



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ



## ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

2021

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	22
ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ .....	22
1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները և առաջ եկած խնդիրները.....	24
2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղությունները	33
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ.....	69
ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ.....	73
1. Համագործակցությունը հանրային մարմինների հետ.....	73
2. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրագրողների և փաստաբանների հետ .....	75
ԳԼՈՒԽ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ .....	78
1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության վերաբերյալ միջազգային գնահատականը .....	79
2. Պաշտպանի հաստատության հիմնական ծրագրերը .....	81
ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ .....	87
1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը.....	87
2. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ .....	88
ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ .....	90
ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....	97
ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....	97
1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ.....	97

1.1	Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելը.....	97
1.2	Մասնակի կենսաթոշակ նշանակելը.....	103
1.3	Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրներ.....	110
1.4	Աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատվելու դեպքում աշխատանքային կենսաթոշակն ավելի վաղ ժամկետից վերահաշվարկելու և չստացված կենսաթոշակը կենսաթոշակառուին վճարելու հետ կապված խնդիր .....	117
1.5	ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը ....	119
1.6	Անկանխիկ եղանակով կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան մեկ անգամ բանկ այցելելու պարտավորությունը.....	122
1.7	Ոչ պատշաճ (թերի) վարչարարությունը և իրազեկման պակասը՝ որպես իրավունքների խախտման պատճառ սոցիալական ապահովության ոլորտում.....	124
2.	Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը .....	133
2.1	«ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուներ» հասարակական կազմակերպության անդամների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի սահմանափակումը.....	133
2.2	Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման պրակտիկ խնդիրներ .....	138
2.3	Ընտանիքների անապահովության գնահատման գործընթացում առաջացող խնդիրներ.....	140
2.4	ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդի փոխհատուցում .....	147
2.5	ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների հատուցման խնդիր .....	153
2.6	Անօթևան մարդկանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ.....	155
<b>ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....</b>		<b>161</b>
1.	Պետության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի սահմանափակելը .....	161
2.	«Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցումը .....	166
3.	Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցումը և բնակավայրերի բնակիչների իրավունքների ապահովումը .....	169

4. Սեփականության իրավունքով պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պատճառով առաջացած հողամասերի համադրումները շտկելու խնդիր.....	170
5. Քաղաքաշինական նորմերը և կանոնները չպահպանելու հետևանքով գույքային իրավունքների խախտումը .....	173
6. Վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում 176	
7. Տրանսպորտային միջոցի հափշտակման և փաստացի չտիրապետման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր .....	180
8. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան հատկացնելը.....	183
9. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հատուցումը .....	186
10. Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելը .....	189
<b>ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ.....</b>	<b>193</b>
1. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողություն իրականացնող արտադատական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը .....	193
2. Գործադուլի իրավունքի սահմանափակումը .....	198
3. Աշխատանքային իրավահարաբերություններում արհմիությունների դերի բարձրացումը.....	200
4. Աշխատանքային իրավունքների ոտնահարման առանձին դեպքեր .....	202
4.1 Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը կամ ոչ ամբողջովին կատարելը.....	202
4.2 Աշխատավարձի չվճարման պրակտիկա .....	204
4.3 Ծանուցման հետ կապված խնդիրներ.....	206
4.4 Աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը .....	207
5. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ.....	209
6. Խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը .....	214



- 7. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ.....216
- 8. Հանրային ծառայության ոլորտում կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված՝ հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատված անձանց աշխատանքային իրավունքների ապահովման խնդիրներ ..... 219
- 9. Գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման օրենսդրական խնդիրները .....225

**ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....230**

- 1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը..... 230
- 2. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում..... 234
- 3. Սննդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում..... 239
- 4. Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ջեռուցման խնդիրներ ..... 240
- 5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում..... 244

**ԳԼՈՒԽ 5.ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....254**

- 1. Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով իրականացվող բուժօգնության նկատմամբ վերահսկողության իրականացումը ..... 254
- 2. Պալիատիվ բուժօգնությունը .....257
- 3. Բժշկական օգնության հասանելիության և մատչելիության խնդիր ..... 259
- 4. Շտապ օգնության ծառայության հասանելիության խնդիր..... 265
- 5. Սկրինինգային հետազոտությունները Հայաստանում ..... 266
- 6. Անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության հետ կապված խնդիր ..... 268
- 7. Բուժօգնությունը պոլիկլինիկաներում.....273
- 8. Պետական մարմնի առջև իրավական պաշտպանության բացակայության խնդիր..277
- 9. Իրազեկվածության պակասը որպես իրավունքների խախտման նպաստող պայման ..... 279
- 10. Սիրտ-անոթային վիրաբուժական օգնության հետ կապված խնդիր .....281

11. Չարորակ ուռուցքաբանական հիվանդությունների բուժօգնության ոլորտի խնդիրներ .....	282
12. Հիմնական դեղերի ցանկում ներառված դեղորայքի որակի, դրանք շահառուներին չտրամադրելու խնդիր.....	287

**ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ .....** 291

1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադատական մեխանիզմի բացակայությունը .....	292
2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը .....	297
3. ՓՀԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը .....	302
4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ .....	306

**ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ .....** 319

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների մասին անձանց պատշաճ չձանուցելը.....	319
2. Կատարողական գործողությունների իրականացումը դրանց կասեցման միջնորդությունը դատարանի կողմից բավարարված լինելու պայմաններում .....	328
3. Կատարողական վարույթի շրջանակներում կատարողական գործողությունները պատշաճ ժամկետներում չիրականացնելը.....	331
4. Պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա սահմանվածից ավելի չափերով բռնագանձում տարածելը.....	333
5. Կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելը և բռնագանձում տարածելը.....	338
6. Իրավահաջորդներին կատարողական վարույթին մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայությունը.....	344
7. Պարտապանի՝ օրենսդրությամբ սահմանված մեկնարկային գնից ցածր գին ունեցող միակ բնակարանն արգելանքից չհանելը .....	346
8. Անբողոքարկելի չդարձած վարչական ակտերով ոչ իրավաչափ կատարողական վարույթ հարուցելու և գումարներ բռնագանձելու խնդիր .....	348

**ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ.....** 352

**ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ .....** 380

1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա .381
2. Վիրավորանքն ու ատելության խոսքը հանրային տիրույթում..... 385
3. Պետական սահմանին տեսալուսանկարահանման արգելքի իրավաչափությունը կարծիքի արտահայտման ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում..... 392
4. Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքի սահմանափակումների իրավաչափությունը կարծիքի արտահայտման ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում ..... 399
5. Ծանր վիրավորանքի քրեականացման իրավաչափությունն ատելության խոսքի բացառման և կարծիքի արտահայտման ազատության իրավունքի հարաբերակցության համատեքստում. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում..... 403

**ԲԱԺԻՆ 8. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ ..... 409**

1. «Անձնական տվյալ» հասկացության շրջանակը ..... 409
2. Անձնական տվյալների պաշտպանությունը պետական համակարգի գործունեության մեջ. պետական մարմնի ներսում և այլ մարմինների հետ հարաբերություններում անձնական տվյալների մշակման, օգտագործման ու փոխանցման կանոնները..... 417
3. Մարդու իրավունքների պաշտպանի հարցմամբ պետական իրավասու մարմինների կողմից անձնական տվյալների փոխանցման գործնական և օրենսդրական հարցերը 422
4. Անձնական տվյալների պաշտպանության հարաբերակցությունը կարծիքի արտահայտման իրավունքի հետ ..... 425
5. Անձնական տվյալների պաշտպանությունը որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմք..... 431
6. Անձնական տվյալների պաշտպանությունը «Դատալեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում ..... 436

**ԲԱԺԻՆ 9. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ..... 439**

**ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ..... 441**

1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը ..... 441

2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան ..... 451
3. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը ..... 457
4. Քրեական դատավարությանը մասնակցող, ինչպես նաև հանցագործության մասին հաղորդում տվող անձանց պաշտպանությունը ..... 463
5. «Փաստացի քրեական հետապնդման» վտանգները և դրանից անձի պաշտպանության երաշխիքները ..... 468
6. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրները ..... 473
7. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան ..... 479
8. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ ..... 488
9. Քրեական գործով վարույթի ընթացքում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության իրավունքին անհամաչափ միջամտությունը ..... 494
10. Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան ..... 498
11. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործումը և դրանց չարաշահման վտանգը քրեական դատավարությունում ..... 500
12. Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցություններ ձայնագրելու և որպես ապացույց օգտագործելու պրակտիկան քրեական գործով մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում ..... 507
13. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան ..... 513
14. Քրեական գործի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներ ..... 521
15. Գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների անլիարժեքությունը ..... 527
16. Քրեական գործերով իրավական օգնության շրջանակում արձանագրված գործնական խնդիրներ ..... 538

**ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ** ..... 543

1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները ..... 543

2. Հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա անձին ձերբակալելու պրակտիկայում մարդու իրավունքների խնդիրները ..... 546
3. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը ..... 550
4. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու թերի կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները ..... 553
5. Հետախուզման մեջ գտնվող անձին արգելանքի վերցնելիս և օրենքով նախատեսված դեպքում ձերբակալված մեղադրյալին անհապաղ դատավորի մոտ տանելու իրավական պահանջի կատարման գործնական խնդիրները ..... 560

**ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ..... 566**

1. Կասկածյալի կամ մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան ..... 566
2. Դատարանի կողմից մեղադրյալի՝ Հայաստանից ելքը թույլատրելու դեպքում ՍԷԿՏ համակարգում տվյալներ չմուտքագրելու ոչ իրավաչափ պրակտիկան..... 571
3. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը և կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու ոչ իրավաչափ պրակտիկան ..... 572
4. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան ..... 575

**ԳԼՈՒԽ 4. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 578**

1. Փաստաբանի մասնագիտական գործունեությունը ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում ..... 578
2. Իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի մատչելիությունը՝ որպես քրեական հետապնդման ենթարկվող անձի այլ իրավունքների ապահովման երաշխիք ..... 580
3. Մեղադրյալի և փաստաբանի հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու, որպես ապացույց քրեական գործի շրջանակում օգտագործելու ոչ իրավաչափ պրակտիկան..... 585

**ԳԼՈՒԽ 5. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԻՄՔՈՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ..... 589**

**ԳԼՈՒԽ 6. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ ..... 596**

1. ՀՀ ոստիկանության համակարգի ճանապարհային ոստիկանության և Պարեկային ծառայության գործունեությանն առնչվող բողոքներով բարձրացված խնդիրներ ..... 596
2. Ոստիկանության անձնագրային և վիզաների գործունեության ոլորտի խնդիրներ ..601
3. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ոստիկանության լիազորությունների կատարման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ..... 605

**ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ..... 612**

1. 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ և դրան փոխկապակցված մյուս քրեական գործերի քննությունը .....613
2. 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների կապակցությամբ քննվող քրեական գործերը և դրանցում ներգրավված անձանց մասնակցությամբ այլ գործեր ..... 623
3. 2020 թվականի նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Երևանում տեղի ունեցած իրադարձությունները ..... 627
4. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության երաշխավորումը՝ որպես պետության պոզիտիվ պարտավորություն.....631
5. Զանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը..... 637

**ԲԱԺԻՆ 10. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ..... 650**

1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացումը..... 652
2. Սահմանված ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը. ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը..... 657
3. Ազատությունից զրկված անձի նախընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը..... 660
4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ..... 662
5. Հավաքների մասնակիցներին ազատությունից զրկելու ընթացակարգերի իրավաչափ նպատակի չապահանումը..... 671
6. Հավաքների ազատության երաշխավորման հարցում ռազմավարական փոփոխությունների անհրաժեշտությունը, իրավունքահեն մոտեցումը և մարդու իրավունքների կրթության առանցքային դերը հավաքների ազատության երաշխավորման ոստիկանական պրակտիկայում..... 676

- 7. Հավաքների իրականացման ընթացքում առանց պատշաճ համազգեստի կամ տարբերանշանի Ոստիկանության ծառայողների կողմից անձանց վարչական ձերբակալման ենթարկելու կամ ձերբակալելու խնդրահարույց պրակտիկան ..... 678
- 8. Վարչական ձերբակալման կամ բերման ենթարկելու շրջանակներում անձանց լուսանկարելու իրավաչափությունը..... 680
- 8. Հավաքներին երեխաների մասնակցության իրավաչափության դիտարկումը երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից ..... 682
- 9. Հավաքների ազատությունն ամրագրող ներպետական օրենսդրության համապատասխանությունը միջազգային մոտեցումներին..... 687

**ԲԱԺԻՆ 11. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 693**  
**ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ..... 694**

- 1. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար տուգանքների անհամաչափությունը և անհատական մոտեցման բացակայությունն օրենքով..... 694
- 2. Սեփականության իրավունքի երաշխավորումը հարկային պարտավորությունների կատարմանն ուղղված հարկադրանքի միջոցներ կիրառելիս ..... 697
- 3. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի երաշխավորումը գնումների գործընթացում ..... 701
- 4. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտներ շինարարության թույլտվություն տրամադրելու գործընթացում..... 706
- 5. Արտակարգ դրության իրավական ռեժիմի և կարանտինի պայմաններում տնտեսվարողների գործունեությունն արգելելու որոշումների վարչական բողոքարկման արդյունավետ մեխանիզմների բացակայություն..... 710
- 6. ՀՀ ապրանքներ ներմուծելիս ավելացված արժեքի հարկի վճարման պահանջը որպես գործարարների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտ ..... 711
- 7. Խաղահրապարակների սարքավորումների, զբոսայգիների և մարզահրապարակների արտադրության ոլորտում պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը որպես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտ ..... 715
- 8. Վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողության բացակայություն ..... 718
- 9. Ապրանքը մաքսազերծելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելը ..... 720

10. Մտավոր սեփականությամբ պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավատերերի իրավունքների երաշխավորումը.....	722
11. Գրքերի բոլոր տեսակների օտարումն ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկելը.....	724
12. Հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտի ներդրումը որպես գործարարության պաշտպանության երաշխիք.....	726
13. Անձնական օգտագործման ապրանքները ՀՀ ներմուծելիս մաքսատուրք վճարելու խնդիր .....	728
14. ՀՀ մշտական բնակության տեղափոխվող անձանց կողմից մաքսային վճարների արտոնություններից չօգտվելու խնդիր .....	730
15. ՊԵԿ հարկային և մաքսային բողոքարկման հանձնաժողովի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց .....	732
16. Պետական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով գործելը որպես անձի իրավունքների իրացման ապահովման արդյունավետ միջոց .....	734
17. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր .....	735
18. Գործարարների իրավունքների խախտումներ կատարողական վարույթի շրջանակներում.....	736
<b>ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b> .....	<b>739</b>
1. Անձնական տվյալների պաշտպանությունը փոստային կապի ոլորտում.....	740
2. Տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում էլեկտրական էներգիայի, խմելու ջրի, գազի մատակարարման դադարեցումներ .....	742
3. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը.....	744
4. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը.....	746
5. Խմելու ջրի մատակարարման խափանումներ.....	748
6. Առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ապացուցման բաժանորդին պատասխանատվության ենթարկելը.....	749
7. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ .....	751



**ԲԱԺԻՆ 12. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ** ..... 753

1. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը ..... 753
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված բողոքարկումը՝ որպես արդյունավետ պաշտպանության միջոց, այդ բողոքների քննության ժամկետների առումով ..... 757
3. Դատական գործերի «ձեռքով» մակագրումը և անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքի խորքային վտանգները..... 761
4. Քրեակատարողական ծառայողների իրավունքների ապահովման օրենսդրական խնդիրը՝ սահմանային տարիքը լրանալու հիմքով աշխատանքից ազատվելու դեպքում ..... 767
5. Մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով 3-րդ խմբի հաշմանդամություն ստացած զինծառայողների վնասի հատուցման հարցերը ..... 772
6. Պատվաստումների գործընթացի կազմակերպման օրենսդրական և գործնական խնդիրները..... 775
7. Խտրականությունը սեռական կողմնորոշման հիմքով ..... 785
8. Արտաքին լուսավորությամբ ապահովելու անհրաժեշտություն ..... 787
9. Աղմուկի հետևանքով համակեցության կանոնների խախտումը..... 790
10. Թափառող շների վնասազերծման խնդիր ..... 793
11. Հանրային ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, սպասարկման որակի և այլ խնդիրներ ..... 797

**ԲԱԺԻՆ 13. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ** ..... 801

**ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ** ..... 804

1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ..... 804
2. Հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով համագործակցությունը..... 808
3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում..... 811

**ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ..... 816**

- 1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը..... 816
- 2. Զորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու գործընթացը (այդ թվում՝ «Ես եմ», «Պատիվ ունեմ» և այլ ծրագրերի հետ կապված խնդիրներ)..... 820
- 3. Զինվորական հաշվառման փաստաթղթեր ստանալու իրավունքը ..... 827

**ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ..... 830**

- 1. Առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության խնդիրները..... 830
- 2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը ..... 840
- 3. Զինապարտ քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը ..... 845
- 4. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը ..... 849

**ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ 852**

- 1. Անընդհատ և շարունակական կրթության իրավունքը..... 852
- 2. Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու իրավունքը ..... 855
- 3. Ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում ստանալու իրավունքը 858

**ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ..... 862**

- 1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում ..... 862
- 2. Զինծառայողների առաջնահերթ հետազոտման, փորձաքննության և բուժման իրավունքը..... 869
- 3. Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը 874
- 4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը ..... 885
- 5. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը..... 888

**ԳԼՈՒԽ 6. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....891**

- 1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը ..... 891
- 2. Պայմանագրային զինծառայողներին շաբաթ օրը ծառայության ներգրավելը, այլ զորամաս տեղափոխելը և գործուղելը..... 895
- 3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը .....899
- 4. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը ..... 903
- 5. Առողջական վիճակով պայմանավորված պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելը ..... 906
- 6. Զինծառայողների իրավունքների պաշտպանությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս .....910

**ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ .....923**

- 1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ..... 923
- 2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք..... 928
- 3. Հրաման չկատարելու և զինգրքույկը կորցնելու համար կարգապահական տույժ կիրառելու պրակտիկան..... 937
- 4. Պարտադիր զինծառայողին մշտական տեղակայման զորամասից այլ զորամաս տեղափոխելու պրակտիկան..... 943

**ԳԼՈՒԽ 8. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ..... 946**

- 1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային իրազեկումը ..... 946
- 2. Զինված ուժերում բռնության արգելքը ..... 954

**ԳԼՈՒԽ 9. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ.....957**

- 1. Կանանց մասնակցության կարևորությունը զինված ուժերում..... 957
- 2. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները..... 960
- 3. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները ..... 964

**ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ..... 969**

- 1. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը..... 969
- 2. Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը..... 997
- 3. Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու պրակտիկան ..... 1001
- 4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը 1003
- 5. Արտոնություններ զինծառայողների և նրանց ընտանիքների համար..... 1010

**ԳԼՈՒԽ 11. ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ.....1013**

- 1. Զինված ուժերում նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի հետ կապված խնդիրներ..... 1013
- 2. Քաղաքացիների իրավունքները զորահավաքային զորակոչի և ծառայության ընթացքում (արձանագրված խնդիրներ և չիրացված առաջարկներ) .....1024
- 3. Վարժական հավաքների ներգրավված անձանց իրավունքների ապահովման օրենսդրական և գործնական խնդիրները.....1033
- 4. Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո..... 1041
- 5. Գերությունից վերադարձած հայ ռազմագերիների նկատմամբ քրեական հետապնդումներ.....1055

**ԲԱԺԻՆ 14. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....1060**

- 1. Կանանց նկատմամբ բռնություն և ընտանիքում բռնություն .....1063
  - 1.1 Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ ընտանեկան բռնությանն առնչվող դիմում-բողոքների ընդհանուր նկարագիրը. քանակական և որակական ուսումնասիրություն .....1064
  - 1.2 Ընտանեկան բռնության դեմ պայքարի շարունակական օրենսդրական և գործնական խնդիրները ..... 1073
- 2. Թրաֆիքինգ և շահագործում.....1110
- 3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ ..... 1113
- 4. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին..... 1120

5. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ.....	1128
6. Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ .....	1130

**ԲԱԺԻՆ 15. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ .....**

1. Խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանության վիճակի մշտադիտարկում .....	1146
1.1 Շենքային և բնակության պայմանները .....	1147
1.2 Սննդի կազմակերպում.....	1150
1.3 Անկախ ապրելու, ինքնուրույն կյանք վարելու հմտություններ, շփումներ անձնակազմի հետ և կապն արտաքին աշխարհի հետ.....	1153
1.4 Կրթության իրավունքի իրացման ապահովումը .....	1158
1.5 Խմբերի ձևավորում (մանկատներ).....	1166
1.6 Բժշկական սպասարկում .....	1167
1.7 Բողոքարկման մեխանիզմներ .....	1179
1.8 Դպրոցի անվանման անթույլատրելիությունը երեխայի իրավունքների համատեքստում .....	1181
2. Կրթության իրավունքի սահմանափակումները նախադպրոցական կրթական հաստատություններում.....	1182
2.1 Նախադպրոցական կրթական հաստատությունների հասանելիությունը .....	1183
2.2 Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովի հիմունքներով գործելը.....	1193
3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության ընթացակարգային խնդիրները .....	1195
4. Երեխայի կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով.....	1199
5. Մանկական աղքատության հիմնախնդիրը .....	1205
6. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը .....	1209
7. Խնամակալության և հոգաբարձության մարմինների (հանձնաժողովների) գործունեության հետ կապված՝ լուծում չստացող շարունակական խնդիրները .....	1215
8. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելը և նրանց աջակցություն տրամադրելը.....	1232

9. Ապահինստիտուցիոնալացման գործընթացը և ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման վիճակը.....1236

10. Երեխաների որդեգրման գործընթացը և ոլորտի խնդիրները .....1250

11. Երեխայի լավագույն շահերի ապահովումը ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթների ընթացքում1253

12. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների, շրջանավարտների և շրջանավարտ չհամարվող նախկին սաների հիմնախնդիրները՝ ինքնուրույն կյանք վարելու, հասարակությունում լիարժեք ներգրավվելու, բնակարանային ապահովման համատեքստում.....1267

13. Դժվարին իրավիճակում հայտնված և անօթևան մնացած ընտանիքների կացարանով ապահովելու գործընթացում արագ արձագանքման գործիքակազմ ներդնելու անհրաժեշտությունը՝ երեխայի և ընտանիքի անդամների բաժանումը բացառելու սկզբունքի ապահովմամբ .....1280

14. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի՝ որպես երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստող խորհրդակցական մարմնի անարդյունավետ գործունեության հետևանքով շարունակական լուծում չստացող խնդիրները.....1297

**ԲԱԺԻՆ 16. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՏՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ ..... 1301**

Գլուխ 1. Կարծրատիպերը ԵՎ խտրական մոտեցումների անթույլատրելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ՝ որպես խախտումների խորքային պատճառ .....1306

Գլուխ 2. Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ որեՎէ տեսակի վատ վերաբերմունքի անթույլատրելիություն.....1313

Գլուխ 3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգի բարեփոխումները Կոնվենցիայի պահանջների համատեքստում .....1319

Գլուխ 4. Հաշմանդամության կարգավիճակի սահմանման ոլորտի խնդիրները ... 1323

4.1 Հաշմանդամության կարգավիճակի սահմանման չափորոշիչների անհամապատասխանությունը անձի կարիքներին և կենսագործունեությանը..... 1323

4.2 Ոչ պատշաճ իրազեկումը և ուղղորդումը՝ որպես խնդիրների առաջացման խորքային պատճառ..... 1327

4.3 Թերի վարչարարությունը՝ որպես այդ խնդիրների առաջացման խորքային պատճառ.....	1330
<b>Գլուխ 5. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորումը ներառական հասարակությունում .....</b>	<b>1335</b>
5.1 Ֆիզիկական միջավայրի մատչելիություն .....	1335
5.2 Փոխադրամիջոցների մատչելիություն .....	1342
5.3 Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին .....	1345
5.4 Մասնակցությունը հանրային կյանքին .....	1350
5.5 Առողջապահության մատչելիություն .....	1351
5.6 Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման խնդիրները.....	1357
5.7. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար .....	1362
<b>Գլուխ 6. Հաշմանդամություն ունեցող անձանց մասնավոր կյանքի ԵՎ արժանապատվության նկատմամբ հարգանքը .....</b>	<b>1367</b>
<b>Գլուխ 7. Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն կյանքի խթանումը ...</b>	<b>1370</b>
7.1 Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և հասարակությունում (համայնքում) ներգրավվելու իրավունքի երաշխավորումը.....	1370
7.2 Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի երաշխավորումը.....	1376
7.3 Սոցիալական բնակարանների ապահովումը .....	1380
<b>Գլուխ 8. Կրթության իրավունք.....</b>	<b>1386</b>
8.1 Նախադպրոցական կրթություն.....	1387
8.2 Հանրակրթություն .....	1393
8.3 Բարձրագույն կրթություն .....	1400
<b>Գլուխ 9. Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներ .....</b>	<b>1403</b>
<b>Գլուխ 10. Հարգանք հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների նկատմամբ .....</b>	<b>1408</b>
<b>Գլուխ 11. Պատերազմի հետեւանքով վիրավորում ստացած, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ինտեգրման մարտահրավերները, վերականգնողական, համայնքահեն ծառայությունների հետ կապված խնդիրներ.....</b>	<b>1415</b>

**ԲԱԺԻՆ 17. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....1420**

1. Տարեցների իրավունքների պաշտպանությունը տուն-ինտերնատներում.....1420

1.1 Տարեցների իրավունքների պաշտպանությունը տուն-ինտերնատներում կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում..... 1421

1.2 Տարեցների բնակության պայմանները տուն-ինտերնատներում .....1425

2. 2021 թվականին լուծում չստացած օրենսդրական խնդիրներ տարեցների խնամք իրականացնող հաստատություններ տեղավորվելու և այլ հարցերի հետ կապված ...1428

3. Տարեցներին տրամադրվող ծառայությունների վիճակը.....1434

**ԲԱԺԻՆ 18. ԱԴՐԲԵՋԱՆԻ ՍԱՆՁԱԶԵՐԾԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ..... 1441**

1. Կացարանով ապահովում ..... 1441

2. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը.....1449

3. Սոցիալական աջակցության միջոցառումներին և ընթացակարգին առնչվող խնդիրներ..... 1452

4. Արցախից Հայաստան տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների ապահովումը.....1459

**ԲԱԺԻՆ 19. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՅՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ .....1462**

1. Ընդհանուր տեղեկություն Հայաստանում փախստականների և ապաստանի վերաբերյալ.....1463

2. 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղությունները .....1466

3. 2021 թվականի հիմնական զարգացումները ..... 1468

4. 2021 թվականին արձանագրված հիմնական խնդիրները .....1470

**ԲԱԺԻՆ 20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԿՐՃԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ..... 1488**

**ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՈՒ ԿՐՃԱՏՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ..... 1490**

1. Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները և ձեռքբերումները..... 1491



**ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԿՐՃԱՏՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ .....1495**

- 1. Ապաքաղաքացիության մասին նոր իրավական ակտի ընդունման ձգձգման հետ կապված խնդիր .....1495
- 2. Քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց վերաբերյալ համապարփակ վիճակագրական տվյալների վարման հետ կապված խնդիր.....1496
- 3. Քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման գործուն մեխանիզմների բացակայություն. ընդհանուր նկատառումներ և բացահայտված դեպքերի օրինակներ՝ ըստ ընդհանրությունների .....1499
- 4. Ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և պաշտպանության հարցերով զբաղվող միջգերատեսչական մարմնի ստեղծման անհրաժեշտություն .....1503
- 5. Երեխայի ծննդի դեպքում փաստաթղթավորման խոչընդոտները՝ որպես ծնունդը չգրանցելու կամ դրա խոչընդոտների պատճառ.....1504
- 6. Անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրում ՔԶԱ կարգավիճակ հայցող անձանց ..... 1510
- 7. Անվճար իրավաբանական օգնության տրամադրում քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց ..... 1511

**ԲԱԺԻՆ 21. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԴԻԲԵՁԱՆԱԿԱՆ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԶԻՆՎԱԾ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ..... 1514**

**ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ .....1516**

- 1. Արգելված զենքերի կիրառումը խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ..... 1516
- 2. ԱԹՍ-ների կիրառումը Արցախի և Հայաստանի քաղաքացիական բնակավայրերի նկատմամբ ..... 1518
- 3. Հայկական կողմի քաղաքացիական անձանց և զինծառայողների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի դաժանություններն ու խոշտանգումները ..... 1519
- 4. Քիմիական տարրեր պարունակող զենքի օգտագործում ..... 1523

5. Չինված հարձակումներով երեխաներին թիրախավորելը և երեխաների իրավունքների խախտումները.....	1526
6. Լրագրողների նկատմամբ հարձակումներն ու նրանց իրավունքների խախտումները ադրբեջանական զինված ուժերի կողմից .....	1528
<b>ԳԼՈՒԽ 2. ԳԵՐԻՆԵՐԻՆ ՉՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ.....</b>	<b>1530</b>
1. Գերինների ազատ արձակման և նրանց չվերադարձնելու միջազգային պահանջների խախտումները՝ իրավական ընթացակարգեր չարաշահելու և դրանց էությունը նենգափոխելու միջոցով .....	1531
2. Հայկական կողմի գերինների կեղծ դատավարությունները Ադրբեջանում .....	1537
<b>ԳԼՈՒԽ 3. ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՐԱՏԱՊ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ.....</b>	<b>1539</b>
1. Հայատյացության խրախուսումը և թշնամանքի քարոզը՝ որպես ադրբեջանական պետական քաղաքականության մաս.....	1542
2. Հայատյացությունն ու թշնամանքը Ադրբեջանի նախագահի հրապարակային ելույթներում .....	1546
3. Հայատյացությունը ադրբեջանական և թուրքական սոցիալական ցանցերում .....	1550
<b>ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՄ ԽԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ.....</b>	<b>1552</b>
1. ՀՀ սահմանային բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքների խախտումներ .....	1552
2. ՀՀ սահմանային բնակիչների սեփականության իրավունքի խախտումները.....	1555
3. ՀՀ սահմանային բնակիչների սոցիալ-տնտեսական իրավունքների խախտումներն ազատ տեղաշարժի իրավունքի և անվտանգության իրավունքի իրացման համատեքստում.....	1563
4. ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի ջրային պաշարների անվտանգ օգտագործման խնդիրներ .....	1572

# **ԲԱԺԻՆ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

## **ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատություն, 2004 թվականից գործունեությունը սկսելուց ի վեր անցել է զարգացման մի քանի փուլ: Այդ փուլերից յուրաքանչյուրը կարևոր դեր է ունեցել պետության իրավական համակարգում կառույցի դերի ամրապնդման և մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի զարգացմանը:

Հաստատության զարգացման տեսանկյունից հիմնարար նշանակություն ունեցավ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններն: Մասնավորապես, Սահմանադրությունն ամրագրում է Մարդու իրավունքների պաշտպանին դիմելը որպես՝ մարդու հիմնական իրավունք, նախատեսելով մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ 2-րդ գլխում:

Ավելին, սահմանվեց Պաշտպանի վերաբերյալ ինքնուրույն գլուխ, որը նախատեսում է նրա գործառույթների ու լիազորությունների, ընտրության և գործունեության երաշխիքների վերաբերյալ կարգավորումներ: Սահմանադրությունը սահմանել է նաև Պաշտպանի գործունեության նոր ուղղությունների հիմքեր:

Սահմանադրության փոփոխությունների հիմքով 2016 թվականին ընդունվեց և 2017 թվականին ուժի մեջ է մտավ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքը<sup>1</sup>, որն ավելի բարձր իրավական ուժ ունի, քան մյուս օրենքները: Այն որակապես նոր հիմքեր ապահովեցին մեր երկրի իրավական համակարգում Պաշտպանի՝ որպես սահմանադրական մարմնի տեղի ու դերի համար:

Քննարկվող փոփոխությունների հիման վրա զարգացվեցին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի նոր ուղղություններ (մարդու իրավունքների կրթություն, գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանություն սեփական գործունեության արդյունքների վրա հիմնված օրենսդրական նախագծի մշակում և այլն):

Այդ օրենսդրական փոփոխություններով ընդլայնվեցին Պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության երաշխիքները, ինչպես նաև իրավասության ոլորտները: Մասնավորապես, նախատեսվեց, որ Պաշտպանը, բացի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց դեմ ներկայացված բողոքներից, իրավասու է քննարկել նաև հանրային ծառայության ոլորտում գործող, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ հարցերը:

<sup>1</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Օրենք:

Ավելին, ամրագրվեց, որ Պաշտպանը հանդիսանում է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն իրականացնող մարմին: Նշված օրենսդրական փոփոխություններն առավել մանրամասն քննարկվում են Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդման մեջ:

Հատկանշական է, որ կատարված փոփոխություններից հետո՝ 2018 թվականի հունիսի 13-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքը: Դրանով նախատեսվել է, որ Պաշտպանն իրականացնում է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն:

Պետք է հատուկ ընդգծել, որ Պաշտպանի վերը նշված կոնվենցիոն մանդատների արդյունավետ իրականացման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվել կամ վերակազմավորվել են համապատասխան ստորաբաժանումներ:

Ավելին, վերը քննարկված իրավական լուծումները հնարավորություն տվեցին նաև ավելի ուժեղացնել Մարդու իրավունքների պաշտպանի մասնագիտական մոտեցումները՝ աշխատանքին ներգրավելով բժիշկների, հոգեբանների, սոցիալական աշխատողների և այլն: Դրանից բացի, Պաշտպանի գործունեությանն առավել լայն ներգրավում ապահովվեց քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու անկախ մասնագետների համար:

Օրենսդրական զարգացմանն առնչվող մեկ այլ կարևոր հարց վերաբերում է հատուկ խմբերի իրավունքների վերաբերյալ Պաշտպանին դիմում ներկայացնելու հարցին և որը բխել է գործնականում արձանագրված բարդություններից: Մասնավորապես, այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող անձանց շարքում ամրագրվել են նաև ազատությունից զրկված անձանց և զինծառայողների մերձավոր ազգականներին: Այս փոփոխությունը միտված է եղել ապահովելու քննարկվող խումբ անձանց իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանը:

2020 թվականին ադրբեջանական լայնածավալ հարձակումները և ադրբեջանական զինված ուժերի ապօրինի ներկայությունը Հայաստանի Հանրապետության գյուղերի հարևանությամբ սկզբունքորեն փոխեցին Պաշտպանի գործունեության առանձնահատկություններն ու ուղղությունները: Օբյեկտիվորեն թե՛ 2020, թե՛ 2021 թվականներին խիստ անհրաժեշտ դարձավ

լայնածավալ հրատապ 24-ժամյա փաստահավաք աշխատանքներ իրականացումը: Նախորդ տարում ինտենսիվ աշխատանք էր տարվում ռազմական գործողությունների համատեքստում ադրբեջանական զինված ուժերի պատերազմական հանցագործությունների վերաբերյալ ապացույցներ հավաքագրելու, անհրաժեշտ իրավական գնահատականներ տալու և դրանք հանրությանն ու միջազգային կառույցներին ներկայացնելու տեսանկյունից: Խնդիրը չափազանց բարդ էր, քանի որ ստիպված էինք աշխատանքները տանել համավարակի պայմաններում:

Հաշվետու տարում արմատական աշխատանքներ են տարվել հետպատերազմական փուլում ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացված խախտումների և դրանց արդյունքում ՀՀ սահմանամերձ բնակավայրերում մարդու իրավունքների ոտնահարումների վերաբերյալ: Այդ նպատակով Պաշտպանի գլխավորությամբ պարբերական այցեր են իրականացվել սահմանամերձ բնակավայրեր, տեղում մանրամասն ուսումնասիրվել են տեղի բնակիչների կենսապահովման պայմանները, առանձին իրավունքների ապահովման հետ կապված հարցերը: Այցերի արդյունքում մշակվել և իրավասու պետական մարմիններին, միջազգային կազմակերպություններին են ներկայացվել ամփոփ տեղեկություններ արձանագրված մարդու իրավունքների ոտնահարումների վերաբերյալ<sup>2</sup>:

Կատարված արձանագրումների հիման վրա, որպես հիմնարար առաջարկություն, ներկայացվեց Ադրբեջանի հետ սահմանամերձ բնակավայրերի հարևանությամբ անվտանգության ապառազմականացված գոտի ստեղծելու գաղափարը: Այն ենթադրում էր ադրբեջանական զինված ուժերի հետքաշում, որը կերաշխավորեր տեղում բնակիչների և այլոց բնականոն կյանքը, և ոչ մի դեպքում չի ենթադրի այդ տարածքի՝ որևէ կողմի պատկանելություն:

Այցերն ու ուսումնասիրությունները շարունակվել են նաև 2022 թվականի հունվար – փետրվար ամիսներին:

## **1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության երաշխիքները և առաջ եկած խնդիրները**

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի արդյունավետության գրավականն է նաև օրենսդրական այն երաշխիքները, որոնք ապահովում են ինստիտուցիոնալ անկախության անհրաժեշտ մակարդակ:

Այդ երաշխիքները հատկապես ուժեղացվեցին 2017 թվականին՝ սահմանադրական օրենքի ուժի մեջ մտնելուց հետո՝ նույնիսկ ապահովելով այնպիսի պայմաններ, որոնք յուրահատուկ են միջազգային առաջատար փորձի տեսանկյունից:

Նախ, կարևոր էր սահմանադրական օրենքի մակարդակով ամրագրելը, որ Պաշտպանի աշխատակազմում<sup>3</sup> պաշտոն զբաղեցնող անձինք չեն կարող բացատրություն տալ կամ հարցաքննվել Պաշտպանին հասցեագրված դիմումների կամ բողոքների էության կամ դրանց

<sup>2</sup> Կատարված աշխատանքների արդյունքները ներկայացված են սույն հաղորդման համապատասխան բաժնում:

<sup>3</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Աշխատակազմ:

ուսումնասիրությունների արդյունքում Պաշտպանի կայացրած որոշումների վերաբերյալ, ինչպես նաև դրանք այլ անձանց տրամադրել ծանոթացման՝ առանց Պաշտպանի գրավոր համաձայնությամբ: Ընդ որում, այս նույն պահանջը վերաբերում է նաև խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի շրջանակներում Պաշտպանի հետ համատեղ աշխատող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և անկախ փորձագետներին: Այս նոր լուծումը կարևոր է հատկապես բողոք ներկայացրած անձանց վստահության տեսանկյունից:

Ավելին, ՀՀ քրեական օրենսգրքի 332.1-րդ հոդվածով սահմանվեց առանձին հանցակազմ, որը պատասխանատվություն է նախատեսում Պաշտպանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու, այդ թվում՝ նրա գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու, իսկ 2017 թվականից սկսած՝ նաև Պաշտպանի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման հետ կապված՝ նրա կամ նրա որոշմամբ հանդես եկող իրավասու անձի մուտքը ցանկացած վայր չթույլատրելու համար:

Սահմանադրությամբ և դրա հիման վրա ընդունված սահմանադրական օրենքով սահմանվեց Պաշտպանի ֆինանսական անկախության երաշխիքներ: Նախ, Սահմանադրության 193-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Պետությունն ապահովում է Պաշտպանի գործունեության պատշաճ ֆինանսավորումը:

Դրանից բացի, յուրաքանչյուր տարի Պաշտպանի և Աշխատակազմի, ինչպես նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար **պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից**: Այս փոփոխությունը հատկապես ունեցավ հիմնարար նշանակություն, սահմանեց ինստիտուցիոնալ անկախության նոր նշաձող ու դարձավ միջազգային լավագույն փորձի օրինակ:

Նշված երաշխիքներից զատ ներպետական օրենսդրությամբ նախատեսվում են Պաշտպանի և Աշխատակազմի գործունեության այլ երաշխիքներ (պատասխանատվության մեխանիզմներ և այլն), որոնք նպաստում են կառույցի լիազորությունների արդյունավետ իրականացմանը:

Այդուամենայնիվ, գործնականում արձանագրվել են դեպքեր, որոնք պարունակել են Պաշտպանի գործունեության ինստիտուցիոնալ խոչընդոտների իրական վտանգներ: Դրանցից մեկը վերաբերել է հաստատության ֆինանսական անկախության երաշխիքի վերացմանը: Այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը խոչընդոտող մեկ այլ արատավոր երևույթ էր Պաշտպանի հասցեին իր գործունեության իրականացման կապակցությամբ գլխավորապես կեղծ էջերից կամ օգտահաշիվներից կազմակերպվածության բարձր աստիճանի ատելության ու վիրավորանքի, ինչպես նաև ակնհայտ կեղած կամ սխալ տեղեկությունների տարածումը: Խնդիրն այն աստիճան էր սրվել, որ 2020 թվականին Պաշտպանը ստիպված էր հայտարարել, որ դա նաև իրականացվում կամ համակարգվում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից: Այդ ամենը հստակ նպատակ է ունեցել՝ ստեղծել սխալ պատկերացումներ հաստատության

գործունեության վերաբերյալ ու հնարավորության դեպքում այդպիսի քննարկումների ներքաշել հնարավորինս շատ իրական օգտատերերի, ազդել հաստատության հեղինակության վրա:

Պաշտպանի հասցեին հնչել են վիրավորական արտահայտություններ նաև իրական օգտատերերի կողմից:

Այս ամենի հիմքում դրվում էր նաև այն, որ Մարդու իրավունքների պաշտպանից ակնկալվում էր անել գործողություններ, որ վերապահված են իրավապահ մարմիններին կամ դատարանին: Հարցն ակնհայտորեն վերաբերում է հարցերի, որոնք Պաշտպանը չի էլ կարող լուծել (օրինակ՝ մասնավոր անձանց կողմից պաշտոնատար անձանց նկատմամբ ենթադրյալ հանցանքներ կատարելու համար պատասխանատվության միջոցներ ձեռնարկելուն և այլն):

Ավելին, հատկանշական է, որ արձանագրված բոլոր դեպքերում հնչեցված վիրավորանքը վերաբերել է Մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական գործունեությանը՝ խոչընդոտ դառնալով հաստատության գործունեության արդյունավետ իրականացման համար:

Դրանցից յուրաքանչյուրի մասով ձեռնարկվել են համապատասխան քայլեր, այդ թվում՝ ներկայացվել է հանցագործության մասին հաղորդում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հանրային կապերի բաժնի գործառույթներից է ուսումնասիրել Պաշտպանի գործունեության լուսաբանումները ՁԼՄ-ներով: Նման մշտադիտարկումների հիման վրա վեր է հանվել, որ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» թողարկումը շարունակում է առավելագույն անտեսել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հրապարակումները երկրում տեղի ունեցող կարևոր իրադարձությունների վերաբերյալ, գործում է Պաշտպանի գործունեության եթեր հեռարձակելն առավելագույնը բացառելու սկզբունքով:

Այս խիստ դատապարտելի գործելաոճին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն անդրադարձել է դեռ 2021թ. մայիսի 6-ին՝ Ազգային ժողովում տարեկան հաղորդմանը նվիրված եզրափակիչ ելույթով:

Պաշտպանի այդ հայտարարության հիմքում էին ամիսների օբյեկտիվ մշտադիտարկման արդյունքներ: ԱԺ-ի այդ ելույթից հետո հատկապես են սահմանափակվել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության լուսաբանումները:

Հաշվի առնելով այս անթույլատրելի վիճակը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է նոր մշտադիտարկում:

Փաստերը հաստատում են, որ պատկերն ավելի մտահոգիչ է, քան մայիսի 6-ից առաջ էր. խոսքը ՀՀ կառավարության հիմնադրած հեռուստաընկերության կողմից ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված իրավապաշտպան միակ պետական հաստատության գործունեության լուսաբանումն անտեսելու, Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված մարդու իրավունքները խախտող քաղաքականության մասին է:

2021թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 2-ի ժամանակահատվածում Youtube-ում հրապարակված «Լուրեր» բոլոր թողարկումների (10:00, 13:00, 15:00, 17:00, 19:00, 21:00, Օրը՝ 60 վայրկյանում)

մշտադիտարկումը<sup>4</sup> հաստատում է, որ լրջորեն խախտված է մարդկանց օբյեկտիվ ու բազմակողմանի ինֆորմացիայի տրամադրումը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության լուսաբանման, այդ առումով մարդու իրավունքների խնդիրները հանրությանը ներկայացնելու և այլակարծությունը խթանելու տեսանկյունից:

Այս եզրահանգման հիմքում են շուրջ 5 ամիս տևած մշտադիտարկման արդյունքները, որոնցից մի քանիս օրինակ ներկայացնում ենք ստորև.

1) Նշված ժամանակահատվածում հոգեբուժարաններում, քրեակատարողական հիմնարկներում, զինծառայողների բժշկական օգնության ու բնակարանային ապահովման, կանանց ու երեխաների իրավունքների, առողջապահական ու սոցիալական և այլ ոլորտներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է բազմաթիվ խնդիրներ, ներկայացրել է լուծումների առաջարկներ, իրականացրել է կարծրատիպեր կոտրելուն ուղղված հանրային իրազեկման աշխատանքներ, որոնցից որևէ մեկը հանրությանը հասանելի չի դարձվել: Չեն պատրաստվել խնդիրները բազմակողմանի ներկայացնող տեսանյութեր:

2) 5 ամիսների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կամ աշխատակազմի ներկայացուցչի հետ որևէ անգամ որևէ թեմայով հարցազրույցի հրավեր «Լուրեր»-ից չի նախաձեռնվել:

Մարդու իրավունքներին վերաբերող հարցերում որևէ անգամ չի պարզվել, թե ինչ դիրքորոշում կամ գործունեության արդյունքներ ունի Մարդու իրավունքների պաշտպանը:

Սա կարևոր է հատկապես այն առումով, որ օրինակ, ՔԿՀ-ներում կամ հոգեբուժարաններում ուսումնասիրության բազմաթիվ հարցեր գտնվում են հենց Պաշտպանի ու նրա աշխատակազմի բացառիկ իրազեկման տիրույթում:

Միայն եզակի դեպքերում է, որ լուսաբանումն արվել է պաշտոնական հաղորդագրության ընդամենը ձևական վերարտադրմամբ:

3) Փոխարենը՝ միակողմանիորեն եթեր են հեռարձակվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարություններն անհիմն հերքող պետական մյուս մարմինների հաղորդագրությունները, բայց ինքնին բուն խնդիրների վերաբերյալ Պաշտպանի հաղորդագրություններին Հ1-ը որևէ անդրադարձ չի կատարել:

Օրինակ՝ եթեր են հեռարձակվել Պաշտպանության նախարարության հերքումները, անգամ Տեղ համայնքապետարանի հերքումը, բայց Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումն այդպես էլ չի հրապարակվել ու նույնիսկ այն ճշտելու համար հարցում չի արվել:

4) Փաստերը վկայում են, որ հատկապես չեն լուսաբանվում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այն հայտարարությունները, որոնք ցույց են տալիս ադրբեջանական անօրինականությունները, Հայաստանի սահմանային բնակիչների իրավունքների խախտումները, հանրությանը չի ներկայացվում, թե ինչ լուծումներ է առաջարկում Մարդու իրավունքների

<sup>4</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/c7c05a3a58a43e22dd7459b3fa113cf9.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



պաշտպանը, այդ թվում՝ որպես Կառավարության տեսակետին այլընտրանք: Առավելագույն դեպքում տեղի ունենում է ձևական լուսաբանում «վազող տողով»:

Ադրբեջանական խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունները հետևողականորեն չլուսաբանելն առավել դատապարտելի է, քանի որ այդ հայտարարություններն ուղղված են ՀՀ բնակչության իրավունքների պաշտպանությանը, մեր գյուղերի հարևանությամբ և ճանապարհներին ադրբեջանական զինված ծառայողների ներկայության անօրինականությունը ցույց տալուն:

Իրավիճակները բազմաթիվ են. օրինակ՝ նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը Սյունիքի մարզում փաստահավաք աշխատանքների, արձանագրված խնդիրների վերաբերյալ որևէ անդրադարձ չկա որևէ թողարկման ընթացքում:

Տեղի է ունեցել հակառակը՝ այդ օրերին եթեր են հեռարձակվել միակողմանի, սահմանային իրական վիճակը թաքցնող ու փաստերը խեղաթյուրող բազմաթիվ ռեպորտաժներ, որոնք հակադրվում են ՀՀ բնակչության իրավունքների պաշտպանությանը:

***Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս է զգուշացրել, որ Հանրային հեռուստաընկերությունը, լինելով ՀՀ կառավարության կողմից հիմնադրված, պարտավոր է հաշվի առնել, որ իր պարտաստած նյութերն արտահայտում են պեպական մոտեցում. սա նաև նշանակում է, որ այդ նյութերը կարող են դառնալ ապացույց ՀՀ քաղաքացիների իրավունքների դեմ՝ հարկապես միջազգային ադյաններում: Եվ հակառակը՝ օբյեկտիվ լուսաբանումները կարող են դառնալ միջազգային ադյաններում մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանության ապացույցներ:***

5) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը լուսաբանելու առումով նույն պատկերն է նաև 1lurer.am կայքում:

Հանրային հեռուստաընկերության նկարագրված քաղաքականությունը կոպտորեն ոտնահարում է տեղեկություններ ստանալու, երկրում տեղի ունեցող կարևոր իրադարձություններին ծանոթ լինելու յուրաքանչյուրի իրավունքը: Մարդկանց օբյեկտիվ տեղեկություններ տրամադրելով է ձևավորվում քաղաքացիների վերահսկողությունը պետության նկատմամբ, որը ժողովրդավարության անկյունաքար է:

Հ1-ի «Լուրեր»-ի պահվածքից տպավորություն է ստեղծվում, թե Հայաստանում կա՛մ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատություն գոյություն չունի ընդհանրապես կա՛մ այն մատնված է տոտալ անգործության:

Սա էլ տանում է նրան, որ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը չի լինում հասանելի հանրության լայն շերտերի համար՝ հատկապես մարզերում, ինչն էլ ուղղակիորեն կապված է հանրային վստահության և ճանաչելիության խաթարման հետ: Սա իր հերթին ուղղակիորեն բացասական է ազդում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իր սահմանադրական առաքելությունն արդյունավետ կատարելու վրա՝ հաշվի առնելով, որ այդ առաքելությունը գլխավորապես իրացվում է հանրային հեղինակության ուժով, ու հետևաբար,

որպես արտաքին գործոն, դա վտանգում է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից քաղաքացիներին աջակցություն ցուցաբերելը: Լուսաբանման անտեսումը (արդեն տևական ժամանակ) հնարավորություն չի տալիս արդյունավետ աշխատանքներ տանել նաև համակարգային խնդիրների լուծման հարցերում (օրինակ՝ հանրային իրազեկումներով ատելության խոսքի դեմ պայքարը և այլն): Այսինքն՝ ակնհայտ է, որ խոսքը Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական առաքելության խոչընդոտների մասին է: Ընդ որում, նկարագրվածն ուղղակիորեն կապված է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության միջազգային ակրեդիտացիայի հետ:

Այսինքն՝ Հ1-ի այս քաղաքականությամբ ոտնահարվում է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված յուրաքանչյուրի իրավունքը, որ ենթակա չէ սահմանափակման որևէ պարագայում:

Նշվածը, հատկապես մտահոգիչ է՝ հաշվի առնելով, որ «Լուրեր» թողարկումն է ողջ երկրի տարածքով գլխավոր լուրեր մատուցողը ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում ու Արցախում: Այսինքն՝ խոսքը թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում, թե՛ Սփյուռքում բնակվող մեր հայրենակիցների իրավունքների մասին է:

Այլ կերպ՝ նկարագրված քաղաքականությամբ Հանրային հեռուստաընկերությունը, լինելով Կառավարության կողմից հիմնադրված, ոտնահարում է նաև պետության պոզիտիվ պարտավորությունները, լուրջ վնասներ է հասցնում երկրում խոսքի ազատությանն ու ժողովրդավարության հիմքերին, ստեղծում է վտանգավոր նախադեպեր:

Հատուկ ենք նշում, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը չունի հավակնություն ամեն օր, տարբեր թողարկումներով հայտնվել հեռուստաէթերում. խոսքն ինստիտուցիոնալ մոտեցման մասին է, այն մասին, որ անտեսված են մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն խնդիրներ, ինչը դատապարտելի գործելաոճով տևական ժամանակ անում է Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» թողարկումը: Հատուկ նշում ենք նաև, որ սույն հայտարարությունը վերաբերում է միայն Հ1-ի «Լուրեր» թողարկմանը, քանի որ այլ՝ ոչ լրատվական ֆորմատներում Պաշտպանի աշխատակազմը որոշակի համագործակցություն ունի:

Այսպիսով, հաշվի առնելով ողջ վերը շարադրվածը՝ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը սեփական նախաձեռնությամբ սկսել է քննարկման վարույթ:

Հանրային հեռարձակողի խորհրդից, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովից պաշտոնական հարցադրումներով պարզաբանումներ են պահանջվել նշված հարցերի վերաբերյալ: Հարցերը հիմնավորվել են ՀՀ Սահմանադրության, «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի, Հանրային հեռարձակողի խորհրդի կանոնադրության և մի շարք այլ իրավական ակտերի

տեսանկյունից: Ձուգահեռ, պաշտոնական հաղորդակցություն է նախաձեռնվել նաև միջազգային համապատասխան կառույցների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանը խոսել է միջազգային միջկառավարական ու հասարակական մի շարք կառույցների ղեկավարների հետ, ներկայացրել է մտահոգիչ իրավիճակը և պայմանավորվածության համաձայն՝ մշտադիտարկման արդյունքները թարգմանվել ու հայտարարության հետ միասին ուղարկվել են նրանց:

Թեմայի վերաբերյալ հայտարարությամբ է հանդես եկել Եվրոպական օմբուդսմանի ինստիտուտը՝ խիստ մտահոգիչ համարելով, որ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունն իրականացնում է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հեռարձակումն արգելափակելու արդեն երկարաժամկետ քաղաքականություն<sup>5</sup>:

Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենից ու Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահից Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված պարզաբանումները, դրանց բովանդակային կրկնությունները, շահարկող շեշտադրումներն ու համադրված վերլուծությունները հիմք են տվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին եզրահանգել, որ Հանրային հեռուստաընկերության «Լուրեր» թողարկմամբ օրենսդրության խախտմամբ տևական ժամանակ չլուսաբանելը Հանրային հեռարձակողի խորհրդի և Հ1-ի համաձայնեցված քաղաքականության հետևանք է: *Ավելին, հարույկ ընդգծում ենք, որ արդեն տևական ժամանակ է, ինչ Հանրային հեռուստաընկերությունն իրականացնում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը ոչ միայն չլուսաբանելու, այլ նաև վարկաբեկելու նպատակային քաղաքականություն:*

*Խոսքը, մասնավորապես, միևնույն հաղորդավարի վարած մի քանի հաղորդումների մասին է, որոնց ընթացքում նա հնչեցնում է ոչ թե հարցեր, այլ փախս է ակնհայտ միակողմանի, մասնագիտական որևէ հիմնավորում չունեցող գնահատականներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության վերաբերյալ. ցուցադրելով ակնհայտ փախվորություն, որ ամենից շատ ինքն է Պաշտպանի մշտադիտարկման օբյեկտիվ արդյունքների ծանր ազդեցության տակ:*

Նախ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցման պատասխանում Հանրային հեռարձակողի խորհուրդը փորձել է մանիպուլացնել ժամանակահատվածը և աղավաղել է իրականությունը՝ նախկին հրապարակումները ներկայացնելով՝ որպես Պաշտպանի գործունեության պատշաճ լուսաբանում այն դեպքում, երբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումը և եզրահանգումները վերաբերել են կոնկրետ ժամանակաշրջանի՝ 2021թ. հուլիսի 1-ից մինչև դեկտեմբերի 2 ու այս պրակտիկան շարունակվում է:

Երկրորդ, Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարության առիթ դարձավ նաև fir.am-ի «Ընտրողական մոտեցում և շահերի բախում. ՄԻՊ գրությանը ՀՀԽ արձագանքի հետքերով»

<sup>5</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/2111>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

վերտառությամբ կարևոր հրապարակումը. այստեղ ուղիղ շեշտադրված է փաստը, որ Հանրային հեռարձակողի խորհրդի անդամներից մեկը՝ նախորդ գումարման ԱԺ կառավարող խմբակցության պատգամավոր Վահագն Թևոսյանը, Հանրային հեռուստաընկերության լրատվական և վերլուծական հաղորդումների տնօրենի ամուսինն է:

Ստացվում է՝ «վերադաս» և «ենթակա» պաշտոնյաներն ընտանիքի անդամներ են:

Ընդ որում, հենց Վ. Թևոսյանն էլ մասնակցել է Մարդու իրավունքների պաշտպանի բարձրացրած հարցի քննարկմանն ու պատասխանի կազմմանը, որ վերաբերում է Հանրային հեռուստաընկերությանը: Այսինքն՝ ամուսինը մասնակցել է իր կնոջ ղեկավարած միավորի (մարմնի) կողմից ՀՀ օրենսդրությունը խախտելու, կողմնակալ լինելու, մարդու իրավունքները խախտելու մասին հարցի քննարկմանը:

Ակնհայտ է, որ այստեղ գոյություն ունի շահերի բախում, և ակնհայտ առաջացնում է «Լուրեր» հաղորդման կողմնակալության հարց:

Ավելին, սա իրական գործոն է, որ կասկածի տակ է դնում Հանրային հեռարձակողի խորհրդի անկողմնակալությունն առհասարակ. սա լուրջ հարց է առաջացնում, թե շահերի ակնհայտ բախման այս պայմաններում ինչպես է ապահովվում ՀՀԽ-ի լիազորությունների պատշաճ կատարումը:

Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված պատասխանն էլ Հանրային հեռարձակողի խորհրդի կայքում տեղադրված է ողջ խորհրդի անունից, հետևաբար նշանակում է, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված պատասխանի կազմմանը մասնակցել և որոշումը կայացրել են խորհրդի բոլոր անդամները, այդ թվում՝ ԱԺ նախկին պատգամավոր Վ. Թևոսյանը:

Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի պատասխանից ակնհայտ է, որ նա չի տիրապետում իր ղեկավարած հեռուստաընկերության «Լուրեր» թողարկման աշխատանքային սկզբունքներին. սա այն դեպքում, երբ ինքը մասնագիտությամբ լրագրող է և ունի լրատվական բնույթի հաղորդումներում աշխատելու երկարամյա փորձ:

Ըստ այդմ, հանրությանը ներկայացնում ենք հիմնական նշանակության մի քանի հարցադրում (ընդամենն օրինակներ), որոնց պատասխաններն այդպես էլ չեն տրվել:

1. Ինչպե՞ս է ստացվել, որ պաշտոնական հաղորդագրությունների հրապարակման պահանջ ունեցող «Լուրեր»-ի թողարկումը բացահայտ միակողմանիորեն եթեր է հեռարձակել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարություններն ակնհայտ անհիմն հերքող պետական մյուս մարմինների հաղորդագրությունները, բայց ինքնին բուն խնդիրների վերաբերյալ Պաշտպանի հաղորդագրություններին Հ1-ը որևէ անդրադարձ չի կատարել:

2. Ինչպե՞ս է ստացվել, որ 5 ամիսների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կամ աշխատակազմի ներկայացուցչի հետ որևէ անգամ որևէ թեմայով հարցազրույցի հրավեր «Լուրեր»-ից չի նախաձեռնվել: Մարդու իրավունքներին վերաբերող հարցերում որևէ անգամ չի պարզվել, թե ինչ դիրքորոշում կամ գործունեության արդյունքներ ունի Մարդու իրավունքների պաշտպանը:

3. Ինչպե՞ս է ստացվել, որ, օրինակ, նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 2-ը Սյունիքի մարզում փաստահավաք աշխատանքներին, ադրբեջանական խախտումներին ոչ միայն անդրադարձ չկա որևէ թողարկման ընթացքում, այլ հակառակը՝ այդ օրերին եթեր են հեռարձակվել միակողմանի, սահմանային իրական վիճակն ու փաստերը խեղաթյուրող բազմաթիվ ռեպորտաժներ, որոնք հակադրվում են ՀՀ բնակչության իրավունքների պաշտպանությանը, օրինականացնում են ադրբեջանական հանցավոր արարքները:

Որևէ նյութում անդրադարձ չկա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումներին ստեղծված իրավիճակի վերաբերյալ:

4. Ինչպե՞ս է հիմնավորվում, որ հատկապես արգելափակված է ադրբեջանական զինված ուժերի կողմից ՀՀ սահմանային բնակիչների իրավունքների խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունների լուսաբանումը:

Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենի և Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահի՝ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված պատասխաններում առկա են նաև ձևակերպումներ, որոնք շատ ավելի են հարցեր առաջացնում, քան պարունակում են պատասխաններ:

Օրինակ՝ մի դեպքում Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենը նշում է. «Որևէ միտում չկա մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունները կամ գործունեությունը չլուսաբանելու, եթե այդպիսի լուսաբանման վերաբերյալ կա հանրային պահանջ և համագործակցության ցանկություն Ձեր կողմից», իսկ մեկ այլ հատվածում ավելացնում. «Իսկ կոնկրետ Ձեր գործունեությանը և Ձեզ անդրադարձ կատարվել է մի շարք դեպքերում, երբ այդպիսի լուսաբանումը կարծել ենք պահանջարկ ունի հանրային հեռարձակողի հեռուստալսարանի համար»:

Օբյեկտիվ դիտողի մոտ ակնհայտ հարց է առաջանում, թե ինչպե՞ս կամ ի՞նչ չափանիշով են Հ1-ում գնահատում, թե ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ո՞ր հայտարարությունը «պահանջարկ ունի հանրային հեռարձակողի հեռուստալսարանի համար» և որը չունի:

Ավելին, օրվա լուրերը կամ եթեր հեռարձակվող թեմաները որոշելու հարցում Հանրային հեռուստաընկերության համար, որը ՀՀ կառավարության հիմնադրած հանրային հեռարձակող է, «կարծել»-ը չի կարող օբյեկտիվ չափանիշ լինել:

Կամ հարց է առաջանում, թե ինչպե՞ս է որոշվում հանրային պահանջը կամ համագործակցության ցանկությունը. հատուկ ընդգծում ենք, որ նախորդող գրեթե 5 տարիների ընթացքում Հանրային հեռուստաընկերության նախաձեռնությամբ լուսաբանումն իրականացվել է բարեխղճորեն և բազմակողմանի, ուստի բացառիկ են եղել են դեպքերը, երբ Պաշտպանի աշխատակազմի համապատասխան բաժինը դիմել է այս կամ այն հարցը լուսաբանելու խնդրանքով:

Մեկ այլ դեպքում էլ և՛ Հանրային հեռուստաընկերության գործադիր տնօրենը, և՛ Հանրային հեռարձակողի խորհուրդը լրատվական թողարկումները համեմատության մեջ են դնում Հանրային հեռուստաընկերության այլ ձևաչափի հաղորդումների հետ՝ փորձելով հոգեբուժարաններում, քրեակատարողական հիմնարկներում, զինծառայողների բժշկական օգնության ու բնակարանային ապահովման, կանանց ու երեխաների իրավունքների, առողջապահական ու սոցիալական և այլ ոլորտներում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած խնդիրների չլուսաբանումը քողարկել հեռուստատեսային այլ ֆորմատների հաղորդումներում դրանց անուղղակի անդրադարձով. այսինքն՝ **կրկին Պաշտպանի հաստատության դիրքորոշումները շրջանցելով:**

Նախ, բոլորի համար պարզ է, որ մարդիկ երկրում տեղի ունեցող իրադարձությունների մասին առաջնային տեղեկություններ են ստանում գլխավորապես լուրերի միջոցով, այլ ոչ թե այլ ձևաչափերի հեռուստահաղորդումների: Դրանից բացի, հատուկ ընդգծում ենք, որ այդ ոլորտների հարցերի զգալի մասում Մարդու իրավունքների պաշտպանը տվյալների բացառիկ աղբյուր է, այլընտրանք ապահովող սահմանադրական հաստատություն՝ որպես շատ հարցերում առաջնային աղբյուր և դա պայմանավորված է հաստատությանը Սահմանադրությամբ ու միջազգայնորեն վերապահված երաշխիքներով (օրինակ՝ անարգել այցեր ցանկացած հաստատություն ցանկացած ժամի):

*Սրացվում է՝ այս եղանակով «դաս» է տրվում երկրում Մարդու իրավունքների պաշտպանության միակ ազգային սահմանադրական մարմնին առ այն, որ հաստատության նկատմամբ քաղաքական կամ Կառավարության վերաբերմունքը փոխվելու դեպքում փոխվելու է նաև Կառավարության կողմից հիմնադրված հեռուստաընկերության վերաբերմունքը՝ լուսաբանումները դադարեցնելով և օրենսդրությունը ոտնահարելու հաշվին: Հետագայում վերականգնվելու դեպքում անգամ միևնույնն է՝ սա թողնելու է իր անվերականգնելի հետքը*

*Թեմայի վերաբերյալ ամբողջական ինֆորմացիան ուղարկվել է միջազգային կազմակերպություններին երկրում խոսքի ազատության վիճակն ու այլակարծության խրախուսումը գնահատելիս հաշվի առնելու, հետագայում մարդու իրավունքների և օրենսդրության նման խախտումները կանխելու համար:*

## **2. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղությունները**

Գործող օրենսդրական կարգավորումների և Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես պետության իրավական և մարդու իրավունքների համակարգի առանցքային մարմնի գործառույթների հաշվառմամբ, 2021 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ընդգրկել է երկու հիմնարար ուղղություն՝ անհատական դեպքերով բողոքների ու դիմումների քննարկում և համակարգային խնդիրների լուծմանն ուղղված քայլեր: Վերջինն իր հերթին հետապնդում է նաև կանխարգելիչ նպատակ՝ բացառելու համար ապագայում իրավունքների խախտման դեպքերը:

Օրենքի համաձայն՝ կոնկրետ դեպքերի քննարկումներն իրականացվում է երկու հիմնարար ուղղությամբ՝ բողոքի և սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման ընթացակարգերով: Հատկանշական է, որ նման դեպքերի ուսումնասիրման ընթացքում արձանագրվում են նաև համակարգային խնդիրներ: Սա հնարավորություն է տալիս ձեռնարկել Մարդու իրավունքների պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման սահմանադրական գործառույթի իրականացման համատեքստում կանխարգելել հետագա հնարավոր խախտումները:

Անհատական դեպքերի քննարկման շրջանակում իրականացվում են Օրենքով նախատեսված գործողությունները: Օրինակ՝ պարզաբանումներ են պահանջվում իրավասու պետական մարմիններից և կազմակերպություններից, իրականացվում են այցեր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու կազմակերպություններ, խնդիրները վերլուծության են ենթարկվում ներպետական և միջազգային վերաբերելի կարգավորումների համատեքստում և այլն:

Իրականացված գործողությունները հետապնդում են Պաշտպանի սահմանադրական լիազորության՝ մարդու խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման իրականացում: Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են սույն հաղորդման 2-րդ բաժնում:

Ինչպես նշվեց՝ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մյուս հիմնարար ուղղությունը համակարգային խնդիրների վերհանումն ու դրանց լուծման համար անհրաժեշտ ուղիների նախանշումն է: Այս խնդիրների վերհանման աղբյուրը հաճախ հենց անհատական դեպքերի քննարկումն է:

Այս առումով հատկանշական է, որ խնդրի համակարգային լինելու համար պարտադիր պայման չէ դիմումների մեծ քանակը, դա կարող է արձանագրվել նույնիսկ մեկ դիմումի քննարկման շրջանակում: Օրինակ՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին արձանագրված որոշումը կարող է նախանշել նաև օրենսդրական խնդիր:

2021 թվականի ընթացքում համակարգային բնույթի աշխատանք էր իրականացվում նաև Ադրբեջանի կողմից 2020 թվականին Արցախի դեմ սանձազերծված պատերազմի հետևանքով Հայաստանի սահմանային բնակավայրերում մարդու իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Սա հաշվետու տարում Պաշտպանի գործունեության հիմնական ուղղություններից էր, որը նպատակ էր հետապնդում վեր հանել ադրբեջանական զինված ուժերի կողմից մարդու իրավունքների խախտումները, արձանագրել դրանք միջազգային իրավանորմերի համատեքստում և ներկայացնել դրանք մարդու իրավունքների և մարդասիրական հարցերի մանդատ ունեցող միջազգային կառույցներին: Իբրև խնդրի լուծում, Մարդու իրավունքների պաշտպանն առաջ քաշեց անվտանգության ապահովման կազմակերպված գոտի ստեղծելու գաղափարը, որը կկանխեր հետագա հումանիտար և մարդու իրավունքների խնդիրները և այդ բնակավայրերում կերաշխավորեր բնականոն կյանք մինչև սահմանազատման և սահմանագծման գործընթացի իրականացումը:

1.1 Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնական ուղղությունները նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման ոլորտում

Ինչպես նշվեց՝ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մասնավորապես, անհատական դեպքերի քննարկման արդյունքում արձանագրվում են խնդիրներ, որոնք պահանջում են նորմատիվ իրավական ակտերի կատարելագործում: Այդ մասով Պաշտպանի գործառույթները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական ուղղությունների՝

1. օրենքների և ենթօրենսդրական ակտերի նախագծերի մշակում.
2. օրենքների, Ազգային ժողովի որոշումների, Հանրապետության նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Կառավարության և վարչապետի որոշումների, ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով Սահմանադրական դատարան դիմումի հասցեագրում.
3. մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին գրավոր, իսկ առանձին դեպքերում՝ բանավոր կարծիքների տրամադրում.
4. Սահմանադրական դատարանում քննվող՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին հակասությանը վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ կարծիքների ներկայացում:

Այս հիմնական ուղղություններով աշխատանքն իրականացվում է Պաշտպանի՝ նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանն առնչվող սահմանադրական գործառույթի շրջանակում: Սա թույլ է տալիս ոչ միայն նպաստել ներպետական օրենսդրության զարգացմանը, այլ նաև անհատական դիմումներից, մշտադիտարկումներից և այլ աղբյուրներից վերհանված խնդիրների լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկել՝ կանխելով հետագա հնարավոր խախտումները:

1.1.1 Օրենքների և ենթօրենսդրական ակտերի նախագծերի մշակումը

Դեռևս 2017 թվականից գործադրվել է նոր պրակտիկա, որը ենթադրում է, որ մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ մշակվում են օրենսդրական նախագծեր, դրանք շրջանառվում են իրավասու պետական մարմինների, ինչպես նաև համապատասխան հասարակական կազմակերպությունների շրջանակներում և ներկայացվում կառավարության և խորհրդարանի քննարկմանը:

➤ Կալանավորված անձանց տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ արգելքի համակարգի բարեփոխում

- Պաշտպանը մշակել է օրենքների նախագծեր, որոնցով առաջարկվում է հետևյալը.
- կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների հետ արգելելը նախատեսել՝ որպես դատավարական հարկադրանքի միջոց,



- նշված դատավարական հարկադրանքի միջոցը մինչդատական վարույթում կիրառել միայն քննիչի պատճառաբանված միջնորդությամբ՝ դատախազի որոշմամբ կամ դատախազի սեփական նախաձեռնությամբ,

- դատական քննության փուլում կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը կիրառել դատարանի որոշմամբ,

- սահմանել կալանքի տակ գտնվելու ընթացքում մերձավոր ազգականի հետ մեղադրյալի տեսակցությունն արգելելու հստակ հիմքեր,

- դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառել միայն կալանավորված անձի այն մերձավոր ազգականի նկատմամբ, ում տվյալները հստակ նշված են որոշման մեջ,

- նախատեսել դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառելու վերաբերյալ որոշումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկելու հստակ պահանջ,

- նախատեսել քննիչի միջնորդությամբ կամ դատախազի նախաձեռնությամբ հարկադրանքի նշված միջոցի ժամկետի երկարացման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը վերանայելու և այդ մասին պատճառաբանված որոշում կայացնելու պահանջ,

- դատավարական հարկադրանքի միջոցի հետագա կիրառման անհրաժեշտության վերացման դեպքում նախատեսել դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից այն վերացնելու պարտականություն,

- նախատեսել դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին որոշումներ բովանդակելու պահանջ:

➤ Փաստաբանի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու քրեականացում

Սույն նախագծով առաջարկվում է ընդլայնել փաստաբանի գործունեությանը խոչընդոտելու համար քրեական պատասխանատվության շրջանակները՝ պաշտոնատար անձից բացի որպես հանցակազմի սուբյեկտ ամրագրելով նաև ցանկացած այլ անձի, ով կխոչընդոտի փաստաբանի օրինական գործունեությանը:

Նախագծով առաջարկվում է նաև առանձին դրույթով պատասխանատվություն նախատեսել փաստաբանի գործունեությունը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելու միջոցով:

➤ Սահմանադրական դատարանի որոշումների կատարում օրենսդրական փոփոխությունների միջոցով

Դեռևս 2018 թվականին Պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերն իրականացրել են ՀՀ սահմանադրական դատարանի 2015-2016 թվականների որոշումների կատարման վիճակի համատեղ ուսումնասիրություն:

Այդ ուսումնասիրության արդյունքում մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ՝ ուղղված Սահմանադրական դատարանի որոշումներում բարձրացված օրենսդրական բացերի ու թերությունների վերացմանը: Նախագծերը սահմանված կարգով շրջանառվել, ամփոփվել և ուղարկվել են խորհրդարան:

Մինչ այժմ նախագծերը դեռ չեն ընդունվել:

➤ Հակամենաշնորհային կոմպլանսի ինստիտուտի ներդրումը որպես գործարարության պաշտպանության երաշխիք

Պաշտպանի աշխատակազմում մշակված օրենսդրական նախագծերի փաթեթով առաջարկվում է գործարարների շահերի պաշտպանության նպատակով ներդնել նոր ինստիտուտ՝ հակամենաշնորհային կոմպլանս:

Այն հակամենաշնորհային օրենսդրության պահանջներին համապատասխանության ներքին ապահովման համակարգ է, որը սահմանվում է տնտեսվարող սուբյեկտի ներքին ակտով: Հակամենաշնորհային կոմպլանսն ուղղված է հակամենաշնորհային օրենսդրության պահանջների պահպանմանը և խախտումների կանխարգելմանը:

Կոմպլանսի՝ որպես հակամենաշնորհային քաղաքականության գործիքի ներդրումը մեր իրավական համակարգում հնարավոր է, օրինակ՝ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի համապատասխան նոր լիազորության օրենսդրական ամրագրմամբ՝ սահմանելով հակամենաշնորհային պահանջների պահպանման արտաքին կանոններ, որոնք տնտեսվարողի համար իբրև հիմք կձառայեն արդեն ներքին միջոցառումներ սահմանելու համար՝ ուղղված հակամենաշնորհային քաղաքականության պահանջների պահպանման ընթացիկ վերահսկողությանը:

2021 թվականին օրենսդրական ամփոփված փաթեթն ուղարկվել է Ազգային ժողով և Կառավարություն՝ պաշտոնական ընթացք տալու համար:

➤ Մտավոր սեփականությանը պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավաբերների իրավունքների երաշխավորումը

Օրենսդրական ակտերի նախագծերի մեկ այլ փաթեթով Պաշտպանն առաջարկում է նախատեսել մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման գործընթացի վերաբերյալ գործերով դատարանը, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է եռօրյա ժամկետում: Հայցադիմումը վերադարձնելու դեպքում այն կրկին ստացվելուց հետո դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է ոչ ուշ, քան այն կրկին ստացվելու հաջորդ օրը:

Առաջարկվում է նաև սահմանել, որ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ որոշում է մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման բաց թողնումը մաքսային մարմինների կողմից ժամանակավորապես՝ մինչև գործով վերջնական դատական ակտի կայացումը, կասեցնելու հարցը: Պետք է նաև սահմանել, որ պատասխանողի շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ դատարանը որոշում է կայացնում կասեցված ապրանքների մաքսային արժեքի հինգ տոկոսի չափով ապահովված գումարը պետական գանձապետական հաշվից դատարանի դեպոզիտ փոխանցելու մասին:

➤ Գրքերի բոլոր տեսակների օտարումն ավելացված արժեքի զրոյական դրույքաչափով հարկելը

Պաշտպանի առաջարկած մեկ այլ օրենսդրական առաջարկությամբ նախատեսվում է գրքերի բոլոր տեսակների (այդ թվում՝ էլեկտրոնային) օտարումը հարկել ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով:

Մասնավորապես, առաջարկվում է ձեռագիր, տպագիր, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա զետեղված գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական կամ այլ բովանդակությամբ ստեղծագործության օտարումը հարկել ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափով:

2021 թվականին ամփոփված փաթեթն ուղարկվել է Ազգային ժողով և Կառավարություն՝ պաշտոնական ընթացք տալու համար:

*1.1.2 Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելը*

Մարդու իրավունքների պաշտպանի՝ օրենսդրության կատարելագործման սահմանադրական գործառույթի իրականացման կարևոր ուղղություններից է Սահմանադրական դատարան դիմումների ներկայացումը: 2021 թվականին ՀՀ սահմանադրական դատարան են հասցեագրվել 11 դիմումներ, որոնցով բարձրացվել են մի շարք դրույթների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Բարձր դատարան ներկայացված դիմումները վերաբերել են պետական սահմանին տեսալուսանկարահանումներ իրականացնելու և օրենքով սահմանված այլ արգելքների իրավաչափությանը, հաշմանդամություն ունեցող օդաչուների իրավունքների վերականգնմանը, ծանր վիրավորանքի քրեականացման իրավաչափությանը, բուհերի հոգաբարձուների խորհրդի ձևավորման համամասնությանը վերաբերող կարգավորումների իրավաչափությանը, Արդարադատության նախարարի կողմից մինչև 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ ստեղծելու իրավաչափությանը, պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան կալանավորելու համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու մեխանիզմների բացակայությանը, դատարան դիմելու համար պետական տուրքի դրույքաչափերի մինչև 10 անգամ բարձրացման վտանգներին, Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ձայները հավասար բաշխվելու

հետևանքով սահմանադրական դատարանի որոշում կամ եզրակացություն չկայացվելու դեպքում դիմումը մերժված համարելու իրավաչափությանը, ՀՀ ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքի սահմանափակումների իրավաչափությանը, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի՝ անհաղթահարելի ուժի հետևանքով դատական գործերի բաշխման ավտոմատացված եղանակից բացառություն նախատեսող կարգավորումների և ՀԴՄ կիրառման կանոնները խախտելու համար տուգանքներ նշանակելիս իրավախախտման հանգամանքները հաշվի չառնելու իրավաչափությանը:

Ստորև ներկայացվում են այդ դիմումների համառոտ նկարագրությունները, իսկ դրանք առավել մանրամասն ներկայացված են սույն հաղորդման համապատասխան բաժիններում: Այսպես.

➤ Պետական սահմանին տեսալուսանկարահանումներ իրականացնելու և օրենքով սահմանված այլ արգելքների իրավաչափությունը

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվում են սահմանափակումներ (տեսալուսանկարահանում իրականացնելու, անմիջապես սահմանագծին մոտենալու, սահմանապահ վերակարգերի հետ շփվելու և այլ արգելքները), որոնք չունեն բացառություն՝ անվերապահորեն վերաբերում են սահմանային շերտ մուտք գործած և սահմանային շերտում գտնվող յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ նաև Մարդու իրավունքների պաշտպանին: Նշվածը սահմանափակում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ իր մանդատի ամբողջ ծավալով աշխատանքների իրականացումը, քանզի սահմանային շերտում հատկապես տեսալուսանկարահանումներ իրականացնելու արգելքը լրջագույն խնդիրներ է առաջացրել փաստահավաք աշխատանքների համար:

Օրենքով նախատեսված սահմանափակումները հանգեցնում են անձնական ազատության, ազատ տեղաշարժվելու, կարծիքի արտահայտման ազատության, Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու և Պաշտպանի աջակցությունը ստանալու սահմանադրական իրավունքներին պետության անհամաչափ միջամտության, ինչպես նաև իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքների ոտնահարման: Նշվածի հաշվառմամբ էլ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով պետական սահմանին տեսալուսանկարահանումներ իրականացնելու և օրենքով սահմանված այլ արգելքների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

➤ Հաշմանդամություն ունեցող օդաչուների իրավունքների վերականգնման խնդիրը

Սահմանադրական դատարան դիմելու հիմք է հանդիսացել այն, որ Քաղաքացիական օրենսգրքի, Աշխատանքային օրենսգրքի, Կառավարության երկու որոշումների դրույթները, որոնք չեն սահմանում գործուն մեխանիզմներ հաշմանդամություն ունեցող օդաչուների իրավունքները պաշտպանելու համար: Օրենսդրությամբ բացակայում են իրավական կառուցակարգեր՝ ուղղված կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում աշխատավայրում դժբախտ

դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալուն: Արդյունքում՝ հաշմանդամություն ունեցող օդաչուների իրավունքները Կառավարության ու դատական շուրջ 15 տարիների քաշքուկների պատճառով խախտվել են:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ ՍԴՈ-1618 որոշմամբ ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելը աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը: Դիմումով վիճարկվող մյուս դրույթները ճանաչվել են Սահմանադրությանը համապատասխանող<sup>6</sup>:

➤ Ծանր վիրավորանքի քրեականացման իրավաչափությունը

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-323-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է նոր՝ 137.1-րդ հոդվածով, որով քրեականացվել է ծանր վիրավորանքը: Հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում անձին ծանր վիրավորանք հասցնելու՝ հայիոյելու կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելու համար:

Հանցակազմի ձևակերպումներն այնպիսին են, որ հանցագործության շեմը էապես նվազեցվել է, քանի որ այն չի պարունակում հանցագործության որևէ հատկանիշ կամ հիմք, որով նման արարքը պետք է դրսևորվի: Հոդվածը լի է անորոշ ձևակերպումներով, զուրկ է իրավական կոնկրետությունից: Չկան հայիոյանքի և այլ վիրավորանքի թվացյալ շեմը տարբերելու չափանիշներ ոչ միայն քաղաքացիների, այլ հենց դատախազության, քննիչների ու փաստաբանների կամ ցանկացած այլ մեկի համար:

Հանցակազմում տեղ գտած ձևակերպումների անորոշության և դրանով պայմանավորված՝ անձանց սահմանադրական այլ իրավունքների ոտնահարման ռիսկի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան:

➤ Բուհերի հոգաբարձուների խորհրդի ձևավորման համամասնությանը վերաբերող կարգավորումների իրավաչափությունը

2021 թվականի ընթացքում Կառավարության մի շարք որոշումներով սահմանվել է պետական բուհերի հոգաբարձուների խորհրդի ձևավորման նոր համամասնություն, ըստ որի՝

<sup>6</sup> Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1618.pdf> հղումով:

հոգաբարձուների խորհրդի անդամների 55%-ին հիմնադրի անունից առաջադրում է Վարչապետը, 10%-ին՝ լիազոր մարմինը, 10%-ը նշանակվում է պրոֆեսորադասախոսական կազմից և 25%-ը՝ ուսանողական համակազմի ներկայացուցիչներից: Այսինքն՝ Վարչապետի և լիազոր մարմնի կողմից նշանակված անդամները կազմելու են խորհրդի 65 տոկոսը, ինչը նվազեցնում է պրոֆեսորադասախոսական կազմի ու ուսանողության ներկայացուցիչների ներկայացվածությունը՝ այդպիսով ուղղակիորեն հակասելով կրթության իրավունքի առանցքային բաղադրիչի՝ բուհական ինքնավարության երաշխավորմանը:

Խնդրի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան: Արդյունքում՝ Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴԱՌ-195 որոշմամբ գործի վարույթը կարճվել է, քանի որ գործի քննության ընթացքում կատարված օրենսդրական փոփոխություններով դիմումով վիճարկվող դրույթները կորցրել են իրենց իրավական ուժը<sup>7</sup>:

➤ Արդարադատության նախարարի կողմից մինչև 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ ստեղծելու իրավաչափությունը

«Հիմնադրամաների մասին» ՀՀ օրենքով համաձայն՝ եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում 2-ամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի կեսից ավելին չի նշանակվում, ապա ՀՀ արդարադատության նախարարը 2-ամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Ընդ որում, այդ խորհրդին վերապահվել է հոգաբարձուների խորհրդին վերապահված ողջ լիազորությունները: Խնդրահարույց է այն, որ գոյություն չունեն ժամանակավոր խորհրդի ձևավորման չափանիշներ և խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներ:

Մարդու իրավունքների պաշտպանը հարցը բարձրացրել է սահմանադրաիրավական հարթությունում, քանի որ օրենքի վիճարկվող կարգավորումները, նախատեսելով ՀՀ արդարադատության նախարարի կողմից 3 անդամից կազմված ժամանակավոր խորհրդի ստեղծման իրավակարգավորումը և վերջինիս գործառույթների շրջանակը, հաշվի չեն առնում կրթության սահմանադրական իրավունքի կարևորագույն պարտադիր բաղադրիչը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը, և հանգեցնում են այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման:

Սահմանադրական դատարան ներկայացված մյուս դիմումների հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ հրապարակային զեկույցներ, որոնց բովանդակությունն առավել մանրամասն ներկայացված է սույն բաժնի 2.3 ենթաբաժնում:

<sup>7</sup> Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-195.pdf> հղումով:

*1.1.3 Մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ գրավոր կարծիքների տրամադրումը*

2021 թվականի ընթացքում Պաշտպանին կարծիքի է ներկայացվել Սահմանադրական օրենքների, օրենսգրքերի և նոր կարգավորման առարկա ունեցող կամ ամբողջովին փոփոխվող օրենքների և այլ իրավական ակտերի 185 նախագիծ, որոնցից 113-ով ներկայացվել են թվով 308 նկատառում և առաջարկ՝ հաշվի առնելով միջազգային չափանիշները, ինչպես նաև ներպետական իրավական ակտերի կարգավորումները և իրավակիրառ պրակտիկան:

*1.1.4 Սահմանադրական դատարանի հատուկ կարծիքներ ներկայացնելը՝ որպես միջազգային լավագույն փորձ*

Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարանին ուղղված՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին վերաբերող դիմումների վերաբերյալ հատուկ դիրքորոշում (amicus brief) է ներկայացնում՝ սկսած 2016 թվականից:

2021 թվականին Պաշտպանը Սահմանադրական դատարան է ներկայացրել 12 հատուկ դիրքորոշում, որոնք վերաբերել են՝

1. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ հաստիքների կրճատումների դեպքում աշխատողներին աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունք տալու համար անհրաժեշտ չափանիշների բացակայությանը,

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննության ենթակա մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործերը, ինչպես նաև ՀՀ տարածքում դատարանների թույլտվությամբ անցկացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին բոլոր միջնորդությունները Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի քրեական մասնագիտացման առանձին դատավորների կողմից քննելուն, այդ դատավորների նոր հաստիքների համալրման համար պարզեցված պայմաններ նախատեսելուն, Բարձրագույն դատական խորհրդին համապատասխան մասնագիտացման դատավորներ առանձնացնելու հայեցողական լիազորություն վերապահելուն,

3. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհրդին դիմելու՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հնարավորություն նախատեսելուն, վարչական, քաղաքացիական և քրեական մասնագիտացման դատավորներից առանձին տեսակի կամ բարդության գործեր քննող դատավորների առանձնացման հնարավորություն նախատեսելուն, քրեական վարույթում ոչ իրավաչափ վարքագծի արգելքի սկզբունքին ու մեղադրյալի դատավարական պարտականությունների չկատարման հիմքով խափանման միջոցի կիրառության հիմքերին,

4. հակակակոռուպցիոն դատարանի դատավորների վարձատրության չափին,

5. հանրային բուհերի կառավարման խորհրդի կազմի ձևավորման համամասնությանը,
6. Վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված կարգավորումներին, որոնք հնարավորություն չեն նախատեսում նույն գլխի կանոններով պատշաճ սահմանված դատավարական նորմերի կիրառմամբ քննության առարկա դարձնել նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի) իրավաչափության հարցը՝ դրա ընդունման համար հիմք հանդիսացած ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցած, սակայն ուժը կորցրած (գործողությունը դադարած) նորմատիվ իրավական ակտին (կամ դրա դրույթին) համապատասխանության տեսանկյունից,
7. «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 40-րդ հոդվածի կարգավորման պայմաններում բարձրագույն հրամանատարական կազմի զինվորական պաշտոնից ազատումը սուկ քաղաքական հայեցողությամբ՝ առանց պաշտոնից ազատման՝ այդ օրենքով սահմանված դեպքերի (հիմքերի) առկայության իրականացվելու հնարավորությանը,
8. կալանքի կիրառության շրջանակներում «հիմնավոր կասկածի» չափանիշին, «քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու» վտանգի գնահատմանը և ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում «պաշտոնատար անձ» եզրույթի հասկացությանը,
9. սնանկության գործը քննող դատարանին սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կամ պարտապանի նկատմամբ գրանցված որևէ պահանջի մասով (կատարմանն ուղղված գործողությունները ներառյալ) կասեցնելու լիազորություն չվերապահելուն այն պարագայում, երբ սնանկության գործի հետագա ընթացքն ամբողջությամբ կամ մասամբ անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը,
10. տուժողների իրավունքների պաշտպանությունն ամբողջությամբ չապահովելու խնդրին այն դեպքերում, երբ անհետաձգելի միջամտության որոշումն անհապաղ կայացնելու հետևանքով տուժում են ընտանիքում բռնության ենթարկված անձիք, կամ որ անհապաղության դեպքում ոստիկանության ներկայացուցիչները բացատրություն են վերցնում բռնություն գործադրած անձանցից և ոչ տուժողներից,
11. դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների՝ օբյեկտիվ ընտրական իրավունքի խախտումները և իրենց դիտորդների (ՁԼՄ ներկայացուցիչների) սուբյեկտի իրավունքի խախտումները վարչական և դատական կարգով բողոքարկելու հնարավորության բացակայությանը,
12. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածով սահմանված՝ վիրավորանքի և զրպարտության փոխհատուցման նոր՝ բարձրացված չափերի (վիրավորանքի դեպքում գործող խմբագրության նվազագույն աշխատավարձի 1000-ապատիկը դարձել է 3000-ապատիկ, իսկ զրպարտության դեպքում՝ 2000-ապատիկը՝ 6000-ապատիկ) համաչափությանը:

## 2.2 Պաշտպանի միջազգային կոնվենցիոն կարգավիճակները



Մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնատար անձ է, որ ունի բնույթով բացառիկ միջազգային կոնվենցիոն կարգավիճակներ, որոնք են՝

- «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի՝ 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունված կամընտիր արձանագրությամբ սահմանված կանխարգելման ազգային մեխանիզմ: Այս մանդատի շրջանակներում իրականացված գործունեություն առավել մանրամասն ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության մասին տարեկան զեկույցները.

- «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին: Հարկ է ընդգծել, որ սույն կարգավիճակի հիմքով իրականացված գործունեությունը ներկայացված է սույն հաղորդման «Պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում.

- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 13-ի ՄԱԿ-ի կոնվենցիայով նախատեսված մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին: Այս ոլորտում իրականացված աշխատանքներն ու արձանագրումները ներկայացված են սույն հաղորդման «Պաշտպանը որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» 2006 թվականի դեկտեմբերի 13-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում.

### 2.3 Արտահերթ հրապարակային զեկույցներ, ուղեցույցներ և այլ փաստաթղթեր

Պաշտպանի աշխատանքի հիմնարար ուղղություններից է առանձին թեմաներով արտահերթ զեկույցների, ուղեցույցների և այլ փաստաթղթերի հրապարակումը:

Զեկույցներում ներկայացվում են անհատական դիմումների և այցերի արդյունքում վեր հանված խնդիրներ, որոնք առավել խորությամբ ուսումնասիրվում և մանրամասն վերլուծության են ենթարկվում: Կատարված աշխատանքի հիման վրա իրավասու մարմիններին ներկայացվում են կոնկրետ առաջարկություններ, իսկ դրանց կատարման նկատմամբ իրականացվում է հետագա հետևողական մշտադիտարկում:

2021 թվականի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել 2020 թվականի պատերազմի հետևանքով մարդու իրավունքների պահպանության հիմնարար նշանակության հարցին: Ստեղծված իրավիճակը առաջացրեց խիստ անհրաժեշտություն իրականացնելու բարձր աստիճանի ինտենսիվության փաստահավաք աշխատանքներ, այդ թվում՝ ՀՀ սահմանային բնակավայրերում և հանդես գալ արտահերթ զեկույցներով և հրապարակումներով:

Արտահերթ հրապարակային զեկույցների առարկա են դարձել նաև Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացված որոշ դիմումներ: Այսպես.

2.3.1. Արտահերթ հրապարակային զեկույց. Պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան կալանավորելու համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու մեխանիզմների բացակայությունը և մարդու սահմանադրական իրավունքների խախտումները նենգափոխված երաշխիքների պայմաններում<sup>8</sup>

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանվում է, որ պատգամավորի թեկնածուի՝ լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ, սակայն դրա համար չկա որևէ ընթացակարգ, մարդու համար սահմանված չեն իրավունքներ ու այդ իրավունքներն ապահովելու մեխանիզմներ, իսկ նշված դրույթը կիրառվում է խիստ ձևական մոտեցումներով: Արդյունքում՝ ԿԸՀ-ի որոշումը կայացվում է՝ անձի իրավունքները չափապանելով, իսկ նախատեսված ընթացակարգը ստացվում է ձևական, ինչն առաջացնում է մարդու իրավունքների համար խորքային վտանգներ:

Այդ վտանգների հաշվառմամբ էլ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրության 27-րդ, 63-րդ, 67-րդ, 75-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով սահմանված չեն մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունն ստանալու պատշաճ կառուցակարգեր և ընթացակարգային նորմեր:

2.3.2. Արտահերթ հրապարակային զեկույց. Դատարան դիմելու համար պետական տուրքի դրույքաչափերի մինչև 10 անգամ բարձրացման վրանգները դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի համար<sup>9</sup>.

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով մինչև 10 անգամ բարձրացվել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափերը, որոնք ստեղծում են մարդու խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու խոչընդոտներ և հանգեցնում են դատարանի մատչելիության անհիմն սահմանափակումների:

Օրինակ՝ պետական տուրքի նվազագույն շեմը 1500 դրամից դարձել է 6000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար նախատեսված 4000 դրամ պետական տուրքը՝ 20.000 դրամ, ոչ դրամական պահանջի գործերով վերաքննիչ բողոքների համար

<sup>8</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/f4f5aa96b6eebf128550b446aa071016.pdf> հղումով:

<sup>9</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/c55de4c7bfa90d8d1a6bce23a21fe026.pdf> հղումով:

նախատեսված պետական տուրքը 10.000 դրամից՝ 30.000 դրամ, վճարել բողոքների դեպքում՝ 20.000 դրամից 40.000 դրամ, իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար նախատեսված 500.000 դրամ պետական տուրքը՝ 1.000.000 դրամ, իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար ներկայիս 2.000 դրամը՝ 20.000 դրամ և այլն: Վերացվել են նաև պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի համոզմամբ՝ սահմանված նոր դրույքաչափերը ստեղծում են մարդու խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրական խոչընդոտներ և հանգեցնում են դատարանի մատչելիության անհիմն սահմանափակումների: Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-րդ հոդվածների համապատասխանությունը Սահմանադրության 61-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին:

*2.3.3. Արտահերթ հրապարակային զեկույց. Սահմանադրական դատարանում քննարկվող հարցի վերաբերյալ ծայները հավասար բաշխվելու հետևանքով սահմանադրական դատարանի որոշում կամ եզրակացություն չկայացվելու դեպքում դիմումը մերժված համարելու բացասական ազդեցությունը մարդու սահմանադրական իրավունքների վրա<sup>10</sup>.*

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը դատարանին հնարավորություն է տալիս մերժված համարելու արդեն քննության ընդունված այն դիմումը, որի քննարկման վերաբերյալ ծայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունվում: Խնդիրը սահմանադրաիրավական հարթությունում բարձրացնելու համար ազդակ է դարձել Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2020 թվականի դեկտեմբերի 9-ին Սահմանադրական դատարան ներկայացված այն դիմումը, որով վիճարկվում էր ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Խնդիրն այն է, որ Սահմանադրական դատարանում արդեն քննության ընդունված գործով դիմումը տեխնիկական նկատառումներով մերժվելու դեպքում մարդը զրկվում է իր խախտված իրավունքների վերականգնման այդ հնարավորությունից, դիմումում նշված համակարգային խնդիրները մնում են չլուծված, իրավունքների խախտումները՝ չվերացած: Օրենքի վիճարկվող նորմը հանգեցնում է դատական պաշտպանության յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի անհամաչափ սահմանափակման, որի հաշվառմամբ էլ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան:

<sup>10</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/90f6009b34332fc3f1077e63a618c7cf.pdf> հղումով:

2.3.4. Արտահերթ հրապարակային զեկույց. Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումները և հանրային պաշտոնյաների անթույլատրելի արարքները լրագրողների նկատմամբ<sup>11</sup>.

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանված չեն առանձին իրավական կոնկրետ կարգավորումներ, որոնցով կամ որոնց հիման վրա կամրագրվեն Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում հավատարմագրված լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, իսկ լրագրողների գործունեության սահմանափակումները ԱԺ նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների լույսի ներքո սահմանելը իրավաչափության տեսանկյունից խնդրահարույց է:

Գոյություն չունեն իրավական կոնկրետ ու հստակ կարգավորումներ, որոնցով կամ որոնց հիման վրա կամրագրվեն Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները ԱԺ նստավայրի տարածքում և շենքում: Խնդրահարույց է ԱԺ-ում հավատարմագրված լրագրողների նկատմամբ բացասական հետևանքները, պատասխանատվության միջոցները չունեն իրավական հիմք, չեն ստացել օրենքի մակարդակով ամրագրում, ինչպես նաև կանխատեսելի չեն հենց իրենց լրագրողների համար: Լրագրողների համար չի իրականացվել պատշաճ իրազեկում իրենց իրավունքների, մասնագիտական գործունեության սահմանափակումների վերաբերյալ, այդ թվում՝ սահմանափակումների սահմանների, ինչպես նաև այդ սահմանափակումներին չհետևելու դեպքում բացասական հետևանքների վերաբերյալ:

Բացի այդ, զեկույցում Պաշտպանն անդրադարձել է նրան, որ անորոշ կարգավորումների ու օրենսդրական բացի պատճառով ստեղծվել է այնպիսի վիճակ, երբ տարբեր հանրային գործիչներ, այդ թվում՝ Կառավարության և Ազգային ժողովի բարձրաստիճան պաշտոնյաներ լրագրողների մասնագիտական աշխատանքի քննարկվող սահմանափակումները հիմնավորելիս բերում են հանցագործությունների դեմ պայքարի հիմնավորումներ:

Զեկույցում նաև մանրամասն վերլուծված է Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցների անթույլատրելի վարքագիծն ու արարքները լրագրողների նկատմամբ, այդ թվում՝ ապօրինի սպառնալիքների ներքո լրագրողներին ապօրինի պահանջներ ներկայացնելը (առանց հիմնավորումների լրագրողական նյութերը ջնջելու պահանջներ, հավատարմագրումից զրկելու սպառնալիքի դեպքեր և այլն):

Սահմանափակումներ նախատեսող դրույթներում իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումները հանգեցնում են Սահմանադրությամբ երաշխավորված՝ կարծիքի արտահայտման ազատության, տեղեկություններ ստանալու իրավունքի անհամաչափ սահմանափակմանը, ինչպես նաև չեն համապատասխանում միջազգային պրակտիկային և մեր երկրի ստանձնած միջազգային պարտավորություններին: Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը խնդիրը բարձրացրել է Սահմանադրաիրավական հարթությունում:

<sup>11</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/a40f8132dd39d17f27fd7c0ffd2f53d6.pdf> հղումով:

2.3.5. Արտահերթ հրապարակային զեկույց. Դատական գործերի «ծեռքով» մակագրումը և անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության՝ յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքի խորքային վտանգները<sup>12</sup>.

Արտահերթ հրապարակային զեկույցի առարկա դարձած Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկվում են անհաղթահարելի ուժի առկայության պարագայում դատական գործերի ավտոմատացված կարգով բաշխման փոխարեն «ծեռքով» մակագրումն ամրագրող դրույթները, քանի որ չկան դատական գործերի «ծեռքով մակագրման» չափանիշներ ու միասնական ամրագրված մոտեցումներ, դատական գործերի բաշխման ավտոմատացված համակարգի չգործարկման տևականությունը և իրավիճակի հանգուցալուծման ժամկետները անորոշ են, իսկ ծեռքով մակարման համար հիմք հանդիսացող «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակությունը բացահայտված չէ:

Նշվածի արդյունքում չեն ապահովվում դատական գործընթացի շրջանակներում հայեցողականության ու կամայականության բացառման երաշխավորման նկատմամբ հանրային ընկալումն ու բարձր վստահությունը, մարդու իրավունքների պաշտպանության և օրենքի գերակայության սկզբունքները, անկախ դատարանի երաշխիքը, ինչն էլ անխուսափելիորեն ոտնահարում է անձի արդար դատաքննության և սահմանադրական այլ իրավունքներ:

Արտահերթ զեկույցում բարձրացված է նաև այն խնդիրը, որ առկա են օրենսդրական անորոշ կանոններ ու այդ կանոնները գործնականում ստացել են այնպիսի մեկնաբանություն ու այդ մեկնաբանությամբ կիրառություն, որ հանգեցրել են լուրջ խնդիրների մարդու սահմանադրական իրավունքների հարցում: Կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների վրա հիմնած վերլուծությամբ հստակ ցույց են տրված մարդու սահմանադրական իրավունքների համար խորքային վտանգներ պարունակող իրավիճակներն ու մեկնաբանությունները՝ օրենսդրական ապահովագրող կարգավորումների բացակայության պայմաններում, քրեական հետապնդման մարմնի միջամտության վտանգավոր հետևանքները ՀՀ ողջ դատական համակարգի նկատմամբ ու այն էլ անորոշ ժամկետով, ինչպես նաև ցույց են տրված մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման գործնական իրավիճակներ:

2.3.6. Արտահերթ հրապարակային զեկույց. Հարկային օրենսգրքում իրավախախտումների համար տուգանքների ֆիքսված չափերի ամրագրումը և անհատականացման անհնարինությունը՝ որպես տնտեսական գործունեության ազատությանն անհամաչափ միջամտություն<sup>13</sup>.

Արտահերթ հրապարակային այս զեկույցով անդրադարձ է կատարվում Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով բարձրացված այն հարցին, որ Հարկային օրենսգրքով նախատեսված չէ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար

<sup>12</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/f163711f002aec2584d22d45d2d40d47.pdf> հղումով:

<sup>13</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/225666d3daf8571a8ec149089f088826.pdf> հղումով:

տուգանքների նշանակման ճկուն մեխանիզմ, այլ սահմանված են տուգանքների ֆիքսված չափեր՝ առանց հաշվի առնելու կոնկրետ իրավախախտման հանգամանքները: Տուգանքները նշանակվում են առանց ենթադրյալ իրավախախտման հանգամանքներին ու իրավիճակին անհատականացման. դրանք չեն նշանակվում՝ հիմք ընդունելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտի շրջանառության ծավալը:

Վերոնշյալ վիճակը չի ապահովում տնտեսական և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու երաշխավորման սահմանադրական պահանջը: Սա իր հերթին հանգեցնում է տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական, գործունեությամբ զբաղվելու սահմանադրական իրավունքի նկատմամբ անհամաչափ միջամտության հարկային մարմինների կողմից:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 7-8-ի նիստերում քննության էր առել Մարդու իրավունքների պաշտպանի՝ դեռևս 2020 թվականի դեկտեմբերի 9-ին ներկայացրած դիմումը: Հաշվի առնելով, որ նշված գործի վերաբերյալ ծայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չէր ընդունվել և դիմումը համարվել էր մերժված՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի հոկտեմբերի 11-ին կրկին դիմել է Սահմանադրական դատարան:

*2.3.7. Արտահերթ զեկույց ազատությունից զրկված անձի հիվանդասենյակում քրեակատարողական ծառայողի մշտական ներկայության անթույլատրելիության վերաբերյալ (կալանավորված անձի օրինակով)<sup>14</sup>*

Հարցն այն է, որ ներկայում ազատությունից զրկված բուժում ստացող կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձի հիվանդասենյակում մշտական հիմունքով ներկա է պահակետի քրեակատարողական մեկ ծառայող, ով հիվանդասենյակը կա՛մ առհասարակ չի լքում, կա՛մ յուրաքանչյուր դեպքում այն լքում է բուժում ստացողի խնդրանքով կամ պահանջով: Այս սխալ կանխավարկածի հիմքում էլ անորոշ, պրակտիկայում անձի իրավունքների տեսանկյունից իրավական լուծումներ են:

Իրականում, պետք է գործի հետևյալ կանխավարկածը. քրեակատարողական ծառայողի մշտական ներկայությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է բացառվի: Դա կարող է հնարավոր լինել միայն այն բացառիկ դեպքերում, երբ անվտանգության նկատառումով բժիշկը կամ բուժանձնակազմի այլ ներկայացուցիչն է խնդրում ապահովել քրեակատարողական ծառայողի ներկայություն:

Ուստի, կալանավորված անձի հիվանդասենյակում պահակետի ծառայողի մշտական ներկայությունը խնդրահարույց է նրան ցուցաբերվող խնամքի, նրա արժանապատվության, մասնավորության ու անգամ նրան խնամողների արժանապատվության ու մասնավորության տեսանկյունից: Այսինքն՝ այս իրավիճակում առաջ են գալիս իրավունքի խախտման հարցեր, որոնք

<sup>14</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/185bbc0afa0b2fb3147bd9dbcf5933a.pdf?fbclid=IwAR2GCMesI-no-03p4IGICRPfOltDnetcL4fGwXnKnTDI3tiMrkVW-m8w650>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

պետք է դիտարկվեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թե՛ 3-րդ, թե՛ 8-րդ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածների տեսանկյունից:

Հետևաբար, քաղաքացիական բժշկական հաստատությունում ազատությունից զրկված անձի հիվանդասենյակում քրեակատարողական ծառայողի ֆիզիկապես մշտական ներկայությունը խաթարում է նրա նկատմամբ պետության պոզիտիվ պարտավորությունների էությունը: Դա չի արտահայտում արդարացի հավասարակշռությունը հանրային ու մասնավոր շահերի միջև և հանգեցնում է մարդու իրավունքների նկատմամբ պետության անհամաչափ միջամտության:

Նման եզրահանգման համար հիմք են ծառայել հարցի առնչությամբ Պաշտպանին հասցեագրած բողոքների, կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկման, օրենսդրության ու միջազգային չափանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Մասնավորապես, Պաշտպանի անմիջական դիտարկման արդյունքում արձանագրած մի շարք դեպքերում պահակետի ծառայողն իր ծառայությունն իրականացրել է բժշկական հաստատության հիվանդասենյակի ներսում՝ անմիջականորեն դռան և սանհանգույցի մոտ, որտեղ նրա նստելու համար տեղադրված է եղել մեկ աթոռ: Ծառայողի աթոռը հիվանդասենյակի մյուս հատվածից առանձնացված է եղել շերտավարագույրով, որն ունեցել է նաև թափանցելիության որոշակի աստիճան, տեղադրված է եղել հատակին և չի հասել առաստաղին: Ջեկույցում այս հարցը քննարկվում է նաև անվտանգության ու, մասնավորապես, քրեակատարողական ծառայողի ներկայության տեսանկյունից, օրինակ, միջանցքում՝ հիվանդասենյակի անմիջական հարևանությամբ:

Պահակետի ծառայողների շուրջօրյա ներկայության պայմաններում ազատությունից զրկված անձինք հնարավորություն չեն ունենում առողջական խնդիրների վերաբերյալ անկաշկանդ գրուցել թե՛ բժշկական անձնակազմի, թե՛ իրեն խնամողների հետ. առողջական վիճակի մասին իրազեկվում են նաև երրորդ անձինք: Դրանից կաշկանդվում է նաև բժշկական անձնակազմը: Բացի այդ, հիվանդասենյակում քրեակատարողական ծառայողի մշտական ներկայությունը խնդրահարույց է նաև այն տեսանկյունից, որ ազատությունից զրկված անձի անձնական կյանքին վերաբերող բոլոր հարցերը, խնամքն իրականացնողի հետ խոսակցությունները հասու են դառնում պահակետի ծառայողին, ինչն ուղղակիորեն հանգեցնում է մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին ոչ իրավաչափ միջամտության:

Այս ամենը հաշվի առնելով՝ ազատությունից զրկված անձի դեպքում նրա առողջության պահպանման և բժշկական սպասարկման ու, առհասարակ, բուժօգնության հետ կապված հարցերն առաջնահերթ պետք է դիտարկել վատ վերաբերմունքի բացառման և առանձին իրավիճակներում՝ անձի մասնավորության (privacy) երաշխավորման տեսանկյունից, ինչպես նաև ընդունված է միջազգային իրավաբանության մեջ:

Բժշկական օգնության և սպասարկման մակարդակն ազատությունից զրկված անձի համար չի կարող պակաս լինել, քան բժշկական օգնության ու սպասարկման այն մակարդակը, ինչ առկա է երկրի ընդհանուր բնակչության, այսինքն՝ ազատությունից չզրկված անձանց համար:

Հենց այդ նպատակի համար էլ նշված փաստաթղթերը սահմանում են, որ հարկ եղած դեպքում, երբ քրեակատարողական համակարգը չի կարող բավարարել պահանջվող չափանիշները, բժշկական օգնությունն ու սպասարկումը պետք է տրամադրվեն քաղաքացիական, այդ թվում՝ հատուկ մասնագիտացում ունեցող քաղաքացիական բժշկական հաստատությունում՝ անհրաժեշտ բոլոր պայմանների պատշաճ ապահովմամբ: Այս կանոնները խտրականություն չեն ճանաչում:

Ամենից սկզբում անհրաժեշտ է արձանագրել, որ առհասարակ, ազատությունից զրկված անձի առողջության պահպանման իրավունքի երաշխավորման, պատշաճ բժշկական օգնության և սպասարկման միջազգային պահանջները ենթադրում են քրեակատարողական ծառայողի ֆիզիկական ներկայության հնարավորություն միայն այն բացառիկ դեպքերում, երբ այդ մասին նրան խնդրում է բժիշկը ու այն էլ՝ անվտանգության նկատառումից ելնելով:

Այս մոտեցումը բխում է այն հիմնարար սկզբունքից, որ ազատությունից զրկված անձի իրավունքների երաշխավորման աստիճանը բժշկական հաստատությունում չի կարող ավելի պակաս լինել, քան քրեակատարողական հիմնարկում. օրինակ՝ քրեակատարողական հիմնարկում անձի խցում նույն սկզբունքով մշտապես ֆիզիկապես առկա չէ քրեակատարողական ծառայող:

Ուստի, անհրաժեշտ է մինչև իրավական փոփոխությունները, փոխել պրակտիկան այս արտահերթ զեկույցում շարադրված խնդիրների հաշվառմամբ՝ ձևական մոտեցումներից զերծ, առավել իրավունքահեն շեշտադրմամբ բարելավվելու նպատակով:

### *2.3.8. Արտահերթ զեկույց զինծառայողներին և նրանց ընտանիքներին արտոնություններ տրամադրելու վերաբերյալ<sup>15</sup>*

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց զինծառայողներին և նրանց ընտանիքներին արտոնություններ տրամադրելու վերաբերյալ:

Առաջարկվող արտոնություններից են, օրինակ.

- աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը,
- չվճարվող արձակուրդի տրամադրման պարտադիր կարգը,
- ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության արտոնությունը,
- զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունքը և այլն:

<sup>15</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/images/files/540f59a9e7c06f9552485e26339aaf06.pdf?fbclid=IwAR2lwKa\\_W5cU5tqyxOFzh0BH0PJlaOKJkHfCGGnYjaViDGxO7IAbvRf1Y20](https://ombuds.am/images/files/540f59a9e7c06f9552485e26339aaf06.pdf?fbclid=IwAR2lwKa_W5cU5tqyxOFzh0BH0PJlaOKJkHfCGGnYjaViDGxO7IAbvRf1Y20), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



Չինված ուժերի և այլ զորքերի զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների համար Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշակած արտոնությունների ընդունումը կունենա սոցիալական կարևոր նշանակություն եւ կնպաստի զինվորական ծառայության հեղինակության աճին: Առաջարկվող արտոնությունները նաև կբարձրացնեն ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների կարգավիճակը:

Ներկայացվող առաջարկությունների իրական շահառուներ կարող են լինել տարբեր կատեգորիայի զինծառայողներ կամ նրանց ընտանիքների անդամներ, այդ թվում՝

ա) ժամկետային պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները,

բ) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներ,

գ) ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներ, նրանց և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ,

դ) ՀՀ կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած կամ մասնակցող անձինք կամ նրանց ընտանիքների անդամներ և այլն:

Սույն արտահերթ զեկույցն առավել կարևոր է դառնում հատկապես հետպատերազմական շրջանում, երբ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների երաշխավորումը, ամրապնդումն ու պաշտպանությունն առաջնահերթ հրամայականն է:

Պետք է ամեն կերպ արժևորել զինվորական ծառայությունը, իսկ առաջարկվող արտոնությունները կնպաստեն, որպեսզի բանակում ծառայությունը դառնա ավելի գրավիչ նաև հենց ծառայության մեջ գտնվողների և նրանց ընտանիքների համար:

Զեկույցը մշակվել է՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային փորձը:

### 2.3.9. Արտահերթ զեկույց Ադրբեջանի կողմից COVID-19-ի պայմաններում կատարված մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ<sup>16</sup>

COVID-19-ի պայմաններում ադրբեջանական զինված հարձակումների պատճառով այս մահաբեր վիրուսն ունեցավ սրընթաց աճ ոչ միայն Արցախում, այլ նաև Հայաստանում:

Եթե պատերազմին նախորդած 7 ամսվա տվյալներով արձանագրվել է 951 մարդու մահ, ապա պատերազմի ընթացքում այդ թիվը հասել է 658-ի, իսկ պատերազմից հետո միայն կես ամսվա ընթացքում մահացել է 584 մարդ:

<sup>16</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/326290df4f5627efee9967798fdcbcb2.pdf?fbclid=IwAR00gCSHfehoZWxejDsijTO5WQ4Kw0max4bNLc6s25E6WSvxNGZYWhakMYc>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Դրանով ադրբեջանական զինված ուժերը կատարել են ոչ միայն պատերազմական, այլ նաև մարդկության դեմ ուղղված հանցագործություններ:

Տեղի են ունեցել կյանքի, առողջության պահպանման, արժանապատվության և մյուս իրավունքի կոպիտ խախտումներ:

2020թ. մարտի 23-ին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշն աշխարհին կոչ արեց COVID-19 համավարակով պայմանավորված հաստատել հրադադար՝ «մեր կյանքերի իրական պայքարի» վրա կենտրոնանալու համար:

Ադրբեջանական զինված հարձակումները սկսվեցին պատերազմի, ուժի բացառման միջազգային կոչերի, այդ թվում՝ COVID-19-ի ընթացքում պատերազմական գործողություններն անհապաղ դադարեցնելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ուղիղ պահանջի կոպիտ խախտմամբ:

Ակնհայտ էր, որ COVID-19 համաշխարհային պանդեմիայի ժամանակ հարձակումն էականորեն նպաստելու էր մարդասիրական աղետի:

Որևէ երկրի առողջապահական համակարգ ի զորու չէ լայնածավալ պատերազմի պայմաններում դիմադրել այս մահաբեր վիրուսին:

ՀՀ և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների փաստահավաք աշխատանքները վկայում են հենց այս վիրուսի գլոբալ սահմանափակումներն օգտագործելով են Ադրբեջանի զինված ուժերը Արցախի և Հայաստանի բնակչությանը պատճառել զանգվածային մահեր և այլ տառապանքներ:

*2.3.10. Արտահերթ զեկույց՝ «Սպանված հայ զինվորների և շղթայված գերիների պուրակ Բաքվում. մարդկային տառապանքների թանգարան և ռասիզմի խթանում»<sup>17</sup>*

Այս զեկույցն այն մասին է, թե ինչ ազդեցություն է ունեցել 2021 թվականի ապրիլի 12-ին Բաքվում բացված Ռազմավարի պուրակը ադրբեջանական ընկալումներում:

Ստորև այդ ընկալումների մի քանի օրինակ՝

1. Վազգեններին շան պես կապել են, որ չփախչեն:

2. Շնորհակալություն այն մարդկանց, ովքեր աշխատել, պատրաստել են այս մոդելները: Ստորներին, անամոթներին, անբարոյականներին, դավաճաններին, խորամանկներին, դահիճներին բնորոշ բոլոր գծերը ամենայն ճշգրտությամբ պատկերել են:

3. Ռազմական ավարի պուրակը ռևանշիստների համար խրատ է, դաս, հերթական «Երկաթե բռունցքի» մասին նախազգուշացում է:

4. Հաջորդ կանգառը՝ Երևան, Ջանգեզուր, Գյոյչա (Սևան):

5. Ցանկանում եմ, որ այս ավարի ու մոդելների ցուցադրությունը երկարաժամկետ լինի, որովհետև ապագա սերունդը պետք է ճանաչի ազգի թշնամուն և ատելությամբ հիշի:

<sup>17</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/images/files/96e6d55d169a784b6424e4d565b29dba.pdf?fbclid=IwAR1UXKtVBenb4AD71W-6V4s\\_E3fUP\\_uKM2d3sYK6UzHTSuBsymsPoxKzD\\_g](https://ombuds.am/images/files/96e6d55d169a784b6424e4d565b29dba.pdf?fbclid=IwAR1UXKtVBenb4AD71W-6V4s_E3fUP_uKM2d3sYK6UzHTSuBsymsPoxKzD_g), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

6. Ընկերներ, ասեք տեսնեմ այս մոդելների վրա անամոթների աչքերը ինչ էլ մեծ են: Կեցցեն ստեղծողները: Կարծես անօդաչուի գալուց են վախենում: Երկրորդ մոդելի դեպքում մեր պարոն Նախագահի իրավացի խոսքն է. «Ի՞նչ եք առնետի պես թաքնվել այստեղ-այնտեղ» և այլն:

Այսինքն՝ այս զեկույցում տեղ են գտել կոնկրետ օգտատերերի, այդ թվում՝ հանրային գործիչների խոսքերը: Այն կոնկրետ ապացույցներով՝ տեսանյութերով ու լուսանկարներով ցույց է տալիս, որ պուրակը հայատյացության և թշնամանքի գեներացիայի հերթական աղբյուրն է, որ ունի պետական բացահայտ հովանավորչություն:

Զեկույցը ներկայացնում է նաև միջազգային մարմինների և լրատվամիջոցների հրապարակային դատապարտող հայտարարությունները պուրակի վերաբերյալ:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի այս զեկույցը ուղարկվել է միջազգային կառույցներին՝ հատուկ նշումով այն մասին, որ տասնամյակներ շարունակ ադրբեջանական իշխանությունների նման հայատյաց ու թշնամանքի քարոզի քաղաքականությունն է, որ հանգեցրել է պատերազմի ընթացքում խոշտանգումների, դաժանությունների, իսկ այժմ բացարձակ խաթարում են խաղաղությունն ու համերաշխությունը տարածաշրջանում:

2.3.11. Արտահերթ զեկույց ՀՀ Արարադի մարզի Երասխ համայնքի անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերի 2021թ. հուլիսի 14-21 կրակոցների և մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ<sup>18</sup>

Զեկույցում ցույց են տրված Երասխում Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքների արդյունքները, ապացույցներով են ներկայացված համայնքի բնակիչների իրավունքների վտանգներն ու խախտումների փաստերը:

Ցույց է տրված նաև դրանց կապը ՀՀ սահմանային մյուս հատվածներում՝ բնակավայրերի հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերի հրահրած կրակոցների հետ, նույնական տրամաբանությունը:

2.3.12. Արտահերթ զեկույց հայ գերիներին խոշտանգելու և անմարդկային վերաբերմունքի ենթարկելու համար Ադրբեջանի պաշտպանության վերաբերյալ<sup>19</sup>

Հայ գերիներին խոշտանգելու և անմարդկային վերաբերմունքի ենթարկելու կոնկրետ ապացույցներ, բարձր հավաստիությամբ փաստեր են ներկայացված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անգլերենով այս արտահերթ զեկույցում:

<sup>18</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/images/files/22a1728ac8baa655e3689687cf82c4b9.pdf?fbclid=IwAR3SKKQC34udpr5Z7H6anI6\\_halc0bYZE9aInGPjTwzAzx5ULMM5LhwHzH4](https://ombuds.am/images/files/22a1728ac8baa655e3689687cf82c4b9.pdf?fbclid=IwAR3SKKQC34udpr5Z7H6anI6_halc0bYZE9aInGPjTwzAzx5ULMM5LhwHzH4), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>19</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf?fbclid=IwAR2OAJjo6BxmRFaBSrtbXFqSyXeM3M-5vZRFgpgCRCo4urVPVE2NPL\\_VO4g](https://ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf?fbclid=IwAR2OAJjo6BxmRFaBSrtbXFqSyXeM3M-5vZRFgpgCRCo4urVPVE2NPL_VO4g), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Փաստաթուղթը վերաբերում է պատերազմական հանցագործությունների համար Ադրբեջանի պատասխանատվությանը:

Ձեկույցի հիմնական դրույթները հրապարակել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն ու իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանը՝ ցույց տալով հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի, խոշտանգումների և նվաստացումների փաստերը, այդ արարքների համար պատասխանատվության մեխանիզմները:

Արտահերթ զեկույցում ներկայացված են նաև 2020 թվականի հոկտեմբերի 20-ին Կովսականում տեղի ունեցած զանգվածային խախտումները (հայ զինվորներին մեքենայից կապել ու քաշել, սպանված մարդկանց ականջները կտրել և այլն):

Ձեկույցն ունի հետևությունները, այդ թվում՝ կապված Ադրբեջանի Սահմանապահ ծառայության հետ, հիմնավորող լուսանկարներ և տեսանյութեր, վերլուծություններ:

*2.3.13. Արտահերթ զեկույց անվտանգության ապառազմականացված գոտու հրատապ անհրաժեշտության վերաբերյալ՝ որպես բնակչության իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք Հայաստանում<sup>20</sup>*

Արտահերթ զեկույցը հիմնավորված կոնկրետ փաստերով ներկայացնում է ադրբեջանական զինվորական ուժերի հետ շփման տարածքներում անվտանգության ապառազմականացված գոտու հրատապ անհրաժեշտությունը Հայաստանի բնակչության իրավունքների պաշտպանության համար:

1 տարվա անդադար փաստահավաք աշխատանքների, բազմաթիվ սահմանային այցերի արդյունքները ներկայացվում են անգլերենով ԻՆՏԵՐՆԵՏԻՎ՝ GOOGLE EARTH-ի ՔՍՐՏԵՁԻ վրա՝

<https://earth.google.com/web/@39.6073893,46.24798605,2755.1571428a,245194.54737689d,30.000009y,0h,0t,0r/data=MicKJQojCiExcEJPVmlPZk1vUTVDMmRqdzR2X2NXcjVYNjNSSIJ0Mnk?fbclid=IwAR0fXNjTYSDasBVGpz1kPFiVPr6b8t673eEka56zm1bDefiLjz0kn-jfLuA>

Քարտեզի (Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի օրինակով) վրա ադրբեջանական տեղակայումներ են, որոնք ցուցադրված են պայմանական դեղին վրաններով: Առկա նշանների տակ կան նաև իրական լուսանկար-ապացույցներ:

*2.3.14. Արտահերթ զեկույց՝ «Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես Ջինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք»<sup>21</sup>*

<sup>20</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/4f4d3319548889e2900530457ae24bad.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>21</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/41fcac17c257cd9690351d60ffe67de6.pdf?fbclid=IwAR1mGEbIpZItouyVojYMvjUVz9jc6NsQW27EINA-nxNBdLUJ-v667lxzwbw>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Ձեկույցը հատուկ անդրադարձ է կատարել սերժանտական և սպայական կազմերին, կարգապահության ամրապնդման գործում նրանց դերի բարձրացմանը, հրամանատարական այդ օղակներում խնդիրներին և ուժումներին: Առանձին ուսումնասիրվել են նաև կարգապահության ամրապնդման գործում հրամանատարի բարոյահոգեբանական աշխատանքների գծով տեղակալի, զորամասի իրավաբանի ու հոգեբանի դերին և նշանակությանը:

Որպեսզի Ձինված ուժերում կարգապահությունը լինի կայուն և երաշխավորված, զինվորականների կողմից «լիազորությունների (ներառյալ՝ պարտականությունների) գրագետ կատարումը» պետք է ուղեկցվի «ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցմամբ», իսկ այստեղ պետք է բացառվի «ծառայակցի (ներառյալ՝ ենթակայի) նկատմամբ ոչ արժանապատիվ վերաբերմունքը»:

Ձեկույցում առաջարկվում է ամուր կարգապահության ապահովման բանաձև՝ Գ + Պ - Վ = Կ, որտեղ «Գ»-ն լիազորությունների գրագետ կատարումն է (գրագիտություն), «Պ»-ն՝ ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցումը (պատասխանատվություն), «Վ»-ն՝ ոչ արժանապատիվ վերաբերմունքը ծառայակցի նկատմամբ (վերաբերմունք), իսկ «Կ»-ն՝ զինվորական կարգապահությունը: Սա է պրոֆեսիոնալ միջոցների իրականացմամբ զինվորական կարգապահության ամրապնդման ողջամիտ բանաձևը: Նման մոտեցմամբ հնարավոր է ապահովել թե՛ զինվորական կարգապահությունը, թե՛ իրավունքի գերակայության վրա հիմնված մարդու իրավունքների պաշտպանությունը և խթանումը Դրական տեղաշարժերի հետ միասին Պաշտպանի ներկայացուցիչների կողմից զորամասեր այցերի, Պաշտպանին հասցեագրվող բողոքների և կատարված ուսումնասիրությունների արդյունքում վեր են հանվել նաև խնդիրներ:

Օրինակ՝ շարունակում է չլուծված մնալ զորամասերում իրավաբանների և հոգեբանների թափուր հաստիքների համալրման խնդիրը, որի արդիականությունը հատկապես պայմանավորված է այդ պաշտոնները զբաղեցնող անձանցից յուրաքանչյուրի կարևոր գործառույթներով:

Անքննելի է, որ կարգապահության ապահովման հարցում զորամասերի իրավաբաններին վերապահված է բացառիկ դեր, իսկ ամենօրյա ռեժիմով զինծառայողների հոգեբանական վիճակին խիստ մասնագիտական մոտեցում և հատուկ ուշադրություն դարձնելու տեսանկյունից անփոխարինելի է հոգեբանների աշխատանքը:

Հետևաբար, հաստիքների համալրման խնդիրը հրատապ լուծում պահանջող է:

Ձեկույցում առանձնացված են նաև զինծառայողների շրջանում իրավագիտակցության բարձրացման, պրոֆեսիոնալ և որակյալ կադրերի պատրաստման, առանձին պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքի սկզբունքների, ինչպես նաև նրանց համար կազմակերպվող դասընթացներին վերաբերող և մի շարք այլ հարցեր:

Ոլորտի խնդիրները գնահատվել են նաև 2020 թվականին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններից հետո հետպատերազմյան վիճակի հաշվառմամբ: Ձեկույցը ներկայացնում է ՀՀ զինված ուժերում կարգապահության որոշ խնդիրներ, տալիս է

գնահատականներ և լուծման կոնկրետ առաջարկներ՝ նպաստելու համար իրավունքի գերակայության վրա հիմնված զինվորական կարգապահության ամրապնդմանը:

Ձեկույցը պատրաստվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման Ձինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից:

Ուսումնասիրության համար հիմք են ընդունվել զորքերում կարգապահության խնդիրներին առնչվող գրավոր և բանավոր բողոքները, այդ թվում՝ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարներին ահազանգերը, զորամասեր և զինվորական այլ հաստատություններ Պաշտպանի ներկայացուցիչների արագ արձագանքման այցերը, սպաների և զինվորների հետ առանձնազրույցները, նրանց ընտանիքների հետ հանդիպումներն ու քննարկումները:

Ձեկույցի շրջանակներում Ձինված ուժերում կարգապահությունը ներկայացվում է մարդու իրավունքների տեսանկյունից՝ հատկապես ընդգծելով, որ ամուր կարգապահությունը Ձինված ուժերում մարդու իրավունքների ապահովման երաշխիք է:

Ձեկույցի վերտառությունն է՝ «Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք»:

Ձեկույցի ուղերձն է՝ «Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը մարտունակ բանակի հիմքն է»:

*2.3.15. Արտահերթ զեկույց Ադրբեջանում պահվող ռազմագերիների և քաղաքացիական անձանց նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ (հարցաքննությունների վերաբերյալ շեշտադրմամբ)<sup>22</sup>*

Արտահերթ զեկույց այն մասին, որ Ադրբեջանում հայկական կողմի գերիների հարցաքննությունների արդյունքները չեն կարող որևէ հիմք լինել նրանց քրեական հետապնդման ենթարկելու համար և չեն կարող ապացույց լինել միջազգային, այդ թվում՝ դատական աստիճաններում:

Ձեկույցը վերաբերում է Ադրբեջանում գերիների՝ թե՛ զինձառայողների, թե՛ քաղաքացիական անձանց նկատմամբ վերաբերմունքին:

Ձեկույցում հատուկ շեշտադրում է արվում Ադրբեջանում նրանց հարցաքննությունների վրա՝ եզրահանգելով, որ հայկական կողմի գերիների հայտնած տեղեկությունները չեն կարող որևէ հիմք ծառայել նրանց նկատմամբ քրեական հետապնդման համար, ինչպես նաև չեն կարող ունենալ որևէ ապացուցողական նշանակություն միջազգային կառույցներում:

<sup>22</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը <https://www.ombuds.am/images/files/1138b156720bec6ae0fd88dc709eb62c.pdf>, հետևյալ հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: հղումով՝ թվականի

Մասնավորապես, արտահերթ զեկույցը ներկայացնում է ադրբեջանական զինված ուժերի դաժանությունները, որոնք ուղեկցվել են հայկական կողմի գերիներին խոշտանգելով, գործողություններ անել հարկադրանքով, նվաստացնելով և այլն:

Այս փաստերը հիմնված են զեկույցում բերված ապացույցների ու վերլուծությունների վրա, ինչը ևս մեկ անգամ հաստատում է ադրբեջանական զինված ուժերի կողմից հայկական կողմի գերիների նկատմամբ միջազգային բացարձակ պահանջներով արգելված մեթոդների կիրառման մասին:

Զեկույցի գնահատականները հիմնված են նաև Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի սեփական փաստաթղթի աշխատանքների վրա:

Բացի դրանից, ուսումնասիրվել են ռազմագերիների և քաղաքացիական անձանց վերաբերմունքի և նրանց հարցաքննության հետ կապված միջազգային պահանջները և իրավական չափանիշները, օբյեկտիվ բնույթի ապացույցներ ու այլ նյութեր:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի գործունեության արդյունքներով 2022 թվականի հունվար – փետրվար ամիսներին ևս հրապարակվել են արտահերթ զեկույցներ, որոնք ներկայացվում են ստորև:

*2.3.16. Արտահերթ զեկույց՝ «Դատական գործերի «ձեռքով» մակագրումը և անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքի խորքային վտանգները»<sup>23</sup>*

Դատական համակարգում ու փաստաբանների մեր հարցումները, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքները, ազատագրվածների հետ առանձնագրույցները հաստատում են, որ վիճակը մտահոգիչ է՝ մարդու սահմանադրական իրավունքների համար վտանգավոր նախադեպերով:

Ըստ հավաստի ահազանգերի՝ Վարչական դատարանում, օրինակ, Դատարանի նախագահին ինքն է որոշում 5 դատավոր ունեցող դատական կազմերում ընդգրկվող դատավորներին՝ առանց չափանիշների, սեփական հայեցողությամբ: Խոսքը նաև դատական կազմերում հաճախ կրկնվող՝ նույն դատավորների ընդգրկելու խնդրի մասին է: Խոսքն այն էլ վերաբերում է բացառիկ զգայուն հարցերի, ինչպիսիք են, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված, թեկնածուներ գրանցելու կամ չգրանցելու հետ կապված որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերը կամ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը:

Երևանի ընդհանուր իրավասության դատարանում, ըստ մեզ ներկայացված ահազանգերի, ընդհանրապես մակագրություններ է անում նաև դատարանի աշխատակազմի ղեկավարը՝ բացի այն, որ չկան ամրագրված չափանիշներ հենց դատարանի նախագահի համար: Նշվող պատճառն

<sup>23</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/f163711f002aec2584d22d45d2d40d47.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

այն է, որ թե՛ ֆիզիկապես, թե՛ մասնագիտական առումով դատարանի նախագահը, այսինքն՝ մեկ մարդ, ի վիճակի չէ իրականացնել այդքան գործերի մակագրություն:

Նշվածից բացի, չի պահպանվում (հաճախ) ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության դատական գործերի բաշխման պահանջը: Մեկ այլ դեպքում չի պահպանվում դատական գործերի բաշխման պատահականության սկզբունքը:

Տևական ժամանակ է, ինչ որոշ դատավորներ այլևս չեն քննում որոշակի կատեգորիայի գործեր (օրինակ՝ գործեր, որոնք բարդ են, ունեն զգայունություն, ներկայացնում են հանրային հետաքրքրություն)՝ այդպիսիք այդ դատավորներին մտադրված չմակագրելու արդյունքում: Սա էլ վտանգավոր է ոչ միայն դատավորների միջև տարբերակումների կամ նրանց «դատական մեկուսացման», այլ հենց մարդու իրավունքների համար համակարգային վտանգների տեսանկյունից և այլն: Սա կարող է տանել նաև դատարանների նախագահներից դատավորների անթույլատրելի կախվածության:

Ավելին, ՍԴ դիմելուց առաջ բոլոր դատարանների նախագահներին հարցումներ են արել, բայց նրանցից որևէ մեկը ցույց չի տվել, որ կան չափանիշներ կամ չի ներկայացրել ապացույցներ, որ պահպանվում է այբբենական կարգը:

Ո՞վ կարող է այսքանից հետո երաշխավորել, որ համակարգչային ծրագրի փոխարեն դատավորների միջև գործերի բաշխում «ձեռքով» իրականացնելու ընթացքում դատարանների նախագահների կողմից կամ նրանց նկատմամբ արտաքին միջամտություններ չեն լինում:

Այս հարցով արդեն դիմել են Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Դատական օրենսգրքի և Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-16-Ն-6 որոշման դրույթներ ու այդ մասին տարածել հատուկ հայտարարություն:

Արտահերթ զեկույցում ևս բարձրացված է խնդիրն այն մասին, որ առկա են օրենսդրական անորոշ կանոններ ու այդ կանոնները գործնականում ստացել են այնպիսի մեկնաբանություն ու այդ մեկնաբանությամբ կիրառություն, որ հանգեցրել են լուրջ խնդիրների մարդու սահմանադրական իրավունքների հարցում:

Կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների վրա հիմնած վերլուծությամբ հստակ ցույց ենք տրված մարդու սահմանադրական իրավունքների համար խորքային վտանգներ պարունակող իրավիճակներն ու մեկնաբանությունները՝ օրենսդրական ապահովագրող կարգավորումների բացակայության պայմաններում, քրեական հետապնդման մարմնի միջամտության վտանգավոր հետևանքները ՀՀ ողջ դատական համակարգի նկատմամբ ու այն էլ անորոշ ժամկետով, ինչպես նաև ցույց են տրված մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման գործնական իրավիճակներ:



2.3.17. Արտահերթ զեկույց ադրբեջանական կեղծ խաղաղասիրության փաստերի՝ որպես մարդու իրավունքների երկարաժամկետ սպառնալիքների վերաբերյալ<sup>24</sup>

Հայաստանի ու Արցախի մարդու իրավունքների պաշտպաններով հրապարակում ենք անգլերենով արտահերթ զեկույց ադրբեջանական կեղծ խաղաղասիրության փաստերի վերաբերյալ՝ որպես մարդու իրավունքների երկարաժամկետ սպառնալիք:

Այս զեկույցն այն մասին է, որ հակամարտություններում մարդու իրավունքների պաշտպանության և իրական խաղաղության համար անհրաժեշտ է ազնիվ և վստահության վրա հիմնված երկխոսություն: Այդ երկխոսությունն առաջնահերթ անհրաժեշտ է հասարակությունների միջև՝ որպես խաղաղության երկարաժամկետ գրավական և կարևոր է, որպեսզի դրան պետությունները քաղաքական ուղղորդումներ կամ արհեստական միջամտություններ չանեն:

Իրական խաղաղասիրության ճանապարհը ենթադրում է, որ քաղաքական գործոնները չեն կարող ազդել մարդու իրավունքների պաշտպանության վրա:

Գլխավոր գործոնն էլ հենց այն է, որ պետության չճանաչված լինելը կամ որևէ տարածքի քաղաքական կարգավիճակը չի կարող խոչընդոտ լինել այդտեղ ապրող մարդկանց իրավունքների պաշտպանության համար:

Այս զեկույցը, ներկայացնելով Արցախին վերաբերող 1990-ական թվականներից սկսած տարբեր խաղաղաշինական նախաձեռնություններ, անդրադարձել է 2016-2017 թվականների Բաքու-Թբիլիսի պլատֆորմներին, որոնք ադրբեջանական կողմը նախաձեռնեց ադրբեջանական վայրագություններով ուղեկցվող ապրիլյան պատերազմից անմիջապես հետո: Այս նախաձեռնությունները հայտարարվել էին՝ որպես անկախ քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ, մինչդեռ դրանք կազմակերպվել և ուղղորդվում էին ադրբեջանական կառավարության ու մասնավորապես, հատուկ ծառայությունների կողմից:

Բացի այն, որ այդ պլատֆորմներն անտեսում էին ազգային ինքնորոշման բնական իրավունքը, դրանք ամբողջությամբ արտահայտում էին միայն ադրբեջանական պետական քաղաքական գիծը: Ավելին, այդ նախաձեռնությունները Հայաստանի կամ Արցախի քաղաքացիական հասարակությունների հետ կապ չունեին, իսկ նրանցում մի շարք հայերի ընդգրկել էր ադրբեջանական կողմը, որոնք էլ աչքի էին ընկնում իրենց հայատյաց ելույթներով: Այս ամենին զուգահեռ, ադրբեջանական կառավարությունը շարունակում էր հայատյացության հովանավորչության պետական քաղաքականությունը:

Այն, որ այդ նախաձեռնություններն իրական խաղաղություն կառուցելու նպատակներ չունեին, չէին ներառում իրապես անկախ ՀԿ-ներ կամ գործիչներ և ուղղորդվում էին ադրբեջանական իշխանությունների կողմից, հաստատվում է այդ նախաձեռնության նախկին մի շարք հայ գործիչների հրապարակային հարցազրույցներով այն մասին, որ իրենց անունից արվել է կեղծ հայտարարություններ, ադրբեջանաձայն հայտարարությունների համար ադրբեջանական կառավարությունը խոստացել է կաշառք (օրինակ՝ աշխատանք Գերմանիայում և այլն): Այս բոլոր

<sup>24</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/457b493b908a7a95948f84df7c5781e1.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

դեպքերն արտահայտված են Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների զեկույցում:

Ավելին, զեկույցում տեղ են գտել նաև ադրբեջանական պետական գործիչների ելույթներն ու հարցազրույցները, որոնք բացահայտում են նշված պլատֆորմներում ընդգրկված ՀԿ-ների ու գործիչների ուղղորդումն ու կախվածությունը ադրբեջանական իշխանություններից:

2016-2017թթ. Բաքու-Թբիլիսի պլատֆորմներն ամբողջությամբ անտեսում էին «Որևէ մեկը չպետք է հայտնվի լուսանցքում և որևէ իրավունք չպետք է անտեսվի» միջազգային հանրահայտ սկզբունքը:

Այդ նախաձեռնությունները, ըստ էության, սատարում էին ադրբեջանական տարիների պետական քաղաքականությունը, որը մշտապես ուղղված է եղել Արցախն արտաքին աշխարհից մեկուսացնելուն, մարդու իրավունքների միջազգային կառույցների, միջազգային փորձագետների ու լրատվամիջոցների մուտքը Արցախ ամեն գնելով խոչընդոտելուն:

### *2.3.18. Արտահերթ զեկույց դատարան դիմելու համար պետական տուրքի դրույքաչափերի մինչև 10 անգամ բարձրացման վրանգների վերաբերյալ<sup>25</sup>*

Դատարան դիմելու համար պետական տուրքի դրույքաչափերի մինչև 10 անգամ բարձրացման վրանգների վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ հրապարակային զեկույց:

Պաշտպանի համոզմամբ՝ սահմանված նոր դրույքաչափերը ստեղծում են մարդու խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրական խոչընդոտներ և հանգեցնում են դատարանի մատչելիության անհիմն սահմանափակումների:

Մասնավորապես, 2021 թվականի հոկտեմբերի 29-ին ուժի մեջ են մտել «Պետական տուրքի մասին» օրենքում կատարված այն լրացումներն ու փոփոխությունները, որոնցով զգալիորեն բարձրացվել են դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև գործում առկա լուսանկարների (լուսաժապավենների), ձայնագրությունների, տեսագրությունների և դրանց էլեկտրոնային կրիչների բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար նախատեսված պետական տուրքի դրույքաչափերը:

Օրինակ՝ պետական տուրքի նվազագույն շեմը 1500 դրամից դարձել է 6000 դրամ, ոչ դրամական պահանջներով հայցադիմումների համար նախատեսված 4000 դրամ պետական տուրքը՝ 20.000 դրամ, ոչ դրամական պահանջի գործերով վերաքննիչ բողոքների համար նախատեսված պետական տուրքը 10.000 դրամից՝ 30.000 դրամ, վճռաբեկ բողոքների դեպքում՝ 20.000 դրամից 40.000 դրամ, իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար նախատեսված 500.000 դրամ պետական տուրքը՝ 1.000.000 դրամ, իրավաբանական

<sup>25</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/images/files/c55de4c7bfa90d8d1a6bce23a21fe026.pdf?fbclid=IwAR35VP92XiGA\\_XWKOPO\\_EUn-icw\\_a9frjvI0SRR7nFHISgUwoTeJwLDLano](https://ombuds.am/images/files/c55de4c7bfa90d8d1a6bce23a21fe026.pdf?fbclid=IwAR35VP92XiGA_XWKOPO_EUn-icw_a9frjvI0SRR7nFHISgUwoTeJwLDLano), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար ներկայիս 2.000 դրամը՝ 20.000 դրամ և այլն: Վերացվել են նաև պետական տուրքի գծով առկա որոշ արտոնություններ:

Այս թեմայով դիմում եմ հասցեագրել նաև Սահմանադրական դատարան, որտեղ հատուկ անդրադարձել կա նաև պետական տուրքի դրույքաչափերը մի քանի անգամ բարձրացնելու հիմնավորումներին: Այդ հիմնավորումներն այնպես են գրված, որ ստացվում է դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերը հնարավոր է ծածկել միայն պետական տուրքերի գումարներն ավելացնելով ու դրանցից ստացվող միջոցների հաշվին:

Այդպես լինի՝ նշանակում է որքան շատ բարձրացնենք տուրքերի գումարները, այնքան արագ ու հեշտ կլուծվեն դատական համակարգի խնդիրները: Իրականում, այս խնդիրները լուծելու ճանապարհը ոչ թե պետական տուրքերի գումարներն ավելացնելն է, այլ տարի «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքներով ՀՀ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար ՀՀ դատական դեպարտամենտին գումարների հատկացումը, ինչն էլ յուրաքանչյուր տարի արվում է հենց այդ նպատակով:

Այսինքն՝ արդարադատության շահառուն ողջ հասարակությունն է, ուստի առնվազն ճիշտ չէ դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ ծախսերի վճարման ողջ բեռը միայն դատավարության մասնակիցների վրա դնելը: Այս ճանապարհը պարզապես հանգեցնելու է դատարանի մատչելիության սահմանադրական ու կոնվենցիոն իրավունքի սահմանափակման:

Դատարանների նյութատեխնիկական ապահովվածության բարելավման, դատավորների և նրանց կցված ծառայողների թվաքանակի ավելացման, նրանց սոցիալական երաշխիքների, այդ թվում՝ վարձատրության բարելավման և դատական համակարգ նոր կադրերի ներգրավման խթանման խնդիրները չպետք է հիմք դառնան մարդու ու այն էլ սահմանադրական իրավունքները սահմանափակող կառուցակարգեր ստեղծելու համար. իրավունքներ, որոնց պաշտպանությունը երաշխավորելը և դրանց ոտնահարումը նախականիսելը պետք է լինի հենց պետության առաջնային գերակայություններից մեկը:

Ընդունելի չէ նաև որպես պետական տուրքի դրույքաչափերը բարձրացնելու հիմնավորում նվազագույն աշխատավարձի փոփոխությունների վկայակոչումը, որ 2003 թվականի դրությամբ այն կազմել է 13.000 ՀՀ դրամ, իսկ 2020 թվականին՝ 68.000 ՀՀ դրամ՝ աճելով 5.2 անգամ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2003 թվականից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում նվազագույն աշխատավարձի աճին զուգահեռ աճել են նաև սպառողական ապրանքների, ծառայությունների և այլնի գները, ինչը նշանակում է, որ միայն նվազագույն կամ միջին ամսական աշխատավարձի ցուցանիշները և նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը բավարար չեն պետական տուրքի դրույքաչափերի բարձրացումը հիմնավորելու համար:

Նման խնդիրներն անհրաժեշտ է լուծել այնպիսի մեխանիզմներով, որոնք չեն սահմանափակի անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները և առավել ևս չեն հանգեցնի դրանց անհամաչափ սահմանափակման:

Պետական համակարգում առկա խնդիրները տուրքերի չափերի ավելացումով ու մարդու իրավունքների սահմանափակման միջոցով լուծելը բացարձակ անընդունելի մոտեցում է:

*2.3.19. Արտահերթ զեկույց Սահմանադրական դատարանում ձայները հավասար բաշխվելու դեպքում որոշում կամ եզրակացություն չկայացվելու և դիմումը մերժված համարելու բացասական ազդեցության վերաբերյալ<sup>26</sup>*

Հարցն այն է, որ Սահմանադրական դատարանը կարող է մերժել քննության ընդունված դիմումը, երբ ՍԴ-ում ձայները հավասար են բաշխվում ու ՍԴ-ն որոշում կամ եզրակացություն այդ դեպքում չի կայացնում:

Խոսքը վերաբերում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասին, որը դատարանին հնարավորություն է տալիս մերժված համարելու արդեն քննության ընդունված այն դիմումը, որի քննարկման վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում կամ եզրակացություն չի ընդունվում:

Այս հարցով Պաշտպանը դիմել է նաև Սահմանադրական դատարան, որի համար ազդակ է դարձել 09.12.2020թ. ՍԴ ներկայացված իմ այն դիմումը, որով վիճարկել եմ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի սահմանադրականությունը:

Մասնավորապես, խոսքն այդ դիմումի քննարկման այնպիսի արդյունքի մասին է, որով դիմումը ՍԴ-ն մերժված է համարել քննարկվող հարցը ձայների հավասարության պատճառով:

Նշված դիմումով վիճարկում էի այն, որ Հարկային օրենսգրքով նախատեսված չէ տուգանքների նշանակման ճկուն մեխանիզմ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար: Սահմանված են միայն տուգանքների ֆիքսված չափեր՝ առանց հաշվի առնելու կոնկրետ իրավախախտման հանգամանքները:

ՍԴ-ն Պաշտպանի այդ դիմումի կապակցությամբ այդպես էլ ըստ էության որևէ որոշում չի կայացրել:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորումը վիճարկվել է՝ ելնելով հետևյալ հիմնական մոտեցումներից.

- Սահմանադրական դատարանին դիմում ներկայացնելն ու դատարանի կողմից որոշում կայացնելը մարդու իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոց է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի իմաստով.

<sup>26</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/90f6009b34332fc3f1077e63a618c7cf.pdf?fbclid=IwAR3TzNUxr68Pr-8JQkr8xROPbgT4S007xyAfg3IZAdyb-VO1r6pNzolQc4>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

- Սահմանադրական դատարանը կոնկրետ գործերով իրականացնում է կոնկրետ անձանց իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման գործառույթ, քանի որ վիճարկվող նորմը կամ դրա մեկնաբանությունը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչող ՍԴ որոշման հիման վրա անձի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով ենթակա է վերանայման:

Մինչդեռ, Սահմանադրական դատարանում արդեն քննության ընդունված գործով դիմումը տեխնիկական նկատառումներով մերժվելու դեպքում, փաստորեն, մարդը զրկվում է իր խախտված իրավունքների վերականգնման այդ հնարավորությունից:

- Սահմանադրական դատարանը սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց լինելուց բացի նաև իրականացնում է կանխարգելիչ գործառույթ:

Սահմանադրական դատարանի որոշումներում ամրագրված ուղենիշային դիրքորոշումները կանխարգելիչ նշանակություն ունեն իրավունքների հետագա խախտումները բացառելու և Սահմանադրության ու մարդու իրավունքների սահմանադրական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սահմանադրական դատարան դիմելը նպատակ ունի ներկայացնելու անհատական դիմում բողոքների արդյունքներով արձանագրված համակարգային խնդիրները, պայքարել խնդիրների արմատների դեմ, ինչպես նաև նպաստել դրանց լուծմանը և հետագայում նմանատիպ խնդիրների և խախտումների բացառմանը:

«Վարդու իրավունքների պաշտպանի դիմումների հիման վրա Սահմանադրական դատարանի պարտադիր կատարման ենթակա որոշումներով, փաստորեն, արձանագրվում են Պաշտպանի դիմումներով բարձրացված համակարգային խնդիրները, վիճարկվող նորմերը ճանաչվում են Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ առնվազն տրվում են վիճարկվող նորմերի պաշտոնական մեկնաբանություններ:

Մինչդեռ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը կիրառելու արդյունքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումում նշված համակարգային խնդիրները մնում են չլուծված, իրավունքների խախտումները՝ չվերացած՝ դրանով իսկ առկախված թողնելով վիճարկվող նորմի իրավաչափության հարցն, առհասարակ:

Ստացվում է՝ ՍԴ-ն կարող է հրաժարվել իրավունքների պաշտպանությունից՝ մարդուն թողնելով իր խնդիրների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի դեպքում դա էլ իր հերթին անխուսափելի բացասական ազդեցություն է ունենում Պաշտպանի աջակցությունը ստանալու յուրաքանչյուրի սահմանադրական իրավունքի, Պաշտպանի սահմանադրական գործառույթների վրա, խաթարում է հանրային վստահությունը սահմանադրական այս հաստատության նկատմամբ:

Սահմանադրական դատարանում քննվող գործի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու կարևորությունն ու անհրաժեշտությունն ընդգծվում է հատկապես այն բանի հաշվառմամբ, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասում շարադրված

իրավական դիրքորոշումները իրավունքի աղբյուր են և իրենց բնույթով հանդիսանում են սահմանադրական դրույթների պաշտոնական մեկնաբանություն:

2.3.20. Արտահերթ զեկույց՝ «Հարկային օրենսգրքում իրավախախտումների համար տուգանքների ֆիքսված չափերի ամրագրումը և անհատականացման անհնարինությունը՝ որպես տնտեսական գործունեության ազատության անհամաչափ միջամտություն»<sup>27</sup>

Հարկային օրենսգրքով նախատեսված է տուգանքների ֆիքսված, այն էլ բարձր չափեր հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման կանոնները խախտելու համար:

Այս հարցով դիմել են նաև Սահմանադրական դատարան. վիճարկում են այն, որ տուգանքների ֆիքսված չափեր սահմանելով՝ հաշվի չի առնվում իրավախախտման հանգամանքները և չի տալիս անհատականացման հնարավորություն:

Խոսքը վերաբերում է Օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերին, որոնց համաձայն, օրինակ՝ տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝ 300. 000 դրամի չափով, իսկ հանրային սննդի օբյեկտում իրականացվող հանրային սննդի գործունեության մասով 1. 000. 000 դրամի չափով: Ստացվում է, որ օրենքով հարկային մարմնի համար նախապես կանխորոշված են տուգանքների չափերը, որոնցից որևէ բացառություն չի կարող արվել:

Մասնավորապես, տուգանքները նշանակվում են առանց ենթադրյալ իրավախախտման հանգամանքներին ու իրավիճակին անհատականացման. դրանք չեն նշանակվում հիմք ընդունելով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտի շրջանառության ծավալը:

Առաջին անգամ իրավախախտումը հայտնաբերելիս տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտի նկատմամբ կիրառվում է տուգանք՝ անկախ խախտումը կատարելու օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններից:

Խնդրահարույց է նաև տուգանքի չափերի բարձր լինելը, ինչը նորաբաց և/կամ փոքր կազմակերպությունների, ի տարբերություն տարիներ շարունակ գործող և մեծ կազմակերպությունների, դնում է տնտեսական դժվար կացության առաջ, իսկ որոշ տնտեսվարող սուբյեկտների համար այն հանգեցնում է ընդհուպ մինչև ձեռնարկատիրական գործունեության դադարեցման:

Այս վիճակը չի ապահովում տնտեսական և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու երաշխավորման սահմանադրական պահանջը: Սա իր հերթին հանգեցնում է տնտեսական, ներառյալ՝ ձեռնարկատիրական, գործունեությամբ զբաղվելու սահմանադրական իրավունքի նկատմամբ անհամաչափ միջամտության հարկային մարմինների կողմից:

<sup>27</sup> Տե՛ս արտահերթ զեկույցը <https://ombuds.am/images/files/225666d3daf8571a8ec149089f088826.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

2.3.21. Արտահերթ զեկույց «Հայաստանի Հանրապետության և թշնամանքի ադրբեջանական քաղաքականությունը որպես՝ մարդու իրավունքների էթնիկ հիմքով խախտումների պատճառ»<sup>28</sup>

Այս զեկույցի հիմքում օբյեկտիվ ապացույցներ են, կոնկրետ փաստեր, որոնք հավաքագրել ենք ամենօրյա անդադար աշխատանքով:

Զեկույցի հիմնական հետևություններն են՝

1) Պատերազմից հետո ադրբեջանական իշխանությունները շարունակում են ատելության ու թշնամանքի քարոզի պետական քաղաքականությունը:

2) Այն ունի 2 հենասյուն՝ էթնիկ ու կրոնական:

3) Դա ոչ միայն ու ոչ այնքան հռետորաբանություն է, որքան տարիներով կենսագործվող իրական քաղաքականություն (կրթություն, մշակույթ, սպորտ և այլն): Ուստի, ճիշտ չէ խոսել միայն հռետորաբանությունից:

4) Հենց այս քաղաքականությունն է պատերազմից առաջ, պատերազմի ընթացքում ու դրանից հետո Հայաստանում ու Արցախում ադրբեջանական զինված ուժերի կողմից մարդու իրավունքների խախտումների, այդ թվում՝ պատերազմական հանցանքների ու տարբեր դաժանությունների իրական աղբյուրը:

5) Ատելությունն ու թշնամանքի քարոզը ադրբեջանական իշխանությունների համար քաղաքական կյանքի աղբյուր է, ներքին խնդիրներից սեփական ժողովրդին շեղելու միջոց. այն չի նվազել ու չի նվազելու:

6) Կրոնական հիմքով ատելությունը ձեռք է բերում նոր խիստ վտանգավոր զարգացումներ՝ հայ ժողովրդին բացարձակ անհիմն մեղադրելով իսլամաֆոբիայի մեջ: Սա էլ իր հետ բերում է եկեղեցիներ ոչնչացնելու, դրանց հայկական պատկանելիությունը ջնջելու, հայ գերիների նկատմամբ խոշտանգումների նոր դրսևորումներ:

Զեկույցում պատմական փաստերով ցույց է տրված Հայ եկեղեցու, մեր ժողովրդի իրական հարգանքը իսլամի նկատմամբ:

7) Ադրբեջանական ատելության քաղաքականությունը թշնամանքի մեջ է պահում երկու ժողովուրդներին ողջ աշխարհում, և այն վտանգավոր է նաև այլ երկրների համար, որտեղ ապրում են հայեր ու ադրբեջանցիներ:

8) Խաղաղարարության ադրբեջանական կոչերը չունեն ազնիվ մղումներ, կեղծ են և շղարշ են արտաքին աշխարհի համար:

Խաղաղությունը մեզ համար բարձրագույն արժեք է, թշնամանքն ընդունելի չէ, բայց մի կողմի իրավունքների հաշվին իրական խաղաղություն չի լինում, խաղաղություն չի նշանակում ատելություն: Ուստի, չպետք է մոռանանք այս ամենի մասին. մեզ պետք են մեր իրավունքների պաշտպանության իրական երաշխիքներ:

<sup>28</sup>

Տե՛ս արտահերթ զեկույցը հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf?fbclid=IwAR3BPWvKOIreGmQ7r\\_eVZbgKR3-F1MiPOJbxiXni-Jlca\\_KGKVjA9H71M3g#page50](https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf?fbclid=IwAR3BPWvKOIreGmQ7r_eVZbgKR3-F1MiPOJbxiXni-Jlca_KGKVjA9H71M3g#page50), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

2.3.22. *Ուղեցույց անձնական օգտագործման ապրանքներ Հայաստանի Հանրապետություն արտոնություններով ներմուծելու կանոնների վերաբերյալ*<sup>29</sup>

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումների, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված դիմումների և բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ճանաչված անձինք, մեծամասամբ, ծանոթ չեն նշված արտոնություններից օգտվելու իրենց իրավունքներին և ընթացակարգին:

Ուղեցույցում ներառվել են այն հարցերի պատասխանները, որոնք դիմողներն առավել հաճախ են բարձրացնում իրենց դիմումներում ու բողոքներում:

Հարցերի պատասխանները կազմելիս հիմք են ընդունվել համապատասխան կարգավորումները:

2.3.23. *Ուղեցույց շինարարության թույլտվության տրամադրման վերաբերյալ*<sup>30</sup>

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ դեպքերում մարդիկ տեղեկացված չեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին, ինչի արդյունքում հաճախ տուժում են պետական մարմինների վարչարարությունից, կայացրած վարչական ակտերից, պետական մարմինների անհարկի քաջքշուկներից և այլն: Խնդիրն արդիական է հատկապես շինարարության թույլտվության տրամադրման ոլորտում:

Շինարարությունների թույլտվությունների տրամադրման գործընթացի ձգձգումները կամ մերժումները նաեւ խոչընդոտներ են ստեղծում երկրում ներդրումների ավելացման, գործարար միջավայրի զարգացման համար:

Ուղեցույցում ներառվել են այն հարցերի պատասխանները, որոնք դիմողներն առավել հաճախ են բարձրացնում իրենց դիմումներում ու բողոքներում:

Հարցերի պատասխանները կազմելիս հիմք են ընդունվել համապատասխան կարգավորումները:

2.3.24. *Ուղեցույց՝ «Եկեք սովորենք երեխայի իրավունքները. Ուղեցույց ուսուցիչների համար»*<sup>31</sup>

Ուսուցիչների համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) համագործակցության արդյունքում:

<sup>29</sup> Տե՛ս ուղեցույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/35f41cdc46cac94e2e3f429df8b749ab.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>30</sup> Տե՛ս ուղեցույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf?fbclid=IwAR2c7BVVI-NbaSnVqjuX4-HPOcyAQsNm4xiUZ4WLFUIbZqjQNvJC4fIElcU>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>31</sup> Տե՛ս ուղեցույցը հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/91775bc3f0e89967d04d1759c580b472.pdf?fbclid=IwAR3ImFi1pUmgTNC9kVL9rFOhYeubEuAJzM8uXhBNgljPOy-aj3iEBhorDY>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



Ուղեցույցը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարի հրամանով երաշխավորվել է որպես ուսումնական նյութ դպրոցներում օգտագործելու համար:

Երեխաներին անհրաժեշտ է իրազեկել իրենց իրավունքների և այդ իրավունքների իրականացման հնարավորությունների մասին. այդ դեպքում երեխաները կկարողանան պատշաճ իրացնել իրենց իրավունքները, պաշտպանել այլ երեխաների իրավունքները և թույլ չտալ դրանց խախտումը, ինչպես նաև լինել իրավավիճակից ու սեփական վարքագծի նկատմամբ պատասխանատու քաղաքացիներ:

Ուղեցույցում ներկայացված են երեխաների իրավունքներին առնչվող հաճախ հանդիպող իրավիճակներ և հարց ու պատասխանի, քննարկումների միջոցով հնարավորություն է ստեղծված սովորել երեխաների իրավունքները, ինչպես նաև գտնել երեխաների լավագույն շահերից բխող լուծումներ կոնկրետ իրավիճակների համար:

### *2.3.25. Ուղեցույց պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված մարդկանց համար<sup>32</sup>*

Մարդու իրավունքների պաշտպանը «Կոնրադ Ադենաուեր» հիմնադրամի աջակցությամբ հրապարակել է տեղեկատվական ուղեցույց պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից տեղահանված մարդկանց համար հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով:

Ուղեցույցում մանրամասն ներկայացված են պետության կողմից սոցիալական աջակցության ծրագրերը, միջոցառումներից օգտվելու նախապայմաններն ու դիմումների լրացման ձևն ու ժամկետները:

Ուղեցույցում ներկայացված է նաև Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունն ու դիմելու տարբերակները:

<sup>32</sup>

Տե՛ս

ուղեցույցը

հետևյալ

հղումով՝

[https://ombuds.am/images/files/c06fb1b47d16be14b5ba6cdcc1502642.pdf?fbclid=IwAR1hlz83ACdJbKF6W\\_y4TAQx7W0Im5rHwsKhdKkM67tS9gpnYSHkWO6ILEU](https://ombuds.am/images/files/c06fb1b47d16be14b5ba6cdcc1502642.pdf?fbclid=IwAR1hlz83ACdJbKF6W_y4TAQx7W0Im5rHwsKhdKkM67tS9gpnYSHkWO6ILEU), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

## ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Հանրային հաղորդակցության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատության իրականացրած աշխատանքները 2021 թվականին արժանացել են բարձր գնահատականի Հայկական PR ասոցիացիայի կողմից կազմակերպված Հայկական PR մրցանակաբաշխության ժամանակ: Մասնավորապես, «Տարվա պետական կառույց» անվանակարգում հաղթող է ճանաչվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, իսկ «Տարվա PR պատասխանատու» անվանակարգում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հանրային կապերի բաժնի պետը<sup>33</sup>:

Ուսումնասիրությունն իրականացվել է Հայկական PR ասոցիացիայի հետազոտական թիմի կողմից 2020 թվականի հունվարից 2021 թվականի ապրիլն ընկած ժամանակահատվածում: Ըստ հրապարակված չափանիշների՝ հետազոտության ընթացքում աշխատանքային գործիքներն ընտրվել են ըստ թիրախային լսարանի՝ իրականացվել են մանրակրկիտ հարցազրույցներ, հարցաթերթիկային փորձագիտական հարցումներ: Հարցման է ենթարկվել թվով 1925 ռեսպոնդենտ (հանրային կապերի մասնագետներ, քաղաքագետներ, արվեստագետներ, հոգեբաններ, ՋԼՄ ներկայացուցիչներ, փորձագետներ): Հետազոտությանը մասնակցել է 19 ֆոկլուս խումբ՝ տարիքային 2 խմբով (23-35 և 35-70 տարեկան 250 մարդ, որոնցից 42%-ը տղամարդ, 58%-ը՝ կին): Մեկ տարվա կտրվածքով մշտադիտարկման են ենթարկվել ՋԼՄ-ներում տեղ գտած հրապարակումներն ու տեսանյութերը, ինչպես նաև օգտագործվել է ավտոմատացված «Ռումորս» մոնիթորինգային համակարգը<sup>34</sup>:

Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակով պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանի հանրային կապերի զարգացման ռազմավարությունը 2021 թվականին ևս նախորդ տարվա նման ենթարկվել է հիմնարար փոփոխության: Իրազեկման տարատեսակ արշավներին ու հանրային միջոցառումներին փոխարինելու են եկել իրազեկման օնլայն նյութերը:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմից հետո սկսվել և 2021 թվականին շարունակվել է աշխատանքի նոր ուղղությամբ մշտադիտարկումը, որի ընթացքում բաժնում մասնագիտացված անձինք ուսումնասիրել են ադրբեջանական ու թուրքական մամուլի հրապարակումներում ատելության խոսքը էթնիկ հայերի նկատմամբ, որոնք տարածվել են հատկապես ադրբեջանական իշխանությունների կողմից: Հավաքագրված ինֆորմացիան թարգմանվել է բնօրինակ լեզուներից՝ հիմք ծառայելով զեկույցների կազմման համար: Նույն սկզբունքով հավաքագրվել է ադրբեջանական կողմում հայտնված հայկական կողմի գերիներին վերաբերող ադրբեջանական ու թուրքական աղբյուրներից տարածվող տեսանյութերն ու

<sup>33</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=dli1u2ukTq8&t=3s>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>34</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.armpr.org/post/arm-state-department-ombuds>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

լուսանկարները, և Պաշտպանի աշխատակազմի այլ բաժինների հետ համագործակցությամբ նույնականացվել են մարդկանց անձնական տվյալները նրանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ աշխատանքներում օգտագործելու, այդ թվում՝ միջազգային կառույցներին հավաստի տեղեկություններ փոխանցելու համար:

2021 թվականին Հանրային կապերի բաժինն առանձնակի ուշադրություն է դարձրել էթնիկ հայերի նկատմամբ թույլ տրված ադրբեջանական կողմի պատերազմական հանցագործությունները միջազգային լրատվամիջոցներում լուսաբանելու ուղղությանը: Մասնավորապես, կազմակերպվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցազրույցները բազմաթիվ լրատվամիջոցների հետ, այդ թվում՝ Le Monde<sup>35</sup>, Al Jazeera English<sup>36</sup>, Al Arabiya<sup>37</sup>, Rai1 TV<sup>38</sup>, Russia Today<sup>39</sup>, Loopsider<sup>40</sup>, Südwestrundfunk, Deutschlandfunk և Westdeutscher Rundfunk<sup>41</sup> լրատվամիջոցների հետ:

Բացի այդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը Ֆրանսիա, ԱՄՆ<sup>42</sup> և Իտալիա կատարած այցերի ժամանակ առանձին հանդիպումներ է ունեցել միջազգային լրատվամիջոցների հետ<sup>43</sup> ներկայացնելով Ադրբեջանում ապօրինի պահվող հայ գերիների վերադարձի հրատապությունը, ադրբեջանական խախտումներն ու ՀՀ սահմանների շուրջ ապառազմականացված գոտի ստեղծելու իր առաջարկը:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի հանրային կապերի բաժինը ապահովել է ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի, այնպես էլ աշխատակազմի ներկայացուցիչների աշխատանքի հրապարակայնությունը տարբեր ոլորտներում՝ կազմակերպելով քննարկումներ, ասուլիսներ, հարցազրույցներ և այլն: Այս տարի հատկապես մեծ տեղ է հատկացվել մարդային այցերի լուսաբանմանը: Այս հարցում կարևոր համագործակցություն է ձևավորված լրատվամիջոցների ու լրագրողների հետ, որոնց նկատմամբ հավասար վերաբերմունքի ու աշխատատեղի շնորհիվ ապահովում է հաստատության պատշաճ լուսաբանումը: Այս հարցում

<sup>35</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1595>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>36</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=tB97hPR1Ckk>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>37</sup> Տե՛ս հետևյալ հղումներով՝ [https://www.youtube.com/watch?v=93L2vIrvv\\_4](https://www.youtube.com/watch?v=93L2vIrvv_4), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: <https://www.youtube.com/watch?v=9GQLQ3T9YQY>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>38</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=jEi80tEysqY>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>39</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=zN7GWp6th1o&t=1s>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>40</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ [https://www.youtube.com/watch?v=hq2J\\_3uzztA](https://www.youtube.com/watch?v=hq2J_3uzztA), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>41</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1702>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>42</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.youtube.com/watch?v=dPKh1KT5J0Q>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>43</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1944>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կարևոր նշանակություն ունեն պարբերական դարձած հանդիպումները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ու լրագրողների միջև:

Մարդու իրավունքների պաշտպան- հանրություն կապի ամրապնդման նպատակով մշտապես կազմակերպվում են տարաբնույթ հանդիպումներ երեխաների, ուսանողների և այլ շահագրգիռ խմբերի հետ, որի ընթացքում ներկայացվում են Պաշտպանի իրավասությունը, աշխատանքի սկզբունքները տարբեր ոլորտներում:

2021 թվականի ևս շարունակվել է նախորդ տարիների պրակտիկան՝ լրագրողների հետ սեմինար-քննարկումների շարքը, որը հնարավորություն է տվել ավելի մանրամասն ներկայացնել Պաշտպանի աշխատանքի սկզբունքներն ու ուղղությունները, ինչպես նաև քննարկումներ ծավալել կոնկրետ ոլորտներում առկա խնդիրների վերաբերյալ: Օրինակ՝ այդպիսի հանդիպումներ կազմակերպվել են Եվրոպայի խորհրդի<sup>44</sup>, Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի<sup>45</sup>, Բուլղարիայի դեսպանատան<sup>46</sup> հետ համագործակցությամբ:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հանրային կապերի բաժինը շարունակել է 2017 թվականից իրականացվող՝ դրական ելքով գործերի վերաբերյալ հաջողված պատմությունների հրապարակումը ինչպես տեսանյութերով<sup>47</sup>, այնպես էլ տեքստային տարբերակով<sup>48</sup>: Վերջին տարիներին ակտիվորեն զարգանում է նաև պարզ ինֆոգրաֆիկաների ոճով Պաշտպանի զեկույցների հանրայնացման պրակտիկան, որոնք տարածվում են ինչպես զանգվածային լրատվության միջոցներով, այնպես էլ սոցիալական ցանցերով՝ Ֆեյսբուքով, Թվիթերով, Ինստագրամով, ՅուԹյուբով և Տելեգրամով:

2021 թվականին սոցիալական ցանցերի դիտարկումը ցույց է տվել, որ աստելության խոսքը չի նվազել և իրական կյանք տեղափոխվելու ռիսկեր է պարունակում: Դրա դեմ պայքարի նպատակով 2021 թվականի ընթացքում Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, աստելության հիմքով կատարվող հանցագործությունների և աստելություն սերմանող խոսքի զոհերի համար ոչ դատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է 3<sup>49</sup> տեսանյութ աստելության խոսքի, դրա բացասական ազդեցության, այլակարծության և խոսքի ազատության իրավունքի

<sup>44</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1965>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>45</sup> Տե՛ս հետևյալ հղումներով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1543>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1635>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>46</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/2035>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>47</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ [https://ombuds.am/am/site/NewsVideoGallery?place=media\\_success\\_video](https://ombuds.am/am/site/NewsVideoGallery?place=media_success_video), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>48</sup> Տե՛ս հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/am/site/news>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>49</sup> Տե՛ս հետևյալ հղումներով՝ <https://ombuds.am/am/site/VideoGalleryView/613>, <https://ombuds.am/am/site/VideoGalleryView/612>, <https://ombuds.am/am/site/ViewNews/2066>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

նկատմամբ հարգանքի անհրաժեշտության վերաբերյալ: Տեսանյութերի ուղերձն է, որ բոլորս պետք է ապրենք միասին՝ որպես համերաշխ ու ժողովրդավար հասարակություն՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունն ու իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև տեսանյութ՝ ներկայացնելով հանրությանը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերն ատելության խոսքի դեմ պայքարի գործում:

Հանրային ոլորտի աշխատանքներից հաջորդը վերաբերում է աշխատանքային ոլորտում մարդկանց իրավունքների վերաբերյալ իրազեկումներին: Մարդու իրավունքների պաշտպանը Բուլղարիայի Հանրապետության արտաքին գործերի նախարարության աջակցությամբ հրապարակել է իրազեկող տեսանյութեր աշխատանքային իրավունքների վերաբերյալ: 4 տեսանյութերը<sup>50</sup> պատրաստելու համար վեր են հանվել այն խնդիրները, որոնք տարիներ շարունակ հասցեագրվում են Մարդու իրավունքների պաշտպանին:

Ինչպես ատելության խոսքի դեմ պայքարի, այնպես էլ աշխատանքային իրավունքներին առնչվող տեսանյութերը լայն տարածվել են լրատվամիջոցներով:

---

<sup>50</sup> Տե՛ս հետևյալ հղումներով՝ <https://www.youtube.com/watch?v=YpPmcYneDUk&t=50s>,  
<https://www.youtube.com/watch?v=GoCcsKvsdOo>, <https://www.youtube.com/watch?v=Q3gyha6OwXE&t=8s>,  
<https://www.youtube.com/watch?v=1f-E0DtMp3A&t=1s>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

### **ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

#### **1. Համագործակցությունը հանրային մարմինների հետ**

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործառույթների իրականացման կարևոր բաղադրիչներից է համագործակցություն պետական մարմինների և պաշտոնատար անձանց հետ:

ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է, որ *պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են օրենքով սահմանված կարգով Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրել անհրաժեշտ փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև աջակցել նրա աշխատանքներին*: Նշված սահմանադրական երաշխիքը կարևոր նշանակություն ունի Մարդու իրավունքների պաշտպանի անկախության ու աշխատանքի արդյունավետության տեսանկյունից:

Չնայած այս և այլ օրենսդրական երաշխիքներին, Պաշտպանի գործունեության կարևոր սկզբունքներից է գործընկերային աշխատանքի և գործընկերների նկատմամբ հարգանքի սկզբունքը՝ հետապնդելով երկրում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման մակարդակի բարձրացման նպատակ: Այս սկզբունքի պահպանմամբ է, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի արդյունքում արձանագրված խնդիրների լուծման վերաբերյալ առաջ են բերվում իրատեսական առաջարկություններ: Ավելին, դրա հաշվառմամբ է, որ պատրաստականություն է ներկայացվում իրավասության սահմաններում համատեղ լուծելու մարդու իրավունքների ոլորտի մարտահրավերները:

Միևնույն ժամանակ արդյունավետ աշխատանքի երաշխիք է նաև վեր հանված խնդիրների լուծման նկատմամբ հետևողականությունը: Անհրաժեշտ է աշխատել այնպես, որ հանրային մարմիններն իրենք զգան Օմբուդսմանի մշտական հետևողականությունը և բարձր պրոֆեսիոնալ մոտեցումների կարևորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության համար կարևոր նշանակություն ունի համատեղ աշխատանքը Ազգային ժողովի հետ: Կրելով խորհրդարանական իրավապաշտպանի բարձր կոչումը՝ Մարդու իրավունքների պաշտպանն օժտված է մարդու իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու սահմանադրական գործառույթով:

2021 թվականին նույնպես երկու հաստատությունների միջև շարունակվել է համագործակցությունը:

Կարևոր է Պաշտպանի աշխատանքն ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի և մյուս մշտական հանձնաժողովների հետ: Հաշվետու տարում դրանք ծառայել են իբրև հարթակ քննարկելու մարդու իրավունքների առկա մարտահրավերները, այդ թվում՝ 2020 թվականի սեպտեմբեր – նոյեմբերի ամիսների պատերազմի հետևանքով առաջացած խնդիրներն ու մարդու իրավունքների ոտնահարումները ադրբեջանական զինված ուժերի կողմից: Նշված

համատեղ բոլոր աշխատանքները նաև կապված են եղել պատերազմի ընթացքում Ադրբեջանական զինված ուժերի կողմից իրավունքների կոպիտ խախտումները, պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցանքները համաշխարհային հանրությանը ներկայացնելու հետ:

Անհատական մակարդակում համագործակցությունն ԱԺ պատգամավորների հետ դրսևորվել է, բայց չի սահմանափակվել անհատական դեպքերի վերաբերյալ քննարկումներով և համատեղ լուծումներ գտնելով՝ ընդգրկելով մարդու իրավունքներին առնվող վերլուծությունների և վերհանված խնդիրների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը:

Համագործակցության արդյունավետության տեսանկյունից կարևոր է նաև Ազգային ժողովում Պաշտպանի ներկայացուցչի դերը: Նա մասնակցում է ԱԺ աշխատակազմի և փորձագետների մասնակցությամբ մարդու իրավունքներին առնչվող օրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ քննարկումներին, խորհրդարանական լսումներին և աշխատանքային հանդիպումներին: Դրանց ընթացքում ներկայացվում են Պաշտպանի՝ անհատական դիմումների քննարկման և մշտադիտարկման առանցքային գործառույթների իրականացման արդյունքում վեր հանված համակարգային խնդիրները, որոնք պահանջում են օրենսդրական լուծումներ: 2020 թվականի ընթացքում Ազգային ժողովի հետ համատեղ աշխատանքներ են տարվել ընտրական, զինվորական ծառայության, քրեակատարողական, խոսքի ազատության և այլ ոլորտների օրենսդրական ակտերի կատարելագործման ուղղությամբ:

Նույն սկզբունքով, առանցքային է նաև աշխատանքը դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի հետ: Ի տարբերություն Սահմանադրական դատարանի՝ մյուս դատարանների և Բարձրագույն դատական խորհրդի հետ համագործակցությունը հիմնականում վերաբերում է դատական պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը և քննարկումներին: Կարևոր է նաև փոխգործակցությունը Վճռաբեկ դատարանի՝ որպես օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման ապահովման, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումների վերացման լիազորությամբ օժտված մարմնի հետ:

Սահմանադրական դատարանի հետ համագործակցությունը դրսևորվում է Սահմանադրական դատարանի դիմումներ ներկայացնելով, ինչպես նաև մարդու իրավունքներին կամ ազատություններին վերաբերող գործերով Սահմանադրական դատարան օժանդակ դիրքորոշումներ (*amicus curiae*) ներկայացնելով: Դրանց հիմքում ընկած են լինում ինչպես Պաշտպանին ներկայացված անհատական դիմումների վերլուծությունները, այնպես էլ միջազգային կոնվենցիոն մեխանիզմների մանդատի շրջանակներում իրականացված մշտադիտարկման այցերի արդյունքները:

Սահմանադրական դատարանում նույնպես գործում է Պաշտպանի ներկայացուցչի ինստիտուտը: Վերջինս, մասնավորապես, պատասխանատու է ինչպես Պաշտպանին հասցեագրվող՝ Սահմանադրական դատարանի դիմելու խնդրանք պարունակող դիմումների, այնպես Պաշտպանի անմիջական դիտարկման արդյունքների վրա հիմնված սահմանադրաիրավական խնդիրների

ուսումնասիրման և համակարգման համար: Պաշտպանի ներկայացուցչի աշխատանքի մեկ այլ ուղղություն վերաբերում է Սահմանադրական դատարանում քննվող գործերի պարբերական մշտադիտարկմանը և ըստ Պաշտպանի գործունեության առաջնահերթությունների՝ դրանց վերաբերյալ հատուկ դիրքորոշումների ներկայացմանը: Սա ապահովում է Պաշտպանի՝ «դատարանի ընկեր» կարգավիճակում հատուկ կարծիք ներկայացնելու գործառույթի արդյունավետությունը և համակարգվածությունը:

Կարևոր է նաև Պաշտպանի համագործակցությունը Կառավարության հետ:

Տեղական ինքնակառավարման մարմինների հետ աշխատանքում նույնպես առկա են դրական արդյունքներ: Օրինակ՝ սեպտեմբեր – նոյեմբեր ամիսների և դրան հաջորդող ժամանակահատվածի ընթացքում օպերատիվ համագործակցություն է արձանագրվել հատկապես Սյունիքի և Գեղարքունիքի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Երևան քաղաքի դեպքում խոսքը վերաբերում է ինչպես Երևանի քաղաքապետին, այնպես էլ Երևան քաղաքի ավագանուն:

## **2. Համագործակցությունը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, լրագրողների և փաստաբանների հետ**

Որպես մարդու իրավունքների ազգային հաստատություն՝ Պաշտպանի կարևոր առաքելություններից է նաև ստեղծել հասարակական կազմակերպությունների և պետական մարմինների միջև քննարկումների հարթակներ համապատասխան ոլորտներում առկա խնդիրների վերհանման, դրանց քննարկման և լուծումների նախանշման համար: Հետևաբար՝ Պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություն է այդ կազմակերպությունների աշխատանքի խթանումը, պետական մարմիններում նրանց գործունեությունը և բարձրացված հարցերը տեսանելի դարձնելը:

Հասարակական կազմակերպությունների և Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համագործակցության շրջանակում է նաև առանձին ոլորտներում արձանագրված խնդիրների լուծմանն ուղղված համատեղ քայլերի ձեռնարկումը:

Որպես գործունեության հիմնական ուղղություն՝ շարունակվել են աշխատանքները հասարակական կազմակերպությունների հետ ինչպես կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների պաշտպանության, խոշտանգումների կանխարգելման, փախստականների և ապաստան հայցող անձանց, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ այլ ոլորտներում<sup>51</sup>:

Քաղաքացիական հասարակության հետ աշխատանքը կազմակերպվում է տարբեր եղանակներով, այդ թվում՝ Պաշտպանին առընթեր խորհրդատվական խորհուրդների միջոցով, որը ստեղծելու Պաշտպանի լիազորությունն ամրագրված է սահմանադրական օրենքում: Նման խորհուրդները ստեղծվում են առանձին ոլորտներում մարդու իրավունքների պաշտպանության

<sup>51</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման համանուն բաժիններում:



վիճակի բարելավման և առկա խնդիրների վերհանման ու քննարկման նպատակով: Հանդիպումների ընթացքում քննարկվում են ինչպես համակարգային խնդիրներ, այնպես էլ անհատական դեպքեր և դրանց լուծման ուղիներ:

Կազմակերպվում են նաև խորհուրդների ընդլայնված կազմով նիստեր, որոնց մասնակցում են նաև ոլորտի իրավասու պետական մարմինները: Նման միջոցառումները երկրում մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման գործում Պաշտպանի՝ որպես քաղաքացիական հասարակության և պետական մարմինների միջև կապող օղակի դերի կարևոր օրինակ են:

Պաշտպանի գործունեության ուղղությունների զարգացմանը զուգահեռ քննարկվում են նաև այլ ուղղություններով խորհուրդներ ստեղծելու հարցը:

Խորհուրդների ձևաչափերից բացի, ակտիվորեն գործադրվել են համատեղ աշխատանքի այլ մեխանիզմներ: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է քննարկումներին, վերապատրաստման դասընթացներին մասնակցությանը, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերին մասնակցությանը, Աշխատակազմի համակարգմամբ իրականացվող ծրագրերին նրանց ներգրավմանը և այլն:

Այս մասում պետք է առանձնացնել Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը լրատվամիջոցների և լրագրողների հետ:

Լրագրողներին Մարդու իրավունքների պաշտպանը համարում է ռազմավարական գործընկերներ և հետևաբար՝ նրանց հետ համատեղ աշխատանքն իրականացվում է հենց այդ հիմնարար սկզբունքից ելնելով: Հարցն այն է, որ լրագրողներն են, որ ապահովում են խոսքի, կարծիքի արտահայտման, տեղեկություններ ստանալու մարդկանց իրավունքների սպառիչ իրացումը: Լրագրողն է, որ իր բարդ աշխատանքով ապահովում է քաղաքացիական վերահսկողությունը պետության նկատմամբ, մեծ հաշվով հենց լրագրողի մասնագիտական գործունեության շնորհիվ է մարդը պատկերացում կազմում այն մասին, թե ինչով են զբաղված հանրային մարմինները երկրում:

Կարևոր է լրագրողների դերը երկրում առանձին հարցերի վերաբերյալ կարծրատիպեր կոտրելու և մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ դրական միջավայր ապահովելու հարցում:

Ցավոք, առկա են լրագրողների աշխատանքի սխալ ընկալումներ ոչ միայն հասարակությունում, այլ նաև պետական համակարգում: Ցանկացած պաշտոնատար անձ պետք է հստակ գիտակցի, որ պատկերացումն այն մասին, թե լրագրողը խոչընդոտում է իր աշխատանքը, ընդամենը կարծրատիպ է ու ոչ ճիշտ պատկերացման արդյունք է:

Մյուս կողմից, լրագրողի մասին ճիշտ պատկերացումներ ձևավորելու տեսանկյունից կարևոր է լրագրողների կողմից պատասխանատու լրագրության սկզբունքներին համապատասխան մասնագիտական գործունեություն ծավալելը՝ սկսած լրագրողական նյութի համար վերնագիր ընտրելուց մինչև այդ նյութի բազմակողմանիության ապահովումը: Դա լրագրողին դարձնում է

անխոցելի և հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել նրանց մասնագիտական աշխատանքի պաշտպանությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի կարևոր գործընկերներ են փաստաբանները: Այստեղ պետք է նախևառաջ առանձնացնել արդյունավետ աշխատանքը Փաստաբանների պալատի ու Փաստաբանական դպրոցի հետ: Պարբերաբար անցկացվող համատեղ քննարկումներն ու ծրագրային նախաձեռնությունները նպաստում են թե՛ փաստաբանի դերի բարձրացմանը երկրում, թե՛ մարդու իրավունքների վիճակի շարունակական բարելավմանը:

Փաստաբանի մասնագիտական աշխատանքը կարևոր է նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունավետության տեսանկյունից:

#### ԳԼՈՒԽ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2019 թվականի մարտին վերահաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակը:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակի քարտուղարությամբ գործող Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախմբի կողմից այս բարձր կարգավիճակի հաստատումը վկայում է Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի լիարժեք անկախության, վստահելիության ու արդյունավետ աշխատանքի մասին: Գնահատման համար ուսումնասիրությունը ներառել է նաև 2016-ից մինչև 2018 թվականների ժամանակահատվածը: ***Անկախ հանձնախումբը հավատարմորեն գեկույցում ընդգծել է, որ ողջունում է մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքը՝ նշելով, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը բարդ իրավիճակներում գործունեություն ծավալելիս զգալուն հարցերի վերաբերյալ հնչեցնում է հրապարակային գնահատականներ<sup>52</sup>:***

Մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության այս վերանայումը կատարվում է ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներով սահմանված մարդու իրավունքների ազգային ինստիտուտներին առաջադրվող անկախության պահանջներին համապատասխանության տեսանկյունից: Անկախ հանձնախմբի կողմից առաջարկված «A» կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանն իրավունք է վերապահում մասնակցել միջազգային կառույցների, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդի աշխատանքներին և որոշումների կայացմանը, հանդես գալ հատուկ ելույթներով, օգտվել միջազգային համապատասխան կառույցների ղեկավար մարմիններում ընտրվելու և այդ մարմինների ընտրություններին քվեարկության իրավունքից:

Հաշվետու տարում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից միջազգային համագործակցության ոլորտում իրականացվել են ծրագրեր, կազմակերպվել են Պաշտպանի հանդիպումներ, մշակվել և միջազգային գործընկեր կազմակերպություններին են ներկայացվել Պաշտպանի մի շարք արտահերթ գեկույցներ և ծրագրային նոր առաջարկներ, իրականացվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրման և այլ աշխատանքներ:

<sup>52</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների ազգային հաստատությունների համաշխարհային միավորման անկախ հանձնախումբի»

գեկույցը,

<https://nhri.ohchr.org/EN/AboutUs/GANHRIAccreditation/Documents/SCA%20Report%20March%202019%20-%20EN%20.pdf>:

## 1. Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության վերաբերյալ միջազգային գնահատականը

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության գործունեությունը բարձր գնահատականի է արժանացել միջազգային և ներպետական տարբեր հարթակներում: Դրանք հիմնականում հնչել են Պաշտպանի գործունեության անաչառության, բարձր մասնագիտական սկզբունքների պահպանման և անկախության բարձր մակարդակի հաշվառմամբ:

Այսպես, 2021 թվականի մարտին **Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI)** նախագահ Քերոլայն Ֆենելին ՀՀ Ազգային ժողովի նախագահին հղած բաց նամակում նշել է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի ֆինանսավորման երաշխիքը եվրոպայում լավագույն փորձ է և պետք է պահպանվի: Նամակում նշվել է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն ունի միջազգային «A» կարգավիճակ, որը վերջին անգամ ստացել է 2019 թվականի մարտ ամսին, քանի որ ամբողջությամբ համապատասխանում է ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներին:<sup>53</sup>

**Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի** (ք. Ժնև) գլխավոր քարտուղար Բարբարա Բերնաթը սույն թվականի մարտին նույնպես բաց նամակ է հղել ՀՀ Ազգային ժողովի նախագահին՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի անկախության վերաբերյալ՝ նշելով, որ սահմանադրական օրենքում Պաշտպանի գործունեության ֆինանսական անկախության երաշխիքը պետք է պահպանել: Մասնավորապես, նամակում նշվել է, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը լայնորեն ճանաչվել է միջազգային լավագույն փորձ, որը Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի կողմից առաջարկվում է այլ երկրների՝ կանխարգելման ազգային մեխանիզմներ հիմնադրելիս: Ավելին, նամակում ընդգծվել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի դերը որպես ուժեղ և վստահելի գործընկեր խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարում՝ շնորհիվ ֆինանսական և անկախության մյուս երաշխիքների:<sup>54</sup>

2020 թվականի Հայաստանի կառավարության կողմից «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասում առաջարկվող Պաշտպանի գործունեության ֆինանսավորման երաշխիքներին վերաբերող փոփոխության վերաբերյալ իրենց

<sup>53</sup> Մարդու իրավունքների ազգային հաստատությունների եվրոպական ցանցի (ENNHRI) նախագահի նամակը հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://ombuds.am/images/files/446ccd626f8534e036f7102b18d76735.pdf?fbclid=IwAR3w3f7594t8VZheFYHutwrwppqJ75r87216UwvShPwKZCyffwECKfnoaU> (անգլերեն),

[https://ombuds.am/images/files/6d52db3d872e529cf9cc2acf9bdc81ac.pdf?fbclid=IwAR3yiTwL7kOOj4XgySiOUUpqBk-35ayiEPFiIcIZYe8KICjDuE0\\_OqgE9y0](https://ombuds.am/images/files/6d52db3d872e529cf9cc2acf9bdc81ac.pdf?fbclid=IwAR3yiTwL7kOOj4XgySiOUUpqBk-35ayiEPFiIcIZYe8KICjDuE0_OqgE9y0) (հայերեն)

<sup>54</sup> Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի գլխավոր քարտուղարի նամակը հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://ombuds.am/images/files/d71e28018654d836d431adec738ddd6.pdf?fbclid=IwAR2ute1ePaC3-eaDG-XcyHBcuEjVj33oWIHWoiPgrlujcet5MQyNTauW44> (անգլերեն), [https://ombuds.am/images/files/b01de2a2f13b2a9140db41df1b71cbdf.pdf?fbclid=IwAR0feT\\_D2Bdg\\_jaZzGSnsqQHn248rOBvoz774L7JTA-bgOUvqQs2HIn4vZI](https://ombuds.am/images/files/b01de2a2f13b2a9140db41df1b71cbdf.pdf?fbclid=IwAR0feT_D2Bdg_jaZzGSnsqQHn248rOBvoz774L7JTA-bgOUvqQs2HIn4vZI) (հայերեն)

մտահոգություններն են հայտնել նաև **Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի ղեկավարը** (ք. Ստրասբուրգ)<sup>55</sup> և **Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի** նախագահը (ք. Փարիզ)<sup>56</sup>:

2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Հայաստանի ու Ադրբեջանի միջև ապառազմականացված գոտի ստեղծելու հայեցակարգն ակտիվորեն տարածում է գտել միջազգային հանրությունում: Մասնավորապես՝ **Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով 2021 թվականի սեպտեմբերի 27-ի բանաձևում** (այսուհետ՝ ԵԽԽՎ բանաձև)<sup>57</sup> ներառվել է ՀՀ սահմանների շուրջ ապառազմականացված գոտի ստեղծելու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի առաջարկը, որը ներկայացվել էր ԵԽԽՎ հատուկ զեկուցողին՝ փաստերի հիմնավորմամբ: Այսպես, Լեռնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների վերաբերյալ ԵԽԽՎ բանաձևում, այլ հարցերի թվում, երկու երկրներին կոչ է արվել սկսել բանակցություններ դելիմիտացիայի ու դեմարկացիայի վերաբերյալ և ուսումնասիրել ապառազմականացված գոտի ստեղծելու հարցը խաղաղապահ կամ ռազմական մշտադիտարկման ուժերի ներգրավմամբ:

Հաշվետու տարում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտական կապի մեջ է եղել **Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (այսուհետ՝ Վեհաժողով) (PACE)** համազեկուցողների և քարտուղարության հետ: Վեհաժողովի Մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողների 2021թ. նոյեմբերի 9-ի պաշտոնական բնորոշմամբ՝ ՀՀ-ում ինստիտուցիոնալ հակակշիռները գտնվում են կառուցման փուլում, և որ **Մարդու իրավունքների պաշտպանը զսպումների և հակակշիռների արդեն իսկ գործող համակարգ է ապահովում:**

Վեհաժողովը 2022 թվականի հունվարի 27-ի բանաձևում ևս մեկ անգամ անդրադարձ է կատարել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին, **որպես զսպումների և հակակշիռների ապահովման արդյունավետ հաստատություն՝ նշելով, որ Պաշտպանի անկախությունը, կարծես թե, ամուր կերպով հաստատվել է:**<sup>58</sup>

<sup>55</sup> Երեխաների հարցերով օմբուդսմանների եվրոպական ցանցի ղեկավարի նամակը հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://ombuds.am/images/files/5872de7ee976d2ad42cf4dff02b7577f.pdf> (անգլերեն); <https://ombuds.am/images/files/d530a035da94143d7d90a4aa7e0bc1fb.pdf> (հայերեն)

<sup>56</sup> Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի նախագահի նամակը հասանելի է հետևյալ հղումներով՝ <https://ombuds.am/images/files/1d419cb70fba9d322dc86d17eae86c39.pdf> (ֆրանսերեն); <https://ombuds.am/images/files/1ec47b9cf19a61dfefaf2f669097d900.pdf> (հայերեն)

<sup>57</sup> Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ) 2021 թվականի սեպտեմբերի 27-ի բանաձևը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://pace.coe.int/pdf/77dfac5825284bebd0d9dd8e4e12320a8a81f83fe6891990a95ff8391c2b5b/resolution%202391.pdf>

<sup>58</sup> Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով (ԵԽԽՎ) 2022 թվականի հունվարի 27-ի բանաձևը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://pace.coe.int/pdf/6c2ac0f6c9cfc738746aec05d2dc1ed4971d56d69bdc944b1c72264d58a8d0df/resolution%202427.pdf>

**ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի (International Republican Institute (IRI))** կողմից 2022թ. հունվարի 31-ին հրապարակված սոցիալական հարցման արդյունքներով՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունից գոհ է հարցմանը մասնակցած քաղաքացիների 68%-ը (շատ գոհ՝ 35%, որոշ չափով գոհ՝ 33%-ը):<sup>59</sup> Հարցումն իրականացվել է 1 512 քաղաքացիների շրջանում, ընդգրկել է 2021 թվականի նոյեմբերի 22-ից դեկտեմբերի 5-ն ընկած ժամանակահատվածը:

Միջազգային հանրապետական ինստիտուտը անցկացրել է նաև Հայաստանի բնակիչների կարծիքի ուսումնասիրություն այն մասին, թե որ հաստատություններն են համարվում առավել վստահելի՝ արտաքին քաղաքականության մասին տեղեկատվություն ստանալու տեսանկյունից: Քաղաքացիներն այս հարցում ևս ամենաշատը (առավելագույն 30%-ից 25%) վստահում են Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին:

## **2. Պաշտպանի հաստատության հիմնական ծրագրերը**

Հայաստանում մարդու իրավունքների համակարգի կատարելագործման, Պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացման և երկրում միջազգային չափանիշների արդյունավետ ներդրման տեսանկյունից անփոխարինելի նշանակություն ունի Պաշտպանի համագործակցությունը միջազգային գործընկերներ հետ, նրանց հետ ծրագրերի իրականացումը:

### 2.1. Մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցություն

2021 թվականին Աշխատակազմը Բուլղարիայի Արտաքին գործերի նախարարության աջակցությամբ ավարտին է հասցրել «Մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների պաշտպանության և խթանման ոլորտում Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանն աջակցություն» դրամաշնորհային ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր):

Ծրագրի իրականացման մասին համաձայնագիրը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Բուլղարիայի Արտաքին գործերի նախարարության միջև կնքվել է 2019 թվականի հունիսի 19-ին:

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

<sup>59</sup> ԱՄՆ Միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) սոցիալական հարցումը հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.iri.org/resources/public-opinion-surveyresidents-of-armenia/?fbclid=IwAR1CoTlHzGdb-Mgl56MiPYN\\_ZGAwVvplLxu0d22M-C8zigPEAQ7HhbKMbQ](https://www.iri.org/resources/public-opinion-surveyresidents-of-armenia/?fbclid=IwAR1CoTlHzGdb-Mgl56MiPYN_ZGAwVvplLxu0d22M-C8zigPEAQ7HhbKMbQ)

Եվրոպական չափանիշներին համապատասխան աշխատանքային իրավունքների հարցերով բողոքների պատշաճ քննության նպատակով Աշխատակազմի կարողությունների ամրապնդում, աշխատանքային իրավունքների հարցերով Մարդու իրավունքների պաշտպանի դերի, լիազորությունների և գործառույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածության մակարդակի բարձրացում

Ծրագրի շրջանակներում 2020 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք գործողություններ: Մասնավորապես կազմակերպվել են դասընթացներ ինչպես Աշխատակազմի ներկայացուցիչների կարողությունների զարգացման նպատակով, այնպես էլ ՋԼՄ ներկայացուցիչների համար՝ նվիրված աշխատանքային իրավունքների խթանման ու պաշտպանությանը:

Ծրագրի շրջանակներում մշակվել է հրապարակային զեկույցը, որը վերաբերում է աշխատանքային իրավունքների իրացման առնչվող խնդիրներին և դրանց լուծմանն ուղղված առաջարկներին: Զեկույցը կազմվել է հիմք ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ու զեկույցներում տեղ գտած աշխատանքային իրավունքի ոլորտում առկա խնդիրները, հետևաբար՝ ունի պրակտիկ կիրառելիություն:

Զեկույցի հիման վրա մշակվել են նաև Աշխատակազմի համապատասխան աշխատակիցների համար ձեռնարկ-ուղեցույց՝ ուղղված ոլորտին առնչվող անհատական դիմումների քննարկման համար կարողությունների զարգացմանը՝ միջազգային և եվրոպական չափորոշիչների հիման վրա:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ հասարակության իրավագիտակցության մակարդակը բարձրացնելու նպատակով՝ Ծրագրի շրջանակներում պատրաստվել և հրապարակվել են թվով չորս իրազեկող տեսանյութեր, որոնք վերաբերում են 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներով բարձրացված ամենատարածված խնդիրներին: Պատրաստվել և տպագրվել են նաև իրազեկող թռուցիկներ՝ աշխատանքային իրավունքների պաշտպանության առկա մեխանիզմների, ինչպես նաև դրանց դիմելու ժամկետների և կարգի վերաբերյալ՝ ներկայացնելով նաև Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները:

## 1.2. Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների ընդլայնում և Հայաստանում խոշտանգումների կանխարգելման նպաստում

Միավորված ազգերի կազմակերպության «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» 1984 թվականի կոնվենցիայի 2002 թվականի դեկտեմբերի 18-ին ընդունած կամընտիր արձանագրության (այսուհետ՝ Կամընտիր արձանագրություն) հիման վրա Հայաստանի Հանրապետությունում Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակը վերապահված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին: Կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության նպատակն է խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող

վերաբերմունքի կանխարգելումն ազատությունից զրկման վայրերում («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 27-րդ հոդված):

2011 թվականին Կամընտիր արձանագրության 26-րդ հոդվածի համաձայն ստեղծվել է Կամընտիր արձանագրության հատուկ ֆոնդը (այսուհետ՝ Ֆոնդ) ([OPCAT Special Fund](#)), որն աջակցում է խոշտանգումների կանխարգելմանն ուղղված նախագծերին:

Հայաստանի Խոշտանգումների կանխարգելման ազգային մեխանիզմը, որպես Ֆոնդի շահառու, 2019 թվականին «Կանխարգելման ազգային մեխանիզմի կարողությունների ընդլայնում և Հայաստանում խոշտանգումների կանխարգելման նպաստում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման առաջարկ է ներկայացրել Ֆոնդին, որը վերջինիս կողմից հաստատվել է:

Ծրագրի իրականացումը նախատեսված էր 2020 թվականին, սակայն Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված արտակարգ դրության, ինչպես նաև երկրում հայտարարված ռազմական դրության հետևանքով կողմերի համաձայնությամբ Ծրագրի իրականացման վերջնաժամկետը երկարաձգվել է մինչև 2021 թվականի դեկտեմբեր:

Ծրագրի շրջանակներում իրականացվել է փորձի փոխանակում/ուսումնական այց Ալբանիայի Օմբուդսմանի աշխատակազմ, կազմակերպվել են կլոր սեղան-քննարկումներ դատավորների, հասարակական կազմակերպությունների և համապատասխան պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, ինչպես նաև երկօրյա դասընթաց հոգեկան առողջության պահպանման կենտրոնների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար:

Ի թիվս այլնի, Ծրագրի իրականացման արդյունքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի տարեկան զեկույցը թարգմանվել է անգլերեն և տպագրվել հայերեն և անգլերեն լեզուներով:

### 1.3. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրավիճակային վերլուծություն

2021 թվականին Պաշտպանը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին, իրականացրել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ իրավիճակային վերլուծություն՝ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի՝ ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի ընդհանուր համակարգմամբ և ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների գործընկերության (UNPRPD) ֆինանսավորմամբ իրականացված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման համար նպաստավոր միջավայրի և



էկոհամակարգի ստեղծում և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խթանում Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

Իրավիճակային վերլուծությունը իրականացվել է շահագրգիռ կողմերի և համաձայնեցման/համակարգման, հավասարություն և խտրականության բացառման, մատչելիության, ներառական ծառայությունների մատուցման, պատերազմի հետևանքների, Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված դրության պայմաններում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիային համապատասխանող բյուջեի կազմման և ֆինանսական կառավարման և հաշվետվողականության բնագավառների առնչությամբ:

Իրավիճակային վերլուծության շրջանակում իրականացվել է առանձին ոլորտների, մասնավորապես՝ առողջության պահպանման, կրթության, աշխատանքի և զբաղվածության, քաղաքական, մշակութային և սպորտային կյանքին մասնակցելու վերաբերյալ օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրություն:

Հատուկ ուսումնասիրության առարկա են դարձել համապատասխան միջազգային կոնվենցիաները, ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի մեկնաբանությունները և եզրափակիչ դիտարկումները, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030թ օրակարգում» և դրանում ներառված կայուն զարգացման նպատակները:

#### 1.4. Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը

2021 թվականի ընթացքում Աշխատակազմը իրականացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) դրույթների կիրառության մշտադիտարկում՝ որպես Կոնվենցիայի դրույթների իրականացումը մշտադիտարկում իրականացնող մարմին:

Մշտադիտարկման արդյունքում Աշխատակազմը մշակել և հրապարակել է «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույց (այսուհետ՝ Ձեկույց): Ձեկույցը հրապարակվել է ՄԱԿ-ի հաշմանդամության հարցերով Կոմիտեի պաշտոնական կայքէջում<sup>60</sup>:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի՝ Ազգային ժողովում 2020 թվականի տարեկան հաղորդման և խոշտանգումների կանխարգելման մեխանիզմի զեկույցի ներկայացումը<sup>61</sup>,

<sup>60</sup> «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fNHS%2fARM%2f47632&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fNHS%2fARM%2f47632&Lang=en) հղումով:

<sup>61</sup> Տե՛ս հրապարակումը, հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1672> հղումով:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ, առաջին անգամ ուղեկցվել է նաև ժեստերի լեզվով թարգմանությամբ<sup>62</sup>:

Աշխատակազմի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում իրականացված աշխատանքները մանրամասն ներկայացված են սույն տարեկան հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում:

### 1.5. Հայաստանի Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանությունը

2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում հրապարակվել է ուսուցիչների համար նախատեսված «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցը:<sup>63</sup> Ուղեցույցը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարի հրամանով երաշխավորվել է որպես ուսումնական նյութ դպրոցներում օգտագործելու համար:

Աշխատակազմի ներկայացուցիչները 2021 թվականի հունիսի մեկին ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ կազմակերպել են միջոցառում երեխաների համար, որին մասնակցել են հանրակրթական ու հատուկ դպրոցների սաներ, Արցախից տեղահանված երեխաներ, հաշմանդամություն ունեցող երեխաներ, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված «Փոխիր աշխարհը» արշավի մասնակիցներ: Միջոցառումն ուղեկցվել է ժեստերի լեզվով թարգմանությամբ, իսկ հյուրասիրությունը երեխաների համար իրականացվել է «Արեգակ» ներառական փուռ-սրճարանի հետ համագործակցությամբ:<sup>64</sup>

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը «Կասպերսկի» ընկերության հետ համագործակցության շրջանակներում 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կազմակերպել է «Մեծահասակները և երեխաները թվային աշխարհում» խորագրով սեմինար հանրակրթական դպրոցների ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համար: Սեմինարին մասնակցել են ինֆորմատիկայի ուսուցիչներ Երևանի շուրջ 100 հանրակրթական դպրոցներից: Միջոցառմանը քննարկվել են թվային միջավայրում երեխաների անվտանգությանը և նրանց իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցեր<sup>65</sup>:

<sup>62</sup> Տե՛ս Ազգային ժողովի նիստը, հասանելի է <https://www.youtube.com/watch?v=xnE9vIc8TY8&t=2s> հղումով:

<sup>63</sup> Տե՛ս ուղեցույցը, հասանելի է [8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf \(ombuds.am\)](https://ombuds.am/am/site/ViewNews/1722) հղումով, 2022 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:

<sup>64</sup> Միջոցառման վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս <https://ombuds.am/am/site/ViewNews/1722> 2022 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:


<sup>65</sup> Տե՛ս միջոցառման մասին, հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1970> հղումով, 2022 թվականի փետրվարի 10-ի դրությամբ:



2021 թվականի դեկտեմբերի 23-ին Աշխատակազմը ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և «Վորլդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության աջակցությամբ իրականացրել է ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում բնակվող շուրջ 50 սոցիալապես անապահով ընտանիքներում բնակվող երեխաների համար միջոցառում՝ հանձնելով երեխաներին նվերներ:

## ԳԼՈՒԽ 5. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՆՁԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ

### 1. Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կառուցվածքը

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության համար կարևոր նշանակություն ունի աշխատակազմի կառուցվածքը՝ ըստ, իհարկե, առկա սահմանափակ ռեսուրսների: Ստորև ներկայացվում է Աշխատակազմի կառուցվածքը՝





## 2. Մարդու իրավունքների կրթություն և վերապատրաստումներ

Պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է մարդու իրավունքներին կրթությունը: Դրա շահառու խմբերը ներառում են ինչպես պաշտոնատար անձանց, այնպես էլ հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ և այլն:

Աշխատանքի արդյունավետության պահպանման և զարգացման տեսանկյունից հիմնարար նշանակություն ունի աշխատակազմի պրակտիկ հմտությունների և տեսական գիտելիքների

պարբերական զարգացումը: Այդ նպատակով տարբեր ծրագրերի համատեքստում կազմակերպվել են Աշխատակազմի ներկայացուցիչների վերապատրաստումներ:

### 2.1 Մարդու իրավունքների կրթություն

2021 թվականին Պաշտպանը շարունակել է աշխատանքի մեկ այլ կարևոր ուղղության՝ մարդու իրավունքների կրթության, զարգացումը: Սահմանադրական օրենքի մակարդակում ամրագրված է, որ Պաշտպանը կարող է իրականացնել Աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ: Հիմք ընդունելով այս լիազորությունը, հաշվետու տարում շարունակվել է իրականացնել վերապատրաստումներ և իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հանդիպումներ:

Հատկանշական է, որ այս գործառույթի շրջանակում դեռևս 2018 թվականին Աշխատակազմում ստեղծվել է Հետազոտական և կրթական կենտրոնը: Կենտրոնը Պաշտպանի աշխատակազմի, ինչպես նաև շահառու մարմինների և կազմակերպությունների համար իրականացնում է մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող հարցերով վերապատրաստումներ:

2021 թվականին մարդու իրավունքների կրթության ոլորտում կազմակերպված միջոցառումներ են իրականացվել ինչպես Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների, այնպես էլ պաշտոնատար անձանց, հասարակական կազմակերպություններ, լրագրողների, ինչպես նաև հատուկ խմբերի ներկայացուցիչների, օրինակ՝ փախստականներ և ապաստան հայցող անձանց համար:

## **ԲԱԺԻՆ 2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Վերջին 6 տարիներին էականորեն աճել է Պաշտպանին ներկայացվող դիմումների ու բողոքների թիվը: Դրանց համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2016 թվականին դիմում-բողոքների թիվը կազմել է 5.113, 2017 թվականին՝ 6.417, իսկ 2018 թվականին այդ ցուցանիշը գրեթե երկու անգամ ավելացել է՝ դառնալով 10.744 դիմումներ ու բողոքներ:

2019 թվականին, նախորդ տարվա համեմատ, դիմում-բողոքների թիվն ավելացել է 22%-ով կամ 2386-ով, դառնալով՝ 13.140 դիմում-բողոք, 2020 թվականին կրկին դիմում-բողոքների և սեփական նախաձեռնությունների աճ է գրանցվել՝ կազմելով 14.780:

Այսպես, 2016 թվականի համեմատությամբ՝ 2021 թվականին դիմում-բողոքների և սեփական նախաձեռնությունների թիվը 4 անգամից ավել աճել է՝ դառնալով 21181: Ինչպես երևում է դիմում-բողոքների աճը կրում է շարունակական բնույթ:

2019 թվականին բողոքների թվի աճով և մշտադիտարկման լիազորություններով պայմանավորված ավելացել են նաև իրականացվող այցերը:

Այսպես, 2016 թվականին ընդհանուր առմամբ իրականացվել է 415 այց, 2017 թվականին՝ 614, 2018 թվականին՝ 864, իսկ օրինակ՝ 2016 թվականի համեմատությամբ՝ 2019 թվականին այցերն ավելացել են 495-ով՝ կազմելով 910 այց:

2020 թվականին իրականացվել է 193 այց: Այս այցերն ուղեկցվել են աշխատանքի անսպասելի նոր մարտահրավերներով՝ պայմանավորված նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի և ռազմական դրության պայմաններով: Ադրբեջանական զինված հարձակումների ժամանակ և դրանից հետո այցեր են իրականացվել Արցախից տեղահանված անձանց՝ հատուկ ուշադրություն դարձնելով երեխաների, կանանց և տարեցների իրավունքներին:

2021 թվականին 2020 թվականի համեմատությամբ այցերի թիվն ավելացել է 567-ով՝ կազմելով 760 այց:

Զուգահեռ աճում է նաև անհատական գործերով աշխատանքի արդյունավետությունն ու դրական գործերի քանակը:

Այսպես, Պաշտպանի իրավասությանը վերաբերող անհատական գործերով վերջին 6 տարիների տվյալների համեմատական պատկերը ցույց է տալիս, որ 2016 թվականին դրական լուծում ստացած բողոքների թիվը կազմել է 444, 2017 թվականին այդ ցուցանիշը շուրջ երկու անգամ ավելացել է՝ դառնալով 845, 2018 թվականին գրեթե կրկնակի ավելացել է՝ դառնալով 1593, 2019 թվականին այդ թիվը կազմել է 1287, իսկ 2020 թվականին, նախորդ տարվա համեմատ, գրեթե կրկնակի ավելացել է դրական լուծում ստացած բողոքների թիվը՝ կազմելով 2203 դիմում-բողոք:

2021 թվականին, 2020 թվականի համեմատությամբ կրկին արձանագրվել է դրական լուծում ստացած բողոքների թվի աճ՝ կազմելով 2754 դիմում-բողոք:

Աճի միտում ունեն նաև Պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարներին ստացվող հեռախոսազանգերը: Այսպես, 2016 թվականին ստացված հեռախոսազանգերի թիվը կազմել է 2086, 2017-ին՝ 1876, 2018-ին՝ 2802, 2019 թվականին այդ ցուցանիշն աճել է երկու անգամից ավելի՝ դառնալով 6210 հեռախոսազանգ:


2019 թվականի հետ համեմատ՝ 2020 թվականին գրեթե կրկնակի աճել են Պաշտպանի աշխատակազմում շուրջօրյա գործող թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված զանգերը՝ կազմելով 11.735 զանգ:

Թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված զանգերի թվի աճը կրում է շարունակական բնույթ: Այսպես, 2021 թվականին կրկին արձանագրվել է թեժ գիծ հեռախոսահամարներին ստացված զանգերի աճ՝ դառնալով 14124:

Վիճակագրական տվյալները վկայում են նաև Պաշտպանին կարծիքի ներկայացված իրավական ակտերի նախագծերի թվի էական աճի մասին: Այսպես, 2016 թվականին Պաշտպանին կարծիքի են ներկայացվել մոտ 90 իրավական ակտերի նախագծեր, 2017 թվականին՝ 144, 2018 թվականին՝ 185, 2019 թվականին՝ 241, 2020 թվականին՝ 192, իսկ 2021 թվականին՝ 185:




ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ<sup>1</sup>




<sup>1</sup> Դիմում-բողոքների և սեփական նախաձեռնությունների թվական տվյալները ներկայացվում են՝ ըստ անձանց:


**2016-2021 թվականների ընդհանուր  
բողոքների համեմատական  
վիճակագրական տվյալներ**



2016-2021 թվականների ընթացքում  
դրական լուծված գործերի համեմատական  
պատկեր




## Դիմում-բողոքներ և սեփական նախաձեռնություններ՝ ըստ վարչատարածքային միավորների



- |                           |                                     |
|---------------------------|-------------------------------------|
| ■ Երևան - 7895            | ■ Մյունիքի մարզ - 2991              |
| ■ Ֆեդարքունիքի մարզ - 772 | ■ Արարատի մարզ - 756                |
| ■ Շիրակի մարզ - 664       | ■ Կոտայքի մարզ - 518                |
| ■ Արմավիրի մարզ - 490     | ■ Լոռու մարզ - 257                  |
| ■ Արագածոտնի մարզ - 164   | ■ Տավուշի մարզ - 129                |
| ■ Վայոց ձորի մարզ - 66    | ■ Հասցե չպարունակող բողոքներ - 6479 |

## Դիմում-բողոքներ և սեփական նախաձեռնություններ՝ ըստ մարմինների և կազմակերպությունների



- Դատախազություն - 2691
- Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն - 1359
- Ոստիկանություն - 1078
- Պաշտպանության նախարարություն - 893
- Երևանի քաղաքապետարան - 739
- Առողջապահության նախարարություն - 492
- Դատական իշխանության մարմիններ - 434
- Քրեակատարողական ծառայություն - 382
- Հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպություններ - 355
- Քննչական կոմիտե - 347
- Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն - 305
- Արդարադատության նախարարության կենտրոնական և այլ ստորաբաժանումներ - 294
- Համայնքապետարաններ - 272
- Կրթության, զիտության, մշակույթի և սպորտի նախարարություն - 209
- Սարգսյաններ - 160
- Պետական եկամուտների կոմիտե - 93
- Այլ մարմիններ և կազմակերպություններ - 11078

### **ԲԱԺԻՆ 3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

#### **ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

Սոցիալական ապահովության իրավունքի պաշտպանության հիմնախնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է:

Սահմանադրության 83-րդ հոդվածն ամրագրում է սոցիալական ապահովության իրավունքը, իսկ 84-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր կարիքավոր և տարեց մարդ, օրենքին համապատասխան, ունի արժանապատիվ գոյության իրավունք: Սահմանադրաիրավական այդ դրույթներն ամրագրում են մեր պետության պարտականությունը՝ ապահովելու կյանքի բոլոր բնագավառներում անձի ընդունելի և արժանավայել կենսամակարդակի համար անհրաժեշտ պայմաններ:

Սոցիալական ապահովության իրավունքը երաշխավորվում է նաև միջազգային իրավական փաստաթղթերով: Հայաստանը ստանձնել է սոցիալական ապահովության իրավունքի անարգել իրացումն ապահովող երաշխիքների ստեղծման միջազգային պոզիտիվ պարտավորություններ: Սոցիալական իրավունքների բնագավառում պետությունն իր ստանձնած պարտավորություններն ապահովում է երեք մակարդակում՝ հարգելով, պաշտպանելով և պատշաճ կերպով իրականացնելով: Այս ոլորտում ստանձնած պարտավորություններից շեղումը, պետության անգործությունը, նույնիսկ ռեսուրսների անբավարարության պատճառաբանությամբ, կամ այդ իրավունքների իրականացման ձգձգումները չեն կարող արդարացվել որևէ կերպ, հատկապես ճգնաժամային իրավիճակներում:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունները պետք է կատարվեն պետության կողմից՝ ձգտելով սոցիալական ապահովության առավել ամբողջական համակարգի ձևավորման և իրավունքների ապահովման:

#### ***1. Կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներ***

##### ***1.1 Արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելը***

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ շարունակում են արդիական մնալ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրները:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման վերաբերյալ հարցերով թե քաղաքացիների, և թե նշանակման վարչության հասցեագրած հարցումներին տրվել են և նշանակման նպատակով պարզաբանումներ ու ցուցումներ, և մերժման մասին համապատասխան օրենսդրական իրավակարգավորումներ. մասնավորապես, 1 գործով տրվել է դրական ցուցում, 2 գործով տրվել է համապատասխան ցուցում, 17 գործով մերժվել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակումը, որոնցից՝ 2 գործով Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությամբ տրվել է ցուցում՝ գործատուների մոտ լրացուցիչ (հարցումներ) ստուգումներ կատարելու համար (դրանք ընթացքի մեջ են), 4 գործով տրվել է ցուցում՝ վերստին անդրադառնալ, ճշտել աշխատանքի բնույթը (այդ թվում՝ 2 գործով աշխատանքը շարունակելու դեպքում պահանջվող ստաժը ապահովելուց հետո կրկին դիմել):

Ողջունելի է, որ կենսաթոշակային մարմինը, հիմք ընդունելով Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությունը, գործատուների մոտ իրականացնում է լրացուցիչ (հարցումներ) ստուգումներ, սակայն պետք է նկատի ունենալ, որ կենսաթոշակային ոլորտում լիազորված մարմին են ուղղակիորեն պատվիրակված լիազորություններ համապատասխան ստաժի կամ աշխատանքներ կատարելու փաստը հաստատելու նպատակով ուսումնասիրություններ կամ ստուգումներ իրականացնելու, ուստի կենսաթոշակային մարմինը պարտավոր է յուրաքանչյուր կոնկրետ խնդրով իրականացնել ժամանակին, պատշաճ և բազմակողմանի վարչարարություն: Միննույն ժամանակ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած վիճակագրական տվյալներով ակնհայտ է, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման մերժումներն էականորեն գերազանցում են:

Այսպես, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված խնդիրներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին նույնաբովանդակ են: Դրանք վերաբերում են արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ անձանց դիմումները մերժելուն՝ պատճառաբանությամբ, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող նրանց աշխատանքային ստաժը չի բավականացրել, քանի որ ծանր, վնասակար արտադրությունները, աշխատանքները, մասնագիտությունները, պաշտոններն ու ցուցանիշները սահմանող համապատասխան իրավական ակտերում մարդկանց մասնագիտությունները տառացիորեն ներառված չեն:

Հաշվի առնելով նշվածը՝ Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է Կառավարության՝ 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակները կատարելագործելու անհրաժեշտության հարցը:

Սակայն, հարկ է նկատել, որ 2021 թվականի ընթացքում Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ցուցակների կատարելագործման ուղղությամբ համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ չեն

իրականացվել: Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու համար առաջարկություններ չի ներկայացրել, չի նախաձեռնել, քանի որ դրա անհրաժեշտությունը չի առաջացել: Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրա անհրաժեշտությունը մշտապես եղել է՝ հաշվի առնելով այն, որ կենսաթոշակի կոնկրետ տեսակով պայմանավորված՝ պրակտիկայում առաջացող խնդիրներն անհատական են, ուստի անհրաժեշտ է ցուցաբերել անհատական մոտեցում:

Մտահոգության տեղիք է տալիս այն, որ մարդիկ, փաստացի կատարելով արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք, զրկված են կենսաթոշակի այդ տեսակն ստանալու իրավունքից, քանի որ իրենց կատարած աշխատանքն արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող՝ Կառավարության սահմանած համապատասխան ցանկերում բառացիորեն ներառված չէ: Պետք է նկատել, որ խնդրի առաջացման հիմնական պատճառը կենսաթոշակային մարմնի գործելաճան է. կենսաթոշակային մարմինն արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու դեպքերով հաշվի չի առնում կենսաթոշակի իրավունք տվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունն ու բնույթը, բացի այդ՝ Կառավարության որոշումներով մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին տալիս է տառացի և նեղ մեկնաբանություն: 2021 թվականի ընթացքում նույնպես կենսաթոշակային մարմնի նախկինում ձևավորած այդպիսի պրակտիկան, ընդհանուր առմամբ, մնացել է նույնը, ընդհանուր գնահատականով վիճակը չի փոխվել:

Այսպիսով, նշվածը բերում է այն միանշանակ համոզմանը, որ կենսաթոշակային մարմինը յուրաքանչյուր դեպքում պետք է հիմք ընդունի կատարված աշխատանքի բնույթը, կատարված աշխատանքին համարժեք աշխատանքը բնութագրող պաշտոնի առկայությանը ցուցակում, հակառակ դեպքում անձին արտոնյալ պայմաններով կենսաթոշակի անցնելու իրավունքից զրկելով՝ կխախտվի նրա՝ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված հիմնարար իրավունքները:

Նշված մոտեցումն անթույլատրելի է ոչ միայն մարդկանց սոցիալական իրավունքների պատշաճ իրացման, այլ նաև կենսաթոշակային մարմնի իրականացրած վարչարարության տեսանկյունից: Սոցիալական ապահովության ոլորտում մարդկանց իրավունքների խախտումները շատ հաճախ կենսաթոշակային մարմնի իրականացրած ոչ պատշաճ վարչարարության դրսևորում են, այդ մասին են վկայում սոցիալական իրավունքների խախտումների վերաբերյալ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները: Կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքով կենսաթոշակային մարմինը չի իրականացնում պատշաճ, օբյեկտիվ վարչարարություն, այդ թվում՝ համապատասխան ստուգումներ:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ կենսաթոշակային մարմնի նման գործելաճան անթույլատրելի է:

Այդ մոտեցման անթույլատրելիությանն անդրադարձ կա նաև դատական պրակտիկայում: Գործերից մեկով դատարանն արձանագրել է, որ անձի սոցիալական ապահովության իրավունքը



սահմանադրաիրավական այնպիսի իրավունք է, որը պետության կողմից երաշխավորել և միաժամանակ ստանձնել է պարտականություն ապահովելու անձի այդ իրավունքի պատշաճ մակարդակով իրացումը: Սոցիալական ապահովության իրավունքի և պատշաճ վարչարարության սկզբունքի փոխհարաբերության համատեքստում Դատարանը նշել է, որ սոցիալական ապահովության իրավունքի իրացման ապահովման լիազորությունը «պատվիրակված» է սոցիալական ապահովության մարմիններին՝ որպես վարչարարություն իրականացնող մարմինների: Նշված վարչական մարմինները հատկապես սոցիալական ապահովության վերաբերյալ վարչարարություն իրականացնելիս պարտավոր են հաշվառել ոչ միայն գործող իրավական ակտերի պահանջները, այլև այդպիսի ակտերի նորմերը մեկնաբանելիս առաջնորդվել անձի սահմանադրաիրավական իրավունքի արդյունավետ իրացման երաշխավորման կանխավարկածով (թիվ ՎԴ/1444/05/20 վարչական գործ):

Կենսաթոշակային մարմինների ոչ պատշաճ (թերի) վարչարարության արդյունքում սոցիալական ապահովության ոլորտում մարդկանց իրավունքների խախտմանն հանգեցնող խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել սույն հաղորդման «Ոչ պատշաճ (թերի) վարչարարությունը և իրազեկման պակասը՝ որպես իրավունքների խախտման պատճառ սոցիալական ապահովության ոլորտում» թեմայի շրջանակում:

Կենսաթոշակային մարմինների ոչ պատշաճ (թերի) վարչարարություն իրականացնելու վառ օրինակ է նաև այն, որ մարդկանց կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք կատարելու փաստը հաստատող փաստաթղթեր ներկայացվելու դեպքում նույնիսկ կենսաթոշակային մարմինը դրանք համարում է առանց հիմքերի տրված ոչ պատշաճ փաստաթուղթ: Սակայն կենսաթոշակային մարմինը չի հիմնավորում ու չի պատճառաբանում փաստաթղթերի՝ առանց հիմքերի լինելը:

Այսպես, 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու համար դիմել է կենսաթոշակային մարմին, սակայն մերժվել է արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժը բավարար չլինելու պատճառով: Նշել է, որ ունի 40 տարվա աշխատանքային ստաժ, որից 16 օրացուցային տարին աշխատել է մասնավոր կազմակերպության օբսիդի վերամշակման արտադրամասում որպես թրծող վառարան բեռնավորող-բեռնաթափող բանվոր, տաք աշխատանքներ կատարող: Կենսաթոշակի նշանակումը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք կատարելը կազմակերպության կողմից տրված տեղեկանքով, ինչպես նաև աշխատանքային պայմանագրով չի հիմնավորվել: Դիմողը նշել է նաև, որ Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ շարունակել է կատարել նույն՝ առանձնապես ծանր պայմաններում և արտոնյալ կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի N 66 հրամանով հաստատված կանոնների համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելիս անհրաժեշտ է ճշտող տեղեկանքով հիմնավորում, որ անձը լրիվ աշխատանքային

օրվա ընթացքում կատարել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք հատուկ նյութերով, որոշակի սարքավորումներով, ինչպես նաև այդ աշխատանքի բնույթը և պայմանը:

Հարկ է նկատել, որ Պաշտպանի աշխատակազմ դիմողի ներկայացրած գործատուի տված տեղեկանքն արտացոլում է պահանջվող տեղեկությունը. կատարել է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանք. աշխատանքային գրքույկում նշված է, որ ընդունվել է աշխատանքի օբսիդի վերամշակման արտադրամասում որպես բանվոր:

ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող առանձնապես ծանր, առանձնապես վնասակար արտադրությունների, աշխատանքների, մասնագիտությունների, պաշտոնների և ցուցանիշների թիվ 1 ցուցակի 5-րդ բաժնի 2-րդ կետի համաձայն՝ թիվ 1070200ա-12093 ծածկագրով նախատեսված են թրծող վառարան բեռնավորող-բեռնաթափողներ, ովքեր կատարում են տաք աշխատանքներ:

Պաշտպանի աշխատակազմ դիմողի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությունը փաստում է, որ վերջինիս կատարած աշխատանքը նախատեսված է նշյալ ծածկագրով: Դրական համարելով այն, որ նշված դեպքով կենսաթոշակային մարմինը Մարդու իրավունքների պաշտպանի գրության հիման վրա կատարած աշխատանքի բնույթը ճշտելու նպատակով նախաձեռնել է իրականացնել համապատասխան ուսումնասիրություն, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս դեպքում ևս դիմողի ներկայացրած փաստաթղթերը կենսաթոշակային մարմինը համարել է առանց հիմքերի:

ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված «Կենսաթոշակ նշանակելու համար աշխատանքային ստաժը հաշվարկելու կանոնների» (այսուհետ՝ Կանոններ) 39-րդ կետի համաձայն՝ եթե աշխատանքային գրքույկում չկան արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքի բնույթի մասին բավարար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած N 1 և N 2 ցուցակներում նշված մասնագիտություններին և պաշտոններին ամբողջությամբ համապատասխանող տվյալներ, ապա աշխատանքի բնույթը հաստատվում է կազմակերպության տված՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժի մասին տեղեկանքով:

Կանոնների 40-րդ կետի համաձայն՝ աշխատանքի բնույթը հաստատող տեղեկանքում նշվում են արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած N 1 և N 2 ցուցակներով նախատեսված արտադրությունը, աշխատանքը, մասնագիտությունը, պաշտոնը և ցուցանիշները, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում հաշվառվող աշխատանքային գործունեության ժամանակահատվածը, ցուցակի բաժինը, ենթաբաժինը, ծածկագիրը, այն սկզբնական փաստաթղթերը (հիմքերը), որոնց հիման վրա տրված է տեղեկանքը:

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2012 թվականի հուլիսի 20-ի N 66-Ն հրամանի 28-րդ գլուխը նախատեսում է արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքն աշխատանքային ստաժով հիմնավորելու վերաբերյալ կարգավորումները: Մասնավորապես՝ նշված հրամանի 695-րդ կետի համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքը կարելի է հիմնավորել միայն փաստաթղթերով: Աշխատողների մասնագիտությունների և պաշտոնների մասին տեղեկություններն արտացոլվում են աշխատանքային գրքույկում: Արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժի հիմնավորման խնդիրներ են առաջանում միայն այն դեպքում, երբ մասնագիտության կամ պաշտոնի անվանումը ճիշտ չի նշվել:

Որոշակի տեսակի աշխատանքների հիմնավորումը հավաստող փաստաթղթերի տեսակները հստակ նախատեսված և խմբավորված են հրամանում՝ 7 գործոններով (ցուցանիշներով): Մասնավորապես՝ որոշակի տեսակի աշխատանքների իրականացման հաստատող անհրաժեշտ տվյալներ պարունակող փաստաթղթեր են, օրինակ, աշխատողի ազգանունը, մասնագիտությունը, աշխատանքի տեղամասը կամ սարքավորումը, որով նա աշխատում է, աշխատանքի տեսակը, տվյալ մասնագիտության կամ պաշտոնի աշխատանքի բնույթը, սարքավորման անվանումը և տեսակն ըստ կառուցվածքային ստորաբաժանումների: Օրինակ՝ կենսաթոշակի համար դիմողի աշխատանքային գրքույկում նշված է, որ նա աշխատել է 5-րդ արտադրամասում որպես հղկող բանվոր: Այդ արտադրամասի տեխնոլոգիական քարտով հիմնավորվել է, որ մետաղյա իրերը հղկվում են ինչպես չոր եղանակով, այնպես էլ էմուլսիայով: Աշխատողներին սարքավորումներին կցելու մասին հրամանով կարելի է պարզել, թե ինչ հաստոցով է աշխատել բանվորը, իսկ հաստոցի անձնագրի հիման վրա՝ սառեցնող սարքի առկայությունը կամ բացակայությունը:

Այսպիսով, արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տվող ստաժի հիմնավորման խնդիրներ առաջանալու դեպքում աշխատանքի բնույթը կարող է հաստատվել «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանում նախատեսված փաստաթղթերով:

Ստացվում է, որ մարդն իր կենսաթոշակի իրավունքն իրացնելու նպատակով անհրաժեշտության դեպքում, բացի աշխատանքային գրքույկից, ներկայացնում է նաև անհրաժեշտ այլ փաստաթղթեր: Կենսաթոշակային մարմինն իր իրականացրած վարչարարության շրջանակներում պարտավոր է մարդկանց ներկայացրած փաստաթղթերը պատշաճ ուսումնասիրել, դրանց՝ առանց հիմքերի տրված լինելը հիմնավորել և պատճառաբանել, որպեսզի խնդիրներ առաջանալու դեպքում՝ մարդու համար որոշակի լինեն ինչպես կենսաթոշակային մարմնի մերժումները, այնպես էլ իր հետագա քայլերը:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ իրականացված վարչարարությամբ պայմանավորված՝ կենսաթոշակային մարմինների նկատմամբ մարդկանց վստահությունը ցածր է, այդպիսով մարդիկ նախապատվություն են տալիս խնդրին լուծում տալու համար միանգամից դիմել դատարան, այդ մասին է վկայում նաև ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը: Դատարան դիմելու դեպքում էլ վերջիններս հիմնականում հաջողության են հասնում:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած տեղեկության համաձայն՝ արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու հարցով 2021 թվականի ընթացքում դատարան ներկայացվել է թվով 8 պահանջ, դրանցից բավարարվել է 1 գործ և նշանակվել է արտոնյալ պայմաններով աշխատանքային կենսաթոշակ, իսկ մնացած գործերը դեռևս գտնվում են դատաքննության փուլում:

Բացի այդ, ըստ նախարարության՝ իրավակիրառ պրակտիկայի յուրաքանչյուր խնդրով դատական պրակտիկան կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրարկման ընթացքում որպես նախադեպ չի կիրառվում, իսկ քաղաքացիների հայցերով (դիմումներով) դատարանի վճռով բավարարված յուրաքանչյուր գործ կենսաթոշակային մարմինը դարձնում է քննարկման առարկա և օրենքով սահմանված կարգով տալիս համապատասխան ընթացք:

Այս համատեքստում Պաշտպանը վերահաստատում է դատական պրակտիկան կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելու անհրաժեշտությունը: Կարևոր է, որ կենսաթոշակային մարմինը նպաստի արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման գործընթացում առաջացող խնդիրների արագ և արդյունավետ լուծմանը: Բացի այդ, դա կնպաստի կենսաթոշակային մարմնի նկատմամբ քաղաքացիների վստահության աճին և դատարանների ծանրաբեռնվածության թթափմանը և, որ առավել կարևոր է, մարդիկ ստիպված չեն լինի ժամանակ և ֆինանսական միջոցներ ծախսել դիմելով դատարան:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

1. *իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպքի հիման վրա իրականացնել օբյեկտիվ, պարզաճ, պիտանի վարչարարություն, հաշվի առնել կենսաթոշակի իրավունք տրվող յուրաքանչյուր մասնագիտության և պաշտոնի բուն էությունն ու բնույթը, կենսաթոշակատուի օգտին հանգամանքները, իսկ Կառավարության որոշումներով մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին չտալ նեղ մեկնաբանություն,*

2. *պրակտիկայում առաջացած խնդիրները հաշվի առնելով՝ կատարելագործել Կառավարության 2012 թվականի հունվարի 12-ի N 12-Ն և 2014 թվականի հուլիսի 10-ի N 674-Ն որոշումներով հաստատված արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք տրվող ցուցակները,*

3. *արտոնյալ պայմաններով կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել նմանապիպ գործերով դատական պրակտիկան:*

## **1.2 Մասնակի կենսաթոշակ նշանակելը**

Մասնակի կենսաթոշակի իրավունքի հետ կապված խնդիրներն արձանագրվել են Պաշտպանի՝ նախորդ տարիների գործունեությունն ամփոփող հաղորդումներում: Մարդու իրավունքների

պաշտպանի աշխատակազմ 2021 թվականին ևս բողոքներ են ստացվել կենսաթոշակի այս տեսակին վերաբերող խնդիրներով:

Մասնակի կենսաթոշակ նշանակվում է կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին, եթե լրացել է նրանց 55 տարին և ունեն առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն 12 օրացուցային տարին մասնագիտական ստաժ է: Մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառվում են Կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն աշխատած ժամանակահատվածները («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված): Մասնակի կենսաթոշակի իրավունքը տվող մասնագիտությունների և պաշտոնների ու կազմակերպությունների անվանումների ցանկը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ:

Հարկ է նշել, որ ինչպես նախորդ տարիներին, 2022 թվականին նույնպես մասնակի կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ քաղաքացիների դիմումները մերժվել են, քանի որ զբաղեցրած պաշտոնը, մասնագիտությունը կամ այն կազմակերպությունը, որտեղ աշխատել են, ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ ներառված չեն: Բացի այդ՝ որոշմամբ թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկը թերի է, լիազոր մարմինը ցանկում ընդգրկված պաշտոններն ու մասնագիտությունները տառացի ու նեղ է մեկնաբանում և ցանկում չընդգրկված մասնագիտությունների ու պաշտոնների բնույթն ու էությունը հաշվի չի առնում:

Ավելին, շարունակում է խնդրահարույց մնալ մասնակի կենսաթոշակ նշանակելու հարցում կենսաթոշակային մարմնի այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ կենսաթոշակային մարմինն անտեսում է նույնիսկ ոլորտի լիազոր մարմնի (օրինակ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության) տրամադրած տեղեկատվությունը, որը հստակ կողմնորոշիչ նշանակություն ունի անձանց կատարած աշխատանքի, պաշտոնի կամ մասնագիտության բուն էության բացահայտման հարցում:

Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով քաղաքացին դիմել է կենսաթոշակային մարմնին մասնակի կենսաթոշակ նշանակելու համար, սակայն մերժվել է մասնագիտական ստաժը չբավարարելու պատճառաբանությամբ: Ըստ բողոքի՝ աշխատել է երաժշտական մասնագիտական դպրոցում որպես երգչախմբի դասատու, սակայն աշխատանքի ընդունվելու հրամանում նշված է, որ աշխատել է որպես խմբավար, ինչն էլ մերժման պատճառ է հանդիսացել: Դիմողի պնդմամբ՝ խմբավար մասնագիտությունը նույն երգչախմբի դասատուն է, ով աշխատում է երեխաների հետ: Այս մասին վերջինս դպրոցի տնօրենի հաստատած տեղեկանք է ներկայացրել կենսաթոշակային մարմնին, սակայն արդյունքի չի հասել: Բացի այդ՝ դիմողն իր մասնագիտության բովանդակության պարզաբանման համար դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և ստացել պատասխան, որ որպես խմբավար կատարած աշխատանքը հաշվարկվում է լուսավորության աշխատողների մանկավարժական աշխատանքի ստաժի մեջ՝

հղում կատարելով ՍՍՀՄ լուսավորության մինիստրության 1985 թվականի մայիսի 16-ի «Լուսավորության աշխատողների աշխատավարձը հաշվարկելու կարգի մասին» թիվ 94 հրամանի դրույթներին, որն էլ ներկայացրել է կենսաթոշակային մարմինն, սակայն մասնակի կենսաթոշակի նշանակումը կրկին մերժվել է:

Նմանատիպ մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ունի 35 տարվա մանկավարժական ստաժ, որից 31 տարին աշխատել է երաժշտական դպրոցում որպես երգչախմբի դասատու, խմբավար: Դիմողը 55 տարին լրանալուց հետո դիմել է կենսաթոշակային մարմնին՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար, սակայն մերժվել է դպրոցի տնօրենի անփույթ գործողությունների պատճառով: Ըստ աշխատանքային գրքույկի՝ ընդունվել է աշխատանքի որպես երգչախմբի դասատու, ըստ աշխատանքային պայմանագրի՝ որպես երգչախմբի ուսուցիչ, ըստ հրամանագրի՝ որպես դասատու, աշխատանքի ընդունվելու հրամանում նշված է՝ «ընդունել աշխատանքի որպես խմբավար»: Քաղաքացին մտահոգություն է հայտնել առ այն, որ մասնակի կենսաթոշակի նշանակումը մերժել են համապատասխան փաստաթղթերում պաշտոնը խմբավար նշված լինելու պատճառով, մինչդեռ, 35 տարի անընդմեջ երաժշտական դպրոցում աշխատել է երեխաների հետ, կատարել է ուսուցչի աշխատանք: Ըստ դպրոցի տնօրենի տված բնութագրի՝ 1994 թվականից աշխատում է որպես խմբավար՝ երգչախմբի դասատու, դասավանդում է երգչախումբ և վոկալ առարկաներ: Կենսաթոշակային մարմինը, սակայն, այն հաշվի չի առել:

Նշված երկու դեպքերում նույնպես խնդիրը ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման թիվ 6 հավելվածով հաստատված կրթության, մշակույթի որոշ կատեգորիաների աշխատողներին մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկում համապատասխան՝ «խմբավար», մասնագիտության նախատեսված չլինելն է: Դրանով պայմանավորված՝ կենսաթոշակային մարմնի դիրքորոշմամբ՝ համապատասխան մասնագիտական ստաժ չունենալու պատճառով դիմողներին մասնակի կենսաթոշակ չի նշանակվել:

Դիմողների պնդմամբ՝ դպրոցում դասավանդող խմբավարը համարվում է մանկավարժական աշխատող, հետևաբար գործունեությունը համարժեք է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված մասնագիտությունների բովանդակություն կազմող գործունեությանը: Նշվածը, սակայն, հաշվի չի առնվում կենսաթոշակային մարմնի կողմից և իրավական կարգավորումներին տրվում է նեղ մեկնաբանություն:

Ներկայացված դեպքերը ոչ միայն խնդրահարույց են լիազոր մարմնի կողմից Կառավարության որոշման ցանկում ընդգրկված պաշտոններն ու մասնագիտությունները տառացի ու նեղ է մեկնաբանելու և ցանկում չընդգրկված մասնագիտությունների ու պաշտոնների բնույթն ու էությունը հաշվի չառնելու, այլև՝ տարբերակված մոտեցում դրսևորելու տեսանկյունից: Մասնավորապես՝ տարբերակված մոտեցում է դրսևորվում միևնույն կատեգորիայի՝ փաստացի մանկավարժական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ: Կենսաթոշակային մարմինը շարունակում է նաև անտեսել ոլորտի լիազոր մարմնի տրամադրած տեղեկատվությունը, որը հստակ կողմնորոշիչ

նշանակություն ունի անձանց կատարած աշխատանքի, պաշտոնի կամ մասնագիտության բուն էության բացահայտման հարցում:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ կենսաթոշակային մարմինը մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնի մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ հիմք ընդունելով դրանց էության բացահայտման հետ կապված ոլորտի լիազոր մարմնի առաջարկությունները:

Մեկ այլ բողոքի համաձայն՝ դիմողն ավարտել է պետական ինստիտուտներից մեկի մանկավարժական ֆակուլտետը, ունի ֆիզկուլտուրա առարկայի «դասատու»-ի որակավորում: Ըստ բողոքի՝ 1990 թվականից մինչև 2000 թվականն աշխատել է գյուղական համայնքում որպես ֆիզկուլտուրայի դասատու: 1998 թվականից տեղափոխվել է Երևանի ինստիտուտներից մեկը և աշխատել որպես ֆիզդաստիարակության ղեկավար: Դիմողը, ըստ հրամանագրերի, աշխատել է որպես ֆիզիկական դաստիարակության դասատու, 2001-2003 թվականներին, ըստ հրամանագրերի, աշխատել է որպես «դասախոս»: Պաշտպանի աշխատակազմ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2019 թվականին քաղաքացին դիմել է կենսաթոշակային մարմին՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար, որը նշանակվել է: Հետագայում քաղաքացին կրկին դիմել է կենսաթոշակային մարմին՝ պահանջելով իր կենսաթոշակը հաշվարկել 2017 թվականից՝ առաջին դիմումը ներկայացնելու օրվանից: Կենսաթոշակային մարմինը կատարել է կենսաթոշակի գործի լրացուցիչ ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ ըստ աշխատավայրի հրամանագրերի՝ 2001-2002 և 2002-2003 թվականներին քաղաքացին աշխատել է որպես դասախոս, ինչը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին 665-Ն որոշման հավելված 6-ով մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտությունների և պաշտոնների ցանկով նախատեսված չէ: Նշվածով պայմանավորված՝ մասնագիտական աշխատանքային ստաժից համամասնորեն պակասեցվել է 2001 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածը և մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է: Դիմողը դասախոսի՝ մանկավարժական աշխատող հանդիսանալու հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Նախարարությունը վկայակոչել է «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքը: Նշված օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ «դասախոսը» ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող է: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության դիրքորոշմամբ՝ դասախոսը ևս համարվում է մանկավարժական աշխատող, սակայն համարժեք է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նշված «դասատու», «ուսուցիչ», «մանկավարժ» հասկացություններին: Ավելին, նշվածը հաստատվել է նաև դատական պրակտիկայում

նույնաբովանդակ գործի շրջանակներում: Բացի այդ, դիմողը խնդիրը ներկայացրել է նաև մեկ այլ տեսանկյունից, այն է՝ իր կատարած փաստացի աշխատանքն իրականում մանկավարժական աշխատանք է, սակայն դասախոսի գործառույթների հետ ուղղակիորեն առնչություն չունի և չի համապատասխանում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» օրենքի վերը նշված նորմերի բովանդակային պահանջին:

Բացի այդ, թիվ ՎԴ5/0093/05/21 վարչական գործի շրջանակներում, դատարանը բավարարելով դիմողի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը մասնակի կենսաթոշակ նշանակելու պարտավորեցնելու պահանջը (մասնակի կենսաթոշակ նշանակելու պահանջներով ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ մարդիկ դատարան դիմելու դեպքում հիմնականում հաջողության են հասնում), հաստատված է համարել, որ դասախոսն ուսանողի (ունկնդրի) տեսական գիտելիքների յուրացումն ապահովող և գործնական կարողությունների զարգացմանը նպաստող, մասնագիտական կրթության և (կամ) ուսուցման համակարգի մանկավարժական աշխատող է և արհեստագործական ու միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություններում նախատեսվում են, ի թիվս այլի, մանկավարժական անձնակազմեր, որոնց կազմում ընդգրկվում են նաև դասախոսները, որպիսի պայմաններում դիմողի աշխատած դասախոսի պաշտոնն, ըստ էության, համապատասխանում է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ սահմանված մանկավարժի պաշտոնի անվանմանը և բովանդակությանը: Ավելին, Վարչական դատարանը նշել է, որ կենսաթոշակային մարմինը խախտել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի դրույթն առ այն, որ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Այսպես, դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ մասնակի կենսաթոշակի նշանակման հետ կապված խնդիրները հիմնականում վերաբերում են լիազոր մարմնի այն դիրքորոշմանը, որ Կառավարության կիրառելի որոշմամբ սահմանված չէ այս կամ այն մասնագիտությունը կամ հաստիքը, որը հնարավորություն կտա մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ստաժի: Դատարանը բացահայտում է քաղաքացիների կատարած աշխատանքը, բուն գործառույթները, հիմք է ընդունում նաև ոլորտին տիրապետող պետական մարմնի տեղեկություններն ու առաջարկները (թիվ ՎԴ/3516/05/20, ՎԴ1/0074/05/19, ՎԴ5/0093/05/21 վարչական գործերով կայացված վճիռներ):

Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր խնդրով դատական պրակտիկան կենսաթոշակային ապահովության օրենսդրության կիրարկման ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը որպես նախադեպ չի կիրառում: Մինչնույն ժամանակ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ քաղաքացիների հայցերով (դիմումներով) դատարանի վճռով յուրաքանչյուր բավարարված գործը Միասնական ծառայությունում դառնում է քննարկման առարկա և օրենքով սահմանված կարգով



տրվում է համապատասխան ընթացք (բողոքարկվում է կամ ի կատարումն ապահովվում է համապատասխան ընթացք):

Ստացվում է՝ եթե անձը նմանատիպ դեպքերում դատարան չդիմի՝ կրելով հավելյալ ֆինանսական բեռ, արտադատական կարգով արդյունքի հասնել չի կարող:

*Մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում կենսաթոշակային մարմինը պետք է առաջնորդվի մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը և դրանց էության բացահայտման հետ կապված ոլորտի լիազոր մարմնի առաջարկությունները, ինչպես նաև դատական պրակտիկան հիմք ընդունելու մոտեցմամբ:*

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է նաև, որ 2021 թվականի ընթացքում Կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված ցանկում թվարկված կազմակերպությունների, մասնագիտությունների և պաշտոնների ցանկի կատարելագործման անհրաժեշտությունը պահպանվել է:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողը 2019 թվականին դիմել է կենսաթոշակային մարմին՝ մասնակի կենսաթոշակ նշանակելու համար, սակայն մերժվել է աշխատանքային բավարար ստաժ չունենալու հիմնավորմամբ: Ըստ բողոքի՝ դիմելու պահին լրացած է եղել 55 տարին և ունեցել 25 օրացուցային տարվա մանկավարժական աշխատանքային ստաժ: Պաշտպանի աշխատակազմ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրմամբ պարզվել է, որ կենսաթոշակային տարածքային մարմինը վերջինիս աշխատանքային ստաժում չի հաշվառել մասնավոր հանրակրթական դպրոցում 31.08.2001-01.06.2003 թվականներն աշխատած ժամանակահատվածը՝ պատճառաբանելով, որ այն մասնակի կենսաթոշակի իրավունք տվող կազմակերպությունների ցանկում ներառված չէ: Արդյունքում մասնակի կենսաթոշակի իրավունք տվող ժամանակահատվածը բավարար չի եղել մասնակի կենսաթոշակ նշանակելու համար: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած պարզաբանման համաձայն՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշմամբ հաստատված ցանկով մասնակի կենսաթոշակի իրավունք ունեն պետական հանրակրթական դպրոցների ուսուցիչները:

Ոչ պետական դպրոցում ուսուցիչ աշխատելու ժամանակահատվածը մանկավարժական աշխատանքային ստաժում չհաշվառելը բովանդակային առումով չհիմնավորված է, քանի որ հանգեցնում է տարբերակված մոտեցման: Մասնավորապես՝ քննարկվող դեպքում նույնպես, ինչպես և վերը նկարագրվածներում՝ տարբերակված մոտեցում է դրսևորվում միևնույն կատեգորիայի անձանց նկատմամբ, ովքեր կատարել են նույն մանկավարժական գործունեությունը: Դպրոցում դասավանդող ուսուցիչը համարվում է մանկավարժական աշխատող, հետևաբար համարժեք է ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ հաստատված մասնագիտությունների ցանկում նշված «դասատու», «ուսուցիչ», «մանկավարժ» հասկացություններին: Նշվածը, սակայն, հաշվի չի առնվել կենսաթոշակային մարմնի կողմից և իրավական կարգավորումներին տրվել նեղ մեկնաբանություն: Բացի այդ՝ անհասկանալի է մասնակի կենսաթոշակի իրավունք տվող

հաստատությունների ցանկում ենթակայության կարևորումը միայն պետական հանրակրթական դպրոցների մասով, եթե 2003 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ Հայաստանում գործող մասնավոր հանրակրթական դպրոցներ նույնպես կան:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում մասնակի կենսաթոշակի հետ կապված օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել: Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթների կատարելագործման ուղղությամբ համապատասխան օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու համար առաջարկություններ չի ներկայացվել, չի նախաձեռնվել (անհրաժեշտություն չի առաջացել):

Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրված բողոքների համալիր ուսումնասիրությունը վկայում է, որ դրա անհրաժեշտությունն իրականում եղել է:

*Պետք է նկատի ունենալ, որ իրավակիրառ պրակտիկայում առկա յուրաքանչյուր դեպք անհատական է իր բնույթով, ուստի փոփոխություններ իրականացնելու անհրաժեշտությունը պետք է դիտարկել՝ հաշվի առնելով պրակտիկայում առաջացած յուրաքանչյուր դեպք:*

2021 թվականի ընթացքում համակարգային լուծում չի ստացել նաև Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացված այն հարցը, որ ՍՍՀՄ ընտրովի պաշտոններում մարդկանց աշխատած ժամանակահատվածը մասնակի կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժում չի հաշվառվում<sup>66</sup>:

Խնդիրն այն է, որ մարդիկ, ովքեր ընդհատել են իրենց մանկավարժական գործունեությունը և սովետի մարմնում ընտրովի պաշտոն են զբաղեցրել, հետագայում նրանց մանկավարժական ստաժի անընդհատությունը չի պահպանվել:

ՍՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՍՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ սովետի մարմնում ընտրովի պաշտոնում դեպուտատի աշխատանքի ժամանակն աշխատանքային ստաժ է համարվում այն մասնագիտությամբ, որով դեպուտատն աշխատել է մինչև սովետի մարմնում ընտրովի պաշտոնում ընտրվելը:

Կարևոր է նկատել, որ ՍՍՀՄ գերագույն սովետի 1972 թվականի սեպտեմբերի 20-ի «ՍՍՀՄ-ում ժողովրդական դեպուտատների ստատուսի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի ուժով ընտրովի պաշտոն զբաղեցնելիս պահպանվել է մասնագիտական աշխատանքային ստաժի անընդհատությունը: ՍՍՀՄ ընտրովի պաշտոններում աշխատած մարդիկ նշված օրենքի ուժով իրավունք են ձեռք բերել, որ հետագայում իրենց աշխատանքային ստաժում սովետի մարմնում

<sup>66</sup> Առավել մանրամասն տե՛ս, օրինակ, 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 92-94:

ընտրովի պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածը հաշվարկվելու է այն մասնագիտությամբ, որով իրենք աշխատել են մինչև սովետի մարմնում ընտրովի պաշտոնում ընտրվելը:

Մինչդեռ, գործող օրենսդրությամբ այդ արտոնությունը սահմանված չէ, ինչի պատճառով մարդիկ հնարավորություն չեն ունենում իրացնել մասնակի կենսաթոշակ ստանալու իրավունքը: Հատկապես մտահոգիչ են այն դեպքերը, երբ օրենսդրական նշված կարգավորման բացակայության պայմաններում մասնակի կենսաթոշակ նշանակելիս չի բավականացնում համապատասխան տարիների մասնագիտական ստաժը:

Հարցին անդրադարձ է կատարվել կենսաթոշակի նկատմամբ՝ որպես սեփականություն (կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության է նաև ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի<sup>67</sup>) «իրավաչափ ակնկալիք» ունենալու տեսանկյունից:

*Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

1. *մասնակի կենսաթոշակի նշանակման յուրաքանչյուր դեպքում հաշվի առնել մարդկանց մասնագիտության և պաշտոնի բուն էությունը՝ հիմք ընդունելով դրանց էության բացահայտման հետ կապված ոլորտի լիազոր մարմնի առաջարկությունները, ինչպես նաև դատական պրակտիկան, չորս Կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման՝ մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտություններ և պաշտոններ սահմանող դրույթներին տարածի և նեղ մեկնաբանություն,*

2. *իրավակիրառ պրակտիկայում առկա յուրաքանչյուր դեպք հաշվի առնելով 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն որոշման մեջ իրականացնել անհրաժեշտ փոփոխություններ,*

3. *մասնակի կենսաթոշակի իրավունք տվող մասնագիտական աշխատանքային ստաժում հաշվառել նաև ՍՍՀՄ ընտրովի պաշտոններում մարդկանց աշխատած ժամանակահատվածը:*

### **1.3 Կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրներ**

2021 թվականի ընթացքում որևէ դրական տեղաշարժ չի արձանագրվել՝ կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրներին օրենսդրական լուծումներ չեն տրվել: Խնդիրները տարիներ շարունակ բարձրաձայնել է Մարդու իրավունքների պաշտպանն իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում, ինչպես նաև ներկայացրել դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

<sup>67</sup> Տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (Burdov v. Russia) գործով 2002 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 59498/00, կետ 40:

«Առաջադրանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակառուի համար մատչելի մեխանիզմներ ներդնելու ուղղությամբ փոփոխություններ կամ լրացումներ չեն ձեռնարկվել, քանի որ անհրաժեշտություն չի առաջացել:

Նկատենք, սակայն, որ 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սոցիալական ապահովության ոլորտում հանդիպող խնդիրների մեծամասնությունը վերաբերում են հենց աշխատանքային ստաժի հաստատմանը, շարունակում է արդիական մնալ մարդկանց փաստացի աշխատած ժամանակահատվածն աշխատանքային ստաժում չհաշվառելու համակարգային հարցը: Ուստի նվազագույնն անհասկանալի է, թե ինչ հիմնավորմամբ է իրավասու մարմինը խնդրի լուծմանն ուղղված փոփոխությունների կամ լրացումների ձեռնարկումը համարում ոչ անհրաժեշտ ու ոչ նպատակահարմար:

Այսպես, ինչպես նախորդ տարիներին, 2021 թվականի ընթացքում նույնպես Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բողոքներ՝ կապված աշխատանքային ստաժի հաշվարկման հետ:

Հայտնի է, որ աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրների մարդիկ բախվում են, երբ կենսաթոշակ նշանակելիս չեն կարողանում ներկայացնել աշխատանքային ստաժը հաստատող և ապացուցող փաստարկներ: Այդ պահանջը հստակ սահմանված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում: Մասնավորապես՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ մինչև 2013 թվականի հունվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար աշխատանքային ստաժը հաստատող հիմնական փաստաթուղթն աշխատանքային գրքույկն է կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած այլ փաստաթուղթ, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի: Հետևաբար, 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ը՝ աշխատանքային գործունեությունը հաստատելու համար անձանց աշխատանքային գրքույկից բացի անհրաժեշտ են համապատասխան լրացուցիչ փաստաթղթեր:

Հայտնի է նաև խնդրի առաջացման հիմնական պատճառը. գործատուները սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չեն պահպանել կամ չեն հանձնել արխիվ, կամ երբ կենսաթոշակ նշանակելիս չեն գործում (վերացված կամ լուծարված են լինում) այն կազմակերպությունները, որտեղ անձինք աշխատել են:

Աշխատանքային ստաժի հաստատման հարցում առաջացող խնդիրների համակարգային կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրացրել է աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակառուի համար մատչելի մեխանիզմի նախատեսման կարևորությունը: Որպես լուծման տարբերակ, առաջարկվել է նախ

վերացնել 1992 թվականի հունվարից մինչև 2013 թվականի հունվարի 1-ն աշխատանքային գործունեությունը հաստատելու համար աշխատանքային գրքույկից բացի սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր ներկայացնելու պահանջն այն կենսաթոշակառուների համար, որոնք նշված ժամանակահատվածում աշխատել են պետական հաստատություններում:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից խնդիրը բարձրաձայնելուց հետո քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեներում (առանց ենթակա կազմակերպությունների) աշխատած լինելու դեպքում աշխատանքային ստաժի հաստատման հարցը 2020 թվականին կարգավորվել է:

Այնուհետև՝ հաշվի առնելով քաղաքացիների դժգոհությունները՝ 2020 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթեր չպահանջվեն նաև այն անձանցից, ովքեր աշխատել են քաղաքային, շրջանային, ավանային, գյուղական խորհուրդների գործադիր կոմիտեների ենթակա կազմակերպություններում: Առաջարկն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ընդունել է ի գիտություն, սակայն պատշաճ ընթացք չի տվել: Իսկ որպես խնդրի վերջնական լուծման տարբերակ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է սահմանել աշխատանքային ստաժի խնդրահարույց տարիների (1992-2003 թվականներ) պայմանական գումարային արժեքը և այն հաշվարկելու համար կենսաթոշակառուներին ներկայացվող հստակ չափանիշներ, որոնց հաստատումն իր հերթին չի առաջացնի կենսաթոշակառուների համար ապացուցման բեռ:

Հաճախ են դեպքերը նաև, երբ Պաշտպանին դիմած անձինք պնդում են, որ աշխատանքային ստաժի հաստատման բոլոր փաստաթղթերն առկա են, սակայն կենսաթոշակային մարմինը չի իրականացնում պատշաճ վարչարարություն՝ չի կատարում համապատասխան ուսումնասիրություններ և բավարարվում է միայն Ազգային արխիվից տրված տեղեկություններով:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ լրացել է իր 63 տարին և տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակման համար դիմում է ներկայացրել կենսաթոշակային մարմին: Դիմողի հայտնած տվյալների համաձայն՝ լրացել է իր աշխատանքային գործունեության 35 տարին, ինչը հաստատվում է աշխատանքային գրքույկում կատարած գրառումների միջոցով: Մինչդեռ, կենսաթոշակային մարմնից հայտնել են, որ իր աշխատանքային ստաժը կազմում է 28 տարի 9 ամիս 15 օր: Համաձայն չլինելով կենսաթոշակային մարմնի որոշման հետ՝ դիմողը ներկայացրել է կենսաթոշակի վերահաշվարկման դիմում: Ի պատասխան դիմումի՝ կենսաթոշակային մարմինը նշել է, որ աշխատանքային ստաժը կազմում է 30 տարի 10 ամիս 15 օր: Բացի այդ՝ 1998, 2000, 2004, 2005 թվականներին իր աշխատավայրի՝ գործարանի, անհատական հաշվառման մատյաններում աշխատավարձի հաշվարկ չի հայտնաբերվել: Արդյունքում տարիքային աշխատանքային կենսաթոշակի նշանակումը մերժվել է: Դիմողի պնդմամբ՝ աշխատել է

գործարանում և ստացել աշխատավարձ, որի վճարման վերաբերյալ տեղեկությունները կհայտնաբերվեն պատշաճ ուսումնասիրության արդյունքում: Նշված կոնկրետ դեպքով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում սկսվել է քննարկման ընթացակարգ, կենսաթոշակային մարմնին առաջարկվել է աշխատանքային ստաժի վերահաշվարի նպատակով իրականացնել լրացուցիչ ուսումնասիրություններ:

*Այսպիսով, խնդրահարույց և մտահոգիչ են սոցիալական ապահովության ոլորտում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումները՝ կապված օրենսդրական փոփոխություններ չիրականացնելու անհրաժեշտության բացակայության հետ, այն էլ այն դեպքում, երբ խնդիրներն ակնհայտ են և դրանց լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկները փարհներ շարունակ տեղ են գտել Մարդու իրավունքների պաշտպանի փարեկան հաղորդումներում:*

Աշխատանքային ստաժի հաշվառման գործընթացում քաղաքացիները հանդիպում են դժվարությունների նաև այլ պատճառներով: Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով՝ դիմողը տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու համար դիմել է կենսաթոշակային մարմնին, սակայն հայրանունն աշխատանքային գրքույկում կրճատ լրացված լինելու պատճառով մերժվել է:

Մեկ այլ դեպքով էլ քաղաքացուն աշխատանքային տարիքային կենսաթոշակ չի նշանակվել առնվազն 10 տարի աշխատանքային ստաժ չունենալու պատճառով: Ստաժը չի բավարարել, քանի որ կենսաթոշակային մարմինը չի հաշվառել աշխատանքային գրքույկի այն գրառումները, որոնք կատարված են ջնջումներով, մասնավորապես՝ աշխատանքից ազատման տարեթիվը լրացված է ջնջումով, ինչպես նաև գրառումները կազմակերպության կնիքով վավերացված չեն: Ըստ դիմողի՝ աշխատանքային գրքույկի ոչ պատշաճ գրառումները կատարվել են ոչ իր մեղքով:

Ըստ մեկ այլ բողոքի՝ դիմողը երկար տարիներ աշխատել է օտարերկրյա պետությունում 63 տարին լրանալու կապակցությամբ դիմել է կենսաթոշակային մարմնին, սակայն կենսաթոշակ չի նշանակվել առնվազն 10 տարի աշխատանքային ստաժ չունենալու հիմնավորմամբ: Աշխատանքային ստաժը չի հիմնավորվել, քանի որ աշխատանքային գրքույկում կան ջնջումներ: Ըստ աշխատանքային գրառումների՝ դիմողն աշխատել է այդ պետության մանկապարտեզներից մեկում, սակայն կնիքն անընթեռնելի է, որի պատճառով հնարավոր չէ հաշվառել ստաժում: Որպես խնդրի լուծման տարբերակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից դիմողին առաջարկվել է նոտարական կարգով թարգմանել աշխատանքային գրքույկի օտարերկրյա պետության կնիքը և այն ներկայացնել կենսաթոշակային մարմնին:

*Հարկ է նկատել, որ վերը ներկայացված իրավիճակներում մարդիկ հիմնականում ստիպված են լինում խնդիրը լուծելու նպատակով դիմել դատարան: Նմանատիպ իրավիճակներում, որպեսզի քաղաքացիները հնարավորինս ազատվեն դատական քաջքուկներից, կենսաթոշակային մարմինը յուրաքանչյուր դեպքով պետք է ցուցաբերի անհատական մոտեցում, քննարկի կոնկրետ խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ:*

Աշխատանքային ստաժի հաշվարկման կենսաթոշակառուների համար դժվարություններ ստեղծող դրույթ է սահմանված «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածում, որի համաձայն՝ ամեն տարի՝ տարիքային կամ հաշմանդամության կենսաթոշակ նշանակելուց կամ կենսաթոշակը կենսաթոշակառուի գրավոր դիմումի հիման վրա վերահաշվարկելուց 12 ամիս հետո՝ կենսաթոշակառուն կրկին պարտավոր է ներկայացնել դիմում, որպեսզի վերջին տարում ձևավորված նրա աշխատանքային ստաժը հաշվառվի:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 48.1 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Սոցիալական ապահովության ծառայությունը հարկային մարմնից ստանում է շտեմարանը ձևավորելու համար անհրաժեշտ տվյալներ, Կառավարության սահմանած դեպքերում և կարգով ստուգում դրանց հավաստիությունը:

Այսինքն, էլեկտրոնային կենսաթոշակի գործերի համակարգը միացված է բնակչության պետական ռեգիստրին և համապատասխան տեխնիկական կարգավորումների դեպքում կենսաթոշակային մարմինն ինքնաշխատ եղանակով անհրաժեշտության դեպքում կարող է ստանալ կենսաթոշակ ստացողի վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ:

Նշված կարգավորումների առկայությամբ աշխատող կենսաթոշակառուների վրա դրվում է լրացուցիչ պարտականություն:

Կենսաթոշակային համակարգի տվյալների էլեկտրոնային համակարգը միացված է հարկային մարմնի համապատասխան էլեկտրոնային շտեմարանին և անհրաժեշտ տվյալների տրամադրման համար տեղեկատվության փոխանակմամբ կարող է ապահովվել օրենքով սահմանված ժամկետներում կենսաթոշակի վերահաշվարկը՝ կանխելով քաղաքացու տարբեր մարմիններին դիմելու անհրաժեշտությունը:

*Հետևաբար, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է այս խնդիրը նույնպես կարգավորել:*

Տարիների շարունակ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել է նաև 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված անձանց և 1992 թվականին ՀՀ Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված անձանց աշխատանքային ստաժը սահմանող հանձնաժողովի գործունեությունը վերականգնելու անհրաժեշտության հարցը:

Հանձնաժողովի գործունեությունը վերականգնելու անհրաժեշտությունը առավել մանրամասն ներկայացվել է նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում<sup>68</sup>:

*Այս կապակցությամբ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ վերականգնել ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի թիվ 907-Ն որոշմամբ սրտեղծված և 2017 թվականի հունվարից գործունեությունը դադարեցրած 1988-1992 թվականներին Ադրբեջանից բռնագաղթված անձանց և 1992 թվականին Հայաստանի Հանրապետության Արծվաշեն գյուղից բռնի*

<sup>68</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 106-108:

*տեղահանված անձանց աշխատանքային ստատուս սահմանող հանձնաժողովի գործունեությունը, ինչպես նաև քննարկել նմանատիպ իրավիճակում գտնվող անձանց դեպքում այլ հանձնաժողովների ստատուսի անհրաժեշտությունը:*

Մեկ այլ՝ այդպես էլ չլուծվող համակարգային խնդիր է մարդկանց՝ կլինիկական օրդինատուրայում սովորելու տարիներն աշխատանքային ստատուս չհաշվառելը:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ «կենսաթոշակ նշանակելիս աշխատանքային ստատուս հաշվառվում է ուսումնական հաստատություններում, բացառությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների, առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը՝ վեց տարուց ոչ ավելի»:

ՀՀ կառավարության 1996 թվականի փետրվարի 16-ի «Աշխատանքային ստատուս հաշվառվող աշխատանքային կամ այլ բնույթի գործունեության տեսակները, հաշվառման կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 41-Ն որոշմամբ (ուժը կորցրել է 2003 թվականի հունիսի 24-ին) հաստատված կարգի 3-րդ կետի «թ» ենթակետի համաձայն՝ «կենսաթոշակ նշանակելիս ընդհանուր աշխատանքային ստատուս հաշվառվում են (...) կլինիկական օրդինատուրայում (...) ուսուցման ժամանակաշրջանը»:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության վերը նշված որոշումն ուժը կորցնելուց հետո վերացվել է որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի «թ» ենթակետով նախատեսված արտոնություն սահմանող դրույթը՝ կապված կլինիկական օրդինատուրայում ուսուցման ժամանակահատվածն աշխատանքային ստատուս հաշվարկելու առանձնահատկության հետ:

Այսինքն, օրենսդիրը, սահմանել է ուսումնական հաստատությունում անձանց ուսման ժամանակահատվածն աշխատանքային ստատուս 6 տարուց ոչ ավելի հաշվառելու դրույթը, սակայն հաշվի չի առել բժշկի մասնագիտությամբ սովորելու ժամանակահատվածը, որն ի տարբերություն մյուս մասնագիտությունների, ավելի երկարաժամկետ է:

Մինչև 2008 թվականն ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածները հաշվառվել են ապահովագրական ստատուս: Նշվածն ամրագրվել է «Պետական կենսաթոշակների մասին» 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքում, որի 45-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածները հաշվառվում են ապահովագրական ստատուսի մեջ, եթե ուսման տարիներին կամ ուսումն ավարտելուց հետո՝ տասը տարվա ընթացքում, ֆիզիկական անձը վճարումներ է կատարել վճարման պահին գործող օրենսդրությամբ վարձու աշխատողի համար սահմանված պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության վճարի նվազագույնի չափով»: Այս դրույթը գործել է մինչև 26.12.2008 թվականը, որից հետո կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ ապահովագրական (աշխատանքային) ստատուս առկայության դեպքում ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածը, սակայն վեց տարուց ոչ ավելի, հաշվառվել է ապահովագրական ստատուս:



ՀՀ աշխատանքային օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ «աշխատանքային ստաժը կարող է լինել ապահովագրական ստաժ, որում հաշվարկվում է ՀՀ օրենսդրությամբ չարգելված աշխատանքային և այլ գործունեության ժամանակահատվածների հանրագումարը, որի ընթացքում քաղաքացին ենթակա է եղել ապահովագրության, նրա համար և (կամ) նրա կողմից օրենքով սահմանված կարգով կատարվել են պարտադիր սոցիալական ապահովության վճարումներ»: Աշխատանքային օրենսգիրքը նաև սահմանում է ընդհանուր աշխատանքային ստաժը, որում հաշվարկվում է քաղաքացու՝ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածը, ինչպես նաև այլ ժամանակահատվածներ, որոնք թույլատրվում է հաշվարկել աշխատանքային ստաժում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշմամբ՝ խնդիրը ոչ թե բժշկի մասնագիտությամբ սովորելու ժամանակահատվածի՝ ի տարբերություն մյուս մասնագիտությունների, ավելի երկարաժամկետ լինելը հաշվի չառնելն է, այլ այն, որ օրենսդիրը սահմանել է աշխատանքային ստաժում հաշվառման ենթակա ուսման ժամանակահատվածի առավելագույն շեմ՝ անկախ մասնագիտական կրթության տարբեր հաստատություններում (ծրագրերով) սովորած լինելուց: Նախարարությունը կլինիկական օրդինատուրայում սովորելու տարիները մարդկանց աշխատանքային ստաժում չհաշվառելը հիմնավորում է նաև նրանով, որ քանի դեռ ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածները դիտարկվել են որպես ապահովագրական ժամանակահատվածներ (դրանց համար կատարվել են ապահովագրական վճարներ), դրանք ապահովագրական ստաժում հաշվառվել են առանց որևէ սահմանափակման: Որպես այլ գործունեության ժամանակահատված դիտարկելու զուգահեռ, խնդրո առարկա ժամանակահատվածի համար օրենսդիրը սահմանել է առավելագույն շեմ՝ 6 տարուց ոչ ավելի:

Մինչդեռ, Պաշտպանը բարձրացրել է ոչ թե կլինիկական օրդինատուրայում սովորած տարիներն ապահովագրական ստաժում հաշվառելու, այլ այդ ժամանակահատվածը համապատասխան ապահովագրական ստաժի առկայության դեպքում՝ որպես այլ գործունեության ժամանակահատված, ընդհանուր աշխատանքային ստաժում հաշվառելու և խնդրո առարկա ժամանակահատվածի առավելագույն շեմը վերանայելու հարցերը:

*Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

- 1. օրենսդրական փոփոխություններով ներդնել աշխատանքային ստաժի հաստատման կենսաթոշակատուի համար մատչելի մեխանիզմներ,*
- 2. յուրաքանչյուր դեպքով ցուցաբերել անհատական մոտեցում, քննարկել կոնկրետ խնդրի լուծման այլընտրանքային տարբերակներ,*
- 3. փոփոխել աշխատող կենսաթոշակատուների համար լրացուցիչ պարտականություն սահմանող՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի կարգավորումը,*

4. վերականգնել Ադրբեջանից բռնագաղթված անձանց և 1992 թվականին Հայաստանի Հանրապետության Արծվաշեն գյուղից բռնի տեղահանված անձանց աշխատանքային ստաժը սահմանող հանձնաժողովի գործունեությունը,

5. կլինիկական օրդինատորայում սովորած փարիները համապատասխան ապահովագրական ստաժի առկայության դեպքում՝ որպես այլ գործունեության ժամանակահատված, հաշվառել ընդհանուր աշխատանքային ստաժում, ինչպես նաև վերանայել խնդրո առարկա ժամանակահատվածն աշխատանքայի ստաժում հաշվառելու առավելագույն շեմը:

#### **1.4 Աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատվելու դեպքում աշխատանքային կենսաթոշակն ավելի վաղ ժամկետից վերահաշվարկելու և չստացված կենսաթոշակը կենսաթոշակառուին վճարելու հետ կապված խնդիր**

Նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն անդրադարձել էր աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատվելու դեպքում աշխատանքային կենսաթոշակն ավելի վաղ ժամկետից վերահաշվարկելու և չստացված կենսաթոշակը կենսաթոշակառուին վճարելու խնդրին<sup>69</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնում, որ աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատվելու պարագայում կենսաթոշակն ավելի վաղ ժամկետից չի վերահաշվարկվում, այլ վերահաշվարկվում է դատական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը, ըստ որի՝ վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո, եթե այլ բան նախատեսված չէ օրենսգրքով և նույն օրենսգրքի 241-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու վերաբերյալ դատարանի վճիռը հիմք է համապատասխան մարմինների կողմից այդ փաստը գրանցելու կամ հաստատված փաստի կապակցությամբ ծագած իրավունքները ձևակերպելու համար:

Խնդրահարույցն այն է, որ առանց այն էլ դատարաններում գործերի քննությունն ունի տևական բնույթ, այն կարող է տևել տարիներ, իսկ աշխատանքային ստաժի հաստատումից հետո միայն կենսաթոշակի վերահաշվարկ դատական ակտի կայացման օրվանից իրականացնելը զրկում է այդ տարիների համար վճարվելիք կենսաթոշակի գումարից:

<sup>69</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 110-113:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրի կարգավորման կարևորությանն անդրադարձել է չստացված կենսաթոշակի՝ որպես սեփականություն (կենսաթոշակը, սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության է նաև ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի<sup>70</sup>) լինելու և դրա նկատմամբ «իրավաչափ ակնկալիք» ունենալու տեսանկյունից:

Խնդիրը դիտարկելով մեկ այլ հարթությունում՝ տարբերակված մոտեցման և խտրականության տեսանկյունից. կարող ենք նկատել հետևյալը. իրավակիրառ պրակտիկայում, երբ կենսաթոշակային ոլորտում համաձայնագրի մասնակից պետությունում քաղաքացու աշխատանքային գործունեությունը հիմնավորելու նպատակով հարցում է կատարվում, անկախ հարցման դրական պատասխանն ստանալու ժամկետներից, օրենսդրությամբ հստակ ամրագրմամբ չվճարված կենսաթոշակի գումարները վճարվում են անցած ամբողջ ժամանակահատվածի համար: Մինչդեռ, այլ է իրավիճակն աշխատանքային գործունեությունը դատական կարգով հիմնավորելու պարագայում: Այդ դեպքում անցած ամբողջ ժամանակահատվածի համար լրավճար վճարելու վերաբերյալ նորմեր օրենսդրությամբ սահմանված չեն: Նշվածն, ըստ էության, խտրական մոտեցում է տարբեր պատճառներով աշխատանքային գործունեության ժամանակահատվածները քաղաքացիների կողմից հիմնավորելու անհնարինության և այս դեպքում այդ հիմնավորումը վարչական և դատական կարգով հաստատելու գործընթացում առկա միատեսակ փաստական հանգամանքների ոչ իրավաչափ գնահատման համատեքստում: Բացի դրանից, շատ հաճախ կենսաթոշակային մարմինը շահագրգիռ չէ աշխատանքային գործունեությունը վարչական կարգով հաստատելուն և ձևական պահանջների ներկայացմամբ անձանց ուղղորդում են դիմել դատական պաշտպանության:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվել է նաև միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է, որ մի շարք երկրներում առկա կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համար լրացուցիչ երաշխիքներ սահմանող կարգավորումներ: Այսպես, օրինակ՝ Ուկրաինայի կենսաթոշակային ֆոնդի խորհրդի 2005 թվականի նոյեմբերի 25-ի N° 22-1 որոշմամբ հաստատված «Կենսաթոշակների նշանակման (վերահաշվարկի) փաստաթղթերի ներկայացման և կատարման կարգ»-ի համաձայն՝ մարդը կարող է տարիքային կենսաթոշակի նշանակման հարցով կենսաթոշակային մարմին դիմում ներկայացնել կենսաթոշակային տարիքը լրանալուց ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ: Նշվածը լրացուցիչ երաշխիք է, օրինակ, մինչև կենսաթոշակի նշանակումն աշխատանքային ստաժի հաշվարկման հետ կապված խնդիրների բացահայտման, վերհանման և դրանց առնչությամբ կենսաթոշակային մարմնի կամ կենսաթոշակառուի կողմից միջոցներ ձեռնարկելու համար: Այսպիսով, սոցիալական ապահովության ոլորտում խնդիրներից խուսափելու, դրանք առնվազն նվազագույնի հասցնելու կամ

<sup>70</sup> Տե՛ս Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի (Burdov v. Russia) գործով 2002 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 59498/00, կետ 40

կենսաթոշակառուի օգտին որոշ հանգամանքներ հաշվի առնելու համար կարևոր է ոլորտում ճկուն և կենսաթոշակառուների համար մատչելի մեխանիզմների սահմանումը:

Բացի այդ, բարձրացված խնդրի լուծման ուղիներն աշխատանքային կարգով քննարկելու համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում 2021 թվականի ընթացքում տեղի է ունեցել քննարկում Պաշտպանի ներկայացուցիչների և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների միջև: Նախարարության ներկայացուցիչները հավաստիացրել են, որ հաշվի առնելով ներկայում օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայությունը՝ աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելու համար քաղաքացիներն իրազեկվում են կենսաթոշակային մարմնի վրա դատական ակտով այդպիսի պարտավորություն դնելու պահանջ ներկայացնելու մասին:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է դրական տեղաշարժի մասին. աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելու համար քաղաքացիները հիմնականում սկսել են դիմել Վարչական դատարան՝ միանգամից ներկայացնելով պահանջ՝ պարտավորեցնել կենսաթոշակային մարմնին հաստատել համապատասխան աշխատանքային ստաժը: Դա իրենից ներկայացնում է առավել դյուրին ընթացակարգ: Ակնհայտ է, որ նշվածը կենսաթոշակային մարմնի ձևավորած պրակտիկայի արդյունք է:

Կենսաթոշակային մարմնի ձևավորած վերը նշված պրակտիկան ողջունելի է, սակայն չպետք է անտեսել բարձրացված խնդրով օրենսդրական կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը: Հարկ է նկատել, որ այս տարիների ընթացքում բարձրացված հարցով օրենսդրական փոփոխություններ այդպես էլ չեն իրականացվել, և այն մինչ օրս շարունակում է մնալ խնդրահարույց:

*Ելնելով վերոգրյալից՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է ստեղծել անձանց սոցիալական ապահովության իրավունքի լիարժեք իրացմանն ուղղված արդյունավետ մեխանիզմներ (այդ թվում՝ օրենսդրական):*

### **1.5 ՀՀ տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարումը**

Արդիական խնդիր է շարունակում մնալ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների չվճարված կենսաթոշակը ստանալու հնարավորության բացակայության հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող դիմումներն ու բողոքները վկայում են, որ ՀՀ քաղաքացիների Հայաստան վերադառնալու անհնարինությունը հաճախ պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով՝ օրինակ՝ երկարատև բուժման հիմքով: Օրինակ, Մարդու իրավունքների

պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ վերջինս չի կարողացել տարեկան առնվազն մեկ անգամ ներկայանալ բանկ օտարերկրյա պետությունում երկարատև բուժման մեջ գտնվելու հիմքով: Արդյունքում, ներպետական օրենսդրական կարգավորումների ուժով մեխանիկորեն դադարեցվում է կենսաթոշակի վճարումը՝ առանց հաշվի առնելու Հայաստանի Հանրապետություն տարեկան առնվազն մեկ անգամ վերադառնալու պարտականությունը չկատարելու օբյեկտիվ պատճառները:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-ին մասի համաձայն՝ կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառու (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է բանկի միջոցով) կամ Ազգային օպերատորին (եթե կենսաթոշակն անկանխիկ եղանակով վճարվում է Ազգային օպերատորի միջոցով) և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

Կենսաթոշակը անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ Ազգային օպերատորի կողմից կարող է հաստատվել նաև առանց կենսաթոշակառուի բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու՝ Կառավարության սահմանած կարգով:

Կենսաթոշակը կանխիկ եղանակով նաև վճարվում է կենսաթոշակառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչ՝ ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով կենսաթոշակ վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Ընդ որում, կենսաթոշակը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած կենսաթոշակը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 35, մաս 11):

Արդյունքում, օրենսդիրը կենսաթոշակառուին տասներկու ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու, լիազորագրի գործողության ժամկետը լրանալու կամ կենսաթոշակը տասներկու ամիս անընդմեջ լիազորագրով վճարելու կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկու ամսվա ժամկետը լրանալու, ինչպես նաև սույն օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու կամ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկի կամ Ազգային օպերատորի կողմից չհաստատվելու) դեպքերը դիտարկում է կենսաթոշակի վճարումը դադարեցնելու հիմք:

Իսկ չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու (կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, հոդված 36, մաս 1):

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումները թույլ են տալիս փաստել, որ կենսաթոշակի վճարումը դադարեցվում է մեխանիկորեն՝ Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիներին հնարավորություն չընձեռեցնելով վիճարկման առարկա դարձնել բաց թողնված տասներկու ամսվա ժամկետը հարգելի համարելու փաստը:

Հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմումների շարունակականությունը և օրենսդրական անհրաժեշտ կարգավորումներ ամրագրելու անհրաժեշտությունը՝ ՀՀ քաղաքացիների չվճարված կենսաթոշակը ստանալու հնարավորության բացակայության հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Նշված գրությանն ի պատասխան՝ Նախարարությունը հայտնել է, որ խնդրի լուծման նպատակով օրենսդրական փոփոխություններ կատարելը համարում է ոչ նպատակահարմար:

Մասնավորապես, համաձայն նախնական հաշվարկների՝ արտերկրում բնակվող կենսաթոշակառուներին կենսաթոշակ վճարելու արդյունքում ժամանակի ընթացքում կավելանա նաև կենսաթոշակառուների թիվը, և էապես կավելանան կենսաթոշակային ծախսերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ բնակչության պետական ռեզիստրում հաշվառված՝ կենսաթոշակային տարիքի անձանց շուրջ 25 տոկոսը որևէ տեսակի կենսաթոշակ կամ նպաստ ՀՀ-ից չի ստանում:

Ըստ նախարարության տրամադրած տեղեկությունների՝ փոփոխությունը կհանգեցնի նաև փաստացի (մշտապես) արտերկրում բնակվող ՀՀ-ից կենսաթոշակ ստացող երկքաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անձանց թվի, հետևաբար՝ ՀՀ պետական բյուջեի ծախսերի ավելացման:

Միաժամանակ, արտերկրում բնակվող կենսաթոշակառուներին կենսաթոշակ վճարելու դեպքում էապես կավելանա նաև մահացած կենսաթոշակառուին կենսաթոշակ «վճարելու» ռիսկը, ինչը ևս կբերի ծախսերի ավելացման:

Բարձրացված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել նաև հաշվետու տարվա ընթացքում: Այն հարցին, թե 2021 թվականի ընթացքում ինչ քայլեր են ձեռնարկվել Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարման խնդիրը լուծելու ուղղությամբ, մասնավորապես, խոսքը վերաբերում է այն դեպքերին, երբ ՀՀ քաղաքացիների՝ Հայաստան վերադառնալու անհնարինությունը պայմանավորված է եղել օբյեկտիվ պատճառներով (երկարատև բուժման հիմքով), ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պատասխանել է, որ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ

կատարելու համար առաջարկություններ չեն ներկայացվել, չեն նախաձեռնվել (անհրաժեշտություն չի առաջացել):

Պետք է արձանագրել, որ նախկինում Արդարադատության նախարարության և Ազգային ժողովի կողմից փորձ է արվել օրենսդրական ճանապարհով կարգավորել Հայաստանից դուրս գտնվող ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարման խնդիրը՝ կենսաթոշակի վճարման համար անհրաժեշտ լիազորագրի գործողության ժամկետը երկարաձգելու միջոցով: Պետք է նկատել, սակայն, որ այս նախագծային լուծումները նախատեսված էին միայն ապագայում առաջացող իրավահարաբերությունների կարգավորման համար:

Մինչդեռ, արտերկրում ՀՀ քաղաքացիների կենսաթոշակի վճարման խնդիրը պետք է դիտարկել ինչպես ներկայում, այնպես էլ նախկինում կենսաթոշակ չստանալու տեսանկյունից՝ հիմք ընդունելով կենսաթոշակի՝ որպես սեփականություն լինելու փաստը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով ամրագրել խնդրո առարկա բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հնարավորությունը:*

### **1.6 Անկանխիկ եղանակով կենսաթոշակի վճարումը շարունակելու համար փարեկան մեկ անգամ բանկ այցելելու պարտավորությունը**

2021 թվականի ընթացքում շարունակում է արդիական մնալ անկանխիկ եղանակով կենսաթոշակի վճարումը շարունակելու համար տարեկան մեկ անգամ բանկ այցելելու պարտավորության հետ կապված խնդիրը:

Կենսաթոշակի վճարումը շարունակելու համար բանկ ներկայանալու պահանջն ամրագրված է «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում: Օրենքով սահմանված այդ պարտավորությունը շարունակում է դժվարություններ առաջացնել հաշմանդամություն կամ տեղաշարժման դժվարություններ ունեցող, այդ թվում՝ տարեց մարդկանց կյանքում. տասներկու ամիսը մեկ անգամ բանկ ֆիզիկապես ներկայանալու հնարավորություն չունենալու պատճառով դադարեցվում է կենսաթոշակի վճարումը:

Օրինակ՝ բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ մայրը 88-ամյա կենսաթոշակառուն է, կենսաթոշակ ստանում է անկանխիկ եղանակով, ողջ լինելու և Հայաստանում գտնվելու փաստը հաստատելու համար տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջն իր 88-ամյա մոր համար տարեցտարի ավելի է դժվարանում՝ պայմանավորված վերջինիս առողջական խնդիրներով: Ըստ բողոքի՝ քաղաքացին դիմել է բանկին՝ ակնկալելով աջակցություն, սակայն մերժվել է այն հիմնավորմամբ, որ բանկը որևէ պարտավորություն չունի:

Հարկ է նշել, որ խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի տարեկան հաղորդումներում, այն հատկապես ակնառու է դարձել 2020 թվականին՝ հաշվի առնելով այդ

Ժամանակ Նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակով պայմանավորված ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումները<sup>71</sup>:

Մինչև 2020 թվականը «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասում ամրագրված էր, որ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուին (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցիչը՝ ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) կենսաթոշակի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

Պաշտպանի կողմից խնդրի բարձրացումից հետո կենսաթոշակի վճարումը շարունակելու համար բանկ ներկայանալու պահանջն օրենսդրական փոփոխությունների ենթարկվեց, արդյունքում՝ անձամբ բանկ ներկայանալու պահանջի հարցում նախատեսվեցին բացառություններ: Ի ապահովումն դրա՝ Կառավարության 2020 թվականի սեպտեմբեր 24-ի թիվ 1579-Ն որոշմամբ լրացում կատարվեց Կառավարության 2020 թվականի մարտի 12-ի թիվ 284-Ն որոշման մեջ և սահմանվեց, որ շահառուի Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկը կարող է հաստատել նաև առանց կենսաթոշակառուի բանկ ներկայանալու, եթե շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը բանկը հաստատել է՝ 1) բանկի աշխատակցի՝ Հայաստանի Հանրապետությունում շահառուի գտնվելու վայր այցելությամբ, 2) իր ներքին ընթացակարգերին համապատասխան՝ տեղեկատվատեխնիկական միջոցների կիրառմամբ (հաստատելով շահառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը):

Արդյունքում՝ որպես կենսաթոշակի իրավունքի իրացման պայման՝ կենսաթոշակառուի՝ Հայաստանում գտնվելու փաստի հաստատումը թողնվեց բանկի հայեցողությունը՝ հաշվի առնելով օրենսդրությամբ «կարող է» բառի ամրագրումը: Ստեղծվեց իրավիճակ, որ ոչ բոլոր բանկերն ապահովեցին օրենքով ամրագրված լիազորության իրականացումը (բանկի աշխատակիցները չեն այցելում շահառուի գտնվելու վայր և ոչ բոլոր բանկերն են ներդրել կամ կիրառում տեղեկատվատեխնիկական միջոցներ), ինչն էլ կրկին սկսեց հանգեցնել մարդու իրավունքների խախտումների: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ խնդիրը 2021 թվականին նույնպես շարունակվում է. ակնհայտ է, որ հայեցողական լիազորությունների ամրագրումը լիարժեք չի կարող ապահովել հարցի լուծումը:

Այս համատեքստում Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ նշված հարցի լիարժեք կարգավորումն անհրաժեշտություն է՝ հաշվի առնելով

<sup>71</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 94-97:



այն, որ հաշմանդամություն կամ տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց իրավունքներն առանց այն էլ բնույթով զգայուն են: Ուստի, պետությունն իր պոզիտիվ պարտավորությունների առավելագույն կիրառմամբ պետք է ապահովի նրանց իրավունքները:

Պետությունը պարտավոր է գործադրել այնպիսի մեխանիզմներ, որոնք կամրագրեն բանկերի ուղիղ պարտավորությունը և կբացառեն որևէ հայեցողական մոտեցման հնարավորություն: Դա կարող է ապահովվել, օրինակ, պատշաճ վերահսկողության մեխանիզմի ներդրմամբ:

Հարկ է նկատել, որ ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկության՝ վերը նշվածի կապակցությամբ օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու համար առաջարկություններ չի ներկայացվել, չի նախաձեռնվել (անհրաժեշտություն չի առաջացել): Մինչդեռ, Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ դրա անհրաժեշտությունը կա: Այս մասին է վկայում նաև Օրենքի 35-րդ 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքով կենսաթոշակառուների կենսաթոշակի վճարման դադարեցումների քանակը: Ըստ ստացված տվյալների՝ 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ 2021 թվականի ընթացքում կենսաթոշակի վճարումը դադարեցված գործերից թվով 8723 էլեկտրոնային գործերում վճարումը դադարեցվել է Օրենքի 35-րդ 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքով:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ կենսաթոշակառուի Հայաստանի Հանրապետությունում գտնվելու հաստատումն ապահովելու համար օրենքով սահմանել կենսաթոշակների վճարման ծառայություն մատուցող կազմակերպությունների համար հստակ պահանջներ կամ որոշակի խումբ անձանց դեպքում (հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ, տեղաշարժման դժվարություններ ունեցող անձինք) իրավունքահեն միասնական պրակտիկա ապահովող բացառությունների կիրառման մեխանիզմներ:*

### **1.7 Ոչ պատշաճ (թերի) վարչարարությունը և իրազեկման պակասը՝ որպես իրավունքների խախտման պատճառ սոցիալական ապահովության ոլորտում**

Սոցիալական ապահովության ոլորտում որպես մարդկանց իրավունքների խախտմանը հանգեցնող հիմնական խնդիր՝ շարունակում է արդիական մնալ կենսաթոշակային մարմինների ոչ պատշաճ (թերի) վարչարարությունը և իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման պակասը: Այս խնդիրները մշտապես բարձրաձայնվել են Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ խնդիրները հիմնականում նույնաբնույթ են, իսկ հատկապես 2021 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության գործունեության դադարեցման և սոցիալական կարիքների գնահատման միասնական նոր համակարգի՝ Միասնական սոցիալական ծառայության ստեղծմամբ դրանք դրսևորվել են նորովի: Մասնավորապես՝ Միասնական սոցիալական ծառայության աշխատանքների պատշաճ կազմակերպման առումով: հաշվի առնելով այն, որ իրենց գործունեությունը դադարեցրել են սոցիալական պաշտպանության ոլորտի չորս մարմինները՝ սոցիալական ապահովության ծառայությունը, բժշկասոցիալական փորձաքննության, զբաղվածության պետական գրասենյակները, ինչպես նաև մարզային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալություն և համայնքային ենթակայության սոցիալական աջակցության 17 բաժին համակարգվել են նոր ստեղծված Միասնական սոցիալական ծառայության կազմում: 2021 թվականի մարտի 17-ին ընդունվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 37-Լ հրամանը, որով հաստատվել է Միասնական սոցիալական ծառայության կանոնադրությունը և վերապահված լիազորությունների շրջանակներում Ծառայության գործառույթները:

Իրականացված փոփոխությունների արդյունքում տեղի են ունեցել նաև հաստիքների կրճատումներ: Հարկ է նկատել, որ չնայած նրան, որ իրավական առումով Միասնական սոցիալական ծառայությունը ստեղծվել է ավելի վաղ, սակայն այն փաստացի իր աշխատանքներն սկսել է ավելի ուշ: Արդյունքում՝ Միասնական սոցիալական ծառայության աշխատանքում սկզբնական շրջանում առաջացել են տեխնիկական և այլ բնույթի խոչընդոտներ, ինչպես նաև սահմանափակ մարդկային ռեսուրսների պայմաններում չեն ապահովել մարմինն վերապահված գործառույթների պատշաճ կատարումը: Համակարգում տեղի են ունեցել հաստիքների կրճատումներ և հետագայում էլ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններն ուշացումներով են զբաղեցվել (այս մասին առավել մանրամասն կխոսվի սույն հաղորդման «Աշխատանքային իրավունքներ» վերտառությամբ գլխում):

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով մասնավոր կազմակերպության ղեկավար-գործատուն Պաշտպանի աշխատակազմ տեղեկություն է ներկայացրել, որ կազմակերպությունն օտարերկրյա քաղաքացիների աշխատանքի ընդունելու նպատակով դիմել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախկին զբաղվածության գործակալության տարածքային կենտրոն աշխատանքի թույլտվություն ստանալու համար, սակայն որևէ պատասխան չի ստացել: Նշվածի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանել են, որ զբաղվածության գործակալության գործունեությունը դադարեցված է և դրա գործառույթները կատարում է նոր ստեղծված Միասնական սոցիալական ծառայությունը, ուստի դիմումներին ուշ պատասխանելու պատճառը դա է: Նախարարությունից պարզաբանել են, որ Միասնական սոցիալական ծառայությանը դեռևս

հասանելի չէ նախկին մարմնի փաստաթղթաշրջանառությունը և չեն կարող հարցի վերաբերյալ որևէ այլ տեղեկություն հաղորդել:

*Այս կապակցությամբ հարկ է նկատել հետևյալը. լուծարված պետական մարմնի համապատասխան լիազորությունները, գործառույթներն ամբողջությամբ փոխանցվել են նոր պետական մարմնի՝ Միասնական սոցիալական ծառայությանը, բացի այդ՝ նախկին պետական մարմնի մասնակցությամբ առաջացած իրավահարաբերությունները չեն դադարել և նրան էլ վերապահվել են համապատասխան լիազորությունները: Ուստի, լիազոր մարմնից ստացված այն պարզաբանումները, որ քաղաքացիներից ստացված դիմումներին ուշ պատասխանելը պայմանավորված է եղել կազմակերպատիրավական փոփոխություններով և դրա արդյունքում սրտեղծված տեխնիկական բնույթի հարցերով, անընդունելի է, քանի որ այդպիսի փոփոխություններ իրականացնելիս լիազոր մարմինը ամեն դեպքում պարտավոր էր կանխատեսել և ապահովել սոցիալական ապահովության համապատասխան մարմնի պատշաճ և անխափան աշխատանքը:*

Միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումներում արձանագրվել են նաև ռեսուրսների բավարարման և կառավարման խնդիրներ:

Այսպես, Միասնական սոցիալական ծառայության աշխատանքին ծանոթանալու նպատակով, մասնավորապես տարածքային ստորաբաժանումներում առաջացող խնդիրների դիտարկման նպատակով 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մշտադիտարկման այց են իրականացրել Միասնական սոցիալական ծառայության Երևան քաղաքի ստորաբաժանումներից մեկում, որտեղ առանձնազրույցներ են ունեցել քաղաքացիների հետ: Չնայած նախաձեռնված բարելավումներին՝ Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ Միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումներում առկա է ռեսուրսների բավարարման և կառավարման խնդիրներ: Մասնավորապես, արձանագրվել է, որ դիմում ներկայացնելու համար մարդկանց կուտակում կա, բաժիններում տեղադրված հերթերի կառավարման մոնիտորի ձայնի հնչեցումն առանց թվի արտաբերման է, բացակայում են սպասարկման արտոնություններ սահմանող չափանիշներ: COVID-19 համավարակի պայմաններում հերթերի կառավարման և սոցիալական հեռավորության պահպանման նկատմամբ վերահսկողությունը բացակայել է: Բաժիններում առկա նստարանների քանակը ևս բավարար չի եղել սպասարկման սպասող քաղաքացիներին: Պետք է հաշվի առնել, որ ծառայության շահառուները հիմնականում տարեց կամ հաշմանդամություն ունեցող քաղաքացիներ են: Տեղում արձանագրվել է, որ աշխատակիցների քանակը չի բավարարել պատշաճ սպասարկում ապահովելու համար, ինչի հետևանքով հերթեր են գոյացել: Արձանագրվել է նաև դեպք, երբ մանկահասակ երեխայով ծնողը ստիպված է եղել մի քանի ժամ սպասել հերթում՝ ճշտելու համար մայրության նպաստի էլեկտրոնային մի շարք դիմումների մերժման պատճառները:

Դրանից բացի, 2021 թվականի ընթացքում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը չի ապահովել պատշաճ

համագործակցություն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ աշխատանքների շրջանակում:

Խնդիրն այն է, որ Միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումների հեռախոսահամարները երկար ժամանակ հրապարկված չեն եղել, իսկ նախկին հեռախոսահամարները եղել են անհասանելի: Նշվածի արդյունքում տարածքային ստորաբաժանումների հետ կապ չեն կարողացել հաստատել ոչ միայն քաղաքացիները, այլ նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:

Դա խոչընդոտել է նաև Պաշտպանի սահմանադրական գործառույթների իրականացմանը: Զգալի դժվարություններ են առաջացել Պաշտպանի աշխատանքում, հատկապես արագ արձագանքման սկզբունքով մարդկանց դիմումների ընթացքն ապահովելու հարցում (քառքշուկների ավելացում, գործերի լուծման երկար ժամկետներ և այլն): Այս պատճառով է նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստիպված է եղել առավելապես աշխատել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցիչների հետ: Նշվածը նաև որևէ կերպ չի բխել համագործակցության ու գործընկերային աշխատանքի սկզբունքից:

*Այսպես, Միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումները պարտավոր են մշտապես պատշաճ և բարձր մակարդակի համագործակցություն ապահովել Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության հետ: Դա ունի հիմնարար նշանակություն մարդկանց սոցիալական աջակցության օպերատիվ տրամադրման, ինչպես նաև այդ նպատակով տեղեկությունների փոխանակման համար:*

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ վեր են հանվել Միասնական սոցիալական ծառայության աշխատանքների կազմակերպման հետ կապված այլ խնդիրներ ևս: Դրանք հիմնականում վարչարարական բնույթի են:

Բողոքները հատկապես վերաբերում են սոցիալական ապահովության համակարգում ոչ պատշաճ (թերի) վարչարարության հետևանքով մարդկանց իրավունքների խախտմանը, քաղաքացիներից գրավոր դիմումներ չվերցնելուն, կենսաթոշակային մարմին դիմող մարդկանց իրենց իրավունքներին առնչվող ոչ լիարժեք տեղեկությունների տրամադրմանը կամ դրանք առհասարակ չտրամադրելուն:

Այսպես, 2021 թվականի ընթացքում շարունակվել է մարդկանց իրավունքները խախտող կենսաթոշակային մարմինների՝ քաղաքացիներից գրավոր դիմումներ չվերցնելու և սոցիալական իրավունքների, այդ իրավունքներն իրացնելու համար սահմանված ժամկետում փաստաթղթեր ներկայացնելու անհրաժեշտության մասին չիրազեկելու անթույլատրելի պրակտիկան:

Նախ, կարևոր է նկատել, որ սոցիալական ապահովության համակարգում վարչարարության համար կարևոր նշանակություն ունի սոցիալական ապահովության իրավունքի իրացման սկզբնական փուլը՝ դիմում ներկայացնելու պահից սկսած: Ընդ որում, խոսքը վերաբերում է դիմումի

գրավոր ձևի պահպանմանը: Սրա հետ է կապվում այդ դիմումի քննարկման ընթացքում անձի իրավունքների ապահովման հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկումները վկայում են, որ լայն տարածում ունեն դեպքերը, երբ կենսաթոշակային մարմինների աշխատակիցները չեն վերցնում մարդկանցից դիմումներ: Դրան էլ շատ դեպքերում գումարվում է այն, որ մարդիկ պատշաճ չեն տեղեկացվում կամ նրանց չի տրամադրվում խորհրդատվություն անհրաժեշտ փաստաթղթերի կամ այդ փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու և այդ ժամկետը բաց թողնելու հետևանքների մասին:

Ավելին, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ կենսաթոշակային մարմնից մերժումները լինում են բանավոր՝ դրանով իսկ զրկելով մարդուն հետագայում իր իրավունքները պաշտպանելու և անգամ պետական մարմնին իր դիմելը հիմնավորելու հնարավորությունից:

Պետք է հաշվի առնել, որ գրավոր դիմումը ենթադրում է գրավոր ընթացակարգի նախաձեռնում ու գրավոր մերժում, իսկ գրավոր մերժումը հնարավորություն է տալիս մարդուն պատկերացում կազմել իր դիմումը մերժելու հիմքերի մասին: Գրավոր մերժման դեպքում մարդը հնարավորություն կունենա նաև բողոքարկելու այդ մերժումը: Նշվածի բացակայության պատճառով է, որ կենսաթոշակառուն հայտնվում է քաշքշուկների մեջ: Սա անթույլատրելի պրակտիկա է, դրա պատճառով մարդը զրկվում է իրեն հասանելիք գումարներից ևս՝ կենսաթոշակից, նպաստից և այլն:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ 2020 թվականին 63 տարին լրանալու կապակցությամբ դիմել է կենսաթոշակային մարմին տարիքային աշխատանքային կենսաթոշակ նշանակելու նպատակով, սակայն աշխատանքային գրքույկ չունենալու պատճառով կենսաթոշակային մարմնում չեն առաջարկել գրավոր դիմում ներկայացնել: Երկրորդ անգամ դիմել է մեկ տարի անց: Այս անգամ առաջարկվել է գրավոր դիմում ներկայացնել՝ նշելով աշխատած ժամանակահատվածների և գործատուների մասին տեղեկություն: Արդյունքում առաջին անգամ դիմելու օրը գրավոր դիմում չներկայացնելու պատճառով բաց է թողել օրենքով սահմանված ժամկետը: Դիմողի պնդմամբ՝ եռամսյա ժամկետը բաց է թողել, քանի որ կենսաթոշակային մարմնում առաջին անգամ դիմելիս չեն առաջարկել գրավոր դիմում ներկայացնել:

Բողոքներից մեկով էլ դիմողը նշել է, որ միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող է, գրավոր դիմել է կենսաթոշակային մարմին մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքից օգտվելու նպատակով, սակայն հետագայում բանավոր ձևով իրեն տեղեկացրել են, որ որպես միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող՝ այդ իրավունքից օգտվել չի կարող: Դիմողը նշել է, որ դրա վերաբերյալ նույնիսկ գրավոր մերժում չի ստացել, չնայած նրան, որ գրավոր դիմում է ներկայացրել: Քաղաքացին հետագայում դիմել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և ստացել խորհրդատվություն այն մասին, որ

«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքում 2020 թվականին իրականացվել է փոփոխություն, սահմանվել է, որ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստի իրավունք ունեն նաև միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատող համարվող անձինք: Այսինքն, կոնկրետ դեպքում կենսաթոշակային մարմինը, քաղաքացուն ոչ միայն չի իրազեկել օրենսդրական համապատասխան փոփոխությունների մասին, որը քաղաքացիներին իրենց իրավունքների իրազեկման տեսանկյունից է մտահոգիչ է, դեռ ավելին՝ իր իրավունքից օգտվելու վերաբերյալ գրավոր դիմումին տվել է բանավոր մերժում, չի ներկայացրել գրավոր մերժման հիմքերն ու հիմնավորումները՝ զրկելով անձին իր իրավունքից օգտվելու հնարավորությունից:

Մեկ այլ բողոքի համաձայն՝ օտարերկրյա քաղաքացին դիմել է Պաշտպանին՝ նշելով, որ 65 տարին լրանալու կապակցությամբ դիմել է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն իրեն ծերության նպաստ նշանակելու հարցով՝ ներկայացրելով բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը: Միասնական սոցիալական ծառայության գրությամբ տեղեկացել է, որ դիմումը մերժվել է՝ օտարերկրյա պետությունում կենսաթոշակ չստանալու վերաբերյալ փաստաթուղթ չներկայացնելու հիմքով: Դիմողը ներկայացրել է երկրորդ գրավոր դիմումը, որով ներկայացրել է նաև պահանջված փաստաթուղթ: Կենսաթոշակային մարմնի կողմից ժամանակին այդ փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության մասին չտեղեկանալու արդյունքում դիմողը բաց է թողել օրենքով սահմանված եռամսյա ժամկետը, արդյունքում նպաստը նշանակվել է ոչ թե ծննդյան, այլ՝ երկրորդ անգամ կենսաթոշակային մարմին գրավոր դիմելու օրվանից: Բացի դրանից՝ կենսաթոշակային մարմինը խախտել է դիմումին պատասխանելու օրենքով սահմանված 10 աշխատանքային օրը («Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մաս. կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է որոշում):

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ սոցիալական ոլորտում այս կամ այն իրավունքի իրացման համար որոշակի ժամկետներ սահմանելն ինքնանպատակ չէ, այն միտված է այդ ոլորտում պահանջվող կանխատեսելիության ու կայունության ապահովմանը, որն իր մեջ ներառում է ինչպես քաղաքացիների կողմից իրենց իրավունքների պաշտպան և ժամանակին իրացում, այնպես էլ առավել ևս կենսաթոշակային մարմնի կողմից օրենքով նախատեսված ժամկետների պահպանում: Կենսաթոշակային մարմնի կողմից օրենքով նախատեսված ժամկետները չպահպանելը մի շարք դեպքերում կարող է ուղղակիորեն հանգեցնել անձի իրավունքների խախտման: Առավել ևս, որ իրավունքի իրացման ժամկետների չպահպանումը անձի համար առաջացնում է նյութական վնաս:

Միևնույն ժամանակ, կոնկրետ դեպքով (իսկ այդպիսի դեպքերը պրակտիկայում շատ են) ակնհայտ է, որ սոցիալական ապահովության մարմինը նույն անձից ստացել է երկու դիմում, երկրորդ անգամ դիմելու պատճառը առաջին դիմումին մեխանիկական մոտեցում ցուցաբերելն է:

Պատճառն այն է, որ քաղաքացիների դիմումները հաստատելը կամ մերժելը սոցիալական ապահովության մարմինն իրականացնում է էլեկտրոնային համակարգի միջոցով, արդյունքում՝ կոնկրետ դեպքերով դիմումում նկարագրված տարբերվող հանգամանքները քննության առարկա չեն դառնում, ինչը լրացուցիչ աշխատանք է ստեղծում և սոցիալական ապահովության մարմնի համար, և դրա արդյունքում մարդը ստիպված է լինում իր իրավունքների իրացման համար լրացուցիչ քաշքշուկների մեջ ընկնել:

*Պեպք է հաշվի առնել, որ խոսքը սոցիալական ծառայությունների մասին է, այսպես կարևորվում է ոչ միայն մեխանիկորեն դիմումի պատասխանի տրամադրումը, այլ՝ դիմումով բարձրացված իրավունքի տրամադրումը կամ կարիքի բավարարումը, կյանքի դժվարին իրավիճակի հաղթահարման ուղղված աջակցության տրամադրումը:*

Ուստի, սոցիալական ապահովության համակարգում դիմումների էլեկտրոնային համակարգը պետք է պարբերաբար կատարելագործվի, որի միջոցով հնարավոր կլինի ձևավորել խնդրահարույց դիմումներին անհատական մոտեցում ցուցաբերելու, կոնկրետ դեպքերով պրակտիկայում առաջացող խնդիրները վերհանելու, մարդկանց իրավունքներն ապահովելու պրակտիկա:

Մարդկանց սոցիալական ապահովության իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու տեսանկյունից կարևոր է նաև Միասնական սոցիալական ծառայության տարածքային ստորաբաժանումների պատշաճ աշխատանքը: Այս առումով հստակ պետք է արձանագրել, որ տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները մարդկանց իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու նպատակով պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր գործողությունները, որոնց համար իրենք օրենքով լիազորված են:

Անհրաժեշտ է ևս մեկ անգամ ընդգծել կենսաթոշակային մարմնի աշխատակիցների անբարեխիղճ և ոչ իրավաչափ աշխատանքի և գործելաոճի վերացման և համապատասխանաբար վերջիններիս պատասխանատվության պատշաճ կառուցակարգերի անհրաժեշտությունը. այդպիսիք կա՛մ չեն գործում կա՛մ չունեն արդյունավետություն: Հարկ է նշել, որ պատշաճ կառուցակարգերի ներդրման անհրաժեշտության մասին բարձրաձայնել է Պաշտպանը նաև իր նախորդ հաղորդումներում ու զեկույցներում:

Նշվածի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Միասնական սոցիալական ծառայության աշխատանքի հետ կապված ստացվել է 22 բողոք, երկուսը եղել է աշխատակցի վատ վերաբերմունքի մասին՝ աշխատողների նկատմամբ նշանակվել է ծառայողական քննություն, մյուս բողոքները՝ Ծառայության վերակազմավորման պատճառով եղել են նախկին աշխատակիցների աշխատանքից ազատելու մասին բողոքներ, վերջիններիս դիմումներին տրվել է պարզաբանում: Միևնույն ժամանակ, նախարարությունից տեղեկացրել են, որ 2021 թվականի ընթացքում Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների մոտ իրենց աշխատանքի հանդեպ պատասխանատվությունը բարձրացնելու, գործունեության արդյունավետությունը ապահովելու համար կիրառվել են ՀՀ Կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշմամբ

սահմանված աշխատանքային ծրագրերի հաստատման և կատարողականների գնահատման մեխանիզմները, ինչպես նաև իրականացվել են վերապատրաստումներ՝ հաշվի առնելով քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների և կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջները:

Հարկ է նշել, որ մտահոգիչ և խնդրահարույց են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացրած այն տվյալները, ըստ որի՝ Միասնական սոցիալական ծառայության աշխատանքի հետ կապված ստացվել է 22 բողոք, որոնցից էլ բուն երկուսն են վերաբերել հարցադրմամբ ակնկալվող բողոքներին: 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բողոքների թիվը մի քանի տասնյակ անգամ ավելին է: Նշվածը թույլ է տալիս ենթադրելու, որ ինչպես Միասնական սոցիալական ծառայությունը, այնպես էլ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չեն իրականացրել աշխատանքի պատշաճ մշտադիտարկում և գնահատում: Տարվա ընթացքում նախարարությանը միայն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացված դեպքերը բավարար պետք է լինեին եզրահանգելու, թե որքան են թերացել իրենց աշխատանքում Միասնական սոցիալական ծառայության մարմինները:

Ի վերջո ներքին վերահսկողության պատշաճ աշխատանքներ իրականացնելով՝ կապահովվի Միասնական սոցիալական ծառայության ստորաբաժանումների աշխատակիցների նկատմամբ վերահսկողություն, ինչը նաև կբարձրացնի ծառայությունների հասցեականությունը, արդյունավետությունը և որակը:

Ինչ վերաբերում է սոցիալական իրավունքների վերաբերյալ քաղաքացիների իրազեկվածությանը՝ Պաշտպանին հասցեագրված բողոքները և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սա նույնպես շարունակում է մնալ արդիական խնդիր. քաղաքացիները բավարար չափով իրազեկ չեն իրենց իրավունքներին:

Տարածքային ստորաբաժանումներում առկա չեն իրազեկման գործուն մեխանիզմներ, առկա է պատշաճ տեղեկատվության պակաս կենսաթոշակային ապահովման գործընթացի կամ օրենքով պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ: Ինտերնետային կայքերն ու սոցիալական ցանցերի պաշտոնական էջերն ակնհայտորեն բավարար չեն ժամանակակից տեխնոլոգիաներին չտիրապետող կամ դրանցից չօգտվող տարեց քաղաքացիների իրազեկման համար: Այս բացերը կարող են հանգեցնել քաղաքացիների առավել հաճախ այցելությունների կենսաթոշակային մարմիններ, հանգեցնել վարչարարական քաշքշուկների, առաջացնել կոռուպցիոն ռիսկեր: Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ առկա է անբարեհաճ վերաբերմունք կենսաթոշակառուների նկատմամբ, անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու պատրաստակամության բացակայություն: Առավել մտահոգիչ է, որ հանդիպում են դեպքեր, երբ ոլորտի որոշ պատասխանատուներ չեն տիրապետում կենսաթոշակային օրենսդրության գիտելիքների, ինչպես նաև իրենց պարտականություններին: Համակարգի պատասխանատուներն



աշխատակիցների նման վարքագիծը պատճառաբանել են կոռուպցիոն դրսևորումների բացառման պայմաններում աշխատանքի ոչ գրավիչ լինելու հանգամանքով: Ուստի Նախարարությունը պետք է միջոցներ ձեռնարկի ծառայության նկատմամբ սոցիալական ու մասնագիտական գրավչության բարձրացման, բնագավառի իրական կատարելագործման ու արդիականացման ուղղությամբ:

Հարկ է նկատել, որ Պաշտպանի այն հարցադրմանը, թե 2021 թվականի ընթացքում սոցիալական ապահովության իրավունքի իրացման վերաբերյալ հանրային իրազեկման ուղղությամբ ինչ աշխատանքներ են իրականացվել (օրինակ՝ լրատվության միջոցներով, իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակում, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստում և այլն), Նախարարությունը նշել է, որ պարբերաբար թարմացվում է Նախարարության կայքէջը՝ իրազեկելով քաղաքացիներին կատարված փոփոխությունների մասին: Ստացվում է, որ 2021 թվականի ընթացքում հանրային իրազեկումն ապահովվել է միայն Նախարարության կայքէջի միջոցով և հաշվի չի առնվել այն, որ շատ մարդիկ, օրինակ, չունեն անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, կամ էլ չունեն հասանելիություն կամ չեն կարողանում օգտվել Նախարարության պաշտոնական կայքէջից: Ուստի խնդրահարույց է, որ Նախարարությունը հանրային իրազեկման աշխատանքներ իրականացնելու համար ընտրել է մեկ միջոց՝ Նախարարության կայքէջը: Պետք է նկատի ունենալ, որ իրենց իրավունքների մասին հանրային իրազեկվածության պակասը սոցիալական ապահովության ոլորտում իրավունքների խախտման հանգեցնող հիմնական խնդիրներից է:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

1. շարունակաբար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սոցիալական ապահովության փարաձքային բաժինների աշխատակիցների մոտ իրենց աշխատանքի հանդեպ պատասխանատվությունն ավելի բարձրացնելու, սոցիալական ապահովության իրավունքին առնչվող անհրաժեշտ և ամբողջական խորհրդարկությունների տրամադրման և դրա նկատմամբ վերահսկման մեխանիզմների ներդրման ուղղությամբ,

2. շարունակաբար բարձրացնել կենսաթոշակային մարմնի աշխատակիցների անբարեխիղճ և ոչ իրավաչափ աշխատանքի և գործելաոճի վերացման և համապատասխանաբար վերջիններիս պատասխանատվության պարզաճ կառուցակարգերի արդյունավետությունը,

3. իրականացնել ներքին մշտադիտարկման աշխատանքներ Միասնական սոցիալական ծառայության ստորաբաժանումների աշխատակիցների աշխատանքի որակի նկատմամբ վերահսկողություն ապահովելու նպատակով,

4. աշխատանքներ իրականացնել սոցիալական ապահովության իրավունքի ոլորտում մարդկանց իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկումը բարձրացնելու ուղղությամբ նաև լրատվության միջոցներով, իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակումների, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստման և այլ միջոցներով:

## **2. Սոցիալական աջակցության իրավունքների ապահովումը**

### **2.1 «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուներ» հասարակական կազմակերպության անդամների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի սահմանափակումը**

2021 թվականի դրությամբ շարունակվում է չլուծված մնալ աշխատավայրում դժբախտ դեպքերի և մասնագիտական հիվանդությունների հետևանքով «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի իրացման սահմանափակման խնդիրը: Օդաչուների գործը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ առաջին անգամ մուտքագրվել է 2006 թվականին:

Հաշմանդամություն ստացած օդաչուները տարիների ընթացքում ամեն կառավարության հետ նորովի են ստիպված լինում բարձրացնել իրենց իրավունքների պաշտպանության հարցերը, սակայն վերջում միևնույնն է՝ ամեն անգամ ստանում են միայն խուսափողական, խնդրի լուծում չապահովող, չհիմնավորված վախերով պատճառաբանվող ու մարդկանց միայն հույսեր ներշնչող նույնաբովանդակ պատասխաններ:

Այս տեսանկյունից, ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այս տարիների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանները տասնյակներով գրություններ են հասցեագրել պետական համապատասխան մարմիններին՝ անհրաժեշտ օրենսդրական ուսումնասիրություններով և հարցի լուծման առաջարկներով, կազմակերպել կամ նախաձեռնել են քննարկումներ:

Տեղի են ունեցել մի քանի տասնյակ հանդիպումներ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Արդարադատության նախարարության, «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների և հարցի կարգավորման գործում ներգրավված այլ կողմերի միջև:

Արձանագրած արդյունքները և ձեռքբերված պայմանավորվածությունները վկայել են այն մասին, որ վերջիններս ընդունում են խնդրի առկայության փաստը և նրանց ջանքերը միտված են եղել խնդրի շուտափույթ լուծմանը, ինչպես նաև արդարացի ակնկալիք են առաջացրել «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների շրջանում:

Հաշվի առնելով նշված խնդրի համակարգային բնույթը և շարունակականությունը, ինչպես նաև օրենսդրական փոփոխությունների ճանապարհով իրավական լուծումների բացակայությունը՝

Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի մարտի 16-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ հաշմանդամություն ունեցող օդաչուների խախտված իրավունքների վերականգնման հարցով: Սահմանադրականության հարթությունում խնդրո առարկա օրենսդրական կարգավորումների իրավաչափության վիճարկման անհրաժեշտությունը հիմնված են, մասնավորապես, «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուներ» հասարակական կազմակերպության անդամների իրավունքների չսպահովման՝ երկար տարիներով ձգձգվող խնդրի ուսումնասիրության վրա:

Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով վիճարկվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջապահության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» թիվ 579 որոշման, ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշման՝ ՀՀ Սահմանադրության 29-րդ, 60-րդ, 75-րդ, 78-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով ՀՀ քաղաքացիական և աշխատանքային օրենսգրքերի, ինչպես նաև կյանքի կամ առողջությանը պատճառված վնասի հատուցմանն առնչվող ենթաօրենսդրական իրավական ակտերով ամրագրված չեն գործուն իրավական կառուցակարգեր՝ ուղղված կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում աշխատավայրում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալուն:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշմամբ հաստատված կանոնների 16-րդ կետը, որի համաձայն՝ *կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է (վնասի փոխհատուցումը շարունակում է) նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին:*

Այնուհետև, ՀՀ կառավարությունը 2009 թվականի հուլիսի 23-ին ընդունել է «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» թիվ 914-Ն որոշումը, որի համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ մասը:

Պետք է նկատել, սակայն, որ վերոնշյալ և օրենսդրական հետագա փոփոխություններով լուծումներ չեն ամրագրվել այն դեպքերի համար, երբ կազմակերպության լուծարման կամ բացակայության դեպքում կապիտալացված գումարները չեն բավարարում դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման համար:

2006 թվականից մինչ 2020 թվականը կազմակերպության լուծարման վերաբերյալ դատական գործընթացների ավարտին սպասել են նաև օդաչուները, որոնց նպատակն է եղել վերջնական դատական ակտ ունենալուց հետո օրենսդրական նախաձեռնության ճանապարհով ստանալ վնասի հատուցման համար նախատեսված գումարները:

Հատկանշական է, որ խնդրի լուծման նպատակով տարիներ շարունակ հանդիպումներ են տեղի ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Արդարադատության նախարարության և «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների միջև:

Հանդիպումների ընթացքում լսելի են դարձել հաշմանդամություն ունեցող օդաչուների խնդիրները, մանրամասն քննարկվել են խնդրի լուծման կապակցությամբ իրականացվող քայլերը, ընդ որում, թե՛ օրենսդրական հստակ և գործուն մեխանիզմների ներդրման, թե՛ կազմակերպության լուծարման վերաբերյալ ընթացիկ դատական գործընթացներն ավարտին հասցնելու առնչությամբ:

Հանդիպումներին արձանագրած արդյունքները և ձեռք բերված պայմանավորվածությունները վկայել են, որ շահագրգիռ կառույցների ջանքերը միտված են խնդրի շուտափույթ լուծմանը, ինչպես նաև արդարացի ակնկալիք են առաջացրել «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների շրջանում:

Պետք է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների և Կառավարության հետ քննարկումները և ձեռք բերված աշխատանքային պայմանավորվածություններն արձանագրել են խնդրի լուծմանն ուղղված որոշակի դրական տեղաշարժեր:

Այդպիսի տեղաշարժերից էր խնդրի լուծմանն ուղղված օրենսդրական նախաձեռնությունը, որով նախատեսվում էր ստեղծել անհրաժեշտ իրավական հիմքեր՝ ստեղծելով պետական բյուջեի միջոցների հաշվին կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցման իրավունք ունեցող, սակայն այդ հատուցումը չստացող անձանց համապատասխան հատուցման գումարների վճարման հնարավորություն համապատասխան ենթաօրենսդրական ակտի մշակման և ընդունման արդյունքում:

Մասնավորապես, նախագծի համաձայն՝ *աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պարասխանափու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ ֆիզիկական անձի գործունեության դադարեցման դեպքում, եթե տուժողը չի ստանում սույն օրենսգրքի 1086-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վճարները՝ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի հատուցումը կատարվում է պետական բյուջեի միջոցների*

հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի միջոցով: Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված հատուցումը կատարվում է դիմելուն նախորդած երեք տարիների համար միանվագ, և այնուհետք ամենամսյա վճարումների տեսքով:

Մինչդեռ, 2020 թվականի հուլիսի 2-ին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ նախագիծը Վարչապետի հանձնարարականով հետ է ուղարկվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որով հանձնարարվել է հիմք ընդունել ՀՀ արդարադատության նախարարության բացասական եզրակացությունը, ինչի արդյունքում գործընթացը դադարեցվել է:

Ստացվում է, որ ավելի քան 7 տարի Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շրջանառության է դրել այդպես էլ իրականություն չդարձած օրենքի նախագիծ, որի նպատակն է կազմակերպության լուծարման դեպքում լուծել դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների հետևանքով տուժած անձանց վնասի հատուցման հարցը:

Նման գործելաոճն անարդարացի վերաբերմունքի դրսևորում է «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուներ» հասարակական կազմակերպության անդամների նկատմամբ՝ նրանց լեգիտիմ ակնկալիքների տեսանկյունից՝ հաշվի առնելով բարձրացված խնդրի լուծման ժամկետների չարդարացված երկարաձգումները, հաշմանդամություն ստացած օդաչուների տարիքային ու առողջական վիճակը, շահառու օդաչուների մահացության դեպքերը: Սրանք գործոններ են, որոնք առաջ են բերում պետության առավել բարձր պարտավորվածությունը՝ խնդրի հրատապ ու ոչ ժամանակավրեպ լուծումներ գտնելու հարցում:

Ընդ որում, այս տարիների ընթացքում կյանքի և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող օդաչուների թիվը նվազել է. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2016 թվականի նոյեմբերի 28-ին տրամադրած տեղեկությունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «ՀՀ քաղաքացիական ավիացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության անդամների թիվը 58 է:

Իսկ արդեն 2018 թվականին «ՀՀ քաղաքացիական ավիացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հասցեագրած գրությամբ հայտնել են, որ վերջիններիս թիվը նվազել է՝ 132-ից դառնալով 42:

Ավելին, դրանից հետո ևս պարբերական քննարկումների ընթացքում օդաչուները տեղեկացրել են խնդրի լուծմանը տարիներ շարունակ սպասող օդաչուների քանակի շարունակական կրճատման մասին՝ պայմանավորված մահվան նոր դեպքերով:

ՀՀ սահմանադրական դատարանը 2021 թվականի նոյեմբերի 30-ի ՍԴՈ-1618 որոշմամբ<sup>72</sup>, թեև վիճարկվող իրավակարգավորումները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող, այնուամենայնիվ պետք է նկատել, որ դատարանը հայտնել է իրավական դիրքորոշումներ, որոնք կարևոր նշանակություն ունեն «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական

<sup>72</sup> <https://www.concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1618.pdf>

կազմակերպության ներկայացուցիչների կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալուն առնչվող խնդրի լուծման համար:

Մասնավորապես, անդրադառնալով վիճարկվող դրույթների՝ սեփականության իրավունքին համապատասխանության հարցին՝ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք:

Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը սույն գործով հստակ արձանագրել է, որ ՀՀ կառավարության թիվ 579 որոշման մեջ կատարված փոփոխության արդյունքում **սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք ունեն այն անձինք, որոնք աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում վնասներ են կրել մինչև 2004 թվականի համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելը**, իսկ այդ փոփոխությունից հետո վնաս կրած անձինք չունեն սեփականություն ձեռք բերելու օրինական ակնկալիք, ուստի՝ այդ մասով սեփականության իրավունքի պաշտպանության խնդիր առկա չէ:

Այնուհետև, դատարանն արձանագրել է, որ և՛ աշխատանքային, և՛ քաղաքացիաիրավական օրենսդրության շրջանակներում ամրագրված են ինչպես կազմակերպության վերակազմակերպման, այնպես էլ լուծարման դեպքում վնասի հատուցման իրավունքի իրացման կառուցակարգերը, իսկ վնասի հատուցման տրամադրման և համապատասխան վճարների կապիտալացման կարգի մանրամասները նախատեսվում են ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով: **Նման պայմաններում այն անձինք, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվում աշխատավայրում դժբախտ պատահարի արդյունքում, օժտված են վերոնշյալ իրավական կարգավորումների հիմքով պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքով:**

Արդյունքում՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ ՀՀ կառավարության վիճարկվող թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ **մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ կատարված փոփոխության ուժի մեջ մտնելը աշխատավայրում աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը:**

Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում հարկ ենք համարում արձանագրել, որ «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության անդամները դժբախտ դեպքերի, մասնագիտական հիվանդությունների

հետևանքով իրենց կյանքին և առողջությանը պատճառված վնասները կրել են մինչև 2004 թվականի համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելը: Այս ամենը թույլ է տալիս եզրահանգել, որ հաշմանդամություն ունեցող օդաչուները սահմանադրական դատարանի որոշման ուժով ունեն պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունք:

Հաշվի առնելով Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումները՝ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն՝ որպես աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմին, օդաչուների փոխհատուցում ստանալու ուղղությամբ իրականացվող քայլերի վերաբերյալ:

ՀՀ կառավարությունը պարտավոր է առավել սեղմ ժամկետներում փալ այնպիսի լուծումներ, որոնք կապահովեն «ՀՀ քաղաքացիայի հաշմանդամ օդաչուների» հասարակական կազմակերպության ներկայացուցիչների կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքի լիարժեք իրացումը:

## **2.2 Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման պրակտիկ խնդիրներ**

Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակման կապակցությամբ 2021 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքները հիմնականում վերաբերել են նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելուն:

Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու հարաբերությունները կարգավորվում են «Պետական նպաստների մասին» օրենքի և ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 6-ի թիվ 275-Ն որոշման դրույթներով:

Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խնդրահարույց է Կառավարության որոշմամբ հաստատված Հավելված N 1-ի 8-րդ կետի գործնական կիրառումը նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելիս:

Չնայած ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի N 2141-Ն որոշմամբ կանոնակարգվել է նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող երեխաների հաշվառման կարգը, որով սահմանվել է, որ եթե նոր ծնված երեխայի ծննդյան ակտի գրառման մեջ հոր մասին տեղեկությունը լրացվել է մոր գրավոր հայտարարության հիման վրա կամ հոր մասին տեղեկությունը չի լրացվել, նշանակվում է երեխայի ծննդյան միանվագ նպաստ, այնուամենայնիվ խնդիրն առկա է նպաստ նշանակելու գործընթացում՝ կապված երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնվող երեխաների հայրություն ճանաչված լինելու դեպքերի հետ:

Օրինակ, բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ դիմում է ներկայացրել կենսաթոշակային մարմնին 6-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու նպատակով,

սակայն իրեն հայտնել են, որ նշանակվելու է 4-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ, քանի որ առաջին երկու երեխան այլ ամուսնուց են սերվել, որոնց նկատմամբ հայրություն է ճանաչվել: Միևնույն ժամանակ կենսաթոշակային մարմնից տեղեկացրել են 6-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվելու պահանջը, այն է՝ նոտարական վավերացմամբ փաստաթղթի ներկայացում 1-ին երկու երեխաների խնամքն իր կողմից իրականացվելու մասին:

Պահանջը բխում է օրենսդրական կարգավորումից, սակայն ներկայացված բողոքի ուսումնասիրությամբ եզրահանգում ենք, որ նպաստի իրավունքի ձեռք բերումը պայմանավորում է շատ դժվարություններով և քաշքշուկով: Տվյալ դեպքում անձը կենսաթոշակային մարմնին է ներկայացրել 1-ին ամուսնուց փաստաթուղթ այն մասին, որ երեխաների խնամքն իրականացնում է մայրը: Արդյունքում, բավարարվել է պահանջը և նշանակվել է 6-րդ երեխայի ծննդյան միանվագ նպաստ: Ըստ դիմողի՝ նախկին ամուսնու ծնողների աջակցությամբ և մեծ դժվարությամբ է կարողացել ձեռք բերել անհրաժեշտ փաստաթուղթը, քանի որ նախկին ամուսինը կտրականապես հրաժարվել է անհրաժեշտ փաստաթուղթը ներկայացնել, չնայած այն հանգամանքին, որ իր խնամքի տակ են բոլոր երեխաները: Այսպիսով, երեխաների, այդ թվում նոր ծնված մանկահասակ երեխային փաստացի խնամող ծնողն անհարկի քաշքշուկների մեջ է ընկնում: Խնդիրն ավելի է բարդանում, երբ մյուս ծնողի գտնվելու վայրը հայտնի չէ: Այս դեպքում էլ գործում է այն դրույթը, որով սահմանվում է, որ նոր ծնված երեխայի կարգաթիվը որոշելիս հաշվի են առնվում նպաստը նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված (անկախ բնակության (հաշվառման) վայրից) նոր ծնված երեխայի ծնողից (հորից կամ մորից) սերված երեխաները և զավակները (նոր ծնված երեխայի համահայր կամ համամայր քույրերն ու եղբայրները), եթե նոտարական ակտով հաստատված է այդ երեխայի՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը: Այն դեպքում, երբ նոր ծնված երեխայի ծնողների ամուսնությունը գրանցված չէ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում կամ ամուսնությունը գրանցված է նոր ծնված երեխայի ծնվելու օրը կամ դրանից հետո, իսկ հայրությունը ճանաչված է, ապա կենսաթոշակային մարմին դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացվի նոտարական ակտով հաստատված այդ երեխայի՝ նոր ծնված երեխայի ծնողի խնամքի տակ լինելու փաստը:

Ինչպես նախորդ, այնպես էլ 2021 թվականի բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իրավակիրառ պրակտիկայում նոտարները նման գործարք կատարելուց հրաժարվում են, լավագույն դեպքում հաստատում են ծնողի հայտարարությունն այն մասին, որ երեխաների խնամքն իրականացնում է ծնողը (հայր կամ մայր), որպիսի փաստաթուղթն էլ կենսաթոշակային մարմնում հիմք չէ ծնված երեխայի կարգաթիվը որոշելու համար:

Պետք է հաշվի առնել, որ նոր ծնված երեխայի կարգաթիվն արտացոլում և պայմանավորվում է ընտանիքում խնամվող երեխաների քանակով, որով էլ պայմանավորվում է վճարվող նպաստի չափը: Ընտանիքում ծնված երեխաների կարգաթիվ սահմանելու նպատակը, ըստ էության այն է, որ տրամադրվող սոցիալական ապահովության միջոցը ծառայի ընտանիքի բազմազավակությամբ



պայմանավորված կարիքներին, ինչպես նաև ունենա խթանիչ ազդեցություն: Հետևաբար, նոր ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը պետք է ձեռք բերվի՝ հաշվի առնելով ընտանիքում փաստացի խնամվող երեխաների քանակը և դրա համար պետք է ներդրված լինեն և կիրառվեն արդյունավետ մեխանիզմներ, որոնք կոչված են առավելագույնս բարենպաստ որոշում կայացնելուն:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ ապահովել առկա իրավակարգավորումների շրջանակում իրավակիրառ պրակտիկայի դյուրին և պիտանի մեխանիզմներ, որոնք կյանքի կկոչեն օրենսդրի նպատակը և անհարկի դժվարություններ չեն առաջացնի ծնողների համար:*

### **2.3 Ընտանիքների անապահովության գնահատման գործընթացում առաջացող խնդիրներ**

«Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքով որպես պետական նպաստի տրամադրման նպատակ սահմանվել է անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը: Սահմանվել է ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների ծրագիրը, որն իր մեջ ներառում է ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող աղքատ ընտանիքների համար և սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող աղքատ ընտանիքների համար և հրատապ օգնություն: Իսկ հրատապ օգնության տեսակներն են միանվագ հրատապ օգնությունը՝ ընտանիքում երեխայի ծննդյան, առաջին դասարան ընդունվելու դեպքերում և ընտանիքի անդամի մահվան դեպքում, ինչպես նաև եռամսյակային հրատապ օգնությունը՝ անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:

2014 թվականի հունվարի 30-ին ընդունվել է «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին N 145-Ն ՀՀ կառավարության որոշումը, որով կարգավորվել են ընտանեկան կամ սոցիալական նպաստի և հրատապ օգնության նշանակման և վճարման հետ կապված հարաբերությունները:

Նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է ՀՀ կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված սոցիալական նպաստի իրավունք տվող սահմանային միավորից:

Սոցիալապես խոցելի խմբերին պատկանող անձինք՝ հաշմանդամություն ունեցողները, երեխաները, կենսաթոշակառուները, տարեցները, երեխաների առանձնահատուկ խմբերն ունեն որոշակի ազդեցություն ընտանիքի աղքատության մակարդակի ձևավորման վրա:

Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր երկրում անապահովության գնահատման համակարգը դեռևս ունի բազմաթիվ խնդիրներ, որովհետև համակարգը հիմնված է ոչ թե ուղղակի եկամուտների գնահատման վրա, այլ իրականացվում է անուղղակի գնահատում:

Ընտանիքների անապահովության գնահատման համակարգում առկա խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է իր տարեկան հաղորդումներում<sup>73</sup>:

Տարածքային մարմինը Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքում և կարգով՝ գնահատում է սոցիալական աջակցություն հայցողների և ստացողների սոցիալական կարիքները, կազմում անհատական ծրագիրը, ինչպես նաև ապահովում է անհատական ծրագրի իրականացումը և շարունակական հսկողությունը:

Չնայած ընտանիքների անապահովության գնահատումն իրականացվում է ինքնաշխատ եղանակով՝ ընտանիքի սոցիալական գնահատման համակարգի տեղեկատվական ենթահամակարգում ներառված տվյալների հիման վրա, սակայն Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը վկայում է դրա ճկուն չլինելու մասին:

Այսպես, դեպքերից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ ընտանիքը նպաստառու է, ինքն ունի 1-ին խմբի հաշմանդամություն և մշտապես անկողնային խնամքի կարիք, անժառանգ է, բնակվում է 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող եղբոր և նրա կնոջ հետ: Նշել է, որ եղբայրը կնոջ հետ ամիսներ առաջ մեկնել են ՌԴ՝ իրենց որդուն խնամելու նպատակով: Վերջինիս անհրաժեշտ է վիրաբուժական միջամտություն, մասնավորապես լյարդի փոխպատվաստում:

Ընտանիքի անդամների ժամանակավոր բացակայության պատճառով սոցիալական աջակցության մարմնի տեղեկացմամբ անապահովության միավորն իջել է, արդյունքում հնարավոր է նպաստի իրավունքի դադարում: Միավորի պահպանման միակ տարբերակ ընտանիքի բացակա անդամներին բնակության հասցեի հաշվառումից դուրս հանելն է, որը սակայն հնարավոր չէ սեփականատիրոջ ՀՀ-ից բացակայելու պատճառով: Դիմողի պնդմամբ՝ միակ եկամուտը հաշմանդամության և սոցիալական նպաստներն են, չունի այլ եկամուտ և նպաստի իրավունքի դադարմամբ կհայտնվի կյանքի դժվարին իրավիճակում:

Ընտանիքի՝ գտնվելու վայրում հաշվառված, բայց այդ վայրում փաստացի չբնակվող անդամը սոցիալական անձնագրում և տեղեկատվական բազայում հաշվառվում է որպես ընտանիքի «բացակա» նշված անդամ, եթե առկա է տարածքային կենտրոնի և «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված խորհրդի ներկայացուցիչներից կազմված խմբի տնային այցելության մասին արձանագրությունը: «Բացակա» լրացված ընտանիքի անդամի համար սոցիալական անձնագրում ամրագրվում և տեղեկատվական բազայում մուտքագրվում է «հարգելի բացակա», եթե՝ ընտանիքի բացակա անդամը 6 ամիս և ավելի

<sup>73</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 և 2019 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 89 և էջ 99:

Ժամկետով Հայաստանի Հանրապետությունից բացակայում է և ներկայացնում է փաստաթուղթ Հայաստանի Հանրապետությունից դուրս հաշվառված լինելու (բնակվելու) մասին:

Մի կողմից քննարկվող դեպքով հնարավոր չէ կատարել օրենսդրական պահանջը սեփականատիրոջ արտերկրում հաշվառում չունենալու պատճառով, մյուս կողմից էլ հաշմանդամություն ունեցող, ինքնասպասարկման ունակությունից զուրկ քաղաքացին հայտնվում է կյանքի դժվարին իրավիճակում:

Խնդիրը բարձրացվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում՝ առաջարկելով կյանքի դժվարին իրավիճակի կանխարգելման և հաղթահարման նպատակով քայլեր ձեռնարկել, ըստ կարիքի տրամադրել համապատասխան ծառայություններ, սակայն արդյունքներ չեն արձանագրվել:

Մեկ այլ բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ ամուսնալուծված է, ունի մեկ երեխա, ապրում է հաշմանդամություն ունեցող ծնողների տանը: Ընտանեկան նպաստ ստանալու համար դիմել է սոցիալական աջակցության մարմնին և ստացել մերժում՝ եղբոր անունով ՍՊԸ ունենալու պատճառով: Ըստ դիմողի՝ եղբայրը հաշվառված է նույն բնակարանում, սակայն գտնվում է ՌԴ-ում՝ բուժման նպատակով: Վերջինս արդեն 4 տարի է անգիտակից վիճակում է, անկողնային, ունի նաև 1-ին խմբի հաշմանդամություն և չի կարող ՍՊԸ-ն լուծարել, ոչ էլ կարող է լիազորել որևէ մեկին իր փոխարեն գործողություններ կատարելու նպատակով:

Խնդիրը քննարկվել է սոցիալական աջակցության մարմնի հետ և պայմանավորվածություն է ձեռք բերել աջակցության խորհրդի նիստով քննարկել հարցը: Սակայն այդպես էլ հարցը չի լուծվել:

Ինչպես տեսնում ենք, վերոնշյալ երկու բողոքների դեպքում էլ ինքնաշխատ եղանակի կիրառումը ճկուն չէ: Պետք է սահմանել այնպիսի ճկուն մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան իրապես աղքատ և կարիքավոր ընտանիքներին ընդգրկվել համակարգում:

Ընտանիքների անապահովության համակարգի հասցեականության և թափանցիկության կապակցությամբ 2021թ. արձանագրված զարգացումների վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ 2021 թվականի ապրիլի 1-ից գործում է Նախարարության ենթակա մարմինը՝ Միասնական սոցիալական ծառայությունը, սոցիալական պաշտպանության ոլորտի բոլոր 4 մարմինների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակա մարմին սոցիալական ապահովության ծառայության (անվանափոխվել է Միասնական սոցիալական ծառայության), Բժշկասոցիալական փորձաքննության և Զբաղվածության պետական գրասենյակների, ինչպես նաև մարզային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալությունների և համայնքային ենթակայության սոցիալական աջակցության 17 բաժինների ներգրավմամբ: Միասնական սոցիալական ծառայությանն են վերապահվել նշված 4 մարմինների լիազորությունները, որը թույլ է տալիս ապահովել ընտանիքների և քաղաքացիների սոցիալական կարիքի համալիր և միասնական գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը: Ըստ Նախարարության դիրքորոշման՝ այդ փոփոխությունը մեծապես կնպաստի նորաստեղծ Միասնական սոցիալական ծառայության

աշխատանքների բարելավմանը, անխափան աշխատանքին և դրանց կառուցվածքային մոդելի արդյունավետության բարձրացմանը, լիարժեք կայացմանը: Միաժամանակ կապահովվի բնակչության սոցիալական կարիքների առավել հասցեական և ամբողջական գնահատում, մատչելի, նպատակային և որակյալ սոցիալական համայնքահեն ծառայությունների ամբողջական փաթեթով անխափան տրամադրման ապահովում՝ կիրառելով դրա իրականացման համար առավել ճկուն և արդյունավետ մեխանիզմներ:

2021 թվականի ապրիլի մեկից ձևավորված Միասնական սոցիալական ծառայությունը միտված է անապահով ընտանիքների կարիքները թիրախային վերլուծություն իրականացնելուն և արդյունավետ որոշումներ կայացնելուն: Մինչդեռ, դիտարկումները վկայում են, որ Միասնական սոցիալական ծառայության աշխատանքը, պարտականությունները և վարչարարությունը կատարվել է թերացումներով: Նշվածի մասին առավել մանրամասն անդրադարձ կատարվել է սույն տարեկան հաղորդման «Ոչ պատշաճ (թերի) վարչարարությունը և իրազեկման պակասը՝ որպես իրավունքների խախտման պատճառ սոցիալական ապահովության ոլորտում» պարագրաֆում:

Ցանկացած բարեփոխումների հիմքում պետք է հաշվի առնվեն համակարգի առկա թերությունները և բացթողումները, բացի կարգավորումների բարելավումից, պետք է կարևորել նաև ծրագրերը կյանքի կոչող մեխանիզմները և մարդկային ռեսուրսները: Այս համակարգում տարիներ շարունակ արմատացած մարդկային գործոնի խնդիրը պետք է բալանսավորել՝ դրա նվազեցմամբ և յուրաքանչյուր անհատական դեպքին մեխանիկական մոտեցում չցուցաբերելով: Նշվածը հնարավորություն կտա բարձրացնել ծրագրի հասցեականությունը: Չարաշահումների դիսկն առավել դրսևորվում է սոցիալական աջակցության տեսուչների կողմից տնային այցելություններ իրականացնելիս: Այս դեպքում չեն գործում անապահովության գնահատման գործընթացին անմիջականորեն մասնակցող տեսուչի գործողությունները գնահատելու պատշաճ վերահսկման մեխանիզմներ: Հետագայում չարաշահումներ հայտնաբերելիս պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է նպաստառուի վրա, և վերջինս զրկվում է ընտանեկան կամ սոցիալական նպաստ ստանալու իրավունքից:

Օրինակ, դեպքերից մեկով հաշմանդամություն, ինչպես նաև հենաշարժողական խնդիր ունեցող միայնակ տարեցը տեղեկացրել է, որ սոցիալական նպաստը դադարեցվել է: Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ տեսուչը մեկ անգամ տնային այցելություն է կատարել և բնակարանում հանդիպել մեկ այլ անձի, ով ներկայացել է նպաստառուի նախկին կինը, որին էլ արձանագրել է որպես ընտանիքի անդամ և քայլեր ձեռնարկել նպաստի իրավունքը դադարեցնելու ուղղությամբ:

Դիմողի պնդմամբ՝ նախկին կինն իր հետ համատեղ կենցաղ չի վարում, երբեմն այցելում է խնամքի նպատակով: Հակառակ փաստն էլ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչին պնդել է տեսուչը՝ առաջարկելով սոցիալական անձնագրում ներառել նաև կնոջը, որի դեպքում էլ անապահովության միավորն ինքնաշխատ եղանակով նվազել է:

Ստացվում է, որ երկու կողմերի ներկայացրած փաստարկները տարբեր են և հակասական, ուստի անհրաժեշտ է վերահսկողական կարգով լրացուցիչ տունայցեր իրականացնել, ինչպես օրինակ հանձնաժողովային կարգով:

Այս հարցում կարևոր է սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակցի ստանձնած դերը, ով կարող է օբյեկտիվորեն չգնահատել անձի փաստացի սոցիալական վիճակը կամ պարզապես անուշադրության, անտարբերության, իրականացված ոչ պատշաճ վարչարարության պատճառով թերի տվյալներ մուտքագրել համակարգ, որի դեպքում էլ հաշվարկված անապահովության միավորը չի արտահայտելու անձի սոցիալական իրական դրությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են նաև, որ դեռևս առկա են այն դեպքերը, երբ սոցիալական աջակցության մարմնում անձանց չեն առաջարկվում լրացնել դիմում-հայտարարագրեր, ինչը վարչարարության համար կարևոր նշանակություն ունի: Բանավոր մերժվում է նպաստների նշանակման գործընթացի վարումը՝ ներկայացնելով անապահովության միավորը չբավարարելու համոզմունք: Արդյունքում, անձինք զրկվում են նպաստն ստանալու իրավունքից, այդ թվում՝ հրատապ օգնությունից: Բողոքներ են եղել նաև սոցիալական աջակցության մարմնի աշխատակիցների կոպիտ, վատ և արհամարհական վերաբերմունքի վերաբերյալ:

Տարեկան հաղորդումներով Պաշտպանն առաջարկել էր բարձրացնել համակարգի տեսուչների նկատմամբ վերահսկողությունը՝ չարաշահումների վերհանման, քաղաքացիների հետ վարքագծային կանոնների պահպանման և պատասխանատվության ենթարկելու նպատակով, սակայն բողոքները ցույց են տալիս, որ շարունակվում է նման արատավոր պրակտիկան:

Օրինակ, բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ 70 տարեկան կենսաթոշակառու է, ամուսինը մահացած է, որդին՝ ազատագրված, բնակվում է միայնակ՝ հարազատի բնակարանում: Դիմել է սոցիալական աջակցության մարմնին նպաստի իրավունք ձեռք բերելու նպատակով, սակայն մերժել են՝ ոչ միայն տեղեկացնելով, որ չի կարող նպաստ ստանալ կենսաթոշակը բարձր լինելու պատճառով, այլ նաև նրան մեղադրել են ոչ բանիմաց լինելու համար:

Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ մարմնում ոչ միայն ձևավորվել է անապահովության միավորը չբավարարելու համոզմունք, այլ դիմում-հայտարարագիր լրացնելու առաջարկ չի եղել: Իսկ երբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը խնդիրը քննարկել է տեսուչի հետ, վերջինս պնդել է անապահովության միավորը չբավարարելու հիմնավորումը և միաժամանակ տեղեկացրել, որ եռամսյակային հրատապ օգնություն ստանալու դիմումի ընդունումը հնարավոր է միայն իր ղեկավարի թույլտվությամբ, այլ ոչ թե սահմանված կարգավորումների ուժով:

Մեկ այլ բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ առաջին խմբի հաշմանդամություն ունեցող անձ է, միայնակ խնամում է մեկ տարեկան իր երեխային: Հայտնել է, որ ստանում է նպաստ, սակայն տեղյակ չէ, թե ինչ նպաստ է: Խնդրել է օգնել՝ երեխայի համար լրացուցիչ գումար

ստանալու հարցում: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչն իրականացրել է այց, ուսումնասիրել փաստաթղթերը: Արդյունքում պարզվել է, որ դիմողն ստանում է հաշմանդամության նպաստ (26.500 ՀՀ դրամ) և ընտանեկան նպաստ: Ըստ դիմողի՝ սոցիալական աջակցության մարմինն դիմելիս չի իրազեկվել սոցիալական աջակցության բնույթի կամ սոցիալական այլ ծառայություններից օգտվելու հնարավորության մասին, փոխարենը արժանացել է արհամարհական վերաբերմունքի, ավելին, ստացել նախատինք՝ առողջական և սոցիալական նման խնդիրների պարագայում երեխա ունենալու համար:

Անապահովության նպաստների վերաբերյալ բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ նպաստի իրավունքի դադարեցման պատճառներն են ավտոմեքենայի առկայությունը, գործարքների կատարումը, մաքսային գործարքների կատարումը, ձեռնարկատիրական գործունեությունը, էլեկտրոէներգիայի ծախսի գերազանցումը և այլն, ինչպես նաև ընտանիքի կազմի և եկամուտների մասին ոչ հավաստի տեղեկատվության տրամադրումը: Երբեմն, նպաստի իրավունքը դադարում է ոչ քաղաքացու մեղավորության, այլ օրենսդրության ճկուն չլինելու պատճառով: Օրինակ, քաղաքացու տեղեկացմամբ՝ դիմել է սոցիալական աջակցության մարմինն ընտանեկան նպաստ նշանակելու համար, սակայն տեղեկացրել են, որ անապահովության միավորը 0-ից չի կարող բարձրանալ, քանի որ ընտանիքի անդամ հոր անվամբ առկա է ավտոմեքենա: Դիմողի պնդմամբ՝ հայրն արտերկրում է, ավտոմեքենան՝ նույնպես: Նշել է նաև, որ ապրում է 21-ամյա ուսանող քրոջ հետ: Ինքը չափահաս է, չի աշխատում: Բնական է դիմողին պարզաբանվել է, որ ավտոմեքենայի առկայությունը և տեխնիկական զննում անցնելու հանգամանքն ընտանիքի անապահովության միավորի վրա ազդեցություն են գործում (ՀՀ կառավարության 2014թ. թիվ 145-Ն որոշում): Որպես լուծում առաջարկվել է քայլեր ձեռնարկել կամ հորը բնակության վայրի հաշվառումից հանելու, կամ հոր բնակության վայրի և հաշվառման վերաբերյալ տեղեկանք արտերկրից ներկայացնելու ուղղությամբ:

Ընտանիքի անդամի՝ ավտոմեքենա ձեռք բերելու կամ այլ անձի ավտոմեքենան շահագործելու դեպքում (ինչպես նաև ավտոմեքենայի տարեթվի, ձիաուժի հետ կապված), որը հանգեցնում է անապահովության միավորի զրոյացմանը, Նախարարության տեղեկացմամբ՝ օրենսդրական բարեփոխումները քննարկման փուլում են:

Մեկ այլ օրինակ, քաղաքացին հայտնել է, որ ընտանիքն ընդգրկված է ընտանիքների անապահովության գնահատման համակարգում, ստանում է ընտանեկան նպաստ: Ունի 4 անչափահաս թոռ, հարսն անժամկետ 3-րդ խմբի հաշմանդամ է, որդին չունի մշտական աշխատանք, հիմնականում աշխատում է օրավարձով: Վերափաստագրման նպատակով անհրաժեշտ փաստաթղթերով ներկայացել են սոցիալական աջակցության մարմին, որտեղ պահանջել են որդու՝ զբաղվածության կենտրոնում գրանցված լինելու մասին տեղեկանք, եթե ոչ, ապա՝ վերափաստագրում չի իրականացվի: Ըստ դիմողի՝ որդին գտնում է տարբեր օրավարձով աշխատանքներ, կարիք չունի գրանցվել որպես աշխատանք փնտրող անձ: Ճիշտ է պետք խրախուսել գրանցված աշխատողներին, բայց մի կողմից էլ պետք է հաշվի առնել, որ չգրանցվելու

հանգամանքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ վերափաստագրման համար: Պաշտպանի աջակցությամբ վերափաստագրումն իրականացվել է:

Գնահատման համակարգում դրսևորվող խնդիրներից է սոցիալական կամ ընտանեկան նպաստի իրավունքից զրկվելը՝ պայմանավորված շահառուի եկամուտների անհամաչափ փոփոխությամբ: Խնդիրն առավել ցայտուն դրսևորվում է սոցիալական ապահովության այլ միջոցների փոփոխության դեպքում: 2021 թվականի ընթացքում սոցիալական ապահովության միջոցների չափերի փոփոխություն տեղի չի ունեցել: 2022 թվականի հունվարի 1-ից օրինակ բարձրացել է նվազագույն կենսաթոշակի չափը՝ 28,600 դրամ՝ նախկին 26,500 դրամի փոխարեն: Բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ անապահովության համակարգում հաշվառված և նպաստառու ընտանիքի անդամների եկամուտների (շատ դեպքերում սոցիալական ապահովության միջոցների) չնչին փոփոխությունը հանգեցնում է նպաստի իրավունքից զրկվելուն: Այսպիսով, ստացվում է, որ եկամտի 2100 դրամով փոփոխության արդյունքում ընտանիքը կարող է զրկվել 18 հազար դրամ նպաստի գումարից: Նշվածը չի կարող դիտվել սոցիալական աջակցության քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու, նպաստառու ընտանիքներում աղքատության վերարտադրությունը հաղթահարելու տեսանկյունից առավել բարենպաստ արդյունք: Ստացվում է, որ ընտանիքները եկամտի չնչին բարձրացումով անհամաչափ զրկվում են ոչ միայն ավելի մեծ չափի գումարից, այլ նաև սահմանված արտոնություններից՝ պետական պատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական օգնությունից, դեղորայքից և այլն: Իսկ կենսաթոշակի բարձրացումով պայմանավորված սոցիալական աջակցության հնարավոր դադարեցումից խուսափելու համար ընտանեկան կամ սոցիալական նպաստ նշանակելու համար անապահովության սահմանային մեծության միավորի փոփոխություն 2021 թվականին չի նախատեսվել:

Տարածված արատավոր պրակտիկա է նաև նպաստի իրավունքի դադարեցումից միայն 6 ամիս հետո դիմում ներկայացնելու թույլտվությունը, որը չի բխում իրավական կարգավորումներից: Պետք է հաշվի առնել նաև, որ անապահով ընտանիքներին բնորոշ է իրազեկված չլինելը: Աղքատության մեջ հայտնվելով՝ շատ հաճախ մարդիկ կորցնում են նաև տեղեկատվության հասանելիությունը և տեղեկություն ձեռք բերելու հմտությունները: Ուստի, այդ պատճառով հաճախ են լինում աղքատ ընտանիքներ, ովքեր չեն կարողանում օգտվել իրենց համար սահմանված օգնություններից, արտոնություններից իրազեկվածության ու անհրաժեշտ խորհրդատվության անբավարարության կամ անմատչելիության պատճառով:

Այսպիսով, աղքատության խորացման, աղքատությունից դուրս գալու հանգամանքները, դրան նպաստող գործոնները բազմազան են, ուստի անհատական սոցիալական ծրագիրն առավելագույնս հասցեական դարձնելու ջանքերը պետք է լինեն առավելագույն, քանի որ այն ուղղված է աղքատ ընտանիքներին: Դրանք պետք է ուղղված լինեն աղքատությունից դուրս գալուն օգնող հանգամանքների ճշտմանը և դրանք, որպես բնութագրիչ, օգտագործելը: Վերանայվող մեթոդաբանությունը պետք է ներդաշնակ լինի իրական կարիքներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ փարհների առաջարկը՝ անհրաժեշտ է՝

1. շարունակաբար բարձրացնել համակարգի հասցեականությունը և թափանցիկությունը՝ ներդնելով գործուն օրենսդրական մեխանիզմներ,
2. ուժեղացնել վերահսկողությունը տեսուչների նկատմամբ՝ չարաշահումների վերհանման, կանխման և պատասխանատվության ենթարկելու նպատակով,
3. իրականացնել վերահսկողություն մարդկանց սոցիալական աջակցության համակարգին առնչվող անհրաժեշտ և ամբողջական տեղեկությունների տրամադրումն ապահովելու նպատակով,
4. կատարելագործել ընդհանրիքների անապահովության գնահատման բանաձևի կիրառումը, որը հնարավորություն կտա մարդկային գործոնի նվազագույն մասնակցությունը:

#### **2.4 ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդի փոխհատուցում**

2021 թվականի ընթացքում շարունակում է մնալ խնդրահարույց ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման հասցեականության հարցը: Պաշտպանին բողոքներ հասցեագրվել են նաև 2021 թվականի ընթացքում:

2021 թվականի դեկտեմբերի 23-ի N 2112-Ն որոշմամբ Կառավարությունը փոփոխություն է կատարել 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշման մեջ, որով ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմը բարձրացվել է և սահմանվել է նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրած դրամական ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրումը մինչև 1939 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված մարդկանց 1938 թվականի փոխարեն:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ նախկինում ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք տվող տարիքային շեմը բարձրացվել էր 2 տարով: Ուստի, տվյալ պարագայում անհասկանալի է տարիքային շեմի 1 և ոչ թե նախկինում իրականացվող 2 տարվա փոփոխության տրամաբանությունը. տարիքային շեմն առնվազն 2 տարով բարձրացնելը հնարավորություն կնախատեսեր ավելի ընդլայնել փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը:

Այսպիսով, փոխհատուցում ստացող անձանց շրջանակը ինչ-որ չափով 2021 թվականի ընթացքում ընդլայնվել է, սակայն հարկ է նշել, որ ավանդների հասցեականության խնդիրը շարունակում է մնալ խնդրահարույց:



Ավանդների փոխհատուցման գործընթացը շարունակում է արդարացիորեն չգոհացնել քաղաքացիներին: Հաշվի առնելով այն, որ փոխհատուցում ստացող հասցեատերերը հիմնականում տարեցներ են, մեծ է հավանականությունը, որ կլինեն շահառուներ, որոնք կմահանան առանց իրենց իրավունքն իրացնելու, առավել ևս՝ կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում: Սրան գումարվում է նաև այն, որ ավանդատուի փոխհատուցում ստանալու պահանջի իրավունքն անձի հետ անխզելիորեն կապված իրավունք է, այն չի կարող անցնել այլ անձի (բացառությամբ՝ զոհվածների ժառանգների), լինել գրավի առարկա, մտնել ժառանգության զանգվածի մեջ:

Այսինքն՝ ընդհանուր գնահատականով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության այն դիրքորոշումը, ըստ որի՝ ներդրված դրամական ավանդների փոխհատուցման տրամադրման գործընթացը՝ որպես սոցիալական աջակցության ծրագիր, ուղղված է աղքատության հաղթահարմանը և այդպիսով չի հետապնդում ներդրված դրամական ավանդների վերադարձման բուն նպատակ, մնացել է նույնը:

*Պեպոն է նշել նաև, որ լիազոր մարմնի նման դիրքորոշումը չի բխում սոցիալական աջակցության սկզբունքից, մասնավորապես չի ապահովում ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման առավել թիրախային և ընդգրկուն հասցեականություն:*

Նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում որպես խնդիր առանձնացվել է նաև ավանդների փոխհատուցման ընթացակարգի երկարատև և բարդ լինելը:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ իրավական ակտերի միջոցով պարբերաբար պարզեցվում և հստակեցվում է ավանդների փոխհատուցման գործընթացը: Մինչդեռ, հարկ է նկատել, որ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կարգավորումներ չեն նախատեսվել՝ ուղղված ավանդների փոխհատուցման գործընթացի պարզեցմանը:

Նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչև 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց հաշվառման, հաշվառված տվյալների ճշտման, ճշտված ցուցակի ձևավորման և վճարումների իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշմամբ՝ լիազոր մարմինն ընդունում է դիմումները, իրականացնում դիմումում նշված տվյալների ճշգրտում, դիմումների հաշվառում, տեղեկատվական բազայի ներկայացում կենտրոնական տեղեկատվական բազան շահագործող կազմակերպություն: Այնուհետև՝ Կազմակերպությունը տարածքային կենտրոններից առցանց ստացած տեղեկատվությունն ամփոփում և ներառում է կենտրոնական տեղեկատվական բազա, պարզում տվյալների մուտքագրման տեխնիկական սխալների առկայությունը, որոնց հիման վրա կազմում է ավանդատուների ճշտված ցուցակը և վիճահարույց տվյալներով ավանդատուների ցուցակը: Վիճահարույց տվյալներով ավանդատուների ցուցակը տրամադրվում է տարածքային կենտրոններին՝ համապատասխան ուղղումներ կատարելու և մինչև հաջորդ ամսվա 8-ը

կազմակերպությանը վերադարձնելու համար: Կազմակերպությունը ճշտված ցուցակում ավանդատուի հաշվառման հերթական համարը որոշում է դիմումի օրվա դրությամբ՝ ըստ որոշակի առաջնահերթությունների: Ճշտված ցուցակում ընդգրկված ավանդատուի՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ փոխհատուցում ստանալու գույքային իրավունքը համարվում է ծագած տարածքային կենտրոնների ղեկավարների կողմից ավանդատուի փոխհատուցման իրավունքի ճանաչման կարգադրությունը հաստատվելու օրվանից: Որից հետո՝ ավանդատուների փոխհատուցման վճարումներն իրականացվում են ամսական պարբերականությամբ՝ ըստ ավանդատուների հերթական համարի:

Այսպիսով, նախատեսված չեն ավանդների փոխհատուցման հստակ միջանկյալ և վերջնական ժամկետներ. դա լրացուցիչ դժվարություն է ստեղծում ավանդների փոխհատուցման հարցում: Ավանդի փոխհատուցումը պետք է իրականացվի հնարավոր կարճ ժամկետներում. պետք է հաշվի առնել, որ հասցեատերը հիմնականում տարեց անձ է:

Օրինակ՝ բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ հայրը ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրել է դրամական ավանդ, հայրը լիազորել է իրեն, որպեսզի ստանա դրամական ավանդի դիմաց փոխհատուցումը: 2021 թվականի փետրվարի 17-ին դիմել է «ՎՏԲ-Հայաստան» բանկ դրամական փոխհատուցումը ստանալու համար, որից հետո ապրիլի 14-ին տվյալները փոխանցվել են Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժին: 2021 թվականի մայիս ամսին հայրը մահացել է: Չնայած որ դիմողը պնդել է, որ նախքան հոր մահանալն արդեն հոր տվյալներն ընդգրկված են եղել դրամական ավանդների դիմաց փոխհատուցման վճարման ցուցակում և ինքը ժառանգության իրավունքի վկայագրով պետք է փոխհատուցման գումարն ստանար, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման գրավոր ընթացակարգի շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի ղեկավարի կողմից չի հաստատվել ավանդատուի փոխհատուցման իրավունքի ճանաչման կարգադրությունը՝ մահանալու պատճառով, ուստի ներդրված դրամական ավանդների դիմաց տրամադրվող փոխհատուցման գումարը մահացած անձի ժառանգներին վճարել հնարավոր չէ:

Այսպիսով, չնայած Որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 36-րդ կետը սահմանում է, որ եթե ավանդատուն մահացել է իր տվյալներն ավանդի փոխհատուցման վճարման ցուցակում ներառվելուց հետո, ապա մահացած ավանդատուին հասանելիք փոխհատուցումը վճարվում է նրա ժառանգին (ժառանգներին)՝ ավանդատուի բնակության վայրը (բնակչության պետական ռեգիստրում հաշվառված՝ բնակության վայրի հասցեն) սպասարկող տարածքային կենտրոն ներկայացրած դիմումի և նոտարի կողմից տրված ժառանգության իրավունքի վկայագրի հիման վրա, այնուամենայնիվ՝ պրակտիկայում հնարավոր են այնպիսի դեպքեր, ինչպիսին վերը նկարագրվածն է, որ դրամական ավանդների փոխհատուցման գործընթացը հասած լինի վերջնական փուլին՝ ավանդատուի տվյալները փոխհատուցման վճարման ցուցակում ընդգրկելուն,

սակայն օբյեկտիվ պատճառներով պայմանավորված՝ Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժինը չհաստատի ավանդատուի փոխհատուցման իրավունքի ճանաչման կարգադրությունը: Իրավակիրառ պրակտիկայում հանդիպող նմանատիպ դեպքերը շատ են և ինքնին խնդրահարույց: Այսպես, իր իրավունքի իրացումը նախաձեռնած անձը մայիս ամսվա դրությամբ դեռ չի ստանում փոխհատուցում, ավելին՝ լինելով իրական հասցեատեր, այդպես էլ վերջինիս համար չի ապահովում վերջնական արդյունքը:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հայտնած տեղեկության՝ 2021 թվականի ընթացքում ամսվա կտրվածքով ավանդի փոխհատուցում ստացել է շուրջ 490 ավանդատու, իսկ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրած ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու գործընթացը տևում է մոտ 1-ից 2 ամիս: Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ փոխհատուցում ստանալու գործընթացի տևողությունը հաճախ շատ ավելին է:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին, ով ծնվել է 1937 թվականին, նշել է, որ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ունի ներդրած ավանդ: Նշել է նաև, որ, ավանդի դիմաց փոխհատուցման հարցով դիմել է լիազոր մարմին՝ ներկայացնելով անհրաժեշտ փաստաթղթեր: Դիմողի պնդմամբ՝ փոխհատուցման վճարումը շուրջ 7 ամիս ձգձգվել է:

Դեպքերից մեկով էլ քաղաքացին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով 2021 թվականի փետրվարի 10-ին դիմել է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ: Դիմում ներկայացնելիս «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ից տեղեկացվել է, որ անհրաժեշտ փաստաթղթերը 90-օրյա ժամկետում կներկայացվեն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: Այնուհետև, 90 օր անց քաղաքացուն հրավիրել են Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժին և տեղեկացրել, որ փոխհատուցման գումարը կվճարվի 2-3 ամիսների ընթացքում, արդյունքում՝ փոխհատուցում ստանալու դիմումը ներկայացրել է փետրվարի 10-ին, սակայն երկար ժամանակ փոխհատուցումը չի ստացել: Պաշտպանի աշխատակազմում բողոքի ուսումնասիրության շրջանակներում խնդիրը քննարկվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ներկայացուցչի հետ, քննարկման արդյունքում պարզվել է, որ դիմողի տվյալները դեռևս ներառված չեն փոխհատուցման վճարման ցուցակներում, սակայն հաշվի առնելով ցուցակում առկա անձանց քանակը՝ փոխհատուցումը դիմողին կտրամադրվի 2021 թվականի հոկտեմբեր ամսին: Վերը ներկայացված դեպքում ևս օրենսդրությամբ գործընթացի պատշաճ կազմակերպման համար հստակ ժամկետներ նախատեսված չլինելու պատճառով ավանդի դիմաց փոխհատուցումը երկար ժամանակ ձգձգվել է:

Այսպիսով, ավանդների փոխհատուցման գործընթացի բարդ և ժամանակատար լինելու խնդիրը համակարգային առումով պահպանվում է:

Ուստի, հաշվի առնելով նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը (նրանք հիմնականում տարեց անձինք են)՝ անհրաժեշտ է ավանդների փոխհատուցման գործընթացը պարզեցնել, սահմանել հնարավորինս կարճ ժամկետներ՝ սոցիալական աջակցության այդ իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու համար:

2021 թվականին ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքների բնակավայրերին սոցիալական աջակցության տրամադրման նպատակով փոխհատուցման կարգը, ժամկետները, չափորոշիչները և աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը հաստատելու մասին» N 1444-Ն որոշման մեջ իրականացվել է փոփոխություն. սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ցանկը ընդլայնվել է: Արդյունքում՝ ավանդի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք են ձեռք բերել Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակից կամ մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող և հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված անձինք:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրած ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով Հայաստանի սահմանամերձ համայնքների բնակավայրերից 2021 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ հաշվառվել է շուրջ 460 ավանդատու և բոլորն էլ ընդգրկվել են ավանդի փոխհատուցման վճարման ցուցակներում: Սակայն առանձին-առանձին՝ ըստ սահմանամերձ համայնքների բնակավայրերի, նախարարությունը տեղեկատվություն չի տրամադրել՝ նման վերլուծություններ առկա չլինելու պատճառաբանությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սյունիքի մարզի սահմանային բնակավայրերում 2021 թվականի ընթացքում իրականացված փաստահավաք աշխատանքների ընթացքում, ի թիվս այլ սոցիալական խնդիրների, արձանագրվել են խնդիրներ նաև ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման գործընթացում դժվարությունների հետ կապված:

Մասնավորապես, կատարված փաստահավաք աշխատանքների ընթացքում կոնկրետ դեպքերով պարզվել է, որ մարդիկ իրազեկված չեն եղել, որ 2021 թվականին իրականացված օրենսդրական փոփոխությունների արդյունքում, որպես սահմանամերձ համայնքների բնակիչներ, իրենք ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու հնարավորություն են ստացել կամ շատերն էլ, թեև իրազեկված են եղել, սակայն քանի որ անհրաժեշտ է փոխհատուցում ստանալու նպատակով գրավոր դիմում ներկայացնել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոններ՝ ադրբեջանական զինված ուժերի՝ ճանապարհներին ու ՀՀ ինքնիշխան տարածքում ներխուժման և անօրինական տեղակայման պատճառով մարդկանց ազատ տեղաշարժը և

ճանապարհների փակվելու հետևանքով, ունեցել են դժվարություններ: Փաստահավաք աշխատանքների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները տեղերում այդ կապակցությամբ իրականացրել են համապատասխան իրազեկման աշխատանքներ:

2021 թվականի ընթացքում դրական քայլ է ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված դրամական ավանդների փոխհատուցման գործընթացի իրազեկման և իրավունքի իրացման ուղղված մեխանիզմի ներդրումը: Մասնավորապես, Կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N 1719-Ն որոշմամբ սահմանվել է, որ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնն ավանդատուների հաշվառման գործընթացում, ի թիվս այլնի, իրականացնում է հետևյալ գործառույթները՝ տրամադրում է խորհրդատվություն փոխհատուցում ստանալու համար. դիմումի ձևի լրացման պարզաբանման, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի կապակցությամբ՝ *տարածքային կենտրոնում կամ տարածքային կենտրոնի տնօրենի հանձնարարությամբ կատարված տնային այցելության ընթացքում, եթե ավանդատուն որևէ պատճառով չի կարող ներկայանալ տարածքային կենտրոն և գրավոր կամ հեռախոսով կամ այլ անձի միջոցով խնդրել է կազմակերպել տնային այցելություն (ներառյալ՝ այցելություն բուժման վայր):*

Այսինքն, ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 23-ի N 460-Ն որոշմամբ ներդրված ավանդների փոխհատուցման համար տարածքային կենտրոնը խորհրդատվություն տրամադրել, դիմումը լրացնել և անհրաժեշտ փաստաթղթերի հետ վերցնել կարող է նաև տնային այցելության միջոցով: Այս համատեքստում, հարկ է նշել, որ առավել կարևորվել է սահմանամերձ բնակչության սոցիալական ծառայության մատչելիությունը, ինչը ողջունելի է:

Պետք է ընդգծել, որ հատկապես պատերազմից հետո ադրբեջանական զինված ուժերի ՀՀ բնակավայրերի հարևանությամբ, ճանապարհներին ու ՀՀ ինքնիշխան տարածքում ներխուժման և անօրինական տեղակայման հետևանքով սահմանափակվել է մարդկանց ազատ տեղաշարժը, ճանապարհների փակվելու հետևանքով մարդկանց համար առաջ են եկել իրավունքի իրացման (այդ թվում՝ սոցիալական ապահովության իրավունքի) դժվարություններ և անգամ անհնարինություն: Նշվածը հաստատվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Սյունիքի մարզի սահմանային բնակավայրերում 2021 թվականի դեկտեմբեր ամսին իրականացրած փաստահավաք աշխատանքների արդյունքում, կոնկրետ դեպքերով: Դա հաշվի առնելով էլ՝ ակնհայտ է, որ սոցիալական աջակցությունը մարդկանց առավել հասանելի է դառնում վերը նշված հնարավորության կյանքի կոչմամբ՝ տունայցի միջոցով: Մինչդեռ, տեղերում փաստահավաք աշխատանքների ընթացքում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ այդ հնարավորության գործնական կիրառումը ներկայումս հիմնականում չի ապահովվում: Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժինները դա պատճառաբանում են ռեսուրսների անբավարարությամբ:

Փաստորեն, ստացվում է, որ օրենսդրական մակարդակում սահմանամերձ բնակչության սոցիալական ծառայության մատչելիությունն ապահովող մեխանիզմը ներդրվել է, սակայն

տարածքային բաժիններում ռեսուրսների անբավարարությունը խնդիր է առաջացնում դրա գործնական կիրառման համար:

Այսպիսով, անհրաժեշտ է՝ Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժիններում ապահովել անհրաժեշտ և բավարար ռեսուրսների առկայությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. շարունակաբար ընդլայնել նախկին ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող սուբյեկտային կազմի շրջանակը,*
- 2. պարզեցնել ավանդների փոխհատուցման գործընթացը, օրենսդրությամբ սահմանել ավանդների վճարումն իրականացնելու կարճ ժամկետներ,*
- 3. իրականացված և իրականացվելիք օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ հանրության շրջանում ապահովել պատշաճ իրազեկում,*
- 4. ապահովել սահմանված գործառույթների իրականացումը՝ հատկացնելով Միասնական սոցիալական ծառայության տարածքային բաժիններին լրացուցիչ ռեսուրսներ:*

## **2.5 ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտավորումների, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների հատուցման խնդիր**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների հատուցման հարցով, ինչը վկայում է խնդրի արդիականության և կարգավորման անհրաժեշտության մասին:

2021 թվականի ընթացքում ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների համար հատուցում նախատեսող համապատասխան օրենսդրական կարգավորումներ սահմանելու ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկվել: Նախարարությունը նշել է, որ նման տեղեկատվության չի տիրապետում:

Հարկ է նկատել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության խնդիրներից է սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության հիմնական և գերակա ուղղությունների մշակումն ու իրականացումը, սոցիալական ապահովության ոլորտի պետական նպատակային ծրագրերի մշակումը և դրանց իրականացման աշխատանքների համակարգումը: Ուստի, այս առումով առնվազն մտահոգիչ է բարձրացված խնդրով տեղեկատվության չտիրապետելու Նախարարության ներկայացրած դիրքորոշումը:

Այսպես, մարդիկ ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք են բերել արժեթղթեր, դրանց հավելագրվել են նաև տոկոսներ, սակայն ներկայում գործող օրենսդրական մեխանիզմներով չի ապահովվում գնված,

սակայն ժամանակին ավանդ չձևակերպված արժեթղթերի դիմաց հատուցում ստանալու նրանց իրավունքի իրացումը: Այդ մասին տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ հաշմանդամություն ունեցող (մանկուց ձեռք բերված հիվանդության պատճառակալ կապով) անձ է, հետագայում որպես իր համար ֆինանսական աջակցություն՝ հայրը 1989 թվականին ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք է բերել 1000 խորհրդային ռուբլի արժողությամբ արժեթղթեր՝ թվով հինգ սերտիֆիկատ, որին նաև հավելագրվել են տոկոսներ: Սակայն ներկայում, ունենալով ֆինանսական խնդիրներ, ինքը հնարավորություն չունի ստանալ դրամական հատուցում հոր ձեռք բերած սերտիֆիկատների դիմաց:

Հարկ է նկատել, որ գնված արժեթղթերի համար հատուցում տրամադրելու հնարավորություն մարդկանց տրվել է միայն այն դեպքում, եթե մինչև 1993 թվականի հունվարի 1-ն արժեթղթերը ձևակերպել են ավանդ, որպեսզի հետագայում դրանց համար հատուցումն ապահովվի ՀՀ կառավարության որոշումներով սահմանված՝ ավանդների փոխհատուցման կարգին համապատասխան: Սակայն կան մարդիկ, ովքեր ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերած արժեթղթերը ժամանակին չեն ձևակերպել ավանդ, ինչպես նաև դրանք չեն փոխանակել այլ վճարային արժեթղթերով՝ հաշվի առնելով այն, որ գնված արժեթղթերն այլ վճարային արժեթղթերով փոխարինելու կամ ավանդ ձևակերպելու մասին դրույթներ նախատեսվել են ՀՀ կառավարության 1992 թվականի մարտի 26-ին ընդունած թիվ 181 որոշմամբ (որոշումն ուժը կորցրել է 2000 թվականի հունվարի 11-ին թիվ 4 որոշմամբ), որով սահմանվել է, որ ՀՀ քաղաքացիները 1993 թվականի հունվարի 1-ից կարող են իրենց մոտ եղած արժեթղթերը փոխանակել այլ վճարային արժեթղթերով, ինչպես նաև խնայբանկում ձևակերպել որպես ավանդ՝ հաշվեգրելով 1991 թվականի մարտին սահմանված 40 տոկոսի և 1992 թվականի հունվարի 1-ից սկսած՝ 9 տոկոսի չափով փոխհատուցումներ, անկախ ավանդի ձևակերպման ժամկետից: Այսինքն՝ նշված որոշմամբ նախատեսվել է մարդկանց ձեռք բերված արժեթղթերը ավանդ ձևակերպելու մասով հայեցողական մոտեցում՝ «կարող է» բառի ամրագրմամբ: Բացի այդ՝ մարդիկ իրազեկված չեն եղել գնված արժեթղթերը ավանդ չձևակերպելու հետագա հնարավոր ռիսկերի՝ հետագայում հատուցում ստանալու հնարավորությունից զրկվելու մասին:

Այսպիսով, ստացվում է, որ եթե մարդիկ գնված արժեթղթերը ժամանակին չեն ձևակերպել ավանդ, հնարավորություն չունեն ներկայում ստանալ համապատասխան հատուցում. չկա որևէ օրենսդրական մեխանիզմ:

Փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների դիմաց հատուցման խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկված քայլերի, ինչպես նաև ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկից ՀՀ քաղաքացիների ձեռք բերած փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների դիմաց հատուցման տրամադրման վերաբերյալ մասնագիտական եզրակացության առկայության առնչությամբ դեռևս

2020 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը հարցում է ներկայացրել ՀՀ ֆինանսների նախարարություն: Մինչդեռ, ՀՀ ֆինանսների նախարարությունը նշված հարցադրումներին պատասխան չի տվել՝ պարզաբանելով, որ դրանք դուրս են իր գործունեության հիմնական ոլորտներից և վկայակոչել է նախկինում արտահայտած իր դիրքորոշումը:

Նշվածի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության դիրքորոշումն էլ այն է եղել, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերը նույնական են նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում այլ հանրապետություններում գործած խնայբանկերից ձեռք բերած արժեթղթերին, անվանական և թվագրված չեն, ըստ այդմ էլ ԽՍՀՄ Խնայբանկի ՀՀ քաղաքացիների ձեռք բերած արժեթղթերի դիմաց հատուցման տրամադրման հարցը ներկայում լուծել հնարավոր չէ:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ նախկինում գործող արժեթղթերի թողարկման կարգին համապատասխան՝ արժեթղթերը չեն եղել անվանական և թվագրված, ուստի դա չի կարող համարվել պատշաճ պատճառաբանություն և խոչընդոտել իրավունքի իրացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի վերը ներկայացված բոլոր դիտարկումները բխում են նաև ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությունից:

Այսպիսով, ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի՝ փոխառության պարտատոմսերի, սերտիֆիկատների և գանձատնային պարտավորությունների հատուցման հարցը շարունակում է մնալ չլուծված: Դա չի բխում սոցիալական ապահովության ոլորտում պետության որդեգրած քաղաքականությունից: Միևնույն ժամանակ, օրենսդրական թերի կարգավորումների կամ համապատասխան կարգավորումների բացակայությունը չպետք է անձի իրավունքների խախտման պատճառ դառնա, մարդիկ չպետք է զրկվեն ԽՍՀՄ Խնայբանկից ձեռք բերված արժեթղթերի դիմաց հատուցում ստանալու իրավունքից:

*Վերահաստատելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է նախատեսել համապատասխան օրենսդրական կարգավորումներ արժեթղթերի դիմաց հատուցում տրամադրելու նպատակով:*

## **2.6 Անօթևան մարդկանց կացարանով ապահովման և խնամքի կազմակերպման խնդիրներ**

Պետության իրականացրած սոցիալական աջակցությունը ներառում է սոցիալական տարատեսակ ծառայությունների ամբողջություն՝ ներառելով նաև հասարակության խոցելի, կարիքավոր, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքը, սննդի կազմակերպումը, բժշկական, իրավական, սոցիալ-հոգեբանական աջակցությունը, ժամանցի կազմակերպումը, որոնք իրականացվում են սոցիալական տարբեր հաստատությունների միջոցով:



Ինչպես նախորդ, այնպես էլ 2021 թվականին բազմաթիվ են եղել բողոքներ անօթևան մնացած քաղաքացիներից, ինչպես նաև ահազանգեր պետական մարմիններից այս կամ այն քաղաքացու դրսում հայտնվելու և կացարանի կարիք ունենալու վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք: Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում այս իրավունքի իրականացման համար: Ի ապահովում այս սահմանադրական նորմի՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ սոցիալական ծառայությունները ՀՀ օրենսդրությանը համապատասխան իրականացվող միջոցառումներ են, որոնք, ի թիվս այլնի, ուղղված են կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին (ընտանիքին, սոցիալական այլ խմբին) այդ վիճակից դուրս բերելուն: Նույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը սահմանում է նաև, որ որոշակի բնակության վայր չունեցող անձին տրամադրվում է կացարան՝ որպես ժամանակավոր օթևան, մինչև 90 օր տևողությամբ: Որոշակի բնակության վայր չունեցող անձին՝ որպես ժամանակավոր օթևան՝ կացարան և այլ սոցիալական ծառայություններ տրամադրելու կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում): Որոշման իմաստով՝ որոշակի բնակության վայր չունեցող կամ անօթևան է համարվում հատուկ սոցիալական կարիքներ ունեցող անձը, ով չունի բնակարան կամ ընտանիքում առկա միջանձնային անառողջ հարաբերությունների հետևանքով առաջացած անհաղթահարելի խոչընդոտների պատճառով ի վիճակի չէ ապրել սեփական բնակարանում կամ ձեռք բերել բնակարան, ով սոցիալապես ու հոգեբանորեն մեկուսացված է և կարիք ունի ապաստարանի ու սոցիալական աջակցության:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի թիվ 71-Ա հրամանով հաստատվել է «Սոցիալական շտապ օգնության համակարգի ձևավորման ծրագիրը», որի նպատակն արագ արձագանքն է արտակարգ՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց սոցիալական խնդիրների լուծման հարցում: Դրա շրջանակներում տրամադրվում են հիմնական սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ կացարանով ապահովում:

Նշված իրավական ակտի գործողության պայմաններում և այդ ակտով սահմանված կարգով ու նպատակով դրսում հայտնված մարդկանց կացարանի տրամադրումը գրեթե չի իրականացվում, այդ մասին են վկայում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներն ու ահազանգերը:

Բողոքները վկայում են, որ անօթևանության խնդրին արագ արձագանքելը Հայաստանում լուրջ խնդիր է: Խնդրի լուծման ուղղությամբ Պաշտպանի աշխատակազմի և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի ակտիվ համագործակցություն է ձևավորվել, խնդիրները ներկայացվել են նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, միասնական

սոցիալական ծառայության տարածքային մարմիններին, հասարակական կազմակերպություններին:

Արդյունավետ մեխանիզմներ չգործելու պատճառով անօթևան մնացած քաղաքացուն օգնելու գործընթացը երբեմն երկար է տևում: Լինում են դեպքեր, երբ մարդիկ մի քանի օր շարունակ ապրում են դրսում մինչև կացարանում տեղավորվելը: Չկան շուրջօրյա ծառայություններ դրսում հայտնված քաղաքացիներին հնարավոր սեղմ ժամկետում աջակցելու, մասնավորապես կացարանով ապահովելու համար:

Տարիներ շարունակ մեր երկրում անօթևան մարդկանց ժամանակավոր կացարանով ապահովելու ծառայություն իրականացրել է հայ-դանիական «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի Վարդաշենում գտնվող անօթևանների ժամանակավոր կացարանը:

Տարեվերջին Պաշտպանի աշխատակազմ են ստացվել կացարանի շահառուներից ահազանգեր այն մասին, որ 2021թ. դեկտեմբերի 31-ից հայտնվելու են դրսում, քանի որ պետության և «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամի միջև կնքված պայմանագրի ժամկետն ավարտվում է:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ նախկինում եղել են դեպքեր, երբ պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է, բայց հիմնադրամը շարունակել է պատվիրակված ծառայությունների մատուցումը մինչև նոր պայմանագրի կնքումը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանել է, որ այս անգամ պայմանագրի գործողությունը չի շարունակվելու և 2022թ. հունվարի 1-ից նախարարությունն է ստանձնելու կացարանի տրամադրումը, որն էլ հանձն է առել ապահովել «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի առանձին մասնաշենքում: Պատճառն այն է, որ բարեգործական նշված հիմնադրամը մեկ այլ ծրագրի շրջանակում ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու հետևանքով Ֆինանսների նախարարության կողմից 2021թ. օգոստոսի 8-ին ընդգրկվել է պետական բյուջեից դրամաշնորհի ստանալու նպատակով կազմակերպվող մրցույթներին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցուցակում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ 2021 թվականի դեկտեմբերի 30-ին արագ արձագանքման այց է իրականացվել «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի համապատասխան մասնաշենք՝ կացարանի պայմաններն ուսումնասիրելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի այցի ընթացքում արձանագրվել է, որ Տուն-ինտերնատի առաջարկվող մասնաշենքում չկան մարդկանց արժանապատիվ բնակության և կենսական կարիքների համար նվազագույն պայմաններ: Մասնավորապես, թեև Նախարարությունը նախատեսել է, որ 93 շահառուները պետք է տեղափոխվեն դեկտեմբերի 31-ից, այդ մասնաշենքում դեռ դեկտեմբերի 30-ի դրությամբ իրականացվում էին վերանորոգման աշխատանքներ, որոնք մասնագետների տեղեկացմամբ՝ պետք է վերսկսվեին 2022թ. հունվարի 3-ից:

Նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին հավաստիացրել է, որ վերանորոգման աշխատանքները կավարտվեն հունվար ամսվա վերջում, բայց ուսումնասիրությունը վկայել է, որ դա լիարժեք վերանորոգման իրատեսական ժամկետ չի կարող լինել:

Այցի պահին առկա է եղել ընդամենը 1 շահագործվող սանհանգույց՝ նախատեսված թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց համար, սենյակները գերբեռնված են եղել մահճակալներով: Մահճակալները տեղադրված են այն աստիճան անթույլատրելի կիպ, որ ապահովված չեն անձնական կյանքի, մասնավորության գոնե նվազագույն տանելի պայմաններ:

Նախարարության խիստ թերի կազմակերպման պատճառով ծառայությունները ստանձնած հաստատությունը տեղյակ չի եղել, թե շահառուներն ինչ կարիքներ ունեն, օրինակ՝ նրանցից քանիսն ունեն հաշմանդամություն, այդ թվում՝ տեղաշարժման դժվարություններ, քանիսն ունեն անկողնային խնամքի կարիք: Արձանագրվել է, որ մասնաշենքը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց համար, այդ թվում՝ առկա չէ վերելակ:

Հակառակ նրան, որ շահառուների կարիքների մասին չկա պատշաճ տեղեկություն՝ ներկայացվել է հաստիքների ավելացման պահանջ, ինչը խնդրահարույց է մարդկանց կարիքներին համապատասխանության տեսանկյունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ դեռ 2021թ. դեկտեմբերի 13-ին Նախարարության համար արդեն պարզ էր, որ ժամանակավոր օթևանի տրամադրման ծառայությունների մրցույթում որևէ կազմակերպություն հայտ չի ներկայացրել: Ավելին, ավելի վաղ տեղյակ է եղել, որ այդ տարի հայտ չի կարող ներկայացնել ծառայությունն այդ պահին իրականացնող «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամը:

Այսպիսով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը թերի է կազմակերպել անօթևան մարդկանց համար կացարանի տրամադրման գործընթացը, մարդիկ բարդությունների առաջ են կանգնել պետության կողմից խնդիրները ժամանակին չլուծելու պատճառով: Անտեսվել է, որ հարցը վերաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և կրկնակի խոցելի վիճակում գտնվող մարդկանց արժանապատվությանն ու իրավունքներին:

Խնդիրն առավելապես սուր է հոգեկան առողջության անձանց, տուբերկուլոզով, մաշկային և վարակիչ այլ հիվանդություններով անօթևանների պարագայում, քանի որ նման առողջական խնդիրներ ունեցող մարդիկ իրավունք չունեն բնակություն հաստատել խնամքի հաստատություններում: Այս մասին բարձրացվել է նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ և որպես լուծում առաջարկ ներկայացվել բաշխիչ կայան ստեղծելու, անկախ կարգավիճակից բոլոր անօթևաններին ընդունելու, այնուհետև՝ ըստ կարիքի և սահմանված չափորոշիչների համապատասխան հաստատություններում տեղավորելու վերաբերյալ<sup>74</sup>:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար հանրապետությունում գործող շուրջօրյա խնամքի հաստատությունները 4-ն են, որոնք մշտապես գերբեռնված են:

<sup>74</sup> Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2020թ. տարեկան հաղորդում էջ 153

Օրինակ բողոքներից մեկով, քաղաքացին տեղեկացրել է, որ անօթևան է, ունի կացարանի կարիք: Դիմել է «Հանս Քրիստիան Կոֆոեդ» բարեգործական հիմնադրամ, սակայն ստացել է մերժում: Կատարված ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացին հաշվառված է հոգեկան առողջության կենտրոնում, որն էլ պատճառ է հանդիսացել նրան չընդունելու:

Մեկ այլ օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ նախկին դատապարտյալ է, 2-րդ խմբի հաշմանդամ, մի քանի ամիս է բուժում է ստանում տուբերկուլոզի դեմ: Նշել է, որ բժշկական կազմակերպությունից դուրս գրվելուց հետո հայտնվելու է դրսում, չունի բնակության վայր, ընտանիք, ազգականներ: Վերջինիս պարզաբանվել է շուրջօրյա խնամքի հաստատությունում բնակություն հաստատելու ընթացակարգը, խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը, որի մեջ մտնում է նաև մանրէազատ տուբերկուլյոզը: Այսինքն, խնամքի հաստատությունում կարող է բնակվել բացառապես առողջացումից հետո:

Ողջունելի է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տարեվերջին մշակել և շրջանառել է «ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով որպես ժամանակավոր լուծում՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անօթևան անձանց համար առաջարկվում է հատուկ (մասնագիտացված) կացարան՝ մինչև ազատ տեղերի հայտնվելը և տեղափոխումը շուրջօրյա խնամքի հաստատություն: Նույն հարցը վերաբերում է նաև տուբերկուլոզով կամ սեռավարակով հիվանդացած անօթևան անձանց, որոնք նույնպես չունեն բնակության վայր, և հատուկ (մասնագիտացված) կացարանի մյուս տեսակը նախատեսված է անօթևանների հենց այդ խմբի համար:

Նույն նախագծով որպես անօթևանների գործող կացարանի և հատուկ (մասնագիտացված) կացարանի միջանկյալ օղակ՝ առաջարկվում է ընդունիչ-ախտորոշիչ կենտրոն, որը նախատեսված է անձի ինքնությունը չպարզված, ակնհայտ ոչ ադեկվատ վարքագիծ դրսևորող, կասկածելի հոգեկան առողջությամբ անօթևան անձանց հրատապ սոցիալական աջակցություն տրամադրելու՝ կացարանով, ախտորոշիչ ծառայություններով և կենսական անհրաժեշտ օգնությամբ ապահովելու, հոգեկան առողջության և սոցիալական կարիքները գնահատելու, կարգավիճակը ճշտելու, և ըստ գնահատված կարիքի և առողջական վիճակի՝ համապատասխան սոցիալական ծառայություն ուղղորդելու համար:

Նախագծի ընդունման դեպքում հնարավոր կլինի հստակեցնել կացարանի ծառայությունների տրամադրումը, որն ուղղված է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անօթևան անձանց:

*Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ փարվա փարեկան հաղորդմամբ կատարված առաջարկը՝ անհրաժեշտ է՝*

1. *անհապաղ ստեղծել մեխանիզմներ սոցիալական աջակցության «շրապ օգնության» ծառայությունը գործարկելու համար,*

2. անհապաղ ընդունել «ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

## ԳԼՈՒԽ 2. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Սեփականության իրավունքը՝ որպես ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության մեջ մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորման կարևորագույն պայման, միաժամանակ որպես մասնավոր և հանրային իրավահարաբերությունները կարգավորող մեխանիզմ, կարևոր սահմանադրաիրավական նշանակություն ունի: Սեփականության իրավունքի պաշտպանության իրավական հիմքերը դրված են Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով: Այսպիսով, ինչպես միջազգային իրավական, այնպես էլ սահմանադրական մակարդակում սահմանվում է պետական իշխանությունների պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքները:

Հարկ է նշել, որ պրակտիկ կյանքում սեփականության իրավունքի հոչակումը դեռևս բավարար չէ այդ իրավունքի լիարժեք իրացման համար: Դրա պաշտպանվածության համար անհրաժեշտ է նաև ստեղծել լիարժեք և արդյունավետ օրենսդրական և իրավակիրառ մեխանիզմներ և գործածել դրանք:

2021 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են սեփականության իրավունքի խախտումների մասին բողոքներ: Ընդ որում՝ խախտումների մեծ մասը վերաբերում է տարիներ շարունակ մեր երկրում լուծում չստացած համակարգային բնույթ կրող խնդիրներին:

### ***1. Պեղության կողմից բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու հետևանքով սեփականության իրավունքի սահմանափակելը***

2021 թվականին ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են Կառավարության որոշմամբ համապատասխան տարածքների հանրային գերակա շահ ճանաչվելու հետևանքով մարդկանց իրավունքների սահմանափակման հարցին: Չնայած նախկինում առկա և ներկայում գործող սահմանադրական երաշխիքների և համապատասխան օրենսդրության (նախկինում Կառավարության որոշումներ, ներկայում Օրենք) առկայությանը՝ 2000-ական թվականներից սկսած զանգվածաբար խախտվել են սեփականատերերի և օգտագործողների հիմնարար իրավունքները: Նշենք, որ ներկայում համակարգային առումով դեռևս շարունակում է չլուծված մնալ հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումներով՝ քաղաքաշինական ծրագրերի իրականացման համար մի շարք տարածքներ ձեռքբերող կազմակերպություններին օտարելու, սակայն այդ կազմակերպությունների կողմից օրենսդրության անկատարության հետևանքով տարածքների նախկին բնակիչներին համարժեք փոխհատուցում չտրամադրելու հարցը: Այսպես, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության

օտարման մասին» օրենքում առկա են մի շարք խնդիրներ, որոնց մասին բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում<sup>75</sup>: Խնդրահարույց են դիտարկվել օրենքում տեղ գտած ձևակերպումները՝ կապված օտարվող սեփականության դիմաց նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելու պահանջի հետ: Այսպես, օրենքում տեղ գտած կարգավորումների ուժով՝ սեփականությունը կարող է օտարվել ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև կնքվող պայմանագրի համաձայն, այդ դեպքում կողմերի համաձայնությամբ են որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Ընկերությունները, առաջնորդվելով վերը նշված կարգավորմամբ, համապատասխան տարածքներում նախկինում բնակվող անձանց հետ կնքել են իրացված տարածքների փոխարեն կառուցվելիք բազմաբնակարան շենքերում բնակարաններ տրամադրելու վերաբերյալ պայմանագրեր: Արդյունքում, Սահմանադրությամբ ամրագրված նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելու հիմնադրույթային պահանջը խախտվել է և տարիներ շարունակ մարդկանց չեն տրամադրվել բնակարանները և համարժեք փոխհատուցումը: Պատճառը, ինչպես նշվեց, օրենքի ոչ բոլոր հոդվածներում «նախնական համարժեք փոխհատուցում» եզրույթի ամրագրումն է, փոխարենը որոշ տեղերում օգտագործվում է միայն «համարժեք փոխհատուցում» տերմինը: Հաշվի առնելով օրենքի ուժով պայմանագրերի կնքման ձևավորված բացասական պրակտիկան՝ Կառավարությունը 2017 թվականից սկսեց ընդունել գերակա շահ ճանաչելու մասին որոշումներ, որոնցով նախատեսվել է, որ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքներում օտարվող սեփականության սեփականատերերի և տարածքները ձեռք բերողի միջև կնքվող պայմանագրերում անհրաժեշտ է բացառել, որպես օտարվող տարածքի փոխհատուցման ձև, ապագայում կառուցվելիք շենքից բնակարանի տրամադրումը: Ինչը խնդրի լուծում չէ, քանի որ անհրաժեշտ է խնդիրը կարգավորել համակարգային առումով և փոփոխություններ կատարել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում, որպեսզի հետագայում բացառվի Կառավարության որոշումներում օտարվող գույքի դիմաց նախնական համարժեք փոխհատուցման մասին նորմեր չսահմանելը: Նշվածից օգտվելով՝ գերակա շահ ճանաչված տարածքները ձեռքբերող կազմակերպությունները խախտել են և կխախտեն օտարված տարածքների սեփականատերերի իրավունքները և օրենքով պահմանվող շահերը: Օրինակ՝ ընթացիկ տարում բողոքներից մեկով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված իրացվող տարածքների սեփականատերերը տեղեկացրել են, որ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի «ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» N 1661-Ա որոշմամբ Եղիպատրուշ

<sup>75</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 112-119 և էջեր 180-185:

վարչական բնակավայրում գտնվող հողատարածքները, այդ թվում՝ բնակավայրի բնակիչների սեփականություն հանդիսացող տնամերձ հողամասերն ու վարելահողերը, ճանաչվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ: Բողոքի համաձայն՝ որոշման ընդունման և հետագայում իրագործման հետևանքով բազմաթիվ ընտանիքներ զրկվել են իրենց հողատարածքների ծանրակշիռ, իսկ որոշ դեպքերում նաև ամբողջ մասից: Դրա հետևանքով կտրուկ անկում է ապրել համայնքում բնակչության ինքնագրավածության մակարդակը, քանի որ իրենց կամքին հակառակ զրկվել են իրենց հողատարածքները մշակելու հնարավորությունից: Սեփականատերերը տեղեկություն չեն ունեցել, թե նշված հողատարածքների դիմաց որքան գումար է վճարվելու և ինչ սկզբունքով (1 քմ-ի դիմաց վճարվելիք գումարը), ուստի պահանջել են նշված որոշման հիման վրա օտարման գործընթացի ամբողջական իրագործման պարագայում օտարվող հողամասերի գները համաձայնեցնել բնակավայրի բնակչության հետ: Կառավարության վերոնշյալ որոշման համաձայն՝ օտարման գործառույթների իրականացման համակարգողը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն է, որտեղից բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանվել է, որ որոշմամբ հանրային գերակա շահ ճանաչված հողատարածքներն օտարվելու են օրենսդրությամբ սահմանված դրույթներով: Ըստ պարզաբանման՝ ՀՀ հողային օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով հողամասի սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ: «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատիրոջը վճարվում է համարժեք փոխհատուցում: Նույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ օտարվող սեփականության շուկայական արժեքը բաց և մրցակցային շուկայում սեփականություն հանդիսացող գույքի վաճառողի և գնորդի գիտակցաբար, արդարացի առևտրի պայմանների պահպանմամբ և օրինական գործողությունների արդյունքում ձևավորվող, գույքի վաճառքի առավել հավանական գինն է: Եթե օտարվող սեփականության համար առկա չէ համապատասխան բաց և մրցակցային շուկա, ապա սեփականության շուկայական արժեքը որոշվում է այնպիսի հաշվարկման մեթոդով, որն արդարացի կհամարի դատարանը: Անշարժ գույքի կամ անշարժ գույքի նկատմամբ գույքային իրավունքների շուկայական արժեքի գնահատումն իրականացվում է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հետևաբար, որոշմամբ հանրության գերակա շահ ճանաչված տարածքների օտարման գործընթացն իրականացվելու է ՀՀ օրենսդրության դրույթներին համապատասխան, և տարածքներն օտարվելու են վերը նշված գնահատման գործընթացի արդյունքում ձևավորված գնով: Հատկանշական է, որ Նախարարությունը պատասխան գրությամբ վկայակոչել է նաև «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված նորմերը, համաձայն որոնց՝ սեփականությունը կարող է օտարվել՝ ձեռքբերողի և օտարման ենթակա սեփականության սեփականատիրոջ միջև



կնքվող պայմանագրի համաձայն: Այս դեպքում կողմերի համաձայնությամբ են միայն որոշվում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը: Մինչդեռ, Պաշտպանը տարիներ շարունակ տարեկան զեկույցներում և հաղորդումներում բարձրաձայնել է, որ «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում նշված նորմերի առկայությունն անթույլատրելի է և անհրաժեշտ է դրանք փոփոխել, որովհետև դրանք հակասում են Սահմանադրությամբ և նույն օրենքում ամրագրված «նախնական» և «համարժեք» փոխհատուցում եզրույթների իմաստին և բովանդակությանը: Քանի որ վերոնշյալ կարգավորմամբ կողմերն են (այն է՝ տարածքները ձեռք բերող կազմակերպությունը և իրացվող տարածքի սեփականատերը) որոշում օտարվող սեփականության դիմաց տրվող համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն ու կողմերի պատասխանատվությունը, ինչը և նախկինում պատճառ է հանդիսացել մարդկանց համատարած իրավունքների խախտման համար: Այս կարգավորման արդյունքում անտեսվում է նույն օրենքով սահմանված շատ կարևոր եզրույթներից մեկը՝ պետության «սուբսիդիար պարտավորություն» եզրույթը: Այս մասին ևս բարձրաձայնվել է Պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում: Ներկայացվել է, որ շատ դեպքերով նախկինում ծագած իրավահարաբերություններից մարդկանց իրավունքները խախտվել են կնքված պայմանագրերը ձեռքբերող կազմակերպության կողմից չկատարելու հետևանքով: Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի ստեղծման պահից ի վեր հարցը բարձրաձայնվել է: Հատկանշական է այն, որ Կառավարության վերոնշյալ արդեն 2021 թվականի որոշմամբ նախնական համարժեք փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ նորմեր սահմանված չեն, ինչը շատ մտահոգիչ է:

Պաշտպանին հասցեագրած բողոքներից մինչ օրս շարունակում է չլուծված մնալ Կառավարության որոշմամբ 2007 թվականին Եկմայան 6-14 հասցեներում գտնվող բնակելի տարածքները քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու, սակայն շահառուներին բնակարանային կամ գումարային համարժեք փոխհատուցում այդպես էլ չտրամադրելու հարցը: «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքի համապատասխան նորմերի համաձայն՝ *եթե անհրաժեշտ սեփականությունն օտարելուց հետո ձեռքբերողը երկու տարվա ընթացքում չի սկսում օտարման հիմք հանդիսացող գործունեությունը կամ թույլ է տալիս պետության և ձեռքբերողի միջև կնքված պայմանագիրն անվավեր կամ վաղաժամկետ լուծման հիմք հանդիսացող խախտումներ, ապա հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումը ձեռքբերողի մասով կառավարության որոշմամբ կարող է համարվել անվավեր, և օտարված սեփականությունը մրցութային կարգով ենթակա է օտարման այլ անձանց:* Եթե հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումն անվավեր է ճանաչվել կառավարության որոշմամբ, ապա մրցույթն իրականացվում է կառավարության սահմանած կարգով, իսկ եթե հանրության գերակա շահ ճանաչելու մասին որոշումն անվավեր է ճանաչվել դատական կարգով, ապա մրցույթն

իրականացվում է դատարանի սահմանած կարգով: *Փաստորեն*, կոնկրետ դեպքում տարածքը Կառավարության համապատասխան որոշմամբ ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և քաղաքաշինական ծրագրի իրականացումը ձեռքբերող կազմակերպությունը ձախողել է, որի հետևանքով շահառուները 2007 թվականից մինչ օրս համարժեք գումարային և (կամ) բնակարանային փոխհատուցում չեն ստացել, սակայն պետությունը գործուն քայլեր չի ձեռնարկում խնդիրը կարգավորելու համար: Ըստ տրամադրված պարզաբանման՝ Երևանի քաղաքապետարանը դեռևս 2012 թվականին հայտարարել և անցկացրել է տարածքն այլ ներդրողների օտարելու մասին մրցույթ, սակայն մասնակից չի ներկայացել, ինչի պատճառով հնարավորություն չի ստեղծվել իրականացնելու Կառավարության կողմից մշակված ծրագիրը: Այսպիսով, 2012 թվականից մինչ օրս գործուն քայլեր չեն ձեռնարկվել նոր ներդրողներ ներգրավելու և խնդիրը վերջնական կարգավորելու ուղղությամբ:

Ընթացիկ տարում ՄԻԵԴ-ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի գրասենյակը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ կարծիքի է ներկայացրել ««Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվել է օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասում «տասնհինգ տոկոս ավելի գումարը» բառերից հետո լրացնել «ինչպես նաև սեփականատիրոջն օտարման արդյունքում պատճառված այլ վնասները» բառերը: Նախատեսվել է նաև, Օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-րդ մասով. «Այլ վնասները կարող են ներառել եկամտի միակ կամ հիմնական աղբյուրի կորուստը, ապրուստը հոգալու միջոցներից զրկվելու հետ կապված փաստացի կորուստը, ծախսերը, որոնք ծագել են որպես օտարման անմիջական և ողջամիտ արդյունք, տրանսպորտային և գործառնական ծախսերը, տեղափոխման ծախսերը, ձեռնարկատիրական գործունեության ընդհատման ժամանակաշրջանի համար դրամական փոխհատուցումը՝ հարկային հայտարարագրի կամ պաշտոնապես սահմանված նվազագույն աշխատավարձի հիման վրա, այլ կորուստներ կամ վնասներ»: Առաջարկվող փոփոխությունն իհարկե շատ ողջունելի է և միտված է ՀՀ օրենսդրական կարգավորումները համահունչ դարձնել ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին՝ լրացուցիչ երաշխիք դառնալով անձանց իրավունքների և ազատությունների լիարժեք ապահովման համար:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ նախատեսվել է համապատասխան վերլուծության արդյունքում մինչև 2022 թվականի առաջին կիսամյակն Ազգային ժողով ներկայացնել ««Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որի ընդունման արդյունքում որպես ազդեցություն ակնկալվում է, որ կնվազեն հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման արդյունքում

մարդու սեփականության իրավունքի խախտման դեպքերը, սեփականության իրավունքի խախտման դիմաց մարդկանց կտրամադրվի արդարացի փոխհատուցում:

Հույս ունենք, որ օրենքի նախագծում կներառվեն բարձրացված համակարգային խնդրի կարգավորման համար Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում արված առաջարկները, որոնք վերահաստատվում են սույն հաղորդմամբ:

*Մասնավորապես, անհրաժեշտ է՝*

1. փոփոխել «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը՝ այս հոդվածում ևս ամրագրելով «նախնական համարժեք» փոխհատուցում եզրույթը,

2. Նշված հոդվածից հանել պայմանագրով (կողմերի համաձայնությամբ) համարժեք փոխհատուցման չափը, ձևը, կարգը, ժամկետները, պայմաններն և պատասխանատվությունը որոշելու հնարավորությունը,

3. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքում կատարել հետևյալ փոփոխությունները,

– կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ ևս սահմանել պետության սուբսիդիար պատասխանատվություն՝ այն տարածելով ոչ միայն ձեռքբերող կազմակերպությունների և շահառու անձանց միջև ապագայում, այլ նաև նախկինում ծագած իրավահարաբերությունների նկատմամբ,

– սահմանել պետական վերահսկողության մեխանիզմներ սեփականության օտարման գործընթացում ձեռքբերողի կողմից շահառուի նկատմամբ ունեցած պարտավորությունների կատարման նկատմամբ՝ նախատեսելով համապատասխան պատասխանատվության միջոցներ,

– «փոխհատուցում» բառը ցանկացած հոդվածում օգտագործել «նախնական համարժեք» բառերի հետ միասին, այն տարածելով նախկինում ծագած, սակայն մինչ օրս չկատարված իրավահարաբերությունների նկատմամբ,

4. մինչև օրենքում փոփոխություն կատարելը յուրաքանչյուր դեպքում սեփականությունը օտարելիս՝ Կառավարության որոշմամբ սահմանել հետևյալ եզրույթը, այն է՝ սեփականությունը կարող է օտարվել միայն «նախնական համարժեք փոխհատուցմամբ»,

5. գործուն քայլեր ձեռնարկել նոր ներդրողներ ներգրավելու, արդյունքում Եկմայլան 6-14 հասցեների իրացված բնակելի տարածքների շահառուներին համարժեք գումարային և (կամ) բնակարանային փոխհատուցում տրամադրելու ուղղությամբ:

## **2. «Դալմայի» այգիների նախկին հողօգտագործողների օտարված հողատարածքների դիմաց փոխհատուցումը**

2021 թվականի դեռևս չի լուծվել Պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրաձայնված 1991 թվականից «Դավմայի» այգիներում հողամասեր վարձակալած կամ զբաղեցրած անձանց հողատարածքներն այլ նպատակային նշանակության համար վերցնելու և փոխհատուցում չտրամադրելու հարցը: Այսպես, ՀՀ կառավարության որոշմամբ 2003-2004 թվականներին, առանց «Դավմայի» այգիներում հողամասեր վարձակալած և (կամ) զբաղեցրած անձանց իմացության, համաձայնության և գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու, հողամասերը Երևանի քաղաքապետարանն աճուրդային կարգով օտարել է առանձին անհատներին ու կազմակերպություններին: Սակայն, այդ հողամասերը վարձակալած կամ զբաղեցրած անձանց ֆինանսական կամ գույքային փոխհատուցում չի տրամադրվել: Բողոքների քննարկման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից ներկայացված պարզաբանման համաձայն՝ Երևանի «Դավմայի» այգիների հողօգտագործողների կազմած և Երևանի քաղաքապետարան ներկայացրված ցուցակի համաձայն՝ Երևանի «Դավմայի» այգիներում հողամասերի ներկայիս սեփականատերերը գումարներ են տրամադրել հողամասեր զբաղեցրած 48 անձանցից 41 անձի (ընդհանուր 27.748.900 ՀՀ դրամի և 266.320 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով): Հետագայում նոր անձինք են ներկայացել և հայտնել իրենց նախկինում ունեցած իրավունքների մասին և խնդրել փոխհատուցումներ, արդյունքում, անձանց թիվը դարձել է 12: Պարզաբանվել է նաև, որ Երևան համայնքը կամ Երևանի քաղաքապետարանն օրենքով կամ իրավական այլ ակտերով չի կրում փոխհատուցում տրամադրելու որևէ պարտականություն: Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում Դավմայի այգիների նախկինում օտարված հողամասերի դիմաց փոխհատուցման գործընթաց չի իրականացվել:

Հարկ է նշել, որ Պաշտպանին բողոք ներկայացրած անձինք հայցադիմում են ներկայացրել նաև դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևան քաղաքի Լենինգրադյան փողոցին հարող՝ «Դավմայի այգիներ» տարածքում գտնվող 0,42 հա հողամասի աճուրդներն անվավեր ճանաչելու և մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջների մասին: Հայցը մերժվել է այն պատճառաբանությամբ, որ վարձակալության պայմանագրերը հայցվորները կնքել են ոչ պատշաճ կողմի, այն է՝ Շահումյանի շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի հետ: Դատարանի դիրքորոշման համաձայն՝ իրավահարաբերության ծագման պահին գործող ՀՀ հողային օրենսգրքի համաձայն՝ հողամասի վարձակալության պայմանագրերը պետք է կնքվեին Երևանի քաղաքային խորհրդի հետ, ուստի օրենսդրությամբ նման լիազորություն չունեցող մարմնի հետ կնքած վարձակալության պայմանագրերն անվավեր են: Գործող ՀՀ հողային օրենսգրքի կարգավորումներով սահմանված է, որ քաղաքացիները պետության ու համայնքների հողերի այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավաբանական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն օգտագործման

իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք: Նշյալ իրավունքն այդ անձանց նախապատվության իրավունքն է: Նշյալ հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց պետք է փոխարենը տրամադրվեն այլ հողամասեր կամ պետք է հատուցվեն նրանց վնասները: Նույն կարգավորմամբ սահմանված է, որ քաղաքացիները, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների իրավաբանական ձևակերպման, օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը կամ, եթե դրանք վաճառվում կամ անհատուց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար: Նշված իրավակարգավորումներից հետևում է, որ եթե քաղաքացիների կնքված վարձակալության պայմանագրերն անվավեր են և տարածքներն օգտագործել են առանց իրավաբանական ձևակերպման, ապա հողամասերն այլ անձանց օտարելուց առաջ պետք է այգիների նախկին հողօգտագործողներին դրանք գնելու առաջարկություն արվեր: Հողօգտագործողների հրաժարվելու դեպքում միայն համապատասխան փոխհատուցման դիմաց դրանք կարող էին օտարվել այլ անձանց: Այսպիսով, տարիներ շարունակ նշված բողոքների քննարկման և ուսումնասիրության արդյունքում Պաշտպանը վերահաստատում է, որ «Դալմայի» այգիներում տարածքների աճուրդները կազմակերպելիս չեն պահպանվել գործող իրավակարգավորումները, արդյունքում խախտվել են մարդկանց իրավունքները,

Վերը նշվածից բացի, հարցի կարգավորման համար տարիներ շարունակ էական նշանակություն է ունեցել նախկինում մարզի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանի ներկայիս համայնքի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանին քաղաքացիաիրավական իրավունքները և պարտականությունները փոխանցելու, այն է՝ իրավահաջորդության որոշման հարցը: Բարձրացված հարցի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի դիրքորոշման համաձայն՝ Երևան համայնքը կամ Երևանի քաղաքապետարանն օրենքով կամ իրավական այլ ակտերով կամ պայմանագրով չի կրում հատուցում տրամադրելու որևէ պարտավորություն: Երևանի քաղաքապետարանի իրավահաջորդության հարցի լուծումը տարիներ շարունակ կրել է համակարգային բնույթ, որի հետևանքով բազմաթիվ անձինք չեն կարողացել իրացնել իրենց իրավունքները: Հարցի հրատապ կարգավորման անհրաժեշտությունից ելնելով՝ Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է այն՝ առաջարկելով լուծել հարցը պետական մարմնի լիազորությունը տեղական ինքնակառավարման մարմնին պատվիրակելու միջոցով: Այս կապակցությամբ Պաշտպանը նաև մի շարք գրություններ է ուղարկել Վարչապետի աշխատակազմ և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: 2021 թվականի նոյեմբերի 17-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՕ-353-Ն օրենքը, որով Երևանի քաղաքապետին է պատվիրակվել

մարզպետի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետի, Երևան քաղաքի շրջանային խորհուրդների և նրանց գործադիր մարմինների, Երևանի քաղաքային խորհուրդների ընդունած և իրենց իրավական ուժը պահպանած ակտերի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, դրանք ուժը կորցրած ճանաչելու լիազորությունները: Ամփոփելով՝ անհրաժեշտ է ընդգծել, Կառավարության որոշմամբ 2003-2004 թվականներին, առանց վերոնշյալ հողամասերը վարձակալած և (կամ) զբաղեցրած անձանց իմացության, համաձայնության և գնման նախապատվության իրավունքը հաշվի առնելու, հողամասերը մարզի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանն աճուրդային կարգով օտարել է առանձին անհատներին ու կազմակերպություններին և ներկայում նշված պետական կառավարչական հիմնարկ համարվող մարմնի լիազորությունը պատվիրակվել է համայնքային կառավարչական հիմնարկ համարվող մարմնին, այն է՝ համայնքի կարգավիճակ ունեցող Երևանի քաղաքապետարանին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

*1. հողամասերը վաճառելու դեպքում հաշվի առնել գնման նախապատվության իրավունք ունեցող անձանց շահերը, իսկ նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում ձեռքբերման վաղեմության իրավունք ունեցող անձանց տրամադրել այլ հողամասեր կամ հատուցել նրանց վնասները,*

*2. փոխհատուցել Դալմայի այգիների վարձակալների և (կամ) հողօգտագործողների կրած վնասները:*

### **3. Հյուսիս-հարավ ավտոմայրուղու կառուցումը և բնակավայրերի բնակիչների իրավունքների ապահովումը**

2021 թվականին ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով մարդկանց իրավունքների խախտման վերաբերյալ: Պաշտպանի դեռևս 2018 և 2019 թվականների տարեկան հաղորդումներում բարձրաձայնվել է Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման հետևանքով սեփականությունից անարգել օգտվել չկարողանալու խնդիրը: Մասնավորապես, «Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրան սահման» Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման պատճառով ընդհանուր օգտագործման ճանապարհին հարող նախկին անցուղու փակման հետևանքով ՀՀ Արարատի մարզի Բաղրամյան, Բերքանուշ, Մրգավան և Դալար համայնքների բնակիչները չեն կարողանում անարգել օգտվել իրենց սեփականությունից և լրացուցիչ բարդությունների են հանդիպում: Նշված խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ ՀՀ Արարատի մարզի Դալար համայնքի ղեկավարի հայտնած տեղեկության համաձայն՝ ընթացիկ տարում վերգետնյա ուղեանցի կառուցման նախագիծն իր կողմից ստորագրվել է ու հաստատվել, իսկ ըստ ծրագրի 2022 թվականին այն նախատեսվում է կառուցել:

Լիահույս ենք, որ բարձրացված հարցը 2022 թվականին կլուծվի և Բաղրամյան, Բերքանուշ, Մրգավան և Դալար համայնքների բնակիչները վերջապես հնարավորություն կունենան օգտվել արդեն կառուցված վերնանցումից: Ընթացիկ տարում բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 2003 թվականին աճուրդային կարգով սեփականության իրավունքով ձեռք է բերել ՀՀ Արարատի մարզի Արգավանի համայնքում գտնվող 1020 քմ մակերեսով հողամաս: 2015 թվականին նշված հատվածում սկսվել է իրականացվել Հյուսիս-հարավ մայրուղու կառուցման ծրագիրը, որի հետևանքով հողամասը բաժանվել է, մի մասը ճանաչվել է բացառիկ՝ գերակա հանրային շահ և օտարվել է: Հողամասի մնացած մասի նոր չափագրության արդյունքում պարզվել է, որ կոորդինատները (տեղադիրքը) անհայտ պատճառներով փոխվել է, այն տեղադրված է ջրանցքի հատվածում: Համայնքապետարանից պարզաբանվել է, որ խնդիրն առաջացել է քաղաքացու հողամասը տարբեր մասերի բաժանելու հետևանքով, այն է՝ Հյուսիս-հարավ ճանապարհի կառուցման համար Երևանի քաղաքապետարանի և Կադաստրի կոմիտեի օտարման գործընթացում կատարած գործարքների հետ: Երևանի քաղաքապետարանը չի ընդունել, որ խախտումը տեղի է ունեցել իրենց մեղքով: Փաստորեն, կոնկրետ դեպքով Հյուսիս-հարավ միջպետական նշանակության ավտոճանապարհի կառուցման շրջանակներում ոչ պատշաճ վարչարարության հետևանքով անձին պատճառվել է վնաս, այն է՝ նրա իրավահաստատող փաստաթղթերում ի հայտ են եկել անհամապատասխանություններ, ինչի հետևանքով անձը զրկվել է հողամասի տնօրինման հնարավորությունից: Վարչական մարմիններ էլ միջոցներ չեն ձեռնարկում խնդիրը կարգավորելու ուղղությամբ և այն մնում է չլուծված:

*Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է իր նախորդ դիրքորոշումն առ այն, որ անհրաժեշտ է՝*

- 1. գործուն միջոցներ ձեռնարկել 2022 թվականին Հյուսիս-հարավ ավտոմայրուղու Դալար համայնքի հատվածում վերգեպոնյա կամուրջ կառուցելու ուղղությամբ,*
- 2. ավտոմայրուղու շինարարության աշխատանքներն իրականացնելիս նվազեցնել և (կամ) բացառել այլ անձանց վնաս պատճառելու հնարավորությունը, իսկ վնաս հասցնելու դեպքում միջոցներ ձեռնարկել դրանք հատուցելու և խախտումները վերացնելու ուղղությամբ:*

**4. Սեփականության իրավունքով պարկանոց հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու պարճառով առաջացած հողամասերի համադրումները շտկելու խնդիր**

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են բողոքներ, որոնք վերաբերել են անձանց սեփականության իրավունքով

պատկանող հողամասերը սխալ չափագրելու և կադաստրային քարտեզում ամրագրելու հետևանքով առաջացած իրավունքների խախտումներին: Օրինակ՝ ընթացիկ տարում բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 1946 թվականին իր ընտանիքին պետության կողմից հատկացվել է 525 քմ մակերեսով հողամաս բնակելի տուն կառուցելու համար, որը կառուցվել և շահագործման է հանձնվել 1947 թվականին: Ըստ այդ տարիների հատակագծի՝ շինությունը նշված է եղել հողամասի եզրից 5 մ խորության մեջ: Այնուհետև, Նշված բնակելի տունը հիմնովին քանդվել է, որի նույն հատվածում 1960 թվականին կառուցվել է նոր բնակելի տուն: Նոր բնակելի տան կառուցման ավարտից հետո կատարվել է հողամասի և բնակելի տան նոր չափագրություն, որի ընթացքում համապատասխան աշխատակցի կողմից թույլ է տրվել սխալ, այն է՝ նոր բնակելի տունը հատակագծում տեղադրվել է հատակագծի եզրում, սակայն բնության մեջ փաստացի այն գտնվում է հողամասի առաջամասից 5 մ խորության մեջ: Կադաստրային գործում առկա է 1992 թվականի սեփականության իրավունքի վկայագրի հողամասի ընդհանուր բնութագիրը մասում հողամասի մակերեսը նշված է 525 քմ: Սակայն, կադաստրային քարտեզում նշված անճշտությունների հետևանքով անձի հողամասի մակերեսն ամրագրված է պակաս չափերով՝ 466 քմ, այն է՝ չի ամրագրվել շինության ճակատային մասում գտնվող հողամասի հատվածը, որը անձի սեփականության իրավունքի խախտմամբ հաշվառված է որպես համայնքային հողամաս: Ըստ բողոքի՝ անձը 2011 թվականից սկսած բազմիցս դիմել է Կադաստրի կոմիտե ժառանգության հիման վրա նշված անշարժ գույքի վերաբերյալ սեփականության իրավունքի պետական նոր վկայական տրամադրելու համար, սակայն իրավունքների պետական գրանցման վարույթն ամեն անգամ կասեցվել է հատակագծում առկա նշված սխալի պատճառով: Նշվածի կապակցությամբ Կադաստրի կոմիտեից պարզաբանվել է, որ շենքի ճակատային մասում գտնվող հողամասի կարգավիճակին առնչվող հարցը կարգավորելու համար առաջարկվում է դիմել Երևանի քաղաքապետարան՝ 2008 թվականի հունիսի 10-ի «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի դրույթներին համապատասխան որոշում կայացնելու կամ Երևան համայնքի հաստատված գլխավոր հատակագծում համապատասխան փոփոխություններ իրականացնելու համար: Մինչդեռ, հարկ է ընդգծել, որ Կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշմամբ սահմանված է, որ կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների հետ կապված սխալների ուղղումներն իրականացվում են հետևյալ սկզբունքներով՝ եթե անշարժ գույքի (հողամասի) միավորների գծային չափերի կամ տեղադիրքի կամ երկրաչափական տեսքի ուղղումներն իրականացնելիս փոփոխվում են միայն համայնքի կամ պետության անվամբ հաշվառված հողամասի տվյալները կամ այլ անձի պատկանող հողամասի տեղադիրքը, և ուղղման համար ներկայացված կամ առկա հատակագծերը համապատասխանում են օրթոֆոտոհատակագծին (օրթոլուսանկարին), **ապա ուղղումներն իրականացվում են առանց**



**համաձայնությունների՝ կոմիտեի նախաձեռնությամբ:** Վերոգրյալի ուսումնասիրություններից հետևում է, որ շինությունը կադաստրային քարտեզում տեղադրվել է սխալ տեղադիրքով, իսկ հողամասն արտացոլվել է սխալ գծային չափերով: Այն է՝ շինությունը ճակատային մասից տեղադրվել է հողամասի սահմանագծին, որի հետևանքով հողամասի երկարությունը 5 մետրով պակասել է: Մինչդեռ, փաստացի բնության մեջ այն գտնվում է ճշգրիտ, այն է՝ 5 մ խորության մեջ: Արդյունքում, չի ապահովվում բողոք ներկայացրած անձի մոտ առկա տարբեր տարեթվերի, այդ թվում՝ 1992 թվականի սեփականության վկայագրին կից առկա (1992թ.) հատակագծում 525 քմ մակերեսով հողամասի գծային և երկրաչափական չափերի պահպանությունը: Սակայն, Կադաստրի կոմիտեն միջոցներ չի ձեռնարկում վերոնշյալ կարգավորումների հիման վրա իր նախաձեռնությամբ խնդիրը լուծելու համար: 2021 թվականին կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների հետ կապված սխալների ուղղումները իրականացնելու համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Կադաստրի կոմիտեից պարզաբանվել է, որ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 29-ի «Կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղման կարգը սահմանելու մասին» N 698-Ն որոշման N 2 հավելվածի դրույթներով Կադաստրի կոմիտեի նախաձեռնությամբ իրականացվում է օրթոֆոտոհատակագծերի (օրթոլուսանկարների) հիման վրա կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալների ուղղում, որի շրջանակներում կատարվում է համայնքների վարչական սահմանների, կադաստրային թաղամասի տեղադիրքերի և սահմանների ճշգրտման աշխատանքներ, որի շրջանակներում ամբողջական ուղղվել են ՀՀ Արարատի մարզի Լուսառատ, Նոր Կյանք, Տափերական, Փոքր Վեդի բնակավայրերի կադաստրային քարտեզները և Կոմիտեի ղեկավարի հրամանով փոխանցվել են համապատասխան տարածքային ստորաբաժանմանը, որպես ընթացիկ վարվող քարտեզներ, իսկ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյան և Արթիկ խոշորացված համայնքների թվով 57 բնակավայրերի կադաստրային քարտեզների ուղղման աշխատանքներն արդեն իսկ ավարտվել են և քարտեզների ուղղման նախագծերը վերոնշյալ որոշման N 2 հավելվածի 19-րդ և 25-րդ կետերի պահանջների համաձայն ներկայացվել են համապատասխան համայնքների ղեկավարներին՝ համաձայնեցման: Կոմիտեի նախաձեռնությամբ կադաստրային քարտեզների ուղղումներն իրականացնելուց հետո կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների հետ կապված սխալների ուղղումներն իրականացվում են N2 հավելվածի IV բաժնով սահմանված կարգով, որի շրջանակներում կադաստրային քարտեզների ուղղումները կատարվում են բավականին պարզեցված և հստակեցված ընթացակարգերով: Վերոնշյալ աշխատանքները ՀՀ բոլոր համայնքների համար նախատեսվում է իրականացնել 2021- 2026 թվականների ընթացքում: Այսպիսով, թեև նոր կարգավորումներով Կադաստրի կոմիտեին իրավունք է վերապահվել սեփական նախաձեռնությամբ լուծել կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների գծային չափերի կամ տեղադիրքի կամ երկրաչափական տեսքի կամ արտացոլմանը վերաբերող սխալների ուղղումները, սակայն ոչ պատշաճ վարչարարության հետևանքով, ինչպես

կոնկրետ օրինակում բերված դեպքով, դրանք տարիներ շարունակ մնում են չլուծված և անձինք ստիպված են լինում դիմել դատարան՝ **անհիմն ծանրաբեռնելով** դատական համակարգը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

1. իրականացնել պատշաճ վերահսկողություն գեոդեզիական և քարտեզագրական աշխատանքների իրականացման նկատմամբ՝ կադաստրային քարտեզում սխալները բացառելու համար,

2. իրականացնել պատշաճ վարչարարություն՝ սեփական նախաձեռնությամբ ձեռնարկելով միջոցներ կադաստրային քարտեզներում անշարժ գույքի (հողամասի) միավորների գծային չափերի կամ տեղադիրքի կամ երկրաչափական տեսքի կամ արտացոլմանը վերաբերող սխալները ուղղելու համար:

## **5. Քաղաքաշինական նորմերը և կանոնները չպահպանելու հետևանքով գույքային իրավունքների խախտումը**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են քաղաքաշինական նորմերը և կանոնները չպահպանելու հետևանքով այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտելուն: Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի կողմից վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 48-րդ և 154-րդ հոդվածների դրույթներին համապատասխան կազմվել է թվով 1021 արձանագրություն և ձեռնարկված միջոցառումների արդյունքում քանդվել է թվով 307 ինքնակամ կառույց, որից թվով 155-ի քանդման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետի համապատասխան որոշումների հիման վրա: Փաստորեն, ստացված պարզաբանման ուսումնասիրությունից հետևում է, որ 152 ինքնակամ շինություն քանդվել է առանց Երևանի քաղաքապետի համապատասխան որոշման կայացման: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ ուղղակիորեն նախատեսված է, որ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին: Հարկ է նշել, որ նույն Կառավարության

որոշմամբ այնպիսի ընթացակարգ նախատեսված չէ, որով հնարավոր է ինքնական շինությունը քանդել առանց քանդման որոշման:

Ընթացիկ տարում ստացված բողոքները, մասնավորապես, վերաբերել են Երևանի քաղաքապետարանի կողմից ինքնական շինարարության կանխման, կասեցման և հետևանքների վերացման գործընթացը ոչ արդյունավետ և պատշաճ կազմակերպելու և իրականացնելու հարցին: Այսպես, Պաշտպանի աշխատակազմ հասցեագրած բողոքներով անձինք տեղեկացրել են, որ 2021 թվականի հունիսի 21-ի դրությամբ վերջին մեկ ամսում Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Հալաբյան-Մարգարյան-Էստոնական փողոցների՝ հանրային տարածք հանդիսացող հատվածներում կառուցվել է շուրջ 20 նույնատիպ ինքնական շինություն: Նշվածը տեղի է ունեցել գիշերային ժամանակ՝ ժամը 01.00-ի սահմաններում, այնպես, որ առավոտյան արդեն կառուցված են եղել բետոնային հիմքով, քարե պատերով, ապակեպատ դռներով շինություններ: Շինությունները կառուցվել են առանց համապատասխան շինարարության թույլտվության՝ ինքնական: Նշված շինությունները կառուցվել են Երևանի Աջափնյակ վարչական շրջանի Կ. Հալաբյան, Հ. Մարգարյան, Էստոնական, Ֆուչիկ-Մարգարյան և Էստոնական-Շինարարներ փողոցների և խաչմերուկների տարբեր հատվածներում: Կառուցապատողները զավթել են հանրային կանաչ տարածքներ, ապօրինի հատել են ծառեր և զրկել բնակիչներին արևի լույսից: Վերոգրյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ քաղաքապետարանի համակարգմամբ պետք է ձեռնարկվեին ինքնական շինությունների կառուցման կանխարգելման համապատասխան միջոցառումներ, որոնք, սակայն, պատշաճ չեն կազմակերպվել: Արդյունքում Երևան քաղաքի որոշ վարչական շրջաններում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակման տակ գտնվող հողամասերի վրա շատ կարճ ժամկետներում կառուցվել են մի շարք ինքնական շինություններ: Ընթացիկ տարում ինքնական շինությունների կառուցման հետ կապված արձանագրվել են ոչ պատշաճ վարչարարության նաև այլ դրսևորումներ: Այսպես, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Երևան քաղաքի Հ. Մարգարյան փողոցում գտնվող շենքի դիմացի հատվածում կառուցել է ինքնական շինություն: Դիմել է Երևանի քաղաքապետարան նշված շինությունն օրինականացնելու խնդրանքով: Ինքնական կառույցն օրինականացնելու կամ օրինականացումը մերժելու մասին որոշում Երևանի քաղաքապետարանի կողմից դեռ չկայացված և առանց չօրինականացված ինքնական կառույցը քանդելու մասին համայնքի ղեկավարի որոշման, նախաձեռնվել են կառույցի քանդման գործողություններ: Ահազանգի հիման վրա Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել և արձանագրել, որ Երևանի քաղաքապետարանի և Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի ներկայացուցիչներն առանց համապատասխան քանդման որոշման առկայության ամբողջությամբ քանդել են ինքնական կառույցն այն պարագայում, երբ անձը դիմել է Երևանի քաղաքապետին այն օրինականացնելու խնդրանքով: Մեկ այլ դեպքով անձը զանգահարել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի «թեժ գծի» հեռախոսահամարին և տեղեկացրել, որ Երևան քաղաքի Յ. Ֆուչիկի

փողոցում գտնվող շենքի հարևանությամբ կառուցել է ինքնակամ շինություն և դիմել Երևանի քաղաքապետարան նշված շինությունն օրինականացնելու խնդրանքով: Ինքնակամ կառույցն օրինականացնելու կամ օրինականացումը մերժելու մասին որոշում դեռ չկայացված, առանց չօրինականացված ինքնակամ կառույցը քանդելու մասին համայնքի ղեկավարի որոշման, նախաձեռնվել են կառույցի քանդման գործողություններ: Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել նշված հասցե, որի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի և Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցներից քանդման աշխատանքների իրավաչափության վերաբերյալ պարզաբանումներ պահանջել, սակայն պատշաճ պարզաբանումներ չեն ներկայացվել: Ավելին, իրականացնողները չեն ներկայացրել, չեն վկայակոչել իրավասության շրջանակները: Փոխարենը ներկայացվել է, որ քանդման աշխատանքներն իրենք չեն իրականացնում: Ըստ մեկ այլ բողոքի՝ Երևան քաղաքի Գ. Ղափանցյան փողոցում անձը կառուցել է ինքնակամ կառույց և դիմել Երևանի քաղաքապետարան նշված շինությունն օրինականացնելու խնդրանքով, սակայն ստացել է մերժում: Տեղեկացրել է, որ ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու մասին որոշումը բողոքարկել է դատարան և կիրառվել է հայցի ապահովում: Սակայն, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչները հաշվի չեն առել, որ կիրառված է հայցի ապահովում և քանդել ինքնակամ կառույցը:

Վերոնշյալ փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում Երևան համայնքում արձանագրվել է հետևյալը՝

1. ինքնակամ շինարարության կանխարգելման աշխատանքները պատշաճ չեն կազմակերպվել,
2. քանդման աշխատանքները չեն իրականացվել մինչ այդ կայացված վարչական ակտի՝ քանդման որոշման հիման վրա,
3. մինչ քանդման աշխատանքներն իրականացնելը չեն կայացվել նաև ինքնակամ կառուցված շինությունների օրինականացումը մերժելու մասին որոշումներ,
4. արագ արձագանքման շրջանակներում չի ապահովվել Պաշտպանի ներկայացուցիչներին պահանջված նյութերի, տեղեկությունների և պարզաբանումների անհապաղ տրամադրումը:

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ սկզբնական փուլում Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների ղեկավարների ոչ պատշաճ հսկողության հետևանքով Երևան համայնքի տարբեր վարչական շրջանների տարբեր հատվածներում, այդ թվում՝ սահմանափակման տակ գտնվող տարածքներում կառուցվել են ինքնակամ շինություններ: Այնուհետև, Երևանի քաղաքապետարանի կողմից նախաձեռնվել և իրականացվել են դրանց քանդման գործողություններ, որոնք, սակայն, իրականացվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի և մի շարք այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ, ինչն անթույլատրելի է:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. պատշաճ հսկողություն իրականացնել ապօրինի շինարարությունը կանխարգելելու ուղղությամբ,

2. վարչարարությունն իրականացնելիս պահպանել ՀՀ-ում գործող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները՝ բացառելով այլ անձանց իրավունքների և օրենքով պահպանվող շահերի խախտումները:

## **6. Վթարային բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավում**

2021 թվականին ևս լուծված չի ստացել սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով 4-րդ աստիճանի վթարային (բնակության համար ոչ պիտանի) դարձած բնակելի տների բնակիչներին պետական աջակցությամբ վերաբնակեցնելու հարցը: Ըստ գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի (ՀՀ ՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարություն: Նախագծման նորմեր» շիննորմեր, ՀՀ քաղաքաշինության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի N 282-Ն հրամանով հաստատված «Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության մեթոդական ցուցումներ»), 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող շենքերի կոնստրուկցիաների վիճակը վթարային է, շենքերը վտանգավոր են հետագա շահագործման համար: Այդ շենքերի բնակիչները ենթակա են վերաբնակեցման: Հարկ է նշել այն, որ բնակարանային ֆոնդի նշված հատվածում բնակվում են սոցիալապես առավել խոցելի անձինք, որոնք իրենց միջոցներով հնարավորություն չունեն հոգալու բնակարանային ապահովման խնդիրները: Սակայն, ներկայում դեռևս չկան համապատասխան իրավական հիմքեր սահմանամերձ բնակավայրերում բնակվող և սողանքների հետևանքով տուժած անձանց անվտանգ բնակելի տարածքով ապահովման պետական աջակցության առաջնահերթ ծրագրի վերաբերյալ: Հետևաբար, նշվածով պայմանավորված բնակարանային պայմանների բարելավման սահմանադրական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել այդ համակարգային խնդրի լուծման համար: Որպես քաղաքաշինական պետական, տարածական զարգացման ծրագրերի մշակման և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմին չափազանց կարևոր է Պաշտպանի համագործակցությունը և համատեղ աշխատանքը Քաղաքաշինության կոմիտեի հետ: Համատեղ ջանքերի արդյունքում դա նպաստում է քաղաքացիների իրավունքների վերականգնմանը: Ձևավորվել է գործնական սերտ համագործակցության պրակտիկա: Սակայն, առկա են խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Այսպես, ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի մարտի 18-ին ընդունվել է «Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 376-Լ որոշումը: Նշված որոշմամբ Կառավարությունը հաստատել է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման նոր հայեցակարգը և անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների

կանոնակարգման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը: Հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի ուսումնասիրությունից հետևում է, որ առկա հիմնախնդիրների կանոնակարգման համար դրանում նշված մի շարք իրավական ակտերը պետք է ներկայացվեն ՀՀ վարչապետի աշխատակազմ 2021-2023 թվականների ընթացքում: Վթարային և անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման համար նոր իրավական հիմքերի ստեղծման անհրաժեշտության կապակցությամբ կատարված հարցմանն ի պատասխան՝ Քաղաքաշինության կոմիտեից պարզաբանվել է, որ Կառավարության 2021 թվականի մարտի 18-ի N376-Լ որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված՝ անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրով 2021 թվականի համար նախատեսված է ««Քաղաքաշինության մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ» միջոցառումը (միջոցառումների ծրագրի 1-ին կետ): Նշված միջոցառման շրջանակներում Կոմիտեի կողմից մշակվել և սահմանված կարգով ու ժամկետում Կառավարության քննարկմանն է ներկայացվել «Քաղաքաշինության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի և հարակից՝ «Տարածքային կառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը, որով նախատեսված է սահմանել անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակարանային ֆոնդի հիմնախնդիրն առնչվող հարցերում Կառավարության, պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների համար լիազորող նորմերը: Փաթեթը քննարկվել է Տարածքային զարգացման և շրջակա միջավայրի նախարարական կոմիտեի 2021 թվականի դեկտեմբերի 13-ի նիստում: Քննարկման արդյունքում հնչեցված դիտարկումների հիման վրա օրենսդրական փաթեթը գտնվում է շահագրգիռ մարմինների հետ լրացուցիչ քննարկման փուլում: Այսպիսով, ողջունելի են Կոմիտեի ձեռնարկած միջոցներն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման համար միջոցառումներից բխող համապատասխան իրավական հիմքերի ստեղծման ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել դրանք հնարավոր սեղմ ժամկետներում ստեղծելու, այնուհետև կյանքի կոչելու ուղղությամբ: Քանի որ խնդիրը տարիներ շարունակ կրում է համակարգային բնույթ, ինչի մասին բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում<sup>76</sup>: Սողանքների հետևանքով վթարային տների բնակիչների բնակարանային պայմանների բարելավման համակարգային խնդրի լուծման ուղղությամբ ընթացիկ տարում ձեռնարկված միջոցների վերաբերյալ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ Գեղարքունիքի մարզում բարձրացված հարցերը կներառվեն 2023-2025

<sup>76</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 205-209:

թվականների միջնաժամկետ միջոցառումների ծրագրում: ՀՀ Սյունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով վթարային դարձած 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող անհատական բնակելի տների մասով վերջին 10 տարում փոխհատուցում չի տրամադրվել: Ինչպես նաև չկա օրենսդրական կարգավորում այն մասին, որ վթարային դառնալու դեպքում պետությունն ունի պարտավորություն: Նորմատիվ իրավական ակտում նշվում է, որ պետությունը կարող է օժանդակել: Ներկա պահին սահմանամերձ բնակավայրերում առկա 4-րդ և 5-րդ աստիճանի վթարային անհատական տները ըստ բնակավայրերի հետևյալն են՝ Կապան համայնքի Դավիթ Բեկ բնակավայր՝ 4 տուն, Ագարակ բնակավայր՝ 2 տուն, Ճակատեն բնակավայր՝ 1 տուն, Քարահունջ բնակավայր 4 տուն, Տաթև համայնքի Խոտ բնակավայր՝ 10 տուն: Վերջին ուսումնասիրությունները կատարվել են 2008 թվականին և դրանք կրել են ընտրողական բնույթ, ուստի իրական թվերը կարող են ավելի մեծ լինել: Միջնաժամկետ ծախսային ծրագրերում փոխհատուցում չի նախատեսվել: ՀՀ Վայոց ձորի մարզում 2021 թվականի ընթացքում միջոցներ չեն ձեռնարկվել սահմանամերձ բնակավայրերում սողանքների հետևանքով 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող անհատական բնակելի տների մասով: Խնդիրը ներառված է միջնաժամկետ ծախսերի ծրագրերում: ՀՀ Տավուշի մարզում 2021 թվականի ընթացքում պետական միջոցների հաշվին քանդման ենթակա վթարային բնակելի տների բնակիչների վերաբնակեցման բնակարանային ապահովման ծրագրեր չեն իրականացվել:

Նշվածի կապակցությամբ պետք է արձանագրել, որ 2021 թվականի ընթացքում ևս լուծում չեն ստացել Մարդու իրավունքների պաշտպանի 2018 և 2019 թվականների տարեկան հաղորդումներում ներկայացված ՀՀ Վայոց ձորի սահմանամերձ Խաչիկ բնակավայրի բնակիչների սողանքների հետևանքով քանդման ենթակա բնակելի տների վերաբնակեցման, ինչպես նաև ՀՀ Տավուշի մարզում 4-րդ կարգի վթարային տների բնակիչներին փոխհատուցում, այն է՝ բնակարանի հատկացման կամ շուկայից բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար ֆինանսական աջակցության տրամադրելու հարցը: Վերը նշվածից բացի, ներկայում հանրապետության տարածքում առկա է բնակարանային ֆոնդ, որը վթարային և բնակության համար ոչ պիտանի է դարձել այլ գործոնների ազդեցության արդյունքում, օրինակ՝ բնակարանային ֆոնդի շահագործման ժամկետի սպառման կամ տեղանքների գրունտների ֆիզիկամեխանիկական հատկություններով պայմանավորված: Նշված խնդրով տարիներ շարունակ Պաշտպանի աշխատակազմ են ներկայացվել բազմաթից բողոքներ, որոնցում անձինք հայտնել են, որ իրենց բնակելի տները և (կամ) բազմաբնակարան շենքերում բնակարանները տեխնիկական կամ տնտեսական նպատակահարմարության տեսանկյունից դարձել են ամրացման ոչ ենթակա, բնակության համար ոչ պիտանի և վտանգավոր, այն է՝ 4-րդ աստիճանի վթարային, սակայն Երևանի քաղաքապետարանից ստացված տարբեր պատճառաբանություններով նշված բնակարանային ֆոնդի բնակիչների վերաբնակեցման գործընթաց չի իրականացվել: Օրինակ՝ բողոքներից մեկով անձը հայտնել է, որ բնակվում է Երևան քաղաքի Արզումանյան փողոցում գտնվող շենքում, որը 4-րդ աստիճանի վթարային է: Արդեն 4 տարի է շենքի բնակիչները ապրում են վախի և սարսափի

մեջ, այն պահից սկսած, երբ դրսից և ներսից սկսվել են շենքի փլուզումները: Ըստ բողոքի՝ օրեցօր ավելանում են ճաքերը և սարսափելի ձայներ են արձակվում, պատերը դեֆորմացվել են, իսկ դռներն ու պատուհանները չեն բացվում: Նշվածի խնդրի կարգավորման վերաբերյալ Երևանի քաղաքապետարան են ուղարկվել մի շարք գրություններ, որոնց ի պատասխան՝ ընթացիկ տարում Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ վերոնշյալ շենքի բնակիչների վերաբնակեցման գործընթացի շրջանակներում Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում քննարկում շենքի բնակիչների և կառուցապատող կազմակերպության ներկայացուցիչների մասնակցությամբ: Սակայն հաշվի առնելով բնակիչների անհամաձայնությունները և դժգոհությունները կառուցապատող կազմակերպությունը հրաժարվել է շենքի քանդման և տեղում նոր շենքի կառուցման գործընթացն իրականացնելուց: Պարզաբանվել է նաև, որ ՀՀ կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 682-Ն որոշմամբ հաստատվել է վթարային բազմաբնակարան շենքերի բնակիչների վերաբնակեցման կարգը, համաձայն որի՝ 4-րդ աստիճանի վթարային շենքի բնակիչները ենթակա են բնակարանով ապահովման պետական միջոցների հաշվին: Վերոգրյալ վերաբերյալ հարկ է ընդգծել, որ թեև նշված որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ 4-րդ աստիճանի վթարային շենքի բնակիչները ենթակա են բնակարանով ապահովման պետական միջոցների հաշվին, սակայն նույն կարգով սահմանված է, որ Երևանի քաղաքապետն է ճանաչված նշված ծրագրի պատասխանատու, հետևաբար անհրաժեշտ է գործուն և արդյունավետ միջոցներ ձեռնարկել լուծելու համար ինչպես կոնկրետ դեպքով շենքի բնակիչների, այնպես էլ Երևան համայնքում բնակվող այլ 4-րդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցման հարցը: Քանի որ նշված անձին փաստացի բնակվում են կյանքի և առողջության համար վտանգավոր պայմաններում: Այսպիսով, անհրաժեշտ է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի միջնաժամկետ ծախսային ծրագրերով նախատեսել հատկացումներ քանդման ենթակա վթարային բնակարանային ֆոնդի բնակիչների բնակարանային ապահովման համար կամ նույն նպատակների իրականացման համար Երևան համայնքում ստեղծել սոցիալական բնակարանային ֆոնդ և այդ միջոցների հաշվին իրականացնել համապատասխան բնակարանաշինարարական, բնակապահովման ծրագրեր:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. սողանքային վտանգի և ռիսկի աստիճանի գնահատման նպատակով սահմանամերձ բնակավայրերում պետական միջոցների հաշվին իրականացնել բնակելի տների տեխնիկական վիճակի գնահատման հետազննություններ, այդ թվում սահմանամերձ բնակավայրերում պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացնել նախկինում 3-րդ աստիճանի վթարային գնահատված բնակելի տների կրկնակի հետազննություն,*

*2. սահմանված ժամկետներում ընդունել «Անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման հայեցակարգը և դրանից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման հայեցակարգից բխող*



*միջոցառումների ծրագրով նախատեսված համապատասխան իրավական ակտերը ոլորտում առկա հիմնախնդիրների կանոնակարգման և լուծման համար,*

*3. յուրաքանչյուր փարվա պետական միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին կառուցել բնակելի շենքեր քանդման ենթակա վթարային բնակարանների բնակիչներին բնակարանով ապահովման համար, նույն նպատակների իրականացման համար ստեղծել Երևան քաղաքի համայնքային սոցիալական բնակարանային ֆոնդ:*

**7. Տրանսպորտային միջոցի հափշտակման և փաստացի չփիրապետման պարագայում գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու խնդիր**

Ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2021 թվականին, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնցում բարձրացվել է գույքահարկի վճարման պահանջի առաջադրման խնդիրը: Մասնավորապես՝ մինչ օրս էլ գույքահարկի վճարման պարտավորությունը չի դադարեցվում այն դեպքերում, երբ անձանց սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը գաղտնի հափշտակվել է և տարիներ շարունակ չի հայտնաբերվել, ինչպես նաև՝ պատերազմական գործողությունների արդյունքում ոչնչացվել կամ ադրբեջանական զինված ուժերի վերահսկողության տակ է անցել: Օրինակ՝ բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 2012 թվականին ձեռք է բերել ավտոմեքենա, հաշվառել այն: 2014 թվականին ավտոմեքենան անհայտ անձի կողմից գաղտնի հափշտակվել է: Հարուցվել է քրեական գործ, սակայն ավտոմեքենան Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ չի հայտնաբերվել: Նշված ավտոմեքենան ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Հաշվառման-քննական ստորաբաժանման կողմից հաշվառումից ժամանակավոր հանվել է և գրանցումը կասեցվել է՝ հափշտակված լինելու հանգամանքով պայմանավորված: Մինչդեռ, նման պայմաններում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմից սեփականատիրոջը ներկայացվել է իրեն պատկանող ավտոմեքենայի գույքահարկի գծով վճարման ենթակա պարտավորություններ: Խնդրո առարկա դեպքում փոխադրամիջոցը ֆիզիկական անձի կողմից չի շահագործվում, քանի որ հափշտակվել է և պարզ չի, թե երբ է հայտնաբերվելու կամ հայտնաբերվելու է արդյոք, թե՛ ոչ: Անձը զրկվել է իր գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունից: Հափշտակման հիմքով պայմանավորված տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանել է, գրանցումը կասեցվել է, սակայն ներկայիս օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով անձը պարտավորվում է շարունակել վճարել գույքահարկը: Պաշտպանը անդրադարձել է բարձրացված հարցին 2020 թվականի տարեկան հաղորդմամբ՝ առաջարկելով կատարել համապատասխան

օրենսդրական փոփոխություններ նման դեպքերում անձանց գույքահարկի վճարման պարտավորությունից ազատելու վերաբերյալ<sup>77</sup>:

Նշվածից բացի, ընթացիկ տարում արդիական է դարձել նաև 2020 թվականի 44-օրյա պատերազմական գործողությունների արդյունքում անձանց պատկանող տրանսպորտային միջոցների ոչնչացման կամ Ադրբեյջանի վերահսկողության տակ անցնելու, սակայն գույքահարկի վճարման պահանջ առաջադրելու հարցը: Օրինակ, բողոքներից մեկով անձը հայտնել է, որ զինվորական է: Նշել է, որ 44-օրյա պատերազմի ժամանակ իր անձնական ավտոմեքենան կայանել է Հադրութ քաղաքում իր վարձակալած բնակելի տան բակում, հետագայում այն տիրապետությունից դուրս է եկել: Այնուհետև, 2020 թվականի դեկտեմբերի 10-ին Բաքվում անցկացված զորահանդեսի տեսագրություններում նկատել է իրեն պատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը: Անձը նշվածով պայմանավորված՝ դիմում է ներկայացրել համայնքապետարան նշված տրանսպորտային միջոցի համար հաշվարկված գույքահարկը զրոյացնելու խնդրանքով, սակայն ստացել է մերժում՝ պարտավորություն ստանձնելով վճարել գույքահարկի հաշվարկված ողջ գումարը: Վերոգրյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ գործող օրենսդրությամբ անձը սեփականության իրավունքի սուբյեկտ հանդիսանալու համար պետք է օժտված լինի սեփականության իրավունքի օբյեկտ հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավաբանորեն ապահովված հնարավորությամբ, որը տվյալ դեպքում բացակայում է: Բնակավայրը, որտեղ գտնվել է գույքը պատերազմական գործողությունների արդյունքում անցել է Ադրբեյջանի վերահսկողության տակ, իսկ գույքը հափշտակվել է հակառակորդի կողմից և գրեթե անհավանական է, որ այն երբևէ կհայտնաբերվի: Նշված համակարգային խնդրի կարգավորման անհրաժեշտությամբ պայմանավորված գրություն է ուղարկվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Գրությամբ առաջարկվել է համապատասխան իրավասու մարմինների ներգրավմամբ քննարկել օրենսդրական փոփոխություններ կատարելու միջոցով նշված իրավիճակում հայտնված անձանց գույքահարկի վճարման պարտավորությունից ազատելու հնարավորությունը: Գրությանն ի պատասխան՝ Նախարարությունից պարզաբանվել է, որ առաջարկը քննարկվել է Պետական եկամուտների կոմիտեի, այնուհետև վերջինիս առաջարկությամբ՝ Արդարադատության նախարարության հետ: ՊԵԿ-ից պարզաբանվել է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու սահմանած կարգով կարող է սահմանել փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություններ և կայացնել փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ: Մինչդեռ, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության դիրքորոշմամբ այդ կարգավորումը կարող է կրել լրկալ բնույթ և չի կարող համարվել խնդրի

<sup>77</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 211-214:

խորքային լուծման տարբերակ: Արդարադատության նախարարությունը, անդրադառնալով գրությամբ բարձրացված հարցին առ այն, թե ինչպես կարող են անձինք ազատվել փոխադրամիջոցների գույքահարկից, եթե տրանսպորտային միջոցը պատերազմի ժամանակ ոչնչացվել է, հափշտակվել է կամ անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, նշել է, որ տվյալ դեպքում վիճահարույց է անձի՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը դադարած համարելը և դրա ընթացակարգը: Նախարարությունը գտել է, որ պատերազմական գործողությունների արդյունքում ոչնչացված կամ Ադրբեջանի վերահսկողությանն անցած տրանսպորտային միջոցի համար հաշվարկված գույքահարկից այդ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջն ազատելու համար անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ հարկային օրենսգրքի՝ փոխադրամիջոցների գույքահարկի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող դրույթներում՝ որպես փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորության դադարման հիմք նախատեսելով նաև խնդրո առարկա դեպքը: Ընդ որում, ըստ Նախարարության դիրքորոշման՝ նշված օրենսդրական փոփոխություններին հնարավոր կլինի հետադարձ ուժ տալ և շահագրգիռ անձանց փոխադրամիջոցների գույքահարկի պարտավորությունը համարել դադարած փոխադրամիջոցների պատերազմական գործողությունների արդյունքում ոչնչացված կամ հակառակորդին անցած լինելու պահից: Իհարկե ողջունելի է Արդարադատության նախարարության հայտնած դիրքորոշումը բարձրացված հարցի համակարգային կարգավորման վերաբերյալ, սակայն խնդրի կարգավորման համար ընթացիկ տարում օրենսդրական փոփոխություններ չեն կատարվել և այդ սոցիալական կարևոր նշանակություն ունեցող հարցը մնացել է չլուծված: Որպես լրացում նշենք, որ դեպքերից մեկով Երևանում որպես խնդրի լուծում կարգավորման օրինակ՝ համայնքի ավագանին 2021 թվականի մարտի 16-ի ընդունել է թիվ 344-Ա որոշումը, որով սահմանվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած պատերազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում մնացած, ինչպես նաև շահագործման համար ոչ պիտանի դարձած և Երևան համայնքում գրանցված փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություն՝ ազատելով փոխադրամիջոցների տերերին գույքահարկի առկա պարտավորությունների և հաշվարկված տույժի վճարումից մինչև նշված փոխադրամիջոցների խոտանման ամիսը ներառյալ և դրանց մասով փոխադրամիջոցների գույքահարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից կատարել վճարում: Իհարկե գովելի է, որ Երևան համայնքի պարագայում խնդիրը տեղային լուծում է ստացել, սակայն հանրապետության մարզերի բյուջետային առավել սուղ միջոցներ ունեցող համայնքները նման տեսակի ծախսեր չեն կարող իրենց թույլ տալ, ուստի անհրաժեշտ է խնդիրը կարգավորել համակարգային առումով, այն է՝ օրենսդրական փոփոխություններ կատարելով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է՝*

1. սահմանել օրենսդրական կարգավորումներ փոխադրամիջոցը հափշտակվելու դեպքում այն ժամանակավորապես հաշվառումից հանելու պարագայում դրա սեփականության իրավունքի սուբյեկտին գույքահարկի պարտավորությունից ազատելու վերաբերյալ,

2. սահմանել օրենսդրական կարգավորումներ պատերազմական գործողությունների արդյունքում ոչնչացված կամ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տրանսպորտային միջոցի համար հաշվարկված գույքահարկից այդ տրանսպորտային միջոցի սեփականատիրոջն ազատելու վերաբերյալ:

## **8. Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքներին բնակարան հատկացնելը**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդրի վերաբերյալ: Բողոքներով մարդիկ հայտնել են, որ անհիմն կերպով չեն հաշվառվել երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների հերթացուցակում, սակայն օրենսդրության կարգավորումների բացակայության հետևանքով չեն կարողանում վերահաշվառվել համապատասխան ցուցակներում և օգտվել ներկայում գործող բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրերից<sup>78</sup>: 2021 թվականին նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Քաղաքաշինության կոմիտեից պարզաբանվել է, որ ծրագրի ավարտական փուլում՝ 2020-2021 թվականների ընթացքում, դիտարկվել է ծրագրի շահառու ճանաչված 242 ընտանիքի բնակարանային խնդրի լուծում: Նշված 242 ընտանիքներից՝ 214-ի խնդիրը դիտարկվել է Կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 712-Ն որոշման շրջանակներում (187-ը՝ բնակելի տների կառուցման, 20-ը՝ բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանի գնման վկայագրի միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման, իսկ 7-ն՝ ուղղակի ֆինանսական աջակցության տրամադրման եղանակով)՝ այդ ուղղությամբ հատկացված շուրջ 3.4 մլրդ դրամի հաշվին: Ընդ որում, նշված 214 ընտանիքից 7-ն ինչ-ինչ պատճառներով հերթացուցակում չհաշվառված անձինք են, որոնք հերթացուցակում հաշվառված լինելու իրենց իրավունքը վերականգնել են դատական կարգով: 28-ը Ջրածոր համայնքի բնակիչներ են, որոնց բնակարանային խնդրի լուծումը և ֆինանսավորման հարցը դիտարկվելու է Կառավարության 2020 թվականի օգոստոսի 27-ի N 1411-Լ որոշման համաձայն՝ Կապսի ջրամբարի կառուցման

<sup>78</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 200-202:

նպատակով Ջրածոր համայնքից վերաբնակեցվող ընտանիքների հետ՝ միասնական մոտեցումների համաձայն և նախատեսված աջակցության ամբողջ ծավալով: Կոմիտեից պարզաբանվել է նաև, որ Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 1006-Ն որոշման 6-րդ կետով սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ծրագրի շրջանակներում բնակապահովման իրավունքը վերականգնած՝ ծրագրի շահառու ճանաչված ընտանիքների՝ բնակարանային խնդիրները լուծվելու են բնակարանի գնման վկայագրի տրամադրման միջոցով (բացառությամբ գյուղական բնակավայրերում մեկ սենյակի շահառու ճանաչված ընտանիքների, որոնց բնակարանային պայմանների բարելավման նպատակով տրամադրվում է ուղղակի ֆինանսական աջակցություն՝ 3.0 մլն դրամի չափով): Բնակարանային խնդիրների լուծման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները ՀՀ տարեկան պետական բյուջեներում նախատեսվելու են համապատասխան մարզպետարանների կողմից Կոմիտեի հետ համաձայնեցված և ծրագրի բյուջետային գլխավոր կարգադրիչ հանդիսացող մարմին՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված հայտի հիման վրա: Ինչ վերաբերում է բնակարանի կարիքավորների հերթացուցակում ինչ-ինչ պատճառներով չհաշվառված անձանց բնակապահովման խնդիրն, ապա այդ ընտանիքների թվի ճշտման, համապատասխան իրավական հիմքերի ստեղծման և դրանց հիման վրա ծրագրերի իրականացման հարցին նախատեսվում է անդրադառնալ ծրագրի ավարտից հետո՝ փուլային մոտեցման եղանակով: Որպես նշված խնդրի կանոնակարգման առաջին փուլ է դիտարկվել այդ ընտանիքներից մի խմբի՝ ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների մասով Կառավարության 2018 թվականի մարտի 29-ի N 361-Ն և Վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1658-Ա որոշումների համաձայն՝ կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքները: Արդյունքում, խնդիրը ներառվել է Ազգային Ժողովի կողմից 2021 թվականի օգոստոսի 26-ի N ԱԺՈ-002-Ն որոշմամբ հավանության արժանացած Կառավարության ծրագրի «2.7 Քաղաքաշինություն» բաժնի 2-րդ պարբերության 9-րդ կետով, որում ամրագրվել է, որ նախորդող ժամանակահատվածում իրականացված փաստագրման արդյունքների հիման վրա նախատեսվում է շարունակել երկրաշարժից հետո տեղադրված (կառուցված) ավելի քան 7000 ոչ հիմնական շինություններում բնակվող ընտանիքների վերաբնակեցման, այդ շինությունների քանդման և տարածքների քաղաքաշինական միջավայրը վերականգնելու հետ կապված գործընթացը: Ըստ այդմ, խնդիրը տեղ է գտել նաև Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ Կառավարության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրի «Քաղաքաշինության կոմիտե» բաժնում (նպատակ 17), որի համաձայն՝ նախատեսվում է՝ 2021-2022 թվականներին ստեղծել իրավական հիմքեր (ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքների կարգավիճակի գնահատում, գնահատման արդյունքների տեղադրում քարտեզագրական նյութերի վրա, ընտանիքների տարանջատում ըստ կարգավիճակի և յուրաքանչյուր խմբի մասով մոտեցումների ու առաջնահերթությունների մշակում, նախնական ֆինանսական հաշվարկներ և դրանց հիման վրա ծրագրերի իրականացման համար համապատասխան իրավական ակտերի մշակում), սկսած 2023 թվականից մեկնարկելու են

ծրագրեր՝ Կառավարության կողմից սահմանված մոտեցումների և առաջնահերթությունների համաձայն: Ընդ որում, 2021 թվականի մասով նախատեսված են եղել ոչ հիմնական շինությունների և դրանցում բնակվող ընտանիքների կարգավիճակի գնահատման, գնահատման արդյունքները քարտեզագրական նյութերի վրա տեղադրման, ըստ կարգավիճակի ընտանիքների տարանջատման աշխատանքները, որոնք սահմանված ժամկետում իրականացվել են:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Քաղաքաշինության կոմիտեից բարձրացված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ դեռևս նախորդ տարի պարզաբանվել է, որ 229 ընտանիքի բնակապահովման խնդրի լուծումը մեկնարկել է ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 7-ի N 712-Ն որոշմամբ, որի համաձայն՝ խնդրի լուծումը նախատեսվում է մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը, այդ ուղղությամբ հատկացված շուրջ 3.4 մլրդ դրամի հաշվին: Մինչդեռ, ընթացիկ տարվա Կոմիտեից ստացված պարզաբանմամբ՝ նշված 226 շահառու ընտանիքի թիվը արդեն դարձել է 242 ընտանիք: Ընդ որում՝ կրկին նշվել է, որ դիտարկվում է նշված անձանց խնդրի լուծում, սակայն ըստ նախորդ տարվա պարզաբանման նշված ընտանիքների խնդրի լուծումը նախատեսվել է իրականացնել մինչև 2021 թվականի նոյեմբերի 30-ը, որը փաստացի մինչ օրս չի կատարվել, ընդհակառակը՝ շահառու անձանց թիվն ավելացել է: Հարկ է ընդգծել նաև, որ Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված՝ Կառավարության 2021-2026 թվականների միջոցառումների ծրագրի «Քաղաքաշինության կոմիտե» բաժնում (նպատակ 17) ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ միջոցառման նպատակը՝ ոչ հիմնական շինությունների հետագա տնօրինման և դրանցում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հետ կապված մոտեցումների և առաջնահերթությունների սահմանման համար իրավական հիմքերի ստեղծումն է: Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ երկրաշարժից հետո անօթևան անձինք բնակվում են ոչ միայն ոչ հիմնական շինություններում, այլ նաև վարձակալական հիմունքներով, սակայն ինչ-ինչ պատճառներով չեն հասցրել մինչև 2008 թվականը հաշվառվել աղետի գոտու բնակավայրերում քաղաքացիներին բնակարանների արտահերթ հատկացման հերթացուցակում, ինչի հետևանքով զրկվել են բնակապահովման իրավունքից: Առկա ժամկետներից հետո դիմումներ չեն ընդունվում, և այդ ժամկետում բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառվելու նպատակով՝ սահմանված կարգով դիմում չներկայացրած անձանց նկատմամբ աղետի գոտու գյուղական և քաղաքային բնակավայրերում բնակելի տների հատկացման մասով պետական աջակցության ցուցաբերման պարտավորությունների կատարումը համարվել է դադարեցված: Նշված կարգավորումների հետևանքով երկրաշարժից անօթևան մնացած բազմաթիվ քաղաքացիներ զրկվել են վերահաշվառվելու և բնակարանային պայմանների բարելավման իրավունք ունեցող քաղաքացիների ցուցակներում ընդգրկվելու հնարավորությունից: Չնայած բնակապահովման պետական աջակցության ծրագրերով կատարված աշխատանքներին՝ ընթացիկ տարում ևս լուծում չի ստացել ինչ-ինչ պատճառներով հաշվառումից դուրս մնացած, սակայն իրավական հիմքերի բացակայության պատճառով ներկայում իրականացվող ծրագրերից

օգտվել չկարողացող անձանց բնակարանային ապահովման նշված համակարգային բնույթ կրող խնդիրը:

*Հաշվի առնելով վերոգրյալը Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

*1. ընդունել Կառավարության որոշում բնակարանային հերթացուցակի հաշվառումից դուրս մնացած անօթևան անձանց վերահաշվառման և բնակապահովման հարցի կարգավորման նպատակով,*

*2. ձեռնարկել միջոցներ հնարավոր սեղմ ժամկետներում 242 ընդանիքի բնակապահովման խնդիրը լուծելու ուղղությամբ:*

**9. Անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերի կողմից ԽՍՀՄ ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց հարուցումը**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին շարունակում է չլուծված մնալ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացված անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայտերերի կրած կորուստների դիմաց վերջիններիս դրամական օգնություն չտրամադրելու հարցը: Խնդիրն այն է, որ Կառավարության որոշումներով նախատեսվել է անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերին տրամադրել համապատասխան դրամական օգնություն: Ընդ որում՝ որոշումներով հաստատված ժամանակացույցով նախատեսվել է բոլոր անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերին հասանելիք դրամական օգնության տրամադրման գործընթացն ավարտել մինչև 2011 թվականը: Սակայն, ըստ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննվող բողոքների՝ գրեթե կեսի հասանելիք դրամական փոխհատուցումը մինչ օրս չի տրվել: Բողոքների համաձայն՝ առկա են նաև անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվներ, որոնք չեն ներառվել ժամանակացույցում: Նշված համակարգային խնդրի կարգավորման համար 2020 թվականի պետական բյուջեով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման համար նախատեսվել է հատկացնել 730.880.000 ՀՀ դրամ գումար: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 12-ի թիվ 948-Ն որոշմամբ կատարվել է միջոցառման բյուջետային հատկացումների վերաբաշխում, ինչի արդյունքում կոոպերատիվների փայտերերին դրամական օգնության համար հատկացված միջոցներն ուղղվել են այլ ծրագրերի: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ ո՛չ «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով, և

ո՛չ էլ «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնություն տրամադրման համար միջոցներ չեն նախատեսվել: Արդյունքում, անավարտ բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերին փոխհատուցում վճարելու վերաբերյալ հարցը շարունակվում է չլուծված մնալ: Հարկ է ընդգծել, որ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կրած կորուստների դիմաց դրամական փոխհատուցման տրամադրման գործընթացի պատասխանատուն ի սկզբանե ՀՀ ֆինանսների նախարարությունն է եղել: Նախարարությունը տրամադրել է թվով 40 կոոպերատիվների փայատերերին հասանելիք դրամական փոխհատուցումները: Թեև «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նշված գործընթացի իրականացումը վերապահվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, սակայն Պաշտպանին դիմած քաղաքացիներին ուղղված պատասխանագրություններում Նախարարությունը նշել է, թե կոոպերատիվների փայատերերին հասանելիք դրամական փոխհատուցումները վճարելու լիազորություն չունի: Բարձրացված խնդրի քննարկման շրջանակներում 2021 թվականին բողոքներից մեկով անձը նշել է, որ «Երարդշին-1» բնակարանաշինարարական կոոպերատիվի անդամ է, սակայն մինչ օրս Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց որևէ դրամական փոխհատուցում և (կամ) աջակցություն չի ստացել: Բարձրացված խնդրով կատարված հարցմանն ի պատասխան՝ Ֆինանսների նախարարությունը տրամադրել է պարզաբանումներ:

Խնդրի ուսումնասիրությունը վկայում է հետևյալի մասին. ՀՀ կառավարության 2000 թվականի օգոստոսի 2-ի թիվ 432, այնուհետև 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2000-Ն որոշումներով սահմանված է, որ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի օգնության տրամադրման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: ՀՀ կառավարության 2002 թվականի մարտի 12-ի թիվ 229, այնուհետև 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 1999-Ն որոշումներով ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին է վերապահվել նույն որոշումներով հաստատված ժամանակացույցով նշված ժամկետներին համապատասխան փայատերերին տրամադրվող գումարները ՀՀ պետական բյուջեների նախագծերում ներառելու հնարավորությունների մասին հարցը յուրաքանչյուր տարվա ՀՀ պետական բյուջեի նախագծի հետ միասին ՀՀ կառավարության քննարկմանը ներկայացնելու պարտականությունը: Մինչդեռ, «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով կոոպերատիվների փայատերերին դրամական օգնության տրամադրում նախատեսող միջոցառումը ներառվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության իրավասության դաշտը կազմող սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող ծրագրերի շրջանակում: Սակայն, մինչ օրս իրավասու մարմնի մասով համապատասխան փոփոխություններ չեն կատարվել վերոնշյալ Կառավարության որոշումներում,



այն է՝ որպես լիազոր իրավասու մարմին Ֆինանսների նախարարության փոխարեն չի նշվել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: Նշված տարրնկալման հետևանքով մինչ օրս չի կարգավորվել ինչպես ժամանակացույցում ներառված, այնպես էլ՝ չներառված անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներին դրամական օգնություն տրամադրելու հարցը: Խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է հստակեցնել և տարանջատել Ֆինանսների ու Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների իրավասությունները<sup>79</sup>:

Վերը նշվածից բացի, հանրապետությունում եղել են դեպքեր, երբ կոոպերատիվների փայտերերի անդամավճարների հիման վրա կառուցվող, սակայն անավարտ մնացած բնակելի շենքերը սեփականության իրավունքով հատկացվել են համապատասխան համայնքներին, որոնք հետագայում, առանց դրանց կառուցման համար գումար ներդրած բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներին գումարային և (կամ) բնակարանային փոխհատուցում տրամադրելու, դրանք օտարել են այլ անձանց և (կամ) կազմակերպությունների<sup>80</sup>:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է իր նախորդ տարեկան հաղորդումներում բարձրաձայնված դիրքորոշումն առ այն, որ անավարտ շենքերի բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամներն ունեն ոչ թե ուղղակի դրամական օգնության, այլ անավարտ շենքերի կառուցումն ավարտին հասցնելու աջակցության և բնակապահովման կարիք: Քանի որ բնակարանաշինարարական կոոպերատիվների անդամները ներդրել են դրամական միջոցներ, որպեսզի ապագայում նրանց ներդրված միջոցների հաշվին բնակվեն կառուցված բնակարաններում, այլ ոչ թե տրամադրվի ուղղակի դրամական օգնություն: Այդ ակնկալիքի ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է: Օրինական հիմքով սեփականություն ձեռք բերելու իրավունքը պետությունից պահանջում է այդ օրինական հիմքն այնպես կարգավորել, որ դրանով երաշխավորի անձի սեփականություն ձեռք բերելու իրավունքը:

*Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտերերի կրած կորուստների դիմաց դրամական օգնության տրամադրման գործընթացի շարունակականությունն ապահովելու կարևորությունից՝ անհրաժեշտ է՝*

*1. բացահայտել անավարտ շենքերը սեփականության իրավունքով համապատասխան համայնքներին հատկացնելու, այլ անձանց և (կամ) կազմակերպություններին օտարելու, սակայն կոոպերատիվների փայտերերին դրամական օգնություն չտրամադրելու դեպքերը և տրամադրել կոոպերատիվների փայտերերին համարժեք փոխհատուցում և (կամ) բնակարաններ,*

<sup>79</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 191-196:

<sup>80</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 124-127:

2. Հայաստանի Հանրապետության առաջիկա տարիների պետական բյուջեներում դրամական միջոցներ նախատեսել և հատկացնել կոոպերատիվների փայտափայտերին դրամական օգնություն տրամադրելու համար,

3. Կառավարության համաֆինանսավորմամբ, ինչպես նաև դոնոր կազմակերպությունների ներգրավմամբ ավարտին հասցնել անավարտ շենքերի կառուցումը՝ կոոպերատիվների փայտափայտերին բնակարաններով ապահովելու համար,

4. կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ անավարտ շինարարության բնակարանաշինարարական կոոպերատիվների փայտափայտերին դրամական օգնության տրամադրման գործընթացը կազմակերպող և իրականացնող մարմնի իրավասությունները ճշգրտելու և սահմանելու համար:

## **10. Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերը չպահպանելը**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վերաբերել են բազմաբնակարան շենքերի պահպանմանն ուղղված պարտադիր իրականացման ենթակա միջոցառումներին: Բազմաբնակարան շենքերը շահագործման ընթացքում ձեռք են բերում ֆիզիկական և բարոյական մաշվածություն, ենթարկվում տարբեր բնական և տեխնաժին երևույթների և կրում դրանց բացասական ազդեցության հետևանքները, որոնց չեզոքացման կամ ազդեցության նվազեցման համար պահանջվում է որոշակի միջոցառումների իրականացում: Նման միջոցառումների ժամանակին չիրականացումը կամ թերի իրականացումը հանգեցնում է վնասվածության մնացորդային կուտակումների՝ վատթարացնելով շենքի տեխնիկական վիճակը (ընդհուպ մինչև անբավարար կամ վթարային), որից էլ անմիջականորեն տուժում են մարդիկ: Հարկ է ընդգծել, որ Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ բազմաբնակարան շենքի կառավարման մարմինները գրեթե չեն ձեռնարկում շենքի պահպանմանն ուղղված պարտադիր իրականացման ենթակա միջոցառումներ՝ վտանգելով ոչ միայն շենքի ֆիզիկական գոյությունը, այլ նաև մարդկանց առողջությունն ու անվտանգությունը: Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանված են Կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1161-Ն որոշմամբ: Պարտադիր նորմերն իրենցից ներկայացնում են այնպիսի նվազագույն ծավալի պարտադիր իրականացման ենթակա կազմակերպական և տեխնիկական համալիր միջոցառումներ ու աշխատանքներ, որոնց ժամանակին չիրականացումը կարող է ուղղակի վտանգ ներկայացնել շինությունների սեփականատերերի կամ այլ մարդկանց կյանքին, առողջությանը, անձանց գույքին, շրջակա միջավայրին: Այդ նորմերը կոչված են ապահովելու բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության՝ շենքը կրող կառուցվածքների, շենքի միջհարկային

ծածկերի (առաստաղների, հատակների), նկուղների, ձեղնահարկի, տեխնիկական հարկերի, տանիքի, ինչպես նաև մեկից ավելի շինություններ սպասարկող և բազմաբնակարան շենքի միասնական ամբողջական սպասարկման համար նախատեսված մուտքերի, աստիճանավանդակների, աստիճանների, վերելակների, վերելակային և այլ հորերի, մեխանիկական, էլեկտրական և այլ սարքավորումների ու տարածքների պահպանմանը ներկայացվող քաղաքաշինական, սանիտարական, հակահրդեհային և կոմունալ սպասարկման պահանջները: Բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի պահպանման ընդհանուր վերահսկողությունն իրականացնում է տվյալ համայնքի ղեկավարը՝ ըստ «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի: Հայաստանի բազմաբնակարան շենքերի կարևորագույն խնդիրներից է տանիքների հիմնանորոգման հարցը, որը ներկա դրությամբ առկա է Երևանում համայնքում, սակայն առավել անմխիթար է վիճակը ՀՀ այլ համայնքներում: Օրինակ՝ բողոքներից մեկով շենքի բնակիչները հայտնել են, որ շենքի տանիքն ունի հիմնանորոգման խնդիր, քանի որ անձրևաջրերն տանիքից լցվում են ներս և թուլացնում կրող պատերի ու կոնստրուկցիաների ամրությունը: Նշել են, որ բազմիցս դիմել են Չարենցավանի համայնքապետարան շենքի տանիքի հիմնանորոգման խնդրանքով, սակայն արդյունքի չեն հասել: Նշվածի կապակցությամբ Չարենցավանի համայնքապետարանից պարզաբանվել է, որ բազմիցս դիմել են բնակիչներին իրենց կողմից դեռևս 90-ական թվականներին կառուցված թեք տանիքը վերացնելու համար, որպեսզի շենքն ընդգրկվի հարթ տանիքների հիմնանորոգման ծրագրում: Սակայն բնակիչների կողմից բոլոր առաջարկները մերժվել են, ուստի նշված տանիքի խնդիրը հնարավոր չէ վերջնականորեն լուծել: Մեկ այլ բողոքով շենքի բնակիչները տեղեկացրել են, որ Իջևան համայնքում գտնվող շենքի տանիքը տասնյակ տարիներ չի նորոգվել, գտնվում է վթարային վիճակում, ինչը վտանգ է ներկայացնում շենքի, մասնավորապես՝ վերջին հարկում բնակվող ընտանիքների, այդ թվում՝ մանկահասակ երեխաների առողջությանը: Շենքի բնակիչները տանիքի հիմնանորոգման հարցով դիմել են Իջևանի համայնքապետարան, սակայն միջոցներ չեն ձեռնարկվել շենքի տանիքի նորոգման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ: Նշվածի կապակցությամբ Իջևանի համայնքապետարանից պարզաբանվել է, որ շենքի բնակիչների կողմից վերանորոգման աշխատանքներն սկսելու դեպքում համայնքապետարանը կաջակցի շինարարական նյութերով: Թեև «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքով շենքի տանիքը ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է բնակարանների սեփականատերերին՝ այսինքն բնակիչներին, սակայն, հաշվի առնելով խնդրի սոցիալական նշանակությունն ու ծավալները՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պետք է համապատասխան ծրագրերով աջակցեն շենքերի բնակիչներին տանիքների հիմնանորոգման հարցում:

Խոսելով բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի պահպանման մասին՝ հնարավոր չէ չընդգծել Երևանում և հանրապետության այլ համայնքներում կարևոր հիմնախնդիրներից մեկի՝ շենքերում տեղակայված վերելակների տեխնիկական վիճակի խնդիրը: Վերելակները և դրանց

կազմում օգտագործվող՝ անվտանգության ապահովման սարքերը պետք է համապատասխանեն դրանց անվտանգ շահագործման տեխնիկական պահանջներին՝ բացառելով մարդկու կյանքին և առողջությանը վնաս պատճառելու բոլոր ռիսկերը: Մինչդեռ, Երևանում և հանրապետության այլ քաղաքներում կան շահագործվող վերելակներ, որոնք հնամաշ են և վթարային: Վերելակները՝ որպես ընդհանուր բաժնային սեփականություն, նույնպես պատկանում են բազմաբնակարան շենքերի բնակիչներին և բնակիչները, ըստ գործող իրավակարգավորումների, կառավարման մարմինների միջոցով պետք է իրականացնեն դրանց սպասարկման և պահպանման աշխատանքների իրականացումը: Սակայն, Երևան համայնքում Երևանի քաղաքապետարանը նախաձեռնել և իրականացնում է բազմաբնակարան շենքերի վերելակների փոխարինման գործընթաց, որի շրջանակներում բազմաբնակարան շենքերի շուրջ 574 վերելակ փոխարինվել է: Նշվածը, իհարկե, շատ ողջունելի է և շատ կարևոր է, որ այն շարունակական բնույթ ունենա Երևան համայնքում առկա հնամաշ վերելակային տնտեսության հիմնահարցի հիմնովին լուծման և բազմաբնակարան շենքերի բնակիչների անվտանգության ապահովման նպատակով:

Վերոգրյալից բացի, ընթացիկ տարում ստացվել են բողոքներ, որոնք վերաբերել են Երևանի քաղաքապետարանի կողմից Երևան համայնքի տարբեր վարչական շրջաններում մեկնարկած բազմաբնակարան շենքերում իրականացվող աղբամուղերի փակման ծրագրին: Իհարկե, հասկանալի է, որ բազմաբնակարան շենքերում աղբամուղերի փակումն իրականացվում է սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից ելնելով: Սակայն, խնդրահարույցն այն է, որ ըստ բողոքների՝ աղբամուղերի փակման աշխատանքները կոնկրետ դեպքերով իրականացվել են առանց բազմաբնակարան շենքերի բնակիչների համաձայնության: Մինչդեռ, բազմաբնակարան շենքը համարվում է շենքի բնակիչների բաժնային սեփականությունը, ուստի շենքում ցանկացած փոփոխություն կարող է իրականացվել միայն ու միայն շենքի բնակիչների համաձայնությամբ և բնակիչների հետ համագործակցելով: Հարկ է նշել նաև, որ Երևանի քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրի հաստատման մասին» թիվ 45-Ն որոշման 2019-2023թթ. նախատեսվող աշխատանքներ բաժնի 4-րդ կետով սահմանված է, որ պետք է նախաձեռնել բազմաբնակարան շենքերի աղբամուղերի արդիականացման կամ դրանց փակման գործընթաց՝ ելնելով սանիտարահիգիենիկ, առողջապահական նկատառումներից: Նշվածից հետևում է, որ ըստ Երևանի զարգացման ծրագրի՝ բազմաբնակարան շենքերի աղբամուղերը նախատեսվում է արդիականացնել կամ փակել: Մինչդեռ պրակտիկայում դրանք միայն փակվում են, ընդ որում կոնկրետ դեպքերով առանց շենքերի բնակիչների համաձայնության:

*Հաշվի առնելով վերոգրյալը Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

*1. պատշաճ վերահսկողություն իրականացնել համայնքների տարածքում ընդգրկված բազմաբնակարան շենքերում պարտադիր նորմերի պահպանման նկատմամբ՝ առաջացած խնդիրների և հարկապես տանիքների և վերելակների վերանորոգման, հիմնանորոգման կամ փոխարինման ուղղությամբ՝ ձեռնարկելով գործուն միջոցներ,*

2. բազմաբնակարան շենքերում վերելակների տեխնիկական անվտանգության ապահովման նկատմամբ իրականացնել պատշաճ հսկողություն՝ կիրառելով պատասխանատվության միջոցներ և դադարեցնելով դրանց շահագործումը:

3. բազմաբնակարան շենքերում աղբամուղերի փակման գործընթացն իրականացնել միայն շենքերի բնակիչների համաձայնությամբ, իսկ դրա բացակայության դեպքում կրկին նրանց համաձայնությամբ արդիականացնել դրանք:

### ԳԼՈՒԽ 3. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի կայուն զարգացման 8-րդ նպատակով ամրագրված է արժանապատիվ աշխատանքը և տնտեսական աճը, մասնավորապես՝ կայացած, ներառական և կայուն տնտեսական աճի խթանումը, լիարժեք և արտադրողական զբաղվածությունը և բոլորի համար արժանապատիվ աշխատանքը:

Աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրներից զատ, իբրև նոր մարտահրավեր առաջ եկավ նոր կորոնավիրուսային համավարակը՝ դրանից բխող հետևանքներով:

Մարդու իրավունքները, փոխկապակցված լինելով միմյանց հետ, կազմում են մեկ ամբողջական փոխներգործուն համակարգ: Աշխատանքային իրավունքներն, այդ համակարգում ունենալով կարևորագույն տեղ, ուղղակի և անուղղակի կերպով ազդեցություն են տարածում այդ շղթայի մասը կազմող մյուս իրավունքների վրա: Աշխատանքային իրավունքների խախտումների արգասիքները բացասաբար են ազդում մարդու այլ իրավունքների վրա՝ դժվարացնելով, իսկ շատ հաճախ նաև անհնարին դարձնելով դրանց իրացումը:

Պետք է հստակորեն ընդգծել, որ ի թիվս այլնի, աշխատանքային իրավունքների երաշխավորումը քաղաքացիական հասարակության ձևավորման, զարգացման և կենսաապահովման կարևորագույն տարրերից է: Ուստի, շատ կարևոր է, որ պետությունը մշտապես ապահովի աշխատանքային իրավունքների անշեղ իրացումը, իրականացնի խախտումների կանխարգելմանը և խախտված իրավունքների վերականգնմանն ուղղված քայլեր:

Միայն հետևողական և մշտական աշխատանքի միջոցով է հնարավոր հասնել դրական արդյունքի: Չնայած իրականացվող աշխատանքների և օրենսդրական նախաձեռնությունների, այնուամենայնիվ, 2021 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են աշխատանքային իրավունքի ենթադրյալ խախտումների մասին բարձրաձայնող բողոքներ, իսկ ոլորտի ուսումնասիրությունը շարունակում է փաստել աշխատանքային օրենսդրության խնդրահարույց կարգավորումների առկայության, աշխատողների՝ սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասի, ինչպես նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության գործիքակազմերի սակավության մասին:

***1. Աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պեղական հսկողություն իրականացնող արտադարական մարմնի բացակայությունը և աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը***

Հայաստանի Հանրապետությունում 2004 թվականից գործում էր Աշխատանքի պետական տեսչությունը, որն օժտված էր գործատուների կողմից ՀՀ աշխատանքային օրենսդրության և աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահպանման նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնելու հիմնական գործառույթով: 2013 թվականին, սակայն, ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչությունը և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը վերակազմակերպվել են ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահական պետական տեսչության, որը 2015 թվականի հունվարի 9-ին ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխության արդյունքում այլևս լիազորված չէր իրականացնել ոլորտի նկատմամբ հսկողություն:

2019 թվականի դեկտեմբերի 4-ին ՀՀ աշխատանքային օրենսգրքում իրականացվեցին փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի հուլիսի 1-ից: Այդ փոփոխություններով Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն վերապահվել է աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի այլ պահանջների, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորություն:

Ասվածից պետք է ստացվեր, որ 2021 թվականի հուլիսի 1-ից արդեն իսկ կա ստեղծված մարմին, որին վերապահված է աշխատանքային վեճերի լուծման իրավասություն: Սակայն, նշվածի հետ մեկտեղ, Կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի 4-րդ կետն իր հերթին նախատեսում է ներդնել աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգ: Նման պարագայում խնդիր է առաջանում հստակեցնելու և պարզելու նախատեսվող արտադատական մարմնի լիազորությունների ծավալը և հետևողական լինել, որ դրանք չնույնանան Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին վերապահված լիազորությունների ծավալի հետ: Նշված հարցի կապակցությամբ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացվել է պարզաբանում այն մասին, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածի կարգավորումների համաձայն՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացնում է գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողություն: Ըստ նախարարության՝ աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման նպատակն է ապահովել վեճերի լուծումը առավել կարճ ժամկետներում և առանց դատական ծախսերի:

**Վերը նշվածն ամփոփելով նախարարությունից նշել են, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացնում է աշխատանքային օրենսդրության**

**պահանջների կատարման նկատմամբ միայն պետական վերահսկողություն և վերջինիս աշխատանքային վեճերի լուծման իրավասություն վերապահված չէ:**

Այսպես, ցանկացած աշխատանքային վեճ իրենից ենթադրում է աշխատանքային ոլորտը կարգավորող նորմի խախտում, ինչ արդյունքում գործատուի և աշխատողի միջև ծագում է աշխատանքային վեճ: Հետևաբար՝ նման յուրաքանչյուր վեճ տեսականորեն ենթակա է արտադատական մարմնի կողմից քննության: Խախտված յուրաքանչյուր դեպքի առթիվ աշխատողը կաշկանդված չէ դիմել տեսչական մարմնին իր խախտված իրավունքների պաշտպանության և վերականգման համար: Ուստի, հարկ է հստակ ընդգծել, որ անգամ նախատեսվող արտադատական մարմնի ստեղծման պարագայում, վերջինիս և տեսչական մարմնին ունենալու են նուրբ բաժանարար, շատ դեպքերում անգամ աշխատողի համար լինելով անորոշ, թե կոնկրետ իրավիճակում ուր պետք է դիմել կամ ինչ քայլեր ձեռնարկել: Նախարարության պատասխանից կարելի է եզրակացնել, որ տեսչական մարմինը, փաստորեն, թեև 2021 թվականի հուլիսի 1-ից սկսել է վերը նշված ծավալով գործել, սակայն, չի համարվում վեճերի լուծման արտադատական մարմին: Մինչդեռ օրենքի տառացի մեկնաբանությամբ՝ օժտված է թե՛ վերահսկողության և թե՛ պատասխանատվության միջոցներ կիրառելու լիազորությամբ: Այստեղ հարց է առաջանում, թե տվյալ մարմինը առանց առկա վեճի քննարկման, վերլուծության և լուծման, ինչպես կարող է կայացնել պատասխանատվության ենթարկելու մասին որոշում: Որպես նշվածի ամփոփում հավելենք, որ աշխատանքային իրավունքի նորմ պարունակող ակտերի պահանջների պահպանման միջոցով աշխատանքային վեճերի լուծումը պետական վերահսկողության իրականացման ձևերից մեկն է:

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է արտադատական մարմնի կարևորության մասին, ինչին ի պատասխան նախորդ տարիներին նախարարությունից ստացվել է տեղեկություն, որ այդ բացը լրացնելու է տեսչությունը: Ավելին, «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-265-Ն օրենքի նախագծի ընդունման հիմնավորումների համաձայն՝ մինչև ՀՕ-265-Ն օրենքի ընդունումը չի իրականացվել աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ ամբողջական պետական վերահսկողություն: Պետական վերահսկողությունից դուրս են մնացել, մասնավորապես, աշխատանքային պայմանագրերի կնքման և լուծման կարգի պահպանման, անօրինական աշխատանքների հայտնաբերման (չձեռակերպված աշխատող), սեռային հատկանիշով պայմանավորված խտրականության, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կոլեկտիվ պայմանագրերով նախատեսված պարտավորությունների կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողությունը: Նշենք, որ վերը թվարկածների իրականացումը ըստ նախագծի պետք է գտնվի և գտնվում է տեսչության գործունեության տիրույթում:



Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են նաև, որ դեռևս հնարավոր չէ ներկայացնել, թե կառուցվածքային և ֆունկցիոնալ ի՞նչ լուծումներ են տրվելու և ընթացակարգային ի՞նչ կանոններ են գործելու աշխատանքային վեճերի լուծման նոր՝ արտադատական համակարգի գործարկման դեպքում, քանզի ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված է աշխատանքային վեճերի լուծման արտադատական համակարգի ներդրման մոդելի և ֆինանսական գնահատականի վերաբերյալ վերլուծության իրականացման միջոցառում, այնուհետև վերլուծության արդյունքները հաշվի առնելով համակարգի ներդրման աշխատանքների իրականացում (մինչև 2023 թվականի):

Վերոգրյալից ստացվում է, որ նվազագույնը մինչև 2023 թվականի նոյեմբերի 3-րդ տասնօրյակ Հայաստանում շարունակելու է չգործել աշխատանքային վեճերի լուծման արտադատական մարմին, քանզի, ինչպես ներկայացված է ոլորտի լիազոր մարմնի պատասխաններում՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինն իրականացնում է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ միայն պետական վերահսկողություն և վերջինիս աշխատանքային վեճերի լուծման իրավասություն վերապահված չէ:

Մեկ անգամ չէ, որ խոսվել է աշխատանքային իրավունքների վերաբերյալ աշխատողների իրազեկվածության պակասի և դրա հետևանքով առաջ եկող խնդիրների մասին: Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակը ոչ միայն իրավունքների խախտման «օժանդակող» հանգամանք է, այլ նաև նպաստում է իրավունքի խախտման դեպքերի բարձրաձայնված չլինելուն, դրանց՝ լուծում չստանալուն, ինչպես նաև սեփական իրավունքների վերականգնման հնարավորության և վերջինիս օրենսդրական մեխանիզմների մասին: Աշխատանքը կորցնելու վախից, ինչպես նաև գործատուի հետ հարաբերությունները չվատացնելու համար շատ հաճախ մարդիկ չեն ցանկանում բարձրաձայնել իրենց խախտված իրավունքների մասին, իսկ դեպքերի ուսումնասիրությունները ցույց են տալիս նաև, որ աշխատողները տեղյակ չլինելով սեփական իրավունքների մասին չեն գիտակցում, որ տեղի է ունենում իրավունքների խախտում: Այդպիսով բազմաթիվ խախտումներ վերը նշված պատճառների արդյունքում շարունակում են մնալ չբացահայտված ու չբարձրաձայնված: Այնինչ, յուրաքանչյուր աշխատող պետք է հստակ գիտակցի, որ խնդրի բարձրաձայնումը և իրավունքների պաշտպանությունը կարող է ունենալ կանխարգելիչ նշանակություն ինչպես անձամբ իր, այնպես էլ մյուս աշխատողների համար: Ավելին, իրազեկվածության մակարդակն ուղիղ համեմատական է աշխատանքային իրավունքների խախտումների, դրանց կանխման և վերականգնման քանակին: Այսինքն, միայն այդ պարագայում է հնարավոր վեր հանել իրական պատկերը և առավել թիրախային զբաղվել աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իր լիազորությունների շրջանակում շարունակական կերպով տարբեր գործիքների կիրառմամբ իրականացնում է աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկող միջոցառումներ: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ աշխատանքային իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ

ներկայացրած քաղաքացիներին բացատրվում են իրենց իրավունքները, ներկայացվում դրանց պաշտպանության ուղիները, աշխատանքային վեճերի լուծման տարբերակները և այլն:

Աշխատանքային իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը լրացնելու կապակցությամբ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկացրել են, որ 2022 թվականի ընթացքում իրականացվել են մի շարք նախաձեռնություններ, մասնավորապես՝ հանրության շրջանում աշխատանքային հարաբերությունների և պայմանների մասին իրազեկվածության բարձրացման նպատակով նախարարության պաշտոնական էջերում պարբերաբար տեղադրվել են քաղաքացիների իրավունքների իրացման վերաբերյալ հրապարակումներ<sup>81</sup>, աշխատող-գործատու իրավահարաբերությունների, աշխատանքային օրենսդրության կարգավորումների, նախատեսվող բարեփոխումների և այլնի վերաբերյալ տրամադրվել են հարցազրույցներ<sup>82</sup>, կազմակերպվել են մամուլի ասուլիսներ աշխատանքային օրենսդրության կարգավորումների, սոցիալական փաթեթի հատկացման կարգում կատարված փոփոխությունների, զբաղվածության քաղաքականության վերաբերյալ<sup>83</sup> և այլն: Կարևորելով աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացումն ու կրթություն-աշխատանք կապը՝ կազմակերպվել և լուսաբանվել են դասընթացներ, աշխատանքային տոնավաճառներ<sup>84</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը տարվա ընթացքում հետևողականորեն իրականացնում է իրազեկման շարունակական աշխատանքներ: Այսպես 2021 թվականին, ի թիվս այլնի, աշխատանքային իրավունքներին առնչվող խնդիրների վերաբերյալ քննարկում է տեղի ունեցել լրագրողների հետ<sup>85</sup>, հանրության շրջանում իրազեկման աշխատանք է իրականացվել աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը կամ ոչ ամբողջովին կատարելու<sup>86</sup>, աշխատանքային ստաժը դատական կարգով հաստատելու դեպքում կենսաթոշակառուների համար գումարի վերահաշվարկի իրականացման<sup>87</sup> վերաբերյալ և այլն:

Հարկ է հստակ ընդգծել, որ իրազեկման արշավներն ունեն կարևորագույն նշանակություն իրավունքների խախտման կանխարգելման տեսանկյունից, խախտումների բացահայտման և հետազայում՝ բացառման տեսանկյունից, ուստի անհրաժեշտ է չսահմանափակվել կոնկրետ իրավիճակի առկայության պարագայում աշխատանքային իրավունքների իրազեկման աշխատանքների իրականացմամբ, այլ այն իրականացնել մշտապես և շարունակաբար:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

<sup>81</sup> Հասանելի է <https://bit.ly/3qA3UDB>, <https://bit.ly/3zedP2D> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>82</sup> Հասանելի է <https://bit.ly/3Gjg0Gr>, <https://fb.watch/ati7bc5lkC/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>83</sup> Հասանելի է <https://bit.ly/3cdFtne>, <https://bit.ly/3qzy368>, <https://bit.ly/3c9A5kY> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>84</sup> Հասանելի է <https://bit.ly/3cdFtne>, <https://bit.ly/3qzy368>, <https://bit.ly/3c9A5kY> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>85</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/2035> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>86</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1923> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>87</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1797> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

1. *Սահմանված ժամկետներում իրականացնել աշխատանքային վեճերի լուծման արտադարական մարմնի ստեղծումը,*

2. *զանգվածային լրատվության և այլ միջոցներով պարբերաբար հասարակությանն իրազեկել աշխատանքային իրավունքների և դրանց պաշտպանության ուղիների վերաբերյալ:*

## **2. Գործադուլի իրավունքի սահմանափակումը**

Գործադուլն այն գործիքներից մեկն է, որով աշխատողները բարձրացնում են իրենց բողոքը կամ անհամաձայնությունը այս կամ այն հարցի վերաբերյալ: Գործադուլի իրավունքի իրացումը կարևորագույն երաշխիք է աշխատողի համար, ուստի այն կարգավորող նորմերը պետք է լինեն այնպիսին, որ անհիմն չսահմանափակեն կամ չդժվարացնեն տվյալ իրավունքի իրացումը:

Ինչպես ՀՀ սահմանադրությամբ, այնպես էլ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրով<sup>88</sup>, Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով<sup>89</sup> և այլ ներպետական ու միջազգային փաստաթղթերով սահմանված է գործադուլի իրավունքը:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 58-րդ հոդվածով սահմանվում է աշխատողների՝ իրենց տնտեսական, սոցիալական կամ աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունքը: Նույն հոդվածով ամրագրված է նաև, որ գործադուլի իրականացումը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրային շահերի կամ այլոց հիմնական իրավունքների ու ազատությունների պաշտպանության նպատակով: Աշխատանքային օրենսգրքով, սակայն, վերը նշված սահմանադրական իրավունքի բովանդակությունը ներկայացված է առավել նեղ մեկնաբանման տրամաբանությամբ:

Սահմանադրության 58-րդ հոդվածը բովանդակային առումով ընդգրկել է Վերանայված Եվրոպական Սոցիալական Խարտիայի 6-րդ հոդվածի 4-րդ կետով ամրագրված գործադուլի իրավունքը: Սահմանադրությամբ, ինչպես և Վերանայված Խարտիայի վկայակոչված դրույթներով, ամրագրված են գործադուլի իրավունքի և դրա թույլատրելի սահմանափակման հիմքերը:

Սակայն ի տարբերություն վերը նշվածի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ գործադուլի հասկացությունն ամրագրող 73-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ աշխատողների գործադուլի իրավունքն Աշխատանքային օրենսգրքով սահմանափակվում է կոլեկտիվ աշխատանքային վեճի առկայությամբ: Վերջինիս բացակայության և աշխատանքային վեճի հետ չկապված որևէ այլ հարցի, օրինակ՝ սոցիալական, տնտեսական կամ այլ իրավունքների պաշտպանության կապակցությամբ գործադուլի իրականացումը հանգեցնելու է Աշխատանքային օրենսգրքի 82-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

<sup>88</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր, հասանելի է <http://www.irtek.am/views/act.aspx?aid=37347> հղումով:

<sup>89</sup> Տե՛ս Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիա, հոդված 6, կետ 4:

Արդեն բազմիցս նշվել է, որ նշված հարցի կապակցությամբ դեռևս 2007 թվականին Սահմանադրական դատարանը թիվ ՍԴՈ-677 որոշմամբ հստակ արձանագրել է, որ աշխատողի գործադուլի իրավունքը միայն կոլեկտիվ վեճի առկայությամբ սահմանափակելն անթույլատրելի է, քանզի գործադուլի իրավունքն առնչվում է ոչ միայն «աշխատողներ-գործատու» իրավահարաբերություններին, այլև «աշխատողներ-երրորդ անձինք (հասարակություն)», «աշխատողներ-պետական մարմիններ», «գործատու-պետական մարմիններ» փոխհարաբերություններին: Սակայն, պետք է փաստել, որ այս տարիների ընթացքում օրենսդրական փոփոխություններ չեն իրականացվել, և գործող կարգավորումը մինչ օրս շարունակում է մնալ խնդրահարույց: Մինչդեռ, գործնականում հնարավորություն ենք ունեցել արձանագրել, թե որքան կարևոր դեր են խաղում ոչ միայն կոլեկտիվ աշխատանքային վեճերի, այլ նաև այլ հանգամանքների առնչությամբ իրականացվող գործադուլները, որոնց միջոցով, օրինակ, մարդիկ արտահայտել են իրենց դժգոհությունը հույժ կարևորության հարցերի վերաբերյալ: Աշխատանքի միջազգային կազմակերպության «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները» աշխատությունում նշված է, որ գործադուլի միջոցով կարող են բարձրացվել խնդիրներ և առաջադրվել պահանջներ, որոնք աշխատանքային պայմաններին և արհմիությունների իրավունքների երաշխավորմանը վերաբերելուց զատ կարող են ունենալ քաղաքական բնույթ<sup>90</sup>:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ գործադուլ հայտարարելու մասին որոշում ընդունելու իրավունք ունի արհեստակցական միությունը՝ նույն օրենսգրքով և իր կանոնադրությամբ սահմանված կարգով: Գործադուլը հայտարարվում է այն դեպքում, եթե այդ մասին որոշումը գաղտնի քվեարկությամբ հավանության է արժանացել կազմակերպությունում գործադուլ հայտարարելիս՝ կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի կողմից կամ կազմակերպության առանձնացված (կառուցվածքային) ստորաբաժանումում գործադուլ հայտարարելիս՝ այդ ստորաբաժանման աշխատողների երկու երրորդի կողմից: Եթե կազմակերպության առանձնացված ստորաբաժանումում գործադուլ հայտարարելը խոչընդոտում է կազմակերպության մյուս ստորաբաժանումների բնականոն գործունեությանը, ապա գործադուլ հայտարարելու որոշումը պետք է հավանության արժանանա այդ ստորաբաժանման աշխատողների երկու երրորդի կողմից, որը չի կարող պակաս լինել կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի կեսից:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունում ոչ բոլոր կազմակերպություններում են գործում արհեստակցական միություններ: Աշխատողների ընդհանուր թվի համապատասխան հատվածի ապահովման օրենսդրական կարգավորումն անելանելի վիճակի առջև է կանգնեցնում աշխատողներին, իրենց՝ գործադուլի իրացման ճանապարհին:

2021 թվականի ապրիլ ամսին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը շրջանառել է, ի թիվս այլնի, նշված երկու հարցերը կարգավորող դրույթներ պարունակող

<sup>90</sup> Տե՛ս «Գործադուլի վերաբերյալ ԱՄԿ սկզբունքները», Բ. Գերնիգոն, Ա. Օդերո, Հ. Գուիդո, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, Ժնև, էջ 13:

նախագիծ: Տվյալ նախագծի վերաբերյալ ծավալուն նկատառումներ է ներկայացրել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, կապված ինչպես վերը նշված, այնպես էլ այլ կարգավորումների հետ: Նշված նախագծի կյանքի կոչմամբ բազմաթիվ հարցեր առաջին հայացքից ստանալու էին լուծում՝ ապահովելով աշխատողների՝ առավել դյուրին կերպով գործադուլի իրականացման հնարավորություն, նորմերը համապատասխանեցվելու էին միջազգային փաստաթղթերով սահմանված պահանջներին: Սակայն 2021 թվականին նախագիծը չի ընդունվել, ինչի արդյունքում շարունակել են գործել նույն խնդրահարույց կարգավորումները:

Նշված նախագծի կապակցությամբ Նախարարությունից 2022 թվականի հունվարի 17-ին ստացվել է պատասխան առ այն, որ տվյալ օրենսդրական նախագիծը դեռևս գտնվում է քննարկման փուլում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. օրենսդրորեն ամրագրել գործադուլի իրավունքի առավել ընդգրկուն բովանդակություն,*
- 2. գործադուլի իրականացման ավելի լայն կարգ սահմանել, որը թույլ կտա գործադուլ իրականացնել ոչ թե աշխատողների ընդհանուր թվի երկու երրորդի, այլ, օրինակ, մեկ երրորդի համաձայնությամբ:*

### **3. Աշխատանքային իրավահարաբերություններում արհմիությունների դերի բարձրացումը**

Հայաստանի Հանրապետությունում ոչ բոլոր կազմակերպություններում են գործում արհեստակցական միություններ: Պետք է նշել նաև, որ գործող արհեստակցական միություններն էլ ինստիտուցիոնալ առումով ունեն հզորացման կարիք: Արհեստակցական միությունների հետապնդող նպատակները ամրագրված են «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում: Այդ նպատակները իրագործելու համար առաջնային նշանակություն ունի արհմիությունների դերի բարձրացումը, ինչն էլ կարևոր է աշխատողների իրավունքների և սոցիալական-տնտեսական երաշխիքների ապահովման ուղղակի և անուղղակի ազդեցության տեսանկյունից:

Լայն աշխատաշուկայի ձևավորման ու ամրապնդման, աշխատանքային հարաբերությունների ազատականացման, գործատու-աշխատող հարաբերությունները բանակցային մակարդակի վրա դնելու համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալ առումով հզոր արհեստակցական միությունների ձևավորումը:

Աշխատողի իրավունքների պահպանման, խախտված իրավունքների վերականգնման առումով ևս, հզոր արհեստակցական միությունը կարող է լինել աշխատողի կողքին՝ հստակ ունենալով զսպիչ դեր գործատուի համար:

Թեև աշխատանքային օրենսդրությունը, ինչպես նաև «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը սահմանում են արհմիությունների գործառույթները լիազորությունները, նպատակները, սակայն ամրագրված նպատակների ու լիազորությունների պատշաճ իրագործման, ինչպես նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների բավարար ներգրավվածության համար ոլորտի մասնագետները, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան բազմիցս բարձրացնում են արհմիությունների փաստացի հզորացման անհրաժեշտության և կարևորության հարցը:

Արհեստակցական միությունների գործառույթները, լիազորություններն ամրագրված են ոչ միայն «Արհեստակցական միությունների մասին», այլ նաև աշխատանքային օրենսդրությամբ: Սակայն, չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը, արհմիությունների փաստացի հզորացման կարևորության մասին մշտապես բարձրաձայնում են ոլորտի մասնագետները, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան՝ հստակ նշելով, օրինակ, աշխատանքային իրավունքների պաշտպանության գործում արհմիությունների ոչ բավարար ներգրավվածության խնդիրը:

Արհեստակցական կազմակերպությունների (արհմիություններ) գործունեության գործիքակազմն օրենսդրորեն կատարելագործելու ուղղությամբ միջոցառում, ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ նախատեսված է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում, որի համար ժամկետ է սահմանված 2022 թվականի դեկտեմբերի 2-րդ տասնօրյակը, այդ իսկ պատճառով 2021 թվականին այդ ուղղությամբ քայլեր չեն իրականացվել: Աշխատանքների մեկնարկը նախատեսվում է 2022 թվականին:

Պետք է նշել, որ Արհեստակցական միությունների գործունեության վերաբերյալ օրենսդրության կատարելագործման պահանջներ ամրագրված են նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 1753-Լ որոշմամբ (հավելված N 2-ով հաստատված «Աշխատի՛ր, Հայաստան» ռազմավարության գործողությունների շրջանակում՝ նպատակ 4, խնդիր 2, Գործողություն 2.2), ինչպես նաև ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշմամբ (հավելված N 2-ով հաստատված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի 74-րդ կետ՝ **արհմիությունների գործունեության գործիքակազմի օրենսդրական կատարելագործում** ):

**Ինչ վերաբերում է վերջինիս, ապա պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի թիվ 1030-Լ որոշմամբ երկարաձգվել է 74-րդ կետով նախատեսված գործողության կատարումը՝ 2021 թվականի երկրորդ կիսամյակից երկարաձգվելով 2022 թվականի 2-րդ կիսամյակ: Ավելին, ի սկզբանե որպես այդ գործողության իրականացման վերջնաժամկետ նախատեսված է եղել 2020 թվականի առաջին կիսամյակը:**

Եթե վերոգրյալի դեպքում տեղի է ունեցել ժամկետի երկարաձգում ավելի քան երկու տարի, ապա պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշմամբ (հավելվածով N 1-ով հաստատված ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկ 4-րդ կետի նպատակի 4.2-րդ կետով)

նախատեսված է եղել արհմիությունների դերին վերաբերող կարգավորումների համապատասխանեցում աշխատանքային հարաբերությունների կարգավորման ոլորտում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի առանձին դրույթներին, **որի վերջնաժամկետը սահմանված է եղել 2021 թվականի մարտի 3-րդ տասնօրյակը: Վերջինիս իրականացման վերաբերյալ նախարարությունից տեղեկություններ չեն ստացվել:**

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է օրենսդրական և գործնական քայլերով բարձրացնել արհմիությունների դերը և աշխատանքային իրավահարաբերություններում ներգրավվածությունը, ինստիտուցիոնալ կարողությունների հզորացումը:*

#### **4. Աշխատանքային իրավունքների ուղնահարման առանձին դեպքեր**

##### **4.1 Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը կամ ոչ ամբողջովին կատարելը**

Աշխատանքից ազատվելիս աշխատողների հետ վերջնահաշվարկ չկատարելը, ոչ ամբողջովին կատարելը կամ օրենսդրությամբ սահմանված ժամկետը չպահպանելով կատարելն ամենատարածված խախտումներից է, որին Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես անդրադառնում է իր գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում:

Ըստ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկության՝ տեսչական մարմնում աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ ստացված 269 դիմում-բողոքներից 146-ը վերաբերել են օրենքով սահմանված կարգով վերջնահաշվարկ չկատարելուն և օրենքով սահմանված ժամկետներում աշխատավարձը չվճարելուն:

Ընդհանուր և իմպերատիվ պայմանն այն է, որ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե ՀՀ աշխատանքային օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Ընդ որում՝ գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, իսկ եթե այդ պարտավորությունը գործատուից անկախ պատճառներով հնարավոր չէ կատարել, ապա աշխատողի աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները կատարվում են աշխատողի կողմից նման պահանջ ներկայացնելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը ևս վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս և ներառվում է վերջնահաշվարկի մեջ:

Նշված պահանջներն ուղղակիորեն ամրագրված են մեր երկում աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող հիմնական իրավական ակտով՝ Աշխատանքային օրենսգրքով և հարակից այլ իրավական ակտերով: Ավելին, օրենսդրության այդ դրույթներն իմպերատիվ են, ուղղված են աշխատողի աշխատանքային իրավունքների պատշաճ ապահովմանը և դրանցից որևէ շեղում չի կարող լինել:

Աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելը գործատուների ոչ թե իրավունքն է, այլ պարտականությունը, իսկ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսելու հնարավորությունը վերաբերում է ոչ թե վերջնահաշվարկ կատարելու կամ չկատարելու կողմերի հայեցողությանը, այլ վերջնահաշվարկի կատարման կարգին, օրինակ՝ ժամկետին: Այսինքն՝ գործատուն որևէ կերպ իրավասու չէ սահմանափակելու աշխատանքից ազատվելուց հետո աշխատողի հետ վերջնահաշվարկ կատարելու իրավունքը: Նշված դիրքորոշումները վերահաստատում է Մարդու իրավունքների պաշտպանը:

Հարկ է նշել, որ կոնկրետ դեպքերով վերջնահաշվարկի կատարման վերաբերյալ բողոքները Պաշտպանի աջակցությամբ մեծամասամբ ստացել են լուծում: Պաշտպանին հասցեագրված բողոքները դրանք ներկայացրած անձանց համաձայնությամբ և Պաշտպանի վերահսկողությամբ փոխանցվել են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, Պաշտպանի գրությունների հիման վրա տեսչական մարմինը հարուցել է վարչական վարույթներ: Մինչդեռ, ամեն դեպքում խնդրահարույց է այն, որ ՀՀ աշխատանքային օրենսդրության նորմերն ի սկզբանե չեն պահպանվում:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատանքային ոլորտում հաճախ հանդիպող խախտումներից է չօգտագործված ամենամյա արձակուրդի համար գործատուի կողմից փոխհատուցում չտրամադրելը: Օրինակ՝ բողոքներից մեկով գործատուն աշխատողի հետ լուծել է աշխատանքային պայմանագիրը և վերջնահաշվարկ անելիս հրաժարվել է վճարել չօգտագործված բոլոր ամենամյա արձակուրդների համար փոխհատուցում:

Աշխատանքային օրենսդրությունն իրավական որևէ հիմք չի տալիս գործատուներին վերջնահաշվարկը մասնակի կատարելու կամ վերջնահաշվարկ կատարելիս որոշ տեսակի գումարներ չհաշվարկելու համար. ինչպես արդեն իսկ նշվեց, չօգտագործված ամենամյա արձակուրդի համար հասանելիք գումարները նույնպես մտնում են վերջնահաշվարկի մեջ՝ որպես աշխատավարձին հավասարեցված այլ վճարներ:

Ինչ վերաբերում է արձակուրդային բոլոր օրերի համար հատուցում տրամադրելուն՝ հարկ է վկայակոչել Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/3516/02/08 որոշումը, որում Վճռաբեկ դատարանը պարզաբանել է, որ հատուցումը պետք է վճարվի չօգտագործված բոլոր արձակուրդների համար:

Հետևաբար, պետք է արձանագրել, որ չօգտագործված, ընդ որում՝ բոլոր, արձակուրդների համար դրամական հատուցումը վերջնահաշվարկի մաս է, և վերջնահաշվարկ կատարելիս



գործատուն պարտավոր է աշխատողին չօգտագործված բոլոր արձակուրդների համար փոխհատուցել:

*Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է մշտապես առաջնորդվել օրենսդրության պահանջների պահպանմամբ. աշխատանքից ազատվող աշխատողի հետ կատարել պատշաճ և լրիվ վերջնահաշվարկ՝ պահպանելով նաև օրենսդրությամբ սահմանված ժամկետները: Աշխատանքային օրենսդրության պահանջների պահպանման հարցում առաջնահերթ դերակատարությունը ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնինն է:*

## **4.2 Աշխատավարձի չվճարման պրակտիկա**

Աշխատանքային ոլորտում հաճախ հանդիպող խախտումներից է աշխատավարձի չվճարումը, որը ունի երկու դրսևորում՝ աշխատանքի դիմաց առհասարակ չվարձատրելը և օրենքով սահմանված ժամկետում աշխատանքի դիմաց աշխատողին չվճարելը: 2021 թվականի ընթացքում նույնպես շարունակվել են նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել բողոքներ:

Ինչպես նշվել է վերևում, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի տրամադրած տեղեկությունները վկայում են, որ աշխատանքային իրավունքների խախտումների վերաբերյալ բողոքների մեծ մասն օրենքով սահմանված կարգով վերջնահաշվարկ չկատարելու և օրենքով սահմանված ժամկետներում աշխատավարձը չվճարելու վերաբերյալ են:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանրական ուսումնասիրությունը վկայում է, որ աշխատավարձի չվճարման հետ կապված բողոքները հիմնականում մասնավոր ոլորտից են: Այսպիսի բողոքների հիմնական մասը Պաշտպանի աջակցությամբ ստացել են դրական լուծում: Սակայն, այս դեպքում նույնպես խնդրահարույց է օրենսդրության նորմերի չկիրառման պրակտիկան:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով դիմողը տեղեկացրել է, որ աշխատավայրում կատարվել է հաստիքների կրճատում, կրճատված հաստիքները զբաղեցրած աշխատողների պարտականությունները դրվել են իր և այլ աշխատակիցների վրա, աշխատավարձը դարձել է ժամավճարային՝ ամսեկան 184 կամ 192 ժամ, իսկ ձմռանը՝ 240 ժամ, սակայն իրենց շարունակել են վճարել 184 կամ 192 ժամի համար: Արդյունքում, ամիսներ շարունակ իրենց աշխատավարձը հաշվարկվել և վճարվել է ոչ թե 240, այլ՝ 184 ժամի համար, այսինքն՝ փաստացի աշխատած ժամանակահատվածի համար աշխատավարձ չեն ստացել: Պաշտպանի աշխատակազմում բողոքի գրավոր քննարկման շրջանակներում գրություն է ուղարկվել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, գրության հիման վրա տեսչական

մարմնում հարուցվել է վարչական վարույթ, որը 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ գտնվում է ընթացիկ փուլում:

Կատարած աշխատանքի համար աշխատողին աշխատավարձ չվճարելու հնարավորություն աշխատանքային օրենսդրությունը չի նախատեսում. կատարած աշխատանքի համար աշխատողին վճարելը գործատուի պարտականությունն է: ՀՀ աշխատանքային օրենսգիրքը նախատեսում է կարգավորումներ աշխատավարձն ուշացումով վճարելու վերաբերյալ: Մասնավորապես, օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե գործատուի մեղքով աշխատավարձի վճարումը կատարվում է նույն օրենսգրքով, կոլեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը:

Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ օրենսդրական նման դրույթի ամրագրումը նպատակ չունի հնարավորություն տալ գործատուին աշխատավարձի վճարման սահմանված ժամկետները չպահպանել: Ընդհակառակը՝ պրակտիկայում օրենսդրության պահանջների խախտման հնարավորությունը հաշվի առնելով՝ գործատուի համար սահմանում է նման խախտումների համար տուժանքի վճարման պարտավորություն:

Յուրաքանչյուր աշխատողի՝ կատարած աշխատանքի համար աշխատավարձ ստանալու իրավունքը երաշխավորված է ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ բխում է միջազգային իրավաբանությունից:

Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է աշխատողների՝ արդար վարձատրության իրավունքը, նշելով, որ դա բավարար կլինի նրանց և նրանց ընտանիքների պատշաճ կենսամակարդակի համար: Աշխատանքի միջազգային կազմակերպության «Աշխատավարձի պաշտպանության» վերաբերյալ թիվ Co95 կոնվենցիայի<sup>91</sup> 1-ին հոդվածի համաձայն՝ նույն Կոնվենցիայում «աշխատավարձ» եզրույթը, անկախ անվանումից և հաշվարկման մեթոդից, նշանակում է՝ փողով հաշվարկվող և փոխադարձ համաձայնագրով, ազգային օրենսդրությամբ սահմանված ցանկացած վարձատրություն կամ վաստակ, որը գրավոր կամ բանավոր պայմանագրի հիման վրա գործատուն վճարում է աշխատողին կատարած կամ կատարվելիք աշխատանքի կամ մատուցած կամ մատուցվելիք ծառայությունների համար: Նույն կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ աշխատավարձը պետք է վճարվի կանոնավոր կերպով: Իր բնույթով աշխատավարձն իրավունք է աշխատողի համար և պարտականություն՝ գործատուի համար<sup>92</sup>:

ՀՀ վճարել դատարանն իր 2007 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 3-1603(ՎԴ) քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում

<sup>91</sup> Հասանելի է <https://bit.ly/3s9oIYB> հղումով:

<sup>92</sup> Հասանելի է <https://bit.ly/3LRBgpF> հղումով:

յուրաքանչյուր աշխատող ունի իր կատարած աշխատանքի համար աշխատավարձ ստանալու իրավունք: Աշխատավարձի վճարման օրվանից աշխատողի մոտ ծագում է գործատուից այն պահանջելու իրավունք: Վճռաբեկ դատարանի նույն որոշման համաձայն՝ աշխատավարձի վճարման համար սահմանված ժամկետից դրա նկատմամբ ծագում է աշխատողի սեփականության իրավունքը, հետևաբար գործատուն, ժամանակին չվճարելով աշխատողի աշխատավարձը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի իմաստով ապօրինի պահում է վերջինիս դրամական միջոցները:

*Մտահոգիչ է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի նման ակնհայտ խախտումները գործնականում շարունակվում են: Պաշտպանը վերահաստատում է, որ աշխատանքային օրենսդրության պահանջները պետք է մշտապես պահպանվեն: Այս դեպքում ևս կարևոր է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի դերակատարությունը:*

### **4.3 Ծանուցման հետ կապված խնդիրներ**

Այս կամ այն աշխատանքային իրավահարաբերության ծագման, փոփոխման կամ դադարման դեպքերում ՀՀ աշխատանքային օրենսգրքն աշխատողի և գործատուի համար սահմանում է նախապես ծանուցման որոշակի ժամկետներ:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրաձայնվել են ծանուցման ժամկետների չպահպանման խնդիրներ: Արձանագրվել է դեպք կապված աշխատողի՝ աշխատանքից ազատվելու ծանուցում ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում այն հետ վերցնելու աշխատողի պահանջի չբավարարում գործատուի կողմից: Ըստ բողոքի՝ աշխատողի վրա դրվել է աշխատանքային պայմանագրով չնախատեսված պարտականություն և երբ աշխատողը հրաժարվել է կատարել այն, գործատուն ստիպել է աշխատանքից ազատման դիմում գրել: Այնուհետև, աշխատողը ցանկացել է հետ վերցնել աշխատանքից ազատման դիմումը, սակայն ստացել է մերժում տեղեկանալով, որ արդեն աշխատանքից ազատվել է:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Կոնկրետ դեպքով խնդիրը Պաշտպանի աջակցությամբ լուծվել է, գործատուն փոստային առաքմամբ վերադարձրել է քաղաքացու դիմումը և աշխատողն աշխատանքից չի ազատվել:

Մեկ այլ դեպքով աշխատողի դրույքաչափն է կրճատվել՝ առանց պատշաճ ծանուցելու:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «աշխատանքի էական պայմաններ են աշխատանքի վայրը, աշխատանքի վարձատրության չափը և (կամ) այն որոշելու ձևը, արտոնությունները, աշխատաժամանակի (աշխատանքի և հանգստի) ռեժիմը, տարակարգերը և պաշտոնների անվանումները, աշխատանքային պայմանագրի տեսակը, որոնց և (կամ)

գործատուի փոփոխման դեպքում գործատուն աշխատողին պետք է ծանուցի սույն օրենսգրքի 115-րդ հոդվածով սահմանված ժամկետներում»:

Նույն օրենսգրքի 115-րդ հոդվածի համաձայն՝ «օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում գործատուն պարտավոր է գրավոր ծանուցել իր մոտ մինչև մեկ տարի աշխատողին ոչ ուշ, քան 14 օր առաջ, մեկից մինչև հինգ տարի աշխատողին՝ 35 օր առաջ, հինգից մինչև տասը տարի աշխատողին՝ 42 օր առաջ, տասից մինչև տասնհինգ տարի աշխատողին՝ 49 օր առաջ, տասնհինգ տարուց ավելի աշխատողին՝ 60 օր առաջ, իսկ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով նախատեսված հիմքով՝ 3 օր առաջ»:

Նշված կոնկրետ դեպքով նույնպես աշխատողի իրավունքները վերականգնվել են: Պաշտպանի աջակցությամբ քաղաքացուն տրամադրվել է փոխհատուցում՝ յուրաքանչյուր չծանուցված օրվա համար, ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված չափով:

Բողոքներից մեկով էլ աշխատողն աշխատանքից ազատվել է հաստիքի կրճատման հիմքով՝ առանց սպասելու ծանուցմամբ նշված ժամկետի լրանալուն: Աշխատողին փաստացի արգելվել է մուտք գործել աշխատավայր:

Աշխատանքային օրենսգրքի 115-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հաստիքների կրճատման հիմքով աշխատանքային պայմանագիրը լուծելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողին գրավոր ծանուցել ոչ ուշ, քան երկու ամիս առաջ:

Այս դեպքով Պաշտպանի աջակցությամբ քաղաքացուն փոխանցվել է չծանուցելու հատուցման և վերջնահաշվարկի գումարը:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով՝ առանց ծանուցելու և առանց աշխատողի համաձայնության, գործատուն կիսով չափ կրճատել է հաստիքի դրույքաչափը՝ դարձնելով 0,5 դրույք: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման շրջանակներում գրություն է ուղարկվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, հարուցված վարչական վարույթի արդյունքում տեսչական մարմինը կարգադրագիր է ուղարկել գործատուին՝ աշխատողին աշխատավարձի վճարման կետանցված օրերի համար, ինչպես նաև գործատուի կողմից աշխատանքի էական պայմանների փոփոխության վերաբերյալ չծանուցելու համար տուժանք վճարելու պահանջով, որը գործատուն կատարել է:

*Այսպիսով, շարունակում է մտահոգիչ մնալ աշխատանքային օրենսդրության դրույթները չպահպանելու ոչ իրավաչափ պրակտիկան:*

#### **4.4 Աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը**

Աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելու ոչ իրավաչափ պրակտիկան 2021 թվականի ընթացքում նույնպես արդիական է:

Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկումը վկայում է, որ աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը գործատուների համար «անցանկալի» աշխատողից ազատվելու այլընտրանքային տարբերակ է, հատկապես այն դեպքում, երբ գործատուն իրավական հնարավորություն չի ունենում իր նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման, քանի որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածով սահմանված հիմքերը բացակայում են: Պրակտիկան ցույց է տալիս, որ աշխատողները պաշտպանված չեն գործատուի կամայականություններից, աշխատավայրում իրադրության փոփոխություններով (ինչպես օրինակ վերադասի փոփոխություն), կամ այլ գործոններով պայմանավորված գործատուներն առանց կաշկանդվելու ազատվում են աշխատողներից:

2021 թվականի ընթացքում այս խնդրով առավել մտահոգիչ դեպքեր արձանագրվել են տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ պայմանավորված աշխատողի՝ այս կամ այն քաղաքական թիմին հարելով:

Օրինակ՝ բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ աշխատում է մասնավոր ընկերությունում և որպես համայնքի ավագանու թեկնածու՝ ընդգրկված է քաղաքական ուժերից մեկի ավագանու թեկնածուների ցուցակում: Իմանալով ավագանու թեկնածուների ցուցակում ընդգրկված լինելու մասին՝ գործատուն առաջարկել է կա՛մ հրաժարվել ավագանու թեկնածությունից և դուրս գալ թեկնածուների ցուցակից, կա՛մ ներկայացնել աշխատանքից ազատվելու մասին դիմում: Ճիշտ է, աշխատողն ազատման դիմում կոնկրետ դեպքում չի ներկայացրել, սակայն ստիպված գրավոր դիմել է գործատուին՝ իրեն չվճարվող արձակուրդ տրամադրելու խնդրանքով, սակայն դիմումն անպատասխան է մնացել:

Պետք է նկատի ունենալ, որ աշխատանքից ազատվելու համար դիմում գրել կամ չգրելն աշխատողի իրավունքն է, և նա է որոշում ազատվել աշխատանքից, թե ոչ: Աշխատողին աշխատանքից դիմում գրելուն հարկադրելն ինքնին ոչ իրավաչափ է, առավել ևս անընդունելի է, երբ աշխատանքային իրավունքի նման ոտնահարումը կապվում է անձի ընտրական կամ այլ իրավունքի իրացման հետ:

Ընտրական իրավունքի կարևոր բաղադրատարրերից է հնարավորությունների հավասարությունը: Վերջինս իր հերթին ներառում է ընտրարշավին անկաշկանդ մասնակցությունը և ընտրական գործընթացի մյուս փուլերին մասնակցությունը: Ստացվում է, որ գործատուն աշխատողի աշխատանքային իրավունքների երաշխավորումը պայմանավորել է Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական իրավունքներից հրաժարումով:

*Ուստի, աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը, այն էլ քաղաքական հայացքներով և ընտրական իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անընդունելի է:*

Պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է նաև, որ գործնականում քիչ չեն դեպքերը, երբ աշխատողները ենթարկվում են գործատուի հորդորներին

կամ սպառնալիքներին և սեփական դիմումի հիման վրա ազատվում են աշխատանքից: Արդյունքում՝ նրանք ոչ միայն կորցնում են իրենց աշխատանքը, այլև բախվում են հետագայում իրենց խախտված իրավունքների վերականգնման գործնական անհնարինության խնդրին, եթե հաշվի առնենք այն, որ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված առանձին հիմք է, իսկ գործատուի հորդորներին կամ սպառնալիքներն իրականում ունեն ապացուցողական նշանակություն: Այսպիսի դեպքերում աշխատողը ստիպված է դիմել դատարան ազատման դիմումն անվավեր ճանաչելու համար, քանի որ օրենքն ընդհանուր կարգով դատարան դիմել նախատեսում է գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցված լինելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ աշխատողի համաձայն չլինելու դեպքերում:

Հարկ է նշել, որ նման հարցերով Մարդու իրավունքների պաշտպանին դիմելու դեպքում քաղաքացիներին վերոնշյալ, ինչպես նաև ստիպված ազատման դիմում գրելու բացասական հետևանքների վերաբերյալ քաղաքացիներին շատ հաճախ տրվում է անհրաժեշտ խորհրդատվություն, սակայն նրանք խուսափում են գրավոր բողոք ներկայացնել, քանի որ վերջիններս չեն ցանկանում, որ գործատուն, որի հետ աշխատողն արդեն իսկ լարված հարաբերությունների մեջ են, իմանա Պաշտպանին կամ որևէ այլ պետական մարմին դիմելու մասին:

*Նմանապիսի խախտումների շարունակական լինելը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք հատկապես քաղաքացիների իրազեկվածության պակասի արդյունք են, իսկ օրենսդրական պահանջների չպահպանումը՝ արտադարական ոչ բավարար վերահսկողության ու արհմիությունների դերի պակասի: Ուստի, այս պարագայում ևս անհրաժեշտ է, որ լիազոր մարմինը՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, իրականացնի անհրաժեշտ վերահսկողություն, ինչպես նաև իրազեկման աշխատանքներ:*

## **5. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ**

Աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ոլորտի լիազորված տեսչական մարմինը՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 755-Լ որոշմամբ տեսչական մարմնի լիազորություններից է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Նշյալ ենթակետի «Ժ» պարբերությունը սահմանում է, որ տեսչական մարմնի կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացվում է վերահսկողություն այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողությունների պահպանման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ:

Այսպես, 2021 թվականի ընթացքում Աշխատանքային օրենսգրքի հիման վրա սահմանվել են տեսչական մարմնի գործառույթների իրականացման համար նոր կառուցակարգեր նախատեսող օրենսդրական կարգավորումներ, ինչը դրական է: Սակայն, հարկ է նկատել, որ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված անհատական բողոքներով վեր են հանվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման ընթացքում գործնական խնդիրներ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին նշել է, որ գործատուն իրենից պահանջել է աշխատանքից ազատման դիմում գրել, քանի որ ինքը վերջինիս քաղաքական թիմից չէ և իր քաղաքական թիմին չի ընտրել: Բողոքի քննարկման ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից նշել են, որ քաղաքացու բարձրացրած հարցերը դուրս են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների շրջանակից:

Մինչդեռ, ինչպես վերը նշվեց՝ տեսչական մարմնի լիազորություններից է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված խտրականության արգելքների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

Հարկ է նկատել, որ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածի՝ աշխատանքային օրենսդրությամբ խտրականությունն արգելվում է:

Խտրականություն է համարվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, **քաղաքական կամ այլ հայացքների**, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային հարաբերությունների ծագման և (կամ) փոփոխման և (կամ) դադարման

դեպքերում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով, և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:

Աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է, գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից:

Պաշտպանին դիմած աշխատանք փնտրող քաղաքացիների բողոքները և իրականացված մշտադիտարկումները վկայում են, որ պետության կողմից չկա պատշաճ վերահսկողություն այդ հայտարարությունների, գործատուների ընտրության, այս կամ այն անձին որպես աշխատող նախապատվությունը տալու նկատմամբ: Սա նույնպես խտրականության դրսևորման ակնհայտ օրինակ է և նույնպես Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների տիրույթում է:

*Այսպիսով, ակնհայտ է, որ տեսչական մարմինը, ունենալով խտրականության արգելքների պահպանման հստակ լիազորություն, պատշաճ չի իրականացնում այն:*

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ մասնավոր կազմակերպության հետ կնքել է հաշվապահական ծառայությունների մատուցման պայմանագիր: Մինչ պայմանագրի կնքումը՝ առաջին հարցազրույցի ժամանակ տեղեկացվել է, որ կնքվելու է աշխատանքային անժամկետ պայմանագիր, մինչդեռ երկրորդ հարցազրույցի ընթացքում պարզվել է, որ կնքվելու է քաղաքացիաիրավական պայմանագիր՝ 2-3 ամիս անց, փորձաշրջանի ավարտից հետո աշխատանքային պայմանագիր կնքելու և բարձր աշխատավարձ վճարելու պայմանով: Ըստ քաղաքացու՝ չնայած, որ կնքվել է քաղաքացիաիրավական պայմանագիր, պայմանագրով հստակ սահմանվել են աշխատանքային ժամերը և աշխատանքի կատարման վայրը, ինչը դիմողի համար հիմք է պնդելու, որ կազմակերպության հետ գտնվում է աշխատանքային հարաբերություններում: Փորձաշրջանի ավարտից հետո քաղաքացին դիմել է գործատուին՝ աշխատանքային պայմանագիր կնքելու և աշխատավարձը փոփոխելու նպատակով և տեղեկացել, որ տնօրենը որոշել է լուծել իր հետ կնքած ծառայությունների մատուցման պայմանագիրը: Դիմողն իր աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով դիմել է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, սակայն իր դիմումին ի պատասխան՝ տեղեկացել է, որ իր և կազմակերպության միջև առկա է քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններ, որոնց նկատմամբ տեսչական մարմինը վերահսկողություն իրականացնելու իրավասություն չունի: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման



կապակցությամբ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից ստացված պարզաբանումների համաձայն՝ տեսչական մարմնում բարձրացված հարցի կապակցությամբ քաղաքացու երկրորդ դիմումի հիման վրա հարուցվել է վարչական վարույթ, որի շրջանակներում իրականացված զննման ընթացքում աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հավաստող որևէ ապացույց ձեռք չի բերվել Սակայն ակնհայտ է, որ նշված կոնկրետ դեպքն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների տիրույթում է եղել:

*Ուստի խնդրահարույց է, որ տեսչական մարմինը ի սկզբանե, քաղաքացու առաջին դիմումի առկայության պայմաններում հարցը չի դիտարկել բազմակողմանի և գտել է, որ այն իր լիազորություններից դուրս է:*

«Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման առումով պրակտիկայում խնդիրներ առաջանում են նաև աշխատողի և գործատուի միջև ծագած այս կամ այն տարաձայնությունն աշխատանքային վեճ դիտարկելու և այդպիսով վեճը տեսչական մարմնի կողմից քննարկելու հետ կապված: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ աշխատանքային վեճ կարող է առաջանալ ոչ միայն աշխատանքային իրավունքների իրականացման և աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ, այսինքն՝ աշխատանքային պայմանագրի գործողության ընթացքում: Ավելին, պրակտիկայում բավականին շատ են դեպքերը, որ աշխատանքային վեճերը ծագում են առավելապես հենց աշխատանքային պայմանագրի դադարեցումից հետո:

Գործող աշխատանքային օրենսգիրքը սահմանում է աշխատանքային վեճի հասկացությունը: Աշխատանքային օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային վեճն աշխատողի կամ տվյալ գործատուի հետ նախկինում աշխատանքային հարաբերությունների մեջ գտնված աշխատողի և գործատուի միջև տարաձայնությունն է, որն առաջանում է կամ առաջացել է աշխատանքային օրենսդրությամբ, այլ նորմատիվ իրավական ակտերով, ներքին իրավական ակտերով, աշխատանքային կամ կոլեկտիվ պայմանագրով սահմանված իրավունքների և պարտականությունների կատարման ժամանակ:

«Աշխատանքային վեճ» հասկացության օրենսգրքային բնորոշմամբ բացահայտված չէ, թե կոնկրետ ինչի շուրջ է առաջանում աշխատանքային վեճը: Հասկանալի է, որ օրենսդիրը չէր կարող սպառիչ թվարկել տարաձայնության առարկա հանգամանքները, սակայն պրակտիկայում հանդիպում են դեպքեր, երբ տարաձայնությունը պայմանավորված այն հանգամանքով, որ առաջացել է աշխատողի և գործատուի միջև, մեկնաբանվում է որպես աշխատանքային վեճ:

Կողմերի միջև կարող են առաջանալ նաև այնպիսի տարաձայնություններ, որոնք ընդհանուր առմամբ, կապված լինելով աշխատողի աշխատանքային գործունեության հետ կամ այդ գործունեության հետ ուղղակիորեն առնչություն չունեցող հարցերի հետ:., այդուհանդերձ, հիմքում ունեն կողմերից մեկի աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կանոնի չպահպանման բաղադրիչ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով դիմողը նշել է, որ աշխատում է մասնավոր ընկերությունում, գտնվում է հղիության և ծննդաբերության արձակուրդում: Ըստ բողոքի՝ գործատուն հրաժարվում է փոխանցել օրենքով սահմանված մայրության նպաստը: Բողոքի քննարկման գրավոր ընթացակարգի շրջանակներում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից վկայակոչել են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները, մասնավորապես այն, որ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարձու աշխատողի նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է գործատուն՝ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Վկայակոչել են նաև Կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի թիվ 1024-Ն որոշումը, որի համաձայն՝ եթե տվյալ ամսվա համար հաշվարկված եկամտային հարկի գումարները բավարար չեն նպաստը վճարելու համար, ապա գործատուն նպաստի՝ ՀՀ պետական բյուջեի հաշվին վճարվող գումարների պակասող մասը վճարում է իր միջոցներից, որը գործատուին փոխհատուցում է Միասնական սոցիալական ծառայությունը: Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից գործատուին փոխհատուցման ենթակա գումարը վճարվում է հարկային մարմին ներկայացված տեղեկանքի հիման վրա՝ դրան կցելով հաշվետու ամսվա ընթացքում վճարված նպաստների նշանակման և վճարման համար հիմք հանդիսացած ժամանակավոր անաշխատունակության թերթիկների լուսապատճենները: Ծառայությունը, հաստատած (կնքած) տեղեկանքը ներկայացվելուց հետո մեկ ամսվա ընթացքում, գործատուին փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է նրա բանկային հաշվեհամարին: Ըստ ստացված տեղեկության՝ կոնկրետ դեպքում ևս մայրության նպաստի գումարը Միասնական սոցիալական ծառայությունը փոխանցել է մասնավոր կազմակերպությանը: Ըստ այդմ՝ Ծառայությունն ապահովել է օրենսդրությամբ ամրագրված իր պարտավորությունների կատարումը:

Նշված բողոքի շրջանակներում Պաշտպանի ներկայացուցչի հետ աշխատանքային քննարկման արդյունքում ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ներկայացուցիչը նշել է, որ աշխատողի և գործատուի միջև նշվածի կապակցությամբ ծագած տարաձայնությունը տեսչական մարմինը քննարկման առարկա չի դարձրել, քանի առկա չէ այնպիսի աշխատանքային տարաձայնություն, որի կապակցությամբ համապատասխան լիազորություններ կարող է ունենալ տեսչական մարմինը: Ակնհայտ է, որ նշված իրավիճակում նույնպես առկա է տարաձայնություն աշխատող-գործատու հարաբերություններում, բայց թե որքանով է դա տեղավորվում Աշխատանքային օրենսգրքի՝ «աշխատանքային վեճ» բնորոշման մեջ և թե որքանով է այն առնչվում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորություններին, խնդրահարույց է:

*Հասկանալի է, որ Աշխատանքային օրենսգրքի հիման վրա տեսչական մարմնի գործառույթների իրականացման համար նոր կառուցակարգեր նախատեսող օրենսդրական կարգավորումներն ընդունվել են 2021 թվականին, այդպիսով առաջացել է նոր մարտահրավեր տեսչական մարմնի*

լիազորությունների իրացման տեսանկյունից, այդուամենայնիվ պետք է արձանագրել, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պարտավոր է պատշաճ ջանասիրություն դրսևորել՝ կոնկրետ բողոքները բազմակողմանի ուսումնասիրելու և դրանց քննարկումն իր լիազորությունների տիրույթում ապահովելու համար:

**6. Խախտված աշխատանքային իրավունքների հարցով ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորության բացակայությունը**

2019 թվականի դեկտեմբերի 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, ըստ որի՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ. գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ոլորտի լիազորված տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին)՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ: Նշված դրույթն ուժի մեջ է մտել 2021 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 755-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 10-րդ ենթակետի «Ժա» պարբերությունը սահմանում է, որ տեսչական մարմնի կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացվում է վերահսկողություն այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, աշխատաժամանակի և հանգստի ժամանակի տևողությունների պահպանման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ:

Այդպիսով, աշխատանքային իրավունքների և օրենսդրության նկատմամբ պետական հսկողությունը 2021 թվականի հուլիս ամսից ամբողջությամբ վերապահվել է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին, ինչը կարևոր և ողջունելի քայլ է:

Հարկ է նկատել, սակայն, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, իրեն վերապահված լիազորություններն իրականացնելիս, անանուն բողոքներ չի քննարկում, ինչի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրած բողոքներով մարդիկ իրենց մտահոգությունն են հայտնել: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների

ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գործնականում շատ են դեպքերը, երբ մարդիկ, խուսափում են դիմել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, քանի որ անանուն բողոքներ տեսչական մարմինը չի ընդունում, իսկ իրենք չեն ցանկանում, որ գործատուն նույնականացնի բողոք ներկայացրած անձին:

Օրինակ՝ 2021 թվականի ընթացքում զգալի թվով բողոքներով Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել պարտադիր պատվաստման դեմ տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր կազմակերպությունների աշխատակիցներ: Նրանք հասցեագրել են թե՛ գրավոր, թե՛ բանավոր բողոքներ: Սակայն բոլոր դեպքերում, մտավախություն հայտնելով, որ կբացահայտվի իրենց անձը, խնդրել են ընթացք չտալ բողոքներին այն մտավախությամբ, որ իրենց աշխատանքից կազատեն կամ աշխատավարձ չեն ստանա:

Ըստ ստացված տեղեկության՝ տեսչական մարմնի «Թեժ գիծ» ծառայությունով նույնպես քաղաքացիներից ստացվել են անանուն բողոքներ: Մասնավորապես՝ գործատուներն ընտրություններին առնչվող գործընթացների ընթացքում աշխատողներին (որպես աշխատանքային հարաբերությունները շարունակելու պայման) պարտադրել են մասնակցել հանրահավաքներին: Տեսչական մարմինն իր պաշտոնական կայքում նախապատրաստել և հրապարակել է համապատասխան հրապարակում :

Միևնույն ժամանակ, ըստ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից ստացված տեղեկության՝ տեսչական մարմինը 2021 թվականի հոկտեմբերի 1-ից գործարկել է աշխատանքային իրավունքի պաշտպանության EmployeeProtect.am հարթակը: Դրա հիմնական նպատակն է՝ ուժեղացնել Հայաստանի Հանրապետությունում աշխատողների իրավունքների պաշտպանության համակարգը: EmployeeProtect.am-ն աշխատանքային ոլորտում ծագած խնդիրներին կամ առերևույթ իրավախախտումներին արագ արձագանքելու և աշխատանքային իրավունքների պաշտպանությանն ուղղված հարթակ է, որտեղ աշխատողները կարող են դիմում-հայտ ներկայացնել Տեսչական մարմնին: Դիմումին կարելի է կցել լուսանկարներ, տեսագրություններ, ձայնագրություններ, այլ ապացույցներ: Հայտ կարող է ներկայացնել յուրաքանչյուր անձ, այդ թվում՝ պետական և մասնավոր կազմակերպությունների աշխատողներ, որոնք Հայաստանում աշխատանքային իրավունքի ոլորտում առնչվել են խնդիրների:

Նախատեսվել է, որ հետագայում կգործարկվի նաև հարթակի անանուն դիմումներ ներկայացնելու գործիքը, որով հնարավոր կլինի դիմումն ուղարկել անանուն, պաշտպանված IP հասցեից: Հարթակը հասանելի է նաև mobile տարբերակով, ինչպես ներբեռնելու, այնպես էլ առցանց օգտագործելու միջոցով: Հարթակի միջոցով Տեսչական մարմինը նաև աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ աշխատողների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա իրականացնում է փաստարկված բարեփոխումներ, աշխատողներին իրազեկում է աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտի վերջին նորությունների մասին:

Այսպիսով, ողջունելի է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի պատրաստակամությունը քաղաքացիների կողմից անանուն դիմումներ ներկայացնելու հնարավորություն նախատեսելու առումով: Դա հնարավորություն կտա վեր հանել աշխատանքային բնույթի առավել խորքային խնդիրներ, ինչպես նաև կանխարգելել առավել մեծ խախտումներ, այդ թվում՝ ապօրինի ազատումների, ինչպես նաև մարդիկ չեն խուսափի բարձրաձայնել իրենց խախտված աշխատանքային իրավունքների մասին, իսկ գործատուները, իրենց հերթին, առավել զգոն կլինեն:

*Այսպիսով, անհրաժեշտ է՝ հնարավոր սեղմ ժամկետում EmployeeProtect.am հարթակում գործարկել անանուն դիմումներ ներկայացնելու գործիքը:*

## **7. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ**

Աշխատանքային օրենսգրքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության, աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերի պահանջների կատարման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ոլորտի լիազորված տեսչական մարմինը՝ օրենքով նախատեսված դեպքերում կիրառելով պատասխանատվության միջոցներ:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 755-Լ որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը գործում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, իրավական այլ ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

Նույն հավելվածի 11-րդ կետի 10-րդ ենթակետի համաձայն՝ տեսչական մարմնի լիազորություններից է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը: Նշյալ ենթակետի «ժա» պարբերությունը սահմանում է, որ տեսչական մարմնի կողմից աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ իրականացվում է վերահսկողություն այդ թվում՝ աշխատանքային պայմանագրերի կնքման և (կամ) լուծման կարգի պահպանման, աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությամբ աշխատանքների (անօրինական աշխատանք) դեպքերի հայտնաբերման, աշխատաժամանակի և

հանգստի ժամանակի տևողությունների պահպանման, օրենքով սահմանված կարգով և ժամկետներում աշխատավարձի հաշվարկման ու վճարման նկատմամբ: Նույն ենթակետի «ժգ» պարբերության համաձայն՝ տեսչական մարմնի լիազորություններն են աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված խտրականության արգելքների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

Այսպես, 2021 թվականի ընթացքում Աշխատանքային օրենսգրքի հիման վրա սահմանվել են տեսչական մարմնի գործառույթների իրականացման համար նոր կառուցակարգեր նախատեսող օրենսդրական կարգավորումներ, ինչը դրական է: Սակայն, հարկ է նկատել, որ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված անհատական բողոքներով վեր են հանվել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի՝ աշխատանքային ոլորտում լիազորությունների կատարման ընթացքում գործնական խնդիրներ:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին նշել է, որ գործատուն իրենից պահանջել է աշխատանքից ազատման դիմում գրել, քանի որ ինքը վերջինիս քաղաքական թիմից չէ և իր քաղաքական թիմին չի ընտրել: Բողոքի քննարկման ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից նշել են, որ քաղաքացու բարձրացրած հարցերը դուրս են ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների շրջանակից:

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 755-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետի 10-րդ ենթակետի «ժգ» պարբերության համաձայն՝ տեսչական մարմնի լիազորություններից է աշխատանքային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված խտրականության արգելքների պահպանման նկատմամբ վերահսկողությունը:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1 հոդվածի՝ աշխատանքային օրենսդրությամբ խտրականությունն արգելվում է:

Խտրականություն է համարվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային հարաբերությունների ծագման և (կամ) փոփոխման և (կամ) դադարման դեպքերում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի

տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով, և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:

Աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է, գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից:

Այսպիսով, ակնհայտ է, որ տեսչական մարմինը, ունենալով խտրականության արգելքների պահպանման հստակ լիազորություն, կոնկրետ դեպքով չի իրացրել այն: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին ուղղված մեկ այլ գրությամբ Պաշտպանը պահանջել է բողոքում բարձրացված հարցը քննարկել խտրականության դրսևորման լույսի ներքո:

Մեկ այլ բողոքով քաղաքացին բարձրացրել է իր աշխատանքային իրավունքների պաշտպանության հարցը: Ըստ բողոքի՝ քաղաքացին մասնավոր կազմակերպության հետ կնքել է հաշվապահական ծառայությունների մատուցման պայմանագիր: Մինչ պայմանագրի կնքումը՝ առաջին հարցազրույցի ժամանակ տեղեկացվել է, որ կնքվելու է աշխատանքային անժամկետ պայմանագիր, մինչդեռ երկրորդ հարցազրույցի ընթացքում պարզվել է, որ կնքվելու է քաղաքացիաիրավական պայմանագիր՝ 2-3 ամիս անց, փորձաշրջանի ավարտից հետո աշխատանքային պայմանագիր կնքելու և բարձր աշխատավարձ վճարելու պայմանով: Ըստ քաղաքացու՝ չնայած, որ կնքվել է քաղաքացիաիրավական պայմանագիր, պայմանագրով հստակ սահմանվել են աշխատանքային ժամերը և աշխատանքի կատարման վայրը, ինչը դիմողի համար հիմք է պնդելու, որ կազմակերպության հետ գտնվում է աշխատանքային հարաբերություններում: Փորձաշրջանի ավարտից հետո քաղաքացին դիմել է գործատուին՝ աշխատանքային պայմանագիր կնքելու և աշխատավարձը փոփոխելու նպատակով և տեղեկացել, որ տնօրենը որոշել է լուծել իր հետ կնքած ծառայությունների մատուցման պայմանագիրը: Քաղաքացին իր աշխատանքային իրավունքների պաշտպանության նպատակով դիմել է Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին, սակայն իր դիմումին ի պատասխան՝ տեղեկացել է, որ իր և կազմակերպության միջև առկա է քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվող հարաբերություններ, որոնց նկատմամբ տեսչական մարմինը վերահսկողություն իրականացնելու իրավասություն չունի: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման ընթացքում Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից տեղեկացրել են, որ տեսչական մարմնում բարձրացված հարցի կապակցությամբ հարուցվել է վարչական վարույթ: Հարկ է նկատել, որ թեև աշխատանքային հարաբերությունների առկայության փաստը հավաստող որևէ ապացույց ձեռք չի բերվել տեսչական մարմնի կողմից վարչական վարույթի շրջանակներում իրականացրած զննման ընթացքում, սակայն ակնհայտ է, որ նշված կոնկրետ դեպքը

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների տիրույթում է եղել: Ուստի խնդրահարույց է, որ տեսչական մարմինը ի սկզբանե, քաղաքացու առաջին դիմումի առկայության պայմաններում հարցը չի դիտարկել բազմակողմանի և գտել է, որ այն իր լիազորություններից դուրս է:

*Հասկանալի է, որ Աշխատանքային օրենսգրքի հիման վրա տեսչական մարմնի գործառույթների իրականացման համար նոր կառուցվարգեր նախատեսող օրենսդրական կարգավորումներն ընդունվել են 2021 թվականին, այդպիսով առաջացել են նոր մարտահրավեր տեսչական մարմնի լիազորությունների իրացման տեսանկյունից, այդուամենայնիվ պետք է արձանագրել, որ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը պարտավոր է պատշաճ ջանասիրություն դրսևորել կոնկրետ բողոքները բազմակողմանի ուսումնասիրելու և դրանց քննարկումն իր լիազորությունների տիրույթում ապահովելու համար:*

**8. Հանրային ծառայության ոլորտում կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված՝ հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատված անձանց աշխատանքային իրավունքների ապահովման խնդիրներ**

Մտահոգիչ և խնդրահարույց են հանրային ծառայության ոլորտում 2021 թվականի ընթացքում իրականացված կառուցվածքային փոփոխությունները, որոնց արդյունքում հաստիքների կրճատման հիմքով աշխատանքից ազատվել են բազմաթիվ հանրային ծառայողներ:

Ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հանրային ծառայողների բողոքները հիմնականում վերաբերում են նրան, որ պետական մարմիններում կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ կրճատված հաստիքի փոխարեն նոր ստեղծված հաստիքի կամ պաշտոնի նշանակելիս ղեկավար-գործատուն դրսևորում է լայն հայեցողություն և նախապատվություն չի կիրառվում կրճատվող հաստիքները զբաղեցնող անձանց նկատմամբ: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ մարդկանց մտահոգություններն արդարացված են. ոչ միայն օրենսդրության դրույթների մեկնաբանման կամ կիրառման տեսանկյունից, այլ նաև այն տեսանկյունից, որ շատ հաճախ աշխատանքից ազատվում և պաշտոնի նշանակվելու նախապատվություն չեն ունենում երկար աշխատանքային ստաժ, բարձր դասային աստիճան կամ կատարողականի գնահատման բարձր արդյունքներ ունեցող աշխատակիցները:

Օրինակ՝ պետական մարմնի մի խումբ աշխատակիցներ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են կոլեկտիվ բողոք, ըստ որի՝ մի ամբողջ բաժնի հաստիքներ կրճատվել են, որի արդյունքում իրենք ազատվել են աշխատանքից: Պաշտպանի աշխատակազմում բողոքի ուսումնասիրության ընթացքում պետական համապատասխան մարմնից ստացված



պարզաբանումների համաձայն՝ տվյալ դեպքում տեղի է ունեցել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի հաստիքների առավելագույն քանակի կրճատում, որի դեպքում, որպես կանոն, աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշվել է համապատասխան մարմնի ղեկավարի կողմից: Քաղաքացիական ծառայության գրասենյակից նույնպես տրվել է նույնաբովանդակ պարզաբանում, վկայակոչվել է ՀՀ վարչապետի՝ «Պետական իշխանության մարմիններում հաստիքների առավելագույն թիվը սահմանելու մասին» համապատասխան անհատական որոշումը, ինչպես նաև «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի հաստիքների առավելագույն քանակի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Բարձրաձայնված նմանատիպ այլ բողոքներ էլ հասցեագրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործունեությունը դադարեցրած մարմինների՝ (Սոցիալական ապահովության պետական ծառայություն, Սոցիալական աջակցության գործակալություն, Բժշկասոցիալական գործակալություն, Զբաղվածության պետական գործակալություն) աշխատանքից ազատված աշխատակիցներից: Բանն այն է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կազմում գործող սոցիալական պաշտպանության մարմինների գործունեությունը 2021 թվականին դադարեցվել է, դրա փոխարեն ստեղծվել է սոցիալական կարիքների գնահատման միասնական նոր համակարգ՝ Միասնական սոցիալական ծառայությունը. սոցիալական պաշտպանության ոլորտի չորս մարմինները՝ սոցիալական ապահովության ծառայությունը, բժշկասոցիալական փորձաքննության, զբաղվածության պետական գրասենյակները, ինչպես նաև մարզային ենթակայության սոցիալական աջակցության 38 գործակալություն և համայնքային ենթակայության սոցիալական աջակցության 17 բաժին համակարգվել են Միասնական սոցիալական ծառայության կազմում: Դրա արդյունքում տեղի են ունեցել հաստիքների կրճատումներ և այդ հիմքով քաղաքացիական ծառայողներն ազատվել են աշխատանքից:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով աշխատանքից ազատված քաղաքացիական ծառայողներն իրենց դժգոհությունն են հայտնել, որ Միասնական սոցիալական ծառայության ստեղծումից հետո ծառայությունում հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ չեն առաջարկվել, բացի այդ՝ ծառայության պաշտոնական կայքում հայտարարություններ են հրապարակվել թափուր հաստիքները համալրելու վերաբերյալ, աշխատակիցները դիմել են թափուր հաստիքներ զբաղեցնելու համար, սակայն այդ պաշտոններում չեն նշանակվել: Աշխատակիցների պնդմամբ՝ թափուր հաստիքները համալրվել են կամայականությամբ, դրսևորվել է հովանավորչություն: Բացի այդ, վերջիններիս պնդմամբ, թափուր հաստիքների համալրման գործընթացում հաշվի չի առնվել այն, որ աշխատանքից ազատված անձինք ունեն երկար տարիների աշխատանքային ստաժ և իրենց աշխատանքում զգալի փորձ:

Պաշտպանի աշխատակազմում նույնաբովանդակ բողոքների քննարկման շրջանակում Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից նույնպես վկայակոչել են ՀՀ օրենսդրության այն կարգավորումները, ըստ որոնց՝ աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը: Մասնավորապես, 2021 թվականի մարտի 4-ին ընդունվել է «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-97-Ն ՀՀ օրենքը (ուժի մեջ է մտել 01.04.2021 թվականին), այնուհետև՝ 2021 թվականի փետրվարի 3-ին ընդունված փոփոխություններով «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2020 թվականի մարտի 4-ի ՀՕ-97-Ն օրենքը շարադրվել է հետևյալ դրույթով խմբագրությամբ. սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների համապատասխան գործառույթները Միասնական սոցիալական ծառայությանը վերապահելու դեպքում քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների անձնագրերի հաստատումից հետո Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում համապատասխան գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողներին Միասնական սոցիալական ծառայությունում *կարող են առաջարկվել* քաղաքացիական ծառայության հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ:

Ըստ նախարարության՝ վերը նշված կարգավորումների ուժով նոր ստեղծված Միասնական սոցիալական ծառայությանը վերապահվել է հայեցողական լիազորություն, ուստի Ծառայությունը չի ունեցել օրենսդրական որևէ պարտականություն նշված կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ գործունեությունը դադարեցրած մարմինների աշխատակիցներին առաջարկելու քաղաքացիական ծառայության հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ:

Հայեցողական լիազորության նպատակահարմարության հետ կապված էլ նախարարությունից նշել են, որ ՀՀ օրենսդրության շրջանակներում Միասնական սոցիալական ծառայությունն իրականացնում է մի շարք նոր գործառույթներ, որոնց ապահովման (իրականացման) համար անհրաժեշտ են ոչ միայն նախկինում զբաղեցված պաշտոնի համար անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ, այլ նաև՝ ծառայության հաստատած գործառույթներից բխող գիտելիքներ, հմտություններ: Ուստի, պաշտոնի են նշանակվել այն անձինք, ովքեր համապատասխան մրցույթներում հաղթող են ճանաչվել՝ ելնելով տվյալ պաշտոնին վերապահված գործառույթները պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ գիտելիք, հմտություն և անհրաժեշտ այլ կարողություններ ունենալու հանգամանքից:

Այսպիսով, պետական մարմնում կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված հաստիքների կրճատման դեպքում, ըստ ներկայացված պարզաբանումների, պետական մարմնի ղեկավարին տրվել է հայեցողական լիազորություն՝ մրցույթի արդյունքներով քաղաքացիական ծառայության պաշտոնի նշանակելու նախընտրելի անձի:

Այս կապակցությամբ նախևառաջ պետք է նշել, որ հայեցողական լիազորությունների ամրագրումը չի երաշխավորում մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Հայեցողական լիազորությունների իրացման մասով խնդիրը համընդհանուր դրսևորում ունի և հատկապես ակնառու է աշխատանքային իրավունքների պաշտպանության ոլորտում:

Բացի այդ, տվյալ իրավիճակում խնդիրը պայմանավորված է ոչ միայն և ոչ այնքան հայեցողական լիազորություններ սահմանող այլ օրենսդրական նորմերի առկայությամբ, այլ նաև դրանց խնդրահարույց մեկնաբանմամբ և կիրառմամբ:

Սոցիալական ապահովության համապատասխան մարմինների դադարեցման և դրա արդյունքում հաստիքների կրճատումներ իրականացնելուց հետո, Միասնական սոցիալական ծառայության ստեղծմանը զուգահեռ, «Սոցիալական աջակցության մասին» օրենքում իրականացվել են փոփոխություններ: Մասնավորապես՝ սահմանվել է, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում և Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալություններում համապատասխան գործառույթներ իրականացնող քաղաքացիական ծառայողներին Միասնական սոցիալական ծառայությունում *կարող են առաջարկվել* քաղաքացիական ծառայության հավասարազոր կամ ավելի ցածր պաշտոններ:

Նշված դրույթի սահմանման կապակցությամբ հարկ է նկատել հետևյալը.

«Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է իմպերատիվ պահանջ առ այն, որ հաստիքների հիմքով աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա հնարավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից:

Աշխատանքային օրենսգրքի նշված դրույթի ամրագրմամբ օրենսդիրը կարևոր երաշխիք է նախատեսել աշխատողների իրավունքների պաշտպանության համար: Այն, մի կողմից նախատեսել է գործատուի հնարավորությունն ազատել աշխատանքից աշխատողին, մյուս կողմից պարտականություն սահմանել աշխատողին աշխատանք առաջարկել համապատասխան աշխատանքի առկայության դեպքում:

*Մինչդեռ հարկ է նկատել, որ «Սոցիալական աջակցության մասին» օրենքի համապատասխան կարգավորումներով օրենսդիրը շեղվել է աշխատանքային իրավահարաբերություններ կարգավորող հիմնական իրավական ակտից՝ «Աշխատանքային օրենսգրքի առավել բարձր երաշխիքներ սահմանելու, դրանում տեղ գրած կարևորագույն և ելակետային սկզբունքներից, թեև հասկանալի կլիներ հակառակը, որ որպես Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայության մեջ գործող անձանց համար, ելնելով նրանց կարգավիճակի կամ գործառույթների առանձնահատկություններից, օրենսդիրը սահմաներ ավելի բարձր սոցիալական երաշխիքներ: Միևնույն ժամանակ, հարցն անհրաժեշտ է դիտարկել հաստիքները կրճատված աշխատողների՝*

հետագայում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքի ապահովման տեսանկյունից:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ վերակազմակերպմամբ և (կամ) կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների և (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը տրվում է հղի կամ մինչև երեք տարեկան երեխա խնամող կամ պարտադիր զինվորական ծառայության գորակոչված քաղաքացիական ծառայողին, իսկ այս պայմանի հավասարության կամ բացակայության դեպքում՝ քաղաքացիական ծառայության առավել երկար աշխատանքային ստաժ և վերջին երեք տարվա ընթացքում կատարողականի գնահատման ավելի բարձր արդյունքներ ունեցող քաղաքացիական ծառայողին: Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքերում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի հաստիքների առավելագույն քանակի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը որոշում է համապատասխան մարմնի ղեկավարը:

Այսպիսով, ի տարբերություն Աշխատանքային օրենսգրքի, որը հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության օրենսդրական չափանիշներ չի նախատեսում, «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքը վերը ներկայացված դրույթներն ուղղակիորեն վերաբերում են վերակազմակերպմամբ և (կամ) կառուցվածքային փոփոխությամբ պայմանավորված հաստիքների և (կամ) քաղաքացիական ծառայության պաշտոնների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքին, ավելին՝ դրանք ունեն իմպերատիվ ձևակերպում: Բացի այդ, նշված օրենքի 2-րդ և 3-րդ մասերը փոխադարձաբար կապված են միմյանց հետ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան մարմնի հաստիքների առավելագույն քանակի կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվությունը սահմանող հայեցողական լիազորությունը կարող է իրացվել տվյալ մարմնում հաստիք կամ պաշտոն զբաղեցրած քաղաքացիական ծառայողի նկատմամբ, այլ ոչ թե նախկինում քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցրած և համապատասխան պաշտոնին նշանակվելու համար դիմած նոր անձի միջև ընտրություն կատարելիս:

Աշխատանքի միջազգային կազմակերպության 1982 թվականի հունիսի 2-ի «Աշխատանքային հարաբերությունների դադարեցման մասին»<sup>93</sup> թիվ 158 կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային հարաբերությունը չի կարող դադարեցվել, քանի դեռ չկա այնպիսի բավարար

<sup>93</sup> Սույն Կոնվենցիան վերաբերում է միայն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու դեպքերին՝ ըստ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի:

պատճառ, որը կապված է աշխատողի կարողության կամ վարքագծի հետ, կամ որը հիմնված է ձեռնարկության, հիմնարկի կամ ծառայության գործառնական պահանջների վրա<sup>94</sup>:

Նույն կոնվենցիայի թիվ 166 հանձնարարականի 23-րդ կետի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կառուցվածքային կամ համանման բնույթի պատճառներով աշխատանքից ազատելիս աշխատողների միջև ընտրությունը պետք է կատարվի նախապես սահմանված չափանիշների հիման վրա, որոնք հավասարակշռում են միաժամանակ գործատուի և աշխատողի շահերը<sup>95</sup>:

Նշվածի կապակցությամբ հանրային ծառայության տեսակներից համայնքային ծառայության առնչությամբ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության հետևանքով հաստիքների կրճատման դեպքում աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը որոշելիս պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն օժտված չէ լիակատար հայեցողությամբ, այլ սահմանափակված է օրենսդրի սահմանած նախապատվության որոշակի կանոնները պահպանելու պարտականությամբ: Հակառակ մեկնաբանության պարագայում կրճատումների դեպքում օրենսդրի սահմանած աշխատանքային գործունեությունը շարունակելու նախապատվության իրավունքը կդառնա ձևական պահանջ: Եթե կրճատումներով ուղեկցվող աշխատակազմի վերակազմակերպման, անվանափոխության և կառուցվածքային փոփոխության ընթացքում համայնքային ծառայության բոլոր պաշտոններում նշանակումներ կատարելը թողնվեր պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հայեցողությանը, ապա բոլորովին ավելորդ կլիներ որոշակի համայնքային ծառայողների համար օրենքով աշխատանքը շարունակելու նախապատվության իրավունք նախատեսելը, մինչդեռ այդ իրավունքի և դրա իրացման պայմանների սահմանում օրենսդրի կողմից որոշակի երաշխիք է՝ ուղղված կրճատումների դեպքում առավել որակյալ, փորձառու կամ սոցիալապես խոցելի անձանց աշխատանքը շարունակելու հնարավորության ապահովմանը: Այլ խոսքով՝ համայնքային ծառայության հաստիքների կրճատման պարագայում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը համապատասխան կրճատված հաստիքում աշխատող համայնքային ծառայողին այդ հաստիքից ազատելիս միաժամանակ պարտավոր է նաև քննարկել նախապատվության իրավունքով նրան նոր առաջացած հաստիքում աշխատանքի թողնելու հարցը և նախապատվության իրավունքի ու դրա պայմանների առկայության դեպքում նրան նշանակել նոր առաջացած պաշտոնում, դրանից հետո միայն պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող անձը կարող է օրենքով սահմանված կարգով համարել նոր առաջացած մյուս թափուր մնացած պաշտոնները՝ իր հայեցողությամբ (Վճռաբեկ դատարանի 2018 թվականի ապրիլի 7-ի թիվ ԿԴ/1490/02/16 որոշում):

<sup>94</sup> Հասանելի է՝ <https://cutt.ly/mx91qhT> հղումով:

<sup>95</sup> Հասանելի է՝ <https://cutt.ly/bx91dU3> հղումով:

Այսպիսով, հանրային ծառայության ոլորտում կառուցվածքային փոփոխությունները, որոնք ենթադրում են հաստիքների կրճատումներ, պետք է իրականացվեն ՀՀ օրենսդրության բոլոր պահանջների, աշխատանքային իրավահարաբերությունների հիմքում ընկած ելակետային սկզբունքների միասնության պահպանմամբ՝ հաշվի առնելով այն, որ խոսքը վերաբերում է մարդուն անմիջականորեն առնչվող, նրա կարևորագույն՝ աշխատանքային իրավունքին միջամտող, իսկ առանձին դեպքերում նաև այլ իրավունքների վրա ազդող հարցերին:

### **9. Գործարարի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման օրենսդրական խնդիրները**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին տարիներ շարունակ բազմաթիվ դիմումներ են հասցեագրվել, որոնցով բարձրացվել են օրենսդրական խնդիրներ՝ կապված գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման հետ: Մասնավորապես, ըստ դիմումների՝ պարտապանի սնանկության պարագայում աշխատավարձի գծով պահանջատեր պարտատիրոջ պահանջները չեն կարող ընդգրկվել որպես ստորադաս չապահովված պահանջներ կառավարչի կողմից վարվող պարտատերերի պահանջների գրանցամատյանում, ավելին, աշխատավարձի գծով պահանջները արտոնյալ կարգով պետք է բավարարվեն:

«Սնանկության մասին» օրենքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասով սահմանված ժամկետում դատարան չենք կայացված չապահովված պահանջները համարվում են ստորադաս չապահովված պահանջներ: Ըստ օրենքի 82-րդ հոդվածի՝ պարտատերերի չապահովված պահանջների բավարարման հերթականությունն ամրագրող 1-ին մասի համաձայն՝ ստորադաս չապահովված պարտատերերի պահանջները՝ համաձայն նույն օրենքի 83-րդ հոդվածի բավարարվում են «ը» կետով:

Նույն օրենքի 83-րդ հոդվածի «գ)» կետով սահմանվում է, որ ստորադաս չապահովված պահանջների խմբին դասվում են նաև աշխատավարձի գծով այլ պահանջները:

Վերոնշյալ օրենսդրական կարգավորումների համադիր վերլուծությունից ստացվում է, որ **աշխատանքային իրավունքներից բխող պահանջներն առաջնահերթ բավարարման ենթակա պահանջներ չեն**. Օրենքի ուժով ստորադաս են դիտարկվում աշխատավարձի գծով այլ պահանջները, աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները բավարարվում են *ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը*, իսկ սահմանված ժամկետում պահանջը չենք կայացնելու դեպքում՝ դրանք ևս դիտարկվում են իբրև ստորադաս չապահովված պահանջներ: Այդ դեռ բավական չէ, **աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման այլընտրանքային մեխանիզմներ չկան**:

Ստացվում է, որ չնայած նրան, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածի 1-ին մասի «գ)» կետով նախատեսվում է, որ աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները պարտատերերի չապահովված պահանջների բավարարման երրորդ հերթում են, քննարկվող իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ պահանջատեր պարտատերերի

սահմանված ժամկետում դատարան չներկայացրած աշխատանքային պայմանագրերից բխող պահանջներն ու աշխատավարձի գծով այլ պահանջները, իրենց բնույթից անկախ, կառավարչի կողմից վարվող պարտատերերի պահանջների գրանցամատյանում ընդգրկվում են որպես ստորադաս չապահովված պահանջներ, հետևաբար բավարարվում են նույն հոդվածում ամրագրված հերթականության ութերորդ հերթով:

Մինչդեռ, այդպիսի օրենսդրական կարգավորումները Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին հակասում են: ՀՀ կողմից վավերացվել է «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիան<sup>96</sup>, որի 5-րդ հոդվածով ամրագրվում է աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների արտոնյալ կարգավիճակը այսինքն՝ այն ձևով, որ մինչև ոչ արտոնյալ պարտատերերի պահանջների բավարարումը դրանք բավարարվեն անվճարունակ գործատուի ակտիվներից:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրվում է, որ ազգային օրենսդրությամբ աշխատողների պահանջներին գերակայություն է տրվում շատ այլ արտոնյալ պահանջների համեմատ. մասնավորապես՝ պետության և սոցիալական ապահովության համակարգերի պահանջների: Միաժամանակ, ըստ նույն հոդվածի՝ եթե աշխատողների պահանջները, Կոնվենցիայի 3-րդ բաժինն համապատասխան, պաշտպանված են երաշխիքային հաստատությունների միջոցով, ապա այդպիսի պաշտպանված պահանջները կարող են ստորադասվել պետության և սոցիալական ապահովության համակարգերի պահանջների համեմատ:

Կոնվենցիայի դրույթները վկայությունն են այն բանի, որ աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունները մինչ այլ պահանջների բավարարումը բավարարվում են առաջնահերթությամբ: Դրա հետ մեկտեղ, Կոնվենցիայով սահմանվում է, որ **պետության նկատմամբ պարտավորությունները աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունների նկատմամբ չեն կարող գերակայել:** Նշվածից բացառություն, այն է՝ պետության հանդեպ պարտավորությունների սոցիալական ապահովության համակարգերի պահանջների առաջին հերթով բավարարում, Կոնվենցիայով թույլատրվում է միայն այն դեպքում, երբ աշխատանքային հարաբերություններից բխող պարտավորությունների բավարարման համար ստեղծված են երաշխիքային հաստատություններ:

Ելնելով այն հանգամանքից, որ Հայաստանի Հանրապետությունը, Կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, պարտավորություններ է ստանձնել Կոնվենցիայի երկրորդ (աշխատողների պահանջների պաշտպանությունը արտոնությունների միջոցով) և երրորդ (աշխատողների պահանջների պաշտպանությունը երաշխիքային հաստատությունների միջոցով) բաժիններով՝ տրամաբանական է այն արձանագրումը, որ Կոնվենցիայով նախանշված է ստանձնած պարտավորությունների կատարման երկու ուղղություն՝ սահմանել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների գերակայությունը շատ այլ արտոնյալ պահանջների նկատմամբ կամ աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարումն ապահովել երաշխիքային հաստատությունների միջոցով:

Մինչդեռ, իրականությունն այն է, որ Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունների կատարումը գործող օրենսդրությամբ նշված երկու ուղղություններից որևէ մեկով ապահովված չէ:

<sup>96</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիա (սույն պարագրաֆում այսուհետ՝ Կոնվենցիա), ընդունվել է 03.06.1992թ.:

Ներպետական կարգավորումներից բխում է, որ սահմանված ժամկետում չներկայացված աշխատանքային հարաբերություններից բխող պահանջները և աշխատավարձի գծով այլ պահանջները բավարարվում են մի շարք պահանջների բավարարումից հետո և չնայած այդպիսի պահանջների առաջնահերթ բավարարման կոնվենցիոն պահանջին՝ ազգային օրենսդրությամբ վերոնշյալ պահանջների՝ այլ պահանջների նկատմամբ ստորադասման հնարավորություն է ստեղծվում: Այդ պարագայում, օրենսդրությամբ այդ պահանջների ստորադասման պայմաններում, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով քննարկվող պահանջների բավարարումը երաշխիքային հաստատությունների միջոցով պետք է իրականացվի:

Այնինչ, Հայաստանում աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման ապահովման երաշխիքային հաստատություններ չկան: Դրանից բացի, «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» հանձնարարականով<sup>97</sup> սահմանված կարգով չկան նաև այնպիսի ֆոնդեր, որոնց միջոցով կբավարարվեն աշխատողների արտոնյալ պահանջները արագացված կարգով:

Այս խնդրի համակարգային դիտարկման արդյունքում կարելի է հանգել այն համոզմանը, որ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների պայմաններում ներպետական օրենսդրությամբ չկան համապատասխան կարգավորումներ, որոնք ուղղված են գործատուի սնանկության պարագայում աշխատանքային հարաբերություններից բխող որոշակի պահանջների՝ այլ պահանջների նկատմամբ առաջնահերթությունն ապահովելուն, այդ պահանջների բավարարման համար երաշխիքային հաստատությունների ներդրմանը: Հետևաբար, չկան նաև գործուն մեխանիզմներ՝ ուղղված Կոնվենցիայով ամրագրված դրույթների իրագործմանը, ինչի հետևանքով անձինք փաստացի զրկվում են իրենց իրավունքներն իրացնելու հնարավորությունից:

**Այդպիսով օրենսդրությամբ սահմանափակվում են աշխատողների պահանջների՝ որպես ապահովված պահանջների բավարարման Կոնվենցիայով ամրագրված հնարավորություններն ու պետության հանդիպակաց պարտավորությունները:**

Քննարկվող խնդրի ուսումնասիրությունների շրջանակներում պարզ է դարձել, որ մի շարք այլ երկրներ ևս վավերացրել են Կոնվենցիան մասամբ կամ ամբողջովին. մի մասը Կոնվենցիայով պարտավորվել է սահմանել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման արտոնյալ կարգ, մի մասը՝ ստեղծել երաշխիքային հաստատություններ, մի մասն էլ՝ երկուսը միասին:

Այսպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունը<sup>98</sup>, Ուկրաինայի Հանրապետությունը միայն Կոնվենցիայի 2-րդ բաժնի պարտավորություններն են ընդունել, որով պարտավորվել են և համապատասխանաբար սահմանել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման արտոնյալ կարգ: Ավելին, չնայած Ուկրաինան պարտավորություններ չի ստանձնել

<sup>97</sup> Տե՛ս «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» հանձնարարական, ընդունվել է 1992 թվականին, հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100\\_INSTRUMENT\\_ID:312518:NO](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=NORMLEXPUB:12100:0::NO:12100:P12100_INSTRUMENT_ID:312518:NO) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>98</sup> Տե՛ս Ռուսաստանի Դաշնության «Սնանկության մասին» օրենք, ընդունվել է 26.10.2002թ., հասանելի է <http://www.consultant.ru/cons/cgi/online.cgi?from=372105-0&req=doc&rnd=Q4nqvA&base=LAW&n=406292#hRMQ6yS0yXP2NHds> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



Կոնվենցիայի 3-րդ բաժնով, այն ձեռնարկել է քայլեր երաշխիքային հաստատությունների ստեղծելու նպատակով<sup>99</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նույնիսկ այն պետությունները, որ չեն վավերացրել «Գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանության մասին» կոնվենցիան, նախատեսում են գործատուի անվճարունակության դեպքում աշխատողների պահանջների պաշտպանությունը երաշխիքային հաստատությունների միջոցով: Օրինակ, Միացյալ Թագավորության «Աշխատանքային իրավունքների մասին» ակտի 182-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատողի պահանջները բավարարվում են Ազգային երաշխիքային հիմնադրամի հաշիվներից<sup>100</sup>:

Ասվածի կապակցությամբ պետք է նաև նշել, որ Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի գործատուի անվճարունակության դեպքում աշխատողի պաշտպանության մասին 2008/94/ԵՀ հրահանգով<sup>101</sup> ևս ընդգծվել է երաշխիքային հաստատությունների ստեղծման անհրաժեշտությունը: Նույն հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն՝ **մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկեն երաշխիքային հաստատությունների կողմից, նույն հրահանգի 4-րդ հոդվածին համապատասխան, աշխատողների աշխատանքային պայմանագրից կամ աշխատանքային հարաբերություններից բխող չբավարարված պահանջների՝ ներառյալ ազգային օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում արձակման վճարի, բավարարման երաշխավորումն ապահովելու ուղղությամբ:**

Ելնելով Սնանկության ոլորտի օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի շարունակական կատարելագործման անհրաժեշտությունից՝ գործատուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման օրենսդրական խնդիրներն ու դրանց վերաբերյալ Պաշտպանի դիտարկումները տեղ են գտել նաև ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի<sup>102</sup> վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում, ՀՀ արդարադատության նախարարությանը հասցեագրված՝ սնանկության ոլորտի մի շարք հարցերի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշման մեջ. դրանցում ևս ներկայացվել են աշխատանքային հարաբերություններից բխող

<sup>99</sup> Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիաների և առաջարկությունների կիրառման վերաբերյալ փորձագետների հանձնաժողովի 2012 թվականին Ուկրաինային ուղղված ուղիղ հարցում հասանելի է [https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100\\_COMMENT\\_ID:3081258](https://www.ilo.org/dyn/normlex/en/f?p=1000:13100:0::NO:13100:P13100_COMMENT_ID:3081258) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>100</sup> Տե՛ս Միացյալ Թագավորության «Աշխատանքային իրավունքների մասին» ակտ, ընդունվել է 1996 թվականին, հասանելի է <https://www.legislation.gov.uk/ukpga/1996/18/section/182?fbclid=IwAR3zdL9H-WSPD7P762blwBUSSlLh7Y3y7jPHJB1sZOk9YI5iMSiKQAXoSQA> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>101</sup> Տե՛ս Եվրոպական խորհրդարանի և Եվրոպական խորհրդի 2008 թվականի հոկտեմբերի 22-ի գործատուի անվճարունակության դեպքում աշխատողի պաշտպանության մասին 2008/94/ԵՀ հրահանգ, հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/ALL/?uri=CELEX%3A32008L0094> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>102</sup> Տե՛ս ««Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ, հասանելի է <https://www.e-draft.am/projects/2014/about> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

պարտավորությունների բավարարման առաջնահերթության ամրագրման անհրաժեշտությունն ու պետության նկատմամբ պարտավորությունների գերակայության անթույլատրելիությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների՝ անհրաժեշտ է՝

1. օրենսդրորեն ամրագրել գործադուի սնանկության պարագայում աշխատողների աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման առաջնահերթ կարգը, որով կբացառվի աշխատանքային հարաբերություններից բխող որևէ պահանջի ստորադասումը,

2. ներդնել աշխատանքային հարաբերություններից բխող պահանջների բավարարման համար երաշխիքային հաստատություններ:

## ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածով սահմանվել է կրթության իրավունքը՝ որպես անձի հիմնական իրավունք, իսկ 15-րդ հոդվածով ամրագրվել է, որ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Կրթության իրավունքն ամրագրված է նաև ՀՀ վավերացրած մի շարք միջազգային պայմանագրերով՝ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպության «Կրթության բնագավառում խտրականության դեմ» կոնվենցիայով, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի միջազգային կոնվենցիայով, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ՄԱԿ-ի դաշնագրով և այլն: ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է, ի թիվս այլնի, ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները (4-րդ նպատակ):

Կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որի ապահովումն ունի կարևոր նշանակություն նաև անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Ոլորտի ուսումնասիրությունները վկայում են, որ կրթության տարբեր մակարդակներում դեռևս առկա են կրթության իրավունքի ապահովման հետ կապված օրենսդրական և գործնական խնդիրներ: Անհատական բողոքների քննարկման և մշտադիտարկման աշխատանքների իրականացման արդյունքում արձանագրվել են կրթության իրավունքի սահմանափակման համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են կրթության իրավունքի լիարժեք իրացումը:

### **1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձումը**

2021 թվականին շարունակվել է չլուծված մնալ հանրակրթական ուսումնական հաստատություններում դասագրքերի օգտագործման համար ներդրումային գումարների գանձման խնդիրը, որն արձանագրվել էր Մարդու իրավունքների պաշտպանի 2018-2020 թվականների տարեկան հաղորդումներով:

Պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների չորրորդից բարձր դասարանների աշակերտների դասագրքերի տրամադրման համար պարտադիր պայման է դրանց օգտագործման դիմաց աշակերտների ծնողների (օրինական ներկայացուցիչների) կողմից դասագրքերի ներդրումային գումարների վճարումը՝ համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի՝ 2009 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու, հանրակրթական առարկաների դասագրքերը հրատարակելու և հանրակրթության պետական չափորոշչին դասագրքերի համապատասխանության գնահատման առարկայական հանձնաժողովների ձևավորման կարգը հաստատելու մասին» N 752-Ն հրամանի հավելվածի 5-րդ կետի: Պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում պետական բյուջեի միջոցների հաշվին անվճար ապահովվում են միայն առաջինից չորրորդ

դասարանի աշակերտների՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերը:

Ավելին, ներդրումային վճարների վերաբերյալ խոցելի խմբերի երեխաների դասագրքերի համար որևէ բացառություն նախատեսված չէ: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման, պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերում կատարվող վերաբաշխումների կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների, ըստ աշակերտների թվի, ֆինանսավորման իրականացման բանաձևը, որում ներառված է նաև սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարի համար փոխհատուցվող գումարի չափը: Ըստ այդմ՝ հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը քննարկվում և ձևավորվում է հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում, որը հաստատվում է տնօրենի կողմից:

Սակայն իրավական ակտերով նախատեսված չեն այն հստակ չափանիշները, սկզբունքները և փաստերը, որոնց հաշվառմամբ պետք է ընտրվեն ծրագրի շահառու երեխաները: Գործող իրավական ակտերի կիրառողներին նշված չափանիշների բացակայության արդյունքում առաջացած լայն հայեցողությունը գործնականում առաջացնում է տարբեր խնդիրներ: Երեխաների սոցիալական կարիքների գնահատումը փաստորեն իրականացվում է երկակի չափորոշիչների հիման վրա, հնարավոր է, օբյեկտիվ հիմնավորումների չափանիշների բացակայության և թերի կարգավորումների արդյունքում:

Բացի լայն հայեցողությունից, խնդրահարույց են ներդրումային գումարների չվճարելու արտոնությունից օգտվելու հարցի շուրջ մոտեցումները: Խնդիրը այն է, որ արտոնությունից օգտվելու հարցը կարող է հանգեցնել խտրական վերաբերմունքի նույնիսկ ուսումնական հաստատության անձնակազմի կողմից, ինչի պատճառով երեխաները կամ նրանց ընտանիքները հաճախ խուսափում են այդ արտոնությունից օգտվելու մասին բարձրաձայնելուց: Մեկ այլ խնդիր է միասնական չափորոշիչների բացակայության արդյունքում սոցիալական նույնանման պայմաններում ապրող երեխաների խտրականության ենթարկվելը, քանի որ հստակ չափորոշիչների բացակայության հետևանքով ստացվում է, որ հանրապետության տարբեր ուսումնական հաստատություններում ներդրումային գումարների գանձումը կարող է տարբեր կերպ իրականացվել հանրապետության տարբեր բնակավայրերում:

Անվճար միջնակարգ կրթության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 15-րդ հոդվածով, որի համաձայն՝ պետությունը խթանում է կրթության և գիտության զարգացումը: Ավելին, ՀՀ Սահմանադրության՝ անձի հիմնարար իրավունքներն ամրագրող 2-րդ գլխի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար

է:

Ճանաչելով անվճար միջնակարգ կրթության իրավունքը և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ, դրա բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսելով վճար՝ օրենսդրական որևէ տարանջատում չի սահմանվում խոցելի խմբերի երեխաներին դասագրքերով ապահովելու վերաբերյալ: Ավելին, դասագրքերով սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովելու առկա ծրագրային միջոցների իրականացմամբ ավելանում է առանձին խումբ երեխաների առանձնացումը հասակակիցներից և խոցելիությունը՝ հանգեցնելով խտրական վերաբերմունքի: Խնդրի առնչությամբ պետք է նշել, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է, ի թիվս այլնի, ապահովել կրթության բոլոր մակարդակներում կրթության հավասար հասանելիությունը խոցելի խմբերի անձանց, մասնավորապես, հաշմանդամություն ունեցող մարդկանց, համայնքաբնակ (indigenous) անձանց և խոցելի վիճակում գտնվող երեխաների համար<sup>103</sup>:

Խնդրի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2017 թվականին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան, որի արդյունքում ՀՀ սահմանադրական դատարանը 2018 թվականի հունիսի 12-ի ՍԴՈ-1419 որոշմամբ հայտնել է, որ պետությունը պարտավոր է երաշխավորել սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար դասագրքերի հասանելիությունն ապահովող բավարար որոշակի, թափանցիկ և հավասարության վրա հիմնված ընթացակարգեր: Ավելին, Սահմանադրական դատարանը ևս ընդգծել է սոցիալապես անապահով ընտանիքների սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը սահմանելու անհրաժեշտությունը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանը դիրքորոշում է հայտնել, որ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում փոխհատուցման կարգը խնդրահարույց է դասագրքերի հասանելիությունը երաշխավորելու առումով առնվազն երկու պատճառով: Նախ՝ նշված կարգը չի հստակեցնում ընտանիքի՝ «սոցիալապես անապահով» կարգավիճակ ձեռք բերելու և այդ կարգավիճակով պայմանավորված՝ դասագրքերն անվճար կամ էականորեն նվազեցված գնով հասանելիությունն ապահովելու հստակ ընթացակարգեր: Երկրորդ՝ մարդու հիմնական իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը և կառուցակարգերը՝ տվյալ դեպքում սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը, պետք է ամրագրվեն օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով:

2020 թվականի մարտի 6-ին ընդունված ««Հանրակրթության մասին» օրենքում լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասում լրացում կատարել, որի համաձայն՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի իրավասությունն է, ի թիվս այլնի, հաստատել Հայաստանի Հանրապետության ուսումնական

<sup>103</sup> ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներ, 4.5 նպատակ:

հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը:

Իբրև դրական առաջընթաց կարող ենք նշել, որ 2021 թվականի նոյեմբերի 29-ին ընդունվել է «ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանը ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009 թվականի օգոստոսի 21-ի N 752-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 81-Ն հրամանը, որով հաստատված հավելվածի 7-րդ կետով սահմանվել է, որ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված կամ պետության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերում ընդգրկված ընտանիքների սովորողներին հատկացվող դասագրքերի համար ներդրումային գումարների փոխհատուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից՝ «Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում» ծրագրի շրջանակներում: Հաստատության սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների ցուցակը կազմվում է Հաստատության մանկավարժական և ծնողական խորհուրդների համատեղ նիստում և հաստատվում տնօրենի կողմից:

Արդյունքում, գրեթե ամբողջ 2021 թվականի ընթացքում խնդիրը շարունակել է մնալ չկարգավորված, քանի որ օրենքով սահմանված կարգով ենթաօրենսդրական մակարդակում դրա լուծմանն ուղղված կարգը սահմանվել է միայն 2021 թվականի նոյեմբերի 29-ին:

Խնդիրը 2022 թվականի ընթացքում ևս շարունակելու է մնալ Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո՝ պրակտիկայում դրա իրավաչափ կիրառման ապահովման տեսանկյունից:

Ստացվում է, որ Սահմանադրական դատարանի դեռևս 2018 թվականի հունիսի 12-ին հայտնած դիրքորոշումը, համաձայն որի՝ սոցիալապես անապահով ընտանիքի սովորողներին դասագրքերի անվճար հասանելիությունն ապահովելու կարգը պետք է ամրագրի օրենքով և ի կատարումն այդ օրենքի ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, 2021 թվականի ընթացքում, ինչպես նախորդ տարիներին, չի իրականացվել:

Ճանաչելով անվճար միջնակարգ կրթության իրավունքը և ամրագրելով ՀՀ-ում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական պարտադիր կրթությունը՝ կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ բաղկացուցիչ մասը կազմող դասագրքերի համար նախատեսված վճարն առանց խոցելի խմբերի երեխաների համար որևէ տարանջատման օրենսդրական այս թերության վերացման հարցը պետք է լուծում ստանա հրատապության կարգով, քանի որ այն անմիջականորեն առնչվում է յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքին, սոցիալական արդարությանը և այլ հիմնահարցերին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *ապահովել «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 26.13-րդ կետով ամրագրված Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունները դասագրքերով ապահովելու կարգը սահմանող ենթաօրենսդրական ակտի պատշաճ և իրավաչափ կիրառումը պրակտիկայում:*

## 2. Ջրի և սանիտացիայի հասանելիության հարցը նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում

2017 թվականին նախաձեռնվել էր նախադպրոցական ուսումնական, հանրակրթական ուսումնական, ինչպես նաև երեխաների խնամք իրականացնող հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների ուսումնասիրման ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ գործող իրավական դաշտը, կատարվել են այցելություններ և մշտադիտարկումներ նշված հաստատություններում ջրի և սանիտարական պայմանների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով:

Կատարված մշտադիտարկումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույց<sup>104</sup>, որում ներկայացվել են մշտադիտարկման արդյունքում վեր հանված ջրի և սանիտացիայի հասանելիության վիճակը, բացերը և խնդիրները և դրանց հաղթահարման համար առաջնահերթությունները:

Այս խնդիրը տարիներ շարունակ բարձրաձայնվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներում<sup>105</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման ընթացքում արձանագրված և արտահերթ հրապարակային զեկույցում առավել մանրամասն ներկայացված հիմնական խնդիրները հանգում են հետևյալին:

Արտահերթ զեկույցին հաջորդիվ՝ 2020 թվականի ընթացքում մշտադիտարկման այցերի ընթացքում վեր են հանվել փաստեր, որոնք վկայում են ջրամատակարարման բացակայության մասին: Մասնավորապես, մշտադիտարկված 121 դպրոցից շուրջօրյա խմելու տնտեսական հոսող ջրով ապահովված են եղել 105-ը, իսկ մնացած 16 դպրոցից 1-ի (Սյունիքի մարզի) ներսում ջուր չկա, իսկ մյուս դպրոցում 3 օրը մեկ անգամ գրաֆիկով (Սյունիքի մարզի), իսկ 14 դպրոցում տրվում է ժամային գրաֆիկով: Օրինակ, Սյունիքի Խնածախ համայնքի միջնակարգ դպրոցում կատարված այցելության ընթացքում դպրոցի վարչակազմի կողմից ստացվել է տեղեկություն առ այն, որ դպրոցի համար խմելու ջուրը բերվել է մոտակա աղբյուրից, իսկ երեք օրը մեկ անգամ տրվում է խմելու համար անախտան ջուր (խողովակների հին լինելու պատճառով ջրի գույնը և համը փոխված են լինում), որը հավաքվելով բաքերում, օգտագործվում է սանհանգույցներում: Բացի աղբյուրից բերվող

<sup>104</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/1c2de2c4d7e5715dd0fe05676136de73.pdf> հղումով:

<sup>105</sup> Հասանելի են <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> (էջեր 151-156), <https://ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> (էջեր 195-202), <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> (էջեր 285-295) հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ջրից, երեխաները նաև սեփական շշերով են ջուր բերում դպրոց: Զուրը գրաֆիկով է հասանելի նաև, օրինակ՝ Երևան քաղաքի թիվ 90 դպրոցում՝ առավոտյան 10-ին և երեկոյան ժամերին, Վայոց ձորի մարզի Գլաձոր համայնքի դպրոցում՝ յուրաքանչյուր օր առավոտյան 8:30-ից մինչև 14:00-ն, Վերնաշենի դպրոցում՝ 9:00-ից 12:00-ն:

Ընդ որում, ի տարբերություն քաղաքային համայնքների, գյուղական համայնքներում խնդիրն առավել նկատելի է: Այսպես, ջրամատակարարումը բացակայում է բացառապես մարզային դպրոցներում (օրինակ՝ Արագածոտնի մարզի 15 դպրոցում, Գեղարքունիքի մարզի 13 դպրոցում, Շիրակի մարզի 12 դպրոցում)<sup>106</sup>: Նշվածը չափազանց խնդրահարույց է և ներկայացնում է ընդհանուր պատկերը Երևանում և մարզերում գործող հաստատությունների վերաբերյալ: Ստացվում է, որ Երևանում սովորող երեխաները մշտապես կարող են օգտվել խմելու հոսող ջրից, մինչդեռ, մարզերում ջրի հասանելիության ապահովման համար կիրառվում են տարբեր մեթոդներ (հաճախ նաև անձնական միջոցների հաշվին):

Նշված խնդրի հետ մեկտեղ, հարկ է նշել նաև, որ ուսումնասիրված մի շարք դպրոցներում ջուրն անհասանելի էր ծորակների ոչ սարքին լինելու կամ դրանց բացակայության պատճառով: Ավելին, ուսումնասիրության ընթացքում հանդիպել են այնպիսի դեպքեր, երբ ամբողջ դպրոցում առկա է եղել ընդամենը մեկ ծորակ, ինչը բավարար չի կարող համարվել ջրի հասանելիության իրավունքի իրացման տեսանկյունից:

Ավելին, գործող օրենսդրությամբ բացակայում են նախադպրոցական ուսումնական հաստատությունների, մասնավորապես՝ համապատասխան շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ՝ ի տարբերություն հանրակրթական ուսումնական հաստատությունների:

Դիտարկվել են նաև խմելու նպատակով ջրի օգտագործման եղանակները: Ուսումնական հաստատություններում խմելու ջրի հասանելիությունն ունի կենսարար նշանակություն: Հատուկ ուշադրության է արժանի այն, թե ինչպես են երեխաներն օգտվում խմելու ջրից: Վերջինս շատ կարևոր է երեխաների շրջանում ջրով փոխանցվող բակտերիալ, վիրուսային, սնկային և մակարուծային հիվանդությունների առաջացման, դրա տարածման և ռիսկերի կառավարման տեսանկյունից<sup>107</sup>:

<sup>106</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/soc\\_vich\\_2017\\_2.pdf](https://www.armstat.am/file/article/soc_vich_2017_2.pdf) հղումով, էջ 104, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>107</sup> Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների համաձայն՝ ինֆեկցիոն բնույթի հիվանդությունների 80%-ը հիմնականում պայմանավորված է ջրային գործոնով, որը կապված է ջրամատակարարման սանիտարահիգիենիկ նորմերի խախտման և խմելու ջրի անբավարար որակական ցուցանիշների հետ: Զրի միջոցով տարածվող հիվանդությունները լինում են ինֆեկցիոն և ոչ ինֆեկցիոն: Զրամատակարարման կազմակերպման և շահագործման սանիտարական նորմերի, կանոնների խախտումը բերում է ինֆեկցիոն հիվանդությունների բռնկմանը: Զրի միջոցով տարածվում են խոլերան, որովայնային տիֆը և պարատիֆերը, դիզենտերիան, սալմոնելոզը և այլն: (Նյուֆն ամբողջությամբ հասանելի է <http://www.armwater.am/files/adb/Gap/Gender%20training%202015.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ):



Այցերի ընթացքում վեր են հանվել այնպիսի դեպքեր, երբ երեխաները ջուր խմում են միայն ցայտադրյուրից, քանի որ դա միակ հնարավորությունն է: Օրինակ, Սյունիքի մարզի միջնակարգ դպրոցներից մեկի ներսում ջուրը հասանելի չէ, ուստի երեխաները ջուր խմելու համար ստիպված են լինում օգտվել դպրոցի շենքից դուրս գտնվող ցայտադրյուրից: Նշվածը հատկապես խնդրահարույց է ձմեռային կամ ցուրտ եղանակին խմելու ջրից օգտվող երեխաների առողջության պահպանման տեսանկյունից:

Ավելին, մշտադիտարկված հաստատություններից որոշներում, թեև դպրոցի ներսում կամ հաստատության բակում առկա է եղել ցայտադրյուր, սակայն դրանք սարքին չեն եղել կամ ջուրը փակված է եղել գլխավոր փականով: Դպրոցների վարչակազմի տրամադրած տվյալների համաձայն՝ որոշ դպրոցներում երեխաներն օգտվում են բուֆետներում առկա բաժակներից, իսկ որոշ դպրոցներում տրամադրվում են մեկանգամյա օգտագործման բաժակներ: Սակայն, այցերի ընթացքում հանդիպել են դեպքեր, երբ ջուր խմելու համար նախատեսված մեկանգամյա օգտագործման բաժակներն օգտագործվելուց հետո հավաքվում, վրացվում և նորից տրամադրվում էին երեխաներին: Որոշ դպրոցներ երեխաների համար բաժակներ առհասարակ նախատեսված չեն եղել:

Մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել են խմելու ջրից օգտվելու տարբեր եղանակները: Գյուղական նախադպրոցական հաստատություններում 34% դեպքերում երեխաները ջուր են խմում ընդհանուր բաժակից, իսկ քաղաքային հաստատություններում տվյալ տոկոսային հարաբերակցությունը կազմում է 22%

Ուսումնասիրվել է նաև սանհանգույցների հասանելիությունը: Կատարված այցի և ուսումնասիրությունների արդյունքում վեր է հանվել մի իրավիճակ, երբ զուգարանակոնքերը թեև տեսողական առումով գտնվել են սարքին վիճակում, սակայն պարզվել է, որ ջրթող բաքերը գտնվել են անսարք վիճակում: Հաստատության յուրաքանչյուր հարկում աղջիկների և տղաների առնվազն մեկական սանհանգույց տեղակայված լինելու պահանջի ապահովման առնչությամբ պարզվել է, որ հետազոտությանը մասնակցած 121 դպրոցի 35% շենքերի յուրաքանչյուր հարկում ըստ սեռերի առանձնացված սանհանգույցներ բացակայում են: Այցերի ընթացքում արձանագրվել են նաև մի շարք խնդրահարույց և անթույլատրելի դեպքեր, երբ սանհանգույցներում զուգարանակոնքերը տեղադրված չեն եղել փակ խցիկներում, ինչը ևս խնդրահարույց է մարդու անձնական կյանքի անձեռնմխելիության, սեռական դաստիարակության և հոգեբանական կերտվածքի տեսանկյունից: Ներկայացվածն անընդունելի է հատկապես երեխայի լավագույն շահի տեսանկյունից: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն արձանագրել են նաև, որ հաստատությունների սանհանգույցներում զուգարանակոնքերը միմյանցից անջատված չեն եղել նույնիսկ միջնորմերով:

Առանձնացված սանհանգույցների բացակայությունը խնդրահարույց է երեխաների շրջանում առկա բռնության դեպքերի ռիսկի ավելացման տեսանկյունից: Հատկապես տարբեր տարիքային խմբերի երեխաների՝ նույն սանհանգույցից օգտագործումը կարող է ռիսկային լինել տարիքով ավելի փոքր երեխաների համար: Ավելին, բավարար իրազեկման պակասի պարագայում բռնության

տեսանկյունից կարող է չափազանց դիսկային լինել նաև դեռահաս աղջիկների և տղաների նույն սանհանգույցից օգտվելը:

Մշտադիտարկումների ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ շենքի ներսում չի գործել սանհանգույց դրսում տեղակայված լինելու պատճառով:

Խնդիրների ուսումնասիրությամբ նաև դիտարկվել է, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների մասին իրազեկվածության պակասն է հանդիսանում ուսումնական հաստատություններում ներպետական օրենսդրությամբ սահմանված պահանջների և չափորոշիչների չապահովման պատճառ: Հաստատություններում իրականացված հարցումների արդյունքները վկայում են, որ երբեմն հաստատության անձնակազմը պատշաճ կերպով իրազեկված չէ մանկական նախադպրոցական օբյեկտների կառուցվածքի, գույքով ու սարքավորումներով ապահովման վերաբերյալ նորմատիվային դրույթների և դրանց չկիրառման հետևանքով հնարավոր բացասական հետևանքների մասին:

Այսպիսով, վերոգրյալի հաշվառմամբ՝ պետության ուշադրությունն ենք հրավիրում վերը նշված խնդիրների վրա: Պետք է նկատի ունենալ, որ պետությունն ինքը պետք է նախաձեռնի և մշադիտարկման պարբերաբար աշխատանքների միջոցով հետևողական լինի Մարդու իրավունքների պաշտպանի «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցում վեր հանված խնդիրների լուծման ուղղությամբ: Ընդ որում՝ պետության կողմից զեկույցում արձանագրված խնդիրների մշտադիտարկումը պետք է մշտական գործընթաց լինի:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պետության առաջնահերթ ուշադրության առարկան պետք է լինեն նախորդ փարիներին Պաշտպանի առաջարկները՝*

1. *օրենսդրությամբ շինարարական նորմերի, ջրի որակի, անընդհատության և մատակարարվող ջրի ջերմաստիճանի, ինչպես նաև սանիտացիայի իրավական կարգավորումներ ամրագրել նաև նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար,*

2. *քայլեր ձեռնարկել ջրանջատման բացառապես բոլոր դեպքերի մասին իրական իրազեկումն ապահովելու ուղղությամբ:*

3. *մշակել հստակ ժամանակացույց մինչև ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանի ընդունումը կառուցված շենքերում ցայտադրյալի առկայությունն ապահովելու համար,*

4. *որպես միջանկյալ լուծում՝ անհրաժեշտ է ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի N 12-Ն հրամանում կարարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով հանրակրթական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների փարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել մեկանգամյա օգտագործման բաժակների նախատեսումը,*

5. *վերանայել վերոնշյալ հրամանի 9-րդ կետի պահանջը, ցայտադրյալի քանակի*

վերաբերյալ համապատասխան նորմեր նախատեսել՝ հաշվի առնելով դպրոցում երեխաների քանակը,

6. ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի N 857 հրամանում կատարել փոփոխություն՝ հստակ կարգավորումներ նախատեսելով նախադպրոցական ուսումնական հաստատությունում երեխաների կողմից խմելու ջրից օգտվելու համար՝ հաշվի առնելով վարակների տարածման ռիսկերը: Այդպիսին կարող է լինել հստակ ամրագրված նորմը, ըստ որի՝ երեխաներին կտրամադրվեն բացառապես անհատական օգտագործման այնպիսի բաժակներ, որոնք նրանց համար հեշտ փարանջատելի լինեն մյուս բաժակներից կամ մեկանգամյա օգտագործման բաժակներ,

7. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ փարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Երևանի քաղաքապետարանի կողմից ջրի և սանիտացիայի հասանելիության փորձերակված վիճակագրության վարում՝ հիմնված փորձեր չափանիշների վրա,

8. «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «www.emis.am» կայքում հասանելի դարձնել նախադպրոցական կրթական հաստատությունների վերաբերյալ տվյալները,

9. համակարգային ուսումնասիրության ենթարկել բոլոր հաստատությունների՝ (այդ թվում՝ մինչև համապատասխան նորմերի փոփոխությունը կառուցված և վերակառուցված) գործող նորմերին համապատասխանությունը,

10. մշակել գործողությունների ազգային ծրագիր՝ նախատեսելով միջոցառումներ առ այն, որ հստակ նշված ժամանակացույցում բոլոր հաստատությունները համապատասխանեցվեն գործող նորմերին,

11. գործողությունների ազգային ծրագրում ներառել նաև այլ միջոցառումներ՝ ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության բարձրացման ուղղությամբ: Ընդ որում, անհրաժեշտ է ներդնել հատուկ մեխանիզմ, որը կիրականացնի պարբերական և մշտական մշտադիտարկում՝ նորմերի յուրաքանչյուր փոփոխության պարագայում նախանշելով հաստատություններում համապատասխան գործողությունների անհրաժեշտությունը,

12. զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական ցանցերով, ինչպես նաև կրթական համակարգերի միջոցով իրականացնել իրազեկման աշխատանքներ ուսումնական հաստատությունների աշակերտների, վերջիններիս ծնողների համար՝ ջրի և սանիտացիայի, հիգիենայի կանոնների վերաբերյալ,

13. քայլեր ձեռնարկել հաստատությունների անձնակազմի շրջանում օրենսդրական պահանջների վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման ուղղությամբ,

14. հաստատություններում երեխաների համար տեղադրել իրազեկող և մարտչելի պաստառներ սանիտացիայի և հիգիենայի վերաբերյալ:

### **3. Սննդի անվտանգության ապահովումը հանրակրթական ուսումնական հաստատություններում**

Հանրապետության ուսումնական հաստատություններում սննդի անվտանգության հարցը տարիներ շարունակ բարձրացվում է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան զեկույցներում և հաղորդումներում: 2021 թվականի ընթացքում խնդիրը շարունակել է մնալ արդիական: Բանն այն է, որ հանրապետության մի շարք ուսումնական հաստատությունների սննդի կետերում վաճառվում են այնպիսի սննդատեսակներ, որոնց վաճառքն ուսումնական հաստատություններում արգելվում է: Սննդային գործոնով պայմանավորված՝ զանգվածային վարակիչ հիվանդությունների և սննդային թունավորումների առաջացման ու տարածման, ինչպես նաև զանգվածային ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով՝ ելնելով առողջ և ռացիոնալ սննդի սկզբունքից՝ ուսումնական հաստատություններում չօգտագործվող սննդամթերքը և չպատրաստվող նշված ճաշատեսակներն ու խոհարարական կերակրատեսակները սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» N 32-Ն հրամանի 26-րդ կետով:

ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի 48-րդ կետի համաձայն՝ ուսումնական հաստատության ղեկավարը սննդի կազմակերպման և դրանում սովորողներին լիարժեք ընդգրկելու պատասխանատու անձն է: Ավելին, ըստ նույն հրամանի՝ ուսումնական հաստատությունում սովորողների առողջության պահպանմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու նպատակով հաստատության ղեկավարի կողմից ապահովվում են՝ սանիտարական կանոնների առկայությունը, սանիտարական կանոնների կատարման ապահովումը և այլն:

Մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի որակի վերաբերյալ բողոքների ստացման և խնդրի շուրջ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ խնդրի վերաբերյալ բողոքներ չեն ստացել մարզպետարանները: Միաժամանակ, Երևանի քաղաքապետարանի ենթակայության ուսումնական հաստատություններում սննդի որակի և անվտանգության առնչությամբ ՀՀ սննդի անվտանգության տեսչական մարմնի կողմից ստուգում է իրականացվել թվով 3 մանկապարտեզներում: Արդյունքում փորձարկման են ենթարկվել տվյալ մանկապարտեզներում պահեստավորված կարագը և պանիրը, որոնցում հայտնաբերվել են ՄԱՖԱՄ (մեզոֆիլ աէրոբ և ֆակուլտատիվ անաէրոբ միկրոօրգանիզմներ) և ԱՑԽՄ (աղիքային ցուպիկի խմբի մանրէներ): Վտանգավոր սննդատեսակները ենթարկվել են ոչնչացման՝ սահմանված կարգով:

Սննդամթերքի անվտանգության, դպրոցականների սնուցման կազմակերպման և դպրոցականների առողջ սնուցման իրականացումը կարևոր հարցեր են երեխայի առողջ ֆիզիկական զարգացման և դասընթացներին լիարժեք մասնակցության համար:

Ուստի, վերոնշյալ իրավական ակտերով սահմանված իրավասու պետական մարմինները պետք է ապահովեն հանրակրթական ուսումնական հաստատություններում սննդի կազմակերպումը՝ «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02- 2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի N 32-Ն հրամանի պահանջների պահպանմամբ:

#### **4. Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների, ջեռուցման խնդիրներ**

2021 թվականի ընթացքում ևս արդիական են եղել ուսումնական հաստատություններում շենքային, գույքային անբավարար ու վատ պայմանների, ինչպես նաև ջեռուցման հետ կապված խնդիրները: Տարիներ շարունակ այս խնդիրները բարձրացվում են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ինչպես տարեկան հաղորդումներում ու հատուկ զեկույցներում, այնպես էլ հրապարակային այլ հայտարարություններում:

Հանրակրթական ու նախադպրոցական կրթական ուսումնական հաստատությունների շենքային ու գույքային անբավարար ու վատ պայմանների և ջեռուցման խնդիրներ են արձանագրվել Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված անհատական բողոքների քննարկման, ինչպես նաև մշտադիտարկման աշխատանքների իրականացման արդյունքում: Նշված խնդիրները տարիներ շարունակ բարձրաձայնվել են ինչպես հանրապետության տարբեր ուսումնական հաստատությունների աշակերտների կողմից Պաշտպանի աշխատակազմ պարբերաբար իրականացված այցելությունների, այնպես էլ Պաշտպանի ու աշխատակազմի ներկայացուցիչների մարզային հանդիպումների ընթացքում:

Դեռևս 2019 թվականին ուսումնական հաստատությունների շենքային և գույքային անբավարար ու վատ պայմանների խնդիրներ են վեր հանվել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության հարցի մշտադիտարկման շրջանակներում<sup>108</sup>:

Հարկ է ընդգծել, որ այս խնդիրները մտահոգիչ են ուսուցման գործընթացի կազմակերպման և երեխայի, ուսուցչական ու վարչական անձնակազմի առողջության ու կյանքի համար:

Պետք է նշել, որ շենքային և գույքային անբավարար պայմաններն իրենց մեջ ընդգրկում են ոչ միայն շենքի վթարային կարգի կամ նյութական պայմանների անբավարարության, այլ նաև դասասենյակների անհրաժեշտ կահավորման, որոշ դեպքերում մարզական դահլիճների բացակայության կամ բարեկարգության բացակայության հարցեր: Երեխաների համար հատկապես գյուղական բնակավայրերում, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող սովորողների համար

<sup>108</sup> Մանրամասն տե՛ս «Նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում ջրի և սանիտացիայի հասանելիության իրավունքի ապահովման վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը:

շենքային վատ պայմանները առավել լուրջ խնդիր են: Դպրոցական շենքերը, ներառյալ սանհանգույցները և դասասենյակները նրանց համար հաճախ անմատչելի են<sup>109</sup>: Այս խնդիրները տարիներ շարունակ բարձրացվում են տարբեր դիտարկումներով<sup>110</sup>: Ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմաններից զատ կան նաև ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման և այլ խնդիրներ:

Այսպես, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պարզաբանումների համաձայն՝ նախարարության ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում 2021 թվականի ընթացքում գույքային անբավարար պայմանների պատճառով դասապրոցեսի խաթարում չի արձանագրվել, իսկ հնամաշ գույքը հնարավորության սահմաններում փոխարինվում է նորով: Շենքային անբավարար պայմանների հետ կապված նախարարությունը նշում է, որ հիմնանորոգման ծրագրում ներառված դպրոցների երեխաները տեղափոխվել են մոտակա դպրոցներ, և երեխաների ուսումնառության հետ կապված որևէ խնդիր չի առաջացել:

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականին իրականացվել է մարզպետարանների ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային անբավարար պայմանների մշտադիտարկում, որի արդյունքում արձանագրվել են առկա հրատապ լուծում պահանջող խնդիրները:

Այսպես, Արագածոտնի մարզում դրանց լուծում տալու նպատակով Կառավարության կողմից հրատապ ծրագրերին ուղղված կապիտալ դրամաշնորհներով 10 դպրոցներում իրականացվել են տանիքների, պատուհանների և մարզադահլիճների վերանորոգման աշխատանքներ, ևս 53 դպրոցներում շենքային պայմանների բարելավմանը ուղղված աշխատանքներ են իրականացվել դպրոցներում տնտեսված գույքների հաշվին: Արարատի մարզում մշտադիտարկման արդյունքներով առաջարկություն է ներկայացվել Կառավարություն Նիզամիի, Լուսաշողի, Լանջառի, Ազատաշենի համայնքներում կառուցել մոդուլային դպրոցներ: Մշտադիտարկման արդյունքում Արմավիրի մարզում երկու դպրոցներում տեղադրվել է ջեռուցման համակարգ, երեք դպրոցներում իրականացվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ, իսկ երկու դպրոցների համար պատվիրվել է նախագծանախահաշվային փաստաթղթեր, Գեղարքունիքի մարզում նախատեսվում է 8 համայնքներում կառուցել նոր դպրոցական շենքեր, Սյունիքի մարզում՝ 2021 թվականին պետական բյուջեի միջոցների հաշվին մշտադիտարկված 23 դպրոցներից 14-ում իրականացվել են

<sup>109</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» վերտառությամբ բաժնի «Կրթության իրավունք» վերտառությամբ գլխում:

<sup>110</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՅՈՒՆԻՍԵՖ), հասանելի է <https://cutt.ly/itd6f09> հղումով, ՀՀ հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական և սանիտարահիգիենիկ պայմանների մոնիտորինգի արդյունքների զեկույցը, էջ 42, հասանելի է <https://transparency.am/files/publications/1575983241-0-311692.pdf?v=4> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

շինարարական աշխատանքներ: Մշտադիտարկման արդյունքում Լոռու, Վայոց ձորի և Տավուշի մարզերում շենքային անբավարար պայմաններով հաստատություններ չեն արձանագրվել, իսկ Կոտայքի մարզում մշտադիտարկում չի իրականացվել:

Ուսումնական հաստատություններում շենքային և կոմունալ վատ պայմանների պատճառով դասապրոցեսի խաթարման դեպքերի կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարզաբանումների համաձայն՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում մարզային ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և կոմունալ վատ պայմանների պատճառով դասապրոցեսի խաթարման դեպքեր 2021 թվականի ընթացքում չեն արձանագրվել: Իսկ Կոտայքի մարզում Աբովյանի Վ.Համբարձումյանի անվան N10 հիմնական դպրոցի կաթսայատան անսարքության հետևանքով դասապրոցեսն իրականացվել է հեռավար եղանակով, առկա անսարքությունը վերացվել է, Բալահովիտի Ի.Վիրաբյանի անվան միջնակարգ և Գառնիի Ա. Հակոբյանի անվան N1 հիմնական դպրոցներում եղել են կոմունալ (գազամատակարարման և հոսանքի) ընդհատումներ: Բալահովիտի դպրոցում կրճատվել է դասապրոցեսի տևողությունը, իսկ Գառնիում դասերը լրացվել են շաբաթ օրերի հաշվին: Խափանումները վերականգնվել են:

Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում նախադպրոցական ու հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և կոմունալ վատ պայմանների պատճառով դասապրոցեսի խաթարման դեպքեր չեն արձանագրվել:

Այս խնդրի առնչությամբ պետք է ընդգծել, որ ուսումնական հաստատությունների շենքային պայմանների բարելավման, սեյսմիկ անվտանգության խնդիրների շուրջ միջոցառումների իրականացումը ներառված է ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի մայիսի 16-ի N 650-Լ որոշման 1-ին հավելվածի 169-րդ կետում: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման համար հանրակրթական ուսումնական հաստատությունների դպրոցական գույքի նորացման, շենքային պայմանների բարելավման, միջազգային չափանիշներին համապատասխանեցման հարցերը ներառված են նաև ՀՀ Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 25-Լ N 45-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 184-Ա որոշման հավելվածով ամրագրված Երևանի զարգացման 2019-2023 թվականների հնգամյա ծրագրում:

2021 թվականի ընթացքում ևս արձանագրվել են նաև ուսումնական հաստատություններում ջեռուցման խնդիրներ: Այս մասին են վկայում ոլորտի իրավասու մարմինների պարզաբանումները:

Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պարզաբանումների՝ Արարատի մարզում ստացվել են բողոքներ Բարձրաշենի միջնակարգ դպրոցից՝ դպրոցում ցածր ջերմային ռեժիմ ապահովելու վերաբերյալ, 22 մանկապարտեզներ ջեռուցման սեզոնում չեն աշխատում: Գեղարքունիքի մարզում Թթուջրի, Լիճքի, Գավառի N 2, Լուսակունքի միջնակարգ և

Վարդենիկի N 2 հիմնական դպրոցներում առաջացել են տեխնիկական խնդիրներ, որոնք շտկվել են: Շիրակի մարզում «Մուսայեյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը դիմել է ՀՀ Շիրակի մարզպետարան ջեռուցման համակարգում առաջացած խնդիրը վերացնելու համար: Արմավիրի մարզում կան նախադպրոցական ուսումնական հաստատություններ, որոնք գործում են սեզոնային՝ ջեռուցման լոկալ համակարգի բացակայության պատճառով: Երևանում 2021 թվականի ընթացքում 3 մանկապարտեզներում (հ.հ 83, 27 և 90) առաջացել են ջեռուցման համակարգերի հետ կապված խնդիրներ, որոնք լուծվել են:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ 2021 թվականի ընթացքում քաղաքապետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում ջեռուցման խնդիրների վերաբերյալ բողոքներն ուսումնասիրվել են հանրակրթության վարչության աշխատակիցների կողմից, ըստ անհրաժեշտության՝ կրթական հաստատությունների ղեկավարներից պահանջվել են բացատրություններ, տրվել հանձնարարականներ սեղմ ժամանակահատվածում խնդիրների լուծման, ինչպես նաև ջեռուցումն ըստ եղանակային պայմանների, այլ ոչ թե որոշակի ամսաթվից սկսած ապահովելու վերաբերյալ:

Այս հարցերը խնդրահարույց են ինչպես դասապրոցեսի բնականոն ընթացքի կազմակերպման և երեխայի կրթության իրավունքի իրականացման, այնպես էլ երեխայի առողջության, անվտանգության և զարգացման համար:

Վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ դեռևս 2015 թվականին ՀՀ կառավարության թիվ 797-Ն որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը»: Ծրագրի շրջանակում նախատեսված է 46 դպրոցների ուժեղացում կամ նորերի կառուցում<sup>111</sup>:

Այսպիսով, ուսումնական հաստատությունների մշտադիտարկման արդյունքների համադրված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության հատկապես համայնքային մի շարք պետական ուսումնական հաստատությունների շենքային և գույքային պայմանների անբավարարության վիճակը դեռևս առկա է. նշվածը սպառնում է առաջացնել երեխայի կրթության իրավունքի սահմանափակումներ:

Թեև հանրակրթական դպրոցների շենքային և գույքային պայմանների խնդիրներ առկա են թե՛ քաղաքային, և թե՛ մարզային ու գյուղական դպրոցներում, սակայն ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ առավել խոցելի են այս առումով գյուղական դպրոցները<sup>112</sup>:

<sup>111</sup> Տե՛ս 2018 թվականի դեկտեմբեր 13-ի ՀՀ կառավարության նիստի օրակարգի 25-րդ հարցի հիմնավորումները, հասանելի է [https://www.e-gov.am/sessions\\_old/archive/2018/12/13/](https://www.e-gov.am/sessions_old/archive/2018/12/13/) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>112</sup> Խնդրի մասին բարձրաձայնել է նաև ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն՝ հատուկ նշելով թե՛ շենքային և գույքային անբարեկարգ պայմանների, թե՛ ջեռուցման հետ կապված խնդիրներն ու հորդորել պետությանը ներդրումներ կատարել դպրոցների ենթակառուցվածքների բարելավման նպատակով:



Ճանաչելով յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքը՝ պետության ջանքերը պետք է նպատակաուղղված լինեն յուրաքանչյուր երեխայի կրթության մատչելիության, հավասար պայմանների և հավասար հնարավորության որակի ապահովմանը: Ուստի, դպրոցի ջեռուցումը, օդափոխության և օդորակման հարմարությունները ևս կարևոր են հարմարավետ դասավանդման և ուսուցման համար:

Հարցի դիտարկումները ցույց են տալիս, որ 2021 թվականին ևս շարունակվել են չլուծված մնալ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային անբավարար պայմանների և ջեռուցման հետ կապված խնդիրները, որոնք արգելք են կրթության իրավունքի իրականացման համար:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *ավելացնել հանրակրթական ուսումնական հաստատություններում շենքային և գույքային պայմանների բարելավման համար հատկացվող ֆինանսական միջոցները,*
2. *ապահովել հանրակրթական ուսումնական հաստատություններում օդային և ջերմային ռեժիմի պահպանման պահանջների կատարումը՝ ուժեղացնելով վերահսկողությունը դրա խախտման դեպքերի բացահայտման ուղղությամբ:*

## **5. Բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում**

Բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտություն ենթադրող ցանկացած գործընթաց մշտապես գտնվել է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո, իսկ 2021 թվականի ընթացքում նման գործընթացները բազմաթիվ են եղել: Բուհերի ինքնակառավարման իրավունքի՝ որպես կրթության իրավունքի կարևորագույն բաղադրիչի երաշխավորման խնդիրը հատկապես արդիական է եղել 2021 թվականին՝ օրենսդրական

---

(Տե՛ս ՄԱԿ-ի՝ Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 3-4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 2013 թվականի մայիսի 27-ից հունիսի 14, հասանելի է <http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ):

Նման առաջարկ է արել նաև ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն՝ ընդգծելով ուսումնական հաստատությունների բարելավման համար հատկացված ֆինանսական միջոցների առավել արդյունավետ կերպով օգտագործման անհրաժեշտությունը:

(Տե՛ս ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի 2-3-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, հասանելի է [http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguQgxwB0Dv54x9D%2FtTVTtkqVIVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKIROrDzjo9z47iNYCZgmYgv27A6%2F5Jw0ZBjno1v\\_pNcA](http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=4slQ6QSmlBEDzFEovLCuW0fp9m5PoYHYLH3qkguQgxwB0Dv54x9D%2FtTVTtkqVIVcgKieaWt6S0CJmSRHd2YbUGKIROrDzjo9z47iNYCZgmYgv27A6%2F5Jw0ZBjno1v_pNcA) հղումով 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ):

փոփոխությունների և դրանցով պայմանավորված՝ գործնական մի շարք գործընթացների հետ կապված: Այդ գործընթացներին Պաշտպանի գնահատականներն արտահայտվել են Սահմանադրական դատարան դիմումներ, ինչպես նաև հատուկ կարծիք ներկայացնելու, ոլորտը կարգավորող օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացնելու միջոցով:

Այսպես, դեռևս 2020 թվականին շրջանառության էին դրվել և ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի նիստում հաստատվել «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի և հարակից 22 օրենքների նախագծերը: Դրանց վերաբերյալ ներկայացված կարծիքով Մարդու իրավունքների պաշտպանն իր սկզբունքային մտահոգություններն է հայտնել նախագծային այնպիսի լուծումների վերաբերյալ, որոնք վերաբերել են բուհի կառավարման խորհրդի ձևավորմանը<sup>113</sup>:

Մասնավորապես, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի<sup>114</sup> նախնական տարբերակով, ի թիվս այլ կարգավորումների՝ սահմանվում էր, որ բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 12 անդամից, որոնցից 1-ն՝ ուսանողության ներկայացուցիչն է, որին առաջադրում է բուհի ուսանողական խորհուրդը, 4-ը՝ բուհի հիմնական ակադեմիական կազմից են, որոնց առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, ևս 1-ը՝ բուհի հետ համագործակցող կազմակերպություններից, որոնց ներկայացուցչին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, ելնելով բուհի առանձնահատկություններից և ոլորտային ուղղվածությունից, իսկ 6 անդամին գործարարներից, կրթության, գիտության, մշակույթի կամ տնտեսության այլ ոլորտների ներկայացուցիչներից՝ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի ղեկավարը:

Նախագիծն Ազգային ժողովում ներկայացվելուց հետո ընթերցումների ընթացքում լրամշակվել է, ինչի արդյունքում բուհերի կառավարման խորհրդին վերաբերող կարգավորումները ևս փոփոխության են ենթարկվել: Արդյունքում, օրենքի նախագծով սահմանվել է, որ հանրային բուհի կառավարման խորհուրդը բաղկացած է 9 անդամից: Ընդ որում՝ բուհի կառավարման խորհրդի անդամներից 4-ին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, իսկ 5-ին՝ համապատասխան լիազոր մարմինը: Սահմանվել է նաև, որ կառավարման խորհրդի բուհի 4 անդամին նույն հոդվածով սահմանված ժամկետում չառաջադրելու կամ 4-ից պակաս առաջադրելու դեպքում կառավարման խորհրդի բուհի չառաջադրած անդամների համալրումն իրականացնում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարը:

«Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի այս նախագիծն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2021 թվականի մարտի 24-ին, որից հետո, սակայն, ՀՀ Նախագահը,

<sup>113</sup> Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ, որը հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1416> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>114</sup> Հասանելի է <https://www.e-draft.am/projects/2164> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

իրացնելով Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին և 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը, 2021 թվականի ապրիլի 22-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով վիճարկվող օրենքի՝ Սահմանադրության 28-րդ, 29-րդ և 38-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխանության հարցը: Այդ գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի օգոստոսի 2-ին կայացրել է թիվ ՍԴՈ-1608 որոշումը<sup>115</sup>, որով Բարձր դատարանում վիճարկվող օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը ճանաչել է Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին հակասող<sup>116</sup>:

Սահմանադրական դատարանում քննվող այս գործի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր հատուկ կարծիքը, որով հայտնած դիրքորոշմամբ մտահոգիչ է համարվել այն, որ վիճարկվող օրենքի կարգավորումները չեն ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը՝ որպես Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրավունքի իրացման նախադրյալ:

Նշված որոշմամբ Բարձր դատարանը սկզբունքային մի շարք մտահոգություններ է հայտնել, որոնք, սակայն, այդ որոշման կայացումից հետո շրջանառված և 2021 թվականի հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում հանրային քննարկման դրված «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով<sup>117</sup> չեն լուծվել:

Այսպես, օրինակ՝ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1608 որոշմամբ Բարձր դատարանը նշել է, որ երբ հանրային բուհի կառավարման խորհրդի անդամների մեծամասնությունը նշանակվում և ազատվում է լիազոր մարմնի ղեկավարի կողմից, խիստ պատրանքային է դառնում հանրային բուհի կառավարման խորհրդի նշանակված անդամի ինքնուրույնությունը նշանակող մարմնից: Մինչդեռ, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով բուհերի կառավարման խորհրդին վերաբերող այնպիսի կարգավորումներ են սահմանվել, որոնք կրկին բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտելու ռիսկեր են պարունակել:

Օրինակ, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նոր նախագծով սահմանվել է հանրային բուհի կառավարման խորհրդի ձևավորման նոր համամասնություն, ըստ որի՝ հանրային բուհի 12 անդամներից 6-ին առաջադրում է բուհի ակադեմիական խորհուրդը, մյուս 6-ին նշանակում է համապատասխան լիազոր մարմինը: Նախագծային նման լուծումը խնդրահարույց է այն բանի հաշվառմամբ, որ բուհերի կառավարման խորհրդի որոշումները

<sup>115</sup> Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/common/2021/pdf/sdv-1608.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>116</sup> Սահմանադրական դատարանում քննվող այս գործի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է իր հատուկ կարծիքը, որով հայտնած դիրքորոշմամբ մտահոգիչ է համարվել այն, որ վիճարկվող օրենքի կարգավորումները չեն ապահովում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը՝ որպես Սահմանադրության 38-րդ հոդվածով երաշխավորված կրթության իրավունքի իրացման նախադրյալ:

<sup>117</sup> Հասանելի է <https://www.e-draft.am/projects/3663> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կայացվում են ձայների մեծամասնության հիման վրա: Արդյունքում, ստացվում է, որ բուհի կառավարման խորհրդին վերապահված ցանկացած հարցի կապակցությամբ որոշում կայացնելիս լիազոր մարմնի կողմից նշանակված անդամների ձայներն ունենալու են վճռորոշ նշանակություն, քանի որ առանց այդ անդամներից առնվազն մեկի ձայնի հնարավոր չի լինի միայն ակադեմիական խորհրդի առաջադրած մնացած 6 անդամների ձայներով որևէ որոշում ընդունել:

Փաստորեն, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նոր, շրջանառվող նախագծով բուհի կառավարման խորհրդի ձևավորման համամասնության հավասարության պայմաններում ևս բուհի ինքնակառավարման սահմանադրական իրավունքը դառնում է խիստ պատրանքային, որպիսի խնդիրն արդեն իսկ արձանագրվել է Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1608 որոշմամբ: Ուստի, «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի նոր նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքում Մարդու իրավունքների պաշտպանն իր դիտարկումներն է ներկայացրել, որոնց համաձայն՝ անհրաժեշտ է բուհի կառավարման խորհրդի անդամների համամասնությունն այնպես բաշխել, որ լիազոր մարմնի կողմից նշանակված անդամների ձայնը որոշումների կայացման հարցում որոշիչ չլինի: Այս հրամայականը բխում է բուհի ինքնակառավարման իրավունքի պատշաճ երաշխավորման անհրաժեշտությունից:

Օրենքի նոր նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում Պաշտպանը խնդրահարույց է համարել բուհի գործունեության և զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը 2 անգամ անընդմեջ չընդունելու միջոցով բուհի ռեկտորին անվստահություն հայտնելու լիազորություն կառավարման խորհրդին վերապահելը, քանի որ այն առաջ է բերում բուհի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի պատշաճ երաշխավորման հարց: Պաշտպանը մտահոգիչ է համարել նաև հանրային բուհի ռեկտորի թեկնածուների ընտրության կարգը, ըստ որի՝ ռեկտորի թեկնածուներն ընտրվում են կառավարման խորհրդի կողմից՝ ընտրանքային կարգով վարկանիշային քվեարկությամբ: Ընտրանքային փուլին մասնակցած և փակ գաղտնի քվեարկության արդյունքում խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի կողմ ձայներ ստացած մինչև երեք թեկնածու խորհրդի որոշմամբ ներկայացվում են համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին, որն այդ կազմից նշանակում է բուհի ռեկտոր: Պաշտպանի դիտարկմամբ, նախ՝ խնդրահարույց է այն, որ քվեարկության այդ տեսակի էությունն օրենքի մակարդակում բացահայտված չէ, պարզ չէ նաև, թե առաջադրվող թեկնածուների «վարկանիշն» ինչի հիման վրա է ձևավորվելու: Մյուս կողմից՝ անառարկելի է ռեկտորի ընտրության գործընթացում գործադիր իշխանության անխուսափելի մասնակցությունը և ռեկտորի ընտրության հարցում միանձնյա որոշում կայացնելու ռիսկը, ինչը կրկին առաջ է բերում բուհերի ինքնակառավարման իրավունքի լիարժեք երաշխավորման հարց:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծը Պաշտպանին պարզաբանումներ ներկայացնելու օրվա դրությամբ (13.01.2022թ.)

ուղարկվել է Վարչապետի աշխատակազմ սահմանված կարգով ՀՀ Ազգային ժողով ներկայացնելու համար:

Բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտություն ենթադրող օրենսդրական նախաձեռնությունների շարքն այսքանով չի սպառվում: Սահմանադրական դատարանում ՀՀ Նախագահի դիմումի հիման վրա «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի և հարակից 22 օրենքների՝ Սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ գործի քննությունը դեռ չավարտված՝ ՀՀ կառավարությունը հանդես եկավ բուհերի ինքնավարությանը միջամտություն ենթադրող օրենսդրական նոր նախաձեռնությամբ:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1408-Ն, 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 138-Ն և 2016 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1031-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 704-Ն<sup>118</sup> որոշմանը, որով փոփոխություններ են կատարվել Կառավարության մի շարք այլ որոշումներում: Դրանք վերաբերել են Երևանի պետական համալսարանի, Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի և Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի հոգաբարձուների խորհրդի ձևավորմանը:

Բանն այն է, որ մինչ Կառավարության թիվ 704-Ն որոշմամբ կատարված օրենսդրական փոփոխությունները գործող կարգավորումների համաձայն՝ նշված բուհերի հոգաբարձուների խորհրդի 20 անդամները ձևավորվում էին հետևյալ համամասնությամբ. 25%-ին առաջադրում էր հիմնադիրը, 25%-ին՝ լիազոր մարմինը, 25%-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից և մյուս 25%-ը՝ ուսանողական համակազմի ներկայացուցիչներից: Մինչդեռ, կատարված փոփոխություններով այս համամասնությունը փոխվեց՝ սահմանվելով, որ հոգաբարձուների խորհրդի անդամների 55%-ին հիմնադրի անունից առաջադրում է Վարչապետը, 10%-ին՝ լիազոր մարմինը, 10%-ը նշանակվում է պրոֆեսորադասախոսական կազմից և 25%-ը՝ ուսանողական համակազմի ներկայացուցիչներից: Այսինքն՝ այս կարգավորումներով ստացվում է, որ նշված երեք բուհերում ՀՀ վարչապետի և լիազոր մարմնի կողմից նշանակված անդամները կազմելու են խորհրդի 65 տոկոսը: Սա էլ իր հերթին վկայում է, որ պրոֆեսորադասախոսական կազմից և ուսանողների կողմից ընտրված անդամների ծայները որոշումների կայացման գործընթացում որևէ դերակատարություն չեն ունենալու<sup>119</sup>:

<sup>118</sup> Այսուհետ՝ ՀՀ կառավարության թիվ 704-Ն որոշում:

<sup>119</sup> Հարկ է նկատել, որ Կառավարության թիվ 704-Ն որոշումը խնդրահարույց է ոչ միայն բովանդակային առումով, այլ դրա ընդունման ընթացակարգային նորմերի պահպանման տեսանկյունից: Մասնավորապես, թիվ 704-Ն որոշման նախագիծը e-draft.am կայքում հանրային քննարկման է դրվել 2021 թվականի ապրիլի 28-ին: Որպես հանրային քննարկման վերջնաժամկետ սահմանված է եղել 2021 թվականի մայիսի 14-ը, սակայն նախագիծն ընդունվել է դրա հանրային քննարկումը չավարտած և դրա արդյունքները դեռևս չսամփոփած՝ մայիսի 4-ին, ընդ որում՝ առանց նիստ հրավիրելու, գրավոր քվեարկությամբ:

Փաստորեն, առավել բարձր իրավաբանական ուժ ունեցող ակտի՝ օրենքի՝ Բարձր դատարանում վիճարկվելու պայմաններում ՀՀ կառավարությունը նախաձեռնել է նույն հարցի կարգավորում ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտով՝ Կառավարության որոշմամբ:

Հաշվի առնելով, որ Կառավարության թիվ 704-Ն որոշմամբ նախատեսված կարգավորումները խախտում են կրթության սահմանադրական իրավունքի կարևորագույն անքակտելի բաղադրիչը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը և կարող են հանգեցնել այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի մայիսի 10-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով Կառավարության թիվ 704-Ն որոշման համապատասխանությունը Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին և 81-րդ հոդվածին:

Սահմանադրական դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ ՍԴԱՌ-195 որոշմամբ<sup>120</sup> նշված գործի վարույթը կարճվել է՝ պատճառաբանությամբ, որ 2021 թվականի սեպտեմբերի 8-ին ընդունվել է ՀՀ կառավարության թիվ 1448-Ն որոշումը, որով քննարկվող բուհերի հոգաբարձուների խորհրդի կազմի ձևավորման համամասնությունը կրկին փոխվել է՝ հիմնադրի, լիազոր մարմնի կողմից առաջադրվող թեկնածուների, ինչպես նաև պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների ներկայացուցիչներից յուրաքանչյուրի ներկայացվածությունը սահմանվելով 25 %-ի չափով: Այդպիսով, փաստորեն, լուծվել է Սահմանադրական դատարանում վեճի առարկա դարձած խնդիրը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիմումով Սահմանադրական դատարանում քննարկման առարկա դարձած հաջորդ կարգավորումը վերաբերում է «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի այն դրույթին, որի համաձայն՝ եթե հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունների դադարման դեպքում 2-ամսյա ժամկետում հոգաբարձուների խորհրդի կեսից ավելին չի նշանակվում, ապա ՀՀ արդարադատության նախարարը 2-ամսյա ժամկետում նշանակում է 3 անդամից կազմված ժամանակավոր խորհուրդ: Ընդ որում, այդ խորհրդին վերապահվել է հոգաբարձուների խորհրդին վերապահված ողջ լիազորությունները: Խնդրահարույց է այն, որ գոյություն չունեն ժամանակավոր խորհրդի ձևավորման չափանիշներ, խորհրդի անդամներին ներկայացվող պահանջներ: Այս կարգավորման սահմանադրականության հարցը բարձրացվել է, քանի որ դրա գործնական կիրառությունն է առաջ բերել բուհական ինքնավարության սկզբունքի ոտնահարման ռիսկ:

Այսպես, գործնական օրինակով կարելի է համոզվել, որ այս չափանիշների բացակայությունն անուղղակիորեն հանգեցնում է բուհերի ինքնակառավարման իրավունքի ոտնահարմանը: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է ՀՀ արդարադատության նախարարի 2021 թվականի հունիսի 24-ի թիվ 264-Ա հրամանով ԵՊՀ-ի ժամանակավոր խորհրդի ստեղծմանը, որի անդամներն էին Մհեր

<sup>120</sup> Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-195.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Գրիգորյանը, Վահրամ Դումանյանը և Եղիշե Կիրակոսյանը: Փաստորեն, Նախարարի նշված հրամանով ձևավորված ԵՊՀ ժամանակավոր խորհրդի երեք անդամներն էլ գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչներ են եղել, նրանք բոլորն էլ գործել են երկրի գործադիր իշխանության բարձրագույն մարմնի ղեկավարի՝ ՀՀ վարչապետի ուղիղ ենթակայությամբ և իրենց բարձրաստիճան կարգավիճակի համար գտնվում են նրանից ամբողջական կախվածության մեջ<sup>121</sup>:

Այս դիսկերի հաշվառմամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածը, նախատեսելով ՀՀ արդարադատության նախարարի կողմից 3 անդամից կազմված ժամանակավոր խորհրդի ստեղծման հնարավորություն և վերջինիս գործառույթների շրջանակ, հաշվի չի առնում կրթության սահմանադրական իրավունքի կարևորագույն պարտադիր բաղադրիչը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնակառավարման իրավունքը, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը, և հանգեցնում է այդ իրավունքի անհամաչափ սահմանափակման՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի հուլիսի 15-ին դիմել է սահմանադրական դատարան: Բարձր դատարան ներկայացված դիմումով Պաշտպանը վիճարկում է օրենքի վիճարկվող կարգավորումների համապատասխանությունը Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերին, 78-րդ և 81-րդ հոդվածներին:

Սահմանադրական դատարանում գտնվող գործը քննությունը դեռ ընթացիկ փուլում է, նիստը նշանակված է 2022 թվականի փետրվարի 22-ին<sup>122</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտություն ենթադրող նկարագրված գործընթացներին Մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է տարբեր ձևաչափերով (Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելով, Սահմանադրական դատարանում քննվող գործի վերաբերյալ հատուկ կարծիք ներկայացնելով, շրջանառվող օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ դիրքորոշումներ ներկայացնելով): Ընդ որում, այդ ողջ գործընթացին Մարդու իրավունքների պաշտպանի մասնակցությունը և ձևավորած դիրքորոշումները հիմնված են եղել բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքի և բուհական ինքնավարության վերաբերյալ միջազգային-իրավական հետևյալ չափանիշների հիմքում:

Այսպես, Եվրոպական համալսարանների ասոցիացիան, անդրադառնալով բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությանը, նշում է, որ **ուսումնական հաստատությունների կառավարման մարմինները քննարկում և որոշում են երկարաժամկետ**

<sup>121</sup> ՀՀ վարչապետի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատվել է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կազմը: Գործող կարգի համաձայն՝ հոգաբարձուների խորհրդի 20 անդամներից 5-ն առաջադրվել է հիմնադրի անունից, 5-ը՝ լիազոր մարմնի, 5-ը՝ պրոֆեսորադասախոսական կազմից և ևս 5-ը՝ ուսանողության կողմից:

<sup>122</sup> Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-255.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ռազմավարական հարցեր, ինչպիսիք են՝ կանոնադրություններն ու բյուջեն, ինչպես նաև ակադեմիական հարցեր, օրինակ՝ ուսումնական ծրագրերն ու առաջխաղացումները: Եթե այդ մարմիններում ընդգրկվում են նաև այնպիսի անդամներ, որոնք չեն ներկայացնում ուսումնական հաստատությունը և ներգրավված են հիմնարար ինստիտուցիոնալ որոշումների ընդունման հարցերում, կարևոր է, որ բուհերն իրենց խոսքն ասեն վերջիններիս նշանակման հարցում<sup>123</sup>:

Համալսարանների միջազգային ասոցիացիայի «Ակադեմիական ազատությանը և համալսարանի ինքնավարությանը սպառնացող վտանգների մասին» վերլուծության համաձայն՝ **պետությունների պարտականությունը ոչ թե համալսարաններին վերահսկելն է, այլ կարգավորելն ու հաշվետվողականության և ինքնավարության հավասարակշռությունը երաշխավորելը:** Միևնույն ժամանակ, համալսարանական ղեկավար կազմը պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ինքնավարությունը չպետք է օգտագործվի որպես պատրվակ բարձրագույն կրթության հաստատությունների դասախոսական կազմի իրավունքները սահմանափակելու համար<sup>124</sup>:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) «Բարձրագույն կրթության ոլորտում կառավարման և որակի ուղեցույցների» համաձայն՝ **արտաքին կառավարման համակարգի կողմից միջամտության մակարդակը կարող է սահմանափակել ինստիտուցիոնալ ինքնավարությունը, այն կարող է ազդել ակադեմիական ազատության վրա և ստիպել հաստատություններին կայացնել որոշումներ, որոնք հակասում են իրենց ինքնությանը կամ զարգացման ռազմավարությանը:** Բարձրագույն կրթության կարևոր ներդրումը սոցիալական համախմբվածության և տնտեսական աճի գործընթացում պահանջում է, որ բոլոր կառավարությունները սահմանեն համընդհանուր ռազմավարություն բարձրագույն կրթության համակարգի համար<sup>125</sup>:

Եվրոպայի Խորհուրդը «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» վերտառությամբ իր 2015 թվականի վերլուծական աշխատանքում նշել է, որ Հայաստանում պետք է մշակել բարձրագույն կրթությանը վերաբերվող նոր առաջնային օրենք, որով **պետք է ամրապնդվի բուհերի պատշաճ ինքնավարությունը՝ ներառելով կառավարության տարանջատումը բուհերի կառավարումից՝ հատկապես բուհերի կառավարման մարմինների անդամակցության մասով**<sup>126</sup>: ՀՀ կառավարությունը պետք է հարգի

<sup>123</sup> Հասանելի է <https://www.university-autonomy.eu/dimensions/organisational/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>124</sup> Հասանելի է [https://iau-aiu.net/IMG/pdf/iau\\_horizons\\_vol.22.2.pdf](https://iau-aiu.net/IMG/pdf/iau_horizons_vol.22.2.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>125</sup> Հասանելի է <https://www.oecd.org/education/imhe/46064461.pdf> հղումով, էջ 72, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>126</sup> Հասանելի է <https://rm.coe.int/16804895e7> հղումով, էջ 5, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



բուհերի պատշաճ ինքնավարությունը ոչ միայն նոր օրենսդրության ընդունման ժամանակ, այլև իր հետագա քաղաքական գործունեության ընթացքում<sup>127</sup>:

Հայաստանում տեղի ունեցող բարձրագույն կրթության բարեփոխումների շրջանակում Համաշխարհային բանկն իր 2013 թվականի զեկույցում անդրադարձել է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարմանը: Զեկույցում քննարկվել է Հայաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ կառավարման շրջանակներում դրանց կազմակերպչական ինքնավարության հարցերը: Մասնավորապես, Զեկույցի 40-րդ կետի համաձայն՝ **կառավարությունը, ընտրելով բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ներկայացուցչության մեծամասնությանը, ներգործում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կառավարման վրա**<sup>128</sup>:

Նույն Զեկույցի 39-րդ կետում Համաշխարհային բանկը հանգել է եզրահանգման, ըստ որի՝ բարձրագույն ուսումնական հաստատության մարմիններին վերաբերող կանոններն ուշադիր ուսումնասիրելիս կբացահայտվի կառավարության ճնշող ներկայությունը համալսարանի ղեկավարման և կառավարման մեջ՝ վտանգելով համալսարանի ինքնավարությունը:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 13-րդ համընդհանուր մեկնաբանության 40-րդ կետի համաձայն՝ ակադեմիական ազատությունը պահանջում է բարձրագույն կրթության հաստատությունների ինքնավարություն: **Ինքնավարությունն ինքնակառավարման այն աստիճանն է, որն անհրաժեշտ է բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից արդյունավետ որոշում կայացնելու համար՝ կապված նրանց ակադեմիական աշխատանքի, ստանդարտների, կառավարման և դրանց հետ կապված գործունեության հետ**<sup>129</sup>:

Բուհերի ինքնավարության հարցի կապակցությամբ ուշագրավ են նաև արտասահմանյան երկրների սահմանադրական դատարանների որոշումներում արտահայտված դիրքորոշումները: Այսպես, Մոլդովայի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2014 թվականի հունիսի 3-ի թիվ 19a/2014 որոշմամբ քննարկման առարկա է դարձել «Կրթության մասին» օրենքի այն նորմի սահմանադրականությունը, որի ուժով Մոլդովայի Հանրապետության Նախագահին առընթեր ուսումնական հաստատության ղեկավորը, ինչպես նաև Մոլդովայի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Պաշտպանության նախարարության և Տեղեկատվական ծառայության

---

<sup>127</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>128</sup> Հասանելի է <https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/16531/776690WP0P127300governance000final.pdf?sequence=1&isAllowed=y> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>129</sup> Հասանելի է <https://www.refworld.org/pdfid/4538838c22.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ու անվտանգության նախարարության ենթակայության բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորները նշանակվում են համապատասխան մարմինների կողմից<sup>130</sup>:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է բարձրագույն ուսումնական հաստատություններին վերաբերող օրենսդրական նախաձեռնություններում բացառել բուհերի ինքնակառավարման սահմանադրական իրավունքին միջամտություն ենթադրող ցանկացած կարգավորում և նախագծային ցանկացած լուծում:*

---

<sup>130</sup> Հասանելի է [https://www.constcourt.md/public/ccdoc/hotariri/ru-h\\_19\\_2014\\_ru.pdf](https://www.constcourt.md/public/ccdoc/hotariri/ru-h_19_2014_ru.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

## ԳԼՈՒԽ 5.ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջությունը, որպես մարդու իրավունք, երաշխավորված է բազմաթիվ միջազգային և ազգային փաստաթղթերում: Մարդու իրավունքների վերաբերյալ մեծ թվով միջազգային պայմանագրեր և ազգային սահմանադրություններ իրենց բնորոշ հատուկ ձևակերպումներով առողջությունը սահմանում են որպես մարդու իրավունք: Նման դրույթներն արտահայտում են պետությունների պատասխանատվությունն առողջապահության բնագավառում՝ առողջությունը դիտելով անձի իրավունք կամ պետությունների համար նախատեսելով որոշակի պարտավորություններ:

Առողջության իրավունքը տնտեսական, սոցիալական, ինչպես նաև մշակութային հայեցակետեր ունի: Իր բնույթով այս իրավունքը տնտեսական և սոցիալական է, քանի որ նրա նպատակն է ապահովել, որ մարդը առողջական առումով սոցիալական և տնտեսական անարդարությունների զոհ չդառնա:

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքին համապատասխան առողջության պահպանման իրավունքը: Պետությունը պետք է ստեղծի պայմաններ անձի առողջությունը պաշտպանելու համար և կրի նաև սեփական պատասխանատվություն այս առումով:

2021 թվականի ընթացքում առողջության պահպանման իրավունքի երաշխավորման նպատակով ձեռնարկվել են գործողություններ, որոնք դրական արդյունքների են հանգեցրել: Կարևոր է Պաշտպանի հաստատության ինստիտուցիոնալ հիմքեր ունեցող համագործակցությունը Առողջապահության նախարարության և առանձին բժշկական հաստատությունների հետ: Այնուհանդերձ, առողջության պահպանման իրավունքի արդյունավետ և լիակատար իրացման համար եղել են խոչընդոտներ, որոնք ստորև նկարագրված են: Նշվածը չի հետապնդում բուժաշխատողների մասնագիտական ձեռնահասությունը գնահատելու նպատակ, այլ հետապնդում է համակարգային խնդիրների վերհանում և դրանց լուծման ուղիների բացահայտում:

Մարդու իրավունքների պաշտպանին 2021 թվականին հասցեագրած բողոքներով մարդիկ բարձրացրել են մի շարք, մասնավորապես՝ բուժօգնության մատչելիության, անհասանելիության, դեղորայք չստանալու, դրանց որակի և այլնի վերաբերյալ հարցեր:

### **1. Պեղծության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով իրականացվող բուժօգնության նկատմամբ վերահսկողության իրականացումը**

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի համաձայն՝ բնակչության բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ առողջապահական բնագավառում լիցենզիայի պայմանների և պահանջների նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է առողջապահության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը:

ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունն ու

սպասարկումն իրականացվում է ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

Այդ որոշման համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդանոցային ու արտահիվանդանոցային, հանրային առողջապահական և առողջապահական հարակից ծառայությունների դիմաց փոխհատուցված միջոցների նպատակային օգտագործման ու բժշկական օգնության որակի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը:

Ստացվում է, որ պացիենտն իրավունք ունի իր ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանության համար դիմել ՀՀ առողջապահության նախարարություն: Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության նկատմամբ հսկողություն իրականացնում է Առողջապահության նախարարության առանձնացված ստորաբաժանումը՝ Պետական առողջապահական գործակալությունը:

ՀՀ կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1301-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարության պետական առողջապահական գործակալության կանոնադրությունը: Կանոնադրության համաձայն՝ գործակալության նպատակներից ու խնդիրներից է առողջապահական պետական նպատակային ծրագրերով նախատեսված պետական պատվերի միջոցով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար ՀՀ պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական միջոցների արդյունավետ ու նպատակային օգտագործման ապահովումը: Գործակալությունն իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է բժշկական օգնություն իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին համապատասխանության վերահսկում:

Պաշտպանին տարիներ շարունակ հասցեագրվող բողոքները վկայում են, որ բուժօգնության որակի և ծավալի նկատմամբ վերահսկողությունը պատշաճ չի իրականացվում: Որպես կանոն, պացիենտները մասնավոր բժշկական կենտրոնների, ինչու չէ նաև մարզպետարանների ենթակայության կենտրոնների բժիշկներից, նրանց բուժօգնությունից բողոք ունենալու դեպքում դիմում են Առողջապահության նախարարություն, մարզպետարաններ, սակայն արդյունքի չեն հասնում:

Օրինակ՝ բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ պետական պատվերի շրջանակներում ստացիոնար բուժօգնություն է ստանում բժշկական կենտրոնի նյարդաբանական բաժանմունքում: Շնչառական գանգատներ ունենալուց հետո կատարվել է ԼՈՒԲ բժշկի խորհրդատվություն, որից հետո նշանակվել է դեղորայք, որոնք բաժանմունքում իրեն չեն տրամադրվում: Ինքն էլ գումար չունի դրանք գնելու համար: Բողոքի շրջանակներում դիմողին պարզաբանվել է, որ նշանակված դեղորայքը պետք է տրամադրվի անկախ հայտնաբերված ախտորոշումից, քանի որ այն ընդգրկվում է տրամադրվող բուժօգնության ծավալի մեջ (ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. դեկտեմբեր 18-ի N 4484-Լ հրաման): Այնուհետև բուժող

բժշկին առաջարկվել է քայլեր ձեռնարկել դեղորայքը տրամադրելու ուղղությամբ, որից հետո խնդիրը կարգավորվել է:

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ 12-ամյա որդուն ախտորոշման ճշտման նպատակով «Արաբկիր» բժշկական համալիրում գննելուց հետո ուղղորդել են վիտամին Դ և Մանթուի մաշկային փորձ հետազոտություններ անցնելու: Դրանք իրականացվել են վճարովի (12.000 դրամ) հիմունքներով: Պաշտպանի աշխատակազմում քաղաքացուն տեղեկացվել է, որ Մանթուի փորձն ընդգրկված է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում արտահիվանդանոցային կարգով առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող հաստատություններում իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների տեսակների ցանկում:

Մյուս բողոքով քաղաքացին հայտնել է, որ հայրը գրեթե մեկ ամիս գտնվում է «Արմենիա» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքում: Ըստ դիմողի՝ տրամադրվող բուժօգնությունն անարդյունք է, ավելին՝ բժշկի նշանակած դեղամիջոցների պատճառով հայրը կոմատոզ վիճակում է, որը բնորոշվում է գիտակցության կորստով: Նշված խնդրով դիմել է Առողջապահության նախարարություն, սակայն նախարարությունը պատշաճ չի արձագանքել: Բողոքի շրջանակներում դիմողին պարզաբանվել է, որ Պաշտպանը բուժօգնության որակը գնահատելու իրավասություն չունի: Միևնույն ժամանակ իրազեկվել է այն մասին, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կապակցությամբ կարող են դիմել իրավապահ մարմիններին քրեական գործ հարուցելու (կամ չհարուցելու) նպատակով («Քրեական օրենսգրքի 130-րդ հոդված»): Սրա հետ մեկտեղ դիմողը բժշկի, ինչպես նաև բժշկական հաստատության ընտրության իրավունք ունի, ուստի առաջարկվել է բուժող բժշկի հետ քննարկել նման առողջական վիճակի պարագայում այլ բժշկական կենտրոն տեղափոխելու նպատակահարմարությունը:

Մեկ այլ օրինակով էլ փախստականի կարգավիճակ ունեցող անձը տեղեկացրել է, որ ՍԻՀ. ՁՓ-ի սրտամկանի ST սեգմենտի էլևացիայով ստորին պատի սուր ինֆարկտ ախտորոշմամբ տեղադրվել է մեկ դեղապատ ստենտ: Նրա տեղեկացմամբ՝ կատարված բուժօգնության համար վճարել է 1.075.000 ՀՀ դրամ գումար: Ստենտավորումը չի իրականացվել պետական պատվերի՝ սրտի անհետաձգելի վիրահատական (stent for life) ծառայության շրջանակում, քանի որ դիմողը չի ունեցել ՀՀ քաղաքացիություն: Բողոք ներկայացրած անձը դիմել է և բժշկական կենտրոնի ղեկավար կազմին, և Առողջապահության նախարարություն, սակայն արդյունքի չի հասել:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանը գրություններ է հասցեագրել Նախարարություն՝ պարզաբանելով, որ սրտի անհետաձգելի վիրահատական (stent for life) ծառայությունից կարող են օգտվել բնակչության բոլոր խմբերը:

Համաձայն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման՝ ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված ծառայությունների շրջանակներում պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման իրավունքից օգտվում են բնակչության բոլոր խմբերը՝

սրտամկանի սուր ինֆարկտի անհետաձգելի վիրահատական (կորոնար անոթների ստենտավորում) բուժման դեպքերում: Նշված իրավակարգավորումից հետևում է, որ ստենտավորման ծառայությունից անվճար օգտվելու համար փախստականի կարգավիճակ ունեցող անձի՝ սոցիալապես անապահով և առանձին խմբերի ցանկում ընդգրկված լինելը պարտադիր պայման չէ:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ տարածքում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն օգտվելու ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացիների համար սահմանված սոցիալական ծառայություններից, մասնավորապես՝ ստանալու պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում, եթե նրանք բավարարում են տվյալ ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները:

Բողոք ներկայացրած անձի (փախստականի) ախտորոշումը համապատասխանում էր օրենսդրության պահանջներին, մինչդեռ Նախարարությունը հրաժարվում էր փախստականի իրավունքի ապահովման իրացումից: Պաշտպանի աջակցությամբ խնդիրը լուծվել է. վճարված գումարը բժշկական կենտրոնը վերադարձրել է:

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ լիազոր մարմնի պատշաճ հսկողության և ստուգումների դեպքում հնարավորինս կբացառվեն բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով անորակ և թերի բուժօգնության դեպքերը:

*Ելնելով վերոգրյալից և վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներով կատարած առաջարկները՝ անհրաժեշտ է՝*

1. *բժշկական կենտրոններում ուժեղացնել հսկողությունը՝ բժշկական օգնություն իրականացնողների կողմից պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքների որակի և ծավալի՝ սահմանված չափանիշներին անհամապատասխանությունը բացահայտելու, ֆինանսական միջոցների նպատակային, արդյունավետ և թափանցիկ բաշխման ապահովման համար,*

2. *ձեռնարկել համապատասխան միջոցներ խախտումներ հայտնաբերելու դեպքում դրանք հնարավորինս բացառելու նպատակով:*

## **2. Պալիատիվ բուժօգնությունը**

Պալիատիվ բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է յուրաքանչյուր անձի, ով ունի կյանքին վտանգ սպառնացող կամ շարունակական և (կամ) կյանքը սահմանափակող հիվանդություններ, նպատակ ունի մեղմելու պացիենտի ցավը և հիվանդության հետ կապված

Ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրները՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով<sup>131</sup>:

Այս կարգավորման կյանքի անշեղ կոչման, ինչպես նաև պալիատիվ բուժօգնության և դրա ամբողջական ներդրման հարցն ունի կարևոր նշանակություն, ուստի տարիներ շարունակ գտնվում է Մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև հասարակական և միջազգային մի շարք կազմակերպությունների ուշադրության ներքո:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N-1978 որոշմամբ հաստատվել է պալիատիվ բուժօգնության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներ: Մասնավորապես, նշված որոշման 2-րդ հավելվածի 51-րդ կետով նախատեսվում է բարձրացնել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին հանրային իրազեկվածությունը՝ զանգվածային լրատվության, տեղեկատվական նյութերի միջոցով հանրային իրազեկման աշխատանքներ կազմակերպվելով և պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման հարցերի վերաբերյալ քարոզարշավներ իրականացնելով: Նույն հավելվածի 52-րդ կետով նախատեսվում է իրականացնել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ (այդ թվում՝ ոլորտի իրավակարգավորումների) շարունակական կրթական ծրագրեր՝ բուժաշխատողների և ուսանողների համար՝ բուժհաստատություններում և ուսումնական հաստատություններում:

Առողջապահության նախարարությունից, սակայն, տեղեկացրել են, որ 2021 թվականի ընթացքում ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ չեն իրականացվել:

Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ (այդ թվում՝ ոլորտի իրավակարգավորումների) շարունակական կրթական ծրագրերի իրականացումը և այդպիսով կարողությունների և պրոֆեսիանալիզմի բարձրացումն ուղիղ համեմատական է տրամադրվող ծառայության որակին, պացիենտի իրավունքների իրացման ապահովմանը: Ուստի խնդրահարույց է այն, որ չեն կրթական ծրագրերի իրականացումը կանգնում է և չի ունենում հստակ պարբերականություն և շարունակականություն, տարեցտարի ներառելով ավելի լայն շրջանակներ:

Ըստ նախարարության՝ պալիատիվ բուժօգնության ծառայության ներդրման, շարունակական զարգացման և ծառայության հասանելիության ապահովման նպատակով 2021 թվականին պալիատիվ բժշկական օգնության գծով պետական պատվեր է տեղադրվել շուրջ 17 բժշկական հաստատություններում: 2021թ. դրությամբ Երևանում և մարզերում պալիատիվ բուժօգնության

<sup>131</sup> ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 45-Ն հրաման <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=132500>

ծառայություն են մատուցում շուրջ 30 արտահիվանդանոցային և հիվանդանոցային հաստատություններ:

2021 թվականին ԱՆ Պրոֆ. Ռ.Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոնն ՓԲԸ-ում բացվել է Հայաստանում առաջին մանկական պալիատիվ (ամոքիչ) խնամքի կլինիկան:

2021 թվականի դրությամբ արտահիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի բժշկական կազմակերպությունների կողմից: Հիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու համար պետական պատվեր տեղադրված է Վայոց ձորի մարզի «Վայքի բուժմիավորում» ՓԲ ընկերությունում:

Պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարությանն ու պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման զարգացման ռազմավարության միջոցառումների շրջանակներում Արյունաբանական կենտրոնում գործարկվել է Մանկական քաղցկեղի պալիատիվ ծառայությունը և պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնության բաժանմունք՝ 5 մահճակալ, ապահովված է համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով:

Հաշվի առնելով ոլորտում դրական տեղաշարժերը, այնուամենայնիվ պետք է փաստել, որ հանրապետության ոչ բոլոր մարզերում է իրականացվում արտահիվանդանոցային պալիատիվ բժշկական օգնություն և սպասարկում:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

*1. շարունակել պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման մասին հանրային իրազեկվածության աշխատանքները և բուժաշխատողների համար պալիատիվ բժշկական օգնության և սպասարկման, ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ շարունակական կրթական ծրագրերի իրականացումը,*

*2. շարունակել ընդլայնել պետական պատվերի շրջանակներում արտահիվանդանոցային և հիվանդանոցային պայմաններում պալիատիվ բուժօգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների ցանկը:*

### **3. Բժշկական օգնության հասանելիության և մատչելիության խնդիր**

ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուր անձի՝ առողջության պահպանման իրավունքը: Նույն հոդվածով սահմանված են նաև անվճար բուժօգնության հիմքերը. օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

Անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման տեսակներն ու ծավալները սահմանվում են ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով, կառավարության կողմից հաստատվող ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերով, ինչպես նաև



ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ: Այս որոշմամբ կարգավորվել են պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բնակչությանը տրամադրվող առողջապահական ծառայությունների և տեսակների ցանկի, ֆինանսավորման, հիվանդների հերթագրման, ուղեգրման և մի շարք այլ հարցերի հետ կապված իրավահարաբերություններ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին Պաշտպանին քաղաքացիները բողոքներ են ներկայացրել անհրաժեշտ բուժօգնությունը թանկարժեք լինելու և բավարար ֆինանսական միջոց չունենալու պատճառով բուժօգնության չդիմելու կամ դիմելու պարագայում մերժվելու վերաբերյալ: Վերջիններս դիմելով Պաշտպանին՝ խնդրել են աջակցել ցուցված բուժօգնությունն անվճար ստանալու հարցում: Բողոքներ են ներկայացրել ինչպես սոցիալական որևէ կարգավիճակ ունեցող, այնպես էլ այդպիսի կարգավիճակ չունեցող անձինք:

Բողոքները վերաբերել են նաև դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններից օգտվել չկարողանալուն:

ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 20-ի N 53-Ն հրամանով հաստատվել է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ և դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների տրամադրման չափորոշիչը և ցանկը: Չափորոշիչը կարգավորում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների կազմակերպման և իրականացման հետ կապված հարաբերությունները: Հատուկ ու դժվարամատչելի են համարվում այն բժշկական հետազոտությունները, որոնք ՀՀ տարածքում ունեն տարածքային առումով անբավարար հասանելիություն, ընդգրկված չեն Առողջապահության նախարարի կողմից հաստատված առողջության առաջնային պահպանում իրականացնող բժշկական կազմակերպություններում ամբողջ բնակչության համար անվճար իրականացվող լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների փաթեթում:

Հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ըստ բժշկական ցուցումների իրականացվում են՝

ա) բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված շահառուներին,

բ) բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններով և տուբերկուլոզ ախտորոշում ունեցող բոլոր պացիենտներին,

գ) բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց, ում սահմանված կարգով ուղեգիր է տրամադրվել ՀՀ տարածքում տեղակայված պոլիկլինիկական բժշկական օգնություն տրամադրող կազմակերպություններում մշտական գործող ուղեգրող հանձնաժողովների կողմից:

Ընթացիկ տարում ստացվել են բողոքներ բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններ ունեցող քաղաքացիներից, ովքեր հայտնել են իրենց մտահոգությունն ախտորոշիչ հետազոտությունները պետության կողմից

երաշխավորված անվճար պայմաններով չիրականացվելու վերաբերյալ: Մինչդեռ, հատուկ ու դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունները բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված չարորակ նորագոյացություններով բոլոր պացիենտներին ըստ բժշկական ցուցումների իրականացվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով:

Այստեղ խնդիրն այն է, որ գործող չափորոշիչի համաձայն՝ բժշկական կազմակերպության տնօրենի կողմից ուղեգրումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ պացիենտը ստացիոնար բուժման մեջ է: Նա հիմնականում վճարում է մինչև պետական պատվերով հիվանդության պատմագրի բացումը:

Օրինակ՝ բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ մոր մոտ հայտնաբերվել է չարորակ ուռուցք: Հետագա բուժօգնության տեսակը կազմակերպելու համար անհրաժեշտ են մի քանի հետազոտություններ, մասնավորապես ԿՏ, իմունոկիստալոգիա, որոնց համար դիմել են Վ. Ա. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն, որտեղ էլ առաջարկվել են այդ ծառայությունները վճարովի սկզբունքով:

Ստացվում է, եթե պացիենտը չի գտնվում ստացիոնար բուժման մեջ, ապա ախտորոշիչ հետազոտությունները չեն կարող իրականացվել անվճար սկզբունքով, քանի որ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2019թ. հունվարի 10-ի N 20-Ա հրամանի՝ սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց համար ամբուլատոր պայմաններում (լաբորատոր-գործիքային հետազոտություններ) ախտորոշումն իրականացվում է վճարովի սկզբունքով, որոնցից էլ շատ պացիենտներ հրաժարվում են ծառայությունը մատչելի չլինելու պատճառով:

ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. փետրվարի 21-ի N 457-Ա հրամանով հաստատված է բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով բժշկական կազմակերպություններ ուղեգրող հանձնաժողովի ձևավորման և գործունեության մեթոդական ուղեցույցը:

Այդ ուղեցույցով կարգավորվում են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններ ուղեգրող կենտրոնական մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Բժշկական ցուցումների առկայության դեպքում, համապատասխան բժիշկ-մասնագետների կողմից տրված եզրակացության հիման վրա Հանձնաժողովն ուղեցույցին համապատասխան տրամադրում է՝ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով:

Օրինակ՝ 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել է բողոք այն մասին, որ Հանձնաժողովը մերժել է ուղեգրի տրամադրումը դրա քանակն սպառված լինելու պատճառով: Դիմողը մասնավորապես նշել էր, որ ամուսինը 44-օրյա պատերազմի մասնակից է: Մարտական գործողությունների ընթացքում ձեռք է բերել առողջական խնդիրներ: Այժմ առաջացել է վիրահատական միջամտության անհրաժեշտություն, որն անվճար իրականացնելու համար

տեղական ինքնակառավարման մարմնից ստացել են միջնորդություն, որն էլ ներկայացրել են պոլիկլինիկա, սակայն մերժել են ուղեգիր տրամադրել չափաքանակն ավարտված լինելու հիմնավորմամբ:

Այստեղ խնդիրն այն է, որ պոլիկլինիկան 44-օրյա պատերազմի մասնակցին դիտարկել է որպես բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձ: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2004թ. N 318-Ն որոշման մեջ 2020թ. հոկտեմբերի 1-ին կատարվել է լրացում (N 1625-Ն), համաձայն որի՝ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով: Տուժած անձն օգտվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնությունից և սպասարկումից սահմանված ծավալներով, այդ թվում՝ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից:

Պաշտպանի աշխատակազմի և պոլիկլինիկայի ղեկավարի համագործակցության արդյունքում խնդիրը լուծվել է, քաղաքացին ուղեգրով վերաբերյալ՝ տարվա մեջ արդեն մեկ անգամ այն ստացած լինելու պատճառաբանությամբ: Հանձնաժողովը պացիենտին տեղեկացնում է, որ ուղեգրերը սահմանափակ են, ուստի կարող են տրամադրել հաջորդ տարի: Մինչդեռ, առկա է ցուցում տարին 2-3 անգամ անհրաժեշտ հետազոտությունն անցնելու, արդյունքում էլ ֆինանսական միջոց չունենալու պատճառով բուժօգնության չեն դիմում, ինչն էլ հանգեցնում է հիվանդության բարդացումների: Ստացվում է պետության աջակցությունը թերի է, իսկ արդեն ստացած բուժօգնությունը դառնում է անիմաստ:

Բուժօգնության մատչելիության հետ կապված 2021 թվականին բողոք է արձանագրվել «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հեմոդիալիզի բաժանմունքում բուժօգնություն չստանալու վերաբերյալ: Խնդիրն այն է, որ այստեղ պացիենտները հեմոդիալիզ են ստանում հերթագրման սկզբունքով, քանի որ համապատասխան սարքավորումներն անբավարար են և հնամաշ: Բողոք ներկայացրած անձի նկատմամբ սահմանված է 2-րդ խմբի հաշմանդամություն: Քրոնիկ երիկամային անբավարարություն ախտորոշմամբ պայմանավորված՝ շաբաթը երեք անգամ վերջինս ենթարկվում է հեմոդիալիզի, որի համար ստիպված է այցելել Երևան, որտեղ հասնելու համար ամեն անգամ 8000 դրամ է ծախսում: Հավելել է, որ եկամուտը միայն իր և կնոջ կենսաթոշակներն են, որը միասին կազմում է 90.000 դրամ:

Պաշտպանին Արմավիրի մարզպետարանից տեղեկացրել են, որ 2011 թվականից գործում է հեմոդիալիզ բաժանմունքը, որտեղ բուժումն ապահովող ջրի մաքրման սարքերը՝ Օսմոսները (RO-3000 DWA ֆիրմայի) մաշվածության պատճառով բազմաթիվ անգամ ենթարկվել են վերանորոգման, որի թույլ հզորության հետևանքով բաժանմունքն ավել հիվանդ ընդունելու հնարավորություն չունի: Ներկայում հեմոդիալիզի բաժանմունքում բուժում են ստանում թվով՝ 16 հիվանդ և ևս 20 հիվանդ հերթագրվել են՝ հետագայում բուժումը տվյալ կենտրոնում շարունակելու նպատակով:

Մարզային տարածքում խնդրի կարգավորման կապակցությամբ պարզաբանվել է, որ ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ պայմանավորվածություն է ձեռք բերվել մոտակա ժամանակահատվածում «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ն հետադարձ Օսմոսի համակարգն ապամոնտաժելու և «Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ում մոնտաժելու նպատակով, որի արդյունքում բժշկական կազմակերպությունը հնարավորություն կունենա ևս 13 հիվանդ ընդունելու:

Նույն հարցի կապակցությամբ Նախարարությունն այլ տեղեկություն է հայտնել. ՀՀ Արմավիրի մարզպետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ «Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության հեմոդիալիզի բաժանմունքի գործունեությունը վերսկսելու նպատակով 2021 թվականի դեկտեմբեր ամսին հայտարարվել է սարքի ձեռք բերման մրցույթ, որի իրականացումից հետո սարքը ձեռք կբերվի և կվերսկսվի բաժանմունքի աշխատանքը:

Ուսումնասիրությունների արդյունքում բուժօգնության հասանելիության խնդիր է արձանագրվել սահմանամերձ համայնքներում և գյուղական բնակավայրերում: Մասնավորապես, ՀՀ Սյունիքի բնակավայրերն իրար կապող ճանապարհներին ադրբեջանական բացարձակ անհիմն, այսպես կոչված, սահմանային ու մաքսային վերահսկողության պատճառով բնակիչները բախվել են բազմաթիվ խնդիրների:

Որոտանում, օրինակ՝ բնակիչները տարբեր բժշկական հարցերի համար պայմանավորվածություններ ունեն բուժհաստատություններում, բայց ժամերի տարբերության կամ ճանապարհի դժվարանցանելիությամբ պայմանավորված՝ չեն կարողանում սահմանված ժամերին հասնել բժշկի:

Խնդրահարույց է հրատապ բուժօգնության հասանելիությունը: Հատկապես առկա է շտապ բժշկական օգնության հասանելիության խնդիր: Այս հարցն արդիական է նաև այն պատճառով, որ սահմանամերձ բնակավայրերում (Գորիս-Որոտան-Շուռնուխ-Բարձրավան) ապրում են տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, որոնց առողջության պահպանումը հատկապես պահանջում է հրատապ ու արդյունավետ արձագանք, դեղորայքի արագ մատակարարում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արագ հոսպիտալացում: Կան դեպքեր, երբ մարդիկ չեն կարողանում ներկայանալ պլանային բուժհետազոտությունների՝ ճանապարհի խոչընդոտների պատճառով. այդ ճանապարհն անանցանելի է թեթև մարդատար ավտոմեքենաների և անգամ դժվարանցանելի ամենագնաց ավտոմեքենաների համար:

Ստացվել են նաև բողոքներ COVID-19 համավարակով պացիենտներից հոսպիտալացում չկազմակերպելու վերաբերյալ: Եղել են դեպքեր, երբ մի քանի օր շարունակ վարակված անձը չի կարողացել հիվանդանոցային բուժօգնություն ստանալ բժշկական հաստատություններում ազատ մահճակալ չլինելու պատճառով, արդյունքում առողջական վիճակը գնալով վատթարացել է: Նման պարագաներում Պաշտպանի աշխատակազմը դիմել է առողջության առաջնային պահպանման օղակներին, ինչպես նաև հիվանդների տեսակավորման կենտրոնին՝ առաջարկելով հնարավոր սեղմ ժամկետում կազմակերպել հոսպիտալացումը: Պետք է նշել, որ սակավ դեպքերում է հաջողվել խնդրի լուծումը:

Բազմաթիվ են եղել բողոքները (այդ թվում՝ բժիշկներից) հիվանդների տեսակավորման կենտրոն կապ հաստատել չկարողանալու, COVID-19 համավարակով հոսպիտալացված պացիենտներից

օրեր շարունակ տեղեկություն ստանալ չկարողանալու, ինչպես նաև պացիենտների հարազատներից դեղորայք պահանջելու, անուշադիր վերաբերմունքի հետ կապված:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ առողջապահական ծառայությունների անմատչելիությունը, անհասանելիությունն իր բոլոր դրսևորումներով բնակչության (հատկապես սոցիալապես անապահով խավերի) շրջանում առաջացնում է նաև հոգեբանական արգելք՝ առողջության մասին լուրջ չմտածելու և առողջապահական համակարգին հնարավորինս քիչ դիմելու առումով: Հատկապես ցածր եկամուտ ունեցողները խուսափում են առողջապահական ծառայություններից օգտվել:

Խնդրի լուծումը երկրում առողջության համապարփակ բժշկական ապահովագրության համակարգ ունենալն է, որին պետք է անցում կատարվի փուլային կարգով ֆինանսական դեֆիցիտ չառաջանալու ակնկալիքով: Պետության կողմից առաջարկվող փաթեթը պետք է լինի իսկապես որակյալ և ապահովի մարդու առողջության համար անհրաժեշտ հիմնական ծախսերը: Քաղաքացին չպետք է զրկվի բուժօգնություն ստանալու հնարավորությունից ֆինանսական միջոց չունենալու պատճառով:

Այս հարցի վերաբերյալ ըստ ՀՀ առողջապահության նախարարության հայտնած տեղեկության՝ Նախարարությունում ստեղծված հանձնաժողովի կողմից 2021 թվականի ընթացքում մշակվել է առողջության համապարփակ ապահովագրության ներդրման հայեցակարգը և կատարվել են աշխատանքներ համակարգի ներդրման ֆինանսական գնահատականի, հիմնական ծառայությունների փաթեթի կազմման, ապահովագրվող բնակչության խմբերի սահմանման, անհրաժեշտ ծախսերի հաշվարկման ուղղությամբ: Հայեցակարգի նախագիծը քննարկվել է շահագրգիռ գերատեսչությունների հետ, ինչպես նաև ներկայացվել է հանրային քննարկմանը: 2021 թվականի դեկտեմբերին հայեցակարգի նախագիծը ներկայացվել է Վարչապետի աշխատակազմ: Շարունակվում են համակարգի ներդրման աշխատանքները:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. *քայլեր ձեռնարկել չարորակ նորագոյացություններ ունեցող բոլոր քաղաքացիների ախտորոշիչ հետազոտությունները (այդ թվում՝ ամբուլատոր պայմաններով) պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով իրականացնելու ուղղությամբ,*

2. *քննարկել բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց համար տրամադրվող ուղեգրերի չափաքանակի ավելացման հնարավորությունը,*

3. *հնարավոր սեղմ ժամկետում ներդնել Առողջության համապարփակ բժշկական ապահովագրության համակարգ,*

4. *անհապաղ քայլեր ձեռնարկել սահմանամերձ բնակավայրերի բնակիչների առողջության առաջնային պահպանման օղակը հասանելի դարձնելու ուղղությամբ:*

#### **4. Շտապ օգնության ծառայության հասանելիության խնդիր**

Ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ շտապօգնության ծառայության վատ աշխատանքի մասին: Ստացված ահազանգերով քաղաքացիները դժգոհել են, որ հաճախ շտապօգնության աշխատակիցներն ուշանում են կամ, առհասարակ, հրաժարվում են կանչ ընդունել, կամ պարզապես 1-03 դիսպետչերական ծառայություն կապ չեն կարողանում հաստատել: Նրանք ահազանգերով տեղեկացրել են, որ, օրինակ՝ վարակված են կորոնավիրուսով կամ ունեն սիրտ-անոթային խնդիրներ, սուր-շնչառական հիվանդություններ ու վնասվածքներ: Սրանք այն հիմնական խնդիրներն են, որոնց համար մարդիկ դիմում են շտապօգնության աշխատակիցներին՝ անհետաձգելի բուժօգնություն ստանալու ակնկալիքով:

Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է Երևանի քաղաքապետարանի թեժ գծին ուղղված 1 բողոք՝ շտապ օգնության կանչը սահմանված ժամկետում չիրականացնելու վերաբերյալ: Դեպքի օրը «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ից պահանջվել է գրավոր բացատրագիր՝ քաղաքացու բողոքի վերաբերյալ: Ըստ բացատրագրի՝ տրված կանչը գրանցելուց հետո կարգավարը զգուշացրել է պացիենտին կանչի հնարավոր ուշացման մասին՝ պատճառաբանելով, որ կանչերի քանակը կտրուկ ավելացել է և քաղաքացուն կսպասարկեն առաջին իսկ բրիգադի ազատվելուն պես: Շուրջ 30 րոպե հետո վերոնշյալ քաղաքացին զանգահարել է 1-03 դիսպետչերական ծառայություն և հրաժարվել է կանչից: Այնուհետև 15 րոպե անց կրկին զանգահարել և խնդրել է կանչ գրանցել: Կանչը սպասարկվել է մեկ ժամ հետո, ավտորոշվել է «Հիպոտոնիա» /արյան ցածր ճնշում/:

Ըստ քաղաքապետարանի հայտնած տեղեկության՝ 2021 թվականի ընթացքում Երևանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն ռեսուրսների անբավարարություն չի ունեցել: Շտապ օգնության ծառայության պատվիրատու՝ պետական առողջապահական գործակալությունը ֆինանսական հատկացումներն իրականացրել է պայմանագրային ծավալներին և ժամանակացույցին համապատասխան: Ներկա դրությամբ Երևանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն վարորդների պահանջարկ չունի: Թվով 53 բրիգադներում ներգրավված են 165 վարորդներ:

Հասկանալի է, որ առողջապահության ոլորտում ողջ աշխարհում մեծագույն մարտահրավեր էր կորոնավիրուսային հիվանդությունը (COVID-19), ինչով էլ պայմանավորված մեծ է շտապ օգնության կանչերի թիվը: Դրա տարածումը և իրավիճակի աննախադեպությունը ստիպում է ձեռնարկել հրատապ միջոցառումներ այդ մահաբեր հիվանդությունը կանխարգելելու, առողջապահական համակարգը գերծանրաբեռնվածությունից զերծ պահելու, հանրության առողջության պաշտպանությունը պատշաճ կերպով իրականացնելու նպատակով:

Առկա իրավիճակն ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի բացասական ազդեցություն է ունեցել առողջության պահպանման իրավունքի վրա: Ուստի, ստեղծված իրավիճակում առողջապահական համակարգերի առաքելությունն է սահմանափակ ռեսուրսների պայմաններում առավելագույն կյանքեր փրկելը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. բարելավել և ներդնել հավելյալ հեռախոսահամարներ՝ շտապ օգնության հեռախոսահամարներն անխափան գործելու նպատակով,
2. շտապ դեպքերի կանչերի համար շարունակաբար ավելացնել շտապօգնության բրիգադների և մեքենաների թիվը:

## **5. Սկրինինգային հետազոտությունները Հայաստանում**

Սկրինինգային հետազոտությունները կանխարգելիչ միջոցառումներ են, որոնք ուղղված են հիվանդությունների վաղ հայտնաբերմանը՝ նախքան որևէ ախտանշանի ի հայտ գալը: Ախտորոշման համար մեծ դերակատարություն ունեն բժշկական ծառայությունների մատչելիությունն ու հասանելիությունը, ինչպես նաև որակը, բնակչության շարունակական կրթումը և սկրինինգային ծրագրերը:

Ողջունելի է, որ ՀՀ առողջապահության նախարարությունը 2015թ. իրագործել է մի շարք ծրագրեր: Առողջության առաջնային պահպանման օղակում 2015թ. հունվարի 1-ից իրականացվում են սկրինինգային ծրագրեր՝ ուղղված արգանդի վզիկի քաղցկեղի, զարկերակային գերճնշման, շաքարային դիաբետի վաղ հայտնաբերմանը, ինչպես նաև սոցիալական փաթեթի շահառուների տարեկան կանխարգելիչ բժշկական քննություններ:

Նախատեսված ծրագրերից օգտվելու համար շատ կարևոր է բնակչության շրջանում հաճախ և ուսանելի իրազեկումների իրականացումը, քանի որ հիվանդության բուժումը վաղ փուլերում շատ ավելի արդյունավետ է և դյուրին: Հիվանդության վաղ ախտորոշումը ոչ պակաս կարևոր է նաև հետազոտությունների և բուժօգնության ծախսատարության տեսակետից և՛ պետության, և՛ պացիենտի համար:

Բողոքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բնակչության մի մասը տեղեկացված չէ սկրինինգային ծրագրերի գոյության մասին, տեղեկացված չեն, որ այդ ծրագրերով նախատեսված հետազոտություններից կարող են օգտվել պոլիկլինիկաներում՝ անվճար սկզբունքով:

Նախարարության պարզաբանմամբ՝ Հայաստանի Հանրապետությունում Եվրասիական կայունացման և զարգացման հիմնադրամի (ԿԶԵՀ) միջոցներից ֆինանսավորվող «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 2021 թվականի հունվարի 19-ից Լոռու մարզում իրականացվում են կրծքագեղձի մամոգրաֆիկ անվճար հետազոտություններ: Ծրագրի շրջանակներում շարժական մամոգրաֆը տեղակայվում է ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերի բոլոր քաղաքներում և 50-69 տարեկան կանայք հնարավորություն ունեն անցնել կրծքագեղձի մամոգրաֆիկ անվճար հետազոտություն: 2021 թվականի ընթացքում շարժական մամոգրաֆը սպասարկել է Վանաձոր քաղաքի, Գուգարքի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների բժշկական կազմակերպություններին կցագրված 50-69

տարեկան կանանց: 2022 թվականի հունվարի 3-ից շարժական մամոգրաֆը գործում է Տաշիրի պոլիկլինիկայի տարածքից, այնուհետև փետրվար ամիսն կտեղափոխվի Ալավերդի քաղաք: 2022 թվականի ապրիլ ամսին շարժական մամոգրաֆը կտեղափոխվի ՀՀ Տավուշի մարզ, որտեղ կտեղակայվի մարզի բոլոր քաղաքներում, որից հետո կուղևորվի ՀՀ Սյունիքի մարզ: 2021 թվականի ընթացքում իրականացվել է արգանդի պարանոցի քաղցկեղի սքրինինգային ծրագիր՝ 30-60 տարեկան կանանց շրջանում:

Բնակչությանը նախատեսված ծրագրերի իրագրելման կապակցությամբ Առողջապահության նախարարությունը տեղեկացրել է, որ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» 5222-ԱՄ վարկային ծրագրի շրջանակներում ուղարկվել են SMS հաղորդագրություններ 3 բջջային օպերատորների բոլոր բաժանորդներին, ինչպես նաև ամենօրյա աշխատանք է կատարվել ԱԱԴ բժշկական կազմակերպությունների անձնակազմի հետ՝ տրամադրելով կատարողականի ցուցանիշները:

Բացի այդ, «Առողջապահության առաջնային օղակում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկման կատարելագործում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում տպագրվել են պաստառներ և տեղեկատվական թռուցիկներ կանանց տրամադրելու համար, տեղեկատվական և գովազդային նյութեր են տեղադրվում տարբեր տեղեկատվական հարթակներում, սոցիալական ցանցերում: Շուրջ 15.000 անվանական նամակ-հրավերներ են ուղարկվել Վանաձորի տարածաշրջանում բնակվող 50-69 տարեկան կանանց:

Սկրինինգային ծրագրերի ավելացում նախատեսելու վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ 2022 թվականին զարկերակային գերճնշման, շաքարային դիաբետի և արգանդի պարանոցի քաղցկեղի վաղ հայտնաբերման և կանխարգելման նպատակով իրականացվող սկրինինգային հետազոտությունները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի շրջանակներում: Կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշման Հավելված 1-ով հաստատված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի» «Առողջապահության նախարարություն» բաժնի 5.1 կետով նախատեսվում է կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սկրինինգային ծրագրի ներդրում:

Ըստ Նախարարության՝ ԿԶԵՀ կողմից ֆինանսավորվող կրծքագեղձի քաղցկեղի կանխարգելման նպատակով իրականացվող մամոգրաֆիայի սքրինինգային ծրագիրը կշարունակվի նաև 2022 թվականին ՀՀ Տավուշի և ՀՀ Սյունիքի մարզերում:

Այսպիսով, սկրինինգային ծրագրերը մասամբ ապահովում են բժշկական ծառայությունների հասանելիությունը հատկապես սոցիալապես անապահով բնակչության շրջանում, ուստի կարևոր է ընթացիկ սկրինինգային ծրագրերի շարունակական իրականացումը հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման և հիվանդացության նվազեցման համար:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. *սկրինինգային ծրագրին մասնակցելու, առողջ ապրելակերպի խթանման և ռիսկային գործոնների կանխարգելմանն ուղղված հանրային իրագրելման քարոզարշավի շարունակական իրականացում,*



2. *տարեցտարի ավելացնել կանխարգելման և առողջության ամրապնդման ծրագրերը:*

## **6. Անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության հետ կապված խնդիր**

Առաջնային բժշկական օգնությունը՝ որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը երաշխավորվում է պետության կողմից: Այն մատուցվում է պոլիկլինիկաներում:

Ընթացիկ տարում պոլիկլինիկաներից արձանագրվել են բողոքներ բուժօգնությունը վճարովի մատուցելու, բժշկական սարքավորումը չաշխատելու, դեղորայք չստանալու, ՊՇՌ հետազոտությունն անվճար չիրականացնելու, լաբորատոր-գործիքային որոշ հետազոտություններ վճարովի իրականացնելու վերաբերյալ:

Օրինակ՝ քաղաքացին տեղեկացրել է, որ ունի 3-րդ խմբի հաշմանդամություն: Նշել է, որ պոլիկլինիկայում կատարվել է ծնկահողի հեղուկի հեռացում, որից հետո ցուցվել է ծնկահողի սոնոգրաֆիա: Նշված ծառայությունների համար պահանջվել է կատարել վճարում:

Նշված բողոքի կապակցությամբ բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմում տեղեկացել է, որ պոլիկլինիկայում գործող այն նեղ մասնագիտական ծառայությունները, որոնք չեն մտնում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալներում և որոնց համար տվյալ պետական պատվեր չի տեղադրվել, ապա մատուցվում են վճարովի, ինչպիսի տեղեկությունն էլ առաջացրել է բողոք ներկայացրած անձի դժգոհությունը: Առաջարկվել է դիմել պոլիկլինիկայի համապատասխան աշխատակցին մատուցված ծառայության մասին (գնացուցակի) տեղեկություն ստանալու ակնկալիքով:

Բողոքներ են ստացվել ՊՇՌ հետազոտությունները պոլիկլինիկաներում պետական պատվերի շրջանակում չիրականացնելու վերաբերյալ: Ըստ քաղաքացիների՝ բժիշկները չեն ուղեգրում կորոնավիրուսի նկատմամբ թեստավորման կամ համապատասխան թեստեր չլինելու կամ ցուցում չունենալու տարբեր պատճառաբանություններով: Քաղաքացիները մեծ դժվարությամբ են ձեռք բերում ուղեգրերը:

Վերլուծելով բողոքների բովանդակությունը՝ ստացվում է, որ ոչ բոլոր ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններն են, որ բնակչության բոլոր խմբերին տրամադրվում են անվճար: Մասնավորապես՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020թ. մարտի 12-ի N 961-Լ հրամանով սահմանվել է ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպություններում 18 տարին լրացած անձանց համար իրականացվող վճարովի ծառայությունների ցանկը: Վճարովի են Առողջապահության նախարարի հրամանով հաստատված լաբորատոր-գործիքային հետազոտությունների փաթեթում չընդգրկված հետազոտությունները:

Բողոքներից հանգում ենք այն եզրակացության, որ մարդկանց մի մասն էլ տեղյակ չեն պոլիկլինիկաներում որոշ ծառայություններ վճարովի լինելու մասին: Նրանք կարծում են, թե բոլոր ծառայություններն անվճար են: Տարընկալման պատճառ է նաև «Բնակչության բժշկական

օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի ձևակերպումը, որտեղ նշված է, որ առաջնային բժշկական օգնությունը, որպես յուրաքանչյուր մարդու համար անվճար, առավել մատչելի մեթոդների և տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը երաշխավորվում է պետության կողմից: Քանի որ ենթաօրենսդրական ակտերի կարգավորմամբ, ստացվում է, որ առաջնային օղակում ոչ բոլոր ծառայություններն են անվճար և ոչ բոլորի համար, ուստի պետք է մանրամասն սահմանել վճարովի ծառայությունների ցանկը և պոլիկլինիկաների տեսանելի վայրում փակցնել:

Բժշկական օգնության և սպասարկման տեսակ է մասնագիտացված բժշկական օգնությունը՝ որպես ախտորոշման և բժշկական առանձնահատուկ մեթոդների, այդ թվում՝ նորագույն և բարդ բժշկական տեխնոլոգիաների վրա հիմնված բժշկական օգնությունը և սպասարկումը, որի պետական պատվերի շրջանակներում չիրականացնելու վերաբերյալ բողոքներ տարվա ընթացքում բազմաթիվ են ստացվել: Քաղաքացիները նշել են, որ ըստ բժշկական կազմակերպությունների՝ մերժումը կապված է պետության կողմից տրամադրված գումարներն սպառված լինելու հետ և առաջարկվել է հերթագրում: Նրանց պնդմամբ՝ հերթագրման դեպքում իրենց բժշկական հետազոտության օր է նշանակվել դիմելուց 2-3 ամիս անց: Նշված անձինք, որպես կանոն, խնդրում են Պաշտպանի աջակցությունն անհրաժեշտ բուժօգնությունը հնարավոր շուտ ստանալու հարցում: Պատճառները տարբեր են նշվել. անհանգստացնող ցավեր, հիվանդության, մասնավորապես օնկոլոգիական հիվանդության բարդացում և այլն: Հերթագրման երկար ժամկետների պատճառով անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունք ունեցող պացիենտը ստիպված գերադասում է վճարովի սկզբունքով արտահերթ բուժօգնությունը:

Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող քաղաքացին բողոքով նշել է, որ իր մոտ ախտորոշված է քաղցկեղ, անհրաժեշտ է հերթական ՄՌՏ հետազոտություն անցնել: Դիմել է բժշկական հաստատություն, որտեղ հետազոտությունը նշանակվել է 3 ամիս հետո: Վերջինս խիստ անհանգստացած իր առողջական վիճակով դիմել է Պաշտպանին իրեն անհրաժեշտ հետազոտությունը պետական պատվերի շրջանակում հնարավորինս շուտ իրականացնելն աջակցելու հարցով:

Բողոքներից մեկով էլ քաղաքացին (անօթևանների կացարանի բնակիչ) վիրահատական միջամտության համար հինգ ամիս սպասել է իր հերթին: Նշանակված օրը ներկայացել է բժշկական կենտրոն, որտեղ հրաժարվել են բուժօգնություն տրամադրել ուղեգրի ժամկետն ավարտված լինելու պատճառաբանությամբ: Պաշտպանի միջամտության արդյունքում քաղաքացին ստացել է անհրաժեշտ բուժօգնությունը:

Բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ պետական պատվերով բուժօգնություն ստացող քաղաքացիները մի բժշկական կազմակերպությունից ուղարկվում են մեկ այլ բժշկական կազմակերպություն և վճարում դժվարամատչելի հետազոտության դիմաց: Մինչդեռ, դժվարամատչելի հետազոտությունն անհրաժեշտ էր ընդգրկել հիվանդանոցային բուժօգնության մեջ:

Օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ մարզային բժշկական կենտրոնում պետական պատվերի շրջանակներում ստացիոնար բուժօգնության ընթացքում ուղեգրվել է մեկ այլ

բժշկական կենտրոն, քանի որ տվյալ կենտրոնում բացակայել է հիվանդի բուժման կազմակերպման համար անհրաժեշտ լաբորատոր գործիքային ախտորոշիչ՝ մագնիսա-ռեզոնանսային հետազոտությունը և այն անցել վճարովի հիմունքներով, չնայած որ ներկայացրել էր սոցիալական կարգավիճակը հավաստող փաստաթուղթը: Քաղաքացին նշել է նաև, որ բժիշկն իրեն ուղղորդել է կոնկրետ բժշկական կենտրոն հետազոտությունն անցնելու համար:

Մինչդեռ, ՀՀ առողջապահության նախարարի 2018թ. նոյեմբերի 6-ի թիվ 2848-Ա հրամանի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման հիմքում ընկած է բժշկական և սոցիալական ցուցումների համադրման սկզբունքը, ըստ որի պետությունը երաշխավորում է անվճար բժշկական օգնություն և սպասարկում հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում պահանջող վիճակների դեպքում՝ սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց համար և ներառում է հիվանդանոցային պայմաններում հետազոտությունը և բուժումն անկախ ախտորոշումից:

Քննարկվող օրինակում ստացվում է, որ ցուցված հետազոտությունն իրականացնելու համար պացիենտը ոչ թե ուղեգրվել, այլ ուղղորդվել է համապատասխան բժշկական կազմակերպություն, ինչը պետության կողմից ֆինանսական փոխհատուցման հիմք չէ: Հասկանալի է, որ առանց ուղեգրի առկայության, որի հիման վրա պետք է այդ ծառայությունների դիմաց ֆինանսական փոխհատուցում ստանար հետազոտությունն իրականացնող բժշկական կազմակերպությունը, այն անվճար սկզբունքով չէր կարող իրականացվել: Եթե հիվանդանոցային բժշկական կազմակերպությունում բացակայում են հիվանդի բուժման կազմակերպման համար անհրաժեշտ լաբորատոր գործիքային ախտորոշիչ հետազոտությունների անցկացման հնարավորությունները, բժշկական կազմակերպությունը բուժման համար հատկացվող միջոցներից պայմանագրային հիմունքներով պետք է փոխհատուցում կատարի սպասարկումն իրականացրած բժշկական կազմակերպությանը:

Դրանից բացի, պացիենտին կոնկրետ բժշկական կազմակերպություն ուղղորդելը խախտում է նրա ազատ ընտրության իրավունքը, քանի որ նա ունի բոլոր հնարավորություններն իմանալու և համապատասխան տեղեկատվության հիման վրա իր սեփական ընտրությունը կատարելու իրավունք, ինչը սահմանված է նաև մի շարք միջազգային փաստաթղթերով, այդ թվում՝ «Հիվանդների իրավունքների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով:<sup>132</sup>

Պաշտպանի աջակցությամբ խնդիրը լուծվել է. բողոք ներկայացրած անձին վերադարձվել է վճարած գումարը:

Մեկ այլ բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ բժշկական կենտրոնում 2021թ. փետրվարի 27-ին կատարվել է վիրահատություն. հայտնաբերված անևրիզմայի միկրոպարոյրներով օբլիտերացիա: Բժշկական կենտրոնում հարազատները տեղեկացրել են 2 ամիս առաջ իր զորացրված լինելու և կենսաթոշակ նշանակելու համար դիմած լինելու մասին, սակայն այս հանգամանքը բժշկական կազմակերպությունը հաշվի չի առել, քանի որ երկարամյա զինվորական կենսաթոշակ նշանակված չի եղել: Բժշկական ծառայությունները վճարովի մատուցելու նպատակով

<sup>132</sup> European charter of patients' rights, 2002. [http://ec.europa.eu/health/ph\\_overview/co\\_operation/mobility/docs/health\\_services\\_co108\\_en.pdf](http://ec.europa.eu/health/ph_overview/co_operation/mobility/docs/health_services_co108_en.pdf)

բժշկական կենտրոնի և ընտանիքի անդամի միջև ստիպված կնքվել է պայմանագիր, համաձայն որի՝ վճարվել է 5 մլն. դրամ: Ըստ քաղաքացու՝ կենսաթոշակը նշանակվել է դիմելուց 3 ամիս հետո: Ստանալով կենսաթոշակի վկայականը՝ անմիջապես ներկայացրել է բժշկական կենտրոնի համապատասխան բաժին՝ վճարված գումարը վերադարձնելու ակնկալիքով, սակայն մերժել են սահմանված ժամկետին այն չներկայացնելու հիմնավորմամբ, վկայակոչելով, որ Կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 806-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ գլխի 18-րդ կետի համաձայն՝ «անհետաձգելի հիվանդանոցային բուժօգնություն պահանջող դեպքերում զինժառայողները և նրանց ընտանիքների անդամները կարող են ծրագրի շրջանակներում բժշկական օգնություն ու սպասարկում ստանալ շտապ օգնության ծառայության ուղեգրով կամ հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող բժշկական կազմակերպության ընդունարանի բժշկի եզրակացության հիման վրա՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան կարգավիճակը և անձը հաստատող փաստաթղթերը բժշկական կազմակերպություն ներկայացնելու պայմանով»:

Այսպիսով, ստացվում է, որ պետական մարմնի անգործության պատճառով սոցիալական կարգավիճակ ունեցող (երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակառու) անձը զրկվել է պետական պատվերի շրջանակում բուժօգնություն ստանալու իրավունքից, քանի որ օրենքով սահմանված ժամկետում կենսաթոշակը նշանակված չի եղել, իսկ կենսաթոշակային օրենսդրության համաձայն՝ դիմումն ընդունվելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում կայացվում է կենսաթոշակ նշանակելու (չնշանակելու) մասին որոշում:

2021 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել բժշկական կենտրոններում պայմանագրային գումարներն սպառված լինելու պատճառով հիվանդանոցային բուժօգնությունը պետական պատվերի շրջանակներում չկազմակերպվելու վերաբերյալ:

Պաշտպանին դիմած անձինք (նաև՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմի ընթացքում վիրավորում ստացած քաղաքացիներ) հայտնել են իրենց մտահոգությունը, որ բուժօգնության շարունակությունը չի ապահովվում այն բժշկական կազմակերպությունը, որտեղ իրենք բուժօգնություն են ստացել մի քանի ամիս առաջ, մասնավորապես՝ վիրահատվել: Նշել են, որ իրենց ուղղորդել են մեկ այլ բժշկական կենտրոն կամ առաջարկել հերթագրվել: Սակայն դիմողների պնդմամբ՝ ցանկություն ունեն բուժօգնությունն ավարտել այն բժշկի մոտ, ով իրենց բուժել է, մյուսների պնդմամբ՝ հերթագրվելու դեպքում բժշկի խորհրդով բուժօգնությունը պարզապես անարդյունավետ կլինի:

ՀՀ կառավարության 2004 թվականի ամսաթիվ թիվ 318-Ն որոշման համաձայն՝ բժշկական կազմակերպություններում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայություններն իրականացվում են տվյալ կազմակերպության տարեկան պայմանագրային գումարի շրջանակներում՝ ամսական կտրվածքով հաստատված տվյալ ծրագրի համամասնությունների չափով: Պայմանագրային գումարի ամսական համամասնության սպառման կամ բժշկական կազմակերպության համապատասխան ծառայության թողունակության անբավարարության

դեպքում բժշկական կազմակերպությունը բժշկական օգնություն և սպասարկում իրականացնում է հերթագրման եղանակով՝ բացառությամբ որոշ ծառայությունների:

Հասկանալի է, որ բժշկական հաստատությունների գումարներն անսպառ չեն, բայց այն դեպքերում, երբ առկա են բժշկական ցուցումներ բուժօգնության արդյունավետության վերաբերյալ, ապա պետք է այն տրամադրվի առանց հերթագրման:

Առողջապահության նախարարությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում պայմանագրային գումարները սպառված լինելու պատճառով պետական պատվերի շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում չստանալու վերաբերյալ Առողջապահության նախարարությունը ստացել է 264 բողոք: Լրացուցիչ գումարներ բաշխվելու մասին էլ տեղեկացրել են, որ 2021 թվականի ընթացքում Առողջապահության նախարարության կողմից բժշկական կազմակերպությունների պայմանագրային գումարներում կատարվել են վերաբաշխումներ՝ հաշվի առնելով բժշկական կազմակերպությունների կատարած աշխատանքները, սակայն չեն նշել վերաբաշխում կատարած բժշկական կազմակերպությունների անվանումները և ժամկետները, չնայած Պաշտպանի՝ այդ կապակցությամբ հարցմանը:

Բժշկական օգնության և սպասարկման մյուս տեսակի՝ շտապ և անհետաձգելի օգնությունը տրամադրվում է և համավճարային, և անվճար սկզբունքներով:

Արտոնյալ պայմաններով բժշկական ծառայությունները տրամադրվում են համավճարային սկզբունքի կիրառմամբ:

Համավճարային սկզբունքի կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը քաղաքացիների կողմից առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված բժշկական ծառայությունների դիմաց մասնակի փոխհատուցումն է, այսինքն, պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդների բուժման համար պատվիրատուի կողմից սահմանված գների և նույն ծառայությունների համար հաշվարկված իրական ծախսերի տարբերությունն է, կամ հաստատագրված վճար է, որը վճարում է հիվանդը:

Համավճարը տարածվում է բժշկական օգնության տեսակների և ծառայությունների շրջանակներում փոխհատուցման ենթակա՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հաստատած հիվանդությունների, վիճակների և հետազոտությունների վրա:

Բնակչության բոլոր խմբերին արտոնյալ պայմաններով, նախարարի սահմանած կարգով տրամադրվում են բժշկական օգնության և սպասարկման հետևյալ տեսակները և ծառայությունները՝

ա. անհետաձգելի բժշկական օգնության ծառայություններ,

բ. մաշկային և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ,

գ. ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայություններ:

ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի ամսաթիվ թիվ 229-Ա հրամանով հաստատվել է բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության

և սպասարկման շրջանակներում համավճարային սկզբունքով փոխհատուցվող հիվանդությունների և վիճակների ցանկը:

Մասնավորապես՝ համավճարային սկզբունքով բուժօգնությունը տրամադրվում է միայն 18 տարեկան և բարձր տարիքի անձանց՝ նկատի ունենալով, որ մինչև 18 տարեկան անձանց անհետաձգելի բժշկական օգնություն և միջամտություն պահանջող հիվանդությունների դեպքում օգնությունը տրամադրվում է անվճար:

Բուժօգնությունը համավճարային փոխհատուցմամբ է իրականացվում այնպիսի հիվանդությունների դեպքում՝ ինչպիսին է օրինակ՝ ախտորոշված չարորակ նորագոյացությունների դեպքում, երբ հաստատված սխեմաներով օգտագործվում են թանկարժեք քիմիոթերապիայի արատներ, կամ տարածուն պերիտոնիտ և այլն:

Պետք է նկատել, որ պարզ չէ արտոնյալ պայմաններով հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ենթակա հիվանդությունների և վիճակների ցանկերի որոշման չափանիշները: Դրանք սահմանելիս հաշվի չի առնվել կյանքին սպառնացող իրական վտանգի լրջությունը:

Բողոքների ուսումնասիրությամբ պարզ է դարձել, որ անհետաձգելի միջամտություն պահանջող շատ դեպքեր պետական հոգաձության շրջանակներում չեն՝ հաստատված ցանկերում ներառված չլինելու պատճառով: Օրինակ՝ սրտի սուր ինֆարկտների դեպքում անոթների ստենտավորումը, որի վերաբերյալ պարբերաբար ստացվում են բողոքներ:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

- 1. շարունակական ընդլայնել առողջության առաջնային պահպանման օղակներում անվճար տրամադրվող բժշկական ծառայությունների ցանկը,*
- 2. առողջության առաջնային պահպանման օղակներում տեսանելի վայրերում փակցնել պոլիկլինիկական ծառայությունների անվճար և վճարովի տրամադրվող բժշկական ծառայությունների ցանկը,*
- 3. բնակչության անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված բնակչության համար հատկացվող պետական ֆինանսավորման ծավալներն ավելացնել հերթագրման դեպքում բժշկական ծառայությունն ավելի շուտ մատուցելու նպատակով,*
- 4. բժշկական հաստատություններում կատարել պարբերաբար սպուգումներ քաղաքացիների բուժօգնությունն ամբողջությամբ պետական պարվերի շրջանակներում չիրականացնելը բացահայտելու և բացառելու նպատակով,*
- 5. վերանայել և հստակեցնել համավճարային փոխհատուցմամբ իրականացվող հիվանդությունների և վիճակների ցանկը:*

## **7. Բուժօգնությունը պոլիկլինիկաներում**

Առողջության առաջնային պահպանման ծառայություններն (այսուհետ ԱԱՊ) արտահիվանդանոցային ձևով իրականացվող ծառայություններ են, որոնք բժշկական օգնության և սպասարկման համակարգի հիմքում են և ներառում են բնակչության շրջանում հիվանդությունների

առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելումը, ախտորոշումը, բուժումը, հղիության ընթացքի վարումը, ինչպես նաև առողջ ապրելակերպի և հակահամաճարակային միջոցառումների մասին իրազեկումը:

ԱԱՊ ծառայությունն իրականացվում է պոլիկլինիկաներում (այդ թվում՝ բուժմիավորումների, բժշկական կենտրոնների պոլիկլինիկական ստորաբաժանումներում): Ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններում, սահմանված կարգով, բժշկական օգնությունն իրականացնում է բնակչի կողմից ընտրված առողջության առաջնային պահպանման բժիշկը (տեղամասային թերապևտ, ընտանեկան բժիշկ, մանկաբարձ-գինեկոլոգ): ԱԱՊ ծառայություններ մատուցող բժշկի ընտրության և նրա մոտ բնակչության գրանցման կարգը սահմանվում և իրականացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշման:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին ԱԱՊ ծառայությունների կապակցությամբ հայտնաձև դժգոհությունները, բողոքները հիմնականում վերաբերել են կորոնավիրուսով վարակված և հիվանդանոցային բուժօգնության կարիք ունեցող անձանց հոսպիտալացումները պատշաճ չկազմակերպելուն, դեղեր չտրամադրելուն, տրամադրվող դեղերի որակին, բժիշկների պացիենտների նկատմամբ անհարգալից և կոպիտ վերաբերմունքին, ոչ օպերատիվ արձագանքմանը և այլն:

Բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ մարդկանց որոշ խումբ պոլիկլինիկաներ չեն դիմում, ինչը հիմնականում պայմանավորված է բժիշկներին չվստահելով, ինչպես նաև ծառայության որակի նկատմամբ վստահության բացակայությամբ, տեխնիկական թույլ զինվածությամբ, մատուցվող ծառայությունների փոքր շրջանակով: Քաղաքացիները միանգամից դիմում են հիվանդանոց՝ շրջանցելով բժշկության առաջնային օղակը՝ ակնկալելով, որ հիվանդանոցներում ավելի բարձր որակի և համալիր ծառայություններ կստանան: Որոշ դեպքերում էլ քաղաքացիներն իրազեկված չեն, թե պոլիկլինիկաներում ինչպիսի ծառայություններ են մատուցվում:

Օրինակ՝ բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ ունի սրտի հետ կապված առողջական խնդիրներ, որով էլ պայմանավորված իր նկատմամբ սահմանվել է հաշմանդամություն: Հավելել է, որ պոլիկլինիկայից պարբերաբար ստացել է ատորիս, կարդիոմագնիլ, կարվիդիլոլ դեղերը, իսկ այժմ չեն տրամադրում: Պաշտպանի աշխատակազմին հայտնաձև տեղեկության համաձայն՝ պատճառը դեղերի համար տրամադրված գումարի սպառումն է, որի մասին տեղեկացրել են պետական առողջապահական գործակալությանը լրացուցիչ գումարի տրամադրման նպատակով:

Մեկ այլ բողոքով էլ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը հայտնել է, որ ունի ստորին վերջույթների անոթների առողջական խնդիր: Նշանակված դեղորայքից (դետրալեքս, ակտովեգին և այլն) պոլիկլինիկան տրամադրում է միայն մեկը: Կատարված ուսումնասիրության արդյունքում Պաշտպանի աշխատակազմը պարզել է, որ պոլիկլինիկան մրցույթ է հայտարարել, դեռ արդյունքներ չկան, ուստի չի կարող տրամադրել նշված դեղերը:

Մյուս բողոքով էլ մարզում բնակվող քաղաքացին տեղեկացրել է, որ վարակված է կորոնավիրուսով, այցելել է ամբուլատորիա և արժանացել արհամարհական և վատ

վերաբերմունքի, ավելին խորհրդատվություն չի տրամադրվել, բուժում չի նշանակվել: Պաշտպանի աշխատակազմի և մարզպետարանի համագործակցությամբ խնդիրը լուծվել է. խորհրդատվության և հետազոտությունների արդյունքում նշանակվել է համապատասխան բուժում:

Մեծ թիվ են կազմում բողոքները կորոնավիրուսով վարակված անձանցից և նրանց հարազատներից՝ հոսպիտալացումը պատշաճ չկազմակերպելու, հետևողական չլինելու վերաբերյալ, ինչի հետևանքով տնային բուժման պայմաններում վարակված անձանց առողջությունը վատթարացել է: Նման դեպքերում Պաշտպանի աշխատակազմի և հիվանդների տեսակավորման կենտրոնի (տրիաժ) հետ համագործակցության արդյունքում որոշ բողոքներ դրական լուծում են ստացել:

Քիչ չեն եղել դեպքերը, երբ մարդիկ ուղղակիորեն իրազեկ չեն բժշկական օգնության առաջնային օղակներից: Օրինակ՝ անվճարունակ քաղաքացին դիմել է Պաշտպանին՝ ակնկալելով աջակցություն բժշկական հաստատությունից անվճար օգտվելու, դեղորայք ունենալու համար: Նման դեպքերում խորհրդատվությունների արդյունքում մարդիկ ուղղորդվել են պոլիկլինիկաներ:

Ստացվել են բողոքներ նաև բնակչության անապահով և առանձին /հատուկ/ խմբերի ցանկում ընդգրկված անձանցից՝ նշանակված դեղերի համարժեքները տրամադրելու դեպքում դրանց որակի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկության համաձայն՝ պոլիկլինիկաներից դեղեր չստանալու վերաբերյալ 2021 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարան ստացվել է 46 դիմում: Նշանակված դեղերի փոխարեն դրանց համարժեքները տրամադրելու կապակցությամբ տեղեկացրել են, որ սպասարկող պոլիկլինիկաները կարող են քաղաքացիներին տրամադրել դեղորայքի այն համարժեքները, որոնք ձեռք են բերում մրցույթների արդյունքում՝ բացառապես առաջնորդվելով «Գնումների մասին» օրենքով:

Այս կապակցությամբ Պաշտպանն իր տարեկան հաղորդումներով առաջարկել է պետության կողմից երաշխավորված հասանելիք գումարի չափով պացիենտին տրամադրել սերտիֆիկատ, որպեսզի վերջինս պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով ստացող դեղերի փոխարեն առավել լավ որակի թանկարժեք դեղ ձեռք բերելու ցանկության դեպքում՝ հնարավորություն ունենա վճարելով լրացուցիչ գումար և օգտագործելով նշված սերտիֆիկատը՝ ձեռք բերել առավել արդյունավետ դեղեր:

Քաղաքացիներին դեղորայքով ժամանակին և օպերատիվ ապահովման գործընթացը 2021 թվականին ևս իրականացվել է թերացումներով: Այս կապակցությամբ քաղաքապետարանը տեղեկացրել է, որ բուժհաստատությունները հաջորդ տարվա համար դեղորայքի ձեռք բերման նպատակով մրցույթները հայտարարում են դեռ ընթացիկ տարվա նոյեմբեր ամսին: Իսկ դեղապահովման գործընթացը խախտվել է մի քանի պատճառներով, մասնավորապես՝

-որոշ դեղերի մասով մրցույթները չեն կայացել գնային առաջարկ չլինելու պատճառով: Հայտարարվել է նոր մրցույթ, մինչև նոր մրցույթի կայանալը բուժհաստատության կողմից հնարավորության սահմաններում դեղն ապահովվել է կամ սեփական միջոցների հաշվին կամ այլ համարժեք դեղով փոխարինելով կամ հումանիտար ճանապարհով ստացած համարժեք դեղով փոխարինելով /առկայության դեպքում/,



-արձանագրվել են դեպքեր, երբ մրցույթները կայացել են, կնքվել են համապատասխան պայմանագրեր, սակայն մրցույթում հաղթած ընկերության կողմից օրենքով սահմանված ժամկետում մատակարարում չի եղել կամ եղել են մատակարարման ժամկետների խախտումներ, ուշացումներ:

Նման դեպքերում, ըստ քաղաքապետարանի՝ օրենքով սահմանված կարգով լուծվել է տվյալ ընկերության հետ կնքած պայմանագիրը և հայտարարվել նոր մրցույթ:

Այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ անձանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունն էլ ավելի է մեծանում այն պատճառով, որ առողջության պահպանման իրավունքն անմիջականորեն կապված է մյուս իրավունքների, այդ թվում՝ առողջապահության, ինչպես նաև կյանքի իրավունքի հետ: Ուստի, առողջության պահպանման, այդ թվում՝ առողջապահական ծառայություններից օգտվելու և օրենքով սահմանված կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք, ինչպես նաև բուժօգնություն ստանալու իրավունքների ապահովման նպատակով պետությունը պարտավոր է գործադրել առավելագույն ջանքեր:

Պաշտպանն արձանագրում է նաև, որ դեղամիջոցները պետք է մշտապես առկա լինեն՝ անհրաժեշտ քանակով և հաստատված որակով, պոլիկլինիկաներում պետք է պարբերաբար հսկողություն իրականացվի դեղերի շրջանառության նկատմամբ: Ուստի անհրաժեշտ է վերանայել պետության կարիքների համար ձեռք բերվող դեղերի գնումների գործընթացը, մասնավորապես՝ ստեղծել առաջնահերթություն դեղորայքի որակական հատկանիշներին տալու հնարավորություն, պատշաճ գնահատել գործընթացի ռիսկերը, ինչպես նաև պոլիկլինիկաներին բաշխվող դեղերով ապահովման գործընթացի վերահսկողությունն:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, որ պետության կողմից երաշխավորված հասանելիք գումարի չափով պացիենտին անհրաժեշտ է տրամադրել սերտիֆիկատ, որպեսզի վերջինս պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով ստացող դեղերի փոխարեն առավել լավ որակի թանկարժեք դեղ ձեռք բերելու ցանկության դեպքում՝ հնարավորություն ունենա վճարելով լրացուցիչ գումար և օգտագործելով նշված սերտիֆիկատը՝ ձեռք բերել առավել արդյունավետ դեղեր:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *բժշկական ծառայությունների սպասարկման որակի բարձրացման նկատմամբ պոլիկլինիկաներում ուժեղացնել վերահսկողությունը,*

2. *« առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով ձեռք բերվող և պոլիկլինիկաներին բաշխվող դեղերով ապահովման գործընթացի վերահսկողությունն ուժեղացնել*

3. *պացիենտների նկատմամբ վարքագծային կանոնները խախտելու դեպքում ձեռնարկելի պատասխանատվության միջոցներ բժիշկների նկատմամբ,*

4. *շարունակական ընդլայնել պոլիկլինիկական ծառայություններն ու տեխնիկական զինվածությունը:*

## **8. Պեղական մարմնի առջև իրավական պաշտպանության բացակայության խնդիր**

2021 թվականին շարունակել են բողոքներ ստացվել բուժօգնության որակի, բժշկական սխալի, բժիշկների գործողությունների վերաբերյալ, որոնք բողոքարկելով տարբեր պետական մարմիններին՝ մարդիկ արդյունքի չեն հասել «իրավասություն չունենալու» մասին պատասխան ստանալով:

Բուժօգնություն ստացած անձի իրավունքների առավել լայն պաշտպանություն ապահովելու համար վերջինս պետք է կարողանա բողոք ներկայացնել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի դեմ, եթե գտնում է, որ նրանց գործողություններով կամ անգործությամբ խախտվել է իր ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքները կամ չեն ապահովվել այդ իրավունքների իրականացման համար անհրաժեշտ պայմանները: Խնդիրն այն է, որ նման դեպքերում անձը չի կարողանում վերականգնել իր իրավունքը բողոքարկման մեխանիզմների ոչ հստակության պատճառով: Օրինակ՝ բժշկի բուժումը ոչ արդյունավետ է, կամ պետական պատվերի շրջանակում հիվանդանոցային բուժօգնություն ստանալիս բուժօգնությունն ամբողջովին անվճար չի իրականացվել, հիվանդանոց ընդունվելիս երկար ժամանակ որևէ բժիշկ չի մոտեցել, դրսևորվել է կոպիտ կամ արհամարհական վերաբերմունք և այլն: Նման դեպքերում, դիմելով Առողջապահության նախարարություն, մարդիկ արդյունքի չեն հասնում:

Օրինակ՝ Պաշտպանին դիմած անձը տեղեկացրել է, որ բժշկական կենտրոնում թոքաբորբի դեմ բժշկական օգնություն է ստացել: Ըստ դիմողի՝ բուժօգնությունը պատշաճ չտրամադրելու պատճառով հիվանդությունը գնալով զարգացել է: Ի վերջո՝ ստիպված է եղել լքել բժշկական հաստատությունը: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչին բժշկական կենտրոնից տեղեկացրել են, որ բուժօգնությունը տրամադրվել է ըստ անհրաժեշտության:

Մեկ այլ բողոքով էլ քաղաքացին տեղեկացրել է, որ քրոջ ստացիոնար բուժօգնության համար վճարել են 3 մլն դրամ: Բուժօգնությունն անարդյունավետ, ոչ պատշաճ է եղել, արդյունքում քույրը մահացել է: Դիմողը համարել է, որ անիմաստ է եղել վճարումը, ուստի պահանջել է վերադարձնել գումարը, սակայն բժշկական կենտրոնը չի վերադարձրել:

Մյուս բողոքով էլ քաղաքացին հայտնել է, որ իր երկու քույրը վարակվել են կորոնավիրուսով (COVID-19) և հոսպիտալացվել: Բուժօգնությունը պատշաճ չի եղել: Նրանց առողջական վիճակը գնալով վատացել է: Այս առնչությամբ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչին բժշկական կենտրոնից տեղեկացրել են, որ պացիենտների առողջական վիճակը կայուն է, բուժօգնությունը տրամադրվում է՝ ըստ ուղեցույցի, արյան մեջ թթվածնի քանակը բարձրացել է: Դուրսգրումը իրականացվելու է ըստ բժշկական ցուցումների:

Եղել են բողոքներ, որ վճարումներ չկատարելու պատճառով բժշկական էպիկրիզները չեն տրամադրվել պացիենտներին: Սա կարող է խոչընդոտ հանդիսանալ պոլիկլինիկայում հետագա բժշկական հսկողության տակ գտնվելու կամ բժշկասոցիալական հանձնաժողովին

հաշմանդամության սահմանման նպատակով դիմելու համար: Նման դեպքերում Պաշտպանի աջակցությամբ խնդիրը լուծվել է, բայց համակարգային առումով շարունակական բնույթ է կրում:

Հաշվի առնելով այն, որ պացիենտի և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի միջև բուժօգնության վերաբերյալ վեճերի լուծումը պահանջում է առողջապահության ոլորտի մասնագիտացում և այդ ոլորտում համապատասխան փորձի առկայություն, Մարդու իրավունքների պաշտպանը չի կարող լուծում տալ բարձրացված հարցերին, քանի որ հնարավոր չէ պարզել՝ բողոք ներկայացրած անձանց հայտնած տեղեկության հավաստիությունը կամ բժշկի գործողությունների իրավաչափությունը, մատուցած բուժօգնության որակը: Պաշտպանի աշխատակազմում նրանք հիմնականում ուղղորդվում են դիմելու ՀՀ իրավապահ մարմիններին՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ հաղորդմամբ կամ դիմել դատական պաշտպանության, քանի որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների գործողությունների բողոքարկման և պատասխանատվության այլ մեխանիզմներ սահմանված չեն:

Ճիշտ է, ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված անվճար բուժօգնության և սպասարկման շրջանակներում բուժօգնություն ստացող քաղաքացուն տրվող իրազեկման թերթիկով սահմանված է, որ քաղաքացին բողոքների դեպքում կարող է դիմել բուժող բժշկին, կազմակերպության տնօրենին կամ ՀՀ առողջապահության նախարարության թեժ գիծ ծառայությանը, սակայն բժշկական հաստատություններում ղեկավարներին, Առողջապահության նախարարության թեժ գծին բողոք ներկայացնելու մեխանիզմներն անարդյունավետ են, քանի որ խնդիրը հիմնականում չի լուծվում:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշման համաձայն՝ Նախարարության նպատակներից է մարդու և հանրության առողջության պահպանումը, բնակչության առողջության բարելավումը, հիվանդությունների կանխարգելումը: Նախարարությունն իր նպատակների կենսագործման նպատակով իրականացնում է բժշկական օգնության կազմակերպման և բուժօգնության որակի գնահատման չափորոշիչների ու չափանիշների մշակման, դրանց իրականացման դիտարկման գործառույթ: Ուստի ճիշտ կլինի, որ բողոքի առկայության դեպքում ՀՀ առողջապահության նախարարությունն ապահովվի դիմումում նշված փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ պացիենտի օգտին առկա հանգամանքները: Սակայն, որպես կանոն, Նախարարությունն իր պատասխաններում նշում է, որ բողոքում բարձրացված հարցի լուծումը դուրս է իր լիազորությունների շրջանակից՝ հաշվի չառնելով այն, որ քաղաքականությունը մշակող, լիազոր մարմինն է:

*Ելնելով վերոգրյալից և վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներով կատարած առաջարկները՝ անհրաժեշտ է՝*

- 1. քաղաքացիների բողոքները քննել ըստ էության,*
- 2. ապահովել պացիենտների բողոքների քննման մասնագիտացված և արդյունավետ մեթոդներ,*

3. բժշկական հաստատություններում ստեղծել պացիենտների իրավունքների պաշտպանության ընթացակարգ,

4. կանոնակարգել քաղաքացիների կողմից իրենց իրավունքների խախտումների վերաբերյալ վարչական բողոք ներկայացնելու կարգը:

### **9. Իրազեկվածության պակասը որպես իրավունքների խախտման նպաստող պայման**

Առողջապահության ոլորտում իրավունքների վերաբերյալ իրազեկման պակասը խոչընդոտում է այդ իրավունքների խախտումների կանխարգելմանը: Պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ մարդիկ, տեղյակ չլինելով իրենց իրավունքների, օրենքով սահմանված որոշակի արտոնությունների մասին, չեն կարողանում իրացնել, պաշտպանել իրենց իրավունքները, հասնել դրանց վերականգնմանը:

Հաճախ քաղաքացիները չգիտեն և չեն կարողանում իրացնել իրենց իրավունքներն առողջապահության համակարգի մի շարք օղակներում՝ այդ թվում հիվանդանոցային բուժօգնություն ստանալիս և առողջության առաջնային պահպանման ծառայություններ ստանալու ընթացքում: Բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման որոշ չափորոշիչներում նկարագրված են այդ գործընթացները, սակայն չկան մատչելի համակարգեր: Բժշկական կազմակերպություններում էլ հաճախ չեն տեղեկացնում այդ մասին:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի՝ ՀՀ Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակներում քաղաքացին տեղեկացրել է, որ ունի ինֆեկցիոն հիվանդություն՝ հեպատիտ Յ: Բժշկական կենտրոնի լյարդաբանն իրեն նշանակել է մի դեղամիջոց, որի 28 հաբն արժե 160.000 դրամ: Այն գնել է հարազատների աջակցությամբ և արդեն ընդունել, այնուհետև կրկին դեղամիջոցը ձեռք բերելու համար դիմել է Պաշտպանի աջակցությանը: Բողոքի շրջանակում դիմողին նախ պարզաբանվել է, որ Հեպատիտ Յ-ի բուժման ազգային ծրագրում ընդգրկվելու դեպքում անհրաժեշտ դեղորայքը կարող է ստանալ անվճար: Տեղեկացվել է նաև, որ ծրագրում ընդգրկվելու համար կարող է դիմել տեղամասային պոլիկլինիկա կամ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց: Բողոք ներկայացրած անձը հետագայում տեղեկացրել է, որ ընդգրկվել է հեպատիտ Յ-ի բուժման ազգային ծրագրում: Հակավիրուսային դեղորայքն արդեն ստանում է անվճար:

Ստացվում է, որ մարդիկ չգիտեն հեպատիտ Յ-ի բուժման ազգային ծրագրի առկայության, առողջապահական համակարգում պոլիկլինիկական կազմակերպություններում գործող ինֆեկցիոն կաբինետների մասին, որոնք համարվում են պարտադիր և իրականացնում են ինֆեկցիոն հիվանդների արտահիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը: Բժիշկը նույնպես չի տեղեկացրել սրա մասին պացիենտին և խորհրդատվության, համապատասխան հետազոտությունների արդյունքում ուղղորդել դեղը գնելու:

Երբեմն էլ մարդիկ, բժշկական հաստատություններում կատարելով վճարումներ, չգիտեն կոնկրետ որ ծառայության համար են վճարել՝ հիվանդասենյակ, դեղորայք, բժշկական

հետազոտություններ և այլն: Մինչդեռ, բժշկական օգնություն ցուցաբերողները պարտավոր են յուրաքանչյուր պացիենտի տեղեկացնել նրա նկատմամբ ցուցաբերվող բժշկական օգնության և սպասարկման տեսակի, մեթոդների, շրջանակի և կարգի, ինչպես նաև պայմանների մասին: Նրանք նաև պարտավոր են պացիենտին կամ պացիենտի բժշկական օգնության համար վճարող այլ անձին տեղեկացնել բժշկական օգնության և սպասարկման քանակի թե ծավալի ու որակի առանձնահատկությունների և կատարված ծախսերի նպատակի մասին:

ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքը ծանոթանալու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին: Նշված պարտականությունն ամրագրված է նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում: Սա նշանակում է, որ բուժաշխատողը պարտավոր է պացիենտին նախապես հայտնել՝ ինչ բժշկական օգնություն և սպասարկման տեսակ, մեթոդներ են կիրառվելու բուժման ընթացքում, ինչ ծավալներով է այն իրականացվելու (այսինքն՝ բուժման կուրսն ինչ ձևեր ու եղանակներ է ընդգրկելու), ինչպիսին են լինելու բժշկական օգնության տրամադրման կարգը և պայմանները (վճարովի, թե անվճար, վճարման պայմանները):

Քիչ չեն եղել դեպքերը, երբ Պաշտպանի աշխատակազմում քաղաքացիների հետ առանձնագրույցներից պարզ է դարձել, որ ուղեգիր տրամադրող կազմակերպությունները՝ առողջության առաջնային պահպանման օղակները, հիվանդանոցային բուժման կամ ախտորոշիչ հետազոտությունների կարիք ունեցող պացիենտներին չեն տեղեկացրել բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերի ցանկում չընդգրկված անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման համար ուղեգիր տրամադրելու կարգին և պայմաններին: Բնականաբար վերջիններիս պարզաբանվել է կարգը, ովքեր հետագայում օգտվել են անհրաժեշտ բուժօգնությունից:

Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ մարդիկ դիմում են Պաշտպանին սոցիալական աջակցության ակնկալիքով, սակայն դիմումի քննարկման շրջանակում կատարվող ուսումնասիրության արդյունքում բացահայտվում է, որ նրանք ունեն դեղերի և բժշկական օգնության կարիք, որի բավարարման նպատակով են սոցիալական աջակցություն խնդրում, քանի որ այլևս հնարավոր չէ կարիքների բավարարումն ազգականների հաշվին իրականացնել: Պարզվում է նաև, որ վերջիններն ունեն սոցիալական կարգավիճակ, ուստի դեղերը և բժշկական խորհրդատվություններն ստանալու համար կարող են օգտվել արտոնություններից: Նրանց պարզաբանվում է պոլիկլինիկական ծառայություններից օգտվելու և դեղորայքն անվճար ստանալու իրենց իրավունքներն ու ընթացակարգը:

*Ելնելով վերոգրյալից և վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի փարեկան հաղորդումներով կատարած առաջարկները՝ անհրաժեշտ է՝*

1. ստեղծել այնպիսի տեղեկատվական համակարգ (պորտալ), որտեղ բնակչությունը, մասնագետները և հանրությունը կարող են ստանալ մատչելի տեղեկատվություն պետության կողմից երաշխավորված ծրագրերի ֆինանսավորման, անվճար և համավճարային սկզբունքով մատուցվող բժշկական ծառայությունների վերաբերյալ,

2. պարբերաբար կազմակերպել հանրային իրազեկումներ վճարովի և անվճար բժշկական ծառայությունների և դեղերի մասին:

### **10. Սիրտ-անոթային վիրաբուժական օգնության հետ կապված խնդիր**

ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված ծառայությունները պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման իրավունքից օգտվում են բնակչության բոլոր խմբերը՝ սրտամկանի սուր ինֆարկտի (ST սեգմենտի էլկացիայով) անհետաձգելի վիրահատական (կորոնար անոթների ստենտավորում) բուժման դեպքում: Իսկ սուր ինֆարկտն առանց ST սեգմենտի էլկացիայի դեպքերում վիրահատական բուժումն իրականացվում է վճարովի սկզբունքով, բացառությամբ համապատասխան իրավական ակտով սահմանված անձանց խմբերի:

Բացառություն կազմող խմբերը թվարկված են ՀՀ կառ. 2004թ. թիվ 318-Ն որոշմամբ հաստատված՝ առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում պետական բյուջեի միջոցների հաշվին նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների փոխհատուցման կարգում:

Չնայած ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 27-ի թիվ 782-Ն որոշմամբ ընդլայնվել է սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից անվճար օգտվող շահառուների շրջանակը, այնուամենայնիվ ինչպես նախորդ, այնպես էլ 2021 թվականի ընթացքում շարունակել են բողոքներ ստացվել ծառայությունների մատչելի չլինելու պատճառով դրանցից չօգտվելու, օգտվելու դեպքում ֆինանսական մեծ բեռի տակ ընկնելու վերաբերյալ:

Բողոքները մեծամասամբ վերաբերել են սրտի կորոնար անոթների ստենտավորում ծառայության անմատչելիությանը:

Սրտի ստենտավորումը մարդու կյանքը փրկելու ամենաարդյունավետ միջոցն է: Այն դասվում է թանկարժեք վիրահատությունների շարքին, որը, օրինակ՝ զարգացած երկրներում ավելի թանկ արժե: Հայաստանում ստենտավորում կարելի է իրականացնել անհամեմատ էժան գներով՝ կախված ստենտավորման դեղապատ և ոչ դեղապատ լինելու հանգամանքից:

Այդուհանդերձ, որքան էլ սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնությունը մեր երկրում մատչելի է այլ երկրների համեմատ, իսկ բնակչության որոշ խավերի համար՝ առհասարակ անվճար, Պաշտպանը շարունակում է բողոքներ ստանալ բնակչության մյուս՝ սոցիալական կարգավիճակ չունեցող անձանցից, ինչպես նաև ոչ անհետաձգելի վիրահատական բուժօգնություն պահանջող դեպքերում:

Օրինակ՝ դեպքերից մեկով քաղաքացին նշել է, որ իր 74-ամյա տատին անհրաժեշտ է սրտի կորոնար երկու անոթի ստենտավորում, որի համար պահանջվել է վճարում կատարել 1.400.000 ՀՀ դրամ: Նշել է, որ անվճարունակ են, չեն կարող օգտվել անհրաժեշտ բժշկական օգնությունից:

Բժշկական կենտրոնն էլ կտրուկ հրաժարվել է բուժօգնությունից առանց վճարում կատարելու: Նման բողոքները բազմաթիվ են:

Պաշտպանին դիմել են նաև ընտանիքների անապահովության համակարգում հաշվառված այն քաղաքացիները, որոնց անապահովության միավորը չի բավարարել պետական պատվերի շրջանակում բուժօգնություն ստանալու համար:

Բողոք ներկայացնողների թվում են եղել նաև համեմատաբար ավելի բարձր եկամուտ ստացող քաղաքացիներ, որոնց համար նման վիրահատական ծառայությունները ֆինանսական առումով կրկին մատչելի չեն:

Սրտի անհետաձգելի վիրահատություն իրականացնող բժշկական կազմակերպություններում սպասարկման որակից բողոքները շատ չեն: Այդուհանդերձ, բժշկական կենտրոններում խրոնիկ է դարձել այն երևույթը, որ շատ դեպքերում քաղաքացիներին հրաժարվում են սպասարկել առանց վճարումներ կատարելու:

Առողջապահության նախարարության տեղեկացմամբ՝ սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման ծառայության արժեքի վճարման հնարավորություն չունեցող անձանց համար 2021 թվականի ընթացքում ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընձեռման տարբերակներ չեն մշակվել:

Հասկանալի է, որ որևէ երկրի առկա ֆինանսական միջոցներն անսահմանափակ չեն և չի բացառվում բյուջեում անհրաժեշտ միջոցների դեֆիցիտը, սակայն որևէ կերպ չպետք է խոչընդոտվի բնակչության առողջության պահպանմանն ուղղված անհրաժեշտ ներդրումների հատկացումը: Ուստի, անհրաժեշտ է համակարգում առկա բացերի հաղթահարմանն ուղղված հիմնական քայլերի ձեռնարկումը:

Այս պայմաններում բժշկական ապահովագրության ներդնումը միակ ռազմավարական որոշումն է, որը թույլ կտա պահպանել առողջապահությունը որպես ճյուղ և կձևավորի նոր սոցիալական ինստիտուտ, որում կզուգակցվեն ապահովագրության սկզբունքները, բժշկական ծառայությունների ֆինանսավորման նոր մոտեցումները և քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. *իրականացնել սիրտ-անոթային վիրաբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվող ծառայություններից անվճար կամ արտոնյալ պայմաններով օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակի շարունակական ընդլայնում,*

2. *շտապ և անհետաձգելի սրտային վիրաբուժական միջամտություն պահանջող վիճակների և ախտորոշումների ցուցանիշների մեղմացում,*

3. *բժշկական ապահովագրության համակարգի ներդնում՝ հնարավոր սեղմ ժամկետում:*

## **11. Չարորակ ուռուցքաբանական հիվանդությունների բուժօգնության ոլորտի խնդիրներ**

Ուռուցքաբանական ծառայությունները Հայաստանում առողջության առաջնային պահպանման օղակներում անվճար են: Դրանք իրականացնում են քաղցկեղի կանխարգելում և վաղ հայտնաբերում, պացիենտներին ուղղորդում են երկրորդային և երրորդային մասնագիտացված հաստատություններ՝ վիրահատության և այլ բուժում ստանալու համար, ինչպես նաև հաշվառում և հետևում են ուռուցքաբանական ծառայություններ ստացող պացիենտներին՝ վիճակագրական տվյալներ հաղորդելով Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնին (այսուհետ՝ ՈւԱԿ):

Քաղցկեղի բուժման ոլորտում ցանկացած առաջընթաց ողջունելի է: Հարկ է նշել, որ ցանկացած նոր տեխնոլոգիա՝ ներդրման փուլում, նախորդից ավելի թանկ է: Ուստի, պետք է ենթադրել, որ քաղցկեղի բուժման որակի բարելավումը Հայաստանում զուգորդված է դրա գնի բարձրացմամբ: Հետևաբար, քաղցկեղի վաղ հայտնաբերման ոլորտում առաջընթացը կարող է որակապես բարելավել քաղցկեղի բուժման արդյունավետությունը՝ միաժամանակ զգալիորեն կրճատելով անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

Քաղցկեղի վաղ հայտնաբերմանն ուղղված ֆինանսական միջոցները կարող են կրճատել կոնկրետ հիվանդի բուժման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների օգտագործումը և կիրառվել ավելի մեծաքանակ հիվանդների բուժման համար: Վերջին հաշվով, վաղ հայտնաբերման դեպքում բուժումն ավելի արդյունավետ է և շահավետ, քան բուժման նոր տեխնոլոգիաները:

Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են նաև, որ բժշկական ծառայությունների անհավասար հասանելիությունը կախված սոցիալական կարգավիճակից, մնում է լրջագույն խնդիր մեր երկրի համար: Ուստի այդ անհավասարությունների վերացումը համարվում է առաջնահերթ խնդիրներից մեկը: Լիազոր մարմինն այնպիսի մեխանիզմներ պետք ստեղծի, որպեսզի բնակչության բոլոր շերտերին ուռուցքաբանական բժշկական ծառայությունները, սկսած հայտնաբերման փուլից, լինեն հասանելի:

Համաձայն ՀՀ կառավարության 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման՝ ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության ծառայությունները մատուցվում են արտոնյալ պայմաններով (համավճարով), բացառությամբ նույն որոշման հավելված 1-ով հաստատված բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի՝ դիսպանսեր հաշվառման տակ գտնվող հիվանդների շարունակական հսկողության և հիվանդությունների վաղ հայտնաբերման նպատակով իրականացվող սքրինինգային ծրագրերի լաբորատոր-գործիքային ախտորոշիչ հետազոտությունների մասով, ինչպես նաև 15 և ավելի MeV (մեգաէլեկտրոնավոլտ) հզորություն ունեցող բժշկական գծային արագացուցիչով ճառագայթային բուժման մասով:

Համաձայն Առողջապահության նախարարի 2019 թվականի հունվարի 10-ի թիվ 20-Ա հրամանի՝ բնակչության բոլոր խմբերի համար անվճար է չարորակ նորագոյացությունների վիրահատական, ինչպես նաև ճառագայթային բուժումը:

Չարորակ նորագոյացությունների ախտորոշման և բուժման համար մեծ կարևորություն ունեն ձևաբանական (բջջաբանական, հյուսվածաբանական, իմունոհիստոքիմիական և մոլեկուլային) հետազոտությունները: Քաղցկեղի կառավարման ձևաբանական հետազոտությունից է կախված ճիշտ ախտորոշումը ու հետագա բուժման տակտիկայի ընտրությունը: Հետևաբար, առաջնահերթ է,



որ քաղցկեղի բուժմամբ զբաղվող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններն ունենան պատշաճ ծառայություններ: Ինչպես նախորդ, այնպես էլ 2021 թվականի բողոքները վկայում են, որ գործնականում բացակայում է պետական վերահսկողությունը հյուսվածաբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության նկատմամբ, առկա չեն որակի գնահատման հաստատված ցուցանիշներ, ինչը հանգեցնում է կրկնակի հետազոտությունների իրականացմանը, ինչպես նաև ժամանակի և ֆինանսական միջոցների կորուստների: Այս մասին անդրադարձ է եղել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>133</sup>:

Բողոքներով քաղաքացիները նշել են նաև, որ ուռուցքաբանական վիրահատությունից առաջ անհրաժեշտ են եղել ավտորոշման ճշտման նպատակով դժվարամատչելի հետազոտություններ, լաբորատոր-գործիքային հետազոտություններ, որոնք իրականացրել են վճարովի կամ այդ պատճառով չեն դիմել, ինչի հետևանքով հիվանդությունը զարգացել է: Վերջիններս պետության կողմից երաշխավորված պայմաններով բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող խմբին չեն պատկանել, և եղել են անվճարունակ: Խնդիրը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով:

Բողոքներ են եղել քիմիաթերապևտիկ բուժօգնությունը քիմիաթերապարատների բացակայության պատճառով պատշաճ չտրամադրելու, պացիենտների նկատմամբ վատ և արհամարհական վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Քիմիաթերապևտիկ բուժման փոխհատուցումը ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման թիվ 1 Հավելվածում նշված սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված անձանց համար կատարվում է ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատված քիմիաթերապևտիկ միջոցառումների նվազագույն սխեմաների շրջանակներում, կազմակերպության միջոցներով գնված և հիվանդին հատկացված քիմիաթերապարատների փաստացի ծախսի չափով՝ ոչ ավելին՝ քիմիաթերապևտիկ 1 կուրսի համար 60 հազար դրամ, իսկ մեկ հիվանդի համար տարեկան 300 հազար դրամի չափով: Համապատասխանաբար, սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերում չընդգրկված անձանց համար 1 կուրսի համար 30 հազար դրամ, իսկ մեկ հիվանդի համար տարեկան 150 հազար դրամի չափով:

Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ վերոնշյալ հատկացումները բավարար չեն պատշաճ մակարդակով քիմիաթերապևտիկ բժշկական օգնություն կազմակերպելու համար: Բացի այն, որ հատկացումները բավարար չեն, պացիենտներին չեն տրամադրվում իրենց հասանելիք քիմիաթերապարատները կամ կենտրոնում չլինելու կամ լինելու դեպքում էլ չափաբաժինը չհամապատասխանելու պատճառով: Նրանք քիմիաթերապևտիկ բուժօգնությունն ապահովելու նպատակով ուղղորդվում են դեղատուն անհրաժեշտ դեղերը գնելու:

Օրինակ՝ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող քաղաքացին դիմումով տեղեկացրել է, որ Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոնում ստանում է քիմիաթերապևտիկ բուժօգնություն, որի շարունակականությունն ապահովելու համար բժիշկն իրեն պարբերաբար ուղղորդել է գնել անհրաժեշտ դեղերը՝ պատճառաբանելով, որ բժշկական կենտրոնում դրանք

<sup>133</sup> Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդում, էջ 334:

առկա չեն: Ութ ամսվա ընթացքում ստացել է ինը կուրս, որի համար իր միջոցներով ձեռք է բերել (գնել է) ութ հատ կարբոպլատին, 1 հատ պակլիտաքսել քիմիապրեպարատ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 252.000 դրամ:

Հաստատությունից բողոք ներկայացրած անձին տեղեկացրել են, որ նշանակված քիմիապրեպարատներն առկա չեն: Այնուհետև անձը դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն, որտեղից ստացված պատասխանում հղում է կատարվել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի թիվ 2690-Ա հրամանի դրույթներին. քիմիաթերապևտիկ բուժումն, անկախ քիմիապրեպարատների ձեռք բերման աղբյուրից, բնակչության բոլոր խմբերի համար, կատարվում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում: Հիվանդանոցային բուժման սխեմաներին համապատասխան բնակչության բոլոր խմբերին հատկացվում են նույն հրամանի հավելվածում նշված և կենտրոնացված գնումներով ձեռք բերված քիմիապրեպարատները: Նախարարությունից ստացած պատասխանը բժշկական հաստատությանը ներկայացնելուց հետո էլ պացիենտին պարզաբանել են, որ առկա դեղամիջոցի մեկ սրվակի չափաբաժինը մեծ է, ուստի չի կարող բացվել այն, հակառակ դեպքում ավելցուկը թափվում է:

Հարկ է նշել, չարորակ նորագոյացությունների քիմիաթերապևտիկ բուժումն իրականացվում է համավճարային սկզբունքով: Պետական պատվերի շրջանակներում փոխհատուցվում է ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի թիվ 2690-Ա հրամանով հաստատված քիմիապրեպարատների ցանկում ընդգրկված դեղերի արժեքը՝ ոչ ավելի քան մեկ հիվանդի համար առաջին քիմիաթերապիայի սեանսից սկսած մեկ տարվա ընթացքում տարեկան 300.000 դրամ ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հավելված 1-ում նշված սոցիալապես անապահով ու առանձին խմբերում ընդգրկված անձանց համար: Քիմիապրեպարատների ցանկում առկա են պակլիտաքսել (150մգ), կարբոպլատին (450մգ) դեղերը: Պացիենտն ընդգրկված է սոցիալապես անապահով ու առանձին խմբերում, ուստի վերջինս վերոգրյալ իրավական ակտերի ուժով իրավունք ունի ստանալու դեղերը 300.000 դրամի փոխհատուցման սկզբունքով:

Վերոգրյալից պետք է եզրակացնել, որ քիմիապրեպարատների առկայության դեպքում էլ բուժօգնության գործընթացի ոչ պատշաճ պլանավորման և կազմակերպման պատճառով այն պացիենտին չի տրամադրվում, ավելին՝ ուղղորդվում է գնելու:

Այս առնչությամբ պետք է հաշվի առնել, որ հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունն էլ ավելի է մեծանում այն պատճառով, որ առողջության պահպանման իրավունքն անմիջականորեն կապված է մյուս իրավունքների, այդ թվում՝ կյանքի իրավունքի հետ: Ուստի, առողջության պահպանման, այդ թվում՝ առողջապահական ծառայություններից օգտվելու և օրենքով սահմանված կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքների ապահովման նպատակով պետությունը պարտավոր է գործադրել առավելագույն ջանքեր:

Բացի այդ, Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունները վկայում են, որ քիմիաթերապիայի անհրաժեշտություն ունեցող, քաղցկեղ ունեցող պացիենտը, ով սոցիալապես

անապահով է, չի կարողանում գնել քիմիապրեպարատները և լիարժեք ստանալ բուժօգնությունը. ժամանակին և արդյունավետ բուժօգնություն ստանալը հատկապես այդ շրջանակի անձանց համար մատչելի չէ և կարող է առողջական վիճակի անդառնալի վատթարացման պատճառ դառնալ: Հետևաբար, ծագում է կյանքին կամ առողջությանը սպառնացող վտանգ, քանի որ օնկոլոգիական հիվանդությունները պահանջում են անհետաձգելի գործողություններ հիվանդությունը բուժելու կամ հիվանդության հետագա զարգացումը կանխարգելելու համար:

Չնայած մեր երկրում չարորակ նորագոյացությունների քիմիաթերապևտիկ բուժումն իրականացվում է համավճարային սկզբունքով, սակայն բողոքների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ պացիենտները հաճախ չեն կարողանում օգտվել դեղ ստանալու արտոնություններից ուռուցքաբանական կենտրոնի կողմից դեղորայքի ձեռքբերման գնումների գործող գործընթացի իրականացման պատճառով: Պետության կամ պետության կողմից պատվիրակված ծառայություն մատուցող կազմակերպությունների պարտավորությունների կատարումը, ինչպես նաև օրենսդրորեն նախատեսված գործընթացների ապահովումը չի կարող լինել ի վնաս մարդու:

Առողջապահության նախարարության տեղեկացմամբ 2021 թվականի ընթացքում Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունում քիմիաթերապևտիկ դեղերի բացակայության վերաբերյալ ստացվել է 27 դիմում, որից 3-ը՝ «Պակլիտաքսել» դեղի և 21 բողոք: Սակայն Նախարարությունը չի պարզաբանել, թե ինչ ընթացք են տրվել դրանց, ինչպես են ապահովել իրական կարիքներով անձանց իրավունքների իրացումը: Իսկ քիմիապրեպարատների առկայությունը մշտապես ապահովելու ուղղությամբ ձեռնարկվող քայլերի մասին Պաշտպանի հարցադրմանը պատասխանվել է, որ քիմիաթերապևտիկ դեղերով ապահովումն իրականացվում է Առողջապահության նախարարության կողմից հաստատված քիմիաթերապևտիկ միջոցառումների նվազագույն սխեմաների շրջանակներում, կազմակերպության միջոցների հաշվին՝ համավճարային եղանակով, ինչպես նաև Առողջապահության նախարարության կողմից տրամադրվում են որպես մարդասիրական օգնություն ստացվող քիմիաթերապիայի դեղերը: Կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշումը լրամշակվել է և այսուհետև «Պրոֆ. Ռ. Օ. Յոյանի անվան արյունաբանական կենտրոն» և «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերությունները պետության կարիքների համար կարող են ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, սակայն կենսականորեն անհրաժեշտ դեղեր: Վերոնշյալ փոփոխության շնորհիվ հնարավոր եղավ 2021 թվականին ձեռք բերել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված, սակայն կենսականորեն անհրաժեշտ, մանկական և մեծահասակների ուռուցքաբանության ոլորտում կիրառվող դեղեր:

Նախարարության պարզաբանումից ակնհայտ է, որ նախարարությունը կոնկրետ չի անդրադարձել քիմիապրեպարատների առկա չլինելու դեպքում ձեռնարկվող քայլերին:

Այնուամենայնիվ, անքննարկելի է, որ քաղցկեղի դեմ բուժումը պետք է լինի մարդակենտրոն, ինչը հանդիսանում է բարձրորակ ծառայությունների նախապայման: Ինչպես նաև պացիենտները պետք է հնարավորինս տեղեկացված լինեն իրենց ախտորոշման, բուժման և հետագա վարման գործընթացի մասին՝ կայացնելով իրազեկ որոշումներ: Բժիշկ-մասնագետների և պացիենտների

միջև արդյունավետ հաղորդակցությունը կարևոր է գործընկերային հարաբերությունների ձևավորման համար, որն էլ իր հերթին ազդում է արդյունքի վրա: Անվտանգ և որակյալ ծառայությունները պացիենտներին պետք է հասանելի լինեն դրա կարիքի առաջացման պահին: Երկրում առկա առավելագույն ծառայությունները պետք է մատուցվեն պացիենտին: Վերջինները պետք է լինեն ստանդարտացված և հիմնված ապացուցողական բժշկության սկզբունքների վրա:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1. *ապահովել չարորակ նորագոյացությունների կանխարգելման, ախտորոշման, վաղ հայտնաբերման և հիվանդացության նվազեցման համար ընթացիկ սկրինինգային ծրագրերի շարունակական իրականացում և նոր ծրագրերի մեկնարկ՝ ապահովելով ծառայությունների հասանելիություն ամբողջ բնակչության շրջանում,*

2. *ապահովել հայտնաբերված հիվանդների արդյունավետ բուժման կազմակերպումը՝ այդ թվում՝ վիրաբուժական, ճառագայթային, քիմիաթերապևտիկ, իմունաբանական, հորմոնալ, հաստատված սխեմաների համաձայն, սրացիոնար և հնարավորության դեպքում՝ ամբուլատոր պայմաններում՝ դրանց նկատմամբ իրականացնելով պետական հսկողություն,*

3. *բուժման նորագույն եղանակների, ինչպես նաև հակաուռուցքային նոր սերնդի (թանկարժեք) դեղեր նշանակելիս կիրառել համավճարի սկզբունքը, եթե վերջիններն ընդգրկված չեն ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ հաստատված «սոցիալապես անապահով և հատուկ խմբերի ցանկում»,*

4. *ապահովել քիմիաթերապևտիկ դեղորայքի սահմանված չափաքանակի տրամադրումն առանց ձգձգումների և վերահսկողություն իրականացնել դրա նկատմամբ:*

## **12. Հիմնական դեղերի ցանկում ներառված դեղորայքի որակի, դրանք շահառուներին չտրամադրելու խնդիր**

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ կառավարությունը սահմանում է բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի և այն հիվանդությունների ցանկերը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, ինչպես նաև այդ դեղերի փոխհատուցման և հատկացման կարգը: ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանվել է բնակչության սոցիալական կամ հատուկ խմբերի ցանկը, որում ընդգրկված շահառուներին դեղերը հատկացվում են դրանց արժեքի լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ, հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում դեղերը շահառուներին հատկացվում են դրանց արժեքի լրիվ փոխհատուցմամբ:

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականի ընթացքում Պաշտպանը բողոքներ ստացել է փոխհատուցվող դեղերի արդյունավետ չլինելու, պոլիկլինիկաներում դեղերն ուշացումով տրամադրելու կամ ընդհանրապես դեղեր չստանալու վերաբերյալ: Մարդիկ հաճախ պնդում են, որ

տրամադրվող դեղորայքն առողջության վերականգնման համար արդյունավետ չէ, որի պատճառով էլ հրաժարվում են դրանցից՝ նախընտրելով գնել սեփական միջոցներով: Ուշացումներն էլ պայմանավորված են գնումների գործընթացի խափանումներով կամ ձգձգումներով: Իսկ դեղն առհասարակ չտրամադրելու պատճառը եղել է դեղերի հիմնական ցանկում չլինելը:

Դեղերի գնման գործընթացի խափանման պատճառով դեղերը չտրամադրելու վերաբերյալ ՀՀ առողջապահության նախարարության տեղեկացմամբ ստացվել է 26 դիմում և 17 բողոք: Իսկ դեղերի գնման գործընթացի խափանման դեպքում դրանց ապահովման վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ «համաձայն Կառավարության 2013 թվականի մայիսի 2-ի թիվ 502-Ն որոշման 2-րդ կետի 2.1 և 2.2 ենթակետերը, մասնավորապես՝ Առողջապահության նախարարության կարիքների համար կատարվող գնումների պլանում կարող են ընդգրկվել նաև «Դեղերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ պետության կարիքների համար լիազոր մարմնի հատուկ թույլտվությամբ կիրառվող չգրանցված դեղեր, որոնք գրանցված են ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված միջազգային մասնագիտական կազմակերպություն սահմանելու մասին» թիվ 172-Ա որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպության անդամ երկրում կամ ունեն Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախատրակավորում: Ինչպես նաև սույն հավելվածի 2.1-ին կետով նախատեսված դեղերի համար գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մրցույթի արդյունքում առաջին տեղը զբաղեցրած մատակարարը որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի հետ միաժամանակ պարտավորվում է ներկայացնել Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախատրակավորում ունենալու մասին: Համաձայն վերոգրյալ որոշման 2.3 ենթակետի՝ ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ կարող են ձեռք բերվել նաև Կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 202-Ն որոշմամբ հաստատված կարգին համաձայն Առողջապահության նախարարության թույլտվության հիման վրա ներմուծված չգրանցված դեղեր՝ ներմուծման հավաստագրի առկայության դեպքում: Վերոգրյալ որոշման 2.3 ենթակետով սահմանված կարգավորումները գործում են Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր բժշկական կազմակերպությունների համար»:

Դեղերի հիմնական ցանկում համալրում իրականացնելու վերաբերյալ Նախարարությունից տեղեկացրել են, որ «դեղերի ցանկը լրամշակվել է և հաստատվել Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 28-ի թիվ 56-Ն հրամանով, որտեղ հաշվի են առնվել քաղաքացիների պահանջները, բողոքները և առաջարկները: Ցանկը համալրվել է՝ նախկին 435 անվանման փոխարեն (2018թ.) ներկայում ներառված է 526 անվանում դեղ, ինչպես նաև ընդգրկվել են նոր դեղաձևեր և դեղաչափեր»:

Լրիվ կամ մասնակի փոխհատուցմամբ տրամադրվող դեղերի որակի վերաբերյալ դիմում-բողոքներ Առողջապահության նախարարության տեղեկացմամբ 2021 թվականի ընթացքում չեն ստացվել:

Ըստ Առողջապահության նախարարության՝ Նախարարության և «Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից դեղերի անցանկալի և վնասակար ազդեցությունների մշտադիտարկումն իրականացնելու նպատակով մշակվել է դեղերի կողմնակի ազդեցությունների գրանցման քարտ-հայտագրերի ձևերը: «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բուժկանխարգելիչ հիմնարկները, դեղատները և դեղերի իրացմամբ ու կիրառմամբ զբաղվող հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են կառավարության լիազորած մարմնին անհապաղ տեղեկացնել դեղերի անհայտ կողմնակի ազդեցության բոլոր դեպքերի մասին:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարիների տարեկան հաղորդումներով արձանագրած այն եզրահանգումը, որ պետական գնումների շրջանակներում ընտրություն անելիս հիմք է ընդունվում միայն ազդող նյութը և ցածր գինը, ինչի արդյունքում ձեռք բերված դեղորայքը ցածր որակ ունի և արդյունավետ չէ, որը հանգեցնում է քաղաքացիների դժգոհությունների: Բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ բժշկական կազմակերպությունները չեն կարողանում ձեռք բերել անհրաժեշտ տեսակի և ծավալի դեղորայք դրա համար նախատեսված ֆինանսական ոչ բավարար միջոցների պատճառով:

Բացի այդ, բացակայում է վերահսկողությունը պոլիկլինիկայում դեղաշրջանառության նկատմամբ: Որպես խնդրի լուծում Պաշտպանի տարեկան հաղորդումներով առաջարկվել է պետության կողմից երաշխավորված հասանելիք գումարի չափով պացիենտին տրամադրել սերտիֆիկատ, որպեսզի վերջինս պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով ստացող դեղերի փոխարեն առավել լավ որակի թանկարժեք դեղ ձեռք բերելու ցանկության դեպքում՝ հնարավորություն ունենա վճարելով լրացուցիչ գումար և օգտագործելով նշված սերտիֆիկատը՝ ձեռք բերել առավել արդյունավետ դեղեր:

Օրինակ՝ դեպքերից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ ունի դեղամիջոցի կարիք, սակայն պոլիկլինիկայում չեն տրամադրում՝ առաջարկելով դրա փոխարինողը, սակայն ինքը հրաժարվել է, քանի որ նշանակող բժիշկն է խորհուրդ տվել կոնկրետ դեղամիջոցը:

Մեկ այլ քաղաքացի էլ բողոքել է, որ մի քանի օր է չի ստացել դեղորայքը: Պոլիկլինիկայում առաջարկել են գնել մինչ գնումների գործընթացի ավարտը:

Հատկանշական է, որ եղել է դեպք, երբ բժիշկը մերժել է դեղի տրամադրումը կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստված չլինելու պատճառով: Խնդիրը լուծվել է պոլիկլինիկայի ղեկավարի և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի համագործակցության շրջանակում:

Ստացվել են նաև բողոքներ COVID-19 համավարակով հիվանդ պացիենտներից (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանցից) հակաբիոտիկ դեղորայք չստանալու հետ կապված: Խնդիրն առավել է ընդգծվում այն դեպքերում, երբ ընտանիքի մի քանի անդամ են վարակվում COVID-19-ով: Օրինակ՝ բողոքներից մեկով ընտանիքի 5 անդամն էլ վարակված են եղել COVID-19-

ով: Բացի անչափահաս երեխաներից, մնացածի մոտ հաստատվել է թոքաբորբ: Նշանակվել է դեղորայք: Բողոքով նշվել է, որ նրանք չեն կարող գնել դեղերը, քանի որ չունեն ֆինանսական միջոցներ: Պաշտպանի ներկայացուցիչը դիմողին տեղեկացրել է անվճար դեղորայք ստանալու հնարավորության մասին: Մասնավորապես, այն մասին, որ նրանք կարող են ստանալ դեղորայքն (հիմնականում հակաբիոտիկային և ջերմիջեցնող) այն պոլիկլինիկայից, որտեղ հաշվառված են:

Մեկ այլ քաղաքացի էլ տեղեկացրել է, որ ունի սրտի հետ կապված առողջական խնդիրներ, որով էլ պայմանավորված իր նկատմամբ սահմանվել է 2-րդ խմբի հաշմանդամություն: Հավելել է, որ պոլիկլինիկայից պարբերաբար ստացել է ատորիս, կարդիոմագնիլ, կարվիդիլոլ: Այժմ չեն տրամադրում: Բողոքի ուսումնասիրության ընթացքում պոլիկլինիկայի ղեկավարը տեղեկացրել է, որ այդ նպատակով տրամադրված պետական պատվերի գումարն սպառվել է: Դիմել է Պետական առողջապահական գործակալություն ֆինանսական հավելումների համար: Մինչ խնդրի լուծումը, հաշմանդամություն ունեցող անձին բժիշկն առաջարկել է գնել անհրաժեշտ դեղորայքը:

Պաշտպանն արձանագրում է, որ դեղամիջոցները պետք է մշտապես առկա լինեն՝ անհրաժեշտ քանակով, համապատասխան չափաբաժիններով, հաստատված որակով և այնպիսի գնով, որ քաղաքացին ի վիճակի լինի վճարել: Ուստի անհրաժեշտ է վերանայել պետության կարիքների համար ձեռք բերվող դեղերի գնումների գործընթացը, մասնավորապես՝ ստեղծել առաջնահերթություն դեղորայքի որակական հատկանիշներին տալու հնարավորություն:

Պաշտպանը բողոքներ է ստացել նաև քաղցկեղ ունեցող քաղաքացիներից, ովքեր դժգոհել են ցավազրկող դեղորայքի, մասնավորապես մորֆին դեղամիջոցի տրամադրման քիչ քանակությունից: Նրանք պնդում են, որ այն սուր ցավի ամոքման միակ նախընտրելի դեղամիջոցն է, սակայն բժիշկը հաճախ է հրաժարվում չափաբաժնի փոփոխությունից: Նման պարագաներում, պոլիկլինիկայի ղեկավարների՝ Պաշտպանի աշխատակազմին հայտնած դիրքորոշմամբ դեղի չափաբաժնի ավելացումը կհանգեցնի պացիենտի դեղից կախվածության, այդ իսկ պատճառով հաճախ դժվարությամբ են հանձնաժողովային կարգով չափաբաժին ավելացնում:

Ցավազրկող դեղամիջոցը նշանակելիս շատ կարևոր է պատճառաբանված հիմնավորումը չափաբաժնի վերաբերյալ, ինչպես նաև պացիենտի հոգեբանական ու վարքագծային առանձնահատկությունները, ցավի հաճախակի գնահատումը:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

- 1. վերանայել պետության կարիքների համար գնվող դեղերի գնումների գործընթացը,*
- 2. խստացնել վերահսկողությունը պետական գնումներով ձեռք բերվող դեղորայքին առաջադրված պահանջների կատարման, դեղերի որակի նկատմամբ, պատշաճ կերպով ուսումնասիրել հիվանդների բողոքները՝ պետական պարվերով տրամադրվող դեղերի որակի վերաբերյալ,*
- 3. ՀՀ հիմնական դեղերի ցանկը շարունակական ընդլայնել՝ ներառելով առավել պահանջված դեղատեսակներ,*
- 4. ուժեղացնել վերահսկողությունը ավիոնային դեղամիջոցների նշանակումների նկատմամբ:*

#### **ԲԱԺԻՆ 4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ**

Մարդու իրավունքներն ու շրջակա միջավայրը միմյանց հետ փոխկախվածության և փոխկապակցվածության մեջ են գտնվում: Շրջակա միջավայրը, դրա պահպանությունն ու ոլորտի խնդիրներն ուղղակիորեն կապված են մարդու իրավունքների պատշաճ իրացման հետ: Մաքուր, առողջ, անվտանգ և կայուն զարգացող շրջակա միջավայրի բացակայության արդյունքում մարդը զրկվում է իր կենսական մի շարք իրավունքների (կյանքի, առողջության պահպանման, սննդի և ջրի հասանելիության իրավունքներ) իրացման հնարավորությունից:

Հավասարապես, առանց մարդու իրավունքների հաստատման և դրանց նկատմամբ հարգանքի առկայության շրջակա միջավայրի կայուն կառավարումը հնարավոր չէ. շրջակա միջավայրի պաշտպանության համար խիստ կարևոր են մարդու իրավունքները, ինչպես օրինակ՝ տեղեկատվության մատչելիության, հանրային մասնակցության և իրավական պաշտպանության միջոցի իրավունքները:

Աղքատությունն իր բոլոր ձևերով վերացնելու, անհավասարությունների դեմ պայքարելու և կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները լուծելու նպատակով ընդունված ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակները արտացոլում են մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներն ու չափանիշները: Կայուն զարգացման նպատակներն, ի թիվս այլնի, նպատակ ունեն երաշխավորելու շրջակա միջավայրի պաշտպանությունն ու դրա հետ կապված խնդիրների լուծումը:

Շրջակա միջավայրին առնչվող մարդու իրավունքներ են պարունակում շուրջ 150 երկրների սահմանադրություններ՝ այդպես անձի համար ձևավորելով շրջակա միջավայրի որոշակի հատուկ պայմանների նկատմամբ ակնկալիք: Նշված սահմանադրական դրույթների մեծ մասը շրջակա միջավայրի առնչությամբ ամրագրում է անձանց իրավունքը, իսկ մնացած դեպքերում՝ պետության պարտականությունը: Միջազգային իրավական մի շարք փաստաթղթերում ամրագրված է առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը, ինչպես օրինակ՝ Ստոկհոլմի 1972 թվականի հռչակագրում, Ռիոյի 1992 թվականի հռչակագրում: Քաղաքակիրթ աշխարհը ներկա ժամանակում ձգտում է ուղիղ և բացահայտ կերպով ճանաչել ու ամրագրել մարդու՝ առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը:

Ասվածի կապակցությամբ, պետք է նշել, որ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ շրջակա միջավայրի առնչությամբ պարտականությունից բացի մարդու համար նախատեսվում էր նաև իրավունք: Այսպես, 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 33.2-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 12-րդ հոդվածով, ի տարբերություն 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 33.2-րդ հոդվածի, սահմանվում է յուրաքանչյուրի՝ շրջակա միջավայրի պահպանության մասին հոգ տանելու պարտականությունը: Դրա հետ մեկտեղ, Սահմանադրության



նույն հողվածով ամրագրվում է, որ պետությունը խթանում է շրջակա միջավայրի պահպանությունը, բարելավումը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև:

Սահմանադրաիրավական գործող կարգավորումները առանց մարդու առողջ ու անվտանգ շրջակա միջավայրում ապրելու իրավունքի ուղղակի ամրագրման ձևավորում են մարդու մոտ ակնկալիք պետության պարտականությունների նկատմամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, հաշվի առնելով առողջ, անվտանգ, ինչպես նաև կայուն զարգացող շրջակա միջավայրի նշանակալից դերը մարդու իրավունքների պատշաճ իրացման հարցում, իր զեկույցներով ու տարեկան հաղորդումներով, հրապարակային և ոչ հրապարակային այլ դիրքորոշումներով մշտական սկզբունքով բարձրացնում է շրջակա միջավայրի պահպանության ոլորտի խնդիրները, որոնք արդիական են և ունեն համակարգային բնույթ:

### **1. Շրջակա միջավայրի հարցերի վերաբերյալ հանրային իրազեկման և հանրության պաշտպան ներգրավվածության ապահովումը, էկոլոգիական իրավունքների պաշտպանության արտադարական մեխանիզմի բացակայությունը**

2021 թվականի ընթացքում շարունակել են արդիական լինել շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ հանրային իրազեկման և հանրության պատշաճ ներգրավվածության հարցերը: Այս հարցերը՝ որպես միջազգային պահանջ, ամրագրված են «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիայի (Օրհուսի կոնվենցիա)<sup>134</sup> Կողմերի հանդիպմամբ (Meeting of the Parties) հաստատված մի շարք որոշումներում և տարիներ շարունակ բարձրացվում է այդ հարցերի լուծմանն ուղղված անհրաժեշտ ջանքերի գործադրման հրամայականը:

Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ VII/8ա որոշմամբ<sup>135</sup> շեշտադրում է արվել այն փաստի վրա, որ Հայաստանի Հանրապետությունը չի կատարել Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ VI/8ա<sup>136</sup> որոշման 3(ա), 3(բ), 3(գ) և 3(դ) կետերը: Հայաստանի վերաբերյալ VII/8ա որոշմամբ<sup>137</sup>

<sup>134</sup> Տե՛ս «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ՄԱԿ-ի 1998 թվականի կոնվենցիա, հասանելի է <http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/documents/cep43e.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>135</sup> Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2021 թվականի VII/8ա որոշում, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2022-01/Decision\\_VII.8a\\_eng\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2022-01/Decision_VII.8a_eng_0.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>136</sup> [https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf)

վերահաստատվել են Հայաստանի վերաբերյալ VI/8ա<sup>138</sup> որոշմամբ արտահայտած դիրքորոշումները՝ առաջարկելով հանրային լուսման պատշաճ իրականացման (կետ 2(ա)), շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացում հանրության կողմից դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար ավելի երկար ու ողջամիտ ժամկետների սահմանման (կետ 2(բ)), Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ կետով ամրագրված արդարադատության մատչելիության ապահովման (կետ 2(գ)), ինչպես նաև կոնվենցիոն պահանջներին համապատասխան ներպետական օրենսդրության կիրառումը խթանելուն ուղղված դատական համակարգի իրազեկվածության բարձրացմանն ուղղված (կետ 2(դ)) հրատապ միջոցներ (օրենսդրական, կարգավորող ու վարչական) ձեռնարկել: Ավելին, Հայաստանի վերաբերյալ VII/8ա որոշմամբ՝ Կողմերի հանդիպման ընթացքում, ի թիվս այլնի, հաստատվել է նաև Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի 2021 թվականի եզրակացությունն<sup>139</sup> այն մասին, որ Կողմերի հանդիպմամբ հաստատված որոշման պահանջները Հայաստանի Հանրապետության կողմից դեռևս չեն կատարել<sup>140</sup>: Ընդ որում, Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի 2021 թվականի զեկույցում կոմիտեն արտահայտում է իր հիասթափություն ու խիստ մտահոգությունը այն առումով, որ Հայաստանը պատշաճ և ակտիվ կերպով չի ներգրավվել Հայաստանի համապատասխանության ուղղված հետագա ընթացակարգին<sup>141</sup>:

Այսպես, հիմնական խնդիրներից մեկն այն է, որ նախքան հանրային լուսմանը շահագրգիռ հանրության համար փաստաթղթերին ծանոթանալու համար «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով նախատեսված ժամկետը չի համապատասխանում Օրհուսի կոնվենցիայի դրույթներին: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է հանրությանը ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին լուսմանից առնվազն 7 աշխատանքային օր առաջ ծանուցելու պահանջ: Սակայն, օրենքով նախատեսված հանրության ծանուցման նշված

<sup>137</sup> Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2021 թվականի VII/8ա որոշում, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2022-01/Decision\\_VII.8a\\_eng\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2022-01/Decision_VII.8a_eng_0.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>138</sup> [https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf)

<sup>139</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2021 թվականի զեկույց, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP\\_PP\\_2021.46\\_ac\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP_PP_2021.46_ac_0.pdf) 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>140</sup> Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2021 թվականի VII/8ա որոշում, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2022-01/Decision\\_VII.8a\\_eng\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2022-01/Decision_VII.8a_eng_0.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>141</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2021 թվականի զեկույց, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP\\_PP\\_2021.46\\_ac\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP_PP_2021.46_ac_0.pdf) 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Ժամկետները Օրհուսի կոնվենցիայի Կողմերի հանդիպմամբ հաստատված՝ Հայաստանի վերաբերյալ մի շարք որոշումներում<sup>142</sup>, ինչպես նաև Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի եզրակացություններով<sup>143</sup> խնդրահարույց են համարվել, ավելին, դրանցով շահագրգիռ հանրության կողմից փաստաթղթերին ծանոթանալու համար ողջամիտ ժամկետ սահմանելու ցուցում է տրվել: 2011 թվականից ի վեր հանրությանը ծանուցելու ժամկետների հետ կապված խնդիրը բարձրացվում է:

Այս առումով, հարկ է նշել, որ Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեն դեռևս 2017 թվականի զեկույցում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերում ամրագրված ժամկետների հետ կապված մտահոգություն է հայտնել առ այն, որ մեկ շաբաթը նախքան լույսը շահագրգիռ հանրության համար փաստաթղթերին ծանոթանալու համար վաղ ծանուցում չէ Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի իմաստով՝ ելնելով նրանից, որ շահագրգիռ հանրության համար այդ տեխնիկական բնույթի մեծածավալ փաստաթղթերին ծանոթանալու և արդյունավետ մասնակցություն ունենալու համար այդ 7 օրը բավարար չէ: Ըստ կոմիտեի՝ նշված 7 օրը նվազագույն ժամկետ է, և իրավասու մարմինները կարող էին առավել երկար ժամկետ սահմանել: Նշվածի հետ մեկտեղ, Կոմիտեն արձանագրել է, որ 7 օրը չափազանց կարճ ժամանակահատված է Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի առարկա գործողությունների մեծ մասի (եթե ոչ բոլորի) համար՝ համապատասխան փաստաթղթերը քննարկելու և հանրային լույսը նախապատրաստվելու տեսանկյունից<sup>144</sup>:

<sup>142</sup> Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2011 թվականի IV/9a որոշում, հասանելի է [https://unece.org/DAM/env/pp/mop4/Documents/Excerpts/Decision\\_IV-9a\\_Compliance\\_by\\_Armenia\\_e.pdf](https://unece.org/DAM/env/pp/mop4/Documents/Excerpts/Decision_IV-9a_Compliance_by_Armenia_e.pdf) հղումով, 2014 թվականի V/9a որոշում, հասանելի է [https://unece.org/DAM/env/pp/mop5/Documents/Post\\_session\\_docs/Decision\\_excerpts\\_in\\_English/Decision\\_V\\_9a\\_on\\_compliance\\_by\\_Armenia.pdf](https://unece.org/DAM/env/pp/mop5/Documents/Post_session_docs/Decision_excerpts_in_English/Decision_V_9a_on_compliance_by_Armenia.pdf) հղումով, 2017 թվականի VI/8a որոշում, հասանելի է [https://unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance\\_by\\_Armenia\\_VI-8a.pdf](https://unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/Compliance_by_Armenia_VI-8a.pdf) հղումով, ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված 2021 թվականի VII/8a որոշում, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2022-01/Decision\\_VII.8a\\_eng\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2022-01/Decision_VII.8a_eng_0.pdf) հղումով,

Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության վերաբերյալ Կողմերի հանդիպմամբ հաստատված որոշումների կատարումը անդամ-պետությունների կողմից, հասանելի է <https://unece.org/env/pp/cc/implementation-decisions-meeting-parties-compliance-individual-parties> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>143</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2014 թվականի զեկույց, հասանելի է [https://unece.org/DAM/env/pp/mop5/Documents/Category\\_II\\_documents/ECE.MP.PP.2014.10\\_e.pdf](https://unece.org/DAM/env/pp/mop5/Documents/Category_II_documents/ECE.MP.PP.2014.10_e.pdf) հղումով, 2017 թվականի զեկույց, հասանելի է [https://unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE\\_MP.PP\\_2017\\_33\\_E.pdf](https://unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE_MP.PP_2017_33_E.pdf) հղումով, 2021 թվականի զեկույց, հասանելի է [https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP\\_PP\\_2021.46\\_ac\\_0.pdf](https://unece.org/sites/default/files/2021-08/ECE.MP_PP_2021.46_ac_0.pdf), 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>144</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2017 թվականի զեկույց, հասանելի է [http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE\\_MP.PP\\_2017\\_33\\_E.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE_MP.PP_2017_33_E.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Միաժամանակ, մեկնաբանելով Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Կոմիտեն նշել է, որ նույն դրույթում նշված ողջամիտ ժամկետը հանրության մասնակցության տարբեր/բոլոր փուլերին է վերաբերում, ուստի հանրության մասնակցության ժամկետների այդկերպ հաշվարկումը ճիշտ չէ: Կոմիտեի դիտարկմամբ՝ շահագրգիռ հանրության համար անհրաժեշտ է սահմանել ողջամիտ ժամկետ հանրության մասնակցության գործընթացի բոլոր փուլերի համար<sup>145</sup>:

Ասվածի առնչությամբ, պետք է նաև արձանագրել, որ ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ VI/8a որոշման հանձնարարականների կատարման մասին վերջնական զեկույցում<sup>146</sup> նշվել է, որ 2019 թվականին մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի փոփոխությանն ուղղված նախագիծ, որով Օրհուսի կոնվենցիայի պահանջներին են համապատասխանեցվել օրենքի դրույթները՝ սահմանելով հանրության մասնակցության համար ողջամիտ ժամկետներ: *Դրա հետք մեկտեղ նույն զեկույցի համաձայն՝ օրենսդրությամբ Կառավարության կողմից ամփոփված նախագիծն Ազգային ժողով ներկայացնելու համար վերջնաժամկետներ սահմանված չեն:*

Մարդու իրավունքների պաշտպանին Շրջակա միջավայրի նախարարությունից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարի 2021 թվականի հունվարի 1-ի N 29-Ա հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ, որի կողմից իրականացվող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի նոր նախագծի մշակման աշխատանքներն ընթացքի մեջ են: Օրենքի նախագիծը մշակվում է հիմք ընդունելով ԵՄ համապատասխան հրահանգների պահանջները<sup>147</sup>, ինչպես նաև Օրհուսի և «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» Էսպոյի կոնվենցիաներով ամրագրված պարտավորությունները:

Ըստ նույն նախարարության՝ 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի 13.1 կետով նախատեսվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը մշակել և մինչև 2022 թվականի մարտի 3-րդ տասնօրյակ ներկայացնել Վարչապետի աշխատակազմ:

<sup>145</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>146</sup> Տե՛ս ՀՀ՝ Օրհուսի կոնվենցիայի պահանջներին համապատասխանության վերաբերյալ VI/8a որոշման հանձնարարականների կատարման մասին 2020 թվականի նոյեմբերի 18-ի վերջնական զեկույց, հասանելի է [https://unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/VI.8a\\_Armenia/Correspondence\\_with\\_Party\\_concern\\_ed/frPartyVI.8a\\_18.11.2020\\_final\\_progress\\_report.pdf](https://unece.org/fileadmin/DAM/env/pp/compliance/MoP6decisions/VI.8a_Armenia/Correspondence_with_Party_concern_ed/frPartyVI.8a_18.11.2020_final_progress_report.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>147</sup> Շրջակա միջավայրի վրա որոշակի պետական և մասնավոր ծրագրերի ազդեցության մասին 2011/92/ԵՄ հրահանգ,

Շրջակա միջավայրի վրա որոշակի նախագծերի և ծրագրերի ազդեցության գնահատման մասին 2001/42/ԵՀ հրահանգ,

Շրջակա միջավայրին վերաբերող որոշակի նախագծերի և ծրագրերի կազմման մասով հանրային մասնակցությունը սահմանող և հանրային մասնակցության և արդարադատության մատչելիության վերաբերյալ 2003/35/ԵՀ հրահանգ

Շրջակա միջավայրի նախարարության տվյալների համաձայն՝ ըստ Օրհուսի կոնվենցիայի ազգային համակարգողի կողմից ներկայացված տեղեկության՝ օրենքի նախագծի մատնանշված հոդվածը համապատասխանեցվել է Օրհուսի կոնվենցիային:

Այսինքն, ստացվում է, որ ներպետական օրենսդրական կարգավորումների անկատարության հարցը նաև միջազգային չափանիշներին անհամապատասխանության տեսանկյունից արձանագրվել է ինչպես միջազգային կառույցների, այնպես էլ ոլորտի լիազոր մարմնի կողմից:

Հասարակական կազմակերպությունների համար արդարադատության մատչելիության հարցը ևս քննարկվել է Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի կողմից: Անդրադառնալով ՀՀ ներպետական կարգավորումներին՝ Կոմիտեն «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 216.6-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթները խնդրահարույց է համարել՝ հիմք ընդունելով այն, որ այդ դրույթներով հայց ներկայացնելու համար որպես նախապայման են սահմանում հիմնադրությային փաստաթղթերի կամ նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկումներին մասնակցած լինելը կամ հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորության բացակայությունը: Կոմիտեի դիրքորոշմամբ՝ արդարադատության մատչելիության համար նախապայմաններ սահմանող կարգավորումը չի համապատասխանում Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 2-րդ մասին<sup>148</sup>:

Ասվածի շրջանակներում հատկանշական են նաև արդարադատության մատչելիության ապահովմանն ուղղված Օրհուսի կոնվենցիայի դրույթները: Օրհուսի կոնվենցիայի 9-րդ հոդվածով ճանաչվում է էկոլոգիական իրավունքների խախտման համար դատական և արտադատական պաշտպանության դիմելու իրավունքը՝ ընդգծելով անկախ և անաչառ մարմնի կողմից վեճերի քննման ընթացակարգերի նախատեսման անհրաժեշտությունը:

Այս առումով, պետք է նաև նշել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2017-2019 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 483-Ն որոշման հավելված 1-ի 57-րդ կետով որպես միջոցառում նախատեսվում է շրջակա միջավայրի օրենսդրությունը և ոլորտի քաղաքականությունը համապատասխանեցնել Օրհուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի՝ Հայաստանի վերաբերյալ կայացրած որոշումներին, մասնավորապես, շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության ազատության, որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության և դատական մատչելիության հարցերում: Այս միջոցառման իրականացման համար որպես ժամկետ սահմանված է եղել 2017-2019թթ. պարբերաբար:

<sup>148</sup> Տե՛ս Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի՝ ՀՀ իր կոնվենցիոն պարտավորությունների կատարման մասին 2017 թվականի գեկույց, հասանելի է [http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE\\_MP.PP\\_2017\\_33\\_E.pdf](http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/English/ECE_MP.PP_2017_33_E.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Օրենսդրական հստակ պահանջի առկայության պարագայում նշյալ միջոցառումը մինչ օրս չի կատարվել:

Ընդ որում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման մեջ վերոնշյալ միջոցառումը տեղ չի գտել:

Վերոշարադրյալի ամփոփմամբ՝ պետք է փաստել, որ իրավասու մարմինների կողմից տարված աշխատանքները բավարար չեն ոլորտի՝ տարիներ շարունակ կարգավորման կարիք ունեցող հարցերը ու խնդիրները լուծելու և կոնվենցիոն ու միջազգային հանձնարարականներով պահանջված արդյունքին հասնելու համար: Արդյունքում, Օրհուսի կոնվենցիային համապատասխան հանրության պատշաճ ներգրավվածության և ողջամիտ ժամկետներում ծանուցման, կենտրոնացված մշտադիտարկող անկախ և անաչառ արտադատական մարմնի ստեղծման և այլ խնդիրներ շարունակում են արդիական մնալ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ գործողություններ՝ ուղղված ոլորտի խնդիրների համակարգային լուծմանը:

*Հիմք ընդունելով վերոգրյալը և ի կատարումն Կողմերի հանդիպմամբ ընդունված հանձնարարականների՝ անհրաժեշտ է՝*

1. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ վերջինիս 26-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով ամրագրված կարգավորումները համապատասխանեցնելով Օրհուսի կոնվենցիային և սահմանելով հանրային լսումների վերաբերյալ հանրությանը ծանուցելու առավել երկար ժամկետներ,

2. օրենսդրորեն երաշխավորել հասարակական կազմակերպությունների արդարադատության մարտչելիության իրավունքը՝ Համապատասխանության կոմիտեի առաջարկություններին համահունչ,

3. քայլեր ձեռնարկել ուղղված՝ Օրհուսի կոնվենցիայով նախատեսված անկախ և անկողմնակալ արդարադատական մարմնի ստեղծմանը:

## **2. Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը**

Աղտոտումը առողջ և անվտանգ շրջակա միջավայրի մեծագույն սպառնալիքներից է: Հանքարդյունաբերության հետևանքով առաջացող քիմիական նյութերն ու թափոնները, ինչպես նաև կենցաղային թափոնները բացասական ազդեցություն են ունենում շրջակա միջավայրի վրա: Թափոնների բացասական ազդեցությունը տարածվում է բնական միջավայրի, մարդկանց, բուսական ու կենդանական աշխարհի վրա. աղտոտվում են մթնոլորտային օդը, ընդերքը, ջրերն ու հողերը:

Ջրերի աղտոտվածության խնդիրը եղել է 2021 թվականի մարտահրավերներից: Ներթափանցելով ջրային օբյեկտներ՝ թափոններն ու դրանց արտանետումները վնասում են ջրային

էկոհամակարգը: Ոլորտի առկա խնդիրների մասին են փաստում ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքները: Մոնիթորինգի արդյունքներով՝ օրինակ՝ Շնող գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)<sup>149</sup>: Ընդհանուր առմամբ Շնող գետի ջրի որակի ընդհանրական դաս գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մի շարք նյութերով (մոլիբդեն, սուլֆատ իոն և այլն):

Գավառագետ, Ծաղկածոր (Տանձաղբյուր), Վարդենիս, Հրազդան Կարկաչուն, Մեծամոր, Ախթալա և մի շարք այլ գետերի ջրերի որակի ընդհանրական դասը ևս գնահատվել է «վատ» (5-րդ դաս, որն էլ ամենացածրն է)<sup>150</sup>: Ընդհանուր առմամբ, այն ջրային ռեսուրսները, որոնց ջրի որակի ընդհանրական դասը գնահատվում է լավ (2-րդ դաս) փոքրամասնություն են կազմում:

Ջրային օբյեկտների աղտոտվածության հարցը բարձրաձայնվել է նաև բնապահպանների կողմից, օրինակ՝ Լոռու մարզի Ախթալա, Շնող ու Չքնաղ<sup>151</sup> գետերի աղտոտվածության դեպքը, ինչը հանքարդյունաբերության հետևանք է<sup>152</sup>:

Այլ ջրային օբյեկտներում ևս աղտոտվածության խնդիրը լուրջ է: Այսպես, 2021 թվականի 3-րդ եռամսյակի վերաբերյալ ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ օրինակ՝ Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակի ընդհանրական դասը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), իսկ Արփի լճի ջրամբարի ջրի որակի ընդհանրական դասը՝ «անբավարար» (4-րդ դաս): Ներկայացվածը ուղղակի վկայությունն է այն բանի, որ ջրային օբյեկտների որակային ցուցանիշները մտահոգիչ ու խնդրահարույց են:

Վերոշարադրյալի կապակցությամբ, ուշագրավ է ՄԱԿ-ի կայուն զարգացման 17 նպատակներից 6-րդ նպատակը, որն ուղղված է բոլորի համար ջրի ու սանիտարական պայմանների հասանելիություն ու դրանց կայուն ձևով կառավարման ապահովմանը: Այս նպատակի իրագործման շրջանակներում նախատեսվում է բարելավել ջրի որակը մինչև 2030 թվական՝ կրճատելով աղտոտումը, վերացնելով վտանգավոր քիմիական նյութերի ներթափանցումը, նվազեցնելով դրանց արտահոսքերը, ամբողջ աշխարհում էապես ընդլայնելով վերամշակման և անվտանգ վերաօգտագործման ծավալները:

Ոլորտի լրջագույն խնդիրներից է այն, որ վտանգավոր թափոնների տեղակայման, կուտակման և վնասագերծման համար նախատեսված հատուկ վայրեր չկան: Նման վայրերի բացակայության պայմաններում վտանգավոր թափոնները ընդհանուր աղբավայրերում են կուտակվում: Առավել հաճախ վտանգավոր թափոնները հայտնվում են ոչ այդ հատուկ այդ թափոնների համար նախատեսված՝ պատահական վայրերում՝ դրանով աղտոտելով շրջակա միջավայրը: Նշվածի

<sup>149</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի «ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի արդյունքների մասին» տեղեկագիր 2021 թվականի երրորդ եռամսյակ, հասանելի է <http://env.am/storage/files/iii-eramsyak-2021.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>150</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>151</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/waste/13672/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>152</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/mining/13347/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

պատճառներից են, ի թիվս այլնի, այն, որ մասնագիտացված աղբավայրերը (արտադրական, շինարարական թափոնների) բացակայում են ու դրանով նաև պայմանավորված՝ աղբի տեսակավորումն իրականացվում է ոչ լրիվ և հատվածական կերպով:

Այս խնդիրներ մասին բարձրաձայնել է նաև Շրջակա միջավայրի նախարարությունը դեռևս 2021 թվականին Պաշտպանին ուղղված իր պարզաբանումներում: Մասնավորապես, ըստ վերջինի՝ քանի որ չկան վտանգավոր թափոնների տեղադրման հատուկ վայրեր կամ վնասազերծման օբյեկտներ, վտանգավոր թափոնների հեռացման խնդրի ժամանակավոր լուծումը ներկայումս թափոններ առաջացնող անձանց մոտ անվտանգ եղանակով պահելն է՝ մինչև վտանգավոր թափոնների տեղադրման հատուկ վայրերի կամ վնասազերծման օբյեկտների ստեղծումը:

Ավելին, ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ վերջինս որոշակի թափոնների (սնդիկային լամպեր, սնդիկ պարունակող այլ թափոններ, փոքր մարտկոցներ, բանեցված յուղեր, էլեկտրոնային սարքավորումներ, ասբեստի թափոններ, քիմիական նյութերի) հեռացման հետ կապված հարցումներ է ստանում իրավաբանական և ֆիզիկական անձանցից: Իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից սպառման արդյունքում առաջանում են վտանգավորության առաջին դասի թափոններ՝ բանեցված սնդիկային լամպեր, լյումինեսցենտային խողովակներ և սնդիկային ջերմաչափեր, որոնք ենթակա են վերամշակման: Մինչդեռ, դրանց վերամշակման ձեռնարկություններ չկան: Ըստ Նախարարության՝ 2020 թվականի ընթացքում ՀՀ-ում վտանգավոր թափոնների պոլիգոններ և վերամշակման ձեռնարկություններ չեն ստեղծվել:

Բացի այդ, Շրջակա միջավայրի նախարարության տեղեկությունների համաձայն՝ առաջանում են նաև տարբեր տեսակի բանեցված հանքային և սինթետիկ յուղերի վտանգավոր թափոններ, որոնք ենթակա են վերամշակման, վնասազերծման, սակայն դրանց իրականացման համար անհրաժեշտ հզորություններ առկա չեն:

Այս խնդրի արդիականությունը պահպանվում է մինչ օրս. չկան վտանգավոր թափոնների տեղադրման կամ պահման համար նախատեսված հատուկ վայրեր՝ նույնիսկ ժամանակավոր տեղադրման կամ պահման համար: Արդյունքում, վտանգավոր թափոնները հայտնվում են դրանց համար չնախատեսված և կենցաղային թափոնների համար նախատեսված բաց վայրերում՝ դրանով իսկ վնաս հասցնելով շրջակա միջավայրին<sup>153</sup>:

Դեռևս 2019 թվականին Շրջակա միջավայրի նախարարությունը նշել էր, որ թափոնների գործածության բնագավառում առաջացող խնդիրներից է այն, որ թեև ըստ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի «14.Շրջակա միջավայրի պահպանության բնագավառ» բաժնի 1-ին կետի՝ վտանգավոր թափոնների գործածությունը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ, սակայն աղբահանություն և սանիտարական մաքրություն իրականացնող ընկերությունները լիցենզավորված չեն:

Ավելին, Նախարարության կողմից խնդիր էր ներկայացվել առ այն, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 30-ի N 121-Ն որոշման մեջ

<sup>153</sup> Հասանելի է [https://fb.watch/bkExMc\\_VZ9/](https://fb.watch/bkExMc_VZ9/) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



կատարված փոփոխությամբ «Վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա» արտահայտությունը փոխարինվել է «Վտանգավոր թափոնների գործածության լիցենզիա» արտահայտությամբ: Սակայն, տնտեսվարողներին նախկինում տրամադրված՝ գործող «Վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաները» փոփոխության չեն ենթարկվել և չեն վերաձևակերպվել: Նախարարության տեղեկությունների համաձայն՝ նման պարագայում խնդիրներ են առաջացել նախկինում լիցենզիա ստացած տնտեսվարողների մասով: Մասնավորապես, խնդիրն այն է, որ վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիա ստացած տնտեսվարողներն իրավասու են իրականացնել միայն այն գործողությունը, որի համար ստացել են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն: Մինչդեռ, գործնականում տնտեսվարողները փաստացի իրականացում են նաև գործունեություն, որի համար չեն ստացել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն:

Նշվածով պայմանավորված, ըստ Շրջակա միջավայրի նախարարության, մշակման փուլում է գտնվում ««Լիցենզավորման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով նախատեսվում է պահանջ սահմանել վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության համար նախկինում լիցենզիա ստացած տնտեսվարողների համար որոշակի ժամկետի ընթացքում շրջակա միջավայրի ոլորտում լիազոր մարմին դիմելու, վտանգավոր թափոնների գործածության գործունեության նոր տեսակի լիցենզիա և իրենց ներկայացրած փաստաթղթերին համապատասխան լիցենզիայի ներդիրներ ստանալու նպատակով, որոնցով թույլատրվում է զբաղվել գործունեության կոնկրետ տեսակով՝ միայն լիցենզիայի ներդիրներում նշված թափոնատեսակների գործածության համար:

Բացի այդ, Նախարարության պարզաբանումների համաձայն՝ խնդիր կա առ այն, որ նախկինում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիա ստացած որոշ տնտեսվարողներ, հիմնավորելով, որ մինչև օրենսդրական փոփոխությունները տրամադրված լիցենզիաները չեն սահմանում, թե կոնկրետ որ թափոնատեսակների գործածության համար են տրվել դրանք, իրականացնում են վերջիններիս տրված շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություններում չնախատեսված թափոնատեսակների ընդունում, վերամշակում կամ վնասազերծում:

Ներկայացվածի հետ մեկտեղ, պետք է նշել, որ որոշակի քայլեր են ձեռնարկվել ուղղված ոլորտի խնդիրների լուծմանը: Այսպես, ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ 2021 թվականի փետրվարի 4-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N90-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» N 115-Ն Կառավարության որոշումը, ինչը միտված է երրորդ երկրների հետ վտանգավոր թափոնների առևտրի իրականացման դեպքում ոլորտը կարգավորող ՀՀ նորմատիվ իրավական ակտերի ներդաշնակեցմանը ԵՏՄ համապատասխան իրավական ակտերին:

Նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ապրիլի 8-ին ընդունվել է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների միջև փոխադարձ առևտուր իրականացնելիս վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման եզրակացության (թույլատրագրի) տրամադրման կարգը հաստատելու մասին» N 489-Ն Կառավարության որոշումը:

Ազգային ժողովի կողմից 2021 թվականի նոյեմբերի 17-ին առաջին ընթերցմամբ ընդունվել են «Սնդիկի մասին» և «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերը: Օրենքների ընդունման նպատակը սնդիկ և սնդիկի միացություններ պարունակող ապրանքների արտադրության, ներմուծման և արտահանման արգելքներ և սահմանափակումներ սահմանելն է, ինչը միտված է նաև սնդիկային թափոնների գոյացման կանխարգելմանը:

Նախարարություն պարզաբանումներով՝ մշակվել և սահմանված կարգով վարչապետի աշխատակազմ է ներկայացվել «Թափոնների մասին օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի փաթեթը, ինչով նախատեսվում է իրավական հիմք ստեղծել «Աղբավայրերի մոնիթորինգի իրականացման կարգը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման համար: Նշված Կառավարության որոշման նախագիծը ներկայացվել է Կառավարություն:

Ըստ Նախարարության տեղեկությունների՝ Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվել և Ազգային ժողովի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքը, համաձայն որի՝ մինչև 2024 թվականի հունվարի 1-ը կերկարաձգվի բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների, մասնավորապես, մեծ, միջին և փոքր ավտոբուսների, մարդատար տրանսպորտային միջոցների, մոտոցիկլների և մոպեդների ներմուծման և (կամ) օտարման համար գործող ԱԱՀ-ից ազատման արտոնության ժամկետը: Օրենքի ընդունմամբ նպաստավոր պայմաններ են ստեղծվել երկրում էլեկտրական շարժիչով աշխատող տրանսպորտային միջոցների ձեռքբերումն ու կիրառումը խթանելու, արդեն իսկ արձանագրված դրական արդյունքների շարունակականության ապահովման, շարժական աղբյուրներից մթնոլորտային օդի աղտոտվածության նվազեցման համար: Էլեկտրական շարժիչով տրանսպորտային միջոցների քանակի զգալի աճը կնպաստի նաև դրանց շահագործման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների (լիցքավորման կայաններ, վերանորոգման կետեր և այլն) զարգացմանը՝ լրացուցիչ ներդրումների (միջազգային և մասնավոր հատվածի կողմից) և նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով:

Միևնույն ժամանակ, Նախարարության կողմից նշվում է, որ 2021 թվականի ընթացքում անթափոն տեխնոլոգիաներ կիրառող տնտեսվարողների համար արտոնություններ տրամադրող օրենսդրական փոփոխություններ և տնտեսական խրախուսանքի միջոցներ կիրառող ծրագրեր չեն իրականացվել:

Ընդունելով հանդերձ, որ 2021 թվականի ընթացքում որոշակի աշխատանքներ են կատարվել՝ այնուհանդերձ, պետք է նշել, որ առկա կարգավորումներն ու մինչ օրս ձեռնարկված քայլերը բավարար չեն ոլորտի խնդիրների հաղթահարման համար, ինչի ուղղակի վկայությունն է այս խնդիրների ինչպես 2021 թվականի ընթացքում, այնպես էլ տարիներ շարունակ առկայությունը. արձանագրված խնդիրները առավել մտահոգիչ են դառնում դրանց տևականության տեսանկյունից: Այս առումով, հարկ է ընդգծել, որ խիստ կարևոր է թափոնների վերացման և կառավարման համար բավարար կազմակերպական և տեխնիկական պայմանների ապահովումը:

Հիշատակման է արժանի նաև այն, որ կենցաղային թափոնների տեսակավորման հարցում 2021 թվականի ընթացքում ևս որոշակի դրական շարժ է գրանցվել: 2021 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները Երևան քաղաքում թափոնների տեսակավորման նոր ամանների տեղադրման և դրանց հասանելիության ապահովման ուղղությամբ<sup>154</sup>: Դրա հետ մեկտեղ, ողջ հանրապետությունում թափոնների տեսակավորման խնդիրը շարունակում է առկա լինել՝ դրա հատվածական և ոչ լրիվ իրականացմամբ, որոշ մասնագիտացված աղբամանների բացակայությամբ, ինչպես նաև բնակչության ոչ բավարար իրազեկվածությամբ պայմանավորված:

*Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է՝*

1. *օրենսդրական փոփոխությունների միջոցով ստեղծել արտոնություններ տրամադրող ու տնտեսական խրախուսանքի այլ միջոցներ կիրառող ծրագիր (քաղաքականություն) այն տնտեսվարողների նկատմամբ, ովքեր կներդնեն, կկիրառեն կամ կիրականացնեն առավելագույն անթափոն միջոցներ, մեխանիզմներ կամ տեխնոլոգիաներ, կամ կընդունեն դրանց այն տեսակները, որոնք էկոլոգիապես անվտանգ են և շրջակա միջավայրի վրա ունեն նվազագույն վնասակար ազդեցություն,*

2. *ստեղծել թափոնների տեսակավորման և վերամշակման գործուն և կայուն համակարգ համապետական մակարդակով՝ ապահովելով դրա նկատմամբ արդյունավետ վերահսկողություն:*

### **3. ՓՀԷԿ-երը և ջրային ռեսուրսների գերօգտագործումը**

ՄԱԿ-ի 2015թ. սեպտեմբերի պատմական գագաթնաժողովի ժամանակ աշխարհի երկրների առաջնորդներն ընդունել են Միավորված ազգերի կազմակերպության կայուն զարգացման 17 նպատակները: Կայուն զարգացման 2030 օրակարգում ներառված այդ նպատակները պաշտոնապես ուժի մեջի են մտել 2016 թվականի հունվարի 1-ից: Օրակարգ 2030-ի 6-րդ նպատակը ջրի և սանիտացիայի հասանելիության խնդրի վերաբերյալ է: Այդ նպատակը նախատեսում է ջրի ու սանիտարական պայմանների հասանելիության և դրանց կայուն ձևով կառավարման ապահովում՝ այդ ճանապարհին լուծելով անվտանգ և մատչելի խմելու ջրի համընդհանուր, հավասար հասանելիությունից ընդհուպ մինչև բոլորի համար համարժեք և հավասար սանիտարահիգիենիկ պայմանների ապահովման և ջրամատակարարման ու

<sup>154</sup> Հասանելի է <https://www.facebook.com/YerevanTesakavorum/posts/260954815487887> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ջրահեռացման կառավարման բարելավման ոլորտներում առկա խնդիրները: Որպես այս նպատակի թիրախ սահմանվում է բոլոր ոլորտներում ջրօգտագործման արդյունավետության բարձրացումն ու քաղցրահամ ջրի կայուն ջրառի և ջրամատակարարման ապահովումը<sup>155</sup>:

Գետային էկոհամակարգերի հետ կապված խնդիրները Հայաստանի Հանրապետությունում մշտապես առկա են: Այս խնդիրների պատճառը ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու վատնումն է: Իր հերթին ջրային ռեսուրսների գերօգտագործման հիմնական աղբյուրն էլ ՓՀԷԿ-երն են ու խախտումները, որ թույլ են տրվում դրանց շահագործման ընթացքում: Ըստ Շրջակա միջավայրի նախարարության տվյալների՝ 2021 թվականի տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործում է 10 ՀԷԿ 2 գետի վրա և 190 ՓՀԷԿ՝ 93 գետի վրա:

Դեռևս 2020 թվականին արձանագրվել էին ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրաքանակների գերազանցման հետ կապված խնդիրներ, որոնց կիզակետում Եղեգիս գետի ծանրաբեռնվածության խնդիրն էր: Եղեգիս գետի ծանրաբեռնվածության խնդիրը ուշադրություն գրավել էր և՛ բնապահպանների շրջանում, և՛ տեղի բնակչության, և՛ ոլորտի իրավասու մարմինների: Բնապահպանները իրենց մտահոգությունն էին հայտնել Եղեգիս գետի ծանրաբեռնվածության վերաբերյալ՝ ահազանգելով, որ միայն բուն Եղեգիս գետի վրա կառուցված ՓՀԷԿ-երի շահագործման արդյունքում (չհաշված Եղեգիս գետը սնող վտակների վրա կառուցված ՓՀԷԿ-երին) գետի հոսքը դերիվացված է 51.46%-ով, իսկ նախատեսվող 4 ՓՀԷԿ-ի շահագործման դեպքում այդ մեծությունը 76.69%-ի կհասնի<sup>156</sup>: Եղեգիս գետի ծանրաբեռնվածության խնդիրն առնչվող՝ ամռանը ոռոգման ջրի պակասի հետ կապված բնակչությունը ևս դժգոհություն էր արտահայտել՝ խնդրի պատճառ համարելով գետի վրա կառուցված ՓՀԷԿ-երի գործունեությունը<sup>157</sup>:

2020 թվականին Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի «Մինա-Մայա» ՍՊԸ-ին պատկանող «Եղեգնաձոր» ՓՀԷԿ-ում կատարած ստուգումների արդյունքում պարզվել էր, որ ընկերությունն իրականացրել է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրաքանակից ավել ջրառ՝ խախտելով ջրային օրենսդրությունը պահանջները, իսկ շրջակա միջավայրին հասցված վնասը հաշվարկվել է 8.694. 215 ՀՀ դրամի չափով<sup>158</sup>: ՓՀԷԿ-ում կատարված ստուգման արդյունքում կայացվել էր վարչական տույժ նշանակելու մասին որոշում, որը կատարվել էր:

«Եղեգ ՀԷԿ» ՍՊԸ-ին պատկանող «Եղեգ» ՓՀԷԿ-ում իրականացված 2020 թվականի ընթացքում ստուգման արդյունքում Տեսչական մարմնի կողմից պարզվել էր, որ ընկերությունն իրականացրել է ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված ջրաքանակից ավել ջրառ՝ խախտելով ՀՀ ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի պահանջը և շրջակա միջավայրին հասցնելով 3.813.821 ՀՀ դրամի

<sup>155</sup> Տե՛ս Կայուն զարգացման նպատակ 6, հասանելի է <http://un.am/hy/p/sustainable-development-goal-6> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>156</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/water/12709/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>157</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>160</sup> Հասանելի է <https://www.ecoinspect.am/14-%d5%b4%d5%ac%d5%b6-%d5%a4%d6%80-%d5%be%d5%b6%d5%a1%d5%bd%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d6%81%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b6%d5%bb/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

չափով վնաս<sup>160</sup>: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020 թվականին ձեռնարկված քայլերի վերաբերյալ պարզաբանումներով՝ «Եղեգ» ՓՀԷԿ-ում իրականացված ստուգումների արդյունքում ևս կայացվել էր վարչական տույժ նշանակելու մասին որոշում, որը «Եղեգ ՀԷԿ» ՍՊ ընկերության կողմից բողոքարկվել էր դատական կարգով:

Ասվածի շրջանակներում, ջրօգտագործման թույլտվություններով տրված ջրաքանակների գերազանցման հետ կապված պետք է նշել, որ ըստ Ջրային օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի՝ ջուրը պետք է վերցվի և օգտագործվի միայն ջրօգտագործման թույլտվության մեջ նշված նպատակներով և չպետք է գերազանցի արդյունավետ օգտագործման համար Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի հիմնավորած և սահմանած չափաքանակները: Նույն օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ ջրօգտագործման թույլտվության յուրաքանչյուր կողմ պարտավոր է կատարել ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պարտավորությունները:

Շրջակա միջավայրի նախարարությունը, Եղեգիս գետի սակավաջրության խնդրին անդրադառնալով, 2020 թվականի գործողությունների կապակցությամբ պարզաբանել էր, որ Նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N369-Ա հրամանով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի նպատակն է Եղեգիս գետի վրա գտնվող ՓՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվություններով ամրագրված ռեժիմների և դրանց հնարավոր փոփոխության ուսումնասիրությունը, խնդիրների վերհանումը և վերջիններս գույքագրելուց հետո համապատասխան օրենսդրական և իրավական ակտերի փոփոխությունների հետ կապված առաջարկությունների մշակումը:

Ելնելով Եղեգիս գետի սակավաջրության խնդրից՝ հարցումներ են արվել նաև Շրջակա միջավայրի նախարարություն պարզելու նպատակով, թե ի՞նչ արդյունքներ են գրանցվել Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N369-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի՝ Եղեգիս գետի վրա գտնվող ՓՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվություններով ամրագրված ռեժիմների և դրանց հնարավոր փոփոխության վերաբերյալ ուսումնասիրություններով:

Շրջակա միջավայրի նախարարության պարզաբանումների համաձայն՝ Շրջակա միջավայրի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 28-ի N 369-Ա հրամանով ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից 2021 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսների ընթացքում ուսումնասիրություններ են կատարվել Եղեգիս գետի և դրա Այսաս, Արտաբույնք, Կարակայա, Քարագլուխ վտակների վրա կառուցված թվով 18 ՓՀԷԿ-ում: Արդյունքում, արձանագրվել են մի շարք խախտումներ ու թերություններ: Այդ արդյունքներով պայմանավորված՝ 2021 թվականի ընթացքում Վայոց ձորի մարզի Եղեգիս գետի և նրա վտակների վրա կառուցված 18 ՓՀԷԿ-երից

<sup>160</sup> Հասանելի է <https://www.ecoinspect.am/14-%d5%b4%d5%ac%d5%b6-%d5%a4%d6%80-%d5%be%d5%b6%d5%a1%d5%bd%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d6%81%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b6%d5%bb/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

վերանայվել են 9 ՓՀԷԿ-երի ջրօգտագործման թույլտվություն՝ ղեկավարվելով Սևանա լիճ «Արփա-Սևան» թունել N2-ով տեղափոխման, ոռոգման պահանջարկի բավարարման և Եղեգիս գետում բնապահպանական թողքի ապահովման առաջնահերթություններով:

Ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների՝ 2021 թվականի ընթացքում Եղեգիս գետի վրա գտնվող ՓՀԷԿ-երի շահագործման շրջանակներում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից երեք ՓՀԷԿ-երում, որոնցից մեկում՝ «Գետիկ ՀԷԿ» ՍՊԸ-ի «Գետիկվանք» ՓՀԷԿ-ում, խախտումներ չեն հայտնաբերվել, իսկ երկուսում՝ «Արատես Էներջի» ՍՊԸ-ի «Նանե» ՓՀԷԿ-ում (տուգանքը վճարվել է պետական բյուջե) ու «Բազենք» ՓԲԸ-ի «Եղեգիս-1» ՓՀԷԿ-ում (որոշումը դատական կարգով բողոքարկվել է) արձանագրվել են ՀՀ Զրային օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի և 114-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների խախտումներ:

ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը 2021 թվականի ընթացքում «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ-ում իրականացված ստուգման արդյունքում արձանագրած խախտումներով ընկերությանը ներկայացրել է 14 միլիոն 259 հազար 226 դրամի վնասի հատուցման պահանջ: Ընկերությանը պատկանող «Ամբերդ-1», «Ամբերդ-2» և «Ամբերդ-3» ՓՀԷԿ-երը խախտել են տրված ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված պարտավորությունները՝ իրականացնելով ջրօգտագործման թույլտվությունից ավելի ջրային ռեսուրսների ջրառ: ՓՀԷԿ-երում տեղադրված ուլտրաձայնային ջրաչափերը չեն գործել: Վարչական վիճակագրական տարեկան հաշվետվությունները ներկայացվել են սահմանված կարգի խախտմամբ և աղավաղմամբ: «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակվել են վարչական տուգանքներ՝ ընդհանուր 530 հազար դրամի չափով<sup>160</sup>:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2021 թվականին կատարված ստուգումների արդյունքում 17 ՀԷԿ-երում ու ՓՀԷԿ-երում հայտնաբերած խախտումներով շրջակա միջավայրին հասցված վնասը հաշվարկվել է 626 միլիոն դրամից ավելի և կիրառվել է մոտ 3.5 միլիոն դրամի վարչական տուգանք<sup>161</sup>:

Ըստ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի՝ 2021 թվականի ընթացքում ՓՀԷԿ-երի և ՀԷԿ-երի շահագործման շրջանակներում արված ստուգումների արդյունքում հայտնաբերվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի

<sup>160</sup> Հասանելի է <https://www.ecoinspect.am/14-%d5%b4%d5%ac%d5%b6-%d5%a4%d6%80-%d5%be%d5%b6%d5%a1%d5%bd%d5%ab-%d5%b0%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d6%81%d5%b4%d5%a1%d5%b6-%d5%ba%d5%a1%d5%b0%d5%a1%d5%b6%d5%bb/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>161</sup> Հասանելի է <https://www.ecoinspect.am/%d5%a2%d5%b6%d5%a1%d5%ba%d5%a1%d5%b0%d5%ba%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d6%87-%d5%a8%d5%b6%d5%a4%d5%a5%d6%80%d6%84%d5%ab-%d5%bf%d5%a5%d5%bd%d5%b9%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6-%d5%b4-48/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

խախտման 3 դեպք: Իրավախախտները տուգանվել են և տրվել են «Խախտումները վերացնելու վերաբերյալ» պարտադիր կատարման հանձնարարականներ:

Ըստ Շրջակա միջավայրի նախարարության՝ 7 ՓՀԷԿ-երի ջրառի կետերում տեղադրվել է առցանց հոսքաչափ:

Խնդրի շրջանակներում, պետք է արձանագրել, որ ՀՀ ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների համար որպես ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժման հիմք է նախատեսված ՓՀԷԿ-երի կառուցման նախատեսումն այն գետերի վրա, որոնք հանդիսանում են Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր կամ որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է:

ՀՀ ջրային օրենսգրքի 30.1-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրվում է, որ այդ գետերի ցանկը պարտավորվում է սահմանել Կառավարությունը: Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նոր կառուցվող ՓՀԷԿ-երին տրամադրվող ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են, եթե ՓՀԷԿ-երի կառուցումը նախատեսվում է նշված գետերի վրա:

Պաշտպանի դեռևս 2019 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդման շրջանակներում բարձրացվել է այն խնդիրը, որ նշված գետերի ցանկը սահմանված չէ: Այս առումով, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2021 թվականի ապրիլի 19-ին ընդունել է «Նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերի մերժում՝ նախատեսված Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր հանդիսացող կամ դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի ծանրաբեռնված գետերի ցանկը սահմանելու մասին» թիվ 488-Ն որոշումը, որով թվով 25 գետեր ընդգրկված են քննարկվող ցանկում: Դրա հետ մեկտեղ, հարկ է ընդգծել, որ 2021 թվականի ընթացքում չի սահմանվել այն գետաբերանների ցանկը, որտեղ առկա են սողանքային տարածքներ, որտեղ էլ հետևաբար նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների համար ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են:

Վերոգրյալի հաշվառմամբ, պետք է փաստել, որ 2021 թվականի ընթացքում տիրող իրավիճակը վկայում է, որ խնդիրը պետք է ենթարկվի համակարգային և պարբերական ուսումնասիրման:

*Արձանագրելով 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքները՝ այնուամենայնիվ, անհրաժեշտ է ուժեղացնել ՓՀԷԿ-երի շահագործման նկատմամբ վերահսկողությունը, որպեսզի կանխվեն և վերացվեն դրանց շահագործման հետևանքով առաջացող ջրային ռեսուրսների գերօգտագործումն ու էկոհամակարգերի հետ կապված խնդիրները:*

#### **4. Հանքավայրերի շինարարության և շահագործման հետ կապված խնդիրներ**

Հանքարդյունաբերության՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը հանքարդյունաբերական գործունեություն իրականացնող երկրներում ամենատարածված

խնդիրներից է: Այն վատթարացնում է շրջակա միջավայրի որակը՝ բացասաբար ազդեցություն ունենալով մակերևութային և ստորերկրյա ջրերի, օդի, ծովային և առափնյա տարածքների վրա<sup>162</sup>: Հանքարդյունաբերության ուղղակի ազդեցության օբյեկտն են կազմում շրջակա միջավայրն ու բնակչության առողջությունը:

Հանքավայրերի շինարարության ու շահագործման հետ կապված խնդիրները 2021 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ: Այս խնդիրները 2021 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո են գտնվել:

### 5.1 Ամուսարի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներ

Ամուսար լեռան վրա կատարվող ոսկու հանքի շինարարական աշխատանքների և հետագայում հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության խնդիրը տարիներ շարունակ բարձրացվում է քաղաքացիական հասարակության, ներառյալ՝ հասարակական կազմակերպությունների և անհատ բնապահպանների կողմից: Այս հարցի կապակցությամբ բազմաթիվ անգամներ բողոքներով Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել հանքավայրի շրջակա բնակավայրերի բնակիչները, հանքի շահագործման համար թույլտվություն ստացած ընկերությունը, այդ ընկերության աշխատակիցները: Նշված բողոքներով ներկայացված խնդիրները 2021 թվականի ընթացքում ևս արդիական են եղել: Բողոքներից բացի, հարցի կարևորությունից ու հանրային հետաքրքրությունից ելնելով՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացրել է քննարկվող խնդրի ամբողջական դիտարկում իր սահմանադրական կարգավիճակի առավելագույն հնարավորությունների շրջանակներում և իր իրավասությանն առնչվող մասով: Խնդիրը դիտարկվել է բացառապես Պաշտպանի իրավասության սահմաններում շահագրգիռ բոլոր կողմերի մտահոգությունների ու տեղեկությունների հավաքագրման նպատակով:

«Լիդիան Արմենիա» կազմակերպության կազմած «Ամուսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիր փոփոխված նախագծի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում»» փաստաթղթին տրված դրական եզրակացությունն առջինն ճանաչելու և հանքավայրի շինարարական աշխատանքները կասեցնելու հարցը բարձրացված հիմնական խնդիրն է: Բանն այն է, որ մի շարք բնապահպաններ ու փորձագետներ պնդում են ներկայացնում առ այն, որ Ամուսարի հանքի շահագործումը լուրջ էկոլոգիական վտանգների առաջացման սպառնալիք է: Այդ դեռ բավական չէ, վերջիններիս պնդումներով՝ պետական փորձաքննական եզրակացությունը առանց փորձաքննության լիարժեք իրականացման է տրվել<sup>163</sup>:

Ամուսարի հանքավայրի շահագործման բնապահպանական և սոցիալական հետևանքների վերաբերյալ կատարվել են շատ հետազոտություններ, որոնք ուղղված են հանքավայրի

<sup>162</sup> Հասանելի է <https://sustainabledevelopment.un.org/partnership/?p=1636> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>163</sup> Հասանելի է <https://econews.am/?p=8721&l=am,%20https://www.ecolur.org/hy/news/mining/~/10594/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



շահագործման սոցիալական հետևանքների վերաբերյալ ազդակիր համայնքների բնակչության ընկալումների ու գնահատականների<sup>164</sup>, հանքավայրի շահագործման բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման վերլուծության ու կենսաբազմազանության վրա դրա շահագործման ազդեցության<sup>165</sup>, Ամուլսարի հանքավայրի շահագործման խնդրի շուրջ առկա իրավիճակի, շրջակա միջավայրի վրա դրա հնարավոր ազդեցության և 2020 թվականի ընթացքում խնդրի շրջանակներում տեղի ունեցած իրադարձությունների<sup>166</sup> պարզմանը:

Վերոշարադրյալի առնչությամբ, հարկ է արձանագրել, որ Ամուլսարի հանքավայրի շահագործման համար դրական եզրակացությունը տրվել է ՀՀ բնապահպանության նախարարի կողմից դրական եզրակացությունը հաստատվել է 2016 թվականի ապրիլի 29-ի թիվ ԲՓ-35 պետական փորձաքննական եզրակացությամբ:

Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ Ամուլսարի հանքավայրի շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն ու դրա հնարավոր ռիսկերն ուսումնասիրելու նպատակով դեռևս 2019 թվականին արվել էր Ամուլսարի հանքավայրի շահագործման ծրագրի միջազգային բնապահպանական փորձաքննություն: Փորձաքննության արդյունքների հրապարակմանը հաջորդեցին Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ պայքարող բնապահպանների ու ակտիվիստների բողոքի ակցիաները նոր թափով. բողոքի ակցիաներ են իրականացվել մայրաքաղաքում՝ ՀՀ կառավարության շենքի դիմաց, ինչպես նաև հանքավայրի ազդակիր համայնքներում:

Այս առիթով 2019 թվականի օգոստոսի 23-ից 25-ը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները Ամուլսարի հանքի շահագործման վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրություն իրականացնելու, հարակից համայնքների բնակիչների և բնապահպան մասնագետների հետ հանդիպելու և քննարկումներ կազմակերպելու, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպելու նպատակով գործուղվել են Վայոց ձորի մարզ (Գնդեվազ, Զառիթափ և Սարավան գյուղական համայնքներ, Ջերմուկ քաղաք) և Սյունիքի մարզ (Գորայք գյուղական համայնք): Այցի ընթացքում խնդիրները քննարկվել են և՛ տեղի բնակիչների, և՛ պետական կառույցների ներկայացուցիչների հետ:

<sup>164</sup> Տե՛ս ««Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման վերաբերյալ սոցիալական հետևանքների գնահատականը ազդակիր համայնքների բնակչության կողմից» սոցիոլոգիական հետազոտություն, 2018 թվականի հոկտեմբերի 2-6, հասանելի է <https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-1-Social-min.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>165</sup> Տե՛ս «Կենսաբազմազանության փոխհատուցումը և Հայաստանում Ամուլսարի ոսկու ծրագրի «Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում» փաստաթղթի այլ խնդիրները» 2019 թվականի հունվար, հասանելի է <https://bankwatch.org/wp-content/uploads/2019/01/Amulsar.-Report-2-Biodiversity-min.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>166</sup> Հասանելի է <https://bankwatch.org/wp-content/uploads/2021/01/RAW-DEAL.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Աշխատանքային խմբի ներկայացուցիչներն առանձնագրույցներ են անցկացրել ինչպես այն անձանց հետ, ովքեր դրական են վերաբերվում Ամուլսարի հանքի շահագործմանը, այնպես էլ նրանց հետ, ովքեր շահագործմանը դեմ են արտահայտվում: Այցի արդյունքները միանշանակ չեն եղել: Բնակիչների մի մասը դժգոհել է, որ Ամուլսարի հանքի շահագործումը դադարեցվել է՝ պատճառաբանելով, որ շատերը այդ կերպ զրկվել են իրենց աշխատանքներից: Վերջիններիս պնդմամբ՝ շահագործման ընթացքում «Լիդիան Արմենիա» ընկերությունը պահպանում է օրենսդրությամբ և միջազգային չափանիշներով ամրագրված բոլոր պահանջները, իրականացրել է բնակիչների համար առողջապահական և մի շարք ծրագրեր՝ համայնքներում առկա խնդիրների վերացմանն ուղղված:

Բնակիչների մյուս մասը Ամուլսարի հանքի շահագործմանը դեմ է արտահայտվել այն պատճառաբանությամբ, որ ազդակիր համայնքների լուսմները հանքի շահագործումից առաջ պատշաճ չեն կազմակերպվել: Բարձրաձայնել են հանքավայրի շահագործումը սպառնում է բացասական հետևանքներ առաջացնել՝ վտանգելով շրջակա միջավայրը, մարդկանց կյանքը և առողջությունը, ռազմական անվտանգությունն ու զբոսաշրջությունը:

Ամուլսարի շահագործման շուրջ տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ 2020 թվականի օգոստոս ամսին Երևանում և Ջերմուկ քաղաքում (Ամուլսարի տարածքում) կազմակերպվել են հավաքներ, որոնք ևս Պաշտպանի կողմից դիտարկվել են: Այս իրադարձությունները եղել են Պաշտպանի ուշադրության ներքո, կատարվել է իրականացվող բողոք ակցիաների մշտադիտարկում<sup>167</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի արագ արձագանքման խումբը տեղի ունեցող իրադարձությունների կապակցությամբ 2020 թվականի օգոստոսի 4-5-ն այցելել է Ամուլսարի հանքավայրի շահագործման տարածք քաղաքացիներին և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին և Ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության Վայքի բաժին բերման ենթարկվածներին հանդիպելու նպատակով: Ջերմուկ գործուղված Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպումներ և քննարկումներ են ունեցել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, համայնքների բնակիչների, ինչպես նաև հանքավայրի շահագործման դեմ պայքարող ակտիվիստների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

<sup>167</sup> Ամուլսարի հանքավայրի շահագործմանը դեմ արտահայտվողների կողմից 2020 թվականին իրականացվող բողոքի ակցիաներին անդրադարձել է նաև «Հյուման Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպությունն իր 2021 թվականի զեկույցի՝ Հայաստանում 2020 թվականին տեղի ունեցած միջոցառումների բաժնում՝ նշելով որ Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործումը վերսկսելու ծրագրերի դեմ բողոքի ցույցերը շարունակվել են ամբողջ տարվա ընթացքում:

Տե՛ս «Հյուման Ռայթս Ուոչ» (Human Rights Watch) իրավապաշտպան կազմակերպություն 2021 թվականի զեկույցը 2020 թվականի իրադարձությունների վերաբերյալ, հասանելի է [https://www.hrw.org/sites/default/files/media\\_2021/01/2021\\_hrw\\_world\\_report.pdf#page=29&zoom=100,1406,116](https://www.hrw.org/sites/default/files/media_2021/01/2021_hrw_world_report.pdf#page=29&zoom=100,1406,116) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Երևանում 2020 թվականի օգոստոս ամսին Ամուլսարի հանքավայրի շահագործման թեմայով տեղի ունեցած իրադարձությունների առթիվ Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են ՀՀ ոստիկանության համապատասխան բաժիններ բերման ենթարկված անձանց հանդիպելու նպատակով: Հավաքների ազատության արգելքի պայմաններում, որը պայմանավորված է եղել նոր կորոնավիրուսային համավարակով, քննարկման առարկա է հանդիսացել այն հարցը, թե նշված իրադարձությունները հավաքներ են, թե՛ ոչ:

Ամուլսարի հանքավայրը հիմք է հանդիսացել ոչ միայն շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ քննարկումների, այլև բնապահպանների և Ամուլսարի հանքավայրի աշխատողների բախումների համար: Ասվածի մասին է վկայում այս տարիների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների բովանդակությունը: Դեռևս 2018 թվականին Պաշտպանին բողոք են հասցեագրել «Լիդիան Արմենիա» ընկերության 174 կին աշխատակիցներ: Բողոքով վերջիններս տեղեկացրել են, որ ամիսներ շարունակ իրենց աշխատավայր տանող ճանապարհը փակ է, դրա հետևանքով իրենք չեն կարողանում մուտք գործել աշխատավայր: Ըստ վերջինների՝ Ամուլսարի հարակից համայնքներում, հատկապես՝ Ջերմուկում և Գնդեվազում, ճանապարհը փակող մի խումբ անձինք հարձակվում են իրենց վրա, հնչեցնում սպառնալիքներ ու գործադրում ճնշումներ: «Լիդիան Արմենիա» ընկերության 192 աշխատակիցներ ևս նույնաբովանդակ բողոք են հասցեագրել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:

Ասվածի շրջանակներում, հարկ է անդրադառնալ նաև ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի բնական ռեսուրսների շահագործման դեմ բողոքի ակցիաների առնչությամբ դիտարկումներին, որոնք տեղ են գտել վերջինիս՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցում<sup>168</sup>: Հատուկ զեկուցողն այց է իրականացրել Ամուլսար հանքավայրի հարող տարածք և լսել մտահոգությունները հանքավայրի հասանելիությունը արգելափակած բողոքի ակցիա անող անձանց :

Հատուկ զեկուցողը կարևորում է այն, որ կառավարությունը խորհրդակցի համայնքների հետ շահագործման սոցիալական և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության, ինչպես նաև դրանից բխող օգուտների վերաբերյալ հարցերի շուրջ: Զեկույցում արձանագրվում է, որ ստեղծված իրավիճակը շտկելու համար առաջին քայլը, որ կառավարությունը պետք է ձեռնարկի՝ խորհրդատվություններ անցկացնելն է՝ հավաստիանալու, որ այս ծրագրերը համապատասխանում են գործարարության և մարդու իրավունքների ուղենիշային սկզբունքներին:

Ամուլսարի հանքավայրի շուրջ ստեղծված իրավիճակը պարբերաբար քննարկվել է միջազգային մի շարք գործընկերների, այդ թվում՝ ՄԱԿ-ի նշված հատուկ զեկուցողի հետ: Դեռևս 2019

<sup>168</sup> Տե՛ս ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույ, 2019 թվականի մայիսի 13, էջ 10 հասանելի է <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G19/136/82/PDF/G1913682.pdf?OpenElement> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

թվականին Հատուկ զեկուցողը առանձին հանդիպում է ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի հետ: Այս առնչությամբ, Պաշտպանը ևս կարևոր է համարել բոլոր կողմերին լսելն ու Կառավարության կողմից այդ քաղաքականությունը շարունակելը:

*Այս առումով, պետք է կարևորել Կառավարության կողմից հարցն անմիջական ուշադրության ներքո պահելը՝ ինչպես պետական մարմինների հետ քննարկումների, այնպես էլ անմիջականորեն Վայոց Ձորի մարզ այցերի ու բնակիչների հետ հանդիպումների ձևաչափերով: Ընդ որում, կարևոր է, որ դա իրականացվում է հրապարակայնություն ապահովելով:*

Հարկ է նաև նկատել, որ դեռևս 2018 թվականի ընթացքում կատարված տեսչական ստուգումների արդյունքում արձանագրվել էին շինարարական աշխատանքների ընթացքում օրենսդրության պահանջների և հանքավայրերի շահագործման մի շարք խախտումներ<sup>169</sup>: Ստուգումների արդյունքներն ամրագրող վարչական ակտը բողոքարկվել է դատական կարգով: Վարչական դատարանը 2020 թվականի փետրվարի 26-ի վճռով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության հայցը բավարարել է մասնակի՝ անվավեր ճանաչել ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 24.08.2018թ. թիվ 30 ստուգման ակտի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի վարչական բողոքը մերժելու մասին 15.11.2018թ. թիվ 30/1 որոշումը, հայցը մնացած մասով՝ մերժել:<sup>170</sup>:

Ամուսարի հանքավայրի շահագործման, ինչպես նաև դրա՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նոր գնահատման իրականացման անհրաժեշտության վերաբերյալ Շրջակա միջավայրի նախարարության դիրքորոշումը պարզելու նպատակով Պաշտպանի աշխատակազմը ուղղակի հարցադրումներ է արել նախարարությանը, որին ի պատասխան՝ նախարարությունը ներկայացրել է իր՝ 2019 թվականին Վարչապետի աշխատակազմին ուղղված գրությունը: Գրությամբ ներկայացվում են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ փաստաթղթերի (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության) վերաբերյալ պետական կառավարման լիազոր մարմինների, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի, Elard ու TRC ընկերությունների դիրքորոշումներ, որոնցով արձանագրվում են «Լիդիան Արմենիա» ՓԲԸ փաստաթղթերի (այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության) վերաբերյալ մի շարք խնդիրներ: Նույն գրությամբ այդ դիրքորոշումների հիման վրա Նախարարությունը խնդրում է Վարչապետին ստուգումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարական տալ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին:

<sup>169</sup> Մանրամասն տե՛ս «2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, էջեր 204-205, հասանելի է <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>170</sup> Տե՛ս թիվ ՎԴ/11628/05/18 վարչական գործը:

Դրա հետ մեկտեղ, Շրջակա միջավայրի նախարարության՝ 2021 թվականի ընթացքում ձեռնարկված քայլերի վերաբերյալ պարզաբանումների համաձայն՝ Լիդիան Արմենիա» ՓԲԸ 2021 թվականի մարտի 2-ին դիմել է Շրջակա միջավայրի նախարարություն՝ հայտնելով, որ վերը հիշատակված գրության հետ կապված ընկերությունը և միջազգային փորձագետների խումբը կազմել են փաստաթուղթ, ինչը պարզաբանում է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունում և ծրագրին առնչվող այլ փաստաթղթերում առկա ենթադրյալ թերությունների հարցերը և խնդրել է նախարարությանը տրամադրել վերջինիս դիրքորոշումը:

Շրջակա միջավայրի նախարարությունը 2021 թվականի մարտի 4-ին Շրջակա միջավայրի նախարարի տեղակալի գրությամբ ընկերությանն է տրամադրել ներկայացված պարզաբանումների վերաբերյալ նախարարության համակարգի կառույցների, Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի և Գիտությունների ազգային ակադեմիայի երկրաբանական գիտությունների ինստիտուտի կարծիքների պատճենները, ինչից հետո Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն նախարարությանն է տրամադրել կարծիքների վերաբերյալ պատասխանները:

Խնդրի շրջանակներում հարկ է արձանագրել նաև, որ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման թույլտվության գործընթացում հնարավոր չարաշահումների վերաբերյալ քննվող քրեական գործով վարույթը կարճվել է<sup>171</sup>: Ըստ Քննչական կոմիտեի՝ էկոլոգիական, երկրաբանական, հիդրոլոգիական, երկրաֆիզիկական, քիմիական, շինարարատեխնիկական և տնտեսագիտական համալիր փորձաքննության արդյունքում դրական եզրակացություն ստացած Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման նպատակով ներկայացված փաստաթղթերում առկա են թերություններ, թերհաշվարկներ, անճշտություններ և տվյալների բացեր: Հիշյալ հետևությունների վերաբերյալ «Լիդիան Արմենիա» ընկերությունը ներկայացրել է իր գրավոր առարկությունները: Քննչական կոմիտեի տեղեկություններով՝ նախաքննությամբ պարզվել է նաև, որ բնապահպանական նույն երևույթների և դրանց հետ կապված տվյալների վերաբերյալ իրարամերժ փաստարկները պայմանավորված են դրանք հաշվարկելու և գնահատելու ընթացքում տարբեր մեթոդաբանություններ կիրառելու՝ գիտական խորը վեճերով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ հաստատված կոնկրետ չափորոշիչների և մեթոդաբանության բացակայությամբ: Նշվածի կապակցությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացի կարգավորման իրավական ընթացակարգում առկա թերությունները վերացնելու նպատակով նույն քրեական գործի շրջանակներում համապատասխան փաստաթղթեր են ուղարկվել նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն:

Վերոնշյալի կապակցությամբ պետք է նշել, որ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տվյալների համաձայն՝ և՛ 2019, և՛ 2020, և՛ 2021 թվականների ընթացքում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը պատկանող Վայոց ձորի մարզի Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների

<sup>171</sup> Հասանելի է <https://www.investigative.am/news/view/amulsar-karchum.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հանքավայրում տեսչական ստուգումներ չեն իրականացվել, շինարարության կամ շահագործման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ:

Կարևոր է նաև այն արձանագրումը, որ դեռևս 2018 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ քաղաքի և Գնդեվազ բնակավայրի 19 բնակիչներ դիմել էին ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ բնապահպանության նախարարի՝ պահանջելով պարտավորեցնել ՀՀ բնապահպանության նախարարին ուժը կորցրած ճանաչել Ամուլսարի ոսկերեք քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի փոփոխված նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձագիտական ԲՓ-35 եզրակացությունը և ՀՀ բնապահպանության նախարարի 29.04.2016թ. դրա հաստատումը: Դատական գործընթացը դեռևս չի ավարտվել<sup>172</sup>:

Հարկ է նաև նշել, որ Ջերմուկ խոշորացված համայնքի ավագանին 2018 թվականի դեկտեմբերի 18-ին որոշում է ընդունել, որով հավանություն է տվել համայնքի բնակիչների կողմից համայնքի ավագանուն ներկայացրած կոլեկտիվ հանրագրում նշված «Ջերմուկ համայնքն էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու վերաբերյալ» առաջարկությանը: Հանրագրում բնակիչները նշել էին նաև հետևյալի մասին, որ Ամուլսարում ոսկու արդյունահանմանը դրական եզրակացություններ տալով՝ մինչև 2016 թվական Ջերմուկը չի համարվել Ամուլսարի ծրագրի ազդակիր, իսկ 2016 թվականին ազդակիր հայտարարվելուց հետո էլ այնտեղ պատշաճ կարգով չեն կազմակերպվել հանրային լսումներ<sup>173</sup>:

«Էկոլուր» տեղեկատվական հասարակական կազմակերպությունն ու «CEE Bankwatch Network» ՀԿ-ների միջազգային ցանցը բողոք էին ներկայացրել Բեռնի կոնվենցիայի քարտուղարություն այն կապակցությամբ, որ Ամուլսարում ոսկու հանքի ծրագիրը խախտում է կոնվենցիայով Հայաստանի ստանձնած պարտավորությունները: Բողոքում ներկայացված է, թե ինչպես է ՀՀ կառավարությունն անտեսել Ամուլսարի ոսկու հանքի ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականում առկա ապացույցները, որոնք մատնանշում էին Էմերալդ բնապահպանական հատուկ հետաքրքրություն ներկայացնող թեկնածու երեք տարածքների (ԲՀՀՏ)՝ Ջերմուկի, Գորայքի և Սևանա լճի բուսական և կենդանական աշխարհների վրա զգալի ազդեցությունները: Էմերալդ ԲՀՀՏ-ն մի կարգավիճակ է, որը շնորհվում է Բեռնի կոնվենցիայի կողմից բնության կարևոր նշանակություն ունեցող տարածքներին: Ամուլսարի տարածքը ներառված է Բեռնի կոնվենցիայով նախատեսված «Էմերալդ» գոտում՝ այսինքն կենսաբազմազանության առումով արժեքավոր և պաշտպանության ենթական տարածք է<sup>174</sup>:

Բեռնի կոնվենցիայի Բյուրոն վերահաստատել է իր հանձնարարականը՝ կասեցնել ցանկացած զարգացում, որը կարող է բացասաբար ազդել Կոնվենցիայով պաշտպանվող կենսամիջավայրերի

<sup>172</sup> Տե՛ս թիվ ՎԴ/10166/05/18 դատական գործ:

<sup>173</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/amulsar/-/10701/>, [http://www.jermuk.am/upload/DocFlow/Council/Th18122715383371823\\_100001.pdf](http://www.jermuk.am/upload/DocFlow/Council/Th18122715383371823_100001.pdf) հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>174</sup> Հասանելի է <https://rm.coe.int/other-complaint-armenia-amulsar-gold-project-comp-report/1680a1db9b> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

և տեսակների վրա, անկախ նրանից դա վերաբերում է «Էմերալդ» ցանցի տարածքներին, թե ոչ, և մեկ անգամ ևս խնդրել է ՀՀ իշխանություններից զեկույց ներկայացնել, որը մասնավորապես կարծազանքի Ամուլսարի ոսկու հանքի խնդրին: Բյուրոն հիշեցրել է, որ «Էմերալդ» ցանցի ներքո ստանձնած պարտավորությունները գոյություն ունեն ինչպես թեկնածուների, այնպես էլ հաստատված տարածքների համար և որ իշխանությունները պետք է հետևեն Մշտական հանձնաժողովի թիվ 208 (2019) հանձնարարականին՝ «Էմերալդ» ցանցի տարածքների էկոլոգիական բնույթի փոփոխությունները հայտնաբերելու, զեկույցելու, գնահատելու և արձագանքելու վերաբերյալ: Նրանք պետք է հարգեն «Էմերալդ» ցանցի իրական շահերը: Բյուրոն նաև խրախուսել է իշխանություններին գործընթացում ներգրավել բոլոր համապատասխան շահագրգիռ կողմերին: Այս մասին նշված է Բեռնի կոնվենցիայի քարտուղարության կողմից 2021թ-ի ապրիլի 30-ին ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանն ուղղված նամակում<sup>175</sup>:

Կառավարությունը, սրան ի պատասխան, նշել է, որ իրականացվում է հնարավոր տարածքների սահմանների հստակեցում և ճշգրտում, փորձագետների ուսումնասիրություններից հետո նախարարությունը Կոնվենցիայի Քարտուղարությանը պաշտոնապես կներկայացնի Էմերալդ» ցանցի թեկնածու տարածքների օպտիմալացված ցանկը<sup>176</sup>:

*Ասվածի հաշվառմամբ՝ հարկ է ընդգծել, որ Ամուլսարի հանքավայրի շինարարության և շահագործման խնդիրն ընկալվում է իբրև համազգային խնդիր: Հետևաբար, չափազանց կարևոր է, որ Կառավարությունը շարունակի իրազեկման աշխատանքներ իրականացնի ոչ միայն ազդակիր համայնքի, այլև ողջ բնակչության շրջանում:*

*Վերոնշյալ տվյալներից կարելի է հետևություն անել, որ առկա է համակարգային խնդիր. մի կողմից անհրաժեշտ է հաշվի առնել հարակից համայնքների բնակիչների իրավունքները և իրականացնել իրավիճակի անկախ և համալիր գնահատում, մյուս կողմից էլ անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել աշխատողների իրավունքների ոչնչացման դեպքերի և վերջիններիս իրավունքների դեմ ոչնչությունների բացահայտման ուղղությամբ:*

## 5.2 Թեղուտի հանքավայրի շահագործման հետ կապված խնդիրներ

2021 թվականի ընթացքում ևս արդիական են եղել «Թեղուտ» ՓԲԸ-ում բնապահպանական ստուգումների իրականացման, ինչպես նաև հանքավայրի շահագործման ընթացքում անվտանգության ապահովման հարցերը, որոնք ևս տարիներ շարունակ բարձրացվում են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում:

2019 թվականին վերագործարկվել է Թեղուտի հանքավայրը, որի շահագործումը 2018 թվականին դադարեցվել էր: Հանքավայրի շահագործման հետ կապված բարձրաձայնվել են

<sup>175</sup> Հասանելի է <https://rm.coe.int/report-1st-meeting-of-the-bureau-14-15-april-2021/1680a24efe> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>176</sup> Հասանելի է <https://rm.coe.int/files50e-2021-armenia-amulsar-gold-project-govt-report/1680a2dc9c> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



խնդիրներ դրա շահագործման ռիսկերի ու հանքավայրի պոտենցիալի անկայունության<sup>177</sup>, հանքավայրի շահագործման դրական եզրակացության բացակայության<sup>178</sup>, ինչպես նաև **Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրում հանքարդյունաբերության՝ մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության**<sup>179</sup> վերաբերյալ:

Հանքավայրի շրջակա միջավայրի բնակիչները 2021 թվականի ընթացքում իրենց բողոքն են բարձրացրել՝ պահանջելով դադարեցնել արտանետումները դեպի գյուղատնտեսական նշանակության հողեր և շրջակա միջավայր, գյուղատնտեսական հողերից<sup>180</sup>:

Ասվածից բացի, բնապահպանները պնդում են, որ վերագործարկվելուց առաջ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ծրագիրը նոր բնապահպանական փորձաքննություն չի անցել, ավելին, հանքի շահագործման նպատակով տրված բնապահպանական ԲՓ-135 դրական եզրակացության գործողության ժամկետն ավարտվել է 2014թ. նոյեմբերի 7-ին:

Իրավական հիմքերի հստակեցման նպատակով Թեղուտի հանքավայրի շահագործման փորձաքննական եզրակացության ժամկետի պարզաբանման պահանջ է ներկայացվել ոլորտի իրավասու մարմիններին՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը և ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին: Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմը հարցադրում է արել առ այն, թե ի՞նչ փորձաքննական եզրակացության հիման վրա է ներկայում Թեղուտի հանքավայրը շահագործվում: Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ «Թեղուտ» փակ բաժնետիրական ընկերությունը 2006 թվականի նոյեմբերի 7-ին ստացել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական թիվ ԲՓ-135 եզրակացությունը՝ 8 տարի շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ: Ավելին, Տեսչական մարմինը նշել է, որ 2021 թվականի ընթացքում ընկերությունում ստուգումներ չեն իրականացվել, և առաջարկել է դիմել լիազոր մարմնին:

Նշվածի կապակցությամբ, Շրջակա միջավայրի նախարարության տեղեկություններով՝ «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ի՝ Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի և պղնձամոլիբդենային հանքավայրի 1-ին հերթի (8 տարի ժամկետով) շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ 2006 թվականի նոյեմբերի 7-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացություն (ԲՓ-135), նույն ընկերությանը Թեղուտի փիրուզի հանքավայրի շահագործման աշխատանքային նախագծի

<sup>177</sup> Հասանելի է <https://www.azatutyun.am/a/30085282.html>, <https://www.ecolur.org/hy/news/teghout/12403/> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>178</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/mining/-/11903/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>179</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/teghout/13605/> հղումով <https://www.ecolur.org/hy/news/teghout/13458/>, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Ջրային ռեսուրսների որակային ցուցանիշներին անդրադարձը տե՛ս սույն բաժնի «Քիմիական նյութերի և թափոնների անվտանգ հեռացումն ու ոչնչացումը» պարագրաֆում:

<sup>180</sup> Հասանելի է <https://www.ecolur.org/hy/news/teghout/13742/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



վերաբերյալ (8,6 տարի ժամկետով) 2008 թվականի օգոստոսի 19-ին տրվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական փորձաքննական եզրակացություն (ԲՓ-85):

Մինևույն ժամանակ, Նախարարությունը իր 2020 թվականին իրականացրած գործողությունների վերաբերյալ պարզաբանումներում նշել էր, որ փորձաքննական եզրակացության փորձաքննական պահանջներում, թեպետ ամրագրված են, որ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ներկայացնել՝ հանքավայրի սահմաններում տեղակայված Թեղուտի փիրուզի հանքարդյունահանման ծրագիրը, ենթակառուցվածքների և Թեղուտ գյուղի տարածքում հանգստյան գոտու (արհեստական լճակ, քրթեջներ և այլն) նախագծային փաստաթղթերը, հանքավայրի երկրորդ հերթի շահագործման նախագծային փաստաթղթերը և տարածքի (հանքավայր, լցակույտ, պոչամբար և այլն) ռեկուլտիվացիայի ու կոնսերվացման նախագծային փաստաթղթերը, այնուամենայնիվ, նշված ծրագիրն ու նախագծային փաստաթղթերը փորձաքննության չեն ներկայացվել:

Այս առումով, ըստ Շրջակա միջավայրի նախարարության վերջին պարզաբանումների՝ Թեղուտի փիրուզի հանքարդյունահանման ծրագրից, ենթակառուցվածքների և Թեղուտ գյուղի տարածքում հանգստյան գոտու (արհեստական լճակ, քրթեջներ և այլն) նախագծային փաստաթղթերից, հանքավայրի երկրորդ հերթի շահագործման նախագծային փաստաթղթերից և տարածքի (հանքավայր, լցակույտ, պոչամբար և այլն) ռեկուլտիվացիայի ու կոնսերվացման նախագծային փաստաթղթերից «Թեղուտ» ՓԲ ընկերության կողմից շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել միայն Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի երկրորդ հերթի բացահանքի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, ինչի վերաբերյալ 2021 թվականի նոյեմբերի 16-ին տրվել է Տեխնիկական առաջադրանք, որում ներկայացվել է նախկինում արդյունահանման աշխատանքների հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի և կոնսերվացման վերաբերյալ պահանջներ: Հարկ է ընդգծել, որ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ փորձաքննական դրական եզրակացությունը տրվում է հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության փաստաթղթերում նշված ժամկետով, եթե եզրակացությունում այլ ժամկետ չի սահմանված, որը պետք է ունենա հիմնավոր պատճառաբանություն: Նույն հոդվածի 6-րդ հոդվածի համաձայն՝ առանց փորձաքննական դրական եզրակացության արգելվում է հիմնադրությամբ փաստաթղթի ընդունումը կամ նախատեսվող գործունեության իրականացումը:

Վերոնշյալից ելնելով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով 94<sup>1</sup>-րդ հոդվածով վարչական պատասխանատվություն է նախատեսվել առանց փորձաքննական դրական եզրակացության շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեության իրականացման համար: Ըստ նույն օրենսգրքի 242-րդ հոդվածի՝ շրջակա միջավայրի օրենսդրության կատարման նկատմամբ պետական վերահսկողությունը, այդ թվում՝

վերոնշյալ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացնում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը:

Ընդհանուր առմամբ, մտահոգության տեղիք է տալիս առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության՝ գործունեություն ծավալելու արձանագրված խախտումների շարունակական առկայությունը, ինչը փաստում է արդյունավետ կառուցակարգերի գործադրման անհրաժեշտության մասին:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել պատշաճ վերահսկողություն Թեղուրի հանքավայրի շահագործման գործընթացի նկատմամբ՝ օրենսդրության պահանջների պահպանման տեսանկյունից:*

Հանքարդյունաբերության խնդիրներին անդրադառնալով՝ պետք է նաև անդրադարձ կատարել 2022 թվականի փետրվարի 10-ին Կառավարության նիստում հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին<sup>181</sup>: Մասնավորապես, նշված նախագծի լուծումներով հնարավորություն է ստեղծվում անհաղթահարելի ուժի հիմքով ընդերքօգտագործման իրավունքի ժամկետի երկարաձգման: Նախագծի 13-րդ հոդվածով նախատեսվում է, որ անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում, այդ հիմքով ընդերքօգտագործման գործող իրավունքի ժամկետները երկարաձգվում են առավելագույնն այդ հանգամանքների գործողության ժամկետով: Նույն հոդվածի համաձայն՝ անհաղթահարելի ուժ են համարվում հրդեհները, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները կամ այլ բնական աղետները, ինչպես նաև պայթյունները, պատերազմը, ահաբեկչությունը, քաղաքացիական պատերազմը, քաղաքացիական զանգվածային անհնազանդությունը, որոնք ընդերքօգտագործողը չէր կարող կանխատեսել, կանխարգելել եւ որոնց հետեւանքով ընդերքօգտագործողը չի կատարել կամ անպատշաճ է կատարել սույն օրենսգրքով եւ ընդերքօգտագործման իրավունքով սահմանված պարտավորությունները:

Նախագծային կարգավորումները խիստ մտահոգությունների տեղիք են տվել քաղաքացիական հասարակության շրջանում: Այսպես, այս դժգոհությունները արտահայտվում են 54 բնապահպան կազմակերպությունների ու անհատների հայտարարություններով, որոնցով վերջիններս Կառավարությանը պահանջում են հետ կանչել Ազգային ժողով ուղարկված քննարկվող նախագիծը<sup>182</sup>: Քննարկվող նախագիծը նաև չի ներկայացվել Մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

<sup>181</sup> Հասանելի է <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=65021> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>182</sup> Հասանելի է <https://hraparak.am/post/6ecf1b68a86f80479df9b7df2f1e09b9>  
<https://www.ecolor.org/hy/news/mining/13786/>  
<https://prwb.am/2022/02/18/%D5%B0%D5%A1%D5%B5%D5%BF%D5%A1%D6%80%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-10-02-2022%D5%A9->

---

[%D5%B6%D5%AB%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4-%D5%A1%D5%BC%D5%A1%D5%B6%D6%81-%D5%A6%D5%A5/](#) հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

## ԲԱԺԻՆ 5. ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Վարչական մարմնի գործունեությունը պետք է համապատասխանի օրենսդրի կողմից սահմանված ընթացակարգային պահանջներին, որքան էլ որ ընթացակարգային պահանջները ՀՀ իրավական համակարգում ունեն օժանդակ գործառույթ: Ընթացակարգային պահանջներին հետևելու նպատակն իրավաչափ որոշում կայացնելն ու շահագրգիռ անձանց իրավունքների գործնականում արդյունավետ պաշտպանությունն ապահովելն է: Իզուր չէ, որ պատշաճ վարչարարություն իրականացնելու պահանջը սահմանված է Սահմանադրությամբ երաշխավորման նպատակով: Սահմանադրության 50-րդ հոդվածն ընդլայնում և հստակեցնում է սահմանադրական կարգավորումները՝ ամրագրելով, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք և որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Վարչական մարմինների և վարչարարությանը վերաբերող հարաբերությունները ՀՀ-ում կարգավորված են օրենսդրական մակարդակով ևս: 2021 թվականի ընթացքում շարունակում են արդիական և մտահոգիչ մնալ ոչ պատշաճ (թերի) վարչարարության հետևանքով մարդկանց իրավունքների խախտման դեպքերը:

### ***1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների մասին անձանց պարզաձև չճանուցելը***

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ բարձրացրել է կատարողական վարույթի կողմերի պատշաճ չճանուցվելու վերաբերյալ գործնական և օրենսդրական խնդիրները: Չնայած դրան 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ խնդիրը լուծում չի ստացել:

Հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումներն ուղարկելու (հանձնելու) կարգը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1 հոդվածով:

Նշված հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը հարկադիր կատարողի համար սահմանել է պարտականություն պատշաճ ձևով ծանուցելու իր որոշումների մասին պահանջատիրոջը և պարտապանին: Այս կարգավորումն ուղղված է կատարողական վարույթի կողմերի՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով սահմանված իրավունքների ապահովմանը, որի համաձայն՝ կատարողական վարույթի կողմերն իրավունք ունեն մասնակցել կատարողական գործողություններին, ներկայացնել միջնորդություններ, բողոքարկել հարկադիր կատարողի որոշումները, օգտվել օրենքով

սահմանված այլ իրավունքներից և այլն: Ըստ այդմ, հարկադիր կատարողի որոշումների վերաբերյալ ծանուցված լինելը կատարողական վարույթի կողմերին հնարավորություն է տալիս որպես վարույթի մասնակից արդյունավետ կերպով իրացնելու իրենց իրավունքները:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ անձինք շարունակվում են պատշաճ ծանուցված չլինել կամ ուշ ծանուցվել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կայացրած որոշումների, ինչպես նաև իրենց գույքի և դրամական միջոցների վրա արգելանքի կիրառման և հարկադիր կատարողի կայացրած այլ որոշումների մասին:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով՝ անձը տեղեկացրել է, որ հարուցված կատարողական վարույթի պարտապան է: Վերջինս հայտնել է, որ իր բնակարանն աճուրդով վաճառված լինելու մասին տեղեկացել է, երբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցներն այցելել են իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակարան: Անձի տեղեկացմամբ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից որևէ ծանուցում չի ստացել: Նշվածի կապակցությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը պարզաբանել է, որ ծանուցումն ուղարկվել է փոստային առաքման միջոցով, սակայն, ըստ բողոք ներկայացրած անձի՝ ինքը փոստային առաքմամբ ուղարկված որոշումը չի ստացել: Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից պարզաբանվել է, որ «Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին» որոշման օրինակները հետ են վերադարձվել ծառայություն «Չպահանջված» նշումով: Պարզաբանվել է նաև, որ վերը նշված որոշումը տեղադրվել է հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային «Azdarar.am» կայքէջում:

Պատշաճ չծանուցման խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանվել է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կատարողական վարույթի կողմերին ծանուցելու վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարում: Այնուամենայնիվ, կատարողական վարույթի կողմերին ծանուցումը Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն իրականացնում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28.1-րդ հոդվածով սահմանված կարգով:

ՀՀ արդարադատության նախարարությունից տրված նման պատասխանը վկայում է այն մասին, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ խնդիրները բարձրաձայնելուց հետո ոլորտում պատշաճ հսկողություն չի իրականացվել, և չեն նախատեսվել միասնական քաղաքականության շրջանակներում արձանագրված խնդիրների լուծումներ թե գործնական և թե օրենսդրական մակարդակով:

Հարկ է նշել, որ 2021 թվականին ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ անձինք տեղեկացել են իրենց նկատմամբ հարուցված կատարողական վարույթների մասին բանկում գործարք կատարելիս: Նշվածը փաստում է, որ առկա ծանուցման համակարգն անարդյունավետ է:

Հարկ է նշել, որ պատշաճ ծանուցման օրենսդրական խնդրին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>183</sup>:

Բանն այն է, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումներն ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն, իսկ նույն հոդվածով նախատեսված դեպքերում ուղարկվում են էլեկտրոնային փոստի հասցեով կամ հաղորդակցության այլ միջոցներով:

Խնդիրն այն է, որ ծանուցման խնդիրներն առավելապես խորացան, երբ 2019 թվականի օգոստոսի 4-ին «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքում կատարվեց փոփոխություն, որով սահմանվեց հարկադիր կատարողի որոշումների և ծանուցումների ուղարկման (հանձնման) նոր կարգ:

Մինչև 2019 թվականի օգոստոսի 4-ը գործող կարգավորումների ուժով հարկադիր կատարողներն իրենց կայացրած որոշումները կատարողական վարույթի կողմերին պետք է ուղարկեին պատվիրված նամակով, հետևաբար, պարզապես փոստային առաքմամբ ուղարկված լինելը Պաշտպանի գնահատմամբ խնդրահարույց է:

Մասնավորապես, օրենսդրական նման լուծումը խնդրահարույց է անձի լսված լինելու սահմանադրական իրավունքի լիարժեք ապահովման տեսանկյունից: Իսոթն այն մասին է, որ պատշաճ կերպով ծանուցված չլինելով իր նկատմամբ կայացված վարչական ակտերի կամ վարչական որևէ գործընթացի վերաբերյալ՝ անձը զրկվում է նաև վարչական վարույթի վերաբերյալ իր փաստարկները և առարկությունները ներկայացնելու հնարավորությունից, այլ կերպ ասած՝ լսված լինելու իր սահմանադրական իրավունքից: Սա բնականաբար ունի իր հետևանքները, ընդ որում՝ անձանց համար ոչ բարենպաստ:

Համեմատության կարգով հարկ է նշել, որ օրենսդրական այլ կարգավորումներում՝ օրինակ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում, օրենսդիրը նախապատվությունը տվել է պատվիրված փոստով ծանուցմանը, ոչ թե հասարակ փոստային առաքմանը: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ևս կարևորվել է օրենսդրական ակտերում պատվիրված փոստի կառուցակարգը: Մասնավորապես, վերը նշված օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանելով, որ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Այսինքն, օրենսդիրը, նշված օրենսդրական ակտերում պատվիրված փոստի կառուցակարգից չհրաժարվելով, ընդգծել է դատավարության կամ վարչական վարույթի կողմի ծանուցված լինելու մասին դատարանի կամ վարչական մարմնի տեղեկացված լինելու փաստը: Բոլոր այն դեպքերում,

<sup>183</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ՝ 371-383

երբ նամակն ուղարկվում է ոչ պատվիրված փոստով, ուղարկողը զրկվում է նամակը հասցեատիրոջը հասնելու մասին տեղեկացված լինելու հնարավորությունից: Հակառակ պարագայում ստեղծվելու էին իրավիճակներ, երբ սովորական փոստով ուղարկված նամակը հասցեատերը չստանար, մինչդեռ դատարանը կամ վարչական մարմինը համարեին այն ստացված և ձեռնարկեին դրանից բխող իրենց հետագա գործողությունները, ինչը կլինեին անթույլատրելի և Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված արդար դատաքննության իրավունքի կոպտագույն խախտում: Իսկ այն դեպքում, երբ Օրենքում շեշտված չէ ծանուցագրերը պատվիրված նամակով ուղարկելու անհրաժեշտության մասին, այսինքն՝ որպես ծանուցման եղանակ՝ օգտագործվում է «փոստային առաքում» ձևակերպումը, դա ենթադրում է, որ ծանուցումներն ուղարկվում են առանց պատվիրված նամակի, ինչը գործնականում հնարավորություն չի տալիս հարկադիր կատարողներին տեղյակ լինելու, թե արդյոք կատարողական վարույթի կողմերը ստացել են իրենց հասցեագրված ծանուցագրերը, թե՛ ոչ:

Հարկ է նշել, որ իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ օրենքները պետք է համապատասխանեն մարդու իրավունքներին, ոչ թե հակառակը: Մինչդեռ, Օրենքի գործող կարգավորումները չեն բխում անձի՝ պատշաճ վարչարարության բաղադրատարր հանդիսացող լաված լինելու սահմանադրական իրավունքից:

Այս առումով հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ անձը պարտավոր չէ վարչական ակտի ընդունման մասին տեղեկանալ պաշտոնական տեղեկագրից, այլ պետք է անձամբ ծանուցվի իր նկատմամբ կայացված վարչական ակտի և հարուցված վարչական վարույթի մասին:

Տեղին է շեշտել նաև, որ ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք: Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների: Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

Նշվածի կապակցությամբ Սահմանադրական դատարանը 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ, արձանագրել է հետևյալը. 1) անձի լաված լինելու իրավունքը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր է, 2) լաված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու իրավական պաշտպանության միջոց է, որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ, 3) անձի լաված լինելը պատշաճ վարչարարության հիմնարար բաղադրիչ է, 4) անձի լաված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառույթային նշանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ արդյունավետ

պաշտպանության ապահովման հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց օբյեկտիվությունը և լիարժեքությունը՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով, 6) վարչական վարույթում լավաժ լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա, 8) «(...) բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմնի կողմից լուծման կարող են չանցկացվել օրենքով սահմանված բացառիկ դեպքերում (տե՛ս, օրինակ, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-4-րդ մասերը):

ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված դիրքորոշումների լույսի ներքո անձի կողմից պատշաճ ծանուցված լինելու փաստը պետք է հաստատվի հասցեատիրոջ կողմից ցանկացած եղանակով ակտն ստանալու հավաստման միջոցով: Կոնկրետ գործով Սահմանադրական դատարանը գտել է, որ հարկ վճարողներին հարկային մարմնի կողմից պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն էլեկտրոնային եղանակով ուղարկելը՝ առանց այդ փաստաթղթի մուտքագրումը հավաստող ծանուցագրի ստացման, չի կարող դիտարկվել բավարար պայման, որպեսզի հարկ վճարողը համարվի պատշաճ ծանուցված: Օրենքի վիճարկվող կարգավորումը նույնանում է Հարկային օրենսգրքի՝ թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ վիճարկվող կարգավորման հետ այնքանով, որքանով հնարավորություն չի տալիս հարկադիր կատարողին ստանալու կատարողական վարույթի կողմերին ուղարկված որոշումների ու ծանուցագրերի՝ վերջիններիս կողմից ստանալու փաստը հավաստող ծանուցագիր:

ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մարտի 14-ի թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով կայացված որոշման համաձայն՝ վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված «Կատարողական վարույթ հարուցելու մասին» հարկադիր կատարողի որոշումն (...) իր բնույթով վարչական ակտով նախատեսված հանրային իրավական դրամական պահանջի հարկադիր կատարմանն ուղղված կատարողական վարույթի՝ որպես իրավական ընթացակարգի սկզբն ազդարարող իրավական ակտ է հանդիսանում: Վերոգրյալի համատեքստում պետք է փաստել, որ կատարողական հետագա գործողությունների մասին կատարողական վարույթի կողմերին ծանուցելու հարցում խիստ կարևոր է հատկապես իրավական հենց այդ ընթացակարգի սկզբի պատշաճ ազդարարումը:

Այսպիսով, վարչական վարույթի շրջանակներում լավաժ լինելու իրավունքի ապահովման կարևորագույն երաշխիքն է վարչական վարույթի հարուցման և վարչական վարույթի շրջանակներում կայացված վարչական ակտերի մասին պատշաճ ծանուցված լինելը: Միայն վարչական վարույթի մասնակիցներին վարույթի հարուցման և հետագա վարչական ակտերի կայացման մասին պատշաճ ծանուցելու պայմաններում է հնարավոր երաշխավորել վարչական վարույթի ընթացքում նրանց լավաժ լինելու իրավունքը:



Այսպիսով, ասվածը հիմք է տալիս եզրակացնել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումը ողջամտորեն չի ապահովում կատարողական վարույթի կողմերի պատշաճ ծանուցված լինելու, հետևաբար՝ լաված լինելու իրավունքի արդյունավետ իրականացումը:

Հարկադիր կատարողի որոշումներն ու ծանուցագրերը կատարողական վարույթի կողմերին ուղարկելու օրենսդրական պահանջի նպատակը վերջիններիս իրավունքների և շահերի վերաբերյալ կայացվելիք վարչական ակտերի մասին իրազեկելն է, ինչն էլ իր հերթին ծառայում է նրանց լաված լինելու սահմանադրական իրավունքի իրացման ապահովմանը:

Այս նպատակի հաշվառմամբ՝ կարող ենք վստահաբար պնդել Օրենքի 28.1-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ծանուցման կարգի՝ որպես ՀՀ սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացման անարդյունավետության մասին: Ակնհայտ է, որ հարկադիր կատարողի որոշումներն ու ծանուցագրերը կատարողական վարույթի կողմերին փոստային առաքմամբ՝ առանց ստացման մասին հետադարձ ծանուցման ուղարկելու մեխանիզմը չի երաշխավորում սահմանադրորեն կանխորոշված նպատակի լիարժեք իրացումը և չի բացառում կատարողական վարույթի կողմերի օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները:

Հարկադիր կատարողի որոշումների և ծանուցագրերի՝ կատարողական վարույթի կողմերին ուղարկելու կարգը չպետք է հակասի անձի լաված լինելու իրավունքին, այն պետք է հանդիսանա լաված լինելու իրավունքի ապահովման երաշխիք, արդյունավետ ընթացակարգ և հարկադիր կատարողների կողմից իրականացվող վարչարարության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նախադրյալ:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե 2021 թվականի ընթացքում ի՞նչ միջոցառումներ են նախաձեռնվել հարկադիր կատարողի բոլոր որոշումները կատարողական վարույթի կողմերին պատվիրված փոստով ուղարկվելու ուղղությամբ, ՀՀ արդարադատության նախարարությունը չի ներկայացրել ամբողջական և ըստ էության պատասխան: Փոխարենը վկայակոչել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28.1-րդ հոդվածի 3-րդ մասը՝ շեշտելով, որ հարկադիր կատարողն օրենքով լիազորված է, և ըստ այդմ՝ պարտավոր է, կատարողական վարույթի կողմերին պատվիրված նամակով ուղարկել կատարողական վարույթի ընթացքում կայացվող ոչ թե բոլոր որոշումները, այլ միայն այն որոշումները, որոնք ստանալու փաստով պայմանավորված է գործողությունների կատարման համար որոշակի ժամկետի հաշվարկը:

Ստացվում է, որ Պաշտպանի տարեկան հաղորդումներով տարիներ շարունակ բարձրացված խնդիրը շարունակվում է չլուծված մնալ:

Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ծանուցումների պատշաճ իրականացման համար «Հայփոստ» ՓԲ ընկերության հետ կնքված պայմանագրի առկայության պայմաններում արձանագրվե՞լ են դեպքեր անձանց ուշ ծանուցելու կամ ընդհանրապես չծանուցելու մասին և ի՞նչ

վերահսկողության մեխանիզմներ են գործում, ՀՀ արդարադատության նախարարության պատասխանը կրկին սահմանված կանոնների վկայակոչումն է, որոնց պահպանման նկատմամբ հսկողությունը կոչված է ապահովելու նախարարությունը: Սակայն որքանով են դրանք պահպանված և որքանով է նախարարությունը արագ և պատշաճ արձագանքել չկատարելու իրավական հետևանքներին, նախարարությունը խուսափել է տվյալներ տրամադրել:

Նշվածի համատեքստում էլ առավել մտահոգիչ է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից համապատասխան վիճակագրություն չվարելը գնահատելու համար վերոնշյալ պայմանագրի գործարկման պայմաններում համակարգի գործունեության արդյունավետությունը:

Հաշվի առնելով, որ հարկադիր կատարողի կայացրած որոշումները կատարողական վարույթի կողմերին ուղարկվում են ոչ թե պատվիրված փոստով, այլ փոստային առաքմամբ, այդ որոշումների մասին անձանց պատշաճ ծանուցման ապահովումը պետական վերահսկողության բացակայության պայմաններում էլ ավելի խնդրահարույց է դառնում:

Այս առումով հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի որոշումները և ծանուցումները փոստային առաքմամբ ուղարկելու դեպքում կատարողական վարույթին կցվում է հասցեատիրոջն ուղարկելու մասին ապացույցը: Ըստ նշված հոդվածում ամրագրված նորմերի՝ հարկադիր կատարողը որոշումները և ծանուցումները փոստային առաքմամբ ուղարկելու դեպքում կատարողական վարույթին պարտավոր է կցել միայն հասցեատիրոջն ուղարկելու մասին ապացույցը և որևէ պարտավորություն չունի կատարողական վարույթին կցել հասցեատիրոջ կողմից նամակը ստանալու վերաբերյալ ապացույցը:

Խնդիրն այն է, որ գործնականում հանդիպում են այնպիսի իրավիճակներ, երբ հասցեատերերը նամակները չեն ստանում, քանի որ, օրինակ՝ որոշ ժամանակ իրենց բնակության վայրի հասցեում չեն բնակվում կամ բացակայում են և այլ պատճառներով:

Արդյունքում, խախտվում է անձի սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը:

ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը թեև վերաբերում է էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցմանը, սակայն այդ դիրքորոշումը, համադրելով անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ ունենալու սահմանադրական իրավունքի հետ, հանգեցնում է այն իրավական հրամայականին, որ բոլոր դեպքերում հիշյալ իրավունքը կհամարվի ապահովված, եթե անձը փաստացի տեղեկացված է լինում վարչական ակտի մասին, և վարչական մարմնի տիրապետության տակ առկա են լինում այդպիսի փաստը հավաստող ապացույցներ, իսկ զուտ հրապարակային ծանուցումն ինքնին չի կարող համարվել որպես նման ապացույց, քանի որ անձը ողջամտորեն կարող է չենթադրել ու փաստացի տեղյակ չլինել իր վերաբերյալ հրապարակային ծանուցման գոյության մասին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ որևէ նորմով անձի վրա դրված չէ հնարավոր բոլոր հրապարակային ծանուցումների մասին տեղեկացված լինելու պարտավորություն, ինչպես նաև ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-

ին մասի 64-րդ կետը նախատեսում է նաև պարտադիր ծանուցման ենթակա փաստաթղթերի ընդունում թղթային եղանակով:

Պատշաճ ծանուցման շրջանակներում կարևոր խնդիր է նաև Հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում հարկադիր կատարողի ոչ բոլոր որոշումների հրապարակման հարցը, որը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներում<sup>184</sup>:

Խնդիրն այն է, որ 2021 թվականի ընթացքում «azdarar.am» կայքում հիմնականում շարունակվում են տեղադրվել միայն կատարողական վարույթը կասեցնելու և գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հարկադիր կատարողի որոշումները:

Նշված խնդրի լուծման կապակցությամբ Պաշտպանն առաջարկել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում ձևավորված իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել գործող օրենսդրական կարգավորումներին՝ ապահովելով «azdarar.am» կայքում հարկադիր կատարողի՝ կատարողական վարույթի շրջանակներում կայացրած բոլոր որոշումների հրապարակումը:

Ի պատասխան նշվածի՝ ՀՀ արդարադատության նախարարությունը վկայակոչել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 28.1 հոդվածի դրույթները:

ՀՀ արդարադատության նախարարության հայտնած տեղեկությունների համաձայն՝ պաշտոնական ծանուցումների կայքում 2021 թվականին առաջացած՝ ծանուցմանը ֆայլ կցելու անհնարինության հետ կապված տեխնիկական խնդիրը լուծվել է այն հայտնաբերելուց հետո՝ սեղմ ժամկետում: Կայքի աշխատանքի պարբերաբար խափանումների դեպքում ևս ապահովվել է արագ արձագանքում և խնդրի լուծում: Միաժամանակ տեղեկացրել են, որ 2022 թվականի հունվարի 14-ի դրությամբ նախնական գործարկման փուլում է գտնվում հրապարակային ծանուցումների նոր կայքը:

ՀՀ արդարադատության նախարարության ներկայացրած պարզաբանումներից ստացվում է, որ հիմնականում կատարողական վարույթը կասեցնելու և գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին հարկադիր կատարողի որոշումներն ստանալուց է կողմը հրաժարվել կամ նշած հասցեով ուղարկված փոստային առաքանին վերադարձվել է կամ պատվիրված նամակով ուղարկելու դեպքում ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, հարկադիր կատարողը չի ստացել հետադարձ ծանուցումը: Այնինչ, Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ մարդիկ անգամ ծանուցված չեն լինում իրենց նկատմամբ հարուցված կատարողական վարույթների, ինչպես նաև գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքների մասին:

Համակարգի արդյունավետ գործունեության կարևոր խնդիրներից է նաև պաշտոնական էլեկտրոնային փոստի միջոցով անձանց պատշաճ ծանուցելու և այդ փոստի գործնական

<sup>184</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ՝ 211-216, 241:

կիրառման հարցը: Նշվածն առավել մանրամասն ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի 2018 և 2019 թվականների տարեկան հաղորդումներով<sup>185</sup>:

2021 թվականի ընթացքում պարտապանի գույքի վրա արգելանք դնելու կամ սահմանափակում կիրառելու մասին վերջինիս իր պաշտոնական էլեկտրոնային փոստից օգտվելը մատչելի և հասանելի դարձնելու ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում պաշտոնական էլեկտրոնային փոստից օգտվելը մատչելի և հասանելի դարձնելու ուղղությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից միջոցառումներ չեն ձեռնարկվել:

*Հաշվի առնելով վերոգրյալը, Պաշտպանը վերահաստատում է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության որոշումների՝ օրենքով սահմանված կարգով քաղաքացիներին պատշաճ ծանուցումն ապահովելու և այդ որոշումների մասին քաղաքացիների չծանուցման հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է՝*

1. *ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը,*

2. *սահմանել վերահսկողական մեխանիզմներ «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից փոստային առաքանու պատշաճ առաքումն ապահովելու համար,*

3. *իրավակիրառ պրակտիկան համապատասխանեցնել օրենսդրական գործող կարգավորումներին, այն է՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28.1-րդ հոդվածի 13-րդ մասում նախատեսված պահանջները չպահպանվելու դեպքում ապահովվի «azdarar.am» կայքում բոլոր որոշումների կամ ծանուցումների տեղադրումը,*

4. *պաշտոնական էլեկտրոնային փոստից օգտվելը քաղաքացիների համար մատչելի և հասանելի դարձնելու նպատակով ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ (օրինակ՝ իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակում, տեղեկատվական տեսառուլվակների պատրաստում, սեմինար-քննարկումների կազմակերպում և այլն):*

5. *«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարել՝ ամրագրելով հարկադիր կատարողի բոլոր որոշումները կատարողական վարույթի կողմերին պարզվիրված փոստով ուղարկելու իմպերատիվ պահանջ,*

6. *նախատեսել պարզվիրված փոստով ծանուցման իմպերատիվ պահանջի գործնական երաշխավորման անհրաժեշտ կազմակերպական, ֆինանսական և մարդկային բավարար ռեսուրսներ:*

<sup>185</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018, 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր՝ 211-216, 240-241

## **2. Կապարողական գործողությունների իրականացումը դրանց կասեցման միջնորդությունը դապարանի կողմից բավարարված լինելու պայմաններում**

2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ պարտապանը վիճարկում է «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» հարկադիր կատարողի որոշումը դատական կարգով, քննության շրջանակներում հայցվորի՝ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու միջնորդությունը բավարարվում է, սակայն այն դեռևս օրինական ուժի մեջ չմտած՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կատարում է վտարման կատարողական գործողություններ: Այս խնդրին Պաշտպանն անդրադարձել է 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>186</sup>:

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ այն դեպքերի, երբ վիճարկվում է կատարողական վարույթի ընթացքում հարկադիր կատարողի կողմից կայացված վարչական ակտ:

Նույն հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի համաձայն՝ հայցվորի միջնորդությամբ վարչական դատարանը կարող է գործի քննության ժամանակ նույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 4.1-ին, 5-րդ, 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցնել վարչական ակտի կատարումը: Միջնորդությունը բավարարվում է, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի համաձայն՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա են վարչական դատարանի նույն օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-ին մասի համաձայն՝ վարչական դատարանի՝ նույն օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միջանկյալ դատական ակտերն օրինական ուժի մեջ են մտնում դրանք ստանալուց 5 օր հետո:

Վերը նշված իրավակարգավորումների վերլուծությունից ստացվում է, որ հարկադիր կատարողների որոշումները դատական կարգով վիճարկելիս վիճարկման հայցի վարույթ ընդունվելն ինքնին չի կասեցնում վիճարկվող վարչական ակտի կատարումը և անհրաժեշտություն է առաջանում, որպեսզի հայցվորն առանձին միջնորդություն ներկայացնի դատարան: Դատարանն օրենսդրությամբ սահմանված ժամկետում միջնորդությունը բավարարելու դեպքում կայացնում է

<sup>186</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 387-391:

միջանկյալ դատական ակտ, որն օրինական ուժի մեջ է մտնում միջանկյալ դատական ակտերի համար սահմանված ընդհանուր ժամկետում՝ ստանալու պահից 5 օր հետո:

Օրենսդիրը սահմանել է, որ հարկադիր կատարողի որոշումների կատարումը կարող է կասեցվել, եթե առկա է հիմնավոր կասկած, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը: Այլ կերպ ասած, դատական ակտի կատարման ենթակա լինելու տեսանկյունից օրենսդիրը սահմանել է, որ բացառապես իրավունքների խախտման հիմնավոր կասկածների դեպքում կարող է դրանց կատարմանն ուղղված որոշումների կատարումը կասեցվել, մյուս բոլոր դեպքերում այն կխախտի պահանջատեր կողմի՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքները:

Այս առումով հարկ է նշել, որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները կամ նրան ներկայացրած ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք (...):

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/0850/05/19 վարչական գործի շրջանակներում, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի կիրառման առանձնահատկություններին, արձանագրել է, որ հայցապահանջը հիմնավորող փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ հայցվորի միջնորդությունը բավարարելու համար, իսկ վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու իրավական հնարավորությունը կարող է առկա լինել միայն այն պարագայում, եթե միջնորդության մեջ պարունակվող փաստարկների ուժով դատարանի մոտ ձևավորվի հիմնավոր կասկած առ այն, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Այսպիսով, ստացվում է, որ դատարանը ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով ներկայացված միջնորդությունները բավարարելու հիմք է այն հանգամանքը, որ վարչական ակտի կատարումը հայցվորին զգալի վնաս կպատճառի կամ անհնարին կդարձնի նրա իրավունքների պաշտպանությունը:

Հարկ է նկատել, որ գործնականում հանդիպում են այնպիսի դեպքեր, երբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը վտարման կատարողական գործողությունների մասին պատշաճ ծանուցում է կողմերին՝ այնուամենայնիվ, վերջիններն ուշ են դիմում դատական կարգով կատարողական գործողությունը վիճարկելուն կամ կասեցնելուն, իսկ դատարանի բավարարած միջանկյալ դատական ակտի պարագայում սահմանված ժամկետներն ի վնաս այդ կողմի են: Բավարարված դատական ակտն ստանում է օրինական ուժ միայն այն ստանալուց 5 օր հետո, որի ընթացքում արդեն իսկ կատարվում է վտարման կատարողական գործողությունը: Արդյունքում ստացվում է, որ նշված դատական ակտն օրինական ուժ է ստանում վտարումից օրեր անց, դրանով իսկ դառնալով առարկայազուրկ և իր նպատակին չծառայող:

Օրինակ՝ Պաշտպանի հասցեագրված բողոքներից մեկով՝ հարուցված կատարողական վարույթի պարտապանը դիմել է ՀՀ վարչական դատարան «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» հարկադիր կատարողի կայացրած որոշումն անվավեր ճանաչելու պահանջով: Պարտապանը ներկայացրել է նաև միջնորդություն կասեցնելու «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» որոշման կատարումը: ՀՀ վարչական դատարանը բավարարել է ներկայացված միջնորդությունը: Պարտապանը ներկայացել է վարչական դատարան 2021 թվականի հունիսի 18-ին և ստացել դատարանի որոշումը, իսկ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը նույն որոշումը ստացել է 2021 թվականի հունիսի 21-ին: Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը 2021 թվականի հունիսի 22-ին իրականացրել է վտարման կատարողական գործողություններ, քանի որ «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» որոշման կատարումը կասեցնող միջանկյալ դատական ակտը դեռևս օրինական ուժի մեջ մտած չի եղել:

Նույնն է խնդիրը նաև այն դեպքում, երբ օրենսդրությամբ սահմանված ժամկետում բողոքարկվում է դատարանի բավարարած, սակայն օրինական ուժ չստացած միջանկյալ դատական ակտը:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով պարտապանը 2021 թվականի օգոստոսի 24-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության՝ խնդրելով անվավեր ճանաչել Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2021 թվականի օգոստոսի 19-ի «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» որոշումը: Հետագայում Դատարանի 2021 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ ներկայացված միջնորդությունը բավարարվել է՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2021 թվականի օգոստոսի 19-ի «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» որոշման կատարումը կասեցվել է: Այնուհետև, նշված որոշման դեմ երրորդ անձը 2021 թվականի սեպտեմբերի 10-ին ներկայացրել է վերաքննիչ բողոք՝ խնդրելով վերացնել ՀՀ վարչական դատարանի 2021 թվականի օգոստոսի 26-ի «Վիճարկվող վարչական ակտի կատարումը կասեցնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին» որոշումը: Վերաքննիչ դատարանի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի որոշմամբ երրորդ անձի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և 2021 թվականի հոկտեմբերի 10-ի որոշմամբ բավարարվել է: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով 5-օրյա ժամկետում վերաքննիչ վարչական դատարանի կայացրած որոշումն իր կողմից բողոքարկվել է վճարել դատարան: Նշվածի կապակցությամբ դիմել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը, սակայն արդյունքի չի հասել: Բացի վերը նշվածից, բողոք ներկայացրած անձը Պաշտպանի աշխատակազմին տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության աշխատակիցներն այցելել են իրենց բնակության հասցե և պատրաստվում են սկսել վտարման կատարողական գործողությունները:

Չնայած, կոնկրետ դեպքով Պաշտպանի աջակցությամբ խնդիրն ստացել է դրական լուծում, մինչդեռ՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը տարբեր իրավիճակներում միատեսակ

վարչարարություն չի իրականացնում: Այսինքն՝ օրենսդրական խնդրի կարգավորումը կարող է բացառել գործնականում նման խնդիրների առկայությունը:

Վերոգրյալի հաշվառմամբ, Պաշտպանն արձանագրում է, որ «Բնակարանը հարկադիր վտարելու մասին» որոշումների վիճարկման բոլոր դեպքերում անհրաժեշտ է վարչական ակտի կատարման կասեցման վերաբերյալ ներկայացված միջնորդության բավարարման մասին դատարանի միջանկյալ դատական ակտի՝ հրապարկման պահից օրինական ուժի մեջ մտնելու դրույթ սահմանել, քանի որ միայն նման դեպքում այն կծառայի իր նպատակին, և գործնականում կբացառվեն այն փակուղային իրավիճակները, երբ դատարանի որոշմամբ կասեցվի այնպիսի կատարողական գործողությունների կատարումը, որպիսիք արդեն կատարվել են:

Նշված խնդրի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ արձանագրվել է մեկ դեպք, երբ վարչական ակտի կատարումը կասեցված լինելու պայմաններում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն իրականացրել է վտարման կատարողական գործողություն, ինչը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ վտարման կատարողական գործողության կատարման պահին Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը կայացված դատական ակտի վերաբերյալ տեղեկատվություն չի ունեցել: Նշված հարցին առնչվող օրենսդրական փոփոխություններ 2021 թվականի ընթացքում չեն նախաձեռնվել:

*Այսպիսով, վերոգրյալ խնդիրների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝ ՀՀ վարչական դատարարության օրենսգրքի 127-րդ և 131-րդ և 83-րդ հոդվածներում կատարել համապատասխան փոփոխություններ՝ սահմանելով դրույթներ, որոնց ուժով կկասեցվի հարկադիր կատարողի կողմից կայացված և վիճարկվող վարչական ակտի կատարումը՝ դատարանի միջանկյալ դատական ակտի հրապարակման պահից:*

### **3. Կատարողական վարույթի շրջանակներում կատարողական գործողությունները պատշաճ ժամկետներում չիրականացնելը**

Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում բարձրացրել է կատարողական վարույթների շրջանակներում անհրաժեշտ կատարողական գործողությունների կատարումը ձգձգելու և դրա պատճառով ոչ պատշաճ վարչարարություն իրականացնելու խնդիրը: Հարկ է նշել, որ նշված խնդրին Պաշտպանն անդրադարձել է 2018 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում<sup>187</sup>:

<sup>187</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 և 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 216-219, 391-394:



«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կատարողական գործողությունների իրականացման համար սահմանվում է երկամսյա ժամկետ, բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածով սահմանված ժամկետում չեն հաշվարկվում կատարողական գործողություններն աճուրդային գործընթացում գտնվելու, գույքն ուղղակի վաճառքով իրացնելու, պարտապանի կամ նրա գույքի հետախուզման, կատարողական վարույթի հետաձգման կամ կասեցման, ինչպես նաև նույն օրենքի 43-րդ հոդվածի 9-11-րդ մասերով նախատեսված գործողությունների կատարման ժամկետները: Աշխատավարձից, կենսաթոշակից, այլ եկամուտներից, ալիմենտային պարտավորություններից բխող բռնագանձումների կատարումը, հարկադիր կատարման պարբերական բնույթ ունեցող կատարողական գործողությունները (երեխայի տեսակցություն և այլն) իրականացվում են պարբերական կատարման միջոցով: Այդ դեպքերում հարկադիր կատարումը դադարում է վարույթի ավարտով կամ կարճմամբ: Պարտապանի մոտ պահանջների բավարարման համար անհրաժեշտ արգելադրված դրամական միջոցների առկայության դեպքում կատարողական գործողություններն իրականացվում են տասնհինգօրյա ժամկետում:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գործնականում հանդիպում են իրավիճակներ, երբ պարտապանի գումարն առգրավվում և փոխանցվում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշվին, սակայն նշված գումարն ուշ է փոխանցվում պահանջատիրոջը:

Ստացվում է, որ բռնագանձման իրականացումն ամբողջությամբ չի ապահովվում, քանի որ պարտապանի բանկում եղած գումարի վրա արգելանք է կիրառվում, այն առգրավվում է, սակայն չի փոխանցվում պահանջատիրոջը, որից հետո միայն ավարտված պետք է համարվեր բռնագանձման գործընթացը:

ՀՀ արդարադատության նախարարությունից տեղեկացրել են, որ 2021 թվականի ընթացքում կատարողական վարույթի ընթացքում թույլ տրված խախտումների համար 4 հարկադիր կատարող ենթարկվել է կարգապահական տույժի, որոնցից 2-ը՝ նախազգուշացում, 1-ը՝ նկատողություն, 1-ը՝ խիստ նկատողություն կարգապահական տույժի:

Հարկ է ընդգծել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը փաստում է, որ սահմանված չէ որևէ նորմ, թե ինչ ժամկետում է դեպոզիտ հաշվում պահված գումարը փոխանցվում պահանջատիրոջը, ինչի հետևանքով գործնականում առաջանում են գումարները պահանջատիրոջն ուշ փոխանցելու հետ կապված խնդիրներ:

Նշվածի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշվում պահված գումարը պահանջատիրոջը փոխանցելու կոնկրետ ժամկետների նշումով նորմերի ամրագրմանն ուղղված փոփոխություն չի նախաձեռնվել: Այնուամենայնիվ, այդ հանգամանքը, ի թիվս այլ խնդիրների, հաշվի է առնվում «Կատարողական վարույթի մասին» օրենքի նախագծի մշակման ընթացքում:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե 2021 թվականի ընթացքում քանի՞ դեպք է արձանագրվել կատարողական վարույթները «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի հիմքով ավարտելու դեպքում պարտապանից ամեն ամիս բռնագանձված գումարներն ուշ բաշխելու և պահանջատիրոջը փոխանցելու վերաբերյալ, ի՞նչ ընթացք է տրվել հայտնաբերված դեպքերին, ՀՀ արդարադատության նախարարությունը չի ներկայացրել ամբողջական և ըստ էության պատասխան: Փոխարենը նշել է, որ նշված հարցի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը վիճակագրություն չի վարում: Այդուհանդերձ, նմանատիպ որևէ դեպք հայտնաբերվելու դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն օրենքով սահմանված կարգով արձագանքում է դրան: Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշվում առկա դրամական միջոցները պահանջատիրոջը փոխանցելուն առնչվող հարցերով ներկայացված բողոքների վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն առանձին վիճակագրություն չի վարում: Դեպոզիտ հաշիվ վճարված գումարները պահանջատիրոջը փոխանցվում են դրանք Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեպոզիտ հաշիվ մուտքագրվելուց հետո եռօրյա ժամկետում, եթե այլ բան չի բխում կատարողական թերթի կամ հարկադիր կատարման ենթակա այլ ակտի պահանջներից:

Այսպիսով, հարկ է մեկ անգամ ևս ընդգծել, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից համապատասխան վիճակագրություն չվարելը խնդրահարույց է:

Այսպիսով, ՀՀ արդարադատության նախարարության վերը նշված պարզաբանումներից կարող ենք փաստել, որ Նախարարությունը չի բացահայտում իրեն ուղղված բողոքների բնույթը, ինչը կարող է խթան հանդիսանալ այնպիսի մեխանիզմների ներդրմանը, որոնք հետագայում կնպաստեն գործնականում նման խնդիրների բացառմանը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

1. *կատարողական գործողությունների կատարման ձգձգման և (կամ) ուշացման հետևանքով կատարողական վարույթի կողմերին ոչ պատշաճ վարչարարությամբ վնաս հասցնելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների հստակ և ժամանակին կատարման նկատմամբ վերահսկողություն,*

2. *օրենսդրությամբ սահմանել նորմեր դեպոզիտ հաշվում պահված գումարը պահանջատիրոջը փոխանցելու կոնկրետ ժամկետների նշումով:*

**4. Պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա սահմանվածից ավելի չափերով բռնագանձում փարածելը**

Շարունակվում է չլուծված մնալ հարուցված կատարողական վարույթի շրջանակներում պարտապանների գույքի և դրամական միջոցների վրա բռնագանձում տարածելու չափերին առնչվող խնդիրները: Ասվածը փաստում է Պաշտպանին 2021 թվականի ընթացքում հասցեագրված բողոքները:

Հարկ է նշել, որ վերը նշված խնդիրը բարձրացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2018 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով<sup>188</sup>:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը:

Նույն օրենքի 44.1-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանվում է, որ արգելանքի տակ գտնվող պարտապանի գույքը հարկադիր կատարողի որոշմամբ արգելանքից հանվում է, եթե դրամական միջոց չհանդիսացող գույքի նկատմամբ կիրառված արգելանքն ակնհայտորեն գերազանցում է պահանջատիրոջ պահանջի և կատարողական գործողությունների կատարման ծախսերի չափը, դրամական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը գերազանցում է պահանջատիրոջ պահանջի և կատարողական գործողությունների կատարման ծախսերի չափը:

Չնայած օրենքով սահմանված պարտավորության չափով պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու պահանջին, պարտապանի անվամբ առկա գույքի և դրամական միջոցների մասին նախապես՝ մինչև արգելանքներ կիրառելը տեղեկանալու մեխանիզմի բացակայության պայմաններում խնդրահարույց է մնում կատարողական վարույթի շրջանակներում որոշակի ժամանակահատվածում պարտապանի՝ միաժամանակ ողջ գույքի և դրամական միջոցների վրա դրված արգելանքների պահպանումը:

Խնդիրն այն է, որ երբ պարտապանը դրամական միջոցներ ունի միաժամանակ մի քանի բանկում, դրանց բոլորի վրա ի սկզբանե արգելանք է կիրառվում մինչև բոլոր բանկերից պատասխաններ ստանալը և դրանք համադրելը: Ստացվում է, որ մինչև այդ պարտապանների դրամական միջոցներն անորոշ ժամանակով արգելադրվում են, որն էլ խոչընդոտ է իրենց գույքից անարգել օգտվելու համար: Այս առումով խնդրահարույց է այն, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով հստակեցված չեն պարտապանի անվամբ հայտնաբերված դրամական միջոցների վրա դրված արգելանքը մասնակի վերացնելու որոշում կայացնելու և դրանք էլ իրենց հերթին բանկերին ուղարկելու ժամկետները:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթի շրջանակներում արգելանք է դրվել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող մի շարք անշարժ և շարժական գույքերի, ինչպես նաև դրամական միջոցների վրա: Պաշտպանին դիմելու օրվա

<sup>188</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 223-225 և 394-397:

դրությամբ պարտավորությունը կազմել է 3776883 (երեք միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ, իսկ արգելադրված գույքի արժեքն էականորեն գերազանցել է պարտավորության նշված չափը: Գույքերի վրա դրված ավել արգելանքը հանելու նպատակով գույքի շուկայական և լիկվիդացիոն արժեքը որոշելու նպատակով իրականացրել են փորձաքննություն, մինչդեռ արդյունքները ներկայացնելուց հետո էլ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն ավել դրված արգելանքը չի հանել: Նշվածի կապակցությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացրած պարզաբանման համաձայն՝ պարտավորության չափը կազմում է 5501119 (հինգ միլիոն հինգ հարյուր մեկ հազար հարյուր տասնինը) ՀՀ դրամ: Նշվածի հետևանքով պարտապանը կատարել է նաև մեկ այլ գույքի շուկայական և լիկվիդացիոն արժեքի որոշման նպատակով փորձաքննություն:

Մեկ այլ բողոքի շրջանակներում արգելանք է դրվել պարտապանին սեփականության իրավունքով պատկանող երկու անշարժ գույքի վրա, այն դեպքում, երբ գույքերի արժեքն ակնհայտորեն գերազանցել է պարտավորության չափը:

Այսպիսով, հարկ է նշել, որ անհրաժեշտ է այնպիսի գործուն մեխանիզմներ ներդնել, որի արդյունքում չեն սահմանափակվի անձի Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքը և լրացուցիչ երաշխիքներ կստեղծվեն հարկադիր կատարողների համար՝ ապահովելու «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված պահանջները:

Պարտապանի արգելադրված դրամական միջոցները մասնակի արգելանքից ազատելու մասին որոշման ձևանմուշը սահմանված է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2016 թվականի հունիսի 21-ի N 104-Ն որոշմամբ հաստատված հավելվածով:

Նշված որոշման ուսումնասիրությունից կարող ենք փաստել, որ պարտապանի արգելադրած դրամական միջոցները մասնակի արգելանքից ազատելու մասին որոշումը բանկերին ուղարկելու ժամկետների հարցը ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի նշված որոշման կարգավորման առարկա չէ:

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հարկադիր կատարողը որոշումը կայացնում է դրա համար հիմք հանդիսացող հանգամանքները հայտնի դառնալու օրվանից եռօրյա ժամկետում, եթե օրենքով ավելի կարճ ժամկետ նախատեսված չէ: Նույն օրենքի 40-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հարկադիր կատարողի հարցումներին պետական մարմինները և այլ կազմակերպությունները, այդ թվում՝ բանկերը, յոթնօրյա ժամկետում պետք է պատասխանեն:

Հաշվի առնելով, որ պարտապանի արգելադրված դրամական միջոցները մասնակի արգելանքից ազատելու մասին որոշում կայացնելու և այն բանկերին ուղարկելու ավելի կարճ ժամկետ օրենքով նախատեսված չէ՝ ստացվում է, որ այդ որոշումը հարկադիր կատարողը կայացնում է եռօրյա ժամկետում:

Այսպիսով, ստացվում է, որ միաժամանակ մի քանի բանկերում առկա պարտապանի դրամական միջոցների վրա դրված արգելանքները նվազագույնը կարող են շուրջ 10 օր չհանվել, ինչը խնդրահարույց է:

Վերոգրյալի հաշվառմամբ, անհրաժեշտ է հստակ և եռօրյա ժամկետից սեղմ ժամկետ սահմանել պարտապանի արգելադրված դրամական միջոցները մասնակի արգելանքից ազատելու մասին որոշում կայացնելու և այն բանկերին ուղարկելու համար:

Նշվածի կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնել են, որ հարկադիր կատարողը կատարողական վարույթը հարուցելուց հետո բոլոր դեպքերում պարտապանի գույքի և դրամական միջոցների նկատմամբ արգելանք կիրառում է միայն բռնագանձման ենթակա գումարի չափով (ներառյալ կատարողական գործողությունների համար նախատեսված ծախսերը), և արգելանք կիրառելու վերաբերյալ որոշումը՝ բռնագանձման ենթակա գումարի չափի նշումով, ուղարկում է առևտրային բանկերին և պետական իրավասու մարմիններին: Այն դեպքում, երբ հետագայում պարզվում է, որ փաստացի արգելադրված գույքի արժեքը կամ դրամական միջոցները գերազանցում են բռնագանձման ենթակա գումարի չափը, հարկադիր կատարողը, ղեկավարվելով 2019 թվականի օգոստոսի 4-ին ուժի մեջ մտած «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 44.1-րդ հոդվածի 7-րդ կետով, բռնագանձման ենթակա գումարը գերազանցող մասով դրամական միջոցները հանում է արգելանքից: Բացի այդ, 2021 թվականի ընթացքում ակտիվ աշխատանք է տարվել ավտոմատ բռնագանձման գործիքի ներդրման և գործարկման ուղղությամբ, որի ամբողջական գործարկումը թույլ կտա կատարողական վարույթի հարուցումից հետո առևտրային բանկերին պարտապանի դրամական միջոցների վերաբերյալ հարցումներ ուղարկելուց և որևէ կամ մի քանի բանկում առկա դրամական միջոցները պարտավորությունը մարելու համար բավարար լինելու վերաբերյալ պատասխան ստացվելուց հետո անմիջապես, ինքնաշխատ եղանակով բռնագանձել բանկային հաշվում առկա գումարը և ապաարգելադրել մնացած բանկերում պարտապանի ունեցած հաշիվները:

Պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա ի սկզբանե մարման ենթակա գումարի չափից ավել արգելանք դրված լինելու վերաբերյալ 2021 թվականի ընթացքում ստացված բողոքների հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանումների համաձայն՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն այդպիսի բողոքների վերաբերյալ առանձին վիճակագրություն չի վարում: Նախարարությունից նշել են նաև, որ այս և հաջորդող մի շարք հարցադրումներում առանձնացված չափանիշներով Ծառայության կողմից վիճակագրություն չվարելը պայմանավորված է նրանով, որ Ծառայությունում գործող փաստաթղթաշրջանառության համակարգերը թույլ են տալիս Ծառայությունում ստացված փաստաթղթերը դասակարգել և վիճակագրական տվյալներ դուրս բերել միայն մի քանի, խիստ սահմանափակ շրջանակի չափանիշներով: Այդ չափանիշներից դուրս այլ բնույթի դիմումները, բողոքներն առանձնացնելու, կատարողական վարույթներն ըստ շրջանակում կատարված առանձին գործողությունների դասակարգելու հնարավորություն առկա էլեկտրոնային համակարգերում առկա չէ: Պահանջվող

տվյալներն առանձին վարույթներն ուսումնասիրելով դուրս բերելն իր հերթին օբյեկտիվորեն հնարավոր չէ, քանի որ Ծառայությունում առկա են հարուցված հարյուր հազարավոր կատարողական վարույթներ, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին տասնյակ կամ հարյուրավոր էջերից է կազմված: Այնուամենայնիվ, բոլոր այն դեպքերում, երբ կատարողական վարույթ հարուցելուց և արգելանք կիրառելուց հետո պարզվում է, որ պարտապանի գույքի և/կամ դրամական միջոցների նկատմամբ կիրառված արգելանքը գերազանցում է բռնագանձման ենթակա գումարի չափը (ներառյալ՝ կատարողական ծախսերի գումարը), հարկադիր կատարողը որոշում է կայացնում բռնագանձման ենթակա գումարը գերազանցող մասով գույքը և/կամ դրամական միջոցներն արգելանքից հանելու վերաբերյալ՝ հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 44.1-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերը:

Մինչդեռ, վիճակագրություն չվարելու Հարկադիր կատարումն ապահովող ծառայության պատճառաբանությունը չի կարող արդարացվել էլեկտրոնային համակարգում նման հնարավորության բացակայությամբ: Հարկ է նշել, որ վիճակագրական տվյալները, հատկապես կարևոր են ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմելու, ինչպես նաև դրանց լուծման նպատակով ռազմավարություններ մշակելու համար:

Ուստի, վերը նշված հարցն անհրաժեշտ է լուծել այնպիսի կառուցակարգերի միջոցով, որոնք որևէ կերպ չառնչվեն անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների հետ և առավելապես՝ չհանգեցնեն դրանց սահմանափակման: Պետական համակարգում առկա խնդիրները մարդու իրավունքների սահմանափակման միջոցով լուծելու մոտեցումն անընդունելի է:

Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր այն հարցը, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված հայցագնի չափը գերազանցող գույքն արգելանքից հանելու ընթացակարգը պարտապանների համար որոշ դժվարություններ է ստեղծում պրակտիկայում:

Մասնավորապես «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ եթե այլ բան նախատեսված չէ կատարողական թերթով, ապա, որպես հայցի ապահովում հայցագնի չափով արգելանք է դրվում պարտապանին պատկանող՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքի վրա:

Նույն օրենքի 44.3-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պարտապանը, որի գույքի, այդ թվում՝ դրամական միջոցների վրա, որպես հայցի ապահովում, հայցագնի չափով արգելանք է կիրառվել, կարող է միջնորդություն ներկայացնել հարկադիր կատարողին արգելանքն այլ գույքի վրա դնելու կամ հայցագնի չափը գերազանցող գույքն արգելանքից հանելու մասին՝ կցելով այլ գույքի կամ արգելադրված գույքի լիկվիդացիոն արժեքի՝ հայցագնի չափը գերազանցելու վերաբերյալ գնահատման եզրակացությունը և միջնորդությունն ու գույքի գնահատման եզրակացությունը պարտատիրոջ կողմից ստանալը հավաստող փաստաթուղթ:

Ստացվում է, որ պարտապանները ծանրաբեռնվում են լրացուցիչ պարտավորություններով՝ վերը նշված փաստաթղթերը ձեռք բերելու, դրանք հարկադիր կատարողին ներկայացնելու համար, ինչպես նաև պարտատիրոջը ծանուցելու համար:

*Վերահաստատվելով նախկինում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝*

*1. սահմանել մեխանիզմներ կատարողական վարույթի շրջանակներում պարտապանի գույքի և դրամական միջոցների վրա ի սկզբանե մարման ենթակա գումարի չափով արգելանք դնելու կապակցությամբ*

*2. սահմանել նախատեսված ժամկետներից առավել սեղմ ժամկետներ պարտապանի արգելադրված դրամական միջոցները մասնակի արգելանքից ազատելու մասին որոշում կայացնելու և այն բանկերին ուղարկելու համար:*

*3. ապահովել առանձնացված վիճակագրության վարում:*

## **5. Կատարողական վարույթի շրջանակներում բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելը և բռնագանձում տարածելը**

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի կարգավորումների ուժով բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վրա արգելանք դնելու և դրանք բռնագանձելու վերաբերյալ 2021 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ: Նշվածը փաստում է այն, որ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում բարձրացված համակարգային բնույթ ունեցող այս խնդիրը շարունակվում է չլուծված մնալ:

Հարկ է նշել, որ նշված խնդիրն Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև հրապարակմամբ և փաստել, որ պետք է անհապաղ միջոցներ ձեռնարկվեն՝ համապատասխան մեխանիզմներ ներդնելու համար, ինչը կերաշխավորի բռնագանձման ոչ ենթակա գումարների անձեռնմխելիությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքները և վերջ կդնի հաշմանդամության կենսաթոշակների հաշվեհամարներից գումարների բռնագանձման անընդունելի պրակտիկային<sup>189</sup>:

Բարձրացված հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ կատարողական վարույթ հարուցելուց հետո հարկադիր կատարողը հարցում է կատարում Սոցիալական ապահովության ծառայություն (Միասնական սոցիալական ծառայություն) և Պետական եկամուտների կոմիտե՝

<sup>189</sup> Տե՛ս «Պետք է անհապաղ դադարեցվի հաշմանդամության կենսաթոշակների հաշվեհամարներից գումարների բռնագանձումը » հրապարակումը՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1984>:

պարզելու համար պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, աշխատավարձին հավասարեցված այլ վճարների, ինչպես նաև բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների փոխանցման հաշվեհամարների վերաբերյալ տեղեկատվությունը: Արդեն տևական ժամանակ է՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում է Սոցիալական ապահովության ծառայությունից, իսկ պարտապանի աշխատելու փաստի մասով՝ նաև Պետական եկամուտների կոմիտեից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի «Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների փոխանակման և էլեկտրոնային հարցումների իրականացման կարգը սահմանելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 687-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում): Ըստ ՀՀ արդարադատության նախարարության՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և պետական այլ մարմինների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգը սահմանելու վերաբերյալ կառավարության նշված որոշման համաձայն՝ գործարկվել է էլեկտրոնային նոր համակարգ նաև Պետական եկամուտների կոմիտեի հետ, արդյունքում պարտապանին նույնականացնելուց և կատարողական վարույթ հարուցելուց անմիջապես հետո էլեկտրոնային եղանակով հարցում է կատարվում Պետական եկամուտների կոմիտե՝ պարզելու պարտապանի գործատուի և վերջինիս հաշվեհամարների վերաբերյալ տեղեկատվությունը: Հարկադիր կատարողը պարտավորության չափով արգելանք է դնում պարտապանին պատկանող բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների վրա՝ որոշման մեջ նշելով այն հաշվեհամարները, որտեղից եկող դրամական միջոցները բռնագանձման ենթակա չեն:

Այս առումով հարկ է նշել, որ բռնագանձման ոչ ենթակա դրամական միջոցների ցանկը սահմանված է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով: Չնայած բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա արգելանք չկիրառելու և դրանք չբռնագանձելու ուղղությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ձեռնարկած միջոցներին՝ 2021 թվականի ընթացքում աշխատավարձի, կենսաթոշակի, հաշմանդամության կենսաթոշակի, պարտադիր զինվորական ծառայություն անցնող շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողներին ու ռազմաուսումնական կամ ոստիկանական ուսումնական հաստատություններում սովորող կուրսանտներին և սովորողներին՝ որպես դրամական ապահովության դրամական գումարների վրա կիրառված արգելանքները վերացնելու խնդրով Պաշտպանին հասցեագրված բողոքներն ու ահազանգերը վկայում են, որ խնդրի հաղթահարմանն ուղղված միջոցները եղել են անարդյունավետ և ոչ բավարար:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը հայտնել է, որ կենսաթոշակից բռնագանձում է կատարվել: Հավելել է նաև, որ բնակվում է մարզում, վատառողջ է, անընդհատ բուժում է ստանում հանրապետության տարբեր հաստատություններում, ունի դեղորայքի կարիք: Նշվածի կապակցությամբ Հարկադիր կատարումն



ապահովող ծառայությունը Պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել է, որ բանկը սխալմամբ հաշմանդամության կենսաթոշակի գումարը փոխանցել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը՝ որպես այլ եկամուտ: Քաղաքացին ստիպված է եղել գնալ մարզի այլ քաղաք և ներկայանալ բանկի մասնաճյուղ, քանի որ իրենց տարածքում առկա չէ տվյալ բանկի մասնաճյուղ: Նա տեղեկանք է վերցրել բանկից, ներկայացրել այդ տարածքի հարկադիր ծառայություն, այնտեղից էլ ասել են, որ սեղմ ժամկետներում հարցը չի լուծվի, և նա 1 ամսից նոր կարող է ստանալ այդ գումարը:

Խնդիրն այն է, որ երբ քաղաքացիները դիմում են Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանն անօրինական բռնագանձումը վերացնելու խնդրով, ծառայությունից բռնագանձումը վերացնելու փոխարեն պահանջում են նաև ներկայացնել այդ ամենը հիմնավորող ապացույցներ՝ ասենք, գրավոր դիմումով կամ բանկից տեղեկանք ներկայացնելով:

Մինչդեռ, Հարկադիր կատարումն ապահովող Ծառայությունն ինքը պետք է նախապես ձեռնարկած միջոցներով պարզի, որ այն գումարը, որի վրա պատրաստվում է տարածել բռնագանձում, արդյոք բռնագանձման ոչ ենթակա հաշմանդամության կենսաթոշակ կամ, օրինակ, նպաստ չէ: Անգամ եթե հարցը բանկի հետ է կապված, միևնույն է՝ պետությունը պետք է ներդրած մեխանիզմների հաշվին լուծի այդ հարցը:

Այլ կերպ ասած, պետության չհաշվարկված գործողությունների պատճառով թույլ տված թերությունները շտկելու բեռը հաշմանդամություն ունեցող անձի վրա թողնելն անթույլատրելի է: Պետությունն ինքը պետք է ահազանգ ստանալուն պես անհապաղ պարզի իրականությունը, այդ թվում՝ վերացնի հետևանքները:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթի պարտապան է: Նշված վարույթի շրջանակներում արգելանք է դրվել իր հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարի վրա և շուրջ մեկ շաբաթ է չի կարողանում ստանալ այն:

Նշվածի կապակցությամբ հարկադիր կատարողը պարզաբանում է ներկայացրել, որ պարտապանն է տեղեկություն տրամադրել այն մասին, որ արգելադրված գումարը հաշմանդամության կենսաթոշակի գումարն է: Այստեղից հետևում է, որ հարկադիր կատարողն ինքնուրույն, իր միջոցներով չի բացահայտել բռնագանձված գումարի բնույթը:

Ստացվում է, որ հաշվեհամարի՝ կենսաթոշակային կամ հաշմանդամության լինելու վերաբերյալ տեղեկությունը հարկադիր կատարողը ստացել է ոչ թե ներդրված էլեկտրոնային համակարգի, այլ պարտապանի կողմից իրեն այդ տեղեկությունը փոխանցելու արդյունքում:

Այսպիսով, չնայած դրական կարելի է համարել 2020 թվականից գործող էլեկտրոնային համակարգի առկայությունը, սակայն Պաշտպանին 2021 թվականին շարունակաբար հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ տեղեկությունների հավաքագրման գործընթացը ոչ պատշաճ իրականացնելու, ինչպես նաև ոչ պատշաճ վարչարարության հետևանքով անձանց համար առաջանում են խնդիրներ, որն էլ իր հերթին առաջացնում է անձի ոչ

միայն իրեն առնչվող գործի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության, այլ նաև անձի սեփականության, ինչպես նաև սոցիալական ապահովության երաշխավորման իրավունքների խախտում:

Հարկ է ընդգծել, որ մեծամասամբ խնդիրը բանավոր ընթացակարգով ստանում է լուծում, և այդ առնչությամբ Պաշտպանը կարևորում է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ հաստատված կայուն համագործակցությունը:

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով առաջարկվել է հաշմանդամության կենսաթոշակի վրա բռնագանձում տարածելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով լրացուցիչ միջոցներ ձեռնարկել հաշմանդամության կենսաթոշակի հաշվեհամարները բացահայտելու ուղղությամբ՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ բռնագանձման ոչ ենթակա հաշվեհամարները նշելուց բացի պարտապաններին նաև ծանուցել «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով նախատեսված բռնագանձման ոչ ենթակա գումարներն այլ անհատական հաշվեհամարներով ստանալու դեպքում, այդ հաշվեհամարների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը հարկադիր կատարողին ներկայացնելու մասին:

Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում որևէ քայլ չի ձեռնարկվել խնդիրը կարգավորելու ուղղությամբ, մասնավորապես՝ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի բովանդակության մեջ վերը նշված տեղեկությունները ներառելու առումով:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ 2021 թվականի ընթացքում դեռևս լուծված չէ կենսաթոշակներից սահմանված չափից ավելին բռնագանձելու խնդիրը: Մասնավորապես 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ առ այն, որ ամբողջությամբ արգելադրվել է անձի տարիքային աշխատանքային կենսաթոշակի հաշվեհամարն այն դեպքում, երբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածով սահմանվում է, որ կատարողական թերթի կատարման ընթացքում պարտապանի պետական կենսաթոշակից կարող է պահվել երեսուն տոկոսից ոչ ավելի՝ մինչև բռնագանձվող գումարների լրիվ մարումը:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով, անձը տեղեկացրել է, որ հարուցված կատարողական վարույթի պարտապան է և ստանում է տարիքային աշխատանքային կենսաթոշակ: Վերջինս տեղեկացրել է նաև, որ իր տարիքային կենսաթոշակի գումարը կազմում է 32000 ՀՀ դրամ, մինչդեռ ստացել է 17000 ՀՀ դրամ: Ստացվում է, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը բռնագանձել է պետական կենսաթոշակի ոչ թե 30, այլ 51 տոկոսը:

Այս դեպքում էլ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը, օրենքով սահմանված չափից ավելի արգելանք դնելով և կենսաապահովման նվազագույն կարիքների բավարարման համար տրվող գումարը բռնագանձելով, խախտում է անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված սոցիալական ապահովության իրավունքը:

Հարկ է անդրադառնալ նաև նրան, որ 2020 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր այն հարցը, որ Որոշմամբ հստակ ժամկետ սահմանված չէ, թե երբ պետք է Սոցիալական ապահովության ծառայությունը պարտապանից պահած կենսաթոշակի գումարը փոխանցի Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տրամադրած հաշվեհամարին<sup>190</sup>:

Բռնագանձման ոչ ենթակա մեկ այլ գումարի, այն է՝ պարտադիր ժամկետային զինծառայողներին հատկացվող ամսեկան դրամական բավարարման վրա արգելանք դնելու վերաբերյալ 2021 թվականի ընթացքում հասցեագրվել են բողոքներ:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը տեղեկություն է տրամադրել այն մասին, որ որդին պարտադիր ժամկետային զինծառայող է և ստանում է զինծառայողներին հատկացվող ամսեկան դրամական բավարարում: Վերջինս հավելել է նաև, որ որդին Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթի պարտապան է: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ արգելանք է դրվել որդուն հատկացվող ամսեկան դրամական բավարարման վրա:

Բարձրացված խնդիրը քննարկվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների հետ: Ըստ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների՝ ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեհամարներն իրենց հասանելի չեն՝ արգելանքներ չկիրառելու համար:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե 2021 թվական ընթացքում քանի՞ դիմում է ստացել ծառայությունը ՀՀ պաշտպանության նախարարությունից փոխանցվող բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա արգելանք կիրառված լինելու վերաբերյալ, ի՞նչ ընթացք են ստացել դրանք և ի՞նչ մեխանիզմներ են ներդրվել նշվածը բացառելու ուղղությամբ, ՀՀ արդարադատության նախարարությունը չի ներկայացրել ամբողջական և ըստ էության պատասխան: Փոխարենը նշել է, որ ՀՀ պաշտպանության նախարարությունից փոխանցվող բռնագանձման ոչ ենթակա գումարների վրա արգելանք կիրառելու վերաբերյալ դիմումներով Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն առանձին վիճակագրություն չի վարում, իսկ համապատասխան դիմումներ ստանալու դեպքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը դրանց իր իրավասության սահմաններում ընթացք է տալիս:

Պաշտպանին հասցեագրված բողոքի շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ համագործակցության արդյունքում զինծառայողին հատկացվող ամսեկան դրամական բավարարման հաշվեհամարի վրա դրված արգելանքը վերացվել է, սակայն զինծառայողը չի կարողացել բանկոմատի օգնությամբ կանխիկացնել գումարը:

<sup>190</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 399:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե արդյոք արձանագրվել են դեպքեր, երբ բռնազանձման ոչ ենթակա գումարների հաշվեհամարների վրա դրված արգելանքները վերացվել են, սակայն անձինք չեն կարողացել գումարը ստանալ բանկոմատից, ՀՀ արդարադատության նախարարությունը նշել է, որ դրամական միջոցներն արգելանքից հանելու վերաբերյալ որոշում կայացնելուց անմիջապես հետո արգելանքը հանելու վերաբերյալ համապատասխան հաղորդագրությունն ուղարկվում է ՀՀ բոլոր առևտրային բանկերին: Բանկային հաշվում առկա դրամական միջոցները առևտրային բանկի կողմից փաստացի ապաստարկադրելն արդեն առևտրային բանկի իրավասությունն է, և Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունն այդ գործընթացին միջամտության կամ արգելանքն առևտրային բանկի կողմից չհանվելը բացառելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու իրավասություն չունի:

Այսպիսով, Արդարադատության նախարարության կողմից նման խնդրահարույց հարցերով վիճակագրություն չվարելը՝ տպավորություն է ստեղծում, որ լիազոր մարմինն իրեն ազատում է լրացուցիչ վարչարարության իրականացումից և տվյալների ճշգրտումից, պատշաճ վերահսկողություն իրականացնելուց, մինչդեռ պետք է հաշվի առնել, որ ստեղծված իրավիճակում առաջնային է սոցիալական ապահովության երաշխավորումը, ուստի պետական մարմինն ինքը պետք է ամբողջությամբ կրի նշված միջոցառումների շրջանակում իրականացվող վարչարարության ամբողջ բեռը: Չնայած նրան, որ վերը նշված գումարը բռնազանձելու արգելքն օրենսդրությամբ ամրագրված է, գործնականում շարունակվում են արձանագրվել նմանօրինակ խնդիրներ, ինչն էլ վկայում է արդյունավետ մեխանիզմների ներդրման կարիք:

Օրինակ՝ արդյունավետ մեխանիզմ կարող է լինել այն, որ «Պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին» որոշման ձևանմուշի մեջ, բացի արդեն իսկ առկա բռնազանձման ոչ ենթակա հաշվեհամարները, նշվեն նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից փոխանցվող բռնազանձման ոչ ենթակա գումարների հաշվեհամարները, որն էլ գործնականում կարող է բացառել նման դեպքերը:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների մի մասն էլ վերաբերել է հարուցված կատարողական վարույթի շրջանակում պարտապանի աշխատավարձի հաշվեհամարների վրա օրենսդրությամբ սահմանված չափից ավել արգելանք դնելու և բռնազանձում տարածելուն:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում գործող պրակտիկան խնդրահարույց է, քանի որ լրացուցիչ պարտավորություն է առաջացնում անձանց համար: Նշվածը փաստում են 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքները:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ հարուցված կատարողական վարույթի պարտապան է, անցնում է պայմանագրային զինվորական ծառայություն: Բողոք ներկայացրած անձը տեղեկություն է

ներկայացրել նաև այն մասին, որ Պաշտպանին դիմելու հաջորդ օրը պետք է իրականացնի մարտական հերթապահություն: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ իր աշխատավարձն ամբողջությամբ արգելադրվել է, ինչի կապակցությամբ համապատասխան տեղեկանք է վերցրել գործատուից՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը ներկայացնելու նպատակով:

Նշվածի կապակցությամբ խնդիրը քննարկվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների հետ: Ըստ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ներկայացուցիչների՝ պարտապանի կողմից համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում աշխատավարձի հաշվեհամարի վրա դրված արգելանքն օրենքով սահմանված չափով կհանվի:

Չնայած այն հանգամանքին, որ կոնկրետ դեպքով Հարկադիր կատարումն ապահովող ծառայության հետ համագործակցության արդյունքում խնդիրը ստացավ լուծում, սակայն համակարգային առումով այն շարունակում է չլուծված մնալ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը, վերահաստատելով նախորդ տարեկան հաղորդումներում ներկայացված առաջարկները, գտնում է, որ անհրաժեշտ է՝*

1. ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 30-ի N 687-Ն որոշմամբ սահմանել հստակ ժամկետներ Միասնական սոցիալական ծառայության կողմից պարտապանից պահված գումարը Հարկադիր կատարումն ապահովող ծառայության տրամադրած հաշվեհամարին փոխանցելու մասին:

2. գործուն քայլեր ձեռնարկել պարտապանի հաշվեհամարի վերաբերյալ տեղեկությունը բոլոր հնարավոր եղանակներով պարզելու և ճշգրիտ բռնագանձում իրականացնելու ուղղությամբ,

3. գործուն մեխանիզմներ ներդնել գործնականում ապահովելու պարտապանի աշխատավարձի բռնագանձումը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 58-րդ հոդվածով սահմանված չափով:

## **6. Իրավահաջորդներին կատարողական վարույթին մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում մշտապես բարձրացվել է կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին կատարողական վարույթին մասնակից դարձնելու ընթացակարգերի բացակայության վերաբերյալ խնդիրը<sup>191</sup>: Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում նույնպես այն կարգավորում չի ստացել:

<sup>191</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018, 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 228-229, 246-247, 383-385:

Ունենք օրենսդրական բաց, որը գործնական բազմաթիվ խնդիրների և անգամ դատական ակտի պահանջի չկատարման կարող է հանգեցնել: Մասնավորապես, խոսքն այն դեպքերի մասին է, երբ օրինակ՝ պահանջատերը մահանում է, վիճելի իրավահարաբերությունը թույլ է տալիս իրավահաջորդություն, սակայն հարկադիր կատարողն ընթացակարգերի բացակայության պատճառով չի կարողանում պահանջատիրոջը նրա իրավահաջորդով փոխարինել և այդպիսով հայտնվում է պահանջատիրոջ բոլոր իրավահաջորդներին հայտնաբերելու խնդրի առաջ:

Ստացվում է, որ մեխանիզմի բացակայությունն էլ հենց հանգեցնում է տվյալ դեպքում պարտապանի շահերի ոտնահարման այն առումով, որ վերջինիս գույքի և դրամական միջոցների վրա կիրառված արգելանքները չեն հանվում:

Արդյունավետ մեխանիզմների օրենսդրորեն ամրագրման արդյունքը կարող է լինել այն, երբ օրինակ՝ պահանջատիրոջը նրա իրավահաջորդով փոխարինելու դեպքում պարտապանը գուցե հաշտության համաձայնություն կնքի վերջինիս հետ, ինչը կատարողական վարույթը կարճելու և պարտապանի գույքի ու դրամական միջոցների վրա դրված արգելանքները հանելու համար:

Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկություններ է տրամադրել առ այն, որ 2021 թվականի ընթացքում կատարողական վարույթի կողմերի իրավահաջորդներին հայտնաբերելու և կատարողական վարույթին ներգրավելու գործընթացում հարկադիր կատարողին լրացուցիչ լիազորություններ վերապահելու ուղղությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից օրենսդրական որևէ փոփոխություններ կամ լրացումներ չեն ձեռնարկվել: Այդուհանդերձ, հարկ ենք համարում ընդգծել, որ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից ցանկացած պահի կատարողական վարույթի կողմին իրավահաջորդով փոխարինելու հիմքերի առկայության վերաբերյալ տեղեկատվություն (հարցումների կամ շահագրգիռ անձանց կողմից ներկայացված) ստացվելու դեպքում հարկադիր կատարողն իր նախաձեռնությամբ կամ կատարողական վարույթի կողմի միջնորդությամբ վերսկսում է կատարողական վարույթը և իրավահաջորդին ներգրավում է որպես կողմ:

*Վերահաստատվելով նախորդ տարիների տարեկան հաղորդումներով արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝*

*1. նախատեսել օրենսդրական մեխանիզմներ կատարողական վարույթի կողմերից մեկի մահվանից հետո վերջինիս իրավահաջորդներին՝ կատարողական վարույթի մասնակից դարձնելու ուղղությամբ, մասնավորապես՝ կատարողական վարույթի կողմերի մահվան փաստը հայտնի դառնալուց հետո, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն, վարույթի կողմի մահվանից 6 ամիս հետո կատարվող հարցման միջոցով պարզել մահացած պարտատիրոջ իրավահաջորդների առկայության փաստը,*

*2. հարցման արդյունքներով պայմանավորված՝ օրենսդրական մեխանիզմներ նախատեսել հայտնաբերված իրավահաջորդներին՝ կատարողական վարույթին մասնակցությունն ապահովելու համար:*

## **7. Պարտապանի՝ օրենսդրությամբ սահմանված մեկնարկային գնից ցածր գին ունեցող միակ բնակարանն արգելանքից չհանելը**

Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով բարձրացվել է պարտապանի՝ օրենսդրությամբ սահմանված մեկնարկային գնից ցածր գին ունեցող միակ բնակարանն արգելանքից չհանելու վերաբերյալ խնդիրը, այն դեպքում, երբ այդ բնակարանի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է օրենսդրությամբ սահմանված չափից<sup>192</sup>:

Նշվածը վերաբերում է այն դեպքերին, երբ օրինակ՝ հարկադիր կատարողի որոշմամբ անձի բնակարանի շուկայական արժեքը որոշելու նպատակով նշանակվել է փորձաքննություն, փորձագետի տված եզրակացությամբ նրա բնակարանը գնահատվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 808-Ն որոշմամբ սահմանված չափից (4.900.000 ՀՀ դրամ) քիչ, սակայն դրված արգելանքը չի հանվել:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ բռնագանձում չի կարող տարածվել քաղաքացի-պարտապանին պատկանող միակ այն բնակարանի (այդ թվում՝ բնակարանի հետ մեկ միասնական գույքային միավոր կազմող տնամերձ հողամասի և այդ հողամասի վրա առկա օժանդակ կառույցների) կամ դրա բաժնի, որը պարտապանի համար հանդիսանում է մշտական բնակության միակ վայր, և որի մեկնարկային գինը հավասար կամ ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված նվազագույն գումարից:

Վերը նշված իրավական նորմի վերլուծության արդյունքում կարելի է եզրակացնել, որ օրենսդիրն ընդհանուր կանոն է սահմանել պարտապանի համար մշտական բնակության միակ վայր հանդիսացող և ՀՀ կառավարության սահմանած մեկնարկային գնին հավասար կամ ցածր նվազագույն գին ունեցող միակ բնակարանի կամ դրանում պարտապանի բաժնի վրա բռնագանձում տարածելու արգելք:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելը ներառում է գույքի վրա արգելանք դնելը, սահմանափակում կիրառելը, այն առգրավելը և հարկադիր իրացնելը (աճուրդ կամ ուղղակի վաճառք):

Այսինքն, բռնագանձման բովանդակությունը ներառում է հարկադիր կատարողի կողմից իրականացվող երեք գործողություն՝ գույքի վրա արգելանք դնելը (սահմանափակում կիրառելը), այն առգրավելը և հարկադիր իրացնելը:

<sup>192</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումները, էջեր 243-245, 385-387:

Վերը նշված օրենսդրական կարգավորման համաձայն՝ միակ բնակարանն իրացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված գումարը գերազանցող գնով, ապա Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած՝ միակ բնակարանի իրացման համար նախատեսված գումարը վերադարձվում է պարտապանին:

Այսպիսով, վերը նշված իրավանորմերի վերլուծությունից ստացվում է, որ այն դեպքում, երբ պարզվում է, որ արգելանք է կիրառվել բռնագանձման ոչ ենթակա գույքի նկատմամբ, ապա «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածով սահմանված նորմերի պատշաճ կատարումը պահանջում է, որ վերացվեն այդ գույքի վրա դրված արգելանքները, քանի որ դրանց պահպանումն արդեն կոտնահարի պարտապանի սեփականության իրավունքը:

**Այս համատեքստում անհրաժեշտ է զուգահեռներ անցկացնել այն դեպքերի հետ, երբ օրինակ՝ կատարողական վարույթի շրջանակներում արգելանք է դրվում հաշմանդամության կենսաթոշակի վրա: Հաշվի առնելով այն, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածով հաշմանդամության կենսաթոշակի վրա չի կարելի բռնագանձում տարածել հարկադիր կատարողը հանում է դրված արգելանքը: Նույնն է իրավիճակն անձի միակ բնակարանի վրա դրված արգելանքի դեպքում, և վերը նշված օրենսդրական կարգավորումներից բխում է, որ այն նույնպես ենթակա է վերացման:** Այսպիսով, ստացվում է, որ անձի միակ բնակարանի վրա դրված արգելանքը չվերացնելու հետևանքով սեփականատերը չի կարողանում տնօրինել իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքը և այն հանգեցնում է սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակման և այդպիսով անձի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված սեփականության իրավունքի ոտնահարման:

Նշված խնդրի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարության պարզաբանման համաձայն՝ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը նման դեպքերի վիճակագրություն չի վարում: Այդուհանդերձ, հարկ ենք համարում ընդգծել, որ եթե կատարողական վարույթի ընթացքում պարզվում է, որ պարտապանի բնակարանի մեկնարկային գինը կամ բնակարանի նկատմամբ համատեղ սեփականության առկայության պարագայում պարտապանի բաժնեմասի նվազագույն գումարը հավասար կամ ցածր է ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 808-Ն որոշմամբ սահմանված չափից, հարկադիր կատարողը բռնագանձում չի տարածում այդ անշարժ գույքի վրա: Այնուամենայնիվ, ասվածը չի նշանակում, որ կատարողական վարույթի ընթացքում վերոնշյալ հանգամանքն ի հայտ գալուց հետո հարկադիր կատարողը պարտավոր է վերացնել պարտապանի միակ բնակարանի նկատմամբ կիրառված արգելանքը՝ հետևյալ պատճառաբանությամբ: Ըստ ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշման՝ օրենսդիրը սահմանել է այն սպառիչ պայմանները (հիմքերը), որոնց առկայության դեպքում միայն հարկադիր կատարողն իրավունք ունի գույքի վրա դրված արգելանքը վերացնել («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 44.1-րդ հոդված), և այդ հիմքերի ուսումնասիրությունից հստակ է, որ դրանցում առկա չէ միակ բնակարանն արգելանքից հանելու վերաբերյալ հիմք: 2021



թվականին գույքն արգելանքից հանելու հիմքերի շարքում նման հիմք նախատեսելու գործընթաց Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը չի նախաձեռնել:

Այսպիսով, ՀՀ արդարադատության նախարարությունը չի բացառել գործնականում նման դեպքերի առկայությունը, այլ նշված տեղեկատվությունը չհայտնելը պատճառաբանել է վիճակագրություն չվարելու հանգամանքով:

Մինչդեռ, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկվող բողոքի շրջանակներում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը դեռևս 2019 թվականի հունիս ամսին տեղեկություն է տրամադրել այն մասին, որ իրականացվում են աշխատանքային քննարկումներ՝ բարձրացված հարցին օրենսդրական լուծում տալու համար: Ստացվում է համապատասխան լիազոր մարմինը գտնում է, որ առկա է խնդիրն օրենսդրական մակարդակում կարգավորման անհրաժեշտություն:

Վերահաստատելով 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

1. *վերացնել կադրողական վարույթների շրջանակներում պարտապանների՝ ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի N 808-Ն որոշմամբ սահմանված չափին հավասար կամ ցածր մեկնարկային գին ունեցող միակ բնակարանների նկատմամբ արգելանքների կիրառման պրակտիկան,*

2. *«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.1-րդ հոդվածում պարտապանի գույքն արգելանքից հանելու հիմքերի շարքում ներառել գնահատման արդյունքներով պարտապանի միակ բնակարանի արժեքի՝ ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված չափին հավասար կամ դրանից ցածր լինելը պարզվելու դեպքը:*

## **8. Անբողոքարկելի չդարձած վարչական ակտերով ոչ իրավաչափ կադրողական վարույթ հարուցելու և գումարներ բռնագանձելու խնդիր**

Անբողոքարկելի վարչական ակտերի առնչությամբ իրականացված վարչարարության հետ կապված խնդիրներին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>193</sup>: 2021 թվականին ևս Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ մինչև վարչական մարմնի որոշումն անբողոքարկելի դառնալը դրա կատարման համար համապատասխան գումարի գանձման մասին գրություն է ուղարկվել Հարկադիր կատարումն

<sup>193</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 403-405:

ապահովող ծառայություն, դրա հիման վրա հարուցվել է կատարողական վարույթ, այնուհետև պարտապանի հաշիվների վրա արգելանք է դրվել և գումար բռնագանձվել:

Օրենսդիրը վարչական ակտերով սահմանված հանրային իրավական դրամական պահանջների հարկադիր կատարման վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորել է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Նույն օրենքով սահմանված է դրամական պահանջները հարկադիր կատարման ներկայացնելիս համապատասխան վարչական ակտի, այդ ակտի մասին իրազեկելը կամ օրենքներով սահմանված կարգով հասցեատիրոջը հանձնելը, կամ այլ կերպ պատշաճ ծանուցելը հավաստող ապացույցները և կատարման վերաբերյալ գրություն ուղարկելու պահանջ:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով անբողոքարկելի վարչական ակտի հիման վրա կատարողական վարույթ հարուցելու և հարկադրանքի միջոցներ կիրառելու համար անհրաժեշտ է, որ պահպանվի ակտի անբողոքարկելի դառնալու համար նախատեսված ընթացակարգերը: Հետևաբար, հանրային իրավական դրամական պահանջ պարունակող վարչական ակտն ընդունված վարչական մարմնի կողմից հարկադիր կատարողին ուղարկված դիմումի (գրության) և դրան կցված փաստաթղթերի «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է ներկայացված փաստաթղթերը վերադարձնել համապատասխան վարչական մարմին:

Նշված խնդրի վերաբերյալ 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ 2021 թվականի մարտի 30-ին Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից ստացել է որոշում այն մասին, որ հարուցվել է կատարողական վարույթ, որով իրենից հոգուտ պետական բյուջեի պետք է բռնագանձվի 7500 ՀՀ դրամ գումար ներառյալ կատարողական գործողությունների կատարման ծախսը: Նշված որոշման մեջ կատարողական վարույթի հարուցման հիմք է հանդիսացել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից 2021 թվականի մարտի 22-ին ստացված գրությունը: Բողոք ներկայացրած անձը 2021 թվականի փետրվարի 5-ին դատական կարգով բողոքարկել է ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության որոշումը, դատարանը 2021 թվականի մարտի 19-ին այն ընդունել է վարույթ և դատաքննություն է նշանակել 2021 թվականի հունիսի 2-ին: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ հարկադիր կատարողը 2021 թվականի մարտի 25-ի որոշմամբ հետախուզում է հայտարարել և արգելանք դրել իր դրամական միջոցների վրա 7500 ՀՀ դրամ գումարի չափով, նույն թվականի ապրիլ ամսվա սկզբին էլ գումարը բռնագանձել է:

Նշվածի կապակցությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից պարզաբանվել է, որ 2021 թվականի մայիսի 3-ի որոշմամբ վերադասության կարգով վերացվել է հարկադիր կատարողի որոշումը, որի հիման վրա գրություն է ուղարկվել ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայություն կատարողական վարույթի շրջանակում բռնագանձված և ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությանը փոխանցված 5000 ՀՀ դրամ գումարը վերադարձնելու մասին: ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունը գրությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայությանը տեղեկացրել է, որ վերը նշված 5000 ՀՀ դրամ գումարը և կատարողական վարույթի շրջանակում բռնագանձված 2500 ՀՀ դրամ գումարը 2021 թվականի մայիսի 18-ի վճարման հանձնարարագրով վերադարձվել է նույն բանկային հաշվեհամարին, որից կատարվել է բռնագանձումը:

Այսպիսով, ստացվում է, որ հարկադիր կատարողը պատշաճ չի ստուգել վարչական մարմնի ուղարկած գրությունը և դրան կցված փաստաթղթերի համապատասխանությունը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին և փաստաթղթերը վերադարձրել համապատասխան վարչական մարմնին, այլ հակառակը, կայացրել է «Կատարողական վարույթ հարուցելու որոշում», արգելանք դրել պարտապանի դրամական միջոցների վրա և բռնագանձել այն:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե 2021 թվականի ընթացքում Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը քանի՞ բողոք է ստացել անբողոքարկելի վարչական ակտերի կատարման վերաբերյալ, դրանցից քանիստ՞վ է հաստատվել վարչական մարմնից գումարի գանձման մասին ոչ իրավաչափ գրություններ ուղարկելու, գրությունների հիման վրա ոչ իրավաչափ կատարողական վարույթներ հարուցելու և գումարներ բռնագանձելու դեպքերը, ի՞նչ միջոցներ են ձեռնարկվել հաստատված ոչ իրավաչափ դեպքերով, ՀՀ արդարադատության նախարարությունը չի ներկայացրել ամբողջական և ըստ էության պատասխան: Փոխարենը նշել է, որ 2021 թվականի ընթացքում հանրային իրավական դրամական պահանջների կատարման կատարողական վարույթների առնչությամբ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության դեմ ներկայացվել է 85 հայցադիմում, որից բավարարվել և վճիռն օրինական ուժի մեջ է մտել 14-ը: Ըստ նախարարության՝ եթե կատարողական գործողությունների ընթացքում պարզվում է, որ վարչական ակտը ներկայացվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 88-րդ հոդվածի խախտմամբ, հարկադիր կատարողը, հիմք ընդունելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, որոշում է կայացնում կատարողական վարույթը կարճելու, իսկ մինչ կատարողական վարույթ հարուցելն այդ

հանգամանքը պարզվելու դեպքում՝ ներկայացված փաստաթղթերը նույն օրենքի 31.1-րդ հոդվածի հիման վրա վարչական մարմնին վերադարձնելու վերաբերյալ:

Այսպիսով, նախարարությունը չի ներկայացրել հանրային իրավական դրամական պահանջների կատարման կատարողական վարույթների վերադասությամբ իրականացման ենթակա վերահսկողության արդյունքներ:

*Վերահաստատելով 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արտահայտած դիրքորոշումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է պատշաճ վերահսկողություն իրականացնել անբողոքարկելի չդարձած վարչական ակտը կատարման ներկայացնելու, ինչպես նաև օրենսդրության պահանջներին չհամապատասխանող փաստաթղթերը պատշաճ ստուգելու և խախտումներ հայտնաբերելու դեպքում դրանք վերադարձնելու ուղղությամբ:*

## ԲԱԺԻՆ 6. ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն՝ ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածով սահմանվում է ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունքը:

Ընտրական իրավունքի իրացումն այն կարևոր գործիքն է, որի միջոցով ձևավորվում են ժողովրդավարական ինստիտուտներն ու երկրի կառավարման համակարգը: Ընտրական իրավունքի ազատ ու անխոչընդոտ իրացումը կանխորոշում է քաղաքացու կամքի հրապարակային արտահայտման արդյունքում նոր ձևավորված մարմնի նկատմամբ վստահությունը:

Ընտրական իրավունքն ամրագրված է նաև միջազգային մի շարք փաստաթղթերում և իրավական ակտերում: Այսպես, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 21-րդ հոդվածով սահմանվում է յուրաքանչյուրի՝ անմիջականորեն կամ ազատորեն ընտրված ներկայացուցիչների միջոցով իր երկրի կառավարմանը մասնակցելու իրավունքը: Յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև անմիջականորեն կամ ընտրված ներկայացուցիչ միջոցով հանրային կառավարմանը մասնակցելու և հանրային ծառայության ընդունվելու իրավունքը սահմանված է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 25-րդ հոդվածով և այլն:

Վերը նշված նորմերի համապարփակ վերլուծությամբ կարող ենք ամրագրել, որ ընտրություններն ու հանրաքվեներն են հիմնական գործիքները, որոնց միջոցով իրականացվում է ժողովրդաիշխանությունը: Հենց ազատ ու թափանցիկ ընտրությունների միջոցով է ժողովուրդը ներկայացնում և հաստատում իր կամքը, հնարավորություն է ստանում մասնակցել պետության կառավարման գործընթացին: Մինչդեռ, ընտրական գործընթացներում առկա ցանկացած խախտում ազդում է ընտրության միջոցով ձևավորված իշխանությունների նկատմամբ վստահության ձևավորման վրա: Ուստի, ընտրական գործընթացը չափազանց մեծ կարևորություն ունի, և այն պետք է իրականացվի միջազգային և Սահմանադրական չափանիշներին համահունչ և վայելի բարձր վստահություն մարդկանց շրջանում:

2021 թվականը հարուստ էր ընտրական գործընթացներով. տեղի ունեցան Ազգային ժողովի արտահերթ և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Ինչպես քվեարկության օրերին, այնպես էլ նախընտրական և հետընտրական գործընթացներում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, իր հաստատված գործելաոճին համաձայն, աշխատել է արտակարգ ռեժիմով՝ հետևելով և արձագանքելով մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների, իրավունքների իրացման խնդիրների առաջացման, լրագրողների աշխատանքային գործունեության խոչընդոտման դեպքերին: Ընտրական գործընթացների կապակցությամբ

ուսումնասիրությունների իրականացման, Պաշտպանի իրավասությանը վերաբերող հարցերով բողոքների ու դիմումների քննարկման համար Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծվել էր աշխատանքային խումբ, որը նախընտրական և հետընտրական փուլերում, ինչպես նաև քվեարկության օրերին արտակարգ ռեժիմով իրականացնում էր անկախ մշտադիտարկման աշխատանքներ:

Նշենք, որ 2021 թվականի հուլիսի 2-ին «Հայաստան» և «Պատիվ ունեմ» դաշինքները, ինչպես նաև «Զարթոնք» և «Հայոց հայրենիք» կուսակցությունները դիմել էին ՍԴ-ն՝ պահանջելով անվավեր ճանաչել ընտրությունների արդյունքները, սակայն հուլիսի 17-ին Սահմանադրական դատարանը կայացրեց որոշում անփոփոխ թողնել արտահերթ ընտրությունների արդյունքների վերաբերյալ ԿԸԸ որոշումը: Նպատակ չունենալով գնահատել Սահմանադրական դատարանի՝ վերը նշված որոշմամբ արտահայտված դիրքորոշումները, սույն գլխում ամփոփվում են Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման գործունեության ու իրականացված վերլուծության արդյունքները:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար հանդես է եկել իրազեկող հայտարարություններով ինչպես ընտրական իրավունքի, այնպես էլ Պաշտպանի՝ տվյալ ոլորտում լիազորությունների վերաբերյալ: Քվեարկության օրերին Պաշտպանի աշխատակազմի կենտրոնական և մարզային ստորաբաժանումներն աշխատել են վաղ առավոտից՝ 24 ժամյա ռեժիմով: Աշխատանքային խմբի ներկայացուցիչները գործուղվել այն մարզեր կամ համայնքներ, որտեղ չկան մարզային ստորաբաժանումներ:

Համագործակցություն է իրականացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի, ինչպես նաև իրավապահ մարմինների, մասնավորապես՝ ՀՀ դատախազության հետ, ինչն էլ իր հերթին ուղղված է եղել ընտրական իրավունքի անշեղ իրացումն ապահովելուն:

## **Արտահերթ խորհրդարանական ընտրություններ**

2021 թվականի ապրիլի 25-ին ՀՀ վարչապետի հրաժարականի հետ մեկտեղ հայտարարվեց, որ հունիսի 20-ին անցկացվելու են արտահերթ խորհրդարանական ընտրություններ:

Այս ընտրությունների գլխավոր խնդիրներից էր երկրում համերաշխության վերականգնումը ու իրավունքի գերակայության հաստատման ապահովումը, ուստի անթույլատրելի էր հասարակության շրջանում բևեռացման ու անհանդուրժողականության խորացումը:

Առաջին իսկ օրվանից Մարդու իրավունքների պաշտպանը կարևորել է, որ ընտրական գործընթացին մասնակից քաղաքական բոլոր ուժերը պետք է բացառեն վիրավորանքն ու հայիոյանքը, ատելության ու բռնության հետ առնչվող ցանկացած խոսք<sup>194</sup>: Նշվածը կարևոր երաշխիք է ընտրական իրավունքի ազատ ու անխոչընդոտ իրացման համար: Մարդու իրավունքների պաշտպանն այդ օրերին բազմիցս ընդգծել է նաև, որ քաղաքական բոլոր ուժերը և հանրային գործիչները պետք է ձեռնպահ մնան հասարակությունը բևեռացնող ու լարվածություն

<sup>194</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1729> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ավելացնող արարքներից, վիրավորանք կամ ատելություն տարածող բառապաշարից, իսկ հանրային գործիչները հատկապես պարտավոր են իրենց արարքներով ու խոսքով օրինակ ծառայել այս հարցում: Անդրադառնալով պաշտոն զբաղեցնող և պետական կարգավիճակ ունեցող անձանց՝ անկախ պաշտոնեական դիրքի աստիճանից, Պաշտպանը նշել է, որ վերջիններս պարտավոր են հաշվի առնել, որ իրենք նախընտրական քարոզարշավի ընթացքում չեն դադարում պաշտոնյա լինելուց և պետական կարգավիճակ ունենալուց: Սա նշանակում է, որ նրանք սահմանափակված են իրենց իրավասության սահմաններով և պետք է թույլ չտան խախտում՝ անցնելով այդ իրավասության սահմանները: Պետության բոլոր մարմինները, այդ մարմինների պաշտոնատար անձինք պետք է նկատի ունենան, որ նրանց ուղիղ պարտավորությունն է իրենց խոսքով ու վարքով բացառել լարվածության տանող ցանկացած երևույթ՝ վիրավորանքն ու ատելությունը, հայիոյանքը, բռնության ուղղակի կամ անուղղակի արդարացումը կամ խրախուսումը<sup>195</sup>:

Նշված հայտարարության համար, ի թիվս այլնի, հիմք էր հանդիսացել նաև այն, որ սոցիալական ցանցերում ակտիվ տարբեր կողմերի սատարող կեղծ էջերով ու օգտահաշիվներով արվում էին հայիոյանքներ պարունակող, ագրեսիվ, անգամ բռնությունը խրախուսող կամ արդարացվող գրառումներ, ինչն էլ ավելացնում են առանց այդ էլ առկա լարվածությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում էր նաև լրագրողական գործունեությունը<sup>196</sup>: Լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչներն անփոխարինելի դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային վերահսկող դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով: Սակայն, հասարակությունում, ինչպես նաև պետական համակարգում լրագրողների աշխատանքի սխալ ընկալումների դրսևորման առկա երևույթներով պայմանավորված, Մարդու իրավունքների պաշտպանը հստակ ընդգծել է ընտրական գործընթացներում լրագրողների ու լրատվության ոլորտի ներկայացուցիչների մասնագիտական անխոչընդոտ աշխատանքն ապահովելու հարցում ինչպես պետության, այնպես էլ՝ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի պարտականությունը:

Մասնավորապես, յուրաքանչյուր հանրային գործիչ՝ թե՛ ընդդիմության, թե՛ իշխանության ներկայացուցիչ, պետք է նկատի ունենա, որ լրագրողի կամ լրատվամիջոցի նկատմամբ ընտրողական մոտեցում կամ հրապարակային թիրախավորումը բացասական ազդեցություն է ունենում հասարակությունում, այդ թվում՝ սոցիալական ցանցերում և հանգեցնում լրագրողի համար բացասական իմաստով նոր թիրախավորման և խոչընդոտների աշխատանքում: Քաղաքական

<sup>195</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1683> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>196</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1736> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ուժերի՝ իրենց կողմնակիցների շրջանում լրագրողի դերի և աշխատանքի կարևորության վերաբերյալ ուղերձների հղումը հնարավորություն կտա խուսափել հնարավոր լարվածությունից:

Մյուս կողմից կարևոր է, որ լրագրողները մասնագիտական գործունեություն ծավալեն պատասխանատու լրագրության սկզբունքներին համապատասխան՝ սկսած լրագրողական նյութի համար վերնագիր ընտրելուց մինչև այդ նյութի բազմակողմանիության ապահովումը: Այդպիսի մոտեցումները լրագրողին դարձնում է անխոցելի և հնարավորություն է տալիս առավել արդյունավետ իրականացնել իր մասնագիտական աշխատանքի պաշտպանությունը:

Առհասարակ, պետք է հստակ ընդգծել, որ ողջ հասարակությունը հենց լրագրողի աշխատանքի շնորհիվ է տեղեկանում ընտրական գործընթացի մասնակիցների ծրագրերի, նպատակների մասին՝ այդպիսով հնարավորություն ստանալով իրազեկված ու վստահ որոշում կայացնել ընտրության հարցում:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը հստակ արձանագրել է, որ լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է արագ ու պատշաճ իրավական գնահատական ստանա պետական, այդ թվում՝ իրավապահ մարմինների կողմից:

### **Նախընտրական քարոզարշավ: Ատելության խոսքը և սպառնալիքները՝ որպես հասարակությունում անհանդուրժողականությունն ավելացնող և անթույլատրելի միջոց քաղաքական պայքարում**

Նախընտրական քարոզարշավի մեկնարկի հետ մեկտեղ պարզ դարձավ, որ վիրավորանքն ու հայհոյանքը, ատելության ու բռնության հետ առնչվող խոսքերը ուղեկցելու են ողջ գործընթացը, ինչը ոչ միայն անթույլատրելի երևույթ էր, այլ խորացնում էր հասարակությունում բևեռացվածությունը, խարխուլում երկրում համերաշխությունը վերականգնելու հեռանկարը:

Ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի Վարչապետի թեկնածուների կողմից օգտագործվող ամեն բառ տարածվում էր կողմնակիցների վրա, հետո նրանք այդ նույն բառերով վիրավորում ու հայհոյում էին իրար:

2021 թվականին Քրեական օրենսգիրքը լրացվեց 137.1 հոդվածով, որը վերաբերում է ծանր վիրավորանքին: Սակայն հաշվի առնելով այս անթույլատրելի երևույթի խորքային բնույթը, պետք է հստակ ընդգծել, որ քրեականացումը խնդրի լուծում չի կարող լինել, քանի որ նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել կանխարգելիչ հստակ գործողություններ:

Ընտրողների հետ հանդիպումների ժամանակ ՀՀ վարչապետի պաշտոնակատարը խոսում էր քաղաքացիական և քաղաքական վեճերի, քաղաքացիական վրեժի մասին, տալիս կադրային ջարդուփշուրի մասին խոստումներ<sup>197</sup>: Ակնհայտ է, որ ինչպես էլ ուզում է մեկնաբանվի՝ նշված վեճերն ու քաղաքացիական վրեժն ակնհայտ ասոցացվում են բռնության ու

<sup>197</sup> Հասանելի է <https://www.aravot.am/2021/06/08/1196579/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



հաշվեհարդարի, իսկ կադրային ջարդուիշուրն էլ աշխատանքային իրավունքների զանգվածային խախտումների հետ: Այսպիսի հոետորաբանության իրական վտանգն այն է, որ այն ավելի է մեծացնում առանց այդ էլ առկա լարվածությունը, պարունակում է իրական կյանք տեղափոխվելու վտանգավոր ռիսկեր: Ճիշտ է, ՀՀ վարչապետի պաշտոնակատարը հատուկ շեշտադրել է, որ խոսքը չի վերաբերում ֆիզիկական հաշվեհարդարի, բայց ակնհայտ է, որ դա չի չեզոքացրել նշվածի վտանգավոր ազդեցությունը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը վկայում է, որ սոցիալական մեղիայի այն տիրույթներում, որտեղ տարածվել են «քաղաքացիական վրեժ», «վենդետա» և նման այլ վերնագրերով նյութերը, արձանագրվել է մեծածավալ վիրավորանքի ու ատելության խոսք, հայիոյանք ու փոխադարձ մեղադրանքներ: Այս վերնագրերը ևս մեկ անգամ վկայում են, որ ֆիզիկական հաշվեհարդարի չվերաբերվելու վերապահումը ազդեցություն չի ունեցել:

ՀՀ վարչապետի պաշտոնակատարին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անդրադարձը հատուկ արվել է այն նկատառումից ելնելով, որ նա քաղաքականից բացի, նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածում շարունակում էր պահպանել ՀՀ գործադիր իշխանության ղեկավարի կարգավիճակը՝ անկախ արձակուրդում լինելուց կամ չլինելուց: Հենց այս կարգավիճակի ուժով էլ ՀՀ վարչապետի պաշտոնակատարի խոսքերը կարող էին ոչ ճիշտ ընկալվել հանրության կողմից, ինչպես նաև պետական մարմինների ու առաջին հերթին իրավապահ մարմինների կողմից ընկալվել որպես ուղերձներ:

Սոցիալական ցանցերի մշտադիտարկումը վկայում էր, որ նաև բռնության համատեքստում էր քննարկվում «Հայաստան» դաշինքի Վարչապետի թեկնածուի և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության Վարչապետի թեկնածուի՝ ՀՀ վարչապետի պաշտոնակատարի միջև դուելի թեման<sup>198</sup>: Բնական է, որ նման մթնոլորտի ստեղծումը և նման բառապաշարի կիրառումը հանգեցնելու էր մարդու իրավունքների խախտումների:

Քարոզարշավի ընթացքում դրսևորված մեկ այլ անթույլատրելի երևույթ էր Ադրբեջանում ապօրինի պահվող գերիների վերադարձի հարցերի շահարկումը՝ այն էլ խոսելով այլ մարդկանցով գերիների փոխանակումների ու փոխանակվելու պատրաստակամության մասին<sup>199</sup>:

Բացի այն, որ նման բան տեղի ունենալ չի կարող, այլև այդ շահարկումները միայն ավելացնում են լարվածությունը երկրում և ավելի են բարդացնում գերիների վերադարձը. այդ կերպ ադրբեջանական իշխանությունների համար պարզապես բարձրացվում է գերիների վերադարձի

<sup>198</sup> Հասանելի է [https://yandex.ru/video/preview/?text=%D6%84%D5%B8%D5%B9%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%A4%D5%B8%D6%82%D5%A5%D5%AC&path=wizard&parent-reqid=1644497636859401-13743775916016182771-vla0-7840-b36-vla-l7-balancer-8080-BAL-7758&wiz\\_type=vital&filmId=1266728585784366147](https://yandex.ru/video/preview/?text=%D6%84%D5%B8%D5%B9%D5%A1%D6%80%D5%B5%D5%A1%D5%B6%20%D5%A4%D5%B8%D6%82%D5%A5%D5%AC&path=wizard&parent-reqid=1644497636859401-13743775916016182771-vla0-7840-b36-vla-l7-balancer-8080-BAL-7758&wiz_type=vital&filmId=1266728585784366147) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>199</sup> Հասանելի է <https://www.panarmenian.net/arm/news/293455/>, <https://lurer.com/?p=421597&l=am> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

«գինը»: Նշվածը բացահայտ անհարգալից վերաբերմունք էր գերիների ու նրանց ընտանիքների անդամների, նրանց զգացմունքների նկատմամբ:

Նշվածի վերաբերյալ Պաշտպանը հանդես է եկել հայտարարությամբ՝ բոլորից պահանջելով ամբողջությամբ դադարեցնել գերիներին վերադարձի հարցերի շահարկումը, նշելով, որ պետք է ոչ թե շահարկումներով բարդացնել գործընթացը, այլ իրական ջանքեր ներդնել Ադրբեջանում անօրինական գերության մեջ գտնվող մեր հայրենակիցների վերադարձի համար<sup>200</sup>:

Նախընտրական քարոզարշավի արատավոր ու խիստ մտահոգիչ երևույթներից էր նաև այն, որ տարբեր քաղաքական ուժերի կողմնակիցներ պատրաստում ու տարածում էին իրենց հակառակորդ ուժերի աջակից կամ նրանց օգտին կարծիք արտահայտող քաղաքացիների լուսանկարներ և տեսանյութեր՝ վիրավորանքներով, հայհոյանքներով ու նվաստացնող արտահայտություններով:

Ընդ որում, ընտրությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու համար մարդկանց լուսանկարների ու տեսանյութերի վրա արվում են վիրավորական ու հայհոյանքի գրառումներ՝ նաև օգտագործելով նրանց ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկությունները<sup>201</sup>:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ սոցիալական մեդիայի տիրույթում նշված լուսանկարներն ու տեսանյութերը ստանում էին արագ տարածում, արժանանում ծաղրանքի, ուղեկցվում ավելի խորքային վիրավորանքներով, հայհոյանքներով ու ատելության խոսքով՝ նվաստացնելով մարդկանց արժանապատվությունը: Հետո էլ այդ գրառումներ անողները քննադատվում էին մյուս ուժերի կողմնակիցները նույն արտահայտություններով («ժեխ», «զոմբի», «ծախված», «ոհմակ», «բորենի» և այլն): Վիճակն ավելի բորբոքվում էր կեղծ էջերի ու օգտահաշիվների գրառումներից, որոնք առավել ագրեսիվ բնույթ էին կրում ու անգամ առանձնանում անօրինական արարքների, այդ թվում՝ բռնության կոչերով, ինչը, նախևառաջ, կոպտորեն խախտում էր այն մարդկանց իրավունքները, որոնց լուսանկարներն ու տեսանյութերը ծաղրող, վիրավորանքի ու հայհոյանքի նկարներով համացանցում տարածվում էին: Այս արատավոր երևույթը վկայում էր հասարակության բևեռացման, ինչպես նաև անհանդուրժողականության անթույլատրելի բարձր մակարդակի մասին:

Քարոզարշավի ողջ ընթացքում տարբեր քաղաքական ուժեր ու գործիչներ իրար ուղիղ հրապարակային հայհոյում էին, ինչը արագ տարածվում էր հասարակության շրջանում, և մի ուժի հարող քաղաքացիները նույն բառերով հայհոյում էին մեկ այլ ուժի կողմնակիցներին: Հարկ է նշել, որ վերոգրյալի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրվում էին պաշտոնյաների պաշտպանելու դիմումներ՝ բացահայտ անտեսելով, որ Պաշտպանը պաշտոնյա պաշտպանող կամ մասնավոր անձանց միջև հայհոյանքի գործ քննող չէ, «մոռանալով», որ դրա համար կան իրավապահ մարմիններ ու դատարան:

<sup>200</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1738> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>201</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1748> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Քարոզարշավի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հրապարակային դիմել է նաև Հանրային հեռուստաընկերությունը՝ կապված, իր ձևակերպմամբ, «Առաջին ալիքի նկատմամբ քաղաքական ճնշումների փորձերի» հետ<sup>202</sup>: Ըստ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված հրապարակային բողոքի՝ Հանրային հեռուստաընկերությունը Պաշտպանից ակնկալում էր «հրատապ արձագանք» և «կոչ անում պաշտպանել Հանրայինի՝ անաչառության և ոչ խտրական վերաբերմունքի հանձնառությունը»՝ նկատի ունենալով «տարբեր քաղաքական ուժերի» հայտարարությունները, թե հեռուստաընկերությունը նախընտրական հոլովակների ցուցադրման հարցում ցուցաբերում է խտրական մոտեցումներ: Ըստ բողոքի՝ խոսքը վերաբերել է տարբեր քաղաքական ուժերի տրամադրած օրենքի տեսանկյունից վիճելի հոլովակների ցուցադրմանը: Միննույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանին առանձին բողոքով դիմել է նախընտրական քարոզարշավի մասնակից «Պատիվ ունեմ» դաշինքի պաշտոնական ներկայացուցիչը և նշել, որ Հանրային հեռուստաընկերությունն առաջնորդվում է խտրական մոտեցմամբ, մերժել է իրենց նախընտրական քարոզչական հոլովակի հեռարձակումը՝ առանց բովանդակային հիմնավորումների՝ միայն արձանագրելով, թե իրենց հոլովակը պարունակում է վիրավորանք և զրպարտություն: Ըստ դիմումի՝ Հանրային հեռուստաընկերության արարքն ունի քաղաքական դրդապատճառներ, հիմքում ունի Կառավարության կոնկրետ հրահանգը և օրենքի ակնհայտ խախտում են, քանի որ հեռուստաընկերությունը չունի իրավասություն որոշելու, թե ինչն է վիրավորանք կամ ինչը զրպարտություն, և այն այդ պատրվակով խախտել է իրենց քաղաքական իրավունքները, իրականացրել գրաքննություն, իսկ դրանից առաջ հեռարձակել է ակնհայտ վիրավորական ու զրպարտչական արտահայտություններով այլ քաղաքական ուժերի քարոզչական հոլովակներ, այդ թվում՝ իրենց վերաբերյալ: Նշված հարցի կապակցությամբ Պաշտպանը տեղեկացրել է, որ Կառավարության հիմնադրած Հանրային հեռուստաընկերությունը չի կարող նշված կոնկրետ գործով ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը, քանի որ Պաշտպանի իրավասությունը կոնկրետ գործերով պետական կազմակերպությունների պաշտպանությունը չէ: Կոնկրետ դեպքում նշված դաշինքի ներկայացուցչի բողոքն ուղղված է Կառավարության հիմնադրած հեռուստաընկերության դեմ, որն, ըստ դաշինքի բողոքի, գործել է հենց Կառավարության հրահանգով:

Ինչպես արդեն նշվեց, այս գործընթացում ՀՀ վարչապետի պաշտոնակատարի դերն օբյեկտիվորեն առանձնահատուկ էր, քանի որ քաղաքականից ու վարչապետի թեկնածու լինելուց բացի, նա շարունակում էր պահպանել ՀՀ գործադիր իշխանության ղեկավարի գործող կարգավիճակը՝ անկախ արձակուրդում լինելուց կամ չլինելուց, ուստի՝ պատասխանատվություն էր կրում երկրում լարվածության ու բռնության բացառման, համերաշխության ապահովման համար:

<sup>202</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1747> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Այդ փաստի ուժով էլ գտնվում էր Մարդու իրավունքների պաշտպանի ուղիղ իրավասության տիրույթում<sup>203</sup>:

Այսպես, նախընտրական քարոզարշավի ընթացքում ՀՀ վարչապետի պաշտոնակատարի կողմից մի քանի օր շարունակ նախընտրական ելույթների ժամանակ տեղի էր ունենում մուրճի ցուցադրում<sup>204</sup>, խոսվում էր «կվալիդի»<sup>205</sup> և հետո մուրճի ցուցադրմամբ արվել են պատկերավոր համեմատություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը վկայում է, որ այս ցուցադրումներն ու համեմատություններն առաջացրել են վտանգավոր քննարկումներ. մուրճի ցուցադրումից հետո տարբեր, այդ թվում՝ ընդդիմության աջակից քաղաքացիներ սոցիալական ցանցերի իրենց էջերում հրապարակել են մուրճի նկարներ՝ համեմատելով Վարչապետի պաշտոնակատարի հրապարակած մուրճի հետ՝ անգամ նշելով, թե իրենց հրապարակածն է իսկական մուրճն իրական կիրառությունից հետո կամ ինչպես է իրական կիրառություն ստանալու այդ մուրճը:

Վարչապետի պաշտոնակատարը Սյունիքի մարզում քարոզարշավի ժամանակ շարունակում էր իրականացնել մուրճի անընդհատ ցուցադրություն ու պատկերավոր համեմատություններ: Ավելին, մշտադիտարկումը վկայում է, որ մուրճի հետ կապված բառապաշարն ավելի է բռնության հետ ասոցացվում (օրինակ՝ «սա ժողովրդի չագուչն ա, ու հունիսի 20-ին այս չագուչը իջնելու ա ձեր դատարկ գլուխներին») և այլն):

Մի քաղաքացի էլ «Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածուին մանգաղ նվիրեց էլ ասելով, որ դա բերել է վարչապետի պաշտոնակատարի մուրճին ի հակադրություն՝ քաղաքական մոլախոտերին հնձելու համար<sup>206</sup>:

Քարոզարշավի մասնակից մյուս քաղաքական ուժերին Վարչապետի պաշտոնակատարը սպառնում էր իրավապահ մարմիններով («ուզում է Ոստիկանության դուբինկաների տակ ընկնել» և այլն): Հաշվի առնելով Ոստիկանության ուղիղ ենթակայությունը ՀՀ վարչապետին՝ նման բառապաշարը կարող էր սխալ ուղերձ ընկալվել Ոստիկանության տարբեր ծառայողների համար:

Մտահոգիչ էր նաև այն համատեքստը, որում անընդհատ օգտագործվում էր «պողպատե մանդատ» արտահայտությունը՝ ասոցացվելով մարդու իրավունքների խախտումների հետ: Իրականում, իրավական և ժողովրդավարական պետությունում պետք է խոսքը լինի բացառապես իրավունքի գերակայության մասին:

Վարչապետի պաշտոնակատարի նման հռետորաբանությամբ ելույթներից հետո այլ բարձրաստիճան պաշտոնյաներ ևս նույն սկզբունքով ատելության ու բռնության բառապաշարով

<sup>203</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1756> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>204</sup> Հասանելի է <https://www.aravot.am/2021/06/14/1198045/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>205</sup> Հասանելի է <https://www.live24.am/78192> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>206</sup> Հասանելի է <https://armeniasputnik.am/20210617/skzbum-vor-tesa-vaxeca-robert-kocharyanin-mangax-nvirecin-27954919.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հայտարարություններ էին անում՝ սպառնալով Ոստիկանության միջամտությամբ («իրավապահ մարմինների կրունկների տակ եք հայտնվելու (...) ոտնատակ կտանք» և այլն):

Սյունիքում տեղի ունեցող քարոզարշավի օրերին ՀՀ վարչապետի պաշտոնակատարը սպառնալիքներ էր հնչեցնում տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավորապես՝ համայնքապետերի նկատմամբ, ինչը նրա կարգավիճակի մեջ չի մտնում:

Կոնկրետ դեպքում խոսքը նրա մասին է, երբ խոսվում է քրեական գործեր հարուցելու և քրեակատարողական հիմնարկների մասին, քանի որ Վարչապետը չունի ո՛չ քրեական գործեր հարուցելու, ո՛չ մարդկանց քրեակատարողական հիմնարկում ազատությունից զրկելու իրավասություն:

Հարցն այն է, որ համայնքների ղեկավարներն առաջնային մանդատով, ՀՀ քաղաքացու փակ գաղտնի քվեարկությամբ ընտրված պաշտոնյաներ են, իսկ վարչապետի պաշտոնակատարի նման գնահատականը, նախևառաջ, խնդրահարույց է քաղաքացիների քաղաքական իրավունքների, առաջնահերթ՝ ընտրելու իրավունքի երաշխավորման տեսանկյունից:

ՀՀ վարչապետի պաշտոնակատարը խոսում էր զանգվածային ազատումների մասին<sup>207</sup>, ինչը կապվում է աշխատանքային իրավունքների զանգվածային խախտումների և կամայականությունների, գործադիր իշխանության կամայական միջամտությունների հետ:

Նշված հարցերին անդրադարձի անհրաժեշտությունը պայմանավորված է նաև նրանով, որ ՀՀ վարչապետի պաշտոնակատարը նախընտրական քարոզարշավի հավաքների ժամանակ մարդկանց մոտ ընկալվում է հենց ՀՀ վարչապետի, այլ ոչ թե պաշտոնակատարի կարգավիճակով: Հավաքների կազմակերպիչներն իրենք, ելույթ ունեցողներն են ներկայացնում՝ որպես ՀՀ վարչապետ:

Քարոզարշավ ընթացքում արվում էին անորոշ անձանց շրջանակի ուղղված «ասֆալտին պառկեցնելու», «պատերին տալու», «չփորձել թպրտալու» մարդու իրավունքների տեսանկյունից խիստ վտանգավոր արտահայտություններ: Այդ անթույլատրելի հոետորաբանությունն ասոցացվում էր մարդու իրավունքների զանգվածային խախտումների հետ: Ակնհայտ էր, որ Վարչապետի պաշտոնակատարն առաջնահերթ նկատի ուներ իրավապահ մարմինների կողմից նման արարքներ կատարելը, բայց իրավապահ մարմիններն առաջնորդվում են բոլորովին այլ կանոններով և «ասֆալտին պառկեցնելու», «պատերին տալու», «չփրտացնելու» կատեգորիաներով ղեկավարվելու որևէ իրավունք չունեն:

Նախընտրական քարոզարշավի հանդիպումների ժամանակ Վարչապետի պաշտոնակատարի կողմից մուրճի ցուցադրման ու մուրճի հետ կապված պատկերավոր համեմատությունների, ասելության ու վիրավորանքի, սպառնալիքների հոետորաբանության հետ հանգեցրին մի իրավիճակի, երբ ՀՀ վարչապետի պաշտոնակատարի 2021 թվականի հունիսի 17-ի հավաքին ներկա են եղել մուրճը ձեռքին մասնակիցներ, ովքեր նաև բացահայտ ցուցադրել են իրենց ձեռքի

<sup>207</sup> Հասանելի է <https://www.pastinfo.am/hy/news/2021/06/12/1h7gls92e/1219949> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

մուրճերը<sup>208</sup>: Մուրճով մարդկանց առկայությունը հանրահավաքին հեռարձակվել է զանգվածաբար՝ ուղիղ եթերներով: Հավաքն ուղիղ եթերով հեռարձակվել է նաև ՀՀ վարչապետի պաշտոնակատարի ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Ավելին, հավաքի մասնակիցների մուրճերով լուսանկարները այդ օրերին լայնորեն տարածվել են սոցիալական ցանցերում:

Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը հանդես է եկել հայտարարությամբ՝ կիսելով Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի մտահոգությունները նախընտրական շրջանում հայաստանյան քաղաքական գործիչների կողմից օգտագործվող բռնություն ու աստելություն պարունակող խոսքի հետ կապված:

Freedom House-ի բնորոշմամբ՝ «այն նպաստում է կործանարար բևեռացմանն ու աստելության խոսքի տարածմանը, քանի դեռ Հայաստանը վերականգնվում է Լեռնային Ղարաբաղի պատերազմից ու պատրաստվում է պատմական խորհրդարանական ընտրություններին»<sup>209</sup>:

### **Վարչական ռեսուրսի կիրառումը: Երեխաների լավագույն շահի պահպանումը նախընտրական քարոզարշավին մասնակցելիս**

Չնայած երեխաների ներկայությունը նախընտրական քարոզարշավում ինքնին խնդիր չէ և երեխաներն ունեն այդ իրավունքը, սակայն, արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է քաղաքական հավաքներին երեխաների մասնակցության հետ կապված խնդրահարույց, ինչպես նաև նրանց լավագույն շահերը խախտող իրավիճակներ: Մասնավորապես, երեխաները մասնակցել են նախընտրական քարոզարշավի ընթացքում այնպիսի հավաքների, որտեղ հնչել են աստելություն ու վիրավորանք, բռնության հետ ասոցացվող խոսքեր: Եղել են նաև երեխաների ներկայությամբ հայիոյանքի խոսքեր հրապարակային հնչեցնելու դեպքեր:

Այս համատեքստում հատկապես անընդունելի է երեխաների մասնակցությամբ նախընտրական քարոզարշավին նման կոչեր անելը՝ դրանով երեխաների համար ևս ստեղծելով աստելության մթնոլորտ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումն արձանագրել է հրապարակումներ ՀՀ վարչապետի պաշտոնակատարի մասնակցությամբ տարբեր մարզերում անցկացվող նախընտրական հավաքներին վարչական լծակների գործադրմամբ, դպրոցների տնօրենների հորդորով կազմակերպված խմբերով ուսուցիչների և աշակերտների ներգրավվածության վերաբերյալ: Քաղաքական բնույթ ունեցող հավաքներին կազմակերպված խմբերով դպրոցների տնօրենների, ուսուցիչների և երեխաների ներգրավվածության, այդ թվում՝ դասերի ժամերին ներգրավվածության դեպքերի մասին են վկայել հրապարակային տարբեր

<sup>208</sup> Հասանելի է <https://hrapararak.am/post/7e1402e7af79368edcc57b891830c3d8> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>209</sup> Հասանելի է <https://armenpress.am/eng/news/1054944.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

աղբյուրներով տարածվող տեսանյութերում դպրոցի տնօրենների և ուսուցիչների որոշ մեջբերումներ:

Պետք է գիտակցել, որ խաղաղ հավաքներին երեխաների մասնակցության իրավունքի իրացում չէ, երբ երեխաները դասերի ժամերին ներգրավվում են քաղաքական բնույթ ունեցող հավաքների: Դպրոցների տնօրեններն ու ուսուցչական անձնակազմը, ինչպես նաև իրավասու մարմինների ներկայացուցիչները պարտավոր են իրենց գործողություններում առաջնորդվել բացառապես երեխաների լավագույն շահերով, երեխաների անվտանգության, ծնողների, խնամակալների, ուսումնական հաստատության պատասխանատու ներկայացուցիչների վերահսկողության, ինչպես նաև երեխաների կրթության իրավունքի երաշխավորման սկզբունքով:

Արձանագրվել է նաև «Փաստերի ստուգման հարթակի» հրապարակումն այն մասին, որ տեղեկություններ են ունեցել հունիսի 8-ին Գորիսում «Հայաստան» դաշինքի նախընտրական հանրահավաքին մարդկանց մասնակցությունն ապահովելու նպատակով համայնքի մանկապարտեզների մի քանի տնօրենների հրահանգ տալու վերաբերյալ: Հրապարակված հեռախոսազրույցի ժամանակ Գորիսի մանկապարտեզներից մեկի տնօրենը հայտնում է, որ մասնակցության վերաբերյալ հրահանգ եղել է<sup>210</sup>: Պաշտպանի մշտադիտարկումն արձանագրել է նաև դեպք, երբ Արմավիրի մանկապարտեզներից մեկի ֆեյսբուքյան էջը տարածել է իշխող կուսակցության քարոզարշավի տեղի ունենալու ժամանակի և վայրի վերաբերյալ իրազեկող տեղեկություն:

Միջազգային պահանջների համաձայն՝ քաղաքական բնույթ ունեցող հավաքներին երեխաների մասնակցության դեպքում անհրաժեշտ է ապահովել երեխաների իրազեկված, գիտակցված և կամավոր մասնակցությունը: Կարևոր է ծնողների, խնամակալների տեղեկացվածությունը, նրանց համաձայնության առկայությունը և վերահսկողությունը տվյալ գործընթացի նկատմամբ: Երեխաները պետք է պաշտպանված լինեն այնպիսի իրավիճակներից, երբ նրանք քաղաքական կուսակցական գործունեության, հատկապես՝ ընտրարշավների ընթացքում քաղաքական գործիչների կողմից «օգտագործվում են» որպես «զարդարանք» իրենց քարոզչությունն իրականացնելու համար: Երեխաները չպետք է նախընտրական շրջանում քաղաքական կուսակցությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին ներգրավվեն որպես «ֆոն» (նստած, կանգնած կամ այլ եղանակով)<sup>211</sup>:

Պաշտպանն արձանագրել է, որ խաղաղ հավաքներին, այդ թվում՝ քաղաքական, երեխաների մասնակցության արգելք գոյություն չունի: Կարևոր նշանակություն ունի խաղաղ հավաքներին կամ այլ զանգվածային միջոցառումներին երեխայի մասնակցության, երեխայի կարծիքի ազատ արտահայտման իրավունքների պատշաճ ապահովումը: Այնուամենայնիվ, հավաքներին երեխաների մասնակցության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել երեխաների

<sup>210</sup> Հասանելի է <https://fip.am/16081> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>211</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1758> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու հրամայականով՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակները: Պետք է միշտ նկատի ունենալ երեխայի լավագույն շահերը՝ որպես բացարձակ արժեք և այն, որ դրանցով չառաջնորդվելը երեխայի իրավունքների խախտում է:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուշադրության կենտրոնում են եղել նաև վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերը<sup>212</sup>: Մասնավորապես, ՀՀ վարչապետի պաշտոնակատարի հունիսի 17-ի հավաքի ժամանակ արձանագրվել են հրապարակումներ, այդ թվում՝ տեսանյութեր ու լուսանկարներ, որ վարչական ռեսուրսի օգտագործմամբ պետական կառավարման մարմինների ու հատկապես մարզպետարանների միջոցով կազմակերպվում է մարդկանց (այդ թվում՝ նաև դպրոցներից) մասնակցությունը հավաքին: Եղել են հրապարակումներ հավաքին դատաիրավական մարմինների ու Արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի աշխատակիցների քաղաքացիական հագուստներով ներգրավելու վերաբերյալ:

Արձանագրվել են հրապարակումներ այն մասին, որ ՀՀ առևտրային բանկերից մեկի տնօրինության հրահանգների հիման վրա կազմակերպվել է աշխատակիցների կազմակերպված մասնակցությունը հունիսի 17-ի հավաքին<sup>213</sup>: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ահազանգել բանկերից մեկի աշխատակից՝ մտավախություն հայտնելով հավաքին չմասնակցելու համար հնարավոր խնդիրների մասին:

Հատուկ ուսումնասիրվել են տեսանյութերը, որոնցով պնդումներ են արվում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հավաքին «Սևան» հոգեկան առողջության կենտրոնի պացիենտների ու աշխատակիցների, ինչպես նաև Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի աշխատակիցներին մասնակցելուն հարկադրելու վերաբերյալ<sup>214</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ հենց հաջորդ օրը՝ հունիսի 18-ին տեղի են ունեցել չհայտարարված այցեր այդ հոգեբուժական կազմակերպություններ:

Պարզվել է, որ «Սևան» հոգեկան առողջության կենտրոնի պացիենտները հավաքին չեն մասնակցել: Փոխարենը՝ պարզվել է, որ տեղի է ունեցել աշխատակիցների կազմակերպված մասնակցություն հավաքին. խոսքը օրվա հերթափոխն ավարտած աշխատակիցների մասին է: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հոգեբուժարանի աշխատակիցների հարկադրական մասնակցության դեպքեր չի հայտնաբերել: Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ չհայտարարված այցի ընթացքում հունիսի 17-ի հավաքին խնամյալների մասնակցության փաստեր չեն արձանագրվել: Այստեղ նույնպես արձանագրվել է, որ տեղի է ունեցել աշխատակիցների կազմակերպված մասնակցություն հավաքին: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացվել են տեղեկություններ այն մասին, որ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի աշխատակիցների մասնակցությունը հավաքին

<sup>212</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1764> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>213</sup> Հասանելի է <https://news.am/arm/news/649519.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>214</sup> Հասանելի է <https://www.youtube.com/watch?v=dbEOjHa3tBU> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



համակարգել է «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի եւ բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի տնօրեն Վիլեն Գաբրիելյանը: Համաձայն ձեռք բերված տվյալների՝ Վ.Գաբրիելյանը տուն-ինտերնատի տնօրենին տվել է կոնկրետ գործողություններ կատարելու ապօրինի հրահանգներ, համակարգել է նրա աշխատանքները՝ կապված հունիսի 17-ի հավաքին աշխատակիցների մասնակցությունն ապահովելու հետ: Ըստ տեղեկությունների՝ նա նաև տնօրենին հրահանգներ է տվել այն հարցի հետ կապված, թե ինչ պատասխանել այլ մարմինների ու լրատվամիջոցների տուն-ինտերնատի աշխատակիցների մասնակցության մասին հրապարակված տեսանյութի առնչությամբ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը վերոգրյալի կապակցությամբ կոչ է արել ինչպես նշված, այնպես էլ որևէ այլ հոգեբուժական կազմակերպության պացիենտների ու խնամյալների մասին հրապարակումները դադարեցնել, զերծ մնալ նրանց քաղաքական հարցերի, այդ թվում՝ շահարկումների ներգրավելուց, քանի որ նման երևույթները թիրախավորման, խարանի ու խտրականության են արժանացնում հոգեբուժական կազմակերպություններում խնամվող անձանց, ոտնահարում են նրանց իրավունքները:

Ավելին, Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղից տեղեկացրել են, որ արտահերթ խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ՀՀ վարչապետի պաշտոնակատարի կողմից կազմակերպված հանրահավաքին «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի աշխատակիցների մասնակցությունն առերևույթ հարկադրաբար ապահովելու վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցի հաղորդումն ուղարկվել է Գեղարքունիքի մարզի դատախազին՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու հանձնարարություն տալու համար:

«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատի» աշխատակիցների մասնակցությունը հավաքին համակարգելու, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանին ու լրատվամիջոցների՝ տուն-ինտերնատի աշխատակիցների մասնակցության մասին հրապարակված տեսանյութի առնչությամբ պատասխան ներկայացնելու վերաբերյալ հրահանգներ տալու փաստը, կրկին ուղարկվել է Գեղարքունիքի մարզի դատախազին՝ նախապատրաստվող հիշյալ նյութերի հետ համատեղ ընթացքը լուծելու նպատակով:

Ըստ Դատախազության՝ նյութերի նախապատրաստմամբ զանգվածային լրատվության միջոցի հաղորդումը, ինչպես նաև գրությամբ վկայակոչված հանգամանքները չեն հաստատվել: Մասնավորապես, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի տնօրենը և աշխատակիցները, ինչպես նաև «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենը՝ տրված բացատրություններով հերքել են դրանցում տեղ գտած հանգամանքները, իսկ դեպքի մանրամասները պարզելու ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներն արդյունք չեն տվել, ուստի

որոշում է կայացվել քրեական գործ հարուցելը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով:

Հունիսի 18-ի հավաքի հետ կապված՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է հրապարակումներ, որոնք պարունակում են ստուգման ենթակա տվյալներ «Հայաստան» դաշինքի եզրափակիչ հավաքին մասնակցության համար վարչական ռեսուրսի չարաշահման վերաբերյալ: Խոսքը վերաբերել է մի շարք կազմակերպությունների աշխատակիցների կազմակերպված մասնակցությանը հունիսի 18-ի հավաքին<sup>215</sup>: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից այս տվյալների հրապարակումը: Արձանագրվել են ստուգման ենթակա հրապարակային տվյալներ «Հայաստան» դաշինքի նախընտրական ցուցակում ընդգրկված «Իզմիրյան» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն, բ.գ.դ., պրոֆեսոր Արմեն Չարչյանի կողմից աշխատակիցներին ընտրություններին մասնակցության ենթադրյալ կազմակերպման հարցին:

Նախընտրական քարոզարշավի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրավապահ մարմիններին պարբերաբար ուղարկել է իր տրամադրության ներքո եղած տվյալները կամ նյութերը: Հաշվի առնելով արտահերթ խորհրդարանական ընտրությունների հիմնարար կարևորությունը երկրի համար, ստեղծված իրավիճակը ու խաղաղ հավաքների ազատությունը երաշխավորելու պետության պարտավորությունը՝ նշված տեղեկությունները պետք է իրավական պատշաճ ընթացակարգի շրջանակում ստուգման ենթարկվեն:

### **Խորհրդարանական արտահերթ ընտրությունների օրը**

Խորհրդարանական արտահերթ ընտրությունների օրը՝ հունիսի 20-ին, Պաշտպանի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խումբը վաղ առավոտից իրականացրել է ընտրական գործընթացի անկախ դիտարկում ինչպես աշխատակազմի կենտրոնական, այնպես էլ Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզային ստորաբաժանումներում: Նշված մարզերից բացի, աշխատանքային խմբի ներկայացուցիչներ էին գործուղվել Սյունիքի մարզ Վայոց ձորի և Սյունիքի մարզերի ընտրական իրավունքներին առնչվող հնարավոր բողոքները տեղում ուսումնասիրելու և ըստ անհրաժեշտության՝ արագ արձագանքելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 18:00-ի դրությամբ ստացվել է ընտրական գործընթացին վերաբերող 145 ահազանգ ու դիմում, ուսումնասիրել է սոցիալական ցանցերի ու լրատվամիջոցների 941 հրապարակում:

Աշխատակազմի թեժ գծին ստացված ահազանգերը հիմնականում վերաբերել են ընտրատեղամասի մատչելիությանը, ընտրատեղամասի համարի և գտնվելու վայրի վերաբերյալ

<sup>215</sup> Հասանելի է <https://freenews.am/post/6dbd204b0f14d5812616215aa51781b4> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

տեղեկություններ ստանալուն, քվեարկության կարգի խախտմանը, բժշկական հաստատությունում գտնվող անձի ընտրական իրավունքի իրացման վերաբերյալ, քվեաթերթիկների բացակայությանը, ակնհայտ իրարից տարբեր լինելուն, քվեարկության օրը ընտրական ցուցակներում ընդգրկված չլինելուն, հաշմանդամություն ունեցող անձի տեղամասային կենտրոններ ինքնուրույն ներկայանալու անհնարինությանը և այլն:

Սոցիալական ցանցերի ու լրատվամիջոցների հրապարակումներով ավելի հաճախ արձանագրված խնդիրների թվում են եղել քվեաթերթիկի տրամադրման կարգի խախտումները, կոնկրետ քաղաքական ուժի քվեաթերթիկ չտրամադրելը, քաղաքացիների, այդ թվում՝ զինծառայողների (օրինակ, խնդիրներ են արձանագրվել զինծառայողների ուղղորդումների, մարտական հերթապահության ընդգրկված որոշ զինծառայողների ընտրական իրավունքն իրացնելու հետ կապված)<sup>216</sup>, ուղղորդված քվեարկության դեպքերը, քվեաթերթիկների սահմանված ձևի խախտումները, կաշառք բաժանելու վերաբերյալ իրավապահ մարմինների ահազանգերը և այլն: Ահազանգերով և մշտադիտարկման արդյունքների հիման վրա Պաշտպանի ներկայացուցիչներն իրականացրել են մի քանի արագ արձագանքում, այդ թվում՝ այցեր: Մասնավորապես, Ազատաշեն գյուղում հնչած կրակոցների և բերման ենթարկվածների վերաբերյալ ստացվել է ահազանգ, անհրաժեշտ պարզաբանումներ են ստացվել Ոստիկանությունից: Բացի այդ, բողոքի հիման վրա արագ արձագանքման այց է իրականացվել «Հայաստան» դաշինքի Սիսիանի շտաբի ղեկավարին և տեղի ունեցել առանձնագրույց:

Տարբեր հարցերի վերաբերյալ քննարկումներ են իրականացվել և պարզաբանումներ ստացվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովից, Պաշտպանության նախարարությունից, Նորքի տուն-ինտերնատից: Իրականացվել են այցեր Ոստիկանության բաժիններ, այդ թվում՝ արագ արձագանքման այցեր Ոստիկանության մարզային ստորաբաժանումներ: Ըստ անհրաժեշտության կապ է հաստատվել նաև իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ: Հատուկ ուշադրություն է դարձվել դիտորդների ու լրագրողների անխոչընդոտ աշխատանքների ապահովման հարցերին:

Վերը նշված և ընտրության օրը Պաշտպանի աշխատակազմի աշխատանքային խմբի վեր հանած այլ դեպքերի կապակցությամբ գրություն է ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն, ինչի ի պատասխան, Դատախազությունից տեղեկացրել են, որ գրությամբ մատնանշված բոլոր դեպքերի կապակցությամբ նախաձեռնվել են վարույթներ, որոնք ընթացքի մեջ են: Միաժամանակ, Պաշտպանի գրությունն ուղարկվել է վարույթն իրականացնող մարմիններին՝ նշված հանգամանքները քննության առարկա դարձնելու նպատակով:

Հունիսի 20-ին առավոտյան զանգվածային լրատվության միջոցներով տարածվեց տեղեկություն այն մասին, որ Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինքի պատգամավորության ցուցակի առաջին համար, «Հանուն Հանրապետության» կուսակցության ղեկավար Արման

<sup>216</sup> Զինծառայողների իրավունքների հետ կապված հարցերը մանրամասն ներկայացվել են սույն հաղորդման «Մարդու իրավունքները զինված ուժերում» բաժնում:

Բաբաջանյանի տրանսպորտային միջոցը հայտնաբերվել է դիմապակու վրա կրակոցի հետքերով<sup>217</sup>: Մարդու իրավունքների պաշտպանը հունիսի 20-ի վաղ առավոտյան զանգահարել և խոսել է «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»-ի նախընտրական ցուցակը գլխավորող Արման Բաբաջանյանի հետ նրա «Լենդ քրաուզեր պառոտ» մակնիշի ավտոմեքենայի դիմապակու վրա կրակոցի մասին տեղեկությունների հրապարակումից անմիջապես հետո: Իրավապահ մարմինները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները՝ արագ քննություն ապահովելու և տեղի ունեցածը բացահայտելու համար: Արման Բաբաջանյանը Մարդու իրավունքների պաշտպանի հետ հեռախոսազրույցի ընթացքում նշել է, որ չի բացառել, որ այսօրվա դեպքը կարող է կապված լինել Երևանում հունիսի 18-ին տեղի ունեցած իրենց դաշինքի եզրափակիչ հավաքի ընթացքում ելույթներում հնչած շեշտադրումների հետ:

Նշվածի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ գլխավոր դատախազություն, որտեղից, ի պատասխան, տեղեկացրել են, որ դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով նույն օրը հարուցվել է թիվ 13202721 քրեական գործը: 2021 թվականի հունիսի 20-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 34-305-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ 13202721 քրեական գործը և միացվել թիվ 13144321 քրեական գործին: Կատարվում է նախաքննություն:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների օրը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է սոցիալական ցանցերում տարածվող քվեարկված քվեաթերթիկների լուսանկարներ, այդ թվում՝ վիրավորական գրառումներով: Այդպիսի գործընթացը խախտում է ընտրական իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանը քաղաքացիներին իրազեկել է, որ Քրեական օրենսգրքի հանցանք է համարում քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդյունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկության խցիկ (սենյակ) մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունն այլ կերպ խախտելը:

## **Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ**

2021 թվականին մի շարք համայնքներում տեղի ունեցան նաև ՏԻՄ ընտրություններ: Մասնավորապես հոկտեմբերի 17-ին տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ են անցկացվել Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերի 6 համայնքում, իսկ Արագածոտնի, Արմավիրի և Լոռու մարզերի 3 համայնքում անցկացվել են մեծամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ: Նոյեմբերի 14-ին

<sup>217</sup> Հասանելի է <https://www.azatutyun.am/a/31316889.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով ընտրություններ են անցկացվել Ստեփանավան, Կապան և Իջևան համայնքներում, իսկ Արզնի և Լերմոնտովո համայնքներում անցկացվել են մեծամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ, դեկտեմբերի 5-ին՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի և Տավուշի մարզերի 36 համայնքներում, իսկ Արագածոտնի մարզի Արևուտ և Մեծաձոր համայնքներում անցկացվել են մեծամասնական ընտրակարգով հերթական ընտրություններ:

«Վարդու իրավունքների պաշտպանը, ընտրական իրավունքի պաշտպանության սահմանադրական իր կարգավիճակին համապատասխան, իրականացրել է վերը նշված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դիտարկում:

Այսպես, արձանագրվել են Սյունիքի մարզի Կապան համայնքում տեղի ունեցող ՏԻՄ ընտրությունների հետ կապված ինչպես Պաշտպանին հասցեագրված, այնպես էլ հրապարակային ահազանգեր<sup>218</sup>: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանին գրավոր բողոքներ են հասցեագրել «Չաարատ Կապան» ՓԲ ընկերության մի քանի աշխատակիցներ այն մասին, որ իրենք ընդգրկված են «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության ավագանու թեկնածուների ցանկում և այդ մասին տեղեկանալուց անմիջապես հետո ընկերության ղեկավարությունը իրենցից պահանջել է կա՛մ հրաժարվել ավագանու թեկնածությունից և դուրս գալ կուսակցության ցուցակից, կա՛մ սեփական դիմումով ազատվել աշխատանքից: Ըստ նշված քաղաքացիների՝ ընկերության ղեկավարությունն ապօրինի միջամտել է իրենց քաղաքական իրավունքներին, պահանջել հրաժարվել դրանցից՝ աշխատանքային իրավունքների խախտման սպառնալիքով<sup>219</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված ահազանգերի համաձայն՝ նշված ՓԲ ընկերության նկատմամբ ճնշումներ են գործադրել հանրային իշխանության առանձին մարմիններ ու պաշտոնյաներ՝ իրենց առաջադրած թեկնածուի օգտին բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով:

Ըստ ահազանգերից մեկի՝ «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության ավագանու անդամների ցուցակից դուրս գալու կամ աշխատանքից ազատվելու պահանջ է ներկայացվել Կապանի հաշվապահական հաշվառման գրասենյակի աշխատակցի: Ըստ ահազանգի տվյալների՝ նշված աշխատակիցը, իր դիմումի համաձայն, կազատվի աշխատանքից:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է սոցիալական ցանցերում և մի շարք լրատվամիջոցներում տարածված քաղաքացու ահազանգ այն մասին, որ Կապանի գործող համայնքապետի՝ «Շանթ դաշինք»-ի Կապան համայնքի ղեկավարի թեկնածուի կողմնակիցները եկել են իրենց տուն և հորդորել ընտրել գործող համայնքապետին: Քաղաքացին գրառմամբ գործող համայնքապետից պահանջել է իր նկատմամբ ճնշումներ չգործադրել:

<sup>218</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1983> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>219</sup> Հասանելի է <https://www.5tv.am/news/communities/pre-election-alarms-from-kapan-active-inspections-have-started-in-the-city.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Պաշտպանի աշխատակազմը ստացել է ահազանգ այն մասին, որ քրեական վարույթի շրջանակում մի քանի օր առաջ խուզարկությամբ առգրավվել են «Սյունիքի մարզային տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ին պատկանող գույքը՝ համակարգիչներ և փաստաթղթեր: Ըստ ահազանգի տվյալների՝ դա արվել է՝ նպատակ ունենալով հասնել քոլեջի տնօրենի հեռացման, քանի որ նա Կապան համայնքի ղեկավարի տեղակալի մայրն է, իսկ համայնքի ղեկավարի նշված տեղակալն ընդգրկված է «Շանթ դաշինք» ազգայնական կուսակցության ավագանու անդամների ցուցակում:

Ըստ մի շարք ահազանգերի՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության տարբեր աջակիցներ հետևել են համայնքի գործող ղեկավարի օգտին գրառումներ անող քաղաքացիների սոցիալական ցանցերի էջերին, և դրական գրառումների ու անգամ որևէ դրական գրառում հավանելու դեպքում՝ արվել են նկատողություններ, պահանջներ են ներկայացվել, որ գրառումները ջնջվեն կամ հավանումները հանվեն:

Պաշտպանի աշխատակազմ մի շարք ահազանգեր են հասցեագրվել նաև այն մասին, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները ճնշումներ են գործադրել համայնքի մի շարք դպրոցների նկատմամբ՝ պահանջելով կամ հորդորելով տնօրեններին, որպեսզի վերջիններս իրենց աշխատակիցներին ուղղորդեն ՏԻՄ ընտրությունների ժամանակ քվեարկել կուսակցության առաջադրած թեկնածուի օգտին: Ըստ ահազանգի՝ դպրոցի մի շարք աշխատակիցների ներկայացվել են աշխատանքից ազատելու սպառնալիքներ:

Այս տվյալների կապակցությամբ գրություն է հասցեագրվել քրեական հետապնդման մարմիններին: Մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազությունից գրության ի պատասխան տեղեկացրել են, որ վերը նշված խնդիրների կապակցությամբ Պաշտպանի գրությունը փոխանցվել է ՀՀ ոստիկանության Կապանի բաժին: Վերջինից ստացվել է պատասխան առ այն, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ստուգվել է, պնդումները հավաստող տեղեկություններ չեն ստացվել:

Ըստ մեկ այլ ահազանգի՝ Կապան համայնքի գործող ղեկավարին՝ «Շանթ դաշինք»-ի Կապան համայնքի ղեկավարի թեկնածուին աջակցողներին պատկանող մի շարք խանութներում հենց ընտրական գործընթացի մեկնարկից անմիջապես հետո իրականացվել են նպատակային ստուգումներ հարկային մարմինների կողմից, այդ թվում՝ 1 դեպքում կիրառվել է տուգանք ՀԴՄ կտրոն չտրամադրելու հետ կապված: Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում հատուկ նշել, որ անթույլատրելի է որևէ տեսակի իրավախախտում, այդ թվում՝ պետք է պարտադիր լինի ՀԴՄ կտրոնների տրամադրումը գործարարների կողմից, սակայն հատուկ շեշտվում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից հրապարակվող ահազանգերը վերաբերում են հարկային մարմինների գործողություններին՝ կապված հենց ընտրական գործընթացի հետ:

2021 թվականի հոկտեմբերի 17-ին՝ Սյունիքում անցկացվող տեղական ինքնակառավարման մարմինների համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունների օրը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ են ներկայացվել մի շարք ահազանգեր այն մասին, որ

Ոստիկանության մեծաքանակ ծառայողներ են ժամանել «Առուշ Առուշանյան» դաշինքի Գորիս քաղաքի շտաբի մոտ, և ոստիկանների մի մասը մուտք է գործել շտաբ, ինչպես նաև տևական ժամանակ է, ինչ փակել է շտաբի մուտքը<sup>220</sup>: Ահազանգերի համաձայն՝ ոստիկանները պարզաբանել են, որ հարուցված քրեական գործի շրջանակում դատարանի որոշման հիման վրա շտաբում պետք է իրականացնեն խուզարկություն, բայց ըստ ահազանգի՝ դատարանի որոշումն անօրինական է:

Ահազանգով նշվել է, որ Ոստիկանության աշխատակիցների արարքներով խոչընդոտվում են շտաբի աշխատանքները. մեծաքանակ ոստիկաններ ժամանել են ցուցադրաբար, նրանց մի մասը սահմանափակել է շտաբի մուտքը և շտաբի աշխատանքները, որ դա հատուկ է արվում հենց քվեարկության օրը՝ Գորիս համայնքի մարմինների ընտրական գործընթացին «Առուշ Առուշանյան» դաշինքի համար խոչընդոտ առաջացնելու նպատակով: Հարցը քննարկվել է Առուշ Առուշանյանի փաստաբանի, շտաբի հետ: Լրատվամիջոցների մոնիթորինգով արձանագրվել է, որ շտաբի մոտ ներկա ոստիկանների մի մասը փակել է շտաբի մուտքը:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը արձանագրել է, որ Ոստիկանության հանրային պարտավորությունն է ցույց տալ, թե ինչ ծանրակշիռ հիմնավորումներով են նշված արարքները հենց քվեարկության օրն իրականացվում ոստիկանների այդ քանակի մասնակցությամբ՝ ուղեկցվելով ողջ շտաբի մուտքը փակելով ու նախընտրական շտաբի աշխատանքները սահմանափակելով<sup>221</sup>:

Վերը ներկայացված դեպքի կապակցությամբ՝ ՀՀ ոստիկանությունից տեղեկացրել են, որ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության կոռուպցիոն և տնտեսական հանցագործությունների դեմ պայքարի վարչությունում հարուցված քրեական գործի շրջանակներում էլ 2021 թվականի հոկտեմբերի 17-ին Երևանի ընդհանուր իրավասության դատարանի որոշման հիման վրա «Առուշ Առուշանյան» դաշինքի՝ Գորիս համայնքի Մաշտոցի փողոցի թիվ 6-րդ շենքի 1-ին հարկում տեղակայված նախընտրական շտաբում ՀՀ ոստիկանության Գորիսի բաժնի ծառայողները ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ վարչության ծառայողների հետ համատեղ կատարել են խուզարկություն: Դրանով պայմանավորված՝ ոստիկանության ծառայողները ծառայություն են իրականացրել շտաբի մուտքի դռան դիմաց՝ ապահովելով նշված դատավարական գործողության պատշաճ ընթացակարգը: Հիշյալ խուզարկությանը մասնակցել են ոստիկանության թվով 4 ծառայողներ: Խուզարկությունը կատարվել է օրենքով սահմանված կարգով, պահպանվել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր պահանջները, դրա ընթացքում հայտնաբերված և առգրավված բոլոր փաստաթղթերը պարունակել են քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալներ: Խուզարկության ժամանակ հրավիրված երկու ընթերակաները գործով չչահագրգռված Հայաստանի Հանրապետության չափահաս քաղաքացիներ են եղել, ովքեր ունակ են եղել լրիվ և ճշտորեն ընկալելու իրենց ներկայությամբ կատարվող գործողությունները, բացի այդ տիրապետել են հայերեն բանավոր լեզվին, սակայն նրանցից մեկը խուզարկության վերջում հայտարարել է, որ

<sup>220</sup> Հասանելի է <https://www.infocom.am/hy/Article/66574> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>221</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1951> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ինչը՝ ըստ քրեական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի խոչընդոտ չի հանդիսանում անձին որպես ընթերակա ներգրավելու համար: Ընթերականերին պատշաճ կեպով պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածով սահմանված նրանց իրավունքներն ու պարտականությունները, ինչը և հաստատվել է նրանց ստորագրություններով: Միևնույն ժամանակ Ոստիկանությունից տեղեկացրել են, որ 2021 թվականի հոկտեմբերի 17-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններով պայմանավորված՝ Գորիս համայնք են գործուղվել ՀՀ ոստիկանության ծառայողներ՝ ընտրությունների ժամանակ հասարակական կարգ ապահովելու համար:

Ոստիկանությունը պետք է իր գործողությունները կատարի այնպես, որ ընտրական գործընթացին մասնակցության հետ կապված որևէ քաղաքական ուժի համար, հատկապես քվեարկության օրը խոչընդոտներ չառաջանան, որևէ անհամաչափ միջամտություն չլինի, ինչպես նաև իր միջամտության արդյունքում տեղի չունենա ընտրական գործընթացի որևէ մասնակցի քաղաքական կամ այլ իրավունքների ոտնահարում կամ առնվազն չստեղծվի նման ընկալում:

### **Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում համայնքների ընտրված ավագանիների կալանավորված անդամների սահմանադրական իրավունքի իրացման խոչընդոտումը**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրել Վարդենիս և Վանաձոր համայնքների ավագանիների ընտրություններին մասնակցած և ավագանու անդամ ընտրված համապատասխանաբար՝ Արամ Հարությունյանը և Մամիկոն Ասլանյանը: Նրանք գտնվում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում՝ քրեական գործերով կալանավորվածի կարգավիճակում: Նրանք երկուսն էլ բողոքներով տեղեկացրել են, որ իրենց կալանավորումները նպատակ ունեն այնպես անել, որ իրենք չմասնակցեն ավագանիների առաջին նիստերին և այդ պարագայում երկու դեպքում էլ ձայներն այնպես կբաշխվեն, որ և՛ Արամ Հարությունյանը, և՛ Մամիկոն Ասլանյանը չեն կարողանա ընտրվել համայնքի ղեկավար: Ավելին, ըստ բողոքների՝ չմասնակցության դեպքում իրենք ևս կզրկվեն քվեարկելու, այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրելու և ընտրվելու իրավունքից:

Սրանից բացի, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է ահազանգեր կալանավորումներից հետո ավագանիների նշված անդամների նկատմամբ ճնշումների մասին. նրանք տեղերում՝ իրենց համայնքներում, ներկայացվում են՝ որպես հանցանք կատարած և արդեն իսկ դատապարտված ու համայնքի ղեկավար դառնալու հնարավորությունից առհասարակ զրկված անձինք: Այս մասին են նշել հենց բողոք ներկայացրած անձինք:

Արամ Հարությունյանի և Մամիկոն Ասլանյանի բողոքների, քրեակատարողական հիմնարկներում նրանց հետ առանձնազրույցների, անհրաժեշտ փաստաթղթերի համադրված ուսումնասիրությունների արդյունքներով հարկ է նշել, որ նախ, ավագանիների այդ անդամների



նկատմամբ գործում է անմեղության կանխավարկածի երաշխիքը՝ որպես արդար դատաքննության իրավունքի պարտադիր բաղադրիչ: Հետևաբար, նրանց նկատմամբ վերաբերմունքը չի կարող խաթարել այդ սահմանադրական և միջազգային կոնվենցիոն պահանջը:

Դրանից բացի, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու ընտրելու և ընտրվելու իրավունքը երաշխավորված է Սահմանադրության մակարդակով և հենց Սահմանադրությունը հենց ինքը թվարկում է այդ իրավունքի թույլատրելի սահմանափակումների սպառիչ շրջանակը:

Ըստ ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածի 4-րդ մասի՝ «Ընտրելու և ընտրվելու, ինչպես նաև հանրաքվեին մասնակցելու իրավունք չունեն դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք: Ընտրվելու իրավունք չունեն նաև այլ հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձինք»:

Այսինքն՝ Սահմանադրությունն ամրագրում է քաղաքացուն ընտրելու և ընտրվելու իրավունքից զրկելու առնվազն երկու պարտադիր պայման, որոնք պետք է առկա լինեն միաժամանակ՝ 1) դատապարտված լինելը և 2) պատիժ կրելը: Ընտրվելու իրավունքի դեպքում Սահմանադրությունն ավելի առաջ է գնացել՝ ամրագրելով այդ իրավունքից զրկելուց պաշտպանություն ցանկացած հանցանքի պարագայում: «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 42.2-րդ հոդվածի 1-ին մասի ուժով՝ «Համայնքի ղեկավարի ընտրությունն անցկացվում է նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում»: Այսինքն՝ Սահմանադրությունն ու Ընտրական օրենսգիրքը նախատեսել են, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դեպքում ՀՀ քաղաքացու ընտրվելու իրավունքի վերջնական իրացումը չի սահմանափակվում միայն ավագանու անդամ ընտրվելով, այլ այն վերջնական լուծվում է համայնքի ղեկավարի ընտրության փուլով՝ նորընտիր ավագանու առաջին նիստի ընթացքում: Այլ կերպ ասած, համայնքի ղեկավարի ընտրության համար անցկացվող առաջին նիստը քաղաքացու՝ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրվելու իրավունքի իրացման գործընթացի անբաժան մասն է:

Վարդենիս և Վանաձոր համայնքների դեպքում ավագանիների ընտրված և ներկայում կալանավորված անդամների պարագայում Սահմանադրության 48-րդ հոդվածով պահանջվող պայմաններն առկա չեն, անգամ չկա պարտադիր պայմաններից որևէ մեկը՝ 1) չկա դատապարտված անձ, 2) չկա պատժի կրում:

Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է նաև ՀՀ քաղաքացիների ընտրելու սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից:

Հարցն այն է, որ քրեական գործերով կալանավորված են ավագանու անդամ ընտրված ՀՀ այն քաղաքացիները, որոնք քաղաքական ուժերի ղեկավարներ են և նախընտրական քարոզարշավին մասնակցել են՝ որպես համայնքի ղեկավարի թեկնածուներ:

Այսինքն՝ նրանցից յուրաքանչյուրի կողմնակից քաղաքացին նրանց ընտրել է այն ակնկալիքով, որ հենց այդ անձինք են լինելու իրենց համայնքի ղեկավարը: Այլ կերպ ասած, քաղաքացու

ընտրական իրավունքի վերջնական և սպառիչ իրացումը ենթադրում է ավագանիների այդ անդամների կողմից համայնքի ղեկավարի ընտրության համար անցկացվող ավագանու առաջին նիստին մասնակցելու և քվեարկելու իրավունքի իրացում:

Սա է ներկայացուցչական ժողովրդավարության էությունը: Այս կերպ է, որ ընտրական իրավունքի շնորհիվ ձևավորվում է երկրում ժողովրդավարության համակարգը: Նույն սկզբունքը վերաբերում է նաև խորհրդարանական ընտրություններին և Կառավարության ձևավորմանը:

Ուստի, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացրած ավագանիների անդամներ Արամ Հարությունյանի (Վարդենիս) և Մամիկոն Ասլանյանի (Վանաձոր) ընտրվելու սահմանադրական իրավունքը լիարժեք երաշխավորելու համար ՀՀ կառավարությունը, իսկ ավելի կոնկրետ՝ ՀՀ արդարադատության նախարարությունը պետք է ապահովի համապատասխան ավագանիների առաջին նիստերին նրանց մասնակցությունը և քվեարկության իրավունքի իրացումն ըստ առաջնահերթության, հետևյալ սկզբունքով.

1) նրանց կալանքից ազատ արձակելով, ինչը հնարավորություն կտա ապահովել համապատասխան ավագանիների նիստերին նրանց լիարժեք մասնակցությունը: Հակառակ պարագայում՝ ստեղծված իրավիճակում կալանքի տակ նրանց հետագա պահելու իրավաչափությունը քրեական հետապնդման մարմիններից ու դատարաններից պահանջում է բարձր շեմի հաղթահարում ու բարձր չափանիշներով հիմնավորում,

2) թեև կալանավորված վիճակում, բայց ավագանիների նիստերին ֆիզիկական մասնակցությունն ապահովելով,

3) թեև կալանավորված վիճակում, բայց Զում (Zoom), Սկայպ (Skype) կամ որևէ այլ եղանակով ապահովելով ավագանիների նիստերին նրանց մասնակցությունն ու ընտրվելու իրավունքի իրացումը:

Թվարկված կետերից որևէ մեկի չկատարումը կառաջացնի մարդու ընտրվելու սահմանադրական իրավունքի խախտում, ինչպես նաև կլինի խնդրահարույց ընտրելու սահմանադրական իրավունքի լիարժեք իրացման տեսանկյունից: Ավելին, հարցը հրատապ է՝ հաշվի առնելով ավագանիների առաջին նիստերի անցկացման ժամկետները:

Քանի որ ավագանիների նշված անդամները գտնվում են ազատությունից զրկված (խափանման միջոց կալանք) վիճակում, այն է՝ Արդարադատության նախարարության ՔԿՀ-ներում, ապա նրանց ընտրվելու սահմանադրական իրավունքի իրացումը պետք է ապահովվի ՀՀ Կառավարության, մասնավորապես՝ Արդարադատության նախարարության կողմից՝ անկախ քրեական հետապնդման մարմնի կամ կալանքի միջնորդությունը բավարարած դատարանի վերաբերմունքից: Այսինքն՝ չի կարող այս հարցի լուծումը կախվածության մեջ դրվել քրեական գործ քննող մարմինների կամքից, քանի որ այն կապ չունի նրանց կողմից քննվող քրեական գործի առարկայի հետ և, բացի այդ էլ խոսքը գնում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական իրավունքի մասին, որից զրկելու հիմքեր կոնկրետ իրավիճակում չկան առհասարակ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը այս հարցի վերաբերյալ դիմել է նաև ԵԱՀԿ դիտորդական առաքելությանը, միջազգային այլ

կառույցներին, դիտորդական կազմակերպությունների, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Սույն հարցի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պաշտոնական հարցում է ուղարկել ՀՀ արդարադատության նախարարին՝ պահանջելով հրատապ պարզաբանում:

Արդարադատության նախարարի պատասխան գրությամբ, սակայն, ցուցաբերվել է խիստ ֆորմալ, մարդու սահմանադրական իրավունքները ոտնահարող մոտեցում՝ առանց հաշվի առնելու Սահմանադրության առանձնահատկությունները և իրավունքի գերակայության ապահովման հիմնարար պահանջը:

Արդարադատության նախարարությունը մի կողմից անվիճելի է համարել Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած փաստը, որ կալանքը՝ որպես խափանման միջոց կիրառելն անձին չի կարող զրկել ընտրական իրավունքից, մյուս կողմից, սակայն, ձևական մեկնաբանությունների վրա դիմելով՝ հարցը հատուկ տարել այնպիսի ճանապարհով, որ ինքն իր համար ապահովի մարդու սահմանադրական իրավունքի իրացումը մերժելու հիմքեր: Մասնավորապես, անցում է կատարել կալանավորվածի մեկնումների, տեսակցությունների ոլորտ՝ նշելով, թե «սահմանադրական նշված նորմի (48-րդ հոդված) կիրառման կառուցակարգը հասկանալու և դրա համատեքստում քրեակատարողական հիմնարկի պետի իրավասության առկայությունը հաստատելու համար» վկայակոչել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի դրույթներ՝ ցույց տալու համար, թե կալանավորված անձին արտաքին աշխարհի հետ փոխադարձ հաղորդակցությունն ապահովելու և հիմնարկից այլ վայր փոխադրելու հիմքեր չկան:

Արդարադատության նախարարությունը նշել է, թե կարճաժամկետ մեկնումները «կարող են տրամադրվել միայն քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ և միայն կալանավորված անձանց մերձավոր ազգականի մահվան կամ կյանքին սպառնացող ծանր հիվանդության, կալանավորված անձին կամ նրա ընտանիքին զգալի նյութական վնաս պատճառած տարերային աղետի դեպքում»: Իսկ տեսակցությունների կապակցությամբ էլ Նախարարը նշել է, թե տվյալ դեպքում դրանք արգելվել են վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ, հետևաբար նման արգելքի պայմաններում այս տարբերակը ևս խնդրո առարկայի շրջանակներում չի կարող քննարկվել:

Ակնհայտ է, որ կոնկրետ իրավիճակում մարդու սահմանադրական ընտրական իրավունքների ապահովման հետ այս պահանջներն առնչություն չունեն: Ուստի, բացարձակ անընդունելի է Արդարադատության նախարարության նման դիրքորոշումը և հարցին լուծում տալու փոխարեն պարտավորության կատարումից հրաժարվելը՝ փորձելով ստեղծել մարդու ընտրական իրավունքի սահմանափակման այնպիսի հիմքեր, որոնք Սահմանադրությամբ գոյություն չունեն:

Ինչպե՞ս կարելի է անձի ընտրելու և ընտրվելու իրավունքի երաշխավորման հարցը պայմանավորել վարույթն իրականացնող անձի կամքով, երբ Սահմանադրությունը իրավունքի սահմանափակման նման որևէ հիմք չի նախատեսում:

Այս առումով Մարդու իրավունքների պաշտպանը մեկ անգամ ևս հատուկ ընդգծել է, որ չի կարելի այս հարցի լուծումը կախվածության մեջ դնել քրեական գործ քննող մարմինների կամքից, քանի որ այն կապ չունի քննվող քրեական գործի առարկայի հետ և, բացի այդ էլ՝ խոսքը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված ընտրական իրավունքի մասին է, որից զրկելու հիմքեր կոնկրետ իրավիճակում չկան առհասարակ:

Արդարադատության նախարարությունը, կրկին դիմելով ֆորմալ մեկնաբանության, մարդու սահմանադրական իրավունքի իրացումը փորձել է դարձնել անիրատեսական: Մասնավորապես, եզրահանգել է, թե քրեակատարողական հիմնարկի պետը լիազորված չէ ինքնուրույն կալանավորված անձին նիստի անցկացման վայր տեղափոխել կամ տեսակցություն տրամադրել՝ մեջբերելով Սահմանադրության 6-րդ հոդվածը, որի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Սահմանադրական այս հոդվածի վկայակոչումը կոնկրետ դեպքում սկզբունքորեն անընդունելի է, որի ներքո, ըստ կարիքի, հաճախ են «թաքնվում» պետական մարմինները: Անթույլատրելի է անտեսել հենց նույն Սահմանադրության մեկ այլ՝ փոփոխման ոչ ենթակա հոդված, ըստ որի՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է (...) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (3-րդ հոդված):

Մարդու իրավունքների պաշտպանը խիստ մտահոգիչ է համարում պետական նման մարմնի այսպիսի մոտեցումը, որը ստեղծում է վտանգավոր նախադեպ: Արդարադատության նախարարությունը պարտավոր է ապահովել կալանավորված ավագանու անդամի ընտրական իրավունքը երաշխավորելու համար Սահմանադրության պահանջները՝ հատկապես, որ հնարավոր է ապահովել ավագանու կալանավորված անդամի մասնակցությունը ավագանու առաջին նիստին՝ հնարավորություն ընձեռելով նրան այլ եղանակով, օրինակ՝ տեսակապի միջոցով կամ որևէ այլ կերպ, արտահայտել իր դիրքորոշումը կամ այլ կերպ իրացնել իր սահմանադրական ընտրական իրավունքը: Կոնկրետ դեպքում խոսքը վերաբերում է Մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացրած ՔԿՀ-ում գտնվող Մամիկոն Ասլանյանի մասնակցությանը ավագանու նիստին, քանի որ Վանաձորում ավագանու առաջին նիստ դեռ չի գումարվել, որի ընթացքում պետք է որոշվի համայնքի ղեկավարի ընտրության հարցը:

Ավագանու յուրաքանչյուր անդամի կողմնակից քաղաքացին (անկախ նրանից՝ ավագանու տվյալ անդամը կալանավորված է, թե ոչ) համայնքի ղեկավարի թեկնածուին ընտրել է այն ակնկալիքով, որ հենց այդ անձն է լինելու իր համայնքի ղեկավարը: Այլ կերպ ասած, քաղաքացու ընտրական իրավունքի վերջնական և սպառիչ իրացումը ենթադրում է ավագանիների այդ անդամների կողմից

համայնքի ղեկավարի ընտրության համար անցկացվող ավագանու առաջին նիստին մասնակցելու և քվեարկելու իրավունքի իրացում:

Սա է ներկայացուցչական ժողովրդավարության էությունը: Այս կերպ է, որ ընտրական իրավունքի շնորհիվ ձևավորվում է երկրում ժողովրդավարության համակարգը: Նույն սկզբունքը վերաբերում է նաև խորհրդարանական ընտրություններին և Կառավարության ձևավորմանը:

Հաշվի առնելով սույն բաժնում արձանագրվածը՝ անհրաժեշտ է

- ընտրական գործընթացում բացառել վիրավորանքն ու հայհոյանքը, ատելության ու բռնության հետ առնչվող ցանկացած խոսք, իսկ քաղաքական բոլոր ուժերը և հանրային գործիչները պետք է ձեռնպահ մնան հասարակությունը բևեռացնող ու լարվածությունն ավելացնող արարքներից,

- հստակ ընդգծել, որ պաշտոն զբաղեցնող և պետական կարգավիճակ ունեցող անձինք անկախ պաշտոնեական դիրքի աստիճանից, նախընտրական քարոզարշավի ընթացքում չեն դադարում պաշտոնյա լինելուց և պետական կարգավիճակ ունենալուց, ուստի սահմանափակված են իրենց իրավասության սահմաններով և չպետք է անցնեն այդ իրավասության սահմանները,

- բացառել հանրային գործիչների կողմից լրագրողի կամ լրատվամիջոցի նկատմամբ ընտրողական մոտեցումը կամ հրապարակային թիրախավորումը, իսկ լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում պետք է արագ ու պատշաճ իրավական գնահատական ստանա պետական, այդ թվում՝ իրավապահ մարմինների կողմից: Միևնույն ժամանակ լրագրողները մասնագիտական գործունեություն պետք է ծավալեն պատասխանատու լրագրության սկզբունքներին համապատասխան՝ սկսած լրագրողական նյութի համար վերնագիր ընտրելուց մինչև այդ նյութի բազմակողմանիության ապահովումը,

- քաղաքական բնույթ ունեցող հավաքներին երեխաների մասնակցության դեպքում ապահովել երեխաների իրազեկված, գիտակցված և կամավոր մասնակցությունը՝ մշտապես՝ կոնկրետ իրավիճակի հաշվառմամբ, նկատի ունենալ երեխայի լավագույն շահերը՝ որպես բացարձակ արժեք և այն, որ դրանցով չառաջնորդվելը երեխայի իրավունքների խախտում է,

- ընտրական գործընթացում բացառել վարչական ռեսուրսի կիրառումը,

- բացառել Ոստիկանության կողմից յուրաքանչյուր գործողության իրականացում այնպես, որ ընտրական գործընթացին մասնակցության հետ կապված որևէ քաղաքական ուժի համար, հատկապես քվեարկության օրը առաջնան խոչընդոտներ, տեղի ունենա ընտրական գործընթացի որևէ մասնակցի քաղաքական կամ այլ իրավունքների ոտնահարում կամ առնվազն ստեղծվի նման ընկալում,

- ապահովել կալանավորված ավագանու անդամի ընտրական իրավունքը երաշխավորելու համար Սահմանադրության պահանջները՝ հատկապես, որ հնարավոր է ապահովել ավագանու կալանավորված անդամի մասնակցությունը ավագանու առաջին նիստին՝ հնարավորություն ընձեռելով նրան այլ եղանակով, օրինակ՝ տեսակապի միջոցով կամ որևէ այլ կերպ, արտահայտել իր դիրքորոշումը կամ այլ կերպ իրացնել իր սահմանադրական ընտրական իրավունքը:

## **Լրացումներ և փոփոխություններ ՀՀ քրեական օրենսգրքում**

2021 թվականի ապրիլի 28-ին ՀՀ քրեական օրենսգրքի 149.1-րդ հոդվածում իրականացվեցին փոփոխություններ: Այդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում «նախընտրական քարոզչությանը մասնակցելուն կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն կամ նախընտրական քարոզչությանը մասնակցելուց կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու կամ նախընտրական քարոզչությանը մասնակցելուն կամ հանրաքվեի քարոզչություն կատարելուն որևէ եղանակով խոչընդոտելու համար»: Հոդվածի փոփոխությունները Քրեական օրենսգրքում ամրագրվեցին շատ հապճեպ, նախագիծն ԱԺ նստաշրջանի օրակարգ ընդգրկվեց և առաջին, երկրորդ ընթերցումներով ու ամբողջությամբ ընդունվեց մեկ օրում՝ 2021 թվականի ապրիլի 28-ին, առանց մասնագիտական ու պատշաճ հանրային քննարկումների, առանց «e-draft.am» կայքում հրապարակելու, իսկ նախագծային փուլում առկա էին եղել մի քանի տարբերակներ:

Հիմնավորված լինելով խիստ մակերեսայնորեն ու մարդու իրավունքների խախտումների վտանգներով, ցույց տրված չէին օրենսդրի մտադրության և իրավապահ մարմինների ու դատարանի հայեցողության սահմանները փոփոխությունները կիրառելու հարցում: Մատնանշված չէին որևէ երկրի փորձ, ցույց տված չէին, թե այդ ինչ միջազգային պահանջների հիման վրա են կատարվում այդ փոփոխությունները և վերլուծված չէին մարդու իրավունքների տեսանկյունից ռիսկերը:

Դրա համար էլ, ինչպես վկայում են բողոքներն ու ահազանգերը, պրակտիկայում այն ստացել է խնդրահարույց ու անտրամաբանական կիրառություն: Քրեական օրենսգրքի նշված հոդվածի փոփոխությունից հետո իրավապահ մարմինների ու դատարանների համար այդպես էլ գործնական որևէ չափանիշ կամ ուղեցույց չընդունվեց:

Իրավապահ մարմիններն իրենք են պարզաբանումներում նշել, որ հասկանալիորեն չունեն կիրառության փորձ և դիրքորոշում էլ չեն կարող հայտնել կիրառության վերաբերյալ:

Քանի որ Քրեական օրենսգրքի այդ փոփոխությունները, այն էլ արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանակում կիրառվելու էին շատ կարճ ժամանակահատվածի համար, վերաբերում են մարդու իրավունքների տեսանկյունից զգայուն հարցերի հատկապես չէր կարելի դրանք ընդունել առանց պատշաճ քննարկումների ու նման թերություններով՝ առավել ևս առանց իրավապահ մարմինների ու դատարանի պատշաճ վերապատրաստումների կամ առնվազն նրանց համար ուղեցույցների:

**Պատգամավորի թեկնածուի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան կալանավորելու համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունը ստանալու մեխանիզմների բացակայությունը**

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորությունները ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությամբ: Առանց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնության՝ նա չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ, երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նշված հարցի վերաբերյալ որոշում ընդունում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով: Նշված դրույթը չի տարածվում մինչև թեկնածու գրանցվելը ձերբակալված կամ կալանավորված քաղաքացիների, ինչպես նաև ձերբակալված անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և նշված անձանց կալանքի ժամկետը երկարաձգելու դեպքերի վրա:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են բողոքներ այն մասին, որ, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի վերը նշված դրույթը կիրառվում է խիստ ձևական մոտեցումներով, որից օգտվում է քրեական հետապնդման մարմինը և կատարում է մարդու սահմանադրական իրավունքները խախտող գործողություններ: Հիմքում, մասնավորապես, այն է, որ ԿԸՀ-ում համաձայնություններ ստանալու համար միևնույն է չկա որևէ ընթացակարգ, մարդու համար սահմանված չեն իրավունքներ ու այդ իրավունքներն ապահովելու մեխանիզմներ: Քրեական հետապնդման մարմինն էլ, օգտվելով դրանից, գործում է՝ առանց հաշվի առնելու պաշտպանության կողմի իրավունքները: ԿԸՀ-ն էլ չի կարողանում ապահովել իր կազմակերպած և իր մոտ իրականացվող վարույթում այն անձանց իրավունքները, ում նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու թույլտվություն ստանալու հարց է քննարկվում: Սույն զեկույցի հիմքում դրվել են Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, որոնց համաձայն՝ իրավական որևէ ընթացակարգ սահմանված չէ, նախատեսված չէ քրեական հետապնդման մարմնի միջնորդություններից, իրավունքների խախտումներից պաշտպանվելու հնարավորություն: Դատախազը կամ քննչական մարմինը գործում են այնպես, որ եթե չկա նախատեսված կարգ կամ իրավունք, ապա իրավունքներ առկա չեն կամ չունեն կարևորություն: Այս պայմաններում թե՛ փաստաբանների, թե՛ նրանց վստահորդների պնդմամբ՝ իրենց համար ստեղծվում է անորոշ վիճակ, քանի որ մի կողմից՝ օրենքում չկա որևէ ընթացակարգ, մյուս կողմից՝ իրենց համար գործնականում չեն երաշխավորվում իրենց իրավունքները, չի ապահովվում պաշտպանվելու որևէ հնարավորություն: Արդյունքում՝ ԿԸՀ-ի որոշումը կայացվում է անձի իրավունքները չափապանելով, իսկ նախատեսված ընթացակարգը ստացվում է ձևական: Ընդ որում, ԿԸՀ-ն ինքը գործուն միջոց չի ձեռնարկում՝ անձի

իրավունքները ապահովելու համար: Կարգավորումների բացակայության պատճառով անգամ փորձ չի արվում թույլ չտալու, որ անձի իրավունքները խախտվեն: Խնդիրն էլ այն է, որ ընթացակարգի արդյունքում կայացվող որոշումները քրեական հետապնդման մարմնի համար դառնում են անձի իրավունքները սահմանափակող գործողությունների հիմք: Ընդ որում, ինչպես նշում են փաստաբանները, վարույթն իրականացնող մարմինն էլ հետագայում քրեական հետապնդումը կամ ազատությունից զրկելը վիճարկելու ժամանակ անընդհատ պաշտպանվում է պնդումներով կամ հիմնավորումներով, որ դրանք իրավաչափ են, քանի որ ԿԸՀ-ն արդեն տվել է համաձայնությունը: Այսինքն՝ ստացվում է՝ ԿԸՀ-ում հարցի քննարկմամբ ու կայացվող որոշմամբ լեգիտիմացվում են իրավունքների հնարավոր սահմանափակումներն ապագայում: Այլ կերպ ասած, վարույթն իրականացնող մարմինն ինքն իրեն ապահովագրում է: Ընդ որում, սկզբունքային է այն, որ ԿԸՀ-ի ընթացակարգի ելքը, որոշումներն արդեն իսկ հստակ կանխորոշված են դատախազի կամ քննչական մարմնի համար, այսինքն՝ միանշանակ վստահությամբ նախապես հայտնի է, որ քրեական մարմնի միջնորդությունը բավարարվելու է: Նշվածին ավելանում է նաև այն, որ ԿԸՀ-ն ինքն է հրաժարվում կարգավորումների բացակայության պատճառով իրականացնել գործի կամ հարցի ուսումնասիրություն:

Խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ, 63-րդ, 67-րդ, 75-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին այնքանով, որքանով սահմանված չեն մարդու նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համաձայնությունն ստանալու պատշաճ կառուցակարգեր և ընթացակարգային նորմեր, ինչը հանգեցնում է մարդու սահմանադրական իրավունքների խախտման: Սահմանադրական դատարանում գտնվող գործի քննությունը դեռ ընթացիկ փուլում է, նիստը նշանակված է 2022 թվականի մարտի 22-ին<sup>222</sup>:

Խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև արտահերթ զեկույց, որտեղ կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների լույսի ներքո ներկայացված են մարդու իրավունքների համար խորքային վտանգներ, ինչպես նաև մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման գործնական իրավիճակներ<sup>223</sup>:

<sup>222</sup> Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումը հասանելի է <https://concourt.am/pdf/uploads/d64625932e0ddfc31519581e7cec2a324db828f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>223</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/f4f5aa96b6eebf128550b446aa071016.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



## ԲԱԺԻՆ 7. ԿԱՐԾԻՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս 2020 թվականի գործունեության արդյունքներով արձանագրել էր, որ կարծիքի արտահայտման ազատության ու մամուլի ազատություն նկատմամբ սահմանափակումների պետական քաղաքականությունը սկզբունքային առումով խնդիրներ է առաջ բերում՝ իրավունքահեն մոտեցման բացակայության պատճառով:

Այսպես, համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման և մասնավորապես՝ խոսքի ու մամուլի ազատության նկատմամբ միջամտություններն առաջ են բերել համակարգային խնդիրներ: Մասնավորապես, համավարակի և ռազմական դրության պայմաններում կարծիքի արտահայտման ազատության պաշտպանության առումով Պաշտպանի սկզբունքային դիտարկումներն էին՝

1. սահմանափակող միջոցները չեն կարող որևէ կերպ կանխել լրագրողական աշխատանքն ու հանգեցնել համացանցում հրապարակումների անհարկի հեռացմանը,

2. բացառապես իշխանությունների կողմից տրամադրված տեղեկությունների հրապարակումը խիստ սահմանափակող միջոց է, որն անհամաչափ կսահմանափակի մամուլի ազատությունը և տեղեկատվության հասանելիությունը,

3. կարծիքի արտահայտման ազատության գործնական երաշխավորումը կարևորություն է ձեռք բերում նաև այն տեսանկյունից, որ այն հանդես է գալիս իբրև այլ իրավունքների իրացման նախադրյալ,

4. կարծիքի արտահայտման ազատության և համավարակի դեմ պայքարը չհակադրելու, այլ փոխպայմանավորելու մոտեցումը պետք է իբրև սկզբունք որդեգրվի պետությունների կողմից,

5. մի կողմից՝ ռազմական դրության պայմաններում անվտանգային հարցերի երաշխավորման կամ համավարակի պայմաններում հանրային առողջության պահպանման կենսական անհրաժեշտության, մյուս կողմից՝ կարծիքի արտահայտման և մամուլի ազատության երաշխավորման հրամայականի պայմաններում իրավունքահեն մոտեցումն է, որ կարող է ապահովել այդ երկու արժեքների պաշտպանությունը՝ ոչ թե այդ երկուսի հակադրության, այլ դրանց փոխպայմանավորվածության ու համադրման սկզբունքով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2021 թվականի գործունեության արդյունքները ևս ցույց տվեցին, որ պետության քաղաքականությունը՝ կարծիքի արտահայտման ազատության նկատմամբ սահմանափակումների առումով, համակարգային խնդիր է: Թերևս սա է պատճառը, որ 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումներից երեքն առնչվում են կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական իրավունքի երաշխավորման հարցին: Այդ իրավական վերլուծություններն ամփոփ ներկայացվում են ստորև: Այսպես.

**1. Տեղեկատվության ազատությունը. օրենսդրություն և իրավակիրառ պրակտիկա**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղեկություններ ստանալու հարցումների պատասխանների տրամադրման որակի, ժամկետների, մերժումների բնույթի ու առհասարակ, այդ հարցումների նկատմամբ հանրային մարմինների վերաբերմունքի հարցերը և դրանց դիտարկումը:

Տեղեկատվության մատչելիությունը պետության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության կարևորագույն երաշխիք է, և պետության պարտավորությունն է ապահովել տեղեկատվության արդարացի հասանելիություն բոլորի համար՝ մարդկանց կարիքներին ու նոր տեխնոլոգիաների զարգացմանը համահունչ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը սկզբունքային է համարում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղեկություններ ստանալու հարցումների պատասխանների տրամադրման լրիվության, որակի, ժամկետների, մերժումների բնույթի ու առհասարակ, այդ հարցումների նկատմամբ հանրային մարմինների վերաբերմունքի հարցերը:

Հանրային մարմինների կողմից նման գործելաոճի դրսևորումները գործնականում կարող են առաջ բերել տեղեկատվության ոչ ամբողջական տրամադրման կամ առհասարակ տեղեկությունների տրամադրման մերժումների շարունակականության ռիսկեր:

Ուստի, յուրաքանչյուր պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին պարտավոր է տեղեկություններ ստանալու վերաբերյալ հարցումներին վերաբերվել պատասխանատվությամբ, ապահովել դրանց ամբողջական և պատշաճ տրամադրումը, ինչն էլ իր հերթին կերաշխավորվի ՀՀ Սահմանադրությամբ, օրենքներով և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքի պատշաճ իրացումը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանը կարևորում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները տեղեկություններ հայցողներին դրանք փոխանցեն այնպիսի ծավալով, որ այդ տեղեկությունների տրամադրումն այլ անձանց անձնական տվյալների երաշխավորման առումով խնդրահարույց չլինի:

Հասարակության իրազեկվածության ապահովման նպատակով առանցքային դերակատարություն ունեն զանգվածային լրատվության միջոցները, քանի որ նրանք իրենց գործունեությամբ նպաստում են խոսքի ազատության երաշխավորմանը և տեղեկատվության տարածմանը:

Ուստի, լրագրողների կողմից տեղեկություններ ստանալու հետ կապված հարցերը ևս գտնվում են Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո: Խոսքը հատկապես

վերաբերում է հանրային նշանակության կամ հետաքրքրության առարկա տեղեկատվության մատչելիության ապահովմանը:

Տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: Պետական իշխանությունների թափանցիկությունը լավ կառավարման հիմնական առանձնահատկությունն է և ցուցիչ, թե արդյոք հասարակությունն իսկապես ժողովրդավարական է և բազմակարծ: Պաշտոնական փաստաթղթերին հասանելիության իրավունքը կարևոր նշանակություն ունի անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրականացման հարցում:

Այս կարևոր ուղղությունը նպատակ ունի շարունակաբար ամրապնդել պետության և քաղաքացիների կապը, իսկ լրագրողների միջոցով՝ իրացնել քաղաքացիների տեղեկություններ ստանալու իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության մասին տեղեկություններ ստանալու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունք:

2020 թվականին ազգային օրենսդրության՝ միջազգային պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ՀՀ կառավարությունը հավանություն է տվել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի ստորագրման առաջարկությանը, որի արդյունքում Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է կոնվենցիան<sup>224</sup>:

2021 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 1999-Ա որոշմամբ Կառավարությունը հավանություն է տվել «Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը:<sup>225</sup>

Հիմք ընդունելով տեղեկատվության ազատության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության արդյունքները՝ Պաշտպանը կարևորում է Կոնվենցիայի վավերացումը՝ որպես տեղեկատվության ազատության լիարժեք երաշխավորմանն ու ՀՀ ներպետական օրենսդրությունն ու պրակտիկան միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված գործընթաց:

Մարդու իրավունքների պաշտպանը տեղեկություններ ստանալու իրավունքի իրացմանն առնչվող խնդիրների վերհանումը և դիտարկումն իրականացնում է Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և դրանց վիճակագրության վարման արդյունքների վրա:

<sup>224</sup> Տե՛ս ՀՀ արտաքին գործերի նախարարության հայտարարությունը՝ [https://www.facebook.com/MFA.Armenia/posts/4601335649892595?\\_tn=-R](https://www.facebook.com/MFA.Armenia/posts/4601335649892595?_tn=-R)

<sup>225</sup> [https://www.e-gov.am/gov-decrees/item/37383/?fbclid=IwAR2IXIWrA8X1JV3oUPU4FXxdZP8v\\_-vJWi3vxfakBBGEwIgsK9r4NAMyMi4](https://www.e-gov.am/gov-decrees/item/37383/?fbclid=IwAR2IXIWrA8X1JV3oUPU4FXxdZP8v_-vJWi3vxfakBBGEwIgsK9r4NAMyMi4)

Այսպես, 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացվել է տեղեկատվության ազատությանը վերաբերող 87 դիմում-բողոք:

Բողոքների հիմնական մասն ուղղված է եղել Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, Պաշտպանության նախարարությանը, Ոստիկանությանը, Առողջապահության նախարարությանը:

Պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքների ուսումնասիրությունը վկայում են, որ առկա են դեպքեր, երբ լրագրողական գրավոր հարցումները պետական մարմիններն անպատասխան են թողնում կամ պատասխանում են ձգձգումներով կամ տրամադրում են խուսափողական, բովանդակազուրկ պատասխաններ:

Այս ամենը հանգեցնում է ոչ միայն օրենքով սահմանված ժամկետների խախտման, այլ նաև նպաստում է ապատեղեկատվության տարածմանը: Ուստի, ապատեղեկատվության կամ կեղծ տեղեկությունների դեմ պայքարի հարցում առաջնային նշանակություն ունի պետության հանրային հաղորդակցության քաղաքականությունը:

Այսպես, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահը 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով բարձրացրել է տեղեկատվություն տրամադրելու իր հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից ոչ պատշաճ և ոչ սպառիչ տեղեկություններ տրամադրելու հարցը: Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանը համապատասխան պարզաբանումների պահանջով գրություններ է ուղարկել Երևանի քաղաքապետարան, ինչի արդյունքում պարզ է դարձել, որ քաղաքապետարանը որոշ հարցադրումներին անդրադարձ չի կատարել: Մինչդեռ, դիմումատուի հարցադրումներին պատասխանելը Երևանի քաղաքապետարանի լիազորությունների շրջանակներում է:

Արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ դիմումատուի հարցումներին պատշաճ և սպառիչ պատասխան չտրամադրելով՝ Երևանի քաղաքապետարանը խախտել է ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու վերջինիս իրավունքը: Ըստ այդմ, Պաշտպանը կայացրել է դիմումատուի իրավունքների խախտման մասին որոշում՝ առաջարկելով Երևանի քաղաքապետին բարձրացված հարցադրումներին տրամադրել պատշաճ և ամբողջական տեղեկություններ:

Ինչպես նախորդ տարեկան հաղորդումներում, այնպես էլ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ իրեն նախընտրելի եղանակով տեղեկությունների ստացման և փոխանցման մատչելիության հետ կապված խնդիրները շարունակական են եղել կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ կրթությունից մինչև պետության հետ ծագած վարչական իրավահարաբերություններ:

Բանն այն է, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով և հաղորդակցության իրենց նախընտրած բոլոր միջոցներով տեղեկություններ ստանալու

իրավունքի իրացման համար ներպետական օրենսդրությամբ բացակայում են համապատասխան իրավական կառուցակարգեր և գործուն կարգավորումներ:

Առանձնահատուկ պետք է ընդգծել այն, որ տեղեկությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձի համար պետք է ապահովվի դրանք ինքնուրույն ստանալու հնարավորության առկայությամբ, այն է՝ առանց այլ անձի օգնության՝ հաշվի առնելով անձի կարողություններն ու հմտությունները: Նման մոտեցումը բխում է նաև ՄԱԿ-ի հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի պահանջներից, ինչը ենթադրում է, որ պետությունն իր պոզիտիվ պարտավորությունը պատշաճ կատարելու նպատակով պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ և խելամիտ միջոցները՝ ստեղծելով այլ անձանց հետ հավասար հիմունքներով իրավունքների իրացման իրական հնարավորություններ՝ հաշվի առնելով անձի կարիքների առանձնահատկությունները<sup>226</sup>:

2021 թվականին տեղեկատվության ազատությանն առնչվող խախտումների մասին բարձրաձայնել են նաև տեղեկատվության ազատության ոլորտի հասարակական կազմակերպությունները:

Այսպես, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը հրապարակել է այն գերատեսչությունների ու նրանց ղեկավարների ցանկը, որոնք 2021 թվականի ընթացքում խախտել են տեղեկություն ստանալու իրավունքը, անպատասխան են թողել տեղեկություն ստանալու հարցումները կամ տվել են անօրինական պատասխաններ: Օրինակ, հաշվետու տարվա ընթացքում Ինֆորմացիայի ազատության կենտրոնն արձանագրել է, որ ՀՀ Պաշտպանության նախարարությունն անհիմն մերժել է տրամադրել պահանջվող տեղեկությունը, իսկ Երևանի քաղաքապետարանը տրամադրել է անհիմն պատասխան՝ ըստ էության չպատասխանելով հարցմանը: Նույնը շարունակվել է նաև կրկնակի հարցումների դեպքում, իսկ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի վերադասության կարգով բողոքը մնացել է անպատասխան<sup>227</sup>:

2021 թվականին Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեն արձանագրել է տեղեկատվություն ստանալու ու տարածելու իրավունքի 99 խախտում:<sup>228</sup>

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պետք է արձանագրել, որ տեղեկատվության ազատության ոլորտում առկա խնդիրները շարունակում են մնալ չլուծված, ինչի հետևանքով բավարար կերպով չի երաշխավորվում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով ամրագրված տեղեկություններ ստանալու իրավունքը:

<sup>226</sup> Մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում:

<sup>227</sup> <http://www.foi.am/hy/years/>

<sup>228</sup> <https://khosq.am/reports/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%bd%d5%bf%d5%a1%d5%b6%d5%b8%d6%82%d5%b4-%d5%ad%d5%b8%d5%bd%d6%84%d5%ab-%d5%a1%d5%a6%d5%a1%d5%bf%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%a1%d5%b6-%d5%be%d5%ab%d5%b3%d5%a1%d5%af%d5%ab-28/>

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝

1. կազմակերպել վերապատրաստման դասընթացներ պետական մարմինների աշխատակազմերի տեղեկատվության հարցերով պատասխանատու անձանց համար «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի ու վերջինիս կիրարկման մեխանիզմների վերաբերյալ,

2. ՀՀ ներպետական օրենսդրությամբ (օրինակ՝ «Լեզվի մասին» ՀՀ օրենք, «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, «Տեսողական մեդիայի մասին» ՀՀ օրենք) մանրամասն կառուցակարգեր նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց կողմից տեղեկությունների հայցման և ստացման կարգի վերաբերյալ:

## **2. Վիրավորանքն ու արելության խոսքը հանրային տիրույթում**

Ցանկացած հարցի հանրային ազատ քննարկումը ժողովրդավարական կարևոր ձեռքբերում է: Հետևաբար, ցանկացած քննարկում պետք է ընթանա այլոց իրավունքների և ազատությունների հարգման ու համերաշխության մթնոլորտում:

Հանրային տիրույթում ու հատկապես սոցիալական ցանցերում ատելության խոսքը, սպառնալիքները կամ բռնության կոչերը մարտահրավեր են խոսքի ազատությանը, խախտում են մարդու իրավունքները, ինչպես նաև ավելացնում են անհանդուրժողականությունը, նպաստում են լարվածությանը և, իհարկե, խնդիրներ առաջացնում իրավունքի գերակայության համար: Այս արատավոր երևույթները վտանգավոր են նաև այն տեսանկյունից, որ դրանք կարող են տեղափոխվել իրական կյանք:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 2021 թվականի մշտադիտարկումը վկայում է, որ սոցիալական մեդիայում շարունակվում են վիրավորանքներն ու ատելության խոսքը, տարբեր հարցերում փոխադարձ մեղադրանքները՝ առողջ կամ մասնագիտական քննարկումների գրեթե լիակատար բացակայության պայմաններում: Այդպիսի գրառումները խիստ վտանգավոր չափերի են հասել՝ հատկապես հաշվի առնելով պատերազմին հաջորդած ճգնաժամային իրավիճակները, էմոցիոնալ լարվածությունը: Սրան ավելանում է նաև հանրային գործիչների անթույլատրելի կերպով անհանդուրժողականությունն ավելացնող հանրային խոսքն ու ելույթները:

Շեշտակիորեն աճել է կեղծ կամ ոչ իրական օգտահաշիվների քանակը, որոնք առավել ագրեսիվ են և հաճախ ոչ մասնագիտական դիտարկմամբ դժվար է տարբերակել: Դրանք ի հայտ են գալիս կոնկրետ իրավիճակի կամ նույնիսկ առանձին հրապարակման կապակցությամբ, գործում են կազմակերպված, հստակ նպատակներով ու թիրախներով: Դրանք հաճախ գործում են կազմակերպվածության ակնհայտ հատկանիշներով՝ աջակցելով թե՛ պաշտոնյաների կամ

իշխանության մարմինների, թե՛ ընդդիմության առանձին ուժերի կամ անձերի: Սա էլ իր հերթին խնդրահարույց է այն առումով, որ նպաստում է երկրում լարվածության ու անհանդուրժողականության աճին:

Այս առումով չափազանց կարևոր են պետության՝ ատելության խոսքի դեմ պայքարի այնպիսի ամուր իրավական հիմքեր ստեղծելուն ուղղված ջանքերը, որոնք յուրաքանչյուր դեպքում կապահովեն անհրաժեշտ հավասարակշռություն խոսքի ազատության և այլոց իրավունքների և արժանապատվության պաշտպանության միջև:

Մարդու իրավունքների պաշտպանն ատելության խոսքի՝ արատավոր երևույթի բացարձակ անթույլատրելիության մասին մշտապես բարձրաձայնել է իր հրապարակային և ոչ հրապարակային հայտարարություններում, զեկույցներում ու ելույթներում:

Նախ, բացարձակ անընդունելի է վիրավորանքի ու հայհոյանքի, ատելության խոսքի ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից, թե ով է դա անում կամ ում է ուղղված: Մարդու արժանապատվությունը վիրավորել չի կարելի: Անթույլատրելի է նաև այն, որ գրառումների ներքո արվող արժանապատվությունը նսեմացնող ու ատելություն գեներացնող մեկնաբանությունները չեն հեռացվում: Սա նշանակում է, որ գրառման հեղինակը միայն խրախուսում է վիրավորանքն ու ատելությունը՝ բոլոր բացասական հետևանքներով:

Ցավոք, այս խնդիրը ձեռք է բերել համակարգային բնույթ, որի լուծման հարցում իրենց անձնական օրինակով առաջնահերթ մեծ դեր ունեն հանրային գործիչները, այդ թվում՝ պաշտոն գրադեցնող անձինք:

Պետության բոլոր մարմինները, այդ մարմինների պաշտոնատար անձինք պետք է նկատի ունենան, որ նրանց ուղիղ պարտավորությունն է իրենց խոսքով ու վարքով բացառել լարվածության տանող ցանկացած երևույթ՝ վիրավորանքն ու ատելությունը, հայհոյանքը, բռնության ուղղակի կամ անուղղակի արդարացումը կամ խրախուսումը: Համերաշխության մթնոլորտի, մարդու իրավունքների ու յուրաքանչյուրի կարծիքի նկատմամբ հարգանքի ապահովման գլխավոր պարտավորությունը պետությանն է:

Ցանկացած շեղում կարող է առաջացնել իրավական պատասխանատվություն: Նրանք պարտավոր են լինել զսպված և թույլ չտալ վիրավորանք, ատելություն գեներացնող, լարվածություն առաջացնող որևէ խոսք:

Նշված պահանջները գործում են միշտ. ոչ աշխատանքային ժամերը կամ օրերը պաշտոնյայի համար ոչ իրավաչափ արարքների արդարացում լինել չեն կարող: Հասարակությունը միշտ է նրանց ընկալում պաշտոնյայի կարգավիճակով:

Վիրավորանքի ու ատելության տարածման կանխարգելման հարցում չափազանց կարևոր է նաև զանգվածային լրատվամիջոցների դերը: Նրանք չպետք է դառնան վիրավորանքի ու հայհոյանքների, ատելության խոսքի տարածողը ու պետք է հատկապես ուշադիր լինեն վերնագրերի ընտրության հարցում:

Ուստի, լրատվական գործունեություն իրականացնող բոլոր կազմակերպություններին ու լրագրողներին Մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար հրապարակային կոչեր է արել հատուկ ուշադրությամբ հետևել հրապարակումների ներքո ծավալվող քննարկումներին և հեռացնել վիրավորանք ու ատելություն, բռնության կոչ կամ սպառնալիք պարունակող մեկնաբանություններն ու գրառումները, ինչպես նաև լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել դա լուծելու համար: Դրանից բացի, ցանկացած հրապարակում անելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել տեղեկությունների ստուգվածությանը և գործել պատասխանատու լրագրության սկզբունքների պահպանմամբ:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ «հաշվի առնելով, որ արտահայտվելու ազատության իրականացումը կապված է «պարտավորությունների» և «պատասխանատվության» հետ, ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող դեպքերի վերաբերյալ լրատվություն տարածելու 10-րդ հոդվածով սահմանված լրագրողի պաշտպանությունը գործում է, եթե [լրագրողները] գործում են բարեխղճորեն՝ լրագրողական վարքագծի նորմերի հիման վրա ճշգրիտ և վստահելի տեղեկատվություն տրամադրելու նպատակով»<sup>229</sup>:

**Պատասխանատու լրագրության սկզբունքը պահանջում է, որ լրատվամիջոցները օգտվեն վստահելի աղբյուրներից, քանի որ առաջին, առաջնահերթ է, որ տարածված տեղեկությունը լինի ճշգրիտ ու վստահելի, երկրորդ, անանուն աղբյուրից վերցրած տեղեկության համար պատասխանատվության կարող է ենթարկվել լրատվամիջոցը՝ հատկապես ատելության խոսքի դեպքում:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ճանաչելով համացանցի «կարևոր դերը» «հանրության համար լուրերի մատչելիությունն ապահովելու և ընդհանրապես տեղեկությունների ավելի արագ տարածման գործում, այնուամենայնիվ, նշել է, որ համացանցը տպագիր մամուլից տարբերվող տեղեկատվության և հաղորդակցության միջոց է: Համացանցում տեղադրվող բովանդակությունն ու դրա միջոցով կատարվող հաղորդակցությունները մարդու իրավունքների և ազատությունների իրացմանը վնաս պատճառելու ավելի մեծ սպառնալիք են պարունակում, քան մամուլը»<sup>230</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկմամբ՝ վտանգավոր ծավալների հասնող ատելության խոսքի և բռնության կոչերի աճ է գրանցվել 2021 թվականի ընթացքում իրականացված հավաքների ժամանակ: Այս վիճակն անգամ առավել բարձր ծավալով նկատվել է սոցիալական ցանցերում:

Նախ, պետք է նկատի ունենալ, որ խաղաղ հավաքների ազատության նպատակներից է ապահովել հանրային քննարկման հարթակ և բողոքի բաց արտահայտման հնարավորություն,

<sup>229</sup> Տե՛ս Բլադետ Տրոմսոն ու Սթենսասան ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը (ՄՊ), գանգատ թիվ 21980/93, կետ 65:

<sup>230</sup> Տե՛ս «Պրավոյե Դելոյի» խմբագրական խորհուրդը և Շտեկելն ընդդեմ Ուկրաինայի (Editorial Board of Pravoye Delo and Shtekel v. Ukraine) գործով 2011 թվականի մայիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ 33014/05, կետ 63:



հատկապես եթե տեղի է ունենում հանրային նշանակության այնպիսի իրադարձություն, որին հասարակությունը անհրաժեշտ է համարում հրատապ արձագանքել:

Այսպես, վիրավորական ու անհանդուրժողականությունը խորացնող արտահայտություններ են արձանագրվել քաղաքական իշխանությանն աջակցող հավաքի ու երթի ժամանակ, մասնավորապես՝ դրանց մասնակիցների կողմից՝ ուղղված ընդդիմության կազմակերպած հավաքի մասնակիցներին:

Նույն անթույլատրելի երևույթներն արձանագրվել են նաև ընդդիմության հավաքների ու երթերի ընթացքում թե՛ մասնակիցների, թե՛ որոշ ելույթ ունեցողների կամ կազմակերպիչների կողմից գործածվող՝ վիրավորանքի ու անհանդուրժողականությունն ավելացնող անթույլատրելի բառապաշար ու գործողություններ:

Ուստի, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային հայտարարություններով մշտապես կոչ է արել ցուցաբերել առավելագույն զգոնություն, դրսևորել զսպվածություն, ամեն ինչ անել, որպեսզի ապահովվի հավաքի խաղաղ բնույթը և բացառվի որևէ տեսակի լարվածության տանող երևույթ:

Առհասարակ, պետք է բացառել, ուղղակի վերացնել նման ձևակերպումները հատկապես հանրային քննարկումների տիրույթից ու հանրային խոսքից՝ անկախ քաղաքական կամ որևէ այլ տեսակի հայացքներից: Դրանք լարվածություն առաջացնող բառեր ու ձևակերպումներ են:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումները կապված 2021 թվականին տեղի ունեցած խորհրդարանական արտահերթ ընտրությունների գործընթացների հետ ևս վեր են հանել անհանդուրժողականության և ատելության խոսքի բարձր մակարդակ: Մասնավորապես, խիստ մտահոգիչ է եղել նախընտրական քարոզարշավի ընթացքում ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի խոսքը և ելույթները: Բովանդակային հարցերի փոխարեն գերակայել են փոխադարձ մեղադրանքները, իրար ուղղված հայհոյանքն ու վիրավորանքը՝ զուգակցված բռնության հետ ասոցացվող հոետորաբանությամբ:

Նախընտրական քարոզարշավի արատավոր ու խիստ մտահոգիչ երևույթներից է եղել այն, որ տարբեր քաղաքական ուժերի կողմնակիցներ պատրաստել ու տարածել են իրենց հակառակորդ ուժերի աջակից կամ նրանց օգտին կարծիք արտահայտող քաղաքացիների լուսանկարներ և տեսանյութեր՝ վիրավորանքներով, հայհոյանքներով ու նվաստացնող արտահայտություններով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ սոցիալական մեդիայի տիրույթում նշված լուսանկարներն ու տեսանյութերը ստանում են արագ տարածում, արժանանում են ծաղրանքի, ուղեկցվում են ավելի խորքային վիրավորանքներով, հայհոյանքներով ու ատելության խոսքով՝ նվաստացնելով մարդկանց արժանապատվությունը: Հետո էլ այդ գրառումներ անողներին քննադատում են մյուս ուժերի կողմնակիցները նույն արտահայտություններով: Այս ամենը հասարակությունը բևեռացնելու, այն խմբերի բաժանելու, խտրականություն սերմանելու անթույլատրելի օրակարգ է:

Արտահերթ խորհրդարանական ընտրությունների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է քաղաքական հավաքներին երեխաների մասնակցության հետ կապված խնդրահարույց, ինչպես նաև նրանց լավագույն շահերը խախտող իրավիճակներ: Մասնավորապես, բացարձակ անթույլատրելի է երեխաների մասնակցությունը նախընտրական քարոզարշավի ընթացքում այն հավաքներին, որտեղ հնչում էին ատելություն ու վիրավորանք, բռնության հետ ասոցացվող խոսքեր: Առկա էին նաև երեխաների ներկայությամբ հայիոյանքի խոսքեր հրապարակային հնչեցնելու դեպքեր:

Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը ևս կիսել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի մտահոգությունները նախընտրական շրջանում հայաստանյան քաղաքական գործիչների կողմից օգտագործվող բռնություն ու ատելություն պարունակող խոսքի հետ կապված:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ խորհրդարանական ընտրությունների 2021 թվականի հունիսի 21-ի քվեարկության օրվանից անմիջապես հետո հանրային տիրույթ են բերվել մարդկանց խմբերի բաժանող, վիրավորանքն ու ատելությունը, անհանդուրժողականությունը զարգացնող նոր վտանգավոր դրսևորումներ:

Խոսքը հասարակության բևեռացումը խորացնող արհեստական բաժանումների մասին է՝ «գյուղաբնակներ ու քաղաքաբնակներ», «գրագետներ և անգրագետներ», «հետամնացներ և զարգացածներ», որը կապվում է քվեարկության արդյունքների հետ: Այս արտավոր դիսկուրսի հիմքում են «նախկին ու նոր», «սև ու սպիտակ», «Ժեխ», «զոմբի», «ծախված», «դավաճան» և այլ արտահայտություններով մարդկանց վիրավորելու դատապարտելի թեզերը:

Նախ, պետք է հատուկ ընդգծել, որ որքան ազատ ու անխոչընդոտ է ընտրական իրավունքի իրացման հնարավորությունը, այնքան մեծ է քաղաքացու կամքի հրապարակային արտահայտման արդյունքում նոր ձևավորված մարմնի նկատմամբ վստահությունը:

Այս նպատակի համար հիմնարար նշանակություն ունեցող հարցերից է ապահովել վիրավորանքի, հայիոյանքի ու ատելության բացառումը, երկրում համերաշխության մթնոլորտի երաշխավորումը: Դա երաշխիք կլինի ընտրական իրավունքի ազատ ու անխոչընդոտ իրացման համար: Պետք է նկատի ունենալ, որ ցանկացած լարվածություն տարածվում է նաև կողմնակիցների միջև և մեծացնում է լարվածությունը, անգամ ագրեսիվացնում է մթնոլորտը:

Պաշտոն զբաղեցնող և պետական կարգավիճակ ունեցող բոլոր անձինք՝ անկախ պաշտոնեական դիրքի աստիճանից, պարտավոր են հաշվի առնել, որ իրենք նախընտրական քարոզարշավի ընթացքում չեն դադարում պաշտոնյա լինելուց և պետական կարգավիճակ ունենալուց: Սա նշանակում է, որ նրանք սահմանափակված են իրենց իրավասության սահմաններով և պետք է թույլ չտան խախտում՝ անցնելով այդ իրավասության սահմանները:

Բացի այդ, իրենց կողմից օգտագործվող ամեն բառ տարածվում է կողմնակիցների վրա, հետո նրանք այդ նույն բառերով վիրավորում ու հայիոյում են իրար:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի դիտարկումները վկայում են, որ այս վիճակն ավելի են խորացնում թե՛ իշխանության մարմիններին, թե՛ ընդդիմության տարբեր շրջանակներին աջակցող սոցիալական ցանցերի կեղծ էջերի ու օգտահաշիվների կազմակերպված նպատակային հարձակումները:

Արդյունքում ստացվել է այնպես, որ սոցիալական մեդիայի հայկական ողջ տիրույթը հեղեղվել է հայիոյախառն վիրավորանքներով, միմյանց ուղղված սպառնալիքներով ու ատելության խոսքով՝ հիմնովին ոտնահարելով մարդու իրավունքների համակարգի պահանջները:

Այս երևույթը պարունակում է համակարգային վտանգներ, պետք է անհապաղ կանխել դրա որևէ տեսակի դրսևորում: Դա, նախևառաջ, վտանգավոր է հասարակությունում հանդուրժողականության ու համերաշխության տեսանկյունից:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունն ինքը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների ձևավորմանը, միևնույն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու համար:

Ուստի, վերոնշյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է սոցիալական ցանցերում դրսևորել զսպվածություն, չներքաշվել այնպիսի «քննարկումների» մեջ, որոնք ծաղրում, վիրավորում կամ նվաստացնում են մարդու արժանապատվությունը, իսկ իրավապահ մարմինները պարտավոր են գործել օրենքին խիստ համապատասխան՝ բացառապես իրավունքի գերակայության սահմաններում: Բռնություն կամ ցանկացած այլ տեսակի լարվածություն բացառելու հարցում սկզբունքային դեր ունեն պետական մարմինները, որոնք պարտավոր են ապահովել իրավունքի գերակայություն թե՛ մեր երկրում, թե՛ իրենց սեփական գործողություններում՝ յուրաքանչյուրն իր իրավասության սահմաններում:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածն ամրագրում է նոր հանցակազմ, այն է՝ բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը:

ՀՀ գլխավոր դատախազության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականին ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է 16 քրեական գործ:

Միևնույն ժամանակ, պետք է նկատի ունենալ, որ ատելության խոսքի ծայրահեղ դրսևորումների քրեականացումը խնդրի դեմ պայքարի միայն մեկ ուղղություն է: Ատելության խոսքի այլ դրսևորումները ենթադրում են կանխարգելիչ միջոցառումների իրականացում:

Այս առումով, հարկ է նշել, որ պետք է թիրախավորվեն ատելության խոսքի այլ կառուցակարգեր, օրինակ՝ իրականացնել իրազեկման աշխատանքներ, լրատվության միջոցների հետ պարբերաբար քննարկումների միջոցով նպաստել ատելության խոսքի դրսևորման դեպքերի նվազեցմանը: Բանն

այն է, որ մարդիկ շատ հաճախ տեղեկացված չեն կարծիքի արտահայտման իրավունքի և ատելության խոսքի սահմանագծի մասին, ինչն ավելի է դժվարացնում դրա դեմ պայքարը:

Ատելության խոսքի համար պատասխանատվության սահմանումը և իրազեկվածության բարձրացումը՝ որպես ռազմավարական ուղղություններ ամրագրվել են ՀՀ կառավարության «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ:

2021 թվականի ընթացքում Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Արդարադատության մատչելիության խթանում Արևելյան գործընկերության երկրներում խտրականության, ատելության հիմքով կատարվող հանցագործությունների և ատելություն սերմանող խոսքի զոհերի համար ոչ դատական կարգով փոխհատուցման մեխանիզմների միջոցով» տարածաշրջանային ծրագրի շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է 3 տեսանյութեր<sup>231,232,233</sup> ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության, այլակարծության և խոսքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի անհրաժեշտության վերաբերյալ: Տեսանյութերի ուղերձն է, որ բոլորս պետք է ապրենք միասին՝ որպես համերաշխ ու ժողովրդավար հասարակություն՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունն ու իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև տեսանյութ՝ ներկայացնելով հանրությանը Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերն ատելության խոսքի դեմ պայքարի գործում: Անհատական գործերից բացի, Մարդու իրավունքների պաշտպանն ատելության խոսքի դեմ տանում է նաև համակարգային պայքար իրազեկման արշավների ու կրթական ծրագրերի, օրենսդրական փոփոխություններին նպաստելու միջոցով:

Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ **օգտատերերի կողմից համացանցում արտահայտչական գործունեության ծավալումն արտահայտվելու ազատության աննախադեպ հնարավորություն է ստեղծում:** Սա անվիճելի է և նախկինում այլ առիթների ժամանակ Դատարանի կողմից արդեն ճանաչվել է<sup>234</sup>: Սակայն, այս առավելությունների հետ մեկտեղ որոշակի վտանգներ ևս կարող են ստեղծվել: **Զրպարտիչ և այլ՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ խոսքը, այդ թվում նաև՝ ատելության խոսքը և բռնություն հրահրող կոչերը կարող են վայրկյանների ընթացքում աշխարհով մեկ տարածվել ավելի արագ, քան նախկինում երբևէ տարածվել են, իսկ երբեմն նույնիսկ կայուն մնալ համացանցում:** Այս երկու միմյանց հակասող իրականություններն ընկած են այս գործի հիմքում: Գիտակցելով Կոնվենցիայի հիմքում ընկած արժեքների պաշտպանության անհրաժեշտությունը և հաշվի առնելով

<sup>231</sup> <https://ombuds.am/am/site/VideoGalleryView/612>

<sup>232</sup> <https://ombuds.am/am/site/VideoGalleryView/613>

<sup>233</sup> <https://ombuds.am/am/site/ViewNews/2066>

<sup>234</sup> Տե՛ս Ահմեդ Յիլդիրիմն ընդդեմ Թուրքիայի (Ahmet Yildirim v. Turkey), թիվ 3111/10, կետ 48, ՄԻԵԴ 2012, և (թիվ 1 և 2)Թայմս Նյուսփեյփերն ընդդեմ Միացյալ Թագավորության (Times Newspapers Ltd v. UK), թիվ 3002/03 և 23676/03, կետ 27:

այն, որ Կոնվենցիայի 10-րդ և 8-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներն արժանի են հավասար հարգանքի, անհրաժեշտ է այս երկուսը հավասարակշռել այնպես, որ դրանց էությունը պահպանվի:

Այսպիսով, չնայած Դատարանը ճանաչում է այն հանգամանքը, որ **խոսքի ազատության իրացման տեսանկյունից համացանցը կարևոր առավելություններ է տալիս, այն նաև հաշվի է առնում, որ զրպարտիչ կամ այլ անօրինական բովանդակության համար պատասխանատվությունը պետք է սկզբունքորեն պահպանվի և հանդիսանա անձնական իրավունքների խախտման համար արդյունավետ միջոց:**

Դատարանը, սույն գործով անդրադառնալով նաև համացանցում ատելության խոսքի և բռնության հրահրող կոչերի տարածումը սահմանափակելու պարտականությանը, նշել է, որ ատելության խոսքի արդյունքում պոտենցիալ տուժողի՝ համացանցն անընդմեջ մշտադիտարկելու հնարավորությունները շատ ավելի սահմանափակ են, քան ընդարձակ կոմերցիոն համացանցային լրատվական պորտալի՝ այդպիսի մեկնաբանությունների տեղադրումը կանխելու կամ դրանք արագ հեռացնելու հնարավորությունները՝ կարևորելով իր կողմից ներդրված «նկատելուն պես հեռացնելու» համակարգի (notice-and-take-down system) կիրառումը<sup>235</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ են լայնածավալ իրազեկման արշավներ, այդ թվում՝ հասարակության լայն շերտերի ներգրավմամբ՝ ուղղված ատելության խոսքի, դրա բացասական ազդեցության բացառմանը, այլակարծության և խոսքի ազատության իրավունքի նկատմամբ հարգանքի խթանմանը:*

### **3. Պետական սահմանին տեսալուսանկարահանման արգելքի իրավաչափությունը կարծիքի արտահայտման ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում**

Ազգային ժողովի 2021 թվականի հուլիսի 30-ի նիստում երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ««Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով այդ օրենքի 22<sup>1</sup>-րդ հոդվածով ամրագրված՝ սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումները լրացվել են նորերով: Կատարված օրենսդրական լրացման արդյունքում սահմանային շերտ մուտք գործած անձանց արգելվել է առանց համապատասխան թույլտվության օգտագործել անօդաչու թռչող սարքեր, տեսալուսանկարահանել սահմանակից պետության տարածքը, սահմանային շերտում տեղակայված ինժեներական

<sup>235</sup> Տե՛ս Դելֆի ԱՄ-ն ընդդեմ Էստոնիայի (Delfi AS v. Estonia) գործով 2015 թվականի հունիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 64569/09, կետեր 110, 157-159 (հայերեն թարգմանությամբ):

կառույցները և արգելափակոցները, սահմանապահ զորքերի կողմից օգտագործվող շենքերը, շինությունները, դիտաշտարակները, տրանսպորտային միջոցները:

Ի թիվս այլ ուղղությունների՝ սահմանային շերտ մուտք գործած անձանց վրա տարածվող սահմանափակումները Մարդու իրավունքների պաշտպանը դիտարկել է կարծիքի արտահայտման ազատության և լրագրողների մասնագիտական գործունեության իրականացման վրա ազդեցության տեսանկյունից: Այսպես.

Կարծիքի արտահայտման ազատությունը և լրագրողների մասնագիտական աշխատանքը ժողովրդավարական համակարգի անկյունաքարային բաղադրիչներն են: Լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով: Լրագրողի մասնագիտական աշխատանքը կարևոր է պետության քաղաքականության առաջնահերթությունների և հասարակական կարծիքի ձևավորման տեսանկյունից: Լրագրողի աշխատանքի շնորհիվ է ամրանում քաղաքացիների վերահսկողությունը պետության նկատմամբ: Լրագրողների աշխատանքն ունի նաև իրավապաշտպան բնույթ ու մարդու իրավունքների խախտումները կանխարգելող կարևոր նշանակություն:

Եվրոպական օմբուդսմանների ինստիտուտի (EOI) տարածած հայտարարություններից մեկի համաձայն՝ քաղաքացիական հասարակության անդամների և լրագրողների այցերը հակամարտության գոտիներ (կոնկրետ հայտարարության դեպքում՝ Լեոնային Ղարաբաղ) ունեն անգնահատելի նշանակություն մարդասիրական տեսանկյունից և այդտեղ տիրող իրավիճակի վերաբերյալ օբյեկտիվ տեղեկություններ տրամադրելու առումով<sup>236</sup>: Մինչդեռ, Օրենքի 22<sup>1</sup>-րդ հոդվածով ամրագրված սահմանափակումների կիրառման պայմաններում, ի թիվս այլ սուբյեկտների, խոչընդոտվում է նաև լրագրողների մասնագիտական գործունեությունը հատկապես հանրությանը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ տեղեկություններ փոխանցելու իրենց պարտականության պատշաճ ապահովման հարցում:

Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, ինչպես նաև առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ *տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ* ու գաղափարներ փնտրելու, *ստանալու և տարածելու ազատությունը*: Խոսքի (կարծիքի արտահայտման) ազատության իրավունքն ունի անձնական և սոցիալական նշանակություն: Խոսքի ազատությունն *անձնական* (անհատական) նշանակություն ունի, քանի որ յուրաքանչյուրն իրավունք ունի ազատորեն, առանց կաշկանդվելու արտահայտել իր կարծիքը, գաղափարները, համոզմունքները՝ առանց հետապնդվելու մտավախության: *Սոցիալական* նշանակությունը պայմանավորված է

<sup>236</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/124> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

նրանով, որ խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության զարգացման և կայացման հարցում անփոխարինելի գործիք է: Խոսքի ազատության բացակայությունը նշանակում է բազմակարծության, հետևաբար՝ ժողովրդավարության բացակայություն:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը երաշխավորում է արտահայտվելու ազատությունը: Մասնավորապես՝ յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, **տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝** առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի 10-րդ հոդվածի մեկնաբանմանը, բազմիցս նշել է, որ իրավունքներին միջամտելու անհրաժեշտությունը որոշելու հարցում մասնակից պետություններն օժտված են հայեցողության որոշակի սահմանով, որը, սակայն, ուղեկցվում է եվրոպական կառույցների վերահսկողությամբ, իսկ վերջինիս սահմանները կախված են գործի բնույթից: Բոլոր այն դեպքերում, երբ արձանագրվում է միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով երաշխավորված ազատություններին և իրավունքներին, եվրոպական կառույցները պետք է խիստ վերահսկողություն սահմանեն, ինչը պայմանավորված է այդ իրավունքների կարևորությամբ<sup>237</sup>:

Ազատորեն արտահայտվելու իրավունքն ընկած է ժողովրդավարական հասարակության հիմքում, այն ժողովրդավարական հասարակության և յուրաքանչյուր անհատի զարգացման հիմնական պայմաններից մեկն է<sup>238</sup>: Խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության էական հիմքերից է, դրա զարգացման, անձի ինքնաբավարարման հիմնական պայմաններից մեկը<sup>239</sup>: Մամուլն ունի կարևոր դեր քաղաքական և հանրային հետաքրքրության այլ հարցերով տեղեկություններ և գաղափարներ տարածելու մեջ, իհարկե եթե այն չի խախտում Կոնվենցիայով նախատեսված թույլատրելի սահմանները<sup>240</sup>: Մամուլը ոչ միայն ունի տեղեկատվություն և

---

<sup>237</sup> Տե՛ս «Աուտրոնիկ» ընկերությունն ընդդեմ Շվեյցարիայի (Autronic AG v. Switzerland) գործով 1990 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 12726/87, կետ 61:

<sup>238</sup> Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. The United Kingdom) գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 5493/72, կետ 49: Ստոլլն ընդդեմ Շվեյցարիայի (Stoll v. Switzerland) գործով 2007 թվականի դեկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 69698/01, կետ 101: Մորիսն ընդդեմ Ֆրանսիայի (Morice v. France) գործով 2015 թվականի ապրիլի 23-ի վճիռը, գանգատ թիվ 29369/10, կետ 124):

<sup>239</sup> Տե՛ս Standard Verlags GmbH-ն ընդդեմ Ավստրիայի գործով 2009 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 21277/05, կետ 44: Éditions Plon-ն ընդդեմ Ֆրանսիայի գործով 2004 թվականի օգոստոսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 58148/00, կետ 42:

<sup>240</sup> Տե՛ս Կաստելլան ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի գործով վճիռը, գանգատ թիվ 11798/85, կետ 43:

գաղափարներ տարածելու խնդիր, այլ նաև հասարակությունն ունի դրանք ստանալու իրավունք<sup>241</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականի 13-րդ կետը սահմանում է, որ տեղեկություններ ստանալու իրավունքը ներառում է տեղեկությունների հասանելիության իրավունքը: **Հասարակությունն ունի հանրային հետաքրքրություն ներկայացնող այնպիսի տեղեկություններ և գաղափարներ ստանալու իրավունք, որոնք լրատվական գործունեություն իրականացնողները խնդիր ունեն տարածելու:** Տեղեկությունների հավաքագրումը լրագրողական գործունեության կարևոր նախապատրաստական քայլ է և մամուլի ազատության պաշտպանության ենթակա բաղկացուցիչ մասը<sup>242</sup>:

Հանձնարարականի «Սկզբունքներ» բաժնի 2-րդ կետի համաձայն՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածով երաշխավորված **խոսքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը կիրառելի է ոչ միայն ընդունելի, անվնաս կամ չեզոք տեղեկությունների կամ գաղափարների, այլև այնպիսի տեղեկությունների նկատմամբ, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստացնում են պետությանը կամ հասարակության որոշակի խմբին:**

Այսպիսով, խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:

Արտահայտվելու ազատությունը ենթակա է որոշակի բացառությունների, որոնք, սակայն, պետք է նեղ մեկնաբանություն ստանան, և ցանկացած սահմանափակման անհրաժեշտություն պետք է համոզիչ կերպով հիմնավորվի<sup>243</sup>:

Եվրոպական դատարանի դիտարկմամբ՝ դատարանները պետք է գնահատեն, թե **արդյոք խոսքի ազատության սահմանափակումը ելնում է «հրատապ հասարակական կարիքից», արդյոք այն համաչափ է իր առջև դրված «իրավաչափ նպատակին», և արդյոք**

<sup>241</sup> Տե՛ս Բլադետ Տրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21980/93, կետ 62: Տորգեիր Տորգեիրսոնն ընդդեմ Իսլանդիայի (Thorgeir Thorgeirson v. Iceland) գործով վճիռը, գանգատ թիվ 13778/88, կետ 63:

<sup>242</sup> Հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016806415d9#\\_ftn1](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016806415d9#_ftn1) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>243</sup> Տե՛ս Տորգեիր Տորգեիրսոնն ընդդեմ Իսլանդիայի (Thorgeir Thorgeirson v. Iceland) գործով վճիռը, գանգատ թիվ 13778/88, կետ 63:



## իշխանությունների կողմից միջամտության արդարացման նպատակով առաջ քաշված պատճառները «պատշաճ են և բավարար»<sup>244</sup>:

Սահմանադրական դատարանի 2011 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՍԴՈ-997 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ իրավակիրառողները պարտավոր են հաշվի առնել, որ արտահայտվելու ազատության իրավունքի ցանկացած սահմանափակում պետք է սահմանված լինի օրենքով, ծառայի իրավաչափ շահ պաշտպանելու նպատակին և լինի անհրաժեշտ տվյալ շահն ապահովելու համար:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2005 թվականի ապրիլի 28-ի «Մամուլի ազատության և հակամարտության գոտիներում լրագրողների աշխատանքային պայմանների մասին» թիվ 1438 (2005) բանաձևի 1-ին կետում նշվել է, որ **պատերազմի կամ հակամարտության իրավիճակները պակաս կարևոր չեն դարձնում լրատվության միջոցով տեղեկատվության տրամադրումը, ընդհակառակը՝ դրանք բարձրացնում են դրա արդիականությունը**<sup>245</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականի 14-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է հաշվի առնեն ճգնաժամային իրավիճակներում (ի թիվս այլնի՝ հակամարտությունների գոտիներում) լրագրողների և մամուլի մասնակիցների ունեցած դերի յուրահատուկ բնույթը և ժողովրդավարական արժեքը: Ուստի, կարևոր է, որ իրավակիրառող պետական մարմինները հարգեն լրագրողների այդ դերը<sup>246</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1996 թվականի մայիսի 3-ի «Կոնֆլիկտային և լարված իրավիճակներում լրագրողների իրավունքների պաշտպանության մասին» թիվ R(96)4 առաջարկության համաձայն՝ լրատվության և ազատ ու անարգել լրագրության ազատությունը պետք է հարգվի կոնֆլիկտային և լարված իրավիճակներում, քանի որ անհատների և ընդհանուր հասարակության՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերի վերաբերյալ տեղեկացված լինելու և պետական իշխանության մարմինների գործողությունները գնահատել կարողանալու իրավունքը հատկապես կարևոր է նման իրավիճակներում<sup>247</sup>:

Նույն առաջարկությամբ ընդգծվել է լրատվության և լրագրողների դերը ներպետական և միջազգային իրավունքի խախտումների, ինչպես նաև կոնֆլիկտային և լարված իրավիճակներում մարդկանց տառապանքների մասին հանրությանն իրազեկելու հարցում: **Հետևաբար՝**

<sup>244</sup> Տե՛ս Գրինբերգն ընդդեմ Ռուսաստանի (Grinberg v. Russia) գործով 2005 թվականի հոկտեմբերի 21-ի վճիռը, զանգատ թիվ 23472/03, կետ 27:

<sup>245</sup> Հասանելի է <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17326&lang=en> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>246</sup> Հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016806415d9#\\_ftn1](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016806415d9#_ftn1) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>247</sup> Հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804ff5a1> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

**լրագրողները կարող են կանխել նման հետագա խախտումներն ու տառապանքները:** Նման իրավիճակում լրագրողների աշխատանքին ցանկացած միջամտություն պետք է լինի որպես բացառություն, այն պետք է նվազագույնի հասցվի և խստորեն համապատասխանի մարդու իրավունքների միջազգային փաստաթղթերով ամրագրված պայմաններին:

Հակամարտության գոտիներում լրագրողների աշխատանքին է անդրադարձել նաև ԵԱՀԿ ԶԼՄ-ների հարցերով ներկայացուցիչը<sup>248</sup>: Վերջինս, նկատի ունենալով կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային գոտում լրագրողի աշխատանքի կարևորությունը և նշանակությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված նամակում նշել էր, որ Լեռնային Ղարաբաղում լրագրողների աշխատանքն իրավաչափ է, այն ունի լեգիտիմ և իրավապաշտպան բնույթ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2016 թվականի ապրիլի 13-ի «Լրագրողական գործունեության և լրագրողների ու մամուլի մասնակիցների ապահովության պաշտպանության մասին» թիվ CM/Rec(2016)4[1] հանձնարարականի 26-րդ կետի համաձայն՝ պետությունը չպետք է անհարկի սահմանափակի լրագրողների և մամուլի մասնակիցների ազատ տեղաշարժը՝ ներառյալ ըստ անհրաժեշտության անդրսահմանային հատվածում տեղաշարժը և հասանելիությունը մասնավոր հատվածներ և կոնֆլիկտային տարածքներ, քանի որ նման շարժունակությունը և հասանելիությունը (նման տարածքներ մուտք գործելու առումով) կարևոր է նորությունների և տեղեկությունների հավաքագրման նպատակների պատշաճ ապահովման համար<sup>249</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2007 թվականի սեպտեմբերի 26-ի «Ճգնաժամային իրավիճակներում տեղեկատվության և արտահայտվելու ազատության պաշտպանության մասին» ուղեցույցի համաձայն՝ լրատվության ներկայացուցիչների անվտանգությունն ապահովելու և երաշխավորելու անհրաժեշտությունը չպետք է անդամ պետությունների կողմից օգտագործվի որպես պատրվակ անհարկի սահմանափակելու լրատվամիջոցների այնպիսի իրավունքներ, ինչպիսիք են նրանց ազատ տեղաշարժման ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը<sup>250</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(96)4 առաջարկությամբ ամրագրված 6-րդ սկզբունքի համաձայն՝ անդամ պետությունները չպետք է սահմանափակեն լրագրողների կողմից հաղորդակցման միջոցների օգտագործումը նորությունների, կարծիքների, գաղափարների կամ մեկնաբանությունների՝ միջազգային կամ ներպետական փոխանցման համար: Նրանք չպետք է հետաձգեն կամ որևէ այլ կերպ միջամտեն նման փոխանցումներին<sup>251</sup>:

<sup>248</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/113> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>249</sup> Հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectId=09000016806415d9#\\_ftn1](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=09000016806415d9#_ftn1) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>250</sup> Հասանելի է <https://rm.coe.int/09000016805ae60e> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>251</sup> Հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804ff5a1> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1438 (2005) բանաձևի 8-րդ կետով կոչ է արվում անդամ պետություններին ձեռնպահ մնալ հաղորդակցման այնպիսի միջոցների օգտագործումը սահմանափակելուց, ինչպիսիք են ֆիքսված, բջջային կամ արբանյակային հեռախոսները, ռադիոհաղորդակցության միջոցները<sup>252</sup>:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Ճգնաժամային իրավիճակներում տեղեկատվության և արտահայտվելու ազատության պաշտպանության մասին» ուղեցույցի համաձայն՝ ճգնաժամային իրավիճակներում անդամ պետությունները պետք է երաշխավորեն լրատվամիջոցների ներկայացուցիչների տեղաշարժման ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը: Այդ նպատակով ճգնաժամային իրավիճակների կառավարման համար պատասխանատու պետական մարմինները պետք է իրենց լրատվական կազմակերպությունների կողմից հավատարմագրված լրատվության ներկայացուցիչներին թույլ տան մուտք գործել ճգնաժամային տարածքներ<sup>253</sup>: Միաժամանակ, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(96)4 առաջարկությամբ ամրագրված 10-րդ սկզբունքը անդամ պետություններից պահանջում է հեշտացնել լրագրողների մուտքը դեպի անհրաժեշտ տարածք՝ վիզաներ և անհրաժեշտ այլ փաստաթղթեր անհապաղ տրամադրելով<sup>254</sup>:

**Ակնհայտ է, որ կոնֆլիկտային և լարված իրավիճակներում պետությունն ունի սեփական երկրի ու քաղաքացիների անվտանգությունն ապահովելու իրավաչափ շահ, որի ապահովումը կարող է ենթադրել ողջամիտ սահմանափակումներ: Բայց այդ սահմանափակումները պետք է ունենան հստակ հիմքեր, գործադրման կոնկրետ մեխանիզմներ: Դրանք չպետք է առաջացնեն նաև սահմանադրական իրավունքներին, կոնկրետ դեպքում՝ կարծիքի արտահայտման ազատությանն ու լրագրողական մասնագիտական աշխատանքին անհամաչափ միջամտություն:**

Այսպիսով, կարծիքի արտահայտման ազատության առանձնահատկությունների և դրա բովանդակության համալիր, միջազգային իրավական ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների գործադրման պայմաններում ոտնահարվում են ոչ միայն լրագրողների՝ տեղեկություններ տարածելու ազատությունը, այլև հասարակության՝ այդ տեղեկություններն ստանալու իրավունքը:

Վերոգրյալի հաշվառմամբ էլ՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի սեպտեմբերի 16-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով վիճարկվող կարգավորումների՝ Սահմանադրության 27-րդ, 40-րդ, 42-րդ, 52-րդ, 78-րդ և 79-րդ հոդվածներին

<sup>252</sup> Հասանելի է <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17326&lang=en> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>253</sup> Հասանելի է <https://rm.coe.int/09000016805ae60e> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>254</sup> Հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804ff5a1> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

համապատասխանության հարցը: Ընդ որում՝ դիմումով Մարդու իրավունքների պաշտպանը միջնորդել է կասեցնել վիճարկվող սահմանափակումների գործողությունը մինչև Սահմանադրական դատարանում գործի դատաքննության ավարտը և առաջնահերթություն տալ գործի քննությանը: Ներկայացված միջնորդության քննության արդյունքում որոշում չի ընդունվել միջնորդությունը բավարարելու համար ձայներ չհավաքվելու պատճառով: Սահմանադրական դատարանում գտնվող գործի քննությունը դեռ ընթացիկ փուլում է, նիստը նշանակված է 2022 թվականի փետրվարի 22-ին<sup>255</sup>:

**4. Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների աշխատանքի սահմանափակումների իրավաչափությունը կարծիքի արտահայտման ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից. խնդրի դիտարկումը սահմանադրաիրավական հարթությունում**

ՀՀ Ազգային ժողովի նախագահի՝ 2021 թվականի հուլիսի 30-ին ընդունված և 2021 թվականի օգոստոսի 2-ին հրապարակված որոշմամբ մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ Ազգային ժողովի նախագահի 2019 թվականի փետրվարի 12-ի ՆՈ-01-Լ որոշման հավելված 1-ում, որով սահմանված են ՀՀ Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնները: Նշված փոփոխություններով պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է ուսումնասիրություն, որի արդյունքները վեր են հանել կարծիքի արտահայտման իրավունքի ոտնահարման ռիսկեր: Մասնավորապես, պարզվել է, որ լրագրողների նկատմամբ սահմանափակումները կիրառվում են որպես Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոնների մաս: Ուշագրավ է, որ հիմնականում հենց ՀՀ Ազգային ժողովի նախագահի քննարկվող որոշմամբ նախատեսված փոփոխությունների և լրացումների հիման վրա էլ Ազգային ժողովում կիրառվում են լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումները:

Ազգային ժողովի հատուկ վերահսկելի գոտում արգելվում է հավատարմագրված լրագրողներին զբաղվել մասնագիտական գործունեությամբ, սակայն խնդրահարույց է այն, որ իրավական մակարդակում հստակ ամրագրված չէ կամ չկան անգամ չափանիշներ, թե Ազգային ժողովի որ հատվածներն են ներառված կամ կարող են ներառվել «հատուկ վերահսկելի գոտի» հասկացության ներքո: Խոսքն, օրինակ, այն մասին է, թե Որոշմամբ սահմանված՝ Ազգային ժողովի նիստերի դահլիճից, Ազգային ժողովի նախագահի աշխատասենյակից և Ազգային ժողովի նախագահի

<sup>255</sup> Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումը հասանելի է <https://concourt.am/pdf/uploads/9b98ede0e75a11df8a28f7de5ac6dbabe228b910.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ընդունարանից բացի որ հատվածները կարող են Ազգային ժողովի նախագահի որոշմամբ ներառվել «հատուկ վերահսկելի գոտի» հասկացության ներքո:

Արդյունքում՝ Ազգային ժողովում ծառայություն իրականացնող անվտանգության աշխատակիցները չեն թույլատրում հավատարմագրված լրագրողներին մուտք գործել Ազգային ժողովի նոր մասնաշենք, մոտենալ խմբակցությունների և պատգամավորների աշխատասենյակներին, հարցազրույցներ և մեկնաբանություններ վերցնել Ազգային ժողովի միջանցքներում, դրանց նախասրահներում, լրագրողներին արգելվում է տեսանկարահանում և լուսանկարահանում իրականացնել այն վայրերում, որտեղ ԱԺ անվտանգության աշխատակիցներն են գտնվում կամ ծառայություն իրականացնում:

Պետք է հաշվի առնել նաև այն, որ Ազգային ժողովում աշխատում են սահմանված ընթացակարգով հավատարմագրված լրագրողներ, որոնք Ազգային ժողով մուտք գործելիս արդեն իսկ ենթարկվում են ստուգման անվտանգությունն ապահովող ծառայության կողմից, այդ թվում՝ համապատասխան սարքերով, և անվտանգության ապահովման հիմքով նրանց նկատմամբ լրացուցիչ սահմանափակումների կիրառումն անընդունելի է:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ խնդրի կապակցությամբ իրականացված ուսումնասիրության արդյունքների հիման վրա Պաշտպանը հանդես է եկել համապատասխան հայտարարություններով<sup>256</sup>: Հարցի կապակցությամբ նաև քննարկումներ են տեղի ունեցել Մարդու իրավունքների պաշտպանի և Ազգային ժողովի նախագահի, ինչպես նաև երկու հաստատությունների աշխատակազմերի միջև, որոնց արդյունքում, սակայն, խնդիրը լուծում չի ստացել:

Խնդրի դիտարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է Ազգային ժողովում լրագրողների աշխատանքի սահմանափակումների, ինչպես նաև միջազգային փորձի և չափանիշների ուսումնասիրություն, որի արդյունքները հանգում են հետևյալին:

Կարծիքի արտահայտման իրավունքի բուն էությունը միջազգային-իրավական կարգավորումների լույսի ներքո արդեն իսկ ներկայացվել է նախորդ շարադրանքում: Ի լրումն դրա՝ պետք է հավելել հետևյալը.

**Մամուլը կարևոր դեր ունի քաղաքական և հանրային հետաքրքրության այլ հարցերով տեղեկություններ և գաղափարներ տարածելու մեջ**, իհարկե եթե այն չի խախտում Կոնվենցիայով նախատեսված թույլատրելի սահմանները<sup>257</sup>: **Մամուլը ոչ միայն ունի տեղեկատվություն և գաղափարներ տարածելու խնդիր, այլ նաև հասարակությունն ունի դրանք ստանալու**

<sup>256</sup> Հասանելի են հետևյալ <https://ombuds.am/am/site/ViewNews/1846>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1855>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1876> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>257</sup> Տե՛ս Կաստելլան ընդդեմ Իսպանիայի (Castells v. Spain) գործով 1992 թվականի ապրիլի 23-ի գործով վճիռը, գանգատ թիվ 11798/85, կետ 43:

**իրավունք**<sup>258</sup>: Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 2020 թվականի 2317 բանաձևով արձանագրվել է, որ առանց խոսքի ազատության իրավունքի և ազատ, անկախ ու բազմակարծիք լրատվամիջոցների չկա իրական ժողովրդավարություն:

Այս առումով Եվրոպայի խորհուրդը և նրա Խորհրդարանական վեհաժողովը կարևորել են լրատվամիջոցների ազատության երաշխավորումը բոլոր առումներով, ներառյալ՝ տեղեկատվության հասանելիության իրավունքի, աղբյուրների պաշտպանության, աշխատավայրում և մասնավոր բնակավայրում խուզարկություններից, ինչպես նաև նյութերի առգրավումից պաշտպանված լինելու, խմբագրական անկախության և հասարակական բանավեճերին հետաքննելու, քննադատելու և դրանց նպաստելու ունակության երաշխավորումը՝ առանց ճնշման կամ միջամտության վախի: Լրագրողների և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգությունն այս ազատության հիմնարար բաղադրիչն է:

Բանաձևով նաև արձանագրվել է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի համատեքստում՝ անդամ պետությունները լրագրողների և լրատվամիջոցների այլ ներկայացուցիչների անվտանգ գործունեության համար պատշաճ իրավական հիմք ստեղծելու դրական պարտավորություն ունեն: Այնուամենայնիվ, սպառնալիքները, հետապնդումները, իրավական և վարչական սահմանափակումները, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական անհարկի ճնշումները լայն տարածում ունեն:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովն անդամ պետություններին կոչ է արել ստեղծել բարենպաստ լրատվական միջավայր և այդ նպատակով վերանայել ներպետական օրենսդրությունը՝ նպատակ ունենալով կանխել լրատվամիջոցների ազատության վրա ազդեցություն ունենալու հնարավորություն ընձեռող տարբեր օրենքների կամ դրույթների չարաշահումը, ինչպիսիք են՝ զրպարտությանը, ահաբեկչության դեմ պայքարին, ազգային անվտանգությանը, հասարակական կարգին, ատելության խոսքին, հայիոյանքին վերաբերող օրենքները, որոնք չափազանց հաճախ կիրառվում են լրագրողներին ահաբեկելու և լռեցնելու նպատակով<sup>259</sup>:

**Լրագրողների և մամուլի այլ ներկայացուցիչների մասնակցությունը հանրային իրավաչափ մտահոգության հարցերով հանրային բանավեճերին չպետք է խոչընդոտվի, օրինակ, տեղեկությունը հասանելի դարձնելու միջոցները ծանրաբեռնելով կամ կամայական սահմանափակումներով, որոնք կարող են դառնալ անուղղակի գրաքննության եղանակներ:** Այդպիսով, խոսքի ազատությունը նպաստում է ողջամիտ հանրային բանավեճին, որն իր հերթին բազմակարծության, հանդուրժողականության վրա հիմնված ժողովրդավարական հասարակության նախադրյալ է: **Լրագրողների ու մամուլի մասնակիցների այդ իրավունքին**

<sup>258</sup> Տե՛ս Բլադետ Տրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի (Bladet Tromsø and Stensaas v. Norway) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21980/93, կետ 62: Տորգեիր Տորգեիրսոնն ընդդեմ Իսլանդիայի (Thorgeir Thorgeirson v. Iceland) գործով վճիռը, գանգատ թիվ 13778/88, կետ 63:

<sup>259</sup> Հասանելի է <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=28508&lang=en> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

**ցանկացած միջամտություն ունենում է սոցիալական հետևանքներ, քանի որ նման սահմանափակումը միջամտում է նաև տեղեկություններ փնտրելու և ստանալու այլոց իրավունքին ու հանրային բանավեճին:**

Լրատվական գործունեություն իրականացնողի կամ լրագրողի աշխատանքի շնորհիվ է, որ հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ հնարավորություն է ստանում հետևելու հանրային գործառույթի իրականացմանը կոնկրետ մարմնի կողմից<sup>260</sup>:

2021 թվականի օգոստոսի 2-ից Ազգային ժողովի շենքում լրագրողների գործունեության նկատմամբ կիրառվող սահմանափակումներն ակնհայտ վկայում են, որ դրանք Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում անվտանգության ապահովման հետ առնչություն չունեն, այլ պարզապես անհիմն սահմանափակում են լրագրողների աշխատանքը՝ խոչընդոտներ առաջացնելով նրանց մասնագիտական գործունեության համար, ինչպես նաև բացասական ազդելով հասարակությունում լրագրության հեղինակության վրա:

**Լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները պետք է բխեն բացառապես Ազգային ժողովի աշխատանքների բնականոն կազմակերպման պահանջից, սակայն դրանք չպետք է հանգեցնեն լրագրողների աշխատանքի խոչընդոտների կամ նրանց իրավունքների անհիմն սահմանափակման:**

Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների գործունեության հետ կապված կարգավորումները պետք է նախատեսվեն ոչ թե Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում գործող անվտանգության կանոններով, այլ պետք է ստանան առանձին և հստակ կարգավորում օրենսդրական մակարդակում՝ դրանք դիտարկելով Ազգային ժողովում լրագրողի բնականոն գործունեությունն ապահովելու տեսանկյունից:

*Մասնավորապես, անհրաժեշտ է օրենսդրական մակարդակում սահմանել կարգավորումներ, որոնցով կամ որոնց հիման վրա կամրագրվեն Ազգային ժողովի նստավայրի տարածքում և շենքում լրագրողների աշխատանքի առանձնահատկությունները, լրագրողների վարքագծի կանոնները, ինչպես նաև լրագրողների նկատմամբ պարզամավորների ու այլ պաշտոնատար անձանց պարտականությունները:*

*Ընդ որում, նշվածն անհրաժեշտ է ամրագրել պարզաճ իրավական ակտով, իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական պահանջներին համապատասխան, և նախքան Ազգային ժողովի նստավայրի տարածքում կամ շենքում լրագրողների ազատ աշխատանքը սահմանափակող որևէ փոփոխություն ընդունելն այն նախապես պարտադիր քննարկել Ազգային ժողովում աշխատող հավատարմագրված լրագրողների հետ: Այս առումով*

<sup>260</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Իրավական չափանիշներ քրեակատարողական հիմնարկ լրագրողի մուտքի իրավունքի և այդ կապակցությամբ պետական իրավասու մարմնի պարտականության վերաբերյալ» ուղեցույց, 2018թ., էջ 3, հասանելի է [https://www.ombuds.am/images/files/986e87edd62975d1dd1a8a035d509f19.pdf?fbclid=IwAR0bXxtC5y37RebGpMODygmRQVn\\_vREYOf6\\_cDFYFYBCZPz0zPau03D-hsw](https://www.ombuds.am/images/files/986e87edd62975d1dd1a8a035d509f19.pdf?fbclid=IwAR0bXxtC5y37RebGpMODygmRQVn_vREYOf6_cDFYFYBCZPz0zPau03D-hsw) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

անհրաժեշտ է հաշվի առնել նաև լրագրողական ոլորտի կազմակերպությունների և մասնագետների դիրքորոշումները:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ հարկ է նշել, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի՝ սույն վերլուծությամբ քննարկման առարկա դարձած դրույթներով ամրագրված իրավական որոշակիությունից զուրկ ձևակերպումները վկայում են դրանց հիման վրա Ազգային ժողովում հավատարմագրված լրագրողների գործունեության նկատմամբ կիրառվող սահմանափակումների ոչ իրավաչափ զսպող ազդեցության (chilling effect) մասին, ինչն էլ անխուսափելիորեն հանգեցնում է կարծիքի արտահայտման իրավունքի անհամաչափ միջամտության:

Նշվածի հաշվառմամբ էլ՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի հոկտեմբերի 22-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով քննարկվող դրույթների՝ Սահմանադրության 42-րդ, 51-րդ, 75-րդ, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին: Սահմանադրական դատարանում գտնվող գործը քննությունը դեռ ընթացիկ փուլում է, նիստը նշանակված է 2022 թվականի մարտի 29-ին<sup>261</sup>:

**5. Ծանր վիրավորանքի քրեականացման իրավաչափությունն արելության խոսքի բացառման և կարծիքի արտահայտման ազատության իրավունքի հարաբերակցության համարեքստում. խնդրի դիպարկումը սահմանադրահրավական հարթությունում**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՕ-323-Ն օրենքով ՀՀ քրեական օրենսգիրքը լրացվել է նոր՝ 137.1-րդ հոդվածով, որով քրեականացվել է ծանր վիրավորանքը: Հոդվածի 1-ին մասը քրեական պատասխանատվություն է նախատեսում անձին ծանր վիրավորանք հասցնելու՝ հայիոյելու կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելու համար:

Քրեական օրենսգրքում կատարված լրացումն ուժի մեջ է մտել 2021 թվականի օգոստոսի 31-ին, որից հետո նշված նորմի գործնական կիրառման արդյունքում մի շարք խնդիրներ են վեր հանվել: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման և ստացված դիմում-բողոքների ընդհանուր ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է նշված նորմի գործնական կիրառության արդյունքում առաջացած խնդիրների հիմքում ընկած մեկ այլ համակարգային խնդիր:

Խնդիրն այն է, որ ամրագրված քրեականացվող արարքը չափազանց լայն ձևակերպում է ստացել և առաջացնում է որոշակիության հարցեր, ինչը կիրառության ընթացքում

<sup>261</sup> Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումը հասանելի է <https://concourt.am/pdf/uploads/1960dfbb4a7e6b03193db2d48bc8c01d121e1767.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



մեկնաբանության և արարքի ճիշտ որակման խնդիրների է հանգեցնում: Հանցակազմի նման ձևակերպման պարագայում հանցագործության շեմը էապես նվազեցվում է, քանի որ այն չի պարունակում հանցագործության որևէ հատկանիշ կամ հիմք, որով նման արարքը պետք է դրսևորվի: Քրեականացված արարքների էությունը պարզ չէ. տարրնկալման տեղիք են տալիս «հայհոյել», «արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորել», «տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով», «հրապարակախոսական գործունեություն» կամ այլ ձևակերպումները:

Ակնհայտ է, որ չկան հայհոյանքի և վիրավորանքի թվացյալ շեմը տարբերելու չափանիշներ ոչ միայն քաղաքացիների, այլ հենց դատախազության, քննիչների ու փաստաբանների, անգամ իրավապահ մարմինների ու դատավորների համար:

Խնդրի կապակցությամբ հնչել են նաև հանրային մտահոգություններ: Օրինակ՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի հրապարակման համաձայն՝ ծանր վիրավորանքի քրեականացմամբ առավել պաշտպանության տակ առնվեցին հանրային ու պետական գործունեություն իրականացնողները, մի քանի այլ խմբեր, որոնց վիրավորելն ավելի խիստ պատիժ է նախատեսում, քան շարքային քաղաքացու դեպքում, ինչը խտրական վերաբերմունքի դրսևորում է: Օրենսդրական այս փոփոխությունները վտանգավոր են այն առումով, որ իշխանության ներկայացուցիչները, քաղաքական գործիչներն իրենց հասցեագրված քննադատությունն ու սուր խոսքը հաճախ ընկալում են որպես զրպարտություն կամ վիրավորանք և դիմում են դատարան՝ փորձելով ճնշել քննադատողներին: Այսինքն՝ օրենսդրական փոփոխությունները պարարտ հող են ստեղծում ընդդեմ ՁԼՄ-ների ներկայացվող դատական հայցերի համար: Մինչդեռ այդպիսի հայցերի 25 տոկոսը հենց պետական պաշտոնյաների կամ քաղաքական գործիչների կողմից են: Հեղինակավոր միջազգային կազմակերպությունները խիստ քննադատության ենթարկեցին այս նոր օրենքները<sup>262</sup>:

Ուշագրավ է քննարկվող հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերի քանակական ցուցանիշը: Այսպես, ՀՀ քննչական կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով հարուցվել է 225 քրեական գործ, որից 223 քրեական գործը հարուցվել է ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա:

Ըստ Քննչական կոմիտեից ստացված պարզաբանումների՝ հարուցված 223 քրեական գործից 24-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 67-ով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին, 24-ով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, 19 քրեական գործ ուղարկվել է այլ ստորաբաժանում, 13 քրեական գործ միացվել է այլ

քրեական գործի, իսկ 76 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է: Քրեական հետապնդում է հարուցվել 60 անձի նկատմամբ, այդ քրեական գործերի շրջանակներում 49 անձ ունեցել է մեղադրյալի, իսկ 11-ը՝ կասկածյալի դատավարական կարգավիճակ, նրանցից մեկի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանավորումը, 58 անձի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը: 1 անձ ձերբակալվել է, ձերբակալումը դատարանի որոշմամբ ճանաչվել է ոչ իրավաչափ, որպես պատճառաբանություն նշվել է ձերբակալման նպատակի ոչ իրավաչափ լինելը: Դատարանի որոշումը չի բողոքարկվել:

Քննչական կոմիտեին ուղղված գրությամբ Պաշտպանը հարց է բարձրացրել, թե ի՞նչ չափանիշներով և (կամ) փաստական տվյալների հաշվառմամբ են առաջնորդվում իրավապահ մարմիններն անձանց կողմից սոցիալական ցանցերի հարթակներում և (կամ) հրապարակային խոսքում հնչեցված արտահայտությունները «ծանր վիրավորանք» դիտարկելով և ի՞նչ առիթների ու հիմքերի հաշվառմամբ են ՀՀ քրեական օրենսգրքի 137.1.-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվում նշված քրեական գործերը: Նշված հարցադրմանն ի պատասխան՝ Քննչական կոմիտեից պարզաբանվել է, որ քրեական գործերի մեծ մասը հարուցվել է ֆիզիկական անձանց հաղորդումների հիման վրա, նշված հանցակազմը գնահատվում է ՀՀ քրեական դատավարության և քրեական օրենսգրքերով սահմանված իրավակարգավորումների շրջանակներում:

Իրավունքների երաշխավորման օրենսդրական անկատարությունը, ինչպես նաև իրավական ֆորմալ պահանջին, առաջին հայացքից, բավարարելով հանդերձ, նման սխալ իրավակիրառումն առաջ է բերում անձի իրավունքների երաշխավորման լուրջ խնդիրներ:

**Հասարակության շրջանում թյուրըմբռնումից խուսափելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը, նախ, հարկ է համարում հատուկ ընդգծել, որ ատելության խոսքը, արժանապատվության դեմ ուղղված և խոսքի ազատությանը հակադրվող ցանկացած խոսք դատապարտելի է, նման արատավոր երևույթները չպետք է տեղ ունենան մեր հասարակությունում:** Մարդու իրավունքների պաշտպանն ատելության խոսքի՝ արատավոր երևույթի բացարձակ անթույլատրելիության մասին մշտապես բարձրաձայնել է իր հրապարակային և ոչ հրապարակային հայտարարություններում, զեկույցներում ու ելույթներում: Սկզբունքորեն անընդունելի է ցանկացած տեսակի վիրավորանք ու անձի արժանապատվություն վիրավորող արարք՝ անկախ նրանից՝ երբ և ում կողմից է արվում կամ ում է ուղղված: Հանրային տիրույթում ու հատկապես սոցիալական ցանցերում ատելության խոսքը, սպառնալիքները կամ բռնության կոչերը մարտահրավեր են խոսքի ազատությանը, խախտում են մարդու իրավունքները, ինչպես նաև ավելացնում է անհանդուրժողականությունը, նպաստում են լարվածությանը և, իհարկե, խնդիրներ առաջացնում իրավունքի գերակայության համար: Դա վտանգավոր է նաև այն առումով, որ նշված արատավոր երևույթները տանում են բռնության խոսքի և կարող է տեղափոխվել իրական կյանք:

**Բայց սա չի նշանակում, թե պետությունն այս զգայուն ոլորտի կարգավորմանն ուղղված համակարգված, ծրագրված պետական քաղաքականություն վարելու փոխարեն պետք է**

**միանգամից սկսի գործել Քրեական օրենսգրքի անորոշ ձևակերպումներով հողվածներով ու դրանով ավելի բարդացնի վիճակը:** Պետությունը պետք է ձևավորի և իրականացնի միասնական քաղաքականություն, ձեռնարկի գործուն քայլեր խնդիրների հաղթահարման և վիրավորանքի, ատելության, անձի արժանապատվությունը նվաստացնող այլ արատավոր երևույթների վերացման ուղղությամբ: Այդ քաղաքականությունը պետք է լինի համակարգային՝ բոլոր ոլորտներում պարտադիր ազդեցությամբ: Պետք է սկսել կրթական հաստատություններից ու գիտակից քաղաքացիներ ձևավորելու պետության հիմնարար հրամայականի հիմքում դնել հենց այս արժեքներով դաստիարակումը: Սա, իհարկե, հեռահար նպատակ է, համակարգային թիրախ: Անհրաժեշտ է նաև անմիջական թիրախների քայլերով վարել պետական միասնական քաղաքականություն ներկայում այս արատավոր երևույթների դեմ պայքարի համար: Նման քայլերի ձեռնարկումն անհրաժեշտ է, սակայն արդյունավետ և թիրախային կարող են լինել միայն արարքի շուրջ իրավական ճիշտ արձագանքմամբ, համաչափ ձեռնարկումների իրականացումը:

Բռնություն կամ ցանկացած այլ տեսակի լարվածություն բացառելու հարցում սկզբունքային դեր ունեն պետական մարմինները, որոնք պարտավոր են ապահովել իրավունքի գերակայություն հենց առաջին հերթին իրենց գործունեության մեջ:

Հանրային տիրույթում կարծիքի արտահայտման ազատության ոչ իրավաչափ դրսևորումների, այդ թվում՝ ատելության խոսքի, վիրավորանքի ու զրպարտության դեմ պետության հակազդման, խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ միջոցները պետք է երաշխավորվեն թե՛ օրենսդրական, թե՛ գործնական մակարդակներում: Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ հակազդման այդ կառուցակարգերը պետք է լինեն որոշակի, համաչափ և արդյունավետ հետապնդվող նպատակին հասնելու համար: Ասվածը հատկապես վերաբերում է քրեականացմանը՝ որպես պետական միջամտության, պետական հարկադրանքի առավել խիստ գործիքի կիրառմանն արդեն քրեաիրավական եղանակներով: Այստեղ մտահոգության առարկա է նաև պետության վերաբերմունքը, որ ստացվում է՝ այս երևույթների դեմ ամենաարդյունավետ միջոց է համարում քրեական քաղաքականությունը, այն էլ ընդհանրական ձևակերպումներով հանցակազմերի հիման վրա: Խնդիրը, սոսկ քրեաիրավական դաշտում գնահատական տալով, չի կարող լուծվել. իրավական պետության որդեգրած սկզբունքներին համահունչ պետությունը պետք է ձեռնարկի համալիր քայլեր՝ դրանցում կարևորելով կանխարգելիչ ձեռնարկումները:

Հակառակ դեպքում, առաջ է գալիս այնպիսի հարաբերակցվող իրավական արժեքների հավասարակշռված պաշտպանվածություն չապահովելու խնդիր, ինչպիսին տվյալ դեպքում մարդու պատիվը, արժանապատվությունն ու կարծիքի արտահայտման ազատությունն է:

Կոնկրետ իրավիճակում մտահոգությունը հատկապես նրանում է, որ քրեական քաղաքականության համար անորոշ հիմքեր ստեղծելուն զուգահեռ կամ դրանից առաջ ու հետո էլ պետական միասնական քաղաքականություն այդպես էլ չի վարում նշված արատավոր երևույթների դեմ համակարգային պայքարի, համակարգային կանխարգելման համար:

*Սրացվել է այնպես, որ ծանր վիրավորանքի քրեականացման և հատկապես հանցակազմում առկա անորոշ ձևակերպումների պայմաններում զգալիորեն սահմանափակվում է կարծիքի արտահայտման ազատության իրավունքը, քանի որ այդ իրավունքով պաշտպանված շատ արտահայտություններ կարող են որակվել որպես «ծանր վիրավորանք»՝ այդպիսով հանգեցնելով քրեական պարասխանաբանության այն դեպքում, երբ օրենսդրական մակարդակում արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելու չափանիշների առկայության դեպքում նման խնդիր վստահաբար չէր առաջանա:*

*Ծանր վիրավորանքի հանցակազմում առկա անորոշ ձևակերպումներն անխուսափելիորեն հանգեցնում են անձանց՝ կարծիքի արտահայտման ազատության սահմանադրական իրավունքի սահմանափակման նաև այն բանի հաշվառմամբ, որ հանցակազմում առկա ձևակերպումների անորոշության պայմաններում անձինք շատ հաճախ հրաժարվում են զանգվածային լրատվության միջոցներին հրապարակայնորեն հայտնել իրենց կարծիքը (այսինքն՝ չեն իրացնում կարծիքի արտահայտման ազատության իրենց սահմանադրական իրավունքը): Խնդիրը բարձրաձայնվել է լրագրողների կողմից:*

Ի լրումն կարծիքի արտահայտման ազատության վերաբերյալ նախորդ ենթակետերում ներկայացված միջազգային-իրավական կարգավորումների՝ հարկ է ավելացնել, որ «Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության» Նախարարների խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 3/18 որոշման 11-րդ կետը պետություններին կոչ է անում ապահովելու, որ զրպարտության մասին օրենսդրությունը չնախատեսի չափից ավելի խիստ պարասխանաբանության միջոցներ, որոնք կարող են խաթարել լրագրողների անվտանգությունը կամ գրաքննության ենթարկել լրագրողներին, ինչպես նաև խոչընդոտել հասարակության իրազեկման վերջիններիս առաքելությունը: Անհրաժեշտության դեպքում պետք է վերանայել և չեղյալ հայտարարել նման օրենքները՝ մասնակից պետությունների մարդու իրավունքների միջազգային իրավունքի պարտավորություններին համապատասխան<sup>263</sup>:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ օրենսդրական քննարկվող կարգավորումներն անխուսափելիորեն կարող են հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության ոչ իրավաչափ սահմանափակման ոչ թե անձին հայիոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը որպես խոսքի ազատություն դիտարկելու տիրույթում քննարկելու տեսանկյունից, այլև խնդրո առարկա կարգավորումների որոշակիության և համաչափության սկզբունքի բացակայության, միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները գերազանցող հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումների նախատեսման արգելքի տեսանկյունից:

Խոսքի կամ կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման նպատակով պետությունը պետք է ստանձնի այնպիսի հանձնառություն, որը չի խեղաթյուրի կամ ուղիղ

<sup>263</sup> Հասանելի է <https://www.osce.org/files/mcdec0003%20safety%20of%20journalists%20en.pdf> հղումով, 11-րդ կետ, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

սպառնալիքի տակ դնի լրագրողական կամ մամուլի աշխատանքը: Ուստի, պետության ձեռնարկած միջոցները չպետք է լինեն այնքան խիստ և անհամաչափ, որ փոխհատուցման և պատասխանատվության մեխանիզմները դուրս գան իրենց նպատակային նշանակության տիրույթից, իսկ իրավունքների պաշտպանության միջոցները դառնան պատրանքային: **Այս տրամաբանությամբ, Քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով վիրավորանքի համար քրեական պատասխանատվության նախատեսումը՝ որպես պատիժ, գումարային բարձր սահմանաչափերի սահմանմամբ և հատկապես ազատազրկմամբ, խնդրահարույց է և կարող է առաջ բերել անհամաչափ միջամտության խոսքի ազատությանը կամ մամուլի ազատությանը:**

Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի հոկտեմբերի 13-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի՝ Սահմանադրության 42-րդ, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին համապատասխանության հարցը: Ընդ որում՝ դիմումով Մարդու իրավունքների պաշտպանը միջնորդել է կասեցնել վիճարկվող դրույթի գործողությունը մինչև Սահմանադրական դատարանում գործի դատաքննության ավարտը: Ներկայացված միջնորդության քննության արդյունքում որոշում չի ընդունվել միջնորդությունը բավարարելու համար ձայներ չհավաքվելու պատճառով: Սահմանադրական դատարանում գտնվող գործը քննությունը դեռ ընթացիկ փուլում է, նիստը նշանակված է 2022 թվականի մարտի 22-ին<sup>264</sup>:

*Համակարգային՝ սահմանադրահրավական մակարդակում խնդիրներ առաջացնող օրենսդրական փոփոխությունների այս քաղաքականությունը հիմք է տալիս եզրահանգելու, որ բացակայում է կարծիքի արտահայտման ազատության նկատմամբ զգայունությունն ու իրավունքահեն մոտեցումը, ինչը դրսևորվում է և՛ օրինաստեղծ գործունեության մեջ, և՛ իրավակիրառ պրակտիկայում: Խնդիրն ինստիտուցիոնալ մոտեցմամբ կարող է լուծվել: Ավելին, կոնկրետ նկարագրված խնդիրների պարագայում հատկապես իրավակիրառող մարմինները պետք է հաշվի առնեն, որ դրանք ներկայում Սահմանադրական դատարանում վիճարկման առարկա են:*

<sup>264</sup> Սահմանադրական դատարանի աշխատակարգային որոշումը հասանելի է <https://concourt.am/pdf/uploads/6b9196dc82aebd2d35dc15b5dc0d033da64d0fbd.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

**ԲԱԺԻՆ 8. ԱՆՃՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Անձնական տվյալների պաշտպանության հարցերը դիտարկվել են երկու՝ լրագրողի մասնագիտական աշխատանքի և պետական իրավասու մարմինների գործունեության շրջանակներում անձնական տվյալների պաշտպանության տեսանկյունից:

Անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության հարցերը լրագրողական գործունեության հետ ուղղակի առնչություն ունեն այն առումով, որ մամուլը տեղեկատվության տրամադրման և հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուսաբանման կարևորագույն առաքելություն ունի և մշտապես բախվում է տեղեկացված լինելու հանրային շահի և անձի մասնավորության ակնկալիքի հավասարակշռման խնդրին: Հետևաբար, կարևոր է, որ մի կողմից՝ ապահովվի հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության ժամանակին տրամադրումը, մյուս կողմից՝ պատասխանատու լրագրության սկզբունքներն են ենթադրում, որ լրագրողը պետք է գործի բարեխղճորեն և իրավական կանոններին համապատասխան, երբ խոսքը վերաբերում է անձի անձնական տվյալների հավաքմանն ու հրապարակմանը:

Լրագրողական գործունեություն իրականացնողի մասնագիտական աշխատանքն անխուսափելիորեն առնչվում է մի կողմից՝ կարծիքի արտահայտման ազատության և տեղեկացված լինելու հանրային շահի, մյուս կողմից՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների հավասարակշռման հետ: Ուստի, պատասխանատու լրագրությունից բխող գործնական իմացության տիրույթում պետք է գտնվեն նաև ուսումնասիրության առարկա հարցերը: Այս տրամաբանությամբ էլ առաջնորդվելով՝ սույն գլխի թիրախում են հայտնվել անձնական տվյալների պաշտպանության հարցերը հենց լրագրողի մասնագիտական աշխատանքի ու մամուլի գործունեության դիտանկյունից:

Անդրադառնալով պետական իրավասու մարմինների գործունեության շրջանակներում անձնական տվյալների պաշտպանության հարցերին՝ հարկ է նշել, որ պետական իրավասու մարմիններն իրենց ամենօրյա գործունեության շրջանակներում անխուսափելիորեն բախվում են անձանց անձնական տվյալների պաշտպանության հարցերին: Իսկ «անձնական տվյալ» հասկացության շրջանակի բացահայտումն անհրաժեշտ է, քանի որ առկա է անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի իրազեկման և այդ իրավունքի ճիշտ ընկալման խնդիր: Այսպես.

**1. «Անձնական տվյալ» հասկացության շրջանակը**

2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության նորամուծություններից էր անձնական տվյալների պաշտպանության ամրագրումը սահմանադրական մակարդակում: Այսպես,

Սահմանադրության 34-րդ հոդվածը որպես մարդու հիմնական իրավունք ամրագրել է անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ սահմանելով, որ յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող տվյալների պաշտպանության իրավունք: Անձնական տվյալների մշակումը պետք է կատարվի բարեխղճորեն, օրենքով սահմանված նպատակով, անձի համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության՝ օրենքով սահմանված այլ իրավաչափ հիմքի առկայությամբ (...):

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքը չի նույնանում մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի հետ: Անձնական տվյալների պաշտպանության իրավունքն առավել ընդգրկում է այն առումով, որ այն ներառում է ոչ միայն անձնական տվյալները վերաբերելի դեպքերում գաղտնի պահելու իրավունքը, այլև անձնական տվյալների բարեխիղճ և իրավական հիմքով մշակումը: Դրանից զատ, անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր ու ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքների պաշտպանության ներքո գտնվող տվյալների, տեղեկությունների շրջանակը ևս նույնական չէ:

Հետևաբար, գործնականում կարևոր է հասկանալ, թե ինչ է անձնական տվյալը, ինչ է ենթադրում անձնական տվյալների պաշտպանությունը և ինչպես է հարաբերակցվում անձի մասնավոր կյանքի գաղտնիության հետ:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքն ինքնին չի արգելում այս կամ այն անձնական տվյալի մշակումը, այդ թվում՝ հրապարակումը կամ փոխանցումը, ինչպես նաև չի սահմանում այս կամ այն անձնական տվյալի գաղտնիք լինելու կարգավիճակը, իսկ անձնական տվյալը տվյալի տեսակի անվանումն է, այլ ոչ թե ռեժիմը (անձնական տվյալները կարող են լինել նաև հանրամատչելի): Վերոգրյալից հետևում է, որ որոշակի իրավահարաբերությունները կամ կոնկրետ մարմնի գործունեությունը կարգավորող օրենքներով կարող են ուղղակիորեն սահմանվել այս կամ այն անձնական տվյալի փոխանցման (այդ թվում՝ հրապարակման) թույլտվություն կամ արգելք: Այլ կերպ ասած՝ **անձնական տվյալն ինքնին անձնական տվյալ լինելու ուժով դեռևս գաղտնիք չէ:**

Վերոնշյալը չի նշանակում, որ անձնական տվյալները չեն կարող համարվել կամ դառնալ այնպիսին կամ մշակվել այնպես, որ խախտեն մարդու մասնավոր (անձնական) կյանքի անձեռնմխելիության կամ անձնական կյանքի հարգանքի իրավունքը: Ավելին, հաճախ անձնական տվյալների մշակումը կարող է վկայել անձնական կյանքին միջամտության և անգամ անձնական կյանքի հարգման իրավունքի խախտման մասին: Այս կապակցությամբ **անձի անձնական և ընտանեկան կյանքի հարգման իրավունքի տեսանկյունից հիմնարար նշանակություն է տրվում նաև անձնական տվյալների պաշտպանությանը**<sup>265</sup>:

Անձնական որոշ տվյալների զգայունությունը մարդու մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի համատեքստում ամրագրում է ստացել հենց Օրենքով, որով, մասնավորապես, առանձնացվել են այնպիսի տվյալներ, ինչպիսիք են՝

<sup>265</sup> Հասանելի է [http://www.foi.am/u\\_files/file/Voroshum\\_2019\\_qaghaqapetaran.pdf](http://www.foi.am/u_files/file/Voroshum_2019_qaghaqapetaran.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

- անձնական կյանքի տվյալները (անձի անձնական կյանքի, ընտանեկան կյանքի, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, մտավոր, սոցիալական վիճակի վերաբերյալ կամ նման այլ տեղեկություններ) հավակնում են լինել կամ դառնալ մարդու մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիքներ, եթե օրենքով մարդը չի զրկվել կամ հենց ինքն իրեն չի զրկել իր անձնական կյանքի տվյալները գաղտնի պահելու արտոնությունից,

- կենսաչափական (նույն բիոմետրիկն է) անձնական տվյալները (անձի ֆիզիկական, ֆիզիոլոգիական և կենսաբանական առանձնահատկությունները բնութագրող տեղեկություններ) ունեն իրենց առանձնահատկությունները. մի կողմից դրանք, որպես կանոն, մոտ են մարդուն, և դրանք հնարավոր է ստանալ միայն մարդուց, անհրաժեշտ է մարդու ֆիզիկական ներկայությունը, մյուս կողմից դրանք թույլ են տալիս անսխալական նույնականացնել մարդուն, քանի որ բացառիկ են, վերաբերում են (պատկանում են) միայն մի մարդու և չեն կրկնվում: Այս առանձնահատկություններով պայմանավորված՝ կենսաչափական տվյալներն, օրինակ, մեծացնում են մարդու ինքնության գողության հավանականությունը (кража личности, identity theft) հնարավորությունը,

- հատուկ կատեգորիայի անձնական տվյալները (անձի ռասայական, ազգային պատկանելությանը կամ էթնիկ ծագմանը, քաղաքական հայացքներին, կրոնական կամ փիլիսոփայական համոզմունքներին, արհեստակցական միությանն անդամակցությանը, առողջական վիճակին ու սեռական կյանքին վերաբերող տեղեկություններ) ըստ էության խտրականության հիմք կարող են հանդիսանալ, և այս տվյալների զգայունությունը պայմանավորված է դրանց միջոցով խտրականության ռիսկի մեծացմամբ<sup>266</sup>:

Այսպիսով, հարկ է կրկին արձանագրել, որ **«անձնական տվյալը» ինքնին չի նշանակում գաղտնիություն**: Անձնական տվյալը ցանկացած տվյալ է (կարող է լինել ոչ հրապարակային, գաղտնի և հանրամատչելի), որը թույլ է տալիս նույնականացնել անձին: Մինչդեռ, մասնավոր կյանքին ու օրենքով պահպանվող գաղտնիք համարվող տեղեկությունները ենթադրում են գաղտնիության որոշակի ռեժիմ, որի պահպանման պարտականություն ունեցող սուբյեկտների շրջանակը, այդ գաղտնիքի չպահպանման իրավական հետևանքներն ամրագրված են ներպետական օրենսդրությամբ, ինչպիսիք են՝ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքը, ՀՀ քրեական օրենսգիրքը, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, «Բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքը և այլն:

Միևնույն ժամանակ, անձնական տվյալ հասկացության, անձնական տվյալների հանրամատչելի և ոչ հանրամատչելի տեղեկատվության ռեժիմների սահմանումը ընդհանուր եզրահանգման հիմք են ստեղծում, որ **անձնական տվյալների մշակման, օգտագործման և փոխանցման հարցերը սերտորեն փոխկապված են անձի մասնավոր կյանքի և մասնավորության (privacy) ակնկալիքի հետ**: Ընդ որում, օրենքի մի շարք դրույթներ իբրև անձնական տվյալների մշակման,

<sup>266</sup> ԱՏՊ գործակալության ընդհանուր մեկնաբանությունն է:



**օգտագործման և փոխանցման պայման ամրագրում են «անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունը»:**

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝ **որպես ընդհանուր կանոն՝ անձնական տեղեկատվությունը չպետք է հանրայնացվի առանց շահագրգիռ անձի համաձայնության:** Համաձայնությունը կարևորագույն տարր է՝ որոշելու, թե արդյոք անձի անձնական կյանքի վերաբերյալ տվյալի հրապարակումը միջամտություն է գաղտնիության իրավունքին<sup>267</sup>:

Անձնական տվյալների պաշտպանության և մասնավոր կյանքի գաղտնիության հարաբերակցության հարցը դիտարկվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննված բազմաթիվ գործերի օրինակներով, որոնք վերաբերում են զանգվածային լրատվության միջոցներով անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ հրապարակելու իրավաչափության խնդրին: Այսպես.

*Պեկն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործի փաստերի համաձայն՝ Մեծ Բրիտանիայի Բերտվուդ քաղաքի փողոցային և CCTV համակարգ ունեցող տեսախցիկներից մեկը ֆիքսել է, թե ինչպես է քաղաքացիներից մեկը՝ Ջեֆրի Պեկը՝ խոհանոցային դանակը ձեռքին, գնում փողոցով: Պեկն այդ օրը փորձել է ինքնասպանություն գործել՝ կտրելով ձեռքի երակները, սակայն փողոցում տեղադրված տեսախցիկը ինքնասպանության փորձի կադրերը չի ֆիքսել: Տեսախցիկների աշխատանքը հսկող օպերատորն ահազանգել է Ոստիկանություն, որի շնորհիվ էլ կանխվել է ինքնասպանությունը: Հետագայում տեսախցիկի ֆիքսած կադրերը տրամադրվել են լրատվամիջոցներին՝ առանց Պեկի համաձայնության և առանց կադրերում նրա ինքնությունը քողարկելու, ինչի կապակցությամբ էլ Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում<sup>268</sup>:

*Ալակայան ընդդեմ Թուրքիայի* գործի փաստերի համաձայն՝ Դիմողը Թուրքիայում հայտնի դերասանուհի է, ում տուն գողեր են ներխուժել: Այս դեպքի մասին տեղական լրագրողներից մեկը հոդված է հրապարակել, որում տպվել է դիմողի լուսանկարը, ինչպես նաև նշվել է նրա բնակության վայրի կոնկրետ հասցեն: Հոդվածի հրապարակումից հետո Դիմողին անընդհատ անհանգստացրել են իր տանը, ինչը հանգեցրել է նրան, որ վերջինս սկսել է վախենալ տանը մենակ մնալուց: Դիմողը վնասների հատուցման պահանջով դիմել է դատարան, սակայն շրջանային դատարանը մերժել է նրա հայցը՝ գտնելով, որ նա հանրային անձ է, հետևաբար նրա հասցեի հրապարակումը չի կարող խախտել նրա իրավունքները:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է անհատի՝ իր տան նկատմամբ հարգանքի իրավունքը, ինչը նշանակում է ոչ միայն իրական

<sup>267</sup> Եվրոպայի խորհուրդ, «Մամուլում գաղտնիության պահպանման վերաբերյալ ուղեցույց», 2018 թ. հոկտեմբեր, էջ 10: Հասանելի է <https://rm.coe.int/prems-guidelines-on-safeguarding-privacy-in-the-media-2018-/168090289b> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>268</sup> Տե՛ս Պեկն ընդդեմ Միացյալ Թագավորության (*Peck v. The United Kingdom*) գործով 2003 ապրիլի 28-ի վճիռը, զանգատ թիվ 44647/98:

Ֆիզիկական տարածքի, այլ նաև այդ տարածքից հանգիստ օգտվելու իրավունք: Անձի բնակության վայրի հասցեն համարվում է անձնական տվյալ կամ տեղեկատվություն, որն ընկնում է անձնական կյանքի շրջանակի մեջ և ենթակա է վերջինիս տրված պաշտպանությանը: Չնայած որոշակի հատուկ հանգամանքներում տեղեկացված լինելու հասարակության իրավունքը կարող է նույնիսկ ընդգրկել հանրային գործիչների անձնական կյանքի որոշ կողմեր, մասնավորապես, երբ խոսքը վերաբերում է քաղաքական գործիչներին: Սակայն այն հողվածները, որոնց նպատակն անձանց անձնական կյանքի մանրամասների վերաբերյալ որոշակի ընթերցասերների հետաքրքրությունը բավարարելն է (որքան էլ այդ անձը հանրաճանաչ լինի) չի կարող համարվել, թե այն նպաստում է հասարակության համար կարևորություն ներկայացնող որևէ բանավեճի<sup>269</sup>: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ ներպետական դատարանների կողմից վտանգված շահերը կշռադատելու նման ձախողումը չի կարող համատեղելի համարվել Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված Պետության դրական պարտավորության հետ: Սույն գործով Դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում<sup>270</sup>:

*Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի* գործի փաստական հանգամանքների համաձայն՝ դիմումատուները Մոնակոյի արքայադուստր Կարոլինա Ֆոն Հաննովերը և վերջինիս ամուսին, արքայազն Էռնեստ Ավգուստ Ֆոն Հաննովերն են: Գերմանական «Frau im Spiegel» ամսագրում առանց դիմումատուների համաձայնության հրապարակվել են նրանց անձնական կյանքի որոշակի դրվագներ պատկերող երեք լուսանկար: Դիմումատուներին լուսանկարել են զբոսնելիս՝ իրենց դահուկային հանգստի ընթացքում:

Դիմումատուները պահանջել են դատական կարգադրություն արձակել գերմանական ամսագրերում լուսանկարների ցանկացած հետագա հրապարակման դեմ և մերժում ստանալով՝ հայտարարել, որ գերմանական դատարանների կողմից՝ իրենց լուսանկարների հետագա հրապարակումն արգելող դատական կարգադրության արձակման մերժումը խախտում է իրենց՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ նույնիսկ եթե անձը հայտնի է ընդհանուր հանրությանը, նա կարող է ապավինել իր անձնական կյանքի պաշտպանության և հարգանքի «օրինական ակնկալիքին»<sup>271</sup>: Անձնական կյանքի բնագավառն

<sup>269</sup> Տե՛ս Ալկայան ընդդեմ Թուրքիայի (Alkaya v. Turkey) գործով 2013 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 42811/06, կետ 35: ՄԳՆ Լիմիթիդն ընդդեմ Միացյալ Թագավորության (MGN Limited v. United Kingdom) գործով 2011 թվականի ապրիլի 18-ի վճիռը, գանգատ թիվ 39401/04, կետ 143: Քուդերը և Աշետ Ֆիլիպակի Ասոսիե՛ն ընդդեմ Ֆրանսիայի (Couderc and Hachette Filipacchi Associés v. France) գործով 2015 թվականի նոյեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 40454/07, կետ 100:

<sup>270</sup> Տե՛ս Ալկայան ընդդեմ Թուրքիայի (Alkaya v. Turkey) գործով 2013 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 42811/06:

<sup>271</sup> Տե՛ս Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատներ թիվ 40660/08 և 60641/08, կետ 97:

ընդգրկում է տարրեր, որոնք վերաբերում են անձի պատկերին և լուսանկարի հրապարակմանը, որն ընկնում է անձնական կյանքի շրջանակի մեջ<sup>272</sup>:

Չնայած Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմնական նպատակը անձին հանրային իշխանությունների կամայական միջամտությունից պաշտպանությունն է, այնուամենայնիվ այն պարզապես չի հարկադրում պետությանը ձեռնպահ մնալ այդպիսի միջամտությունից. ի հավելումն պետության բացասական պարտականության կարող են լինել անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ արդյունավետ հարգանքի դրական պարտավորություններ: Այդ պարտավորությունները կարող են ներառել անձնական կյանքի նկատմամբ հարգանք ապահովելու համար նախատեսված միջոցների ընդունումը նույնիսկ անհատների՝ միմյանց միջև առկա հարաբերությունների կապակցությամբ<sup>273</sup>: Լուսանկարի հրապարակումը կարող է ներխուժել անձի անձնական կյանք, նույնիսկ եթե այդ անձը հանրային գործիչ է<sup>274</sup>:

*Ռեկլոսը և Դավուրլիսն ընդդեմ Հունաստանի* գործով դիմումատուների երեխայի ծնվելուց հետո վերջինս տեղափոխվել է ծննդատան ստերիլ բաժանմունք, որտեղ մուտքը սահմանափակված է եղել անգամ բուժաշխատողների համար: Երեխայի ծնունդից հետո դիմումատուներին ցույց են տվել երեխայի երկու լուսանկարներ, որոնք ամբողջությամբ պատկերել են երեխայի դեմքը: Ակնհայտ է եղել, որ լուսանկարներն արվել են ստերիլ բաժանմունքում, որտեղ, փաստորեն, լուսանկարչի մուտքն արգելված է եղել: Ընդ որում՝ ծնողները նախնական համաձայնություն չեն տվել իրենց նորածին երեխային լուսանկարելու կապակցությամբ: Նշված գործով Եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ այլոց կողմից անձին լուսանկարելը՝ անկախ լուսանկարի հետագա հրապարակումից կամ տարածումից, ազդում է մարդու անձնական կյանքի վրա: Իրենց նորածին երեխային նկարելու վերաբերյալ ծնողների նախնական համաձայնությունն ստանալը պարտադիր է դրա օգտագործման իրադրությունը պարզելու համար<sup>275</sup>:

*Բեդալոն ընդդեմ Շվեյցարիայի* գործով լրագրողը ցանկացել է տեղեկություններ ստանալ քրեական վարույթում որպես մեղադրյալ ներգրավված անձի վերաբերյալ: Պետությունը մերժել է նման տեղեկությունների տրամադրումը ոչ միայն նախնական քննության շահերից ելնելով, այլև

<sup>272</sup> Տե՛ս Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2004 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 59320/00, կետ 53: Էրիկայնեն ընդդեմ Ֆինլանդիայի (Eerikäinen v. Finland) գործով 2009 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 3514/02, կետ 61:

<sup>273</sup> Տե՛ս Իքսը և Իգրեկն ընդդեմ Նիդերլանդների (X and Y v. The Netherlands) գործով 1985 թվականի մարտի 26-ի վճիռը, գանգատ թիվ 8978/80, կետ 23: Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատներ թիվ 40660/08 և 60641/08, կետ 98:

<sup>274</sup> Տե՛ս Շյուսսելն ընդդեմ Ավստրիայի (Schüssel v. Austria) գործով 2002 թվականի փետրվարի 21-ի որոշումը, գանգատ թիվ 42409/98: Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատներ թիվ 40660/08 և 60641/08, կետ 95: Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2004 թվականի սեպտեմբերի 24-ի վճիռ, գանգատ թիվ 59320/00, կետ 50 և 53: Պետրինան ընդդեմ Ռումինիայի (Petrina v. Romania) գործով 2008 թվականի հոկտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 78060/1, կետ 27 և այլն:

<sup>275</sup> Տե՛ս Ռեկլոսը և Դավուրլիսն ընդդեմ Հունաստանի (Reklos and Davourlis v. Greece) գործով 2009 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 1234/05, կետ 38 և 41:

վկայակոչելով անձի անձնական կյանքի հարգանքի իրավունքը: Հաշվի առնելով գործի փաստական հանգամանքները՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պետության կողմից իրավունքի խախտում տեղի չի ունեցել<sup>276</sup>:

*Աքսել Սփրինգեր ԱԳ-ն ընդդեմ Գերմանիայի* գործով քննարկելով լրագրողի կողմից հանրահայտ դերասանի ձերբակալման և դատապարտման վերաբերյալ տեղեկությունների հրապարակման դատական արգելքի իրավաչափությունը՝ Եվրոպական դատարանը նշել է, որ կոնկրետ իրավիճակում երկու արժեքների հավասարակշռման հարցում որոշիչ նշանակություն են ունեցել այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են՝ անձի ձերբակալման ու դատապարտման՝ հրապարակային դատական փաստ լինելը և հանրային շահի առկայությունը, անձի՝ հանրային գործիչ լինելը, ինչպես նաև տեղեկատվության ձեռքբերման եղանակն ու հավաստիությունը<sup>277</sup>:

*Մոսլին ընդդեմ Միացյալ Թագավորության* գործով վճռում Եվրոպական դատարանը քննարկման առարկա է դարձրել անձի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության իրավաչափությունն այն հաշվառմամբ, որ լրատվամիջոցն անձի անձնական լուսանկարները հրապարակել էր առանց վերջինիս նախնական ծանուցման: Դատարանը նշել է, որ թեև կոնկրետ իրավիճակում նյութի տարածումը հետապնդել է ոչ այնքան կրթական, որքան ժամանցային նպատակ, այն ընկնում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պաշտպանության ոլորտ, որը, սակայն, կարող է զիջել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի **պահանջներին, եթե տեղեկություններն անձնական բնույթի էին, և առկա չէր դրանք հրապարակելու հանրային շահ**<sup>278</sup>:

**Անձի պատկերը համարվում է նրա անհատականության գլխավոր հատկանիշներից մեկը, քանի որ այն բացահայտում է անձի ուրույն բնութագրիչները և տարբերում է նրան իր նման այլ մարդկանցից: Անձի պատկերի պաշտպանությունն այդպիսով անձնական զարգացման էական բաղադրիչներից է: Անձի՝ իր նկարներն օգտագործելու նկատմամբ հսկողության իրավունքը ներառում է անձի հնարավորությունը հրաժարվելու իր նկարը հրապարակելուց, ինչպես նաև անձի իրավունքը՝ առարկելու մեկ այլ անձի կողմից իրեն ձայնագրելու, դրանք պահպանելու և վերարտադրելու դեմ**<sup>279</sup>:

Որոշ տվյալներ հատուկ պաշտպանված են Եվրոպական Միության տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգով (GDPR), և լրագրողները պետք է չափազանց զգույշ լինեն, եթե մտադիր են այդ տեսակի տվյալներ մշակել: Հատուկ կատեգորիայի տվյալները ներառում են ռասայական կամ էթնիկ ծագումը բացահայտող տվյալները, քաղաքական կարծիքները, կրոնական

<sup>276</sup> Տե՛ս Բեդատն ընդդեմ Շվեյցարիայի (Bédat v. Switzerland) գործով 2016 թվականի մարտի 29-ի վճիռը, գանգատ թիվ 56925/08, կետ 74:

<sup>277</sup> Տե՛ս Աքսել Սփրինգեր ԱԳ-ն ընդդեմ Գերմանիայի (Axel Springer AG v. Germany) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը (ՄՊ), գանգատ թիվ 39954/08, կետեր 90-91:

<sup>278</sup> Տե՛ս Մոսլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Mosley v. United Kingdom) գործով 2011 թվականի սեպտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 48009/08, կետեր 129-130:

<sup>279</sup> Տե՛ս Ֆոն Հաննովերն ընդդեմ Գերմանիայի (Von Hannover v. Germany) գործով 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, գանգատներ թիվ 40660/08 և 60641/08, կետ 96: Ռեկլոսը և Դավուրլիսն ընդդեմ Հունաստանի (Reklos and Davourlis v. Greece) գործով 2009 թվականի ապրիլի 15-ի վճիռը, գանգատ թիվ 1234/05, կետ 40:

կամ փիլիսոփայական համոզմունքները, արհմիություններին անդամությունը, ինչպես նաև ֆիզիկական անձի նույնականացման նպատակով գենետիկ և կենսաազատական տվյալների մշակումը, ֆիզիկական անձի առողջության կամ սեռական կյանքի կամ սեռական կողմնորոշման վերաբերյալ տվյալները: **Տվյալների հատուկ կատեգորիա են կազմում նաև անձի առողջության վերաբերյալ տվյալները, որոնք լրագրողական նպատակներով մշակելու վերաբերյալ Եվրոպական դատարանի դատական պրակտիկան ևս ուսումնասիրվել է: Այսպես.**

*Ֆյուրսթ-Պֆեյֆերն ընդդեմ Ավստրիայի* գործի փաստերի համաձայն՝ 2008 թվականի դեկտեմբեր ամսին տարածաշրջանային լրատվական կայքում հրապարակվել է հոդված, որը վերաբերել է դատական գործընթացների համար գրանցված հոգեբան-փորձագետին: Հոդվածում, մասնավորապես, նշվել է, որ հոգեբան-փորձագետը հոգեբանական այնպիսի խնդիրներ է ունեցել, ինչպիսիք են, օրինակ՝ տրամադրության փոփոխությունները կամ խուճապային հարձակումները: Չնայած այս փաստին՝ հոգեբանը երկար տարիներ աշխատել է որպես դատարանի կողմից նշանակվող փորձագետ: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ հոգեբան-փորձագետի հոգեբանական առողջության վիճակի վերաբերյալ լուրջ բանավեճը, որն առաջացել է հիմնավոր կասկածների հիման վրա, պետք է դիտվի որպես ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող բանավեճ, քանի որ դատավարությանը ներգրավված փորձագետից պահանջվում է համապատասխանել ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության չափանիշներին<sup>280</sup>:

*Արմոնիեն ընդդեմ Լիտվայի* գործի փաստական հանգամանքների համաձայն՝ Լիտվայի ազգային ամենամեծ օրաթերթը մանրամասներ է հրապարակել ֆիզիկական անձի առողջական վիճակի վերաբերյալ, որում, ի թիվս այլ տեղեկությունների՝ նշվել է, որ նա ՄԻԱՎ վարակակիր է և ՁԻԱ վարակակիր այլ կնոջից 2 երեխա ունի: Ամուսնու գաղտնիության իրավունքը խախտելու համար նրա կինը՝ Դիմողը, ոչ նյութական վնասի հատուցման հայց է ներկայացրել դատարան, սակայն արդյունքի չի հասել:

Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ նման տեղեկություններ պարունակող հոդվածի հրապարակումն անձնական բնույթ է կրում և ընկնում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո: Դատարանը գտել է, որ ամուսնու առողջական վիճակի մասին տեղեկությունները հրապարակայնորեն բացահայտելը և նրա լրիվ անունը, ազգանունը և բնակության վայրը նշելը չի բխում հանրային շահից: Ըստ Եվրոպական դատարանի՝ հաստատելով դիմողի ամուսնու հիվանդության մասին տեղեկությունները՝ ՁԻԱՀ կենտրոնի աշխատակիցները կարող էին բացասաբար անդրադառնալ այլ ՄԻԱՎ վարակակիրների՝ կամավոր հետազոտության ենթարկվելու պատրաստակամության վրա: Դատարանը կարևորել է նաև այն հանգամանքը, որ ընտանիքն ապրել է ոչ թե քաղաքում, այլ գյուղում, որը մեծացնում է հրապարակման հավանական ազդեցությունն այն առումով, որ դիմողի ամուսնու հիվանդության մասին նրա հարևանները կարող են տեղեկանալ՝ այդպիսով հանգեցնելով հանրային նվաստացման և գյուղական սոցիալական

<sup>280</sup> Տե՛ս *Ֆյուրսթ-Պֆեյֆերն ընդդեմ Ավստրիայի* (*Fürst-Pfeifer v. Austria*) գործով 2016 թվականի օգոստոսի 17-ի վճիռը, գանգատ թիվ 33677/10 և 52340/10:

կյանքից հեռացման: Նշված գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում<sup>281</sup>:

*Միտկուսն ընդդեմ Լատվիայի* գործի փաստական հանգամանքների համաձայն՝ լատվիական լրագրերից մեկը հրապարակել է հոդված «Բանտի բժիշկները մեղադրվում են ՁԻԱՀ-ով վարակելու մեջ» վերտառությամբ, որտեղ նշվել է, որ բանտարկյալ Անդրիս Մ.-ն Կենտրոնական բանտի դեմ բողոք է ներկայացրել՝ նշելով, որ նա բժշկի սխալի պատճառով բանտում ՁԻԱՀ-ով և հեպատիտ C-ով է վարակվել: Հոդվածը նաև ներառել է դիմողի լուսանկարը, որտեղ նրա դիմագծերը հստակ ճանաչելի են եղել: Դիմողը հայց է ներկայացրել այդ հոդվածը հրատարակող լրատվական ընկերության դեմ՝ ոչ նյութական վնասի հատուցում պահանջելով նշված հոդվածի հրապարակման արդյունքում իրեն բարոյական և հոգեբանական վնաս հասցնելու համար:

Հայցը հիմնված է եղել անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ օրենսդրության դրույթների ենթադրյալ խախտման հիմքով: Հայցը բավարարվել է, ներպետական դատարաններն արձանագրել են, որ խախտվել են դիմողի իրավունքները, սակայն ոչ նյութական վնասի հատուցման պահանջը չի բավարարվել՝ պատճառաբանությամբ, որ բավարար հիմնավորումներ ներկայացված չեն եղել: Նույն հիմքով էլ Եվրոպական դատարանը դիմումն ընդունելի չի համարել<sup>282</sup>:

## **2. Անձնական տվյալների պաշտպանությունը պետական համակարգի գործունեության մեջ. պետական մարմնի ներսում և այլ մարմինների հետ հարաբերություններում անձնական տվյալների մշակման, օգտագործման ու փոխանցման կանոնները**

Պետական մարմնի ներսում և պետական այլ մարմինների հետ հարաբերություններում արդեն մշակված անձնական տվյալների փոխանցումը զգալիորեն կրճատում է պահանջվող տվյալները փնտրելու, գտնելու և դրանք մշակելու համար անհրաժեշտ ժամանակահատվածը՝ միաժամանակ հեշտացնելով և արագացնելով որոշումների կայացման գործընթացը, վարչական մարմնի բեռը, ինչու ոչ՝ նաև զարգացնելով պետության մատուցած ծառայությունների որակը և արդյունավետությունը: Մշակված անձնական տվյալների փոխանցումը, սակայն, պետք է կազմակերպվի այնպես, որ չխախտվեն անձնական տվյալների մշակման և փոխանցման վերաբերյալ միջազգայնորեն ընդունված և ճանաչված նորմերը:

Այսպես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր

<sup>281</sup> Տե՛ս Արմոնիեն ընդդեմ Լիտվայի (*Armonienė v. Lithuania*) գործով 2009 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 36919/02:

<sup>282</sup> Տե՛ս Միտկուսն ընդդեմ Լատվիայի (*Mitkus v. Latvia*) գործով 2013 թվականի հունվարի 2-ի վճիռը, գանգատ թիվ 7259/03:

անձնական ու ընտանեկան կյանքի, (...) նկատմամբ հարգանքի իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Պետական համակարգի մարմինների կողմից զործունեության իրականացման ընթացքում մշակված անձնական տվյալները հանրայնացնելու կամ այլ անձանց փոխանցելու հարցին անդրադարձ է կատարվել Եվրոպական խորհրդարանի և Եվրոպայի Խորհրդի 2016 թվականի ապրիլի 27-ի «Ֆիզիկական անձանց անձնական տվյալների մշակման պաշտպանության և այդ տվյալների ազատ տեղաշարժի, ինչպես նաև թիվ 95/46/EC Դիրեկտիվն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 2016/679 կարգավորմամբ, որի 86-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանության կամ պետական մարմնի կամ հանրային շահերից բխող առաջադրանքներ կատարող մասնավոր մարմնի կողմից պահվող պաշտոնական փաստաթղթերում առկա անձնական տվյալները կարող են բացահայտվել իշխանության կամ մարմնի կողմից Միության կամ անդամ երկրների օրենքին համապատասխան՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ պաշտոնական փաստաթղթերին հասարակության հասանելիությունը ներդաշնակեցնելու համար՝ համաձայն նույն Կանոնակարգի<sup>283</sup>:

Պետական համակարգի մարմինների կողմից մշակված անձնական տվյալները երրորդ անձանց հրապարակելու վերաբերյալ առավել թիրախային երաշխիքներ են սահմանվել Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի 1991 թվականի սեպտեմբերի 9-ի «Պետական մարմինների կողմից պահվող անձնական տվյալների հրապարակումը երրորդ անձանց» վերտառությամբ թիվ R(91)10 հանձնարարականով, որի 2.1-րդ կետի համաձայն՝ պետական մարմինների կողմից պահվող անձնական տվյալների կամ անձնական տվյալներ պարունակող ֆայլերի հրապարակումը երրորդ անձանց էլեկտրոնային եղանակով պետք է ուղեկցվի երաշխիքներով, որոնք նախատեսված են ապահովելու, որ **անձնական տվյալների սուբյեկտի անվտանգությանն անհարկի վնաս չհասցվի**: Մասնավորապես, անձնական տվյալների կամ անձնական տվյալ պարունակող ֆայլերի փոխանցումը երրորդ անձանց չպետք է իրականացվի, քանի դեռ՝

- ա) հատուկ օրենքը դա թույլ չի տալիս, կամ**
- բ) իրավական կարգավորումներին համապատասխան՝ հանրությունը չունի հասանելիություն պետական հատվածի տեղեկատվությանը, կամ**
- գ) տվյալների հրապարակումը չի համապատասխանում տվյալների պաշտպանության վերաբերյալ ներպետական օրենսդրությանը, կամ**

<sup>283</sup>Հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32016R0679&from=EN#d1e1404-1-1> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

**դ) անձնական տվյալների սուբյեկտը չի տվել իր ազատ և իրազեկված համաձայնությունը<sup>284</sup>:**

Նույն հանձնարարականի 2.2-րդ կետի համաձայն՝ **քանի դեռ ներպետական օրենսդրությունը համապատասխան երաշխիքներ չի ապահովում անձնական տվյալների սուբյեկտների համար, անձնական տվյալները կամ անձնական տվյալներ պարունակող ֆայլերը չեն կարող հրապարակվել երրորդ անձանց այդ տվյալների հավաքագրման նպատակներից չբխող նպատակներով:**

Պետական համակարգի մարմինների կողմից հավաքագրված և մշակված անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ անդրադարձ կատարվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային վճիռներում: Մասնավորապես, Եվրոպական դատարանի զարգացրած իրավաբանության համաձայն՝ ներքին օրենսդրությունը պետք է ապահովի համապատասխան երաշխիքներ՝ կանխելու համար այնպիսի տվյալների ցանկացած հրապարակումը կամ բացահայտումը, որոնք չեն համապատասխանում Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքներին<sup>285</sup>: Չնայած Կոնվենցիայի 8-րդ հոդվածի հիմնական նպատակն անհատներին պետական իշխանության կամայական միջամտությունից պաշտպանելն է, սակայն այն կարող է նաև պետության վրա դնել որոշակի դրական պարտավորություններ՝ երաշխավորելու 8-րդ հոդվածով պաշտպանված իրավունքների նկատմամբ արդյունավետ հարգանքը<sup>286</sup>: **Ավելին, այս պարտականությունը կարող է ներառել հատուկ միջոցների՝ ներառյալ անձնական կյանքը հարգելու իրավունքը պաշտպանելու արդյունավետ և ընդունելի միջոցների ընդունման պարտավորություն<sup>287</sup>:**

Ըստ Եվրոպական դատարանի՝ պաշտոնատար անձանց կողմից անձին վերաբերող տեղեկությունների հավաքումն ու դրանց օգտագործումը, ինչպես նաև այդ տեղեկատվությունը հերքելու հնարավորության մերժումը պետք է դիտարկել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված՝ անձնական կյանքի իրավունքի նկատմամբ միջամտություն՝ անկախ այն հանգամանքից, այդ տեղեկությունները հետագայում օգտագործվել են, թե ոչ<sup>288</sup>:

Անձնական կյանքի վերաբերյալ հարց կարող է առաջանալ, երբ համակարգված կամ մշտական ձայնագրառման արդյունքում (record) որոշակի տեղեկատվություն ստացվում է հանրային դոմեյնից:

284

Հասանելի

է

<https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016804c1486>

հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>285</sup> Տե՛ս Զ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի (Z. v. Finland) գործով 1997 թվականի փետրվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 22009/93, կետ 95:

<sup>286</sup> Տե՛ս Բարբուլեսկուն ընդդեմ Ռումինիայի (Bărbulescu v. Romania) գործով 2017 թվականի սեպտեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 61496/08, կետ 108: Համալայնենն ընդդեմ Ֆինլանդիայի (Hämäläinen v. Finland) գործով 2014 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 37359/09, կետ 62:

<sup>287</sup> Տե՛ս Համալայնենն ընդդեմ Ֆինլանդիայի (Hämäläinen v. Finland) գործով 2014 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 37359/09, կետ 63:

<sup>288</sup> Տե՛ս Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի (Rotaru v. Romania) գործով 2000 թվականի մայիսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28341/95, կետ 46: Ամանն ընդդեմ Շվեյցարիայի (Amann v. Switzerland) գործով 2000 թվականի փետրվարի 16-ի վճիռը, գանգատ թիվ 27798/95, կետ 69:



Դա այն պատճառով է, որ **անվտանգության ծառայությունների կողմից որոշակի անձի վերաբերյալ հավաքագրված տվյալներն ընկնում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածի ներքո, անգամ եթե տեղեկատվությունը չի հավաքագրվել որևէ քողարկված կամ միջամտող եղանակով**<sup>289</sup>։

Պետական համակարգի մարմիններում տվյալների հրապարակման և երրորդ անձանց փոխանցման հարցի առնչությամբ ուսումնասիրվել է նաև արտասահմանյան երկրների օրինակը։ Մասնավորապես, Իռլանդիայի տվյալների պաշտպանության պետական հանձնաժողովի<sup>290</sup> «Պետական համակարգում տվյալների հրապարակման մասին» զեկույցի համաձայն՝ պետական մարմինն անձի վերաբերյալ տեղեկատվություն հրապարակելիս պետք է պարզի՝

- թե տեղեկատվության ստացումն ինչ նպատակի է ծառայելու,
- թե հնարավոր է արդյոք հասնել հայցվող նպատակին առանց անձի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման կամ այդ տեղեկատվությունն անանուն եղանակով հրապարակելու միջոցով,

- տեղեկատվության նվազագույն շրջանակը, որն անհրաժեշտ է հայցող նպատակին հասնելու համար,

- ցանկացած ռիսկ, որին կարող է հանգեցնել տեղեկատվության հրապարակումը,
- թե երբ և ինչ հաճախականությամբ պետք է տեղեկատվությունը հրապարակվի<sup>291</sup>։

Նույն զեկույցի համաձայն՝ տվյալների փոխանակման գործընթացին ներգրավված պետական մարմինը պետք է ունենա սեփական պարտականությունները և պատասխանատվության միջոցներն այն անձնական տվյալների առնչությամբ, որոնք ինքը մշակում է<sup>292</sup>։

«Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին» կոնվենցիայի խորհրդակցական կոմիտեի 2016 թվականի օգոստոսի 19-ի «Ուղևորների անուններ պարունակող գրառումների մշակման վերաբերյալ տվյալների պաշտպանության հետևանքների վերաբերյալ» կարծիքի համաձայն՝ պետական մարմինները և տեղական իշխանությունները, որոնք հասանելիություն ունեն քաղաքացիներին վերաբերող գաղտնի տեղեկություններին, կարող են գաղտնիություն պահպանելու պարտականություն կրել։ Պետական մարմինների կողմից պահվող տեղեկատվության նկատմամբ կիրառելի են այն նույն սկզբունքները,

<sup>289</sup> Տե՛ս Պ. Գ.-ն և Ջ. Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (P.G. and J.H. v. United Kingdom) գործով 2001 թվականի դեկտեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 44787/98, կետ 57։

<sup>290</sup> Տվյալների պաշտպանության հանձնաժողովն (Data Protection Commission) իռլանդական ազգային անկախ մարմին է՝ պատասխանատու Եվրոպական միությունում անհատների՝ իրենց անձնական տվյալների պաշտպանության հիմնարար իրավունքի ապահովման համար։ ՏՊՀ-ն Եվրոպական Միության տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգը (GDPR) վերահսկողական մարմին է Իռլանդիայում։

<sup>291</sup> Հասանելի է <https://www.dataprotection.ie/sites/default/files/uploads/2019-05/190418%20Guidance%20on%20Data%20Sharing%20in%20the%20Public%20Sector.pdf> հղումով, էջ 4, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ։

<sup>292</sup> Հասանելի է <https://www.dataprotection.ie/sites/default/files/uploads/2019-05/190418%20Guidance%20on%20Data%20Sharing%20in%20the%20Public%20Sector.pdf> հղումով, էջ 9, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ։

որոնք գործում են ֆիզիկական և իրավաբանական անձանց համար: Դրանից հետևում է, որ պետական մարմինները չեն կարող իրենց հայտնի դարձած անձնական տեղեկատվության հետ վարվել ինչպես ցանկանան՝ առանց գաղտնիության պահպանման վերաբերյալ օրենսդրությունը խախտելու: Նույն կարծիքի համաձայն՝ **պետական տարբեր գերատեսչություններ դիտարկվում են որպես առանձին իրավաբանական անձինք, ինչը նշանակում է, որ տեղեկատվությունը չի կարող ազատորեն հրապարակվել պետական տարբեր գերատեսչությունների միջև՝ առանց հաշվի առնելու գաղտնիության խախտման վերաբերյալ գործող օրենքի կարգավորումները**<sup>293</sup>:

Ներպետական մակարդակում, պետական մարմինների համակարգում անձնական տվյալների պաշտպանության առումով գործնական ուղենշային նշանակություն ունի ՀՀ ԱՆ անձնական տվյալների գործակալության «Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ուղեցույցը»<sup>294</sup>:

Պետական համակարգի մի շարք մարմինների պաշտոնական կայքերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իբրև այդ մարմինների կողմից անձնական տվյալների մշակման կանոններ՝ հղում է կատարվում Անձնական տվյալների գործակալության այդ ուղեցույցին: Այդպիսիք են, օրինակ, Արտակարգ իրավիճակների նախարարությունը<sup>295</sup>, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը<sup>296</sup>, Ազգային անվտանգության ծառայությունը<sup>297</sup>, Ոստիկանությունը<sup>298</sup>, Ֆինանսների նախարարությունը<sup>299</sup>, Շրջակա միջավայրի նախարարությունը<sup>300</sup>, Արտաքին գործերի նախարարությունը<sup>301</sup>, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը<sup>302</sup>, Պետական վերահսկողական ծառայությունը<sup>303</sup>, տեսչական

<sup>293</sup> «Պետական մարմինների կողմից տվյալների փոխանակումը»: Ուղեցույց, 2003 թ., հասանելի է [https://www.mentalhealthlaw.co.uk/media/Data\\_sharing\\_legal\\_guidance.pdf](https://www.mentalhealthlaw.co.uk/media/Data_sharing_legal_guidance.pdf) հղումով, էջ 12, կետ 4, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>294</sup> Հասանելի է <https://www.police.am/resources/police/uploads/files/protocols/4014f31c02d42c943971aec77e636e6f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>295</sup> Հասանելի է <http://www.mes.am/files/docs/3434.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>296</sup> Հասանելի է [http://www.mtad.am/u\\_files/file/ME/Uxecuyc%20cucumner%20\(4\).pdf](http://www.mtad.am/u_files/file/ME/Uxecuyc%20cucumner%20(4).pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>297</sup> Հասանելի է <https://www.sns.am/hy/%D6%85%D6%80%D5%A5%D5%B6%D5%BD%D5%A4%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>298</sup> Հասանելի է <https://www.police.am/resources/police/uploads/files/protocols/4014f31c02d42c943971aec77e636e6f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>299</sup> Հասանելի է <https://minfin.am/website/images/files/Uxecuyc%20cucumner.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>300</sup> Հասանելի է <https://mnp.studio-one.am/storage/files/uxecuyc-cucumner.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>301</sup> Հասանելի է [https://www.mfa.am/filemanager/andznakan%20tyval/andznakan\\_tvalneri.pdf](https://www.mfa.am/filemanager/andznakan%20tyval/andznakan_tvalneri.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>302</sup> Հասանելի է <https://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/Uxecuyc-cucumner.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>303</sup> Հասանելի է <https://www.supervision.am/wp-content/uploads/2020/01/Uxecuyc-cucumner.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

մարմինները<sup>304</sup>, մի շարք մարզպետարաններ<sup>305</sup>: Արձանագրվել է նաև պրակտիկա, երբ «Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման ուղեցույցի» բովանդակությունը տեղայնացվել և տվյալ պետական մարմնի ղեկավարի ընդունած իրավական ակտով պարտադիր իրավաբանական ուժ է ստացել<sup>306</sup>:

Հարկ է նկատել, որ ուղեցույցը նախանշում է անձնական տվյալների մշակման համաչափության, տեխնիկական անվտանգության ապահովման ընդհանուր կանոնները, անձնական տվյալի գաղտնիության, տվյալ պետական մարմնի պատասխանատու նշանակելու հարցերը: Այլ պետական մարմիններին փոխանցելու կանոնների առնչությամբ ուղեցույցը սահմանում է, որ *պետական մարմնի տնօրինության տակ գտնվող անձնական տվյալներն այլ պետական մարմիններին կարող են փոխանցվել միայն օրենքներով ուղղակիորեն նախատեսված դեպքերում*:

### **3. Մարդու իրավունքների պաշտպանի հարցմամբ պետական իրավասու մարմինների կողմից անձնական տվյալների փոխանցման գործնական և օրենսդրական հարցերը**

Անձնական տվյալների պաշտպանության հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեության շրջանակներում երկակի նշանակություն ունեն. մի կողմից անձնական տվյալների պաշտպանության իրավունքը՝ որպես Սահմանադրությամբ երաշխավորված իրավունք, ներառվում է Օմբուդսմանի ընդհանուր մանդատի շրջանակներում, մյուս կողմից էլ Օմբուդսմանի աշխատակազմի ամենօրյա գործունեությունն առնչվում է անհատական բողոքների քննարկման հետ: Ուստի, ՄԻՊ աշխատակազմը մշտապես առնչվում է անձնական տվյալների մշակման գործընթացի հետ՝ կրելով անձնական տվյալների պաշտպանության կանոնների պահպանման պարտականություն: Հետևաբար, անձնական տվյալների պաշտպանության հարցերը գործնական նշանակություն են ձեռք բերում այն տեսանկյունից, որ այդպիսի տվյալների մշակման սկզբունքներն ու կանոնները պետք է պահպանվեն հենց Օմբուդսմանի հաստատության կողմից:

<sup>304</sup> Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին - <https://snund.am/wp-content/uploads/2020/01/Uxecucyc-cucumner-4.pdf>, Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին - <https://www.hlib.am/guide/>, Շուկայի վերահսկողության տեսչական մարմին - <https://www.msib.am/hy/guide>

<sup>305</sup> Օրինակ՝ Արագածոտնի մարզպետարան - <http://aragatsotn.mtad.am/files/docs/50231.pdf>, Շիրակի մարզպետարան - <http://shirak.mtad.am/uxecucyc/>, Այունիքի մարզպետարան - <http://syunik.mtad.am/files/docs/42396.pdf>, Գեղարքունիքի մարզպետարան - <http://geggharkunik.mtad.am/files/legislation/41913.pdf>, Վայոց ձորի մարզպետարան - <http://vdzor.mtad.am/files/docs/43322.pdf>

<sup>306</sup> Օրինակ՝ Պետական եկամուտների կոմիտեն - <https://www.petekamutner.am/si.aspx?itn=asInfoRespGuidelines> Ազգային վիճակագրական կոմիտեն - <https://armstat.am/file/doc/99517523.pdf>, Կոտայքի մարզպետարանը - <http://kotayk.mtad.am/files/docs/50400.pdf>, Արմավիրի մարզպետարանը - <http://armavir.mtad.am/files/docs/49812.pdf>, Տավուշի մարզպետարանը - <http://tavush.mtad.am/files/docs/42502.pdf>

Այսպես, Օմբուդսմանական հաստատությունների ներսում անձնական տվյալներ կազմող տեղեկությունների շրջանառության և դրանց պաշտպանության առնչությամբ ուշագրավ է հատկապես Եվրոպական օմբուդսմանի հաստատության օրինակի ուսումնասիրությունը: Մասնավորապես, **հաստատության ողջ անձնակազմը զգուշացված է խիստ գաղտնիություն պահելու իրենց պարտականության մասին, բացի այդ՝ նրանք անցնում են համապատասխան վերապատրաստումներ և ստանում թարմացված տեղեկատվություն պրակտիկայի և կանոնների վերաբերյալ:** Օմբուդսմանի հաստատության յուրաքանչյուր անդամ անմիջական պատասխանատվություն է կրում իրեն վստահված աշխատանքային փաստաթղթերը պահպանելու համար այնպիսի եղանակով, որով հնարավոր կլինի երաշխավորել դրանցում առկա անձնական տվյալների անվտանգությունը: Դիմումները հիմնականում ստացվում են էլեկտրոնային եղանակով, ինչը կրճատում է դիմումների տպագիր օրինակների ականա շրջանառությունը: Արխիվում գտնվող դիմումները պահվում են կողպված, առանձին արխիվի սենյակներում և ըստ անհրաժեշտության՝ նաև չհրկիզվող պահարաններում<sup>307</sup>:

Իսնդրի կապակցությամբ հատկանշական է հատկապես Օմբուդսմանի միջազգային հաստատության (IOI) 2017 թվականի հունիսի 1-ի «Օմբուդսմանական հաստատությունների զարգացման և բարեփոխման մասին» ուղեցույցը, որի համաձայն՝ **օմբուդսմանական հաստատությունները պետք է իրավունք ունենան այլոց հետ համագործակցելու և կիսվելու տեղեկատվությամբ, որտեղ դա անհրաժեշտ է՝ հաշվի առնելով գաղտնիության պայմանները:** Դա հատկապես կարևոր է, երբ Օմբուդսմանն աշխատում է մշտադիտարկող կամ կարգավորող այլ մարմինների կողքին, որոնց գործունեությունն առնչվում է նույն հանրային ծառայություններ մատուցողներին<sup>308</sup>:

Պետական մարմինների գործունեության շրջանակներում անձնական տվյալների պաշտպանության հետ կապված հարցերն առանձնահատուկ համատեքստ են ստանում, երբ խոսքը վերաբերում է անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների փոխանցմանը Մարդու իրավունքների պաշտպանին:

Հարցը գործնական նշանակություն ունի այն բանի հաշվառմամբ, որ Պաշտպանի գործունեության ընթացքում արձանագրվել է դեպք, երբ Պաշտպանին հասցեագրված բողոքի կապակցությամբ դիմումատուի առողջական վիճակին վերաբերող տեղեկությունների, մասնավորապես՝ վերջինիս հիվանդության պատմագրի, ինչպես նաև էպիկրիզի տրամադրումը սկզբնապես Առողջապահության նախարարությունը մերժել է: Ընդ որում, իբրև պահանջվող փաստաթղթերի տրամադրումը մերժելու հիմք՝ Նախարարությունը վկայակոչել է առանց անձի համաձայնության՝ անձնական տվյալների փոխանցման օրենսդրական արգելքը: Մասնավորապես, Առողջապահության նախարարությունից ստացված պատասխան-գրությամբ նշվել է, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ

<sup>307</sup> Հասանելի է [https://www.ombudsman.europa.eu/en/document/en/70850#\\_ftn1](https://www.ombudsman.europa.eu/en/document/en/70850#_ftn1) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>308</sup> Հասանելի է <https://www.theioi.org/publications/ioi-best-practice-papers> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կետից բխում է, որ անձի առողջական վիճակին վերաբերող տեղեկությունները հանդիսանում են հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ:

Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ տվյալների սուբյեկտը (այն ֆիզիկական անձը, որին վերաբերում են անձնական տվյալները) իրավունք ունի ստանալու տեղեկություններ իր անձնական տվյալների (...) մասին, (...) ծանոթանալու իր անձնական տվյալներին (...): Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ տվյալների սուբյեկտին անձնական տվյալները տրամադրվում են տվյալների սուբյեկտի կամ լիազորագրով հանդես եկող ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի գրավոր հարցման հիման վրա: Օրենսդրական վկայակոչված կարգավորումների վերլուծության արդյունքում Նախարարությունը հանգել է եզրահանգման, որ Պաշտպանին դիմած անձի էպիկրիզի պատճենը կարող է տրամադրվել միայն վերջինիս՝ «Վնասվածքաբանության և Օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ ներկայանալու դեպքում:

**Այս օրինակը ցույց է տալիս, որ պետական մարմինների համակարգում առկա է մի կողմից՝ անձնական տվյալների պաշտպանության ներպետական իրավական կարգավորումների, մյուս կողմից՝ Մարդու իրավունքների պաշտպանի իրավական կարգավիճակի, վերջինիս՝ տեղեկություններ պահանջելու և ստանալու իրավասության բովանդակության ճիշտ ընկալման ու կիրառման հարց:**

Ըստ այդմ էլ, գործնական կարևորություն ունեն Օմբուդսմանական գործունեության շրջանակներում անձնական տվյալների մշակմանն առնչվող իրավակարգավորումների ու երաշխիքների բացահայտումը: Այսպես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի դրույթները, որոնք վերաբերում են Պաշտպանի կողմից տեղեկություններ պահանջելու և ստանալու իրավասությանը, այդ թվում՝ անձնական տվյալներին, չպետք է դիտարկվել առանձին կամ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ հակադրության մեջ: Բանն այն է, որ ըստ վերոնշյալ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ անձնական տվյալները երրորդ անձանց փոխանցելու հիմնական պայմանն անձնական տվյալների սուբյեկտի համաձայնությունն է: Դրա բացակայության դեպքում, ըստ հոդվածի 2-րդ մասի տրամաբանության, հատուկ կատեգորիայի տվյալների փոխանցումը երրորդ անձանց իրավաչափ է, եթե այն՝

1. ուղղակիորեն նախատեսված է օրենքով և ունի բավարար պաշտպանության մակարդակ.
2. օրենքով նախատեսված բացառիկ դեպքերում փոխանցվել է տվյալների սուբյեկտի կյանքի, առողջության կամ ազատության պաշտպանության համար:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Պաշտպանին ներկայացված բողոքը համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն և հիմք է անհրաժեշտ անձնական տվյալները Պաշտպանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու համար:

Սա նշանակում է, որ **անձը Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած բողոքով տալիս է համաձայնություն իրավասու մարմիններից ստանալու բարձրացված խնդիրների քննարկման համար անհրաժեշտ՝ իրեն վերաբերող անձնական տվյալներ: Ավելին, անձի**

**համաձայնությունն ամրագրող սահմանադրական օրենքի այս կարգավորումից զատ, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության իրավական հիմքերն անգամ ապահովում են անձի համաձայնության բացակայության պահանջը հաղթահարող լրացուցիչ երաշխիքները, ինչպիսիք են՝ պաշտպանության բավարար մակարդակն ու իրավաչափ նպատակը:**

Այսպես, Սահմանադրության 52-րդ հոդվածով ամրագրված իրավունքի հետ կապված կարևոր է նկատի ունենալ, որ **անձի իրավունքների ապահովմանն ուղղված կարգավորումները որևէ կերպ չեն կարող մեկնաբանվել և կիրառվել այնպես, որ անձի մի իրավունքը, տվյալ դեպքում՝ անձնական տվյալների պաշտպանությունը, հակադրվի և խոչընդոտի մեկ այլ իրավունքի՝ Պաշտպանի աջակցությունը ստանալու սահմանադրական իրավունքին և իր խախտված իրավունքների վերականգնմանը:** Ուստի, ստացվում է, որ հայցվող բժշկական փաստաթղթերի տրամադրման մերժման հիմքում ընկած անձնական տվյալների պաշտպանության իրավունքն այլևս ինքնանպատակ է, քանզի կոնկրետ պայմաններում այն երաշխիքից վեր է ածվում իրավունքի պաշտպանության սահմանափակման:

Պաշտպանի գործունեության սկզբունքները, բողոքի քննարկման ընթացակարգերը, տեղեկություններ ստանալու և պահանջելու իրավասությունը պետք է դիտարկվեն իբրև Պաշտպանի անխոչընդոտ գործունեության երաշխիքներ և դրանով հանդերձ՝ Պաշտպանի աջակցությունն ստանալու անձի բացարձակ իրավունքի իրացման նախադրյալներ:

*Ուստի, հաշվի առնելով, որ Մարդու իրավունքների պաշտպանի և վերջինիս աշխատակազմի գործունեության համար անհրաժեշտ անձնական տվյալների հասանելիությունն ամրագրված է օրենքով՝ միանշանակ է, որ Պաշտպանի կողմից հայցվող տեղեկությունների տրամադրումը, եթե անգամ դրանք պարունակում են (հատուկ կատեգորիայի) անձնական տվյալներ, չի կարող մերժվել՝ անձնական տվյալների պաշտպանության հիմնավորմամբ:*

#### **4. Անձնական տվյալների պաշտպանության հարաբերակցությունը կարծիքի արտահայտման իրավունքի հետ**

Եվրոպական միության Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (GDPR) 85-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պետք է համաձայնեցնեն անձնական տվյալների պաշտպանության իրավունքը կարծիքի արտահայտման և տեղեկատվության ազատության հետ՝ ներառյալ անձնական տվյալների մշակումը լրագրողական, ակադեմիական, գեղարվեստական կամ գրական նպատակներով մշակումը: Հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ լրագրողական նպատակներով տվյալների մշակման կամ ակադեմիական, գեղարվեստական կամ գրական արտահայտման նպատակներով անդամ պետությունները պարտավոր են նախատեսել բացառություններ կամ վերապահումներ անձնական տվյալների պաշտպանության կանոնակարգի մի շարք դրույթներից, ինչպիսիք են՝ սկզբունքները, անձնական տվյալների սուբյեկտի

իրավունքները, անկախ վերահսկողական մարմինները, համագործակցությունն ու շարունակականությունը, տվյալների մշակման առանձնահատուկ իրավիճակներ<sup>309</sup>:

Կանոնակարգի վերոնշյալ դրույթով սահմանված՝ լրագրողական գործունեությամբ պայմանավորված բացառությունները միջազգային իրավաբանության մեջ հայտնի են որպես **«լրագրողական բացառություն» (journalistic exemption):**

Թեև կանոնակարգն այս բացառության կիրառության շրջանակների հետագա մանրամասնեցումն ու կոնկրետ օրենսդրական լուծումների ամրագրումը թողել է անդամ պետությունների հայեցողությանը, այդուհանդերձ այն կողմնորոշիչ է այն առումով, որ այդպիսով նախանշում է լրագրողական գործունեության՝ իբրև կարծիքի արտահայտման ազատության ու մամուլի՝ որպես հանրային վերահսկողության կարևորագույն օղակի գործունեության ապահովման համար անձնական տվյալների ընդհանուր կանոնների չկիրառելիությունը:

Այս տեսանկյունից առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով, այնպես էլ արտասահմանյան օրենսդրական փորձի համեմատական դիտարկմամբ վեր հանված երկու մրցակցող իրավունքների՝ կարծիքի արտահայտման ազատության և անձնական տվյալների պաշտպանության հավասարակշռման բանաձևային լուծումները: Առավել կոնկրետ, կարևոր է վեր հանել լրագրողական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված կամ այսպես կոչված «լրագրողական բացառության» շրջանակներում անձնական տվյալների պաշտպանությանն առնչվող հարցերը:

Միջազգային իրավաբանությամբ վեր հանված իրավական կանոններն ու ուղենիշները կարող են գործնական նշանակություն ունենալ ներպետական համատեքստում ևս՝ այն բանի հաշվառմամբ, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում քննարկվող բացառությունն ուժը կորցրած ճանաչվելուց հետո որևէ հաջորդիվ հստակեցում, կանոնակարգում չի նախատեսվել:

Ներպետական մակարդակում 2016 թվականի դեկտեմբերի 16-ին «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում կատարված փոփոխությամբ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչվեց, որով սահմանվում էր, որ անձնական տվյալներ մշակելու սահմանափակումները չեն տարածվում բացառապես լրագրության, գրական և գեղարվեստական նպատակներով մշակվող անձնական տվյալների վրա: Դրույթն ուժը կորցրած ճանաչելով՝ անձնական տվյալներ մշակելու, հետևաբար նաև տարածելու սահմանափակումներն օրենսդիրը տարածել է նաև լրագրության վրա<sup>310</sup>: **Այլ կերպ ասած, լրագրողի մասնագիտական գործունեության համատեքստում անձնական տվյալների պաշտպանության հարցերի օրենսդրական հատուկ կանոնակարգումներ առկա չեն, ինչը նշանակում է, որ լրագրողների և լրագրողական գործունեության վրա տարածվում են Օրենքի ընդհանուր կարգավորումները:**

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքում 2016 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններից հետո, փաստորեն, այդ օրենքը հակասության մեջ է գտնվում Եվրոպական միության Տվյալների պաշտպանության ընդհանուր կանոնակարգի (GDPR) 85-րդ

<sup>309</sup> Հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32016R0679&from=EN> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>310</sup> Հասանելի է [http://www.parliament.am/draft\\_history.php?id=8469](http://www.parliament.am/draft_history.php?id=8469) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հողվածի 2-րդ մասով ամրագրված կարգավորման հետ, որն անդամ պետություններին պարտավորեցնում է լրագրողական նպատակներով տվյալների մշակման համար նախատեսել բացառություններ կամ վերապահումներ անձնական տվյալների պաշտպանության կանոնակարգի մի շարք դրույթներից, ինչպիսիք են՝ սկզբունքները, անձնական տվյալների սուբյեկտի իրավունքները, անկախ վերահսկողական մարմինները, համագործակցությունն ու շարունակականությունը, տվյալների մշակման առանձնահատուկ իրավիճակները:

Օրենքում կատարված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ոլորտի մասնագետների կարծիքներն իրարամերժ են: Այսպես, մասնագետների մի խումբն օրենքի գործող կարգավորումները խնդրահարույց է համարում այն համատեքստում, որ եթե պաշտոնատար անձն, օրինակ, իր վերաբերյալ անձնական տվյալները մշակելու համաձայնություն չի տալիս, ապա լրագրողը չպետք է հավաքի, պահի կամ տարածի նման տեղեկությունները, ինչը լրագրողական գործունեությանը և մամուլի դերին ու նպատակին է անմիջականորեն հակասում:

Մասնագետների մեկ այլ խումբ օրենսդրական կարգավորումներում նման վտանգ չի տեսնում: Ավելին, ըստ վիճակագրական տվյալների՝ Օրենքում կատարված փոփոխություններից հետո ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունը 2018 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ հարուցել է ընդհանուր առմամբ 62 վարույթ, որից 11 վարույթը 2016 թվականին, 21-ը՝ 2017 թվականին, իսկ 30-ը՝ 2018 թվականին: Ընդ որում՝ հարուցված վարույթներից միայն մեկն է եղել լրատվամիջոցի դեմ, քաղաքացին էլ պարտվել է լրատվամիջոցի դեմ<sup>311</sup>:

Նախագծի հիմնավորումների տրամաբանությունն այն է, որ լրագրողական գործունեության կարգավորումներն ամրագրված են «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքում: Մինչդեռ, պետք է նշել, որ այդ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը սահմանափակվում է՝ միայն արգելելով օրենքով սահմանված կարգով գաղտնի համարվող կամ քրեորեն պատժելի արարքներ քարոզող, ինչպես նաև այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար: Հարկ է նկատել, որ այս օրենքը ևս հատուկ կանոններ չի ամրագրում, թե ինչպես են, օրինակ, հարաբերակցվում անձնական տվյալների պաշտպանությունն ու լրագրողական գործունեությանը հետապնդվող հանրային շահն ինչպես լրագրողի կողմից տեղեկությունների հավաքման, այնպես էլ հրապարակման փուլերում:

*Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ խնդրո առարկա օրենսդրական բացառության սկզբնական ամրագրումը և հետագայում դրա վերացումը, ինչպես նաև այդ փոփոխության հատվածական և մակերեսային հիմնավորումներն առկախված են թողնում լրագրողական գործունեության ընթացքում անձնական տվյալների պաշտպանության, լրագրողական գործունեության առանձնահատկությունների հաշվառման և այս համապետքստում*

<sup>311</sup> Հասանելի է <https://www.Iragir.am/2018/12/27/406630/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



«հանրային շահի»՝ որպես անձնական տվյալների հրապարակումն արդարացնող գործոնի գնահատման հետ կապված իրավական լուծումները:

Հանրային շահի գնահատումն անձնական տվյալների պաշտպանության համատեքստում.

Մամուլը հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի լուսաբանման իր առաքելությունն իրականացնելիս բախվում է տեղեկացված լինելու հանրային շահի և անձի մասնավորության ակնկալիքի հավասարակշռման խնդրին: Հանրային շահի էությունը բացահայտվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ: Այսպես, Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ հանրային շահը սովորաբար վերաբերում է այն հարցերին, որոնք ազդում են հասարակության վրա այնքանով, որքանով դրանք կարող են հետաքրքրել հասարակությանը, որը գրավում է նրա ուշադրությունը կամ նշանակություն է տալիս դրան, հատկապես այն դեպքերում, երբ դրանք ազդում են քաղաքացիների բարեկեցության կամ հասարակության կյանքի վրա<sup>312</sup>: Հանրային շահը չի կարող նվազել ուրիշների անձնական կյանքի կամ լսարանի՝ սենսացիոն տեղեկություններ իմանալու ցանկությունը բավարարելու ծարավով<sup>313</sup>:

Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ անդամ պետությունները, բացառությամբ որոշ դեպքերի, պետք է երաշխավորեն յուրաքանչյուրի իրավունքը ստանալու պետական փաստաթղթերը, որոնք պահպանվում են հանրային իշխանությունների կողմից: Եվրոպական դատարանը գտել է, որ **պահանջվող տեղեկությունը, տվյալները կամ փաստաթղթերը պետք է ներկայացնեն հանրային շահագրգռվածություն, որպեսզի առաջանա դրանք բացահայտելու անհրաժեշտությունը**: Նման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ այն նպատակ է հետապնդում ապահովել թափանցիկություն հանրային գործառույթների իրականացման ոլորտում, ինչպես նաև հասարակության հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի վերաբերյալ, ինչով հասարակության լայն զանգվածներին հնարավորություն է ընձեռվում մասնակցել հանրային կառավարմանը: Եվրոպական դատարանն ընդգծել է նաև, որ հանրային շահերին վերաբերվող տեղեկության բովանդակությունը կախված է յուրաքանչյուր գործի հանգամանքներից<sup>314</sup>:

Նույն գործով Եվրոպական դատարանն առանձնացրել է չափանիշներ, որոնց միջոցով **յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատվում է, թե արդյոք պետության (պետական մարմինների) կողմից պահվող տեղեկությունների մատչելիության մերժումը միջամտություն է անձի արտահայտվելու ազատության իրավունքին, թե ոչ**:

Այդ չափանիշներն են՝

<sup>312</sup> Տե՛ս Սատակուննան Մարկկինապորսսի Օյը և Սատամեդիա Օյն ընդդեմ Ֆինլանդիայի (Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland) գործով 2017 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 931/13, կետ 171:

<sup>313</sup> Տե՛ս Couderc and Hachette Filipacchi Associés v. France գործով 2015 թվականի նոյեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 40454/07, կետ 101:

<sup>314</sup> Տե՛ս Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի (Magyar Helsinki Bizottság v. Hungary) գործով 2016 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 18030/11, կետեր 145, 161, 162:

1) *տվյալ տեղեկությունը հայցելու նպատակը*. հարցումը պետք է հետապնդի ազատորեն արտահայտվելու իրավունքի իրացման, այդ թվում՝ սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու նպատակ,

2) *հայցվող տեղեկության բնույթը*. այն պետք է հանրային հետաքրքրություն ներկայացնի, որպեսզի առկա լինի դրա բացահայտման անհրաժեշտությունը: Նման անհրաժեշտությունն առկա է, եթե, ի թիվս այլնի, նման բացահայտումն ապահովում է հանրային կառավարման և հանրության շահերին առնչվող հարցերի թափանցիկությունը և այդպիսով հնարավորություն է տալիս հանրությանը մասնակցելու պետական կառավարմանը,

3) *տեղեկություն հայցողի դերը*. կոնկրետ անձի կողմից համապատասխան տեղեկատվության հայցումը պետք է միտված լինի ստացված տեղեկատվությունը հասարակությանը փոխանցելուն՝ ի սկզբանե նպատակ ունենալով պաշտպանելու հասարակության շահը,

4) *պատրաստի տեղեկությունների առկայությունը*. տեղեկատվության տրամադրման մերժումը որպես «տեղեկատվության ստացման և տարածման ազատության» իրավունքի իրացման «միջամտություն» գնահատելու համար կարևոր չափանիշ է տեղեկատվության պատրաստի լինելը<sup>315</sup>:

Տեղեկատվության մատչելիության և հանրային շահագրգռվածության, դրանում մամուլի դերակատարության հարցերը քննարկման առարկա են դարձել նաև ներպետական պրակտիկայում՝ Վճռաբեկ դատարանի կողմից: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/4169/05/15 վարչական գործով արձանագրել է, որ արտահայտվելու իրավունքն անձի՝ Կոնվենցիայով և ՀՀ Սահմանադրությամբ պաշտպանվող հիմնարար իրավունքներից մեկն է, որը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշ սահմանափակումների: Նշված իրավունքը ենթակա է սահմանափակումների օրենքով սահմանված կարգով՝ ելնելով պետական անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը պահպանելու, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակից:

Հանրային շահի գնահատման խնդրին և լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակմանն անդրադարձել է նաև ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալությունն իր 2019 թվականի գործունեությունն ամփոփող հաշվետվությամբ: Մասնավորապես, 2019 թվականի ընթացքում երեք անգամ Գործակալությունն առիթ է ունեցել քաղաքացիների դիմումների հիման վրա ստուգել լրատվամիջոցների կողմից անձնական տվյալների մշակման իրավաչափությունը: Ընդ որում, երկու վարույթով խոսքը գնացել էր լրատվամիջոցներով մարդկանց տվյալների այնպիսի հրապարակման մասին, որից այդ անձինք տեղյակ չէին: Այս երկու վարույթների ընթացքում լրատվամիջոցները, հաշվի առնելով դիմողների պահանջները և փաստարկները, ապանձնավորել են նրանց տվյալները (հեռացրել են

<sup>315</sup> Տե՛ս Հունգարիայի Հելսինկյան կոմիտեն ընդդեմ Հունգարիայի (Magyar Helsinki Bizottság v. Hungary) գործով 2016 թվականի նոյեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 18030/11, կետեր 159, 161, 168, 170: Հասանելի է <https://www.osf.am/wp-content/uploads/2020/09/Final-book-FOI.pdf> հղումով, էջ 181, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հրապարակումներից նույնականացնող տվյալները) և ըստ էության կատարել են դիմումատուների պահանջները: Ուստի, Գործակալությունը վարույթները կարճել է՝ առանց ըստ էության քննության առնելու դիմողների պահանջները:

Այդուհանդերձ, վարույթների հանգամանքներն ընդունելով որպես առիթ՝ Գործակալությունն անդրադարձել է լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակման առանձնահատկություններին: Այսպես, Գործակալությունը, հաշվի առնելով, որ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ անձնական տվյալների օրինական մշակման հիմքերն են համաձայնությունը, կամ համաձայնության բացակայության դեպքում մշակումն ուղղակիորեն օրենքով նախատեսված լինելը, կամ տվյալները հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը, նշել է, որ **կախված լրագրողական նյութի ժանրից, նպատակից և ֆորմատից՝ լրագրողական նպատակով անձնական տվյալների մշակման հիմք կարող է հանդիսանալ օրենքով նախատեսված հիմքերից յուրաքանչյուրը՝ և անձի համաձայնությունը (օրինակ, հարցազրույցի դեպքում), և հանրամատչելի աղբյուրներից ձեռք բերված լինելը (օրինակ, վերլուծության դեպքում), և օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը:**

Հաշվի առնելով «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով, Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներով լրագրության սկզբունքների նախանշած կանոնները՝ Գործակալությունը դիրքորոշում է հայտնել, որ անձնական տվյալների մշակման և մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն տարածելու յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է, որ լրատվամիջոցը (լրագրողը) սահմանի տվյալների մշակման նպատակ և գնահատի՝ արդյո՞ք առկա է հանրային այնպիսի շահ, որի պաշտպանության նպատակով անհրաժեշտ է ստորադասել մարդու անձնական տվյալների պաշտպանության շահը և մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկություն տարածել: Միաժամանակ, սահմանված նպատակը պետք է լինի որոշակի և օրինական, այսինքն՝ հանրային շահի պաշտպանությունը պետք է ոչ թե պատրվակ լինի, այլ պետք է իրականում արտացոլի տարածվող տեղեկության (տվյալ դեպքում՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկության) սոցիալական անհրաժեշտությունը և կարևորությունը, իսկ հրապարակվող անձնական տվյալները պետք է լինեն սահմանված նպատակին համաչափ՝ լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր, մշակվեն այն քանակով, որն անհրաժեշտ է սահմանված նպատակին հասնելու համար, և պետք է բացառվի այն տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ<sup>316</sup>:

**Այսպիսով, ակնհայտ է, որ օրենսդրությամբ նախանշված չեն «հանրային շահի» հստակ սահմաններ:** Հանրային շահի վերաբերյալ առկա ներպետական և միջազգային իրավական կարգավորումների հաշվառմամբ՝ կարող ենք առանձնացնել հետևյալ չափանիշները՝ որպես ուղենիշ հանրային շահերի պաշտպանության համար առանց անձի համաձայնության նրա անձնական տվյալների հրապարակման իրավաչափությունը գնահատելիս.

<sup>316</sup> Հասանելի է <https://www.moj.am/storage/uploads/2019Annual-report-2019-ATPG.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

- լրագրողի կողմից անձի անձնական տվյալներ կազմող տեղեկատվության հայցումը նպատակ է հետապնդում ապահովել թափանցիկություն հանրային գործառույթների իրականացման ոլորտում,

- հայցվող տեղեկատվության ստացման և այն հանրությանը փոխանցելու միջոցով հասարակության լայն զանգվածներին հնարավորություն է տրվում մասնակցելու հանրային կառավարմանը,

- անձի անձնական տվյալներ պարունակող հայցվող տեղեկատվության բացահայտումը հետապնդում է պետական անվտանգությունը, փարածքային ամբողջականությունը կամ հասարակության անվտանգությունը պահպանելու նպատակ,

- անձի անձնական տվյալներ պարունակող հայցվող տեղեկատվության բացահայտումը հետապնդում է նաև զանգվածային անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, արդարադատության հեղինակությունն ու անաջատությունը պահպանելու նպատակ:

**5. Անձնական տվյալների պաշտպանությունը որպես լրագրողական հարցումներին չպատասխանելու կամ ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրման հիմք**

Հարցը տեղին է դիտարկել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկման առարկա դարձած հետևյալ օրինակով: Այսպես, Պաշտպանին ներկայացրած դիմումներից մեկով քաղաքացին բարձրացրել էր իր անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտման հարց այն պատճառով, որ լրագրողական հարցմանն ի պատասխան ՀՀ քրեակատարողական ծառայությունը տրամադրել էր վերջինիս՝ ծառայող լինելու, զբաղեցրած պաշտոնի, կոչման, պարգևավճարների, ինչպես նաև կադրերի ռեզերվում գտնվելու, օրենքով սահմանված կարգով աջակցություն ստանալու և առաջատար խմբի տարբեր պաշտոններ զբաղեցնելու առաջարկներից քաղաքացու հրաժարվելու վերաբերյալ տեղեկություն:

Խնդրո առարկա հրապարակման՝ անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրությանը համապատասխանության հարցով Պաշտպանը խնդիրը ներկայացրել է ՀՀ ԱՆ անձնական տվյալների գործակալությանը (ոլորտի լիազոր մարմնին): Արդյունքում, Գործակալությունը հարուցված վարչական վարույթի արդյունքներով կայացրել է անձնական տվյալների մշակման համապատասխանությունն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի պահանջներին ստուգելու վերաբերյալ որոշում, որով արձանագրել է հետևյալ իրավական եզրահանգումները՝

- ՀՀ քրեակատարողական վարչության կողմից քաղաքացու վերաբերյալ վերոնշյալ տեղեկությունների փոխանցումը «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի իմաստով անձնական տվյալների մշակում է:

- Օրենսդրորեն առկա են անձնական տվյալների մշակման երեք իրավական հիմք. 1) տվյալների սուբյեկտի համաձայնություն, 2) տվյալների հանրամատչելի լինելու հանգամանք, 3)

տվյալների մշակումն օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելը, այսինքն՝ անձնական տվյալները օրենքի հիման վրա մշակելը:

- Օրենքով սահմանվում են անձնական տվյալների մշակման և մշակման նկատմամբ հսկողություն իրականացնելու միայն ընդհանուր կանոնները, իսկ անձնական տվյալների և տվյալներ մշակողի ու տվյալների սուբյեկտի միջև առկա հարաբերությունների բնույթով պայմանավորված անձնական տվյալների մշակման առանձնահատկությունները կարգավորվում են այլ, այսինքն՝ հատուկ օրենքներով:

- Այդպիսին է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը, որի 6-րդ հոդվածն ամրագրում է յուրաքանչյուր անձի իրավունքը՝ իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Իսկ Օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողը պարտավոր է օրենքով սահմանված կարգով՝ տեղեկություններ փնտրող անձին տրամադրել հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն:

- Ընդ որում, այստեղ առանցքային է դիտարկումն առ այն, որ «Տեղեկատվության ազատության» մասին օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **տեղեկությունը մերժելու հիմք է ոչ թե անձնական տվյալ լինելը, այլ մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը: Քրեակատարողական վարչության կողմից անձի անձնական տվյալների փոխանցումը Գործակալությունը դիտարկել է անձնական տվյալների մշակման համաչափության սկզբունքի համատեքստում:**

- Գործակալությունը եզրահանգել է, որ լրագրողի հարցման մեջ նշված են եղել քրեակատարողական ծառայողի արձակուրդի օրերի քանակը, դրանց համար վճարված աշխատավարձի չափը, արձակուրդային օրերի չվճարած գումարը, ինչպես նաև քրեակատարողական ծառայողներին ընդհանրապես լիարժեք արձակուրդային գումարներ չվճարելու հանգամանքը՝ Վարչության կողմից **լրագրողի հարցերին միայն այդ կամ ոչ պատասխանելը լիարժեք չէր լինի նշված տեղեկությունների հավաստիությունը պարզելու համար:** Հետևաբար, Վարչության կողմից քաղաքացու՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պաշտոն **զբաղեցնելու փաստը հաստատելու և ծառայության ժամկետների, զբաղեցրած պաշտոնի, կոչումի, նախքան պաշտոնից ազատվելը ամենամյա արձակուրդից օգտվելը, պաշտոնից ազատվելու ժամկետի և հիմքերի վերաբերյալ տեղեկությունների փոխանցումը անհրաժեշտ էր** «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով արձակուրդային օրերի և արձակուրդային գումարները հաշվարկելու համար: Ըստ Գործակալության՝ նշված տեղեկությունների փոխանցումը բխել է տեղեկատվություն տնօրինողի՝

տեղեկություններ փնտրող անձին հավաստի և իր տնօրինության տակ գտնվող ամբողջական տեղեկություն տրամադրելու պարտականությունից:

**Քննարկվող հարցի վերաբերյալ Գործակալության ընդհանուր դիրքորոշումն այն է, որ անձնական տվյալ պարունակող այն տեղեկությունները, որոնք երրորդ անձինք օրինական հիմքերով ազատորեն կարող են վեր հանել նաև այլ աղբյուրներից (իրավական ակտերից, օրենքներից և այլն), քան հարցման սուբյեկտն է, ապա հարցման սուբյեկտի կողմից այդ տեղեկությունների հրապարակումը չի համարվի անձնական տվյալների պաշտպանությանը միջամտություն:**

- Միևնույն ժամանակ, հետաքրքրություն է ներկայացնում Գործակալության որոշմամբ անդրադարձ կատարված այն խնդրին, որ պետական մարմնի կողմից, ի թիվս վերոնշյալի, տրամադրվել է նաև հարցմամբ չպահանջվող հավելյալ տեղեկատվություն: Մասնավորապես, խոսքը վերաբերում էր ոչ թե տեղեկության տրամադրումը ռեակտիվորեն՝ դիմումի հիման վրա տրամադրելուն, այլ Վարչության կողմից պրոակտիվորեն՝ սեփական նախաձեռնությամբ հրապարակելուն:

Այս համատեքստում Գործակալությունն արձանագրել է, որ *անգամ գաղտնիքի կարգավիճակ չունեցող կամ մերժման ոչ ենթակա տեղեկությունների հրապարակումը հարկ է համեմատել անձնական տվյալների մշակման համաչափության հետ, այն է՝ արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամապատասխան են դրա հետ:*


Գործակալության եզրահանգմամբ՝ անձնական տվյալներ մշակողները պետք է ձեռնպահ մնան այնպիսի անձնական տվյալներ սեփական նախաձեռնությամբ հրապարակելուց, որոնք թեև պաշտպանված չեն որևէ գաղտնիքի կարգավիճակով, սակայն կոնկրետ իրավիճակում բացակայում է այդ անձնական տվյալների հրապարակման նպատակը:

Անձնական տվյալներ պարունակող տեղեկությունները լրագրողական հարցման հիման վրա փոխանցելու իրավաչափության նկարագրված խնդրի հետ մեկտեղ, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում վեր են հանվել խնդիրներ՝ կապված լրատվական գործունեություն իրականացնողների հարցումները պետական մարմինների կողմից անպատասխան թողնելու իրավաչափության հետ: Խոսքը վերաբերում է այն տեղեկություններին, որոնք պարունակում են անձնական տվյալներ: Ըստ հարցադրումների՝ նման մերժման հիմքում դրվել է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջը, ըստ որի՝ տեղեկատվության տնօրինողը մերժում է տեղեկության տրամադրումը, եթե դա խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Ըստ լրագրողների՝ վերջիններիս պատասխան է տրվում, որ հայցվող տվյալները հանդիսանում են անձի անձնական կյանքի վերաբերյալ տեղեկություններ, ուստի առանց այդ անձի համաձայնության դրանց տրամադրումը ենթակա է մերժման:

Այս առումով ուշագրավ է նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» ամփոփած հետևյալ վիճակագրությունը:

**2020 թ. հարցումների բաշխումը՝ ըստ մերժման հիմքերի (35 մարմինների տվյալների համաձայն)**

- Անձնական տվյալների պաշտպանության հիմքով
- Պետական եւ/կամ ծառայողական գաղտնիքի պաշտպանության հիմքով
- Այլ հիմքերով



Այսպես, տեղեկություն ստանալու հարցումների առավել հաճախ կիրառվող մերժման հիմքերը պարզելու նպատակով «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը 2021 թվականի հունվարին դիմել է պետական կառավարման 40 մարմինների՝ խնդրելով տեղեկություններ տրամադրել, թե տեղեկություն ստանալու քանի հարցում է մերժել կոնկրետ կառույցը 2020 թվականի ընթացքում, հարցումներից քանիսն են մերժվել անձնական տվյալների, և քանիսը՝ պետական և (կամ) ծառայողական գաղտնիքի պաշտպանության հիմքով: Ըստ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի կայքէջում հրապարակված վիճակագրական տվյալների՝ 2020 թվականի շուրջ 35 պետական մարմնի արված հարցումներից մերժվել են 206-ը, որից 107 հարցումներն են մերժվել անձնական տվյալների պաշտպանության հիմքով: Ընդ որում՝ մերժման հիմքերին առնչվող այդ վիճակագրությունը չի ներառում Ոստիկանությունից և ՊԵԿ-ից մերժված 260 հարցումները, քանի որ այդ մարմինները մերժման հիմքերի մասին տեղեկություններ պատասխան գրությամբ չեն տրամադրել<sup>317</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված իրավիճակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ բարձրացված հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է նախանշել կոնկրետ չափանիշներ, որոնք պետք է կիրառելի լինեն լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկություններ հայցելիս և պետական մարմնի՝ դրանց տրամադրման հարցը քննարկելիս: Մասնավորապես,

1. *Լրագրողների ու լրատվության ոլորտի ներկայացուցիչների գործունեությունն ունի հանրային նշանակություն: Ժողովրդավարական հասարակությունում լրագրողն ունի կարևոր դերակատարություն հանրային բանավեճերին, տեղեկություններ փնտրելու և ստանալու հասարակության իրավունքին նպաստելու առումով.*

2. *Օրենքին համապատասխան և բարեխիղճ գործելու լրագրողի բարձր պատասխանատվությունն ու կոչումը պայմանավորում են պետության ներկայացուցիչ*

<sup>317</sup> Հասանելի է <http://www.foi.am/hy/research/item/1978/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

պարտականությունն առաջնորդվելու լրագրողի օրինավորության, նրա բարեխղճության ու ազնվության կանխավարկածով.

3. Միաժամանակ, տեղեկություններ ստանալու իրավունքի իրացման հարցը, երբ դավերաբերում է անձնական տվյալներին, շրջանակների որոշակիացման հարցում կարող է առաջ բերել մրցակցող այլ իրավաչափ շահերի, կոնկրետ դեպքում՝ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության բացահայտման անհրաժեշտություն՝ քննարկվող երկու իրավական արժեքների հավասարակշռման տեսանկյունից.

4. Միջազգային իրավաբանությունն այդպիսի հավասարակշռության ապահովման ընդհանուր բանաձև է համարում խոսքի ազատության իրավունքի երաշխավորումն այնպիսի սահմաններում, որ չխախտի այլոց մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը.

5. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտությունը կարող է իրավաչափ լինել, եթե խոսքի ազատության իրավունքի շրջանակներում տեղեկությունների հրապարակումը պայմանավորված է հանրային գերակա շահով.

6. Հանրային գերակա շահն իր հերթին հնարավոր է հավաստել կոնկրետ գործի փաստական հանգամանքների համակցությամբ: Այդ առումով, անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների հրապարակման արդարացվածության մասին կարող են վկայել, օրինակ, համընդհանուր հետաքրքրություն ունեցող քննարկմանը նպաստելը, շահագրգիռ անձի հանրահայտ լինելն ու նրա վարքագիծը՝ տեղեկություններն անձամբ հասանելի դարձնելու առումով, հրապարակման բովանդակությունը, ձևը և հետևանքները, հանգամանքները, որոնցում արվել են հրապարակումները և այլն.

7. Յուրաքանչյուր դեպքում, երբ խոսքի ազատության իրացումը կարող է հանգեցնել այլոց մասնավոր կյանքին միջամտության, դրա նկատմամբ հարգանքը իրավակիրառող մարմնից ամեն դեպքում պահանջում է գնահատել, թե արդյոք կոնկրետ գործով փաստական տվյալները վկայում են իր տնօրինած տեղեկությունների տրամադրման հանրային շահի առկայության մասին, որը կարդարացներ անձի անձնական տվյալների հրապարակումը: Այդպիսի գնահատումն իր հերթին ենթադրում է, որ իրավակիրառող մարմինը պետք է տիրապետի էական նշանակություն ունեցող փաստերին.

8. Ասվածն ամենևին չի նշանակում, որ ամեն անգամ տեղեկություններ ստանալու իր իրավունքն իրացնելիս լրագրողը պարտավոր է իրավասու մարմնին հիմնավորել դրա անհրաժեշտությունը: Այն որևէ կերպ չի կարող մեկնաբանվել որպես լրագրողի պարտավորություն՝ հիմնավորելու տեղեկություններ ստանալու իր իրավունքի իրավաչափությունը՝ իբրև հենց այդ իրավունքի իրացման ինքնուրույն նախապայման:

9. Լրագրողն ունի օրենքով սահմանված կարգով և շրջանակներում պետական մարմիններից տեղեկություններ ստանալու երաշխավորված իրավունք.

10. Այլ է վիճակը, երբ տեղեկություններ ստանալու լրագրողի հարցումը վերաբերում է այլոց՝ օրենքով պաշտպանվող անձնական տվյալներին: Այստեղ է, որ առաջ է գալիս իրավական այդ



երկու արժեքների հավասարակշռությունն ապահովելու խնդիր՝ հանրային գերակա շահի առկայության հավաստմամբ.

11. Այդպիսի իրավիճակում որքան բարձր է լրագրողի հարցման փաստարկվածությունը, որն անհրաժեշտ է հանրային գերակա շահի առկայությունը հավաստելու նպատակով անձնական տվյալների հասանելիության շեմը հաղթահարելու համար, այնքան ավելի մեծ է հարցումը մերժելու դեպքում հակառակը հիմնավորելու պետական մարմնի պատասխանատվության բեռը (առանձին դեպքերում նաև ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ).

12. Հեղինակը, այլոց անձնական տվյալներին վերաբերող տեղեկություններ ստանալու հարցման հանգամանքների ու նպատակի նկարագրությունը (հարցվող տեղեկությունների շրջանակը, դրանք ստանալու նպատակն ու հանրային նշանակությունը և այլն) ոչ այնքան կարևոր է նրանով, որ հնարավորություն է ընձեռում իրավասու մարմնին գնահատելու դրանց տրամադրման իրավաչափությունը, այլև բարձրացնում է այդ մարմնի պարտավորվածությունն անդրադարձ կատարելու հարցմամբ ներկայացված փաստարկներին.

13. Անհրաժեշտ է, որ լրագրողի՝ անձնական տվյալներ պարունակող տեղեկությունների վերաբերյալ հարցումը, սույն իրավական վերլուծության մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան, բովանդակի լրագրողական իրավաչափ գործունեության համար անհրաժեշտ այն տեղեկությունները, որոնք հնարավորություն կտան գնահատելու և հավասարակշռելու մրցակցող երկու շահերը և կվկայեն այդ տեղեկությունները տրամադրելու հարցում հանրային շահի առկայության մասին.

14. Հենց այսպիսի հարցումն է, որ տեղեկատվության տնօրինողի համար առաջացնում է առավել մեծ իրավական բեռ, այն է՝ պարտականություն գնահատելու, թե կոնկրետ իրավիճակում անձնական տվյալների պաշտպանության և տեղեկություններ ստանալու՝ երկու մրցակցող իրավունքներից որն է գերակա:

15. Արդյունքում, հայցվող տեղեկության տրամադրումը մերժելու վերաբերյալ մարմնի պատասխանը՝ ուղղված լրագրողին, չի կարող սահմանափակվել միայն անձնական տվյալների պաշտպանության ներպետական օրենսդրական դրույթներին պարզապես հղում կատարելով: Այդ պատասխանը պետք է պարունակի նաև հարցմամբ ներկայացված փաստերին՝ իբրև հանրային շահը հավաստող տվյալներին տրված գնահատական:

## **6. Անձնական տվյալների պաշտպանությունը «Դատալեքս» համակարգում դատական գործերի հրապարակման համատեքստում**

Թեև ներպետական օրենսդրությամբ սահմանված է դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման հնարավորություն, այնուամենայնիվ,

գործնականում դրա լիարժեք իրականացումն ապահովող գործուն կառուցակարգեր ներդրված չեն: Բարձրացված խնդիրը շարունակում է չլուծված մնալ 2021 թվականի ընթացքում:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումներով քաղաքացիները բարձրաձայնել են այն հարցը, թե ինչ ընթացակարգով կարող են դատական տեղեկատվական համակարգից հեռացվել իրենց անձնական տվյալները, այդ թվում՝ անձնական և ընտանեկան կյանքի մանրամասներ պարունակող դատական ակտերը:

Համաձայն «ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 11-րդ հոդվածի 10-րդ մասի՝ դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական կյանքի տվյալներ, կենսաչափական և հատուկ կատեգորիայի անձնական տվյալներ, երեխայի անձնական տվյալներ պարունակող դատական ակտերը հրապարակվում են ապանձնավորված կարգով: Բարձրագույն դատական խորհուրդը կարող է սահմանել անձնական տվյալների ապանձնավորման այլ դեպքեր: Ապանձնավորման կարգը սահմանում է Բարձրագույն դատական խորհուրդը:

Ըստ այդմ, Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշմամբ սահմանված կարգին համապատասխան ապանձնավորվում են ֆիզիկական անձանց վերաբերյալ սահմանված անձնական տվյալները: Մինչույն ժամանակ, հրապարակման ենթակա դատական ակտում դատավարության մասնակցի՝ Բարձրագույն դատական խորհրդին ուղղված դիմումի հիման վրա կարող են ապանձնավորվել նաև օրենսդրությամբ սահմանված՝ ֆիզիկական անձանց վերաբերյալ անձնական տվյալ հանդիսացող այլ տեղեկություններ:

Հարկ է նկատել, որ «Դատական համակարգ» համակարգչային ծրագիրն ավտոմատ կերպով դատական ակտի տեքստում նույնականացնում և ապանձնավորում է սույն կարգում նշված ապանձնավորման ենթակա անձնական տվյալները՝ պահպանելով ապանձնավորման գործընթացին ձեռքով միջամտելու հնարավորությունը, իսկ անձնական տվյալների ապանձնավորման նկատմամբ հսկողությունն իրականացնում է տվյալ ակտն ընդունող դատավորը:

Բարձրագույն դատական խորհուրդ հասցեագրած գրությանն ի պատասխան նշվել է, որ «Դատական համակարգ» համակարգչային ծրագրով հնարավոր չէ ապահովել նշյալ որոշման 1-ին հավելվածի 3-րդ կետով նախատեսված ապանձնավորման ենթակա անձնական տվյալները դատական ակտի տեքստում ավտոմատ կերպով նույնացնելը և ապանձնավորելը:

Բարձրագույն դատական խորհրդի կողմից ներկայում շարունակվում են բանակցությունները միջազգային կազմակերպությունների հետ համապատասխան համակարգչային ծրագրի կազմման և ներդրման կապակցությամբ, որում, ի թիվս այլնի, նախատեսվում է նաև անձնական տվյալներ պարունակող դատական ակտերի ապանձնավորված կարգով հրապարակմանն ուղղված համապատասխան ծրագրային լուծումների ապահովումը:

Ստացվում է, որ մինչ օրս դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիր դեռևս ներդրված չէ, ինչը չի ապահովում ինչպես 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշման ընդունումից առաջ, այնպես էլ դրանից հետո կայացրած դատական ակտերի ապանձնավորման հնարավորությունը:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2018 թվականից հետո դատարանի կողմից հոգեբուժական կազմակերպությունում ոչ հոժարական հոսպիտալացման ենթարկելու վերաբերյալ կայացրած վճռում հրապարակված քաղաքացու անձնական տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, բնակության վայրը, ծննդյան թիվը, ամուսնական կարգավիճակը և անձնական կյանքի մանրամասները) դատական իշխանության պաշտոնական կայքում ապանձնավորված չեն:

Ավելին, լուրջ մտահոգության տեղիք են տալիս այն դատական գործերը, որոնք պարունակում են երեխաների անձնական տվյալները: Օրինակ, ծնողական իրավունքներից զրկելու պահանջի մասին դատարանի վճռում հրապարակված են թե՛ ծնողների, թե՛ երեխաների անձնական տվյալները:

Սա նշանակում է, որ մարդու անձնական կամ ընտանեկան կյանքի մանրամասներն առանց որևէ ողջամիտ հիմնավորման շարունակում են հասանելի լինել հրապարակային տիրույթում:

Ստացվում է՝ բավական է մարդը գոնե մեկ անգամ առնչվի դատական համակարգի հետ, իր անձնական ու ընտանեկան կյանքը դառնում է հանրային սեփականություն: Նկարագրվածն անընդունելի է մարդու իրավունքների տեսանկյունից:

Ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք 2021 թվականի ընթացքում ստացվել են դիմումներ դատական իշխանության պաշտոնական կայքում ([www.datalex.am](http://www.datalex.am)) հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման վերաբերյալ, ապա Բարձրագույն դատական խորհուրդը հայտնել է, որ Դատական դեպարտամենտը համապատասխան դիմումի հիման վրա կարող է առանձին դեպքերում սահմանափակել տվյալ գործի հասանելիությունը «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում:

Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում Դատական դեպարտամենտում ստացվել են դիմումներ՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման վերաբերյալ, որոնք մերժվել են, քանի որ ի կատարումն Բարձրագույն դատական խորհրդի 2018 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ ԲԴԽ-40-Ո-105 որոշմամբ սահմանված կարգի՝ առկա չեն համապատասխան ծրագրային հնարավորություններ՝ դատական ակտում ներառված անձնական տվյալների ապանձնավորում իրականացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է հնարավորինս սեղմ ժամկետում ներդնել դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակվող դատական ակտերում անձնական տվյալների ապանձնավորման ծրագիրը:

## **ՔԱԺԻՆ 9. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Իրավախախտումների, հանցավորության դեմ պայքարի, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության հարցում կենսական նշանակություն ունի իրավապահ մարմինների աշխատանքը:

Հենց սրանով է պայմանավորված Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության առանձնահատուկ ներգրավվածությունը քրեական արդարադատության և իրավապահ մարմինների գործունեության ոլորտներում: Այստեղ իրավունքների արդյունավետ ապահովումը Պաշտպանի գործունեության առաջնահերթություններից է:

Արդարադատության ոլորտը բնույթով առանցքային է, քանի որ կոչված է ապահովելու հանցավոր ոտնձգություններից պետության ու մարդու իրավունքների պաշտպանությունը: Սա, անշուշտ, բարձրացնում է ինչպես քրեական հետապնդում իրականացնող, այնպես էլ դատական մարմինների պատասխանատվությունն հնարավոր խնդիրների լուծման հարցում: Դրա հետ մեկտեղ, քանի որ մարդն այս ոլորտ հիմնականում ներգրավվում է հաճախ հրապարակայնորեն չգործող, իսկ երբեմն՝ նաև՝ գաղտնիության պայմաններում գործող մարմինների (այն էլ՝ հարկադրանք կիրառելու իրավասություն ունեցող մարմինների) կողմից, մեծանում է նրա հիմնարար իրավունքների և ազատությունների խախտման ռիսկերի շրջանակը:

Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ընթացքում արձանագրվել է, որ Հայաստանում արդարադատության ոլորտի ռիսկերը տարիների ընթացքում ձեռք են բերել տարբեր, երբեմն՝ նաև նոր դրսևորումներ:

Պատճառները, իհարկե, տարբեր են. նախաքննության չարդարացված մեծ դերը, քրեական գործերի ծանրության կենտրոնն իրավապահ մարմիններից դատարաններ անարդարացիորեն չտեղափոխելը, մինչդեռատական վարույթի ընթացքում քրեական հետապնդման մարմինների համեմատությամբ փաստաբանի անհավասար հնարավորությունները գործին լիարժեք տիրապետող և պրոֆեսիոնալ մասնագետների պակասը և այլն: Իհարկե, դրանց թվին պետք է ավելանել նաև իրավապահ մարմինների ծանրաբեռնվածությունը:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր և բանավոր գանգատներն ու ահազանգերը, ուսումնասիրությունները, ոստիկանության բաժիններ կամ իրավապահ համակարգի այլ ստորաբաժանումներ այցերը ցույց են տալիս, որ մարդու հետ առնչվող պաշտոնյաների գործունեության ելման կետը, ըստ էության, ոչ միշտ է մարդակենտրոն:

Դրա հետ մեկտեղ, մարդու իրավունքներին առնչվող շատ հարցեր տարիների սխալ պրակտիկայի արդյունք են: Այդ պրակտիկայի յուրաքանչյուր արատավոր դրսևորման վերացումը

պետք է դրվի ինստիտուցիոնալ, օրենսդրական հիմքերի և մարդու իրավունքների ապահովման սկզբունքների վրա, որպեսզի բացառվի իրավունքը որևէ ձև խախտող պրակտիկան:

Թեև գործնականում կան դրական դրսևորումներ, սակայն այս ամենը դեռ դրված չէ ինստիտուցիոնալ հիմքերի վրա, բազում հարցեր անարդարացիորեն թողնված են իրավակիրառողի բարեխղճությանը կամ իրավիճակային լուծումներին, առկա են օրենսդրական բացեր: Նշված խնդիրների լուծման հարցում անհրաժեշտ է մարդու իրավունքների միջազգային իրավական չափանիշների ներքո առաջնահերթ ամրապնդել օրենսդրությունը և թույլ չտալ, որ նման հարցերը թողնվեն հենց իրավապահ համակարգի կամքին:

Արձանագրված անհատական և համակարգային խնդիրների լուծման հարցում Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել իրավապահ մարմինների հետ առանձին ձևաչափով համագործակցությունը: Օրինակ՝ Դատախազության, Ոստիկանության, Քննչական կոմիտեի, Ազգային անվտանգության ծառայության հետ ձևավորված է ինստիտուցիոնալ բնույթի համագործակցություն և գործում է տարբեր մակարդակներում:

Պաշտպանի տարեկան հաղորդումներով բազմիցս ընդգծվել է, որ քրեական արդարադատության ոլորտի համակարգային բնույթի հարցերից մեկը վերաբերում էր ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ընդունմանը: 2021 թվականի հունիսի 30-ին այն ընդունվեց և ուժի մեջ կմտնի 2022 թվականի հուլիսի 1-ին: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքը սկզբունքային փոփոխություններ պարունակող փաստաթուղթ է, որը կլուծի համակարգային նշանակության բազմաթիվ խնդիրների ու մարդու իրավունքների խախտումների բազմաթիվ պատճառների վերացմանը՝ սկսած մարդու նկատմամբ քրեական հետապնդում սկսելուց մինչև դատավարության ավարտը<sup>318</sup>:

Նշված զարգացումների լույսի ներքո ՀՀ նոր քրեական օրենսգրքի և քրեական դատավարության օրենսգրքի ընդունումը Պաշտպանը գնահատում է որպես դրական զարգացում քրեական արդարադատության ու իրավապահ մարմինների գործունեության ոլորտների բարեփոխման տեսանկյունից: Բայց այստեղ շատ կարևոր է, թե ինչպես են նոր կարգավորումները կյանքի կոչվելու պրակտիկայում:

2021 թվականի ընթացքում, դատական ու իրավապահ համակարգի մարմինների հետ Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունն, ընդհանուր առմամբ, արդյունավետ է եղել, նախորդ տարիներին ձևավորված համագործակցությունը շարունակել է ամրապնդվել: Լուծումներ

<sup>318</sup> Անհրաժեշտ է հատուկ գնահատել Քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման հարցում Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դերը, որի ներկայացրած պրոֆեսորադասախոսական կազմից էլ ձևավորվել էր աշխատանքային խումբը: Նույնը վերաբերում է նաև ՀՀ նոր քրեական օրենսգրքի մշակմանը: Այն նույնպես մշակվել է նույն սկզբունքով ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մասնագետների կողմից: Աշխատանքային խմբերի հարցը հատուկ է շեշտվում, քանի որ ներգրավված են անկախ մասնագետներ, ովքեր վեր են որևէ գերատեսչական շահից: Երկար տարիներ արդյունավետ համագործակցություն առկա է նաև Արդարադատության նախարարության մասնագետների հետ, ովքեր գործել են բարեխղճորեն:

են ստացել ինչպես Պաշտպանի բարձրացրած կոնկրետ դեպքերով, այնպես էլ համակարգային բնույթ ունեցող խնդիրներ:

## **ԳԼՈՒԽ 1. ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

### **1. Անմեղության կանխավարկածի պահպանումը և ենթադրյալ հանցանք կատարած անձի կամ քրեական վարույթի վերաբերյալ հանրությանը տեղեկություններ տրամադրելու անհրաժեշտությունը**

Քրեական արդարադատության համակարգում մարդու իրավունքների պաշտպանության համար հիմնարար նշանակություն ունի անմեղության կանխավարկածի երաշխավորումը և հանրային հաշվետվողականությունը:

Այսպես, անմեղության կանխավարկածի սկզբունքն արդար դատաքննության իրավունքի անփոխարինելի բաղադրիչ է: Այս հիմնարար սկզբունքի պահպանման պահանջը վերաբերում է բոլորին, այդ թվում՝ պաշտոնատար անձանց ու լրատվամիջոցներին՝ յուրաքանչյուրին ըստ իրավասության կամ կարգավիճակի: Իրավական ցանկացած ընթացակարգ պետք է իրականացվի դրա համար նախատեսված պարտադիր կանոնների խստիվ պահպանմամբ: Այդ պարտադիր կանոններից շեղումը չի կարող արդարացվել անգամ իրավաչափ որևէ նպատակով:

Անկյունաքարային նշանակության այդպիսի պահանջ է քրեադատավարական ցանկացած ընթացակարգի ժամանակ անմեղության կանխավարկածի երաշխավորումը: Անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը: Այն պետք է խիստ պահպանվի ցանկացած գործով վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ արարքի մասին է խոսքը, հասարակության շրջանում ինչ վարկ ունի անձը և այլն:

Այս պահանջն առաջնահերթ ուղղված է հանրային իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնատար անձանց և նշանակում է, որ նրանք պարտավոր են ձեռնպահ մնալ անձի մեղավորության մասին կանխակալ ու վաղաժամ գնահատականներից՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում:

Իրենց հրապարակային դիրքորոշումներում կամ հայտարարություններում առանձնապես պետք է զգույշ լինեն այն մարմինները, որոնք պատասխանատու են քրեական հետապնդման համար և ում քաղաքացին ընկալում է պետության՝ իրավախախտումների, այդ թվում նաև հանցավորության դեմ պայքարի ոլորտի մարմին:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա

անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում արդարադատություն իրականացնող և դրանց օժանդակող մարմինների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույնն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու, դատական իշխանության անկախության բարձր արժեքի երաշխավորումը, ինչպես նաև այդ գործընթացի մասնակիցների մասնագիտական աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Անմեղության կանխավարկածի չպահպանումը կարող է խաթարել արդարադատության ողջ գործընթացը, ինչպես նաև ձևավորել անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի մասին հասարակական ընկալում կամ նպաստել դրան: Դա էլ իր հերթին առաջացնում է այլ հետևանքներ. բարդություններ փաստաբանի աշխատանքում, քանի որ որոշ դեպքերում նրանց հանրությունը սկսում է ընկալել՝ որպես «հանցագործների պաշտպաններ», բարդություններ լրագրողի աշխատանքում, ճնշում դատարանի նկատմամբ և այլն: Ուստի, անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է անշեղորեն պահպանվի ցանկացած քրեական գործով վարույթի ընթացքում՝ անկախ նրանից, թե ինչ հանցավոր արարքի մասին է խոսքը, հասարակության շրջանում ինչ վարկ ունի անձը և այլն:

Մյուս կողմից, հանրային իշխանությունը պետք է գործի թափանցիկության և հաշվետվողականության պահանջների պահպանմամբ: Այս առումով, *ողջունելի են այն դեպքերը, երբ իրավապահ մարմիններն առավել մեծ ծավալի տեղեկություններ են տրամադրում հանրությանն իրենց կողմից քննվող գործերի ու դրանց ընթացքի մասին: Հատկապես կարևոր է օբյեկտիվ տվյալներ պարունակող նյութերի տարածումը (օրինակ՝ տեսանյութեր, որոնք հասարակությանը հնարավորություն են տալիս պատկերացում ձևավորել կոնկրետ հանցավոր արարքով պատճառված վնասի չափի կամ բնույթի մասին և այլն):*

Այսպիսի պրակտիկան ուղղակիորեն բխում է այդ գործերի նկատմամբ հանրային վստահության և քաղաքացիական վերահսկողության ապահովման հիմնարար գաղափարից: Ասվածը, սակայն, չի նշանակում, որ կատարված դատավարական գործողություններն ու արդյունքները կարող են ներկայացվել՝ դրանց անհերքելիության և ապացուցված փաստեր լինելու հաստատմամբ: Սա լրջորեն կարող է խաթարել հիմնարար իրավական պահանջն այն մասին, որ որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի, և դրանով հանդերձ՝ ապացույցների գնահատման քրեադատավարական սկզբունքները:

**Նշվածի հետ միասին, իրավապահ մարմինների կողմից տարածվող իրազեկող տեսանյութերում կամ տեքստային հայտարարություններում հաճախ են լինում վիճահարույց, այդ թվում՝ մինչև դատավճռի կայացումն անձին՝ որպես հաստատված փաստ հանցանքի կատարում վերագրող, անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ: Ավելին, ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականներին արձանագրվել են հանցավորության դեմ պայքարի ոլորտի պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից այնպիսի**

**հայտարարություններ, որոնք հասարակությունում ստեղծում էին կոնկրետ քրեական հետապնդման ենթարկվող անձի մեղավորության մասին կանխակալ պատկերացումներ:**

Համատարած պրակտիկա է գրեթե յուրաքանչյուր հայտարարության վերջում ծանուցման ձևով անմեղության կանխավարկածի մասին մեջբերումները: Մինչդեռ, ակնհայտ է, երբ հայտարարության տեքստն ինքնին պարունակում է անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումներ, իսկ այդ ծանուցումները պարզապես կրում են ձևական բնույթ և չեն ծառայում նպատակին:

Քննարկվող խնդրի կապակցությամբ 2019, 2020 և 2021 թվականների ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, Պաշտպանի աշխատակազմում իրականացվել է մշտադիտարկում:

Արձանագրվել են անմեղության կանխավարկածի չպահպանմանն առնչվող մի շարք խնդիրներ՝ ինչպես իրավասու պետական մարմինների, այնպես էլ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներում: Այս առումով Պաշտպանը վերահաստատում է բազմիցս ներկայացված դիրքորոշումն առ այն, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը պետք է խստորեն պահպանվի ոչ միայն իրավապահ մարմինների, այլև պետական մյուս բոլոր մարմինների կողմից: Սա նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայուն իրավաբանության հրամայականն է:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը քննարկել է անմեղության կանխավարկածի ու արտահայտվելու ազատության հարաբերակցությունը, նշելով, որ անմեղության կանխավարկածի պահպանման սկզբունքը չի կարող խոչընդոտ հանդիսանալ իշխանությունների համար հանրությանը քննվող քրեական գործերի մասին տեղեկություններ տրամադրելու համար, այնուամենայնիվ իշխանությունները դա պետք է անեն զուսպ և նրբանկատորեն, ինչպես որ պահանջում է անմեղության կանխավարկածի նկատմամբ ունեցած հարգանքը:

Ընդ որում, Եվրոպական դատարանի որոշումից հետևում է, որ ոստիկանության, ինչպես նաև մյուս գերատեսչությունների պաշտոնատար անձանց կողմից զանգվածային լրատվության միջոցներում արվող հայտարարությունները, որոնցում մինչև դատական քննությունը պնդում են որոշակի անձի հանցագործ լինելու մասին, համարվում է անմեղության կանխավարկածի խախտում: Եվրոպական դատարանն առանձին շեշտել է, որ անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատարանի կամ դատավորի, այլև պաշտոնատար այլ անձանց կողմից:

Կարևոր է նաև նշել, որ անմեղության կանխավարկածի պահպանման անհրաժեշտությունը չի բացառում քրեական հետապնդման մարմինների կողմից անձին հանցանքի կատարման փաստ վերագրելը, կասկածանքի կամ մեղադրանքի ձևով քրեական հետապնդում իրականացնելը: Այսպես, 2010 թվականի մարտի 30-ի ՍԴՈ-871 որոշմամբ արձանագրվել է, որ Սահմանադրության 21-րդ հոդվածում ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նպատակ ունենալով պաշտպանել անձին հանիրավի մեղադրանքից, միաժամանակ չի կարող բացառել իրավասու մարմնի կողմից նրան քրեական հանցագործության մեջ կասկածելու հանգամանքը՝ մինչև այն պահը, երբ այդ կասկածներն այդ մարմնի իրավաչափ գործողությունների արդյունքում հնարավոր չի եղել հիմնավորվել: Ուստի, կոնկրետ քրեական գործով վարույթն իրականացնող քննիչի,



հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնող կամ դատարանում մեղադրանքը պաշտպանող դատախազի հայտարարությունն անձի մեղավորության մասին չի կարող դիտվել անմեղության կանխավարկածի խախտում: Տրամաբանությունն այն է, որ եթե մեղադրանքի կողմը վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցներով չի հանգում հետևության, որ անձը կատարել է իրեն վերագրվող արարքը, ապա պետք է քրեական հետապնդումն անհապաղ դադարեցվի: Եթե քրեական հետապնդումը շարունակվում է, ապա մեղադրանքի կողմը ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ ձևավորել է դիրքորոշում անձի մեղավորության մասին, ուստի հրապարակային հայտարարություններում ևս կարող է ներկայացնել իր դիրքորոշումը:

Քննարկման է արժանի նաև այն հարցը, թե արդյոք անձի մեղավորության մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները խախտում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Սանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության որոշմամբ Եվրոպական դատարանը եկել այն եզրահանգման, որ մեղադրյալի դեմ որոշ անբարենպաստ հրապարակումներ, որ գրվում են մինչև դատական քննությունը, օրինակ՝ ի դեմս մամուլում անողոք արշավի, վնասում են անմեղության կանխավարկածի սկզբունքը: Նման դեպքերում անհրաժեշտ է պարզել, թե արդյոք զանգվածային լրատվության միջոցների նմանօրինակ արշավներն ազդել են դատավորների կամ երդվյալների վրա այն աստիճան, որ նրանք մոռացել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանության մասին»: Փաստորեն, ըստ Եվրոպական դատարանի՝ մեղադրյալի վերաբերյալ անբարենպաստ հրապարակումները հնարավոր է, որ անմեղության կանխավարկածի խախտման հանգեցնեն, եթե դրանք որևէ կերպ ազդեն դատարանի կարծիքի վրա:

Չնայած դրան, Եվրոպական դատարանը մեկ այլ գործով, քննարկելով մամուլի հրապարակումների առնչությունն անմեղության կանխավարկածի իրավունքին, դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ազգային դատարանները, որոնք ամբողջովին կազմված են մասնագետ դատավորներից, սովորաբար, ի տարբերություն երդվյալ ատենակալների անդամների, ունենում են համապատասխան փորձ ու վերապատրաստում, որը նրանց թույլ է տալիս դիմակայել ցանկացած արտաքին ազդեցությանը<sup>319</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշմամբ անմեղության կանխավարկածի խախտում է այն դեպքը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի

---

<sup>319</sup> Տե՛ս Կրակսին ընդդեմ Իտալիայի (*Craxi v. Italy*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի մարտի 5-ի վճիռը, գանգատ թիվ 34896/97, 104-րդ կետ, Միրչեան ընդդեմ Ռումինիայի (*Mircea v. Romania*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունիսի 29-ի վճիռը, գանգատ թիվ 41250/02, 75-րդ կետ:

մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով<sup>320</sup>: Մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ անմեղության կանխավարկածը կխախտվի, եթե պաշտոնատար անձը կարծիք արտահայտի հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղավորության վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով: Նույն որոշմամբ դատարանն ընդգծել է պաշտոնատար անձանց կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին<sup>321</sup>:

Քննարկված մեկ այլ գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի հանրային անձ լինելով պայմանավորված պետական պաշտոն զբաղեցնող անձինք (այդ թվում՝ Գլխավոր դատախազը և օրենսդիր մարմնի ղեկավարը) պետք է հանրությանն իրազեկեն առաջադրված մեղադրանքի մասին, այնուամենայնիվ Դատարանը չի համաձայնվել Կառավարության այն պնդման հետ, որ այս հանգամանքը կարող է արդարացնել տվյալ պաշտոնատար անձանց կողմից մամուլին տված հարցազրույցներում ընտրված բառերի օգտագործումը<sup>322</sup>:

Պաշտպանի աշխատակազմը շարունակաբար ուսումնասիրում է իրավապահ մարմինների՝ քրեական հետապնդման ենթարկվող անձանց մասին հաղորդումները:

Հատկանշական է, որ արձանագրված առանձին դեպքերում իրավապահ մարմինների տված հրապարակումներն ունեն բարձր մշակվածություն և անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդիր չեն առաջացնում: Դրանք այն օրինակներն են, երբ մեղադրյալի անհատականացնող տվյալ չի ներառվում, նշվում են մեղադրյալի անվան և ազգանվան առաջին տառերը, իսկ լուսանկար չի հրապարակվում:

Ոստիկանության հրապարակումներում, ընդհանուր առմամբ, նշվում են քրեական հետապնդման ենթարկվող անձի տարիքը, երբեմն՝ բնակության վայրը, զբաղմունքը, իսկ լուսանկարում դեմքի հատվածը մշակվում է այնպես, որ նույնականացնել հնարավոր չլինի: Որոշ դեպքերում հրապարակվում է նաև անձին Ոստիկանության ստորաբաժանում բերման ենթարկելու տեսանյութը, որում ևս, որպես կանոն, դեմքի հատվածը մշակվում է այնպես, որ նույնականացնել հնարավոր չլինի, իսկ որոշ դեպքերում էլ նկարահանումը կատարվում է այնպիսի դիրքից, որ անձի դեմքն առհասարակ տեսանելի չլինի: Չնայած նշված պրակտիկային, արձանագրվել են նաև

---

<sup>320</sup> Տե՛ս Գարիցկին ընդդեմ Լեհաստանի (*Garycki v. Poland*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, 66-րդ կետ:

<sup>321</sup> Տե՛ս Դակթարասն ընդդեմ Լիտվայի (*Daktaras v. Lithuania*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, 41-րդ կետ:

<sup>322</sup> Տե՛ս Բուդկևիչուսն ընդդեմ Լիտվայի (*Butkevicius v. Lithuania*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 48297/99, 50-րդ կետ:

դեպքեր, որ այս չափանիշները չեն պահպանվել, հրապարակվել է անձի անունն ու ազգանունը, ինչպես նաև ցուցադրվել է լուսանկար:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժիններից մեկի կողմից որոնվել է հանցագործություն կատարելու կասկածանքով: Հավելել է, որ ինքնական ներկայացել է Ոստիկանություն և ինքնախոստովանական ցուցմունք տվել: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ դրանից հետո ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրված իր լուսանկարով տեսանյութը՝ «27-ամյա աղջիկը որոնվում է գողության կասկածանքով» վերնագրով, լայն տարածում է ստացել նաև զանգվածային լրատվության այլ միջոցներով: Քաղաքացու տեղեկացմամբ՝ ինքնական ներկայանալուց հետո մինչ Պաշտպանին բողոք ներկայացնելու օրը տեսանյութը չի հեռացվել Ոստիկանության պաշտոնական կայքէջից:

Ըստ պնդման՝ նշված տեսանյութով խախտվել է ոչ միայն իր՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված անմեղության կանխավարկածի սկզբունքը, այլև խախտվում է իր անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքը, ինչպես նաև դրա առկայությունն անմիջական ազդեցություն է ունենում իր ընտանեկան և անձնական կյանքի վրա:

Բողոքի ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրվել է նաև խնդրո առարկա տեսանյութը: Ի գիտություն է ընդունվել տեսանյութում առկա ծանուցումն այն մասին, որ ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ի գիտություն է ընդունվել նաև Ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրված տեսանյութում առկա գրառումը՝ «որոնվում է գողության կասկածանքով» արտահայտությունը:

Հաշվի առնելով, որ միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը պատասխանատվություն է դնում պետության վրա անմեղության կանխավարկածի տեսանկյունից խնդրահարույց իրավիճակներ թույլ չտալու համար, ինչպես նաև այն, որ բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված տեսանյութը չհեռացնելու արդյունքում խախտվում են իր իրավունքները՝ համապատասխան գրագրություն է սկսվել Ոստիկանության հետ: Արդյունքում հարցը ստացել է լուծում և Ոստիկանությունը պաշտոնական կայքից, ֆեյսբուքյան և յուրօրյան էջերից հեռացրել է հրապարակված տեսանյութը:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան Ոստիկանությունը նշել է, որ անմեղության կանխավարկածն ապահովելու նպատակով Ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվական վարչության կողմից պատրաստվող և հրապարակվող նյութերում չեն նշվում բերման ենթարկվածների, կասկածյալների, մեղադրյալների նույնականացման տվյալները, այդ թվում՝ անուն, ազգանուն, հայրանուն, բնակության վայր, զբաղմունք, մասնագիտություն և այլն: Բացի այդ, հիշյալ անձինք տեսանյութերում ներկայացվում են դեմքերը փակված վիճակում, ինչն արվում է տեխնիկական միջոցներով: Հրապարակվող նյութերում արարքին սուբյեկտիվ որակումներ,

գնահատականներ չեն տրվում և շեշտվում է, որ դեպքերը ներկայացվում են ըստ նախնական տվյալների: Տեսանյութերի վերջում՝ ձայնային և տեքստային տարբերակով պարտադիր նշվում է ծանուցում՝ անմեղության կանխավարկածի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկ ուրիշով էլ փաստաբանները տեղեկացրել են, որ ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում քննվող քրեական գործի շրջանակում նախկինում բարձրաստիճան պետական պաշտոն զբաղեցրած անձի կոնկրետ դեպքում՝ նախկին պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի) տանն իրականացվել է խուզարկություն, որից հետո նա հրավիրվել է ԱԱԾ քննչական դեպարտամենտ, որտեղ ձերբակալվել է ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքը կատարելու կասկածանքով: Փաստաբանների հայտնած տեղեկությունների համաձայն՝ ձերբակալելու հաջորդ օրը ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը համացանցում և հեռուստատեսությամբ հաղորդագրություն է տարածել վերը նշվածի մասին: Հավելել են, որ տարածված հաղորդագրությամբ նշվել են մի շարք անհատականացնող տվյալներ, այդ թվում՝ նախկինում զբաղեցրած պաշտոնը և խիստ սուբյեկտիվ գնահատականներ, որոնք հասարակական լայն շերտերում, ինչպես նաև մամուլում, կանխակալ վերաբերմունք են ձևավորում հաղորդագրության մեջ ներկայացված անձի մասին՝ որպես հանցագործություն կատարած անձի՝ դրանով իսկ վնասելով հասարակությունում նրա ունեցած հեղինակությանը:

Ավելին, ըստ փաստաբանների՝ հաղորդագրությանը հաջորդել են նաև հասարակական և քաղաքական գործիչների ամենատարբեր հայտարարությունները՝ կապված քրեական գործի և անձի գործունեությանը, որն էլ ավելի է նպաստել հասարակական բացասական կարծիքի ձևավորմանը:

Բողոքի քննարկման ընթացքում մշտապես կապ է պահպանվել Դ. Տոնոյանի փաստաբանների հետ: Բացի այդ, Պաշտպանն անձամբ այցելել է Դ. Տոնոյանին ազատությունից զրկման վայրում և առանձնազրույց ընթացքում քննարկել բարձրացված խնդիրները:

Փաստաբանների պնդմամբ՝ հաշվի անելով, որ նախաքննությունն իրականացնող մարմնի կողմից Դավիթ Տոնոյանի մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց տեսակցությունների վրա կիրառված արգելանքի պայմաններում նա զրկված է եղել վերոգրյալ հաղորդագրությամբ տարածված տեղեկություններին հրապարակային հակադարձելու հնարավորությունից: Բողոք ներկայացրած անձինք ընդգծել էին, որ այդ պայմաններում ստեղծվել է անհավասար իրավիճակ, որտեղ քրեական հետապնդման ենթարկվող անձը չի ունենում մինչև ազատության մեջ հայտնվելն իր անվան և հեղինակության նկատմամբ ձևավորված հասարակական կարծիքի վնասմանը հակադարձելու տեսական և գործնական իրական հնարավորություն, ինչի արդյունքում հասարակական լայն շերտերում ձևավորվում է հաստատված համոզմունք մեղսագրվող արարքը նրա կողմից հաստատապես կատարված լինելու և դրանում նրա մեղքի առկայության մասին:

Նշված բողոքի քննարկման շրջանակում գրավոր հաղորդակցություն է իրականացվել ՀՀ գլխավոր դատախազության հետ: Դատախազությունը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ ազգային անվտանգության ծառայության հրապարակած հաղորդագրությամբ թույլ չի տրվել մեղադրյալի անմեղության կանխավարկածի խախտում:

Դատախազությունը հղում է կատարել Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում արտահայտած այն դիրքորոշմանը<sup>323</sup>, որ անհրաժեշտ է տարբերակել հայտարարությունները, որոնք արտահայտում են տվյալ անձի մեղավորության վերաբերյալ կարծիք, և հայտարարությունները, որոնք պարզապես նկարագրում են «կասկածի վիճակ»: Վերջինները Եվրոպական դատարանի կողմից քննության առնված տարբեր իրավիճակներում ընդունվել են որպես առարկություն չառաջացնող: Դատախազության գրության համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայության տարածած հաղորդագրությունն, ըստ էության, հանդիսանում է «կասկածի վիճակի ներկայացում»:

Քննարկվող հրապարակման մեջ, ըստ գրության՝ արձանագրվել է, որ նախաքննության փուլում գտնվող քրեական գործով Դ.Տ.-ին առաջադրվել է մեղադրանք, ձևակերպումներ են շարադրվել մեղադրանքից և առկա է անմեղության կանխավարկածի վերաբերյալ ծանուցում: Նաև շեշտադրվել է, որ անմեղության կանխավարկածին քննարկվող ասպեկտով էապես առնչվում է տեղեկատվության ազատությունը, որպես հասարակության անդամներից յուրաքանչյուրի իրավունք՝ տեղեկացված լինելու հանրությանը հետաքրքրող էական հանգամանքների մասին:

Կոնկրետ դեպքով արձանագրված հիմնական խնդիրն այն է, որ իրավապահ մարմինը նախաքննության սկզբնական փուլում հանդես է գալիս հրապարակային հայտարարությամբ, որն իրական ռիսկեր է ձևավորում հասարակության մեջ անձի (առավել ևս նախկին բարձրաստիճան պաշտոնյանի) անունը վարկաբեկելու և հեղինակությունն ու բարի համբավն արատավորելու՝ անգամ վերջում նշված անմեղության կանխավարկածի պարագայում: Կիրառված խափանման միջոցի պայմաններում մեղադրյալը, որպես կանոն, չի ունենում հնարավորություն իր դիրքորոշումը հրապարակային հայտնելու: Ավելին, հետագայում քրեական գործի քննության ընթացքում պարզված հանգամանքները, այդ թվում անձի անմեղության մասին վկայող, չեն հրապարակվում՝ «նախաքննության գաղտնիությունը» պահպանելու պատճառաբանությամբ:

Պաշտպանը կարևոր է համարում խնդրի բարձրաձայնումը՝ հետագայում նման դեպքերը բացառելու նպատակով:

Պաշտպանը հարկ է համարում հատուկ արձանագրել, որ դատական ու իրավապահ մարմինների գործունեության, այդ մարմիններում քննվող գործերի վերաբերյալ տեղեկություններ

<sup>323</sup> Տե՛ս Լուտզն ընդդեմ Գերմանիայի (Lutz v. The Federal Republic of Germany) գործով 1987 թվականի օգոստոսի 25-ի վճիռ, զանգատ թիվ 9912/82, 59-60-րդ կետեր; Էնգլերտն ընդդեմ Գերմանիայի (Englert v. The Federal Republic of Germany) 1987 թվականի օգոստոսի 25-ի վճիռ, զանգատ թիվ 10282/83, 36-37-րդ կետեր; Էնրիկաս Դակտարասն ընդդեմ Լիտվայի (Henrikas Daktaras v. Lithuania), զանգատ թիվ 42095/98, 2000 թվականի հունվարի 11-ի զանգատի ընդունելիության վերաբերյալ որոշումը:

լրատվամիջոցներով ստանալը մարդու հիմնարար իրավունքներից է: Դա խոսքի ազատության կարևոր բաղադրիչ է:

Եվ այստեղ կարևոր և պատասխանատու է լրագրողի աշխատանքը: Բայց այն պետք է հիմնված լինի իրավունքի գերակայության ու քրեական վարույթին ներգրավված անձի իրավունքների նկատմամբ հարգանքի վրա: Լրագրողները պետք է ունենան քրեական արդարադատության ոլորտին վերաբերող տեղեկություններ ստանալու և ազատորեն տարածելու հնարավորություն:

Դրա հետ միասին, Հայաստանի միջազգային պարտավորությունները կոնկրետ քրեական գործերին վերաբերող տեղեկություններ լրագրողների տարածելու հարցում առաջադրում են հատուկ պահանջներ: Մասնավորապես, «Լրատվամիջոցներով քրեական վարույթներին վերաբերող տեղեկությունների տրամադրման մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2003)13 հանձնարարականի 2-րդ սկզբունքի համաձայն՝ անմեղության կանխավարկածի նկատմամբ հարգանքն արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մաս է: Ըստ նշված միջազգային կանոնի՝ հետևաբար, ընթացիկ քրեական վարույթին վերաբերող կարծիքները և տեղեկությունները կարող են տրամադրվել կամ տարածվել լրատվամիջոցներով, եթե դա չի խախտում կասկածյալի կամ մեղադրյալի անմեղության կանխավարկածը: Նույն հանձնարարականը մեղադրյալին վերապահում է պաշտպանության արդյունավետ միջոցի հնարավորություն, եթե խախտվել է արդար դատաքննության իրավունքը:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) «Լրագրության էթիկայի մասին» թիվ 1003 (1993) բանաձևի 22-րդ կետի համաձայն՝ լրագրության մեջ տեղեկությունները և կարծիքները պետք է հարգեն անմեղության կանխավարկածը, հատկապես այն գործերով, որոնք դեռ ավարտված չեն և պետք է ձեռնպահ մնալ գնահատականներից: Հետևաբար, անմեղության կանխավարկածի հիմնարար սկզբունքը պետք է պահպանվի նաև լրատվամիջոցների ու լրագրողների աշխատանքում: Սա բխում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Դյու Ռոյը և Մալոդին ընդդեմ Ֆրանսիայի գործով<sup>324</sup> վճռի 34-րդ կետից, որի համաձայն՝ ընթացիկ քրեական վարույթի վերաբերյալ նյութ պատրաստող լրագրողները պարտավոր են հարգել մեղադրյալի անմեղ համարվելու իրավունքը:

***Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ ցանկացած պարագայում լրատվամիջոցի հրապարակման կամ տեսանյութի ձևակերպումները պետք է լինեն այնպիսին, որ ինքնին չստեղծեն կանխակալ ազդեցություն անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի բացակայության պայմաններում: Խոսքը նաև վերաբերում է հրապարակմամբ օգտագործվող ձևակերպումներին ու բառապաշարին:***

---

<sup>324</sup> Տե՛ս Դյու Ռոյը և Մալոդին ընդդեմ Ֆրանսիայի (Du Roy and Malarie v. France) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2000 թվականի հոկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 34000/96, 34-դ կետ:

Հանրային ու հատկապես՝ իրավապահ մարմիններն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են խստորեն պահպանել անմեղության կանխավարկածի հիմնարար պահանջն՝ իր բոլոր բաղադրիչներով: Այդ պահանջի խաթարումը խնդրահարույց է ոչ միայն անձի իրավունքների, այլ նաև քննության որակի ու արդյունքների նկատմամբ հավաստիության տեսանկյունից: Հրապարակման համար լրատվամիջոցներին տեղեկություններ տրամադրելիս անմեղության կանխավարկածի երաշխավորման սկզբունքով ղեկավարվելը պարտադիր է:

Մարդու իրավունքների պաշտպանը տարբեր ժամանակներում հրապարակայնորեն ներկայացրել է նշված դիրքորոշումները: Հարկ է կրկին ընդգծել, որ այն դեպքերում, երբ խոսքը գնում է պետական պաշտոնյաների՝ օրենսդիր, գործադիր կամ դատական իշխանության ներկայացուցիչների մասին կարևոր է առավելագույնս ապահովել մինչդատական քրեական վարույթի գաղտնիությունը: Նշվածը պետք է դիտարկել ոչ միայն անձի անմեղության կանխավարկածի, այլև պետական համակարգի հեղինակության տեսանկյունից: Պետական գործիչների վերաբերյալ քրեական գործի վարույթին առնչվող տեղեկությունների հրապարակումը ողջամտորեն կարող է կասկածներ հարուցել առհասարակ կոնկրետ պետական մարմնի աշխատանքի նկատմամբ, խաթարել դրա նակատմամբ քաղաքացու վստահությունը:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ *պետական իրավասու մարմինները պետք է առավել ուշադիր լինեն անձի մեղավորության վերաբերյալ գնահատականներում՝ բացառելով մինչև իրավասու դատարանի օրինական ուժի մեջ մտած դատական ակտի առկայությունը նրա մեղավորության վերաբերյալ որևէ կանխակալ վերաբերմունք: Ասվածը հատկապես կարևորվում է պետական մարմինների, մասնավորապես իրավապահ առաքելություն իրականացնող մարմնի, պաշտոնական լրատվական միջոցներով որոշակի գնահատականի մասով:*

Անհրաժեշտ է արձանագրել նաև, որ անմեղության կանխավարկածի օրենսդրական ձևակերպումը «վազող տողի» միջոցով հրապարակման վերջում տեղադրելը դեռևս բավարար երաշխիք չէ անմեղության կանխավարկածի պահպանման տեսանկյունից: Ուստի անհրաժեշտ է հետամուտ լինել, որ հրապարակումների բովանդակությունը, դրանում առկա ձևակերպումները լինեն այնպիսին, որ ընթերցողը հստակ գիտակցի, որ դրանք զուտ նախնական տեղեկություններ են և ենթակա են քննարկման դատարանի կողմից:

Միաժամանակ Պաշտպանը կարևոր է համարում կրկին ընդգծել, որ իրավապահ մարմինները զանգվածային լրատվության միջոցներին փոխանցեն տեղեկություններ այնպիսի ծավալով, որ այդ տեղեկությունների հրապարակումն անձի իրավունքների երաշխավորման առումով խնդրահարույց չլինի: Չպետք է մոռանալ, որ ի տարբերություն զանգվածային լրատվության միջոցների, իրավապահ մարմիններն իրականացնում են մասնագիտական գործունեություն և իրենց լիազորությունների շրջանակում համարվում են մարդու իրավունքի պաշտպանության երաշխավոր և պատասխանատու:

## **2. Հանցագործությունների վերաբերյալ ֆիզիկական անձանց հաղորդումները չքննարկելու և հաղորդումն ընդունող մարմնի հայեցողության պրակտիկան**

Հանցագործությունների մասին հաղորդումների քննարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի գործնական ապահովման խնդիրներին ևս Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձ է կատարել 2017, 2018, 2019 և 2020 թվականի տարեկան հաղորդումներով<sup>325</sup>:

Պետք է նշել, որ այս հարցերով 2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՀՀ ոստիկանության միջև տեղի են ունեցել մի շարք քննարկումներ: Դրական է այն, որ ՀՀ ոստիկանության պետը կարևոր հանձնարարականներ է տվել ոլորտի խնդիրները վերացնելու և պրակտիկան բարելավելու ուղղությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2021 թվականին ևս բողոքներ են ստացվել այն մասին, որ Ոստիկանության ծառայողների կողմից հանցագործության մասին հաղորդումները քննարկելիս ոչ բոլոր դեպքերում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով կայացման ենթակա որոշումներից որևէ մեկը: Նման դեպքեր արձանագրվել են նաև իրավապահ այլ մարմինների գործունեության ընթացքում:

Ոստիկանությունից ստացված պարզաբանման համաձայն՝ թեև նշված հարցի կապակցությամբ առանձին հաշվառում ՀՀ ոստիկանությունում չի տարվում, սակայն հայտնաբերված դեպքերով ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվել են 2, իսկ Երևան քաղաքի վարչությունում՝ 5 ծառայողական քննություններ: Նշել են, որ դրանց արդյունքներով ոստիկանության 7 ծառայողներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, մեկը՝ խիստ նախազգուշացվել է:

Միաժամանակ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացության օրինակներն ուղարկվել են ենթակա ստորաբաժանումներ՝ հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու ուղղությամբ համապատասխան հանձնարարականներ տալու համար, բացի այդ, հանձնարարվել է հայտնաբերված փաստի կապակցությամբ ՀՀ քրեական դատավարության 180-181-րդ հոդվածներով նախատեսված կարգով նախապատրաստել նյութեր:

Նույն հարցի վերաբերյալ Դատախազությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում հանցագործության մասին հաղորդումները ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով չքննարկելու և որոշում չկայացնելու վերաբերյալ արձանագրվել է 75 դեպք: Ըստ Դատախազության՝ այդ կապակցությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, մասնավորապես՝ 36 դեպքով առերևույթ հանցագործության մասին տեղեկություններ չպարունակելու վերաբերյալ քաղաքացիներին տրվել է համապատասխան պարզաբանում, 37 դեպքով համապատասխան հանձնարարություններ են տրվել ՀՀ քրեական դատավարության

<sup>325</sup> Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2017 թվականի (էջ 194-199), 2018 թվականի (էջ 288-291), 2019 թվականի (էջ 281-284) և 2020 թվականի (էջ 462-467) տարեկան հաղորդումներում



օրենսգրքի 180-181-րդ հոդվածով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու վերաբերյալ, 2 դեպքով ներկայացվել է ծառայողական քննություն կատարելու միջնորդություն, որի քննարկման արդյունքներով կիրառվել են կարգապահական ներգործության միջոցներ:

Արձանագրված դեպքերից մեկով քաղաքացին Պաշտպանին հասցեագրված բողոքով հայտնել է, որ Ոստիկանության ծառայողներն իրեն և որդուն ֆիզիկական բիրտ ուժի կիրառմամբ անհիմն տեղափոխել են Ոստիկանության բաժին, որտեղ հրաժարվել են տվյալները գրանցել բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանում: Անձը նշել է, որ այդ ընթացքում Ոստիկանության ծառայողների կողմից տարբեր կերպ ոտնահարվել են իր իրավունքները: Տեղեկացրել է, որ Ոստիկանության բաժնում հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու ցանկություն է հայտնել, սակայն իրեն նման հնարավորություն չի տրվել:

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ Ոստիկանության ծառայողներն այցելել են իր բնակության վայր՝ դատավարական գործողություններ կատարելու համար բերման ենթարկելու նպատակով: Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ քույրը բերման ենթարկելու ընթացքում խնդրել է, որ Ոստիկանության ծառայողները լքեն իրենց բնակության վայրը, ինչից հետո ոստիկանները քաշքշել են իրենց և բացել տան դուռը, ապա շարունակել են քաշքշել իրեն, հարվածներ են հասցրել գլխի շրջանում, գցել գետնին, ինչից հետո ոտքերով բազմաթիվ հարվածներ են հասցրել մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով ֆիզիկական ցավ և մարմնական վնասվածքներ: Նշել է նաև, որ դրանից հետո իրեն նստեցրել են Ոստիկանության ավտոմեքենա և տեղափոխել Ոստիկանության բաժին:

Քաղաքացու պնդմամբ՝ Ոստիկանության բաժիններից մեկի պետը հարվածներ է հասցրել իր մարմնի տարբեր մասերին, ինչպես նաև իր հասցեին հնչեցրել է հայիոյանքներ: Ապա իրեն ստիպել են ստորագրել որոշակի փաստաթղթերի տակ, որոնք ստորագրել է՝ չզիտակցելով դրանց նշանակությունը: Տեղեկացրել է նաև, որ հիվանդանոցում արձանագրվել են նաև իր մոտ առկա վնասվածքները:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ այցելել է Ոստիկանություն՝ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու համար, սակայն հաղորդումը ոստիկանության ծառայողների կողմից չի ընդունվել:

Նշված դեպքերով իրավապահ մարմինների հետ իրականացվել է համապատասխան գրագրություն և քաղաքացիների հանցագործության մասին հաղորդումներն ընդունվել են, սահմանված կարգով իրավասու մարմիններում նախապատրաստվել են նյութեր:

Պաշտպանին ներկայացված բողոքները փաստում են, որ հանցագործության մասին հաղորդումը որպես ահազանգ դիտարկելու, ստուգման ընթացակարգը եզրակացությամբ ավարտելու, հաղորդում ներկայացրած անձին չպատասխանելու կամ գրությամբ պատասխանելու անընդունելի պրակտիկան շարունակվում է:

Մարդու իրավունքների պաշտպանի բողոքների քննարկման արդյունքները թույլ են տալիս արձանագրել, որ իրավապահ մարմինների կողմից հանցագործության մասին հաղորդումն

ընդունելուց և գրանցելուց հրաժարվելու նախկինում ձևավորված պրակտիկան, ընդհանուր առմամբ, շտկվել է: Այնուամենայնիվ, առանձին դեպքերում ահազանգեր են ներկայացվել նաև այդ մասին, նման դրսևորումները հիմնականում անհապաղ լուծում են ստացել իրավասու մարմինների հետ համագործակցության շրջանակում: Դրանից բացի, երբեմն, երբ Պաշտպանի ներկայացուցիչները քաղաքացիներին առաջարկել են իրենց հայտնի տեղեկությունների վերաբերյալ ներկայացնել հանցագործության մասին հաղորդում, նրանք հայտնել են մտահոգություններ այն մասին, որ հնարավոր է հաղորդումը պատշաճ չարձանագրվի կամ քննության չառնվի:

Հանցագործության մասին հաղորդումներին ընթացք տալու օրենսդրական կարգավորվածության առումով հարկ է առանձնացնել ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից հանցագործությունների, վարչական իրավախախտումների, պատահարների վերաբերյալ հաղորդումներն ընդունելու, գրանցելու, հաշվառելու և դրանց ընթացք տալու կարգը սահմանելու մասին» թիվ 1495-Ն որոշման ընդունումը<sup>326</sup>: Մասնավորապես, որոշման 62-րդ կետն ամրագրում է, որ հանցագործության մասին հաղորդումների ստուգումն իրականացվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ, որի արդյունքում ընդունվում է նույն օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը:

Որպես խնդրի լուծմանն ուղղված կարգավորում՝ Կառավարության որոշմամբ նախատեսվում է նաև քաղաքացիների իրավունքների պարզաբանմամբ կտրոն-ծանուցագրերի տրամադրում՝ անձանց իրազեկվածությանը նպաստելու նպատակով: Կառավարության վերը նշված որոշման ընդունումն ինքնին դրական է այն առումով, որ այդպիսով ամրագրվեցին իրավախախտումների ընդունման, գրանցման, հաշվառման և ստուգման ոչ դատավարական հարցերի կարգավորման իրավական հիմքերը<sup>327</sup>: Հարկ է նկատել, որ Կառավարության որոշմամբ ամրագրված՝ քրեական դատավարության օրենսգրքի պահանջների պահպանմամբ ստուգում իրականացնելու պահանջը վերաբերում է հանցագործության մասին հաղորդմանը: Մինչդեռ, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքներում բարձրացված բուն խնդիրն էլ այն է, որ անձանց հաղորդումները, որպես այդպիսին, չեն դիտարկվել իբրև հանցագործության մասին հաղորդում:

Ասվածի հետ կապված, Կառավարության որոշման՝ հասկացությունները սահմանող 3-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության մասին հաղորդումները՝ Հայաստանի Հանրապետության

<sup>326</sup> Որոշումն ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

<sup>327</sup> Բանն այն է, որ մինչև Կառավարության վերոնշյալ որոշման ընդունումը՝ այդպիսի իրավական հիմք էին ծառայում ՀՀ գլխավոր դատախազի և Ներքին գործերի նախարարի 1999 թվականի թիվ 12/354 համատեղ հրամանի պահանջները: Մինչդեռ, այդ հրամանի՝ որպես նորմատիվ իրավական ակտի պետական գրանցումն ապահովված չէր «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

քրեական դատավարության օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով նախատեսված քրեական գործ հարուցելու առիթներն են:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածը սահմանում է, որ «Քրեական գործ հարուցելու առիթներն են՝

1) հանցագործությունների մասին ֆիզիկական և իրավաբանական անձանց հաղորդումները՝ ուղղված հետաքննության մարմնին, քննիչին, դատախազին,

2) հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները,

3) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:»:

Իսկ օրենսգրքի 177-179-րդ հոդվածներով կարգավորվում են քրեական գործ հարուցելու վերը նշված առիթներին ներկայացվող առավելապես տեխնիկական պահանջները (ռեկվիզիտները): Ասվածը նշանակում է, որ հանցագործության մասին հաղորդմանը, որպես այդպիսին, ներկայացվող բովանդակային պահանջ օրենսդրորեն նախատեսված չէ:

Այդ բովանդակային պահանջները հստակեցված են ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային դիրքորոշումներով: Մասնավորապես՝

- քրեական գործ հարուցելու առիթ կարող է հանդիսանալ ոչ թե ցանկացած, այլ միայն հանցագործության մասին արված հաղորդումը.

- առիթը պայման է, որի առկայության դեպքում օրենքը լիազորում է իրավասու մարմիններին և պաշտոնատար անձանց մտնել իրավահարաբերությունների մեջ, կատարել գործողություններ, որոնք իրենց միասնությամբ ներկայացնում են քրեական դատավարության սկզբնական փուլի գործունեություն.

- կոնկրետ հանցագործության մասին տվյալներ բովանդակելու պահանջը, սակայն, չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար.

- հաղորդման մեջ պարունակվող տեղեկությունները կարող են բավարար լինել այն քննարկելուն, ստուգելուն և լուծելուն ուղղված օրենսդրական կարգավորումները (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներ) գործողության մեջ դնելու համար, եթե ողջամիտ հավանականություն կա, որ դրանց ստուգման արդյունքում կարող են հայտնաբերվել, այլ ոչ թե հաստատապես հայտնաբերվելու են քրեական գործ հարուցելու բավարար հիմքեր.

• այդ չափանիշին համապատասխանող յուրաքանչյուր հաղորդում առաջացնում է վարույթ իրականացնող մարմնի պարտականությունը դրա կապակցությամբ կայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից մեկը<sup>328</sup>:

Ասվածի հաշվառմամբ, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ **հաղորդումների քննարկման և լուծման դատավարական ընթացակարգի նախաձեռնումը պայմանավորված է ոչ թե հանցագործության մասին ներկայացված տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման արդյունքներով, այլ հիմնված է նախնական ստուգման արդյունքների, այսինքն՝ այն եզրահանգման վրա, որ ներկայացված հաղորդման մեջ առկա են տվյալներ, որոնք կարող են որևէ կերպ առնչվել քրեական օրենքով արգելված արարքին:**

Այս առումով, կարծում ենք, որ հաղորդումն ընդունող մարմնի հայեցողությունը, դրա հիման վրա ընթացակարգ նախաձեռնելու առումով, պետք է սահմանափակվի միայն ներկայացված տեղեկության՝ ենթադրյալ հանցագործության հետ հնարավոր կապի ստուգմամբ՝ առանց իրավական գնահատական տալու դրանց ճշմարտացիությանն ու հիմնավորվածությանը:

Ավելին, պետք է նաև նշել, որ օրենքը քրեական հետապնդման մարմնին չի էլ վերապահել մինչև քրեական գործի հարուցումը լայն գործիքակազմ հանցագործության մասին տեղեկության արժանահավատության և հավաստիության գնահատման համար: Այսինքն՝ քրեական վարույթի կոնկրետ փուլում օրենքը նման բարձր չափանիշի բավարարման պահանջ հասկանալիորեն չի էլ դրել: Գործող օրենսդրությամբ՝ քննչական կամ այլ դատավարական գործողությունները ողջ ծավալով «հասանելի են դառնում» վարույթն իրականացնող մարմնին միայն քրեական գործը հարուցելուց հետո:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրմամբ կարելի է արձանագրել նաև, որ մարդիկ իրազեկ չեն Վճռաբեկ դատարանի դիրքորոշումներին: Բազում դեպքերում անձինք դիմում են Ոստիկանություն, համոզված լինելով, որ իրենց կողմից ներկայացվածը հանցագործության մասին հաղորդում է՝ անտեղյակ լինելով Վճռաբեկ դատարանի կողմից հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդմանն առաջադրվող չափանիշներին: Ուստի նաև ակնկալում են, որ այն կրնդունվի որպես հանցագործության մասին հաղորդում և օրենքով սահմանված կարգով ընթացք կտրվի: Նման դեպքերում Պաշտպանի աշխատակազմի կողմից անձանց պարզաբանվում են Վճռաբեկ դատարանի համապատասխան դիրքորոշումները: Հետևաբար, անհրաժեշտ է Ոստիկանություն դիմած անձին որևէ եղանակով իրազեկել Վճռաբեկ դատարանի որոշումներով հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդումներին առաջադրվող չափանիշների մասին: Չնայած նման առաջարկ ներկայացվել էր նաև Մարդու

<sup>328</sup> Հանցագործությունների մասին հաղորդումների ընդունման և քննարկման՝ քրեադատավարական կարգավորումների, ինչպես նաև ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը տե՛ս նաև 2016 թվականի տարեկան զեկույցի էջեր 137-140:

իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ, սակայն գործնականում այդ առումով փոփոխություններ չեն արձանագրվել:

Հատկանշական է նաև, որ հանցագործության մասին հաղորդմամբ բովանդակվող տեղեկությունների օրենսդրական կարգավորման մոտեցում է որդեգրվել 2021 թվականին ընդունված Քրեական դատավարության նոր օրենսգրքում, որի 173-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համապատասխան հաղորդումը համարվում է առերևույթ հանցանքի մասին, եթե դրանով փաստվում է այնպիսի դեպք կամ գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական:

Բացի այդ, Քրեական դատավարության նոր օրենսգրքի նույն հոդվածում որպես քրեական վարույթ նախաձեռնելու առիթ դիտարկվում են ֆիզիկական անձից, իրավաբանական անձից, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ ներկայացված հանցանքի մասին պատշաճ հաղորդումները: Քրեական դատավարության նոր օրենսգրքի 174-177-րդ հոդվածներում նկարագրված է ֆիզիկական անձի կողմից անմիջականորեն, ֆիզիկական կամ իրավաբանական անձի փոստային, Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի, Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի, քննիչի, դատախազի կամ դատավորի կողմից հանցագործության հաղորդում ներկայացնելու կարգը:

Ողջունելի է Քրեական դատավարության նոր օրենսգրքում նման դրույթների ներառումը, որոնք սահմանում են հանցագործության մասին հաղորդման համար հատուկ չափանիշներ: Միևնույն ժամանակ, սակայն, հարկ է ընդգծել, որ վերոնշյալ հոդվածներում առանձնացված են հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու վերաբերյալ բացառապես ձևական (ֆորմալ) բնույթի չափանիշներ: Օրենսգրքում ներառված չեն դրույթներ, որոնք կվերաբերեն հաղորդման մեջ նշվող տեղեկատվության չափանիշներին և կոնկրետ հանցագործության մասին տվյալներ բովանդակելու պահանջին:

Խնդրի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի իրավական գնահատականները, Քրեական դատավարության գործող և 2022 թվականին ուժի մեջ մտնող նոր օրենսգրքի պահանջները, կարծում ենք, ապահովում են բավարար որոշակիություն՝ հանցագործության մասին հաղորդման ստուգման և քրեադատավարական ընթացակարգերի կիրառման առումով: Այդուհանդերձ, «հանցագործության մասին հաղորդման» հասկացության օրենսդրական ամրագրումը՝ Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով սահմանված տարրերի ու հատկանիշների արտացոլմամբ, կարող է նպաստել իրավակիրառ պրակտիկայում բարձրացված խնդիրների բացառմանը:

*Վերը նշվածի հաշվառմամբ անհրաժեշտ է.*

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ամրագրել «հանցագործության մասին հաղորդման» հասկացությունը՝ օրենսդրական մակարդակում հստակեցնելով հաղորդման բովանդակությանը ներկայացվող պահանջները՝ իբրև քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու առումով,

2. հանցագործությունների վերաբերյալ քաղաքացիների հաղորդումները քննարկելիս գործնականում ապահովել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջները՝ Վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավամեկնաբանման հաշվառմամբ: Քրեադատավարական օրենքի դրույթները պետք է անվերապահորեն կիրառվեն հանցագործությունների վերաբերյալ հաղորդումների ընդունման հենց սկզբնական փուլից,

3. տարբեր եղանակներով հաղորդում ներկայացնող անձին իրազեկել Վճռաբեկ դատարանի որոշումներով հստակեցված՝ հանցագործության մասին հաղորդումներին առաջադրվող չափանիշների մասին (օրինակ՝ Ոստիկանության բաժիններում տեսանելի վայրերում փակցնել այդ մասին տեղեկատվական թերթիկներ):

### **3. Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորումը և գործնական ապահովումը**

Բացատրություն անձից իրավապահ մարմինները վերցնում են սովորաբար վարույթի սկզբնական փուլերում: Կան նաև դեպքեր, երբ բացատրություն վերացնում են նաև քրեական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմինները քրեական վարույթի որևէ փուլում: Հատկապես սկզբնական փուլերում է դիսկային բացատրություն վերցնելն անձի իրավունքների տեսանկյունից: Այստեղ է իրավունքների խախտումների անօրինական ճնշումների, անօրինական հետապնդումների ենթարկվելու ռիսկը:

Լռություն պահպանելու և իր դեմ ցուցմունք չտալու իրավունքները Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի անկյունաքարն են հանդիսանում:

Այդ իրավունքներն ունեն նաև սահմանադրաիրավական երաշխիքներ. 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 65-րդ հոդվածով սահմանվում է, որ ոչ ոք պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների վերաբերյալ, եթե ողջամտորեն ենթադրելի է, որ այն հետազայում կարող է օգտագործվել իր կամ նրանց դեմ:

Անձի հիմնական իրավունքները և ազատություններն օրենքով սահմանափակելիս սահմանադրաիրավական սկզբունքների հետևողական կենսագործման հրամայականը հատկապես կարևորվում է քրեական արդարադատության ոլորտում, որտեղ անձի իրավունքների խախտման վտանգն ավելի մեծ է:

Այս առումով, հարկ է անդրադառնալ քրեական գործով վարույթի շրջանակներում բացատրություններ տալիս համապատասխան դատավարական երաշխիքների ապահովման խնդրին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածից բխում է, որ հանցագործության մասին ներկայացված հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցելու հարցը լուծելիս վարույթն իրականացնող մարմինը կարող է, ի թիվս այլնի, պահանջել նաև բացատրություններ: Այլ կերպ՝ քրեական գործ հարուցելու առիթն օրինական և հիմքերը բավարար լինելու հարցը որոշելու տեսանկյունից վերցված բացատրությունը կարող է էական նշանակություն ունենալ և հիմք հանդիսանալ քրեական գործ հարուցելու համար: Շատ հաճախ նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք էլ հետագայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

Ակնհայտ է, որ բացատրությունները վերցվում են հարուցված քրեական գործի շրջանակներից դուրս և այն անձանցից, ովքեր դեռևս չունեն որևէ դատավարական կարգավիճակ, իսկ քրեական դատավարության օրենսդրությամբ բացատրություն վերցնելու ընթացակարգ նախատեսված չէ: Բացակայում են անհրաժեշտ օրենսդրական լծակները, որոնք կպարտավորեցնեն վարույթն իրականացնող մարմնին անձին տեղեկացնելու իր իրավունքների և պարտականությունների (հատկապես՝ լռություն պահպանելու, բացատրություն չտալու իրավունքի), համապատասխան գործողության արդյունքում վրա հասնող հնարավոր հետևանքների վերաբերյալ:

Ուստի, համապատասխան կանոնակարգումների բացակայությունը կարող է հանգեցնել բացատրություն տված անձի իրավունքների անհամաչափ սահմանափակման, քանի դեռ օրենսդրորեն անձին իր նվազագույն իրավունքների մասին իրազեկելու և դրանց իրացումն ապահովելու անհրաժեշտ երաշխիքներ չեն նախատեսվել:

Այս առումով, հարկ է նշել, որ ըստ ՀՀ ոստիկանությունից ստացված տեղեկության՝ ՀՀ ոստիկանության պետի 31.03.2020թ. թիվ 17-Լ և թիվ 18-Լ հրամանների ուժի մեջ մտնելուց ի վեր՝ տեսաձայնագրման համակարգերով հասցեագրված ոստիկանության ստորաբաժանումների համապատասխան աշխատասենյակներում իրականացվել և տեսաձայնագրվել են 245 հարցաքննություններ, որոնցից 128-ը 2020թ. 8 ամիսների, իսկ 117-ը 2021թ. ընթացքում: Հարցաքննության կանչված անձինք ունեցել են վկայի, տուժողի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակ:

Հատկանշական է, որ ըստ Ոստիկանության տրամադրած տեղեկության՝ անձից բացատրություն վերցնելու ընթացքում տեսաձայնագրություն չի իրականացվում և հաշվառում չի տարվում: Օրենքով տեսաձայնագրվում է դատավարական կարգավիճակ ունեցող վերը նշված սուբյեկտների հարցաքննությունը:

Ստացվում է, որ օրենսդրական հիմքերի բացակայությամբ պայմանավորված անձից բացատրություն վերցնելու գործընթացը չի տեսաձայնագրվում, ինչի արդյունքում նա զրկվում է լրացուցիչ երաշխիքներից:

Բացատրություն տալիս անձի իրավունքների երաշխավորման և գործնական ապահովման պատշաճ մեխանիզմների բացակայության մասին անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2017, 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ շարունակվել են ստացվել բողոքներ, հատկապես՝ Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի միջոցով, այն մասին, որ նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում չեն պահպանվում բացատրություններ տվողի համապատասխան դատավարական երաշխիքները: Այլ խոսքով, բացատրություն տվող անձինք մինչ փաստի առթիվ իրենց հայտնի տեղեկությունները տրամադրելը պատշաճ կերպով չեն տեղեկացվում Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի երաշխավորված իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ: Չնայած դրանց, գերակշիռ դեպքերում նյութերի նախապատրաստման փուլում բացատրություն տված անձինք կամ նրանց մերձավոր ազգականները հետազայում՝ արդեն իսկ հարուցված վարույթի շրջանակներում, հայտնվում են կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակում:

Օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում մեծապես խախտվում է անձի բացատրություն տալու նպատակով վարույթն իրականացնող մարմին կանչելու մասին պատշաճ ծանուցվելու իրավունքը:

Մասնավորապես, ինչպես նախկինում, այնպես էլ 2021 թվականի ընթացքում բողոքներ են ստացվել այն մասին, որ ՀՀ ոստիկանությունից հեռախոսով կանչում են բացատրություն տալու: Քաղաքացիները մեծամասամբ ցանկանում են տեղեկանալ չներկայանալու իրավական հետևանքների մասին:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը բացատրություն տալու հնարավորություն նախատեսելով հանդերձ՝ չի նախատեսում ինչպես բացատրություն վերցնելու, այնպես էլ անձին բացատրություն տալու նպատակով կանչելու կարգ: Սա հանգեցնում է քրեական հետապնդման մարմինների կողմից կամայական վերաբերմունքի: Մասնավորապես, հարցաքննության կանչելու վերաբերյալ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավակարգավորումները կամայականորեն և խեղաթյուրված կերպով կիրառում են բացատրություն տալու նկատմամբ. գրավոր ծանուցագիր չուղարկելով հանդերձ, անձին զգուշացնում են չներկայանալու դեպքում բերման ենթարկելու հնարավորության մասին: Նման պրակտիկան անթույլատրելի է, քանի որ քրեական վարույթի ամենասկզբնական փուլում դրվում են անձի իրավունքների ոտնահարման հիմքերը:

2020 և 2021 թվականների ընթացքում բողոքներ են ստացվել նաև բացատրություն տալու նպատակով անձանց նրանց կամքին հակառակ բերման ենթարկելու վերաբերյալ: Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իրավապահ մարմինների ներկայացուցիչներն առանց համապատասխան դատավարական երաշխիքների պահպանման անձին ազատությունից զրկում են, սակայն ահազանգերի շրջանակում տեղի ունեցած քննարկումների ընթացքում Պաշտպանի իրավասու ներկայացուցիչներին բանավոր



պարզաբանում են, որ տվյալ անձինք ազատությունից զրկված չեն, իրենց կամքով ներկայացել են և տալիս են բացատրություն: Այս արատավոր պրակտիկան հանգեցնում է նաև անձի անձնական ազատության իրավունքի խախտման:

Անհրաժեշտ է նկատել, որ թեև նյութերի նախապատրաստության ընթացքում անձի տված բացատրությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստով ապացույցի ինքնուրույն տեսակ չէ, այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ բացատրությունը ճանաչվում է որպես այլ փաստաթուղթ և օգտագործվում որպես ապացույց, ինչն անթույլատրելի է: Այդ մասին են վկայում նաև դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքները: Այսպես, օրինակ, 2018 թվականին կայացված դատավճիռներից մեկով առաջին ատյանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով որ «(...) Դատաքննությամբ հետազոտվել են նաև որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված (...) բացատրություն վերցնելու և (...) լրացուցիչ բացատրություն վերցնելու արձանագրությունները:

Դատարանը գտնում է, որ նշված արձանագրությունները չեն կարող օգտագործվել որպես թույլատրելի ապացույց հետևյալ պատճառաբանությամբ. Դատարանն արձանագրում է, որ որպես այլ փաստաթուղթ ապացույց կարող են ճանաչվել այն փաստաթղթերը կամ այլ տեսակի կրիչները, որոնք պատրաստվել, կազմվել և լրացվել են ոչ դատավարական գործունեության ժամանակ: Տվյալ դեպքում ակնհայտ է, որ նշված անձանցից բացատրություններ և լրացուցիչ բացատրություն վերցվել են հետաքննության մարմնի աշխատակցի կողմից դատավարական գործունեություն իրականացնելու պայմաններում և քննիչը, նշված արձանագրությունների վերաբերյալ որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչելու մասին որոշում կայացնելով, դատավարական գործողության էական խախտում է թույլ տվել: Վերոգրյալի հիման վրա դատարանը որոշում է հաստատել որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչված (...), բացատրություն վերցնելու ու (...) լրացուցիչ բացատրություն վերցնելու արձանագրությունները որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիությունը և դրանք հանել ապացույցների ծավալից»<sup>329</sup>:

Այլ քրեական գործով պաշտպանական կողմը միջնորդել է անթույլատրելի ճանաչել այլ փաստաթուղթ ճանաչված փաստացի կասկածյալի կարգավիճակում գտնվելու ընթացքում անձի կողմից տրված բացատրության արձանագրությունը: Այս կապակցությամբ դատարանն արձանագրել է՝ «(...) Դատարանը փաստում է, որ տվյալ դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս պարտավոր է ապահովել արդար դատաքննության իրավունքի մաս կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն և այդ դեպքում միայն բացատրությունը որպես այլ փաստաթուղթ ապացույց ճանաչելը և օգտագործելը չի կարող համարվել անթույլատրելի: Սույն գործի փաստերը վերլուծելով վերը նշված իրավական դիրքորոշումների լույսի ներքո Դատարանն արձանագրում է, որ (...) դեռևս սույն գործով նյութերի նախապատրաստման փուլում, երբ հետաքննության մարմնի կողմից բերման

<sup>329</sup> Տե՛ս թիվ ՍԴ/0035/01/18 գործով 2018 թվականի սեպտեմբերի 4-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=35465847065579997](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=35465847065579997) հղումով:

է ենթարկվել ոստիկանության բաժին փաստացի լինելով կասկածյալի կարգավիճակում, սակայն քրեական գործ հարուցված չլինելու պայմաններում չունենալով իրավական կարգավիճակ, տեղեկացվել է մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող իրավունքների մասին (...), որպիսի պայմաններում բացատրությունն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել արդար դատաքննության իրավունքի խախտման, ուստի Դատարանը գտնում է, որ բացատրությունը որպես այլ փաստաթուղթ ապացուցողական զանգվածում ընդգրկելը տվյալ դեպքում իրավաչափ է, ուստի պաշտպանի միջնորդությունը ենթակա է մերժման»<sup>330</sup>:

Մեկ այլ՝ 2013 թվականին կայացված դատավճիռներից մեկով ևս առաջին ատյանի դատարանն արդարացիորեն այն ճանաչել է անթույլատրելի ապացույց՝ ընդգծելով. «(...) Դատարանը հարկ է համարում նշել, որ նման պրակտիկայի դեպքում մեղադրյալի կողմից ցուցմունքներ չտալու իրավունքը կամ «լռություն պահպանելու» իրավունքը՝ երաշխավորված ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, դառնում է վերացական ու ոչ իրական, քանի որ համանման հանգամանքներում անձի կողմից տրված բացատրությունը տվյալ դեպքում առանց որևէ պատճառաբանության օգտագործվում է նրա դեմ՝ մասնավորապես՝ առանց վերջինիս պարզաբանելու բացատրություններ տալուց հրաժարվելու իրավունքի և նրա կողմից տրված բացատրությունը նրա դեմ օգտագործելու հնարավորության մասին»<sup>331</sup>:

ՀՀ դատախազության կոլեգիան, 2016 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում անդրադառնալով անձից բացատրություն վերցնելու արձանագրությունն այլ փաստաթուղթ ճանաչելու վերաբերյալ առկա պրակտիկայի թույլատրելիության հարցին, արձանագրել է, որ բացատրության արձանագրությունը որպես այլ փաստաթուղթ, այլ ապացույցների թվում կարող է դրվել մեղադրանքի հիմքում, եթե բացատրություն տված անձի հարցաքննությունը հնարավոր չի եղել իրականացնել այնպիսի պատճառներով, որոնք բացառել են նրա՝ նախաքննական մարմին ներկայանալու հնարավորությունը:

Փաստորեն, գործնականում, ըստ էության, չեն բացառվում նյութերի նախապատրաստման ժամանակ անձի տված բացատրությունն այլ փաստաթուղթ ճանաչելը և որպես ապացույց մեղադրանքի հիմքում դնելը: Կարծում ենք՝ քրեադատավարական օրենսդրությամբ համապատասխան կարգավորումներ, հստակ ընթացակարգեր ու անհրաժեշտ իրավական երաշխիքներ նախատեսված չլինելու պայմաններում նման պրակտիկան անթույլատրելի է, քանի որ անխուսափելիորեն հանգեցնելու է անձի հիմնարար իրավունքների, մասնավորապես՝ պաշտպանության իրավունքի խախտման:

<sup>330</sup> Տե՛ս թիվ ՏԴ/0008/01/18 գործով 2018 թվականի մայիսի 22-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=32369622321748403](http://datalex.am/?app=AppCaseSearch&case_id=32369622321748403) հղումով:

<sup>331</sup> Տե՛ս թիվ ԵԱՆԴ/0092/01/12 գործով 2013 թվականի մայիսի 15-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=1125899906864517](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=1125899906864517) հղումով:

Պետք է նկատել նաև, որ եթե նույնիսկ բացատրությունները չդրվեն մեղադրանքի և կայացվող դատական ակտերի հիմքում, այնուամենայնիվ դրանք վարույթի համար ունեն առանցքային նշանակություն, քանի որ շատ հաճախ հենց անձի տված բացատրությունն է քրեական գործ հարուցելու հիմք հանդիսանում, երբեմն նաև քրեական հետապնդում իրականացնելու համար: Ստացվում է, որ առանց հիմնական իրավունքների վերաբերյալ պատշաճ կերպով ծանուցվելու, պաշտպանի բացակայությամբ տրված բացատրությունը կարող է հետագայում օգտագործվել հենց բացատրություն տված անձի դեմ: Բացի այդ, քրեական գործի նյութերում անձի տված բացատրության առկայությունն ինքնին անձի մեղավորության հարցը լուծելիս կարող է որոշակի ազդեցություն ունենալ վարույթն իրականացնող մարմնի մոտ համապատասխան ներքին համոզմունք ձևավորելու հարցում, թեպետ ֆորմալ առումով այն որպես ապացույց չի կարող օգտագործվել: Հետևաբար՝ անձի իրավունքների անհամաչափ սահմանափակումները բացառելու համար անհրաժեշտ է օրենսդրորեն նախատեսել նյութերի նախապատրաստության ընթացքում անձից բացատրություն վերցնելու համապատասխան կառուցակարգ, որը կապահովի վերջինիս՝ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված իրավունքների իրացումն ու կսահմանի համարժեք դատավարական երաշխիքներ:

Միևնույն ժամանակ, բացատրության արձանագրությունը կարող է օգտագործվել քրեական վարույթի ընթացքում, եթե այն տրվել է քրեադատավարական համապատասխան երաշխիքների պահպանմամբ: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հովհաննեսյանն ընդդեմ Բուլղարիայի գործով կայացրած վճռում<sup>332</sup>: Դատարանը, մասնավորապես նշել է, որ երբ քրեական վարույթն իրականացնող մարմինը բացատրություն վերցնելիս կասկածյալի հնարավոր կարգավիճակ ունեցող անձի համար ապահովել է արդար դատաքննության իրավունքի բաղադրիչը կազմող երաշխիքների կենսագործման իրական հնարավորություն, ապա բովանդակային առումով այդ ապացույցը չի կարող արժեզրկվել, որպիսի պարագայում այն այլ փաստաթղթի ձևով ապացույցի տեսակ ճանաչելը չի կարող հանգեցնել քրեական վարույթի արդարացիության ապահովման սկզբունքի խախտմանը:

2020 թվականի Տարեկան հաղորդման մեջ Պաշտպանն ընդգծել է, որ ողջունելի է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ նախատեսված է նաև օրենսդրորեն սահմանել բացատրություն վերցնելու կարգ: Այնուամենայնիվ 2022 թվականի փետրվարի 1-ի դրությամբ այդ կարգը չի սահմանվել:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանը հնարավոր է համարում, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելուց հետո ի սպառ կվերացվի այս պրակտիկան, քանի որ դատավարության փուլերի հայեցակարգային նոր մոտեցումներով*

<sup>332</sup> Տե՛ս Հովհաննեսյանն ընդդեմ Բուլղարիայի (Hovhannesyan v. Bulgaria) գործով 2010 թվականի դեկտեմբերի 21-ի վճիռը, գանգատ թիվ 31814/03, 36-44-րդ կետեր:

պայմանավորված օրենսգրքում բացակայում են քրեական գործի հարուցման նախապայտրաստման փուլը և դրանով հանդերձ վերացվում է բացառություն վերցնելու ինստիտուտը:

Միննույն ժամանակ, նկատի ունենալով, որ նոր օրենսգրքի կարգավորումները կսկսեն գործել միայն 2022 թվականի հուլիսի 1-ից, իսկ խախտումները նշված ընթացակարգի բացակայությամբ պայմանավորված շարունակվում են՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ ենթաօրենսդրական ակտի կամ առնվազն հետաքննություն իրականացնող մարմինների ներքին կանոնակարգերի մակարդակում անհրաժեշտ են փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն բացառություն վերցնելու այնպիսի հստակ ընթացակարգ սահմանելուն, որը մինչև նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը կապահովի անձի՝ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ պատշաճ կերպով իրազեկված լինելու, բացառության հնարավոր բացասական հետևանքների մասին տեղեկացվելու իրավունքի կենսագործումը:

#### **4. Քրեական դատավարությանը մասնակցող, ինչպես նաև հանցագործության մասին հաղորդում տվող անձանց պաշտպանությունը**

Քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Սա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված երաշխիք է, որը կոչված է պաշտպանելու քրեական դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը:

Գործող օրենսդրությունը սահմանել է պաշտպանության մի շարք միջոցներ: Քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ, իսկ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

Պաշտպանության միջոցների կիրառման հետ կապված 2019, 2020 և 2021 թվականներին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել էին գրավոր և բանավոր բողոքներ քրեական գործով տարբեր դատավարական կարգավիճակներ ունեցող անձանց կողմից:

Ընդ որում, քննության նպատակով դատարան ուղարկվելու փուլում ևս տուժողները մտավախություն ունեն, որ թեև տվյալ պահին իրենց անձնական անվտանգությունն ապահովվում է, սակայն նույնիսկ տվյալ անձանց դատապարտվելուց հետո կարող են ունենալ անվտանգության խնդիր:

2021 թվականի ընթացքում անվտանգության միջոցների կիրառման վերաբերյալ քրեական վարույթի շրջանակում իրենց անվտանգության ապահովման մասին մտահոգություններ են ներկայացրել դատավարական տարբեր կարգավիճակներ ունեցող կամ հաղորդում տվող անձինք:

Օրինակ՝ քաղաքացին բողոքով տեղեկացրել է, որ իր որդին կատարել է դրամական գործարքներ: Որդին ամբողջությամբ վերադարձրել է նշված անձանց գումարը, ինչն ապացուցվել է դատական վարույթում, սակայն նշված քաղաքացիները քրեական ենթամշակույթի ներկայացուցիչների հետ միասին չնայած իրավապահ մարմինների կողմից նախազուշացված լինելուն և քրեական գործ հարուցված լինելուն, պարբերաբար զանգահարում են որդուն, այցելում նրա աշխատավայր, ահաբեկում՝ պահանջելով վերադարձնել գումարը: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ իր ընտանիքի անվտանգությունն ապահովելու նպատակով քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացրել է պաշտպանության միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդություններ: Հավելել է, որ նույն խնդրով դիմումներ է հասցեագրել նաև մի շարք պետական մարմինների: Ըստ պնդման՝ ստացել է պատասխաններ առ այն, որ իր դիմումները կքննարկվեն քրեական գործի վարույթի շրջանակում, սակայն արդեն շուրջ 10 ամիս իր միջնորդությունների քննարկման արդյունքների վերաբերյալ որևէ վերջնական որոշում չի կայացվել:

Նշված դեպքի առնչությամբ գրություն է հասցեագրվել Գլխավոր դատախազություն, որի արդյունքում դատախազության կողմից վարույթն իրականացնող մարմնին տրվել է ցուցում և հանձնարարվել է պաշտպանության միջոց կիրառելու միջնորդության վերաբերյալ կայացնել համապատասխան որոշում:

ՀՀ դատախազության տեղեկացմամբ՝ 2021 թվականի ընթացքում 26 քրեական գործով 30 անձանց նկատմամբ կիրառվել է պաշտպանության միջոց: Մասնավորապես՝ քրեական պատասխանատվության ենթարկելու հավանականության մասին նախազուշացնելը պաշտպանության միջոցը կիրառվել է 4 անձի նկատմամբ ծեծի, սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի, անհետաձգելի միջամտության որոշումը կամ պաշտպանական որոշումը դիտավորությամբ չկատարելու, բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու դեպքերի առթիվ հարուցված 4 քրեական գործով: Ըստ Դատախազության՝ մեկ դեպքում հսկող դատախազի կողմից վերացվել է պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշումը և ցուցում է տրվել այլ պաշտպանության միջոց կիրառելու մասին:

ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում 39 քրեական գործով որոշում է կայացվել 45 անձի նկատմամբ պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին: Ըստ քննչական կոմիտեի պարզաբանման՝ անձի կյանքի և առողջության դեմ ուղղված, սեփականության, բնակչության առողջության, ինչպես նաև հասարակական անվտանգության դեմ

ուղղված հանցագործությունների դեպքերով հարուցված քրեական գործերով կիրառվել են պաշտպանվող անձի անձնական անվտանգությունն ապահովելը, բնակարանը և այլ գույքը պահպանելը, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալները պաշտպանելը, անձին պաշտոնապես նախազգուշացնելը, ծառայության վայրը փոխելը պաշտպանության միջոցները:

Քրեական դատավարության գործող օրենսգրքով ամրագրվել է, որ պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ: Չնայած դրան, այս ինստիտուտի ներդրումից մինչև 2020 թվականը պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները որևէ իրավական ակտով չէին կանոնակարգվել:

Պաշտպանի համոզմամբ հենց ընթացակարգային նորմերի բացակայությունն է գործնականում խնդիրներ առաջ բերում: Ընթացակարգային նորմերի բացակայությամբ է պայմանավորված նաև այն, որ իրավակիրառողները հաճախ խուսափում են կիրառել պաշտպանության միջոցներ:

Նշված խնդրի լուծման նպատակով դեռևս 2019 թվականին մշակվել և Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին էր ներկայացվել քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները սահմանող՝ «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները, ինչպես նաև պաշտպանվող անձի և պաշտպանության միջոցի իրականացման վերաբերյալ տեղեկությունները չհրապարակելու մասին գրավոր նախազգուշացման ձևը սահմանելու մասին» Կառավարության որոշման նախագիծ:

2020 թվականի սեպտեմբերի 3-ին այն ընդունվեց Կառավարության N 1474-Ն որոշմամբ:

Մինչ որոշման ընդունումը նախագիծն ուսումնասիրվել էր Պաշտպանի աշխատակազմում և ընդհանուր առմամբ դրական գնահատելով նախաձեռնությունը, ներկայացվել էին որոշ նկատառումներ: Մասնավորապես.

Նախագծով՝ պաշտպանությունն իրականացվում է այն դեպքում, երբ պաշտպանվող անձի կյանքին, առողջությանը, գույքին, իրավունքներին ու օրինական շահերին իրական վտանգ է սպառնում՝ քրեական դատավարությանն անձի մասնակցությամբ պայմանավորված: Այս կապակցությամբ ներկայացված կարծիքով նշել էինք, որ Քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք: Այսինքն՝ Օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար նշանակություն ունեցող տվյալներ հայտնելու հետևանքով անձի, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը վտանգելու

դեպքում պաշտպանության իրավունք ունեն թե՛ քրեական դատավարությանը մասնակցող, թե՛ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ: Ուստի, գործնականում պաշտպանության միջոց կիրառելու անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև տվյալ անձի և նրա ընտանիքի անդամների ու մերձավորների համար:

Կառավարության որոշմամբ ամրագրվել է, որ պաշտպանությունն իրականացվում է անձի գրավոր դիմումի հիման վրա կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի նախաձեռնությամբ:

Դրանից բացի, Նախագծի ուսումնասիրմամբ պարզվել էր, որ դրանով կարգավորվում են Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված պաշտպանության ոչ բոլոր միջոցները: Օրինակ՝ նախագծի կարգավորումից դուրս էր մնացել պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրը փոփոխելու միջոցը: Ուստի առաջարկվել էր կարգավորումների լիարժեքության տեսանկյունից կարգավորման առարկա դարձնել պաշտպանության բոլոր միջոցները՝ անկախ նրանից, թե դրանք պետք է իրականացվեն Ոստիկանության, թե այլ մարմնի կողմից:

Նշված առաջարկը, սակայն չի ներառվել և նշված որոշմամբ հատուկ ընդգծվել է, որ Քրեական դատավարության օրենսգրքի 98.1-ին հոդվածի 1-ին մասի 3-6-րդ և 8-9-րդ կետերով նախատեսված պաշտպանության միջոցների կատարումը քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշման հիման վրա ապահովում է ոստիկանությունը՝ իրավասու ստորաբաժանումների միջոցով:

Բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ սովորաբար պաշտպանության միջոցները չեն կիրառվում պաշտպանության համար դիմող անձի կողմից հայտնած տեղեկությունների արժանահավատությունը ստուգելու գործնական խնդիրների պատճառով:

Անձի իրավունքների երաշխավորման տեսանկյունից առավել խնդրահարույց է առանց ինքնության մասին տեղեկություններ հրապարակելու դատարանում պաշտպանվող անձին հարցաքննելը: Չնայած, որ այդ դեպքում պաշտպանության է առնվում ցուցմունք տվող անձը, սակայն մյուս կողմից դա կարող է վտանգել մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքը<sup>333</sup>:

Ինչպես երևում է, այս իրավիճակում հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության մեջ նախապատվությունը տրվում է անձի անվտանգությանը, ում կարող է վտանգ սպառնալ: ՄԻԵԴ-ի որոշումներից մեկով նշվել է, որ դատարանի որոշումը չի կարող հիմնվել բացառապես անանուն

---

<sup>333</sup> Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդհանուր հետևությունն այն է, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա ապահովված չէ նրա արդար դատաքննության իրավունքը (օրինակ Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի (Unterperfinger v Austria) գանգատ թիվ 9120/80, 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռ, 31-33-րդ կետեր): Այնուհետև, զարգացնելով իր դիրքորոշումը, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել (Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) (Sadak and others v Turkey №1), գանգատներ թիվ 29900/96 և այլն, 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռ, 65-րդ կետ):

վկայի ցուցմունքի վրա, հակառակ դեպքում խախտվում է պաշտպանության իրավունքը:<sup>334</sup> Նման իրավական մոտեցումն ունի իր հիմնավորումը. մեղադրանքը նախ պետք է հիմնված լինի բավարար ապացուցողական բազայի վրա: Եթե մեղադրանքի կողմը, բացի անանուն վկայի ցուցմունքից, այլ ապացույց չունի, դատարանն իրավունք չունի անձին մեղավոր ճանաչել: Վկաների դասակարգման համար բավարար հիմքերի առկայությունը նշվել է Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների (Van Mechelen and Others v. the Netherlands) գործով ՄԻԵԴ-ի 1997 թվականի ապրիլի 23-ի վճռի մեջ:<sup>335</sup> Դատարանի պարտականությունը մանրամասնորեն որոշել վկաների անանունությունը պահպանելու պատճառները դատական նիստում մանրամասնաձ է ՄԻԵԴ-ի 2006 թվականի Կրասնիկին ընդդեմ Չեխական հանրապետության (Krasniki v. Czech Republic) գործում<sup>336</sup>: ՄԻԵԴ-ն իր դիրքորոշմամբ ընդունում է դատարանի պարտականությունը՝ ստուգել անանուն վկաներից ցուցմունք ստանալու ընթացակարգն ու պայմանները: Այսպիսով, ՄԻԵԴ-ի կարծիքով՝ դատական նիստում անանուն վկաների ցուցմունքների ստացման ընթացակարգի և պայմանների ստուգման բացակայությունը հանգեցնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման:

Պաշտպանության միջոցների հարցին անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ, սակայն հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավական մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը:

Վճռաբեկ դատարանը ևս քննարկվող հարցում խիստ մոտեցում է որդեգրել: Մասնավորապես, Հ. Սահակյանի վերաբերյալ կայացրած որոշմամբ Դատարանը նշել է, որ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է այնպես հավասարակշռվեն, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, ուստի առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու՝ որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական

<sup>334</sup> Տե՛ս Բրուտիսն և այլք ընդդեմ Լիտվայի (Birutis and Others v. Lithuania) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի մարտի 8-ի գանգատի ընդունելիության վերաբերյալ որոշումը, գանգատներ 47698/99 and 48115/99, 34, 35-րդ. կետեր:

<sup>335</sup> Տե՛ս Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդեռլանդների (Van Mechelen and Others v. the Netherlands) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1997 թվականի ապրիլի 23-ի վճիռ, գանգատներ թիվ. 21363/93, 21364/93, 21427/93 և 22056/93:

<sup>336</sup> Տե՛ս Կրասնիկին ընդդեմ Չեխական հանրապետության (Krasniki v. Czech Republic) Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2006 թվականի փետրվարի 28-ի վճիռ, գանգատ թիվ 51277/99 64-86-րդ կետեր:



դատավճռի հիմքում: Այլ կերպ, ըստ Վճռաբեկ դատարանի, չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից, իսկ այդ արգելքը խախտելն ինքնին կազմում է քրեադատավարական օրենքի էական խախտում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հաստատուն նախադեպային իրավունքին՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այսինքն՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում, ուստի այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ<sup>337</sup> (Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի վերաբերյալ մանրամասն խոսվել է սույն գլխի մեկ այլ պարագրաֆում):

Հատկանշական է, որ 2022 թվականին ուժի մեջ մտնող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում քրեական վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությունը նվիրված է առանձին գլուխ:

*Վերը նշված դիրքորոշումների հաշվառմամբ Պաշտպանը մեկ անգամ ևս ընդգծում է, որ անհրաժեշտ է.*

*1. գործուն միջոցներ ձեռնարկել 2020 թվականի սեպտեմբերի 3-ին ընդունված Կառավարության N 1474-Ն որոշման պահանջները գործնականում արդյունավետ կիրառելու ուղղությամբ,*

*2. գործնականում մանրամասն ուսումնասիրման առարկա դարձնել պաշտպանության միջոց կիրառելու մասին միջնորդությունները, այդ թվում՝ դրա արժանահավաստությունը ստուգելու միջոցով:*

## **5. «Փաստացի քրեական հետապնդման» վրանգները և դրանից անձի պաշտպանության երաշխիքները**

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում «փաստացի քրեական հետապնդման» խնդիրը միշտ ներկայացվել է: Ընդ որում՝ այն քննարկվել է ինչպես

---

<sup>337</sup> Տե՛ս Համայնակ Սահակյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 քրեական գործով կայացրած որոշումը, 21-23-րդ կետեր:

սահմանադրաիրավական և միջազգային իրավական մոտեցումների վերլուծությամբ, այնպես էլ քրեադատավարական կարգավորումների լիարժեքության տեսանկյունից<sup>338</sup>:

Նշված հարցի կապակցությամբ Քննչական կոմիտե իրականացվել է հարցում: Ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում վարույթն իրականացնող մարմնի «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ դեպքեր չեն արձանագրվել:

2021 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են հասցեագրվել բողոքներ, այն մասին, որ անձինք, հարցաքննվելով որպես վկա, այնուհետև միևնույն գործով վարույթի շրջանակներում ներգրավվել են որպես մեղադրյալ: Նկարագրվածն առնվազն վկայում է անձի ազատությունից զրկված լինելու և քրեական հետապնդման ենթարկվելու մասին՝ առանց օրենքով պահանջվող կանոնների պատշաճ պահպանման:

Պաշտպանի աշխատակազմ շարունակում են բողոքներ ստացվել փաստաբաններից, ովքեր հայտնում են, որ չի ապահովվում իրենց մուտքը՝ պատճառաբանությամբ, որ վկան հրաժարվել է փաստաբանի ներկայությամբ հարցաքննվելու իր իրավունքից: Մինչդեռ, նշել են, որ իրենց վստահորդներին վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննել են կասկածանքի շուրջ:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ իր նկատմամբ իրականացվում է փաստացի քրեական հետապնդում Քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 2 մասի 1-ին կետով: Ըստ բողոքի՝ տևական ժամանակ աշխատել է պետական հիմնարկում: Համադրելով աշխատանքի ընթացքում վերլուծությունները և մամուլում պարբերաբար տարածվող տեղեկատվությունը սոցիալական ցանցերից մեկում մտացածին անվանմամբ կատարել է գրառում այն մասին, որ իր հիմնարկի տնօրենը չարաշահել է դիրքը՝ յուրացնելով խոշոր գումար ու առաջարկել է ստուգումներ իրականացնել այդ կառույցում: Ըստ պնդման՝ կատարված գրառման վերաբերյալ տվյալ կառույցի աշխատակիցներից մեկը հաղորդում է ներկայացրել ոստիկանություն՝ պնդելով, որ տեղի է ունեցել սուտ մատնություն և խնդրել բացահայտել գրառումն իրականացրած անձին: Հավելել է, որ Ոստիկանության ծառայողները զանգահարել են իրեն և պահանջել ներկայանալ ոստիկանություն՝ չներկայացնելով պատճառները՝ սպառնալով, որ բերման կենթարկեն: Ըստ պնդման՝ բացատրություն տալու ընթացքում նշել է, որ այլ հարցերի չի պատասխանի առանց փաստաբանի ներկայության: Հետագայում, սակայն կրկին չի հրավիրվել հարցաքննության, չի ստացել որևէ որոշում սուտ մատնության դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու մասին: Բազմաթիվ անգամ փորձել է տեղեկանալ գործի ընթացքի վերաբերյալ և ստանալ որոշումը, սակայն այն, ինչպես նաև իր վերաբերյալ կազմված այլ փաստաթղթերն իրեն չեն տրամադրվել՝ զրկելով իրեն այդ փաստաթղթերին ծանոթանալու և բողոքարկման հնարավորությունից:

<sup>338</sup> Առավել մանրամասն տե՛ս 2016 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 122-125:

Հետագայում ծանուցագրի հիման վրա ներկայացել է Քննչական կոմիտե, ծանոթացել քրեական գործ հարուցելու մասին որոշմանը և հարցաքննվել վկայի կարգավիճակով՝ իր կողմից կատարված հրապարակման շուրջ: Պնդման համաձայն՝ քննիչին տեղեկացրել է, որ ցանկանում է լրացուցիչ տեղեկություններ հայտնել ցուցմունքով, սակայն մինչ Պաշտպանին բողոք ներկայացնելու օրը չի կանչվել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անձի՝ միևնույն քրեական գործով վարույթի շրջանակներում կարգավիճակի փոփոխությունն ինքնին խնդրահարույց չէ, եթե վարույթն իրականացնող մարմնի կողմից քննչական և այլ դատավարական գործողությունների իրականացման, այդ թվում՝ անձին հարցաքննելու ընթացքում ապահովվել են վերջինիս՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքներն ու համարժեք դատավարական երաշխիքները:

Այլ է իրավիճակը, երբ անձը հարցաքննության է կանչվում վկայի դատավարական կարգավիճակով՝ դրանից բխող իրավունքների և պարտականությունների համապատասխան ծավալով, սակայն վարույթն իրականացնող մարմնի մոտ արդեն իսկ առկա է քրեական օրենքով չթույլատրված արարքի կատարմանն անձի առնչության վերաբերյալ կասկած: Խնդրահարույց է, երբ այդպիսի «կասկածի» առկայությամբ անձի՝ վկայի դատավարական կարգավիճակով նրա մասնակցությամբ իրականացվում են քննչական և այլ դատավարական գործողություններ, որոնք նպատակ ունեն ձեռք բերելու այդ անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցներ: Այս դեպքում անձի իրավունքներն էականորեն սահմանափակվում են, իսկ երաշխիքների իմաստն էլ նենգափոխվում է:

Բացի դրանից, հանցանք կատարած լինելու կասկածանքի առկայության պայմաններում անձին վկայի դատավարական կարգավիճակով հարցաքննելով՝ էականորեն սահմանափակվում է նրա փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը:

Մասնավորապես, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի 72-րդ հոդվածով նախատեսվում է, որ Պաշտպանից հրաժարվելը քրեական վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, եթե կասկածյալի կամ մեղադրյալի կողմից այդ մասին հայտարարվել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր և այն պաշտպանի ներկայությամբ, որը կարող էր նշանակվել կամ նշանակված է պաշտպան: Չի ընդունվում պաշտպանից հրաժարումը, եթե այն հարկադրված է իրավաբանական օգնության վճարման համար միջոցների բացակայությամբ: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 47-րդ հոդվածում ևս շեշտադրվում է, որ Պաշտպանից հրաժարվելը վարույթն իրականացնող մարմինն ընդունում է միայն այն դեպքում, երբ մեղադրյալն այդ մասին հայտարարել է սեփական նախաձեռնությամբ, կամավոր, գիտակցված, վարույթին մասնակցող պաշտպանի ներկայությամբ, և ողջամտորեն ենթադրելի է, որ մեղադրյալն ի վիճակի է ինքնուրույն իրականացնելու իր պաշտպանությունը:

Ընդ որում, վկայի դատավարական կարգավիճակ ունեցող անձը նշված իրավունքից չի օգտվում, ուստի այս դեպքում անձին որպես վկա հարցաքննելու ընթացքում փաստաբանից հրաժարվելու պատճառաբանությամբ փաստաբանի մուտքը չապահովելը և փաստաբանից նրա ներկայությամբ

հրաժարվելու հնարավորություն չտալը հանգեցնում է տվյալ անձի պաշտպանության իրավունքի խախտման:

Հաշվի առնելով փաստացի քրեական հետապնդման դեպքերը և դրանով պայմանավորված անձանց իրավունքների սահմանափակումների շարունակականությունը, Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում անդրադարձ կատարել «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» եզրույթներին:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ «մեղադրվող» և «քրեական մեղադրանք» եզրույթներն ունեն ինքնավար բնույթ և պետք է մեկնաբանվեն Կոնվենցիայի իմաստով, այլ ոչ թե միայն ներպետական իրավունքում դրա ունեցած նշանակությանը համապատասխան:

Այս համատեքստում մեղադրանքը ենթադրում է ոչ միայն հանցագործություն կատարած լինելու կասկածանքի առկայության մասին պետական իշխանության իրավասու մարմնի պաշտոնական հայտարարություն, այլև ցանկացած միջոց, որն էականորեն ազդում է կասկածյալի կարգավիճակի վրա<sup>339</sup>:

Ասվածը նշանակում է, որ քրեական մեղադրանքն առկա է նաև քրեորեն հետապնդելի արարք կատարելու մեջ ողջամիտ կասկածի առկայության դեպքում, և դրա առկայությունը չի կարող պայմանավորվել միայն անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու քրեադատավարական ընթացակարգի հետ:

Ընդ որում, «քրեական մեղադրանքի» սկզբնական պահի որոշումը սկզբունքային նշանակություն ունի, քանի որ այն կանխորոշում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքի ծագման պահը՝ «քրեական մեղադրանքի» առնչությամբ:

Ի տարբերություն 2005 թվականի Սահմանադրությամբ «*ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունքի*» երաշխավորմանը՝ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 67-րդ հոդվածն ամրագրում է «հանցագործության համար մեղադրվող յուրաքանչյուրի»՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը՝ դրա առանձին տարրերի մատնանշմամբ (այդ թվում՝ անձամբ կամ իր ընտրած փաստաբանի միջոցով պաշտպանվելու իրավունքը): Սահմանադրական այս դրույթը, կրկնելով Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի երաշխիքները, ըստ էության ելնում է անձի՝ «հանցագործության համար մեղադրվողի» կարգավիճակի ինքնավարության գաղափարից:

Մինչդեռ, ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգիրքը «քրեական մեղադրանքի» բնորոշման ոչ ֆորմալ մեկնաբանության իրավական կառուցակարգեր չի նախատեսում: Բանն այն

---

<sup>339</sup> Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73, Քասսն ընդդեմ Լյուքսեմբուրգի (Casse v. Luxembourg) գործով 2006 թվականի ապրիլի 27-ի վճիռը, գանգատ թիվ 40327/02, կետ 71, Սերվեսն ընդդեմ Ֆրանսիայի (Serves v. France) գործով 1997 հոկտեմբերի 20-ի վճիռ, գանգատ թիվ 20225/92, կետ 42, Թեյեդոր Գարսիան ընդդեմ Իսպանիայի (Tejedor García v. Spain) գործով 1997 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 25420/94, կետ 27:

է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ և 64-րդ հոդվածներով ամրագրված՝ կասկածյալի և մեղադրյալի օրենսդրական բնորոշումներից բխում է, որ անձը համապատասխան դատավարական կարգավիճակ, հետևաբար նաև օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանությունն իրականացնելու իրավունք է ձեռք բերում քրեական հետապնդման մարմնի կողմից դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու կամ անձին մեղադրանք առաջադրելու դեպքերում: Այլ կերպ ասած, անձի՝ կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակի ձեռքբերումը կախվածության մեջ է դրվում անձին ներկայացված պաշտոնական մեղադրանքից կամ վերջինիս համար ակնհայտ՝ իրավունքների սահմանափակում ենթադրող հարկադրանքի միջոցների կիրառումից:

Սրա հետ կապված, հարկ է անդրադառնալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխությունների նախաձեռնմանը<sup>340</sup>, որոնցով ամրագրվեցին ազատությունից զրկված անձի իրավունքների ապահովման հետ կապված կառուցակարգերը՝ անձին արգելանքի վերցնելու պահից: Նախ, օրենսդրորեն ամրագրվեցին «արգելանքի վերցված անձի» իրավունքները՝ այդպիսով կարգավորելով ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով լրացվող օրենսդրական բացը<sup>341</sup>: Բացի այդ, օրենսդրորեն ամրագրվել է փաստի ուժով անձի իրավունքների ձեռքբերման՝ Քրեական դատավարության օրենսգրքի նախագծով որդեգրված մոտեցումը: Մասնավորապես, օրենսդրական փոփոխություններով ամրագրվում է *մինչև ձերբակալման արձանագրությունը նրան հայտարարելն արգելանքի վերցված անձի իրավունքները, այդ թվում՝ լռություն պահպանելու իրավունքը: Նույն դրույթի համաձայն՝ անկախ ձերբակալման արձանագրությունն անձին հայտարարելու հանգամանքից՝ փաստացի արգելանքի վերցվելուց չորս ժամ հետո անձը ձեռք է բերում կասկածյալի վերաբերելի իրավունքները և պարտականությունները:*

Օրենսդրական այս փոփոխություններն, իհարկե, դրական քայլ են՝ ազատությունից զրկված անձի՝ այդպիսի սահմանափակման սկզբնական փուլից սկսած իրավունքների ամրագրման տեսանկյունից: Միննույն ժամանակ, «փաստացի քրեական հետապնդման» դեմ արդյունավետ իրավական կառուցակարգերը պետք է ենթադրեն նաև դրա հետևանքները չեզոքացնելուն ուղղված օրենսդրական հնարավորություն:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում, երբ բարձրացվում է «փաստացի քրեական հետապնդման» խնդիր, քննարկման առարկա պետք է հանդիսանա նաև դրա շրջանակներում ձեռք բերված ապացույցների թույլատրելիության հարցը: Ասվածի օրենսդրական ուղղակի ամրագրման մոտեցում դրսևորվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով, որի 97-րդ հոդվածի 3-րդ

---

<sup>340</sup> Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նշված նախագծի վերաբերյալ ներկայացվել են մի շարք սկզբունքային նկատառումներ, այդ թվում՝ անձի անձնական ազատության սահմանադրական իրավունքի երաշխավորման դատավարական կառուցակարգերի լիարժեքության տեսանկյունից:

<sup>341</sup> Տե՛ս Գագիկ Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով կայացված որոշումը:

մասն ամրագրում է, որ օրենքի էական խախտմամբ ստացված են համարվում այն տվյալները, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կարգավիճակ չունեցող անձից, ում նկատմամբ փաստացի իրականացվել է քրեական հետապնդում՝ առանց այդ մասին նրան պատշաճ ծանուցելու:

Գործող քրեադատավարական օրենսդրությունը «փաստացի քրեական հետապնդման» հետևանքով ձեռք բերված ապացույցի անթույլատրելիության մասին ուղղակի դրույթ չի պարունակում: Փոխարենը, վերոնշյալ օրենսդրական փոփոխությունների համաձայն՝ որպես ապացույց չեն կարող օգտագործվել այն նյութերը, որոնք, մասնավորապես, ձեռք են բերվել քննչական կամ այլ դատավարական գործողության կատարման կարգի էական՝ քրեական դատավարության մասնակիցների հիմնական իրավունքների և ազատությունների կամ քրեական դատավարության սկզբունքների խախտմամբ:

Օրենսդրական կարգավորումներից զատ անհրաժեշտ է ուժեղացնել գերատեսչական վերահսկողությունը «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ դեպքերը բացառելու նպատակով, քանի որ նմանատիպ խախտումների դեպքում քրեական հետապնդման մարմինների նկատմամբ անբարենպաստ իրավական հետևանքների բացակայությունը կարող է հող նախապատրաստել խախտումների շարունակականության համար:

*Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ.*

1. անկախ անձի՝ քրեադատավարական օրենքի իմաստով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ձեռք բերելուց՝ վերջինս պետք է օգտվի քրեական հետապնդման ենթարկվող անձի վերաբերելի բոլոր իրավունքներից այն դեպքում, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողությունները (որոշումները) հիմք են տալիս ողջամտորեն ենթադրելու, որ առկա է տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանք,

2. անհրաժեշտ է բացառել անձի կողմից հանցանք կատարած լինելու կասկածանքի առկայության պայմաններում նրան որպես վկա կեղծ ցուցմունք տալու կամ ցուցմունք տալուց հրաժարվելու դեպքում սահմանված քրեական պատասխանատվության մասին նախազգուշացնելու դեպքերը,

3. անհրաժեշտ է ուժեղացնել գերատեսչական վերահսկողությունը «փաստացի քրեական հետապնդում» ենթադրող ոչ իրավաչափ դեպքերի նկատմամբ,

4. «փաստացի քրեական հետապնդման» պրակտիկայի կանխարգելումը պետք է իրականացվի ոչ միայն գերատեսչական վերահսկողության շրջանակներում, այլև պետք է քննարկման առարկա դառնա կոնկրետ քրեական գործով վարույթի շրջանակներում դրա բացասական հետևանքների չեզոքացումը:

## **6. Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման գործնական խնդիրները**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ քրեական գործերի նախաքննության ընթացքում քննչական մարմինների գործողությունների վերաբերյալ:

Նախաքննության ընթացքի կապակցությամբ ներկայացված բողոքների քննությունն ունի որոշակի բարդություն՝ նկատի ունենալով քրեական դատավարության սուբյեկտների կազմը և նրանց հստակ իրավունքներն ու պարտականությունները: Քաղաքացիներն անհատական ընդունելությունների և խորհրդատվությունների ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչներին հաղորդում են այնպիսի տեղեկություններ, որոնք թույլ են տալիս դիտարկել քննչական մարմինների գործողություններում առկա պրակտիկ խնդիրներն ու օրենսդրական դաշտը:

*Այս իմաստով, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ Պաշտպանի աշխատակազմում անհատական բողոքները քննարկվում են այնպես, որ քրեական գործի արդյունավետ քննությանը որևէ խոչընդոտ կամ միջամտություն չարվի:*

2021 թվականին նույնպես Պաշտպանին հասցեագրված քրեական վարույթին առնչվող հարցերի մեծ մասը վերաբերել է մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի ապահովմանը:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները. (...), դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության (...):»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ եթե մեղադրյալին դատավարության որևէ փուլում հնարավորություն չի տրվել հարցեր ուղղելու իր դեմ ցուցմունք տված անձին, ապա նա զրկվում է արդար դատաքննության իրավունքից<sup>342</sup>:

---

342 Տե՛ս Ունտերպենտինգերն ընդդեմ Ավստրիայի (Unterpentinger v. Austria) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80, 31-33-րդ կետեր, Հուլիի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի (Hulki Güneş v. Turkey) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28490/95, 53-54-րդ կետեր, Գոսսան ընդդեմ Լեհաստանի (Gossa v. Poland) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 47986/99, 54-55-րդ կետեր, Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի (Balsytė-Lideikienė v. Lithuania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 72596/01, 86-րդ կետ, Չական ընդդեմ Ալբանիայի (Čaka v. Albania) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 44023/02, 102-րդ կետ, և այլն:

Անձի դատապարտումը չի կարող ամբողջապես կամ վճռական չափով հիմնվել այնպիսի անձի հայտնած տվյալների վրա, որին հարցեր ուղղելու համարժեք հնարավորություն պաշտպանության կողմը չի ունեցել<sup>343</sup>:

Հակընդդեմ հարցման իրավունքով չապահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու իրավաչափության հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը<sup>344</sup>:

Վճռաբեկ դատարանն, ի թիվս այլնի, արձանագրել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հնարավորություն է ընձեռում իրավակիրառողին մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքն իրացնել նաև նախաքննության փուլում՝ առերեսում քննչական գործողության միջոցով: Ավելին, ըստ Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ ցուցմունք տալուց հրաժարվելու՝ մեղադրյալի սահմանադրական իրավունքի իրացումն ինքնին չի բացառում առերեսման (հակընդդեմ հարցման) հնարավորությունը<sup>345</sup>:

Ինչ վերաբերում է արդեն դատական վարույթի ընթացքում այդ իրավունքի ապահովմանն, ապա, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այդ հարցին անդրադարձել է նաև Հայաստանի դեմ կայացված՝ Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի վճռում: Դրանով, մասնավորապես նշվել է, որ «բոլոր ապացույցները, որպես կանոն, պետք է ներկայացվեն մեղադրյալի մասնակցությամբ գործի հրապարակային քննության ընթացքում՝ հակափաստարկ ունենալու հնարավորությամբ: Սակայն սա չի նշանակում, որ որպեսզի վկաների ցուցմունքներն օգտագործվեն իբրև ապացույց, դրանք անպայման պետք է տրված լինեն միայն հրապարակային դատաքննության ընթացքում»: Դատարանի գնահատմամբ՝ նախաքննության ընթացքում տրված ցուցմունքներն որպես ապացույց դիտարկելն ինքնին չի հակասում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքին, եթե ընդհանուր առմամբ երաշխավորվել են պաշտպանական կողմի իրավունքները: Դատարանի իրավաբանությամբ՝ որպես կանոն, այս իրավունքների իրականացումը պահանջում է, որ մեղադրյալին համարժեք և պատշաճ հնարավորություն տրվի վիճարկելու և հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկային, ինչպես ցուցմունք տալու պահին, այնպես էլ գործի քննության հետագա փուլերում<sup>346</sup>:

Դատական վարույթի ընթացքում այդ իրավունքի ապահովման կարևորության առնչությամբ ներպետական դատական պրակտիկան զարգացել է նաև վերջին տարիների ընթացքում: Այսպես, Վճռաբեկ դատարանը հայտնել է դիրքորոշում առ այն, որ հակընդդեմ հարցման իրավունքը

---

343 Տե՛ս Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (Sadak and others v. Turkey) (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96 և այլն, 65-րդ կետ:

344 Տե՛ս *mutatis mutandis* Համայակ Զալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշման 22-24-րդ կետերը:

345 Տե՛ս *mutatis mutandis* Սարիբեկ Վարազդատի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱԲԴ/0189/01/12 որոշման 27-28-րդ կետերը:

346 Տե՛ս Մամիկոնյանն ընդդեմ Հայաստանի (Mamikonyan v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 25083/05, 42-րդ կետ:



քրեական վարույթի արդարացիության ապահովման հիմնարար երաշխիքներից է, որի կենսագործման միջոցով հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձը գործի դատական քննության ընթացքում կարողանում է վիճարկել իր դեմ տրված ցուցմունքը: Այդ գործընթացն առանցքային նշանակություն ունի նաև գործն ըստ էության քննության առնող դատարանի համար, որը ենթադրյալ հանցանք կատարած անձի մեղավորությունը որոշելիս համակողմանի գնահատման է ենթարկում ինչպես վկայի տված ցուցմունքը, այնպես էլ հանցագործության կատարման մեջ մեղադրվող անձի կողմից վկային ուղղված հարցերի առնչությամբ վերջինիս տրված պատասխանները<sup>347</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նաև մշակել է մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի խախտումը ստուգելու թեստը: Թեստն ամփոփվել է Մեծ պալատի՝ Ալ-Խավաջան և Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության և Չաթչաշվիլին ընդդեմ Գերմանիայի վճիռներում:

Գնահատելու համար՝ արդյոք առկա է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում, թե ոչ, անհրաժեշտ է պատասխանել հետևյալ հարցերին.

- I. արդյոք առկա է վկայի բացակայության հարգելի պատճառ,
- II. արդյոք բացակայող վկայի նախկինում տված ցուցմունքը մեղադրյալի դատապարտման համար ունի վճռորոշ նշանակություն կամ բացառապես հիմնված է դրա վրա,
- III. արդյոք առկա են բավարար հակակշռող հանգամանքներ, այդ թվում քրեադատավարական երաշխիքներ, որոնք չստուգված ապացույցի ընդունման արդյունքում կկոնպենսացնեն պաշտպանության բացերը:

Թեստի առաջին հարցի բացասական պատասխանը դեռևս չի կարող բավարար լինել անձի իրավունքի խախտումը ճանաչելու համար: Այս հարցի պատասխանը ենթակա է գնահատման երկրորդ հարցի համատեքստում՝ պարզելու նպատակով, թե մեղադրյալի դատապարտումը վճռորոշ չափով կամ բացառապես հիմնված է եղել այդ ցուցմունքի վրա, թե ոչ: Վկայի բացակայության պատճառը դատաքննության ընթացքում համարվում է «հարգելի», եթե այն, ըստ էության, օբյեկտիվ դիտորդի համար ցույց է տալիս բացակայության պատճառի փաստական կամ իրավական հիմքերը: Այդպիսին կարող է լինել, օրինակ, այդ վկայի վատառողջ լինելը կամ այլ պատճառներ: Դատական նիստին չներկայանալու հարգելի պատճառ չի կարող գնահատվել այն պայմաններում, երբ դատարանների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել նրա գտնվելու վայրը պարզելու և ներկայությունն ապահովելու ուղղությամբ: Թեստի երկրորդ հարցը վերաբերում է գործով ձեռք բերված ապացույցներին, մասնավորապես, թե տվյալ ցուցմունքը մեղադրյալի դատապարտման համար միակ ապացույցն է, թե ունի վճռորոշ նշանակություն: Երրորդ հարցադրումն այն է, թե արդյոք պետությունը որևէ այլ եղանակով կարող է հաստատել տվյալ ապացույցի արժանահավատությունը:

<sup>347</sup> Տե՛ս mutatis mutandis Արտուշ Վլադիմիրի Ղուլյանի գործով Վճռաբեկ դատարանի 2018 թվականի նոյեմբերի 15-ի թիվ ՏԴ2/0037/01/15 որոշման 17-րդ կետերը:

Չնայած նրան, որ մեղադրյալի հակընդդեմ հարցման իրականացման նպատակով առերեսումն իրականացնելը վարույթի արդյունավետության տեսանկյունից ունենում է կարևոր նշանակություն, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ դա բացասական հետևանքներ է առաջացնում դատավարության մասնակիցների և մասնակցող անձանց համար: Օրինակ՝ դեռևս 2019 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքով պնդում է արվել այն մասին, որ կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու դեպքի քննության ընթացքում իրականացվել է առերեսում մեղադրյալի և տուժողի միջև, որից հետո նախկին ամուսինը կատարել է հանրորեն վտանգավոր արարք՝ կնոջն առևանգելու ձևով: Նշված դեպքի կապակցությամբ, թեև հարուցվել է քրեական գործ, սակայն, հասկանալի պատճառներով դեպքը հանրային մեծ հետաքրքրության է արժանացել: Թե՛ քննչական գործողությունը և թե՛ դրանից հետո տեղի ունեցած իրադարձություններն ի վերջո հուզական խիստ բացասական ազդեցություն ունեցան կնոջ վրա:

Նման խնդիրներ գործնականում առաջ են գալիս նաև սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունների կամ անչափահասների ներգրավմամբ քրեական գործերով վարույթների քննության ընթացքում:

Այսպես ասած, խոցելի համարվող վկայի կամ տուժողի ու մեղադրյալի համաժամանակյա հարցաքննությունների խնդրահարույց կողմերի մասին բարձրաձայնվել է նաև միջազգային դատական պրակտիկայում: Կայացրած վճիռներից մեկով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անչափահասի նկատմամբ տեղի ունեցած սեռական ոտնձգության գործով տուժողը չի ներկայացվել դատարան, քանի որ, ըստ բժշկական տեղեկանքի, նրա ունեցած հիվանդությամբ պայմանավորված եղել է առողջական վիճակի վատթարացման վտանգ: Ներպետական դատարանները թեև նշել են, որ դատարանում տուժողի հարցաքննության բացակայությունն էական բացթողում է, սակայն դա արդարացրել են երեխայի հոգեկան վիճակի վերաբերյալ բժշկական տեղեկանքով: Վճռով դատարանը նշել է, որ անչափահաս զոհերի մասնակցությամբ իրականացվող քրեական դատավարության ընթացքում պետք է հաշվի առնել նրանց շահերի պաշտպանությունը, սակայն արձանագրվել է մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի խախտում, քանի որ տուժողի ցուցմունքները հանդիսացել են մեղադրյալի դատապարտման միակ ուղղակի ապացույցը, իսկ նրա նկատմամբ հոգեբանական փորձաքննությունը նշանակված է եղել տևական ժամանակ անց<sup>348</sup>:

Առանձնակի կարևորություն ունի նաև միևնույն քրեական գործի շրջանակում մեղադրյալի դատավարական կարգավիճակ ունեցող անձանց առերեսումն իրականացնելու հարցը: Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ մեղադրյալներից մեկը հրաժարվում է մասնակցել քննչական գործողությանը: Ուստի, այս դեպքում հարց է առաջանում՝ արդյոք պետք է առերեսումն իրականացվի, թե ոչ:

<sup>348</sup> Տե՛ս Պ. Ս.-ն ընդդեմ Գերմանայի (P. S. v. Germany) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2002 թվականի սեպտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 33900/96, 30-31-րդ կետեր:

Այս կապակցությամբ Դատախազությունից պարզաբանումներ են ներկայացվել այն մասին, որ հարցի հետ կապված գործնականում վարույթն իրականացնող քննիչների մոտեցումները տարբեր են, մի դեպքում ընդհանրապես առերեսում քննչական գործողությունը չի իրականացվում, մեկ այլ դեպքում՝ առերեսում քննչական գործողության ընթացքում՝ մինչև առերեսումը սկսելը, երբ առերեսվող կասկածյալներից կամ մեղադրյալներից մեկը հրաժարվում է դրան մասնակցելուց՝ այդ մասին նշում է կատարվում առերեսում քննչական գործողության արձանագրության մեջ փաստացի չիրականացնելով առերեսում:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ այս հարցը ևս պետք է լուծում ստանա մեղադրյալի կոնֆրոնտացիայի իրավունքի իրացման համատեքստում: Այլ խոսքով՝ քննչական գործողության իրականացումն անհրաժեշտ է այդ գործողությունից չհրաժարվող մեղադրյալի հակընդդեմ հարցումն ապահովելու նպատակով:

Առերեսում քննչական գործողության իրականացման հետ կապված գործնականում արձանագրվել են նաև դեպքեր, երբ առերեսման ընթացքում փաստաբանը տարբեր պատճառներով հրաժարվել է շարունակել մասնակցել արդեն իսկ սկսված քննչական գործողությանը: Այս առումով ևս Պաշտպանի դիրքորոշումն այն է, որ առանց պաշտպանի տվյալ գործողությունը չի կարող շարունակվել, այլ հարց է, որ փաստաբանի նման վարքագիծը պետք է ունենա հիմնավոր պատճառներ և չհանգեցնի իրավունքի չարաշահման:

Մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի ապահովման համատեքստում հարկ է անդրադառնալ մեկ այլ խնդրի ևս, որը բարձրացվել է փաստաբանների կողմից: Այսպես, Պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ստացվել այն մասին, որ առերես հարցաքննությունների ընթացքում վարույթն իրականացնող մարմինը թույլ չի տալիս փաստաբանին հարցեր տալ առերեսվող անձին: Փաստաբանները նշել են, որ այս առումով պրակտիկան միատեսակ չէ, քննչական որոշ ստորաբաժանումներում փաստաբանին թույլատրվում է հարցեր ուղղել առերեսվողին, որոշ ստորաբաժանումներում՝ չի թույլատրվում:

Նման պրակտիկան խնդրահարույց է ոչ միայն փաստաբանի մասնագիտական երաշխիքների իրացման, այլև կասկածյալի ու մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման տեսանկյունից: Խնդիրն առավել ակնառու է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի առկայության պայմաններում («Կասկածյալը և մեղադրյալն իրավունք ունեն մեղադրանքից պաշտպանվել ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի և օրինական ներկայացուցչի միջոցով»): Դրանից բացի, Քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածն, ի թիվս այլնի լիազորում է պաշտպանին մասնակցել իր պաշտպանյալի մասնակցությամբ իրականացվող ցանկացած քննչական կամ այլ դատավարական գործողությանը, ոչ թե զուտ ներկա գտնվել դրան:

Ձևավորված պրակտիկայի վերաբերյալ աշխատանքային կարգով խորհրդակցություններ են տեղի ունեցել նաև քրեական հետապնդման մարմինների տարբեր ներկայացուցիչների հետ: Պարզվել է, որ այս մասով ոչ միայն առկա չէ միասնական պրակտիկա, այլև իրավակիրառ

պրակտիկայում հարցի կապակցությամբ տեսակետները տարբեր են: Դատախազությունից նաև տեղեկություններ են ներկայացվել այն մասին, որ 2021 թվականի ընթացքում մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրացման չապահովման վերաբերյալ ստացվել է 5 բողոք, որոնք մերժվել են:

Վերը նշվածի համատեքստում Պաշտպանն ընդգծում է, որ առկա է տվյալ հարցը վերանայելու և միասնական պրակտիկա ձևավորելու կարիք:

*Վերոնշյալ դրսևորումների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.*

*1. քննչական գործողությունները պլանավորելիս առանձնակի ուշադրության արժանացնել նաև քրեական գործի բնույթին և դատավարության խոցելի մասնակիցների ու մեղադրյալների օրինական շահերի արդարացի հակակշռմանը,*

*2. առավելագույն ջանքեր գործադրել, այդ թվում՝ մեղադրյալի լռելու պարագայում վերջինիս հակընդդեմ հարցման իրավունքի արդյունավետ իրացման համար: Վերը քննարկված իրավական պահանջները պետք է անվերապահորեն կատարվեն անկախ քրեական գործի բնույթից, ծավալից կամ այլ հանգամանքներից,*

*3. բացառել առերեսման ժամանակ փաստաբանի կողմից առերեսվողին հարցեր ուղղելը չթույլատրելու պրակտիկան:*

***7. Կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու պրակտիկան***

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը 2021 թվականի ընթացքում շարունակել է բողոքներ ստանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից կալանավորված անձին մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի անդամների և օրինական ներկայացուցչի հետ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելելու մասին:

Այդ բողոքների, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմինների կայացրած որոշումների ուսումնասիրությունները վկայում են, որ խնդիրներն այս առումով 2021 թվականի ընթացքում շարունակել են կրել համակարգային բնույթ, իսկ անթույլատրելի պրակտիկան՝ շարունակական է: Քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ կալանավորված անձի տեսակցություններն արգելող որոշումները ոչ միշտ են բավարար չափով պատճառաբանված: Մեծամասամբ վարույթն իրականացնողը բավարարվում է օրենսդրական նորմերի վկայակոչմամբ, և առհասարակ չի կատարվում համադրում գործի փաստական հանգամանքների, գործով ձեռք բերված փաստական տվյալների հետ: Ինչ վերաբերում է կայացված որոշման վերանայմանը, ապա որոշ դեպքերում քրեական վարույթն իրականացնող մարմինն անհարկի ձգձգում է կամ ընդհանրապես չի քննարկում հիշյալ սահմանափակման շարունակական կիրառման անհրաժեշտության հարցը:

Նման պայմաններում սահմանափակումը հաճախ կիրառվում է ինքնանպատակ, առանց իրավաչափ շահի հետապնդման, ավելին, ունենում է կալանավորված անձին հոգեճնշելու, նրանից քննության համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու միտում: Ստացվում է, որ անձին ազատությունից զրկելուց զատ, նրան պատճառվում են լրացուցիչ զրկանքներ՝ ընտանիքի հետ կապը սահմանափակելու ձևով:

Բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ քրեական վարույթն իրականացնող քննիչը որոշում է կայացրել արգելել հեռախոսազանգերի և տեսակցությունների միջոցով արտաքին աշխարհի հետ իր շփումը, հավելելով, որ չի կարողանում տեսակցել կամ այլ եղանակով կապ հաստատել իր 4-ամյա դստեր հետ: Դատախազություն ներկայացված գրությամբ խնդրել ենք ստուգել հեռախոսային խոսակցությունները և տեսակցությունները քննիչի կողմից անհիմն սահմանափակելու վերաբերյալ բողոք ներկայացրած անձի պնդումները, ինչպես նաև քննարկման առարկա դարձնել նախաքննության այդ փուլում կալանավորված անձի տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ կիրառված արգելքը պահպանելու անհրաժեշտությունը՝ հատուկ քննարկման առարկա դարձնելով 4-ամյա երեխայի հետ քաղաքացու տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների նկատմամբ կիրառված արգելքը վերացնելու հարցը:

Դատախազության պարզաբանումների համաձայն՝ քննիչի կողմից քաղաքացու տեսակցությունները և հեռախոսային խոսակցություններն արգելելու մասին որոշումը կայացվել է նկատի ունենալով, որ վերջինիս տեսակցությունները և հեռախոսային խոսակցությունները կարող են խոչընդոտել գործով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելուն, իսկ նկատի ունենալով, որ քաղաքացու տեսակցություններն իր 4-ամյա դստեր հետ չեն կարող խոչընդոտել գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության կատարմանը, գործի դատավարական ղեկավարումն իրականացնող դատախազի կողմից տրվել է ցուցում՝ քաղաքացու և նրա 4-ամյա դստեր հետ տեսակցությունները թույլատրելու ուղղությամբ անհապաղ միջոցներ ձեռնարկելու համար:

Մեկ այլ բողոքով փաստաբանը բարձրացրել էր հարց առ այն, որ քրեական գործը քննող քննիչը չի հիմնավորել, թե ինչպես կարող են իր պաշտպանյալի տեսակցություններն ու հեռախոսային խոսակցությունները մերձավոր ազգականների, հատկապես անչափահաս երեխաների հետ բացասական կերպով անդրադառնալ քրեական գործի քննության վրա: Նշված հարցի կապակցությամբ Դատախազության պատասխանի համաձայն՝ մեղադրյալի տեսակցությունները, հեռախոսային կապը՝ ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ արգելելու մասին քննիչի որոշումը կայացվել է նկատի ունենալով, որ գործով բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տեսակցությունները, ինչպես նաև՝ նրա հեռախոսային խոսակցությունները կարող են բացասաբար անդրադառնալ քրեական գործի քննության լրիվության, օբյեկտիվության և բազմակողմանիության վրա: *Միևնույն ժամանակ, իրավասու մարմինը մանրամասն չի անդրադարձել այն հարցին, թե*

*ինչպես հարկապես անչափահաս երեխաների հետ կապը կարող է կոնկրետ դեպքում բացասական կերպով անդրադառնալ քրեական գործի քննության վրա:*

Հարկ է նկատել, որ գործնականում տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն արգելվում են միաժամանակ: Սովորաբար նախ վերացվում է տեսակցություններ ունենալու արգելքը, իսկ հեռախոսային խոսակցությունների արգելքը ևս որոշ ժամանակահատված շարունակվում է պահպանվել: Նման մոտեցումը վարույթն իրականացնող մարմինը պատճառաբանում է հեռախոսային խոսակցությունների վերահսկողության մեխանիզմի բացակայությամբ: Մասնավորապես, ըստ քննչական մարմինների, հեռախոսազանգերի դեպքում չկա որևէ գործիքակազմ պարզելու համար, թե իրականում ում հետ է կալանավորված անձը խոսում:

Այս առումով անվիճելի է, որ ինչպես թերի իրավակարգավորումները, այնպես էլ անձի վարքագծի իրավաչափության վերահսկողության մեխանիզմների բացակայությունը չի կարող հանգեցնել անազատության մեջ գտնվող անձի իրավունքի ոչ համաչափ սահմանափակմանը: Ուստի հարցի լուծման համար չպետք է իրավիճակային լուծում առաջարկել մարդու իրավունքի սահմանափակման տեսանկյունից: Համակարգային լուծման համար անհրաժեշտ են այլընտրանքային մոտեցումներ:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապի երկու տարբեր, ինքնուրույն միջոցներ են, ուստի ամեն դեպքում պետք է քննարկվի դրանցից յուրաքանչյուրի սահմանափակման անհրաժեշտության հարցը. ոչ մի դեպքում չպետք է մեկի սահմանափակումն ինքնին հանգեցնի մյուսի սահմանափակմանը:

Արտաքին աշխարհի հետ կապը պահպանելու և մերձավոր ազգականների հետ տեսակցելու իրավունքի իրացման օրենսդրական և գործնական ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իրավակիրառ պրակտիկայում առաջ եկող խնդիրներն, ի թիվս այլնի, նաև օրենսդրական թերի և ոչ հստակ կարգավորումների արդյունք են:

«Օրենսդրությունն այս առումով թեև բովանդակում է որոշակի կարգավորումներ, այնուհանդերձ դրանք բավարար չեն իրավունքի իրական երաշխավորման համար: Այսպես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասը սահմանում է, որ քննության շահերից ելնելով՝ ձերբակալված կամ կալանավորված անձանց տեսակցություններն ու հեռախոսային խոսակցություններն օրինական ներկայացուցչի, մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների և այլ անձանց հետ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, կարող է արգելվել քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ այդ մասին գրավոր իրազեկելով ձերբակալվածներին պահելու վայրի կամ կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին:

Վկայակոչված իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ այն չի պարունակում կալանավորված անձի՝ օրինական ներկայացուցչի կամ մերձավոր ազգականների հետ

տեսակցության և հեռախոսային խոսակցությունների արգելքի կիրառելիության հստակ չափանիշներ՝ այն կապելով միայն «քննության շահ» գնահատողական և որոշակիության սկզբունքին չհամապատասխանող եզրույթի հետ: Միաժամանակ, հողվածը չի բովանդակում տեսակցությունների արգելքի պատճառաբանության և հիմնավորվածության, ինչպես նաև որոշման պարբերական վերանայման վերաբերյալ հստակ պահանջներ:

Չնայած դրան, ոլորտը կանոնակարգող միջազգային օրենսդրության ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել անձի նկատմամբ արգելքի կիրառման հստակ չափանիշները:

Այսպես, ըստ Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (այսուհետ՝ ԽԿԿ-ն) իրավաբանության՝ ազատագրված անձանց համար շատ կարևոր է բավարար շփումն արտաքին աշխարհի հետ: Առաջին հերթին կալանավորված անձը պետք է հնարավորություն ստանա պահպանելու հարաբերություններն իր ընտանիքի և մերձավոր ազգականների հետ: Ղեկավար սկզբունք պետք է լինի՝ արտաքին աշխարհի հետ շփման աջակցությունը: Այդպիսի շփման որևէ սահմանափակում պետք է հիմնավորված լինի միմիայն անվտանգության շահերի ողջամիտ պաշտպանությամբ (...)<sup>349</sup>:

Այս առումով, ԽԿԿ-ն Հայաստանի վերաբերյալ 2011 թվականի զեկույցում նշել է, որ *անհրաժեշտ է ձեռնարկել արդյունավետ քայլեր՝ ապահովելու համար, որ ազատությունից զրկված անձանց՝ տեսակցություններ ունենալու և հեռախոսակապից օգտվելու իրավունքներն անհիմն կերպով չսահմանափակվեն*<sup>350</sup>:

Կալանավորված անձանց ընտանիքի և արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու կարևորությունն ընդգծվել է նաև «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի 2-րդ մասի 24.1-րդ կանոնում, ըստ որի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է թույլատրվի հնարավորին չափ հաճախ նամակների, հեռախոսակապի կամ հաղորդակցության այլ ձևերով հաղորդակցվել իրենց ընտանիքների, այլ անձանց և արտաքին կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև տեսակցել թվարկված անձանց հետ*:

Դրա հետ մեկտեղ, ըստ 24.2-րդ կանոնի՝ *հաղորդակցությունները և տեսակցությունները կարող են ենթարկվել սահմանափակումների կամ վերահսկման, ելնելով քրեական գործի քննությունը շարունակելու անհրաժեշտությունից՝ կարգուկանոնի պահպանման, ապահովության և անվտանգության, ինչպես նաև հանցագործության կանխարգելման և հանցագործությունից պրոժաճների պաշտպանության համար: Այնուհանդերձ, այդ սահմանափակումները, ներառյալ՝*

<sup>349</sup> Տե՛ս 1991 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ԽԿԿ-ի գործունեության մասին 2-րդ ընդհանուր հաշվետվության 51-րդ կետը:

<sup>350</sup> Տե՛ս ԽԿԿ-ի զեկույցը 2010 թվականի մայիսի 10-ից 21-ը Հայաստան կատարած այցի վերաբերյալ: Փաստաթուղթ թիվ CPT/Inf (2011) 24, կետ 124-126: Ձեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով: <http://www.cpt.coe.int/documents/arm/2011-24-inf-eng.pdf>:

դարական մարմինների որոշումներով նախատեսված կոնկրետ սահմանափակումները, պետք է ցանկացած պարագայում թույլատրեն շփումների թույլատրելի նվազագույն մակարդակ:

Միաժամանակ, 99-րդ կետի համաձայն՝ ազատությունից զրկված անձինք պետք է ունենան տեսակցություններ և պահպանեն կապն ընտանիքի և այլ անձանց հետ այնպես, ինչպես դա նախատեսված է դատապարտյալների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ առանձին գործով դարական մարմնի կողմից որոշակի ժամանակահատվածով կիրառվել է արգելք:

Հիշյալ կանոնների մեկնաբանությունների համաձայն՝ այն կանոնները, որոնց հիման վրա կիրառվում է սահմանափակումն ունեն կարևոր նշանակություն: Դրանք պետք է հստակ ձևակերպված լինեն, «համապատասխանեն գործող օրենսդրությանը», ինչպես պահանջում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ մասը և չպետք է թողնվեն ազատությունից զրկման վայրի վարչակազմի հայեցողությանը<sup>351</sup>: Սահմանափակումները պետք է հասցվեն նվազագույնի և համապատասխանեցվեն անձի անհատական ռիսկայնության աստիճանին: Այսպես, օրինակ՝ նամակագրությունը կարող է ենթարկվել ստուգման (արտաքին զննման)՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով, սակայն նամակագրության բովանդակությանը ծանոթանալը հնարավոր է միայն այն դեպքում, երբ առկա է հստակ տեղեկություն այն մասին, որ նամակագրության բովանդակությունը հակաիրավական բնույթ է կրում: Այն դեպքում, երբ առկա է անվտանգության սպառնալիք պետք է ոչ թե չտրամադրել տեսակցություններ, այլ ուժեղացնել հսկողություն դրանց անցկացման ընթացքում<sup>352</sup>:

Հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից 1955 թվականի օգոստոսի 30-ին ընդունված «Ազատությունից զրկված անձանց հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնները» նույնպես պարունակում են դրույթներ ազատությունից զրկված անձանց շփումն արտաքին աշխարհի հետ ապահովելու նպատակով: Այսպես, ըստ ստանդարտ կանոնների 37-րդ կետի՝ *ազատությունից զրկված անձանց պետք է հնարավորություն տալ ինչպես գրավոր հաղորդակցության կարգով, այնպես էլ այցելությունների ընթացքում, կանոնավոր ժամանակահատվածների ընդմիջումով և հարկ եղած վերահսկողության տակ կապ պահպանել իրենց ընտանիքների և անբասիր վարկ ունեցող ընկերների հետ:*

Հատկանշական է, որ ազատությունից զրկված անձանց տեսակցության իրավունքն ուղղակիորեն փոխկապակցված է վերջիններիս երեխաների հիմնարար իրավունքների հետ, որոնք, մասնավորապես, սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 9-րդ

<sup>351</sup> Տե՛ս Լաբիտան ընդդեմ Իտալիայի (Labita v. Italy) գործով 2000 թվականի ապրիլի 6-ի վճիռը, գանգատ թիվ 26772/095:

<sup>352</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Եվրոպական բանտային կանոնների մասին» թիվ (2006)2 հանձնարարականի մեկնաբանությունները, էջ 13 (հասանելի է հետևյալ կայքում՝ <http://www.refworld.org.ru/docid/55c36e8b4.html>):



հողվածով, որի համաձայն՝ *համապատասխան պետական մարմինները պետք է ապահովեն երեխաների՝ իրենց ծնողների հետ կապ պահպանելու իրավունքի իրականացումը (...):*

Հեռախոսազանգերի կամ տեսակցությունների հնարավորության բացարձակ արգելքի վերաբերյալ ԽԿԿ-ն նշել է, որ *նման ցանկացած սահմանափակում պետք է հստակորեն հիմնավորվի նախաքննության պահանջներով, ենթակա լինի հաստատման վարույթին առնչություն չունեցող մարմնի կողմից և կիրառվի հստակ ժամանակահատվածի համար: Գրավոր որոշումը պետք է պարունակի կիրառված յուրաքանչյուր սահմանափակման հիմքերը և պետք է տրամադրվի ազատությունից զրկված անձին և (կամ) նրա փաստաբանին: Սահմանափակումները պետք է պարբերաբար վերանայվեն՝ դրանց շարունակական անհրաժեշտության առկայությունը քննարկելու համար<sup>353</sup>:*

Այսպիսով, միջազգային և ներպետական իրավական կարգավորումների լույսի ներքո մանրազնին վերլուծության ենթարկելով ազատությունից զրկված անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելն արգելելու հարցերը՝ կարելի է ենթադրել, որ.

1. ինքնին քրեական գործի քննության փաստը չի կարող հանդիսանալ ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքի սահմանափակման հիմք: Նման հաղորդակցման ցանկացած սահմանափակում պետք է ունենա հատուկ և անհատականացված հիմնավորում,

2. տեսակցելու իրավունք ունեցող անձանց շրջանակից պետք է առանձնացնել ազատությունից զրկվածի ընտանիքի անդամներին կամ մերձավոր ազգականներին ու նրանց հետ տեսակցելու իրավունքը սահմանափակելու հնարավորության համար նախատեսել ավելի խիստ պահանջներ.

3. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ ձերբակալվածի կամ կալանավորվածի տեսակցության իրավունքը սահմանափակելու լիազորությամբ չպետք է օժտված լինի վարույթն իրականացնող մարմինը,

4. այս իրավունքը սահմանափակող որոշումները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված,

5. դրանք պետք է անհապաղ հանձնվեն կալանավորվածին և/կամ նրա փաստաբանին՝ բողոքարկման իրավական հնարավորությունից լիարժեք օգտվելու նպատակով,

6. ընտանիքի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության իրավունքը սահմանափակող որոշումը պետք է պարբերաբար վերանայվի՝ անկախ ազատությունից զրկված անձի ցանկությունից կամ վերաբերմունքից:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմը Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ դեռևս 2018 թվականին մշակել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով առաջարկվել է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում: Նախագծով առաջարկվել են կարգավորումներ, որոնք ուղղված են կալանավորված

<sup>353</sup> Տե՛ս ԽԿԿ-ի 2010 թվականի փետրվարի 5-ից 15-ը Վրաստան կատարած այցի վերաբերյալ զեկույցը, կետ 108:

անձի՝ մերձավոր ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցությունն արգելելու հստակ մեխանիզմի նախատեսմանը, ազգային օրենսդրության միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովմանը:

Մասնավորապես՝ առաջարկվել է.

1) կալանավորված անձանց տեսակցությունը մերձավոր ազգականների հետ արգելելը նախատեսել որպես դատավարական հարկադրանքի միջոց,

2) նշված դատավարական հարկադրանքի միջոցը մինչդատական վարույթում կիրառել միայն քննիչի պատճառաբանված միջնորդությամբ՝ դատախազի որոշմամբ կամ դատախազի սեփական նախաձեռնությամբ,

3) դատական քննության փուլում կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելու ձևով դատավարական հարկադրանքի միջոցը կիրառել դատարանի որոշմամբ,

4) սահմանել կալանքի տակ գտնվելու ընթացքում մերձավոր ազգականի հետ մեղադրյալի տեսակցությունն արգելելու հստակ հիմքեր,

5) դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառել միայն կալանավորված անձի այն մերձավոր ազգականի նկատմամբ, ում տվյալները հստակ նշված են որոշման մեջ,

6) նախատեսել դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառելու վերաբերյալ որոշումն անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կալանավորված անձին, նրա պաշտպանին՝ քրեական գործով վարույթին մասնակցության դեպքում, ինչպես նաև կալանավորվածներին պահելու վայրի վարչակազմին ուղարկելու հստակ պահանջ,

7) նախատեսել քննիչի միջնորդությամբ կամ դատախազի նախաձեռնությամբ հարկադրանքի նշված միջոցի ժամկետի երկարացման անհրաժեշտության և իրավաչափության հարցերը վերանայելու և այդ մասին պատճառաբանված որոշում կայացնելու պահանջ,

8) դատավարական հարկադրանքի միջոցի հետագա կիրառման անհրաժեշտության վերացման դեպքում նախատեսել դատախազի կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի կողմից այն վերացնելու պարտականություն,

9) նախատեսել դատական քննություն նշանակելու մասին որոշման մեջ կալանավորված անձի տեսակցությունը մերձավոր ազգականի հետ արգելելը վերացնելու, փոխելու կամ ընտրելու մասին որոշումներ բովանդակելու պահանջ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ նշված օրենսդրական առաջարկի առանցքային դրույթներն արդեն իսկ տեղ են գտել 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, մասնավորապես, Օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կալանք կիրառելու կամ կալանքի ժամկետն երկարաձգելու մասին դատարանի որոշմամբ կարող է սահմանափակվել մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը, եթե փաստական հանգամանքների բավարար ամբողջությամբ քննիչի կամ դատախազի կողմից հիմնավորվել և դատարանի կողմից պատճառաբանված հաստատվել է այդպիսի սահմանափակման անհրաժեշտությունը, ներառյալ ժամկետին և անձանց շրջանակին վերաբերող պայմանները:

Մասնավորապես, օրենսդրական այս կարգավորումն արտացոլում է 2020 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկն առ այն, որ մեղադրյալի՝ այլ անձանց հետ հաղորդակցվելու իրավունքը սահմանափակող որոշումը պետք է ենթարկվի պարբերաբար վերանայման:

Հարկ է նշել, որ նախագծի ընդունման արդյունքում անհրաժեշտություն կառաջանա փոփոխություն կատարել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 137-րդ կետում:

Պաշտպանն ընդգծում է, որ մինչև օրենսդրական համապատասխան փոփոխություններն ու ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի՝ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտնելն *անհրաժեշտ է պրակտիկական զարգացնել այն ուղղությամբ, որ վարույթն իրականացնողի կողմից կայացված յուրաքանչյուր որոշմամբ հստակ ամրագրվի անձանց շրջանակ, որոնց հետ արգելվում են կալանավորված անձանց տեսակցությունների ու հեռախոսային խոսակցությունները: Միաժամանակ անհրաժեշտ է պարբերաբար վերանայել որոշումն ու արգելքի անհրաժեշտության վերացման դեպքում վերացնել կայացված որոշումը:*

Նաև անհրաժեշտ է նշել, որ օրենսդրական նման առաջարկը որոշակի առումով ուներ պրակտիկ հիմքեր, քանի որ ներկայում էլ, ըստ Դատախազության պարզաբանումների, կիրառվող արգելքը դեպքերի մեծամասնության ժամանակ նախապես համաձայնեցվում է հսկող դատախազի հետ: Այն դեպքերում, երբ արգելքը նախապես դատավարական ղեկավարում իրականացնող դատախազի հետ չի համաձայնեցվում, դատախազն այդ մասին իրազեկվում է կամ քրեական գործի նյութերի ուսումնասիրության ընթացքում իր հսկողական լիազորություններն իրականացնելիս կամ այդ որոշման դեմ դատավարության մասնակիցներից բողոքներ ստանալիս:

Գործնականում արձանագրված մեկ այլ խնդիր, երբ դեռևս նախաքննության փուլում կալանավորված մեղադրյալի տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների արգելք է սահմանվում վարույթն իրականացնող քննիչի որոշմամբ, այնուհետև քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվում է դատարան, բայց քրեակատարողական հիմնարկը շարունակում է չթույլատրել կալանավորված անձին տեսակցել ընտանիքի ու արտաքին աշխարհի հետ:

Այս առնչությամբ անհրաժեշտ է հղումներ անել նախևառաջ ՀՀ Սահմանադրության 31-րդ, 33-րդ և 78-րդ հոդվածներին:

Պետք է նշել նաև, որ Սահմանադրությունից զատ, անձնական ու ընտանեկան կյանքի իրավունքը երաշխավորվում է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով (այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա): Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք: Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այս իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, **երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է (...) ի շահ պետական անվտանգության,**

**հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:** Հոդվածի ձևակերպումից ստացվում է, որ միջամտությունը՝ նախևառաջ պետք է նախատեսված լինի օրենքով: Այն պետք է հետապնդի իրավաչափ նպատակ (ընդ որում, նպատակների ցանկը սպառիչ է): Եվ, պետք է լինի այդ նպատակին համաչափ: Այսինքն, միջամտությունը պետք է լինի այն չափով, որքան անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում իրավաչափ նպատակին հասնելու համար:

Ինչպես վերը նշվեց, միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունները պետության համար սահմանում են հատուկ պահանջներ, որոնք վերաբերում են ազատությունից զրկված անձանց սոցիալական շփումներին, մերձավոր ազգականների, այդ թվում՝ ընտանիքի հետ կապին:

Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ արտաքին աշխարհի հետ կապի սահմանափակման պայմաններում պետության պարտավորվածությունն ավելի է մեծանում՝ հնարավորինս խթանելու ազատությունից զրկված անձի բավարար սոցիալական շփումներն ու կապերը: Ընդ որում, ազատությունից զրկված անձի և, հատկապես, կալանավորված անձի համար սոցիալական շփումների երաշխավորումը դիտարկվում է նրա նկատմամբ վատ վերաբերմունքի տեսանկյունից:

Մասնավորապես, «Եվրոպական բանտային կանոնների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 հանձնարարականի արտաքին աշխարհի հետ կապի վերաբերյալ 99-րդ կանոնի համաձայն՝ այն դեպքերում, երբ չկա անհատական գործի շրջանակներում դատարանի կողմից կոնկրետ ժամանակահատվածում կոնկրետ արգելք նախատեսելու մասին պահանջ, ապա կալանավորված անձինք պետք է հաղորդակցվեն ընտանիքի անդամների և այլ անձանց հետ նույն եղանակով, ինչ դատապարտյալները:

Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի գործով 2015 թվականի հունիսի 30-ի վճռում արձանագրել է, որ կալանքն, ինչպես անձին ազատությունից զրկելու յուրաքանչյուր այլ միջոց, հանգեցնում է նրա անձնական և ընտանեկան կյանքի սահմանափակում: Այնուամենայնիվ, դատապարտյալի՝ իր ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի կարևոր մասն է կազմում վարչակազմի կողմից նրա կապը մերձավոր ազգականների հետ ապահովելը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ապահովմանն աջակցելը<sup>354</sup>:

*Ուստի, անհրաժեշտ է պրակտիկական զարգացնել այն ուղղությամբ, որ քրեական գործով դատաքննության մեկնարկի դեպքում միջոցներ ձեռնարկվեն պարզելու համար մինչդատական վարույթում կիրառված արգելանքի վերաբերյալ վարույթն իրականացնող դատարանի դիրքորոշումը:*

<sup>354</sup> Տե՛ս Խորոշենկոն ընդդեմ Ռուսաստանի (Khoroshenko v. Russia) գործով Եվրոպական դատարանի 2015 թվականի հունիսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 41418/04, կետ 106:

## **8. Խուզարկություն քննչական գործողությանն առնչվող գործնական խնդիրներ**

2021 թվականի ընթացքում խուզարկություն քննչական գործողության իրականացման՝ իրավակիրառ պրակտիկայում արձանագրված խնդրահարույց դրսևորումների կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմ շարունակվել են ստացվել բողոքներ:

Այս թեմայի շրջանակում քննարկման առարկա են դարձել տվյալ քննչական գործողությանն առնչվող գործնական նշանակություն ունեցող մի քանի խնդիրներ, որոնք արձանագրվել են Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրմամբ:

Այսպես, քննարկված հարցերից մեկը վերաբերում է բնակարանի խուզարկություն և դեպքի վայրի զննություն քննչական գործողությունների հարաբերակցությանը՝ քրեական վարույթի շրջանակում մեկը մյուսով փոխարինելու անընդունելի դրսևորումներին:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը երաշխավորվում է ՀՀ Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով:

Բնակարանի խուզարկության առնչությամբ Եվրոպական դատարանը գնահատում է՝ արդյոք այդ միջոցի կիրառման անհրաժեշտության համար ներկայացված հիմքերը եղել են «վերաբերելի» ու «բավարար» և արդյոք վերոնշյալ համաչափության սկզբունքը պահպանված է: Վերջինիս կապակցությամբ Եվրոպական դատարանը, նախ, պարզում է՝ արդյոք համապատասխան օրենսդրությունը և պրակտիկան անձանց տրամադրում են համարժեք և արդյունավետ երաշխիքներ չարաշահումների դեմ, այնուհետև հաշվի է առնում գործի կոնկրետ հանգամանքները՝ պարզելու համար արդյոք միջամտությունը եղել է համաչափ հետապնդվող նպատակին: Որպես վերջին հանգամանքի գնահատման չափանիշ Եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, հիմք է ընդունում այն հանցագործության ծանրությունը, որի կապակցությամբ խուզարկությունը կատարվում է, թույլտվությունը տալու կարգը և հանգամանքները, մասնավորապես՝ այդ պահին հավելյալ ապացույցների առկայությունը, թույլտվության բովանդակությունը և սահմանները՝ հատուկ ուշադրություն դարձնելով խուզարկվող բնակարանի բնույթին և այն երաշխիքներին, որոնք կիրառվել են միջամտության ազդեցությունը ողջամտորեն սահմանափակելու համար:<sup>355</sup>

«Բնակարան» եզրույթը բացահայտվել է 1998 թվականին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածում: Ըստ այդմ՝ բնակարանը որպես քրեադատավարական եզրույթ, ներառում է շենքը կամ շինությունը, որը մշտապես կամ ժամանակավորապես օգտագործվում է որոշակի անձի կամ անձանց բնակության համար, այդ թվում՝ սեփական կամ վարձակալված բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը,

355 Տե՛ս, ի թիվս այլնի, Սմիրնովն ընդդեմ Ռուսաստանի (Smirnov v. Russia) գործով 2007 թվականի հունիսի 7-ի վճիռ, գանգատ թիվ 71362/01, կետեր 43-44, Բաքն ընդդեմ Գերմանիայի (Buck v. Germany) գործով 2005 թվականի ապրիլի 28-ի վճիռ, գանգատ թիվ 41604/98, կետ 45:

նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, համապատասխանաբար նրանց անմիջական հարող ծածկապատշգամբները, սանդղավանդակները, վերնասարահները, պատշգամբները, ընդհանուր օգտագործման տարածքը, ինչպես նաև դրանց այլ բաղկացուցիչ մասերը, որոնք օգտագործվում են հանգստի, գույքը պահելու, ինչպես նաև որոշակի անձի կամ անձանց այլ պահանջմունքները բավարարելու համար, բնակելի շինության նկուղը և ձեղնահարկը: «Բնակարան» հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ինչպես նաև ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը: Հետևապես, նշված վայրերում խուզարկության իրականացման համար անհրաժեշտ է այդ մասին դատարանի թույլտվություն:

Դատական վերահսկողության շրջանակում նշված վայրերում դատարանի թույլտվություն անհրաժեշտ չէ, եթե այդ վայրը կոնկրետ վարույթի շրջանակում հանդիսանում է դեպքի վայր և այնտեղ իրականացվում է դեպքի վայրի գննություն:

Այս համատեքստում ստացված բողոքներում բարձրացված հիմնական մտահոգությունը վերաբերում է կոնկրետ տարածքն արհեստականորեն դեպքի վայր դիտարկելու և ըստ այդմ այնտեղ առանց դատարանի որոշման, քողարկված եղանակով խուզարկության իրականացումը: Օրինակ՝ անհասկանալի է, թե ինչպես կարող է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործության դեպքի առթիվ նախապատրաստվող նյութերի շրջանակում սուբյեկտի գործունեության վայրն ինքնաբերաբար գնահատվել որպես դեպքի վայր, երբ քննությունը կատարվում է, օրինակ «Հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը» հանցակազմի շրջանակում: Նշված դիտարկման համար առանցքային նշանակություն ունի տվյալ հանցակազմի օբյեկտիվ կողմին բնորոշ գործողությունների կատարման եղանակը: Մասնավորապես, խոսքն այն մասին է, որ դիսպոզիցիայով սահմանված գործողությունները, ոլորտային օրենսդրությանը համապատասխան, իրականացվում է առավելապես էլեկտրոնային եղանակով կամ համապատասխան հաշվետվություններն իրավասու պետական մարմին թղթային տարբերակով ներկայացնելու միջոցով:

Նշված վայրը որպես դեպքի վայր դիտարկելն ու գննությունն իրականացնելը խնդրահարույց է նկատի ունենալով, որ կոնկրետ օրինակում «դեպքի վայրի գննության» ընթացքում վարույթն իրականացնողը խնդրել է աշխատակիցներին պահարաններից հանել, սեղանների վրա դնել քննությանը հետաքրքրող թղթապանակները, որոնք գործողության ավարտին վերցվել են: Վարույթն իրականացնողի գործողությունները, եթե անգամ իրականում նման նպատակ չեն հետապնդել, առերևույթ ողջամիտ կասկած են հարուցել քողարկված խուզարկության անցկացման մասին:

Քրեական հետապնդման մարմինների կողմից դեպքի վայրի գննության ներքո խուզարկության իրականացումը խիստ անընդունելի է. այս պրակտիկան քրեադատավարական ընթացակարգի շրջանակում ոչ միայն վտանգում է մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքները, այլև ուղիղ հարված է հասցնում այդ քննչական գործողության արդյունքում ձեռքբերված ապացույցների

թույլատրելիությանը, ինչպես նաև այն ապացույցների թույլատրելիությանը, որոնք անթույլատրելի ապացույցի հետ գտնվում են պատճառահետևանքային կապի մեջ:

Քննարկման արժանի մյուս հարցը նախաքննության մարմնի կողմից խուզարկությանն անձի և նրա փաստաբանի մասնակցությունը (ներկայությունը) չթույլատրելն է: Նման բողոքներ ևս Պաշտպանի աշխատակազմը ստացել է: Նույն խնդիրն արձանագրվել էր նաև Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի աշխատասենյակը խուզարկելիս:

Մարդու իրավունքների պաշտպանն այս առնչությամբ հարկ է համարում արձանագրել, որ խուզարկվող բնակարանի նկատմամբ մասնավորության ակնկալիք (expectation of privacy) ունի հենց այն անձը, ով մշտապես կամ ժամանակավորապես բնակվում է այնտեղ, իսկ աշխատասենյակի դեպքում՝ ում հատկացված է և ով զբաղեցնում է այն:

Այս երաշխիքը պատահական չէ. այն նպատակ ունի երաշխավորելու մասնավոր կյանքի պաշտպանության իրավաչափ անհրաժեշտությունը: Ուստի, անձի ներկայությունը կամ մասնակցությունն իր աշխատասենյակում կատարվող առգրավմանը, անկախ նրա դատավարական կարգավիճակից, պետք է ցանկացած գործով միշտ դիտարկվի հենց այդ տեսանկյունից: Դա ապահովելու անմիջական պարտականություն կրում է քննչական գործողությունը կատարողը, եթե իհարկե հնարավոր չէ դա օբյեկտիվ պատճառներով: Նշվածը բխում է խուզարկությանը և առգրավմանը ներկա գտնվող անձանց շրջանակը հստակեցնող Քրեական դատավարության օրենսգրքի 227-րդ հոդված համակարգային վերլուծությունից:

Դրանից բացի, անհրաժեշտ է նկատել, որ բնակարանում իրականացվող քննչական գործողությունն անձի մոտ ողջամտորեն կարող է կասկած հարուցել իր նկատմամբ իրականացվող քրեադատավարական պրոցեսի մասին: Իսկ քանի որ Սահմանադրության ուժով՝ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք, ուստի հենց վարույթն իրականացնող մարմնի պարտավորությունն է ձեռնարկել հնարավոր բոլոր միջոցները քննչական գործողությանն անձի և նրա ցանկության դեպքում նաև փաստաբանի ներկայությունն ապահովելու համար:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ հանդիպող մյուս հարցը վերաբերում է խուզարկություն կատարելու թույլտվություն ստանալու քննիչի միջնորդության ու այդ միջնորդության կապակցությամբ դատարանի կայացրած որոշման մեջ առկա ընդհանրական ձևակերպումներին:

Այսպես, պրակտիկայում արձանագրվել են դեպքեր, երբ բնակարանը խուզարկելու մասին դատարանի որոշման մեջ որպես խուզարկության նպատակ նշվել է քրեական գործի համար նշանակություն ունեցող իրեր հայտնաբերելը: Մեկ այլ դեպքում որոշման եզրափակիչ մասում խուզարկությունը թույլատրվել է «(...) քրեական գործով ապացուցողական նշանակություն ունեցող էլեկտրոնային կրիչներ և փաստաթղթեր, ինչպես նաև այլ առարկաներ և իրեր հայտնաբերելու և վերցնելու համար»:

Ըստ էության, դատարանները նման որոշումներով սահմանում են առարկաների բավականին ընդարձակ շրջանակ, ինչը վարույթն իրականացնողին հնարավորություն է տալիս գործնականում

վերցնել իրերի անորոշ շրջանակ՝ այդպիսով վարույթն իրականացնողի բարեխղճությանը թողնելով իրերի շրջանակը որոշելու հարցը:

Այս կապակցությամբ հետաքրքրական և կարևոր դիրքորոշում է հայտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Դատարանի դիրքորոշմամբ՝ պետությունները որոշակի իրավախախտումներով ապացույց ձեռք բերելու նպատակով կարող են խուզարկել բնակարան և առգրավել գույք, սակայն իրավական կարգավորումները և պրակտիկան պետք է խուզարկության ենթարկվող անձին ապահովեն համապատասխան և արդյունավետ պաշտպանություն հնարավոր կամայականություններից և չարաշահումներից<sup>356</sup>: Ավելին, նշվել է նաև, որ խուզարկության մասին որոշումները, որքան հնարավոր է, պետք է ապահովեն դրանց հետևանքների սահմանափակումը ողջամիտ սահմաններով<sup>357</sup>:

Նշված խնդիրն ավելի ուշ քննարկվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանում: Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի գործով<sup>358</sup> Վճռաբեկ դատարանը, հղում կատարելով Եվրոպական դատարանի դիրքորոշումներին, ի թիվս այլնի, նշել է, որ ինչպես խուզարկություն կատարելու համար նախաքննական մարմնի միջնորդությունը, այնպես էլ դատարանի թույլտվության որոշումը պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված: Մասնավորապես, ըստ հիշատակված որոշման, նախաքննական մարմնի որոշման պատճառաբանական մասում պետք է նշվեն տվյալներ այն հանցագործության մասին, որի առիթով մտադրություն կա կատարել խուզարկություն, ինչպիսի առարկաներ պետք է ստացվեն քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակման հետ կապված գործողության արդյունքում, դրա կատարման ժամկետը, այն բնակարանի նույնականացման տվյալները, որտեղ պետք է կատարվի խուզարկությունը, տվյալները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ փնտրվող առարկաները գտնվում են տվյալ բնակարանում, քննչական գործողության անմիջական կատարողները, արդյունքների ամրագրման ձևը, ինչպես նաև այլ տվյալներ, որոնք անհրաժեշտ են դատարանին օրինական և հիմնավորված որոշում ընդունելու համար:

Ընդ որում, Դատարանը սահմանել է, որ միջնորդության բավարարման դեպքում դատարանի որոշումը պետք է պարունակի նշում խուզարկության կատարման փաստական հիմքերի առկայության մասին, դրանց վերաբերելիության, արժանահավատության և բավարարության մասին հիմնավորումներ, փնտրվող առարկաների՝ գործի համար նշանակության վերաբերյալ հիմնավորումներ, ինչպես նաև հստակ նշում բնակարանի նույնականացման համար անհրաժեշտ տվյալների և փնտրվող առարկաների բնութագրի վերաբերյալ:

---

<sup>356</sup> Տե՛ս Իլյա Ստեֆանովն ընդդեմ Բուլղարիայի (Iliya Stefanov v. Bulgaria) գործով 2008 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 65755/01, կետ 41:

<sup>357</sup> Տե՛ս Վան Ռոսսեմն ընդդեմ Բելգիայի (Van Rossem v. Belgium) գործով 2004 թվականի դեկտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 41872/98, կետ 45:

<sup>358</sup> Տե՛ս Սեպուհ Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի գործով Վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ին թիվ ԵՇԴ/0073/07/15 որոշման 24-րդ կետը:



Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ խուզարկությունը քրեական վարույթի ընթացքում հանրային իրավաչափ շահերի պաշտպանության համար կարևոր նշանակություն ունեցող քննչական գործողություն է: Դրա հետ միասին, կատարվող խուզարկությունը ցանկացած պարագայում մարդու անձնական կյանքին միջամտող քննչական գործողություն է, իսկ խուզարկությունն առհասարակ կարող է պարունակել քրեական հետապնդման տարրեր: Ուստի, քննչական տվյալ գործողության պարագայում կարևորագույն նշանակություն ունի այն, թե որոշակիության ինչ աստիճան ունեն քննիչի միջնորդության ու առավել ևս խուզարկությունը թույլատրող դատարանի որոշման մեջ առկա ձևակերպումները:

Դատական ակտի ձևակերպումները պետք է լինեն կոնկրետ (այդպիսին պետք է լինի նաև քննիչի միջնորդությունը), հստակ ցույց տան դատարանի թույլտվության սահմանները, խուզարկության ծավալն ու կանխորոշեն քննիչի գործողությունների շրջանակը: Հակառակ դեպքում խուզարկության նկատմամբ դատական վերահսկողության նշանակությունն իմաստազրկվում է և չի ծառայում իր նպատակին՝ իրական երաշխիքից վերաժվելով պատրանքայինի: Այդ պարագայում խուզարկությունը չի ծառայում քննության կամ քրեական հետապնդման իրավաչափ շահի պաշտպանությանը, իսկ անձնական կյանքին միջամտությունը դառնում է ոչ իրավաչափ:

Ձևակերպումների կոնկրետության պահանջը վերաբերում է ոչ միայն որոնվող առարկաներին կամ փաստաթղթերին, այլ նաև այն կոնկրետ տարածքին, որի խուզարկության համար տրվել է դատարանի թույլտվությունը: Այս կանոնից ցանկացած շեղում պետք է համարել անթույլատրելի:

Սույն թեմայի շրջանակում կարևոր ենք համարում անդրադառնալ մեկ այլ կարևոր հարցի ևս: Քրեական դատավարության օրենսգրքի 225-րդ հոդվածի ուժով՝ խուզարկությունն իրականացվում է հանցագործության գործիքներ, հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաներ ու արժեքներ, ինչպես նաև այլ առարկաներ ու փաստաթղթեր գտնելու և վերցնելու համար, որոնք կարող են նշանակություն ունենալ գործի համար: Խուզարկություն կարող է կատարվել նաև հետախուզվող անձանց, հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց, ինչպես նաև դիակները հայտնաբերելու համար:

Մինևույն ժամանակ, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել է, որ Ոստիկանությունը հանցագործություններ հայտնաբերելիս և բացահայտելիս իրավունք ունի հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հետապնդելիս հանցագործություն կատարվելու կամ կատարված լինելու, ինչպես նաև դժբախտ պատահարի մասին բավարար տվյալների առկայության դեպքում վթարների, համաճարակների, զանգվածային անկարգությունների ժամանակ քաղաքացիների և հասարակական անվտանգության ապահովման անհրաժեշտության, ինչպես նաև հետաձգում չհանդուրժող այլ դեպքերում մուտք գործելու բնակարաններ, շինություններ, տարածքներ, հողամասեր, այդ թվում՝ արգելքները վերացնելու միջոցով:

Անհրաժեշտ է նկատել, որ ի տարբերություն խուզարկության ընթացակարգին, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների հիման վրա բնակարան կարելի է մուտք

գործել բացառապես հանցագործություններ հայտնաբերելիս ու բացահայտելիս և բացառապես հետաձգում չհանդուրժող այլ դեպքերում: Այսինքն՝ օրենսդրական նման ձևակերպումը նախատեսված է միայն կոնկրետ իրադրությունում հանցագործության կանխման և խափանման, անձին անհապաղ արգելանքի վերցնելու համար:

Չնայած դրան, գործնականում այս իրավադրույթը չարաշահում է նաև քրեական գործի շրջանակում հետախուզվող անձին հայտնաբերելու համար: Օրենսդրությամբ հստակ ամրագրվել է «հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց հետապնդելիս» ձևակերպումը: Դրանից ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է հանցանք կատարած անձին անմիջապես դրա կատարումից հետո կամ կատարման ընթացքում բռնելուն, իսկ հետախուզման մեջ գտնվող անձին բռնելիս այս դրույթը չի կարող կիրառվել: Հակառակ պարագայում՝ անիմաստ կլիներ հետախուզվող, ինչպես նաև հանցագործություն կատարելու մեջ կասկածվող անձանց որոնելու և հայտնաբերելու համար խուզարկություն իրականացնելու օրենսդրական կառուցակարգի ամրագրումը: Հետևապես, անթույլատրելի է քրեական վարույթի շրջանակում հետախուզվող անձին հայտնաբերելու համար խուզարկության քրեադատավարական ընթացակարգի փոխարինումը «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված լիազորությամբ: Հատուկ ընդգծում ենք, որ սրանք տարբեր ինստիտուտներ են, որոնցից առաջինն ուղղված է քրեադատավարական խնդիրների լուծմանը, իսկ երկրորդը՝ Ոստիկանության խնդիրների իրականացմանը:

Օրինակ, խուզարկության կատարման կարգի վերաբերյալ 2021 թվականին հասցեագրված բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ վստահորդի բնակարանում դատարանի որոշմամբ կատարվել է խուզարկություն, որի արդյունքում հայտնաբերվել և առգրավվել է գույք, որի մի մասը վստահորդին է պատկանել: Փաստաբանը հավելել է, որ խուզարկության թույլտվության մասին դատարանի որոշման ու խուզարկության արձանագրության պատճենները ստանալու համար մի քանի անգամ դիմել է վարույթի իրականացնող մարմին՝ նկատի ունենալով, որ դրանք առնչվում են Վ. Մուրադյանին ու անհրաժեշտ են նրա իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով, սակայն իր դիմումներն անհիմն կերպով չեն բավարարվել: Այնուամենայնիվ, բողոքի քննարկման շրջանակում փաստաբանի բարձրացրած հարցը լուծվել է:

Վերը քննարկված խնդիրների հաշվառմամբ՝ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է.

1. գործնականում բացառել դեպքի վայրի զննություն քննչական գործողության ներքո քողարկված ձևով բնակարանի խուզարկության իրականացումը՝ նկատի ունենալով, որ անձի համապատասխան սահմանադրական իրավունքին անհամաչափ միջամտության ռիսկերը խիստ մեծանում են,

2. բնակարանի խուզարկության ընթացքում ապահովել անձի և նրա կողմից մատնանշված փաստաբանի մասնակցությունը (ներկայությունը), ինչպես նաև տրամադրվեն խուզարկության թույլտվության մասին դատարանի որոշման ու խուզարկության արձանագրության պատճենները,

3. վարույթի իրականացնող մարմնի միջնորդությամբ և խուզարկությունը թույլատրող դատարանի ակտով հստակեցնել թույլտվության սահմանները՝ խուզարկության իրականացման

վայրի, ծավալի, փնտրվող առարկաների վերաբերյալ՝ նկատի ունենալով, որ դրանք ունեն կարևոր նշանակություն մարդու անձնական կյանքի միջամտության ու վարույթն իրականացնող մարմնի գործողությունների ծավալների տեսանկյունից,

4. գործնականում բացառել հետախուզվողին հայտնաբերելու ուղղությամբ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթների ուժով անձի բնակարանի անձեռնմխելիության խախտման դեպքերը:

**9. Քրեական գործով վարույթի ընթացքում որպես իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության իրավունքին անհամաչափ միջամտությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի 2016, 2017, 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով մանրամասն անդրադարձ է կատարվել անձի սեփականության իրավունքի և հանրային շահի ողջամիտ հավասարակշռության ապահովման, սեփականության իրավունքին միջամտության համաչափության խնդիրներին:

Մասնավորապես, իրականացնելով սահմանադրական, կոնվենցիոն և ներպետական օրենսդրական համապատասխան նորմերի համակարգված վերլուծություն, այդ հաղորդումներում արձանագրվել է, որ ընդհանուր կանոնի համաձայն՝ որպես իրեղեն ապացույց ճանաչված առարկաները պահվում են քրեական վարույթն իրականացնող մարմնի մոտ մինչև գործով վերջնական դատական ակտի կամ որոշման կայացումը:

Միևնույն ժամանակ, սեփականության օբյեկտ հանդիսացող որոշակի առարկաների դեպքում օրենսդիրը նախատեսել է իրեղեն ապացույցների պահպանման նշված կանոնից բացառություն, համաձայն որի՝ գույքը սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին վերադարձվում է քրեական գործի քննության ընթացքում:

Սրա հետ կապված, հարկ ենք համարում նշել, որ թեև քրեադատավարական օրենքը վարույթն իրականացնող մարմնի՝ իրեղեն ապացույցները նախքան քրեական գործով վարույթի ավարտը վերադարձնելու պարտականության որևէ կոնկրետ դատավարական ժամկետ չի սահմանում, այդուհանդերձ, օրենսդրական այս պահանջի՝ սեփականության իրավունքի պաշտպանության կարևորությունից բխում է, որ վարույթն իրականացնող մարմինը պետք է պատշաճ ջանասիրություն ցուցաբերի իրեղեն ապացույց ճանաչված անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու ուղղությամբ:

Այս դիրքորոշումը բխում է նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքից: Որոշումներից մեկում<sup>359</sup> Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իր նախադեպային իրավունքում ձևավորած իրավական դիրքորոշումներն առ այն, որ գույքի տիրապետման, տնօրինման և օգտագործման՝ սեփականատիրոջ իրավազորությունները մեծ կարևորության իրավական արժեքներ են, որոնք ունեն սահմանադրական բնույթ<sup>360</sup>: Սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը պահանջելու, որ այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև պետության պարտականությունը՝ սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգություններից<sup>361</sup>:

Մեկ այլ որոշման<sup>362</sup> շրջանակում Վճռաբեկ դատարանը վկայակոչել է Եվրոպական դատարանի իրավադիրքորոշումներից մեկը, որի համաձայն՝ իրեղեն ապացույց ճանաչված առարկայի մեծածավալության դեպքում այն համապատասխան անձանց պատասխանատու պահպանմանը հանձնելու հայեցողական լիազորությունն իրականացնելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է ելնի պատշաճ ապացուցման ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև արդարացի հավասարակշռություն ապահովելու անհրաժեշտությունից: Յուրաքանչյուր դեպքում պետք է հաշվի առնվի սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովվեն համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ<sup>363</sup>:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանը վերահաստատել է իրավական դիրքորոշումն առ այն, որ իրեղեն ապացույց ճանաչված մեծածավալ գույքի դեպքում, եթե ողջամտորեն բացառվում է դրա առանձնահատկությունները, հատկանիշները, պարունակող հետքերն էապես փոփոխելու հնարավորությունը, վարույթն իրականացնող մարմինը պետք է քննարկման առարկա դարձնի այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի պահպանմանը թողնելու հարցը: Վերջին պահանջից բխում է նաև սեփականատիրոջ պատասխանատու պահպանմանը վերոհիշյալ գույքը չթողնելու պարագայում պատշաճ հիմնավորում ներկայացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը, որպիսի

---

<sup>359</sup> Տե՛ս Արմեն Սարգսյանի և Վազգեն Գաբրիելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշման 20-րդ կետը:

<sup>360</sup> Տե՛ս Արթուր Հայրապետյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի օգոստոսի 27-ի թիվ ԵՇԴ/0001/11/10 որոշման 19-րդ կետը:

<sup>361</sup> Տե՛ս Արամ Ատեփանի Մկրտչյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի հունիսի 8-ի թիվ ԵԿԴ/0326/01/09 որոշման 20-րդ կետը:

<sup>362</sup> Տե՛ս Լևոն Զաքոյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշման 18-րդ կետը:

<sup>363</sup> Տե՛ս Borzhonov v. Russia գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:

դեպքում միայն կապահովվի սեփականության իրավունքի սահմանափակման համաչափությունն անձի կողմից վիճարկելու, ինչպես նաև իրավասու մարմնի կողմից այն գնահատելու հնարավորությունը<sup>364</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը վերը նշվածի կապակցությամբ շարունակում է ստանալ թե գրավոր և թե բանավոր բողոքներ: Բողոքներով անձինք տեղեկացրել են, որ քրեական վարույթի շրջանակներում Ոստիկանության բաժնում պահվող կամ քրեական գործով իրեղեն ապացույց ճանաչված տրանսպորտային միջոցը քննչական կամ այլ դատավարական գործողություններ կատարելու կամ առանց պատճառաբանությամբ չի վերադարձվել սեփականատիրոջը կամ օրինական տիրապետողին: Մի քանի դեպքում անձինք նշել են, որ տրանսպորտային միջոցը խիստ անհրաժեշտ է, ամենօրյա աշխատանքի համար, ապրուստի միակ միջոցն է:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ կատարված գողության դեպքի կապակցությամբ հրավիրվել է Ոստիկանության բաժին, սակայն գողության դեպքի հետ որևիցե առնչություն չունի՝ հավելելով, որ դեպքի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում նախաքննության ընթացքում առգրավվել են իր ավտոմեքենան, անձնական իրերը, այդ թվում՝ մեքենայում գտնվող աշխատանքային գործիքները: Հավելել է, որ փականագործ է, իսկ աշխատանքային գործիքներն անհրաժեշտ են եղել ընտանիքի կարիքները հոգալու համար: Հետագայում քաղաքացու ներկայացրած տեղեկության համաձայն՝ վարույթն իրականացնող մարմինն իր նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցրել է, ինչպես նաև վերադարձվել են ավտոմեքենան և անձնական իրերը:

Մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ որդին նրա վարած ավտոմեքենայով տրանսպորտային միջոցով վթարի է ենթարկվել, ճանապարհատրանսպորտային պատահարի ժամանակ մյուս տրանսպորտային միջոցի վարորդը վթարի արդյունքում մայթի վրա գտնվող երկու անձանց առողջությանը վնաս է պատճառվել, իսկ որդուն պատկանող տրանսպորտային միջոցն առգրավվել է 2021 թվականի ապրիլին, նշանակվել են դատահետքաբանական, դատաքիմիական, մանրաթելերի համալիր, դատաավտոտեխնիկական, ինչպես նաև տեսաձայնագրային և դատաավտոտեխնիկական համալիր փորձաքննություններ, որոնց արդյունքները բողոքը ներկայացնելու օրվա դրությամբ դեռևս չեն ստացվել և տրանսպորտային միջոցը տևական ժամանակ իրեն չի վերադարձվում:

Բողոքների ուսումնասիրությունից ակնհայտ է, որ քաղաքացիներն ու իրավապահ մարմինները հաճախ են բախվում նշված խնդրին գլխավորապես փորձաքննության նշանակման դեպքում դրանց եզրակացությունները տևական ժամանակ անց ստանալու պատճառով: Երբեմն նաև իրավապահ մարմինները որպես արդարացում նշում են վարույթն իրականացնողի ծանրաբեռնվածության խնդիրը: Օրինակ, արձանագրվել են դեպքեր, երբ տրանսպորտային միջոցը հետ չի վերադարձվել պատճառաբանությամբ, որ անհրաժեշտություն կա այն խուզարկելու, սակայն վարույթն

<sup>364</sup> Տե՛ս Արմեն Սարգսյանի և Վազգեն Գաբրիելյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 որոշման 21.1-րդ կետը:

իրականացնողը ծանրաբեռնվածության պատճառով չի կարողանում սեղմ ժամկետում դիմել դատարան՝ խուզարկության վերաբերյալ դատական ակտը ստանալու և այն իրականացնելու համար:

«Քննչական կոմիտեն պարզաբանել է, որ գործնականում անձի սեփականությունը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ պահվում է մինչև նշանակված փորձաքննությունների եզրակացությունները ստանալը կամ մինչև քրեական գործով նախաքննության ավարտը: Ուստի, հստակ ժամկետներ հայտնել անձի սեփականությունը վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ պահելու ժամկետների մասին, հնարավոր չի եղել նշել: «Քննչական կոմիտեից նաև տեղեկացրել են, որ քրեական գործի շրջանակներում նշանակված փորձաքննության տևական լինելու պատճառով սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու հնարավորությունից զրկված լինելու առնչությամբ 2021 թվականի ընթացքում 3 դեպքով բողոք է ներկայացվել, որից 2 դեպքում գույքը չվերադարձնելը պայմանավորված է եղել գույքը համապատասխան փորձաքննության ուղարկված լինելու հանգամանքով:

Քրեական գործերով իրեղեն ապացույցների, առգրավված իրերի, առարկաների և այլ արժեքների կորուստը, սեփականատիրոջ կամ այլ օրինական տիրապետողի գույքային իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումները բացառելու նպատակով դեռևս 2018 թվականի դեկտեմբերի 18-ին տրվել էր համապատասխան շրջաբերական<sup>365</sup>:

Պաշտպանը կարևորում է Քննչական կոմիտեի նախաձեռնողականությունը գործնականում առաջացող խնդիրների լուծման ուղղությամբ, ընդգծում, որ քրեական գործով վարույթի շրջանակներում անձանց իրավունքների սահմանափակման վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն պետք է ունենա քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր: Ընդ որում, թեև այդպիսի սահմանափակումը «օրենքով նախատեսված լինելու» և «իրավաչափ նպատակ հետապնդելու» պահանջներին բավարարելու ուժով սկզբնապես կարող է իրավաչափ լինել, այդուհանդերձ, դրա շարունակականությունը կարող է առաջ բերել այդ իրավունքին միջամտության համաչափության խնդիր: Ավելին, անթույլատրելի և օրենքին հակասող է իրավակիրառ պրակտիկայի ցանկացած դրսևորում, երբ անձի սեփականության իրավունքի սահմանափակումը պահպանվում է՝ դրա փաստական և իրավական հիմքերի բացակայության պայմաններում:

Ուստի, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ.

*1. քրեադատավարական օրենսդրությամբ սահմանված՝ իրեղեն ապացույցները քրեական գործի հետ պահելու ընդհանուր կանոնից բացառության առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է քննարկել այդ գույքը սեփականատիրոջ կամ օրինական տիրապետողի*

<sup>365</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս 2018 թվականի ընթացքում «Վարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 302-303:

պահպանմանը թողնելու հարցը, իսկ չթողնելու պարագայում պետք է ներկայացնի պատշաճ հիմնավորում,

2. վարույթն իրականացնող մարմնի կողմից պետք է ցուցաբերվի բավարար ջանասիրություն և բարեխղճություն՝ իրենքն ապացույց ճանաչված՝ անձի սեփականության հետ կապված քննչական և այլ դատավարական գործողությունները ողջամիտ ժամկետներում իրականացնելու և գույքը սեփականատիրոջ տիրապետմանը վերադարձնելու պարտականության ապահովման ուղղությամբ,

3. պետք է բացառվի քրեական գործով վարույթի շրջանակներում գույքի վրա կալանքի կիրառությամբ անձանց սեփականության իրավունքին ցանկացած միջամտություն, որը հիմնված չէ փաստական և իրավական հիմքերի վրա:

### **10. Քրեական գործի շրջանակներում մեղադրյալին պատկանող գույքի և դրամական միջոցների վրա դրվող կալանքի պրակտիկան**

2021 թվականի ընթացքում քրեական գործերի նախնական քննության վերաբերյալ Պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել: Կրկին ստացվել են բողոքներ նախաքննության ընթացքում մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի և դրամական միջոցների վրա կալանք դնելու վերաբերյալ:

Խնդիրը վերաբերում է նրան, որ կալանք է դրվում արժեքով մի քանի անգամ ավելի դրամական միջոցների և այլ գույքի վրա, քան քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի, գույքի հնարավոր բռնագանձման կամ դատական ծախսերի չափն է:

Անդրադառնալով քննարկվող քրեադատավարական ինստիտուտին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ սեփականություն հանդիսացող գույքն իր հայեցողությամբ տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու՝ անձի սահմանադրական իրավունքը սահմանափակող քրեադատավարական հարկադրանքի այս միջոցի իրավաչափ կիրառման համար վարույթն իրականացնող մարմինն ընդհանուր շահի և անհատի՝ իր գույքից անարգել օգտվելու իրավունքի պաշտպանության պահանջների միջև պարտավոր է ապահովել արդարացի հավասարակշռություն<sup>366</sup>: Ընդ որում, Վճռաբեկ դատարանն իր այս դիրքորոշումը հիմնավորել է հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Մասնավորապես, Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում, մեկնաբանելով Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի դրույթները, Եվրոպական դատարանը նշել է, որ պետք է լինի ողջամիտ հավասարակշռություն պետության կողմից կիրառվող, այդ թվում՝

<sup>366</sup> Տե՛ս Ալլա Սեկոյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0185/11/11 քրեական գործով 2012 թվականի նոյեմբերի 1-ի որոշում:

սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վերահսկելու հետ կապված միջոցների և այդ միջոցների կիրառման արդյունքում ակնկալվող նպատակների միջև: Այս պահանջն արտահայտվում է «արդարացի հավասարակշռություն» ձևակերպմամբ, որը պետք է առկա լինի հասարակության ընդհանուր շահի պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մեղադրյալի գույքի վրա կալանք դնելն ինքնին ենթակա չէ քննադատության՝ հաշվի առնելով, մասնավորապես, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի երկրորդ պարբերությունը, սակայն պետք է հաշվի առնել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից օգտվելու սահմանափակմամբ անձի վրա չափազանց ծանր բեռ դնելու ռիսկը և, հետևաբար, պետք է ապահովել համապատասխան դատավարական երաշխիքներ՝ համոզվելու համար, որ անձի սեփականության իրավունքի վրա առկա ազդեցությունը կամայական կամ ոչ կանխատեսելի չէ<sup>367</sup>:

Չնայած նշված «արդարացի հավասարակշռության» պահանջին, վարույթն իրականացնող մարմինների կողմից երբեմն արգելանք է կիրառվում մեղադրյալին պատկանող *ամբողջ* գույքի վրա: Նման պրակտիկան, իհարկե, անընդունելի է՝ հատկապես, որ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրմամբ հաճախ պարզվում է, որ քրեական օրենսգրքով չթույլատրված արարքով պատճառված քրեական դատավարության կարգով հատուցման ենթակա գույքային վնասի չափն անհամեմատ ավելի փոքր է:

Սա ոչ իրավաչափորեն անբարենպաստ հետևանքներ է առաջացնում մեղադրյալի համար, քան իրականում անհրաժեշտ է քաղաքացիական հայցը, գույքի հնարավոր բռնագրավումը կամ դատական ծախսերն ապահովելու համար:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր բոլոր դրամական միջոցների վրա քննիչի որոշմամբ կալանք է դրվել, ինչի կապակցությամբ փաստաբանը միջնորդություն է ներկայացրել վարույթն իրականացնող մարմին, սակայն իր միջնորդությունները չեն բավարարվել: Այնուհանդերձ բողոքի քննարկման շրջանակում պարզվել է, որ փաստաբանն այդ հարցով դիմել է նաև դատարան և միայն տևական ժամանակ անց է հնարավոր եղել առգրավված դրամական միջոցները կալանքից ազատել:

Դատախազությունը դեռևս 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին պարզաբանել է, որ մեղադրյալին պատկանող գույքի արժեքը որոշվում է դատաապրանքագիտական փորձաքննության նշանակմամբ և կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված՝ հաշվի է առնվում գույքի կազմը, արժեքը, պատճառված վնասի չափը, դատական ծախսերը, գույքի ընդհանուր զանգվածում մեղադրյալի մասնաբաժինը, ներկայացված քաղաքացիական հայցի հայցագնի չափը: Դատախազության պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում մեղադրյալի գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշումների

<sup>367</sup> Տե՛ս Բորժոնովն ընդդեմ Ռուսաստանի (Borzhonov v. Russia) գործով 2009 թվականի հունվարի 22-ի վճիռը, գանգատ թիվ 18274/04, կետեր 59-60:



դեմ բերվել է 84 բողոք, որոնցից 4-ը բավարարվել է ամբողջությամբ, 1-ը՝ մասնակի, իսկ մյուսները մերժվել են: Ըստ Դատախազության՝ 2021 թվականի ընթացքում մեղադրյալին պատկանող ողջ գույքի վրա կալանք դնելու վերաբերյալ ներկայացվել է 14 բողոք, որից 2-ը բավարարվել է, իսկ 12-ը՝ մերժվել: 2 դեպքով ներկայացված բողոքները բավարարվել են վարույթն իրականացնող մարմնի որոշումների ոչ բավարար չափով պատճառաբանված լինելու պատճառով:

Հաշվի առնելով Դատախազության՝ որպես քրեական վարույթի նկատմամբ հսկողության հանձնառություն ունեցող մարմնի պարզաբանումները՝ Պաշտպանն ընդգծում է, որ անհրաժեշտ է միասնական պրակտիկայի ապահովման նպատակով խստորեն հետևել «Վճռաբեկ դատարանի» վերը նշված որոշմամբ ամրագրված դիրքորոշումներին և բոլոր հնարավոր միջոցների կիրառմամբ բացառել մեղադրյալին պատկանող ամբողջ գույքի վրա անհամաչափ կալանք դնելու՝ պրակտիկայում դեռևս շարունակվող դեպքերը:

Այսպիսով, վերը նշվածի հաշվառմամբ, կարելի է պնդել, որ անհրաժեշտ է բացառել քրեական գործով վարույթի շրջանակներում այնպիսի գույքի վրա կալանքի կիրառությունը, որն օրենքով ենթակա չէ բռնագանձման կամ կալանքը պետք է դնել այն չափով, որ չափով ենթակա է բռնագանձման:

#### **11. Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործումը և դրանց չարաշահման վրանգը քրեական դատավարությունում**

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2021 թվականի ընթացքում շարունակվել է բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների հիման վրա իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություններ կատարելու և որոշումներ կայացնելու պրակտիկայի ուսումնասիրությունը:

Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «Ներպետական օրենսդրությունը պետք է սահմանի պետական մարմինների կողմից եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված իրավունքներին կամայական միջամտության դեմ իրավական պաշտպանության միջոց, իսկ օրենքը պետք է բավարար հստակությամբ նախատեսի իրավասու մարմիններին տրամադրվող ցանկացած նման հայեցողության շրջանակը և դրա իրականացման եղանակը՝ հաշվի առնելով տվյալ միջոցառման օրինական նպատակը՝ անհատին կամայական միջամտության դեմ համապատասխան պաշտպանություն տրամադրելու համար»<sup>368</sup>:

<sup>368</sup> Տե՛ս Սեֆիլյանն ընդդեմ Հայաստանի (Sefilyan v. Armenia) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2012 թ. հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22491/08, կետ 126:

Հաշվի առնելով օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկությունները, դրանց արդյունքում ստացված տվյալների կարևորությունն ու չարաշահման հնարավոր վտանգները՝ սույն հաղորդմամբ անդրադարձ կատարենք օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման խնդիրներին:

Օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների օգտագործման ու դրանով պայմանավորված անձի իրավունքների երաշխավորման խնդիրը պայմանավորված է հենց այդ տվյալների գաղտնիությամբ:

Իսկ քրեական հետապնդման մարմիններն, օգտվելով առիթից, որ դրանք գաղտնի են անձի համար, ուստի վերջինս չունի նաև դրանից պաշտպանվելու արդյունավետ միջոց, չարաշահում են այդ տվյալներն ու օրենսդրական ընդհանրական ձևակերպումներով կայացնում են որոշումներ, որոնք հանգեցնում են անձի իրավունքի ոչ համաչափ սահմանափակման:

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով որպես օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման սկզբունք, ի թիվս այլնի, նախատեսված է նաև գործունեության բացահայտ և գաղտնի մեթոդների ու միջոցների համակցության, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների, աշխատանքի ձևերի, մեթոդների, ուժերի և միջոցների գաղտնապահության սկզբունքները: Բացի այդ, նույն օրենքի 41-րդ հոդվածի ուժով՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների ուժերի, միջոցների ու աղբյուրների, մեթոդների, պլանների, այդ միջոցառումների արդյունքների, դրանց ֆինանսավորման, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հաստիքային գաղտնի աշխատակիցների, ինչպես նաև այդ մարմինների հետ գաղտնիության հիման վրա համագործակցող և համագործակցած անձանց մասին տեղեկությունները հանդիսանում են պետական գաղտնիք:

Գործնականում ստացվում են իրավիճակներ, երբ վարույթն իրականացնող մարմնի գործողության հիմքում դրվում է բացառապես օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալը: Նման պրակտիկան, իհարկե, վիճահարույց է մարդու իրավունքների տեսանկյունից, քանի որ փաստորեն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի ձեռքբերման ընթացքը, դրա արդյունքը գաղտնի են մնում անձի համար, ում իրավունքի սահմանափակում ենթադրող որոշում է կայացվում:

Վարույթն իրականացնող մարմինը պետք է համակողմանիորեն գնահատի օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալն ու որոշի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում միայն այդ տվյալի հիման վրա անձի իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու իրավաչափությունը:

Օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալի գնահատման և դրանով պայմանավորված այդ տվյալի օգտագործման թույլատրելիության հարցը մանրամասն

քննարկման առարկա է դարձել ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ, որով հարցը քննարկվել է օպերատիվ-հետախուզական տվյալի հիման վրա բնակարանի խուզարկության համար տրված թույլտվության իրավաչափության տեսանկյունից:

Վճռաբեկ դատարանը, նախ, արձանագրել է, որ այդ տվյալներն ապացույցների նկատմամբ ստորադաս բնույթ ունեն, սակայն որոշ դեպքերում անփոխարինելի և եզակի տվյալներ կարող են պարունակել որոշակի բնակարանում գործի համար նշանակություն ունեցող առարկաների կամ անձանց գտնվելու վերաբերյալ, հետևաբար, ըստ Վճռաբեկ դատարանի, օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալները վարույթն իրականացնող մարմնի կողմից անտեսելն անթույլատրելի է:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության առանձնահատկություններով պայմանավորված՝ մի շարք դեպքերում վարույթն իրականացնող մարմինը զրկված է օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ձեռք բերված տվյալները գնահատելու հնարավորությունից, հետևաբար բոլոր այն դեպքերում, երբ օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալը հնարավոր է գնահատման ենթարկել, այն կարող է հանդես գալ որպես խուզարկության կատարման ինքնուրույն հիմք:

Վճռաբեկ դատարանն ավելի է կոնկրետացրել իր դիրքորոշումը՝ առանձնացնելով օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում ստացված տվյալների գնահատման հստակ չափորոշիչներ: Այսպես, Վճռաբեկ դատարանի դիրքորոշմամբ՝ տվյալները գնահատելիս վարույթն իրականացնող մարմինը պետք է հաշվի առնի միջոցառման՝

- կոնկրետ տեսակին օրենքով առաջադրվող պահանջները,
- արդյունքների ամրագրման եղանակը,
- աղբյուրի՝ օրենքով սահմանված կարգով բացահայտման հանգամանքը և այլն:

Այն դեպքում, երբ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալի գնահատումն անհնար է, այն ինքնին խուզարկության հիմք չի կարող հանդիսանալ, սակայն այլ տվյալների (այդ թվում՝ օպերատիվ-քննչական իրադրության) հետ համակցությամբ կարող է հաշվի առնվել խուզարկության կատարման անհրաժեշտության հարցը լուծելիս, հատկապես քննության վաղ փուլերում, երբ համապատասխան ապացույցներ դեռ ձեռք չեն բերվել:

Բացի այդ, իր որոշմամբ Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալների՝ բավարարության տեսանկյունից գնահատումը պետք է հանգեցնի այն ողջամիտ եզրահանգման, որ խուզարկության կատարման արդյունքում կարող են ձեռք բերվել փնտրվող առարկաները: Ընդ որում, օրենսդրորեն նախատեսված չէ տվյալների համակցության վերաբերյալ պահանջ: Այլ խոսքով՝ տվյալների բավարարության վերաբերյալ պահանջը որակական բնույթ է կրում. խուզարկության կատարման արդյունքում փնտրվող առարկաների հայտնաբերման հավանականության մասին եզրահանգումը

կարող է հիմնված լինել ինչպես մեկ վերաբերելի և արժանահավատ տվյալի, այնպես էլ՝ տվյալների համակցության վրա<sup>369</sup>:

Վճռաբեկ դատարանի վերոհիշյալ դիրքորոշումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությանը: Այսպես, Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի գործով Եվրոպական դատարանը գտել է, որ առկա տվյալներն ունակ էին հանգեցնել համոզման, որ գողացված իրերը կարող էին պահվել Դիմումատուի բնակարանում: Եվրոպական դատարանն ընդգծել է, որ նման կասկած հարուցող փաստերը կարիք չունեն լինելու նույն մակարդակի, ինչպիսիք անհրաժեշտ են մեղադրանք առաջադրելու կամ անձին դատապարտելու համար: Նշելով նաև, որ ներպետական դատարանը կասկածը հաստատված է համարել՝ հղում կատարելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ստացված տվյալների վրա, գտել է, որ հավելյալ տվյալներ պահանջելն իրավացիորեն արդարացված չէր լինի՝ հաշվի առնելով քննության վաղ փուլը և մասնավորապես այն փաստը, որ որոշ էական ապացույցներ (այն է՝ գողացված իրերը) դեռ պետք է բացահայտվեին<sup>370</sup>:

Չնայած նրան, որ Վճռաբեկ դատարանը վերոնշյալ դիրքորոշումներին հանգել է բնակարանի խուզարկության իրավաչափության համատեքստում, սակայն, ըստ էության Դատարանի դիրքորոշումներն ընդհանրական բնույթ ունեն և պետք է կիրառվեն օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի հաշվառմամբ անձի իրավունքի սահմանափակում ենթադրող դատավարական գործողություններ կատարելիս և դատավարական որոշումներ կայացնելիս:

Կարևորելով հատկապես քննության վաղ փուլում օպերատիվ-հետախուզական միջոցառումների դերը հանցավորության դեմ պայքարում՝ Պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ գործնականում առկա է օպերատիվ-հետախուզական տվյալների չարաշահման վտանգավոր միտում հատկապես անձանց օպերատիվ տվյալների հիման վրա հանցանք կատարելու կասկածանքով իրավասու մարմին ներկայացնելու նպատակով արգելանքի վերցնելու դեպքերում:

Քրեական հետապնդման մարմինները, օգտվելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների գաղտնիության հանգամանքից, օպերատիվ տվյալները ստուգելու պատճառաբանությամբ մարդկանց պարբերաբար բերման են ենթարկում, որը նրանց նկատմամբ ճնշում գործադրելու նպատակ է հետապնդում:

Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է, որ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով. (...) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր

<sup>369</sup> Տե՛ս Սեպուի Թադևոսյանի և Սիրուն Նաջարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵՇԴ/0073/07/15 գործով կայացված որոշումը:

<sup>370</sup> Տե՛ս Ռատուշնան ընդդեմ Ուկրաինայի (Ratushna v. Ukraine) գործով 2010 թվականի դեկտեմբերի 2-ի վճիռ, գանգատ թիվ 17318/06, կետեր 77, 80:

կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով:

Ընդ որում, քրեական դատավարության ոլորտին վերաբերող գործերով ազատությունից ենթադրաբար զրկելու հանգամանքը գնահատելիս Եվրոպական դատարանն էական գործոն չի համարում անազատության մեջ պահելու հարաբերականորեն կարճ տևողությունը<sup>371</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության մեջ «հիմնավոր կասկածի» առկայությունը պարտադիր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1«գ» ենթակետի ներքո անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպքի պարագայում: Այսինքն՝ հանցանք կատարած լինելու հիմքով անձին ազատությունից զրկելու ցանկացած եղանակ կարող է իրավաչափ համարվել, եթե առնվազն առկա է հանցանք կատարած լինելու «հիմնավոր կասկած»:

Հանցանք կատարելու «հիմնավոր կասկածը» ենթադրում է այնպիսի փաստերի և տեղեկությունների առկայություն, որոնք օբյեկտիվ դիտորդի համար բավարար կլինեն հաստատելու տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու հնարավորությունը<sup>372</sup>:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նաև արձանագրել է, որ ահաբեկչական հանցագործություններն այս առումով գտնվում են հատուկ կարգավիճակում: Կյանքի կորստի և մարդկային տառապանքի վերահաս սպառնալիքի դեպքում (the attendant risk of loss of life and human suffering) ոստիկանությունը պարտավոր է գործել առավելագույն հրատապությամբ՝ առաջնորդվելով բոլոր տեղեկություններով, այդ թվում՝ գաղտնի աղբյուրներից ստացված: Բացի դրանից, Ոստիկանությունը հաճախ կարող է ստիպված լինել ձերբակալել կասկածվող ահաբեկչին այնպիսի տեղեկության հիման վրա, որը հավաստի է, սակայն որն առանց տեղեկության աղբյուրը վտանգի ենթարկելու չի կարող բացահայտվել կասկածյալի համար կամ ներկայացվել դատարանում մեղադրանքը պաշտպանելու համար<sup>373</sup>:

Ուստի անհրաժեշտ է բացառել անձին այլ ավելի ցածր հանրային վտանգավորություն ունեցող հանցանքի կատարման կասկածանքով ազատությունից զրկելու դեպքերը՝ միայն օպերատիվ այնպիսի տեղեկությունների հիման վրա, որոնց աղբյուրները հետագայում չեն կարող բացահայտվել:

---

<sup>371</sup> Տ'ես Ռանցլեն ընդդեմ Կիպրոսի և Ռուսաստանի (Rantsev v. Cyprus and Russia) գործով 2010 թվականի մայիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 25965/04, կետ 317, Իսկանդարովն ընդդեմ Ռուսաստանի (Iskandarov v. Russia) գործով 2011 թվականի փետրվարի 21-ի վճիռ, գանգատ թիվ 17185/05, կետ 140:

<sup>372</sup> Տ'ես Ֆոքսը, Քեմբլը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռ, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, կետ 32, Իլգար Մամմադովն ընդդեմ Ադրբեյջանի (Ilgar Mammadov v. Azerbaijan) գործով 2014 թվականի մայիսի 22-ի վճիռ, գանգատ թիվ 15172/13, կետ 88:

<sup>373</sup> Տ'ես վերը նշված Ֆոքսը, Քեմբլը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) գործով 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռ, գանգատներ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, նույն տեղում:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների բացահայտված չլինելու պարագայում մարդու իրավունքի ապահովման տեսանկյունից գործ ունենք երաշխիքների ավելի ցածր շեմի հետ: Հենց սրանով է պայմանավորված Պաշտպանի դիրքորոշումն առ այն, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալի բացահայտված չլինելու դեպքում է հատկապես անհրաժեշտ այն համադրել առկա այլ փաստական տվյալների հետ:

Սույն պարագրաֆում անհրաժեշտ ենք համարում քննարկման առարկա դարձնել նաև օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքում ստացված տվյալների որպես ապացույց օգտագործելու հարցը:

Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, որոնք ձեռք են բերվել նույն օրենքով սահմանված կարգով, հանդիսանում են ապացույցներ, բացառությամբ նույն օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ և 9-րդ կետերով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն ապացույցների շարքում չի նախատեսում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները: Քրեական հետապնդման մարմինները յուրաքանչյուր դեպքում ստիպված են լինում օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները քրեադատավարական ընթացակարգով ճանաչել որպես ապացույց: Ընդ որում, պրակտիկայում միասնական պատասխան չունի այն հարցը, թե օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացույց ճանաչելիս դրանք պետք է ճանաչվեն որպես այլ փաստաթուղթ, թե պետք է կատարվի զննություն և քրեական գործով որպես ապացույց դիտարկվի զննության արձանագրությունը: Օրինակ, 2020 թվականին կայացված դատավճիռներից մեկի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ գործով որպես ապացույց են դիտարկվել «ներքին դիտում» օպերատիվ հետախուզական միջոցառման ընթացքում ձեռք բերված տեղեկությունների զննության արձանագրությունները<sup>374</sup>: Մինչդեռ, մեկ այլ գործով «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառման լազերային սկավառակը ճանաչվել է այլ փաստաթուղթ, և նույնիսկ որպես իրեղեն ապացույց: Բացի դրանից, որպես ապացույց է դիտարկվում նաև այդ սկավառակի զննության արձանագրությունը<sup>375</sup>:

Մեկ այլ գործով ապացույցների շարքում նշված են «հեռախոսային խոսակցությունների վերահսկում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների լազերային

---

<sup>374</sup> Տե՛ս թիվ ԵԴ/0332/01/20 գործով 2020 թվականի հունիսի 24-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=45880421204029604](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421204029604) հղումով:

<sup>375</sup> Տե՛ս թիվ ԱՎԴ /0130/01/19 գործով 2020 թվականի հուլիսի 17-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=27303072741041620](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=27303072741041620) հղումով:

սկավառակը՝ որպես այլ փաստաթուղթ և թղթային տարբերակում առկա տվյալների զննություն կատարելու մասին արձանագրությունը<sup>376</sup>:

Ստացվում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները որպես ապացույց ճանաչվում են քրեադատավարական տարբեր ընթացակարգերով: Առավել խնդրահարույց են այն դեպքերը, երբ նույն օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները դիտարկվում են որպես տարբեր ապացույցներ:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքով փաստաբանը հայտնել է, որ քրեական գործերից մեկով, որով հանդիսացել է մեղադրյալի պաշտպանը, քննության ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում գաղտնալսվել է իր կողմից նաև աշխատանքային նպատակով օգտագործվող հեռախոսահամարը: Փաստաբանը Պաշտպանին հայտնել է, որ գաղտնալսվել են նաև այլ քրեական գործերով իր պաշտպանյալների հետ տեղի ունեցած և փաստաբանական գաղտնիք կազմող հեռախոսային խոսակցություններ, իսկ քրեական գործի նյութերում առկա չէր իր նշված հեռախոսահամարով, ինչպես նաև մի քանի այլ հեռախոսահամարներով կատարված հեռախոսային խոսակցությունները գաղտնալսելու վերաբերյալ օպերատիվ-հետախուզական միջոցառում իրականացնելու դատարանի թույլտվություն: << դատախազությունից ստացված պարզաբանման համաձայն՝ փաստաբանի հեռախոսային խոսակցությունների զննության արձանագրությունները քրեական գործով որպես ապացույց չեն ճանաչվել և մեղադրանքի հիմքում չեն դրվել, բացի այդ, որոշում է կայացվել դրանք ոչնչացնելու մասին: Դատախազության տրամադրած պատասխանի հիման վրա կայացվել է փաստաբանի բողոքի քննարկումը դադարեցնելու որոշում, քանի որ բողոքի քննարկման շրջանակներում բարձրացված հարցն ստացել է լուծում:

2021 թվականի հունիսի 30-ին ընդունված՝ << քրեական դատավարության նոր օրենսգրքը սահմանում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ համարվող գործողությունները սահմանված են որպես գաղտնի քննչական գործողություններ՝ միաժամանակ դրանց արդյունքները դիտարկելով որպես առանձին ապացույց: Որպես դրական զարգացում անհրաժեշտ է դիտարկել նաև այն, որ << քրեական դատավարության նոր օրենսգրքի 241-րդ հոդվածով հստակ սահմանված են գաղտնի քննչական գործողությունների իրավաչափության երաշխիքները: Մինչև նույն ժամանակ, նույն օրենսգրքի 97-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Օրենքով սահմանված պահանջների խախտմամբ կատարված գաղտնի քննչական գործողության արդյունքով ձեռք բերված տեղեկություններն ապացույցման գործընթացում չեն կարող օգտագործվել:

Ավելին, << քրեական դատավարության նոր օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ մասով նաև նախատեսվել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքով կազմված փաստաթղթերը և որևէ կրիչի վրա ամրագրված տվյալները քրեական վարույթում ապացույց չեն:

<sup>376</sup> Տե՛ս թիվ ԵԴ/0703/01/19 գործով 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կայացված դատավճիռը, հասանելի է [http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case\\_id=45880421203972854](http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=45880421203972854) հղումով:

Սա պրակտիկայում առկա տարակարծիք մեկնաբանությունների, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացույց ճանաչելիս առկա խնդիրների լուծմանն ուղղված կարևոր քայլ է արձանագրել, որ նախքան ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելն առկա է պրակտիկան միասնականացնելու անհրաժեշտություն:

*Վերոնշյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.*

1. քրեական վարույթի ընթացքում օպերատիվ-հետախուզական տվյալներն օգտագործելիս առաջնորդվել Վճռաբեկ դատարանի կողմից առաջադրված չափանիշներով, կասկած հարուցող տվյալները գնահատման ենթարկելու հնարավորության բացակայության դեպքում դրանք համադրել ձեռք բերված այլ փաստական հանգամանքների, փաստական տվյալների հետ կամ դրանք բացառապես օգտագործել Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ստուգողական ընթացակարգերն ապահովելուց հետո,

2. նախքան ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի ուժի մեջ մտնելը միասնականացնել պրակտիկան կապված օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքներն ապացույց ճանաչելու քրեադատավարական ընթացակարգի հետ:

## **12. Մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցություններ ձայնագրելու և որպես ապացույց օգտագործելու պրակտիկան քրեական գործով մարդու իրավունքների պաշտպանության համարեքստում**

Հաղորդակցության, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների գաղտնիության իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրության մակարդակով: Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ բացառապես Սահմանադրությամբ նախատեսված նպատակների համար և երաշխիքների պահպանմամբ:

Դրա հետ մեկտեղ, քրեադատավարական գործող օրենսդրությունը կանոնակարգում է միայն քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից անձի հաղորդակցության ազատության և գաղտնիության իրավունքի սահմանափակման հիմքերն ու ընթացակարգը: Անձի նշված իրավունքը, սակայն, կարող է սահմանափակվել նաև հաղորդակցության մասնակիցներից մեկի կողմից:

Հարկ է նշել, որ պետական մարմինների կողմից հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը սահմանափակելու դեպքերում օրենքով սահմանված կարգով և համապատասխան դատավարական երաշխիքների պահպանմամբ միջամտության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցն ինքնին խնդրահարույց չէ, ի տարբերություն հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունների:



Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում շարունակվում է մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես ապացույց քրեական գործում օգտագործելու ընթացքում առկա խնդիրների ուսումնասիրությունը:

Հաշվի առնելով հարցի վերաբերյալ նախկինում գործող պրակտիկան Պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ խնդրո առարկային առնչվող մի քանի հարցի, այդ թվում՝ հաղորդակցության մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրությունները որպես ապացույց քրեական գործում օգտագործելու թույլատրելիության հարցին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համատեքստում հանրային և մասնավոր անձանց գործողությունների իրավաչափությունը գնահատելիս Եվրոպական դատարանը դրանք նույն հարթության մեջ չի դիտարկում:

Եվրոպական դատարանն արձանագրել է, որ մասնավոր (հեռախոսային) խոսակցության ձայնագրումը զրուցակցի կողմից և նման ձայնագրությունների անձնական օգտագործումն, ըստ էության (*per se*), չեն խախտում Կոնվենցիայի 8-րդ հոդվածը, եթե դա իրականացվել է մասնավոր միջոցներով: Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ այս իրավիճակն իր բնույթով տարբերվում է քրեական կամ այլ գործի քննության համատեքստում ի շահ այդ քննության մասնավոր անձի կողմից հաղորդակցության գաղտնի դիտարկումից և դրա ձայնագրումից, որն իրականացվում է քննություն իրականացնող պետական մարմինների լռելյայն համաձայնությամբ և վերջիններիս տեխնիկական աջակցությամբ<sup>377</sup>:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ մասնավոր անձի գործողություններն իրավական կարգավորման ենթակա չեն և (*a priori*) չեն կարող որակվել որպես դատավարական գործողություններ, այդուհանդերձ դրանք էական դեր ունեն դատավորի համոզմունքի ձևավորման համար՝ նշելով, որ ներկայացվող ապացույցների թույլատրելիությունը կանոնակարգող իրավական կարգավորումների բացակայությունն ինքնին չի կարող դիտարկվել որպես Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտում<sup>378</sup>:

Մեկ այլ գործով Եվրոպական դատարանը ոչ իրավաչափ է համարել դատարանի կողմից գործի ըստ էության քննության փուլում ներկայացված խոսակցությունների ձայնագրությանը պատշաճ գնահատական չտալը<sup>379</sup>:

Բացի դրանից, Եվրոպական դատարանը նաև գտել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության հիման վրա դիմումատուին դատապարտելը չի

---

<sup>377</sup> Տե՛ս Վան Վոնդելն ընդդեմ Նիդերլանդների (*V. Vondel v. the Netherlands*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի հունվարի 25-ի վճիռը, գանգատ թիվ 38258/03, կետ 49:

<sup>378</sup> Տե՛ս Թուրքուին ընդդեմ Ֆրանսիայի (*Turquin v. France*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 2002 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 43467/98:

<sup>379</sup> Տե՛ս Նեչիպորուկ և Յոնկալոն ընդդեմ Ուկրաինայի (*Nechiporuk and Yonkalo v. Ukraine*) գործով Եվրոպական դատարանի 2011 թվականի հուլիսի 21-ի վճիռը, գանգատ թիվ 42310/04, կետ 276-281:

հանգեցրել Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման: Այդ ձայնագրությունը, որով հիմնավորվել էր դիմումատուի կողմից կնոջ սպանության դրոշմի փորձի կատարումը, ներկայացվել էր քննիչին և հետագայում օգտագործվել դատարանում՝ մերժելով ձայներիզը գործի նյութերից հեռացնելու մասին դիմումատուի պահանջը<sup>380</sup>:

*Վերը նշված միջազգային իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Մարդու իրավունքների պաշտպանը գտնում է, որ մասնավոր անձանց կողմից կատարված ձայնագրառումներն ինքնին անթույլատրելի չճանաչելը և դրանց՝ որպես ապացույց օգտագործելն ամբողջությամբ չբացառելը ողջամիտ է:*

Անձի կողմից կատարված գաղտնի ձայնագրության արդյունքները որպես ապացույց օգտագործելու խնդրին անդրադարձել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը *Մելինե Մարգարյանի* գործով՝ եզրահանգում անելով այն մասին, որ գործի քննության ընթացքում տուժող կողմից վարույթն իրականացնող մարմնին ներկայացված՝ իր ամուսնու կողմից կատարված՝ իր և ամբաստանյալի միջև տեղի ունեցած խոսակցության ձայնագրառումը պարունակող լազերային սկավառակն անթույլատրելի ապացույց է: Վճռաբեկ դատարանը դա հիմնավորել է նրանով, որ ձայնագրությունը կատարվել է քրեական դատավարություն իրականացնելու, համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություն կատարելու իրավունք չունեցող անձի՝ վկայի կողմից, չի պահպանվել այդ գործողության՝ օրենքով սահմանված կատարման կարգը, քանի որ ամբաստանյալի և տուժողի խոսակցությունների լսման և ձայնագրառման միջնորդություն դատարան չի ներկայացվել, դատարանը համապատասխան որոշում չի կայացրել<sup>381</sup>:

Սակայն հետագայում, մեկ այլ որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերանայել և զարգացրել է *Մելինե Մարգարյանի* գործով արտահայտված իրավական դիրքորոշումները<sup>382</sup>, ինչը հատկապես կարևոր է մասնավոր անձանց կողմից կատարված ձայնագրառումներն ինքնին անթույլատրելի ճանաչելու պրակտիկական վերացնելու համար:

Նշված որոշմամբ Վճռաբեկ դատարանը հիմնավորված գտել է, որ մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը չպետք է նույնացնել քրեական հետապնդման մարմինների կողմից քրեադատավարական ճանապարհով անձի հաղորդակցության վերահսկման, այդ թվում՝ նրանց իրազեկվածությամբ՝ քրեական կամ այլ պաշտոնական քննության համատեքստում համագործակցող անձանց կողմից իրականացված ձայնագրառման հետ: Վճռաբեկ դատարանը նշել է, որ դրանց համար սահմանված չափանիշները չպետք է մեխանիկորեն կիրառել մասնավոր անձանց կողմից կատարված հեռախոսային

<sup>380</sup> Տե՛ս Սչենկն ընդդեմ Շվեյցարիայի (*Schenk v. Switzerland*) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1988 թվականի հուլիսի 12-ի վճիռը, գանգատ թիվ 10862/84, կետեր 47-49:

<sup>381</sup> Տե՛ս *Մելինե Մարգարյանի* վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԵԿԴ/0081/01/11 գործով կայացված որոշումը:

<sup>382</sup> Տե՛ս Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԼԴ/0002/01/18 գործով կայացված որոշումը:

խոսակցությունների ձայնագրության նկատմամբ: Նշված չափանիշները ենթակա են վերագրման պետական իշխանության մարմիններին, ովքեր, ի տարբերություն մասնավոր անձանց, իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Վճռաբեկ դատարանը նաև արձանագրել է, որ մասնավոր անձի կողմից կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրությունը որպես ապացույց ճանաչելու և քրեական դատավարությունում օգտագործելու հնարավորությունը գնահատելիս քրեադատավարական կարգավորումները չպետք է մեկնաբանվեն չափազանց ձևականացված: Այսինքն՝ հեռախոսային խոսակցության ձայնագրությունը մասնավոր անձի կողմից կատարելն ինքնին չպետք է դիտարկվի որպես անվերապահ հիմք՝ դրա օգտագործումը քրեական դատավարությունում բացառելու համար:

Արդյունքում, Վճռաբեկ դատարանը եզրահանգում է կատարել, որ մասնավոր անձի կողմից քրեական վարույթն իրականացնող մարմինն ներկայացված հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է ճանաչվել որպես ապացույց՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախատեսված այլ փաստաթուղթ, և ենթարկվել իրավական գնահատման՝ ըստ անհրաժեշտության նաև հիմք հանդիսանալով քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման համար<sup>383</sup>:

Ուստի, Պաշտպանը, նկատի ունենալով և ողջունելով Վճռաբեկ դատարանի խնդրի կապակցությամբ որդեգրած մոտեցումը, արձանագրում է, որ պետական մարմիններն իրենց գործունեության ընթացքում պետք է հետևեն վերը նշված որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին և ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու հարցը քննարկելիս առաջնորդվեն դրանցով:

Այս հարցի կապակցությամբ Դատախազության պարզաբանման համաձայն՝ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է մասնավոր անձանց կողմից հեռախոսային խոսակցությունները ձայնագրելու և որպես ապացույց վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու 12 դեպք, և առաջնորդվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 122-123-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ նախադեպային որոշմամբ, մասնավոր անձի կողմից ներկայացված հեռախոսային խոսակցությունների ձայնագրառումը վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ ճանաչվել է որպես այլ փաստաթուղթ է և կցվել քրեական գործին:

Սույն թեմայի շրջանակում հարկ է անդրադառնալ նաև քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը) և 146-րդ (նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական կամ այլ հաղորդումների գաղտնիությունը խախտելը) հոդվածների հատկանիշներով նոր քրեական գործ հարուցելու հարցին:

---

<sup>383</sup> Տե՛ս նույն տեղում:

Սրա հետ կապված Պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ մասնավոր սուբյեկտների կողմից կատարված ձայնագրություններն ինքնին անթույլատրելի ապացույց չդիտարկելու վերաբերյալ առկա գնահատականները չեն բացառում նմանատիպ ձայնագրությունները ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածներով նախատեսված հանցագործությունների համատեքստում դիտարկելու հնարավորությունը:

Նախ, Պաշտպանն ընդգծում է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի խախտման բացակայությունը դեռևս չի նշանակում, որ չի կարող առկա լինել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում: Այդ մասին է վկայում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումն այն մասին, որ խոսակցության ապօրինի ձայնագրության օգտագործումը չի զրկում մեղադրյալին արդար դատաքննության իրավունքից, նույնիսկ եթե այն ձեռք է բերվել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտմամբ<sup>384</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված է մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, հաղորդակցության ազատության և գաղտնիության, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության իրավունքները:

ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ և 146-րդ հոդվածները հենց կոչված են ապահովելու անձի վերը նշված սահմանադրական իրավունքները և պաշտպանելու անձի անձնական ու ընտանեկան կյանքն անհարկի միջամտությունից:

Ուստի, անհրաժեշտ է պարզել խոսակցության ձայնագրումամբ անձի՝ Սահմանադրությամբ հատուկ երաշխավորված իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության աստիճանը, դրանով պայմանավորված նաև քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված հանցակազմերի առկայության հարցը: Հակառակ պարագայում, անձի անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի նման եղանակով անհարկի սահմանափակումները կկրեն համատարած բնույթ:

Ինդիքը հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ձայնագրությունը կատարվում է խոսակցության մասնակից չհանդիսացող երրորդ անձանց կողմից: Այն դեպքում, երբ ձայնագրությունը կատարվում է զրուցակցի կողմից արարքի հանրային վտանգավորությունն ավելի ցածր է, քանի որ հաղորդակցության մասնակիցը ողջամտորեն կարող է ենթադրել, որ իր ներկայացրած տեղեկությունների բովանդակությունը հետագայում կարող է բացահայտվել վարույթն իրականացնող մարմնին: Ուստի զրուցակցի անձով պայմանավորված ընտրում է ներկայացվող տեղեկությունների բովանդակության շրջանակը: Մյուս կողմից, երրորդ անձի կողմից ձայնագրությունը կատարելու դեպքերում անձը զրկված է նման հնարավորությունից, ուստի կատարված արարքի հանրային վտանգավորությունն այս դեպքում համեմատաբար ավելի բարձր է:

---

<sup>384</sup> St' u Թուրքուին ընդդեմ Ֆրանսիայի (Turquin v. France) գործով Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի՝ 2002 թվականի հունվարի 24-ի որոշումը, գանգատ թիվ 43467/98:

Այս կապակցությամբ հատկապես ողջունելի է, որ Վճռաբեկ դատարանն իր վերոնշյալ որոշմամբ սահմանել է նաև այն հակակշռող գործոնները, որոնք իրավակիրառողները պետք է գնահատեն մասնավոր անձի կողմից օրենքով չկանոնակարգված եղանակով կատարված հեռախոսային խոսակցության ձայնագրության՝ որպես ապացույց օգտագործելու թույլատրելիությունն ըստ յուրաքանչյուր գործի փաստական հանգամանքների որոշելիս: Այդ հակակշռող գործոններն են հեռախոսային խոսակցության ձայնագրառման իրականացման պայմանները, հեռախոսային խոսակցության ձայնագրառմամբ անձի իրավունքների նկատմամբ իրականացված միջամտության բնույթը, հեռախոսային խոսակցության ձայնագրառման նպատակը, հանրային և մասնավոր շահերի հարաբերակցությունը, հեռախոսային խոսակցության ձայնագրառման շարժառիթները, հեռախոսային խոսակցության ձայնագրառման սուբյեկտը, հեռախոսային խոսակցության ձայնագրառումը քրեական վարույթի ընթացքում: Կատարված ձայնագրառումը պետք է հետապնդած լինի իրավաչափ նպատակ, այն է՝ պաշտպանելու անձի իրավունքներն ու օրինական շահերը, ուղղված լինի հակաիրավական վարքագծի կանխմանը, բացահայտմանը և նշանակալի մասնավոր շահերը (significant private interest) պաշտպանելուն: Միաժամանակ, հարկ է նշել, որ որպես իրավաչափ նպատակ կարող է դիտարկվել նաև մասնավոր անձի կողմից հեռախոսային խոսակցության ձայնագրառումն անձի անմեղությունը կամ այլուրեքությունն ապացուցելու համար: Այլ կերպ, հեռախոսային խոսակցության ձայնագրառումը կարող է արդարացված համարվել, եթե հետապնդել է անձի իրավական պաշտպանությունն ապահովելու նպատակ<sup>385</sup>:

*Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է.*

*1. վերացնել մասնավոր անձանց կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված ձայնագրությունները որպես ապացույց օգտագործելն ինքնին անթույլատրելի ճանաչելու պրակտիկան,*

*2. մասնավոր անձանց կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ներկայացված ձայնագրությունները որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցը լուծել Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշմամբ ներկայացված իրավական դիրքորոշումների, և հատկապես հակակշռող գործոնների լույսի ներքո,*

*3. մասնավոր անձանց կողմից քրեական վարույթն իրականացնող մարմնին ձայնագրություններ ներկայացնելիս՝ դրանց որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցի հետ մեկտեղ քննարկման առարկա դարձնել նաև ըստ անհրաժեշտության քրեական վարույթ նախաձեռնելու հարցը:*

---

<sup>385</sup> Տե՛ս Վահիկ Մխիթարյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2019 թվականի ապրիլի 11-ի վերը նշված որոշումը:

### **13. Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկան**

Կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու խիստ խնդրահարույց պրակտիկայի հարցը 2021 թվականի ընթացքում շարունակել է մնալ արդիական: Արդիականությունը պայմանավորված է ոչ միայն այն հանգամանքով, որ այն գործող օրենսդրությամբ սահմանված խափանման միջոցներից ամենախիստն է, այլ նաև, առանձին դեպքերում կրում է շարունակական բնույթ: Եվ նույնիսկ գործնականում դեպքեր են լինում, երբ մինչև վերջնական դատական ակտի կայացումն անձը գտնվում է նախնական կալանքի տակ: Ակնհայտ է, որ կալանավորումը՝ որպես խափանման միջոց է ընտրվում մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովման նպատակից ելնելով, և այդ խափանման միջոցի ընտրությունն, ի թիվս այլնի, պայմանավորված է այլընտրանքային արդյունավետ խափանման միջոցների բացակայությամբ:

2021 թվականի ընթացքում կալանքի կիրառելիության վերաբերյալ վիճակագրական տվյալներ են ստացվել ՀՀ դատախազությունից և ՀՀ քննչական կոմիտեից:

Այսպես, Դատախազության տեղեկություններով՝ 2021 թվականի ընթացքում ներկայացվել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ 1283 միջնորդություն, որից 1030-ը բավարարվել է, (այսինքն՝ ներկայացված միջնորդությունների 80,28%-ը բավարարվել է): Համեմատության համար նշենք, որ 2017 թվականին կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ ներկայացված միջնորդությունների քանակը կազմել է 2363, 2018 թվականին՝ 1866, 2019 թվականին այդ միջնորդություններն աճել են շուրջ 118-ով՝ հասնելով 1984-ի, 2020-ին՝ 1905, իսկ 2021-ին արձանագրվել է նվազում՝ 622-ով:

Նախորդ տարիների համեմատությամբ 2020 և 2021 թվականներին դրական դինամիկա է արձանագրվել: Սա կարևոր է՝ հաշվի առնելով դատախազության հսկողական գործառույթները մինչդատական վարույթի ընթացքում և դերը պրակտիկայի ձևավորման հարցում: Միաժամանակ, Դատախազությունից տեղեկացրել են, որ 2021 թվականի ընթացքում գրավ խափանման միջոցը վարույթն իրականացնող քննիչի կամ դատախազի որոշմամբ կիրառվել է 84 դեպքում:

Ինչպես Պաշտպանի կողմից նշվել է դեռևս 2017 թվականի Տարեկան հաղորդմամբ՝ անձին կալանքից գրավով ազատելու դեպքերի քանակական հարաբերակցությունը 2011 թվականից մինչև 2017 թվականներին շարունակել է տատանվել 4-7% միջակայքում<sup>386</sup>: Այս առումով կարելի է արձանագրել, որ 2018 թվականին գրավի կիրառման դեպքերն աճել են՝ հասնելով 11.1%-ի, 2019 թվականին նվազել, հասնելով 10.9%-ի, իսկ 2020-ին՝ 6.8%-ի:

<sup>386</sup> Առավել մանրամասն տե՛ս 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 231:

Սակայն անհրաժեշտ է նշել, որ ի տարբերություն նախորդ տարիների՝ 2020 թվականին Քրեական դատավարության օրենսգրքում արված փոփոխությունների արդյունքում գրավը դարձվեց ինքնուրույն խափանման միջոց:

Ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվող բողոքները հիմնականում վերաբերում են դրա հիմքերի բավարարությանն ու արժանահավատությանը, իսկ ավելի հաճախ՝ դրա շարունակականությանը:

Մասնավորապես, 2021 թվականի ընթացքում ներկայացված բողոքներից մեկով քաղաքացին բարձրացել է ամուսնու նկատմամբ կալանքը՝ որպես խափանման միջոց ընտրելու հիմքերի բացակայության հարց:

Մեկ այլ բողոքով փաստաբանը ներկայացրել է պնդումներ առ այն, որ Դատարան ներկայացված միջնորդության մեջ իր պաշտպանյալին կալանավորելու համար «համապատասխան» և «բավարար» պատճառներ չեն ներկայացվել: Մեկ այլ բողոքով էլ փաստաբանը հայտնել է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ պաշտպանյալը քրեական գործին առնչություն չի ունեցել:

2021 թվականին ներկայացված մեկ ուրիշ բողոքի համաձայն էլ՝ Դատարանի կողմից վստահորդին կալանավորելու վերաբերյալ որոշման մեջ արձանագրվել է, որ վստահորդը տառապում է սրտի իշեմիկ հիվանդությամբ, լարման ստենոկարդիայով, զարկերակային հիպերտոնիայով, սրտի ռիթմի խանգարմամբ, պարոքսիզմալ շողացող առիթմիայով, խրոնիկ սրտային անբավարարությամբ և միզաքարային հիվանդությամբ: Փաստաբանի պնդմամբ՝ իր պաշտպանյալի մոտ առկա հիվանդությունները, մասնավորապես՝ սրտի իշեմիկ հիվանդությունը, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 26-ի թիվ 825-Ն որոշման համաձայն՝ ընդգրկված է կալանքը կամ պատիժը կրելուն խոչընդոտող ծանր հիվանդությունների ցանկում, ինչի կապակցությամբ դատաբժշկական փորձաքննություն նշանակելու վերաբերյալ միջնորդություններ է ներկայացրել ինչպես քրեական վարույթն իրականացնող քննիչին, այնպես էլ դատախազին՝ պարզելու համար, թե ինչ առողջական խնդիրներ ունի վստահորդը և արդյոք նրա մոտ առկա հիվանդությունները համատեղելի են կալանքի հետ: Ըստ փաստաբանի՝ իր միջնորդությունները նույնաբովանդակ անհիմն պատճառաբանությամբ մերժվել են քրեական վարույթն իրականացնող քննիչի կողմից:

Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու պրակտիկայի կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքների մի մասն առնչվել է նաև կալանքի շարունակականության հիմնահարցին: Մասնավորապես, բողոքներից մեկով անձի փաստաբանը պնդումներ է ներկայացրել առ այն, որ այլևս առկա չէ վստահորդին անազատության մեջ պահելու անհրաժեշտություն, սակայն միևնույն է վարույթն իրականացնող մարմնի կողմից խափանման միջոց ընտրված կալանավորման ժամկետը երկու ամիս ժամանակով երկարացնելու մասին Դատարան միջնորդություն է ներկայացվել: Մեկ այլ բողոքի շրջանակում փաստաբանը ներկայացրել է պնդումներ առ այն, որ վստահորդը հայտարարել է անժամկետ հացադուլ՝

պայմանավորված քննչական մարմնի կողմից ոչ օբյեկտիվ քննություն իրականացմամբ և կալանքի ժամկետը դատարանի կողմից անհիմն երկարացմամբ:

Անդրադառնալով կալանավորման պայմաններին, հարկ է մատնանշել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումները, մասնավորապես, Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշման մեջ արտահայտված դիրքորոշմանը, ըստ որի՝ կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը: Ըստ Եվրոպական դատարանի դիրքորոշման՝ «հիմնավոր կասկածի» առկայությունը ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկատվության առկայություն, որոնք ընդունակ են օբյեկտիվ դիտորդին համոզելու, որ անձը, որին վերաբերում է խոսքը, կարող էր կատարել իրավախախտումը: Կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին<sup>387</sup>:

Ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցի տևականության հարցը քննարկելիս Պաշտպանը հարկ է համարում անդրադառնալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Եվրոպական դատարանի կայուն իրավաբանությամբ՝ հանցագործության համար մեղադրվողը մինչդատական վարույթի ընթացքում միշտ պետք է ազատ արձակվի, քանի դեռ պետությունը չի կարողացել ցույց տալ, որ շարունակական կալանավորման համար գոյություն ունեն «հիմնավոր և բավարար» պատճառներ<sup>388</sup>: Ընդ որում, այս դիրքորոշումն առաջ է քաշվել նաև Հայաստանի դեմ կայացված վճիռներից մեկում: Այսպես, *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն ամրագրել է, որ ներպետական դատարանները պետք է քննության առնեն բոլոր փաստերը, որոնք կողմ կամ դեմ են այնպիսի հանրային շահի իրական պահանջի առկայությանը,

<sup>387</sup> Տե՛ս Վահրամ Գևորգյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 գործով կայացված որոշումը, Ֆոքսը, Քենփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատներ թիվ 12244/86; 12245/86; 12383/86:

<sup>388</sup> Տե՛ս Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի (Piruzyan v. Armenia) գործով 2012 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 33376/07, կետ 91, տե՛ս նաև Սմիրնովան ընդդեմ Ռուսաստանի (Smirnova v. Russia) գործով 2003 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատներ թիվ 46133/99 և 48183/99, կետ 58, Բեսսինն ընդդեմ Մոլդովայի (Becciev v. Moldova) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 53, Խոդորկովսկին ընդդեմ Ռուսաստանի (Khodorkovskiy v. Russia) գործով 2011 թվականի մայիսի 31-ի վճիռը, գանգատ թիվ 5829/04, կետ 182:



որն արդարացնում է անձի ազատությունը հարգելու կանոնից կատարվող շեղումը: Դատարանի արձանագրմամբ դրանք պետք է ամրագրեն անձին ազատ արձակելու միջնորդությունների վերաբերյալ իրենց որոշումներում<sup>389</sup>, ընդ որում, ազատ արձակելուն կողմ կամ դեմ արված փաստարկները պետք է ընդհանուր և վերացական բնույթ չունենան<sup>390</sup>:

Եվրոպական դատարանի կողմից ամրագրված «համարժեքությունն» ըստ իրավական չափանիշների կարող է արտահայտվել հետևյալով՝

- ա) փախուստի վտանգ,
- բ) արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգ,
- գ) հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգ,
- դ) հանրային անկարգության վտանգ:

Փախուստի վտանգը գնահատելու համար Եվրոպական դատարանը համակողմանի քննարկման առարկա է դարձնում անձի բնավորությունը, նրա բարոյականությունը, բնակության և աշխատանքի պայմանները, ունեցվածքը, ընտանեկան կապերը և հետապնդման երկրի հետ ունեցած բոլոր տեսակի այլ կապերը<sup>391</sup>:

Ընդ որում, Եվրոպական դատարանը հստակ արձանագրել է, որ, օրինակ, մշտական բնակության վայր չունենալն ինքնին չի կարող բավարար համարվել փախուստի վտանգի մասին հետևություն կատարելու համար<sup>392</sup>:

Փախուստի վտանգը գնահատելու համար կարևոր է անձին սպառնացող պատժի խստությունը, սակայն այս հանգամանքը ևս չի կարող արդարացնել անձի երկարատև նախնական կալանքը<sup>393</sup>:

Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ արդարադատության նկատմամբ անիրավաչափ ազդեցության վտանգը չի կարող վերացական լինել: Այն պետք է հիմնված լինի հստակ փաստական տվյալների վրա<sup>394</sup>: Այսպես, *Խանգադյանն ընդդեմ Հայաստանի* գործով Եվրոպական դատարանն իրավաչափ է համարել վարույթի նկատմամբ միջամտություն կատարելու վտանգի առկայության մասին ազգային դատարանների հետևությունը՝ վկայակոչելով այն հանգամանքը, որ լինելով նախկին քննիչ, անձը մեղադրվել է իր գործունեության հետ առնչվող

<sup>389</sup> Տե՛ս Լեթելիերն ընդդեմ Ֆրանսիայի (*Letellier v. France*) գործով 1991 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 12369/86, կետ 35:

<sup>390</sup> Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (*Clooth v. Belgium*) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12718/87, կետ 44:

<sup>391</sup> Տե՛ս Բեկինն ընդդեմ Մոլդովայի (*Becciev v. Moldova*) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 58:

<sup>392</sup> Տե՛ս Սուլաոյան ընդդեմ Էստոնիայի (*Sulaoja v. Estonia*) գործով 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55939/00, կետ 64:

<sup>393</sup> Տե՛ս Իդալովն ընդդեմ Ռուսաստանի (*Idalov v. Russia*) գործով 2012 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 5826/03, կետ 145, տե՛ս նաև Իլիժկովն ընդդեմ Բուլղարիայի գործով 1997 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 33977/96, կետ 80-81:

<sup>394</sup> Տե՛ս Բեկինն ընդդեմ Մոլդովայի (*Becciev v. Moldova*) գործով 2005 թվականի հոկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 9190/03, կետ 59:

հանցագործության կատարման համար, որը ենթադրաբար կատարել է ոստիկանության այլ ծառայողների հետ<sup>395</sup>:

Հետագա հանցավոր գործունեություն իրականացնելու վտանգը, ըստ Եվրոպական դատարանի, պետք է գնահատվի յուրաքանչյուր կոնկրետ գործով՝ հաշվի առնելով մեղադրյալի անցյալը և նրա անձը<sup>396</sup>, ընդ որում՝ նախկինում դատապարտված լինելը կարող է ողջամիտ հիմնավորում լինել նոր հանցանք կատարելու մտավախության համար<sup>397</sup>: Միաժամանակ, ընտանիք և աշխատանք չունենալը դեռևս չի կարող վկայել այն մասին, որ մեղադրյալը հակված է նոր հանցանք կատարելուն<sup>398</sup>:

Հանրային անկարգության վտանգը, որն ի դեպ, ազգային օրենսդրությամբ նախատեսված չէ, վերաբերում է այն դեպքերին, երբ հանցագործության առանձնակի ծանրությունը և դրա նկատմամբ հանրային արձագանքը կարող են հանգեցնել հասարակական հուզումների: Ընդ որում, անհրաժեշտ է, որ ներկայացվեն փաստեր առ այն, որ մեղադրյալի ազատ արձակումն իսկապես խաթարելու է հանրային կարգը<sup>399</sup>:

Կալանքի տևականության հարցը նաև քննարկման առարկա է դարձել քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանման համատեքստում: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դիրքորոշում է ձևավորել առ այն, որ իրավասու մարմինները պետք է «հատուկ ջանասիրություն» դրսևորեն նաև այն գործերով, որոնցով անձը դատական քննության ընթացքում գտնվում է կալանքի տակ<sup>400</sup>:

Այդ թվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների ներքո՝ Վճռաբեկ դատարանը 2019 թվականի սեպտեմբերի 18-ին Լ. Վարդանյանի և Զ. Այվազյանի վերաբերյալ կայացված որոշմամբ ընդգծել է, որ ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից հատուկ ջանասիրության պետք է արժանան այն գործերը, որոնք հնարավորին սեղմ ժամկետում քննության չառնելն էապես վնաս կհասցնի արդարադատության շահերին, մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Վճռաբեկ դատարանն առանձնացրել է նաև քրեական գործերի այն

<sup>395</sup> Տե՛ս Խանզադյանն ընդդեմ Հայաստանի (Khanzadyan v. Armenia) գործով 2014 թվականի մարտի 11-ի որոշումը, գանգատ թիվ 68571/11, կետ 39:

<sup>396</sup> Տե՛ս Քլութն ընդդեմ Բելգիայի (Clooth v. Belgium) գործով 1991 թվականի դեկտեմբերի 12-ի վճիռը, գանգատ թիվ 12718/87, կետ 40:

<sup>397</sup> Տե՛ս Սելչուկն ընդդեմ Թուրքիայի (Selçuk v. Turkey) գործով 2006 թվականի հունվարի 10-ի վճիռը, գանգատ թիվ 21768/02, կետ 34:

<sup>398</sup> Տե՛ս Սուլաոյան ընդդեմ Էստոնիայի (Sulaoja v. Estonia) գործով 2005 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 55939/00, կետ 64:

<sup>399</sup> Տե՛ս Պրենսիպն ընդդեմ Մոնակոյի (Prencipe v. Monaco) գործով 2009 թվականի հուլիսի 16-ի վճիռը, գանգատ թիվ 43376/06, կետ 79:

<sup>400</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Աբդոելլան ընդդեմ Նիդերլանդների (Abdoella v. the Netherlands) գործով 1992 թվականի նոյեմբերի 25-ի վճիռը, գանգատ թիվ 12728/87, կետ 24, Կալաշնիկովն ընդդեմ Ռուսաստանի (Kalashnikov v. Russia) գործով 2002 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 47095/99, կետ 132:

կատեգորիաները, որոնք պետք է հատկապես ուշադրության արժանան ողջամիտ ժամկետների պահպանման տեսանկյունից: Վճռաբեկ դատարանի դասակարգմամբ՝ առաջնային կարող են ուշադրության արժանանալ այն գործերը, որոնցով «անձինք գտնվում են կալանքի տակ (հատուկ ուշադրության են արժանի ավելի երկար ժամանակահատված կալանքի տակ գտնվող անձանց վերաբերյալ գործերը)»: Համեմատության համար նշենք, որ դրանից հետո կարող են ուշադրության արժանանալ դատական կազմի փոփոխության կամ այլ հիմքով վերսկսված դատական քննությանը գործերը, դատական վերանայման արդյունքում բեկանված և նոր քննության ուղարկված գործերը, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայման արդյունքում վերսկսված գործերը, խոցելի խմբեր համարվող՝ անչափահասների, հոգեկան հիվանդությամբ տառապող անձանց վերաբերյալ գործերը, պետության պոզիտիվ պարտականության ներքո գտնվող՝ կյանքի իրավունքի պաշտպանության, խոշտանգումների բացարձակ արգելքի ենթադրյալ խախտումներին վերաբերող գործերը<sup>401</sup>:

*Վերոգրյալի հաշվառմամբ Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումը և ընդգծում, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել շարունակական կալանքի պրակտիկան Եվրոպական դատարանի իրավաբանությանը համահունչ դարձնելու, անհիմն կալանքի դեպքերը բացառելու և կալանքի տակ գտնվող անձանց մասնակցությամբ քրեական գործերն առաջնահերթ քննելու ուղղությամբ պատշաճ ջանասիրություն դրսևորելու հարցում:*

Կարևոր է նաև անդրադառնալ Վճռաբեկ դատարանի՝ 2020 թվականին ընդունված որոշումներից մեկին, որով Դատարանը կրկին փաստել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված (Խափանման միջոց կիրառելու հիմքերը) մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: Սակայն, միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ կալանավորման հիմք(եր)ի առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալուն<sup>402</sup>:

<sup>401</sup> Տե՛ս Լիլիթ Վարդանյանի և Զարինե Այվազյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 18-ի ԵԱՔԴ/0016/01/14 որոշումը, կետ 20:

<sup>402</sup> Տե՛ս Վալերի Հակոբյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2020 թվականի դեկտեմբերի 25-ի ԵԴ/0548/06/19 որոշումը, կետ 15.1:

Խափանման միջոցների համակարգին անդրադարձ է կատարվել ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՌ-1480 որոշմամբ: Սահմանադրական դատարանը համադրելով և վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավանորմերը հանգել է հետևության, որ որոշակի հանգամանքների համակցության պարագայում ազատությունից զրկելու հետ չկապված վեց խափանման միջոցներից յուրաքանչյուրի կիրառումն սկզբունքորեն կարող է ապահովել այն նույն ցանկալի արդյունքը, ինչ ազատությունից զրկելուն հանգեցնող միակ խափանման միջոցը՝ կալանավորումը: Հետևաբար, ըստ Սահմանադրական դատարանի, քրեական վարույթն իրականացնող մարմինը պետք է իրական հնարավորություն ունենա ոչ միայն հիմնավորված ենթադրության մակարդակով գնահատել կասկածյալի կամ մեղադրյալի հնարավոր ոչ պատշաճ վարքագծի այս կամ այն դրսևորման հավանականությունը, այլև անկաշկանդ կիրառել հենց այն խափանման միջոցը, որն, իր համոզմամբ, պիտանի և անհրաժեշտ է նախանշված նպատակին հասնելու համար և կարող է արդյունավետ կերպով չեզոքացնել ենթադրյալ ոչ պատշաճ վարքագծի բացասական հետևանքները:

Քննարկելով գործող իրավակարգավորումները Սահմանադրական դատարանը գտել է, որ անձին չի տրամադրվում նաև հնարավորություն՝ խափանման այլ, ավելի մեղմ միջոցի կիրառման շնորհիվ ի սկզբանե խուսափել ազատագրվումից, քանի որ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է ընտրվել միայն այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները չեն կարող ապահովել կամ երաշխավորել մեղադրյալի պատշաճ վարքագիծը և հանրային շահերի համարժեք պաշտպանությունը:

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ կալանավորումը՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց (*ultima ratio*), միշտ և պարտադիր կերպով պետք է այլընտրանք ունենա, իսկ օրենսդրությամբ ամրագրվելիք այդ այլընտրանքը պետք է քրեական վարույթն իրականացնող մարմնին փաստացի հնարավորություն ընձեռի և իրավաբանական պարտականություն դնի նրա վրա՝ ի սկզբանե ընտրություն կատարել տարբեր խափանման միջոցների միջև՝ իրավաչափ նպատակին հասնելու համար ընտրելով առավել պիտանի միջոցը:

Որոշման արդյունքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն Օրենսգրքի 134-րդ հոդվածի 4-րդ մասը, 137-րդ հոդվածի 4-րդ մասը և 139-րդ հոդվածի 2-րդ մասը՝ այնքանով, որքանով որ գրավը սահմանում են որպես կալանավորման այլընտրանք՝ կալանավորումից կախյալ խափանման միջոց, ճանաչվել է Սահմանադրության 27 և 78-րդ հոդվածներին հակասող: Նկատի ունենալով, որ նշված որոշումն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա խափանման այլ միջոցները՝ որպես կալանավորման այլընտրանք, ինչպես նաև գրավը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց կիրառելու համար, Սահմանադրությանը հակասող ճանաչված վերոնշյալ դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է

սահմանվել 2020 թվականի ապրիլի 15-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու որոշման պահանջներին:

Այս կապակցությամբ տեղին է նկատել, որ դեռևս 2018 թվականին մշակվել էր օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որով ևս առաջարկվում էր կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կիրառելի դարձնել միայն այն դեպքում, երբ խափանման այլ միջոցների կիրառումը բավարար չէ մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար: Նման կարգավորման անհրաժեշտության մասին, ի դեպ, նշվել է ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում<sup>403</sup>, այնպես էլ հրապարակային հայտարարություններում:

Նաև Սահմանադրական դատարանի նշված որոշման հաշվառմամբ 2019 թվականին մշակվել և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիք ներկայացնելու համար ուղարկվել էր «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

*Ընդհանուր առմամբ, դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ, արձանագրվել էր, որ Նախագիծը պարունակում է կարևոր իրավադրույթներ, որոնք էականորեն կարող են բարելավել խափանման միջոցների ընտրության պրակտիկան և դրա հաշվառմամբ՝ Պաշտպանն ընդգծել էր սեղմ ժամկետներում Նախագծի ընդունման անհրաժեշտությունը<sup>404</sup>: Ողջունելի է այն հանգամանքը, որ Նախագծով առաջարկվող լուծումները տեղ են գտել թե՛ գործող և թե՛ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտնող Քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումներում:*

---

<sup>403</sup> Տես, օրինակ, 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 229:

<sup>404</sup> Դեռևս 2018 թվականին Դատախազությունը մշակել էր օրենսդրական փոփոխությունների նախագիծ. դրանով առաջարկվում է ներդնել այլընտրանքային խափանման միջոցներ, որով կնվազեցվեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու բարձր ցուցանիշները: Մասնավորապես, առաջարկվում է որպես խափանման միջոց ներդնել տնային կալանքն ու վարչական վերահսկողության հանձնելը, սակայն, Նախագծով գրավը որպես այլընտրանքային խափանման միջոց չի ներդրվում:

Այլընտրանքային խափանման միջոցների անխափան կիրառման, մեղադրյալի վարքի նկատմամբ պատշաճ հսկողության իրականացման համար կարևոր է էլեկտրոնային հսկողության միջոցների լիարժեք կիրառման ապահովումը: Էլեկտրոնային հսկողության միջոցների տեխնիկական, կազմակերպական և մեթոդաբանական անհրաժեշտ նախադրյալների վերաբերյալ խնդիրները մանրամասն արձանագրվել և վերլուծվել են Մարդու իրավունքների պաշտպանի «Պրոբացիայի պետական ծառայության գործունեության մշտադիտարկում» արտահերթ հրապարակային զեկույցում: Ուստի, էլեկտրոնային հսկողության կիրառման օրենսդրական հիմքերի ամրագրումը միայն բավարար չէ դրանով հետապնդվող նպատակի իրագործման տեսանկյունից: Ավելին, այլընտրանքային խափանման միջոցների և էլեկտրոնային հսկողության՝ միայն Քրեական դատավարության օրենսգրքում ամրագրված լինելը՝ ոչ պատշաճ իրավակիրառմամբ, կարող է հանգեցնել պետության պարտականության չկատարման՝ առաջ բերելով այդպիսի հսկողության ներքո գտնվող անձի արդարացի բողոքի:

Անհրաժեշտ է արձանագրել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի լուծումներն առանցքային նշանակություն ունեն նաև շարունակական կալանքի պրակտիկայի բարելավման հարցում:

Միևնույն ժամանակ, կարևորում ենք ընդգծել, որ խափանման միջոցների կիրառման հարցը մշտապես արդիական է քրեական դատավարությունում և ունի ուղիղ առնչություն մարդու հիմնական իրավունքներին, ուստի պետք է հետամուտ լինել օրենսդրական կառուցակարգերի լիարժեք կենսագործմանը և կալանք խափանման միջոցի՝ որպես քրեադատավարական հարկադրանքի վերջին՝ բացառիկ միջոց կիրառելու իրավակիրառ պրակտիկայի ամրապնդմանը:

#### **14. Քրեական գործի նյութերին ծանոթանալու ժամկետներին և կարգին առնչվող գործնական խնդիրներ**

Մրցակցային դատավարությունում իր պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքը քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Այս իրավունքը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով ամրագրված արդար դատաքննության մաս է կազմում և իր հատուկ կարևորությամբ պայմանավորված Հայաստանում երաշխավորված է սահմանադրական հարթության վրա:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս իր որոշումներով բազմիցս ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները պետք է դիտարկել որպես արդար դատաքննության հատուկ բաղադրատարր, որը երաշխավորվում է Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով: Հետևաբար, Եվրոպական դատարանը երկու դրույթների վերաբերյալ բողոքները քննարկում է միասին<sup>405</sup>:

Ուստի քրեական հետապնդման մարմինները պետք է իրենց գործունեության ընթացքում չափազանց զգուշավորություն ցուցաբերեն հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանության իրավունքը պատշաճ ապահովելու համար:

Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկապես մեծածավալ գործերի դեպքում դատավարության մասնակիցները բողոքում են, որ տրամադրված ժամանակը բավարար չէ գործին պատշաճ ու որջ ծավալով ծանոթանալու համար:

Նշված հարցի առնչությամբ Դատախազության կողմից տրամադրվել են պարզաբանումներ, ըստ որոնց՝ քրեական վարույթի նյութերին ծանոթանալու համար բավարար ժամանակ չտրամադրելու

<sup>405</sup> Տե՛ս F.C.B-ն ընդդեմ Իտալիայի (F.C.B. v. Italy) գործով 1991 թվականի օգոստոսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 12151/86, կետ 29, Պոիթրիմոլն ընդդեմ Ֆրանսիայի (Poitrimol v. France) գործով 1993 թվականի նոյեմբերի 23-ի վճիռը, գանգատ թիվ 14032/88, կետ 29, Գալստյանն ընդդեմ Հայաստանի, (Galstyan v. Armenia) գործով 2008 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 26986/03, կետ 83:

վերաբերյալ Դատախազությունում ստացվել է 17 բողոք, որոնցից 9-ը բավարարվել է ամբողջությամբ, 2-ը՝ մասնակի:

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով մեղադրյալի փաստաբանը հայտնել է, որ իր պաշտպանյալի վերաբերյալ քննչական բաժնում քննվող քրեական գործով քննիչը հայտարարել է նախաքննության ավարտ, քրեական գործի նյութերը տրամադրվել է լազերային սկավառակով, որից հետո փաստաբանը միջնորդություն է ներկայացրել՝ խնդրելով 1 օր ողջամիտ ժամկետ տրամադրել նյութերին ծանոթանալու համար: Սակայն, ըստ պնդման, քննիչը մերժել է իր միջնորդությունը և նյութերին ծանոթանալու և համապատասխան միջնորդություններ ներկայացնելու համար սահմանել է ժամկետ՝ նույն օրը մինչև ժամը 16:00-ն: Փաստաբանը հավելել է, որ քննիչը հրաժարվել է փաստաբանին տրամադրել քրեական գործի նյութերի թղթային տարբերակը պատճառաբանելով, որ այն տրամադրվել է մեղադրյալին և միայն Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների միջամտության արդյունքում է դրանք նույն օրը՝ ժամը 16:20-ի սահմաններում, տրամադրվել է փաստաբանին: Ներկայացնելով նաև խնդրի վերաբերյալ իր դիտարկումներն ու իրավական հիմնավորումները, Փաստաբանը պնդել է, որ քննիչն անհամաչափ և անհիմն կերպով սահմանափակել է իր և իր պաշտպանյալի քրեական գործի նյութերին ծանոթանալու իրավունքը:

Քրեական գործի նյութերին ծանոթանալու համար պահանջված ժամկետի՝ քննիչի կողմից սահմանափակելու կապակցությամբ Դատախազության դիրքորոշման համաձայն՝ 3 հատորներից բաղկացած քրեական գործի նյութերին ծանոթանալու համար գործում ներգրավված արհեստավարժ և մասնավոր փորձառություն ունեցող երկու պաշտպանների պարագայում ողջամտորեն պահանջվում է մի քանի ժամ ժամանակ, քանի որ քրեական գործի նախաքննության ընթացքում պաշտպանը մասնակցել է մեղադրյալի մասնակցությամբ կատարված քննչական գործողություններին: Ստացվում է, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակի սահմանափակումն իրավապահ մարմինների կողմից պայմանավորվել է մեղադրյալի՝ երկու պաշտպան ունենալու կամ իրականացված քննչական գործողություններին պաշտպանի ներկայությամբ, ինչը վկայում է այս հարցում մեխանիկական մոտեցման մասին:

Պաշտպանի աշխատակազմ ստացված մեկ այլ բողոքով էլ քրեական գործի շրջանակում մեղադրյալի խնամակալը հայտնել է, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու համար քրեական վարույթն իրականացնող մարմինը չի տրամադրել ողջամիտ ժամկետ, այդ կապակցությամբ միջնորդություն է ներկայացրել քրեական վարույթն իրականացնող քննիչին, Պահանջել է նաև իրեն տրամադրել քրեական գործի նյութերի էլեկտրոնային տարբերակը, սակայն քննիչի կողմից իր միջնորդությունն անհիմն մերժվել է:

Ստացվում է, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու համար ժամանակ տրամադրելիս քրեական հետապնդման մարմինները դրսևորում են մեխանիկական մոտեցում՝ առանց կոնկրետ դեպքում առկա հանգամանքները հաշվի առնելու, մինչդեռ առկա են դեպքեր, ինչպես վերը նշված

օրինակում, երբ քրեական գործի մեկ հատորին ծանոթանալու համար 1 օրը կամ մի քանի ժամն իրապես չի բավականացնում:

Հարկ է նկատել, որ ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը պաշտպանական կողմին գործի նյութերին ամբողջությամբ ծանոթանալու հնարավորություն տալիս է միայն գործը դատարան ուղարկելու նպատակով մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ: Ընդ որում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է գործի նյութերին ծանոթանալուց հետո միջնորդություններ ներկայացնելու, իսկ դրանց կապակցությամբ քննիչի կայացրած որոշումները դատախազին բողոքարկելու հնարավորություն:

Փաստորեն, քրեական գործի նյութերին ամբողջությամբ և խորությամբ ծանոթանալու հնարավորությունը կարևոր է նաև քրեական դատավարության մասնակիցների կողմից միջնորդություններ ներկայացնելու համար՝ այդ կերպ ապահովելով քրեական գործի քննության լրիվությունն ու բազմակողմանիությունը:

Այս առումով հատկանշական է, որ նույնիսկ նախաքննության նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բողոք ներկայացնելու դեպքում, եթե դատարանը գտնի, որ վարույթն իրականացնող մարմինը խախտել է անձի իրավունքը, գործն ըստ էության քննության նպատակով դատարան ուղարկված լինելու պարագայում չի կարող վարույթն իրականացնող մարմնի (տվյալ դեպքում՝ դատարանի) համար սահմանել խախտումը վերացնելու պարտականություն:

Տվյալ հարցի հետ կապված իրավական դիրքորոշում է հայտնել նաև Վճռաբեկ դատարանը՝ նշելով, որ, երբ քրեական գործը նախնական քննության փուլից դատական քննության փուլ անցնելու հետևանքով վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ որոշում կայացնելու իրավասությունը նախաքննական մարմնից փոխանցվել է դատարանին՝ անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն սահմանելու դատարանի լիազորությունը դառնում է անիրագործելի և կարող է առաջացնել դատարանի համապատասխան որոշման կատարման անհնարիություն: Նշված դատողությունը պայմանավորված է այն իրողությամբ, որ մի կողմից՝ քրեական գործը դատարանին փոխանցված լինելու պատճառով նախաքննական մարմինը վեճի առարկա իրավահարաբերությունների առնչությամբ որոշումներ կայացնելու կամ գործողություններ կատարելու իրավասություն չունի, ուստի վերջինիս համար *post factum* պարտականություն չի կարող սահմանվել, մյուս կողմից՝ հաշվի առնելով, որ այդ պահին վարույթն իրականացնող մարմինը գործն ըստ էության քննող դատարանն է, մինչդեռ դատարանն է, մինչդեռ դատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատարանն իրավասություն չունի որոշակի պարտականություններ սահմանելու նույն ատյանի մեկ այլ դատարանի համար<sup>406</sup>:

Բացի դրանից, ըստ էության քննության նպատակով քրեական գործն ստանալուց հետո, նույնիսկ եթե դատարանը պարզում է, որ քրեական հետապնդման մարմինների կողմից թույլ են տրվել

<sup>406</sup> Տե՛ս Լ. Զաքոյանի վերաբերյալ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2018 թվականի մարտի 20-ի թիվ ԵԿԴ/0255/11/15 գործով կայացված որոշումը:



քրեադատավարական օրենքի էական խախտումներ, որոնք չեն կարող վերացվել դատական քննության ընթացքում, չի կարող գործը լրացուցիչ նախաքննության վերադարձնելու մասին որոշում կայացնել, քանի որ դատարանին այդպիսի լիազորությամբ օտտող դրույթը ՀՀ սահմանադրական դատարանի որոշմամբ ճանաչվել է հակասահմանադրական<sup>407</sup>:

Ստացվում է, որ առանց իր բողոքները պատշաճ քննարկելու հնարավորություն տալու գործն ըստ էության քննության նպատակով դատարան ուղարկելը կարող է անձին զրկել իր իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունից բոլոր այն դեպքերում, երբ քրեական հետապնդման մարմինների թույլ տված խախտումները դատական քննության ընթացքում վերացնելն անհնար է:

Այս համատեքստում հատկանշական է 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 200-րդ հոդվածով սահմանված՝ մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ վարույթի նյութերին ծանոթանալու կարգը, որը սահմանում է վարույթի նյութերին ծանոթանալու համար վարույթի մասնակիցներին ողջամիտ ժամկետ տրամադրելու պահանջ:

Սրա հետ կապված ՀՀ սահմանադրական դատարանն ընդգծել է, որ օրենքով սահմանված կարգով նախնական քննության փուլի շրջանակներում են ձեռք բերվում և հետազոտվում հանցագործության կատարման փաստի հետ կապված բոլոր հանգամանքները, որպիսիք ապացուցողական հիմք կարող են հանդիսանալ քրեական դատավարության հետագա փուլերում դրանց վերջնական իրավական գնահատական տալու և անհրաժեշտության դեպքում պետական հարկադրանք կիրառելու համար: Հետևաբար, իրավական այդ գործընթացների նախնական փուլի շրջանակներում անձի՝ իր իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքի երաշխավորումը նույնքան կարևոր է, որքան հետագա փուլերում<sup>408</sup>:

Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ քրեական գործի նյութերին ծանոթանալու համար քրեական հետապնդման մարմինների կողմից հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձին և նրա փաստաբանին պետք է բավարար ժամանակ տրամադրվի նյութերին ծանոթանալու, միջնորդություններ ներկայացնելու, մերժելու դեպքում՝ դրանք բողոքարկելու (այդ թվում՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակում) միջոցով իր իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

---

<sup>407</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2007 թվականի հուլիսի 24-ի թիվ ՍԴՌ-710 որոշումը՝ քաղաքացի Գևորգ Գզարյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 311 հոդվածի 2-րդ կետի, 414.2. հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

<sup>408</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՌ-1008 որոշումը՝ քաղաքացի Հասմիկ Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթի և 201-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

Հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձի պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակ և հնարավորություններ ունենալու իրավունքին անդրադարձ կատարվել է նաև Եվրոպական դատարանի մի շարք վճիռներով:

Եվրոպական դատարանն իր դիրքորոշումներից մեկում ընդգծել է, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (բ) ենթակետը երաշխավորում է մեղադրյալին «բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար», այդ իսկ պատճառով ենթադրում է, որ ի շահ նրա ինքնուրույն իրականացվող պաշտպանական գործունեությունը կարող է ներառել այն ամենը, ինչն «անհրաժեշտ է» հիմնական դատավարությունը կազմակերպելու համար: Մեղադրյալը պետք է հնարավորություն ունենա պատշաճ կերպով կազմակերպելու իր պաշտպանությունն առանց սահմանափակումների՝ կապված գործին վերաբերող բոլոր պաշտպանական փաստարկները դատարանին ներկայացնելու հնարավորության հետ՝ դրանով իսկ ազդեցություն ունենալով դատավարության արդյունքի վրա<sup>409</sup>:

Ավելին, յուրաքանչյուր ոք, ում ներկայացված է քրեական մեղադրանք, պետք է ունենա իր պաշտպանությունը նախապատրաստելու նպատակով ամբողջ վարույթի ընթացքում իրականացված քննության արդյունքներին անձամբ ծանոթանալու հնարավորություն<sup>410</sup>:

Գործի նյութերին առանց սահմանափակումների հասանելիությունը և ցանկացած նշումների անսահմանափակ օգտագործումը, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, համապատասխան փաստաթղթերի պատճենները ստանալու հնարավորությունն արդար դատաքննության կարևոր երաշխիքների են<sup>411</sup>:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ գործի նյութերին ծանոթանալու իրավունքը հավասարապես կարևոր է նաև քրեական գործով տուժող կողմի համար:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2006թ. հունիսի 14-ի՝ «Հանցագործության զոհերի աջակցության վերաբերյալ» R(2006)8 հանձնարարականի 6.1 կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է հանցագործության զոհի համար երաշխավորեն իրենց գործին առնչվող և իրենց շահերի պաշտպանության ու իրավունքների իրացման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Նույն հանձնարարականի 6.5-րդ կետում, որը վերաբերում է հանցագործության զոհի համար երաշխավորվող՝ քրեական գործի վարույթին առնչվող տեղեկատվության ծավալին, ամրագրված է. «Պետությունը պետք է համապատասխան միջոցներով երաշխավորի, որ

---

<sup>409</sup> *Տե՛ս Քոննոլլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Connolly v. the United Kingdom)* գործով 1996 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 27245/95, *Մայզիտն ընդդեմ Ռուսաստանի (Mayzit v. Russia)* գործով 2005 թվականի հուլիսի 6-ի վճիռը, գանգատ թիվ 63378/00, կետ 78:

<sup>410</sup> *Տե՛ս C.G.P.-ն ընդդեմ Նիդերլանդների (C.G.P. v. the Netherlands)* գործով 1997 թվականի հունվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 29835/96, *Ֆուշերն ընդդեմ Ֆրանսիայի (Foucher v. France)* գործով 1997 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 22209/93, կետ 26-38:

<sup>411</sup> *Տե՛ս Բերարուն ընդդեմ Ռումինիայի (Beraru v. Romania)* գործով 2014 թվականի մարտի 18-ի վճիռը, գանգատ թիվ 40107/04, կետ 70:

հանցագործության գոհերը տեղեկացվեն իրենց բողոքների արդյունքների, քրեական գործի ընթացքի համապատասխան փուլերի և իրավասու դատարանի դատավճռի վերաբերյալ»:

Պաշտպանին հասցեագրված բողոքների դիտարկումը և իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ գործնականում վարույթի մասին տեղեկություններ չեն կարողանում ստանալ քրեական դատավարության մասնակիցները՝ տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները և այլն:

Գրեթե նույնաբովանդակ խնդրին անդրադարձել է Սահմանադրական դատարանը դեռևս 2012 թվականի հունվարի 24-ի ՍԴՈ-1008 որոշմամբ: Քննարկվող դեպքում քրեական գործով տուժողի իրավահաջորդը և նրա ներկայացուցիչները միջնորդություններ են ներկայացրել քննչական մարմին՝ խնդրելով տրամադրել քրեական գործով ապացույց ճանաչված նոթատետրի, տուժողի ձեռագրի ազատ նմուշների էջերի լուսապատճենները, դեպքի վայրի գննման արձանագրության, տուժողի հագուստի գննման արձանագրության լուսապատճենները: Քննիչի որոշումներով նշված միջնորդությունները մերժվել են:

Նկարագրված իրավիճակը քննարկելով քրեադատավարական նորմերի վերլուծությամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն առանձնացնում է մինչև նախնական քննության ավարտը (գործով մեղադրական եզրակացություն կազմելը) տուժողի և/կամ նրա ներկայացուցչի, ինչպես նաև տուժողի իրավահաջորդի համար մատչելի՝ գործի նյութերի որոշակի ողջամիտ շրջանակ, որոնց վերաբերյալ տուժողի տեղեկացվածությունը նախնական քննության փուլում ապահովում է տուժողի՝ բացարկներ հայտնելու, միջնորդություններ հարուցելու, հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի գործողություններն ու որոշումները բողոքարկելու իրավունքներն իրացնելու հնարավորությունը և այդպիսով երաշխավորում է նաև տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը մինչդատական վարույթի ընթացքում:

Ինչ վերաբերում է նախնական քննության տվյալներին, ապա գործող օրենսդրությամբ դրանք կարող են հրապարակվել միայն վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ և կարող են մատչելի դառնալ տուժողին միայն վարույթն իրականացնող մարմնի կողմից իր հայեցողության իրացման արդյունքում: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել ընդգծել, որ վարույթն իրականացնող մարմնի՝ շահագրգիռ անձին քրեական գործի նյութերից այս կամ այն փաստաթղթի տրամադրումը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված, ինչպես դա նախատեսված է Քրեական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածով:

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ սկզբունքային մոտեցումը պետք է լինի այն, որ նախնական քննության տվյալների հրապարակման թույլտվություն տալու՝ վարույթն իրականացնող իրավասու մարմնի հայեցողությունը չպետք է լինի բացարձակ, այդ կապակցությամբ կայացված որոշումը պետք է հետապնդի նախաքննության շահերի իրական պաշտպանության նպատակ:

Սահմանադրական դատարանը մատնանշել է նաև եվրոպական երկրների փորձը, ըստ որի՝ այդ երկրների օրենսդրությամբ սահմանում են այն հիմքերը, որոնց առկայության դեպքում չի թույլատրվում քրեական գործի նյութի հրապարակումը: Մասնավորապես, դրանք առնչվում են հասարակական կարգի պաշտպանությանը, հանցագործության բացահայտմանը խոչընդոտելուն, քրեական դատավարությանը վնասելուն և հանցանքի կատարմանը նպաստելուն, առևտրային գաղտնիքին և իրավաբանական անձի գործունեությանը վնաս պատճառելուն, ընտանեկան կամ անձնական կյանքի անձեռնմխելիությունը խախտելուն կամ անձի պատիվը ոտնահարելուն, անչափահասի շահերին վնաս պատճառելուն և այլն: Ըստ այդմ, Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ այս ուղղությամբ Քրեական դատավարության օրենսդրության զարգացումը լրացուցիչ երաշխիքներ կստեղծի տուժողի շահերի պաշտպանության և նախաքննության նկատմամբ վստահության ամրապնդման գործում<sup>412</sup>:

Թեև կոնկրետ որոշմամբ խնդիրը քննարկվել է տուժողի իրավահաջորդի և նրա ներկայացուցչի իրավունքների ապահովման տեսանկյունից, սակայն նշված իրավավերլուծությունը հավասարապես վերաբերելի է քրեական դատավարության մասնակիցներին: Չնայած ակնկալվում էր, որ նշված որոշումը պրակտիկայի զարգացման համար ուղենշային կլինի, սակայն իրականում քննչական մարմինները շարունակում են նախաքննության տվյալների գաղտնիության «շահարկմամբ» մերժել պահանջվող տեղեկությունների տրամադրումը:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է կատարելագործել պրակտիկան և ապահովել, որ հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող անձին և շահագրգիռ մյուս սուբյեկտներին, այդ թվում՝ տուժողին բավարար ժամանակ տրամադրվի քրեական գործի նյութերին ծանոթանալու և միջնորդություններ ներկայացնելու համար՝ հաշվի առնելով գործի առանձնահատկությունները և ծավալը:*

### **15. Գործերի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը: Դատարանակազմական և դատավարական կանոնակարգումների անլիարժեքությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2021 թվականի ընթացքում շարունակվել են ստացվել բողոքներ՝ քրեական գործերի քննության ձգձգման առնչությամբ:

Խնդիրը հատկապես սուր է դրված այն քրեական գործերով, որոնց շրջանակներում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոց է ընտրված կալանավորումը: Նման բողոքներ Պաշտպանի աշխատակազմին ներկայացվում են քրեակատարողական հիմնարկներ կատարվող այցերի և

<sup>412</sup> Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՈ-1008 որոշումը՝ քաղաքացի Հասմիկ Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի՝ «նախաքննության ավարտման պահից» դրույթի և 201-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով:

առանձնագրույցների ընթացքում: Նույնաբովանդակ հարցեր ներկայացվում են նաև կալանավորված անձանց մերձավոր ազգականների կողմից:

Օրինակ, ստացված մի բողոքով քրեական գործի շրջանակում մեղադրյալի կարգավիճակ ունեցող անձը հայտնել է, որ քրեական գործի վարույթն իրականացնող քննիչը պատշաճ ջանասիրություն չի ցուցաբերել նախաքննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու համար, ավելին՝ ամիսների շարունակ չեն իրականացվել անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ:

Մեկ այլ բողոքի քննարկման շրջանակում մեղադրյալի պաշտպանն հայտնել է, որ իր պաշտպանյալին մեղադրանք է առաջադրվել 2019 թվականին, քրեական գործն ինքնին հարուցվել է 2017 թվականին, սակայն Պաշտպանին 2021 թվականին բողոք հասցեագրելու դրությամբ գործով քննությունը չի ավարտվել: Քրեական գործի նախաքննության տևողության կապակցությամբ Դատախազության դիրքորոշման համաձայն՝ այն պայմանավորված է բացառապես՝ քրեական գործի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունն ապահովելու նպատակով բազմաթիվ քննչական և դատավարական գործողություններ կատարելու, այդ թվում՝ փորձաքննություններ նշանակված լինելու անհրաժեշտությամբ:

2021 թվականի ընթացքում ստացվել են նաև բողոքներ՝ դատարանների վարույթներում քննվող քրեական գործերի անհիմն ձգձգման, ողջամիտ ժամկետում գործի քննությունը չապահովելու արդյունքում անձանց իրավունքների ապահովմանն առնչվող հարցերի վերաբերյալ<sup>413</sup>:

Կոնկրետ դատական վարույթին և դատավորի լիազորությունների իրականացմանը չմիջամտելու օրենսդրական պահանջից ելնելով՝ առանձին գործերով ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքի ենթադրյալ խախտման հարցերը Պաշտպանի կողմից քննության առարկա չեն դարձել: Այդուհանդերձ, երկրում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակին ընդհանուր անդրադարձը պայմանավորում է նաև քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների պահպանման խնդրի ուսումնասիրություն՝ միջազգային իրավական չափանիշների, դատարանակազմական և դատավարական օրենսդրական կանոնակարգումների վերլուծություն: Նշվածի հաշվառմամբ 2017, 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում<sup>414</sup> կատարվել էր ներպետական և միջազգային իրավական ակտերի մանրամասն վերլուծություն:

---

<sup>413</sup> Նախորդ տարիներին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար ստանում էր բողոքներ նաև իրավական օգնության կարգով ստացված հարցումները թարգմանելու խնդրի կապակցությամբ, որը հանդիսացել է քրեական գործերի քննության ձգձգման պատճառ, առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 545-551:

<sup>414</sup> 2017 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 235-241, 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 305-312, 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության

Եվրոպական դատարանը, խոսելով պատշաճ քննության մասին, սահմանում է նաև գործը ողջամիտ ժամկետում քննելու պետության պարտականությունը<sup>415</sup> այն դիտարկելով իբրև պետական մարմինների գործողությունների նկատմամբ հասարակական վստահության կարևոր պայման<sup>416</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով փաստում է, որ քրեական գործով «ողջամիտ ժամկետը» սկսում է հաշվվել այն պահից, երբ առաջադրվում է մեղադրանքը: Դա կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան: Այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր նկատմամբ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննությունը սկսելու պահից:

Ժամկետի հաշվարկն ավարտվում է, երբ ավարտվում է քննությունն ամենաբարձր ատյանի դատարանում, այն է՝ երբ կայացվում է վերջնական որոշում: Այսինքն՝ գործի քննության ընդհանուր տևողության ողջամտությունը գնահատելիս պետք է հաշվի առնվի նաև վարույթների տևողությունը վերաքննիչ և վճռաբեկ ատյաններում<sup>417</sup>:

Գործի քննության ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը չի կարող արդարացվել, անգամ եթե համապատասխան դատավարական որոշումներն ընդունվել են անձի օգտին (քրեական գործի վարույթի կարճում, պատժի մեղմացում, հայցադիմումի (դիմումի) բավարարում և այլն)<sup>418</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ՝ դատարանների քրոնիկ ծանրաբեռնվածությունը ևս չի կարող արդարացնել վարույթի չափազանց երկար տևողությունը<sup>419</sup>:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի շրջանակներում Եվրոպական դատարանը ներպետական վարույթի տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում գնահատում է՝ ելնելով քննության առարկա գործի կոնկրետ հանգամանքներից: Չնայած դրան՝ Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ողջամիտ ժամկետի վիճարկմանը վերաբերող մի շարք

---

վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 330-339 և 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 538-551:

<sup>415</sup> Տե՛ս Յասան ընդդեմ Թուրքիայի (Yasa v. Turkey) գործով 1998 թվականի սեպտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22495/93, կետեր 102-104:

<sup>416</sup> Տե՛ս Մահմուտ Կայան ընդդեմ Թուրքիայի (Mahmut Kaya v. Turkey) գործով 2000 թվականի մարտի 28-ի վճիռը, գանգատ թիվ 22535/93, կետեր 106-107:

<sup>417</sup> Տե՛ս Ողջամիտ ժամկետում արդար դատաքննության և դատավարություններում դատավորի դերի վերաբերյալ (հաշվի առնելով վեճերի լուծման այլընտրանքային միջոցները) Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (CCJE) կողմից Նախարարների կոմիտեի ուշադրությանը ներկայացնելու համար 2004 թվականի Նոյեմբերի 22-ից 24-ն ընդունված թիվ 6 (2004) կարծիքը, կետ 98:

<sup>418</sup> Տե՛ս Էկլեն ընդդեմ Գերմանիայի (Eckle v. Germany) գործով 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, գանգատ թիվ 8130/78, կետ 73:

<sup>419</sup> Տե՛ս Պրոբստմեյերն ընդդեմ Գերմանիայի (Probstmeier v. Germany) գործով 1997 թվականի հուլիսի 1-ի վճիռը, գանգատ թիվ 20950/92, կետ 64:

գործերի քննության արդյունքում ձևավորել է որոշակի չափանիշներ, որոնք դատաքննության ողջամտությունը գնահատելիս կիրառելի են բոլոր գործերի նկատմամբ:

Ըստ այդմ, ողջամիտ ժամկետի հետ կապված՝ Եվրոպական դատարանն ելնում է հետևյալ չափանիշներից՝

1. գործի բարդությունը.

Գործի բարդությունը որոշելիս՝ Եվրոպական դատարանն ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով, որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին՝ հաստատման ենթակա փաստերի բնույթը, մեղադրյալների և վկաների թվաքանակը, միջազգային գործոնները, դատավարությանը նոր անձանց ներգրավումը, հաշվարկները, փորձագետների անհրաժեշտությունը և այլն: Անդրադառնալով գործի բարդությանը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ այն կարող է կապված լինել ինչպես փաստերի, այնպես էլ իրավական տեսակետների հետ<sup>420</sup>, օրինակ, գործում մի քանի կողմ ներգրավելու<sup>421</sup>, տարբեր ապացույցներ ձեռք բերելու<sup>422</sup>, փորձագետի եզրակացությունն ստանալու հետ<sup>423</sup> և այլն:

2. Դիմողի համար ողջամիտ ժամկետի չափանիշները.

Դիմողի համար այդպիսի հետևանքները վերջինիս իրավունքների ապահովման այն հնարավոր դիսկերն են, որոնք կարող են վրա հասնել դատավարական ժամկետների ձգձգման պատճառով:

3. Համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվությունը.

Համապատասխան մարմինների աշխատանքի օպերատիվություն ասելով ի նկատի է առնվում վարույթն իրականացնող մարմնի կողմից գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և ժամանակին ուսումնասիրումը: Ընդ որում, միջազգային իրավական մոտեցումների համաձայն՝ պետք է արձանագրել, որ գործի քննության ձգձգումը հանգեցնում է ողջամիտ ժամկետների խախտման, եթե դա պայմանավորված է սուբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների գերձանրաբեռնվածությունը, դատավորների ոչ արհեստավարժությունը և այլն. նման դեպքերում պետությունն է կրում որակյալ և արագ արդարադատություն ապահովելու պարտականությունը:

4. Դիմողի սեփական վարքագիծը.

Դիմողի սեփական վարքագծի հետ կապված՝ Եվրոպական դատարանն արձանագրում է, որ վերջինս պետք է «ցուցադրի քննության՝ իրեն անմիջականորեն վերաբերող բոլոր փուլերին

<sup>420</sup> Տե՛ս Քաթ Կլիշշե դե լա Գրանգեն ընդդեմ Իտալիայի (Katte Klitsche de la Grange v. Italy) գործով 1994 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 12539/65, կետ 55:

<sup>421</sup> Տե՛ս Հ.-ն ընդդեմ Միացյալ Թագավորության (H. v. United Kingdom) գործով 1987 թվականի հուլիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 9580/81, կետ 72:

<sup>422</sup> Տե՛ս Հյումենն ընդդեմ Լեհաստանի (Humen v. Poland) գործով 1999 թվականի հոկտեմբերի 15-ի վճիռը, գանգատ թիվ 26614/95, կետ 63:

<sup>423</sup> Տե՛ս Պանդոլֆելլի և Պալումբոն ընդդեմ Իտալիայի (Pandolfelli and Palumbo v. Italy) գործով 1992 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 13218/87, կետ 17:

մասնակցելու պատրաստակամություն, ձեռնպահ մնա դատավարությունը ձգձգող հնարքներից, ինչպես նաև դատավարությունն արագացնելու նպատակով առավելագույնս օգտագործի ներպետական օրենսդրությամբ նախատեսված բոլոր միջոցները»<sup>424</sup>: Եթե գործի քննության ձգձգումը տեղի է ունենում դիմողի մեղքով, ապա դա, անկասկած, վերջինիս բողոքի արդյունավետությունը նվազեցնող գործոն է<sup>425</sup>:

Արդար դատաքննության իրավունքի, մասնավորապես՝ ողջամիտ ժամկետների երաշխավորումն առաջին հերթին կանխորոշվում է դատարանակազմական և դատավարական լիարժեք կառուցակարգերով և դրանց պատշաճ գործադրմամբ: Հետևաբար, դատավարական ողջամիտ ժամկետների պահպանումն իր հերթին փոխապայմանավորված է մի շարք ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ գործոններով, ինչպիսիք են, օրինակ, դատարանների ծանրաբեռնվածության համաչափությունը, գործի քննության անխոչընդոտ ընթացքն ապահովելու դատավարական հստակ կառուցակարգերը, դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ վարքագիծը և այն ապահովող օրենսդրական լծակները, դատավարական ժամկետների սահմանումը:

Միևնույն ժամանակ, հարկ է նկատել, որ ողջամիտ ժամկետը վերացական հասկացություն չէ. այն մեծապես կախված է կոնկրետ գործի առանձնահատկություններից, և տևողության միևնույն թվային ցուցանիշը կարող է մի դեպքում համարվել ողջամիտ, մյուս դեպքում՝ ոչ:

Հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է<sup>426</sup>:

Գործի քննության ողջամիտ ժամկետների միջազգային իրավական մոտեցումների տրամաբանությամբ՝ ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն իր հերթին արձանագրել է, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում: Խորհուրդն արձանագրել է, որ գործի քննության ժամկետները որոշելիս գործի քննության ժամկետի սկիզբ քրեական գործերով պետք է համարել այն պահը, երբ առաջադրվում է մեղադրանքը, որը կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործն ուղարկվում է դատարան, այդ ժամկետը կարող է հաշվվել անձին ձերբակալելու պահից, կամ այն պահից, երբ տվյալ անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ իր դեմ քրեական գործ է հարուցվել, կամ նախնական քննություն սկսելու պահից<sup>427</sup>:

<sup>424</sup> Տե՛ս Ալիմենտարիա Սանդերս ընդդեմ Իսպանիայի (Alimentaria Sanders S. A. V. Spain) գործով 1989 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 11681/85, կետ 35:

<sup>425</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Երևան, 2010թ., էջեր 232-233, հասանելի է <https://www.osce.org/hy/yerevan/74940?download=true> հղումով:

<sup>426</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ԳԴ1/0012/13/09 և ԼԴ/0082/13/09 որոշումները:

<sup>427</sup> Տե՛ս ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2006 թվականի հունիսի 13-ի թիվ 98 որոշում. [http://www.court.am/files/news/101\\_am.pdf](http://www.court.am/files/news/101_am.pdf):



Օրենսդրական մակարդակում դատավարական ողջամիտ ժամկետների պահպանման խնդիրն անհրաժեշտ ենք համարում դիտարկել երկու հարթությունում՝

1. դատական իշխանության կազմակերպման և գործունեության հիմունքների ու սկզբունքների տեսանկյունից.

Գործերի քննության ողջամիտ ժամկետների պահպանումն ուղղակիորեն կապված է դատական համակարգի կառուցվածքից, դատավորների թվաքանակից, դատարանների նստավայրերի, դրանց սպասարկման տարածքների և դատավորների բաշխման ու թվակազմի սահմանումից և այլն:

Այս առումով թերևս ողջունելի է ՀՀ դատական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2018 թվականի հունվարի 25-ին ուժի մեջ մտած օրենքով ստեղծվեց Երևան քաղաքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության մեկ դատարանը, որի դատական տարածքը Երևան քաղաքի տարածքն է, իսկ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ընդունմամբ սահմանվեց, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների թվակազմը ֆիքսված չէ, և Բարձրագույն դատական խորհրդին տրվեց առանձին դատարանների դատավորների թվակազմը Կառավարության համաձայնությամբ ավելացնելու լիազորություն:

Միաժամանակ, վերը նշված սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների հաշվառմամբ ամրագրվեցին դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելու չափանիշները: Մասնավորապես, հոդվածի առաջին մասով ամրագրվեց, որ գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում: Նույն հոդվածի 2-րդ մասով՝ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը (տևողության մեջ հաշվարկվում է վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյաններում բողոքների քննության ժամանակահատվածը նույնպես),

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

2. Քրեադատավարական ընթացակարգերի օրենսդրական կարգավորումների տեսանկյունից.

Գործող քրեադատավարական կառուցակարգերը քրեական գործերի քննության ժամկետների պահպանման առումով լիարժեք չեն: Այսպես, օրենսգրքի՝ դատավարական ժամկետներ ամրագրող կարգավորումները հանգում են հետևյալին՝

1. հետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում,

2. քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը,

3. միևնույն ժամանակ, նախաքննության ժամկետը քննիչի պատճառաբանված միջնորդության հիման վրա կարող է երկարացնել հսկող դատախազը՝ միջնորդությունը լրիվ կամ մասնակիորեն բավարարելու վերաբերյալ որոշում կայացնելով: Նախաքննության ժամկետի մասնակի երկարացումը ենթակա է պատճառաբանման: Նախաքննության ժամկետը յուրաքանչյուր դեպքում կարող է երկարացվել մինչև երկու ամիս ժամանակով:

Ստացվում է, որ թեև մինչդատական վարույթի փուլերի՝ հետաքննության և նախաքննության առավելագույն ժամկետներն օրենքով ամրագրված են, այդուհանդերձ, վարույթն իրականացնող մարմինն իրավասու է նախաքննության երկամսյա ժամկետը երկարացնել՝ ընդ որում առանց օրենսդրական սահմանափակման: Չնայած յուրաքանչյուր դեպքում նախաքննության ժամկետը երկարացնելու պատճառաբանվածության պահանջին՝ օրենսդրական այդպիսի կառուցակարգը կարող է խնդրահարույց լինել քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքների, այդ թվում՝ իր գործի քննության ողջամիտ ժամկետների երաշխավորման տեսանկյունից,

4. գործի դատական քննության նախապատրաստման փուլի հետ կապված օրենսգրքի 292-րդ հոդվածն ամրագրում է, որ քրեական գործն իր վարույթ ընդունած դատավորը հետագոտում է գործում եղած նյութերը և քրեական գործն իր վարույթն ընդունելու պահից 15 օրվա ընթացքում կայացնում է որոշում,

5. օրենսգրքի 293-րդ հոդվածի համաձայն՝ դատական քննությունը պետք է նշանակվի դատական քննություն նշանակելու մասին որոշում կայացնելու պահից 10 օրվա ընթացքում,

6. քրեադատավարական օրենքը գործի դատական քննության առավելագույն ժամկետներ չի նախատեսում՝ միաժամանակ ամրագրելով անձի՝ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունք:

Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված Քրեական դատավարության օրենսգրքի 192-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդման ժամկետներ:

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտնող Քրեական դատավարության օրենսգրքի լուծումները, փաստորեն, ամրագրում են անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու առավելագույն ժամկետները:

Ողջամիտ ժամկետի պահպանման կարևորությանն անդրադարձել է նաև ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1074 որոշմամբ: Դատարանը նշել է, որ «ողջամիտ ժամկետ» եզրույթը չի բացառում տարբեր գործոններով պայմանավորված՝ գործի դատական քննության ընթացքը դանդաղեցնող օբյեկտիվ հանգամանքների հնարավոր առկայությունը և դրանով պայմանավորված՝ նախնական դատական նիստերի, գործի քննությունը վերսկսելու, գործի քննությունը հետաձգելու,

գործի վարույթը կասեցնելու ինստիտուտների անհրաժեշտությունը: Դատարանի դիրքորոշմամբ՝ դա միաժամանակ ենթադրում է դատարանի կողմից գործի քննությանն անհարկի, կամայականորեն ձգձգելը բացառելու պատվիրան:

Հաշվի առնելով ձևավորված պրակտիկան և առկա օրենսդրական բացի հաղթահարման նպատակով՝ Պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան, բացի այդ՝ ընթացիկ տարում հրապարակվել է նաև արտահերթ հրապարակային զեկույց<sup>428</sup>:

Հարկ է նկատել, որ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով դիտարկվել է ոչ միայն քրեական, այլև առհասարակ դատավարության բոլոր տեսակներում առկա՝ գործի քննությունը ողջամիտ ժամկետում ապահովելու խնդիրը: Ընդ որում՝ խնդիրը դիտարկվել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածի լույսի ներքո, որը Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվելու դեպքում յուրաքանչյուրի համար երաշխավորում է պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքը, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված միջոցը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրությամբ: Եվրոպական դատարանը բազմիցս նշել է, որ *միջոցն արդյունավետ է, եթե այն կանխում է ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակականությունը կամ ապահովում է արդեն տեղի ունեցած խախտման համար համարժեք փոխհատուցում*<sup>429</sup>:

Սահմանադրական դատարանը, քննության առնելով Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացրած բողոքը, թեև գտավ, որ վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը, սակայն 2021 թվականի մարտի 16-ի ՍԴՈ-1585 որոշմամբ տվեց ուղենշային եզրահանգումներ:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ գործի քննության ողջամիտ ժամկետը չունի ընդհանուր, բոլոր իրավիճակների համար կիրառելի թվային արտահայտություն. այն ենթակա է գնահատման յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները, ընդ որում, Սահմանադրության 81-րդ հոդվածի ուժով անձի արդար դատաքննության իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի և կիրառվի, ի թիվս այլնի, նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան:

<sup>428</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/e722139fe25348c1076dae0df9496c55.pdf> հղումով:

<sup>429</sup> Տե՛ս Վլադը և այլք ընդդեմ Ռումինիայի (Vlad and others v. Romania) գործով 2013 թվականի նոյեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 40756/06, 41508/07 և 50806/07, կետ 111: Ուազերմանն ընդդեմ Ռուսաստանի (Wasserman v. Russia (No 2)) գործով 2008 թվականի սեպտեմբերի 29-ի վճիռը, գանգատ թիվ 21071/50, կետ 45: Կուդլան ընդդեմ Լեհաստանի (Kudła v. Poland) գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը: գանգատ թիվ 30210/96, կետ 158: Դորանն ընդդեմ Իռլանդիայի (Dorann v. Ireland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 50389/99, կետ 59:

Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ պետությունն առաջին հերթին պետք է սահմանի անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ իրացումը՝ կանխելով արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումները, մյուս կողմից, գործի քննության ձգձգումների դեպքում պետք է ապահովի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն:

Անդրադառնալով գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի պահպանումն ապահովելու հարցին՝ Սահմանադրական դատարանը, հղում կատարելով Եվրոպական դատարանի դիրքորոշումներին, արձանագրեց, որ պետությունն իր իրավական համակարգը պետք է կազմակերպի այնպես, որ դատարանները հնարավորություն ունենան և իրենց իրավասությանը վերապահված գործերը քննեն ողջամիտ ժամկետում:

Հղում անելով նաև Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի դիրքորոշմանը Սահմանադրական դատարանը նշել է, որ գործերի քննության ժամկետները սերտորեն կապված են հետևյալ տարրերի հետ.

- քննվող գործերի քանակ,
- գործերը քննող համակարգին հասանելի ռեսուրսներ (մարդկային և նյութական),
- գործերի քննության որակ:

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանը փաստել է, որ հաճախ մատնանշվում է դատարանների ծանրաբեռնվածությունը՝ առանձին դեպքերում այն կապելով գործերի քննության երկարաձգումների հետ (օրինակ՝ Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի տարեկան հաղորդումը, «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի 1441-Լ որոշումը): Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ արդարադատության արդյունավետության մակարդակը չի բնութագրվում բացառապես հնարավոր ամենակարճ ժամկետում քննվող և լուծվող գործերի թվային ցուցանիշով. դատարանները կրում են արդար դատաքննության բոլոր պահանջներին համահունչ գործերի քննություն իրականացնելու պարտականություն, իսկ դատարանների ծանրաբեռնվածությունը կարող է վտանգել առաջադրված բոլոր պահանջների միաժամանակյա ապահովումը: Ուստի, ըստ Սահմանադրական դատարանի, անհրաժեշտ է ապահովել դատարանների այնպիսի ծանրաբեռնվածություն, որի պայմաններում վերջիններս հնարավորություն կունենան գործերի քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետում՝ միաժամանակ արդար դատաքննության իրավունքի նաև մյուս պահանջների պահպանմամբ:

Դրանից բացի, Սահմանադրական դատարանն անդրադարձել է այն հարցին, որ օրենսդիրը Բարձրագույն դատական խորհրդին տվել է ըստ գործերի առանձին տեսակների և բարդության քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ սահմանելու լիազորություն (Օրենսգրքի

89-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետ): Այդ հանգամանքի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտել է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից իր նշված լիազորությունն իրականացնելու, իսկ գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումների դեպքում իրավասու մարմինների կողմից դրանց արդյունավետորեն արձագանքելու պարագայում հնարավոր է գործնականում բարձրացնել վիճարկվող դրույթում ամրագրված, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բացահայտված չափորոշիչների հաշվառմամբ գնահատվող՝ գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանման արդյունավետության մակարդակը:

Այս համատեքստում առանձնակի ուշադրության է արժանի 2021 թվականի ընթացքում Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշումը, որը սահմանել է գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության: Ընդ որում, գործի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետներ սահմանելիս՝ հիմք է ընդունվել գործի բարդության մակարդակը՝ գործի իրավական և փաստական բարդության չափանիշներով պայմանավորված<sup>430</sup>:

Կարևորելով Բարձրագույն դատական խորհրդի կողմից ի վերջո գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները սահմանելը՝ հարկ է, այնուամենայնիվ, նշել, որ ուղենիշային այդ ժամկետներն անհրաժեշտ, սակայն դեռևս ոչ բավարար միջոց են ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքի պահանջը լիարժեքորեն ապահովելու համար: Այդ իրավունքի լիարժեք ապահովումը պահանջում է իրավունքի խախտման հնարավոր դեպքերը կանխարգելող օրենսդրական կառուցակարգերի ներդրում: Այս խնդրին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը դատական նիստերի անվերջ ձգձգման վերաբերյալ լրատվական հոդվածի կազմման շրջանակներում տված հարցազրույցի ժամանակ<sup>431</sup>:

Խնդրի բազմակողմանի ուսումնասիրության շրջանակներում պարզվել է նաև, որ որպես ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման միջոց ծառայող՝ դատական ակտերի բողոքարկման, ընթացիկ դատական գործերով մեկ այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի հարցի քննարկման և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգերը, ինչպես նաև դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերն *արդյունավետ միջոց չեն*:

Այդ մասին է վկայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Մասնավորապես, Եվրոպական դատարանն իր վճիռներից մեկում արձանագրել է, որ ավելի բարձր ատյաններին դիմելը չի կարող համարվել որպես արդյունավետ միջոց գործի

---

<sup>430</sup> Տե՛ս ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի օգոստոսի 30-ի թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշում. <https://court.am/storage/uploads/files/bdx-decisions/6RWmcd70J72Vw4rTAPPNDgutjWkYw6ZhhWXxWfg6.pdf>:

<sup>431</sup> Տե՛ս «Անվերջ ձգվող դատական նիստեր. որտե՞ղ է ավարտվում ողջամիտ ժամկետի սահմանը» տեսանյութը, հասանելի է <https://factor.am/426269.html> հղումով (05:43 րոպե):

քննության տևողությունը վիճարկելու համար<sup>432</sup>: Արդեն տեղի ունեցած անհարկի ձգձգումների համար դրամական փոխհատուցում տրամադրելը չի բացառում, որ այլ անտեղի ձգձգումներ տեղի չեն ունենալուն<sup>433</sup>: Որևէ ապացույց չկա, որ վնասի փոխհատուցման միջոցն ավելի արագ կքննվի, քան սովորական քաղաքացիական հայցը, որը կարող է մի քանի տարի տևել և անցնել դատական բոլոր աստիճաններով: Ժամանակի նման վատնումը չի կարող համատեղելի լինել վարույթն ավելի արագացնելու պահանջի հետ<sup>434</sup>: Գործը քննող դատավորի նկատմամբ կարգապահական գործողությունն արդյունավետ միջոց կարող է համարվել միայն, եթե դա ուղղակի և անմիջական հետևանք է առաջացնում այն վարույթների համար, որոնք վիճարկվում են<sup>435</sup>:

Այն դեպքում, երբ դատական համակարգը թերի է կարգավորված Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանված ողջամիտ ժամկետի պահանջն ապահովելու համար, ամենաարդյունավետ լուծումն այն միջոցն է, որը նախատեսված է դատական գործընթացներն արագացնելու համար, որպեսզի կանխվի դրա չափից դուրս երկար տևողությունը: Նման միջոցն ունի անհերքելի առավելություն այն միջոցի նկատմամբ, որն ապահովում է միայն փոխհատուցման տրամադրումը, քանի որ այն կանխում է նույն վարույթի հաջորդող խախտումների հայտնաբերումը և պարզապես չի վերականգնում արդեն կատարված խախտումը<sup>436</sup>: Վենետիկի հանձնաժողովի դիրքորոշման համաձայն՝ Կոնվենցիայով ամրագրված իրավունքներից մեկի խախտման դեպքում մինչև խախտումը եղած դրությունը վերականգնելը գերադասելի է դրամական փոխհատուցում տրամադրելուց<sup>437</sup>: Լավագույն լուծումը, անվիճելիորեն, կանխարգելումն է: Նման միջոցն անհերքելի առավելություն ունի իրավական պաշտպանության այնպիսի միջոցի նկատմամբ, ինչպիսին փոխհատուցումն է<sup>438</sup>:

**Այսպիսով, վստահաբար կարելի է պնդել, որ ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի ապահովման համար որպես Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված՝**

---

<sup>432</sup> Տե՛ս Հարթմանն ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Hartman v. Czech Republic) գործով 2003 թվականի դեկտեմբերի 3-ի վճիռը, գանգատ թիվ 53341/99, կետ 82:

<sup>433</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0fF-Fgfx4u24Ar\\_eyJXdaKzle6gmmUqjmLlVVdiltU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0fF-Fgfx4u24Ar_eyJXdaKzle6gmmUqjmLlVVdiltU70XtZMIHOyKK8CU) հղումով, էջ 31, կետ 171:

<sup>434</sup> Տե՛ս Իլիչն ընդդեմ Սերբիայի (Ilić v. Serbia) գործով 2008 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 30132/04, կետ 65: ՄաքՖարլեյնն ընդդեմ Իռլանդիայի (McFarlane v. Ireland) գործով 2010 թվականի սեպտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 31333/06, կետ 123:

<sup>435</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD\(2007\)044-e&fbclid=IwAR0fF-Fgfx4u24Ar\\_eyJXdaKzle6gmmUqjmLlVVdiltU70XtZMIHOyKK8CU](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-STD(2007)044-e&fbclid=IwAR0fF-Fgfx4u24Ar_eyJXdaKzle6gmmUqjmLlVVdiltU70XtZMIHOyKK8CU) հղումով, էջ 28, կետ 147:

<sup>436</sup> Տե՛ս Ֆինգերն ընդդեմ Բուլղարիայի (Finger v. Bulgaria) գործով 2011 թվականի օգոստոսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 37346/05, կետ 83(d):

<sup>437</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2002\)034-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2002)034-e), հղումով, կետ 64:

<sup>438</sup> Տե՛ս Միլիչն ընդդեմ Մոնտենեգրոյի և Սերբիայի (Milić v. Montenegro and Serbia) գործով 2013 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 28359/05, կետ 73:

**իրավական պաշտպանության արդյունավետ միջոց կարող են հանդես գալ միայն կանխարգելիչ միջոցները, որպիսիք, սակայն բացակայում են մեր իրավական համակարգում:**

Վերը նշվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ քրեական գործերի քննության ողջամիտ ժամկետների ապահովման հարցում դատական պրակտիկայի կատարելագործման նպատակով *անհրաժեշտ է՝*

1. *ապահովել «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի և Բարձրագույն դատական խորհրդի թիվ ԲԴԽ-65-Ո-165 որոշման՝ գործի քննության տևողության ողջամտության ապահովմանն առնչվող պահանջների պարզաճ կենսագործումը,*

2. *ուսումնասիրել ՀՀ քննչական կոմիտեի և քննչական մյուս մարմիններում քննիչների թվակազմը՝ գործերի քանակի համադրմամբ և ըստ անհրաժեշտության ավելացնել հաստիքներ կամ թափուր հաստիքների առկայության դեպքում՝ համալրել դրանք,*

3. *ներպետական օրենսդրությամբ ամրագրել արդյունավետ կառուցակարգեր, որոնք ուղղված կլինեն ինչպես գործերի քննության ողջամիտ ժամկետի խախտումները կանխելուն, այնպես էլ խախտված իրավունքների դեպքում դրանց լիարժեք վերականգնմանը:*

## **16. Քրեական գործերով իրավական օգնության շրջանակում արձանագրված գործնական խնդիրներ**

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների միջև դատապարտյալների փոխանցումն իրականացվում է «Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի եվրոպական կոնվենցիայի, «Պատժի հետագա կրման համար դատապարտյալների փոխանցման մասին» Մոսկվայի 1998 թվականի կոնվենցիայի, ինչպես նաև առանձին երկկողմ միջազգային պայմանագրերի դրույթներով:

«Դատապարտյալների փոխանցման մասին» 1983 թվականի մարտի 21-ին Ստրասբուրգում ստորագրված կոնվենցիայի նպատակը դրա կողմ հանդիսացող պետությունների տարածքում մյուս կողմերի դատապարտված քաղաքացիների՝ իրենց քաղաքացիության պետությունում պատիժը կրելու համար փոխանցման հնարավորության ապահովումն է: Այսինքն՝ *պետությունների համար կոնվենցիան նախատեսում է հնարավորություն, ոչ թե պարտականություն: Ընդ որում, որևէ իրավական ակտով պետության վրա դրված չէ կայացված որոշումը պարճառաբանելու պարտականություն: Կոնվենցիայի համաձայն՝ դատապարտյալը կարող է փոխանցվել միայն հետևյալ պայմանների առկայության դեպքում.*

ա) տվյալ անձը Կատարող պետության քաղաքացի է,

բ) դատավճիռը վերջնական է,

գ) փոխանցման մասին խնդրանքն ստանալու պահին պատիժը կրելու համար դատապարտյալին մնացել է առնվազն վեց ամիս ժամկետ կամ պատժի ժամկետն անսահմանափակ է,

դ) փոխանցումը համաձայնեցված է դատապարտյալի հետ կամ երկու Կողմերից որևէ մեկը, ելնելով դատապարտյալի տարիքից, ֆիզիկական կամ հոգեկան վիճակից, անհրաժեշտ է համարում փոխանցումը համաձայնեցնել նրա օրինական ներկայացուցչի հետ,

ե) գործողությունը կամ անգործությունը, որի համար դատավճիռ է կայացվել, հանցագործություն է համարվում ըստ Կատարող պետության օրենսդրության կամ այդպիսին կհամարվեր, եթե հանցագործությունը կատարվեր այդ պետության տարածքում,

զ) Դատապարտող և Կատարող պետությունների միջև համաձայնություն է ձեռք բերվել փոխանցման վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար ստանում է ազատազրկման դատապարտված ՀՀ քաղաքացիներին պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով փոխանցելու վերաբերյալ խնդիրներին առնչվող բողոքներ: Բողոքների ճնշող մեծամասնությունը վերաբերում է Ռուսաստանի Դաշնությունում պատիժ կրող ՀՀ քաղաքացիներին:

Օրինակ, 2021 թվականին Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներից մեկով անձը հայտնել է, որ իր և ամուսնու միակ որդին դատապարտվել և ազատազրկման ձևով պատիժ է կրում Ռուսաստանի Դաշնությունում: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով 2019 և 2020 թվականներին դիմել են ՀՀ արդարադատության նախարարություն, սակայն Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն փոխանցման հարցին առնչվող անհրաժեշտ փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում իրենց խնդրանքը մերժվել է: 2021 թվականի ընթացքում բողոք ներկայացրած անձինք կրկին դիմել են Արդարադատության նախարարություն՝ պատժի մնացած մասը կրելու նպատակով Ռուսաստանի Դաշնությունից իրենց որդուն Հայաստանի Հանրապետություն փոխանցման հարցը քննարկելու կապակցությամբ: Նախարարության պարզաբանման համաձայն՝ դատապարտյալի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու նպատակով անհրաժեշտություն է առաջացել կատարել լրացուցիչ հարցումներ:

Մեկ այլ բողոքով Ռուսաստանի Դաշնությունում պատիժ կրող ՀՀ քաղաքացու հայրը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությանը՝ հայտնելով, որ պատիժը կրելու ընթացքում որդու առողջական վիճակը վատթարացել է, դիմել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ վերջինիս Ռուսաստանի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն փոխանցելու և պատժի մնացած մասը Հայաստանի Հանրապետությունում կրելու խնդրանքով: Բողոք ներկայացրած քաղաքացին հավելել է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից որդու փոխանցման համար անհրաժեշտ փաստաթղթերն ուղարկվել են Ռուսաստանի Դաշնություն, և չնայած որդուն Հայաստանի Հանրապետություն հանձնելու Ռուսաստանի Դաշնության համաձայնության առկայությանը՝ նրան ՀՀ փոխանցելու գործընթացը ձգձգվում է: Նշված հարցադրման կապակցությամբ Արդարադատության նախարարության տրամադրած պարզաբանման համաձայն՝ Արդարադատության նախարարությունը 2021 թվականի հուլիս և հոկտեմբեր ամիսներին գրավոր հարցումներ է կատարել Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարություն՝ տվյալ



անձի փոխանցման հարցն ուսումնասիրելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու խնդրանքով, սակայն հարցման պատասխանները դեռևս չեն ստացվել:

Այսինքն, վերը նշված դեպքերում բողոք ներկայացրած անձինք պատժի մնացած մասը Հայաստանում կրելու նպատակով դատապարտյալին փոխանցելու խնդրանքով դիմել են ՀՀ արդարադատության նախարարություն, իսկ փոխանցման գործընթացի տևողությունը պայմանավորված է եղել դատապարտյալի վերաբերյալ հարցումների պատասխաններն այլ պետություններից ստանալու հանգամանքով:

Պրակտիկայի ամփոփման նպատակով Պաշտպանի աշխատակազմն անհրաժեշտ պարզաբանումների պահանջով գրություն է հասցեագրել Արդարադատության նախարարություն: Նախարարությունը տեղեկություններ է տրամադրել այն մասին, որ 2021 թվականի ընթացքում պատժի մնացած մասը կրելու նպատակով օտարերկրյա պետությունից Հայաստանի Հանրապետություն փոխանցման խնդրանքով դիմել է ՀՀ քաղաքացի հանդիսացող 68 դատապարտյալ, որոնցից միայն 1-ի դեպքում է փոխանցումը բավարարվել: **Այսինքն, ըստ ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների՝ նախորդ տարվա համեմատությամբ 2021 թվականի ընթացքում ՀՀ քաղաքացի հանդիսացող և օտարերկրյա դատարանների կողմից ազատազրկման դատապարտված անձանց Հայաստանի Հանրապետություն փոխանցելու մասին դիմումների բավարարման դեպքերը 8 անգամ նվազել են, որն առավել քան մտահոգիչ է:**

Պաշտպանը գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով դատապարտյալի փոխանցման հարցը քննարկելիս առաջնահերթ ուշադրության պետք է արժանանա դատապարտյալի ընտանիքի՝ Հայաստանում բնակվելու հանգամանքը, քանի որ հենց ընտանիքի հետ կապի պահպանումն ունի առանցքային նշանակություն անձի ուղղման, կրկնահանցագործության ռիսկի նվազեցման հարցում: Ի վերջո, հարցը պետք է քննարկվի ոչ միայն և ոչ այնքան պետության համար լրացուցիչ ծանրաբեռնվածության (այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկների բեռնվածության աստիճանը) ավելացման, այլ անձի նկատմամբ նշանակված պատժի նպատակների իրագործման տեսանկյունից: Հատկապես մտահոգիչ են այն դեպքերը, երբ օտարերկրյա իրավասու մարմինը դրական եզրակացություն է տալիս դատապարտյալի փոխանցման հարցին, իսկ Հայաստանի իրավասու մարմինը՝ ոչ:

Ընտանիքի անդամների հետ կապի կարևորությանը Պաշտպանն անդրադարձել է բազմիցս. այդ մասին առավել մանրամասն քննարկվել է նաև Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի 2020 թվականի զեկույցի «Կապն արտաքին աշխարհի հետ» վերտառությամբ թեմայի շրջանակում:

*Վերը նշվածի համատեքստում Պաշտպանն 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրել էր, որ յուրաքանչյուր դեպքում դատապարտյալի փոխանցումը մերժելիս Արդարադատության նախարարության կողմից պետք է ներկայացվեն որոշակի, թեկուզև նվազագույն հիմնավորումներ: Նշված հարցի լուծման կապակցությամբ օգտակար կարող է լինել*

Արդարադատության նախարարի՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված թիվ N 536-Ն հրամանը, որով հաստատվել են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն ազատագրկման դատապարտված դատապարտյալների փոխանցման կարգը և համապատասխան չափորոշիչները:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում վեր հանված մեկ այլ խնդիր վերաբերում է օտարերկրյա դատարանների կողմից անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու դեպքում նրանց բուժման մնացած մասը Հայաստանի Հանրապետությունում անցնելու նպատակով փոխանցման հարցին: Բողոքներից մեկով անձը հայտնել է, որ առողջական խնդիրներ ունեցող որդին շուրջ 5 տարի ազատագրկման ձևով պատիժ է կրում Ռուսաստանի Դաշնության քրեակատարողական հիմնարկում և առողջական խնդիրներով պայմանավորված՝ տեղափոխվել է համապատասխան բժշկական հաստատություն: Նշվածի կապակցությամբ Արդարադատության նախարարության տրամադրած պատասխանի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության դատարանը բողոք ներկայացրած անձի որդու նկատմամբ պատիժ չի կիրառել, այլ կիրառել է բժշկական բնույթի հարկադրանքի միջոց՝ հարկադիր բուժման նպատակով նրան տեղավորելով ստացիոնար պայմաններում հոգեբուժական օգնություն մատուցող մասնագիտացված բժշկական կազմակերպություն:

**Հոգեկան խնդիրներ ունեցող անձանց փոխանցումն իրականացվում է «Հարկադիր բուժում անցկացնելու համար հոգեկան խանգարումներով տառապող անձանց փոխանցելու մասին» 1997 թվականի Մոսկվայի կոնվենցիայի դրույթների համաձայն: Կոնվենցիայով իրավասու մարմին է նշանակվել Արդարադատության նախարարությունը:**

Ըստ Արդարադատության նախարարության դիրքորոշման՝ Կոնվենցիայի շրջանակներում հարկադիր բուժում անցկացնելու համար հոգեկան խանգարումներով տառապող անձանց փոխանցումը Հայաստանի Հանրապետություն մինչ օրս չի իրականացվել, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Կոնվենցիայի կիրառումը խնդրահարույց է, հոգեկան հիվանդություններով տառապող անձանց փոխադրումն անվտանգային առումով գործնականում հնարավոր չէ ապահովել, Կոնվենցիայի կատարումը Հայաստանի Հանրապետության կողմից կարող է հանգեցնել հոգեկան հիվանդություններով տառապող անձանց իրավունքների խախտման և նրանց առողջության վատթարացման անկանխատեսելի հետևանքների:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան Արդարադատության նախարարության տրամադրած հավելյալ պարզաբանումների համաձայն՝ «Հարկադիր բուժում անցկացնելու համար հոգեկան խանգարումներով տառապող անձանց փոխանցելու մասին» 1997 թվականի Մոսկվայի կոնվենցիայի կիրառման հետ կապված խնդիրներ են առաջացել նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց տեղափոխումն ավիաընկերությունների հետ համաձայնեցնելու, ուղեկցող խմբում բժշկի առկայությունն ապահովելու և օտարերկրյա պետություն կարճաժամկետ հոգեմետ դեղամիջոցներ ներկրելու և արտահանելու հնարավորության համատեքստում: Նույն գրությամբ նշվել է նաև, որ Կոնվենցիայի դրույթների կիրարկման կապակցությամբ առաջացած

խնդիրներով պայմանավորված՝ Արդարադատության նախարարությունը խնդրել է Արտաքին գործերի նախարարությանը քննարկել «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում Կոնվենցիայի գործողության կասեցման նպատակահարմարության հարցը:

*Վերոգրյալի հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է.*

1. Կարևորելով Արդարադատության նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 21-ին ընդունված թիվ N 536-Ն հրամանը՝ գործնականում ապահովել դրանում սահմանված չափանիշների իրագործումը՝ բացառելու համար ազատագրկման դատապարտված դատապարտյալների փոխանցման դիմումների չհիմնավորված մերժման դեպքերը և քայլեր ձեռնարկել այդ դիմումների քննարկման ընթացակարգերի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու ուղղությամբ,

2. Նկատի ունենալով, որ ներկայում «Հարկադիր բուժում անցկացնելու համար հոգեկան խանգարումներով տառապող անձանց փոխանցելու մասին» կոնվենցիան դեռևս գործում է՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը շարունակում է կրել միջազգային պայմանագրի կատարումն ապահովելու պարտավորություն:

## ԳԼՈՒԽ 2. ԱՆՁՆԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

### 1. Ազատությունից զրկելիս անձի իրավունքների ապահովման երաշխիքները

Մարդու իրավունքների համակարգում առաջնային նշանակություն ունեցող իրավունքներից հատկապես կարևորվում է անձնական ազատության իրավունքը:

Անձնական ազատության իրավունքի երաշխավորման հետ կապված համակարգային խնդիրներին մանրամասն անդրադարձ է կատարվել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում, այնպես էլ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցի շրջանակներում<sup>439</sup>:

2021 թվականի ընթացքում ևս ազատությունից զրկելիս անձի նվազագույն իրավունքների ապահովման առնչությամբ ստացված մի շարք բողոքների և ահազանգերի արդյունքներով վեր են հանվել մի շարք խնդիրներ: Պաշտպանի աշխատակազմն այս հարցերով իրականացրել է նաև մոնիթորինգային և վերլուծական աշխատանքներ: Բողոք ներկայացրած անձանց գերակշիռ մասը պնդել է, որ արգելանքի վերցնելիս (քրեական և վարչական վարույթներով) չեն տեղեկացվել ազատությունից զրկվելու հիմքերի և պատճառների մասին, չեն ծանուցվել իրենց իրավունքների մասին:

Պաշտպանի ներկայացուցիչները տեղում նույնաբնույթ խնդիրներ են արձանագրել նաև Ոստիկանության բաժիններ կատարած այցերի շրջանակում, ընդ որում՝ Պաշտպանի ներկայացուցիչների կողմից արձանագրվել են դեպքեր, երբ վարչական ձերբակալման ենթարկված անձինք Ոստիկանության բաժնում պահվել են օրենքով սահմանված ժամանակից ավելի:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի թեժ գծի հեռախոսահամարին ներկայացրած ահազանգերով, ինչպես նաև Ոստիկանության բաժիններ իրականացված այցերի ընթացքում նաև արձանագրվել են դեպքեր, երբ բերման ենթարկված անձինք տեղեկացված չեն եղել իրենց նվազագույն իրավունքների մասին և ցանկացել են տեղեկանալ Պաշտպանի աշխատակազմից:

Այսպես, Պաշտպանի աշխատակազմ ներկայացված ահազանգերով և մշտադիտարկման այցերի շրջանակում արձանագրվել են խաղաղ հավաքների մասնակիցների կողմից բարձրացված խնդիրները, որոնցից էին ազատությունից զրկելու հիմքերը պարզաբանելու, նվազագույն իրավունքները պարզաբանելու (փաստաբանի, լռելու և այլ իրավունքներ) և անհամաչափ ուժի կիրառությամբ անձանց վարչական ձերբակալման ենթարկելու հետ կապված խնդիրներ:

<sup>439</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2016 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 149-154, 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույց, էջեր 41-59:

Նշված խնդիրների առնչությամբ Պաշտպանի կողմից բազմիցս արձանագրվել է, որ տարիների ուսումնասիրությունները վկայում են վարչական ձերբակալման ու բերման ենթարկելու այս խնդրահարույց պրակտիկայի լայն տարածման մասին: Այս կապակցությամբ ընդգծվել է, որ վարչական ձերբակալման և բերման ենթարկելու կամ որ նույնն է՝ ազատությունից զրկելու ցանկացած դեպք անօրինական է, եթե չեն ապահովվում ազատությունից զրկելիս մարդու նվազագույն իրավունքները<sup>440</sup>:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչների հետ տեղի ունեցած առանձնագրույցի ընթացքում ազատությունից զրկված անձը հայտնել է, որ վարչական ձերբակալման ենթարկելիս իր նկատմամբ կիրառվել է բռնություն և ֆիզիկական ուժ՝ չորս ոստիկանության ծառայողներ սահմանափակել են իր տեղաշարժը, նստեցրել մեքենայի մեջ, հայիոյել, ամբողջ ճանապարհին ձախ ձեռքը պահել ոլորած դիրքում՝ հավելելով, որ Ոստիկանության բաժնում գտնվելու ընթացքում իրեն հնարավորություն չի տվել նույնիսկ զանգահարել իր փաստաբանին: Մինևույն ժամանակ, ազատությունից զրկված անձի ինքնազգացողության վատթարացման պարագայում հրավիրվել է շտապ բժշկական օգնության խումբ, տրամադրվել է բժշկական օգնություն:

Բողոքներից մեկով էլ փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդին նրա անչափահաս երեխաների ներկայությամբ մի քանի տասնյակ ոստիկաններ բռնի ուժի գործադրմամբ բերման են ենթարկել Ոստիկանության բաժին: Ավելին, միջադեպից հետո երեխաներից մեկի ինքնազգացողությունը խիստ վատացել է: Ըստ ոստիկանություն բերման ենթարկված քաղաքացու՝ երեխաները հատկապես վախեցրել են բազմաքանակ՝ 40-ից ավել ոստիկանների ներկայությունից: Նշել է, որ իրեն ձեռքերը ոլորելով և քարշ տալով տարել են դեպի ոստիկանական մեքենան, որի ընթացքում պառկեցրել են գետնին և հարվածել: Արձանագրվել է, որ իր ձեռքերին առկա են քերծվածքներ, իսկ մեջքի և կողերի հատվածում ցավ է զգում: Բացի այդ, քաղաքացու պնդմամբ՝ բռնություն է գործադրվել նաև իր կնոջ եղբոր նկատմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը նշված դեպքի առթիվ ընդունել է սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկում սկսելու մասին որոշում, իրավասու պետական մարմինների հետ իրականացվել է համապատասխան գրագրություն: Նույն հարցի վերաբերյալ Պաշտպանը նաև հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ:

Անձի անձնական ազատության իրավունքի պաշտպանության միջազգային իրավական մոտեցումների և սահմանադրաիրավական երաշխիքների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմում արձանագրված գործնական խնդիրների հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջ են քաշվել հետևյալ իրավական չափանիշները՝

- անձի անձնական ազատության իրավունքին միջամտության՝ «ազատությունից զրկման» փաստը որոշելիս որոշիչ գործոններ են ազատությունից զրկելու բնույթը, ազատությունից զրկելու

<sup>440</sup> Տե՛ս Պաշտպանի հայտարարությունը, հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/2018> հղումով:

օրյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը: Օրյեկտիվ կողմը ներառում է ազատությունից զրկման վայրը և պահման ժամանակը, սուբյեկտիվ կողմը՝ անձի համաձայնությունը<sup>441</sup>.

- ազատությունից զրկել է համարվում, երբ իրավապահ մարմինը, ուժի գործադրմամբ կամ առանց դրա, անձին արգելում է լքել իր գտնվելու վայրը կամ պահանջում է իր հետ գնալ մեկ այլ վայր կամ անձը ստիպված է հետևել ոստիկանի կամքին: «Ազատությունից զրկել» է համարվում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը<sup>442</sup> կամ օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման<sup>443</sup>.

- ազատությունից զրկված լինելու փաստի գիտակցումն այս հարցում որոշիչ չէ: Որոշիչ է միայն այն հանգամանքը, որ անձն այլևս չի կարող լքել իր գտնվելու վայրը<sup>444</sup>, որը կարող է լինել ոչ միայն իր նպատակային նշանակությամբ որպես այդպիսին օգտագործվող տարածքը (օրինակ՝ խուցը), այլև ցանկացած վայր, այդ թվում՝ տրանսպորտային միջոց<sup>445</sup>.

- անձն ազատությունից զրկվածի կարգավիճակ է ձեռք բերում անգամ այն դեպքերում, երբ կամովին ներկայանալով ոստիկանություն՝ հնարավորություն չի ունենում լքել այն.

- անձի անձնական ազատության իրավունքին ցանկացած միջամտություն, անկախ դրա իրականացման՝ օրենքով նախատեսված հիմքերից և ընթացակարգերից, պետք է ենթադրի իրավունքի սահմանափակման բնույթին ու աստիճանին համարժեք իրավական երաշխիքների տրամադրում.

- իրավասու պետական մարմինների գործունեության հիմքում պետք է ընկած լինի այն սկզբունքային մոտեցումը, ըստ որի՝ անձին ազատությունից զրկելու փաստի ուժով՝ անկախ վարույթային առանձնահատկություններից (քրեական, վարչական), ֆորմալ ընթացակարգերի առկայությունից կամ բացակայությունից, օպերատիվ միջոցառումների իրականացումից, պետք է ապահովվի իրավունքների՝ սահմանադրությամբ և միջազգային իրավական նորմերով երաշխավորված իրավունքների նվազագույն ծավալ.

---

<sup>441</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույցը, էջեր 5-7, հասանելի է [http://www.echr.coe.int/Documents/Guide\\_Art\\_5\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Guide_Art_5_ENG.pdf) հղումով:

<sup>442</sup> Տե՛ս Գիլլանն ու Քուինթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillan & Quinton v. the United Kingdom) գործով 2010 թվականի հունվարի 12-ի վճիռը, գանգատ թիվ 4158/05, կետ 57:

<sup>443</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցի 17-ից 18-րդ էջերը, հասանելի է [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf) հղումով, 12.02.20թ., Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով 2011 թվականի նոյեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 49:

<sup>444</sup> Տե՛ս Դե Ուալդը, Ումսը և Վերսիպան ընդդեմ Բելգիայի (De Wilde, Ooms and Versyp v. Belgium) գործով 1971 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգատներ թիվ 2832/66, 2835/66, 2899/66, կետ 65:

<sup>445</sup> Տե՛ս Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի կիրառման վերաբերյալ ուղեցույցը, էջ 18, հասանելի է [http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05\(2004\).pdf](http://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRHAND/DG2-EN-HRHAND-05(2004).pdf) հղումով:

• այլ կերպ ասած, անձին ազատությունից զրկելը՝ անկախ նրանից, թե դա իրականացվել է, ասենք, վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի կամ քրեական դատավարության շրջանակներում, ձերբակալման կամ բերման ենթարկելու ինստիտուտների շրջանակներում, պետք է ուղեկցվի անձին որոշակի նվազագույն իրավունքներ տրամադրելով և միասնական երաշխիքներ ամրագրելով:

Ընդ որում, նվազագույն իրավունքների ապահովման պահանջն ուղղված է ոչ միայն անձի անձնական ազատության իրավունքի, այլև վատ վերաբերմունքի չենթարկվելու բացարձակ իրավունքի ապահովմանը: Այս պահանջից ելնելով՝ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում ամրագրված են ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք իրավունքները. փաստաբանի և բժշկի մատչելիության իրավունքները և ձերբակալության մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը:

*Պաշտպանը խնդրահարույց է համարում այն փաստը, որ հաշվետու տարվա ընթացքում ազատությունից զրկելիս անձի նվազագույն իրավունքների չափահավանքն դեպքեր շատ են արձանագրվել: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը հարուկ ընդգծում է, որ ներպետական օրենսդրությամբ սահմանված ցանկացած ընթացակարգի շրջանակներում ազատությունից զրկված յուրաքանչյուր ոք (ազատությունից զրկելու փաստը պետք է դիտարկել վերը նշված չափանիշների շրջանակում), միջազգային պահանջների ձևակերպմամբ, պետք է ունենա առնվազն հետևյալ իրավունքները.*

1. անհապաղ տեղեկացվել ազատությունից զրկվելու պատճառների մասին՝ իրեն հասկանալի լեզվով,
2. պահպանել լռություն,
3. իրեն ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվի իր ընտրած անձը,
4. հրավիրել փաստաբան,
5. իր պահանջով ենթարկվել բժշկական զննման, այդ թվում՝ իր նախընտրած բժշկի կողմից,
6. իրեն ազատությունից զրկելու իրավաչափությունը վիճարկել և դատարանի կողմից ազատ արձակվել, եթե ազատությունից զրկելը ոչ իրավաչափ է:

## **2. Հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա անձին ձերբակալելու պրակտիկայում մարդու իրավունքների խնդիրները**

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել են բողոքներ ստացվել հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա անձանց ձերբակալելու ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրությունն ու Քրեական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում են անձին ձերբակալելու, այդ թվում՝ անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա ձերբակալելու բոլոր հիմքերը (պայմանները):<sup>446</sup>

Անձի ձերբակալման քրեադատավարական ընթացակարգերի կատարելագործման առումով հատկանշական են 2021 թվականի հունիսի 30-ին ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ՀՀ քրեական դատարավարության նոր օրենսգրքի կարգավորումները, որոնցով սահմանվել են անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում իրականացված ձերբակալման արձանագրությանը ներկայացվող մանրամասն պահանջները:

Անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ *հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա անձին ձերբակալելու համակարգային հարցին, քանի որ խնդիրների գերակշիռ մասը գործնականում ծագում են այս փուլում և Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացվում են բողոքներ հենց այս ընթացակարգի վերաբերյալ:*

Այսպես, բողոքներ են ստացվել այն մասին, որ ձերբակալման արձանագրությունը չի պարունակել այնպիսի կոնկրետ փաստական տվյալներ, որոնք կհիմնավորեն անձի կողմից քրեորեն պատժելի արարք կատարած լինելու հանգամանքը, ուստի որևէ կերպ չի հիմնավորվել ձերբակալված անձի առնչությունն արարքին:

Մի շարք դեպքերում պնդումներ են ներկայացվել այն մասին, որ ձերբակալման արձանագրության մեջ որպես հիմք նշվել է միայն Ոստիկանության ծառայողի կազմած՝ անձին բերման ենթարկելու մասին զեկուցագրում առկա տվյալները, որը ձերբակալված անձի դիրքորոշմամբ հավաստիության տեսանկյունից կասկածելի է և հիմնավոր չի կարող համարվել:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ձերբակալման արձանագրությամբ դրա նպատակը հանցագործությունը կատարելուց հետո անձի փախուստը կանխելն է եղել, մինչդեռ նշված նպատակը հիմնավորող որևէ տեղեկություն, փաստական տվյալ ձերբակալման արձանագրությունը չի պարունակել: Մի դեպքում անգամ անձը փաստացի արգելանքի է վերցվել իր աշխատավայրից, ինչից, ըստ անձի և նրա պաշտպանի, ակնհայտ է եղել փախուստի նպատակի բացակայությունը:

Հատկանշական է, որ Պաշտպանի աշխատակազմը ևս դեպքեր է արձանագրել, որ ձերբակալման արձանագրությունները չեն պարունակել հանցավոր արարքի փաստական նկարագիրը, գործողությունները չեն անհատականացվել, վարույթն իրականացնող մարմինը բավարարվել է միայն օրենսդրական նորմի մեխանիկական շարադրմամբ:

Բողոքներից մեկով ձերբակալվածի փաստաբանը հայտնել է, որ վստահորդին հանցանքի կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա ձերբակալել են, սակայն ձերբակալվածներին պահելու վայրում անձի մասնակցությամբ որևէ քննչական կամ այլ դատավարական գործողություններ չի իրականացվել:

---

<sup>446</sup> Համապատասխան դրույթները ներկայացված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, «2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդման մեջ:



Մեկ այլ բողոքով ձերբակալված անձի ամուսինը մտահոգություններ է հայտնել առ այն, որ կինը ձերբակալվել է և բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության բաժին՝ առանց հաշվի առնելու վերջինիս հղի լինելու հանգամանքը:

Բողոք է ստացվել նաև այն մասին, որ ձերբակալման արձանագրությունը չի պարունակել արձանագրությունը կազմելու ժամանակը՝ ժամը և րոպեն, որն էական է եղել այնքանով, որ դրանով հնարավորություն պետք է ստեղծվեր գնահատել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումների սահմաններում վարույթն իրականացնող մարմնի կողմից իրականացված գործողությունների իրավաչափությունը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ձերբակալման արձանագրության մեջ անձի արարքի փաստական կողմի նկարագրության բացակայությունն ուղղակիորեն բացառում է «հանցանք կատարելու մեջ անմիջականորեն ծագած կասկածանքի» առկայությունը: Այլ խոսքով՝ եթե արձանագրությունում նկարագրված չեն արարքի փաստական հատկանիշները, ապա պարզ չէ, թե ինչու է անձը կասկածվում, ուստի և անձը չի կարող ընտրել համարժեք վարքագիծ պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման համար: Առավել քան անընդունելի է, երբ ձերբակալման արձանագրությունը չի պարունակում արձանագրությունը կազմելու ժամանակը՝ ժամը և րոպեն:

Այս դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությունից: Դատարանի իրավաբանության մեջ «հիմնավոր կասկածի» առկայությունը պարտադիր է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1 «գ» ենթակետի ներքո անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպքի պարագայում: Այլ կերպ՝ հանցանք կատարած լինելու հիմնավորմամբ անձին ազատությունից զրկելու ցանկացած եղանակ (բերման ենթարկել, ձերբակալում, կալանավորում) կարող է իրավաչափ համարվել, եթե առնվազն առկա է եղել հանցանք կատարած լինելու «հիմնավոր կասկածը»<sup>447</sup>:

Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ հանցանք կատարելու «հիմնավոր կասկածը» ենթադրում է այնպիսի փաստերի և տեղեկությունների առկայություն, որոնք օբյեկտիվ դիտորդի համար բավարար կլինեն հաստատելու տվյալ անձի կողմից հանցանք կատարած լինելու հնարավորությունը: Ընդ որում, յուրաքանչյուր դեպքում կասկածի «հիմնավոր» լինելը կախված է դեպքի հանգամանքներից<sup>448</sup>:

Կարևոր է նաև նշել, որ Եվրոպական դատարանը «մեղադրանք» հասկացությանը տվել է ինքնուրույն բնորոշում՝ անկախ ներպետական իրավունքում այդ հասկացության բնորոշումից: Էկլեն ընդդեմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության գործով Դատարանն ընդհուպ նշել է, որ անձին

<sup>447</sup> Տե՛ս ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիմնահարցերը քրեական գործերով, դասավանդման նյութ, Դ. Մելքոնյան, էջ 22:

<sup>448</sup> Տե՛ս Ֆոքսը, Քեմփբելը և Հարթլին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1990 թվականի օգոստոսի 30-ի վճիռը, գանգատ թիվ 12244/86, 12245/86, 12383/86, 32-րդ կետ, Իլգար Մամեդովն ընդդեմ Ադրբեջանի (Ilgar Mammadov v. Azerbaijan) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2014 թվականի մայիսի 22-ի վճիռը, գանգատ թիվ 15172/13, 88-րդ կետ:

«մեղադրանքի առաջադրումը» կարող է տեղի ունենալ ավելի շուտ, քան գործը կուղարկվի դատարան՝ կալանավորման օրվանից, այն պահից, երբ շահագրգիռ անձը պաշտոնապես ծանուցվել է, որ իր դեմ հարուցվել է քրեական գործ, կամ այն պահից, երբ անձն իմացել է, որ իր դեմ սկսվել է քննություն: Այս փուլից արդեն անձի մոտ ծագում է մեղադրանքից պաշտպանվելու իրավական հնարավորություն, որն առարկայազուրկ է դառնում այն դեպքում, երբ կասկածանքն ամրագրվում է անորոշ ձևակերպումներով կամ բացառապես օրենսդրական նորմի շարադրմամբ:

Քննարկվող մյուս կարևոր հարցն այն է, թե «նա բռնվել է քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո» ձևակերպման մեջ օգտագործված «անմիջապես» եզրույթն ինչպես կարող է մեկնաբանվել, ենթադրյալ հանցանք կատարելուց որքան ժամանակ անց անձի բռնվելը կարող է տրամաբանական և հիմնավորված համարվել:

Հարկ է ընդգծել, որ յուրաքանչյուր գործով քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարելուց անմիջապես հետո բռնվելու հանգամանքը կարող է տարբեր լինել, մի դեպքում՝ երկու օր անց բռնվելը կարող է լիովին արդարացված լինել, մյուս դեպքում՝ ոչ: Գործնականում արձանագրվել են դեպքեր, երբ շուրջ երկու-երեք օր Ոստիկանության ծառայողներն այցելել են անձի բնակության վայր, նրան այնտեղ չեն հայտնաբերել, ապա՝ հերթական այցի ընթացքում հայտնաբերել ու բերման են ենթարկել: Մեկ այլ դեպքում անձը գրառում է կատարել սոցիալական կայքում, նրա արարքում վարույթն իրականացնող մարմինը նկատել է հանցակազմի հատկանիշներ, սակայն անձը բերման է ենթարկվել մի քանի օր անց:

Հանցանքի կատարման և բռնվելու միջև ժամանակամիջոցի արդարացվածությունը գնահատելիս, Պաշտպանի դիրքորոշմամբ, հատկապես կարևոր ինդիկատոր է կասկածանքի ծագման, ծագումից հետո անձին բռնելու նպատակով վարույթն իրականացնողի կողմից ձեռնարկված պիտանի միջոցների գործադրման փաստը: Ըստ այդմ, եթե վարույթն իրականացնողի մոտ անձի կողմից հանցանքը կատարելու հիմնավոր կասկածը ծագում է, սակայն ինչ-ինչ (սուբյեկտիվ) նպատակահարմարությունից ելնելով նրան բռնելու գործընթացը կատարվում է շատ ավելի ուշ, ապա առնվազն կարելի է կասկածի տակ դնել «անմիջապես հետո բռնվելու» օրենսդրական պահանջի պահպանումը:

Պաշտպանի աշխատակազմ հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականի ընթացքում արձանագրվել են նաև հատուկ միջոց ձեռնաշղթաների գործադրման խնդրահարույց պրակտիկա, մասնավորապես՝ դրանց անհարկի կիրառության դեպքեր:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը հստակ ամրագրում է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում կարող են ձեռնաշղթաներ գործադրվել: Այսինքն, ձեռնաշղթաները չեն կարող կիրառվել ցանկացած իրավիճակում և մշտապես:

Օրինակ, Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված մի շարք անձինք պնդել են, որ բերման ենթարկելիս անհարկի

ձեռնաշղթաներ են կիրառել իրենց նկատմամբ, տևական ժամանակ ձեռքերը եղել է մեջքի հետևում պահած վիճակում: Սա նույնպես խիստ մտահոգիչ պրակտիկա է:

Մեկ այլ դեպքում բերման ենթարկված անձը տեղեկացրել է, որ իրեն ձերբակալելիս որևէ դիմադրություն ցույց չի տվել, ամբողջությամբ կատարել է Ոստիկանության ծառայողների պահանջները, սակայն իր նկատմամբ անհարկի կիրառել են ձեռնաշղթաներ և մինչ Ոստիկանության բաժին բերվելը դրանք եղել են ձեռքերին, կիպ վիճակում, ինչի արդյունքում դաստակների շրջանում առաջացել են վնասվածքներ և կապտուկներ:

Վերոգրյալի հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է, որ *անթույլատրելի է ձերբակալման արձանագրության մեջ ընդհանրական կամ զուտ օրենսդրական բնույթի ձևակերպումների ներառումը, ուստի*

*1. անհրաժեշտ է դրանում հնարավորին հստակ տալ կասկածանքի փաստական ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը,*

*2. բացառել օրենքով սահմանված հիմքերի բացակայության դեպքում բերման ենթարկվող անձի նկատմամբ ձեռնաշղթաների գործադրման պրակտիկան:*

### **3. Քրեական գործով վարույթի շրջանակներում անձի ոչ պատշաճ ծանուցված լինելու և դրանով պայմանավորված՝ բերման ենթարկելու ոչ իրավաչափությունը**

«Քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում է դատավարությանը մասնակցող անձանց իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում՝ այդ անձանց քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալու պարտականություն:

Ինչպես նախորդ տարիներին, 2021 թվականի ընթացքում նույնպես Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թե՛ զծին ահազանգեր են ստացվել հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելու մասին:

Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներով և զանգերով անձինք հայտնել են, որ իրենք կանչվել են քննչական բաժին հեռախոսազանգի միջոցով՝ առանց ծանուցագրի: Չանգահարող պաշտոնյաները չեն տեղեկացրել, թե կոնկրետ ինչ գործի շրջանակներում, ինչ կարգավիճակով, և թե այդ կարգավիճակից բխող ինչ իրավունքներ և պարտականություններ ունեն իրենք: Թե՛ զծին ստացված բանավոր բողոքներով անձինք ցանկացել են տեղեկանալ, թե արդյոք այդ եղանակով հարցաքննության կանչելն իրավաչափ է, և արդյոք իրենք այդպիսի դեպքերում պարտավոր են ներկայանալ վարույթն իրականացնող մարմին:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների ուսումնասիրության արդյունքներով վեր են հանվել հետևյալ խնդիրները՝

- անձին՝ որպես առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակցին բերման ենթարկելն այն դեպքում, երբ ծանուցագիրը սահմանված ժամկետում վերջինիս հանձնված չի եղել.

- հարցաքննության կանչելու մասին ծանուցագրի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները չպահպանելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախորդ խմբագրությամբ հարցաքննության կանչելու կարգն ամրագրված էր 205-րդ հոդվածով, սակայն 2021 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով օրենսգիրքը լրացվել է 24.1 գլխով, որը սահմանում է քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ քննչական կամ այլ դատավարական գործողության կամ դատական նիստի մասին պատշաճ ծանուցելու պարտականությունը, ծանուցման եղանակները և կարգը:

Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պատշաճ ծանուցման և դրանով պայմանավորված բերման ենթարկելու վերաբերյալ նախկինում գործող քրեադատավարական կարգավորումների վերլուծությունը հիմք է տվել եզրակացնելու, որ՝

- վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

- «ծանուցագիր» եզրույթի գործածումն ու դրա բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները կանխորոշում են դրա գրավոր ձևի պարտադիրությունը, իսկ անձին բանավոր ծանուցելու պրակտիկան հակասում է քրեադատավարական օրենքի պահանջներին.

- վարույթն իրականացնող մարմին ներկայանալու ծանուցագիրն անձին ժամանակին հանձնելու, վերջինիս կողմից այդ ծանուցագիրը ստացած լինելու և հետևաբար նաև չներկայանալու պատճառների մեջ հավաստիանալու դատավարական որևէ կարգավորում նախատեսված չէ.

- վարույթն իրականացնող մարմին ծանուցագրով կանչելու պահանջը, ինչպես նաև ծանուցագրի բովանդակությանը ներկայացվող պահանջները, անձանց շրջանակը, ում կարող է հանձնվել ծանուցագիրը, թերևս ամրագրված են միայն հարցաքննության կանչելու դատավարական կարգի շրջանակներում.

- մինչդեռ, բերման ենթարկելը՝ որպես անձի իրավունքների և ազատությունների սահմանափակմամբ զուգորդվող դատավարական հարկադրանքի միջոց, կարող է ուղղված լինել նաև բերման ենթարկվողի՝ օրենսգրքով նախատեսված այլ դատավարական գործողությունների մասնակցության ապահովմանը.

- անձին բերման ենթարկելու վարույթն իրականացնող մարմնի որոշման պատճառաբանվածության պահանջը ենթադրում է, որ այդպիսի որոշում կարող է կայացվել միայն անձի պատշաճ ծանուցման և նշանակված ժամկետում ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին անձի կողմից չտեղեկացնելու դեպքում.

• վարույթն իրականացնող մարմին ներկայանալու անհրաժեշտության մասին անձին ծանուցելու պատշաճությունն իր հերթին պետք է կանխորոշվի ոչ միայն ծանուցագիրն անձին հանձնելու փաստով, այլև դրա ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջների պահպանմամբ, ինչպես նաև ծանուցագիրն այնպիսի ողջամիտ ժամկետում հանձնելով, որ անձը ժամանակին ներկայանալու կամ չներկայանալու պատճառների մասին հայտնելու հնարավորություն ունենա:

Վերը նկարագրվածի լույսի ներքո՝ Մարդու իրավունքների պաշտպանը դիրքորոշում էր հայտնել, որ անձի պատշաճ ծանուցման<sup>449</sup> և վերջինիս բերման ենթարկելու որոշման իրավաչափության ապահովման նպատակով քրեական գործով վարույթի շրջանակներում ծանուցման հետ կապված հարաբերությունները պետք է հստակ կանոնակարգման ենթարկվեն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով<sup>450</sup>: Չնայած այդպիսի փոփոխություններ նախաձեռնվել էին դեռևս 2017 թվականին, սակայն անհրաժեշտ փոփոխություններ, ի վերջո, կատարվեցին 2021 թվականի հունվարի 19-ին: Փոփոխություններով, մասնավորապես հստակեցվեցին նախևառաջ ծանուցման եղանակները: Սահմանվեց, որ անձի ծանուցումը կատարվում է՝

1) թղթային ծանուցագրով.

2) էլեկտրոնային ծանուցագրով.

3) ծանուցվող անձի մասնակցությամբ կատարվող քննչական կամ այլ դատավարական գործողության կամ ընթացող դատական նիստի ժամանակ ծանուցման մասին հայտարարելով և միաժամանակ համապատասխան արձանագրության մեջ այդ մասին նշում կատարելով:

Միաժամանակ սահմանվեց, որ անչափահասը ծանուցվում է իր օրինական ներկայացուցչի միջոցով, իսկ հատուկ հաստատությունում գտնվելու դեպքում՝ դրա վարչակազմի միջոցով, անազատության մեջ պահվող անձը ծանուցվում է համապատասխան վայրի վարչակազմի միջոցով, իսկ գինձառայողը՝ զորամասի հրամանատարության միջոցով:

Իրավունքների երաշխավորման տեսանկյունից հատկանշական է, որ փոփոխություններով վարույթն իրականացնող մարմնի վրա դրվել է տվյալ դատավարական կարգավիճակով առաջին անգամ հրավիրվող անձին հասցեագրված ծանուցագրին իր կարգավիճակից բխող իրավունքների և պարտականությունների ցանկը կցելու պարտականություն:

Հատկանշական է, որ վերը նշված փոփոխություններով Պաշտպանի նկատառումներն այլևս ամրագրված են օրենքի մակարդակով, ուստի, Պաշտպանը դրսևորելու է բավարար հետևողականություն մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից ընդունելի պրակտիկա ձևավորելու ուղղությամբ:

Ասվածի հաշվառմամբ՝ *Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ.*

<sup>449</sup> 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 573-577:

<sup>450</sup> 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 146-149:

1. պրակտիկան փոփոխել և հետևողականորեն ապահովել բացառապես Քրեական դատավարության օրենսգրքում արված փոփոխությունների կանոնները,

2. գործնականում բացառել դեպքերը, երբ անձը բերման է ենթարկվում առանց վարույթն իրականացնող մարմին ներկայանալու պատշաճ ծանուցման,

3. իրավապահ մարմինների համապատասխան ներկայացուցիչների համար կազմակերպել հատուկ դասընթացներ՝ ուղղված նշված խնդիրների լուծմանը:

**4. Վարչական իրավախախտման վարույթով ազատությունից զրկելու թերի կարգավորումները և անձի համար ծագող գործնական խնդիրները**

Հանցանքի կատարման կասկածանքի հիման վրա ազատությունից զրկելու դեպքերից բացի ՀՀ օրենսդրությամբ առկա է նաև անձին վարչական իրավախախտում կատարելու հիմքով ազատությունից զրկելու հնարավորություն:

Մինչդեռ, վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու՝ օրենքով ամրագրված հստակ կառուցակարգերը և ընթացակարգերը բացակայում են: Իսկ ոստիկանության կողմից ազատության իրավունքի սահմանափակմամբ պայմանավորված՝ անձի իրավունքների ցանկն ու դրանց ծանուցման կարգն իրենց ամրագրումն են ստացել ենթաօրենսդրական ակտով՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի «Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին» թիվ 818-Ն որոշմամբ:

Պրակտիկան ցույց է տալիս, որ գործնականում չեն ապահովվում անգամ Կառավարության վերը նշված որոշման պահանջները:

Հատկանշական է, որ Ոստիկանությունից ստացված տեղեկության համաձայն 2021թ. իրականացված հավաքների ընթացքում բերման ենթարկված և ձերբակալված անձանց նվազագույն իրավունքներն ապահովելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի և իրավաբանական վարչության կողմից պարբերաբար տարածքային ստորաբաժանումների ծառայողներին ցուցաբերվել է իրավական և մեթոդական օժանդակություն: Բացի այդ, ըստ Ոստիկանությունից տրամադրած տեղեկատվության՝ ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապմունքների ընթացքում ոստիկանության ծառայողները սահմանված ուսումնական պլանով ուսումնասիրում են համապատասխան թեմաները և իրավական ակտերը:

Սա, իհարկե, Ոստիկանության կողմից գործադրված ողջունելի և կարևոր քայլ է, այնուամենայնիվ պետք է բացառել պրակտիկայում ընդհանուր պահանջից որևէ շեղում:

Խնդրի համակարգային բնույթի, ինչպես նաև օրենսդրական կարգավորումների անկատարության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր վարչական

իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ոչ լիարժեք կանոնակարգումների և դրանով պայմանավորված՝ իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականության հարց: Արդյունքում, Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի որոշմամբ տրվեցին անձի անձնական ազատության երաշխավորման վերոնշյալ չափանիշներին համահունչ իրավական հստակ գնահատականներ: Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրեց, որ ներպետական իրավական կարգավորումները համապատասխանում են ՀՀ սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ «խախտողի բերում», «վարչական ձերբակալում», «բերման ենթարկում» միջոցառումների դեպքում անձնական ազատությունից փաստացի զրկելու պահից սկսած ազատությունից զրկված անձի համար ապահովվում են ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով և 64-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավունքները՝ որպես անմիջականորեն գործող իրավունքներ, և ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի ծանուցման ենթակա իրավունքների ցանկում միշտ պետք է ներառված լինեն առնվազն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածով (Անձնական ազատությունը) և 64-րդ հոդվածի 1-ին մասով (իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը) սահմանված իրավունքները:

Ավելին, Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու ընթացակարգերի օրենսդրական կանոնակարգման անկատարությանը, ընդգծել է, որ «անձի ազատության իրավունքի ապահովման բնագավառում ձևավորվել է ոչ պատշաճ իրավակիրառ պրակտիկա՝ հնարավոր դարձնելով անգամ Սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչված իրավադրույթի՝ ոստիկանության կողմից շարունակական կիրառումը, ինչն իր հերթին երկրում սահմանադրական օրինականությանն ուղղված լուրջ սպառնալիք է»՝ ըստ այդմ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի համարելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը<sup>451</sup>:

Նման պրակտիկայի շարունակականությունը փաստվում է նաև 2021 թվականի ընթացքում արձանագրված խնդիրներով:

2020 թվականին նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի արդյունքում հայտարարված արտակարգ դրության, որը 2020 թվականի սեպտեմբերի 11-ից փոխարինվեց կարանտինով, և 2020 թվականի սեպտեմբերի 7-ից 2021 թվականի մարտի 23-ը հայտարարված ռազմական դրության սահմանափակումներով պայմանավորված 2020 և 2021 թվականներին զգալիորեն աճեցին այդ սահմանափակումները չպահպանելու համար անձանց բերման ենթարկելու դեպքերը: Հաշվի առնելով նման դեպքերի աճը՝ Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մշտապես այցեր են իրականացրել Ոստիկանության բաժիններ արգելանքի վերցված անձանց իրավունքների ապահովման վիճակին ծանոթանալու և առկա խնդիրները վեր հանելու նպատակով:

<sup>451</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ի թիվ ՍԴՌ-1339 որոշումը:

Այցերի արդյունքները մշտապես ամփոփվել են, գրություններ են հասցեագրվել իրավասու մարմիններ, սակայն առկա որոշ խնդիրներ այդպես էլ լուծում չեն ստացել:

Մասնավորապես, Պաշտպանին ներկայացված բողոքներով, ինչպես նաև Ոստիկանության բաժին կատարված այցերի շրջանակներում բերման ենթարկված անձինք Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հիմնականում տեղեկացրել են, որ բերման ենթարկելու հիմքերն իրենց չեն պարզաբանել: Սույն խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից, սակայն պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ Ոստիկանության ծառայողներն անձանց արգելանքի վերցնելիս գրեթե բոլոր դեպքերում չեն պարզաբանում նրանց ազատությունից զրկելու հիմքերը: Ազատությունից զրկելու հիմքերը կա՛մ պարզաբանվում են արդեն Ոստիկանության բաժնում վարչական վարույթների ընթացքում, կա՛մ առհասարակ չեն պարզաբանվում այն դեպքերում, երբ արգելանքի վերցված անձինք անձնական տվյալներ չեն ներկայացնում և նրանց վերաբերյալ վարչական վարույթ չի նախաձեռնվում:

Խնդրի վերաբերյալ Պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ արձանագրում է, որ անձին արգելանքի վերցնելիս իրավասու մարմինները պարտավոր են առաջին հերթին անհապաղ ներկայացնել ազատությունից զրկելու հիմքերը:

Ոստիկանությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության բաժիններ բերված 1363 անձ արգելանքի են վերցվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 180<sup>1</sup> և 182-րդ հոդվածով: Իսկ 2021 թվականին անցկացված հավաքների ընթացքում ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախաձեռնված արարք կատարելու համար ոստիկանության բաժիններ են բերվել ընդամենը 321-ը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի դիտարկմամբ՝ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականների ընթացքում հատկապես հավաքների վայրերից Ոստիկանության ստորաբաժանումներ բերման ենթարկված անձանց մեծ մասն արգելանքի են վերցվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության զորքերի զինծառայողի կամ Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու կասկածանքով:

Այս մասով առաջանում է մտավախություն առ այն, որ Ոստիկանության բաժիններում բերման ենթարկված անձանց հաշվառման մատյանները թերի են լրացվում, իսկ հետագայում վարչական վարույթներն իրականացվում են ՎԻՎ օրենսգրքի այլ հոդվածներով, քան անձանց ներկայացվել է ազատությունից զրկելու պահին:

Ոստիկանության ծառայողի հնչեցրած օրինական պահանջի և այն չկատարելու չափանիշների վերաբերյալ Ոստիկանությունից ստացված տեղեկության համաձայն՝ տվյալ դեպքում գլխավոր նախապայմաններն հետևյալն են՝

- ոստիկանության ծառայողի պահանջը պետք է բխի օրենքից (նորմատիվ իրավական ակտից),



- ոստիկանության ծառայողի կողմից օրինական պահանջը պետք է հնչեցվի հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման կամ օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում,

- օրինական պահանջը պետք լսելի լինի անձի համար և վերջինս լսելու պայմաններում պետք է հրաժարվի այն կատարելուց:

Այնուամենայնիվ, Պաշտպանի ներկայացուցիչների արագ արձագանքումների արդյունքները փաստում են, որ պրակտիկայում այդ չափանիշները հաճախ չեն պահպանվում: Ոստիկանության բաժիններ այցերի ընթացքում արգելանքի վերցված անձինք Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին մեծամասամբ հայտնել են, որ իրենց որևէ օրինական պահանջ չի ներկայացվել, որոշ դեպքերում պնդել են, որ պահանջը լսելի չի եղել, կամ Ոստիկանության ծառայողները հնարավորություն չեն տվել կատարել օրինական պահանջը: Արձանագրվել են դեպքեր, երբ արգելանքի վերցված անձինք հայտարարել են, որ Ոստիկանության ծառայողի կողմից թեև պահանջ եղել է, սակայն այն օրինական չի եղել:

Այս առումով նախ պետք է արձանագրել, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինծառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար, իրավական տեսանկյունից բավարար որոշակի չէ, և տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Պարզ չէ, թե օրինական պահանջն ինչ եղանակով պետք է ներկայացվի. արդյոք, օրինակ, հավաքի ընթացքում բարձրախոսով ընդհանրական պահանջ ներկայացնելու դեպքում հնարավոր է անձին նշված հոդվածով պատասխանատվության ենթարկել, թե պահանջը պետք է ներկայացվի անհատապես:

Հաշվի առնելով, որ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքը նախատեսում է 182-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում կատարած անձանց վարչական ձերբակալման ենթարկելու հնարավորություն՝ Պաշտպանը գտնում է, որ անձի համար ներկայացված պահանջը պետք է լինի որոշակի: Իրավասու մարմինները պարտավոր են անձին անհատապես, լսելի և հասկանալի ձևով ներկայացնել օրինական պահանջ, անձի համար պետք է պարզ լինի համապատասխան իրավահպատակ վարքագիծ չդրսևորելու դեպքում իր համար անբարենպաստ հետևանքների վրա հասնելու հնարավորությունը, այդ թվում՝ ազատությունից զրկվելու ձևով:

Բացի դրանից, պետք է արձանագրել, որ նշված հոդվածով անձանց վարչական ձերբակալման ենթարկելով հանդերձ, Ոստիկանության ծառայողները բավարար հետևողականություն չեն դրսևորում նրանց վարչական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Վարչական վարույթների ընթացքում պատշաճ ջանքեր չեն գործադրվում վերոնշյալ իրավախախտումը կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու նպատակով բավարար ապացույցներ

ձեռք բերելու ուղղությամբ: Ավելին, նախաձեռնված վարույթները մեծամասամբ թողնվում են անհետևանք և նույնիսկ Վարչական դատարան չեն ուղարկվում:

Տպավորություն է ստեղծվում, որ Ոստիկանության ծառայողների նպատակը ոչ թե նշված հողվածով ենթադրյալ իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելն է, այլ պարզապես վարչական ձերբակալման ենթարկելը կամ դրա միջոցով որոշակի ժամանակով անձին պատժելը:

Այդ մասին է վկայում նաև Ոստիկանությունից ստացված տեղեկությունը, համաձայն որի՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախաձեռնված արարք կատարելու համար ոստիկանության բաժին բերված 321 անձանց վերաբերյալ վարույթներից 303-ը, այսինքն՝ 94,3 %-ը թողնվել են անհետևանք, և միայն 18-ով (5,7%) են հայցադիմումներ ներկայացվել դատարան, որոնց վերաբերյալ դեռևս վերջնական դատական ակտեր չեն կայացվել:

Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ առկա է նշված հողվածի չարաշահման վտանգավոր միտում: Անձանց հասարակությունից մի քանի ժամով մեկուսացնելու նման քաղաքականությունը չի բխում վարչական իրավախախտումների նախականիման, կանխման և խափանման գաղափարից, հատկապես, երբ հետագայում բավարար միջոցներ չեն ձեռնարկվում վարույթներով դատարան հայցադիմումներ ներկայացնելու և այդ կերպ ենթադրյալ իրավախախտում կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նաև արձանագրվել են դեպքեր, երբ Ոստիկանության բաժին կամովին կամ ոստիկանի այսպես կոչված «հրավերով» ներկայացած քաղաքացիները մի քանի ժամ պահվել են այնտեղ և դուրս գալու հնարավորություն չեն ունեցել:

Օրինակ՝ 2021 թվականի մարտի 10-ին զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություն է տարածվել այն մասին, որ ՀՀ նախագահի նստավայրի վարչական շենքի դիմացից մի խումբ քաղաքացիներ բերման են ենթարկվել ՀՀ ոստիկանություն: Նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի հրապարակումները, իսկ Պաշտպանի ներկայացուցիչներն այց են իրականացրել Ոստիկանության ստորաբաժանում և առանձնազրույցներ ունեցել ազատությունից զրկված անձանց հետ, ուսումնասիրել նրանց վերաբերյալ կազմված փաստաթղթերը: Պարզվել է, որ քաղաքացիները բերման են ենթարկվել ՎԻՎ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված արարք կատարելու համար: Ըստ ոստիկանության՝ նրանք ՀՀ նախագահի նստավայրի վարչական շենքի ուղղությամբ աղբ են նետել, ոստիկանները քաղաքացիներին առաջարկել են ներկայանալ Ոստիկանության բաժին, նրանք հրաժարվել են, որից հետո Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու հիմքով բոլորը բերման են ենթարկվել Ոստիկանություն:

Առանձնագրույցների ընթացքում ազատությունից զրկված անձինք հայտնել են, որ բերման ենթարկվելուց առաջ իրենք արդեն իսկ պատրաստվում էին հեռանալ տարածքից: Ըստ քաղաքացիների, Ոստիկանության ծառայողներն իրենց *հրավիրել են, նույնիսկ* տրամադրել են իրենց տվյալները (անուն, ազգանուն, բնակության հասցե) և նշել, որ սահմանված կարգով ծանուցվելու դեպքում կներկայանան Ոստիկանություն: Դրանից հետո, Ոստիկանության ծառայողները տեղեկացրել են, որ նրանք չեն կատարել իրենց օրինական պահանջը և պետք է բերման ենթարկվեն: Այնինչ, ըստ քաղաքացիների, որևէ պահանջ չի ներկայացվել, չեն պարզաբանվել բերման ենթարկելու իրավական հիմքերն: Ավելին, այցի ընթացքում արձանագրվել է, որ քաղաքացիները շուրջ 2 ժամ 30 րոպե գտնվել են Ոստիկանության բաժնում, սակայն իրենց հետ որևէ գործողություն չի իրականացվել:

Նշված հարցի կապակցությամբ համապատասխան գրագրություն է իրականացվել Ոստիկանության հետ: Ըստ Ոստիկանության պարզաբանման՝ Ոստիկանության ծառայողները «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 43.1-րդ հոդվածով նախատեսված *իրավախախտումը կանխելու և բացահայտելու նպատակով* քաղաքացիներից տեղում փորձել են ճշտել անձնական տվյալները: Արդյունքի չհասնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 258-րդ հոդվածի համատեքստում հրավիրել են ոստիկանության բաժին, այնուհետ ներկայացվել է օրինական պահանջ և իրականացվել վարչական ձերբակալում:

Պաշտպանի աշխատակազմում լրացուցիչ ուսումնասիրվել են զանգվածային լրատվության միջոցներով տարածված տեսանյութերը և պարզվել է, որ քաղաքացիները բերման ենթարկելու պահին ավարտած են եղել անհամաձայնության ակցիան և իրականացնելիս չեն եղել ենթադրյալ իրավախախտման օբյեկտիվ կողմի գործողություններ: Բացի այդ, քաղաքացիներից առնվազն երկուսը տեղում հայտնում են իրենց անձնական տվյալները, իսկ մյուսները պատրաստակամություն հայտնում դրանք ոստիկանության ծառայողներին տեղեկացնելու հարցում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ հստակ պետք է արձանագրել, որ Ոստիկանությունից ստացված պարզաբանումները խիստ անընդունելի են: Քաղաքացիների կողմից իրենց տվյալները ներկայացնելուց հետո իրավական ի՞նչ հիմնավորմամբ են Ոստիկանության ծառայողները նրանց «հրավիրել» Ոստիկանության բաժին՝ տեղում վարչական արձանագրություն կազմելու փոխարեն: Բացի այդ, անընդունելի է և չպետք է թույլ տրվի Ոստիկանության ծառայողի «հրավիրելը» մերժելը դիտարկվի որպես Ոստիկանության ծառայողի օրինական պահանջին չենթարկվել, և դրանով պայմանավորված իրականացնել վարչական ձերբակալում: Պարզ չէ նաև, թե ի՞նչ իրավաչափ նպատակ է հետապնդել նրանց ազատությունից զրկելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ենթադրյալ իրավախախտումը չի շարունակվել, և այն կանխելու անհրաժեշտություն այլևս չի եղել:

Բացի այդ, բողոքների ուսումնասիրությունը հիմք է տալիս արձանագրելու, որ անձանց ոստիկանության բաժին «հրավիրելու» և վերջիններիս՝ ազատությունից փաստացի զրկմամբ պայմանավորված իրավունքները չապահովելու պրակտիկան իրավապահ մարմինների կողմից որոշ դեպքերում արդարացվում է այն հիմնավորմամբ, որ անձին բերման ենթարկելու մասին

որոշում չի կայացվել, քանի որ նրան հրավիրել են բաժին օպերատիվ միջոցառում իրականացնելու շրջանակներում:

Մարդու իրավունքների պաշտպանն այս կապակցությամբ վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ **նման դեպքերը նույնպես պետք է համարվեն ազատությունից զրկում, և այդ անձինք պետք է օժտվեն անհրաժեշտ իրավունքներով ու դրանք ապահովող երաշխիքներով: Սա պետք է դառնա իրավապահ մարմինների գործունեության սկզբունք: Ինչ վերաբերում է «օպերատիվ միջոցառումներ իրականացնելու» պետական մարմնի արդարացումներին, դրանք չեն կարող ընդունելի լինել, իսկ նման պրակտիկան պետք է պարզապես բացառել:**

Ոստիկանություն «հրավիրելու» ընթացակարգի կիրառության հետ կապված՝ Մարդու իրավունքների Պաշտպանի 2020 թվականի Տարեկան հաղորդման պատրաստման ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից տեղեկություն է ներկայացվել, որ հարցի կարգավորմանն ուղղված օրենսդրական բարեփոխումները նախատեսված է կատարել «Ոստիկանության մասին» նոր օրենքի շրջանակներում: Սրա հետ կապված, կարևոր է նկատել, որ «հրավիրելու»՝ որպես ոստիկանություն կամավոր ներկայանալու գործընթացի՝ օրենքով ամրագրումը որևէ կերպ չի կարող ընդգրկել փաստացի ազատությունից զրկման վերը նշված և ոչ մի դեպք:

Այնուամենայնիվ 2021 թվականի գործունեության առնչությամբ Ոստիկանությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նշված հարցի կարգավորմանն ուղղված օրենսդրական բարեփոխումների նախաձեռնություն ՀՀ ոստիկանության կողմից չի իրականացվել: Ըստ պարզաբանման՝ 2021 թվականի ընթացքում Ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում քաղաքացիներին ոստիկանության բաժիններ հրավիրելու և նրանց իրավունքները պարզաբանված չլինելու վերաբերյալ կատարվել է 1 ծառայողական քննություն, որի արդյունքներով Ոստիկանության ծառայողը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Միաժամանակ նմանատիպ դեպքերը բացառելու ուղղությամբ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացության օրինակը քննարկման նպատակով ուղարկվել է Ոստիկանության տվյալ վարչական շրջանի ստորաբաժանման ղեկավարին:

**Հաշվի առնելով վերոնշյալը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության արդյունքները միանշանակ փաստում են, որ անհրաժեշտ է ազատությունից զրկում ենթադրող ընթացակարգերի (վարչական ձերբակալում, բերման ենթարկել և խախտողի բերում)՝ օրենքով հստակ կանոնակարգում:**

Ուստի, ազատությունից զրկված անձանց իրավունքների երաշխավորման առաջնահերթությամբ պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

1. *ապահովել ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին համապատասխան իրավակիրառում: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել վարչական իրավախախտման վերաբերյալ գործով վարույթի շրջանակներում անձին ազատությունից զրկելու հստակ և որոշակի ընթացակարգեր,*

2. *ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով*

նախատեսված օրինական պահանջն իրենից պետք է ներկայացնի անձին անհատապես, լսելի և հասկանալի ձևով ներկայացված օրինական պահանջ, որպեսզի անձի համար պարզ լինի համապատասխան իրավահպատակ վարքագիծ չդրսևորելու դեպքում իր համար անբարենպաստ հետևանքների վրա հասնելու հնարավորությունը,

3. անհրաժեշտ է նաև համապատասխան փոփոխություններ կատարել Ոստիկանության գործունեության ներքին կանոնակարգման ակտերում, ինչպես նաև Ոստիկանության՝ քաղաքացիների հետ անմիջականորեն շփվող ծառայողների վերապատրաստումն իրականացնել այնպես, որ յուրաքանչյուր ոստիկան տիրապետի քաղաքացիների նվազագույն իրավունքներին ու դրանց թղթակցող իր պարտականություններին:

**5. Հետախուզման մեջ գտնվող անձին արգելանքի վերցնելիս և օրենքով նախատեսված դեպքում ձերբակալված մեղադրյալին անհապաղ դատավորի մոտ տանելու իրավական պահանջի կատարման գործնական խնդիրները**

Ազատությունից զրկված անձին դատավորի մոտ տանելու պահանջը Եվրոպական կոնվենցիայով և Սահմանադրությամբ նախատեսված կարևորագույն միջոցներից է ազատության իրավունքի ապահովման տեսանկյունից: Դատարանի առջև կանգնելու պահանջը կարևորագույն երաշխիքային հենք է ստեղծում ավելի բարձր մակարդակում անձին ազատությունից զրկելու հիմքերը ստուգելու համար:

Միաժամանակ հարկ է ընդգծել, որ անձին ազատությունից զրկելու պահից մինչև նրան դատավորի մոտ տանելու ընթացքը չի կարող այնքան երկար տևել, որ դատավորի մոտ տանելու պահանջը կորցնի իր բուն իմաստը:

Նշված խնդրի կապակցությամբ Դատախազությունից ստացված տեղեկության համաձայն՝ օրենքով սահմանված դեպքերում անձին դատավորի մոտ անհապաղ չներկայացնելու դեպքեր չեն արձանագրվել: Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնց ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ անձանց նկատմամբ նրանց բացակայությամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը, հայտարարվել է հետախուզում, հայտնաբերելուց հետո տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ, և 72 ժամվա ընթացքում չեն տարվել դատավորի մոտ:

Բողոքներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդը մոտ 20 օր գտնվել է հետախուզման մեջ, որի ընթացքում դատարանը նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրել կալանքը: Անձն ինքնական ներկայացել է Քննչական կոմիտե, տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ, լրացել է նախատեսված կալանքի վերահաստատման համար դատարան ներկայացնելու 72 ժամը, սակայն դատարանը դեռ նշված հարցը չի քննել (փաստացի մեղադրյալը չի ազատվել կալանքից): Վերոգրյալի կապակցությամբ Դատախազությունից ստացվել

է պարզաբանում առ այն, որ քրեական գործի վարույթն իրականացնող քննիչն օրենքով սահմանված ժամկետում կալանքը վերահաստատելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացրել է դատարան, իսկ դատարանի կողմից գործը մինչև անձի կողմից ներկայանալու 72 ժամվա լրանալը չքննելը դեռ հիմք չի հանդիսանում նրան կալանքից ազատելու համար: Նույն խնդրի կապակցությամբ Քրեակատարողական հիմնարկի պետը հայտնել է այն դիրքորոշումը, որ քրեակատարողական հիմնարկի համար կալանավորված անձին պահելու հիմք է հանդիսանում դատարանի կողմից կալանք խափանման միջոց ընտելու մասին որոշումը՝ որտեղ նշված է երկամսյա ժամկետ և դատարանի մեկ այլ որոշման բացակայության պայմաններում իրենք իրավասություն չունեն երկամսյա ժամկետի լրանալուց առաջ ազատել անձին: Փաստորեն, քննիչի կողմից սահմանված ժամկետում միջնորդություն ներկայացնելու, սակայն դատարանի կողմից 72 ժամվա ընթացքում նշված հարցը չքննարկելու պարագայում անձի իրավունքների ապահովման համար քրեակատարողական հիմնարկի պետը համապատասխան գործիքակազմ չունի: Տվյալ դեպքում դատարանի կողմից հարցը 72 ժամվա ընթացքում չքննարկելու պարագայում ըստ էության խախտվում է անձի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով սահմանված ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը:

Մարդու իրավունքների պաշտպանն այս խնդրի առնչությամբ հարկ է համարում ազատության իրավունքի համատեքստում վերլուծության ենթարկել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասը և դրա վերաբերյալ միջազգային իրավաբանությունը:

Այս առումով հատկանշական է, որ անդրադառնալով ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր անձի անհապաղ դատավորի մոտ տարվելու իրավունքին՝ Եվրոպական դատարանն ընդգծել է, որ քրեական հանցագործության կասկածանքով ձերբակալված կամ կալանավորված անձը պետք է պաշտպանված լինի դատական վերահսկողության միջոցով: Ընդ որում՝ վերահսկողությունը պետք է բավարարի որոշակի չափանիշների, այն է՝ լինի անհապաղ, ինչը թույլ կտա բացահայտելու վատ վերաբերմունքի ցանկացած դեպք և նվազագույնի հասցնելու անձի ազատությանը ցանկացած չարդարացված միջամտություն, պետք է իրականացվի ավտոմատ կարգով և չի կարող կախված լինել կալանավորված անձի դիմումից, ինչով էլ սույն նորմը տարբերվում է 5-րդ հոդվածի 4-րդ կետից, որը կալանավորված անձին իրավունք է վերապահում դիմելու ազատ արձակվելու խնդրանքով: Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, ըստ որի՝ ձերբակալված կամ կալանավորված յուրաքանչյուր ոք անհապաղ տարվել է դատավոր կամ այլ պաշտոնատար անձի մոտ, չի նախատեսում որևէ հնարավոր բացառություն<sup>452</sup>:

Եվրոպական դատարանն ընդգծել է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի վերաբերյալ վերոնշյալ չափանիշները կիրառելի են նաև այն դեպքում, երբ քրեական հանցանք կատարելու մեջ կասկածվող և քննությունից ենթադրաբար թաքնվող անձն արգելանքի է վերցվում կալանավորելու

<sup>452</sup> Տե՛ս Լադենտն ընդդեմ Լեհաստանի գործով (Ladent v. Poland) գործով 2008 թվականի հունիսի 18-ի վճիռը, գանգատ թիվ 11036/03, կետ 72-75:

մասին որոշման հիման վրա, որը դատարանը կայացրել է նրա բացակայությամբ: Դատարանի կողմից արդարադատությունից թաքնվող անձին հեռակա կարգով (in absentia) կալանավորելու հնարավորությունն ըստ էության (per se) չի հակասում Կոնվենցիայի դրույթներին, եթե վերջինս հայտնաբերվելու դեպքում անհապաղ տարվում է դատավորի մոտ, ինչպես որ պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետը, ինչից որևէ հնարավոր բացառություն նախատեսված չէ<sup>453</sup>:

Վերլուծելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 259-րդ հոդվածի 3-րդ մասով և 285-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանված նորմերը, Վճռաբեկ դատարանը գտել է, որ նշված իրավադրույթները, հետախուզման մեջ գտնվող մեղադրյալի բացակայությամբ նրա նկատմամբ խափանման միջոցի ընտրության առումով, չեն բխում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված՝ դատավորի մոտ անհապաղ տարվելու պահանջից: Նշված իրավանորմերը վարույթն իրականացնող մարմնին հնարավորություն են տալիս անձի նկատմամբ ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոց ընտրել անձի բացակայության պայմաններում՝ առանց հնարավորություն ընձեռելու, որ հետախուզման արդյունքում հայտնաբերված անձը ներկայանա դատարան, և անձի կալանավորման հարցի քննարկումը տեղի ունենա իր ներկայությամբ:

Վճռաբեկ դատարանը գտել է, որ քրեադատավարական օրենքում ամրագրված նման կարգավորումը, կհակասի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասին և կոպտորեն կխախտի անձի ազատության իրավունքը, եթե հետախուզման մեջ գտնվող անձի ի հայտ գալուց հետո նա անհապաղ դատարանի առջև չներկայացվի՝ կարևորելով քրեական դատավարության շրջանակներում ազատությունից զրկված անձին անհապաղ դատարան ներկայացնելու երաշխիքային նշանակությունը:

Հիմք ընդունելով ՀՀ իրավական համակարգում Կոնվենցիայի բարձրագույն իրավաբանական ուժը, ինչպես նաև ազատությունից զրկված անձանց անհապաղ դատարանի առջև ներկայացնելու՝ Կոնվենցիայով հստակ ամրագրված և Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում բազմիցս վերահաստատված պահանջի ներպետական երաշխավորման պահանջը՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ ՀՀ ներպետական օրենսդրության մակարդակում ազատության իրավունքի ապահովման անհրաժեշտ երաշխիք պետք է լինի հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո, արդեն նրա ներկայությամբ, նրա նկատմամբ ընտրված խափանման միջոցի հարցի կրկնակի քննարկումը նախաքննության կատարման վայրի դատարանում: Դա հնարավորություն կտա նվազեցնել կամայական կալանավորման դեպքերը, ինչպես նաև կապահովի Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության համար միջազգային պարտավորություն հանդիսացող պահանջների կատարումը: Հետևաբար, ըստ

---

<sup>453</sup> Տե՛ս Վախիտովը և մյուսներն ընդդեմ Ռուսաստանի գործով (Vakhitov and Others v. Russia) գործով 2017 թվականի ապրիլի 30-ի վճիռը, գանգատ թիվ [18232/11](#), կետ 50-51:

վճռաբեկ դատարանի՝ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո նա պետք է անհապաղ (72 ժամվա ընթացքում) տարվի դատավորի մոտ<sup>454</sup>:

Այս կարևոր արձանագրումը երաշխիքային հիմք ստեղծեց Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառումը ներպետական մակարդակում ապահովելու համար:

Այս առումով, Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ հետախուզման մեջ գտնվող անձին հայտնաբերելուց հետո անհապաղ (72 ժամվա ընթացքում) նրան դատավորի մոտ փաստացի տանելն ինքնանպատակ չէ, այն Կոնվենցիայով երաշխավորված ազատության իրավունքի ապահովման երաշխիք է: Այս առումով հատկանշական է, որ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված «անհապաղությունը» Վճռաբեկ դատարանը դիտարկել է «քրեական դատավարության իմաստով ձերբակալման եռօրյա ժամկետը, որից հետո անձը կա՛մ ազատ է արձակվում, կա՛մ մինչդատական վարույթ իրականացնող մարմնի միջնորդության հիման վրա դատարանի որոշմամբ նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվում է կալանավորումը<sup>455</sup>»:

Ձերբակալված անձին անհապաղ դատարանի առջև ներկայացնելու օրենսդրական պահանջի առնչությամբ Պաշտպանը կարևոր է համարում անդրադառնալ նաև «քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածին: Ըստ 130-րդ հոդվածի 1-ին մասի՝ ազատության մեջ գտնվող մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության դեպքում քննիչը որոշում է կայացնում մեղադրյալին ձերբակալելու մասին: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այդ հիմքով իրականացված ձերբակալումը չի կարող տևել 36 ժամից ավելի: **Նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան արգելանքի վերցնելու պահից 18 ժամվա ընթացքում: Հակառակ դեպքում անձը պետք է ազատ արձակվի:** Միևնույն ժամանակ 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալն արգելանքի վերցնելու պահից 36 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Ստացված բողոքներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ հարուցված քրեական գործի շրջանակում իր պաշտպանյալն ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ: Տեղեկացրել է, որ վարույթն իրականացնող մարմինը խախտել է Քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջը՝ իր վստահորդը լինելով ձերբակալված դատարան ներկայացվելու հիմքով, չի տարվել դատարան նրան արգելանքի վերցնելու պահից 18 ժամվա ընթացքում: Ավելին, ըստ փաստաբանի՝ դատարան սահմանված ժամկետում ներկայացված չլինելու պարագայում վարույթն իրականացնող մարմինը միջոցներ չի ձեռնարկել ապօրինի անազատության մեջ գտնվող անձին արգելանքից ազատ արձակելու ուղղությամբ:

<sup>454</sup> Տե՛ս Տիգրան Վահրադյանի վերաբերյալ «Վճռաբեկ դատարանի 2008 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ԼԴ/0197/06/08 գործով կայացված որոշումը»:

<sup>455</sup> Տե՛ս Տիգրան Վահրադյանի վերաբերյալ «Վճռաբեկ դատարանի նույն որոշումը»:



Բարձրացված հարցը քննարկվել է քրեական վարույթն իրականացնող մարմնի իրավասու ներկայացուցչի հետ: Պարզաբանում է ներկայացվել առ այն, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդությունը մինչ օրենքով սահմանված 18 ժամը լրանալը ներկայացված է եղել է դատարան, իսկ ձերբակալման համար սահմանված 36 ժամը դեռևս չի լրացել:

Միևնույն ժամանակ, իրականացված գրագրության շրջանակում Դատախազությունը հայտնել է այն դիրքորոշումը, որ մեղադրյալի իրավունքները, կոնկրետ դեպքում չեն խախտվել: Ըստ Դատախազության պարզաբանման՝ 130-րդ հոդվածի 5-րդ մասում նշված «ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի» ձևակերպումը նշանակում է ոչ թե ֆիզիկապես մեղադրյալին դատարան տանել կամ դատական նիստ անցկացնել, այլ դատարան կալանավորման միջնորդություն ներկայացնել: Ըստ Դատախազության՝ այլ կերպ մեկնաբանելու դեպքում կստացվի, որ դատարանը 18 ժամը պահպանելու համար, ըստ էության առանց ծանոթանալու միջնորդությանը և կից ներկայացված նյութերին՝ ստիպված կլինի դատական նիստ նշանակել, այնուհետև հետաձգել այն՝ նյութերին ծանոթանալու նպատակով և անձի դատական պաշտպանության իրավունքը կկրի ձևական բնույթ: Բացի դրանից, ըստ Դատախազության, նման մեկնաբանությամբ՝ դատարանին առնվազն 18 ժամ է հատկացվում միայն որոշում կայացնելու համար, որով կիմաստազրկվի նույն հոդվածի 6-րդ մասի այն դրույթը, որ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով ձերբակալված մեղադրյալն արգելանքի վերցնելու պահից 36 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Այնուամենայնիվ, նույն գործի շրջանակում Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանն արձանագրել է, որ քննիչը խախտել է ձերբակալվածին դատարան տանելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 130-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետը, անձի ձերբակալումը ճանաչվել է ոչ իրավաչափ և նա ազատ է արձակվել: Դատարանն իրավամբ, անդրադառնալով ձերբակալվածին Դատարան տանելու՝ օրենքով սահմանված ժամկետի պահպանման հարցին, նշել է, որ որպես ձերբակալված մեղադրյալ անձը պետք է քննիչի կողմից Դատարան տարվեր նրան արգելանքի վերցնելու պահից 18 ժամվա ընթացքում»:

Դատարանը փաստել է, որ օրենսդրական նշված պահանջի խախտման իրավաբանական հետևանքը մեղադրյալի ազատ արձակումն, ինչը, ըստ Դատարանի, նշանակում է, որ **քննիչը պարտավոր էր սահմանված ժամկետում ազատ արձակել մեղադրյալին, ինչը չի կատարվել, իսկ քննիչի այդ վարքագիծը հանգեցրել է [մեղադրյալի]՝ անձնական ազատության հիմնական իրավունքի խախտման:**<sup>456</sup>

<sup>456</sup> Հարկ է ընդգծել, որ նշված դատական ակտը հետագայում Դատախազության կողմից չի բողոքարկվել և ստացել է օրինական ուժ:

*Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ օրենքի իմպերատիվ պահանջն այն է, որ որպես ձերբակալված մեղադրյալ անձը պետք է արգելանքի վերցնելու պահից 18 ժամվա ընթացքում քննիչի կողմից Դատարան տարվի փաստացի:*

Այս առումով կարևոր է ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով նախատեսվում են առավել սեղմ ժամկետներ անձին դատարան ներկայացնելու համար: (ըստ նոր օրենսգրքի՝ «նշված հիմքով ձերբակալված մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 12 ժամվա ընթացքում»)

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը կրկին արձանագրում է, որ իրավասու մարմիններն իրենց գործունեության ընթացքում պետք է բավարարեն օրենքով սահմանված հստակ ժամկետները, և *ապահովեն քննիչի որոշմամբ ձերբակալված մեղադրյալին կամ հետախուզման մեջ գտնվող անձին արգելանքի վերցնելուց հետո անհապաղ (և կոնկրետ ժամկետի սահմանում) դատավորի մոտ տանելու իրավունքը:*

### ԳԼՈՒԽ 3. ԱԶԱՏ ՏԵՂԱՇԱՐԺՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

#### **1. Կասկածյալի կամ մեղադրյալի ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման ոչ իրավաչափ պրակտիկան**

2021 թվականի ընթացքում շարունակվում են արձանագրվել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ոչ համաչափ սահմանափակման դեպքեր:

Ընդ որում, մտահոգիչ է, որ նշված սահմանափակումների վերաբերյալ խնդիրներն արձանագրվում են ոչ միայն Մարդու իրավունքների պաշտպանի, այլև իրավասու պետական մարմինների գործունեության արդյունքում:

ՀՀ գլխավոր դատախազությունից այս հարցի կապակցությամբ ստացված տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության կամ ստացված բողոքների քննարկման շրջանակներում 35 դեպք է արձանագրվել 37 անձի վերաբերյալ, երբ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական (ՍԷԿՏ) համակարգի կիրառմամբ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը վերացված չի եղել՝ քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական գործով ավարտված վարույթի պայմաններում: Դատախազության գրության համաձայն՝ բոլոր դեպքերով համապատասխան գրություններ են հասցեագրվել ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների պետերին և անձանց ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումը վերացվել է:

Բացի դրանից, ձևավորված պրակտիկայի վերաբերյալ հարցում է արվել ՀՀ քննչական կոմիտե: Քննչական կոմիտեից ստացված տեղեկության համաձայն՝ ներքին անվտանգության վարչությունում իրականացված կարգապահական վարույթով պարզվել է, որ ԶԲԳՎ կայազորային քննչական բաժնի քննիչի վարույթում քննված 6 քրեական գործերով վարույթը կարճելուց հետո 6 մեղադրյալների նկատմամբ ընտրված խափանման միջոցները չեն վերացվել և համապատասխան տեղեկատվություն իրավասու մարմինն չի փոխանցվել: ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամանի համաձայն՝ բաժնի պետի և քննիչի նկատմամբ կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի համաձայն՝ չհեռանալու մասին ստորագրություն տված կասկածյալը կամ մեղադրյալը չի կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը, նա պարտավոր է ներկայանալ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի և դատարանի կանչով և նրանց հայտնել իր բնակության վայրը փոխելու մասին:

Անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնող մարմինների կողմից «Ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը կիրառելու մասին տվյալները մուտքագրվում են ՍԷԿՏ ՀՀ կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» թիվ 884-Ն որոշմամբ նախատեսված կարգով: ՍԷԿՏ համակարգի խնդիրը Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և պետական կառավարման այլ մարմինների կողմից ՀՀ մուտք (ելք) գործող անձանց և տրանսպորտային միջոցների հաշվառման միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումն է, տեղեկատվության ստացման, կուտակման և մշակման ապահովումն է, ինչպես նաև համապատասխան շահագրգիռ մարմիններին անհրաժեշտ տվյալների տրամադրումն է:

Գործնականում շարունակել են արձանագրվել դեպքեր, որ խափանման միջոցի վերացման դեպքում համապատասխան գրառում ՍԷԿՏ համակարգում չի արվել, և երբ անձը ցանկացել է հատել ՀՀ պետական սահմանը տեղեկացվել է, որ իր նկատմամբ դեռևս առկա է արգելք:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են դեպքեր, երբ չնայած անձինք կրած են եղել դատարանի կողմից նշանակված պատիժը, սակայն վերջիններիս՝ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը ՍԷԿՏ համակարգից չէր հանվել՝ դեռևս նախաքննության փուլում կիրառված արգելանքի հիման վրա:

Ստացվել են ահազանգներ այն մասին, որ քրեական գործով վարույթը կարճվել է և քննիչը որոշում է կայացրել քրեական հետապնդումը դադարեցնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին: Համապատասխան գրություններ են ուղարկվել Ոստիկանություն, սակայն ՍԷԿՏ համակարգում դեռ առկա են տվյալներ, արդյունքում՝ անձանց ելքը Հայաստանից չի թույլատրվել:

Ստացված բոլոր դեպքերն հնարավոր սեղմ ժամկետներում քննարկվել են իրավասու պետական մարմինների՝ Ոստիկանության և քննչական մարմինների հետ: Դրանք ձևավորված արդյունավետ համագործակցության արդյունքում ստացել են լուծում:

Խնդրի համակարգային բնույթից ելնելով, Մարդու իրավունքների պաշտպանը համակողմանի ուսումնասիրության առարկա է դարձրել անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի ապահովման ներպետական և միջազգային իրավակարգավորումները և դիմել է Սահմանադրական դատարան:

Արդյունքում, ՀՀ սահմանադրական դատարանը դեռևս 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-1360 որոշմամբ արտահայտել է իրավակիրառ պրակտիկայի իրավաչափությունը կանխորոշող պայմաններ՝ նշելով, որ «նման կանոնակարգման առկայության պայմաններում և նման կառուցակարգի միջոցով անձի տեղաշարժման ազատությունը սահմանափակելու պարագայում այն պետք է իրացվի բացառապես խափանման միջոցի վերացման մասին որոշում ընդունելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս նույն համակարգում տեղադրելու՝ իրավասու մարմնի հստակ պարտականության իրացման և անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները

վերացնելու պայմանով»՝ միաժամանակ արձանագրելով օրենսդրության մեջ այս պահանջի՝ վարույթն իրականացնող մարմնի վրա դրված հստակ պարտականության տեսքով ուղղակի ամրագրման բացակայությունը:

Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների բովանդակության<sup>457</sup> ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ ՀՀ կառավարության խնդրո առարկա որոշման<sup>458</sup> մեջ խափանման միջոցի վերացման մասին որոշման վերաբերյալ տեղեկատվությունը ՍԷԿՏ համակարգ ուղարկելու ուղղակի պարտականության բացակայությունը հարցականի տակ է դնում այդ ընթացակարգի որոշակիությունը, քանի որ կոնկրետ իրավասու մարմնի վրա դրված այդպիսի պարտականություն չկա:

*Մարդու իրավունքների պաշտպանը կրկին արձանագրում է, որ քանի դեռ օրենսդրական համապատասխան փոփոխություններ չեն նախաձեռնվել, իրավակիրառ պրակտիկան պետք է ընթանա այն սկզբունքով, որ խափանման միջոցի կիրառմամբ իրավասու մարմնին տեղեկություններ տրամադրելու պարտականությանը զուգահեռ ապահովվի հակառակի՝ խափանման միջոցի վերացման վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու պարտականությունը:*

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված նույնաբովանդակ բողոքների շարունակականությունն ինքնին վկայում է ոչ միասնական իրավակիրառ պրակտիկայի մասին: Սա առաջին հերթին արդյունք է այն բանի, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումները վերացվելու դեպքում ՍԷԿՏ համակարգում տեղեկատվությունը տեղադրելու կառուցակարգերը դեռևս բացակայում են: Այլ խոսքով՝ դեռևս հստակեցված չէ, թե որ մարմինը պետք է հանձն առնի անձի նկատմամբ կիրառված արգելքի սահմանափակման մասին ՍԷԿՏ համակարգը վարող մարմին տեղեկացնելու պարտականությունը:

Շարունակում է խնդրահարույց մնալ այն հանգամանքը, որ Ոստիկանությանը ՍԷԿՏ համակարգը մուտքագրվող համապատասխան տեղեկատվությունը փոխանցվում է փոստային առաքման միջոցով, ինչն ինքնին բարդացնում է ընթացակարգը՝ խլում ավելորդ ռեսուրս և ժամանակ: Արձանագրվել են դեպքեր, երբ կիրառված սահմանափակումը վերացնելուց երկու-երեք օր անց անձը փորձել է հատել պետական սահմանը, սակայն չի թույլատրվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինն անհրաժեշտ գրությունը Ոստիկանությանն ուղարկել է փոստային ծառայության միջոցով, ուստի այն դեռևս ստացված չի եղել:

Նման դեպքերում Ոստիկանության հետ ձևավորված համագործակցության արդյունքում հնարավոր կարճ ժամկետներում խնդիրը լուծվում է գրությունը ֆաքսիմիլային կամ էլեկտրոնային տարբերակով Ոստիկանության իրավասու ստորաբաժանում ուղարկելու միջոցով: Սակայն

<sup>457</sup> Բողոքների նկարագրությունը Սահմանադրական դատարան է ներկայացվել առանց անհատականացնող տվյալների մատնանշման:

<sup>458</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2006 թվականի 22 հունիսի «Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգ ստեղծելու, դրա շահագործման կարգը և համակարգից օգտվողների ցանկը սահմանելու մասին» N 884-Ն որոշումը:

պրակտիկան շարունակում է ընթանալ այնպես, որ գրություններն ուղարկվում են փոստային ծառայության միջոցով, չնայած նրան, որ իրավունքի սահմանափակման դե յուրե վերացումն անհապաղ ենթակա է դե ֆակտո կյանքի կոչման:

Ուստի, Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ, եթե անձն ունի որևէ դատավարական կարգավիճակ, օրինակ՝ մեղադրյալի, սակայն նրա նկատմամբ խափանման միջոց կիրառված չէ, ապա որևէ կերպ չի կարող սահմանափակվել հանրապետությունից դուրս գալու նրա իրավունքը: Հատկանշական է, որ այս մասով նկատվում է դրական միտում: Մասնավորապես, ըստ Քննչական կոմիտեի ներկայացրած պարզաբանումների՝ 2021 թվականի ընթացքում խափանման միջոց ընտրված չլինելու պայմաններում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու դեպքեր չեն արձանագրվել:

Ոստիկանությունը լրամշակել և 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի էր ուղարկվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթը: Պաշտպանը ողջունել էր ոլորտի պատասխանատուների ջանքերը խնդրի կարգավորման ուղղությամբ, նախագծի վերաբերյալ ներկայացվել են համապատասխան դիտարկումներ<sup>459</sup>: Այնուամենայնիվ, 2022 թվականի փետրվարի 1-ի դրությամբ վերոնշյալ օրենքների նախագծերի փաթեթը չի ընդունվել:

Անձանց ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման հետ կապված մեկ այլ խնդիր վերաբերում է օտարերկրյա պետության իրավապահ մարմնի կողմից հետախուզման մեջ գտնվող անձանց վերաբերյալ քրեական գործերը ՀՀ իրավապահ մարմիններին չփոխանցելուն և այդ հանգամանքով պայմանավորված ՍԷԿՏ համակարգում անձի նկատմամբ սահմանափակումների առկայության պայմաններում նրա ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման հարցին:

Մասնավորապես, բազմաթիվ բողոքներ են ստացվել այն մասին, որ օտարերկրյա իրավապահ մարմինների կողմից անձի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Հետախուզվող անձը հայտնաբերվել է Հայաստանի տարածքում, սակայն առկա է անձի հանձնումը բացառող հանգամանք, (օրինակ՝ անձը ՀՀ քաղաքացի է): Միևնույն ժամանակ նրա նկատմամբ քրեական

---

<sup>459</sup> Նախատեսվող դրույթների ուսումնասիրության արդյունքում պարզ չէ, սակայն, թե անձի ելքի արգելքի մասին որոշումն իրավասու մարմնի կողմից կայացված խափանման միջոցի կիրառման մասին որոշման բաղկացուցիչ մաս է կազմելու, թե՛ ոչ: Պարզ չէ նաև դրա հիմնավորվածության և բողոքարկման հնարավորության հարցը: Այս հարցերը վտանգում են անձի իրավունքների իրացումը: Պաշտպանի դիրքորոշմամբ՝ անձը պետք է իրավունք ունենա ծանոթանալ ՍԷԿՏ համակարգով հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման վերաբերյալ որոշմանը, որի անհրաժեշտությունը պետք է պատշաճ հիմնավորված լինի, ինչպես նաև քաղաքացուն պետք է պարզաբանվի իր իրավունքներն ու պարտականությունները և հնարավորություն ընձեռվի բողոքարկել այդ որոշումը:

հետապնդում իրականացնելու նպատակով օտարերկրյա իրավապահ մարմինները ՀՀ իրավապահ մարմիններին չեն փոխանցում քրեական գործի նյութերը, սակայն նաև չեն դադարեցնում նրա նկատմամբ հայտարարված հետախուզումը: Արդյունքում՝ անձի իրավունքներն անորոշ ժամանակով սահմանափակվում են, օրինակ՝ նրա ելքը ՀՀ-ից արգելվում է, անձնագրային և նոտարական գործարքներ իրականացնելիս խնդիրներ են առաջանում և այլն: Նման իրավիճակները, ցավոք, փակուղային են նաև իրավական տեսանկյունից: Հասկանալի է նաև, որ օտարերկրյա պետության իրավասու մարմնի հայտարարած հետախուզումը չի կարող դադարեցվել ՀՀ քրեական հետապնդման մարմինների կողմից:

Դրականորեն պետք է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքների կապակցությամբ, Դատախազության և Ոստիկանության համագործակցության արդյունքում մշտապես գտնվել է իրավիճակային լուծում: Մասնավորապես, Հայաստանի տարածքում անձի նկատմամբ հետախուզումը և կիրառվող սահմանափակումները վերացվում են: Այս դեպքում անձը ստանում է հնարավորություն Հայաստանի տարածքում լիարժեք իրացնել իր իրավունքները, օրինակ՝ անձնագրային գործարքներ կատարել: Այս դեպքում անձի համար հետագայում կարող է խնդիր առաջանալ, որ ՀՀ սահմանը հատելու պարագայում օտարերկրյա պետությունների տարածքում հայտնաբերվելու պարագայում կարող է հայտնաբերվել և արտահանվել հետախուզումը հայտարարած երկիր: Լուծումն, իհարկե, մասնակի է, սակայն, մեր համոզմամբ, այն առավելագույնն է ինչ կարող է արվել Հայաստանի պետական մարմինների կողմից:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝

1. ապահովել ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի վերացման պահին այդպիսի սահմանափակման վերացման վերաբերյալ տեղեկությունների պարտադիր տրամադրումը ՍԷԿՏ համակարգը վարող իրավասու մարմին,
2. տեղեկությունները ՍԷԿՏ համակարգը վարող իրավասու մարմին տրամադրել էլեկտրոնային եղանակով՝ ապահովելով դրա անհապաղ փոխանցումն ու մուտքագրումը համակարգ,
3. հնարավորին սեղմ ժամկետում ընդունել օրենսդրական վերը նշված կարգավորումները՝ հստակ ամրագրելով իրավասու մարմնի կոնկրետ պարտականությունը նաև այն դեպքերում, երբ արգելանքը վերացվում է դատաքննության փուլում, ինչպես նաև պատժի կրումից հետո:
4. Օտարերկրյա պետության կողմից հետախուզման մեջ գտնվող անձի վերաբերյալ քրեական գործը տևական ժամանակ ՀՀ իրավապահ մարմիններին չփոխանցելու դեպքերում հետախուզումը Հայաստանում դադարեցնելու հարցի վերաբերյալ սահմանել օրենսդրական կառուցակարգեր (այն դեպքերում, երբ առկա է անձի հանձնումը բացառող հանգամանք, օրինակ՝ ՀՀ քաղաքացի է):

## **2. Դադարանի կողմից մեղադրյալի՝ Հայաստանից ելքը թույլատրելու դեպքում ՍԷԿՏ համակարգում տվյալներ չմուտքագրելու ոչ իրավաչափ պրակտիկան**

Մարդու իրավունքների պաշտպանին այս խնդրով բողոքներ են հասցեագրվել ինչպես 2019, 2020, այնպես էլ 2021 թվականների ընթացքում:<sup>460</sup>

Մարդու իրավունքների Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել էր, որ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի վարույթում գտնվող քրեական գործի շրջանակում ունի ամբաստանյալի դատավարական կարգավիճակ և իր նկատմամբ ընտրված է չհեռանալու մասին ստորագրություն խափանման միջոցը: Քաղաքացին ներկայացրել է նաև դատարանի կողմից Ոստիկանություն ուղարկված գրության պատճենը, որով իրեն թույլատրվել է մեկ ամսով բացակայել ՀՀ տարածքից: Հավելել է, որ նշված ժամկետում փորձել է մեկնել արտերկիր, սակայն տեղեկացել է, որ իր նկատմամբ առկա են սահմանափակումներ ՍԷԿՏ համակարգում: Կոնկրետ դեպքում՝ Ոստիկանության հետ համագործակցության շրջանակներում խնդիրը հրատապ կարգով ստացել է լուծում:

Մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ մանրամասն անդրադարձել է նշված հարցին և վերլուծել Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված ընթացակարգերը: Այնուամենայնիվ հարցի վերաբերյալ բողոքների շարունակականությունը վկայում է այն մասին, որ խնդիրը շարունակում է արդիական մնալ:

Քրեական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերլուծությունը վկայում է, որ ստորագրություն չհեռանալու մասին խափանման այս միջոցի իրավաչափության պայմաններից է այն, որ կասկածյալը կամ մեղադրյալը չեն կարող առանց հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի թույլտվության մեկնել այլ տեղանք կամ փոխել բնակության վայրը:

Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի իրավաչափության նշված պայմանը ենթադրում է, որ խախտում չի համարվի, եթե մեղադրյալն այլ տեղանք մեկնի հիշյալ մարմիններից որևէ մեկի թույլտվությամբ՝ պայմանավորված այն հանգամանքով, թե նրանցից ում վարույթում է գտնվում գործը և ով է պատասխանատու դատավարության կոնկրետ փուլում գործով վարույթի համար: Դա նաև նշանակում է, որ այդ թույլտվությունը պատշաճ իրավական հիմք է այն մարմինների համար, ում համար առաջանում է քրեական վարույթն իրականացնող մարմնի այդ ակտի պահանջի կատարման պարտականություն: Ընդ որում, օրենքը չի կոնկրետացնում, թե ինչ կոնկրետ ձև կամ ինչ բովանդակային բաղադրիչներ պետք է ունենա այդ թույլտվությունը: Ավելին,

---

<sup>460</sup> Խնդրին առնչվող համապատասխան իրավական կարգավորումների և գնահատականների մասին մանրամասն ներկայացված է 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման մեջ, էջեր 580-587:



օրենքը վերջիններիս չի վերապահում այդ ակտը վիճարկելու կամ կասկածի տակ դնելու հնարավորություն:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան Ոստիկանության հայտնած տեղեկության համաձայն՝ կիրառված խափանման միջոցի մասին տեղեկությունները ՍԷԿՏ համակարգից հանվում են վարույթն իրականացնող մարմնից համապատասխան գրություն կամ որոշում ստանալու դեպքում: Նախկինում պարզաբանվել է նաև, որ գործնականում գրություն ստանալուց հետո այն կատարվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նշված գրությունների հիմնավորվածությունը չի ստուգվում, քանի որ նման իրավասություն Ոստիկանությանն օրենքով վերապահված չէ:

Պաշտպանն անդրադարձել է նաև դատարանի կողմից գրությամբ, այլ ոչ թե որոշմամբ անդրադառնալուն ու դրա հետ կապված դատական պրակտիկային: Մասնավորապես, քրեական գործը քննող դատարանի՝ մարդու իրավունքներին առնչվող ակտերը պետք է կայացվեն գրավոր որոշումների ձևով բոլոր այն դեպքերում, երբ դատարանն առնչվում կամ հաղորդակցվում է արտաքին աշխարհի, այսինքն՝ դատավարության մասնակից չհանդիսացող սուբյեկտների հետ:

*Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ բոլոր այն իրավիճակներում, երբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի պայմաններում առկա է որոշակի վարքագիծ թույլատրելու մասին վարույթն իրականացնող մարմնի դիրքորոշում, որն առերևույթ անօրինական չէ, այն պետք է կատարվի անհապաղ և առանց դրա հիմնավորվածությունը և իրավաչափությունը գնահատելու:*

### **3. Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառումը և կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու ոչ իրավաչափ պրակտիկան**

Ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառման պարագայում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելու և հետագայում չվերադարձնելու վերաբերյալ ինչպես նախկին տարիներին, այնպես էլ 2021 թվականի ընթացքում ստացվել են բողոքներ:

Պաշտպանի աշխատակազմ մուտքագրված բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ քրեական գործի շրջանակում ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ, իր նկատմամբ ընտրվել է ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը և վարույթն իրականացնող մարմնի կողմից վերցվել է իր անձնագիրը: Քաղաքացին հայտնել էր, որ Վերաքննիչ քրեական դատարանը թույլատրել է իրեն ժամանակավորապես բացակայել Հայաստանի Հանրապետությունից, սակայն չի կարողացել երկրից մեկնել, քանի որ Դատարանի վարույթում գտնվող քրեական գործի նյութերում իր անձնագիրը բացակայել է: Ոստի, նշված դեպքում վարույթն իրականացնող մարմնի կողմից քաղաքացու անձնագիրը չվերադարձնելու

հանգամանքով պայմանավորված անձը գրկվել է ազատ տեղաշարժի իր իրավունքն իրացնելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների պաշտպանի 2016, 2017, 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով, ինչպես նաև Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով<sup>461</sup> անդրադարձ է կատարվել «Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոցի կիրառման շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների ապահովման մեկ այլ խնդիրն՝ անձնագիրը վերցնելու իրավաչափության շրջանակներին: Այս խնդիրն ունի շարունակական բնույթ:

Քրեական դատավարության օրենսգրքի և «Քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի<sup>462</sup> համադրության մեջ դիտարկման արդյունքներով Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ քրեական դատավարության կամ դրա առանձին փուլերի խնդիրների իրագործմանն ուղղված վարույթն իրականացնող մարմնի ցանկացած գործողություն, այդ թվում՝ դատավարական կարգավիճակ ունեցող անձի անձնագիրը վերցնելը, պետք է իրավական հիմք ունենա հենց Քրեական դատավարության օրենսգրքում:

Ավելին, «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» օրենքի խնդրո առարկա հոդվածի կարգավորումը, համաձայն որի՝ կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես, ևս վկայում է, որ անձի անձնագիրը վերցնելու օրենքով ամրագրված այդպիսի կառուցակարգը չի համապատասխանում ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի քրեադատավարական կարգավորումներին:

Խնդիրն այն էր, որ Քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ քրեական հետապնդման դադարեցումը քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի որոշումն է առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին:

Օրենսգրքի 151-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է, որ խափանման միջոցը վերացվում է, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը: Դատավարական այս կարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ ընտրված խափանման միջոցը կարող է վերացվել նաև քրեական հետապնդման իրականացման պայմաններում: Ստացվում էր, որ «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ անձի անձնագիրը կարող է հետ չվերադարձվել անգամ այն ժամանակ, երբ վերացվել է վերջինիս նկատմամբ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը:

Քննարկելով կասկածյալի, մեղադրյալի նկատմամբ «Ստորագրություն չհեռանալու մասին» խափանման միջոց կիրառելու դեպքում անձնագիրը վերցնելու կանոնակարգման

<sup>461</sup> ՀՀ Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի մասին տե՛ս սույն գլխի առաջին պարագրաֆում:

<sup>462</sup> «ՀՀ քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է. «4. Կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը ժամանակավորապես վերցնում է հետաքննության կամ նախաքննության մարմինը: (...) Կասկածյալի և մեղադրյալի անձնագիրը պահվում է վարույթ իրականացնող պաշտոնատար անձանց մոտ և վերադարձվում է հարուցված քրեական հետապնդումը դադարեցվելուց հետո անմիջապես»:

սահմանադրականության հարցը՝ Սահմանադրական դատարանը հստակ դիրքորոշում է արտահայտել, որ այն դեպքերում, երբ քրեական հետապնդում իրականացնող մարմնի կողմից, առանց խափանման միջոցի (ստորագրություն չհեռանալու մասին) կիրառման, վերցվում է կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը, բացակայում է նաև կասկածյալի կամ մեղադրյալի կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու, նրանց կողմից դատավճռի կատարմանը խոչընդոտելու վերաբերյալ ողջամիտ կասկածը: Հետևաբար՝ բացակայում է նաև հանցագործությունները կանխելու կամ բացահայտելու, այլոց և, մասնավորապես, տվյալ քրեական գործով տուժողների իրավունքները և ազատությունները պաշտպանելու նպատակով անձնագիրը վերցնելու միջոցով կասկածյալի կամ մեղադրյալի իրավունքների սահմանափակման անհրաժեշտությունը:

Արդյունքում, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ **անձնագիրը կասկածյալից կամ մեղադրյալից կարող է վերցվել բացառապես խափանման միջոցի կիրառման դեպքում: Եվ խափանման միջոցի վերացման պահին անձի անձնագիրը ենթակա է անհապաղ վերադարձման:**

Վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ «**Ներկայումս ձևավորված պրակտիկան, երբ անձի անձնագիրը պահվում է իրավասու մարմնի մոտ «ստորագրություն՝ չհեռանալու մասին» խափանման միջոցը վերացնելու դեպքում, խախտում է ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված՝ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը**»:

Բացի այդ, քրեական գործով վարույթի շրջանակներում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիր վերցնելը դիտարկվել է անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքին միջամտության համաչափության տեսանկյունից:

Հարկ է նշել, որ Պաշտպանի դիմումը Սահմանադրական դատարանում քննության ընդունվելուց հետո անձնագիրը վերցնելիս փոխարինող փաստաթղթի տրամադրման վերաբերյալ բարձրացված խնդրի օրենսդրական կարգավորումները փոփոխվեցին: Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը և Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» թիվ 821-Ն որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 12-ի թիվ 4-Ն որոշմամբ ուժը կորցրած ճանաչվեց:

Կատարված փոփոխությունների արդյունքում, կասկածյալին կամ մեղադրյալին անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ դրույթն ուղղակի հանվեց՝ առանց փոխարենը նոր կառուցակարգերի ամրագրման: Քննարկվող դրույթի գործողության դադարեցման պայմաններում Սահմանադրական դատարանն, այդուհանդերձ, որոշման եզրափակիչ մասում արձանագրել է, որ *Կառավարության որոշման 19-րդ կետի 3-րդ պարբերությունը (Կառավարության 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 823-Ն որոշման խմբագրությամբ) «համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակության շրջանակներում, համաձայն որի՝ հեղաքննության կամ*

**նախաքննության մարմինների կողմից անձնագրի փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ պետք է տրվի կալանքի տակ չգտնվող այն կասկածյալներին և մեղադրյալներին, ում նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն՝ չհեռանալու մասին»:**

Ստացվում է, որ քննարկվող դեպքերում կասկածյալին կամ մեղադրյալին անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական կարգավորումների բացակայությունն այնքանով, որքանով արդեն իսկ չկան որևէ սահմանադրաիրավական ընկալման և մեկնաբանության հիմքեր, խնդիրներ կարող է առաջացնել Սահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումների կատարման տեսանկյունից:

Ուստի, *խնդրի լուծումը պետք է տրվի օրենսդրական բացի հաղթահարման ճանապարհով՝ համապատասխան ընթացակարգերի ամրագրմամբ:*

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ *անհրաժեշտ է՝*

*1. բացառել քրեական գործով վարույթի ընթացքում խափանման միջոցի կիրառման շրջանակներից դուրս կասկածյալի և մեղադրյալի անձնագիր վերցնելու կամ պահելու, ինչպես նաև խափանման միջոցը ժամանակավորապես կասեցման պարագայում անձնագիրը չվերադարձնելու պրակտիկան,*

*2 ամրագրել ստորագրություն չհեռանալու, ինչպես նաև անազատության հետ չկապված այլ խափանման միջոցի կիրառման շրջանակում կասկածյալի կամ մեղադրյալի անձնագիրը վերցնելիս դրա փոխարեն անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու օրենսդրական պահանջ և դրա ապահովմանն ուղղված ընթացակարգեր:*

**4. Քրեական վարույթով վկայի և տուժողի, ինչպես նաև դատավարության մասնակից չհանդիսացող անձանց անձնագրերը վերցնելը և նրանց նկատմամբ Հայաստանից դուրս գալու արգելք սահմանելու ոչ իրավակիրառ պրակտիկան**

Անձի անձնագիրը վերցնելու և ազատ տեղաշարժվելու իրավունքին միջամտելու պրակտիկայի ոչ իրավաչափ դրսևորումներից է նաև այդպիսի սահմանափակումների կիրառումը քրեական վարույթի շրջանակում վկայի (կամ տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող, կամ առհասարակ դատավարական կարգավիճակ չունեցող) անձանց նկատմամբ՝ «քրեական դատավարության օրենսգրքի՝ այդպիսի գործողության իրավական հիմքերի բացակայության պայմաններում: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրաձայնել է տարեկան հաղորդումներում: Այս պրակտիկան պետք է օր առաջ փոխվի:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ «Սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴՌ-1360 որոշմամբ արձանագրել է, որ «որևէ իրավական ակտով վկայից, տուժողից

անձնագիր վերցնելու կամ այդ անձի վերաբերյալ տեղեկությունները ՍԷԿՏ համակարգ տեղադրելու պահանջ չի նախատեսվում:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ քրեական գործով որպես վկա կամ տուժող հանդես եկող անձանց նկատմամբ նման սահմանափակումների կիրառման պրակտիկան, անկախ հետապնդվող նպատակից, օրինական և հիմնավորված կարող է լինել միայն, եթե ունի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքեր:

Անհրաժեշտ է նշել, որ Ոստիկանության կողմից լրամշակված և Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի ուղարկված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու և Հայաստանի Հանրապետությունից ելքի մասին» ՀՀ օրենքի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացրել էր իր մտահոգությունները և վերահաստատել դիրքորոշումը, ըստ որի՝ անգամ եթե նման սահմանափակումը վարույթի մասնակցի դատավարական պարտականությունների ապահովման իրավաչափ նպատակ է հետապնդում, դրա կիրառման համար օրենսդրությամբ պետք է սահմանված լինեն քրեադատավարական հիմքեր:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրման կապակցությամբ Դատախազության ներկայացրած տեղեկությամբ՝ 2021 թվականի ընթացքում գրանցվել է 1 դեպք, երբ ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակումը կիրառվել է որպես վկա հանդես եկող անձի նկատմամբ:

Պաշտպանը կրկին ընդգծում է, որ պրակտիկայում հարցի շուրջ ոչ իրավաչափ դրսևորումների բացառման նպատակով անհրաժեշտ է ցուցաբերել հետևողականություն:

Բացի քրեական գործի շրջանակում վկայի կամ տուժողի նկատմամբ նման սահմանափակումների կիրառումից, գործնականում լինում են նաև համընկնող անձնական տվյալներով (սակայն քրեական գործին չառնչվող) անձանց նկատմամբ սահմանափակումների կիրառման դեպքեր:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին հայտնել է, որ ցանկացել է մեկնել արտերկիր, սակայն «Զվարթնոց» օդանավակայանում Ոստիկանության ծառայողներն իր նկատմամբ հայտարարված հետախուզման հիմքով արգելել են ելքը ՀՀ տարածքից, այնինչ ինքը որևէ քրեական գործի շրջանակում չունի մեղադրյալի կամ կասկածյալի դատավարական կարգավիճակ: Պարզվել է, որ վարույթն իրականացնող քննիչը որոշում է կայացրել իր նկատմամբ հետախուզում հայտարարելու մասին, ավելին՝ Հայաստանից իր ելքի նկատմամբ ՍԷԿՏ համակարգով կիրառվել է սահմանափակում:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ նշվածի կապակցությամբ դիմել է քննիչին, ով տեղեկացրել է, որ շփոթմունք է տեղի ունեցել և անհապաղ միջոցներ կձեռնարկի իր ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումը վերացնելու ուղղությամբ: Այնուհետև, ըստ բողոք

ներկայացրած անձի՝ կրկին փորձել է հատել սահմանը, սակայն ազատ տեղաշարժվելու իրավունքի խոչընդոտները վերացված չլինելու պատճառով ինքը կրկին չի կարողացել մեկնել արտերկիր:

Նշված դեպքում ստացվել է, որ քննիչի որոշման և այն ժամանակին չվերացնելու հետևանքով ոչ միայն սահմանափակվել է անձի ազատ տեղաշարժման իրավունքը, այլև իրեն պատճառվել է խոշոր դրամական վնաս:

Բողոքի քննարկման շրջանակում իրավասու մարմինների հետ համագործակցության շրջանակում քաղաքացու նկատմամբ կիրառված անհիմն սահմանափակումը վերացվել է:

Միևնույն ժամանակ Քննչական կոմիտեից Պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան պարզաբանվել է, որ որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձանց նկատմամբ ՍԷԿՏ համակարգի կիրառմամբ հանրապետությունից դուրս գալու իրավունքի սահմանափակման այլ դեպք իրենց մոտ չի արձանագրվել:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր մոտեցումը և արձանագրում է, որ.

*1. պետք է ուժեղացնել վերահսկողությունը և գործնականում ապահովել, որ քրեական գործով վարույթին որպես վկա կամ տուժող հանդես եկող կամ դատավարական կարգավիճակ չունեցող անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը չսահմանափակվի՝ անձի անձնագիրը վերցնելու կամ ՍԷԿՏ համակարգով համակարգում հանրապետությունից դուրս գալու արգելքի մասին տվյալ մուտքագրելու եղանակով. դրա օրենսդրական հիմքերը բացակայում են,*

*2. անձի ազատ տեղաշարժվելու իրավունքի նմանադիպ ցանկացած խախտում պետք է օրենսդրությամբ սահմանված կարգով առաջ բերի պատասխանատու պաշտոնատար անձի պատասխանատվության հարց:*

#### ԳԼՈՒԽ 4. ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

##### **1. Փաստաբանի մասնագիտական գործունեությունը ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում**

Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթ ուշադրության արժանի հարցերից են փաստաբանի կարգավիճակն ու նրա դերի ճիշտ ընկալումը հասարակությունում: Ե՛վ հանրության շրջանում փաստաբանի դերի, և՛ գործառույթների ճիշտ ընկալումը, համապատասխան վերաբերմունքը նաև նրա անձի նկատմամբ փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքների տեսանկյունից ունի առանցքային նշանակություն: Ավելին, պետք է միշտ նկատի ունենալ, որ փաստաբանի մասնագիտական ու պատասխանատու աշխատանքը պետության իրավական անվտանգության երաշխիքներից է:

Վերջին տարիներին հանրային հետաքրքրություն ունեցող քրեական գործերի հետ կապված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ առանձին դեպքերում պաշտոնատար անձինք հանդես են գալիս այնպիսի հայտարարություններով ու գնահատականներով, որոնք ակնհայտորեն առաջացնում են անձի մեղավորության՝ որպես հաստատված փաստի վերաբերյալ հասարակական ընկալում: Սա իր հերթին նպաստում է նաև փաստաբանների մասնագիտական աշխատանքի վերաբերյալ սխալ ընկալումների ձևավորմանը, սոցիալական մեղիայում փաստաբաններին ուղղված վիրավորական մեկնաբանություններին ու նույնիսկ սպառնալիքներին: Այսպիսի մեկնաբանություններ են արձանագրվել նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնող մի շարք անձանց<sup>463</sup>, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կողմից<sup>464</sup>:

---

<sup>463</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունը հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/510> հղումով:

<sup>464</sup> ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդը ևս 2020 թվականի հունվարի 14-ի նիստում, քննարկելով փաստաբանների մասնագիտական գործունեության հետ կապված խոչընդոտները, ինչպես նաև փաստաբաններին սպառնալու և վիրավորելու դեպքերը կանխելու/վերացնելու հարցը, արձանագրել է, որ փաստաբանների մասնագիտական գործունեության խոչընդոտման դեպքերը շարունակվում են և հաճախ ուղեկցվում են փաստաբանների նկատմամբ վիրավորանքներով, հայիոյանքներով և սպառնալիքներով: Այնուհետ, ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 2020 թվականի հունվարի 23-ի թիվ 18-Ա որոշմամբ ձևավորված՝ փաստաբանների իրավունքների խախտումներն արձանագրող աշխատանքային խումբը հրապարակել է զեկույց 2018 թվականի հունվարի 1-ից առ 2020 թվականի փետրվարի 10-ն ընկած ժամանակահատվածում փաստաբանների իրավունքների խախտումների վերաբերյալ: Զեկույցը հասանելի է [http://advocates.am/images/lureri\\_nkarnem/pastaban\\_xochndot\\_zekuyts/9-5\\_Zekuyc\\_past. irav. pasht. 05.05.2020.pdf](http://advocates.am/images/lureri_nkarnem/pastaban_xochndot_zekuyts/9-5_Zekuyc_past. irav. pasht. 05.05.2020.pdf) հղումով:

Հատկանշական է, որ սոցիալական ցանցերի նպատակային դիտարկումը ևս վկայում է, որ հաճախակի են դարձել դեպքերը, երբ մասնագիտական աշխատանք կատարող փաստաբանը նույնացվում է իր վստահորդի հետ: Արձանագրվում են վիրավորանք և սպառնալիք պարունակող մեկնաբանություններ: Ազդեցիկություն է նկատվում հատկապես այն մեկնաբանություններում, որոնք արվում են առերևույթ կեղծ օգտատերերի կողմից: Սրան գումարվում է նաև այն, որ ներկայում ակնհայտորեն բարձր է սոցիալական ցանցերում ընդգրկված քաղաքացիների թիվը<sup>465</sup>:

Ստեղծված իրավիճակը խնդրահարույց է հատկապես փաստաբանների մասնագիտական անկաշկանդ աշխատանքի տեսանկյունից:

Ժողովրդավարական կարևոր արժեք է փաստաբանի հանրային հեղինակությունը: Այն ձեռք է բերվում փաստաբանի բարդ աշխատանքի շնորհիվ և դառնում կարևոր երաշխիք ոչ միայն նրա վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից, այլև դառնում է երկրում իրավապաշտպան աշխատանքի զարգացման անհրաժեշտ գրավական: Սա իրավունքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական պետություն կայացնելու հիմնարար ցուցիչ է:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածով նախատեսված իրավաչափ սահմանափակումների չափանիշների և փաստաբանի մասնագիտական գործունեության վերաբերյալ արտահայտվելու իրավունքի հարաբերակցությանը մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>466</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ փաստաբանը ներկայացնում ու պաշտպանում է անձի, ում պետությունը կասկածում կամ մեղադրում է կոնկրետ, բայց ենթադրյալ հանցանքի կատարման մեջ: Փաստաբանի առաքելությունն է այդ անձի համար քրեական վարույթի ընթացքում ապահովել որակյալ իրավաբանական օգնություն, իրավական պատշաճ պաշտպանություն մեղադրանքից: Սա որևէ կերպ չի նշանակում, թե փաստաբանն արդարացնում է հանցագործությունները կամ ապահովում անպատժելիություն: Փաստաբանի մասնագիտական գործունեությունն ուղղված է հնարավոր ապօրինի հետապնդումից կամ ապօրինի ազատազրկումից յուրաքանչյուրի պաշտպանությանը:

Միջազգային իրավաբանությունը, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, մեծ պատասխանատվություն է դնում պետությունների վրա նման իրավիճակներ թույլ չտալու համար: Անգամ, եթե պետությունն ինքը չի նպաստել հասարակական կանխակալ ընկալումների, դրա արդյունքում դատարանի ու փաստաբանների նկատմամբ ճնշման ձևավորմանը, միևնույն է՝ այդպիսի իրավիճակի դեպքում պարտավոր է համապատասխան մարմինների միջոցով գործադրել առավելագույն ջանքեր իրավիճակը մեղմելու, դատական

<sup>465</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/499> հղումով:

<sup>466</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 594-597:



իշխանության անկախության բարձր արժեքի երաշխավորումը, ինչպես նաև փաստաբանների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Դա անհրաժեշտ է անել հենց այն նկատառումից ելնելով, որ նման իրավիճակները կարող են ձևավորել դատական իշխանության անկախությանը միջամտության վտանգավոր նախադեպ<sup>467</sup>:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկում է զերծ մնալ փաստաբաններին ուղղված վիրավորանք, ծաղրանք կամ ատելության խոսք պարունակող մեկնաբանություններից՝ փաստաբանի դերի և իրավապաշտպան աշխատանքի նկատմամբ հասարակական ճիշտ ընկալում ձևավորելու նպատակով:

Պետք է հատուկ արձանագրել, որ Հայաստանում փաստաբանությունը կայացած է, և փաստաբաններն ունեն իրավապաշտպան առաքելություն:

## **2. Իրավաբանական օգնության իրավունքը և փաստաբանի մատչելիությունը՝ որպես քրեական հեղափոխության ենթարկվող անձի այլ իրավունքների ապահովման երաշխիք**

Փաստաբանության ինստիտուտն ունի առանձնահատուկ նշանակություն իրավաբանական օգնություն ստանալու անձի սահմանադրական իրավունքի իրացման գործում: Պատահական չէ, որ Սահմանադրությամբ իր ամրագրումն է գտել նաև իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեության երաշխավորման պահանջը:

Փաստաբանի պաշտպանված մասնագիտական գործունեությունը երկրում մարդու իրավունքների պաշտպանության համակարգը պայմանավորող գործոններից է, արդարադատության համակարգում և իրավունքի գերակայության ապահովման գործում այն ունի առանցքային կարևորություն:

Փաստաբանի անխոչընդոտ մասնագիտական գործունեության դերը և այդ առնչությամբ պետությունների պարտավորությունները նախատեսված են նաև ՄԱԿ-ի մի շարք փաստաթղթերով<sup>468</sup>: Ավելին, խոշտանգումների կանխարգելման կոմիտեի չափանիշների

<sup>467</sup> Այս մասին Պաշտպանի իրապարակային հայտարարությունն հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/659> հղումով:

<sup>468</sup> «Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ», Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելու ձևերին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ., հասանելի է <https://www.ohchr.org/en/professionalinterest/pages/roleoflawyers.aspx> հղումով:

համաձայն՝ փաստաբանի մատչելիությունը հանդիսանում է նաև ազատությունից զրկված անձանց՝ վատ վերաբերմունքի դեմ հիմնարար երաշխիք:<sup>469</sup>

Փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման հարցը քննարկման առարկա է դարձրել ՀՀ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, Գ. Միքայելյանի վերաբերյալ գործով 2009 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է ձերբակալման սկզբնական փուլում գտնվող անձի կոնկրետ իրավունքների ծավալը, որն այլ իրավունքների թվում ներառում է նաև իր փաստաբանին հրավիրելու իրավունքը<sup>470</sup>:

Փաստաբանի մատչելիության իրավունքի տեսանկյունից կարևոր է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2018 թվականին ուժի մեջ մտած փոփոխությունների արդյունքում ամրագրվեց, որ մինչև ձերբակալման արձանագրությունն անձին հայտարարելն արգելանքի վերցված անձն, ի թիվս այլնի, իրավունք ունի փաստաբան հրավիրելու:

Այնուամենայնիվ, թե՛ նախորդ տարիներին, թե՛ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների շարունակականությունը վկայում է, որ իրավակիրառ պրակտիկայում դեռևս առկա են իր վստահորդին տեսակցելու նպատակով ազատությունից զրկման վայր փաստաբանի մուտքը խոչընդոտելու դեպքեր:

Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի գործունեության ընթացքում արձանագրվել է նման դեպքերի աճ: Արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանները տեղեկացրել են, որ իրենց վստահորդներին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժին, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, և իրենց չեն թույլատրում հանդիպել նրանց հետ: Օրինակ, արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանները տեղեկացրել են, որ իրենց վստահորդներին բերման են ենթարկել ՀՀ ոստիկանություն, սակայն Ոստիկանության ծառայողներն իրենց չեն թույլատրում հանդիպել նրանց հետ: Փաստաբանները Պաշտպանի աշխատակազմ ներկայացրել են նաև ահազանգեր և բողոքներ, առ այն, որ իրենց վստահորդները տեղափոխվել են Ոստիկանության մեկ տարածքային ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում, և փաստաբանները վստահորդների գտնվելու վայրը ճշտելու համար դիմել են Պաշտպանի աջակցությանը, որպեսզի կարողանան ժամանակին մասնակցել վստահորդի մասնակցությամբ քննչական կամ այլ դատավարական գործողությանը:

Փաստաբանի մուտքը խոչընդոտելու վերաբերյալ Պաշտպանին ներկայացված յուրաքանչյուր բողոքի դեպքում, նկատի առնելով մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից դրա կարևորությունը, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացվում է անհապաղ միջամտություն:

<sup>469</sup> Տե՛ս ԽԿԿ-ի չափանիշների վերաբերյալ զեկույցը : Փաստաթուղթ թիվ CPT/Inf/E (2002) 1, կետ 18-25: Զեկույցի ամբողջական տեքստը հասանելի է հետևյալ հղումով. <https://www.echr.am/resources/echr//pdf/02d62f9426f1725ecb9525f656d0e6b3.pdf>:

<sup>470</sup> Տե՛ս Գագիկ Միքայելյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ ԵԱԴԴ/0085/06/09 գործով կայացված որոշումը:

Այլ կերպ ասած, բարձրացված հարցն անհապաղ բանավոր ընթացակարգով քննարկվում է իրավասու պետական մարմնի ներկայացուցչի հետ, իսկ նման ընթացակարգով հարցը չլուծվելու դեպքում՝ արագ արձագանքման ձևով կազմակերպվում է այց տվյալ բաժին: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ մեծամասամբ խնդիրը բանավոր ընթացակարգով ստանում է լուծում, և այդ առնչությամբ Պաշտպանը կարևորում է Ոստիկանության, Քննչական կոմիտեի, ԱԱԾ քննչական դեպարտամենտի հետ հաստատված կայուն համագործակցությունը:

Նույնաբնույթ խնդիրները հատկապես կարևոր են, քանի որ փաստաբանի մուտքն ու վստահորդին տեսակցելն ինքնանպատակ չէ, այն ուղղված է ապահովելու իրավաբանական օգնության կարիք ունեցող անձի իրավունքների լիարժեք իրացմանը և մի շարք դեպքերում կարող է ուղղակիորեն հանգեցնել անձի պաշտպանության իրավունքի ոտնահարմանը:

Հատկանշական է, որ վստահորդների իրավունքների պաշտպանությունը ստանձնելու նպատակով փաստաբանների մուտքն արգելելու վերաբերյալ իրավապահ մարմինների ներկայացուցիչները ներկայացրել են տարաբնույթ պատճառաբանություններ:

Որոշ դեպքերում իրավապահ մարմինները պատճառաբանել են, որ անձը հրաժարվել է իրավաբանական օգնություն ստանալու իր իրավունքից, և փաստաբանի մուտքի արգելքը պայմանավորված է եղել այդ հանգամանքով:

Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են նաև այլ դեպքեր: Օրինակ՝ փաստաբանի մուտքը ձգձգվել է, քանի որ համապատասխան մարմնում հերթապահ ծառայություն իրականացնող անձինք, ըստ իրենց պարզաբանման, չեն կարողացել արագ կապվել իրենց վերադասի հետ: Ընդ որում, արձանագրվել են դեպքեր, երբ փաստաբանի մուտքը հիշյալ պատճառաբանությամբ չի թույլատրվել մինչև նրանց վստահորդների մասնակցությամբ իրականացվող քննչական կամ այլ դատավարական գործողության ավարտը:

Նման պրակտիկան խիստ մտահոգիչ է և վտանգում է վարույթն իրականացնող մարմնի վարչական շենքում գտնվող անձանց՝ հատկապես քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրական իրացումը:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են նաև հասցեագրվել փաստաբանի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելու վերաբերյալ բողոքներ, որոնք կապված չեն ազատությունից զրկելու վայրեր մուտք գործելու հետ, այլ ցույց են տալիս, որ փաստաբանի մատչելիությունը չապահովելը կարող է վտանգել քրեական հետապնդման ենթարկվող մարդու մյուս իրավունքները:

Փաստաբանները Պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներով բարձրացրել են քրեական վարույթի շրջանակում պաշտպան ներգրավելու վերաբերյալ հարցեր, որոնք պայմանավորված են եղել քրեական գործերը հետաքննություն իրականացնող մարմնից քննչական մարմիններ ուղարկելու, ինչպես նաև քրեական գործերի ենթակայությունը փոխելու հետ: Քրեական հետապնդման ենթարկվող անձի փաստաբանի միջոցով իր պաշտպանությունն իրականացնելու

իրավունքի իրացման տեսանկյունից պաշտպան ներգրավելու հարցն առավել կարևորվում է նշված անձանց ձեռքակալելու կամ կալանավորելու դեպքերում:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով փաստաբանը հայտնել է, որ քրեական գործի շրջանակում հանդիսացել է վկայի ներկայացուցիչ և քննչական գործողության իրականացման ժամանակ վարույթն իրականացնող քննիչի կողմից միջամտություն է իրականացվել իր մասնագիտական գործունեության նկատմամբ:

Մեկ այլ բողոքով փաստաբանը տեղեկացրել է, որ Ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններից մեկի վարչական շենքում դատական կարգադրիչը, դիմակ չկրելու պատճառաբանությամբ խոչընդոտել է իր մուտքը դատական նիստերի դահլիճ, ինչի արդյունքում, ըստ փաստաբանի՝ դատական կարգադրիչը դուրս է եկել իր լիազորությունների տիրույթից, իր գործողությունների արդյունքում խախտվել են իր վստահորդի արդար դատաքննության, արդյունավետ դատական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքները:

Քրեական հետապնդման ենթարկվող անձանց իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման հարցերին մանրամասն անդրադարձ կատարվել է նաև Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումների շրջանակներում՝ ընդգծելով, որ նախորդ տարիներին փաստաբանական անխոչընդոտ գործունեության ապահովման նպատակով փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտող վարքագծի քրեականացման վերաբերյալ ներկայացված առաջարկը որոշակի առումով ներառվել է 2020 թվականի սեպտեմբերի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխությունների արդյունքում ընդունված կարգավորումներով<sup>471</sup>: Մասնավորապես, նախորդ տարիներին Պաշտպանը միջազգային համապատասխան փորձի ուսումնասիրության արդյունքում արձանագրել էր, որ ՀՀ քրեական օրենսգրքի նախորդ տարիներին գործող խմբագրության 332<sup>3</sup>-րդ հոդվածի առաջին մասի կարգավորումը, որը հանցագործություն է համարում պաշտոնատար անձի կողմից փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, սուբյեկտային առումով քրեաիրավական ազդեցության նեղ շրջանակ է սահմանում, ինչը հնարավոր չէր ընդունելի համարել<sup>472</sup>:

Փաստաբանի անխոչընդոտ գործունեության առնչությամբ հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի Տարեկան հաղորդմամբ արձանագրվել էին Դատախազության տրամադրած պարզաբանումներն առ այն, որ 2020 թվականի ընթացքում ազատությունից զրկման վայր, Ոստիկանության ստորաբաժանում կամ քննչական մարմին

---

<sup>471</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 608-616:

<sup>472</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 360-362:

փաստաբանի մուտքը չթույլատրելու, քննչական և դատավարական այլ գործողություններին պաշտպանի մասնակցությունը չապահովելու հետ կապված արձանագրվել է 2 դեպք, որոնցից մեկ դեպքով փաստաբանի կողմից բողոք է ներկայացվել ՀՀ հատուկ քննչական ծառայություն այն մասին, որ ՀՀ ԱԱԾ-ում իր վստահորդին հանդիպելու նպատակով իրեն չեն թույլատրել մուտք գործել ՀՀ ԱԱԾ Երևան քաղաքի վարչության շենք, որտեղ գտնվել է իր վստահորդը: Մեկ այլ դեպքով՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում բողոք է ստացվել, որ ՀՀ քննչական կոմիտեի քննիչը՝ իր վարույթում գտնվող քրեական գործի նախաքննության ընթացքում խոչընդոտել է պաշտպանի մասնակցությունը քննչական գործողությանը: Հատուկ քննչական ծառայությունում նախապատրաստված նյութերով վերոգրյալ հանգամանքները դարձել են քննության առարկա, որոնցով որոշում են կայացվել քրեական գործի հարուցումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով մերժելու մասին:

Պաշտպանի 2020 թվականի Տարեկան հաղորդմամբ հատուկ նշվել էր, որ Փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու արձանագրված դեպքերին զուգահեռ հարուցված քրեական գործերի բացակայությունը խիստ մտահոգիչ է: Դրա հետ մեկտեղ նշվել էր, որ ՀՀ քրեական օրենսգրքի 332.3-րդ հոդվածը գործնականում չի կիրառվում, ինչը ևս փաստաբանների գործունեությունը խոչընդոտելու դեպքերի աճի պատճառ կարող է հանդիսանալ:

Ըստ Դատախազության պարզաբանումների՝ 2021 թվականի ընթացքում ազատությունից զրկման վայր, Ոստիկանության ստորաբաժանում կամ քննչական մարմին փաստաբանի մուտքը չթույլատրելու, քննչական և դատավարական այլ գործողություններին պաշտպանի մասնակցությունը չապահովելու հետ կապված դեպքեր չեն արձանագրվել:

ՀՀ քննչական կոմիտեից տրամադրված տեղեկության՝ 2021 թվականի ընթացքում Քննչական կոմիտեի ներքին անվտանգության վարչություն քննչական և դատավարական այլ գործողություններին պաշտպանի մասնակցությունը չապահովելու հետ կապված ներկայացվել է մեկ միջնորդություն, որի նախնական ուսումնասիրության արդյունքում Քննչական կոմիտեի նախագահի հրամանով քննիչի նկատմամբ կիրառվել է «զգուշացում» կարգապահական տույժը:

Առկա խնդիրների օրենսդրական կանոնակարգման անհրաժեշտության հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում դեռևս 2017 թվականի ընթացքում մշակվել և շրջանառության է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ նախատեսող օրենքի նախագիծ<sup>473</sup>:

Չնայած նրան, որ նախագծում տեղ գտած առաջարկներից մեկն օրենսդրական մակարդակով կարգավորվել է, այնուամենայնիվ փաստաբանների մուտքի և նրանց գործունեության ոլորտում

---

<sup>473</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 603-605, տե՛ս նաև Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում, հասանելի է <https://www.e-draft.am/projects/1478/about> հղումով:

առկա խնդիրները շարունակում են մնալ չլուծված: Ուստի, օրենսդրական կանոնակարգման խնդրից զատ առավել կարևոր է միջոցներ ձեռնարկել դրանց գործնական կիրառման ուղղությամբ:

Հարկ է նկատել, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած ՀՀ քրեական նոր օրենսգրքով սահմանվել են փաստաբանի գործունեության, ինչպես նաև ազատությունից զրկված անձի՝ փաստաբանի մատչելիության իրավունքի ապահովման քրեաիրավական երաշխիքները: Մասնավորապես, նոր Քրեական օրենսգրքի 486-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում նաև փաստաբանի գործունեությանը ցանկացած ձևով միջամտելու համար, իսկ 490-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը պատասխանատվություն են նախատեսում, ի թիվս այլոց, նաև փաստաբանի նկատմամբ սպառնալիքի և բռնություն գործադրելու համար: Բացի դրանից, Օրենսգրքի 361-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվել փաստաբանի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու համար, եթե դա դրսևորվել է իր վստահորդին տեսակցելու նպատակով՝ ազատությունից զրկման ցանկացած վայր փաստաբանի մուտքն ապօրինի չթույլատրելով:

Նշված օրենսդրական կարգավորումներն համընկնում են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջարկված փոփոխությունների տրամաբանությանը:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ՝

1. *անհրաժեշտ է բացառել փաստաբանի մուտքի արգելքի ցանկացած դրսևորում, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այն ունի երկու հիմնարար բաղադրիչ՝ անձի պաշտպանության իրավունքի և փաստաբանի մասնագիտական օրինական աշխատանքի անխոչընդոտ, պարզաձև ապահովում,*

2. *ՀՀ քրեական օրենսգրքում կատարված օրենսդրական փոփոխությունների գործնական կիրառման միջոցով անհրաժեշտ է ուժեղացնել հսկողությունը փաստաբանի մասնագիտական գործունեության ավելի բարձր մակարդակի պաշտպանությունն ապահովելու համար:*

### **3. Մեղադրյալի և փաստաբանի հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառելու, որպես ապացույց քրեական գործի շրջանակում օգտագործելու ոչ իրավաչափ պրակտիկան**

Նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել էր նաև քրեական վարույթի ընթացքում փաստաբանի և նրա պաշտպանյալի հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման հարցը: Այդ խնդրի կապակցությամբ 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակել են ստացվել բողոքներ:

Օրինակ՝ փաստաբանը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով հայտնել է, որ քրեական գործերից մեկով քննության ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում գաղտնալսվել են իր կողմից աշխատանքային նպատակով օգտագործվող, ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքէջում տեղադրված հեռախոսահամարով

կատարված խոսակցությունները, մասնավորապես, այլ քրեական գործերով իր պաշտպանյալների հետ տեղի ունեցած և փաստաբանական գաղտնիք պարունակող խոսակցությունները: Փաստաբանը մտավախություն է հայտնել առ այն, որ այդ ձայնագրությունները կարող են որպես ապացույց դրվել քրեական գործի հիմքում և շարունակել պահվել քրեական գործի նյութերում:

Հետագայում բողոքի քննարկման շրջանակում պարզվել է, որ փաստաբանի և նրա պաշտպանյալի հեռախոսային խոսակցությունները գաղտնալսվել են դատական ակտի առկայության պայմաններում և քրեական հետապնդման մարմնի հետ իրականացված համապատասխան գրագրության արդյունքում փաստաբանի հեռախոսային խոսակցությունների գննության արձանագրությունները քրեական գործով որպես ապացույց չեն ճանաչվել և կայացվել է որոշում դրանց ոչնչացման մասին:

Նմանատիպ մտահոգություններ ներկայացվել են նաև մի շարք այլ փաստաբանների կողմից՝ նշելով, որ դա եզակի երևույթ չէ: Մտահոգիչ է առանձին փաստաբանների ընկալումն առ այն, որ փաստաբանների նկատմամբ ճնշումները՝ կապված մասնագիտական պարտականությունների և դրանց խոչընդոտելու հետ, պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Ճնշման առաջին խումբը կապված է իշխանությունների կողմից փաստաբանների և վստահորդների հարաբերություններին միջամտելու հետ, երբ գաղտնալսում են փաստաբանի և նրա վստահորդի հեռախոսային խոսակցությունները, որոշ դեպքերում դրանց արձանագրությունները կցվում են քրեական գործին, կոտրում են էլեկտրոնային փոստի հասցեն՝ մատչելի դարձնելով այնտեղ առկա տեղեկությունները: Երկրորդ խումբը նրանց նկատմամբ բարոյական և ֆիզիկական ճնշումներն են:

Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ պաշտպանյալի հետ փաստաբանի հեռախոսային խոսակցությունների արձանագրությունները, առանձին դեպքերում, քրեական գործին կցելը (այն չոչնչացնելը) խիստ մտահոգիչ է անձի պաշտպանության իրավունքի և փաստաբանների մասնագիտական գործունեության երաշխիքների ապահովման տեսանկյունից:

Մեղադրյալի՝ իր պաշտպանի հետ խորհրդապահական կարգով հաղորդակցվելու իրավունքը պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրիչ է, որի վերաբերյալ միջազգային իրավաբանությունը կարևոր երաշխիքներ է նախատեսում:

Օրինակ՝ «Փաստաբանի մասնագիտական գործունեության ազատության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2000 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ (2000)21 հանձնարարականի 1-ին սկզբունքի 1-ին կետն ամրագրում է, որ փաստաբանները չպետք է ենթարկվեն որևէ պատժամիջոցի, ճնշման կամ դրանց սպառնալիքի, երբ գործում են իրենց մասնագիտական չափանիշներին համապատասխան: Հանձնարարականի 1-ին սկզբունքի 6-րդ կետի համաձայն՝ պետք է ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու փաստաբան-վստահորդ հաղորդակցության գաղտնիությունը: Այս կանոնից բացառությունները թույլատրելի են, միայն եթե դրանք համահունչ են իրավունքի գերակայությանը<sup>474</sup>:

<sup>474</sup> Հասանելի է <https://rm.coe.int/16804d0fc8> հղումով:

Պաշտպանի հետ երրորդ անձի լսողությունից դուրս հաղորդակցվելու իրավունքը հանդիսանում է արդար դատաքննության իրավունքի մաս և բխում է 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետից: Եթե փաստաբանը հնարավորություն չունենա խորհրդակցել իր պաշտպանյալի հետ և նրանից ստանալ գաղտնի ցուցումներ՝ առանց հսկողության, նրա օգնությունը կկորցնի իր օգտակարության մեծ մասը, մինչդեռ՝ Կոնվենցիան նպատակ ունի երաշխավորել գործնական և արդյունավետ իրավունքներ<sup>475</sup>:

Ընդհանրապես, միջազգային իրավաբանությունը, ներառյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշումները զարգացել են այն ուղղությամբ, որ փաստաբան-վստահորդ հաղորդակցության գաղտնիության երաշխիքներին ցանկացած անհամաչափ միջամտությունը կարող է ազդեցություն ունենալ արդարադատության պատշաճ իրականացման և Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված իրավունքների վրա: Դա կարող է բացասաբար ազդել փաստաբանի մասնագիտական հեղինակության վրա՝ ինչպես իր վստահորդների, այնպես էլ ողջ հասարակության շրջանում<sup>476</sup>:

Եվ ընդհանուր տրամաբանությունն այնպիսին է, որ ցանկացած միջամտություն՝ անկախ նրանից, թե ներպետական օրենսդրությամբ ինչ ընթացակարգի շրջանակներում է իրականացվում, իրավաչափ կարող է համարվել, միայն եթե պահպանված են այդպիսի միջամտության օրինականությունն ու համաչափությունը, այլ կերպ՝ առկա է հիմնավեր պատճառ (reasonable cause):

Նշված միջազգային չափանիշների հաշվառմամբ՝ Պաշտպանն անթույլատրելի է համարում փաստաբան-վստահորդ գաղտնի հաղորդակցության, այդ թվում՝ անձի պաշտպանությունն իրականացնելու հետ կապված ցանկացած տեղեկության նկատմամբ հսկողություն, որը կարող է վտանգել նման միջամտության իրավաչափ նպատակով չպայմանավորված այլ տեղեկությունների գաղտնիությունը:

Ասվածի վերաբերյալ հարկ է հավելել, որ տարբեր երկրներ տարբեր հավելյալ երաշխիքներ են ստեղծել փաստաբան-վստահորդ հեռախոսային խոսակցությունները լսելու հավանականությունը նվազագույնի հասցնելու համար: Օրինակ, ԱՄՆ Ֆլորիդա նահանգի Շարլոտի շրջանի Շերիֆի գրասենյակը մշակել է քաղաքականություն, որն իրավաբաններին թույլ է տալիս իրենց հեռախոսահամարները տեղադրել չհսկվող հեռախոսահամարների ցանկում<sup>477</sup>:

Փաստաբանի և վերջինիս վստահորդի միջև հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցությունների լսման և ձայնագրառման անթույլատրելիությանը զուգահեռ, շատ կարևոր է նման նյութերը որպես ապացույց օգտագործելու անթույլատրելիության գիտակցումը պետական

<sup>475</sup> Տե՛ս Բրեննանն ընդդեմ Միացյալ Թագավորության (BRENNAN v. THE UNITED KINGDOM) գործով 2002 թվականի հունվարի 16-ի վճիռը, գանգատ թիվ 39846/98, կետ 58:

<sup>476</sup> Տե՛ս, օրինակ, Ջագարիան ընդդեմ Իտալիայի (Zagaria v. Italy) գործով 2008 թվականի հուլիսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 58295/00, կետ 36, Նիմիցն ընդդեմ Գերմանիայի (Niemiets v. Germany) գործով 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 13710/88, կետ 37:

<sup>477</sup> Հասանելի է <https://www.prisonlegalnews.org/news/2008/aug/15/authorities-listen-in-on-attorney-client-calls-at-jails-in-fl-ca-and-tx/> հղումով:



իրավասու մարմինների կողմից: Իրավասու մարմինները պետք է միջոցներ ձեռնարկեն նմանատիպ նյութերը ոչնչացնելու ուղղությամբ:

Փաստաբանների պալատը ևս նման դեպքերում հանդես է եկել համապատասխան հայտարարություններով՝ դատապարտելով այդ պրակտիկան և իրավասու պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց հորդորելով՝ փաստաբանի և վերջինիս վստահորդի միջև հեռախոսային կամ կապի այլ միջոցներով տարվող խոսակցությունների լսման և ձայնագրառման նյութերն անհապաղ ոչնչացնել:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ստացված բողոքի քննարկման շրջանակներում արձանագրվել է 1 դեպք՝ մեղադրյալի և փաստաբանի՝ միմյանց հետ հեռախոսային խոսակցությունները լսելու և ձայնագրառում կատարելու վերաբերյալ, որը որպես ապացույց չի օգտագործվել և ոչնչացվել է:

Փաստաբանական գաղտնիք պարունակող տեղեկությունների անհապաղ ոչնչացման պահանջի պահպանումն արդար դատաքննության երաշխիք է և անթույլատրելի ապացույցների հիման վրա վարույթն իրականացնող մարմնի մոտ ներքին համոզմունք չձևավորելու անհրաժեշտ պայման: Ուստի, իրավաչափ նպատակով չպայմանավորված փաստաբան-վստահորդ հեռախոսային խոսակցությունները լսելու արդյունքում ձեռք բերված տեղեկություններն ամեն դեպքում պետք է ոչնչացվեն:

*Վերոգրյալի հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է, որ՝*

*1. անհրաժեշտ է հատուկ մեխանիզմներ մշակել, որոնք հնարավորություն կտան առաջին հերթին կանխել փաստաբան-վստահորդ հեռախոսային խոսակցություններն անիրավաչափորեն վերահսկելու դեպքերը,*

*2. անհրաժեշտ է շարունակական քայլեր ձեռնարկել մեղադրյալի և նրա փաստաբանի հեռախոսային խոսակցությունները վերահսկելու արդյունքում ձեռք բերված տվյալները քրեական գործին կցելը և հատկապես այն որևէ ձևով դատարանին հասանելի դարձնելը բացառելու ուղղությամբ:*

## **ԳԼՈՒԽ 5. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՀԻՄՔՈՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԺԱՄԱՆԱԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Երկրում համաճարակային իրավիճակի փոփոխություններից ելնելով նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակի տարածմամբ պայմանավորված 2020 թվականի մարտի 16-ին Կառավարության հայտարարած արտակարգ դրությունը 2020 թվականի սեպտեմբերի 11-ին փոխարինվեց կարանտինով, որի ընթացքում սահմանվեցին մի շարք սահմանափակումներ: Դրանց պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու պարտականությունը դրվեց տարբեր պետական մարմինների վրա:

Պաշտպանը 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ մանրամասն անդրադարձել է տեղաշարժման թերթիկների արտակարգ դրության պայմաններում ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներին և թերթիկի բացակայության կամ թերի լրացված լինելու դեպքում նշանակվող տուգանքներին ինչպես դրանց իրավաչափության, այնպես էլ գործնական առաջացող խնդիրների տեսանկյունից:<sup>478</sup> Չնայած 2021 թվականի ընթացքում նշված սահմանափակումները չեն գործել, սակայն Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ 2020 թվականի ընթացքում իրենց վերաբերյալ կազմված վարչական իրավախախտման մասին որոշումների կապակցությամբ: Դա ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ բարձրացված խնդիրները կրել են համակարգային բնույթ:

Նոր Կորոնավիրուսային (COVID-19) վարակի տարածման կանխարգելման նպատակով 2021 թվականի ընթացքում գործող կարանտինային պայմանների շրջանակում սահմանվել էր փակ տարածքներում դիմակ կրելու պարտադիր պահանջ: 2021 թվականի նոյեմբերի 1-ից Առողջապահության նախարարի համապատասխան հրամանով դիմակ կրելու պարտադիր պահանջ էր սահմանվել նաև բաց հանրային տարածքներում:

Դիմակ կրելու պարտադիր պահանջ նախատեսվելուց հետո Մարդու իրավունքների աշխատակազմ ստացվել են մի շարք բողոքներ: Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ խնդիրները պայմանավորված են ոչ միայն թերի իրավակարգավորումներով, այլ նաև Ոստիկանության գործունեության անհստակությամբ, ոչ միասնական մոտեցումներով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածն առանձին կետ է նախատեսում կարանտինի ընթացքում անհատական պաշտպանության միջոցների կիրառման կանոնները խախտելու համար:

---

<sup>478</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 610-619:

Նախարարի հրամանով նախատեսելով փակ, իսկ հետագայում նաև բաց տարածքներում դիմակ կրելու պահանջ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված նորմի դիսպոզիցիայից անձի համար բավարար չափով պարզ չէ հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը (դիմակ չկրելը), և նման վարքագիծ դրսևորելու դեպքում հնարավոր պատասխանատվության աստիճանը:

**Ուստի, այս դեպքում ևս բավարար հետևողականություն չէր դրսևորվել դիմակ կրելու պահանջը խախտելու համար անձին պատասխանատվության ենթարկելու նպատակով իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան օրենք ընդունելու ուղղությամբ:**

Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ոստիկանության ծառայողները կոնկրետ դեպքերում չեն ցուցաբերել անհատական մոտեցում, հաշվի չեն առնվել յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները:

Այսպես, բողոքներից մեկով քաղաքացին հայտնել էր, որ մեքենայից դուրս գալուց դիմակն իր ձեռքում է եղել և դուրս գալուն պես պատրաստվել է կրել այն, սակայն Պարեկային ծառայողներն իր նկատմամբ կայացրել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն՝ հաշվի չառնելով իր պնդումները:

Բողոքներից մի քանիսով քաղաքացիները հայտնել են, որ դիմակ չկրելու համար ՀՀ ոստիկանության կողմից ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ այն պարագայում, որ այդ պահին ջուր է խմել, ինչի համար էլ իջեցրել են դիմակը: Ընդ որում, քաղաքացիներից մեկի պնդմամբ՝ այդ մասին ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր բացատրություններ է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին, սակայն ապարդյուն: Ավելին՝ նկատի ունենալով, որ Ոստիկանության ծառայողները հաշվի չեն առնում ներկայացրած բացատրություններն՝ իր նախաձեռնությամբ որպես վկա է հրավիրել ներկա անձանց, ինչը գնահատվել է որպես Ոստիկանության ծառայողի պարտականությունների կատարմանը խոչընդոտելուն ուղղված գործողություն:

Մեկ այլ բողոքով էլ քաղաքացին հայտնել է, որ որդու նկատմամբ դիմակ չկրելու պատճառով երեք տարբեր օրերի կազմվել են վարչական իրավախախտումների վերաբերյալ արձանագրություններ: Բողոք ներկայացրած անձը նշել է, որ որդու նկատմամբ սահմանված է 2-րդ խմբի հաշմանդամություն, ունի հոգեկան առողջության խնդիրներ և հաշվառված է հոգեկան առողջության կենտրոնում: Ըստ պնդման՝ որդին ենթակա չէ վարչական պատասխանատվության, քանի որ վարչական իրավախախտումները կատարելու ժամանակ գտնվել է անմեղսունակության վիճակում: Այսինքն՝ խրոնիկական հոգեկան հիվանդության, տկարամտության հետևանքով չէր կարող իրեն հաշիվ տալ իր գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները: Նշված դեպքում՝ Պաշտպանի ներկայացուցիչների միջամտությամբ որդու նկատմամբ կայացված վարչական ակտերը վերացվել են:

Պաշտպանն արձանագրում է, որ Ոստիկանությունն այս հիմքով վարչական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնի ջուր խմելու կամ սնվելու և միաժամանակ դիմակ կրելու անհամատեղելիությունը: Այս հարցում ևս Ոստիկանության գործունեությունն ունեցել է ծայրահեղ դրսևորումներ, և համապատասխան արձանագրությունները կազմելիս հաշվի չի առնվել դիմակ կրելու օբյեկտիվ հնարավորությունը:

**Պաշտպանը վերահաստատում է իր արձանագրումն առ այն, որ ոստիկանը պետք է ցուցաբերի անհատական մոտեցում իր գործողություններն իրականացնելիս՝ յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները հաշվի առնելով: Պաշտպանը կրկին արձանագրում է, որ դիմակ չկրելու կամ դիմակը ոչ պատշաճ կրելու համար վարչական տուգանքը չպետք է ստանա պատժիչ բնույթ, դա անընդունելի ու մարդու իրավունքների համակարգի տեսանկյունից վտանգավոր մոտեցում է: Այդ գործողությունների նպատակը պետք է լինի նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակի կանխարգելմանն աջակցելը, երկրում համերաշխության մթնոլորտ ապահովելուն նպաստելը. սա է այն ղեկավար սկզբունքը, որով պետք է ղեկավարվել:**

Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմն արձանագրել է, որ Ոստիկանության ծառայողների կողմից չի դրսևորվել միասնական մոտեցում: Մասնավորապես՝ որոշ դեպքերում դիմակը չկրելու համար Ոստիկանության ծառայողների կողմից անձին տրվել է բանավոր զգուշացում, իսկ որոշ դեպքերում նշանակվել է օրենսդրությամբ նախատեսված վարչական տույժը: Մի շարք քաղաքացիներ այս առնչությամբ մտահոգություններ են հայտնել՝ նշելով, որ ՀՀ ոստիկանության ծառայողներն իրենց վերաբերյալ արձանագրություն են կազմել և տուգանել են, դրան զուգահեռ մի շարք այլ քաղաքացիների վերաբերյալ նույն պայմաններում արձանագրություններ չեն կազմվել: Բացի դրանից, բավարար իրազեկման աշխատանքներ չեն տարվել:

Քաղաքացիները տեղեկացրել են նաև, որ Ոստիկանության ծառայողները դիմակ չկրելու համար իրենց նկատմամբ կազմել են արձանագրություն՝ վստահեցնելով, որ այն իրենից ներկայացնում է միայն նախազգուշացում: Մինչդեռ, ավելի ուշ ստացել են վարչական իրավախախտման վերաբերյալ որոշում, համաձայն որի իր նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 10.000 ՀՀ դրամ գումարի չափով: Պաշտպանը նման պրակտիկա արձանագրել է նաև նախորդ տարի:

Նաև հատկանշական է, որ ըստ ՀՀ Ոստիկանությունից ստացված տվյալների՝ ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի ընթացքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182.4-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման համար կայացվել են թվով 20112 որոշումներ:

Չնսեմացնելով իրավասու մարմինների իրական բարի նպատակները, այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ որոշ դեպքերում նման միջոցառումներն ունեցել են ծայրահեղ դրսևորումներ, և համապատասխան արձանագրությունները կազմվել են առանց հաշվի առնելու քաղաքացիների ներկայացրած փաստարկները: Ոստիկանության դրսևորած նման մոտեցումների պատճառն

առաջին հերթին եղել է միասնական չափանիշների բացակայությունը, որով Ոստիկանության ծառայողները կարող էին առաջնորդվել իրենց գործունեության ընթացքում:

Բացի դրանից, բողոքների քննության ընթացքում Ոստիկանությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ մատնանշված դեպքերի կապակցությամբ անցկացվել են ծառայողական քննություններ: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հաճախ դրանք կրում են սահմանափակ իրավիճակային բնույթ: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ *յուրաքանչյուր անգամ ոստիկանների գործողությունների առնչությամբ նշանակվող ծառայողական քննություններն առանց նկարագրված համակարգային խնդիրները լուծելու իրական արդյունք տալ չեն կարող: Նման պայմաններում այդ ծառայողական քննությունները պարզապես ձեռք են բերում դրվագային ու այն էլ ոչ արդյունավետ նշանակություն կոնկրետ միջադեպերով արձանագրվող խնդիրները լուծելու տեսանկյունից, և պատրանքային են դառնում կուրակված համակարգային խնդիրները լուծելու տեսանկյունից:*

Դիմակ կրելու պարտադիր պահանջի իրականացման ապահովումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտվեն անձանց այլ իրավունքները: Այսպես, ստացված բողոքներից մեկով փաստաբանը տեղեկացրել է, որ ներկայացել է առաջին ատյանի դատարանում կայանալիք դատական նիստին իր վստահորդի շահերը պաշտպանելու նպատակով: Նշել է, որ դատարանի նստավայրում դատական կարգադրիչը, դիմակ չկրելու պատճառաբանությամբ խոչընդոտել է իր մուտքը դատական նիստերի դահլիճ: Փաստաբանը մատնանշել էր, որ չլինելով վարչական վարույթ իրականացնելու իրավասություն ունեցող մարմին դատական կարգադրիչն իր գործողություններով խախտել է իր վստահորդի արդար դատաքննության, արդյունավետ դատական պաշտպանության և իրավաբանական օգնություն ստանալու իրավունքները:

Դատական դեպարտամենտի կողմից ներկայացրած պարզաբանումների համաձայն՝ դատական կարգադրիչն ապահովում է դատարանում անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից, որը կոնկրետ դեպքում դրսևորվել է որպես Առողջապահության նախարարի որոշմամբ սահմանված պարտադիր պահանջի չկատարում:

Ստացվում է դիմակ կրելու պարտադիր պահանջն ապահովելու պարագայում կարող են խախտվել այլ անձանց իրավունքները, այդ թվում՝ դատավարական: Նման դեպքերում, առավել ևս պետք է պահպանվի ոստիկանի կամ այլ պետական մարմնի ներկայացուցչի կողմից իրականացվող գործողությունների համաչափությունը կատարված արարքի և ներգործության արդյունքում այլ հիմնարար իրավունքների պաշտպանության միջև:

Յուրաքանչյուր պետական մարմնի աշխատակից պետք է հստակ գիտակցի, որ հենց ինքն է պետության այն ներկայացուցիչը, որ պարտավոր է երաշխավորել այն մարդու իրավունքները, ում ինքը մոտեցել է կամ ում նկատմամբ պատրաստվում է ներգործության միջոց կիրառել: Անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ է քաղաքացուն տրամադրել դիմակ, այլ ոչ թե տուգանել կամ սահմանափակել իր իրավունքները որպես առաջնային այլընտրանք: Անհրաժեշտ է

յուրաքանչյուր պահանջվող դեպքում քաղաքացուն պարզաբանել դիմակ կրելու պահանջի էությունը, դիմակ չկրելու կամ դիմակը ոչ պատշաճ կրելու հետևանքները: Ոստիկանները հատկապես պետք է նաև պատշաճ տիրապետեն այն իրավախախտման հատկանիշներին, որի համար անձի նկատմամբ կիրառում է ներգործության միջոց:

**Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ այս ոլորտում ևս ոստիկաններն իրենք են հաճախ դառնում գոյություն ունեցող անորոշ կարգավորումների «իրավական զոհը»:** Այս ոլորտի օրենսդրությունը չի ստացել բավարար կանխատեսելիություն թե՛ քաղաքացու, թե՛ Ոստիկանության ծառայողի համար:

Ոստիկանության ծառայողների համար պետք է առկա լինեն մանրամասն կանոններ կամ ուղեցույցներ, որոնք նախատեսված կլինեն հենց նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում նրանց աշխատանքի համար:

Ոստիկանները պետք է անցնեն թիրախային վերապատրաստում, որպեսզի կարողանան քաղաքացուն բացատրել դիմակ չկրելու թե՛ իրավական, թե՛ առողջապահական հետևանքները, իսկ անհրաժեշտության դեպքում ցուցաբերեն անհրաժեշտ աջակցություն:

Դրա հետ մեկտեղ, կարանտին սահմանելու մասին որոշմամբ կիրառվող սահմանափակումների կապակցությամբ ստացվել են նաև այլ բողոքներ: Օրինակ՝ անձը տեղեկացրել է, որ ստացել է վարչական իրավախախտման և իրեն վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում՝ ինքնամեկուսացման կանոնները խախտելու համար, այն պարագայում, երբ իրեն երբևէ չի ներկայացվել ինքնամեկուսանալու պահանջ, իսկ COVID-19-ի առկայության վերաբերյալ թեստը եղել է բացասական:

Մեկ այլ խնդիր է, երբ վարչական վարույթների ընթացքում պատշաճ չի ապահովվել անձանց լավաճ լինելու իրավունքը: Օրինակ, բողոքներից մեկով քաղաքացին հայտնել է, որ Ոստիկանության ծառայողը արձանագրություն է կազմել, սակայն իրեն հավաստիացրել է, որ դա ընդամենը բացատրություն է, այդ դեպքում վարչական տուգանք չի նշանակվում՝ միաժամանակ նշելով, որ իր հետ կկապվեն տեղեկությունները ճշտելու համար: Մինչդեռ, ոստիկանությունից իր հետ չեն կապվել, և որոշում է ստացել վարչական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Լավաճ լինելու իրավունքի իրացման կարևորությանը, դրա օրենսդրական կարգավորմանը և միջազգային իրավաբանությամբ տրված չափանիշներին Պաշտպանը մանրամասն անդրադարձել է 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ:<sup>479</sup>

Նույնաբնույթ բողոքների քննության ընթացքում Ոստիկանությունից պարզաբանումներ են ստացվել այն վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունները կազմվել են վարույթի ընթացիկ փուլում, ուստի քաղաքացիները մասնակցել են վարույթին:

---

<sup>479</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 610-619:

Պաշտպանը մեկ անգամ ևս արձանագրում է, որ նշված դեպքերով վարույթների ընթացքում անձի լսված լինելու իրավունքի իրացման ապահովումը մեծամասամբ կրել է ֆորմալ բնույթ, իսկ դա մտահոգիչ պրակտիկա է

Բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ առաջին հերթին առկա է եղել խնդիր վարչական վարույթի հիմքերի և հետևանքների մասին քաղաքացիներին իրազեկելու հարցի առնչությամբ: Վարչական վարույթի մասնակիցները չեն իրազեկվել իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների մասին: Երկրորդ, նույնիսկ տեղում արձանագրություն կազմելիս, երբ քաղաքացիներն այս կամ այն ձևով ներկայացրել են բացատրություն, միևնույն է այդ իրավիճակում նրանք չեն գիտակցել վարույթի հնարավոր հետևանքները: Դա չի կարող դիտարկվել որպես պատշաճ հնարավորություն, որպեսզի վարույթի մասնակիցը կարողանա վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնել, և դրանց միջոցով կարողանա ազդել վարչական մարմնի վերջնական որոշման վրա:

Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ դիմակ չկրելու կամ ոչ պատշաճ կրելու համար վարչական պատասխանատվության ենթարկված անձինք, հետագայում արդեն գիտակցելով իրենց մոտեցած ոստիկանների գործողությունների հետևանքները, բողոքներ են ներկայացրել Մարդու իրավունքների պաշտպանին:

Բացի այդ, Պաշտպանի աշխատակազմ ստացվել են նաև մի շարք բողոքներ առ այն, որ չեն պահպանվել հարուցված վարչական վարույթի մասին ծանուցելու, իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում վարչական տույժ նշանակելու և գրավոր վարչական ակտ ընդունելուց հետո այն եռօրյա ժամկետում վարույթի մասնակիցներին հանձնելու օրենսդրական պահանջները: Քաղաքացիներից շատերը տեղեկացրել են, որ ստացել են վարչական իրավախախտման մասին որոշումը մի քանի ամիս, իսկ որոշ դեպքերում նաև մեկ տարի անց: Բողոքներով նաև նշել են, որ ստանալու օրվանից փորձել են օրենքով սահմանված կարգով գանգատարկել այդ որոշումը, սակայն տեղեկացել են, որ վարչական ակտը արդեն դարձել է անբողոքարկելի: Ավելին, մի շարք բողոքներով քաղաքացիները տեղեկացրել են, որ իմացել են իրենց նկատմամբ վարչական իրավախախտման մասին որոշում կայացված լինելու մասին միայն Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունից կատարողական վարույթի հարուցման կամ գումարների բռնագանձման մասին համապատասխան գրությունները:

Դրա մասին է վկայում նաև Ոստիկանությունից ստացված տեղեկությունը առ այն, որ ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 182. 4-րդ հոդվածի հատկանիշներով կայացված վարչական ակտերի դեմ վերադասության կարգով ստացվել է 267 բողոք, որից 159-ը (այսինքն 59,5%-ը) տարբեր պատճառներով մերժվել են: Դատական բողոքարկման արդյունքում անվավեր են ճանաչվել 66 որոշում:

**Ուստի, Պաշտպան վերստին արձանագրում, որ Վարչական մարմիններն իրենց գործունեության ընթացքում պետք է իրական այլ ոչ թե պատրանքային հնարավորություն ստեղծեն անձին իր վերաբերյալ քննվող վարչական վարույթներին մասնակից դարձնելու համար: Վարույթի մասնակիցը պետք է հնարավորություն ունենա իր փաստարկներով ազդելու գործի ելքի վրա:**

Կարանտինային իրավիճակում, երբ նոր կորոնավիրուսային (COVID-19) վարակի տարածման վտանգը մնում է արդիական Ոստիկանության ծառայողների վարքագիծն ունենում է անհամաչափ դրսևորումներ: Դրանով պայմանավորված առկա է վարակի տարածման կանխարգելմանն ուղղված համաչափ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտություն: Իսկ նման միջոցներ ներկայում գրեթե բացակայում են: Իրավասու պետական մարմինների կողմից համապատասխան որոշումների կայացման սկզբնական փուլում համատարած վարչական պատասխանատվության ենթարկելով դիմակ կրելու պահանջ ներկայացնելուն հակադրվում է վիճակը, երբ հետագայում Ոստիկանության ծառայողներն առհասարակ մոռացության են մատնում համավարակը, այն դեպքում, երբ դիմակ կրելու սահմանված պարտադիր պահանջը շարունակում է պահպանվել:

*Այս համալրեքստում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ .*

- 1. անհրաժեշտ է օրենսդրության հստակությամբ ապահովել բավարար կանխարգելիչությունը թե՛ քաղաքացու, թե՛ Ոստիկանության ծառայողի համար,*
- 2. միջոցներ ձեռնարկել անհատական պաշտպանության միջոցների կիրառման կանոնները խախտելու համար պատասխանատվություն ենթարկելու իրավասություն ունեցող մարմինների, Կրկին պետք է ընդգծվի՝ Ոստիկանության գործունեության համապատասխան չափանիշներ մշակելու ուղղությամբ,*
- 3. ուժեղացնել վերահսկողությունը վերը նշված խնդիրներով ծառայողական քննությունների արդյունավետ իրականացման ուղղությամբ*
- 4. վարչական վարույթների ընթացքում պետք է ոչ թե ձևական, այլ իրական հնարավորություն ստեղծել անձանց լավագույն լինելու իրավունքն ապահովելու համար,*
- 5. Ոստիկանության ծառայողների հետ անցկացնել նվազագույն պահանջները բավարար թիրախային վերապատրաստումներ, որպեսզի արտակարգ իրավիճակների կամ կարանտինի ժամանակ առանձնահատկություններով պայմանավորված կարողանան համարժեք վարքագիծ դրսևորել քաղաքացիների հետ շփումներում:*



## **ԳԼՈՒԽ 6. ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ԽՆԴԻՐՆԵՐ**

### **1. ՀՀ ոստիկանության համակարգի ճանապարհային ոստիկանության և Պարեկային ծառայության գործունեությանն առնչվող բողոքներով բարձրացված խնդիրներ**

Մարդու իրավունքների պաշտպանին 2021 թվականի ընթացքում հասցեագրվել են մի շարք բողոքներ ճանապարհային ոստիկանության և Պարեկային ծառայության գործունեության վերաբերյալ:

Ճանապարհային ոստիկանության հետ ձևավորված է ինստիտուցիոնալ համագործակցություն, այդ թվում՝ արդյունավետ է աշխատանքը թե՛ գծին ստացվող ահազանգերի քննարկման ու լուծման հարցերով: 2021 թվականին նման համագործակցության կայուն հիմք է դրվել նաև Պարեկային ծառայության հետ:

Ինչպես և նախկինում 2021 թվականի ընթացքում ևս բողոքները վերաբերել են վարորդական վկայական ստանալու քննությունների անցկացմանը, տրանսպորտային միջոցը պահպանվող հատուկ տարածք տեղափոխելուն, նշանակված վարչական տույժերի իրավաչափությանը, ճանապարհային երթևեկության կազմակերպման տեխնիկական միջոցներին՝ ճանապարհային նշաններ, լուսացույցներ, գծանշումներ և այլն:

Բողոքներով բարձրացված հարցերի մեծ մասը հնարավոր է եղել լուծել սեղմ ժամկետներում՝ Ոստիկանության ներկայացուցիչների հետ արդյունավետ համագործակցության շրջանակում:

Այսպես, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Ոստիկանության էլեկտրոնային համակարգով նախապես գրանցվել է իր ավտոմեքենայի վերահաշվառման գործարքի իրականացման նպատակով: Իրեն ուղարկվել է sms հաղորդագրություն, որով տեղեկացվել է Ոստիկանության համապատասխան ստորաբաժանում մոտենալու օրվա և ժամի վերաբերյալ: Քաղաքացին հավելել է, որ գտնվում է Ոստիկանության համապատասխան ստորաբաժանումում, սակայն 5 ժամից ավելի է իր մեքենայի վերահաշվառման գործընթացը դեռ չի սկսվել: Նշված խնդիրն անհապաղ քննարկվել է իրավասու ստորաբաժանման ներկայացուցչի հետ և արագ ստացել է լուծում:

Նույնաբովանդակ խնդիրներ առաջացել են նաև վարորդական վկայական ստանալու քննությունների իրականացման կապակցությամբ: Եղել են դեպքեր, երբ անձն էլեկտրոնային համակարգով գրանցված է եղել, սակայն տևական ժամանակ չի հրավիրվել քննության: Իրավիճակից կախված յուրաքանչյուր դեպքում հարցը քննարկվել է Ոստիկանության իրավասու ներկայացուցիչների հետ և անհատական մոտեցմամբ խնդիրներին լուծումներ են տրվել:

Պաշտպանի աշխատակազմի դիտարկումը վկայում է, որ վարորդական վկայական ստանալու քննությունների առումով ՀԲԲ ծանրաբեռնվածությունը նաև օրենսդրական խնդրի արդյունք է: Այն

հարցին, որ գործող կարգավորումներն անհարկի սահմանափակում են իրավասու պետական մարմինն քննությունների կազմակերպման հարցում առավել ճկուն մոտեցում ցուցաբերելու հնարավորությունը Պաշտպանն անդրադարձել է 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ:<sup>480</sup>

Ճանապարհային ոստիկանության գործունեությանն առնչվող խնդիրներից շարունակում է մնալ նշանակված վարչական տույժի մասին պատշաճ ծանուցման խնդիրը: Այս խնդրի վերաբերյալ մանրամասն անդրադարձ է կատարել Պաշտպանի նախորդ տարիների գործունեությունն ամփոփող զեկույցներում:

Պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ Ճանապարհային ոստիկանությունը պետք է գործուն միջոցներ ձեռնարկի ծանուցման հետ կապված գործնական թերությունները կամ բացթողումները վերացնելու ուղղությամբ՝ հատկապես, որ պատշաճ չծանուցումը կարող է ստվերել նրա իրականացրած վարչարարության պատշաճության աստիճանը: Ընդ որում, հատկանշական է, որ դա կարևոր է ոչ միայն անձի իրավունքների ապահովման տեսանկյունից, այլև ունի մեկ այլ կողմ: Իսկ եթե նկատի ունենանք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից զրկված կամ տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքը կասեցված անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու հանցակազմը, ապա ծանուցված չլինելու արդյունքում տրանսպորտային միջոցներ վարելու հանրային վտանգավորությունն էլ ավելի ակնհայտ է դառնում:

Հաշվի առնելով, որ Պարեկային ծառայությունը սկսել է գործել 2021 թվականի հուլիսից՝ Ծառայության գործունեությանն անդրադարձ է կատարվում բացառապես Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներով բարձրացված հարցերի տեսանկյունից: Պարեկային ծառայողների իրավասության ոլորտներից են հասարակական կարգի և ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովումը, հասարակական վայրերում հանցագործությունների և վարչական իրավախախտումների հայտնաբերումը, կանխումը և խափանումը, քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից կատարվող դատավարական գործողությունների և դրանց մասնակցող անձանց անվտանգության պահպանությունը:

Պաշտպանը դրական է գնահատում Ոստիկանության նոր առավել մասնագիտացված ծառայության միջոցով աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու ջանքերը: Հատկանշական է, որ տարեկան հաղորդման նախապատրաստական աշխատանքների ընթացքում իրականացված հարցմանն ի պատասխան Ոստիկանությունից ստացված տեղեկության համաձայն՝ Պարեկային ծառայության հաստիքները ներկայումս համալրված են գրեթե 97%-ով: Ըստ Ոստիկանության տրամադրած տվյալների՝ 2021 թվականի 6 ամսվա ընթացքում Պարեկային ծառայողների անմիջական մասնակցությամբ բացահայտվել են թվով 480 հանցագործության դեպքեր: Ընդ որում, կարելի է նկատել, որ ամսական կտրվածքով նկատվում է բացահայտված

<sup>480</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 628-630:

դեպքերի աճ, ինչը վկայում է այն մասին, որ ժամանակին զուգընթաց պարեկային ծառայողներն առավել զարգացնում են իրենց գործնական մասնագիտական ունակությունները: Բացի այդ, Պարեկային ծառայողների մասնակցությամբ իրականացվել են քրեական վարույթն իրականացնող մարմինների կողմից դատավարական գործողությունների և դրանց մասնակից անձանց անվտանգության ու դեպքի վայրի պահպանության 2707 միջոցառում:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ Պարեկային ծառայության աշխատանքում առկա են մի շարք թերություններ, որոնց շտկման ուղղությամբ պետք է իրականացվի համակարգային աշխատանք:

Այսպես, Ոստիկանության տրամադրած տեղեկության համաձայն՝ հասարակական կարգի և ճանապարհային երթևեկության անվտանգությունն ապահովելիս պարեկային ծառայողների կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ կայացված որոշումների վերաբերյալ ստացվել են 1100-ից առավել դիմում-բողոքներ: Այս ոլորտում Պարեկային ծառայության աշխատակիցների գործունեության վերաբերյալ մի շարք բողոքներ ստացվել են նաև Պաշտպանի աշխատակազմում: Օրինակ՝ ստացված բողոքների մի մասը վերաբերել է ճանապարհային երթևեկության կանոնների խախտման համար վարչական արձանագրություն կազմելուց հետո կամ անգամ առանց դրա օրենքով նախատեսված չլինելու պարագայում անձանց տրանսպորտային միջոցները Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք տեղափոխելուն: Ընդ որում, քաղաքացիներից շատերը նշել են, որ անգամ տևական ժամանակ անց, մինչև անգամ օրեր, իրենց չի տրամադրվել ոչ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, ոչ էլ ավտոմեքենան:

Նշված բողոքների առնչությամբ անմիջապես կապ է հաստատվել Պարեկային ծառայության իրավասու ներկայացուցչի հետ և խնդիրը հնարավորին արագ լուծվել է:

*Այնուամենայնիվ, Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ անընդունելի է անձանց սեփականություն հանդիսացող տրանսպորտային միջոցները Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք տեղափոխելն օրենքով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում:*

Բացի այդ, ըստ Պաշտպանին դիմած մի շարք քաղաքացիների՝ իրենց մեքենան չնախատեսված վայրում կայանելու համար տուգանք կազմելիս Պարեկային ծառայողներն արձանագրության մեջ նշել են, որ համապատասխան փաստաթղթերը չներկայացնելու կամ անձի իրավախախտման վայրում չլինելու հիմքով մեքենան տեղափոխվում է տուգանային հրապարակ, այն պարագայում, երբ անձը եղել է մեքենայի մոտակայքում կամ տեղեկացրել է, որ փաստաթղթերը գտնվում են մոտակա շենքում և կարող է արագ ներկայացնել դրանք: Օրինակ, բողոք ներկայացրած անձը տեղեկացրել է, որ իր բնակարանի դիմացի փողոցում կայանել է իր մեքենան:

Առավոտյան Ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները, անտեսելով մի քանի րոպե իրեն տրամադրելու խնդրանքը (փաստաթղթերը ներկայացնելու համար), ավտոմեքենան տեղափոխել են Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք: Քաղաքացու պնդմամբ՝ մեքենան հատուկ պահպանվող տարածք տեղափոխելուց հետո են միայն պարեկային ծառայողները կազմել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն: Արդյունքում՝

5-6 ժամ անձը ստիպված է եղել սպասել և փաստացի չի կարողացել տիրապետել իրեն սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցը:

Նման բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ Պարեկային ծառայողներն իրենց գործողություններն իրականացնելիս ոչ միշտ են ցուցաբերում անհատական մոտեցում՝ առանց հաշվի առնելու յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները:

**Պաշտպանը բազմիցս հայտնել է այն դիրքորոշումը, որ Ոստիկանության ծառայողները, տվյալ դեպքում՝ նաև Պարեկային ծառայության ներկայացուցիչները, միշտ պետք է ցուցաբերեն անհատական մոտեցում իրենց գործողություններն իրականացնելիս՝ հաշվի առնելով բոլոր առանձնահատկությունները:**

Բողոքներից մի քանիսով էլ քաղաքացիները տեղեկացրել են, որ վարչական իրավախախտում իրականացնելու կասկածանքով իրենց տրանսպորտային միջոցը կանգնեցնելուց հետո Պարեկային ծառայողները, առանց հիմքերը ներկայացնելու, անհամաչափ ֆիզիկական ուժ են կիրառել և իրենց բերման են ենթարկել Ոստիկանության բաժին: Բողոք ներկայացրած անձանցից մեկն էլ տեղեկացրել է, որ Հանրապետության Հրապարակի կենտրոնում գտնվող օղակաձև շրջանի եզրագծի մոտ բաժանարար գոտին հատելու համար Ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցները կանգնեցրել են իրեն և առանց որևէ իրավական հիմնավորում ներկայացնելու մեքենան տեղափոխել են Ոստիկանության հատուկ պահպանվող տարածք, նաև իրեն վայր են գցել գետնին, ձեռքերը ծալել մեջքի հետևում, ձեռնաշղթաների կիրառմամբ, գետնին քարշ տալով նստեցրել են Ոստիկանական մեքենան, որի արդյունքում վնասվել է իր ծունկը:

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ չնախատեսված վայրում մեքենան կայանելու կասկածանքի առկայության հիմքով Պարեկային ծառայողները մեքենայի ընթացքը չդադարած լինելով բացել են մեքենայի դուռը և անհամաչափ ֆիզիկական ուժի գործադրմամբ քաշել իր ծախ ձեռքից (ամրագոտին ամրակապված լինելու պարագայում): Նշել է, որ Պարեկային ծառայողներից մեկը մուտք գործելով իր մեքենա միացրել է կայանման ռեժիմը և անջատել ամրագոտին: Առանց որևէ պահանջ ներկայացնելու, բիրտ ֆիզիկական ուժի կիրառմամբ իրեն հանել են մեքենայից, ձեռքերը ոլորել և կիրառել ձեռնաշղթաներ: Ընդ որում, ըստ պնդման, նա չի դիմադրել և հաստատել է, որ ուսի հատվածում զգում է ուժեղ ցավ, իսկ ոստիկանները շարունակել են նույն վերաբերմունքը: Արդյունքում անձի մոտ բժշկական հետազոտությամբ արձանագրվել է ծախ բազկոսկրի գլխիկի հոդախախտում:

**Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում, անկախ իրավախախտման բնույթից անձին ազատությունից զրկելը պետք է լինի վերջին միջոցն իրավախախտումն արձանագրելու տեսանկյունից: Ուստի պետք է պատշաճ և բավարար միջոցներ ձեռնարկվեն անձի ինքնությունը տեղում պարզելու և իրավախախտման առնչությամբ տեղում արձանագրություն կազմելու կամ անհրաժեշտ այլ գործողություններն իրականացնելու ուղղությամբ:**

Հատկապես մտահոգիչ է Պարեկային ծառայողների անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառման մասին բողոքներով արձանագրված պրակտիկան:

Այս մասով, հարկ է կրկին արձանագրել, որ կիրառված ուժի համաչափությունը գնահատվում է մի շարք գործոններով՝ ֆիզիկական ուժի գործադրման ձևը, ուղեկցվող գործողությունները, ոստիկանների գործողությունների շարունակական բնույթը և այդ ընթացքում քաղաքացու վարքագծի փոփոխությունները, ենթադրյալ իրավախախտման բնույթը և այլն: Թեև օրենքը Ոստիկանությանը վերապահում է ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոց, այդ թվում՝ ձեռնաշղթա գործադրելու լիազորություն, սակայն դա պետք է լինի հետապնդվող նպատակին և կոնկրետ իրավիճակին համաչափ:

Ուժեղ Ոստիկանություն ունենալը, իհարկե, կարևոր պայման է մարդու իրավունքների երաշխավորման համար, սակայն Ոստիկանության ծառայողների գործողությունները ցանկացած պարագայում չեն կարող ուղեկցվել նաև անձի առողջությանը վնասի հասցման կամ արժանապատվությունը ոտնահարող գործողություններով: Առանց այն էլ բերման ենթարկելու համակարգում առկա համակարգային խնդիրների պայմաններում Պարեկային ծառայության աշխատակիցների ձևավորված այս նոր պրակտիկան ավելի էր խորացնում առկա խնդիրները՝ առաջացնելով լրացուցիչ լարվածություն:

Հատկանշական է, որ Ոստիկանության կողմից ներկայացված տեղեկության համաձայն՝ Պարեկային ծառայության աշխատակիցների գործունեության վերաբերյալ քաղաքացիների կողմից Ոստիկանություն և ներկայացվել է 23 դիմում-բողոքներ, որոնք վերաբերվել են նյութական վնասով ՃՏՊ ձևակերպումներին և ԱՊՊԱ գործակալությունից փոխհատուցում չստանալուն, պարեկային ծառայողների կողմից անհարգալից վերաբերմունք դրսևորելուն և այլն: Ըստ Ոստիկանության՝ դրանցից 9-ով նշանակվել են ծառայողական քննություններ, որոնցից 1-ով ծառայողական քննություն նշանակող անձի որոշմամբ կարգապահական խախտում կատարած ոստիկանության ծառայողն ազատվել է կարգապահական տույժից, իսկ 5-ի արդյունքներով ծառայողական քննության ընթացքը կասեցվել է՝ նկատի ունենալով, որ նախաքննական մարմիններում հարուցվել են քրեական գործեր:

Ոստիկանության կողմից ստացված տեղեկությունների համաձայն՝ Պարեկային ծառայողները սահմանված ընթացակարգով պարբերաբար անցնում են մասնագիտական և այլ դասընթացներ:

Պաշտպանը բարձր է գնահատում Ոստիկանության Պարեկային ծառայության ջանքերը ծառայողների կողմից իրականացված խախտումները բացահայտելու և դրանք կանխելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը շեշտադրում է, որ անհրաժեշտ է մշակել հատուկ մեթոդական ձեռնարկներ ոստիկանության, այդ թվում՝ Պարեկային ծառայության աշխատակիցների համար՝ գործունեության ընթացքում անձանց իրավունքների սահմանափակման իրավաչափության և ֆիզիկական ուժի գործադրման չափանիշների վերաբերյալ:

*Վերը նկարագրվածի հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝*

1. գործնականում բացառել վարչական տույժի նշանակման և հատկապես տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքի կասեցման դեպքում անձին ոչ պատշաճ ծանուցելու դեպքերը,

2. բացառել անձանց նկատմամբ վարչական վարույթի շրջանակներում ոչ համաչափ ֆիզիկական ուժի կիրառման և անձանց իրավունքներն անհամաչափ սահմանափակելու դեպքերը:

## **2. Ոստիկանության անձնագրային և վիզաների գործունեության ոլորտի խնդիրներ**

Իրավական պետության մեջ սոցիալական և իրավական հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտներում անձանց համար կարևորագույն նշանակություն ունի քաղաքացու անձնագիրը: Անձնագրի բացակայությամբ հաճախ հնարավոր չէ իրականացնել անհրաժեշտ գործարքներ: Ուստի, անձնագրային գործարքների պատշաճ իրականացումը հիմք է ստեղծում մի շարք ոլորտներում անձանց իրավունքների իրացման ապահովման համար:

Ինչպես նախկինում, այնպես էլ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստացվել են անձնագրավորման գործընթացի հետ կապված մի շարք բողոքներ:

Բողոքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ հաճախ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած, կամ պարտադիր զինվորական ժամկետային ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները բախվում են խնդիրների՝ կապված նոր անձնագիր ձեռք բերելու կամ անձնագիրը փոխանակելու հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ մանրամասն անդրադարձ է կատարվել համապատասխան կարգավորումների բացակայության պայմաններում արական սեռի քաղաքացիների ազատ տեղաշարժման իրավունքի չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:<sup>481</sup> Խոսքը վերաբերում է այն խնդրին, որ գործնականում քաղաքացիների համար առաջացել են խնդիրներ անձնագիր ստանալու կամ դրա վավերականության ժամկետի հետ կապված՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված, զինված ուժերի պահեստազորում հաշվառված և զինվորական գրքույկ ունեցող քաղաքացիների կողմից վերափորձաքննված չլինելու դեպքում, թեև «Հայաստանի Հանրապետության քաղաքացու մասին» ՀՀ օրենքով 16 տարին լրացած անձանց անձնագիր տրամադրվում է 10 տարի վավերականության ժամկետով և օրենքի նախկին խմբագրությամբ նախատեսված բացառություններում առկա չէին վերոնշյալ հիմքերը:

<sup>481</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 631-636:

Դրա հետ մեկտեղ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված անձնագիր տրամադրելը (փոխանակելը) մերժելու սպառիչ հիմքերի շարքում այդ հանգամանքները ևս թվարկված չեն եղել:

Պաշտպանին 2021 թվականի ընթացքում շարունակվել են հասցեագրվել բողոքներ առողջական խնդիրների պատճառով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատված լինելու և պահեստազորում հաշվառված լինելու պարագայում մինչև վերափորձաքննության համար սահմանված ժամկետի լրացումը ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից անձնագիր չտրամադրելու վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում քննարկվող բողոքների քննարկման շրջանակում Ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչության կողմից խնդիրը լուծվել է անձանց կենսաչափական տվյալներով անձնագիր տրամադրելու միջոցով: Այնինչ, տրամադրվող անձնագրի տեսակի հետ կապված օրենսդրական որևէ արգելք չկար

Այս հարցի կապակցությամբ 2020 թվականին մշակվել և Ազգային ժողովի օրակարգում էր ընդգրկվել «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով, ի թիվս այլնի, սահմանվում էր, որ վերափորձաքննության ենթակա քաղաքացիների անձնագրերը կտրամադրվեն վերափորձաքննության ժամկետով: Նշված փոփոխությունն ուժի մեջ է մտել 2021 թվականի դեկտեմբերի 8-ին :

«Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի ներկա խմբագրման 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մինչև 16 տարեկան, ինչպես նաև 16 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին անձնագրերը տրամադրվում են մինչև նրանց 19 տարին լրանալը, իսկ 19 տարին լրացած լինելու դեպքում՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով տրված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված բժշկական վերափորձաքննության ժամկետով:

Պաշտպանը վերահաստատում է, որ նման փոփոխությունը սկզբունքորեն անընդունելի չէ, այնուամենայնիվ, քանի որ նախկին իրավակարգավորումների շրջանակում առկա չէր իրավական արգելք ինչպես կենսաչափական, այնպես էլ հին նմուշի անձնագիր տրամադրելու համար, պետական իրավասու մարմնի կողմից չհիմնավորված մերժումներն իրավաչափ համարվել չեն կարող:

Հարկ է ընդգծել, որ անգամ կարգավորումների փոփոխությունների դեպքում զինապարտ քաղաքացիներին անձնագրի տրամադրման հետ կապված առաջանում են խնդիրներ: Այսպես, ստացված բողոքներից մեկով քաղաքացին նշել է, որ իր հին նմուշի անձնագրի վավերականության ժամկետը լրացել է և դիմել է Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն նոր անձնագիր ստանալու համար, ներկայացրել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ նաև զինվորական հաշվառման փաստը հավաստող տեղեկանք: Սակայն Ոստիկանությունում մերժվել է

հին նմուշի անձնագրի տրամադրումը՝ այն պատճառաբանությամբ, որ այն տրամադրվում է 27 տարին լրացած արական սեռի անձանց, և առաջարկվել է վերցնել նույնականացման քարտ: Բողոքի քննարկման ընթացքում՝ Ոստիկանությունից ստացվել է պարզաբանում, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մինչև 16 տարեկան արական սեռի քաղաքացիներին անձնագիրը տրամադրվում է մինչև նրանց զորակոչային տարիքը լրանալը, իսկ զորակոչային տարիքը լրանալու դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամկետով և քանի, որ տվյալ պարագայում զորակոչային տարիքը լրացել է անհրաժեշտ է զինկոմիսարիատից տրված տեղեկանք ներկայացնել՝ անձնագրի տրամադրման ժամկետը հստակեցնելու համար: Նման մեկնաբանությունն անընդունելի էր, քանի որ զորակոչային տարիք է համարվում 18-ից 27 տարեկանը, իսկ բողոք ներկայացրած անձը 26 տարեկան էր, ուստի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամկետի մասին խոսք լինել չէր կարող:

Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ համագործակցության արդյունքում ներկայացված գրավոր բողոքի հիման վրա Ոստիկանությունն իրականացրել է հարցում Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն: Արդյունքում անձին տրամադրվել է հին նմուշի անձնագիր:

Մեկ այլ խնդիր վերաբերում է անձնագրի տրամադրման գործընթացի անհարկի ձգձգումներին:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ իրավասու մարմինների ոչ պատշաճ վարչարարության արդյունքում արհեստականորեն ձգձգվում է անձնագրի տրամադրումը:

Օրինակ՝ ստացված բողոքներից մեկով դատապարտյալը նշել է, որ արդեն տևական ժամանակ դիմել է քրեակատարողական հիմնարկի վարչակազմին՝ ՀՀ քաղաքացու նոր անձնագիր ստանալու համար, սակայն դեռևս չի ստացել անձը հաստատող փաստաթուղթը: Քաղաքացին տեղեկացրել է, որ այդ պատճառով չի կարողանում իր կողմից ընտրված անձին տրամադրել լիազորագիր՝ իր փոխարեն քաղաքացիական գործարքներ իրականացնելու նպատակով: Բողոքի քննարկման ընթացքում պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկի վարչակազմը դիմումը սահմանված ժամկետում ուղարկել է Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն: Ոստիկանության հետ համագործակցության արդյունքում հնարավոր է դարձել հարցն արագ կարգավորել և դատապարտյալին տրամադրվել է նոր անձնագիր:

2021 թվականի ընթացքում պաշտպանի աշխատակազմ ստացված որոշ բողոքներով քաղաքացիները տեղեկացրել են, որ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության ներկայացուցիչներն անհիմն մերժել են իրենց անձնագրի որևէ տեսակի տրամադրումը:

Այսպես՝ քաղաքացին տեղեկացրել է, որ աշխատանքային պայմանագրի հիման վրա պետք է ստանա Կանադա մեկնելու թույլտվություն (վիզա) և ընտանիքի հետ տևական ժամանակով բնակության մեկնի այդ պետություն: Նշել է, որ իր և ընտանիքի անդամների անձնագրերի վավերականության ժամկետն առավել կարճ է, քան տրամադրվելիք վիզայինը: Դիմել են ՀՀ



ոստիկանության Անձնագրային և վիզաների վարչություն, սակայն իրենց հրաժարվել են տրամադրել նոր անձնագրեր, այն պատճառաբանությամբ, որ հին նմուշի անձնագրեր տրամադրում են միայն 6 ամսից պակաս վավերականություն ունեցող անձնագրերի պարագայում, իսկ իրենց կարող են տրամադրել միայն կենսաչափական անձնագիր (Հարկ է ընդգծել, որ որևէ օրենսդրական սահմանափակում 6 ամսից առավել վավերական անձնագրեր ունեցող անձանց նոր անձնագիր տրամադրելու վերաբերյալ գոյություն չունի):

Բողոքների քննարկման ընթացքում Ոստիկանության ներկայացուցիչը պարզաբանել է, որ հին նմուշի անձնագրերի տպագրության հետ կապված առկա են տեխնիկական խնդիրներ: Ըստ Ոստիկանության պարզաբանման՝ անձնագրերի մեջ կատարված գրառումները ժամանակի ընթացքում դառնում են ոչ հստակ, ինչը կարող է անձի համար հետագայում խնդիրներ առաջացնել:

Բողոքներից որոշներով էլ անձինք տեղեկացրել են, որ մի շարք գործարքների համար իրենց անհրաժեշտ է ստանալ կենսաչափական անձնագիր, սակայն Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչությունում իրենց դիմումներն անհիմն մերժվել են: Այն պարագայում, երբ կենսաչափական անձնագիրը միակ ընդունելի փաստաթուղթն է այս կամ այն գործարքի համար և այլընտրանքային եղանակ նախատեսված չէ, անձինք փաստացիորեն զրկվում են իրենց իրավունքներն իրացնելու իրական հնարավորությունից:

Այսպես, բողոք ներկայացրած անձանցից մեկը տեղեկացրել էր, որ իրեն Բելգիա մեկնելու համար անհրաժեշտ է ստանալ ուսանողական վիզա, որի պարագայում կենսաչափական անձնագիրը պարտադիր է: Քաղաքացու պնդմամբ՝ ոստիկանության ներկայացուցիչը տեղեկացրել է իրեն, որ տվյալ ժամանակաշրջանում կենսաչափական անձնագրեր չեն տրամադրվում որևէ քաղաքացու, առանց բացառության:

Բողոքների քննության ընթացքում Ոստիկանությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ կենսաչափական անձնագրեր չեն տրամադրվում ծրագրային խնդիրների պատճառով, քանի որ իրականացվում են ծրագրի բարելավման և օպտիմալացման աշխատանքներ:

Նմանօրինակ բողոքները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և Ոստիկանության համագործակցության արդյունքում ստացել են լուծում և հնարավոր է դարձել անհրաժեշտ տեսակի անձնագրի ստացումը:

*Այնուամենայնիվ, Պաշտպանը հատուկ արձանագրում է, որ անընդունելի է անձանց ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակումն օրենսդրական արգելքի բացակայության պարագայում՝ տեխնիկական կամ տպագրական որևէ խնդրի պատճառաբանությամբ: Սկսվում է, որ վարչական մարմնի աշխատանքի պատճառով անհիմն և անհարկի սահմանափակվում են իրենց այլ իրավունքները:*

Շարունակում են ստացվել բողոքներ նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառում չունենալու հիմքով անձնագիր չտրամադրելու վերաբերյալ: Նշված դեպքերում խնդիրը հիմնականում կապված է եղել փաստացի հաշվառման գործընթացի մասին քաղաքացիներին

պատշաճ չիրագրելու հետ: Դրանք հիմնականում լուծում են ստանում Անձնագրային և վիզաների վարչության ստորաբաժանումների հետ համագործակցության արդյունքում:

Պաշտպանը բարձր է գնահատում Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հետ հաստատված համագործակցությունը, համատեղ քննարկումների արդյունքում այս ոլորտում ծառայած խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը:

*Միևնույն ժամանակ, Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ առկա է համակարգային խնդիրները տարբեր եղանակներով, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների ճանապարհով լուծելու անհրաժեշտություն: Տվյալ խնդիրները ցույց են տալիս, որ երբեմն գործնականում չի ապահովվում պետության պատասխանատվությունը մարդու ու նրա կոնկրետ խնդիրների նկատմամբ, ինչն ինքնին հանգեցնում է նաև պետական այս կամ այն մարմնի գործունեության նկատմամբ բացասական ընկալմանը:*

Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ պրակտիկայում ոչ հազվադեպ հանդիպող չհիմնավորված ձգձգումները (քաշքշուկները) կամ մերժումները խաթարում են իրավունքի գերակայության գաղափարը և կոպտորեն ոտնահարում մարդու՝ բարձրագույն արժեք լինելու սահմանադրական սկզբունքը:

Նշվածի հաշվառմամբ Պաշտպանն արձանագրում է, որ անհրաժեշտ է՝ գործնականում առաջնորդվել գործող օրենսդրությամբ, և բացառել անձանց իրավունքներն օրենքով նախատեսված հիմքերի բացակայության պայմաններում անհիմն սահմանափակելու դեպքերը:

### **3. Ներխուժումը կանխելիս կամ վերացնելիս ՀՀ ոստիկանության լիազորությունների կարարման ընթացքում վեր հանված գործնական խնդիրներ**

Անձի սեփականության իրավունքի լիարժեք իրացման ապահովումը պետության կարևորագույն պարտավորություններից մեկն է: Գործնականում այս կապակցությամբ առաջանում են մի շարք խնդիրներ: Այսպես, անշարժ գույքի տարածք մուտք գործելը կանխելուն կամ վերացնելուն ուղղված Ոստիկանության գործողությունների իրավաչափության վերաբերյալ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել մի շարք բողոքներ:

Արձանագրված բազմաթիվ դեպքերում ահազանգերը վերաբերել են դատարանում Ոստիկանության գործողությունների վիճարկման պարագայում ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ իրականացնելու իրավաչափությանը:

Ներխուժումը կանխելու կամ վերացնելու հարաբերությունները կարգավորող ՀՀ կառավարության որոշման (2021 թվականի հունվարի 21-ի խմբագրությամբ) համաձայն՝ Ոստիկանն իրավունք չունի կողմերի նկատմամբ կիրառելու որևէ միջոց կամ պահանջ, եթե պարզում է, որ՝ ներխուժում իրականացրած կամ իրականացնող կամ այդ տարածքում շարժական գույք տեղադրած անձը տվյալ անշարժ գույքի օրինական տիրապետող է, կամ անձը գրավոր կնքված

քաղաքացիաիրավական կամ աշխատանքային կամ ամուսնարնտանեկան կամ այլ պայմանագրի կամ լիազորագրի համաձայն իրավունք ունի մշտապես կամ որոշակի ժամանակով գտնվելու տվյալ անշարժ գույքի տարածքում կամ շարժական գույքը տեղադրելու տվյալ անշարժ գույքի տարածքում, կամ անձը բնակելի տարածքն օրինական տիրապետող անձի անչափահաս երեխան է կամ ամուսինը:

Թվում է, որ որոշման մեջ սպառիչ թվարկված են ներխուժումը կանխելուն կամ վտարելուն ուղղված գործողությունները բացառող հանգամանքները: Սակայն Ոստիկանության գործողությունների կասեցման հիմք է նաև ՀՀ վարչական դատարանի որոշումը վտարելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու մասին կամ ընթացող վարչական կամ քաղաքացիական դատական վարույթների շրջանակում հայցի ապահովման միջոցի կիրառումը:

2021 թվականի ընթացքում շարունակել են արձանագրվել դեպքեր, երբ անշարժ գույքի տարածքը լքելու համար անձին տրամադրվում է որոշակի ժամկետ, անձն այդ ընթացքում հայցադիմում է ներկայացնում ՀՀ վարչական դատարան՝ վտարելուն ուղղված գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն պարտավորեցնելու պահանջի մասին և միաժամանակ միջնորդում հայցի ապահովման միջոց կիրառելու մասին, կամ Ոստիկանությունն իրականացնում է ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ՝ չսպասելով դատարանի կողմից որոշում կայացնելուն:

Նշված դեպքերի կապակցությամբ Ոստիկանության հետ ձևավորված համագործակցության շրջանակում մեծ մասամբ դիմողներին տրամադրվել է լրացուցիչ ժամկետ՝ մինչև համապատասխան վարույթներով որոշումների կայացումը:

Միևնույն ժամանակ արձանագրվել են դեպքեր, երբ անշարժ գույքի տիրապետողը դիմում է դատարան և ներկայացնում է հայցի ապահովման միջնորդություն, սակայն Ոստիկանության կողմից ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններն իրականացվում են ավելի վաղ, քան դատարանը միջնորդության վերաբերյալ որոշում է կայացրել: Չնայած, եթե դատարանն ավելի շուտ կայացներ այդ որոշումն, ապա վտարումը չէր իրականացվի: Ստացվում է, որ ըստ էության, դատարանի կողմից որոշում կայացնելու արագությունից կախված դիմողները փաստացի կարող էին հայտնվել բարենպաստ կամ անբարենպաստ վիճակում:

Հանդիպել են դեպքեր, երբ դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու և հայցի ապահովման միջոց կիրառելու մասին որոշում է կայացվում, այդ որոշումը լինում է ուշացած, և այն չի իրականացվում: Ստացվել է այնպես, որ անձը Ոստիկանության գործողությունների ավարտից հետո ունեցել է որոշում, որի առկայության դեպքում Ոստիկանությունն իրավասու չէր լինի կատարել նման գործողություններ:

Այնուամենայնիվ, դատական նման որոշման post factum առկայությունը որևէ նշանակություն չի ունենում դիմողի համար, քանի որ, ֆորմալ մոտեցմամբ, թիվ 797-Ն որոշմամբ սահմանված չէ

իրավական համապատասխան գործիքակազմ՝ մինչև Ոստիկանության գործողությունների կատարումը եղած դրությունը վերականգնելու համար:

**Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայությունը, այնուամենայնիվ, չպետք է անձի իրավունքի սահմանափակման պատճառ հանդիսանա:**

**Պաշտպանը կրկին արձանագրում է նաև, որ Ոստիկանության նախաձեռնած վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության իրականացման համար Ոստիկանությունը՝ որպես վարչական մարմին, պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ և բավարար միջոցներ իր գործողությունների արգելք համարվող դեպքերի հնարավոր առկայությունը կամ բացակայությունը պարզելու ուղղությամբ:**

Չնայած դրան, Պաշտպանի աշխատակազմում քննարկված բողոքներից կարելի է նկատել, որ անձի՝ լսվելու իրավունքի ապահովումը Ոստիկանության կողմից գործնականում որոշ դեպքերում կրել է սուսկ ձևական բնույթ, քանի որ Ոստիկանության ծառայողները, լսելով, օրինակ՝ դատարան հայցի ապահովման միջոցի վերաբերյալ միջնորդություն ներկայացված լինելու մասին անձի հայտարարությունը, բավարար և անհրաժեշտ քայլեր չեն ձեռնարկել այդ հանգամանքի մանրամասները պարզելու համար:

Հարցը հատկապես սուր է այն իմաստով, որ երբ պետությունը՝ հանձին դատարանի, ուսումնասիրում է իրավական վեճին հնարավոր միջամտության անհրաժեշտության հարցը, այդ ընթացքում նույն պետությունը՝ իշխանության համակարգի մեկ այլ մարմնի միջոցով փաստացի ձեռնարկում է այնպիսի միջոցներ, որոնք ուղղակի անհնար են դարձնում դատարանի կողմից կայացվելիք որոշման կատարումը հետագայում ապահովելու հարցը:

**Պետական միասնական համակարգի երկու տարբեր մարմինների կողմից միևնույն հարցի համաժամանակյա ուսումնասիրությունը և գործողությունների կատարումը ոչ միայն իրական վտանգ է ստեղծում ապագայում իրարամերժ դիրքորոշումների կայացման դեպքում դրանց կատարումն ապահովելու համար, այլև փաստացի իմաստագրկում է անձի՝ դատարան դիմելու իրավունքը, որպիսին պետք է առկա լինի իրավական պետությունում:** Հատկապես կարևոր է ընդգծել, որ օրենսդրությունը հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը քննելու սեղմ ժամկետներ է նախատեսել: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը դատարանը քննում է առանց դատական նիստ հրավիրելու ոչ ուշ, քան այն ստանալու հաջորդ օրը, իսկ եթե միջնորդությունը ներկայացվել է հայցադիմումի հետ, ապա հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 91-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հայցի ապահովման մասին միջնորդությունը քննարկվում է այն ստացվելուց հետո՝ ոչ ուշ, քան երկօրյա ժամկետում, և դրա վերաբերյալ կայացվում է որոշում՝ առանձին դատական ակտի տեսքով:

Պաշտպանն արձանագրում է նաև, որ հայցի ապահովման միջոցի առկայության պայմաններում Ոստիկանության կողմից անձին վերաբնակեցնելու իրավական կառուցակարգերի բացակայությունն ավելի խոցելի է դարձնում հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդությամբ դիմած անձի փաստացի վիճակը: Ավելին՝ նման կառուցակարգի բացակայությունը որոշ դեպքերում իմաստազրկում է հայցի ապահովման միջոցի ողջ ինստիտուտը:

Նման պրակտիկայի առկայությունը հաստատվում է նաև ոստիկանությունից ստացված տվյալներով: Ոստիկանությունը ևս արձանագրել է, որ գործնականում լինում են այնպիսի իրավիճակներ, երբ քաղաքացին դիմում է ՀՀ ոստիկանություն՝ ներխուժումը վերացնելու նպատակով, սակայն միաժամանակ նույն հասցեի վտարման վերաբերյալ քաղաքացիական դատարանում քննվել է գործ, որի վերաբերյալ տեղեկատվությանը ՀՀ ոստիկանությունն օբյեկտիվորեն չի կարող տիրապետել: Ըստ Ոստիկանության՝ 2021 թվականի ընթացքում ևս արձանագրվել է դեպք դատարանում միևնույն առարկայի կամ պահանջի շուրջ գործի առկայության պայմաններում ներխուժումը վերացնելուն ուղղված գործողությունների:

Որոշ դեպքերում, անձինք նշել են, որ չնայած տվյալ անշարժ գույքը հանդիսանում է վեճի առարկա, ընթանում է դատաքննություն, և դատարանը դեռևս վերջնական որոշում չի կայացրել, այնուամենայնիվ Ոստիկանության կողմից իրականացվել են ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություններ:

Այս մասով հարկ է ընդգծել, որ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշման նախորդ խմբագրությամբ՝ Ոստիկանության կողմից ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունները բացառող հանգամանքների շարքում թվարկված էր նաև անշարժ գույքի օրինական տիրապետողի պահանջն օրենքով սահմանված կարգով կողմերի միջև կնքված և տվյալ պահին գործող քաղաքացիաիրավական կամ այլ պայմանագրից կամ ամուսնարնտանեական հարաբերություններից ծագող վեճի, այդ թվում՝ դատական վարույթի առկայությունը: 2021 թվականի հունվարի 21-ին ՀՀ կառավարության որոշման մեջ կատարված փոփոխությունների համաձայն արդեն նման հիմք նախատեսված չէ:

Խնդիրը կայանում է նրանում, որ քաղաքացիները հաճախ տեղեկացված չեն լինում ուժի մեջ մտած փոփոխությունների բովանդակության մասին և համոզված են, որ վեճի առկայությունը բավարար հիմք է Ոստիկանության կողմից ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողությունները կասեցնելու համար: Պրակտիկայի վերլուծությունը վկայում է այն մասին, որ Ոստիկանության ծառայողները չեն ձեռնարկում բավարար միջոցներ անձանց կառավարության համապատասխան որոշման դրույթները ներկայացնելու և մանրամասն պարզաբանելու նպատակով:

Այս կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ որպես պետության ներկայացուցիչ Ոստիկանության ծառայողները մինչև վարչական վարույթի շրջանակներում գործողություններ

իրականացնելը՝ առավել ևս ներխուժումը վերացնելուն ուղղված, պետք է պատշաճ կարգով ներկայացնեն քաղաքացիներին վարույթի հիմքերը և անհրաժեշտ իրավակարգավորումները:

Մինևույն ժամանակ, արձանագրվել են նաև դեպքեր, երբ կայացված դատական ակտի առկայության պայմաններում Ոստիկանությունն իրականացրել է ներխուժումը վերացնելուն ուղղված գործողությունները: Այսպես, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ կայացված դատական ակտի, ինչպես նաև Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ Ոստիկանությանն անձին վտարելուն ուղղված գործողություններ կատարելն արգելելու վերաբերյալ որոշման առկայության պայմաններում Ոստիկանության ծառայողներն իրեն հորդորել են ստորագրել բնակարանն ազատելու վերաբերյալ համապատասխան արձանագրությունը:

Ոստիկանությունից ստացված տեղեկության համաձայն՝ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 10-ի թիվ 797-Ն որոշմամբ ՀՀ ոստիկանությանը վերապահված գործառույթներն իրականացնելու վերաբերյալ 2021 թվականի ընթացքում ստացված 526 դիմումներից 366-ը (69,5%-ը) բավարարվել է:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան Ոստիկանության հայտնած տվյալները, ըստ էության հաստատում են վերոնշյալ խնդիրների առկայությունը: Մասնավորապես, պարզվել է, որ Ոստիկանության կողմից մերժված 87 դեպքից 21-ը մերժվել է հենց դատարանի կողմից կայացված որոշման հիմքով, 22-ը կասեցվել են դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու, իսկ 2-ը՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների առկայության հիմքով:

Դեռևս 2020 թվականին Պաշտպանի կարծիքին է ներկայացվել քննարկվող ոլորտը կանոնակարգող՝ «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում, շենքում կամ շինությունում կամ այլ անշարժ գույքի տարածքում ապօրինաբար գտնվող ուրիշի շարժական գույքը հեռացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ֆիզիկական անձի կամ ֆիզիկական անձի և շարժական գույքի ներխուժումը վերացնելու, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ազատելու վերաբերյալ պահանջ ներկայացնելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Նախագծի վերաբերյալ Պաշտպանի կարծիքը տրվել է բացառապես ստացված բողոքների ամփոփման ու ձևավորված պրակտիկայի հաշվառմամբ: Ի թիվս օրենսդրական տեխնիկային առնչվող խնդիրներին, ներկայացվել են նաև ներքոբերյալ նկատառումները, որոնք այնուամենայնիվ չեն ներառվել փոփոխությունների նախագծում և փոփոխված որոշման վերջնական խմբագրության մեջ:

Այսպես, ոլորտային օրենսդրությունը չի կարգավորում քրեական գործի (օրինակ՝ խարդախության արդյունքում զրկվել է անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքից)

առկայությունը որպես ներխուժում վերացնելը բացառող հանգամանք: Ստացվում է, որ կոնկրետ քրեական գործով տուժողի դատավարական կարգավիճակ ունեցող անձի նկատմամբ իրականացվում է ներխուժումը կանխելուն կամ վերացնելուն ուղղված գործողություն՝ առանց այդ գործով վերջնական որոշման առկայության:

Նախկին կարգավորումներով անշարժ գույքն ազատելու և գույքը դուրս բերելու համար ներխուժողին տրվում էր ողջամիտ ժամկետ: Գործնականում տրամադրվող ժամկետները տարբեր էին՝ սովորաբար մեկ օրից մինչև մեկ ամիս:

Ողջամիտ ժամկետը որոշելու ուղենշային որոշ չափանիշներ սահմանված էին «Ներխուժումը կանխելու կամ վերացնելու նպատակով անշարժ գույքի օրինական տիրապետողի կողմից ոստիկանությանը լիազորելու կարգն ու պայմանները սահմանելու մասին» Ոստիկանության պետի հրամանով հաստատված մեթոդական ուղեցույց-տիպաբանական ձեռնարկով: Ըստ այդմ, այդ ժամկետը որոշվում էր Ոստիկանության ծառայողի կողմից՝ կողմերի հետ քննարկման արդյունքում: Ուղեցույցի համաձայն՝ ժամկետը որոշելիս Ոստիկանության ծառայողն առաջնորդվում էր մարդասիրական սկզբունքներով, հաշվի էր առնվում օրվա ժամը, եղանակային պայմանները, ներխուժողի և դիմումատուի առողջական վիճակը, տարիքային և այլ պայմանները:

Պաշտպանը ներկայացրել էր դիտարկումներ առ այն, որ այս չափանիշներն ունեն կարևոր նշանակություն ներխուժողի՝ ծանր սոցիալական դրության մեջ հայտնվելը կանխելու տեսանկյունից: Միևնույն ժամանակ, առաջարկվել էր նշված չափանիշների շարքում ներառել նաև ներխուժող ընտանիքի կազմում երեխաների առկայությունը, տվյալ ժամկետում գործողությունն իրականացնելու հետևանքով նրանց՝ բառացիորեն դրսում հայտնվելու իրական վտանգը:

Նշված չափանիշներն, ինչպես վերը նշվեց, ամրագրված էին Ոստիկանության պետի անհատական հրամանով, որը հասանելի չէ հանրությանը: Ուստի, առաջարկվել էր այս չափանիշները ևս սահմանվել Կառավարության որոշման շրջանակում՝ այդպիսով ապահովելով դրանց մատչելիությունն ու հասանելիությունը շահագրգիռ կողմերին: Չնայած այս առաջարկն ընդունվել է և փոփոխություններով սահմանվել է, որ ժամկետը որոշելիս ոստիկանության ծառայողը հաշվի է առնում ներխուժողի և դիմումատուի (եթե ընտանիք է ապա նաև ընտանիքի անդամների) տարիքը և առողջական վիճակը, եղանակային և այլ պայմանները, սակայն միևնույն ժամանակ սահմանվել է ժամանակային սահմանափակում՝ իրավական ակտով ողջամիտ ժամկետի փոխարեն ամրագրելով մինչև մեկամսյա ժամկետ:

*Վերը նշվածի հիման վրա՝ Պաշտպանն արձանագրում է, որ*

*1. Ոստիկանության գործողությունները պետք է իրականացվեն միայն այն դեպքերում, երբ միանշանակ է անձի՝ գույքի օրինական տիրապետող լինելու իրավունքը, և ստուգվել է նման գործողությունների իրականացումը բացառող բոլոր հնարավոր հանգամանքների բացակայությունը,*

*2. Ոստիկանությունը պետք է պատշաճ ջանասիրություն դրսևորի դատարանի կողմից կայացված որոշման առկայությունը, առկայության դեպքում՝ դրա բովանդակությունը ստուգելու և դրանով*

պայմանավորված միայն՝ իր գործողությունները կատարելու համար: Ընդ որում՝ եթե դեռևս դատարանի կողմից առկա չի լինում որոշումը, ապա ժամկետի տրամադրմամբ Ոստիկանությունը կարող է ապահովել հետազայում դատարանի կողմից կայացվելիք որոշման պատշաճ կատարումը,

3.անհրաժեշտ է պրակտիկական զարգացնել այն ուղղությամբ, որ նախքան ներխուժումը կանխելու կամ վերացնելուն ուղղված գործողությունների կատարումն անձի կողմից դատական իշխանություններին դիմած լինելու մասին հայտարարության դեպքում, անգամ եթե առկա չեն համապատասխան փաստաթղթեր, իրականացվի ստուգման ընթացակարգ՝ հետագա գործողությունների իրականացման հարցը որոշելու նպատակով,

4.անհրաժեշտ է, որ փաստացի բոլոր դեպքերում Ոստիկանության ծառայողները, մինչև ներխուժումը վերացնելուն ուղղված գործողություններ իրականացնելը, պատշաճ կարգով ներկայացնեն քաղաքացիներին ինչպես վարույթի հիմքերը, այնպես էլ անհրաժեշտ իրավակարգավորումները:



## ԳԼՈՒԽ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԲԱՂԱԴՐԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ՎԱՐՈՒՅԹՆԵՐ

2021 թվականը նույնպես առանձնացավ արդարադատության ոլորտին առնչվող գործընթացներով: Պաշտպանի աշխատակազմում իրականացված լրացուցիչ ուսումնասիրություններով արձանագրվել է, որ 2021 թվականի ընթացքում շարունակվել են քննվել նախկինում հարուցված քրեական գործեր և հարուցվել են նոր քրեական գործեր, որոնց շրջանակում իրականացվել են հանրային հետաքրքրության հարցերի առնչությամբ կամ հանրային ճանաչում ունեցող անձանց նկատմամբ քրեական հետապնդումները: Հանրային մեծ հետաքրքրություն ունեցող գործերով 2021 թվականին շարունակված, ինչպես նաև դրանց թվին ավելացած քննությունները մշտապես գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո:

Նախ, Պաշտպանը ևս մեկ անգամ նշում է, որ հանրային ճանաչում ունեցող անձանց ներգրավումը քրեական գործերում անխուսափելիորեն հանգեցնում է քրեական գործերի նկատմամբ հանրային հետաքրքրության աճին: Նման գործերի արդյունավետ քննությունն ու դրանց ընթացքի մասին հանրությանը պատշաճ իրազեկելը դառնում են այդ գործերի, իսկ առանձին դեպքերում նաև երկրի ողջ իրավապահ ու դատական համակարգերի նկատմամբ հանրության վստահության ապահովման հրամայականը:

Անհրաժեշտ է արձանագրել, որ 2021 թվականին ևս պետական իրավասու մարմինների կողմից հանրային հետաքրքրություն վայելող քրեական վարույթների վերաբերյալ պարբերաբար տրամադրվել են որոշակի ծավալով տեղեկություններ, ինչը դրական է: Սակայն առանձին դեպքերում դա իր հետ առաջ է բերում այնպիսի զգայուն հարցեր, ինչպիսին անմեղության կանխավարկածն է:

Հասարակության համար կարևոր նշանակություն ունեցող իրադարձությունների վերաբերյալ հանրությանն իրազեկելու անհրաժեշտությունը բխում է նաև միջազգային-իրավական չափանիշներից: Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մշտապես ընդգծել է լրատվության՝ որպես «հասարակական դիտորդի» (“public watchdog”) դերը ժողովրդավար հասարակությունում և հանրային հետաքրքրություն ներկայացնող բոլոր հարցերով գաղափարներ տեղեկություններ հաղորդելու հարցում մամուլի դերը փոխկապակցել է հասարակության՝ այդպիսի տեղեկությունները ստանալու իրավունքի հետ<sup>482</sup>: Ավելին, նմանօրինակ դեպքերում պետության հայեցողությունը սահմանափակվում է ժողովրդավար հասարակության շահերով՝ ապահովելու համար լրատվության դերը հասարակության լուրջ մտահոգության առարկա հանդիսացող գործերի վերաբերյալ տեղեկության տարածելու հարցում<sup>483</sup>:

<sup>482</sup> Տե՛ս Սատակուննան Մարկկինապորսսի Օյ ընդդեմ և Սատամեդիան Ֆինլանդիայի (Satakunnan Markkinapörssi Oy and Satamedia Oy v. Finland) գործով 2017 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 931/13, կետ 126:

<sup>483</sup> Տե՛ս Տոնսբերգս Բլանդ Աս և Հաուկոմն ընդդեմ Նորվեգիայի (Tonsbergs Blad AS. and Haukom v. Norway) գործով 2007 թվականի մարտի 1-ի վճիռը, գանգատ թիվ 510/04, կետ 82:

## **1. 2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ և դրան փոխկապակցված մյուս քրեական գործերի քննությունը**

2008 թվականի մարտի 1-ի տասը զոհերի մահվան փաստով կատարվող նախաքննությանը և դրա վերաբերյալ հասարակության իրազեկված լինելուն առնչող հարցին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2011, 2012, 2013, 2014, 2015, 2016 թվականների տարեկան հաղորդումներում: Այն իր առանձին տեղն է ունեցել 2016, 2017, 2018, 2019 և 2020 թվականների գործունեության հաղորդումներում: 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին առնչվող դատական վարույթի հետ կապված գործընթացները շարունակում են մնալ Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում:

Մինչ Մարտի 1-ի իրադարձություններին առնչվող կոնկրետ վարույթներին կամ դրանց մասերին անդրադառնալը, Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ այս գործերը, դրանց առնչվող հարցերը հասկանալի պատճառներով ունեն հանրային մեծ նշանակություն և զգայուն ընկալում հասարակությունում: Դրանք սկզբունքային նշանակություն ունեն նաև մեր երկրում իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կայացման տեսանկյունից:

Նշված բոլոր գործոններն առավել մեծ պատասխանատվություն են դնում իրավապահ մարմինների ու դատարանի վրա՝ քրեական գործի քննության բարձր իրավական նշաճող ամրագրելով: Դատական արդյունավետ իշխանությունը պահանջում է ինչպես դատարանի և դատավորի լիարժեք անկախություն օրենսդիրից ու գործադիրից, ցանկացած այլ մարմնից կամ պաշտոնատար անձից, այնպես էլ միջամտության բացարձակ արգելք դրանցից դուրս որևէ այլ մեկից կամ անձից: Օրենքը դատարանին պարտավորեցնում է անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերել՝ անկախ քննվող գործի բնույթից կամ ցանկացած այլ ճնշումից կամ ճնշման փորձից: Պետք է հստակ գիտակցել, որ դատավորի կողմից քննվող գործը կամ նրա քննությանը ներկայացված հարցը միշտ կոնկրետ է, որի լուծումը պետք է տա ինքը դատարանը՝ հիմք ընդունելով հենց այդ կոնկրետ գործի հանգամանքները: Քննությանը ներկայացվող իրավական չափանիշներն այս պարագայում առավել բարձր են՝ բացառելու համար որևէ տարրնկալում և երաշխավորելու համար վստահություն քննության ընթացքի ու արդյունքների նկատմամբ:

Այդ իսկ պատճառով 2017 թվականի գործունեության հաղորդումից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս գործերը ներկայացվում են «Հանրային վստահության հատուկ բաղադրիչ ունեցող քրեական գործերով վարույթներ» վերտառության ներքո՝ հաշվի առնելով դրանց կարևորագույն նշանակությունը հանրության վերաբերմունքի ու իրավապահ և դատական մարմինների նկատմամբ հանրության վստահության տեսանկյունից:

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ նախորդ տարիների ընթացքում մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ քննվող հանրային նման հետաքրքրություն ունեցող վարույթի վերաբերյալ

հանրությանը չեն տրամադրվել բավարար տեղեկություններ՝ չնայած դրա հանրային մեծ պահանջին, չի իրականացվել զոհերի հարազատների և հանրության շրջանում պատշաճ իրազեկում այդ գործերի քննության վիճակի մասին: Դրանից բացի, Պաշտպանի տարեկան հաղորդումներում անընդհատ նշվել է, որ անհրաժեշտ է արագացման սկզբունքով ապահովել հարուցված քրեական գործերի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննությունը<sup>484</sup>:

2018, 2019 և 2020 թվականների պես 2021 թվականն էլ առանձնացավ հերթական զարգացումներով:

2021 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակում Մարտի 1-ի իրադարձությունների հետ կապված կոնկրետ վարույթներին առնչվող հարցերի կապակցությամբ գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն:

Ըստ ստացած տեղեկությունների՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ընթացքում 10 անձանց մահվան հանգամանքների վերաբերյալ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է, հարուցված քրեական գործից տարիների ընթացքում նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ցուցումների համաձայն 10 անձանց մահվան յուրաքանչյուր դեպքով անջատվել են վարույթներ և քննվել են առանձին քրեական գործեր: 2018 թվականին դարձյալ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազի ցուցումով բոլոր քրեական գործերը միացվել են մեկ վարույթում: 2021 թվականի ընթացքում, ըստ տեղեկությունների, նշված հանգամանքները բացահայտելու ուղղությամբ ձեռնարկվել են քննչական և դատավարական գործողություններ, մասնավորապես՝ հարցաքննվել են 100-ից ավելի անձինք, նշանակվել են մի շարք փորձաքննություններ, կատարվել են առգրավումներ, զննություններ և հետաքննության մարմիններին տրվել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գրավոր հանձնարարություններ: Դատախազությունից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականին նշանակված փորձաքննությունների մեծ մասը գտնվում են դեռևս կատարման փուլում, առգրավվել և փորձագետներին են ներկայացվել ավելի քան 600 միավոր հրազեն, կատարված հանցագործությունների, այդ թվում՝ 10 անձանց սպանությունների հանգամանքները պարզելու ուղղությամբ համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու նպատակով հանձնարարություններ են տրվել հետաքննության մարմիններին:

Դեռևս 2019 թվականին քրեական գործից առանձին վարույթում անջատվել է Ռոբերտ Քոչարյանի, Յուրի Խաչատուրովի, Սեյրան Օհանյանի և Արմեն Գևորգյանի վերաբերյալ գործը: Այն, ըստ

<sup>484</sup> Այս գործին առնչվող զարգացում էր ՀՀ Ազգային ժողովի 2019 թվականի հունիսի 4-ին ընդունած «2008 թվականի մարտի 1-2-ը Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ տուժած անձանց աջակցության մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորումներին մանրամասն անդրադարձ է կատարվել Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով, առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 370-371 և 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 644:

մեղադրանքի Ռոբերտ Քոչարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, Սեյրան Օհանյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով, Յուրի Խաչատուրովի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով և Արմեն Գևորգյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 2019 թվականի ապրիլի 29-ին ուղարկվել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան: 2020 2021 թվականին շարունակվել է նշված քրեական գործով հրապարակային դատաքննությունը: Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի որոշմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը ճանաչվել է ՀՀ Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր<sup>485</sup>: Այնուհետև, Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել է, որ թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի ապրիլի 6-ին կայացրել է որոշում՝ Ռոբերտ Քոչարյանի, Սեյրան Օհանյանի, Յուրի Խաչատուրովի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը դադարեցնելու վերաբերյալ որոշում՝ հանցագործության դեպքի բացակայության հիմքով, իսկ Արմեն Գևորգյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-300.1-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը նույնպես դադարեցվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով: Դատարանի կողմից նշված մեղադրանքների մասով քրեական գործի վարույթները կարճվել են, իսկ նշված դատական ակտը բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան, որը բողոքը մերժել է՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի ապրիլի 6-ի որոշումը թիվ ԵԴ/0253/01/19 որոշումը թողնելով անփոփոխ:

2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններին առնչվող քրեական վարույթի շրջանակում քրեական հետապնդում է իրականացվում նաև այդ իրադարձությունների առթիվ քննվող քրեական գործի քննչական խմբի նախկին ղեկավար Վահագն Հարությունյանի նկատմամբ: Նա մեղադրյալ է ներգրավվել Քրեական օրենսգրքի 38-349 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 308-րդ հոդվածի 2-րդ մասով և 309-րդ հոդվածի 2-րդ մասով: Ներկայում նրա նկատմամբ հետախուզում է հայտարարվել: 2020 թվականին նա հայտնաբերվել է ՌԴ մայրաքաղաքում, ձերբակալվել, ապա Գլխավոր դատախազության հրապարակային պարզաբանումների համաձայն՝ ձերբակալման՝ օրենքով սահմանված ժամկետը դեռևս չավարտված, ՌԴ դատախազությունն անձին մեղսագրվող արարքների վաղեմության ժամկետն իրենց օրենսդրությամբ անցած լինելու հիմնավորմամբ ազատ արձակելու որոշում է կայացրել:

2019 թվականին նույն քրեական գործի շրջանակում որոշում էր կայացվել ՀՀ նախկին գլխավոր դատախազ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ նախկին ներկայացուցիչ, ԱԺ Պետական-իրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական

<sup>485</sup> Առավել մանրամասն տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴՈ 1586-րդ որոշումը:

հանձնաժողովի նախկին նախագահ Գևորգ Կոստանյանին Քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-308-րդ հոդվածի 2-րդ մասով, 38-314-րդ հոդվածի 1-ին մասով, 38-334-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով մեղադրյալ ներգրավելու մասին:

Մարդու իրավունքների պաշտպանն ուսումնասիրել է Մարտի 1-ի քրեական գործին Գևորգ Կոստանյանի առնչության հետ կապված Հատուկ քննչական ծառայության հրապարակային հայտարարությունը: Ուսումնասիրվել է նաև Գևորգ Կոստանյանի՝ լրատվամիջոցներին տրված մեկնաբանություններն ու պնդումներն իր նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման վերաբերյալ: Խոսքը վերաբերում է նրա հրապարակային պնդումներին այն մասին, որ իրեն վերագրվող արարքի կատարման մեղադրանքն անհիմն է, առկա չէ իր մեղքի մասին վկայող ապացույցներ, քննչական մարմնի գործությունները խախտում են իր իրավունքները և իրականում 10 զոհերին դիտավորությամբ ապօրինի կյանքից զրկելու մեջ իրական մեղավոր անձանց բացահայտելու նպատակ չունեն: Ըստ Գևորգ Կոստանյանի՝ իրականում քրեական հետապնդման մարմինն այս ուղղությամբ միջոց չի ձեռնարկում:

Քրեական վարույթն իրականացնող մարմնի գործողությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը նաև բողոքներ է ստացել Գևորգ Կոստանյանի պաշտպաններից, նախաձեռնվել է քննարկման ընթացակարգ, պարզաբանումներ են պահանջվել քրեական հետապնդման մարմիններից: Այնուհետև, Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ և ամրագրել այն չափանիշները, որոնցով ղեկավարվում է Մարտի 1-ի քրեական գործի քննության նկատմամբ Պաշտպանի իրավասության սահմաններում վերահսկողություն իրականացնելիս<sup>486</sup>: 2021 թվականի ընթացքում ՀՀ ազգային ժողովի անկախ պատգամավոր Թագուհի Թովմասյանը որոշակի հրապարակային տեղեկություններ է ներկայացրել Գևորգ Կոստանյանի նկատմամբ հայտարարված հետախուզման վերաբերյալ: Մասնավորապես, ըստ պատգամավոր Թ. Թովմասյանի՝ Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպության (Ինտերպոլ) կողմից Հայաստանում Ինտերպոլի Ազգային կենտրոնական բյուրո հասցեագրված գրությամբ նշվել է, որ Գ. Կոստանյանի նկատմամբ հայտարարված հետախուզման վերաբերյալ փաստաթղթերը ենթարկվել են իրավաբանական փորձաքննության, դրանից հետո Ինտերպոլի Գլխավոր քարտուղարությունը եկել է եզրահանգման, որ հետախուզվող անձի մասին ծանուցումը չի համապատասխանում Ինտերպոլի կանոնադրության 3-րդ հոդվածին և ըստ Թ. Թովմասյանի՝ ՀՀ իրավապահ մարմինների կողմից Ինտերպոլի ստորաբաժանումներին համապատասխան ծանուցում չի ուղարկվել և անձի վերաբերյալ տեղեկությունը դեռևս 2020 թվականի ապրիլի 4-ին Ինտերպոլի տվյալների բազայից հանվել է: Պատգամավորի, ինչպես նաև Գ. Կոստանյանի տրամադրած տեղեկությունների հաշվառմամբ գրություն է հասցեագրվել ՀՀ գլխավոր դատախազություն:

2008 թվականի մարտի 1-ի 10 զոհերի մահվան վերաբերյալ և դրան փոխկապակցված մյուս քրեական գործերը, դրանց առնչվող հարցերը հասկանալի պատճառներով ունեն հանրային մեծ նշանակություն և զգայուն ընկալում հասարակությունում: Դրանք սկզբունքային նշանակություն ունեն

<sup>486</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/995> հղումով:

նաև մեր երկրում իրավունքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կայացման համար:

Նշված բոլոր գործոններն առավել մեծ պատասխանատվություն են դնում իրավապահ մարմինների ու դատարանի վրա՝ քրեական գործի քննության բարձր իրավական նշանոց ամրագրելով: Քննությանը ներկայացվող իրավական չափանիշներն այս պարագայում առավել բարձր են՝ բացառելու համար որևէ տարրնկալում և երաշխավորելու համար վստահություն քննության ընթացքի ու արդյունքների նկատմամբ:

Քրեական հետապնդման մարմինների հավաստմամբ՝ 2008 թվականի մարտի 1-ին և 2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ 2020 թվականի ընթացքում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով և 314-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է 3 քրեական գործ: Հաշվի առնելով, որ հիշյալ քրեական գործերը միմյանց հետ կապակցված են՝ դրանք միացվել մեկ վարույթում, իրականացվում են անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ, իսկ ներկա փուլում մեղադրյալի կարգավիճակ ունի 12 անձ:

Քննարկվող քրեական գործերի քննությունը Մարտի 1-ին առնչվող քրեական գործերի նկատմամբ հանրային հետաքրքրության նոր ալիք բարձրացրեց նաև այն պատճառով, որ դրա շրջանակներում որպես մեղադրյալ ներգրավվեց և հետագայում կալանավորվեց Հայաստանի Հանրապետության պաշտոնաթող նախագահ, Արցախի Հանրապետության պաշտոնաթող նախագահ Ռոբերտ Քոչարյանը:

Դեռ 2018 թվականից այս գործի առնչությամբ հանրային քննարկումներն առավել ակտիվացան այն բանից հետո, երբ հրապարակվեցին բարձրաստիճան պաշտոնատար անձանց հեռախոսային խոսակցությունների գաղտնալուսումները: Հետագայում հանրային քննարկումների ակտիվությունը տարբեր առիթներով շարունակեց պահպանվել: Նախ, նման առիթներից էր այն, որ սկսվեց հրապարակային դատավարություն: Այն սկսեց ընթանալ հասարակությանը հետաքրքրող զգայուն հարցերի քննարկմամբ և պարբերաբար նախկին ու ներկա հանրային գործիչների կամ պաշտոնատար անձանց վարույթին ներգրավմամբ:

Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործի քննարկման ընթացքում Պաշտպանին պարբերաբար բողոքներ են հասցեագրել նրա փաստաբանները և փաստաբանների հետ ապահովվել է մշտական կապ: Իրականացվել են նաև այցեր Արդարադատության նախարարության «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկ, որտեղ տեղի են ունեցել առանձնազրույցներ Ռոբերտ Քոչարյանի հետ: Փաստաբանների հետ համագործակցությունը, ինչպես նաև առանձնազրույցները Ռոբերտ Քոչարյանի հետ Պաշտպանին տվել են անմիջականորեն տեղեկությունների տիրապետելու ու իր իրավասության շրջանակներում համապատասխան լիազորություններն առավել արդյունավետ գործադրելու հնարավորություն: Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման, այդ թվում քրեակատարողական հիմնարկում նրա իրավունքների ապահովման

հարցերին անդրադարձ է կատարվել 2020 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդմամբ<sup>487</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ընդգծում է, որ Ռոբերտ Քոչարյանի իրավունքների ապահովման կապակցությամբ նախաձեռնված քննարկումը նպատակ չունի գնահատական տալու կոնկրետ գործով դատական ակտերի կամ այնպիսի հարցերի, որոնք դատական վարույթի կամ դատական վիճարկման առարկա են և գտնվում են կոնկրետ գործով դատարանի լիազորությունների տիրույթում, բոլոր հարցերին անդրադարձերը կատարված են բացառապես Պաշտպանի իրավասության տեսանկյունից:

2019 թվականի մայիսի 18-ին Ռոբերտ Քոչարյանը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի որոշմամբ անձնական երաշխավորության կիրառմամբ ազատ էր արձակվել: Ապա, մոտ մեկ ամիս անց՝ Վերաքննիչ քրեական դատարանի որոշմամբ 2019 թվականի հունիսի 25-ին դարձյալ կալանավորվել: Կալանավորումից հետո տեղի էր ունեցել այց «Երևան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկում և առանձնազրույց նրա հետ, ուսումնասիրվել էին պահման պայմաններն ու քննարկվել էին Պաշտպանի իրավասությանն առնչվող հարցեր:

Ռոբերտ Քոչարյանը քրեակատարողական հիմնարկի ծառայողների վերաբերմունքի առնչությամբ դժգոհություններ կամ բողոքներ չէր ներկայացրել:

Առանձնազրույցի ընթացքում Ռոբերտ Քոչարյանը բարձրացրել էր մի շարք հարցեր, որոնք օրենքով Պաշտպանին վերապահված իրավասության շրջանակներում ուղղվել էին համապատասխան մարմիններին:

Բողոքների քննարկման արդյունքում Պաշտպանի միջամտությամբ Ռոբերտ Քոչարյանին խցում առանց ինտերնետ համացանցի հասանելիության տրամադրվել էին համակարգիչ կամ համարժեք էլեկտրոնային միջոց ունենալու թույլտվություն, բացի այդ, վերացվել էր Ռոբերտ Քոչարյանի կենսաթոշակային հաշվեհամարի վրա դրված կալանքը:

2018 թվականին փաստաբանների բողոքի հիման վրա քննարկված և մասնակի լուծում ստացած հարցերից էր նաև մերձավոր ազգականների նկատմամբ կիրառված տեսակցությունների և հեռախոսային խոսակցությունների արգելքի հարցը: Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ մասնակի վերացվեց արգելքը, այն պահպանվեց միայն մերձավոր ազգականներից մեկի նկատմամբ:

Ըստ փաստաբանի՝ մերձավոր ազգականների, զանգվածային լրատվության միջոցների և այլ անձանց հետ կապի արգելքի մասին 2018 թվականի հուլիսի 28-ին քննիչի որոշումը կիրառության համար չունի հիմքեր: Մասնավորապես, ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքում նշել էր փաստաբանը, քրեակատարողական հիմնարկը Ռոբերտ Քոչարյանի տեսակցությունները և հեռախոսային խոսակցություններն արգելելու համար հիմք էր ընդունել դեռևս նախաքննության փուլում ու դեռ նրա առաջին կալանավորումից անմիջապես հետո քննիչի կայացրած որոշումը՝ չնայած նրան, որ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործը դատարանի

<sup>487</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 647-649:

վարույթում էր ու վերջին անգամ նա կալանավորվել էր հենց դատարանի վարույթում գործի գտնվելու ընթացքում:

Ընդհանրապես, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասի կարգավորումն ինքնին խնդրահարույց է: Այն չի պարունակում կալանավորված անձի՝ օրինական ներկայացուցչի կամ մերձավոր ազգականների հետ տեսակցության արգելքի կիրառության հստակ չափանիշներ՝ սահմանափակման հիմքում դնելով միայն «քննության շափ» գնահատողական ձևակերպումը: Օրենքը չի նախատեսում տեսակցությունների արգելքի պատճառաբանության և հիմնավորվածության, ինչպես նաև արգելքի կիրառության ժամկետների, այդ որոշման պարբերական վերանայման հստակ պահանջներ<sup>488</sup>:

Կոնկրետ բողոքի քննարկման արդյունքում պարզվել էր, որ Ռոբերտ Քոչարյանի տեսակցությունները և հեռախոսային խոսակցություններն այդ թվում՝ ընտանիքի անդամների հետ արգելելու համար փաստացի հիմք էր ընդունվել դեռևս նախաքննության փուլում, դեռ նրա առաջին կալանավորման ժամանակ քննիչի կայացրած որոշումը՝ չնայած նրան, որ Ռոբերտ Քոչարյանի վերաբերյալ գործն արդեն գտնվում էր դատարանի վարույթում: Ավելի կոնկրետ, Ռոբերտ Քոչարյանի իրավունքի նկատմամբ արգելքը քննիչի որոշմամբ սահմանվել էր 2018 թվականի հուլիսի 28-ին: Դրանից հետո Ռոբերտ Քոչարյանն ազատ էր արձակվել օգոստոսի 13-ին և շուրջ չորս ամիս մնացել ազատության մեջ: Այնուհետև, նա կրկին կալանավորվել էր 2018 թվականի դեկտեմբերի 7-ին, իսկ 2019 թվականի մայիսի 18-ին դատարանի որոշմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել անձնական երաշխավորությունը և նա շուրջ մեկ ամիս դարձյալ գտնվել էր ազատության մեջ: Ազատության մեջ գտնվելու ընթացքում բնականաբար Ռոբերտ Քոչարյանն ունեցել էր բազմաթիվ շփումներ, այդ թվում ընտանիքի անդամների և ընտանիքի այն անդամի հետ, ում հետ տեսակցություն չէր թույլատրվում:

Վերջին անգամ Ռոբերտ Քոչարյանը կալանավորվել էր դատարանի կողմից և գործի հենց դատարանի վարույթում գտնվելու ընթացքում: Ընդ որում, ինչպես պնդում էին փաստաբանները, դատարանն այդ հարցին չի անդրադարձել, այդ թվում՝ գործը վարույթ ընդունելիս: Պարզվել էր, որ դատարանի նման որոշում առկա չէ: Այդ դեպքում առաջ էր գալիս հարց այն մասին, թե արդյոք քննիչի՝ մեկ և կես տարուց ավելի վաղեմություն ունեցող որոշումը չի կորցրել արդիականությունը մեղադրյալի՝ ազատության մեջ հայտնվելու պատճառով կամ արդյոք շարունակում է ծառայել որոշմամբ հետապնդվող նպատակին:

Ռոբերտ Քոչարյանի, ինչպես նաև նրա փաստաբանների, մի շարք քաղաքացիների բարձրացրած մյուս հիմնական հարցը վերաբերում էր նրան, որ Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ կիրառված կալանքն իրավաչափ չէ: Փաստաբանները նշում էին, որ դատարանին հասցեագրած իրենց միջնորդությունները, այդ թվում՝ կապված կալանքից ազատ արձակելու, գրավի կիրառության հետ,

<sup>488</sup> Կալանավորված անձի տեսակցությունների կարգավորման ու այս առնչությամբ գործնականում մարդու իրավունքների հետ կապված հարցերի մասին առավել մանրամասն խոսվում է սույն հաղորդման «Քրեական դատավարության մասնակիցների իրավունքների ապահովման երաշխիքները քրեական վարույթի շրջանակում» գլխում:



դատարանն առհասարակ քննության չի արժանացնում, չեն նշանակվում դատական նիստեր՝ չնայած նույնիսկ այն հանգամանքին, որ տեղի էր ունեցել դատավորի փոխարինում նորով:

Փաստաբանների բարձրագրած՝ վերը նշված հարցերը բնույթով այնպիսին էին, որոնք պետք էր կոնկրետ գործով քննարկման առարկա դարձներ միայն այդ գործով վարույթն իրականացնող մարմինը, կոնկրետ դեպքում՝ դատարանը:

Նկատի ունենալով այն, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը Պաշտպանին արգելում է միջամտություն ցուցաբերել կամ քննարկման առարկա դարձնել այն հարցերը, որոնք առնչվում են կոնկրետ գործերով դատավորների լիազորությունների իրականացմանը, Պաշտպանը քննարկման շրջանակում ձեռնպահ է մնում որևէ այնպիսի գնահատական տալուց կամ գործողություն կատարելուց, որը դուրս է մեջբերված օրենսդրական արգելքի շրջանակից: Այդուհանդերձ, նշված հարցերը Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են և գտնվում են մշտադիտարկման ներքո, քանի որ առնչվում են մարդու սահմանադրական իրավունքներին:

Այս տեսանկյունից Պաշտպանն արձանագրում է, որ կալանքի ու, առհասարակ, ազատությունից զրկելուն վերաբերող հարցերը դրանց հասցեատեր մարմիններից ու պաշտոնատար անձանցից պետության պոզիտիվ պարտականության ուժով պահանջում են առավելագույն ջանքեր՝ ապահովելու համար ազատությունից զրկված ցանկացած մարդու իրավունքների երաշխավորումը: Բոլոր դեպքերում, պետք է հաշվի առնել, որ կալանքը բարձր աստիճանի միջամտություն է անձի անձնական ազատությանը, ուստի դրա հետ կապված հարցերը պահանջում են հետաձգում չհանդուրժող քայլեր հանրային իշխանության կողմից՝ դրանց ցանկացած այնպիսի վիճարկման դեպքում, որը վերաբերում է անազատության մեջ գտնվելու իրավաչափությանը: Հարցն առավել արդիական է գործը քննող դատավորի փոփոխության պարագայում, երբ քննությունը պետք է սկսվի նորից ու կալանքին առնչվող հարցերը լինեն այնպիսիների թվում, որոնց պետք է անդրադարձ կատարվի հետաձգում չհանդուրժող դատավարական քայլերով: Այս մասին արձանագրված է նաև Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակային հայտարարությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նաև ուսումնասիրվել է Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանի 2019 թ. սեպտեմբերի 4-ի ՍԴՈ-1476 որոշումը: Այդ որոշմամբ դատարանը սահմանել է ինչպես անհատական, այնպես էլ ընդհանուր միջոցներ: Պաշտպանը, սակայն, չի անդրադառնում Սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանված անհատական միջոցներին, քանի որ դրանք առնչվում են Ռոբերտ Քոչարյանին վերաբերող գործին և հետևաբար՝ գտնվում են բացառապես կոնկրետ գործի վարույթը ստանձնած դատարանի իրավասության տիրույթում:

Սահմանադրական դատարանի սահմանած ընդհանուր միջոցներն ունեն համակարգային բնույթ և վերաբերում են կամ կարող են վերաբերել նույն իրավիճակում հայտնված, դատարանի բնորոշմամբ, հատուկ պաշտպանությամբ օժտված պաշտոնատար անձանց իրավունքներին առհասարակ, ուստի դրանք պետք է լուծում ստանան համակարգային մակարդակում:

Ռոբերտ Քոչարյանի պաշտպանները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով հայտնել էին, որ դատական նիստերի ընթացքում, դրանցից առաջ և հետո Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթի նստավայրի վարչական շենքում, բակում հավաքված անձինք անհարգալից և վիրավորանք պարունակող արտահայտություններ են հնչեցնում իրենց և իրենց պաշտպանյալի հասցեին: Ըստ փաստաբանների՝ նման միջադեպերը տեղի են ունենում Ոստիկանության ծառայողների և դատական կարգադրիչների ներկայությամբ, իսկ վերջիններս դրանք կանխելու ուղղությամբ պատշաճ միջոցներ չեն ձեռնարկում: Փաստաբանները նշել էին, որ այդ միջադեպերը կրում են պարբերական բնույթ և նպատակ են հետապնդում բարդացնել պաշտպանական կողմի աշխատանքը: Այս բողոքի ուսումնասիրությամբ պաշտոնական հաղորդակցություն է իրականացվել Ոստիկանության և Դատական դեպարտամենտի հետ:

Վերը նշվածից բացի, Պաշտպանին ներկայացված բողոքով Ռոբերտ Քոչարյանն ու նրա փաստաբանները հարց են բարձրացրել քաղաքացիական առողջապահական հաստատությունում նրա իրավունքների ապահովման առնչությամբ: Մասնավորապես, հայտնել են, որ նրա հիվանդասենյակում մշտապես, ներառյալ՝ գիշերային ժամերին, ներկա է գտնվում պահակետի քրեակատարողական մեկ ծառայող: Ըստ փաստաբանների՝ դա բացասական է ազդում անձի պատշաճ բուժօգնության վրա, հանգեցնում է նրա առողջական վիճակի վերաբերյալ բժշկական գաղտնիք կազմող տեղեկությունների ոչ իրավաչափ հրապարակման: Դիտարկումը ցույց է տվել, որ հիվանդասենյակից դուրս՝ անմիջականորեն դռան մոտ ծառայություն է իրականացնում ևս քրեակատարողական 3 ծառայող և ևս 1 ծառայող էլ այն միջանցքի մուտքի դռան մոտ, որտեղ գտնվում է Ռոբերտ Քոչարյանի հիվանդասենյակը:

Ըստ Ռոբերտ Քոչարյանի և նրա փաստաբանների կողմից Մարդու իրավունքների պաշտպանին փոխանցած տեղեկությունների՝ քրեակատարողական ծառայողները հիվանդասենյակում ծառայություն իրականացնում են հերթափոխերով և յուրաքանչյուր հերթափոխ օրվա մեջ 3 կամ 4 մեկ անգամ փոխվում է ու յուրաքանչյուր ծառայող հիվանդասենյակում գտնվում է 2-3 ժամ: Ըստ նրանց՝ ստացվում է, որ Ռոբերտ Քոչարյանի հիվանդասենյակում ծառայություն է իրականացնում 5 հոգի՝ մշտապես փոփոխվող անձնակազմերով, իսկ հերթափոխերում ամեն անգամ ընդգրկված են լինում ոչ թե նույն, այլ տարբեր անձինք:

Թե՛ փաստաբանները, թե՛ Ռոբերտ Քոչարյանը նշել են, որ պահակետի ծառայողը հիվանդասենյակը լքում է միայն այն դեպքում, երբ Ռոբերտ Քոչարյանն ինքն է ներկայացնում այդպիսի պահանջ և այն էլ քրեակատարողական ծառայողը համաձայնում է դա անել միայն անմիջական բժշկական հետազոտությունների կամ խորհրդատվությունների ընթացքում: Ըստ Ռոբերտ Քոչարյանի՝ քաղաքացիական բժշկական հաստատությունում իր առաջին բժշկական հետազոտություններից մեկի ընթացքում քրեակատարողական ծառայողը չի ցանկացել թողնել իրեն բժշկի հետ առանձին. դա արել է միայն այն բանից հետո, երբ Ռոբերտ Քոչարյանը նշել է, որ ցանկանում է այդ հարցով ահազանգ ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ու նաև նշել, որ քրեակատարողական ծառայողը դուրս է եկել միայն այն բանից

հետո, երբ ինքը նշել է, որ հրաժարվում է բուժօգնությունից և պահանջում է իրեն տեղափոխել քրեակատարողական հիմնարկ: Այս մասին նշել են նաև նրա փաստաբանները:

Ընդ որում, նշված հարցերը Ռոբերտ Քոչարյանը և նրա փաստաբանը նշել են նաև հրապարակային դատաքննության ընթացքում, ինչը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է 2020 թվականի մայիսի 19-ի հրապարակային դատական նիստերի մշտադիտարկման գործառույթի շրջանակում<sup>489</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը, քննարկելով ներկայացված փաստական տվյալները, այդ կապակցությամբ Արդարադատության նախարարության պարզաբանումները, ոլորտը կանոնակարգող օրենսդրությունը՝ կայացրել է «Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին» որոշում: Որոշման շրջանակում անդրադարձ է կատարվել Ռոբերտ Քոչարյանի իրավունքների ապահովմանը՝ կապված քաղաքացիական բժշկական հաստատության նրա հիվանդասենյակի ներսում պահակետի քրեակատարողական ծառայողի մշտական հիմունքով ներկայության հետ:

Ազատությունից զրկված անձանց իրավունքների ապահովմանը վերաբերող համակարգային բնույթի մի շարք հարցեր առանձին ներկայացվել են թեմատիկ՝ «Արտահերթ հրապարակային զեկույց ազատությունից զրկված անձի հիվանդասենյակում քրեակատարողական ծառայողի մշտական ներկայության անթույլատրելիության վերաբերյալ (կալանավորված անձի օրինակով)» վերտառությամբ արտահերթ հրապարակային զեկույցով<sup>490</sup>:

Հարցն այն է, որ ներկայում ազատությունից զրկված բուժում ստացող կալանավորված կամ ազատազրկման դատապարտված անձի հիվանդասենյակում մշտական հիմունքով ներկա է պահակետի քրեակատարողական մեկ ծառայող, ով հիվանդասենյակը կա՛մ առհասարակ չի լքում, կա՛մ յուրաքանչյուր դեպքում այն լքում է բուժում ստացողի խնդրանքով կամ պահանջով: Այս սխալ կանխավարկածի հիմքում էլ անորոշ, պրակտիկայում անձի իրավունքների տեսանկյունից իրավական լուծումներ են:

Իրականում, պետք է գործի հետևյալ կանխավարկածը. քրեակատարողական ծառայողի մշտական ներկայությունը, որպես ընդհանուր կանոն, պետք է բացառվի: Դա կարող է հնարավոր լինել միայն այն բացառիկ դեպքերում, երբ անվտանգության նկատառումով բժիշկը կամ բուժանձնակազմի այլ ներկայացուցիչն է խնդրում ապահովել քրեակատարողական ծառայողի ներկայություն:

Ուստի, կալանավորված անձի հիվանդասենյակում պահակետի ծառայողի մշտական ներկայությունը խնդրահարույց է նրան ցուցաբերվող խնամքի, նրա արժանապատվության, մասնավորության ու անգամ նրան խնամողների արժանապատվության ու մասնավորության տեսանկյունից: Այսինքն՝ այս իրավիճակում առաջ են գալիս իրավունքի խախտման հարցեր, որոնք պետք է դիտարկվեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության

<sup>489</sup> Տե՛ս, օրինակ, [https://www.youtube.com/watch?time\\_continue=1&v=KpBlq8wX-4Q&feature=emb\\_title](https://www.youtube.com/watch?time_continue=1&v=KpBlq8wX-4Q&feature=emb_title):

<sup>490</sup> Ձեկույցը հասանելի է <https://ombuds.am/images/files/185bbc0afa0b2fb3147bd9dbcfd5933a.pdf> հղումով:

մասին եվրոպական կոնվենցիայի թե՛ 3-րդ, թե՛ 8-րդ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածների տեսանկյունից:

Հետևաբար, քաղաքացիական բժշկական հաստատությունում ազատությունից զրկված անձի հիվանդասենյակում քրեակատարողական ծառայողի ֆիզիկապես մշտական ներկայությունը խաթարում է նրա նկատմամբ պետության պոզիտիվ պարտավորությունների էությունը: Դա չի արտահայտում արդարացի հավասարակշռությունը հանրային ու մասնավոր շահերի միջև և հանգեցնում է մարդու իրավունքների նկատմամբ պետության անհամաչափ միջամտության:

Նման եզրահանգման համար հիմք են ծառայել հարցի առնչությամբ Պաշտպանին հասցեագրած բողոքների, կանխարգելման ազգային մեխանիզմի մշտադիտարկման, օրենսդրության ու միջազգային չափանիշների ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

Ազատությունից զրկված անձի դեպքում նրա առողջության պահպանման և բժշկական սպասարկման ու, առհասարակ, բուժօգնության հետ կապված հարցերն առաջնահերթ պետք է դիտարկել վատ վերաբերմունքի բացառման և առանձին իրավիճակներում՝ անձի մասնավորության (privacy) երաշխավորման տեսանկյունից, ինչպես նաև ընդունված է միջազգային իրավաբանության մեջ:

**Ուստի, անհրաժեշտ է մինչև իրավական փոփոխությունները, փոխել պրակտիկան արտահերթ զեկույցում շարադրված խնդիրների հաշվառմամբ՝ ձևական մոտեցումներից զերծ, առավել իրավունքահեն շեշտադրմամբ բարելավվելու նպատակով:**

*Մարդու իրավունքների պաշտպանը, ձեռնպահ մնալով քրեական վարույթի ընթացիկ գործով որևէ գնահատական տալուց, արձանագրում է, որ հանրային բարձր հեղափոխություն ունեցող քրեական գործեր քննելիս պետությունը ստանձնում է առավել պատասխանատվություն հետևողականորեն երաշխավորելու քրեորեն հետապնդելի արարքում մեղադրվող ցանկացած անձի անմեղության կանխավարկածը: Դա միայն ցույց է տալիս՝ որքան բարձր է պետությունը գնահատում հանցավորության դեմ պայքարի իր հանձնառությունը՝ այդ պայքարի արդյունքների կայուն հավաստիությունն ապահովելու տեսանկյունից: Ավելին, քրեական արդարադատության համակարգը կրում է քրեական վարույթին առնչվող անհրաժեշտ տեղեկություններ հանրությանը տրամադրելու և այդ կերպ հաշվետու քննություն ապահովելու պարտադիր բեռը: Սա իր հերթին կոչված է երաշխավորելու հանրության վստահությունն առ այն, որ քրեական կոնկրետ վարույթն իրականացվում է իրավունքի գերակայության մշտական պահպանմամբ:*

## **2. 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների կապակցությամբ քննվող քրեական գործերը և դրանցում ներգրավված անձանց մասնակցությամբ այլ գործեր**

2016 թվականի հուլիսի իրադարձությունների շրջանակում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քննությունը շարունակում է հանրային մեծ հետաքրքրվածություն վայելել: Պաշտպանը

վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունները մարդու իրավունքների տեսանկյունից լուրջ մարտահրավերների առաջ կանգնեցրին մեր երկիրը: Դրա հետ միասին, այդ իրադարձությունները լրացուցիչ ազդակ էին հասկանալու երկրում առկա համակարգային խնդիրները, դրանց նպաստող պատճառներն ու պայմանները: Այդ նպատակով էր նաև, որ 2017 թվականին հրապարակվեց «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը: Զեկույցում հանգամանորեն քննարկվեցին հուլիսյան դեպքերը, ինչպես նաև դրանց առնչությամբ ներկայացվեցին մանրամասն գնահատականներ: Արձանագրվեցին նաև հուլիսի 17-ից 31-ի իրադարձությունների ընթացքում տեղի ունեցած՝ մարդու իրավունքներին և ազատություններին առնչվող խնդիրներ, որը բարձր գնահատվեց նաև միջազգային գործընկերների կողմից<sup>491</sup>:

Ինչպես 2017, 2018, 2019 և 2020 թվականի տարեկան հաղորդումներով, սույն հաղորդմամբ ևս անդրադարձ է կատարվել 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների ընթացքում Ոստիկանության գործողությունների առնչությամբ հարուցված քրեական գործերի քննությանը: Սա պայմանավորված է հատկապես այն հանգամանքով, որ Պաշտպանն անհրաժեշտ է համարում տվյալ գործերի ընթացքի մասին հանրային բարձր իրազեկվածությունը<sup>492</sup>:

Հուլիսյան իրադարձություններին առնչվող քրեական գործերի հիմնական մասը գտնվում է դատաքննության փուլում: Առկա են նաև դատական ակտեր: Հրապարակային դատաքննության պայմաններում հասարակությունը հնարավորություն ունի հետևելու գործերի ընթացքին՝ ամենայն մանրամասնությամբ: Տեղի ունեցող դատական նիստերը մշտապես գտնվում են զանգվածային լրատվության միջոցների ուշադրության կենտրոնում և ակտիվ լուսաբանվում են: Նկատի ունենալով այս քրեական գործերի առանձնահատկությունը, հասարակության վերաբերմունքն ու հետաքրքրվածությունը, ինչպես նաև դատավարության մասնակիցների, գործի հետ առնչություն ունեցող անձանց իրավունքներն ու օրինական շահերը, դատավարության մասնակիցների միջև առկա լարվածությունն ու հուզականությունը, Պաշտպանը հորդորում է թեմային առնչվող տեղեկություններ հրապարակելիս առավել զգոն լինել՝ ընդհուպ մինչև ձևակերպումների ընտրության հարցում:

Ինչպես ներկայացվել էր Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ՝ 2016 թվականի հուլիսի 17-ին տեղի ունեցած իրադարձությունների առթիվ հարուցված քրեական գործի նախաքննությունն իրականացվում էր ՀՀ հատուկ քննչական ծառայությունում՝ նախաքննությունն իրականացվում է քննչական խմբի կողմից: Այդ քրեական գործից որոշ գործեր անջատվել, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան: Լրագրողի մասնագիտական

<sup>491</sup> Տե՛ս «2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/831269377eb9300ea711f6f312c9de1a.pdf>:

<sup>492</sup> 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների առթիվ քրեական գործերի, այդ կապակցությամբ Պաշտպանի ձեռնարկած միջոցների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Պաշտպանի 2018 թվականի հաղորդումը, էջ 321-325:

օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերով դատարան ուղարկված գործերով կայացվել են մեղադրական դատավճիռներ (օրինակ, «Արմենիա» հեռուստաընկերության լրագրող Ալբերտ Գալստյանի, «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Հովհաննես Մովսիսյանի, «news.am» կայքի լրագրող Խորեն Գրիգորյանի, լրագրող Դավիթ Հարությունյանի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելու ենթադրյալ դեպքերի առթիվ կայացված դատավճիռները):

Դրանից բացի, 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմում քննարկվել էր Հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով մեղադրյալ Արա Ալեքսանդր Կոմշույանի (Ալեք Ենիգոմշյան) բողոքը: Նա հայտնել էր, որ իրեն ՀՀ քրեական օրենսգրքի 38-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով նախատեսված հանրորեն վտանգավոր արարքների ենթադրյալ կատարման համար մեղադրանք է առաջադրվել դեռևս 2016 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ իրեն մեղադրանք առաջադրելուց անցել է շուրջ 1328 օր, սակայն քրեական գործը դեռ գտնվում է նախաքննության փուլում, չնայած նրան, որ սկզբնական գործը, որից իր նկատմամբ գործ է անջատվել, հարուցումից շուրջ 8-9 ամիս անց ուղարկվել է դատարան՝ ըստ էության քննելու համար: Ա. Կոմշույանը պնդել էր, որ այդ գործով նախաքննություն փաստացի չի իրականացվում, քանի որ չեն կատարվում քննչական կամ այլ դատավարական գործողություններ, ուստի խնդրել էր Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը քրեական գործով նախաքննության ավարտ հայտարարելու հարցում:

Բողոքում բարձրացված հարցի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիմել էր Գլխավոր դատախազություն: Դատախազությունը պարզաբանել էր, որ կազմակերպված խմբի կողմից ապօրինի կերպով հրազեն, ռազմամթերք ձեռք բերելու, պահելու, փոխադրելու և 2016 թվականի հուլիսի 17-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի տարածք մուտք գործելու, նշված ստորաբաժանման վարչական շենքը և հարակից տարածքը զավթելու, պահելու դեպքերի առթիվ հարուցված, ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննվող քրեական գործով հիշյալ հանցագործությունների կատարմանն անմիջականորեն մասնակցելու և դրանց կատարմանն օժանդակելու համար մեղադրվող 7 անձանց մասով նախաքննությունը դեռևս շարունակվում էր:

Միաժամանակ պարզաբանվել է, որ 2019 թվականի ապրիլի 12-ին որոշում էր կայացվել հանցակազմի բացակայության հիմքով մեղադրյալ Ա. Կոմշույանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-219-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդումը դադարեցնելու, ՀՀ քրեական օրենսգրքի 38-218-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով քրեական հետապնդում չիրականացնելու և ընտրված խափանման միջոցը վերացնելու մասին:

**Դատարանի շենքում ամբաստանյալների նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու ենթադրյալ դեպքի առթիվ քննվող քրեական գործը.** Հուլիսյան իրադարձությունների շրջանակներում անհրաժեշտ է անդրադարձ կատարել հանրային նշանակության մեկ այլ՝ 2017 թվականի հունիսի 28-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Ավան նստավայրի

շենքում Ոստիկանության ծառայողների կողմից ամբաստանյալներին ենթադրաբար ծեծի ենթարկելու տեղեկությունների առնչությամբ հարուցված քրեական գործի քննությանը:

Դեռևս 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով նշվել էր, որ Պաշտպանին ներկայացված տեղեկության համաձայն՝ պաշտոնատար անձանց կողմից բռնություն գործադրելով զուգորդված պաշտոնեական լիազորություններն անցնելու ենթադրաբար տեղի ունեցած վերոնշյալ դեպքի առթիվ 2017 թվականի հուլիսի 3-ին Հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քրեական գործ: Նախաքննության ընթացքում Արեգ Կյուրեղյանը, Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանը, Մխիթար Ավետիսյանը և Գագիկ Եղիազարյանը ճանաչվել են տուժող: Արեգ Կյուրեղյանն ու Մխիթար Ավետիսյանը հրաժարվել են ցուցմունք տալ, իսկ Սմբատ Բարսեղյանը, Արայիկ Խանդոյանն ու Գագիկ Եղիազարյանը հարցաքննվել են և դեպքի վերաբերյալ տվել ցուցմունքներ:

Պաշտպանը մշտապես ուշադրության ներքո է պահել հարուցված քրեական գործի ընթացքը: Դրանից բացի, Պաշտպանի անմիջական հանձնարարությամբ, ծեծի ենթարկվելու ահազանգից անմիջապես հետո՝ լուսադեմին է Պաշտպանի աշխատակազմը նրանց տեսակցել ԲԿՀ-ում և արձանագրել ստացած վնասվածքները:

2020 թվականին Դատախազությունից և Հատուկ քննչական ծառայությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ քրեական գործի շրջանակում որոշում է կայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 309.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (խոշտանգումը մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից) նախատեսված հանրորեն վտանգավոր արարքի ենթադրյալ կատարման համար Երևանի վարչության ուղեկցող գումարտակի հրամանատարին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

Արդեն իսկ 2021 թվականին Դատախազությունից տրամադրված պատասխանների համաձայն՝ Ոստիկանության պարեկապահակակետային ծառայության գնդի վրա զինված հարձակման գործով ամբաստանյալների նկատմամբ բռնություն գործադրելու դեպքի առթիվ հարուցված թիվ 62219517 քրեական գործով վարույթը 2021 թվականի հուլիսի 06-ին կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդված 1-ին մասի 1-ին կետով, իսկ մեկ անձի վերաբերյալ որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ ՀՀ քրեական դատավարության 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով:

Պաշտպանը հարկ է համարում հատուկ ընդգծել խոշտանգումների վերաբերյալ գործերով արդյունավետ քննության անհրաժեշտությունն ու միջազգային իրավաբանությանը հայտնի չափանիշները: Այս գործի քննությունը միջազգային չափանիշներին համապատասխան ընթանալու տեսանկյունից խնդրահարույց հարցեր է առաջացնում:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ՝ քննություն իրականացնելու պարտականությունը «ոչ թե որևէ արդյունքի հասնելու, այլ միջոցներ ձեռնարկելու պարտականություն է»։ պարտադիր չէ, որ յուրաքանչյուր քննություն լինի հաջողված կամ հանգեցնի այնպիսի եզրակացության, որը համընկնում է պահանջ ներկայացրած անձի՝

դեպքերի մասին տված ցուցմունքներին. *այնուամենայնիվ, դրա միջոցով սկզբունքորեն պետք է հնարավոր լինի պարզել գործի փաստերը և, այն դեպքում, երբ պարզվում է, որ պնդումները ճիշտ էին, ապա նաև բացահայտել և, հիմնավորված լինելու դեպքում, պատժել պատասխանատու անձանց*<sup>493</sup>: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ ցանկացած դեպքում իշխանությունները պետք է ձգտեն պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, և հապճեպ արված կամ անհիմն եզրակացությունները չպետք է հիմք ընդունվեն իրենց քննությունն ավարտելու համար կամ դրվեն իրենց որոշումների հիմքում: Պետք է ձեռնարկվեն բոլոր հնարավոր միջոցները՝ միջադեպի հետ կապված ապացույցները, այդ թվում՝ ակնատեսների ցուցմունքները, դատաբժշկական և այլ ապացույցներ ապահովելու համար: Քննության ցանկացած թերություն, որը խոչընդոտում է վնասվածքների պատճառը կամ հանցանքի համար պատասխանատու անձանց ինքնությունը պարզելը, կանգնեցնում է այս չափանիշը խախտելու վտանգի առջև<sup>494</sup>: Դրանից բացի, որպեսզի պետական մարմինների կողմից ցուցաբերված ենթադրյալ վատ վերաբերմունքի գործով քննությունն արդյունավետ լինի, այն պետք է լինի անկախ: Քննության անկախությամբ ենթադրվում է ոչ միայն ենթակայության կամ ինստիտուցիոնալ կապի բացակայություն, այլ նաև գործնական իմաստով անկախություն<sup>495</sup>:

### **3. 2020 թվականի նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Երևանում տեղի ունեցած իրադարձությունները**

2021 թվականի ընթացքում Պաշտպանի ուշադրություն ներքո շարունակել են մնալ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության մասին հայտարարելուց անմիջապես հետո Երևանում տեղի ունեցած բռնությամբ զուգորդված իրադարձությունները, երբ մի խումբ անձինք մուտք էին գործել ՀՀ կառավարության վարչական շենք, այդ թվում՝ ՀՀ վարչապետի ընդունարան և կառավարության նիստերի դահլիճ, Ազգային ժողովի վարչական շենք, այդ թվում՝ նիստերի դահլիճ, կառավարական ամառանոց, նաև բռնություն գործադրվել Ազգային ժողովի նախագահի նկատմամբ: Ստացած մարմնական վնասվածքների պատճառով ԱԺ նախագահը տեղափոխվել էր բժշկական հաստատություն, երկարատև ստացիոնար բուժում ստացել, ենթարկվել վիրահատական միջամտության:

<sup>493</sup> Տե՛ս Մաթևոսյանն ընդդեմ Հայաստանի (Matevosyan v. Armenia) գործով 2017 թվականի սեպտեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 52316/09, կետ 73:

<sup>494</sup> Տե՛ս Միխեյևն ընդդեմ Ռուսաստանի (Mikheyev v. Russia) գործով 2006 թվականի հունվարի 26-ի վճիռը, գանգատ թիվ 77617/01, կետ 108, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի (Virabyan v. Armenia) գործով 2012 թվականի հոկտեմբերի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 162:

<sup>495</sup> Տե՛ս Օգյուրն ընդդեմ Թուրքիայի (Ogur v. Turkey) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 21594/93, կետ 91, Մեհմեթ Էմին Յուկսելն ընդդեմ Թուրքիայի (Mehmet Emin Yuksel v. Turkey) գործով 2004 թվականի հուլիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 40154/98, կետ 37, Երգին ընդդեմ Թուրքիայի (Ergi v. Turkey) գործով 1998 թվականի հուլիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 66/1997/850/1057, կետ 83:



Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ դրանք երկրում օրեցօր աճող անհանդուրժողականության արդյունք էին: Վտանգավոր ծավալների հասնող ատելության խոսքի և բռնության կոչերի աճ գրանցվեց հատկապես արտակարգ դրության պայմաններում, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի պատերազմի ընթացքում: Ստեղծված իրադրությունն ավելի խորացավ պատերազմական գործողությունների վերաբերյալ տեղեկատվական վակուումի պայմաններում և, ի վերջո, այդ վտանգավոր դրսևորումները, ցավոք, տեղափոխվեցին իրական կյանք:

2020 թվականի նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Երևանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանն անմիջապես հանդես եկավ իրողությունը դատապարտող հայտարարությամբ՝ առաջնային հրամայական համարելով իրար նկատմամբ բռնության որևէ դեպքի, անգամ բռնության որևէ կոչի կամ հնարավորության բացառումը<sup>496</sup>:

Տարբեր հարթակներում Պաշտպանը բազմիցս հայտարարել է, որ դատապարտել է ՀՀ Ազգային ժողովի նախագահի նկատմամբ կիրառված բռնությունը: Մտահոգիչ էր այն, որ ինչպես հաղորդվել է Մարդու իրավունքների պաշտպանին և հրապարակայնորեն, Ազգային ժողովի նախագահի նկատմամբ բռնություն գործադրողները դադարեցրել են իրենց գործողությունները, երբ կարծել են, որ նա արդեն մահացած վիճակում է:

Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո էր նաև նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակի նկատմամբ արձանագրված հարձակումը, ինչը նույնպես անթույլատրելի երևույթ էր: Ինչպես վկայում էին այդ պահի տվյալները, տեղի էր ունեցել լրատվամիջոցի գույքի ու տեխնիկայի նկատմամբ հարձակման փորձ, ինչպես նաև, հարձակում լրատվամիջոցի աշխատակիցների վրա: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հետագայում արձանագրեց տեղեկություն, որ ֆիզիկական հարձակման էր ենթարկվել նաև «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» հիմնադրամի գրասենյակը:

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես գտնվել է և շարունակում է գտնվել իրավապահ մարմինների հետ սերտ կապի մեջ, ու բարձր է գնահատում նրանց գործառույթների դերը մեր երկրում՝ հատկապես այդ պատասխանատու օրերին: Իրավապահ մարմինների գործընկերները տարել են գիշերուզոր աշխատանք ու հաճախ գործել բարդ իրավիճակներում: Այդուհանդերձ, պետք է անել այնպես, որ խոսքը գնա ոչ թե նման ցավալի դեպքերի հետևանքների վերացման, այլ դրանց կանխարգելման մասին:

Պաշտպանի՝ այդ օրվա հայտարարությունն այն կշռադատված, հիմնավորված արձագանք էր, որն ուղղված էր ողջ հանրությանը, ուներ կանխարգելիչ նպատակ ու հիմնված էր այդ օրերին արձանագրված հիմնական գործոնների վերլուծության վրա.

<sup>496</sup> Տե՛ս «Մարդու իրավունքների պաշտպանը համերաշխության ու համախմբվածության կոչ է անում» հրապարակումը՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1366> հղումով, ինչպես նաև «ՀՀ վարչապետի հայտարարությունը, թե Պաշտպանը չի դատապարտել նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Երևանում տեղի ունեցած իրադարձությունները, իրականությանը չի համապատասխանում» հրապարակումը՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1380> հղումով:

1) զինվորական համազգեստով ու զինված անձանց՝ ատելություն, վիրավորանք ու սպանության սպառնալիքներ պարունակող ուղերձներ առաջնագծից ու դրանց լայն տարածում,

2) նույնաբնույթ ուղերձներ մի շարք քաղաքացիական անձանց կողմից,

3) հանրային առանձին, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից ուղղակի կամ անուղղակի ատելության ու բռնության սպառնալիքների հրապարակային տարածում,

4) Երևանի Հանրապետության հրապարակում տեղադրված էկրանին ատելություն, բռնության կոչեր ու սպանության սպառնալիքներ պարունակող տեսանյութի ցուցադրում,

5) սոցիալական ցանցերում ատելություն, բռնության կոչ, հայիոյանք ու սպառնալիքներ պարունակող ագրեսիվ գրառումների ու մեկնաբանությունների կտրուկ աճ՝ գլխավորապես կեղծ օգտահաշիվներից՝ կազմակերպված, կոնկրետ նպատակներով ու թիրախներով:

**Անհրաժեշտ է այս համատեքստում ևս մեկ անգամ ընդգծել, որ Մարդու իրավունքների պաշտպանի իրավասությունը հստակ է՝ ուղիղ ազդեցությամբ պաշտպանել մարդուն պետական կամ ցանկացած այլ հանրային մարմնից կամ պաշտոնյայից: Հետևաբար, պաշտոնյաներն իրենց լիազորությունների իրականացման կամ չիրականացման, դրանց հետևանքների կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն ակնկալել չեն կարող:**

Այդ օրը տեղի ունեցած բռնության դատապարտելի իրադարձությունները կանխելու, դրանք հետագայում բացառելու ու մեղավորներին պատասխանատվության ենթարկելը երաշխավորելու ուղիղ պարտավորություն ունեն, առաջին հերթին, պետական իրավասու մարմինները: Այս գործերը պետք է ենթարկվեն պատշաճ քննության՝ հանրային հաշվետվողականություն ապահովելու նկատառումով և այն հաշվով, որ վեր հանվեն ու հանրությանը ներկայացվեն բոլոր շարժառիթները:

Մարդու իրավունքների պաշտպանը հատկապես կարևորում է այս իրադարձությունների կապակցությամբ նախաձեռնված քրեական վարույթների արդյունավետ քննության իրականացումը, ինչպես նաև այդ վարույթների մասին պարբերաբար հանրության իրազեկումը՝ կասկածվող ու մեղադրվող անձանց անմեղության կանխավարկածի անվերապահ ապահովմամբ:

Դատախազությունից ստացվել էին տեղեկություններ այն մասին, որ 2020 թվականի նոյեմբերի 10-ին Կառավարության շենքում, Ազգային ժողովում և պետական նշանակության այլ օբյեկտներում ու հասարակական վայրերում տեղի ունեցած դեպքերի առթիվ Ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում նույն օրը ՀՀ քրեական օրենսգրքի 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերով, 301-րդ հոդվածով և 301.1 հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ: Նշված գործով քննություն է կատարվում նաև զանգվածային անկարգությունների ժամանակ Ազգայի ժողովի նախագահի նկատմամբ բռնություն գործադրելու դրվագով:

2021 թվականին հիշյալ քրեական գործի քննության ընթացքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ին Երևան քաղաքում գտնվող Կառավարության շենքում, Ազգային ժողովի շենքում և պետական նշանակության այլ օբյեկտներում ու վայրերում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ քրեական գործով ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական դեպարտամենտում դեռևս

նախաքննությունը շարունակվում է: Տվյալ քրեական գործով 22 անձ ունի մեղադրյալի դատավարական կարգավիճակ, նրանց 2020-2021 թվականների ընթացքում մեղադրանքներ է առաջադրվել 225-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով, 225.1-րդ հոդվածով, 301.1-րդ հոդվածի 1-ին մասով, 38-301.1-րդ հոդվածի 1-ին մասով, 34-300-րդ հոդվածի 1-ին մասով, 38-34-300-րդ հոդվածի 1-ին մասով, 176-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 235-րդ հոդվածի 1-ին մասով:

Դրա հետ մեկտեղ, ըստ Դատախազությունից տրամադրած տեղեկության՝ ձեռք բերված ապացույցների բավարար համակցությամբ քրեական գործից անջատվել և մեղադրական եզրակացությամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ուղարկվել 29 անձի վերաբերյալ 10 քրեական գործ, որոնցից 4-ով 7 անձի վերաբերյալ կայացվել է մեղադրական դատավճիռ: Դրանցից մեկով 1 անձ դատապարտվել է ազատազրկման 4 տարի ժամկետով և պատիժը պայմանականորեն չի կիրառվել, սահմանվել է 5 տարի փորձաշրջան: Մեկ քրեական գործով արագացված դատական քննության արդյունքում 2 անձ դատապարտվել է 4-ական տարի ազատազրկման: Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել պաշտպանի կողմից, որի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը որոշում է կայացրել պաշտպանի բողոքը մասնակիորեն բավարարելու մասին, և ամբաստանյալների նկատմամբ նշանակվել է համապատասխան հոդվածով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պատիժ, քան նախատեսված է այդ հոդվածով, այսինքն՝ ազատազրկում 2 տարի ժամկետով: Նշված դատական ակտի դեմ ներկայացվել է վճռաբեկ բողոք: Քրեական գործով կրկին արագացված դատական քննության կարգով կայացված մեղադրական դատավճռով (առանց հափշտակելու նպատակի ավտոմեքենային ապօրինաբար տիրանալը) ամբաստանյալը դատապարտվել է տուգանքի՝ 150.000 ՀՀ դրամի չափով: Քրեական գործով էլ համաձայնեցման վարույթի շրջանակներում 3 անձ (զանգվածային անկարգության մասնակիցներ) դատապարտվել է ազատազրկման 3 տարի ժամկետով, նրանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել և սահմանվել է 2 տարի փորձաշրջան:

Վերոնշյալ իրադարձությունների հանրային նշանակության հաշվառմամբ՝ կարևոր նշանակություն կունենա խորհրդարանական վերահսկողությունը՝ հատկապես կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու և այդպիսի իրադարձությունների որևէ տեսակի կրկնություն բացառելու նկատառումով:

*2020 թվականի նոյեմբերի 9-ի լույս 10-ի գիշերը Երևանում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ իրականացվող վարույթների հանրային հնչեղության և կարևորության հաշվառմամբ՝ ինչպես վերը թվարկված բոլոր քրեական վարույթները, այն ևս լինելու է Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության կենտրոնում ու վերահսկողության ներքո՝ իրավական կարգավիճակի առավելագույն հնարավորություններով:*

**4. Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության երաշխավորումը՝ որպես պետության պոզիտիվ պարտավորություն**

Մարդու իրավունքների ապահովման ոլորտում պետության պոզիտիվ պարտավորությունների թվում առանձնակի դեր ունի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության երաշխավորումը, որն ուղղակիորեն բխում է ժողովրդավարական և մարդու իրավունքների հարգանքի վրա հիմնված պետության գաղափարից:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության խնդիրն է նպաստել մարդու իրավունքների համակարգի բարելավմանը, ընթացակարգային ու ինստիտուցիոնալ երաշխիքների ամրապնդմանը: Դրա մեջ է նաև մտնում քաղաքացիական հասարակության դերը, իրավապաշտպան կազմակերպությունների ու անհատների պաշտպանված աշխատանքի երաշխավորումը: Պետությունը պետք է իր համապատասխան մարմինների միջոցով երաշխավորի հասարակական կազմակերպությունների ազատ գործունեությունը երկրում ու ապահովի նրանց պաշտպանված աշխատանքը:

Ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականի ընթացքում շարունակվեցին արձանագրվել իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին և նրանց անդամներին թիրախավորելու դեպքեր, նրանց հանդեպ հնչող վիրավորանքների ծավալների ու աճի վտանգավոր միտումներ, ինչպես նաև հարուցվեց և շարունակվեց իրավապաշտպան կազմակերպության նախագահի նկատմամբ քրեական հետապնդումը, ինչը խիստ մտահոգիչ երևույթ է:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել իրապարակային հայտարարությամբ<sup>497</sup>:

Մասնավորապես, Պաշտպանն անթույլատրելի է համարում իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին և նրանց անդամներին թիրախավորելը, նրանց հանդեպ հնչող վիրավորանքների ծավալներն ու աճի վտանգավոր միտումները: Մտահոգիչ է, որ սոցիալական մեդիայի տիրույթներում թիրախավորումը նաև անձնավորված է ու առանձնանում է ատելության խոսքով:

Չպետք է թույլ տալ, որպեսզի մեր հասարակությունում նման ընկալումներ զարգանան, քանի որ դրանք վտանգավոր են ոչ միայն երկրում անհանդուրժողականության աճի, այլ նաև ՀԿ-ների ու իրավապաշտպանների դերի տեսանկյունից:

Հրապարակային հայտարարությամբ հատկապես ընդգծվել է այս հարցում պետության հատուկ դերը: Պետությունը պոզիտիվ պարտավորություն ունի համապատասխան մարմինների միջոցով ապահովելու ՀԿ-ների և իրավապաշտպանների երաշխավորված գործունեությունը երկրում ու ապահովել նրանց անհրաժեշտ պաշտպանությունը: Պետք է նկատի ունենալ, որ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները մարդու իրավունքների պաշտպանության համակարգում

<sup>497</sup> Հրապարակումը հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1467> հղումով:

իրենց հատուկ տեղ ունեն, դրանք կատարում են պետության նկատմամբ վերահսկողության կարևոր գործառույթ: Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը մեծ կարևորություն է տալիս ՀԿ-ների ու իրավապաշտպանների աշխատանքին ու նրանց դերին մեր երկրում ժողովրդավարության կայացման ու զարգացման հարցում:

Իրավապաշտպանների ու ՀԿ-ների հետ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի համագործակցությունը շարունակական է մարդու իրավունքների պաշտպանության այնպիսի առաջնահերթ ոլորտներում, ինչպիսիք են՝ զինձառայողների և նրանց ընտանիքի անդամների իրավունքները, հաշմանդամություն ունեցող անձանց, երեխաների, կանանց իրավունքները, կարծիքի արտահայտման ու մամուլի ազատությունը, ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանությունը և խոշտանգումների կանխարգելումը, գործարարության խթանումն ու աշխատանքային իրավունքների պաշտպանությունը, փախստականների իրավունքների ապահովումը և այլն:

2021 թվականի ընթացքում ևս շարունակվել է մարդու իրավունքների և ազատությունների, հանրային նշանակություն հարցերի շուրջ համատեղ արդյունավետ աշխատանքն այնպիսի ՀԿ-ների ու իրավապաշտպանների հետ, ինչպիսիք են, օրինակ, Հայաստանի հելսինկյան կոմիտեն, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը, Երևանի մամուլի ակումբը, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, Իրազեկ քաղաքացիների միավորումը, «ՍՕՍ մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը, Մարդու իրավունքների պաշտպանությունն առանց սահմանների ՀԿ-ն, Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի համակարգողը, Լիարժեք կյանքը, Ունիտոնը, Ընդդեմ իրավական կամայականության ՀԿ-ն, Հարկ վճարողների պաշտպանությունը, Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոնը և այլն: Կարևոր է նաև փակ հաստատությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբերի գործունեությունը: 2021 թվականն առանձնացավ նաև իրավապաշտպան գործընկերների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գերիների շահերի պաշտպաններ, իրավապաշտպաններ Արտակ Զեյնալյանի և Սիրանուշ Սահակյանի հետ համատեղ իրականացված աշխատանքով:

Պաշտպանը պարբերաբար հրապարակային մտահոգություն է հայտնել իրավապաշտպանների դերով պայմանավորված՝ նրանց նկատմամբ բռնության կոչերի, սպառնալիքների անթույլատրելիության մասին: Բազմիցս ընդգծվել է այս հարցում պետության՝ համարժեք քայլեր ձեռնարկելու պարտականությունը: Խոսքն ինչպես իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին, այնպես էլ անհատների մասին է: Իրավապաշտպանների նկատմամբ քրեորեն պատժելի արարքներ թույլ տրվելու դեպքում պետք է անհապաղ իրականացնել քրեական վարույթ ու ապահովել հանցանքի բոլոր հանգամանքների բացահայտումը՝ բացառելու համար նաև նման արարքները հետագայում:

Օրինակ՝ դեռևս 2017 թվականի հունիսի 6-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը տեղեկություններ էր հրապարակել իրեն

կյանքից զրկելու սպառնալիքների վերաբերյալ<sup>498</sup>: Հրապարակված տեղեկությունների համաձայն՝ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի էջում կատարած գրառման կապակցությամբ ցանցի մեկ այլ օգտատեր մեկնաբանություն է տեղադրել դիմահար կրակոցով Ա. Սաքունցին կյանքից զրկելու վերաբերյալ:

Պաշտպանը սեփական նախաձեռնությամբ սկսել էր քննարկման ընթացակարգ և անմիջապես դիմել ՀՀ գլխավոր դատախազին՝ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող վերոնշյալ դեպքերով վարույթ նախաձեռնելու խնդրով: Հարուցված քրեական գործով իրավապաշտպանը ճանաչվել է տուժող: Դրանից հետո, Ա. Սաքունցը Պաշտպանին էր ներկայացրել մտահոգություններ՝ կապված քրեական գործի դանդաղ ընթացքի, ինչպես նաև գործի շրջանակներում քննչական գործողությունների հարցի հետ:

Հետագայում Պաշտպանին տրամադրած պարզաբանումների համաձայն՝ քրեական գործի վարույթը կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների անխոչընդոտ աշխատանքի ընթացքում ծագած խնդիրների առնչությամբ Պաշտպանը գրավոր բողոք էր ստացել նաև «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպությունից<sup>499</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանն այդ միջադեպին առնչվող հայտարարությամբ<sup>500</sup> հատուկ շեշտադրել է, որ կոնկրետ միջադեպով պայմանավորված՝ իրավունքների պաշտպանության հարցում նշանակալից ներդրում ունեցող իրավապաշտպանին Ոստիկանության բաժին տանելը հանրային ընկալման տեսանկյունից կարող է ստեղծել նրա հանրային գործունեությամբ պայմանավորված

<sup>498</sup> Տե՛ս <http://www.armtimes.com/hy/article/114198>, <http://www.1in.am/2153667.html> հղումներով:

<sup>499</sup> Բողոքով նշվել է, որ 2020 թվականի նոյեմբերի 10-ին ֆիզիկական հարձակում է տեղի ունեցել Հիմնադրամի գրասենյակի նկատմամբ, որից հետո՝ դեկտեմբերի 12-ին «որպես արյան կոչ» անհայտ անձինք կարմիր գույնի ներկ են լցրել գրասենյակի մուտքի մոտ: Այս մասին Պաշտպանին բանավոր տեղեկություններ է փոխանցել նաև Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը: Նշվածի կապակցությամբ ևս գրություններ են հասցեագրվել Դատախազություն և Ոստիկանություն, պարզվել է, որ դեկտեմբերի 12-ի դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 226.2-րդ հոդվածով (Բռնություն գործադրելու հրապարակային կոչերը, բռնությունը հրապարակայնորեն արդարացնելը կամ քարոզելը), ներկայում ընթանում է նախաքննություն: Հայաստանում մարդու իրավունքների համակարգի զարգացման գործում նշանակալից ներդրում ունեցած իրավապաշտպանի ներգրավմամբ դեպք արձանագրվել էր 2020 թվականի նոյեմբերի 25-ին: Այդ օրը զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են հրապարակվել «Հայաստանի հելսինկյան կոմիտե» հասարակական կազմակերպության նախագահ, իրավապաշտպան Ավետիք Իշխանյանին Ոստիկանություն տանելու մասին: Տեղեկությունների հրապարակումից անմիջապես հետո Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման խումբն իրականացրել է այց Ոստիկանության համապատասխան ստորաբաժանում: Այցից անմիջապես առաջ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ներկայացրել նաև նրա փաստաբանը: Այցի ընթացքում տեղի է ունեցել առանձնազրույց իրավապաշտպան Ավետիք Իշխանյանի հետ: Ստացվել են Ոստիկանության պարզաբանումները: Դեպքի վերաբերյալ տեղեկությունները հասանելի են <https://www.azatutyun.am/a/30942405.html> և <https://www.youtube.com/watch?v=5oNKmc5PKSI> (1:17:23 վայրկյան) հղումներով:

<sup>500</sup> Հաղորդումը հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1400> հղումով:

լինելու տպավորություն, թեև կարող էր Ոստիկանությունը նման նպատակ չունենալ: Ոստի, կոնկրետ դեպքում անհրաժեշտ էր հաշվի առնել Հայաստանի հելսինկյան կոմիտեի ղեկավար Ավետիք Իշխանյանի հանրային հեղինակությունը, նրա նշանակալից ավանդը մարդու իրավունքների պաշտպանության, մեր երկրի իրավական համակարգի զարգացման հարցում ու այն փոքր միջադեպը, որին ներկա են եղել Ոստիկանության ծառայողներ: Այս դեպքից բացի, արձանագրվել են մի քանի այլ դեպքեր, երբ հավաքների վայրերից բերման է ենթարկվել իրավապաշտպան Ավետիք Իշխանյանը:

Զեկույցի սույն հատվածում անհրաժեշտ ենք համարում հատուկ անդրադարձ կատարել «Մարդու իրավունքների եզդիական կենտրոն» ՀԿ նախագահ Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ խիստ խնդրահարույց կերպով իրականացվող քրեական հետապնդմանը, որը սկսվել է 2021 թվականին և շարունակվում է մինչ օրս: Մասնավորապես, 2021 թվականի ընթացքում արձանագրվել է, որ Սաշիկ Սուլթանյանին առաջադրվել էր մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, իսկ մեղադրանքի հիմքում դրվել է իրաքյան եզդիալեզու լրատվամիջոցներից մեկի լրագրողի հետ Մարդու իրավունքների եզդիական կենտրոնի ղեկավար Սաշիկ Սուլթանյանի հարցազրույցը, որում ներկայացվել են մարդու իրավունքների խախտումների մասին կարծիք և գնահատողական դատողություններ:

Ս. Սուլթանյանի՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող կազմակերպության նախագահի իրավունքների ապահովման հարցերով մի շարք միջազգային և հայաստանյան կազմակերպություններ (այդ թվում՝ «Առաջնագծի պաշտպաններ» (Front Line Defenders) կազմակերպությունը) դիմել են Մարդու իրավունքների պաշտպանին՝ կապված նրա նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման իրավաչափության հետ: Ստացված բողոքների և դիմումների ուսումնասիրությամբ արձանագրված մի շարք խնդիրների կապակցությամբ Պաշտպանը հանդես է եկել հայտարարությամբ, ինչպես նաև ՀՀ գլխավոր դատախազության հետ իրականացվել է շարունակական հաղորդակցություն<sup>501</sup>: Այս առումով անհրաժեշտ է հատուկ արձանագրել նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից Դատախազություն ուղարկված տվյալ գրությունները հատուկ չեն պարունակել կոնկրետ քրեական գործով դատավարական գործողություններին գնահատական տվող ձևակերպումներ կամ պնդումներ, այլ հստակ մատնանշվել է, որ բոլոր հարցերին անդրադարձերը կատարված են բացառապես Պաշտպանի մանդատի և միջազգային բարձր ատյանների ու իրավապաշտպան կազմակերպությունների կողմից հնչեցված մտահոգիչ գնահատականների տեսանկյունից:

Բացի դրանից, Պաշտպանի կողմից արձանագրվել են նաև միջազգային մի քանի հեղինակավոր կառույցների գնահատականները Սաշիկ Սուլթանյանին առաջադրված մեղադրանքի կապակցությամբ: Մասնավորապես, Human Rights Watch իրավապաշտպան հեղինակավոր կազմակերպությունը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, ըստ որի՝ Հայաստանի իշխանությունները պնդում են կեղծ քրեական մեղադրանքներն իրավապաշտպան Սաշիկ

<sup>501</sup> Տե՛ս Պաշտպանի հայտարարությունը, հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1847> հղումով:

Սուլթանյանի դեմ, իսկ մեղադրանքները կապված են Սուլթանյանի տված առցանց հարցազրույցի հետ, որում նա խոսել է մի շարք խնդիրների մասին, որոնց, իր կարծիքով, բախվում է եզրհական համայնքը Հայաստանում<sup>502</sup>: Նշված միջազգային և մյուս գնահատականներին հաջորդել է Գլխավոր դատախազության ներկայացուցչի հրապարակային արձագանքը<sup>503</sup> իրավապաշտպանների և հասարակական կազմակերպությունների հայտարարություններին ուղղված, որը, Պաշտպանի գնահատմամբ, պարունակում է քննադատական խոսքին կամ իրավապաշտպան գործունեությանը վերաբերող վտանգավոր շեշտադրումներ: Այս հարցում, մասնավորապես, Պաշտպանի մոտեցումն այն է, որ նման գնահատականները խոսքի ազատության պաշտպանելու հատուկ իրավական պարտավորության և ազգային փոքրամասնությունների հարցերով հասարակական գործիչների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքի տեսանկյունից խիստ խնդրահարույց են:

**Պաշտպանն անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ նշել, որ իրավապաշտպան գործունեության շրջանակում անձի կողմից հնչեցված դատողական գնահատականների առթիվ քրեական հետապնդում իրականացնելը խիստ խնդրահարույց պրակտիկա է, իսկ տվյալ քրեական գործի օրինակով կարող է վտանգավոր պրակտիկա զարգանալ:**

Իրավապաշտպան Սաշիկ Սուլթանյանի նկատմամբ խիստ խնդրահարույց կերպով իրականացվող քրեական հետապնդման իրավաչափության հարցով ՀՀ իշխանությունների վերաբերյալ խիստ քննադատական գնահատականն է հնչեցվել ՄԱԿ-ի իրավասության ներքո տրված հատուկ հայտարարությամբ, որով Հայաստանին կոչ է արվել հրաժարվել Սաշիկ Սուլթանյանին առաջադրված մեղադրանքից, և ներկայացվել են եզրահանգումներ առ այն, որ փոքրամասնությունների նկատմամբ վերաբերմունքի և մարդու իրավունքների ոլորտի վերաբերյալ մտահոգություններ բարձրացնելն ատելության կամ բռնության հարուցում չէ, այլ հակառակը՝ արտահայտվելու ազատության իրավունքով պաշտպանված խոսք: Ըստ հայտարարության՝ ազգային փոքրամասնությունները, ներառյալ՝ եզրինները «պետական անվտանգությանը սպառնալիք չեն», «քրեական մեղադրանքը (...) կարծես, պարզապես նախանշված է Ս. Սուլթանյանին և փոքրամասնությունների իրավունքները պաշտպանող անձանց նկատմամբ ճնշում գործադրելու համար»<sup>504</sup>:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով բարձրացվել է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպության գրասենյակի հասցեին պարբերաբար հնչեցվող վիրավորանքներ ու ատելության խոսք պարունակող արտահայտությունների, ինչպես նաև Հիմնադրամի ներկայացուցիչների նկատմամբ մասնավոր անձանց կողմից իրականացվող հետապնդումների և նրանց բնականոն աշխատանքի ընթացքում ի

<sup>502</sup> Տե՛ս Human Rights Watch կազմակերպության հայտարարությունը, հասանելի է <https://www.hrw.org/hy/news/2021/06/17/378980> հղումով:

<sup>503</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ գլխավոր դատախազության կայքում հրապարակված հայտարարությունը, հասանելի է <https://www.prosecutor.am/am/mo/8244/> հղումով:

<sup>504</sup> Տե՛ս <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=27372&LangID=E> հղումով:



հայտ եկած խոչընդոտների կապակցությամբ: Ընդ որում, վիրավորանք ու ատելության խոսք գործածելու կամ տարածելու դեպքեր արձանագրվել են նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից: Նշված հարցերի, ինչպես նաև Հիմնարկի գրասենյակի նկատմամբ իրականացված հարձակման կապակցությամբ շարունակական գրագրություն է իրականացվել Գլխավոր դատախազության և Ոստիկանության հետ:

Պաշտպանը բազմիցս ընդգծել է, որ արժանապատվությունը վիրավորող կամ ատելության խոսքի տարածումը դատապարտելի է ցանկացած պարագայում՝ անկախ նրանից, թե ով է դա տարածում և ում դեմ է ուղղված, իսկ այդ տեսակի հրապարակումները չեն պաշտպանվում խոսքի ազատության երաշխիքներով: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը վկայում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից նույնպես առկա են վիրավորանք ու ատելության խոսք գործածելու կամ տարածելու դեպքեր: Սա առավել ևս անթույլատրելի է, քանի որ յուրաքանչյուր հանրային պաշտոնյա ունի կոնկրետ իրավական կարգավիճակ ու սահմանափակված է այդ իրավական կարգավիճակի սահմաններով: Դրանից բացի, ակնհայտ է, որ հանրային գործիչները պետք է ավելի զգույշ լինեն իրենց արտահայտություններում՝ հաշվի առնելով անգամ այդ արտահայտությունների բոլոր հնարավոր փոխաբերական կամ անուղղակի իմաստները:

Մտահոգիչ է նաև այն, որ Պաշտպանի աշխատակազմում 2021 թվականի ընթացքում իրավապաշտպան հասարակական կազմակերպություններին և նրանց անդամներին թիրախավորելու վերաբերյալ, ընդհանուր առմամբ, բողոքների աճ է արձանագրվել: Բողոքներից մեկով բարձրացվել է նաև ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավարի, «Եվրասիա» համագործակցություն հիմնադրամի Մարդու իրավունքների ծրագրի տնօրեն Իզաբելլա Սարգսյանի, Դանիել Իոաննիսյանի ու Արթուր Սաքունցը հասցեին հնչեցված սպառնալիքների, վիրավորանքների, ատելության խոսքի ու բռնության կոչեր տարածելու դեպքեր:

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և իրավապաշտպանների գործունեության երաշխավորման տեսանկյունից Պաշտպանն անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ նշել, որ մեծ կարևորություն ունի յուրաքանչյուր վարույթի արդյունավետ քննության հարցն, առավել ևս, երբ այն ուղղակիորեն առնչվում է իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձանց իրավունքների ապահովմանը: Հարցը կարևոր է հատկապես իրավապաշտպանների անկաշկանդ աշխատանքի տեսանկյունից: Պատասխանատվության անխուսափելիությունն ապահովելու և հետագայում այդպիսի ոտնձգությունները կանխարգելելու պահանջը ենթադրում է, որ իրավասու մարմինների կողմից պետք է ձեռնարկվեն օրենքով նախատեսված բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները պարզելու և ոտնձգություն կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ:

Հասկանալի է նաև, որ սոցիալական ցանցերի միջոցով կատարված հանցագործությունների քննությունն ունի որոշակի բարդություններ, հատկապես պայմանավորված սոցիալական ցանցի կառավարման մարմնի հետ համագործակցության, ըստ այդմ՝ օգտատիրոջ բացահայտման և նույնականացման հնարավորության մասով:

Նման քրեական վարույթները գտնվում են Պաշտպանի անմիջական ուշադրության ներքո, այդ իսկ պատճառով քննության վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ են պահանջվում քրեական հետապնդման մարմիններից, ում հետ աշխատանքներն իրականացվում են համագործակցության սկզբունքներով:

### **5. Ձանգվածային լրատվության միջոցների գործունեության երաշխիքների ապահովումը**

Ժողովրդավարական պետությունում լրագրողների անխոչընդոտ մասնագիտական աշխատանքի ապահովումն առանցքային նշանակություն և հանրային կարևորություն ունի: Այն ունի հասարակության տեղեկացված լինելու իրավունքին և պետական մարմինների գործունեության հաշվետվողականությանը նպաստելու նպատակ: Այն նաև երկրում ժողովրդավարության կարևոր ցուցանիշ է:

Լրագրողական գործունեությունը խոչընդոտելու ցանկացած դրսևորում անթույլատրելի է և պետք է արժանանա պետության պատշաճ իրավական արձագանքին: Այդպիսի ցանկացած ոտնձգություն վտանգում է ոչ միայն լրագրողի իրավունքները, այլև իր բացասական ազդեցությունն է թողնում հասարակության տեղեկացվածության իրավունքի լիարժեք ապահովմանը:

Թե՛ 2020, թե՛ 2021 թվականներին նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակը մամուլի ու լրագրության համար առաջացրեց անսպասելի մարտահրավերներ. արտակարգ դրություն, արագ փոփոխվող սահմանափակումներ և այլն: Նման դժվար պայմանները հրամայական էին դարձնում մի կողմից պրոֆեսիոնալ լուսաբանումն ու մարդկանց լիարժեք իրազեկումը, մյուս կողմից պետության հանրային հաշվետվողականության ապահովումը:

Լրագրողական աշխատանքի համար լուրջ մարտահրավերներ էր առաջացրել նաև Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմը: Լրագրողները հաճախ էին կատարում հերոսական աշխատանք՝ վտանգելով սեփական կյանքը, սակայն ունենալով հանրային բարձր գիտակցում, որ իրենք նպաստում են ադրբեջանական զինված ուժերի խախտումների վեր հանմանը: Այս առումով, պատերազմի ժամանակ լրագրողների իրավունքների խախտումների վերաբերյալ հարցերը վերլուծությամբ տեղ են գտել առանձին արտահերթ զեկույցում, որտեղ և ներկայացվում են մանրամասները:

Մամուլի և լրագրողների աշխատանքը պետք է լինի ազատ ու պաշտպանված, կարծրատիպերն էլ պետք է կոտրել պրոֆեսիոնալ գործով՝ պատասխանատու լրատվության սկզբունքների ներքո: Այդ կերպ է հնարավոր սպառիչ արմատավորել լրագրողի աշխատանքի նկատմամբ օրինավորության ու բարեխղճության կանխավարկածը:

Այս կանոններն անհրաժեշտ են յուրաքանչյուր մարդու խոսքի ազատության երաշխավորման և, ի վերջո, պետության նկատմամբ քաղաքացու լիարժեք վերահսկողության համար:

Լրագրողներն ու լրատվության ոլորտի ներկայացուցիչները կարևոր դեր ունեն ժողովրդավարական հասարակությունում հանրային բանավեճերի և որոշումների կայացման

գործընթացներում՝ իբրև հանրային կամ սոցիալական դիտորդներ (watchdogs) հանդես գալու և տեղեկատվության ու գաղափարների փոխանակման, դրանց քննարկման ընդհանուր հարթակներ ստեղծելու միջոցով:

Դրանից բացի, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Մամուլի միջոցով քրեական վարույթին վերաբերող տեղեկությունների տրամադրման վերաբերյալ» 2003 թվականի հուլիսի 10-ի թիվ Rec(2003)13 հանձնարարականի 5-րդ սկզբունքով՝ «Ընդգծվում է զանգվածային լրատվության միջոցների կողմից արձանագրման կարևորությունը՝ հանրությանը քրեական վարույթի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու, քրեական օրենքի կանխարգելիչ նշանակության տեսանկյունից, ինչպես նաև քրեական արդարադատության համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողությունն ապահովելու տեսանկյունից»:

Վերը նշվածի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանի անմիջական ուշադրության ներքո են մշտապես գտնվում լրատվամիջոցների ու լրագրողների մասնագիտական աշխատանքի, նրանց գործունեությանը ցանկացած տեսակի միջամտության հետ կապված հարցերը<sup>505</sup>:

Լրագրողական գործունեությանն առնչվող ցանկացած գործողություն կամ միջամտություն միշտ պետք է իրականացվի իրավական պահանջներին խիստ համապատասխան՝ առանց լրագրողի գործունեությունը խոչընդոտելու կամ միջամտելու: Լրագրող-քրեական հետապնդման մարմին փոխհարաբերակցության հարցի զգայունության հաշվառմամբ, ինչպես նաև գիտակցելով, որ վերը նշված դեպքերը կարող են դառնալ վտանգավոր նախադեպեր՝ Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում վերահաստատել իր դիրքորոշումն առ այն, որ պետության ներկայացուցիչը պարտավոր է ղեկավարվել լրագրողի օրինավորության և բարեխղճության կանխավարկածով: Խոսքի ազատությունը պետք է լայն պաշտպանություն ունենա՝ ընդգրկելով այնպիսի երաշխիքներ, ինչպիսիք են՝ լրագրողի տեղեկատվության աղբյուրի գաղտնիությունը, լուրերի և տեղեկությունների հավաքման գործընթացի պաշտպանվածությունը, խմբագրման ու ներկայացման ինքնավարությունը և այլն: Միաժամանակ, հարցազրույցի ընթացքում կամ լրագրողին գրավոր փոխանցված տեղեկությունների տարածմանը նպաստելու համար լրագրողին պատասխանատվության ենթարկելը կամ որևէ այլ ներգործությունը լրջորեն կխաթարեն մամուլի ներդրումը հանրային հետաքրքրության հարցերի քննարկմանը, և այն չպետք է նախատեսված լինի, քանի դեռ դրա համար հատուկ ծանրակշիռ պատճառներ չկան:

Դեռևս 2019 թվականի ընթացքում Պաշտպանի անմիջական ուշադրությանն արժանացավ 2019 թվականի մարտի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված հոդվածի հետ կապված հարց,

<sup>505</sup> Պաշտպանի 2018 թվականի հաղորդմամբ անդրադարձ էր կատարվել «News.am», «Aysor.am» լրատվամիջոցների հետ առնչվող որոշ խնդիրների, առավել մանրամասն տե՛ս էջ 326-329, իսկ Պաշտպանի 2020 թվականի հաղորդմամբ մանրամասն անդրադարձ էր կատարվել 2019 թվականի մարտի 16-ին «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված հոդվածի հետ կապված հարցին, որի կապակցությամբ Հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել էր քրեական գործ, առավել մանրամասն տե՛ս էջեր 667-669:

որի կապակցությամբ Հատուկ քննչական ծառայությունում ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել էր քրեական գործ<sup>506</sup>:

Հարկ է նկատել, որ զանգվածային լրատվության միջոցի վերը նշված կարևորագույն առաքելության պատշաճ իրականացումն ապահովելու, լրագրողի մասնագիտական գործունեությանը հնարավոր ապօրինի միջամտությունից պաշտպանելու համար թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությամբ սահմանված են երաշխիքներ<sup>507</sup>:

Միջազգային-իրավական չափանիշների, փաստաթղթերի և դատական ատյանների դիրքորոշումներին համապատասխան՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում ամրագրվել է իրավական դրույթ, որի համաձայն՝ լրատվական գործունեություն իրականացնողները և լրագրողները պարտավոր չեն բացահայտել տեղեկատվության աղբյուրը, բացառությամբ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի: Տեղեկատվության աղբյուրի բացահայտումը լրատվական գործունեություն իրականացնողին, ինչպես նաև լրագրողին կարող է պարտադրվել դատարանի որոշմամբ՝ քրեական գործի առիթով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության բացահայտման նպատակով, եթե հասարակության շահերի քրեաիրավական պաշտպանության անհրաժեշտությունն ավելի ծանրակշիռ է, քան տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու հասարակության շահագրգռվածությունը, և սպառված են հասարակական շահերի պաշտպանության մնացած բոլոր միջոցները: Այդ դեպքում, լրագրողի միջնորդությամբ, դատական քննությունն իրականացվում է դռնփակ:

---

<sup>506</sup> Մասնավորապես, «Ժողովուրդ» օրաթերթի հրապարակմամբ՝ հատուկ քննչական ծառայության հաղորդման ձևակերպումներում «գրեթե սպառնալիք կա, (...) որը ոչ այլ ինչ է, քան ճնշում մամուլի, ազատ խոսքի նկատմամբ: Ըստ հրապարակման՝ օրաթերթը քննվող քրեական գործով կողմ չէ, հետևաբար ազատ է իր գործողություններում՝ հրապարակելու այն, ինչ չի արգելում լրագրողական էթիկան կամ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը: Վերոգրյալի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին մտահոգություն էր հայտնել նաև Հայաստանի Ժուռնալիստների միության նախագահը: Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշմամբ՝ Հատուկ քննչական ծառայության հաղորդմամբ տրվել էին այնպիսի ձևակերպումներ, որոնք խնդրահարույց են: Մասնավորապես, տպավորություն էր ստեղծվում, թե իրականում քրեական գործը հարուցվել է լրատվամիջոցի կամ լրագրողի կողմից մասնագիտական գործունեության իրականացման՝ հոդվածի հրապարակման փաստով, այլ ոչ թե հատուկ սուբյեկտի կողմից նախաքննության տվյալները հրապարակելու փաստով: Պաշտոնական հաղորդագրությունից կարող էր ենթադրություն արվել, որ քննության ուշադրության կենտրոնում գտնվում է առաջին հերթին մասնագիտական գործունեություն իրականացնող տվյալ զանգվածային լրատվության միջոցը: Դրանից բացի, նման պայմաններում անմեղության կանխավարկածի օրենսդրական ձևակերպման մեխանիկական շարադրումը հրապարակման վերջում տեղադրելը դեռևս բավարար չէ սահմանադրական այդ երաշխիքի պահպանման տեսանկյունից: Ավելին, կոնկրետ հայտարարության համատեքստում պարզ էլ չէր այդ երաշխիքի մեջբերման նշանակությունը: Տե՛ս նաև <https://armlur.am/886335/> հղումով:

<sup>507</sup> Միջազգային-իրավական որոշ չափանիշներին մանրամասն անդրադարձ է կատարվել 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 668-670:

Կարևոր է նաև անդրադառնալ 2015 թվականի հոկտեմբերի 20-ի ՍԴՈ-1234 որոշմանը<sup>508</sup>, որով անդրադարձել է կատարվել նաև ՀՀ սահմանադրական դատարանը: Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «Չանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ իրավունքի գերակայությամբ առաջնորդվող ժողովրդավարական պետությունում՝ իրավական որոշակիության և իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքներից ելնելով, տեղեկատվության աղբյուրի բացահայտման օրինական շահը գերակա կարող է ճանաչվել այն չբացահայտելու հանրային շահի նկատմամբ այն դեպքում, երբ աղբյուրի բացահայտումն անհրաժեշտ է անձի կյանքի պաշտպանության, ծանր (առանձնապես ծանր) հանցագործությունը կանխելու կամ ծանր (առանձնապես ծանր) հանցանքի մեջ մեղադրվող անձի դատական պաշտպանությունն ապահովելու համար: Ընդ որում, Սահմանադրական դատարանը հստակ արձանագրել է, որ նշված իրավապայմաններից առնվազն մեկի առկայությունը միայն իրավաչափ հիմք կարող է հանդիսանալ օրենքով սահմանված կարգով ու վեճի առարկա դրույթում նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում տեղեկատվության աղբյուրի բացահայտման համար:

Պետության կողմից նշված երաշխիքների պահպանումը հարուցված քրեական վարույթի շրջանակներում ունի կարևոր նշանակություն երկրում խոսքի ազատության ու լրագրողների պաշտպանված մասնագիտական աշխատանքի տեսանկյունից: Մյուս կողմից, հասկանալի է նաև, որ կարող է պետությունն ունենալ իրավաչափ շահ հանցագործությունների բացահայտման ու հանցավորության դեմ պայքարի անհրաժեշտությունից ելնելով պաշտպանել այդ նպատակի համար անհրաժեշտ տեղեկությունները: Այդուհանդերձ, պետք է մշտապես նկատի ունենալ նկարագրված բարձր չափանիշները:<sup>509</sup>

Բացի դրանից, 2019 թվականի դեկտեմբերի 14-ին զանգվածային լրատվության միջոցներով հրապարակվել էր ««Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագրին գաղտնալսե՞լ են» վերտառությամբ հոդվածը<sup>510</sup>, որտեղ, մասնավորապես, նշվել էր, որ հրապարակող լրատվամիջոցի տեղեկություններով՝ վարույթն իրականացնող մարմինը ձեռք է բերել լրագրողի հեռախոսային խոսակցությունների վերծանումները՝ փորձելով բացահայտել լրագրողի տեղեկատվության աղբյուրը: Ըստ հրապարակման՝ քրեական վարույթն իրականացնող մարմինը հնարավոր է նաև գաղտնալսել է լրագրողի հեռախոսային խոսակցությունները:

<sup>508</sup> Հասանելի է <http://concourt.am/armenian/decisions/common/2015/pdf/sdv-1234.pdf> հղումով:

<sup>509</sup> 2019 թվականի դեկտեմբերի 14-ին զանգվածային լրատվության միջոցներով հրապարակված՝ ««Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագրին գաղտնալսե՞լ են» վերտառությամբ հոդվածի կապակցությամբ արձանագրված խնդիրներին, ինչպես նաև «Հայելի» մամուլի ակումբի դրան ուղղությամբ ձվեր նետելու և պաստառներ փակցնելու դեպքի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակային արձագանքը և այս հարցերով Դատախազությունից ներկայացված պարզաբանումներին մանրամասն անդրադարձ է կատարվել 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ, էջեր 671-673:

<sup>510</sup> Հասանելի է <https://168.am/2019/12/14/1223059.html> հղումով:

Քննչական գործողությունը թույլատրելու մասին խնդրո առարկա դատական ակտը բողոքարկվել էր վերաքննության կարգով, արդյունքում՝ Վերաքննիչ քրեական դատարանը 2020 թվականի հունվարի 23-ին ոչ իրավաչափ ճանաչեց «Ժողովուրդ» օրաթերթի գլխավոր խմբագիր Քնար Մանուկյանի հեռախոսային խոսակցությունները վերծանելու վերաբերյալ առաջին ատյանի դատարանի որոշումը:

Նշվածից բացի, 2019 թվականի դեկտեմբերի 19-ին Պաշտպանին դիմել էր «Ժողովուրդ» օրաթերթի խմբագիր Քնար Մանուկյանը և հայտնել, որ անհայտ անձինք ներխուժել են օրաթերթի խմբագրություն: Գլխավոր խմբագրի տեղեկացմամբ՝ առավոտյան՝ ժամը 10:30-ին, խմբագրության աշխատակիցը ներկայացել էր աշխատանքի և նկատել, որ խմբագրությունում խառնաշփոթ վիճակ է: Ըստ նրա՝ դեպքի կապակցությամբ ահազանգ էր ներկայացվել Ոստիկանություն:

Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարականով ներկայացուցիչները նույն օրը՝ ժամը 11:30-ի սահմաններում, այց էին իրականացրել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն: Այնուհետ, դեպքի վայր էին ժամանել նաև Ոստիկանության ծառայողները: Ըստ Ք. Մանուկյանի՝ խմբագրությունում եղել են թանկարժեք իրեր և գումար, որոնք չեն հափշտակվել, ըստ նրա, ներխուժումը շահադիտական նպատակ չի հետապնդել, հետևաբար այն ուղղված է լրագրողի մասնագիտական գործունեությունը խոչընդոտելուն:

Պաշտպանի ներկայացուցիչների արձանագրած տվյալներն ամփոփվել ու գրություններ էին ուղարկվել իրավապահ մարմիններ: ՀՀ քրեական օրենսգրքի 34-177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետի և 164-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել էր քրեական գործ, որը հետագայում կասեցվել է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես մեղադրյալ ներգրավման ենթակա անձը հայտնի չլինելու հիմքով:

2019 թվականին տեղի ունեցած մեկ այլ դեպք ևս արժանացել էր Պաշտպանի ուշադրությանը: Զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ էին հրապարակվել այն մասին, որ չորս անձ ի նշան բողոքի ձվեր են նետել «Հայելի» մամուլի ակումբի դռան ուղղությամբ, փակցրել են պաստառներ<sup>511</sup>:

Նշված դեպքի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես էր եկել հրապարակային արձագանքով այն մասին, որ լրագրողի կամ լրատվամիջոցի նկատմամբ ոտնձգությունը մասնագիտական գործունեության կապակցությամբ վտանգում է խոսքի ազատությունն ու այլակարծությունը:

Նույն հրապարակմամբ ընդգծվել էր, որ պետք է անհապաղ գործադրվեն օրենքով նախատեսված միջոցներ տեղի ունեցածի առնչությամբ՝ բացառելու համար որևէ նման դեպքի կրկնություն:

Պաշտպանի նախաձեռնած վարույթի ընթացքում պարբերաբար տեղեկություններ են ստացվել «Հայելի» մամուլի ակումբի ղեկավար Անժելա Թովմասյանի ներկայացուցիչ, փաստաբան Զարուհի Փոստանջյանից, շարունակական գրագրություն է իրականացվել Գլխավոր դատախազության հետ:

<sup>511</sup> Հասանելի է <https://hraparak.am/post/2a240aa0afb0345dd94843bc020a5451> հղումով:

Պարզվել է, որ դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ, չորս անձի առաջադրվել է մեղադրանք, Անժելա Թովմասյանը ճանաչվել է տուժող:

2020 թվականին նշված քրեական գործով կայացվել է վարույթը կարճելու մասին որոշում՝ անձի (անձանց) արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ (Լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը), 137-րդ (Սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 143-րդ (Մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելը), 185-րդ (Գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) 258-րդ (Խուլիգանությունը), 332-րդ (Արդարադատության իրականացմանը և քննությանը խոչընդոտելը) հոդվածներով նախատեսված հանցակազմերի բացակայության հիմքով:

Պաշտպանի ուշադրության ներքո էր եղել նաև քրեական գործը, որի շրջանակում «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում կատարվել էր խուզարկություն:

Խնդիրն այն էր, որ Ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության և Քննչական կոմիտեի ծառայողների կողմից խուզարկություն էր կատարվել «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում: Խուզարկության ավարտից հետո, լրատվամիջոցի գլխավոր խմբագիրը, պատասխանելով լրագրողների հարցերին, հայտարարել է, որ խուզարկությունը կատարվել է կոպիտ խախտումներով և այն նպատակ է հետապնդել վնասել իրենց լրագրողական գործունեությանը: Ըստ գլխավոր խմբագրի՝ խուզարկությունն ավարտելուց հետո Քննչական կոմիտեի ծառայողներն արձանագրել են, որ նախաքննությանը հետաքրքրող որևէ առարկա չի հայտնաբերվել, այնուամենայնիվ առգրավել են իր աշխատանքային համակարգիչը, ինչպես նաև խմբագրության աշխատակիցների համակարգիչների կոշտ սկավառակները՝ արդյունքում անորոշ ժամկետով խաթարվել է իրենց բնականոն աշխատանքը:

Հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում էր լրատվամիջոցի խմբագրությունում իրականացված խուզարկությանը, Պաշտպանի սեփական նախաձեռնությամբ սկսվել էր քննարկման ընթացակարգ, որի շրջանակում քրեական վարույթի ընթացքում լրատվամիջոցի լրատվական գործունեության բնականոն ընթացքի ապահովման կապակցությամբ, այդ թվում՝ լրագրողական գործունեության համար անհրաժեշտ առգրավված իրերը վերադարձնելու հարցի քննարկման նպատակով գրություն էր հասցեագրվել Գլխավոր դատախազություն:

Շարունակական գրավոր հաղորդակցության ընթացքում Դատախազությունը լրացուցիչ տեղեկություններ էր ներկայացրել այն մասին, որ «Yerevan.Today» լրատվական կայքի գրասենյակից առգրավվել է մեկ պրոցեսոր և հիշողության կոշտ կրիչներ, նշանակվել է դատահամակարգչատեխնիկական փորձաքննություն: Ավելի ուշ Դատախազությունը տեղեկացրել էր, որ առգրավված առարկանները վերադարձվել են գրասենյակին, չնայած նշանակված դատահամակարգչատեխնիկական փորձաքննության եզրակացությունը դեռևս ստացված չի եղել, իսկ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

Դրանից հետո «Yerevan.Today» լրատվական կայքի փաստաբանը լրացուցիչ բողոք է հասցեագրել Պաշտպանին, որով հայտնել է լրատվական կայքի մտավախությունն առ այն, որ վերադարձված առարկաների մեջ հնարավոր է լինեն ծրագրային միջոցներ կամ սարքավորումներ, որոնք կարող են գաղտնի տեղեկությունները դարձնել հասանելի:

Փաստաբանը հավելել է, որ առգրավված մշակիչում և հիշողության կրիչներում առկա են եղել լրատվական կայքի 2003 թվականից սկսած գործունեության վերաբերյալ տվյալներ, այդ թվում՝ քրեական գործի հետ որևէ առնչություն չունեցող, և լրատվական կայքը մտավախություն ունի, որ նշված տեղեկությունները ևս կարող են օգտագործվել վարույթն իրականացնող մարմնի կողմից:

Բարձրացված հարցը ևս քննարկման առարկա է դարձվել: Դատախազությունը հերքել է վերադարձված առարկաների մեջ գաղտնի տեղեկությունները հասանելի դարձնելու հնարավորություն ստեղծող ծրագրային միջոցներ կամ սարքավորումներ, տեղադրելու հնարավոր հանգամանքը, ինչպես նաև հավելել, որ դատահամակարգչատեխնիկական բնագավառի փորձագետներին տրվել են կոնկրետ հարցադրումներ՝ վերաբերելի միայն քրեական գործի փաստական հանգամանքներին, իսկ քննության հետ առնչություն չունեցող տեղեկությունները չեն հանդիսացել փորձագիտական հետազոտման առարկա:

Քրեական գործի շրջանակում «Yerevan.Today» լրատվական կայքի խմբագրության գրասենյակում կատարված խուզարկության, ինչպես նաև նշված լրատվության միջոցի լրագրողական գործունեության նկատմամբ հնարավոր միջամտության հարցերին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդմամբ<sup>512</sup>:

Այն պահից, երբ նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակի հիմքով Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հայտարարվեց արտակարգ դրություն, լրագրողական մասնագիտական աշխատանքի, խոսքի ազատության ապահովման հարցերը դարձան Մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթ ուշադրության առարկա:

Մասնավորապես, արտակարգ դրության ողջ ընթացքում Պաշտպանի ուշադրության ներքո են եղել լրագրողական աշխատանքի նկատմամբ պետության միջամտությունները կամ դրանց բնույթը, լրագրողական մասնագիտական աշխատանքի երաշխավորման ուղղված պետության ջանքերը, արագացված կարգով ուսումնասիրվել են լրագրողների մտահոգություններն ու հարցադրումները, մշակվել և ըստ իրավասության պետական մարմիններին են ներկայացվել արձանագրվող խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ և այլն: Առաջարկներից մեկն էլ վերաբերում էր լրատվամիջոցների նկատմամբ արգելքը վերացնելուն, որը կարող էր խնդիրներ առաջացնել ինչպես

---

<sup>512</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 385 և 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջեր 672-673:



լրագրողների, այնպես էլ հատկապես հետաքննական լրագրության համար: Պաշտպանն այս առաջարկն արել էր՝ հաշվի առնելով ԵԽ մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակի բարձրացրած հարցը:

Լրատվական գործունեություն իրականացնող մի շարք կազմակերպություններ, Հայաստանի ժողովրդային լրատվության նախագահը, առանձին լրագրողներ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են դիմումներ ու բողոքներ. վիճարկվում է եթերի ժամանակ հեռուստատեսային տաղավարում լրագրողներից և հարցազրույցի կամ քննարկման հրավիրված հյուրերից պարտադիր պահանջվում է կրել դիմակներ:

Բողոքների ամփոփմամբ մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ արտահերթ հրապարակային զեկույցով, որում դիրքորոշումները տրվել են այնպես, որ կիրառելի են ոչ միայն արտակարգ դրության ռեժիմի, այլ նաև արտակարգ դրության ավարտից հետո՝ այնքանով, որքանով առկա է համավարակի դեմ պայքարի իրավաչափ նպատակ: Արտահերթ զեկույցում տեղ են գտել առաջարկներ, որոնք վերաբերում են փոփոխություններին ինչպես օրենսդրական մակարդակում, այնպես էլ գործնականում<sup>513</sup>:

Երկրում ռազմական դրությամբ պայմանավորված նույնպես լրատվամիջոցների համար սահմանվեցին որոշակի սահմանափակումներ: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» կառավարության որոշմամբ սահմանվեցին արգելքներ, որոնցով, ըստ էության, թույլ չէր տրվում քննադատել որևէ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի գործողություն, այդ թվում՝ ելույթներ, հրապարակումներ, որոնք կարող են վերաբերել ռազմական դրության իրավական ռեժիմի ապահովմանը և պետական անվտանգության ապահովմանը:

Կառավարության որոշման խնդրահարույց նորմերի սահմանադրականության հարցով Մարդու իրավունքների պաշտպանը դիմում է ներկայացրել Սահմանադրական դատարան, որի հիման վրա քննվող գործով Դատարանը կասեցրել է այն դրույթների գործողությունը, որոնք վերաբերում են ռազմական դրության ընթացքում ՀՀ տարածքում գտնվող մարդկանց, ինչպես նաև ՀԼՄ-ների ու լրագրողների կողմից կարծիքի արտահայտման և մամուլի ազատության սահմանափակմանը: Դատարանը կասեցրել էր այդ դրույթների գործողությունը մինչև գործի դատաքննության ավարտը:

Օրինակ՝ «Analitik.am» կայքի գլխավոր խմբագիր Անի Հովհաննիսյանը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ 2020 թվականի հոկտեմբերի 20-ին նույն կայքում հրապարակվել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ հնարավոր այցի վերաբերյալ հոդված:

Բողոքում նա վերաշարադրել է հրապարակման ամբողջ տեքստը, ինչպես նաև ընդգծել, որ դրանում որևէ կերպ չեն խախտվել ռազմական դրության իրավական ռեժիմի ընթացքում գործող կանոնները: Նաև հավելել է, որ չնայած դրան՝ ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներն առաջարկել

<sup>513</sup> Զեկույցը հասանելի է <https://ombuds.am/images/files/ef9235b0e3470edd2088be0d83c8d2b7.pdf> հղումով:

են կայքից հեռացնել հրապարակումը՝ իրազեկելով, որ հակառակ դեպքում լրատվամիջոցի նկատմամբ վարչական տույժ է կիրառվելու:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ հրապարակումը հեռացվել է, քանի որ վարչական հնարավոր տույժի չափը բավականին մեծ է և կարող է բռնագանձվել նույնիսկ անկախ դրա բողոքարկումից:

Դիմումով բարձրացված հարցի կապակցությամբ համապատասխան պարզաբանումների պահանջով գրություն էր հասցեագրվել Ոստիկանություն:

Պատասխան գրությամբ Ոստիկանությունը հղում է կատարել Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին Կառավարության 27.09.2020թ. N 1586-Ն որոշման (տվյալ պահի խմբագրությամբ) 9.1 և 9.2 կետերին և նշել, որ գործողություններին իրականացվել են Ոստիկանության լիազորությունների շրջանակում՝ խնդիր ունենալով հնարավորին չափ կանխել խուճապային տրամադրությունների առաջացման հնարավորությունը: Ոստիկանության պարզաբանմամբ՝ խնդրո առարկա հրապարակումը հանրության շրջանում, մասնավորապես՝ սոցիալական կայքերում, տարաբնույթ մեկնաբանությունների առիթ էր հանդիսացել, իսկ լրատվամիջոցը, ըստ Ոստիկանության, թույլ էր տվել Կառավարության նշված որոշման խախտում:

Միևնույն ժամանակ, հաշվի առնելով, որ լրատվամիջոցն ընդունել է Ոստիկանության առաջարկը և հեռացրել հրապարակումը՝ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 21-րդ հոդվածը և լրատվամիջոցն ազատվել է վարչական պատասխանատվությունից:

Հարցն այն է, որ Կառավարության նշված որոշման մեջ տեղ գտած «քննադատող», «հերքող», «արդյունավետությունը կասկածի տակ դնող», «արժեզրկող» և «պաշտպանունակությունը կասկածի տակ դնող» ձևակերպումները՝ որպես հաղորդումների ու հրապարակումների սահմանափակման հիմք, գնահատողական էին և խնդրահարույց իրավական որոշակիության տեսանկյունից: Սա լայն հայեցողություն է տալիս իրավակիրառողներին անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու, ինչը կարող էր հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության անհիմն սահմանափակման: Այս իրավական կարգավորումներով գնահատողական և հայեցողական կիրառության տեղիք տվող ձևակերպումների անորոշությունը չէր փարատվում նաև Ոստիկանության՝ վերը նշված պարզաբանումները հաշվի առնելով: Ուստի, նաև նշված հանգամանքները ևս ներառվել էին Սահմանադրական դատարան ներկայացված՝ վերը նշված դիմումով:

2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով «Հրապարակ» օրաթերթի լրագրող Անուշ Դաշտենցը հայտնել է, որ իր և ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի միջև տեղի է ունեցել միջադեպ, որի ժամանակ, մասնավորապես, մոտենալով պատգամավորին միացրել է բջջային հեռախոսի տեսախցիկը, ներկայացել է որպես օրաթերթի լրագրող և հարց ուղղել, սակայն ՀՀ Ազգային ժողովի պատգամավորն իր նկատմամբ հարձակում է գործել, վերցրել հեռախոսը, փորձել ջնջել տեսանյութն, ինչը հեռախոսի՝ կողավորված լինելու պատճառով չի հաջողվել: Լրագրող Անուշ Դաշտենցը հայտնել է նաև, որ հեռախոսն իրեն վերադարձվել է միջադեպից միայն 20 րոպե անց: Լրագրողը հավելել է նաև, որ իր կողմից

մատնանշված պատգամավորն Ազգային ժողովում կայացած ճեպագրույցի ընթացքում հայտնել է տեսաձայնագրությունը ջնջելու մասին: Իրավապահ մարմինների հետ իրականացված հաղորդակցությամբ արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանությունում նախապատրաստվել են նյութեր, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Անուշ Դաշտենցի հայտնած ենթադրյալ հանցագործության դեպքը վերաբերել է բարձրաստիճան պաշտոնատար անձին, նախապատրաստված նյութերն ուղարկվել են ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Բացի դրանից, 2021 թվականի ընթացքում «Tert.am» և «Yerevan.Today» լրատվամիջոցների լրագրողներ Անի Գևորգյանի և Սյուզի Բադոյանի կողմից Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել այն մասին, որ Արարատի մարզում տարբեր անձինք առաջացրել են մասնագիտական աշխատանքի խոչընդոտներ, սակայն տեղում ծառայություն իրականացնող ոստիկանները չեն ապահովել իրենց անվտանգությունը: Պաշտպանին ուղղված բողոքներով հատուկ նշվել է, որ Ոստիկանության ծառայողներն առանց որևէ հիմքի իրենց չեն թույլատրել մոտենալ և լուսաբանումներ անել Արարատի մարզում՝ Հովտաշատ ու Մասիս գյուղերի, Արտաշատ քաղաքի այն կոնկրետ վայրերում, որտեղ տեղի են ունեցել հանդիպումներ այդ ժամանակ Վարչապետի ժամանակավոր պաշտոնակատարի ու համայնքների բնակիչների միջև: Ըստ լրագրողների՝ ոստիկանները որևէ պատճառաբանություն չեն ներկայացրել լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումների և խոչընդոտները չվերացնելու հետ կապված:

Բարձրացված հարցերի կապակցությամբ արագացված կարգով ուսումնասիրվել են լրագրողների մտահոգություններն ու հարցադրումները, բոլոր հարցերը քննարկվել են լրագրողների հետ, ուսումնասիրվել են հրապարակված տեսանյութերը, կատարվել է սոցիալական մեդիայի մոնիթորինգ: Արձանագրված տեղեկությունների հաշվառմամբ պաշտոնական հաղորդակցություն է իրականացվել իրավասու պետական մարմինների հետ. արդյունքում պարզվել է, որ Քրեական օրենսգրքով նախատեսված՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու հանցագործության հատկանիշներով Ոստիկանությունում հարուցվել է քրեական գործ, որն ուղարկվել է Քննչական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ հետագա ընթացքը որոշելու համար: Պաշտպանի աշխատակազմում ի գիտություն է ընդունվել նաև տրամադրված պարզաբանումն առ այն, որ Ոստիկանության ծառայողների գործողությունների առնչությամբ նշանակվել է ծառայողական քննություն:

2021 թվականին տեղի ունեցած մեկ այլ դեպք ևս արժանացել էր Պաշտպանի ուշադրությանը: Բողոքներից մեկով լրագրող Անի Գևորգյանը Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած բողոքով տեղեկացրել էր, որ իր մասնագիտական գործունեության կապակցությամբ սպառնալիքներ է ստացել, իսկ սոցիալական ցանցերի տարբեր էջերում՝ լրագրողական գործունեությանը վերաբերող վիրավորանքներով, արժանապատվությունը նվաստացնող լայն ծավալի խոսքով տարածվել է իր և իր մանկահասակ երեխայի լուսանկարը: Նշված դեպքի կապակցությամբ Պաշտպանը հանդես է եկել

նաև հրապարակային հայտարարությամբ<sup>514</sup>: Վերը նշված տեղեկությունների հաշվառմամբ պաշտոնական հաղորդակցություն է իրականացվել իրավասու պետական մարմինների հետ. Պաշտպանի աշխատակազմում ի գիտություն է ընդունվել ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականի պարզաբանումն այն մասին, որ լրագրողի նկատմամբ սպառնալիքներ հնչեցվելու վերաբերյալ հանցագործության մասին հաղորդման հիման հարուցվել է քրեական գործ և իրականացվում է նախաքննություն:

Մասնագիտական գործունեության կապակցությամբ սոցիալական ցանցի կեղծ ու իրական մի շարք օգտատերերից ստացված սպառնալիքների կապակցությամբ Պաշտպանին դիմել է նաև լրագրող Նանե Արզումանյանը՝ տեղեկացնելով, որ ստացել է վիրավորանքներ, արժանապատվությունը նվաստացնող նամակներ, դրանցով թիրախավորվել են նաև ընտանիքի անդամները: ՀՀ ոստիկանության հետ իրականացված հաղորդակցության արդյունքում արձանագրվել է, որ Քրեական օրենսգրքով նախատեսված՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու հանցագործության հանցակազմի բացակայության հիմքով մերժվել է քրեական գործի հարուցումը: Պաշտպանին հասցեագրված բողոքով «Հայկական ուսումնասիրությունների Անի կենտրոն» հիմնադրամի տնօրեն, լրագրող Թաթուլ Հակոբյանը ևս տեղեկացրել է, որ իր մասնագիտական գործունեությունը ծավալելու կապակցությամբ սոցիալական ցանցի մի շարք օգտատերերից ստացվել են սպառնալիքներ: Ընդ որում, լրագրող Թաթուլ Հակոբյանը հատուկ ընդգծել է, որ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցում կատարված գրառումները պարունակել են ատելության խոսք և իր անձի նկատմամբ հաշվեհարդարի սպառնալիքներ: Նշված հանգամանքների առնչությամբ Դատախազությունից տրամադրվել են պարզաբանումներ առ այն, որ Պաշտպանի կողմից ներկայացված գրությունը և կից ներկայացված հանցագործության մասին հաղորդումը կցվել են լրագրող Թաթուլ Հակոբյանի վերաբերյալ նախապատրաստվող նյութերին:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին դիմել է նաև փաստաբան՝ տեղեկացնելով «5-րդ ալիք» հեռուստաընկերության լրագրող Լարա Առաքելյանի՝ որպես լրագրողի մասնագիտական գործունեության խոչընդոտման դեպքի, ինչպես նաև նրա նկատմամբ տարածված ատելության խոսքի, վիրավորանք և զրպարտանք պարունակող արտահայտությունների կապակցությամբ: Փաստաբանը տեղեկացրել է, որ դեպքի առնչությամբ հանցագործության մասին հաղորդման քննարկման արդյունքում քրեական գործի հարուցումը մերժվել է: Մասնավորապես, փաստաբանը Պաշտպանի ուշադրությունն է հրավիրել նյութեր նախապատրաստող քննիչի այն եզրահանգման վրա, որ Լ. Առաքելյանի անձի վերաբերյալ որևէ վիրավորական և զրպարտչական արտահայտություն տեղի չի ունեցել, մինչդեռ, փաստաբանի գնահատմամբ, արտահայտությունները վիրավորանք կամ զրպարտություն որակելու իրավասությունը վերապահված է ՀՀ դատարաններին և ավելին՝ հանցագործության մասին հաղորդումը ներկայացվել է ոչ միայն վիրավորանքի կամ զրպարտության շրջանակներում, այլև լրագրողի մասնագիտական գործունեությանը խոչընդոտելու և

<sup>514</sup> Այս մասին Պաշտպանի հրապարակային հայտարարությունն հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1628> հղումով:

խուլիգանության կապակցությամբ: Գլխավոր դատախազությունից Պաշտպանին տրամադրված պատասխանի համաձայն՝ փաստաբանի և լրագրող Լարա Առաքելյանի հաղորդման կապակցությամբ նախապատրաստված նյութերով ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումը կայացրել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, իսկ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման օրինականությունը ստուգվել է Դատախազությունում:

Վերը թվարկված բողոքներից բացի, 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում շարունակվել է լրագրող Թագուհի Մելքոնյանի իրավունքների ապահովման վերաբերյալ քննարկումը, որն առնչվում էր և հայտնել, որ նոյեմբերի 16-ին «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի «Անհերքելի Փաստեր» կեղծ հաշվում տարածվել են իր և «Yerkir.am» կայքի 6 այլ նախկին լրագրողների՝ Լուսինե Հակոբյանի, Անի Սահակյանի, Գևորգ Խաչատրյանի, Մելանյա Մելքունյանի, Արագ Գայմազամյանի և Կարինե Հարությունյանի լուսանկարները և նրանց տվյալները՝ «Տարածեք, որ մարդիկ դեմքով ճանաչեն» վերտառությամբ լուսանկարների և «Տարածեք, որ մարդիկ դեմքով ճանաչեն» վերտառությամբ գրառման տարածմանը: Ըստ նրա լրագրող Թ. Մելքոնյանի՝ հրապարակման մեջ տեղ են գտել ատելության խոսք պարունակող ձևակերպումներ: Հայտնել է, որ հիշյալ քաղաքացիներից որևէ մեկը ներկայում չի հանդիսանում «Երկիր» կայքի լրագրող, իսկ մի մասն առհասարակ լրատվական գործունեություն չի իրականացնում: Ըստ նրա՝ հիշյալ հրապարակումը ոչ միայն արատավորել է գործող և նախկին լրագրողների անունն ու հեղինակությունը, այլև նրանց դարձրել ատելության խոսքի և բռնության կոչերի թիրախ՝ նպաստելով նրանց հետագա աշխատանքային գործունեության խաթարմանը:

Բողոք ներկայացրած անձի տեղեկացմամբ՝ գրառման կապակցությամբ դիմել է Դատախազություն և Ոստիկանություն, սակայն Պաշտպանին բողոք հասցեագրելու օրվա դրությամբ գրառումը չի ջնջվել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի «Անհերքելի փաստեր» հաշվից, ինչն սպառնալիք է իրենց անվտանգությանը: Ավելին, 2020 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ այն արդեն ունի ունեցել է 500-ից ավելի հավանում, 170 մեկնաբանություն (այդ թվում՝ սպառնալիքներ պարունակող) և 190 տարածում:

Թագուհի Մելքոնյանի պնդմամբ՝ հաշվի առնելով իրավապահ մարմինների ծանրաբեռնվածությունը, մտավախություն են ունեցել ունեն, որ դիմումին օպերատիվ կերպով ընթացք չի տրվի:

Վերը նշված տեղեկությունների հաշվառմամբ պաշտոնական հաղորդակցություն է իրականացվել իրավասու պետական մարմինների հետ. արդյունքում պարզվել է, որ ներկայացված դիմումի ուսումնասիրմամբ առերևույթ հանցագործության հատկանիշներ պարունակող փաստական տվյալներ ձեռք չեն բերվել:

Զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ են հրապարակվել լրատվամիջոցների ներկայացուցիչների սոցիալական ցանցի անձնական հաշիվներ և աշխատանքային էլեկտրոնային հասցեներ մուտք գործելու և դրա փորձերի վերաբերյալ: Մասնավորապես, «Politik.am» լրատվական

կայքի խմբագիր Բորիս Մուրազին նույն օրը տեղեկություն է հրապարակել այն մասին, որ մուտք են գործել «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի իր հաշիվ և ընթերցել անձնական նամակագրությունը:

Նույն օրը նույնաբովանդակ գրառումներ են կատարել նաև «AntiFake.am» լրատվական կայքի խմբագիր Աստղիկ Մաթևոսյանը և «CIVILNET» լրատվական կայքի լրագրող Գևորգ Թոսունյանը:

Դատախազությունից ներկայացված պատասխանի համաձայն՝ 2021 թվականի ընթացքում լրագրողների մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու դեպքերի առնչությամբ հարուցվել է 9 քրեական գործ: Նշված քրեական գործերից 4-ի վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 4-ի վարույթը կասեցվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 1-ը գտնվում է նախաքննության փուլում:

Հարկ ենք համարում ընդգծել, որ լրագրողական պաշտպանված աշխատանքի երաշխիքները պահանջում են, որպեսզի քրեական հետապնդման մարմինները ցուցաբերեն առավել մեծ ուշադրություն մասնագիտական գործունեության կապակցությամբ լրագրողին քրեական դատավարության ոլորտ ներգրավվելու հարցում կամ նրանց վերաբերյալ հայտարարություններ անելիս՝ անկախ կարգավիճակից, և հանրային բոլոր մարմիններն ու պաշտոնատար անձինք նույնպես պետք է նկատի ունենան այս երաշխիքներն իրենց գործողություններում:

2021 թվականի ընթացքում լրագրողները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրել են նաև մի շարք բողոքներ ՀՀ Ազգային ժողովում լրագրողների մասնագիտական աշխատանքի սահմանափակումների և լրագրողների նկատմամբ հանրային պաշտոնյաների անթույլատրելի արարքների առնչությամբ, որոնք վերհանված խնդիրների հետ մեկտեղ ամփոփված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում<sup>515</sup>:

Լրագրողական մասնագիտական աշխատանքն ուղղակիորեն բխում է Հայաստանի Սահմանադրությամբ ու միջազգային պարտավորություններով ամրագրված խոսքի ազատության հիմնարար արժեքից, նպաստում է պետության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովմանը և պետք է ունենա հատուկ պաշտպանություն:

Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության համար լրագրողի պաշտպանված մասնագիտական աշխատանքն ունի ռազմավարական նշանակություն:

<sup>515</sup> Ձեկույցը հասանելի է <https://ombuds.am/images/files/a40f8132dd39d17f27fd7c0ffd2f53d6.pdf> հղումով:

## **ԲԱԺԻՆ 10. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԱՐԱՏՈՒԹՅՈՒՆ: ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ**

Հավաքների ազատության իրավունքը ժողովրդավարական հասարակության հիմնաքարերից է: Այն մարդու իրավունքների միջազգային-իրավական փաստաթղթերում ևս ամրագրված է որպես հիմնարար արժեք: Խաղաղ հավաքների ազատությունը մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներից է: Դրա պաշտպանությունն էական դեր է կատարում ժողովրդավարական պետության համար՝ որպես ժողովրդաիշխանության իրականացման և քաղաքացիական հասարակության կայացման անհրաժեշտ նախապայման: Միաժամանակ, հավաքների իրականացման միջոցով քաղաքացիական հասարակությունը վերահսկողություն է իրականացնում պետության նկատմամբ:

Հատկանշական է, որ հավաքների ազատության իրավունքի իրացման միջոցով երաշխավորվում է նաև մեկ այլ՝ կարծիքի արտահայտման ազատությունը: Խաղաղ հավաքների իրականացման միջոցով բողոքի բաց արտահայտման հնարավորություն է ապահովվում, հատկապես եթե տեղի է ունենում հանրային նշանակության այնպիսի իրադարձություն, որին հասարակությունն անհրաժեշտ է համարում հրատապ արձագանքել:

Մարդու իրավունքների պաշտպանը բարձր է գնահատում ՀՀ ոստիկանության հետ հաստատված ինստիտուցիոնալ և կայուն համագործակցությունը: 2021 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունն առավելագույնս երաշխավորելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտապես գտնվել են Ոստիկանության բաժիններում և հետևողական եղել, որ պահպանվեն վարչական ձերբակալման ենթարկված անձանց իրավունքները: Արդյունքում, եղել են դեպքեր, երբ տեղում Ոստիկանության հետ արդյունավետ և պատշաճ համագործակցության արդյունքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտությունից հետո լրացվել են բաժին բերված անձանց հաշվառման մատյանները, անձին հնարավորություն է տրվել օգտվել զանգի իրավունքից, օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտից հետո դեռևս անազատության մեջ գտնվող անձինք ազատ են արձակվել և այլն:

Հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում ևս Ոստիկանության հետ համագործակցությունն արդյունավետ է եղել, արագ արձագանքման դեպքերում խնդիրներ չեն արձանագրվել, այն դեպքերում, երբ մեծ թվով վարչական ձերբակալման ենթարկվածներ են եղել, այդ անձանց ցուցակներն են անգամ տրվել Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին և այլն:

2021 թվականի գրեթե ողջ ընթացքում երկրում տեղի էին ունենում իրադարձություններ, որոնք զուգորդվում էին հավաքներով: Այդ հավաքները տարբեր նպատակներ էին հետապնդում: Օրինակ՝ հավաքներից մեկը կազմակերպել են անհետ կորած և գերեվարված անձանց հարազատները՝ Աժ խոսնակի արած հայտարարությունների վերաբերյալ բացատրություններ ստանալու պահանջով<sup>516</sup>: Իրականացված հավաքներից մեկն էլ Երևան քաղաքի Ալիխանյան եղբայրների 6/1 հասցեում («Ֆիզգարադոկ») գտնվող տարածքն անօրինական սեփականաշնորհելու դեմ է ուղղված եղել<sup>517</sup>, հավաքներ են իրականացվել ընտրություններին նախորդած և հաջորդած ժամանակահատվածներում<sup>518</sup>, որոշ ցույցեր էլ կրել են քաղաքական բնույթ<sup>519</sup> և այլն:

2021 թվականի ընթացքում տեղի ունեցած իրադարձությունները, այդ թվում՝ իրականացված հավաքները գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության կենտրոնում: Հավաքների հետ կապված խնդիրների դիտարկում իրականացնելու և հավաքների մասնակիցների իրավունքների ապահովման նպատակով Պաշտպանը 2021 թվականի ընթացքում ևս աշխատանքի ձևավորված հաստատուն սկզբունքներին համահունչ, հավաքները մշտադիտարկել է տարբեր ուղղություններով՝ հավաքների մասնակիցներին վարչական ձերբակալման ենթարկելիս (ձերբակալելիս) նվազագույն իրավունքների ապահովման վիճակը դիտարկելով (ձերբակալվածներին պահելու վայրեր այցերի, առանձնազրույցների միջոցով), հավաքների անցկացման վայրում ու Ոստիկանության բաժիններ աշխատանքային խմբեր ուղարկելով<sup>520</sup> և տեղում բարձրացված խնդիրներն ուսումնասիրելով, իրավասու մարմինների ու պաշտոնատար անձանց հետ խնդիրներն օպերատիվ եղանակով քննարկելով, ինչպես նաև հրապարակային հայտարարությունների միջոցով:

Նշվածից բացի, Պաշտպանը հավաքների իրականացմանը զուգահեռ հանդես է եկել հրապարակային հայտարարություններով<sup>521</sup> դրանցով հավաքներին առնչվող իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման հնարավորությունների վերաբերյալ իրազեկումներ իրականացնելով և արտահայտելով երկրում տիրող իրավիճակի վերաբերյալ առկա մտահոգությունները:

Հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում տեղի ունեցած հավաքների մշտադիտարկման արդյունքներով կրկին արձանագրվել և վերահաստատվել են Մարդու իրավունքների պաշտպանի

<sup>516</sup> Հասանելի է <https://www.azatutyun.am/a/31599377.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>517</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1870>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1872> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>518</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1761> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>519</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1646>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1764> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>520</sup> Հասանելի են, օրինակ՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1616>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1770>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1772>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1872>, <https://ombuds.am/am/site/ViewNews/2018> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>521</sup> Հասանելի են, օրինակ՝ <https://ombuds.am/am/site/ViewNews/1958>, <https://ombuds.am/am/site/ViewNews/1825>, <https://ombuds.am/am/site/ViewNews/2018> հղումներով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումներով տարիներ շարունակ բարձրացվող համակարգային և շարունակական բնույթ կրող խնդիրներ<sup>522</sup>: Նշվածը բերում է այն եզրահանգման, որ հավաքների իրականացման ընթացքում Ոստիկանության գործողությունները և Ոստիկանությունում ձևավորված իրավակիրառ պրակտիկան դեռ չի համապատասխանում ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական օրենսդրությամբ ամրագրված չափանիշներին: Նշվածն, ըստ էության, պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ կադրային, կազմակերպական, օրենսդրական խնդիրները, արժեհամակարգը և ընկալումները:

Այսպես, 2021 թվականի ընթացքում իրականացված հավաքների մշտադիտարկման արդյունքներով արձանագրվել են համակարգային և շարունակական բնույթ կրող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հավաքների մասնակիցների զանգվածային ձերբակալումները (բերման ենթարկելը), ազատությունից զրկելու ընթացակարգային խախտումները (օրինակ՝ նախքան ազատությունից զրկելն օրինական պահանջ չներկայացնելը), ազատությունից զրկված անձանց Ոստիկանության բաժիններ տեղափոխելու ընթացակարգային խախտումները, վարչական ձերբակալման ենթարկելիս անհամաչափ ուժի գործադրումը, անձին ազատությունից զրկելու պատճառների մասին անհապաղ տեղեկացնելու և կարգավիճակից բխող իրավունքները ծանուցելու պահանջի չպահպանումը, վարչական ձերբակալման՝ օրենքով նախատեսված առավելագույն ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը, քաղաքացու հետ հարաբերություններում ոստիկանության ծառայողների ինքնության չբացահայտումը, Ոստիկանության բաժիններում աշխատանքի կազմակերպման ընթացակարգային խնդիրները, առանց լուսանկարվելուց հրաժարվելու հնարավորության մասին նախապես իրազեկելու վարչական ձերբակալման ենթարկվածներին լուսանկարելը, Ոստիկանության ծառայողների կողմից ոչ բարեկիրթ վերաբերմունքը և այլն:

Մտահոգիչ է, որ վերը նշված խնդիրները մեծամասամբ կրկնվել են նաև նախորդ տարիներին կազմակերպված հավաքների ընթացքում. սա վկայում է խնդիրների համակարգային բնույթի, հետևաբար նաև դրանց կանխարգելման ուղղությամբ ինստիտուցիոնալ փոփոխությունների անհրաժեշտության մասին: Ասվածը հաստատվում է արդեն ներկայացված՝ փաստական և իրավական հիմնավորումներով վերլուծված խնդիրներով: Այսպես.

### **1. Հավաքի մասնակիցներին ազատությունից զրկելու հիմքերի և պատճառների չներկայացումը**

Անձանց վարչական ձերբակալման ենթարկելիս անհապաղ չեն ներկայացվում նրանց վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառները: Դիտարկված որոշ դեպքերում, երբ անձանց վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերը ներկայացվել են, դրանք կրել են

<sup>522</sup> Օրինակ՝ Պաշտպանի 2020 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը, էջ 678-700 և 702-706 կամ 2019 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը, էջ 386-397 և 400-402:

ընդհանրական բնույթ, անհատականացված չեն եղել, ինչը հնարավորություն չի տվել անձանց հասկանալու, թե կոնկրետ ինչ հիմքով և պատճառաբանությամբ են հենց իրենց վարչական ձերբակալման ենթարկվում: 2021 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընդհանուր մշտադիտարկումը վկայում է խնդրի շարունակականության մասին:

Այսպես, 2021 թվականի հունվարի 28-ին Ոստիկանության տարբեր բաժիններ վարչական ձերբակալման է ենթարկվել 26 անձ, որոնցից 8-ի հետ Պաշտպանի ներկայացուցիչներն առանձնազրույցներ են ունեցել: Վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղեկացրել են, որ վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց չեն պարզաբանվել վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառները: Ընդհանուր պրակտիկան այն է, որ այդ մասին վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղեկացվում են վարչական ձերբակալման ենթարկվելուց հետո՝ կա՛մ Ոստիկանության ծառայողական մեքենաներում, կա՛մ էլ Ոստիկանության բաժիններում: Ավելին, եղել են դեպքեր, որ վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերն ու պատճառներն այդպես էլ չեն ներկայացվել անձանց:

Անձին արգելանքի տակ վերցնելու պահին նրան վարչական ձերբակալման ենթարկելու իրավական հիմքերն ու պատճառները, ինչպես նաև նրանց կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները չներկայացնելու խնդիրներ են արձանագրվել նաև 2021 թվականի փետրվարի 23-ին, ապրիլի 7-ին, հունիսի 10-ին, սեպտեմբերի 14-ին, հոկտեմբերի 7-ին իրականացված հավաքների ընթացքում անձանց վարչական ձերբակալման ենթարկելու կապակցությամբ Ոստիկանության բաժիններ կատարած այցերի արդյունքներով: Հարկ է նկատել, որ իրենց նվազագույն իրավունքների մասին վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղեկացել են Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներից:

Դեպքերի ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ անձինք վարչական ձերբակալման են ենթարկվում Ոստիկանության օրինական պահանջը չկատարելու համար: Ընդ որում, հարկ է հատուկ նշել, որ շատ դեպքերում անձանց համար այդպես էլ պարզ չի եղել, թե որն է եղել այդ «օրինական պահանջը», քանի որ վարչական ձերբակալման ենթարկելու որոշ դեպքերում, ըստ Պաշտպանին դիմած կամ առանձնազրույցներին մասնակցած անձանց պնդումների, անձանց առհասարակ որևէ պահանջ չի էլ ներկայացվել, այլ նրանք վարչական ձերբակալման են ենթարկվել զուտ հավաքի անցկացման վայրում գտնվելու փաստի ուժով:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ առանձնազրույցների արդյունքում պարզ է դարձել, որ, օրինակ՝ դեպքերից մեկով անձանց վարչական ձերբակալման են ենթարկել պետական արարողակարգի իրականացմանը խոչընդոտելու պատճառաբանությամբ՝ առանց մանրամասնելու և հստակեցնելու, թե կոնկրետ ինչ արարողակարգի մասին է եղել խոսքը: Մեկ այլ դեպքով վարչական ձերբակալման ենթարկվող անձը ցանկացել է Ոստիկանության ծառայողներից տեղեկանալ, թե ինչու են իրեն վարչական ձերբակալման ենթարկում, ինչին ի պատասխան՝ Ոստիկանության ծառայողներն ասել են. «Դու լավ գիտես»:

2021 թվականի նոյեմբերի 26-ին Ոստիկանություն վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում հայտնել է, որ իրեն վարչական ձերբակալման ենթարկելիս կրկին որևէ պահանջ չի ներկայացվել, ավելին, Ոստիկանության ծառայողն ի սկզբանե վստահ չի եղել իրեն վարչական ձերբակալման ենթարկելու հարցում: Ըստ քաղաքացու պնդման՝ Ոստիկանության ծառայողն իրեն բերման ենթարկելու հարցը հեռախոսով քննարկել է այլ անձի հետ, այդ հեռախոսազրույցին էլ հաջորդել է իրեն Ոստիկանության բաժին բերման ենթարկելը: Էլ ավելի խնդրահարույց է այն, որ նշված դեպքով անձին սկզբում ասվել է, թե ազատությունից զրկվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով, սակայն հետագայում վերջինս տեղեկացվել է, որ վարչական ձերբակալման ենթարկված անձի կարգավիճակ ունի:

2021 թվականի նոյեմբերի 22-ին Ոստիկանություն վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկի պնդմամբ՝ բերման ենթարկելիս Ոստիկանության ծառայողները միայն հայտնել են, որ բերման է ենթարկվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարման համար: Օրենսգրքի այդ հոդվածը վկայակոչվել է ձևականորեն, քանի որ հոդվածի բովանդակությունը և դրանով նախատեսված արարքի էությունն այդպես էլ անձին չի պարզաբանվել:

Անձին արգելանքի տակ վերցնելու պահին նրան վարչական ձերբակալման ենթարկելու իրավական հիմքերն ու պատճառները, ինչպես նաև նրանց կարգավիճակից բխող իրավունքներն ու պարտականությունները չներկայացնելու խնդրի կապակցությամբ Ոստիկանությունից պարզաբանումներ են պահանջվել, որոնց ի պատասխան ստացված գրությամբ տեղեկացվել է, որ Ոստիկանության ծառայողներն *ամեն դեպքում* անձանց վարչական ձերբակալման ենթարկելիս ներկայացնում և պարզաբանում են վարչական ձերբակալման ենթարկելու հիմքերը և ազատությունից զրկելու հետ կապված իրավունքները: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները, սակայն, հակառակի մասին են վկայում: Ավելին, ընթացիկ տարում արձանագրված խնդիրները վկայում են ոստիկանական համակարգում դեռևս տիրող ոչ իրավաչափ պրակտիկայի մասին՝ զուգորդված ազատությունից զրկված անձանց նվազագույն իրավունքների չպահպանմամբ:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանը կրկին արձանագրում է, որ **անձն ազատությունից զրկվելուց հետո անհապաղ իրեն հասկանալի լեզվով պետք է տեղեկացվի իրեն ազատությունից զրկելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին:** Դա է պահանջում Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածից անմիջականորեն բխող Սահմանադրության 27-րդ հոդվածի 2-րդ մասը: Սահմանադրական այս երաշխիքն ինքնանպատակ չէ: Այն ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ իրեն ազատությունից զրկելու պատճառն իմանալու և ըստ այդմ՝ իրեն վերագրվող ոչ իրավաչափ արարքներից (ընդհուպ մինչև իրեն ազատությունից զրկելու հիմքերը դատական կարգով վիճարկելու հնարավորության ապահովումը) իր պաշտպանությունը պատշաճ կազմակերպելու

հնարավորության ապահովման նպատակին է ծառայում: Ընդ որում, կարևոր է, որ **Սահմանադրական այս երաշխիքն ապահովվի այնպես, որ օրինակ՝ անձին ազատությունից զրկելու հիմքերը ներկայացնելը ձևական և մեխանիկական բնույթ չկրի, այսինքն՝ այն ունենա փաստական և իրավական բավարար հիմնավորում:**

Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի ազատությունից զրկվելու պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին **իրեն հասկանալի լեզվով անհապաղ** տեղեկացնելու իրավական բովանդակությունը բացահայտվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ: Մասնավորապես, Եվրոպական դատարանի դիրքորոշմամբ՝ «անհապաղությունը» պետք է գնահատվի կոնկրետ գործի առանձնահատուկ հանգամանքների հաշվառմամբ: Այս տեղեկատվությունը պետք է հաղորդվի «անհապաղ», սակայն պարտադիր չէ, որ այն ամբողջությամբ բացահայտվի ձերբակալությունն իրականացնող ոստիկանի կողմից անմիջապես ձերբակալման պահին: Անձը պետք է պարզ, ոչ տեխնիկական՝ իրեն հասկանալի լեզվով տեղեկացվի իր ձերբակալության հիմնական իրավական և փաստական հիմքերի մասին<sup>523</sup>:

Այնուամենայնիվ, տարիների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի իրականացված հավաքների համալիր դիտարկումը բերում է այն միանշանակ եզրահանգման, որ **արդիական և համակարգային առումով չլուծված է մնում անձին արգելանքի վերցնելու պահին նրան ազատությունից զրկելու իրավական հիմքերն ու պատճառները, ինչպես նաև վերջինիս նվազագույն իրավունքներն ու պարտականությունները չներկայացնելու խնդիրը: Խնդիրը չի վերանում անգամ այն դեպքում, երբ որպես անձին վարչական ձերբակալման ենթարկելու հիմք ներկայացվում է «ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելը», հատկապես երբ անձի համար որոշակի էլ չէ, թե որն է այդ «օրինական պահանջը», առավել ևս երբ այդպիսի պահանջ ներկայացնելը, ըստ բողոքների բովանդակության, մեծամասամբ դեպքերում այդպես էլ չի նախորդում անձին վարչական ձերբակալման ենթարկելուն: Խնդրահարույց է նաև որպես վարչական ձերբակալման ենթարկելու հիմք վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի որևէ հոդվածի գուտ վկայակոչումը՝ առանց բացահայտելու այդ հոդվածով ամրագրված վարչական իրավախախտման բուն բովանդակությունը:**

Քննարկվող խնդրի կապակցությամբ Ոստիկանությունից պարզաբանումներ են պահանջվել, որոնց ի պատասխան ստացված գրությամբ տեղեկացվել է, որ 2021 թվականին իրականացված հավաքների ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված և ձերբակալված անձանց նվազագույն իրավունքներն ապահովելու նպատակով ՀՀ ոստիկանության շտաբի և իրավաբանական վարչության կողմից պարբերաբար տարածքային ստորաբաժանումների

<sup>523</sup> Տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (Murray v. the United Kingdom), 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, Շարք Ա թիվ 300-Ա, էջ 31, կետ 72: Ֆոքսը, Քեմփբելը և Հարթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Fox, Campbell and Hartley v. the United Kingdom), 1990թ. օգոստոսի 30-ի վճիռը, Շարք Ա թիվ 182, էջ 19, կետ 40:

ծառայողներին ցուցաբերվել է իրավական և մեթոդական օժանդակություն: Բացի այդ, ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում անցկացվող ծառայողական պարապմունքների ընթացքում ոստիկանության ծառայողները սահմանված ուսումնական պլանով ուսումնասիրում են համապատասխան թեմաներ և իրավական ակտերը:

Անդրադառնալով ոստիկանության ծառայողի հնչեցրած օրինական պահանջի և այն չկատարելու չափանիշներին՝ Ոստիկանությունից ստացված գրությամբ նշվել է, որ՝

- ոստիկանության ծառայողի պահանջը պետք է բխի օրենքից (նորմատիվ իրավական ակտից),
- ոստիկանության ծառայողի կողմից օրինական պահանջը պետք է հնչեցվի հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման կամ օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում,
- օրինական պահանջը պետք լսելի լինի անձի համար և վերջինս լսելու պայմաններում պետք է հրաժարվի այն կատարելուց:

Վերջին նախապայմանի կապակցությամբ, օրինակ, հարկ է նշել, որ Ոստիկանության ներկայացրած պահանջներն անգամ լսելի կերպով ներկայացնելու դեպքերում շատ հաճախ Ոստիկանության ծառայողներն անմիջապես են վարչական ձերբակալման ենթարկում անձանց՝ ողջամիտ ժամկետ չտրամադրելով ներկայացված օրինական պահանջը կատարելու համար:

Սույն ենթակետում քննարկման առարկա դարձած խնդրի կապակցությամբ հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում, ի թիվս այլնի, քննության առարկա են դարձել անձին ազատությունից զրկելիս հիմքերը չներկայացնելու և նրան իր իրավունքներն ու պարտականությունները չպարզաբանելու խնդիրները: Պաշտպանի դիմումի քննության արդյունքում 2017 թվականի հունվարի 24-ին կայացված թիվ ՍԴՈ-1339 որոշմամբ Սահմանադրական դատարանը նախ արձանագրել է, որ երկրում սահմանադրական օրինականության հաստատման տեսանկյունից անհետաձգելի անհրաժեշտություն է Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ նոր օրենսգրքի ընդունումը: Այնուհետև Բարձր դատարանն արձանագրել է, որ ազատությունից զրկվելու պատճառների մասին տվյալ անձին «անհապաղ տեղեկացնելը» հանրային իշխանության ուղղակի պարտականությունն է, և այդ հարցում հայեցողական մոտեցումն անթույլատրելի է:

Նշենք, որ ՎԻՎ օրենսգիրքը չի ընդունվել, օրենսդրական որևէ փոփոխություն՝ ուղղված վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում ազատությունից զրկելու ընթացակարգերի հստակեցման ու երաշխիքների ամրապնդմանը:

Այսպիսով, ոլորտում առկա խնդիրների շարունակականությունը և դրանց բնույթը վկայում են, որ ոչ միայն օրենսդրական գործող կարգավորումներն ամբողջությամբ չեն ապահովում անձանց իրավունքների պաշտպանությունը (ընդ որում՝ անգամ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների առկայության պայմաններում), այլև անձանց վարչական ձերբակալման ենթարկելու օրենսդրական պահանջները գործնական չեն ապահովվում:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է*

1. վերանայել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի՝ իրավունքների միջամտություն ենթադրող վարչական ձերբակալման, բերման ենթարկելու և իրավախախտի բերման ընթացակարգերը կանոնակարգող կարգավորումները՝ միաժամանակ անձանց վարչական ձերբակալման ենթարկելու պրակտիկան խստորեն համապատասխանեցնելով օրենսդրությամբ սահմանված կարգավորումներին,

2. ոստիկանությունում ձևավորված պրակտիկան համապատասխանեցնել սահմանադրական պահանջներին այն առումով, որ ազատությունից զրկելու յուրաքանչյուր դեպքում ներկայացվեն անձին ազատությունից զրկելու կոնկրետ հիմքերն ու պատճառները:

## **2. Սահմանված ժամկետից ավելի անձին անազատության մեջ պահելը. ազատությունից զրկելու սկզբնական պահի որոշակիացումը**

Բերման ենթարկված անձանց օրենսդրությամբ սահմանված ժամկետից ավելի են Ոստիկանության բաժիններում պահում: 2021 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընդհանուր մշտադիտարկումը վկայում է խնդրի շարունակականության մասին:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիմքով ազատությունից զրկված անձն անհապաղ ազատ է արձակվում, եթե նրա վերաբերյալ ազատությունից զրկվելու պահից ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան յոթանասուններկու ժամվա ընթացքում դատարանը որոշում չի կայացնում անազատության մեջ նրան հետագա պահելը թույլատրելու մասին: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ վարչական իրավախախտում կատարած անձի վարչական ձերբակալումը կարող է տևել ոչ ավելի, քան երեք ժամ (...):

Ոստիկանությունում ձևավորված այս պրակտիկան հակասում է նաև ՄԻԵԴ իրավաբանությանը: Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանն «ազատությունից զրկել» է համարում նաև անձին փողոցում մի քանի ժամով կանգնեցնելը և հեռանալն արգելելը կամ, օրինակ, ոստիկանության բաժնից դուրս գալն արգելելը, նույնիսկ, եթե անձն այնտեղ է գնացել իր կամքով՝ առանց իրավապահ մարմինների կողմից ուժի գործադրման: Եվրոպական դատարանը Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի գործով կայացված վճռում «ազատությունից զրկել» է որակել նույնիսկ դիմումատուին ոստիկանության բաժին տեղափոխելը և այնտեղ շուրջ 45 րոպե պահելը<sup>524</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ անձին կանգնեցնելու և անձնական զննություն կատարելու՝ ոստիկանության լիազորության

<sup>524</sup> Տե՛ս Շիմովոլոսն ընդդեմ Ռուսաստանի (Shimovolos v. Russia) գործով 2011 թվականի նոյեմբերի 11-ի վճիռը, գանգատ թիվ 30194/09, կետ 48:

իրականացման ընթացքում հարկադրանքի տարրի օգտագործումն անձին ազատությունից զրկելու նշան է, անկախ նրանից, թե որքան է այդ միջոցառումը տևում<sup>525</sup>:

Եվրոպական դատարանի նշված գործերից վերջինի դեպքում, օրինակ, դիմողներից մեկը ոստիկանների կողմից պահվել է տրոլեյբուսում և միայն մի քանի կանգառ հետո՝ 8 րոպե անց ազատ է արձակվել: Դատարանը գտել է, որ չնայած դիմողի ազատությունից զրկումը եղել է շատ կարճ ժամանակով, այնուամենայնիվ, ըստ գործի նյութերի, **ցույցին նրա մասնակցությանը խոչընդոտելու ոչ իրավաչափ նպատակով նա զրկված է եղել այդ վայրը լքելու հնարավորությունից և, հետևաբար, խախտվել է նրա անձնական ազատության իրավունքը:**

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացրած անձանցից մեկը տեղեկացրել է, որ 2021 թվականի հունվարի 28-ին իրեն բերման են ենթարկել Ոստիկանության Էրեբունու բաժին, որտեղից տեղափոխել են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչություն, որտեղ տեղափոխման ճանապարհին արդեն լրացել է իրեն անազատության մեջ պահելու՝ օրենսդրությամբ սահմանված 3 ժամը:

2021 թվականի սեպտեմբերի 21-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին այցի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն ուսումնասիրել են բաժին բերված անձանց հաշվառման մատյանները, որտեղ արված գրառումների համաձայն՝ թեև անձը վարչական ձերբակալման է ենթարկվել ժամը 08:20-ին և ազատ է արձակվել ժամը 11:20-ին, սակայն, ըստ անձի պնդման, ինքը Ոստիկանության բաժնից փաստացի դուրս է եկել ժամը 12:10-ին (3 ժամը լրանալուց հետո), քանի որ մինչ այդ դեռ նրան վերադարձված չի եղել նրանից առգրավված հեռախոսը: Կամ, մեկ այլ դեպքում օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո վարչական ձերբակալման ենթարկված անձանց ևս մեկ ժամ պահել են Ոստիկանության բաժնում՝ անձնական զննություն իրականացնելու պատճառաբանությամբ, քանի որ մինչ այդ հնարավոր չի եղել ապահովել ընթերականների ներկայությունը:

Այս պրակտիկայի առնչությամբ հարկ է նշել, որ վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում վարչական ձերբակալման ենթարկված անձին անազատության մեջ առավելագույնը 3 ժամ պահելու օրենսդրական սահմանափակումը ենթադրում է, որ վարույթն իրականացնող մարմինն անազատության մեջ գտնվող անձին վերաբերող անհրաժեշտ գործողությունները պետք է կատարի այդ 3 ժամվա ընթացքում: Հանրային իշխանության կրողը՝ Ոստիկանությունն է կրում օրենքով նախատեսված ժամկետում անհրաժեշտ գործողությունների չկատարման ռիսկը: Ասվածի հաշվառմամբ՝ վարչական ձերբակալման ենթարկված անձից

<sup>525</sup> Տե՛ս Կրուկպոն և այլք ընդդեմ Ռուսաստանի (Krupko and others v. Russia) գործով 2014 թվականի հունիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 26587/07, Ֆոկան ընդդեմ Թուրքիայի գործով (Foka v. Turkey) 2008 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 28940/95, Բրեգան և այլք ընդդեմ Մոլդովայի (Brega and others v. Moldova) գործով 2012 թվականի ապրիլի 24-ի վճիռը, գանգատ թիվ 61485/08 և այլն):

առգրավված իրերը նրան հետ վերադարձնելու, ընթերակաների ներկայությունն ապահովելու և նման այլ հարցեր ևս պետք է լուծվեն սահմանված 3 ժամվա ընթացքում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ **առհասարակ պետական մարմնի ռեսուրսների ոչ բավարար լինելը չի կարող անձին օրենքով սահմանված ժամկետից ավելի անազատության մեջ պահելն արդարացնող հիմք լինել**: Ոստիկանության բաժիններում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հաշվառման մատյանները պետք է պատշաճ լրացվեն՝ անկախ որևէ հանգամանքից (վարչական ձերբակալման ենթարկված անձանց քանակ, վարչական ձերբակալման ենթարկելու վայր և այլն): Այս տեսակ խնդիրներն անհրաժեշտ է լուծել այնպիսի կառուցակարգերի միջոցով, որոնք որևէ կերպ չառնչվեն անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված երաշխիքների հետ և առավելապես՝ չխոչընդոտեն դրանց պատշաճ իրացմանը: **Պետական համակարգում առկա խնդիրները մարդու իրավունքների սահմանափակման կամ նրանց տրված երաշխիքային նորմերի ոտնահարման միջոցով լուծելու մոտեցումն անընդունելի է**:

Մտահոգիչ է Ոստիկանությունում ձևավորված այն պրակտիկան, երբ վարչական ձերբակալման ենթարկված անձանց անազատության մեջ պահելու ժամկետի հաշվարկի պահ է ընդունվում ոչ թե անձին ազատությունից փաստացի զրկելու, այլ այդ կապակցությամբ համապատասխան արձանագրություն կազմելու կամ նրան Ոստիկանության համապատասխան բաժին բերելու պահը: Այսպես, 2021 թվականի նոյեմբերի 22-ին Ոստիկանության Կենտրոնականի բաժին այցի շրջանակներում պարզվել է, որ վարչական ձերբակալման ենթարկվածներից մեկը փաստացի արգելանքի է վերցվել ժամը 09:01-ին, մինչդեռ Ոստիկանության ստորաբաժանում բերված անձանց հաշվառման մատյանում և մյուս փաստաթղթերում արձանագրվել է ժամը 09:10, որը Ոստիկանության Կենտրոնական բաժին մուտք գործելու ժամն է:

2021 թվականի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ առանձնագրույցների ընթացքում բազմիցս բարձրացվել է այն խնդիրը, որ Ոստիկանության բաժիններ վարչական ձերբակալման ենթարկվելուց հետո տևական ժամանակ որևէ գործողություն չի կատարվել այդ անձանց վերաբերյալ, նրանք պարզապես սպասել են: Օրինակ՝ այցերից մեկի ժամանակ Պաշտպանի ներկայացուցիչների բաժնում գտնվելու ընթացքում, երբ անձանց փաստացի արգելանքի տակ վերցնելուց 1.5 ժամ արդեն անցած է եղել, նրանց վերաբերյալ վարչական վարույթի փաստաթղթերի կազմման գործընթացը նոր միայն սկսվել է:

Հարցի կապակցությամբ ուշագրավ է Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումը, որի փաստերի և որում արտահայտված դիրքորոշման համաձայն՝ դիմումատուի ձերբակալման արձանագրությունը կազմելիս ժամը 22:30-ը նշվել է որպես նրան ձերբակալելու պահ՝ ի տարբերություն այն ժամի, երբ դիմումատուն փաստացի զրկվել է ազատությունից՝ այդպիսով, ըստ էության, դիմումատուին ազատությունից զրկելու սկզբնական տասնվեց ժամը թողնելով պաշտոնապես չհաստատված: Նույնիսկ եթե ընդունենք, որ կարճ ժամանակահատված կարող է անցնել անձի փաստացի ձերբակալման և այդ անձին ձերբակալվածի կարգավիճակ տալու միջև, Դատարանը տարբերակում է Կոնվենցիայի 5-րդ



հողվածի իմաստով ձերբակալման պահը և այն ձևականությունները, որոնք պետք է պահվեն տվյալ ընթացակարգը ձևակերպելու համար: Անընդունելի կլինեն անձի ձերբակալման պահն այդպիսի ձևականությունների կատարման և իրականացման հետ կապելը՝ անձին փաստացի ազատությունից զրկելու պահի փոխարեն: Այդպիսի անհարկի ձևականությունները չեն կարող համատեղելի լինել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի տառի և ոգու հետ, և ամեն դեպքում կհանգեցնեն ազատությունից կամայական զրկման<sup>526</sup>:

Անձին ազատությունից զրկելու սկզբնական պահի հաշվարկման խնդրին անդրադառնալով՝ Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում կրկին արձանագրել, որ **անձին ազատությունից զրկելու սկզբնական պահի ճիշտ արձանագրումը սկզբունքային է, քանի որ, նախ՝ մի կողմից պահպանվում են օրենսդրությամբ ամրագրված առավելագույն ժամկետները, մյուս կողմից՝ այդպիսով ապահովվում են անձի՝ ազատությունից զրկվածի կարգավիճակից բխող բոլոր երաշխիքները:**

Պետք է հաշվի առնել միջազգային իրավաբանությամբ ընդունված այն մոտեցումը, որ անձը համարվում է ազատությունից զրկված այն պահից սկսած, երբ նա ստիպված է հետևել ոստիկանի կամքին և չի կարող ինքնակամ լքել իր գտնվելու վայրը: Հետևաբար, նրան անազատության մեջ պահելու ժամկետի հաշվարկն էլ պետք է սկսել հենց այդ, այսինքն՝ ազատությունից փաստացի զրկելու պահից, ընդ որում՝ անկախ նրանից քրեական, վարչական, թե այլ վարույթ է իրականացվում:

**Վերոգրյալի հաշվառմամբ՝ հարկ է կրկին արձանագրել, որ ազատությունից զրկելու մեխանիզմի գործադրման սկզբնական պահ պետք է համարել անձին փաստացի արգելանքի վերցնելը՝ անկախ նրա նկատմամբ կիրառվող ներգործության միջոցի ֆորմալ անվանումից կամ անձի կարգավիճակից:**

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմի պատշաճ երաշխավորման նպատակով անհրաժեշտ է անձին անազատության մեջ պահելու ժամկետը հաշվարկել նրան փաստացի ազատությունից զրկելու, ոչ թե Ոստիկանության բաժին վարչական ձերբակալման ենթարկելու կամ այդ կապակցությամբ արձանագրություն կազմելու պահից:*

### **3. Ազատությունից զրկված անձի նախընտրած անձին տեղյակ պահելու իրավունքն անհապաղ չապահովելը**

Վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում վարչական ձերբակալման ենթարկված անձը պատշաճ չի տեղեկացվում այդ մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու սահմանադրական իր իրավունքի մասին: Մեկ այլ խնդիր է այդ իրավունքի մասին իրազեկվելուց

<sup>526</sup> Տե՛ս Մուշեղ Սաղաթեյանի ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգառ թիվ 23086/08, կետ 173:

հետո այդ իրավունքի պատշաճ իրացումը չապահովելը: 2021 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընդհանուր դիտարկման արդյունքները վկայում են խնդրի արդիականության և շարունակականության մասին:

Մասնավորապես, ընթացիկ տարում անձանց վարչական ձերբակալման ենթարկելու կապակցությամբ Ոստիկանության բաժիններ կատարած այցերի արդյունքներով կրկին արձանագրվել է, որ Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղյակ չեն պահվել Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով երաշխավորված իրենց իրավունքի մասին: Էլ ավելի մտահոգիչ է այն, որ իրենց այդ իրավունքի մասին տեղյակ պահվելուց կամ այդ մասին այլ աղբյուրներից տեղեկանալուց հետո անգամ Ոստիկանության ծառայողների կողմից միջոցներ չեն ձեռնարկվել վարչական ձերբակալման ենթարկված անձանց քննարկվող իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու ուղղությամբ: Ավելին, դեպքերից մեկով Ոստիկանության ծառայողը վարչական ձերբակալման ենթարկված անձից պահանջել է անջատել հեռախոսը: Նշված դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների միջամտությամբ հնարավոր է եղել ապահովել վարչական ձերբակալման ենթարկված անձի սահմանադրական իրավունքի արդյունավետ իրացումը (վերջինս կարողացել է օգտվել զանգի իր իրավունքից), Ոստիկանության պրակտիկան, այնուամենայնիվ, շարունակում է խնդրահարույց մնալ:

Անձնական ազատությունից զրկված յուրաքանչյուր անձի՝ այդ մասին անհապաղ իր ընտրած անձին տեղեկացնելու իրավունքը երաշխավորված է Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասով: Ընդ որում՝ այդ իրավունքի իրականացումը կարող է հետաձգվել միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով՝ հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասի համապարփակ վերլուծությունից հետևում է, որ ազատությունից զրկված անձի՝ 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված իրավունքի իրականացման հետաձգման հնարավորություն սահմանադիրը նախատեսել է միայն հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանմամբ՝ հետաձգումը միայն օրենքով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետով և հանցագործությունների կանխման կամ բացահայտման նպատակով: Սա իր հերթին ենթադրում է, որ խոսքը ոչ թե վարչական, այլ քրեական իրավախախտման վարույթին է վերաբերում: Ուստի, նշվածը թույլ է տալիս գալ այն միանշանակ եզրահանգման, որ *վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում իրեն ազատությունից զրկելու վերաբերյալ իր նախընտրած անձին տեղյակ պահելու անձի իրավունքի ապահովման անհապաղության պահանջից ցանկացած բացառություն անվերապահորեն հակասում է սահմանադրական պահանջին:*

Ձերբակալման մասին ազգականին կամ իր ընտրությամբ երրորդ անձին տեղեկացնելու իրավունքը, ի թիվս այլ իրավունքների՝ Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման

կոմիտեի (ԽԿԿ) չափանիշներում նախատեսված է որպես ոստիկանության կողմից ձերբակալված անձանց երեք հիմնարար իրավունքներից մեկը:

Հարցի կապակցությամբ ուշագրավ է Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի 2017 թվականի հունվարի 24-ին կայացրած թիվ ՍԴՈ-1339 որոշումը, որով արտահայտած դիրքորոշման համաձայն՝ Սահմանադրությունը չի բացառել այն, որ անհապաղ տեղեկացումը կարող է հանգեցնել նաև այլ անձանց կողմից համապատասխան տեղեկատվություն ստանալուն, ինչը կարող է դժվարացնել հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը: Հնարավոր հանցագործությունները կարող են առնչվել պետական անվտանգությանը, հասարակական կարգին, այլոց հիմնական իրավունքներին և ազատություններին, որոնց պաշտպանությունը ևս պետության խնդիրն է: Միաժամանակ, հաշվի առնելով ազատությունից զրկելու հարկադիր միջոցառման բնույթը՝ չի կարող բացառվել այդպիսի միջոցառման իրականացմանը խոչընդոտող հանգամանքների գոյությունը, որոնք օբյեկտիվորեն դժվարացնում են անձի իրավունքների իրացմանն ուղղված պարտականությունների **անհապաղ** կատարումը: Այլ խնդիր է, որ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը (նախկինում գործող խմբագրությամբ) չի վերաբերում միայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված տվյալ նպատակին, **այլ վերաբերում է անձնական ազատությունից զրկելու բոլոր դեպքերին, այդ թվում՝ վարչական իրավախախտումներին**, ինչն անհամատեղելի է ՀՀ Սահմանադրության պահանջների հետ:

Արդյունքում, Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1339 որոշմամբ Սահմանադրությանը հակասող և անվավեր են ճանաչվել «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ մասը, որով ամրագրվում էր Ոստիկանություն բերելու պահից սկսած 3 ժամվա ընթացքում անձանց գտնվելու վայրի մասին նրանց հարազատներին (...) տեղյակ պահելու Ոստիկանության պարտականությունն այնքանով, որքանով չեն ապահովում ազատությունից փաստացի զրկված անձանց համար այդ իսկ պահից իրավունքների պաշտպանության՝ սահմանադրորեն նախատեսված շրջանակներում, անհրաժեշտ իրավական երաշխիքներ:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է իրավակիրառ պրակտիկան կազմակերպել այնպես, որ գործնականում ապահովվի ազատությունից զրկված անձին անհապաղ իր նախընտրած անձին իր անազատության մեջ գտնվելու մասին տեղյակ պահելու վերջինիս սահմանադրական իրավունքի մասին իրազեկումը և այդ իրավունքի պաշտպան իրացումը:*

#### **4. Ոչ համաչափ ուժի գործադրում և վերաբերմունքն ազատությունից զրկված անձանց նկատմամբ**

2021 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների ընդհանուր դիտարկման արդյունքներով արձանագրված թերևս ամենատարածված խնդիրը վերաբերում է ազատությունից

գրկելիս անձանց նկատմամբ ոչ համաչափ ուժի գործադրմանը և ոչ բարեկիրթ վերաբերմունք ցուցաբերելուն:

Այսպես, 2021 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների ընթացքում Ոստիկանության տարբեր բաժիններ վարչական ձերբակալման ենթարկված քաղաքացիներ ահազանգել են, որ վարչական ձերբակալման ենթարկելու ընթացքում իրենց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժ է գործադրվել: Օրինակ, 2021 թվականի հունիսի 16-ին Ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչության Եղեգնաձորի բաժին վարչական ձերբակալման ենթարկված, այնտեղից էլ քննչական մարմին տեղափոխված անձանցից մեկը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին տեղեկացրել է, որ քննչական մարմնի վարչական շենքից դուրս է եկել՝ ձեռքի հատվածում վիրակապված, ունի ձեռքի հողի խախտում: Վարչական ձերբակալման ենթարկված անձի պնդմամբ՝ մարմնական վնասվածքն ստացել է բերման ենթարկվելիս ձեռնաշղթաներ գործադրվելու արդյունքում: Ընդ որում՝ քաղաքացին նախապես Ոստիկանության ծառայողներին տեղեկացրել է, որ ձեռքի մատներն ամպուտացված են, և խնդրել է ձեռնաշղթաներ չգործադրել, սակայն ապարդյուն:

2021 թվականի նոյեմբերի 11-ին Ոստիկանության տարբեր բաժիններ վարչական ձերբակալման ենթարկված անձինք ևս բարձրաձայնել են վարչական ձերբակալման ենթարկելիս իրենց նկատմամբ անհամաչափ ֆիզիկական ուժի գործադրման դեպքերի մասին: Օրինակ, վարչական ձերբակալման ենթարկվածներից մեկի պնդմամբ՝ վարչական ձերբակալման ենթարկելիս Ոստիկանության ծառայողներն իրեն ոստիկանական մեքենան են նստեցրել քաշելով և գետնին գցելով, ինչի արդյունքում վնասվել է պարանոցը: Վարչական ձերբակալման ենթարկված մեկ այլ անձի տեղեկացմամբ՝ իր նկատմամբ կիրառված անհամաչափ ֆիզիկական ուժի գործադրման արդյունքում վնասել է ոտքը, հրավիրվել է շտապ բուժօգնության խումբ:

2021 թվականի մարտի 26-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին վարչական ձերբակալման ենթարկված անձինք տեղեկացրել են, որ իրենց հեռախոսները մի կողմ դնելու հարցի շուրջ ծագել է վիճաբանություն, ինչի պատճառով Ոստիկանության 4-5 ծառայող ֆիզիկական ուժի գործադրմամբ նրանց ձեռնաշղթաներ են հագրել՝ չնայած այն փաստին, որ վարչական ձերբակալման ենթարկվածներից մեկը բազմիցս նշել է, որ մեջքի առողջական խնդիր ունի և որ ձեռքերը մեջքի հետևում ստիպողաբար պահելն իրեն ֆիզիկական ցավ է պատճառում: Այս գործողությունների արդյունքում անձը դաստակի հատվածում ուժեղ ցավ է զգացել, առաջացել են կարմիր հետքեր: Ապրիլի 7-ին կազմակերպված բողոքի ակցիայի շրջանակներում վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հետ առանձնազրույցի ընթացքում տեղեկացրել է, որ իրեն բերման են ենթարկել Ոստիկանության 3 ծառայողներ, որոնցից մեկն իր ձեռքերից շատ ուժեղ բռնել է, փորձել է մոտեցնել ոստիկանության տրանսպորտային միջոցին, սակայն մի քանի րոպե այդպես շրջել են, քանի որ Ոստիկանության ծառայողը չի կարողացել գտնել Ոստիկանության տրանսպորտային միջոցը: Իսկ սեպտեմբերի 21-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Նոր Նորքի բաժին

վարչական ձեռքակալման ենթարկված անձը պնդել է, որ իրեն բերման ենթարկած Ոստիկանության 4 ծառայողներն իրեն բռնությամբ նստեցրել են մեքենայի մեջ, հայիոյել և ամբողջ ճանապարհի ընթացքում ձեռքը պահել ոլորած դիրքում: Ընդ որում, նշված դեպքում՝ անձը Ոստիկանության ծառայողներին հայտնել է ձեռքի շրջանում առաջացած ցավի մասին, ինչին ստացել է պատասխան, որ «Ժամանակին պաշտպանել է ՊՊԾ գունդը գրավողներին, դրա համար էլ իրեն հասնում է»:

2021 թվականի փետրվարի 23-ին Ոստիկանության բաժիններ վարչական ձեռքակալման ենթարկված անձանցից մեկը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում տեղեկացրել է, որ իրեն բերման ենթարկելիս Ոստիկանության պարեկապահակետային ծառայության 3-րդ գումարտակի ծառայողները ծնկով հարվածել են իր ողնաշարին: Նույն օրը վարչական ձեռքակալման ենթարկված մեկ այլ անձ պնդել է, որ վարչական ձեռքակալման ենթարկելիս Ոստիկանության զորքերի հատուկ նշանակության ստորաբաժանման ծառայողները ոտքով հարվածներ են հասցրել իր ոտքերին: Ընդ որում ինչպես այս, այնպես էլ անձանց վարչական ձեռքակալման ենթարկելու որոշ այլ դեպքեր զուգորդվել են վարչական ձեռքակալման ենթարկվող անձանց ուղղված հայիոյանքներով և վիրավորական արտահայտություններով: Վարչական ձեռքակալման ենթարկված մեկ այլ անձի հետ առանձնազրույցի ժամանակ պարզվել է, որ Ոստիկանության տրանսպորտային միջոցը նստեցնելու ժամանակ Ոստիկանության ծառայողների հրելու արդյունքում ձախ ոտքը սեղմվել է Ոստիկանության տրանսպորտային միջոցի ստորին հատվածին, արդյունքում՝ անձն ստացել է ձախ սրունքի դրսային հատվածի վերին երրորդականի վնասվածք: Վնասվածքի լրջությունը հաշվի առնելով՝ վարչական ձեռքակալման ենթարկված անձը շտապ բուժօգնության մեքենայով տեղափոխվել է «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն:

Վարչական ձեռքակալման ենթարկված անձանց նկատմամբ անհամաչափ ուժ գործադրելու այլ դեպքեր են բարձրաձայնվել նաև 2021 թվականի ապրիլի 21-ին, օգոստոսի 21-ին, նոյեմբերի 22-ին, դեկտեմբերի 8-ին և 10-ին իրականացված հավաքների ընթացքում Ոստիկանության տարբեր բաժիններ իրականացված այցերի շրջանակներում վարչական ձեռքակալման ենթարկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում:

Այսպես, Երևան քաղաքի Ալիխանյան եղբայրների 6/1 հասցեին հարակից շենքերի բնակիչները Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին տեղեկացրել են, որ օգոստոսի 21-ին իրականացված բողոքի ակցիայի շրջանակներում Ոստիկանության ծառայողները ոտքով հարվածել են տարածքում գտնվող անչափահաս (16-ամյա) երեխայի որովայնին, ով ստացված վնասվածքի հետևանքով տեղափոխվել է հիվանդանոց: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցելել են նաև հիվանդանոց և տեղում պարզել, որ անչափահաս երեխայի մոտ ախտորոշվել է որովայնի առաջնային պատի սալքարդ:

Նույն օրը վարչական ձեռքակալման ենթարկված մեկ այլ անձ տեղեկացրել է, որ Ոստիկանության 4 ծառայողների կողմից վարչական ձեռքակալման ենթարկվելու ընթացքում իր

հագուստը պատռվել է և փաստացի վարչական ձերբակալման է ենթարկվել տաբատը վրայից ամբողջությամբ ընկած վիճակում՝ արժանապատվությունը նվաստացնող եղանակով, քանի որ ոստիկանները թույլ չեն տվել այն հագնել: Այս ամենը նկատած քաղաքացիներից մեկը մոտեցել է Ոստիկանության ծառայողին և փորձել կանխել այն. արդյունքում, ըստ քաղաքացու պնդման՝ նրան ևս բերման են ենթարկել: Մեկ այլ քաղաքացի էլ վարչական ձերբակալման է ենթարկվել այն պատճառով, որ նկատելով, որ Ոստիկանության ծառայողը մեքենան վարում է իր մոր ուղղությամբ, կանգնել է մեքենայի դիմաց և բռունցքով հարվածել մեքենային: Այնուհետև Ոստիկանության ծառայողներն անհամաչափ ֆիզիկական ուժի կիրառմամբ նրան վարչական ձերբակալման են ենթարկել, որի ընթացքում վերջինս աջ աչքի շրջանում վնասվածք է ստացել, հագուստն էլ պատռվել է:

2021 թվականի ապրիլի 21-ին իրականացված բողոքի ակցիաների շրջանակներում վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկի պնդմամբ՝ Ոստիկանությունում իր նկատմամբ բռնություն է գործադրվել: Ոստիկանության ծառայողներն իրեն տարել են աշխատասենյակ, գցել գետնին և ոտքերով հարվածել, որից հետո գետնին գցած վիճակում քարշ են տվել մեկ սենյակից մյուսը և այս ողջ գործընթացը տեսանկարել: Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնականի բաժնում վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկի հետ առանձնազրույցի ընթացքում պարզ է դարձել, որ նրան ևս վարչական ձերբակալման ենթարկելիս գցել են գետնին, քարշ տվել, ոտքերով հարվածել մարմնի տարբեր հատվածներին և այս ամենին զուգահեռ նաև հայիոյել: Նույն բաժին վարչական ձերբակալման ենթարկված մեկ այլ անձի պնդմամբ էլ՝ իրեն բերման ենթարկած ոստիկաններից մեկը մի քանի անգամ հարվածել է իր գլխին, ուսին, գլուխը հարվածել պատին՝ միաժամանակ պնդելով, որ իրեն փաստաբան անհրաժեշտ չէ, և որ ինքը պետք է ամեն ինչ ներկայացնի այնպես, ինչպես Ոստիկանության ծառայողները կասեն: Նույն օրը Ոստիկանության ԵՔՎ Արաբկիրի բաժին վարչական ձերբակալման ենթարկվածներից մեկն էլ պնդել է, որ վարչական ձերբակալման ենթարկելիս իրեն պառկեցրել են գետնին և Ոստիկանության շուրջ 5 ծառայողներ սկսել են ոտքերով հարվածներ հասցնել նրա մարմնի տարբեր մասերին:

Դեկտեմբերի 10-ին Ոստիկանության ԵՔՎ Նոր Նորքի բաժին վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ առանձնազրույցի արդյունքներով վեր են հանվել Ոստիկանության ծառայողների կողմից վարչական ձերբակալման ենթարկված անձանց նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսևորման դեպքեր: Օրինակ՝ ըստ վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկի պնդման՝ նրան մատնացույց անելով՝ Ոստիկանության ծառայողն իր ծառայակից ընկերներին ասել է, «սրան քաշեք ստեղ հլը», ինչին ի պատասխան՝ վարչական ձերբակալման ենթարկված անձն ասել է. «կարող ա ձեր համար ստեղ կարտոշկա ենք», որին էլ հետևել է Ոստիկանության ծառայողի հետևյալ պատասխանը. «կարտոշկա չես, մեշոկ ես»: Մեկ այլ դեպքով՝ Ոստիկանության ՊՊԾ գնդի 3-րդ գումարտակի ծառայողներից մեկը սպառնացել է վարչական ձերբակալման ենթարկված անձանց՝ ասելով «ձեր հետ դուբինկայի լեզվով պետք է խոսալ»: Մեկ

այլ դեպքով վարչական ձերբակալման ենթարկված անձին թույլ չեն տվել նստել: Նկատելով, որ նա նստած է՝ Ոստիկանության ծառայողն ասել է. «ով ասեց էսի պտի նստի», ինչից հետո անձը ստիպված է եղել մոտ 30 րոպե ոտքի վրա մնալ, որի ընթացքում իր հասցեին հնչեցվել են այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են «արա այ քյաբաբ ուտող», «փռեք գետնին սրան», «միջանցքով քաշեք էս քյաբաբ ուտողին»:

Հավաքների ընթացքում անձանց վարչական ձերբակալման ենթարկելու դեպքերի ուսումնասիրությամբ բարձրացվել է նաև Ոստիկանության ծառայողների կողմից վարչական ձերբակալման ենթարկված անձանց նկատմամբ ոչ բարեհաճ վերաբերմունքի դրսևորման հարցը՝ կապված ոստիկանական մեքենաներում և Ոստիկանության բաժիններում բժշկական շնչադիմակներ չկրելու հետ այն դեպքում, երբ հենց Ոստիկանության ծառայողներն են անձանցից պահանջել դիմակ կրել:

Անձանց վարչական ձերբակալման ենթարկելու ընթացքում որոշ քաղաքացիներ նաև նյութական կորուստներ են կրել՝ մեկի բջջային հեռախոսն է կոտրվել, մեկ ուրիշի՝ անձրևանոցը, շատերի հագուստն է պատռվել, դեպքերից մեկով էլ վարչական ձերբակալման ենթարկված անձի «Մարշալ Բաղրամյան» շքանշանն է պոկվել ու կորել և այլն:

Վերը նկարագրված բոլոր դեպքերն արձանագրվել են Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների կողմից:

ՀՀ ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ Ոստիկանության ծառայողների կողմից ոչ համաչափ ֆիզիկական ուժ գործադրելու կապակցությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել են 30 ծառայողական քննություններ, որոնցից 19-ի արդյունքներով Ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ֆիզիկական ուժ գործադրելը չի հաստատվել, ուստի դրանց արդյունքները թողնվել են անհետևանք, 4-ով «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով կարգապահական տույժ չի կիրառվել, 3-ը դեռ չեն ավարտվել, իսկ 4-ի արդյունքներով ծառայողական քննության ընթացքը կասեցվել է՝ նկատի ունենալով, որ նախաքննական մարմիններում հարուցվել են քրեական գործեր և որոշվել է դրանց անդրադառնալ այդ քրեական գործերով իրավական գնահատականի վերջնական արդյունքներով:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ Ոստիկանության ծառայողը որպես բացառիկ միջոց գործադրում է ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և հրազեն՝ նույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, **այնքանով, որքանով դա անհրաժեշտ է իր պարտականությունները կատարելու համար, եթե այլ միջոցներով այդ պարտականությունների կատարումը հնարավոր չէ ապահովել:** Նույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ իրավախախտումները կանխելու կամ խափանելու, իրավախախտներին բռնելու և ոստիկանություն ներկայացնելու, ոստիկանության ծառայողի օրինական պահանջներին չենթարկվելու կամ դիմադրություն ցույց տալու դեպքերում, ինչպես նաև ինքնապաշտպանության նպատակով ոստիկանության ծառայողն իրավունք ունի իրավախախտների նկատմամբ գործադրել

Ֆիզիկական ուժ (այդ թվում՝ ձեռնամարտի հնարքներ), ինչպես նաև ձեռքի տակ գտնվող անհրաժեշտ առարկաներ, **եթե ոչ ուժային միջոցները չեն ապահովում ոստիկանության վրա դրված պարտականությունների կատարումը:**

Հասարակական կարգը պահպանելիս Ոստիկանության պարտականությունները սահմանված են «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով, որի 1-ին պարբերության համաձայն՝ Ոստիկանությունը պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը փողոցներում, հրապարակներում, զբոսայգիներում և երկաթուղային կայարաններում, օդանավակայաններում, ընտրական տեղամասերում, այլ հասարակական վայրերում, դատական նիստերի ընթացքում (դատարանների միջնորդությամբ)՝ միջոցներ ձեռնարկելով հասարակական կարգի խախտումները նախականելու, կանխելու և խափանելու ուղղությամբ:

Վարչական ձերբակալման ենթարկելիս անձանց նկատմամբ ոչ համաչափ ուժ գործադրելու հարցի վերաբերյալ Ոստիկանության պարզաբանումներից մեկի համաձայն՝ ֆիզիկական ուժի կիրառումը համաչափ է այնքանով, որքանով հնարավոր է հասնել վարչական միջամտության հանգուցալուծմանը:

**Մինչդեռ, վերը բերված օրինակների համընդհանուր դիտարկումը բերում է այն համոզման, որ Ոստիկանության ծառայողների կողմից անձանց նկատմամբ կիրառված ֆիզիկական ուժն անցնում է վարչական միջամտության հանգուցալուծմանը հասնելու համար անհրաժեշտ սահմանները: Ակնհայտ է, որ Օրենքով Ոստիկանության վրա դրված պարտականությունների պատշաճ կատարմանը կարելի է և պետք է հասնել ոչ այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝ ոչ բարեկիրթ վերաբերմունքը, վիրավորական, անհարգալից պահվածքը և անձի ցուցաբերած դիմադրությունը զսպելու նպատակի սահմաններից դուրս ֆիզիկական բռնության այլ տեսակներ կիրառելը: Միանշանակ է, որ թվարկվածները չեն կարող Ոստիկանության պարտականությունների կատարումն ապահովող իրավաչափ միջոցներ համարվել: Այդ պարտականությունների կատարմանը պետք է հասնել բացառապես օրինական ճանապարհով և իրավաչափ միջոցներով:**

Անհամաչափ ուժի գործադրման, այս կապակցությամբ պետության ապացուցման բեռի վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ եթե համապատասխան իրադարձություններն ամբողջությամբ կամ մեծ մասամբ գտնվում են իշխանությունների բացառիկ իմացության դաշտում, ինչպես, օրինակ, ազատությունից զրկման մեջ իշխանությունների հսկողության ներքո գտնվող անձանց պարագայում է, այդ մարմնական վնասվածքների առնչությամբ կծագեն փաստերին վերաբերող լուրջ կանխավարկածներ: Եթե իշխանությունները չեն ներկայացնում մարմնական վնասվածքների պատճառի գոհացուցիչ և համոզիչ բացատրություն, ապա Եվրոպական դատարանը հակված է լինում ընդունել առերևույթ վատ վերաբերմունքի մասին գանգատաբերի ներկայացրած պնդումները: Այս սկզբունքը տարածվում է նաև ոստիկանության բաժնում անձի ինքնությունը ստուգելու նպատակով նրան ազատությունից զրկելու կամ նման տարածքներում պարզ հարցազրույց անցկացնելու



իրավիճակների նկատմամբ: Այն կիրառելի է նաև հասարակական վայրերի կամ բոլոր այլ տարածքների նկատմամբ, որոնցում իրավապահ մարմիններն իրականացնում են այն գործողությունը, որի ընթացքում գործադրել են ուժ: **Ֆիզիկական ուժի ցանկացած գործադրում՝ անգամ ապտակը, որը խիստ անհրաժեշտ չի դարձել տվյալ անձի վարքագծի պատճառով, և կիրառվել է իրավապահ համակարգում աշխատող անձանց կողմից, նսեմացնում է մարդու արժանապատվությունը և առաջացնում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում**<sup>527</sup>:

Անդրադառնալով քննարկվող դեպքերում պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու հարցին՝ Եվրոպական դատարանն արձանագրել է, որ ուժի կամ հատուկ միջոցների գործադրմամբ մարմնական վնասվածքներ կամ այլ վնասներ պատճառելուց հետո հնարավորինս կարճ ժամկետում պատշաճ բուժօգնություն չցուցաբերելն առաջ է բերում Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման հարց<sup>528</sup>:

1990 թվականին ընդունված «Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման» ՄԱԿ-ի հիմնական սկզբունքներն ուրվագծում են ուժի կիրառման հիմնական սկզբունքները, որոնք կիրառելի են ոստիկանության բոլոր ծառայողների նկատմամբ: «Հիմնական սկզբունքները» ընդգծում են, որ ուժի կիրառումը պետք է միշտ լինի ծայրահեղ միջոց՝ ոչ թե նորմ, և այն պետք է լինի համաչափ՝ միտված մարդու կյանքը պաշտպանելուն:

Նախքան հավաքի ընթացքում ուժի կիրառման հարցը դիտարկելը, **ոստիկանությունը պետք է նախ քննարկի դրա անհրաժեշտությունը: Եթե նույն նպատակին հնարավոր է հասնել խաղաղ միջոցներով, ապա հարկ չկա ուժ կիրառել: Երկրորդ, ուժի կիրառման պարագայում հարկ է նկատի առնել դրա համաչափությունը ոստիկանական գործողության օրինական նպատակին հասնելու համար: Երբ հավաքի նկատմամբ ուժ է կիրառվում, ոստիկանության ղեկավարությունը (ռազմավարական, օպերատիվ և մարտավարական մակարդակներում) պետք է կարողանա բացատրել հանրությանը՝ հասարակական կարգի պահպանման ի՞նչ նպատակի են ուզում հասնել (աջակցում, զսպում, շուրջկալում կամ ցրում), և տվյալ հանգամանքներում ինչու՞ է ընտրված մոտեցումն ամենապատշաճ տարբերակը:** Չափազանց կարևոր է նաև, որ պլանավորման և հավաքի սպասարկման ողջ ընթացքում հրամանատարական մակարդակների միջև լինի հաղորդակցություն և երկխոսություն, հատկապես երբ խոսքը ուժի կիրառման մասին է: Ապօրինի հրամանները չպետք է կատարվեն<sup>529</sup>:

<sup>527</sup> Տե՛ս Բույիդն ընդդեմ Բելգիայի (Bouyid v Belgium) գործով 2015 թվականի սեպտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 23380/09: Մուրադովան ընդդեմ Ադրբեյջանի (Muradova v. Azerbaijan) գործով 2009 թվականի ապրիլի 2-ի վճիռը, գանգատ թիվ 22684/05:

<sup>528</sup> Տե՛ս Շամանն և այլք ընդդեմ Վրաստանի և Ռուսաստանի (Shamayev and Others v Georgia and Russia) գործով 2005 թվականի ապրիլի 12-ի վճիռը, գանգատ թիվ 36378/02:

<sup>529</sup> «Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներ» (Հավանա, Հանցագործությունների կանխմանը և իրավախախտների հետ վարվելաձևին նվիրված ՄԱԿ-ի ութերորդ կոնգրես, 1990թ., հասանելի է <https://www.osce.org/hy/odihr/425663?download=true> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Թեև «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը Ոստիկանությանը ֆիզիկական ուժ կամ հատուկ միջոց գործադրելու լիազորություն է վերապահում, սակայն պետք է նկատի ունենալ, որ դա պետք է լինի հետապնդվող նպատակին և կոնկրետ իրավիճակին համաչափ՝ նաև հաշվի առնելով այն ենթադրյալ իրավախախտումը, որի կապակցությամբ ֆիզիկական ուժը կամ հատուկ միջոցը գործադրվում է: Ընդունելով հանդերձ, որ ուժեղ Ոստիկանությունը կարևոր պայման է մարդու իրավունքների երաշխավորման համար՝ հարկ է, սակայն, միաժամանակ նշել, որ **Ոստիկանության ծառայողների գործողությունները չպետք է ուղեկցվեն անձի արժանապատվությունը ոտնահարող գործողություններով: Միանշանակ է, որ իրավախախտում թույլ տված յուրաքանչյուր անձի պատասխանատվության ենթարկելու կապակցությամբ պետական մարմնի գործողությունները պետք է լինեն համաչափ:**

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի 2016 թվականի «Մարդու իրավունքների ձեռնարկ. ոստիկանության գործունեությունը հավաքների ժամանակ» ուղեցույցի համաձայն՝ Ոստիկանության կողմից ուժի կիրառումը պետք է մշտապես լինի բացառություն, այլ ոչ թե նորմ: Նախապատվությունը պետք է միշտ տրվի խաղաղ ճանապարհով լարվածության թուլացմանը՝ որպես ուժի կիրառման այլընտրանք օգտագործելով երկխոսությունը, համոզելը և բանակցելը<sup>530</sup>:

Ուշագրավ է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի դեմ կայացված վճիռներում արձանագրել է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում՝ գտնելով, որ անցկացվող հավաքը ցրելը կատարվել է առանց բավարար հիմնավորման, առանց ցրելու մասին նախազգուշացումների և ուժի չհիմնավորված և անհամաչափ գործադրմամբ: **Դա՝ որպես անհամաչափ միջոց, անցել է ողջամտության այն սահմանները, որը հավաքների ազատությունը սահմանափակելիս կարելի էր ակնկալել իշխանություններից<sup>531</sup>:**

Հետաքրքրական է, որ օրինակ՝ այդ գործերից մեկով դիմումատուին 20.600 եվրոյին համարժեք ՀՀ դրամ գումար վճարելու պարտավորություն է դրվել Հայաստանի վրա: Նշվածի հաշվառմամբ՝ կարծում ենք, որ Հայաստանի դեմ կայացված ՄԻԵԴ վճիռները ևս մեկ ազդակ պետք է լինեն Ոստիկանության համակարգում՝ անձանց վարչական ձերբակալման ենթարկելիս ոչ համաչափ ուժ գործադրելու և սույն հաղորդմամբ բարձրացված մյուս խնդիրների առնչությամբ ձևավորված պրակտիկան օրենսդրական կարգավորումներին խիստ համահունչ դարձնելու համար:

Վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարիների գործունեության արդյունքներն ամփոփող տարեկան հաղորդումներում արտահայտված դիրքորոշումը՝ հարկ է կրկին նշել, որ **վարչական ձերբակալման ենթարկելիս կամ ձերբակալելիս փաստացի արգելանքի վերցնելու կամ որ նույնն է՝ ազատությունից զրկելու սկզբնական փուլերում անձի նվազագույն իրավունքների երաշխավորման, նրա նկատմամբ պատշաճ վերաբերմունքի**

<sup>530</sup> Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/c/6/425663.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>531</sup> Տե՛ս Մուշեղ Սաղաթեյանն ընդդեմ Հայաստանի գործով 2018 թվականի սեպտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 23086/08, կետ 248: Տեր-Պետրոսյանն ընդդեմ Հայաստանի գործով 2019 թվականի ապրիլի 25-ի վճիռը, գանգատ թիվ 36469/08, կետ 64:

**ապահովման հարցերը շարունակում են համակարգային առումով խնդրահարույց մնալ: Պատճառն այն է, որ դրանք չունեն ինստիտուցիոնալ հիմքեր, իսկ օրենսդրությունը չի բովանդակում երաշխիքների պատշաճ կարգավորում:**

Կարևոր է նաև ուժի կիրառման մասին վերադասին հնարավորինս արագ զեկուցելը երաշխավորող արդյունավետ ընթացակարգերի ներդրման հարցը: Բացի այդ, Ոստիկանության համապատասխան ծառայողն իր հերթին պարտավոր է արձանագրել ուժի կիրառման յուրաքանչյուր դեպք: Բոլոր այն դեպքերում, երբ որոշում է կայացվում ուժ կիրառելու մասին, ապա հրամանատարը պետք է իր այդ որոշման հիմնավորումն ու արդյունքն արձանագրի:

Վերոգրյալով հանդերձ՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականի ընթացքում Ոստիկանության կողմից Պաշտպանի աշխատանքները խոչընդոտելու դեպք չի արձանագրվել. պահպանվել է աշխատանքի կարևոր արդյունքներ ապահովող համագործակցությունը երկու կառույցների միջև:

Այսպիսով, 2020 թվականի ընթացքում արձանագրված և վերը նկարագրված խնդիրներն արդիական են դարձնում Պաշտպանի նախկինում արտահայտած և դեռևս չփարատված մտահոգությունները: Ուստի, ավելորդ չենք համարում վերահաստատելու մարդու իրավունքների և իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից սկզբունքային ներքոնշյալ դիրքորոշումները: Այսպես.

- *Խաղաղ հավաքների ազատության երաշխավորումը, ոստիկանության գործողությունների իրավաչափությունն ու մարդու իրավունքների հարգման առաջնային պարտականության անշեղ կատարումը պետության ժողովրդավարության ցուցիչ են:*

- *Հավաքների ազատության իրավունքի իրացման դեպքում առավելագույնս դրսևորվում են ինչպես հասարակական իրավագիտակցությունը՝ իրավունքների իրացման իրավական հնարավորությունները ճիշտ գործադրելու առումով, այնպես էլ պետության՝ ի դեմս հասարակական կարգի պահպանության և պետություն-քաղաքացի անմիջական շփման առաջնային օղակ հանդիսացող Ոստիկանության պարտաստիչությունը՝ ցանկացած իրավիճակում առաջնորդվելու մարդու իրավունքների հարգման հիմնարար գաղափարով, դրսևորելու առավելագույնս հանդուրժողականություն և հարգանք յուրաքանչյուր անձի նկատմամբ, ինչպես նաև յուրաքանչյուր իրավիճակում պահպանելու իր գործողությունների օրինականությունն ու համաչափությունը՝ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմամբ:*

- *Յուրաքանչյուր պաշտոնատար անձ պարտավոր է միշտ հիշել մարդու արժանապատվության անխախտելիության և իրավունքների ու ազատությունների հիմքում ընկած լինելու սահմանադրական բացարձակ կանոնները և պահպանել դրանք իր ամենօրյա աշխատանքում: Այդ կանոնները պետք է դրվեն բոլոր մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների հիմքում:*

- *Պաշտոնատար անձը պարտավոր է քաղաքացու նկատմամբ ցուցաբերել հարգանք և նրա հետ հարաբերություններում լինել հանդուրժող: Միայն այս սկզբունքների պահպանմամբ է*

հնարավոր հասնել ժողովրդավարական երկրում իրավունքների իրական երաշխավորման հաստատումն պրակտիկայի: Այդ պրակտիկան ենթադրում է նաև արդյունավետ պայքար իրավախախտումների դեմ ու դրա հետ միասին՝ պատասխանատվության անխուսափելի ու խիստ միջոցների կիրառում լիազորությունները գերազանցած կամ ապօրինի գործադրած պաշտոնատար անձանց նկատմամբ:

- Ավելի կոնկրետ՝ իրավախախտումը կամ հանրության համար վրանգ ներկայացնող արարքը կանխելու նպատակով պետության իրավասու մարմինների կողմից անձի նկատմամբ ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցի գործադրման ցանկացած դեպք պետք է կոնկրետ իրավիճակի տեսանկյունից լինի պատշաճ հիմնավորված: Այն պետք է լինի անհրաժեշտ և համաչափ՝ կանխելու համար այն իրավախախտումը կամ վրանգը, որն այլ եղանակով հնարավոր չէր անել:

- Պետք է բացառել օրենքով արգելված վերաբերմունքի որևէ դրսևորում պետության կողմից ենթադրյալ իրավախախտում կատարելու մեջ կասկածվող կամ մեղադրվող՝ ազատությունից զրկված ցանկացած անձի նկատմամբ: Այս բացարձակ արգելքը պայմանավորված է նաև այն հիմնարար գաղափարով, որ պետությունը, զրկելով այդ անձին ազատությունից, ստանձնում է նաև նրա երաշխավորված պաշտպանության հանձնառություն: Ուստի, այս բացարձակ կանոնից ցանկացած շեղում պետք է դառնա քրեական վարույթի առարկա<sup>532</sup>:

- անբարեկիրթ, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, իշխանության ներկայացուցչին ոչ վայել և պաշտոնեական կարգավիճակի հետ անհամարեղելի ցանկացած վարքագծի բնագավառում:

## **5. Հավաքների մասնակիցներին ազատությունից զրկելու ընթացակարգերի իրավաչափ նպատակի չպահպանումը**

2021 թվականի ընթացքում կազմակերպված հավաքների ընդհանուր դիտարկման շրջանակներում խնդրի մեկ այլ դրսևորում է արձանագրվել, երբ անձը վարչական ձերբակալման է ենթարկվում իբրև հավաքի մասնակից այն պարագայում, երբ վերջինս պնդում է, որ հավաքի մասնակից չի եղել: Ընթացիկ տարում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների արդյունքներով վեր հանված խնդիրների ընդհանուր դիտարկումը ցույց է տալիս, որ անձանց վարչական ձերբակալման ենթարկելը հիմնականում կազմակերպված հավաքը կամ ցույցը ցրելու նպատակ է հետապնդել: Ընդ որում՝ նման եզրահանգումը հիմնված է մի շարք հանգամանքների համադրման և հետևյալ օրինակների դիտարկման վրա:

<sup>532</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ 2016 թվականի հուլիսյան իրադարձությունների վերաբերյալ արտահերթ հրապարակային զեկույցը, էջեր 60-67. Հասանելի է <http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/e014052ce8bdca5513f5a7d68deb6224.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Այսպես, անձանց վարչական ձերբակալման ենթարկելու միջոցով կազմակերպված հավաքները կամ ցույցերը ցրելու նպատակ հետապնդելու վերաբերյալ մտահոգություններն առաջանում են այն բանի հաշվառմամբ, որ օրինակ՝ վարչական ձերբակալման է ենթարկվել 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Երևանի քաղաքապետարանի մոտ իրականացվող բողոքի ակցիային հեռվից հետևող անձ, ով հավաքին որևէ մասնակցություն չի ունեցել, այլ պարզապես Քաղաքապետարանի վարչական շենքի դիմացի մայթեզրին կանգնած դիտարկել է տեղի ունեցածը: Անձանց վարչական ձերբակալման ենթարկելու նպատակի իրավաչափությունը կասկածի տակ դնող դեպքեր են արձանագրվել նաև 2021 թվականի հունվարի 28-ին, փետրվարի 23-ին, մարտի 10-ին և 26-ին, ապրիլի 7-ին և 21-ին, հունիսի 10-ին, սեպտեմբերի 14-ին և 21-ին, նոյեմբերի 22-ին և 26-ին, դեկտեմբերի 8-ին և 10-ին վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ տեղի ունեցած առանձնազրույցների ընթացքում:

Այսպես, դեպքերից մեկով անձը վարչական ձերբակալման է ենթարկվել բողոքի ակցիայի իրականացման վայրում իր ավտոմեքենայով երթևեկելիս: Արձանագրվել են դեպքեր, երբ անձինք վարչական ձերբակալման են ենթարկվել կատարվող իրադարձությունները սուկ տեսանկարահանելու հիմքով: Բողոքի ակցիաների որոշ մասնակիցներ էլ վարչական ձերբակալման են ենթարկվել այն բանից հետո, երբ հայտարարել են բողոքի ակցիայի իրականացման վայրից հեռանալ պատրաստվելու մասին:

Վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկն էլ բողոքի ակցիայի իրականացման ժամանակ անկողնային վիճակում է գտնվել՝ ամենայն հավանականությամբ նոր կորոնավիրուսային վարակի ախտանիշներով, ուստի օբյեկտիվորեն չէր կարող որևէ կերպ մասնակցություն ունենալ իրականացված բողոքի ակցիային: Չնայած այդ հանգամանքին՝ անձը, միևնույն է, բողոքի ակցիայի ավարտից հետո վարչական ձերբակալման է ենթարկվել Քննչական կոմիտե: Մեկ այլ դեպքում վարչական ձերբակալման է ենթարկվել բողոքի ակցիայի իրականացման վայրում գտնվող անձ, ով պարզապես փորձել է իրավիճակը հանդարտեցնել: Դեպքերից մեկով էլ անձը վարչական ձերբակալման է ենթարկվել նրա համար, որ փորձել է Ոստիկանության ծառայողներից պարզել, թե ինչու են իր հորը տանից վարչական ձերբակալման ենթարկում՝ թույլ չտալով անգամ հողաթափերը փոխել և կոշիկ հագնել:

Ընթացիկ տարում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում արձանագրվել է նաև մի պրակտիկա, երբ անձինք վարչական ձերբակալման են ենթարկվել՝ դեռ ենթադրյալ հավաքը կամ ցույցը չսկսված: Այսպես, դեպքերից մեկով այգում նստած անձինք հեռախոսով ուղիղ եթեր են մտել, երբ իրենց են մոտեցել Ոստիկանության ծառայողներ, նշել, որ խոչընդոտում են պետական արարողակարգի իրականացմանը և վարչական ձերբակալման ենթարկել Ոստիկանության բաժին: Պաշտպանի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկը տեղեկացրել է, որ Ոստիկանության տրանսպորտային միջոցում գտնվելու ընթացքում Ոստիկանության ծառայողներից մեկը նշել է, որ պարզապես հրաման են կատարել և կանխել են նրանց հնարավոր ոչ իրավաչափ գործողությունները, քանի որ նրանք նախկինում բազմիցս անհնազանդության ակցիաներ են իրականացրել:

2021 թվականի մարտի 10-ին տեղեկատվության հրապարակային աղբյուրներով տարածված տեսանյութերի ուսումնասիրությամբ էլ պարզ է դարձել, որ քաղաքացիները վարչական ձերբակալման են ենթարկվել այն ժամանակ, երբ անհամաձայնության ակցիան արդեն ավարտված է եղել:

Վարչական ձերբակալման ենթարկվածների թվում են եղել անգամ փաստաբաններ, ովքեր հավաքների անցկացման վայրում են գտնվել ի պաշտոնե՝ որպես փաստաբաններ փաստաբանական գործունեություն իրականացնելու և իրենց պաշտպանյալների շահերը պաշտպանելու նպատակով: Այսինքն՝ ակնհայտ է, որ հավաքի անցկացման վայրում նրանց ներկայությունը հավաքին մասնակցելու նպատակ չի հետապնդել: Ավելին, փաստաբաններից մեկը Ոստիկանության բաժնում է միայն տեղեկացել, որ ինքը ևս վարչական ձերբակալման է ենթարկվել, մինչդեռ իր պաշտպանյալի թույլտվությամբ վերջինիս ձերբակալման ժամանակ որպես նրա փաստաբան պարզապես վերջինիս ուղեկցել է դեպի Ոստիկանության համապատասխան բաժին:

2021 թվականի փետրվարի 23-ին Երևան քաղաքում տեղի ունեցած բողոքի ակցիաների դիտարկման արդյունքում վարչական ձերբակալման ենթարկված անձանցից տեղեկություն է ստացվել այն մասին, որ Ոստիկանության ծառայողները բողոքի ակցիայի մասնակիցներին հորդորել են բացել ճանապարհի երթևեկելի հատվածը, Ոստիկանության այդ պահանջը թեև անմիջապես կատարվել է և ակցիան շարունակվել է իրականացվել մայթին, այնուամենայնիվ անձինք վարչական ձերբակալման են ենթարկվել:

Դիտարկված որոշ դեպքերում Ոստիկանության ծառայողները ձևականորեն ժամանակ են տրամադրել անձանց բողոքի ակցիան դադարեցնելու համար, սակայն չսպասելով տրված ժամկետի ավարտին (որոշ դեպքերում՝ դրանից անմիջապես հետո)՝ նրանց վարչական ձերբակալման են ենթարկել: Այս պրակտիկայի առնչությամբ հարկ է նշել, որ «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ հավաքի ղեկավարի բացակայության կամ հավաքի ղեկավարի կողմից ոստիկանության պահանջը չկատարելու դեպքերում ոստիկանության ներկայացուցիչը ոչ պակաս, քան երկու անգամ բարձրախոսով մասնակիցներից պահանջում է դադարեցնել հավաքը՝ **սահմանելով ողջամիտ ժամկետ**: Միաժամանակ ոստիկանության ներկայացուցիչը հավաքի մասնակիցներին նախազգուշացնում է **սահմանված ժամկետում** հավաքը կամովին չդադարեցնելու դեպքում հավաքը ցրելու, ներառյալ՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատուկ միջոցներ կիրառելու իր լիազորության մասին:

Պետք է նկատի ունենալ, որ հավաքը դադարեցնելու համար հավաքի մասնակիցներին ողջամիտ ժամկետ տրամադրելը և այդ ժամկետում հավաքը չդադարեցվելու դեպքում հավաքը ցրելուն ուղղված գործողություններ ձեռնարկելու օրենսդրական պահանջն ինքնանպատակ չէ, թեև Ոստիկանությունում ձևավորված պրակտիկան ակնհայտորեն հակասում և առարկայազուրկ է դարձնում օրենսդրական այդ պահանջը:

Վերոգրյալից բացի՝ 2021 թվականի ընթացքում հավաքի անցկացման վայրից անձանց վարչական ձերբակալման ենթարկելու և վարչական իրավախախտման վարույթն ավարտին

հասցնելու քանակական տվյալների համադրումը ցույց է տալիս, որ վարչական իրավախախտման վարույթները, որպես կանոն, սահմանափակվել են անձանց ազատությունից զրկելով:

Այսպես, Ոստիկանության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականին անցկացված հավաքների ընթացքում ոստիկանության բաժիններ են բերվել կամ բերման ենթարկվել 1376 անձ, (որոնցից՝ ռազմական դրությամբ պայմանավորված սահմանափակումների ժամանակահատվածում՝ 27 անձ): Նշված անձանցից 13-ը՝ քրեական (ռազմական դրությամբ պայմանավորված՝ 8, քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու կասկածանքով՝ 5), 1363-ը՝ վարչական (<< ՎԻՎ օրենսգրքի 180-րդ և 182-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտում կատարելու կասկածանքով): << վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված՝ Ոստիկանության զորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու կասկածանքով ոստիկանության բաժիններ են բերվել 321 անձ: Նախաձեռնված վարույթներից 303-ը կարճվել են՝ ապացույցների բավարար չլինելու հանգամանքով, իսկ 18-ի արդյունքում հայցադիմում է ներկայացվել << վարչական դատարան, որոնցով դեռևս ուժի մեջ մտած դատական ակտեր առկա չեն:

Ստացվում է, որ 2021 թվականի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված 1363 անձից միայն 18-ի գործով է հայցադիմում ներկայացվել դատարան: Թվային այս ցուցիչն ինքնին կասկածի տակ է դնում անձանց ազատությունից զրկելու նպատակի իրավաչափությունը: Հարկ է նկատի ունենալ, որ վարչական իրավախախտումը հիմնավորող փաստական և իրավական հիմքերի բավարար լինելու գնահատումը պետք է իրականացվի անձանց վարչական ձերբակալման ենթարկելու փուլում, ոչ թե դատարան հայցադիմում ներկայացնելու հարցը քննարկելիս: Ասվածն, իհարկե, չի նշանակում, թե անձին վարչական ձերբակալման ենթարկելուց հետո Ոստիկանությունը պարտավոր է անպայման նրան վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմում ներկայացնել Վարչական դատարան: Ընդհակառակը, խնդրին պետք է մոտենալ հակառակ տեսանկյունից և բացառել անձանց անհիմն կերպով վարչական ձերբակալման ենթարկելու յուրաքանչյուր դեպք:

Քննարկվող հարցի համատեքստում տեղին է անդրադառնալ Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 182-րդ հոդվածով նախատեսված զանցակազմի օրենսդրական բնորոշմանը և գործնականում դրա կիրառության հետ կապված խնդիրներին: Այսպես, Օրենսգրքի 182-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է նախատեսում հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության պարտականությունները կատարելու ընթացքում ոստիկանության զորքերի զինձառայողի կամ ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար:

Սահմանադրական դատարանն իր 2016 թվականի հուլիսի 8-ի թիվ ՍԴՈ-1291 որոշմամբ նախանշել է քննարկվող հոդվածի կիրառության շրջանակները: Դատարանի դիրքորոշմամբ՝ «օրինական պահանջ» եզրույթն ընդգրկում է փոխկապակցված հետևյալ բաղադրատարրերը.

ա) պահանջը պետք է ներկայացվի իրավասու սուբյեկտի, կոնկրետ դեպքում՝ ոստիկանության զորքերի զինձառայողի, ոստիկանության ծառայողի կողմից,

բ) իրավասու սուբյեկտի կողմից ներկայացվող պահանջը պետք է ունենա համապատասխան իրավական հիմք, այսինքն՝ իրավասու սուբյեկտի հանրային-իրավական վարքագիծը պետք է բխի իր լիազորություններից, կոնկրետ դեպքում՝ հասարակական կարգի պահպանության, հասարակական անվտանգության ապահովման, օբյեկտների պահպանության ոստիկանության գործերի զինծառայողի, ոստիկանության ծառայողի լիազորություններից:

Ոստիկանության ծառայողի ներկայացրած պահանջի օրինականությունն ու առհասարակ անձանց ազատությունից զրկելու ընթացակարգերի նպատակի իրավաչափությունն անհրաժեշտ է դիտարկել նաև այդ պահանջների հասցեատերերի սուբյեկտային կազմի հետ համադրությամբ: Այսպես, «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասը հավաքի մասնակից է համարում այն անձին, որը հավաքի անցկացման ժամանակ **գտնվում է հավաքի վայրում հավաքին մասնակցելու նպատակով**: Նորմատիվ իրավական ակտի տառացի մեկնաբանման կանոնից ակնհայտորեն հետևում է, որ անձը հավաքի մասնակից դիտարկվելու համար պետք է հավաքի վայրում գտնվի հենց հավաքին մասնակցելու հստակ նպատակով: Ընդ որում՝ հավաքին մասնակցելու նպատակը պետք է բացահայտվի անձի՝ հավաքին մասնակցություն ենթադրող գործողություններից: Այսինքն՝ առանց նման նպատակի հավաքի վայրում սուկ գտնվելու փաստն անձին ինքնաբերաբար չի դարձնում հավաքի մասնակից՝ իր բոլոր իրավական հետևանքներով: Այդպես լինի՝ հավաքի անցկացման վայրի տարածքում գտնվող կամ այդ տարածքով պարզապես անցնող յուրաքանչյուր անձ կարող է որպես հավաքի մասնակից դիտարկվել և վարչական ձերբակալման ենթարկվել Ոստիկանության տարբեր ստորաբաժանումներ՝ իրականում նվազագույն իսկ առնչություն չունենալով կազմակերպված հավաքին կամ բողոքի ակցիաներին:

Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում որպես «հավաքի մասնակից» դիտարկված և Ոստիկանության բաժիններ վարչական ձերբակալման ենթարկված անձանցից շատերն են նշել և վերը բերված կոնկրետ օրինակներով էլ կարելի է համոզվել, որ շատերն իրականում որևէ մասնակցություն չեն ունեցել կազմակերպված հավաքին, նրանք հավաքի կազմակերպման վայրում են գտնվել այլ՝ հավաքին մասնակցություն չենթադրող նպատակով (փողոցն անցնելիս են եղել, մայթեզրին կանգնած պարզապես հետևել են տեղի ունեցող իրադարձություններին, փորձել են բախումները հանդարտեցնել, իրենց վստահորդի կողքին են գտնվել որպես նրանց փաստաբան և այլն): Ակնհայտ է, որ այդ քաղաքացիները «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի իմաստով չէին կարող և չպետք է դիտարկվեին որպես հավաքի մասնակից: Փաստորեն, այդ անձանց վարչական ձերբակալման ենթարկելը որևէ իրավաչափ հիմք չի ունեցել:

Ստացվում է, որ բերված օրինակներում անձինք վարչական ձերբակալման են ենթարկվել ոչ թե հակաօրինական որևէ արարք կատարելու համար, այլ սուկ այն պատճառով, որ հավաքի անցկացման պահին գտնվել են հավաքի անցկացման վայրում: Հարցին Հայաստանի դեմ կայացված վճիռներից մեկում անդրադարձել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով, որ խաղաղ հավաքների ազատության իրավունքի էությանը վնաս կհասցվի, եթե պետությունը, չարգելելով հանրահավաքը, այնուամենայնիվ պատժամիջոցներ կիրառի դրա մասնակիցների նկատմամբ **սուկ հանրահավաքին գալու համար**, երբ չի կատարվել որևէ



դատապարտելի արարք: Այդ գործով Եվրոպական դատարանն արձանագրել է Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում<sup>533</sup>:

Նշվածից բացի, Եվրոպական դատարանը Հայաստանի դեմ կայացված վճիռներով եկել է այն եզրահանգման, որ դիմումատուների դեմ հարուցված վարչական վարույթը և դրան հետևող կալանավորումը հանդիսացել է միջոցառում, որը նպատակ է ունեցել կանխելու կամ խափանելու դիմումատուների մասնակցությունը ցույցերին: Դատարանը գտել է, որ տեղի է ունեցել միջամտություն դիմումատուների խաղաղ հավաքների իրավունքին՝ արձանագրելով Կոնվենցիայի 11-րդ հոդվածի խախտում<sup>534</sup>:

Մեր համոզմամբ՝ Ոստիկանության ծառայողի ներկայացրած պահանջի օրինականությունը պետք է կանխորոշվի ոչ միայն իշխանության ներկայացուցչի լիազորությունների հետ կապի առկայության հավաստմամբ, այլև նման պահանջի բովանդակությամբ, այսինքն՝ որքանով է անձին ներկայացված պահանջն ուղղված, մասնավորապես, հասարակական կարգը խախտող վարքագիծը դադարեցնելուն կամ հասարակական կարգը պահպանող վարքագիծ ապահովելուն:

**Մինչդեռ, ինչպես նախորդ տարիների, այնպես էլ 2021 թվականին իրականացված հավաքների մշտադիտարկումները վկայում են, որ խնդիրը շատ դեպքերում ոչ միայն անձանց ազատությունից զրկելիս իրավական հիմքերի չներկայացնելն է, այլև առհասարակ նման հիմքի՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով ամրագրված զանցակազմի առկայությունը՝ Սահմանադրական դատարանի առաջ քաշած պայմանների հավաստմամբ:**

***Վերոգրյալի հաշվառմամբ՝ Ոստիկանությունում ձևավորված պրակտիկան անհրաժեշտ է համապատասխանեցնել «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի կարգավորումներին այն առումով, որ գործնականում բացառվեն Օրենքի իմաստով հավաքի մասնակից չհանդիսացող անձանց Ոստիկանության բաժիններ վարչական ձերբակալման ենթարկելու բոլոր հնարավոր դեպքերը:***

**6. Հավաքների ազատության երաշխավորման հարցում ռազմավարական փոփոխությունների անհրաժեշտությունը, իրավունքահեն մոտեցումը և մարդու իրավունքների կրթության առանցքային դերը հավաքների ազատության երաշխավորման ոստիկանական պրակտիկայում**

<sup>533</sup> Տե՛ս Գալստյանն ընդդեմ Հայաստանի (Galstyan v. Armenia) գործով 2008 թվականի փետրվարի 15-ի վճիռը, գանգատ թիվ 26986/03, կետ 117:

<sup>534</sup> Տե՛ս Սմբատ Այվազյանն ընդդեմ Հայաստանի գործով 2021 թվականի հունվարի 8-ի վճիռը, գանգատ թիվ 49021/08, կետ 121: Հակոբյանը և այլոք ընդդեմ Հայաստանի գործով 2012 թվականի հուլիսի 10-ի վճիռը, գանգատ թիվ 34320/04, կետ 99: Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով 2013 թվականի հունվարի 2-ի վճիռը, գանգատ թիվ 40094/05, կետ 210:

Հավաքների ազատության երաշխավորման հարցում ռազմավարական և իրավունքահեն մոտեցման ամրագրման հրամայականը բխում է արձանագրված խնդիրների շարունակականությունից և ինստիտուցիոնալ լուծումների անհրաժեշտությունից:

**Հավաքների ընթացքում ոստիկանական գործունեության իրավունքահեն մոտեցումը ենթադրում է, որ պետությունը պետք է ընկալի այս հարցում իր՝ որպես հավաքների ազատության իրավունքի իրացմանը նպաստողի առաջնահերթ դերակատարությունը: Հարկադրանք ու իրավունքին միջամտություն ենթադրող գործողությունները թերևս պետք է բխեն հենց այդ խաղաղ հավաքների երաշխավորման տրամաբանությունից:**

Ասվածը հիմք է տալիս արձանագրելու, որ հավաքների ազատության թեմայով թիրախային և շարունակական դասընթացներն ու վերապատրաստումները պետք է դիտարկվեն որպես ոլորտի բարեփոխման կարևորագույն ուղղություն:

Այս ուղղությամբ ձեռնարկված քայլերի առումով հարկ է նկատել, որ Ոստիկանության գրավոր պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության ծառայողների համար մարդու իրավունքների ապահովման վերաբերյալ ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնում անցկացվել են վերապատրաստման դասընթացներ (72 դասաժամ) հետևյալ թեմաներով՝ Մարդու կյանքի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական բնութագիրը, Մարդու իրավունքների հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եվրոպայի խորհուրդը և մարդու իրավունքների պաշտպանությունը, Ոստիկանությունը և մարդու իրավունքները, Կանանց և տղամարդկանց իրավահավասարության և երեխաների իրավունքների վերաբերյալ ներպետական և միջազգային իրավական փաստաթղթերը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտման կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության վերաբերյալ կայացված վճիռները, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները ՀՀ ոստիկանության գործունեության մեջ, Մարդու իրավունքները և ոստիկանությունը, Պացիենտի իրավունքների պաշտպանության իրավական երաշխիքները, Մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերը ոստիկանության գործունեության համատեքստում, Մարդու և քաղաքացու անձնական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներն ու ազատությունները, Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը ոստիկանության ծառայողների կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս:

Վերապատրաստումների կարևորությանն անդրադարձել է նաև ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեն (CAT)՝ Հայաստանին կոչ անելով ապահովել իրավապահ մարմինների պարբերաբար վերապատրաստումն ուժի կիրառման վերաբերյալ, հատկապես ցույցերի, ամբոխի վերահսկման և ոչ բռնի միջոցների կիրառման համատեքստում<sup>535</sup>:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատվել է մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-2022

<sup>535</sup> Հասանելի է <https://www.rightofassembly.info/country/armenia> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

թվականների գործողությունների ծրագիրը: Նույն որոշմամբ հաստատված հավելված 2-ի 56-58-րդ կետերն են վերաբերել հավաքներին: Ընդ որում, ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի թիվ 1030-Լ որոշմամբ նշված կետերը նոր խմբագրությամբ են շարադրվել: Մասնավորապես, հավելվածի 56-րդ կետով նախատեսված «Փոփոխություններ կատարել «Հավաքների ազատության մասին» օրենքում՝ միջազգային չափանիշներին համապատասխան» գործողությունը փոխարինվել է ««Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված և միջազգային չափանիշներին համապատասխան գործելակերպերի բարելավում» գործողությամբ, 57-րդ կետով նախատեսված «Վերապատրաստումներ իրականացնել հավաքների ազատության թեմայով՝ միջազգային չափանիշների վերաբերյալ» գործողությունը լրացվել է «Վերանայել ՀՀ ոստիկանության կրթահամալիրի հավաքների ազատության թեմայով վերապատրաստման ծրագրերը միջազգային չափորոշիչներին համապատասխան» գործողությունով: Ընդ որում՝ նախատեսվել է վերապատրաստել ոստիկանների 24%-ը: Մինչդեռ, մարդու իրավունքների ազգային ռազմավարության e-rights.am հարթակում այդ ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրով 2021 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվության ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ Ոստիկանության կողմից հավաքների մասնակիցների իրավունքների խախտման դեպքերը նվազեցնելու նպատակ հետապնդող վերոնշյալ 57-րդ կետով նախատեսված գործողությունը կատարվել է մասամբ (ընդհանուր առմամբ վերապատրաստվել է ոստիկանության 119 ծառայող)<sup>536</sup>:

Գործողությունների ծրագրի 58-րդ կետով որպես ռազմավարությունից բխող գործողություն նախատեսվել է օրենսդրորեն սահմանել հավաքների հետ կապված ՀՀ ոստիկանության գործողությունների կարգը և պայմանները՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Մինչդեռ որպես այդ գործողության կատարման վերջնաժամկետ սահմանվել է 2022 թվականի առաջին կիսամյակը, ուստի այդ գործողության կատարման վերաբերյալ հաշվետվություն դեռ առկա չէ:

*Ուստի, կարևոր է կրթական միջոցառումների շարունակականության ապահովումը ինչպես ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների շրջանակներում, այնպես էլ իբրև ոստիկանական պրակտիկայի շարունակական կատարելագործման մշտական գործընթացի մաս՝ ապահովելով ոստիկանության բոլոր պատասխանատու ծառայողների ներգրավվածությունն այդ դասընթացներում:*

## **7. Հավաքների իրականացման ընթացքում առանց պարշաճ համազգեստի կամ փարբերանշանի Ոստիկանության ծառայողների կողմից անձանց վարչական ձերբակալման ենթարկելու կամ ձերբակալելու խնդրահարույց պրակտիկան**

<sup>536</sup> Հասանելի է [http://www.e-rights.am/file.php?class\\_name=company\\_document\\_file&file\\_uniq\\_id=4448610bd359774646280&size\\_mode=1](http://www.e-rights.am/file.php?class_name=company_document_file&file_uniq_id=4448610bd359774646280&size_mode=1) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

2021 թվականի ընթացքում ևս արձանագրվել են Ոստիկանության գործողությունների այնպիսի ոչ իրավաչափ դրսևորումներ, ինչպիսիք են՝ անձանց վարչական ձերբակալման ենթարկելը Ոստիկանության ծառայողների կողմից՝ առանց համազգեստի կամ տարբերանշանի:

2021 թվականին խնդրի կապակցությամբ մի քանի բողոքներ են ստացվել, որոնցից մեկի համաձայն՝ ապրիլի 22-ի երեկոյան Գլխավոր դատախազության վարչական շենքի դիմաց տեղի ունեցած հավաքի անցկացման վայրից հեռանալուց հետո անձը նկատել է, որ իրեն քաղաքացիական հագուստով անձինք են հետևում, ովքեր էլ նրան վարչական ձերբակալման են ենթարկել: Մեկ այլ դեպքում 2021 թվականի հունիսի 10-ին ՀՀ կառավարության վարչական շենքի հարակից տարածքում բողոքի ակցիա իրականացնող և վարչական ձերբակալման ենթարկված անձանցից մեկը տեղեկացրել է, որ իրեն վարչական ձերբակալման ենթարկած ծառայողները եղել են Ոստիկանության դաշտային համազգեստով, իսկ մեկ այլ դեպքի ուսումնասիրությամբ էլ պարզ է դարձել, որ 2021 թվականի հունվարի 28-ին ՀՀ կառավարության շենքի դիմացից Ոստիկանության ԵԲՎ էրեբունու բաժին վարչական ձերբակալման ենթարկված անձին արդեն Ոստիկանության բաժնում մոտեցել է քաղաքացիական սևազգեստ հագուստով տղամարդ, ով փորձել է պարզել նրա կողմից հավաք իրականացնելու պատճառները: Ընդ որում՝ վարչական ձերբակալման ենթարկված անձը քրեական հետախուզության վարչության մասնաշենք է տեղափոխվել կրկին քաղաքացիական հագուստով անձանց կողմից:

Խնդրի կապակցությամբ կարևոր է նշել, որ հանրային վայրում տեղի ունեցող քաղաքացիական ակցիան կամ խաղաղ հավաքը դադարեցնելու կամ մարդկանց վարչական ձերբակալման ենթարկելու համար Ոստիկանության այնպիսի ծառայողների ներգրավումը, ովքեր չեն կրում պատշաճ համազգեստ կամ տարբերանշան, պետք է խստորեն բացառվի: Դա, նախևառաջ, անհրաժեշտ է, որ հավաքների ընթացքում Ոստիկանության ծառայողներին հնարավոր լինի անհատապես նույնականացնել և հստակ տարանջատել քաղաքացիական բնակչությունից:

Սա պետք է լինի Ոստիկանության պրակտիկայի բարելավման առաջնահերթ հարցերից մեկը, որպեսզի Ոստիկանության ծառայողն ինքը գիտակցի և հասկանա, թե որքան կարևոր է պատշաճ համազգեստի և տարբերանշանի կրումը քաղաքացու հետ անմիջական շփման, այդ թվում՝ վերջինիս իրավունքները սահմանափակելիս: Պետք է նկատի ունենալ, որ ոստիկանի՝ որպես իշխանության ներկայացուցչի անհատականացումն ու նրա կարգավիճակի ճիշտ ընկալումն ինքնանպատակ չէ. դրանով միաժամանակ ապահովվում է գործընթացի լեգիտիմությունը, մյուս կողմից էլ այն կարևոր է ձերբակալվող անձի սուբյեկտիվ ընկալման տեսանկյունից, որպեսզի վերջինիս մոտ կասկած չառաջանա իրեն ձերբակալող անձի գործողությունների օրինականության հարցի շուրջ:

Ոստիկանությունը պետք է գործի այնպես, որ ապահովված լինի իր գործողությունների կանխատեսելիությունը և որոշակիությունը հավաքի կամ քաղաքացիական որևէ այլ ակցիայի մասնակիցների համար:

Անձին ազատությունից զրկելու և դրա հետագա գործընթացներում ոչ պատշաճ համազգեստով ծառայողի ներգրավումն էլ ավելի է բարձրացնում այդ գործողությունների նկատմամբ պետական խիստ վերահսկելիության, հնարավոր չարաշահումների, ազատությունից զրկվածի նկատմամբ

վատ վերաբերմունքի կանխարգելման և բոլոր բացասական հետևանքները կրելու պետության բեռը: Այն միաժամանակ չի նվազեցնում ազատությունից զրկվածի իրավունքները և ընթացակարգային երաշխիքներն ապահովելու պետության պարտավորվածությունը:

Խնդրի կապակցությամբ հատկանշական են Խաղաղ հավաքների վերաբերյալ ԵԱՀԿ (ԺՄԻՀԳ) ուղեցույցում տեղ գտած դիրքորոշումները, որոնց համաձայն՝ հավաքների ընթացքում ոստիկանական պրակտիկայի ընդհանուր սկզբունքներից է, որ իրավակիրառ մարմնի ծառայողներին հնարավոր լինի **հստակորեն և անհատապես նույնականացնել**: Համազգեստ կրող ծառայողները պետք է անհատականացնող որևէ բան ցուցադրեն կամ կրեն (օրինակ՝ ազգանվամբ կամ համարանիշով ցուցանակ) և չպետք է անհատականացնող այդ տեղեկությունը հեռացնեն կամ ծածկեն կամ խոչընդոտեն հավաքների ընթացքում այլ անձանց համար դրա հասանելիությանը: Պատշաճ համազգեստը կարևոր է հանրությանը ճիշտ ուղերձ հղելու համար: Բոլոր համազգեստները և սաղավարտները պետք է պարունակեն ոստիկանության ծառայողի ծառայողական համարանիշ՝ ծառայողի ոչ իրավաչափ գործողությունների դեպքում վերջինիս անհատականացնելու, ինչպես նաև բարեկեցության, բժշկական օգնության կամ հրահանգավորման նկատառումներից ելնելով:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է Ոստիկանության պրակտիկայից իսպառ բացառել առանց համազգեստի կամ տարբերանշանի Ոստիկանության ծառայողների կողմից անձանց վարչական ձերբակալման ենթարկելու հնարավոր դեպքերը:*

## **8. Վարչական ձերբակալման կամ բերման ենթարկելու շրջանակներում անձանց լուսանկարելու իրավաչափությունը**

Վարչական ձերբակալման ենթարկված անձանց օրենսդրության խախտմամբ լուսանկարելը մտահոգիչ և խնդրահարույց է ազատությունից զրկված այդ անձանց իրավունքների երաշխավորման տեսանկյունից: Խնդիրը բարձրացվել է նաև 2021 թվականի ընթացքում վարչական ձերբակալման ենթարկված անձանց հետ առանձնազրույցների ընթացքում:

Այսպես, դեպքերից մեկով անձանց վարչական ձերբակալման ենթարկելուց առաջ Ոստիկանության ծառայողները հեռախոսներով նրանց նկարահանել են վարչական ձերբակալման ենթարկվող անձանց ինքնության մեջ հավաստիանալու նպատակով: Մեկ այլ դեպքով էլ Ոստիկանության բաժնում անձի նկատմամբ բռնություն է գործադրվել, Ոստիկանության ծառայողները նրան տարել են աշխատասենյակ, զցել գետնին և ոտքերով հարվածել, որից հետո գետնին զցած վիճակում քարշ են տվել մեկ սենյակից մյուսը և տեսանկարել այս ողջ գործընթացը:

Ոստիկանության ծառայողի կողմից վարչական ձերբակալման ենթարկված անձին լուսանկարելու հարցը կարգավորված է «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով, որի կարգավորումների համաձայն՝ հանցագործությունները կանխելիս կամ բացահայտելիս, հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները կարող են օգտագործել *շարժական տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցներ*: Ընդ

որում, պետք է նկատի ունենալ, որ վերջին դեպքում խոսքը ոստիկանության ծառայողի համազգեստին ամրացվող կամ նրա ձեռքում կամ ոստիկանության ծառայողական տրանսպորտային միջոցում գտնվող տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցին է վերաբերում: Ընդ որում, նույն հոդվածում հատուկ շեշտված է, որ տեսաձայնագրումը, տեսանկարահանումը և լուսանկարահանումն իրականացվում են **միայն ծառայողական (ոչ անձնական) տեխնիկական միջոցներով:**

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը՝ որպես հասարակական կարգը պահպանելիս ոստիկանության կողմից ձեռնարկվելիք թույլատրելի գործողություն, լուսանկարելը հնարավոր է համարում 2 դեպքում. միայն հանրային վայրերում կամ ոստիկանության ծառայողի համազգեստին ամրացվող կամ նրա ձեռքում կամ ոստիկանության ծառայողական տրանսպորտային միջոցում գտնվող տեսաձայնագրող կամ լուսանկարահանող տեխնիկական միջոցով (ընդ որում՝ ոչ անձնական) լուսանկարահանում իրականացնելու դեպքում:

Փաստորեն, Ոստիկանության ծառայողի անձնական տեխնիկական միջոցներով (ներկայացված դեպքում՝ հեռախոսով) վարչական ձերբակալման ենթարկված անձանց մինչև վարչական ձերբակալման ենթարկելը չունի որևէ իրավական հիմք, ընդ որում՝ հաշվի առնելով նաև այն փաստը, որ այդ անձինք չեն տեղեկացվել իրենց լուսանկարելուց հրաժարվելու հնարավորության մասին: Որևէ իրավական հիմք չի կարող ունենալ նաև անձի նկատմամբ կիրառվող բռնության տեսարանները տեսանկարելը: Ավելին, անգամ ձերբակալված անձի համաձայնության գործոնը որոշիչ չէ, քանի որ Ոստիկանության ծառայողը չունի օրենսդրական հիմք նման գործողություններ կատարելու համար, քանի որ դա Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով չնախատեսված ընթացակարգ է:

Ձերբակալված անձանց լուսանկարելու ընթացակարգ ՎԻՎ ՀՀ օրենսգրքով առհասարակ նախատեսված չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նշել, որ պարզ չէ, թե ինչ իրավաչափ նպատակի է ծառայում կոնկրետ քննարկվող իրավիճակում ազատությունից զրկված անձանց՝ լուսանկարվելուց հրաժարվելու իրենց իրավունքի մասին չիրազեկելը: Հարցն ավելի զգայուն է այն բանի հաշվառմամբ, որ տվյալ դեպքում խոսքն ազատությունից զրկված և այդպիսով իր իրավունքներն ինքնուրույն իրացնելու սահմանափակ հնարավորություն ունեցող անձի մասին է, ով ենթադրաբար առաջնորդվում է իշխանության ներկայացուցչի գործողությունների՝ օրենքից բխելու և դրանց պարտադիրության կանխավարկածով:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ Ոստիկանության ծառայողների՝ օրենսդրական գործող կարգավորումներին համապատասխան վարքագիծ ապահովելու նպատակով անհրաժեշտ է բացառել օրենսդրական հիմքեր չունեցող գործողությունների իրականացման (օրինակ՝ լուսանկարահանման) պրակտիկական և ուժեղացնել հսկողությունը նրանց նկատմամբ:*

## **8. Հավաքներին երեխաների մասնակցության իրավաչափության դիրարկումը երեխայի լավագույն շահի ապահովման տեսանկյունից**

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներով<sup>537</sup> բարձրացրել է երեխաների՝ հավաքների ազատության իրական երաշխավորման և վերջիններիս գիտակցված մասնակցության ապահովման խնդիրը: Այդ խնդիրն արդիական է մնացել նաև 2021 թվականի ընթացքում:

Այսպես, խիստ մտահոգիչ է 2021 թվականի ընթացքում նախընտրական քարոզարշավների ընթացքում երեխաների մասնակցությունն այն հավաքներին, որտեղ հնչում են ատելություն ու վիրավորանք, բռնության հետ ասոցացվող խոսքեր: Եղել են նաև երեխայի ներկայությամբ հրապարակայնորեն հայհոյանքի խոսքեր հնչեցնելու դեպքեր:

Խնդրի կարևորությունը հաշվի առնելով՝ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես եկավ հրապարակային հայտարարությամբ<sup>538</sup>՝ անընդունելի համարելով երեխաների մասնակցությամբ նախընտրական քարոզարշավին նման կոչեր անելը՝ դրանով երեխաների համար ևս ստեղծելով ատելության մթնոլորտ: Երեխաներն այս հարցերի նկատմամբ առավել խոցելի են նաև այն պատճառով, որ նրանց մոտ այդ խոսքերը կարող են արագ փոխակերպում ստանալ:

Մեկ այլ խնդիր է քաղաքական բնույթ ունեցող հավաքներին կազմակերպված խմբերով դպրոցների տնօրենների, ուսուցիչների և երեխաների ներգրավվածությունը՝ հատկապես դասերի ժամերին: Այդ մասին են վկայում հրապարակային տարբեր աղբյուրներով տարածվող տեսանյութերում դպրոցի տնօրենների և ուսուցիչների որոշ մեջբերումներ: Օրինակ՝ լրատվամիջոցներում տարածվող տեսանյութերից մեկում Վարչապետի պաշտոնակատարի մասնակցությամբ քարոզարշավին մասնակցող ուսուցիչը, լրագրողի հարցադրմանն ի պատասխան, թե արդյո՞ք իրեն նախապես տեղեկացրել էին տվյալ հանդիպման մասին, նշել է՝ «Իհարկե: Տնօրինության աչքից չընկնելու համար եկել եմ: Ուրիշ ի՞նչ կարող էի անել, եկել եմ, բայց չեմ մասնակցում, հոգեպես չեմ մասնակցում»: Փոքր Վեդիի նույն նախընտրական հավաքին ուսուցիչների և աշակերտների՝ դասերի ժամերին մասնակցության վերաբերյալ լրագրողի հարցին ի պատասխան՝ դպրոցի տնօրենը նշել է, որ ամբողջ կոլեկտիվով դիմել են, որ մի փոքր կրճատումներ անեն դասերի, բոլոր դասերն արել են և մասնակցել հավաքին:

Այսպիսով, զանգվածային լրատվության միջոցներով տարածված նյութերի համադիր դիտարկումը թույլ է տալիս հանգել հետևության, որ աշակերտների մի մասը քարոզարշավներին մասնակցել է դասաժամերի հաշվին: Սա խիստ մտահոգիչ պրակտիկա է: Պետք է ղեկավարվել երեխաների կրթության իրավունքի սկզբունքով և գիտակցել, որ խաղաղ հավաքներին երեխաների մասնակցության իրավունքի իրացում չէ, երբ երեխաները դասերի ժամերին ներգրավվում են

<sup>537</sup> Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը (էջեր 370-374), 2019 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը (էջեր 402-404) և այլն:

<sup>538</sup> Հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1758> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

քաղաքական բնույթ ունեցող հավաքների: Մեկ այլ խնդիր է այն, որ երեխաները նման հավաքներին ներգրավվում են առանց ծնողների տեղեկացվածության ու համաձայնության: Ամեն դեպքում, հակառակը փաստող որևէ տվյալ գոյություն չունի:

Դպրոցների տնօրեններն ու ուսուցչական անձնակազմը, ինչպես նաև իրավասու մարմինների ներկայացուցիչները պարտավոր են իրենց գործողություններում առաջնորդվել բացառապես երեխաների լավագույն շահերով, երեխաների անվտանգության, ծնողների, խնամակալների, ուսումնական հաստատության պատասխանատու ներկայացուցիչների վերահսկողության, ինչպես նաև երեխաների կրթության իրավունքի երաշխավորման սկզբունքով: Այս մասին նշվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակային հայտարարությամբ:

Հավաքներին երեխաների մասնակցության խնդրի դիտարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է նաև երեխաների կողմից քարոզչական բնույթ ունեցող գրություններով հագուստով, պաստառներով շրջելու, պաստառներ փակցնելու կամ պատռելու, տարբեր կուսակցությունների թռուցիկներ բաժանելու, քարոզարշավի ընթացքում երեխաներին ծափ տալ, ինչպես նաև քաղաքական բնույթի որոշակի վանկարկումներ անել հորդորելու, կուսակցություններից մեկի քարոզչական գրությամբ գլխարկն այրելու, դա տեսանկարահանելու և համացանցում տարածելու դեպքեր: Դեպքերից մեկով էլ երեխաները լուսանկարվել են կուսակցություններից մեկի քարոզչական թռուցիկներով ու պաստառներով և լուսանկարը տարածել ֆեյսբուքյան էջում: Մտահոգիչ է նաև այն երևույթը, երբ երեխաներին կանգնեցնում են աղ ու հացով դիմավորելու քաղաքական գործիչների կամ տարբեր չինովնիկների: Ակնհայտ է, որ այստեղ նույնպես գոյություն ունի երեխաների տարբեր քաղաքական կամ այլ նպատակներով օգտագործելու գործոնը:

Հաշվի առնելով արձանագրված խնդիրների շարունակական բնույթը՝ Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է խնդրի կապակցությամբ առկա միջազգային-իրավական հետևյալ մոտեցումներն ու կարգավորումները: Այսպես.

ՄԱԿ-ի միջազգային մարմինների իրավական չափանիշների համաձայն՝ երեխաներն ունեն խաղաղ, այդ թվում՝ քաղաքական բնույթ կրող հավաքներին գիտակցված մասնակցելու իրավունք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան թեև երեխայի իրավունքների երաշխավորման նվազագույն տարիք չի նախատեսում, սակայն ամրագրում է այսպես կոչված «երեխայի զարգացող հնարավորությունների» գաղափարը, երբ երեխայի զարգացմանը զուգահեռ մեծանում է սեփական իրավունքներն ինքնուրույն իրացնելու վերջինիս կարողությունը: Միևնույն ժամանակ, երեխաների իրավունքների երաշխավորման հարցում առանցքային է համարվում ընտանիքի և ծնողների դերակատարությունը: Կոնվենցիոն մակարդակում ընտանիքը հոչակվում է իբրև հասարակության հիմնարար խմբային միավոր և երեխայի աճի ու բարեկեցության բնական միջավայր, ինչպես նաև վերջինիս դերակատարությունն իր իրավունքներն իրականացնելիս երեխային ուղղություն տալու հարցում:



Երեխայի հիմնարար իրավունքները, այդ թվում՝ խաղաղ հավաքներին մասնակցության իրավունքը երաշխավորող ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության ուղենշային սկզբունքներից է նաև երեխայի մասնակցության իրավունքը: Այն առարկայանում է որոշումների կայացման գործընթացներին երեխայի մասնակցության և դրանց վրա ներազդելու իրավունքի ապահովմամբ՝ լինի դա ընտանիքում, դպրոցում, թե հասարակության մեջ: Այս սկզբունքն ամրապնդում է երեխայի՝ հասարակության լիարժեք անդամ լինելու իրավունքը, ով ունի իրեն վերաբերող ցանկացած հարցի առնչությամբ կարծիքն արտահայտելու, այն լսելի դարձնելու և պատշաճ ուշադրության իրավունք՝ իր տարիքին և հասունությանը համապատասխան: Երեխայի մասնակցության սկզբունքը հռչակում է վերջինիս ներուժը՝ որոշումների կայացմանը նպաստելու, իր հեռանկարները կիսելու և իբրև քաղաքացի ու փոփոխությունների դերակատար մասնակցելու առումներով:

Երեխաների իրավունքները երաշխավորող միջազգային փաստաթղթերը կարևորում են երեխայի տեղեկացված մասնակցությունը, երբ վերջինս, մասնավորապես, գիտակցում է որոշակի գործընթացներին իր մասնակցության նպատակը, ում կողմից է կայացվել իր մասնակցության վերաբերյալ որոշումը և ինչու, իր դերակատարությունը բովանդակային, այլ ոչ թե ձևական առումով, և ի վերջո տեղեկացված լինելու պայմաններում վերջինիս կամահայտնությունը:

Նույն միջազգային փաստաթղթերն անընդունելի են համարում երեխաների՝ որոշակի գործընթացներին մասնակցության այնպիսի դրսևորումներ, երբ երեխան մասնակից է դառնում մի գործընթացի, որի էությունն ու նպատակը չի գիտակցում, կամ երբ երեխաները մեծահասակների կողմից ներգրավվում են ոչ թե այն պատճառով, որ խնդիրն առնչվում է նրանց շահերին, այլ այդպիսով ապահովվում է խնդրի ցուցադրականությունը (միջազգային իրավական տերմինաբանությամբ նման ոչ իրավաչափ դրսևորումները բնորոշվում են «մանիպուլյացիա», «դեկորացիա» և «տոկենիզմ» անվանումներով)<sup>539</sup>:

«Սեյվ դը չիլդրենի» մշակած՝ երեխաների մասնակցության գործնական չափանիշների շարքում ամրագրված է երեխայի մասնակցության վերաբերելիության և կամավորության չափանիշը (Չափանիշ 2): Ըստ դրա՝ երեխաները մասնակցում են գործընթացներին և բարձրացնում հարցեր, որոնք ուղղակի կամ անուղղակի իրենց առնչվում են, և մասնակցության հարցում ընտրության հնարավորություն ունեն: Այս չափանիշը նպատակ է հետապնդում ապահովելու, որ երեխաների մասնակցությունը հիմնված լինի վերջիններիս անձնական գիտելիքների՝ սեփական կյանքի, միջավայրի և իրենց առնչվող հարցերի վերաբերյալ երեխաների ունեցած տեղեկությունների և աշխարհայացքի վրա: Նույն փաստաթղթում նախանշվում են երեխայի մասնակցության չափանիշի ապահովման նախապայմանները, որոնք են, մասնավորապես, երեխայի կողմից գործընթացին մասնակցության որոշում կայացնելու համար բավարար ժամանակ և հնարավորություն՝ արտահայտելու իր անձնական և իրազեկված համաձայնությունը, երեխաների այլ

<sup>539</sup> Տե՛ս «Երեխաների մասնակցությունը. տոկենիզմից մինչ քաղաքացիություն» էջ 9, հասանելի է [https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens\\_participation.pdf](https://www.unicef-irc.org/publications/pdf/childrens_participation.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

պարտականությունների (օրինակ՝ տանը, դպրոցում կամ աշխատավայրում) հաշվառում ու համատեղում և այլն<sup>540</sup>:

Անդրադառնալով քաղաքական բնույթ կրող հավաքներին երեխաների մասնակցության հարցին՝ Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում նշել հետևյալը.

Ինքնին խաղաղ, այդ թվում՝ քաղաքական հավաքներին երեխաների մասնակցության արգելք գոյություն չունի: Կարևոր նշանակություն ունի խաղաղ հավաքներին կամ այլ զանգվածային միջոցառումներին երեխայի մասնակցության, երեխայի կարծիքի ազատ արտահայտման իրավունքների պատշաճ ապահովումը: Այնուամենայնիվ, հավաքներին երեխաների մասնակցության հարցը պետք է առաջնորդվել երեխաների լավագույն շահերին առաջնահերթության հրամայականով՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակները: Պետք է միշտ նկատի ունենալ երեխայի լավագույն շահերը՝ որպես բացարձակ արժեք և այն, որ դրանցով չառաջնորդվելը երեխայի իրավունքների խախտում է:

Երեխայի իրավունքների իրացումը որևէ դեպքում չի կարող ինքնանպատակ լինել. այն պետք է ուղղված լինի հասարակական կյանքին երեխայի լիարժեք և գիտակցված ներգրավվածության ապահովմանը, որը ծառայում է երեխայի լավագույն շահերին:

ԵԱՀԿ համեմատական ուսումնասիրությամբ արձանագրված է, որ երեխաների ակտիվ մասնակցությունը հաճախ շահագործվում է խաղաղ հավաքների կազմակերպիչների, ինչպես նաև ծնողների կամ խնամակալների կողմից, որոնք իրենց համաձայնությունն են տալիս երեխաների մասնակցության համար: Հաճախ հաշվի չեն առնվում այն երկարաժամկետ հետևանքները, որոնք կարող են առաջանալ երեխաների համար քաղաքական բնույթ ունեցող հավաքներին նրանց ներգրավելու դեպքում, ինչպիսիք են, օրինակ, թիրախավորումը, բուլլինգը, խտրականությունը: ԵԱՀԿ ուսումնասիրությամբ նաև արձանագրված է, որ նման բացասական հետևանքները հնարավորինս բացառելու, ինչպես նաև այսպես կոչված «հուզական քվեարկություն» ապահովելու համար քաղաքական գովազդային արշավներում երեխաներին ներգրավելու մանիպուլյատիվ ներուժը զսպելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել այն սկզբունքը, որ երեխաները պետք է պաշտպանված լինեն այնպիսի իրավիճակներից, երբ նրանք քաղաքական կուսակցական գործունեության, հատկապես՝ ընտրարշավների ընթացքում քաղաքական գործիչների կողմից «օգտագործվում են» որպես «զարդարանք» իրենց քարոզչությունն իրականացնելու համար: Երեխաները չպետք է նախընտրական շրջանում քաղաքական կուսակցությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին ներգրավվեն որպես «ֆոն» (նստած, կանգնած կամ այլ եղանակով):

Այս կապակցությամբ գոյություն ունեն հետևյալ միջազգային պահանջները. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի՝ մինչև 18 տարեկան երեխաների ու երիտասարդների մասնակցության մասին հանձնարարականով ամրագրված սկզբունքներից են՝

<sup>540</sup> Հասանելի է <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000154861/PDF/154861eng.pdf.multi> հղումով:

1. Երեխաների բովանդակային և իրազեկված մասնակցությունն ապահովելու նպատակով նրանց համապատասխան տեղեկատվությամբ ապահովելու անհրաժեշտությունը.

2. Իրենց տեսակետն ազատորեն արտահայտելու իրավունքն իրացնող երեխաների՝ հնարավոր վտանգավոր հետևանքներից, այդ թվում՝ սպառնալիքներից, վրեժխնդրությունից, ինչպես նաև անձնական, մասնավոր կյանքի իրավունքի խախտումներից, պաշտպանվածությունն ապահովելը.

3. Երեխաների կողմից իրենց մասնակցության շրջանակի, ներառյալ՝ ներգրավվածության հետ կապված սահմանափակումների, մասնակցության ակնկալվող և իրական արդյունքների վերաբերյալ մշտապես լիովին տեղեկացված լինելն ապահովելը<sup>541</sup>:

Բացի այդ, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի վերաբերյալ ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ երեխայի լաված լինելու իրավունքի ապահովմանն ուղղված բոլոր գործընթացները պետք է լինեն թափանցիկ, տեղեկատվական, կամավոր, հարգալից, անվտանգ, ներառական (ոչ խտրական), երեխայակենտրոն միջավայրում, ռիսկերի նկատմամբ զգայուն, ինչպես նաև հաշվետու: ԵԱՀԿ ուսումնասիրությամբ արձանագրված է՝

1. քաղաքական կուսակցությունները պարտավոր են հնարավորինս զերծ մնալ քաղաքական գովազդային արշավներում երեխաներին, հատկապես՝ մինչև 8 տարեկան երեխաներին ներգրավելուց, քանի դեռ խնդիրներն ակնհայտորեն կապված չեն նրանց հետ,

2. երեխաների լուսանկարները, որոնք օգտագործվում են քաղաքական գովազդային արշավներում, հնարավորինս պետք է վերցվեն ֆոնդային լուսանկարներից՝ խուսափելու համար հնարավոր մակնշումից, բուլլինգից և ցանկացած այլ բացասական ազդեցությունից,

3. բոլոր քաղաքական գովազդային նյութերը, որոնցում ներգրավված են երեխաներ, պետք է ստուգվեն նախքան պատասխանատու մարմնի կողմից ցուցադրվելը: Մասնավորապես, լրատվամիջոցների համակարգողը պետք է իրականացնի մանրակրկիտ, սպառիչ և պարտադիր բնույթ ունեցող ստուգման գործընթաց,

4. քաղաքական կուսակցությունները և քաղաքական թեկնածուները պետք է լրացնեն մանրամասն և համապարփակ համաձայնության ձևաթուղթ՝ ստորագրված ոչ միայն երեխաների ծնողների կամ խնամակալների, այլ նաև այն երեխաների կողմից, որոնք թերթերում, գովազդային վահանակներում, հեռուստատեսությունում և այլ եղանակով մտադիր են ներգրավվել քաղաքական գովազդային արշավներում:

**Հաշվի առնելով վերոգրյալը՝ հավաքներին երեխաների մասնակցության հարցը դիտարկելիս անհրաժեշտ է առաջնորդվել երեխաների լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու հրամայականով: Բացի այդ, պետք է հաշվի առնվեն երեխայի իրավունքների՝ իր փարիքին ու հասունությանը համապատասխան ծավալով երաշխավորման պահանջը և երեխայի համար անվտանգ միջավայրի ապահովումն ու այդ հարցում ծնողի, ինչպես նաև պետության ու հասարակության պարտականությունները:**

<sup>541</sup> Հասանելի է <https://rm.coe.int/168046c478> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

## **9. Հավաքների ազատությունն ամրագրող ներպետական օրենսդրության համապատասխանությունը միջազգային մոտեցումներին**

2021 թվականի ընթացքում իրականացված հավաքների ընդհանուր դիտարկման արդյունքները վկայում են ներպետական օրենսդրության՝ միջազգային չափանիշներին համապատասխանության հարցի արդիականության մասին: Խոսքը հատկապես վերաբերում է հավաքների ազատության իրավունքի բովանդակային շրջանակներին և այդ իրավունքի իրացման ընթացակարգային պահանջներին:

Ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտի կատարելագործման հարցի արդիականության մասին է վկայում նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ նախատեսված 56-րդ միջոցառումը՝ ««Հավաքների ազատության մասին» օրենքով նախատեսված և միջազգային չափանիշներին համապատասխան գործելակերպերի բարելավում», որի իրականացման վերջնաժամկետ է ամրագրված 2021 թվականի երկրորդ կիսամյակը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն այդ միջոցառման համակատարող մարմիններից է:

Ուստի, ստորև անդրադարձ է կատարվում ոլորտի միջազգային մոտեցումների, այդ թվում՝ Հայաստանի վերաբերյալ միջազգային գնահատականների և ներպետական որոշ օրենսդրական դրույթների համադրմանը: Ուսումնասիրվել են 2020 թվականին հրապարակված այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողի՝ Հայաստանի վերաբերյալ զեկույցը<sup>542</sup>, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ խաղաղ հավաքների վերաբերյալ ուղեցույցները (3-րդ հրատարակությունը)<sup>543</sup> և այլն:

### **1. Հակադարձ ուղղվածությամբ հավաքների երաշխավորման տեսանկյունից**

Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի համատեղ միջանկյալ կարծիքում անդրադարձ է կատարվում «Հավաքների ազատության մասին» օրենքի<sup>544</sup> նախագծային մի շարք դրույթների, որոնք արդիական են նաև գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում:

Այսպես, կարծիքի 25-րդ կետում անդրադարձ է կատարվում օրենքի գործող խմբագրությամբ 18-րդ հոդվածի 5-րդ մասի կարգավորմանը, համաձայն որի՝ *հավաքի իրազեկման մեջ նշված ժամանակում և վայրում այլ, ներառյալ՝ հակադարձ ուղղվածությամբ հավաքի անցկացումն ինքնին հիմք չէ հավաքի նկատմամբ սահմանափակումներ սահմանելու համար, եթե չկա դրանց*

<sup>542</sup> Հասանելի է <https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2021.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>543</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)017rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)017rev-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>544</sup> Սույն պարագրաֆում՝ այսուհետ՝ Օրենք:

մասնակիցների բախման անմիջական վրանգ: Հակառակ դեպքում ավելի ուշ իրազեկված հավաքի նկատմամբ կիրառվում են սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերը:

Մինչդեռ, ըստ միջազգային մոտեցումների՝ թեև հակընդդեմ հավաքի իրավունքը չի տարածվում այլոց հավաքների ազատությունը սահմանափակելու վրա, այդուհանդերձ, «բախման անմիջական վրանգը» չի կարող ինքնաբերաբար պատճառ դառնալ նույն ժամանակահատվածում և տարածքում իրականացվող հավաքներից մեկի արգելման համար: Այստեղ շեշտադրումը պետք է դրվի պետության պարտականության վրա՝ պաշտպանելու և նպաստելու դրանցից յուրաքանչյուրին՝ համարժեք ոստիկանական ռեսուրսներ հատկացնելով միմյանցից տեսանելի և լսելի հեռավորության վրա:

Ասվածի հիմքում ընկած է միջազգայնորեն կիրառելի այն մոտեցումը, որ թե՛ միջազգային և եվրոպական գործիքներով, թե՛ երկրի Սահմանադրությամբ և ներպետական օրենսդրությամբ «իրավաչափ նպատակի» ամրագրումն ինքնին չպետք է դիտարկվի իբրև սահմանափակումներ կիրառելու թույլտվություն, և իշխանություններն են կրում նման սահմանափակումների արդարացվածությունը հիմնավորելու բեռը: Նման արդարացումները պետք է լինեն վերաբերելի, բավարար և համոզիչ, ինչպես նաև հիմնված լինեն վերաբերելի փաստերի գնահատման վրա<sup>545</sup>:

Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի հետ համատեղ հրապարակած ԺՀՄԻԳ-ի՝ «Խաղաղ հավաքների ազատության մասին ուղեցույցների»՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշների համաձայն՝ այն փաստը, որ հավաքը, ամենայն հավանականությամբ, կհանդիպի հակընդդեմ բռնի բողոքի կամ նույնիսկ կենթարկվի հակառակ կարծիք ունեցող անձանց ուղղակի հարձակմանը, չի կարող սկզբունքորեն հանգեցնել խաղաղ հավաքի արգելմանը: Այս դեպքում խաղաղ հավաքի մասնակիցների պաշտպանությունը հակընդդեմ բողոքի ակցիայի մասնակիցների հարձակումներից կամ բռնությունից ոստիկանության պարտականությունն է<sup>546</sup>:

Հետևաբար, օրենսդրական այս սահմանափակումը կիրառելիս պետք է սկզբունքորեն բացառել, որ այն վերաճի ընդհանուր արգելքի՝ առանց կոնկրետ իրավիճակից բխող պատշաճ հիմնավորվածության:

## 2. Հավաքների ազատության իրավունքին առնչվող ընդհանուր արգելքի տեսանկյունից

Հաջորդ օրենսդրական խնդիրը վերաբերում է հավաքների անցկացման որոշակի վայրերի հետ կապված հավաքների ազատության ընդհանուր արգելքին:

Այսպես, Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հավաքն արգելվում է, եթե հավաքն անցկացվելու է **Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, Կառավարության**

<sup>545</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)049-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)049-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>546</sup> Հասանելի է <https://www.osce.org/hy/odihr/425663?download=true> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

**նստավայրերից, դատարաններից** կամ քրեակատարողական հիմնարկներից այնպիսի հեռավորության վրա, որի դեպքում այն սպառնում է դրանց բնականոն գործունեությանը:

Սրա հետ կապված, Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ 2010 թվականի դեկտեմբերի 22-ի համատեղ միջանկյալ կարծիքում այս կարգավորումը խնդրահարույց է գնահատվել միջազգայնորեն ընդունված հետևյալ սկզբունքների հաշվառմամբ՝

- որպես ընդհանուր կանոն՝ հավաքները պետք է երաշխավորվեն թիրախային լսարանի համար տեսանելի և լսելի հեռավորության վրա, և սահմանափակումները չպետք է խոչընդոտեն հաղորդակցումը:

- Բնական է, որ հավաքներն անցկացվեն կարևոր որոշումներ ընդունող մարմինների առաջ, ինչպիսիք են, օրինակ, Կառավարության շենքը, Նախագահի նստավայրը, դատարանները կամ Խորհրդարանը: Միայն անմիջական բռնության գործոնը կարող է արդարացնել հավաքների արգելումը:

- Համընդհանուր օրենսդրական նորմերը, որոնք արգելում են հավաքները հատուկ ժամերի կամ հատուկ տարածքներում (վայրերում), ավելի մեծ հիմնավորում են պահանջում, քան առանձին հավաքների սահմանափակումները:

- Հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքի առանձնահատուկ հանգամանքները՝ օրենսդրության մեջ նման ընդհանուր նորմերի ներառումը (և դրանց կիրառումը) կարող է համարվել անհամաչափ, քանի դեռ սոցիալական ճնշող պահանջ չկա:

- Թեև հավաքը չպետք է արգելի այդ (Կառավարություն, Նախագահ, դատարանները կամ Խորհրդարան) հաստատություններին գործառութավորումը, այդուհանդերձ, այն փաստը, որ դա կարող է որոշակի անհարմարություններ պատճառել, չպետք է հանգեցնի արգելքի կամ որևէ էական սահմանափակման:

Ավելին, «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ խաղաղ հավաքների վերաբերյալ 2020 թվականի ուղեցույցների 133-րդ կետն ամրագրում է «Ոչ մի համընդհանուր արգելքներ» սկզբունքը, համաձայն որի՝ **համընդհանուր իրավական սահմանափակումները, օրինակ՝ բոլոր հավաքների արգելքը որոշակի ժամանակահատվածում կամ որոշակի տարածքներում կամ հավաքներ անցկացնելու առումով հարմար հանրային վայրերում, որպես կանոն պարունակում են անհամաչափ և հավաքների ազատության իրավունքը խախտող սահմանափակումներ**<sup>547</sup>:

Հետաքրքրական է ուղեցույցներում արձանագրված այն մոտեցումը, որ հավաքների անցկացման վայրի կամ ժամանակի արգելք նախատեսող այս սահմանափակումները իբրև կանոն ամրագրելը և այնուհետև այդ սահմանափակումներից բացառությունները հակադարձ հարաբերակցության մեջ են դնում իրավունքն ու դրա սահմանափակումները՝ այդպիսով իրավունքը վերածելով արտոնության:

<sup>547</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)017rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)017rev-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Այդ պատճառով համընդհանուր արգելքները կարող են ձախողել համաչափության չափանիշը, քանի որ դրանք չեն տարբերակում հավաքների ազատության իրավունքի իրացման եղանակները և այդպիսով բացառում են յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունների հաշվառումը:

Հարցի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ընդհանուր դիրքորոշման համաձայն՝ **բռնության հրահրման կամ ժողովրդավարական սկզբունքների մերժման դեպքերից բացի հավաքների և արտահայտվելու ազատությունը ճնշելուն ուղղված կանխարգելիչ բնույթի միջոցները, որքան էլ որոշակի մոտեցումներ կամ գործածված խոսքեր ցնցող և անընդունելի թվան իշխանություններին, կամ ներկայացված պահանջները լինեն անօրինական, վնասում կամ անգամ վտանգում են ժողովրդավարությունը**<sup>548</sup>:

*Ասվածի հաշվառմամբ, հարկ է արձանագրել, որ մեջբերված օրենսդրական դրույթի տառը հավաքների ազատության ընդհանուր արգելքի տեսանկյունից համահունչ չէ միջազգային իրավական մոտեցումներին:*

### 3. Հավաքների իրազեկման ընթացակարգային պահանջների տեսանկյունից

Օրենքի 12-րդ հոդվածն ամրագրում է, որ *իրազեկումը կարող է ներկայացվել հավաքի անցկացման օրվանից ոչ ուշ, քան 7 օր, և ոչ շուրջ, քան 30 օր առաջ:*

Վենետիկի հանձնաժողովը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն այս առնչությամբ արձանագրել են, որ իրազեկման յոթօրյա ժամկետի սահմանումը սովորականից ավելի երկար է: **Իրազեկման նման երկար ժամկետի ամրագրումն անխուսափելիորեն հանգեցնում է մարդկանց հնարավորությունների սահմանափակմանը՝ ողջամիտ արագությամբ արձագանքելու այն իրադարձություններին, ինչի առթիվ վերջիններս ցանկանում են անցկացնել հավաք:** Մասնավորապես, օրենսդրական այս կարգավորումը կարող է խնդրահարույց լինել այն դեպքերում, երբ անձինք, օրինակ, հավաք անցկացնելու ցանկություն են ունենում, օրինակ, երեք, չորս, հինգ կամ վեց օր առաջ, ինչը, ստացվում է, թույլատրելի չէ: Այդ պայմաններում էլ եթե այդպիսի հավաքն անգամ դիտարկվի իբրև ինքնաբերական կամ շտապ հավաք՝ դրա նկատմամբ կիրառելի կլինի Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանափակումը՝ վեց ժամից ավելի հավաքն անցկացնելու արգելքի առումով:

Չափազանց երկար այս ժամկետը, Վենետիկի հանձնաժողովի դիտարկմամբ, որոշակի հանգամանքներում հանգեցնելու է պետության ձախողմանը՝ իր պոզիտիվ պարտականությունների կատարման և հավաքների ազատությանը նպաստելու առումով:

Վենետիկի հանձնաժողովը քննարկվող ժամկետների առնչությամբ նաև դիրքորոշում է հայտնել, որ անգամ նախնական իրազեկման չորս օրվա ժամկետի սահմանումը եվրոպական առաջադեմ փորձի համեմատ երկար է<sup>549</sup>:

<sup>548</sup> St'u Association of Citizens Radko & Paunkovski v. the Former Yugoslav Republic of Macedonia գործով 2009 թվականի հունվարի 15-ի վճիռ, գանգատ թիվ 74651/01, կետ 76:

<sup>549</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)049-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)049-e) հղումով, էջեր 10-11, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Խաղաղ հավաքների վերաբերյալ 2020 թվականի ուղեցույցների 112-րդ կետն ամրագրում է, որ նախնական իրազեկման պահանջը դե ֆակտո հավաքների ազատության նկատմամբ միջամտություն է, և հետևաբար ցանկացած այդպիսի սահմանափակում պետք է նախատեսված լինի օրենքով, *լինի անհրաժեշտ և համաչափ*: Ավելին, այդպիսի կարգավորումները չպետք է թաքնված խոչընդոտ պարունակեն հավաքների ազատության կոնվենցիոն իրավունքի իրացման համար: Այնուհետև, նախնական իրազեկման կանոնների կիրառումն ինքնին չպետք է կանխորոշի գործընթացի ավարտ: Այլ կերպ ասած, իրազեկման պահանջի չպահպանման դեպքում հավաքը չպետք է դիտարկվի անօրինական և ինքնին հավաքի մասնակիցների իրավունքների սահմանափակման կամ հավաքը ցրելու հիմք հանդիսանա<sup>550</sup>:

Մինչդեռ, հարկ է վկայակոչել Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ *եթե հավաքն անցկացվում է նույն օրենքի 2-րդ գլխով նախատեսված իրազեկմանը վերաբերող պահանջների խախտմամբ, ապա ոստիկանությունը պարտավոր է բարձրախոսով տեղեկացնել, որ հավաքն անօրինական է, և որ մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության*: *Եթե հավաքը խաղաղ բնույթ ունի, ապա ոստիկանությունն իր իրավասությունների սահմաններում պարտավոր է աջակցել հավաքին*:

ՄԱԿ-ի խաղաղ հավաքների և միավորումների ազատության հարցերով հատուկ զեկուցողը Հայաստանի վերաբերյալ 2019 թվականի զեկուցում ևս, ի թիվս այլ դրույթների, անդրադարձել է օրենքի քննարկվող կարգավորմանը՝ մտահոգություն հայտնելով օրենսդրության կիրառության հարցում մարդու իրավունքների երաշխավորման հնարավոր մարտահրավերների առնչությամբ:

Մարդու իրավունքների ոլորտում միջազգային իրավունքի համաձայն՝ ներպետական օրենսդրությամբ հավաքի մասին նախնական իրազեկման պահանջ սահմանելը պարտադիր չէ: Իրականում, բաց հասարակությունում հավաքների բազմաթիվ ձևերի համար պետական որևէ կարգավորում չի պահանջվում: Նախնական իրազեկումը, հետևաբար, պետք է պահանջվի միայն այն դեպքերում, երբ պետությունը պարտավոր է ձեռնարկել հավաքների ազատության ապահովման և ազգային կամ հասարակական անվտանգության, հասարակական կարգի, բնակչության առողջության կամ բարոյականության պահպանման կամ այլոց իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար անհրաժեշտ միջոցներ<sup>551</sup>:

**Օրենքում ամրագրված ցանկացած նմանատիպ դրույթ պետք է պահանջի հավաքի կազմակերպիչներից ներկայացնել մտադրության մասին ծանուցում, ոչ թե թույլտվության հայտ**: Իրազեկման գործընթացը չպետք է լինի բարդ կամ բյուրոկրատական, իսկ իրազեկման **ժամկետը՝ անհարկի երկար**: Փոխարենը, իրազեկման ժամկետը սահմանվում է այնպես, որ՝

ա. համապատասխան մարմինները բավարար ժամանակ ունենան անհրաժեշտ պլանները մշակելու և իրենց դրական պարտավորությունների կատարմանը նախապատրաստվելու համար, և

<sup>550</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2019\)017rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2019)017rev-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>551</sup> Հասանելի է <https://www.osce.org/hy/odihr/425663?download=true> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



բ. կազմակերպիչները բավարար ժամանակ ունենան հարկադրված սահմանափակումների հետ անհամաձայնության դեպքում դրանք բողոքարկելու և դատարանի որոշում ստանալու համար<sup>552</sup>:

*Ասվածը հիմք է տալիս եզրահանգելու, որ նախնական ծանուցման՝ օրենքով սահմանված ժամկետները պետք է վերանայվեն՝ միջազգային առաջադեմ պրակտիկային համահունչ:*

**Ամփոփելով հարկ է արձանագրել, որ խաղաղ հավաքների ազատության լիարժեք երաշխավորման օրենսդրական հիմքերը պետք է կատարելագործվեն՝ մասնավորապես օրենսդրական փոփոխությունների միջոցով թիրախավորելով դիտարկված անհամապատասխանությունները միջազգային իրավական մոտեցումներին:**

---

<sup>552</sup> Հասանելի է <https://www.osce.org/files/f/documents/c/6/425663.pdf> հղումով, էջեր 22-23, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

## ԲԱԺԻՆ 11. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Երկրի մարդու իրավունքների համակարգի կարևոր գերակայությունն է այդ իրավունքների պաշտպանությունը գործարարության ոլորտում: Այստեղ խոսքը վերաբերում է գործարարների շահերի պաշտպանությանը, նրանց ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելուն, պատշաճ վարչարարությանը, սեփականության և այլ իրավունքների երաշխավորմանը:

Այս ամենն իհարկե ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնային ուղղությունն է: 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո 2016 թվականին ընդունված և 2017 թվականին ուժի մեջ մտած «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի փոփոխություններով ընդլայնվեցին Պաշտպանի իրավասության ոլորտները: Այս մասին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>553</sup>:

Գործարարության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գերակայություններից է տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց իրավունքների պաշտպանությունը ոչ պատշաճ վարչարարությունից, սեփականության իրավունքի, ձեռնարկատիրական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորումը, սպառողների շահերի պաշտպանությունը:

Գործարարների իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման նպատակով Պաշտպանի ներկայացուցիչը մասնակցում է գնումների հետ կապված բողոքների քննությանը:

Պետական կարիքների համար կազմակերպված մրցույթի արդյունքների հետ անհամաձայնության կամ գործարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու ընթացակարգ նախաձեռնելու դեպքերում տնտեսավարողները միջնորդություն են ներկայացնում բողոքներ քննող անձին Մարդու իրավունքների պաշտպանին որպես կողմ ներգրավելու համար:

Գործարարության ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է ինչպես անհատական դեպքերով իրավունքների պաշտպանությունը, այնպես էլ՝ համակարգային հարցեր լուծելով: Անհատական իրավիճակներում աշխատանքները տարվում են թե՛ զծի հեռախոսահամարին ստացվող ահազանգերին արագ արձագանքելով, բանավոր ու գրավոր բողոքներ քննարկելով և այլն: Համակարգային խնդիրների դեպքում աշխատանքները տարվում են՝ օրենքների նախագծեր, ուղեցույցներ մշակելով, Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելով և այլն:

Այս ոլորտում 2021 թվականի ընթացքում շարունակվել է համագործակցությունը Պետական եկամուտների կոմիտեի, էկոնոմիկայի նախարարության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և մի շարք այլ մարմինների հետ:

<sup>553</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 726:

## ԳԼՈՒԽ 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

### **1. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար տուգանքների անհամաչափությունը և անհատական մուրեցման բացակայությունն օրենքով**

Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականից բարձրաձայնում է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար սահմանված տուգանքների միասնական չափերի խնդրահարույց լինելու հարցը: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից այս հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել տնտեսվարողների հասցեագրած բողոքները: Հարցն այն է, որ տուգանքները անհատականացված չեն, իսկ տուգանելիս էլ հաշվի չեն առնվում կոնկրետ իրավախախտման հանգամանքները և չափերը: Նշվածը շատ դեպքերում հանգեցնում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց իրավունքների անհամաչափորեն սահմանափակման, ընդհուպ մինչև բիզնես գործունեության դադարեցման: Պաշտպանին հասցեագրած բողոքներով մարդիկ բարձրաձայնել են գյուղական համայնքներում, ինչպես նաև փոքր շրջանառություն ունեցող ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց համար խնդրո առարկա իրավակարգավորումների բացասական հետևանքների մասին: Այսպես, դիմումներից մեկով ներկայացվել է, որ տնտեսվարող սուբյեկտը գյուղական համայնքներից մեկում ունի փոքր մթերային խանութ՝ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ: Տնտեսվարողի պնդմամբ՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնների խախտման համար նշանակվել է 150 հազար դրամի չափով տուգանք, ինչն իր համար ծանր տնտեսական հետևանքներ է առաջացրել, քանզի անգամ իր ողջ շրջանառությունը չի կազմել այդքան: Ըստ բողոքի՝ գյուղական համայնքում տեղակայված խանութի պարագայում Հարկային օրենսգրքով սահմանված չափով տուգանք նշանակելն իրատեսական չէ, քանի որ սահմանված շեմը բավականին բարձր է: Այն հանգեցնելու է ձեռնարկատիրական գործունեության դադարեցմանը: Տվյալ պարագայում հիմնական մտահոգությունը հարկային տուգանքների անհատականացման մեխանիզմի բացակայությունն է:

Ստացվում է, որ տուգանք նշանակելիս հաշվի չի առնվում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարողի շրջանառության ծավալը, բոլորի համար գործում է տուգանքի միևնույն չափը, իսկ հարկային տեսուչը չունի օրենսդրական այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ կարողանա յուրաքանչյուր խախտման պարագայում ցուցաբերել անհատական մոտեցում: Պետք է նշել, որ մեծ ձեռնարկատիրության համար քննարկվող տուգանքի չափը կարող է լինել աննշան՝ հաշվի առնելով ձեռնարկատիրության ֆինանսական դրությունը, փոքր ձեռնարկատիրության համար այն կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ առհասարակ և հանգեցնել ձեռնարկատիրական գործունեության ծավալման արգելքի:

Նշվածը խիստ բացասաբար է ազդում նաև նորաբաց հաստատությունների վրա, քանզի դեպքերից մեկով նորաբաց սրճարանի սեփականատերը տեղեկացրել է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար նշանակվել է 600 հազար դրամի չափով տուգանք: Սրճարանի սեփականատիրոջ պնդմամբ՝ բացման օրվանից ի վեր իր զուտ եկամուտն անգամ չի հասել 600 հազար դրամի, իսկ տուգանքի՝ նման չափի պարագայում այլևս հնարավորություն չի ունենա շարունակելու իր գործունեությունը: Նշվածից բացի, տնտեսվարողները բարձրաձայնում են նաև այն, որ առաջին անգամ իրավախախտումը հայտնաբերելիս անգամ զգուշացում չի տրվում, այլ՝ իրենց նկատմամբ անմիջապես կիրառվում է տուգանք՝ նախապես որոշված չափով ու առանց որևէ բացառության: Ավելին, տարբերակված մոտեցում առկա չէ նաև փոքր և խոշոր գումարի չափով գնումներ կատարելիս հսկիչ դրամարկղային մեքենաների կտրոնները չտրամադրելու դեպքերի համար:

Հարցն այն է, որ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1 մասերի վերլուծությունը վկայում է, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելու համար ամրագրված են տուգանքների կոնկրետ չափեր: Ըստ հարկային օրենսգրքի՝ հսկիչ դրամարկղային մեքենայի բացակայության կամ հարկային մարմնում այդ վայրի հասցեով տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենա գրանցված չլինելու համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է 300 հազար դրամի չափով: Հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով նույն իրավախախտման համար սահմանված է 1 միլիոն դրամի չափով տուգանք: Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար սահմանված է 150 հազար դրամի չափով տուգանք, իսկ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով՝ 600 հազար դրամի չափով տուգանք: Հարկ է նշել, որ հարկային օրենսգիրքը տարբերակում նախատեսում է միայն սննդի օբյեկտների համար, իսկ կախված ձեռնարկատիրական գործունեության այլ պայմաններից (օրինակ՝ նորաբաց լինելը, գյուղական համայնքում աշխատելը) որևէ տարբերակում նախատեսված չէ:

Ստեղծված իրավիճակում տուգանքների առանց տարբերակման կամ անհատականացման, միասնական չափերի կիրառումը կարող է տարբեր աստիճանի ներգործություն ունենալ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մեծ և փոքր ձեռնարկատիրության համար՝ առանց դրանցից յուրաքանչյուրի առանձնահատկությունները հաշվի առնելու: Տուգանքի և ձեռնարկատիրության ֆինանսական դրության անհամապատասխանությունը կարող է պատճառ դառնալ այդ գործունեությունը շարունակելու անհնարինության համար:

Անհամաչափության խնդիրը վերաբերում է նաև հարկային այլ իրավախախտումների համար նախատեսված տուգանքներին: Խոսքը վերաբերում է, օրինակ, լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու համար սահմանված տուգանքներին:

Հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների պաշտպանը հարկային իրավախախտումների համար սահմանված տուգանքների անհամաչափության հարցը պարբերաբար բարձրացրել է Կառավարության մարմինների հետ քննարկումներում: Սակայն, տնտեսվարողների կողմից պարբերաբար բարձրացվող քննարկվող հարցի լուծման համար ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմում է ներկայացրել ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով վերը նշված կարգավորման սահմանադրականության հարցը:

Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի դեկտեմբերի 9-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ ՍԴԱՌ-2 աշխատակարգային որոշմամբ Պաշտպանի դիմումն ընդունվել է քննության:

Սահմանադրական դատարանը 2021 թվականի սեպտեմբերի 7-8-ի նիստերում քննության էր առել «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-5.1-րդ մասերի և 422-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը: Հաշվի առնելով, որ նշված գործի վերաբերյալ ձայների հավասարության հետևանքով ըստ էության որոշում չէր ընդունվել՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի ուժով նշված դիմումը համարվել էր մերժված, որի մասին հայտարարվել էր նիստերի դահլիճում:

Հաշվի առնելով, որ Բարձր դատարան ներկայացված դիմումով առաջադրված հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման բացակայության պայմաններում նույն դիմումը կրկին ներկայացնելու դեպքում գործի քննությունը մերժելու կամ գործի վարույթը կարճելու հիմքեր «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում առկա չեն՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի հոկտեմբերի 11-ին կրկին դիմել է Սահմանադրական դատարան<sup>554</sup>: Ավելին, նույն օրը Սահմանադրական դատարան ներկայացված մեկ այլ դիմումով էլ բարձրացվել է Պաշտպանի դիմումը մերժելու հիմք հանդիսացած նորմի՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասի սահմանադրականության հարցը:

Սույն խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ հրապարակային զեկույց<sup>555</sup>:

*Նշված խնդրի կարգավորման համար անհրաժեշտ է վերանայել հարկային իրավախախտումների, մասնավորապես՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության*

<sup>554</sup> Նշված գործի քննությունը դեռ ընթացիկ փուլում է, նիստը նշանակված է 2022 թվականի մարտի 15-ին: ՍԴ աշխատակարգային որոշումը հասանելի է [https://concourt.am/pdf/uploads/620377b021944\\_sdav-215.pdf](https://concourt.am/pdf/uploads/620377b021944_sdav-215.pdf) հղումով, [2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ](https://concourt.am/pdf/uploads/620377b021944_sdav-215.pdf):

<sup>555</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/225666d3daf8571a8ec149089f088826.pdf> հղումով, [2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ](https://ombuds.am/images/files/225666d3daf8571a8ec149089f088826.pdf):

կանոնների խախտման համար սահմանված տուգանքների չափերը համաչափության սկզբունքի տեսանկյունից և սահմանել տուգանքների նվազագույն և առավելագույն չափեր: Ընդ որում, դա պետք է անել այնպես, որ հնարավոր լինի ցուցաբերել անհատական մոտեցում՝ հաշվի առնելով կոնկրետ իրավիճակում իրավախախտման կոնկրետ հանգամանքները:

## **2. Սեփականության իրավունքի երաշխավորումը հարկային պարտավորությունների կատարմանն ուղղված հարկադրանքի միջոցներ կիրառելիս**

2021 թվականի Մարդու իրավունքների պաշտպանին շարունակվել են բողոքներ հասցեագրվել հարկ վճարողների սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ:

Դեռևս 2020 թվականի Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ հարկային օրենսգրքով հարկային մարմնին վերապահված է առանց դատարան դիմելու հարկ վճարողների գույքի վրա արգելանք դնելու լիազորություն:

Այսպես, ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 430-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ չկատարված հարկային պարտավորության չափը 1 միլիոն 500 հազար դրամ կամ ավելի կազմելու դեպքում, եթե հարկային մարմնի իրականացրած վարչարարության ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել հարկային մարմնի ընդունած իրավական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա հարկային մարմնի ղեկավարը Օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու մասին հանձնարարագիր հրապարակելու:

Օրենսգրքի 429-րդ հոդվածի համաձայն՝ գույքի արգելանքը հարկային պարտավորության կատարումն ապահովելու նպատակով հարկ վճարողի գույքային իրավունքների սահմանափակմանն ուղղված՝ հարկային մարմնի կողմից իրականացվող գործողություն է: Այն կիրառվում է հարկ վճարողի բանկային հաշիվներում և (կամ) դրամարկղում առկա դրամական միջոցների, ինչպես նաև այլ գույքի տնօրինման, տիրապետման կամ օգտագործման իրավունքի՝ հարկային պարտավորությունների չափով սահմանափակման միջոցով:

Ընդ որում, հարկ վճարողը զգուշացվում է արգելանքի տակ դրված գույքը կամ դրա առանձին բաղադրամասերը վատնելու, օտարելու, թաքցնելու կամ ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու դեպքում վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին:

Օրենսգիրքը որոշակի բացառություններ է սահմանում հարկ վճարողի բանկային հաշիվներում և դրամարկղում ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու դեպքերի համար: Օրենսգրքի 433-րդ հոդվածի 8-րդ մասը նախատեսում է, որ բանկային հաշիվներում հարկ վճարողի ունեցած դրամական միջոցների արգելանք դնելու մասին որոշումը չի տարածվում պետական բյուջե վճարման ենթակա դրամական միջոցների փոխանցման վրա, և հարկ վճարողն իրավունք ունի այդ միջոցներից պետական բյուջե փոխանցումներ կատարելու, եթե այդ դրամական միջոցները գրավի առարկա չեն:

Օրենսգրքի 434-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամարկղում հարկ վճարողի ունեցած կանխիկ դրամական միջոցների վրա արգելանք դնելու մասին որոշումը չի տարածվում պետական և համայնքային բյուջեներ կատարվող վճարումների վրա, և հարկ վճարողն իրավունք ունի դրամարկղում առկա դրամական միջոցներից պետական և համայնքի բյուջեներ վճարումներ կատարելու:

Այլ գույքի վրա արգելանք դրվում է հարկ վճարողի բանկային հաշիվների և դրամարկղի բացակայության կամ հարկային պարտավորությունները մարելու համար դրանցում առկա դրամական միջոցների անբավարար լինելու դեպքում:

Հարկ վճարողի այլ գույքի վրա արգելանք դնելու դեպքերի համար բացառություններ Օրենսգրքով նախատեսված չեն: Օրենսգրքով գույքն արգելանքից հանելու հիմքերից է հարկ վճարողի հարկային պարտավորության դադարումը կամ Օրենսգրքով սահմանված կարգով հարկային պարտավորության գումարի գանձումը:

Իսկ հարկային պարտավորությունը ներառում է ոչ միայն վճարման ենթակա հարկերի գումարները, այլև տույժերն ու տուգանքները: Դրանից բացի, գույքի վրա արգելանք դնելու մասին որոշման արտադատական կարգով բողոքարկումը չի կասեցնում որոշման կատարումը:

Ավելին, Օրենսգրքի 432-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է արգելանքի տակ դրված գույքը վատնելու, օտարելու, թաքցնելու, ապօրինաբար մեկ ուրիշին հանձնելու, փչացնելու կամ ոչնչացնելու արգելքը:

Հարկ վճարողի այլ գույքի արգելանքի կարևոր բաղադրիչներից է այն օտարելու արգելքը:

Այս հարցին անհրաժեշտ է անդրադառնալ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված և սահմանված մարդու իրավունքների տեսանկյունից:

Սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուրի՝ օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքը: Սահմանադրության համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Քաղաքացիական օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները, գույքը գրավ դնել կամ տնօրինել այլ եղանակով:

Այլ գույքի վրա արգելանք կիրառելու նպատակը հարկ վճարողի հարկային պարտավորության ապահովումն է, իսկ գույքն օտարելու բացարձակ արգելքը որոշ դեպքերում նպատակին հասնելու արդյունավետ միջոց չի կարող համարվել և կարող է հանգեցնել անձի սեփականության իրավունքի անհամաչափ սահմանափակմանը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել իր գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Շեշտադրվում է նաև, որ նախորդ

դրոյթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:

Վերոնշյալից հետևում է, որ սեփականության օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության իրավաչափության պարտադիր պայմաններն են՝ միջամտության օրինականությունը, ընդհանուր շահը կամ հարկերի, մյուս գանձումների, տուգանքների վճարումն ապահովելու նպատակը, համաչափությունը:

Միջամտության համաչափությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև հետապնդվող նպատակին հասնելու այլ միջոցների բացակայությունը: Հետևաբար, անհրաժեշտ է բարենպաստ հավասարակշռություն ստեղծել հարկային պարտավորությունների ապահովման և անձի իրավունքների միջև:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ սոցիալական և տնտեսական օրենսդրության, այդ թվում՝ հարկային օրենսդրության ոլորտում, պետությունն ունի հայեցողության լայն շրջանակ: Դատարանը նշել է նաև, որ այս ոլորտի միջոցների կիրառումը պետք է լինեն խտրականության բացառման և համաչափության պահանջներին համապատասխան<sup>556</sup>:

Հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու որոշման հիմքում ընկած է հարկային պարտավորությունների ապահովման նպատակը: Հետևաբար, նշված նպատակին հասնելու համար արգելանքի տակ գտնվող գույքի ճակատագիրը որոշելու սեփականատիրոջ իրավունքը չպետք է սահմանափակվի: Սակայն այն պիտի իրականացվի հարկային մարմնի թույլտվությամբ և ուղղված լինի առաջին հերթին հարկային պարտավորությունների կատարմանը:

Համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի՝ պետության միջամտությունը, այդ թվում՝ հարկային պարտավորությունների ապահովման միջոցներ սահմանելը, պետք է ապահովի արդար հավասարակշռություն հանրային ընդհանուր պահանջների և անհատի հիմնարար իրավունքների պաշտպանության միջև<sup>557</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «ցանկացած միջամտություն, ներառյալ հարկերի վճարման ապահովման միջոցի կիրառման արդյունք հանդիսացող միջամտությունը, պետք է ապահովի ողջամիտ հավասարակշռություն հասարակության ընդհանուր շահերի պահանջների և մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև: Անհրաժեշտ է պահպանել ողջամիտ համաչափություն օգտագործված միջոցների և հետապնդվող նպատակի միջև<sup>558</sup>:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ երկրներում հարկ վճարողի գույքի նկատմամբ արգելանքը կիրառվում է երկու եղանակով՝ ամբողջությամբ կամ մասնակի:

Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության հարկային օրենսգրքով նախատեսված գույքի արգելանքն ամբողջությամբ կիրառելու դեպքում սահմանված է հարկ վճարողի համար արգելանքի ենթարկված

<sup>556</sup> Տե՛ս Ն.Կ.Մ.-ն ընդդեմ Հունգարիայի (N.K.M. v. Hungary) գործով 2013 թվականի մայիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66529/11, կետ 65:

<sup>557</sup> Տե՛ս Պլիսիեն Բ. Վ.-ն ընդդեմ Նիդերլանդների (PLAISIER B.V. against the Netherlands and 2 other) գործով 2017 թվականի նոյեմբերի 14-ի վճիռը, գանգատ թիվ 46184/16, կետ 71:

<sup>558</sup> Տե՛ս ի թիվս այլոց, Gasus Dosier- und Fordertechnik GmbH v. The Netherlands գործով 1995 թվականի փետրվարի 23-ի վճիռը, գանգատ թիվ 15375/89, կետ 49, 62:



գույքը տնօրինելու բացարձակ արգելք, իսկ գույքի տիրապետումն ու օգտագործումը հնարավոր է միայն հարկային մարմնի թույլտվությամբ և հսկողությամբ:

Գույքի արգելանքը մասնակի կիրառելու դեպքում հարկ վճարողը, բացի գույքը տիրապետելուց և օգտագործելուց, հնարավորություն ունի նաև հարկային մարմնի հսկողությամբ այն տնօրինելու<sup>559</sup>:

Վրաստանի հարկային օրենսգիրքը հարկ վճարողին իրավունք է վերապահում հարկային մարմնի գրավոր համաձայնությամբ տնօրինել արգելանքի ենթարկված գույքը, պայմանով, որ ստացված գումարն ուղղվի հարկային պարտավորությունների կատարմանը<sup>560</sup>:

Նմանատիպ կարգավորում է նախատեսված նաև Ուկրաինայի հարկային օրենսգրքով, որի համաձայն՝ հարկային մարմնի թույլտվությամբ հարկ վճարողը կարող է արգելանքի դրված գույքի հետ իրականացնել ցանկացած գործողություն, եթե այն չի հանգեցնի հարկ վճարողի հարկային պարտավորության ավելացմանը կամ հարկային պարտավորությունը կատարելու հավանականության նվազմանը<sup>561</sup>:

Այսպիսով, վերոգրյալից հետևում է, որ սեփականության իրավունքն «անսահմանափակ» իրավունք չէ: Այդ իրավունքի իրականացումը չպետք է խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Հարկ վճարողի գույքն օտարելու իրավունքի սահմանափակման նպատակը հարկերի վճարումն ապահովելն է: Այն իրականացվում է հարկային մարմնի կողմից անձի գույքային իրավունքների սահմանափակմամբ, որը դրսևորվում է նաև վերջինիս պարտավորությունների կատարմանը համարժեք գույքն օտարելու արգելքի կիրառմամբ:

Ստացվում է, որ հարկ վճարողի գույքի վրա արգելանք կիրառելով, սահմանափակվում է Սահմանադրությամբ ամրագրված անձի սեփականության իրավունքը Սահմանադրությամբ ամրագրված նրա մեկ այլ՝ հարկեր վճարելու պարտականության կատարումն ապահովելու համար:

Արգելանքի տակ գտնվող գույքը հարկային մարմնի համաձայնությամբ օտարելու և գումարը պարտավորությունների մարմանն ուղղելու մեխանիզմների սահմանումը կնպաստի հարկային պարտավորությունները ողջամիտ ժամկետում կատարելուն և անձի՝ իր հայեցողությամբ սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու սահմանադրական իրավունքի պատշաճ իրացման ապահովմանը:

Վերոնշյալ առաջարկը Պաշտպանը ներկայացրել է նաև 2021 թվականին «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացրած կարծիքում: Ողջունելի է, որ այն ընդունվել է նախագծի նախնական շրջանառման ընթացքում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սահմանել այնպիսի օրենսդրական կարգավորումներ, որոնց դեպքում պարտապանը հնարավորություն կունենա արգելանքի տակ գտնվող գույքը հարկային մարմնի համաձայնությամբ օտարել և գումարն ուղղել պարտավորությունների մարմանը:*

<sup>559</sup> Հասանելի է [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_19671/21a7df5b9bea740dee9d39f6d704a17a66f45eb1/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/21a7df5b9bea740dee9d39f6d704a17a66f45eb1/) է հետևյալ հղմամբ <https://matsne.gov.ge/ru/document/view/1043717?publication=171>:

<sup>560</sup> Հասանելի է հետևյալ հղմամբ <https://matsne.gov.ge/ru/document/view/1043717?publication=171>:

<sup>561</sup> Հասանելի է հետևյալ հղմամբ <https://www.profiwins.com.ua/ru/legislation/kodeks/1349.html>:

### **3. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի երաշխավորումը գնումների գործընթացում**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել գնումների գործընթացում գործարարների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել գնումների գործընթացում առկա համակարգային խնդիրներ, որոնք վերաբերում են «Գնումների մասին» օրենքով սահմանված «համարժեք» տերմինի տարակերպ մեկնաբանմանը և բողոքարկելու իրավասություն ունեցող անձանց շրջանակին:

Պաշտպանին հասցեագրած բողոքով գործարարը տեղեկացրել է, որ բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով բժշկական կազմակերպությունը հայտարարել է մրցույթ: Մրցույթին գործարարը մասնակցել է հրավերով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող համարժեք ապրանքով: Գնահատող հանձնաժողովն արձանագրել է հրավերի պահանջներին մասնակցի հայտի անհամապատասխանություններ և պահանջել է օրենքով նախատեսված կարգով և ժամկետներում շտկել տեխնիկական բնութագրերը: Մասնակիցը տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունների շտկում չի իրականացրել:

Գործարարի պնդմամբ՝ ընկերությունը, հրավերի համաձայն, մրցույթին կարող էր մասնակցել համարժեք ապրանքով, իսկ նման դեպքում չափորոշիչների ոչ ամբողջական համընկնում հնարավոր էր: Ըստ գործարարի՝ համարժեք ապրանքով ներկայանալու հնարավորությունը չէր ենթադրում նույնական ապրանքով ներկայանալու պահանջ:

Արդյունքում, գործարարի հայտը գնահատվել էր անբավարար և մերժվել: Այնուհետև, պատվիրատուի գրության հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել էր գործարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Գնումների մասին» օրենքով համարժեք գնման առարկայով մրցույթին մասնակցելու հնարավորության նախատեսումը՝ առանց գնման առարկային ներկայացվող նվազագույն չափորոշիչների նկարագրման օրենսդրական պահանջի, գործնականում իրավակիրառողին օրենքի սուբյեկտիվ մեկնաբանության լայն հայեցողություն է տալիս:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանվում է, որ գնման առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար, չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը, պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված է, որ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Ստացվում է՝ օրենսդրությամբ տարակերպ մեկնաբանման տեղիք տվող «համարժեք» տերմինի կիրառման արդյունքում գործարարը կարող է հայտնվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում հայտնվելու վտանգի առջև:

Հետևաբար, անհրաժեշտություն է առաջացել «Գնումների մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումները համապատասխանեցնել իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել, որ այն դեպքերում, երբ գնման առարկայի հատկանիշները հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը, սակայն այս դեպքում կոնկրետ պետք է նկարագրվեն գնման առարկային ներկայացվող նվազագույն չափորոշիչները: Այսինքն, մրցույթին «համարժեք» գնման առարկայով ներկայացող մասնակցին հասկանալի և կանխատեսելի պետք է լինեն հրավերով պահանջվող «համարժեք» գնման առարկային ներկայացվող պահանջները:

Նշված պահանջն ուղղակիորեն բխում է իրավական որոշակիության, օրենքում օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության, իրավահարաբերության մասնակիցների կողմից իրենց վարքագիծն օրենքի պահանջներին համապատասխանեցնելու գործնական հնարավորության և օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներից:

Սահմանադրական դատարանն իր 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ ՍԴՈ-1176 և 2015 թվականի հունիսի 9-ի թիվ ՍԴՈ-1213 որոշումներով արձանագրել է, որ իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության: Իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Մի շարք որոշումներում Սահմանադրական դատարանը, հիմնվելով Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա, գտել է, որ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (*res judicata*) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՍԴՈ-630, ՍԴՈ-753, ՍԴՈ-1120, ՍԴՈ-1322, ՍԴՈ-1270):

Այս հարցին իր իրավական դիրքորոշումներով լուծում է տվել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Օրինակ՝ «Սանդի թայմս» թերթն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1979 թ. ապրիլի 26-ի վճիռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գեկույցներ, հտ. 2, 1979 թ., էջ 45, պարբ. 47 (*Sunday Times v. United Kingdom*, European Court of Human Rights, 26 April 1979, European Human Rights Reports,

Vol. 2, 1979, p. 45, para. 47), Հիլդա Հաֆստեյնսդոտիրն ընդդեմ Իսլանդիայի (Hilda Hafsteinsdottir v. Iceland) գործով 2004 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 40905/98, կետ 56, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի հրատապ հիմնախնդիրները. Գիտագործնական ձեռնարկ դատավորների և դատական ծառայողների համար, Երևան 2011, էջ 15):

Օրենքի համապատասխանությունն իրավական որոշակիության սկզբունքին բխում է նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Մասնավորապես նշված օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հայեցողություն նախատեսող օրենքի առնչությամբ իր դիրքորոշումն է հայտնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ արձանագրելով, որ հայեցողություն նախատեսող օրենքն ինքնին համապատասխանում է կանխատեսելիության պահանջին՝ պայմանով, որ հայեցողության շրջանակը և դրա իրացման եղանակը սահմանվեն բավարար հստակությամբ՝ հաշվի առնելով քննարկվող միջոցի օրինական նպատակը՝ այդպիսով անձին տալով անհատական պաշտպանություն կամայական միջամտությունից<sup>562</sup>:

Գործարարը մրցույթի հրավերին ծանոթանալիս հստակ պատկերացում պետք է կազմի պահանջվող համարժեք գնման առարկային ներկայացվող չափորոշիչների վերաբերյալ: Հակառակ պարագայում՝ մրցույթին համարժեք գնման առարկայով ներկայանալու արդյունքում հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Ավելին, գործարարը կարող է հայտնվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև: Ընդ որում, տնտեսվարողը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Վերոգրյալից հետևում է, որ օրենքում անորոշ ձևակերպումը գործնականում կարող է հանգեցնել գործարարին երկու տարով տնտեսական գործունեություն իրականացնելու իրավունքից զրկելուն՝ վերջինիս պատճառելով ֆինանսական կորուստներ:

Հետևաբար, պետության պոզիտիվ պարտականությունն է անձանց տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքի համար նպաստավոր պայմանների ստեղծումն ու ապահովումը: Իհարկե այստեղ խստորեն պետք է պահպանվեն նաև խտրականության և մրցակցության սահմանափակման բացառման սկզբունքները:

Այսպիսով, «Գնումների մասին» օրենքում «համարժեք» գնման առարկային ներկայացվող նվազագույն չափորոշիչները կոնկրետ նկարագրելու պահանջը կապահովի իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքների պահանջները:

Գնումների մասին օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է նաև, որ «Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահված բողոքարկելու

<sup>562</sup> St' u Olssonն ընդդեմ Շվեդիայի (Olsson v. Sweden (No. 1)) գործով 1988 թվականի մարտի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10465/83, կետ 61: Գիլլոուն ընդդեմ Միացյալ Թագավորության (Gillow v. United Kingdom) գործով 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9063/80, կետ 51:

պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Հարկ է նկատել, որ օրենսդրությամբ յուրաքանչյուր անձի բողոքարկման հնարավորության տրամադրումը կարող է չարաշահումների տեղիք տալ: Բանն այն է, որ նշված հնարավորությունը կարող է օգտագործվել գնման գործընթացը կասեցնելու կամ ընդհանրապես չկայացած հայտարարելու նպատակով: Օրինակ՝ հնարավոր է նշված հնարավորությունն օգտագործվի հակառակորդ պետության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության համար անհրաժեշտ ապրանքների մատակարարումը կանխելու, հետաձգելու կամ ընդհանրապես չիրականացնելու նպատակով, ինչն ուղղակի կսպառնա պետության անվտանգությանը:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է սահմանափակել բողոքարկելու իրավունք ունեցող անձանց շրջանակը և սահմանել, որ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները կարող են բողոքարկել շահագրգիռ անձինք:

«Գնումների մասին» օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կամ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կատարած գործողության կամ անգործության հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

Վերոնշյալից հետևում է, որ նույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով օրենսդիրը մի կողմից բողոքարկման լայն հնարավորություն է տալիս յուրաքանչյուր անձի, իսկ մյուս կողմից նույն հոդվածի 4-րդ մասով դատական կարգով բողոքարկման հնարավորություն տալիս է այն անձին, ով շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել:

Կարծում ենք, որ վերոնշյալ կարգավորումները հակասական են և օրենքով շահագրգիռ անձի հասկացության սահմանումը և բողոքարկելու իրավասություն ունեցող անձանց շրջանակի հստակեցումը կվերացնի ակտուում առկա ներքին հակասությունները նույնպես: Առավել ևս, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով արդեն իսկ սահմանված է վնասի հատուցման սուբյեկտների շրջանակը: Այսպես, քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2010 թվականի սեպտեմբերի 7-ի թիվ ՍԴՈ-906 որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին համահունչ ՀՀ օրենսդրությունը հիմնված է այն տրամաբանության վրա, որ խախտված իրավունքների պաշտպանության արդյունավետությունը, ի թիվս այլոց, ներառում է անմիջականորեն դատարան դիմելու իրավունքն այն անձանց կողմից, որոնց իրավունքները խախտվել են:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ՝ 2008 թվականի ապրիլի 4-ի թիվ ՍԴՈ-747 որոշմամբ արտահայտել է դիրքորոշում առ այն, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն:

Հետևաբար, օրենսդրությամբ «շահագրգիռ անձ» հասկացության ձևակերպումը կհստակեցնի գնումների գործընթացում բողոքարկման հնարավորություն ունեցող անձանց շրջանակը, ինչն էլ կնվազեցնի գնման գործընթացն անհարկի կասեցնելու կամ ընդհանրապես չկայացած հայտարարելու ռիսկը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ մի շարք երկրներում գնումների գործընթացում բողոքարկման իրավունքը վերապահված է շահագրգիռ անձանց: Այսպիսի կարգավորումներ են նախատեսված մասնավորապես Բուլղարիայում, Վրաստանում, Ուզբեկստանում:

Կան երկրներ, որտեղ «շահագրգիռ անձ» հասկացության մեջ ներառված են նաև հասարակական կազմակերպությունները:

Այսպես՝ Բուլղարիայում «Պետական գնումների» ակտով պատվիրատուի գործողությունները բողոքարկելու իրավունք վերապահված է շահագրգիռ անձանց և մասնակիցներին<sup>563</sup>:

Ուզբեկստանում պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունները բողոքարկման հանձնաժողովին կամ դատարան կարող են բողոքարկել գնումների գործընթացի մասնակիցները և վերահսկողություն իրականացնող անձինք<sup>564</sup>:

Վրաստանում Գնումների հետ կապված վեճերը քննող խորհրդին կամ դատարան պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների դեմ բողոք ներկայացնելու իրավասություն ունեն գնումների գործընթացին մասնակցել ցանկացող անձինք, մասնակիցները, մատակարարները<sup>565</sup>:

Այսպիսով, իրավական որոշակիության և կանխատեսելիության սկզբունքների պահանջներից ելնելով, անհրաժեշտ է սահմանել, որ այն դեպքերում, երբ գնման առարկայի հատկանիշները հղում են պարունակում որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին և հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը, կոնկրետ պետք է նկարագրվեն գնման առարկային ներկայացվող նվազագույն չափորոշիչները: Գնումների գործընթացն անհարկի կասեցնելու կամ հետաձգելու դեպքերը կանխելու համար անհրաժեշտ է «Գնումների մասին» օրենքով հստակեցնել բողոքարկելու իրավասություն ունեցող անձանց շրջանակը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է «Գնումների մասին» օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ:*

<sup>563</sup> Հասանելի է <https://www.mi.government.bg/en/library/public-procurement-act-357-c25-m258-1.html> հղումով

<sup>564</sup> Հասանելի է <https://lex.uz/docs/5382983> հղումով

<sup>565</sup> Հասանելի է <https://matsne.gov.ge/ru/document/view/31252?publication=79> հղումով

#### **4. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտներ շինարարության թույլտվություն տրամադրելու գործընթացում**

2021 թվականի ընթացքում գործարարները Պաշտպանին բողոքներ են հասցեագրել այն մասին, որ շինարարության թույլտվություն տրամադրելու ոլորտում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտ է վարչական մարմինների իրականացրած ոչ պատշաճ վարչարարությունը:

Օրինակ՝ բողոքներից մեկով գործարարը տեղեկացրել է, որ Երևանի քաղաքապետարանը, արհեստական խնդիրներ առաջացնելով, չի երկարաձգում շինարարության թույլտվության ժամկետը և ավարտական ակտ չի տրամադրում:

Մեկ այլ բողոքով՝ գործարարը նշել է, որ համայնքի ղեկավարին հասցեագրած իր հարցումներին պատասխան չի տրվել: Դրանից բացի, համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված շինարարություն իրականացնելու նախագծային փաստաթղթերի փոփոխությունը ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում իրեն է ուղարկվել ամիսներ անց ուշացումով:

Այս գործով համայնքապետարանի պարզաբանումների համաձայն՝ գործարարը ստացել է շինարարական թույլտվություն հասարակական սպասարկման օբյեկտ կառուցելու համար: Այնուհետև, 2020 թվականի սեպտեմբերի 10-ին համայնքի ղեկավարի հաստատմանն է ներկայացրել նախագծային փոփոխություն: Դրանով նախատեսվում էր էական փոփոխությունների ենթարկել կառուցվող շինությունը: Շինարարություն իրականացնելու նախագծային փաստաթղթերի փոփոխության վերաբերյալ գործարարի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի գրությունը համայնքապետարան մուտքագրվել է 2020 թվականի սեպտեմբերի 30-ին, այն համաձայնեցվել է 2020 թվականի հոկտեմբերի 15-ին: Համաձայնեցված նախագծային փաստաթղթերի փոփոխությունը համայնքապետարանից ելք է արվել և կառուցապատողին է ուղարկվել 2021 թվականի մարտի 4-ին:

Ըստ համայնքապետարանի՝ 2020 թվականի արցախյան պատերազմի ընթացքում և ծմռան ամիսներին գործարարը շինարարական աշխատանքներ չի իրականացրել, այդ պատճառով չի ներկայացրել համայնքապետարան փաստաթղթերը ստանալու նպատակով: Շինարարական աշխատանքները սկսելուն պես գործարարը 2021 թվականի մարտի 1-ին գրություն է ուղարկել համայնքապետարան՝ պահանջելով իր ներկայացրած նախագծի փոփոխված օրինակները, որից հետո նախագծի 2 օրինակը փոստով ուղարկվել է նրան:

Համայնքապետարանի պարզաբանումների համաձայն՝ նախագծային փաստաթղթերի փոփոխությունները հաստատելու համար «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ կոնկրետ ժամանակահատված չի սահմանվում, ինչպես նաև չի սահմանվում, թե ինչ եղանակով և ինչ ժամկետում հաստատված նախագծային փաստաթղթերը պետք է տրամադրվեն կառուցապատողին:

Պետք է նշել, որ անձի պատշաճ վարչարարության իրավունքն ամրագրված է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերում, այն իր մեջ ներառում է գործերի անաչառ, արդարացի, ողջամիտ ժամկետում քննության, լսված լինելու և փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը:

ՀՀ Սահմանադրության «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում են մարդու և քաղաքացու պատշաճ վարչարարության իրավունքի մաս կազմող՝ վարչական մարմինների կողմից անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, տվյալ անձի՝ իրեն վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը, ինչպես նաև անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելուց առաջ անձի լսված լինելու իրավունքը:

Նշված սահմանադրական նորմերի վերլուծությունից հետևում է, որ պատշաճ վարչարարության իրավունքին համապատասխանում է այն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունը՝ ապահովելու այդ իրավունքի երաշխավորված իրացումը, որոնք Հայաստանի Հանրապետությունում ունեն վարչական մարմնի կարգավիճակ:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Պատշաճ վարչարարության մասին» թիվ CM/Rec(2007)7 հանձնարարականի 18-րդ հոդվածի համաձայն՝ վարչական որոշումները պետք է հրապարակվեն, որպեսզի շահագրգիռ անձինք հստակ և համակողմանի տեղեկատվություն ունենան դրանց մասին: Հրապարակումը կարող է իրականացվել անձնական ծանուցման միջոցով կամ կարող է կրել ընդհանուր բնույթ: Անձինք պետք է ծանուցվեն կայացված անհատական որոշումների վերաբերյալ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր են միայն հրապարակման ընդհանուր եղանակները: Բոլոր դեպքերում պետք է նշվեն բողոքարկման ընթացակարգերը և ժամկետները:

Օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է վարչարարության օրինականության սկզբունքը, ըստ որի՝ վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

Սա նշանակում է, որ վարչական մարմինները սահմանափակված են օրենքներով և նրանք ոչ միայն պետք է կիրառեն օրենքները, այլև չխախտեն դրանց պահանջները: Վարչական մարմինները պարտավոր են ղեկավարվել օրենքների պահանջներով, հակառակ դեպքում, նրանց գործունեությունը և դրա արդյունքում ընդունված իրավական ակտը կամ նրա գործողությունը կամ անգործությունն իրավաչափ լինել չեն կարող:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ շինարարության թույլտվությունը համայնքներում տալիս է համայնքի ղեկավարը քաղաքաշինական բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից համակարգվող քաղաքաշինական թույլտվությունների առցանց տրամադրման համակարգի միջոցով՝ Կառավարության սահմանած կարգով: Այն տրվում է ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրած մարմնի կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերը Կառավարության սահմանած կարգով համաձայնեցնելուց և կառուցապատողի կողմից դրանք հաստատելուց հետո (...):

Շինարարության թույլտվությունը տրվում է տվյալ օբյեկտի ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, իսկ նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե կառուցապատողը նախագծային փաստաթղթերի հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված մարմնին:

ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և փաստաթղթերի տրամադրման կարգի (այսուհետ՝ Կարգ) 98-րդ կետի համաձայն՝ կառուցապատողը, նախագծային փաստաթղթերի համաձայնեցման և միաժամանակ



շինարարության թույլտվության ստացման նպատակով դիմում է իրավասու մարմնին՝ կցելով շինարարության թույլտվության համար օրենքով սահմանված տեղական տուրքը վճարելու մասին անդորրագիրը, նախագծային փաստաթղթերը (...):

Վերոնշյալ կարգավորումներից հետևում է, որ շինարարության թույլտվության տրամադրման պարտադիր պայման է իրավասու մարմնի՝ համայնքի ղեկավարի կողմից նախագծային փաստաթղթերի համաձայնեցումը:

Կարգի 101-րդ կետի կարգավորումներից հետևում է, որ նախագծային փաստաթղթերում փոփոխությունները համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցնելուց և նոր շինարարության թույլտվություն տրամադրվելուց հետո դրանք «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է հանձնվեն կառուցապատողին: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է նույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասը սահմանում է, որ գրավոր վարչական ակտն ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Գրավոր վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում օրենքով սահմանված կարգով փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում այդ փոփոխությունները և լրացումները կատարած վարչական մարմինը պարտավոր է նույն հոդվածով սահմանված կարգով դրանք հանձնել վարչական ակտի հասցեատիրոջը:

Վերոգրյալից հետևում է, որ համայնքապետարանը յուրաքանչյուր դեպքում նախագծային փաստաթղթերի փոփոխությունները համաձայնեցնելու հետ միաժամանակ պետք է տրամադրի նոր շինարարության թույլտվություն:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի համաձայն՝ անձը պարտավոր չէ վարչական ակտի ընդունման մասին տեղեկանալ պաշտոնական տեղեկագրից (էլեկտրոնային եղանակով), այլ պետք է անձամբ ծանուցվի իր նկատմամբ կայացված վարչական ակտի և հարուցված վարչական վարույթի մասին (Տե՛ս Սերխիդեսը և Քրիստոֆորուն ընդդեմ Կիպրոսի (Serghides and Christoforou v. Cyprus) գործով 2002 թվականի նոյեմբերի 5-ի վճիռը, գանգատ թիվ 44730/98, կետ 69):

Սահմանադրական դատարանն իր թիվ ՍԴՈ-1189 որոշման մեջ ընդգծել է, որ «(...) շահագրգիռ սուբյեկտների կողմից (...) պատշաճ ծանուցված լինելը՝ վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non* (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստիև ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք է ուղղված լինեն (...) սուբյեկտի (...)՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը:

Սահմանադրական դատարանն իր մեկ այլ 2015 թվականի մայիսի 26-ի թիվ ՍԴՈ-1210 որոշմամբ արձանագրել է, որ պատշաճ ծանուցման ինստիտուտը, որը հնարավորություն է տալիս փաստացի իրազեկված լինել վարչական տուգանքների նշանակման մասին, կարևոր երաշխիք է անձի իրավունքների պաշտպանության հարցում, այդ թվում՝ ինչպես դատական, այնպես էլ պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության հարցերում:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ՎԴ/5086/05/09 վարչական գործով դիրքորոշում է հայտնել առ այն, որ վարչական մարմնի ծանուցման ձևն ընտրելու հայեցողությունը պետք է համապատասխանի «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին, որի համաձայն՝ հայեցողական լիազորություններ իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

Սահմանադրական դատարանն իր 2020 թվականի մայիսի 12-ի ՍԴՈ-1529 որոշմամբ արտահայտել է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ծանուցման հանձնումը պետք է կատարվի այնպիսի եղանակով, որը թույլ կտա հաստատել հասցեատիրոջ կողմից ակտն ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը, որը արդյունավետ կառուցակարգ է պատշաճ ծանուցման իրականացման համար, այսինքն՝ էական նշանակություն ունի ծանուցումն ստանալու հանգամանքը, այլ ոչ միայն այն ուղարկելու փաստի առկայությունը:

Իր հերթին Վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/2982/05/09 վարչական գործով արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ անձի՝ վարչական ակտին տեղեկանալու իրավունքը պաշտպանվում (երաշխավորվում) է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59-րդ և 60-րդ հոդվածներով նախատեսված երաշխիքային նորմերով:

Վերը նկարագրված դեպքում համայնքապետարանը նախագծային փաստաթղթերի փոփոխությունները համաձայնեցնելուց հետո շինարարության թույլտվություն չի տրամադրել, ավելին չի ապահովել անձի՝ նախագծի փոփոխությունները համաձայնեցված լինելու մասին տեղեկանալու իրավունքը՝ չուղարկելով այն Օրենքով սահմանված ժամկետում:

Ստացվում է, որ համաձայնեցված նախագծային փաստաթղթերի փոփոխությունները գործարարին օրենքով սահմանված ժամկետում չտրամադրելու արդյունքում վերջինս հնարավորություն չի ունեցել օրինական կարգով իրականացնելու շինարարական աշխատանքները և իրագործել իր ներդրումային ծրագիրը:

Անձի տնտեսական, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման գործում չափազանց կարևոր է, որ վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս գործի առավել սեղմ ժամկետում, հնարավորինս արագ որոշումներ կայացնի և ապահովի դրանց հասցեատերերի պատշաճ ծանուցումը:

Մինչդեռ, տվյալ դեպքում նախագծային փաստաթղթերի համաձայնեցված փոփոխությունների մասին տնտեսվարողը ծանուցվել է մոտ 6 ամիս անց, ինչը չափազանց երկար ժամկետ է իրականացրած ներդրումների և ծախսերի տեսանկյունից: Նախագծային փաստաթղթերի համաձայնեցված փոփոխությունների մասին տնտեսվարողին 6 ամիս ուշացումով ծանուցելու և շինարարության նոր թույլտվություն չտրամադրելու արդյունքում գործարարը հնարավորություն չի ունեցել իրականացնելու շինարարական աշխատանքները և իրացնելու ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իր իրավունքը:

Բողոքի քննարկման շրջանակներում ստացած գրավոր պարզաբանումների և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Պաշտպանն արձանագրել է, որ համաձայնեցված նախագծային փաստաթղթերի փոփոխությունը գործարարին ուշացումով ուղարկելու և նոր շինարարության

թույլտվություն չտրամադրելու արդյունքում խախտվել է վերջինիս պատշաճ վարչարարության իրավունքը:

Քննարկվող դեպքը մի օրինակ է, երբ իրավասու մարմինը պարտավոր է յուրաքանչյուր դեպքում ապահովել անձի պատշաճ վարչարարության իրավունքի իրացումը:

Այս գործով Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում, որում խախտումը կատարած իրավասու մարմնին առաջարկվել է ձեռնարկել արդյունավետ և բավարար միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան վարչարարություն ապահովելու համար, հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:

*Հաշվի առնելով վերոգրյալ՝ անհրաժեշտ է՝ գործարարների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացումն ապահովելու նպատակով շինարարության թույլտվությունների տրամադրման գործընթացում իրականացնել օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան վարչարարություն:*

**5. Արտակարգ դրության իրավական ռեժիմի և կարանտինի պայմաններում տնտեսվարողների գործունեությունն արգելելու որոշումների վարչական բողոքարկման արդյունավետ մեխանիզմների բացակայություն**

2021 թվականին շարունակվել է չլուծված մնալ արտակարգ դրության իրավական ռեժիմի և կարանտինի պայմաններում տնտեսվարողների գործունեությունն արգելելու պարագայում բողոքարկման մեխանիզմների անարդյունավետության, իսկ առանձին դեպքերում բացակայության հարցերը:

Բանն այն է, որ օրենսդրությամբ նմանատիպ իրավիճակներում վարչական մարմնի կայացրած ակտերի բողոքարկման արդյունավետ մեխանիզմներ սահմանված չեն: Դեռևս 2020 թվականին փոփոխություններ իրականացվեցին «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին», «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին», «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքներում, ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում:

Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի հատուկ վարույթներ բաժնում նախատեսվեց նոր գլուխ՝ կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործերի վարույթը: Փոփոխություններով սահմանվեց, որ նշված գործերը դատարանը քննում է դիմումը վարույթ ընդունելու պահից տասնօրյա ժամկետում: Սահմանվեց նաև, որ գործերի բանավոր քննության դեպքում դատարանը կարող է թույլատրել դիմողին մասնակցելու դատական նիստին տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ, եթե դատական նիստերի դահլիճում տեղադրված է նման հաղորդակցության հնարավորությունն ապահովող համակարգ:

Մինչդեռ, կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում պետական մարմինների կայացրած ակտերը, գործողությունները (անգործությունը) վարչական կարգով բողոքարկելու դեպքերի համար հատուկ ընթացակարգ չսահմանվեց:

Ստացվում է՝ կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վերաբերյալ դատական կարգով բողոք ներկայացնելու և բողոքի քննության համար հատուկ ժամկետներ օրենսդրությամբ սահմանվել են, իսկ վարչական կարգով բողոք ներկայացնելու դեպքերի համար գործում են օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգն ու ժամկետները:

Մինչդեռ, կարանտինի պայմաններում կիրառվող միջոցառումների շրջանակներում վարչական մարմինների կայացրած ակտերը, գործողությունները (անգործությունը) վարչական կարգով բողոքարկելու և բողոքը քննելու համար հատուկ մեխանիզմների, երաշխիքների օրենսդրական ամրագրումը կապահովի տնտեսվարողի պատշաճ վարչարարության իրավունքը:

Անձի տնտեսական գործունեությամբ զբաղվելու և պատշաճ վարչարարության իրավունքների երաշխավորման նպատակով պետությունը պետք է սահմանի արտակարգ դրության իրավական ռեժիմի և կարանտինի պայմաններում կիրառվող միջոցառումների շրջանակներում վարչական մարմինների կայացրած ակտերը, գործողությունները (անգործությունը) վարչական կարգով բողոքարկելու և բողոքը քննելու համար հատուկ մեխանիզմներ և երաշխիքներ:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝ օրենսդրությամբ նախատեսել արտակարգ դրության իրավական ռեժիմի և կարանտինի պայմաններում վարչական բողոքարկման արդյունավետ ընթացակարգեր:*

## **6. ՀՀ ապրանքներ ներմուծելիս ավելացված արժեքի հարկի վճարման պահանջը որպես գործարարների ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտ**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ԵՏՄ անդամ պետություններից ՀՀ ապրանքներ ներմուծելիս սահմանին մաքսային ծառայողների կողմից ավելացված արժեքի հարկ վճարելու պահանջներ ներկայացնելու և ապրանքները բաց չթողնելու վերաբերյալ:

Բողոքներ են ստացվել նաև հարկային պարտավորությունների հիմքով ապրանքները ՀՀ սահմանին բաց չթողնելու վերաբերյալ:

Այսպես, բողոքներից մեկով գործարարը տեղեկացրել է, որ օրեր շարունակ մաքսային ծառայության աշխատակիցները ՀՀ տարբեր մաքսակետերում բաց չեն թողնում ԵՏՄ անդամ երկրից ՀՀ ներմուծած ապրանքները տեղափոխող բեռնատարները: Գործարարի տեղեկացմամբ, որպես բաց չթողնման պատճառ, նշվում է նախկինում չմարած հարկային պարտավորությունների առկայությունը:

Գործարարի պնդմամբ՝ մաքսային ծառայության աշխատակիցների պահանջներն անհիմն են և ապրանքի բաց չթողնման արդյունքում կրում է ֆինանսական կորուստներ:

Մեկ այլ բողոքով գործարարը տեղեկացրել է, որ թեև ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը, մաքսային ծառայության աշխատակիցներն ապրանքը բաց չեն թողնում և պահանջում են վճարել ավելացված արժեքի հարկի գումարները:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՊԵԿ-ի պարզաբանումների համաձայն՝ ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչությունն իրեն վերապահված գործառույթների շրջանակներում իրականացրած վարչարարական գործիքների, հարկային և մաքսային հսկողությանը զուգահեռ, նաև որպես իրավապահ մարմին ամենօրյա միջոցառումներ է իրականացնում հարկային և մաքսային իրավախախտումների և հանցագործությունների կանխման, խափանման և բացահայտման ուղղությամբ: Այդ առումով ՊԵԿ հետաքննության և օպերատիվ հետախուզության վարչություն պարբերաբար ստացվում են օպերատիվ տվյալներ այն մասին, որ տարբեր ֆիզ. անձինք և որոշ կազմակերպությունների իրական կամ փաստացի շահառուներ հարկեր չվճարելու կամ կանխամտածված անվճարունակության հատկանիշներ ստեղծելու ուղղակի դիտավորությամբ մշակում են հանցավոր մեխանիզմներ և փորձում իրացնել դրանք: Այդ առումով այդ անձինք այլ անձանց անուններով (հիմնականում սոցիալապես անապահով) գրանցում են կազմակերպություններ կամ Ա/Ձ-ներ, որից հետո նոր գրանցված Ա/Ձ-ի կամ կազմակերպությունների անվամբ ԵՏՄ անդամ երկրներից ՀՀ են ներկրում տարբեր տեսակի ապրանքներ և չեն ներկայացնում համապատասխան հարկային հայտարարագրեր կամ ներկայացնում են հայտարարագրեր, համապատասխան փաստաթղթեր՝ չվճարելով հարկային պարտավորություններ:

Ըստ ՊԵԿ-ի՝ վերոնշվածից և ստացված օպերատիվ տվյալներից ելնելով, տվյալ տնտեսվարող սուբյեկտների շահառուների նախկին և ներկա գործունեությունը հաշվի առնելով՝ վարքագծում առկա են եղել ռիսկեր, որի հետևանքով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ իրականացվում են օպերատիվ հետախուզական միջոցառումներ:

Իհարկե հասկանալի է, որ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակներից է հարկային մարմին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջների խախտումների նախազգուշացումը, կանխումը, խափանումն ու բացահայտումը: Սակայն, այդ գործողությունները պետք է իրականացվեն համաչափության սկզբունքի պահպանմամբ, որի արդյունքում չի ոտնահարվի նաև անձի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

ՀՀ հարկային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգրք) ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

Բացի այդ, Օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների ներմուծման դեպքում (այդ թվում՝ Օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև Օրենսգրքի 79-րդ հոդվածով սահմանված դեպքերում) հարկ վճարողը պարտավոր է մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի

Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ հարկային մարմին ներկայացնել միայն հետևյալ փաստաթղթերը.

1) ներմուծողի լրացրած՝ ներմուծման հարկային հայտարարագիրը.

2) ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ թղթային կրիչով (չորս օրինակից) և էլեկտրոնային տարբերակով կամ ապրանքների ներմուծման և անուղղակի հարկերի վճարման (կամ անուղղակի հարկերից ազատման, անուղղակի հարկերն այլ կարգով վճարելու) մասին ներմուծողի լրացրած հայտարարությունը՝ էլեկտրոնային տարբերակով՝ հարկ վճարողի էլեկտրոնային (թվային) ստորագրությամբ:

Համաձայն Օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի՝ ԱԱՀ վճարողները Օրենսգրքի 70-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված՝ պետական բյուջե վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները պետական բյուջե են վճարում մինչև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ: Նույն հոդվածի 6-րդ հոդվածով սահմանված է, որ ԵՏՄ անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող՝ ԵՏՄ ապրանքի կարգավիճակ ունեցող ապրանքների համար Օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են վճարվում մինչև ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու (Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելու) օրն ընդգրկող ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ՝ որպես հարկային մարմին վճարվող գումարներ (...):

Վերոգրյալ կարգավորումների հաշվառմամբ՝ յուրաքանչյուր կասկածելի դեպքում ԱԱՀ վճարելու պահանջ ներկայացնելը կարող է հանգեցնել անձի սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքների անհամաչափ սահմանափակմանը: Գործարարը, վստահելով գործող կարգավորումներին, ապրանք է ներմուծում ՀՀ այն իրացնելու և մինչև հաջորդող ամսվա 20-ը ԱԱՀ-ի գծով պարտավորությունները կատարելու ակնկալիքով, սակայն սահմանին նրան ներկայացնում են ԱԱՀ վճարելու պահանջ: Նմանատիպ է իրավիճակը նաև հարկային պարտավորությունների չկատարման կասկածի հիմքով գործարարին պատկանող ապրանքը բաց չթողնելու պարագայում:

ՀՀ հարկային օրենսգրքի համաձայն՝ հարկային պարտավորությունը հարկային օրենսգրքով և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված վերջնաժամկետներում չկատարվելու կամ մասնակի կատարվելու դեպքում հարկային մարմինն իրավասու է ձեռնարկել հարկային պարտավորությունների կատարումն ապահովող միջոցներ: ՀՀ հարկային օրենսգրքով հարկային մարմինն իրավունք է վերապահված հարկային պարտավորությունների գանձումն ապահովելու նպատակով հարկային օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով արգելանք դնել հարկ վճարողի գույքի վրա:

Սակայն, յուրաքանչյուր դեպքում ցանկացած գործողություն և պահանջ պետք է իրականացվի համաչափության սկզբունքի պահպանմամբ և չպետք է պարունակի անձանց սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքին անհամաչափ միջամտության ռիսկեր:

ՄԻԵԴ նախադեպային պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՄԻԵԿ կից Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով որպես «գույք» է որակվել սեփական գույքից շահույթ ստանալու իրավունքը:

Անդրադառնալով հարկային քաղաքականությանը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Ն.Կ.Մ.-ն ընդդեմ Հունգարիայի գործով նշել է, որ սոցիալական և տնտեսական օրենսդրության, այդ թվում՝ հարկային օրենսդրության ոլորտում պետությունն ունի հայեցողության լայն շրջանակ: Միննույն ժամանակ, դատարանը նշել է նաև, որ այս ոլորտի միջոցների կիրառումը պետք է լինի խտրականության բացառման և համաչափության պահանջներին համապատասխան<sup>566</sup>:

Հենտրիչն ընդդեմ Ֆրանսիայի գործով դատարանն անդրադարձել է «օրենքին» ներկայացվող պահանջներին (գործի փաստական հանգամանքների համաձայն՝ հարկային մարմնի կողմից իրացվել էր չափազանց ցածր գնով գնված ապրանքը գնելու նախապատվության իրավունքը), արձանագրելով, որ՝ «Այն դեպքում երբ օրենսդրությունը թույլ է տալիս իշխանություններին ցուցաբերել հայեցողություն, օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ, կանխատեսելի, ապահովվի հիմնարար ընթացակարգային երաշխիքները (մրցակցային վարույթը)»: «Դիմումատուները պետք է ունենան ողջամիտ հնարավորություն պատասխանատու իշխանություններին իրենց բողոքը ներկայացնելու՝ արդյունավետ կերպով հերքելու համար այն եղանակները, որոնք, ըստ իրենց, միջամտություն են իրենց իրավունքներին»<sup>567</sup>:

Մեկ այլ գործով ՄԻԵԴ-ը հանգել է այն եզրահանգման, որ «Օրենքը պետք է լինի բավականաչափ հստակ և կանխատեսելի իր հետևանքներում, իսկ սեփականությունից զրկելը պետք է ուղեկցվի համապատասխան դատավարական երաշխիքներով: Այսինքն՝ սեփականության իրավունքին միջամտելը պետք է միաժամանակ լինի բավականաչափ կարգավորված օրենքով, որը պահանջում է բավականաչափ հասանելիություն, հստակություն և կանխատեսելիություն ներպետական օրենքում և պրակտիկայում» (Carbonara et Ventura c. Italie (2000)):

Ջեյմսը և մյուսներն ընդդեմ Մեծ Բրիտանիայի գործով ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ «Բավարար չէ, որպեսզի սեփականության իրավունքից զրկման եղանակը հետապնդի «հանրության շահի» իրավաչափ նպատակը, նաև պետք է գոյություն ունենա համաչափության ողջամիտ հարաբերակցություն կիրառված միջոցների և դրված նպատակների միջև»<sup>568</sup>:

«Համաչափությունը կխախտվի այն դեպքում, եթե շահագրգիռ անհատը ենթարկվի «հատուկ և բացառիկ պարտավորության»» (Sporrong and Lönnroth v. Sweden (1982)):

Համաչափության սկզբունքին անդրադարձել է նաև Կանադայի Գերագույն դատարանը, որն իր 1986 թվականի փետրվարի 28-ի որոշման մեջ տալիս է այն հիմնարար չափանիշները, որոնց հիման վրա իրավունքների և ազատությունների սահմանափակումները, որոնք երաշխավորվում են Կանադական խարտիայով, կարող են ճանաչվել թույլատրելի: Համաձայն այդ որոշման՝ համաչափությունն ունի հետևյալ 3 բաղադրիչները՝

<sup>566</sup> Տե՛ս Ն.Կ.Մ.-ն ընդդեմ Հունգարիայի (N.K.M. v. Hungary) գործով 2013 թվականի մայիսի 14-ի վճիռը, գանգատ թիվ 66529/11, կետ 65

<sup>567</sup> Տե՛ս Հենտրիչն ընդդեմ Ֆրանսիայի (Hentrich v. France) գործով 1994 թվականի սեպտեմբերի 22-ի վճիռը, գանգատ թիվ 13616/88

<sup>568</sup> Տե՛ս Ջեյմսը և մյուսները ընդդեմ Մեծ Բրիտանիայի (James and others v UK) 1984 թվականի մայիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 8793/79

1. կիրառված միջոցները պետք է նախատեսված լինեն նպատակին հասնելու համար, այսինքն՝ դրանք պետք է կապված լինեն նպատակի հետ,
2. ընտրված միջոցները հնարավորինս քիչ պետք է վնասեն իրավունքներն ու ազատությունները,
3. պետք է լինի համաչափություն միջոցների, հետևանքների և նպատակի միջև<sup>569</sup>:

Եվրոպական դատարանը Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով նշել է, որ կիրառվող ցանկացած «ձևականություն», «սահմանափակում» կամ «տուգանք» պետք է համաչափ լինեն հետապնդվող օրինական նպատակին<sup>570</sup>: Այս հայեցակարգը հատկապես կարևոր է մարդու իրավունքներից ժամանակավոր կամ մշտական սահմանափակումներ առումով:

Իհարկե, հասկանալի է, որ հարկային հսկողության նպատակն է հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերի պահանջներին դրանց կատարման համապատասխանությունը պարզելը, այդ պահանջների խախտումները կանխելն ու խափանելը, դրանց հայտնաբերելը, հարկային մարմնին հսկողության լիազորություններ վերապահող իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով հարկային պարտավորությունները ճշգրտելը և այլն: Սակայն, տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելու քաղաքականությունը պետք է առավելապես ունենա կանխարգելիչ, այլ ոչ պատժիչ ուղղվածություն: Հետևաբար, ապրանք ներմուծելիս ԱԱՀ վճարելու պահանջը պետք է համաչափ լինի հանգամանքներին և չսահմանափակի գործարարների սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքները:

Բանն այն է, որ գործարարները, վստահելով գործող կարգավորումներին, ապրանք են ներմուծում այն իրացնելու, այնուհետև հարկային պարտավորությունները կատարելու նպատակով, սակայն սահմանին ԱԱՀ վճարելու պահանջը նրանց համար առաջացնում է ֆինանսական խնդիրներ: ՊԵԿ մարմինների նման գործելակերպի հետևանքով կարող են տուժել նաև բարեխիղճ գործարարները:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է սահմանել հարկային պարտավորությունների կատարմանն ուղղված գործողությունների հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք չեն սահմանափակի գործարարների սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքները և կլինեն կանխարգելիչ:*

**7. Խաղաղապարակների սարքավորումների, զբոսայգիների և մարզահրապարակների արտադրության ոլորտում պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը որպես ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի իրացման խոչընդոտ**

<sup>569</sup> Տե՛ս Կանադայի Գերագույն դատարանի R. v. Oakes 1986 թվականի փետրվարի 28-ի թիվ 1986.1 SCR 103.

<sup>570</sup> Տե՛ս Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության (Handyside v. the United Kingdom) գործով 1976 թվականի դեկտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 5493/72, կետ 49:



2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոք է հասցեագրվել խաղահրապարակների սարքավորումների, զբոսայգիների և մարզահրապարակների արտադրության ոլորտում առկա մի շարք հարցերի վերաբերյալ:

Բողոքի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերը նշված ոլորտում առկա են համակարգային բնույթ կրող խնդիրներ:

Բանն այն է, որ խաղահրապարակների սարքավորումների, զբոսայգիների և մարզահրապարակների արտադրության ոլորտում օրենսդրական թերի կարգավորումների հետևանքով պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը խոչընդոտներ է ստեղծում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող սուբյեկտների համար:

Գործարարը բողոքով տեղեկացրել է, որ դեռևս 2002 թվականից զբաղվում է խաղահրապարակների, զբոսայգիների և մարզահրապարակների սարքավորումներ համալիր սարքավորումների, խաղահրապարակների համալիր սարքավորումների մետաղական կոնստրուկցիաների արտադրությամբ: Դրանից բացի, ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից պետական գրանցամատյանում գրանցվել և այդ կապակցությամբ ստացել է խաղահրապարակների համար համալիր սարքավորումների և մանկական խաղահրապարակների սարքավորումների 9 տարբերակների վերաբերյալ արդյունաբերական նմուշի վկայագրեր, որոնցով փաստացի գրանցված է 15 անուն (տեսակ) սարքավորումների և դրանց ենթատեսակների հեղինակային իրավունքները:

Գործարարը նշել է, որ մանկական խաղահրապարակների, զբոսայգու սարքավորումների և զբոսայգիներում տեղադրվող մարզահրապարակների ու մարզական սարքերի, խաղահրապարակների համալիր սարքավորումների պատրաստման և տեղադրման գործընթացներն ամբողջությամբ դուրս են մնացած պետական մարմինների կամ համապատասխան մասնագիտացված ու ստուգող մարմինների իրավասության շրջանակներից:

Ըստ գործարարի՝ գործնականում ցանկացած անձ, ով ունի զոդում կատարելու կամ ներկելու հմտություն, կարող է ձեռք բերել երկրորդային օգտագործման մետաղի կտորներ, մի մասը նաև կորոզիայի ենթարկված, ձեռք բերել ցինկային հիմքով թիթեղներ, դրանք զոդել կամ այլ կերպ ամրացնել իրար, պատրաստել մանկական խաղահրապարակների, զբոսայգու սարքավորումների, զբոսայգիներում տեղադրվող մարզահրապարակներ և մարզական սարքեր, խաղահրապարակների համալիր սարքավորումներ, դրանք ներկել ցանկացած ներկանյութով և տեղադրել իրեն նպատակահարմար վայրում: Հայաստանում նման գործունեությամբ զբաղվում են մի շարք անձինք և նրանց գործունեության նկատմամբ որևէ հսկողություն չի իրականացվում: Մինչդեռ, նմանատիպ սարքավորումների պատրաստման, տեղադրման, ֆունկցիաների, օգտագործվող դետալների և շինանյութի, ներկանյութի նկատմամբ պետք է լինի պետական իրավասու մարմինների հսկողություն:

Բարձրացված հարցի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը դեռևս 2017 թվականի մայիսի 17-ին ընդունել է «Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ ՏԿ 042/2017) տեխնիկական կանոնակարգը:

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 686-Ն որոշմամբ նշված կանոնակարգի, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 113 որոշմամբ հաստատված «Ատրակցիոնների անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 038/2016)

Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը (այսուհետ նաև՝ Տեսչական մարմին):

ԵՏՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների և ծածկույթի արձանագրված դեպքերի և դրանք կանխելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների մասին Պաշտպանի կողմից պարզաբանումներ են պահանջվել Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնից: Ներկայացված պարզաբանումների համաձայն՝ մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների և ծածկույթի փորձարկումներ կարող են կատարվել համապատասխանության գնահատում իրականացնող մարմինների կողմից: Տեսչական մարմինը մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների և ծածկույթի համապատասխանության սերտիֆիկատներ չի տրամադրում:

Տեսչական մարմնի պարզաբանումների համաձայն՝ մինչ օրս վերոհիշյալ տեխնիկական կանոնակարգերը (այդ թվում՝ «Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 042/2017) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգը), չնայած, ենթարկվել են թարգմանության, սակայն դեռ պաշտոնապես չեն հրապարակվել:

Դրանից բացի, մանկական խաղահրապարակներում Տեսչական մարմինը չի իրականացրել ստուգումներ՝ անհրաժեշտ օրենսդրական հիմքերի, մասնավորապես՝ համապատասխան ստուգաթերթի բացակայության պատճառով: Հետևաբար՝ չեն կիրառվել նաև վարչական պատասխանատվության միջոցներ: Տեսչական մարմինը ներկայում մշակում է ստուգաթերթեր՝ Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով: Ստուգաթերթերի ցանկը կընդգրկի ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ Տեսչական մարմնի վերահսկողությանը վերապահված բոլոր տեխնիկական կանոնակարգերը, այդ թվում նաև՝ «Մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների անվտանգության մասին» (ԵԱՏՄ ՏԿ 042/2017) Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգը:

Պաշտոնական հրապարակումից հետո ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը կիրականացնի բոլոր այն տեխնիկական կանոնակարգերին վերաբերող ստուգաթերթերի վերջնական մշակումը, որոնց պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի N 71-Ն որոշմամբ հանձնարարված է իրեն:

Խնդիրն այն է, որ բարձրացված հարցը վերաբերում է ոչ միայն գործարարների իրավունքներին, այլև երեխաների կյանքի և առողջության համար անվտանգ պայմանների ապահովմանը:

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգում սահմանված են մանկական խաղահրապարակների համար նախատեսված սարքավորումների և ծածկույթների, ինչպես նաև դրանց հետ կապված նախագծման, արտադրության, մոնտաժի, շահագործման, պահպանման, փոխադրման և օգտագործման անվտանգության պահանջները: Հետևաբար, որակյալ, համապատասխանության սերտիֆիկատներով մանկական խաղահրապարակների առկայությունը, ինչպես նաև

տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական պատշաճ վերահսկողությունը մի կողմից կխթանի տեղական արտադրողի գործունեությանը, մյուս կողմից՝ կապահովի երեխաների կյանքի և առողջության համար անվտանգ պայմաններ:

Մարդու իրավունքների պաշտպանը սա համարում է համակարգային նշանակության հարց և արձանագրում է, որ այն պետք է ստանա կարգավորում: Կոնկրետ իրավիճակում խոսքը գնում է անձի՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և առողջության իրավունքների պաշտպանության մասին:

Պետությունը առաջնային պարտավորություն ունի պաշտպանելու և խրախուսելու մարդու իրավունքները: Մարդու իրավունքների ոլորտում պետության պարտավորությունները սահմանված և երաշխավորված են միջազգային իրավունքով<sup>571</sup>: Պետությունը առողջության իրավունքի պաշտպանությունն իրականացնում է հարգելու, պաշտպանելու և իրագործելու միջոցով<sup>572</sup>:

Հետևաբար, խաղահրապարակների սարքավորումների, զբոսայգիների և մարզահրապարակների անվտանգության ապահովմանն ու առողջության պահպանմանն ուղղված պաշտպանիչ միջոցների առկայության, պահպանման և շահագործման նկատմամբ անհրաժեշտ է իրականացնել պատշաճ պետական վերահսկողություն: Քանի որ, օրենսդրական կարգավորումների ամբողջականության խնդրի կարգավորումից բացի, կարևոր է իրավունքների պաշտպանության համար արդյունավետ և կանխատեսելի կառուցակարգերի առկայությունը:

Վերոգրյալի համատեքստում պետք է նշել, որ օրենսդրական թերի կարգավորումները կամ պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը չեն կարող անձի իրավունքների խախտման պատճառ դառնալ:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է

1. *հնարավոր սեղմ ժամկետում մշակել և ընդունել տեխնիկական կանոնակարգերին վերաբերող ստուգաթերթերը,*
2. *ապահովել տեխնիկական կանոնակարգի պահանջների պահպանման նկատմամբ պետական պատշաճ վերահսկողությունը:*

## **8. Վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպմանը ներկայացվող պահանջների պահպանման նկատմամբ պատշաճ հսկողության բացակայություն**

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպմանը ներկայացվող պահանջների պահպանման վերաբերյալ:

Մասնավորապես, բողոքները վերաբերում են Երևան քաղաքում վճարովի ավտոկայանատեղերը համապատասխան տեխնիկական ցուցանակներով ապահովված լինելուն, տրանսպորտային միջոցների երթևեկության համար նախատեսված երթևեկելի մասում վճարովի կայանատեղեր

<sup>571</sup> Customary law is evidence of a general practice of States accepted as law and followed out of a sense of legal obligation.

<sup>572</sup> <https://www.ohchr.org/Documents/Publications/Factsheet31.pdf>

երթևեկելի գոտու օրենքով սահմանված չափերի հաշվին կառուցապատմանը, երթևեկության բանուկ հատվածում առևտրային գործունեության համար տարածք առանձնացնելու իրավաչափությանը, ճանապարհի բանուկ հատվածներում վճարովի կայանատեղեր սահմանելուն և այլն:

Բարձրացված հարցի ուսումնասիրությամբ պարզվել է, որ Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի «Երևանի քաղաքային համայնքում ավտոկայանատեղեր կազմակերպելու մասին» թիվ 561-Ն որոշման 6-րդ կետով ավտոկայանատեղերի կահավորմանը ներկայացված է նաև ավտոկայանատեղի տարածք ավտոտրանսպորտային միջոցների մուտք գործելու, տարածքից դուրս գալու մատչելի և անվտանգ ուղիների պահանջը:

Երևան քաղաքի ավագանու վերանշյալ որոշման 1-ին կետով սահմանված են Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոկայանատեղերի կազմակերպման պայմանները, որոնց համաձայն՝ ավտոկայանատեղերի կազմակերպվում են

1) երթևեկելի մասերում՝ միայն այն փողոցներում, որտեղ երթևեկությունն իրականացվում է յուրաքանչյուր ուղղությամբ երկու և ավելի գոտիներով, իսկ այն փողոցներում, որտեղ երթևեկությունն իրականացվում է յուրաքանչյուր ուղղությամբ մեկական գոտիով (օրինակ՝ Գյուլբենկյան փողոց), ավտոկայանատեղին կազմակերպել երթևեկելի մասից դուրս՝ տեղային լայնացում ունեցող հատվածներում (գրպանիկներում),

2) միակողմ երթևեկություն ունեցող փողոցներում՝ միայն երկու և ավելի գոտիների առկայության դեպքում, և այդ հատվածներում՝ ավտոկայանատեղի հանդիպակաց կողմում, անկախ երթևեկության գոտիների քանակից, արգելելով ավտոտրանսպորտային միջոցների կանգառն ու կայանումը,

3) հրապարակներում ավտոկայանատեղեր կազմակերպելիս դրանց սահմանները համապատասխան գծանշումներով կամ երթևեկության կազմակերպման այլ տեխնիկական միջոցներով առանձնացնել երթևեկելի մասից և կանոնակարգել դեպի կայանատեղ մուտքի ու ելքի հատվածները,

4) վճարովի ավտոկայանատեղերում նախատեսել առանձին հատվածներ 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող ավտոտրանսպորտային միջոցների կայանման համար: Նշված ավտոտրանսպորտային միջոցների համար փողոցների յուրաքանչյուր ուղղության վրա և հրապարակներում, որտեղ նույն կարգին համապատասխան կազմակերպվում է վճարովի ավտոկայանատեղեր, նախատեսել 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձանց կողմից վարվող կամ այդպիսի հաշմանդամներ կամ հաշմանդամի կարգավիճակ ունեցող երեխա տեղափոխող առնվազն 1 (մեկ) ավտոտրանսպորտային միջոցի կայանման համար հատված:

Նույն որոշման 3-րդ կետի համաձայն՝ Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ավտոկայանատեղեր կարող են կազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաքաշինական, շինարարական և այլ նորմերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով չթույլատրվող գոտիների կամ հատվածների, հաշվի առնելով տվյալ տարածքի առանձնահատկությունները և ավտոկայանատեղ կազմակերպելու նպատակահարմարությունը, ընդ որում՝

1) փողոցի երթևեկելի գոտում՝ միայն երթևեկելի մասի եզրի երկարությամբ ավտոտրանսպորտային միջոցների հաջորդական տեղաբաշխմամբ՝ պայմանով, որ չարգելափակվեն բակային մուտքերը:

2) փողոցի երթևեկելի մասի տեղային լայնացում ունեցող հատվածում՝ ավտոտրանսպորտային միջոցների՝ միմյանց նկատմամբ զուգահեռ տեղաբաշխմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 113-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Նույն որոշման 7-րդ կետի համաձայն՝ ավտոկայանատեղի կահավորման և գետնանշման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան՝ ավտոկայանատեղի կազմակերպչի կողմից, իր միջոցների հաշվին:

Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպումն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի հետ կնքված պայմանագրի հիման վրա և ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունների մատուցման պարտականությունները, պահանջները և վերահսկման մեխանիզմները սահմանված են պայմանագրով: Սակայն, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ վճարովի ավտոկայանատեղերի կազմակերպման նկատմամբ պատշաճ վերահսկողություն չի ցուցաբերվում, ինչի արդյունքում հաճախ դրանք կազմակերպվում են փողոցների բանուկ հատվածներում և խոչընդոտներ են ստեղծում ավտոմեքենաների անվտանգ երթևեկության համար:

Վճարովի ավտոկայանատեղերը կազմակերպվում են համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման տարածքներում, ինչը ենթադրում է, որ Երևանի քաղաքապետարանը պետք է ապահովի պատշաճ վերահսկողությունը դրանց կազմակերպման նկատմամբ:

Մինչդեռ, վճարովի ավտոկայանատեղիները շատ դեպքերում կազմակերպվում են նեղ փողոցներում, որտեղ մեքենաների առկայությունն արդեն խցանում է առաջացնում: Դրանից բացի, աղբարկղերը տեղադրվում են գծանշված կայանատեղիներում, ինչն էլ անարդյունավետ է դարձնում գծանշման առկայությունը:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

1) ավտոկայանատեղ կազմակերպելու յուրաքանչյուր դեպքում ուսումնասիրել քաղաքաշինական, շինարարական և այլ նորմերի պահանջների, ինչպես նաև տարածքի առանձնահատկությունների և ավտոկայանատեղ կազմակերպելու նպատակահարմարության պահանջների պահպանումը,

2) ներդնել արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ նշված պահանջների պահպանման նկատմամբ:

## **9. Ապրանքը մաքսագերծելիս գործարքի գնի մեթոդը չկիրառելը**

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է ապրանքի գործարքի գնի մեթոդով մաքսազերծումն անհիմն մերժելու խնդրի մասին<sup>573</sup>:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը կրկին բողոքներ է ստացել այն մասին, որ ՊԵԿ-ի մաքսային ծառայությունը տրանսպորտային միջոցների ձեռքբերման գնով մաքսազերծումը մերժում է: Որպես պատճառաբանություն՝ նշվում է փաստաթղթերում ոչ էական, շտկելի թերությունների առկայությունը, ինչպես նաև ներկայացված փաստաթղթերի արժանահավատության վերաբերյալ մաքսային մարմնի ունեցած կասկածները:

Այս խնդրի մասին տարիներ շարունակ անդրադարձել է տարեկան հաղորդումներում:

Բանն այն է, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքին, որի՝ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդը սահմանող 78-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ եթե մաքսային մարմինները հիմքեր ունեն համարելու, որ հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են, ապա նրանք այդ փաստաթղթերի հավաստիության ստուգման նպատակով օգտվում են նույն օրենքի 79-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկատվությունից՝ նշյալ օրենքի 86-րդ հոդվածով նախատեսված մերժման ժամանակ գրավոր ներկայացնելով մերժման հիմք համարվող տեղեկատվությունը և դրա աղբյուրները:

Այդ օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասում տեղ գտած «մաքսային մարմինները հիմքեր ունեն համարելու, որ հայտարարատուի ներկայացրած փաստաթղթերը հավաստի չեն կամ կեղծ են» ձևակերպումը խնդրահարույց է որոշակիության տեսանկյունից, քանի որ թույլ չի տալիս քաղաքացիներին դրա հետ համատեղելու իրենց վարքագիծը և հայեցողական վարքագիծ թույլատրելու պատճառով ստեղծում է կամայական մոտեցման հնարավորություն:

ՀՀ սահմանադրական դատարանը 2014 թվականի թիվ ՍԴՈ-1176 որոշմամբ արտահայտել է հստակ դիրքորոշում այն մասին, որ մաքսազերծման ժամանակ մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդն ընդհանուր կանոն է, իսկ մաքսային արժեքի որոշման այլ մեթոդները՝ բացառություն ընդհանուր կանոնից, մինչդեռ, գործնականում հակառակ պատկերն է:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը նույնպես ցույց է տալիս, որ տարբեր երկրներում ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար մաքսային մարմիններին լիազորություն չի ընձեռվում սեփական հայեցողությամբ որոշելու հայտարարատուի կողմից ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը:

Այսպես, Եվրոպական Միության Մաքսային օրենսգրքով, Նորվեգիայի, Ուկրաինայի, Վրաստանի օրենսդրությամբ հստակ սահմանված են ապրանքների մաքսային արժեքի որոշման մեթոդները<sup>574</sup>: Ընդ որում, նշված իրավական ակտերում սահմանվում է, որ ապրանքների մաքսային

<sup>573</sup> Տե՛ս օրինակ՝ 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 752-753:

<sup>574</sup> Տե՛ս «Եվրոպական պառլամենտի և խորհրդի կանոնները», հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32013R0952&from=LV> հղումով, Նորվեգիայի «Մաքսային տուրքերի և ապրանքների տեղափոխման մասին ակտ» [https://www.toll.no/contentassets/71f70c1b980a45b8b57098ded3069fd9/act\\_on\\_customs\\_duties\\_and\\_movement\\_of\\_goods\\_0718.pdf](https://www.toll.no/contentassets/71f70c1b980a45b8b57098ded3069fd9/act_on_customs_duties_and_movement_of_goods_0718.pdf), Վրաստանի Հանրապետության հարկային օրենսգրք, հասանելի է <https://matsne.gov.ge/en/document/download/1043717/105/ru/pdf> հղումով և այլն

արժեքի յուրաքանչյուր հաջորդ մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ ապրանքների մաքսային արժեքը հնարավոր չէ որոշել նախորդող մեթոդով:

Այսպիսով, ներկայիս օրենսդրական կարգավորումների պարագայում շարունակում է գործել խնդրահարույց պրակտիկա:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ բացառել անհիմն պատճառներով գործարքի գնի մեթոդով մաքսազերծման մերժման դեպքերը:*

### **10. Մտավոր սեփականությանը պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավաբերների իրավունքների երաշխավորումը**

Դեռևս 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագիծը մշակվել է հաշվի առնելով մտավոր սեփականությանը պաշտպանվող ապրանքների ներմուծման գործընթացում իրավատերերի համար առաջացող խնդիրները:

Բանն այն է, որ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքն իրավատիրոջն իրավունք է վերապահում Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքների տեղափոխման վերաբերյալ բավարար հիմքեր ունենալու դեպքում դիմել մաքսային մարմինն՝ ապրանքների բաց թողնումը կասեցնելու խնդրանքով: Մաքսային մարմինն ապրանքների բաց թողնումը կասեցնելու դիմումը բավարարում կամ մերժում է յոթնօրյա ժամկետում:

Եթե ապրանքների բաց թողնման կասեցման մասին իրավատիրոջը տեղեկացնելուց հետո տասն օրվա ընթացքում մաքսային մարմինը չի տեղեկացվում, որ գործը հանձնված է դատական մարմիններ, և դատարանը ձեռնարկել է ապրանքների բաց թողնման կասեցումը երկարաձգող հայցի ապահովման միջոց, ապրանքների բաց թողնումը կասեցնելու որոշումը չեղյալ է համարվում: Եթե հայտատուն ապացուցում է դատարան հայցադիմում ներկայացնելու, բայց դատարանի կատարողական թերթը դեռևս ստացած չլինելու փաստը, սկզբնապես կիրառված կասեցման ժամկետը մաքսային մարմինը կարող է երկարաձգել տասն օրը չգերազանցող ժամկետով:

Ստացվում է, որ օրենսդիրը ՀՀ ներմուծվող մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների բաց թողնման առավել երկար ժամկետով կասեցնելու լիազորությունը վերապահել է դատարանին:

Վերոգրյալից հետևում է, որ ապրանքների բաց թողնման կասեցումը երկարաձգող հայցի ապահովման միջոց չկիրառելու հետևանքով վեճի առարկա ապրանքները բաց կթողնվեն և կհայտնվեն ազատ շրջանառության մեջ: Նշվածը կբարդացնի կամ նույնիսկ անհնարին կդարձնի հայցվորի իրավունքների հետագա պաշտպանությունը, մասնավորապես վեճի առարկա ապրանքների հայտնաբերումը և պատասխանողի միջոցներով ոչնչացումը:

Մի շարք դեպքերում իրավատերը մտավոր սեփականության օբյեկտի՝ մաքսային սահմանով ապօրինի տեղափոխումը դադարեցնելու նպատակով հայց է ներկայացնում դատարան: Դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնում է յոթնօրյա ժամկետում,

իսկ վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելու օրվանից եռօրյա ժամկետում այն ուղարկում է գործին մասնակցող անձանց:

Լինում են դեպքեր, երբ հայցադիմման թերությունները վերացնելու նպատակով դատարանն այն վերադարձնում է: Նման դեպքերում հայցադիմումը վարույթ ընդունելու ժամկետը երկարացվում է, սակայն ապրանքների բաց թողնման ժամկետը՝ ոչ: Ստեղծված իրավիճակում իրավատերը հնարավորություն չի ունենում ներկայացնել գործը վարույթ ընդունելու մասին դատարանի որոշումը, և մտավոր սեփականության իրավունքները խախտող ապրանքները բաց են թողնվում և իրացվում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ապրանքային նշանի իրավատիրոջը տրված է բացառիկ իրավունք տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը: Գրանցված ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի արգելելու երրորդ անձանց առանց իր թույլտվության առևտրային գործունեության ընթացքում օգտագործել ցանկացած նիշ:

Ընդ որում՝ ապրանքային նշանի օգտագործում է համարվում նաև այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների ներմուծումը կամ արտահանումը:

«Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով անդամ պետությունների տարածքներում կիրառվում է ապրանքային նշանի, Միության ապրանքային նշանի նկատմամբ բացառիկ իրավունքի ապառման սկզբունքը<sup>575</sup>:

Նշվածից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում գործում է մտավոր սեփականության իրավունքների սպառման տարածքային սկզբունքը: Ներկայում ԵՏՄ անդամ չհանդիսացող երկրներից ապրանքների ներմուծումը սահմանափակվել է: Ինչը նշանակում է, որ եթե իրավատերն իր ապրանքային նշանը գրանցել է մաքսային մարմնում, միայն պաշտոնական մատակարարն իրավունք ունի դրանք ներմուծել Հայաստանի Հանրապետություն:

Այսպիսով, մտավոր սեփականության օբյեկտների իրավատերերի իրավունքների պաշտպանության, ինչպես նաև անձի իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի երաշխավորման նպատակով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխությունների իրականացումն անհրաժեշտ է դառնում:

Հաշվի առնելով այն, որ մտավոր սեփականությունն անկյունաքարային դեր ունի գրեթե յուրաքանչյուր տնտեսվարողի համար, և մտավոր սեփականության իրավունքների պատշաճ պաշտպանության ապահովումը կարևոր է տնտեսվարողի գործունեության հաջողության համար՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Նախագծով առաջարկվում է մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման գործընթացի վերաբերյալ գործերի վարույթն ընդգրկել հատուկ հայցային վարույթներում, սահմանել դատարանում նշված գործերի քննության առավելագույն ժամկետ:

Մասնավորապես, առաջարկվում է նախատեսել մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման գործընթացի վերաբերյալ

<sup>575</sup> Տե՛ս «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 26-րդ հավելվածի «Մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ իրավունքների պահպանության և պաշտպանության մասին» արձանագրություն:



գործերը դատարանում քննելու և լուծելու եռամսյա ժամկետ: Սահմանել, որ դատարանը, հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումը կայացնում է եռօրյա ժամկետում: Հայցադիմումը վերադարձնելու դեպքում այն կրկին ստացվելուց հետո դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է ոչ ուշ, քան այն կրկին ստացվելու հաջորդ օրը:

Նախագծով առաջարկվում է նաև սահմանել, որ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ որոշում է մտավոր սեփականության օբյեկտներ հանդիսացող կամ պարունակող (կրող) ապրանքների ներմուծման բաց թողնումը մաքսային մարմինների կողմից ժամանակավորապես՝ մինչև գործով վերջնական դատական ակտի կայացումը, կասեցնելու հարցը: Առաջարկվում է նաև սահմանել, որ պատասխանողի շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ մեկտեղ դատարանը որոշում է կայացնում կասեցված ապրանքների մաքսային արժեքի հինգ տոկոսի չափով ապահովված գումարը պետական գանձապետական հաշվից դատարանի դեպոզիտ փոխանցելու մասին:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթերթ, որը ներկայացվել է ՀՀ վարչապետի աշխատակազմ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում:*

## **11. Գրքերի բոլոր տեսակների օտարումն ավելացված արժեքի հարկի զրոյական դրույքաչափով հարկելը**

Դեռևս 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ օրենսդրությամբ տպագրական որոշակի նյութերի օտարումն ազատված է ԱԱՀ-ից: Մինչդեռ, որևէ արտոնություն նախատեսված չէ, օրինակ, գեղարվեստական գրքերի օտարման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ:

Նախագծով առաջարկվում է գրքերի (այդ թվում՝ էլեկտրոնային) բոլոր տեսակների օտարումը հարկել ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով:

ՀՀ հարկային օրենսգրքով ԱԱՀ-ից ազատված են դպրոցական գրերի և նոտայի տետրերի, նկարչական ալբոմների, մանկական և դպրոցական գրականության, դպրոցական ուսումնական հրատարակությունների, բուհերի, մասնագիտացված գիտական կազմակերպությունների, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած գիտական և ուսումնական հրատարակությունների օտարումը: Ընդ որում, սահմանված արտոնությունների կիրառության շրջանակը սահմանում է Կառավարությունը:

Մինչդեռ, կրթության, մշակույթի, գիտության խթանումը, հայոց լեզվի և մշակութային ժառանգության պաշտպանությունը պետության հոգածության և պաշտպանության ներքո են: Գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը նույնպես պետության քաղաքականության հիմնական նպատակներից է:

Ձեռնարկատիրական գործունեության խթանման կարևոր գործոններ են հարկային բեռի, այդ թվում՝ հարկերի դրույքաչափերի կրճատումը, առանձին հարկերի վերացումը, հարկերի տարբերակված դրույքաչափերի կիրառումը:

Պետք է նշել, որ վերջին տարիներին աշխարհի շատ երկրներ նվազեցրել են գրքերի օտարման հարկային բեռը՝ ընդհուպ մինչև առանձին հարկատեսակների վերացումը:

Այսպես, օրինակ, 2015 թվականին Հրատարակիչների միջազգային ասոցիացիան հրապարակել է զեկույց տպագիր և էլեկտրոնային գրքերի համար նախատեսված ավելացված արժեքի հարկի չափերի վերաբերյալ: Համաձայն նշված զեկույցի՝ աշխարհի 31 երկրում, ինչպիսիք են, օրինակ, Կանադան, Լիբանանը, Հորդանանը, Մեծ Բրիտանիան, Ուկրաինան, Նորվեգիան, Հարավային Ամերիկայի երկրները, տպագրված գրքերի համար սահմանվում է 0% ԱԱՀ: Աշխարհի 31 երկրում, ինչպիսիք են, օրինակ, Սինգապուրը, Ճապոնիան, Թայլանդը, Իռլանդիան, Բելգիան, Կիպրոսը, տպագրված գրքերի համար սահմանվում է նվազեցված ԱԱՀ<sup>576</sup>:

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը բնութագրվում է անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշռով: ԱԱՀ-ն, լինելով պետական բյուջեի եկամտային մասի ձևավորման հիմնական աղբյուր, բացի զուտ ֆիսկալային գործառույթից, ունի նաև կարգավորիչ գործառույթ: Հանդիսանալով անուղղակի հարկ և ներառվելով ապրանքի գնագոյացման մեջ՝ այն ապրանքի շուկայական առաջարկի ու պահանջարկի ձևավորման կարևոր գործոն է և անմիջականորեն ազդում է արտադրության ու իրացման ծավալների և որպես հետևանք՝ նաև երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա:

Գրքերի միջոցով է իրականացվում կրթության իրավունքի ապահովումը, ժողովրդի գրական-մշակութային ժառանգության պահպանումը, զարգացումը, տարածումը, բարեկիրթ քաղաքացիական հասարակության ձևավորումը: Այս տեսանկյունից կարևորագույն բարեփոխում կհամարվի գրքերի (այդ թվում՝ էլեկտրոնային) բոլոր տեսակների օտարումն ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկելը:

Նախագծի ընդունումը կնպաստի ՀՀ-ում հրատարակչական գործի, մշակույթի, կրթության զարգացմանը: Այն դրական ազդեցություն կունենա նաև ձեռնարկատիրության խթանման համար:

Նախագիծը ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա այն լրամշակվել է, կազմվել է ամփոփաթեթ: 2021 թվականին ամփոփված փաթեթն ուղարկվել է Ազգային ժողով և Կառավարություն՝ պաշտոնական ընթացք տալու համար:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ ընդունել նշված օրենսդրական առաջարկը և գրքերի բոլոր տեսակների օտարման համար սահմանել ԱԱՀ-ի զրոյական դրույքաչափ:*

<sup>576</sup> St'u Նորվեգիայի «Ավելացված արժեքի մասին ակտը», հասանելի է <https://www.skatteetaten.no/globalassets/bedrift-og-organisasjon/avgifter/merverdiavgift/refusjon-av-mva---avgiftsinfo/vat-act---oversatt-versjon-av-merverdiavgiftsloven-updatet-may-2014.pdf> հղումով, Իռլանդիայի «Ավելացված արժեքի կոնսոլիդացիայի մասին ակտը», հասանելի է <http://www.irishstatutebook.ie/eli/2010/act/31/enacted/en/pdf> հղումով, Միացյալ թագավորության «Ավելացված արժեքի մասին ակտը», հասանելի է <http://www.legislation.gov.uk/ukpga/1994/23/contents> հղումով և այլն

## **12. Հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտի ներդրումը որպես գործարարության պաշտպանության երաշխիք**

Դեռևս 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների ուսումնասիրությամբ պարզվել է, որ ՀՀ-ում բացակայում են տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումների կանխարգելման այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան տնտեսվարողին կազմակերպության ներսում բացահայտել խախտումները և վերացնել: Սա մի կողմից հնարավորություն կտա տնտեսվարողին խուսափել տուգանքներից, մյուս կողմից՝ կթեթևացնի վարչարարություն իրականացնող մարմնի ծանրաբեռնվածությունը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրներում լայնորեն կիրառվում են տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման ներքին զսպման մեխանիզմներ: Այդ մեխանիզմներից է, օրինակ, հակամենաշնորհային կոմպլաենսը:

Այն կազմակերպչական և իրավական միջոցառումների ամբողջություն է, որն ուղղված է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահանջների պահպանմանը և խախտումների կանխարգելմանը:

Հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրմամբ տնտեսվարողը կազմակերպության ներսում սահմանում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման և վերահսկողության կանոններ: Արդյունքում տնտեսվարողը հնարավորություն է ունենում կազմակերպության ներսում բացահայտել խախտումները և վերացնել: Սա նաև հնարավորություն է տալիս նրան խուսափել տուգանքներից:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանն առաջարկել է ներպետական օրենսդրության մեջ ներդնել հակամենաշնորհային կոմպլաենսի ինստիտուտը:

Այս ինստիտուտի ներդրմամբ օրենսդրությամբ իրավասու մարմնին իրավունք կվերապահվի սահմանելու հակամենաշնորհային պահանջների պահպանման արտաքին կանոններ: Այս կանոնների հիման վրա տնտեսվարողը ներքին ակտով կսահմանի տնտեսական մրցակցության օրենսդրության պաշտպանության ներքին կանոններ: Օրինակ՝ տնտեսվարողի ներքին ակտով կսահմանվեն տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման ռիսկերի նվազեցմանը, տնտեսվարողի կողմից հակամենաշնորհային կոմպլաենսի կիրառման նկատմամբ հսկողության իրականացմանն ուղղված միջոցառումներ և այլն: Հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրմամբ տնտեսվարողները հնարավորություն կունենան պարզել կազմակերպությունում առկա տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումները և կանխել դրանց հետագա տարածումը:

Կոմպլաենսը կարևոր նշանակություն կունենա նաև խախտումների հայտնաբերման դեպքում տնտեսվարողի մեղքի հաստատման, իրավախախտման պատճառների վերհանման և պատասխանատվության համաչափության ապահովման տեսանկյունից:

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել է հակամենաշնորհային կոմպլաենսի ներդրման միջազգային փորձը:

Այսպես, Եվրոպական միությունում մրցակցային հարաբերությունները կարգավորվում են Եվրոպական միության պայմանագրով, որը կոմպլաենսի մասին նորմեր չի պարունակում: Սակայն

անդամ պետությունների հակամրցակցային մարմիններն ընդունել են խորհրդատվական բնույթի փաստաթղթեր, որտեղ սահմանված են կոմպլանսի հիմնական հատկանիշները:

Եվրոպական հանձնաժողովը 2011 թվականին հրապարակեց տեղեկատվական թերթիկ՝ «Կոմպլանսի հարցեր» վերնագրով<sup>577</sup>: Այստեղ մանրամասն պարզաբանվում է հակամրցակցային օրենսդրությունը պահպանելու պարտավորությունը, մրցակցային շուկայի հիմնական կանոնները, իրավախախտ տնտեսվարողի ռիսկերը, սահմանվում է նաև կոմպլանսի ներդրման ռազմավարությունը:

Եվրոպական Միության անդամ մի շարք երկրներում ազգային մակարդակով ուսումնասիրվում են պատժաչափերի իջեցման հնարավորությունը կազմակերպությունների կողմից հակամենաշնորհային կոմպլանսի առկայության և նրա պահանջների պահպանման դեպքում: Այսպես, Մեծ Բրիտանիայում և Ֆրանսիայում հակամենաշնորհային կոմպլանսի առկայության և նրա պահանջների պահպանման դեպքերում նախատեսվում է տուգանքի իջեցում 10%-ով, իսկ Իտալիայում՝ 15%-ով:

Մեծ Բրիտանիայում 2011 թվականին հրապարակվեց «Ինչպես ձեր բիզնեսը համապատասխանել հակամրցակցային իրավունքի նորմերին» ուղեցույցը<sup>578</sup>, որով կազմակերպություններին առաջարկվեց կիրառել հակամենաշնորհային կոմպլանսը:

ԱՄՆ-ում դատարանները որպես մեղմացուցիչ հանգամանք հաշվի են առնում կազմակերպությունում կոմպլանսի ծրագրի ներդրումը: Սակայն սա չի վերաբերում խոշոր հակամենաշնորհային խախտումներին, օրինակ՝ կարտելային փոխհամաձայնություններին<sup>579</sup>:

2017 թվականի հունվարի 1-ին Ղազախստանի Հանրապետության «Մրցակցության և բնակարանաշինության պետական աջակցության օրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու մասին» օրենքում ամրագրվեց հակամենաշնորհային կոմպլանսի հասկացությունը<sup>580</sup>:

Ռուսաստանի Դաշնության նախագահի՝ 2019 թվականի մարտի 1-ի Մրցակցության զարգացման պետական քաղաքականության մասին հրամանագրով սահմանվեց իշխանության Ֆեդերալ և տարածաշրջանային մարմինների գործունեության մեջ հակամենաշնորհային կոմպլանսի ներդրման պահանջ:

ԱՄՆ-ի հակամենաշնորհային հիմնական օրենքը՝ Շերմանի ակտը, հակամենաշնորհային կոմպլանսի մասին նորմեր չի պարունակում: Սակայն դատարանները պատիժ նշանակելիս, այդ թվում մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման համար, օգտվում են ԱՄՆ-ի՝ դաշնային պատասխանատվության վերաբերյալ ուղեցույցից<sup>581</sup>: Այն խորհրդատվական բնույթի փաստաթուղթ է, որով դատարաններին առաջարկվում է հակամենաշնորհային գործերը

<sup>577</sup> Տե՛ս Եվրոպական միության մրցակցային օրենսդրության խախտումների համար տուգանքները, հասանելի է [http://ec.europa.eu/competition/antitrust/compliance/index\\_en.html](http://ec.europa.eu/competition/antitrust/compliance/index_en.html) հղումով

<sup>578</sup> Տե՛ս «Ինչպես ձեր բիզնեսը համապատասխանել հակամրցակցային իրավունքի նորմերին» ուղեցույց 2011, հասանելի է [https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/284402/oft1341.pdf](https://www.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/284402/oft1341.pdf) հղումով

<sup>579</sup> Տե՛ս «Հակամենաշնորհային կոմպլանսի գնահատումը հակամենաշնորհային քրեական հետաքննություն իրականացնելիս», հասանելի է <http://www.justice.gov/atr/public/speeches/308499.pdf> հղումով

<sup>580</sup> Տե՛ս «Մրցակցության և բնակարանաշինության պետական աջակցության օրենսդրական ակտերում փոփոխություններ մտցնելու մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքը, հասանելի է [https://online.zakon.kz/Document/?doc\\_id=38924913#pos=2;-256](https://online.zakon.kz/Document/?doc_id=38924913#pos=2;-256) հղումով

<sup>581</sup> Տե՛ս Ֆեդերալ դատավճիռների կայացման ուղեցույց, հասանելի է <http://www.ussc.gov/guidelines-manual/2011/2011-8b21> հղումով

քննելիս հաշվի առնել կազմակերպությունում արդյունավետ ներդրված հակամենաշնորհային կոմպլանսի առկայությունը:

Հակամենաշնորհային կոմպլանսի օրենսդրորեն ամրագրումը կապահովագրի տնտեսվարողներին հակամենաշնորհային օրենսդրության խախտումներից և հնարավորություն կտա խուսափել տուգանքներից, մյուս կողմից՝ պետության կողմից կապահովվի տնտեսական գործունեությանը զբաղվելու իրավունքը և անբարեխիղճ մրցակցության և գերիշխող դիրքի չարաշահման սահմանափակման քաղաքականության իրականացումը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը:

Նախագծերով առաջարկվում է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ներդնել հակամենաշնորհային կոմպլանսի ինստիտուտը:

Առաջարկվում է հակամենաշնորհային կոմպլանս ներդրած կազմակերպության ներքին ակտով սահմանել տնտեսվարող սուբյեկտի գործունեության իրականացման հետ կապված տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման ռիսկերի գնահատման իրականացման կարգի պահանջներ, տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության խախտման ռիսկերի նվազեցման և հակամենաշնորհային կոմպլանսի կիրարկման նկատմամբ հսկողության իրականացմանն ուղղված միջոցառումներ, հակամենաշնորհային կոմպլանսի կիրարկման համար պատասխանատու անձանց շրջանակ և այլն:

Նախագծերով առաջարկվում է նաև տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքում տնտեսվարող սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելիս հակամենաշնորհային կոմպլանսի ներդրումը և կիրարկումը դիտարկել որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Նախագծերի փաթեթը քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի հետ: Այն ներկայացվել է շրջանառության, շահագրգիռ մարմինների նկատառումների ու առաջարկությունների հիման վրա կազմվել է ամփոփաթեթ: 2021 թվականին օրենսդրական ամփոփված փաթեթն ուղարկվել է Ազգային ժողով և Կառավարություն՝ պաշտոնական ընթացք տալու համար:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում ամրագրել հակամենաշնորհային կոմպլանսի ինստիտուտը:*

### **13. Անձնական օգտագործման ապրանքները ՀՀ ներմուծելիս մաքսապուրք վճարելու խնդիր**

Դեռևս շարունակվում է չլուծված մնալ ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքներն առանց մաքսատուրքերի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչների բացակայության խնդիրը:

2021 թվականին շարունակվել են Պաշտպանին բողոքներ հասցեագրվել անձնական օգտագործման ապրանքները ՀՀ ներմուծելիս մաքսային ծառայողների կողմից մաքսատուրք վճարելու պահանջ ներկայացնելու վերաբերյալ: Այս խնդրին անդրադարձ է կատարվել նաև 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>582</sup>:

Բանն այն է, որ ոլորտը կարգավորող օրենսդրությամբ սահմանված չեն անձնական օգտագործման ապրանքների ներմուծման հստակ չափորոշիչներ: Ինչի հետևանքով ֆիզիկական անձանց համար պարզ չէ, թե ի՞նչ հաճախականությամբ և ո՞ր երկրներից ՀՀ ապրանք ներմուծելիս նրանք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:

Այսպես, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների կատեգորիաները և դրանց ներմուծման եղանակները, արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերը սահմանված են անձնական օգտագործման ապրանքների հետ կապված առանձին հարցերի մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի թիվ 107 որոշման հավելված 2-ով: Նշված հավելվածի համաձայն՝ ֆիզիկական անձինք ազատվում են մաքսատուրքից, եթե ԵՏՄ մաքսային տարածք ներմուծեն անձնական օգտագործման ապրանքներ, որոնց արժեքները չեն գերազանցում 500 եվրոյին համարժեք գումարը, իսկ քաշը՝ 25 կիլոգրամը: Սահմանված չափաքանակները գերազանցելու դեպքում կիրառվում է մաքսատուրքերի և հարկերի միասնական դրույքաչափ:

«Ֆիզիկական անձանց կողմից Մաքսային Միության մաքսային սահմանով անձնական օգտագործման ապրանքների փոխադրման և դրանց բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների իրականացման կարգի մասին» 2010 թվականի հունիսի 18-ի համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետով սահմանվում է, որ ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելն իրականացվում է մաքսային մարմնի կողմից՝ ռիսկերի կառավարման համակարգի կիրառմամբ, ելնելով՝ տեղափոխվող ապրանքների մասին ֆիզիկական անձի դիմումից, ապրանքների բնույթից և քանակից, ֆիզիկական անձանց կողմից մաքսային սահմանը անցնելու և (կամ) նրանց կողմից մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման հաճախականությունից:

Ֆիզիկական անձանց կողմից Միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքներն անձնական օգտագործման ապրանքների շարքին դասելու համար օգտագործվող ռիսկի ցուցիչները հաստատված են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28.09.2017թ. N 24/13 որոշման հավելվածով: Նշյալ հավելվածով հաստատված ռիսկի ցուցիչներից է նաև ֆիզիկական անձի կողմից Միության մաքսային սահմանը հատելու հաճախականությունը՝ այդ թվում կախված հարևան պետությունից և տրանսպորտի տեսակից:

Մի կողմից Միության մաքսային օրենսդրությունը նախատեսում է մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման հաճախականության հսկողություն, սակայն մյուս կողմից՝ ապրանքներ տեղափոխող ֆիզիկական անձանց պարզ չէ, թե ի՞նչ հաճախականությամբ ապրանք ներմուծելիս նրանք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:

<sup>582</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 750-752:

Մինչդեռ այս ոլորտում հստակ կարգավորումների բացակայությունը կարող է կամայական մոտեցումների տեղիք տալ:

Այս առնչությամբ ՊԵԿ-ից պարզաբանել են, որ անձնական օգտագործման ապրանքների հետ կապված առանձին հարցերի վերաբերյալ դրույթները, մասնավորապես՝ արժեքային, քաշային և (կամ) քանակական նորմերը, որոնց սահմաններում անձնական օգտագործման ապրանքները ներմուծվում են ԵԱՏՄ տարածք առանց մաքսատուրքերի, հարկերի վճարման, ինչպես նաև անձնական օգտագործման ապրանքների մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափերը, դրանց այն կատեգորիաները, որոնց համար ենթակա են վճարման միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքեր, հարկեր սահմանված են ԵԱՏ հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 107 որոշմամբ:

Ըստ ՊԵԿ-ի՝ ԵԱՏՄ հարթակում նախաձեռնվել է վերոնշյալ որոշման մեջ որոշակի փոփոխությունների իրականացում, որի շուրջ տարվում են աշխատանքներ:

Այսպիսով, Միության մաքսային օրենսդրությունը թեև նախատեսում է մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի միջոցով ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման ապրանքների տեղափոխման հաճախականության հսկողություն, սակայն անորոշ է, թե ի՞նչ հաճախականությամբ ՀՀ ապրանք ներմուծելիս ֆիզիկական անձինք պարտավորված կլինեն վճարել մաքսատուրք:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ սահմանել ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսատուրքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչներ և դրանց վերաբերյալ իրականացնել պարզաճ իրազեկման աշխատանքներ:*

#### **14. ՀՀ մշտական բնակության տեղափոխվող անձանց կողմից մաքսային վճարների արտոնություններից օգտվելու խնդիր**

2021 թվականին շարունակվում է չլուծված մնալ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ֆիզիկական անձանց համար օրենսդրությամբ նախատեսված մաքսային վճարների արտոնություններից օգտվելու խնդիրը:

Բանն այն է, որ գործնականում շատ են դեպքերը, երբ Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ճանաչված անձինք ծանոթ չեն լինում մաքսային վճարների արտոնություններից օգտվելու իրենց իրավունքներին և ընթացակարգին: Նշվածի հետևանքով հաճախ խնդիրներ են ունենում այդ իրավունքներն իրացնելիս:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների աշխատակազմում մշակվել և 2021 թվականին հրապարակվել է Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ֆիզիկական անձանց համար օրենսդրությամբ նախատեսված մաքսային վճարների արտոնություններից օգտվելու վերաբերյալ ուղեցույց:

Ուղեցույցի նպատակն է բարձրացնել Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ֆիզիկական անձանց իրազեկվածությունը մաքսային վճարների արտոնություններից օգտվելիս:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով անձնական օգտագործման ապրանքները ներմուծելու արտոնությունից օգտվելու համար Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ճանաչված անձը պետք է ներկայացնի մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում բնակության փաստը հաստատող փաստաթուղթ:

Օրենսդրությամբ սահմանված չէ օտարերկրյա պետությունում բնակության փաստը հաստատող փաստաթղթի հասկացությունը, ինչը խնդրահարույց է որոշակիության և կանխատեսելիության տեսանկյունից:

«Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքով անձնական օգտագործման ապրանքները ներմուծելու արտոնությունից օգտվելու համար Հայաստանի Հանրապետություն մշտական բնակության տեղափոխվող ճանաչված անձը պետք է ներկայացնի մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում բնակության փաստը հաստատող փաստաթուղթ:

Արձանագրվել են դեպքեր, երբ այլ երկրներում անձինք բնակվել են առանց օրինական հիմքերի: Անգամ եղել է դեպք, երբ խոսքը վերաբերել է, օրինակ, դիվանագիտական հարաբերությունների բացակայությանն այլ երկրների հետ (օրինակ՝ Թուրքիա), հետևաբար Հայաստանի Հանրապետություն վերադարձած անձինք հնարավորություն չեն ունեցել ներկայացնելու պահանջվող փաստաթուղթը:

ՊԵԿ-ն այս խնդրով պարզաբանել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 2-ի N1131-Ն որոշմամբ սահմանվել է որպես Հայաստանի Հանրապետության տարածք մշտական բնակության տեղափոխված անձ ճանաչված օտարերկրյա ֆիզիկական անձանց կամ Հայաստանի Հանրապետության տարածքում փախստականի, հարկադիր տեղահանվածի կարգավիճակ ստացած օտարերկրյա ֆիզիկական անձանց նկատմամբ արտոնության կիրառման կարգը: Նշված որոշման 1-ին հավելվածի 2-րդ կետով սահմանվել են արտոնությունից օգտվելու համար մաքսային մարմիններին ներկայացվող փաստաթղթերը, որոնցից է նաև մինչև Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում ֆիզիկական անձի բնակության փաստը հավաստող փաստաթուղթը: Ըստ ՊԵԿ-ի՝ Հայաստանի Հանրապետություն ժամանումն օտարերկրյա պետությունում ֆիզիկական անձի բնակության փաստը հավաստող փաստաթղթերի վերաբերյալ առանձին պահանջներ սահմանված չեն և ֆիզիկական անձի կողմից կարող է ներկայացվել ցանկացած փաստաթուղթ, որով մաքսային հսկողության արդյունքում կհաստատվի ֆիզիկական անձի օտարերկրյա պետությունում բնակվելու հանգամանքը:

Ըստ ՊԵԿ-ի՝ որպես այդպիսի փաստաթուղթ կարող է լինել, օրինակ, քաղաքացու անձնագրի նշումներ բաժնում առկա ելքի և մուտքի կնիքները, որոնք կհավաստեն խնդրո առարկա ժամանակահատվածում քաղաքացու նախորդ բնակության երկրում բնակված լինելու հանգամանքը, կամ օրինակ սահմանված կարգով վավերացված և թարգմանված բնակավայրի վարձակալության պայմանագիրը կամ աշխատավայրի տեղեկանքը, ինչպես նաև այլ հավաստող փաստաթղթեր, որոնց հիման վրա մաքսային մարմինը, գնահատելով գործում առկա բոլոր



պիտանի և անհրաժեշտ ապացույցները, կհամարի, որ գործի բոլոր փաստական հանգամանքները բացահայտված են:

Ստացվում է, անձի օտարերկրյա պետությունում բնակվելու փաստը հավաստող փաստաթղթի գնահատումը թողնված է մաքսային մարմնի հայեցողությանը: Նման պարագայում հայեցողությունը գործնականում կարող է պատշաճ չիրականացվել և կամայական մոտեցումների տեղիք տալ:

Հետևաբար, ՀՀ մշտական բնակության տեղափոխվող անձանց համար իրավունքներ ու պարտականություններ, ինչպես նաև սահմանափակումներ սահմանող օրենսդրական կարգավորումները պետք է համապատասխանեցվեն որոշակիության և կանխատեսելիության պահանջներին:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պատշաճ ապահովման նպատակով սահմանել ֆիզիկական անձանց կողմից ապրանքներն առանց մաքսափորքի ՀՀ ներմուծելու հաճախականության որոշման հստակ չափորոշիչներ:*

### **15. ՊԵԿ հարկային և մաքսային բողոքարկման հանձնաժողովի գործունեության թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ որպես իրավական պաշտպանության արդյունավետ միջոց**

Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ անդրադարձել էր ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի աշխատանքների թափանցիկության ու հրապարակայնության խնդրին<sup>583</sup>:

ՀՀ հարկային օրենսգրքով ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի իրավասությանն է վերապահված հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտերի, ինչպես նաև հարկային ծառայողի գործողությունների կամ անգործության վերաբերյալ բերված դիմում-բողոքների քննությունը: Հանձնաժողովն ընդունված դիմում-բողոքի քննության արդյունքում կայացնում է որոշում, որն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից, իսկ դիմում-բողոք բերած անձին տրամադրվում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Ստացվում է, որ հանձնաժողովի որոշումներն ուժի մեջ են մտնում մինչև այդ որոշումների ընդունման մասին դիմումատուներին իրազեկելը: Մինչդեռ, պետք է գործի հակառակ տրամաբանությունը, այսինքն՝ բողոքարկման հանձնաժողովի որոշումները պետք է ուժի մեջ մտնեն այդ մասին դիմումատուներին իրազեկելուց, նրանց պատշաճ ծանուցելուց հետո միայն:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ դեպքերում դիմում-բողոք բերած անձը Հանձնաժողովի որոշումը ստանում է ուշացումով և բաց է թողնում բողոքարկման ժամկետները:

<sup>583</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 424-425:

Պաշտպանը դեռևս 2019 թվականին առաջարկել էր Հանձնաժողովում հարուցված վարչական վարույթի եզրափակիչ փուլում նաև նախատեսել կայացրած որոշման հրապարակման փուլ և սահմանել, որ Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Հանձնաժողովի որոշման ուժի մեջ մտնելու մասով ներկայացված առաջարկության վերաբերյալ ՊԵԿ-ից պարզաբանել էին, որ այն առաջացնում է հարկային օրենսգրքում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն, քանի որ Հանձնաժողովի որոշման ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանված է հարկային օրենսգրքով:

2021 թվականին Պաշտպանին կարծիքին էին ներկայացվել «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը: Պաշտպանը ներկայացված կարծիքում նշել էր, որ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշումներն անհրաժեշտ է ուժի մեջ մտած համարել այդ որոշումների մասին դիմումատուներին պատշաճ ծանուցելու հաջորդ օրվանից:

Ողջունելի է, որ Պաշտպանի առաջարկը նախագծերը շրջանառող մարմինը՝ ՊԵԿ-ը, ընդունել է և նախագծի համապատասխան հոդվածները խնբագրվել են: Մասնավորապես, սահմանվել է, որ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովի կայացրած որոշումներն ուժի մեջ են մտնում իրազեկելուն հաջորդող օրվանից: 2021 թվականի դեկտեմբերի 9-ին Կառավարությունը հավանություն է տվել նախագծին և այն ներկայացվել է Ազգային ժողով:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով բողոքարկման հանձնաժողովի աշխատանքների թափանցիկության բարձրացման ուղղությամբ ներկայացված հարցադրմանն ի պատասխան ՊԵԿ-ից պարզաբանել են, որ ՊԵԿ նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 3-ի N883-Ն հրամանով փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հանձնաժողովի աշխատակարգում (21.02.2018թ. N102-Ն հրաման), որով որոշակի հարցեր ավելի պարզեցվել և հստակեցվել են, հաշվի են առել նաև Պաշտպանի նախկինում ներկայացված առաջարկը:

Հարկ է նշել, որ Պաշտպանը 2019 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկել էր նաև սահմանել Հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պահանջ՝ բացառություն նախատեսելով այն դեպքերի համար, երբ դիմում-բողոք բերած անձը նիստն առցանց չհեռարձակելու միջնորդություն է ներկայացնում, օրինակ՝ առևտրային գաղտնիքի պահպանման նկատառումներով:

Պաշտպանի նշված առաջարկն ընդունվելու դեպքում կապահովվի և կամրապնդվի Հանձնաժողովի որոշումների օբյեկտիվության ու անկողմնակալության, ինչպես նաև արտադատական կարգով վեճերի լուծման նկատմամբ վստահությունը և կապահովվի դիմում-բողոք բերած անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի իրացումը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ սահմանել Հանձնաժողովի նիստերի առցանց հեռարձակման պարտադիր պահանջ:*

**16. Պեղական եկամուտների կոմիտեի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով գործելը որպես անձի իրավունքների իրացման ապահովման արդյունավետ միջոց**

2021 թվականին ստացված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարունակվում է չլուծված մնալ ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի մշտական հիմունքներով չգործելու խնդիրը:

Այս առնչությամբ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվում բողոքներ:

ՊԵԿ հեռախոսազանգերի կենտրոն-բաժինը կազմակերպություններին և ֆիզիկական անձանց տրամադրում է տեղեկատվություն հարկային և մաքսային հարաբերությունները կարգավորող օրենսդրության պահանջների պարզաբանման վերաբերյալ՝ ՊԵԿ իրավասությունների շրջանակներում, հարկային և մաքսային վարչարարության, հարկային և մաքսային մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործառույթային իրավասությունների և պարտականությունների վերաբերյալ: Հեռախոսազանգերի կենտրոն-բաժինն աշխատում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ ժամը 09:00-ից 18:00-ն: Այս տեղեկատվությունը գետեղված է ՊԵԿ-ի պաշտոնական կայքէջում:

Բանն այն է, որ ՊԵԿ-ի մաքսային ծառայության աշխատանքը շուրջօրյա է, քանի որ օրվա տարբեր ժամերին Հայաստանի Հանրապետություն են ներկրվում և արտահանվում ապրանքներ: Գործնականում սահմանային անցակետերում մարդիկ հաճախ, համաձայն չլինելով մաքսային ծառայության աշխատակիցների պահանջների հետ, փորձում են ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնից իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ ստանալ տեղեկատվություն: Սակայն չեն կարողանում, քանի որ այն գիշերային ժամերին չի գործում: Հեռախոսազանգերի կենտրոնի շուրջօրյա չգործելու պատճառով արագ արձագանքում պահանջող բողոքները տեղ չեն հասնում և ողջամիտ ժամկետում չեն լուծվում:

Այս խնդիրն առնչվում են նաև այլ մարմինների կամ կազմակերպությունների աշխատակիցները:

Այս առումով շարունակում է խնդրահարույց մնալ հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը շաբաթվա բոլոր օրերին և շուրջօրյա չիրականացնելու հարցը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք երկրներում մաքսային ծառայության թեժ զժի հեռախոսահամարը գործում է շուրջօրյա (Գերմանիա, Իտալիա, ԱՄՆ, Ավստրալիա, Մոլդովա, Հոնկոնգ, Ռուսաստանի Դաշնություն, Ուկրաինա, Ղազախստան)<sup>584</sup>:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝ ՊԵԿ-ի հեռախոսազանգերի կենտրոնի աշխատանքը դարձնել մշտական հիմունքներով:*

<sup>584</sup>Տե՛ս [https://www.zoll.de/EN/Contact/Other\\_contacts/other\\_contacts\\_node.html](https://www.zoll.de/EN/Contact/Other_contacts/other_contacts_node.html), <http://www.gdf.gov.it/servizi-per-il-cittadino/contatti/come-contattare-la-guardia-di-finanza>, <https://www.usa.gov/federal-agencies/u-s-customs-and-border-protection> և այլն:

## **17. Ստուգումներ իրականացնող պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդիր**

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է ստուգումների ընթացքում պետական մարմինների ծառայողների գործունեության թափանցիկության ապահովման խնդրի մասին<sup>585</sup>:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը կրկին բողոքներ է ստացել ստուգումներ իրականացնող անձանց, մասնավորապես՝ հարկային և մաքսային ծառայողների անհարգալից և անօրինական վարքագծի վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան ՊԵԿ-ից պարզաբանել են, որ ՊԵԿ ներքին անվտանգության վարչության աշխատակիցների կողմից իրականացված շրջայցերի ընթացքում, անձնակազմի հետ տարվող աշխատանքներում, ծառայողներին հանձնարարվել է պահպանել «Հարկային ծառայության մասին», «Մաքսային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքների և ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջները և անշեղորեն առաջնորդվել ՊԵԿ նախագահի համապատասխան հրամաններով և հանձնարարականներով, ինչպես նաև խստագույնս պահպանել հարկային և մաքսային ծառայողների վարքագծի կանոնները՝ համակարգում բացառելով հարկ վճարողների շահերի ոտնահարման, նրանց գործունեության խոչընդոտման, անհարկի միջամտության, ճնշումների գործադրման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերը:

Այս հարցի առնչությամբ պետք է նշել, որ Պաշտպանը տարիներ շարունակ տարեկան հաղորդումներում առաջարկել է ստուգումների գործընթացի թափանցիկությունն ապահովելու նպատակով հարկային և մաքսային ծառայողների հանդերձանքին ամրացնել դյուրակիր տեսախցիկներ:

Որպես օրինակ՝ նշվել է, որ Ոստիկանության դեպքում դյուրակիր տեսախցիկները ցույց են տվել կիրառության արդյունավետություն: Հետևաբար, դրանք կարող են կիրառելի լինել նաև մաքսային և հարկային մարմինների աշխատանքում: Ներկայացվել են նաև միջազգային փորձի օրինակներ:

Այսպես, ԱՄՆ-ի Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալությունը, որն իրավապահ մարմին է, 2013 թվականից ի վեր կիրառում է տեսախցիկներ ինչպես գործակալության տրանսպորտային միջոցների, այնպես էլ սպաների հանդերձանքի վրա: Տեսախցիկները սպաների հանդերձանքի վրա ամրացվել են ավտոմեքենաներից հեռու գտնվելու դեպքում սպաներին ուղեկցելու նպատակով<sup>586</sup>:

<sup>585</sup> Առավել մանրամասն տե՛ս 2018, 2019, 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներ:

<sup>586</sup> Տե՛ս ԱՄՆ-ի «Մաքսային և սահմանային պաշտպանության գործակալությունը դյուրակիր տեսախցիկներով ապահովելու մասին» զեկույց, հասանելի է <https://www.aclu.org/other/strengthening-cbp-use-body-worn-cameras> հղումով:

Պետական մարմինների աշխատանքի հաշվետվողականության ապահովման նպատակով տեսախցիկների կիրառման վերաբերյալ կարգավորումներ առկա են Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Սլովակիայում, Թունիսում և այլն<sup>587</sup>:

Քաղաքացիների հետ անմիջական շփում ունեցող ստուգումներ իրականացնող անձանց հանդերձանքին դյուրակիր տեսախցիկների ամրացումը կբարձրացնի նրանց գործունեության թափանցիկությունը, կնպաստի կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև բողոքներում բարձրացված հարցերի արդյունավետ լուծմանը:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝ քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների հետ ստուգումների ընթացքում անմիջական շփում ունեցող ծառայողներին ապահովել դյուրակիր տեսախցիկներով:*

### **18. Գործարարների իրավունքների խախտումներ կատարողական վարույթի շրջանակներում**

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել հարկադիր կատարողի գործողությունների (անգործության) հետևանքով գործարարների իրավունքների խախտումների վերաբերյալ:

Օրինակ՝ բողոքներից մեկով գործարար կազմակերպության ներկայացուցիչը տեղեկացրել է, որ դատարանը քաղաքացիական գործով կիրառել է հայցի ապահովման միջոց և արգելանք է դրել գործարար կազմակերպության գույքի վրա: Ընդ որում, հայցվորի ներկայացուցիչը դատարանին միջնորդել էր հայցագնի գումարի չափով արգելանք դնել պատասխանող կազմակերպությանը պատկանող գույքի և դրամական միջոցների վրա:

Հարկադիր կատարողն արգելանք է դրել գործարար կազմակերպության դրամական միջոցների վրա՝ պատճառաբանելով, որ կազմակերպության անշարժ, շարժական գույքն այլ կատարողական վարույթների շրջանակներում գտնվում է արգելանքի տակ:

Կազմակերպությունը ներկայացրել է միջնորդություն դրամական միջոցների վրա դրված արգելանքը հանելու և այլ գույքի վրա դնելու վերաբերյալ: Կազմակերպությունը ներկայացրել է նաև ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ» գրանցամատյանից քաղվածքը կազմակերպությանը պատկանող այլ գույքի վերաբերյալ ծանրաբեռնում, սահմանափակում չլինելու վերաբերյալ:

Հարկադիր կատարողը դրամական միջոցների վրայից արգելանքը չի հանել և հարցում է ուղարկել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների և բարձր տեխնոլոգիական

<sup>587</sup> Տե՛ս Ֆրանսիայի Ներքին անվտանգության օրենսգիրք, Code de la Sécurité Intérieure, art. L-251 and following, Ոստիկանության հաշվետվողականության համար դյուրակիր տեսախցիկների կիրառումը, Gary Cutlack, 'Police "body cams" make criminals 90 per cent more likely to confess' (Gizmodo, 21 August 2013) [accessed 18 March 2015], Հաշվետվողականության ամրապնդումը Թունիսում, հասանելի է [http://procurement-notices.undp.org/view\\_notice.cfm?notice\\_id=51998](http://procurement-notices.undp.org/view_notice.cfm?notice_id=51998) հղումով և այլն:

արդյունաբերության նախարարություններ այլ գույքի նկատմամբ կիրառված սահմանափակումները ճշտելու նպատակով: Հարցման պատասխանները ստանալուց հետո միայն հարկադիր կատարողն արգելանքը հանել է կազմակերպության դրամական միջոցների վրայից և դրել է այլ գույքի վրա:

Ստացվում է, որ հարկադիր կատարողը, իր գործողություններով (անգործությամբ) սահմանափակել է գործարար կազմակերպության սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը: Արդյունքում, ըստ բողոքի, հարկադիր կատարողի ոչ իրավաչափ վարչարարությամբ կազմակերպությանը պատճառվել է վնաս: Մասնավորապես, վերոգրյալի արդյունքում վերջինս չի կարողացել կատարել իր հարկային պարտավորությունները, վճարել աշխատակիցների աշխատավարձերը և այլն:

ՀՀ Սահմանադրության «Պատշաճ վարչարարության իրավունքը» վերտառությամբ 50-րդ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ պատշաճ վարչարարության իրավունքին համապատասխանում է այն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունը՝ ապահովելու այդ իրավունքի երաշխավորված իրացումը, որոնք Հայաստանի Հանրապետությունում ունեն վարչական մարմնի կարգավիճակ:

Վարչական մարմինները սահմանափակված են օրենքներով և նրանք ոչ միայն պետք է կիրառեն օրենքները, այլև չխախտեն դրանց պահանջները: Վարչական մարմինները պարտավոր են ղեկավարվել օրենքների պահանջներով, հակառակ դեպքում, նրանց գործունեությունը և դրա արդյունքում ընդունված իրավական ակտը կամ նրա գործողությունը կամ անգործությունն իրավաչափ լինել չեն կարող: Այս պահանջը բխում է վարչարարության օրինականության սկզբունքից:

Արդյունավետ վարչարարության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի CM/Rec(2007)7 հանձնարարականի 2-րդ հոդվածի համաձայն՝ պետական մարմինները պետք է գործեն օրենքին համապատասխան: Նրանք չպետք է կամայական միջոցներ ձեռնարկեն նույնիսկ հայեցողական լիազորություններ ունենալիս: Համաձայն հանձնարարականի 7-րդ հոդվածի՝ պետական մարմինները պետք է գործեն և կատարեն իրենց պարտականությունները ողջամիտ ժամկետում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 44.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե այլ բան նախատեսված չէ կատարողական թերթով, ապա, որպես հայցի ապահովում, հայցազնի չափով արգելանք է դրվում պարտապանին պատկանող՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված գույքի վրա: Նշված հոդվածի 2-րդ մասով սահմանված է պարտապանի գույքի վրա որպես հայցի ապահովում արգելանք դնելու հերթականությանը, ըստ որի՝ պարտապան ֆիզիկական անձի պարագայում արգելանքը սկզբում դրվում է անշարժ, այնուհետև շարժական գույքի վրա: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պարտապանի մոտ նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գույքի բացակայության կամ անբավարարության դեպքում արգելանքը դրվում է պարտապանին պատկանող դրամական միջոցների վրա:

Այսինքն, նշված կարգավորումը պահանջում է հայցի ապահովման կատարողական վարույթներով արգելանքներն ի սկզբանե դնել պարտապանին պատկանող անշարժ, այնուհետև շարժական գույքի վրա, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում միայն՝ դրամական միջոցների վրա:

Գործող օրենսդրությամբ հարուցված այլ կատարողական վարույթների շրջանակներում անշարժ, շարժական գույքի նկատմամբ կիրառված արգելանքը խոչընդոտ չէ նոր կատարողական վարույթի

շրջանակում նույն անշարժ, շարժական գույքի նկատմամբ արգելանք կիրառելու համար: Ավելին, կատարողական թերթի պատշաճ կատարումը պահանջում է, որ հարկադիր կատարողն արգելանք կիրառի պարտապանի անվամբ հայտնաբերված գույքի նկատմամբ՝ անկախ այն հանգամանքից, թե այդ գույքի վրա այլ արգելանքներ կան կիրառված, թե՛ ոչ: Այլ վարույթներով արդեն արգելանքի տակ գտնվող գույքի նկատմամբ կոնկրետ վարույթով արգելանք չկիրառելով՝ հարկադիր կատարողը հաշվի չի առել այն ռիսկը, որ կարող է առաջանալ այլ վարույթներով կիրառված արգելանքների վերացման դեպքում:

Այսինքն, յուրաքանչյուր դեպքում հարկադիր կատարողը պետք է նախ արգելանքը կիրառի պարտապանի անշարժ, շարժական գույքի, իսկ դրանց բացակայության կամ անբավարարության դեպքում՝ դրամական միջոցների վրա: Սակայն, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ընդհանուր ուսումնասիրությունը վկայում է, որ գործնականում հարկադիր կատարողը պարտապանի անշարժ, շարժական գույքն այլ կատարողական վարույթների շրջանակներում արգելանքի տակ լինելու դեպքերում արգելանքը դնում է դրամական միջոցների վրա:

Նշված գործելաոճը գործարարների պարագայում խոչընդոտներ է ստեղծում ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար: Արդյունքում ոչ իրավաչափ վարչարարությամբ խախտվում են գործարարների սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջն է, որ վարչարարությունը ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր: Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում: Վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում: Վարչական մարմինը պետք է վարչական վարույթն իրականացնի առանց դա բարդացնելու՝ լրացուցիչ լուսմաներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ զննում կատարելու, եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ: Եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Մինչդեռ, վերը նկարագրված դեպքում հարկադիր կատարողը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության «Շարժական գույքի նկատմամբ ապահովված իրավունքների վերաբերյալ» գրանցամատյանից քաղվածքը կազմակերպությանը պատկանող այլ գույքի վերաբերյալ ծանրաբեռնում, սահմանափակում չլինելու վերաբերյալ հիմք չի համարել և նույն հարցով հարցում է ուղարկել այլ նախարարություններ:

Ստացվում է՝ հարկադիր կատարողը, իր գործողություններով (անգործությամբ) սահմանափակել է գործարարի սեփականության և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Արդյունքում հարկադիր կատարողի ոչ իրավաչափ վարչարարությամբ կազմակերպությանը պատճառվել է վնաս: Գործարար կազմակերպությունը վերոգրյալի արդյունքում չի կարողացել կատարել իր հարկային պարտավորությունները, վճարել աշխատակիցների աշխատավարձերը և այլն:

Քննարկվող դեպքը ևս մի օրինակ է, երբ իրավասու մարմինը պարտավոր է յուրաքանչյուր դեպքում ապահովել անձի պատշաճ վարչարարության իրավունքի իրացումը:

Այս գործով Պաշտպանը կայացրել է «Մարդու իրավունքների և ազատությունների խախտման առկայության մասին» որոշում, որում խախտումը կատարած իրավասու մարմնին առաջարկվել է ձեռնարկել արդյունավետ և բավարար միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան վարչարարություն ապահովելու համար, հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու նպատակով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ կատարողական վարույթի կողմերին ոչ պատշաճ վարչարարությամբ վնաս հասցնելու հնարավոր դեպքերը բացառելու նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել հարկադիր կատարողների՝ օրենքի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը:*

## **ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



## **1. Անձնական տվյալների պաշտպանությունը փոստային կապի ոլորտում**

2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ են հասցեագրվել «Հայփոստ» ՓԲ ընկերության կողմից ծառայությունների մատուցումը հաճախորդների նույնականացումն իրականացնելու պայմանով կատարելու վերաբերյալ:

Մասնավորապես, բողոքի առիթը 2021 թվականի օգոստոսի 27-ին «Հայփոստ» ՓԲ ընկերության հայտարարությունն էր, համաձայն որի՝ սեպտեմբերի 1-ից փոստային ծառայությունները կտրամադրվեն հաճախորդների նույնականացումից հետո:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով անձինք տեղեկացրել են, որ «Հայփոստ» ՓԲ ընկերությունն անձնական տվյալները քաղաքացիներից պահանջում է առանց որևէ իրավական հիմքի՝ խախտելով անձնական տվյալների մասին ՀՀ օրենսդրությունը:

Բարձրացված հարցերի առնչությամբ տարեկան հաղորդման շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության պարզաբանումների համաձայն՝ «Հայփոստ» ՓԲ ընկերությունը իր ողջ գործունեության ընթացքում, ծառայությունների մատուցման նպատակներից ելնելով, մշտապես մշակել է հաճախորդների անձնական տվյալները, քանի որ անձնական տվյալների հավաքագրումն ու օգտագործումը ուղղակիորեն բխում է փոստային ծառայությունների մատուցման գործառույթն իրականացնելու պարտավորությունից: Նոր ծրագրային ապահովման ներդրմամբ նման մշակումը դառնում է ավտոմատացված, որը կհանգեցնի անձնական տվյալների մշակման գործընթացների պատշաճ համակարգմանը և թույլ կտա ապահովելու տվյալների ճշգրտությունն ու դրանց պաշտպանության հանդեպ վերահսկողությունը: Անձնական տվյալների պաշտպանության երաշխիքների հետ կապված պարզաբանել են նաև, որ «Հայփոստ» ՓԲ ընկերությունը՝ որպես փոստային կապի ազգային օպերատոր, ունի պարտավորվածություն պահպանել մշակվող անձնական տվյալների գաղտնիությունը:

Հաճախորդի անձնական տվյալների գաղտնիության պահպանման պարտավորությունը նախատեսված է Համաշխարհային փոստային միության Կոնվենցիայում, որի համաձայն՝ անձնական տվյալներ է համարվում այն տեղեկատվությունը, որը հնարավորություն է ընձեռում նույնականացնել փոստային ծառայությունների հաճախորդի անձը:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է տվյալների մշակման այն ընդհանուր սկզբունքները և կանոնները, որոնք պահպանելու դեպքում անձնական տվյալների մշակումն իրավաչափ և թույլատրելի կլինի:

Անձնական տվյալների մշակման իրավաչափությունը ենթադրում է անձնական տվյալների մշակման բոլոր սկզբունքների և կանոնների միաժամանակյա ապահովում:

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տվյալների սուբյեկտի համաձայնությունը համարվում է տրված, և մշակողն այն մշակելու իրավունք ունի, երբ՝

1) մշակողին հասցեագրած և տվյալների սուբյեկտի ստորագրած փաստաթղթում նշված են անձնական տվյալները, բացառությամբ այն դեպքերի, երբ փաստաթուղթն իր բովանդակությամբ հանդիսանում է անձնական տվյալները մշակելու դեմ առարկություն:

2) մշակողը տվյալները ստացել է տվյալների սուբյեկտի հետ կնքված պայմանագրի հիման վրա և օգտագործում է այդ պայմանագրով սահմանված գործողությունների նպատակով:

3) տվյալների սուբյեկտն իր կամքով, օգտագործելու նպատակով բանավոր փոխանցում է մշակողին իր անձնական տվյալների մասին տեղեկությունները:

Նույն հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝ տվյալների սուբյեկտի համաձայնությունը տրվում է գրավոր կամ էլեկտրոնային եղանակով՝ հաստատված էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բանավոր համաձայնության դեպքում՝ այնպիսի հավաստի գործողությունների միջոցով, որոնք ակնհայտորեն կվկայեն տվյալների սուբյեկտի՝ անձնական տվյալները օգտագործելու համաձայնության մասին: Տվյալների սուբյեկտի համաձայնությունը ստանալու փաստն ապացուցելու, իսկ հանրամատչելի անձնական տվյալներ մշակելու դեպքում դրանց հանրամատչելի լինելու փաստն ապացուցելու պարտականությունը կրում է մշակողը:

Ընդ որում, համաձայնությունը միշտ ենթադրում է անձնական տվյալների մշակման վերաբերյալ անձնական տվյալների սուբյեկտների իրազեկվածություն: Նույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձնական տվյալներ մշակողը կամ նույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված լիազորված անձը տվյալների սուբյեկտի համաձայնությունն ստանալու նպատակով ծանուցում է տվյալներ մշակելու մտադրության մասին:

Ստացվում է, որ օրենքը նախատեսվում է համաձայնության տրամադրման լայն հնարավորություն համապատասխան գործողությունների միջոցով, նաև սահմանում է, որ այդ գործողությունները պետք է լինեն հավաստի:

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ «Անձնական տվյալների մշակման ընթացքում մասնավոր անձանց իրավունքների պաշտպանության մասին» դիրեկտիվը սահմանում է, որ անձնական տվյալներ մշակելիս տվյալների սուբյեկտի համաձայնությունը նրա ազատ տրված ցանկացած կամահայտնությունն է, որի միջոցով տվյալների սուբյեկտը արտահայտում է իր անձնական տվյալները մշակելու համաձայնությունը<sup>588</sup>: Այսինքն, անձնական տվյալներ մշակելու համաձայնությունը պետք է տրված լինի ազատ, սուբյեկտի կամքով, առանց խաբեության, սպառնալիքի, հարկադրանքի կամ համաձայնություն չտալու դեպքում իր համար բացասական հետևանքի: Համաձայնությունը պետք է տրվի անձնական տվյալների մշակման նպատակի և շրջանակի մասին սուբյեկտին տեղեկացնելով: Անձնական տվյալների մշակման սուբյեկտը պետք է տեղեկացված լինի անձնական տվյալների մշակման հանգամանքների և հետևանքների մասին:

Դրանից բացի, տվյալների սուբյեկտի համաձայնության առկայության դեպքում միևնույն է տվյալներ մշակողը պետք է ապահովի տվյալների մշակման գործընթացում օրինականության և համաչափության սկզբունքների պահպանումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ փոստային ծառայությունների արդիականացման գործընթացը պետք է իրականացվի անձնական տվյալների մշակման կանոնների պահպանմամբ: Այսինքն, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է ստանալ անձնական տվյալները մշակելու տվյալների սուբյեկտի համաձայնությունը, տվյալների սուբյեկտը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալու իր տվյալների մշակման իրավական հիմքերին, նպատակներին և պայմաններին:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ շատ դեպքերում բողոքի առիթ է դարձել «Հայփոստ» ՓԲ ընկերության աշխատակիցների անձնական տվյալների մասին օրենսդրությանը և հաճախորդների անձնական տվյալների տրամադրման նպատակներին իրազեկված չլինելը:

<sup>588</sup> <https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=CELEX:31995L0046:en:HTML>

Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝

1. քաղաքացիների անձնական տվյալները մշակելու յուրաքանչյուր դեպքում պահպանել օրինականության և համաչափության սկզբունքները,
2. բարձրացնել անձնական տվյալների մշակման վերաբերյալ աշխատակիցների գիտելիքների մակարդակը և ներդնել իրազեկման գործուն մեխանիզմներ:

## **2. Տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում էլեկտրական էներգիայի, խմելու ջրի, գազի մատակարարման դադարեցումներ**

2021 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շարունակվում է չլուծված մնալ տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում էլեկտրական էներգիայի, խմելու ջրի, գազի մատակարարման դադարեցումների հարցը:

Այս հարցին Պաշտպանն անդրադարձել է նաև 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>589</sup>:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով անձինք տեղեկացրել են, որ փաստացի բնակվում են բնակարանում, որի սեփականության իրավունքի վերաբերյալ առկա է վեճ: Բնակարանի սեփականատիրոջ պահանջով մատակարարը դադարեցրել է ծառայությունների մատուցումը:

Այս դեպքում հարկ է անդրադարձ կատարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան որոշումների կարգավորումներին: Այսպես՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» թիվ 95-Ն որոշման հավելվածի 5.7 կետի բ1) ենթակետով սահմանված է, որ մատակարարը պարտադիր դադարեցնում է գազամատակարարումը՝ գազամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի և առաջարկվող ժամկետի ներկայացման դեպքում, եթե բաժանորդը չունի տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթուղթ՝ լուծելով պայմանագիրը: Գազամատակարարվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում գազամատակարարման դադարեցման և Պայմանագրի լուծման հարցը որոշվում է վեճը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո: Նմանատիպ կարգավորումներ նախատեսված են Հանձնաժողովի 2016 թվականի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն որոշման հավելվածի 75-րդ կետի 4-րդ ենթակետով և իրավահարաբերության պահին գործող Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 358-Ն որոշման հավելվածի 32-րդ կետի 2-րդ ենթակետով:

<sup>589</sup> Առավել մանրամասն տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 766-769:

Հանձնաժողովի վերոնշյալ կարգավորումների ուսումնասիրությունից պարզ է դարձել, դրանք ձևակերպված չեն բավարար հստակությամբ, ինչն էլ հանգեցնում է տարակերպ մեկնաբանությունների:

Խոսքը, օրինակ, վերաբերում է այն դեպքերին, երբ անձը ներկայացնում է ծառայությունների մատուցման տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության փաստը հաստատող փաստաթուղթ, սակայն ծառայությունների մատուցումն արդեն իսկ դադարեցված է, մատակարարը պարտավոր է վերականգնել այն, թե՛ ոչ: Բացի այդ, դատարան հայցադիմում ներկայացնելը, առանց դատարանի կողմից հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշման, հաստատում է ծառայությունների մատուցման տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության փաստը, թե՛ ոչ:

Վերոնշյալ կարգավորումների ոչ հստակ ձևակերպումը հնարավորություն չի տալիս իրավահարաբերության մասնակիցներին համապատասխանեցնելու իրենց վարքագիծը սահմանված պահանջներին:

Իսկ մինչև տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելը ծառայությունների մատակարարման դադարեցումը կարող է հանգեցնել տարածքը տիրապետողների հարկադիր վտարմանը կամ առողջությանը վնաս պատճառելուն: Խոսքը վերաբերում է հատկապես տարեցների, երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց առողջությանը վնաս պատճառելուն:

Իրավական որոշակիությունը կամ կանխատեսելիությունը պահանջում են, որ ցանկացած վկայակոչված նորմ ձևակերպված լինի բավականին ճշգրիտ, որպեսզի անձը հնարավորություն ունենա հանգամանքներից ելնելով ողջամտորեն կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը<sup>590</sup>:

Բարձրացված խնդրի կապակցությամբ հատկանշական է նաև Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումը, որ օրենքի կանխատեսելիության, որոշակիության և հստակության սկզբունքի երաշխավորումը, ի թիվս այլնի, կոչված է նաև կանխելու, բացառելու «կամայականության վտանգը»<sup>591</sup>:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ պետք է արձանագրել, որ Հանձնաժողովի վերը նշված որոշումների համապատասխան կարգավորումները ձևակերպված չեն բավարար հստակությամբ, ինչը հնարավորություն չի տալիս իրավահարաբերության մասնակիցներին համապատասխանեցնելու իրենց վարքագիծը սահմանված պահանջներին, ինչպես նաև գործնականում կարող է հանգեցնել դրույթի ոչ միանշանակ մեկնաբանությանն ու կիրառությանը:

2021 թվականին Հանձնաժողովին հասցեագրված գրությամբ Պաշտպանը հարցադրում էր արել, թե արդյոք Հանձնաժողովում քննարկվել է 2005 թվականի թիվ 95-Ն, 2006 թվականի թիվ 358-Ն, 2016 թվականի թիվ 378-Ն որոշումներում փոփոխություններ իրականացնելու հարցը: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Հանձնաժողովի համապատասխան որոշումներում այնպիսի փոփոխությունների իրականացմանը, որոնք հստակ կսահմանեն մատակարարի պարտավորությունը չդադարեցնելու, իսկ դադարեցված լինելու դեպքում՝ վերականգնելու

<sup>590</sup> Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի հրատապ հիմնախնդիրները. Գիտագործնական ձեռնարկ դատավորների և դատական ծառայողների համար: Երևան 2011, էջ 15:

<sup>591</sup> Տե՛ս Հիլդա Հաֆստեյնսդոտիրը ընդդեմ Իսլանդիայի (Hilda Hafsteinsdottir v. Iceland) գործով 2004 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 40905/98, կետ 56:

բաժանորդին ծառայությունների մատուցումը ծառայությունների մատուցման տարածքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության փաստի հաստատման դեպքում:

Հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային (այսուհետ՝ ԷԲՑ) կանոնների նախագծով նախատեսվում է, որ սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում էլեկտրամատակարարման դադարեցման հարցը լուծվում է վեճը օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո: Այն պարագայում, երբ վեճը ծագել է կամ այդ մասին Բաշխողը տեղեկացել է ԷԲՑ կանոնների 139-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն (նախկին սպառողի) էլեկտրամատակարարման դադարեցումից հետո, Բաշխողը սպառման համակարգի էլեկտրամատակարարումը վերականգնում է վեճի մասին տեղեկանալու պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

Ըստ Հանձնաժողովի՝ ներկայում լրամշակվում է բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները, որում նախատեսվում է ներառել իրավակարգավորումը: Այն կներառվի նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններում:

Իհարկե ողջունելի է, որ Հանձնաժողովը նախաձեռնել է խնդրո առարկա իրավանորմերի կատարելագործման գործընթաց, սակայն բացի վեճի մասին տեղեկանալուց հետո ծառայությունների մատակարարումը վերականգնելու պարտավորության սահմանումը, անհրաժեշտ է հստակեցնել նաև, թե ո՞ր դեպքում է հաստատվում սեփականության իրավունքի վերաբերյալ վեճի առկայության փաստը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ փոփոխություններ իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան որոշումներում:*

### **3. Մատակարարված ծառայությունների համար չվճարելու դեպքում բաժանորդին ջրի նվազագույն քանակով չապահովելը**

Տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է մատուցված ծառայությունների համար սահմանված գումարը չվճարելու պատճառով բաժանորդների ջրամատակարարման դադարեցման դեպքերում ջրի նվազագույն քանակով ապահովելու խնդրի մասին<sup>592</sup>:

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է սոցիալապես անապահով անձանց, երեխաներին, տարեցներին, հաշմանդամություն ունեցող անձանց ջրի հասանելիությունն ապահովելուն:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների

<sup>592</sup> Առավել մանրամասն տե՛ս 2019, 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներ:

մատուցման կանոնները սահմանելու մասին» 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշման (այսուհետ՝ Կանոններ) 74-րդ կետով մատակարարին որպես հայեցողական լիազորություն է տրված մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման դեպքում բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը: Սակայն, բաժանորդի ջրամատակարարման դադարեցումը չպիտի հանգեցնի վերջինիս ջրի իրավունքից զրկելուն: Հետևաբար, Կանոններով պետք է սահմանվի նաև բաժանորդին նվազագույն ջրի քանակով ապահովելու մատակարարի պարտականությունը:

Դեռևս 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար<sup>593</sup>: Մասնավորապես, ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուրի համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը՝ նրա ամենօրյա պահանջմունքների բավարարման համար: Անվտանգ ջրի աղեկվատ քանակությունն անհրաժեշտ պայման է ջրագրկման հետևանքով առաջացող մահերի կանխարգելման, ամենօրյա անորակ ջրի օգտագործումից առաջացող հիվանդությունների ռիսկերի նվազման համար<sup>594</sup>:

Եթե ջրամատակարարման ծառայություններն իրականացնում են ոչ պետական սուբյեկտները, պետությունը շարունակում է պահպանել ջրի իրավունքի պաշտպանությունն իրականացնելու իր պարտավորությունը: Ջրի իրավունքի իրացման կարևորագույն երաշխիքներն են հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները: Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածը սահմանում է, որ կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից: Ինչպես մարդու մյուս իրավունքները, ջրի իրավունքը ևս ենթադրում է պետության պարտավորությունը հարգելու, պաշտպանելու և իրագործելու այն: Ջրամատակարարման ծառայությունների տնտեսապես հասանելիության հետ անմիջականորեն կապված է ջրամատակարարման դադարեցման խնդիրը: Ջրամատակարարման դադարեցման դեպքում անձը պետք է ունենա նվազագույն չափաքանակով ջուր՝ անկախ նրա անվճարունակ լինելու հանգամանքից: Վճարումների չկատարման դեպքում պետք է ապահովվի յուրաքանչյուրի իրավունքը օգտվելու ջրի նվազագույն անհրաժեշտ քանակից: Կարևոր է, որպեսզի ջրանջատումը չհանդիսանա սանիտացիայի օգտագործումից զրկվելու պատճառ<sup>595</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ջրամատակարարումն իրականացվում է մասնավոր՝ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության կողմից: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ջրամատակարարման իրականացումը մասնավոր ընկերությանը փոխանցելու դեպքում պետությունը պահպանում է

<sup>593</sup> Տե՛ս ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի բանաձև 2010 թվական (64/292) հասանելի է [http://www.un.org/waterforlifedecade/human\\_right\\_to\\_water.shtml](http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml) հղումով:

<sup>594</sup> Տե՛ս ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային համաձայնագրի 11-12-րդ հոդվածներ:

<sup>595</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անկախ փորձագիտական զեկույցը խմելու ջրի և սանիտացիայի հասանելիության վերաբերյալ, հասանելի է <https://digitallibrary.un.org/record/685823> հղումով:

մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները հարգելու ու պաշտպանելու Սահմանադրությամբ ամրագրված իր պարտականությունը: Հետևաբար՝ մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չվճարման դեպքում անձն ամբողջովին չպետք է զրկվի ջրի իրավունքից, փոխարենը կարող է կրճատվել ջրամատակարարման տևողությունը:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է արձանագրել, որ պետության պոզիտիվ պարտավորությունն է ջրի հասանելիության ապահովումը հասարակության բոլոր շերտերի համար՝ ներառյալ՝ հատուկ կարիքներ ունեցող անձանց, ինչպես օրինակ՝ երեխաները, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝ սպառած ջրի դիմաց սահմանված գումարը չվճարելու դեպքում անձին նվազագույն ջրի քանակով ապահովելու գործուն կառուցակարգեր սահմանել օրենսդրական մակարդակում:*

#### **4. Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցումը ներդրումային ծրագրերում ներառելը**

Տարիներ շարունակ Պաշտպանին բողոքներ են հասցեագրվում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի բացակայության վերաբերյալ: 2021 թվականին ևս Պաշտպանին հասցեագրվել են նման բողոքներ:

Այսպես, բողոքներից մեկով անձինք տեղեկացրել են, որ Երևանի փողոցներից մեկում տարիներ շարունակ բացակայում է ջրահեռացման համակարգը: Այդ պատճառով բնակիչները զրկված են անձնական հիգիենայի կանոնները պահպանելու հնարավորությունից: Դրանից բացի, փողոցում կոյուղատար համակարգի բացակայությունը նպաստավոր պայմաններ է ստեղծում համաճարակների և հիվանդությունների տարածման համար:

Այս առնչությամբ Զրային կոմիտեից պարզաբանել են, որ վերոնշյալ տարածքն ընդգրկված չէ առաջիկա ներդրումային ծրագրերում, սակայն հնարավորությունների դեպքում հաշվի կառնվի նշված տարածքի կոյուղագծի անցկացման հարցը:

Շարունակվում է չլուծված մնալ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր համայնքում և Ձորաղբյուր-2 այգետարածքում (ամառանոցներ) խմելու ջրի մատակարարման համակարգի կառուցման հարցը:

Դեռևս 2019 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին Երևան քաղաքի թաղամասերից մեկից դիմել էին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման նոր համակարգ կառուցելուն աջակցելու հարցով:

Բողոք ներկայացրած անձը նշել էր, որ ջրագծերի վնասման արդյունքում բնակիչներին մատակարարվում է անորակ ջուր, ձմռանը ջրագծերում ջուրը սառչում է, իսկ հետևանքները վերացվում են բնակիչների կողմից:

Բնակելի տների ջրագծերի վերանորոգման կամ ջրամատակարարման նոր համակարգ կառուցելու առաջարկներով Պաշտպանը համապատասխան գրություններ էր հասցեագրել Զրային կոմիտեին, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին, «Վեոլիա Ջուր» ՓԲ

ընկերությանը: Պատասխաններ են ստացվել այն մասին, որ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ նշված հատվածի բնակիչներին պատկանող ջրագծերը կառուցվել են առանց տեխնիկական նորմերի պահպանման (մասնավորապես՝ առանց խողովակների ջերմամեկուսացման և թաղման նվազագույն խորությունների պահպանման), հիմնականում անցնում են տարածքի տնտեսություններին պատկանող հողամասերով և հանդիսանում են ներքին ցանց, որի սպասարկումը դուրս է «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության գործառույթներից:

Հետևաբար, ջրագծերի վերակառուցումը, իսկ անհրաժեշտության դեպքում նաև կատարված միացման փոփոխությունը պետք է իրականացվի բաժանորդների միջոցների հաշվին:

Պաշտպանը խնդրի վերաբերյալ իրավասու մարմիններին է ուղարկել բազմաթիվ գրություններ, այդ թվում՝ Ջրային կոմիտե: Մասնավորապես, պարզաբանումներ են պահանջվել փողոցի ջրագծերի վերակառուցման աշխատանքները նախատեսվող ներդրումային ծրագրերում ընդգրկելու վերաբերյալ:

2021 թվականին Ջրային կոմիտե կրկին գրություն է հասցեագրել՝ կապված նշված բնակելի տների ջրամատակարարման խնդիրը Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում ներառելու և թաղամասում ջրամատակարարման խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների հետ:

Պատասխան է ստացվել այն մասին, որ բնակելի տների ջրամատակարարման բաշխիչ ցանցը վերակառուցվել է Երևանի ջրամատակարարման բարելավման ծրագրի շրջանակներում և ներկայում բոլոր 19 բաժանորդների ջրամատակարարումն իրականացվում է նոր համակարգով:

Ջրի իրավունքը՝ որպես մարդու հիմնարար իրավունք, ամրագրված է միջազգային հիմնարար փաստաթղթերով: 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 հանձնարարականով<sup>596</sup> ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվեց որպես մարդու իրավունք և ընդունվեց այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար<sup>597</sup>:

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակները՝ ընդունված աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015թ. սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի գագաթնաժողովի ժամանակ: Մասնավորապես, Կայուն զարգացման 6-րդ նպատակն է ապահովել հասանելիություն և կայուն ձևով կառավարել ջուրն ու սանիտարական պայմանները բոլորի համար: Կայուն զարգացման նպատակներին համապատասխան նախատեսվել են նաև թիրախներ, որոնք պետությունների համար հիմնարար են և ըստ այդմ՝ քաղաքականության մշակումը և ծրագրերի իրականացումը պետք է ուղղված լինեն այդ թիրախների իրագործմանը<sup>598</sup>:

Ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուրի համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը նրա նվազագույն պահանջումների բավարարման համար<sup>599</sup>:

<sup>596</sup> Տե՛ս United Nations General Assembly Resolution (64/292):

<sup>597</sup> Տե՛ս [http://www.un.org/waterforlifedecade/human\\_right\\_to\\_water.shtml](http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml):

<sup>598</sup> Տե՛ս <https://unstats.un.org/sdgs/report/2018/goal-06/>:

<sup>599</sup> Տե՛ս UN CESCR General Comment 15: Ընդունվել է 2003 թվականի հունվարի 20-ին ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի 29-րդ համաժողովում (E/C.12/2002/11):



Չնայած խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցմանն ուղղված որոշակի քայլերին, այնուամենայնիվ խնդիրը համակարգային բնույթ է կրում և տարիներ շարունակ լուծում չի ստանում: Մարդիկ տարիներ շարունակ բնակվում են ջրամատակարարման կամ կոյուղատար համակարգերի բացակայությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ առաջնահերթության կարգով միջոցներ ձեռնարկել բնակելի թաղամասերում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման ուղղությամբ:*

## **5. Խմելու ջրի մատակարարման խափանումներ**

2021 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել խմելու ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ:

Խնդիրներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին վերաբերել են ըստ սահմանված ժամանակացույցի ջրամատակարարում չիրականացնելուն, ջրամատակարարման ընդհատումներին, խմելու ջրի որակի փոփոխությանը, ջրանջատումների վերաբերյալ պատշաճ չձանուցելուն:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքների համաձայն, ջրանջատումների վերաբերյալ բաժանորդների բջջային հեռախոսահամարներին հաղորդագրություններ ուղարկվել են ջրանջատումներն իրականացնելուց հետո կամ ընդհանրապես ծանուցում չի իրականացվել: Բողոքներ են ստացվել նաև այն մասին, որ ջրանջատումների վերաբերյալ բաժանորդներին հաղորդագրություններ ուղարկվել են, սակայն ջրանջատումներ տեղի չեն ունեցել:

Բարձրացված հարցերի կապակցությամբ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության պարզաբանումների համաձայն՝ ընկերությունն առկա խնդիրների, ինչպես նաև վթարային ընդհատման կամ Ֆորս մաժորի հետևանքով ընդհատման հասցեի (վայրի), օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգնման կանխատեսվող ժամի մասին հնարավորինս սեղմ ժամկետում իր պաշտոնական կայքում, ֆեյսբուքյան էջում հրապարակել է տեղեկատվություն, ինչպես նաև բջջային հեռախոսահամարներին հաղորդագրություններ ուղարկելու միջոցով անհատապես ծանուցել է բաժանորդներին: Ջրի որակի հարցի հետ կապված «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունից պարզաբանել են, որ ահազանգերի հիման վրա իրականացվել են խմելու ջրի նմուշառումներ և խմելու ջրի որակի հետ կապված որևէ շեղում և անհամապատասխանություն չի հայտնաբերվել: Ընկերության պարզաբանումների համաձայն՝ երբեմն հնարավոր են դեպքեր, երբ վթարի բնույթից, ծավալից կամ այլ իրավիճակներից ելնելով, այն կանխվում է նախապես ջրանջատումից շուտ, որի դեպքում ջրամատակարարման ցանցն ամբողջությամբ չի դատարկվում:

Ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության՝ 2021 թվականի ընթացքում ջրամատակարարման գրաֆիկի խախտման վերաբերյալ ընկերությունը գրավոր և էլեկտրոնային եղանակով ստացել է 52 բողոք: Ջրամատակարարման ընդհատման յուրաքանչյուր դեպքում ընկերությունը ձեռնարկել է վթարավերականգնողական աշխատանքներ՝ կիրառելով լավագույն արդյունաբերական պրակտիկայի նորմերը և խելամիտ ինժեներական պրակտիկայի պահանջները:

«Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերությունից պարզաբանել են, որ ջրի որակի վերաբերյալ ընկերությունը ստացել է 2 գրավոր բողոք և 3354 հեռախոսազանգ: Յուրաքանչյուր դեպքում կատարվել է խմելու

ջրի նմուշառում և ստուգվել է համապատասխանությունը սահմանված սանիտարական նորմերին և կանոններին: Ընկերությունը հնարավոր ամեն քայլ ձեռնարկում է այն ՀՀ-ում գործող սանիտարական նորմերի և կանոնների պահանջներին համապատասխան պահելու համար:

ՄԱԿ-ի սպառողների պաշտպանության 2016 թվականի ուղեցույցի 72-րդ կետում սահմանվում է ջրամատակարարման ոլորտում անդամ պետությունների պարտավորությունը մշակել, իրականացնել և ամրապնդել խմելու ջրի մատակարարման, բաշխման և որակի բարելավման ազգային քաղաքականություն: Ընդ որում, նշվում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձնել ծառայությունների մատուցման մակարդակի, որակի և տեխնոլոգիայի բարձրացմանը, կարգավորող վերահսկողության իրականացմանը, ինչպես նաև սպառողների իրազեկման և ծրագրերին հասարակության մասնակցության կարևորությանը:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանությունների համաձայն՝ մասնակից պետությունները պետք է ընդունեն համապարփակ ծրագրեր ներկա և ապագա սերունդների համար բավարար և անվտանգ ջրի առկայությունն ապահովելու համար: Մասնավորապես, ընդգծվում է ջրային ռեսուրսներն աղտոտումից, ջրամբարներից ջրերի գերբացթողումից պաշտպանելը՝ մշտադիտարկում իրականացնելով առկա ռեսուրսների և վերջնական սպառողների կողմից ջրի արդյունավետ օգտագործման նկատմամբ և այլն :

Այսպիսով, մատակարար ընկերության մատուցած ծառայությունների որակի և սահմանված պահանջների նկատմամբ պատշաճ վերահսկողությունը և հետևողականությունը հնարավորություն կտան խուսափել հաճախակի ջրանջատումներից և կնպաստեն նաև սպառողների պատշաճ իրազեկման ապահովմանը:

*Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է՝*

*1. ուսումնասիրել վթարային ընդհատումների պատճառները և աշխատանքներ իրականացնել դրանք նվազագույնի հասցնելու ուղղությամբ,*

*2. խստացնել վերահսկողությունը խմելու ջրի մատակարարման ծառայությունների կանոնների, ինչպես նաև ջրամատակարարման ընդհատումների վերաբերյալ պատշաճ ծանուցումների կատարման նկատմամբ:*

## **6. Առևտրային հաշվառքի սարքի խափանման կամ վնասման դեպքում առանց մեղքի ապացուցման բաժանորդին պարասխանադրվության ենթարկելը**

2021 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ջրամատակարարում իրականացնող ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարքերը փոխարինելուց հետո իրականացված վերահաշվարկների վերաբերյալ: Բողոքներ են հասցեագրվել նաև առևտրային հաշվառքի սարքերի (գազահաշվիչի) խափանման կամ վնասման դեպքում գազամատակարարում

իրականացնող ընկերության կողմից բաժանորդներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

Այս խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում: Բողոքներն ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին նույնաբովանդակ են:

Բողոքների համաձայն՝ ջրամատակարարում իրականացնող ընկերությունը փոխարինել է բաժանորդների ներքին ցանցում տեղադրված առևտրային հաշվառքի սարքերը, որից հետո դրանք ստուգաչափվել են չափագիտական մարմնի կողմից: Փորձագիտական եզրակացությամբ պարզվել է, որ օրինակ՝ բացակայում է, վնասվել կամ կեղծվել է առևտրային հաշվառքի սարքի կապարակնիքը: Առևտրային հաշվառքի սարքի խախտման հիմքով իրականացվել է վերահաշվարկ և այն վճարելու պարտավորությունը դրվել է բաժանորդի վրա:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 378-Ն որոշման հավելվածի 55-րդ կետով սահմանված է, որ բաժանորդը պատասխանատվություն է կրում այնպիսի գործողությունների համար, որոնք ուղղված են իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածքում տեղակայված առևտրային հաշվառքի սարքի խախտմանը:

Մինչդեռ, հնարավոր է առևտրային հաշվառքի սարքը վնասվեր, օրինակ, ջրամատակարարում իրականացնող ընկերության աշխատակցի կողմից այն ապահավաքակցելու ընթացքում: Հետևաբար, խնդրահարույց է իրականացված վերահաշվարկի արդյունքում գումարը վճարելու պահանջը, առանց մեղքի ապացուցման, բաժանորդին ներկայացնելը:

Նմանօրինակ է իրավիճակը գազահաշվիչի փոխարինման դեպքերում: Գործող կարգավորումների համաձայն՝ եթե չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի խախտում, որն ըստ մատակարարի պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով և դա վերջին երկու տարիներին առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով:

Եթե երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի մեկից ավելի խախտում հայտնաբերվել է միևնույն բաժանորդի մոտ և չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերը, ըստ մատակարարի, պայմանավորված են եղել բաժանորդի միտումնավոր գործողություններով, մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ:

Այսպիսով, բազմաբնակարան շենքերի և առանձնատների առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են բաժանորդի սեփականության տարածքից դուրս: Սակայն, գազահաշվիչի խափանման դեպքում, եթե ըստ մատակարարի այն պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով, պատասխանատվությունը դրվում է բաժանորդի վրա:

Առևտրային հաշվառքի սարքերի՝ բաժանորդների սեփականության և վերահսկողության տարածք տեղափոխելու կամ մատակարարի կողմից առևտրային հաշվառքի սարքերի անվտանգությունն ապահովող շուրջօրյա վերահսկողության համապատասխան մեխանիզմներ կիրառելու դեպքում հնարավոր կլինի խուսափել բաժանորդին անհարկի պատասխանատվության ենթարկելու դեպքերից:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում բաժանորդին պատասխանատվության ենթարկելու հարցը շարունակում է խնդրահարույց մնալ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. առավել խիստ վերահսկողություն սահմանել մատակարար ընկերությունների կողմից ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումների կատարման նկատմամբ:*

*2. փոփոխություններ իրականացնել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշման մեջ:*

## **7. Ոռոգման ջրի մատակարարման խափանումներ**

2021 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել ոռոգման ջրի մատակարարման խափանումների վերաբերյալ:

Բողոքների համաձայն՝ Արմավիրի մարզի 12 համայնքին օրեր շարունակ ոռոգման ջուր չի մատակարարվել, դաշտերը չեն ոռոգվել, ինչի հետևանքով բերքը վնասվել է: Նմանատիպ բողոքներ են ստացվել նաև Շիրակի մարզից:

Բարձրացված հարցերի վերաբերյալ Ջրային կոմիտեի պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Ջրային Կոմիտեն ստացել է շուրջ 1250 դիմում-բողոք, որոնք համակարգի կազմակերպությունների հետ ստացել են համապատասխան լուծումներ:

«Ջրառ» ՓԲ ընկերության 2021 թվականի նախահաշվով նախատեսված էր համեմատաբար խոշոր 15 ջրամբարների և ՀՏԿ-ների անվտանգության հայտարարագրերի կազմումը, որը ֆինանսական միջոցների սղության պատճառով չի իրականացվել: Վերջիններս նախատեսվում է իրականացնել 2022 թվականին: Ներկայում Արարատի մարզում կառուցվում է Վեդիի ջրամբարը, որը նախատեսվում է շահագործման հանձնել 2022թ. դեկտեմբեր ամսին: Գառնի-Քաղցրաշեն ինքնահոս ջրատարը հանձնված է շահագործման:

Ջրային ռեսուրսները մարդու կենսագործունեության, տնտեսության կայացման և զարգացման կարևորագույն պայմաններից են: Ոռոգման ջուրը կենսական նշանակություն ունի բնակչությանը սննդով ապահովելու հարցում: Ոռոգման ջրի մատակարարման խնդիրն առնչվում է տնտեսության բոլոր ճյուղերին և ոլորտներին: Գյուղատնտեսական արտադրանքի առկայությունն ուղղակիորեն պայմանավորված է ոռոգման ջրի առկայությամբ և մատչելիությամբ: Հետևաբար, ոռոգման ջրի մատակարարման հարաբերությունները պետք է գտնվեն պետության ուշադրության կենտրոնում: Ջրային ռեսուրսների կառավարումը պետք է ընդգրկի համապատասխան տնտեսական և ֆինանսական ծրագրերի մշակման և իրականացման, ոլորտում համապատասխան ներդրումների ներգրավման միջոցառումներ: Ջրային ռեսուրսների կառավարման կարևորագույն տարրերից է նաև դրանց խնայողությունը և արդյունավետ օգտագործումը:

Հետևաբար, ոռոգման ջրի մատակարարման ոլորտը կանոնակարգելու ուղղությամբ պետք է իրականացվեն շարունակական գործողություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝ միջոցներ ձեռնարկել ոռոգման ջրի անխափան մատակարարումն ապահովելու ուղղությամբ:

## ԲԱԺԻՆ 12. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԱՅԼ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

### **1. Սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը**

Մարդու իրավունքների պաշտպանի դեռևս 2020 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր Սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայության խնդիրը<sup>600</sup>: Հաշվի առնելով, որ 2021 թվականի ընթացքում թե՛ օրենսդրական, և թե՛ գործնական մակարդակում բարձրացված խնդրի լուծմանն ուղղված քայլեր չեն ձեռնարկել՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ այն շարունակում է արդիական մնալ:

Սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայության արդյունքում գործնականում առաջանում է ոչ միայն Բարձր դատարանի որոշումների առհասարակ պատշաճ կատարման երաշխավորման, այլ այդ որոշումների բովանդակության ճիշտ ընկալման ու կիրառման հարց:

Խնդրի վերաբերյալ առկա օրենսդրական կարգավորումները հանգում են հետևյալին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 66-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է, որ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակումից հետո՝ ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում Կառավարությունը Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա ուսումնասիրում և անհրաժեշտության դեպքում նախաձեռնում է համապատասխան իրավական ակտեր մշակելը և Ազգային ժողով ներկայացնելը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասամբ ճանաչվել է Սահմանադրությանը հակասող, և սահմանվել է նորմատիվ իրավական ակտի կամ դրա մի մասի իրավական ուժը կորցնելու ավելի ուշ ժամկետ, ապա Կառավարությունը *մինչև այդ ժամկետի ավարտը* համապատասխան օրենքի նախագիծ կամ նախագծերի փաթեթ ներկայացնելու միջոցով ապահովում է որոշման կատարումը:

Պետք է նկատի ունենալ, որ օրենսդրական այս կարգավորումներն ինքնին չեն երաշխավորում Սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումը հետևյալ առումներով: Նախ, սահմանված ժամկետում համապատասխան օրենքի նախագիծ կազմելը և այն Ազգային ժողովին ներկայացնելը դեռևս չի երաշխավորում ողջամիտ ժամկետում այդ նախագծի ընդունումը և ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանի որոշումներում նախանշված ժամկետներում այդ որոշումների պատշաճ կատարումը:

<sup>600</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, էջ 812-819, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Մյուս կողմից, նշված ժամկետներում համապատասխան նախագծեր չմշակելու և դրանք Ազգային ժողով չներկայացնելու համար որևէ պատասխանատվություն նախատեսված չէ ՀՀ օրենսդրությամբ, ինչն առավել առարկայացնում է Սահմանադրական դատարանի որոշումների պատշաճ կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու խնդիրը: Ուշագրավ է, որ Սահմանադրական դատարանի պահանջները չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու, դրանց կատարումից խուսափելու կամ կատարման ժամկետները խախտելու համար պատասխանատվության միջոց նախատեսված է եղել «Սահմանադրական դատարանի մասին» թիվ ՀՕ-58-Ն օրենքով, որն ուժը կորցրել է 2018 թվականի ապրիլի 9-ից<sup>601</sup>: Համեմատության կարգով հարկ է նշել, որ Սահմանադրական դատարանի դատական ակտերը չկատարելու համար Մոլդովայի Սահմանադրական իրավասության վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է վարչական պատասխանատվություն<sup>602</sup>, իսկ «Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի մասին» դաշնային սահմանադրական օրենքով՝ քրեական<sup>603</sup>:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ իր 2017 թվականի հունիսի 2-ի կարծիքում արձանագրել է, որ Սահմանադրական դատարանի որոշումների չկատարումը սահմանադրական արդարադատության և օրենքի գերակայության համար մեծ սպառնալիք է և պետք է շտապ լուծվի<sup>604</sup>: **Նույն կարծիքում Վենետիկի հանձնաժողովը շեշտել է Սահմանադրական դատարանի որոշումների կատարման կարևորությունը՝ արձանագրելով, որ անհրաժեշտ է այդ որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության ավելի գործնական մեխանիզմներ ներդնել, ինչպես նաև հետևանքներ նախատեսել իրենց պահանջներին չհամապատասխանելու համար**<sup>605</sup>:

Մեկ այլ խնդիր է Սահմանադրական դատարանի որոշմանը գործնականում այդ որոշման էությանը չհամապատասխանող մեկնաբանություն տալը: Թեև ենթադրելի է, որ Սահմանադրական դատարանի որոշումների պատճառաբանական մասերում տրված մեկնաբանություններն ինքնին պետք է բավարար լինեն Բարձր դատարանի դիրքորոշումն ամբողջությամբ ընկալելու և դրան համապատասխան նախագծեր մշակելու համար, սակայն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրություններն այլ բանի մասին են վկայում: Սահմանադրական դատարանի որոշումները կարող են տարակերպ մեկնաբանման տեղիք տալ, և ըստ այդմ՝

<sup>601</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդումը հետևյալ <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, էջ 813:

<sup>602</sup> Հասանելի է [https://online.zakon.kz/document/?doc\\_id=30398307#pos=551;-53](https://online.zakon.kz/document/?doc_id=30398307#pos=551;-53) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ, հոդված 75, 82:

<sup>603</sup> Հասանելի է [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_4172/58f88826b5f968bb22e2a69b687da3e5686cfc82/](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_4172/58f88826b5f968bb22e2a69b687da3e5686cfc82/), [http://www.consultant.ru/document/cons\\_doc\\_LAW\\_10699/92d337ccb0bfa433cfb933ae2ef639f06fea27e8/#dstl02043](http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/92d337ccb0bfa433cfb933ae2ef639f06fea27e8/#dstl02043) հղումներով, 2021 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>604</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2017\)021-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2017)021-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ, կետ 92:

<sup>605</sup> Հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(2017\)021-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(2017)021-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ, կետ 107:

նախաձեռնված օրենսդրական լուծումները կարող են ամբողջությամբ չբխել Բարձր դատարանի կոնկրետ որոշման էությունից: Օրինակ՝ Սահմանադրական դատարանի որոշումներից մեկի հիման վրա կազմվել և շրջանառվել են միմյանցից լիովին տարբերվող և Սահմանադրական դատարանի որոշման էությունից չբխող լուծումներ բովանդակող բազմաթիվ նախագծեր, որոնցից 3-ին բովանդակային անդրադարձ կատարվել է Պաշտպանի 2020 թվականի գործունեությունն ամփոփող տարեկան հաղորդմամբ:

Խոսքը Սահմանադրական դատարանի 2019 թվականի հունիսի 18-ի թիվ ՍԴՈ-1463 որոշման մասին է, որով Սահմանադրությանը հակասող են ճանաչվել «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասը, նույն հոդվածի 4-րդ մասը՝ դատավորներին վերաբերող մասով, 9-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին պարբերությունը և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ «մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը գործող օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի և դրա նկատմամբ սահմանված հավելվածարի հանրագումարի) գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով» դրույթի մասով, երրորդ պարբերության երկրորդ նախադասությունը և չորրորդ պարբերությունը:

Ուշագրավ է, որ նույն որոշմամբ **Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանվել 2019 թվականի հոկտեմբերի 30-ը՝** հնարավորություն տալով Ազգային ժողովին «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու նույն որոշման պահանջներին: **Մինչդեռ՝ պետք է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1463 որոշումից բխող օրենսդրական փոփոխությունները շուրջ 2.5 տարի է, ինչ փաստացի չեն կատարվել՝ չնայած ի կատարումն ՍԴՈ-1463 շրջանառված և շրջանառվող բազմաթիվ նախագծերի:**

Ի լրումն նախորդ տարիներին շրջանառված նախագծերի՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ կառավարությունը շրջանառել է նոր նախագիծ<sup>606</sup>, որը սույն զեկույցի հրապարակման պահին գտնվում է Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ դեռևս չընդգրկված նախագծերի շարքում<sup>607</sup>: Աժ նստաշրջանի օրակարգ դեռևս չընդգրկված նախագծերի շարքում է նաև պատգամավորներ Արթուր Դավթյանի և Վլադիմիր Վարդանյանի հեղինակած նախագիծը «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, որը ևս բխում է ՍԴՈ-1463 որոշման կատարման հրամայականից:

**Չխորանալով նշված նախագծերի բովանդակային լուծումների մեջ՝ հարկ է արձանագրել, որ Սահմանադրական դատարանի նույն որոշումից բխող, սակայն միմյանցից էապես տարբերվող նախագծերի սուկ գոյությունն իսկ ապացույցն է այն բանի, որ անհրաժեշտ են**

<sup>606</sup> Հասանելի է [http://www.parliament.am/draft\\_docs8/K-163.pdf](http://www.parliament.am/draft_docs8/K-163.pdf) հղումով:

<sup>607</sup> Հասանելի է <http://www.parliament.am/drafts.php?sel=introduction&lang=arm> հղումով, հարց 50, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



**Սահմանադրական դատարանի որոշումների կատարման գործուն մեխանիզմներ ներդնել թե՛ օրենսդրական և թե՛ գործնական մակարդակում:**

Սահմանադրական դատարանի որոշումների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմների բացակայությունը ևս մեկ խնդրի է հանգեցնում: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ Սահմանադրական դատարանի որոշումները և դրանցում արտահայտված դիրքորոշումները պարզապես անտեսվում են իրավակիրառողների կողմից (քանի որ, միևնույնն է, որևէ պատասխանատվության չեն ենթարկվելու), որպիսի փաստով պայմանավորված՝ Բարձր դատարանին դիմած անձինք ստիպված են լինում դատական նոր վարույթներ հարուցելու, ինչը ոչ միայն ժամանակի և ֆինանսական առումներով ավելորդ բեռ է նրանց համար, այլ նաև դատարաններին է անհարկի ծանրաբեռնում առանց այն էլ առկա ծանրաբեռնվածության պայմաններում:

Օրինակ՝ Սահմանադրական դատարանի թիվ ՍԴՈ-1463 որոշման հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը կենսաթոշակ նշանակելուն պարտավորեցնելու կամ մինչև ՍԴՈ-1463 որոշման կայացումն արդեն նշանակված կենսաթոշակի վերահաշվարկ կատարելուն պարտավորեցնելու պահանջով մի քանի դատավորներ արդեն դիմել են ՀՀ վարչական դատարան (վարչական գործեր թիվ ՎԴ/3846/05/20, թիվ ՎԴ/9041/05/18, ՎԴ/7089/05/20, ՎԴ/1595/05/20, ՎԴ/5242/05/19 և այլն):

Վերոգրյալից բացի՝ հարկ է նշել, որ 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերն իրականացրել են ՀՀ սահմանադրական դատարանի 2015-2016 թվականների որոշումների կատարման վիճակի համատեղ ուսումնասիրություն: Այդ ուսումնասիրությունն իրականացվել է՝ նաև հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը նպաստելու Մարդու իրավունքների պաշտպանի սահմանադրական նոր գործառույթը և օրենսդրական փոփոխությունների առաջարկներ ներկայացնելու օրենքով նախատեսված հնարավորությունը:

Ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել Սահմանադրական դատարանի որոշումներ, որոնցում ներկայացված են մարդու իրավունքների ոլորտում օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտության վերաբերյալ իրավական պահանջներ, սակայն դրանք մինչ օրս կատարված չեն: Ըստ այդմ, Մարդու իրավունքների պաշտպանի և Սահմանադրական դատարանի աշխատակազմերը համատեղ մշակել են մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ առաջարկող նախագծեր: Այդ նախագծերը, որոնցում օրենսդրական փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն է եղել, ներկայացվել են Ազգային ժողով և ՀՀ արդարադատության նախարարություն, որոնք, սակայն, սահմանված կարգով ընթացք չեն ստացել:

***Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է ներդնել Սահմանադրական դատարանի որոշումների անշեղ կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացնելու օրենսդրական և գործնական մեխանիզմներ:***

**2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված բողոքարկումը՝ որպես արդյունավետ պաշտպանության միջոց, այդ բողոքների քննության ժամկետների առումով**

Դեռևս 2020 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին են ներկայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի հետ կապված օրենսդրական և դրանով պայմանավորված իրավակիրառ պրակտիկայի խնդիրներ: Բանն այն է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված դրույթի ձևակերպման արդյունքում չի ապահովվում անձի՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների վերաբերյալ բողոքի քննությունը ողջամիտ ժամկետներում՝ դրանով վտանգելով այդ բողոքի քննության արդյունավետությունը:

Քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով սահմանվում է հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների դատարան բողոքարկումը: Նշվախ հոդվածի 4-րդ մասով ամրագրվում է, որ բողոքը դատավորի կողմից միանձնյա քննվում է այն ստանալու պահից տասն օրվա ընթացքում՝ այդ մասին տեղյակ պահելով դիմողին և վարույթն իրականացնող մարմնին:

Ներկայացված դիմումների համաձայն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ այդ բողոքների քննության տասնօրյա ժամկետում իրականացման վերաբերյալ պահանջը իրավակիրառման շրջանակներում մեկնաբանվում է որպես այդ բողոքի քննությանն ուղղված առաջին դատական նիստի օրը տասնօրյա ժամկետում նշանակելու իրավակիրառողի պարտականություն: Ասվածը, ըստ դիմումի պայմանավորված է Քրեական դատավարության օրենսգրքում կիրառվող տարաբնույթ ձևակերպումների («բողոքը քննվում է», «բողոքի քննումն ավարտելուց հետո դատարանը որոշում է կայացնում բողոքը բավարարելու կամ մերժելու մասին», «բողոքը քննում և որոշում է կայացնում» և այլն) կիրառմամբ և դրանից ելնելով էլ՝ խնդրո առարկա դրույթի՝ իրավական որոշակիության սկզբունքին անհամապատասխանությամբ:

Այս հարցի, այն է՝ բողոքի տասնօրյա ժամկետում քննության պահանջն ամրագրող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի գործնական դրսևորման վերաբերյալ հարցադրումներ են ուղղվել Փաստաբանական պալատին: Փաստաբանների պալատը ներկայացրել է փաստաբանների շրջանում արված հարցումների արդյունքները: Փաստաբանական պալատի կողմից ներկայացվել են գործնական մի շարք իրավիճակների վերաբերյալ օրինակներ, որոնք վկայում են այն մասին, որ մի շարք դեպքերում նշված տասնօրյա ժամկետում բողոքի քննությունը չի ավարտվել և բողոքով բարձրացված հարցի լուծմանն ուղղված որոշումը կայացվել է քրեադատավարական օրենսդրությամբ ամրագրված տասնօրյա ժամկետի ավարտից հետո:

Ավելին, ըստ Փաստաբանների պալատի ներկայացրած պարզաբանումների՝ դեպքեր են արձանագրվել, երբ ամիսներ է տևում նման բողոքների քննությունը:

Ներկայացվածից բացի, Փաստաբանների պալատի ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ շատ փաստաբաններ իրենց դժգոհությունն են հայտնել այն հարցի կապակցությամբ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված գործերով նիստը տասնօրյա ժամկետում է նշանակվում, բայց դատական նիստի մասին ոչ պատշաճ ծանուցման արդյունքում նիստը չի կայանում:

Ասվածը ևս վկայում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասում նշված տասնօրյա ժամկետում իրավակիրառ պրակտիկայում չի ավարտվում բողոքի քննությունը, ավելին, նշված բողոքների քննությունն իրականացվում է ձգձգումներով: Նշվածն էլ արդեն բողոքարկման մեխանիզմի անարդյունավետության կարող է հանգեցնել:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված հարցերը ուսումնասիրության առարկա են դարձել մարդու սահմանադրական իրավունքների տեսանկյունից Սահմանադրական դատարանի ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների համատեքստում: Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների վերաբերյալ բողոքի քննության ողջամիտ ժամկետի հարցերը դիտարկումն իրականացվել է անձի ոչ միայն արդար դատաքննության իրավունքի, այլև դատական պաշտպանության արդյունավետության դիտանկյունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով գործի ողջամիտ ժամկետում քննությանը, որից կախվածության մեջ է դրել արդարադատության ճշմարտացիությունն ու արդյունավետությունը, արտահայտել է դիրքորոշում առ այն, որ *գործերը պետք է քննվեն ողջամիտ ժամկետում*. *Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական կոնվենցիան նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ընդհատումներով, որոնք կարող են վարկաբեկել դրա արդյունավետությունն ու ճշմարտացիությունը*<sup>608</sup>:

Նույն դատարանի իրավաբանությամբ արձանագրվել է, որ «*Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին*» եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածը *երաշխավորում է ազգային մակարդակում իրավական պաշտպանության միջոցի առկայություն կոնվենցիայում ամրագրված իրավունքների և ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովման համար՝ անկախ նրանից, թե ինչ ձևով են դրանք ապահովված ներպետական իրավական համակարգում: Հետևաբար, 13-րդ հոդվածի գործողությունը դրսևորվում է նրանում, որ*

<sup>608</sup> Տե՛ս Հ.-ն ընդդեմ Ֆրանսիայի (H. v. France) գործով 1989 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 10073/82, կետ 58:

պահանջվում է ներպետական իրավական պաշտպանության միջոց՝ Կոնվենցիան համապատասխան «բողոքի» էության լուծման և համապատասխան պաշտպանության համար<sup>609</sup>:

Ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ինչպես իրավակիրառ պրակտիկայում, այնպես էլ օրենսդրությամբ<sup>610</sup>, մասնավորապես՝ այն իմաստով, որ պետության իշխանական մարմինների գործողություններն ու անգործությունները չպետք է չարդարացված կերպով խոչընդոտեն այդ միջոցի իրագործմանը: Ըստ Դատարանի՝ «արդյունավետ» եզրույթը նաև նշանակում է, որ պաշտպանության միջոցը պետք է լինի բավարար (համարժեք) և հասանելի<sup>611</sup>:

Դատարանը հատուկ ընդգծել է նաև, որ հատուկ ուշադրություն պետք դարձնել, ի թիվս այլնի, իրավական պաշտպանության միջոցի գործողության տևողությանը՝ արագությանը: Չի բացառվում պաշտպանության միջոցի բավարար լինելը խաթարվի այդ միջոցի չափազանց երկար տևողությամբ<sup>612</sup>:

Քննարկելով մինչդատական վերահսկողության շրջանակներում որոշումների բողոքարկման ժամկետների հարցը՝ Սահմանադրական դատարանը ևս նշել է, որ դատավարական ժամկետների սահմանափակումը կապել է նաև անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորման հետ<sup>613</sup>:

Դրա հետ մեկտեղ, Սահմանադրական դատարանը, դիտարկելով դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում իրացման համար անհրաժեշտ առաջնահերթ իրավապայմանները, արձանագրել է, որ դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ «Սահմ. 18, 19-րդ հոդվածներ») <sup>614</sup>:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մինչդատական վարույթում դատական պաշտպանության արդյունավետության հարցին, դիրքորոշում է հայտնել առ այն, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման

<sup>609</sup> Տե՛ս Դորանն ընդդեմ Իռլանդիայի (Dorann v. Ireland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 50389/99, կետ 55,

Կուդա ընդդեմ Լեհաստանի (Kudła v. Poland), գործով 2000 թվականի հոկտեմբերի 26-ի վճիռը, գանգատ թիվ 30210/96, կետ 157:

<sup>610</sup> Տե՛ս Իլհանն ընդդեմ Թուրքիայի (İlhan v. Turkey) գործով 2000 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 22277/93, կետ 97:

<sup>611</sup> Տե՛ս Դորանն ընդդեմ Իռլանդիայի (Dorann v. Ireland) գործով 2003 թվականի հոկտեմբերի 31-ի վճիռը, գանգատ թիվ 50389/99, կետ 56:

<sup>612</sup> Տե՛ս նույն վճիռը, կետ 57:

<sup>613</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2006 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ ՍԴՌ-652 որոշումը:

<sup>614</sup> Տե՛ս Սահմանադրական դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ ՍԴՌ-1477 որոշումը:

երաշխիքներից է: Ավելին, Վճռաբեկ դատարանը որպես մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներ է նշում դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումն ու դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում<sup>615</sup>:

Հարկ է արձանագրել նաև, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ» 2004 թվականի մայիսի 12-ի R (2004)6 հանձնարարականում նշվում է, որ *իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները պետք է ներառեն նաև խելամիտ ժամկետներում դատաքննության ապահովումը*:

Վերոշարադրյալից բխում է, որ իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ինչպես օրենսդրությամբ, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայում: Իրավական պաշտպանության միջոցի արդյունավետությունը կարող է երաշխավորվել միայն այն պարագայում, երբ նշված միջոցը հստակ է ու բավարար, գործում է առանց ընդհատումների ու ձգձգումների, երկարատև չէ:

Այս պարագայում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված բողոքները սահմանված 10-օրյա ժամկետում պետք է քննվեն և խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանությունն ու դրանց վերականգնումը պետք է իրականացվեն մինչդատական վարույթի ընթացքում: Այնինչ, գործնական իրավիճակներից բխում է, որ նշված բողոքներով քննությունը ոչ միայն չի իրականացվում սահմանված ժամկետում, այլև մինչդատական վարույթի ընթացքում:

Ասվածը վկայությունն է այն բանի, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասով՝ հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների անօրինական և անհիմն որոշումների և գործողությունների դեմ բողոքը տասնօրյա ժամկետում քննելու պահանջն ամրագրող դրույթը՝ դրա ձևակերպման իրավական անորոշությամբ պայմանավորված՝ իրավակիրառ պրակտիկայում ստանում է այլ (տարակերպ) մեկնաբանություն, արդյունքում էլ քննարկվող դրույթը կարող է հանգեցնել իրավական պաշտպանության միջոցի անարդյունավետության՝ առաջացնելով անձի սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորման խնդիր:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է անձի սահմանադրական իրավունքների լիարժեք երաշխավորման նպատակով քայլեր ձեռնարկել՝ ուղղված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 4-րդ մասի իրավական լիարժեք որոշակիության, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրա միանշանակ մեկնաբանության ապահովմանը:

<sup>615</sup> Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԴ1/0003/11/08 քրեական գործով 2009 թվականի ապրիլի 10-ի որոշումը:

### **3. Դատական գործերի «ձեռքով» մակագրումը և անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքի խորքային վրանգները**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը դիմել է Սահմանադրական դատարան՝ բարձրացնելով դատական գործերի «ձեռքով» մակագրման հարցերը՝ կապված դատական գործերի «ձեռքով» մակագրման հետ, որով խաթարված է դատավորների միջև գործերի բաշխման օբյեկտիվությունը և առաջին հերթին վտանգված է անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքը: Դիմումով ներկայացված խնդիրները ամփոփվել են նաև արտահերթ հրապարակային զեկույցում<sup>616</sup>: Այս հարցի դիտարկման համար ազդակ է հանդիսացել 2021 թվականի հուլիսից քրեական գործերից մեկի նախաքննության շրջանակում քրեական հետապնդման մարմնի կողմից դատավորների միջև գործերի բաշխման համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստը:

Նշված հարցով Պաշտպանին իրենց մտահոգություններն ու բողոքներն են ներկայացրել ինչպես ազատությունից զրկված անձինք ու փաստաբաններ, այնպես էլ տարբեր դատավորներ կոնֆիդենցիալ կարգով: Հարցը բարձրացրել նաև մի շարք դատավորների հրապարակային կերպով: Խնդրի առնչությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հարցումներ է ստացել նաև միջազգային մի շարք կառույցներից (Եվրոպայի խորհուրդ, ՄԱԿ և այլն): Դիմումի հիմքում դրվել են նաև հրապարակային նյութերի դիտարկման արդյունքները:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվել է դատական գործերի «ձեռքով» մակագրման հարցերի համակարգային դիտարկում՝ անկախ ու անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության յուրաքանչյուր մարդու սահմանադրական իրավունքի տեսանկյունից: Սահմանադրական դատարան ներկայացված դիմումով վիճարկվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի և Բարձրագույն դատական խորհրդի ԲԴԽ-16-Ն-6 որոշման 4-րդ կետի և Հավելված 1-ի 19-րդ կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 63-րդ, 78-րդ, 79-րդ և 81-րդ հոդվածներին:

Դատական օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եթե անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, ապա գործերը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության, հաշվի առնելով նույն օրենսգրքի 42-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերով սահմանված

<sup>616</sup> Հասանելի է <https://ombuds.am/images/files/f163711f002aec2584d22d45d2d40d47.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

առանձնահատկությունները, դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը:

Այսինքն, Դատական օրենսգիրքն ամրագրում է դատական գործերի բաշխումը համակարգչային ծրագրով (ավտոմատացված համակարգով)՝ որպես գործերի բաշխման այնպիսի հիմնական եղանակ, որից, ըստ օրենքի, բացառություն կարող է արվել միայն մեկ դեպքում՝ եթե առկա է անհաղթահարելի ուժ ու այդ անհաղթահարելի ուժի հետևանքով գործերի բաշխումը հնարավոր չէ իրականացնել համակարգչային ծրագրի միջոցով: Այսինքն՝ օրենքը դրանով ամրագրել է բացառության հաղթահարման բարձր շեմ:

Եվ միայն այս բացառիկ դեպքում է Դատական օրենսգիրքը թույլ տալիս դատական գործերի բաշխումն իրականացնել ոչ համակարգչային կամ ոչ ավտոմատացված եղանակով՝ առանձին դատարանների նախագահների կողմից: Սակայն այս դեպքում էլ, ինչպես օրենքն է ամրագրում, գործերը դատավորների միջև հավասարաչափ բաշխում է դատարանի նախագահը՝ ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության:

Համակարգչային ծրագրով դատավորների միջև գործերի բաշխման մեխանիզմի առկայությունը պայմանավորված է այն արժեքների բարձր պաշտպանության անհրաժեշտությամբ, որի երաշխավորմանը կոչված է ավտոմատացված համակարգը: Այսինքն՝ այնպիսի համակարգ, որ բացառում է մարդկային հայեցողությունը: Դատական գործերի բաշխման ընթացակարգի անաչառության երաշխավորման մասին են վկայում միջազգային իրավական մի շարք փաստաթղթեր՝ ամրագրելով այդ երաշխիքի կարևորությունը անկախ դատարանի և հետևաբար, անձի արդար դատաքննության իրավունքի պատշաճ իրացման ապահովման հարցում:

Խոսքը վերաբերում է դատավորների անաչառությանն ու անկախությանը, որի հետ էլ անմիջականորեն կապված են մարդու սահմանադրական իրավունքները՝ սկսած արդար դատաքննությունից մինչև անձնական ազատություն (օրինակ՝ ձերբակալման կամ կալանավորման իրավաչափություն) և անձնական ու ընտանեկան կյանք (օրինակ՝ հեռախոսային խոսակցությունների կամ նամակագրության վերահսկողություն):

Մինչդեռ 2021 թվականի հուլիսից քրեական գործերից մեկի նախաքննության շրջանակում դատավորների միջև գործերի բաշխման համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստով պայմանավորված՝ Դատական օրենսգրքի «անհաղթահարելի ուժ» հասկացությունը գործնականում մեկնաբանվել է այնպես, որ գործ ունենք այդպիսի ուժի հետ: Ըստ այդմ, գործարկվել է դատավորների միջև դատական գործերի բաշխման կամ գործերի մակագրության «ձեռքով» համակարգ, որն իրականացնում են առանձին դատարանների նախագահներ:

Նշվածի հետ մեկտեղ, Օրենսգրքում բացահայտված չէ անհաղթահարելի ուժ եզրույթի հասկացությունը և այն միանշանակ չի ընկալվում՝ թողնելով մեկնաբանության լայն հնարավորություն. օրենքում որևէ կերպ չեն բացահայտվում «անհաղթահարելի ուժի» չափանիշները: Այսինքն՝ Օրենսգրքի կարգավորումների բովանդակությունից պարզ չէ, թե ինչ

չափանիշներ են հաշվի առնվում դատարանների նախագահների կողմից անհաղթահարելի ուժի առկայությունը գնահատելիս: Պարզ չէ, թե անհաղթահարելի ուժ եզրույթի հասկացությունը մեկնաբանելիս նույն եզրույթը պարունակող օրենսդրական այլ կարգավորումներում առկա որ մեկնաբանությունը պետք է հիմք ընդունել: Ընդ որում, Բարձրագույն դատական խորհրդի կողմից ևս չեն պարզաբանվել այն չափանիշները, որոնք հիմք են ընդունվում Օրենսգրքի 41-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված «անհաղթահարելի ուժը» գնահատելիս:

Ստեղծվում է մի իրավիճակ, երբ Օրենսգրքում բացահայտված չէ եզրույթի հասկացությունը և առկա օրենսդրական այլ կարգավորումներում ամրագրված «անհաղթահարելի ուժ» եզրույթի բովանդակությունից էլ նույնիսկ չի բխում քրեական գործի շրջանակներում նշված համակարգչային ծրագրի սերվերի մուտքի և կառավարման բանալիների առգրավման փաստը անհաղթահարելի ուժի առկայություն դիտարկելը՝ նշված փաստն ակնհայտորեն չի կարող բավարարել անհաղթահարելիության շեմը:

Այլ կերպ, առկա են օրենսդրական անորոշ կանոններ ու այդ կանոնները գործնականում ստացել են այնպիսի մեկնաբանություն ու այդ մեկնաբանությամբ կիրառություն, որ հանգեցրել են խնդիրների մարդու սահմանադրական իրավունքների հարցում: Այսինքն, օրենսդրական կարգավորումների իրավական որոշակիության բացակայությունը հիմք է ստեղծել սահմանադրական իրավունքների վտանգներ սպառնացող մեկնաբանությունների համար:

Նշվածն առավել խնդրահարույց է դառնում այն առումով, որ ստեղծված իրավիճակը բացառությունից վերածվել է երկրի դատական ողջ համակարգի վրա ազդող կանոնի, որի գործողությունը ժամկետային առումով ևս անորոշ է: Նախ, ժամկետներով սահմանափակված չէ քրեական գործի նախաքննությունը (նախաքննության շրջանակում է տեղի ունեցել առգրավումը): Նույնը վերաբերում է նաև նույն գործի դատական քննությանը դատական հեռանկար ունենալու պարագայում: Պետք է հաշվի առնել նաև նախաքննությանը կամ դատական քննությանն առնչվող դատական բողոքարկումները, այն է՝ նախնական ու հետագա դատական վերահսկողության ենթակա հարցերը: Այսինքն՝ պարզ են առգրավման վերացման կամ դադարեցման ժամկետները, իսկ մոտավոր ժամկետներ ևս չեն նշվում:

Ընդ որում, ինքնին նշված քրեական գործի նախաքննության իրականացման վիճարկման կամ չիրականացման հարց դիմումով չի բարձրացվել: Բարձրագույն դատական խորհրդի հետ կապված էլ արձանագրվել է, որ խորհրդի հետ հաստատված է Մարդու իրավունքների պաշտպանի համագործակցված աշխատանք:

Հարցն այլ է. բավարար օրենսդրական կանոնների բացակայության և գործնական անթույլատրելի մեկնաբանության պատճառով ստացվել է այնպես, որ մեկ քրեական գործով քրեական հետապնդում իրականացնող մարմնի որոշման կամ միջամտության արդյունքում կաթվածահար է եղել ՀՀ-ում արդարադատության (քրեական, վարչական, քաղաքացիական) ողջ համակարգի համար նախատեսված համակարգչային ծրագրով դատավորների միջև գործերի



բաշխման կամ մակագրության ավտոմատացված կամ էլեկտրոնային համակարգը, իսկ դրա հետևանքով էլ լուրջ խնդիրներ են առաջացել մարդու սահմանադրական իրավունքների համար:

Դիմումով բարձրացված խնդիրներից է նաև այն, որ դատական գործերի բաշխման գործընթացում հայեցողականությունն ու կամայականությունը բացառելուն և յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքը երաշխավորելուն ուղղված ավտոմատացված համակարգի չգործարկման պայմաններում դատական գործերը բաշխվում են դատարանի նախագահների կողմից՝ առանց ամրագրված կամ գործող միասնական չափանիշների ու մոտեցումների, իսկ Դատական օրենսգիրքն էլ չի նախատեսում կարգավորումներ նաև նման դեպքերի համար: Ստեղծված իրավիճակը նույնպես խնդրահարույց է մարդու սահմանադրական իրավունքների տեսանկյունից:

Մինչդեռ, դատական գործերի բաշխման գործընթացում ոչ հայեցողական ու անաչառ մոտեցումներ որդեգրելու անհրաժեշտությունը բխում է միջազգային չափանիշներից: Այսպես, օրինակ՝ անդրադառնալով դատավորների միջև գործերի բաշխման չափանիշներին՝ «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականում<sup>617</sup> շեշտվում է, որ **դատավորների միջև գործերի բաշխումը պետք է իրականացվի նախապես հաստատված օբյեկտիվ չափանիշների հիման վրա, որն էլ կերաշխավորվի անկախ և անկողմնակալ դատարանի իրավունքը:** Գործերի բաշխման գործընթացը չպետք է կրի կողմերի կամ գործի ելքով շահագրգռված որևէ այլ անձի ազդեցությունը:

Վենետիկի հանձնաժողովն իր 2010 թվականի դատավորների անկախության վերաբերյալ կարծիքում<sup>618</sup> առավել մանրամասն է անդրադարձել գործերի բաշխման չափանիշներին: Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ որոշ ազգային օրենսդրություններում գործերի բաշխումը վերապահված է դատարանների նախագահներին: Մինչդեռ, նման լիազորությունը իր մեջ կրում է հայեցողականության տարրեր, որը կարող է գործադրվել դատավորների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով՝ ծանրաբեռնելով վերջիններիս կամ վերջիններիս հանձնելով միայն ցածրակարգ գործեր: Նույնիսկ հնարավոր են դեպքեր, երբ դատարանների նախագահները քաղաքական զգայունություն ունեցող գործերը հանձնարարեն կոնկրետ դատավորների և խուսափեն դրանք մակագրել այլ դատավորների: Սա կարող է շատ արդյունավետ միջոց լինել գործերի ելքի վրա ազդեցություն ունենալու համար:

<sup>617</sup> Տե՛ս «Դատավորների անկախության, արդյունավետության և պարտականությունների մասին» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի CM/Rec(2010)12 հանձնարարականը, հասանելի է <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilities-of-judges/16809f007d> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>618</sup> Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 թվականի մարտի 12-13-ի «Դատական համակարգի անկախության. Մաս 1. Դատավորների անկախություն» վերտառությամբ թիվ CDL-AD(2010)004 գեկույցը, հասանելի է [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2010\)004-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2010)004-e) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Մինչդեռ, Դատական օրենսգրքի և Բարձրագույն դատական խորհրդի 2021 թվականի ԲԴԽ-16-Ն-6 որոշման՝ դատական գործերի բաշխման վերաբերյալ կարգավորումների դիտարկումից ստացվում է, որ դատարանի նախագահի կողմից դատական գործերի բաշխման հարցերը կարգավորող դրույթները՝ բաշխման չափանիշների ու հստակ կարգի թերի կարգավորվածության տեսանկյունից, չեն երաշխավորում բաշխման գործընթացի շրջանակներում անկախության ու անաչառության սկզբունքների ապահովումը, ուստի ոչ մի դեպքում չեն կարող ապահովել նաև անձի արդար դատաքննության սահմանադրական իրավունքի պատշաճ իրացումը:

Նման կարգավորումները լուրջ ռիսկեր կարող են պարունակել գործերի բաշխման հայեցողականության հարցում, ուստիև կասկածի տակ են դնում դատարանի անկախության սկզբունքը, հետևաբար նաև արդար դատաքննության իրավունքի պատշաճ երաշխավորման հարցը: Նշվածից ելնելով էլ՝ անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել առավել հստակ ու մանրամասն օբյեկտիվ չափանիշներ ու կարգավորումներ դատարանների նախագահների կողմից դատավորների միջև գործերի բաշխման գործառույթի անաչառության ու թափանցիկության ապահովման ուղղությամբ:

Սա առավել քան կարևոր է ժողովրդավարական հասարակությունում դատական իշխանության նկատմամբ հանրային վստահության բարձր աստիճանի ապահովման համար: Արձանագրված ռիսկերն ու վտանգները բխում են ներպետական կարգավորումների անկատարությունից ու դրանց ձևակերպումների որոշակիության բացակայությունից:

Այս ամենին պետք է ավելացնել նաև, որ օրենսդրական կարգավորումներն այն աստիճան անկատար են, որ համակարգչային ծրագրի չգործելու պատճառով դատարանի նախագահին վերապահված գործերի բաշխման կանոններն անգամ չեն պահպանվում, ինչն անմիջական խնդիրներ է պարունակում մարդու իրավունքների համար:

Օրինակ՝ ուսումնասիրությունները վկայում են, որ չի պահպանվում (հաճախ) ըստ դատավորների ազգանունների այբբենական հերթականության դատական գործերի բաշխման պահանջը: Մեկ այլ դեպքում չի պահպանվում դատական գործերի բաշխման պատահականության սկզբունքը:

Ավելին, ուսումնասիրությունները վկայում են, որ գործող համակարգը հանգեցրել է առավել վտանգավոր հետևանքների՝ Մարդու իրավունքների պաշտպանին ուսումնասիրությունների ընթացքում ներկայացվել են տեղեկություններ այն մասին, որ տևական ժամանակ է, ինչ որոշ դատավորներ այլևս չեն քննում որոշակի կատեգորիայի գործեր (օրինակ՝ գործեր, որոնք բարդ են, ունեն զգայունություն, ներկայացնում են հանրային հետաքրքրություն)՝ այդպիսիք այդ դատավորներին մտադրված չմակագրելու արդյունքում: Սա էլ վտանգավոր է ոչ միայն դատավորների միջև տարբերակումների կամ նրանց «դատական մեկուսացման», այլ հենց մարդու իրավունքների համար համակարգային վտանգների տեսանկյունից և այլն:

Ըստ հավաստի ահազանգերի՝ Վարչական դատարանում, օրինակ, Դատարանի նախագահն ինքն է որոշում 5 դատավոր ունեցող դատական կազմերում ընդգրկվող դատավորներին՝ առանց չափանիշների, սեփական հայեցողությամբ: Խոսքը նաև դատական կազմերում հաճախ կրկնվող՝

նույն դատավորների ընդգրկելու խնդրի մասին է: Խոսքն այն էլ վերաբերում է բացառիկ զգայուն հարցերի, ինչպիսիք են, օրինակ, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների արդյունքներով ընդունված, թեկնածուներ գրանցելու կամ չգրանցելու հետ կապված որոշումները վիճարկելու վերաբերյալ գործերը կամ նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը:

Երևանի ընդհանուր իրավասության դատարանում, ըստ մեզ ներկայացված ահազանգերի, ընդհանրապես մակագրություններ է անում նաև դատարանի աշխատակազմի ղեկավարը՝ բացի այն, որ չկան ամրագրված չափանիշներ հենց դատարանի նախագահի համար: Նշվող պատճառն այն է, որ թե՛ ֆիզիկապես, թե՛ մասնագիտական առումով դատարանի նախագահը, այսինքն՝ մեկ մարդ, ի վիճակի չէ իրականացնել այդքան գործերի մակագրություն:

Դիմումով կոնկրետ օրինակներով և միջազգային-իրավական կարգավորումների վրա հիմնած վերլուծությամբ հստակ ցույց է տրված մարդու սահմանադրական իրավունքների համար խորքային վտանգներ պարունակող իրավիճակներն ու մեկնաբանությունները՝ օրենսդրական ապահովագրող կարգավորումների բացակայության պայմաններում, քրեական հետապնդման մարմնի միջամտության վտանգավոր հետևանքները ՀՀ ողջ դատական համակարգի նկատմամբ ու այն էլ անորոշ ժամկետով, ինչպես նաև ցույց են տրված մարդու սահմանադրական իրավունքների ոտնահարման գործնական իրավիճակներ:

Քննարկվող խնդրի կապակցությամբ հարցումներ են ուղարկվել Բարձրագույն դատական խորհրդին, ինչպես նաև առանձին դատարանների նախագահների: Նրանց պարզաբանումներն ավելի են ամրապնդել համոզմունքն առ այն, որ նշված մարմինները կամ հաստատություններն իրենք չունեն պատկերացում, թե երբ է գործարկվելու համակարգչային ծրագիրը, ինչպես նաև այն, որ դատարանների նախագահների համար գոյություն չունի անգամ չափանիշների միասնական համակարգ, որ կարող էր առնվազն նվազագույն մակարդակով չեզոքացնել «ձեռքով» մակագրության համակարգի ռիսկերը:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանի 2022 թվականի փետրվարի 8-ի ՍԴԱՈ-26 որոշմամբ ««ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի և բարձրագույն դատական խորհրդի «դատավորների միջև գործերի հավասարաչափ բաշխման չափանիշները և կարգը, գործերի վերաբաշխման, կոլեգիալ դատական կազմերը ձևավորելու կարգը և դատավորներին հանձնվող գործերի տոկոսաչափեր սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-16-Ն-6 որոշման 4-րդ կետի և դրա հավելված 1-ի 19-րդ կետի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունվել է քննության:

#### **4. Քրեակատարողական ծառայողների իրավունքների ապահովման օրենսդրական խնդիրը՝ սահմանային տարիքը լրանալու հիմքով աշխատանքից ազատվելու դեպքում**

«Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված՝ ծառայողի սահմանային տարիքը լրանալու հիմքի հայեցողական կիրառությամբ քրեակատարողական ծառայությունից ազատելու խնդիրը համակարգային առումով շարունակել է լուծված չմնալ նաև 2021 թվականի ընթացքում:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդրին անդրադարձ էր կատարել նաև 2020 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում: Այսպես, ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկների մի խումբ ծառայողներ 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումներով տեղեկացրել էին, որ ազատվել են քրեակատարողական ծառայությունից՝ «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված ծառայողի սահմանային տարիքը լրանալու հիմքով:

Մի խումբ քրեակատարողական ծառայողներ էլ քրեակատարողական ծառայությունից ազատվել էին օրենքով նախատեսված՝ ծառայողի սահմանային տարիքը լրանալուց մի քանի տարի անց: Արդյունքում, «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումները կիրառվել են հայեցողաբար և գործող կարգավորումներով նախատեսված ժամկետները լրանալուն պես չազատվելու արդյունքում՝ նշված անձինք ակնկալիք են ունեցել, որ քրեակատարողական ծառայությունից ազատվելու են «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախկին կարգավորումներով սահմանված քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալուն պես:

Բանն այն է, որ համաձայն «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 2009 թվականի նոյեմբերի 17-ին կատարված փոփոխությունների՝ քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվում կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար 50 տարեկանը, միջին և առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 55 տարեկանը, գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 60 տարեկանը, իսկ բարձրագույն խմբերի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 65 տարեկանը:

Մարդու իրավունքների պաշտպանին դիմած քրեակատարողական ծառայողները ծառայության էին անցել մինչև «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածում տարիքային սահմանափակումների վերաբերյալ առաջին փոփոխություններ կատարելը, այսինքն՝ մինչև 2009 թվականի նոյեմբերի 17-ը, երբ քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է համարվել կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնողների համար 55 տարեկանը, միջին և առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 60 տարեկանը, իսկ գլխավոր և բարձրագույն խմբերի պաշտոններ զբաղեցնողների համար՝ 65 տարեկանը:

Խնդրի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ իրավական ակտերով քրեակատարողական ծառայողի համար նախատեսված աշխատանքային երաշխիքներից բացի, օրենսդրությամբ նրանց համար սահմանվում են նաև սոցիալական տարբեր երաշխիքներ, որոնց մանրամասն անդրադարձ է կատարվել 2020 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում<sup>619</sup>, սակայն Պաշտպանին դիմած քաղաքացիների դիմումներում բարձրացված օրենսդրական խնդիրները չեն լուծվել, և արձանագրված խախտումները չեն վերացվել:

Այսպես, բողոքներից մեկում քաղաքացին Քրեակատարողական ծառայությունում զբաղեցրել է գլխավոր մասնագետի հաստիք (ծառայության էր անցել 2002 թվականից), որից, քրեակատարողական ծառայության պետի հրամանով ազատվել է խնդրո առարկա օրենսդրական փոփոխությունների արդյունքում՝ սահմանային տարիքը լրանալու հիմքով: Մինչդեռ, վերջինիս նկատմամբ կիրառելի չէին 2009 թվականի և դրանից հետո կատարված օրենսդրական փոփոխությունները, քանի որ անձի իրավական վիճակը վատթարացնող իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Արդյունքում, քրեակատարողական ծառայությունից ազատվելով՝ քաղաքացին զրկվել է իր աշխատանքը պահպանելու և զինվորական ծառայության ավել ստաժ ունենալու հնարավորությունից:

Կոնկրետ դեպքով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից նշել են հետևյալը.

1) ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության<sup>620</sup> տրամադրած տեղեկանքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի նախկին գլխավոր մասնագետը (սոցիալական աշխատողը), արդարադատության մայրը Քրեակատարողական ծառայությունում զբաղեցրել է տարբեր խմբերի պաշտոններ և Քրեակատարողական ծառայության պետի հրամանի համաձայն՝ ազատվել է Քրեակատարողական ծառայությունից քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալու հիմքով («Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և 41-րդ հոդվածի համաձայն):

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության դիրքորոշման՝ բողոք ներկայացրած անձին քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ Քրեակատարողական ծառայությունից ազատելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ չնայած նա Քրեակատարողական ծառայությունում պաշտոնի է նշանակվել մինչև «Քրեակատարողական ծառայության մասին» 2009 թվականի նոյեմբերի 17-ի ՀՕ-218-Ն օրենքով<sup>621</sup> 41-րդ հոդվածում կատարված փոփոխությունները, սակայն հետագայում

<sup>619</sup> Տե՛ս <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>620</sup> Այսուհետ՝ Քրեակատարողական ծառայություն:

<sup>621</sup> Ուժի մեջ է մտել 2010 թվականի հունվարի 2-ից:

զբաղեցրել է տարբեր պաշտոններ (նախ՝ 02.10.2012 թվականին զբաղեցրել է գլխավոր մասնագետի (քաղաքացիական հատուկ ծառայության) պաշտոն, այնուհետև՝ 16.12.2013թ. և 10.07.2015թ.՝ գլխավոր մասնագետի (քրեակատարողական ծառայության) պաշտոն):

Արդարադատության նախարարության դիրքորոշմամբ՝ նշված դեպքում նույնպես քրեակատարողական ծառայողի համար ծագել են նոր իրավահարաբերություններ, և վերջինս ենթակա է եղել ազատման քրեակատարողական ծառայողների համար պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ՝ «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 41-րդ հոդվածի համաձայն:

Հաշվի առնելով խնդրի կարևորությունը և առանձնահատկությունները, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում փաստական հանգամանքները ուսումնասիրվել են տարբեր իրավական հարթություններում: Հարկ է նշել, որ հետադարձության հարցի կիրառելիության վավերապայմաններ կամ կոնկրետ փաստական հանգամանքներով պայմանավորված լուծումներ՝ անմիջականորեն սահմանված չեն, սակայն ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի «Նորմատիվ իրավական ակտերի գործողությունը ժամանակի մեջ» վերտառությամբ 28-րդ հոդվածով սահմանվում է, որ «1. Նորմատիվ իրավական ակտի գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո գործող հարաբերությունների վրա, եթե այլ բան նախատեսված չէ Սահմանադրությամբ, օրենքով կամ տվյալ նորմատիվ իրավական ակտով: . . . »:

Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով իրավական ակտերի հետադարձության իրավակարգավորումները և իրավական պրակտիկան, արտահայտել է մի շարք իրավական դիրքորոշումներ անձի իրավական վիճակի վատթարացման հարցի վերաբերյալ: Այսպես, 2008 թվականի հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշմամբ Դատարանը նշել է, որ **անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելքը հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այդ սկզբունքը միաժամանակ հանդես է գալիս որպես իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք: Օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա:**

Մեկ այլ 2012 թվականի դեկտեմբերի 14-ի ՍԴՈ-1061 որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ իր՝ ՍԴՈ-649, ՍԴՈ-723, ՍԴՈ-758, ՍԴՈ-881, ՍԴՈ-1000 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումներով բազմիցս, այդ թվում՝ կենսաթոշակային հարաբերությունները կարգավորող նորմերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերով, արձանագրել է անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքին և այլ իրավական ակտերին հետադարձ ուժ

հաղորդելու անթույլատրելիությունը, կարևորելով, որ «... անձի իրավական վիճակը վատթարացնող նորմերի հետադարձ ուժի արգելման սկզբունքը՝ իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ, կոչված է ապահովելու լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքը»։ Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ Եվրոպական միության շրջանակներում ձևավորված իրավակիրառ պրակտիկայում իրավական որոշակիությունն ու լեգիտիմ ակնկալիքների սկզբունքներն իրավունքի հետադարձ ուժի գնահատման չափանիշներ են և համարվում են Եվրոպական միության իրավունքի ընդհանուր սկզբունքներ։

Ելնելով իրավական նորմերի և պրակտիկայի ուսումնասիրություններից, առաջին հերթին հարկ է նշել, որ օրենքի հետադարձության հարցը քննարկվում է նախկինում կարգավորված և զարգացման կամ որոշակի փոփոխություն կրած հասարակական հարաբերությունները հնարավորինս իրավական կարգավորման ենթարկելու դեպքերում։ Այս հարաբերությունների սուբյեկտների նկատմամբ իրավական դրույթների հետադարձ կիրառման վերաբերյալ բերվող փաստարկների առնչությամբ Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ 1224 որոշմամբ արձանագրել է, որ **հետադարձ ուժի արգելման սկզբունքը վերաբերելի է միմիայն այն դեպքերին, եթե անձը գտնվելով արդեն իսկ օրենքով կարգավորված հարաբերությունների մեջ, ունենալով որոշակի իրավունքներ և պարտականություններ, օրենքի փոփոխման պատճառով նրա իրավական վիճակը վատթարանում է, նա զրկվում է իրավունքներից կամ սահմանափակվում է այդ իրավահարաբերությունների ուժով նրա իրավունքի իրացումը։**

Միանշանակ կարևոր է նաև այն, որ այդ փոփոխությունները կարող են կրել համակարգային բնույթ, ինչպես նաև պայմանավորված լինել օբյեկտիվ անհրաժեշտությամբ և հետապնդում լինեն իրավաչափ նպատակներ։ Սակայն, միայն անհրաժեշտությունը և իրավաչափ նպատակներ հետապնդելը չեն ապահովում ձեռնարկվող միջոցների օրինականությունն ու անհրաժեշտ հավասարակշռությունը մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից։

Համակարգային լուծումների անհրաժեշտության համատեքստում կարելի է նշել, որ իրավական պրակտիկայում հետադարձության հարցը քննարկվել է նաև կոնկրետ իրավական ակտում նախատեսված լինելու դեպքերով։ Ինչպես օրինակ՝ Վճռաբեկ դատարանը, քաղաքացիական գործ թիվ ԵԿԴ/3516/02/08-ով արտահայտած դիրքորոշման շրջանակներում անդրադառնալով աշխատանքային օրենսդրության հետադարձության հարցին, նշել է, որ օրենսգրքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությունը տարածվում է մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, այսինքն՝ ունի հետադարձ ուժ միայն սույն օրենսգրքով, այլ օրենքներով, ինչպես նաև տվյալ նորմատիվ իրավական ակտով նախատեսված դեպքերում։ **Հետադարձ ուժ չի կարող տրվել գործատուների կամ քաղաքացիների իրավունքները կամ ազատությունները սահմանափակող, դրանց իրականացման կարգը խստացնող կամ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող կամ պարտականություններ սահմանող կամ պարտականությունների կատարման կարգը սահմանող կամ խստացնող, գործատուների կամ**

**քաղաքացիների գործունեության նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կարգ սահմանող կամ խստացնող, ինչպես նաև նրանց իրավական վիճակն այլ կերպ վատթարացնող իրավական ակտերին:**

Սույն դիրքորոշման բովանդակության վերլուծությունից հետևում է, որ առհասարակ, գործող իրավական ակտերով նախատեսված նորմերին հետադարձ ուժ տալը պայմանավորված է միայն մեկ պայմանով, այն է՝ եթե դա սահմանված է թվարկված իրավական ակտերում:

Ձեռնարկվող միջոցների իրավաչափության և ընտրության հարցում կարևոր նշանակություն ունի Սահմանադրական դատարանի 2018 թվականի դեկտեմբերի 12-ի ՍԴՈ 1437 որոշումը, որտեղ Սահմանադրական դատարանը, հղում կատարելով իր նախորդ որոշումներում անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի արգելքի սահմանադրաիրավական խնդրի վերաբերյալ արտահայտած դիրքորոշումներին, նշել է, որ հետադարձ ուժի արգելքի սկզբունքը՝

- պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկն է,
- իրավական անվտանգության սկզբունքի հետ մեկտեղ կոչված է ապահովելու հարգանքը լեգիտիմ ակնկալիքների հանդեպ,
- ընդհանուր կանոն է, իսկ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը՝ բացառություն ընդհանուր կանոնից, ինչը բխում է մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից,
- իրավական որոշակիության սկզբունքի ապահովման կարևոր երաշխիք է, միաժամանակ, այդ սկզբունքից բխում է այն արգելքը, համաձայն որի՝ անթույլատրելի է այն իրավունքների սահմանափակումը կամ վերացումը, որոնք ամրագրվել են նախկինում գործող նորմերի հիման վրա, ինչը կհակասեր նաև մի շարք միջազգային պայմանագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Ուսումնասիրությունների արդյունքից կարելի է եզրակացնել, որ քաղաքացին Քրեակատարողական ծառայության է անցել 2002 թվականին և նախքան 2009 թվականի փոփոխությունների կատարումը, 2005 թվականի մայիսի 1-ից արդեն իսկ զբաղեցնում էր ՀՀ ԱՆ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժնի գլխավոր մասնագետի հաստիքը, որի համար 2005 թվականի հուլիսի 8-ին ընդունված «Քրեակատարողական ծառայության մասին» ՀՀ օրենքով որպես սահմանային տարիք նախատեսվեց 65 տարեկանը:

Ուստի, կատարված փոփոխություններից հետո քաղաքացին ձեռք է բերել ողջամիտ և իրավաչափ ակնկալիք, որ իր համար որպես Քրեակատարողական ծառայության պաշտոն զբաղեցնելու սահմանային տարիք է հանդիսանալու 65 տարեկանը: Բացի այդ, առանձնակի կարևոր է, որ կատարված փոփոխություններից հետո էլ քաղաքացին, թեկուզ ձևականորեն



ազատվելու և նորից նշանակվելու դեպքերում, շարունակել է Քրեակատարողական ծառայությունում զբաղեցնել գլխավոր մասնագետի պաշտոնը: Ստացվում է, որ իրավահարաբերության բովանդակային և տեխնիկական կողմերը նույնն են եղել և ըստ էության, չի փոփոխվել գործող իրավահարաբերության էությունը, քանի որ նույն պետական ծառայության շրջանակներում կատարելով նույն գործառույթները, տեղափոխվել է նմանատիպ այլ հաստատությունում նույն պաշտոնին:

*Շեքևաբար, ՀՀ արդարադատության նախարարության այն դիրքորոշմամբ, ըստ որի, ծառայության նույն խմբի այլ պաշտոնում նշանակվելը իրենից ենթադրում է իրավահարաբերության դադարում և նոր իրավահարաբերության ձևավորում, ձևավորել է իրավակիրառ այնպիսի պրակտիկա, որը չի համապատասխանում Սահմանադրության 73-րդ հոդվածի տրամաբանությանը և ոգուն:*

### **5. Մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով 3-րդ խմբի հաշմանդամություն ստացած զինծառայողների վնասի հատուցման հարցերը**

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին է ներկայացվել խնդիր առ այն, որ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողները «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի շրջանակներում չեն դիտարկվում որպես շահառու և ըստ այդմ, վերջիններիս համար վնասի հատուցման որևէ կառուցակարգ և ընթացակարգ նախատեսված չէ:

Դիմումով բարձրացված խնդիրը ներկայացվում է այն համատեքստում, որ ի տարբերություն 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողների՝ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողները, որոնց կյանքին կամ առողջությանը վնաս է պատճառվել մարտական գործողությունների հետևանքով, ընդգրկված չեն այն անձանց շրջանակում, որոնք ստանում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատուցում: Այսինքն, նույն օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով հատուցման դեպք չի համարվում, երբ զինծառայողը մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով ստացել է երրորդ խմբի հաշմանդամություն. այնինչ զինծառայողի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ստանալը հիմք է հատուցում ստանալու համար:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունը, վավերացնելով Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թվականի դեկտեմբերի 16-ի միջազգային դաշնագիրը,

նաև դրա 9-րդ հոդվածով է միջազգային պարտավորություն ստանձնել ճանաչելու յուրաքանչյուրի սոցիալական ապահովության իրավունքը:

ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 22-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր մարդ, որպես հասարակության անդամ իրավունք ունի սոցիալական ապահովության և տնտեսական, սոցիալական ու մշակութային բնագավառներում իր արժանապատվությունը պահպանելու և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ իրավունքներ իրագործելու՝ ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով և յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան:

«Սահմանադրության 3-րդ գլխում ամրագրված են տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները: Նույն գլխի 83-րդ հոդվածով սահմանվում են պետության քաղաքականության ուղղությունները սոցիալական ապահովության ոլորտում:

Սահմանադրությամբ սոցիալական ապահովությունն ամրագրված է որպես երաշխիք, վերջինս ենթադրում է պետության կողմից անհրաժեշտ քայլերի ձեռնարկում ու սոցիալական ապահովության ոլորտում պետական այնպիսի քաղաքականության մշակում, որը կլինի սոցիալական ապահովության կարիք ունեցող անձանց համար բարենպաստ և ներառական:

Ուշագրավ է Սահմանադրական դատարանի այն դիտարկումը, որ իրեն նաև սոցիալական հռչակած պետությունը սահմանադրորեն որդեգրում է մարդկանց սոցիալական կյանքին առնչվող խնդիրների նկատմամբ հստակ դիրքորոշումներ: Դրանց թվում՝ սոցիալական ապահովության իրավունքը ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հիմնական իրավունքներից մեկը և Սահմանադրության 3-րդ հոդվածի ուժով պետությունը սահմանափակված է նաև այս իրավունքով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք<sup>622</sup>:

Այս առումով, անհրաժեշտ է նաև նշել, որ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությամբ դեռևս որպես մարդու իրավունք ամրագրված սոցիալական ապահովությանը, նշել է, որ այդ իրավունքի երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հիմնական առանձնահատկություններից մեկն այն է, որ սահմանադրական դրույթի հիման վրա սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով: Սահմանադրական իրավակարգավորումից հստակ է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի՝ քանակական որոշակիության, այնպես էլ ձևերի ընտրության խնդիրը: Տվյալ ոլորտում, համաչափության և համամասնականության հիմնարար սկզբունքների պահանջներից ելնելով՝ հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից, պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից՝ սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով<sup>623</sup>:

<sup>622</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարանի 2014 թվականի ապրիլի 2-ի թիվ ՍԴՌ-1142 որոշում:

<sup>623</sup> Տե՛ս նույն տեղում:

Ասվածից բխում է, որ մի կողմից պետությունը պարտավորված է ձեռնարկելու քայլեր՝ ուղղված սոցիալական ապահովության շրջանակներում սոցիալական ապահովության կարիք ունեցող անձանց համար բարենպաստ և ներառական մոտեցումների որդեգրմանը, մյուս կողմից էլ պետությունը սոցիալական ապահովության ոլորտում օժտված է որոշակի հայեցողությամբ:

Այս առումով, հարկ է նշել նաև, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար բարձրացնում է հաշմանդամության սոցիալական մոդելի կիրառման անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքում նաև դրա ներդրման ուշացած լինելը: Նշվածի հետ մեկտեղ, Հայաստանում դեռևս առկա չեն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների լիարժեք իրացումն ապահովող օրենսդրական երաշխիքներ:

Հաշմանդամության սոցիալական մոդելի ներդրման ուղղված գործողություններ են իրականացվել 2021 թվականի ընթացքում: Նշվածի շրջանակներում հաշմանդամություն ունեցող մարդկանց հասարակություն ինտեգրելուն ուղղված քաղաքականությունն ու ազգային օրենսդրությունը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով ընդունվել են «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքները, որոնք ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանը: Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի ընդունումը նպատակ է հետապնդում հաշմանդամության սահմանման մոդելից անցնել ֆունկցիոնալության գնահատման մոդելին, որը հնարավորություն կընձեռի իրականացնել անձի կարիքների բազմակողմանի գնահատում, հաշմանդամությունը դիտարկել՝ ըստ անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանի, նրա գործունեության և մասնակցության վրա միջավայրային գործոնների ունեցած ազդեցության:

Ֆունկցիոնալության գնահատման արդյունքում, հիմք ընդունելով ֆունկցիաների սահմանափակումները, գործունեության մեջ և միջավայրում ունեցած խնդիրները, որոշարկվելու է անձի ծառայությունների անհատական ծրագիրը: Նշվածը, ենթադրում է անձի համար անհատականացված մոտեցում ցուցաբերելու և ըստ կազմված ծրագրի՝ անձի համար անհրաժեշտ միջոցառումներով ու ծառայություններով ապահովելու հնարավորություն՝ չհիմնվելով սոսկ խմբային դասակարգումների վրա:

Ներկայացվածի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ թեև վերը նշված օրենքներն ընդունվել են, բայց կառուցակարգերը գործնականում չեն գործում, քանի որ անձի ֆունկցիոնալության գնահատման կարգն ամրագրող ենթաօրենսդրական ակտերը ներկայում ընդունված չեն:

Նշվածի համատեքստում, պետք է ընդգծել, որ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով 20-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ նույն հոդվածի դրույթները, որոնցով սահմանվում է հաշմանդամության զինվորական կենսաթոշակ նշանակելու պայմանները և ժամկետը, չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց վրա: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո նույն մասում նշված անձինք ձեռք են բերում նույն հոդվածով սահմանված կենսաթոշակի իրավունք:

Այսինքն, ստացվում է, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք ձեռք են բերում հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք և ստանում են հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ընդհանուր հիմունքներով հատուցման վճարումը դադարեցնելուց հետո: Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակից դուրս մնացած 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողներին, ապա վերջիններս ստանում են հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ընդհանուր հիմունքներով՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածներին համապատասխան:

Ներկայում, իրականացվում են ոլորտի օրենսդրության կատարելագործմանը, հաշմանդամություն ունեցող մարդկանց հասարակության մեջ ինտեգրելուն ուղղված քաղաքականության ամբողջականացմանն ու ոլորտի այդ քաղաքականության համապատասխանեցմանն ուղղված քայլեր, ուստի սույն պարագրաֆում բարձրացված հարցերը ևս ենթակա են կարգավորման նշված օրենսդրական բարեփոխումների շրջանակներում:

*Վերոգրյալի հաշվառմամբ և հաշվի առնելով հաշմանդամություն ուղրտում հայեցակարգային փոփոխությունները՝ նաև հաշմանդամության կարգերի սահմանման առումով, սոցիալական քաղաքականության ոլորտում պետության հայեցողության շրջանակը, ինչպես նաև կարևորելով հաշմանդամություն ունեցող զինծառայողների սոցիալական երաշխիքների շարունակական բարելավման հարցերը՝ կարծում ենք, որ օրենսդրական փոփոխությունները պետք է թիրախավորեն նաև խնդրո առարկա օրենսդրական խնդիրը:*

## **6. Պապվաստումների գործընթացի կազմակերպման օրենսդրական և գործնական խնդիրները**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո է գտնվել Covid 19-ի համավարակով պայմանավորված՝ մարդու իրավունքների լիարժեք իրացումն ու դրանց սահմանափակումների համապատասխանությունը՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին:

Այսպես, 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մի շարք դիմումներով բարձրացվել է պատվաստման գործընթացում մարդու իրավունքների ապահովման խնդիրը՝ մասնավորապես, դրանց պարտադիրությունը աշխատանքային իրավունքների համատեքստում: Ուստի, բարձրացված հարցերը իրավական վերլուծության առարկա են դարձել Պաշտպանի աշխատակազմում՝ միջազգային մոտեցումների ու պրակտիկայի, ինչպես նաև սահմանադրական երաշխիքների ապահովման տեսանկյունից:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի է ներկայացվել ««Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի 4-րդ հոդվածով նախատեսվում էր «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում ավելացնել «Հանրային պաշտոն զբաղեցնող անձին կամ հանրային ծառայողին աշխատանքի (ծառայության) չթույլատրելու, պաշտոնից կամ ծառայությունից ազատելու (լիազորությունները կամ ծառայությունը դադարեցնելու) առանձնահատուկ հիմքերը» վերտառությամբ 16.1 հոդվածը, համաձայն որի՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի կողմից փոփոխությամբ սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում նրան չի թույլատրվում գտնվելու աշխատավայրում, կատարելու իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները և չի տրամադրվում վարձատրություն..., ինչպես նաև սահմանված պարտականությունների խախտման արդյունքում իր աշխատանքային (ծառայողական) պարտականությունների կատարումը չթույլատրվելու հետևանքով ավելի քան 30 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 50 օր աշխատանքային (ծառայողական) պարտականությունները չկատարելը հանրային պաշտոն զբաղեցնող անձին պաշտոնից ազատելու կամ հանրային ծառայողի լիազորությունները դադարեցնելու (ծառայությունից ազատելու կամ ծառայությունը դադարեցնելու) հիմք է:

Դրանից զատ, Առողջապահության նախարարի 2021 թվականի օգոստոսի 20-ի՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 65-Ն հրամանով սահմանվեց, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ- հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող առավելագույնը 72 ժամ վաղեմության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 10-ի թիվ 2688-Լ հրամանով սահմանված սերտիֆիկատ, բացառությամբ ամբողջական

պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների և հղիների: ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին:

Բացի այդ, 2021 թվականի հոկտեմբերի 8-ի ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 78-Ն հրամանով նախատեսվեց, որ այն դեպքերում, երբ աշխատողն աշխատանքն իրականացնում է հեռավար եղանակով, աշխատավայր ներկայանալու օրը ներկայացնում է սերտիֆիկատ, բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների, հղիների, մինչև 18 տարեկան աշխատողների, ինչպես նաև նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացած աշխատողների՝ ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում:

Դեռ ավելին, վերոնշյալ հրամանով սահմանվեց, որ հեռավար եղանակով աշխատողը յուրաքանչյուր անգամ աշխատավայր ներկայանալիս պարտավոր է ներկայացնել սերտիֆիկատ, եթե նախորդ սերտիֆիկատ ներկայացնելու պահից անցել է 14 օր:

Հարկ է նշել նաև, որ նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում էր «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը լրացնել նոր՝ 2-րդ մասով, համաձայն որի՝ պարտադիր պատվաստման պարտականությունը տարածվում է նաև քաղաքացիական աշխատանք կատարող կամ տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց վրա, բացառությամբ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, վարչապետի, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Սահմանադրական դատարանի դատավորի, անկախ պետական մարմնի անդամի, ինքնավար մարմնի անդամի, Վիճակագրության պետական խորհրդի անդամի, վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանի դատավորի, գլխավոր դատախազի պաշտոնների:

Հաշվի առնելով, որ նախագծով առաջարկվող փոփոխությունների և լրացումների հիմքում ընկած էր հանրային առողջության պահպանության գերակա նպատակը, Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում հստակ նշվել էր, որ հանրային ծառայության համակարգի մյուս աշխատողների համեմատությամբ խտրականության բացառման ու նախագծի իրավաչափ նպատակից չչեղվելու համար պետք է հիմնավորել նշված սուբյեկտների չվարակվելու կամ վերջիններիս կողմից քաղաքացիների հետ պարբերաբար շփումների հատուկ պայմանների առկայությունը կամ բացակայությունը:

Օրենքի նախագծի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմի կարծիքում անդրադարձ էր կատարվել ՊՇՌ հետազոտության բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատ ներկայացնելու պահանջով՝ աշխատողների վրա լրացուցիչ անհամաչափ ֆինանսական բեռ դնելու խնդրին:

Համաձայն «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ-ում նվազագույն աշխատավարձը 68000 դրամ է: ՊՇՌ հետազոտության թեստերի արժեքը ՀՀ-ում օրենսդրական պահանջի ամրագրման ժամանակահատվածում կազմում էր 8000-15000 դրամ, իսկ նվազագույն աշխատավարձի հետ համեմատության տեսանկյունից մեկ ամսվա ընթացքում 14 օրը մեկ այն ներկայացնելու դեպքում, կազմում է վարձատրության համարյա կեսը: Ստացվում է, որ առանց հաշվի առնելու մարդկանց եկամուտների չափը, պետությունը իրականացնում է ՊՇՌ հետազոտության անցկացման այնպիսի ֆինանսական քաղաքականություն, որով անձը հարկադրաբար պետք է պատվաստվի՝ ելնելով իր գույքային դրությունից, քանի որ ՊՇՌ հետազոտության թեստերի արժեքների ներկա պայմաններում այն ոչ բոլորին է հասանելի:

Այնուհետև, ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի թիվ 17-Ն և 2020 թվականի սեպտեմբերի 18-ի թիվ 24-Ն հրամաններում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին թիվ 84-Ն հրամանով սահմանվեց, որ հեռավար եղանակով աշխատողը, արձակուրդում գտնվող աշխատողը, օրենքով սահմանված որևէ այլ հիմքով աշխատավայրից բացակայող աշխատողը յուրաքանչյուր անգամ աշխատավայր ներկայանալիս պարտավոր է ներկայացնել սերտիֆիկատ, եթե նախորդ սերտիֆիկատը ներկայացնելու պահից անցել է 7 օր, բացառությամբ ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված, փաստագրված բացարձակ հակացուցում ունեցող աշխատողների, հղիների, մինչև 18 տարեկան աշխատողների, ինչպես նաև նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացած աշխատողների՝ ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում:

Ստացվում է, որ Առողջապահության նախարարի վերոնշյալ հրամանով ավելի է բարձրացվում աշխատողների վրա դրվող ֆինանսական բեռի չափը, որը ավելի է խորացնում մարդկանց սոցիալական ծանր վիճակը և անուղղակի հարկադրում նրանց՝ պատվաստվելու:

Հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանը 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1621 որոշմամբ ամրագրեց, որ «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին:» նախադասության «իր հաշվին» բառակապակցությունը հակասում է Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերին և 39-րդ հոդվածին՝ նկատի ունենալով, որ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցող սուբյեկտների (աշխատողների) շրջանակի սահմանումը դուրս է Առողջապահության նախարարի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից<sup>624</sup>:

Նշվածից զատ, պատվաստման գործընթացի պարտադիրությանն առնչվող մտահոգությունների հաշվառմամբ համավարակի դեմ պատվաստումների իրականացման քաղաքականությունը

<sup>624</sup> Տե՛ս՝ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի ՍԴՈ 1621 որոշումը, հասանելի է՝ [https://www.concourt.am/decision/decisions/61fcdd81a03ef\\_sdv-1621.pdf](https://www.concourt.am/decision/decisions/61fcdd81a03ef_sdv-1621.pdf) հղումով:

դիտարկվել է նաև միջազգային չափանիշների, մոտեցումների և տարբեր երկրներում առկա պրակտիկայի տեսանկյունից:

Այսպես, պարտադիր պատվաստման պահանջը կապված է մարդու ինքնավարության սկզբունքի հետ, համաձայն որի՝ պատվաստումը պահանջում է տեղեկացված, գիտակցված և կամավոր համաձայնություն, ինչը բացառում է ցանկացած ընդհանուր և չտարբերակված հարկադրանք<sup>625</sup>: Եթե որոշում կայացվի պարտադիր պատվաստման իրականացման համար, դա պետք է հիմնավորվի առողջության ընդհանուր պաշտպանության լուրջ հիմքերով և, ի սկզբանե, ներգրավել հստակ սահմանված խոցելի խմբեր հանրային մեծ շփումներով պայմանավորված, ինչպիսիք են օրինակ՝ բուժաշխատողները, ովքեր մշտական շփման մեջ են ռիսկային անձանց կամ պատվաստման հակացուցումներով հիվանդների հետ<sup>626</sup>:

Պարտադիր պատվաստումը՝ որպես ոչ կամավոր բուժում, համարվում է միջամտություն անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, որը ներառում է անձի ֆիզիկական և հոգեկան ամբողջականությունը, որը երաշխավորված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի 1-ին մասով<sup>627</sup>:

Եվրոպական դատարանի նախադեպային դիրքորոշմամբ՝ պարտադիր պատվաստումը ևս համարվում է միջամտություն մարդու անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին, հետևաբար «Բնակչության օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, յուրաքանչյուր ոք կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ կոնտակտային անձն իրավունք ունի հրաժարվելու բժշկական միջամտությունից:

Բացի այդ, պայմանավորված 2021 թվականի ընթացքում COVID-19-ի նոր շտամների ի հայտ գալով՝ չի բացառվում նորից վարակվելու հնարավորությունը, ուստի պետությունը այս ոլորտում պետք է իրականացնի նաև ճիշտ տեղեկատվական քաղաքականություն:

Մինչդեռ, Հայաստանում համավարակի դեմ պայքարում պետական քաղաքականության մի շարք խնդիրներ անառարկելիորեն առաջ բերեցին պատվաստումների հետ կապված հանրային հակազդում: Դրանք փաստվում են նաև նախատեսվող սահմանափակումներով պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող դիմումների ու մտահոգությունների շարունակականությամբ:

Այս առումով, օրենսդրական խնդրո առարկա փոփոխությունների վերաբերյալ կարծիքում Պաշտպանն ընդունելի չի համարել, որ նախատեսվող պարտադրանքով փորձ էր արվում լրացնելու

<sup>625</sup> Տե՛ս՝ «Առողջապահական դաշնագրի կենսաէթիկական հիմքերը», Սան Մարինոյի Հանրապետության ազգային բիոէթիկայի կոմիտե, 13 հունվարի 2021թ. , էջ 8, հասանելի է՝ <https://rm.coe.int/0900001680a15a0f> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>626</sup> Տե՛ս՝ «Առողջապահական դաշնագրի կենսաէթիկական հիմքերը», Սան Մարինոյի Հանրապետության ազգային բիոէթիկայի կոմիտե, 13 հունվարի 2021թ. , էջ 8, հասանելի է՝ <https://rm.coe.int/0900001680a15a0f> :

<sup>627</sup> Տե՛ս՝ Մատտերն ընդդեմ Սլովակիայի (Matter v. Slovakia) գործով 1999 թվականի հուլիսի 5-ի վճիռը, գանգատ թիվ [31534/96](#), կետ 64:



պատվաստումների հարցում հանրային անվտանգություն առաջացնելու բացթողումները, որոնք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝

- *Տեղեկատվական ոչ բավարար աշխատանքներ պատվաստանյութերի՝ վարակից պաշտպանելու արդյունավետության, դրանց հնարավոր այլ ազդեցությունների, պատվաստվելու/չպատվաստվելու հնարավոր առողջական հետևանքների վերաբերյալ:*

- *Պատվաստանյութերի ընտրության հարցում առկա վերապահումները ու սահմանափակ հնարավորությունը:*

- *Անձին պատվաստելիս վերջինիս առողջական վիճակի ոչ լիարժեք գնահատումը, բժշկական հետազոտության չիրականացումը՝ հավասարակշռելու համար անձի առողջական վիճակով պայմանավորված՝ վերջինիս վրա պատվաստման հնարավոր հետևանքներն ու վարակից պաշտպանվելու շահը:*

Փաստորեն, **պետությունը համավարակի դեմ պայքարում իր պարտավորությունների՝ իրազեկման, ամբողջական և ճշգրիտ տեղեկատվության պարբերական տրամադրման, հանրության հետ համագործակցային միջավայր ձևավորելու, պատվաստումների հետ կապված բոլոր մտահոգություններին համարժեք արձագանքի և այլ միջոցառումների ձախողման կամ թերացումների հետևանքով անցում կատարեց մարդու իրավունքներին ուղղակի միջամտության քաղաքականության:**

Այսպիսով, հարկ է նշել նաև, որ մեր դիտարկմամբ պատվաստման ընթացքի, Covid-19 հետ կապված սահմանափակումների հարցերում պետության ձեռնարկած միջոցների նկատմամբ վստահության պակասի պատճառ էր նաև կառավարության պասիվությունը հանրային իրազեկման հարցերում և մասնագիտական մոտեցումների փոխարեն, դրանց **քաղաքականացումը:**

Պատվաստման որոշում կայացնելու համար մարդիկ պետք է ունենան պատվաստանյութերի վերաբերյալ համարժեք և բավարար տեղեկատվություն, իսկ համապատասխան տեղեկատվությունը պետք է ապահովվի պետության կողմից, քանի որ վերջինս պարտավոր է իրականացնել վարակվածների, հետպատվաստումային բարդությունների ու հետևանքների վերաբերյալ պարբերական հետազոտություններ, հանրությանը ներկայացնել այդ արդյունքները և հնարավոր զարգացումները:

Մարդու իրավունքների միջամերկյան հանձնաժողովը 2021 թվականի ապրիլի 6-ին ընդունած «COVID-19-ի դեմ պատվաստումները և մարդու իրավունքների ոլորտում միջամերկյան պարտավորությունները» բանաձևով հստակ ամրագրել է, որ պետությունը պարտավորություն ունի պատվաստանյութերի վերաբերյալ հավաստի և բավարար տեղեկատվություն տրամադրելու և COVID-19-ի տարածումը կանխելու համար: Քաղաքացիական հասարակության անվտանգությանը և պատվաստանյութերի վերաբերյալ ապատեղեկատվությանը, պետք է հակազդեն հանրային առողջապահական հաստատությունների անվտանգության ամրապնդմանն ուղղված գործողությունները և գիտական հիմնավորումները: Այս նպատակով, տարածված

տեղեկատվությունը պետք է լինի որակյալ, օբյեկտիվ և ժամանակին, ինչպես նաև պետք է հաշվի առնի պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության մասին տեղեկատվությունը, որը հիմնված է առկա լավագույն գիտական ապացույցների վրա<sup>628</sup>:

Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողովը նշել է նաև, որ պատվաստանյութերի վերաբերյալ համարժեք և բավարար տեղեկատվության առկայությունն ու մատչելիությունը ապահովելու համար պետությունները պետք է իրականացնեն հանրային քաղաքականություն՝ պատվաստանյութերի վերաբերյալ ապատեղեկատվությանը հակազդելու համար: Հաշվի առնելով, որ պատվաստանյութերի կողմնակի ազդեցությունները կապված են ապատեղեկատվության հետ, պետություններից պահանջվում է տրամադրել կողմնակի ազդեցությունների վերաբերյալ առկա տեղեկատվությունը՝ պատվաստանյութերի անվտանգության և արդյունավետության վերաբերյալ կասկածները վերացնելու համար:

Բացի այդ ԵԽԽՎ 2361 (2021) բանաձևով, հստակ ամրագրվել է, որ պետությունը պարտավոր է տարածել թափանցիկ տեղեկատվություն պատվաստանյութերի անվտանգության ու հնարավոր կողմնակի ազդեցությունների վերաբերյալ, աշխատելով և համագործակցելով սոցիալական մեդիա հարթակների հետ՝ կանխելու ապատեղեկատվության տարածումը<sup>629</sup>:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի դեմ իրականացվող քաղաքականության 2021 թվականի ամփոփմամբ նշել է, որ պարտադիր պատվաստումը պետք է դիտարկել միայն այն դեպքում, եթե դա անհրաժեշտ է և համաչափ հանրային առողջության պահպանման իրավասու մարմինների կողմից հանրային առողջության պահպանման համընդհանուր նպատակին հասնելու համար: Եթե հանրային առողջության պահպանման նման նպատակին (ինչպես օրինակ՝ հավաքական իմունիտետը, առավել խոցելի մարդկանց պաշտպանությունը, բժշկական հաստատություններում բուժօգնություն ստանալու հնարավորության պահպանումը) կարող են հասնել հնարավորինս նվազ հարկադրական և ողջամիտ միջամտություններով (ինչպես օրինակ՝ հանրային կրթությունը), պարտավորության կատարումը արդարացված չի լինի, քանի որ անհատի ազատության և ինքնավարության նվազ սահմանափակումներով հանրային առողջության պահպանման նպատակներին հասնելը ավելի բարենպաստ է ռիսկ-օգուտ հարաբերակցության տեսանկյունից: Անհատական իրավունքները չպետք է սահմանափակվեն ավելի երկար, քան անհրաժեշտ են: COVID-19-ի դեմ պայքարի քաղաքականությունը մշակողները, պետք է հաճախ վերագնահատեն հարկադրանքը՝ ապահովելու համար հանրային առողջության պահպանման նպատակներին հասնելու անաչառությունը և համաչափությունը: Բացի այդ, հանրային առողջության պահպանման նպատակներին հասնելու

<sup>628</sup> Տե՛ս՝ «COVID-19-ի դեմ պատվաստումները և մարդու իրավունքների ոլորտում միջամերիկյան պարտավորությունները», բանաձև 1/2021, Մարդու իրավունքների միջամերիկյան հանձնաժողով, 6 ապրիլի 2021թ. , հասանելի է՝ <https://www.oas.org/en/iachr/decisions/pdf/Resolucion-1-21-en.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>629</sup> Տե՛ս՝ նույն տեղում:

պարտադիր պատվաստման անհրաժեշտությունը պետք է գնահատվի այն հնարավորության համատեքստում, որ հնարավոր է պահանջվի կրկնակի պատվաստման անհրաժեշտություն՝ վիրուսի զարգացման հետ մեկտեղ: Արդյունքում սա հնարավոր է կասկածի ենթարկի պարտադիր պատվաստման հանրային առողջության պահպանման նպատակներին իրատեսորեն հասնելու հնարավորությունը<sup>630</sup>:

Ստացվում է, որ ընտրված և կիրառվող միջոցներն ու դրանց իրացման մեխանիզմները պետք է լինեն հնարավորինս արդյունավետ հանրային առողջության պահպանման տեսանկյունից և ծառայեն պետության հետապնդած իրավաչափ նպատակին, որպեսզի մարդու իրավունքները չսահմանափակվեն ոչ արդյունավետ միջոցներով և անհամաչափ:

Մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք գործերով նշել է, որ, «անձնական կյանքի» գաղափարը լայն հասկացություն է, որը ենթակա չէ սպառիչ սահմանման<sup>631</sup>: Այն կարող է ընդգրկել անհատի ֆիզիկական և սոցիալական ինքնության բազմակի հայեցակետեր<sup>632</sup>:

«Իքս և Իգրեկն ընդդեմ Նիդեռլանդների» գործի շրջանակներում Եվրոպական դատարանը առաջին անգամ նշեց, որ անձնական կյանքի գաղափարն ընդգրկում է անձի ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիությունը<sup>633</sup>: Դատարանը նշել է, որ Ց-րդ հողվածը պետությունների վրա դնում է իրենց քաղաքացիների համար ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության նկատմամբ արդյունավետ հարգանքի իրավունք երաշխավորելու դրական պարտավորություն<sup>634</sup>:

Եվրոպական դատարանը առաջին անգամ անդրադառնալով երեխաների պարտադիր պատվաստումների համատեքստում անձի անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի պաշտպանությանը, արձանագրել է, որ պարտադիր պատվաստման օրենսդրական պահանջը հանդիսանում է միջամտություն անձի անձնական և ընտանեկան կյանքի իրավունքին, սակայն, պետությունը կրում է պոզիտիվ պարտավորություն ձեռնարկելու անհրաժեշտ միջոցառումներ՝ պաշտպանելու իր իրավագործության ներքո գտնվող անձանց կյանքն ու առողջությունը<sup>635</sup>: Այլ անձանց իրավունքները և առողջությունը պաշտպանելու նպատակը

<sup>630</sup> Տե՛ս՝ «COVID-19-ի և պարտադիր պատվաստումը: Էթիկական նկատառումներ և նախազգուշացումներ»-ԱՀԿ քաղաքականության ամփոփում, 13 ապրիլի 2021թ. , հասանելի է <https://www.who.int/publications/i/item/WHO-2019-nCoV-Policy-brief-Mandatory-vaccination-2021.1> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>631</sup> Տե՛ս՝ Փրիթին ընդդեմ Միացյալ Թագավորության (Pretty v. The United Kingdom) գործով 2002 թվականի ապրիլի 29-ի վճիռը, գանգատ թիվ 2346/02, կետ 61:

<sup>632</sup> Տե՛ս՝ Ս. -ն և Մարփերը ընդդեմ Միացյալ Թագավորության (S. and Marper v. The United Kingdom) գործով 2008 թվականի դեկտեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ [30562/04](#) և [30566/04](#), կետ 66:

<sup>633</sup> Տե՛ս՝ Իքսն ու Իգրեկն ընդդեմ Նիդեռլանդների (X and Y v. The Netherlands) գործով 1985 թվականի մարտի 26-ի վճիռը, գանգատ թիվ 8978/80, կետ 22:

<sup>634</sup> Տե՛ս՝ Գլասն ընդդեմ Միացյալ Թագավորության (Glass v. The United Kingdom) գործով 2004 թվականի մարտի 9-ի վճիռը, գանգատ թիվ 61827/00, կետեր 74-83:

<sup>635</sup> Տե՛ս՝ Վավրիկան և ուրիշները ընդդեմ Չեխիայի Հանրապետության (Vavřička and Others v. the Czech Republic) գործով 2021 թվականի ապրիլի 8-ի վճիռը, գանգատ թիվ 47621/13, կետ 197:

Դատարանը դիտել է որպես իրավաչափ նպատակ անձնական և ընտանեկան կյանքին միջամտելու համար: Անդրադառնալով միջոցների անհրաժեշտությանը, համաչափությանը և հիմնավորվածությանը՝ Դատարանն էական նշանակություն է տվել Չեխիայի կողմից ներկայացված հիմնավորումներին: Գիտությանը հայտնի 9 տեսակի ծանր հիվանդություններից երեխաներին պաշտպանելու համար կարևորվել է վաղ տարիքում պատվաստումների ամբողջական չափաբաժինների ընդունումը: Չպատվաստված երեխաներն անուղղակիորեն պաշտպանվում են վարակիչ ծանր հիվանդություններից այնքան ժամանակ, քանի դեռ հասարակությունում պատվաստման անհրաժեշտ ծավալները պահպանվում են: Այլ կերպ, նրանց պաշտպանում է հանրային իմունիտետը: Հետևաբար, եթե կամավոր պատվաստումների քաղաքականությունը բավարար չէ հանրային իմունիտետի հաստատման և պահպանման համար, պետական իշխանությունները կարող են ողջամտորեն ներդնել պարտադիր պատվաստումների քաղաքականություն՝ լուրջ հիվանդություններից պաշտպանության համապատասխան մակարդակի հասնելու համար: Միաժամանակ, չնայած պատվաստումը եղել է պարտադիր, նախատեսված են եղել նաև բացառություններ, օրինակ՝ պատվաստումների նկատմամբ երեխայի անհատական հակացուցումները և այլն:

Covid-19-ի համավարակի դեմ պայքարի քաղաքականության համատեքստում պարտադիր պատվաստումը՝ որպես ամենաարդյունավետ որպես ամենաարդյունավետ միջոց օգտագործելու հետ կապված բողոքներով, Մարդու իրավունքների դատարան<sup>636</sup> են ներկայացվել մի շարք գանգատներ: Մասնավորապես, 2021 թ. սեպտեմբերի 2-ին Հունաստանի առողջապահության համակարգի 30 բուժաշխատողներ ներկայացրել են 2 գանգատ ընդդեմ Հունաստանի:

Գանգատով բարձրացվել էր այն հարցը, որ առողջապահության համակարգի աշխատողների համար պարտադիր պատվաստման պահանջը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 14-րդ հոդվածներով ամրագրված իրավունքներին և Դատարանից խնդրել էին կիրառել միջանկյալ միջոց՝ կասեցնել օրենքի գործողությունը:

2021 թվականի սեպտեմբերի 7-ին Դատարանը որոշել է մերժել միջանկյալ միջոցների կիրառման միջնորդությունները՝ համարելով, որ դրանք դուրս են 39-րդ կանոնի (միջանկյալ միջոցներ) շրջանակից: Դատարանը նշել է, որ բավարարում է նման միջնորդությունները միայն բացառիկ դեպքերում, երբ դիմումատուները հակառակ դեպքում կկանգնեն անդառնալի վնասի իրական վտանգի առաջ<sup>637</sup>:

<sup>636</sup> Այսուհետ՝ Դատարան:

<sup>637</sup> Տե՛ս՝ Կակալետրին և ուրիշները ընդդեմ Հունաստանի (Kakaletri and Others v. Greece) գործով 2021 թվականի սեպտեմբերի 2-ի գանգատ, թիվ 43375/21:

Տե՛ս՝ Թեոֆանոպուլու և ուրիշները ընդդեմ Հունաստանի (Theofanopoulou and Others v. Greece) գործով 2021 թվականի սեպտեմբերի 2-ի գանգատ, թիվ 43910/21:

Նույն խնդրով 2021 թվականի օգոստոսի 19-ին Ֆրանսիայի առողջապահության համակարգի 672 աշխատակիցներ և կամավորներ Մարդու իրավունքների եվրոպական դատարան են ներկայացրել գանգատ ընդդեմ Ֆրանսիայի<sup>638</sup>:

COVID-19-ի դեմ համաշխարհային պատվաստումների նպատակների ու թիրախների իրականացման գործընթացի, սկզբունքների և ուղենիշներին կարևոր անդրադարձ է կատարել նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Այդ սկզբունքների և ուղենիշները հանգում են հետևյալին.

- հավասարություն՝ բոլոր անհատները, բնակչությունը և երկրները պետք է ունենան պատվաստանյութերի արդար հասանելիություն՝ առանց ֆինանսական դժվարությունների,
- որակ՝ օգտագործվող պատվաստանյութերը պետք է համապատասխանեն միջազգային չափանիշներին՝ ստացած լինեն ԱՀԿ լիցենզավորում,
- ինտեգրված՝ պատվաստանյութերը պետք է իրականացվեն թեստերով, բուժումներով և հանրային առողջապահական ու սոցիալական միջոցառումներ,
- ներառականություն՝ պատվաստումը պետք է ներառի մարզինալացված, խոցելի, տեղահանված և բանտարկված բնակչությանը<sup>639</sup>:

COVID-19-ի դեմ պատվաստումների համատեքստում ներարկման անվտանգությունը պետք է ամրապնդվի և խստորեն կիրառվի՝ պաշտպանելու հիվանդներին, բուժաշխատողներին և համայնքներին<sup>640</sup>:

Աշխարհում պատվաստումների աննախադեպ թիվը շատ ավելին է, քան նախկինում իմունիզացիային ուղղված ջանքերը, ներառյալ COVID-19 պատվաստանյութերի 6,8 միլիարդ չափաբաժինները, որոնք արդեն կիրառվել են դրանց առկայության առաջին տարում, ինչպես նաև այն անհետաձգելի պատվաստումների անհրաժեշտությունը, որը դեռևս շտապ է<sup>641</sup>:

COVID-19-ի դեմ պատվաստումների համաշխարհային ռազմավարության անմիջական նպատակն է նվազագույնի հասցնել մահերը, ծանր հիվանդությունները և ընդհանուր

---

<sup>638</sup> Տե՛ս՝ Աբգրալը և 672 ուրիշները ընդդեմ Ֆրանսիայի (Abgrall and 671 Others v. France) գործով 2021 թվականի օգոստոսի 19-ի գանգատ, թիվ 41950/21: Հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng-press#%7B%22sort%22:%7B%22kdate%20Descending%22%7D,%22itemid%22:%7B%22003-7100478-9611768%22%7D%7D> հղումով:

<sup>639</sup> Տե՛ս՝ ԱՀԿ քաղաքականության ամփոփագիր՝ «Ներարկման անվտանգությունը կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) պատվաստման համատեքստում», 2021 թվականի նոյեմբերի 5: Հասանելի է՝ <https://www.who.int/publications/i/item/WHO-2019-nCoV-Policy-brief-Vaccination-Injection-safety> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>640</sup> Տե՛ս՝ «Օգնական հուշագիր. վարակի կանխարգելման և վերահսկման (IPC) սկզբունքներ ու ընթացակարգեր COVID-19-ի դեմ պատվաստումների համար», Ժնև, 2021 թ հոկտոմբերի 31, ԱՀԿ: Հասանելի է՝ <https://www.who.int/publications/i/item/who-2019-ncov-vaccination-IPC-2021-1> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>641</sup> Տե՛ս՝ ԱՀԿ Կորոնավիրուսի (COVID-19) վիճակագրական քարտեզ: Հասանելի է՝ <https://covid19.who.int/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հիվանդությունների ծանրաբեռնվածությունը, նվազեցնել առողջապահական համակարգի ազդեցությունը, լիարժեք վերսկսել սոցիալ-տնտեսական գործունեությունը և նվազեցնել նոր տարբերակներով վարակվելիս մահացության ռիսկը<sup>642</sup>:

Վիրուսի նոր շտամների ի հայտ գալու պայմաններում, այս նպատակին հասնելու համար էական է բնակչության բարձր իմունիտետի առկայությունը, ինչը նշանակում է համատարած պատվաստման պահանջի կատարում: Ելնելով ներկայիս տվյալներից՝ սա նշանակում է, որ աշխարհի բնակչության առնվազն 70%-ը պետք է պատվաստվի՝ հաշվի առնելով մեծահասակների մեծ մասի և բնակչության որոշ խմբերի լուրջ հիվանդությունների առկայությունը, որը նրանց դարձնում է ավելի խոցելի:

### **7. Խտրականությունը սեռական կողմնորոշման հիմքով**

Մարդու իրավունքների պաշտպանին 2021 թվականի ընթացքում ևս հասցեագրվել են անձի սեռական կողմնորոշման հիմքով վերջիններիս իրավունքների խախտման վերաբերյալ ահազանգեր ու բողոքներ:

Այսպես, արձանագրվել է դեպք, երբ անձը տեղեկացրել է, որ ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչ է: Հանրապետության հրապարակի մոտակայքում իր վրա են հարձակվել մի քանի անձինք, հայիոյել են և ծեծել: Միջադեպի կապակցությամբ դիմել է մոտակայքում գտնվող ոստիկանության ծառայողին, սակայն վերջինս որևէ միջոց չի ձեռնարկել: Մեկ այլ դեպքում «Նոր սերունդ» հասարակական կազմակերպության նախագահը Պաշտպանի աշխատակազմին տեղեկացրել է, որ իրենց դիմած ժամկետային զինծառայողը սեռական կողմնորոշման համար զորամասում խտրական վերաբերմունքի ու բռնության է ենթարկվել՝ բարձրացնելով զինծառայողի անվտանգության ապահովման ու մեղավորներին քրեական պատախանատվության ենթարկելու անհրաժեշտության հարցը:

Պաշտպանի աշխատակազմ է դիմել նաև «Փինք» հասարակական կազմակերպության նախագահը՝ ներկայացնելով իրենց գործունեության ընթացքում վեր հանված դեպքերը, երբ անձինք սեռական կողմնորոշման հիմքով ենթարկվել են խտրականության, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, բռնության, այդ թվում՝ ընտանիքում բռնության:

ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածը սահմանում է խտրականության արգելքը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնության պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից,

<sup>642</sup> Տե՛ս՝ «Համաշխարհային COVID-19 պատվաստումների ռազմավարություն», 2021 թվականի հոկտեմբերի 6, գիտական ակնարկ, հասանելի է՝ <https://www.who.int/publications/m/item/strategy-to-achieve-global-covid-19-vaccination-by-mid-2022> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթից այլ հանգամանքներից:

«Սահմանադրությունն ու օրենքները երաշխավորում են բոլորի հավասարությունն օրենքի առջև և բոլոր քաղաքացիների պաշտպանությունը ցանկացած տեսակի բռնությունից կամ դրա սպառնալիքից: Ըստ այդմ, պետության բոլոր իրավասու մարմիններն են կրում հասարակության յուրաքանչյուր անդամի իրավունքների երաշխավորման, այդ թվում՝ յուրաքանչյուրի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովման պարտականություն: Անընդունելի է վատ վերաբերմունքի, խտրականության, իրավունքների և ազատությունների ցանկացած դրսևորում՝ անկախ նրանից, թե ում նկատմամբ է կատարվել և որտեղ: Յուրաքանչյուր դեպքի առնչությամբ պետությունը պարտավոր է ապահովել բոլոր հանգամանքների ուսումնասիրություն և գործի անաչառ քննություն: Նման պարտավորություն պետությունը, դրա բոլոր մարմիններն առանց բացառության ունեն բոլորի հանդեպ:

Բավարար օրենսդրական հիմքերի, մասնավորապես՝ իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի առկայությունը խտրականության բացարձակ արգելքի գործնական ապահովման համար առաջնային կարևորության նշանակություն ունի: Իրավունքների և ազատությունների պաշտպանության, խտրականության կանխարգելման ներպետական օրենսդրությամբ ամրագրված լիարժեք կարգավորումները, սակայն, բացակայում են:

Մասնավորապես, ներպետական օրենսդրության պայմաններում անձի սեռական կողմնորոշմամբ պայմանավորված ատելության հիմքով կատարված հանցագործությունները չեն ազդում հանցագործության որակման և պատժի չափի որոշման վրա: Նշվածը կապված է այն հանգամանքի հետ, որ «Քրեական օրենսգրքի «Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքները» վերտառությամբ 63-րդ հոդվածով արարքն ատելության հիմքով կատարված լինելու շարժառիթ նախատեսված է միայն ազգային, ռասայական կամ կրոնական ատելությունը, անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ որպես ատելության հիմքով կատարված հանցագործության որակյալ հատկանիշ, «Քրեական օրենսգրքի հատուկ մասի նորմերով նախատեսված չէ: Մինչդեռ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով անձի սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորմանը, նշել է, որ խտրականությունն անձի սեռական կողմնորոշման հիմքով նույնքան խնդրահարույց է, որքան «սեռի, ռասայի, մաշկի գույնի» հիմքով խտրականությունը: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը 2018 թվականին Հայաստան կատարած իր այցի արդյունքում ներկայացրած զեկույցում<sup>643</sup> արձանագրել է այս հարցը՝ այն խնդրահարույց համարելով:

<sup>643</sup> Տե՛ս <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149> հղումով, էջ 40, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Այս առումով, հարկ է նկատել, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի<sup>644</sup> 71-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով իբրև քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանք՝ նախատեսում է հանցանքը ռասայական, ազգային, էթնիկ կամ սոցիալական ծագումով, կրոնով, քաղաքական կամ այլ հայացքներով կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված ատելության, անհանդուրժողականության կամ թշնամանքի շարժառիթով կատարելը, այսինքն՝ խտրականության պաշտպանվող հիմքերի ոչ սպառիչ թվարկմամբ:

Օրենսդրական կարգավորումների ամբողջականության առումով առանցքային է խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ կառուցակարգերի առկայությունը:

Իրավահավասարության ոլորտի մարմնի ստեղծման հարցը իրավունքների պաշտպանության և պահպանության, ինչպես նաև խնդիրների կանխարգելման առումով կարևոր նշանակություն ունի: Ոլորտում օրենսդրական կանոնակարգվածության ապահովմանն ուղղված է «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը, որով հավասարության մարմնի կարգավիճակը վերապահվում է Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին:

Նախագծով առաջարկվող լուծումները համահունչ են Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի եվրոպական հանձնաժողովի ինչպես ընդհանուր քաղաքականության, այնպես էլ Հայաստանին վերաբերող զեկույցներում ներկայացված առաջարկություններին:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ իբրև ընդունելի ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ լուծում՝ իրավահավասարության ոլորտի մարմինները գործում են օմբուդսմանների ինստիտուտներին կից կամ դրանց կազմում, որոնց կայացրած որոշումները թեև պարտադիր չեն կատարման համար, բայց միևնույն ժամանակ այդ ինստիտուտները լիազորված են խտրականության ենթարկված անձանց շահերի պաշտպանության նպատակով հայցեր ներկայացնելու դատարան և նրանց շահերը պաշտպանելու դատական ատյաններում:

*Ասվածը վկայում է, որ բարձրացված խնդիրների համակարգային լուծումը պահանջում է խտրականության դեմ պայքարի և դրա կանխարգելման օրենսդրական արդյունավետ կառուցակարգերի ամրագրում՝ միջազգային չափանիշներին համահունչ:*

## **8. Արտաքին լուսավորությամբ ապահովելու անհրաժեշտություն**

2021 թվականին շարունակում է կարևոր հիմնախնդիրներից համարվել հանրապետության մարզերի համայնքների ճանապարհները և փողոցները, ինչպես նաև մայրուղային ավտոճանապարհներն արտաքին լուսավորության ցանցով ապահովելու հարցը: Արտաքին լուսավորության ցանցի զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ դրա արդյունքում ապահովվում է բնակչության անվտանգ տեղաշարժը, ճանապարհատրանսպորտային

<sup>644</sup> Օրենսգիրքն ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին և ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից, բացառությամբ 551-րդ հոդվածի 2-5-րդ մասերով նախատեսված դեպքերի:



պատահարները կրճատվում են, էներգախնայող համակարգերի և լուսատուների կիրառման հաշվին լուսավորվող ժամանակահատվածն ավելանում է, ինչը դրական ազդեցություն է ունենում հանրապետության բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Երևան համայնքում վերջին տարիներին բավականին դրական փոփոխություններ են տեղի ունեցել քաղաքային լուսավորության համակարգի զարգացման և արդիականացման ուղղությամբ, սակայն անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների փողոցները, բակային տարածքները և հանրային օգտագործման բոլոր տարածքներն արտաքին լուսավորության ցանցով ապահովելու համար: Արտաքին լուսավորության ցանցի բացակայության խնդիրն առավել ակնառու է Երևանից դուրս, այն է՝ հանրապետության այլ համայնքների փողոցներում և ներհամայնքային ճանապարհներին, միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհներին, որի պատճառով շատ դեպքերում նաև արագաչափ սարքերն ու զգուշացնող նշաններն ընդհանրապես չեն երևում<sup>645</sup>: Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման պատրաստման շրջանակներում խնդրի կարգավորման համար ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում ապահովվել է թվով 33 փողոցի, փողոցների հատվածների, բակային տարածքների և այգիների արտաքին լուսավորությունը՝ Կենտրոն վարչական շրջան՝ 6, որից 5-ը այգի, Արաբկիր՝ 3, որից 2-ն այգի, Մալաթիա-Սեբաստիա՝ 5, որից 4-ն այգի, Աջափնյակ՝ 5, Նոր Նորք 1 հատ այգի, Դավթաշեն՝ 2, Շենգավիթ՝ 4, Քանաքեռ-Զեյթուն՝ 3, Նուբարաշեն՝ 3, Էրեբունի 1 հատ այգի: 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Երևան քաղաքի՝ ըստ վարչական շրջանների կողմից «Երքալույս» ՓԲԸ-ին ներկայացրած չլուսավորված փողոցների, բակային տարածքների և թաղամասերի քանակը կազմում է մոտ 341 հատ:

2021 թվականին նշված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պարզաբանվել է, որ ՀՀ Արագածոտնի մարզում 2021 թվականին սուբվենցիոն ծրագրերով մարզի 14 համայնքներում լուսավորության ցանց է կառուցվել 91 փողոցներում, որից՝ ներհամայնքային նշանակության 83 փողոց, միջպետական նշանակության 1 փողոց, հանրապետական նշանակության 1 փողոց և մարզային նշանակության 6 փողոց: ՀՀ Արարատի մարզում 2021 թվականի ընթացքում մարզի 7 համայնքներում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվել են ճանապարհների արտաքին լուսավորության կառուցման ծրագրեր: ՀՀ Գեղարքունիքի մարզում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի 11 բնակավայրերի թվով 30 փողոցներում իրականացվել են արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ:

<sup>645</sup> Առավել մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարությունը, հասանելի է՝ <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2079> հղումով:

ՀՀ Լոռու մարզում 2021 թվականի ընթացքում սուբվենցիոն ծրագրերով իրականացվել է շուրջ 25000 մ արտաքին լուսավորության աշխատանքներ: Համայնքների տարածքով անցնող միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհները լուսավորված են, իսկ ներհամայնքային ճանապարհներն ամբողջությամբ լուսավորված չեն 17 բնակավայրերում: Այս բնակավայրերում նախատեսվում է ճանապարհային լուսավորության աշխատանքներ իրականացնել համայնքային միջոցներով կամ որևէ ծրագրերով: ՀՀ Շիրակի մարզում ապահովվել է լուսավորությամբ թվով 34 փողոց, որոնցից 27-ը քաղաքային համայնքում, 7-ը գյուղական համայնքում: ՀՀ բոլոր մարզերում էլ առկա են ճանապարհներ, որոնք չունեն արտաքին լուսավորություն: ՀՀ Սյունիքի մարզում 2021 թվականի ընթացքում մարզային մայրուղային և այլ տեսակի ճանապարհներ լրացուցիչ արտաքին լուսավորությամբ չեն ապահովվել: Ըստ Գորիս համայնքից ստացված հաղորդման՝ 2021 թվականի ընթացքում Գորիս համայնքի Քարահունջ գյուղում 13 մայրուղային և այլ տեսակի ճանապարհներ ապահովվել են արտաքին լուսավորությամբ: ՀՀ Վայոց ձորի մարզում 2021 թվականի ընթացքում մայրուղային և այլ տեսակի ճանապարհներին իրականացվել է 12 կմ արտաքին լուսավորության ցանցի կառուցում: ՀՀ Տավուշի մարզի Իջևան և Բերդ համայնքների բնակավայրերում կատարվել են գիշերային լուսավորվածության իրականացման ծրագրեր, մասնավորապես՝ Բերդ խոշորացված համայնքում 262 մլն դրամի սուբվենցոն ծրագրով:

Վերոնշյալ տեղեկությունների ուսումնասիրությունից հետևում է, որ չնայած իրականացված աշխատանքներին՝ արտաքին լուսավորության ցանցի բարելավման և զարգացման խնդիրը շարունակում է արդիական մնալ: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ համայնքների զարգացման կարևոր նախապայմաններից է արտաքին լուսավորության էներգախնայող համակարգի ներդրումը, այն է՝ շրջակա միջավայրի ու հանրային առողջության համար անվտանգ արդիական ու էներգախնայող լուսադիոդային (LED) լուսատուների համակարգը: Նշված համակարգի ներդրման արդյունքում էապես կկրճատվեն հանրապետության համայնքների բյուջետային ծախսերը՝ թույլ տալով դրանք ուղղել այլ խնդիրների լուծմանը: Քանի որ, ի տարբերություն այլ լամպերի, լուսադիոդային (LED) լուսատուներն առավել արդյունավետ ու դիմացկուն են, կարող են անհամեմատ ավելի երկար ծառայել՝ սպառելով անհամեմատ պակաս էլեկտրաէներգիա: Արձանագրենք նաև, որ այսօր դեռևս արտաքին լուսավորության մալուխները գրեթե ամբողջությամբ վերգետնյա են և անցնում են հենասյունների վրայով, որոնց վրայով անցնում են նաև այլ մալուխներ: Վերգետնյա մալուխներով ծանրաբեռնված հենասյունները, ինչպես նաև դրանց ոչ արդյունավետ բաշխվածությունը համայնքների բնակչության և երթևեկի համար ստեղծում է վտանգավոր իրավիճակներ: Ուստի անհրաժեշտ է գոյություն ունեցող մալուխային ցանցերն անցկացնել ստորգետնյա խրամուղիներով, ինչը կբարձրացնի հետիոտնի և երթևեկի անվտանգության աստիճանը, ինչպես նաև կբարելավի հանրապետության քաղաքների արտաքին տեսքը: Նշենք նաև, որ անհրաժեշտ է ստեղծել արտաքին լուսավորության ավտոմատ կառավարման կենտրոններ, ինչը հնարավորություն կտա առցանց ռեժիմով հետևել լուսատուների

հոսանքի բեռին, անջատումներին, ինչպես նաև թույլ կտա որոշակի անհրաժեշտ հզորությամբ լուսավորություն ապահովել օրվա ողջ գիշերային ժամանակահատվածում:

*Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *շարունակաբար ավելացնել ինչպես մայրաքաղաքի, այնպես էլ հանրապետության այլ քաղաքների և գյուղերի արտաքին լուսավորության ցանցով ամբողջովին ապահովված փողոցներն ու հանրապետության մայրուղային և այլ ճանապարհները,*

2. *նվազեցնել էլեկտրաէներգիայի ծախսումները, այն է՝ այլ լամպերի փոխարեն հանրապետության ամբողջ տարածքում աստիճանաբար ներդնել շրջակա միջավայրի ու հանրային առողջության համար անվտանգ արդիական ու էներգախնայող լուսադիոդային (LED) լուսատուների համակարգեր,*

3. *գոյություն ունեցող մալուխային ցանցերն անցկացնել ստորգետնյա խրամուղիներով:*

4. *ստեղծել լուսավորության ավտոմատ կառավարման կենտրոններ:*

## **9. Աղմուկի հեղուկացման համակցության կանոնների խախտումը**

2021 թվականին ևս Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ հանրային սննդի ծառայություն կամ ժամանց կազմակերպելու (ռեստորան, բար-սրճարան և այլն) հետևանքով մարդկանց իրավունքների խախտման վերաբերյալ: Իսնդիորները հիմնականում ծագում են բազմաբնակարան շենքերում վերը նշված գործունեություն իրականացնելու ժամանակ:

Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ բազմաբնակարան շենքերում բնակարանների գործառնական նշանակության կարող է փոփոխվել հասարակական գործառնական նշանակության միայն որպես գրասենյակ օգտագործելու համար, ինչպես նաև նույն կարգի համաձայն՝ գործառնական նշանակության փոփոխությունը կարող է կատարվել միայն բազմաբնակարան շենքի տվյալ մուտքի, որտեղ տեղակայված է բնակարանը բնակարանների սեփականատերերի կեսից ավելիի կողմից համայնքի ղեկավարին ներկայացված համաձայնության հիման վրա:

Անձը, ձեռք բերելով բազմաբնակարան շենքում բնակարան և օգտվելով նշված կարգավորումներից, դիմում է Երևանի քաղաքապետարան, անհասկանալի է, նույն շենքի բնակիչների համաձայնությամբ, թե առանց համաձայնության, փոխում է գնված բնակարանի կամ նկուղի նպատակային նշանակությունը՝ դարձնելով այն հասարակական: Գլխավոր խնդիրն այն է, թե կոնկրետ ինչ հասարակական օբյեկտի է վերածվելու բնակարանը կամ նկուղը: Ըստ վերոնշյալ կարգավորման այն կարող է փոխվել միայն որպես գրասենյակ օգտագործելու համար: Սակայն շատ դեպքերում դրանք վերածվում են բառ-ռեստորան-սրճարանների, որոնք ամեն կերպ ջանում են բավարարել քմահաճ հաճախորդների ցանկությունները: Այդ ամենից բնականաբար տուժում են

նույն շենքի կամ հարևանությամբ գտնվող շենքերի բնակիչները: Առաջացող խնդիրների շարքում հատուկ առանձնացման է ենթակա աղմուկը, որն առաջանում է նման օբյեկտների գործունեությունից, իսկ բնակիչները զրկված են իրենց տարրական իրավունքները պաշտպանելու հնարավորությունից:

Ընթացիկ տարում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Երևան քաղաքի Թամանյան փողոցի շենքերից մեկի բնակարանի սեփականատերը՝ ստանալով Երևանի քաղաքապետարանի տրամադրած շինարարության թույլտվությունը, բնակարանը վերակառուցել է որպես ռեստորանի տարածք: Մինչդեռ, ըստ բողոքի՝ շենքի բնակիչները տեղյակ չեն եղել նախատեսվող շինարարական աշխատանքների մասին և չեն տվել իրենց գրավոր համաձայնությունը բնակարանի տարածքի որպես գրասենյակ գործառնական նշանակության փոփոխության համար: Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ նշված բնակարանի գործառնական նշանակությունը փոփոխելու վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից որևէ որոշում չի կայացվել, ուստի շինությունը ոչ նպատակային նշանակությամբ օգտագործելու փաստի առթիվ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն և գործը ուղարկվել է համապատասխան բաժին այն քննելու համար:

Նշվածի կապակցության հարկ է ընդգծել, որ եթե վերոնշյալ բնակարանի գործառնական նշանակությունը չէր փոխվել, ապա պարզ չէ, թե ինչ իրավական հիմքով է բնակարանը ռեստորանի վերակառուցելու համար տրվել շինարարության թույլտվություն, որը նույն շենքի բնակիչների բողոքի հիման վրա Երևանի քաղաքապետարանի կողմից հետագայում անվավեր է ճանաչվել: Ռեստորանային գործունեության հետևանքով հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու համակցության կանոնների չպահպանման հետ կապված մեկ այլ բողոքով անձինք տեղեկացրել են, որ Երևան քաղաքում գտնվող հյուրանոցի տարածքում գործող բացօթյա սրճարանում գործունեություն իրականացնող ընկերությունները գիշերային ժամանակ (ժամը 22.00-02.00) երաժշտական գործիքների և (կամ) կենդանի բարձր երաժշտության գործադրմամբ խախտում են իրենց գիշերային անդորրը և հանգիստը:

Նշվածի կապակցությամբ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ նշված ընկերությունները լռությունը և գիշերային անդորրը խախտելու կապակցությամբ մի քանի անգամ ենթարկվել են վարչական պատասխանատվության: Այնուհետև, խնդիրը կարգավորելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ ընկերություններից մեկի ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվությունը դադարեցվել է, իսկ մյուս ընկերության նկատմամբ կիրառվել է նախազգուշացում:

Բարձրացված համակարգային խնդրի կարգավորման վերաբերյալ ձեռնարկված միջոցների վերաբերյալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում բազմաբնակարան շենքերի հարակից տարածքներում հանրային սննդի ծառայություն կազմակերպելու հետևանքով աղմուկի հետ կապված Տեսչական մարմնում

արձանագրվել է շուրջ 28 դիմում, որոնց հիման վրա հարուցվել են վարչական վարույթներ և կազմակերպվել են վարչական լսումներ:

15 վարչական վարույթ կարճվել է՝ դեպքի բացակայության, 4 վարչական վարույթ կարճվել է դիմումից հրաժարվելու կամ իրավիճակի փոփոխման հիմքով:

Խախտումները վերացնելու համար 9 տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներին (տնօրեններին) տրվել է կարգադրագիր՝ ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմերի 5.3-րդ կետի աղյուսակ 3-ի 4-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, պատասխանատու անձինք ենթարկվել են վարչական տույժի (տուգանքի): Կարգադրագրով տրված առաջադրանքների կատարված լինելը պարզելու նպատակով Տեսչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված կատարողական վարույթների արդյունքում թվով 2 կազմակերպություն նկատմամբ հարուցված վարչական վարույթները կարճվել են՝ դեպքի բացակայության հիմքով: Թվով 7 կազմակերպության կարգադրագրերի կատարողական վարույթները դեռևս ընթացքի մեջ են:

Այսպիսով, Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ հանրային սննդի և այլ կազմակերպությունները շարունակում են իրենց գործունեությունը բազմաբնակարան շենքերում, այդ թվում՝ շենքերի հարակից տարածքներում և օբյեկտներից հնչող աղմուկը շարունակում է անհանգստություն պատճառել ինչպես նույն, այնպես էլ հարակից շենքերի բնակիչներին: Արդյունքում խնդիրը համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ:

Ուստի, Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումն առ այն, որ օրենսդրությամբ անհրաժեշտ է սահմանել «համակեցության կանոն» հասկացությունը: Անհրաժեշտ է սահմանել նաև հանրային սննդի կազմակերպման բնագավառում համակեցության կանոնների պահպանման բովանդակությունը, հսկողական մեխանիզմները և համակեցության կանոնները չպահպանելու համար պատասխանատվության միջոցները, ինչը խնդիրը համակարգային առումով կարգավորելու համար կարևոր նշանակություն կունենա: Բացի վերոգրյալից, ներկայում շարունակում է չկանոնակարգված մնալ Երևանի կենտրոնական փողոցներում թափառաշրջիկ երաժիշտների երաժշտական գործունեությունը (մասնավորապես զբոսաշրջային սեզոնին), որի հետևանքով ևս խաթարվում է հարակից շենքերի բնակիչների հանգիստը և անդորրը:

Իհարկե, նախորդ տարի և ընթացիկ տարում ևս կորոնավիրուս (COVID-19) համավարակով պայմանավորված տուրիստական հոսքերի նվազման հետևանքով նման բողոքներ չեն արձանագրվել, սակայն Երևանի կենտրոնական փողոցներում մարդկանց ակտիվ տեղաշարժը վերսկսելուն պես խնդիրը կրկին ի հայտ է գալու: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքին՝ նշելով, որ թեև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան ուղղակիորեն չի պաշտպանում առողջ, խաղաղ միջավայր ունենալու իրավունքը, բայց երբ անհատը լրջորեն և

ուղղակիորեն վնաս է կրում աղմուկից հարցը հայտնվում է Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կարգավորման շրջանակներում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

1. ընդունել հանրային սննդի կազմակերպությունների և (կամ) թափառաշրջիկ երաժիշտների կողմից հարակից շենքերի բնակիչների հետ հարաբերվելու կանոններ սահմանող իրավական ակտեր՝ նախատեսելով համակեցության կանոնների որոշակի շրջանակ դրանց պահպանման համար վերահսկողական մեխանիզմներ և պատասխանատվության միջոցներ:

2. գործող կարգավորումների շրջանակում աղմուկի թույլատրելի մակարդակի խախտման դեպքերով խնդիրները կարգավորելու ուղղությամբ ձեռնարկել պատշաճ հսկողություն:

### **10. Թափառող շների վնասագերծման խնդիր**

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ Երևան համայնքում և ՀՀ մարզերի այլ համայնքներում թափառող շների վնասագերծման և թվաքանակի կանոնակարգման խնդրի վերաբերյալ: Կենսաանվտանգության ապահովման առումով Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվում են Երևան քաղաքում թափառող կենդանիների գլխաքանակի կառավարման վերահսկման և զոոնոտիկ հիվանդությունների տարածման կանխարգելման աշխատանքներ 2019 թվականի փետրվարի 12-ի N 63-Ա ավագանու որոշմամբ ստեղծված «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (ՀՈԱԿ) կողմից: ՀՈԱԿ-ի գործառույթներն են այդ կենդանիների հավաքումը, տեղափոխումը, նախնական զննումը, պատվաստումը, ստերջացումը և համարակալումը: Այն է՝ կազմակերպության գործառույթային առարկան Երևան քաղաքում թափառող կենդանիների վնասագերծման և նրանց թվաքանակի կանոնակարգման համալիր ծրագրի մշակումն ու իրականացումը: Մինչդեռ, ընթացիկ տարում Պաշտպանին հասցեագրած բողոքների և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ուսումնասիրությունները վկայում են, որ Երևան քաղաքի տարբեր վարչական շրջաններում արձանագրվել են թափառող շների մարդկանց վրա հարձակվելու դեպքեր, ինչը շատ դեպքերում ուղեկցվել է մարդկանց հագուստը պատռելով, այլ տեսակի վնասվածքներ հասցնելով, նույնիսկ կծելով: Ըստ տեղեկությունների՝ թափառող շները Երևան համայնքի նաև դպրոցների տարածքում պարբերաբար հարձակվել են երեխաների վրա, նրանց պատճառել են լուրջ վնասվածքներ, այդ թվում՝ հոգեբանական սթրես: Օրինակ, բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ Ա. Բաբաջանյան փողոցում գտնվող իրենց շենքի տարածքում թափառող շները հարձակվում են երեխաների վրա: Նշվածի կապակցությամբ կապ է հաստատվել «Թափառող կենդանիների վնասագերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատակցի հետ, ով պատրաստակամություն է հայտնել խնդրի կարգավորման հարցում: Մեկ այլ բողոքով անձը տեղեկացրել է որ «Սասունցի Դավիթ» կայարանի տարածքում թափառող շները հարձակվում են մարդկանց վրա և անհանգստություն

պատճառում: Նշված խնդրով նույնպես կապ է հաստատվել «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի աշխատակցի հետ խնդիրը կարգավորելու համար, որը ևս պատրաստակամություն է հայտնել այն կարգավորելու համար: Հարկ է նշել, որ երկու դեպքով էլ խնդիրը կարգավորվել է, սակայն հարցը կայանում է նրանում, որ այդ կարգավորումը կրում է կարճաժամկետ բնույթ, քանի որ որպես խնդրի լուծում ՀՈԱԿ-ի աշխատակիցները թափառող շների տեղափոխում են այլ վայրեր, որտեղից, սակայն, սննդի բացակայության հետևանքով նրանք նորից վերադառնում են այնտեղ, որտեղ հնարավոր է սնունդ հայթայթել, այն է՝ մարդաշատ վայրեր: Արդյունքում խնդիրը վտանգավորության տեսանկյունից շարունակում է չլուծված մնալ: Բարձրացված խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ 2021 թվականի ընթացքում «ԹԿՎԿ» ՀՈԱԿ-ի թեժ գծին թափառող շների վնասազերծման և ստերջացման հարցերով ստացվել է 4299 ահազանգ, որոնց մեծ մասը վերաբերվել է թափառող շների հաչոցներով պայմանավորված կենդանիների տեղափոխման խնդրին, ստացվել է 161 ահազանգ թափառող շների հարձակումների հետ կապված: Հարձակումների դեպքերի հետ կապված տեղում կատարվել են ուսումնասիրություններ, հնարավորության դեպքում շները տեղափոխվել են «ԹԿՎԿ» ՀՈԱԿ-ի կլինիկա՝ նրանց վարքը ուսումնասիրելու, վտանգավոր հիվանդությունները բացահայտելու և ստերջացնելու նպատակով: Այնուհետև թափառող կենդանիները հիմնականում վերադարձվել են նույն հասցեները, եթե դրանք չեն հանդիսացել կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպությունների (հիմնարկներին) հարող տարածքներ: Առաջնորդվելով Համաշխարհային առողջապահական կազմակերպության ցուցումներով խիստ վտանգավոր հիվանդությունների կանխարգելման նպատակով կատարվել է որոշ կենդանիների քնեցում (ըստ սահմանված կարգի): «ԹԿՎԿ» ՀՈԱԿ-ի կողմից որոշ շներ հանձնվել են որդեգրության կրկին փողոցում չհայտնվելու պայմանով: Մարդկանց վրա թափառող շների հարձակման դեպքերը կանխելու ուղղությամբ կատարվում են ոհմակների ցրում, ինչպես նաև տարվում են բացատրական աշխատանքներ ազգաբնակչության հետ:

Խնդիրն առավել զգայուն է հանրապետության այլ համայնքներում, քանի որ բացի Երևան համայնքից այլ համայնքներում չկան կենդանիների վնասազերծման հատուկ կազմակերպություններ: Օրինակ, բողոքներից մեկով անձինք տեղեկացրել են, որ Ազատան համայնքի տարածքում ավելացել է թափառող շների քանակը, արդյունքում 2019 թվականին համայնքում գրանցվել է թափառող շների կողմից մարդկանց կծելու 16 դեպք: Բողոք ներկայացրած անձանց հավաստմամբ՝ 2020-2021 թվականներին թափառող շների թիվը կրկնապատկվել է, որի հետևանքով համայնքում ստեղծվել է հակասանիտարական վիճակ: Նշել են նաև, որ թափառող շները վարակիչ հիվանդությունների տարածողներ են և խոչընդոտում են քաղաքացիների՝ հատկապես երեխաների ազատ տեղաշարժը: Ըստ բողոք ներկայացրած անձանց՝ համայնքում գտնվող դպրոցի շրջակայքում պատահել են դեպքեր, երբ թափառող շները հարձակվել են աշակերտների և ուսուցիչների վրա՝ նրանց պատճառելով մարմնական վնասվածքներ: Հավելել են,

որ 2021 թվականի մարտ ամսին դպրոցի բակում շների հարձակման արդյունքում մարմնական ծանր աստիճանի վնասվածքներ են ստացել 7-րդ դասարանի աշակերտ և դպրոցի հնոցապանը: Վերոգրյալի կապակցությամբ իր մտահոգությունն է հայտնել նաև Ազատան համայնքի ղեկավարը: Նրա տրամադրած տեղեկության համաձայն՝ մինչև 2019 թվականը թափառող կենդանիների դեմ պայքարն իրականացվել է հրազենի կիրառմամբ, ինչը ներկայում արգելվում է: Ըստ տեղեկության՝ նախորդ տարիներին համայնքապետարանը 300-400 թափառող կենդանու վնասազերծման համար ծախսել է մոտ 600 հազար ՀՀ դրամ, իսկ ներկայում գործող մասնավոր ընկերությունները ծառայությունը մատուցում են մեկ կենդանու դիմաց՝ 30-40 հազար ՀՀ դրամով: Նման ծախսեր կատարելու համար համայնքի տարեկան բյուջեում անհրաժեշտ է ունենալ լրացուցիչ 9-12 մլն ՀՀ դրամ, ինչը համայնքային սուղ միջոցներով անհնար է իրականացնել: Ըստ համայնքի ղեկավարի՝ թափառող շների վնասազերծման համար առաջարկվող ստերջացման միջոցառումները որևէ կերպ չեն նվազեցնում համայնքի բնակչության համար սպառնացող վտանգը: Ազատան համայնքի ղեկավարը դիմել է ՀՀ Շիրակի մարզպետարան և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն թափառող շների դեմ պայքարի համընդհանուր և ողջամիտ գնով միջոցառումներ իրականացնելու նպատակով համապատասխան մասնագիտացված կազմակերպություն ստեղծելու խնդրանքով, ինչը դեռ չի ստեղծվել: Մեկ այլ բողոքով Արթիկ համայնքի բնակիչները բարձրացրել են թափառող շներին հավաքելու և համապատասխան վայր տեղափոխելու անհրաժեշտությունը, քանի որ, ըստ բողոքի, դրանց թիվը մեծաքանակ է և դրանք հարձակվում են դպրոց հաճախող երեխաների վրա:

Նշված բողոքի ուսումնասիրության և Պաշտպանին հասցեագրած այլ բողոքների քննարկումները վկայում են, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ և առկա է ոչ միայն ՀՀ Շիրակի մարզի համայնքներում, այլ հանրապետության մյուս մարզերի համայնքներում ևս: Նշվածն արձանագրվել է Մարդու իրավունքների պաշտպանի 2018-2020 թվականների տարեկան հաղորդումներում և առաջարկվել է թափառող շների վնասազերծման և դրանց թվաքանակի կանոնակարգման համար ձեռնարկել համապատասխան միջոցներ: Բարձրացված հարցի լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարզաբանման համաձայն՝ կարևորելով հարցի հրատապությունը՝ կատարվել է ուսումնասիրություն խնդրի լուծման հնարավոր ֆինանսական գնահատականների վերաբերյալ: Ուսումնասիրության ընթացքում հաշվարկվել է մեկ մարզի օրինակով (ՀՀ Սյունիքի մարզ) պահանջվող ֆինանսական միջոցների չափը: Մասնավորապես՝ ՀՀ Սյունիքի մարզի բնակավայրերում առկա է շուրջ 3600 թափառող շուն: Խիստ մոտավոր գնահատումներով մասնագիտացված կազմակերպությունների կողմից մեկ կենդանու քնեցումը կարող է կազմել 18000 դրամ, մեկ էգ շան ստերջացումը՝ 35000-40000 դրամ, իսկ մեկ արու շան ստերջացումը՝ 20000-25000 դրամ, այն դեպքում, երբ մեկ թափառող շան լիկվիդացման ծախսը կարող է կազմել 8000-10000 դրամ: Միջին չափի (20-30կգ) մեկ շուն կերակրելու համար մոտավոր հաշվարկներով անհրաժեշտ է 0,5-0,7 կգ կեր, որի ծախսը կարող է կազմել 1000-1500 դրամ: Եթե



ընդունենք, որ ներկայացված հաշվարկներն իրատեսական են, ապա ստացվում է, որ ՀՀ Սյունիքի մարզում առկա թափառող շների ստերջացումը կարող է արժենալ մոտ 117 մլն դրամ, քննցումը՝ 64,8 մլն դրամ, իսկ լիկվիդացումը կարող է արժենալ մոտ 36 մլն դրամ: Կացարանի կառուցման դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն շինության նախագծային արժեքը (նախագծանախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում միայն հնարավոր է գնահատել արժեքը), այլ նաև պահպանման ծախսերը, աշխատակազմի աշխատավարձի, կենդանիների բուժման, պահպանման, տեղափոխման գումարները: Տեղեկացրել են նաև, որ Երևան քաղաքում 2019 թվականին շուրջ 3000 թափառող շան վրա ծախսվել է 150 մլն դրամ, 2800 շուն վերադարձվել է միջավայր, իսկ անասնաբուժական կլինիկա կառուցելու համար արդեն իսկ ծախսվել է շուրջ 180 մլն դրամ: Պարզաբանվել է, որ վերոգրյալ խնդիրներին հնարավոր է համակարգային լուծում տալ միայն համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Այսպիսով, թափառող շների վնասագերծման և թվաքանակի կանոնակարգման հարցը շարունակում է մտահոգիչ մնալ ինչպես Երևան համայնքում, այնպես էլ ՀՀ մարզերի այլ համայնքներում, քանի որ ագրեսիվ շներն իրական վտանգ են դարձել բնակիչների համար: Շների կծոցներ, կատաղախտ, լուպտոսպիրոզ և այլն. այս բոլորը ռիսկային են այն մարդկանց համար, ում բնակության վայրում առկա են թափառող կենդանիների մեծ խմբեր: Շատ կարևոր է կրճատել թափառող կենդանիների խմբաքանակները՝ վտանգավոր հիվանդությունների տարածումը վերահսկելու և շների կծոցներին ու հարձակումներին վերջ դնելու համար: Թափառող կենդանիների խմբերը նվազեցնելու միակ արդյունավետ և գործնական միջոցը զանգվածային ստերջացումն ու իմունիզացիան է, իսկ ծայրահեղ դեպքերում նրանց կյանքի ընդհատումը համապատասխան նյութի ներարկմամբ (քննցում): Հատկանշական է նաև, որ ներկա օրենսդրական կարգավորումների պայմաններում թափառող շների վնասագերծման և նրանց թվաքանակի կանոնակարգման միջոցառումների իրականացումը ՀՀ մարզերի համայնքների համար խնդրահարույց է, քանի որ համայնքային ֆինանսական միջոցները չեն բավականացնում նշված գործողություններն իրականացնելու համար:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Ընտանի կենդանիների պաշտպանության եվրոպական կոնվենցիայի դրույթներին, արձանագրել է, որ երբ կողմը համարում է, որ թափառող կենդանիների թիվն իրենից խնդիր է ներկայացնում, պետք է ձեռնարկի համապատասխան օրենսդրական և/կամ վարչական միջոցառումներ դրանց թվի կրճատման համար, այն միջոցներով, որոնք չեն առաջացնում ցավ, խոշտանգում և տառապանք:

*Հաշվի առնելով վերոգրյալը և խնդրի կարգավորման հրատապությունը՝ անհրաժեշտ է՝*

1. Երևան համայնքում և ՀՀ այլ մարզերի համայնքներում իրականացնել թափառող կենդանիների (շներ) վնասագերծման և դրանց թվաքանակի կանոնակարգման պատշաճ միջոցառումներ,

2. ստեղծել համապատասխան իրավական հիմքեր հանրապետությունում առկա թափառող շների վնասագերծման և թվաքանակի կանոնակարգման գործընթացի կարգավորման համար,

3. ՀՀ մարզերի համայնքներում ստեղծել թափառող շների վնասազերծման և թվաքանակի կանոնակարգմամբ զբաղվող համապատասխան կազմակերպություններ և գործընթացն այնպես կազմակերպել, որպեսզի համայնքները հնարավորություն ունենան իրենց բյուջեում առկա միջոցների հաշվին օգտվել այդ ծառայություններից կամ դրանք իրականացնել պետական համաֆինանսավորմամբ:

## **11. Հանրային ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, սպասարկման որակի և այլ խնդիրներ**

Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին արդիական են հասարակական ուղևորատար տրանսպորտի գերծանրաբեռնվածության, տրանսպորտի սպասարկման որակի և այլ խնդիրները: Տարիներ շարունակ Երևան քաղաքն ունեցել է տրանսպորտային համակարգի հիմնախնդիրներ, որոնց բարելավումն օրվա հրամայական է: Այսպես, Երևանի նոր երթուղային ցանցը գործարկելու, այն է՝ տարբեր երթուղիների սպասարկման համար նախատեսվել է ընդհանուր ձեռք բերել 845 տարբեր չափերի ավտոբուսներ: Երթուղային ցանցի բարեփոխման ծրագրով նշված քանակն անհրաժեշտ է երթուղային ամբողջական սպասարկումն ապահովելու համար: Վերջին շրջանում ձեռք է բերվել, ներկրվել և շահագործվում է 100 միկրոավտոբուս և 211 (8.5 մ) երկարության ավտոբուս, որոնց քանակը, իհարկե, բավարար չէ մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի գերծանրաբեռնվածության և սպասարկման որակի տարիներ շարունակ արմատացած խնդիրները կարգավորելու համար: Ներկայում ուղևորատար տրանսպորտի թերզարգացվածությունը մարդկանց համար առաջացնում է մի շարք սոցիալական և այլ տեսակի խնդիրներ և անհարմարություններ, ինչն առավել ակնառու է դարձել կորոնավիրուսային (COVID-19) համավարակի հետևանքով կիրառված սահմանափակումների ժամանակ: Այսպես, հանրային ուղևորատար տրանսպորտի կարևոր գերխնդիրներից է դրա գերծանրաբեռնվածությունը, արդյունքում նույնիսկ համավարակի պայմաններում ավտոբուսները լեփլեցուն են լինում, կանգառներ ուշ են ժամանում և շատ դեպքերում ուղևորափոխադրամիջոցների տեխնիկական վիճակին և կահավորմանը ներկայացվող պահանջներին չեն համապատասխանում: Առողջապահության նախարարի 2020 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածման կանխարգելման նպատակով կիրառվող ՍԿ N 3.1.2-001-20 սանիտարական կանոնները հաստատելու մասին» N 17-Ն հրամանով սահմանվել է, որ ուղևորատար տրանսպորտի մեջ պետք է տեղադրվեն ախտահանիչ նյութեր և արգելվի կանգնած ուղևորների փոխադրումը: Ուղևորների ընդհանուր թիվը չպետք է գերազանցի նստելու համար հատկացված տեղերի ընդհանուր թվաքանակը: Չի թույլատրվում հավելյալ ինքնաշեն նստատեղերի ավելացումը: Տրանսպորտում վճարման համար պետք է տեղադրվեն հատուկ արկղեր՝ կանխիկ դրամի հետ

շփումը հնարավորինս նվազեցնելու նպատակով, հնարավորինս բացառելով վարորդների կողմից մանր վերադարձնելու անհրաժեշտությունը: Բոլոր տրանսպորտային միջոցներում մուտքի մոտ տեղադրվում են ձեռքերի ախտահանման համար առնվազն 70% սպիրտային հիմքով ախտահանիչ միջոցներ: Մինչդեռ, նշված անվտանգության կանոնները գրեթե չեն պահպանվում, ինչը, ինչպես նշվել է վերը, պայմանավորված է ուղևորատար տրանսպորտի անհրաժեշտ շարժակազմի բացակայության և տրանսպորտային միջոցների հնամաշ լինելով: 2021 թվականին քաղաքացիները բազմիցս արտահայտել են դժգոհություններ Երևանի հասարակական տրանսպորտի, հատկապես՝ ավտոբուսների ու միկրոավտոբուսների ոչ պատշաճ աշխատանքի վերաբերյալ: Ըստ հրապարակված տեղեկության՝ անձը կիրակի օրը շուրջ 40 րոպե սպասել է 33 համարի ավտոբուսի ժամանմանը: Նույն տեղեկությամբ անձը նշել է, որ խախտված պարբերականությամբ երթևեկելուն գումարվում է նաև այն, որ գրաֆիկը հաստատուն չի, ոչ բոլոր ավտոբուսներն են սպասարկում գոնե մինչև ժամը 22:00-ն<sup>646</sup>: Մեկ այլ բողոքով Երևան քաղաքի Ծարավ Աղբյուրի փողոցի նորակառույց թաղամասի բնակիչները հայտնել են, որ թաղամասը սպասարկում են միայն մեկ երթուղու ավտոբուսներ, որոնք մասամբ են ապահովում բնակիչների տեղաշարժը: Մասնավորապես, թաղամասի բնակիչները նշված երթուղու ավտոբուսներով չեն կարողանում հասնել Ավան վարչական շրջան և այնտեղ գտնվող պոլիկլինիկա, դպրոց, մանկապարտեզ և այլ հաստատություններ: Նշել են, որ հանրային տրանսպորտի այլ երթուղիների բացակայության պատճառով թաղամասում բնակվող երեխաները ստիպված են հաճախել Կենտրոն վարչական շրջանում գործող դպրոցներ և մանկապարտեզներ: Երևանի քաղաքապետարանից պարզաբանվել է, որ Երևան քաղաքի հանրային տրանսպորտի բարեփոխումների շրջանակներում ընթացիկ տարում մայրաքաղաք է ներկրվելու փոքր և միջին դասի քաղաքային ավտոբուսներ, ինչը հնարավորություն կտա մասնակիորեն վերանայելու գործող երթուղային ցանցը և բարելավելու առանձին թաղամասերի տրանսպորտային սպասարկման վիճակը: Այդ գործընթացի ընդհանուր համատեքստում կոփտարկվի նաև Ծարավ Աղբյուրի փողոցին հարակից՝ խնդրո առարկա թաղամասում տարբեր ուղղություններով երթուղիների գործարկման հնարավորությունը: Ընթացիկ տարում նշված համակարգային խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկված միջոցների կապակցությամբ Երևանի քաղաքապետարանը պարզաբանել է, որ Երևան քաղաքի հասարակական ուղևորատար տրանսպորտի բարեփոխումների ամբողջ ծրագիրը (դրա շրջանակներում նոր երթուղային ցանցի ներդրման աշխատանքները) նախատեսվում է իրականացնել 2-4 տարվա ընթացքում: Հանրային ուղևորատար տրանսպորտի որակի և վատ աշխատանքի խնդիրն առկա է նաև հանրապետության այլ մարզերի համայնքներում: Այսպես, ըստ հրապարակված տեղեկության՝ Արարատի մարզի Հովտաշատ գյուղի բնակիչը կորցրել է աշխատանքը մարզային թիվ 487 միկրոավտոբուսների նախատեսված չվացուցակից շեղումների պատճառով: Միկրոավտոբուսի մշտական ուշացումների պատճառով նա ամիսներ շարունակ

<sup>646</sup> Հասանելի է՝ <https://armtimes.com/hy/article/226397> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

գործազուրկ է եղել: Այժմ այլ աշխատավայրում ունի աշխատանք, սակայն չուշանալու համար տանից դուրս է գալիս առավոտյան 9-ին ու ստիպված է մեկ ժամ անցկացնել դրսում՝ սպասելով տրանսպորտին հարևան գյուղում: Ըստ տեղեկության՝ թիվ 487 միջմարզային երթուղու միկրոավտոբուսները չեն պահպանում չվացուցակով նախատեսված պայմանները: Ջրառատ-Հովտաշատ-Երևան միջմարզային երթուղին սպասարկում է 8 համայնքների բնակիչների: Ուղևորները շարունակ բողոքում են միկրոավտոբուսների երթևեկությունից՝ մշտական ուշացումներ, վարորդների վատ վարքագիծ, միկրոավտոբուսի ոչ սարքին վիճակ և այլն<sup>647</sup>:

Հանրային ուղևորատար տրանսպորտի կարևոր խնդիրներից է մետրոպոլիտենի արդիականացման հարցը: Ցանցի ծածկույթը սահմանափակ է, ինչի հետևանքով մետրոպոլիտենը երթևեկության զգալի մասը զիջում է վերգետնյա ուղևորատար տրանսպորտին: Ընթացիկ տարում մետրոպոլիտենի հավաքակայանը համալրվել է ամբողջությամբ հիմնանորոգված և արդիականացված 3 վագոններով, ինչը շատ կարևոր է ուղևորահոսքի աճին զուգընթաց հանրային ուղևորատար տրանսպորտի նշված տեսակով առավել արագ և հարմարավետ ուղևորափոխադրման կազմակերպումն ապահովելու համար: Մետրոպոլիտենը բնապահպանության տեսակետից ևս հարմար ու մատչելի հանրային տրանսպորտի տեսակ է, որը համարվում է Երևանի քաղաքային տրանսպորտի համակարգի ողնաշարը, ուստի անհրաժեշտ է գործուն քայլեր ձեռնարկել այն անընդհատ արդիականացնելու, վերազինելու և մետրոպոլիտենի աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է՝*

1. բարձրացնել հասարակական տրանսպորտի սպասարկման որակը՝ սահմանելով վերահսկողության մեխանիզմներ հանրային ուղևորատար տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների մատուցած ծառայությունների որակի նկատմամբ,

2. միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի (երթուղային ցանցի) բարեփոխման ծրագիրն առավել սեղմ ժամկետում իրականացնելու ուղղությամբ,

3. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխման ծրագիրն իրականացնելիս առաջին հերթին նոր շարժակազմով ապահովել այն վարչական շրջանները, որտեղ առավել ակնառու է խնդրի կարգավորման անհրաժեշտությունը,

4. պարզաճ վերահսկողություն իրականացնել հանրային ուղևորատար տրանսպորտում հակահամաճարակային կանոնները պահպանելու ուղղությամբ:

5. Երևան քաղաքը բեռնաթափելու նպատակով պարբերաբար միջոցներ ձեռնարկել Երևանի մետրոպոլիտենը արդիականացնելու, վերազինելու և մետրոպոլիտենի աշխատանքն առավել արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ,

6. միջոցներ ձեռնարկել հանրապետության բոլոր մարզերում հասարակական տրանսպորտի որակի բարելավման և պարզաճ սպասարկումն ապահովելու ուղղությամբ:

<sup>647</sup> Հասանելի է՝ <https://factor.am/443817.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 2-ի դրությամբ:

### ԲԱԺԻՆ 13. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

Ժողովրդավարական պետությունները հաճախ են կանգնած լինում երկատման (դիֆստոմիայի) առաջ՝ խելամտորեն որոշելու այն սահմանագիծը, որն անցնում է երկրի անվտանգության ապահովման կարիքի և մարդու իրավունքների պաշտպանության անհրաժեշտության միջև: Իրականում խնդրի լուծումը շատ պարզ է, եթե դրան մոտենում ենք ճիշտ դիտանկյունից և մերժում ենք այն կարծրատիպը, թե մարդու իրավունքները, և ժողովրդավարությունն ընդհանրապես, հակադրվում են պաշտպանության ու անվտանգության շահերին:

**Զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման խնդրի լուծմանը Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանը միշտ մոտեցել է այն դիտանկյունից, որ անվտանգությունը չի հակադրվում մարդու իրավունքներին: Ավելին՝ դրանք համարժեք երևույթներ ու միմյանց փոխլրացնող արժեքներ են, որոնք կարող են ու պետք է զուգահեռ զարգանան՝ մշտապես լինելով պետության հոգածության ներքո:**

Նաև այս տրամաբանությամբ է, որ զինված ուժերում մարդու իրավունքների ապահովմանն ուղղված գործունեությունը Պաշտպանն իրականացնում երեք հիմնական ուղղություններով՝ (1) աջակցել զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին, ներառյալ՝ վեր հանելով նրանց հուզող խնդիրներն ու առաջարկելով դրանց համար լուծումներ, (2) աջակցել պետությանը, կոնկրետ դեպքում զինված ուժերին՝ նպաստելով զինված ուժերի բոլոր անդամների իրավունքների պաշտպանությանը (protection) և խթանմանը (promotion), (3) վերահսկել պետական մարմիններին՝ երաշխավորելու համար իրավունքի գերակայության սկզբունքի անվերապահ ապահովումը:

Սա ունի թե՛ միջազգային իրավական չափանիշներով, և թե՛ սահմանադրական պահանջներով ամրագրված հենք:

Հայաստանի Սահմանադրության 14-րդ հոդվածը հոչակում է, որ Զինված ուժերն «ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը»: Այս դրույթը փոխլրացվում է սահմանադրական մեկ այլ պահանջով՝ «զինված ուժերը... քաղաքացիական վերահսկողության ներքո են»<sup>648</sup>:

Իրավունքի գերակայության և Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկման մեխանիզմների անհրաժեշտությունն ընդգծված չէ միայն սահմանադրական մակարդակում: Այն ամրագրված է օրենսդրական հարթություններում նույնպես, որտեղ հստակ է, որ Հանրապետության պաշտպանությունը ենթակա է կազմակերպման ու իրականացման, ի թիվս այլնի, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա<sup>649</sup>: Ավելին՝ 2020 թվականի հուլիսին Անվտանգության

<sup>648</sup> ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր:

<sup>649</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված:

խորհրդի նիստում հավանության արժանացած Ազգային անվտանգության ռազմավարությամբ էլ Հայաստանի հիմնարար ազգային շահ է դիտվում նաև ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը:

**Մարդու իրավունքների պաշտպանը մեկ անգամ էլ ընդգծում է, որ ժողովրդավարական պետությունը, և առավելապես Հայաստանն այսօր, իր անվտանգության ապահովման հիմնարար գործոն պետք է համարի մարդու իրավունքների ու նրա օրինական շահերի հուսալի պաշտպանությունը՝ մշտապես կատարելագործելով պաշտպանական ներպետական մեխանիզմները:**

Ճիշտ է՝ վերջին ժամանակներում շատերը մտածում են, որ մարդու իրավունքների վրա ուշադրության ակցենտավորումը ոչ այլ ինչ է, քան անվտանգության ապահովմանն իրական խոչընդոտ. իսկ 2020 թվականին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում հակառակորդի վայրագությունների հանդեպ մարդու իրավունքների ոլորտի կառույցների անտարբերությունը է՛լ ավելի խորացրեց նման պատկերացումը<sup>650</sup>: Իհարկե, դրա մեջ կա որոշակի և՛ հիմք, և՛ տրամաբանություն, բայց ընդունելի չէ, և նույնիսկ վտանգավոր է կարծրատիպային նման մոտեցմամբ ձգտել երկրի և առհասարակ զինված ուժերի զարգացման: Դա որևէ տեղ չտանող ճանապարհ է:

Այստեղ տեղին է մեջբերել ՄԱԿ-ի երկար տարիների գլխավոր քարտուղարի խոսքերը՝ «Մենք չենք վայելի անվտանգությունն առանց զարգացման, մենք չենք վայելի զարգացումն առանց անվտանգության, և մենք կզրկվենք երկուսից էլ, եթե չհարգենք մարդու իրավունքները»:

**Որպես վերը նշված դիտարկման ամփոփում՝ Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ ինչպես միջազգային հանրությունն ու մարդու իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունները, այնպես էլ պետական մարմինները պարտավոր են իրենց վարքագծով և հետևողական քայլերով կոտրել մարդկանց մոտ կարծրացած նման համոզմունքը և հստակ ցույց տալ, որ առանց զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության, առանց զինված ուժերում իրավունքի գերակայության երաշխավորման՝ հնարավոր չէ ապահովել երկրի անվտանգությունը:**

Սույն տարեկան հաղորդման մեջ արտացոլված են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող և ոլորտում առկա տարբեր հարցեր, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների, ինչպես նաև զինապարտության փուլերում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ կապված խնդիրներ:

<sup>650</sup> Հատկանշական է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը միջազգային հանրությունից և հատկապես մարդու իրավունքների հարցերով զբաղվող միջազգային կազմակերպություններից պահանջել է կոնկրետ քայլեր ձեռնարկել ադրբեջանական ագրեսիան կանխելու, Ադրբեջանի կատարած պատերազմական հանցագործությունները դատապարտելու ուղղությամբ: Հատուկ ընդգծվել է՝ ժամանակն է ապացուցելու, որ ամենաբարձր մակարդակով հայտարարվող՝ «**Որևէ մեկը չպետք է դուրս լինի եզրագծից, ու որևէ իրավունք չպետք է անտեսվի**» սկզբունքը ոչ թե գեղեցիկ արտահայտություն է ու պատրանք, այլ իրական կյանքում իրական մարդուն պաշտպանող սկզբունք:

Նախորդ տարիների նման՝ այս անգամ էլ խնդիրները վեր են հանվել երեք հարթություններում՝ նախքան զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և ծառայությունից հետո: Վերլուծությունները չեն սահմանափակվում միայն զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության հարցերով, այլ ընդգրկում են ավելի լայն շրջանակ՝ ներառելով նաև համակարգային խնդիրները:

Ուսումնասիրություններն արվել են, և խնդիրները վեր են հանվել Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքների և ահազանգերի, զինվորական հաստատություններ չհայտարարված այցերի, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների և հասարակական կազմակերպությունների՝ զինապարտների իրավունքների պաշտպանությանն առնչվող հրապարակումների հիման վրա:

Նկատի ունենալով անվտանգության ոլորտի կարևորությունը և դրանում առկա խնդիրներին պատշաճ ու հրատապ արձագանքելու անհրաժեշտությունը՝ Պաշտպանը չի սահմանափակվել հիմնական խնդիրների մատնանշմամբ, այլ ներկայացրել է նաև լուծմանն ուղղված կոնկրետ առաջարկներ:

**Տարեկան հաղորդման սույն բաժինն առանձնանում է նաև մեկ այլ կարևոր մասով. հատուկ ուշադրություն է դարձվել ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակներում Պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության դերի ընդգծմանը:**

**ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության անկախ մեխանիզմ**

Ինչպես միջազգային մի շարք փաստաթղթերով, այնպես էլ ներպետական սահմանադրական մակարդակում ամրագրված է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական (քաղաքացիական) վերահսկողության ապահովման կարևորությունն ու անհրաժեշտությունը:

Հայաստանի Սահմանադրության համաձայն՝ զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Սա ենթադրում է, որ երկրում, ի թիվս այլնի, պետք է ձևավորված լինեն և անընդհատ կատարելագործվեն այն մեխանիզմները, որոնք արդյունավետ են դարձնում զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը ու խթանումը:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) շրջանակներում 1994 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններով» ամրագրվել է, որ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական (քաղաքացիական) վերահսկողությունը կայունության և անվտանգության անբաժանելի մասն է: Նաև ընդգծվել է, որ քաղաքացիական հասարակությանը զինված ուժերի ինտեգրումը ոչ այլ ինչ է, քան ժողովրդավարության կարևորագույն դրսևորում<sup>651</sup>:

Վարքագծի այդ կանոններն ամրագրում են հիմնական սկզբունքներ<sup>652</sup>, որոնցում ընդգծված է «*համազգեստով քաղաքացի*» գաղափարը: Այս գաղափարի կամ հայեցակարգի էությունն այն է, որ յուրաքանչյուր պետությունում միջազգային իրավական նորմերի լույսի ներքո պետք է ապահովվի զինձառայողների՝ մյուս քաղաքացիների հետ հավասար և նույն իրավունքներն ունենալու հնարավորությունը: Այն մշտապես զուգակցվում է զինված ուժերի նկատմամբ *քաղաքացիական վերահսկողության* սկզբունքի հետ, իսկ վերջինիս ամրապնդման և երաշխավորման գործում իր յուրահատուկ դերն ունեն Մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները:

Ասվածը հատկապես արտահայտված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության մեջ՝ նկատի ունենալով յուրաքանչյուր անձի՝ Պաշտպանի աջակցությունը ստանալու սահմանադրական իրավունքը և սահմանադրական օրենքով Պաշտպանին վերապահված լիազորությունների շրջանակը:

Զինված ուժերի անձնակազմի համար կարևոր է, որ նրանք ծառայության ընթացքում իրենց խախտված իրավունքները վերականգնելու նպատակով ունենան անկախ մարմիններին բողոք

<sup>651</sup> Տե՛ս Անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտների վերաբերյալ վարքագծի կանոններ, կետ 20, <http://www.osce.org/fsc/41355>:

<sup>652</sup> Այս մասին նաև՝ 2017 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 266:



ներկայացնելու հնարավորություն: Ավելին՝ յուրաքանչյուր զինծառայող ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, ընդ որում՝ այդ մարմինը կարող է դատական չլինել, սակայն պետությունն, ըստ էության, պետք է ապահովի այն նույն երաշխիքները, որով օժտված են դատական մարմինները՝ իրավական պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար<sup>653</sup>:

Չնայած զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերի գոյությանը՝ զինվորական աստիճանակարգության վերահսկողության ներքո չգտնվող անկախ օմբուդսմանի ինստիտուտների նպատակն է քննության առնել զինված ուժերում ոչ պատշաճ վարքագծի դրսևորումների վերաբերյալ գանգատները, ինչպես նաև զինվորական քաղաքականության բացերը և զինված ուժերի համակարգային հիմնախնդիրները: Ավելորդ չէ ևս մեկ անգամ նշել, օմբուդսմանի դերը կարևորվում է մի քանի առումներով՝

1) նրա անկախ վերահսկողությունը բարձրացնում է վստահությունը զինված ուժերի նկատմամբ՝ վարչարարության գործընթացում ավելի մեծ թափանցիկություն ստեղծելով և չվնասելով ենթակայության աստիճանակարգը:

2) որպես վերահսկող անկախ մարմին՝ խթանում է զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը:

3) զինված ուժերում ուժեղացնում է պատշաճ կառավարման, քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքները:

4) զինծառայողներին պաշտպանում է նրանց իրավունքների խախտումներից, չարաշահումներից և անարդարացի որոշումներից:

5) զինվորական հրամանատարներին օգնում է հասնել ներքին բարեփոխումների և կատարելագործել զինված ուժերի ներքին ծառայությունը:

Արդյունքում, օմբուդսմանը դրական ներգործություն է ունենում զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու և զորքերի մարտական համախմբվածության վրա:

**2015 թվականի սահմանադրական բարեփոխումների արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես ինքնուրույն գործառույթներ իրականացնող և անկախ սահմանադրական ինստիտուտ, ըստ էության, դարձել է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության միակ հաստատությունը, որն ունի իրավապաշտպան բնույթի վերահսկողական սահմանադրական ընդհանուր մանդատ:** 2016 թվականին ընդունվեց «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը, որի շնորհիվ էլ ավելի ամրապնդվեց Մարդու իրավունքների պաշտպանի՝ զինված ուժերում անձանց իրավունքների ապահովման գործիքակազմը:

**Պաշտպանի առաջնահերթություններից է զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ՝ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների**

<sup>653</sup> Չինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագիր, բաժին «ԻԲ»:

**իրավունքների ապահովումը:** Այդ պաշտպանության համար Պաշտպանն ունի մասնագիտացված և անհրաժեշտ ու բավարար կարողություններ՝ հետևելու զինված ուժերում իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների ապահովմանը:

Դեռևս 2016 թվականին հունիսին Պաշտպանի աշխատակազմում ստեղծվեց Քրեադատավարական և զինձառայողների իրավունքների պաշտպանության վարչությունը, իսկ 2017 թվականի հունիսին՝ **Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, որը մասնագիտական ստորաբաժանում է և գործում է նույն թվականի մայիսին ստեղծված՝ Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի կազմում:** Բաժնի գործունեությունը համակարգում է Դեպարտամենտի ղեկավարը:

Առանձին բաժնի ստեղծումը պայմանավորված էր ինչպես Պաշտպանին հասցեագրվող բողոքների շարունակական աճով, այնպես էլ համակարգային ուսումնասիրությունների և ոլորտում առկա օրենսդրական խնդիրները լուծելու համար առաջարկություններ ներկայացնելու պահանջով: Բաժինը զբաղվում է քաղաքացիների զինապարտությանն առնչվող իրավունքների պաշտպանությամբ բոլոր փուլերում (զինվորական հաշվառում և զորակոչ, զինվորական ձառայության բուն ընթացք, պահեստազոր): Հատկապես 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում և դրանից հետո Պաշտպանի աշխատակազմի մասնագիտական ստորաբաժանման աշխատանքի ծավալը է՛լ ավելի ընդլայնվեց՝ ներառելով նաև պատերազմական իրավիճակներում զինված ուժերի անդամների իրավունքների պաշտպանության, պետության աջակցության, ինչպես նաև ռազմական ակտիվ գործողությունների ավարտից հետո առաջացող խնդիրների հետ կապված հարցերը:

Ոլորտում Պաշտպանին **աջակցող մյուս մարմինը Պաշտպանին առընթեր գործող՝ Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհուրդն է:** Խորհրդում ընդգրկված են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և հոգեբանության, սոցիոլոգիայի ոլորտի անկախ մասնագետներ, ինչպես նաև Արցախի հերոս, կապիտան Արմենակ Ուրֆանյանի մայրը: Չնայած 2020 թվականի ընթացքում արտակարգ, իսկ այնուհետև՝ ռազմական դրության ռեժիմներին՝ զինձառայողների իրավունքների պաշտպանության ոլորտում Պաշտպանի գործունեությանն աջակցելու նպատակով շարունակվել են կազմակերպվել խորհրդի նիստեր, որոնց ընթացքում իրականացվել են զինձառայողների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանն ուղղված թիրախային ուսումնասիրություններ և վերլուծություններ, վեր են հանվել համակարգային խնդիրներ և դրանց հիման վրա մշակվել են համապատասխան առաջարկություններ:

Խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովող կարևոր գործոն է նաև այն, որ դրան մասնակցում են քաղաքացիական հասարակության և Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչներ: Խորհուրդը լայն հնարավորություն է տալիս քաղաքացիական հասարակության և իրավասու պետական կառույցների ներգրավմամբ կազմակերպելու

մասնագիտական քննարկումներ՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող բազմաթիվ կարևորագույն հարցերի շուրջ<sup>654</sup>:

**Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունն իրականացվում է 3 գլխավոր ուղղություններով՝ 1) մինչև զինվորական ծառայության անցնելը զինապարտների իրավունքների պաշտպանություն, 2) զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների իրավունքների պաշտպանություն, 3) զինվորական ծառայության ավարտից հետո նախկին զինծառայողների իրավունքների պաշտպանություն: Միաժամանակ, Պաշտպանի ուշադրության կենտրոնում են ոչ միայն զինապարտների, այլ նաև նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանությունը:**

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում, ի թիվս այլ ուղղությունների, շարունակվել են բազմաշերտ աշխատանքներ իրականացվել նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի և 44-օրյա ռազմական գործողությունների հետևանքով զինված ուժերի առջև ծառայած խնդիրների ու մարտահրավերների լուծման ուղղությամբ:

Արտակարգ իրավիճակներում Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ազգային հաստատություններն ունեն կարևոր դերակատարություն: Դա բխում է նաև Փարիզյան սկզբունքների հետագա զարգացման տրամաբանությունից: Մարդու իրավունքների պաշտպանի (օմբուդսմանական) հաստատությունների դերը դժվար է գերազնահատել կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում, որի ժամանակ այդ կառույցները՝ որպես պետական անկախ մարմիններ, չպետք է անմասն մնան առաջ եկող նոր մարտահրավերների դիմակայման ընդհանուր

---

<sup>654</sup> Խորհրդի նիստում բարձրացվում են պաշտպանության և անվտանգության ոլորտում առկա խնդիրներ, դրանք համատեղ քննարկվում են, և առաջարկվում խնդրի լուծման տարբերակներ: Արդյունքում, այդ առաջարկները Պաշտպանի աշխատակազմում ամփոփվում և ըստ անհրաժեշտության ներկայացվում են իրավասու գերատեսչություններին: Օրինակ, 2021 թվականի ապրիլի 29-ին տեղի է ունեցել Պաշտպանին առընթեր Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի հերթական նիստ: Այն անցկացվել է ընդլայնված կազմով, որին խորհրդի անդամներից բացի մասնակցել են նաև զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, Փաստաբանների պալատի ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ: Նիստի բացման խոսքում՝ Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը հատուկ ընդգծել է, որ մարդու իրավունքներին առնչվող խնդիրների արդյունավետ լուծման համար, առավել ևս, եթե դրանք վերաբերում են զինված ուժերին էական է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների դերը: Հանդիպման ընթացքում ներկայացվել են Կորոնավիրուսային (Covid-19) համավարակի և 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում, ինչպես նաև դրանից հետո զորքերում մարդու իրավունքների ապահովմանն առնչվող մի շարք խնդիրներ, որոնք վեր են հանվել Պաշտպանի աշխատակազմ ստացված բողոքների, ահազանգերի և զորամասեր մոնիթորինգային այցերի ժամանակ: Քննարկվել են զորահավաքային զորակոչի և զորահավաքային ծառայության ընթացքում քաղաքացիների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների, ներառյալ՝ առողջական ու սոցիալական բնույթի խնդիրներ: Առանձին անդրադարձ է կատարվել Պաշտպանին առընթեր «Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով» փորձագիտական խորհրդի նիստերին խորհրդի անդամների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների բարձրացրած հարցերին: (հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1660> հղումով):

գործընթացում: Հատկապես դրանով է պայմանավորված Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնողական (պրոակտիվ) գործունեությունը ինչպես ակտիվ ռազմական գործողությունների ընթացքում, այնպես էլ դրանից հետո՝ առ այսօր:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատություն, ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակներում իրականացնում է և ունի աշխատանքի 3 հիմնական ուղղություն.

**1) օգնություն քաղաքացուն** (փորձը ցույց է տվել, որ իրավիճակով պայմանավորված՝ սահմանափակումները օբյեկտիվորեն փոփոխվում են շատ արագ, ինչի պայմաններում քաղաքացիների շրջանում առաջանում է իրազեկվածության պակաս, հետևաբար, մարդու իրավունքների ազգային հաստատությունների ստանձնած դերերից մեկը պետք է լինի նաև քաղաքացիներին առկա սահմանափակումների վերաբերյալ իրազեկումը, նրանց օգնությունը՝ հասկանալու սահմանափակման բնույթը, նշանակությունը, կարգը և այլն),

**2) օգնություն պետությանը** (հնարավորին սեղմ ժամկետում դուրս գալ ստեղծված իրավիճակից, իրականացնել իրազեկման աշխատանքներ, հանդես գալ կոչերով, հայտարարություններով և այլն),

**3) պետության նկատմամբ վերահսկողություն:**

Այս առումով կարևոր է ընդգծել, որ բոլոր ժամանակներում ու հատկապես արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող բոլոր այն հարցերը, որոնք հանդիպում են զինված ուժերում, եղել են և շարունակելու են մնալ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի առաջնահերթություններից:

**2. Հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության հետ զինված ուժերում մարդու իրավունքների հարցերով համագործակցությունը**

2021 թվականի ընթացքում է՛լ ավելի է ակտիվացել համագործակցությունը պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների, զանգվածային լրատվամիջոցների, բանակում մարդու իրավունքների հարցերով զբաղվող այլ հանրային կառույցների հետ: **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հստակ դիրքորոշմամբ՝ մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունները գործում են որպես կամուրջ քաղաքացիական հասարակության և պետության միջև՝ կապելով պետությունների պարտականությունները քաղաքացիների իրավունքների հետ**<sup>655</sup>:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերում ակտիվ համագործակցել է ՀՀ պաշտպանության նախարարության և Զինված ուժերի գլխավոր շտաբի, ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ քննչական կոմիտեի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և մի շարք այլ մարմինների հետ: Ընդ որում, որպես պետական մարմինների հետ համագործակցության լավագույն և հաջողված

<sup>655</sup> <https://www.osce.org/odhr/national-human-rights-institutions>:

օրինակ, առանձնացման ենթակա է Պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի առանձին ստորաբաժանումների հետ ձևավորված արդյունավետ համագործակցությունը, որը, իհարկե, դրականորեն է անդրադարձել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության և խթանման վրա: Հատկապես կարևորվում է ՀՀ պաշտպանության նախարարության և ԶՈՒ գլխավոր շտաբի մի շարք կառույցների, այդ թվում՝ Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի, զինկոմիսարիատների, ռազմաբժշկական վարչության, ռազմաբժշկական հանձնաժողովների, հոսպիտալների պատրաստակամությունը Պաշտպանի աշխատակազմի հետ գործուն համագործակցության առումով: **Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում պետք է ողջունելի համարել Պաշտպանության նախարարության Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի գործունեությունը, որը ներառում է նաև Պաշտպանության նախարարության թեժ գծի աշխատանքի համակարգումը: Պաշտպանն ընդգծել է, որ այդ ստորաբաժանման հրապարակային գործունեությունը միայն օգտակար կլինի թե՛ նրա գործունեության տեսանելիության, և թե՛ նրա ազդեցության բարձրացման, իսկ դրա հետևանքով հավելյալ երաշխիք կստեղծվի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համար: Այս առումով, ողջունելի է Մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի կատարած աշխատանքի վերաբերյալ հաշվետվության ներկայացումը նաև հրապարակային<sup>656</sup>: Այն առավել տեսանելի է դարձրել կատարված աշխատանքը:**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները շարունակել են չհայտարարված այցեր իրականացնել նաև կայազորային զինվորական հոսպիտալներ, որտեղ Պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակներում ուսումնասիրվել են զինծառայողների բուժման ընթացքը, արդյունքները և զինծառայողների բժշկական փաստաթղթերը, տեղի են ունեցել քննարկումներ հոսպիտալների հրամանատարական կազմի հետ: Պաշտպանի ներկայացուցիչները մշտապես համագործակցել են Կենտրոնական բժշկական և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների հետ, ստացված բողոքների շրջանակներում համատեղ քննարկվել են զինապարտ քաղաքացիների առողջական վիճակին առնչվող հարցերը: Պաշտպանության նախարարության հետ համատեղ քննարկումների արդյունքում նշանակվել են առողջական վիճակի

---

<sup>656</sup> Ըստ Պաշտպանության նախարարությունից ներկայացված տեղեկությունների՝ 2021 թվականի ընթացքում Պաշտպանության նախարարության թեժ գծով ստացված զանգերի վերաբերյալ տարեկան հաշվետվությունը հրապարակված է Նախարարության պաշտոնական կայքում հետևյալ հղմամբ՝ <https://cutt.ly/1PuOTLH>: Զինծառայողների իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ամենօրյա աշխատանքային ռեժիմով համագործակցություն է իրականացվում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Վարչապետի աշխատակազմի և ՀՀ կառավարությունում գործող 117 թեժ գծի հետ: Պաշտպանության նախարարության թեժ գծով ստացված զանգերի վերաբերյալ յուրաքանչյուր շաբաթ տեղեկանք է ներկայացվում Պաշտպանության նախարարին, որտեղ նշված է ստացված բողոքի բովանդակությունը, թեժ գծի աշխատակիցների կողմից իրականացրած գործողությունները, ձեռնարկած միջոցները տվյալ խնդրի լուծման ուղղությամբ:

կրկնակի փորձաքննություններ, զորակոչիկները ստացել են տարկետման իրավունք, զինծառայողներն ուղեգրվել են զինվորական հոսպիտալներ և ստացել համապատասխան բուժում:

**Դրականի հետ մեկտեղ՝ կան հարցեր, որոնք շարունակում են մնալ չլուծված: Խոսքը մեծապես վերաբերում է Պաշտպանի նախորդ զեկույցներում կամ իրավունքների ու ազատությունների խախտում արձանագրող Պաշտպանի որոշումներում տեղ գտած առանձին առաջարկությունների չկատարմանը: Սա խնդրահարույց է դառնում, երբ խոսքը ոչ միայն համակարգային խնդիր վերահանող առաջարկությունների կատարման, այլ պարզ կարգավորում ենթադրող խնդիրների լուծման մասին է: 2021 թվականին պետական տարբեր մարմինների հրավերով Պաշտպանի աշխատակազմի Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ներկայացուցիչները ներգրավել են մի քանի օրենքների և կառավարության որոշումների (բժշկական օգնության, բնակարանային պայմանների բարելավման և այլ թեմաներով) նախագծերի վերաբերյալ քննարկումների: Բացի դրանից, Պաշտպանի աշխատակազմի և Պաշտպանության նախարարության մի շարք ստորաբաժանումների միջև տեղի են ունեցել քննարկումներ՝ փոխգործակցության, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության որոշ խնդիրների կապակցությամբ: Քննարկվել են խնդիրների լուծման կոնկրետ ուղիները, ինչպես նաև հստակեցվել են Պաշտպանության նախարարության և ԶՈՒ Գլխավոր շտաբի ստորաբաժանումների հետ հետագա համագործակցության ուղղությունները: Կարևորվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար նման քննարկումները, որոնք նպաստում են խնդիրների կապակցությամբ արագ լուծումներ գտնելուն:**

Դրական արդյունքներ է տվել նաև պետական մյուս կառույցների հետ համագործակցությունը: Օրինակ՝ վարժական հավաքների ներգրավված ուսանողների կրթության իրավունքի ապահովման հարցերի առնչությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցության արդյունքում բարձրացված խնդիրները ստացել են լուծում:

Կարևոր է նաև համագործակցությունը ՀՀ ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովների հետ: 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանումը մշակել և հրապարակել է արտահերթ հրապարակային զեկույց զինծառայողներին և նրանց ընտանիքներին արտոնություններ տրամադրելու վերաբերյալ (առաջարկներ), նշված առաջարկների կապակցությամբ նաև մշակվել է օրենսդրական փոփոխությունների նախագիծ, որն ուղարկվել է Ազգային ժողով:

Բացի դրանից, 2021 թվականին զինծառայողների իրավունքների ապահովմանը վերաբերող մի շարք հարցերի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանն Ազգային ժողով է հասցեագրել գրություններ՝ ներկայացնելով ոլորտային տարբեր խնդիրներ և դրանց լուծման առաջարկներ (այդ թվում՝ զինապարտ քաղաքացիների բուժօգնության, զինծառայողների առողջական վիճակի, բնակարանային ապահովության և այլ հարցերի կապակցությամբ): Կոնկրետ առաջարկներով գրություններ են ուղարկվել նաև ՀՀ և իրավասու պետական մարմիններին:

Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից հատուկ կարևորություն ունի համագործակցությունը փաստաբանների հետ, ինչը կրում է պարբերական և մասնագիտական բնույթ: Իրենց վստահորդներ հանդիսացող զինձառայողների իրավունքների համատեղ պաշտպանությունը դարձել է ամենօրյա աշխատանքի բաղկացուցիչ մասը:

Լինելով կամուրջ հանրային մարմինների և քաղաքացիական հասարակության միջև՝ **Մարդու իրավունքների պաշտպանի համար կարևոր է միասնական հարթակ ստեղծել բանակում առկա խնդիրները վեր հանելու, դրանք քննարկելու և անհրաժեշտ լուծումներ գտնելու ուղղությամբ:** Այստեղ կարևոր է հասարակական կազմակերպությունների կարողությունների զարգացումը, որը հնարավորություն կտա արդյունավետ և պրոֆեսիոնալ կերպով իրականացնել ոլորտի մշտադիտարկումն ու առկա թերությունների մասին իրազեկումը: 2021 թվականի ընթացքում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի են ունեցել զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործնական և համակարգային խնդիրներին նվիրված մի շարք քննարկումներ, որոնց ընթացքում մտքերի փոխանակումներ են արվել որոշակի համակարգային հարցերի շուրջ: Այդ համագործակցությունն ապահովվել է նաև ԵԱՀԿ աջակցությամբ և Ազգային ժողովի պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովին կից գործող՝ Անվտանգության ոլորտի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ազգային հարթակի աշխատանքների շրջանակներում կազմակերպված մի քանի քննարկումների միջոցով:

Հանրապետությունում հայտարարված արտակարգ և ռազմական դրությունը էլ ավելի ընդգծեցին զինված ուժերի և ընդհանրապես անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, և մասնավորապես՝ խորհրդարանական վերահսկողության կարևորությունը: Պաշտպանը գտնում է, որ խորհրդարանական վերահսկողությունը նվազագույնի է հասցնում պետության սխալների ռիսկերը, ուստի անհրաժեշտ է, որ հատկապես խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանը պրոակտիվ քաղաքականություն ցուցաբերի ոլորտի խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ:

Պաշտպանի համար նաև խիստ կարևոր է սեփական գործունեության հրապարակայնությունը, ինչպես նաև իրավապաշտպան գործունեություն իրականացնողների աշխատանքի տեսանելի լինելը:

### **3. Միջազգային համագործակցությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում**

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համար կարևոր է միջազգային մասնագիտացված կառույցների հետ համագործակցության կատարելագործումը: Պաշտպանի առաջնահերթություններից է միջազգային, այդ թվում՝ եվրոպական իրավական չափանիշների կիրարկումը ներպետական զինվորական օրենսդրությունում:

Մարդու իրավունքների իրավական չափանիշների ներդրման գործում, անշուշտ, կարևոր է եղել «Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանի զինված ուժերում» Եվրոպայի Խորհրդի ծրագիրը, որին 2019 թվականի մարտին հաջորդել և 2020, 2021 թվականներին շարունակել է «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» ծրագիրը: Վերը նշված ծրագրի հիմնական գործընկերներից է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հանդիպումներ, կլոր-սեղան քննարկումներ, աշխատաժողովներ, որոնք ուղղված են եղել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների զարգացմանը, միաժամանակ, այդ միջոցառումներին ներգրավված են եղել նաև հասարակական կազմակերպությունների և պետական այլ կառույցների ներկայացուցիչներ:

Ծրագրի շրջանակներում 2020 թվականի ընթացքում, ի թիվս այլնի, Պաշտպանության նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ պատրաստվել և հրապարակվել են երեք տեղեկատվական անիմացիոն տեսահոլովակներ՝ զինվորական ծառայության գրավչության, զինվորական կրթության հավասար հնարավորությունների ապահովման և զինծառայողների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների վերաբերյալ<sup>657</sup>: 2021 թվականի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի և Պաշտպանության նախարարության ներկայացուցիչների մասնակցությամբ պատրաստվել և մշակվել է ևս երեք տեսահոլովակ՝ զինված ուժերում կանանց ծառայության հարցերի, ինչպես նաև երկու տեսահոլովակ զինծառայողների սոցիալական երաշխիքների վերաբերյալ<sup>658</sup>: Տեսահոլովակներում հատուկ շեշտադրվում է զինված ուժերում կանանց ներգրավման, առաջխաղացման և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը:

Բացի դրանից, նույն ծրագրի շրջանակում մշակվել է «Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն. Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման իրավական շրջանակ» ձեռնարկը<sup>659</sup>, որը վերաբերում է Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը և կարևոր ու պրակտիկ գործիք է Պաշտպանի կողմից զինծառայողների իրավունքների և ազատությունների, զինված ուժերում կանանց իրավունքների մշտադիտարկման համար: Ձեռնարկում ներառված են մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ինչպես ներպետական օրենսդրական իրավակարգավորումներ, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանների դիրքորոշումներ, այնպես էլ միջազգային իրավական չափանիշներ, ներառյալ՝

<sup>657</sup> Հասանելի են հետևյալ հղումներով՝

<https://www.facebook.com/britishembassyerevan/posts/10157231458540811>,

<https://www.youtube.com/watch?v=5E1Yc8r-gFO>, <https://www.youtube.com/watch?v=XzbVWgNV6MU&t=1519s>:

<sup>658</sup> Հասանելի են հետևյալ հղումներով՝

<https://vimeo.com/637863329>, <https://vimeo.com/637865467>, <https://vimeo.com/656465951>:

<sup>659</sup> <https://bit.ly/2PVGQiy>:



ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ԵԽ-ի փաստաթղթերում և Եվրոպական դատարանի վճիռներում ու որոշումներում տեղ գտած դրույթներ:

Ձեռնարկը կազմված է հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ու զեկույցներում տեղ գտած խնդիրները, ներառում է Պաշտպանի աշխատանքներում մշտապես օգտագործվող ակտերը, ուստի այն ունի նաև պրակտիկ կիրառելիություն: Դրանում ներառված են զինվորական հաշվառումից ու զորակոչի կազմակերպումից մինչև զինված ուժերում կանանց առաջխաղացման և զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական իրավունքներին առնչվող հարցերին վերաբերելի իրավական չափանիշներ:

2021 թվականի մայիսի 20-ին Պաշտպանի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել նաև «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում-փուլ II» ծրագրի ղեկավար հանձնաժողովի հերթական հանդիպումը, քննարկվել են թիրախային համագործակցության որոշ հարցեր:

Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակներում նախատեսված և իրականացվող միջոցառումներից կարևոր է ընդգծել «Համազգեստով քաղաքացի» հեռախոսային հավելվածի մշակումը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել և ներկայացվել է հեռախոսային մի հավելվածի ներդրման առաջարկ, որի գաղափարը տեղեկատվական և ինտերակտիվ հարթակի ստեղծումն է, որում ներառվելու են մինչև զինվորական ծառայությունը, զինվորական ծառայության ընթացքում և դրանից հետո ծագող հարաբերությունները կարգավորող օրենսդրական նորմեր, միջազգային իրավական չափանիշներ, ոլորտում տարբեր մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի և Պաշտպանության նախարարության ձեռնարկած միջոցների, զեկույցների, հրապարակումների վերաբերյալ և մի շարք այլ տեղեկություններ: Միևնույն ժամանակ, հավելվածը հնարավորություն է տալու մեր քաղաքացիներին դրա միջոցով հեշտությամբ դիմել Պաշտպանին և Պաշտպանության նախարարություն: Այսպիսով, նախատեսվում է ստեղծել այնպիսի ճկուն և հարմարավետ գործիք (User friendly), որի օգտագործմամբ մեր քաղաքացիները հեշտությամբ կկարողանան ստանալ զինվորական հարաբերություններին վերաբերող իրենց հարցերի պատասխանները:

2021 թվականին այս գաղափարի իրացման ուղղությամբ ձեռնարկվել են գործուն միջոցներ, մի քանի առցանց քննարկումներ են իրականացվել Եվրոպայի խորհրդի և Պաշտպանության նախարարության գործընկերների հետ, որոնց ընթացքում ձեռք են բերվել հեռախոսային հավելվածի մշակման և գործարկման հետ կապված կոնկրետ համաձայնություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը, որպես 2018 թվականին Յոհաննեսբուրգում, 2019 թվականին Սարանյում կայացած և 2020 թվականին Վիեննայում 10-րդ, 11-րդ, 12-րդ (առցանց) վեհաժողովների շարունակություն, 2021 թվականի հոկտեմբերի 18-ից 22-ը մասնակցել է Զինված ուժերի հարցերով օմբուդսմանական

հաստատությունների միջազգային կոնֆերանսի (ICOAF) տարեկան առցանց վեհաժողովին (հիմնական վայրը՝ Կանբերրա, Ավստրալիա), որին մասնակցել են շուրջ 50 երկրների ներկայացուցիչներ: Հանդիպմանը, ի թիվս այլնի, քննարկվել են զինված ուժերի օպերատիվ գործունեության էֆեկտիվության հարցում օմբուդսմանական հաստատությունների մասնակցությանն առնչվող հարցեր: Համաժողովի մասնակիցներին դեպարտամենտի ղեկավարը ներկայացրել է Հայաստանի ՄԻՊ հաստատության փորձն այդ ոլորտում:

2020 թվականին մեկնարկ տրվեց նաև Եվրոպայի խորհրդի HELP (Human Rights Education for Legal Professionals) հարթակի ներքո մի նոր կրթական դասընթացի, որը մինչ այդ օրինակը չի ունեցել ԵԽ անդամ երկրների շրջանակում: Խոսքը «Մարդու իրավունքները զինված ուժերում» մոդելային դասընթացի մասին է, որի հիմնական գաղափարն առաջ է եկել 2019 թվականի փետրվարին Ստրասբուրգում HELP բաժնի ղեկավար կազմի հետ, իսկ այնուհետ՝ 2020 թվականի սկզբին Երևանում՝ HELP ստորաբաժանման ներկայացուցչի հետ կայացած երկկողմ խորհրդատվությունների շրջանակներում: Այս գաղափարն իրականացվում է ԵԽ «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» ծրագրի հովանու ներքո, որի արդյունքն, անշուշտ, դրական նշանակություն է ունենալու զորքերում իրավագիտակցության բարձրացման և ԶՈՒ անձնակազմի իրավունքների պաշտպանության ու խթանման գործում:

Կարևոր է արձանագրվել, որ 2021 թվականին ավարտվել են միջազգային փորձագետների մասնակցությամբ աշխատանքային խմբի աշխատանքները, որոնց անմիջական մասնակցություն է ունեցել Պաշտպանի աշխատակազմի Քրեական արդարադատության ոլորտում և զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության դեպարտամենտի ղեկավարը՝ որպես աշխատանքային խմբի մենտոր (mentor): «Մարդու իրավունքները զինված ուժերում» մոդելային դասընթացի մշակման աշխատանքներն ավարտվել են, և 2022 թվականին նախատեսվում է տալ դրա մեկնարկը, ինչը կարող է հասանելի և օգտակար լինել Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր 47 երկրների համար:

Անվտանգության ոլորտի վերահսկողության վերաբերյալ միջազգային չափանիշների ներդրման գործում չափազանց կարևոր է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության «Անվտանգության ոլորտի կառավարումը Հայաստանում» ծրագիրը, որի հիմնական շահառուներից է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը: Ծրագրի շրջանակներում 2019 թվականին Պաշտպանի աշխատակազմի (այդ թվում՝ մարզային ստորաբաժանումների) ներկայացուցիչների համար իրականացվել էր դասընթացավարների վերապատրաստման դասընթաց (training of trainers): Ծրագրի շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի համար անգլերենով մշակվել են անվտանգության ոլորտի գործերի վարման մոդելային չափանիշներ և ոլորտին առնչվող մշտադիտարկման մեթոդաբանական ուղեցույցներ (թարգմանվել են նաև հայերենով):

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի համար կարևոր քայլ էր սկիզբ առած գործունեության նոր ուղղությունը, այն է՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե հատուկ դիրքորոշումներ (Rule 9 communications) ներկայացնելը՝ կապված Հայաստանի վերաբերյալ ՄԻԵԴ վճիռների կատարման հետ<sup>660</sup>: Սա բերեց նոր հնարավորություններ Եվրոպայի խորհրդի մասնագիտացված կառույցների, այդ թվում՝ ԵԽ Նախարարների կոմիտեի ՄԻԵԴ վճիռների կատարման դեպարտամենտի հետ համագործակցության համար:

ՄԻԵԴ վճիռների կատարմանը Հայաստանի մարդու իրավունքների ազգային հաստատության մասնակցությունը միջազգային լավագույն փորձի օրինակ է: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից նման դիրքորոշում ներկայացնելը կարևոր նշանակություն ունի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության համակարգի կատարելագործման ու հետագայում նման խախտումները բացառելու գործում: Հատկապես կարևոր է ընդգծել, որ նման գործիքով Պաշտպանն օգտագործում է միջազգային կառուցակարգերի հավելյալ հնարավորությունները (հնարավոր և հասանելի բոլոր գործիքները)՝ զինված ուժերում մարդու իրավունքներին առնչվող համակարգային խնդիրները վեր հանելու, իր առաջարկություններն այլընտրանքային ուղիներով ներկայացնելու և դրանք կատարելուն հետևողականորեն խորամուխ լինելու առումով:

---

<sup>660</sup> Հատկանշական է, որ առաջին անգամ Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ դիրքորոշում ներկայացվեց Ձինված ուժերին առնչվող ՄԻԵԴ վճիռներից մեկով (*Մուրադյանն ընդդեմ Հայաստանի* (Muradyan v. Armenia)): Հատուկ դիրքորոշման մեջ անդրադարձ է կատարվել տվյալ վճռի կատարման համար սկզբունքային մի շարք խնդիրների, ներառյալ՝ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և զինված ուժերի կարգապահության ամրապնդման անհրաժեշտության հարցերին: Այդ ուղղությամբ Պաշտպանի կողմից արվել են կոնկրետ առաջարկներ: Ընդ որում, 2019 թվականի դեկտեմբերի 12-ին ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում կատարված փոփոխություններով հատուկ դիրքորոշման մեջ կարգապահության ամրապնդման ոլորտում Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկները սկզբունքորեն ընդունվել են: Իսկ 2021 թվականի սկզբին շրջանառության մեջ է դրվել նաև Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որի ընդունման դեպքում կիրացվեն նաև Պաշտպանի ներկայացրած այլ առաջարկները:

## ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

### 1. Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 49-րդ կետի համաձայն՝ պոտենցիալ զորակոչիկները պետք է ստանան լիարժեք և մանրամասն տեղեկություններ զորակոչի բոլոր ասպեկտների, զինվորական ծառայությունը սկսելու և զինվորական ծառայություն անցնելու շրջանում ընդգրկված պարտավորությունների առանձնահատուկ բնույթի մասին:

Զինապարտ քաղաքացիների ծանուցման գործընթացի, այդ թվում՝ զորակոչիկների պատշաճ ծանուցված լինելու, զինվորական կոմիսարիատների տրամադրած ծանուցագրերի ձևերի և միատեսակ պրակտիկայի ապահովման տեսանկյունից կարևոր է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշմամբ հաստատվել է «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը»<sup>661</sup>:

Զորակոչիկների իրազեկվածության բարձրացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն 2018 թվականին հրատարակված «Տեղեկատվական գրքույկ զորակոչիկների համար» և «Զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները» տեղեկատվական գրքույկները, որոնք, սակայն, Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքէջում դեռևս չեն հրապարակվել: Դրա անհրաժեշտության մասին նշվել էր նաև Պաշտպանի 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումների մեջ:

Պաշտպանի ինչպես 2019, այնպես էլ 2020 թվականների տարեկան հաղորդումներով ներկայացվել էին զորակոչի ընթացքում ծանուցման գործընթացի հետ կապված խնդիրները, որոնք վեր էին հանվել Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքում:

Մասնավորապես, կոնկրետ օրինակների հաշվառմամբ ներկայացվել և քննարկվել էր հետևյալ խնդիրը. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետը:

Բացի այդ, ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 1132-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 8-րդ կետի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության *զորակոչը հայտարարվելուց հետո* զինվորական կոմիսարիատը

<sup>661</sup> Կարգն ընդունելու անհրաժեշտության հարցը բարձրացվել էր Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ, տե՛ս 2017 թվականի տարեկան հաղորդում, էջ 272:

շարքային կազմի պարտադիր զինվորական զորակոչի ենթակա քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական կոմիսարիատին քաղաքացու տրամադրած էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Կառավարության նշված որոշման կարգավորումներից, սակայն, պարզ չէ, թե ինչ գործողություններ պետք է իրականացնի զինվորական կոմիսարիատը այն դեպքերում, երբ ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնել չի հաջողվել, և բացակայում է նրա էլեկտրոնային հասցեն:

Այսինքն, պարզ չէ, թե նման իրավիճակներում քաղաքացուն ծանուցված համարելու համար հստակ ինչ գործողություններ պետք է իրականացնի զինվորական կոմիսարիատը (օրինակ, ՀՀ քրեական դատավարության, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքերով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով առկա է անձին ծանուցված համարելու նպատակով տարբեր պետական մարմինների կողմից իրականացվող գործողությունների հաջորդականություն):

Ծանուցման խնդիրների հետ կապված Պաշտպանին են դիմել նաև վարժական հավաքների մասնակիցները, օրինակ, նշել, որ Զինված ուժեր ներգրավվելու մասին ծանուցումը ստացել են զորակոչվելուց ընդամենը մի քանի օր առաջ, ինչի պատճառով նրանք չեն հասցրել լուծել իրենց առօրյա հարցերը<sup>662</sup>:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ առանց պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավաքների ներգրավելու վերաբերյալ: Նշված խնդրին մանրամասն անդրադարձ կկատարվի սույն բաժնի վերաբերելի գլխում:

Կարևոր է ընդգծել «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» («Պատիվ ունեմ») և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնած շարքային կազմի պարտադիր զինծառայողի հետ պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին» («Ես եմ») որոշումների առկայությունը: Նշված ծրագրերը մի դեպքում՝ հնարավորություն են տալիս զորակոչիկներին ուսումնառության նպատակով ստանալ տարկետում և ուսումնառությունից հետո ավելի խորը մասնագիտական գիտելիքներով զորակոչվել ծառայության, իսկ մյուս դեպքում՝ ծառայություն անցնել հատուկ պայմաններով, ինչպես նաև ստանալ որոշակի արտոնություններ ծառայության ընթացքում և

<sup>662</sup> Վարժական հավաքների ներգրավված անձանց իրավունքների վիճակի վերաբերյալ մանրամասները ներկայացված են սույն բաժնի վերաբերելի գլխում:

դրանից հետո: Այս ծրագրերի իրականացումն, իհարկե, մեծապես ուղղված է Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայությունն ավելի գրավիչ դարձնելուն և քաղաքացիների մեջ ծառայության անցնելու ցանկությունը բարձրացնելուն:

Այս տեսանկյունից անհրաժեշտ է նշել, որ դեռևս 2020 թվականի ծմեռային զորակոչին ստացվել էր տեղեկություն «Ես եմ» ծրագրի իրականացումը դադարեցվելու վերաբերյալ:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ «Պատիվ ունեմ» ծրագիրը գործում է ամբողջ ծավալով և ծրագրի դադարեցման հարց չի քննարկվում, ավելին, 2021 թվականի ծմեռային զորակոչի ընթացքում թափուր տեղերը լրացնելու նպատակով կազմակերպվել է ծրագրի ընդունելության երկրորդ փուլ: Բացի այդ քննարկվում է ծրագիրը արդիականացնելու և համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը, որի նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով ստեղծվել է աշխատանքային խումբ: «Ես եմ» ծրագրով վերջին չորս զորակոչների ընթացքում դիմողներ չեն եղել, ծրագիրը շարունակում է գործել:

2018 թվականի հունիսի 25-ի ՀՀ պաշտպանության նախարարի 8-Ն հրամանով սահմանված մրցույթները կազմակերպվում են յուրաքանչյուր զորակոչի ընթացքում՝ նախատեսված մասնագետների պահանջարկ առաջանալու դեպքում:

ՀՀ պաշտպանության նախարարության թեժ գիծը 2021 թվականի ընթացքում ստացել է 242 զանգ «Պատիվ ունեմ», իսկ 41 զանգ՝ «Ես եմ» ծրագրերի վերաբերյալ, տեղում քաղաքացիներին ներկայացվել են պարզաբանումներ և տրվել սպառիչ պատասխաններ:

2021 թվականին Պաշտպանության նախարարությունից Պաշտպանի կարծիքին է ներկայացվել Կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկի նախագիծը և հիմնավորումները, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ ներկայացված միջոցառումների հիմնավորումներում չկա անդրադարձ ո՛չ «Ես եմ» ծրագրի շարունակականությանը, ո՛չ այդ ծրագրի դադարեցման պատճառներին:

Նախագծի կապակցությամբ ներկայացված կարծիքով Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ թե՛ Պաշտպանի աշխատակազմում իրականացվող քննարկման վարույթների, թե՛ զորամասեր իրականացվող այցերի, թե՛ առանձին քննարկումների ընթացքում «Ես եմ» ծրագրի կապակցությամբ ստացվել են քաղաքացիների միայն դրական արձագանքներ:

Դրա հետ մեկտեղ, հատկանշական է, որ քաղաքացիները Պաշտպանին հասցեագրվող բողոքների շրջանակներում ներկայացնում են դժգոհություններ այն մասին, որ նման ծրագրերի (այդ թվում՝ «Ես եմ» ծրագրի) վերաբերյալ իրազեկվածության ցածր մակարդակի պատճառով զրկվել են դրանցից օգտվելու հնարավորությունից:

Հետևաբար, ինչպես 2020 թվականի տարեկան հաղորդմամբ, այնպես էլ Պաշտպանության նախարարություն ներկայացված դիրքորոշմամբ Պաշտպանն արձանագրել է, որ «Ես եմ» ծրագրի իրականացման հնարավոր դադարեցումը խորը և համապարփակ հիմնավորման կարիք կունենա, կամ առնվազն անհրաժեշտ է քննարկել այլընտրանքային ծրագրի ներդրման հնարավորությունը:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2021 թվականի ընթացքում Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները զորակոչի նախապատրաստական փուլում զորակոչիկների և նրանց ծնողների շրջանում իրականացնում են Պաշտպանության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի և Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանով սահմանված մրցույթների լուսաբանման աշխատանքներ, իսկ զորակոչի ենթակա բոլոր զորակոչիկները գրավոր իրազեկվում են վերը նշված ծրագրերի և մրցույթների պայմաններին:

Քաղաքացիների իրազեկվածությունը բարձրացնելու, նմանատիպ ծրագրերի առկայության, պայմանների և դիմելու կարգի պարզաբանման ուղղությամբ աշխատանքները, սակայն, պետք է իրականացվեն կցագրման գործընթացն իրականացնելուց սկսած, ինչն էլ ավելի արդյունավետ կդարձնի և կխթանի այդ ծրագրերով ծառայություն անցնելու ցանկություն ունեցող քաղաքացիների թվի բարձրացումը, ինչպես նաև կբացառի որևէ այլ ծրագրով ծառայություն անցնելու նպատակով դիմում ներկայացնելու հնարավորությունից զրկվելու հավանականությունը: Իրազեկվածության բարձրացմանն ուղղված այդպիսի աշխատանքները հնարավոր է իրականացնել ինչպես զինվորական կոմիսարիատների կողմից, այնպես էլ իրազեկման այլ եղանակներով (օրինակ՝ հանրակրթական հաստատությունները «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի շրջանակներում):

*Ուստի, առաջարկվում է՝*

*1. հրատարակված տեղեկատվական նյութերն էլեկտրոնայնացնել և տեղադրել Պաշտպանության նախարարության պաշտոնական կայքում, որի շնորհիվ մինչև զորակոչային տարիքի հասնելը քաղաքացիները կկարողանան իրազեկված լինել զինծառայողների իրավունքներին և պարտականություններին,*

*2. մշակել ծանուցագիրը քաղաքացուն առձեռն հանձնելու անհնարինության, ինչպես նաև էլեկտրոնային հասցե տրամադրված չլինելու դեպքերում՝ քաղաքացուն ծանուցված համարելու նպատակով զինվորական կոմիսարիատի կողմից իրականացվող գործողությունների հաջորդականություն,*

*3. բացառել զորավարժություններին և վարժական հավաքներին կանչելու նպատակով օրենքով սահմանված կարգի խախտմամբ քաղաքացիներին ծանուցելու պրակտիկան,*

*4. բացառել առանց բժշկական հետազոտությունների և փորձաքննությունների քաղաքացիներին վարժական հավաքների ներգրավելու պրակտիկան, յուրաքանչյուր նման միջոցառման պլանավորումն իրականացնել այնպես, որ հետազոտությունները կատարվեն մինչև կոնկրետ միջոցառումները սկսվելը,*

*5. մշակել և իրականացնել զինվորական ծառայության տարբեր ծրագրերով անցնելու հնարավորությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանն ուղղված աշխատանքներ՝ ներգրավելով ինչպես զինվորական կոմիսարիատները, այնպես էլ այլ հաստատությունները,*

6. քննարկել «Ես եմ» ծրագրի իրականացումը շարունակելու կամ այն զինվորական ծառայության գրավչությունը բարձրացնող այլ ծրագրով փոխարինելու հնարավորության հարցը:

## 2. Զորակոչված քաղաքացիներին ծառայության վայրեր նշանակելու գործընթացը (այդ թվում՝ «Ես եմ», «Պատիվ ունեմ» և այլ ծրագրերի հետ կապված խնդիրներ)

Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել էին օրենքով սահմանված հիմքերով քաղաքացիներին կոնկրետ վայրեր ծառայության նշանակելու վերաբերյալ խնդիրներ և դրանց լուծման առաջարկներ:

Օրինակ, դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացվել էր իրավիճակ, երբ կրտսեր եղբայրը պատվոպահակային վաշտում ծառայող ավագ եղբոր մոտ ծառայության չէր նշանակվել՝ չնայած նրան, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի (խնդրի պահին գործող խմբագրությամբ) համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը: Այսինքն, խնդրի պահին օրենսդրական որևէ արգելք նախատեսված չէր:

Այնուհետև՝ 2019 թվականի հունիսի 4-ին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասում կատարվեց լրացում, ըստ որի՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը չի գերազանցում 17 ամիսը, կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում զորակոչվող եղբոր կողմից:

2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով Պաշտպանն արձանագրել էր, որ ճիշտ է, նշված օրենսդրական փոփոխությամբ փորձ է կատարվել խուսափել հետագայում նմանատիպ խնդիրներից, սակայն վերոնշյալ ձևակերպումը չի արտացոլում կարգավորման նպատակը:

Այսպես, հասկանալի է, որ կատարված լրացման նպատակն է եղել եղբայրներին ծառայության նույն վայր նշանակելու երկու բացառություն նախատեսելը, եթե՝ 1) արդեն իսկ ծառայություն անցնող եղբոր ծառայության ժամկետը գերազանցում է 17 ամիսը, 2) եղբայրը ծառայություն է անցնում այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար զորակոչվող եղբայրը չի բավարարում անհրաժեշտ պայմանները: Սակայն, ներկայում առկա շարադրանքի վերլուծությունից ստացվում է, որ եղբայրները **կարող են** ծառայել նույն զորամասում, եթե ծառայության անցնող եղբայրը **չի բավարարում** անհրաժեշտ պայմանները: Սա հանգեցնելու է պրակտիկայում նոր (լրացուցիչ) խնդիրների:



Վերոգրյալի հաշվառմամբ, առաջարկվել էր խմբագրել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը, սակայն օրենսդրական կարգավորումը դեռևս չի փոփոխվել:

*Ուստի, առաջարկվում է օրենսդրական փոփոխությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել:*

2020 թվականի տարեկան զեկույցով Պաշտպանը նաև արձանագրել էր Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանով նախատեսված մրցույթների իրականացման հետ կապված խնդիրներ:

Մասնավորապես, նախկինում արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչիկները զինվորական նվագախմբում ծառայության նշանակվելու նպատակով զորակոչի ընթացքում անցկացվող մրցույթին մասնակցող անձանց մեծաթիվ լինելու պատճառով քննությունը հանձնել են գիշերային ժամի:

Նշվածի հաշվառմամբ՝ տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր բացի լսումներին մասնակից անձանց առավելագույն քանակից՝ նախատեսել նաև մեկ օրվա համար լսումների անցկացման առավելագույն տևողություն, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

Բացի դրանից, արձանագրվել էին նաև առանձին վայրերում ծառայություն անցնելու հետ կապված խնդիրներ. օրինակ, կարգապահական որևէ խախտում չկատարած և տեխնոլոգիական (գիտական) վաշտում ծառայության պայմաններին համապատասխանող զինծառայողներին ծառայության ընթացքում այլ զորամաս տեղափոխելու դեպքեր:

Չմանրամասնելով կոնկրետ բողոքների հանգամանքները, որոնք ներկայացվել են նախորդ տարեկան հաղորդմամբ՝ Պաշտպանն ընդգծում է, որ կատարված ուսումնասիրությամբ արձանագրվել է տվյալ խնդրի ոչ միայն պրակտիկ, այլև օրենսդրական բնույթը: Այսպես, Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանով նախատեսված առանձին վայրերում ծառայողներին այլ վայր տեղափոխելու հնարավորություն է նախատեսված՝ նշված վայրերում ծառայության համար անհրաժեշտ պայմանները չբավարարելու դեպքում: Այդ պարագայում, զինծառայողները կարող են այլ վայր տեղափոխվել ծառայողական անհրաժեշտությունից ելնելով:

Նման ձևակերպումը իրավական որոշակիության տեսանկյունից չափազանց լայն է և տարաբնույթ մեկնաբանությունների տեղ տվող, քանի որ, ինչպես պարզվեց Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքում, հնարավոր են նաև դեպքեր, երբ զինծառայողներն այլ վայրեր տեղափոխվեն առանց որևէ հիմնավորման, թե կոնկրետ վայրում ծառայության հստակ որ պայմանին չեն բավարարում:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանում կատարել փոփոխություն՝ հստակեցնելով, թե կոնկրետ որ պայմաններին չբավարարելն է հիմք զինծառայողին այլ վայր տեղափոխելու համար, անհրաժեշտության դեպքում

նախատեսել նաև բարձր չափանիշներ ունեցող և կամայականության հնարավորությունները բացառող այլ հիմքեր, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

Անհրաժեշտ է նաև նշել, որ կոնկրետ բողոքներով ներկայացված փաստական հանգամանքների, դրանց կապակցությամբ ձեռնարկված միջոցների և Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանումների ուսումնասիրության արդյունքներով 2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն առաջարկել էր բացառել Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանով նախատեսված առանձին վայրերում ծառայության նպատակով քննությունների շեմը հաղթահարած զինծառայողներին, առանց օրենսդրական հիմքերի առկայության, ծառայության այլ վայր տեղափոխելու դեպքերը:

Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ 2021 թվականի ընթացքում նմանատիպ բողոքներ չեն ստացվել, և դա հիմք է տալիս ենթադրելու, որ այս խնդրի լուծման ուղղությամբ Պաշտպանության նախարարությունը գործուն միջոցներ է ձեռնարկել, ինչը դրական է գնահատվում:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել նաև «Ես եմ», «Պատիվ ունեմ» և այլ ծրագրերին վերաբերող խնդիրների կապակցությամբ:

Բողոքներով բարձրացվող հիմնական խնդիրներից է եղել «Ես եմ» ծրագրով ծառայությունն ավարտելուց հետո տրամադրվող պատվովճարը Կառավարության վերաբերելի որոշմամբ սահմանված նպատակներից դուրս օգտագործելու անհնարինությունը:

Խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 456-Ն որոշման 1-ին կետ 2-րդ ենթակետով սպառիչ կերպով սահմանված են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններում զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր կնքած շարքային կազմի պարտադիր զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվող պատվովճարի տնօրինման ուղղությունները, որոնք են՝ ա) Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության պետական ու հավատարմագրված ոչ պետական կամ օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական և (կամ) բարձրագույն և (կամ) հետբուհական կրթական ծրագրերով ուսումնառության ուսման վարձի ֆինանսավորում, բ) Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում կառուցված կամ կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքում անմիջապես կառուցապատողից բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով հիփոթեքային վարկի կանխավճարի և (կամ) ամսական վճարի, ինչպես նաև անհատական բնակելի տուն կամ բազմաբնակարան բնակելի շենքում բնակարան ձեռք բերելու դիմաց վճարումների ֆինանսավորում, գ) Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում գյուղատնտեսական (ֆերմերային) գործունեության (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի լիզինգ), ինչպես նաև այդ նպատակով ստացած վարկերի գծով ամսական վճարի ֆինանսավորում:

Այսինքն, Կառավարության որոշմամբ նախատեսված չէ որոշակի բացառիկ պայմաններում, այդ թվում նաև օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորված՝ թեկուզև պետական մարմնի հայեցողությամբ բացառություն իրականացնելու հնարավորություն:

Նշված խնդիրը հատկապես ընդգծվեց 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների ավարտից հետո: Պաշտպանին դիմած քաղաքացիները նշել են, որ, օրինակ, ռազմական գործողությունների ընթացքում վիրավորում ստանալու արդյունքում ձեռք են բերել առողջական լուրջ խնդիրներ, որոնց պատճառով չեն կարող զբաղվել գյուղատնտեսությամբ, ստանալ ուսում, իսկ միայն տրամադրվող պատվովճարով բնակարան ձեռք բերելն անհնար է: Հետևաբար, ավելի նպատակահարմար են համարում նշված գումարն ուղղել իրենց առողջական խնդիրների բուժմանը:

Քաղաքացիները նշված հարցով դիմել են նաև Պաշտպանության նախարարություն, սակայն իրավական ակտերի իմպերատիվ կարգավորումների վկայակոչմամբ՝ մերժում են ստացել:

Պաշտպանության նախարարությունի ստացված տեղեկությունների համաձայն՝ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցած զինծառայողների պատվովճարի 3 նպատակներով տրամադրվող գումարի ստացման պայմաններն արդեն իսկ ՀՀ կառավարության որոշումով հեշտացված են: Նոր նախատեսվող ծրագրի համար մշակվում են պատվովճարի ստացման առավել դյուրին ձևաչափեր, իսկ զոհված կամ գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հասանելիք պատվովճարը ժառանգներին տրամադրելու հարցը քննարկման փուլում է:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ «Ես եմ» ծրագրի ներդրման նպատակը, ի թիվս այլնի, միտված է եղել զինվորական ծառայության գրավչության բարձրացմանը: Հասկանալի է նման հարցերում պետության հայեցողության և վարվող քաղաքականության ուղղություններում որոշումների կայացման սահմանը, սակայն իրավիճակով կամ հասարակական պահանջների փոփոխություններով պայմանավորված՝ կարող է առաջանալ որոշակի իրավակարգավորումների փոփոխության, զարգացման կամ քաղաքականության վերանայման հնարավորությունը քննարկելու անհրաժեշտություն: Պաշտպանին հասցեագրվող բողոքներով առավել հաճախակի այս հարցի բարձրացումը վկայում է, որ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցած նախկին զինծառայողներին տրամադրվող պատվովճարի ուղղությունների վերանայման կամ որոշակի օբյեկտիվ պայմաններում բացառություններ իրականացնելու իրավական հնարավորությունների ստեղծման հարցը քննարկման կարիք ունի:

Պաշտպանության նախարարությունից նաև ստացվել է տեղեկություն այն մասին, որ «Ես եմ» ծրագրի շրջանակներում մոտ 200 զինծառայողի հետ դադարեցվել է պայմանագիրը՝ իրենց կողմից ներկայացված զեկուցագրերի հիման վրա (ընտանեկան պայմաններից ելնելով):

Մեկ այլ բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1675-Ն որոշմամբ սահմանված կարգով («Ես եմ» ծրագիր) անցնում է զինվորական ծառայություն: Հայտնել է, որ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից մասնակցել է

մարտական գործողություններին, իսկ նոյեմբերի 3-ին ստացել վիրավորում և տևական ժամանակ գտնվել բուժման մեջ:

Ըստ բողոք ներկայացրած անձի՝ 2020 թվականի փետրվարի 24-ին դիմել է ՀՀ պաշտպանության նախարարություն «Ես եմ» ծրագրի շրջանակներում կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու նպատակով: Ըստ պնդման՝ Պաշտպանության նախարարությունից իրեն տեղեկացրել են, որ պայմանագիրը լուծելու համար անհրաժեշտ է ներկայանալ զորամաս, և զեկուցագիր ներկայացնել զորամասի հրամանատարին: Զինճառայողը նշել է, որ գտնվում է բուժման մեջ և չի կարող ներկայանալ զորամաս:

Զինճառայողը խնդրել է Պաշտպանի աջակցությունը «Ես եմ» ծրագրով կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և զինված ուժերից արձակվելու հարցում:

Բարձրացրած հարցը քննարկվել է Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչների հետ և առաջարկվել ուսումնասիրել ներկայացրած խնդիրը և արդյունքներով պայմանավորված՝ միջոցներ ձեռնարկել զինճառայողի հետ կնքված պայմանագիրը վաղաժամկետ լուծելու և նրան զինված ուժերից արձակելու ուղղությամբ:

Բողոքի քննարկման արդյունքում զինճառայողը Պաշտպանության նախարարի հրամանով արձակվել է Զինված ուժերից:

Թեև անհատական մակարդակում հարցը լուծվել է, սակայն տեխնիկական խնդրի պատճառով զինճառայողին ծառայությունից արձակելու գործընթացն անհարկի ձգձգվել է: Ընդ որում, այսպիսի խնդիրների առաջացումը հնարավոր է կանխել Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի ստորաբաժանումների (այդ թվում՝ զորամասային և հոսպիտալային օղակների) միջև առավել օպերատիվ կապ ապահովելու դեպքում:

Միևնույն ժամանակ, 2021 թվականին Պաշտպանի աշխատակազմ են ստացվել կոնկրետ պայմաններով ծառայություն անցնելու հետ կապված այլ բողոքներ:

Օրինակ, զինճառայողը դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ Պաշտպանության նախարարության հետ կնքել է բարձրագույն ուսումնական հաստատությունում Պաշտպանության նախարարության պատվերով ուսումնառություն անցնելու մասին պայմանագիր: Նշված պայմանագրով կողմերը պայմանավորվել են, որ պայմանագրի հիման վրա բարձրագույն ուսումնական հաստատությունների ավարտական քննություններն ու ստուգարքները հանձնելու և օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայության ներգրավվելու դեպքում ուսանողը Նախարարության հետ կնքում է պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու մասին պայմանագիր՝ 5 տարի ժամկետով, Նախարարությունը ուսանողին շնորհում է «լեյտենանտ» զինվորական կոչում և նշանակում սպայական պաշտոնի: Բացի դրանից, պայմանագրով հստակ ամրագրվել էր ուսանողի իրավունքը, ինչպես նաև դրան համապատասխան Պաշտպանության նախարարության պարտավորությունը՝ բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո ուսանողի հետ կնքելու հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայություն

անցնելու մասին պայմանագիր՝ նրան նշանակելով ստացած մասնագիտությանն ու որակավորմանը համապատասխանող պաշտոնի:

Ձինձառայողը նշել է նաև, որ չնայած պայմանագրով նախատեսված պարտավորություններին՝ «համակարգչային գիտությունների» ծրագրով ուսումնառությունն ավարտելուց և մեկամսյա ռազմական պատրաստություն անցնելուց հետո մասնակցել է վիճակահանության և ծառայության նշանակվել որպես դասակի հրամանատար-կապի պետ: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ նշված պաշտոնն էականորեն տարբերվում է իր մասնագիտությունից, մասնավորապես, «համակարգչային գիտություններ» ծրագրի շրջանակներում ստացած մասնագիտական որակները համապատասխանում են ծրագրավորման ոլորտում աշխատանքներին, իսկ ռազմական կապի ոլորտում ղեկավարման աշխատանքներ իրականացնելու համար ինքը ուսումնառություն չի անցել, որակավորում ձեռք չի բերել և չունի համապատասխան վկայական:

Ձինձառայողը վերը նշված խնդրով դիմել էր նաև Պաշտպանության նախարարություն, սակայն հարցը լուծում չէր ստացել, իսկ տրամադրված պատասխաններով, ի թիվս այլնի, նշվել էր, որ տվյալ ժամանակահատվածում անհրաժեշտություն չլինելու պատճառով համալրման ենթակա պաշտոնների անվանացանկում զինծառայողի մասնագիտությանը խիստ համապատասխան որևէ այլ հաստիք չի ներկայացվել:

Հաշվի առնելով զինծառայողի ստացած մասնագիտությանը համապատասխան պաշտոնի նշանակելու պարտավորությունը Պաշտպանության նախարարության ստանձնած լինելու փաստը, կարևորելով կողմերի պայմանագրային պարտավորությունների կատարումը՝ Պաշտպանը գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն և բարձրացրել զինծառայողին իր ստացած մասնագիտությանը և որակավորմանը համապատասխանող պաշտոնի նշանակելու հարցը:

Պաշտպանության նախարարությունը տրամադրած պատասխանով նշել է, որ «Համակարգչային գիտությունների» ծրագրով ուսումնառության ընթացքում կապի ոլորտում ղեկավարման աշխատանքներ իրականացնելու և մասնագիտական գիտելիքներ ձեռք բերելու նպատակով շաբաթ օրերին զինծառայողը Ռազմական ավիացիոն համալսարանում մասնակցել է համապատասխան դասընթացների: Մինևույն ժամանակ, Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով իրականացվում է երիտասարդ սպաների վերապատրաստում և զինծառայողն ընդգրկված է կապի դասակի հրամանատար-կապի պետերի հետ առաջիկայում անցկացվող դասընթացներին:

Վերը նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է արձանագրել, որ թեպետ Պաշտպանության նախարարությունը փորձել է գտնել որոշակի լուծում և զինծառայողին ապահովել ներկայում նշանակված պաշտոնին համապատասխան գիտելիքներով, սակայն դա խնդրի վերջնական լուծում չէ տարբեր առումներով:

Նախ, զինծառայողն ուսումնառություն է անցել կոնկրետ մասնագիտությամբ և Պաշտպանության նախարարության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ է մտել հենց

նշված մասնագիտությամբ հետագա ծառայությունն իրականացնելու ակնկալիքով, ինչը կարևոր է թե՛ ստացած գիտելիքներն անհրաժեշտ ուղղությամբ օգտագործելու, թե՛ զինծառայողի մասնագիտական հմտությունները պահպանելու, ավելին՝ գործնականում զարգացնելու տեսանկյունից:

Երկրորդ, հենց Պաշտպանության նախարարությունը մտնելով պայմանագրային հարաբերությունների մեջ և գնահատելով իր կարիքները՝ պետական միջոցներն օգտագործել է կոնկրետ մասնագիտություն ունեցող անձին հետագայում ծառայության ներգրավելու նպատակով, սակայն ներկայում փորձում է վերապատրաստումների կամ այլ դասընթացների, այսինքն՝ ոչ ամբողջական կրթության, միջոցով համապատասխանեցնել զինծառայողի գիտելիքներն իր զբաղեցրած պաշտոնին: Սա խնդրահարույց է թե՛ արհեստավարժ զինծառայողի պատրաստման, թե՛ պետական միջոցներն ի սկզբանե ոչ նպատակային օգտագործելու տեսանկյունից:

Ի վերջո, դրանով Պաշտպանության նախարարությունը դուրս է գալիս իր պայմանագրային պարտավորությունների շրջանակից, քանի որ, ինչպես փաստացի նշվեց, քաղաքացու հետ կնքված պայմանագրով հստակ ամրագրված է Նախարարության պարտավորությունը՝ զինծառայողին նշանակելու իր ստացած մասնագիտությանն ու որակավորմանը համապատասխանող պաշտոնի:

Պաշտպանին մեկ այլ բողոք է հասցեագրվել զորակոչիկին գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճում ունենալու հիմքով տարկետում չտրամադրելու հետ կապված:

Մասնավորապես, քաղաքացին դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ որդին մաթեմատիկայի միջազգային օլիմպիադայի բրոնզե մեդալակիր է, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-Ն որոշմամբ սահմանված կարգով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու նպատակով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ որդին անհրաժեշտ փաստաթղթերը թողել է Նախարարության դիմումների ընդունման արկղում, սակայն զորակոչիկի ներկայացված փաստաթղթերի փաթեթը Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում կորել է, նախարարության ներկայացուցիչը հայտնել է, որ փաստաթղթեր չեն ներկայացվել, և հաշվի առնելով, որ փաստաթղթերի ներկայացման սահմանված ժամկետն ավարտվել է՝ առաջարկել է կրկին դիմել 2021 թվականի մայիսին:

Պաշտպանը համապատասխան պարզաբանումների պահանջով գրություն է հասցեագրել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, այնուհետև քաղաքացին նույն հարցով դիմել է Վարչական դատարան, սակայն վարչական գործի վարույթը կարճվել է, քանի որ զորակոչիկը կրկին դիմել է Նախարարություն, ընդգրկվել պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստանալու հավակնորդների ցուցակում և հրաժարվել հայցից:

Այսպիսով, չնայած կոնկրետ անհատական դեպքում հարցը լուծում է ստացել, սակայն նման տեխնիկական խնդիրների պատճառով քաղաքացիների տարկետման իրավունքի իրացման խոչընդոտների առաջացման նույնիսկ հնարավորության առկայությունը մտահոգիչ է:

*Ուստի, առաջարկվում է՝*

1. նվազախմբերում զինվորական ծառայության նշանակելու նպատակով զորակոչի ենթակա քաղաքացիների մրցույթի ժամանակ, բացի լսումներին մասնակից անձանց առավելագույն քանակից՝ նախատեսել նաև մեկ օրվա համար լսումների անցկացման առավելագույն տևողություն,

2. Պաշտպանության նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի թիվ 8-Ն հրամանում կատարել փոփոխություններ՝ հստակեցնելով, թե կոնկրետ որ պայմաններին չբավարարելն է հիմք զինծառայողին այլ վայր տեղափոխելու համար, անհրաժեշտության դեպքում նախատեսել նաև բարձր չափանիշներ ունեցող և կամայականության հնարավորությունները բացառող այլ հիմքեր,

3. քննարկել օբյեկտիվ, ծանրակշիռ փաստերի առկայության պայմաններում և բացառիկ դեպքերում «Ես եմ» ծրագրով ծառայություն անցած զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակելիս հաշվարկվող պատվովճարի տնօրինման երեք ուղղություններից տարբերով նպատակով պատվովճարը հատկացնելու հնարավորությունը դիտարկելու մեխանիզմ մշակելու հարցը,

4. զինծառայողների իրավունքների իրացման գործընթացի ձգձգումներից խուսափելու նպատակով առավել օպերատիվ դարձնել Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի (Գլխավոր շտաբի) ստորաբաժանումների (այդ թվում՝ զորամասային և հոսպիտալային օղակների) միջև կապը:

### **3. Զինվորական հաշվառման փաստաթղթեր ստանալու իրավունքը**

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի Բացատրական հուշագրի «Ժ» բաժնի համաձայն՝ ներկա և նախկին զինծառայողներին պետք է դիմումի հիման վրա հասանելի լինի զինվորական իշխանության մարմինների կողմից պահվող իրենց անհատական տվյալները ստանալու իրավունքը: Անհատական տվյալները ներառում են ցանկացած տեղեկատվություն, որը վերաբերում է ֆիզիկական անձի, ում ինքնությունը հաստատված է կամ հնարավոր է հաստատել:

«Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածը երաշխավորում է անձի պահանջի դեպքում պետական մարմինների կողմից նրա վերաբերյալ պահվող պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքը:

«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ զինվորական հաշվառման նպատակով զինվորական կոմիսարիատում կազմվում է զինապարտի անձնական գործ, որում մուտքագրվում են զինապարտի ծննդյան և անձնագրային, անհրաժեշտ

կենսաչափական, հաշվառման վայրի, ընտանեկան դրության, կրթության, աշխատանքային գործունեության, առողջական վիճակի, դատվածության վերաբերյալ տվյալները, ինչպես նաև ներառվում են այդ տվյալների վերաբերյալ համապատասխան բնօրինակ փաստաթղթերը կամ դրանց պատճենները: Տվյալների միասնականությունը և համակարգված կիրառումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը վարում է զինվորական հաշվառման էլեկտրոնային կառավարման համակարգ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշմամբ սահմանվել է զինվորական հաշվառման կարգը: Կարգով սահմանվել են քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերի տեսակները: Բացի դրանից, նշվել է, որ քաղաքացու զինվորական հաշվառման վերցված լինելու հանգամանքը կարող է հաստատվել նաև զինվորական կոմիսարիատի կողմից ըստ անհրաժեշտության տրված տեղեկանքով: Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր զինվորական հաշվառման վերաբերյալ տվյալներին, դրանցում շտկումներ կատարելու համար ներկայացնել առաջարկություններ:

Չնայած վերը նշված իրավական կարգավորումներին՝ քաղաքացու զինվորական հաշվառման փաստը հաստատող փաստաթղթերը ստանալու իրավունքն ապահովելու հարցում գործնականում 2021 թվականի ընթացքում արձանագրվել են խնդիրներ:

Օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ մասնակցել է մարտական գործողություններին, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանակիր է: Նշել է, որ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո ներկայացել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում (զինկոմիսարիատ) և խնդրել տրամադրել զինվորական գրքույկը: Մինչդեռ, տարածքային ստորաբաժանումում իրենց հայտնել են, որ զինվորական գրքույկը մնացել է զորամասում: Քաղաքացին դժգոհություններ է ներկայացրել այն մասին, որ զինվորական գրքույկ կամ հաշվառման փաստը հաստատող այլ փաստաթուղթ չունենալու պատճառով չի կարողանում անձնագիր ստանալ: Հավելել է, որ տարածքային ստորաբաժանումն անընդհատ ձգձգում է զինվորական գրքույկի տրամադրումը:

Բարձրացված հարցի կապակցությամբ քաղաքացու հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանումից Պաշտպանի աշխատակազմ պարզաբանում է ստացվել այն մասին, որ հարցում է ուղարկվել համապատասխան զորամաս, որտեղից զինգրքույկն ուղարկվել է, և քաղաքացին կարող է այցելել և ստանալ:

Այսպիսով, արագ արձագանքման արդյունքում քաղաքացուն տրամադրվել է զինվորական գրքույկ՝ ապահովելով անձնագիր ստանալու հնարավորությունը:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ պետք է ուժեղացնել հսկողությունը՝ բացառելու համար բոլոր այն դեպքերը, երբ խոչընդոտներ են առաջանում քաղաքացու հաշվառման վերցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթղթերը տրամադրելիս:*



### ԳԼՈՒԽ 3. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

#### 1. Առողջական վիճակի պատշաճ բժշկական հետազոտության և փորձաքննության խնդիրները

Միջազգային և սահմանադրական երաշխիքներն ամրագրում են զորակոչիկների պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն անցնելու իրավունքը:

**Թեև պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված փոփոխությունների մարտահրավերներին:** Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր չառաջացնել, մինչդեռ այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի բավարար ֆիզիկական տոկոսություն: Հետևաբար, հաշվի առնելով զինվորական ծառայության պահանջները, **պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի**<sup>663</sup>:

Այս մասով առկա են նաև միջազգային մի շարք այլ չափանիշներ<sup>664</sup>:

Զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի բժշկական հետազոտության և փորձաքննության նպատակը նրանց պիտանիության աստիճանի որոշումն է: Եվ հատկանշական է, որ ներպետական օրենսդրությունը համապատասխան կարգավորումներ է ամրագրում տվյալ նպատակին հասնելու համար<sup>665</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ զինապարտ քաղաքացու պիտանիության աստիճանից է կախված պարտադիր զինվորական ծառայության զորակոչից կամ զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու, զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու հնարավորությունը: **Հետևաբար, զինապարտ քաղաքացու**

<sup>663</sup> Տե՛ս Կայանկին ընդդեմ Ռուսաստանի գործով (Kayankin v. Russia) 2010 թվականի մայիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

<sup>664</sup> Տե՛ս Քիլինջը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Kilinç and thers v. Turkey) գործով վճիռ, գանգատ թիվ 40145/98, կետեր 41, 42: Կայանկին ընդդեմ Ռուսաստանի վճիռը (Kayankin v. Russia), 2010 թվականի մայիսի 11-ի վճիռը, գանգատ թիվ 24427/02, կետ 87:

<sup>665</sup> Տե՛ս, օրինակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածը, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ նախատեսված Հավելված 1-ի 2-րդ կետը:

**պիտանիության աստիճանի և առողջական վիճակի պատճառով զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից արձակվելու միջև առկա է իրավաբանական նշանակություն ունեցող ուղղակի պատճառական կապ:** Միաժամանակ, առողջական վիճակի բժշկական հետազոտություն և փորձաքննություն պատշաճ անցկացնելն անհրաժեշտ է զինապարտ քաղաքացիների առողջության պահպանման համար:

Դրանով է պայմանավորված փորձաքննություն իրականացնող մարմինների դերի կարևորությունը: Այլ կերպ ասած, զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները պարտավոր են իրականացնել առողջական վիճակի պատշաճ (մանրամասն և ամբողջական) փորձաքննություն՝ բացառելու համար առողջությամբ պայմանավորված ոչ պիտանի քաղաքացիների զորակոչը Հայաստանի Հանրապետության զինված ուժեր:

Զինապարտ քաղաքացիների պատշաճ բժշկական հետազոտություններն ու փորձաքննությունները Պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում են: Ինչպես նախկինում, 2021 թվականի ընթացքում ևս Պաշտպանին հասցեագրվել են զինապարտներին պատշաճ բժշկական հետազոտության ենթարկելու, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների որոշումների (եզրակացության) արդյունքների հիմնավորվածությամբ պայմանավորված՝ այդ որոշումների բողոքարկման և պարտադիր զինվորական ծառայության զորակոչից առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքների տրամադրման խնդիրների վերաբերյալ բողոքներ:

Անհրաժեշտ է արձանագրել, որ նախորդ տարիների հետ համեմատած՝ բժշկական հետազոտությունների, օգնության և փորձաքննությունների վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվող բողոքների թիվը 2021 թվականին զգալիորեն նվազել է, ինչն առաջին հերթին Ջորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (զինվորական կոմիսարիատների), բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների, ինչպես նաև Պաշտպանության նախարարության ձեռնարկած քայլերի արդյունք է: Օրինակ, Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանման համաձայն՝ ամբողջական ախտորոշման համար անհրաժեշտ և թիրախային հետազոտությունների ծավալները սահմանված են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ: Զինծառայողների առողջական վիճակը պարզելու նպատակով մասնագիտացված բուժհաստատություններում առավել թիրախային բժշկական հետազոտություններ (ՄՌՏ, ՀՏ, սթինտիգրաֆիա, էլեկտրոնետրոմիոգրաֆիա, ցերեբրալ անգիոգրաֆիա) իրականացնելու նպատակով 2021 թվականի ընթացքում ԶՈՒ ռազմաբժշկական վարչության և ենթակա զորամասերի կողմից տրամադրվել է 2892 ուղեգիր: ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալում նույն ժամանակահատվածում իրականացվել է 5878 (այդ թվում նաև՝ կոնտրաստավորումով) ՀՏ հետազոտություն:

Միանշանակ դրական գնահատելով Պաշտպանության նախարարության ձեռնարկած միջոցները՝ այնուամենայնիվ, տվյալ ոլորտում դեռևս շարունակում են մնալ չլուծված խնդիրներ:

Դեռևս արդիական են զորակոչիկների պատշաճ փորձաքննության, դրա արդյունքում զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանի որոշման հետ կապված խնդիրները: 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքների քննարկման արդյունքում առաջնային փորձաքննությամբ զինվորական ծառայության համար պիտանի (սահմանափակումով պիտանի) ճանաչված զորակոչիկներին լրացուցիչ հետազոտությունների արդյունքում առողջական վիճակի պատճառով տրվել է տարկետում:

Օրինակ, զորակոչիկի մայրը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին ունի մի շարք առողջական խնդիրներ, որոնց մասին նա հայտնել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումում (զինվորական կոմիսարիատ), ներկայացրել բժշկական փաստաթղթերը, սակայն դրանք հաշվի չեն առնվել, և նրան տրվել է զինվորական ծառայության զորակոչման ծանուցագիր:

Պաշտպանի աշխատակազմում սկսված բողոքի քննարկման շրջանակներում իրականացվել են մի շարք գործողություններ, ներկայացված խնդիրները քննարկվել են զինվորական կոմիսարիատի, այնուհետև՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի իրավասու ներկայացուցիչների հետ, ինչի արդյունքում զորակոչիկն ուղեգրվել է լրացուցիչ ՄՌՏ հետազոտության: Բացի դրանից, Պաշտպանը զորակոչիկի ամբողջական հետազոտություններն իրականացնելու պահանջով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, որտեղից տեղեկացվել է, որ զորակոչիկն ուղեգրվել է առողջական վիճակի լրացուցիչ հետազոտման:

Արդյունքում, զորակոչիկը կրկին փորձաքննվել և ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Բացի դրանից, եղել են նաև դեպքեր, երբ առաջնային փորձաքննությամբ զինվորական ծառայության համար պիտանի (սահմանափակումով պիտանի) ճանաչված զորակոչիկներն արդեն ծառայության ընթացքում անցած լրացուցիչ հետազոտությունների արդյունքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի են ճանաչվել զինվորական ծառայության համար:

Օրինակ՝ քաղաքացին դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ որդին ունի առողջական խնդիրներ, սակայն պատշաճ բժշկական հետազոտություններ չի անցել, նաև չեն ուսումնասիրվել որդու բժշկական փաստաթղթերը: Արդյունքում, զորակոչիկը պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար և զորակոչվել Զինված ուժեր: Քաղաքացին բողոքին կցել է նաև որդու առողջական խնդիրները հիմնավորող բժշկական փաստաթղթեր:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանը զինծառայողին պատշաճ բժշկական հետազոտությունների ենթարկելու պահանջով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, որտեղից ստացված պատասխանով, ի թիվս այլնի, նշվել է, որ զինծառայողը տեղափոխվել է զինվորական հոսպիտալ: Նշվել է նաև, որ զինծառայողն առաջիկայում ներկայացվելու է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի փորձաքննությանը:

Դրանից հետո, քաղաքացին լրացուցիչ դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ որդին իրականացված հետազոտությունների և փորձաքննության արդյունքում ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար, արձակվել Ձինված ուժերից:

Չնայած այսպիսի կոնկրետ օրինակին՝ Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ 2021 թվականի ընթացքում չի արձանագրվել այնպիսի դեպք, երբ պարտադիր ժամկետային զինծառայողը ժամկետից շուտ արձակվել է ծառայությունից այն հիվանդության (դրա զարգացման, սրացման) պատճառով, որն ախտորոշվել է նրան զորակոչելու ժամանակ<sup>666</sup>:

Զորակոչիկների կողմից Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունների բողոքարկման կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ 2021 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած 129 եզրակացություն բողոքարկվել է ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի ներքո գործող 2021 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում քաղաքացիների դիմումները և բողոքները քննարկող հանձնաժողովին: 72 դիմումների վերաբերյալ նշանակվել է լրացուցիչ քննություն, որի արդյունքում 26 եզրակացություն փոխվել է<sup>667</sup>:

Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել էին դեպքեր, երբ ինչպես պարտադիր ժամկետային, այնպես էլ պայմանագրային որոշ զինծառայողներ առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի էին ճանաչվել զինվորական ծառայության համար, սակայն տևական ժամանակ չէին արձակվում Ձինված ուժերից:

2021 թվականի ընթացքում Պաշտպանը կրկին ստացել է այդպիսի բողոքներ:

Օրինակ, փաստաբանը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ իր վստահորդը պայմանագրային զինծառայող է, Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից փորձաքննվել և ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Փաստաբանի տեղեկացմամբ՝ զինծառայողը դեռևս 2021 թվականի սեպտեմբերի 15-ի զեկուցագրով համաձայնություն է հայտնել Կառավարության որոշմամբ հաստատված ցանկի վերաբերելի հոդվածով սահմանված կարգով արձակվել Ձինված ուժերից, նշված զեկուցագիրը զորամասից ելք է արվել սեպտեմբերի 17-ին, սակայն ավելի քան մեկ ամիս Ձինված ուժերից

<sup>666</sup> Պաշտպանության նախարարությունից ստացված մեկ այլ տեղեկության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում չեն արձանագրվել դեպքեր, երբ զորակոչվել են զինվորական ծառայության համար ոչ պիտանի զինծառայողներ, ինչպես նաև դրա հետևանքով հանձնաժողովների որևէ բժիշկ-մասնագետ կամ զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնող անձ չի ենթարկվել պատասխանատվության:

<sup>667</sup> Ի տարբերություն 2020 թվականի Պաշտպանության նախարարության պատասխան պարզաբանումների, երբ կարծիք էր արտահայտվել, որ Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդ ունի ընդամենը խորհրդատվական բնույթ, 2021 թվականին ստացված պատասխան պարզաբանումներում Նախարարությունը հենվում է նաև խորհրդի արդյունավետ գործունեության վրա, ինչը կարևոր է արձանագրել: Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ թեկուզև Հանձնաժողովի միջնորդությունները կրում են խորհրդատվական բնույթ, սակայն հենց Պաշտպանության նախարարության կողմից ստեղծված ներքին վերահսկողության այդպիսի մեխանիզմի առաջարկներն անտեսելը գնահատման կարիք ունի:

արձակելու հրաման դեռևս չի տրվել: Ընդ որում, զինծառայողի առողջական վիճակը շարունակում է վատանալ, և նա ստիպված պետք է ներկայանա գործառնա:

Հաշվի առնելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի կարգավորումն այն մասին, որ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում՝ Պաշտպանը համապատասխան պարզաբանումների պահանջով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն:

Արդյունքում, փաստաբանը տեղեկացրել է, որ իր վստահորդն արձակվել է Զինված ուժերից:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նման հարցերի վերաբերյալ Պաշտպանության նախարարության թեժ գիծը ստացել է 21 բողոք, որոնք աշխատանքային կարգով լուծվել են:

Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խնդիրը պայմանավորված է նաև օրենսդրական անհրաժեշտ կարգավորումների բացակայությամբ:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում: Ինչպես երևում է նշված կարգավորումից, օրենքը հիմքեր ծագելուց հետո զինվորական ծառայությունից արձակման կոնկրետ ժամկետ է նախատեսում միայն պայմանագրային զինծառայողների համար, սակայն նմանատիպ կարգավորում նախատեսված չէ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների համար, ինչն էլ պրակտիկայում հանգեցնում է նմանատիպ խնդիրների:

Այս խնդիրն արձանագրվել է նաև Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ, առաջարկվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ հիմքերի ծագման դեպքում զինվորական ծառայությունից արձակման հստակ ժամկետ նախատեսելով նաև շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների համար, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

Զորակոչիկների առողջական օբյեկտիվ վիճակը պարզելու տեսանկյունից խնդրահարույց է նաև նրանց կողմից սեփական նախաձեռնությամբ ու միջոցներով անցած հետազոտությունների և ուղեգրով կատարված հետազոտությունների միջև էական հակասությունների առկայության դեպքում զորակոչիկներին լրացուցիչ հետազոտության չուղեգրելը: Խնդիրն ավելի արդիական է դառնում այն դեպքերում, երբ զորակոչիկների միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքներով պայմանավորված՝ կարող է փոփոխվել նաև նրանց զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանը:

Իհարկե, հասկանալի է, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությունն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի թիվ 2712-Ա հրամանով նախատեսված բուժհաստատության կողմից տրված առողջական վիճակի վերաբերյալ ակտերի հիման վրա, և քաղաքացու միջոցներով իրականացված հետազոտության արդյունքները փորձաքննության հիմքում դրվել չեն կարող: Սակայն, միևնույն ժամանակ, անընդունելի է նաև երբեմն զորակոչիկների միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքներին առհասարակ որևէ նշանակություն չտալու մոտեցումը:

Վերևում բերված երկու օրինակների պարագայում էլ քաղաքացիներն, ի թիվս այլնի, հայտնել են, որ զորակոչի ընթացքում հաշվի չեն առնվել զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ և միջոցներով իրականացված հետազոտությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Արդեն նշվել է, որ ձեռնարկված միջոցների արդյունքում մի դեպքում հենց զորակոչի ընթացքում փոխվել է զորակոչիկի պիտանիության աստիճանը, մյուս դեպքում՝ ծառայության ընթացքում զինծառայողը լրացուցիչ հետազոտվել, փորձաքննվել և ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար: Հետևաբար, չբացառելով նաև հետազոտություններն անցկացնելիս որոշակի տեխնիկական սխալների կամ բժիշկների տարբերվող դիրքորոշումների հնարավորությունը, և կարևորելով առողջ քաղաքացիներին զորակոչելու անհրաժեշտությունը՝ մի քանի հետազոտություններում (այդ թվում՝ սեփական միջոցներով իրականացված) առկա էապես տարբերվող, և հատկապես պիտանիության աստիճանը փոփոխող ախտորոշումների դեպքում, անհրաժեշտ է իրականացնել զորակոչիկների լրացուցիչ բժշկական հետազոտություններ:

Հատկանշական է, որ տարիներ շարունակ այս խնդիրն արձանագրվել է Պաշտպանի հաղորդումներում, մշտապես նշվել է զորակոչիկներին այդպիսի փաստաթղթերի առկայության դեպքում լրացուցիչ հետազոտությունների ուղեգրելու անհրաժեշտությունը, գործնականում այս խնդիրը, փաստորեն, դեռևս չի լուծվել:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել էր դեպք, երբ զորակոչիկը համաձայն չի եղել պիտանիության աստիճանի վերաբերյալ եզրակացության հետ, ցանկացել է փորձաքննվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից, սակայն մերժում է ստացել:

Նշվածով պայմանավորված՝ Պաշտպանն առաջարկել էր զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (զինվորական կոմիսարիատի) բժշկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հետ համաձայն չլինելու բոլոր դեպքերում զորակոչիկներին ներկայացնել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը՝ ապահովելով գործող իրավակարգավորումների պահանջը:

Այնուամենայնիվ, 2021 թվականին նույնպես Պաշտպանի աշխատակազմ են ստացվել նմանատիպ ահազանգեր: Մասնավորապես, քաղաքացին դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ ունի ողնաշարի հետ կապված առողջական խնդիրներ, որոնց կապակցությամբ նախկինում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացել է տարկետում:

2021 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում քաղաքացին հետազոտվել և փորձաքննվել է Ջորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանման (զինկոմիսարիատի) հանձնաժողովի կողմից և ճանաչվել սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

Ջորակոչիկի պնդմամբ՝ համաձայն չի եղել կայացված եզրակացության հետ, ցանկացել է փորձաքննվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից, սակայն մերժում է ստացել:

Հարցը քննարկվել է քաղաքացու ՋԶՀԾ հաշվառման վայրի ստորաբաժանման (զինկոմիսարիատի) իրավասու ներկայացուցչի հետ, քննարկել նշված խնդիրը, ինչի արդյունքում զորակոչիկը ներկայացվել է Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննության:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 39-րդ կետի համաձայն՝ եթե զորակոչիկը համաձայն չէ իր՝ զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից կայացված եզրակացությանը, կարող է այն բողոքարկել ԿԲՀ-ին և փորձաքննություն անցել ԿԲՀ-ի կողմից: Այսինքն, այս իրավունքը հստակ նախատեսված է, և պետք է միջոցներ ձեռնարկել այն իրացնելու ուղղությամբ:

Հետևաբար, պետք է բացառել գործող իրավակարգավորման պահանջի հնարավոր խախտումները:

Բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների կողմից իրականացվող փորձաքննությունների օբյեկտիվության ապահովումն, ի թիվս այլ հանգամանքների, կախված է հանձնաժողովների կազմում ընդգրկված անդամների պրոֆեսիոնալիզմից և անաչառությունից: Զինապարտ քաղաքացիները պետք է վստահ լինեն, որ բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովներն իրենց պիտանիության վերաբերյալ կայացրել են օբյեկտիվ որոշում: Այդ նպատակով նրանք պետք է հնարավորություն ունենան որպես խորհրդատու փորձաքննությանը ներգրավել նաև իրենց հրավիրած մասնագետների: Մինչդեռ, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգը նախատեսում է բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների անդամների սպառիչ ցանկ, ինչը զորակոչիկներին և զինծառայողներին հնարավորություն չի տալիս փորձաքննություններին ներգրավել նաև իր նախընտրած մասնագետին: Այս առումով հատկանշական է, որ բժշկասոցիալական փորձաքննությանն անձը կարող է որպես խորհրդատու ներգրավել համապատասխան մասնագետի:

Կարծում ենք, բժշկական և ռազմաբժշկական փորձաքննությունների կարգում նմանատիպ դրույթի ավելացումը կարող է նպաստել փորձաքննվողի վերաբերյալ կայացված եզրակացության օբյեկտիվության ապահովմանը: Մասնավորապես, շատ դեպքերում փորձաքննվողները հանձնաժողովների եզրակացությունները բողոքարկելիս չեն տիրապետում բժշկական գիտելիքների, ինչը մի դեպքում անհիմն բողոքարկումների, իսկ մյուս դեպքում՝ խնդրահարույց եզրակացությունների չբողոքարկման հիմք են դառնում: Իսկ փորձաքննություններին որպես

խորհրդատու մասնակցած բժիշկ-մասնագետը կարող է իր խորհուրդներով աջակցել փորձաքննվողներին:

Պաշտպանի դեռևս 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով առաջարկվել էր ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանել, որ փորձաքննվողը բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին որպես խորհրդատու կարող է ներգրավել համապատասխան մասնագետի, սակայն նշված առաջարկը դեռևս չի իրացվել:

Անհրաժեշտ է նաև անդրադառնալ առանց տարկետում տալու զորակոչիկի պիտանիության որոշումը հաջորդ զորակոչին թողնելու խնդրին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված կարգի 41-րդ կետի համաձայն՝ «լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում ԿԲՀ-ն այդ անձի վերաբերյալ եզրակացություն չի ներկայացնում և նրա փորձաքննությունն իրականացնում է հաջորդ զորակոչի ժամանակ: Դեռևս Պաշտպանի 2017 թվականի տարեկան հաղորդմամբ նույն խնդրին անդրադարձ կատարելիս նշվել է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով առողջական վիճակի փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ որոշում չկայացնելու հնարավորություն նախատեսված չէ: Ավելին, նույն օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, այնուհետև հստակ սահմանված են քաղաքացու պիտանիության վերաբերյալ եզրակացությունների տեսակները: Ստացվում է, որ Կառավարության որոշմամբ Կենտրոնական բժշկական հանձնաժողովին տրվել է օրենքով չնախատեսված լիազորություն:

Բացի դրանից, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Առողջական վիճակի պատճառով բուժման կարիք ունեցող քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է երեք անգամ՝ մինչև մեկ տարի ժամանակով: Երրորդ անգամ տրված տարկետման ժամկետը լրանալուց հետո քաղաքացին բժշկական փորձաքննության արդյունքներով կամ ճանաչվում է պիտանի զինվորական ծառայության համար, կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում է պարտադիր զինվորական ծառայության, կամ ճանաչվում է զինվորական ծառայության համար ոչ պիտանի և ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից»: Հետևաբար, առանց տարկետում տալու՝ փորձաքննությունը հաջորդ զորակոչի ընթացքում իրականացնելու դեպքում, երբ հետազոտության ավարտից հետո պարզվում է, որ բուժման կամ ժամանակավորապես ոչ պիտանի լինելու պատճառով անձն ուներ տարկետման իրավունք, անձը զրկվում է տարկետման իրավաբանական նշանակություն ունեցող հետևանքից:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել է վերանայել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման կարգավորումը և ամրագրել, որ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում



զորակոչիկները ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մինչև հաջորդ զորակոչ:

Այնուամենայնիվ, նշված առաջարկը դեռևս չի իրացվել: Ավելին, Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ 2021 թվականի ձմեռային զորակոչին կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշմամբ թվով 196 զորակոչիկների փորձաքննությունը տեղափոխվել է 2022 թվականի ամառային զորակոչ:

Բացի այդ, նախորդ տարիներին Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ մեկ օրվա ընթացքում փորձաքննվում են մեծ թվով զորակոչիկներ, ինչը կարող է ազդել փորձաքննության որակի և զորակոչիկների պիտանիության աստիճանը որոշելիս հանգեցնել որոշակի սխալների: Պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր նախատեսել մեկ օրվա ընթացքում փորձաքննվողների հստակ թվաքանակ, սակայն այս առաջարկը դեռևս չի իրացվել:

Զինապարտ քաղաքացիների փորձաքննության հետ կապված մեկ այլ խնդիր. դեռևս 2020 թվականին Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ եղբայրը զորակոչի ընթացքում անցած բժշկական հետազոտությունների և փորձաքննության արդյունքում ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար, հաշվառվել պահեստազորում և 5 տարի անց պետք է ներկայանար վերափորձաքննության: Քաղաքացին հայտնել է նաև, որ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուց հետո եղբայրը բուժում ստանալու նպատակով մեկնել է արտերկիր, որտեղից վերադառնալ չի կարող, քանի որ առկա է նրա տեղափոխման բժշկական հակացուցում (տեղեկանքը կցել է նաև բողոքին):

Բողոք ներկայացրած անձը առանց եղբոր ներկայանալու նրա վերափորձաքննությունն իրականացնելու խնդրանքով դիմել է ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն, սակայն մերժում է ստացել: Մերժման հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետով բժշկական փաստաթղթերով փորձաքննություն իրականացնելու հնարավորություն նախատեսվում է միայն զորակոչիկների համար, իսկ նշված դեպքում քաղաքացին հաշվառված է Զինված ուժերի պահեստազորում:

Այսպես, Կառավարության նշված որոշմամբ հաստատված կարգի 34-րդ կետի համաձայն՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիները բժշկական փորձաքննություն են անցնում անձամբ՝ զինվորական կոմիսարիատում կազմված անձնական գործով, որը պետք է լինի կարված, համարակալված՝ վերջին էջում նշելով ցանկը, էջերի թիվը և հաստատված լինի համապատասխան զինվորական կոմիսարիատի բժշկի ու զինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով: **Առանձին դեպքերում, երբ զորակոչի ենթակա անձը բուժում է ստանում Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս և գտնվում է բժիշկների անմիջական հսկողության տակ կամ այդ զորակոչիկին տեղափոխումը հակացուցված է,**

**Պաշտպանության նախարարի որոշմամբ, զորակոչիկի փորձաքննությունը կարող է կատարվել զինվորական կոմիսարիատ ներկայացված փաստաթղթերի հիման վրա:**

Այսպիսի կարգավորում միայն զորակոչիկների համար նախատեսելն առնվազն հիմնավորված չէ, քանի որ հատկապես այն դեպքում, երբ անձը նախկինում անցել է տարբեր հետազոտություններ, փորձաքննվել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից և ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար, առնվազն առկա է անձի վերաբերյալ բժշկական փաստաթղթերի որոշակի համակցություն: Նշված փաստաթղթերը կարող են ավելի հեշտացնել նման կարգավիճակ ունեցող անձանց հեռակա փորձաքննությունը, քան դեռևս պետության ուղեգրերով չհետազոտված զորակոչիկների պարագայում: Ընդ որում, պահեստազորում հաշվառված անձանց համար նման հնարավորության նախատեսված չլինելը հանգեցնում է նրանց այլ իրավունքների խախտման (օրինակ, Պաշտպանին հասցեագրված բողոքի փաստական հանգամանքների պարագայում՝ քաղաքացին չփորձաքննվելու արդյունքում բախվել է անձնագիր ստանալու խնդրի, ինչի հետևանքով էլ կարող էր զրկվել արտերկրում բնակվելու և բուժում ստանալու հնարավորությունից):

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողով կամ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն (զինկոմիսարիատ) ներկայացված փաստաթղթերի հիման վրա փորձաքննություն կատարելու հնարավորություն նախատեսելով նաև պահեստազորում հաշվառված, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բուժում ստացող և բժիշկների անմիջական հսկողության տակ գտնվող կամ տեղափոխումը հակացուցված անձանց համար: Այս առաջարկը, սակայն, դեռևս չի իրացվել:

*Վերոնշյալի հաշվառմամբ առաջարկվում է.*

1. *փորձաքննությունները պարզաճ իրականացնելու նպատակով բժշկական հետազոտություններն անցկացնել առավել թիրախային գործիքակազմով՝ ապահովելով զինապարտների առողջական վիճակի վերաբերյալ մանրամասն և հստակ տեղեկությունների ստացումը,*

2. *ուժեղացնել հսկողությունը զինծառայողների կողմից առողջական խնդիրների կապակցությամբ ներկայացվող գանգառների պարզաճ հետազոտությունների, բուժօգնության և փորձաքննությունների իրականացման նկատմամբ,*

3. *«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ հիմքերի ծագման դեպքում զինվորական ծառայությունից արձակման հստակ ժամկետ նախատեսելով նաև շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողների համար,*

4. *զորակոչիկներին ուղեգրել լրացուցիչ հետազոտությունների, երբ զորակոչիկների սեփական նախաձեռնությամբ և միջոցներով իրականացված հետազոտությունների արդյունքում առկա*

են ուղեգրով կատարված հետազոտությունների արդյունքներից էապես փարբերվող և պիտանիության աստիճանի հնարավոր փոփոխության հանգեցնող տվյալներ,

5. զինվորական ծառայության պիտանիության վերաբերյալ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (զինկոմիսարիատի) բժշկական հանձնաժողովի կողմից ներկայացված եզրակացության հետ համաձայն չլինելու բոլոր դեպքերում զորակոչիկներին ներկայացնել Կենտրոնական բժշկական հանձնաժողովի փորձաքննությանը՝ ապահովելով գործող իրավակարգավորումների պահանջը,

6. Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանել, որ փորձաքննվողը բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների նիստերին որպես խորհրդատու կարող է ներգրավել համապատասխան մասնագետի,

7. վերանայել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման կարգավորումը և ամրագրել, որ լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտությունը հայտարարված զորակոչի ընթացքում ավարտված չլինելու դեպքում զորակոչիկները ճանաչվում են բուժման կարիք ունեցող, և նրանց տրվում է տարկետում մինչև հաջորդ զորակոչ,

8. սահմանել մեկ օրվա ընթացքում առողջական վիճակի փորձաքննություն իրականացնելու զինապարտ քաղաքացիների առավելագույն թվաքանակը,

9. Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողով կամ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն ներկայացված փաստաթղթերի հիման վրա փորձաքննություն կատարելու հնարավորություն նախատեսելով նաև պահեստազորում հաշվառված, Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս բուժում ստացող և բժիշկների անմիջական հսկողության տակ գտնվող կամ տեղափոխումը հակացուցված անձանց համար:

## **2. Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զինապարտների տարկետման իրավունքը**

Մի շարք հիվանդություններով զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանի ճանաչված զորակոչիկներին առողջական վիճակի պատճառով տարկետման իրավունքի պաշտպանության խնդիրը շարունակում է մնալ արդիական: Տվյալ խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2016-2020 թվականների տարեկան հաղորդումներում: Մասնավորապես, նշվել է, որ բացակայում են «**հիվանդությունների որակական փունջ**» (այլ ոչ թե որոշակի քանակի հիվանդություններ) ունենալու դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը: Բժշկական հանձնաժողովը «հիվանդությունների որակական փունջ» չունենալու դեպքում այդ հիվանդությունները գնահատում է առանձին-առանձին՝ այլ ոչ թե ընդհանուր վերցրած, և արդյունքում ստացվում է, որ անձը ենթակա է զինվորական ծառայության: Սակայն, զորակոչվելու

դեպքում հնարավոր է զինապարտի փաստացի առողջական վիճակը թույլ չտա լիարժեք կերպով կատարել զինվորական պարտականությունները, և նույնիսկ մեծ հավանականություն կա, որ ծառայության ընթացքում ավելի կխորանան առկա հիվանդությունները, կամ նույնիսկ անձը ձեռք կբերի հաշմանդամություն:

Նշված հարցը տարիներ շարունակ բարձրաձայնվել է Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ինչպես տարեկան հաղորդումներում, այնպես էլ ԶՈՒ իրավասու ստորաբաժանումների հետ քննարկումների ընթացքում: Հասկանալի է, որ նշված առաջարկության իրացումը ենթադրում է որոշակի բարդություններ և առողջական վիճակի գնահատման որակական չափանիշների որոշման հատուկ մեխանիզմների սահմանման անհրաժեշտություն: Սակայն հաշվի առնելով, որ հարցը վերաբերում է զորակոչիկների պատշաճ փորձաքննության և զինվորական ծառայության ընթացքում զինծառայողների առողջական վիճակի պահպանման պետության պոզիտիվ պարտականությանը՝ իրավասու գերատեսչությունները պարտավոր են առողջական վիճակի գնահատման այնպիսի մեխանիզմներ սահմանել, որոնց շնորհիվ հնարավոր կլինի պարզել, թե զորակոչիկի կամ զինծառայողների մոտ առկա առողջական խնդիրների որակական համակցությունը արդյոք թույլ կտա պատշաճ իրականացնել զինվորական պարտականությունները և չի հանգեցնի առողջական խնդիրների վատթարացման:

Պետք է ընդգծել, որ Պաշտպանության նախարարությունը 2020 թվականի սեպտեմբերին շրջանառության մեջ է դրել ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու նախագիծ, որով զինապարտների փորձաքննության կարգում և չափանիշներում նախատեսվում են հիմնարար փոփոխություններ:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշումների նախագծեր պատրաստելու նպատակով Պաշտպանության և Արդարադատության նախարարությունների համապատասխան աշխատակիցների ներգրավմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ: Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիտարկումները տրամադրվել են աշխատանքային խմբին՝ աշխատանքային քննարկումների ընթացքում հաշվի առնելու համար:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշումների նախագծերը նախատեսվում է շրջանառության մեջ դնել 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

Այնուամենայնիվ, պարզ չէ, թե արդյոք Պաշտպանի առաջարկությունն իրացված է նախագծով:

Միննույն ժամանակ, հարկ է արձանագրել, որ նշված խնդրի կապակցությամբ Պաշտպանը քաղաքացիներից շարունակում է ստանալ բողոքներ:

Մեկ այլ խնդիր վերաբերում է մի քանի առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 8-ի թիվ 405-Ն որոշման համաձայն՝ այն **զորակոչիկները**, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով հինգ և ավելի տարբեր հիվանդություններով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող և նրանց տրվում է տարկետում մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման նպատակով:

Մինչդեռ, որոշմամբ **սահմանված չէ զինվորական ծառայությունից ազատելու հնարավորություն այն դեպքերի համար, երբ, օրինակ, հինգերորդ հիվանդությունն անձը ձեռք է բերում ծառայության ընթացքում: Արդյունքում ստացվում է, որ նույն առողջական վիճակն ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրվում է, իսկ այն պարտադիր ժամկետային զինծառայողները, որոնց առողջական վիճակը վատթարանում է ծառայության ընթացքում, տարկետում չեն ստանում:**

Նշված խնդիրների կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականին հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ, ինչպես նաև գրություններ է հասցեագրել Ազգային ժողով, Պաշտպանության և Արդարադատության նախարարություններ:

Սակայն ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ գրություններով բարձրացված հարցերն Ազգային ժողովում մնացել են անարձագանք, իսկ խնդիրները շարունակում են մնալ չլուծված և արդիական:

Նախորդ տարիների հաղորդումներով Պաշտպանն անդրադարձել է նաև բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների հայեցողության սահմանի հետ կապված որոշ խնդիրների:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի թիվ 405-Ն որոշումը հստակ սահմանում են բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների իրավասությունը:

Չնայած գործող իրավակարգավորումներին՝ 2021 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման և ուսումնասիրության ընթացքում կրկին արձանագրվել են հանձնաժողովներին վերապահված հայեցողական լիազորությունների ոչ ճիշտ կիրառման դեպքեր:

Արձանագրվել են դեպքեր, երբ զորակոչիկների փորձաքննությունն իրականացնող հանձնաժողովները մի քանի առողջական խնդիրների կապակցությամբ եզրակացություն են ներկայացրել ոչ բոլոր խնդիրների մասով: Զորակոչիկների փորձաքննությունն իրականացնող հանձնաժողովները պետք է շահագրգռված լինեն բացահայտելու ու արձանագրելու զորակոչիկի բոլոր առողջական խնդիրները, առավել ևս, եթե դրանով կարող է փոխվել զորակոչիկի պիտանիության աստիճանը:

Պաշտպանի նախորդ տարիների հաղորդումներով արձանագրվել էր հայեցողական լիազորությունների հետ կապված մեկ այլ խնդիր: Քաղաքացիները տեղեկացրել են, որ «անգիտորոֆոներոզ» ախտորոշման պատճառով ձմեռային զորակոչից ստացել են տարկետում մինչև հաջորդ՝ ամառային զորակոչ: Որոշ բողոքներով հայտնել են, որ նշված առողջական խնդրի պատճառով ամառային զորակոչից տարկետում է տրվել մինչև հաջորդ տարվա ամառային զորակոչ:

Հարցի կապակցությամբ ուշագրավ է Պաշտպանության նախարարության պատասխանը, համաձայն որի՝ 2021 թվականի ընթացքում «անգիտորոֆոներոզ» ախտորոշմամբ մինչև ամառային զորակոչ տրվել է տարկետում 92 զորակոչիկի, իսկ մինչև ձմեռային զորակոչ՝ 91 զորակոչիկի: Մինևույն ժամանակ, ըստ Պաշտպանության նախարարության, «անգիտորոֆոներոզ» ախտորոշմամբ զինվորական ծառայությունից վաղաժամկետ զորացրվել է 4 զինծառայող:

Եվս մեկ անգամ շեշտում ենք, որ նշված առողջական խնդրի պատճառով տարկետման տրամադրման ժամկետների (մինչև ամառային կամ ձմեռային զորակոչ) հայեցողության հարցը շարունակում է մնալ խնդրահարույց, քանի որ Պաշտպանին հասցեագրված բողոքների, ինչպես նաև դրանցում առկա բժշկական փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում են, որ «անգիտորոֆոներոզ» ախտորոշման արդյունքները կախված եղանակից տարբերվում են: Դրա հետևանքով ամառային զորակոչին փորձաքննվողը ճանաչվում է պիտանի կամ սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

Ուշագրավ է նաև պետական իրավասու մարմինների տրամադրած վիճակագրությունը:

Ըստ Քննչական կոմիտեի՝ ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու հանցակազմի հատկանիշներով հարուցված քրեական գործերի քննության շրջանակներում իրականացված դատաբժշկական-ռազմաբժշկական փորձաքննությունների եզրակացություններով 2021 թվականի ընթացքում 166 մեղադրյալ ճանաչվել է զինվորական ծառայության համար ոչ պիտանի, որից 81-ը՝ ժամանակավորապես ոչ պիտանի և բուժման կարիք ունեցող:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ Վարչական դատարան է բողոքարկվել Ռազմաբժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների երկու որոշում, ինչպես նաև՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի 4 եզրակացություն:

2021 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած 129 եզրակացություն բողոքարկվել է ՀՀ պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի ներքո գործող 2021 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում քաղաքացիների դիմումները և բողոքները քննարկող հանձնաժողովին: 72 դիմումների վերաբերյալ նշանակվել է լրացուցիչ քննություն, որի արդյունքում 26 եզրակացություն փոխվել է:

Կրկին անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» նախագծին՝

Պաշտպանն ընդգծում է, որ դրա վերաբերյալ ներկայացված դիտարկումներից մեկը վերաբերել է հենց «անգիտորոճները» օրվա օրվա իրականացվող փորձաքննություններին:

Մասնավորապես, Պաշտպանն արձանագրել է, որ Նախագծով «անգիտորոճները» օրվա օրվա բացակայում է: Որպես հիմնավորում, Պաշտպանության նախարարությունը մշտապես ներկայացրել է պարզաբանում այն մասին, որ «անգիտորոճները» այլ հիվանդությունների հետևանքով առաջ եկող հետևանք է, ուստի առավել նպատակահարմար է վեր հանել այն հիվանդությունները, որոնց պատճառով անձի մոտ առաջացել է «անգիտորոճները»:

Նախագծով նման փոփոխություն նախատեսելու հետ մեկտեղ անհրաժեշտ է հստակ պարզաբանել, թե արդյոք նախկինում նման տիպի օրվա օրվա ունեցող զորակոչիկների և զինծառայողների մոտ բացահայտվել է «անգիտորոճները» ի հայտ գալու պատճառ հանդիսացած հիվանդություն(ներ)ը: Հակառակ պայմաններում գործնականում կառաջանան իրավիճակներ, երբ «անգիտորոճները» օրվա օրվա ունեցող անձինք զորակոչվեն, այդպես էլ չհիմանալով այն հիմանական հիվանդության մասին, որը դարձել է դրա առաջացման պատճառ:

Նշվածով պայմանավորված՝ Պաշտպանը ներկայացրել է դիրքորոշում առ այն, որ հարկ է հստակ նշել «անգիտորոճները» պատճառ հանդիսացող հիվանդությունները, հակառակ պարագայում՝ պահպանել «անգիտորոճները» օրվա օրվա դեպքում տարկետման հնարավորությունը:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է.*

1. *հիվանդությունների քանակական փնջի հետ միասին քննարկել «հիվանդությունների որակական փունջ», ինչպես նաև անձին զինվորական ծառայության զորակոչելիս նրա առողջական վիճակի գնահատման մեխանիզմ սահմանելու հարցը,*

2. *նախատեսել, որ զինվորական ծառայության ընթացքում հինգերորդ հիվանդության ձեռքբերումը հիմք է զինծառայողի պիտանիության վերանայման համար,*

3. *մի քանի առողջական խնդիրներ ունեցող զինապարտի առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ, նույնիսկ եթե առողջական խնդիրներից մեկով հիմքեր կան քաղաքացուն տարկետում տրամադրելու համար,*

4. *«անգիտորոճները» օրվա օրվա ունեցող զորակոչիկների փաստացի առողջական վիճակը պարզելու համար նրանց բժշկական հետազոտություններն ու փորձաքննությունը կազմակերպել ձմեռային զորակոչին (տարկետման ժամկետը որոշելիս պարտադիր հաշվի առնել, որ կախված եղանակից արդյունքներն էականորեն կարող են տարբերվել)՝ նկատի ունենալով, որ Կենտրոնական բժշկական հանձնաժողովն ունի «մինչև մեկ տարի» ժամկետով տարկետում տրամադրելու հայեցողություն և հաշվի առնելով, որ նշված առողջական խնդիրն առավել արտահայտվում է ցուրտ եղանակին,*

5. *ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշումը փոփոխելիս հստակ նշել «անգիտորոճները» պատճառ հանդիսացող հիվանդությունները, հակառակ պարագայում՝ պահպանել «անգիտորոճները» օրվա օրվա դեպքում տարկետման հնարավորությունը:*

### **3. Զինապարտ քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերանայման անհրաժեշտությունը**

Միջազգային մի շարք փաստաթղթերով ամրագրված է քաղաքացիների առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկելու նպատակով զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ ներդնելու պետության պարտավորությունը<sup>668</sup>:

Նշվածի համատեքստում չափազանց կարևոր է ի սկզբանե ծառայության զորակոչել առողջ քաղաքացիների, իսկ որոշակի առողջական խնդիրների առկայության դեպքում հատուկ ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ դրանք լինեն համատեղելի ծառայության հետ և զինծառայողների համար չդառնան անհամաչափ բեռ: Այս առումով առանցքային նշանակություն ունի զինվորական ծառայության պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունները սահմանող ցանկի կատարելագործման շարունակականությունը:

Նշվածի կապակցությամբ, որպես դրական քայլ, հարկ է ընդգծել, որ 2020 թվականին Պաշտպանության նախարարությունը մշակել և շրջանառել է ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն և 405-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու նախագծեր, որոնցով նախատեսվում է որոշումներում կատարել համակարգային և սկզբունքային փոփոխություններ:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ Պաշտպանության նախարարության կողմից իրականացվում են ընթացիկ վիճակի գնահատման, տարբեր հիվանդություններ ունեցող զինծառայողների՝ ծառայությունը հարմարվելու և զինվորական ծառայությունը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ նախապայմանների գնահատման աշխատանքներ, և կատարվում են համապատասխան փոփոխություններ: Ընդ որում, Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում արձանագրված որոշ խնդիրներ ևս շրջանառված փոփոխությունների նախագծերով լուծում են ստանալու (առնվազն ֆորմալ հարթության մեջ):

Այդպիսի օրինակ է Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ ներկայացված՝ «գիշերամիզություն» հիվանդություն ունեցող քաղաքացիներին Զինված ուժեր զորակոչելու աննպատակահարմարության հարցը:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում 55 ա «գիշերամիզություն» ախտորոշմամբ զինվորական ծառայության են զորակոչվել թվով 21 զորակոչիկներ, նշված ախտորոշմամբ որոշ զորակոչիկներ ներկայացրել են զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու խնդրանքով դիմումներ:

---

<sup>668</sup> Տե՛ս, օրինակ, Կայանկին ընդդեմ Ռուսաստանի վճիռը (Kayankin v. Russia), 2010 թվականի մայիսի 11, գանգատ թիվ 24427/02, կետ 87, [https://hudoc.echr.coe.int/eng#{"itemid":\["001-97214"\]}](https://hudoc.echr.coe.int/eng#{)



Դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել էր, որ Պաշտպանին հասցեագրվում են բողոքներ, որոնցով քաղաքացիները մտահոգություն են բարձրացնում նման հիվանդությամբ զինծառայողների ծառայության պայմաններին հարմարվելու, արժանապատվության, ինչպես նաև ծառայությունը զինծառայողների համար բեռ դառնալու վերաբերյալ: Նշված խնդիրը քննարկվել է նաև 2019-2020 թվականներին կայացած՝ Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի նիստերի ժամանակ, որի ընթացքում «գիշերամիզություն» ունեցող անձանց զորակոչելը խնդրահարույց է համարվել նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ստուգումների և զորամասերում կատարված հարցումների արդյունքում պարզվել է, որ նշված ախտորոշում ունեցող զինծառայողների ծառայությունը գնահատվում է բավարար: Նրանք իրականացնում են տարբեր տիպի թեթև աշխատանքներ և ներքին վերակարգերում հերթապահություն:

Չնայած Պաշտպանության նախարարության պնդմանը՝ 2021 թվականի ընթացքում զորամաս կատարված այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները հանդիպել են այդտեղ ծառայություն անցնող և «գիշերամիզություն» հիվանդություն ունեցող զինծառայողների հետ: Արձանագրվել է, որ զինծառայողները տեղակայվել են առանձին ննջարանում: Զինծառայողները տեղեկացրել են, որ գրեթե ամեն օր լոգանք են ընդունում: Նշել են, որ մարտական հերթապահության չեն ընդգրկվում, կատարում են միայն օրապահի պարտականություններ: **Նաև ներկայացրել են, որ չնայած իրենց առողջական վիճակին՝ հիմնականում աշխատում են պահեստում և ընդգրկվում են զորամասի ֆիզիկական աշխատանքներին:**

Բոլոր զինծառայողների հետ ունեն լավ հարաբերություններ: Իրենց մոտ առկա հիվանդության պատճառով չեն թիրախավորվում ծառայակիցների կողմից:

**Առանձնագրույցի ընթացքում զինծառայողները նշել են, որ առավել նպատակահարմար կլիներ իրենց հիվանդությունը հաշվի առնելով չզորակոչվելին, քանի որ ծառայությունն իրենց համար բարդ է անցնում և մյուս զինծառայողների նման զինված ուժերում չեն կարողանում ծառայություն տանել:** Ի դեպ, այս խնդիրը բազմիցս բարձրացվել և քննարկվել է Պաշտպանության նախարարության և Զինված ուժերի գլխավոր շտաբի ներկայացուցիչների ետ:

**Պաշտպանի գնահատմամբ՝ եթե նման կարեգործիայի զինծառայողներն իրականում էական օգուտ չեն փայլիս զինված ուժերին, ապա նրանց զորակոչելու նպատակահարմարության հարցը պետք է վերանայել: Հակառակ դեպքում, միայն ասել, որ նրանց ծառայությունը «գնահատվում է բավարար», հիմնավոր չէ:**

Շրջանառված նախագծով նախատեսվել է, որ «գիշերամիզություն» հիվանդություն ունեցող զորակոչիկները (այն դեպքում, երբ հիվանդությունը հաստատված է և առանց նյարդային, հոգեբուժական կամ միզասեռական համակարգի հիվանդությունների ախտանիշների է) ժամանակավորապես ոչ պիտանի են ճանաչվելու զինվորական ծառայության համար:

Դրականի հետ մեկտեղ, որոշ հիվանդությունների համար առաջարկվող նախագծով նախատեսվում են նաև խստացումներ: Օրինակ, Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ խնդիր է առկա ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով նախատեսված ցանկի 30-րդ հոդվածով նախատեսված հիվանդություն ունեցող քաղաքացիներին ծառայության զորակոչելու վերաբերյալ: Այսպես, նախկինում արյան մեջ անուղղակի բիլիռուբինը կայուն 25 մկմոլ/լ-ից ավելի լինելու դեպքում զորակոչիկներին տրվում էր տարկետում մինչև մեկ տարի ժամկետով, որից հետո նշանակվում էր կրկնակի փորձաքննություն: Կատարված փոփոխությունների արդյունքում և ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հիվանդությունների ցանկի 30-րդ հոդվածի համաձայն՝ զորակոչիկներին տարկետում է տրվում արյան մեջ անուղղակի բիլիռուբինը կայուն 40 մկմոլ/լ-ից ավելի լինելու դեպքում:

Պաշտպանին նախկինում հասցեագրված բողոքներից մեկով զորակոչիկը տեղեկացրել է, որ զինվորական կոմիսարիատի ուղեգրով անցած երկու հետազոտությունների արդյունքում իր արյան մեջ անուղղակի բիլիռուբինը նշվել է 34 և 33,3 մկմոլ/լ, սակայն իր սեփական նախաձեռնությամբ և միջոցներով անցած երեք հետազոտությունների արդյունքում արյան մեջ անուղղակի բիլիռուբինը եղել է 40 մկմոլ/լ-ից ավելի:

Վերոնշյալի համատեքստում անդրադարձ էր կատարվել երկու հարցի: Առաջին հերթին՝ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշումն ընդունելիս ներկայացված չի եղել անուղղակի բիլիռուբինի ցուցանիշը 25-ից 40 մկմոլ/լ բարձրացնելու հիմնավորում, ինչի պատճառով պարզ չէ, թե որն է եղել այդպիսի փոփոխության համար հիմք հանդիսացած հանգամանքը: Երկրորդ՝ ինչպես նախորդ, այնպես էլ գործող կարգավորումներից պարզ չէ, թե ինչ չափանիշներով է որոշվում արյան մեջ բիլիռուբինի 40 մկմոլ/լ-ից բարձր լինելու *կայունությունը*: Ինչպես նշվեց, եղել են դեպքեր, երբ հետազոտությունների երկու արդյունքներով անուղղակի բիլիռուբինը արյան մեջ եղել է 40 մկմոլ/լ-ից ցածր, իսկ երեք արդյունքներով՝ բարձր: Այս դեպքում պարզ չէ, թե անուղղակի բիլիռուբինի 40 մկմոլ/լ-ից ավելի լինելը կայուն է համարվում բոլոր հետազոտություններով միաժամանակ բարձր լինելու դեպքում, և արդյոք, օրինակ, հինգ հետազոտություններից միայն մեկով 40-ից ցածր լինելն արդեն համարվում է ոչ կայուն:

Չնայած Պաշտպանի վերը շարադրված արձանագրմանը՝ 2020 թվականին շրջանառված նախագծով նախատեսվել է, որ բարորակ հիպերբիլիռուբինեմիայի դեպքում, երբ արյան մեջ անուղղակի բիլիռուբինը 40 մկմոլ/լ-ից ավելի է, փորձաքննությունը իրականացվում է «ե» կետով (առաջին և երկրորդ սյունակով ճանաչվում են «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար» (ծառայություն հեշտացված օրվա կարգացուցակով)): Այսպիսով, ստացվում է, որ առաջարկվող փոփոխությամբ ոչ միայն չի իջեցվել արյան մեջ անուղղակի բիլիռուբինի քանակի ցուցանիշը, այլ հակառակը՝ նախագծով կարգավորումից հանվել է նույնիսկ «կայունության» պահանջը և նախատեսվել, որ անուղղակի բիլիռուբինը 40 մկմոլ/լ-ից ավելի լինելու դեպքում (նույնիսկ կայուն բարձր լինելու դեպքում)՝ փորձաքննվողը սահմանափակումով պիտանի է

ճանաչվում զինվորական ծառայության համար: Կան նաև կարգավորումներ, որոնք Պաշտպանի դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ գնահատվել էր առանց հիմնավորումների փոփոխված, և նույնությամբ պահպանվել նաև առաջարկվող նախագծում. օրինակ, կիֆոզի ծովածության անկյունը, մոտոր-էվակուատոր ֆունկցիայի դանդաղման ցուցանիշը և այլն:

Բացի դրանից, առաջարկվող նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքով արձանագրվել է նաև, որ նախագծով կարգավորվում է, թե ցանկի որ սյունակներով են փորձաքննվում քաղաքացիները: Մինչդեռ նշված չէ, թե որ սյունակով են փորձաքննվելու զորահավաքին ներգրավվող պահեստազորում հաշվառված քաղաքացիները:

Ներկայացված նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրած խնդիրներն ու մյուս դիրքորոշումները սահմանված կարգով ներկայացվել են Պաշտպանության նախարարության քննարկմանը, և նշված դիտարկումների, ինչպես նաև սույն ենթաբաժնում շարադրված խնդիրների հաշվառմամբ՝ նախագծի ընդունումը էականորեն դրական տեղաշարժ կհանդիսանա:

Մեկ այլ խնդիր կապված է զինապարտ քաղաքացիների պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդությունների տեսակով պայմանավորված՝ քաղաքացիներին առհասարակ փորձաքննելու պահանջի վերանայման հետ:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները երեք տարին մեկ ենթակա են բժշկական վերափորձաքննության, որի արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելու դեպքում շարքային կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 27 տարին լրանալը, իսկ սպայական կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 35 տարին լրանալը, ենթակա են սույն օրենքով սահմանված կարգով զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը, եթե նրանց չծառայած ժամկետը գերազանցում է վեց ամիսը:

Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ սահմանված ցանկում, ի թիվս այլնի, առկա են հիվանդություններ, որոնցով փորձաքննվող անձի առողջական վիճակը հետազայում բարելավվել չի կարող: Օրինակ, հիվանդությունների ցանկի 44-րդ հոդվածով սահմանվում են ցանկացած մակարդակով վերջույթի բացակայության և ամպուտացիայի դեպքերը, և նշված հոդվածով փորձաքննվողները ոչ պիտանի են ճանաչվում զինվորական ծառայության համար: Մեկ այլ օրինակ. 3-րդ հոդվածով նախատեսված են շիզոֆրենիան, շիզոտիպային և զառանցանքային խանգարումները, որոնց առկայության կամ առաջացման դեպքում ևս փորձաքննվողը ոչ պիտանի է ճանաչվում զինվորական ծառայության համար:

Խնդիրը նրանում է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասը, գործող ձևակերպմամբ, որևէ բացառություն չի նախատեսում անգամ վերևում նշված հոդվածներով փորձաքննվող անձանց հետազայում փորձաքննելու հետ

կապված, ինչը թե՛ այդպիսի լուրջ առողջական խնդիրներ ունեցող անձանց ավելորդ քաշքշուկների, թե՛ պետական ռեսուրսն անարդյունավետ օգտագործման տեսանկյունից խնդրահարույց է:

Պաշտպանը կարևորում է Պաշտպանության նախարարությունից տրամադրված տեղեկությունն այն մասին, որ «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ու «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Կառավարության որոշումների նախագծերի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկումները տրամադրվել են փոփոխությունների նախագծեր պատրաստելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբին՝ աշխատանքային քննարկումների ընթացքում հաշվի առնելու համար: Նախարարությունից նաև տեղեկացվել է, որ նախագծերը նախատեսվում է շրջանառության մեջ դնել 2022 թվականի հունվար-փետրվար ամիսներին:

*Հետևաբար, անհրաժեշտ է.*

1. *հաշվի առնելով առանձին հիվանդությունների հետ կապված խնդրահարույց դեպքերի առկայությունը՝ օր առաջ ընդունել Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման անհրաժեշտ փոփոխությունների նախագիծը, ինչը գործնականում կարող է բազմաթիվ խնդիրների լուծման հանգեցնել,*

2. *Կառավարության նշված որոշմամբ նախատեսել այն առողջական խնդիրները, որոնց առկայության դեպքում առողջական վիճակի դրական փոփոխություն այլևս հնարավոր չէ, և դրանով պայմանավորված էլ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նման առողջական խնդիրներ ունեցող անձանց ազատել վերափորձաքննության պարտականությունից:*

#### **4. Բժշկական փաստաթղթերը ստանալու իրավունքը**

Միջազգային և ներպետական իրավական փաստաթղթերով ամրագրված է բժշկական փաստաթղթերին ծանոթանալու և դրանք ստանալու անձի իրավունքը<sup>669</sup>: Չնայած իրավական հստակ չափորոշիչների առկայությանը՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի ընթացքում շարունակել է ստանալ բողոքներ առողջական վիճակի և բժշկական հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների վերաբերյալ տեղեկություն, ինչպես նաև ռազմաբժշկական ու բժշկական փորձաքննության

<sup>669</sup> Տե՛ս, օրինակ, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 50-րդ կետը, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 5-րդ մասը, ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի 36-րդ կետի 4-րդ ենթակետը և այլն:

արդյունքներով կայացված որոշումները և այլ բժշկական փաստաթղթերը չտրամադրելու վերաբերյալ<sup>670</sup>:

Օրինակ, զորակոչիկի մայրը Մարդու իրավունքների պաշտպանի թե՛ գծի հեռախոսահամարին ահազանգ ներկայացնելով՝ տեղեկացրել է, որ զորակոչիկ որդին Ջորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանման (զինկոմիսարիատ) ուղեգրով անցել է բժշկական հետազոտություններ: Դրանից հետո բժշկական հաստատությունից խնդրել է տրամադրել իր առողջական վիճակի հետազոտման արդյունքներով տրված բժշկական փաստաթղթերի պատճենները, սակայն մերժում է ստացել: Ըստ քաղաքացու՝ բժշկական կենտրոնից տեղեկացրել են, որ հետազոտությունների արդյունքներն ուղարկվելու են տարածքային ստորաբաժանում, և քաղաքացին կարող է այցելել այնտեղ և ստանալ պահանջվող փաստաթղթերը: Ջորակոչիկի մայրը դժգոհել է, որ շուրջ 20 օր է, ինչ որդին պարբերաբար այցելում է տարածքային ստորաբաժանում, որտեղից ստանում է պատասխան այն մասին, որ բժշկական հաստատությունից հետազոտությունների պատասխանները դեռևս չեն ստացվել:

Արագ արձագանքման շրջանակում խնդիրը ներկայացվել է կոնկրետ բժշկական հաստատությանը և առաջարկվել քաղաքացուն տրամադրել պահանջվող բժշկական փաստաթղթերի պատճենները: Նույն օրը զորակոչիկի մայրը լրացուցիչ հայտնել է, որ որդին այցելել է բժշկական կենտրոն և ստացել անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի պատճենները:

Այս դեպքը եզակի չէ: Բազմաթիվ բողոքներ են ստացվել զորակոչիկներից ու նրանց ընտանիքների անդամներից ինչպես բժշկական հաստատությունների այնպես էլ Ջորակոչային և զորահավաքային համալրման տարածքային ստորաբաժանումների (զինկոմիսարիատ) կողմից զորակոչիկների անցած բժշկական հետազոտությունների արդյունքները նրանց չտրամադրելու վերաբերյալ: Քիչ չեն նաև բողոքները զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի և Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությունները զորակոչիկներին չտրամադրելու հետ կապված:

Օրինակ, զորակոչիկի հայրը Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել է, որ որդին փորձաքննության արդյունքով սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար, համաձայն չէ ներկայացված եզրակացության հետ և ցանկանում է այն բողոքարկել: Մինչդեռ, ըստ պնդման՝ զինկոմիսարիատը չի տրամադրում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացության պատճենը:

Ճիշտ է, արագ արձագանքման շրջանակում զորակոչիկը ստացավ պահանջվող եզրակացության պատճենը, սակայն նմանատիպ դեպքերը մտահոգիչ են հատկապես հաշվի առնելով վերը նշված օրենսդրական հստակ մեխանիզմների առկայությունը: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ բժշկական փաստաթղթերի տրամադրման

<sup>670</sup> Ուշագրավ է, որ ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ 2021 թվականի ընթացքում զորակոչիկներին կամ նրանց օրինական ներկայացուցիչներին բժշկական հետազոտության արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը չտրամադրելու մասին նախարարությունում բողոքներ չեն ստացվել:

պարտադիր կարգ բուժհաստատությունների և Ջորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումների (զինկոմիսարիատ) համար սահմանելն ինքնանպատակ չէ. դա կարևոր է ինչպես անձի՝ իր առողջական վիճակի վերաբերյալ ամբողջական տեղեկություններ ստանալու և դրանով պայմանավորված՝ առողջության պահպանման իրավունքի իրացման, այնպես էլ տրված եզրակացությունների բողոքարկման տեսանկյունից:

Հաշվի առնելով, որ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանը ստանում է բժշկական փաստաթղթերը չտրամադրելու հետ կապված բողոքներ և հարցը բարձրացնում է ինչպես առանձին բողոքների քննարկման շրջանակներում, այնպես էլ տարեկան հաղորդումներում և նկատի ունենալով, որ պրակտիկայում նմանատիպ խնդիրները չեն վերանում՝ Պաշտպանը 2021 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում հրապարակել է իրազեկող տեսանյութ զորակոչիկի՝ առողջական վիճակի հետազոտության և բժշկական փորձաքննության ընթացքին ծանոթանալու, եզրակացություններ ու այլ փաստաթղթեր ստանալու իրավունքի վերաբերյալ<sup>671</sup>:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ բժշկական փաստաթղթերը ստանալու քաղաքացիների իրավունքն ապահովելու նպատակով անհրաժեշտ է խստացնել հսկողությունը Ջորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումների, բժշկական հաստատությունների, զինվորական հոսպիտալների, բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովների գործունեության նկատմամբ:*

---

<sup>671</sup> <https://cutt.ly/aIKHtzm>

## **ԳԼՈՒԽ 4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

### **1. Անընդհատ և շարունակական կրթության իրավունքը**

Կրթության իրավունքի և զինվորական ծառայության հետ կապված հարցերը եղել են Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության կենտրոնում:

Ընդհանրապես, կրթության իրավունքը ոչ միայն նպաստում է կրթություն ստացող անձի կատարելագործմանը, այլ նաև հիմք է ստեղծում ունենալու տարբեր ոլորտներում պրոֆեսիոնալ մասնագետներ, ինչը պետության և հասարակության զարգացման գրավականն է: Առանց պետության կողմից անհրաժեշտ նախապայմանների և հավասար հնարավորությունների ստեղծման՝ կրթության իրավունքի պատշաճ ապահովումը հնարավոր չի լինի: Կրթության իրավունքը ամրագրված է ինչպես միջազգային, այնպես էլ սահմանադրական երաշխիքներով: Ուստի, զինվորական ծառայության կազմակերպման ընթացքում նույնպես պետք է հաշվի առնվի քաղաքացու կրթություն ստանալու իրավունքը: Այլ կերպ՝ զինվորական ծառայությունը չպետք է պատճառ հանդիսանա քաղաքացուն կրթություն ստանալու իրավունքից զրկելու համար:

Կրթության իրավունքի իրացման հետ կապված դեռ նախորդ տարիներին արձանագրվել էին որոշակի խնդիրներ:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել էր, որ որպես գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող անձ՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացել է տարկետում: Նշել էր, որ մինչև տրված տարկետման ժամկետի ավարտը չէր հասցնում ավարտել ասպիրանտուրայում ուսումը, քանի որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 451-Ն որոշման 10-րդ կետի համաձայն՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ տարկետում տրվում է համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ժամկետով՝ սակայն ոչ ավելի, քան մինչև քաղաքացու 26 տարին լրանալու օրը:

Նշված խնդրի կապակցությամբ հարկ է նաև նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն ամրագրում է նպատակային ուսումնառության համար զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերը՝ միաժամանակ սահմանելով տարկետման տրամադրման առավելագույն ժամկետները: Մասնավորապես, հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով իբրև այդպիսի սահմանափակում ամրագրվում է ուսումնառության ավարտի օրը, սակայն ոչ ավելի, քան անձի 26 տարին լրանալը, երբ խոսքը վերաբերում է բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորող քաղաքացուն:

Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետն ամրագրում է, որ քաղաքացուն տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան անձի 19 տարին լրանալը, երբ խոսքը վերաբերում է նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողին:

Օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումների ընդհանուր դիտարկումը ցույց է տալիս, որ տարկետման ժամկետային սահմանափակումները սահմանված են՝ հաշվի առնելով կրթական ծրագրի շարունակականության ապահովման իրական հնարավորությունը: Այլ կերպ ասած, օրինակ, բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրի սովորողի դեպքում մինչև 26 տարին լրանալու պայմանն իրատեսական է՝ կրթությունն ավարտին հասցնելու և հետևաբար, տարկետման տրամադրման՝ օրենքով սահմանված իրավաչափ նպատակի իրագործման տեսանկյունից: Նույն տրամաբանությամբ նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրի դեպքում 19 տարին լրանալու շեմը թերևս սահմանվել է՝ հաշվի առնելով «Կրթության մասին» օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ մասի կարգավորումը, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում տասներկուամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

Ավելին, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտին հասցնելու նպատակով Կառավարության որոշմամբ ևս մեկ անգամ տարկետման հնարավորություն՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ:

Մինչդեռ, հարկ է նկատել, որ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացու՝ զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի իրացման դեպքում կրթությունն ավարտին հասցնելու և ըստ այդմ, տարկետման իրավաչափ նպատակի իրագործումը (խնդրո առարկա ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման 10-րդ կետի սահմանափակման պատճառով) գործնականում չի երաշխավորվում:

Միևնույն ժամանակ, դիտարկվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետևյալ պարզաբանումը. խնդրո առարկա կարգավորումն ուղղված է նրան, որ չստացվի, թե անձին տրվել է ոչ թե տարկետում, այլ կայացվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու որոշում, ինչը կհակասի վերը նշված իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին:

Ընդունելի է, որ նախատեսվող կարգավորումներով պետք է բացառվեն այն իրավիճակները, երբ քաղաքացին, տարկետման տևողությամբ պայմանավորված, ինքնաբերաբար ազատվի պարտադիր զինվորական ծառայությունից՝ տարիքը լրանալու հիմքով:



Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկել էր ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման 10-րդ կետում կատարել փոփոխություն՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելով մինչև 26,5 տարեկանը:

Առաջարկվող կարգավորումը մի կողմից՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացուն համապատասխան կրթական ծրագրով ուսումնառությունն ավարտին հասցնելու հնարավորություն կտա, մյուս կողմից՝ կբացառվեն 27 տարին լրանալու հիմքով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերը: Ավելին, այս առաջարկն առավել իրատեսական է դարձնում օրենքի այն դրույթի կիրառելիությունն ու իրավաչափ նպատակի իրագործումը, որով սահմանվում է գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացու տարկետման հնարավորությունը:

Այնուամենայնիվ, առաջարկը դեռևս չի իրացվել. սա անընդունելի է և պետք է անհապաղ լուծում ստանա:

Մեկ այլ խնդիր. Կառավարության տվյալ որոշմամբ նշվում է, որ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի նիստին կարող են մասնակցել նաև դիմում ներկայացրած քաղաքացին կամ նրա ծնողները կամ նրա կողմից նշված այլ անձինք, սակայն յուրաքանչյուր քաղաքացու մասով՝ մեկ անձից ոչ ավելի: Նման կարգավորումն իրավաչափ համարվել չի կարող՝ հատկապես նկատի ունենալով, որ **վարչական վարույթի ընթացքում անձը չպետք է կաշկանդված լինի իր ներկայացուցիչների քանակով**: Սա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածում ամրագրված՝ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքից:

Բացի այդ, սահմանված չեն այն դեպքերը, երբ հանձնաժողովի անդամը, շահերի բախման կամ այլ հանգամանքներով պայմանավորված, չի կարող մասնակցել հանձնաժողովի նիստին (օրինակ՝ դիմորդն իր ընտանիքի անդամն է կամ աշակերտը):

Հատկանշական է, որ վերը նշված երկու խնդիրների առնչությամբ Պաշտպանի ներկայացրած առաջարկները չեն իրացվել:

*Հերևաբար, ևս մեկ անգամ առաջարկվում է.*

1. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման 10-րդ կետում կատարել փոփոխություն՝ գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելով մինչև 26,5 տարեկանը,

2. վերացնել Հանձնաժողովի նիստերին յուրաքանչյուր քաղաքացու կողմից մեկ անձ ներկա գտնվելու սահմանափակումը,

3. սահմանել այն դեպքերը, երբ հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել հանձնաժողովի նիստին:

## 2. Նպատակային ուսումնառության համար տարկետում ստանալու իրավունքը

«Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է պարտադիր զինվորական ծառայության զորակոչից նպատակային ուսումնառության համար տարկետման իրավունքը: Ըստ նշված դրույթի մեկնաբանության՝ զինապարտ քաղաքացին կրթությունը շարունակելու համար տարկետում կարող է ստանալ նաև Բարձրագույն ուսումնական հաստատություններում առկա ուսուցմամբ սովորելիս՝ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին Պաշտպանության նախարարության հետ քաղաքացիաիրավական պայմանագիր կնքելու դեպքում («Պատիվ ունեմ» ծրագիր):

Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 18 տարին չլրացած անձանց հետ վերը նշված պայմանագիրը կնքելիս նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնությունը չի ստացվում: Նշված խնդիրն արձանագրվել է նաև Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում:

Այսպես, «Նպատակային ուսումնառության համար քաղաքացուն պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու և տրված տարկետումը դադարելու պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 430-Ն որոշմամբ հաստատված պայմանագրի ձևում նախատեսված չէ անչափահասի հետ պայմանագրի կնքման դեպքում նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնության ստացման հնարավորություն, ինչի հետևանքով պրակտիկայում նշված համաձայնությունը չի ստացվում:

Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ:

Հետևաբար, առանց անչափահասի օրինական ներկայացուցիչների համաձայնության կնքված պայմանագիրը հետագայում կարող է անվավեր ճանաչվել, որի հետևանքով պայմանագրի դրույթների կատարումից հրաժարվելու դեպքում ուսումնառության տարիների համար սահմանված ուսման վարձի հանրագումարի կրկնապատիկը բարձրագույն ուսումնական հաստատությանը վճարելու պարտավորություն անձի համար չի կարող առաջանալ:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 430-Ն որոշմամբ նախատեսել, որ անչափահասի հետ պայմանագիր կնքելիս նրա օրինական ներկայացուցիչի (ներկայացուցիչների) համաձայնությունը պարտադիր է: Այս առաջարկը դեռ չի իրացվել, ինչը խնդրահարույց է և պետք է անհապաղ լուծում ստանա:

Հատկանշական է, որ Կառավարության վերը նշված թիվ 430-Ն որոշման մեջ առկա խնդիրների կարգավորման նպատակով դեռևս նախագծի քննարկման շրջանակներում Պաշտպանը

ներկայացրել է նկատառումներ, որոնց մեծ մասն ընդունվել են (օրինակ՝ թեստավորման արդյունքների բողոքարկման հնարավորություն նախատեսելը, առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու կամ ազատագրվման դատապարտվելու պատճառով պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարեցվելու դեպքերում հրաժարագին վճարելու պարտավորությունից ազատելը և այլն): Դրա հետ մեկտեղ, սակայն, կան չլուծված խնդիրներ:

Օրինակ, «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 455-Ն որոշման հավելվածով նախատեսված կարգի 10-րդ կետով սահմանվում են զինվորական պատրաստությունից քաղաքացիների հեռացման դեպքերը, որոնց թվում է նաև ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանելը (անկարգապահությունը):

Նախ, պետք է սահմանել, թե կարգի իմաստով որ արարքներն են համարվում ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանել: Բացի այդ, քանի որ զինվորական պատրաստությունից հեռացումը քաղաքացու համար առաջացնում է իրավական հետևանքներ, այդ թվում՝ հրաժարագին վճարելու պարտավորության առաջացում, ուստի տվյալ դեպքերում անհրաժեշտ է անցկացնել ծառայողական քննություն՝ պարզելու, թե արդյոք քաղաքացին թույլ է տվել կարգուկանոնի խախտում, պարզել նրա մեղավորության աստիճանը և այլ հանգամանքներ՝ այդ կերպ բացառելով հնարավոր սուբյեկտիվ մոտեցումը: Մինչդեռ, գործող իրավակարգավորումների պարագայում տվյալ դեպքերում ծառայողական քննություն անցկացնել հնարավոր չէ, քանի որ «Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի թիվ 991-Ն հրամանով ռազմաուսումնական հաստատություններում զինվորական պատրաստություն անցնող քաղաքացիների կողմից ռազմաուսումնական հաստատությունների կարգուկանոնը չպահպանելու (անկարգապահության) դեպքերում ծառայողական քննություն անցնելու հնարավորություն նախատեսված չէ:

Նշվածի հիման վրա՝ Պաշտպանն առաջարկել է բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում համապատասխան ռազմաուսումնական հաստատությունում զինվորական պատրաստություն անցնող անձանց կողմից ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանելու (անկարգապահության) դեպքում նախատեսել ծառայողական քննության անցկացում: Այդ նպատակով համապատասխան փոփոխություն կատարել նաև «Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի թիվ 991-Ն հրամանում: Առաջարկը, սակայն, չի իրացվել:

Մեկ այլ խնդիր վերաբերում է նպատակային ուսումնառություն անցնող և առողջական վիճակի պատճառով տարկետում ստանալու հետևանքով պայմանագիրը դադարեցնելուց հետո քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիրը վերակնքելու հնարավորության բացակայությանը: Այս խնդիրը վեր էր հանվել 2020 թվականին Պաշտպանին ներկայացված բողոքի քննարկման արդյունքում:

Այսպես, քաղաքացին տեղեկացրել էր, որ ընդունվել է Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, կնքել ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 430-Ն որոշմամբ հաստատված կարգով ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր: Քաղաքացին տեղեկացրել էր նաև, որ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացությամբ ճանաչվել էր բուժման կարիք ունեցող, և նրան տրվել էր հինգ ամիս ժամկետով տարկետում: Այնուհետև բուհից տեղեկացել էր, որ պայմանագիրը լուծվել է: Դրանից հետո մեկ այլ հետազոտությամբ քաղաքացու մոտ նշված առողջական խնդիրը հերքվել էր, և Կենտրոնական բժշկական հանձնաժողովի եզրակացությամբ նա պիտանի էր ճանաչվել զինվորական ծառայության համար:

Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությամբ քաղաքացին վերականգնվել է «Պատիվ ունեմ» ծրագրում, և նրա հետ կրկին կնքվել էր քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր:

Ճիշտ է, բողոքի քննարկման արդյունքում քաղաքացու խնդիրը կարգավորվել էր, սակայն հետագայում նմանատիպ դեպքերը կանխելու նպատակով Պաշտպանն առաջարկել էր Կառավարության որոշմամբ սահմանել որոշակի դեպքերում (օրինակ՝ առողջական վիճակի բարելավում, բարձրագույն ուսումնական հաստատությունից ազատելու և (կամ) հեռացնելու մասին հրամանը հետագայում անվավեր ճանաչվելու) քաղաքացիական բնույթի պայմանագիրը վերակնքելու հնարավորություն: Այս առաջարկը նույնպես չի իրացվել:

*Հետևաբար, առաջարկվում է.*

1. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 430-Ն որոշմամբ նախատեսել, որ անչափահասի հետ պայմանագիր կնքելիս նրա օրինական ներկայացուցչի (ներկայացուցիչների) համաձայնությունը պարտադիր է,

2. Կառավարության որոշմամբ սահմանել որոշակի դեպքերում (օրինակ՝ առողջական վիճակի բարելավում, բարձրագույն ուսումնական հաստատությունից ազատելու և (կամ) հեռացնելու մասին հրամանը հետագայում անվավեր ճանաչվելու) քաղաքացիական բնույթի պայմանագիրը վերակնքելու հնարավորություն,

3. բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում համապատասխան ռազմաուսումնական հաստատությունում զինվորական պատրաստություն անցնող անձանց կողմից ռազմաուսումնական հաստատության ներքին կարգուկանոնը չպահպանելու (անկարգապահության) դեպքում նախատեսել ծառայողական քննության անցկացում:

Այդ նպատակով համապատասխան փոփոխություն կատարել նաև «Ծառայողական քննություն նշանակելու իրավունք ունեցող հրամանատարների (պետերի) անվանացանկը և ծառայողական քննության անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի թիվ 991-Ն հրամանում:

### **3. Ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում ստանալու իրավունքը**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու իրավունք:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում տրամադրելու վերաբերյալ բողոքներ:

Այսպես, զորակոչիկի հայրը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ ունի երեք որդի, որդիներից մեկը 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցելիս զոհվել է և շուրջ 4 ամիս համարվել անհայտ կորած: Դրանից հետո, ԴՆԹ հետազոտությամբ որդու մարմինը հայտնաբերվել է և հուղարկավորվել: Հավելել է, որ մյուս որդին ընթացիկ զորակոչին ենթակա է զորակոչման ՀՀ զինված ուժեր: Ըստ ծնողի՝ որդու զոհվելու և նրա ճակատագրի վերաբերյալ շուրջ չորս ամիս տեղեկություն չունենալու պատճառով ընտանիքի անդամները գտնվել են հոգեբանորեն ընկճված վիճակում: Զորակոչիկի ծնողը դժգոհություն է ներկայացրել առ այն, որ ընթացիկ զորակոչին որդուն չզորակոչելու և ընտանեկան հանգամանքներից ելնելով տարկետում տրամադրելու խնդրանքով դիմել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում (զինկոմիսարիատ), սակայն մերժում է ստացել:

Տվյալ իրավիճակում խնդիրն այն է, որ զորակոչիկին ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու կամ զինվորական ծառայությունից ազատելու օրենսդրական հիմքն առկա չէ (*չի հանդիսանում միակ արու զավակը*): Չնայած դրան, հաշվի առնելով զորակոչիկի փաստացի ընտանեկան պայմանները՝ Մարդու իրավունքների պաշտպանը Պաշտպանության նախարարին ուղարկված գրությամբ առաջարկել է քննարկման առարկա դարձնել զորակոչիկին տարկետում տրամադրելու հարցը:

Հարկ է նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից օրենքով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա և Պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով<sup>672</sup>:

<sup>672</sup> Ըստ Պաշտպանության նախարարության հայտնած տվյալների՝ 2021 թվականի ընթացքում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված հիմքերով տարկետում ստանալու վերաբերյալ ստացվել է 23 դիմում, որից ՀՀ պաշտպանության նախարարի

Կոնկրետ դեպքում արդյունքը եղավ այն, որ տվյալ զորակոչիկն առողջական վիճակի պատճառով ճանաչվեց ոչ պիտանի զինվորական ծառայության համար, և նրան տրվեց 3 տարի ժամկետով տարկետում: Եվ ստացվում է, որ նրա առողջական խնդիրների բացակայության պարագայում հնարավոր չէր լինելու բարձրացված հարցն ըստ էության լուծել, քանի որ ընտանեկան կարգավիճակի հիմքով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմքը բացակայում է:

Դեռևս 2020 թվականին պատգամավորական նախաձեռնությամբ ներկայացվել էր օրենքում լրացումներ կատարելու վերաբերյալ նախագիծ, որում առաջարկվում էր ընտանեկան պայմաններից ելնելով 6 ամիս ժամկետով տարկետում տրամադրել զորակոչի ենթակա այն քաղաքացուն, ում ընտանիքի անդամը մահացել է տվյալ զորակոչի ընթացքում<sup>673</sup>: Մինչդեռ, նախագիծը չի ընդունվել:

Ընտանիքի անդամի մահվան դեպքում զորակոչիկին ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու օրենսդրական հիմք սահմանելը կարևոր է նախևառաջ այն առումով, որ ընտանիքի անդամի մահվան դեպքում անձը դառնում է հոգեպես ճնշված: Տվյալ հոգեվիճակում քաղաքացիական կյանքից զինվորական միջավայրի անցմամբ խնդիրներ կարող են առաջանալ ոչ միայն հարմարվողականության, այլև զինվորական ծառայության մեջ ներգրավվելու հարցերում: Մինչդեռ, որոշակի ժամկետով տարկետում տրամադրելու դեպքում զորակոչիկը կարող է վերականգնել հոգեկան հավասարակշռությունը՝ հարմարվելով ընտանիքի անդամի կորստի փաստին: Այս հարցին անդրադարձ էր կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>674</sup>:

Հարկ է անդրադառնալ նաև մեկ այլ խնդրի: Նախկինում «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի (հոդվածն ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին) 1-ին մասի «դ» կետի համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ընտանեկան դրության բերումով տարկետում էր տրամադրվում զորակոչիկին, ով ուներ **1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին**: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 2017 թվականի դեկտեմբերի 16-ին) ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրամադրելու նշված հիմքը չի նախատեսվել:

**Այս կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետումը վերաբերում է ոչ միայն (նույնիսկ ոչ այնքան) զորակոչիկներին, այլ նախևառաջ, նրանց ընտանիքների անդամներին: Ուստի, տվյալ պարագայում տարկետում տրամադրելը կարող է հետապնդել զորակոչիկի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կնոջն առանց խնամքի չթողնելու իրավաչափ նպատակ:**

---

համապատասխան հրամաններով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրամադրվել 22 քաղաքացու:

<sup>673</sup> [http://www.parliament.am/draft\\_docs7/P-461\\_teghekanq.pdf](http://www.parliament.am/draft_docs7/P-461_teghekanq.pdf)

<sup>674</sup> Տե՛ս, 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումը, էջեր 499-501:

Ընտանեկան պայմաններից ելնելով քաղաքացուն տարկետում տրամադրելու հետ կապված մեկ այլ խնդիր բարձրացվել էր Մարդու իրավունքների պաշտպանի դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ, սակայն առ այսօր լուծում չի ստացել: Այսպես, զորակոչիկը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել էր, որ ենթակա է զորակոչման ՀՀ զինված ուժեր: Նշել էր, որ ունի մեկ զավակ, իսկ կինը գտնվում է 24 շաբաթական հղիության մեջ: Զորակոչիկը հայտնել էր, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում ստանալու նպատակով կնոջ հղիության մեջ գտնվելու ժամկետի վերաբերյալ նշումով տեղեկանքը ներկայացրել է Զորակոչային և զորահավաքային ծառայության տարածքային ստորաբաժանում, սակայն տարկետման տրամադրումը մերժվել է: Ըստ զորակոչիկի՝ տարածքային ստորաբաժանումը պատճառաբանել է, որ կնոջ վեցամսյա հղիությունը կլրանա 26 շաբաթականում, որից հետո միայն հնարավոր կլինի ընտանեկան պայմաններից ելնելով տրամադրել տարկետում:

Տվյալ իրավիճակում խնդիրն այն է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում տրվում է այն քաղաքացուն, որն ունի երկրորդ երեխայով կամ առնվազն զույգ երեխայով **վեցամսյա հղիության մեջ գտնվող կին**:

Օրենքի նշված դրույթը տարկետում տրամադրելը պայմանավորում է հղիության ժամկետի կոնկրետ ամիսը լրացած լինելու հանգամանքով: Մինչդեռ, բժշկության մեջ հղիությունը հաշվարկվում է շաբաթներով: Հենց այդ պատճառով էլ պրակտիկայում խնդիրներ են առաջանում, և անհասկանալի է մնում, թե հղիության քանի շաբաթական ժամկետն է համարվում վեցամսյա:

Նկարագրված դեպքում զորակոչիկը պատրաստակամություն էր հայտնել զորակոչվել ՀՀ զինված ուժեր և կնոջ հղիության 26 շաբաթականը լրանալուց հետո օգտվել օրենքով սահմանված տարկետման իրավունքից, այնուամենայնիվ, նշված կարգավորման հստակեցումն անհրաժեշտություն է:

Ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման հարցի վերաբերյալ խնդրահարույց տարրեր կան նաև այլ իրավակարգավորման մեջ: Օրինակ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասն ամրագրում է, որ ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման հիմք ստացած քաղաքացին իր դիմումի համաձայն կարող է հրաժարվել տարկետման իրավունքից և զորակոչվել զինծառայության: Ստացվում է, որ միայն նրա ցանկությունը (իրավունքից հրաժարվելը) բավարար է և գերակշռում է այլ անձանց շահերի նկատմամբ, մասնավորապես՝ նրանց, ում կարգավիճակով պայմանավորված պետությունը տրամադրում է զինվորական ծառայության չանցնելու արտոնություն: Ավելին, որևէ կերպ չի շոշափվում այն հարցը, թե արդյոք կարևոր չէ ընտանիքի տվյալ անդամի կարծիքը: Ուշադրության է արժանի նաև այն հարցը, թե տարկետումից հրաժարվելուց և զորակոչվելուց հետո՝ զինծառայողն

արդյոք կարող է ցանկություն հայտնել և արձակվել զինված ուժերից: Սրանք հարցեր են, որոնք ևս լրացուցիչ ուսումնասիրության կարիք ունեն:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է.*

*1. օրենսդրական փոփոխությամբ սահմանել, որ հայտարարված զորակոչի ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպքում զորակոչի ենթակա քաղաքացուն տրամադրվում է տարկետում մինչև հաջորդ զորակոչ,*

*2. քննարկել 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կին ունեցող զորակոչիկների (եթե համատեղ են բնակվում) տարկետում տրամադրելու հնարավորության հարցը:*



## ԳԼՈՒԽ 5. ՊԱՏՇԱՃ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

### 1. Առողջության պահպանումը զինվորական ծառայության ընթացքում

Միջազգային փաստաթղթերով և Սահմանադրությամբ հստակ ամրագրված է յուրաքանչյուրի, այդ թվում՝ զինծառայողների պատշաճ բուժօգնություն ստանալու իրավունքը<sup>675</sup>:

**Պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքն ամրագրող միջազգային իրավական կարգավորումների և ներպետական օրենսդրության ուսումնասիրությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ զինծառայողների պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքի իրականացման համար պետությունը պետք է ձեռնարկի այնպիսի միջոցներ, որոնք ուղղված են զինծառայողների առողջության պահպանմանը:**

2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների մի զգալի մաս առնչվել է պատշաճ բժշկական հետազոտություն և բուժում իրականացնելու խնդիրներին:

Բողոքների քննարկման ընթացքում գրավոր պարզաբանումներ են պահանջվել ՀՀ պաշտպանության նախարարությունից, իրականացվել են այցեր զինվորական հոսպիտալներ, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները հասցեագրված բողոքների կապակցությամբ ակտիվ և մշտական քննարկումներ են ունեցել Պաշտպանության նախարարության Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի հետ:

Իհարկե, անհրաժեշտ է նաև ընդգծել, որ նախորդ տարիների համեմատ՝ այդպիսի բողոքների թիվը նվազել է, սակայն որոշ խնդիրներ դեռևս շարունակում են մնալ արդիական: Բողոքներով արձանագրված յուրաքանչյուր դեպքում պարտադիր է ստուգել զինապարտ քաղաքացու փաստացի առողջական վիճակը և հավաստիանալ նրա մոտ առողջական խնդրի առկայության կամ բացակայության մասին:

2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության և քննարկման արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ պարտադիր ժամկետային զինծառայողին պատշաճ բժշկական օգնություն չի տրամադրվել:

Օրինակ՝ քաղաքացին Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին մարտական գործողությունների ընթացքում ստացել է վիրավորում, ինչից հետո նրան բժշկական օգնություն տրամադրելու նպատակով տեղափոխել են տարբեր բժշկական հաստատություններ: Բողոք ներկայացրած անձը հավելել է, որ այնուհետև որդին տեղափոխվել է զորամաս, որի

<sup>675</sup> Այդ թվում՝ 1966 թվականի դեկտեմբերի 16-ի ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրով, Ձինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականով, Սահմանադրությամբ և ներպետական օրենքներով՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք և այլն:

բուժկետում 2 օր գտնվելուց հետո դուրս է գրվել և ուղարկվել հետագա ծառայությունը շարունակելու:

Քաղաքացու պնդմամբ՝ որդին ստացել է կրունկի, մեջքի, ինչպես նաև գլխի հատվածում բեկորային վնասվածքներ, քայլում է ձեռնափայտի օգնությամբ, բժշկական հաստատություններից դուրս գրվելուց հետո նրա առողջական խնդիրները դեռևս առկա են, նա կարիք ունի բժշկական օգնության:

Մարդու իրավունքների պաշտպանը խնդիրը ներկայացրել է Պաշտպանության նախարարություն և առաջարկել զինծառայողին տրամադրել պատշաճ բուժօգնություն: Արդյունքում զինծառայողը տեղափոխվել է զինվորական հոսպիտալ, ընդունվել ստացիոնար բուժման, իրականացվել է նաև անհրաժեշտ վիրահատություն:

2021 թվականին ստացվել են մի շարք բողոքներ պլանային վիրահատությունների ձգձգումների վերաբերյալ: Օրինակ, Պաշտպանին հասցեագրած բողոքով քաղաքացին տեղեկացրել է, որ որ որդին անցնում է պարտադիր զինվորական ծառայություն, ունի առողջական խնդիրներ, մասնավորապես՝ ամորձին այտուցված է, դժվարությամբ է քայլում, ունի մշտական ցավեր, հաճախամիզություն, պարբերաբար ընդունում է ցավազրկող դեղահաբեր: Քաղաքացու տեղեկացմամբ՝ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով որդու առողջական վիճակը վատթարացել է, և զորամասի բուժկետում նրան մի քանի անգամ տրամադրվել է բուժօգնություն:

Քաղաքացին հավելել է, որ մարտական գործողությունների ավարտից հետո որդուն տրվել է լրացուցիչ արձակուրդ, որի ընթացքում նա առողջական վիճակի գանգատների կապակցությամբ Երևանի կայազորային և Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալներում անցել է բժշկական հետազոտություններ: Արդյունքում, զինծառայողի մոտ ախտորոշվել է 3-րդ աստիճանի վարիկոցելե, և տրվել է պլանային կարգով վիրահատության ցուցում: Զինծառայողի ծնողը պնդել է, որ որդու առողջական խնդրի կապակցությամբ անհրաժեշտ է անհապաղ իրականացնել վիրահատություն և դրանից հետո միայն տեղափոխել զորամաս և ներգրավել զինվորական ծառայության:

Պաշտպանը զինծառայողին ցուցված վիրահատությունը հնարավորին սեղմ ժամկետում իրականացնելու պահանջով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն: Դրանից հետո զինծառայողը տեղափոխվել է զինվորական հոսպիտալ: Զինծառայողի ծնողը Պաշտպանի աշխատակազմ է ներկայացրել լրացուցիչ տեղեկություն այն մասին, որ որդուն ցուցված վիրահատությունն իրականացվել է:

Խնդրի կապակցությամբ պետք է ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մատնանշելով նաև ձևավորված կայուն պրակտիկան, նշել է, որ պետությունը պետք է պաշտպանի անձանց ֆիզիկական անվտանգությունը, որոնք հայտնվում են անօգնական վիճակում իշխանությունների հսկողության ներքո գտնվելու հետևանքով, ինչպիսիք են, օրինակ, ազատությունից զրկված անձինք կամ զորակոչված զինծառայողները: Այդուհանդերձ, պետության

այս պարտականությունը չունի սահմանափակումներ զինվորական կամ ուղղիչ հաստատություններում: Այդպես է նաև այն իրավիճակներում, երբ անձի ֆիզիկական անվտանգությունը մեծամասամբ կախված է իշխանությունների գործողություններից, որոնք օրենքի համաձայն պարտավոր են միջոցներ ձեռնարկել իրենց իրավասության սահմաններում, ինչը կարող է անհրաժեշտ լինել կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելուց խուսափելու համար<sup>676</sup>:

Ստացվում է, որ թե՛ ՀՀ Սահմանադրության, և թե՛ ոլորտին առնչվող միջազգային փաստաթղթերի և, հատկապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պետության հոգաճության ներքո գտնվելու հետևանքով պարտադիր զինձառայողները և ազատությունից զրկված անձինք օգտվում են պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից: Հետևաբար, ազատությունից զրկված անձանց պատշաճ բժշկական օգնություն ստանալու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի եզրահանգումները վերաբերելի են նաև պարտադիր ժամկետային զինձառայողներին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում նշել է, որ միայն այն հանգամանքը, որ բժիշկը զննել է ազատությունից զրկված անձին (Եվրոպական դատարանի՝ վերը նշված մոտեցման համաձայն՝ նաև պարտադիր ժամկետային զինձառայողին) և համապատասխան բուժում նշանակել, չի կարող ինքնաբերաբար անձին պատշաճ բժշկական օգնություն տրամադրված լինելու մասին բոլոր դեպքերի համար վերջնական եզրահանգման հանգեցնել: Իշխանությունները պարտավոր են ապահովել ոչ միայն այն, որ բժիշկն այցելի և լսի հիվանդին, այլ պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն նշանակված բուժումը փաստացի և ըստ նպատակի ու արդյունավետ իրականացվելու ուղղությամբ<sup>677</sup>:

**Ուստի, պարտադիր ժամկետային զինձառայողները զինվորական ծառայության ընթացքում պետք է ստանան պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում: Միայն այն հանգամանքը, որ զինվորական ծառայության ընթացքում պարտադիր ժամկետային զինձառայողը զննվել է բժշկի կողմից, և զննման արդյունքում բուժում է նշանակվել (սակայն արդյունքում բժշկական օգնություն չի ստացել), չի կարող բավարար համարվել:**

Հատկանշական է, որ պլանային վիրահատությունների հետ կապված խնդրին անդրադարձ է եղել նաև Պաշտպանի 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումների մեջ: Մասնավորապես, նշվել էր, որ պլանային վիրահատությունների ձգձգումը կարող է պայմանավորված լինել նաև այն հանգամանքով, որ **առկա չէ պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև զինձառայողների հաշվառման կարգ:**

Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ 2021 թվականի ընթացքում պլանային վիրահատությունների հետաձգման հետ կապված ստացվել է 6

<sup>676</sup> Տե՛ս, օրինակ, Դենիս Վասիլևն ընդդեմ Ռուսաստանի (Denis Vasilyev v. Russia) գործով 2010 թվականի մարտի 17-ի վճիռը, գանգատ թիվ 32704/04, 115 կետ):

<sup>677</sup> Տե՛ս, Հումմատովն ընդդեմ Ադրբեյջանի (*Hummatov v. Azerbaijan*) գործով 2008 թվականի փետրվարի 29-ի վճիռը, գանգատներ թիվ 9852/03 և 13413/04, 116 կետ):

դիմում, որոնք իրականացվել են Ջինված ուժերի ռազմաթշկական հաստատություններում: Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է նաև, որ ՀՀ Ջինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքի և ՀՀ պաշտպանության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 1393 հրամանի պահանջների համաձայն՝ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ իրականացվում են պլանային բուժզննումներ, որոնց արդյունքում արձանագրված՝ պլանային կարգով բուժօգնության, այդ թվում՝ վիրահատության կարիք ունեցող զինծառայողները սահմանված կարգով հաշվառվում են բժշկական ծառայության կողմից և ռազմաթշկական հաստատությունների (հոսպիտալներ) հետ համագործակցության արդյունքում կազմվում է բուժման ժամանակացույց:

Դրական գնահատելով այն, որ Պաշտպանության նախարարությունն առնվազն գործնական մակարդակում որոշակի քայլեր է ձեռնարկել բուժման ժամանակացույց կազմելու ուղղությամբ՝ Պաշտպանն այնուամենայնիվ արձանագրում է, որ այդ հարցի կապակցությամբ, ինչպես նաև նշում է Նախարարությունը, դեռևս շարունակում են ստացվել բողոքներ: Պաշտպանի գնահատմամբ՝ խնդրին անհրաժեշտ է տալ համակարգային լուծում (մշակել պլանային վիրահատությունների և բուժման ժամանակացույցի կազմման կարգ, իրավասու ստորաբաժանումների պարտականություններ և այլն): Սա կարևոր է այդ ընթացակարգը հստակեցնելու, հետագայում պլանային բուժօգնության տրամադրման գործընթացի ձգձգումները, ինչպես նաև այդ ուղղությամբ ձեռնարկվող միջոցների հարցում սուբյեկտիվ գործոնները բացառելու տեսանկյունից:

Մեկ այլ խնդիր է պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրամադրելու գործընթացի հետ կապված հարցը:

Այսպես, «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրվում է զորամասի (զինվորական կառավարման մարմնի) հրամանատարի (պետի) կողմից՝ բուժման մեջ գտնվելու կամ վերականգնողական ժամանակահատվածի համար՝ բուժում իրականացնող համապատասխան ռազմաթշկական հաստատության կամ Կենտրոնական ռազմաթշկական հանձնաժողովի տեղեկանքի հիման վրա:

Ստացվում է, որ յուրաքանչյուր դեպքում զինծառայողին հիվանդության պատճառով արձակուրդ տրամադրելու նպատակով Կենտրոնական ռազմաթշկական հանձնաժողովը զորամասի հրամանատարին պետք է ուղարկի տեղեկանք, որի հիման վրա՝ զորամասի հրամանատարը պետք է տա արձակուրդ տրամադրելու հրաման:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զինծառայողները բուժման ավարտից հետո փորձաքննվում են ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման համաձայն: Բոլոր այն փորձաքննվող զինծառայողներին, որոնք նշված որոշման համաձայն վերականգնողական արձակուրդի կարիք են ունեցել, տրամադրվել է արձակուրդ:

Ձինձառայողներին վերականգնողական արձակուրդ տրամադրելու գործընթացի հետ կապված խնդիրներին անդրադարձ էր կատարվել նաև Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում: Պաշտպանին հասցեագրված բողոքներով վեր էր հանվել զորամասից արձակուրդ տրամադրելու վերաբերյալ հրաման ուղարկված չլինելու պատճառով զինձառայողին արձակուրդ տրամադրելու պրակտիկ խնդիր: Ճիշտ է, 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ նման բովանդակությամբ գրավոր բողոքներ չեն ստացվել, սակայն Պաշտպանության նախարարության և Պաշտպանի ներկայացուցիչների միջև տեղի ունեցած քննարկումների արդյունքում պարզվել է, որ նշված խնդիրը պահպանվել է, ինչը գործնականում շարունակում է խոչընդոտ հանդիսանալ ոչ միայն զինձառայողների իրավունքների իրացման, այլ նաև զինվորական հոսպիտալների և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի գործունեության տեսանկյունից:

Մեկ այլ խնդիր. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված կարգի 87-րդ կետի համաձայն՝ ընդհանուր առմամբ, հիվանդության պատճառով բուժման և հիվանդության պատճառով բուժական (վերականգնողական) արձակուրդում անընդմեջ գտնվելու ժամանակահատվածը չի կարող գերազանցել **120 օրը**՝ զորամասից ուղեգրվելու օրվանից հաշված:

Նշված ժամկետային սահմանափակումը պրակտիկայում կարող է հանգեցնել խնդիրների, քանի որ որոշակի դեպքերում, զինձառայողի առողջական խնդիրների բարդությամբ պայմանավորված, ավելի երկար ժամանակահատվածով բուժում իրականացնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ: Նման իրավական կարգավորման պատճառով Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը կամ ստիպված պետք է լինի զինձառայողին դուրս գրել և ընդհատել բուժման գործընթացը, այնուհետև զինձառայողին կրկին բուժման ներկայացնելու ցուցում տալ (ինչը ձևական գործընթաց է և կարող է բարդություններ առաջացնել ոչ միայն հոսպիտալների և ռազմաբժշկական հանձնաժողովների աշխատանքի, այլև բուժում ստացող զինձառայողի համար), կամ հարկադրված զինձառայողին ճանաչելու է զինվորական ծառայության համար ոչ պիտանի:

Վերջին դեպքում առաջանում է մեկ այլ պրակտիկ խնդիր: Բանն այն է, որ Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ հաստատված նույն կարգի 55-րդ կետի համաձայն՝ զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված, զինվորական ծառայությունից արձակված և պահեստագրում հաշվառված քաղաքացիները մինչև 27 տարեկանը լրանալը փորձաքննության են ենթարկվում զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից: «Ձինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առողջական վիճակի պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստագրում հաշվառված քաղաքացիները երեք տարին մեկ ենթակա են բժշկական վերափորձաքննության, որի արդյունքներով պարտադիր զինվորական ծառայության համար պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչվելու դեպքում շարքային կազմի նախկին

պարտադիր զինծառայողները՝ մինչև 27 տարին լրանալը, իսկ սպայական կազմի նախկին պարտադիր զինծառայողները՝ մինչև 35 տարին լրանալը, ենթակա են սույն օրենքով սահմանված կարգով զորակոչի միջոցով ուղարկվելու շարունակելու պարտադիր զինվորական ծառայության չծառայած ժամկետը, եթե նրանց չծառայած ժամկետը գերազանցում է վեց ամիսը:

Այսպիսով, 120 օր ընդհանուր տևողությամբ սահմանափակում նախատեսված չլինելու դեպքում, օրինակ, զինծառայողը լրացուցիչ որոշ ժամանակ բուժում ստանալուց հետո կարող էր վերադառնալ զինվորական ծառայության: Այս պարագայում, զինծառայողը կխուսափեր ոչ պիտանի ճանաչվելուց 3 տարի անց վերափորձաքննվելու, դրա արդյունքում պիտանի (կամ սահմանափակումով պիտանի) ճանաչվելու և կրկին զինվորական ծառայության անցնելու ընթացակարգերից:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ի տարբերություն զինծառայողների՝ զորակոչիկներին որոշակի բժշկական օգնություն տրամադրելու, այդ թվում՝ վիրահատություն իրականացնելու դեպքերում Կենտրոնական բժշկական հանձնաժողովն իր հայեցողության շրջանակում կարող է տալ մինչև 1 տարի ժամկետով տարկետում:

Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի համար, սակայն, այդպիսի հայեցողական լիազորություն նախատեսված չէ: Այսինքն, հնարավոր է, որ զինծառայողն ունենա այնպիսի առողջական խնդիր, որի վերականգնողական շրջանը 3 տարուց պակաս լինի, հետևաբար Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի համար ավելի սեղմ ժամկետ անց վերափորձաքննության օր նշանակելու հայեցողական լիազորության նախատեսումը կլինի տրամաբանական:

Նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր նաև հետևյալ հարցը: Ուսումնական զորամասերի զինծառայողները տեղեկացրել են, որ բուժման նպատակով զինվորական հոսպիտալ տեղափոխվելու, որոշակի ժամանակահատված բուժման մեջ գտնվելու և ուսումնական պարապմունքները բաց թողնելու դեպքում զրկվում են քննություններին մասնակցելու և սերժանտի կոչում ստանալու հնարավորությունից: Զինծառայողների տեղեկացմամբ՝ լինում են դեպքեր, երբ զինծառայողները, իմանալով իրենց մոտ առողջական խնդրի առկայության և բուժման անհրաժեշտության մասին, քննություններին մասնակցությունից չզրկվելու նպատակով չեն բարձրաձայնում առողջական խնդիրները:

Պաշտպանության նախարարության տեղեկությունների համաձայն՝ նշված հարաբերությունները կարգավորվում են Պաշտպանության նախարարի 2016 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1213 հրամանով հաստատված՝ «Ուսումնական զորամասերում ու ստորաբաժանումներում կրտսեր հրամանատարների և մասնագետների պատրաստության ուսումնական գործընթացի կազմակերպման և ստուգման կանոնակարգով»: Կանոնակարգի ընդհանուր դրույթների 21-րդ կետի համաձայն՝ ավարտական քննություններին մասնակցելու թույլտվություն ունեն ուսուցման լրիվ դասընթացն անցած (հիվանդության և այլ պատճառով ընդհանուր դասաժամերի ոչ ավելի, քան 20% ուսումնական ժամ բացակայած), հրաձգության ու մեքենավարման, այդ թվում՝ համաձայն օրագրի, հաստիքային արկով կամ դրանց փոխարինիչներով բոլոր վարժությունները կատարած,

քննության չնախատեսված առարկաներից դրական գնահատված կուրսանտները: Ուսուցման լրիվ դասընթացն անցած, բայց հիվանդության և այլ հարգելի պատճառներով սահմանված օրերին քննությունները չհանձնած կուրսանտները դրանք հանձնում են ուսումնական զորամասի (ստորաբաժանման) հրամանատարի հրամանով կազմավորված հանձնաժողովին: Իհարկե, հասկանալի է, որ սերժանտի կոչում ստանալու և անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ ունենալու տեսանկյունից զինծառայողները պետք է տիրապետեն որոշակի հմտությունների, անցնեն անհրաժեշտ պատրաստություն և դասընթացներ, սակայն նշված պարտավորությունները չպետք է հակադրվեն զինծառայողների առողջության պահպանման, բժշկական օգնության պատշաճ ապահովման իրավունքների հետ<sup>678</sup>:

*Հետևաբար, անհրաժեշտ է.*

1. առողջական վիճակի վերաբերյալ գանգաղի բոլոր դեպքում անհապաղ իրականացնել զինծառայողի պատշաճ հետազոտություն և բուժում,

2. միջոցներ ձեռնարկել, որպեսզի զինվորական ծառայության ընթացքում զինծառայողի նկատմամբ նշանակված բուժումը փաստացի իրականացվի,

3. մշակել պլանային վիրահատությունների ժամանակացույց, ինչպես նաև պլանային վիրահատության կարիք ունեցող զինծառայողների հաշվառման կարգ,

4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ մասում կարարել փոփոխություն՝ շարքային կամ սպայական կազմերի պարտադիր զինծառայողներին հիվանդության պատճառով (վերականգնողական) արձակուրդ տրամադրելու լիազորությունը զորամասի հրամանատարի փոխարեն տրամադրելով բուժում իրականացնող համապատասխան ռազմաբժշկական հաստատությանը կամ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովին,

5. ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման մեջ կարարել փոփոխություն՝ վերանայելով զինծառայողի 120 օր առավելագույն բուժման ժամկետի պարտադիր պահանջը,

6. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում, ինչպես նաև Կառավարության վերոնշյալ որոշման մեջ կարարել փոփոխություն՝ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովին տրամադրելով զինվորական ծառայությունից արձակված անձին ավելի սեղմ ժամկետ անց վերափորձաքննություն նշանակելու հայեցողական լիազորություն:

<sup>678</sup> Այնուամենայնիվ, 2021 թվականի տարեկան հաղորդման մշակման շրջանակներում Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ ուսումնական զորամասերում կուրսանտների հիվանդության պատճառով ընդհանուր դասաժամերից 20% ուսումնական ժամ բացակայությունը վերաբերում է հիմնական առարկաներին (Պաշտպանության նախարարի հրաման), որից վերը նշված ժամանակով բացակայության արդյունքում կուրսանտը անհրաժեշտ գիտելիքներ ձեռք չի բերում: Պաշտպանության նախարարի համապատասխան հրամանի փոփոխության հարցը դեռևս չի քննարկվում:

## **2. Չինժառայողների առաջնահերթ հետազոտման, փորձաքննության և բուժման իրավունքը**

«Չինվորական ծառայության և զինժառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիներին **զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու դեպքերում** քաղաքացիների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են **առաջնահերթ** ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

**Առաջնահերթ բժշկական օգնություն և սպասարկում այսպիսի արտոնություն նախատեսված չէ զինժառայողների պարագայում**, և զինժառայողների հետազոտությունն իրականացվում է ընդհանուր հիմունքներով: Արդյունքում, զինժառայողների հետազոտությունները ձգձգվում են, որի հետևանքով զինվորական հոսպիտալներում նրանց մնալը երկարացվում է: Նշված խնդրին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդմամբ:

Խնդիրը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ զինվորական հոսպիտալները բավարար չափով հագեցված չեն համապատասխան գործիքային ախտորոշիչ սարքավորումներով (օրինակ՝ ՄՌՏ, ներկերակրափոլային էխոկարդիոգրաֆիա, էլեկտրոնեյրոմիոգրաֆիա և այլն), կամ առկա սարքավորումների քանակը բավարար չէ զինժառայողների հետազոտությունները պատշաճ իրականացնելու համար: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում նշված հետազոտություններն իրականացնել քաղաքացիական բժշկական հաստատություններում:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ քաղաքացիական հիվանդանոցներում բժշկական օգնություն կամ հետազոտություն անցնելու նպատակով հերթագրված զինժառայողների հետազոտությունը կամ բուժօգնությունը հերթի պատճառով ձգձգվելու վերաբերյալ Պաշտպանության նախարարության թեժ գիծը ստացել է 6 զանգ, որոնք Առողջապահության նախարարության հետ համատեղ լուծվել են:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ խնդրի համակարգային կարգավորման համար զինժառայողների առաջնահերթ բժշկական օգնության և սպասարկման իրավունքն անհրաժեշտ է ամրագրել օրենքի մակարդակով:

Հարկ է նշել, որ 2021 թվականին պատգամավորական նախաձեռնությամբ շրջանառվել է «Չինվորական ծառայության և զինժառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ, որով առաջարկվել է օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր՝ 1.1-ին մասով, համաձայն որի՝ զինժառայողների առողջական վիճակի հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ ու անվճար՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում:

Մինչդեռ, ՀՀ կառավարությունն առաջարկել էր «Չինվորական ծառայության և զինժառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը թողնել անփոփոխ: Նախագծի վերաբերյալ ինչպես



Կառավարությունը, այնպես էլ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծության վարչությունը ներկայացրել են կարծիքներ, որոնց անդրադարձ կկատարվի ստորև:

Նախագիծը քննարկվել է նաև Ազգային ժողովի Պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նիստում, քննարկմանը մասնակցել է նաև Պաշտպանի ներկայացուցիչը: Քննարկման արդյունքում հանձնաժողովը դեմ է քվեարկել նախագծին:

Նախագծի, դրա կապակցությամբ ՀՀ կառավարության և Ազգային ժողովի կարծիքների կապակցությամբ Պաշտպանն ունի հետևյալ դիրքորոշումը.

Ինչպես նշվեց, զինճառայողների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը առաջնահերթ կատարելու առաջարկը ներկայացվել է Մարդու իրավունքների պաշտպանի ոչ միայն 2020, այլ նաև 2019 թվականի տարեկան հաղորդումներով: Նման կարգավորում ամրագրելու անհրաժեշտությունը վեր է հանվել, ի թիվս այլնի, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվող բողոքների, ինչպես նաև զինվորական հոսպիտալներ և զորամասեր պարբերաբար իրականացվող այցերի արդյունքում կատարված ուսումնասիրություններով:

Բացի դրանից, քաղաքացիական բժշկական հաստատություններում հետազոտելու անհրաժեշտության պարագայում զինճառայողների հետազոտություններն առաջնահերթ կարգով իրականացնելու վերաբերյալ կարգավորման բացակայության արդյունքում զինճառայողների հետազոտությունները ձգձգվելու, դրա հետևանքով զինվորական հոսպիտալներում նրանց մնալը չհիմնավորված երկարացվելու մասին են նշել նաև հենց զինվորական հոսպիտալների ղեկավար և բժշկական անձնակազմերը:

Մինչդեռ, հաշվի առնելով զինվորական ծառայության առանձնահատկությունները՝ զինճառայողների բժշկական հետազոտություններն անհրաժեշտ է իրականացնել առաջնահերթ և սեղմ ժամկետներում:

Օրենքում առաջարկվող լրացման վերաբերյալ ՀՀ կառավարության առաջարկությունն, ըստ էության, հետևյալն է.

1) Կառավարությունը նշել է, որ ռազմաբժշկական փորձաքննություններն իրականացվում են գերատեսչական հոսպիտալային և կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների, այլ ոչ թե քաղաքացիական բժշկական հաստատությունների կողմից:

Պաշտպանը գտնում է, որ զինճառայողների փորձաքննությունն առաջնահերթ իրականացնելու կոնկրետ առաջարկի նպատակն այս պարագայում սխալ է մեկնաբանվել, քանի որ խնդիրը ոչ թե զինճառայողներին քաղաքացիական բժշկական հաստատություններում փորձաքննելն է, այլ հենց հոսպիտալային և կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովներում փորձաքննվող այլ անձանց (օրինակ, զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված և պահեստազորում հաշվառված քաղաքացիների) նկատմամբ զինճառայողներին առաջնահերթություն տրամադրելը:

Հնարավոր են իրավիճակներ, երբ նույն ժամանակահատվածում հոսպիտալային կամ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից փորձաքննվելու անհրաժեշտություն

առաջանա թե՛ զինձառայողի, թե՛ պահեստազորայինի համար, և նման իրավիճակներում անհրաժեշտ է առաջնահերթություն տալ գործող զինձառայողներին:

2) Կառավարության կողմից նշվել է նաև, որ առաջարկվող լրացումը կատարելու պարագայում կստեղծվի իրավիճակ, երբ զինձառայողները, առանց առաջնային կարգով ռազմաբժշկական հաստատություններում հետազոտում և (կամ) բուժում անցնելու, կդիմեն քաղաքացիական բուժհաստատություններ՝ դրանով իսկ խաթարելով օրենսդրության պահանջների իրացումը:

Մինչդեռ, հարկ է նշել, որ զինձառայողները, առանց ռազմաբժշկական հաստատություն դիմելու, չեն կարող քաղաքացիական բժշկական հաստատություններում անցնել անվճար հետազոտություն, քանի դեռ սահմանված կարգով ուղեգիր չի տրվել Պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանումների կողմից (այդ գործընթացը հստակ կարգավորված է Կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 806-Ն որոշմամբ):

Բացի դրանից, Ազգային ժողովում տեղի ունեցած քննարկման ընթացքում Կառավարության ներկայացուցչի կողմից հատուկ ընդգծվել է, որ քաղաքացիական բուժհաստատություններում զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բժշկական օգնության և սպասարկման հիմքը սահմանված է օրենքի 64-րդ հոդվածի 2-րդ մասում, բժշկական օգնության և սպասարկման պայմանները և չափորոշիչները, սոցիալական փաթեթի առողջապահական ուղղությունը սահմանված են ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն, 2012 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1691-Ն և 2013 թվականի հուլիսի 25-ի թիվ 806-Ն որոշումներով, դրանց շրջանակներում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Զինձառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին բժշկական օգնության ծառայություններ» ծրագրով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացվում է հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված կարգով՝ պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով՝ ֆինանսական փոխհատուցումն իրականացնելով փաստացի մատուցված ծառայությունների ծավալին համապատասխան, որի պարագայում համապատասխան շահառուներին բժշկական օգնությունը և սպասարկումը փաստացի իրականացվում է դիմելու կամ ուղեգրման հիմքով՝ առանց հերթագրման:

Այս մասով հարկ է նշել, որ Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման մշակման շրջանակներում Առողջապահության նախարարություն է ներկայացվել կոնկրետ հարցադրում. «Հրապարակային օֆերտայի հիման վրա կնքած պայմանագրի դրույթներին համապատասխան բժշկական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների համար փոխհատուցման հետվճարային սկզբունք կիրառելու պայմաններում արդյոք վերացվել են քաղաքացիական բուժհաստատություններում հետազոտության և բուժման նպատակով զինձառայողների հերթագրումները: Օրինակ, նույն բժշկական հաստատություն ՄՌՏ հետազոտություն անցնելու նպատակով դիմած զինձառայողն օգտվելու է արդյոք

առաջնահերթությունից, թե պետք է սպասի այդ բուժհաստատությունում այլ քաղաքացիների հետազոտությունից հետո իր հերթին:»

Հարցի կապակցությամբ Առողջապահության նախարարությունը տվել է, ըստ էության, նույն պատասխանը՝ նշելով, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի «Առողջապահություն» բաժնի «Զինծառայողներին, ինչպես նաև փրկարար ծառայողներին և նրանց ընտանիքի անդամներին բժշկական օգնության ծառայություններ» միջոցառման շրջանակում իրականացվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումն իրականացվում է հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված կարգով՝ առանց հերթագրման, պայմանագրային գումարով բյուջեի չսահմանափակման սկզբունքով՝ ըստ դիմելիության:

Պաշտպանը հատկապես ընդգծում է, որ զինծառայողների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցումը հրապարակային օֆերտայի պայմանագրով սահմանված կարգով իրականացվելու արդյունքում զինծառայողներին բժշկական հետազոտություն անցնելու առաջնահերթություն չի տրվել:

Խնդիրը շարունակում է մնալ չլուծված, քանի որ խոսքը վերաբերվում է ոչ թե բյուջեի հնարավոր սահմանափակմանը, այլ, օրինակ, նույն հիվանդանոցում, նույն բժշկական հետազոտությունը կամ բուժումն անցնելիս այլ քաղաքացիական անձանց նկատմամբ առաջնահերթություն տրամադրելուն: Ներկայում էլ լինում են դեպքեր, երբ զինծառայողներն օրերով սպասում են հետազոտություն կամ բուժօգնություն ստանալու իրենց հերթին:

**Այս խնդիրը հատուկ լրացուցիչ քննարկվել է նաև զինվորական հոսպիտալների ղեկավար կազմի հետ, և կրկին հաստատվել է դրա առկայությունը, ավելին ընդգծվել է, որ խնդիրը համակարգային է. հիմնականում հետազոտությունները ձգձգվում են և շատ քիչ դեպքերում է, որ իրականացվում են սեղմ ժամկետում: Բացի դրանից, ինչպես նշվել է վերևում, այդպիսի բողոքներ են ստացվել նաև Պաշտպանության նախարարության թեժ գծին (դիցուք, ՄՌՏ հետազոտության համար զինծառայողից առաջ նույն հիվանդանոց դիմել է մի քանի այլ քաղաքացի, այս պարագայում զինծառայողը սպասում է նրանց հետազոտություններն ավարտվելուն, հետո նոր անցնում է հետազոտություն):**

Օրենքում փոփոխություն կատարելու նախագծի վերաբերյալ Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծության վարչության եզրակացությամբ նշված է զինվորական հաշվառման և զորակոչի պարագայում առաջնահերթ բժշկական օգնություն ցուցաբերելու օբյեկտիվ պատճառը, այն է՝ օրենսդրությամբ սահմանված սեղմ ժամկետներում մեծ թվով զորակոչիկների միաժամանակյա սպասարկումը: Դրա հաշվառմամբ՝ նշվում է, որ Նախագծին կից ներկայացված հիմնավորմամբ ներկայացված չէ որևէ օբյեկտիվ հիմք՝ զինծառայողներին առաջնահերթ բժշկական օգնություն տրամադրելու վերաբերյալ: Այդ պատճառով առաջանում է մի իրավիճակ, երբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում բժշկական օգնություն և սպասարկում ցուցաբերելիս՝ նախապատվությունը տալով զինծառայողներին՝ առանց հաշվի առնելու մյուս

անձանց առողջական վիճակի ծանրությունը կամ անհետաձգելի սպասարկման անհրաժեշտությունը՝ դրանով իսկ խաթարելով այլ անձանց իրավունքների իրացումը:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ զինծառայողների հետազոտությունը, փորձաքննությունն ու բուժումն առաջնահերթ իրականացնելու կարևորությունը էլ ավելի բարձր է, քան զորակոչիկների պարագայում՝ պարզապես մեծ թվով անձանց միաժամանակյա սպասարկումը:

Պաշտպանին հասցեագրված բողոքները, ինչպես նաև զորամասեր ու հոսպիտալներ այցերը ցույց են տալիս, որ շատ դեպքերում քաղաքացիական բժշկական հաստատություններում հետազոտության նպատակով հերթագրվելու խնդիրների պատճառով զինծառայողները տևական ժամանակ կարող են մնալ զինվորական հոսպիտալներում, մինչդեռ նրանց խնդիրների շուտափույթ լուծումը կարևոր է, որպեսզի պաշտպանությանն ու անվտանգությանն առնչվող իրենց գործառույթներն իրականացվեն արդյունավետ: Խնդիրը հատկապես ակնառու է այն դեպքերում, երբ տասնյակ օրեր շարունակ հնարավոր չի լինում կազմակերպել մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողների հետազոտությունը, ինչն էլ իր հերթին հանգեցնում է զորամասում մնացած անձնակազմի ծանրաբեռնվածության մեծացմանը: Այսինքն, ստացվում է, որ կազմակերպչական այսպիսի խնդիրն ուղղակիորեն կարող է ազդեցություն ունենալ նաև որևէ կոնկրետ զորամասի կամ ստորաբաժանման պաշտպանունակության և մարտական խնդիրների վրա:

Բացի դրանից, անհրաժեշտ է նաև հիշել, որ զինվորական ծառայության մեջ ընդգրկված և կարգավիճակով զինծառայող հանդիսացող քաղաքացին գտնվում է պետության անմիջական հոգաճության ներքո, ինչը ոչ միայն զինծառայողի իրավունքի և դրան համարժեք՝ պետության պարտավորության խնդիր է, այլ նաև՝ պետության հնարավոր պատասխանատվության: Հետևաբար, զինծառայողների առողջության պահպանման իրավունքի պարագայում պետության պարտավորությունը էլ ավելի է մեծանում:

Այսպիսով, Պաշտպանը գտնում է, որ զինծառայողներին առաջնահերթ հետազոտում, փորձաքննություն և բուժում տրամադրելու օբյեկտիվ հիմքերը ոչ պակաս տեսանելի են, քան զորակոչիկների վերաբերյալ վկայակոչվածները: Այստեղ չի առաջանում տարբերակված մոտեցման հետ կապված խնդիր նույնպես՝ հատկապես, որ առաջարկությունը հիմնավորված է հստակ և կոնկրետ հիմքերով:

*Հետևաբար, առաջարկվում է.*

1. «*Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին*» ՀՀ օրենքում ամրագրել, որ զինծառայողների հետազոտումը, փորձաքննությունը և բուժումը կատարվում են առաջնահերթ՝ պետության երաշխավորած բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում,

2. *մինչև վերը նշված օրենսդրական փոփոխությունը միջոցներ ձեռնարկել զինծառայողներին անհրաժեշտ հետազոտությունները հնարավորին սեղմ ժամկետներում իրականացնելու ուղղությամբ,*

3. *զինվորական հոսպիտալներն ապահովել զինծառայողների հետազոտությունների համար անհրաժեշտ գործիքային ախտորոշիչ սարքավորումներով:*

### **3. Զինծառայողների հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը**

Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում շարունակում են մնալ զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման ոլորտի հետ կապված հարցերը: 2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը մանրամասն անդրադարձ է կատարել ոլորտում առկա խնդիրներին և բացերին՝ ներկայացնելով դրանց լուծման հստակ առաջարկներ: Նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ ներկայացված հանգամանքների և Պաշտպանի առաջարկների իրացման ուղղությամբ ձեռնարկված միջոցների հետ կապված մանրամասները պարզելու նպատակով Պաշտպանի ներկայացուցիչներն այցելել են Պաշտպանության նախարարության Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք, ուսումնասիրել պայմանները, զինծառայողների իրավունքների ապահովման վիճակը, հոսպիտալի և բաժանմունքի ղեկավար կազմի հետ քննարկել առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները:

Արձանագրվել են մի շարք դրական փոփոխություններ, ինչը կարևոր է ընդգծել: Դրա հետ մեկտեղ խնդիրները պահպանվում են:

Մասնավորապես՝

1) արձանագրվել են հոգեբուժական բաժանմունքի ոչ բարվոք շենքային պայմաններ (շինությունն ակնհայտ փոքր է). հոգեբուժական բաժանմունքում առկա է 7 ննջասենյակ, որոնցում ընդհանուր առմամբ՝ 40 մահճակալ, 2 ցնցուղարան, 2 զուգարան: Բաժանմունքի անձնակազմը տեղեկացրել է, որ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ադրբեջանական սանձազերծած ագրեսիվ պատերազմով պայմանավորված՝ եղել են դեպքեր, երբ բաժանմունքում գտնվել են 100-ից ավելի զինծառայողներ:

Կարևոր է ընդգծել, որ ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի նորոգումը ներառված է 2022 թվականի ընթացիկ նորոգումների նախնական ցանկում, իսկ մինչև այդ հոգեբուժական ծանր խնդիրներ, փսիխոտիկ վիճակներ ունեցող զինծառայողների բուժումը կազմակերպվում է Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում: Հոգեբանական խնդիրներ, ներոտիկ, հետսթրեսային և այլ ֆունկցիոնալ խանգարումներ ունեցող հիվանդ զինծառայողների բուժումը պլանավորվում է կազմակերպել հոգեվերականգնողական ծառայության միջոցով:

Նոր շենքի կառուցումն ունի հրատապ անհրաժեշտություն, քանի որ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում արձանագրված խնդիրների զգալի մասը կապված է հենց շենքային ոչ բավարար պայմանների հետ:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ նույնիսկ նոր շենքի կառուցման դեպքում Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը չի վերանա, քանի որ շենքը վերանորոգման կարիք ունի:

2) ինչպես նախկինում, ներկայում էլ հոգեբուժական բաժանմունքում ստացիոնար բուժման ընդունելիս զինձառայողների ցանկությունը հաշվի չի առնվում: Հոսպիտալի անձնակազմը տեղեկացրել է, որ զինձառայողին հարկադիր բուժման ենթարկելու նպատակով դատարան դիմելու դեպք երբևէ չի արձանագրվել:

3) լինում են դեպքեր, երբ բուժումը, այդ թվում՝ դեղորայք ներարկելն իրականացվում է առանց զինձառայողների համաձայնության:

4) բաժանմունքի տարածքում առկա չէ բանկոմատ, որի պատճառով զինձառայողները չեն կարողանում առաջին անհրաժեշտության իրեր և պարագաներ ձեռք բերել:

5) զինձառայողները զբոսանքի են դուրս գալիս օրական 30 րոպեով, լինում են օրեր, երբ մի քանի օր շարունակ բաժանմունքից դուրս չեն գալիս: Ըստ պարզաբանման՝ բուժում ստացող զինձառայողների զբոսանքի կազմակերպման դժվարությունների պատճառը շենքային պայմանների անբավարարությունն է. զինձառայողների համար նախատեսված բացօթյա միակ տարածքը շենքի ներսում առանձնացված ծխարանն է, որն ակնհայտ փոքր է: Բաժանմունքի պետի հավաստմամբ՝ իրենց հսկողությամբ բաժանմունքից դուրս կազմակերպվում է զինձառայողների զբոսանքը՝ հոսպիտալի տարածքում, ինչը տվյալ բաժանմունքում բուժում ստացող զինձառայողների առողջական խնդիրների հաշվառմամբ խնդրահարույց է:

6) լինում են դեպքեր, երբ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից փորձաքննվելուց և զինձառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչվելուց հետո զորամաս տեղափոխվելու փոխարեն զինձառայողները շարունակում են պահվել հոգեբուժական բաժանմունքում: Հոսպիտալի ղեկավար կազմի տեղեկացմամբ՝ դա պայմանավորված է զինձառայողներին հոսպիտալից զորամասեր տեղափոխող մեքենաների երթերը ներքին իրավական ակտերով հստակ կարգավորված պարբերականությամբ իրականացվելու հանգամանքով (օրինակ, կարող է լինել դեպք, երբ զինձառայողը հոսպիտալից դուրս գրվի երկուշաբթի, սակայն նրան զորամաս տեղափոխող մեքենայի երթը նախատեսված լինի ուրբաթ օրը):

7) զինձառայողները հնարավորություն չունեն սեփական միջոցների հաշվին զննության ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից:

8) հոգեբուժական բաժանմունքում առկա են բաժանմունքի պետի, 3 հոգեբույժի և 1 հոգեբանի հաստիքներ: Հոգեբույժի մեկ հաստիք թափուր է: Բաժանմունքի պետի տեղեկացմամբ՝ բաժանմունքի բժիշկները գերձանրաբեռնված են, հաստիքները համալրելու անհրաժեշտություն կա: Միևնույն ժամանակ, Պաշտպանության նախարարությունից ստացվել է պարզաբանում, որ 2022 թվականի ընթացքում նոր շենքի կառուցմամբ Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում ծանրաբեռնվածությունը կնվազի:

Բացի դրանից, բժշկական անձնակազմը Պաշտպանի ներկայացուցիչներին մտահոգություն են հայտնել աշխատավարձերի ցածր լինելու վերաբերյալ, նշելով, որ դա կարող է հանգեցնել կադրային արտահոսքի.

9) հոգեբուժական բաժանմունքում բուժում ստացող որոշ զինծառայողներ առանձնազրույցի ընթացքում բարձրացրել են արտերկրում բնակվող իրենց ծնողների ու ազգականների հետ տեսազանգի միջոցով կապ հաստատելու հնարավորության ստեղծման հարց:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն ընդգծել է, որ վերը նշված խնդիրներն ավելի տեսանելի դարձան՝ պայմանավորված նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի բռնկմամբ, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների մարտական գործողությունների ընթացքում և դրանից անմիջապես հետո: Ստացված բողոքների և հոգեբուժական բաժանմունք կատարած այցերի արդյունքում Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ նշված ժամանակաշրջանում, պայմանավորված հոգեբուժական բաժանմունքում հետազոտություն և բուժում ստացող զինծառայողների բավական մեծ թվով և զինծառայողներին մասնագիտական հոգեբուժական օգնություն տրամադրող միակ հաստատությունը հանդիսանալու հանգամանքով, ավելի հրատապ և արդիական է դարձել Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանները բարելավելու, այդ թվում՝ նոր շենքային պայմաններ ապահովելու անհրաժեշտության հարցը: Դրան ածանցյալ են նաև վերն արձանագրված մյուս խնդիրներին օր առաջ լուծում տալու անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են դրական փոփոխություններ նույնպես: Մասնավորապես՝

1) 2020 թվականի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ հոգեբուժական բաժանմունքում բուժում ստացող զինծառայողները չեն իրազեկվում իրենց իրավունքների, հոգեբուժական հաստատությունում գտնվելու նպատակի և պատճառների մասին: Արդյունքում, *Պաշտպանն առաջարկել էր հոգեբուժական բաժանմունքում զինծառայողներին իրազեկել նրանց իրավունքների, գտնվելու նպատակի և պատճառների մասին: Պաշտպանի ներկայացուցիչների վերջին այցելությամբ արձանագրվել է, որ հոգեբուժական բաժանմունք ընդունվելիս զինծառայողների հետ բժիշկներն ունենում են զրույց, որի ընթացքում պարզաբանում են նշված հասարակությունում նրանց գտնվելու պատճառները, առողջական խնդիրները և այլն: Պաշտպանը դրական է գնահատում այս փոփոխությունը.*

2) նախորդ տարվա տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ խոչընդոտներ են առաջանում զինծառայողների բջջային հեռախոսներից օգտվելու հետ կապված (զինծառայողների հեռախոսները պահվում էին բաժանմունքի աշխատասենյակներից մեկում, հեռախոսներից օրական թույլատրվում էր օգտվել մինչև 2 ժամ, որից առաջ աշխատակիցը բաժանում էր պահվող հեռախոսները, սակայն, ըստ զինծառայողների, լինում էին օրեր, երբ տվյալ աշխատակիցը տարբեր պատճառներով ծառայության վայրում չէր լինում, և այդ օրերին իրենք չէին կարողանում օգտվել հեռախոսներից նույնիսկ թույլատրելի ժամերին): *Պաշտպանն առաջարկել էր հոգեբուժական*

բաժանմունքում գտնվող զինծառայողների բջջային հեռախոսներից օգտվելը կազմակերպել այնպես, ինչպես հոսպիտալների այլ բաժանմունքներում: Կարևոր է նշել, որ թե՛ բժշկական անձնակազմի, թե՛ զինծառայողների տեղեկացմամբ՝ ներկայում հեռախոսները զինծառայողներից չեն վերցվում, և նրանց թույլատրվում է սահմանված ժամերին օգտվել դրանցից, ինչպես մյուս հոսպիտալներում:

3) զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելուց հետո զինծառայողները շարունակում էին պահվել հոգեբուժական բաժանմունքում: Պաշտպանի ներկայացուցիչների վերջին այցի ընթացքում արձանագրվել է, որ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված զինծառայողներին, մինչև ծառայությունից արձակելու վերաբերյալ հրամանն արձակվելը, տրամադրվում է արձակուրդ: Արդյունքում, բժշկական անձնակազմի տեղեկացմամբ՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված զինծառայողներին հոգեբուժական բաժանմունքում պահելու դեպքերը բացառված են:

Հոգեբուժական օգնության և սպասարկման վերաբերյալ միջազգային փաստաթղթերի, ներպետական իրավական ակտերի համադիր ուսումնասիրությամբ վեր է հանվել մի քանի երաշխիք (չափանիշներ), որոնք առնչվում են հոգեբուժական հաստատություններում հետազոտություն և բուժում ստացող անձանց:

Այսպես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1991 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձևով ընդունված՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության սկզբունքների համաձայն՝ պացիենտի բուժումը և խնամքը պարտադիր պետք է քննարկվի նրա հետ և պարբերաբար վերանայվի (9-րդ սկզբունքի 2-րդ կետ): Որևէ բուժում չպետք է իրականացվի առանց անձի նախապես ծանուցված համաձայնությունը ստանալու՝ բացառությամբ հատուկ սահմանված դեպքերի (11-րդ սկզբունքի 1-ին կետ): Պացիենտը, նրա օրինական ներկայացուցիչը և խնամակալը պետք է իրավունք ունենան հաճախել, մասնակցել և անձամբ լսված լինել գործի լուսմների ընթացքում (18-րդ սկզբունքի 5-րդ կետ): Յուրաքանչյուր պացիենտ (այդ թվում՝ նախկին) պետք է իրավունք ունենա բողոք ներկայացնել՝ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան (21-րդ սկզբունք): Նշվում է նաև, որ պետությունները պետք է կիրառեն նշված սկզբունքները համապատասխան օրենսդրական, դատական, վարչական, կրթական և այլ միջոցառումների միջոցով, որոնք նրանք պետք է պարբերաբար վերանայեն (23-րդ սկզբունքի 1-ին կետ):

«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կարգավիճակի մասին» Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1977 թվականի հոկտեմբերի 8-ի թիվ 818(1977) հանձնարարականի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիրների կապակցությամբ բուժում ստացող անձն ունի լսված լինելու իրավունք (17-րդ կետ):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Հարկադիր հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավական պաշտպանության մասին» 1983 թվականի փետրվարի 22-ի թիվ R(83)2 հանձնարարականի համաձայն՝ պացիենտը պետք է անմիջապես



տեղեկացվի իր իրավունքների մասին և պետք է իրավունք ունենա դատական կարգով բողոքարկել իրեն հոգեբուժարանում տեղավորելը (4-րդ հոդվածի 2-րդ կետ): Հանձնարարականով նույնպես կարևորում է անձի՝ անձնապես լաված լինելու իրավունքը (4-րդ հոդվածի 3-րդ կետ): Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը պետք է լինի սահմանափակ ժամկետով, և դրա անհրաժեշտությունը պետք է պարբերաբար վերանայվի: Պացիենտը կարող է պահանջել դատական կարգով ողջամիտ պարբերականությամբ վերանայել իրեն հոգեբուժական հաստատությունում պահելու անհրաժեշտությունը: Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կարող է ընդհատվել բժշկի կամ իրավասու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ, կամ երբ այդ մասին պահանջ է ներկայացնում պացիենտը կամ այլ շահագրգիռ անձ (8-րդ հոդված):

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանությանն առնչվող սկզբունքների մասին» 1999 թվականի փետրվարի 23-ի թիվ R(99)4 հանձնարարականում սահմանված են անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության սկզբունքները, և նշված հանձնարարականով պետություններին առաջարկվում է համապատասխան օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս առաջնորդվել մի շարք սկզբունքներով: Այդ սկզբունքներից է, մասնավորապես, այն, որ *պաշտպանական միջոցները չպետք է ինքնաբերաբար անձին զրկեն իր առողջությանը միջամտելու համաձայնություն տրալու կամ չտրալու իրավունքից կամ ցանկացած ժամանակ այլ անձնական բնույթի որոշումներ կայացնելու հնարավորությունից, եթե նա ունակ է նման որոշումներ կայացնել* (3-րդ սկզբունքի 2-րդ կետ): Չափահաս անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոց կարող է սահմանվել *միայն նրա լիարժեք և կամավոր համաձայնությամբ* (5-րդ սկզբունքի 1-ին կետ): Այն դեպքում, երբ պացիենտը, նույնիսկ ում նկատմամբ պաշտպանական միջոց է կիրառվել, իր առողջությանը միջամտության վերաբերյալ փաստացի ունակ է տրամադրել կամավոր և տեղեկացված համաձայնություն, նշված միջամտությունը կարող է իրականացվել միայն նրա համաձայնությամբ: Նշված համաձայնությունը ստանալու համար անձին պետք է դիմի միջամտություն իրականացնելու իրավասություն ունեցողը (22-րդ սկզբունքի 1-ին կետ): Այն դեպքում, երբ պացիենտը իր առողջությանը միջամտության վերաբերյալ փաստացի ունակ չէ տրամադրել կամավոր և տեղեկացված համաձայնություն, նշված միջամտությունը, այնուամենայնիվ, կարող է իրականացվել միայն այն դեպքում, եթե դա բխում է անձի շահերից և նրա ներկայացուցչի կամ օրենքով լիազորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից ստացվել է թույլտվություն (22-րդ սկզբունքի 2-րդ կետ): Օրենքը պետք է պաշտպանության միջոցներ ապահովի, որպեսզի կարևոր բժշկական միջամտությունից առաջ անձը հնարավորություն ունենա լավել անկախ պետական մարմնի կողմից (23-րդ սկզբունքի 3-րդ կետ):

Վերը նշված խնդրի վերաբերյալ նախադեպ է ձևավորել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ ցանկացած պաշտպանիչ միջոց *պետք է հնարավորինս արտացոլի իրենց կամքն արտահայտելու ունակ*

անձանց ցանկությունները: Նրանց կարծիքը չհարցնելը կարող է հանգեցնել խոցելի անձանց իրավունքների իրականացման չարաշահման և խոչընդոտման իրավիճակների<sup>679</sup>:

Անձին առանց նրա համաձայնության և դատարանի համապատասխան որոշման հոգեբուժական բաժանմունքում տեղավորելը և պահելը Եվրոպական դատարանը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով դիտարկել է որպես անձի ազատության ապօրինի սահմանափակում: Տվյալ պարագայում Եվրոպական դատարանը էական չի համարել պարզել, թե արդյոք անձը ուներ հարկադիր հոգեբուժական օգնություն պահանջող հոգեկան առողջության խնդիր, թե ոչ<sup>680</sup>:

Հոգեկան առողջության հիման վրա անձին ազատությունից զրկելու համատեքստում Եվրոպական դատարանը սահմանել է, որ անձը կարող է դիտվել որպես ազատությունից զրկված նույնիսկ այն ժամանակահատվածում, երբ կանոնավոր գտնվել է բաց տիպի հիվանդասենյակում՝ առանց հսկողության մուտք ունենալով հիվանդանոցի բակ և ունենալով հիվանդանոցից առանց ուղեկցության հեռանալու հնարավորություն<sup>681</sup>:

Ավելին՝ ազատությունից զրկելու հասկացությունը կազմված չէ միայն անձին ոչ կարճ ժամանակահատվածով որոշակի սահմանափակ տարածությունում պահելու օբյեկտիվ տարրից: Անձը կարող է համարվել ազատությունից զրկված, եթե որպես լրացուցիչ սուբյեկտիվ տարր, նա օրինական կերպով չի համաձայնել քննարկվող ազատագրկմանը<sup>682</sup>:

Ինչ վերաբերում է հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց ազատությունից զրկելուն, Եվրոպական դատարանի դիտարկմամբ, անձը չի կարող ազատությունից զրկվել որպես «հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձ», եթե հետևյալ երեք նվազագույն պայմանները բավարարված չեն. առաջին՝ պետք է վստահորեն հիմնավորվի, որ նա հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունի, երկրորդ՝ այդ խնդիրները պետք է լինեն հարկադիր ազատագրկում պահանջող տեսակի կամ աստիճանի, երրորդ՝ շարունակական ազատագրկման օրինաչափությունը կախված է այդպիսի հիվանդության կայունությունից<sup>683</sup>:

Եվրոպական դատարանը, անձին հոգեբուժական հաստատությունում տեղավորելը համարելով անձի ազատության սահմանափակում, նշել է, որ Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ

---

<sup>679</sup> Տես՝ Ստանեն ընդդեմ Բուլղարիայի (Stanev v. Bulgaria) 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 153:

<sup>680</sup> Տես՝ Սթորքն ընդդեմ Գերմանիայի (Storck v. Germany) 2005 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, կետ 112:

<sup>681</sup> Տես՝ Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության (Ashingdane v. The United Kingdom) 1985 թվականի մայիսի 28-ի վճիռը, գանգատ թիվ 8225/78, կետ 42):

<sup>682</sup> Տես՝ Սթորքն ընդդեմ Գերմանիայի (Storck v. Germany) 2005 թվականի սեպտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 61603/00, կետ 74:

<sup>683</sup> Տես՝ Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի (Shtukaturon v. Russia) 2008 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, կետ 114:

կետում հիշատակվող դատական քննությունները պարտադիր չէ, որ միշտ ուղեկցվեն այն նույն երաշխիքներով, որոնք պահանջվում են 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն քաղաքացիական կամ քրեական դատավարությունների համար: Այնուամենայնիվ, էական է, որ շահագրգիռ անձի համար *մատչելի լինի դատարանը, և նա հնարավորություն ունենա լսված լինելու կամ անմիջականորեն կամ, անհրաժեշտության դեպքում, ներկայացուցչության որևէ ձևով*<sup>684</sup>:

Խնդրի կապակցությամբ ուսումնասիրվել է նաև առաջատար երկրների միջազգային փորձը: Ուսումնասիրության երկրներում (օրինակ՝ Ավստրիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա, Գերմանիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Թուրքիա) անձի կամքին հակառակ հոգեբուժական հաստատությունում երկարաժամկետ *տեղավորելու վերաբերյալ որոշումը ուղղակիորեն ընդունվում կամ հաստատվում է դատավորի կողմից*:

### **Նմանատիպ երաշխիքներ սահմանված են նաև ՀՀ օրենսդրությամբ:**

Այսպես, ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք (պացիենտ) սույն օրենքով սահմանված կարգով իրավունք ունի իրազեկ լինելու իր հիվանդությանը և համաձայնություն տալու բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար: Նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մարդու գրավոր համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերի: Ըստ նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի՝ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական օգնություն և սպասարկում իրականացվում են մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեբուժական օգնությունը և սպասարկումն իրականացվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնության (դիմումի) դեպքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: Նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմած անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցիչը, իրավունք ունեն

<sup>684</sup> Տես՝ Ստանլն ընդդեմ Բուլղարիայի (Stanev v. Bulgaria) 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, կետ 171:

ցանկացած պահի հրաժարվելու հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալուց կամ պահանջելու դադարեցնել այն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեբուժական հետազոտումն իրականացվում է անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարական հոսպիտալացման հիմք են անձի հոգեկան խանգարման առկայությունը և բժիշկ-հոգեբույժի՝ անձի հիվանդանոցային ձևով հետազոտության կամ բուժման անհրաժեշտության մասին եզրակացությունը կամ օրենսդրությամբ սահմանված դեպքերում հոգեբուժական փորձաքննություն իրականացնելու անհրաժեշտությունը:

Օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունքից հոժարական հոսպիտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի դուրսգրումը իրականացվում է՝ 1) անձի ցանկությամբ կամ 2) անձի առողջացման և հոգեկան վիճակի բավարար լինելու դեպքում, եթե վերացել է հետագա հիվանդանոցային ձևով բուժման անհրաժեշտությունը՝ բժիշկ-հոգեբույժի եզրակացության հիման վրա, կամ 3) հետազոտման կամ փորձաքննության ժամկետները ավարտվելու դեպքում: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընդհանուր հսկողության հոգեբուժական բաժանմունք հոժարական հոսպիտալացված հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցիչը, իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվելու հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալուց կամ պահանջելու դադարեցնել այն: Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձն առանց իր, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական վկայարկման արդյունքով կարող է ոչ հոժարական հոսպիտալացվել՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ՝ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով, եթե առանց հոսպիտալացման անձի բուժումն արդյունավետ չի կարող կազմակերպվել, և հոգեբուժական օգնության ուշացումը կարող է վտանգ ներկայացնել անձի կյանքին, առողջությանը կամ շրջապատին: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վերը նշված դեպքում հոսպիտալացվելուց հետո՝ 72 ժամվա ընթացքում՝ 1) հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին պարտադիր հետազոտում է հոգեբուժական հանձնաժողովը, և 2) ոչ հոժարական հոսպիտալացման հիմնավորվածությունը մասնագիտական հոգեբուժական հանձնաժողովի եզրակացությամբ հաստատվելու դեպքում հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմինը դիմում է դատարան՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով անձին հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարական բուժման ենթարկելու համար: Սույն մասով նախատեսված դեպքերում մինչև դատարանի կողմից ոչ հոժարական կարգով հոսպիտալացնելու վերաբերյալ բուժման ենթարկելու մասին վճռի օրինական ուժի մեջ մտնելը հոգեբուժական կազմակերպությունում հոգեկան

առողջության խնդիր ունեցող անձին առանց նրա իրազեկված համաձայնության տրամադրվում են միայն շտապ և անհետաձգելի հոգեբուժական օգնություն և սպասարկում: Հատկանշական է, որ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հիվանդանոցային ոչ հոժարական բուժում իրականացնող բժիշկ-հոգեբույժը ամիսը առնվազն մեկ անգամ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի վիճակի մասին մասնագիտական գրավոր կարծիք է ներկայացնում հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողով անձի նկատմամբ ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով: Հոգեբուժական հանձնաժողովը մասնագիտական կարծիքն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, քննում և տալիս է եզրակացություն ոչ հոժարական բուժումը շարունակելու կամ դադարեցնելու մասին:

Օրենքով հստակ սահմանվում են նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց մյուս նվազագույն իրավունքները, որոնք, ըստ բուժում ստացող զինծառայողների, Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում չեն ապահովվում:

Մասնավորապես, Օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման շրջանակում հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը պարտավոր է անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչին տրամադրել տեղեկություններ հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների, հոգեբուժական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու և դրա հետևանքների մասին ու դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթում կատարել համապատասխան գրառումներ և հաստատել դրանք ստորագրությամբ՝ լիազոր մարմնի սահմանած կարգով: Օրենքի Հավելվածի 21-րդ կետի համաձայն՝ եթե հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը, ելնելով իր առողջական վիճակից, ի վիճակի չէ հասկանալ իր իրավունքները կամ ստորագրել իրազեկման թերթիկը, ապա տվյալ անձի իրավունքների և պարտականությունների մասին իրազեկվում է միայն նրա օրինական ներկայացուցիչը, եթե առկա է, որն էլ ստորագրում է նշված իրազեկման թերթիկը: Դրա մասին նշում է կատարվում բժշկական փաստաթղթերում:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք իրավունք ունի հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հաղորդակցվելու արտաքին աշխարհի հետ, հաստատել նամակագրական կապ, օգտվել հեռախոսակապից, հանդիպել այցելուների հետ, ունենալ և ձեռք բերել առաջին անհրաժեշտության իրեր ու պարագաներ: Նշված անձինք ունեն նաև հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության իրավունք: Օրենքի Հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպություններն իրենց տարածքում տեղադրում են առնվազն մեկ տաքսոֆոն (հեռախոս)՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում: Հեռախոսային խոսակցության վճարումները կատարվում են տվյալ անձի հաշվին: Հոգեբուժական

կազմակերպության վարչակազմը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց համար հասանելի վայրում պետք է փակցնի հեռախոսային խոսակցության սակագները՝ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքին համապատասխան: Հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվող յուրաքանչյուր անձ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում իրավունք ունի յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարելու առնվազն երեք անվճար հեռախոսազանգ Հայաստանի Հանրապետության տարածքում, ընդ որում առաջին հեռախոսազանգի իրավունքը ապահովվում է հոգեբուժական կազմակերպություն տեղափոխվելուց անմիջապես հետո:

Օրենքի Հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձինք իրավունք ունեն իրենց միջոցների հաշվին ձեռք բերելու (այդ թվում՝ էլեկտրոնային հեռահաղորդակցության միջոցներով) առաջին անհրաժեշտության իրեր և պարագաներ, բացառությամբ ծակող, կտրող իրերի, ընդ որում՝ գործունակ լինելու դեպքում անձամբ, եթե տվյալ հոգեբուժական կազմակերպության տարածքում առկա է առևտրի օբյեկտ, անգործունակ ճանաչված լինելու դեպքում՝ իրենց օրինական ներկայացուցիչների կամ համապատասխան աշխատակցի միջոցով: (Կարծում ենք, նշված իրավունքի իրացմանը կարող է խոչընդոտել հոսպիտալի տարածքում բանկոմատի բացակայությունը):

**Ամփոփելով վերը նշված ուսումնասիրությունը՝ կարելի է փաստել, որ միջազգային և ներպետական որոշ չափանիշները, որոնք սահմանված են հոգեբուժական հաստատությունների համար, Պաշտպանության նախարարության ենթակայության հոգեբուժական բաժանմունքում չեն պահպանվում, ինչը խիստ մտահոգիչ է, և խնդիրը հրատապ լուծման կարիք ունի:**

**Չափազանց կարևոր է անձին հոգեբուժական բաժանմունքում տեղավորելիս հաշվի առնել նրա համաձայնությունը, հակառակ դեպքում՝ այն կարող է իրականացվել միայն դատարանի որոշման հիման վրա: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը կոնկրետ միջոցներ ձեռնարկի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց համար նախատեսված նվազագույն երաշխիքները Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքում ապահովելու ուղղությամբ:**

Հատկանշական է նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանը 2020 թվականի հունվարի 30-ի թիվ ՍԴՈ-1504 որոշմամբ, ի թիվս այլնի, Սահմանադրությանը հակասող է ճանաչել նաև «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման» և «Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենքների այն դրույթները, որոնք չեն ապահովում անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին՝ չսահմանելով իրազեկված համաձայնություն ստանալու պահանջ, ինչպես նաև չեն ապահովում նշված անձանց՝ իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքը:

Դրանից հետո, Սահմանադրական դատարանի որոշման պահանջները իրացնելու նպատակով նշված օրենքները հիմնովին փոփոխվել են: Նշված գործընթացին ակտիվորեն մասնակցել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը:

Հարկ է նկատել, որ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվել է, որ զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով:

2020 թվականի հունիսի 18-ին ԶՈՒ Ներքին ծառայության կանոնագրքում կատարված փոփոխություններով և լրացումներով 356-րդ հոդվածը լրացվել է 2-4-րդ մասերով, որոնցով նախատեսվել է միայն հետևյալը. «Զինծառայողներին հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկում է գնդի հրամանատարը՝ ըստ բժշկի գրավոր եզրակացության: Եզրակացությանը կցվում են զինծառայողի բժշկական և ծառայողական բնութագրերը, որոնց ձևը սահմանում է պաշտպանության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը: Զորամասի բուժկետը վարում է հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկված զինծառայողների գրանցման գիրք: Հոգեբուժական օգնության և սպասարկման ուղարկված բոլոր զինծառայողները ենթարկվում են ռազմաբժշկական փորձաքննության:»:

Ճիշտ է, Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկություններ դեռևս սահմանված չեն, սակայն պետք է նկատի ունենալ, որ դրանք պետք է պահպանեն «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի հիմնարար սկզբունքները և հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց իրավունքների ապահովման ընթացակարգերը: Նշված առանձնահատկությունները կարող են վերաբերել միայն զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման կազմակերպման ընթացակարգին՝ զինվորական ծառայության կազմակերպման առանձնահատկություններով պայմանավորված:

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

1. *հնարավորին սեղմ ժամկետում բարելավել Երևանի կայազորային հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի շենքային պայմանները, այդ թվում՝ նոր շենքային պայմաններ ապահովելու միջոցով,*

2. *բացառել հոգեբուժական օգնության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջներից դուրս գործող պրակտիկան, այն է՝ առանց զինծառայողների գրավոր համաձայնության կամ դատարանի որոշման զինծառայողներին հոգեբուժական բաժանմունք ընդունելու, ինչպես նաև նրանց հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու դեպքերը,*

3. *ապահովել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինծառայողների հասանելիությունը բանկոմատին և խանութին (թեյարանին),*

4. ապահովել հոգեբուժական բաժանմունքում գտնվող զինծառայողների ամենօրյա առնվազն մեկ ժամ զբոսանքի իրավունքը,

5. հոգեբուժական բաժանմունքում բուժման կամ փորձաքննության ավարտից հետո լուծել զինծառայողներին բաժանմունքից դուրս գրելու հարցը,

6. զինծառայողներին հնարավորություն ընձեռնել սեփական միջոցների հաշվին ենթարկվել իրենց նախընտրած բժշկի կողմից զննության,

7. զինծառայողներին ապահովել տեսազանգի միջոցով ընտանիքի անդամների հետ կապ հաստատելու հնարավորությամբ:

#### **4. Զինվորական ծառայության ավարտից հետո բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ երկարամյա ծառայության կամ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացող նախկին զինծառայողները, զինվորական ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդության կամ ստացած խեղման կամ վնասվածքի պատճառով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամները բժշկական օգնությամբ ապահովվում են օրենքով սահմանված կարգով:

Պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշակի դեպքերում ծառայության ընթացքում հիվանդություն ձեռք բերած նախկին զինծառայողները չեն օգտվում անվճար բժշկական օգնության և սպասարկման իրավունքից: Մասնավորապես՝

1) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ովքեր զինվորական ծառայության ընթացքում ձեռք են բերել հիվանդություն, որը հիմք չի հանդիսացել նրանց ոչ պիտանի ճանաչելու համար, սակայն զորացրվել են ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից.

2) պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած այն քաղաքացիները, ում զինվորական ծառայության ընթացքում ցուցվել է բժշկական օգնություն, սակայն զինվորական ծառայության ընթացքում չի իրականացվել, չեն օգտվում անվճար բժշկական օգնություն ստանալու իրավունքից.

3) զինվորական ծառայության ընթացքում ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով զորացրված անձինք, ում նկատմամբ բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում հաշմանդամության խումբ չի սահմանվել, օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքից՝ միայն բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից կազմված վերականգնողական անհատական ծրագրի շրջանակներում.



4) այն պայմանագրային զինճառայողները, ովքեր զինվորական ծառայությունից արձակվել են պահեստազոր ոչ թե երկարամյա ծառայության կամ ստացած խեղման, վնասվածքի, հիվանդության պատճառով, այլ կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու կապակցությամբ, չեն օգտվում անվճար բժշկական օգնությունից նույնիսկ այն դեպքում, երբ հիվանդությունը ձեռք են բերել ծառայության ընթացքում:

Նշված խնդիրները բարձրացվել են նաև Պաշտպանի 2017, 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով, որոնց հիման վրա առաջարկվել է սահմանել, որ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինճառայողների մոտ բուժման կարիք պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում անհրաժեշտ է նրանց տրամադրել անվճար բժշկական օգնություն և սպասարկում: Առաջարկվել է ամրագրել նաև, որ եթե զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինճառայողների առողջական խնդիրները, ապա ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո:

Պաշտպանն արձանագրում է, որ 2021 թվականին խնդրի վերաբերյալ Պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ:

Օրինակ՝ քաղաքացին դիմել է Պաշտպանին և նշել, որ որդին պարտադիր ժամկետային զինճառայող է, մարտական գործողություններին մասնակցելիս ստացել է վիրավորում, այնուհետև տեղափոխվել մի քանի զինվորական հոսպիտալներ ու քաղաքացիական բժշկական կենտրոններ և ստացել բուժօգնություն: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ զինվորական հոսպիտալում իրականացված հետազոտության արդյունքում բժիշկը որդու քթի միջնապատի վիրահատության ցուցում է տվել, սակայն զարկերակային բարձր ճնշման պատճառով վիրահատություն չեն կատարել: Բացի դրանից, ըստ պնդման՝ նշված հոսպիտալում նյարդաբանի հետազոտության ցուցում է եղել, սակայն որդին չի անցել այդ հետազոտությունը, քանի որ նյարդաբանը տեղում չի եղել:

Քաղաքացու տեղեկացմամբ՝ ներկայում որդու առողջական վիճակը վատթարացել է. զարկերակային ճնշումը տատանվում է 120-160 սս միջակայքում, քթի միջնապատի ծովածոյան պատճառով դժվարությամբ է շնչում, ունի նաև հոգեկան առողջության խնդիրներ:

Բողոքում բարձրացված հարցերի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, որտեղից տրամադրվել են մանրամասն տեղեկություններ զինճառայողի անցած բժշկական հետազոտությունների ու փորձաքննությունների վերաբերյալ: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ զինճառայողը ստացիոնար հետազոտման ու բուժման նպատակով ընդունվել է «Լեռնային Հայաստան» հոգեվերականգնողական կենտրոն, իսկ բուժման ավարտից հետո նախատեսվում է կատարել քթի միջնապատի վիրահատություն:

Մինչդեռ, Պաշտպանին հասցեագրած լրացուցիչ բողոքով քաղաքացին դժգոհություն է ներկայացրել առ այն, որ որդին զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ արձակվել է ՀՀ զինված ուժերից, և նրա քթի միջնապատի վիրահատությունը չի իրականացվել:

Պաշտպանության նախարարություն ուղարկված լրացուցիչ գրությամբ Պաշտպանն առաջարկել է միջոցներ ձեռնարկել նախկին զինծառայողի քթի միջնապատի վիրահատությունն իրականացնելու ուղղությամբ:

Արդյունքում, քաղաքացու քթի միջնապատի վիրահատությունն իրականացվել է:

**Պետք է արձանագրել, որ թեև կոնկրետ բողոքների քննարկման արդյունքում զորացրված նախկին զինծառայողները ստացել են անվճար բժշկական օգնություն և սպասարկում, սակայն խնդիրը շարունակում է մնալ, և այն պահանջում է հստակ և միասնական լուծումներ:**

Պաշտպանության նախարարությունը նույնպես տեղեկացրել է, որ 2021 թվականի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ զինծառայության ավարտից հետո նախկին զինծառայողների բուժումը կազմակերպվել է ռազմաբժշկական հաստատություններում: Ըստ իրավասու գերատեսչության՝ նման դեպքերը պայմանավորված են եղել զինվորական ծառայության ընթացքում սկսած բուժումն ավարտին հասցնելու անհրաժեշտության հետ:–Նախարարությունից նաև տեղեկացվել է, որ զինվորական ծառայության ընթացքում և մինչ զորակոչվելը հիվանդություն ձեռք բերած, սակայն ոչ թե առողջական վիճակի պատճառով, այլ ժամկետը լրանալու կապակցությամբ կամ այլ հիմքով զորացրված նախկին զինծառայողներին անվճար բժշկական օգնություն տրամադրելու խնդրանքով 2021 թվականին ստացվել է 32 դիմում: Բոլոր դիմումատուներին տրամադրվել է անվճար բժշկական օգնություն:

2021 թվականի ընթացքում Պաշտպանը վերը թվարկված խնդիրների կապակցությամբ և դրանց լուծման առաջարկներով հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ<sup>685</sup>, ինչպես նաև գրություններ է հասցեագրել ՀՀ ազգային ժողով, ՀՀ վարչապետին և Պաշտպանության նախարարություն: Հարցը Պաշտպանի ներկայացուցիչները՝ համապատասխան դեպարտամենտի ղեկավարը, զինծառայողների իրավունքների հարցերով մասնագիտացված ստորաբաժանման ղեկավարը և կոնկրետ խնդրով զբաղվող գլխավոր մասնագետը քննարկել են Պաշտպանության նախարարությունում՝ Պաշտպանության նախարարի, Առողջապահության նախարարի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալների, Պաշտպանության նախարարության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության շահագրգիռ ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ:

Քննարկման ընթացքում, ըստ էության, հաստատվել է Պաշտպանի վկայակոչած խնդիրների առկայությունը, և կարևորվել դրանց լուծմանն ուղղված միջոցների ձեռնարկումը:

*Ուտի, առաջարկվում է.*

*1. Կառավարության որոշմամբ սահմանել, որ ժամկետը լրանալու կապակցությամբ զինվորական ծառայությունից արձակվելիս պարտադիր ժամկետային զինծառայողների մոտ բուժման կարիք*

<sup>685</sup> Տե՛ս, <https://ombuds.am/am/site/ViewNews/1906>:

պահանջող հիվանդության հայտնաբերման դեպքում նրանց տրամադրել անվճար բժշկական օգնություն և սպասարկում,

2. սահմանել, որ այն դեպքում, երբ զինվորական ծառայության ժամկետում չեն լուծվում պլանային բուժման կամ վիրահատության կարիք ունեցող զինծառայողների առողջական խնդիրները, ցուցված բուժումը կամ վիրահատությունն անվճար հիմունքներով պետք է իրականացվի զինվորական ծառայությունից արձակվելուց հետո,

3. օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ զինվորական ծառայության ընթացքում սրացած խեղման, վնասվածքի, հիվանդության պարճառով զորացրված անձինք օգտվում են հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում սրանալու իրավունքից՝ անկախ հաշմանդամության ձեռք բերելու հանգամանքից,

4. օրենսդրական փոփոխությամբ ամրագրել, որ նախկին պայմանագրային զինծառայողներն օգտվում են զինվորական ծառայության ընթացքում սրացած խեղման, վնասվածքի, հիվանդության կապակցությամբ անվճար բժշկական օգնություն և սպասարկում սրանալու իրավունքից՝ անկախ զինվորական ծառայությունից արձակվելու հիմքից:

## **5. Առողջական վիճակին հակացուցված ծառայության պայմանները պահպանելու իրավունքը**

Զինծառայողի առողջական վիճակին համապատասխան ծառայողական պայմանների ապահովումը պետության անմիջական պարտականությունն է: Այս պահանջն ամրագրված է նաև միջազգային իրավական չափորոշիչներով<sup>686</sup>:

2021 թվականին նույնպես ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը զինծառայողներից ու նրանց ընտանիքների անդամներից ստացել է բողոքներ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները չպահպանելու վերաբերյալ<sup>687</sup>:

Բողոքներից մեկով պարտադիր ժամկետային զինծառայողի հայրը տեղեկացրել է, որ որդին 3 տարբեր հիվանդության կապակցությամբ ճանաչվել է զինվորական ծառայության համար սահմանափակումով պիտանի: Հավելել է, որ ծառայության ընթացքում որդին փորձաքննվել է Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից, արդյունքում, ևս 2 առողջական խնդիրների կապակցությամբ ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական

<sup>686</sup> Տե՛ս, Քիլինջը և այլոք ընդդեմ Թուրքիայի (Kilinc and others v. Turkey) գործով 2005 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետ 41, 42: Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (Chember v. Russia) գործով 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

<sup>687</sup> Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տվյալների՝ ծառայության ընթացքում զինծառայողների նկատմամբ կիրառված սահմանափակումները չպահպանելու վերաբերյալ արձանագրվել է 19 դեպք, ընդունվել են համապատասխան որոշումներ և խնդիրները ստացել են համապատասխան լուծումներ:

ծառայության համար: Զինծառայողի հայրը դժգոհություն է ներկայացրել այն մասին, որ ծառայության ընթացքում նախատեսված սահմանափակումները չեն պահպանվում, և նա ունի բժշկական օգնության կարիք:

Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն: Արդյունքում, ստացվել է պատասխան այն մասին, որ զինծառայողը բուժման ու հետազոտման նպատակով տեղափոխվել է զինվորական:

Զինծառայողի հայրը լրացուցիչ տեղեկացրել է, որ որդին ստացել է համապատասխան բժշկական օգնություն, ավելին՝ զինվորական ծառայության ընթացքում պահպանվում են բոլոր սահմանափակումները:

Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակին հակացուցված պայմանները չպահպանելու խնդիրն արձանագրվել է նաև զորամասեր կատարված այցերի և զինծառայողների հետ առանձնագրույցների ժամանակ: Առանձնագրույցների ընթացքում պարտադիր ժամկետային զինծառայողը տեղեկացրել է, որ չնայած սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար (<< կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 26-րդ հոդվածի «դ» կետով), սակայն որևէ ֆիզիկական վարժությունից ազատված չէ:

Կառավարության նշված որոշմամբ սահմանված է, որ որոշման 26-րդ հոդվածի «դ» կետով ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված զինծառայողներն չի թույլատրվում 1000մ, 400մ, 4x100մ վազքը, դիմացկունության վարժությունները՝ 3000մ և ավելի վազք ներառող վարժությունները, արգելագոտու հաղթահարումը: Նմանատիպ խնդիրներ բարձրացրել են նաև այլ զինծառայողներ:

Չնայած զորամասի հրամանատարությունը պատրաստակամություն է հայտնել խնդիրը կարգավորել, այնուամենայնիվ, նմանատիպ դեպքերի առկայությունը մտահոգիչ է՝ հաշվի առնելով զինծառայողների առողջական վիճակի պահպանման պետության պոզիտիվ պարտականությունը: Պետությունը պետք է հնարավորին բացառի ծառայողական պայմանների հետ կապված զինծառայողների առողջությանը սպառնացող ռիսկը:

Մեկ այլ խնդիր բարձրացրել են զորամասերից մեկի հրամանատարությունը: Այսպես, հայտնել են, որ զորամասի պահպանությանը ենթակա բոլոր մարտական դիրքերը 2500 մետրից բարձր են, իսկ զորամասում ծառայության են նշանակված նաև պարտադիր ժամկետային զինծառայողներ, ում առողջական վիճակի պատճառով բարձրադիր գոտիներում ծառայության ընդգրկելը հակացուցված է: Հրամանատարությունը նշել է, որ տվյալ զինծառայողներին իրենց առողջական վիճակին համապատասխան զորամասեր տեղափոխելու հարցով ըստ վերադասության գեկուցագրեր են ներկայացվել: Բարձրացված հարցով Պաշտպանը գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, խնդիրը շարունակվում է գտնվել Պաշտպանի ուշադրության ներքո:

*Հեղինակը, անհրաժեշտ է խստացնել հսկողությունը պարտադիր ժամկետային զինծառայողների առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները*

*հեղինակներն պահպանելու, ինչպես նաև զինծառայողներին իրենց առողջական վիճակին համապատասխան զորամասեր ծառայության նշանակելու նկատմամբ:*

**ԳԼՈՒԽ 6. ԶԻՆԱՊԱՐՏ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ  
ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

**1. Պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու իրավունքը**

Ցանկացած պետության մարտունակ բանակի գրավականներից է պայմանագրային (պրոֆեսիոնալ) անձնակազմը: Հայաստանը նույնպես առաջնային է համարում զինված ուժերը պայմանագրային կադրերով համալրելը: Դրա մասին է վկայում, օրինակ, ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը<sup>688</sup>, որի նպատակներից է բանակը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացի ակտիվացումը: Այս մասին է խոսում նաև ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը<sup>689</sup>, որով նախատեսվում է պարտադիր ժամկետային և պայմանագրային ծառայության փոխլրացնող համակարգի շարունակական բարելավում ու արհեստավարժ զինվորական ծառայության համակարգի ընդլայնում:

Այս հարցում կարևոր է, որ պայմանագրային հիմունքներով զինվորական ծառայության անցնող քաղաքացին՝ որպես հանրային ծառայության ընդունվող քաղաքացի, հնարավորություն ունենա օգտվելու հանրային ծառայության անցնող քաղաքացիների իրավունքներից, որոնք ամրագրված են թե՛ միջազգային փաստաթղթերում, թե՛ ՀՀ Սահմանադրությամբ:

Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացրել էր պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնաձև քաղաքացիների անվճար բժշկական հետազոտությունների իրականացման մեխանիզմների հստակեցման հարց: 2021 թվականին նույնպես արձանագրվել են նմանաբնույթ բողոքներ: Օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ ցանկանում է անցնել պայմանագրային զինվորական ծառայության և այդ նպատակով Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումից ստացել է անվճար բժշկական հետազոտություններ անցնելու ուղեգիր: Մինչդեռ, պոլիկլինիկայում տեղեկացել է, որ անվճար հիմունքներով իրականացվում են միայն նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հետազոտությունները:

Հարկ է նկատի ունենալ, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիներին պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու ժամանակ առաջնահերթ ու անվճար իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն: Մինչդեռ, ուշագրավ է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշումը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման առողջապահական պետական

<sup>688</sup> <https://www.mil.am/files/LIBRARY/2018-2024.pdf>

<sup>689</sup> <https://www.e-gov.am/gov-decrees/item/37300/>

նպատակային ծրագրերից օգտվելու իրավունք վերապահում է միայն նախագորակոչային ու գորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիներին և չի անդրադառնում պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու ցանկություն հայտնած քաղաքացիներին: Ստացվում է՝ օրենքը նախատեսել է պայմանագրային զինվորական ծառայություն անցնող քաղաքացիների առողջական վիճակի առաջնահերթ ու անվճար հետազոտություն ու փորձաքննություն, սակայն Կառավարության որոշմամբ հստակեցված չէ, թե պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելիս ինչպես և որ մարմինն է (քաղաքացիական բժշկական կենտրոն կամ զինվորական հոսպիտալ) առաջնահերթ ու անվճար իրականացնելու քաղաքացու բժշկական հետազոտությունը:

Պետք է արձանագրել, որ քաղաքացու բարձրացրած վերը նշված խնդիրը զինկոմիսարիատի հետ համագործակցությամբ լուծվել է, և նա զինվորական հոսպիտալում առաջնահերթ ու անվճար անցել բժշկական հետազոտություններ: Մինչդեռ, նմանատիպ խնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է հստակ սահմանել նշված իրավունքի իրացման մեխանիզմները:

«Վաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ պայմանագրային զինվորական ծառայության անցնելու ցանկություն ունեցող անձանց հետազոտություններն իրականացվում են ռազմաբժշկական հաստատություններում և Պաշտպանության նախարարության կենտրոնական պոլիկլինիկայում: Իսկ նրանց փորձաքննությունն իրականացվում է «Վաշտպանության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշմամբ սահմանված կարգով:

Մեկ այլ բողոքով քաղաքացին հայտնել է, որ կազմակերպչական-հաստիքային միջոցառումների արդյունքում իր հաստիքը կրճատվել է, որից հետո վերադաս հրամանատարությունը միջնորդություն չի ներկայացրել նոր հաստիքի նշանակվելու համար, արդյունքում թողնվել է կադրերի տրամադրության տակ: Քաղաքացին նշել է, որ ունի սոցիալական խնդիրներ, ցանկանում է շարունակել պայմանագրային զինվորական ծառայությունը, ուստի իր հաստիքի հետ կապված հարցին անհրաժեշտ է շուտափույթ լուծում գտնել:

Նշված բողոքի քննարկման արդյունքում քաղաքացին Պաշտպանության նախարարի հրամանով նշանակվել է պահանջվող հաստիքին և նրան շնորհվել է գնդապետ զինվորական կոչում:

Բողոքներից մեկով էլ քաղաքացին (կին) տեղեկացրել է, որ անցել է դիպուկահարի դասընթացներ, կամավոր սկզբունքով ընդգրկվել սահմանապահ ծառայության: Նշել է, որ ընտանիքի ապրուստը հոգալու նպատակով ցանկանում է անցնել պայմանագրային զինվորական ծառայության, սակայն չեն ընդունում: Քաղաքացին խնդրել է աջակցել պայմանագրային զինվորական ծառայության անցնելու հարցում:

Տվյալ խնդրի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարին: Դրանից հետո, քաղաքացին տեղեկացրել է, որ Պաշտպանության նախարարության հավաստմամբ՝ աշխատանքներ են տարվում իր ծառայություն անցնելու հարցին լուծում տալու ուղղությամբ: Պաշտպանության նախարարությունից էլ մեզ հայտնել են, որ

բնակության վայրին մոտ զորամասում հաստիք առկա չէ, սակայն մոտակա մարզում տեղակայված զորամասերից մեկում կա քաղաքացու պահանջած հաստիքը<sup>690</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր է համարում, որ զինվորական ծառայություն անցնելու գործընթացքում հնարավորին երաշխավորված լինեն անձանց իրավունքները:

Այս առումով կարևոր է ՀՀ պաշտպանության նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1550-Ն հրամանը, որով հաստատվել է «Հայաստանի Հանրապետության զինված ուժերում պայմանագրային զինվորական ծառայության ընդունելու կարգը»:

Պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու, ծառայությունն ավելի գրավիչ դարձնելու, այդ գործընթացում անձանց իրավունքների ապահովման հարցերին անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր զինծառայողների իրավունքների հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստերի ընթացքում: Պարբերաբար անդրադարձ է կատարվել նաև «Պատիվ ունեն» և «Ես եմ» ծրագրերով զինված ուժեր ներգրավման հետ կապված պրակտիկ խնդիրներին, այդ ծրագրերի արդյունավետության բարձրացմանը:

Նաև այդ նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են զինծառայողների և նրանց ընտանիքների անդամներին վերապահված ոչ ֆինանսական և այլ արտոնությունների վերաբերյալ մի շարք երկրների փորձը: Արդյունքում, ներկայացվել են կոնկրետ առաջարկներ, որոնց ներդրման արդյունքում բանակում ծառայությունը կդառնա ավելի գրավիչ<sup>691</sup>: Արտոնություններ տրամադրելու վերաբերյալ մշակված նախագծերի փաթեթն ուղարկվել է Ազգային ժողով և Պաշտպանության նախարարություն: 2021 թվականին հրապարակվել է նաև արտահերթ զեկույց<sup>692</sup>:

2021 թվականի ընթացքում զինվորական հաստատություններ այցերի ընթացքում զինծառայողները նշել են, որ նախկինում զինված ուժերում ծառայությունն առավել գրավիչ էր: Ըստ զինծառայողների՝ պատճառներից մեկն էլ այն էր, որ զինծառայողի դրամական ապահովությունն ավելի բարձր էր, քան, օրինակ, քաղաքացիական ծառայողինը կամ մասնավոր ոլորտի աշխատողինը: Զինծառայողները մտահոգություն են հայտնել, որ ներկայում գրեթե հավասարաչափ են վարձատրվում և հաշվի չի առնվում զինվորական ծառայության առանձնահատկությունները: Սա ևս խոչընդոտ է զինված ուժեր ներգրավման համար և նվազեցնում է զինվորական ծառայության գրավչությունը: Զորամասերի այցերի ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ, այդ թվում՝ վարձատրության բարձրացման մասով, Մարդու իրավունքների պաշտպանը գրություններ է ուղարկել ՀՀ վարչապետին, Գլխավոր շտաբի պետին և Պաշտպանության նախարարին:

<sup>690</sup> Այս հարցը շարունակվում է գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո:

<sup>691</sup> Առաջարկների մասին ավելի մանրամասն կարելի է ծանոթանալ սույն բաժնի «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ոչ ֆինանսական բնույթի արտոնությունները» պարագրաֆում:

<sup>692</sup> Տե՛ս, «Զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին արտոնություններ տրամադրելու վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://cutt.ly/mlLQOLq>



Զինվորական ծառայության ներգրավման բարձրացման հարցում առանցքային է ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի ՆՀ-103-Ա հրամանագրով հաստատված՝ «ՀՀ զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագիրը»: Ծրագրով ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունը 2018-2024 թվականներին շարունակելու է պահել և զարգացնել իր հասանելի ռեսուրսների համեմատ մեծաթիվ, խառը (զորակոչային և պայմանագրային) համալրմամբ զինված ուժեր, միջոցներ կձեռնարկի զինված ուժերում ծառայության տեսակների ընդլայնման, զինվորական ծառայության նկատմամբ սոցիալական ու մասնագիտական գրավչության, կոռուպցիայի դեմ պայքարի և հանրային վստահության բարձրացման, կադրային և մասնագիտական առաջխաղացման արդարության սկզբունքների վերաարժևորման հարցերում:

Ծրագրի 6-րդ նպատակի համաձայն՝ «Ձևավորվելու է պարտադիր և պայմանագրային ծառայության փոխկապակցված համակարգ, որը կառաջարկի պարտադիր զինվորական ծառայության այլընտրանքային լուծումներ և կապահովի պայմանագրային հիմունքներով զինված ուժերի համալրումը արհեստավարժ կադրերով»:

Քաղաքացիներին պայմանագրային զինվորական ծառայության ներգրավելու ուղղությամբ ուշագրավ է Գերմանիայի փորձը, որտեղ գործում է «կարիերայի խորհրդատուների» կամ «երիտասարդ սպաների» ինստիտուտը: Վերջիններս քաղաքացիներին բանակ ներգրավելու, ծառայության առավելությունները ներկայացնելու համար այցելում են դպրոցներ, բուհեր, ուսուցիչների շրջանում կազմակերպում են վերապատրաստումներ, տրամադրում խորհրդատվություններ: Նրանք նաև երիտասարդների համար կազմակերպում են այցելություններ գորամասեր<sup>693</sup>:

*Հետևաբար առաջարկվում է.*

1. նպաստել պաշտպանության բնագավառի կադրերի զարգացմանն ու արդիականացմանը նպաստակա ուղղված ծրագրերի, բարեփոխումների վերաբերյալ հանրության տեղեկացվածության աստիճանի բարձրացմանը, այդ թվում՝ հաճախակի իրազեկելով զինծառայողներին տրվող սոցիալական արտոնությունների մասին,

2. բարձրացնել հանրության շրջանում իրազեկվածությունը պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու ընթացակարգերի վերաբերյալ,

3. զինվորական ծառայությունն ավելի գրավիչ դարձնելու նպատակով քննարկել զինծառայողների աշխատավարձերի բարձրացման հարցը, ինչը, ըստ Պաշտպանի իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքների՝ այսօր Զինված ուժերում ամենահրապապ լուծում պահանջող առաջնահերթ խնդիրներից է,

4. խստացնել հսկողությունը զինված ուժեր մուտք գործող անձանց իրավունքների երաշխավորման, հավասար հնարավորությունների ապահովման հարցերում՝ բացառելով զինվորական ծառայության ընդունելն անհիմն մերժելու դեպքերը,

<sup>693</sup> Տե՛ս, [https://wri-irg.org/en/programmes/world\\_survey/reports/Germany](https://wri-irg.org/en/programmes/world_survey/reports/Germany):

5.բարձրացնել ռազմական կրթության որակը, ռազմակրթական ոլորտն ապահովել ժամանակակից կրթական ու մեթոդական ծրագրերով՝ առավել գրավիչ դարձնելով ռազմական կրթությունը,

6. զինված ուժեր ներգրավելիս վերանայել մոտեցումները: Սա նշանակում է, որ զինված ուժերը պետք է արդյունավետորեն մրցակցեն աշխատանքի շուկայում բարձր մակարդակի մասնագետներին ներգրավելու համար՝ առավելապես շեշտը դնելով որակական ցուցանիշների վրա:

## **2. Պայմանագրային զինծառայողներին շաբաթ օրը ծառայության ներգրավելը, այլ զորամաս տեղափոխելը և գործուղելը**

Դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ զինծառայողներից ստացված բողոքների հաշվառմամբ Պաշտպանն առաջարկել էր միջոցներ ձեռնարկել զինծառայողների օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը պահպանելու ուղղությամբ: 2021 թվականի տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում Պաշտպանն հարցադրում էր ուղարկել Պաշտպանության նախարարություն՝ առաջարկելով տրամադրել տեղեկություններ այն մասին, թե քանի դեպք է արձանագրվել կամ բողոք ստացվել ոչ աշխատանքային օրերին պայմանագրային զինծառայողներին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավվելու և շաբաթվա մեջ այլ հանգստյան օր չտրամադրելու վերաբերյալ:

Ըստ Պաշտպանության նախարարության պատասխանի՝ ոչ աշխատանքային օրերին պայմանագրային զինծառայողներին ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավելու և շաբաթվա մեջ այլ հանգստյան օր չտրամադրելու դեպքեր չեն եղել:

Ճիշտ է, 2021 թվականի ընթացքում այդ խնդրի մասին Պաշտպանին գրավոր բողոք չի հասցեագրվել, սակայն զորամասեր այցերի ընթացքում պայմանագրային զինծառայողները տեղեկացրել են, որ շաբաթ օրերին ներգրավվում են ծառայության սակայն հաջորդ շաբաթվա մեջ դրա փոխարեն հանգստյան օր չեն ստանում: Իհարկե, այսպիսի բողոքները եզակի են, ինչը խոսում է Պաշտպանության նախարարության կատարած աշխատանքի արդյունավետության մասին: Միաժամանակ, խնդիրը ի սպառ բացառելու համար աշխատանքները պետք է կրեն շարունակական բնույթ:

Պետք է նկատի ունենալ, որ զինծառայողների աշխատանքային շաբաթվա համար սահմանված ժամանակահատվածը և զինծառայողների հանգստի իրավունքը պահպանելու անհրաժեշտությունը կարևորվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական փաստաթղթերով: Այսպես, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 2-րդ կետի համաձայն՝ զինվորական կյանքի առանձնահատկությունները հաշվի առնելով հանդերձ՝ զինծառայողներն, անկախ իրենց կարգավիճակից, օգտվում են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին

Եվրոպական սոցիալական խարտիայով (վերանայված), ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ այլ համապատասխան փաստաթղթերով երաշխավորված իրավունքներից այնքանով, որքանով պետությունները ստանձնում են այդ պարտավորությունները:

Խարտիայի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրական և շաբաթական աշխատանքային ժամերի ողջամիտ տևողությունը ապահովելու նպատակով աշխատանքային շաբաթը պետք է աստիճանաբար կրճատվի այն չափով, որը թույլատրվում է արտադրական աճով և այլ համապատասխան գործոններով: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են տրամադրել շաբաթական հանգիստ, որը հնարավորին չափով պետք է համընկնի համապատասխան երկրում կամ տարածաշրջանում ավանդույթով կամ սովորույթով որպես հանգստի օր ճանաչված օրվա հետ:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 67-րդ կետի համաձայն՝ զինծառայողները պետք է իրավունք ունենան օգտվելու հանգստի ժամանակահատվածներից: Հանգստի ժամանակահատվածները պետք է հնարավորինս ներառվեն նաև ռազմական պատրաստության և գործողությունների պլանավորման փուլերում:

ՀՀ Սահմանադրության 82-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող, օրենքին համապատասխան, ունի առողջ, անվտանգ և արժանապատիվ աշխատանքային պայմանների, առավելագույն աշխատաժամանակի սահմանափակման, ամենօրյա և շաբաթական հանգստի, ինչպես նաև ամենամյա վճարովի արձակուրդի իրավունք:

Պետք է նշել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը նախատեսում է, որ քաղաքական, հայեցողական կամ քաղաքացիական պաշտոն զբաղեցնող անձանց, ինչպես նաև քաղաքացիական, օրենքով սահմանված այլ պետական (հատուկ) ծառայությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի աշխատողների աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, եթե համապատասխան օրենքներով այլ բան նախատեսված չէ:

Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԵԿԴ/3246/02/13 գործով 2014 թվականի նոյեմբերի 28-ին կայացված որոշմամբ՝ ընդգծելով, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի տրամաբանության լույսի ներքո աշխատանքային օրենսգրքի դրույթները հանրային ծառայության ոլորտում կիրառվում են ոչ թե սուբսիդիարության (լրացուցիչ) սկզբունքով, **այլ հակառակը՝ դրանք նույն օրենսգրքի 7-րդ հոդվածի ուժով ներառված են աշխատանքային օրենսդրության կարգավորման ոլորտում, և այդ հարցերի վերաբերյալ հանրային ծառայության օրենսդրության նորմերը պետք է կիրառվեն սուբսիդիարության (լրացուցիչ) կարգով՝ աշխատանքային հարաբերությունների ոլորտում դրանց միասնական և տարբերակված կարգավորման սկզբունքների հիման վրա:**

Հետևաբար, տվյալ պարագայում կիրառելի են թե՛ Ձինված ուժերի ներքին ծառայության կանոնակարգի, թե՛ Աշխատանքային օրենսգրքի դրույթները<sup>694</sup>:

Անհրաժեշտ օրենսդրական իրավակարգավորումների վերլուծության արդյունքում գործերից մեկով Պաշտպանը արդեն կայացրել է Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության որոշում, որով արձանագրել է, որ **զինծառայողների համար սահմանված է հնգօրյա աշխատանքային շաբաթ՝ երկու հանգստյան օրով: Ընդ որում, զինծառայողների աշխատաժամանակի նորմալ տևողությունը չի կարող անցնել շաբաթական 40 ժամից: Բացի այդ, գործատուն պարտավոր է ստույգ հաշվառել յուրաքանչյուր զինծառայողի օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը, որպեսզի ապահովվի զինծառայողների հանգստի իրավունքը: Հանգստյան օրերին զինծառայողի կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողին մեկ ամսվա ընթացքում պետք է տրամադրվի վճարովի այլ հանգստյան օր, կամ այդ օրը պետք է ավելացվի նրա ամենամյա արձակուրդին: Այն դեպքերում, երբ հանգստյան օրերին կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողին վճարովի այլ հանգստյան օր չի տրամադրվել կամ այն չի ավելացվել ամենամյա արձակուրդին, անհրաժեշտ է զինծառայողին տրամադրել համապատասխան չափի դրամական հավելում: Այն դեպքերում, երբ զինվորական ծառայության ընթացքում հանգստյան օրերին կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողին վճարովի այլ հանգստյան օր չի տրամադրվել կամ այն չի ավելացվել ամենամյա արձակուրդին, ինչպես նաև դրամական հավելում չի տրամադրվել, անհրաժեշտ է այն փոխհատուցել զինվորական ծառայությունից արձակվելիս կատարվող վերջնահաշվարկի ժամանակ:**

Բացի դրանից, Պաշտպանը ևս մեկ անգամ է ընդգծում պայմանագրային զինվորական ծառայությունը կազմակերպելու գործընթացը պատշաճ իրականացնելու համար օրենսդրական փոփոխություններ կատարելու կարևորությունը:

Այսպես, ՀՀ օրենսդրությամբ սահմանված է հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողներին ծառայության նոր վայր տեղափոխելու հնարավորություն: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պլանային փոխարինման կարգով ծառայության նոր վայր տեղափոխման ենթակա են հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող սպայական կազմի պայմանագրային զինծառայողները: Հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության **տևողությունը և տեղափոխման կարգը** սահմանում է պետական լիազոր մարմնի ղեկավարը: Տեղափոխվող պայմանագրային զինծառայողները չեն օգտվում ծառայության նոր վայրն ընտրելու իրավունքից: Նրանք նշանակվում են հավասար կամ բարձր զինվորական պաշտոնի՝ իրավասու պաշտոնատար անձի հրամանով:

<sup>694</sup> Այս մասին իրավակարգավորումների առանձնահատկությունները ներկայացվել են Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ, էջ 954-956:

Պաշտպանության նախարարությունից նախկինում ստացված պարզաբանման համաձայն՝ ՀՀ զինված ուժերի սպայական կազմի **պլանային տեղափոխման կարգը սահմանված է ՀՀ պաշտպանության նախարարի գաղտնի հրամանով**, քանի որ պարունակում է զորամասերի տեղակայման վայրերի և կարգայնության հետ կապված տվյալներ: Այստեղ կա որոշակի խնդիր, քանի որ զորամասերի տեղակայման վայրերը և կարգայնությունը, ինչպես նաև հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունն ու տեղափոխման կարգը չհիմնավորված ներառվել են մեկ ակտում, ինչը առաջացրել է դրանք հրապարակայնացնելու խնդիր:

Այսպես, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանվում են պետական և ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների շրջանակը: Նշված օրենքի դրույթների մեկնաբանությունից պարզ է դառնում, որ որոշակի տեղեկությունների համար գաղտնիություն սահմանելն ինքնանպատակ չէ. գաղտնիության սահմանումը պետք է ունենա իրավաչափ նպատակ՝ կանխարգելելու դրանց տարածման հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե ենթադրյալ, այլ իրական ռիսկերին:

Եվս մեկ անգամ արձանագրվում է, որ թեև «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված տեղեկությունների շարքին է դասվում նաև զորամասերի տեղակայման վայրերի վերաբերյալ տեղեկությունը, սակայն նշված չեն և չէին էլ կարող նշված լինել հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողությունը և տեղափոխման կարգը:

Բացի դրանից, զինծառայողների իրավունքների վերաբերյալ տվյալները պետք է հասանելի լինեն նրանց, որպեսզի կարողանան արդյունավետ կերպով իրականացնել իրենց իրավունքների պաշտպանությունը:

Վերը նշված տեղեկությունների հրապարակային չլինելը կարող է պատճառ հանդիսանալ, որ հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայող զինծառայողները սահմանված ժամկետը լրանալուց հետո չտեղափոխվեն ծառայության նոր վայր:

Զինվորական օրենսդրությամբ բացահայտվել է մեկ այլ օրենսդրական խնդիր: Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է զինծառայողներին Հայաստանի Հանրապետության կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում մինչև վեց ամիս ժամկետով վերապատրաստման գործուղելու հնարավորություն: Մինչդեռ, սահմանված չէ գործուղումից վերադառնալիս զինծառայողին մինչև գործուղվելը զբաղեցրած պաշտոնին կամ հավասարազոր պաշտոնի կամ զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի նշանակելու օրենսդրական պահանջ:

Պետք է նշել, որ վերապատրաստման գործուղման նպատակը զինծառայողների մասնագիտական կարողությունների զարգացումն է, ուստի տրամաբանական կլինի վերապատրաստումը հաջողությամբ անցնելու դեպքում գործուղումից վերադառնալիս նրանց նշանակել ավելի բարձր կամ առնվազն հավասարազոր պաշտոնի:

Հատկանշական է, որ նման երաշխիք ամրագրված է «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքում, որի 14-րդ հոդվածի 9.1-րդ մասի համաձայն՝ ուսման կամ այլ պետական մարմիններ կամ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով միջազգային կազմակերպություններ գործուղված ոստիկանության ծառայողները գործուղումից վերադառնալիս նշանակվում են մինչև գործուղվելը զբաղեցրած պաշտոնին կամ հավասարազոր պաշտոնի կամ զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի:

*Հետևաբար, անհրաժեշտ է.*

1. շարունակել աշխատանքները զինծառայողների օրական և (կամ) շաբաթական աշխատաժամանակը պահպանելու ուղղությամբ: Հանգստյան օրերին զինծառայողների կատարած արտաժամյա աշխատանքի դեպքում զինծառայողներին տրամադրել այլ հանգստյան օր կամ այդ օրը ավելացնել նրանց ամենամյա արձակուրդին կամ զինծառայողներին վճարել համապատասխան չափի դրամական հավելում,

2. հրապարակայնացնել հատուկ և կլիմայական ծանր պայմաններում ծառայության տևողության և տեղափոխման կարգի վերաբերյալ տեղեկությունները,

3. հսկողություն իրականացնել պլանային տեղափոխման գործընթացի նկատմամբ,

4. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում ամրագրել, որ վերապատրաստման գործուղված զինծառայողները գործուղումից վերադառնալիս նշանակվում են մինչև գործուղվելը զբաղեցրած պաշտոնին կամ հավասարազոր պաշտոնի կամ զբաղեցրած պաշտոնից ավելի բարձր պաշտոնի:

### **3. Զինվորական արհմիություններ կամ ընկերակցություններ կազմելու և դրանց անդամակցելու իրավունքը**

Մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացրել էր օրենսդրական փոփոխություններով զինծառայողների համար վերացնել արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու արգելքը, ինչպես նաև ստեղծել զինծառայողների արհեստակցական միություններ:

Ինդրի կապակցությամբ սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվում զինված ուժերում արհմիություններ ստեղծելու ուղղությամբ, և արդյոք նախատեսվում է վերացնել դրանց ստեղծման օրենսդրական արգելքը: Ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ նման հարց չի քննարկվում:

Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ ընդգծում է, որ այլոց հետ միավորվելու ազատությունը հիմնարար իրավունք է, որն անվերապահորեն ճանաչված է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կարևորագույն փաստաթղթերով:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի միավորումներ կազմելու իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետությունները պարտավորվում են ապահովել յուրաքանչյուրի՝ իր տնտեսական և սոցիալական շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը:

Չնայած այն հանգամանքին, որ նշված դրույթները կիրառելի են բոլոր ոլորտների բոլոր աշխատակիցների նկատմամբ՝ այնուամենայնիվ, դրանք պարունակում են կարևոր վերապահումներ: Նշված փաստաթղթերը պետություններին հնարավորություն են տալիս օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության կամ պետական վարչակազմի անդամների համար:

Հավանաբար, հենց այս հնարավորության հիման վրա էլ մեր օրենսդրությամբ նույնպես զինծառայողների համար նախատեսվել է նման սահմանափակում: Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ զինծառայողն իրավունք չունի անդամակցել որևէ արհեստակցական միության: «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել, ի թիվս այլնի, նաև զինված ուժերի ծառայողները:

Կարևոր է նշել, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1572 (2002) հանձնարարականը ողջունելի է համարում զինծառայողներին արհեստակցական միություններ ձևավորելու հնարավորություն տալը: Մասնավորապես, հանձնարարականի 5-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները՝ որպես «համազգեստով քաղաքացիներ», խաղաղ պայմաններում պետք է լիարժեք իրավունք ունենան հիմնադրել, միանալ և ակտիվորեն մասնակցել ժողովրդավարական ինստիտուտների շրջանակներում ստեղծված հատուկ միությունների՝ ծառայողական պարտականությունները կատարելիս իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու համար: Հանձնարարականի 7-րդ կետով պետություններին առաջարկվում է վերացնել զինված ուժերի անդամների համար ներկայում գործող՝ միավորումներ կազմելու անհիմն սահմանափակումները, և այդ նպատակով զինվորական օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

Խորհրդարանական վեհաժողովն իր մոտեցումը հաստատել է նաև թիվ 1742 (2006) հանձնարարականով, դրանով մեկ անգամ ևս անդամ պետություններին կոչ է արել թույլ տալ

զինծառայողներին միանալ մասնագիտական ներկայացուցչական միավորումներին կամ արհմիություններին և զինված ուժերի անձնակազմի բոլոր խմբերի ներկայացուցիչների ներգրավմամբ հիմնել խորհրդատվական մարմիններ:

Միջազգային իրավական փաստաթղթերով սահմանվում են զինծառայողների արհեստակցական միությունների ձևավորման և գործունեության չափանիշներ, որոնք պետությունները պետք է ապահովեն: Մասնավորապես՝

1) պետությունները պետք է բոլոր զինծառայողներին թույլատրեն անդամակցել մասնագիտական միավորման կամ իրենց շահերը ներկայացնող արհմիության:

2) այս միավորումները պետք է իրավունք ունենան խորհրդակցական մարմնի կարգավիճակով մասնակցել զինծառայողների ծառայության պայմաններին վերաբերող քննարկումներին:

3) պետք է արգելվեն նման մասնագիտական միավորումներին կամ արհմիություններին անդամակցելու համար զինծառայողների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառման կամ դրանց կիրառման սպառնալիքի դեպքերը:

4) միավորման ազատության որևէ սահմանափակում (օրինակ՝ կոլեկտիվ աշխատանքային վեճի հետ կապված) պետք է նախատեսված լինի օրենքով, համաչափ լինի մարդու իրավունքների պայմանագրերով նախատեսված՝ պետության իրավաչափ նպատակներին և զերծ լինի խտրականությունից:

Այս կապակցությամբ կարևոր արձանագրում է կատարել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «օրինական սահմանափակում» հասկացությունը չի նշանակում, որ այս իրավունքները սահմանափակող յուրաքանչյուր ներպետական օրենսդրություն ինքնին համատեղելի կլինի Կոնվենցիայի պահանջների հետ: Այդ նպատակով կարևորվում է նաև սահմանափակման որակական չափանիշը, որը պետք է լինի կանխատեսելի և զերծ կամայականություններից<sup>695</sup>:

Այս առումով, հետաքրքրական է Լեհաստանի և Իսպանիայի սահմանադրական դատարանների որոշումները: Օրինակ՝ Լեհաստանի սահմանադրական դատարանը որոշել է, որ զինված ուժերում արհմիություններին անդամակցելու արգելքը սահմանադրական է, եթե գոյություն ունեն միավորման ազատությունն իրացնելու այլընտրանքային եղանակներ<sup>696</sup>: Իսպանիայի սահմանադրական դատարանն էլ որոշել է, որ զինծառայողներն իրենց սոցիալական և տնտեսական շահերը ներկայացնող մարմիններում մասնակցության իրավունք ունեն, եթե վերջիններս չեն մտադրվում իրականացնել գործադուլային ակցիաներ:

Միավորման ազատությունը ճանաչելու առնչությամբ տարբեր է նաև միջազգային փորձը: Ընդ որում, պետությունների որդեգրած մոտեցումները տարբեր են՝ սկսած համապատասխան

<sup>695</sup> Տե՛ս, Ռեքվենյին ընդդեմ Հունգարիայի (Rekvényi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 59:

<sup>696</sup> Տե՛ս, Լեհաստանի սահմանադրական դատարանի 2000 թվականի մարտի 7-ի թիվ X 26/28 որոշումը:



մարմինների գոյությունն ընդհանրապես արգելելուց<sup>697</sup> մինչև նույնիսկ այդ մարմինների (ոչ անկախ միավորումների) պետական ֆինանսավորումը<sup>698</sup>: Իսկ մի շարք երկրներում, որտեղ զինվորական միավորումների կամ միությունների գործունեությունը թույլատրված է, դրանց անդամներին, որոշ բացառություններով, արգելվում է մասնակցել գործադուլներին<sup>699</sup>:

Հատկանշական է, որ դեռևս 2020 թվականին Ջինված ուժերի գլխավոր շտաբում նախաձեռնվել է զինծառայողների արհմիության ձևավորմանը նպատակաուղղված գործընթաց: Նշված գործընթացի շրջանակում դիրքորոշում է ներկայացնել նաև Մարդու իրավունքների պաշտպանը: Պաշտպանն, ընդհանուր առմամբ, ընդունելի է համարել զինծառայողների արհմիություն ձևավորելու գաղափարը, սակայն, մեջբերելով հարցի վերաբերյալ միջազգային փաստաթղթերի և ներպետական իրավական ակտերի պահանջները՝ նշել է, որ գաղափարի իրացման համար առաջին հերթին պետք է անհրաժեշտ փոփոխություններ կատարել թե՛ «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում և թե՛ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքում՝ նկատի ունենալով, որ Ջինված ուժերի ծառայողների համար սահմանված է արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) արգելք: Բացի դրանից, նշվել է, որ միջազգային իրավական փաստաթղթերով պետություններին առաջարկվում է թույլատրել զինված ուժերի անդամներին ներկայացուցչական միությունների միջոցով ինքնակազմակերպվել՝ **վարձատրության և աշխատանքային պայմաններին առնչվող հարցեր բարձրացնելու նպատակով**: Նշվել է նաև, որ արհեստակցական միությունների նպատակները հստակ սահմանված են «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածում: Ընդ որում, նշված բոլոր նպատակներն ուղղված են աշխատողների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերի ու իրավունքների պաշտպանությանը:

Հետևաբար, պետք է որպես հարցի լուծման ելակետ նկատի ունենալ, որ զինծառայողների արհեստակցական միության նպատակը զինծառայողների ծառայողական (աշխատանքային) և դրա հետ կապված այլ շահերի ու իրավունքների պաշտպանությունն է:

Պաշտպանի գնահատմամբ՝ կոլեկտիվ մարմինները կարող են ստեղծել լավ հնարավորություն իրենց անդամների շահերը պատշաճ ներկայացնելու, ներառյալ՝ նրանց իրավունքներն արդյունավետ պաշտպանելու գործում: Ջինվորական միավորումները կամ միությունները կարող են

<sup>697</sup> Ֆրանսիայում, օրինակ, զինծառայողների անդամակցությունը մասնագիտական միավորումներին արգելվում է, սակայն Ջինված ուժերի հարցերով բարձրագույն խորհուրդը թույլ է տալիս նրանց մասնակցությունը ծառայության պայմաններին վերաբերող հարցերի քննարկմանը:

<sup>698</sup> Օրինակ, Բուլղարիայում գործում է Ռակովսկու անվան Բուլղարիայի սպաների լիգան, որը ֆինանսավորվում է Պաշտպանության նախարարության կողմից:

<sup>699</sup> Օրինակ, Հունգարիայում օրենքով արգելվում է զինծառայողների գործադուլը: Շվեդիայում գործում է Շվեդիայի զինված ուժերի սպաների միությունը, որը զինված ուժերի հրամանատարության հետ կնքել է մի շարք պայմանագրեր աշխատանքային ժամերի, գործուղումների և բնակության պայմանների, պահեստազորի սպաների զբաղվածության, զինված ուժերի անձնակազմի այլ ներկայացուցիչների զբաղվածության ն միջազգային առաքելություններում ծառայության հարցերի շուրջ: Չնայած գործադուլ հայտարարելն օրենքով արգելված չէ՝ միությունը գործողության սահմանափակ ժամկետ ունեցող կոլեկտիվ պայմանագրով համաձայնել է, որ գործադուլային ակցիաների չի դիմելու:

նպաստել զինձառայողների բարեկեցությանը, ներկայացնել նրանց շահերը տարբեր մակարդակներում, տրամադրել խորհրդատվություն կամ բանակցել զինված ուժերում ծառայության պայմանների վերաբերյալ: Միջազգային փորձն էլ ցույց է տալիս, որ նման միավորումները կարող են լինել լավագույն միջնորդը պաշտպանական գերատեսչության (մեր դեպքում՝ Պաշտպանության նախարարության) և զինձառայողների միջև:

*Հետևաբար, ևս մեկ անգամ առաջարկվում է.*

1. «Զինվորական ծառայության և զինձառայողի կարգավիճակի մասին» և «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքներում կատարել անհրաժեշտ փոփոխություններ՝ Զինված ուժերի ծառայողների համար վերացնելով արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) արգելքը,

2. ստեղծել զինձառայողների արհեստակցական միություններ և աջակցել դրանց գործունեությանը:

#### **4. Զինվորական ծառայությունից արձակվելու իրավունքը**

Մարդու իրավունքների պաշտպանն ի գիտություն է ընդունում, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական փաստաթղթերը հոչակում ու երաշխավորում են զինված ուժերի կազմից զինձառայողների դուրս գալու իրավունքի լիարժեք իրացումը:

Այսպես, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 16-րդ կետի բովանդակության համաձայն՝ զինված ուժերի անդամներն ունեն զինված ուժերից դուրս գալու իրավունք:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է պարտադրվի կատարելու պարտադիր կամ հարկադիր աշխատանք: Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում նշվում է, որ «պարտադիր կամ հարկադիր աշխատանք» հասկացությունը չի ներառում զինվորական բնույթի ցանկացած ծառայություն, իսկ այն երկրներում, որտեղ օրինական է ճանաչվում զինվորական ծառայությունից հրաժարվելը՝ համոզմունքներից ելնելով՝ պարտադիր զինվորական ծառայության փոխարեն նշանակված ծառայությունը:

Պաշտպանը նաև ի գիտություն է ընդունում, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշման համաձայն՝ 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետն՝ ամբողջությամբ և իր համատեքստում, ուղղված է **միայն պարտադիր զինվորական ծառայությանն** այն երկրներում, ուր այն գոյություն ունի երկու պատճառով. մի կողմից՝ կապված համոզմունքների հիման վրա ծառայություն հրաժարվող անձանց հետ, որոնք ամենայն հավանականությամբ նորակոչիկներ են և ոչ կադրային զինվորականներ, իսկ մյուս կողմից՝ պարբերության վերջում նշված զինվորական

պարտադիր ծառայության հստակ վկայակոչման հետ կապված<sup>700</sup>: Հետևաբար, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության՝ կոնվենցիոն վերը նշված դրույթը չի կարող տարածվել պայմանագրային զինվորական ծառայության նկատմամբ:

Նաև հատկանշական է, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է մինչև պայմանագրի ժամկետը լրանալը զինվորական ծառայությունից արձակվելու զեկուցագիր ներկայացնելիս, եթե չունի սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության չճանաչված ժամկետ: Նույն օրենքի 55-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող հրամանատարի (պետի) հրամանով՝ արձակման հիմքեր ծագելուց ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ պայմանագրային զինվորական ծառայությունից չարձակվելու վերաբերյալ:

Օրինակ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով զինծառայողը տեղեկացրել է, որ պայմանագրային զինվորական ծառայությունից վաղաժամկետ արձակվելու նպատակով զեկուցագիր է ներկայացրել վերադաս հրամանատարությանը, սակայն զեկուցագրին ընթացք չի տրվել: Ավելին, նշվել է, որ զինվորական ծառայությունից կարող է արձակվել միայն ուսման ծախսերի գումարը վճարելուց հետո: Զինծառայողը նշել է, որ ներկայում չի կարող վճարել պահանջվող գումարը և ցանկանում է արձակվել ծառայությունից: Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2017 թվականի ապրիլի 6-ի թիվ 347-Ն որոշմամբ հաստատված հավելվածի «Զինծառայողին հետուսումնական պայմանագրային զինվորական ծառայության ընթացքում զինվորական ծառայությունից արձակելիս պայմանագրային պարտավորությունն անպատշաճ կատարելու համար իրավական հետևանքի կիրառման» կարգի 8-րդ կետի համաձայն՝ օրենքով սահմանված հիմքով զինվորական ծառայությունից արձակման ենթակա զինծառայողի կողմից օրենքով սահմանված տուժանքը սահմանված ժամկետում չվճարելու կամ վճարելուց հրաժարվելու դեպքում, ինչպես նաև եթե զինծառայողը ցանկություն չի հայտնել շարունակելու զինվորական ծառայությունը, պետական լիազոր մարմնի կադրային ստորաբաժանումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում իրականացնում է զինծառայողի արձակումը զինվորական ծառայությունից և արձակման մասին հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում զինծառայողի և տուժանքի ընդհանուր գումարի վերաբերյալ տեղեկությունները ներկայացնում է պետական լիազոր մարմնի իրավաբանական ստորաբաժանում՝ օրենքով սահմանված տուժանքը դատական կարգով բռնագանձելու համար: Նմանատիպ կարգավորում է նախատեսվել նաև ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի թիվ 393-Ն որոշմամբ:

<sup>700</sup> Տե՛ս Շիտոսն ընդդեմ Հունաստանի (Chitos v. Greece) գործով 2015 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 51637/12, կետ 83:

**Հետևաբար, վերը նշված օրենքի և Կառավարության որոշումների կարգավորումների համաձայն՝ եթե զինծառայողը հրաժարվում է փոխհատուցել ուսման ծախսերը, ապա նա պետք է ազատվի զինվորական ծառայությունից և հաշվառվի պահեստազրույցում, իսկ ուսման ծախսերի բռնագանձումն իրականացվի դատական կարգով:**

Նկարագրված վերոնշյալ դեպքում Պաշտպանության նախարարության հետ հարցի քննարկման արդյունքում զինծառայողը արձակվել է ՀՀ զինված ուժերի պահեստազոր:

Մեկ այլ դեպքում, պայմանագրային զինծառայողը Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով հայտնել է, որ ծառայությունից արձակվելու վերաբերյալ զեկուցագիր է ներկայացրել վերադաս հրամանատարին, զեկուցագրին սահմանված կարգով ընթացք է տրվել, սակայն մի քանի ամիս է, ինչ չի արձակվում զինված ուժերից:

Բողոքի քննարկման արդյունքում զինծառայողն արձակվել է զինված ուժերի պահեստազոր:

Նախորդ տարեկան հաղորդումներում Պաշտպանն առաջարկել էր կատարել ուսումնասիրություններ ու վերլուծություններ և վեր հանել պայմանագրային զինծառայողների՝ պայմանագրից հրաժարվելու և զինվորական ծառայությունից արձակվելու պատճառները: Նշվել էր, որ միայն այդ պատճառների վերհանման և դրանց լուծման միջոցով հնարավոր կլինի ՀՀ զինված ուժերում ծառայությունը դարձնել գրավիչ, ինչն իր հերթին կավելացնի զինված ուժերում ծառայություն անցնելու ցանկություն հայտնող անձանց քանակը և կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների թիվը<sup>701</sup>:

2021 թվականի տարեկան հաղորդման մշակման աշխատանքների ընթացքում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարությանն այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել պայմանագրային զինծառայողների ծառայությունից արձակման պատճառները պարզելու ուղղությամբ և արդյոք իրականացվել կամ նախատեսվում է իրականացնել խնդրի վերաբերյալ հետազոտություն և վերլուծություն:

Այս կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ զինված ուժերից զինծառայողների արձակման պատճառները հիմնականում սոցիալական, կենցաղային և բնակարանային խնդիրներն են, ինչի բարելավման ուղղությամբ քայլեր են ձեռնարկվում:

Զինվորական ծառայությունից արձակվելու այս պատճառների մասին պարբերաբար բարձրաձայնում է Մարդու իրավունքների պաշտպանը: Ստացված բողոքները, զորամասեր այցերը, զինծառայողների հետ առանձնազրույցները ևս փաստում են, որ սոցիալական համակարգի ամրապնդումը, այդ թվում՝ վարձատրության բարձրացումը, զինված ուժերում կարևորագույն, հրատապ լուծում պահանջող և առաջնահերթ հարցերից է, որի լուծումը պետք է օր առաջ ապահովել, հակառակ պարագայում մեծանալու է փոխկապակցված այլ խնդիրների խորացման ռիսկը:

Պաշտպանության նախարարությունը նաև տեղեկացրել է, որ ծառայությունից արձակվելու զեկուցագրերին սահմանված ժամկետներում ընթացք չտալու վերաբերյալ 13 զինծառայող դիմել է

<sup>701</sup> Տե՛ս, օրինակ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2018 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 488-489:

դատարան: Դատարան դիմած գործերից 6-ը կարճվել են հայցից հրաժարվելու հիմքով, քանի որ Պաշտպանության նախարարության իրավասու կադրային ստորաբաժանումներն ընթացք են տվել զեկուցագրերին, 1 գործով կայացվել է հայցը բավարարելու վճիռ, մնացած գործերն ընթացքի մեջ են:

*Հետևաբար, առաջարկվում է.*

*1. ձգձգումները բացառելու նպատակով խստացնել հսկողությունը պայմանագրային զինծառայողների կողմից ծառայությունից արձակվելու գործընթացի նկատմամբ,*

*2. լրացուցիչ մեխանիզմների ներդրմամբ (օրինակ՝ սոցիալական) առավել բարձրացնել զինծառայողի կարգավիճակը, ինչը կնվազեցնի զինված ուժերից արձակվող զինծառայողների քանակը:*

## **5. Առողջական վիճակով պայմանավորված պայմանագրային զինվորական ծառայությունից արձակելը**

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն անդրադարձել էր առողջական վիճակի պատճառով պայմանագրային զինվորական ծառայությունից արձակվելու հետ կապված մի խնդրի: Հարցը կայանում է նրանում, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված ցանկով նախատեսված են որոշակի հիվանդություններ, որոնց առկայության դեպքում զորամասի (ՊՆ, ԶՈՒ ԳՇ կառուցվածքային միավորի) հրամանատարի (պետի) միջնորդությամբ, պարտադիր հաշվի առնելով փորձաքննվողի՝ ծառայությունը շարունակելու անձնական ցանկությունը, կարող է անհատապես կայացվել որոշում՝ «Սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար»:

Նշված կարգավորման վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ դրանով զորամասերի հրամանատարներին տրվում է հայեցողական լիազորություն, սակայն, կարևոր է, որ այդպիսի հայեցողությունը չհանգեցնի չարաշահումների կամ սխալ կիրառելիության:

Պաշտպանն այս խնդիրն ուշադրության տակ է պահում ստացված բողոքների հաշվառմամբ: Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրած բողոքով պայմանագրային զինծառայողը տեղեկացրել էր, որ իր մոտ առաջացել է առողջական խնդիր, որի առկայության դեպքում՝ սահմանափակումով պիտանի կարող է ճանաչվել միայն հրամանատարի միջնորդությամբ: Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նշված քաղաքացին բարեխիղճ զինծառայող է, սակայն առկա է մտահոգություն, որ նրա առողջական վիճակը թույլ չի տա շարունակել զինվորական ծառայությունը:

Արդյունքում՝ զինծառայողի հրամանատարի կողմից ներկայացվել է միջնորդություն, և նա Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Մեկ այլ դեպքում՝ պայմանագրային զինծառայողը Պաշտպանին տեղեկացրել է, որ իր մոտ հայտնաբերվել է այնպիսի հիվանդություն, որի առկայության պայմաններում սահմանափակումով պիտանի կարող է ճանաչվել հրամանատարի միջնորդությամբ, սակայն հրամանատարը միջնորդություն չի ներկայացրել:

Պաշտպանության նախարարությունից պարզաբանվել է, որ հաշվի առնելով ծառայողական և ֆունկցիոնալ պարտականությունների կատարման հետ զինծառայողի առողջական վիճակի անհամատեղելիությունը, ինչպես նաև զորամասում շարքային կազմի պայմանագրային զինծառայողի այլ թափուր հաստիքի բացակայությունը՝ զորամասի հրամանատարությունը չի միջնորդել հետագա ծառայությունը շարունակելու նպատակահարմարության վերաբերյալ:

Այս դեպքում, չնայած Պաշտպանության նախարարությունից նաև տեղեկացվել էր, որ Զինված ուժերի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը միջնորդություն է ներկայացրել զինծառայողին իր առողջական վիճակին համապատասխան պաշտոնի նշանակելու վերաբերյալ, ավելին՝ այլ զորամասի հրամանատարությունն էլ պատրաստակամություն էր հայտնել զինծառայողին ծառայության ընդունելու մասին, սակայն գործընթացն անհարկի ձգձգվում էր:

Խնդիրը կայանում էր նրանում, որ, օրինակ, զինծառայողն իր ծառայության վայրի զորամասում հետագա ծառայությունը շարունակել չէր կարող առողջական վիճակի և զորամասի պայմանների անհամատեղելիության պատճառով (այսինքն՝ տվյալ զորամասի հրամանատարը միջնորդություն ներկայացնել չէր կարող), իսկ մեկ այլ զորամասի հրամանատար, ով կարող էր զինծառայողին ընդունել ծառայության, փաստացի նույնպես չէր կարող ներկայացնել միջնորդություն, քանի որ անձն իրավական առումով զինվորական ծառայությունը չէր անցնում իր ենթակայությամբ:

Վերոնշյալ միջնորդության վերաբերյալ կարգավորումից պարզ չէ, թե այդպիսի հնարավորություն նախատեսված է զինծառայողի անմիջական, թե նաև վերադաս հրամանատարության համար, ինչը կարող է տարակերպ մեկնաբանությունների առիթ հանդիսանալ:

Թեև վերադաս հրամանատարության կողմից նույնպես ներկայացվում են միջնորդություններ, սակայն այս գործընթացն իրավական հստակ մեխանիզմների տեսանկյունից կարգավորված չէ, ինչի պատճառով էլ գործնականում առաջանում են այսպիսի անհարկի ձգձգումներ:

Բացի դրանից, գործընթացի ձգձգումը խնդրահարույց է նաև Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից զինծառայողին փորձաքննելու ժամկետների հետ կապված: Պրակտիկայում խնդրի կարգավորման նպատակով Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը գտնում է միջանկյալ լուծումներ, օրինակ, զինծառայողին տրամադրում է վերականգնողական արձակուրդ մինչև վերադաս հրամանատարության կողմից միջնորդության ստացվելը:

Նշված խնդիրն արձանագրվել էր նաև Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով, արձանագրվել էր դեպք, երբ զինծառայողին սահմանափակումով պիտանի ճանաչելու միջնորդություն հրամանատարի կողմից չէր ներկայացվել՝ միայն զինծառայողի ոչ բավարար կարգապահությամբ պայմանավորված: Հասկանալի է հիվանդության և զինվորական

Ծառայության անհամատեղելիության պայմաններում հրամանատարի կողմից միջնորդություն չներկայացնելը, սակայն մտահոգիչ է այն, որ առողջական վիճակով պայմանավորված միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունն առաջանալիս կարող է նաև հիմք ընդունվել զինծառայողի նախկինում կարգապահական խախտումներ կատարած լինելու հանգամանքը: Հենց սա էլ հանդիսանում է հայեցողության այն սահմանը, որը չպետք է խախտվի զորամասերի հրամանատարների կողմից: Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքով նախատեսված են կարգապահական խախտումներ կատարած զինծառայողներին տրվող տույժերի տեսակները, որոնցից ամենախիստը զինվորական ծառայությունից արձակումն է: Եթե զինծառայողը կատարել է այնպիսի կարգապահական խախտումներ, որոնք օրենքի տեսանկյունից անհամատեղելի են ծառայության հետ, ապա նրան ծառայությունից արձակելը պետք է իրականացվի հենց նշված տույժը կիրառելու իրավական ընթացակարգով: Հետևաբար, Կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 404-Ն որոշմամբ նախատեսված որոշակի հիվանդությունների առկայության դեպքում զորամասի հրամանատարի միջնորդություն ներկայացնելը **պետք է դիտարկվի բացառապես զինծառայողի առողջական վիճակի, նրա մոտ առկա հիվանդության և զինվորական ծառայության հետ համատեղելիության տեսանկյունից:** Հակառակ դեպքում՝ զինծառայողի կարգապահությունը առողջական վիճակով պայմանավորված միջնորդություն չներկայացնելու համար հիմք ընդունելը կարող է դիտարկվել որպես **ծառայությունից արձակելու քողարկված հիմք:**

Ավելին, հրամանատարության կողմից նման միջնորդության ներկայացումն ինքնին անտրամաբանական է և հավելյալ խնդիրների առաջացման հիմք է դառնում:

Ինչպես արդեն նշվեց, զինվորական ծառայության համար առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված զինծառայողին սահմանափակումով պիտանի ճանաչելու միջնորդության ներկայացումը կարող է կապված լինել բացառապես զինծառայողի առողջական վիճակի հետ: Հետևաբար, այն դեպքում, երբ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը գտնում է, որ զինծառայողը կարող է շարունակել հետագա ծառայությունը և առկա է զինծառայողի ցանկությունը, ապա զորամասի հրամանատարի կողմից միջնորդության ներկայացումը կամ կորցնում է իր նշանակությունը, կամ կամայականությունների դրսևորման (անցանկալի զինծառայողներին ծառայությունից արձակելու) հիմք է դառնում:

Հետևաբար, զինծառայողի ցանկության առկայության և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի դրական գնահատականի դեպքում զինծառայողի հետագա ծառայության համար չպետք է հիմք ընդունվի կոնկրետ զորամասի հրամանատարի միջնորդությունը: Այս դեպքում պետք է ընդամենը գնահատել, թե արդյոք տվյալ զորամասի պայմանները համատեղելի են զինծառայողի առողջական վիճակի հետ, կարող է նա արդյոք շարունակել կատարել իր պաշտոնով նախատեսված պարտականությունները, եթե ոչ՝ Զինված ուժերը պարզապես պետք է քննարկի մեկ այլ զորամասում զինծառայողի հետագա ծառայությունը կազմակերպելու հնարավորությունը:

Նշվածով պայմանավորված՝ Պաշտպանն առաջարկել է զինվորական ծառայության համար զինծառայողին սահմանափակումով պիտանի ճանաչելը պայմանավորել ոչ թե զորամասի հրամանատարի միջնորդագրով, այլ մշակել առողջական վիճակով պայմանավորված՝ հետագա ծառայությունը շարունակելու հնարավորությունը Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից գնահատելու և նրան առողջական վիճակին համապատասխան այլ զորամաս տեղափոխելու մեխանիզմներ: Այս առաջարկը, սակայն, դեռևս չի իրացվել:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է արձանագրել, որ Պաշտպանն առաջարկել է մինչև իրավական կարգավորման փոփոխության իրականացումը, պայմանագրային զինծառայողի մոտ որոշակի հիվանդությունների առաջացման և նրա հրամանատարի կողմից ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչվելու համար միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում՝ միջնորդություն ներկայացնելը կամ չներկայացնելը պայմանավորել բացառապես զինծառայողի առողջական վիճակով և ծառայության պայմանների հետ դրա համատեղելիությամբ:

Այս առումով կարևոր է ընդգծել, որ 2021 թվականի ընթացքում ոչ պիտանի ճանաչված զինծառայողների վերաբերյալ անհատապես «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար» որոշումը կայացնելու նպատակով զորամասի հրամանատարի կողմից զինծառայողի կարգապահությամբ կամ բացասական բնութագրվելով պայմանավորված միջնորդություն չներկայացնելու վերաբերյալ բողոքներ Պաշտպանին չեն հասցեագրվել: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ այս ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ, ինչը դրական է գնահատվում:

Բացի Պաշտպանի աշխատակազմում առկա տեղեկությունների գնահատումից, խնդրի լուծմանն ուղղված միջոցներ ձեռնարկվելու ենթադրությունը հիմնվում է նաև Պաշտպանության նախարարությունից ստացված այն տեղեկության վրա, ըստ որի՝ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է մեկ դեպք, երբ մարտական գործողությունների ընթացքում սպան վիրավորվել է և կարող էր ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ սպան 8 ամիս հետո ձեռք էր բերելու երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի կողմից ներկայացվել է միջնորդություն, որի հիման վրա զինծառայողը ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

*Հետևաբար, առաջարկվում է՝ զինվորական ծառայության համար զինծառայողին սահմանափակումով պիտանի ճանաչելը պայմանավորել ոչ թե զորամասի հրամանատարի միջնորդագրով, այլ մշակել առողջական վիճակով պայմանավորված՝ հետագա ծառայությունը շարունակելու հնարավորությունը Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի կողմից գնահատելու և նրան առողջական վիճակին համապատասխան այլ զորամաս տեղափոխելու մեխանիզմներ:*



## 6. Զինճառայողների իրավունքների պաշտպանությունը գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս

Պայմանագրային զինճառայողների իրավունքների պաշտպանությունը մշտապես առաջնային է Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության ոլորտում: Այստեղ խոսքը նաև այն խնդրի մասին է, որն առնչվում է նման կատեգորիայի զինճառայողների՝ գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելուն:

Պաշտպանին նախկինում հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ պարզվել է, որ պայմանագիրը լուծելիս զինճառայողների որոշ իրավունքներ չեն պահպանվում: Ընդ որում, խնդիրների թվում կան նաև այնպիսիք, որոնք օրենսդրական բնույթի են, և դրանց լուծման ուղղությամբ Պաշտպանի ներկայացրած որոշ առաջարկներ շարունակում են մնալ չիրացված:

Օրինակ՝ նախկին զինճառայողներին չի տրամադրվում չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում: Խնդիրը կայանում է նրանում, որ «Զինճառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով<sup>702</sup> սահմանված էր, որ զինվորական ծառայությունից արձակվող և ոչ ավելի, քան 2 տարվա (զինվորական ծառայությունից ազատվելու և դրան նախորդող տարում) հերթական արձակուրդից չօգտված (կամ մասամբ օգտված) զինճառայողներին չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց տրվում է փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած չափով: Պաշտպանության նախարարության մեկնաբանությամբ՝ նշված օրենքով նախատեսված էր չօգտագործած արձակուրդների համար փոխհատուցում տրամադրելու ժամանակային սահմանափակում:

Դեռևս 2018 թվականին Պաշտպանի կողմից կայացված՝ մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշմամբ նշվել էր, որ օրենքի տվյալ իրավակարգավորումը վերաբերում է այն դեպքերին, երբ զորացրված զինճառայողը հերթական արձակուրդից չի օգտվել ոչ ավելի, քանի 2 տարի (զինվորական ծառայությունից ազատվելու և դրան նախորդող տարում), ինչը կիրառելի չէ հերթական արձակուրդից 2 տարուց ավելի չօգտված զինճառայողների պարագայում: Այսինքն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մատնանշված դրույթը կարգավորում է միայն որոշակի խումբ զինճառայողների չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց տրվող փոխհատուցման չափի հետ կապված հարցերը: Այդ դրույթը չի կարող մեկնաբանվել այնպես, որ այդ կատեգորիայի մեջ չմտնող անձինք զրկվեն փոխհատուցում ստանալու իրավունքից<sup>703</sup>:

<sup>702</sup> Ուժը կորցրել է 2017 թվականի նոյեմբերի 15-ին:

<sup>703</sup> 2019 թվականին նույնպես վերոնշյալ խնդրի կապակցությամբ Պաշտպանը բողոքներից մեկով կայացրել էր մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, որով արձանագրել է, որ չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց փոխհատուցում տրամադրելու համար առկա են եղել և կան բավարար իրավական հիմքեր, ուստի, նոր իրավական ակտ, այդ թվում՝ դատական, ընդունելու անհրաժեշտությունը բացակայում է: Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր նախկին զինճառայողին տրամադրել զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված բոլոր արձակուրդների համար դրամական հատուցում, իսկ

Հատկանշական է, որ չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց նախկին զինծառայողներին փոխհատուցում տրամադրելու մասով ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/5524/05/16 գործով 2018 թվականի հոկտեմբերի 16-ի վճռով չօգտագործված արձակուրդների դիմաց հատուցում վճարելուն պարտավորեցնելու պահանջի մասին քաղաքացու հայցն ընդդեմ Պաշտպանության նախարարության բավարարել է: Պաշտպանության նախարարության ներկայացրած վերաքննիչ բողոքը մերժվել է, ինչպես նաև մերժվել է վճարել բողոքը վարույթ ընդունելը, և Վարչական դատարանի վճիռը 2020 թվականի հունվարի 22-ից մտել է օրինական ուժի մեջ, ինչից հետո էլ, միայն, Պաշտպանության նախարարությունը անհատական խնդրի լուծման միջոցներ է ձեռնարկել:

Նախորդ տարիներին Պաշտպանի աշխատակազմում քննարկման ընդունված բողոքներով Պաշտպանության նախարարություն հասցեագրվել են գրություններ, սակայն, կրկին, խնդիրը լուծում չի ստացել:

Չնայած դրան, Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց դրամական փոխհատուցում ստանալու խնդրով ստացվել է 11 բողոք, որից 8-ը բավարարվել է և արձակման հրամաններում կատարվել են համապատասխան փոփոխություններ, իսկ 3 բողոքի քննարկում գտնվում է ընթացքի մեջ:

Հարկ է նաև նշել, որ խնդրի կապակցությամբ ՀՀ վարչական դատարանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության որոշման խնդրանքով: Նշված դիմումի շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացվել է դիրքորոշում, որով նշվել է, որ **զինծառայողներին զինվորական ծառայությունից արձակվելիս չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում չտրամադրելը խտրականության դրսևորում է, բացի այդ հանգեցնում է անձի սեփականության իրավունքի խախտման:** Վկայակոչելով ոլորտի միջազգային և ներպետական իրավական կարգավորումները՝ նշվել է, որ չօգտագործված արձակուրդների համար դրամական հատուցում տրամադրելու հարցում զինծառայողների աշխատանքային հարաբերությունների կարգավորումները տարբերվում են այլ պետական ծառայողների ու աշխատակիցների, ինչպես նաև մասնավոր ոլորտում աշխատող անձանց աշխատանքային հարաբերությունների կարգավորումներից: Ընդ որում, պարզ չէ, թե ինչ օրինական նպատակ է հետապնդում կամ զինվորական ծառայության ինչ առանձնահատկություններով է պայմանավորված նման տարբերակված մոտեցումը: Ուստի, տվյալ դեպքում տարբերակված կարգավորումները օբյեկտիվ ու հիմնավոր չեն և հանգեցնում են աշխատանքային իրավահարաբերությունների մեջ գտնվող անձանց համար խտրական վերաբերմունքի:

---

հետագայում նմանատիպ դեպքերը բացառելու համար սահմանել հսկողություն զինծառայողներին հերթական արձակուրդները սահմանված ժամկետում տրամադրելու նկատմամբ:

Միաժամանակ, հիմնավորվել է, որ զինծառայողների նկատմամբ նման խտրականության դրսևորումն ուղղակիորեն միջամտում է նրանց սեփականության իրավունքին, և այն զինծառայողները, ովքեր հերթական արձակուրդից չեն օգտվել ավելի քան երկու տարի, զրկվել են չօգտագործած արձակուրդի դրամական հատուցում ստանալու իրավունքից, ուստի նաև խախտվել է վերջիններիս սեփականության իրավունքը:

Արդյունքում, ՀՀ սահմանադրական դատարանը ՍԴՈ-1424 որոշմամբ, ի թիվս այլնի, արձանագրել է, որ իրավակարգավորման այդպիսի պայմաններում, **երբ կոնկրետ ժամանակահատվածում չի եղել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակումը, սակայն զինծառայողը զրկված է եղել այդ արձակուրդային օրերն օգտագործելու կամ դրանց դիմաց առանց ծառայությունից արձակվելու փոխհատուցում պահանջելու և ստանալու հնարավորությունից, ապա զինծառայողի համար առկա են եղել «օրինական ակնկալիքի» հիմքեր: Հետևաբար, նշված դեպքերում պետք է երաշխավորվի փոխհատուցում ստանալու՝ անձի հնարավորությունը՝ որպես Սահմանադրությամբ նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության իրագործում:**

Այսպիսով, ստացվում է, որ նաև Սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ, առնվազն 2005 թվականի հունիսի 21-ից 2014 թվականի հոկտեմբերի 2-ն ընկած ժամանակահատվածում չեն եղել չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակումներ, և առնվազն այդ ժամանակահատվածի համար փոխհատուցում ստանալու հնարավորությունից զրկված զինծառայողներն ունեցել են «օրինական ակնկալիք», և նրանց փոխհատուցում ստանալու հնարավորությունը երաշխավորելը պարտադիր է:

Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանմամբ, ի թիվս այլնի, նշվել է, որ Օրենքում զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդային օրերի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելու մասին փոփոխություն կատարելու դեպքում այն կարող է կիրառվել զինծառայողների նկատմամբ միայն, եթե դրանում ներառված լինի հետադարձ ուժ ունենալու իրավական նորմը:

Պաշտպանը, այս առումով, կարևոր է համարում արձանագրել, որ **քանի դեռ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում տվյալ իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ նախատեսված չէ, գործում են ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավանորմերը:**

Այս հանգամանքը փաստել է նաև ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը՝ թիվ ՎԴ/5524/05/16 գործով 2019 թվականի հոկտեմբերի 2-ի որոշմամբ: Դատարանը նշել է, որ «...ներկայումս զորացրված զինծառայողների չօգտագործված ամենամյա արձակուրդի դիմաց դրամական հատուցման վերաբերյալ հատուկ կարգավորման բացակայության պարագայում գործում են ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումները»:

Նշվածի համատեքստում ստացվում է, որ Պաշտպանության նախարարության վկայակոչած դիրքորոշումն այն մասին, որ զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդային օրերի դիմաց դրամական փոխհատուցում տրամադրելը հնարավոր է բացառապես օրենքում փոփոխություն կատարվելու և դրան հետադարձ ուժ տրվելու դեպքում, հիմնավոր չէ, քանի որ փաստացի ներկայում գործում է Աշխատանքային օրենսգրքի համապատասխան կարգավորումը, որի հետադարձ ուժ ունենալու հարցը նույնիսկ քննարկման ենթակա չէ (գործող Աշխատանքային օրենսգրքն ուժի մեջ է 2005 թվականի հունիսի 21-ից)<sup>704</sup>:

Ավելին, Պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց աշխատանքային (ծառայողական) հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, եթե **համապատասխան օրենքներով** այլ բան նախատեսված չէ: Այսինքն, Աշխատանքային օրենսգրքի կարգավորումներից տարբերվող կարգավորումներ հնարավոր է նախատեսել **բացառապես օրենսդրական մակարդակով**: Հետևաբար, բացի նրանից, որ Կառավարության նոյեմբերի 27-ի թիվ 778-Ն որոշման կարգավորումը վերաբերում է միայն որոշակի խումբ անձանց, տվյալ դեպքում կարևոր է ընդգծել, որ որոշումն ընդունվել էր «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով, սակայն, հատկանշական է, որ նշված օրենքով չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց փոխհատուցում ստանալու ժամկետային սահմանափակում նախատեսված չի եղել:

Այսպիսով, ենթաօրենսդրական ակտի մակարդակով նման հիմնարար իրավունքը սահմանափակող դրույթի ընդունումն ինքնին իրավաչափ չի եղել:

Վերը նշված խնդրի կապակցությամբ 2021 թվականի ընթացքում տեղի են ունեցել որոշակի այլ զարգացումներ ևս:

Մասնավորապես, Պաշտպանը կրկին մանրամասն վերլուծություններով և հստակ առաջարկներով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն: Դրանից հետո, Պաշտպանության նախարարությունից ստացվել է ««Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի կապակցությամբ Պաշտպանը ներկայացրել է իր դիրքորոշումը:

Այսպես, Նախագծով, ի թիվս այլնի, առաջարկվում էր «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում սույն օրենքի 49-րդ հոդվածի 1-ին և 1.1-ին մասերում սահմանված արձակուրդի չօգտագործված օրեր ունեցող զինծառայողին այդ օրերն արձակուրդի տեսքով տրամադրելու անհնարինության, ինչպես նաև այդ արձակուրդի տրամադրումից զինծառայողի հրաժարվելու

<sup>704</sup> Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 10-ի թիվ ՍԴԴ 1424-րդ որոշման 4.2-րդ կետը:

դեպքերում զինծառայողին տրվում է հատուցում՝ չօգտագործված արձակուրդի **բոլոր օրերի դիմաց**, որի չափը հաշվարկվում է զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի խմբին համապատասխան սահմանված պաշտոնային դրույքաչափը 30-ի բաժանելու և չօգտագործված արձակուրդի օրացուցային օրերի թվով բազմապատկելու միջոցով:»:

Նախագծով նաև նշվում էր, որ այդ փոփոխվող կարգավորման գործողությունը տարածվում է 2017 թվականի դեկտեմբերի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա, իսկ բոլոր օրերի դիմաց փոխհատուցում ստանալու նպատակով կարող են դիմել միայն 2017 թվականի դեկտեմբերի 16-ից մինչև փոփոխություն կատարելու մասին օրենքն ուժի մեջ մտնելը պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 61-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց հատուցում չստացած կամ մասնակի ստացած նախկին զինծառայողները:

Պաշտպանը կարևորել է այս փոփոխությունը, միևնույն ժամանակ, հիմք ընդունելով վերևում ներկայացված դիրքորոշումները, ինչպես նախկինում գործող կարգավորումների սխալ մեկնաբանման, այնպես էլ Աշխատանքային օրենսգրքով սահմանված նվազագույն շեմի վերաբերյալ՝ առաջարկել է Նախագծում կատարել փոփոխություն: Մասնավորապես, առաջարկվել է չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց հատուցում չստացած կամ մասնակի ստացած նախկին զինծառայողներին հասանելիք հատուցումը հաշվարկելու նպատակով դիմում հասցեագրելու հնարավորություն նախատեսել ոչ միայն 2017 թվականի դեկտեմբերի 16-ից հետո պայմանագրային զինվորական ծառայությունից արձակված անձանց, այլ նաև «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի գործողության ժամանակահատվածում ծառայությունից արձակված և օրենքի 30-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն չօգտագործված արձակուրդի օրերի դիմաց հատուցում չստացած կամ մասնակի ստացած նախկին զինծառայողների համար:

Այնուամենայնիվ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում նախագծով առաջարկվող փոփոխությունները դեռևս չեն կատարվել:

Դրա հետ մեկտեղ, 2021 թվականի ընթացքում պատգամավորական նախաձեռնությամբ շրջանառվել է նշված օրենքում այդ խնդրի կապակցությամբ փոփոխություն կատարելու նախագիծ, որով առաջարկվող կարգավորումն ավելի ճիշտ է թվում:

Այսպես, պատգամավորական նախաձեռնությամբ շրջանառված նախագծով առաջարկվում էր նախատեսել, որ զինվորական ծառայությունից արձակվող և զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ չօգտագործված արձակուրդների բոլոր օրերի դիմաց: **Ընդ որում, նախագծով նաև առաջարկվում էր ամրագրել, որ զինվորական ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդ ունեցող զինծառայողներին տրվում է փոխհատուցում՝ անկախ զինվորական ծառայությունից արձակման տարեթվից:**

Օրենսդրական այսպիսի կարգավորում ամրագրելու պարագայում կարող է լուծվել տարիներ շարունակ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվող այս համակարգային խնդիրը, սակայն նախագծի ընդունումն Ազգային ժողովը մերժել է:

2020 թվականի ընթացքում քննարկված բողոքներից մեկով արձանագրվել էր մեկ այլ խնդիր, որն այդ ժամանակահատվածում դեռևս քննարկման փուլում էր:

Զինճառայողը Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել էր, որ իր նկատմամբ կիրառվել էր «Զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական տույժ, որի հիման վրա էլ նա արձակվել էր Զինված ուժերի պահեստագոր: Զինճառայողի տեղեկացմամբ՝ ծառայությունից արձակելու հրամանը բողոքարկել էր Պաշտպանության նախարարություն, ինչի արդյունքում Զինված ուժերի բանակային զորամիավորման հրամանատարի հրամանը չեղյալ էր ճանաչվել: Նշվել էր, որ քաղաքացին պետք է վերականգնվի ծառայության: Այնուամենայնիվ, զինճառայողը ոչ թե վերականգնվել, այլ կրկին ընդունվել էր ծառայության:

Ճիշտ է, Պաշտպանի աջակցությամբ քաղաքացին վերականգնվել էր զինվորական ծառայության և նրա ծառայության ընդհանուր ստաժում հաշվարկվելու էր նաև բաց թողնված զինվորական ծառայության ժամկետը, սակայն նշված հարցի լուծումից հետո զինճառայողը Պաշտպանի աշխատակազմ էր ներկայացրել հավելյալ խնդիր այն մասին, որ ծառայության վերականգնվելուց հետո իրեն չի տրամադրվել հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակահատվածի դրամական ապահովում:

Այս առումով Պաշտպանն ընդգծել է, որ «Զինվորական ծառայության և զինճառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի վերաբերելի նորմերի կարգավորումներով նախատեսված է պայմանագրային զինվորական ծառայությունից անօրինական արձակված պայմանագրային զինճառայողին զինվորական ծառայությունում վերականգնելու դեպքում նրա զինվորական ծառայության ժամկետում, ինչպես նաև զինվորական կոչումների կրման ժամկետում անօրինական զորացրելու և հետագայում վերականգնելու հետևանքով ընդհատված ժամանակահատվածները հաշվարկելու պարտավորություն:

Այսինքն, օրենսդրական կարգավորման տրամաբանությամբ զինվորական ծառայությունից արձակումը ոչ իրավաչափ ճանաչվելու դեպքում զինճառայողին ծառայության վերականգնելը հիմնական իրավունք է, իսկ այդ հանգամանքով պայմանավորված՝ չճառայած օրերը ստաժում հաշվարկելը, այդ ժամկետը նաև կոչումների կրման ժամկետում ներառելը և այլն, ածանցյալ իրավունքներ են: Այս տեսանկյունից, զինճառայողին օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով ծառայությունից արձակված լինելու հանգամանքն ապացուցված լինելու (թեկուզև ոչ դատարանի կողմից) պարագայում չճառայած օրերի դիմաց վարձատրություն ստանալու իրավունքը ևս հիմնականից բխող ածանցյալ իրավունք է, որը վերականգման ենթակա է<sup>705</sup>:

<sup>705</sup> Այս եզրահանգումը հիմնավորվում է նաև Աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորմամբ, որի համաձայն՝ եթե պարզվում է, որ աշխատողի հետ աշխատանքային պայմանագիրը լուծվել է առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով, ապա աշխատողի խախտված

Առանց օրինական հիմքերի կամ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտումով աշխատանքից ազատելու դեպքում քաղաքացու իրավունքների վերականգնման պահանջն ինքնանպատակ չէ, և աշխատանքից (այս դեպքում՝ ծառայությունից) առանց հիմքերի կամ խախտումով ազատված լինելու հանգամանքը իրավունքի պաշտպանության որևէ եղանակից օգտվելու արդյունքում հաստատվելու պարագայում՝ պետք է վերականգնվեն նաև անձի մյուս՝ ածանցյալ, իրավունքները:

Հետևաբար, հաշվի առնելով նաև վերը նշված իրավակարգավորումները և իրավական վերլուծությունները, աներկբա է, որ զինծառայողին ծառայությունից անօրինական արձակելու փաստն ապացուցվելու, արձակելու հրամանը չեղյալ համարելու և նրան ծառայությունում վերականգնելու դեպքում նրան պետք է տրամադրվի նաև հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակահատվածի դրամական ապահովություն:

Այս վերլուծություններն ու եզրահանգումները, ինչպես նաև դրանց հիման վրա կատարված առաջարկները Պաշտպանի գրությամբ ներկայացվել են Պաշտպանության նախարարություն, և արդյունքում խնդիրը լուծվել է՝ զինծառայողին հատկացվել է հարկադիր պարապուրդում գտնվելու ժամանակահատվածի դրամական ապահովությունը:

Այս առումով կարևոր է նշել նաև Պաշտպանը տարեկան հաղորդման մշակման շրջանակներում Պաշտպանության նախարարությանը ներկայացրել էր հետևյալ հարցադրումը. քանի՞ բողոք է ստացվել ծառայությունից ազատելու հրամանը չեղյալ ճանաչվելու արդյունքում զինծառայողին ծառայությունում վերականգնելու փոխարեն կրկին ծառայության նշանակելու, արդյունքում՝ չծառայած օրերի ստաժը չհաշվարկելու և աշխատավարձը չվճարելու վերաբերյալ, ի՞նչ միջոցներ են ձեռնարկվելու բողոքների կապակցությամբ: Ըստ ստացված տեղեկությունների՝ հարցի առաջին մասի վերաբերյալ դեպքեր չեն արձանագրվել, իսկ երկրորդ մասով՝ պահեստազոր արձակված թվով 23 սպայի վերաբերյալ կատարվել է ստաժի վերահաշվարկ:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ 2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն առաջարկել էր *բացառել զինծառայողին ծառայությունից արձակման հրամանն անվավեր ճանաչվելու դեպքում ծառայությունում վերականգնելու փոխարեն նրա հետ նոր պայմանագիր կնքելու դեպքերը, ինչպես նաև ծառայությունից անօրինական արձակելու փաստը հաստատվելու, արձակելու հրամանն անվավեր ճանաչվելու և զինծառայողներին ծառայությունում վերականգնելու*

---

իրավունքները վերականգնվում են: Այդ դեպքում աշխատողի օգտին գործատուից գանձվում է միջին աշխատավարձը՝ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար: Աշխատանքային օրենսգրքի նշված հոդվածով նախատեսված է նաև դատական կարգով իրավունքների պաշտպանության միջոցը: Մասնավորապես, սահմանված է, որ գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը դադարեցնելու կամ աշխատանքային պայմանագիրը լուծելու հետ համաձայն չլինելու դեպքում աշխատողը համապատասխան անհատական իրավական ակտը (փաստաթուղթը) ստանալու օրվանից հետո՝ երկու ամսվա ընթացքում, իրավունք ունի դիմելու դատարան:

դեպքում՝ նրանց տրամադրել նաև հարկադիր պարապորդում գտնվելու ժամանակահատվածի դրամական ապահովությունը:

Պաշտպանն արձանագրում է, որ վերը նշված 2 հարցերով Մարդու իրավունքների պաշտպանին նոր բողոքներ չեն հասցեագրվել: Այս մասով շարունակական վերահսկողությունը կարևոր է:

2021 թվականին արձանագրվել են զինվորական ծառայությունից արձակելու ընթացքում զինծառայողների իրավունքների պահպանման հետ կապված այլ խնդիրներ ևս:

Օրինակ, զինծառայողը դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ 2020 թվականի մարտական գործողությունների ընթացքում ստացել է վիրավորում և մինչև հոկտեմբերի 21-ը ստացիոնար բուժում է ստացել: Զինծառայողի պնդմամբ՝ ստացիոնար բուժում ստանալիս իրեն անհայտ հանգամանքներում պաշտոնին չհամապատասխանելու հիմքով ազատվել է զբաղեցրած պաշտոնից և թողնվել է կադրերի տրամադրության տակ:

Պաշտպանության նախարարություն հասցեագրած գրությամբ Պաշտպանը պարզաբանումներ է պահանջել զինծառայողին պաշտոնից ազատելու իրավական հիմքերի վերաբերյալ:

Պաշտպանի գրության կապակցությամբ Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ զինծառայողի նկատմամբ «նախազգուշացում՝ պաշտոնին ոչ լրիվ համապատասխանության մասին» կարգապահական տույժ չի կիրառվել: Մարտական գործողությունների ընթացքում զորամասի հրամանատարը զեկուցագիր է ներկայացրել բանակային կորպուսի հրամանատարին այն մասին, որ զինծառայողի ծառայության վայրի գումարտակը չի կարողացել հաջող կատարել իր առջև դրված մարտական առաջադրանքը: Դրա հիմնական պատճառն է հանդիսացել գումարտակի հրամանատարի և գումարտակի հրամանատարի տեղակալ-շտաբի պետի (Պաշտպանին բողոք հասցեագրած անձն է) ցածր բարոյականային հատկանիշները: Ըստ պարզաբանման՝ նշված սպաները չեն գործել իրենց ֆունկցիոնալ պարտականությունների համաձայն, ինչպես նաև անձնական օրինակով անձնակազմին ոգևորելու փոխարեն՝ կատարել են ճիշտ հակառակը: Այդ պատճառով էլ առաջարկվել է հրատապ կերպով ազատել սպաներին զբաղեցրած պաշտոններից և կատարել նոր նշանակումներ:

Պաշտպանության նախարարությունից նաև նշվել է, որ հաշվի առնելով ստեղծված հրատապ լուծում պահանջող իրավիճակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ պատերազմական գործողությունների ընթացքում հնարավոր չէ օրենքով սահմանված կարգով իրականացնել ատեստավորում, և զինծառայողների կողմից պարտականությունների կատարման հիմնական ու միակ գնահատականը դա հրամանատարի զեկուցագիրն է՝ ուղղված վերադաս հրամանատարությանը, ուստի, նույնաբովանդակ զեկույց ստանալով, սպան անմիջապես ազատվել է զբաղեցրած պաշտոնից և թողնվել կադրերի տրամադրության տակ:

Պաշտպանության նախարարություն հասցեագրած լրացուցիչ գրությամբ Պաշտպանը ընդգծել է պետական մարմինների ու պաշտոնատար անձանց միայն Սահմանադրությամբ կամ օրենքներով լիազորված գործողություններ կատարելու իրավասությունը, առավել ևս, որ կոնկրետ դեպքում եղել



են պատշաճ ընթացակարգերի ապահովման կամ գործող օրենսդրական կարգավորումների շրջանակում նկարագրված հանգամանքների այլընտրանքային լուծման հնարավորություններ:

Պատշաճ ընթացակարգի ապահովման անհրաժեշտությունը բխում է նաև պետության ստանձնած միջազգային և այլ պարտավորություններից<sup>706</sup>:

Նշվածով պայմանավորված՝ Պաշտպանն առաջարկել է լրացուցիչ քննարկման առարկա դարձնել քաղաքացուն զբաղեցրած նախկին կամ այլ պաշտոնում վերականգնելու հարցը: Արդյունքում, քաղաքացին նշանակվել է հավասար զինվորական պաշտոնի:

Մեկ այլ խնդիր. դեռևս 2019 թվականին Պաշտպանը կայացրել էր մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում, որով արձանագրել էր Ոստիկանությունում ծառայությունից արձակվելիս Ոստիկանության նախկին ծառայողի իրավունքների ապահովման հետ կապված խնդիր: Այդ բողոքով բացահայտված խնդիրների հաշվառմամբ Պաշտպանը ներկայացրել էր առաջարկ, որը դեռևս չի իրացվել:

Մասնավորապես, մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին կայացրած որոշմամբ Պաշտպանը, ի թիվս այլնի, անդրադարձել էր այն խնդրին, որ Ոստիկանության ծառայողին ծառայությունից արձակման հիմքում դրվել էր ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կադրերի ռեզերվում գրանցելու և ռեզերվից հանելու» կարգի 2-րդ կետը. նշված կարգավորմամբ սահմանվում է, որ կադրերի ռեզերվում գրանցվում են ծառայողական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Ոստիկանության ծառայողին այլ պաշտոնի փոխադրելիս՝ զբաղեցրած պաշտոնին համարժեք կամ զբաղեցրած պաշտոնից մեկ աստիճան ցածր թափուր պաշտոն չլինելու դեպքում:

Ինչպես խախտման առկայության մասին որոշմամբ, այնպես էլ տարեկան հաղորդմամբ նշվել է, որ Ոստիկանության ծառայողին պաշտոնից ազատելու և կադրերի ռեզերվում գրանցելու հիմքերը սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, մասնավորապես՝ «հայտարարում զբաղեցրած պաշտոնին անհամապատասխանության մասին»<sup>707</sup> և «մեկ աստիճանով պաշտոնի իջեցում» կարգապահական տույժերի կիրառման, ինչպես նաև նշված օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով (հաստիքների կրճատման, ստորաբաժանման

<sup>706</sup> Դրա մասին է վկայում, օրինակ այն, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից ընդունված հանձնարարականներով կարգապահական վարույթները դիտարկվում են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով (Արդար դատաքննության իրավունք) նախատեսված երաշխիքների համատեքստում: Կարևոր է ընդգծել նաև Հայաստանի Հանրապետության 2020 թվականի ազգային անվտանգության ռազմավարությամբ ամրագրված սկզբունքն առ այն, որ Հայաստանի ազգային անվտանգության ապահովման հիմնական երաշխիքներից են ժողովրդավարական ինստիտուտների հզորացումը և իրավունքի գերակայությունը: Ավելին՝ նույն Ռազմավարությունը մարդու իրավունքների և իրավունքի գերակայության ապահովումը դիտարկում է որպես Հայաստանի հիմնարար ազգային շահերից մեկը: Իսկ դրանից բխում է, որ անվտանգության թվացյալ պաշտպանությունն առանց օրենքի վրա հենվելու, իսկ տվյալ դեպքում՝ օրենքը շրջանցելով, չի կարող բխել նույն անվտանգության շահերից:

<sup>707</sup> Ուժը կորցրել է 2014 թվականի դեկտեմբերի 17-ին:

լուծարման կամ վերակազմակերպման դեպքում, եթե ծառայողին համապատասխան պաշտոնում նշանակելը հնարավոր չէ) և 3-րդ կետով (սահմանափակ առողջական վիճակի պատճառով՝ ծառայության սահմանափակ պիտանիության կապակցությամբ՝ ոստիկանության բժշկական հանձնաժողովի որոշման հիման վրա համապատասխան թափուր հաստիքների բացակայության պատճառով տվյալ պաշտոնում հետագա ծառայությունը շարունակելու անհնարինություն) նախատեսված դեպքերում:

Հատկանշական է, որ ծառայողին կադրերի ռեզերվում գրանցելու Կառավարության որոշմամբ նախատեսված **հիմքը** «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված չէ, ավելին՝ այդպիսի հիմք առկա չէ նաև ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու համար:

**Պաշտոնից ազատելու և կադրերի ռեզերվում գրանցելու հիմքերը** սահմանված են «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքով, իսկ ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ պետք է սահմանվի միայն Ոստիկանության ծառայության **կադրերի ռեզերվում գտնվելու և ռեզերվից հանելու կարգը**:

Պաշտպանի որոշմամբ առաջարկվել էր մշակել և ՀՀ կառավարություն ներկայացնել 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագիծ՝ այդ կարգից հանելով կադրերի ռեզերվում ծառայողին գրանցելու օրենքով չնախատեսված հիմքը, ինչպես նաև մինչև նշված փոփոխությունը բացառել Ոստիկանության ծառայողներին օրենքով չնախատեսված հիմքով պաշտոնից ազատելու և կադրերի ռեզերվում գրանցելու պրակտիկան:

Արդյունքում, Ոստիկանությունից տեղեկացվել էր, որ Կառավարության վերոնշյալ որոշման մեջ փոփոխություն կատարելու նպատակով կմշակվի փոփոխությունների նախագիծ, իսկ մինչ փոփոխություն կատարելը, անմիջականորեն կկիրառվի «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը, ինչպես նաև Պաշտպանի առաջարկները հաշվի կառնվեն իրավակիրառ պրակտիկայում՝ շտկելով իրականացվող վարչարարությունը:

Պաշտպանը դրական է գնահատում անհրաժեշտ միջոցները ձեռնարկելու կապակցությամբ Ոստիկանության պատրաստակամությունը, նաև արձանագրում, որ 2021 թվականի ընթացքում նմանատիպ բողոքներ չեն ստացվել, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ գործնականում այդ խնդրի կարգավորման ուղղությամբ ձեռնարկվել են միջոցներ: Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման մեջ անհրաժեշտ փոփոխությունը դեռևս չի կատարվել:

Ինչպես 2019, այնպես էլ 2020 թվականների տարեկան հաղորդումներով արձանագրվել էր զինվորական ծառայությունից արձակվելու գործընթացում քաղաքացիների իրավունքների ապահովման հետ կապված մեկ այլ խնդիր ևս:

Այսպես, Պաշտպանին հասցեագրած բողոքով պայմանագրային նախկին զինծառայողը տեղեկացրել էր, որ Զինված ուժերի վարչություններից մեկում զբաղեցրել է բաժնի պետի պաշտոնը, որը կրճատվել է բաժնի լուծարման հետևանքով, ինքը թողնվել է կադրերի տրամադրության տակ: Ըստ պնդման՝ իր հաստիքի կրճատումից և երկու բաժանմունք կազմավորվելուց հետո տվյալ

բաժանմունքներում իրեն պաշտոնի նշանակելու առաջարկներ չի արվել: Կադրերի տրամադրության տակ գտնվելու ընթացքում իրեն բանավոր առաջարկվել է իր զինվորական կոչմանը և զբաղեցրած վերջին պաշտոնից շատ ավելի ցածր դասակարգմամբ պաշտոններ, որոնցից ինքը հրաժարվել է: Բողոք ներկայացրած անձը նաև հայտնել է, որ հինգ ամիս գտնվել է կադրերի տրամադրության տակ և իր մասնագիտական ունակություններին, զբաղեցրած վերջին պաշտոնին համապատասխան պաշտոնի առաջարկներ չի ստացել:

Ինդրի առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողը զինվորական ծառայությունից արձակվում է հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման դեպքում, եթե առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի (5-րդ կետ), կամ հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման լուծարման հիմքով կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամկետը լրանալու դեպքում, եթե առկա չէ թափուր այլ զինվորական պաշտոն կամ զինծառայողը համաձայն չէ նշանակվելու այլ զինվորական պաշտոնի (6-րդ կետ): Ինդիրն այն է, սակայն, որ «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված չէ, թե, օրինակ, հաստիքների կրճատման հիմքով կադրերի տրամադրության տակ գտնվող զինծառայողին իր զբաղեցրած նախկին պաշտոնից քանի աստիճան ցածր պաշտոն կարող է առաջարկվել: Նույն իրավիճակը առկա է նաև փրկարար ծառայության, Ոստիկանության, քրեակատարողական ծառայողներին և դատախազներին պաշտոններ առաջարկելու մասով:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքային պայմանագիրը գործատուն կարող է լուծել, եթե իր մոտ առկա են արավորությունների սահմաններում աշխատողին առաջարկել է նրա մասնագիտական պատրաստվածությանը, որակավորմանը, առողջական վիճակին համապատասխան այլ աշխատանք, իսկ աշխատողը հրաժարվել է առաջարկված աշխատանքից: Նշված պահանջի նախատեսումն ինքնանպատակ չէ. այն նպատակ ունի հաստիքների կրճատման հիմքով պաշտոնից ազատված անձանց գործատուի հնարավորությունների սահմանում ապահովել այլ համարժեք աշխատանքով: Եթե որոշակի պաշտոն զբաղեցնող անձը պատշաճ կատարում է իր վրա դրված պարտականությունները, պաշտոնից չի ազատվում այդ պարտականությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով, այլ ազատման հիմք է հանդիսանում միայն զբաղեցրած հաստիքի կրճատումը, ապա արդարացի է առկայության դեպքում նշված անձին իր զբաղեցրած նախկին պաշտոնին համարժեք պաշտոն առաջարկելը:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր ծառայության այն համակարգերում, որտեղ պաշտոնից ազատվելիս անձինք հաստիքների կրճատման կամ ստորաբաժանման լուծարման հիմքով գրանցվում են կադրերի ռեզերվում, նախատեսել, որ հաստիքի առկայության դեպքում ծառայողին առաջարկվում է իր նախկին պաշտոնին համարժեք պաշտոն, իսկ այդպիսի հաստիքի

բացակայության պարագայում, ծառայողի համաձայնությամբ, յուրաքանչյուր դեպքում մեկական աստիճանով ցածր պաշտոն: Նշված առաջարկի իրացման ուղղությամբ դեռևս միջոցներ չեն ձեռնարկվել:

Բացի զինծառայողներից, գործատուի նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելիս իրավունքները չպահպանելու հետ կապված խնդիրներով Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել նաև Զինված ուժերի այլ անդամներ:

Օրինակ, Պաշտպանին են դիմել «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարանում աշխատանքային պայմանագրով աշխատող երկու քաղաքացի և տեղեկացրել, որ իրենց հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվել է նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստվելու հաջորդ օրն ինքնազգացողության վատանալու պատճառով ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չներկայանալու հիմքով: Երկու աշխատակիցներից մեկի դեպքում նաև աշխատանքային պայմանագիրը լուծելու հիմքում դրվել էր 2012 թվականին տեղի ունեցած դեպքը, ինչի պատճառով գործատուն կրել է նյութական վնաս և աշխատողի նկատմամբ կորցրել վստահությունը:

Խնդիրը կայանում է նրանում, որ Աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգապահական տույժը կարող է կիրառվել խախտումը հայտնաբերելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, չհաշված աշխատողի ժամանակավոր անաշխատունակության պատճառով բացակայության, գործուղման կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածները: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժը չի կարող կիրառվել, եթե խախտումը կատարելու օրվանից անցել է վեց ամիս:

Հատկանշական է, որ երկու դեպքում էլ ամբողջ աշխատանքային օրվա ընթացքում աշխատանքի չներկայանալու հիմքով կարգապահական տույժը կիրառվել էր քաղաքացիների կողմից աշխատանքի չներկայանալու հանգամանքը գործատուին պարզ դառնալուց ավելի քան մեկ ամիս հետո: Բացի դրանից, ինչպես նշվեց, քաղաքացիներից մեկի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի հիմքում դրվել էր նաև 2012 թվականին տեղի ունեցած դեպքը:

Այսպիսով, երկու դեպքում էլ գործատուն խախտել էր Աշխատանքային օրենսգրքի 227-րդ հոդվածի պահանջները:

Նշվածի հաշվառմամբ Պաշտպանը համապատասխան պարզաբանումների պահանջով և աշխատանքից ազատված քաղաքացիներին վերականգնելու առաջարկով գրություններ է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, ինչի արդյունքում, նրանք վերականգնվել են զբաղեցրած նախկին պաշտոններում:

Ինչպես երևում է ներկայացված օրինակներից և Պաշտպանին հասցեագրվող բողոքներից, առավել հաճախակի են դարձել ինչպես զինծառայողներին, այնպես էլ Զինված ուժերի այլ անդամներին գործատուի նախաձեռնությամբ արձակելիս նրանց իրավունքների չպահպանման դեպքերը: Չնայած անհատական մակարդակում այդպիսի խնդիրները լուծվում են, սակայն նախորդ տարիների համեմատ նման բողոքների թվի ավելացումը խիստ մտահոգիչ է:

Հետևաբար, առաջարկվում է.

1. խստացնել հսկողությունը ծառայության ընթացքում պայմանագրային զինծառայողներին իրենց հասանելիք արձակուրդները տրամադրելու ուղղությամբ,

2. միջոցներ ձեռնարկել ծառայությունից արձակվելիս նախկին զինծառայողների կողմից չօգտագործված բոլոր արձակուրդների դիմաց հատուցում տրամադրելու ուղղությամբ: Ընդ որում, օրենսդրական փոփոխություն իրականացնելիս կարգավորումները համապատասխանեցնել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիտարկումներին,

3. ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 2043-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ 2-րդ հավելվածից հանելով կադրերի ռեզերվում ծառայողին գրանցելու օրենքով չնախատեսված հիմքը,

4. ծառայության այն համակարգերում, որտեղ պաշտոնից ազատվելիս անձինք հաստիքների կրճատման կամ ստորաբաժանման լուծարման հիմքով գրանցվում են կադրերի ռեզերվում, նախատեսել, որ հաստիքի առկայության դեպքում ծառայողին առաջարկվում է իր նախկին պաշտոնին համարժեք և որակավորմանը համապատասխանող պաշտոն, իսկ այդպիսի հաստիքի բացակայության պարագայում, ծառայողի համաձայնությամբ, յուրաքանչյուր դեպքում մեկական աստիճանով ցածր պաշտոն,

5. ուժեղացնել հսկողությունը գործատուի նախաձեռնությամբ զինծառայողներին և Ջինված ուժերի այլ անդամներին արձակելիս (աշխատանքից ազատելիս) նրանց իրավունքների ապահովման ուղղությամբ:

## ԳԼՈՒԽ 7. ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

### 1. Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես կարգապահական վարույթի մասնակիցների բողոքներ քննող անկախ մեխանիզմ

Զինճառայողներն իրենց իրավունքները պաշտպանելու համար պետք է ունենան անկախ մարմիններին բողոք ներկայացնելու հնարավորություն<sup>708</sup>:

Բացի զինված ուժերում գանգատարկման ընթացակարգերից, աշխարհի տարբեր երկրներ ունեն օմբուդսմանի ինստիտուտ, որի նպատակն է քննության առնել գանգատները՝ զինված ուժերում իրավունքներ խախտող վարքագծի դրսևորումների, զինվորական քաղաքականության բացերի, ինչպես նաև զինված ուժերի համակարգային հիմնախնդիրների մասին: Այս գանգատները և բացերը քննության առնելուց հետո օմբուդսմանը մշակում է իրավիճակը շտկող գործողությունների վերաբերյալ հանձնարարականներ<sup>709</sup>:

**Զինճառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս հատկապես կարևորվում է զինվորական կարգապահության ամրապնդումը, ինչպես նաև ծառայողական քննությունների ընթացքում զինճառայողների իրավունքների պաշտպանությունը:**

Որպես զինված ուժերի նկատմամբ արտաքին վերահսկողություն իրականացնող մարմին՝ առանցքային է օմբուդսմանի ինստիտուտի դերը, որը, ի թիվս այլ գործառույթների, օժանդակում է զինված ուժերում իրավունքի գերակայության<sup>710</sup> պահպանմանը, նպաստում զինված ուժերի կառույցների թափանցիկությանն ու պատասխանատվությանը, ուշադրություն է հրավիրում

<sup>708</sup> Տե՛ս, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի «ԻԲ» կետը:

<sup>709</sup> Ձեռնարկ զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 2008 թվական, էջ 321:

<sup>710</sup> Ընդ որում, ինչպես հետխորհրդային պետություններից շատերում, այնպես էլ Հայաստանի ներպետական օրենսդրությունում օգտագործվում է «օրենքի գերակայություն» սխալ եզրույթը: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինճառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում են զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքները, որի 2-րդ կետով նշվում է, որ սկզբունքներից է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների գերակայությունը: Հարկ է նշել, որ խոսք է գնում ոչ թե ընդամենը «օրենք» կամ «իրավունք» եզրույթների օգտագործման մասին, այլ եզրույթի բովանդակային կողմի մասին: Ճիշտ եզրույթի օգտագործման խնդրի կապակցությամբ նույնիսկ առկա է Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի բանաձևը, ըստ որի՝ «Rule of law» (տառացի թագմանությամբ՝ օրենքի գերակայություն) եզրույթը պետք է թարգմանել որպես «իրավունքի գերակայություն»: Այդ եզրույթը որպես «օրենքի գերակայություն» թարգմանելիս առաջանում է լուրջ մտահոգություն, քանի որ որոշ պետություններում, չնայած իրավունքի գերակայությանը, ինչպես տեսությունում, այնպես էլ գործնականում դեռևս առկա են տոտալիտար պետության սովորույթներ: Տերմինի այդպիսի ֆորմալ թարգմանությունը հակասում է դրա էությանը (Տե՛ս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2007 թվականի թիվ 1594 բանաձևը):

զինվորական պրակտիկայում առկա այն հիմնախնդիրների վրա, որոնք ենթակա են կարգավորող միջամտության:

Արդյունքում, օմբուդսմանը դրական ներգործություն է ունենում զինծառայողների կյանքի որակի, նրանց մարտական ոգու և զորքերի մարտական համախմբվածության վրա:

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը և զինծառայողի կարգավիճակի անընդհատ բարձրացումը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության կարևոր ուղղություններից է:

Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններն են զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության վիճակի, ոլորտում առկա խնդիրների, այդ թվում՝ գործնական և օրենսդրական թերությունների հետ կապված հարցերը: Դրանք վեր են հանվում ստացված բողոքների, զինվորական հաստատություններ չհայտարարված այցերի, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

**Ոլորտի օրենսդրության կատարելագործման նպատակով մշակվում են օրենքների և այլ իրավական ակտերի նախագծեր, կարծիքի ներկայացված նախագծերի վերաբերյալ առաջարկներ, ինչպես նաև Սահմանադրական դատարան են ներկայացվում դիմումներ և հատուկ դիրքորոշումներ: Անհրաժեշտության դեպքում մշակվում են Հայաստանի դեմ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներով որպես երրորդ կողմ ներգրավման, ՄԻԵԴ վճիռների կատարման փուլում եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացման համար հատուկ դիրքորոշումներ:**

Պաշտպանին հասցեագրված՝ զինված ուժերում կարգապահությանն առնչվող քաղաքացիների բողոքների, ստացված ահազանգերի, զինվորական հաստատություններ կատարված մշտադիտարկման այցերի, Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր փորձագիտական խորհրդի վերլուծությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, զորամասը ինքնակամ թողնելու, բռնություն գործադրելու և այլն), քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության արդյունքում նրանցից ստացված տեղեկությունների, իրավասու պետական մարմիններից ստացված պարզաբանումների համակարգային վերլուծությունը, կատարված մասնագիտական բազմակողմանի ուսումնասիրությունները ևս մեկ անգամ փաստում են, որ բանակում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունն առաջնային խնդիր է: Այս առումով կարևոր է ընդգծել, որ **զինվորական մասնագիտությունը կարող է պահպանել մարդու արժանապատվությունն ու արհեստավարժությունը միայն այն դեպքում, երբ հարգվեն զինծառայողների իրավունքները:** Դաժանությունը, ինստիտուցիոնալ ճնշումները, բռնությունները, վատ վերաբերմունքը և խոշտանգումները զինծառայողների իրավունքների խախտումներ են, որոնք ցանկացած դեպքում և ցանկացած հիմնավորմամբ մերժելի են:

Հենց այս ուղենիշային գաղափարների վրա հիմնվելով էլ 2021 թվականին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել և հրապարակվել է «Իրավունքի

գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը՝ որպես Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք» արտահերթ հրապարակային զեկույցը<sup>711</sup>, որի մասին կխոսվի հաջորդ ենթագլխում:

Զինձառայողների իրավունքների և Զինված ուժերում կարգապահության հարցերը մշտապես են գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո: Դեռևս 2017 թվականին Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառվել էին «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի նախագծերը:

Մասնավորապես, ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում առաջարկվել է՝

1) իրավախախտումը համարել ծանրացող միայն այն դեպքերում, երբ դատվածությունը հանված կամ մարված չէ:

2) կարգապահական տույժի ենթարկվելու մասին հրամանին ծանոթանալու պատշաճ ընթացակարգի և զինձառայողի կողմից այն բողոքարկելու իրավունքի ապահովման նպատակով սահմանել, որ կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանը և զինձառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառումը ստորագրությամբ ներկայացվում է զինձառայողի ծանոթացմանը: Զինձառայողի պահանջի դեպքում նրան տրամադրվում են նաև կարգապահական տույժ տալու մասին գրավոր հրամանի և զինձառայողի հաշվառման (ծառայողական) քարտում կատարված գրառման՝ հրամանատարի կողմից հաստատված պատճենները:

3) ծառայողական քննության ընթացքում զինձառայողների ընթացակարգային իրավունքների պաշտպանության նպատակով սահմանել, որ ծառայողական քննություն իրականացնող անձը կարգապահական խախտում կատարելու մեջ մեղադրվող զինձառայողին գրավոր բացատրում է օրենքով նրան վերապահված իրավունքները և պարտականությունները:

4) բողոքարկման արդյունքում զինձառայողին տրված կարգապահական տույժը հանելու կառուցակարգի հստակեցման նպատակով սահմանել, որ բողոքարկման արդյունքներով վերադաս հրամանատարը (պետը) իրավունք ունի գրավոր հրաման ընդունել զինձառայողին տրված կարգապահական տույժը չեղյալ ճանաչելու կամ ուժի մեջ թողնելու մասին:

ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում առաջարկվել է:

1) զինձառայողների կողմից իրավախախտում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գրավոր հաղորդումը նախատեսել որպես ծառայողական քննություն անցկացնելու հիմք:

<sup>711</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/41fcac17c257cd9690351d60ffe67de6.pdf>:



2)սահմանել ծառայողական քննությունը դադարեցնելու, ծառայողական քննությունը կասեցնելու և վերսկսելու հիմքերը և ընթացակարգը:

Այս առումով պետք է նշել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ վճիռների կատարման և բարեկամական կարգավորման պայմանների վերահսկողության կանոնների 9-րդ կանոնի 2-րդ կետի<sup>712</sup> հիման վրա 2018 թվականի սեպտեմբերի 25-ին Պաշտպանը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե էր ներկայացրել հատուկ դիրքորոշում՝ կապված «Մուրադյանն ընդդեմ Հայաստանի» ՄԻԵԴ վճռի կատարման հետ<sup>713</sup>, և բարձրացված խնդիրների առնչությամբ Պաշտպանի հատուկ դիրքորոշման մեջ ներկայացվել են կոնկրետ առաջարկություններ: Մասնավորապես՝ ներկայացված դիրքորոշման մեջ նշվել է վերը նկարագրված օրենսդրական փոփոխություններն իրականացնելու անհրաժեշտությունը՝ որպես զինվորական կարգապահության ամրապնդման միջոց: Բացի այդ, կարևորվել է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության զարգացման անհրաժեշտությունը: Այդ նպատակով նշվել է, որ անհրաժեշտ է կարգապահական վարույթի հարուցման կարգ սահմանող իրավական ակտով ամրագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումը հիմք է հանդիսանում ծառայողական քննություն սկսելու համար: Նշվել է նաև Պաշտպանության նախարարությունում շուրջօրյա թեժ գիծ ունենալու անհրաժեշտությունը:

Պաշտպանի ներկայացրած հատուկ դիրքորոշման կապակցությամբ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչության կողմից 2018 թվականի հոկտեմբերի 3-ին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտե ներկայացված պատասխանում նշվել է, որ ՀՀ կառավարությունը բարձր է գնահատում զինված ուժերում զինծառայողների իրավունքների պաշտպանության գործում Պաշտպանի գործունեությունը և կարևորել ներկայացված առաջարկությունների նշանակությունը:

Դրական քայլ էր այն, որ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կատարվեցին փոփոխություններ, որի արդյունքում Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկները սկզբունքորեն ընդունվեցին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում Պաշտպանի կողմից առաջարկված փոփոխությունները դեռևս չեն կատարվել:

Կարևոր է արձանագրել, որ 2021 թվականի սկզբին շրջանառության մեջ է դրվել Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, ինչի արդյունքում նախատեսվում են սկզբունքային և համակարգային լուծումներ:

Հատկանշական է, որ փոփոխությունների կատարման պարագայում, ի թիվս այլնի, նաև կապահովվի Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված առաջարկների իրացումը,

<sup>712</sup> Նախարարների կոմիտեն իրավունք ունի դիտարկել ոչ կառավարական կազմակերպություններից, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների կողմից վճիռների կատարման ընթացքի մասին ուղարկված ցանկացած նկատառում:

<sup>713</sup> [https://hudoc.exec.coe.int/eng#%7B%22EXECIdentifier%22:%5B%22DH-DD\(2018\)961E%22%5D%7D](https://hudoc.exec.coe.int/eng#%7B%22EXECIdentifier%22:%5B%22DH-DD(2018)961E%22%5D%7D):

և այս տեսանկյունից կարևոր է միջոցներ ձեռնարկել առաջարկվող նախագիծը հնարավորին սեղմ ժամկետում ընդունելու ուղղությամբ: Մինևույն ժամանակ, առաջարկվող փոփոխություններում ևս արձանագրվել են որոշ խնդիրներ, որոնք Պաշտպանի մանրամասն ուսումնասիրություններով և հստակ առաջարկներով սահմանված գրավոր ընթացակարգով տարվա ընթացքում ուղարկվել են Պաշտպանության նախարարություն: Այնուամենայնիվ, 2021 թվականի ընթացքում այդ փոփոխությունները չեն կատարվել: Դրանք պետք է հրատապ կատարվեն՝ հենց զինվորական կարգապահության ամրապնդման շահերից ելնելով:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ Պաշտպանի առաջարկները ներառվել են Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին հրամանի նախագծում, որը համաձայնեցվել է Պաշտպանի աշխատակազմի և ՀՀ արդարադատության նախարարության հետ, սակայն ՀՀ պաշտպանության նախարարի ստորագրմանը չի ներկայացվել, քանի որ ՀՀ կառավարության 2022 թվականի աշխատանքային ծրագրով մարտի 3-րդ տասնօրյակում նախատեսված է ներկայացնել Ջինված ուժերի կարգապահական կանոնագիրքը նոր խմբագրությամբ շարադրելու օրինագիծ, որի ընդունումից հետո վերանայվելու է նաև այդ հրամանը:

Դրա հետ մեկտեղ, պետք է նշել, որ Ջինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ամրապնդելու տեսանկյունից կարևոր է, որ հասարակությանը և Ազգային ժողովին նաև ներկայացվեն կարգապահական վարույթների մասին տեղեկություններ այնքանով, որքանով դրանք չեն բացահայտի ծառայողական և պետական գաղտնիք:

2021 թվականի ընթացքում զորամասեր կատարած այցելությունների ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ ընդհանուր առմամբ, ծառայողական քննություններն անցկացվում են Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Նյութերի ուսումնասիրությամբ պարզվել է, սակայն, որ որոշ դեպքերում ծառայողական քննությունների եզրակացություններում, ինչպես նաև տույժ տալու մասին հրամաններում նկարագրվել են կատարված իրավախախտումները, սակայն հստակ չի նշվել, թե Ջինված ուժերի կարգապահական կանոնագրքի որ հոդվածով է նախատեսված այդ խախտումը: Տույժ տալու հրամաններում չեն նշվել, թե հրամանատարը Կանոնագրքի որ հոդվածով է ղեկավարվում տույժը նշանակելիս:

Այսպիսի արակտիկան խնդրահարույց է ինչպես որոշակիության, այնպես էլ զինծառայողի նկատմամբ կիրառված տույժը հետագայում բողոքարկելու հնարավորության ապահովման տեսանկյունից:

*Հեղինակը, առաջարկվում է.*

*1. ուժեղացնել հսկողությունը Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանի պահանջները, այդ թվում՝ կարգապահական կանոնագրքով խախտումը*

նախատեսող կոնկրետ հողվածները, ինչպես նաև կարգապահական տույժ տալու հրամանատարի իրավասությունը սահմանող կարգավորում նշելը պահպանելու ուղղությամբ,

2. ծառայողական քննությունների անցկացման գործընթացում առկա խնդիրները նվազագույնի հասցնելու նպատակով միջոցներ ձեռնարկել Պաշտպանության նախարարի վերոնշյալ հրամանում փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծը հնարավորին սեղմ ժամկետում ընդունելու ուղղությամբ,

3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ որպես զինվորական ծառայության կազմակերպման սկզբունք սահմանված «օրենքի գերակայություն» եզրույթը դարձնելով «իրավունքի գերակայություն»,

4. միջոցներ ձեռնարկել Մարդու իրավունքների պաշտպանի «Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը՝ որպես Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք» արտահերթ գեկույցում ներկայացված առաջարկների պատշաճ կատարման ուղղությամբ:

## **2. Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք**

Իրավունքի գերակայությամբ երաշխավորված կարգապահությունը մարտունակ բանակի գրավականն է: Զինվորական կարգապահությունը միտված է բանակի մարտունակության բարձրացմանը, ինչպես նաև «համազգեստով քաղաքացիների» իրավունքների ապահովմանը: Միջազգային իրավական չափանիշներով պետությունն է որոշում, թե զինվորական կարգապահության ինչպիսի համակարգ ներդնել, սակայն յուրաքանչյուր դեպքում մարդու իրավունքների պետք է լինեն երաշխավորված<sup>714</sup>:

Նախ, Պաշտպանը հատուկ նշում է, որ 2021 թվականին Պաշտպանի աշխատակազմում մշակվել է «Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը՝ որպես Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք» արտահերթ հրապարակային գեկույցը<sup>715</sup>, որի ուղերձն է՝ «Իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը մարտունակ բանակի հիմքն է»: Պետք է նշել, որ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական

<sup>714</sup> Տե՛ս Էնգելը և այլոք ընդդեմ Նիդերլանդների (Engel and Others v. Netherlands) գործով 1976 թվականի հունիսի 8-ի վճիռը, գանգատ թիվ 5100/71, կետ 57-59 կետեր:

Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 17-րդ կետը սահմանում է, որ պետությունն իրավասու է կազմակերպել զինվորական կարգապահության սեփական համակարգը և այդ հարցում ունի հայեցողության որոշակի շրջանակ:

<sup>715</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ <https://ombuds.am/images/files/41fcac17c257cd9690351d60ffe67de6.pdf>:

դաստիարակության սկզբունքների վրա<sup>716</sup>: Արտահերթ զեկույցում ամրագրված է, որ այս առումով, զինվորական կարգապահությունը՝ հիմնված իրավունքի գերակայության վրա, զուգահեռ ընթանում է զինված ուժերում մարդու իրավունքների ապահովման սկզբունքների հետ: Մեկը մյուսին փոխլրացնում է: Իսկ մեծ հաշվով՝ բանակում մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը սկզբունքորեն դժվար է պատկերացնել առանց զինծառայողների շրջանում ամուր կարգապահության:

**Այլ կերպ ասած՝ իրավունքի գերակայության վրա հիմնված ամուր կարգապահությունը զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության երաշխիք է:**

Զեկույցը նպատակ ունի վեր հանել զինված ուժերում առկա որոշ խնդիրներ, տալ կոնկրետ գնահատականներ և դրանց լուծմանն ուղղված թիրախային առաջարկներով հասնել Հայաստանի զինված ուժերում իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահության ամրապնդմանը:

**Ոլորտի խնդիրները գնահատվել են նաև 2020 թվականին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններից հետո հետպատերազմյան վիճակի հաշվառմամբ:**

Կարևորելով բանակում կարգապահության ամրապնդման հարցերում նոր մոտեցումներ ցուցաբերելու անհրաժեշտությունը, զեկույցում բարձրացված խնդիրներին բազմակողմանի, ճկուն ու խորքային մոտեցում ցուցաբերելու հրամայականը՝ Մարդու իրավունքների պաշտպանը 27 առանձին առաջարկ է ներկայացրել, որոնցից յուրաքանչյուրը միտված է բանակում կարգապահության բարձրացմանը:

«Ղ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից «Սահմանադրությամբ, օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ զինվորական կարգապահությունը հիմնվում է օրինականության, մարդու իրավունքների և ազատությունների հարգման, հրապարակայնության, խրախուսման ու կարգապահական պատասխանատվության անխուսափելիության և անհատականացման, զինծառայողների զինվորական, իրավական ու բարոյական դաստիարակության սկզբունքների վրա:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների հրապարակումները, զորամասեր կատարված մշտադիտարկման այցերը ցույց են տալիս, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման անհրաժեշտությունը շարունակում է մնալ առաջնային խնդիր:

2021 թվականի ընթացքում զինված ուժերում կարգապահությանն առնչվող քաղաքացիների բողոքների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների (այդ թվում՝ մահացության և ինքնավնասման դեպքերի, զորամասը ինքնական թողնելու, բռնություն գործադրելու և այլն)

<sup>716</sup> «Ղ Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք, հոդված 2, մաս 2 (կանոնագիրքը հաստատվել է «Ղ Ազգային ժողովի կողմից 21.03.2021 թ. ընդունված ՀՕ-91-Ն օրենքով):

կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել իրավասու պետական մարմիններից<sup>717</sup>: 2021 թվականին մի շարք զորամասեր կատարած մշտադիտարկման այցերի ընթացքում մշտապես հատուկ ուշադրություն է դարձվել կարգապահական հարցերին, առանձնագրույցներ են տեղի ունեցել պարտադիր ժամկետային ու սպայական կազմի զինծառայողների հետ, ուսումնասիրվել ծառայողական քննությունների նյութերը, տեղում լուծում պահանջող հարցերը քննարկվել են զորամասերի հրամանատարության հետ, իսկ համակարգային խնդիրները վերացնելու նպատակով առաջարկներ են ներկայացվել Պաշտպանության նախարարություն<sup>718</sup>:

Զորամասերից մեկում սպա-իրավաբանը նշել է, որ պարտադիր ժամկետային զինծառայողների կարգապահության մակարդակը նվազել է: Ամենատարածված իրավախախտումը զորամասը և մարտական հերթապահության վայրն ինքնակամ թողնելն է: Սպա-իրավաբանի գնահատմամբ՝ կարգապահական տույժերը փաստացի իրենց նպատակին ոչ միշտ են ծառայում և հաճախ դրանք չեն ունենում ուղղիչ կամ դաստիարակչական ազդեցություն: Դրա հետ մեկտեղ, նրա գնահատմամբ՝ արդյունավետ է «Հիմնական արձակուրդի հետաձգում» տույժը: Որևէ ազդեցություն չի ունենում նաև կարգապահական վաշտ ուղարկելը: Այս հարցը համակողմանի վերլուծության և թիրախային քննարկման կարիք ունի:

Մեկ այլ զորամասում սպա-հոգեբանը ներկայացրել է զինծառայողների հոգեբանական վիճակի բարձրացման վերաբերյալ իր տեսլականը, նշել, թե կոնկրետ ինչ աշխատանքներ է իրականացնում

---

<sup>717</sup> Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2020 թվականի ընթացքում արձանագրվել է զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնների խախտման ընդհանուր 223 դեպք, որից՝ ստորադասության հարաբերություններում գտնվող՝ 125 դեպք, դրանց բացակայությամբ՝ 98 դեպք: Դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ, որոնց արդյունքներով արձակվել են հրամաններ՝ մեղավորներին ենթարկելով կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև դրանց կրկնությունը բացառելու նպատակով տրվել են հանձնարարականներ:

Ըստ Քննչական կոմիտեի՝ 2021 թվականի ընթացքում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է 1990 քրեական գործ, որից 500-ով վարույթը կարճվել է, իսկ 191-ն ուղարկվել է դատարան:

<sup>718</sup> Օրինակ, սպա-իրավաբանների մասով առաջարկվել է ծառայողական քննություններն անցկացնելիս զինծառայողին նրա իրավունքները գրավոր իրազեկելու հետ մեկտեղ, բանավոր ևս պարզաբանել նրա իրավունքները, այդ թվում՝ տեղեկացնել տույժը բողոքարկելու իրավունքի մասին:

Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվել և շրջանառվել են ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի նախագծերը: Դրական քայլ էր այն, որ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում 2019 թվականի դեկտեմբերի 12-ին կատարվեցին փոփոխություններ, որի արդյունքում Պաշտպանի կողմից ներկայացված առաջարկները սկզբունքորեն ընդունվեցին: Միաժամանակ, հարկ է նշել, որ Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում Պաշտպանի կողմից առաջարկված փոփոխությունները դեռևս չեն կատարվել:

զինծառայողների հոգեբանական վիճակի կայունության պահպանման ուղղությամբ: Ըստ սպա-հոգեբանի՝ զորամասում տեղի ունեցող կարգապահական խախտումների զգալի մասը պայմանավորվում է զինծառայողների շրջանում մինչև բանակ զորակոչվելն արմատացած և տարածում գտած վարքագծի դրսևորմամբ: Զորամասերից մեկում էլ սպա-հոգեբանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ զորամասերում սպա-հոգեբանների կարգավիճակն անհրաժեշտ է բարձրացնել: Ըստ սպա-հոգեբանի՝ առավել շատ անձնակազմ ունեցող զորամասերում պետք է լինեն մի քանի սպա-հոգեբաններ, նրանք չպետք է ընդգրկվեն այլ ծառայություններում (օրինակ՝ վերակարգում), այլ ամենօրյա ռեժիմով պետք է շփում ունենան զինծառայողների հետ՝ բացահայտելու նրանց բարոյահոգեբանական վիճակը:

**Այցերից պարզվել է նաև, որ որոշ զորամասերում առկա չեն սպա-հոգեբանների հաստիքներ, իսկ մի քանիսում՝ հաստիքները թափուր են:**

Մինչդեռ, ամենօրյա ռեժիմով խիստ մասնագիտական մոտեցում և հատուկ ուշադրություն պետք է դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին: **Այստեղ խոսքը հավասարապես վերաբերում է ինչպես շարքային և ենթասպայական, այնպես սպայական կազմերի զինծառայողներին: Նրանց հետ անհատական հոգեբանական աշխատանքների իրականացումը պետք է կրի պարբերական բնույթ: Հատկապես մարտական գործողությունների մասնակից զինծառայողներին պարբերաբար հոգեբանական աջակցության տրամադրումը սկզբունքային կարևորություն ունի առողջ զինվոր և մարտունակ բանակ ունենալու տեսանկյունից:**

Շատ կարևոր է, որպեսզի նրանք պատշաճ վերականգնողական կուրս անցնեն, պարբերաբար ստանան հոգեբանական աջակցություն, զորամասերում գտնվեն սպա-հոգեբանների դինամիկ հսկողության ու հոգածության ներքո: Հոգեբանական աջակցության տրամադրումը կարող է հետագայում կանխել հոգեկան առողջության հետ կապված հիվանդությունների ձեռքբերումը, դրականորեն ազդել զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի և մարտունակության վրա: Հոգեպես առողջ զինծառայողն է ընդունակ ամուր պահել զինվորական կոլեկտիվում կարգապահությունն ու մարտական ոգին: Հոգեբանական աջակցության ուժեղացումը, զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունները, հոգեբանական խորհրդատվության տրամադրումը, զինծառայողների հետ անհատական աշխատանքներն իրավախախտումների կանխարգելման լավագույն միջոց կարող են հանդիսանալ: Հետևաբար, անհրաժեշտ է ապահովել, որ բոլոր զորամասերում առկա լինեն սպա-հոգեբանի հաստիքներ, իսկ թափուր հաստիքները կարևոր է, որ համալրվեն: Համալրման նպատակով կարելի է քննարկել նաև նման մասնագետների պատրաստմանը խթանելու հնարավորությունները (օրինակ, ռազմական համալսարաններում կադրերի պատրաստման միջոցով):

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ զինված ուժերում բոլոր համակազմի զինծառայողներին հոգեբանական առաջին օգնությունն ու զինվորական

ծառայության հոգեբանական ուղեկցումը տրամադրվում և իրականացվում է զորամասերում՝ հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալների, սպա-հոգեբանների միջոցով, իսկ մարտական հերթապահություն իրականացնող զինծառայողների հետ՝ մինչև նրանց մարտական հերթապահության ընդգրկվելը, նախապատրաստման ընթացքում անցկացվում են նյարդահոգեկան լարվածության և տազնապայնության գնահատման հոգեբանական թեստավորումներ: Հետտրավմատիկ խանգարումների, սրացումների ու հոգեթերապևտիկ մասնագիտական բուժում ենթադրող այլ խնդիրների պարագայում ստացիոնար բուժման կարիք ունեցող զինծառայողները տեղափոխվում են համապատասխան զինվորական հոսպիտալներ, քաղաքացիական բուժհաստատություններ և ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տան՝ անձնակազմի հետտրավմատիկ հոգեվերականգնողական հավաքական բաժանմունք, որտեղ էլ, համաձայն նեղ մասնագիտական փորձաքննությունների արդյունքների, կազմակերպվում է վերջիններիս հետագա բուժման գործընթացը:

Նախարարության տեղեկացմամբ՝ Ռազմական ոստիկանության ծառայողներն իրականացվում են պրոֆիլակտիկ և անակնկալ ստուգայցեր, անհատական զրույց-հանդիպումներ՝ միջոցառումների ընթացքում սերտ համագործակցելով զորամասերի հրամանատարների հետ:

Հատուկ պետք է ընդգծել, որ հրամանատարի, և ընդհանրապես՝ սպայի վարքը կոլեկտիվում ձևավորում է բարոյական արժեհամակարգ և համարժեք մթնոլորտ: **Սպան և ընդհանրապես հրամանատարը արժեք է, որի հեղինակությունը պետք է մաքսիմալ անխոցելի պահել:** Իսկ դրա համար հրամանատարը (սպան) պետք է լինի պրոֆեսիոնալ ու գրագետ: Նա պետք է լինի խստապահանջ, բայց նաև սրտացավ ու հոգատար իր ենթակայի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ, համարժեք պետք է լինի նաև ենթակայի (ստորադասի) վերաբերմունքը իր հրամանատարի (սպայի) հանդեպ:

Փոխադարձ հարգանքի մթնոլորտում է, որ զինվորական կարգապահությունն ու կանոնադրական կարգը լինում է առավել ապահովված:

Բոլոր դեպքերում հարկ է նկատի ունենալ, որ զինված ուժերում կարգապահության ամրապնդման ցանկացած մեխանիզմ ներդնելիս հիմքում պետք է ունենալ զինծառայողի արժանապատվության պաշտպանության և նրա իրավունքների խթանման բարձր ձգտումը:

Զինված ուժերի անձնակազմի իրավունքների նկատմամբ հարգանքը միայն բարոյական պարտականություն չէ: Նման պահանջը մարդու իրավունքների միջազգային իրավունքի մասն է կազմում, ինչով պայմանավորված՝ պետությունը և առանձին անձինք պարտականություն են կրում հարգել և պաշտպանել մարդու իրավունքները բանակում: Զինծառայողներին որպես համազգեստով քաղաքացիների վերաբերվելը ակնհայտորեն բխում է զինված ուժերը հասարակության մեջ ինտեգրելու նպատակից՝ ի տարբերություն այն մոտեցման, թե զինված ուժերը մեկուսացված են քաղաքական և հասարակական կյանքից: Զինված ուժերի մարտունակության առաջնային հրամայականն է թիմային համախմբվածության և

հրամանատարների ու նրանց ենթակաների միջև վստահության և հավատարմության պահպանումը:

Պետությունը պարտավորություն է կրում ապահովել զինծառայության այնպիսի պայմաններ, որոնք կհամապատասխանեն անձի արժանապատվությանը, իսկ զինծառայության մեթոդներն ու ընթացքը զինծառայողներին տանջանքների ու սթրեսի չեն ենթարկի և չեն անցնի կարգապահության ապահովման համար կիրառվող մեթոդների խստության սահմանը:

**Մտահոգիչ է կոնկրետ խումբ զինծառայողների շրջանում իրավագիտակցության ոչ բավարար մակարդակը:** Դա հատկապես վերաբերում է պարտադիր ժամկետային զինծառայողներին: Իրավական իրազեկվածության պակասն էլ իր հերթին կարող է լինել ոչ կանոնադրային հարաբերությունների հաստատման պատճառներից մեկը: Օրինակ, զինծառայողների մեծ մասը տեղյակ չէ, որ կարգապահական տույժերը տրվում են գրավոր հրամանով, և իրենք ունեն դրանց հետ ծանոթանալու ու բողոքարկման իրավունք: Ձորամասերում զինծառայողների հետ առանձնազրույցները ևս ցույց են տալիս, որ կարգապահական տույժերի բողոքարկման պրակտիկան կայացած չէ և գրեթե չի գործում<sup>719</sup>:

«Կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ զինծառայողը, ում նկատմամբ նշանակված է ծառայողական քննություն, ծառայողական քննությանը մասնակցելու պահից գրավոր ծանոթացվում է անցկացվող ծառայողական քննության շրջանակներում իր իրավունքներին և պարտականություններին, իրավունք ունի ծառայողական քննության անցկացման ժամանակ ծանոթանալու իր մասնակցությամբ կատարված գործողությունների ընթացքի, բովանդակության, արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերին և դրանց կապակցությամբ ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, ինչպես նաև մինչև ծառայողական քննության ավարտը ծանոթանալու ծառայողական քննության նյութերին, ներառյալ՝ ծառայողական քննության արդյունքներով կազմված եզրակացությանը, սույն օրենքով սահմանված կարգով այն բողոքարկելու:

Ձորամասեր այցերի ընթացքում ծառայողական քննություններն անցկացնող իրավաբան-սպաներին մշտապես առաջարկվում է զինծառայողին նրա իրավունքները գրավոր իրազեկելու հետ մեկտեղ, բանավոր ևս պարզաբանել նրա իրավունքները, այդ թվում՝ տեղեկացնել տույժը բողոքարկելու իրավունքի մասին:

Զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման գործում սկզբունքային է նաև իրավախախտումներից տուժած անձանց պաշտպանությունը: Ճիշտ է, իրավախախտումներից տուժած անձանց նկատմամբ, ըստ անհրաժեշտության, կիրառվում են օրենքով սահմանված պաշտպանության միջոցներ, կամ տուժած զինծառայողները տեղափոխվում

<sup>719</sup> Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ծառայողական քննության արդյունքներով հայտարարված կարգապահական տույժերի վերաբերյալ ստացվել է 3 բողոք, արդյունքում տույժը մնացել է անփոփոխ:



են ծառայության այլ վայր<sup>720</sup>, սակայն նրանց հետ անհրաժեշտ է ամենօրյա ռեժիմով անցկացնել հոգեբանական աջակցման աշխատանքներ և պահել հատուկ ուշադրության ու հոգածության ներքո<sup>721</sup>:

Հարկ է նկատի ունենալ, որ բանակում կարգապահության ամրապնդման համար «պատասխանատվության խստացումը կբարձրացնի կարգապահությունը» սկզբունքով առաջնորդվելը լավագույն միջոցը չէ: Ոչ միշտ է պատասխանատվության խստությունը կանխում կամ բացառում անձի ոչ իրավաչափ վարքագիծը: **Պատժի խստության աստիճանը պետք է մշտապես լինի գործած իրավախախտմանը խիստ համաչափ:** Անթույլատրելի է խմբակային պատժամիջոցները, որոնց պարագայում պատասխանատվության է ենթարկվում նաև անձը, ով խախտմանը առնչություն չի ունեցել: Դա կարող է հանգեցնել միջանձնային հարաբերություններում խնդիրների՝ խարխուլելով զինվորական կոլեկտիվի համախմբվածությունը:

**Ինչպես սպայական, այնպես էլ սերժանտական անձնակազմը<sup>722</sup>, լինելով կայուն կարգապահության երաշխիքն ապահովողներ, պետք է հանդես գան զորամասերում տեղի ունեցող իրավախախտումների պայքարի առաջին գծում:** Նրանց ղեկավարումը կարևոր նշանակություն ունի մարդու իրավունքների նկատմամբ հարգանք գեներացնելու գործում: Այս առումով, նրանք ակտիվ լինել (նախաձեռնող դեր ունենալ) զինվորականների միջև փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտ ձևավորելու համար ունի հիմնարար նշանակություն: Նրանք պետք է և կարող են ձեռնարկել բավարար ու անհրաժեշտ բոլոր միջոցները՝ իրենց ենթակաների (ստորադասների) հակաօրինական վարքագիծը կանխելու համար: Առավել ևս, որ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահության և կանոնադրական կարգի ամրապնդման համար պատասխանատու են բոլոր խմբերի հրամանատարները (պետերը), մյուս սպայական ու ենթասպայական անձնակազմը:

Հատկապես, կարևոր է զինված ուժերում սերժանտների դերի բարձրացումը՝ որպես շարքային կազմի զինծառայողների հետ անմիջականորեն և առաջնային շփում ունեցողներ: Սերժանտը պետք է լավ տիրապետի ենթակա անձնակազմի բարոյահոգեբանական և անձնական հատկանիշներին, ընտանեկան դրությանը և հոգ տանի նրանց մասին: Նա զինվորներից պետք է պահանջի զինվորական կարգապահության, օրվա կանոնակարգի պահպանում, վերադաս հրամանատարին

<sup>720</sup> Ըստ Պաշտպանության նախարարության՝ 2021 թվականի ընթացքում պաշտպանության միջոց կիրառելու շրջանակներում մշտական վայրի զորամասից այլ զորամաս տեղափոխվել է մեկ զինծառայող:

<sup>721</sup> Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի «Դ» բաժնի համաձայն՝ արդյունավետ պաշտպանության համար առանցքային կարևորություն ունի այն, որ զինվորական կարգապահությանը և էթիկային հակասող վարքագծի մասին իրավասու մարմինները անհապաղ տեղեկացվեն, և առանց ձգձգման քննություն իրականացվի: Ինչ վերաբերում է կարգապահական վարույթներին, ապա դրանք պետք է ընթանան Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին համահունչ, զանցանքի համար մեղադրվող պետք է պաշտաճորեն տեղեկացվի մեղադրանքի կամ իր գործով կարգապահական վարույթ սկսելու մասին: Կարգապահական զանցանքը, որի համար անձը պատժվում է, պետք է լինի այն, որի համար նա մեղադրվել է: Այն դեպքում, երբ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կիրառելի է, այս դրույթի բոլոր երաշխիքները պետք է ապահովվեն: Պետք է նաև հնարավորություն լինի բողոքարկելու ավելի բարձր մարմնի, որն անկախ է հրամանատարական շղթայից:

<sup>722</sup> Ըստ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ կրտսեր ենթասպայական կազմը բաղկացած է «կրտսեր սերժանտ», «սերժանտ», «ավագ սերժանտ», «ավագ» զինվորական կոչումներից:

պարբերաբար ներկայացնի կիրառված խրախուսանքների ու կարգապահական տույժերի մասին: Նշվածը բխում է նաև «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի պահանջներից:

Այս առումով կարևոր է ՁՈւ կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթի պրակտիկ կիրառության արդյունավետ ապահովումը: Այսպես, ըստ այդ դրույթի՝ տրված կարգապահական տույժերը, ինչպես նաև թույլ տրված կարգապահական խախտումներն իրավասու հրամանատարի (պետի) որոշմամբ կարող են քննարկվել համապատասխանաբար շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ անձնակազմի և սերժանտական ժողովներում, ավագ ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ ենթասպայական ժողովներում, սպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ սպայական ժողովներում կամ սպայի պատվի դատարաններում: Վերջինները կոչված են նպաստելու զինվորական կարգապահության ամրապնդմանն ու զինվորական կոլեկտիվի համախմբմանը: Մինչդեռ, կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ զորքերում մեծամասամբ չեն գործում ենթասպայական և սերժանտական ժողովները: Իսկ այն զորամասերում, որտեղ գործում են՝ սովորաբար, ըստ էության, ձևական բնույթ են կրում: Այս առումով ևս անելիքներ կան՝ նկատի ունենալով, որ այս մարմինների կարգավիճակի բարձրացումը միանշանակ կարող է լինել բանակում կարգուկանոնի երաշխավորմանն ուղղված ևս մեկ լրացուցիչ դրական քայլ:

Այս առումով կարևոր է Կարգապահական կանոնագրքի 27-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթի պրակտիկ կիրառության արդյունավետ ապահովումը: Այսպես, ըստ այդ դրույթի՝ տրված կարգապահական տույժերը, ինչպես նաև թույլ տրված կարգապահական խախտումներն իրավասու հրամանատարի (պետի) որոշմամբ կարող են քննարկվել համապատասխանաբար շարքային կազմի և կրտսեր ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ **անձնակազմի և սերժանտական ժողովներում**, ավագ ենթասպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ **ենթասպայական ժողովներում**, սպայական կազմի զինծառայողների նկատմամբ՝ **սպայական ժողովներում կամ սպայի պատվի դատարաններում**: Նշված ժողովների և սպայի պատվի դատարանների կազմակերպման ու դրանցում հարցերի քննարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով: Պաշտպանության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 947-Ն հրամանի համաձայն՝ ՀՀ զինված ուժերի անձնակազմի, սերժանտական, ենթասպայական, սպայական ժողովները Կարգապահական կանոնագրքի հիման վրա ստեղծված և հասարակական հիմունքներով մշտապես գործող մարմիններ են, որոնք կոչված են **նպաստելու զինվորական կարգապահության ամրապնդմանն ու զինվորական կոլեկտիվի համախմբմանը**:

Մինչդեռ, կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ զորքերում ենթասպայական և սերժանտական ժողովները հիմնականում չունեն անհրաժեշտ ազդեցություն: Ավելին՝ առանձին դեպքերում դրանք ձևական բնույթի են, ինչը, անշուշտ, խնդրահարույց է: Սերժանտների՝ որպես շարքային և սպայական անձնակազմի արանքում կապող օղակի ամրապնդումը, նրանց

կարգավիճակի բարձրացումը, առկա մեխանիզմների արդյունավետ իրագործումը միանշանակ, կարող է լինել բանակում կարգուկանոնի երաշխավորմանն ուղղված ևս մեկ լրացուցիչ դրական քայլ<sup>723</sup>:

Այս մասով մնում է հավելել, որ բանակում ամուր կարգապահություն ապահովելու գրավականներից է գրագետ զինծառայողների արհեստավարժ մոտեցումը ծառայության նկատմամբ: Այն իր հերթին անխուսափելիորեն ենթադրում է մարդու իրավունքների ապահովում, ներառյալ՝ հարգանք մարդու արժանապատվության հանդեպ: Իհարկե, խոսքը վերաբերում է հավասարապես ինչպես շարքային, այնպես էլ ենթասպայական ու սպայական կազմերի զինծառայողներին:

**Որպեսզի զորքերում կարգապահությունը լինի կայուն և երաշխավորված՝ զինվորականների կողմից «լիազորությունների (ներառյալ՝ պարտականությունների) գրագետ կատարումը» պետք է ուղեկցվի «ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցմամբ», իսկ այստեղ անպայմանորեն պետք է բացառվի «ծառայակցի (ներառյալ՝ ենթակայի) նկատմամբ ոչ արժանապատիվ վերաբերմունքը»<sup>724</sup>:**

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկվում է՝*

1. ուսումնասիրել *ԶՈւ ամբողջ համակարգում մարդու իրավունքների խախտումների միտումները՝ նպատակ ունենալով որոշել, թե որքանով է գիտելիքների հնարավոր անբավարարությունը հանգեցնում մարդու իրավունքների խախտումների,*

2. *էլ ավելի հեղուկական դարձնել զինծառայողների շրջանում իրավագիտակցության բարձրացման աշխատանքները՝ նրանց տրամադրելով իրավունքների իրազեկման ձեռնարկներ, ուղեցույցներ, տեղեկատվական թերթիկներ, կազմակերպել դասընթացներ,*

3. *ուսումնասիրել Ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների դասերի պլանը և կատարել զինված ուժերի կարիքներից բխող անհրաժեշտ լրացումներ ու փոփոխություններ (որպես ապագա սպաներ՝ զինված ուժերում մարդու իրավունքներին վերաբերող հարցերին նրանց իրազեկվածությունն առավել կարևոր է),*

<sup>723</sup> Ուշադրության է արժանի նաև Պաշտպանության նախարարի 2012 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 947-Ն հրամանը: Հրամանի «Սպայի պատվի դատարանների կազմակերպման և դրանցում հարցերի քննարկման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ սպայի պատվի դատարանը Կարգապահական կանոնագրքի հիման վրա ստեղծված և հասարակական հիմունքներով գործող ընտրովի մարմին է, որը կոչված է նպաստելու սպայի կողմից ՀՀ Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի պահանջների, ինչպես նաև հրամանատարների հրամանների ու սպայի պատվի կանոնների խստիվ և ճշգրիտ կատարմանը, սպայի կողմից կատարված կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերյալ դիրքորոշման ձևավորմանը: Հարցեր կարող են առաջանալ նաև պատվի դատարանների գործունեության արդյունավետության առումով, քանի որ շատ զորամասերում, ըստ ուսումնասիրության, սովորաբար մեկ-երկու անգամ է նիստ գումարվում ամբողջ տարվա ընթացքում (երբեմն նույնիսկ ընդհանրապես որևէ նիստ չի անցկացվում):

<sup>724</sup> Բանաձևի տեսքով կունենանք հետևյալ պատկերը. Գ + Պ - Վ = Կ: Այստեղ՝ «Գ»-ն լիազորությունների գրագետ կատարումն է (գրագիտություն), «Պ»-ն՝ ծառայության նկատմամբ պատասխանատու մոտեցումը (պատասխանատվություն), «Վ»-ն՝ ոչ արժանապատիվ վերաբերմունքը ծառայակցի նկատմամբ (վերաբերմունք), իսկ «Կ»-ն՝ զինվորական կարգապահությունը: Այս բանաձևի մասին խոսվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներում:

4. կատարելագործել Ռազմական ոստիկանության ծառայողների գիտելիքներն ու կարողությունները, որպեսզի նրանք կարողանան զորամասերում համապատասխան աշխատանքներ իրականացնել, ներառյալ՝ բռնության կանխարգելման աշխատանքներ, և արդյունավետ համագործակցել զորամասի հրամանատարության հետ,

5. բոլոր զորամասերն ապահովել սպա-հոգեբաններով և սպա-իրավաբաններով, ամենօրյա ռեժիմով ուշադրություն դարձնել զինծառայողների հոգեբանական վիճակին, սպա- հոգեբանների և սպա-իրավաբանների համար պարբերաբար իրականացնել վերապատրաստման դասընթացներ,

6. բարձրացնել հսկողությունը դպրոցների տնօրենների և ոստիկանության ծառայողների կողմից զորակոչային տարիքի քաղաքացիների վերաբերյալ օբյեկտիվ ու ամբողջական տեղեկությունների (բնավորություն, վարք, սոցիալ-հոգեբանական մի շարք գործոններ, գիտելիք և այլն)՝ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներ տրամադրելու ուղղությամբ,

7. իրավախախտումների կանխարգելման, զինվորական կարգապահության մակարդակի անընդհատ բարձրացման ու կարգուկանոնի ապահովման համար զարգացնել խրախուսանքի միջոցներ կիրառելու ինստիտուտը, քանի որ խրախուսանքը զինվորական կարգապահության ամրապնդման և զինծառայողների դաստիարակման հայտնի միջոց է:

### **3. Հրաման չկատարելու և զինգրքույկը կորցնելու համար կարգապահական տույժ կիրառելու պրակտիկան**

Միջազգային չափանիշներով հստակ ամրագրված է, որ չնայած պետություններն իրավասու են կազմակերպել զինվորական կարգապահության սեփական համակարգը և այդ հարցում ունեն հայեցողական որոշակի շրջանակ<sup>725</sup>, սակայն միայն զինվորական կարգապահության, կարգուկանոնի, ապահովության կամ անվտանգության սպառնալիք հանդիսացող վարքագիծը կարող է համարվել կարգապահական իրավախախտում:

Ցանկացած պատժի խստության աստիճանը պետք է լինի իրավախախտմանը համաչափ: Զինծառայողների **գործողությունները կամ անգործությունը, որոնք հավասարազոր են կարգապահական խախտումների,** կարգապահական վարույթի շրջանակներում կիրառվող ընթացակարգերը, նշանակվող պատիժների տեսակները և տևողությունը, նման պատիժ նշանակելու իրավասություն ունեցող մարմինը և այդ պատիժները բողոքարկելու իրավունքը **պետք է նախատեսվեն օրենքով:**

2021 թվականի ընթացքում զորամասեր իրականացված այցերի արդյունքում Պաշտպանը արձանագրել է, որ զինծառայողների կողմից զինվորական գրքույկը կորցնելու դեպքերի հանգամանքները պարզելու նպատակով իրականացվում են ծառայողական քննություններ, որոնց արդյունքում զինծառայողներին տրվում են կարգապահական տույժեր: Պաշտպանության

<sup>725</sup> Տե՛ս, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 17-րդ և 19-րդ կետերը:

նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զինվորական գրքույկների կորստի կամ վնասվելու վերաբերյալ իրականացվել են ծառայողական քննություններ: Հատկանշական է, որ 2021 թվականի ընթացքում կրկին ծառայողական քննության արդյունքում կիրառվել է «նկատողություն» կարգապահական տույժ:

Վերոնշյալը խնդրահարույց է հետևյալ պատճառաբանությամբ. ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի (այսուհետ՝ Կարգապահական կանոնագիրք) 13-րդ հոդվածը հստակ սահմանում է կարգապահական խախտման (զանցանքի) հասկացությունը և ընդգծում, որ կարևոր է, որ այդ կանոնագրքով (օրենքով) նախատեսված լինի կարգապահական պատասխանատվություն:

Կարգապահական կանոնագրքի 5-րդ գլխով նախատեսված են կարգապահական իրավախախտումների տեսակները, որոնց շարքում **առկա չէ զինծառայողի կողմից զինվորական գրքույկը կորցնելը, հետևաբար՝ չկա նաև պատասխանատվություն դրա համար:** Նախկինում Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել էր, որ զինվորական գրքույկը կորցնելու համար կարգապահական տույժերը զինծառայողներին տրվել են զինվորական գրքույկի ծանոթացման բաժնի 1-ին կետի հիմքով: ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման ձև 3-ով նախատեսված է զինվորական գրքույկը, որի «Զինվորական հաշվառման և զինվորական գրքույկի վերաբերյալ» կանոնների 1-ին կետի համաձայն՝ զինծառայողները, ինչպես նաև պահեստազորում հաշվառված քաղաքացիները պարտավոր են խնամքով պահել զինվորական գրքույկը, այն կորցնելու դեպքում զինծառայողները անհապաղ այդ մասին զեկուցում են անմիջական պետին, իսկ պահեստազորում հաշվառված քաղաքացիները՝ զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատ: Այդ դեպքում զինվորական գրքույկը համարվում է անվավեր և տրվում է նոր զինվորական գրքույկ: Զինծառայողները զինվորական գրքույկը կորցնելու դեպքում ենթարկվում են կարգապահական պատասխանատվության:

Մինչդեռ, զինծառայողներին զինվորական գրքույկը կորցնելու համար պատասխանատվության ենթարկելու հիմք Կարգապահական կանոնագրքով նախատեսված չէ, առկա չէ նաև բլանկետային նորմ առ այն, որ զինծառայողները պատասխանատվության են ենթարկվում զինվորական գրքույկի «Զինվորական հաշվառման և զինվորական գրքույկի վերաբերյալ կանոնները» խախտելու համար, սակայն զինծառայողները բացառապես զինվորական գրքույկով նախատեսված կանոնի հիման վրա՝ ենթարկվում են կարգապահական պատասխանատվության: Նշված հանգամանքն արձանագրվել էր նաև Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով, և առաջարկվել բացառել զինվորական գրքույկը կորցնելու համար զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան:

Անհրաժեշտ է նաև նշել, որ 2021 թվականի սկզբին շրջանառության մեջ է դրվել Պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 991-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին նախագիծ, որով, ի թիվս այլնի, առաջարկվում է որպես ծառայողական քննության նշանակման առիթ նախատեսել զինծառայողի ծառայողական

վկայականի (զինվորական գրքույկի), ինչպես նաև հատուկ պահպանության ենթակա այլ փաստաթղթի(երի) կորցնելը կամ փչացնելը:

**Պաշտպանը հարկ է համարում ընդգծել, որ զինվորական գրքույկը կորցնելու պատճառները պարզելու նպատակով ծառայողական քննություն իրականացնելն, ինքնին, հասկանալի է (և առնվազն ունի ողջամիտ նպատակ), սակայն Պաշտպանության նախարարի վերոնշյալ հրամանում առաջարկվող լրացմամբ ծառայողական քննություն անցկացնելու այդպիսի առիթի նախատեսումը որևէ պարագայում չպետք է կարգապահական կանոնագրքով չնախատեսված տույժ կիրառելու հիմք հանդիսանա (դա չի ունենա լեգիտիմ նպատակին (legitimate aim) բավարարող հիմնավորվածություն՝ հատկապես, որ օրենքով զանցանքների շարքին այն դասված չէ):**

Մեկ այլ խնդիր վերաբերում է հրաման չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար տույժերի խնդրահարույց պրակտիկային<sup>726</sup>:

Մասնավորապես, նախկինում Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով պարզվել էր, որ սպան, ով ծառայության վայր էր ներկայացել ոչ սթափ վիճակում, ենթարկվել է «զինվորական ծառայությունից արձակում» կարգապահական պատասխանատվության, քանի որ, Պաշտպանության նախարարության մեկնաբանությամբ, այդ կերպ խախտել էր ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» թիվ 992-Ն հրամանով հաստատված կանոնների 6-րդ (արժևորել սեփական խոսքը, խուսափել անհարկի խոստումներից, պահպանել տրված խոստումը՝ միաժամանակ գիտակցելով տրված խոստման հնարավոր բացասական հետևանքները) և 12-րդ (իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի ձևավորմանը և պահպանմանը, որ զինվորական ծառայության համակարգը հիմնված է ազնվության, արդարության ու Հայրենիքի պաշտպանության գաղափարի վրա) կետերի պահանջները:

Պաշտպանի 2018-2020 թվականների հաղորդումներով նշվել էր, որ այս պարագայում, էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյոք ՀՀ պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանով սահմանված վարքագծի կանոնները խախտելը կարող է որակվել Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով, և թե արդյոք հրամանը պետք է ուղղված լինի անորոշ շրջանակի, թե՛ կոնկրետ զինծառայողների:

Այսպես, 31-րդ հոդվածի համաձայն՝ հրամանատարի (պետի) օրինական և սահմանված կարգով տրված հրամանը ստորադասի (ենթակայի) կողմից չկատարելն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն:

Զինծառայողները կարող են պատասխանատվության ենթարկվել միայն օրինական և սահմանված կարգով տրված հրամանը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

---

<sup>726</sup> Այս մասին խոսվել է նաև Պաշտպանի 2018, 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներում նույնպես:

«Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» զանցանքի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ է պարզել «հրաման» և «պետ» հասկացությունների բովանդակությունը:

ՀՀ զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքով (այսուհետ՝ Ներքին ծառայության կանոնագիրք) սահմանվում է հրաման հասկացությունը: Այսպես՝ 37-րդ հոդվածի համաձայն՝ հրամանը հրամանատարի (պետի) կարգադրություն է՝ ուղղված ենթականերին, որ պահանջում է որոշակի գործողություններ կատարել, այս կամ այն կանոնը պահպանել, սահմանում է ինչ-որ կարգ, դիրք: Հրամանը կարող է տրվել գրավոր, բանավոր, կապի տեխնիկական միջոցներով՝ մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը): Գրավոր հրամանը զինվորական կառավարման հիմնական կարգադրիչ, պաշտոնական փաստաթուղթ է (իրավական ակտ), որ միանձնյա ղեկավարման իրավունքով հրապարակում են զորամասերի հրամանատարները (հիմնարկների պետերը): Բանավոր հրամաններ տալիս են բոլոր հրամանատարները (պետերը):

Այսպիսով, որպեսզի հրամանը համարվի օրինական և սահմանված կարգով տրված, ի թիվս այլ պահանջների, այն պետք է **ուղղված լինի մեկ զինծառայողի, զինծառայողների խմբին կամ զորամասին (ստորաբաժանմանը):**

**Հետևաբար, Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանի պահանջները չկատարելը չի կարող հանգեցել Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով սահմանված զանցանքի կատարմանը, քանի որ դրանով վարքագծի կանոններ են սահմանվում բոլոր զինծառայողների համար<sup>727</sup>:**

Հատկանշական է, որ հրամանը՝ որպես իրավական ակտի տեսակ, օրենքից և կառավարության որոշումից ցածր իրավաբանական ուժ ունի, սակայն դրա համար նախատեսված է խիստ պատասխանատվություն, որը կապված է այն հանգամանքի հետ, որ դրանով խախտվում է զինվորական ծառայության կարևորագույն սկզբունքներից մեկը՝ «Միանձնյա ղեկավարությունը»: Համաձայն Ներքին ծառայության կանոնագրքի 31-րդ հոդվածի՝ միանձնյա ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման, ղեկավարման և զինծառայողների փոխհարաբերության սկզբունքներից մեկն է: Դա հրամանատարին (պետին) իր ենթակաների նկատմամբ ողջ կարգադրողական իշխանությամբ օժտելն է և նրա վրա պետության հանդեպ անձնական պատասխանատվություն դնելը զորամասի, ստորաբաժանման և ամեն մի զինծառայողի կյանքի ու գործունեության բոլոր կողմերի համար: Ավելին՝ միանձնյա ղեկավարությունը դրսևորվում է հրամանատարի (պետի)՝ իրադրության համակողմանի

<sup>727</sup> Ներքին ծառայության կանոնագրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ **հրամանատարի** (պետի) հրամանը պետք է կատարվի անվերապահորեն, ճշտորեն և նշված ժամկետում (Ավելին՝ զինծառայողը, ստանալով հրամանը, պատասխանում է «Լսում եմ» և հետո կատարում այն): Նշված դրույթը նաև հստակեցնում է, որ անհրաժեշտության դեպքում, տրված հրամանի ճիշտ ընկալումը ստուգելու նպատակով հրամանատարը (պետը) կարող է պահանջել նրա համառոտ կրկնությունը, իսկ զինծառայողը, ստանալով հրամանը, դիմել հրամանատարին (պետին) այն կրկնելու խնդրանքով: Ստացված հրամանի կատարման մասին զինծառայողը պարտավոր է զեկուցել հրաման տված պետին և իր անմիջական պետին:

գնահատումից ելնելով՝ միանձնյա կերպով որոշումներ ընդունելու, օրենքներին ու զինվորական կանոնադրություններին խստիվ համապատասխան հրամաններ արձակելու և դրանց կատարումն ապահովելու իրավունքի մեջ<sup>728</sup>:

Ինչ վերաբերում է ՀՀ պաշտպանության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին» թիվ 992-Ն հրամանով հաստատված կանոնները խախտելու համար սահմանված պատասխանատվությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ կարգապահական խախտում է համարվում, ի թիվս այլնի, նաև սպայական կազմի զինծառայողի կողմից հաշվետու կամ ուսումնական տարվա արդյունքներով ծառայողական գործառույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ **սպայի պատվի կանոնները խախտելը**:

Հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունն ապահովվում է յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության պաշտպանության, զինվորական պարտքի և իր պարտականությունների կատարման համար անձնական պատասխանատվության գիտակցմամբ, ինչպես նաև **հրամանատարների (պետերի) կողմից իրենց լիազորությունների շրջանակներում տրված հրամանների ճշգրիտ ու ժամանակին կատարմամբ**:

Այս բնորոշումից պարզ է դառնում, որ բոլոր իրավական ակտերը, որոնցով պարտականություններ են սահմանված զինծառայողների համար, զինվորական կարգապահության բաղկացուցիչ մասն են կազմում: Այլ կերպ ասած, թեև Կարգապահական կանոնագրքով նշվում է, որ սպայի պատվի կանոնները խախտելը հանդիսանում է կարգապահական զանցանք, սակայն նշված չէ, թե Կարգապահական կանոնագրքով սահմանված 15 զանցանքից կոնկրետ որ զանցանքն է: Ավելին՝ սպայի պատվի կանոնները խախտելու համար ուղղակիորեն պատասխանատվություն կամ տույժի տեսակ սահմանված չէ: Հետևաբար, սպայի պատվի կանոնների խախտման դեպքում անհրաժեշտ է ծառայողական քննությամբ պարզել, թե

<sup>728</sup> Հարկ է նկատի ունենալ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը Կարգապահական կանոնագրքով սահմանված կարգապահական զանցանքից տարբերվում է միայն առաջացրած հետևանքով, այն է՝ ծառայության շահերին էական վնաս պատճառելը: Հետևաբար, արարքը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով որակելու համար անհրաժեշտ է հանցակազմի համար սահմանված բոլոր հատկանիշները՝ բացառությամբ հետևանքի:

Այս հանցագործության անմիջական օբյեկտը զինվորական ենթակայության կարգն է, և դրանով խախտվում է զինված ուժերի կազմավորման և գործունեության այնպիսի կարևոր սկզբունք, ինչպիսին է միանձնյա ղեկավարումը (այդ թվում՝ անմիջական ենթակայությունը):

Հրամանը պետի կողմից կոնկրետ ստորադասին կամ ստորադասների խմբին ուղղված պարտադիր պահանջ է՝ կատարելու կամ չկատարելու այս կամ այն գործողությունը:

Հրամանից պետք է տարբերել այն պահանջները, որոնք նախատեսված են զինվորական կանոնադրություններում ու կանոնագրքերում և ուղղված են զինծառայողների անորոշ շրջանակի (Սա հստակ է նաև մասնագիտական տեսական գրականության մեջ, տե՛ս, օրինակ՝ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, հատուկ մաս, դասագիրք բուհերի համար, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2012թ.):



զինծառայողը Կարգապահական կանոնագրքով նախատեսված որ զանցանքն է կատարել (օրինակ՝ հնարավոր է, որ դա հանգեցնի «Ներքին ծառայության կանոնագրքային կանոնները խախտելը» կամ «Անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ» կարգապահական զանցանքներին):

**Բոլոր դեպքերում զինծառայողներին վերագրվող իրավախախտումները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության չափանիշներին: Դա է պահանջում նաև իրավունքի գերակայության սկզբունքը:**

Ի դեպ, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի<sup>729</sup>:

**Հետևաբար, Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելը որպես կարգապահական տույժ սահմանված լինելն ինքնին բավարար չէ այդ կանոնները խախտելը Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով որակելու համար:** Արդյունքում, առաջարկվել էր Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելու համար սահմանել առանձին զանցանք, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

Խնդրին անդրադարձ էր կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում Պաշտպանության նախարարության ստորաբաժանումների ղեկավար կազմի հետ 2019 թվականի հոկտեմբերի 7-ին տեղի ունեցած աշխատանքային քննարկման ընթացքում: Պաշտպանության նախարարության ներկայացուցիչներն ընդունել են «Հրամանը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը» զանցանքի որակման հետ կապված պրակտիկ խնդրի առկայությունը և ընդգծել հետագա պրակտիկական փոփոխելու անհրաժեշտությունը:

*Հետևաբար, առաջարկվում է.*

*1. բացառել օրենքով չնախատեսված արարք կատարելու, մասնավորապես՝ զինվորական գրքույկը կորցնելու համար զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկան,*

*2. բացառել Պաշտպանության նախարարի նորմատիվ հրամանները խախտելու համար զինծառայողներին Կարգապահական կանոնագրքի 31-րդ հոդվածով նախատեսված զանցանք (Հրաման չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը) վերագրելու պրակտիկան,*

*3. Կարգապահական կանոնագրքում սպայի պատվի կանոնները խախտելու համար սահմանել առանձին զանցանք:*

<sup>729</sup> Տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 2016 թվականի մայիսի 3-ի թիվ ՍԴՈ-1270 որոշումը:

#### 4. Պարտադիր զինծառայողին մշտական տեղակայման զորամասից այլ զորամաս տեղափոխելու պրակտիկան

Օրենքով հստակ նշված են այն դեպքերը, երբ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները մշտական ծառայության զորամասից կարող են տեղափոխվել ծառայության այլ վայր<sup>730</sup>:

Չնայած օրենսդրական կարգավորումներին՝ շարունակում է խնդրահարույց մնալ զինծառայողին մշտական տեղակայման վայրի զորամասից Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժին տեղափոխելու պրակտիկան: Խնդիրն այն է, որ զինծառայողը մշտական տեղակայման զորամասից տեղափոխվում է Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժին և տևական ժամանակ գտնվում այնտեղ՝ ներգրավված չլինելով քրեական գործում, չունենալով որևէ կարգավիճակ կամ քրեական գործով ունենալով, օրինակ, վկայի դատավարական կարգավիճակ: Երբեմն բաժին են բերվում զինծառայողներ նույնիսկ նյութերի նախապատրաստման ընթացքում: Այս խնդրին անդրադարձ էր կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ և ներկայացվել խնդրի լուծման կոնկրետ առաջարկներ<sup>731</sup>:

2021 թվականին զորամասեր այցերի ընթացքում հրամանատարությունը դժգոհություններ է ներկայացրել իրավապահ համակարգի աշխատանքի վերաբերյալ: Հայտնել են, որ զինծառայողների նկատմամբ հարուցված քրեական գործերը ձգձգվում են և այդ ընթացքում նրանք հանձնվում են հրամանատարության հսկողությանը, ազատվում են մարտական հերթապահությունից, չեն կրում զենք: Ըստ հրամանատարության՝ քրեական գործերն այնքան են ձգձգվում, որ զինծառայողի ծառայության ժամկետը լրանում է, և նա արձակվում է զինված ուժերից: Հետևաբար, հրամանատարության դիրքորոշմամբ՝ ծառայության շահերին այսօր չի ծառայում որպես խափանման միջոց հրամանատարության հսկողության հանձնելը:

Մարդու իրավունքների պաշտպանն այս խնդիրը ներկայացրել է Պաշտպանության նախարարությանը, միաժամանակ, առաջարկելով հայտնել, թե նախարարությունն ինչպես է տեսնում հարցի լուծումը: Ըստ ստացված պարզաբանման՝ 2022 թվականի հունիսի 1-ից ուժի մեջ մտնող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքով խնդիրը լուծվում է:

<sup>730</sup> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ շարքային և սպայական կազմերի պարտադիր զինծառայողները ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով ծառայողական անհրաժեշտությունից ելնելով, կազմակերպչական-հաստիքային միջոցառումների կապակցությամբ, ընտանեկան պայմաններից ելնելով, առողջական վիճակի պատճառով՝ ռազմաբժշկական հանձնաժողովի եզրակացության համաձայն, ռազմաուսումնական հաստատությունից հեռացվելու (ազատվելու) կամ առողջական վիճակի պատճառով ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար ոչ պիտանի ճանաչվելու դեպքում կարող են տեղափոխվել ծառայության այլ վայր: Զինծառայողները ծառայության այլ վայր կարող են տեղափոխվել նաև ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քրեական գործով նախաքննության իրականացման նկատառումներից ելնելով:

<sup>731</sup> Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 999-1002:

Դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժնի հետ կապված մեկ այլ խնդիր: Այսպես, քրեական գործով տարբեր դատավարական կարգավիճակ ունեցող անձինք, ինչպես նաև որևէ կարգավիճակ չունեցող զինծառայողներ պահվում են ընդունիչ-բաշխիչ բաժնում միասին, նրանց օրվա կարգացուցակում չկան տարբերություններ: Այս խնդիրն արձանագրվել էր ընդունիչ-բաշխիչ բաժին այցի ընթացքում: Պաշտպանն առաջարկել էր քննարկել քրեադատավարական և զինվորական օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու հարցը, որով հրամանատարներին իրավասություն կտրվի հրամանատարական հսկողությանը հանձնված զինծառայողներին ներգրավել խափանման միջոցների պայմաններին չհակասող աշխատանքների: Ընդ որում, զինվորական օրենսդրությամբ պարտադիր պետք է սահմանվի թույլատրվող աշխատանքների ցանկը:

Չնայած իրավասու մարմինների պնդմանը, որ զինծառայողները Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժնում գտնվում են զորանոցային պայմաններում՝ այնուամենայնիվ, թե՛ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը և թե՛ Պաշտպանի ներկայացուցիչների այցերը ցույց են տվել, որ առկա են զորամասերում և Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժիններում զինվորական ծառայության տարբերություններ: Օրինակ, ըստ բողոքների՝ ընդունիչ-բաշխիչ բաժիններում չկան սպորտային անկյուններ, պատուհանները փակված են ճաղավանդակներով, չի տրամադրվում ազատ արձակում, հեռախոսազանգի հնարավորություն է տրվում շաբաթը մեկ անգամ:

Շարունակում է չլուծված մնալ Պաշտպանի դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացված մեկ այլ խնդիր, որը վերաբերում է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1675-Ն որոշմանը («Ես եմ» ծրագիր):

Նշված որոշմամբ սահմանվում է, որ որպես պաշտպանության միջոց ծառայության վայրը փոխելու դեպքում ծրագրի շահառու զինծառայողի հետ կնքված պայմանագիրը լուծվում է: Ստացվում է, որ, օրինակ, հանցագործության մասին հաղորդում ներկայացնելու դեպքում զինծառայողի նկատմամբ կարող է կիրառվել պաշտպանության միջոց, փոխվել զորամասը, և վաղաժամկետ լուծվել պայմանագիրը: Պաշտպանն առաջարկել էր քննարկել ծրագրի շահառուի կարգավիճակը պահպանելը նրան այլ զորամաս տեղափոխելու և մարտական հերթապահության ներգրավելու միջոցով: Մինչդեռ, Պաշտպանության նախարարության դիրքորոշմամբ՝ պաշտպանության միջոց կիրառելու դեպքում հնարավոր չէ ծրագրի շահառուի կարգավիճակի պահպանումը, քանի որ զինծառայողի ծառայության վայրը փոխելով պաշտպանության միջոցի կիրառումն իրականացվում է Ռազմական ոստիկանության ենթակա զորամասերում, որոնք ընդգրկված չեն մարտական հերթապահություն իրականացնող զորամասերի ցանկում: Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ օրենքով որևէ արգելք առկա չէ պաշտպանության միջոց կիրառելու դեպքում զինծառայողին մարտական հերթապահություն իրականացնող զորամաս տեղափոխելու վերաբերյալ:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.*

1. «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնողի նկատմամբ պաշտպանության միջոց կիրառելիս չլուծել պայմանագիրը և նրան մշտական ծառայության զորամասից տեղափոխել այլ զորամաս՝ հնարավորություն ընձեռելով ներգրավելու մարտական հերթապահության,

2. մշտական ծառայության վայրի զորամասից այլ զորամաս տեղափոխելիս, ի թիվս այլնի, առանձնահատուկ ուշադրություն դարձնել նոր զորամասում զինծառայողի առողջական վիճակին համադրելի ծառայողական պայմանների ապահովմանը,

3. Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժինների պայմանները և այնտեղ ծառայության պայմանները համապատասխանեցնել զորամասերի զորանոցային պայմաններին,

4. Ռազմական ոստիկանությունում գտնվող դատավարական կարգավիճակ ունեցող (օրինակ՝ վկա, հրամանատարության հսկողությանը հանձնված և այլն) և կարգավիճակ չունեցող (օրինակ՝ ծառայության վայրի զորամասը փոխելու նպատակով) զինծառայողներին պահել անջատ,

5. իրավասու մարմինների կողմից (Պաշտպանության նախարարություն, Դատախազություն, Քննչական կոմիտե) խստացնել հսկողությունը Ռազմական ոստիկանության ընդունիչ-բաշխիչ բաժնում զինծառայողների գտնվելու ժամկետների նկատմամբ՝ բացառելով տևական ժամանակ զինծառայողների այնտեղ գտնվելը:

## ԳԼՈՒԽ 8. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԱՐԳԵԼՔԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

### 1. Զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերը և դրանց վերաբերյալ հանրային իրազեկումը

Կյանքի իրավունքը՝ որպես բնական, հիմնարար և անօտարելի արժեք, ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ, այնպես Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով: Այն պետության վրա դնում է հավելյալ պարտականություն ապահովելու, որ չվտանգվի մարդու կյանքը, իսկ կոնկրետ դեպքերով գործի քննությունները տարվեն արդյունավետ (**effective investigation**): Սա վերաբերում է նաև զինձառայողների կյանքի իրավունքին, և պետությունը խաղաղ պայմաններում կրում է անհրաժեշտ պարտականություն:

ՀՀ Կառավարության կողմից 2019 թվականի դեկտեմբերի 26-ին թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հատուկ կարևորում է պետության հոգաձության ներքո գտնվող, ինչպես նաև կյանքի համար վտանգավոր իրավիճակներում հայտնված անձանց (այդ թվում՝ զինձառայողներ) կյանքի իրավունքի պաշտպանության խնդիրները: Նշված խնդիրները բարձրաձայնվել են նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից պարբերաբար:

2021 թվականին ադրբեջանական շարունակվող ագրեսիայի հետևանքով արձանագրվել են մեր զինձառայողների կյանքի իրավունքի խախտման մի շարք դեպքեր (Երասխում, Գեղարքունիքում, Սյունիքում): Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս, այդ թվում՝ հրապարակայնորեն, հայտարարել է, որ ադրբեջանական իշխանությունները գործում են միջազգային կանոնների բացահայտ խախտումներով և պատասխանատվություն են կրում հայ զինձառայողներին սպանելու, նրանց կյանքի իրավունքը դիտավորությամբ խախտելու համար<sup>732</sup>: Պաշտպանը հատուկ ընդգծել է, որ նշված հետևության հիմքում են հետևյալ փաստերը.

1. ադրբեջանական զինված ծառայողները ներխուժել և առանց որևէ հիմքի՝ պատերազմի սպառնալիքի ներքո տեղակայվել են ՀՀ գյուղերի հարևանությամբ ու համայնքների միջև ճանապարհներին,

2. 2020 թվականի նոյեմբերի 9-ից հետո Գեղարքունիքում և Սյունիքում ֆիզիկապես ներկա են շինություններում և հողատարածքներում (արոտավայրեր, վարելահողեր և այլն), որոնք օրինական փաստաթղթերով սեփականության իրավունքով պատկանում են ՀՀ բնակիչների կամ համայնքային սեփականություն են,

3. պարբերաբար կրակում են ՀՀ գյուղերի, մարդկանց տների ուղղությամբ և իրական վտանգ ստեղծում քաղաքացիական բնակիչների կյանքի և առողջության համար, վնաս են պատճառում

<sup>732</sup> Տես, օրինակ, <https://ombuds.am/am/site/ViewNews/1829>, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2047>:

նրանց գույքին և կենդանիներին, զբաղված են գողություններով, դիտավորյալ խոչընդոտում են գյուղատնտեսական աշխատանքները և այլն,

4. գյուղերի հարևանությամբ հրդեհում են արոտավայրեր ու խոտհարքեր, գյուղերի անմիջական հարևանությամբ և համայնքների միջև ճանապարհներին նրանց առկայության պատճառով վտանգված է մարդկանց կյանքի իրավունքը, սահմանափակվել է մարդկանց ազատ տեղաշարժը, մարդիկ հայտնվել են մեկուսացման և հումանիտար խնդիրների առաջ,

5. ադրբեջանական իշխանությունները պատերազմից հետո խորացրել են հայաստյացության հովանավորչության ու թշնամանքի քարոզի քաղաքականությունը,

6. ադրբեջանական զինված ուժերի ծառայող իր հանցանքների համար չի պատժվել, այդ արարքները միայն խրախուսվել են,

7. ՀՀ զինծառայողները պաշտպանում են քաղաքացիական բնակիչների կյանքն ու առողջությունը, խաղաղ ու անվտանգ կյանքը,

8. հրահրում են հրաձգություններ, որոնք դադարում են միայն ՀՀ զինված ուժերի կանխարգելիչ միջոցների արդյունքում: Այսինքն՝ ՀՀ զինված ուժերը պաշտպանում են մեր բնակիչների իրավունքները, կյանքն ու խաղաղությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը վերը նշված փաստերն ու հիմնավորումները ուղարկվել է միջազգային կառույցներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով ադրբեջանական իշխանությունների՝ մարդու իրավունքների շարունակվող կոպիտ խախտումներին, միջազգային մարդասիրական պահանջները շարունակաբար խարխլող քաղաքականությանը:

Ըստ Պաշտպանության նախարարության տվյալների՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ զորամասերում արձանագրվել է 58 զինծառայողների մահվան ելքով 56 դեպք, որից 29 զինծառայող մահացել է ոչ մարտական պայմաններում, 29-ը՝ մարտական պայմաններում: Այդ թվում՝ սպանություն (5), ինքնասպանություն (6), հակառակորդ (16), զենքի օգտագործման կանոնների խախտում (3), ականի պայթյուն (1), ավտովթար (10), դժբախտ պատահար (4), ինքնասպանություն հասցնել (1), հիվանդություն (12): Դատախազությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում զինծառայողների մահվան դեպքերով հարուցվել է 29 քրեական գործ: Հարուցված 29 քրեական գործերով մահացել են 33 զինծառայողներ, որոնցից 23-ը ժամկետային զինծառայողներ են, 9-ը՝ պայմանագրային, 1-ը՝ պահեստազորային: 2021 թվականի ընթացքում արձանագրվել է ինքնավնասում (ինքնախեղում) կատարելու 77 դեպք:

Մտահոգիչ է, որ 2020 թվականի համեմատությամբ զինված ուժերում ավելացել է և՛ ինքնավնասումների դեպքերի (2020 թվականին արձանագրվել է ինքնավնասումների 65 դեպք) և՛ մահվան դեպքերի քանակը (2020 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 27-ն արձանագրվել է զինծառայողների մահվան 54 դեպք):

Անհրաժեշտ է, որ Պաշտպանության նախարարությունը հստակ և տեսանելի քայլեր ձեռնարկի դրանց պատճառներն ու նպաստող պայմանները վերհանելու, համակարգային լուծումներ տալու և

արդյունքում՝ դրանք բացառելու ուղղությամբ: Իհարկե, չպետք է թերագնահատվի նաև ՀՀ պաշտպանության նախարարության կատարած կարևոր աշխատանքն այդ ոլորտում, որի շրջանակներում, ըստ Պաշտպանության նախարարության հաղորդման՝

1) խաղաղ ժամանակ մահվան ելքով դեպքերի առաջացման և ինքնավնասումների կատարման պատճառահետևանքային կապերը պարզաբանելու և դրանց կրկնությունը բացառելու նպատակով, յուրաքանչյուր դեպքով անցկացվել է ծառայողական քննություն, որոնց արդյունքներով արձակվել են հրամաններ, մեղավորները ենթարկվել են կարգապահական պատասխանատվության, իսկ զորամասերի հրամանատարության առջև դրվել են հանձնարարականներ.

2) ինքնավնասման դեպքերի կանխարգելմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով զորամասերում իրականացվել են սոցիալ-հոգեբանական գործընթացներ, զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում, հոգեբանական խորհրդատվության տրամադրում և անհատական-դաստիարակչական աշխատանքներ.

3) տարաբնույթ խնդիրներ ունեցող զինծառայողների (ընտանեկան, ֆինանսական, ծառայողական և այլն) հետ իրականացվում են անհատական աշխատանքներ, իսկ առավել աչքի ընկած զինծառայողները (բացասական վարքով) հաշվառվում են ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանությունում և զորամասի հրամանատարական կազմի հետ համատեղ վերջիններիս հետ իրականացվում են պրոֆիլակտիկ, բացատրական և դաստիարակչական աշխատանքներ.

4) ՀՀ ՁՈՒ բարոյահոգեբանական ապահովման վարչության համակարգմամբ պլանավորվում և անցկացվում են զորամասերի հրամանատարների ԲՀԱ գծով տեղակալների ու սպա-հոգեբանների ամենամյա վերապատրաստման դասընթացներ, հավաք-խորհրդակցություններ, ինչպես նաև համաբանակային կոնֆերանսներ, որոնք միտված են խաղաղ ժամանակ զինծառայողների շրջանում կատարված ինքնավնասման դեպքերի պատճառների վերհանմանը, ամփոփմանը և կանխարգելման աշխատանքների շրջանակներում առաջավոր փորձի տարածմանը.

5) ՀՀ պաշտպանության նախարարի 2014 թվականի մարտի 20-ի թիվ 271 հրամանով գործողության է դրվել «Ինքնասպանությունների և ինքնախեղումների կանխարգելման արտահաստիքային խմբերի» գործունեության կարգը, ըստ որի՝ նշված խմբում ընդգրկված պաշտոնատար անձինք զորամասի զինծառայողների շրջանում իրականացնում են նպատակամետ աշխատանքներ ինքնասպանությունների և ինքնախեղումների կանխարգելման, վերջիններիս առաջին հոգեբանական օգնության տրամադրման ուղղությամբ.

6) բացի այդ, յուրաքանչյուր տարի, ինքնասպանությունների կանխարգելման համաշխարհային օրվան ընդառաջ, պաշտպանության գերատեսչության նախաձեռնությամբ, պատկան կառույցների, հանրապետության առաջատար մասնագետների մասնակցությամբ

կազմակերպվում են քննարկումներ, մշակվում են իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Այս ուղղությամբ աշխատանքներ են տարել նաև ՀՀ դատախազությունը և ՀՀ քննչական կոմիտեն:

Ըստ Դատախազության տրամադրած տեղեկությունների.

1) 2021 թվականի ընթացքում իրավասու մարմիններին ներկայացվել է 100 միջնորդագիր, որոնք հիմնականում ուղղված են եղել ծառայության ընթացքում տեղ գտած թերությունները, դրանց պատճառներն ու նպաստող պայմանները վեր հանելուն և վերացնելուն, զինծառայողների շրջանում կարգապահությունը պատշաճ մակարդակում պահելուն, կատարված յուրաքանչյուր զինվորական հանցագործությանը նպաստող պատճառների վերացմանն ուղղությամբ միջոցներ ձեռնարկելուն,

2) ՀՀ զինվորական դատախազության սպասարկման տարածքում արձանագրված զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառների և պայմանների պարզմանն ուղղությամբ դատախազության աշխատակիցների կողմից պարբերաբար կատարվել և կատարվում են հետազոտություններ և ուսումնասիրություններ, տեղի ունեցած դեպքերի վերլուծություններով արձանագրված խախտումների ու թերությունների կապակցությամբ գրվել են հաղորդումներ, հարուցվել են ծառայողական քննություններ անցկացնելու միջնորդություններ, ներկայացվել են առաջարկություններ, զորամասերի հրամանատարական կազմի և զորամասերը սպասարկող Ռազմական ոստիկանության աշխատակիցների հետ համատեղ պարբերաբար կատարվում են անակնկալ ստուգումներ, ինչպես զորամասերի մշտական տեղակայման վայրերում, այնպես էլ մարտական դիրքերում, մշտապես կազմակերպվում են հանդիպումներ զինծառայողների հետ: Կատարված աշխատանքների արդյունքում որոշակի փոփոխության է ենթարկվել հանցագործությունների լատենտայնությունը, նկատվել է որոշ հանցատեսակների նվազում:

Քննչական կոմիտեն էլ տեղեկացրել է, որ.

1) 2021 թվականին կատարվել է ՀՀ զինված ուժերում ինքնասպանությունների ուսումնասիրություն ու վերլուծություն, որոնց կատարմանը նպաստող պատճառների ու պայմանների վերացման և դրանց կանխարգելման համար կոնկրետ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ պաշտպանության նախարարություն,

2) Կանխարգելիչ նկատառումներով քննիչների կողմից տարբեր զորամասերում՝ սպայական և շարային կազմի ծառայողների համար կարդացվել է 5 դասախոսություն, ինչպես նաև քննիչները մասնակցել են իրենց կողմից ներկայացված միջնորդագրերի քննարկմանը:

3) 2021 թվականի ընթացքում զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու համար Զինված ուժերի համապատասխան ստորաբաժանումների հրամանատարներին ներկայացվել է 68 միջնորդագիր:



Իհարկե, անհրաժեշտ է ընդգծել իրավասու մարմինների կատարած կարևոր աշխատանքը, սակայն, ինչպես ցույց է տալիս նաև վերը նշված վիճակագրությունը, դա դեռ բավարար չէ բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխելու համար:

Այստեղ անհրաժեշտ է, նախ, հասկանալ, թե ինչ պարտականություններ ունի պետությունը զինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության տեսանկյունից:

Այսպես, զինճառայողների կյանքի իրավունքի պաշտպանության առումով պետությունն ունի նյութական և ընթացակարգային պարտականություններ: Պետության նյութական պարտավորություններն իրենց հերթին բաղկացած են նեգատիվ և պոզիտիվ պարտականություններից:

Չինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության պետության նեգատիվ պարտականության էությունը զինված ուժերի պաշտոնատար անձանց կողմից այլ անձանց կյանքից զրկելուց զերծ մնալն է, իսկ պոզիտիվ պարտականությունը պահանջում է զինճառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանն ուղղված ողջամիտ քայլեր ձեռնարկելու պարտականություն:

Այս առումով, չափազանց կարևոր և հրատապ է ունենալ բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն), որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծման: Չինված ուժերում կյանքի իրավունքի պաշտպանության պետության պոզիտիվ պարտականություններից է զինված ուժերում կարգապահության ամրապնդումը, որի համար առանցքային է իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանումը, կանխարգելման նպատակով կոնկրետ գործողությունների ծրագրի մշակումը<sup>733</sup>:

Եթե, այդուհանդերձ, զինճառայողը զրկվել է կյանքից, ապա առաջ է գալիս պետության ընթացակարգային պարտականությունը՝ զինճառայողների մահվանը հանգեցրած հանգամանքները պարզելու նպատակով իրականացնել արդյունավետ քննություն (effective investigation):

Չինված ուժերի անդամների իրավունքների մասին ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 7-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ստեղծեն անկախ և արդյունավետ մեխանիզմներ զինճառայողների մահվան կամ նրանց կյանքի իրավունքի դեմ կատարված ոտնձգությունների պատշաճ քննության համար: Ավելին՝ զինված ուժերի յուրաքանչյուր անդամի համար պետք է երաշխավորվի արդար դատաքննության իրավունքը:

Երաշխիքներ են ապահովված նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ, որում հատուկ ընդգծված է, որ զինճառայողները «պետության ձեռքերում» են,

<sup>733</sup> Ավելի մանրամասն ներկայացված է սույն բաժնի «Իրավունքի գերակայության վրա հիմնված կարգապահությունը՝ որպես զինված ուժերում մարդու իրավունքների երաշխիք» պարագրաֆում:

հետևաբար պետությունը պատասխանատվություն է կրում բանակում տեղի ունեցող ցանկացած դեպքի (վնասվածքի, մահվան) համար<sup>734</sup>: Բոլոր այն դեպքերում, երբ պետական մարմիններն օբյեկտիվ պատճառներով գործի ճշգրիտ հանգամանքները չեն կարող պարզել, պետք է բավարար և համոզիչ կերպով բացատրեն իրադարձությունների հաջորդականությունը և ներկայացնեն դիմումատուի պնդումները հերքող հիմնավոր ապացույցներ<sup>735</sup>:

Եվս մեկ անգամ կարևոր է շեշտել, որ քննությունն արդյունավետ համարելու համար անհրաժեշտ է, որ այն բավարարի հետևյալ չորս միաժամանակյա պահանջները՝ 1) **անկախություն** (independence), 2) **պատշաճություն** (adequacy), 3) **անհապաղ և ողջամիտ ժամկետ** (promptness and reasonable expedition) և 4) **հանրային վերահսկողություն**, ներառյալ՝ տուժողի իրավահաջորդի ներգրավվածություն (public scrutiny and the participation of the next-of-kin):

Այդ մասին հստակ ընդգծված է նաև ԵԽ Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրով<sup>736</sup>: Մասնավորապես.

1) Գործի քննությունը պետք է լինի անկախ, մասնավորապես, երբ կան կասկածներ առ այն, թե ինչպես է զինձառայողը մահացել: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն այս կապակցությամբ նշել է, որ կյանքի իրավունքի դատավարական պաշտպանությունը պետք է ներառի **անկախ քննություն** իրականացնելու որոշակի հնարավորություն, որի նպատակն է պարզել, թե ինչ հանգամանքներում է մահը վրա հասել, և հաստատել, թե ով պետք է պատասխանատվություն կրի<sup>737</sup>: Քննություն իրականացնելու համար **պատասխանատու անձինք պետք է լինեն իրադարձություններում ներգրավված անձանցից անկախ**<sup>738</sup>:

2) Պետության պարտավորության մասն է արդյունավետ պաշտպանության համար **օրենսդրական և վարչական կառուցակարգի ապահովումը, որը ներառում է ապացույցներ հավաքելու համար պատշաճ ընթացակարգերը**՝ պատասխանատվության կարգապահական կամ քրեական բնույթը պարզելու համար<sup>739</sup>:

3) Քննությունը պետք է կատարվի **անհապաղ և ողջամիտ ժամկետում**, մասնավորապես՝ երբ քննությունը վերաբերում է զինձառայողների կողմից ուժի գործադրման

<sup>734</sup> Տե՛ս, Բեքերն ընդդեմ Թուրքիայի (Beker v. Turkey) 2009 թվականի հունիսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 27866/03, կետ 41:

<sup>735</sup> Տե՛ս, Մարինա Ալեքսեյևան ընդդեմ Ռուսաստանի (Marina Alekseyeva v. Russia) 2014 թվականի մարտի 13-ի վճիռը, գանգատ թիվ 22490/05, 121 և 122 կետեր:

<sup>736</sup> Մանրամասն հասանելի է հետևյալ հղումով՝ <https://rm.coe.int/16805cf943>:

<sup>737</sup> Տե՛ս, Սալգինն ընդդեմ Թուրքիայի (Salgin v. Turkey) 2007 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 46748/99, կետ 86:

<sup>738</sup> Տե՛ս, ՄըքԲերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (McKerr v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 112:

<sup>739</sup> Տե՛ս, Քիլինջը և այլք ընդդեմ Թուրքիայի (Kilinc and others v. Turkey) 2005 թվականի սեպտեմբերի 7-ի վճիռը, գանգատ թիվ 40145/98, կետ 41:

հետևանքով առաջացած մահվանը<sup>740</sup>: «Անհապաղ» նշանակում է, որ գործի քննությունը պետք է սկսել մահվան վրա հասնելուց հետո հնարավորին շուտ, և «ողջամիտ ժամկետում» եզրույթը ենթադրում է, որ քննությունը չպետք է անհարկի ձգձգվի: Այն դեպքերում, երբ մահը վրա է հասել ուժի կիրառման հետևանքով, Եվրոպական դատարանը համարել է, որ քննություն իրականացնող մարմինների կողմից անհապաղ քննություն իրականացնելն էական է՝ վերջիններիս օրենքի գերակայության սկզբունքներին հավատարիմ լինելու առումով հանրության վստահությունը պահպանելու, ինչպես նաև անօրինական արարքների շուրջ գաղտնի համաձայնության գալու կամ դրանց նկատմամբ հանդուրժողականության ցանկացած դրսևորում կանխելու համար<sup>741</sup>:

4) Պետք է առկա լինի **քննության կամ դրա արդյունքների նկատմամբ բավարար հանրային վերահսկողություն**<sup>742</sup>՝ ապահովելու համար քննության հաշվետվողականությունն ինչպես գործնականում, այնպես էլ տեսականորեն: Հանրային վերահսկողության նվազագույն պահանջն այն է, որ **տուժողի իրավահաջորդը դատավարության գործընթացում պետք է լինի բավարար չափով ներգրավված**, որպեսզի կարողանա երաշխավորել իր օրինական շահերի պաշտպանությունը<sup>742</sup>:

Այս ամենից բացի՝ գործի քննությունը պետք է լինի նաև **մանրակրկիտ** (thorough): Ըստ Եվրոպական դատարանի՝ իշխանությունները մշտապես պետք է լուրջ ջանքեր գործադրեն՝ պարզելու համար, թե ինչ է տեղի ունեցել, նրանք **չպետք է ապավինեն հապճեպ կամ վատ հիմնավորված հետևությունների՝ գործի քննությունը դադարեցնելու կամ այլ որոշումներ կայացնելու համար**<sup>743</sup>:

Միաժամանակ, պետք է նշել, որ Հայաստանում Ձինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո են: Նրանք գտնվում են հասարակության ուշադրության կենտրոնում, ուստի զինված ուժերում յուրաքանչյուր մահվան դեպքի վերաբերյալ պետք է հանրությանը ճշգրիտ տեղեկատվություն տրամադրվի իրավասու աղբյուրից:

Այս կապակցությամբ կարևոր է հաշվի առնել, որ զինված ուժերում մահվան դեպքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ցանկացած հապաղում կարող է հիմք հանդիսանալ չստուգված աղբյուրներից տեղեկության հրապարակման, ինչն իր հերթին կարող է բացասաբար ազդել հանրային վստահության վրա: **Ձինված ուժերում մահվան յուրաքանչյուր դեպքի վերաբերյալ տեղեկությունների ճշգրիտ և ժամանակին հրապարակումն ունի նաև հանրության շրջանում լարվածության մթնոլորտի ձևավորումը կանխարգելող նշանակություն:**

<sup>740</sup> Տե՛ս, Հյու Ջորդանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Hugh Jordan v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 24746/94, 107 և 108 կետեր:

<sup>741</sup> Տե՛ս, Քելլին և այլք ընդդեմ Մեծ Բրիտանիայի (Kelly and others v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 30054/96, կետ 97:

<sup>742</sup> Տե՛ս, ՄըքԲերն ընդդեմ Մեծ Բրիտանիայի (McKerr v. The United Kingdom) 2001 թվականի օգոստոսի 4-ի վճիռը, գանգատ թիվ 28883/95, կետ 115:

<sup>743</sup> Տե՛ս, Չելիլոֆն ընդդեմ Հունաստանի (Zelilof v. Greece) 2007 թվականի օգոստոսի 24-ի վճիռը, գանգատ թիվ 17060/03, կետ 56:

Այստեղ հատուկ պետք է ընդգծել, որ պաշտպանության և ընդհանրապես անվտանգության ոլորտում պետությունը պետք է հստակ և կշռադատված քաղաքականություն իրականացնի՝ համաչափ կառավարելով տեղեկատվական հոսքերը<sup>744</sup>: Պետության անվտանգության հետ կապված հարցերը բնույթով այնպիսին են, որ պետությունն ինքը պետք է իրադրությունը վերցնի իր ձեռքում՝ թույլ չտալու համար ապատեղեկատվության որևէ դրսևորում: Բանակում տեղի ունեցող դեպքերի հետ կապված պետությունը պետք է լինի հատկապես ուշադիր և գործի օպերատիվ: Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է այդ զգայուն խնդրին հրապարակային իր խոսքում և նշել. «Երբ ինֆորմացիայի հրապարակումը պետական իրավասու մարմինների կողմից հապաղում կամ ուշանում է, ապա առաջանում է վակուում, բաց տարածք, և դա լցվում է ապատեղեկատվությամբ, այսպես ասած՝ «տեղեկատվական աղբով»»: Դրա համար շատ կարևոր է, որ պետությունը ճիշտ քաղաքականություն տանի: Դա կնպաստի պետության մարմինների նկատմամբ վստահության բարձրացմանը: Ճիշտ է որ պետությունն իր ձեռքը վերցնի նախաձեռնությունը, և ապատեղեկատվության զոհը չդառնա և հետագայում ստիպված չլինի հերքում տարածել<sup>745</sup>»:

*Հեղինակը, անհրաժեշտ է՝*

*1. զինված ուժերում մահվան և ինքնավնասման դեպքերի կանխարգելման և ընդհանուր իրազեկվածության բարձրացման ուղղությամբ ձեռնարկել գործուն միջոցներ, այդ թվում՝ զինծառայողների հետ փարվող անհատական հոգեբանական աշխատանքների իրականացման միջոցով,*

*2. մշակել բանակում մահվան և ինքնավնասման դեպքերը կանխարգելելու միասնական հայեցակարգ (ծրագիր, քայլերի հերթականություն), որի շնորհիվ յուրաքանչյուր դեպքի հանգամանքների ուսումնասիրության և այլ դեպքերի հետ համադրության արդյունքում հնարավոր կլինի հասնել խնդրի համակարգային լուծմանը,*

*3. բանակում յուրաքանչյուր մահվան դեպքի մասին հանրությանը առաջնային աղբյուրից տրամադրել ճշգրիտ տեղեկություններ: Տեղեկատվական անվտանգության հարցերում ցուցաբերել նախաձեռնողականություն՝ կանխելով ապատեղեկատվական հոսքերը, առանձնակի ուշադրություն դարձնելով ճիշտ ժամանակին անհրաժեշտ ծավալի տեղեկատվության տրամադրմանը:*

<sup>744</sup> Օրինակ, զինծառայողների մահվան դեպքերից մեկով, երբ անհրաժեշտ էր, որ Պաշտպանության նախարարությունը տեղեկատվությունը շատ արագ հրապարակի (գոնե նախնական տեղեկատվություն ներկայացնի)՝ տևական ժամանակ որևէ հայտարարություն չի տարածել, ինչի արդյունքում կոնկրետ դեպքով լայն տարածում էր ստացել ապատեղեկատվությունը: Դրանից հետո, Պաշտպանության նախարարությունը ստիպված եղավ հերքել կեղծ լուրերը և ներկայացնել պաշտոնական տեղեկատվություն: Մեկ այլ դեպքում, Պաշտպանության նախարարությունը տեղեկատվությունը տարածել էր շատ արագ (զինծառայողների անհայտ կորելու դեպք), ինչը հանգեցրել էր նրան, որ հակառակորդն անմիջապես անցել էր մեր տղաներին հայտնաբերմանը:

<sup>745</sup> <https://fb.watch/b4IVnhH8K9/>

## 2. **Չինված ուժերում բռնության արգելքը**

Պաշտպանության և անվտանգության համակարգում առաջացող խնդիրները (այդ թվում՝ զորքերում կարգապահության, բռնության դեպքերի, կարգապահական մեկուսարանների պահման պայմանների և այլնի հետ կապված) լուծվում են Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատության գործիքակազմի ներքո և մասնագիտական ստորաբաժանման ներգրավմամբ: Եվ հենց դրա համար էլ բանակում բռնության հարցերն առանձին ձևաչափով ներկայացված են հենց Պաշտպանի տարեկան հաղորդումներով: Չինված ուժերում բռնության հետ կապված հարցերը վեր են հանվում Պաշտպանին հասցեագրված բողոքների, ահազանգերի, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների կամ մոնիթորինգային այցերի արդյունքներով:

Մարդու իրավունքների պաշտպանը բռնության ցանկացած դրսևորում համարում է անընդունելի: Պետք է նկատի ունենալ, որ ի տարբերություն մարդու շատ այլ իրավունքների՝ այս արգելքը չի ենթադրում որևէ բացառություն: Այս արգելքից չի թույլատրվում շեղվել նույնիսկ արտակարգ իրավիճակներում՝ պատերազմների կամ դրանց անմիջական վտանգի ժամանակ<sup>746</sup>: Այս սկզբունքային մոտեցումը պայմանավորված է նրանով, որ բռնությունների և ոչ պատշաճ վերաբերմունքի օբյեկտը՝ անձի ֆիզիկական, հոգեբանական և բարոյական անձեռնմխելիությունը, մարդու կարևորագույն արժեքներից է, որը ոչ մի պարագայում չի կարող ենթարկվել որևէ բացասական ազդեցության: Այն չի կարող արդարացվել և հիմնավորվել նույնիսկ պետության ազգային անվտանգության շահերով կամ ահաբեկչության ու հանցավորության դեմ պայքարից թելադրվող անհրաժեշտությամբ: Բռնությունը և ոչ պատշաճ վերաբերմունքն արգելվում է՝ անկախ անձի վարքագծից<sup>747</sup>:

Պետությունը պոզիտիվ պարտականություն ունի կանխել զինված ուժերում բռնության և ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու դեպքերը, իսկ այդպիսիք լինելու դեպքերում՝ իրականացնել արդյունավետ հետաքննություն, հայտնաբերել մեղավորներին և պատժել: Պետության ձեռնարկած միջոցառումները պետք է արդյունավետ լինեն և ծառայեն իրենց նպատակին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանության համաձայն՝ պետությունը պարտավոր է ապահովել, որպեսզի անձը զինվորական ծառայությունն անցնի այնպիսի պայմաններում, որոնք համատեղելի են նրա մարդկային արժանապատվությունը հարգելու հետ,

<sup>746</sup> Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ բռնության դեպքերի առնչությամբ անցկացվել են ծառայողական քննություններ, որոնց արդյունքներով արձակվել են հրամաններ՝ մեղավորներին ենթարկելով կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև դրանց կրկնությունը բացառելու նպատակով տրվել են հանձնարարականներ:

<sup>747</sup> Չինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 10-րդ կետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն զինծառայողներին բռնություններից և ոչ պատշաճ վերաբերմունքից կամ պատժից պաշտպանելու համար: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի առավել խոցելի կատեգորիաներին, ինչպիսիք են, օրինակ, նորակոչիկները (պարտադիր զինծառայողները):

իսկ զինվորական վարժանքների ընթացակարգը և մեթոդները չեն պատճառում նրան ֆիզիկական տառապանք կամ չեն անցնում զինվորական կարգուկանոնի հետ կապված անխուսափելի դժվարությունների չափն ու սահմանը, և որ նման ծառայության պրակտիկ պահանջների հետ մեկտեղ նրա առողջությունը և ինքնազգացողությունը համարժեքորեն պաշտպանված են: Պետության առաջնային պարտականությունն է անձին զինվորական ծառայության զորակոչելու դեպքում նվազագույնի հասցնել նրա առողջությանը սպառնացող ռիսկը, որը կարող է առաջանալ ոչ միայն զինվորական գործողությունների և օպերացիաների բնույթից, այլ նաև մարդկային գործոնի պատճառով<sup>748</sup>:

2021 թվականի ընթացքում Պաշտպանը ստացել է բողոքներ զինծառայողների նկատմամբ ենթադրյալ բռնություն և ոչ պատշաճ վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ:

Մասնավորապես, Հասարակական կազմակերպության ներկայացուցիչը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկություններ է տրամադրել պարտադիր ժամկետային զինծառայողին ծեծի ենթարկելու ու մարմնական վնասվածքներ պատճառելու վերաբերյալ: Նշել է, որ զինծառայողի նկատմամբ զորամասում ցուցաբերվում է խտրական վերաբերմունք: Հասարակական կազմակերպության ներկայացուցիչը խնդրել է Պաշտպանի աջակցությունը նշված դեպքով քրեական գործ հարուցելու և զինծառայողի անվտագությունն ապահովելու նպատակով նրան այլ զորամաս տեղափոխելու հարցերում:

Մարդու իրավունքների պաշտպանը անմիջապես գրություններ է հասցեագրել ՀՀ պաշտպանության նախարարություն և ՀՀ գլխավոր դատախազություն: Բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը մանրամասն պարզաբանումներ է ներկայացրել՝ տեղեկացնելով, որ զինծառայողը հետագա ծառայությունը շարունակելու նպատակով տեղափոխվել է այլ զորամաս: Գլխավոր դատախազությունից ստացվել է տեղեկություն այն մասին, որ զինծառայողի նկատմամբ ենթադրյալ հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար հարուցվել է քրեական գործ, մեղադրանք է առաջադրվել 4 անձի, իրականացվում է բազմակողմանի, օբյեկտիվ ու լրիվ քննություն:

Մեկ այլ բողոքով զինծառայողի հայրը տեղեկացրել է, որ վերադաս հրամանատարը վատ վերաբերմունք է դրսևորում որդու նկատմամբ ու պարբերաբար սպառնում նրան: Արագ արձագանքման շրջանակներում կապ է հաստատվել Ռազմական ոստիկանության ղեկավար կազմի հետ, ներկայացվել խնդիրը և առաջարկվել հրատապ միջոցներ ձեռնարկել: Դրանից հետո, զինծառայողի հայրը լրացուցիչ հայտնել է, որ այցելել է Ռազմական ոստիկանություն, հանցագործության մասին հաղորդում ներկայացրել: Ռազմական ոստիկանությունից էլ տեղեկություն է տրամադրվել, որ ներկայացված հաղորդման կապակցությամբ անմիջապես միջոցներ կձեռնարկվել, իսկ զինծառայողը կտեղափոխվի այլ զորամաս:

<sup>748</sup> Տե՛ս, Չեմբերն ընդդեմ Ռուսաստանի (Chember v. Russia) գործով 2008 թվականի դեկտեմբերի 1-ի վճիռը, գանգատ թիվ 7188/03, 50-րդ և 52-րդ կետեր:

Բռնության, վատ վերաբերմունքի վերաբերյալ Պաշտպանին հասցեագրված բողոքների առկայությունն արդեն իսկ մտահոգիչ է: Մտահոգիչ է հատկապես այն առումով, որ պրակտիկայում չեն դադարում բանակում բռնության և (կամ) ոչ պատշաճ վերաբերմունքի դրսևորումները: Այս չարիքի դեմ հարկավոր է պայքարել կոշտ միջոցներով և օրենքին համապատասխան: Բռնությունը և ոչ պատշաճ վերաբերմունքի դրսևորումները պետք է տեղ չունենան մեր բանակում: Նման արարքները պետք է ունենան զրո հանդուրժողականություն:

*Հետևաբար, անհրաժեշտ է՝*

*1. մեծացնել զինված ուժերում զինծառայողներին բռնություններից և ոչ պատշաճ վերաբերմունքից պաշտպանելու համար կանխարգելիչ միջոցների ձեռնարկման ծավալները,*

*2. բոլոր զորամասերում սպա-հոգեբանի ինստիտուտի զարգացման ներքո գործուն քայլերն ավելացնել զորքերում բռնության դեպքերի նախականիման, կանխման և խափանման նպատակով,*

*3. զինված ուժերում բռնության վերաբերյալ ցանկացած տեղեկություն դարձնել օբյեկտիվ, լրիվ և բազմակողմանի քննության առարկա:*

## ԳԼՈՒԽ 9. ԿԱՆԱՅՔ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

### 1. Կանանց մասնակցության կարևորությունը զինված ուժերում

Կանանց և տղամարդկանց հավասար պայմանների ապահովումը Զինված ուժերում հատկապես կարևոր է, քանի որ պաշտպանության և ընդհանրապես անվտանգության բնագավառում կանայք խոցելի են: Դրան նաև նպաստում է այն, որ հանրության մոտ ձևավորվել է կարծրատիպ, թե բանակը միայն տղամարդկանց միջավայր է, հետևաբար զինվորական ծառայությունն էլ հենց տղամարդկանց համար է: Իրականում, իհարկե դա այդպես չէ:

Հայ ժողովրդի պատմության ընթացքում կանայք միշտ էլ ունեցել են իրենց ուրույն դերը, այդ թվում՝ ամենածանր և պատերազմների ժամանակ: Եվ այսօր էլ անհնար է թերագնահատել կանանց դերը և կարևորությունը զինված ուժերի զարգացման գործում: Հետևաբար, պետությունը պետք է ջանք չխնայի ՀՀ զինված ուժերում կանանց իրավունքների երաշխավորման ուղղությամբ: Ըստ այդմ էլ, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթություններից տարիներ շարունակ մնում են Զինված ուժերում խտրականության արգելքի երաշխավորումը, կին զինծառայողների իրավունքների ապահովումը, նրանց կարգավիճակի ու դերի բարձրացումը:

Առաջնահերթ կարևոր է նշել, որ միջազգային իրավական փաստաթղթերի հետ միասին՝ ներպետական օրենսդրությունը, և առավել ևս՝ Սահմանադրությունը հստակ ամրագրում են կանանց ու տղամարդկանց իրավահավասարության սկզբունքը: Ընդ որում, Սահմանադրությունը հատկապես ընդգծում է, որ, ի թիվս այլնի, պետության քաղաքականության հիմնական նպատակներից է «կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը» (հոդված 86):

Կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման համար Հայաստանը 1993 թվականին վավերացրել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան և կանանց իրավունքներն ամրագրող մի շարք միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի ՀՀ օրենքում, որը, սակայն, կոնկրետ դեպքերում իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման կառուցակարգեր չնախատեսելու պատճառով շարունակում է մնալ չկիրառված: Ավելին, որպես կայուն զարգացման նպատակ է ամրագրված նաև կանանց և տղամարդկանց միջև հավասարության ապահովումը<sup>749</sup>:

<sup>749</sup> Sustainable Development Goals (SDG) N 5, <https://sustainabledevelopment.un.org/sdg5>:



Կանանց նկատմամբ խտրականության բացառման և կանանց ու տղամարդկանց հավասար հնարավորությունների ամրապնդման առումով Պաշտպանը կարևոր է համարում 2019 թվականի սեպտեմբերի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետությունում գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Կառավարության թիվ 1334-Լ որոշումը: Նշված ուղղությամբ պետական միասնական քաղաքականությունն ամրագրող փաստաթղթի ընդունումը պետք է դիտարկել իբրև դրական քայլ՝ հաշվի առնելով դրա արդիականությունն ու տևական ժամանակ բացակայությունը:

Զինված ուժերում կանանց մասնակցությունը նախևառաջ վերաբերում է կանանց՝ զինվորականի մասնագիտության մատչելիության իրավունքին: Պետության պաշտպանությանը մասնակցելը և զինված ուժերին անդամակցելը քաղաքացիությունից բխող իրավունքների և պարտականությունների բաղկացուցիչ մասն է: Զինված ուժերի նման կարևոր պետական ինստիտուտում ներգրավվելու իրավունքից զրկված լինելու պարագայում կանայք և տղամարդիկ կհայտնվեն անհավասար պայմաններում: **Զինված ուժերում ներգրավվածության փորձի բացակայության պարագայում կանայք ավելի քիչ հնարավորություն կունենան արտահայտելու իրենց կարծիքը անվտանգությանն առնչվող խնդիրների վերաբերյալ: Մինչդեռ, Զինված ուժերում կանանց մասնակցությունը մեծ նշանակություն ունի հակամարտությունների կարգավորմանն ու լուծմանը նրանց մասնակցության տեսանկյունից:**

Այսպես, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2000 թվականի թիվ 1325 բանաձևը կարևորում է կանանց դերը հակամարտությունների կանխարգելման և կարգավորման, ինչպես նաև խաղաղաշինության գործում: Այն պետություններին կոչ է անում ապահովել կանանց առավել գործուն մասնակցությունը հակամարտությունների կանխարգելման, կարգավորման և հանգուցալուծման ազգային, տարածաշրջանային և միջազգային ինստիտուտների և մեխանիզմների շրջանակներում որոշումների ընդունմանը բոլոր մակարդակներում: Բանաձևը հաստատում է, որ որոշումների կայացման գործընթացում կանանց մասնակցության բացակայությունը և նրանց նկատմամբ թիրախավորված բռնության տարածվածությունը երկարաձգում են հակամարտությունները, ապակայունացնում ամբողջական տարածաշրջաններ և խոչընդոտում հակամարտությունների խաղաղ կարգավորմանը:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 2-րդ կետում նշվում է, որ ավելի մեծ թվով կանանց անձնակազմում ներգրավելն ու պահելը դարձել է զինված ուժերի կարևորագույն խնդիրներից մեկը:

Կարևոր քայլ է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 197-Լ որոշումը:

Ձինված ուժերում քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության խթանումն ապահովելու նպատակով 2019 թվականի հոկտեմբերին ՀՀ զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման վարչության կազմում ձևավորվել է կին զինծառայողների հետ տարվող աշխատանքների բաժանմունք: Նորից պետք է արձանագրել նման ստորաբաժանման կարևորությունը, որի գործունեության նպատակն է զինված ուժերում կանանց զինվորական ծառայության կազմակերպման և հավասար հնարավորությունների ապահովման վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացումն ու վերլուծումը, բարձրացված հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ առաջարկությունների ներկայացումը: Զորամասերում գործում են նաև կանանց խորհուրդներ, որտեղ կին զինծառայողները կարող են բարձրացնել իրենց հուզող հարցերը<sup>750</sup>: Դա լրացուցիչ խթան կարող է լինել որոշումների կայացման գործում կանանց ներգրավումն ուժեղացնելու առումով:

Մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականից մեկնարկել է «Դարձիր օրինակ» իրազեկման արշավը, որի շրջանակում տեսանյութեր են պատրաստվել ինչպես կուրսանտների, այնպես էլ զինվորական ծառայությունն ընտանիքի հետ հաջողությամբ համատեղող կանանց մասին, որոնք ցուցադրվել են նաև հեռուստատեսությամբ<sup>751</sup>: Պաշտպանը հրապարակել է «Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանություն. Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման իրավական շրջանակ» ձեռնարկը<sup>752</sup>: Ձեռնարկը վերաբերում է Ձինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությանը և կարևոր ու պրակտիկ գործիք է Պաշտպանի կողմից զինծառայողների իրավունքների և ազատությունների, զինված ուժերում կանանց իրավունքների մշտադիտարկման համար: Ձեռնարկի մի ամբողջ բաժին նվիրված է կին զինծառայողներին: Ձեռնարկում մեկտեղվել են զինծառայողների իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային չափանիշներն ու ստանդարտները, ներպետական կարգավորումները, միջազգային և ներպետական դատարանների նախադեպային իրավունքը, ինչը կիրառական նշանակություն կունենա նաև Ձինված ուժերի համար:

Ձինված ուժերում կանանց դերի բարձրացմանը խթանող գործիք է նաև «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի Հանրապետության զինված ուժերում» 2019-2022 թվականների ԵԽ ծրագիրը<sup>753</sup>, որի հիմնական նպատակն է ապահովել, որ Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքները հարգվեն և խթանվեն, ինչպես նաև ընդլայնվի կանանց դերը բանակում: Այս ծրագրի շրջանակում 2021 թվականի ընթացքում շարունակվել է Պաշտպանության նախարարության և Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների անմիջական մասնակցությամբ պատրաստվել և հրապարակվել են տեղեկատվական անիմացիոն

<sup>750</sup> <https://cutt.ly/gONndMD>

<sup>751</sup> <http://set-an-example.tilda.ws/>

<sup>752</sup> Այն մշակվել ու հրապարակվել է Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի աջակցությամբ՝ «Մարդու իրավունքները և կանայք Հայաստանի զինված ուժերում» ծրագրի շրջանակում: Ձեռնարկը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/2PVGQiy>

<sup>753</sup> <https://cutt.ly/eONms5f>

տեսահոլովակներ<sup>754</sup> զինճառայողների սոցիոլական աջակցության, բժշկական օգնության, զինվորական ծառայության գրավչության, զինվորական կրթության հավասար հնարավորությունների ապահովման և զինճառայողների իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների վերաբերյալ: Տեսահոլովակներում հատուկ շեշտադրվում է զինված ուժերում կանանց ներգրավման, առաջխաղացման և հավասար հնարավորությունների ապահովման անհրաժեշտությունը:

## **2. Զինված ուժերի գործունեությանը կանանց ներգրավվածության և առաջխաղացման խնդիրները**

«Ճարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներով, ինչպես նաև միջազգային ու հասարակական կազմակերպությունների կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվում է կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքում լիարժեք ներգրավման անհրաժեշտության հարցը:

Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել զինված ուժերում կին զինճառայողների ներգրավման և առաջխաղացման խնդիրների վերաբերյալ հատուկ հայտարարությամբ<sup>755</sup>, կոնկրետ առաջարկներով պաշտոնական գրություններ ուղարկել Ազգային ժողով ու Պաշտպանության նախարարություն: Առկա ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց<sup>756</sup>, սակայն դեռևս առկա է զինվորական ծառայության պաշտոններում կանանց ցածր ներգրավվածության խնդիր: Չնայած միջազգային և ներպետական իրավական չափորոշիչներին՝ «Ճինված ուժերում փաստացի շարունակվում է նկատվել կանանց նկատմամբ ուղղահայաց (կարիերայի աստիճանների ոչ հավասար մատչելիություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականություն: Խնդիրն այն է, որ կանայք բարդություններ են ունենում թե՛ զինվորական ծառայության անցնելիս (այդ թվում՝ զինվորական մասնագիտություն ընտրելիս), թե՛ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս, թե՛ զինվորական ծառայությունում առաջխաղացման տեսանկյունից<sup>757</sup>:

Զինված ուժերում ներգրավվածության փորձի բացակայության պարագայում կանայք ավելի քիչ են հնարավորություն ունենանում արտահայտելու իրենց կարծիքը անվտանգությանն առնչվող խնդիրների վերաբերյալ: Շատ ժամանակ նրանք ներգրավված չեն զինվորական

<sup>754</sup> Ծրագրի շրջանակներում մշակել և հրապարակվել է 6 անիմացիոն տեսանյութ: Հասանելի են հետևյալ հղումներով՝ <https://vimeo.com/656465951>, <https://www.youtube.com/watch?v=5E1Yc8r-gF0>, <https://www.youtube.com/watch?v=XzbVWgNV6MU&t=1519s> և այլն:

<sup>755</sup> <https://ombuds.am/am/site/ViewNews/2109>

<sup>756</sup> ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների ախտորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական,

[http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf):

<sup>757</sup> Կանանց աշխատանքային իրավունքների խնդիրներին առավել մանրամասն կարելի է ծանոթանալ սույն հաղորդման՝ «Կանանց իրավունքներ» բաժնում:

ստորաբաժանումներում որոշումների կայացմանը: Դրանից բացի, հասարակությունում կա կարծրատիպային վերաբերմունք կին զինծառայողների նկատմամբ, և կանայք բավարար կերպով ներկայացված չեն զինվորական բարձր պաշտոններում:

Ավելին՝ կին զինծառայողները հիմնականում զրկված են առաջխաղացման հնարավորությունից: Կանայք առավել մեծ թիվ են կազմում միայն շարքային կազմի և ավագ ենթասպայական կազմի պաշտոններում, մինչդեռ սպայական կազմում կին զինծառայողների հարաբերակցությունը բավական ցածր է: Կին զինծառայողները բախվում են խոչընդոտների նաև սպայական կոչում ստանալիս: Այս մտահոգության մասին զորամասեր այցերի և առանձնագրույցների ընթացքում մեզ հայտնել են հենց կին զինծառայողները:

Ըստ Պաշտպանության նախարարության ներկայացրած տեղեկությունների՝ 2021 թվականի դրությամբ ՀՀ զինված ուժերի պայմանագրային զինծառայողների ընդհանուր թվաքանակի 9.5%-ը կազմում են կին զինծառայողները: Կին զինծառայողների ընդհանուր թվաքանակում, ըստ պաշտոնային խմբերի դասակարգման, կին զինծառայողների քանակական բաշխվածությունը հետևյալն է. սպայական կազմ՝ 14.3%, ավագ սպայական կազմ՝ 4.7%, կրտսեր սպայական կազմ՝ 9.6%, ավագ ենթասպայական կազմ՝ 34.9%, պայմանագրային կրտսեր ենթասպայական և շարքային կազմերը՝ 50.8%: Կին զինծառայողների թվաքանակը Երևանում տեղաբաշխված զորամասերում կազմում է 34.6%, իսկ մարզերում՝ 65.4%:

Ուշագրավ է, որ 2019 թվականին Ձինված ուժերի պայմանագրային զինծառայողների ընդհանուր թվաքանակի 9.1 %-ը կազմել են կին զինծառայողները, իսկ 2020 թվականին կին զինծառայողները կազմել են 8.5%-ը: Վերոնշյալ վիճակագրությունը վկայում է, որ ՀՀ զինված ուժերում կին զինծառայողների տոկոսային հարաբերակցությունը՝ տղամարդ զինծառայողների համեմատությամբ, շարունակում է մնալ բավական ցածր:

Խնդրի վերաբերյալ պետք է ընդգծել, մասնավորապես, ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակ 5.5-ը, ըստ որի՝ պետք է ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը և առաջնորդության համար հավասար հնարավորությունների ապահովումը քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքում որոշումների կայացման բոլոր մակարդակներում:

Ձինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԹ» կետում նշվում է, որ կին զինծառայողները տղամարդ զինծառայողների նման պետք է պաշտոնեական առաջխաղացման հարցերում ունենան հավասար հնարավորություններ և զինված ուժերում աշխատելիս արժանանան հավասար վերաբերմունքի: Սեռի հիմքով նրանք չպետք է դուրս թողնվեն մասնագիտությունից, բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ տեսակի մասնագիտական գործունեության բնույթով կամ համատեքստով պայմանավորված, սեռը հանդիսանում է իրական վճռորոշ հանգամանք:

Նաև հատկանշական է, որ Ձինված ուժերում կին զինծառայողների ներգրավման բարձրացման անհրաժեշտությանը տեղ է հատկացվել ՀՀ նախագահի 2018 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆՀ-

103-Ա հրամանագրով հաստատված՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի 2018-2024 թվականների արդիականացման ծրագրում» նույնպես, որի 6-րդ նպատակով նախատեսվում է զինվորական ծառայության մեջ կամավորության սկզբունքի հիման վրա կին զինծառայողների ներգրավումն աստիճանաբար ավելացնել՝ սկզբում նյութատեխնիկական ապահովման, այնուհետև՝ մյուս ոլորտներում:

Պաշտպանն արձանագրում է, որ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ ՊՆ թեժ գծով ստացվել է կին զինծառայողների կողմից ներկայացված 3 բողոք, որոնք վերաբերել են զորամասում իրականացվող կազմ-հաստիքային միջոցառումներին, կիրառված կարգապահական տույժին և ոչ կանոնադրային հարաբերություններին: Կին զինծառայողների ներգրավման մասով Պաշտպանության նախարարությունը կարևոր աշխատանքներ է իրականացրել, այդ թվում՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացման մասով<sup>758</sup>: Ավելորդ չէ մեկ անգամ ևս ընդգծել, որ նման աշխատանքները պետք է ունենան շարունակական բնույթ: Եվ կարևոր է, որ կին զինծառայողների ներգրավածությունն ապահովվի ՊՆ և ԶՈՒ ԳՇ բոլոր ստորաբաժանումներում:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1325, ինչպես նաև «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» բանաձևերի տեղայնացումը Հայաստանում լիակատար ապահովելու համար կարևոր է նաև միջազգային լավագույն փորձի դիտարկումը: Օրինակ, վկայակոչման արժանի է Միացյալ Թագավորությունում նշված բանաձևերի տեղայնացման նպատակով ընդունված՝ «Մարդու անվտանգությունը զինվորական գործողությունների ընթացքում» միասնական ղեկավարման փաստաթուղթը (JSP 1325)<sup>759</sup>:

JSP 1325-ն ընդգծում է, որ կանանց պետք է հնարավորություն ընձեռվի իրենց ներդրումն ունենալ հասարակության համար անվտանգության միջոցառումներ իրականացնելիս, քանի որ նրանք բոլորից լավ գիտեն բոլոր վտանգները և սպառնալիքները, որոնց կարող են բախվել: Ակնհայտ է, որ առանց կանանց մասնակցության՝ չի կարող լավ կազմակերպվել նրանց պաշտպանությունը: Բացի այդ, անհրաժեշտ է իրականացնել խաղաղ պայմաններում և հակամարտությունների ժամանակ գենդերային դինամիկայի վերլուծություն, որը հնարավորություն կտա զինվորական ծրագրեր կազմողներին ավելի լավ հասկանալ հակամարտության մեջ գտնվող հասարակություններին՝ նկատի ունենալով, որ պետությունները, որտեղ կանայք և տղամարդիկ ունեն հավասար հնարավորություններ, ավելի ապահով են և առավել քիչ են ներգրավվում հակամարտությունների մեջ: Զինվորական ծրագրեր կազմողները կարող են ավելի լավ պատկերացում ունենալ բնակչության կարիքների վերաբերյալ, եթե օգտագործեն տվյալ հասարակությունում սեռային և տարիքային տարբերակվածության վերաբերյալ տվյալներ: Այդ

<sup>758</sup> Մանրամասն տե՛ս նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ, 1018-2021 էջեր:

<sup>759</sup> <https://www.gov.uk/government/publications/human-security-in-military-operations-jsp-1325>

տվյալների պատշաճ հավաքագրումը, օգտագործումը և վերլուծությունը ծրագրեր կազմողներին հնարավորություն է տալիս առավել լավ կազմակերպել քաղաքացիական բնակչության պաշտպանությունը:

JSP 1325-ը նշում է, որ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերի տեղայնացման առաջին քայլը իրավիճակի վերլուծությունն է, որի նպատակով անհրաժեշտ է իրականացնել՝

**1) տվյալների հավաքագրում և վերլուծություն ըստ խմբերի** (սեռ, տարիք, էթնիկ խումբ և այլն)՝ հասկանալու համար օրենսդրական բացերը և խնդիրները,

**2) գենդերային զգայունության ցուցիչների սահմանում** (չափեր, թվեր, փաստեր, կարծիքներ և այլն),

**3) գործնական կարիքների գնահատում** (հասարակության մեջ կանանց և աղջիկների դերով պայմանավորված),

**4) մասնակցության տվյալների հավաքագրում** (հասարակության քարտեզագրում, ինտերակտիվ ներկայացումներ, գործողությունների պլանավորում, նպատակաուղղված խմբային քննարկումներ և այլն):

Այս առումով հատուկ կարևորություն ունեն կին զինձառայողների իրավունքների խախտումների վերաբերյալ **վաղ նախազգուշացման ցուցիչները** (քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային, ենթակառուցվածքների, տեղեկատվական, զինվորական կամ անվտանգության, առողջության, կրթական, իրավական)՝ առանց որոնց չափազանց բարդ կլինի բացահայտել գենդերային անհավասարությանը նպաստող պայմանները և պայքարել դրանց վերացման դեմ:

Բացի դրանից, «Կանայք զինված ուժերում. հավասարության խթանում, գենդերային հիմքով բռնության վերացում» ԵԽԽՎ-ի 2016 թվականի թիվ 2120 բանաձևի 6-րդ կետով Եվրոպայի խորհրդի անդամ պետություններին ներկայացվում են հստակ առաջարկություններ:

*Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի առաջարկությունները, անհրաժեշտ է.*

*1. հանրային իրազեկումներով ընդգծել կնոջ դերն ու կարևորությունը Ձինված ուժերում (ներառյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով կանանց զորամասային առօրյան լուսաբանող տեղեկատվության ավելացմամբ), փոխել մտածողությունը հրամանատարական մակարդակներում և այլն,*

*2. կատարել ուսումնասիրություններ (այդ թվում՝ հարցումների միջոցով)՝ «Ձինված ուժերում ընդգրկված իգական սեռի ներկայացուցիչների՝ ծառայության անցնելու, այն շարունակելու կամ դադարեցնելու դրդապատճառները պարզելու նպատակով,*

*3. կանանց համար հասանելի դարձնել «Ձինված ուժերի բոլոր պաշտոնները բոլոր տեսակի զորքերում,*

*4. միջոցներ ձեռնարկել կանանց հավաքագրելու և նրանց այն դերերում ներգրավելու ուղղությամբ, որոնցից նրանք նախկինում դուրս են թողնվել, դիտարկել այդ մասնագիտությունների համալրման ժամանակ կիրառված ֆիզիկական չափանիշները և փորձնական ծրագրերի*

նպատակահարմարությունը՝ կանանց համալրումն այդ մասնագիտություններում խթանելու նպատակով,

5. հասկանալու համար օրենսդրական բացերը և խնդիրները՝ իրականացնել գենդերային տվյալների հավաքագրում ու վերլուծություն ըստ խմբերի, սահմանել գենդերային զգայունության ցուցիչներ, կատարել գործնական կարիքների գնահատում և մասնակցության տվյալների հավաքագրում, մշակել կին զինծառայողներ իրավունքների խախտումների վերաբերյալ վաղ նախազգուշացման ցուցիչներ,

6. աջակցել զորամասերի կին զինծառայողների խորհուրդների գործունեությանն ու կարողությունների զարգացմանը:

### **3. Զինված ուժերում կանանց իրավունքների օրենսդրական երաշխիքները**

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման՝ Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ամենօրյա աշխատանքի կարևոր մասն են կազմում կին զինծառայողների իրավունքների հետ կապված հարցերը: Կանանց իրավունքների պաշտպանությունը զինված ուժերում երաշխավորելու ամենակարևոր քայլերից մեկը զինվորական օրենսդրությամբ համապատասխան երաշխիքների ամրագրումն է:

Չնայած ՊՆ և ԳՇ իրավասու ստորաբաժանումները կին զինծառայողների իրավունքների ապահովման ուղղությամբ կատարել են որոշակի աշխատանք՝ այդուհանդերձ կան օրենսդրական խոչընդոտներ, որոնք Զինված ուժերում հանգեցնում են կանանց իրավունքների ոտնահարումների:

Նախ, օրենսդրությունը հիմնականում սեռով պայմանավորված չեզոք (gender-neutral) է, սակայն հստակ երաշխիքների պակասը (նաև բացակայությունը) բերում է նրան, որ գործնականում ոչ միշտ են հաշվի առնվում սեռային առանձնահատկությունները Զինված ուժերում: Սա կին զինծառայողներին հաճախ է կանգնեցնում խոչընդոտների առջև: Օրենքը պետք է լրացուցիչ երաշխիքներ նախատեսի զինվորական ծառայություն անցնող կանանց համար:

Աշխատանքային իրավունքների սահմանափակման դեպքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք հիմնականում առաջանում են կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում: Ուստի, կին զինծառայողների իրավունքներն առավել արդյունավետ պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է կատարել մի քանի օրենսդրական փոփոխություններ:

Այսպես, արձանագրվել է օրենսդրական խնդիր, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ իգական սեռի ներկայացուցիչների զինվորական հաշվառման համար:

ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1269-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 6-րդ կետի համաձայն՝ զինվորական հաշվառման վերցվում են նաև 18 տարին լրացած և զինվորական մասնագիտություն ստացած կամ պայմանագրային զինվորական

ծառայություն անցնելու համար դիմած, ինչպես նաև *զինվորական հաշվառման ենթակա մասնագիտություններ ունեցող* իգական սեռի քաղաքացիները:

Մինչդեռ, որևէ իրավական ակտում **հրապարակված չեն, թե որոնք են իգական սեռի քաղաքացիներին հասանելի զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունները**, ինչը կարող է խոչընդոտ հանդիսանալ զինվորական հաշվառման նպատակով իգական սեռի քաղաքացիների դիմելու և հետագայում զինվորական ծառայություն անցնելու համար:

**Կանանց զինվորական ծառայության խրախուսման տեսանկյունից կարևոր կլինի նաև ընդհանրապես ընտանեկան կյանքի առանձնահատկությունների հաշվառմամբ օրենսդրության վերանայումը:**

Օրինակ՝ համատեղ ծառայության բավարար օրենսդրական երաշխիքներ առկա չեն զինծառայող և քաղաքացիական ծառայող, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսինների համար:

Միևնույն ժամանակ, առկա չեն օրենսդրական երաշխիքներ պայմանագրային զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսնուն (կնոջը) նրա հետ ծառայության նոր վայր տեղափոխելու, ինչպես նաև տարբեր համակարգերում ծառայող ամուսիններից մեկին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում մյուս ամուսնուն հնարավորին մոտ զորամասում ծառայության տեղափոխելու վերաբերյալ<sup>760</sup>:

**Նախատեսված չէ նաև զինծառայողին մինչև վեց ամիս ժամկետով վերապատրաստման գործուղելու դեպքում զինծառայող հանդիսացող նրա ամուսնուն (կնոջը) նրա հետ գործուղելու կամ դրա անհնարինության դեպքում՝ չվճարվող արձակուրդ տրամադրելու հնարավորություն:**

Ամուսինները ստիպված են ընտրություն կատարել՝ կամ հրաժարվել վերապատրաստման գործուղումից, կամ վերապատրաստման գործուղման ժամանակահատվածում բնակվել առանձին կամ վերապատրաստման գործուղվող զինծառայողի ամուսինը (կինը) ստիպված է ազատվել զինվորական ծառայությունից, որպեսզի ամուսնու (կնոջ) հետ միասին բնակվի:

Այսպես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի մեկնաբանության համաձայն՝ մինչև վեց ամիս ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ Հայաստանի Հանրապետության կամ այլ

<sup>760</sup> Այստեղ հատկանշական է Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «Է» կետը, որի համաձայն՝ զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի համար կարևոր է, որպեսզի նրանք հնարավորության սահմաններում կարողանան կապ պահպանել իրենց մտերիմների, այդ թվում՝ հարազատների և զուգընկերոջ հետ: Անդամ պետությունները պետք է համապատասխան պայմաններ ստեղծեն, որպեսզի զինծառայողներն օգտվեն այս հատուկ իրավունքից:



պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու դեպքում պայմանագրային զինծառայողի զինվորական պաշտոնը պահպանվում է:

Մինչդեռ, նշված օրենքով նախատեսված չեն բավարար երաշխիքներ վերապատրաստման գործուղվող զինծառայողի և նրա ամուսնու (կնոջ) համատեղ բնակվելու համար: Խնդիրն այն է, որ օրենքով սահմանված չէ նշված դեպքերում զինծառայողի հետ զինծառայող ամուսնուն (կնոջը) վերապատրաստման գործուղելու հնարավորության դիտարկումը, ինչպես նաև սահմանված չէ դրա անհնարինության դեպքում՝ գործուղվող զինծառայողի ամուսնուն (կնոջը) չվճարվող արձակուրդ տրամադրելու հնարավորություն:

Զինվորական օրենսդրության ուսումնասիրությամբ պարզվել է, որ **առկա չեն խրախուսական նորմեր այն կին զինծառայողների համար, ովքեր ունեն մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չեն օգտվել**<sup>761</sup>: Խրախուսական նորմերի բացակայությունը կին զինծառայողների ծառայության վերադառնալու որոշում կայացնելու համար կարող է խոչընդոտ հանդիսանալ: Մինչդեռ, պետության քաղաքականություններից է նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց աշխատանքի վերադարձնելը, որի նպատակով նաև նախատեսված է մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության իրավունք<sup>762</sup>:

Խրախուսական նորմերի բացակայությունը գործնականում առաջացնում է խնդիրներ: Օրինակ, նախկինում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով կին զինծառայողը տեղեկացրել էր, որ խնամքին ունի 1 տարեկան 8 ամսեկան երեխա, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից ամբողջությամբ չի օգտվել և իր ցանկությամբ վերադարձել է աշխատանքի: Նշել էր, որ զորամիավորման կապի ստորաբաժանումներում զորամասի տարածքից հեռու անցկացվելու է մարտավարական-մասնագիտական զորավարություն, որին զորամասի անձնակազմի հետ որպես կապավոր նախատեսվել է ներգրավել նաև իրեն, որի դեպքում երեխան կմնա առանց խնամքի: Հավելել էր, որ նշված խնդրի մասին զեկուցել է վերադաս հրամանատարին և խնդրել երեխայի խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված՝ իրեն չներգրավվել զորավարություններին, սակայն մերժում էր ստացել: Չնայած տվյալ պարագայում զինծառայողին զորավարությունների ընդգրկելու համար օրենսդրական սահմանափակումների բացակայությանը՝ արագ արձագանքման

<sup>761</sup> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կին զինծառայողին *իր ցանկությամբ* տրվում է երեխայի խնամքի համար արձակուրդ՝ մինչև երեխայի երեք տարին լրանալը, որը նա կարող է օգտագործել լրիվ կամ մաս-մաս: Երեխայի խնամքի համար տրված արձակուրդի ընթացքում կին զինծառայողի ծառայության տեղն ու պաշտոնը պահպանվում են:

<sup>762</sup> «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 4.2-րդ մաս:

շրջանակներում Պաշտպանի աջակցությամբ խնդիրը կարգավորվել էր՝ հաշվի առնելով երեխայի խնամքի անհրաժեշտությունը:

Մեկ այլ խնդիր. «**Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը հնարավորություն չի տալիս երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հաշվի առնել հերթական զինվորական կոչում շնորհելու համար:**

Սա այն խոչընդոտներից է, որի պատճառով կին զինծառայողները բավարար ներկայացված չեն բարձր պաշտոններում և հիմնականում զրկված են առաջխաղացման հնարավորությունից: Բացի այդ, նշված սահմանափակման հետևանքով կին զինծառայողները կարող են կանգնել մի կողմից՝ ընտանիք և երեխաներ, մյուս կողմից՝ աշխատանք և աշխատանքում առաջընթաց ունենալու երկընտրանքի առաջ:

Մարդու իրավունքների պաշտպանը տարեկան հաղորդումներում մշտապես բարձրացրել է կին զինծառայողներին հատկացվող համազգեստի տրամադրման ժամկետների հարցը և խնդրահարույց համարել նույն ծառայությունն իրականացնող կին և տղամարդ զինծառայողներին տրամադրվող իրային բավարարման ժամկետների տարբերությունը (կին զինծառայողներն ավելի քիչ հաճախականությամբ են զինվորական համազգեստ ստանում, քան տղամարդ զինծառայողները):

Սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ինչ միջոցներ են ձեռնարկվել նույն գործառույթներն իրականացնող զինծառայողների (կանանց և տղամարդկանց) համար համազգեստի տրամադրման միասնական և ոչ տարբերակված ժամկետներ սահմանելու ուղղությամբ: Ողջունելի է Պաշտպանության նախարարության պարզաբանումն առ այն, որ ՀՀ կառավարության 14.10.2021 թվականի թիվ 1669-Ն որոշմամբ փոփոխության է ենթարկվել ՀՀ զինված ուժերի կին զինծառայողներին իրային ունեցվածքով ապահովման N 4 չափաքանակը, որով առանձին իրային միջոցների տրման ժամկետները կրճատվել են:

Բացի այդ, 2015 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1457-Ն որոշման ուսումնասիրությամբ պարզվել է, որ **հղի կին ծառայողների համար հատուկ հանդերձանք նախատեսված չէ:** Մինչդեռ, հղի կանանց համազգեստի հարմարավետության տեսանկյունից, հաշվի առնելով նաև այլ երկրների փորձը (օրինակ՝ Միացյալ Թագավորության) ճիշտ կլինի նրանց համար նախատեսել հատուկ համազգեստ:

Վերը նշված խնդիրները և դրանց լուծման եղանակները տարիներ շարունակ բարձրացվել են Մարդու իրավունքների պաշտպանի ինչպես տարեկան հաղորդումներով, այնպես էլ Պաշտպանության նախարարության և ԶՈՒ Գլխավոր շտաբի հետ քննարկումների ժամանակ: Բացի այդ, նկարագրված խնդիրների ու լուծումների մասով Պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ<sup>763</sup> և պաշտոնական գրություններ են հասցեագրվել Ազգային

<sup>763</sup> <https://ombuds.am/am/site/ViewNews/2109>

Ժողով, այդ թվում՝ ոլորտային հանձնաժողովներին, խմբակցություններին, ինչպես նաև Պաշտպանության նախարարություն:

*Ուստի, հաշվի առնելով վերագրյալը, առաջարկվում է՝*

1. հրապարակել զինվորական հաշվառման ենթակա մասնագիտությունները, որոնք ունեցող իգական սեռի ներկայացուցիչները կարող են դիմել զինվորական հաշվառման համար,

2. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին ծառայության նոր վայր տեղափոխելու դեպքում նրա հետ ծառայության նոր վայր է տեղափոխվում նաև նույն զորամասում քաղաքացիական հաստիք զբաղեցնող նրա ամուսինը (կինը): Դրա անհնարինության դեպքում ծառայության նոր վայր տեղափոխումը չի կատարվում: Սահմանել նաև, որ տարբեր համակարգերում ծառայող ամուսինները ծառայության են նշանակվում միմյանց հնարավորինս մոտ զորամասերում, որպեսզի կարողանան միասին բնակվել,

3. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում սահմանել, որ զինծառայողին վերապատրաստման գործուղելիս հնարավորության դեպքում նրա հետ վերապատրաստման է գործուղվում նրա զինծառայող ամուսինը (կինը), անհնարինության դեպքում՝ վերջինիս տրամադրվում է չվճարվող արձակուրդ ստանալու հնարավորություն,

4. զինվորական օրենսդրությամբ խրախուսական նորմեր նախատեսել մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն ունեցող, սակայն ծառայելու նպատակով այդ արձակուրդից իրենց ցանկությամբ չօգտված կին զինծառայողների համար, որպեսզի նրանք կարողանան ծառայությունը համատեղել երեխայի խնամքի հետ,

5. օրենսդրական փոփոխությամբ վերացնել «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորմամբ սահմանված՝ երեխայի խնամքի համար արձակուրդի ժամանակահատվածը հերթական զինվորական կոչում շնորհելու համար հաշվի չառնելու սահմանափակումը,

6. հղի կին ծառայողների համար նախատեսել հատուկ հանդերձանք:

## **ԳԼՈՒԽ 10. ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **1. Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը**

Զինձառայողներն ունեն առողջության և հիգիենայի համապատասխան պայմաններով բնակության վայր ունենալու իրավունք: Դա ամրագրված է նաև միջազգային իրավական չափորոշիչներով<sup>764</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես կարևորել է զինձառայողների բնակարանային ապահովության հարցերը: Բնակարանային ապահովության հետ կապված խնդիրների լուծումը խթան կհանդիսանա Զինված ուժերի նկատմամբ դրական վերաբերմունքի և ծառայության գրավչության բարձրացման գործում:

Ավելին, հաշվետու տարում Պաշտպանի ներկայացուցիչների կողմից զորամասեր իրականացված այցերի ընթացքում, երբ նաև հատուկ ուշադրություն է դարձվել սպաների կողմից բարձրացված խնդիրներին, արձանագրվել են հիմնականում 3 խոշոր խումբ խնդիրներ, որոնք օր առաջ չլուծելը էական ազդեցություն կունենա Զինված ուժերի զարգացման գործընթացի վրա: Նշված 3 խմբերից մեկը վերաբերում է բնակարանային ապահովման հետ կապված խնդիրներին:

2021 թվականին Պաշտպանը շարունակել է ստանալ զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովման հետ կապված մեծ թվով բողոքներ: Վստահաբար կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ամենախոցելի սոցիալական հիմնախնդիրներից շարունակում է մնալ զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովության իրավունքի իրացումը:

2021 թվականի ընթացքում բնակարանային ապահովման վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները հիմնականում վերաբերել են 1) ծառայողական բնակարանների կամ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման հետ կապված խնդիրներին, 2) նախկին զինձառայողներին բնակելի տարածությունից հանելուն, 3) որպես բնակարանային պայմանների կարիքավոր հաշվառված նախկին զինձառայողների և զոհված (մահացած) զինձառայողների ընտանիքների բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալուն, 4) հիփոթեքային վարկավորման հետ կապված խնդիրներին, 5) բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված անձանց գործերը քննարկելիս բնակարանի տրամադրումը մերժելուն, 6) այլ զորքերի և ծառայությունների (օրինակ՝ քրեակատարողական) անդամների բնակարանային ապահովման խնդիրներին, 7) վարժական հավաքների մասնակիցներին

<sup>764</sup> Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 62-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի յուրաքանչյուր անդամ ունի համարժեք ստանդարտներին համապատասխանող, առողջության և հիգիենայի հիմնական պահանջները բավարարող բնակության վայր ունենալու իրավունք:

վարձակալության փոխհատուցում տրամադրելու գործընթացում առաջացող բարդություններին և այլն: Միևնույն ժամանակ, կան նաև այնպիսի հարցեր, որոնց վերաբերյալ թեև նոր բողոքներ չեն ստացվել, սակայն նախկինում արձանագրված խնդիրները մնում են չլուծված: Այսպես.

**Ծառայողական բնակարանները կոմունալ ենթակառուցվածքներով չապահովելու խնդիր:** Դրական է այն, որ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում զինծառայողների համար հանձնվել է 29 բնակարանով մեկ բնակելի շենք Սյունիքի մարզի Կապան քաղաքում, իսկ Տավուշի մարզի Այգեձոր համայնքում շուտով շահագործման կհանձնվի 20 բնակարանով բնակելի ևս մեկ շենք: «Կարմրաքար» զինավանում նորոգվել է սպայական հանրակացարանային մասնաշենքը, որը բաղկացած է 24 բնակարանից:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի աշխատակազմի մասնագիտացված ստորաբաժանման՝ Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժնի ուսումնասիրությունները վկայում են, որ ներկայում չի կարելի ներկայացնել պնդում այն մասին, որ Զինված ուժերում այս խնդիրը դեռևս առկա չէ: Սա դինամիկ գործընթաց է, որը պայմանավորված է պարբերական իրականացման անհրաժեշտությամբ: Ասվածը հատկապես ընդգծվում է նրանով, որ բնակարանային ապահովման հարցը Զինված ուժերում ամենախոցելի և զինծառայողներին հուզող ամենակարևոր խնդիրներից է:

**Վարձակալության գումարի փոխհատուցում չտրամադրելու և այլ խնդիրներ:** Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով արձանագրվել էր զինվորական ծառայության վայրից 30 կիլոմետր շառավղով վարձակալած բնակարանում հաշվառված լինելու պատճառաբանությամբ զինծառայողին վարձակալած բնակարանի դիմաց դրամական փոխհատուցում չտրամադրելու խնդիր:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրային զինծառայողները ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու դեպքում ապահովվում են ծառայողական բնակարաններով: Ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք է համարվում ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը: Ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովվելու դեպքում այլ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց պայմանագրային զինծառայողներին վճարվում է դրամական փոխհատուցում՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և չափերով:

Այս կապակցությամբ պետք է նկատի ունենալ, որ զինծառայողին դրամական փոխհատուցում տրամադրվում է բնակարան վարձակալելու նպատակով, **իսկ օրենքի վերը նշված սահմանափակման տրամաբանությունից բխում է, որ փոխհատուցումը չի տրամադրվում, եթե զինծառայողն ունի մշտական (փաստացի) հաշվառման վայր և այնտեղ չի բնակվում վարձակալությամբ:** Հետևաբար, եթե զինծառայողը չունի սեփականության իրավունքով բնակելի

տարածություն, ունի մշտական (փաստացի) հաշվառման վայր, սակայն այնտեղ բնակվում է վարձակալությամբ, ապա նրան պետք է տրամադրվի ծառայողական բնակարան կամ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցում:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ զինծառայողներին ծառայողական բնակարաններով ապահովելու կամ փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ բողոքներ 2021 թվականի ընթացքում չեն ստացվել:

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով նաև արձանագրվել էր, որ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ 2019 թվականի օգոստոսի 29-ին կատարվել է փոփոխություն, որի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցման վճարումը **շարունակելու** դեպքում ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանը վարձակալած բնակարանում հաշվառված զինծառայողների վրա չի տարածվում: Նշվել էր, սակայն, որ նույն բացառությունը նախատեսված չէ վարձակալության դիմաց փոխհատուցումը **նշանակելիս**: Մասնավորապես, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման հավելվածով նախատեսված կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից չի օգտվում այն շահառուն, ով ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից (համայնքից), իսկ բազմաբնակավայր համայնքի դեպքում՝ տվյալ բնակավայրից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ ունի մշտական բնակության հաշվառում կամ սեփականության իրավունքով բնակելի տարածություն:

Հաշվի առնելով ներկայացված վերլուծությունը, ինչպես նաև Կառավարության որոշմամբ արդեն իսկ կատարված փոփոխությունը՝ տրամաբանական է, որ վարձակալած բնակարանում հաշվառված զինծառայողների համար ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանի մասով բացառությունը պետք է գործի ի սկզբանե՝ վարձակալության գումարի փոխհատուցում նշանակելիս: Արդյունքում, առաջարկվել էր Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և նախատեսել, որ վարձակալության գումարի փոխհատուցում նշանակելիս վարձակալած բնակարանում հաշվառված զինծառայողների նկատմամբ չի տարածվում մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանը: Այնուամենայնիվ, առաջարկը դեռևս չի իրացվել:

Պայմանագրային զինծառայողներին վարձակալության դիմաց փոխհատուցում չտրամադրելու հետ կապված արձանագրվել է մեկ այլ խնդիր ևս:

Մասնավորապես, զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ վարձակալության դիմաց փոխհատուցում տրամադրելիս օրենքը նախատեսում է մեխանիկական ընթացակարգ: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի

65-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ծառայության վայրում բնակարանային պայմանների բարելավման կարիք է համարվում ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալը: Կառավարության վերաբերելի որոշումն էլ իր հերթին, ինչպես նշվեց, սահմանում է, որ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքից չի օգտվում այն շահառուն, ով ծառայության անցկացման վայրի վարչատարածքային միավորից (համայնքից), իսկ բազմաբնակավայր համայնքի դեպքում՝ տվյալ բնակավայրից մինչև 30 կիլոմետր հեռավորությամբ ունի մշտական բնակության հաշվառում կամ սեփականության իրավունքով բնակելի տարածություն:

Հարկ է նկատի ունենալ, որ մի կողմից՝ պետությունը կարիքավոր պայմանագրային զինծառայողների համար նախատեսում էր բնակարանային պայմանների բարելավման հնարավորություն<sup>765</sup>: Մյուս կողմից՝ բնակության (հաշվառման) վայրից 30 կիլոմետր և ավելի հեռավորությամբ ծառայության անցկացման վայրում մշտական բնակելի տարածություն չունեցող զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է բնակելի տարածություն, իսկ դրա անհնարինության դեպքում՝ վարձակալության գումարի փոխհատուցում:

Մինչդեռ, պրակտիկայում առաջանում են խնդիրներ: Մասնավորապես, ծառայության վայրից 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ հաշվառման վայր չունենալը տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տալիս: Իրավական կարգավորումը տառացի մեկնաբանելու պարագայում ստացվում է, որ ծառայության վայրից 30 կիլոմետր հեռավորությամբ ցանկացած՝ նույնիսկ մեկ քառակուսի մետր տարածությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն ունենալու դեպքում զինծառայողներին չի կարող հատկացվել անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ վարձակալության գումարի փոխհատուցում:

Ստացվում է, որ պետությունը պայմանագրային զինծառայողների համար սահմանել է որոշակի սոցիալական արտոնություն՝ կապված իրենց ծառայության բնույթով, և այդ արտոնությունը պատշաճ կիրառելու տեսանկյունից անհրաժեշտ է մեկնաբանել և ճիշտ ընկալել դրա տրամաբանությունն ու նպատակը, որպեսզի նշված արտոնությունը փաստացի հնարավոր լինի տրամադրել իրականում դրա կարիքն ունեցող զինծառայողներին: Հետևաբար, Կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված իրավակարգավորման բուն էությունը ոչ թե ֆորմալ առումով սեփականություն կամ հաշվառում ունենալն է, այլ սեփականություն իրավունքով պատկանող կամ հաշվառման վայրի տարածությունում զինծառայողների բնակվելու **իրական** հնարավորություն չունենալու դեպքում նրանց սոցիալական արտոնություն տրամադրելը:

---

<sup>765</sup> Ներկայում գործում է մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագիր:

Նախկինում Պաշտպանին հասցեագրված բողոքների քննարկման արդյունքում արձանագրվել է, որ լինում են դեպքում, երբ զինծառայողը **փաստացի** ունի սեփական տարածք, որը, սակայն, փոքր է կամ ոչ բարվոք վիճակում և օբյեկտիվորեն հնարավոր չէ այնտեղ բնակվել, սակայն օրենքի մեխանիկական կարգավորման պատճառով զինծառայողը փոխհատուցում չի ստանում (քանի որ գտնվում է, օրինակ, զորամասից օրենքով նախատեսված 30 կմ սահմաններում):

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով առաջարկվել էր նախատեսել պայմանագրային զինծառայողներին սեփականության իրավունքով ֆորմալ պատկանող բնակելի տարածություններում կամ հաշվառման վայրի բնակարաններում բնակվելու իրական հնարավորությունը պարզելու և դրանով պայմանավորված էլ վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելու հարցը քննարկելու կառուցակարգ (մեխանիզմ)՝ անհրաժեշտության դեպքում կատարելով նաև օրենսդրական փոփոխություններ:

Հատկանշական է, որ նշված առաջարկի կատարման ուղղությամբ միջոցներ դեռևս չեն ձեռնարկվել:

Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ ինչպես այս, այնպես էլ տարեկան հաղորդմամբ արձանագրված մյուս խնդիրների կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականին հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ, ինչին զուգահեռ նաև խնդիրների լուծման առաջարկներով գրություններ է հասցեագրել Ազգային ժողովի նախագահին, մշտական հանձնաժողովներին, առանձին պատգամավորներին և Պաշտպանության նախարարին:

Հատկանշական է, որ վերը նկարագրված խնդրի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը, ըստ էության, պարզապես պատասխանել է, որ խնդրի լուծումը հնարավոր է «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելով:

Պաշտպանն ընդգծում է, որ օրենսդրական մեխանիզմների ներդրման, մշակման, փոփոխման անհրաժեշտությունը հասկանալի է, հատկապես, որ հենց Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկում է նշվել խնդրի լուծման ուղղությամբ միջոցներ ձեռնարկելիս, անհրաժեշտության դեպքում, օրենսդրական փոփոխություններ կատարելու հարցը: Այս պարագայում անհասկանալի է Պաշտպանության նախարարության նմանօրինակ պատասխանը, քանի որ օրենսդրական նախաձեռնության իրավունք ունեցող Կառավարության կազմում ընդգրկված մարմնից առնվազն ակնկալվում էր ստանալ տեղեկություն այն մասին, թե խնդրի կարգավորման ուղղությամբ ինչ միջոցներ են ձեռնարկվել (քննարկվել է արդյոք խնդիրը, դրա լուծման ուղիները, հնարավորությունները, տարբերակները, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը և այլն): Առաջարկների վերաբերյալ Ազգային ժողովից որևէ պատասխան չի ստացվել:

Նախորդ տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել էր վարձակալության գումարի փոխհատուցման հետ կապված մեկ այլ խնդիր ևս:



Այսպես, քաղաքացին դիմել է Պաշտպանին և տեղեկացրել, որ անցնում է զինվորական ծառայություն և բնակվում զորամասի տեղակայման վայրի հարևանությամբ գտնվող համայնքում: Չինծառայողը հայտնել է, որ փաստացի զորամասի և իր բնակության վայրի միջև հեռավորությունը 30 կիլոմետրից ավելի է, սակայն անհատույց օգտագործման իրավունքով բնակարան ստանալու իր դիմումը մերժվել է:

Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչների հետ տեղի ունեցած քննարկման արդյունքում պարզվել է, որ խնդիրը կայանում է գործնականում 30 կիլոմետր շառավիղը հաշվարկելու մեթոդաբանության մեջ: Մասնավորապես, ըստ ստացված պարզաբանումների՝ պրակտիկայում զորամասի և զինծառայողների բնակության կամ հաշվառման վայրի միջև հեռավորությունը պարզվում է ոչ թե ճանապարհի փաստացի կիլոմետրերի հաշվարկով, այլ հիմք է ընդունվում վարչական շրջանների փոստային կենտրոնների միջև ընկած հեռավորությունը:

Գործնականում այսպիսի մեխանիկական մոտեցման անթույլատրելիությունը հասկանալու համար կարելի է ներկայացնել ընդամենը մեկ օրինակ: Այսպես, «Google» մասնավոր ընկերության քարտեզով կատարված ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ճանապարհների տարբերություններից կախված՝ Երևան և Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքների կենտրոնների միջև ընկած առավելագույն հեռավորությունը գրեթե 24 կիլոմետր է: Միևնույն ժամանակ, Երևան քաղաքում գտնվող Պաշտպանության նախարարության վարչական շենքից մինչև Վաղարշապատ քաղաքի, օրինակ, Անդրանիկի փողոց ընկած առավելագույն հեռավորությունը կազմում է գրեթե 34 կիլոմետր: Այսպիսի տարբերություններ են արձանագրվում նաև փոստային կենտրոններով հաշվարկն իրականացնելու պարագայում:

Այսպիսով, ստացվում է, որ փոստային կենտրոնների միջև ընկած հեռավորությունը հիմք ընդունելու պարագայում որոշ զինծառայողներ զրկվում են անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ վարձակալության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից՝ չնայած փաստացի ծառայության վայրի զորամասից 30 կիլոմետր շառավիղով սեփականության իրավունքով բնակարան կամ մշտական հաշվառման վայր չունենալուն:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ բնակարանի վարձակալության դիմաց փոխհատուցում տրամադրելու աջակցության շահառու լինելու հարցը քննարկելիս և ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալու հանգամանքը որոշելիս հիմք ընդունել ոչ թե փոստային կենտրոնների, այլ զինծառայողի բնակության վայրի և զորամասի միջև առկա փաստացի հեռավորությունը: Հատկանշական է, որ ներկայում զորամասի և զինծառայողի բնակության վայրի միջև հաշվարկը շարունակում է իրականացվել նույն ձևով, այսինքն, Պաշտպանի առաջարկը դեռևս չի իրացվել:

Վերը նշվածից բացի առկա է մեկ այլ խնդիր ևս: Այսպես, հնարավոր են դեպքեր, երբ, օրինակ, զինծառայողի բնակության վայրի և զորամասի միջև հեռավորությունը 30 կիլոմետրից ավելի լինի, և զինծառայողն օգտվի անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ վարձակալության դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքից, սակայն զինծառայողի բնակության վայրից զորամասի տեղակայման վայրի համայնք տեղափոխվելը խնդրահարույց լինի տարբեր հանգամանքներով պայմանավորված: Օրինակ, զինծառայողն իր բնակության վայրում ծառայությունից ազատ ժամանակ կարող է վարել նաև գյուղական տնտեսություն, բացի դրանից, ունենա տարեց ծնողներ և իրականացնի նրանց խնամքը, ունենա անչափահաս երեխաներ, ովքեր հաճախեն բնակության վայրի ուսումնական հաստատությունները, և վերջապես, քաղաքային համայնքում, ապրուստն ավելի թանկ է: Բերված օրինակները վերացական չեն, այլ արձանագրված է կոնկրետ զինծառայողի հետ առանձնագրույցի արդյունքում, որը ներկայացված է Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ:

Նշված պարագայում, զինծառայողն ավելի նպատակահարմար էր գտել չփոխել բնակության վայրը և իրեն պատկանող անձնական տրանսպորտային միջոցով ամեն օր մեկնել ծառայության վայր: Ներկայում գործող իրավակարգավորումները, սակայն, նման դեպքերը հաշվի չեն առնում, քանի որ հիմնավոր պատճառներից ելնելով՝ բնակարանային պայմանների հետ կապված օրենքով նախատեսված սոցիալական ապահովությունից չօգտվող զինծառայողների այսպիսի շրջանակի համար որևէ այլ աջակցություն նախատեսված չէ (օրինակ, ճանապարհաձախսի հատուցման հնարավորություն):

Այս դեպքում, հասկանալի է, որ կարող է բարձրացվել նաև զորամասից 30 կիլոմետր շառավղով սեփականություն կամ հաշվառում ունեցող զինծառայողների ճանապարհաձախսի հետ կապված հարց: Օրինակ, հնարավոր է դեպք, երբ զինծառայողը բնակվի զորամասից 29 կիլոմետր հեռավորության վրա և զրկված լինի բնակարանային պայմանների հետ կապված սոցիալական աջակցությունից, իսկ մյուս դեպքում՝ բնակվի 31 կիլոմետր հեռավորությամբ, և ստանա ճանապարհաձախսի հատուցում, ինչը, իհարկե, արդարացի չի լինի:

Նշվածի հաշվառմամբ՝ Պաշտպանն առաջարկել էր քննարկել 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ բնակվող և վարձակալության գումարի փոխհատուցում չստացող անձանց բնակության վայրից մինչև զորամասից 30-րդ կիլոմետրն ընկած ճանապարհաձախսի փոխհատուցում տրամադրելու հարցը: Այնուամենայնիվ, այս մասով որևէ դրական տեղաշարժ չի արձանագրվել:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել էր մեկ այլ խնդիր, որը լուծում է ստացել:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներով զինծառայողները ներկայացրել էին օրենքով չնախատեսված հիմքով բնակարանի վարձակալության դիմաց տրամադրված փոխհատուցման գումարը հետ պահանջելու խնդիր: Քաղաքացիները նշել էին, որ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրվող անհրաժեշտ տեղեկանքը սահմանված ժամկետում զորամաս

չներկայացնելու պատճառով զորամասից բանավոր հայտնել էին, որ վճարված վարձակալության դիմաց փոխհատուցումը ենթակա է վերադարձման:

Պաշտպանն արձանագրել է, որ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ կետի մեկնաբանության համաձայն՝ զինծառայողին վճարված փոխհատուցման գումարները ենթակա են վերադարձման սպառիչ կերպով սահմանված 3 դեպքերում՝ 1) մշտական բնակության հաշվառման, 2) սեփականության իրավունքի պետական գրանցման, 3) բնակելի տարածության վարձակալության գրանցված իրավունքը դադարելու դեպքերում և թվարկված իրավահարաբերությունների ծագման օրերից:

Այսինքն, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրվող տեղեկանքը չներկայացնելու դեպքում վարձակալության դիմաց վճարված փոխհատուցման գումարները վերադարձնելու հիմք Կառավարության վերաբերելի որոշմամբ սահմանված չէ:

Պաշտպանը վերը շարադրված հիմնավորումներով գրություն էր հասցեագրել Պաշտպանության նախարարություն, որտեղից ստացվել էր պատասխան այն մասին, որ կադաստրի կոմիտեի տեղեկանքը սահմանված ժամկետում զորամաս չներկայացնելու դեպքում, բնակելի տարածություն վարձակալելու դիմաց դրամական փոխհատուցման գումարները զորամասի հրամանատարության կողմից կարող են հետ պահանջվել բացառապես դատական կարգով: Բացի դրանից, Պաշտպանության նախարարությունից պարզաբանվել էր, որ նշվածի կապակցությամբ զորամասեր ուղարկվել են գրավոր հանձնարարականներ:

Արդյունքում, Պաշտպանն արձանագրել էր Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրվող տեղեկանքը չներկայացնելու դեպքում վարձակալության դիմաց վճարված փոխհատուցման գումարները վերադարձնելու պահանջ ներկայացնելու պրակտիկան բացառելու անհրաժեշտությունը: Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ 2021 թվականի ընթացքում նմանատիպ բողոքներ չեն ստացվել, ավելին, Պաշտպանության նախարարությունից նույնպես տեղեկացվել է, որ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված բոլոր տեղեկանքները ներկայացվել են սահմանված ժամկետում և վարձակալության դիմաց տրամադրված փոխհատուցման հետ գանձման դեպք չի արձանագրվել:

Զինծառայողների կողմից նաև 2021 թվականին շարունակվել են բարձրացվել բնակարանի վարձակալության դիմաց տրամադրվող փոխհատուցման չափերի հետ կապված խնդիրներ: Նշված հարցը մշտապես եղել է Պաշտպանի ուշադրության կենտրոնում: Դրական է գնահատվում այն, որ նախկինում մեկ անգամ վարձակալության դիմաց տրամադրվող փոխհատուցման չափերը, հաշվի առնելով նաև Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրություններն ու ներկայացված առաջարկները, վերանայվել և բարձրացվել են: Մինևույն ժամանակ, խնդիրը ներկայում կրկին արդիական է դարձել:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները մի քանի այց են իրականացրել տարբեր զորամասեր, և չի եղել զորամաս, որի անձնակազմի մեծ մասը չբարձրացնի այս խնդիրը:

Դեռևս նախկինում Պաշտպանության նախարարությունը պարզաբանել էր, որ խնդիրն առաջացել է մարտական գործողություններից հետո՝ հիմնականում Գորիս և Ջերմուկ քաղաքներում, որտեղ տեղակայվել են մեծաքանակ պայմանագրային զինծառայողներ: Ըստ նախկինում տրված պարզաբանման՝ տեղի բնակիչներն օգտվելով վիճակից արհեստականորեն բարձրացրել են բնակելի տարածության վարձակալության գումարի չափերը: Պաշտպանության նախարարությունը, մինչույն ժամանակ, պարզաբանել էր, որ խնդրի կարգավորումը ընթացքի մեջ է:

Չնայած դրան, 2021 թվականի ընթացքում ստացված բողոքները, զորամասեր այցերը, զինծառայողների հետ առանձնազրույցները վկայում են, որ այս խնդիրը դարձել է համակարգային: Ստացվել է այնպես, որ 20 և ավելի տարվա զինվորական ծառայության կենսագրություն ունեցող սպաները ոչ միայն չունեն սեփական բնակարան և բնակվում են վարձակալությամբ, այլև բնակվարձի անհամաչափ փոխհատուցման արդյունքում նույնիսկ ստիպված են լինում վճարել իրենց գրպանից՝ աշխատավարձի հաշվին:

Օրինակ՝ Գորիսում զինծառայողները հայտնել են, որ բնակարան վարձակալելու համար անհրաժեշտ է առնվազն 80.000-120.000 ՀՀ դրամ: Նշել են, որ ստիպված են լինում սեփական միջոցներից գումար ավելացնել, որ կարողանան բնակարանի վարձավճարը վճարել: Մինչդեռ, ներկայում գործող կարգավորման համաձայն՝ Երևանից բացի, այլ քաղաքներում մինչև 4 անձից բաղկացած շահառու ընտանիքին՝ բնակելի տարածություն վարձակալելու դիմաց տրվում է 38.000 դրամ, իսկ 4 և ավելի անձանցից բաղկացած շահառու ընտանիքին՝ 50.000 դրամ

Նույն խնդիրն արձանագրվել է նաև այլ բնակավայրերում, այդ թվում՝ Սիսիան, Վայք և այլն: Ընդ որում, խնդիրն առկա է ոչ միայն քաղաքներում, այլ նաև մյուս համայնքներում:

**Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս արձանագրել, որ վարձակալության դիմաց տրամադրվող հատուցման գումարի հետ կապված խնդիրը առաջնային կարևորություն ունեցող է, դրա լուծման ուղղությամբ անհրաժեշտ է օր առաջ միջոցներ ձեռնարկել:**

Այս հարցի կապակցությամբ անհրաժեշտ է ընդգծել, որ մի կողմից Պաշտպանության նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանի գրության կապակցությամբ տրամադրված պատասխանով նշել է, որ վարձակալված բնակարանի դիմաց տրամադրվող դրամական փոխհատուցման չափերի հետ կապված խնդիրը համակարգային է և դա հնարավոր կլինի լուծել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում (այսինքն, նաև Նախարարությունն է փաստում խնդրի համակարգային բնույթի լինելը), իսկ մյուս կողմից Պաշտպանի տարեկան հաղորդման մշակման շրջանակներում ներկայացված հարցերին ի պատասխան՝ Պաշտպանության նախարարությունից նշվել է, որ բնակարանային պայմանների բարելավման նպատակով տրամադրվող գումարի, **ինչպես նաև վարձակալության գումարի փոխհատուցման չափերի** վերանայման վերաբերյալ փոփոխություն կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ չի շրջանառվում:

Անհասկանալի է բարձրացված խնդրին Պաշտպանության նախարարության նման մոտեցումը: Փաստորեն, տրամադրված պատասխանով Նախարարությունը չի անդրադարձել ո՛չ խնդրի լուծման իր տեսլականին, ո՛չ ապագայում հնարավոր ձեռնարկվելիք միջոցներին, նույնիսկ չի նշվել վարձակալության գումարի հատուցման փոխարեն քննարկվող հավելավճարի ներդրման մասին, որը կներկայացվի ստորև:

**Պաշտպանը ևս մեկ անգամ և հատուկ ընդգծում է՝ վարձակալության գումարի ոչ բավարար լինելու խնդիրը բարձրացնում է զինծառայողների գերակշիռ մասը: Ավելին, որոշ դեպքերում դա հանգեցնում է կադրային արտահոսքի:**

Բնակելի տարածության վարձակալության հետ կապված 2021 թվականին արձանագրվել է մեկ այլ խնդիր ևս:

Բազմաթիվ զինծառայողներ բարձրացրել են այն հարցը, որ շատ բնակարանների սեփականատերեր չեն ցանկանում օրենքով սահմանված կարգով կնքել վարձակալության պայմանագիր, ինչի պատճառով զինծառայողները կանգնում են անհրաժեշտ փաստաթուղթը ներկայացնելու և վարձակալության գումարի փոխհատուցում ստանալու խնդրի առջև:

Խնդրի հետ կապված պատգամավորական նախաձեռնությամբ 2021 թվականին Ազգային ժողովում տեղի է ունեցել աշխատանքային քննարկում, որի ընթացքում նշվել է ոչ միայն այս խնդիրը, այլ նաև այն, որ զինծառայողները ստիպված են լինում վարձակալել մի բնակարան, սակայն վարձակալության պայմանագիր կնքել այլ բնակարանի սեփականատիրոջ հետ, որպեսզի կարողանան ստանալ փոխհատուցում: Արդյունքում, նման դեպքերի առնչությամբ կան նաև հարուցված քրեական գործեր, որոնց շրջանակներում զինծառայողներին առաջադրվել են մեղադրանքներ:

Պաշտպանի ներկայացուցչի մասնակցությամբ Ազգային ժողովում քննարկվել են խնդրի պատճառները և հնարավոր լուծումները: Արդյունքում, Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչը տեղեկացրել է, որ խնդիրը շուտով հնարավոր է կարգավորվի զինծառայողներին հավելավճար տրամադրելու եղանակով: Այսինքն, այդպիսի կարգավորումներ նախատեսելու պարագայում զինծառայողները ստիպված չեն լինի Պաշտպանության նախարարություն ներկայացնել բնակելի տարածության վարձակալության պայմանագրեր և այլ փաստաթղթեր (այս մասին նշվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան տրամադրված տեղեկություններով):

Պաշտպանը դրական է գնահատում այսպիսի փոփոխության հնարավորությունը, քանի որ դրանով ոչ միայն կլուծվեն վարձակալության պայմանագիր կնքելուց հրաժարվելու պատճառով առաջացող խնդիրները, այլ նաև զինծառայողները կազատվեն բազմաթիվ այլ փաստաթղթեր ներկայացնելու և դրանք հավաքելու քաջքշուկներից:

Մարդու իրավունքների պաշտպանն առանձնահատուկ կարևորում է հատկապես մարտական գործողություններից հետո զինծառայողների սոցիալական, և տվյալ դեպքում՝ նաև բնակարանային խնդիրների օր առաջ լուծման անհրաժեշտությունը: Բնակարանային հարցերի լուծումը կարող է

դրական ներգործություն ունենալ զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական վիճակի բարելավման վրա, հանրության շրջանում բարձրացնել զինվորական ծառայության գրավչությունը:

**Նախկին զինծառայողներին բնակելի տարածությունից հանելու խնդիր:**

Ինչպես 2019, այնպես էլ 2020 թվականների տարեկան հաղորդմամբ Պաշտպանն արձանագրել է մի խնդիր, որը վերաբերում է առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքներին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու դեպքում ծառայողական բնակարաններն ազատելու պահանջ ներկայացնելու հետ:

Այսպես, ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարաններն ազատում են, **եթե Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովված են այլ բնակելի տարածությամբ:**

Չնայած դրան, նախկինում արձանագրվել են դեպքեր, երբ Պաշտպանության նախարարությունն այդ կարգավիճակն ունեցող անձանց ներկայացնում էր ծառայողական բնակարաններն ազատելու պահանջ՝ հիմնավորելով, որ նշված անձինք վերցված չեն բնակարանային պայմանների բարելավման հաշվառման:

Անհրաժեշտ է ընդգծել, որ վերոնշյալ կարգի 8-րդ կետի համաձայն՝ Պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով կարող են տրամադրվել բնակավայրից (հաշվառման վայրից) 30 կիլոմետր և ավելի հեռավորությամբ ծառայության անցկացման վայրում մշտական բնակելի տարածություն չունեցող զինծառայողներին՝ **անկախ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հանգամանքից:** Հատկանշական է, որ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հստակ պահանջ նախատեսված է միայն նույն կարգի 9-րդ կետով Պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող և նույն կարգի 3-րդ կետի համաձայն Պաշտպանության նախարարի հաստատած **ցանկում չընդգրկված** բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու դեպքերի համար:

Այսպիսով, զինծառայողներին Պաշտպանության նախարարի հաստատած **ցանկում ընդգրկված** բնակելի տարածություններն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելիս բնակարանային հաշվառման մեջ գտնվելու օրենսդրական պահանջ նախատեսված չէ: Այդպիսի պահանջ նախատեսված չէ նաև այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու դեպքում

նախկին զինծառայողների կողմից բնակարաններն ազատելու դեպքերի համար: Հետևաբար, առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներին Պաշտպանության նախարարի հաստատած **ցանկում ընդգրկված բնակելի տարածություններն ազատելու պահանջ չի կարող ներկայացվել (անկախ բնակարանային հաշվառման հանգամանքից), եթե Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովված չեն այլ բնակելի տարածությամբ:**

Նախորդ տարեկան հաղորդումներով Պաշտպանն առաջարկել էր առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողների, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու և Պաշտպանության նախարարի հաստատած ցանկում ընդգրկված բնակելի տարածություններում բնակվելու դեպքում՝ բացառել այդ բնակելի տարածություններն ազատելու պահանջ ներկայացնելու պրակտիկան՝ անկախ բնակարանային հաշվառման մեջ գտնվելու հանգամանքից:

Այս առումով հատկանշական է Պաշտպանության նախարարությունից տրամադրված տեղեկությունը: Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել էր կոնկրետ հարցադրում այն մասին, թե զինվորական ծառայությունից արձակվելուց հետո քանի նախկին զինծառայողի է պահանջ ներկայացվել ազատել ծառայողական բնակարանը՝ այլ բնակելի տարածություն չունենալու պարագայում:

Պաշտպանության նախարարության պատասխանով նշվել է, որ Պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված ՀՀ մարզերի թվով 199 նախկին զինծառայողներից 27-ը, ովքեր զբաղեցնում են անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված ծառայողական բնակարաններ, ներկայացրել են պարտավորագիր՝ բնակարան ձեռք բերելուց հետո 1 ամսյա ժամկետում ազատել իրենց կողմից զբաղեցրած ծառայողական բնակարանները:

Իհարկե, դրական է այն, որ տրամադրված տեղեկության հիման վրա հնարավոր է դառնում եզրակացնել առնվազն 27 զինծառայողի առանց այլ բնակելի տարածությամբ ապահովված լինելու ծառայողական բնակարաններն ազատելու պահանջ չներկայացնելու մասին: Սակայն այս պարագայում հարց է առաջանում, թե ինչու է նշվում միայն մարզերի զինծառայողների մասին և արդյոք, օրինակ, Երևան քաղաքում զինծառայողներին չեն ներկայացվել ծառայողական բնակարանն առանց վերը ներկայացված հիմքերի ազատելու պահանջներ:

**Զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձակալության գումարի փոխհատուցման խնդիր:** Պաշտպանի 2018-2020 թվականների տարեկան հաղորդումներում նշվել

էր, որ ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման Հավելվածի 16-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ բնակելի տարածության վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալու իրավունքը դադարեցվում է ծառայությունից շահառուի արձակվելու դեպքում: Մինչդեռ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված բնակարանների պարագայում իրավիճակն այլ է. ՀՀ տարածքում բնակելի տարածությամբ չապահովված և առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողները չեն ազատում ծառայողական բնակարանները: Ստացվում է, որ եթե զինծառայողին տրամադրվել է ծառայողական բնակարան, նշված հիմքերով ծառայությունից արձակվելիս նա շարունակում է բնակվել ծառայողական բնակարանում, իսկ նույն կարգավիճակում գտնվող զինծառայողը, ում վարձակալության դիմաց տրամադրվում է դրամական փոխհատուցում, դադարում է այն ստանալ: Հետևաբար, տարբերակված մոտեցում է դրսևորվում միևնույն կարգավիճակում գտնվող անձանց նկատմամբ, և նման մոտեցումը չունի օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ:

Արդյունքում, Պաշտպանն առաջարկել էր վերոնշյալ հիմքերով ծառայությունից արձակված զինծառայողներին վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելը չդադարեցնել, սակայն նշված առաջարկը դեռևս չի իրացվել:

2021 թվականի ընթացքում Պաշտպանության նախարարություն հասցեագրված գրությամբ Պաշտպանը, ի թիվս այլնի, բարձրացրել էր նաև այս հարցը:

Պաշտպանության նախարարությունն իր պատասխանում բավարարվել է միայն նշելով, որ գործող կարգը չի նախատեսում զորացրված զինծառայողների կողմից վարձակալված բնակելի տարածությունների դիմաց դրամական փոխհատուցման տրամադրում: Այս դեպքում ևս Պաշտպանության նախարարությունը որևէ անդրադարձ չի կատարել այդ խնդրի լուծմանն ուղղված միջոցներ ձեռնարկելու, առնվազն այն քննարկման առարկա դարձնելու և այլ նման հարցերի: Այսպիսի մոտեցումն անընդունելի է:

**Հիպոտեկային վարկավորման հետ կապված խնդիրներ:** 2018 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկի հիման վրա ներդրվել է պայմանագրային զինծառայողների՝ բնակարան կամ բնակելի տուն ձեռք բերելու կամ բնակելի տուն կառուցելու նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագիրը, սակայն 2019 թվականին այն գործնական կիրառություն չի ստացել: 2019 թվականի օգոստոսի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունել է թիվ 1091-Ն որոշումը, որով սահմանվել են «Սպայական և ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի սպայական ու ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ



բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները»:

Կարևոր են նաև Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկություններն առ այն, որ 2021 թվականին դիմած 481 զինծառայողներից մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման պետական նպատակային ծրագրի շահառու են դարձել 250-ը:

Վերոնշյալի հետ կապված, սակայն, գործնականում առկա են որոշ խնդրահարույց հարցեր: Այսպես, հիպոտեկային վարկավորմանն առնչվող Կառավարության որոշման նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել էր դիտարկումներ և առաջարկներ, որոնց մեծ մասն ընդունվել է<sup>766</sup>, սակայն որոշ խնդիրներ շարունակում են մնալ չլուծված:

Օրինակ, Պաշտպանն արձանագրել էր, որ մինչև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ընդունումը բնակարանային հաշվառման կարող էին վերցվել բոլոր պայմանագրային զինծառայողները: Մինչդեռ, Օրենքի 65-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել էր, որ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից կարող են օգտվել *միայն սպայական կազմի պայմանագրային զինծառայողները*: Այս իրավիճակը մտահոգիչ է այն առումով, որ շարքային և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողներն այլևս չեն կարող վերցվել բնակարանային հաշվառման, ինչպես նաև չեն կարող օգտվել հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից: Արդյունքում, Պաշտպանն առաջարկել է հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև շարքային և ենթասպայական կազմի պայմանագրային զինծառայողների համար: Նշված առաջարկն ընդունվել է միայն *ավագ ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների* մասով<sup>767</sup>: Այսինքն, **շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողները ներկայում զրկված են վերոնշյալ ծրագրից օգտվելու հնարավորությունից**:

Խնդիրն առավել է ընդգծվում այն հանգամանքով պայմանավորված, որ հիպոտեկային վարկավորման ծրագրի ներդրումից հետո նշված կազմերի զինծառայողները նաև չեն կարող վերցվել բնակարանային հաշվառման:

Վերը շարադրվածն արձանագրվել է նաև Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով, ինչի հաշվառմամբ էլ առաջարկվել է հիպոտեկային վարկավորման պետական նպատակային

---

<sup>766</sup> Օրինակ՝ զինծառայողին ծառայությունից անհիմն արձակելու և հետագայում ծառայությունում վերականգնելու դեպքում՝ անհիմն արձակված լինելու ժամանակահատվածի համար պետության կողմից վարկի տոկոսի սուբսիդավորումը և եկամտային հարկի վերադարձը վերականգնելը, զինվորական ծառայությունից արձակվելուց հետո վարձու աշխատող հանդիսանալու դեպքում նախկին զինծառայողի եկամտային հարկի վերադարձման գործընթացն օրենքով սահմանված կարգով իրականացնելը և այլն:

<sup>767</sup> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում 2019 թվականի հունիսի 4-ին կատարվել է փոփոխություն:

ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար, սակայն առաջարկը դեռևս չի իրացվել:

Մեկ այլ խնդիր է այն, որ նշված **ծրագրից չեն կարողանալու օգտվել Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողները**: Դեռևս 2018 թվականին Պաշտպանի քննարկմանն ուղարկված նախագծով նախատեսվում էր, որ յուրաքանչյուր տարի ծրագրի շահառու կարող է դառնալ՝ 1) Պաշտպանության նախարարության 400 զինծառայող, 2) Ոստիկանության 40 ծառայող, 3) Ազգային անվտանգության 40 ծառայող և 4) քրեակատարողական ծառայության 20 ծառայող: Սակայն արդեն ընդունված որոշմամբ Կառավարությունը սահմանել է, որ ծրագրի շահառու են հանդիսանում միայն Պաշտպանության նախարարության զինծառայողները:

Մինչդեռ, երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորությունը նախատեսվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 6-րդ բաժնի<sup>768</sup> 65-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրենքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ 6-րդ բաժնի դրույթները տարածվում են Պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողների վրա:

Այսպիսով, ստացվում է, որ Կառավարության որոշմամբ վերը նշված երեք համակարգերի ծառայողների համար չի նախատեսվել օրենքով սահմանված արտոնությունից օգտվելու հնարավորություն:

Այս առումով Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմում քննարկվող բողոքներից մեկի շրջանակներում Արդարադատության նախարարությունից ստացվել է տեղեկություն այն մասին, որ Ֆինանսների նախարարության հետ քննարկման արդյունքում հնարավոր է գնահատվել 2023 թվականի ընթացքում անդրադառնալ նաև քրեակատարողական ծառայողների համար մատչելի և արտոնյալ պայմաններով հիպոտեկային ծրագրի ներդրման հարցին:

Արդարադատության նախարարությունից տրամադրվել է նաև «Քրեակատարողական ծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերմանը կամ բնակելի տան կառուցմանը պետական աջակցության նպատակային ծրագիրը հաստատելու և քրեակատարողական ծառայողների կողմից բնակարանի կամ բնակելի տան ձեռքբերման կամ բնակելի տան կառուցման նպատակով մատչելի և արտոնյալ պայմաններով երկարաժամկետ հիփոթեքային վարկավորման կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Այս նախագծի ներդրումը դրական է գնահատվում, որով ի վերջո կլուծվի տարիներ շարունակ նաև Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվող խնդիրը:

<sup>768</sup> «Զինծառայողների դրամական ապահովությունը և սոցիալական ապահովությունը»:

Այնուամենայնիվ, Պաշտպանը նաև ընդգծում է, որ ինչպես Քրեակատարողական, այնպես էլ Ազգային անվտանգության և Ոստիկանության ծառայողների համար այդպիսի կարգավորումների սահմանումը հրատապ անհրաժեշտություն ունի:

Բացի վերը շարադրվածից, Պաշտպանի ներկայացուցիչները 2021 թվականի ընթացքում զորամասեր իրականացրած այցերի ընթացքում վեր են հանել մեկ այլ խնդիր:

Մասնավորապես, սպաների կողմից հիպոտեկային վարկավորման ծրագիրն, ըստ էության, դրական է գնահատվում, սակայն ունի լուրջ թերություններ, քանի որ տևական ժամանակ ծառայող սպաները, ովքեր երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու մտադրություն ունեն, ծրագրից օգտվելու խնդիրների առջև են կանգնում: Սպաների գնահատմամբ՝ հիպոտեկային վարկավորման ծրագիրն ունի կատարելագործման անհրաժեշտություն, քանի որ շահառուների համար նախատեսված տեղերը սահմանափակ են, իսկ այն կարող է շահավետ լինել միայն զինված ուժեր նոր ներգրավվող սպաների համար: Ուստի, զինծառայողների կարծիքով, անհրաժեշտ է մշակել այլ մեխանիզմներ:

Այս խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել էր նաև Պաշտպանության նախարարություն հասցեագրված գրությամբ, որտեղից ստացված պատասխանով նշվել է հետևյալը. զինծառայողների հիպոտեկային վարկավորման ծրագիրը կյանքի կոչվելուց առաջ այն քննարկվել է մի շարք շահագրգիռ կառույցների, կազմակերպությունների հետ և ընդունվել է գործող կարգով: Ծրագիրը նախատեսում է մի շարք բացառություններ և արտոնություններ (ցածր տոկոսադրույք, ցածր կանխավճար, լրացուցիչ երաշխիքներ, բնակելի անշարժ գույքի գնման ժամանակ պետության կողմից մասնակցություն՝ պայմանագրային գնի 10%-ի չափով, վճարվող տոկոսներից 3%-ի չափով սուբսիդավորում): Սա հեռանկարային ծրագիր է: Ներկայում փորձ է կատարվում բացի «Արդշինբանկ» ՓԲԸ-ից ներգրավել այլ բանկեր («ՎՏԲ-Հայաստանբանկ»), որը հնարավորություն կտա իջեցնել տոկոսադրույքները:

**Ծառայության ընթացքում բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված նախկին զինծառայողների բնակարանային պայմանները բարելավելու հետ կապված խնդիրներ:** ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ, ի թիվս այլնի, սահմանվում են Պաշտպանության նախարարության համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների բնակարանային հաշվառման հետ կապված հարաբերությունները: 2019 թվականի մայիսի 10-ին նշված որոշումը լրացվել է<sup>769</sup> և նախատեսվել, որ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո շահառուի մահվան դեպքում անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրվում է նրա ընտանիքին:

Այս առումով, սակայն, անհրաժեշտ է նշել, որ 2019 թվականին ՀՀ կառավարության նշված որոշման մեջ փոփոխություն կատարելու նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված նկատառումներով առաջարկվել էր սահմանել, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար հասանելիք **սենյակների թիվը որոշելիս**

<sup>769</sup> Փոփոխությունները կատարվել են ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 540-Ն որոշմամբ:

**բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ընդգրկված անձինք հաշվի են առնվում՝ անկախ հաշվառումից հետո նրանց մահվան կամ կարգավիճակի փոփոխություններից:** Դրական գնահատելով նախկին զինծառայողների մահվան դեպքում նրանց ընտանիքների անդամների իրավունքը պահպանելու ուղղությամբ Պաշտպանության նախարարության ձեռնարկած միջոցները՝ պետք է ընդգծել, որ Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման հավելվածով նախատեսված կարգում լրացված 17.4-րդ կետի 1-ին ենթակետով, այնուամենայնիվ, նախատեսվել է, որ զինվորական ծառայությունից արձակվելուց հետո մահացած շահառուի ընտանիքին անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելիս **հասանելիք սենյակների թիվը որոշվում է՝ առանց մահացած շահառուի անձը հաշվի առնելու:**

Պաշտպանության նախարարությունը տրամադրել է տեղեկություն, որ ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն և 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 540-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն՝ Պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող հաշվառված և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված ՀՀ մարզերի թվով 199 նախկին զինծառայողների բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով ցուցաբերվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն: Բնակարանի գնման վկայագրերից հրաժարվելու դեպքեր 2021 թվականի ընթացքում չեն արձանագրվել:

Անհրաժեշտ է ընդգծել, որ ՀՀ կառավարության թիվ 384-Ն որոշման մեջ փոփոխությունների նախագծի վերաբերյալ Պաշտպանը ներկայացրել է կարծիք, որով անդրադարձել է տրամադրվող ֆինանսական աջակցության չափի կարգավորմանը: Այսպես, նախագծով նշված էր, որ անհատույց պետական ֆինանսական աջակցությունը հաշվարկվում է աջակցություն տրամադրելու եզրակացության կայացման օրվան նախորդող եռամսյակի դրությամբ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված՝ Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գների թվաբանական միջինի 50%-ի չափով: Ըստ նախագծի հիմնավորումների՝ աջակցության նման չափը պայմանավորված է նրանով, որ բնակարանների միջին շուկայական արժեքներն արհեստականորեն բարձր են առաջնային շուկայում (նորակառույց շենքեր) և Կենտրոն վարչական տարածքում ձևավորված գների պատճառով, և որ նախատեսվող չափը *սկզբունքորեն բավարար* է երկրորդային շուկայից բնակարան ձեռք բերելու համար:

Մինչդեռ, Պաշտպանն արձանագրում է, որ **պետք է ապահովվի նախկին զինծառայողների՝ բնակության համար նվազագույն պայմանները բավարարող բնակարան ձեռք բերելու իրական հնարավորությունը՝** առանց աջակցություն ստացողի միջոցների հաշվին գնի տարբերությունը լրացնելու անհրաժեշտության: Նշված արձանագրումը Պաշտպանի կողմից կատարվել էր նաև 2019 թվականի տարեկան հաղորդմամբ, որի հաշվառմամբ էլ առաջարկվել էր կատարել ուսումնասիրություններ՝ հավաստիանալու, որ Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ

գտնվող նախկին զինծառայողները Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ նախատեսված աջակցության չափի շրջանակներում իրական հնարավորություն ունեն ձեռք բերել բնակության համար նվազագույն պայմաններ ունեցող բնակարան: Հատկանշական է, որ Կառավարության նշված որոշման կարգավորումը նույնությամբ պահպանվել է, իսկ Պաշտպանին դիմող քաղաքացիները վկայում են, որ այդ գումարն ակնհայտորեն բավարար չէ:

**Բնակարանային գործերի «համապատասխանեցման» արդյունքում հերթացուցակից դուրս մնալու հետ կապված խնդիրներ:** Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի համաձայն՝ Պաշտպանության նախարարության համակարգի զոհված (մահացած) զինծառայողների թվով 87 ընտանիքների տրամադրվել է բնակարանի գնման վկայագրեր:

Բնակարանային հաշվառման ընդգրկված պայմանագրային զինծառայողների բնակարանային խնդիրների լուծման առնչությամբ նշվել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված առաջարկության հիման վրա տվյալ միջոցառումն ընդգրկվել է ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրում, ըստ որի՝ նախատեսվում է նախաձեռնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած զինծառայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը:

Պաշտպանը, սակայն, անհրաժեշտ է համարում ընդգծել, որ նախորդ տարիների ընթացքում հասցեագրվել են մեծ թվով բողոքներ, որոնք վերաբերել են ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ իրականացված *համապատասխանեցման* արդյունքում բնակարանային հաշվառման հերթացուցակից հանվելու հետ կապված խնդիրներին:

Կարիք չկա անդրադառնալու Կառավարության որոշմամբ նախատեսված և իրականացված այս գործընթացի խնդրահարույց ասպեկտներին (դրանք մանրամասն ներկայացվել և վերլուծվել են Պաշտպանի դեռևս 2018 թվականին ներկայացված տարեկան հաղորդմամբ)<sup>770</sup>:

Չնայած նրան, որ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ *համապատասխանեցման* հարցերի հետ կապված դիմում-բողոքներ չեն ստացվել՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում նշել, որ կան 2020 թվականին հասցեագրված բողոքներ, որոնք դեռևս լուծում չեն գտել:

Նախորդ տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ ըստ քաղաքացու դիմումի՝ որդին զոհվել է մարտական գործողություններին մասնակցության արդյունքում, ինչից հետո՝ 2003 թվականին, որպես զոհված զինծառայողի ընտանիքի անդամ, հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում, սակայն 2017 թվականին հանվել է հաշվառման հերթացուցակից՝

---

<sup>770</sup> Տե՛ս, 2018 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 521:

հաշվառման որոշումը ոչ իրավաչափ լինելու պատճառաբանությամբ: **Նա նշել է, որ այդ մասին իրեն չեն տեղեկացրել և չեն տվել որևէ պարզաբանում:**

Երևանի քաղաքապետարանն այնուհետև քաղաքացու բնակարանային գործը լրացուցիչ վերանայման նպատակով ուղարկել է ՀՀ պաշտպանության նախարարություն: Քաղաքացու մեկ այլ պնդմամբ՝ բնակարանային պայմանների կարիքավոր չհանդիսանալու պատճառաբանությամբ 2019 թվականի դեկտեմբերի 18-ին Պաշտպանության նախարարությունը բնակարանի գնման վկայագիր տրամադրելը մերժել է:

Բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ քաղաքացու ընտանիքը 5 անձով բնակարանային պայմանների բարելավման հաշվառման է վերցվել թաղապետի 2003 թվականի որոշմամբ: Պաշտպանության նախարարության բնակարանային հանձնաժողովի 2019 թվականին կայացած նիստի արձանագրության քաղվածքի համաձայն՝ բնակարանային գործի ուսումնասիրության ընթացքում գրություն է հասցեագրվել Երևանի քաղաքապետարան: Ստացված պատասխանի համաձայն՝ մինչև 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշման ուժի մեջ մտնելը հաշվառման են վերցվել այն ընտանիքները, որոնք ներկայացրել են դիմում և համապատասխանել են ՀՀ բնակարանային օրենսգրքի դրույթներին ու չափորոշիչներին: Նշված նիստի արդյունքում հանձնաժողովը որոշել է բնակարանի գնման վկայագիր տրամադրելու դրական եզրակացություն չտալ, քանի որ շահառուն հաշվառման պահին՝ 2003 թվականի դրությամբ, չի հանդիսացել բնակարանային պայմանների կարիքավոր:

Պաշտպանը վերահաստատում է **2018-2020 թվականների տարեկան հաղորդումներում արտահայտված դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման հիման վրա իրականացված համապատասխանեցումը հանդիսացել է վարչական վարույթ, որի շրջանակներում հիմնականում չի ապահովվել** «վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ վարչական վարույթի ընթացքում լաված լինելու իրավունքը:

Սակայն կոնկրետ դեպքում խնդրահարույց է այն, որ 2017 թվականին իրականացված համապատասխանեցման ընթացքում Երևանի քաղաքապետարանն ընդհանրապես քննարկել է նաև 2003 թվականին հաշվառված քաղաքացու բնակարանային գործը: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման համաձայն՝ պետք է իրականացվեր բնակարանային գործերի համապատասխանեցումը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի ու **ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:** Չնայած դրան՝ Երևանի քաղաքապետարանը համապատասխանեցման ընթացքում քննարկել է նաև մինչև 2005 թվականի համապատասխան որոշման ընդունումը հաշվառված քաղաքացիների բնակարանային գործերը:

Բացի դրանից, անհրաժեշտ է անդրադառնալ բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդունելու վերաբերյալ վարչական ակտի կայացման օրվանից 17 տարի անց որևէ հիմքով դրա կատարումը մերժելու հարցին:

Չափազանց կարևոր է ընդգծել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածով սահմանված է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու ժամկետը: Նշված հոդվածով, սահմանվում է, որ չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել 6 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ իրավասու վարչական մարմինն իմացել է այն փաստերի մասին, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ:

Հայտնի է, որ ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ ՀՀ մարզպետներին հանձնարարվել, իսկ համայնքների ղեկավարներին (Երևանի քաղաքապետին) առաջարկվել է մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ն ապահովել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային գործերի համապատասխանեցում: Այսինքն, ստացվում է, որ բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդգրկված շահառուների բնակարանային գործերը 2017 թվականին համապատասխանեցնելիս շահառուներին հաշվառման ընդգրկելու վերաբերյալ վարչական ակտերն անվավեր ճանաչելու հիմքեր հայտնաբերվելու դեպքում՝ այդպիսի վարչական ակտերն անվավեր կարող էին ճանաչվել հիմքերի հայտնաբերման օրվանից 6 ամսվա ընթացքում:

Կոնկրետ դեպքում, 2017 թվականին իրականացված համապատասխանեցման արդյունքում քաղաքացու բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդգրկելու վարչական ակտն անվավեր չի ճանաչվել, ավելին՝ 2019 թվականին Երևանի քաղաքապետարանը բնակարանային գործը կրկին ուղարկել է Պաշտպանության նախարարության քննարկմանը:

Բացի դրանից, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 65-րդ հոդվածով նաև սահմանվում է, որ վարչական ակտն անվիճարկելի է դառնում, և վարչական մարմինը զրկվում է վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավունքից, եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է 10 տարի: Ստացվում է, որ օրենսդիրը պետական մարմինների համար նախատեսել է իրենց կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու առավելագույն ժամկետ:

Ինչպես նշվել է վերևում, քաղաքացուն բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ընդգրկելու վարչական ակտն ընդունվել է 2003 թվականին, այսինքն՝ այդ վարչական ակտն անվիճարկելի է դարձել դեռևս 2013 թվականին, սակայն Պաշտպանության նախարարությունը 2019 թվականին մերժել է անվիճարկելի դարձած վարչական ակտի կատարումը:

Վերը նշված կարգավորումների և վերլուծությունների հաշվառմամբ՝ Պաշտպանը գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետարան և առաջարկել քաղաքացու բնակարանային գործը

Պաշտպանի դիտարկումներով և ներկայացված իրավական հիմնավորումներով կրկին ուղարկել Պաշտպանության նախարարություն:

Ստացված պատասխանով նշվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկության հաշվառմամբ՝ Երևանի քաղաքապետարանը բնակարանային փաթեթն առաքել է Պաշտպանության նախարարություն:

Պաշտպանը բողոք ներկայացրած անձի բնակարանային պայմանների բարելավման հարցով գրություն է հասցեագրել նաև Պաշտպանության նախարարություն, որտեղից ստացված պատասխանով նշվել է, որ բնակարանային գործը կներկայացվի Պաշտպանության նախարարության համապատասխան հանձնաժողովի քննարկմանը առաջիկա նիստերի ընթացքում:

Այնուամենայնիվ, 2021 թվականի ընթացքում Պաշտպանության նախարարությունից ստացվել է պատասխան, ըստ որի՝ հանձնաժողովը դրական եզրակացություն չի տվել քաղաքացու բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ և 2019 թվականի նիստի որոշումը թողել է անփոփոխ, քանի որ շահառուի բնակարանային պայմանները բավարարում են: Միաժամանակ տեղեկացվել է, որ քաղաքացին ունի 18,6 քմ տարածք և հանդիսանում է 4 սենյականոց բնակարանի առնվազն 1 սենյակի սեփականատերը:

Պաշտպանի աշխատակազմում դեռևս շարունակվում է այս բողոքի քննարկումը, քանի որ այն, ի թիվս այլնի, կապված մեկ այլ խնդրի՝ Պաշտպանության նախարարության բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից բնակարանային գործերի «մերժման» լիազորության իրավաչափության հետ: Այս հարցը կքննարկվի ստորև:

2021 թվականին Պաշտպանի աշխատակազմ ստացված մեկ այլ բողոք թեև կապված չէ համապատասխանեցման խնդրի հետ, սակայն այս պարագայում կրկին ընդգծվում է Պաշտպանության նախարարության բնակարանային հանձնաժողովի իրավասության խնդիրը:

Այսպես, քաղաքացին տեղեկացրել է, որ 2016 թվականի ապրիլյան 4-օրյա մարտական գործողությունների ընթացքում զոհված զինծառայողի հետ ունեն որդի (հայրությունը հաստատվել է դատարանի կողմից):

Քաղաքացին տեղեկացրել է նաև, որ որդին, որպես զոհված զինծառայողի ընտանիքի անդամ, հաշվառված է եղել բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում, սակայն հաշվառվելուց հետո Պաշտպանության նախարարության համապատասխան հանձնաժողովը մերժել է բնակարանի գնման վկայագիր տրամադրելը:

Բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ նաև պարզվել է, որ Պաշտպանության նախարարության բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստում արտահայտված դիրքորոշմամբ՝ զոհված զինծառայողի որդին չի կարող ստանալ բնակարանի գնման վկայագիր, քանի որ զինծառայողը նախկինում հանդիսացել է 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող անձ, հաշվառված է եղել բնակարանային



պայմանների բարելավման հերթացուցակում և 2009 թվականին ստացել օրենքով նախատեսված սոցիալական աջակցությունը:

Հանձնաժողովը նման դիրքորոշման հիմքում դրել է ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշմամբ հաստատված կարգի 31-րդ կետի կարգավորումն առ այն, որ բնակարան կամ վկայագրի միջոցով աջակցություն ստացած շահառուները չեն կարող կրկին բնակարանային հաշվառման վերցվել՝ անկախ հետագայում բնակարանային պայմանները վատթարանալու հանգամանքից:

Վերը շարադրվածի կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ Պաշտպանության նախարարության բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի կողմից վկայակոչած Կառավարության նշված որոշման կարգավորումը բնակարանային հաշվառման կրկին վերցնելու արգելք է նախատեսում **նախկինում աջակցություն ստացած նույն շահառուի համար**: Ընդ որում, մեջբերված կարգավորումը շահառուի համար այդպիսի արգելք է նախատեսում անկախ հետագայում բնակարանային պայմանները վատթարանալու հանգամանքից: Այսինքն, կարգավորման նպատակը նախկինում աջակցություն ստացած նույն անձին հետագայում կրկնակի աջակցություն տրամադրելը բացառելն է:

Կոնկրետ բողոքի պարագայում զոհված զինծառայողը նախկինում ինքն է հանդիսացել բնակարանային պայմանների բարելավման շահառու (որպես 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող անձ), ինչի համար էլ ստացել է պետության կողմից տրվող աջակցությունը: Սակայն դրանից հետո՝ 2016 թվականի ապրիլին, նա մասնակցել է մարտական գործողություններին, ինչի արդյունքում զոհվել է: **Նշված պարագայում, ըստ էության, առաջ է գալիս ոչ թե նույն շահառուին կրկին բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում ընդգրկելու հարց, այլ ծագում է նախկինի հետ չկապված նոր իրավահարաբերություն, քանի որ այս դեպքում զինծառայողի որդին արդեն հանդիսանում է զոհված զինծառայողի ընտանիքի անդամ:**

ՀՀ կառավարության ինչպես 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն, այնպես էլ 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշումներով հաստատված կարգերի վերաբերելի կարգավորումների համաձայն՝ բնակարանային ապահովության իրավունք ունեն 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները և **զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքները**:

Այսինքն, Կառավարության որոշումների վերը նշված կարգավորումների տրամաբանությամբ՝ զոհված զինծառայողների ընտանիքները հանդիսանում են առանձին խումբ կազմող շահառուներ:

Այսպիսով, 2009 թվականին Պաշտպանության նախարարության կողմից սոցիալական աջակցություն է տրամադրվել բնակարանային պայմանների բարելավման շահառու, 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող անձին, իսկ ներկայում այդպիսի աջակցություն ստանալով նպատակով դիմել է այլ շահառու՝ զոհված զինծառայողի ընտանիքի անդամ:

Պաշտպանը վերը շարադրված վերլուծություններով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն, որտեղից ստացված պատասխանով նշվել է, որ բնակարանային հանձնաժողովի որոշումը թողնվել է անփոփոխ (այն է՝ դրական եզրակացություն չտալ բնակարանի գնման վկայագրի միջոցով ֆինանսական աջակցություն տրամադրելու համար, քանի որ շահառուին, որպես 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող անձի, իր ընտանիքի անդամների բնակարանային պայմանները բարելավելու նպատակով 2009 թվականին տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ երեք սենյականոց բնակարան ձեռք բերելու համար):

Այսպիսով, Պաշտպանության նախարարությունը, ըստ էության, որևէ կերպ չի հիմնավորել իր որոշումը, այլ միայն նշել է, որ նախկինում կայացված որոշումը մնացել է անփոփոխ: Ներկայում Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է բողոքի քննարկումը:

Մեկ այլ դեպքում, քաղաքացին Պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ որդին զոհվել է մարտական գործողությունների ընթացքում:

Ըստ քաղաքացու՝ 8 անձով բնակվում են 43 քառակուսի մետր բնակելի մակերես ունեցող բնակարանում: 2014 թվականին, որպես զոհված զինծառայողի ընտանիք, վերցվել են բնակարանային պայմանների բարելավման հաշվառման. հնչից հետո, բողոք ներկայացրած անձի պնդմամբ, Պաշտպանության նախարարությունից տեղեկացրել են, որ իրենց բնակարանային պայմանների բարելավման հարցը քննարկվել և մերժվել է:

Վերը նշվածի կապակցությամբ Պաշտպան գրությամբ դիմել և ստացել է նաև քաղաքացու բնակարանային հաշվառման հետ կապված Երևանի քաղաքապետարանի դիրքորոշումը: Նպատակահարմար չգտնելով տարեկան հաղորդմամբ ներկայացնել կոնկրետ անհատական բողոքի մանրամասները՝ Պաշտպանն, այնուամենայնիվ, հարկ է համարում ընդգծել, որ նշված դեպքում վեճ է ծագել համայնքի և Պաշտպանության նախարարության միջև: Մասնավորապես, համայնքի դիրքորոշմամբ՝ քաղաքացին բնակարանային պայմանների բարելավման շահառու է, իսկ Պաշտպանության նախարարության կարծիքով՝ ոչ<sup>771</sup>:

Հատկանշական է Պաշտպանության նախարարությունից ստացված պատասխանն այն մասին, որ իրականացված վարչարարության արդյունքում հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն չի տրվել թվով 24 շահառուի՝ որոնց փաստաթղթերը չեն համապատասխանել ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներին:

---

<sup>771</sup> Այս առումով կարևոր է արձանագրել, որ ինչպես ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն, այնպես էլ 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշումների համաձայն՝ անձին շահառու համարելու իրավասություն ունի միայն համայնքը, իսկ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովն իրավասու է համայնքի ներկայացրած ցուցակների հիման վրա իրականացնել բարելավում: Այլ կերպ ասած, ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման հարցերով զբաղվող հանձնաժողովն իրավասու չէ որոշել (այդ թվում՝ մերժել) անձի շահառու հանդիսանալու հանգամանքը:

Պաշտպանի այն հարցին, թե կոնկրետ որ լիազորության շրջանակներում է Պաշտպանության նախարարության բնակարանային հանձնաժողովը «մերժում» քաղաքացիների բնակարանային գործերը, պարզաբանվել է, որ այդ լիազորությունները սահմանված են ՀՀ պաշտպանության նախարարի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 931 և 2018 թվականի մարտի 26-ի թիվ 272 հրամաններով: Ընդ որում, նշված հրամաններով հաստատված կարգերի 4-րդ կետերի համաձայն՝ հանձնաժողովի անդամները յուրաքանչյուր բնակարանային գործի վերաբերյալ եզրակացություն ընդունում են բնակարանային գործերում առկա փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքում՝ քվեարկելով կողմ կամ դեմ:

Դեռևս 2020 թվականին Պաշտպանն ընդգծել է, որ անձին շահառու համարելու իրավասությունը Կառավարության որոշմամբ տրված է համայնքին, և Պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից համայնքի որոշումները «մերժելու» իրավասություն նախատեսված չէ: Հետևաբար, եթե նույնիսկ այդպիսի իրավասություն հանձնաժողովի համար նախատեսվել է Պաշտպանության նախարարի հրամանով, դա ինքնին խնդրահարույց է, քանի որ հրամանն այս պարագայում չի բխում Կառավարության որոշման պահանջներից:

Նշված վերլուծությամբ պայմանավորված՝ արդեն 2021 թվականին ներկայացված հարցադրմամբ Պաշտպանը խնդրել է նշել Նախարարության դիրքորոշումը Պաշտպանության նախարարի 2017 թվականի թիվ 931 և 2018 թվականի թիվ 272 հրամանների 4-րդ կետերով ամրագրված լիազորությունները Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմանը համապատասխանության վերաբերյալ:

Պաշտպանության նախարարությունը, սակայն, այս մասով որևէ դիրքորոշում չի արտահայտել:

**Այլ համակարգերի ծառայողների բնակարանային ապահովման խնդիր:** Պաշտպանը, նախ, կարևոր է համարում ընդգծել, որ 2021 թվականի ընթացքում վերջապես լուծվել է 2017-2020 թվականների տարեկան հաղորդումներով բարձրացված անհատական խնդիրներից մեկը:

**Այլ գորքերում** պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) կամ զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային ապահովման հարցի վերաբերյալ ներկայացված բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանը կայացրել է Մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում: Որոշմամբ արձանագրվել է, որ անձանց որոշակի արտոնություններ տրամադրելու (տվյալ դեպքում՝ բնակարանային հաշվառման վերցնելու) հանգամանքն անթույլատրելի է պայմանավորել տարբեր համակարգերի կազմում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած լինելու փաստի հետ: Նաև նշվել է, որ **միևնույն պետական մարմնի կողմից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչված, սակայն տարբեր համակարգերում ծառայություն անցած զինծառայողների համար ներպետական օրենսդրությամբ**

**բնակարանային ապահովման տարբեր կարգեր սահմանելը խնդրահարույց է, քանի որ հանգեցնում է միևնույն կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման:** Արդյունքում, առաջարկվել է՝ բողոք ներկայացրած անձին և բնակարանային հաշվառման՝ նմանատիպ մերժում ստացած մյուս անձանց ընտանիքներին վերականգնել բնակարանային հաշվառման հերթացուցակում և միջոցներ ձեռնարկել նրանց բնակարանային ապահովության ուղղությամբ:

**2021 թվականին քաղաքացին տեղեկացրել է Պաշտպանին, որ իրեն տրամադրվել է բնակարանի գնման վկայագիր:**

Նախորդ տարեկան հաղորդմամբ Պաշտպանն անդրադարձել է նաև այլ համակարգերի ծառայողների բնակարանային ապահովման խնդրին:

Օրինակ, Քրեակատարողական հիմնարկի նախկին ծառայողը տեղեկացրել է, որ չնայած նրան, որ ծառայության ընթացքում հաշվառվել է բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հերթացուցակում՝ սակայն իր բնակարանային ապահովության ուղղությամբ առ այսօր միջոցներ չեն ձեռնարկվել:

Քաղաքացին Պաշտպանին հասցեագրված բողոքին կցել է նաև դեռևս Քրեակատարողական վարչությունից 2012 թվականին ստացված պատասխանն այն մասին, որ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող քրեակատարողական ծառայողներին բնակարանով ապահովելու նպատակով հատկացումները 2012 թվականի պետական բյուջեում ներառելու վերաբերյալ առաջարկը չի ընդունվել: Արդեն 2019 թվականին, քաղաքացին Քրեակատարողական ծառայությունից ստացել է գրություն այն մասին, որ քրեակատարողական ծառայողներին բնակարաններ չեն հատկացվել, ներկայումս նման գործընթացներ չեն տարվում:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ինչպես 2017 թվականի դեկտեմբերի 16-ին ուժը կորցրած՝ «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքով, այնպես էլ գործող «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով քրեակատարողական ծառայողները բնակարանային ապահովության վերաբերյալ առկա կարգավորումների տեսանկյունից հավասարեցված են զինծառայողներին:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի թիվ 805-Ն որոշմամբ հաստատվել է Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության և Քրեակատարողական ծառայության համակարգերի զինծառայողների բնակարանային ապահովության կարգը, որի 5-րդ կետի համաձայն՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողների շրջանակը որոշվում և նրանց բնակարանային հաշվառումն իրականացվում է Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման համաձայն:

Ինչպես նշվել է վերևում, ՀՀ կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն և 2019 թվականի մայիսի 10-ի թիվ 540-Ն որոշումներով սահմանված կարգերի համաձայն՝ Պաշտպանության նախարարության համակարգի բնակարանային պայմանների բարելավման

կարիք ունեցող հաշվառված և սահմանված կարգով զինվորական ծառայությունից արձակված ՀՀ մարզերի թվով 199 նախկին զինծառայողների բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով ցուցաբերվել է անհատույց պետական ֆինանսական աջակցություն:

Այսպիսով, ստացվում է, որ չնայած օրենքով նախատեսված իրավունքի առկայությանը, Կառավարության որոշումներով անհրաժեշտ կարգավորումների սահմանված լինելուն և Պաշտպանության նախարարության համակարգի նախկին զինծառայողներին աջակցությունը տրամադրելուն՝ տարիներ շարունակ չլուծված է մնում մյուս համակարգերի զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման հարցը:

Կոնկրետ բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանը գրություններ է հասցեագրել Արդարադատության և Ֆինանսների նախարարություններ, սակայն խնդրի լուծման ուղղությամբ քայլեր դեռևս չեն ձեռնարկվել: Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է բողոքի քննարկումը:

**Բնակարանային ապահովման առաջնահերթության հետ կապված խնդիր:** ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշման համաձայն՝ բնակարանային ապահովումն իրականացվում է հաշվի առնելով հետևյալ առաջնահերթությունը՝ 1) զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներ, 2) 1-ին խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ, 3) 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ, 4) նախկինում հաշվառված (ՀՀ կառավարության նախկին որոշումներով<sup>772</sup>) 2-րդ, ինչպես նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներ: Միևնույն ժամանակ, Կառավարության նշված որոշմամբ սահմանված չէ բնակելի տարածություն չունեցող և բնակելի պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների բնակարանային ապահովումն իրականացնելու հաջորդականությունը:

Պաշտպանին հասցեագրած բողոքներից մեկի քննարկման շրջանակներում Պաշտպանության նախարարությունից ստացվել են պարզաբանումներ առ այն, որ շահառուների բնակարանային ապահովումն իրականացվում է ըստ վերոնշյալ առաջնահերթության՝ առանց տարբերակում դնելու բնակելի տարածություն չունեցող և բնակելի պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների միջև: Նշված հաջորդականությունից, սակայն, նաև պարզ չէ, թե **յուրաքանչյուր խմբի** շահառուների բնակարանային ապահովումն իրականացնելիս ինչպես է որոշվում՝ առաջին հերթին իրականացվում է բնակելի տարածություն չունեցող, թե բնակելի պայմանների բարելավման կարիք ունեցող շահառուների ապահովումը:

Խնդրի կապակցությամբ Պաշտպանն առաջարկել է Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հստակեցնել բնակարան չունեցող և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հերթականությունը, սակայն անհստակությունը դեռևս չի վերացվել:

<sup>772</sup> ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 9-ի թիվ 947-Ն և 2017 թվականի օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշումներ:

2021 թվականի ընթացքում Պաշտպանն արձանագրել է նաև վարժական հավաքների մասնակիցների բնակարանային ապահովման հետ կապված մի շարք խնդիրներ, որոնք մանրամասն կներկայացվեն սույն բաժնի համապատասխան գլխում:

Հետևաբար, առաջարկվում է.

1. շարունակական աշխատանքներ իրականացնել Պաշտպանության նախարարության հաշվեկշռում առկա բնակարանները բարեկարգելու, նոր շենքեր կառուցելու և դրանք կոմունալ ենթակառուցվածքներով ապահովելու ուղղությամբ,

2. Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և նախատեսել, որ վարձակալության գումարի փոխհատուցում նշանակելիս վարձակալած բնակարանում հաշվառված զինծառայողների նկատմամբ չի տարածվում մշտական բնակության հաշվառում չունենալու պայմանը,

3. նախատեսել պայմանագրային զինծառայողներին սեփականության իրավունքով ֆորմալ պատկանող բնակելի տարածություններում կամ հաշվառման վայրի բնակարաններում բնակվելու իրական հնարավորությունը պարզելու և դրանով պայմանավորված էլ վարձակալության գումարի փոխհատուցում տրամադրելու հարցը քննարկելու կառուցակարգ (մեխանիզմ)՝ անհրաժեշտության դեպքում կատարելով նաև օրենսդրական փոփոխություններ,

4. զինծառայողներին անհատույց օգտագործման իրավունքով բնակարան կամ բնակարանի վարձակալության դիմաց փոխհատուցում տրամադրելու աջակցության շահառու լինելու հարցը քննարկելիս և ծառայության վայրի վարչական տարածքից առնվազն 30 կիլոմետր հեռավորությամբ սեփականության իրավունքով բնակելի տարածություն կամ նույն հեռավորությամբ մշտական (փաստացի) հաշվառման վայր չունենալու հանգամանքը որոշելիս հիմք ընդունել ոչ թե փոստային կենտրոնների, այլ զինծառայողի բնակության վայրի և զորամասի միջև առկա փաստացի հեռավորությունը,

5. քննարկել 30 կիլոմետրից ավելի հեռավորությամբ բնակվող և վարձակալության գումարի փոխհատուցում չստացող անձանց բնակության վայրից մինչև զորամասից 30-րդ կիլոմետրն ընկած ճանապարհաձախսի փոխհատուցում տրամադրելու հարցը,

6. միջոցներ ձեռնարկել պայմանագրային զինծառայողներին բնակարանի վարձակալության դիմաց հատուցվող գումարի չափերը բարձրացնելու ուղղությամբ, իսկ վարձակալության գումարի փոխհատուցման փոխարեն հավելավճար տրամադրելու պարագայում՝ ի սկզբանե սահմանել զինծառայողների նշված կարիքները օբյեկտիվորեն բավարարող գումարի չափ,

7. բացառել առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պատճառով զորացրված զինծառայողներին, ինչպես նաև ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված (մահացած) կամ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքներին այլ բնակելի տարածությամբ ապահովված չլինելու դեպքում ծառայողական բնակարաններն ազատելու պահանջ ներկայացնելու պրակտիկան,

8. Կառավարության 2018 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 1321-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ առողջության, տարիքի, երկարամյա ծառայության կենսաթոշակի անցնելու պարճառով զորացրված զինծառայողները շարունակում են վարձակալության դիմաց դրամական փոխհատուցում ստանալ, եթե ՀՀ տարածքում ապահովված չեն բնակելի տարածությամբ,

9. «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն և երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային զինծառայողների համար,

10. երկարաժամկետ հիպոտեկային վարկավորման պետական նպատակային ծրագրերից օգտվելու հնարավորություն նախատեսել նաև Ազգային անվտանգության ծառայության, Քրեակատարողական ծառայության և Ոստիկանության ծառայողների համար՝ ապահովելով «Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նրանց տրված արտոնությունից օգտվելու հնարավորությունը,

11. քննարկման առարկա դարձնել երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերած սպաների մտահոգությունը հիպոտեկային ծրագրի նպատակահարմարության հետ կապված՝ անհրաժեշտության դեպքում նրանց համար մշակելով հատուկ կարգավորումներ,

12. Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն՝ նախատեսելով, որ ֆինանսական աջակցություն տրամադրելու համար հասանելիք սենյակների թիվը որոշելիս բնակարանային պայմանների բարելավման հաշվառման ցուցակում ընդգրկված անձինք հաշվի են առնվում՝ անկախ հաշվառումից հետո նրանց մահվան կամ կարգավիճակի փոփոխություններից,

13. կատարել ուսումնասիրություններ՝ հավաստիանալու, որ Երևան քաղաքում բնակարանային հաշվառման մեջ գտնվող նախկին զինծառայողները Կառավարության 2007 թվականի մարտի 7-ի թիվ 384-Ն որոշմամբ նախատեսված աջակցության չափի շրջանակներում իրական հնարավորություն ունեն ձեռք բերել բնակության համար նվազագույն պայմաններ ունեցող բնակարան,

14. շահառուների բնակարանային գործերը քննարկելիս բացառել նրանց հաշվառման վերցնելու վարչական ակտն ընդունման օրվանից 10 տարի անց փաստացի անվավեր ճանաչելու պրակտիկան՝ ապահովելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի դրույթի կիրարկումը,

15. բացառել Պաշտպանության նախարարության կենտրոնական բնակարանային հանձնաժողովի կողմից Կառավարության որոշմամբ չնախատեսված գործառույթի՝ համայնքի կողմից ներկայացված բնակարանային գործերի «մերժում» իրականացնելու պրակտիկան,

16. միջոցներ ձեռնարկել ծառայության ընթացքում հաշվառված մյուս համակարգերի զինծառայողների բնակարանային ապահովման ուղղությամբ,

17. ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հստակեցնել բնակարան չունեցող և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող անձանց հերթականությունը:

## 2. **Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը**

Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի պատշաճ ապահովումը սերտորեն կապված է նաև արժանապատիվ կենսամակարդակի իրավունքի հետ: Չնայած կենսաթոշակային ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական իրավական կարգավորումներին՝ Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է ստանալ կենսաթոշակի իրավունքի իրացման հետ կապված բողոքներ:

Բողոքները հիմնականում վերաբերել են զինվորական կենսաթոշակի նշանակման գործընթացի ձգձգումներին, զինվորական կենսաթոշակի չափը սխալ հաշվարկելուն, երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելուն և այլն:

Բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ մասնակցել է 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած մարտական գործողություններին, ստացել վիրավորում, որից հետո իր նկատմամբ սահմանվել է հաշմանդամություն, և 8 ամիս շարունակ ստացել է հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ: Քաղաքացին հայտնել է, որ հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու նպատակով տարբեր պետական մարմիններից ստացել է մի շարք փաստաթղթեր: Այդ գործընթացը եղել է տևական, ինչի պատճառով էլ հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակի փոխարեն հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվել է 8 ամիս անց:

Քաղաքացին խնդրել է աջակցել իր նկատմամբ հաշմանդամություն սահմանելու օրվանից հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու հարցում:

Անհրաժեշտ է նշել, որ մարտական գործողություններից հետո Մարդու իրավունքների պաշտպանը նման բովանդակությամբ բազմաթիվ բողոքներ է ստացել: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ ՊՆ թեժ գծին ևս ստացվել են բողոքներ<sup>773</sup>:

Խնդիրը կայանում է նրանում, որ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը հիվանդության, վնասվածքի կամ խեղման՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի

<sup>773</sup> Ըստ Պաշտպանության նախարարության տվյալների՝ նախկին զինծառայողներին կամ նրանց ընտանիքի անդամներին զինվորական կենսաթոշակի (այդ թվում՝ կերակրողին կորցնելու դեպքում) նշանակման գործընթացի ձգձգումների վերաբերյալ ՀՀ ՊՆ թեժ գծով ստացվել է 176 բողոք: Աշխատանքային կարգով քննարկվել է յուրաքանչյուր դեպք, որի արդյունքում պարզ է դարձել, որ խնդիրը մեծամասամբ պայմանավորված է եղել պատճառահետևանքային կապի ուշ տրամադրման հետ:



վերաբերյալ վերջնական եզրակացություն չէր կայացնում՝ նշելով, որ իրականացվում է քննություն (քրեական վարույթ): Արդյունքում, քաղաքացին հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու խնդիրների էր բախվում: Գործնականում հարցը լուծվում էր հետևյալ կերպ. քաղաքացին այցելում էր քննչական կոմիտե, այնտեղից ստանում տեղեկանք այն մասին, որ իր նկատմամբ քրեական հետապնդում չի իրականացվում: Այդ տեղեկանքը ներկայացնում էր Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով, ստանում պատճառական կապի վերաբերյալ վերջնական եզրակացություն, դա ներկայացնում իրավասու մարմին և միայն դրանից հետո հաշմանդամության կենսաթոշակի տեսակը աշխատանքայինից փոխվում էր զինվորականի: Հաճախ, այդ ամբողջ գործընթացը ձգվում էր տևական ժամանակ:

Ճիշտ է, Պաշտպանին հասցեագրվող կոնկրետ բողոքների ուսումնասիրության ու քննարկման, հաճախ արագ արձագանքման շրջանակում Քննչական կոմիտեի ու Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի հետ համագործակցությամբ քաղաքացիների բարձրացրած հարցերին հրատապ լուծումներ են տրվել, սակայն խնդիրը համակարգային լուծման անհրաժեշտություն ունի:

Վերը նկարագրված կոնկրետ դեպքում, բողոքի քննարկման արդյունքում քաղաքացուն լրավճարի տեսքով վճարվել է զինվորական կենսաթոշակը՝ սկսած հաշմանդամություն սահմանելու օրվանից:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ զինվորական կոնսաթոշակի չափի սխալ հաշվարկի վերաբերյալ: Բողոքների կապակցությամբ անհրաժեշտ պարզաբանումների պահանջով և վերահաշվարկ կատարելու առաջարկներով գրություններ են հասցեագրվել Պաշտպանության նախարարություն: Ստացված պարզաբանումները ներկայացվել ու քննարկվել են քաղաքացիների հետ: Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ 2021 թվականի ընթացքում զինվորական կենսաթոշակի չափը վերահաշվարկելու վերաբերյալ ՀՀ ՊՆ թեժ գծով ստացվել է 55 բողոք, որից միայն 3-ի դեպքում է պահանջը իրավաչափ եղել և աշխատանքային կարգով խնդիրը կարգավորվել է:

Հաջորդ խնդիրը վերաբերում է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածը հաշվի չառնելուն:

Այսպես, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ է նշանակվում համապատասխան մարմիններում, ինչպես նաև քրեակատարողական և դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայություններում ծառայությունը կարգավորող օրենքներով սահմանված կարգով և ժամկետներով ծառայած այն անձին (այսուհետ՝ զինծառայող), ով զինվորական ծառայությունից սահմանված կարգով արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 20 օրացուցային տարվա զինվորական ծառայության ստաժ կամ սահմանային տարիքը լրանալու կապակցությամբ, կամ պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ

(սահմանային տարիքը լրացած լինելու դեպքում) զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս, կամ հաստիքների կրճատման կամ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայությունից արձակվելու օրվա դրությամբ առնվազն 45 տարեկան է և ունի առնվազն 25 օրացուցային տարվա աշխատանքային ստաժ, որում զինվորական ծառայության ստաժը կազմում է առնվազն 12 օրացուցային տարի, 6 օրացուցային ամիս:

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ զինծառայողներին երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկով հաշվառվում են համապատասխան մարմինների համակարգերի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմերի պաշտոններում զինծառայության, քրեակատարողական ծառայողի և հարկադիր կատարողի ծառայության, ինչպես նաև համապատասխան մարմինների ուսումնական հաստատություններում ուսման ժամանակահատվածները՝ անկախ զինվորական կամ հատուկ կոչման առկայությունից:

**Ստացվում է՝ եթե անձն անցել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայությունը, որի ընթացքում որոշակի ժամանակ եղել է կադրերի տրամադրության տակ, չի կարող օգտվել իր նկատմամբ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ նշանակվելու իրավունքից, քանի որ գործող օրենսդրական կարգավորումների պարագայում կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածը զինվորական ծառայության ստաժում չի հաշվարկվում:**

Մինչդեռ, օրենսդրության, մասնավորապես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 13-րդ և 15-րդ մասերի վերլուծությունը հիմք է տալիս պնդում անելու, որ օրենսդրի տրամաբանությամբ՝ **որոշակի (օրենքով սահմանված) հիմքերով կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածում անձը պետք է ստանա դրամական ապահովում, ուստի անտրամաբանական է նշված ժամկետը զինվորական ծառայությունում չհաշվարկելը:**

Երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը հաշվի չառնելու խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքով քաղաքացին դժգոհություն է ներկայացրել այն մասին, որ օրենքի պատճառով երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայություն չհամարվող

աշխատանքային ստաժը հաշվի չի առնվում: Այս խնդրին Մարդու իրավունքների պաշտպանը անդրադարձ է կատարել 2018-2020 թվականների տարեկան հաղորդմամբ<sup>774</sup>:

Հարցը կայանում է հետևյալում. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկվում է  $Կ = Հ \times 2ԱԳ + 2Ս \times 2Ա$  բանաձևով, որտեղ՝ Կ-ն կենսաթոշակի ամսական գումարն է, Հ-ն՝ հիմնական կենսաթոշակի չափը, 2Ս-ն՝ զինվորական ծառայության ստաժի տարիները, 2Ա-ն՝ զինվորական ծառայության ստաժի մեկ տարվա արժեքը, 2ԱԳ-ն՝ զինծառայողի զբաղեցրած վերջին պաշտոնի համար «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված գործակիցը:

**Ստացվում է, որ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակը հաշվարկելիս որևէ կերպ հաշվի չի առնվում անձանց զինվորական ծառայություն չհամարվող աշխատանքային ստաժը:**

Ներկա իրավակարգավորումների պարագայում հավասարաչափ կենսաթոշակ են ստանում ինչպես միայն երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, այնպես էլ նույն ժամկետով երկարամյա զինվորական ծառայություն անցած անձինք, ովքեր, բացի զինվորական ծառայությունը, կատարել են նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք: Հետևաբար, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հավասար պայմաններում զինվորական ծառայություն անցած անձանց չի կարող հավասար չափի կենսաթոշակ նշանակվել, եթե նրանցից մեկը կատարել է նաև զինվորական ծառայություն չհամարվող այլ աշխատանք:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանել է, որ նշված առաջարկությունն էապես կավելացնի կենսաթոշակային ապահովության համակարգի ծախսերը: Նշվել է, որ անհրաժեշտ լրացուցիչ միջոցները ներկա պահին հնարավոր չէ հաշվարկել՝ ելակետային տվյալների բացակայության պատճառով: Նշվել է, որ խնդրին հնարավոր է անդրադառնալ առաջիկայում՝ կենսաթոշակային ապահովության համակարգի ֆինանսավորմանը հատկացվող միջոցների չափը հստակեցնելու, ինչպես նաև ոլորտում վարվող քաղաքականության թիրախային նպատակադրումներն ու ծախսային առաջնահերթությունները որոշելու աշխատանքների շրջանակներում:

Պետք է նշել, որ խնդիրը դեռևս չի կարգավորվել և Մարդու իրավունքների պաշտպանը շարունակում է ստանալ բողոքներ:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝*

1. *օրենսդրական փոփոխությունների արդյունքում զինծառայողներին երկարամյա ծառայության կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ զինվորական ծառայության ստաժում օրացուցային հաշվարկում ներառել նաև հաստիքների կրճատման, այդ թվում՝ ստորաբաժանման*

<sup>774</sup> Տե՛ս, օրինակ, 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 1059:

լուծարման կամ հիվանդանոցային բուժման մեջ գտնվող պայմանագրային զինծառայողի՝ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելու կամ պայմանագրային զինծառայողին այլ պետական մարմիններ տեղափոխելու ժամանակահատվածները: Զինվորական ծառայության ստացում օրացուցային հաշվարկում ներառել նաև արձակուրդում (բացառությամբ երեխայի խնամքի համար արձակուրդի) կամ գործուղման մեջ գտնվող զինծառայողների, ինչպես նաև սույն օրենքով սահմանված կարգով վեց ամիսը գերազանցող ժամկետով ռազմաուսումնական (կամ առկա ուսուցմամբ ոստիկանական ուսումնական) հաստատություններ, համապատասխան սպայական կամ սերժանտական դասընթացներ, ասպիրանտուրա, դոկտորանտուրա, կլինիկական օրդինատուրա կամ ինտերնատուրա ընդունվելու կամ << կամ այլ պետության ռազմաուսումնական կամ այլ հաստատությունում վերապատրաստման գործուղվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված լինելու և կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածները,

2. կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություն, որի շնորհիվ հնարավոր կլինի երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակի չափը հաշվարկելիս զինվորական ծառայության ստացի որոշակի տոկոսի չափով հաշվի առնել նաև անձանց՝ զինվորական ծառայության ժամանակահատված չհամարվող աշխատանքային ստաժը,

3. խստացնել հսկողությունը զինվորական կենսաթոշակ նշանակելու գործընթացի, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելիս այն սահմանված չափերին համապատասխան հաշվարկելու նկատմամբ՝ բացառելու համար գործնականում հանդիպով թե՛ ձգձգումները, թե՛ հասանելիք չափերով հաշվարկներից շեղումները:

### **3. Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու պրակտիկան**

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու հարցում մարդիկ բախվում են խնդիրների:

Մասնավորապես, գործող օրենսդրությամբ՝ մարտական գործողության մասնակցի կարգավիճակ հնարավոր է տրամադրել բացառապես 1989-1994 թվականների ընթացքում և ոչ պակաս, քան 3 ամիս ընդհանուր տևողությամբ մարտական գործողությունների մասնակցած անձանց: Քանի որ 3 ամսից ոչ պակաս մասնակցության կանոնն ընդհանուր է, ստացվում է, որ 2016 թվականի ապրիլի, 2020 թվականի հուլիսի, նույն թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների մարտական գործողություններին մասնակցած քաղաքացիներին գործող իրավակարգավորումներով մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ չի կարող տրամադրվել:

Նշված խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ<sup>775</sup>, ինչպես նաև գրություններ հասցեագրել Ազգային ժողովի պաշտպանության

<sup>775</sup> <https://ombuds.am/am/site/ViewNews/1873>

և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով և Պաշտպանության նախարարություն: Ազգային ժողովում բարձրացված հարցերը մնացել են անարձագանք: Պաշտպանության նախարարությունից ստացել է պատասխան այն մասին, որ 2016 թվականի ապրիլյան, 2020 թվականի հուլիսյան և 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողություններին մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելու հարցի առնչությամբ Պաշտպանության նախարարությունում տեղի են ունեցել մի շարք քննարկումներ, որոնց ընթացքում ներկայացվել են խնդրի լուծմանն ուղղված տարբեր ուղիներ, մոտեցումներ, մշակվել և շրջանառվել է նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու» հայեցակարգային փաստաթղթի նախագիծ, սակայն վերջնական որոշում դեռևս չի կայացվել<sup>776</sup>:

Սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում Մարդու իրավունքների պաշտպանը լրացուցիչ հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե արդյոք քննարկվում է 2016 թվականի ապրիլին, 2020 թվականի հուլիսին և նույն թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարտական գործողություններին, ինչպես նաև 2021 թվականին տեղի ունեցած սահմանային միջադեպերի ընթացքում հակառակորդի հետ շփման գծում ծառայություն իրականացրած քաղաքացիներին համապատասխան կարգավիճակ տրամադրելու հարցը, եթե այո՝ ինչ կոնկրետ մեխանիզմներ ու չափորոշիչներ են մշակվել: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ համապատասխան կարգավիճակ տալու վերաբերյալ կայացվել են միջանկյալ որոշումներ, որոշակի ժամկետներով:

Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշմամբ՝ խնդրի խորքային լուծման, սոցիալական արդարության ապահովման, մարտական գործողություններին մասնակցած քաղաքացիների իրավունքների ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է գտնել արագ ու կոնկրետ լուծումներ, քանի որ անձին մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տրամադրելն ինքնանպատակ չէ. այն ունի որոշակի սոցիալական ուղղվածություն և, ըստ էության, նշված կարգավիճակն անձի համար հիմք է որոշակի արտոնություններից և սոցիալական ապահովության միջոցներից օգտվելու համար: Նրանք պետական բյուջեի միջոցների հաշվին ապահովվում են որակյալ բժշկական օգնությամբ, ունեն բնակարանային ապահովության, քաղաքային ուղևորատար տրանսպորտի բոլոր տեսակներից՝ անկախ սեփականության ձևից (բացի տաքսիից), անվճար երթևեկելու, դրամական աջակցության, զինվորական կենսաթոշակի իրավունք:

<sup>776</sup> Պաշտպանության նախարարությունը միաժամանակ նշել է, որ 2016թ. ապրիլյան, 2020թ. հուլիսյան և 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների ժամանակ զոհված (մահացած), գտնվելու վայրն անհայտ լինելու պատճառով դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամները, ինչպես նաև հաշմանդամ դարձած նախկին զինծառայողները և (կամ) կամավորագրված անձինք 2020-2021թթ. ընթացքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված մի շարք սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվում են անկախ զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած, կամ դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված նախկին զինծառայողի կամ կամավորագրված անձի՝ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ունենալու հանգամանքից:

Դեռևս առկա է խնդիր այն դեպքում, երբ անձը նոր է ցանկանում ստանալ մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ: Բանն այն է, որ «Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը մասնակցած անձանց մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ տալու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 1664-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 10-րդ կետով սահմանվում են փաստաթղթերի ցանկը, որոնք անձը պետք է ներկայացնի միջգերատեսչական հանձնաժողով, այդ թվում՝ *մարտական գործողություններին մասնակցած հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, սահմանված կարգով գրանցված կամավորական ջոկատների կազմում գտնվելու մասին փաստաթուղթ, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ:*

Մինչդեռ, բազմաթիվ դեպքերում անձինք մարտական գործողություններին մասնակցած լինելու փաստը հավաստող փաստաթղթերը (օրինակ՝ ստաժն արտոնյալ պայմաններով հաշվարկելու համար) նախկինում արդեն իսկ ներկայացրած են լինում, և օբյեկտիվ պատճառներով այլևս անհնար է լինում դրանք կրկին ներկայացնել:

Մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար նախկինում ներկայացված փաստաթղթերը կրկին չներկայացնելու անհրաժեշտության հարցին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների նախորդ տարեկան հաղորդմամբ:

*Վերը նշվածի հաշվառմամբ անհրաժեշտ է.*

1. *օրենսդրական փոփոխությունների միջոցով սահմանել, որ եթե անձը նախկինում արդեն իսկ ներկայացրել է հրամանատարի կողմից տրված մարտական ուղի, սահմանված կարգով գրանցված կամավորական ջոկատների կազմում գտնվելու մասին փաստաթուղթ, մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի պատճառական կապը հաստատող փաստաթուղթ, և դրանք իրավական հետևանք են առաջացրել, ապա մարտական գործողությունների մասնակցի կարգավիճակ ստանալու համար նա այլևս չի ներկայացնում նույն փաստաթղթերը,*

2. *2016 թվականի ապրիլին, 2020 թվականի հուլիսին և նույն թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարտական գործողություններին, ինչպես նաև 2021 թվականին տեղի ունեցած սահմանային միջադեպերի ընթացքում հակառակորդի հետ շփման գծում ծառայություն իրականացրած քաղաքացիներին համապատասխան կարգավիճակ տրամադրելու համար մշակել կոնկրետ մեխանիզմներ ու չափորոշիչներ:*

#### **4. Զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովումը**

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումն ապահովելը: Դա նաև ընդգծվում է Պաշտպանի՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց

իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող հաստատության կարգավիճակով:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությամբ վեր հանված խնդիրները ևս մեկ անգամ փաստում են, որ զինվորական հաշմանդամություն ունեցող անձինք իրենց իրավունքների իրացման դժվարությունների առաջ են կանգնում: Արձանագրված հիմնական խնդիրները վերաբերում են՝ 1) զինվորական ծառայության հետ հաշմանդամության պատճառական կապը չհաստատելուն, 2) բնակարանային պայմանների բարելավման հերթացուցակում հաշվառված հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողներին բնակարան չտրամադրելուն, 3) զորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չլինելուն, 4) զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց միջև տարբերակված մոտեցում դրսևորելուն և այլն:

Բազմական գործողությունների պատճառով ավելացել են մեր այն հայրենակիցների թիվը, ովքեր ձեռք են բերել հաշմանդամություն: Դա էլ իր հերթին առավել արդիական է դարձրել նրանց կարիքների, այդ թվում՝ խնամքի ծառայությունների, սոցիալական աջակցության, հասարակություն վերահիստեգրվելու խնդիրների արագ արձագանքման ապահովման հրամայականը:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին շարունակել են հասցեագրվել բողոքներ զինծառայողների, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը որոշելու գործընթացի ձգձգումների վերաբերյալ: Այս խնդիրը բարձրացվել էր նաև Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ:

Պետական իրավասու մարմիններից ստացված պարզաբանումների համաձայն՝ զինծառայողների ստացած վիրավորումների կապակցությամբ բոլոր դեպքերով քրեական վարույթի շրջանակներում իրականացվում է քննություն՝ պարզելու համար, թե արդյոք վնասվածքը կամ խեղումը կամ դրանց հետևանքով ստացած հիվանդությունը զինծառայողի կողմից կատարված կանխամտածված օրինազանցության հետևանք է: Միայն այդ հանգամանքների պարզումից հետո ՀՀ ՊՆ կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը կարող է պատճառական կապի վերաբերյալ որոշում կայացնել:

Ստացվում է, որ պետական մարմինները առաջնորդվում են «մեղավորության կանխավարկածով»՝ դրանով սահմանափակելով զինծառայողի հիվանդության, վնասվածքի, խեղման կապակցությամբ պատճառական կապի տրամադրման հնարավորությունը, ինչը խոչընդոտում է, օրինակ, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունքի ձեռքբերման գործընթացին<sup>777</sup>:

<sup>777</sup> Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 74-րդ կետը սահմանում է, որ զինված ուժերի շարքերը լքող պրոֆեսիոնալ ծառայողները պետք է ապահովված լինեն փոխհատուցումների համապատասխան փաթեթներով և ծրագրերով, որոնք կօգնեն նրան նախապատրաստվել քաղաքացիական կյանքին:

Դեռևս 2020 թվականին նշված խնդիրը քննարկվել էր Քննչական կոմիտեի իրավասու ներկայացուցչի հետ: Արդյունքում, որոշում էր կայացվել 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած մարտական գործողություններին մասնակցելիս վիրավորում ստացած զինծառայողներին քրեական գործի շրջանակներում ճանաչել տուժող, որը նրանց հնարավորություն կընձեռի ստանալ պատճառական կապի վերաբերյալ եզրակացություն: Դրանից հետո, Քննչական կոմիտեի իրավասու ներկայացուցիչը լրացուցիչ հայտնել է, որ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովին առաջարկվել է վիրավորում ստացած զինծառայողների տվյալները, ում վերաբերյալ փորձաքննական վերջնական եզրակացություն չի ներկայացվել քրեական վարույթի պատճառով, տրամադրել Քննչական կոմիտեին: Այդ եղանակով հնարավոր կլինի համակարգային լուծում տալ քաղաքացիների բարձրացրած խնդիրներին, և նրանք կկարողանան ստանալ պատճառական կապի վերաբերյալ եզրակացություն: Մինչդեռ, Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովից այդ տվյալները չեն փոխանցվել Քննչական կոմիտե: Սա մտահոգիչ է այն առումով, որ հիվանդության, խեղման, վնասվածքի պատճառական կապը զինվորական ծառայության հետ հաստատված չլինելու պատճառով մարդիկ երբեմն ամիսներ շարունակ չեն կարողանում ստանալ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ (ստանում են հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ): Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով, օրինակ, պատերազմին մասնակցած, վիրավորում ստացած և հաշմանդամության 2-րդ խումբ ունեցող քաղաքացին մի քանի ամիս չի կարողացել ստանալ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, քանի որ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը վերջնական եզրակացություն չի ներկայացրել և նշել է, որ իրականացվում է քննություն (քրեական վարույթ): Կոնկրետ դեպքում, քաղաքացին ստացել է հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ, որը զգալի չափով ավելի պակաս է, քանի զինվորականը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկման արդյունքում քաղաքացու նկատմամբ սահմանվել է զինվորական հաշմանդամություն, ավելին՝ նրան լրավճարի տեսքով վճարվել է նաև նախորդ ամիսների զինվորական կենսաթոշակը:

Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ հիվանդության, խեղման, վնասվածքի պատճառական կապը զինվորական ծառայության հետ հաստատված լինելու պարագայում անձի նկատմամբ հաշմանդամության խումբ սահմանելն ինքնանպատակ չէ: Դրանով պետությունը հստակեցնում է ստանձնած պարտավորությունների շրջանակը իր քաղաքացու հանդեպ՝ նրան տրամադրելով սոցիալական ու իրավական լրացուցիչ պաշտպանության երաշխիքներ<sup>778</sup>:

<sup>778</sup> Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկությունների՝ 2020 թվականի պատերազմի հետևանքով վիրավորում ստացած 1953 անձ ենթարկվել է բժշկասոցիալական փորձաքննության, նրանցից 463-ը հաշմանդամ չեն ճանաչվել, 113 անձի սահմանվել է հաշմանդամության առաջին խումբ, 396 անձի՝ հաշմանդամության երկրորդ խումբ, 981 անձի՝ հաշմանդամության երրորդ խումբ: Հաշմանդամ ճանաչվածներից 166 անձի մոտ հաշմանդամության պատճառ է սահմանվել ընդհանուր հիվանդությունը, 5 անձի՝ ՀՀ սահմանները պաշտպանելիս ստացած վնասվածքը, 11 անձի՝ հիվանդությունը կամ վնասվածքը ստացել է



2021 թվականի ընթացքում բազմաթիվ զորամասեր այցերը ևս մեկ անգամ փաստում են, որ զորամասային պայմանները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցված չեն: Խնդիրն այն է, որ զորամասերում հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են մի շարք խնդիրների, օրինակ, տեղաշարժի, սանհանգույցից օգտվելու, լրացուցիչ ֆիզիկական ծանրաբեռնվածություն պահանջող ծառայության ներգրավելու և այլն: Հարկ է նկատի ունենալ, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական մատչելի միջավայրի ապահովումն առաջնային է նրանց կողմից իրենց իրավունքներից օգտվելու տեսանկյունից:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների անխոչընդոտ իրացումը երաշխավորում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական չափորոշիչներով:

Այսպես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 9-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ **հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի մատչելիությունը**: Ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար պետք է ապահովվի կառույցների, ճանապարհների, բացօթյա և փակ հաստատությունների, այդ թվում՝ աշխատավայրերի մատչելիությունը:

Կոնվենցիայի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող անձն ունի այլ անձանց հետ հավասար հիմունքներով աշխատանքի իրավունք, որը, ի թիվս այլնի, ներառում է **բաց, ընդգրկուն ու մատչելի աշխատանքային միջավայր ունենալու իրավունքը**:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների<sup>779</sup> սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածն արգելում է բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի շրջանների ձևավորումը, նախագծային լուծումների մշակումը, շենքերի, կառուցվածքների շինարարությունն ու վերակառուցումը, եթե դրանք հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության և օգտագործման համար:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի թիվ 405-Ն որոշման 1-ին հավելվածի 120-րդ կետը սահմանում է, որ զորամասի հրամանատարը զինծառայողի համար ապահովում է նրա առողջական վիճակին համապատասխան ծառայողական այնպիսի պայմաններ, որոնք, չնայած

---

զինվորական ծառայության ընթացքում, 1308 անձի՝ վնասվածքը ստացել է հակառակորդի հետ շփման գծում՝ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով:

<sup>779</sup>Սույն հաղորդման սույն բաժնում «հաշմանդամ» եզրույթն օգտագործվում է բացառապես այն դեպքում, երբ հղում է կատարվում գործող իրավական ակտերի դրույթներին: Նշյալ եզրույթի օգտագործումը խնդրահարույց է և չի ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության հարգման երաշխիքների իրացումը, քանի որ այն գնահատողական է և պիտակավորում է հաշմանդամություն ունեցող անձին: Բոլոր այն դեպքերում, երբ սույն բաժնում հղում չի կատարվում իրավական ակտին, օգտագործվում է «հաշմանդամություն ունեցող անձ» եզրույթը:

զինծառայողի առողջական սահմանափակումներին, հնարավորություն կընձեռեն նրան շարունակել ծառայությունն իր պաշտոնում:

**Հետևաբար, հաշմանդամություն ունեցող զինծառայողի համար պետք է ապահովել ծառայողական այնպիսի պայմաններ, այդ թվում՝ կենցաղային, որոնք ֆիզիկական միջավայրը նրա համար կդարձնեն առավելագույն մատչելի և կբացառեն ծառայողական պայմաններով պայմանավորված առողջական վիճակի վատթարացումը:**

Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացրել էր մի խնդիր, որը վերաբերում է ԽՍՀՄ զինված ուժերի և ՀՀ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց միջև տարբերակված մոտեցման դրսևորմանը: Պաշտպանը ինչպես տարեկան հաղորդմամբ, այնպես էլ կարծիքի ներկայացված համապատասխան նախագծերով մշտապես առաջարկել է վերացնել տարբերակված մոտեցումը: Խնդիրը պայմանավորված է ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 668-Ն (ուժը կորցրել է 2021 թվականի փետրվարի 10-ին) և դրա փոխարեն ընդունված՝ 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշումներով:

Այսպես, Կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում **միայն 1-ին և 2-րդ խմբի** հաշմանդամություն ունեցող անձինք են ստանում 5000 և 3000 ՀՀ դրամ չափերով պարգևավճար, **իսկ 3-րդ խմբի համար՝ պարգևավճար սահմանված չէ**<sup>780</sup>:

Մինչդեռ, նույն կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ պարգևավճար ստանում են համապատասխան պետական մարմիններում զինվորական ծառայության ընթացքում 1-ին, 2-րդ և **3-րդ խմբի** հաշմանդամություն ունեցող անձինք՝ համապատասխանաբար՝ 19000, 17000, 15000 ՀՀ դրամ չափերով:

**Մի կողմ թողնելով պարգևավճարի տարբեր չափերը՝ ստացվում է, որ Կառավարության նշված որոշումը փաստորեն տարբերակված մոտեցում է ցուցաբերում ԽՍՀՄ զինված ուժերի և ՀՀ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամություն ձեռք բերած անձանց միջև՝ ԽՍՀՄ զինված ուժերի կազմում 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց դեպքում չսահմանելով պարգևավճար**<sup>781</sup>:

<sup>780</sup> «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների ամենամյա պարգևավճարի չափերը, պարգևավճար նշանակելու և վճարելու կարգը, պարգևավճար նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ կարծիք ներկայացնելիս՝ Պաշտպանն առաջարկել է պարգևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում նաև 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար: ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշմամբ նշված առաջարկը չի իրացվել, և խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

<sup>781</sup> «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների միջև զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական երաշխիքների մասին» 1992 թվականի փետրվարի 14-ի համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝

Դեռևս նախորդ տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ դեղորայքը չտրամադրելու վերաբերյալ խնդիր, երբ 2-րդ խմբի զինվորական հաշմանդամություն ունեցող անձի համար մայրը չէր կարողանում բուժման համար կոնկրետ տեսակի թանկարժեք դեղորայք գնել: Խնդրի հետ կապված էլ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել էր, որ քաղաքացու բուժման համար պահանջվող դեղերը ներառված չեն ՀՀ առողջապահության նախարարի 2018 թվականի մարտի 17-ի թիվ 07-Ն հրամանով հաստատված հիմնական դեղերի ցանկում, հետևաբար ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում դրանք կիրառություն չունեն:

Պաշտպանը ևս մեկ անգամ է նշում, որ զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց բարձրացրած հատկապես առողջական վիճակի վերաբերյալ հարցերը զուտ ֆորմալ կարգավորմամբ և իրավական ակտերին մեխանիկական վկայակոչմամբ մերժելու պրակտիկան խնդրահարույց է: Առավել ևս, որ Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերի և ներպետական օրենսդրության ուսումնասիրությամբ կարող ենք փաստել, որ պետությունը հաշմանդամություն ունեցող (և հատկապես զինվորական) անձանց համար առանձնահատուկ վերաբերմունք է դրսևորում: Քաղաքացի-պետություն հարաբերություններում գործ ունենք ուղղահայաց պատասխանատվության և սոցիալական արդարության ճիշտ բաշխման հետ, որի շրջանակում էլ պետությունը զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց համար ստանձնում է լրացուցիչ սոցիալական երաշխիքների ապահովման պարտավորություն: Ուստի, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում զինվորական հաշմանդամություն ունեցող անձի բարձրացրած խնդրին պետք է ցուցաբերել անհատական, բազմակողմանի ու առավել ճկուն մոտեցում, և ոչ թե պարզապես վկայակոչվի իրավական ակտի դրույթը և փոխարենն այլ լուծում չառաջարկվի:

Շարունակում է արդիական մնալ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման հարցը<sup>782</sup>:

Սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների ընթացքում Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե քանի պայմանագրային զինծառայող և/կամ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողի ընտանիքների անդամ է ստացել բնակարան կամ դրամական աջակցություն բնակարանային պայմանների բարելավման համար:

---

զինծառայողները, զինվորական ծառայությունից զորացրված և Համագործակցության մասնակից պետությունների տարածքներում բնակվող անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամներն օգտվում են նախկին ԽՍՀ Միության օրենքներով և այլ նորմատիվ ակտերով սահմանված իրավունքների և արտոնությունների մակարդակից: Նույն հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների նշված իրավունքների և արտոնությունների միակողմանի սահմանափակումներ չեն թույլատրվում: Իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերությամբ սահմանվել է, որ Համագործակցության մասնակից պետություններն իրավունք ունեն միջոցներ ձեռնարկել զինծառայողների, զինվորական ծառայությունից զորացրված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ուժեղացման համար:

<sup>782</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային ապահովման խնդրին անդրադարձ է կատարվել նաև սույն գլխի «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների բնակարանային ապահովումը» պարագրաֆում:

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ ՊՆ համակարգի զոհված (մահացած) զինծառայողների թվով 87 ընտանիքների տրամադրվել է բնակարանի գնման վկայագրեր<sup>783</sup>:

Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման վերաբերյալ: Բողոքներով զինվորական հաշմանդամություն ունեցող նախկին զինծառայողները հայտնել են, որ հաշվառված լինելով որպես բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր՝ դեռևս բնակարան չեն ստացել:

Հատկանշական է, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշակվել են զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ տրամադրելու առաջարկներ<sup>784</sup>, որոնց իրական շահառուներ կարող են լինել նաև հաշմանդամություն ունեցող զինծառայողները: Առաջարկները ներկայացվել են Ազգային ժողով և Պաշտպանության նախարարություն: Այս հարցով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել և հրապարակվել է նաև արտահերթ զեկույց<sup>785</sup>:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է.*

*1. հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար ապահովել առողջական վիճակի համադրելի այնպիսի ծառայողական պայմաններ (օրինակ՝ սանհանգույց, թեքահարթակ և այլն), որոնք ֆիզիկական միջավայրը նրա համար մատչելի դարձնելուն զուգահեռ՝ կբացառեն ծառայողական պայմաններով պայմանավորված առողջական վիճակի վատթարացումը,*

*2. ապահովել նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող զորամասերի, ենթակառուցվածքների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող զինծառայողների համար,*

*3. հաշմանդամություն ունեցող զինծառայողների բարձրացրած առողջական վիճակի վերաբերյալ խնդիրներին (այդ թվում դեղորայք փրամադրելու վերաբերյալ) յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ցուցաբերել անհատական, բազմակողմանի ու առավել ճկուն մոտեցում՝ չսահմանափակվելով զուտ ֆորմալ օրենսդրական կարգավորումներով և իրավական ակտերի մեխանիկական վկայակոչմամբ,*

*4. ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 141-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու միջոցով պարզևավճար սահմանել նաև ԽՍՀՄ զինված ուժերի կազմում զինվորական ծառայության ընթացքում 3-րդ խմբի հաշմանդամություն ձեռք բերած անձանց համար:*

<sup>783</sup> Բնակարանային հաշվառման ընդգրկված պայմանագրային զինծառայողների բնակարանային խնդիրների լուծման առնչությամբ Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ ներկայացված առաջարկության հիման վրա տվյալ միջոցառումն ընդգրկվել է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության միջոցառումների ծրագրում, ըստ որի նախատեսվում է նախաձեռնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին բնակարանային պայմանների բարելավում ստանալու իրավունքը պահպանած զինծառայողների բնակարանային ապահովման գործընթացի իրականացումը:

<sup>784</sup> Տե՛ս հաջորդ պարագրաֆում:

<sup>785</sup> Արտահերթ զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://cutt.ly/zOGZJip>:

## 5. Արտոնություններ զինծառայողների և նրանց ընտանիքների համար

Նախորդ տարեկան հաղորդումներում և այլ ձևաչափերով Մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս խոսել է զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար արտոնություններ նախատեսելու հարցի մասին: Պաշտպանի աշխատակազմում մշակվել է զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական արտոնություններ տրամադրելու առաջարկների մասին<sup>786</sup>: **Պաշտպանի առաջարկած արտոնություններից են, օրինակ՝ աշխատանքի պահպանման նախապատվության իրավունքը, չվճարվող արձակուրդի տրամադրման պարտադիր կարգը, ամենամյա արձակուրդի ժամանակի ընտրության արտոնությունը, զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունքը և այլն:**

Առաջարկները հիմնականում միտված են ստեղծել օրենսդրական հիմքեր, որ հասարակության բոլոր անդամներն իրենց գործունեության շրջանակներում ներգրավված լինեն ու նպաստեն երկրի ռազմական անվտանգության ապահովման համակարգի խնդիրների լուծմանը: Ուսումնասիրության և ներկայացված առաջարկների գլխավոր խնդիրներից է եղել նաև սահմանել հասարակական բոլոր ոլորտներում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների համար արտոնություններ, որոնք իրենց համակցության մեջ կբարձրացնեն Հայաստանի զինված ուժերում զինվորական ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների, հատկապես սպայական կազմի զինծառայողների կարգավիճակը և զինվորական ծառայության հեղինակությունը:

Առաջարկների ընդունումը, Ջինված ուժերի և այլ զորքերի զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների համար արտոնություններ նախատեսելը կունենա սոցիալական կարևոր նշանակություն և ռազմավարական տեսանկյունից խթանող բնույթ: Դա չի պահանջի ֆինանսական զգալի միջոցների ավելացում: Ավելին՝ ներկայացված առաջարկների կենսագործումը և դրանց արդյունավետ ապահովումը կարող է հանրության մոտ էապես մեծացնել զինվորական ծառայության հանդեպ համակրանքն ու հետաքրքրությունը, ինչպես նաև բարձրացնել ծառայություն անցնող կամ անցած զինծառայողների կարգավիճակը:

**Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ ընդգծում է, որ ներկայացվող առաջարկությունների իրական շահառուներ կարող են լինել տարբեր կատեգորիայի զինծառայողներ և (կամ) նրանց ընտանիքների անդամներ, այդ թվում՝ ա) ժամկետային պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություն անցած կամ անցնող շարքային, ենթասպայական, սպայական կազմի զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները, բ) ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցներ, գ) ՀՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողներ, նրանց և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամներ, դ) ՀՀ կամ պաշտպանության ոլորտում պետական լիազոր մարմնի հետ ռազմական փոխօգնության պայմանագրերի հիման վրա այլ երկրների**

<sup>786</sup> Տե՛ս, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 1072-1076:

պաշտպանության մարտական գործողություններին մասնակցած կամ մասնակցող անձինք կամ նրանց ընտանիքների անդամներ և այլն:

Առաջարկները հանրային լայն քննարկման ներկայացնելու և կենսագործելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնարկել է ակտիվ միջոցներ. մասնավորապես՝

1) նշված բոլոր խնդիրները քննարկվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումներում,

2) առաջարկները մանրամասն հիմնավորումներով, գրություններով ներկայացվել են ՀՀ վարչապետի աշխատակազմ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Պաշտպանության նախարարություն և Զինված ուժերի գլխավոր շտաբ,

3) առաջարկները նաև ներկայացվել են հրապարակայնորեն՝ ինֆոգրաֆիկայի տեսքով,

4) ներկայացված առաջարկների շուրջ քննարկում է տեղի ունեցել Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով փորձագիտական խորհրդի ընդլայնված նիստի ընթացքում, որին բացի Պաշտպանի ներկայացուցիչներից, ներկա են եղել նաև Պաշտպանության նախարարության, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ և փաստաբաններ,

5) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակվել է օրենսդրական նախագծերի փաթեթ և ուղարկվել Ազգային ժողով և Պաշտպանության նախարարություն<sup>787</sup>:

6) Առաջարկների վերաբերյալ մշակվել ու հրապարակվել է արտահերթ զեկույց<sup>788</sup>:

Սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում հարցադրում է ուղարկվել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ տրամադրելու առաջարկների կենսագործման ուղղությամբ ինչ աշխատանքներ են տարվել կամ նախատեսվում տանել: Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ 2021 թվականի ընթացքում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին ոչ ֆինանսական բնույթի արտոնություններ տրամադրելու առաջարկների կենսագործման ուղղությամբ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված առաջարկությունները քննարկվել են պաշտպանական գերատեսչությունում, սակայն նշվածի ուղղությամբ դեռևս քայլեր չեն ձեռնարկվել:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ մշակվել և շրջանառության մեջ են դրվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, և առաջարկվել է որոշակի խմբերի (հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայող, ինչպես նաև 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստացողի կամ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, հարազատ քույր, հարազատ եղբայր, տատ, պապ) համար աշխատողների քանակի և (կամ)

<sup>787</sup> Նախագծերի փաթեթը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://cutt.ly/hOHvDVA>

<sup>788</sup> Արտահերթ զեկույցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://cutt.ly/gOHvfIX>

հաստիքների կրճատման դեպքում աշխատանքում մնալու նախապատվության իրավունք սահմանելու վերաբերյալ կարգավորումներ: Իհարկե, առաջարկների կենսագործման հարցում սահմանափակ տեղաշարժ է, բայց անհրաժեշտ է բոլոր առաջարկների իրացման մասով հնարավորին արագ աշխատանքներ տանել:

Ինչ վերաբերում է Ազգային ժողով ուղարկված նախագծերի փաթեթին՝ դրանք Ազգային ժողովում շարունակում են մնալ անարձագանք:

Զարմանալի է, որ տարիներ շարունակ Պաշտպանի կողմից ներկայացվում են կոնկրետ առաջարկներ, որոնք բարդ լուծում չեն պահանջում, ավելին՝ դրական ազդեցություն են ունենալու զինվորական ծառայության գրավչության վրա, բայց դրանք չեն կենսագործվում<sup>789</sup>: Առաջարկների կենսագործումը առավել քան հրատապ է հատկապես ներկայում՝ հետպատերազմական ծանր շրջանում, երբ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների երաշխավորումը, ամրապնդումն ու պաշտպանությունը պահի հրամայականն է: Մեր երկիրը ներկայում առավել քան կարիք ունի զինվորական ծառայությունն արժևորելու, իսկ նշված արտոնությունների ներդրման արդյունքում բանակում ծառայությունը կդառնա ավելի գրավիչ նաև հենց ծառայության մեջ գտնվողների և նրանց ընտանիքների համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ *անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ոչ ֆինանսական բնույթի արդյունությունները զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վերապահելու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մշակված օրենսդրական նախագծերի փաթեթն ընդունելու ուղղությամբ, ինչը կարևոր նշանակություն կարող է ունենալ զինծառայողի կարգավիճակի և զինվորական ծառայության գրավչության բարձրացման գործում:*

---

<sup>789</sup> Ճիշտ է, առաջարկներից մեկի մասով դեռևս 2020 թվականին Պաշտպանության նախարարությունը հայտնել էր, որ «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ են կատարվել, արդյունքում զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամների և երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակատուների համար սահմանվել են զբաղվածության ապահովմանն ուղղված երաշխիքներ, ըստ որոնց՝ աշխատաշուկայում գործազուրկի անմրցունակության որոշարկման չափանիշ կհանդիսանան նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների կամ մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամ (ամուսին, երեխա, հայր, մայր, քույր, եղբայր, տատ, պապ) ինչպես նաև երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստացող անձ հանդիսանալու հանգամանքները:

**ԳԼՈՒԽ 11. ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱՐՏԻՑ ՀԵՏՈ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ԱՌՆԶՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ**

**1. Զինված ուժերում նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի հետ կապված խնդիրներ**

2020 թվականը բացասական առումով առանձնացավ Նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի տարածման և դրանով պայմանավորված՝ խիստ սահմանափակումներ կիրառելու հանգամանքներով:

Աշխարհում ստեղծված իրավիճակից, բնականաբար, անմասն չի մնացել Հայաստանը: Սահմանափակումներ կազմակերպվել են նաև Զինված ուժերում, ինչը հանգեցրել է նոր և չուսումնասիրված խնդիրների առաջացման, ինչը առավել վառ արտահայտվեց հատկապես 2020 թվականին<sup>790</sup>: Վիճակն է՛լ ավելի դժվար է պատերազմի օրերին:

Նշված իրավիճակը հասկանալիորեն բարդություններ առաջացրեց նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքում, քանի որ կիրառված կամ պահանջվող սահմանափակումները տարածվեցին նաև գործողությունների, այցերի, պետական մարմինների հետ համագործակցության իրականացման և այլ տեսանկյուններից:

Չնայած սահմանափակումներին և դրանց հետևանքով առաջացած գերծանրաբեռնվածությանը, Մարդու իրավունքների պաշտպանն ու իր ներկայացուցիչները շարունակել են շուրջօրյա աշխատանքները՝ համավարակի պայմաններում առաջացած մարտահրավերները հասկանալու, մարդու իրավունքների հնարավոր խախտումները կանխարգելելու, ինչպես նաև այսպիսի բարդ իրադրությունում մարդու իրավունքները լավագույնս երաշխավորելու հարցում պետությանն աջակցելու հրամայականն ու հանձնառությունը ստանձնելով:

**Այս ամենը հատկապես ընդգծվում է նրանով, որ արտակարգ իրավիճակներում մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների (NHRI) դերն անքննելի կարևորություն ունի. մարդու իրավունքների պաշտպանության ազգային մեխանիզմները նման իրավիճակներում պետք է մեծագույն ջանքեր գործադրեն սահմանափակումների համատեքստում իրավունքի գերակայության ապահովման, խոցելի խմբերի վերհանման և նրանց առնչվող կարգավորումների ու գործնական քայլերի բացահայտման, սահմանափակումների և դրանցով պայմանավորված՝ խախտված իրավունքների պաշտպանության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացման և մի շարք այլ սկզբունքային հարցերի ու խնդիրների լուծման ուղղությամբ:**

<sup>790</sup> Այս մասին տե՛ս նաև 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման մեջ, էջ 1077-1089:



Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես մարդու իրավունքների ազգային հաստատություն, ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակներում իրականացնում է և ունի աշխատանքի 3 հիմնական ուղղություն. 1) օգնություն քաղաքացուն (փորձը ցույց է տվել, որ իրավիճակով պայմանավորված՝ սահմանափակումները օբյեկտիվորեն փոփոխվում են շատ արագ, ինչի պայմաններում քաղաքացիների շրջանում առաջանում է իրազեկվածության պակաս, հետևաբար, մարդու իրավունքների ազգային հաստատությունների ստանձնած դերերից մեկը պետք է լինի նաև քաղաքացիներին առկա սահմանափակումների վերաբերյալ իրազեկումը, նրանց օգնությունը՝ հասկանալու սահմանափակման բնույթը, նշանակությունը, կարգը և այլն), 2) օգնություն պետությանը (հնարավորին սեղմ ժամկետում դուրս գալ ստեղծված իրավիճակից, իրականացնել իրազեկման աշխատանքներ, հանդես գալ կոչերով, հայտարարություններով և այլն), 3) պետության նկատմամբ վերահսկողություն:

Այս ամենն, անշուշտ, ուղեկցվում է յուրահատկություններով հատկապես պաշտպանության ու անվտանգության ոլորտին առնչվող հարցերում: Ոլորտի առանձնահատկությունների հաշվառմամբ՝ կարելի է պնդել, որ համավարակի պայմաններում ստեղծված արտակարգ դրությունը կամ իրավիճակը, և դրա արդյունքում առաջացած մարտահրավերները որոշակի զգայունություն ունեցող հարցեր և հետևանքներ առաջացրեցին նշված ոլորտի համակարգերում:

Քննարկելով Ձինված ուժերում համավարակի տարածման, դրա կանխարգելման և առաջացած խնդիրները՝ Պաշտպանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Պաշտպանության նախարարության և Ձինված ուժերի ստորաբաժանումների կողմից մեծապես իրականացվել են անհրաժեշտ գործողություններ<sup>791</sup>: Հատկապես անուրանալի է այսպիսի բարդ իրավիճակում ռազմական բժիշկների հերոսական աշխատանքը, որն առանձնակի դրվատանքի է արժանի:

Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ խաղաղ (ոչ մարտական) պայմաններում կորոնավիրուսային վարակի ներթափանցումը Ձինված ուժեր կանխելու նպատակով ռազմաբժշկական զորամասերն ու ստորաբաժանումները, սերտորեն փոխգործակցելով քաղաքացիական առողջապահական համակարգի կազմակերպությունների հետ, իրականացրել են ՀՀ կառավարության 2020 թվականի թիվ 1514-Ն որոշմամբ, ՀՀ առողջապահության նախարարի և ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամաններով կանոնակարգված սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումները, կորոնավիրուսային վարակով (COVID-19) հիվանդների վաղ և ակտիվ հայտնաբերում, ախտորոշում, մեկուսացում և բուժում:

---

<sup>791</sup> Այդպիսի գործողությունները բխում են նաև միջազգային փաստաթղթերից, օրինակ՝ Ձինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի 68-րդ կետի համաձայն՝ այն դեպքերում, երբ զինծառայողները կարող են ենթարկվել կամ ենթարկվել են համաճարակի, էնդեմիկ կամ այլ հիվանդությունների, անհրաժեշտ է ձեռնարկել նրանց առողջության պահպանմանն ուղղված համապատասխան միջոցներ:

Կիրառվել և ներկայումս կիրառվում են ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված որոշ սահմանափակումներ:

Ձինված ուժերի գլխավոր շտաբի պետի և ռազմաբժշկական վարչության պետի համապատասխան կարգադրություններով ու հրամաններով լրացուցիչ գործել է 2020 թվականից ծավալված՝ Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի COVID-19 հիվանդների բուժական բաժանմունքը, որի գործունեության դադարեցումից հետո 2021 թվականի ընթացքում Ձինված ուժերում արձանագրվող կորոնավիրուսային հիվանդացության պարբերական բարձրացումների ժամանակ Երևանի կայազորային հոսպիտալը վերապրոֆիլավորվել է որպես կորոնավիրուսային վարակով հիվանդ զինծառայողների բուժման մասնագիտացված ռազմաբժշկական հաստատություն:

Ամբողջ տարվա ընթացքում ձեռնարկված միջոցների շնորհիվ քաղաքացիական բնակչության համեմատությամբ Ձինված ուժերում արձանագրվել է հիվանդացության ցածր մակարդակ: 2021 թվականի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության հարուցիչով վարակված հայտնաբերվել է 3015 զինծառայող, և բոլոր դեպքերում կազմակերպվել է անվճար բուժօգնություն: 2021 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ 16 զինծառայողներ դեռևս գտնվում են ստացիոնար բուժման մեջ, 29-ը (պայմանագրային կազմի զինծառայողներ) ինքնամեկուսացված են: Ներկայում Ձինված ուժերում ընթանում է նաև առավել արդյունավետ պայքարի միջոց հանդիսացող պատվաստանյութերի կիրառմամբ սպեցիֆիկ իմունականխարգելումը:

Ըստ Պաշտպանության նախարարության՝ նոր կորոնավիրուսային հիվանդության հետ կապված բողոքներ չեն գրանցվել:

Միևնույն ժամանակ, Պաշտպանին հասցեագրվող բողոքների քննարկման, ինչպես նաև Պաշտպանության նախարարության իրավասու ստորաբաժանումների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքում վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնց համակարգային լուծումները չափազանց կարևոր են հետագայում հնարավոր նման իրավիճակներին պետության պատրաստվածության տեսանկյունից:

Նախկինում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ, որոնք վկայում էին Նոր կորոնավիրուսային հիվանդություն ունեցողների թվի աճին զուգահեռ զինվորական հոսպիտալների ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ այլ առողջական խնդիրներ ունեցող զինծառայողներին պատշաճ բժշկական օգնություն չտրամադրելու, զինվորական ծառայության ընդունվելու ցանկություն ունեցող քաղաքացիների փորձաքննությունները չկազմակերպելու և այլ նման խնդիրների մասին: Այս առումով Պաշտպանը խնդրի լուծման առաջարկներ է ներկայացրել դեռևս 2020 թվականի տարեկան հաղորդմամբ:

Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ Նախարարության համակարգի ստորաբաժանումների համար սահմանված են համաճարակային իրավիճակներում գործելու համապատասխան ընթացակարգեր, որոնք կարգավորվում են Ձինված ուժերի կանոնագրքերի, ՀՀ

կառավարության որոշումների, Առողջապահության նախարարի, Պաշտպանության նախարարի հրամանների և այլ ղեկավար փաստաթղթերի դրույթներով:

Չնայած դրան՝ Պաշտպանն ավելորդ չի համարում ևս մեկ անգամ հատուկ ընդգծել, որ արձանագրված խնդիրները վկայում են համաճարակային իրավիճակներում զինվորական հոսպիտալների ստանդարտացված գործողությունների միասնական ընթացակարգ (հաջորդականություն) մշակելու անհրաժեշտության մասին, որի իրագործմամբ չի սահմանափակվի և կապահովվի ցանկացած պայմաններում (օրինակ՝ կարանտինային) զինծառայողների բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացումը: Ընդ որում, կարևոր է, որ նման ընթացակարգեր (գործողությունների կարգավորումներ, չափանիշներ կամ ստանդարտներ) մշակվեն նաև Զինված ուժերի ստորաբաժանումների համար՝ առավել արդյունավետ դարձնելով գործերի ծառայությունը:

2021 թվականին Պաշտպանը շարունակել է ստանալ Նոր կորոնավիրուսային համավարակի հետ կապված բողոքներ: Օրինակ՝ մեծ թվով բողոքներ են հասցեագրվել զինծառայողներին օրենքով սահմանված արձակուրդների չտրամադրման հետ կապված:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ ՀՀ Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված կարանտին սահմանելու մասին» թիվ 1514-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների 17-րդ կետով նախատեսված սահմանափակումների շրջանակներում արգելվել է ժամկետային պարտադիր զինծառայողների արձակուրդի տրամադրումը՝ բացառությամբ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ ենթակետի հիմքով նախատեսված՝ ընտանիքի անդամի մահվան դեպքերի:

Հասկանալի է, որ մարդու որոշ իրավունքներ և ազատություններ Սահմանադրության 76-րդ և 120-րդ հոդվածների լույսի ներքո արտակարգ դրության ժամանակ կարող են սահմանափակվել. նշվածի հաշվառմամբ էլ Կառավարությունը 2020 թվականի մարտի 16-ից զորամասերում արգելել է շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդը: Հասկանալի է նաև, որ արտակարգ դրության որոշակի ժամանակահատվածում, երբ հանրապետությունում առկա չէին կորոնավիրուսային հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ և բավարար քանակի թեստեր, երբ Հայաստանի ամբողջ տարածքում հայտարարված էր խիստ կարանտինային դրություն, և սահմանափակվել էր նույնիսկ քաղաքացիական անձանց ազատ տեղաշարժը, զինծառայողների արձակուրդների տրամադրման արգելքը կարող էր կրել իրավաչափ նպատակ:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ նշված արգելքը պահպանվել է նույնիսկ այն ժամանակ, երբ առերևույթ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում սահմանափակումների շեմն իջեցվել է: Այսպես, Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի «Կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված կարանտին սահմանելու մասին» թիվ 1514-Ն որոշմամբ նախատեսված միջոցառումների 17-րդ կետի 2-րդ ենթակետով արձակուրդների արգելքը

տևական ժամանակ պահպանվել է՝ բացառությամբ զինծառայողների ընտանիքների անդամների ծանր հիվանդության կամ մահվան դեպքերի:

2022 թվականի հունվարի 20-ին վերոնշյալ կարգավորումը փոփոխվել է և նախատեսվել հետևյալը. «17.1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորամասերում արգելվում են՝

1) շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր զինծառայողների արձակուրդները և արձակուրդները՝ բացառությամբ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստման բացարձակ հակացուցում չունեցող՝ ամբողջական պատվաստումը չստացած շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր զինծառայողների, ինչպես նաև ընտանիքի անդամի ծանր հիվանդության կամ մահվան, կամ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված, ինչպես նաև 11-րդ մասի համաձայն՝ 15 օրացուցային օրից ավելի տրվող վերականգնողական արձակուրդների.

2) տեսակցությունները՝ բացառությամբ տեսազանգից օգտվելու, ամբողջական պատվաստված, մեկ դեղաչափ պատվաստված (առաջին և երկրորդ դեղաչափերի միջև տվյալ պատվաստանյութի համար սահմանված ժամանակամիջոցում), բացարձակ հակացուցում ունեցող, հղի, մինչև 18 տարեկան, պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության 72 ժամ վաղեմությամբ բացասական արդյունքը հավաստող սերտիֆիկատ ներկայացնող, նախկինում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) հիվանդացած (ՊՇՌ հետազոտության առաջին դրական արդյունքից հաշված 90 օրվա ընթացքում) անձանց՝ տեսակցության նպատակով զորամաս ժամանելու դեպքերի:»:

Այսպիսով, կատարված փոփոխության արդյունքում արձակուրդների արգելքից նախատեսվել են լրացուցիչ բացառություններ պատվաստված զինծառայողների և թվարկված մյուս դեպքերի համար:

Նախ, անհրաժեշտ է նշել, որ փոփոխված կարգավորման մեջ առկա է տեխնիկական բնույթի սխալ: Նշվել է, որ արձակուրդներն արգելվում են՝ բացառությամբ պատվաստում **չստացած** զինծառայողների: Հասկանալի է, որ կարգավորման նպատակն իրականում եղել է բացառությունը նախատեսել պատվաստում **ստացած** զինծառայողների համար:

*Գործող կարգավորումը, սակայն, սխալ է շարադրվել, ինչը փոփոխելու անհրաժեշտություն կա:*

Սակայն անդրադառնալով խնդրի բովանդակային հատվածին՝ անհրաժեշտ է նշել, որ Սահմանադրության 76-րդ հոդվածի համաձայն՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ հստակ թվարկվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում:

**Ընդ որում, անհրաժեշտ է հստակ արձանագրել, որ արտակարգ դրության ժամանակ ավելի մեծ է պետության իրավական բեռը մարդու նկատմամբ, քանի որ յուրաքանչյուր սահմանափակում պետք է լինի անհրաժեշտ, իրավաչափ և կոնկրետ իրավիճակին համաչափ, այս դեպքում՝ պետք է ծառայի համավարակի կանխարգելմանը:**

Իրավունքների սահմանափակումների հիմնավորումները չեն կարող լինել այն նույն ծավալի, ինչ արտակարգ դրություն հայտարարելու սկզբնական շրջանում: Այլ կերպ՝ որքան երկարում է արտակարգ դրությունը, այնքան մեծանում է պետության իրավական պարտավորությունն առավել հիմնավորելու մարդու իրավունքների սահմանափակումները:

2021 թվականի ընթացքում Պաշտպանը զինծառայողներին արձակուրդ չտրամադրելու խնդիրների հետ կապված ստացել է մի շարք բողոքներ: Ավելին, մինչև Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշման մեջ պատվաստված զինծառայողների մասով փոփոխություն կատարելը Պաշտպանի թեժ գծին ստացվել են նաև այնպիսի զանգեր, որոնցով զինծառայողները ներկայացրել են այնպիսի առ այն, որ զորամասերի հրամանատարների տեղեկացմամբ՝ չպատվաստված զինծառայողներին որևէ պարագայում չի տրամադրվելու արձակուրդ:

Այս առումով հատկանշական է, որ տարեկան հաղորդման մշակման շրջանակներում Պաշտպանը հատուկ հարց է ներկայացրել Պաշտպանության նախարարությանն այն մասին, թե արդյոք առկա է նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ չպատվաստված պարտադիր ժամկետային զինծառայողներին ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514-Ն որոշմամբ հաստատված սահմանափակումների 17.1-րդ կետի 2-րդ ենթակետով թույլատրվող արձակուրդները սահմանափակող Պաշտպանության նախարարի հրաման: Հարցի կապակցությամբ Պաշտպանության նախարարությունը տեղեկացրել է, որ Պաշտպանության նախարարի այդպիսի հրաման առկա չէ, նշվել է նաև, որ թույլատրված արձակուրդները չտրամադրելու կապակցությամբ բողոքներ չեն ստացվել:

Չնայած նման բողոքներ ստացված չլինելու վերաբերյալ Պաշտպանության նախարարության պարզաբանմանը՝ Պաշտպանի թեժ գծով ստացվող այդպիսի զանգերի քանակն առնվազն հիմք է տալիս ենթադրելու, որ գործնականում զորամասերում փորձ է կատարվում ազդեցություն ունենալ զինծառայողների կամքի վրա, ինչով նաև հանգեցնել պարտադրված պատվաստման:

Զինծառայողներին արձակուրդներ չտրամադրելու խնդիրը հատկապես ընդգծվում է «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնող և ռազմաուսումնական համալսարաններում սովորող անձանց մասով<sup>792</sup>:

---

<sup>792</sup> Պաշտպանության նախարարության կողմից մշակված «Ես եմ» ծրագրով այն նորակոչիկները, ովքեր ցանկություն են հայտնում ծառայությունն իրականացնել մարտական հերթապահություն իրականացնող զորամասում, իրավունք են ստանում անցնելու նոր տեսակի ծառայության: Ծառայությունը տևում է 36 ամիս, սակայն դրանցից գումարային 7 ամիս զինծառայողն անցկացնում է արձակուրդի մեջ՝ սկսած 6-րդ ամսվանից, երբ իր ստորաբաժանումը ստանձնում է մարտական հերթապահությունը՝ յուրաքանչյուր ամիս ծառայելով 1+1+2

Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների՝ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնող զինծառայողների արձակուրդների չտրամադրման դեպքեր չեն եղել, **բացառությամբ նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված**: Պաշտպանության նախարարությունը նշել է, որ տվյալ զինծառայողներին ամսական դրամական բավարարումները հատկացվել են (ճանապարհածախսի համար նախատեսված գումարը) և նշված ժամանակահատվածում իրենց զորամասերում վերցված են եղել պարենային բավարարման:

Չնայած դրամական բավարարումը «Ես եմ» ծրագրի շրջանակներում ծառայություն անցնող զինծառայողներին տրամադրելու հանգամանքին՝ խնդիր է առաջանում ձեռնարկվող այդպիսի միջոցի և արձակուրդի իրավունքի սահմանափակման համաչափության հետ կապված: Ինչպես դա նաև նկարագրված է Պաշտպանության նախարարության կողմից, «Ես եմ» ծրագրի շրջանակներում ծառայությունը որոշակիորեն տարբերվում է երկամյա պարտադիր զինվորական ծառայությունից՝ փաստացի դրվելով, այսպես ասած, «ժամկետային պայմանագրային» հիմքերի վրա, ծրագրի շրջանակներում ծառայությունը սովորական երկամյա ծառայությունից մեկ տարով ավելի է, իսկ մնացած ժամանակահատվածի համար էլ նախատեսված է զգալիորեն երկար տևողությամբ զորամասից դուրս գտնվելու իրավունք:

Խնդիրն այս համատեքստում դիտարկելիս և համավարակի կանխարգելման նպատակով սահմանափակումների անհրաժեշտությունն ու իրավիճակին համաչափ լինելը քննարկելիս հարկ է նշել, որ, օրինակ, պայմանագրային զինծառայողները համավարակի կանխարգելման նպատակով նախատեսված սահմանափակումների ողջ ընթացքում զորամասերի տարածքից դուրս գալու որևէ արգելք չեն ունեցել, ինչը տրամաբանական է: Այնուամենայնիվ, այս դեպքում նաև տրամաբանական հարց է առաջանում, թե որքանով է համաչափ պարտադիր ժամկետայիններին՝ ընդհանրապես, իսկ «Ես եմ» ծրագրի շրջանակներում ծառայություն անցնողներին՝ հատկապես, արձակուրդ տրամադրելու տոտալ արգելքի նախատեսումը, այն էլ այսպիսի տևական ժամանակով:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Ես եմ» ծրագրով ծառայություն անցնող գրեթե բոլոր բողոքաբերները բարձրացրել են այն հարցը, թե

---

բանաձևով (մեկ շաբաթ՝ արձակուրդում, մեկ շաբաթ՝ զորամասում՝ պատրաստվելով մարտական հերթապահության, և երկու շաբաթ՝ առաջնագծում մարտական հերթապահություն անցկացնելիս): Այսպիսով, զորակոչվելուց հետո 5 ամիս ուսումնական փուլ անցնելով՝ անձն անցնում է ծառայության, որի ընթացքում 31 ամսից 7-ն անցկացնում է տանը, իսկ 24-ը՝ զորամասում և մարտական դիրքերում: Յուրաքանչյուր անգամ արձակուրդ գնալիս զինծառայողին վճարվում է որոշակի գումար՝ արձակուրդային ծախսերը հոգալու համար:

Ակնհայտորեն երևում է, որ ի թիվս այլնի, նշված ծրագրի գրավչությունը և դրա շրջանակներում ծառայություն անցնելու խթանը կայանում է նրանում, որ զինծառայողը ծառայության մի զգալի հատված գտնվելու է տանը՝ արձակուրդի մեջ:

Այդ մասին հատուկ նշում է արվում զինծառայողի հետ կնքվող քաղաքացիաիրավական բնույթի պայմանագրում, որի ձևը սահմանված է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1675-Ն որոշմամբ: Պայմանագրի 2.1.6.2-րդ կետի համաձայն՝ զինծառայողին տրվում է ամսական արձակուրդ՝ 7 օրացուցային օր ժամկետով, որը ներառում է նաև արձակուրդի վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու ժամանակահատվածը:

արդյոք հնարավոր է քննարկել չօգտագործված արձակուրդների օրերի քանակով զինվորական ծառայությունից շուտ արձակելու հնարավորությունը:

Քաղաքացիների ներկայացրած մտահոգությունն ունի օբյեկտիվ և տրամաբանական հիմքեր, սակայն գիտակցելով գործող օրենսդրական կարգավորումների պարագայում զինծառայողներին այդպիսի հիմքով ծառայությունից շուտ արձակելու մեխանիզմների բացակայության հանգամանքը՝ **Պաշտպանն արձանագրում է, որ խնդրին հնարավոր է տալ այլընտրանքային լուծում. զինծառայողներին ոչ թե զորացրել ժամկետից շուտ, այլ հաշվարկել չօգտագործված արձակուրդների օրերի թիվը և դրանք ամբողջովին տրամադրել զինծառայողին մինչև նրա զորացրվելու օրը:** Այս պարագայում, կկանխվի երկու հնարավոր խնդրի առաջացում՝ 1) պետությունը կկատարի քաղաքացու հետ կնքված պայմանագրով ստանձնած պարտավորությունը, 2) արձակուրդների ավարտից հետո անմիջապես զորացրվող զինծառայողը չի վերադառնալու զորամաս, հետևաբար կբացառվի նաև նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի տարածման հնարավոր ռիսկը:

Այս առաջարկը ներկայացվել է Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ, սակայն այն դեռևս չի իրացվել և Պաշտպանության նախարարությունը շարունակում է խնդրին լուծում տալ նշված զինծառայողներին միայն դրամական բավարարումը տրամադրելու եղանակով: Խնդրին պետք է հրատապ լուծում տրվի:

Խնդիրը կարգավորված չլինելու մասին է վկայում նաև 2021 թվականին Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկը:

Մասնավորապես, քաղաքացին Պաշտպանին տեղեկացրել է, որ որդին ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1675-Ն որոշմամբ սահմանված կարգով («Ես եմ» ծրագիր) անցնում է զինվորական ծառայություն: Քաղաքացու պնդմամբ՝ չնայած ՀՀ պաշտպանության նախարարության և որդու միջև կնքված պայմանագրում հստակ ամրագրված է յուրաքանչյուր ամիս 7 օր ժամկետով արձակուրդ տրամադրելու վերաբերյալ դրույթ՝ 2020 թվականի մարտից որդուն արձակուրդ չի տրվել: Բացի այդ, քաղաքացու տեղեկացմամբ՝ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին մարտական գործողություններին մասնակցելուց հետո ևս որդուն արձակուրդ չի ստացել:

Պաշտպանին ներկայացված խնդրանքով քաղաքացին բարձրացրել է, կրկին, որդու չօգտագործած արձակուրդների օրերի քանակով նրան զինվորական ծառայությունից ժամկետից շուտ արձակելու հարցը:

Բողոքում բարձրացված հարցի կապակցությամբ Պաշտպանը կոնկրետ առաջարկներով գրություն է հասցեագրել Պաշտպանության նախարարություն: Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված պատասխանի՝ հարցի վերաբերյալ կատարվում են քննարկումներ ու ուսումնասիրություններ:

Այնուհետև, քաղաքացին Պաշտպանին տեղեկացրել է, որ որդուն 2021 թվականի հունիս և հուլիս ամիսներին տրամադրվել են «Ես եմ» ծրագրով նախատեսված 7 օր ժամկետով արձակուրդներ:

Բացի դրանից, քաղաքացին նշել է, որ որդին 2021 թվականի հուլիսի 27-ին պարտադիր զինվորական ծառայության ժամկետը լրանալու կապակցությամբ արձակվել է ՀՀ զինված ուժերից:

Խնդիրը նույն կերպ նաև ընդգծվում է ռազմաուսումնական հաստատություններում ուսանող անձանց մասով: Պաշտպանի աշխատակազմ ստացված տեղեկությունները վկայում են, որ ռազմաուսումնական հաստատությունների ուսանողներին, համավարակով պայմանավորված, արգելվել է շաբաթ և կիրակի օրերին դուրս գալ հաստատությունների տարածքից, ինչը վերը շարադրված դիտարկումների տեսանկյունից ևս խնդրահարույց է:

Այս մասով հարկ է նշել, որ Պաշտպանության նախարարությունից տրամադրված տեղեկությունների համաձայն՝ շաբաթ և կիրակի օրերին ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտների ազատ արձակումների սահմանափակումները կիրառվել են համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 1514 որոշման դրույթների: Նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված ռազմաուսումնական հաստատությունների կուրսանտներին շաբաթ և կիրակի օրերին ազատ արձակում չտրամադրելու կապակցությամբ բողոքներ չեն ստացվել, բացառությամբ ՀՀ ՊՆ մարշալ Ա. Խանփեռյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի մեկ կուրսանտից, ով ռազմաուսումնական հաստատությունից հեռանալու վերաբերյալ զեկուցագիր է ներկայացրել՝ պատճառաբանելով նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստվելուց հրաժարվելը և ազատ արձակումից զրկվելու փաստը: Զեկուցագրով ներկայացված խնդիրը քննարկման փուլում է:

Հաշվի առնելով հանրապետությունում սահմանափակումների փաստացի նվազագույնի հասցված լինելը, համավարակի տարածումը կանխարգելելու հարցում որոշակիորեն հմտացած, վերապատրաստումներ անցած և հստակ ուղեցույցներ ու չափանիշներ ունեցող բուժանձնակազմի առկայությունը, ինչպես նաև, առհասարակ, արտակարգ դրություն հայտարարելու համար հիմք հանդիսացած հարաբերականորեն կայունացած իրավիճակը՝ հնարավոր էր քննարկել զինծառայողներին արձակուրդների տրամադրման տոտալ արգելքը վերացնելու, և արձակուրդները հստակ կանոնների պահպանմամբ տրամադրելու հարցը (օրինակ, արձակուրդից վերադառնալիս պարտադիր մեկուսացում, ամենօրյա ջերմաչափում, սոցիալական հեռավորության խիստ պահպանում, վերադառնալուց հետո որոշակի ժամկետով անհատական պաշտպանիչ միջոցների պարտադիր օգտագործում և այլն):

Նշված հարցն անհրաժեշտ է նաև դիտարկել այն համատեքստում, որ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած մարտական գործողություններից հետո զինծառայողների մի հատվածին խրախուսանքի ձևով տրամադրվեցին կարճաժամկետ արձակուրդներ: Քննարկման ենթակա չէ այն, որ մարտական ծանր գործողությունների միջով անցած, որոշ դեպքերում անգամ մահից փրկված զինծառայողներին արձակուրդների տրամադրումը բարոյական, մարդկային և կարևոր քայլ էր, սակայն հարցը այս համատեքստում դիտարկելիս, ստացվում է, որ արձակուրդների տրամադրումը գործնականում հնարավոր էր կազմակերպել նաև մինչ այդ ժամանակահատվածը: Ընդ որում, այս պարագայում խնդիրն ավելի է



սրվել՝ հաշվի առնելով այն, որ տարբեր պատճառաբանություններով և հիմնավորումներով արձակուրդներ տրամադրվել են ոչ բոլոր զինծառայողներին (Պաշտպանին հասցեագրվող բողոքները վկայում են, որ արձակուրդ չստացած զինծառայողների շարքում կան նույնիսկ այնպիսիք, ովքեր այդ պահին ծառայում էին մեկ տարուց ավելի):

Արձակուրդների չտրամադրման հետ կապված խնդիրը առավել սուր է պարտադիր ժամկետային զինծառայողների *հիմնական* արձակուրդների արգելքի մասով: Պետք է հստակ նկատի ունենալ, որ արձակուրդի այդ տեսակը նախատեսված է օրենքով: *Կառավարության որոշմամբ օրենքով նախատեսված արձակուրդի իրավունքի սահմանափակումը խնդրահարույց է և վերանայման անհրաժեշտություն ունի:*

**Այսպիսով, Պաշտպանի դիրքորոշմամբ զինծառայողներին արձակուրդների տրամադրման տոտալ արգելքը և դրա հետ կապված վերը ներկայացված առանձնահատուկ դրսևորումները շարունակում են լինել խնդրահարույց՝ առաջացնելով այդպիսի սահմանափակման և հետապնդվող նպատակի միջև համաչափության հարց:**

2021 թվականի ընթացքում առաջացան նոր կորոնավիրուսային համավարակի հետ կապված այլ խնդիրներ ևս:

Մասնավորապես, Պաշտպանի թեժ գիծ հեռախոսահամարին պայմանագրային զինծառայողներից ստացվել են 14 օրը մեկ զինծառայողների միջոցների հաշվին պարտադիր թեստավորում անցնելու հետ կապված բազմաթիվ զանգեր:

Հայտնի է, որ Սահմանադրական դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ ՍԴՈ-1621 որոշմամբ աշխատողի հաշվին ՊՇՌ հետազոտություն անցնելու պահանջը ճանաչվել է Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին և 39-րդ հոդվածին հակասող և անվավեր:

Փաստորեն, ստացվում է, որ տևական ժամանակ զինծառայողների վրա դրված է եղել մի պարտավորություն, որը չէր կարող նախատեսվել Առողջապահության նախարարի հրամանով:

Բացի դրանից, Պաշտպանին հասցեագրվել են նաև նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստվելուց հրաժարվող զինծառայողների համար ծառայությունում որոշակի սահմանափակումներ առաջացնելու հետ կապված բողոքներ:

Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ պատվաստումներն իրականացվում են կամավոր սկզբունքով, պատվաստումների և ՊՇՌ հետազոտությունների կապակցությամբ բողոքներ ստանալու մասին տեղեկություններ չկան: Նշված հարցի վերաբերյալ ՊՆ թեժ գծով ստացվել է 31 զանգ: Զանգահարողներին պարզաբանվել է, որ պատվաստումները իրականացվում են ըստ ցանկության: Բացի դրանից, Պաշտպանության նախարարությունից տեղեկացվել է, որ նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ չպատվաստված պայմանագրային զինծառայողներին պաշտոնի առաջխաղացման չներկայացնելու, հերթական զինվորական կոչում չշնորհելու կամ զինված ուժերից արձակելու հետ կապված բողոքներ չեն ստացվել, ինչպես նաև նման դեպքեր չեն արձանագրվել:

Չնայած Պաշտպանության նախարարության ներկայացրած այս տեղեկություններին՝ Պաշտպանին է դիմել պայմանագրային զինծառայող և տեղեկացրել, որ այլ զորամասից ներկայացվել է առաջխաղացման միջնորդագիր, սակայն ծառայության վայրի զորամասից տեղեկացրել են, որ ըստ Պաշտպանության նախարարի հրամանի՝ արգելվել է առաջխաղացման ներկայացնել այն զինծառայողներին, ովքեր պատվաստված չեն Նոր կորոնավիրուսային հիվանդության դեմ:

Նշված բողոքով հետագա գործողությունների անհրաժեշտությունը վերացել է զուտ այն հանգամանքով պայմանավորված, որ նույն զինծառայողը համաձայնվել է պատվաստվել:

Համավարակի տարածմամբ պայմանավորված՝ Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրվել էր մեկ այլ խնդիր ևս: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով նախատեսվում են արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և ուժերը: Հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ շարադրվող խնդիրներն իրականացնելու նպատակով գործադրվում են Ոստիկանության, Ազգային անվտանգության և Պաշտպանության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները:

«Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ սահմանված միջոցների ապահովման գործընթացին տարբեր ուղղություններով ներգրավվել են նաև ուժային կառույցներ, այդ թվում՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Պաշտպանության նախարարություն և այլն: Արդյունքում, **ուժային կառույցների ծառայողների համար սահմանվել են լրացուցիչ այնպիսի պարտականություններ, որոնք քաղաքացիական բնակչության հետ ակտիվ ու անմիջական շփումներ են ենթադրում:**

Պաշտպանին հասցեագրվող բողոքները, աշխատակազմում իրականացված մշտադիտարկումներն ու ուսումնասիրությունները վկայում են, որ որոշ ուժային կառույցների ծառայողներ (օրինակ՝ Ոստիկանության զորքերի) չեն տիրապետում քաղաքացիների հետ անմիջական շփման համար անհրաժեշտ հմտությունների, ինչը հաճախ հանգեցնում էր որոշակի կոնֆլիկտային իրավիճակների:

Գործնականում վերհանված այսպիսի խնդիրները ցույց տվեցին, որ նման իրավիճակներում ոչ միայն տարբեր համակարգերի ծառայողների համար նախատեսված պարտականությունների պատշաճ իրականացման, այլև քաղաքացիների իրավունքների երաշխավորման և ապահովման տեսանկյունից կարևոր է պարբերաբար իրականացնել համապատասխան դասընթացներ ու վերապատրաստումներ:

Նշված դասընթացների իրականացումը մեծապես պետք է ուղղել ուժային կառույցների ծառայողներին քաղաքացիների հետ վարվեցողության կանոնների և շփումների ճիշտ իրականացման գիտելիքների ու հմտությունների զարգացմանը:

*Հեղևաբար, առաջարկվում է՝*

1. մշակել համաճարակային իրավիճակներում զինվորական հոսպիտալների ստանդարտացված գործողությունների ընթացակարգ (հաջորդականություն), որի իրագործմամբ չի սահմանափակվի և կապահովվի ցանկացած պայմաններում (օրինակ՝ կարանտինային) զինծառայողների բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի իրացումը: Ընդ որում, կարևոր է, որ նման ընթացակարգեր (գործողությունների կարգավորումներ, չափանիշներ կամ ստանդարտներ) մշակվեն նաև Զինված ուժերի ստորաբաժանումների համար՝ առավել արդյունավետ դարձնելով գործերի ծառայությունը,

2. արտակարգ իրավիճակներում բացառել զինծառայողներին արձակուրդների տրամադրման երկարատև համապարած (տոտալ) արգելքը և սահմանել արձակուրդները հստակ կանոնների պահպանմամբ տրամադրելու մեխանիզմներ,

3. հաշվարկել «Ես եմ» ծրագրով զինվորական ծառայություն անցնող անձանց չօգտագործված արձակուրդների օրերի թիվը և դրանք ամբողջովին տրամադրել զինծառայողներին մինչև նրանց զորացրվելու օրը,

4. արտակարգ դրության իրավական ռեժիմի ապահովման միջոցառումներին ներգրավվող ուժային կառույցների ծառայողների (նաև զինված ուժերի՝ օրենքով սահմանված կարգով և ռեժիմով նրանց ներգրավման ընթացքում) համար մշակել և իրականացնել քաղաքացիական բնակչությանն հետ շփումների ու համապատասխան կանոնների վերաբերյալ դասընթաց-պարապմունքներ:

## **2. Քաղաքացիների իրավունքները զորահավաքային զորակոչի և ծառայության ընթացքում (արձանագրված խնդիրներ և չիրացված առաջարկներ)**

2020 թվականի սեպտեմբեր 27-ից ադրբեջանական կողմի սանձազերծած ռազմական գործողությունների հաշվառմամբ՝ նույն օրը ՀՀ կառավարությունն ընդունել է «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը՝ հայտարարելով նաև ընդհանուր զորահավաք:

Ռազմական դրության ամբողջ ընթացքում Պաշտպանը տարել է բազմակողմանի աշխատանքներ, որոնցից մեկն ուղղված է եղել զորահավաքային զորակոչի և ծառայության ընթացքում խնդիրների դիտարկմանը, վերհանմանը, քննարկմանը և լուծմանն ուղղված առաջարկների ներկայացմանը:

Զորահավաքային զորակոչի և ծառայության ընթացքում ի հայտ եկած խնդիրներին (ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական) Պաշտպանը մանրամասն անդրադարձել է նախորդ տարեկան հաղորդմամբ<sup>793</sup>: Ճիշտ է, Հանրապետությունում ռազմական դրությունը վերացված է<sup>794</sup>, սակայն այն խնդիրները, որոնք արձանագրվել են և որոնց հաշվառմամբ Պաշտպանը ներկայացրել

<sup>793</sup> Տես, Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդումը, էջեր 1089-1109:

<sup>794</sup> 2021 թվականի մարտի 24-ի որոշմամբ Ազգային ժողովը վերացրել է Հայաստանի Հանրապետությունում հայտարարված ռազմական դրությունը:

է առաջարկներ, խնդիրների լուծման եղանակներ՝ կարևոր են ինչպես պետության ռազմական անվտանգության, այնպես էլ մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: **Եվս մեկ անգամ Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ անվտանգությունն ու մարդու իրավունքները երբեք չի կարելի հակադրել միմյանց, ընդհակառակը, մեկը մյուսին փոխլրացնում են, և երկուսի միաժամանակյա առկայությունն է ուժեղացնում պետությունը: Պաշտպանը բոլոր խնդիրներին նայում է հենց այդ տեսանկյունից և խնդիրների լուծման առաջարկներ ներկայացնելիս ելակետ է ընդունում հենց նշված սկզբունքը:**

Մինչև բուն խնդիրներին ու դրանց լուծման եղանակներին անդրադառնալը, նախ կարևոր է արձանագրել, որ 2020 թվականին տավուշյան մարտական իրադարձությունների և սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ու դրանից հետո Արցախում և Հայաստանի սահմաններին տեղի ունեցած ռազմական գործողությունների արդյունքում ի հայտ եկած խնդիրներն է՛լ ավելի ընդգծեցին զինված ուժերի և ընդհանրապես անվտանգության ոլորտի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության, և մասնավորապես՝ խորհրդարանական վերահսկողության կարևորությունը: Պաշտպանը գտնում է, որ խորհրդարանական վերահսկողությունը նվազագույնի է հասցնում պետության սխալների ռիսկերը, ուստի անհրաժեշտ է, որ հատկապես խորհրդարանական կառավարման պայմաններում խորհրդարանը պրոակտիվ քաղաքականություն ցուցաբերի ոլորտի խնդիրների վերհանման և դրանց լուծման ուղղությամբ:

**Ջորահավաքային զորակոչի հետ կապված Պաշտպանին հասցեագրվել են բազմաթիվ բողոքներ, որոնցով բարձրացվել են հիմնականում հետևյալ խնդիրները՝**

**1) զորահավաքային զինվորական ծառայության ներգրավելուց առաջ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտության ու փորձաքննության չիրականացում կամ ոչ պատշաճ իրականացում:** Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ եղել են դեպքեր, երբ քաղաքացիները ներկայացրել են առողջական վիճակի վերաբերյալ գանգատներ, սակայն պատշաճ հետազոտություններ չեն անցել: Մեկ այլ դեպքում, քաղաքացին ունեցել է առողջական խնդիրներ, սակայն զորակոչվել է զորահավաքային զինվորական ծառայության, որից հետո Կենտրոնական ռազմաբժշկական փորձաքննությամբ ճանաչվել է ոչ պիտանի և զորացրվել: Կամ զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված և հաշմանդամություն ունեցող անձը դիմել է զինկոմիսարիատ, ցանկություն է հայտնել մասնակցելու մարտական գործողություններին, և նրան զորակոչել են զորահավաքային զինվորական ծառայության՝ առանց ստուգելու նրա բժշկական փաստաթղթերը կամ պիտանիության վերաբերյալ առկա տեղեկատվությունը:

*Հասկանալի է, որ ռազմական դրության և մարտական թեժ գործողությունների պայմաններում, երբ պեղության առջև դրված է երկրի պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու խնդիր, յուրաքանչյուր վայրկյան կարևորագույն նշանակություն ունի, սակայն մյուս կողմից էլ հատկապես այսպիսի իրավիճակներում է կարևորվում զորակոչի կազմակերպման ընթացքի պատշաճ ապահովումը: Բացի նրանից, որ առողջական խնդիրներ ունեցող անձանց զորակոչելը կարող է հանգեցնել նրանց առողջության կամ նույնիսկ կյանքի իրավունքի խախտումների, լուրջ*

խնդիրներ ունեցող զինծառայողը մարտական գործողությունների իրականացման վայրում իր ներկայությամբ կարող է նաև բեռ դառնալ մյուս զինծառայողների համար, կամ նույնիսկ հանգեցնել որոշակի մարտական խնդիրների կատարման ծախսողման (առողջական լուրջ խնդիրներ ունեցող անձը կարող է որոշակի պահի պարզապես չկարողանալ կատարել իր առջև դրված խնդիրը, ինչն էլ հնարավոր է նաև հանգեցնի մարտավարական կամ անվտանգային լուրջ հետևանքների առաջացման):

**2)Ձորահավաքային զորակոչի ընթացքում վերհանված խնդիրները կրել են ոչ միայն առողջական, այլ նաև ընտանեկան դրությամբ պայմանավորված բնույթ:**

Օրենքը խիստ սահմանափակ է հաշվի առնում կամ գրեթե հաշվի չի առնում կոնկրետ կատեգորիայի անձանց ընտանեկան հանգամանքները. ընտանեկան պայմաններից ելնելով զորահավաքային զորակոչից ազատվում են միայն նրանք, ովքեր ունեն չորս և ավելի երեխա: Ձորահավաքային զորակոչման ենթակա քաղաքացիների շրջանակը սահմանվում է «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքով (29-րդ հոդվածի 2-րդ մաս): Ի տարբերություն պարտադիր զինծառայության զորակոչի, որի համար «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով նախատեսված են ընտանեկան պայմաններից ելնելով զորակոչից տարկետում տրամադրելու և ծառայությունից ազատելու բազմաթիվ հիմքեր, զորահավաքից ազատման ենթակա անձանց մասով օրենսդրի մոտեցումը չհիմնավորված խիստ է: Պաշտպանի գնահատմամբ՝ այդ անձանց շրջանակը վերանայման կարիք ունի:

Հասկանալի է, որ պետության քաղաքականությունը ռազմական դրության պայմաններում զինապարտների ներգրավման առումով կարող է լինել որոշակիորեն տարբերվող՝ արտակարգ իրավիճակներին հատուկ: Այնուամենայնիվ, նման քաղաքականության հիմքում պետք է լինի հստակ տրամաբանություն և լինի արդարացված, հակառակ դեպքում օրենքով սահմանված կարգավորումը կոնկրետ իրավիճակներում կարող է լինել ձևական, չարդարացված:

Որպես դրա վառ օրինակ կարելի է նշել գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայողի, օրինակ, ծնողին կամ եղբորը զորահավաքային զորակոչից ազատելը (զորահավաքին չընդգրկելը): Թեև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը զորահավաքային զորակոչից ֆորմալ առումով չի ազատում մարտական գործողությունների արդյունքում գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայողի ընտանիքի անդամին, այնուամենայնիվ 2020 թվականին սեպտեմբերին Ադրբեջանի սանձազերծած պատերազմի օրերին, ստեղծված իրավիճակով պայմանավորված, ՊՆ Ձորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները (զինկոմիսարիատները) գործնականում արդարացիորեն ձեռնպահ էին մնում նման անձանց ընդգրկել զորահավաքային զորակոչին:

Պաշտպանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ բացի վերը նշվածից, հնարավոր են նաև այլ դեպքեր, երբ անձին զորահավաքի ներգրավելը նույնպես լինի չարդարացված: Օրինակ՝ անձը ունենա ոչ թե 4 կամ ավելի երեխա (ինչպես պահանջվում է օրենքով՝ զորահավաքից ազատվելու համար), այլ ունեն առանց մոր մեծացող 3 անչափահաս երեխաներ կամ հաշմանդամություն

ունեցող ծնողներ: Կարելի է թվարկել այսպիսի շատ օրինակներ: Հետևաբար՝ տվյալ կատեգորիայի քաղաքացիների շրջանակը սահմանող օրենքի կարգավորումները վերանայման կարիք ունեն: Ավելին՝ նկատի ունենալով, որ սահմանված չէ որևէ մեխանիզմ, որը հնարավորություն կտա հաշվի առնել իրականում ավելի բարդ ընտանեկան պայմանները՝ անհրաժեշտ է ստեղծել նման կառուցակարգեր՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքով անհատական մոտեցում ցուցաբերելու համար<sup>795</sup>:

Այսպիսով, պրակտիկ դեպքերը նույնպես հաստատում են Մարդու իրավունքների պաշտպանի արձանագրումն առ այն, որ ընտանեկան պայմաններից ելնելով զորահավաքային զորակոչի ոչ ենթակա քաղաքացիների վերաբերյալ գործող օրենսդրական կարգավորումը խնդրահարույց է: Մյուս կողմից, յուրաքանչյուր դեպքում անհատական մոտեցում ցուցաբերելիս հայեցողական լիազորությունների նախատեսման չափազանց լայն շրջանակը կարող է հակառակ ու բացասական ազդեցություն ունենալ և նույնիսկ չարաշահումների տեղիք տալ:

Դրական գնահատելով Պաշտպանության նախարարության համակարգի, կոնկրետ դեպքում՝ Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից պրակտիկայում ցուցաբերած ճկուն և արդարացված մոտեցումները՝ անհրաժեշտ է խնդրին տալ ինստիտուցիոնալ լուծում՝ օրենքի հստակ կարգավորմամբ: Օրենքի սահմանափակ կարգավորումը պրակտիկայում առաջացնում է խնդիրներ, և այս պարագայում անհրաժեշտ է կա՛մ վերանայել զորահավաքային զորակոչի ոչ ենթակա անձանց շրջանակը (և չսահմանափակվել միայն 4 երեխա ունեցողներին զորահավաքից ազատելով), կա՛մ նախատեսել այդպիսի անհատական դեպքերի վերհանման ու գնահատման մեխանիզմ, պարբերաբար ճշգրտել և թարմացնել այն տվյալները, որոնց հաշվառմամբ էլ որոշել, թե ով է ենթակա լինելու հնարավոր զորահավաքային զորակոչի, ով՝ ոչ:

Հետևաբար, առաջարկվում է ընդլայնել ընտանեկան պայմաններից ելնելով զորահավաքային զորակոչի ոչ ենթակա անձանց ցանկը կամ, որպես այլընտրանք, ներդնել անհատական (ճկուն) մոտեցում ցուցաբերելու հստակ կառուցակարգեր:

Ավելին, անհրաժեշտ է նշել, որ ընտանեկան պայմանները հաշվի առնելու օրենսդրական համապատասխան կարգավորումներ բացակայում են նաև քաղաքացիներին *վարժական հավաքների և զորավարժությունների ներգրավելիս*:

Այս առումով, կարևոր արձանագրում է այն, որ քաղաքացիներին վարժական հավաքների և զորավարժությունների ներգրավումն ինքնանպատակ չէ: Տրամաբանությունը զինված ուժերի պահեստազրում հաշվառված զինապարտների նախապատրաստությունն է, նրանց ռազմական

<sup>795</sup> Պաշտպանության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացվել է, որ ընտանեկան դրությամբ պայմանավորված (անչափահասի միակ խնամակալ, հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամի միակ խնամակալ և այլն) զորահավաքային միջոցառումներին ընդգրկված քաղաքացիների վերաբերյալ Պաշտպանության նախարարության թեժ գիծը ստացել է ահազանգեր: Դիմումատուներին պարզաբանվել է, որ օրենքով սահմանված են այն դեպքերը, երբ անձը ենթակա չէ զորահավաքային զորակոչով զորակոչվելու: Սակայն, դիմում-բողոքներ ստանալուն պես ՊՆ ստորաբաժանումներն ուսումնասիրվել են կոնկրետ անձի ընտանիքի կազմը և դիմումում նշված փաստերի իսկության դեպքում զինկոմիսարիատները, հնարավորության սահմաններում, ձեռնպահ են մնացել նշված կատեգորիայի անձանց զորահավաքային զորակոչին ընդգրկելու գործողություններից:

գիտելիքների թարմացումն ու բարելավումը՝ հնարավոր մարտական գործողություններ սկսվելու դեպքում զորահավաքային զինվորական ծառայությանը և ռազմական գործողություններին պատշաճ մարտունակությամբ պահեստազորայինների մասնակցությունն ապահովելու նպատակով:

Նշվածի համատեքստում էլ հնարավոր է դառնում հանգել այն հետևության, որ օրենքով սահմանված դեպքերում զորահավաքային զինվորական ծառայության զորակոչման ոչ ենթակա քաղաքացիներին վարժական հավաքների և զորավարժությունների ներգրավումը կորցնում է իր նպատակային նշանակությունը: *Հետևաբար, ընտանեկան պայմաններից ելնելով զորահավաքային զորակոչի ոչ ենթակա անձանց շրջանակի որոշման հետ կապված Պաշտպանի առաջարկը հավասարապես վերաբերելի է նաև վարժական հավաքների և զորավարժությունների ներգրավման գործընթացին:*

Տվյալ խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային հայտարարությամբ և պաշտոնապես գրություններ ուղարկել Ազգային ժողով և Պաշտպանության նախարարություն<sup>796</sup>: Ողջունելի է Պաշտպանության նախարարությունից ստացված պարզաբանումն առ այն, որ ներկայում մշակվում են «Պաշտպանության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնցում լուծում կտրվի նաև ընտանեկան պայմաններից ելնելով զորահավաքային զորակոչին և (կամ) վարժական հավաքներին ոչ ենթակա անձանց մասով՝ հիմքում ունենալով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պայմանները: Նախագծերի շրջանառությունն իրականացվելու է 2022 թվականին:

**3) Զորահավաքային զորակոչի ընթացքում արձանագրվել են նաև դեպքեր, երբ պահեստազորում հաշվառված անձանց զորակոչելիս հաշվի չեն առնվել քաղաքացիների մասնագիտական հմտությունները, զինվորական գիտելիքները, պատրաստվածության աստիճանը, նախկինում զինվորական ծառայություն անցած լինելու կամ չլինելու հանգամանքը և այլն:**

Արձանագրվել է դեպք, երբ զորահավաքային զինվորական ծառայության է զորակոչվել նախկինում պարտադիր ծառայություն չանցած երաժիշտ, ով տեղափոխվել է ծառայության այնպիսի վայր ու այնպիսի գործողությունների իրականացման նպատակով, որոնց բացարձակ պատրաստված չի եղել: Այս դեպքում ևս խոսք է գնում զորահավաքային զորակոչի գործընթացի կազմակերպվածության մասին: Ոչ միայն քաղաքացիների առողջական վիճակի, այլև նրանց մասնագիտության և զինվորական անհրաժեշտ պատրաստվածության ճիշտ գնահատումը, քաղաքացիների գիտելիքների և հմտությունների վերհանումը հետագա զինվորական ծառայության պատշաճ կազմակերպման անհրաժեշտ և կարևորագույն հիմքերից է:

*Մինչև զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելը, պետական իրավասու մարմիններն առնվազն պետք է տիրապետեն այն բոլոր տվյալներին, որոնք անհրաժեշտ են*

<sup>796</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1883>

յուրաքանչյուր պահեստազորայինի հմտությունները, հնարավորությունները, կրթությունն ու պատրաստվածությունը գնահատելու, մարտական գործողությունների ընթացքում այդ հնարավորություններն անհրաժեշտ ուղղությամբ օգտագործելու և յուրաքանչյուր անձին համապատասխան վայր ու առաջադրանք կատարելու ուղարկելու համար<sup>797</sup>:

**Խնդիրներ են արձանագրվել նաև բուն զորահավաքային ծառայության հետ կապված:**

**1) Առանց վարժանքներ անցնելու մարտերի ներգրավում:** Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են բողոքներ առանց վարժանքներ իրականացնելու մարտերի ներգրավելու վերաբերյալ: Թեև, ռազմական դրություն հայտարարվելու որոշակի ժամանակ անց կազմակերպվում էին մասնագիտական (թիրախային) վերապատրաստումներ<sup>798</sup> (որոնց որակի բովանդակային կողմի քննարկումն այս պարագրաֆի խնդիրը չէ), այնուամենայնիվ արձանագրված՝ առանց պատրաստման մարտական առաջադրանքի ուղարկելու դեպքերը խիստ մտահոգիչ էին:

Անթույլատրելի է զորահավաքային զորակոչի միջոցով զինված ուժեր ներգրավելուց հետո քաղաքացուն առանց համապատասխան զինվորական գիտելիքներ սովորեցնելու անմիջական մարտական գործողությունների վայր կամ հատուկ առաջադրանքների ուղարկելու դեպքերը՝ առավել ևս, երբ քաղաքացին երբևէ չի ներգրավվել պահեստազորային պատրաստության միջոցառումների կամ զինվորական ծառայություն չի անցել: Դրանով վրանգվում է ինչպես այդ զինծառայողի, այնպես էլ նրա ծառայակիցների կյանքն ու առողջությունը և հանգեցնում մարտական առաջադրանքների ոչ պատշաճ կատարման:

**2) Առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված զինծառայողներին ծառայությունից չարձակում:** 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված զինծառայողներին ծառայությունից չարձակելու վերաբերյալ: Բողոքներից մեկով, օրինակ, քաղաքացին հայտնել է, որ հարազատն ունի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ, սակայն մեկնել է զորահավաքային զինվորական ծառայության, և նրան հատկացվել է զենք-զինամթերք: Ընդ որում, հոգեկան առողջության խնդրի պատճառով հարազատը նախկինում

<sup>797</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ պահեստազորում հաշվառված քաղաքացիները, իրենց ունեցած ռազմահաշվառական մասնագիտությանը համապատասխան, զինվորական կոմիսարիատների կողմից կցագրվում են զինված ուժերի պատերազմական ժամանակաշրջանի հաստիքների՝ զորահավաքային զորակոչի միջոցով զինված ուժերի համալրումն ապահովելու նպատակով:

<sup>798</sup> Պաշտպանության նախարարության պարզաբանմամբ՝ մարտական ներդաշնակման շրջաններ դուրս բերված բոլոր ստորաբաժանումների (կամավորական ջոկատներ, այլ զորքեր, աշխարհազոր) հետ անցկացվել են հրաձգություններ, մարտավարական, առաջին բուժօգնության, հետախուզության և այլ պարապմունքներ, ընդ որում, վաշտերի հետ՝ եռօրյա, գումարտակների հետ՝ հնգօրյա, իսկ գնդերի հետ՝ յոթնօրյա տևողությամբ: Պատերազմի օրերին ՊՆ թեժ գիծը ստացել է ահազանգեր, երբ պահեստազորայինին կցել են այնպիսի հաստիքի, ինչին ինքը չի տիրապետում: Խնդիրներն անմիջապես զեկուցվել են տվյալ զորամասերի պատասխանատուներին, և հարցերը լուծում են ստացել:



ազատվել է զինվորական ծառայությունից: Քննարկվող դեպքում անմիջապես կապ է հաստատվել Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչների հետ և առաջարկվել հրատապ միջոցներ ձեռնարկել քաղաքացուն զորահավաքային զինվորական ծառայությունից արձակելու ուղղությամբ: Մինչդեռ, խնդիրը միմյանց փոխանցելու ընթացակարգերի պատճառով (Պաշտպանության նախարարություն - ԶՈՒ գլխավոր շտաբ - զորամասի հրամանատարություն) քաղաքացու զինվորական ծառայությունից արձակումը ձգձգվել է. նա արձակվել է մոտ 10 օր անց:

Ընդհանուր առմամբ, ակտիվ մարտական գործողությունների ամբողջ ընթացքում Պաշտպանության նախարարություն - Գլխավոր շտաբ - զորամասերի անմիջական հրամանատարություն օղակում զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքներին առնչվող հարցերը միմյանց միջև տեղ հասցնելու, քննարկելու, լուծումներ գտնելու հետ կապված խնդիրներ են եղել: Մասնավորապես, հարցերին արձագանքելը եղել է ձգձգումներով, որի հետևանքով շատ հաճախ դրանց լուծումը դարձել է ժամանակավրեպ:

**3) Կորոնավիրուսային հիվանդություն ունեցող զինծառայողներին չմեկուսացնելու ու բուժօգնություն չտրամադրելու խնդիր:** Բողոքներ են ստացվել նաև զորահավաքային զինվորական ծառայության ներգրավված և կորոնավիրուսային հիվանդություն ունեցած զինծառայողին չմեկուսացնելու ու պատշաճ բուժօգնություն չտրամադրելու վերաբերյալ: Բողոքներից մեկով, օրինակ, չնայած հարցը մեր կողմից պարբերաբար բարձրացնելուն և խնդրի կարգավորմանը միտված իրավասու մարմնի պատրաստակամությանը՝ զինծառայողը շուրջ 10 օր չի մեկուսացվել, և նրան պատշաճ բուժօգնություն չի տրամադրվել:

*Խնդիրն անհրաժեշտ է մոտենալ երկու դիմացկունից. առաջին՝ զինծառայողի առողջության պահպանման ու բուժօգնություն տրամադրելու հարցում պետությունը կրում է ուղիղ պարտականություն: Երկրորդ, կորոնավիրուսային հիվանդություն ունեցող զինծառայողին չմեկուսացնելը կարող է հանգեցնել մյուս զինծառայողների վարակմանը:*

Իհարկե, պետք է ընդգծել, որ տվյալ ոլորտում բացթողումներ արձանագրվել են ոչ հաճախակի: Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ ընդգծում է, որ ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի **ռազմական բժիշկները հավատարիմ են իրենց մարդասիրական բարձր առաքելությանը:** Դրա մասին են վկայում ոչ միայն Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները, այլև քաղաքացիները, ովքեր իրենց դիմումներում հերոսական են համարում մեր բժիշկների կատարած աշխատանքը<sup>799</sup>:

Իհարկե, ռազմաբժշկության ոլորտում կան նաև տարբեր խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է հետևողական կոնկրետ քայլեր: Մարդու իրավունքների պաշտպանն իր իրավասության շրջանակում պատրաստակամ է ու մշտապես է աջակցում խնդիրների լուծմանը, ինչը բերում է

<sup>799</sup> Պատերազմական գործողությունների ժամանակ շատ դեպքերում նրանք վերջինն են դուրս եկել ռազմական գործողությունների այն վայրերից, որտեղ ընթացել են ծանր մարտեր՝ օգնություն ցույց տալով կամ փրկելով մյուսներին: Պաշտպանն արձանագրել է նաև ռազմագերիներին բացառիկ աջակցության օրինակներ: Բժիշկների բարձր պրոֆեսիոնալիզմը, անձնուրացությունը, գիշեր ու ցերեկ հոգատար աշխատանքը պետք է յուրաքանչյուրս բարձր գնահատի: Նրանց առաքելությունը մարդասիրական է և չի ճանաչում ազգություն:

տվյալ համակարգի զարգացմանը և նպաստում մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր գործին:

**4) Տևական ժամանակ մարտերին մասնակցելուց հետո հերթափոխ չիրականացնելը:** Քաղաքացիները Պաշտպանին դժգոհություններ են ներկայացրել առ այն, որ իրենց հարազատները տևական ժամանակ մասնակցել են մարտական գործողություններին (որոշ դեպքերում շուրջ երկու ամիս անընդմեջ), սակայն նրանց հերթափոխը չի կազմակերպվել: Այդ պատճառով, նրանք հոգնել են, ձեռք բերել առողջական խնդիրներ: Ճիշտ է, անհատական գանգատների շրջանակում Պաշտպանության նախարարության հետ համագործակցությամբ առանձին հարցեր լուծում էին ստանում, սակայն համակարգային խնդիրն առկա էր:

**5) Չինժառայողների կենցաղային պայմանների հետ կապված խնդիրներ:** Պաշտպանը ստացել է բազմաթիվ բողոքներ զինժառայողների պահման պայմանների վերաբերյալ: Քաղաքացիները դժգոհել են, որ զինվորները պահվում են խոնավ, ցուրտ պայմաններում, քնում են հատակին, տևական ժամանակ լոգանք չեն ընդունել, որոշ հատվածներում, առկա չէ խմելու ջուր, զինվորները չունեն բավարար սնունդ, քնում են դրսում՝ քնապարկերում: Սահմանամերձ բնակավայրեր կատարված այցերի և նոր բնագծերում տեղակայված մեր զինժառայողների հետ հանդիպումների ընթացքում զինժառայողները ևս բարձրացրել են հրատապ լուծում պահանջող ու կենսական կարևորության մի շարք խնդիրներ (օրինակ, չկան դաշտային վրաններ, անկողնային պարագաներ, զինժառայողները մի շարք դեպքերում տեղակայվել են պոլիէթիլենային վրաններում, դժվարություններ են առաջանում ջրամատակարարման, ջեռուցման, հիգիենայի կազմակերպման հարցերում և այլն):

Պաշտպանն արձանագրված խնդիրներն անմիջապես ներկայացրել է Պաշտպանության նախարարության քննարկմանը և առաջարկել հնարավորին սեղմ ժամկետներում գտնել լուծումներ<sup>800</sup>:

Մարտական գործողություններին մասնակցած պարտադիր ժամկետային զինժառայողների ծնողները Պաշտպանին հասցեագրված բողոքներով պնդել են, որ մարտական գործողություններին մասնակցության հետևանքով իրենց զավակները ձեռք են բերել լուրջ առողջական և հոգեբանական խնդիրներ: Նշել են, որ նրանք զինվորական ծառայություն են անցնում գերծանրաբեռնված ռեժիմով, ներկայում ավելի հաճախակի են ներգրավվում մարտական հերթապահության, ինչն է՛լ ավելի է վատթարացնում նրանց առողջական վիճակը: Ծնողների դիրքորոշմամբ՝ մարտական գործողություններին մասնակցած պարտադիր ժամկետային զինժառայողներին պետությունը պետք է խրախուսի, և հնարավոր տարբերակներից մեկը դիտարկում են զինվորական ծառայության

---

<sup>800</sup> Ըստ Պաշտպանության նախարարության պարզաբանումների՝ զինված ուժերի անձնակազմն ամբողջությամբ ապահովվել են իրային ունեցվածքով (դաշտային ձմեռային համազգեստով, տաք ներքնաշորերով, անձրևանոցներով և քնապարկերով, վառարաններով, վառելափայտով, անհրաժեշտ սննդով): Նոր զբաղեցվող բնագծերում անձնակազմի կենցաղի բավարար պայմանների ապահովման համար հատկացվել են վրաններ և անկողնային պարագաներ, տարվել են թիրախային բազմաթիվ այլ աշխատանքներ: Աշխատանքները կրելու են շարունակական բնույթ:

Ժամկետի կրճատումը վեց ամսով: Նշել են, որ այդ հարցով դիմել են իրավասու գերատեսչություններին, սակայն հստակ պատասխան չեն ստացել: Զորամասեր այցերի ընթացքում այս հարցը Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչներին մոտ բարձրացրել են նաև զինծառայողները: Պաշտպանության նախարարություն ուղարկված գրությամբ Պաշտպանը կոնկրետ հարցադրում է կատարել այն մասին, թե որն է Պաշտպանության նախարարության հստակ դիրքորոշումը մարտական գործողություններին մասնակցած զինվորների ծառայության ժամկետը կրճատելու հարցի վերաբերյալ: Ըստ Պաշտպանության նախարարության՝ մարտական գործողություններին մասնակցած պարտադիր ժամկետային զինծառայողների ծառայության ժամկետների կրճատում չի նախատեսվում:

Ճիշտ է, ռազմական դրությունը վերացված է, սակայն այն խնդիրները, որոնք արձանագրվել են և որոնց հաշվառմամբ Պաշտպանը ներկայացրել է առաջարկներ՝ կարևոր են պետության անվտանգության և մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

1. բացառել զորահավաքային զորակոչի ընթացքում պահեստագործում հաշվառված անձանց բժշկական հետազոտություններ և փորձաքննություն չիրականացնելու դեպքերը՝ մանրամասն գնահատելով զորակոչվողի առողջական վիճակը,

2. քննարկել քաղաքացիական բուժհաստատություններում զինապարտ քաղաքացիների հետազոտությունների արդյունքները նույնպես ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (զինկոմիսարիատի) համար հասանելի դարձնելու հարցը՝ միասնական բազայի ներդրման եղանակով,

3. քաղաքացուն զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելիս յուրաքանչյուր դեպքում ցուցաբերել անհատական մոտեցում՝ ուշադրություն դարձնելով նրա հատկապես առողջական կամ ընդհանրական կամ այլ օբյեկտիվ, հարգելի ու բարդ խնդիրներին, և յուրաքանչյուր դեպքում քննարկել կարճաժամկետ խնդիրների վերացման հնարավորության դեպքում նրա զորակոչման օրը հետաձգելու հնարավորության հարցը,

4. ընդլայնել ընդհանրական պայմաններից ելնելով զորահավաքային զորակոչի ոչ ենթակա անձանց շրջանակը կամ մշակել ու ներդնել անհատական (ոչ մեխանիկական) մոտեցում ցուցաբերելու հստակ մեխանիզմներ,

5. միջոցներ ձեռնարկել դեռևս մինչև զորահավաքային զինվորական ծառայության քաղաքացուն զորակոչելը նրա կարողությունները, հմտությունները, մասնագիտությունը և զինվորական պատրաստվածությունը պատշաճ գնահատելու ու դրանք զորահավաքային զինվորական ծառայության ընթացքում համարժեք օգտագործելու հնարավորությունները նախապես պարզելու ուղղությամբ,

6. բացառել բոլոր այն դեպքերը, երբ մարտական գործողություններին կամ մարտական հատուկ առաջադրանքների կատարմանը կներգրավվեն մարտական պատրաստություն չանցած, ներառյալ՝ զենքի հետ վարվեցողության կանոններին չփորապետող կամ տեխնիկայի և

սպառազինության հատուկ գիտելիքներ չունեցող կամ ընդհանրապես հոգեբանորեն անպատրաստ որևէ զինծառայող (ընդ որում՝ ինչպես պարտադիր զինծառայող, այնպես էլ պահեստազորից զորակոչված),

7. ուժեղացնել հսկողությունը զինծառայողների առողջական խնդիրների վերաբերյալ գանգաղների դեպքում նրանց պատշաճ բժշկական օգնություն փրամադրելու գործընթացի նկատմամբ,

8. ուժեղացնել հսկողությունը, որպեսզի առողջական վիճակի պարճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի քաղաքացիները անհապաղ արձակվեն զինված ուժերից,

9. մշակել ճգնաժամային կամ արտակարգ իրավիճակներում պետական մարմինների միջև առավել ակտիվ ու արագ համագործակցության արդյունավետ մեխանիզմներ՝ վերլուծելով նաև մարտական գործողությունների ընթացքում թույլ տրված թերություններն ու բացթողումները,

10. նոր զբաղեցվող բնագծերում անձնակազմի կարիքների գնահատմամբ շարունակել և առավել ինտենսիվ աշխատանքներ տանել նրանց ծառայողական պայմանների բարելավման ուղղությամբ (պատշաճ կենցաղային պայմաններ, իրային բավարարում, անվտանգության միջոցների հատկացում և այլն):

### **3. Վարժական հավաքների ներգրավված անձանց իրավունքների ապահովման օրենսդրական և գործնական խնդիրները**

Վարժական հավաքների հետ կապված քաղաքացիների իրավունքների վիճակը 2021 թվականի ընթացքում շարունակել է գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման ներքո: Խնդիրները վեր են հանվել տարբեր եղանակներով, այդ թվում՝ Պաշտպանին հասցեագրված գրավոր ու բանավոր բողոքներով, մի շարք զորամասեր այցելով և վարժական հավաքների մասնակիցների հետ առանձնազրույցներով և այլն:

Նախ, մինչև բուն խնդիրներին և դրանց հնարավոր լուծումներին անդրադառնալը կարևոր է նշել, որ տարբեր զորամասեր այցելի և վարժական հավաքների մասնակիցների հետ հանդիպումների և առանձնազրույցների արդյունքում հնարավոր է դառնում եզրահանգել, որ քաղաքացիները շատ հարցերում դրականորեն են արտահայտվում, ինչը պայմանավորված է նրանց հայրենասիրությամբ, իրենց կատարած ծառայության դերի գնահատմամբ, նման միջոցառումների իրենց մասնակցության կարևորության հստակ գիտակցումով, իսկ որոշ խնդիրներ և դժվարություններ նրանց կողմից նույնիսկ անտեսվում են:

Ինչ վերաբերում է վարժական հավաքների ընթացքում արձանագրված խնդիրներին, ապա դրանք հիմնականում կարելի է բաժանել երկու խմբի՝ պրակտիկ և օրենսդրական:

Այսպես, **քաղաքացիները Մարդու իրավունքների պաշտպանին դիմել են վարժական հավաքներին ծանուցման խնդիրների հետ կապված հարցերով:** Մի շարք դեպքերում մարդիկ

ներկայացրել են պնդումներ, որ իրենց վարժական հավաքների ներգրավման նպատակով **ծանուցվում են հեռախոսազանգի միջոցով:**

Մինչդեռ, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քաղաքացին վարժական հավաքի կանչվում է իր հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատի կողմից տրված փաստաթղթային կամ էլեկտրոնային ծանուցման համաձայն<sup>801</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի թե՛ գծին ահազանգերով քաղաքացիները նաև հայտնել են, որ վարժական հավաքներին զորակոչվելու վերաբերյալ ծանուցագրեր են ստացել: Նրանք դժգոհություն են ներկայացրել առ այն, որ ծանուցագրում նշված է մի քանի օր հետո զինկոմիսարիատ ներկայանալու և վարժական հավաքներին ներգրավելու մասին (արձանագրվել է դեպք նույնիսկ մեկ օր հետո): **Մարդիկ բողոքել են, որ ուշ են ծանուցվել:** Զորամասեր այցերի ընթացքում այս հարցը Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչների մոտ բարձրացրել են նաև վարժական հավաքների ներգրաված քաղաքացիները: Նրանք ևս հայտնել են, որ զորակոչվելու վերաբերյալ համապատասխան ծանուցագիրը զորակոչվելուց ընդամենը մի քանի օր առաջ են ստացել:

Պաշտպանության նախարարությունը ևս փաստում է, որ վարժական հավաքներին ուշ ծանուցելու խնդիրներ են արձանագրվել <sup>802</sup> : Պաշտպանը կարևոր է համարում նշել, որ ուշ ծանուցելու դեպքում անձը չի կարողանում աշխատանքային, ընտանեկան և այլ հարցերը կարգավորել և միայն դրանից հետո, առանց մտահոգվելու այլ խնդիրների մասին, ներգրավել զինված ուժեր և պատշաճ իրականացնել ծառայողական պարտականությունները: Հենց դրա մասին են վկայում հենց վարժական հավաքների ներգրաված քաղաքացիների մտահոգությունները:

Պաշտպանին հասցեագրվել են նաև բողոքներ **առանց պատշաճ բժշկական հետազոտություն և փորձաքննություն իրականացնելու** վարժական հավաքների ներգրավելու վերաբերյալ<sup>803</sup>:

<sup>801</sup> Զինկոմիսարիատների կողմից ծանուցումների հետ կապված խնդիրներին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել «Զինվորական հաշվառման և զորակոչի կազմակերպման գործընթացը» պարագրաֆում:

<sup>802</sup> Մարդու իրավունքների պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե քանի բողոք է ստացվել վարժական հավաքների ներգրավումից ընդամենը մի քանի օր առաջ անձանց ծանուցելու հետ կապված: Ըստ ստացված պատասխանի՝ վարժական հավաքներ անցկացնելու վերաբերյալ ՀՀ կառավարության համապատասխան որոշումները իրենց ընդունման և կազմակերպման ժամանակագրական առումով հնարավորություն չեն տվել պահպանելու ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետով սահմանված պահանջը, այն է՝ պահեստազորայինները, որոնք ընտրվել են որպես վարժական հավաքներում պատրաստվելու թեկնածուներ, ծանուցվում են վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն 20 օրացուցային օր առաջ՝ զինվորական հաշվառման տվյալները ստուգելու և բուժհետազոտում անցկացնելու նպատակով: Նշված խնդրով պայմանավորված քաղաքացիները վարժական հավաքներին իրենց ներգրավվելու մասին ծանուցվել են ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1174-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 13-րդ կետով սահմանված ժամկետների որոշակի խախտմամբ, որի կապակցությամբ քաղաքացիների կողմից ստացվել են դիմում-բողոքներ:

<sup>803</sup> Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ առանց քաղաքացու առողջական վիճակը հետազոտելու կամ ոչ պատշաճ հետազոտելու վարժական հավաքների ներգրավելու

Ի հարկե, անհատական բողոքների և ահազանգերի հիման վրա ձեռնարկված միջոցների կամ քաղաքացիների կողմից զինկոմիսարիատում հետազոտություն անցնելու պահանջ ներկայացվելու արդյունքում խնդիրները կարգավորվել են, սակայն օրենքով նախատեսված և պարտադիր բժշկական հետազոտություններ չիրականացնելն ինքնին խնդրահարույց է:

Այս առումով առկա է նաև օրենսդրական խնդիր: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասը առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության պարտադիր պահանջ է նախատեսում, ի թիվս այլնի, վարժական հավաքի ներգրավման դեպքում:

Բացի դրանից, նույն օրենքի 59-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ ծանուցման հիման վրա զինվորական կոմիսարիատ ներկայացած քաղաքացին անցնում է բուժհետազոտում, որի արդյունքներով վարժական հավաքի կանչվելու ենթակա ճանաչվելու դեպքում ուղարկվում է վարժական հավաքի անցկացման վայր: Օրենքի 60-րդ հոդվածը սահմանում է պահեստազորում հաշվառված քաղաքացիներին զինվորական վարժանքների (հրամանատարաշտաբային կամ շտաբային, զինվորական մարզումների) և զորավարժությունների (զորախաղերի) կանչելու կարգն ու ժամկետները: Օրենքի թե՛ 17-րդ, թե՛ 60-րդ հոդվածներով հետազոտությունների և փորձաքննության պարտադիր պահանջ նախատեսված չէ զինվորական վարժանքների և զորավարժությունների ներգրավման դեպքերի համար:

Օրենքով նման պահանջ նախատեսված չլինելն անհասկանալի է, քանի որ զինվորական վարժանքների և զորավարժությունների ներգրավման դեպքերում ևս քաղաքացիներն իրականացնում են զինվորական պարտականություններից բխող գործողություններ, որոնք ենթադրում են որոշակի ֆիզիկական ծանրաբեռնվածություն:

Հասկանալի է, որ հատկապես համապետական զորավարժությունների և վարժական հավաքների իրականացման դեպքում ներգրավվող քաղաքացիների թիվը կարող է շատ մեծ լինել, սակայն այդ փաստն օրենսդրական պարտավորությունները չիրականացնելու իրավական հիմնավորում հանդիսանալ չի կարող: Զորավարժություններն ու վարժական հավաքները, ի տարբերություն զորահավաքի, նախապես հստակ պլանավորվող միջոցառումներ են, պետությունն է որոշում դրանց իրականացման ժամկետը, տևողությունը և ծավալները, հետևաբար դրանց պլանավորումը պատշաճ իրականացվելու դեպքում հնարավոր է քաղաքացիների բժշկական հետազոտություններն ու փորձաքննություններն իրականացնել մինչ վարժական հավաքների կոնկրետ գործողությունները սկսելը:

Հետևաբար, պատերազմի սպառնալիքի ներքո գտնվող կամ մարտական գործողությունների մեջ ներգրավված պետության պաշտպանության խնդիրների, զորակոչվող անձի, ինչպես նաև մյուս զինծառայողների անվտանգության և իրավունքների ապահովման տեսանկյունից կարևոր է

---

վերաբերյալ բողոքներ չեն ստացվել: 2021 թվականի վարժական հավաքներին ընդգրկված քաղաքացիների բժշկական հետազոտությունը և փորձաքննությունն իրականացվել է քաղաքացիների կողմից ներկայացված բժշկական փաստաթղթերի և գանգատների հիման վրա:

ապահովել հետազոտություններ և փորձաքննություն անցած անձի զորակոչման պատշաճ գործընթացը:

Հենց այսօրի իրավիճակներն են ցույց տալիս խաղաղ պայմաններում նախապես որոշված պլաններին համապատասխան, պատշաճ և որակյալ վարժական հավաքներ իրականացնելու կարևորությունը:

Բացի այդ, Նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում վարժական հավաքների իրականացումը զորքերում վարակի թափանցման ու տարածման առումով, իհարկե, որոշակի ռիսկեր է պարունակում: Նաև այդ առումով է կարևոր վարժական հավաքների ներգրավման հենց սկզբնական փուլից կանխարգելիչ միջոցների ձեռնարկումը և պատշաճ բժշկական հետազոտությունների իրականացումը:

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ վարժական հավաքների ընթացքում զորքերում նոր կորոնավիրուսային վարակի թափանցմամբ ու տարածմամբ պայմանավորված ռիսկերը կառավարելի դարձնելու, վարակվածներին մեկուսացնելու ու բուժում տրամադրելու ուղղությամբ իրականացվել են բուժկանխարգելիչ, սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային համալիր միջոցառումներ: Պայմանագրային զինծառայողներից բարձր ջերմություն ունենալու վերաբերյալ ստացվել է 8 բողոք, աշխատանքային կարգով կազմակերպվել է զինծառայողների թեստավորման գործընթացը:

Մեկ այլ, առավել համակարգային խնդիր է այն, որ **վարժական հավաքների ներգրավելիս օրենքը գրեթե հաշվի չի առնում քաղաքացու ընտանեկան հանգամանքները**<sup>804</sup>: Խնդրի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է բազմաթիվ բողոքներ: Օրինակ, քաղաքացին տեղեկացրել է, որ զինկոմիսարիատից ծանուցում է ստացել վարժական հավաքներին ներգրավելու նպատակով: Նշել է, որ ունի 4 անչափահաս երեխա, և զորակոչվելու դեպքում երեխաները կմնան առանց խնամքի: Ուշագրավ է, որ նկարագրված դեպքում անձը ենթակա չէ զորահավաքային զինվորական ծառայության (ըստ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի), սակայն վարժական հավաքներից չի ազատվում: Մեկ այլ դեպքում էլ քաղաքացին դժգոհություն է հայտնել, որ վարժական հավաքների ներգրավելու դեպքում նորածին դուստրը, հաշմանդամություն ունեցող մայրը կմնան առանց խնամքի և խնդրել է աջակցել ընտանեկան պայմաններից ելնելով վարժական հավաքներից ազատվելու հարցում: Զորամասերի այցերի ընթացքում վարժական հավաքների ներգրավված զինծառայողներից մեկն էլ հայտել է, որ անտեսվել է իր խնամքին 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող մայր ունենալու հանգամանքը և պարտադրել են զորակոչվել: Բոլոր դեպքերում քաղաքացիների բարձրացրած հարցերը ներկայացվել են զինկոմիսարիատին և Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչներին:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը, քաղաքացիների մտահոգությունները և ստացված բողոքները Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է եկել նաև հրապարակային

<sup>804</sup> Խնդիրը մանրամասն վերլուծվել ու ներկայացվել է «Քաղաքացիների իրավունքները զորահավաքային զորակոչի և ծառայության ընթացքում (արձանագրված խնդիրներ և չիրացված առաջարկներ)» պարագրաֆում:

հայտարարությամբ<sup>805</sup> և համապատասխան առաջարկություններով գրություններ հասցեագրել Ազգային ժողով և Պաշտպանության նախարարություն: Սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում ևս խնդրի վերաբերյալ կոնկրետ հարցադրումներ են ուղարկվել Պաշտպանության նախարարություն:

Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ վարժական հավաքներին ընդգրկված անձնակազմի կողմից ընտանեկան դրությամբ պայմանավորված ստացվել է 5 բողոք և քննարկման արդյունքում նշված անձինք արձակվել են ՀՀ ՁՈՒ պահեստագործ<sup>806</sup>: Նախարարությունը հավելել է, որ խնդրի կարգավորման նպատակով մշակվել են օրենքների նախագծեր՝ վարժական հավաքներից և զորահավաքային զորակոչից ընտանեկան պայմաններից ելնելով ազատվելու հիմքերի ընդլայնման վերաբերյալ: Նախագծերի շրջանառությունն իրականացվելու է 2022 թվականին:

**Մարդիկ բողոքներ են ներկայացրել նաև վարժական հավաքների ներգրավելու դեպքում վարկային պարտավորությունների հետ կապված:** Վարժական հավաքների ներգրավված զինծառայողները հայտնել են, որ զորակոչվելուց առաջ բոլոր իրավասու մարմիններին տեղեկացրել են վարկային պարտավորությունների մասին, սակայն հարցը չի լուծվել, պարտավորությունները պահպանվել են, ներկայում ևս բանկերն ու վարկային կազմակերպությունները պահանջում են վճարել վարկերը: Մարդու իրավունքների պաշտպանը տվյալ հարցը նույնպես համապատասխան գրությամբ ներկայացրել է Պաշտպանության նախարարություն:

Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչը հրապարակային խոսքում նշել է, որ օրենքով այդ խնդիրը կարգավորված չէ, իսկ Պաշտպանության նախարարությունը պատասխանատու է լինելու ըստ զինվորական կոչումների տրվելիք աշխատավարձերի համար: Հավելել է, որ հարցը կքննարկվի, կզեկուցվի վերադաս հրամանատարությանը, կփորձեն դիմել Կառավարությանը՝ խնդրի լուծման ուղիներ մշակելու նպատակով<sup>807</sup>:

**Վարժական հավաքների ներգրավված ուսանողների կրթության իրավունքի ապահովման հետ կապված ևս արձանագրվել են խնդիրներ:** Բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ որդին գերազանցությամբ սովորում է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում և վարժական հավաքի ներգրավելու պատճառով չի կարողանա գիտելիքը յուրացնել, քննությունները հանձնել, ինչի պատճառով էլ կզրկվի վարձավճարի զեղչի

<sup>805</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1883>

<sup>806</sup> Պաշտպանության նախարարության տեղեկացմամբ՝ Մարտական գործողությունների ընթացքում գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայող եղբայր կամ ընտանիքի այլ անդամ ունեցող զորակոչիկներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու հարցը քննարկվել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի շրջանակներում և նշված հիմքով տարկետում ստանալու վերաբերյալ ներկայացված բոլոր դիմումները բավարարվել են: Մարտական գործողությունների ընթացքում գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայող եղբայր կամ ընտանիքի այլ անդամ ունեցող քաղաքացիներին վարժական հավաքի կամ զորավարժանքի ներգրավվելու դեպքեր չեն արձանագրվել:

<sup>807</sup> <https://bit.ly/33pqGVM>



արտոնությունից: Քաղաքացու դիրքորոշմամբ՝ վարժական հավաքի ներգրավելու պատճառով խախտվել է որդու կրթություն ստանալու իրավունքը:

Անհատական գանգատի հաշվառմամբ, ինչպես նաև վարժական հավաքների ներգրաված ուսանողների կրթության իրավունքի երաշխավորման նպատակով՝ Մարդու իրավունքների պաշտպանը գրություն է հասցեագրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն: Պահանջվել է պարզաբանել, թե ինչպես են լրացվում վարժական հավաքների մասնակից ուսանողների բաց թողած դասաժամերը և ինչպես են կազմակերպվում նրանց քննությունները: Միաժամանակ, առաջարկվել է հայտնել, թե Նախարարությունն ինչպես է տեսնում նշված խնդիրների լուծման հնարավորությունները:

Կարևոր է արձանագրել, որ ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից ստացված պատասխանի՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում սովորող և վարժական հավաքներին մասնակցող բոլոր ուսանողների կրթության իրավունքի ապահովման համար բոլոր ստորաբաժանումներին հանձնարարվել է նրանց բացակայությունները համարել հարգելի, դասաժամերի լրացման համար կազմակերպել անհատական խորհրդակցություններ, ստուգարքները, կուրսային և լաբորատոր աշխատանքները, միջանկյալ և ընթացիկ քննությունները կազմակերպել անհատական ժամանակացույցով:

Վերը նկարագրված դեպքում քաղաքացին հայտնել է, որ որդուն համալսարանում տեղեկացրել են, որ կազմվելու է անհատական դասացուցակ, որով կլրացվի նրա բաց թողնված դասաժամերը:

Զորամասերում վարժական հավաքների մասնակիցների հետ առանձնազրույցների ընթացքում արձանագրվել է, որ շատ դեպքերում մինչ զորակոչվելը քաղաքացիների հետ **կնքվել է պայմանագիր, որտեղ նշված է եղել մարտական հերթապահության ընդգրկվելու մասին դրույթ, իսկ որոշ դեպքերում՝ նրանց հետ պայմանագիր չի կնքվել:** Ըստ առանձին պնդումների՝ որպես կանոն քրեական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքով են ստիպում ստորագրել պայմանագիրը: Այնուամենայնիվ, հիմնականում մարտական հերթապահությունների ներգրավելու հարցի վերաբերյալ նրանք բողոքներ չեն ներկայացրել և նշել են, որ պատրաստ են իրականացնել մարտական հերթապահություն: Բացի այդ, հավելել են, որ զորամաս տեղափոխվելուց հետո անցել են նախապատրաստական դասընթացներ, այնուհետև ընդգրկվել մարտական հերթապահության: Մասնակիցները հատուկ ընդգծել են, որ իրենց ներկայությունը պարտադիր ժամկետային զինծառայողներին ոգևորում է, զինծառայողների հետ ունենում են անհատական և խմբային զրույցներ, իրենց խորհուրդներով փորձում են բարձրացնել նրանց կարգապահության մակարդակը:

Վարժական հավաքների մասնակիցների հետ զրույցները, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքները փաստում են, որ վարժական հավաքների ներգրավված զինծառայողները տեղեկացված չեն, թե **եռամսյա վարժական հավաքների ընթացքում արդյոք հիմնական աշխատավայրում պահպանվելու են իրենց աշխատավարձերը:** Զինծառայողների դիրքորոշմամբ՝ եթե իմանան հիմնական աշխատատեղում աշխատավարձը պահպանվելու է, է՛լ

ավելի ոգևորված մարդիկ կներգրավվեն վարժական հավաքներին<sup>808</sup>: Վարժական հավաքների ներգրավված զինծառայողները նաև հայտնել են, որ հիմնական աշխատավայրում ոմանք ստանում են ավելի բարձր աշխատավարձ, քան վարժական հավաքներին ընդգրկվելու ընթացքում: Զինծառայողներից մեկը, օրինակ, նշել է, որ իր աշխատավարձը գոյանում է իրականացրած գործարքներից և իր ֆունկցիոնալ պարտականությունները չիրականացնելու, գործարք չկատարելու դեպքում՝ աշխատավարձ չի կարող ստանալ: Թեպետ, եղել են նաև հավաքների այնպիսի մասնակիցներ, ովքեր հայտնել են, որ ներկայում ստանում են ավելի բարձր աշխատավարձ, քան հիմնական աշխատավայրում: Պաշտպանության նախարարին հասցեագրված գրությամբ ներկայացվել է նաև վարժական հավաքների մասնակիցների այս մտահոգությունները:

Վարժական հավաքների մասնակիցները նաև բարձրացրել են աշխատանքային օրերին զորամասից կարճատև բացակայելու (արձակուրդ տրամադրելու) հարցը, որը նրանց կօգնի, օրինակ, ընտանեկան որոշակի հարցեր լուծել, աշխատավարձ ստանալ, կոմունալ վճարումներ կամ վարկային պարտավորությունները կատարել և այլն:

Պաշտպանության նախարարության տեղեկությունների համաձայն՝ վարժական հավաքների մասնակիցներին կարճատև արձակուրդ կամ ազատ արձակում տրամադրելու հետ կապված ստացվել է մեկ դիմում, և ընտանեկան պայմաններից ելնելով դիմումատուին հատկացվել է կարճատև արձակուրդ:

Զորամասեր կատարված մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել է մեկ այլ խնդիր նույնպես: Այսպես, **վարժական հավաքի մի խումբ մասնակիցներ նշել են, որ ցանկանում են բնակարան վարձակալել, սակայն գործնականում դա անհնար է:** Փոխհատուցում ստանալու համար նրանք պետք է վարձակալության պայմանագիր կնքեն, սակայն այդ դեպքում վարձավճարը զգալիորեն բարձրանում է: Բայցի դրանից, ժամանակային առումով չեն կարող բոլոր փաստաթղթային ձևակերպումները կատարել: Նրանց դիրքորոշմամբ՝ վարժական հավաքի մասնակիցների համար փաստաթղթային բոլոր ձևակերպումները պետք է կատարել արագ և պարզեցված ընթացակարգով: Նաև նշել են, որ բնակարանային վարձավճարները բարձր են, իսկ դրա դիմաց հատկացվող գումարը բավական քիչ: Մեկ այլ խումբ պահեստազորայիններ նշել են, որ վարժական հավաքներին ներգրավել են որպես սպա: Հետևաբար, ըստ նրանց՝ պետք է օգտվեն բոլոր արտոնություններից, օրինակ, վարժական հավաքի ամբողջ ընթացքում ապահովվեն բնակարանով: Որպես հարցի լուծման տարբերակ առաջարկում են սպայական հանրակացարանում

---

<sup>808</sup> Այս մասով կարևոր է արձանագրել, որ 2021 թվականի սեպտեմբերի 17-ին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը Վարչապետի աշխատակազմից ստացել է գրություն, որում նշված է, որ Վարչապետի աշխատակազմն ապահովում է այն աշխատողների հիմնական աշխատավարձի պահպանումը, ովքեր մասնակցում են վարժական հավաքներին: Գրությամբ նշված է, որ Վարչապետի աշխատակազմը չի առարկում վերը նշված սկզբունքի պահպանմանը (գրությունը ուղարկվել է հանրային իշխանության մարմինների ղեկավարներին):

բնակարանի տրամադրումը, հատկապես, որ կան զորացրված սպաների կողմից ազատված բնակարաններ<sup>809</sup>:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Մարդու իրավունքների պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ ընդգծում է, որ քաղաքացիներին վարժական հավաքների և զորավարժությունների ներգրավումն ինքնանպատակ չէ: Տրամաբանությունը զինված ուժերի պահեստազորում հաշվառված զինապարտների նախապատրաստությունն է, նրանց ռազմական գիտելիքների թարմացումն ու բարելավումը՝ հնարավոր մարտական գործողություններ սկսվելու դեպքում զորահավաքային զինվորական ծառայությանը և ռազմական գործողություններին պատշաճ մարտունակությամբ պահեստազորայինների մասնակցությունն ապահովելու նպատակով: Դա իր հերթին ենթադրում է, որ այս պրոցեսում անձի իրավունքները պետք է հնարավորին երաշխավորված լինի և անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բոլոր դետալներին՝ սկսած կրթության իրավունքից, մինչև ընտանեկան հանգամանքներ:

Հետևաբար՝ առաջարկվում է.

7. բացառել զորավարժություններին և վարժական հավաքներին կանչելու նպատակով օրենքով սահմանված կարգի խախտմամբ քաղաքացիներին ծանուցելու պրակտիկան, միաժամանակ, ապահովելով Կառավարության որոշմամբ սահմանված ժամկետում ծանուցումը (ծանուցվում են վարժական հավաքի անցկացման օրվանից առնվազն 20 օրացուցային օր առաջ),

8. բացառել առանց բժշկական հետազոտությունների և փորձաքննությունների քաղաքացիներին վարժական հավաքների ներգրավելու պրակտիկան, յուրաքանչյուր նման միջոցառման պլանավորումն իրականացնել այնպես, որ հետազոտությունները կատարվեն մինչև կոնկրետ միջոցառումներն սկսվելը,

9. միջոցներ ձեռնարկել խաղաղ պայմաններում վարժական հավաքների գործընթացում քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունների պատշաճ հավաքագրումն ու թարմացումն ապահովելու ուղղությամբ,

10. վարժական հավաքների ներգրավելիս յուրաքանչյուր դեպքում ցուցաբերել անհատական մոտեցում՝ ուշադրություն դարձնելով անձի հատկապես առողջական կամ ընտանեկան կամ այլ օբյեկտիվ, հարգելի ու բարդ խնդիրներին, և յուրաքանչյուր դեպքում քննարկել կարճաժամկետ խնդիրների վերացման հնարավորության դեպքում նրա զորակոչման օրը հետաձգելու հնարավորության հարցը,

11. հնարավորին սեղմ ժամկետում վերանայել ոլորտային օրենսդրությունը՝ ամրագրելով ընտանեկան պայմաններից ելնելով վարժական հավաքներին չներգրավելու հիմքերի համարժեք շրջանակ:

---

<sup>809</sup> Ուշագրավ է, որ ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ նախարարությունը վարժական հավաքների մասնակիցների կողմից բնակարան վարձակալելու դժվարությունների (օրինակ՝ վարձակալության պայմանագրի կնքում, փաստաթղթերի ստացման հետ կապված քաշքշուկներ, փոխհատուցվող գումարի չափ և այլն) բողոքներ չի ստացել:

#### **4. Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված խնդիրները ռազմական գործողությունների ավարտից հետո**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի մասնագիտացված ստորաբաժանումը՝ Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության բաժինը, շարունակել հետպատերազմյան խնդիրների բացահայտման, ուսումնասիրման ու լուծման եղանակներ ներկայացնելու աշխատանքներ:

Պաշտպանը հրապարակել է ուղեցույցներ, արտահերթ զեկույցներ (այդ թվում՝ փակ զեկույցներ), ձեռնարկներ, հանդես եկել բազմաթիվ հրապարակային հայտարարություններով<sup>810</sup>:

2021 թվականի ընթացքում զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների հետ կապված արձանագրվել են հիմնականում հետևյալ խնդիրները՝ 1) մարտական գործողությունների մասնակիցներին վարձատրության չտրամադրում, 2) «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված գումարի չտրամադրում կամ ձգձգումներ (այդ թվում՝ շահառուների ցանկի ավելացման խնդիր), 3) զինգրքույկում մարտերին մասնակցության վերաբերյալ գրառում չկատարում, 4) վիրավորում ստացած անձանց 500.000 դրամի չափով միանվագ դրամական օգնության տրամադրման մերժում, 5) գերության մեջ հայտնված պայմանագրային զինձառայողների աշխատավարձի չտրամադրում, 6) հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ եզրակացության չներկայացում, 7) գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինձառայողների ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու հետ կապված խնդիր/դատագենետիկական փորձաքննության եզրակացությունների չտրամադրում, 8) մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինձառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցության տրամադրման խնդիր և այլն:

**Զորահավաքային զորակոչով զինված ուժեր ներգրաված քաղաքացիներին վարձատրություն չտրամադրելու խնդիր:** Այս խնդիրը պահպանվել է նաև 2021 թվականի ընթացքում և դեռևս վերջնական լուծում չի ստացել: Մարդիկ պնդում են, որ զորակոչվել են

<sup>810</sup> Դրանք ուղղված են եղել ինչպես պետության կողմից սոցիալական աջակցության ծրագրերի մասին քաղաքացիների իրազեկվածության բարձրացմանը, զոհված զինձառայողների ընտանիքներին և հաշմանդամություն ձեռք բերած անձանց սոցիալական աջակցության ծրագրերից օգուվելու կարգերի պարզաբանմանը, զինձառայողներին և նրանց ընտանիքներին արտոնություններ տրամադրելուն, սահմանային բնակավայրերում մարդկանց իրավունքն ապահովելուն, բանակում կարգապահության ամրապնդմանն ու զինձառայողի դերի բարձրացմանը, գերության մեջ գտնվող մեր հայրենակիցների իրավունքների պաշտպանությանն ու վերադարձն ապահովելուն, ադրբեջանական հանցագործությունների մասին միջազգային կառույցներին ներկայացնելուն այլն: Հասանելի են հետևյալ հղումներով՝ <https://bit.ly/2PVGQiy>, <https://bit.ly/3GMSTmZ>, <https://bit.ly/2M37eoT>, <https://bit.ly/3Lt2Nh0>, <https://bit.ly/3pKmVPE>, <https://bit.ly/3HKx5d1>:

զորահավաքային զինվորական ծառայության, մասնակցել մարտական գործողություններին, սակայն դրամական բավարարում չեն ստացել<sup>811</sup>:

Օրինակ, բողոքներից մեկով պարզվել է, որ քաղաքացին զինկոմիսարիատի ծանուցագրով ներգրավել է զորահավաքային զինվորական ծառայության /Պաշտպանի աշխատակազմ է ներկայացրել նաև զորակոչման ծանուցագիրը/, մասնակցել մարտական գործողություններին: Պաշտպանության նախարարությունը ևս հաստատում է, որ քաղաքացին կոնկրետ ուղղություններով մասնակցել է մարտական գործողություններին: Որպես գումարի չտրամադրման պատճառ՝ Պաշտպանության նախարարությունը նշում է, որ քաղաքացին զորամասում չի հրամանագրվել: Ստացվում է՝ Պաշտպանության նախարարությունը քաղաքացուն զորակոչել է ծառայության, տեղափոխել կոնկրետ զորամաս, որտեղ չի հրամանագրել և ներգրավել է մարտերի: Պաշտպանն անթույլատրելի է համարում, որ Պաշտպանության նախարարությունն իր ներքին կազմակերպչական խնդիրների պատճառով, կոնկրետ դեպքում զինծառայողին զորամասում չհրամանագրելով, չի հատկացնում զինծառայողին հասանելիք դրամական բավարարումը<sup>812</sup>:

Պաշտպանը հատուկ ընդգծում է, որ զինված ուժերն իրենց ներկա և նախկին աշխատակիցների մասին հոգ տանելու պարտականություն ունեն: Սա փոխշահավետ է այն առումով, որ ներկա և նախկին զինծառայողների սոցիալական հարցերի լուծումը կարող է դիտվել նաև որպես հավաքագրմանը նպաստող հանգամանք: Բացի այդ, ապահովության բարելավումը ծառայություն անցող և ապագա զինծառայողներին ցույց է տալիս, որ զինված ուժերը պատասխանատու գործատու են<sup>813</sup>:

Մի շարք բողոքներով էլ արձանագրվել է, որ օրինակ, զորակոչվող քաղաքացին չի հաշվառվել ոչ զինկոմիսարիատում, ոչ զորամասում: Արդյունքում, քաղաքացու տվյալները որևէ տեղ արձանագրված չլինելու պատճառով նրան վարձատրություն չի տրամադրվել: Կամ անձի վերաբերյալ տվյալները (փաստաթղթերը) մնացել են հակառակորդի վերահսկողության տակ անցած զորամասերում, ինչի պատճառով էլ վարձատրության հետ կապված խնդիրներ են առաջացել:

<sup>811</sup> «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ զինծառայողների դրամական ապահովությունը սահմանող դրույթները տարածվում են նաև զորահավաքային զորակոչի միջոցով զինվորական ծառայություն անցնող զինծառայողների վրա:

<sup>812</sup> Սույն տարեկան հաղորդման կազմման աշխատանքների շրջանակում հարցադրում է ուղարկվել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե քանի բողոք է ստացվել զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիներին դրամական բավարարում չտրամադրելու վերաբերյալ և ինչ աշխատանքներ են տարվել հարցի համակարգային լուծման ուղղությամբ: Ըստ ստացված պատասխանի՝ զորահավաքային զորակոչով զինվորական ծառայության զորակոչված և դրամական բավարարում չստանալու վերաբերյալ 2021 թվականիի ընթացքում ՊՆ թեժ գիծը ստացել է շուրջ 160 հեռախոսազանգ: Կատարվել են ճշտումներ համապատասխան գործառնություններից (ստորաբաժանումներից) և հնարավոր սեղմ ժամկետում խնդիրը լուծվել է:

<sup>813</sup> Տե՛ս, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի կողմից 2008 թվականին տպագրված «Զինված ուժերի անձնակազմի մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» ձեռնարկ, էջ 434:

Պաշտպանին հասցեագրված բողոքների շրջանակում մշտապես ակտիվ քննարկումներ են տեղի ունեցել Պաշտպանության նախարարության իրավասու ներկայացուցիչների հետ, բազմաթիվ խնդիրներ արագ լուծում են ստացել, և քաղաքացիներին հատկացվել է համապատասխան վարձատրություն: Որոշ բողոքների քննարկումը դեռևս շարունակվում է (կապված, օրինակ, պակաս վարձատրության, նույն զինվորական կոչումը, հաստիքը և նույն ժամկետով զորահավաքային զինվորական ծառայության ներգրավվածներին տարբեր չափերի վարձատրության վերաբերյալ և այլնի հետ):

**«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված գումարը տրամադրելու ձգձգումների կամ գումարի տրամադրումը մերժելու, ինչպես նաև շահառուների ցանկի ավելացման խնդիր<sup>814</sup>:**

Դեռևս Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ չնայած իրավական հստակ կարգավորումներին՝ պրակտիկայում առաջացել է խնդիրներ վերը նշված օրենքի իմաստով շահառու համարվող անձանց տվյալների հավաքագրման, հստակեցման և դրանից հետո այդ տվյալները Հիմնադրամ փոխանցելու, այնտեղ հարցը քննարկելու, որոշում կայացնելու և գումարը շահառուի բանկային հաշվին փոխանցելու գործընթացի ձգձգումների հետ<sup>815</sup>: Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկություններ համաձայն՝ 2021 թվականի ընթացքում այդպիսի բողոքներ ստացվել են նաև նախարարությունում<sup>816</sup>:

Մարդիկ դժգոհություններ են ներկայացրել, որ պահանջվող բոլոր փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով ներկայացրել են իրավասու մարմին, սակայն տևական ժամանակ համապատասխան գումարը չի փոխանցվել իրենց բանկային հաշիվներին<sup>817</sup>: Բողոքներից մեկով,

<sup>814</sup> Միջազգային իրավական փաստաթղթերը երաշխավորում են պարտականությունների կատարումից բխող վնասվածքների, ինչպես նաև ծառայության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին սոցիալական արտոնությունների տրամադրումը: Այսպես, Զինված ուժերի անդամների իրավունքների մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ CM/Rec(2010)4 հանձնարարականի բացատրական հուշագրի «ԺԷ» կետը սահմանում է, որ զինծառայողները պետք է ստանան համապատասխան նպաստներ պարտականությունների կատարումից բխող վնասվածքներ ստանալու դեպքում, հատկապես, երբ ստացած վնասվածքը կամ հիվանդությունը թույլ չի տալիս շարունակել ծառայությունը զինված ուժերում և ունի երկարատև բացասական հետևանքներ, օրինակ, անձն այլևս չի կարողանում քայլել, օգտագործել ձեռքերը և այլն: Բացի դրանից՝ պետությունը պետք է ներդնի համապատասխան փոխհատուցման համակարգ: Ավելին՝ փոխհատուցման և համապատասխան դեպքերում նպաստների համակարգը պետք է նախատեսվի ծառայության ժամանակ մահացած զինծառայողի հարազատների շահերի հաշվառմամբ:

<sup>815</sup> Տե՛ս, Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդումը, 1115-1116 էջեր:

<sup>816</sup> Ըստ Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված հատուցման գումարների տրամադրման առումով ստացվել է շուրջ 80 դիմում, որոնցում բարձրացված հարցերը հիմնականում վերաբերել են գումարների ստացման կարգի, ժամկետների, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, նշված օրենքի իմաստով հատուցման գումար ստանալու իրավունք ունեցող շահառուների շրջանակի վերաբերյալ պարզաբանումներ տալու հարցերին:

<sup>817</sup> «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի

օրինակ, քաղաքացին հայտնել է, որ 2021 թվականի փետրվարի 1-ից Պաշտպանության նախարարությունը անհրաժեշտ փաստաթղթերը փոխանցել է Հիմնադրամին, սակայն մինչև մարտի 20-ը հարցը Հիմնադրամում չի քննարկվել և վճարումը չի իրականացվել:

Այս հարցով ևս ակտիվ համագործակցություն է տեղի ունեցել Պաշտպանության նախարարության և Հիմնադրամի իրավասու ներկայացուցիչների հետ: Բազմաթիվ դեպքերում, այդ թվում՝ վերը ներկայացված, բարձրացված խնդիրները լուծում են ստացել, և քաղաքացիները ստացել են սահմանված գումարը:

Կարևոր է արձանագրել, որ նախորդ տարեկան հաղորդմամբ այս խնդիրը բարձրացնելու, Պաշտպանության նախարարության և Հիմնադրամի հետ պարբերաբար քննարկումների արդյունքում 2021 թվականի ընթացքում զգալիորեն նվազել են նմանատիպ բողոքները:

Սակայն արձանագրվել է մեկ այլ խնդիր, որը կապված է օրենքի կարգավորման հետ: Այսպես, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով հստակ սահմանված են այն շահառուների ցանկը, ում կարող է հատկացվել համապատասխան գումարը: Այսպես, ըստ նշված օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի՝ զինծառայողի զոհվելու (մահանալու) կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում շահառու են համարվում զինծառայողի *ամուսինը, զավակը* (զավակները), *ծնողը* (ծնողները), հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ *18 տարին չլրացած կամ անգործունակ ճանաչված կամ մինչև 23 տարեկան առկա ցերեկային ուսուցմամբ սովորող ուսանող քույրը և եղբայրը, ինչպես նաև զինծառայողի խնամքի տակ գտնված 18 տարեկան և դրանից բարձր տարիքի հաշմանդամ քույրը և եղբայրը, եթե հաշմանդամ են ճանաչվել մինչև 18 տարին լրանալը*: Ընդ որում, քույրը և եղբայրը համարվում են շահառու, եթե նրանց ծնողները կամ միակ ծնողը մահացած են կամ ունեն աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության առնվազն երրորդ աստիճանի սահմանափակում:

Ստացվում է, որ նշված շահառուներից բացի զինծառայողի ընտանիքի այլ անդամի (եղբայր, քույր, տատ, պապ) հատուցում չի կարող տրամադրվել:

Օրենքի նշված կարգավորումը պրակտիկայում հանգեցրել է խնդիրների: Օրինակ, զոհված զինծառայողի եղբայրը դիմել է Մարդու իրավունքների պաշտպանին և հայտնել, որ զոհված եղբայրը չունի կին, զավակներ, ծնողներ, մինչդեռ օրենքի պատճառով ինքը չի կարողանում հատուցում ստանալ, քանի որ շահառու չի հանդիսանում: Մեկ այլ դեպքում, նման հարցով Պաշտպանին դիմել է զոհված զինծառայողի քույրը:

Հարցի լուծման համար այստեղ պետք է կարևորել պատգամավորական նախաձեռնությամբ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ

---

համաձայն՝ Պաշտպանության նախարարությունը զինծառայողի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելի օրենքով սահմանված կարգով որոշվելու (հաստատվելու) օրվանից մեկ ամսվա ընթացքում որոշում է, թե տվյալ դեպքով ով է համարվում շահառու և Հիմնադրամ է ներկայացնում զինծառայողի, ինչպես նաև շահառուի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները: Այդ տվյալները ստանալու օրվանից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Հիմնադրամը միանվագ գումարը փոխանցում է շահառուի համար բացված բանկային հաշվին:

առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություն կատարելու նախագիծը<sup>818</sup>: Փոփոխություններով, ի թիվս այլնի, առաջարկվում է հատուցում ստացող շահառուների կազմում ներառել նաև զոհվածի քրոջը, եղբորը, տատին, պապին: Փոփոխություններով առաջարկվում է հատուցում ստացող շահառուների կազմում ներառել նաև զոհվածի քրոջը, եղբորը, տատին, պապին և փաստացի ամուսնության մեջ գտնվող զինծառայողի կնոջը, եթե ունեն համատեղ երեխա: Այսպիսով, օրենքով շահառուների ցանկի ընդլայնումը լուծում է նաև Մարդու իրավունքների պաշտպանին դիմաց քաղաքացիների խնդիրները:

**Մարտական գործողություններին մասնակցելու վերաբերյալ զինվորական գրքույկում գրառում չկատարելու խնդիր:** 2021 թվականի ընթացքում շատ բողոքներ են ստացվել զինգրքույկներում մարտական գործողություններին մասնակցության վերաբերյալ առհասարակ գրառում չկատարելու, գրառում կատարելու նպատակով համապատասխան ստորաբաժանումներից տեղեկատվություն ստացված չլինելու կամ կատարված գրառումներում անճշտություններ լինելու վերաբերյալ և այլն:

Օրինակ, նշված թեմայով Պաշտպանին հասցեագրվող բողոքների ստվար հատվածը վերաբերում է զորահավաքային զինվորական ծառայության զորակոչված քաղաքացիների զինվորական գրքույկներում մարտական գործողություններին մասնակցության վերաբերյալ գրառում կատարված չլինելուն: Մի դեպքում, քաղաքացիները ներկայացրել են տեղեկություն այն մասին, որ դիմել են Ջորակոչային և զորահավաքային համալրման հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանում, սակայն ստորաբաժանումում նրանց գործողություններին մասնակցության վայրի, ժամկետների և այլնի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն եղել, ինչի պատճառով էլ հրաժարվել են գրառում կատարել: Մեկ այլ դեպքում, քաղաքացիներն անձամբ մեկնել են ծառայության վայրի զորամաս, ստացել տեղեկանքներ այն մասին, որ նշված զորամասի կազմում կոնկրետ ժամանակահատվածում մասնակցել են մարտերին, տեղեկանքները ներկայացրել հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանում, սակայն զորամասի կնիքը ոչ պատշաճ լինելու պատճառաբանությամբ տարածքային ստորաբաժանումներում հրաժարվել են գրառում կատարել:

Իհարկե, Պաշտպանի աշխատակազմում ի գիտություն է ընդունվել այն, որ գրառում կատարելու հիմքերի կապակցությամբ Ջորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումները քաղաքացիների ծառայության վայրերի զորամասեր իրականացնում են հարցումներ, որպեսզի ստացված տեղեկությունների հիման վրա միջոցներ ձեռնարկեն խնդրի կարգավորման ուղղությամբ: Այնուամենայնիվ, այս կապակցությամբ Պաշտպանին հասցեագրվող բողոքների մեծաքանակ թիվը մտահոգիչ է:

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունները ևս փաստում են, որ նախարարությունը նույնպես զինգրքույկներում գրառումներ կատարելու հարցի վերաբերյալ

<sup>818</sup> Նախագիծը հասանելի է հետևյալ հղումով՝ [http://parliament.am/draft\\_history.php?id=12963](http://parliament.am/draft_history.php?id=12963): 2022 թվականի փետրվարի 9-ին նախագիծը Ազգային ժողովում երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է:



ստանում է բազմաթիվ բողոքներ: Ըստ նախարարության տվյալների՝ 2021 թվականի ընթացքում ՊՆ թեժ գծով նշված խնդրի վերաբերյալ ստացվել է 329 դիմում: Քաղաքացիների դիմումների հիման վրա զինկոմիսարիատները համապատասխան հարցումներ են ուղարկել զորամասեր և դրական պատասխանի դեպքում անհրաժեշտ գրառումներ կատարել զինվորական գրքույկների համապատասխան էջերում: Նախարարությունը հավելել է, որ նշված բողոքներից զերծ մնալու և միատեսակ գրառումներ կատարելու համար պատրաստվել է համապատասխան կարգադրություն, որի կատարումը ընթացքի մեջ է:

**Ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած անձանց 500.000 դրամի չափով միանվագ դրամական օգնություն չտրամադրելու խնդիր:**

«Կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի թիվ 90-Լ որոշմամբ նախատեսվել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած զինծառայողների սոցիալական աջակցության միջոցառումը, որի շահառու է համարվում ռազմական գործողությունների հետևանքով վիրավորում ստացած՝ բժշկական հաստատություններում բժշկական օգնություն և սպասարկում ստացող (ստացած) անձը, ով չունի հաշմանդամության խումբ կամ ունի կամ կարող է ունենալ հաշմանդամության երրորդ խումբ: Սոցիալական աջակցությունը տրամադրվում է միանվագ դրամական օգնության ձևով՝ յուրաքանչյուր շահառուին 500.000 դրամի չափով:

Ծրագրի գործարկումից հետո նշված գումարը չտրամադրելու վերաբերյալ Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ (վիրավորում ստանալու վերաբերյալ տեղեկությունը Պաշտպանության նախարարությունից փոխանցվել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն գումարը չի հատկացվել, առկա են եղել փաստաթղթային անճշտություններ, քաղաքացին ստացիոնար պայմաններում բուժում չի ստացել և այլն): Ճիշտ է, բողոքների հիմնական մասը Պաշտպանության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների հետ քննարկումների արդյունքներով լուծում է ստացել և մարդկանց հատկացվել է նախատեսված գումարը, սակայն խնդիրն առավել խորքային է:

Մարտական գործողությունների ընթացքում վիրավորում ստացած բազմաթիվ զինծառայողներ բուժում են ստացել քաղաքացիական բուժհաստատություններում, և նրանց վերաբերյալ զինվորական հոսպիտալներում տեղեկություններ չկան: Հետևաբար, Պաշտպանության նախարարությունը չի տիրապետում այդ անձանց տվյալներին, քանի դեռ դրանք Առողջապահության նախարարությունից չեն փոխանցվել: Սակայն, Կառավարության վերը նշված որոշմամբ Առողջապահության նախարարությանը չի տրվել վիրավորումից հետո քաղաքացիական բուժհաստատություններում բուժում ստացած անձանց տվյալները Պաշտպանության նախարարություն փոխանցելու հանձնարարական: Պաշտպանության նախարարությունն այդ անձանց տվյալները չունենալու պատճառով քաղաքացիների դիմումները մերժել է: Դրանից հետո, քաղաքացիները (հաճախ առողջական լրջագույն խնդիրներով) ստիպված են եղել բուժում ստացած լինելու մասին էպիկրիզն անձամբ ներկայացնել Պաշտպանության նախարարություն: Ինչպես

հստակ իրավական կարգավորումները, այնպես էլ պետական մարմինների միջև ոչ արդյունավետ համագործակցությունը հանգեցրել են մի վիճակի, երբ վիրավորում ստացած զինծառայողներն ընկել են լրացուցիչ քառքշուկների մեջ, ինչն անթույլատրելի է, և այս կամ այն փաստաթուղթը ներկայացնելու բեռը նրանց վրա թողնելը պետք է հնարավորին բացառել:

Քաղաքացիները դժգոհություններ են հայտնել նաև այն մասին, որ Կառավարության նշված որոշմամբ միանվագ դրամական աջակցություն է տրամադրվում միայն բժշկական հաստատություններում ստացիոնար պայմաններում բուժում ստացած անձանց: Մինչդեռ, բազմաթիվ դեպքերում վիրավորում ստացած զինծառայողները բուժհաստատությունների ծանրաբեռնվածության պատճառով ստացիոնար պայմաններում բուժօգնություն չեն ստացել, այլ բավարարվել են կամ ամբուլատոր բուժմամբ կամ բուժօգնություն են ստացել զորամասի բուժկետում: Մեկ այլ դեպքում, քաղաքացիների բողոքները վերաբերել են Կառավարության նշված որոշման մանրամասներին ամբողջությամբ տեղեկացված չլինելուն: Ըստ քաղաքացիների՝ տեղեկացված չեն եղել, որ 500.000 դրամ միանվագ դրամական աջակցությունից օգտվելու համար առկա է ժամկետային սահմանափակում և կարող էին դիմել մինչև 2021 թվականի մայիսի 15-ը<sup>819</sup>: Հարցի հետ կապված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը Պաշտպանի աշխատակազմ պարզաբանումներ է ներկայացրել, որ Կառավարության որոշմամբ մեկ անգամ ծրագրի ժամկետը երկարացվել է (2021 թվականի ապրիլի 15-ի փոխարեն դիմումների ընդունման վերջնաժամկետ է սահմանվել մայիսի 15-ը), բացի այդ, տևական ժամանակ պատշաճ իրականացվել են իրազեկման արշավներ: Այս խնդրով Պաշտպանի աշխատակազմում բողոքի քննարկումը ընթացքի մեջ է:

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի №90-Լ որոշմամբ նախատեսված սոցիալական աջակցության շահառու չհամարելու վերաբերյալ քաղաքացիներից, հասարակական կազմակերպություններից, գերատեսչություններից և այլ կառույցներից ՀՀ պաշտպանության նախարարին, ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետին և ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետին հասցեագրվել է 448 դիմում: Բոլոր դիմումները ուսումնասիրվել են և համապատասխան ճշտումներ կատարելուց հետո փաստացի շահառու հանդիսացող անձանց տվյալները սահմանված կարգով (2021 թվականի փետրվարի 8-ի ՀՀ կառավարության №148-Լ որոշմամբ) տրամադրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:

### **Գերության մեջ հայտնված պայմանագրային զինծառայողների աշխատավարձի չտրամադրում:**

Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո են գերության մեջ հայտնված մեր հայրենակիցների ու նրանց ընտանիքների իրավունքների հետ կապված հարցերը: 2021 թվականի ընթացքում Հայաստան վերադարձած գերիներից ստացվել են բողոքներ այն մասին, որ

<sup>819</sup> Որոշմամբ հաստատված կարգի 5-րդ կետի համաձայն՝ միջոցառումից օգտվելու համար դիմումը ներկայացվում է էլեկտրոնային եղանակով՝ մինչև 2021 թվականի մայիսի 15-ը:

գերության մեջ գտնվելու ընթացքի իրենց աշխատավարձը չի վճարվել: Այս խնդրի մասին Պաշտպանի ներկայացուցիչներին առանձնազրույցի ընթացքում հայտնել է Հայաստան վերադարձած պայմանագրային զինծառայողներից մեկը, ում կինն էլ հավելել է, որ ամուսնու աշխատավարձը չստանալու պատճառով ընտանիքը հայտնվել է սոցիալապես վատթար վիճակում: Տվյալ խնդրի վերաբերյալ մեկ այլ պայմանագրային զինծառայող էլ գրավոր է դիմել Պաշտպանին և խնդրել աջակցել դրամական բավարարումը ստանալու հարցում<sup>820</sup>:

Պետք է նշել, որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածը կարգավորում է զինծառայողների դրամական ապահովության հետ կապված հարաբերությունները, որի 13-րդ մասի համաձայն՝ գերության մեջ գտնվելու պատճառով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողների համար **պահպանվում է պաշտոնային դրույքաչափը՝ օրենքով սահմանված կադրերի տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում**: Գերության մեջ գտնվող զինծառայողի համար պաշտոնային դրույքաչափը պահպանվում է, և դրա վճարումն իրականացվում է պետական լիազոր մարմնի ղեկավարի հրամանով սահմանված կարգով միայն այն դեպքում, երբ զինծառայողի կողմից գերության մեջ գտնվելու փաստի կապակցությամբ անցկացված ծառայողական քննության արդյունքում հիմնավորվում է, որ գերության մեջ հայտնվելը զինծառայողի՝ զորամասը կամ ծառայության վայրը կամ մարտադաշտն ինքնակամ թողնելու և (կամ) կամովին գերի հանձնվելու հետևանք չէ, կամ եթե առկա չէ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 382-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական վարույթ: Նույն մասի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով **քրեական հետապնդման շրջանակներում լիազորությունների կասեցման հիմքով զինվորական պաշտոնից ազատված և կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողի համար պահպանվում է պաշտոնային դրույքաչափի 50 տոկոսը՝ օրենքով սահմանված կադրերի տրամադրության տակ թողնելու ժամանակահատվածում**:

Վերը նկարագրված դեպքով համապատասխան հարցադրումներով ու պարզաբանումների պահանջով գրություն է հասցեագրվել Պաշտպանության նախարարություն: Բողոքի քննարկումը Պաշտպանի աշխատակազմում շարունակվում է:

Պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ աշխատավարձի պահպանումն առաջնային է հենց պայմանագրային զինծառայողի ընտանիքի սոցիալական կարիքների տեսանկյունից, առավել ևս երբ ընտանիքը տեղեկություն չունի զինծառայողի գտնվելու վայրի վերաբերյալ կամ զինծառայողը գերության մեջ է և ընտանիքը հոգեպես ընկճված վիճակում է: Նման դեպքերում պետությունը պետք է հնարավորին հոգ տանի զինծառայողի ընտանիքի մասին:

<sup>820</sup> Ըստ Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների՝ կադրերի տրամադրության տակ թողնված զինծառայողներին օրենքով սահմանված ժամանակահատվածում վարձատրության ուշացման վերաբերյալ ՀՀ ՊՆ թեժ գծով ստացվել է 454 բողոք: Դրանք պայմանավորված են եղել զինված ուժերում իրականացվող կառուցվածքային փոփոխությունների հետ: Խնդրի լուծման ուղղությամբ աշխատանքներ են տարվում:

**Մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապի չտրամադրում:**

Ադրբեջանական ագրեսիայի և ռազմական գործողությունների հետևանքով, ցավոք, մեր բազմաթիվ զինծառայողներ ստացել են հիվանդություններ, վնասվածքներ, խեղումներ: 2021 թվականի ընթացքում Պաշտպանը շարունակել է ստանալ բողոքներ, որոնցով քաղաքացիները դժգոհություններ են ներկայացրել այն մասին, որ մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը հաստատելու հարցում հանդիպում են խոչընդոտների, մասնավորապես, գործընթացն անընդհատ ձգձգվում է:

Պաշտպանը մեկ անգամ ևս ավելորդ չի համարում նշել, որ հիվանդության, խեղման, վնասվածքի պատճառական կապը զինվորական ծառայության հետ հաստատված չլինելու պարագայում անձը չի կարողանում ձեռք բերել մի շարք իրավունքներ և արտոնություններ: Օրինակ, Պաշտպանին դիմած քաղաքացիներից մեկը չէր կարողանում ստանալ հաշմանդամության զինվորական կենսաթոշակ, քանի որ վնասվածքի պատճառական կապի մասին վերջնական եզրակացություն Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովը չէր ներկայացրել<sup>821</sup>: Ուստի, պետությունը ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը հաստատելով՝ հստակեցնում է ստանձնած պարտավորությունների շրջանակը իր քաղաքացու հանդեպ՝ նրան տրամադրելով սոցիալական ու իրավական լրացուցիչ պաշտպանության երաշխիքներ:

**Գտնվելու վայրն անհայտ կամ գերության մեջ գտնվող զինծառայողների ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու հետ կապված խնդիր/ դատագենետիկական փորձաքննության եզրակացությունների չտրամադրում:**

Պաշտպանության նախարարությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ից առ այսօր 287 զինծառայողի գտնվելու վայրը շարունակում է մնալ անհայտ<sup>822</sup>:

Ցավոք, մարտական գործողություններից տևական ժամանակ անցել է, սակայն բազմաթիվ զինծառայողների ճակատագրեր շարունակում են մնալ անհայտ: Տվյալ խնդրի վերաբերյալ Պաշտպանը ստացել է բազմաթիվ բողոքներ: Քաղաքացիները նշել են, որ իրենց հարազատի ճակատագրի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար դիմել են տարբեր պետական մարմիններ (Վարչապետի աշխատակազմ, ԱԱԾ, ՊՆ և այլն), սակայն ապարդյուն: Մարդիկ դժգոհություններ են հայտնել առ այն, որ չնայած պետական մարմիններին տրամադրել են մարտական գործողությունների ընթացքում իրենց հարազատների տեղաշարժի, գտնվելու վայրի և

<sup>821</sup> Այս խնդրի մասին մանրամասն խոսվել է «Զինծառայողների կենսաթոշակային իրավունքի ապահովումը» պարագրաֆում:

<sup>822</sup> Պաշտպանության նախարարությունից տվյալները ստացվել են 2022 թվականի հունվարի 19-ին:

այլնի վերաբերյալ կոնկրետ տեղեկություններ, սակայն իրավասու մարմինները որևէ գործողություններ չեն իրականացրել (նույնիսկ հարցումներ չեն կատարել զորամաս): Զինճառայողների ճակատագրերի վերաբերյալ հարազատներին տեղեկություններ չտրամադրելը կրել է համակարգային բնույթ, դրա մասին են վկայում Պաշտպանին հասցեագրված բողոքների քանակը<sup>823</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը անհրաժեշտ է համարում ևս մեկ անգամ արձանագրել, որ՝

ա) 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին պատերազմական գործողությունների ընթացքում, ինչպես նաև ակտիվ մարտական գործողությունների ավարտից հետո մյուս ամիսներին պետական իրավասու մարմինները պատշաճ չեն ապահովել բազմաթիվ զինճառայողների ճակատագրերի մասին նրանց հարազատների ժամանակին և անհրաժեշտ տեղեկություններ ստանալու իրավունքը,

բ) ակտիվ մարտական գործողությունների ընթացքում նման տեղեկությունները հաճախ օբյեկտիվորեն հնարավոր չի եղել ձեռք բերել: Սակայն երբեմն օրեր, նույնիսկ ամիսներ անց պետական մարմինները քաղաքացիներին չեն տրամադրել իրենց հարազատների ճակատագրերի մասին որևէ տեղեկություն (նույնիսկ չեն հայտնել, թե ինչ որոնողական աշխատանքներ են իրականացվում, զինճառայողը որտեղ է մասնակցել մարտերին, վերջին անգամ որտեղ է եղել և այլն), որը խիստ անթույլատրելի է,

գ) մարտերին մասնակցող զինճառայողների ճակատագրերի վերաբերյալ հարազատներին հնարավորին արագ տեղեկություններ չտրամադրելը կամ տեղեկատվական վակուում ստեղծելը զինճառայողների ընտանիքներին շարունակաբար հոգեկան տառապանքներ են պատճառում՝ ստեղծելով հանրային լարվածություն,

դ) իր հարազատի ճակատագրի մասին անձի իրազեկվածությունը, տեղեկությունների ստացման իրավունքը պետք է լինի երաշխավորված, սա նաև պետության ուղիղ պարտականությունն է:

**Նշվածից բացի, Պաշտպանին հասցեագրված մեկ այլ խումբ բողոքներ, որոնք վերաբերում են զոհվածների մարմինների/մասունքների ԴՆԹ նույնականացման գործընթացների վերաբերյալ զոհված զինճառայողների հարազատներին տեղեկություններ չտրամադրելուն** (դատագենետիկական փորձաքննության եզրակացությունները չտրամադրելուն) կամ դրանք ուշացումով տրամադրելուն: Այս խնդիրը բարձրացրել են ինչպես զոհված զինճառայողների հարազատները, այնպես էլ հասարակական կազմակերպությունները: Ճիշտ է, բողոքների շրջանակում վարույթն իրականացնող մարմնի հետ քննարկումների արդյունքներով քաղաքացիներին տրամադրվել են փորձաքննությունների եզրակացությունները, սակայն այդպիսի բողոքների առկայությունն ինքնին մտահոգիչ է:

<sup>823</sup> Ճիշտ է, Պաշտպանության նախարարությունը Պաշտպանի հարցմանն ի պատասխան հայտնել է, որ գտնվելու վայրն անհայտ համարվող անձանց կատարած վերջին զանգերի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը փոխանցվել է ԱԱԾ՝ զանգի պահին գտնվելու վայրը պարզելու նպատակով: Պարզված կորոզիանտները նշվել են քարտեզների վրա, որից հետո քարտեզները փոխանցվել են ռուս խաղաղապահներին և ԱՀ ԱԻՆ-ին՝ որոնողական աշխատանքներ կատարելու նպատակով:

Պետք է հաշվի առնել, որ դատագենետիկական փորձաքննության եզրակացությունները, որոնց շրջանակներում համընկնումներ են լինում, եթե անհապաղ չեն տրամադրվում հարազատներին (որպեսզի նրանք հնարավորություն ունենան մանրամասն ուսումնասիրելու դրանցում տեղ գտած տեղեկությունները), ապա այդ չտրամադրումը նրանց մոտ կարող է կասկածի տակ դնել փորձաքննության հավաստիությունը, քանի որ անձամբ չի ծանոթանում դրանում տեղ գտած տվյալներին: Բացի այդ, փորձաքննության նկատմամբ վստահությունն է նվազում, մարդիկ պահանջում են նոր փորձաքննություններ, այդ թվում՝ արտերկրում<sup>824</sup>:

*Անհրաժեշտ է նշել, որ իրավասու պեղական մարմինները պարտավոր են ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի զոհված զինծառայողների դատագենետիկական փորձաքննությունների եզրակացությունները սեղմ ժամկետներում տրամադրվեն հարազատներին՝ դրանով վստահություն ձևավորելով նրանց ընտանիքների մոտ:*

**Մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցության տրամադրման խնդիր:** Ոչ պակաս կարևոր հարց է մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին հոգեբանական աջակցության տրամադրում: Հոգեբանական աջակցության տրամադրումը կարող է հետագայում կանխել հոգեկան առողջության հետ կապված հիվանդությունների ձեռքբերումը, դրականորեն ազդել զինվորների բարոյահոգեբանական վիճակի և մարտունակության վրա: Դա հատկապես կարևոր է ակտիվ մարտական գործողություններից հետո: Զինծառայողներին հոգեբանական աջակցություն տրամադրելու վերաբերյալ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին են դիմել պարտադիր ժամկետային զինծառայողների ծնողները, Պաշտպանի ներկայացուցիչներն այդ հարցին հատուկ ուշադրություն են դարձրել նաև տարբեր զորամասեր այցերի և զինծառայողների, այդ թվում՝ սպայակազմի հետ առանձնազրույցների ընթացքում: Բնականաբար, կարևոր է հոգեբանական աջակցության տրամադրումը ինչպես զինվորներին, այնպես էլ սպաներին: Պաշտպանության նախարարություն հասցեագրված մի շարք գրություններով Պաշտպանը պարբերաբար բարձրացրել է զինծառայողներին հոգեբանական աջակցության տրամադրման հարցը:

<sup>824</sup> Ըստ ՀՀ քննչական կոմիտեից ստացված տեղեկությունների՝ քրեական գործի նախաքննության շրջանակներում քրեական վարույթն իրականացնող մարմինը հանդիպել է 44 օրյա պատերազմի հետևանքով զոհված, գտնվելու վայրն անհայտ զինծառայողների հարազատներին և տեղեկություններ է ներկայացրել նշանակված դատագենետիկական փորձաքննությունների արդյունքների վերաբերյալ: Մի շարք դեպքերում զոհված զինծառայողների հարազատները նախապես հրաժարվել են ընդունել իրենց հարազատի զոհվելու փաստը, չեն ընդունել ԴՆԹ նույնականացումների փորձաքննության նախնական արդյունքները, հետագա բացատրական աշխատանքների արդյունքում ամբողջական պատկերացում են կազմել գործընթացի վերաբերյալ, մի մասը արտասահմանում իրենց միջոցներով են իրականացրել դատագենետիկական փորձաքննություններ, արդյունքում հուղարկավորել են զոհված զինծառայողներին:

Սույն տարեկան հաղորդման մշակման աշխատանքների շրջանակում նույնպես Պաշտպանը հարցադրում է կատարել Պաշտպանության նախարարություն այն մասին, թե ինչ հոգեբանական աջակցություն է տրամադրվում մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին:

Պաշտպանության նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝

1) 44-օրյա պատերազմի առաջին օրերից առ այսօր ՀՀ ՁՈՒ համապատասխան վարչության համակարգմամբ կազմակերպվել են հանդիպումներ բուհական և քաղաքացիական բուժհաստատությունների, հոգեբանական օգնության կենտրոնների, հասարակական կազմակերպությունների հոգեբան-մասնագետների հետ՝ մարտական գործողությունների ընթացքում վիրավորված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների հետ հոգեբանական աջակցման աշխատանքներ իրականացնելու համար: Նշված աշխատանքների իրականացման շրջանակներում կազմվել են կամավոր հոգեբան և հոգեբույժ մասնագետների խմբեր, ովքեր, համաձայն նախապես մշակված պլանի, գործել են ՀՀ բոլոր բուժհաստատություններում:

2) Մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացած և ՁՈՒ ռազմաբժշկական հաստատություններում ու քաղաքացիական բժշկական հիմնարկներում ստացիոնար բուժման մեջ գտնվող զինծառայողներին, որոշ դեպքերում՝ զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին, 2020 թվականի մարտական գործողությունների առաջին իսկ օրվանից Երևանի կայազորային և Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալների հաստիքային, ինչպես նաև քաղաքացիական կազմակերպությունների՝ կամավոր հիմունքներով աջակցող հոգեբանների կողմից տրամադրվել է հոգեբանական օգնություն:

3) ՀՀ պաշտպանության նախարարի, ՁՈՒ գլխավոր շտաբի պետի և ՁՈՒ ռազմաբժշկական վարչության պետի համապատասխան հրամանների և կարգադրությունների համաձայն 2020 թվականի հոկտեմբերի 9-ից «Ձառ» ուսումնական կենտրոնում, որից հետո՝ 2020 թվականի նոյեմբերի 10-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ը, «Լեռնային Հայաստան հանգստյան տուն» պետական հիմնարկում գործել է Երևանի կայազորային հոսպիտալի հետտրավմատիկ հոգեվերականգնողական բաժանմունքը, որտեղ ստացիոնար պայմաններում հոգեբանական վերականգնողական օգնություն են ստացել շուրջ 700 զինծառայողներ:

4) 44-օրյա պատերազմի ընթացքում Ուլնեցի 56/6 հասցեում գործող հանձնաժողովի անդամների կողմից հանդիպումներ են իրականացվել գտնվելու վայրն անհայտ անձանց ծնողների և հարազատների հետ, տրամադրվել է նախնական հոգեբանական աջակցություն:

5) Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության հոգեբանական աջակցության բաժնին և Հայկական Կարմիր խաչի ընկերության սոցիալ-հոգեբանական կենտրոնի հոգեբաններին տրամադրվել են գտնվելու վայրն անհայտ անձանց տվյալները՝ ընտանիքներին հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով, և յուրաքանչյուր շաբաթվա կատարած աշխատանքը վերլուծվել է:

6) Սերտ համագործակցություն է իրականացվել «Ժեստ» հոգեբանական կենտրոնի մասնագետ-հոգեբանների հետ, նրանց կողմից կատարվել է մեծածավալ աշխատանք բուժկենտրոններում, «Ժեստ» հոգեբանական կենտրոնում, ինչպես նաև տնայցեր Երևանում և հանրապետության բոլոր մարզերում՝ գտնվելու վայրն անհայտ զինծառայողների, վիրավոր զինծառայողների, զոհված զինծառայողի, գերության մեջ հայտնվածների ընտանիքի անդամների և գերությունից վերադարձածների հետ:

7) Զինծառայողների հոգեբանական կայունության ապահովման նպատակով անցկացվել են նյարդահոգեկան լարվածության և տազնապայնության գնահատման հոգեբանական թեստավորումներ: Հետտրավմատիկ խանգարումների, սրացումների ու հոգեթերապևտիկ մասնագիտական բուժում ենթադրող այլ խնդիրների պարագայում ստացիոնար բուժման կարիք ունեցող զինծառայողները տեղափոխվել են զինվորական ու քաղաքացիական բժշկական հաստատություններ, ինչպես նաև ՀՀ ՊՆ «Լեոնային Հայաստան» հանգստյան տան՝ անձնակազմի հետտրավմատիկ հոգեվերականգնողական հավաքական բաժանմունք, որտեղ, համաձայն նեղ մասնագիտական փորձաքննությունների արդյունքների, կազմակերպվել է վերջիններիս հետագա բուժման գործընթացը:

8) Մինչ օրս անհրաժեշտության դեպքում հոգեբանական աջակցություն է ցուցաբերվում ինչպես հեռախոսային կապի, այնպես էլ, անհատական հանդիպումների միջոցով՝ Ունեցի 56/6 հասցեում:

Բացի հոգեբանական աջակցության տրամադրումից, Պաշտպանը Պաշտպանության նախարարությանը նաև հարցադրում էր ուղղել այն մասին, թե զոհվածների և գտնվելու վայրն անհայտ զինծառայողների անվանացանկերում ընդգրկված անձանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության ուղղությամբ ինչ աշխատանքներ են տարվում:

Պաշտպանության նախարարությունը հայտնել է, որ՝

ա) Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին ՀՀ օրենքի համաձայն կազմվում և Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ են ներկայացվում զոհված զինծառայողների հատուցման գործերը:

բ) ՀՀ Կառավարության 2018 թվականի օգոստոսի 9-ի թիվ 916-Ն որոշման համաձայն՝ իրականացվում է զոհված զինծառայողների (բացառությամբ «Եռաբլուր» պանթեոնում և այլ եղբայրական գերեզմանոցներում հուղարկավորվածների) գերեզմանի բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերի հատուցման նպատակով մեկ միլիոն չորս հարյուր հազար դրամ հատուցման գումարների տրամադրման գործընթացը: Կառավարության նույն որոշմամբ, պարզեցված ընթացակարգով, իրականացվում է զոհված զինծառայողների ընտանիքներին հուղարկավորության ծախսերի հատուցման նպատակով 700.000-ական դրամների տրամադրման գործընթացը:

գ) Օրենքով սահմանված դեպքերում, կարգով և պայմաններում ապահովվել է տարեկան մեկ անգամ 100.000 դրամի չափով միանվագ դրամական օգնության տրամադրման գործընթացը:



դ) Չոհված (մահացած), անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող ճանաչված զինծառայողների ընտանիքների անդամներին տրամադրվել են ՀՀ պաշտպանության նախարարի համապատասխան հրամանով հաստատված՝ օրենքով սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու մասին տեղեկանքներ, որոնց միջոցով շահառուները կարող են իրացնել սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու իրենց իրավունքները:

ե) 2020 թվականի դեկտեմբերի 10-ին ՀՀ կառավարության թիվ 2001-Լ որոշմամբ հաստատվել է «Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով անհայտ կորած զինծառայողների ընտանիքների աջակցության միջոցառումը», որի համաձայն մինչև անհայտ կորած զինծառայողների կարգավիճակի հստակեցումը, բայց ոչ ավելի, քան 12 ամիս ժամկետով յուրաքանչյուր անհայտ կորած զինծառայողի ընտանիքի ամսական 300.000 դրամի չափով տրամադրվել է սոցիալական աջակցություն՝ սկսած նշված միջոցառումը հաստատելու ամսվանից: Ի սկզբանե աջակցության տրամադրումը նախատեսված է եղել 6 ամիս ժամկետով, սակայն 2 անգամ՝ ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով դրամական վճարի տրամադրումը երկարաձգվել է 3-ական ամսով:

Դրանք կարևոր քայլեր են և պետք է լինեն շարունակական:

*Վերոգրյալի հաշվառմամբ առաջարկվում է.*

1. միջոցներ ձեռնարկել զորահավաքային զորակոչով զինվորական ծառայության ներգրավված բոլոր քաղաքացիներին ծառայության ամբողջ ժամանակահատվածի դիմաց օրենքով նախատեսված դրամական ապահովությունը վճարելու ուղղությամբ՝ բացառելով օբյեկտիվ հիմք և իրավաչափ նպատակ չունեցող փարբերակված մոտեցման ցանկացած դրսևորումները,

2. մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների զինվորական գրքույկներում կատարել մասնակցության վերաբերյալ գրառում՝ ապահովելով բոլորի մասով միասնական պրակտիկա,

3. զոհված զինծառայողների հարազատներին հնարավորին սեղմ ժամկետում տրամադրել դատազենեփիկական փորձաքննությունների եզրակացությունները,

4. գերության մեջ գտնվող անձանց կադրերի տրամադրության տակ գտնվելու ժամանակահատվածում պաշտոնային դրույքաչափի պահպանման վերաբերյալ գործող իրավակարգավորումների հաշվառմամբ՝ ապահովել, որ բոլոր դեպքերում նրանց վարձատրությունը տրամադրվի,

5. ապահովել մարտական գործողություններին մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների կապակցությամբ պարճառական կապ տրամադրելու գործընթացի հնարավորին սեղմ ժամկետում իրականացումը՝ երաշխավորելով քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացումը,

6. մարտական գործողությունների մասնակիցներին, վիրավորում ստացածներին, գտնվելու վայրն անհայտ և զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին մշտապես պահել պետության հոգածության ներքո, այդ թվում՝ պարբերաբար հոգեբանական աջակցություն տրամադրելու միջոցով:

## **5. Գերությունից վերադարձած հայ ռազմագերիների նկատմամբ քրեական հետապնդումներ**

Մարդու իրավունքների պաշտպանի մշտական ուշադրության ներքո են եղել գերության մեջ գտնվող և Հայաստան վերադարձած անձանց իրավունքների պաշտպանության հարցերը:

Չնայած իրավական սահամանափակումներին և այն բանին, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի իրավական խնդիրն է մեր հայրենակիցների վերադարձին աջակցելը, 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած շուրջօրյա աշխատանքով ու փոքր աշխատակազմով Պաշտպանը կատարել է հսկայածավալ աշխատանք ու շարունակում է կատարել այդ աշխատանքը՝ օգտագործելով միջազգային կապերի տարիների կուտակած ողջ ներուժը: Մասնավորապես՝

1. փաստագրվում, իբրև ապացույց՝ ամրագրվում են ադրբեջանական զինված ուժերի վայրագությունները մեր գերեվարված հայրենակիցների նկատմամբ՝ անհրաժեշտ մշակմամբ ու նկարագրությամբ,

2. ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մասնագետների աջակցությամբ ադրբեջաներենից և թուրքերենից անգլերեն ու ռուսերեն լեզուներով թարգմանվում են բոլոր տեսանյութերը և ենթագրերով ամրագրվում են տեսանյութերին: Նույն կերպ մշակվում և ամրագրվում են նաև լուսանկարները:

3. յուրաքանչյուր տեսանյութ և լուսանկար վերլուծվում է, ամրագրվում է միջազգային իրավունքի կոնկրետ պահանջների խախտումների մատնանշմամբ:

4. նշված տեսանյութերի ու լուսանկարների, դրանց վերլուծությունների հիման վրա կազմվում են հատուկ զեկույցներ ու հաղորդագրություններ՝ ըստ կոնկրետ օրերի,

5. զեկույցներն ու առանձին հաղորդագրություններն ուղարկվում են միջազգային միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպություններին, այդ թվում՝ միջազգային դատական ատյաններ, ՄԱԿ-ի ու ԵԽ-ի մարդու իրավունքների հանձնակատարներին, ԵԽ-ի, ԵԱՀԿ-ի, ԵՄ-ի խորհրդարանների բոլոր պատգամավորներին, միջազգայի լրատվամիջոցներին և այլն: Զեկույցներն ու հաղորդագրություններն ուղարկվում են նաև ՀՀ պետական իրավասու մարմիններին:

6. մեր հայրենակիցների վերադարձի, ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ բոլոր դեպքերը ներկայացվում և քննարկվում են Հայաստանում այլ պետությունների դեսպանների ու միջազգային կառույցների հետ:

7. պահպանվում է անընդհատ կապ գերիների ընտանիքների հետ:

8. մշտական աշխատանքներ են տարվում փաստաբանների հետ, ովքեր դիմումներ են հասցեագրում Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Նրանց են տրամադրվում բոլոր ապացույցները:

9. մշտական կապ է պահպանվում Միջազգային իրավական հարցերով Հայաստանի Հանրապետության ներկայացուցչի հետ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքները ներառել են նաև Հայաստան վերադարձած զինծառայողների իրավունքների պաշտպանության հարցերը: Պաշտպանն ու նրա ներկայացուցիչները մշտապես հանդիպումներ ու առանձնագրույցներ են ունեցել ադրբեջանական գերությունից վերադարձած անձանց հետ: Այդ նպատակով այցեր են իրականացվել զինվորական հոսպիտալներ, տարբեր (Լոռի, Շիրակ, Կոտայք) մարզեր, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներ:

Սույն պարագրաֆում անդրադարձ է կատարվել ադրբեջանական գերությունից վերադարձած զինծառայողների կալանավորումների հարցերին:

**Պաշտպանն արձանագրել է, որ ադրբեջանական գերությունից վերադարձած զինծառայողների կալանավորումների իրավաչափությունը համոզիչ չէ:** Խոսքը, մասնավորապես, 2021 թվականի նոյեմբերի 14-ի և 16-ի ադրբեջանական զինված հարձակումներից հետո այդ երկրի զինված ուժերի կողմից գերեվարված և գերությունից վերադառնալուց հետո Հայաստանում ազատությունից զրկված ՀՀ զինծառայողների մասին է:

Պաշտպանի այդ դիրքորոշումը հիմնված է քրեակատարողական հիմնարկներում նշված զինծառայողների, փաստաբաններից մի քանիսի հետ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի առանձնագրույցների, փաստաթղթերի ուսումնասիրության ու համադրման վրա՝ հաշվի առնելով գերեվարման հանգամանքները և գերիների իրավունքների պաշտպանության ներպետական ու միջազգային գործիքակազմը:

Ըստ այդմ, այս եզրահանգման հիմքում են՝

1. Նշված զինծառայողներին վերագրվող արարքների, ինչպես նաև նրանց գերեվարման հանգամանքների ուսումնասիրությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում (դրանք ներկայացվել են քրեական հետապնդման մարմիններին):

2. Քրեական դատավարության հետ կապ չունեցող՝ ՀՀ գործադիր և օրենսդիր մարմինների մի շարք բարձրաստիճան ներկայացուցիչների այն հրապարակային հայտարարությունները, որոնցով արվել են պնդումներ գերեվարված զինծառայողների նկատմամբ քրեական գործեր հարուցելու, նրանց արարքներում հանցագործությունների հատկանիշների առկայության մասին:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ բացի այն, որ նման հայտարարությունները խախտում են մարդու իրավունքները և չեն բխում օրենքից, առանցքային է, որ դրանք արվել են մինչև զինծառայողների վերադարձը ադրբեջանական գերությունից և ունեցել են կանխակալ բնույթ: Ընդ որում, դրանք լայն տարածում են ստացել հայաստանյան և միջազգային լրատվամիջոցներում:

Նշված հրապարակային հայտարարությունները խախտել են ՀՀ գերեվարված զինծառայողների անմեղության կանխավարկածի իրավունքը՝ որպես արդար դատաքննության հիմնարար բաղադրատարր:

Դրանք խնդիրներ են ստեղծել քրեական հետապնդման համար, առաջացրել են քրեական գործ քննող մարմինների վրա օրենքով չնախատեսված ազդեցության ակնհայտ չփարատված կասկածներ:

Այդ պնդումները ստեղծել են նաև կանխակալ պատկերացումներ հայաստանյան հասարակությունում և միջազգային հանրության տարբեր շրջանակներում նշված զինծառայողներին վերագրվող հանցանքներում նրանց մեղքի հաստատված լինելու առնչությամբ:

Պաշտպանը կարևոր է համարում հատուկ նշել, որ խնդիրը քրեական գործը քննող սուբյեկտներին չի վերաբերում: Ակնհայտ է, որ աշխատանք իրականացնող քննչական խումբը սրտացավ և մեծաձավալ աշխատանք է իրականացնում: Ուստի, քրեական դատավարության հետ կապ չունեցող բարձրաստիճան պաշտոնյաների նշված հայտարարությունները քրեական հետապնդում իրականացնող մարմնի և կալանքի հարցերը քննող դատարանների համար առաջ են բերել կալանավորումների իրավաչափության հաստատման բարձր շեմ՝ առավել համոզիչ կերպով ու բարձր չափանիշով ցույց տալու, որ գերեվարված զինծառայողների նկատմամբ քրեական հետապնդումն ու առավել ևս նրանց կալանավորումները չեն արվել գործադիր ու օրենսդիր մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների նշված հայտարարությունների ազդեցության ներքո: Դա անհրաժեշտ է անել նաև հրապարակային՝ հաշվի առնելով հարցի լայն հանրային հետաքրքրությունը և միջազգային լայն արձագանքները:

Պաշտպանի աշխատակազմում կատարված ուսումնասիրությունները վկայել են, որ հիշյալ կալանավորումների իրավաչափությունն այդ շեմը չի բավարարում:

3. Առկա են բազմաթիվ ապացույցներ առ այն, որ ադրբեջանական զինված ուժերը, իրավապահ մարմինները և այլ ծառայողներ հայ գերիների նկատմամբ գործել են տարբեր հանցանքներ: Դրանից բացի, ադրբեջանական իշխանությունները, գերիների իրավունքների միջազգային կանոնների խախտմամբ, արհեստական ձգձգել են և շարունակում են ձգձգել գերիների վերադարձը Հայաստան՝ նաև նրանց ընտանիքներին պատճառելով հոգեկան տառապանքներ:

4. Հարց է առաջանում, թե քրեական քաղաքականության ինչ կանոններ են հիմք ընդունվում գերությունից վերադարձած զինծառայողներին կալանքի միջնորդություններ ներկայացնելու հարցում և ինչու հատկապես 2021 թվականի նոյեմբերի 14-ին ու 16-ին գերեվարված զինծառայողների համար ներկայացվեցին կալանքի միջնորդություններ, որոնք անմիջապես հաջորդեցին գործադիր ու օրենսդիր մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարություններից հետո:

5. Ստեղծված իրավիճակում ոչ պակաս կարևոր հարց է նաև այն, թե ինչ միջոցներ է ձեռնարկել քրեական հետապնդման մարմինը գերությունից վերադարձած ու կալանավորված ՀՀ զինծառայողների ռեաբիլիտացիայի ուղղությամբ<sup>825</sup>:

Հաշվի առնելով հարցի լայն հանրային հետաքրքրությունը և միջազգային լայն արձագանքները, գերությունից վերադարձած անձանց հոգեբանական վիճակը, գերեվարման հանգամանքների մասին հայտնած տեղեկությունները, ադրբեջանական զինված ուժերի կամ այլ հատուկ ծառայությունների կողմից հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը, ինչպես նաև այն, որ խափանման միջոց կալանքն առավելագույնն է միջամտում մարդու անձնական ազատության իրավունքին՝ Պաշտպանը խնդրի վերաբերյալ հանդես է եկել հրապարակային հայտարարությամբ<sup>826</sup> և գրություններ ուղարկել Գլխավոր դատախազին և Քննչական կոմիտեի նախագահին:

Ըստ Դատախազությունից ստացված պարզաբանումների՝ քրեական գործով նախաքննության ընթացքում փաստական տվյալներ են ստացվել 2021 թվականի նոյեմբերի 16-ին գերեվարված զինծառայողների խոշտանգման, նրանց նկատմամբ անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունք դրսևորելու, դիտավորությամբ լուրջ տառապանքներ պատճառելու, վիրավոր զինծառայողին անօգնական վիճակում թողնելու և անհրաժեշտ օգնություն չցուցաբերելու արդյունքում զինծառայողի մահանալու վերաբերյալ: Գերեվարված զինծառայողներին խոշտանգած, նրանց նկատմամբ դաժան, անմարդկային վերաբերմունք դրսևորած անձանց ինքնությունը և դեպքի հանգամանքները պարզելու նպատակով դեռևս ցուցում է տրվել հետաքննության մարմինն՝ համապատասխան օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ:

Գերությունից վերադարձած անձանց նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոցն ընտրելիս հաշվի է առնվել նրանց կողմից ոչ պատշաճ վարքագիծ դրսևորելու՝ մինչդաստական վարույթում գործի քննությանը խոչընդոտելու բարձր հավանականությունը:

Դատախազության պարզաբանմամբ՝ ՀՀ գործադիր ու օրենսդիր մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների հայտարարությունները քրեական գործի քննության, այդ թվում՝ ձեռնարկվող քննչական և այլ դատավարական գործողությունների, կայացվող որոշումների հետ որևէ առնչություն չունեն<sup>827</sup>:

**Պաշտպանն հատուկ ընդգծում է, որ գերությունից վերադարձող անձանց կալանավորումը խնդրահարույց է, իր մեջ պարունակում է հասկանալի ռիսկեր, ավելին, այս հարցերը բարձրացվում են միջազգային գրեթե բոլոր հանդիպումներում, և կալանավորումները խնդրահարույց ընկալում ունեն:**

<sup>825</sup> Պաշտպանը հատուկ նշում է, որ վերը ներկայացված դիրքորոշումները քրեական հետապնդման մարմինների կողմից նշված հարցերով քրեական գործեր կամ քրեական հետապնդումներ հարուցելը կամ չհարուցելը կասկածի տակ չեն դնում. դրանք վերաբերում են գերությունից վերադարձած զինծառայողներին ազատությունից զրկելու, այն է՝ կալանավորելու իրավաչափությանը:

<sup>826</sup> <https://ombuds.am/am/site/ViewNews/2057>

<sup>827</sup> Դատախազությունից ստացված մյուս պարզաբանումները հասկանալիորեն չեն հրապարակվում:

## ԲԱԺԻՆ 14. ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

«Սահմանադրությունը որպես սկզբունք է ամրագրում օրենքի առջև հավասարությունն ու խտրականության արգելքը: Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝ բոլորը հավասար են օրենքի առջև:

Սահմանադրության 29-րդ հոդվածով սահմանվում է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման ուղղությամբ Սահմանադրության 30-րդ հոդվածով առանձին նախատեսվում է, որ կանայք և տղամարդիկ իրավահավասար են: Այս իրավունքի երաշխավորման նպատակով պետությունը Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանել է կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանումը որպես պետություն քաղաքականության նպատակ: Կանանց իրավունքների բարձր երաշխավորումը, պաշտպանությունն ու իրավահավասարության ապահովումը ամրապնդում է պետության հիմքերը ու զարգացումը: Իրավահավասարությունը, իրավունքների իրացման հավասար հնարավորություններն ու մատչելիությունը հնարավորություն են ընձեռում կանանց արդյունավետ, այդ թվում՝ ղեկավար մասնակցություն ունենալ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում և խթանել մեր հասարակության առաջընթացը:

Պետությունը յուրաքանչյուր անձի հիմնական իրավունքների ու ազատությունների իրականացման երաշխավոր է. սա բխում է ինչպես Սահմանադրության դրույթներից, այնպես էլ միջազգային փաստաթղթերով ստանձնած պարտավորություններից: Այս դրույթների ուժով պետությունը պարտավորվում է նպաստել իրավահավասարության սահմանմանը, խտրականության արգելմանը՝ ընտանիքից սկսելով, անցնելով համայնք և հասարակություն:

Կանանց և տղամարդկանց իրավահավասարության ապահովման երաշխիքներ են նախատեսված նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» 2013 թվականի «Օրենքում, որը, սակայն, առավելապես ամրագրում է ընդհանրական կարգավորումներ (օրինակ՝ գենդերային հավասարության ապահովման ոլորտում պետական քաղաքականության ընդհանուր սկզբունքներն ու ուղղությունները), և կոնկրետ դեպքերում իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման հատուկ կառուցակարգեր չի նախատեսում: Խտրականությունն արգելող դրույթներ առկա են նաև կարգավորման տարբեր առարկա ունեցող օրենքներում:

Հայաստանի Հանրապետությունը, 1993 թվականին վավերացնելով «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՄԱԿ-ի կոնվենցիան ու կանանց իրավունքներն

ամրագրող միջազգային պայմանագրեր և կոնվենցիաներ՝ ստանձնել է պարտականություն կանանց և տղամարդկանց՝ պատմականորեն արմատավորված անհավասարության վերացման, կանանց իրավունքների ճանաչման, դրանց պաշտպանության և հավելյալ երաշխիքների սահմանման ուղղությամբ:

ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից մեկը իրավահավասարության ամրապնդումն ու կանանց նկատմամբ բռնության հաղթահարումն է: ՄԱԿ-ի Կայուն զարգացման 5-րդ նպատակը սահմանում է գենդերային հավասարությունը:

Ներպետական օրենսդրական կարգավորումների առկայության հետ մեկտեղ, դեռևս առկա չեն բավարար երաշխիքներ կանանց և տղամարդկանց իրավահավասարության փաստացի իրագործման համար, ինչի պատճառով էլ 2021 թվականի ընթացքում ևս Հայաստանում շարունակվել են արձանագրվել կանանց իրավունքների ոտնահարման և նրանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքեր:

Չնայած ներպետական ու միջազգային իրավական կարգավորումներին՝ կանայք և աղջիկներ շարունակում են բախվել խտրականության: Գենդերային անհավասարությունը կանանց վրա անհամաչափորեն է ազդում՝ առաջացնելով տարբեր խնդիրներ, այդ թվում՝ ընտանեկան և սեռական բռնություններ, ցածր աշխատավարձ, առողջապահական ծառայությունների և կրթության հասանելիություն և այլն:

Այսպիսի դեպքերի առկայությունը վկայում է, որ անհրաժեշտ է շարունակական և համակարգված գործունեության իրականացնել՝ ուղղված կանանց իրավունքների պաշտպանությանը: Շարունակական աշխատանքների իրականացմամբ պետք է արմատավորել այն գիտակցումը, որ կանանց իրավունքների երաշխավորմամբ ու հավասարությամբ, իրավունքների բարձր պաշտպանությամբ ամրանում են պետության հիմքերը, երաշխավորվում է իրավունքի գերակայությունը, մարդու իրավունքների պաշտպանության համակարգն ու ըստ այդմ, պետության ժողովրդավարության աստիճանը:

Հասարակությունում կնոջ դերի վերաբերյալ առկա կարծրատիպերն իրավահավասարության և հավասար հնարավորությունների ապահովման խոչընդոտ են: Կարծրատիպերը ոչ միայն ինքնին խտրականությանը կամ իրավունքների սահմանափակմանը նպաստող երևույթներ են, այլև մեծապես խոչընդոտում են տարբեր խնդիրների դեմ պայքարի և դրանց վերացմանն ուղղված քայլերի ձեռնարկմանը:

Ավելին, առկա կարծրատիպերը հասարակությունում կանանց դերի ընկալման հարցում ոլորտում առկա խնդիրների վերացման ու դրանց հաղթահարման պետական քաղաքականության լիարժեք ու արդյունավետ իրագործման խոչընդոտ են դառնում: Սրանից ելնելով էլ՝ կարծրատիպերի հաղթահարումը պետք է լինի պետության առաջնահերթություններից, ուստի և կարծրատիպերի վերացմանն ուղղված քայլերը պետք է իրագործվեն առաջնահերթորեն ու կրեն պարբերական բնույթ:

Այս ամենից հետևում է, որ կարծրատիպերի վերացման պարբերական ու շարունակական աշխատանքներ պետք է իրականացվեն կանանց կրթական, տնտեսական, սոցիալական և քաղաքական ներուժը և հնարավորությունները վեր հանելու ու օգտագործելու համար:

Խնդիրների հաղթահարման հարցում չափազանց կարևոր է միասնական պետական քաղաքականության վարումը:

Հարկ է նաև արձանագրել, որ կանանց նկատմամբ խտրականության բացառման և կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ամրապնդման ուղղությամբ պետական միասնական քաղաքականության իրականացման նպատակով ռազմավարական փաստաթղթի ընդունումից և գործողությունների իրականացումից զատ խիստ կարևոր են ՀՀ վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին» N 1685-Ա որոշմամբ ստեղծված Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդը, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2019 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում կանանց հարցերով խորհուրդ և աշխատանքային խումբ ստեղծելու, դրանց անհատական կազմերը, կանանց հարցերով խորհրդի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2010 թվականի մարտի 30-ի N 213-Ա, 2010 թվականի հուլիսի 30-ի N 605-Ա, 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1152-Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» 1740-Ա որոշմամբ ձևավորված Հայաստանի Հանրապետությունում կանանց հարցերով խորհուրդը:

Կարևոր է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի հիմնարար ուղղություններից է Կանանց իրավունքների պաշտպանությունը և կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի բացառումը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները Հայաստանի Հանրապետությունում կանանց հարցերով խորհրդի և խորհրդի ընթացիկ աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի անդամներ են:

2020 թվականի ընթացքում որպես աշխատանքային առաջնահերթ ուղղություն Մարդու իրավունքների պաշտպանը նախաձեռնել է իրազեկման արշավ՝ «Դարձիր օրինակ» կոչով հանրայնացնելով կանանց հաջողված պատմություններ: Կանանց հաջողության պատմությունների հանրային իրազեկման արշավի մեկնարկը հասարակությունում կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը կոտրելու և հասարակությանը հաջողված պատմություններով ոգեշնչելու նպատակ է հետապնդել:

Արշավի շրջանակներում առաջարկվել է միանալ «Դարձիր օրինակ» կոչի տարածմանը և ուղարկել կանանց հաջողված սեփական պատմությունները, որոնք կոգեշնչեն կանանց՝ դառնալ հաջորդ օրինակը: Իրազեկման արշավն ուղեկցվել է #Դարձիր\_օրինակ հայերեն և #Set\_an\_example անգլերեն հեշթեգերի ներքո, որին մասնակցել են տարբեր մասնագիտություն ու զբաղմունք ունեցող կանայք հանրապետության տարբեր մարզերից:



2021 թվականի ընթացքում շարունակվել է արշավի շրջանակներում կանանց հաջողված պատմությունների հանրայնացման աշխատանքները՝ հրապարակելով իրազեկման տեսանյութեր<sup>828</sup>:

### **1. Կանանց նկատմամբ բռնություն և ընտանիքում բռնություն**

Ընտանեկան բռնությունը կանանց նկատմամբ խտրականության առավել տարածված ձևերից է<sup>829</sup>: Այն խախտում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, դրսևորվում է ֆիզիկական, հոգեբանական, սեռական և տնտեսական ձևերով: Ընտանեկան բռնությունը տարածված է ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Աշխարհում այն ունի տարբեր դրսևորումներ և տարածվածության մակարդակ:

Այս երևույթը բացասական ազդեցություն ունի բռնության ենթարկված անձի ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջության վրա. բռնությունը ոչ միայն խախտում է անձի հիմնական իրավունքները, այլև խոչընդոտում է անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացմանը՝ հանգեցնելով խնդիրների անձի ձևավորման, հասարակությունում ինտեգրման և ազատ գործելու ու ինքնադրսևորվելու հարցերում:

Ընտանիքում դրա անդամների միջև բռնի արարքների և այլ գործողությունների կամ անգործության դրսևորումներն ունեն ուղղակի և անուղղակի ներգործություն<sup>830</sup>: Ընտանիքում բռնությունը անուղղակիորեն բացասաբար է ազդում բռնությանն ականատես եղած երեխաների, բռնության ուղղակի օբյեկտ չհանդիսացող ընտանիքի այլ անդամների վրա:

Բռնության այս տեսակը քայքայում է ընտանեկան արժեքները: Որպես ընտանիքի անդամների իրավունքների լիարժեք իրացման հիմնաքար և հասարակության բնականոն զարգացման երաշխավոր կարող է հանդես գալ միայն առանց բռնության ընտանիքը:

Իրավասու մարմինների, հասարակական կազմակերպությունների ու միջազգային կառույցների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը՝ որպես համաշխարհային խնդիր, իր ազդեցությունն է ունենում բոլոր հասարակությունների վրա, այդ թվում՝ Հայաստանում:

Այս ոլորտում խնդիրների լուծման, այդ թվում՝ ընտանեկան բռնության քրեականացման և «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի (հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա)

<sup>828</sup> Հասանելի է [https://m.facebook.com/permalink.php?story\\_fbid=819686711963869&id=100017676420633](https://m.facebook.com/permalink.php?story_fbid=819686711963869&id=100017676420633) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>829</sup> Տե՛ս օրինակ՝ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի թիվ 19 Ընդհանուր հանձնարարական, հասանելի է <http://www.un.org/womenwatch/daw/cedaw/recommendations/recomm.htm> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>830</sup> Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, կետ 132:

վավերացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու առաջարկներ Հայաստանին են ներկայացրել մի շարք երկրներ Համընդհանուր պարբերական դիտարկման վերաբերյալ աշխատանքային խմբի 2020 թվականի մարտի 18-ի զեկույցում<sup>831</sup>:

Ընտանիքում բռնության և կանանց նկատմամբ բռնության հարցերը տեղ են գտել նաև Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի 2018 թվականին Հայաստան կատարած այցի հիման վրա մշակված զեկույցում<sup>832</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատանքի կարևոր ուղղություններից է կանանց իրավունքների պաշտպանությունը, կնոջ նկատմամբ ցանկացած տեսակի բռնության կանխումը, դրա դեմ պայքարը: Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի ընթացքում ընտանիքում բռնության կանխարգելման և բռնության ենթարկված անձանց իրավունքների պաշտպանության իրականացման նպատակով շարունակական աշխատանքներ է տարել՝ նաև միջազգային կազմակերպությունների, իրավասու պետական մարմինների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությամբ:

Ստորև ներկայացվում են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ստացված՝ ընտանեկան բռնությանն առնչվող դիմում-բողոքների ընդհանուր նկարագիրն ու Մարդու իրավունքների պաշտպանի կողմից վեր հանված՝ ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրական ու գործնական խնդիրները:


### ***1.1 Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ ընտանեկան բռնությանն առնչվող դիմում-բողոքների ընդհանուր նկարագիրը. քանակական և որակական ուսումնասիրություն***

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել 105 դիմում-բողոք, որոնցով բարձրացվել են ընտանեկան բռնությանն առնչվող հարցեր:

2016 թվականից սկսած՝ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված՝ ընտանեկան բռնության խնդիրներով պայմանավորված բողոքների թիվն աճել է: Այսպես, ընտանեկան բռնության հարցերով 2016 թվականի ընթացքում (26.02.2016թ.-31.12.2016թ.) Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է ներկայացվել 6 բողոք, 2017 թվականին՝ 24 բողոք, 2018 թվականին՝ 50 բողոք, 2019 թվականին՝ 91 բողոք, 2020 թվականին՝ 127 բողոք, 2021 թվականին՝ 105 բողոք:


<sup>831</sup> Հասանելի է <https://www.ohchr.org/EN/HRBodies/UPR/Pages/AMIndex.aspx> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>832</sup> Հասանելի է <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



**Դիմում-բողոքների քանակական և որակական վերլուծությունը**

2021 թվականի ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ 105 դիմում-բողոք, այդ թվում՝ 29 գրավոր դիմում-բողոք, Պաշտպանի աշխատակազմի այլ հեռախոսահամարներով ստացված հեռախոսազանգերով տրամադրված խորհրդատվություններ, ինչպես նաև էլ. փոստի և սոցիալական ցանցի միջոցով ստացված բողոքներ՝ 38, թեժ գիծ հեռախոսազանգերի արդյունքում տրամադրված խորհրդատվություններ՝ 34, թեժ գիծ հեռախոսազանգերի արդյունքում իրականացված արագ արձագանքումներ՝ 4: Այս վիճակագրական տվյալների տոկոսային բաշխվածությունը ներկայացված է ստորև.




«Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2021 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված 105 դիմում-բողոքներից 88-ի դեպքում ընտանեկան բռնության են ենթարկվել իգական սեռի ներկայացուցիչներ, 20-ի դեպքում՝ արական, 8-ի դեպքում բռնության ենթարկված անձանցից որևէ մեկի տվյալները չեն ներկայացվել, իսկ 10-ի դեպքում բռնության ենթարկված անձանց մի մասի սեռի վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել<sup>833</sup>: Ընդ որում՝ 28 դիմում-բողոքների դեպքերով ընտանեկան բռնության են ենթարկվել երեխաներ (10-ի դեպքում՝ իգական սեռի ներկայացուցիչներ, 8-ի դեպքում՝ արական, 10-ի դեպքում՝ երեխայի սեռի հետ կապված տվյալներ չեն ներկայացվել):

<sup>833</sup> Հարկ է նշել, որ ըստ սեռի վեր հանված դեպքերի հանրագումարն ու դիմում-բողոքների թիվը քանակապես չեն նույնանում, քանի որ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված մի շարք բողոքներով մի բողոքի շրջանակներում ներկայացվել են բռնության տարբեր դրսևորումներ ու դրվագներ, հետևաբար՝ որպես դեպք հաշվվել է այդ բողոքներում ներառված յուրաքանչյուր բռնության դրսևորում:

Ինչ վերաբերում է այն դիմում-բողոքների առանձնացմանը, որոնց պարագայում վերաբերյալ բռնության ենթարկված անձանց մի մասի սեռի վերաբերյալ տվյալներ չկան, պետք է նշել, որ դրանք ևս վերաբերում են բազմադրվագ բողոքներին, որոնցում նկարագրված բռնության դեպքերի մասին տեղեկությունները մասնակի են:


### Ընտանեկան բռնության ենթարկված անձանց բաշխվածությունը՝ ըստ սեռի



■ Իգական ■ Արական ■ Սվյալներ չեն ներկայացվել ■ Սվյալները ամբողջական չեն

Ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց՝ 105 դիմում-բողոքներից 84-ի դեպքում բռնություն է գործադրել արական սեռի ներկայացուցիչ, 21-ի դեպքում՝ իգական սեռի, 9-ի դեպքում բռնարարի սեռի մասին տվյալներ չեն ներկայացվել, իսկ 2-ի դեպքում տվյալներ չեն ներկայացվել բռնություն գործադրած անձանց մի մասի սեռի վերաբերյալ<sup>834</sup>:

### Ընտանեկան բռնություն գործադրած անձանց թիվը՝ ըստ սեռի



■ Արական ■ Իգական ■ Սվյալներ չեն ներկայացվել ■ Սվյալները ամբողջական չեն

Հարկ է նշել, որ ստացված դիմում-բողոքներից արձանագրվել է 5 դեպք, որոնցով ընտանեկան բռնության են ենթարկվել խոցելի վիճակում գտնվող անձինք: Մասնավորապես, դրանցից 1-ով

<sup>834</sup> Ինչ վերաբերում է այն դիմում-բողոքների առանձնացմանը, որոնց պարագայում վերաբերյալ բռնություն գործադրած անձանց մի մասի սեռի վերաբերյալ վերաբերյալ տվյալներ չկան, հարկ է նշել, որ դրանք վերաբերում են բազմադրվագ բողոքներին, որոնցում նկարագրված բռնության դեպքերի մասին տեղեկությունները մասնակի են:

ընտանեկան բռնության է ենթարկվել առողջական խնդիրներ ունեցող երեխա, 2-ով՝ հաշմանդամություն ունեցող անձ, 2-ով՝ տարեց:

Դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումներով ներկայացված դիմում-բողոքներից 6-ի դեպքում ընտանեկան բռնության ենթարկող անձինք ունեցել են հոգեկան առողջության խնդիրներ:

Պաշտպանին հասցեագրված 105 դիմում-բողոքների բովանդակային վերլուծության արդյունքում վեր է հանվել բռնության ենթարկված անձի և բռնարարի միջև հարաբերությունների բնույթի հետևյալ պատկերը.


Հարաբերությունների բնույթ	Դեպքերի քանակ <sup>835</sup>
Տղամարդու կողմից ամուսնու (կնոջ) նկատմամբ	43
Կնոջ կողմից ամուսնու (տղամարդու) նկատմամբ	2
Նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ	15
Նախկին ամուսնու (կնոջ) կողմից տղամարդու նկատմամբ	1
Նախկինում փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող տղամարդու (կնոջ) կողմից ամուսնու (կնոջ) նկատմամբ	1
Ծնողի կողմից զավակի նկատմամբ	35
Ծնողի զուգընկերոջ կողմից զավակի նկատմամբ	1
Զավակի կողմից ծնողի նկատմամբ	12
Եղբոր կողմից քրոջ նկատմամբ	5
Եղբոր կողմից եղբոր նկատմամբ	3
Քրոջ կողմից քրոջ նկատմամբ	1
Թոռան կողմից տատի նկատմամբ	1
Տատի կողմից թոռան նկատմամբ	2
Տղամարդու (նախկին փեսայի) կողմից նախկին րուսնու ծնողի (մոր) նկատմամբ	4
Տղամարդու (նախկին փեսայի) կողմից նախկին րուսնու ծնողի (հոր) նկատմամբ	2
Տղամարդու (փեսայի) կողմից ամուսնու ծնողի (ր) նկատմամբ	2
Տղամարդու (փեսայի) կողմից ամուսնու ծնողի	1

<sup>835</sup> Հարկ է նշել, որ դիմում-բողոքների ընդհանուր քանակի (105) և դեպքերի քանակի (155) տարբերությունը պայմանավորված է նրանով, որ բողոքների մի մասը բազմադրվագ է եղել՝ թե՛ բռնության գործադրման, թե՛ սուբյեկտային կազմի առումով: Սույն աղյուսակը կազմվել է ըստ հարաբերության բնույթի՝ դրվագների առանձին-առանձին մատնանշմամբ:

ր) նկատմամբ	
Կնոջ (հարսի) կողմից ամուսնու եղբոր ատմամբ	1
Կնոջ (հարսի) կողմից ամուսնու ծնողի (սկեսուրի) ատմամբ	2
Կնոջ (հարսի) կողմից ամուսնու ծնողի եսրայրի) նկատմամբ	1
Ամուսնու ծնողի (սկեսրայրի) կողմից կնոջ արսի) նկատմամբ	3
Ամուսնու ծնողի (սկեսուրի) կողմից կնոջ (հարսի) ատմամբ	2
Ամուսնու քրոջ կողմից կնոջ (հարսի) նկատմամբ	1
Հարաբերությունների բնույթի մասին մումատուն տվյալ չի ներկայացրել	14

Վերոնշյալ տվյալներից ստացվում է, որ ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը (39 տոկոսը) կատարվել է ամուսնու ու նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ:

Պաշտպանին հասցեագրված 105 դիմում-բողոքների աշխարհագրական տեղակայվածության առումով հարկ է նշել, որ 36 դիմում-բողոքներով բողոք ներկայացրած անձինք հասցե չեն նշել: Մնացած 69 դիմում-բողոքներից 35-ի դեպքում ընտանեկան բռնությունը տեղի է ունեցել Երևանում, իսկ 34-ի դեպքում՝ մարզերում: Ստորև ներկայացվում է Պաշտպանի աշխատակազմ ներկայացված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների թվի ընդհանուր պատկերը՝ ըստ աշխարհագրական տեղակայվածության.




Ստացված 105 դիմում-բողոքներից 26-ի դեպքում ընտանեկան բռնության տեսակի վերաբերյալ ուղղակի մատնանշում չի արվել: Մնացած 79 դիմում-բողոքներից 69-ի դեպքում արձանագրվել է ֆիզիկական բռնություն, որից 38-ը զուգորդվել է հոգեբանական բռնությամբ, 47-ի դեպքում արձանագրվել է հոգեբանական բռնություն, որն իր մեջ ներառում է ֆիզիկական բռնության հետ զուգորդվածների թիվը (38): Դիմում-բողոքներից 2-ի դեպքում արձանագրվել է տնտեսական բռնություն (զուգորդված է բռնության այլ տեսակների հետ), 2-ի դեպքում՝ անտեսում (զուգորդված է բռնության այլ տեսակների հետ), 1-ի դեպքում՝ սեռական բռնություն:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված ընտանեկան բռնության վերաբերյալ դիմում-բողոքներից 4-ով նկարագրվել են նաև հետապնդման դեպք: Այս առումով կարևոր է արձանագրել, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացվում է ընտանեկան բռնության որոշ տեսակների համար պատասխանատվության բացակայության հարցը: Այդ տեսակներից մեկը հետապնդումն (հետամտում) է: Օրենսդրությամբ հետապնդման (հետամտման) համար քրեական պատասխանատվության բացակայությամբ պայմանավորված՝ իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ այդ դեպքերին<sup>836</sup>:

<sup>836</sup> Առավել մանրամասն տե՛ս մանրամասն սույն բաժնի «Ընտանեկան բռնության դեմ պայքարի շարունակական օրենսդրական և գործնական խնդիրները» վերտառությամբ պարագրաֆում:



Ստորև ներկայացվում է դիմում-բողոքների տոկոսային բաշխվածության պատկերը՝ ըստ բռնության տեսակների.



Դիմում-բողոքների ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ 105 դիմում-բողոքներից 8-ի դեպքում արձանագրվել է բռնության գործադրումը բռնարարի կողմից ակոհուլի ազդեցությամբ պայմանավորված տակ, իսկ 2-ի դեպքում՝ թմրամիջոցների:

Անհրաժեշտ է նաև նշել, որ ըստ դիմումատուների հայտնած տվյալների՝ ստացված 105 դիմում-բողոքներից 46-ի դեպքում ընտանեկան բռնությունը եղել է շարունակական, իսկ մնացած դեպքերում այդ մասին տվյալներ չեն ներկայացվել:

Ներկայացված դիմում-բողոքներից 2-ի դեպքում արձանագրվել է ընտանեկան բռնության գործադրում երեխաների ներկայությամբ, այսինքն՝ երեխաները ենթարկվել են անուղղակի բռնության: Մնացած դեպքերում երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության գործադրման մասին տվյալներ չեն արձանագրվել: Մինչդեռ, նշվածը բավարար չէ այն պնդման համար, որ այդ դեպքերում ընտանեկան բռնության գործադրմանը երեխաներ ներկա չեն գտնվել:

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք դիմել են ոստիկանություն ստացված 105 դիմում-բողոքներից 40-ի դեպքում<sup>837</sup>: Ընտանեկան բռնության վերաբերյալ բարձրացված հարցերով 105 դիմում-բողոքներից 63-ով ահազանգել է անձամբ ընտանեկան բռնության ենթարկված անձը:

<sup>837</sup> Այս ցուցանիշը ներառում է նաև այն դեպքերը, երբ անձն արդեն իսկ դիմած է լինում Ոստիկանություն, ընտանեկան բռնության դեպքի հիման վրա բռնարարի նկատմամբ կայացված է լինում նախազգուշացում կամ անհետաձգելի միջամտության որոշում, սակայն քաղաքացին բարձրաձայնում է ընտանեկան բռնության խնդրով պայմանավորված այլ՝ իրավական, սոցիալական և հոգեբանական աջակցության հարցեր:

Մնացած 42 դիմում-բողոքներից 14-ով դիմել է բռնության ենթարկված անձի ազգականը, 5-ով՝ բռնություն գործադրած անձը, 5-ով՝ հասարակական կազմակերպություն, 5-ով՝ բռնության ենթարկված անձի ընկերուհին, 2-ով՝ բռնության ենթարկված անձի հարևանը, 2-ով՝ բռնության ենթարկված անձի մտերիմ անձը, 1-ով՝ բռնության ենթարկված անձի ներկայացուցիչը, 1-ով՝ կուսակցության ներկայացուցիչ, 1-ով՝ պատգամավոր (վերահասցեագրած), 1-ով՝ պետական մարմնի ներկայացուցիչ (վերահասցեագրած), 4-ով՝ բռնության ենթարկված անձի հետ հարաբերությունները չեն ներկայացվել:

Ընտանեկան բռնության վերաբերյալ դիմում-բողոքներով բարձրացվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, ընտանեկան բռնության ենթարկված անձի իրավունքների ու դրանց պաշտպանության եղանակների ու միջոցների վերաբերյալ հարցերը, ոստիկանության գործողությունների կամ անգործության հետ կապված բողոքները, ընտանեկան բռնության ենթարկվելու հետևանքով ապաստարանում տեղավորվելու հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն ծնողական իրավունքներից զրկելու ու ալիմենտ ստանալու, երեխայի հետ տեսակցելու կարգի մասին և այլ հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ընտանեկան բռնության վերաբերյալ ստացված դիմում-բողոքներով պայմանավորված դիմումատուներին ներկայացրել են «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի կարգավորումները՝ միևնույն ժամանակ պարզաբանելով ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները, Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները, ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հաղորդումների քննարկման և դրանց արդյունքում կայացվող որոշումների բողոքարկման ընթացակարգերը, երեխաների խնամքի և տեսակցության կարգը, ամուսնալուծության կարգը, անձին խնամքի հաստատություն ուղեգրելու կարգը, երեխաների համար ալիմենտ բռնագանձելու կարգը, հայրության ճանաչման կարգը, հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց հոգեբուժական հաստատությունում բուժման նպատակով տեղավորելու մասին իրավակարգավորումները և այլն:

Ավելին, դիմում-բողոք ներկայացրած անձանց տրամադրվել են Պաշտպանի աշխատակազմի «թեժ գիծ»՝ 116 և աշխատանքային հեռախոսահամարները, «Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության հեռախոսահամարը:

Դիմում-բողոքներով բարձրացված խնդիրների լուծման նպատակով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները համագործակցել են Ոստիկանության, Դատախազության, Քննչական կոմիտեի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, տեղական ինքնակառավարման մարմինների և ոլորտի հասարակական կազմակերպությունների հետ:

## **1.2 Ընտանեկան բռնության դեմ պայքարի շարունակական օրենսդրական և գործնական խնդիրները**

Ընտանեկան բռնության դեմ պայքարի շրջանակներում շարունակում են առկա լինել համակարգային մի շարք խնդիրներ՝ օրենսդրական, իրավակիրառման, ինչպես նաև կազմակերպական, իրազեկումների ու իրավագիտակցության բարձրացմանն ուղղված աշխատանքների առումով: Այսպես.

- ընտանիքում բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական կարգավորումների թերություններ,

- կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և իրազեկման պակաս, անվստահություն պետական մարմինների նկատմամբ, ոչ բավարար մասնագիտական պատրաստվածություն,

- պետության կողմից տրամադրվող համալիր ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության խնդիրներ,

- ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն:

1) Ընտանիքում բռնության դեպքերի դեմ պայքարի և կանխարգելման հարցում օրենսդրական կարգավորումների թերություններ

Ոլորտի դեռևս արդիական խնդիրներից է օրենսդրական ոչ բավարար կարգավորվածությունը. ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության և այդ դեպքերի արդյունավետ կանխարգելմանն ուղղված օրենսդրական թերի կարգավորումները: Ոլորտում շարունակում են առկա լինել օրենսդրական բացեր և թերի կարգավորումներ՝ չնայած նախաձեռնված օրենսդրական փոփոխություններին: Ասվածի մասին է վկայում օրենսդրական կարգավորումների ու Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված բողոքներով բարձրացված և դրանց դիտարկմամբ վեր հանված խնդիրների ուսումնասիրությունը:

ա. «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի<sup>838</sup> 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անչափահաս կամ անգործունակ անձի նկատմամբ անհետաձգելի միջամտության կամ պաշտպանական որոշումներ չեն կայացվում:

Նշված կարգավորումից բխում է, որ նման բացառության սահմանման արդյունքում իրավասու մարմինները բռնության ենթարկված անձի պաշտպանությունը որևէ միջոցով չեն կարող իրականացնել:

<sup>838</sup> Սույն բաժնում այսուհետ՝ Օրենք:

Պաշտպանին հասցեագրված բողոքով հարց է բարձրացվել առ այն, որ ոստիկանության ներկայացուցիչները որևէ գործուն քայլ չեն ձեռնարկում հաշմանդամություն ունեցող անձի պարբերաբար բռնություն գործադրելու և բռնության վերացման կամ դրա կանխարգելման նպատակով: Նշվածի պատճառն է ընտանեկան բռնություն գործադրողին չհաշվառելը՝ հաշմանդամության առկայությամբ պայմանավորված:

Ըստ ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (մասնագիտացված ստորաբաժանումում) կանխարգելիչ հաշվառման չեն վերցվում քրոնիկ հոգեկան հիվանդություն, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման, տկարամտության կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակի հետևանքով իր գործողությունների վտանգավորությունը չգիտակցող անձը (չափահաս և անչափահաս), ով հաշվառված է բժշկական հաստատությունում:

Ավելին, ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի թիվ 15-Լ հրամանի 1-ին հավելվածի 45-րդ կետի համաձայն՝ հաշվառման մեջ գտնվող անչափահասի վերաբերյալ կազմված քարտի վարումը դադարում է, ի թիվս այլնի, եթե անչափահասը հաշվառման մեջ գտնվելու ընթացքում ձեռք է բերել հոգեկան հիվանդություն և հաշվառվել համապատասխան բժշկական հաստատությունում:

Ասվածի կապակցությամբ, հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի 15-Լ հրամանի 5-րդ կետով ամրագրված դրույթը չի համապատասխանում Օրենքի 12-րդ հոդվածով ամրագրված կարգավորումների. նույն հրամանով ամրագրված ձևակերպումները և «անգործունակություն» եզրույթը բովանդակային առումով չեն համընկնում, իսկ նշված հրամանի համապատասխան ձևակերպման հիմքում ՀՀ քրեական օրենսգրքի «անմեղսունակություն» եզրույթի հասկացությունն է ընկած:

Ներկայացվածից բացի, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշման 26-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանվում է, որ առողջապահական հիմնարկներում հաշվառված, շրջապատի համար վտանգ ներկայացնող՝ հոգեկան հիվանդություններով տառապող անձինք մինչև առողջապահական մարմիններում հաշվառումից հանելը պրոֆիլակտիկ հաշվառման են վերցվում:

Մինչդեռ, անհրաժեշտ է փաստել, որ ընտանեկան բռնության դեպքի շրջանակներում այդ կատեգորիայի անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու նշված մոտեցումը արդյունավետ չէ, և ընդունելի չէ այն, որ վերջիններս հաշվառվում են ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշման 26-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված կարգով:

Առողջապահական հիմնարկներում հաշվառված, շրջապատի համար վտանգ ներկայացնող՝ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց՝ մինչև առողջապահական մարմիններում հաշվառումից հանելը հաշվառման վերցնելը՝ որպես ընտանիքում բռնության դեպքերի հաշվառում և նման դեպքերի կանխարգելիչ միջոց չի կարող հարմարվել:

Այս առումով անհրաժեշտ է ընդգծել, որ հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի բոլոր ոլորտներում մյուսների հետ հավասար հիմունքներով իրավունակությունը ամրագրված է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածով: Ըստ կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանության 9-րդ կետի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի կողմից վերահաստատվում է, որ իրավունակության կամ 12-րդ հոդվածով ամրագրված ցանկացած իրավունքի մերժման համար հաշմանդամություն ունենալը հիմք չէ: Կոնվենցիայի 12-րդ հոդվածը խախտող դեպքերը գործնականում պետք է վերացվեն, որպեսզի ապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց համար բոլորի հետ հավասար լիարժեք իրավական գործունակություն<sup>839</sup>:

ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանության 32-րդ կետով նշվում է, որ օրենքի առջև հավասար ճանաչման համար իրավական կարողությունները չպետք է մերժվեն խտրականորեն: Իրավական գործունակության մերժումը չպետք է հիմնված լինի այնպիսի անձնական հատկությունների վրա, ինչպիսիք են՝ սեռը, ռասան կամ հաշմանդամություն ունենալը, և դա չպետք է ունենա մարդուն այլ կերպ վերաբերվելու նպատակ կամ ազդեցություն<sup>840</sup>:

Խտրական վերաբերմունքի արգելքը գործունակության հիմքով պետք է քննարկել նաև հաշմանդամություն ունեցող անձանց գործողությունների իրավական հետևանքների առումով: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը հաշմանդամություն հիմքով անձանց քրեական պատասխանատվությունից ինքնաբերաբար ազատելը համարել է խտրական և անօրինական: Փոխարենը, հանցակազմի սուբյեկտիվ կողմին վերաբերող դրույթները պետք է հաշմանդամության առումով չեզոք լինեն և հաշվի առնեն կոնկրետ անձի դրությունը: Քրեական իրավունքի ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց գործունակության ճանաչումը պահանջում է վերացնել նրանց պաշտպանությունը՝ հիմնված հոգեկան և մտավոր հաշմանդամության հիմքով քրեական պատասխանատվությունը մերժելու վրա<sup>841</sup>:

Ներկայացվածից բացի, պետք է ընդգծել, որ ընտանիքում բռնության գործերով ընտանիքում բռնություն գործադրած անձի իրավունքների պաշտպանությանը նախապատվություն տալու մոտեցումը հակասում է միջազգային չափանիշներին: Կանանց կյանքի և ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության իրավունքները չեն կարող ստորադասվել բռնություն գործադրողի

<sup>839</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանությունը, կետ 9, հասանելի է <https://digitallibrary.un.org/record/812024?ln=en> հղումով:

<sup>840</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի թիվ 1 (2014) ընդհանուր մեկնաբանությունը, կետ 32, հասանելի է <https://digitallibrary.un.org/record/812024?ln=en> հղումով:

<sup>841</sup> Հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/hrcouncil/docs/10session/A.HRC.10.48.pdf> հղումով, կետ 47, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

իրավունքներից: Ասվածը բխում է ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի դիրքորոշումից<sup>842</sup>:

Ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները ունեն նաև կանխարգելիչ նպատակ, դրանք չափազանց կարևոր նշանակություն ունեն բռնության ենթարկված անձանց պաշտպանության տեսանկյունից:

Նշվածից բացի, ըստ «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի՝ ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշվառումը կանխարգելիչ նպատակ է հետապնդում, որի շրջանակում չափահաս անձի ընտանիքում բռնություն գործադրելը կանխարգելելու նկատմամբ մշտադիտարկում է իրականացվում:

Անձի վարքագծի դրսևորումների մշտադիտարկման տեսանկյունից հաշվառման վերցնելու գործառույթը չափազանց կարևոր նշանակություն ունի, այն կանխարգելման ու պաշտպանության նպատակ է հետապնդում: Մինչդեռ, իրավակիրառ պրակտիկայում պատշաճ չեն իրականացվում կանխարգելման նպատակ ունեցող հաշվառման գործառույթն ու բռնություն գործադրած անձանց մշտադիտարկումը:

ՀՀ ոստիկանության պարզաբանումների համաձայն, որոնցով ներկայացվել են տվյալներ պաշտպանության միջոցների խախտումների վերաբերյալ՝ կայացված 1072 պաշտպանության միջոցներից խախտվել է 63-ը, որից 46-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանիքում բռնության ենթարկված անձը, իսկ 17-ը հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից:

Ստացվում է, որ ՀՀ ոստիկանության պետի քննարկվող հրամանն ուղղակիորեն խոչընդոտում է հաշվառմանն ու հետևաբար ընտանիքում բռնության դեպքերի կանխարգելման արդյունավետ իրականացմանը:

Վերոշարադրյալի շրջանակներում հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված «Հայաստանի Հանրապետությունում ընտանիքում բռնության դեմ պայքարի 2022-2024 թվականների ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով<sup>843</sup> անդրադարձ է կատարվել Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացված այս հարցին: Մասնավորապես, Ռազմավարության նախագծով ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրության կատարելագործման շրջանակներում նախագծի Հավելված N 1-ի 20.2.1-ին կետով նշվում է, որ

<sup>842</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտե CEDAW/C/39/D/6/2005\*, կետ 12.1.5, հասանլի է <https://opcedaw.files.wordpress.com/2012/01/yildirim-v-austria.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>843</sup> Սույն բաժնում այսուհետ՝ Ռազմավարության նախագիծ

անհրաժեշտ է վերացնել խնդրո առարկա սահմանափակումը՝ ապահովելով անգործունակ անձանց նկատմամբ պաշտպանության միջոցների կիրառման գործնական նախապայմանները:

Ռազմավարության նախագիծը կարծիքի է ներկայացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին: Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում է ներառվել նաև այն, որ ընտանիքում բռնություն կիրառած՝ հոգեբուժական կազմակերպությունում հաշվառված անձանց նկատմամբ չի կիրառվում Օրենքի իմաստով նախազգուշացումն այն պատճառաբանությամբ, որ անձն արդեն իսկ հաշվառված է: Մինչդեռ, նման մեկնաբանությունը ոչ միայն օրենսդրական հիմքեր չունի, այլև խոչընդոտում է Օրենքի այլ գործիքակազմի կիրառությանը՝ նկատի ունենալով, որ նախազգուշացումը Օրենքի իմաստով այլ բովանդակություն ու իրավական հետևանքներ է ներառում:

Ավելին, եզրութաբանական համապատասխանության առումով, Պաշտպանի կողմից ներկայացված կարծիքում ընդգրկվել է նաև վերը շարադրված Օրենքի և ՀՀ ոստիկանության պետի 2019 թվականի 15-Լ հրամանի կարգավորումների անհամապատասխանության խնդիրը:

բ. Տուժողի իրավունքների պաշտպանության արդյունավետության տեսանկյունից 2018 թվականից սկսած Մարդու իրավունքների պաշտպանի կողմից խնդրահարույց են համարվել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և 7-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված որոշ դրույթներ:

Այսպես, «Կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայով (սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Կոնվենցիա) նախատեսվում է անհետաձգելի արգելող որոշման միակողմանի կարգով կայացում՝ անմիջապես ուժի մեջ մտնելով: Ի հակադրություն կոնվենցիոն պահանջի՝ Հայաստանում նշված որոշումը, Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մաս համաձայն, ուժի մեջ է մտնում բռնություն գործադրած անձին ծանուցման պահից: Դա կարող է լինել ինչպես համապատասխան որոշման պատճենը առձեռն հանձնելու, այնպես էլ հեռախոսակապի միջոցով, հաշվառման վայր պաշտոնական էլեկտրոնային փոստի կամ պատվիրված փոստի միջոցով: Հարկ է նշել, որ բռնություն գործադրողի հաշվառման հասցեն կարող է լինել այն վայրը, որտեղ գտնվելը բռնություն գործադրող անձին պետք է արգելվի: Արդյունքում, ծանուցում ստանալու համար բռնություն գործադրած անձի՝ պահանջվող ներկայություն այդ կարող է վտանգել ընտանեկան բռնության ենթարկված անձի անվտանգությունը: Այսպիսով, ստացվում է, որ Հայաստանում անհետաձգելի միջամտության ուժի մեջ մտնելու ժամկետը ոչ միայն անհապաղ չէ, այլ անորոշ է:

Նշյալ ընթացակարգը ժամանակատար կարող է լինել, և առավել խնդրահարույց է այն առումով, որ դրանով բռնության ենթարկված անձի կյանքի և ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի նկատմամբ բռնություն գործադրած անձի դատավարական իրավունքները գերադասվում են՝ խախտելով միջազգային չափանիշները: Արդյունքում, բռնության ենթարկված անձի հետ կապ հաստատելու շարունակական քայլերը անհետաձգելի միջամտության որոշման խախտում չեն համարվի այն պատճառաբանությամբ, որ նույն որոշումն ընթացակարգային ձգձգումների պատճառով ուժի մեջ մտած չի լինի: Ավելին, անհետաձգելի միջամտության որոշումների

կատարման ուշացումները հիմք են այդ որոշումների հետագա հավանական խախտումների համար:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով՝ ընտանիքում բռնություն գործադրած անձին հանձնվելուց կամ դրա բովանդակությունը նրան հեռախոսակապի միջոցով պարզաբանվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ինչպես նաև դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետներում: Ոստիկանության որոշումներն իրենց հերթին վարչական ակտեր են և դրանց բողոքարկումները կարգավորվում են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով: Նույն օրենքի 74-րդ հոդվածով սահմանվում են վարչական բողոք բերելու իրավական հետևանքները ու նախատեսվում է վարչական ակտի կասեցնող ազդեցություն<sup>844</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ տարեկան հաղորդումներով այս խնդրի բարձրացմամբ պայմանավորված՝ այն ևս որպես կարգավորման կարիք ունեցող խնդիր ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրության կատարելագործման շրջանակներում տեղ է գտել Ռազմավարության նախագծում դրա Հավելված N 1-ի 20.2.2րդ կետով:

Այս առումով, հարկ է նշել, որ ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ 2021թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ ահազանգերով ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 528 ահազանգով կայացրել են նախազգուշացում, իսկ 544-ով՝ անհետաձգելի միջամտության որոշում: Բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացված 528 նախազգուշացման որոշումից 20-ի դեպքում բռնությունը կրել է շարունակական բնույթ: Նշված բոլոր դեպքերով բռնություն գործադրած անձանց նկատմամբ հաշվառումը շարունակվել է: Կայացված 1072 պաշտպանության միջոցներից խախտվել է 63-ը, որից 46-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանիքում բռնության ենթարկված անձը, իսկ 17-ը հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից: Կայացված 1072 պաշտպանության միջոցներից (նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում) վերադասության կարգով բողոքարկվել է 8-ը, որից անփոփոխ է թողնվել 4-ը, վարչական վարույթ չի հարուցվել (օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը բաց է թողնվել) 3-ի դեպքում, ընթացքի մեջ է 1-ը:

Ներկայացվածն ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ նախազգուշացում կիրառելու մասին որոշումը բողոքարկելու կասեցնող ազդեցությունը վտանգներ է պարունակում այն առումով, որ կասեցման ընթացքում բռնություն գործադրած անձը կարող է խախտել նախազգուշացումը, որը,

<sup>844</sup> «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի համաձայն՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը՝ բացառությամբ օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման, և այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:



սակայն, խախտում չի համարվի՝ այդպիսով նվազեցնելով տուժողին տրամադրված պաշտպանության մակարդակը:

Այս խնդիրների շրջանակներում, հարկ է անդրադառնալ նաև մեկ այլ հարցի. Սահմանադրական դատարանում վիճարկման առարկա է դարձել Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը, որով սահմանվում է, որ եթե ընտանիքի մեկ անդամը մյուսի նկատմամբ բռնություն է կիրառել, և առկա է հիմնավոր ենթադրություն բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի մասին, ապա ընտանիքի մյուս անդամի կյանքի և առողջության ապահովման նպատակով ոստիկանության իրավասու ծառայողն անհապաղ կայացնում է անհետաձգելի միջամտության որոշում (...):

Այս կարգավորման սահմանադրականության հարցը բարձրացվել է այն առումով, որ որոշ դեպքերում անհապաղության հետևանքով տուժում են ընտանիքում բռնության ենթարկված անձիք, կամ որ անհապաղության դեպքում ոստիկանության ներկայացուցիչները բացատրություն են վերցնում բռնություն գործադրած անձանցից և ոչ տուժողներից, ըստ այդմ՝ ամբողջությամբ չի ապահովվում տուժողների իրավունքների պաշտպանությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը հարցը դիտարկել է անձի կյանքի, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության և լիազոր մարմնի կողմից որոշումների կայացման, վարչարարության և լիազորությունների ու գործառույթների պատշաճ իրականացման ապահովման՝ պատշաճ վարչարարության իրավունքների մրցակցության համատեքստում: Ըստ այդմ՝ ներկայացվել է դիրքորոշում առ այն, որ անհետաձգելի միջամտության որոշումների էությունից է բխում դրանց արագ կայացումը, ուստի անհապաղությունն անհրաժեշտ կարևոր բաղադրիչ է, և դրանից բացառություն սահմանումը կարող է խնդրահարույց լինել: Անհետաձգելի միջամտության որոշումների կայացման անհապաղությունից բացառություն սահմանելով՝ այդ որոշման կայացումը գործնականում կարող է իմաստազուրկ դառնալ՝ ելնելով դրա պաշտպանական էությունից ու նպատակից: Ավելին, ընտանեկան բռնության խնդրի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանեկան բռնությունը և դրա հետևանքները հաճախ ավելի լուրջ կարող են լինել, դրանք հաճախ կրկնվում և ժամանակի ընթացքում ավելի են սրվում, քան բռնության այլ ձևերի դեպքում:

*Նշված գործով Սահմանադրական դատարանը 2021 թվականի ապրիլի 6-ի թիվ ՍԴԱՌ-65 որոշմամբ կարճել է գործի վարույթը<sup>845</sup>:*

գ. Ընտանիքում բռնության դեմ պայքարի ոլորտում օրենսդրական կառուցակարգերի ոչ լիարժեքության դրսևորումներից մեկը պատասխանատվության ինստիտուտի անկատարությունն է: Մասնավորապես, խնդիրն այն է, որ ներպետական օրենսդրությամբ ընտանիքում բռնության ոչ բոլոր տեսակների համար է նախատեսված պատասխանատվության մեխանիզմ: Նշվածի

<sup>845</sup> Հասանելի է <https://concourt.am/armenian/decisions/working/2021/pdf/sdav-65.pdf> հղումով:

արդյունքում, այդ դեպքերին իրավասու մարմինները չեն կարողանում համապատասխան արձագանք տալ:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքով հանցագործություն են համարվում ֆիզիկական բռնության որոշ տեսակներ, ինչպես նաև սեռական բռնությունը: Որոշ առումով օրենսդրությամբ կարգավորված է նաև հոգեբանական բռնությունը. ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով քրեական պատասխանատվություն է սահմանվում ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու համար:

Ներկայացածի հետ մեկտեղ, ՀՀ գործող քրեական օրենսգրքով մի շարք արարքներ ամրագրված չեն որպես քրեորեն պատժելի արարք: Օրինակ՝ իբրև հակաիրավական արարք ամրագրված չեն, օրինակ, հարկադիր ամուսնությունը<sup>846</sup>, հղիության արհեստական ընդհատումը հարկադիր կատարելը<sup>847</sup>, հետամտումը («պարբերաբար մեկ այլ անձի հետապնդելը, մեկ այլ անձի հետ անցանկալի հաղորդակցության մեջ ներգրավվելը կամ անձին հետևելու մասին իմաց տալը»): Խոսքը տուժողին ֆիզիկապես հետևելու, նրա աշխատանքի վայր, սպորտային կամ կրթական հաստատություն այցելելու, ինչպես նաև տուժողին վիրտուալ աշխարհում հետևելու, (...) մեկ այլ անձի գույքը վնասելու, անձի անձնական իրերի վրա աննշան հետքեր թողնելու, անձի տվյալներով առցանց կեղծ անուններով հաշիվներ բացելու կամ սուտ տեղեկություններ տարածելու մասին է)<sup>848</sup>, և այլն:

Այնինչ, միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունից բխում է, որ բռնություն գործադրած անձանց համար պատասխանատվության միջոցների նախատեսումը բռնության դեմ պայքարի միջոցներից է<sup>849</sup>: Մի շարք երկրների օրենսդրության և միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ որպես ընտանիքում բռնության դեմ պայքարի միջոց՝ արդյունավետ է դրա քրեականացումը: Միաժամանակ, դա կարող է իրականացվել ինչպես մեկ հանցակազմի նախատեսմամբ, այնպես էլ ընդհանուր հանցակազմերով գործը քննելիս տուժողի և բռնություն գործադրած անձի միջև ընտանեկան կապը որպես պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք նախատեսելով<sup>850</sup>:

Քննարկվող խնդրի շրջանակներում հատկապես կարևոր է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ նշված արարքների համար օրենսդրությամբ քրեական պատասխանատվության ամրագրման բացակայության հարցն առավել խնդրահարույց է դառնում

<sup>846</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 37:

<sup>847</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 39:

<sup>848</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 34:

<sup>849</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդվածներ 33-40:

<sup>850</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 46:

պայմանավորված նրանով, որ այդ արարքների գործնականում կատարվում են: Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված դիմում-բողոքներով ներկայացվում են, օրինակ, դեպքեր երբ ընտանիքի անդամը հետապնդվում է ընտանիքի մեկ այլ անդամի կողմից<sup>851</sup>: Նման պարագայում օրենսդրությամբ հետապնդման համար քրեական պատասխանատվության բացակայության պայմաններում իրավասու մարմինների արձագանքը ևս դառնում է ոչ արդյունավետ ու իմաստազուրկ: Ընտանիքում բռնության դեպքերի արդյունավետ արձագանքման խոչընդոտներից է ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքը՝ տուժողի վարքագծի հակաօրինականությունը կամ հակաբարոյականությունը, որով պայմանավորվել է հանցագործությունը: Միջազգային չափանիշներին համահունչ չէ ընտանիքում բռնության դեպքում նման մեղմացնող հանգամանք նախատեսելը: Ըստ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 42-րդ հոդվածի՝ հանցագործությունների անընդունելի արդարացումներ են համարվում՝ այսպես կոչված, «հանուն պատվի» կատարվող հանցագործությունները: Սա վերաբերում է, հատկապես, այն պնդումներին, որ բռնության ենթարկված անձի կողմից խախտվել են պատշաճ վարքագծի մշակութային, սոցիալական կամ ավանդույթային նորմերը կամ սովորույթները, որոնք բռնության գործադրման համար արդարացումներ են հանդիսանում:

Ասվածի առնչությամբ հարկ է նշել նաև, որ Ռազմավարության նախագծում ևս անդրադարձ կա այս հարցին: Այսպես, ընտանեկան բռնության դեմ պայքարի օրենսդրության կատարելագործման համատեքստում Ռազմավարության Նախագծի Հավելված N 1-ի 21.3-րդ կետով նշվում է, որ ՀՀ քրեական օրենսգրքում անհրաժեշտ է կատարել նաև այլ լրացումներ և փոփոխություններ՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով՝ քրեականացնել ընտանիքում բռնության բոլոր տեսակները՝ ներառյալ հոգեբանական բռնությունը, հետամտումը, հարկադրական ամուսնությունը, վերացնել տուժողի կողմից հակաբարոյական վարքագիծը՝ որպես հանցակազմը մեղմացնող հանգամանք, բռնաբարության հանցակազմի նկարագրությունը համապատասխանեցնել միջազգային չափանիշներին և այլ բարեփոխումներ:

Նշվածով պայմանավորված՝ Ռազմավարության նախագծի Հավելվածի N 2-ի 5.3-րդ կետով որպես գործողություն է նախատեսվում քրեականացնել ընտանիքում բռնության բոլոր տեսակները՝ ներառյալ հոգեբանական բռնությունը, հետամտումը, հարկադրական ամուսնությունը, ֆիզիկական բռնության բոլոր դրսևրումները: Նույն հավելվածի 5.4-րդ կետով էլ նախատեսվում է վերացնել տուժողի կողմից հակաբարոյական վարքագիծը՝ որպես հանցակազմը մեղմացնող հանգամանք:

<sup>851</sup> Ընտանիքում բռնության հարցերով Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված այն դիմում-բողոքների վերաբերյալ տվյալները, որոնցով նկարագրվում են հետապնդման դեպքեր, տե՛ս սույն բաժնի «Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված՝ ընտանեկան բռնությանն առնչվող դիմում-բողոքների ընդհանուր նկարագիրը. քանակական և որակական ուսումնասիրություն» վերտառությամբ պարագրաֆում:

Նախագծային լուծումների հետ կապված, սակայն, հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքում արդեն իսկ վերը նշված արարքներից մի մասի համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում, ինչպես, օրինակ, հարկադրական անուսնության համար: Կամ տուժողի կողմից հակաբարոյական վարքագիծը՝ որպես հանցակազմը մեղմացնող հանգամանք, որի վերացումը որպես առանձին գործողություն է նախատեսված Ռազմավարության նախագծով, արդեն իսկ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքում բացակայում է: Այս մասին արձանագրվել է նաև Ռազմավարության նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում:

Ներկայացվածի հետ մեկտեղ, պետք է նշել նաև, որ Հայաստանի Հանրապետության 2021 թվականի մայիսի 5-ի քրեական օրենսգրքում շարունակում է բացակայել հետամտման (հետապնդման) համար պատասխանատվությունը:

Ե. Խնդրահարույց են նաև ընտանիքում բռնության դեպքերում հանրային և մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի օրենսդրական կարգավորումները: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մասնավոր հետապնդման գործեր են համարվում սույն օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի մի շարք հոդվածներով նախատեսված արարքներ, որոնք կատարվում են նաև ընտանիքում բռնության համատեքստում, քննվում են մասնավոր մեղադրանքի կարգով, այլ կերպ՝ նշված հոդվածներով նախատեսված հանցագործությունների վերաբերյալ գործերը հարուցվում են ոչ այլ կերպ, քան տուժողի բողոքի հիման վրա, և կասկածյալի կամ մեղադրյալի կամ ամբաստանյալի հետ նրա հաշտվելու դեպքում ենթակա են կարճման:

Այս խնդրի լուծման նպատակով «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2017 թվականի դեկտեմբերի 13-ի օրենքով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածը լրացվեց 4-րդ մասով՝ սահմանելով, որ անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելուց դատախազն իրավասու է սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություններով հարուցել քրեական գործ ընտանիքում բռնության դեպքերում, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Այս դեպքում քրեական գործը հարուցվում և քննվում է նույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով, և տուժողի ու մեղադրյալի հաշտության դեպքում քրեական հետապնդումը չի դադարեցվում<sup>852</sup>:

Մինչդեռ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ամրագրված այս չափանիշը գնահատելիս պետք է ի նկատի ունենալ, որ օրենսգրքի խնդրո առարկա դրույթը նախատեսված է՝

<sup>852</sup> Նշված կարգավորումն ուժի մեջ է մտել 2018 թվականից:

հիմք ընդունելով տուժողի դրությունը՝ ի տարբերություն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած չափորոշիչների, որոնցով գնահատվում է ոտնձգողի վարքագիծը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավաբանությամբ սահմանվել են այն չափանիշները, որոնցով գնահատվում է բռնություն գործադրող անձի վարքագիծը: Դատարանի դիրքորոշմամբ՝ կարևոր է այն հարցը, թե արդյոք պաշտպանությանն ուղղված համապատասխան կանխարգելիչ միջոցներ ձեռնարկելու հարցում իշխանությունները ցուցաբերել են պատշաճ զգուշավորություն՝ «անկախ զոհերի կողմից բողոքներ հետ վերցնելու հանգամանքից»: Դատարանը սահմանել է հետևյալ չափանիշները՝ իրավախախտման ծանրությունը, զոհի վնասվածքները ֆիզիկական են, թե՛ հոգեբանական, եթե բռնություն գործադրած անձը զենք է կիրառել, եթե բռնություն գործադրած անձը հարձակումից հետո որևէ ձևով սպառնացել է, եթե բռնություն գործադրած անձը պլանավորել է հարձակումը, ընտանիքում ապրող որևէ երեխայի վրա ազդեցությունը (այդ թվում՝ հոգեբանական), բռնություն գործադրած անձի՝ նորից իրավախախտում կատարելու հնարավորությունները, տուժողի կամ ցանկացած այլ անձի, որը կարող էր ներգրավված լինել, առողջությանը և անվտանգությանը ներկայացվող շարունակական սպառնալիքը, զոհի ներկայիս հարաբերությունը բռնություն գործադրած անձի հետ և զոհի ցանկություններին հակառակ իրականացվող քրեական հետապնդման հետ մեկտեղ շարունակվող հարաբերության վրա ազդեցությունը, հարաբերության պատմությունը, մասնավորապես, եթե նախկինում տեղի է ունեցել բռնության այլ դեպք, ինչպես նաև բռնություն գործադրած անձի քրեական անցյալը, մասնավորապես՝ նախկինում բռնություն կատարելը<sup>853</sup>:

Այս բոլոր չափորոշիչները վերաբերում են կատարողի վարքագծին, զոհի նկատմամբ սպառնալիքներին և նրանց հարաբերություններին. ի տարբերություն վերոնշյալի՝ ՀՀ օրենսդրությամբ ուշադրությունը կենտրոնացած է զոհի վրա: Դրա հիմքում ընկած է զոհի «անօգնական վիճակը»՝ արտացոլելով գենդերային կարծրատիպերի առկայությունը, որոնք, ըստ միջազգային չափանիշների, մերժելի են<sup>854</sup>:

Ասվածի հետ մեկտեղ, որպես դրական քայլ կարող ենք համարել այն, որ ՀՀ դատախազությունն արդեն իսկ կիրառել է ընտանիքում բռնության գործերը հանրային մեղադրանքի կարգով քննելու պրակտիկան: Մասնավորապես, ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ 2021 թվականի ընթացքում ընտանիքում բռնության մասնավոր մեղադրանքի դեպքերով, անկախ տուժողի կողմից բողոք ներկայացնելու հանգամանքից, երբ անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարողացել պաշտպանել իր իրավաչափ

<sup>853</sup> Տե՛ս Օփուզն ընդդեմ Թուրքիայի (Opuz v. Turkey) գործով 2009 թվականի սեպտեմբերի 9-ի վճիռը, գանգատ թիվ 33401/02, 138-րդ կետ:

<sup>854</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի միջազգային խորհրդատու Լորի Մանի 2019 թվականի ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում և Ոստիկանության համապատասխան հրամաններում առկա բացերի վերլուծությունն ու առաջարկությունները» վերտառությամբ վերլուծությունը:

շահերը, ՀՀ քրեական օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, քրեական գործ է հարուցվել 43 դեպքով:

Ըստ ՀՀ դատախազության պարզաբանումների՝ 2021 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 101 քրեական գործ, որից 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, որից 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 4-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 6-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 76-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, որից 11-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 55-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 9-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 1-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով /գործուն գղջալ/, 7-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, որից 3-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 3-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 1-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածով, որով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածով, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել են դատարան:

Այսինքն, արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ հարուցված 101 քրեական գործից 16-ով քրեական վարույթը կարճվել է տուժողի՝ կասկածյալի կամ մեղադրյալի հետ հաշտության հիմքով:

զ. Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով բողոք ներկայացրած անձը բարձրացրել է ընտանեկան բռնության հարց, որի շրջանակներում վերջինս տարիներ շարունակ ֆիզիկական ու հոգեբանական բռնության է ենթարկվել իր երեխայի կենսաբանական հոր (նախկին զուգընկերոջ) կողմից, ով, սակայն, երեխայի հայրությունը չի ճանաչել: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ բռնության դեպքերի կապակցությամբ իրավասու մարմինների կողմից պատշաճ քայլեր չեն ձեռնարկվել:

Նշվածով պայմանավորված՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից գրություն է հասցեագրվել Ոստիկանություն՝ պարզելու, թե ինչ քայլեր են ձեռնարկվել բռնության ենթարկված

անձի նկատմամբ Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցների կիրառման ուղղությամբ: Ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ բռնության ենթարկված անձն ու բռնություն ենթարկող անձը Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն սուբյեկտ չեն համարով, այդ իսկ պատճառով Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներ չեն կիրառվել: Նշվածի հիմքում է դրվել նաև այն, որ բռնության ենթարկված անձը բազմիցս հայտնել է, որ բռնություն գործադրած անձը հանդիսանում է իր երեխայի կենսաբանական հայրը, սակայն իրենք երբևէ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ չեն գտնվել, ինչպես նաև համատեղ կենցաղ չեն վարել:

Մինչդեռ, հարկ է նշել, որ կոնվենցիոն իմաստով ընտանեկան բռնություն են համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բնույթի բոլոր բնարարքները, որոնք կատարվում են ընտանիքի կամ ընտանեկան միավորի ներսում կամ նախկին կամ ներկա ամուսինների կամ զուգընկերների միջև՝ անկախ նրանից՝ կատարողը բնակվում է կամ բնակվել է գոհի հետ նույն բնակարանում, թե ոչ<sup>855</sup>:

Այսինքն, Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքի անդամներ են անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը (այդ թվում՝ փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձը), նախկին ամուսինը, ծնողը, այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (նաև որդեգրված, խորթ, հոգեզավակ), որդեգրող ծնողի ամուսինը, ամուսնու ծնողները, նախկին ամուսնու ծնողները:

ՀՀ օրենսդրական կարգավորումներից ստացվում է, որ ներկա և նախկին զուգընկերները չեն համարվում Օրենքի իմաստով ընտանիքում բռնության սուբյեկտներ, ինչը հակասում է միջազգային ընդունված մոտեցումներին:

Հարկ է նշել, որ դեռևս 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի էր ուղարկվել ««Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով նախատեսվում էր ընտանիքում բռնության սուբյեկտային կազմում ներառել նաև ներկա և նախկին զուգընկերներին:

Ընտանեկան բռնության ենթարկված և գործադրող անձանց շրջանակի ընդլայնումը չափազանց կարևոր է: Անձանց շրջանակի ընդլայնման հարցը բարձրացվել էր դեռևս Օրենքի առաջնային տարբերակի նախագծի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում՝ միջազգային չափանիշներին համահունչ սահմանելու առաջարկով:

Կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան բռնություն է համարվում ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնության գործողությունները, որոնք կատարվում են,

<sup>855</sup> Տե՛ս «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, հոդված 3:

այդ թվում նաև՝ *զուգընկերների միջև*: Ավելին, Կոնվենցիայի բացատրական զեկույցի<sup>856</sup> համաձայն՝ ընտանեկան բռնությունը ներառում է ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ տնտեսական բռնություններ նաև *ներկա կամ նախկին զուգընկերների միջև*:

«Կանանց նկատմամբ բռնության վերացման վերաբերյալ օրենսդրության» ՄԱԿ-ի 2012 թվականի ձեռնարկում նշվում է, որ ընտանեկան բռնությունից օրենքով պաշտպանված անձանց շրջանակը պետք է ընդգրկի առնվազն անհատների, որոնք զուգընկերային հարաբերություններ ունեն կամ ունեցել են՝ ներառելով ամուսնական, *ոչ ամուսնական հարաբերությունները*: Սույն ձեռնարկում նշվում է նաև, որ մի շարք երկրների օրենքներում ընտանեկան բռնության դեպքերը ներառել են միայն ամուսնացած զույգերին, սակայն ժամանակի ընթացքում օրենսդրական շրջանակն ավելի ընդլայնվել է՝ որպես ընտանեկան բռնության տուժող ճանաչելով նաև այն զուգընկերներին, ովքեր ամուսնացած չեն կամ համատեղ չեն բնակվում<sup>857</sup>:

Ավելին, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (այսուհետ՝ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կողմից ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին օրենքների նախագծերի վերաբերյալ տրված կարծիքներում ընդգծվել է, որ ընտանեկան բռնության բնորոշումը օրենքում ամրագրելիս անձանց միջև հարաբերությունների սահմանումը պետք է ընդգրկի դրանց ամենալայն շրջանակը: Մասնավորապես, «Ընտանեկան բռնության դեմ պայքարի վերաբերյալ իրավական դաշտում փոփոխություններ կատարելու մասին» Մոլդովայի Հանրապետության նախագծի վերաբերյալ 2015 թվականի հուլիսի 9-ին ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ներկայացրած կարծիքում<sup>858</sup> բացասական է գնահատվել այն, որ կարծիքի ներկայացված կարգավորումների ձևակերպումները չեն ներառում որոշ հարաբերություններ, ինչպիսիք են օրինակ զուգընկերների հարաբերությունները, ռոմանտիկ և սեռական հարաբերությունները այն անձանց միջև, ովքեր չեն բնակվում կամ երբևէ չեն բնակվել միասին:

Հարկ է նկատել, որ ոլորտի օրենսդրական խնդիրների մեծ մասը Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել են դեռևս 2017 թվականից Եվրոպայի խորհրդի աջակցությամբ իրականացված՝ ՀՀ քրեական օրենսդրության և միջազգային չափանիշների համեմատական վերլուծության զեկույցում<sup>859</sup>, որով նաև հստակ առաջարկներ են ներկայացվել: Այդ, առաջարկներն առ այսօր դեռևս արդիական են:

Նշվածի հետ մեկտեղ, որպես ոլորտի օրենսդրական խնդիրների լուծմանն ուղղված դրական քայլ պետք է համարել Ռազմավարության նախագծի մշակումը: Նախագծային լուծումներն՝ ուղղված

<sup>856</sup> 42-րդ պարբերություն, հասանելի է <https://rm.coe.int/16800d383a> հղումով 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>857</sup> Հասանելի է [http://www2.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/library/publications/2012/12/unw\\_legislation-handbook%20pdf.pdf?v=1&d=20141013T121502](http://www2.unwomen.org/-/media/headquarters/attachments/sections/library/publications/2012/12/unw_legislation-handbook%20pdf.pdf?v=1&d=20141013T121502) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>858</sup> Opinion on Draft Amendments to the Legal Framework on Preventing and Combating Domestic Violence in Moldova, Warsaw, 9 July 2015, Opinion N: AGEND-MDA/271/2015 [AIC], 2.1-րդ մասի 22-րդ պարբերություն

<sup>859</sup> Հասանելի է <https://rm.coe.int/gap-analysis-armenian-law-arm/168075bae2> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտի ռազմավարական մոտեցումների և ընդհանուր քաղաքականության մշակմանը, ողջունելի են՝ հաշվի առնելով նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրացվող ոլորտի խնդիրների և այդ խնդիրների լուծմանն ուղղված Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում ամրագրված առաջարկների մեծամասնությունը նախագծում տեղ է գտել և դրվել է նախագծի մշակման հիմքում:

2) Կարծրատիպեր, իրավագիտակցության ցածր մակարդակ և իրազեկման պակաս, անվստահություն պետական մարմինների նկատմամբ, ոչ բավարար մասնագիտական պատրաստվածություն

Կանանց նկատմամբ և ընտանիքում բռնության վերաբերյալ առկա թյուր պատկերացումներն ու կարծրատիպերը ընտանեկան բռնության դեմ պայքարի և կանխարգելման հարցում մեծագույն մարտահրավերներից են:

Ընտանեկան բռնության դեպքերն ու խտրականության այլ դրսևորումներ շարունակում են տեղի ունենալ երկրում՝ չնայած առկա օրենսդրական կառուցակարգերին: Այդ դեպքերի շարունակականությունն ու մշտական առկայությունը խոսում է այն մասին, որ անհրաժեշտ է իրականացնել անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված շարունակական և համակարգված գործողություններ, որոնք ուղղված կլինեն ընտանեկան բռնության երևույթի վերաբերյալ հասարակությունում առկա ընկալումները և կարծրատիպային մտածելակերպը փոխելուն ու բռնության ենթարկված անձանց իրավունքներն արդյունավետ պաշտպանելուն:

Ընտանեկան բռնության խնդիրը հաճախ ներկայացվում և ընկալվում է որպես իշխանության և ուժի հաստատման և դրսևորման երևույթ, իսկ նման կարծրատիպային մտածելակերպի ամրապնդման համար նպաստավոր պայման կարող է դառնալ բռնություն գործադրողի և բռնության ենթարկվողի իրավագիտակցության ցածր մակարդակը:

Կարծրատիպային մտածելակերպը մի շարք այլ խնդիրների առաջացման հիմք է: Այն բացասաբար է ազդում բռնության ենթարկված անձի կողմից բռնության դեպքերի մասին բարձրաձայնելու և իր իրավունքների պաշտպանության համար քայլեր ձեռնարկելու, ինչպես նաև բռնության կանխարգելման հարցերում:

ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ հանձնաժողովը Հայաստանի չորրորդ պարբերական հաշվետվության (2017) վերաբերյալ իր եզրափակիչ դիտարկումներում արտահայտել է իր մտահոգությունը առ այն, որ Հայաստանում ընտանեկան բռնությունը տարածված է և հաճախ տուժածները չեն բողոքում նման բռնությունը արդարացնող գենդերային կարծրատիպերի պատճառով<sup>860</sup>:

<sup>860</sup> Խոշտանգումների դեմ հանձնաժողով, Հայաստանի չորրորդ պարբերական հաշվետվության վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, 26 հունվարի 2017թ., CAT/C/ARM/CO/4

Ընտանեկան բռնության հարցի վերաբերյալ թերի պատկերացումների և թյուր ընկալման օրինակ է այն, որ այդ խնդիրը և դրա շուրջ քննարկումը շարունակվում են կրել ներընտանեկան բնույթ:

Այս կարծրատիպային մոտեցումն առավել խնդրահարույց է դառնում իրավասու պետական մարմինների ներկայացուցիչների կողմից այդ մոտեցման դրսևորման պարագայում, քանի որ այն հաճախ բերում է կրկնակի զոհացման: Սա էլ իր հերթին կարող է խոչընդոտել հետագա դեպքերի բացահայտմանը՝ արդյունքում հանգեցնելով մի իրավիճակի, երբ տուժողները խուսափում են կրկին դիմել իրավասու մարմիններին<sup>861</sup>: Հասարակությունում առկա կարծրատիպերի պարզմանն ուղղված իրականացվել են ուսումնասիրություններ: Այսպես, ընտանիքում բռնության դրսևորումների վերաբերյալ քննարկումների անբաժան մաս է բռնության հրահրման և առաջացման համար կողմերից որևէ մեկի վրա ընտանիքում լարվածության էսկալացիայի մեղքը բարդելը:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքներով՝ հարցվածների 35.7 %-ը, որից 44.6 %-ը տղամարդ են և 27.8 %-ը՝ կանայք, կարծում են, որ կինը պետք է հանդուրժի բռնությունը՝ ընտանիքի միասնությունը պահպանելու համար<sup>862</sup>: Որոշ դեպքերում «կինը ծեծի է արժանի» պնդման հետ համաձայն է հարցվածների 27.7 %-ը, որից 35.2 %-ը՝ տղամարդ է, 21 %-ը՝ կին<sup>863</sup>: Ավելին, յուրաքանչյուր երեք տղամարդ հարցվածներից մեկը (35.2%) համաձայնել է այն պնդման հետ, որ որոշ դեպքերում կինն արժանի է, որ իրեն ծեծեն. յուրաքանչյուր հինգ կին հարցվածներից մեկն է համաձայնել դրա հետ (21.0%): Հարցվածների 70.3%-ն, որից 78.6%-ը տղամարդ է, իսկ 62.9%-ը՝ կին, արդարացնում է զուգընկերոջ կողմից ֆիզիկական բռնությունը<sup>864</sup>:

Որոշ ուսումնասիրություններ էլ ցույց են տալիս, որ որոշ դեպքերում կնոջը համարում են ընտանիքում լարվածության, վեճերի ու կոնֆլիկտների էսկալացիայի հրահրող<sup>865</sup>: Միևնույն

<sup>861</sup> Հասարակական կազմակերպությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արձանագրվել է նաև դատարանի ու նախաքննության մարմինների կողմից երկակի ստանդարտների կիրառման դեպքեր, որի հիմքով էլ խախտվել է տուժողի արդյունավետ իրավական պաշտպանության միջոցների իրավունքը, հասանելի է՝ <http://coalitionagainstviolence.org/wp-content/uploads/2017/01/Report-short.pdf?x24321> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Խնդրի մասին բարձրաձայնել է նաև Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեն, որը նշել է, որ բռնության դեպքերի մասին բարձրաձայնման խոչընդոտ է հանդիսանում իրավապահ մարմինների կողմից կարծրատիպերի պատճառով բռնությունն արդարացնելը: Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոմիտեի՝ Հայաստանի 4-րդ պարբերական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներ, հասանելի է <https://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2fPPRiCAqhKb7yhsiz2h%2fRs7Wsu8%2feBy9Sh53xzTb9oMILhzi1Cvt3D8bP6U7WVa87PjauSC1TjtSIEo2YXxTMp6xfpRxPngEOGKV1e17IrsW51%2foHNw%2bFpy3F> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>862</sup> Տե՛ս <https://rm.coe.int/eur-justice-arm/168093c14b> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>863</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>864</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>865</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն

Ժամանակ, հատկանշական է, որ մեղքը կնոջ վրա բարդելու միտումը հատուկ է միայն բռնության ոչ պարբերական դրվագների վերաբերյալ քննարկումներին, մինչդեռ, բռնության շարունակական, պարբերաբար կրկնվող և ծայրահեղ դրսևորումների պարագայում մասնակիցները հակված չեն էսկալացիայի մեղքը բարդել կնոջ վրա<sup>866</sup>: Մասնակիցները նշում են դեպքեր, երբ իրենց կարծիքով կնոջ վարքագիծը նպաստում է ընտանիքում լարվածությունը բռնության վերաճելուն, ամուսնու գործազրկության կամ ընտանիքի բարեկեցության ակնկալիքներին անհամապատասխան վաստակի դեպքում տնտեսական անհամարժեք պահանջներ ներկայացնելը, ակոհովի կամ թմրադեղերի ազդեցության տակ գտնվող ամուսնուն որոշակի պահանջներ ներկայացնելը, դիտավորյալ թաքցրած հաշմանդամությունը<sup>867</sup>:

Կանանց դերի և բռնության վերաբերյալ հասարակության մոտ թյուր պատկերացումների ձևավորման հիմքում են ընկած նաև զանգվածային լրատվության միջոցների բռնության վերաբերյալ սխալ տեղեկատվություն ներկայացնելը: Բացի այդ, հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումները և ֆիլմերը ևս բացասական ազդեցություն ունեն բռնության վերաբերյալ ոչ ճիշտ պատկերացումների ձևավորման հարցում:

Այս առումով, հարկ է արձանագրել, որ հասարակությունում ձևավորված թյուր պատկերացումներն արտացոլված են նաև Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված դիմում-բողոքներում: Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրության արդյունքում վեր են հանվել դեպքեր, երբ բողոք ներկայացրած անձը ներկայացրել է ընտանիքի այլ անդամների (ծնողների, եղբոր կողմից) գործադրված ընտանիքում բռնության դեպք՝ պայմանավորված բռնության ենթարկված կնոջ ամուսնալուծության հանգամանքով:

Շատ հաճախ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներով բարձրացվել են իրավասու մարմինների մոտեցման՝ ոչ պատշաճ վարքագծի կամ գործողությունների հարց: Մասնավորապես, մի շարք բողոքներով բողոք ներկայացրած անձինք պնդել են, որ Ոստիկանության ներկայացուցիչները հորդորել են հաղորդում ներկայացնելիս դեպքի վերաբերյալ ոչ լիարժեք տեղեկություններ հայտնել՝ հաշվի առնելով դրանով բռնություն գործադրած անձին սպասվող անբարենպաստ հետևանքները: Այս խնդիրը վերաբերյալ շատ անգամներ բարձրացվել է ինչպես հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների կողմից Պաշտպանի ներկայացուցիչների հետ մարզերում տեղի ունեցած քննարկումների ընթացքում:

Մի շարք հետազոտություններով ևս անդրադարձ է կատարվել նշված խնդրին: Ուսումնասիրություններից մեկին մասնակցած անձինք ընդգծել են, որ լրատվամիջոցները և հատկապես, հեռուստատեսությունը ազդեցություն են ունենում ընտանիքում կոնֆլիկտները լուծելու

---

ուղղված որակական հետազոտություն», հասանելի է [https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach\\_Arm-Final%20with%20logos-upd\\_0.pdf](https://armenia.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Reserach_Arm-Final%20with%20logos-upd_0.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>866</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>867</sup> Տե՛ս նույն տեղում:

մոդելների վրա: Նման ազդեցության հիմքում բռնության այս կամ այն տեսակն է՝ հատկապես հոգեբանական և տնտեսական: Ըստ մասնակիցներից շատերի՝ դրանք ակնհայտորեն նպաստում են կնոջ և տղամարդու դերերի ավանդական ընկալման և հայրիշխանական կարծրատիպերի վերարտադրությանը: Մասնակիցները միաձայն են այն հարցում, որ ընտանիքում բռնություն հրահրող գործոններից մեկն էլ հայկական հեռուստասերիալներն են, որոնց հիմնական լսարանը կանայք են, և որտեղ տղամարդու դրական կերպարը հաճախ ներկայացվում է որպես իշխող, կնոջը որոշումների գործընթացում չներառող, կոնֆլիկտներն ուժի, երբեմն անգամ ծեծի միջոցով լուծող, իսկ կինը՝ որպես հնազանդ, առօրյան սուրճի բաժակի շուրջ անցկացնող և մանր դավադրություններ հյուսող: Մասնակիցների կարծիքով՝ քանի որ մեդիան նման կերպարները չի ներկայացնում որպես անընդունելի և անգամ դատապարտելի, այլ հակառակը, արդարացնում է նման մոտեցումը նրանով, թե «մենք արտապատկերում ենք իրականությունը», նույն անընդունելի իրականությունը շարունակվում է վերարտադրվել, հատկապես երիտասարդների շրջանում<sup>868</sup>:

Հարկ է նշել, որ Ռազմավարության նախագծի Հավելված N 1-ում անդրադարձ կա նաև այն հարցին, որ ընտանիքում բռնության դեմ պայքարի լրջագույն մարտահրավերներից մեկը հասարակությունում առկա կարծրատիպերն են: Թեև Ռազմավարության նախագծով նախատեսվում են միջոցառումներ ոլորտի արձանագանքողների կարողությունների զարգացման ուղղված վերապատրաստումներ իրականացնելուն, ինչպես նաև իրազեկվածությունը բարձրացնելուն ուղղված, հարկ է նշել նաև Ռազմավարության նախագծում ամրագրված են: Մինչդեռ, նախագծում բացակայում են կոնկրետ գործողություններ՝ ուղղված կանանց՝ հասարակությունում և ընտանիքում դերի վերաբերյալ կարծրատիպերի վերացմանը:

Նշվածով պայմանավորված՝ Ռազմավարության նախագծի վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքում ընդգծվել է նախագծով առանձին միջոցառում նախատեսելու անհրաժեշտությունը՝ ուղղված տարբեր մարմինների ու անձանց համար հատուկ դասընթացների և վերապատրաստումների իրականացմանը, որոնք կթիրախավորեն կոնկրետ կանանց՝ հասարակությունում և ընտանիքում դերի վերաբերյալ կարծրատիպերն ու դրանցով պայմանավորված ընտանեկան բռնության դեմ պայքարի խնդիրները:

Քննարկվող խնդրի շրջանակներում, հարկ է նաև նշել, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների համաձայն՝ վերապատրաստման դասընթացներ են իրականացվել ՀՀ բոլոր մարզերում գործող ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների և թվով երկու ապաստարանի սոցիալական աշխատողների, իրավաբանների և հոգեբանների համար, ինչպես նաև Նախարարության ենթակայությամբ գործող թվով 16 ՊՈԱԿ-ների սոցիալական աշխատողների և հոգեբանների համար, վերապատրաստումներ են իրականացվել նաև Նախարարության ոլորտային ստորաբաժանումների աշխատակիցների,

---

<sup>868</sup> Տե՛ս նույն տեղում:

ինչպես նաև «114» և «911» թեժ գծի աշխատակիցների համար: Ընդհանուր առմամբ վերոգրյալ վերապատրաստումներին մասնակցել են ոլորտային թվով 110 աշխատակիցներ:

Ըստ նույն նախարարության՝ 2021 թվականի ընթացքում մարզային զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների համար կազմակերպվել է վերապատրաստման եռօրյա դասընթաց՝ գենդերային հավասարության, ընտանեկան և կանանց նկատմամբ բռնության կանխարգելման վերաբերյալ, որի շրջանակում զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները հնարավորություն են ունեցել ծանոթանալ կանանց նկատմամբ դրսևորվող խտրականության դեպքերին, գենդերային կարծրատիպերի դրսևորումներին ու բռնության ենթարկված կանանց մասնակցությամբ հարցազրույց անցկացնելու առանձնահատկություններին:

ՀՀ ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ Ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների մասնագիտական կարողությունների զարգացմանն ու ուժեղացմանն ուղղված միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության ՀԱԱԳՎ ԱՀ և ԸԲԿ վարչության նախաձեռնությամբ, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում, ինչպես տեղացի, այնպես էլ միջազգային փորձագետների կողմից ոստիկանության անչափահասների գործերով և ընտանեկան բռնության կանխարգելման բաժանմունքների (խմբերի) ծառայողների համար (թվով 145) կազմակերպվել և անց են կացվել վերապատրաստման դասընթացներ: Բացի այդ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի վերապատրաստման կենտրոնում 2021թ. ընթացքում «Ընտանիքում բռնություն և կանխարգելում» թեմայով վերապատրաստվել են ոստիկանության այլ ստորաբաժանումների թվով 113 ծառայող:

Ըստ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ հանրակրթական ծրագրերի դասագրքերի սեռով պայմանավորված կարծրատիպերի վերհանման և դրանց փոփոխության ենթարկելու ուղղությամբ՝ նախարարության կողմից փորձագիտական կարծիքի են ներկայացվել նոր հանրակրթության պետական չափորոշիչի համաձայն մշակված առարկայական ծրագրերն ու չափորոշիչները և արվել են դիտարկումներ և առաջարկներ, ըստ որոնց վերանայվել և լրամշակվել են չափորոշիչները: «Առողջ ապրելակերպ» դասընթացի բովանդակային 8 բաղադրիչներից մեկը «Փոխհարաբերություններ, սեռային խնդիրներ» բաղադրիչն է, և այդ ուղղությամբ բավականաչափ նյութ է ներառվել 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարանների ձեռնարկներում, մշակվել են ինտերակտիվ դասեր՝ որպես օգնություն ուսուցիչներին և սովորողներին: Ստեղծված ձեռնարկները 2021 – 2022 ուստարվա 2-րդ կիսամյակից փորձարկվելու են Տավուշի մարզի՝ փորձարկման գործընթացում ներառված բոլոր դպրոցներում: Բացի այդ, Տավուշի մարզում հանրակրթության պետական չափորոշիչի, առարկայական նոր չափորոշիչների ու ծրագրերի փորձարկման նպատակով փորձագիտական խմբերի կողմից ստեղծվող ուսումնական նյութերը փորձաքննելիս հաշվի են առնվում դրանց՝ սեռային կարծրատիպերից զերծ լինելը, տղաների ու աղջիկների հավասարաչափ արտացոլումը նկարներում, տեքստերում և բովանդակային այլ

բաղադրիչներում, մասնագիտությունների ու դերերի ներկայացումը առանց սեռային խտրականության:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը (ՀՄԿ) և շվեդական «Գլոբալ թուլոքալ» կազմակերպությունը համատեղ 2021 թ. Երևանի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 5 դպրոցների մանկավարժների համար իրականացրել են «Բուլինգի նվազեցումը հանրակրթական դպրոցներում» թեմայով վերապատրաստումներ: ՀՄԿ-ն «Դասավանդիր Հայաստան» կազմակերպության հետ համագործակցությամբ և ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ 2021 թ. իրականացրել է «Գենդերային ինտեգրման խթանում ուսուցիչների կարողությունների զարգացման ծրագրերում և համայնքային ներգրավման նախաձեռնություններում» ծրագիրը, որի շրջանակներում մշակված վերապատրաստման դասընթացների մոդուլներից մեկը վերաբերում էր գենդեր զգայուն և գենդեր արձագանքող մանկավարժությանը և շեշտադրում էր սեռով պայմանավորված բռնությունների նվազեցման կարևորությունը: Վերոնշյալ մոդուլը ներդրվել է Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի վերապատրաստման մոդուլների ցանկում: Ծրագրի 2 փուլերում գենդեր արձագանքող մանկավարժության վերաբերյալ դասընթաց են անցել հանրապետության 120 դպրոցների 2861 մանկավարժներ: ՆՄՄԿՈՒ (նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ուսուցում) համակարգի մանկավարժների համար կազմակերպված վերապատրաստումներն իրականացվել են թե՛ ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության թեմաներով և թե՛ իրավահավասարության, խտրականության արգելքի թեմաներով: Վերապատրաստումներին մասնակցել են 1141 աշխատակից (առաջին կիսամյակում 995):

Առողջապահության նախարարության պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում բժշկական հաստատություններում պարբերական վերապատրաստումներ ընտանիքում բռնության արդյունքում բժշկական օգնության դիմած անձանց հասանելի հոգեբանական և այլ ծառայությունների մասին տեղեկացնելու, նրանց աջակցության կենտրոններ ուղղորդելու վերաբերյալ դասընթացներ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից չեն կազմակերպվել: 2021 թվականի ընթացքում ընտանիքում բռնության դեպքերի մասին ոստիկանությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին կամ դատախազությանը հայտնելու պայմանների և կարգի վերաբերյալ բժշկական կազմակերպությունների աշխատակիցներին իրազեկելու միջոցառումներ չեն իրականացվել:

Արդյունքում, պետք է արձանագրել, որ դեռևս շարունակում է արմատավորված մնալ հասարակությունում կանանց նկատմամբ ու ընտանիքում բռնության վերաբերյալ թյուր

ընկալումները, պատկերացումներն ու կարծրատիպերը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ապահովել կատարվող աշխատանքների շարունակականությունը:

3) Պետության կողմից տրամադրվող համալիր ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների միջև համագործակցության խնդիրներ

Ընտանիքում բռնության դեմ պայքարի մասն են կազմում բռնության դեպքերին արագ և բազմամասնագիտական արձագանքը, ընտանեկան բռնությունից տուժած անձանց ինչպես իրավական, այնպես էլ հոգեբանական ու սոցիալական աջակցության հարցերի լուծումն ու այլ համալիր աշխատանքներ: Առանցքային նշանակություն ունի դրա այդ աշխատանքների անխոչընդոտ ու մատչելի իրականացման ապահովումը. այն առաջնային երաշխիք է՝ ուղղված իրավական, սոցիալական ու հոգեբանական աջակցության ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը, անձանց՝ բռնությունից պաշտպանությանը, ինչպես նաև հանրային նշանակություն ունեցող խնդիրների կանխարգելմանը:

Պետությունը, ելնելով ընտանիքում բռնության առանձնահատկություններից, պետք է քայլեր ձեռնարկի աջակցության տարբեր միջոցների հասանելիություն ապահովելու ուղղությամբ: Այս առումով, կարիք կա արձանագրելու, որ Օրենքով նախատեսվում է բռնությունից տուժած անձանց համար ծառայությունների մատուցման անհրաժեշտություն:

Օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածներով հոդվածներով համապատասխանաբար ամրագրվում է աջակցության կենտրոնների և ապաստարանների ստեղծումը:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում պետական բյուջեի համաֆինանսավորմամբ պատվիրակված ծառայության տեսքով ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների կողմից ծառայություններ մատուցվել են ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում (Երևան քաղաքում և յուրաքանչյուր մարզում գործել է 1 աջակցության կենտրոն):

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով ամրագրվում են ապաստարանների ստեղծման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության լիազորությունները: Մասնավորապես, նույն կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմինը հիմնադրում է ապաստարաններ, ոչ առևտրային իրավաբանական անձանց հետ կնքում ապաստարանի ֆինանսավորման պայմանագիր կառավարության սահմանած պայմանագրի օրինակելի ձևի հիման վրա և վերահսկողություն իրականացնում իր կողմից մասնակի կամ ամբողջապես ֆինանսավորվող ապաստարանների գործունեության նկատմամբ, այդ թվում՝ ֆինանսական միջոցների օգտագործման մասով:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պարզաբանումների՝ 2021 թվականի ընթացքում ՀՀ տարածքում պետական բյուջեի համաֆինանսավորմամբ գործել է 2

ապաստարան, որտեղ, ընտանիքում բռնության ենթարկված կանանց, անհրաժեշտության դեպքում նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին տրամադրվում են օրենքով սահմանված բոլոր ծառայությունները:

Օրենքով պետության՝ ապաստարանների, աջակցության կենտրոնների ստեղծման առաքելությունից զատ, սահմանվում է նաև այլ ծառայությունների մատուցման հնարավորությունը: Օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է, որ աջակցության կենտրոնների և ապաստարանների կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում օրենքի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից մեկ տարի հետո: Այսինքն, 2019 թվականի հունվար ամսից ապաստարանները պետք է հիմնադրված լինեին, մինչդեռ 2021 թվականին հանրապետությունում գործել է 2 ապաստարան:

Ողջունելով անձանց իրավունքների պաշտպանության երաշխավորման, անվտանգության ու բռնությունից զերծ լինելու հարցի ապահովման նպատակով պետական ֆինանսավորման տրամադրումը ոլորտում արդեն իսկ տարիներ շարունակ այդ ծառայությունը մատուցող հասարակական կազմակերպություններին՝ հարկ է որպես ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության, ինչպես նաև բռնության կանխարգելման նպատակով առաջնային նշանակության խնդիր նշել ապաստարանների ծառայության մատչելիության և հասանելիության ապահովման հարցը:

Պետության կողմից բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին տրամադրվող լիարժեք աջակցության հարցը շարունակում է արդիական մնալ՝ պայմանավորված ապաստարանների ծառայության մատչելիության և հասանելիության ոչ բավարար մակարդակով: Խնդրի լուծման նպատակով անհրաժեշտ է ներդնել նոր ապաստարաններ՝ ընդլայնելով ապաստարանների քանակն ու ապահովելով ապաստարանների ծառայության առկայությունը հանրապետության ողջ տարածքում՝ աշխարհագրական լայն տարածվածությամբ:

Մեկ այլ խնդիր, որին պետք է անդրադառնալ, բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամների պաշտպանության և լիարժեք աջակցության նպատակով անվճար ու մատչելի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար) հատուկ թեժ գիծ ծառայության ապահովման հարցն է, որն ուղղված կլինի անձանց շուրջօրյա աջակցության և խորհրդատվության տրամադրմանը:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (լիազոր մարմին), հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված



համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում՝ նաև նրանց համար մատչելի օգնություն:

Այս առումով, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ նախարարությունն իր պաշտոնական կայքէջում հրապարակել է Նախարարության ենթակայությամբ գործող անվճար «Թեժ գիծ» ծառայության «114» հեռախոսահամարը, ինչպես նաև ՀՀ բոլոր մարզերում և Երևանում գործող աջակցության կենտրոնների և ապաստարանների «Թեժ գիծ» հեռախոսահամարները, որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատակցի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ առաջնային խորհրդատվություն<sup>869</sup>:

ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում գործող աջակցության կենտրոնների, ինչպես նաև ապաստարանների թեժ գիծ հեռախոսահամարները գործում են միայն ընտանիքում բռնության դեպքերի համար, իսկ Նախարարության ենթակայությամբ գործող «114» թեժ գիծ հեռախոսահամարը, ի թիվս սոցիալական ոլորտին առնչվող այլ հարցերի, արձագանքում է նաև ընտանիքում բռնության դեպքերով արձանագրված զանգերին:

Մինչդեռ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջում<sup>870</sup> «Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ծառայություններ տրամադրող կառույցները՝ ըստ մարզերի» ենթաբաժնում նշված աջակցության կենտրոնների հեռախոսահամարներ բաժնում նշված թեժ-գծի հեռախոսահամարներից կրկին պարզ չէ, թե արդյոք դրանք անձանց համար հասանելի են ու մատչելի, անվճար են, թե՛ ոչ և արդյոք շուրջօրյա են գործում:

Կարևորելով մարզերում գոնե մեկական աջակցության կենտրոնների հիմնադրումն ու գործող աջակցության կենտրոնների թեժ-գիծ ծառայության համար հատուկ հեռախոսահամարների առանձնացումը՝ այնուամենայնիվ, պետք է ընդգծել, որ բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանությունը կարող է երաշխավորվել միայն թեժ-գիծ ծառայության հասանելիություն ու դրա անվճար լինելը ամբողջությամբ ապահովելու պարագայում: Այս նպատակի իրագործման հարցում մեծ դերակատարում կարող է ունենալ նաև մատուցվող ծառայության մասին իրազեկման աշխատանքների իրականացումը:

Այս առումով, որպես դրական միտում կարելի է համարել, որ ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2021 թվականի ընթացքում նախարարությունը միացել է «Բռնությունը լռության մեջ է» տեղեկատվական արշավին, որի շրջանակներում իրականացված տարբեր իրազեկման միջոցառումներով հանրությանն է ներկայացվել աջակցության կենտրոնների գործունեության, այդ թվում թեժ գծերի վերաբերյալ տեղեկատվությունը:

<sup>869</sup> Աջակցության կենտրոնների թեժ գծերի վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Նախարարության պաշտոնական կայքէջում՝ հետևյալ հղումով՝ [https://www.mlsa.am/?page\\_id=19928/](https://www.mlsa.am/?page_id=19928/), 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>870</sup> Տե՛ս նույն տեղում:

Պաշտպանին ուղղված բողոքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ոլորտում առկա է մեկ այլ խնդիր, որը կապված է իրավակիրառ պրակտիկայում իրավասու մարմինների միջև համագործակցության հետ: Այսպես, չնայած նրան, որ ընտանիքում բռնության ենթադրյալ դեպքերի կապակցությամբ նյութերի նախապատրաստության փուլում ՀՀ ոստիկանության ծառայողների և ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների միջև համագործակցության իրականացման հետ կապված հարցերը կարգավորվում են ՀՀ ոստիկանության պետի հրամանով՝ այնուամենայնիվ, իրավակիրառ պրակտիկայում այդ համագործակցության հետ կապված խնդիրներ են առաջանում:

Կայուն ու անխափան համագործակցությունը խիստ կարևոր նշանակություն ունի տուժողին ճիշտ ուղղորդման, վերջինիս աջակցությանն ուղղված այլ գործողությունների իրականացման, այդ թվում՝ տուժողների կարիքներին համապատասխան ու զոհակենտրոն մասնագիտական օգնության տրամադրման համար: Պաշտպանին ներկայացված բողոքների քննությունը վեր է հանել դեպքեր, երբ պետական մարմինների միջև արդյունավետ համագործակցության բացակայությունը և համակարգի անկատարությունը հանգեցրել են օրենքով ամրագրված միջոցների օգտագործմամբ աջակցություն ցուցաբերելու անհնարինության:

Ընտանիքում բռնությունից տուժած անձանց կյանքի և առողջության պահպանմանն ուղղված Հայաստանի Հանրապետությունը պոզիտիվ պարտականություն է ստանձնել միջազգային և ներպետական իրավական կարգավորումների ուժով: ՀՀ օրենսդրությամբ ու միջազգային չափանիշներով ամրագրվում են բռնության ենթարկված անձանց պաշտպանության առաջնահերթության չափանիշներ ու բազմամասնագիտական աջակցության տրամադրման սկզբունքներ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Կոնվենցիայի<sup>871</sup> 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն օրենսդրական և այլ բնույթի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ցուցաբերելու պատշաճ ջանասիրություն պետության անունից հանդես չեկող անձանց կողմից կատարվող բռնության այն արարքները կանխելու, դրանց նկատմամբ քննություն իրականացնելու, պատասխանատվության ենթարկելու և հատուցում ապահովելու ուղղությամբ, որոնք մտնում են Կոնվենցիայի գործողության շրջանակների մեջ: Ավելին, ըստ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի՝ մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ բռնության ենթարկված անձի իրավունքները դիտարկվեն որպես բոլոր միջոցների կենտրոնում գտնվող և իրականացվեն բոլոր շահագրգիռ գերատեսչությունների, ինստիտուտների և կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության միջոցով: Սույն հոդվածի ներքո ձեռնարկված բոլոր միջոցառումները պետք է ընդգրկեն բոլոր շահագրգիռ դերակատարներին, ինչպիսիք են՝ պետական, համապետական,

<sup>871</sup> Հայաստանի կողմից Կոնվենցիան ստորագրվել է 2018 թվականի հունվարի 18-ին, սակայն դեռ չի վավերացվել:

տարածքային և տեղական մարմինները, մարդու իրավունքների ազգային ինստիտուտները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Կոնվենցիայի 19-րդ հոդվածի համաձայն՝ պետությունները պետք է ապահովեն օրենսդրական և անհրաժեշտ այլ միջոցները տուժողներին հասանելի աջակցության և իրավական պաշտպանության միջոցների մասին իրենց համար հասկանալի լեզվով ժամանակին պատշաճ տեղեկատվություն տրամադրելու համար:

«Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարականով<sup>872</sup> նշվում է, որ պետությունները պետք է ցուցաբերեն պատշաճ ջանասիրություն, որպեսզի կանխվի, քննություն իրականացվի և պատասխանատվություն կիրառվի բռնություն գործադրած անձանց նկատմամբ: Նույն հանձնարարականի 3-րդ կետով նախատեսվում է բռնության դեմ պայքարի քաղաքականություն մշակելիս բռնության ենթարկված անձանց անվտանգությունը հիմք ընդունելու պետությունների պարտականությունը: Ըստ նույն հանձնարարականի 58-րդ կետի «դ» ենթակետի՝ անդամ պետությունները պետք է քաջալերեն բռնությունից տուժած անձանց պաշտպանության նախաձեռնող (pro-active) ծառայություններ, որոնց շնորհիվ բռնությունից տուժած անձանց հետ կապ կհաստատվի անմիջապես ոստիկանությանը դեպքի մասին հայտնի դառնալու պահից: Նույն կետի «ե» ենթակետի համաձայն՝ անդամ պետությունները պետք է ապահովեն արդյունավետ համագործակցություն բոլոր իրավասու մարմինների միջև, ինչպիսիք են՝ ոստիկանությունը, դատարանները և բռնությունից տուժած անձանց պաշտպանության ծառայությունները, որպեսզի տուժողներին հնարավորություն ընձեռվի կիրառելու աջակցություն ստանալու համար անհրաժեշտ բոլոր հնարավոր իրավական և գործնական քայլերը:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանություն իրականացնող իրավասու պետական մարմինների շարքում է նաև ՀՀ ոստիկանությունը: Ընդ որում՝ նույն հոդվածի 2-րդ մասով ամրագրվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների իրենց լիազորությունների շրջանակներում ընտանիքում բռնության դեմ պայքարին աջակցելու ու այդ բնագավառում լիազոր մարմնի հետ համագործակցելու պարտականությունը<sup>873</sup>: Այսինքն, իրավական կարգավորումներից ստացվում է, որ ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար բազմամասնագիտական աջակցության ցուցաբերումն օրենսդրական պահանջ է:

<sup>872</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Բռնությունից կանանց պաշտպանության մասին» Նախարարների կոմիտեի թիվ (2002)5 հանձնարարական, հասանելի է [https://search.coe.int/cm/Pages/result\\_details.aspx?ObjectID=09000016805e2612](https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=09000016805e2612) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>873</sup> Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ լիազոր մարմինն է սոցիալական հարցերի ոլորտում լիազոր հանրապետական գործադիր մարմինը:

Վերոշարադրյալով պայմանավորված՝ Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանության լիազորությունները: Նույն հոդվածի համաձայն՝ այդ լիազորությունների շրջանակներում ոստիկանությունը պարզաբանում է ընտանիքում բռնության ենթարկված լինելու մասին հաղորդմամբ դիմած անձանց իրենց իրավունքների ու հասանելի ծառայություններից օգտվելու հնարավորությունների մասին, կիրառում է Օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներ<sup>874</sup>:

Միաժամանակ, Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանության միջոցները կիրառվում են՝ առաջնորդվելով Օրենքով սահմանված սկզբունքներով և ապահովելով միջամտության համաչափությունը: Ավելին, նույն մասի համաձայն դրանց կիրառումը չի խոչընդոտում օրենքով սահմանված կարգով քրեական գործ հարուցելուն և քրեական հետապնդում իրականացնելուն: Սրանից էլ բխում է, որ անձի պաշտպանությունը քրեական հետապնդում իրականացնելու հետ կապված չէ և առաջնային է բռնության ենթարկված անձի պաշտպանությունը:

Ընտանիքում բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար Օրենքով ամրագրվում են նաև այլ միջոցներ. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելումը և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանությունն իրենց գործառույթների շրջանակներում իրականացնում են նաև ընտանիքում բռնության ենթարկվածներին աջակցություն ցույց տվող հատուկ կառույցները, որոնք են՝ աջակցության կենտրոնները և ապաստարանները:

Դրա հետ մեկտեղ, ըստ Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ լիազոր մարմինը հանրության համար հասանելի կերպով պարբերաբար հրապարակում է կապի այն միջոցների ցանկը (ներառյալ՝ ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված անվճար «Թեժ գիծ» ծառայության հեռախոսահամարները, որոնք աջակցության կենտրոնները պարտավոր են ունենալ), որոնցով ընտանիքում բռնության ենթարկվածները, նրանց ընտանիքի անդամները և այլ անձինք կարող են անհապաղ կապվել աջակցության կենտրոնների աշխատողի կամ կենտրոնի կողմից ներգրավված համապատասխան մասնագետի հետ և ստանալ անհրաժեշտ անհատույց, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում նաև նրանց համար մատչելի օգնություն:

Օրենքով ամրագրվել են նաև այլ հստակ կարգավորումներ պաշտպանության համար առկա բոլոր մեխանիզմների կիրառման նպատակով: Այսպես, օրինակ՝ Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում ոստիկանությունը սույն օրենքով

<sup>874</sup> Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցներն են՝ նախագգուշացումը, անհետաձգելի միջամտության որոշումը, որոնք կիրառվում են ՀՀ ոստիկանության կողմից, ինչպես նաև պաշտպանական որոշումը, որը կիրառվում է դատարանի որոշման հիման վրա:

նախատեսված դեպքերում և կարգով որոշում է կայացնում ընտանիքում բռնության ենթարկվածներին ապաստարանում տեղավորելու մասին: Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկվածներն իրենց դիմումի դեպքում կարող են ապաստարանում տեղավորվել, եթե առկա է բռնության կրկնման կամ շարունակման վտանգի վերաբերյալ հիմնավոր ենթադրություն:

Ուրեմն, ստացվում է, որ Օրենքը նախատեսում է ընտանիքում բռնության ենթարկված անձի պաշտպանության համակարգ, որի արդյունավետ գործարկումը հնարավոր է միայն ու բացառապես դրանց փաստացի գործարկման (օրինակ՝ աջակցության կենտրոնների և ապաստարանների հիմնադրման) ու իրավասու մարմինների միջև համագործակցության գործուն մեխանիզմների առկայության պարագայում: Այս առումով, հատկանշական է, որ Օրենքի 2-րդ հոդվածով ամրագրվում են ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության սկզբունքները, որոնցից է համագործակցությունը պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիական հասարակության միջև համագործակցության սկզբունքներով: Այսինքն, Օրենքն ամրագրում է հնարավորություն, որ պետական աջակցության տրամադրման անհնարինության դեպքերում, այն պետք է իրականացվի նաև ոլորտում մասնագիտացված և ծառայություններ մատուցող հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ:

Վերոշարադրյալի ամփոփմամբ՝ կարելի է պնդել, որ Օրենքով հստակ նախատեսվում է պաշտպանության կարիք ունեցող անձանց պաշտպանության գործիքակազմ, նշվածի շրջանակներում գործիքներից մեկի բացակայությունը կամ չկիրառումը քայքայում է բռնության ենթարկված անձանց պաշտպանության համակարգը՝ վտանգի ենթարկելով անձի կյանքն ու առողջությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ընտանեկան բռնության դեմ պայքարում միջգերատեսչական համագործակցության վերաբերյալ հարցումներ են արվել իրավասու մարմիններին: Այսպես, ըստ Դատախազության պարզաբանումների՝ 2021 թվականի ընթացքում այլ պետական մարմինների հետ տեղեկատվության փոխանակման, բռնության դեպքերին արձագանքելիս բազմամասնագիտական աջակցության տրամադրման ապահովման շրջանակներում դատախազության ներկայացուցիչները մասնակցել են բազմամասնագիտական ձևաչափով սեմինարների, քննարկումների, իրավասու պետական մարմիններին միջնորդագրեր և գրություններ են հասցեագրվել՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության միջոցները օրենսդրական պահանջներին համապատասխան կիրառելու, ընտանեկան բռնության դեպքերը նախականիսելու, կանխելու, անհաշտ ընտանիքներին հաշվառելու և այս միջոցառումների շրջանակներում համապատասխան շահագրգիռ կառույցների հետ առավել արդյունավետ համագործակցություն իրականացնելու ուղղությամբ:

Ըստ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ իրավասու պետական մարմինների հետ տեղեկատվության փոխանակման նպատակով և բռնության դեպքերին

արձագանքելիս բազմամասնագիտական աջակցության տրամադրման ապահովման ուղղությամբ՝ նախարարությունը պարբերաբար կազմակերպել է աշխատանքային քննարկումներ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների աշխատակիցների, հասարակական և միջազգային կազմակերպությունների, ոլորտի փորձագետների և շահագրգիռ ոլորտային այլ գերատեսչությունների աշխատակիցների մասնակցությամբ, Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի նիստերին քննարկվել են գործնականում հանդիպող մի շարք խնդիրներ, որոնք կապված են եղել որևէ գերատեսչության աշխատանքների հետ, որից հետո հասցեականորեն իրականացվել են խնդրի լուծման ուղղված աշխատանքներ: Բացի այդ, ընտանիքում բռնության ենթարկված անձանց ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացն օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովելու համար՝ Խորհրդի կազմում ընդգրկված անդամներից ձևավորվել է նաև բազմամասնագիտական խումբ, որի շրջանակում քննարկվել են շահառուների կողմից ներկայացված դիմումները՝ ֆինանսական աջակցություն ստանալու համար:

Ոստիկանության պարզաբանման համաձայն՝ 2021թ. ընթացքում ընտանիքում բռնության կանխարգելման ոլորտում իրականացվող աշխատանքների շրջանակներում ՀՀ ոստիկանությունը համագործակցել է ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ոլորտում գործառույթներ իրականացնող պետական շահագրգիռ կառույցների հետ: Ընտանիքում բռնության ենթարկված անձանց համապատասխան աջակցություն տրամադրելու նպատակով համագործակցել է մարզպետարանների, տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական աջակցության տարածքային մարմինների, ընտանիքում բռնության դեպքերով տուժած անձանց աջակցություն ցուցաբերող հասարակական կազմակերպությունների հետ:

Ըստ ՀՀ ոստիկանության՝ ընտանիքում բռնության դեպքերով անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների ծառայողները սերտ համագործակցում են ոստիկանության մյուս ծառայությունների հետ: Ընտանիքում բռնության դեպքերով, ոստիկանության ծառայողները, նյութերի նախապատրաստման ընթացքում, համագործակցում են մասնագիտացված ստորաբաժանման ծառայողների հետ, ովքեր իրավական և մասնագիտական օգնություն են ցուցաբերում նյութեր նախապատրաստող ծառայողին: Միաժամանակ, վերջիններս անհրաժեշտության դեպքում նրանց տրամադրում են տեղեկություններ գործող այն կառույցների և կազմակերպությունների մասին, որոնք մասնագիտական աջակցություն և ծառայություններ են մատուցում ընտանիքում բռնության ենթարկվածներին: Հարկ է նշել, որ ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կողմից ընտանիքում բռնության դեպքերի արձագանքման և բռնության ենթարկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հանցագործությունների և պատահարների մասին հաղորդում կամ տեղեկություն ստանալու դեպքում, եթե դրանք պարունակում են ընտանիքում բռնության հատկանիշներ, դեպքի վայր մեկնող օպերատիվ խմբի կազմում ներգրավում են ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքի ծառայողին:

Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթների իրականացման շրջանակներում 2021 թվականի ընթացքում, համաձայն «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու մասին» կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշմամբ հաստատված կարգի, իրականացվել է վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից հաշվառում, անձնական թերթիկների լրացում, տեղեկատվությունը, ըստ պահանջվող ձևաչափի, փոխանցվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն: 2021 թվականի ընթացքում Երևան քաղաքի 12 վարչական շրջաններից ստացված տեղեկատվության համաձայն Երևան քաղաքում գրանցվել է 1-17 տարեկան երեխաների նկատմամբ ծնողների, խնամատարների, օրինական ներկայացուցիչների կամ այլ անձանց կողմից ֆիզիկական պատժի և /կամ/ հոգեբանական ազդեցության, սեռական բնույթի բռնության 10 դեպք: Բոլոր դեպքերով, ոստիկանության հետ համատեղ, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից իրականացվել են աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում, երեխաները տեղափոխվել են ժամանակավոր կացարան, ոստիկանության կողմից կայացվել է անհետաձգելի միջամտության մասին որոշում կամ ուղղորդվել են համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

2021 թվականի ընթացքում շարունակել է առկա լինել ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող գործողությունների ծրագրի բացակայության հարցը: Այս առումով, որպես դրական քայլ կարելի է համարել նշված ռազմավարության ու գործողությունների ծրագրի նախագծի մշակումը (Ռազմավարության նախագիծ): Ռազմավարության նախագծի գերակա ուղղություններից մեկը ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինների միջև համագործակցության ամրապնդումն ու բազմամասնագիտական արձագանքման հիմնումն է: Նախագծում ամրագրվում է այս ուղղությամբ լրացուցիչ ջանքեր ներդնելու անհրաժեշտությունը: Ի թիվս այլնի, սրա շրջանակներում նախատեսվում է կատարելագործել և ամրապնդել համագործակցությունը ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների աշխատակիցների և Ոստիկանության՝ ընտանիքում բռնության դեմ պայքարի տարածքային մասնագիտացված ստորաբաժանումներ միջև: Այս համատեքստում նախատեսվում է ձեռնարկել ոլորտում պրակտիկայի ներդաշնակեցմանը և համակարգմանը նպաստող քայլեր՝ այդ թվում ոստիկանից և սոցիալական աշխատողից բաղկացած մոբիլ խմբերի կիրառումը:

Ներկայում գործում է ՀՀ կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում զենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1334-Լ որոշումը, որը,

սակայն, ընտանիքում բռնության հիմնախնդիրները չի ներառում՝ ելնելով նրանից, որ այդ հիմնախնդիրները հասցեագրվեն առանձին ռազմավարությամբ:

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալներ համաձայն՝ Ռազմավարություն նախատեսվում է ընդունել 2022 թվականին: Ասվածի հետ մեկտեղ, պետք է նշել, որ ոլորտի խնդիրները 2021 թվականի ընթացքում արդիական են եղել և շարունակում են արդիական մնալ:

Ընտանեկան բռնությունից տուժած անձանց իրավունքների համալիր պաշտպանության տեսանկյունից կարևոր է դիտարկել նաև այդ անձանց ֆինանսական աջակցության տրամադրման հետ կապված խնդիրները:

Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ ընտանիքում բռնության ենթարկվածներին ժամանակավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության բնագավառում լիազոր մարմինը բացում է ընտանիքում բռնության ենթարկվածների աջակցության հաշվեհամար և տնօրինում այն՝ կառավարության սահմանած կարգով:

Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր ֆինանսական աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը, ընտանիքում բռնության ենթարկվածներին ֆինանսական աջակցություն տրամադրելու դեպքերը և հատկացվող գումարի չափն ու ֆինանսական աջակցության տրամադրումը սահմանվում է «Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցության հաշվեհամարի տնօրինման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 333-Ն որոշման 1-ին հավելվածով:

Ըստ «Ընտանիքում բռնության կանխարգելման խորհուրդ ստեղծելու, խորհրդի ձևավորման կարգը և գործառույթները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2018 թվականի հուլիսի 10 N 786-Ն որոշման 23-րդ կետի՝ բազմամասնագիտական խումբը քննարկում է ընտանիքում բռնության ենթարկված անձանց ֆինանսական աջակցության տրամադրման առաջարկները և խորհրդի նախագահին է ներկայացնում եզրակացություն դրա տրամադրման վերաբերյալ: Նույն որոշման 24-րդ կետի համաձայն՝ խորհուրդն իր աշխատանքներն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով կարող է ձևավորել աշխատանքային խմբեր, որոնց կազմում կարող են ընդգրկվել խորհրդի անդամ չհանդիսացող այլ մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

Աշխատանքի և սոցիալական հարցերի տեղեկություններով՝ Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդի աշխատանքները կազմակերպվում են նիստերի միջոցով, որոնք 2021 թվականի ընթացքում գումարվել են յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ: Հրավիրված նիստերի ընթացքում քննարկվել են նաև ընտանիքում բռնության ենթարկված անձանց ֆինանսական աջակցության տրամադրման մեխանիզմներին վերաբերելի գործնական խնդիրները: Ընտանիքում բռնության ենթարկված անձանց ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացն օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվելու համար՝ Խորհրդի կազմում ընդգրկված



անդամներից ձևավորվել է նաև բազմամասնագիտական խումբ, որի շրջանակում քննարկվել են շահառուների կողմից ներկայացված դիմումները՝ ֆինանսական աջակցություն ստանալու համար:

Չնայած ոլորտի բարելավմանն ուղղված ձեռնարկված որոշ քայլերին՝ ընտանիքում բռնության ոլորտում անհրաժեշտ է առավել համապարփակ քաղաքականության ամրագրումը, որի արդյունքում լիարժեք կիրառործվի բազմամասնագիտական աջակցություն տրամադրելու ինստիտուտը:

4) Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ ճշգրիտ վիճակագրական տվյալների բացակայություն

Ընտանիքում բռնության վիճակագրական ճշգրիտ համակարգված տվյալների բացակայության խնդիրը շարունակաբար բարձրացվում է Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում: Այս խնդիրը շարունակել է արդի լինել նաև 2021 թվականի ընթացքում:

Ընտանեկան բռնության վերաբերյալ առկա տեղեկությունները և վիճակագրական ցուցանիշները բռնության իրավիճակի իրական պատկերը ամբողջությամբ չեն արտացոլում, որովհետև Հայաստանում դեռևս չի վարվում ընտանիքում բռնության դեպքերի միասնական վիճակագրություն: Ասվածի մասին են վկայում նաև պետական իրավասու մարմինների, հասարակական և միջազգային կազմակերպություններ<sup>875</sup> արձանագրումները:

Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում իրականացնելու լիազոր մարմնի պարտականությունը սահմանվում է Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: Մասնավորապես նույն դրույթի համաձայն՝ «Հայաստանի և սոցիալական հարցերի նախարարությունը՝ որպես լիազոր մարմին իրականացնում է ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառում՝ կառավարության որոշմամբ սահմանված կարգով, ինչպես նաև այդ վիճակագրության ամենամյա հրապարակում իր պաշտոնական կայքում:

Օրենսդրական ուղիղ պահանջի առկայության հետ մեկտեղ, 2017 թվականից (օրենքի ընդունումից) ի վեր միասնական վիճակագրություն չի իրականացվել: Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են ՀՀ կառավարության «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշմամբ, որն ընդունվել է 2019 թվականի հոկտեմբերի 10-ին: Նշված կառավարության որոշումը դեռևս գործնական կիրառություն չի ստացել և միասնական վիճակագրական տվյալները չեն ամփոփվել և ներկայացվել լիազոր մարմնի կողմից:

875 Այս մասին նշվել է նաև «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» ՄԱԿ-ի կոմիտեի կողմից, Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետ 37:

«Կառավարության «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը սահմանելու մասին» 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի համաձայն՝ տեղեկատվության հավաքագրումը սկսվում է նույն որոշումն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո և առաջին անգամ տրամադրվում է տեղեկատվության հավաքագրման մեկնարկից վեց ամիս անց: Դրանից հետո տեղեկատվությունը տրամադրվում է առնվազն յուրաքանչյուր կիսամյակ՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը: Լիազոր մարմինը տեղեկատվությունը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում ամփոփում է այն և հրապարակում:

Ըստ որոշման հավելվածի 12-րդ կետի՝ լիազոր մարմինը յուրաքանչյուր կիսամյակ տեղեկությունները ստանալուց և ամփոփելուց հետո՝ իր պաշտոնական կայքում հրապարակում է նույն հավելվածի 5-րդ կետով սահմանված ժամանակահատվածի վիճակագրական հաշվետվությունն ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ՝ համաձայն հավելվածի Թերթիկ N 4-ի:

Միասնական վիճակագրության բացակայության ու դրա վարման անհրաժեշտության մասին է վկայում Ռազմավարության նախագծի բովանդակությունը: Մասնավորապես Ռազմավարության նախագծի Հավելված N 1-ի 20.2.4 կետի համաձայն՝ «Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշմամբ սահմանված կարգը չափազանց խրթին է և չի ապահովում բոլոր պատկան մարմինների կողմից տվյալների ստանդարտացված հավաքագրում: Ուստի, առաջարկվում է ներդնել միասնական էլեկտրոնային հարթակ՝ տվյալների հավաքագրումը առավել պարզ, արդյունավետ դարձնելու նպատակով: Նշվածով պայմանավորված Ռազմավարության նախագծի Հավելված N 2-ի 2-րդ կետով որպես միջոցառում նախատեսվում է բարեփոխել նշված որոշումը՝ նպատակ ունենալով միատեղել բռնության դեպքերին վերաբերելի տվյալները շահագրգիռ մարմինների կողմից, ներդնել արդյունավետ էլեկտրոնային համակարգ և ապահովել անձնական տվյալների պաշտպանությունը:

2021 թվականի ընթացքում վիճակագրական ճշգրիտ համակարգված տվյալների կենտրոնացված հաշվառում չի իրականացվել, ինչի մասին են վկայում «Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման համաձայն՝ նախարարությունը թղթային տարբերակով պետք է ապահովի ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման գործընթացը: Մինչդեռ, հաշվետու ժամանակահատվածում կենտրոնացված հաշվառման գործընթացն ապահովելու համար՝ գործնական կիրառության ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ նույն որոշմամբ սահմանված կարգով ոլորտային պատասխանատու գերատեսչություններից ոչ բոլորն են պատշաճ, սահմանված չափորոշիչներին համապատասխան ներկայացրել պահանջվող տեղեկատվությունը: Բացի այդ, ներկայացված թերթիկներում պահանջվող տվյալներն ամբողջապես լրացված չեն եղել, շրջանառվել են այնպիսի տվյալներ, որոնք բավարար չեն եղել հաշվետվության ամբողջականությունն ապահովելու տեսանկյունից: Ինչպես նաև առկա թղթային

համակարգով տվյալների ներկայացումը հնարավորություն չի տալիս հետևելու յուրաքանչյուր հաղորդման ընթացքին և գործի ելքին արդարադատության համակարգում, ինչն անհրաժեշտ է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության և պատասխանատվության անխուսափելիության գնահատման տեսանկյունից:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ ներկայում, էլեկտրոնային հարթակի բացակայության պայմաններում պատասխանատու մարմինները համապատասխան տվյալները նախարարություն են ներկայացնում թղթային տարբերակով և առանց մշակման, ինչը չափազանց բարդացնում և ժամանակատար է դարձնում տվյալների ամփոփումը և վերլուծությունը: Այդ պատճառով հաշվետու ժամանակահատվածում հնարավոր չի եղել պատշաճ ամփոփել և հրապարակել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառմանն առնչվող տեղեկությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկություններով՝ վերոգրյալ և այլ խնդիրները հաշվի առնելով՝ որոշում է կայացվել ընդունել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառմանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգող նոր իրավական ակտ՝ հիմնված ժամանակակից լավագույն փորձի և միջազգային չափանիշների վրա, ինչպես նաև հաշվի առնելով գործնականում ծառայած խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու անհրաժեշտությունը: Ըստ այդմ, նախարարությունը 2021 թվականին մշակել է «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1381-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը քննարկման առարկա է դարձել Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդում, ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություններին, այնուհետև ամփոփվել և ներկայացվել է փորձագիտական եզրակացության, որից հետո, առաջիկայում նախատեսվում է ամփոփել ու ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ: Նախատեսվող նոր կարգով, ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումն իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով, որտեղ շահագրգիռ յուրաքանչյուր մարմին լրացնելու է բռնության ենթարկված անձի տվյալները՝ ներառյալ ընտանիքում բռնության ենթարկված անձի հաշմանդամությունը փաստող տվյալները:

Միաժամանակ, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ 2021 թվականի ընթացքում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կողմից արդեն իսկ մշակվել է նախատեսվող էլեկտրոնային համակարգը, համակարգի մշակման ամբողջ գործընթացում ներգրավված են եղել ոլորտային բոլոր գերատեսչությունների պատասխանատու աշխատակիցները, հասարակական կառույցների ներկայացուցիչները և ՏՏ համակարգի որակավորված մասնագետները: Նոր մշակված նախագծի ընդունումից հետո՝ 2022 թվականից հնարավոր կլինի գործարկել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման

էլեկտրոնային համակարգը և վարել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումը:

Ներկայացվածի հետ մեկտեղ, ընտանիքում բռնության առանձնահատկություններից է դրա լատենտայնությունը. ընտանիքում բռնության վերաբերյալ տվյալներն ու վիճակագրական ցուցանիշները բռնության իրավիճակի իրական պատկերն ամբողջությամբ չեն արտացոլում: Վիճակագրական տվյալների ճշգրտությունը կախված է նաև այլ գործոններից՝ օրինակ՝ հասարակական ընկալում, թե ընտանիքում բռնության դեպքերը մասնավոր բնույթ ունեն և ամոթալի է դրա մասին բարձրաձայնելը: Հասարակության շատ անդամներ խուսափում են բռնության՝ իրենց հայտնի դեպքերի վերաբերյալ հաղորդում ներկայացնելուց:

Այսպես, օրինակ, Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մի շարք բողոքներ արտացոլում են հասարակական այն ընկալումները, որոնք խոչընդոտում են ընտանիքում բռնության վերաբերյալ իրական ու ճշգրիտ պատկեր կազմելուն: Պաշտպանին ուղղված բողոքներով վեր են հանվել դեպքեր, երբ բողոք ներկայացրած անձը չի դիմել Ոստիկանություն՝ վախենալով բռնություն գործադրած անձի կողմից հետագայում նոր բռնության ենթարկվելուց, կամ գրանցվել են դեպքեր, երբ քրեական վարույթի հարուցումը մերժվել է հանցակազմի բացակայություն հիմքով, ինչն էլ պայմանավորված է եղել բռնության ենթարկված անձի՝ իրավասու մարմինների հետ համագործակցության բացակայությամբ՝ ելնելով նրանից, որ բռնություն գործադրած անձն ընտանիքի անդամ է: Դեպքեր են գրանցվում նաև, երբ ընտանիքում բռնության դեպքով բռնության ենթարկված անձը չի դիմում իրավապահ մարմիններին՝ վերջիններիս նկատմամբ ունեցած անվստահության պատճառաբանությամբ: Այս օրինակները ևս մեկ անգամ հաստատում են ընտանիքում բռնությանը բնորոշ հատկանիշները, ինչով կարող է պայմանավորվել ընտանիքում բռնության վիճակագրական պատկերը:

Բայց և այնպես, առկա վիճակագրական տվյալները փաստում են ընտանիքում բռնության երևույթի առկայության մասին: Իրավասու մարմինների կողմից տրամադրված տվյալներից ստացվում է, որ ընտանիքում բռնության թիրախում են հիմնականում կանայք:

ՀՀ ոստիկանության տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում քննվել է ընտանիքում բռնության 472 դեպք, որից 310-ը՝ ամուսնու կողմից կնոջ նկատմամբ, 8-ը՝ կնոջ կողմից ամուսնու նկատմամբ, 44-ը՝ ծնողի կողմից զավակի նկատմամբ, 53-ը՝ զավակի կողմից ծնողի նկատմամբ, 57-ը՝ ընտանիքի այլ անդամների կողմից,:

2021 թվականի ընթացքում քննված ընտանիքում բռնության 472 դեպքից 444-ը ֆիզիկական բնույթի բռնության, 27-ը՝ հոգեբանական, 1-ը՝ տնտեսական դեպքեր են: Ինչ վերաբերում է բռնության ենթարկված անձանց տարիքին, ապա, ըստ ՀՀ ոստիկանության, ՀՀ ոստիկանության Ինֆորմացիոն կենտրոնում ընտանիքում բռնության ենթարկված անձանց հաշվառում ըստ տարիքի չի արվում:

ՀՀ ոստիկանության պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում քննվել է ընտանիքում բռնության 472 դեպք, որից 101-ով հարուցվել են քրեական գործեր (21-ն ուղարկվել է

դատարան, 80-ը կարճվել է), 371-ով քրեական գործ հարուցելը մերժվել է (368-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 1-ը՝ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 1-ը՝ նույն օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, 1-ը՝ նույն օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով):

ՀՀ ոստիկանությունից ստացված տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Ոստիկանությունում ստացված ընտանիքում բռնության վերաբերյալ ահազանգերով ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանման ծառայողները 528 ահազանգով կայացրել են նախազգուշացում, իսկ 544-ով՝ անհետաձգելի միջամտության որոշում: Բռնություն գործադրած անձի նկատմամբ կայացված 528 նախազգուշացման որոշումից 20-ի դեպքում բռնությունը կրել է շարունակական բնույթ: Նշված բոլոր դեպքերով բռնություն գործադրած անձանց նկատմամբ հաշվառումը շարունակվել է: Կայացված 1072 պաշտպանության միջոցներից խախտվել է 63-ը, որից 46-ի խախտման մասին ոստիկանությանը հայտնել է ընտանիքում բռնության ենթարկված անձը, իսկ 17-ը հայտնաբերվել է ոստիկանության ծառայողի կողմից: Կայացված 1072 պաշտպանության միջոցներից (նախազգուշացում, անհետաձգելի միջամտության որոշում) վերադասության կարգով բողոքարկվել է 8-ը, որից 4-ը թողնվել է անփոփոխ, 3-ով վարչական վարույթ չի հարուցվել (օրենքով սահմանված բողոքարկման ժամկետը բաց է թողնվել), 1-ը ընթացքի մեջ է:

Ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ 2021 թվականի ընթացքում հարուցվել է 396 քրեական գործ, որից 8-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 106-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 109-րդ հոդվածով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 111-րդ հոդվածով, 9-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածով, 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածով, 29-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, 204-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, 23-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 121-րդ հոդվածով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 118-րդ հոդվածով, 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 133-րդ հոդվածով, 29-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-138-րդ հոդվածով, որը վերաորակել է 118 հոդվածով, 5-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 141-րդ հոդվածով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 142-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 147-րդ հոդվածով, 10-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածով, 14-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 173-րդ հոդվածով, 2-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով, 30-ը՝ 353.1-րդ հոդվածով: 6 քրեական գործ հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ, 167.1-րդ և 353.1-րդ հոդվածներով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 132.2-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 118-րդ հոդվածով, 119-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով:

Քննչական կոմիտեի տվյալներով՝ նշված քրեական գործերից 99-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 3-ը՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու, 169-ով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կարճելու մասին, որից 92-ը՝ արդարացնող, 77-ը՝ ոչ արդարացնող հիմքով: 21 քրեական գործով որոշում է կայացվել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին, որից 10-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, 11-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով, 32 քրեական գործ միացվել է այլ քրեական գործերի և 72 քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ դատախազության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում արձանագրված ընտանեկան բռնության դեպքերի առթիվ հարուցվել է 101 քրեական գործ, որից 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով, որից 2-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 4-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 6-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 76-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով, որից 11-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 55-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 9-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 1-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով (գործուն զղջալ), 7-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով, որից 3-ը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել է դատարան, 3-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 1-ով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածով, որով վարույթը կարճվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 353.1 հոդվածով, որոնք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 277-րդ հոդվածով սահմանված կարգով ուղարկվել են դատարան:

Քրեական գործերի քննության վերաբերյալ վերոնշյալ տվյալների ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրակացնել, որ.

- քրեական գործերի գերակշռող մեծամասնությունը ֆիզիկական բռնության դրսևորումներին է վերաբերում. 2021 թվականի ընթացքում ֆիզիկական բռնության դեպքերը կազմել են ընտանեկան բռնության դեպքերի շուրջ 94%-ը: Նշվածի հիմքում ընկած են և՛ հասարակական այն ընկալումները,

թե տուժողի՝ իրավապահ մարմինների աջակցությանը դիմելը ֆիզիկական բռնության դեպքում կարելի է արդարացնել, և՛ քրեաիրավական համարժեք արձագանք ապահովող օրենսդրական հիմքերի բացակայությունը ընտանեկան բռնության այլ տեսակների դեպքում,

- քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումների տեսակարար կշիռը բավական մեծ է՝ հաշվի առնելով ներկայացված հաղորդումների ընդհանուր քանակը. 2021 թվականի ընթացքում 472 դեպքից 371 դեպքով քրեական գործի հարուցումը մերժվել է, ինչը կազմում է ընդհանուր դեպքերի մոտ 79%-ը,

- ընդ որում՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումները (371 դեպքում) շուրջ 99,1% դեպքերում<sup>876</sup> (368 դեպքում) կայացվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով՝ դիմողի բողոքի բացակայության հիմքով,

Ներկայացվածից բացի, շատ կարևոր է այն արձանագրումը, որ ընտանեկան բռնության գործերով քրեական վարույթների ընթացքին վերաբերող քանակական այս տվյալներն ինքնին չեն բացահայտում ընտանեկան բռնություն երևույթի պատճառներն ու նպաստող պայմանները, դրա սոցիալ-հոգեբանական ասպեկտները, դրսևորման օրինաչափ եղանակները: Ասվածը վկայում է միասնական և համապարփակ վիճակագրության վարման անհրաժեշտության մասին, որը ոչ միայն կներառի ոլորտում պետական մարմինների գործունեության քանակական կողմը, այլև հնարավորություն կտա նախանշելու ընտանեկան բռնության երևույթի ընդհանուր և հատուկ կանխարգելման ուղղված միջոցառումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

- փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ այն համապատասխանեցնելով կանանց նկատմամբ բռնության և ընտանիքում բռնության վերաբերյալ միջազգային չափանիշներին, մասնավորապես նախատեսելով պատասխանատվության միջոցներ կանանց նկատմամբ և ընտանիքում բռնություն համարվող բոլոր արարքների համար,

- փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում՝ բացառելով տուժողի հակաբարոյական արարքը՝ որպես պատիժը մեղմացնող հանգամանք դիտարկելը,

- փոփոխություններ կատարել ՀՀ քրեական դատարավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 4-րդ մասում՝ այն համապատասխանեցնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի սահմանած չափանիշներին,

- փոփոխություններ կատարել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքում՝ վերացնելով բացերը և խնդրահարույց դրույթները,

- կազմակերպել համապատասխան մասնագետների (քննիչներ, դատախազներ, դատավորներ և այլն) պարտադիր և շարունակական դասընթացներ բռնության վերացման և դրա դեմ պայքարի ու կանխարգելման ՀՀ օրենսդրական կարգավորումների, ինչպես նաև միջազգային չափանիշների

<sup>876</sup> Առավել մեծ ցուցանիշ է 2020 թվականի համեմատությամբ:

վերաբերյալ, որոնք նաև ուղղված կլինեն կանանց նկատմամբ բռնության մասին կարծրատիպերի վերացմանը,

- բարձրացնել կանանց իրազեկվածությունն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության առկա մեխանիզմների վերաբերյալ,

- մշակել և իրականացնել իրազեկման բարձրացման ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ընտանիքում բռնության կանխարգելմանը,

- վարել ընտանիքում բռնության դեպքերի միասնական, կենտրոնացած ու համակարգված վիճակագրություն՝ ապահովելով ընտանիքում բռնության դեպքերին առնչվող տվյալների ճշգրիտ ու ամբողջական հաշվառումը,

- ընդունել պետական ռազմավարություն և դրան կից գործողությունների ծրագիր ընտանիքում բռնության կանխարգելման, դրա դեմ պայքարի և բռնությունից տուժած անձանց պաշտպանության համար:

## **2. Թրաֆիքինգ և շահագործում**

Մարդկանց թրաֆիքինգը ժամանակակից ստրկության զանգվածային երևույթ է, հանցագործություն, երբ միլիոնավոր մարդիկ զրկվում են իրենց հիմնական իրավունքներից և ազատությունից, մեծանում են առողջության պահպանության խնդիրները, խաբեությամբ և բռնության կիրառմամբ շահագործվում են՝ սեռական և աշխատանքային շահագործումից մինչև հանցագործության մեջ հարկադրաբար ներգրավումն ու օրգանների հեռացումը կամ շահութաբեր անօրինական այլ շահագործումը: Այն կործանարար հետևանքներ է առաջացնում թե՛ անհատի, թե՛ ընտանիքի և հասարակության վրա:

Թրաֆիքինգը կամ շահագործումը կանանց նկատմամբ բռնության ձևերից է: Բռնության այս տեսակի համար կանանց առավել խոցելի են դարձնում տարբեր գործոններ, որոնցից կարող են լինել տնտեսապես մեկ այլ անձից կախյալ լինելու հանգամանքը, տնտեսական կայունության բացակայությունը կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրները: Կանայք կարող են ենթարկվել սեռական շահագործման, հարկադիր աշխատանքների կատարման կամ թրաֆիքինգի այլ տեսակների:

COVID-19 համավարակը ինչպես այլ, այնպես էլ մարդկանց թրաֆիքինգի դեմ խախտումների պայքարում ևս ստեղծեց նոր մարտահրավերներ, որոնք աննախադեպ հետևանքներ ունեցան և ունեն մարդու իրավունքների ու համաշխարհային տնտեսական զարգացման վրա: COVID-19-ը ստեղծեց պայմաններ, որոնք ավելացրին մարդկանց թիվը, ովքեր խոցելի են մարդկանց նկատմամբ թրաֆիքինգի տեսանկյունից և խաթարեցին հակաթրաֆիքինգային ռազմավարությունների շրջանակներում իրականացվող ու պլանավորված գործողությունների ընթացքը: Աշխարհի պետությունների մեծ մասի կառավարությունները միջոցներն ուղղեցին դեպի



համավարակը, հաճախ նաև ի հաշիվ թրաֆիքինգի դեմ պայքարի ջանքերի, ինչը հանգեցրեց գոհերի պաշտպանության միջոցների և ծառայությունների մատուցման նվազեցմանը, կանխարգելիչ ջանքերի նվազեցմանը և թրաֆիքինգի դեմ արդյունավետ պայքարին խոչընդոտելուն:

Համաձայն ԱՄՆ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին 2021 թվականի զեկույցի՝ Հայաստանը մնացել է 2-րդ խմբի երկրների շարքում, քանի որ Հայաստանի կառավարությունը լիովին չի համապատասխանում թրաֆիքինգի վերացման նվազագույն չափանիշներին՝ չնայած զգալի ջանքերի գործադրմանը<sup>877</sup>:

Թրաֆիքինգի դեմ պայքարի շրջանակներում կարևոր է նշել, որ 2021 թվականի հուլիսի 30-ին մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի համաշխարհային օրվա կապակցությամբ Հայաստանը միացել է «Կապույտ սիրտ» արշավին: Դրանով երկիրը դարձել է արշավի 35 պետությունների համայնքի անդամ՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ համաշխարհային արշավին աջակցելու համար<sup>878</sup>: Որպես մարդկանց թրաֆիքինգի և հասարակության վրա դրա ազդեցության դեմ պայքարի իրազեկման համաշխարհային նախաձեռնություն՝ «Կապույտ սիրտ» արշավը ձգտում է խրախուսել կառավարություններին, քաղաքացիական հասարակությանը, մասնավոր կազմակերպություններին ու անհատներին՝ գործելու և օգնելու կանխել այս հանցագործությունը<sup>879</sup>:

ՀՀ ոստիկանության մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման դեմ պայքարի ուղղությամբ 2021 թվականին ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից իրականացված աշխատանքների մասին տեղեկանք-հաշվետվության համաձայն՝ 2021 թ. մինչ օրս ընկած ժամանակահատվածում մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման հատկանիշներով ՀՀ ոստիկանության կողմից հարուցվել է 7 քրեական գործ: Նշված քրեական գործերից 3-ը՝ աշխատանքային, 4-ը՝ սեռական շահագործման կապակցությամբ հարուցված գործեր են: Աշխատանքային շահագործման բոլոր դեպքերը ներքին շահագործման դեպքեր են, իսկ սեռական շահագործման դեպքերից 3-ը՝ ներքին, 1-ը՝ արտաքին շահագործման դեպք է: Աշխատանքային շահագործման կապակցությամբ հարուցված քրեական գործերով տուժող է ճանաչվել 3 անձ՝ 3-ն էլ արական սեռի ներկայացուցիչ, որոնցից 2-ը՝ անչափահաս: Սեռական շահագործման կապակցությամբ հարուցված քրեական գործերով տուժող է ճանաչվել 16 իգական սեռի ներկայացուցիչ, որից 1-ը՝ անչափահաս<sup>880</sup>:

Հարկ է նշել, որ գեներալային բռնության դեմ պայքարի ամենամյա միջազգային 16-օրյակի շրջանակում ՅՈՒՆԻՍԵՖ-ը և Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան 2021 թվականի

<sup>877</sup> ԱՄՆ Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին 2021 թվականի զեկույց, հասանելի է <https://www.state.gov/wp-content/uploads/2021/09/TIPR-GPA-upload-07222021.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>878</sup> Հասանելի է <https://www.unodc.org/unodc/frontpage/2021/August/armenia-joins-blue-heart-campaign-against-human-trafficking.html> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>879</sup> Տե՛ս՝ <https://www.unodc.org/blueheart/> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>880</sup> Հասանելի է՝ <http://antitrafficking.am/police-reports/> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

դեկտեմբերին ներկայացրեցին «SafeYOU» հավելվածի նորացված տարբերակը, որի միջոցով կանայք ու դեռահաս աղջիկները կարող են առցանց մասնագիտական խորհրդատվություն ստանալ և ահազանգել բռնության վերաբերյալ<sup>881</sup>: Հավելվածի նպատակն է ապահով առցանց միջավայր ստեղծել կանանց և դեռահաս աղջիկների համար, որտեղ նրանք կարող են իրազեկվել իրենց իրավունքների, առողջության, զբաղվածության և այլ թեմաների վերաբերյալ, ստանալ մասնագիտական խորհրդատվություն, ինչպես նաև բռնության պարագայում ահազանգել մասնագիտական աջակցություն տրամադրող կառույցներին:

Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի գործունեության մասով հարկ է նշել, որ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ներգրավված են ՀՀ-ում մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի հարցերով խորհրդում և խորհրդին կից աշխատանքային խմբում: Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը Եվրոպայի Խորհրդի Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի փորձագիտական խմբի (GRETA) խմբի անդամ է: Կարևոր է նշել, որ Եվրոպայի խորհրդի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի հարցերով փորձագետների խմբի (GRETA) պատվիրակության 2021 թվականի սեպտեմբերի 6-ից 10-ը Հայաստան կատարած Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կոնվենցիայի երրորդ գնահատման փուլի այցի շրջանակներում՝ Մարդու իրավունքների պաշտպանը ևս հանդիպում է ունեցել խմբի հետ և քննարկել համապատասխան հանձարարականների իրականացման գործընթացը Հայաստանում, խնդիրները և մի շարք այլ հարցեր: Այցի արդյունքների վերաբերյալ GRETA-ն 2022 թվականի կեսերին կիրապարակի վերջնական զեկույց՝ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ռազմավարության շրջանակներում Հայաստանում իրականացված գործողությունների և արդյունքների վերաբերյալ:

Բռնության այս տեսակը կարող է տարբեր գործոններով պայմանավորված լինել, սակայն պետք է նշել, որ կանանց տնտեսական կայունության բացակայությունը, հաճախ տնտեսապես մեկ այլ անձից կախյալ լինելու հանգամանքը կամ սոցիալ-տնտեսական այլ խնդիրները նպաստում են բռնության այս տեսակի հնարավոր դեպքերի վրա: Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կանխարգելիչ միջոցառումներից է նաև կանանց տնտեսական զարգացումը և դրան ուղղված քայլերի իրականացումը, հատկապես գյուղական բնակավայրերում:

Խնդրի առնչությամբ արդիական է նաև մարդկանց իրազեկվածության հիմնահարցը, քանի որ մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հանցագործության կանխարգելման նպատակով, հաշվի առնելով այս հանցագործության առանձնահատկությունները, չափազանց կարևոր է պարբերական իրազեկվածությանն ուղղված միջոցառումների իրականացումը, ինչպես նաև դրանցով ձևավորվող իրազեկվածության բարձր մակարդակը: Այդ նպատակով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և խնդիրների կանխարգելման վերաբերյալ մարզային և Երևանում տարբեր

<sup>881</sup>Տե՛ս <https://armenia.un.org/hy/164144-yownisef-e-ev-enddem-kanants-nkatmamb-brnowtyan-koalitsian-nerkayatsretsin-safeyou-havelvac> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

քննարկումների ընթացքում պարբերաբար անդրադարձ են կատարել նաև այս հանցագործության հիմնախնդիրներին:

*Հեղևաբար, անհրաժեշտ է շարունակել ապահովել իրազեկման արշավները մարդկանց թրաֆիքինգի և շահագործման երևույթի, դրանից զերծ մնալու ուղիների և այդ դեպքերում առկա պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ: Միաժամանակ, կարևոր է ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցներն ու մեխանիզմները՝ Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարն ավելի արդյունավետ ու նպատակային դարձնելու համար:*

### **3. Պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումներ**

Պտղի սեռի խտրական ընտրության և սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրները 2021 թվականի ընթացքում շարունակել են մտահոգիչ մնալ: Խնդիրների շարունակականության մասին են վկայում Մարդու իրավունքների պաշտպանի ինչպես 2021 թվականի ընթացքում խնդրի կապակցությամբ արված հայտարարությունները<sup>882</sup>, այնպես էլ տարբեր տարիների գործունեության տարեկան հաղորդումներում անդրադարձերը և մտահոգությունները: Չնայած որ խնդիրների դեմ պայքարը շարունակվում է, և ձեռնարկվելիք միջոցառումները կրում են շարունակական բնույթ, սակայն խնդիրը շարունակում է արդիական մնալ:

Պտղի՝ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումն իրականացվում է հիմնականում այն հասարակություններում, որտեղ մշակութային նորմերով կամ ավանդույթներով պայմանավորված է երեխայի կոնկրետ սեռի ցանկալի լինելու հանգամանքը: Այս երևույթը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է, երբ երեխայի սեռը պարզելու դեպքում հղիությունն ընդհատվում է՝ նախապատվություն տալով տղա երեխաներին: Նման հասարակություններում գերակայությունն ավելի շատ տրվում է տղաներին, քան աղջիկներին, ինչի արդյունքում էլ հղիության արհեստական ընդհատում շատ հաճախ կատարվում է այն ժամանակ, երբ բժշկական հետազոտությամբ պարզվում է, որ պտուղը իգական սեռի է: Խնդրի պատճառները կարող են շատ տարբեր և խորքային լինել, սակայն որպես գործոն նման խտրական որոշման կայացման վրա ազդում են, օրինակ, հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները, արու զավակ ունենալու նախապատվությունը կամ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները: Հայաստանում ևս ավանդաբար փոխանցվել է այն ընկալումը, որ ընտանիքում, հատկապես առաջին երեխան պետք է տղա լինի, քանի որ տղան «տոհմաձառ»-ի շարունակողն է:

<sup>882</sup> Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1799> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Ավելին, որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ ընտանիքում խնդիրներ կարող են առաջանալ իգական սեռի երեխա ունենալու դեպքում՝ կնոջը հաճախ մեղադրելով տղա երեխա չունենալու համար՝ մինչև հղիությունը, հղիության ողջ ընթացքում, ծննդաբերությունից հետո քննադատելով հատկապես միայն աղջիկ երեխաներ ունեցող կանանց<sup>883</sup>: Քննադատական այս մոտեցումը հանգեցրել է կարծիքի, որ կանայք ևս ձգտում են տղա ունենալ՝ ընտանիքում շահեկան դիրք ունենալու, կարգավիճակն ամրապնդելու և ապագայի համար կայունության երաշխիք ունենալու նպատակով: Ընտանիքներում երիտասարդ կանանց ավելի ստորադասված և ենթակա դիրքով պայմանավորված «տղա ունեցավ, ոտքը տեղ բռնեց» արտահայտության արժեքը նկատվում է նաև մեր օրերում<sup>884</sup>:

Դրանով պայմանավորված մեկ այլ խնդիր է, որ երբեմն, սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման որոշումը, հնարավոր է, կանայք իրենք ինքնուրույն չկայացնեն. նրանք այդ քայլին կարող են դիմել ընտանիքի անդամների ճնշումների, նույնիսկ հարկադրանքի կամ ավանդական ընկալումների ներքո:

Խնդիրը կարիք ունի ոչ միայն ազգային կամ ավանդական ավանդույթների և ընկալումների փոփոխությունների, այլև լայն առումով հասարակական ընկալման և միջազգային մակարդակով համընդհանուր արձագանքի անհրաժեշտություն: Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ մի շարք միջազգային կազմակերպություններ կոչ են արել հրատապ միջոցներ ձեռնարկել խնդրի լուծման ուղղությամբ<sup>885</sup>:

Հայաստանում կանանց և տղամարդկանց սեռերի հարաբերակցության նորմայից շեղումը սկսել է նկատվել դեռևս 1991 թվականից, իսկ 2000 թվականին այն հասել է մինչև 120 տղա - 100 աղջիկ

<sup>883</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 10, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>884</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf>, էջ 10, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>885</sup> 1995 թվականին Պեկինում անցկացված «Կանանց մասին» 4-րդ համաշխարհային գիտաժողովի ժամանակ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը նկարագրվել է որպես կանանց դեմ բռնության դրսևորում: Երեք տարի անց ՄԱԿ-ի Գլխավոր գազաթաժողովում «Աղջիկ երեխաների մասին» բանաձևը հավանության արժանացավ և Պետություններին կոչ արվեց «ընդունել և կիրառել օրենսդրություն»: Դեռևս 2011 թվականի ԵԽԽՎ-ի թիվ 1829 հանձնարարականով Հայաստանին հանձնարարվել է, ի թիվս այլ գործողությունների, առաջին հերթին ուսումնասիրել սեռով պայմանավորված հղիությունների ընդհատման պատճառները, քայլեր ձեռնարկել կանանց դերի բարձրացման ուղղությամբ, ապահովել կանանց նկատմամբ խտրականությունն արգելող իրավական նորմերի կիրառումը, աշխատանքներ իրականացնել համապատասխան բուժաշխատողների հետ՝ ներկայացնելով խնդիրը և վերջինիս հնարավոր հետևանքները [http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7\\_28](http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta11/ERES1829.htm#P7_28), հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հարաբերակցության այն դեպքում, երբ նման հարաբերակցության համար սահմանված նորման կազմում է 102-103 տղա - 100 աղջիկ հարաբերակցությունը<sup>886</sup>:

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2021 թվականի Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի՝ սեռերի հարաբերակցության գործակիցը 2019 թվականի համեմատ 2020 թվականին պահպանվել է 1.10, իսկ 2018 թվականի համեմատ՝ նվազել: Ճիշտ է, վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2020 թվականին սեռերի հարաբերակցության գործակիցը չի աճել, ինչը դրական տեղաշարժ է, սակայն ընդհանուր տեսանկյունից ստացվում է, որը խնդիրը շարունակում է պահպանվել նույն արդիականությամբ:

ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2008-2012 թվականների ժամանակահատվածում ծնվածների մեջ աղջիկ-տղա հարաբերակցության միջին ցուցանիշը կազմել է 100-115, 2014 թվականին՝ 100-113.4, 2015 թվականին՝ 100-112.7, 2016 թվականին՝ 100-111.9, 2017 թվականին՝ 100-109.8, 2018 թվականին՝ 100-111, 2019 թվականին՝ 100-110, իսկ 2020 թվականին՝ 9 ամսում՝ 100-111.3:

Վիճակագրական տվյալները վկայում են խնդրի առկայության մասին, որը, հատկապես ընդգծվում է երրորդ և հաջորդ երեխաների դեպքում:

Այսպես, համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2021 թվականի Հայաստանի ժողովրդագրական տվյալների՝ սեռերի հարաբերակցության գործակիցն, ըստ ծննդի կարգի՝ առաջին երեխայի դեպքում 1.07 է, երկրորդի դեպքում՝ 1.03, երրորդի երեխայի դեպքում՝ 1.25, չորրորդ երեխայի դեպքում՝ 1.33<sup>887</sup>: Սեռերի հարաբերակցության գործակիցների համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2019 թվականի համեմատ առաջին և չորրորդ երեխաների դեպքում սեռերի հարաբերակցության գործակիցը աճել է, առաջինի դեպքում՝ 1.03-ից դառնալով 1.07, իսկ չորրորդի երեխայի դեպքում՝ 1.26-ից 1.33: Դրական փոփոխություն առկա է երկրորդ և երրորդ երեխաների պարագայում, քանի որ սեռերի հարաբերակցության գործակիցը համեմատաբար նվազել է 1.07-ից և 1.27-ից դառնալով՝ 1.03 և 1.25<sup>888</sup>:

Խնդրի իրական պատկերը վեր հանելու նպատակով մի շարք ուսումնասիրություններ են իրականացվել հասարակական կազմակերպությունների կողմից: 2017 թվականին հրապարակված հետազոտություններից մեկի շրջանակներում պարզվել է նաև, որ Հայաստանի բոլոր մարզերում հստակ արտահայտված է տղա առաջնեկ ունենալու նախապատվությունը: Նման նախապատվությունն առավել արտահայտված է Վայոց ձորի, Արարատի, Շիրակի և Լոռու

---

<sup>886</sup> Տե՛ս [http://unfpa.am/sites/default/files/Sex-selective abortions report Arm.pdf](http://unfpa.am/sites/default/files/Sex-selective%20abortions%20report%20Arm.pdf) հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>887</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2021\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2021_3.pdf) հղումով, էջ 72, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>888</sup> Տե՛ս [https://www.armstat.am/file/article/demog\\_2021\\_3.pdf](https://www.armstat.am/file/article/demog_2021_3.pdf) հղումով, էջ 72, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

մարզերում, մինչդեռ, Երևանի և Սյունիքի կանանց մեծամասնությունը (համապատասխանաբար՝ 61.6% և 62.4%) առաջին հղիության ժամանակ առաջնեկի սեռը չի կարևորել<sup>889</sup>:

Ըստ հետազոտությունների՝ սեռով պայմանավորված հղիության ընդհատման երկու մեխանիզմ է կիրառվում՝ սեփական ուժերով և բժշկական արթուր: Որոշ հետազոտությունների արդյունքները ցույց են տվել, որ հատկապես մարզերում որոշ բուժաշխատողներ ևս ներգրավված են տղա երեխայի ընտրության հաշվարկներում<sup>890</sup>: Ավելին, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեռի ընտրության վերջին փուլը հղիության արհեստական ընդհատումն է այն պարագայում, երբ երեխան աղջիկ է<sup>891</sup>:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրում է սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման արգելքը, համաձայն որի՝ բժշկի կողմից բժշկական կամ սոցիալական ցուցումների՝ նույն հոդվածի 8-րդ մասով նախատեսված կարգով ընդունված ցանկում չնախատեսված որևէ այլ դեպքում, ներառյալ՝ սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական ընդհատումն արգելվում է: ՀՀ կառավարության 2017 թվականի փետրվարի 23-ի «Հղիության արհեստական ընդհատման կարգն ու պայմանները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1116-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 180-Ն որոշումը սահմանում է հղիության արհեստական ընդհատման բժշկական և սոցիալական ցուցումները, ինչպես նաև արթուրների իրականացման կարգը և պայմանները:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար մարզային փոքր բժշկական կենտրոններում սեռով պայմանավորված արթուրներ չեն իրականացվում, մասնակիցների կարծիքներով տեղական բժշկական այն կենտրոններում, որտեղ հնարավոր է արթուր իրականացնել, այն իրականացնում են գաղտնի, առանց գրանցման, երեկոյան ժամերին կամ ոչ աշխատանքային օրերին: Առավել տարածված է դիմել բժշկի աջակցությանն ավելի մեծ քաղաքներում և հատկապես՝ Երևանում<sup>892</sup>:

Խնդրի մշտադիտարկման շուրջ ուսումնասիրությունները նաև ցույց են տալիս, որ խնդիրը կարող է լատենտային բնույթ ստանալ, ինչպես նաև մասնագետները նշում են, որ արդեն

---

<sup>889</sup> Տե՛ս Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի «Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների տարածվածությունն ու պատճառները Հայաստանում» զեկույց, <https://ichd.org/?laid=2&com=module&module=menu&id=8>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>890</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 27, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>891</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 36, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>892</sup> Տե՛ս <https://www.wvi.org/sites/default/files/How%20to%20have%20boy--arm.pdf> հղումով, էջ 39, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հնարավոր է պտղի սեռը որոշել առավել վաղ ժամկետներում՝ հաշվի առնելով բժշկական տեխնոլոգիաների զարգացումը<sup>893</sup>:

«Առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականին պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների թվի նվազեցման և խնդրի լուծման նպատակով մշակվել և 2020 թվականի մարտին Առողջապահության և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով հաստատվել է «Պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելման 2020-2023 թվականների ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը», որի շրջանակներում շարունակվում են իրականացվել հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքներ՝ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և տեղական հասարակական ու համայնքային կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Ստացվում է, որ օրենսդրական կարգավորումներով սեռով պայմանավորված 12-ից մինչև 22 շաբաթական հղիության արհեստական ընդհատման արգելքի սահմանմամբ կամ միայն հանրային իրազեկմանն ուղղված աշխատանքների իրականացմամբ չեն կարող սահմանափակվել խնդրի լուծմանն ուղղված քայլերը: Խնդրի դեմ պայքարի նպատակով համալիր միջոցառումներ պետք է իրականացվեն՝ ուղղված համապարփակ ձևով հարցի առավելապես խորքային պատճառների վերացմանը:

Երեխայի սեռի նախընտրության խնդրի հետ կապված հարկ է անդրադառնալ 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի ներկայացված ««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը:

Մասնավորապես, նախագծով առաջարկվում էր նախագծի 1-ին հոդվածով Օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասում «Ժառանգման հավանականություն» բառերից հետո լրացնել «կամ ընտանիքն ունի նույն սեռի 3 երեխա:» բառերը: Ստացվում է, որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռը պլանավորման արգելքից բացառության շարքում սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն առկայությունից բացի ամրագրվում է նաև ընտանիքն ունի նույն սեռի 3 երեխա ունենալու հանգամանքը:

Հարկ է ընդգծել, որ երեխայի սեռի պլանավորումն ընտանիքի նույն սեռի 3 երեխա ունենալու դեպքում խնդրահարույց է պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի դեպքում, հատկապես, երբ դեռևս լուծված չէ սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիրը: Վերջին տարիներին խնդրի դեմ պայքարի նպատակով ձեռնարկված քայլերը և համալիր ջանքերը դրական տեղաշարժի են գրանցել՝ նպաստելով

<sup>893</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի «ՀՀ-ում պտղի սեռի խտրական ընտրության կանխարգելմանն ուղղված պետական քաղաքականության և ծրագրերի մշտադիտարկման զեկույցը» կետ 68, հասանելի է <https://cutt.ly/qtlovQM> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

նորածինների սեռերի հարաբերակցության գործակցի բարելավմանը: Սակայն խնդիրը դեռ շարունակվում է արդիական մնալ:

Խնդիրն այն է, որ նախապատվություն է տրվում տղա երեխաներին, ինչի պատճառով հղիությունն ընդհատվում է, երբ պարզվում է երեխայի սեռը: Այս երևույթը կանանց նկատմամբ խտրականության դրսևորում է, ինչի պատճառ են ինչպես հասարակությունում ավանդաբար հաստատված պատկերացումները (օրինակ՝ արու զավակ ունենալու նախապատվությունը), այնպես էլ կանանց դերի վերաբերյալ առկա կարծրատիպային մոտեցումները:

Եվրոպայի խորհրդի կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին կոնվենցիան (Օվիեդոյի կոնվենցիա)<sup>894</sup> 14-րդ հոդվածը արգելում է ապագա երեխայի սեռն ընտրելու նպատակով բժշկական օգնությամբ սերունդ տալու տեխնիկայի օգտագործումը, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է խուսափել սեռով պայմանավորված լուրջ ժառանգական հիվանդությունից:

Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքները և կենսաբժշկությունը»<sup>895</sup> վերտառությամբ փաստաթղթի 93-րդ և 94-րդ կետերի համաձայն՝ բժշկության օգնությամբ բեղմնավորումը ներառում է արհեստական բեղմնավորում, արտամարմնային բեղմնավորում և ցանկացած ազդեցություն ունեցող նույն տեխնիկան, որը թույլ է տալիս բեղմնավորում բնական ընթացքից դուրս: Սույն հոդվածի համաձայն՝ ապագա երեխայի սեռը ընտրելու համար չի թույլատրվում օգտագործել բժշկական օգնությամբ սերունդ տալու տեխնիկա, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է խուսափել սեռական հետ կապված լուրջ ժառանգական հիվանդությունից: Ազգային օրենսդրության համաձայն՝ յուրաքանչյուր անդամ պետությունում կիրառվող ընթացակարգերը պետք է որոշի սեռական ժառանգական հիվանդության լրջությունը: Որոշ երկրներում ուղեցույցները սահմանվում են քաղաքական կամ վարչական մարմինների կողմից կամ ազգային էթիկայի հանձնաժողովների, ժամանակավոր հանձնաժողովների, մասնագիտական մարմինների և այլնի կողմից: Ամեն դեպքում անհրաժեշտ է համապատասխան անձանց համապատասխան գենետիկական խորհրդատվություն:

Բժշկական օժանդակ վերարտադրության և սաղմի ցողունային բջիջների հետազոտության ոլորտում Եվրոպայի միության անդամ երկրների օրենսդրության վերաբերյալ հետազոտությունը վկայում է, որ բոլոր այն երկրներում, որտեղ կա նման կարգավորում, սեռի ընտրությունն արգելված է կամ թույլատրվում է միայն սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականության առկայությամբ<sup>896</sup>:

<sup>894</sup> Առ այսօր Հայաստանը չի ստորագրել և չի վավերացրել Եվրոպայի խորհրդի Օվիեդոյի կոնվենցիան: Սակայն, Եվրոպայի խորհրդի կողմից Հայաստանի համար 2019-2022 թվականների գործողությունների շրջանակում իրականացվող ծրագրի նպատակներից է Օվիեդոյի կոնվենցիայի հնարավոր հետագա վավերացմանը Հայաստանի պատրաստմանն ուղղված արդյունքների ձեռքբերումը:

<sup>895</sup> Տե՛ս՝ «Մարդու իրավունքները և կենսաբժշկությունը» փաստաթուղթը, հասանելի է՝ <https://rm.coe.int/human-rights-and-biomedicine-convention-arm/1680a206db> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>896</sup> Տե՛ս՝ հետազոտությունը <https://www.hindawi.com/journals/bmri/2014/307160/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



Ունենալով պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների խնդիր և վիճակագրական բացասական ցուցիչներ՝ հարկ է քայլեր ձեռնարկել սեռով պայմանավորված խտրականության արգելքի դրա դեմ պայքարին միտված: Նման բացառության սահմանումը նպաստում է առկա խտրականության խորացմանը՝ նպաստելով հասարակության լայն շրջանակներում այն թյուր կարծիքի ձևավորմանը, որ որոշ դեպքերում կարելի է ընտրովի մոտեցում ունենալ սեռերի նկատմամբ: Այնինչ, պտղի սեռով պայմանավորված խնդրի հաղթահարման նպատակով պետության ռազմավարությունը պետք է ուղղված լինի սեռով պայմանավորված խտրականության բացարձակ արգելքին, խտրական վերաբերմունքի իսպառ բացակայությանը և վերացնելուն:

Այս առումով, հարկ է նաև անդրադառնալ նախագծի հեղինակի՝ ՀՀ առողջապահության նախարարության պարզաբանումներին: Ներկայացված նկատառումները չեն ընդունվել, սակայն նշվել է, որ մտահոգությունները արդարացի են Հայաստանում պտղի սեռի խտրականության դեմ պայքարի տեսանկյունից: Դիտողությունները չընդունելու հիմնավորումներով նշվում է, որ հաշվի առնելով տվյալ դեպքում Հայաստանի ժողովրդագրական ճգնաժամային իրավիճակը, պատերազմի ընթացքում շուրջ 4000 երիտասարդի կորուստը թելադրում են գտնել լուծումներ, որի միջոցով հնարավոր կլինի ապահովել ընտանիքում 4-րդ և ավելի ևս մեկ երեխայի ծնունդ: Այս դեպքում, եթե ընտանիքը ունի նույն սեռի 3 երեխա (կարևոր չէ, աղջիկ թե տղա), խոսքը գնում է ոչ թե սեռային խտրականության, այլ ընտանիքում սեռերի բալանսավորման մասին: Այսինքն՝ այս կարգավորումը դիտարկվում է որպես չորրորդ երեխայի դեպքում արհեստական ընդհատման այլընտրանք, որի մասին, անկախ այդ երևույթին մեր վերաբերմունքից կամ պտղի սեռով պայմանավորված արհեստական ընդհատման արգելքից, վկայում է վիճակագրությունը:

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խնդրի դեմ պայքարը և դրա կանխարգելումը անհրաժեշտ է այլ ձեռնարկումների հետ մեկտեղ համադրել կանանց կարողությունների զարգացման, որոշումների կայացման ազատության և այլ իրավունքների մասին իրազեկելու, ինչպես նաև բուժաշխատողների նկատմամբ վերահսկողության ուժեղացման նպատակով իրականացվող միջոցառումների հետ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *զանգվածային լրատվության միջոցներով, կրթական ծրագրերում համապատասխան ուղղություններ ներառելով, ինչպես նաև այլ միջոցներով՝ ընդգծել կնոջ՝ որպես որոշում կայացնողի, հասարակության լիիրավ անդամի դերը,*

2. *հանրային իրազեկման համակարգված աշխատանք իրականացել աղջիկ երեխայի արժևորման, կնոջ՝ որպես եկամուտ վաստակողի, որոշումների կայացնողի դերի հաստատման, ինչպես նաև ծնելիության բարձրացման նպատակով,*

3. *ՀՀ առողջապահության նախարարության հետ համարեղ մշակել և կիրառել պարտադիր բնույթ կրող մեխանիզմներ՝ վերահսկելու բուժաշխատողների կողմից հղիության 12-րդ շաբաթից հետո արհեստական ընդհատման ժամանակ բժշկասոցիալական ցուցումների պահպանումը:*

#### 4. Կանանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին

Կանանց՝ հասարակական և քաղաքական կյանքում նվազ մասնակցության հարցը 2021 թվականին արդիական և շարունակական ուշադրության արժանի հարցերից է: Խնդրի մասին բարձրաձայնել են նաև միջազգային կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները:

Խնդրի բարձրաձայնման նպատակով 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը շարունակել է իրականացնել 2020 թվականի ընթացքում նախաձեռնած իրազեկման արշավը՝ «Դարձիր օրինակ» կոչով հանրայնացնելով կանանց հաջողված պատմությունները: Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս 2020 թվականի ընթացքում մեկնարկել էր կանանց հաջողության պատմությունների հանրային իրազեկման արշավ, որը նպատակ ուներ կոտրել հասարակությունում կանանց դերի վերաբերյալ կարծրատիպերը և հաջողված պատմություններով ոգեշնչել հասարակությանը: Պաշտպանն առաջարկում է միանալ «Դարձիր օրինակ» կոչի տարածմանը և ուղարկել կանանց հաջողված պատմություններ [ombuds@ombuds.am](mailto:ombuds@ombuds.am) հասցեին: Պատմությունները կոգեշնչեն կանանց դառնալ հաջորդ օրինակը: Իրազեկման արշավն ուղեկցվել է #Դարձիր\_օրինակ հայերեն և #Set\_an\_example անգլերեն հեշթեգերի ներքո, որին մասնակցել են տարբեր մասնագիտություն ու զբաղմունք ունեցող կանայք հանրապետության տարբեր մարզերից: Այժմ ևս այն շարունակվում է, որով փորձ է կատարվում նպաստել ոլորտի խնդիրների լուծմանը:

Քաղաքական, ընդհանուր առմամբ հասարակական կյանքին կանանց ներգրավվածությունը շարունակաբար ցածր է մնում՝ չնայած առկա ուսումնասիրությունների համաձայն, Հայաստանում կանայք իրենց կրթությամբ չեն զիջում տղամարդկանց<sup>897</sup>:

Հասարակական-քաղաքական կյանքում կանանց լիարժեք մասնակցությանն ու ներգրավվածությանը խոչընդոտող տարբեր գործոններից են՝ կանանց դերի, կարողությունների և հասարակական կյանքում նրանց ներգրավվածության շուրջ առկա կարծրատիպերը և խտրական ընկալումները: Նրանք հաճախ չեն դիտարկվում որպես որոշում կայացնողներ, քաղաքականություն մշակողներ ու իրականացնողներ:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը կանանց տնտեսական կարողությունների զարգացման ծրագրերի իրականացման շրջանակներում իրականացրել է տարբեր այցեր, ինչպես օրինակ՝ մայիսի 14-ին Սյունիքում Գորիս խոշորացված համայնքի ղեկավարի և ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի ղեկավար Ծովինար Հարությունյանի հետ Պաշտպանը այցելել է մի շարք բնակավայրերում գործող արտադրամասեր և զարգացման

<sup>897</sup> Տե՛ս ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ, «Գենդերային ճեղքվածք. կանանց նկատմամբ խտրական դրսևորումների փաստորոշիչ ուսումնասիրություն», 2016 թվական, հասանելի է [http://www.unfpa.am/sites/default/files/2016\\_Gender-Gap-factsheet\\_Arm.pdf](http://www.unfpa.am/sites/default/files/2016_Gender-Gap-factsheet_Arm.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կենտրոններ, ինչպես օրինակ Գորիս քաղաքում գտնվող Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ, Տեղ գյուղում գտնվող կարի արտադրամաս<sup>898</sup>, ինչպես նաև Վերիշեն բնակավայրում գտնվող հիմնադրամի սոցիալական ձեռնարկություն, որն ուսումնական կենտրոն է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կանանց համար: Այցերի ընթացքում քննարկվել են արդեն որոշակի հաջողության հասած ծրագրերը, ինչպես օրինակ՝ Goris Handmade-ը, որն արտադրում է բարձրորակ, 100% բնական բրդից իրերի լայն տեսականի, ներառյալ՝ գորգեր, բարձեր, ծածկոցներ և ավելի քան 50 տարբեր խաղալիք կենդանիներ: Կարևոր է նշել, որ «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամի շահառուների թվում են ինչպես հաշմանդամություն ունեցող, այնպես էլ Արցախից տեղահանված ավելի քան 40 ընտանիքների կանայք, որոնք անցնում են ուսումնառություն և ստանում նոր մասնագիտություն՝ աշխատաշուկայում մրցունակ դառնալու համար (ձեռարվեստ, խոհարարություն, համակարգչային գիտելիքներ, հաշվապահություն, վարսահարդարում և այլն)<sup>899</sup>:

Բացի այդ, այցելություններ են իրականացվել նաև մի շարք մշակութային կենտրոններ, ինչպես օրինակ՝ «Դիզակ արտ» մշակութային կենտրոնը, որը հիմնել են 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմից հետո Հաղրուֆից տեղահանված մի շարք կանայք<sup>900</sup>:

Մենք պետք է ամեն կերպ աջակցենք կանանց տնտեսական կարողությունների զարգացմանը, քանի որ ֆինանսապես կայուն եկամուտներ ունեցող կանայք կարող են հնարավորինս զերծ մնալ բռնությունից ու խտրականության այլ դրսևորումներից: Կանանց ակտիվ ներգրավվածությունը երկրի սոցիալ-տնտեսական կյանքին ու որոշումների կայացման գործընթացներին բխում է հենց հասարակության շահերից:

Կնոջ նկատմամբ հարգանքը, նրա արժանապատվությունը երաշխավորելը և պայքարը կարծրատիպերի դեմ պետք է լինի յուրաքանչյուրիս առաքելությունը: Կանանց նկատմամբ մեր հասարակությունում պետք է լինի արժանապատիվ, հավասար վերաբերմունք: Մենք պետք է խրախուսենք կնոջ մասնակցությունը երկրի քաղաքական կյանքին<sup>901</sup>: Այս համատեքստում կարևոր է վեր հանել նաև այն պատճառները, որոնցով պայմանավորվում է ներկայիս վիճակը: Ինչպես ցույց են տալիս սոցիալական հարցումները, հայաստանյան բիզնեսների մեծ մասը վարում են տղամարդիկ, որովհետև «տան գործերը և երեխաների խնամքը կանխարգելում է ձեռներեցությամբ

<sup>898</sup> Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1895> հղումով, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>899</sup> Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1717> հղումով, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>900</sup> Տե՛ս <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1785> հղումով, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>901</sup> Տե՛ս «Կնոջ սեռը թիրախավորելով նրան վիրավորելը բացարձակ մերժելի երևույթ է. Մարդու իրավունքների պաշտպան» հրապարակումը, հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1173> հղումով, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կանանց զբաղվել»-ուն (48.4% տղամարդիկ, 39.2% կանայք)<sup>902</sup>: Սրան հաջորդող պատճառներից են «տղամարդիկ ավելի մեծ հավանականությամբ են ռիսկի գնում իրենց բիզնեսը սկսելիս» (36.2% տղամարդ և 27.4% կին), «առկա ավանդություններն ու սովորությունները սահմանափակում են կանանց մասնագիտական ձգտումները» (30.1% տղամարդ և 26.1% կին) և «իրենց բիզնեսներն անգամ վարելիս կանայք շարունակում են հենվել տղամարդկանց ուղղորդման, հովանավորության կամ հավանության վրա» (28.2% տղամարդ և 28.7% կին)<sup>903</sup>:

Վիճակագրությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տղամարդկանց 36% և կանանց 25.5%-ը գտնում են, որ, «ներկա ավանդույթներն ու սովորույթներն» են, առաջին հերթին, խոչընդոտ հանդիսանում կանանց ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար: Սրան հաջորդում են «համապատասխան հմտություններ, գիտելիքի և փորձի պակաս» (տղամարդկանց 16.1% և կանանց 19.9%), «հարկերի և հաշվապահական բարդություններից վախ» (տղամարդկանց 13.1% և կանանց 18%) և «շուկայավարման հնարավորությունների բացակայություն» (տղամարդկանց 16.4% և կանանց 12.3%) պատճառները<sup>904</sup>:

Հայաստանում կանանց ձեռներեցության նկատմամբ հասարակության մեջ գերիշխող կարծրատիպերին անդրադարձեր են եղել վերջին շրջանի տարբեր հաշվետվություններում, ինչպես օրինակ՝ «Կանայք, խաղաղություն և անվտանգության ցուցիչներ 2020» (Ջորջթաուն համալսարանի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ինստիտուտ) աշխատությունը բնութագրում է խտրական աշխատանքային նորմերը՝ որպես Հայաստանում կանանց ձեռնարկատիրական գործունեության առանցքային խոչընդոտ:

ԱՄՆ ՄԶԳ-ի 2019թ.-ի «Հայաստան. գենդերային վերլուծություն»-ը նկատում է, որ ՓՄՁ-ներում, չնայած երիտասարդ կանանց բարձրագույն կրթության բնագավառում նվաճումների՝ երիտասարդ տղամարդիկ կրկնակի ավելի մեծ հավանականությամբ են զբաղեցնում կառավարչական պաշտոններ: Ավելին, թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածում առաջատար պաշտոններ զբաղեցնողների մեջ տղամարդիկ ավելի մեծ թիվ են կազմում (70.5%՝ 29.5%-ի դիմաց)<sup>905</sup>:

<sup>902</sup> Տե՛ս [https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE\\_Diagnostic\\_Report\\_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h](https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h) հղումով էջ 11, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>903</sup> Տե՛ս [https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE\\_Diagnostic\\_Report\\_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h](https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h) հղումով էջ 11, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>904</sup> Տե՛ս [https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE\\_Diagnostic\\_Report\\_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h](https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h) հղումով էջեր 11-12, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>905</sup> Տե՛ս [https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE\\_Diagnostic\\_Report\\_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h](https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKlmc8h) հղումով էջեր 58-59, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Օրինակ՝ պատկերը տարբերվող է SS ոլորտում, որտեղ, ըստ էության, կարծատիպերն ավելի քիչ են: Այստեղ նպաստավոր են համեմատաբար բաց աշխատանքային միջավայրը և միջազգային կառույցներին առնչությունները (օրինակ՝ պատվիրակված աշխատանքը): Բայցևայնպես, նույն այս ոլորտում ղեկավար պաշտոններում կանանց ներկայությունը նշանակալից կերպով ավելի սահմանափակ է, այն է՝ միայն 11%<sup>906</sup>:

Արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքի վտանգավոր հետևանքների մասին բազմիցս Մարդու իրավունքների պաշտպանի տարբեր հայտարարություններում բարձրաձայնվել է՝ նշելով, որ մարդու արժանապատվությունը վիրավորելը, նսեմացնելը չափազանց վտանգավոր չափերի են հասել և ընդգծելով, որ նման երևույթները խաթարում են իրավական ու բարոյական բոլոր արժեքները և վտանգում են համերաշխությունը հասարակությունում<sup>907</sup>:

Մասնավոր կամ ընտանեկան կյանքը թիրախավորելը, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքի վտանգավոր դրսևորումները սկզբունքորեն անընդունելի կանանց նկատմամբ խտրականության, բռնության դրսևորում է, որը հանգեցնում է կանանց քաղաքական կամ հասարակական կյանքի մասնակցության ընկճման, նվազ մասնակցության ավելի բացասական միտումի: Այն մեծ խոչընդոտ է կանանց քաղաքական մասնակցության համար՝ այդպիսով մերժելով նրանց քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Այն նաև խոչընդոտում է բնակչության կեսի մասնակցությանը՝ խարխուլված ժողովրդավարության իրականացումն ու լավ կառավարումը՝ ստեղծելով ժողովրդավարական դեֆիցիտ<sup>908</sup>:

Բացի այդ, կարծատիպերի դեմ պայքարում և հասարակության համերաշխության հաստատման գործում հատուկ կարևորություն ունեն հասարակական ու քաղաքական գործիչների դատապարտող հայտարարությունները նման արարքների առնչությամբ:

Ըստ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալների՝ 2021 թվականի հունիսի 20-ին արտահերթ խորհրդարանական ընտրությունների արդյունքում ընտրված թեկնածուների 34.58% կին է, իսկ 65.42%՝ տղամարդ<sup>909</sup>: Ընդ որում, Ազգային ժողովի ընտրված 107 պատգամավորից միայն 35-ն է կին և ի տարբերություն նախորդ գումարումների, այս անգամ ոչ մի կին պատգամավոր չի ընտրվել որպես ԱԺ նախագահի տեղակալ:

<sup>906</sup> Տե՛ս [https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE\\_Diagnostic\\_Report\\_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h](https://www.ifc.org/wps/wcm/connect/0e0b7955-01b5-4521-b3a7-ab63f3ae3f85/WE_Diagnostic_Report_Arm.pdf?MOD=AJPERES&CVID=nKImC8h) հղումով էջ 59, հասանելի է՝ 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>907</sup> Այս մասին առավել մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Կարծիքի արտահայտման ազատությունը» բաժնի «Վիրավորանքը, արժանապատվությունը վիրավորող ու ատելության խոսքը հանրային տիրույթում» պարագրաֆում:

<sup>908</sup> Տե՛ս <https://www.ohchr.org/EN/NewsEvents/Pages/DisplayNews.aspx?NewsID=21652&LangID=E> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>909</sup> Տե՛ս <https://res.elections.am/images/doc/Statistics2021.pdf> հղումով էջ 6, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

«Կառավարության բարձր պաշտոններում ևս կանանց մասնակցության թիվը շարունակել է փոքր մնալ 2021 թվականի ընթացքում: Կառավարության կազմում երկու փոխվարչապետներից և տասներկու նախարարներից միայն մեկն է կին<sup>910</sup>:

Կանանց ներկայացվածության և որոշումների կայացման գործընթացում ներգրավվածության անբավարար լինելու մասին են վկայում նաև պետական այլ մարմիններում աշխատողների սեռային հարաբերակցության պաշտոնական տվյալները: Այսպես, 2021 թվականին քաղաքացիական ծառայողների թվաքանակի տվյալների վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ «Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից հայտնել են, որ քաղաքացիական ծառայության համակարգի տեղեկատվական հարթակը, որը նպատակ ունի գեներացնել համակարգի վերաբերյալ ամբողջական տեղեկատվությունը, և որի միջոցով հնարավորություն է ընձեռվում վարել համապատասխան վիճակագրություն, այժմ գտնվում է գործարկման փուլում: Պայմանավորված այն հանգամանքով, որ ոչ բոլոր պետական մարմինների կողմից են հարթակում մուտքագրվել քաղաքացիական ծառայության պաշտոնները, ուստի առկա տեղեկատվությունն ամբողջական չէ և չի կարող արտացոլել քաղաքացիական ծառայության համակարգում ըստ պաշտոնների, գերատեսչությունների և ոլորտների կանանց ներգրավվածության աստիճանի, 2021 թվականի ընթացքում կանանց և տղամարդկանց ներգրավվածության հարաբերակցության, «Կառավարության կազմում ըստ պաշտոնների ներգրավվածության աստիճանի վերաբերյալ տեղեկատվությունը:

Ըստ «Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի 2018 թվականի հունիսի 30-ի դրությամբ տվյալների՝ բարձրագույն պաշտոնի խմբի 103 ծառայողներից ընդամենը 15-ն են կին, գլխավոր պաշտոնի խմբի 3221 ծառայողներից 1582 են կին, իսկ առաջատար պաշտոնի խմբի ծառայողների 2189 ընդհանուր թվից կին ծառայողներ են 1319-ը, սակայն հատկանշական է, որ կրտսեր պաշտոնի խմբի ծառայողների 860 ընդհանուր թվից 612 կին ծառայողներ են, իսկ 248-ը՝ տղամարդ: Վիճակագրական այս տվյալներն առավել ակնառու են դարձնում խնդիրը:

Նշված տվյալների համալիր վերլուծությունը վկայում է, որ կանանց թիվը գերակայում է տղամարդկանց թվին միայն ցածր աստիճանի պաշտոններում: Ինչ վերաբերում է արդեն բարձրագույն պաշտոններին՝ այստեղ ակնհայտ գերակայում է տղամարդկանց թիվը:

Հարկ է նշել, որ կանանց ղեկավար պաշտոններում ներգրավվածության խնդիրը առանցքային նշանակություն ունի վերջիններիս հասարակական և քաղաքական կյանքին լիարժեք մասնակցությունը ապահովելու տեսանկյունից: Այս խնդրին անդրադարձել է կատարվել նաև 2021 թվականի Գեներալային խզվածքի համաշխարհային զեկույցում, որտեղ նշվում է, որ տարածաշրջանի 9 երկրներում (Հայաստան, Ադրբեջան, Բրունեյ Դարուսսալամ, Պապուա Նոր

<sup>910</sup> «Կառավարության պաշտոնական կայք. կառուցվածք <https://www.gov.am/am/structure/>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Գվինեա, Սաուդյան Արաբիա, Թաիլանդ, Վիետնամ և Եմեն) ընդհանրապես կին նախարարներ չկան<sup>911</sup>, ինչը ևս վկայում է խնդրի արդիականության մասին:

Բացի այդ, համաձայն քաղաքացիական ծառայողների ըստ սեռային կազմի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ տվյալների՝ ընդհանուր քաղաքացիական ծառայողների 6782 թվից 4120 կին են, իսկ 2662՝ տղամարդ: Իրականացնելով վերջին 3 տարիների առկա տեղեկատվության համեմատական վերլուծություն՝ պարզ է դառնում, որ քաղաքացիական ծառայության համակարգում կանանց ներգրավվածությունը ցուցաբերել է դրական աճի միտում՝ շուրջ 16. 8%, իսկ տղամարդկանց դեպքում՝ նվազման միտում՝ շուրջ 6. 5%:

Ի պատասխան բարձրագույն պաշտոններում կանանց ներգրավման բարձրացման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների վերաբերյալ հարցի՝ «Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակից հայտնել են, որ քաղաքացիական ծառայության համակարգի բարձր պաշտոններում կանանց ներգրավվածության խթանման ուղղությամբ ՄԱԶԾ-ի կողմից 2021 թվականին իրականացվել են մի շարք ծրագրեր, որոնք կրում են շարունակական բնույթ»:

Կանանց պատշաճ ներգրավվածության խնդիրներ առկա են նաև դատական համակարգում: Գործընկերություն հանուն լավ կառավարման 2019-2021 թվականների «Աջակցություն դատական բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանում դատական իշխանության անկախության և արհեստավարժության ամրապնդումը» ծրագրի շրջանակներում ներկայացված զեկույցի շրջանակներում ակնհայտորեն ի ցույց են դրել կանանց ներգրավվածության հիմնահարցերը ՀՀ դատական համակարգում: Մասնավորապես, Հայաստանում դատավորների ընդհանուր թիվը 244 է, իսկ նրանց 26.6%-ն իգական, 73.4%-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ են<sup>912</sup>: Ավելի բարձր ատյաններում կին դատավորների տոկոսային մասնաբաժինը նվազում է: Առաջին ատյանի 183 դատավորի թվում կանայք 27.3% են, տղամարդիկ՝ 72.7%, երկրորդ ատյանի 44 դատավորի թվում կանայք 25% են, տղամարդիկ՝ 75%, երրորդ ատյանի 17 դատավորի թվում կանայք ընդամենը 24% են, տղամարդիկ՝ 76%<sup>913</sup>:

Հարկ է նշել, որ ընդհանուր իրավասության և մասնագիտացված առաջին ատյանի դատարանների կազմերում կան տարբերություններ և կին դատավորների տոկոսային մասնաբաժինը շատ ավելի ցածր է մասնագիտացված դատարաններում: Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 147 դատավորի թվում կանայք 29.9% են,

<sup>911</sup> Հասանելի է [https://www3.weforum.org/docs/WEF\\_GGGR\\_2021.pdf](https://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2021.pdf) հղումով, էջ 15, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>912</sup> Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 36, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>913</sup> Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 36, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

տղամարդիկ՝ 70.1%: Առաջին ատյանի մասնագիտացված դատարաններում 36 դատավորի թվում կանայք ընդամենը 16.7% են, տղամարդիկ՝ 83.3%<sup>914</sup>:

Ինչպես երևում է վիճակագրական տվյալներից, առկա է զգալի անհավասարակշռություն բոլոր երեք ատյաններում, որոնցում կանայք փոքրամասնություն են, և ապահովված չէ Եվրոպայի խորհրդի 2003 թվականի հանձնարարականում նախատեսվող 40%-ի կրիտիկական զանգվածը<sup>915</sup>:

Այնուամենայնիվ, ինչ վերաբերում է դատավորների օգնականներին, ապա գենդերային անհավասարակշռություն կա հոգուտ կանանց. 257 օգնականի թվում կանայք 66.1% են, տղամարդիկ՝ 33.9%<sup>916</sup>:

Ինչ վերաբերում է դատական համակարգում բարձր պաշտոններին, ապա դատարանների և պալատների 18 նախագահից ընդամենը երկուսն են կին, այսինքն՝ բարձր պաշտոններում կանայք ընդամենը 11.1% են, իսկ տղամարդիկ՝ 88.9%<sup>917</sup>:

Ներկայացվածության խնդիրը ակներև է նաև Բարձրագույն դատական խորհրդում, որի 10 անդամից միայն մեկն է կին, այսինքն՝ կանայք 11.1% են, իսկ տղամարդիկ՝ 88.9%: Միակ կինը դատավոր անդամ է, ով առաջադրվել է Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, իսկ Ազգային ժողովի կողմից ընտրված ոչ դատավոր անդամների թվում կանայք չկան:

Դատական համակարգում կանանց ներկայացվածության ցուցանիշը զգալիորեն ավելի ցածր է, քան կանանց ներկայացվածությունն իրավաբանների աշխատաշուկայում, ինչը նշանակում է, որ նրանց թերներկայացվածությունն ուղղակի և անուղղակի անհատական, համակարգային և ինստիտուցիոնալ խտրականության հիմնախնդիր է, որը հնարավոր է, որ համակցված է այս մասնագիտության դաշտ մուտք գործելու ճանապարհին կանանց բավարար չափով չաջակցելու և չխրախուսելու հանգամանքի հետ<sup>918</sup>:

<sup>914</sup> Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 37, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>915</sup> Տե՛ս՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2003թ. հանձնարարականը «Քաղաքական և հանրային որոշումների կայացման մեջ կանանց և տղամարդկանց հավասարակշռված մասնակցության մասին», հասանելի է <https://rm.coe.int/1680519084> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>916</sup> Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 37, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>917</sup> Տե՛ս <https://rm.coe.int/arm-prems-080621-arm-2651-gender-equality-in-the-judiciary-of-armenia-/1680a3ef53> հղումով էջ 37, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>918</sup> Ըստ 2017-ի տվյալների՝ ԵՄ պետություններում իրավաբանական ֆակուլտետների շրջանավարտների 60%-ն իգական սեռի ներկայացուցիչներ են: Պրոֆեսիոնալ դատավորների պաշտոնները ԵՄ-ում միջին հաշվով համաչափ են բաշխված կանանց և տղամարդկանց միջև, սակայն նախադեպային իրավունքի երկրներում պրոֆեսիոնալ դատավորների 60%-ն արական սեռի ներկայացուցիչներ են: Ավելին, ավելի բարձր ատյանների դատարաններում և ավելի բարձր պաշտոններում կանանց տոկոսաբաժինը նվազում է. բարձրագույն դատական ատյաններում և գերագույն դատարանների դատավորների թվում տղամարդկանց և կանանց թվային հարաբերակցությունը 2:1 է: “Mapping the Representation of Women and Men in Legal Professions across the EU”, Directorate General of Internal Policies of the Union, 2017: Հասանելի է՝



Հայաստանի Հանրապետության դատական համակարգում կանանց ցածր ներկայացվածությունը, որը զգալիորեն զիջում է Եվրոպայի խորհրդի կողմից նախատեսվող նվազագույն կրիտիկական զանգվածին, վկայում է այն մասին, որ ոլորտում կան կանանց մասնակցությունը խոչընդոտող մի շարք գործոններ: Առկա անհավասարակշռությունը կարող է բացատրվել սոցիալական դիմադրությամբ և գենդերային մտահոգություններին արձագանքելու համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ կարողությունների սահմանափակությամբ:

Այս պատկերի հիմքում, ինչպես արդեն նշվել է ընկած են նաև պահպանվող կարծրատիպերը, որի հայ հասարակությունում առկայության մասին ընդգծվել է ՄԱԿ-ի կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի կողմից Հայաստանի վերաբերյալ հինգերորդ և վեցերորդ համակցված պարբերական զեկույցներում<sup>919</sup>: Հանձնաժողովը մտահոգություն է հայտնել առ այն, որ պահպանվում են ընտանիքում կանանց և տղամարդկանց դերերի վերաբերյալ խտրական կարծրատիպերը, ինչը սասանում է կանանց սոցիալական կարգավիճակը և նրանց կրթական և մասնագիտական կարիերան:

Վիճակագրական տվյալների և ոլորտի խնդիրների համալիր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կանայք դեռևս բավարար կերպով ներկայացված չեն բարձր պաշտոններում և հասարակությունում առկա են կարծրատիպեր կանանց՝ որպես որոշում կայացնողների դիտարկման հարցում<sup>920</sup>: Խնդրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պետք է ստեղծվեն նախապայմաններ կանանց ներուժի լիարժեք, արդյունավետ և թիրախային օգտագործման համար: Խնդրի լուծման նպատակով սկզբնական քայլեր կարող են հանդիսանալ հատուկ թիրախային ծրագրերի իրականացումը, օրինակ՝ խթանող միջոցառումների, քվոտաների կամ այլ մեխանիզմների նախատեսումը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային քայլեր՝*

- 1. հասարակությանն իրազեկել կանանց դերի, կանանց քաղաքական ներգրավվածության և հասարակական կյանքին կանանց մասնակցության կարևորության ընդգծման ուղղությամբ,*
- 2. բարձրացնել կանանց քաղաքական և իրավական գիտակցության մակարդակը, նպաստել երիտասարդ կանանց մոտ քաղաքական համակարգի, գործընթացների և արդյունավետ որոշումների ընդունման մեթոդաբանության վերաբերյալ մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը, երաշխավորել քաղաքական մրցակցության հավասար պայմաններ,*
- 3. զանգվածային լրատվության, տարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ:*

[https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596804/IPOL\\_STU\(2017\)596804\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2017/596804/IPOL_STU(2017)596804_EN.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>919</sup> Տե՛ս ԿՆԽՎԿ-ի հանձնաժողովի, Հայաստանի վերաբերյալ հինգերորդ և վեցերորդ համակցված պարբերական զեկույցների ամփոփիչ դիտարկումներ, պարբ. 14: Հասանելի է <https://www.refworld.org/docid/583863b34.html> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>920</sup> Տե՛ս Կանանց նկատմամբ խտրականության վերացման ՄԱԿ-ի կոմիտեի եզրափակիչ դիտարկումներ (CEDAW/C/ARM/CO/5-6), կետեր 20, 21:

## **5. Առողջության պահպանման իրավունքի սահմանափակման խնդիրներ**

Կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության խնդիրը Մարդու իրավունքների պաշտպանները արձանագրել են 2015 թվականից, որը համակարգային առումով շարունակել է լուծված չմնալ նաև 2021 թվականի ընթացքում:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը, հիմնականում մարզային և համայնքային բնակավայրերից, ցույց է տալիս, որ խնդրահարույց է առանձին բժշկական ծառայությունների հասանելիությունը, քանի որ կանայք կարող են հնարավորություն չունենալ լիարժեք կերպով հետազոտվել և ստանալ համապատասխան բուժօգնություն:

Խնդիրներ, հատկապես առաջանում են հաշմանդամություն ունեցող կանանց դեպքում, որոնք բժշկական օգնություն ստանալու սահմանափակումներ են ունենում՝ խտրականության ենթարկվելով տարբեր պատճառներով, այդ թվում՝ բժշկական ծառայությունների անմատչելիության, բժշկական անձնակազմերի ոչ լիարժեք պատրաստվածության և կարծրատիպային կամ ոչ պատշաճ վերաբերմունքի արդյունքում<sup>921</sup>:

Առողջապահության նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց կողմից սեռական և վերարտադրողական առողջության իրականացման ընթացքում առկա խոչընդոտների վերաբերյալ Առողջապահության նախարարությունը բողոքներ չի ստացել:

Վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու վերաբերյալ նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Առողջապահության նախարարության կողմից մշակվել և Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 2751-Լ հրամանով հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ուղեցույց»-ը, որը տեղադրված է Առողջապահության նախարարության պաշտոնական կայքում՝ [/https://www.moh.am/images/legal-806.pdf/](https://www.moh.am/images/legal-806.pdf/): Ռուսիային կարգով իրականացվում է անվճար և արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունը, որի շահառուների մեջ ընդգրկված են նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

<sup>921</sup> Խնդրի մասին մանրամասն տե՛ս սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում:

Կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշման 10-րդ կետի 4-րդ ենթակետի՝ անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման իրավունք է վերապահված՝ զույգերից մեկի մոտ հաշմանդամության առկայության դեպքում, եթե կնոջ մոտ չկա հղիությունը կրելու հակացուցում: Այս տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձնահատուկ քայլեր վերարտադրողական բժշկական ծառայությունները հաշմանդամություն ունեցող կանանց համար մատչելի դարձնելու ուղղությամբ չեն ձեռնարկվել: Իրականացված քայլերը, ընդհանուր առմամբ, առողջապահական ծառայությունների՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելուն ուղղված քայլերը ևս կարող են որոշակի առումով լուծել վերարտադրողական առողջության համար դիմած հաշմանդամություն ունեցող կանանց որոշակի խնդիրներ կամ ընդհանուր ծառայությունները, որոնք մատչելի են բոլոր անձանց համար: Սակայն դա չի ապահովում խնդիրների համակարգային լուծումներ:

Հատկապես խնդրահարույց է առողջապահական տեղեկությունների, առողջապահական օժանդակ նյութերի անմատչելիությունը տեսողական խնդիրներ ունեցող կանանց համար՝ հանդիսանալով մեծ խոչընդոտ հաշմանդամություն ունեցող անձանց առողջապահական իրավունքի իրականացման համար: Նման տեղեկատվության պատշաճ առկայության համար պահանջվում է ընտանիքի անդամների կամ ծանոթների աջակցությունը, ինչը կարող է խախտել գաղտնիության իրավունքը, էթիկայի կանոնները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի համատեղ դեռևս 2016 թվականին իրականացված ուսումնասիրությունը վկայում է, որ խտրական վերաբերմունքը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ սեռական և վերարտադրողական առողջության, այդ թվում՝ հղիության արհեստական ընդհատումների և հետաքորտային բուժօգնության իրավունքների առումով նույնպես կապված է կարծրատիպերի, ենթադրությունների և համատարած կեղծ համոզմունքների հետ, ըստ որոնց՝ հաշմանդամություն ունեցող անձինք չեն կարող օգտվել իրենց վերարտադրողական իրավունքներից, հատկապես եթե խոսքը մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց մասին է:

2021 թվականին ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս ծառայություններ մատուցելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացմանն ուղղված Առողջապահության նախարարության ձեռնարկումների հարցին ի պատասխան՝ նախարարությունից հայտնել են, որ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության հանրային առողջապահության կազմակերպման և կառավարման ամբիոնի կողմից մշակվել է բուժաշխատողների համար նախատեսված կատարելագործման կրթական ծրագիր, որում ներառված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, բժշկական օգնության ու

սպասարկման, դեղորայք ձեռք բերման իրավական հիմքերն ու բժիշկ հաշմանդամություն ունեցող անձ փոխհարաբերությունների բժշկա-իրավական ու բիոէթիկական կարգավորումները: Նշված դասընթացները ընդգրկված են եղել բուժաշխատողների կատարելագործման դասընթացների մոդուլներում և մասնակցել են 41 բուժաշխատող:

Կանանց ռեսուրսային կենտրոն հասարակական կազմակերպության կողմից ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համար կազմակերպվել է և Առողջապահության նախարարության կողմից կրեդիտավորվել է «Կանանց տարբեր խմբերի վերարտադրողական առողջության և իրավունքի ոչ խտրական մոտեցման սկզբունքները բուժաշխատողների մոտ» թեմայով սեմինար, որի ընթացքում քննարկվել են նաև հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողականության հարցերին վերաբերվող հարցեր: Սեմինարին մասնակցել է 200 բուժաշխատող:

Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների իրացման տեսանկյունից հատուկ քայլեր չեն ձեռնարկվում և խնդիրը համակարգային առումով մնում է չլուծված<sup>922</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ձեռնարկել համակարգային քայլեր՝*

1. կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության ապահովման նպատակով զարգացնել բժշկական փարբեր ծառայությունների մատուցման հասանելիությունը՝ ապահովելով կանանց լիարժեք կերպով հեղափոխվելու և համապատասխան բուժօգնություն ստանալու հնարավորությունը:

2. բարձրացնել կանանց առողջապահական ծառայությունների վերաբերյալ ծառայությունների մատուցում իրականացնող բուժաշխատողների մասնագիտական գիտելիքները և հմտությունները՝ երաշխավորելով ծառայությունների անխտրական պարզաճ իրականացում:

3. զանգվածային լրատվության միջոցներով, փարբեր քննարկումների և սեմինարների պարբերական իրականացման միջոցով կանանց իրազեկել իրենց առողջապահական իրավունքների վերաբերյալ:

## **6. Աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ**

Աշխատաշուկայում կանանց և տղամարդկանց անհավասարության խնդիրները 2021 թվականի ընթացքում շարունակում են համակարգային առումով չլուծված մնալ, ինչի մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնել է նաև նախորդ տարիների զեկույցներով:

Օրենսդրական դաշտի ուսումնասիրությունը վկայում է, որ խտրական դրույթներ իրավական ակտերը չեն պարունակում: Ավելին, տարբեր իրավական ակտերում, հատկապես աշխատանքային

<sup>922</sup> Առավել մանրամասն տե՛ս՝ սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» վերատառությամբ բաժնի «Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքներ» վերտառությամբ գլխում:

իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ ամրագրված է խտրականության արգելքի սկզբունքը:

Նախ, ՀՀ Սահմանադրությունը պարունակում է խտրականության արգելքի, կանանց և տղամարկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովման, ինչպես նաև կանանց և տղամարդկանց միջև փաստացի հավասարության խթանման մասին մի շարք կարևորագույն դրույթներ, որոնք ամրագրված են 29-րդ, 30-րդ, 86 և 87-րդ հոդվածներով:

Աշխատաշուկայում կանանց նկատմամբ խտրականության վերացման որոշակի դրույթներ է պարունակում նաև «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը, որն առավելագույնս ներառել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի մի շարք պահանջներ: Օրենքը, մասնավորապես, ամրագրում է «գենդերային խտրականություն» հասկացությունը, կարգավորում է քաղաքականության, պետական կառավարման, աշխատանքի և զբաղվածության, ձեռնարկատիրական գործունեության, առողջապահության, կրթության ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման խնդիրը, նախատեսում է սեռի հատկանիշով խտրականության դրսևորումներից քաղաքացիների պաշտպանության հնարավորությունը և կարգը, ինչպես նաև պատասխանատվություն խտրական գործելակերպի համար:

Այսպես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներից է աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ անկախ նրանց սեռից: Խտրականության արգելումը սահմանված է օրենսգրքի 3.1-րդ հոդվածով, համաձայն որի՝ աշխատանքային օրենսդրությամբ խտրականությունն արգելվում է: Խտրականություն է համարվում սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, աշխարհայացքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնության պատկանելության, գույքային վիճակի, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքների պատճառով ցանկացած ուղղակի կամ անուղղակի տարբերակում, բացառում կամ սահմանափակում, որի նպատակը կամ արդյունքը հանդիսանում է կոլեկտիվ և (կամ) անհատական աշխատանքային հարաբերությունների ծագման և (կամ) փոփոխման և (կամ) դադարման դեպքերում նվազ բարենպաստ վերաբերմունքի դրսևորումը կամ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ցանկացած իրավունքի ճանաչման և (կամ) իրականացման արգելքը կամ ժխտումը, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի տարբերակումը, բացառումը կամ սահմանափակումն օբյեկտիվորեն արդարացված են հետապնդվող իրավաչափ նպատակով, և այդ նպատակին հասնելու համար կիրառվող միջոցները համաչափ են ու անհրաժեշտ:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ աշխատանքի ընդունման հայտարարություններում (մրցույթներում) և աշխատանքային հարաբերությունների իրացման ընթացքում արգելվում է,

գործնական հատկանիշներից և մասնագիտական պատրաստվածությունից ու որակավորումից բացի, խտրականության հիմք հանդիսացող որևէ այլ պայման սահմանելը, բացառությամբ եթե դա բխում է աշխատանքին ներհատուկ պահանջներից:

Աշխատանքային օրենսգրքի 180-րդ հոդվածով սահմանվում է, որ աշխատանքների որակավորման համակարգի կիրառման դեպքում միևնույն չափանիշները պետք է կիրառվեն ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց նկատմամբ, և այդ համակարգը պետք է մշակված լինի այնպես, որ բացառի սեռային հատկանիշներով ցանկացած խտրականություն:

Աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման առարկա ունեցող իրավական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խտրական նորմեր չկան սահմանված և այդ իրավական ակտերը հիմնականում գենդերային չեզոք են (gender-neutral), սակայն հաճախ խնդիրներ առաջանում են այդ չեզոքության պարագայում, քանի որ հաշվի առնված չեն սեռային առանձնահատկությունները:

Իսնդիրն այն է, որ չնայած առկա օրենսդրական կարգավորումներին և իրավական ակտերում խտրական դրույթների բացակայությանը, կանայք շարունակում են աշխատանքային իրավունքի սահմանափակումների և խտրական վերաբերմունքի հանդիպել: Աշխատանքային իրավունքների սահմանափակման դեպքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դրանք հիմնականում կանանց աշխատանքային իրավունքների իրացման հարցում հավելյալ երաշխիքների բացակայության, ինչպես նաև կանանց զբաղվածության, որոշակի աշխատանքներում ներգրավվածության և առհասարակ կնոջ դերի շուրջ առկա կարծրատիպերի հետևանք են:

Բացի այդ, այսօր պրակտիկայում բազմաթիվ են դեպքերը, երբ գործատուները աշխատանքի ընդունելիս նախապատվությունը տալիս են այսպես ասած՝ «հուսալի» աշխատողի, որին անձնական կամ ընտանեկան հանգամանքները չեն շեղի իր պարտականությունների ճիշտ կատարումից: Հետևաբար, առավել նախընտրելի է ընդունել այնպիսի աշխատողի, որը «հոգսեր» չի պատճառի<sup>923</sup>:

Կինը դարձել է այս դիրքորոշումների «գոհը»: Ավանդական պատկերացումները կնոջ առջև դնում են մի շարք սահմանափակումներ: Նախ և առաջ՝ աշխատանքային ոլորտի առումով, քանի որ կան ոլորտներ, որտեղ կանանց ներկայությունը, մեղմ ասած, ողջունելի չէ: Եվ հակառակը, կան ոլորտներ, որոնք խիստ «կանացի» են<sup>924</sup>: Առավել ծանր դեպքերում՝ ավանդական պատկերացումները կնոջը հետ են պահում աշխատաշուկայում ընդգրկվելուց՝ նրան ցույց տալով

<sup>923</sup> Տե՛ս՝ [https://www.isec.am/images/gitakan\\_hraparakumner/hetazotakan\\_karoxutyunneri\\_zargacum.pdf](https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/hetazotakan_karoxutyunneri_zargacum.pdf) հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-դրությամբ:

<sup>924</sup> Տե՛ս՝ [https://www.isec.am/images/gitakan\\_hraparakumner/hetazotakan\\_karoxutyunneri\\_zargacum.pdf](https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/hetazotakan_karoxutyunneri_zargacum.pdf) հղումով էջ 120, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

տան խոհանոցի տեղը, ընտանիքի առօրյան կազմակերպելու ու երեխաների մասին հոգ տանելու պարտականությունների ճիշտ և ժամանակին իրականացումը<sup>925</sup>:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դեռևս փաստացի շարունակում է կանանց նկատմամբ ուղղահայաց (ծառայողական առաջխաղացման կամ բարձր պաշտոններ զբաղեցնելու ոչ հավասար հնարավորություն) և հորիզոնական (ըստ մասնագիտությունների և ոլորտների) խտրականությունը:

Աշխատանքային հարաբերությունների տարբեր փուլերում կանայք շարունակում են հանդիպել լրացուցիչ դժվարությունների՝ ինչպես աշխատանքի ընդունվելիս, այնպես էլ աշխատանքը երեխայի ծննդյան պարագայում պահպանելիս և աշխատավայրում առաջխաղացում ունենալիս, որը հանգեցնում է նաև մարդկային կապիտալի ոչ լիարժեք օգտագործման ու տնտեսական կորուստների ոչ միայն կանանց և նրանց ընտանիքների, այլև ամբողջ հասարակության համար:

Հայաստանում կանանց միայն կեսն է մասնակցում աշխատաշուկային, ինչը տղամարդկանց համեմատ 18%-ով ավելի ցածր ցուցանիշ է<sup>926</sup>: Այդ բացի պատճառներից մեկը՝ գենդերային նորմերով պարտադրված կանանց՝ որպես տնային տնտեսությունների խնամակալների դերակատարումն է: Կանանց համար հիմնական խոչընդոտները հաճախ պայմանավորված են ընտանիքի խնամքի հետ կապված պարտականությունների և աշխատանքային գործունեության համադրման դժվարություններով, ինչն էլ հանգեցնում է աշխատանքի շուկայում և զբաղվածության ոլորտում կանանց ցածր մասնակցության, նրանց նվազ եկամուտների և անհավասարության այլ դրսևորումներ:

Կանայք շատ հաճախ բախվում են խնդիրների աշխատանքի ընտրության հարցում: Աշխատանքի թափուր տեղերի համար տրվող հայտարարությունները երբեմն պարունակում են խտրական դրսևորումներ: Դեռևս շարունակվում են աշխատանքի այնպիսի հայտարարությունների շրջանառումը, որտեղ աշխատանքի ընդունման հիմնական նախապայմանն է, օրինակ՝ կնոջ տարիքը կամ բարետես արտաքինը: Երբեմն հայտարարությունները կարող են չպարունակել ակնհայտ խտրական նախապայմաններ, սակայն թափուր աշխատատեղի համար մրցույթի գործընթացը և ընտրությունը կատարվում է հենց այդ խտրական մոտեցմամբ, երբ նախապատվություն է տարվում կնոջ արտաքինին կամ այլ արհեստական նախապայմաններին, որոնք աշխատանքի իրականացման համար չափորոշիչներ չեն: Որոշ դեպքերում խտրականության դրսևորման հետևանքով կնոջն աշխատանքի չեն ընդունում, և նախապատվություն է տրվում ավելի ցածր որակավորում ունեցող տղամարդ դիմորդին, օրինակ, հաշվի առնելով կնոջ հնարավոր մայրանալու հետևանքով առաջացող աշխատանքային իրավահարաբերությունների հարցերը:

<sup>925</sup> Տե՛ս՝ [https://www.isec.am/images/gitakan\\_hraparakumner/hetazotakan\\_karoxutyunneri\\_zargacum.pdf](https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/hetazotakan_karoxutyunneri_zargacum.pdf) հղումով էջ 120, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>926</sup> Տե՛ս՝ [https://oxygen.org.am/wp-content/uploads/2020/05/Policy-briefs\\_ARM.pdf](https://oxygen.org.am/wp-content/uploads/2020/05/Policy-briefs_ARM.pdf) էջ 5, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Նշվածը հաշվի առնելով՝ գործատուները, վախենալով կնոջ՝ մայրության արձակուրդի գնալու հավանականությունից, նախապատվությունը տալիս են այլ թեկնածուի:

Կանանց իրավունքների պաշտպանության առումով՝ առանցքային նշանակություն ունի ՀՀ աշխատանքային օրենսգրքի 3.1-րդ հոդվածը, որն ամրագրում է խտրականության արգելքը: Օրենսդրական կարգավորումների հաշվառմամբ, այդուհանդերձ, ոլորտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ զուտ օրենսդրական մակարդակում կարգավորումների նախատեսմամբ խնդիրները չեն լուծվում և համալիր միջոցառումների կարիք է առաջանում:

Գործատուների կողմից ցուցաբերվող խտրականությունը լրացուցիչ գործոն է կանանց աշխատուժի շուկայում մասնակցության սահմանափակման գործում: Ու թեպետ խտրականությունն արգելող սկզբունքներն ամրագրված են ՀՀ սահմանադրությունում և ՀՀ աշխատանքային օրենսգրքում, բայց միշտ չէ, որ դրանք գործում են:

Կանայք, աշխատանքի ընդունվելուց զատ, խնդիրներ են ունենում նաև մայրության արձակուրդից վերադառնալիս: Համակարգային այս հարցը կանանց համար աշխատաշուկայում մրցակցության խոչընդոտներ է ստեղծում, որը պետք է դիտարկել երկու մակարդակներում: Նախ, ծնողները խնդիրներ են ունենում երեխայի խնամքի կազմակերպման հարցում, ապա նրանք բարդությունների են հանդիպում երեխայի խնամքի արձակուրդից վերադառնալիս: Խնդիրն այն է, որ այդ պարագայում նրանք իրենց կարողություններով օբյեկտիվորեն կարող են զիջել գործընկերներին:

Խնդիրը նրանում է, որ նախ երեխայի խնամքի կազմակերպման բարդություններ են առաջանում այն պատճառով, որ նախադպրոցական կրթական հաստատությունները երեխաների ընդունելությունը հազվադեպ են կազմակերպում մինչև երեխայի 2-3 տարեկան լրանալը, իսկ աջակցության նմանատիպ այլ ծրագրերը բացակայում են: Նշվածի հետևանքով կինը շատ հաճախ կանգնում է մայրանալու կամ աշխատելու ընտրության առջև, ինչը իր բացասական ազդեցությունն ու հետևանքները ունենում է ծնելիության ցուցանիշի վրա՝ առաջացնելով ժողովրդագրական խնդիրներ: Ավելին, աշխատանքը և երեխայի խնամքը համատեղելը գործնականում խնդիրներ է առաջացնում նաև այն պատճառով, որ նախադպրոցական կրթական հաստատություններում երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է մինչև ժամը 17:00-ն, իսկ աշխատանքային ժամերը Հայաստանում մինչև 18:00-ն են: Նշվածը հավելյալ բարդություններ է ստեղծում աշխատող ծնողների, հատկապես՝ աշխատող մայրերի համար:

Բացի այդ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների կարճ աշխատաժամերի պատճառով երեխաների ծնողների աշխատանքային ժամերի հետ անհամապատասխանության հարցի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում երեխաներին պահելու տևողություն է սահմանված ժամը 8:30-17:30-ն: Համաձայն Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ մինչև նոր կորոնավիրուսային համավարակը մանկապարտեզներում գործել են երկարօրյա խմբեր 17:30-ից 19:30 ժամերին: Համավարակի ավարտից հետո մանկապարտեզների երկարօրյա խմբերը



կվերագործարկվեն: Սակայն խնդիրն այն է, որ նախադպրոցական ուսումնական հաստատություններում երկարօրյա ծառայությունը վճարովի է և առկա է միայն որոշ մանկապարտեզներում, այսինքն՝ այն հասանելի է միայն անձանց նեղ շրջանակի համար՝ ծնողների համար ավելացնելով հավելյալ ֆինանսական բեռ:

Պետք է նաև նշել, որ ՀՀ կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 665-Ն որոշման 23-րդ հավելվածով հաստատված մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրման ծրագրի իրականացման կարգը դրական է աշխատանքին զուգահեռ երեխայի խնամքի իրականացման համար: Սակայն ծրագրում ընդգրկվելու համար անհրաժեշտ են մի շարք նախապայմաններ, ինչպես նաև այս աջակցությունը սահմանափակ է և չի ընդգրկում հասարակության լայն հատվածին:

Այսպես, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձինք, որոնք մինչև երեխայի երկու տարին լրանալը ցանկանում են վերադառնալ աշխատանքի՝ երեխայի խնամքը ծրագրի միջոցով կազմակերպելով, պետք է նախապես հաշվառված լինեն իրենց բնակության վայրի զբաղվածության տարածքային կենտրոններում: Ծրագրում ընդգրկվել ցանկացող անձանց թիվը ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի թիվը գերազանցելու դեպքում (նախատեսված է ծրագիրն իրականացնել 200 շահառուի համար) ծրագրում ընդգրկվելու առաջնահերթություն տրվում է հետևյալ անձանց՝

1) ում միջին ամսական աշխատավարձը չի գերազանցում Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից հրապարակված՝ Հայաստանի Հանրապետությունում ձևավորված նախորդ տարվա միջին ամսական աշխատավարձի չափը,

2) ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ են կամ

3) ունեն մինչև երկու տարեկան երկու և ավելի երեխա կամ

4) ունեն երեք և ավելի երեխա կամ

5) ունեն հաշմանդամություն ունեցող երեխա:

Նշված պայմանների հավասարության կամ բացակայության դեպքում ծրագրում ընդգրկվելու նախապատվությունը տրվում է տարածքային կենտրոնում առավել երկար ժամկետով հաշվառված անձանց: Սակայն խնդիրն այն է, որ այս ծրագիրը վերաբերում է միայն սահմանափակ թվով շահառուներին, ինչի արդյունքում համակարգային առումով խնդիրը շարունակել է արդիական լինել:

Տղամարդկանց և կանանց միջև զբաղվածության տոկոսի հարաբերակցության կրճատման հավասարեցման նպատակով 2021 թվականի ընթացքում իրականացված ծրագրերի հարցի վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանել են, որ

2021 թվականի ընթացքում իրականացվել են կանանց զբաղվածության ապահովման 2 հիմնական ծրագրեր՝ «Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում» (2021թ.՝ տարեսկզբից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում, որի ընթացքում ծրագրում ընդգրկվել են 106 կանայք, որից 7-ը ծրագրի արդյունքում տեղավորվել է աշխատանքի կամ դարձել է ինքնազբաղված) և «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող՝ աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալն աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» (2021թ. տարեսկզբից դեկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում, ծրագրում ընդգրկվել են 564 կանայք):

Բացի այդ, կանայք կարող են օբյեկտիվորեն անմրցունակ դառնալ կամ զիջել իրենց գործընկերներին՝ պայմանավորված երեխայի խնամքի համար արձակուրդի պատճառով որոշակի ժամանակահատված չաշխատելու հանգամանքով:

Խնդրի ուղղությամբ դրական ձեռնարկում կարող է լինել երեխայի խնամքի համար արձակուրդից վերադարձած կանանց համար կարողությունների զարգացման վերապատրաստումներ կազմակերպելը: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ թեպետ հանրային ծառայողների՝ վերապատրաստումներին մասնակցությունը պարտադիր է, այն իրականացվում է վերապատրաստման կարիքների գնահատման վրա հիմնված անհատական ծրագրի կազմմամբ, սակայն այս պարագայում չի ապահովվում վերապատրաստման թիրախավորված ու ժամանակին իրականացումը, այսինքն՝ հաշվի չեն առնվում այն աշխատողների անհատական կարիքները, որոնք աշխատանքի են վերադառնում հղիության և ծննդաբերության, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդից: Վերապատրաստման թիրախավորված, ժամանակին ու հրատապության կարգով չապահովելու հետևանքով կանայք, օբյեկտիվորեն մրցունակ չլինելով, հաճախ կորցնում են իրենց աշխատանքը:

Աշխատանքի վերադառնալու պարագայում աջակցության, կարողությունների կամ գիտելիքների զարգացման ծրագրերով նման թիրախային վերապատրաստումներ չեն իրականացվում հանրային և մասնավոր ոլորտներում, ինչը կարևոր է նպատակային արձակուրդ մեկնած անձանց համար աշխատանքից երկար բացակայելուց հետո առավելագույնս արդյունավետ աշխատանքում վերաինտեգրվելու և կարողությունների ու գիտելիքների զարգացմամբ հավասար մրցակցության հնարավորություն ունենալու համար:

Համաձայն 2020 թվականին իրականացված հետազոտության արդյունքների՝ Հայաստանում ժամային վարձատրության գենդերային չճշգրտված խզվածքը գնահատվում է 23.1%: Ամսական աշխատավարձով հաշվված չճշգրտված խզվածքը 40% է, որն արտացոլում է և՛ վարձատրության, և՛ աշխատած ժամերի գենդերային խզվածքները: Մասնավորապես, պարզվում է, որ Հայաստանում կանայք 14.3%-ով ավելի քիչ ժամեր են աշխատում, քան տղամարդիկ, ինչով էլ բացատրվում է ամսական աշխատավարձի գենդերային խզվածքի մեկ երրորդ մասից մինչև կեսը (42%):

Հայաստանում ժամային վարձատրության գենդերային ճշգրտված խզվածքը գնահատվում է 28.4%<sup>927</sup>: Այն ավելի մեծ է, քան վարձատրության չճշգրտված խզվածքը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ աշխատող կանայք ունեն աշխատաշուկայի ավելի լավ բնութագրեր (օրինակ՝ կրթություն) քան տղամարդիկ: Այսինքն, աշխատաշուկայում առկա է կանանց առումով դրական ընտրության ավելի մեծ պոտենցիալ կամ որ նույնն է՝ աշխատանքի շուկայում ընտրվելու ավելի մեծ հավանականություն, թեև չաշխատող՝ գործազուրկ և տնտեսապես ոչ ակտիվ կանայք նույնպես ունեն բավականին բարձր կրթական մակարդակ: Հետևաբար, Հայաստանում կանանց և տղամարդկանց որակավորումների տարբերությամբ հնարավոր չէ բացատրել վարձատրության գենդերային խզվածքը: Ճիշտ հակառակը՝ խզվածքն ավելի է մեծանում, երբ դրանք հաշվի են առնվում: Խզվածքի մեծությունը չի փոխվում անգամ ոլորտների և զբաղմունքների տարբերությունները հաշվի առնելու դեպքում, այսինքն՝ ոլորտային և (կամ) մասնագիտական սեգրեգացիան ևս չի բացատրում այս խզվածքը:

Հայաստանում վարձատրության գենդերային ճշգրտված խզվածքը՝ զտված ընտրողականության գործոնից, գնահատվում է մոտ 10%: Այսինքն, երբ հաշվի են առնվում անհատական, աշխատանքային բնութագրերը և ընտրողականության գործոնը, խզվածքը նվազում է: Այսպիսով, սա վարձատրության մնացորդային գենդերային խզվածքն է, որը կարող է վերագրվել աշխատանքի շուկայում խտրականությանը և չդիտարկելի, չբացատրելի գործոնների ազդեցությանը<sup>928</sup>:

Աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրականացման ընթացքում կանայք ենթարկվում են նաև հորիզոնական խտրականության, ինչը ենթադրում է կանանց համար սահմանափակումներ՝ ըստ մասնագիտությունների և աշխատանքի ոլորտների: Դեռևս առկա են կնոջը «հարիր» և «հարմար» աշխատատեղերի մասին հանրային կարծրատիպեր: Ընդհանուր առմամբ, կանանց թվաքանակը, հատկապես մեծ է կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական ապահովության, առևտրի, մշակող արդյունաբերության, իսկ տղամարդկանցը՝ պետական կառավարման և պաշտպանության, առևտրի, մշակող արդյունաբերության և շինարարության ոլորտներում:

Բացի այդ, որոշ մասնագիտություններում և պետական ծառայության տեսակներում կանանց մասնակցությունը շարունակում է շատ նվազ մնալ, ինչի մասին են վկայում պաշտոնական վիճակագրական տվյալները: Ոլորտի ուսումնասիրությունները վկայում են, որ որոշ ծառայության տեսակներ կամ մասնագիտություններ շարունակում են կանանց համար, այսպես կոչված, ոչ ընդունելի և հարմար համարվել կարծրատիպային ընկալումների հետևանքով:

<sup>927</sup> Տե՛ս՝ [https://armstat.am/file/article/analysis\\_of\\_the\\_gender\\_pay\\_gap\\_armenia\\_am.pdf](https://armstat.am/file/article/analysis_of_the_gender_pay_gap_armenia_am.pdf) հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>928</sup> Տե՛ս «Հայաստանի աշխատաշուկայում վարձատրության գենդերային խզվածքի և գենդերային անհավասարության վերլուծություն» հետազոտությունը, հասանելի է <https://www2.unwomen.org/-/media/field%20office%20georgia/attachments/publications/2020/analysis%20armenian.pdf?la=en&vs=532> հղումով, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ, էջեր 6-7:

Այսպես, ըստ ՀՀ քննչական կոմիտեի տվյալների՝ ՀՀ քննչական կոմիտեի իգական սեռի ներկայացուցիչները 93-ն են, որը կազմում է ծառայողների 14%-ը: Իգական սեռի ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց 66.6%-ը ծառայում է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի, իսկ 33.3%-ը մարզային ստորաբաժանումներում: Վերջիններս, ըստ թվային տվյալների, ունեն հետևյալ դասային աստիճանները և զբաղեցնում են հետևյալ պաշտոնները՝ արդարադատության առաջին դասի խորհրդական՝ 4 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ 9 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ 11 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, առաջին դասի խորհրդական՝ 13 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, երկրորդ դասի խորհրդական՝ 24 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, երրորդ դասի խորհրդական՝ 32 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, ստորաբաժանման պետ՝ 1 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, ստորաբաժանման պետի տեղակալ՝ 1 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, ՀԿԳ ավագ քննիչ՝ 5 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, ՀԿԳ քննիչ՝ 14 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, ավագ քննիչ՝ 33 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ, քննիչ՝ 39 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձ:

Ավելին, 2021 թվականին Կոմիտեում ծառայության է նշանակվել է 116 անձ, որից 19-ը իգական սեռի ներկայացուցիչ են: Վերոնշյալ ժամանակահատվածում ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի ստորաբաժանումներում ծառայության նշանակվել է 8 իգական, 38 արական (նշանակվածների 39.6%-ը), իսկ ՀՀ մարզային, ԱՀ ստորաբաժանումներում 19 իգական և 59 արական (նշանակվածների 67.2%-ը) սեռի ներկայացուցիչ:

ՀՀ քննչական կոմիտեի պարզաբանման համաձայն՝ 2021 թվականի դրությամբ Կոմիտեի իգական սեռի ներկայացուցիչ հանդիսացող քննիչների թիվը բավարար է ըստ անհրաժեշտության սեռական բռնության, երեխաների և կանանց ներգրավվածությամբ գործերի քննության համար:

ՀՀ դատախազությունում տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունվար 1-ի դրությամբ ՀՀ դատախազությունում կին դատախազները կազմում են գործող դատախազների 17 տոկոսը, ՀՀ գլխավոր դատախազությունում՝ ՀՀ գլխավոր դատախազության դատախազների ընդհանուր թվի 20 տոկոսը, Երևան քաղաքի և վարչական շրջանների կին դատախազները՝ Երևան քաղաքի և վարչական շրջանների դատախազների ընդհանուր թվի 22 տոկոսը, ՀՀ մարզերի դատախազությունների կին դատախազները՝ ՀՀ մարզերի դատախազությունների դատախազների ընդհանուր թվի 12 տոկոսը, ՀՀ զինվորական դատախազությունում՝ ՀՀ զինվորական դատախազության դատախազների ընդհանուր թվի 11 տոկոսը:

Ավելին, ՀՀ դատախազության համակարգում 2021 թվականին նշանակված կին դատախազները կազմում են 2021 թվականին նշանակված դատախազների ընդհանուր թվի 25 տոկոսը: 2021 թվականին նշանակված բոլոր կին դատախազներին շնորհվել է 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան, բացառությամբ մեկի՝ համապատասխանեցվել է 2-րդ դասի խորհրդականի դասային աստիճանին: 2021 թվականին նշանակված բոլոր կին դատախազները նշանակվել են ստորաբաժանման (դատախազության) դատախազի պաշտոնում:

Հարկ է նշել, որ ըստ ՀՀ դատախազության տվյալների՝ համակարգում կանանց նկատմամբ որևէ խտրական վերաբերմունք կամ մոտեցում չկա և այդ մասին է վկայում այն հանգամանքը, որ տարեցտարի էականորեն ավելանում է համակարգում պաշտոնի նշանակված կին դատախազների թվաքանակը: Այսպես՝ վերջին 6 տարիներին համակարգում նշանակվել է 40 կին դատախազ, ընդ որում՝ եթե 2016 թվականին կին դատախազի նշանակում չի եղել, ապա 2017 թվականին նշանակվել է 3 կին դատախազ, 2020 թվականին՝ 8 կին դատախազ, իսկ 2021 թվականին՝ 19 կին դատախազ, որը կազմում է 2021 թվականի պաշտոնի նշանակված դատախազների 25%-ը:

ՀՀ պաշտպանության նախարարության տվյալների համաձայն՝ ՀՀ զինված ուժերի պայմանագրային զինծառայողների ընդհանուր թվաքանակի 9.5%-ը կազմում են կին զինծառայողները: Կին զինծառայողների ընդհանուր թվաքանակում՝ ըստ պաշտոնային խմբերի դասակարգման կին զինծառայողների քանակական բաշխվածությունը հետևյալն է. սպայական կազմ՝ 14.3%, ընդ որում՝ ավագ սպայական կազմ՝ 4.7%, կրտսեր սպայական կազմ՝ 9.6%, ավագ ենթասպայական կազմ՝ 34.9%, պայմանագրային կրտսեր ենթասպայական և շարքային կազմերը՝ 50.8%: Կին զինծառայողների թվաքանակը Երևանում տեղաբաշխված զորամասերում կազմում է 34.6%, իսկ մարզերում՝ 65.4%:

Ի պատասխան զինված ուժերում կանանց ցածր ներգրավվածության խնդրի ուսումնասիրության իրականացման և համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման ուղղությամբ ձեռնարկված քայլերի վերաբերյալ հարցման՝ ՀՀ պաշտպանության նախարարությունից հայտնել են, որ որևէ իրավական ակտով սահմանված չէ տոկոսային ցուցանիշ, որի դեպքում հնարավոր լիներ գնահատել ներգրավվածության աստիճանը:

Զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում իրականացվում են կանանց ներգրավման խթանմանն ուղղված քարոզչական միջոցառումներ, հատուկ ուշադրություն դարձնելով խաղաղապահ առաքելություններին մասնակցող ստորաբաժանումներում կանանց ընդգրկմանը:

ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1978-Լ որոշման հավելված 2-ի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի 48-րդ կետի շրջանակներում, զինված ուժերում կանանց ծառայության վերաբերյալ հանրության իրազեկումն ապահովելու նպատակով Երևանում Եվրոպայի խորհրդի և ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հետ համագործակցությամբ նախապատրաստվել և ցուցադրվել է 3 տեսաձայնագրություն, հրատարակվել է զինված ուժերում կանանց իրավունքների վերաբերյալ տեղեկատվական գրքույկ, ինչպես նաև իրազեկիչ այլ նյութեր են ուղարկվել զորքեր: Ուսումնական հաստատություններ այցելությունների ընթացքում անդրադարձ է արվել նաև իգական սեռի ներկայացուցիչների զինվորական ծառայությանը, ցուցադրվել են փաստագրական ֆիլմեր: 2019 թվականի համեմատ արձանագրվել է կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի պայմանագրային կին զինծառայողների թվաքանակի ավելի քան 4%-ով աճ<sup>929</sup>:

<sup>929</sup> Տե՛ս նաև սույն հաղորդման «Կանայք զինված ուժերում» գլուխը:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ ՀՀ ոստիկանությունում կին ծառայողները կազմում են ՀՀ ոստիկանության ծառայողների 9%-ը: Համաձայն ներկայացված տվյալների՝ Երևան քաղաքի վարչությունում կին ծառայողները կազմում են Երևան քաղաքի վարչության ծառայողների 11%-ը, ՀՀ ոստիկանության Արագածոտնի մարզային վարչությունում ծառայողների 6%-ը, ՀՀ ոստիկանության Արարատի մարզային վարչությունում ծառայողների 8%-ը, ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչությունում ծառայողների 12%-ը, ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչությունում ծառայողների 3%-ը, ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչությունում ծառայողների 6%-ը, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությունում ծառայողների 10%-ը, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչությունում ծառայողների 9%-ը, ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչությունում ծառայողների 8%-ը, ՀՀ ոստիկանության Վայոց Ձորի մարզային վարչությունում ծառայողների 3%-ը, ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում ծառայողների 7%-ը կանայք են:

Միաժամանակ, ՀՀ ոստիկանությունում զբաղեցրած պաշտոնների խմբերի ներկայացված տվյալների համաձայն՝ գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք կազմում են գլխավոր խմբի պաշտոններ զբաղեցնող ծառայողների 6%-ը, ավագ խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք՝ 11%, միջին խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք՝ 14%, կրտսեր խմբի պաշտոններ զբաղեցնող կանայք՝ 4%:

Ի պատասխան այն հարցին, թե ինչ քայլեր են ձեռնարկվել 2021 թվականի ընթացքում համակարգում կանանց ներգրավվածության բարձրացման ուղղությամբ և արդյոք նրանց թիվը ներկայում բավարար է ըստ անհրաժեշտության իգական սեռի ներկայացուցիչ ոստիկանների ներգրավման համար՝ ՀՀ ոստիկանությունից ստացվել է պատասխան, որ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների մասնագիտացված ծառայությունում իրենց գործառույթները իրականացնող իգական սեռի ներկայացուցիչների թիվը բավարար է սեռական բռնության, երեխաների և կանանց ներգրավվածությամբ դեպքերի քննության ընթացքում ներկայացուցիչ հանդիսացող ոստիկանների ներգրավման համար:

Ըստ ՀՀ ոստիկանության տվյալների՝ Ոստիկանության համակարգում կանանց ներգրավվածությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել են իգական սեռի ներկայացուցիչների ընդունելության և տարբեր ծառայությունների տեղաբաշխման աշխատանքներ: Մասնավորապես՝ 2021թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունում ծառայության են ընդունվել 59 կին ծառայողներ (2020թ.՝ 54), այդ թվում ՀՀ ոստիկանության կրթահամալիրում որպես սովորողներ՝ 40 (2020թ.՝ 29), նույն տարվա ընթացքում ոստիկանության կրտսեր խմբի 15 կին ծառայողներ առաջ են քաշվել սպայական պաշտոնների (2020թ.՝ 24):

Միաժամանակ նշվել է, որ 2020թ. համեմատությամբ 2021թ. ընթացքում կանանց և տղամարդկանց ներգրավվածության տոկոսային հարաբերակցությունը ոստիկանության ծառայողների շրջանում փոփոխության չի ենթարկվել:

Բարձրագույն դատական խորհրդի տվյալների համաձայն՝ 2022 թվականի հունվարի 12-ի դրությամբ դատավորների ընդհանուր թիվը կազմում է 260, որոնցից կին դատավորների թիվը կազմում է 77: Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 25 դատավոր, ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 5 դատավոր, ՀՀ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 4 դատավոր, ՀՀ Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 2 դատավոր, ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 3 դատավոր, ՀՀ Տավուշի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 2 դատավոր, ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 3 դատավոր, ՀՀ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 4 դատավոր, ՀՀ Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում՝ 2 դատավոր, ՀՀ Վարչական դատարանում՝ 5 դատավոր, Սնանկության դատարանում՝ 5 դատավոր, ՀՀ Վճռաբեկ դատարանում՝ 4 դատավոր, ՀՀ Վերաքննիչ քրեական դատարանում՝ 4 դատավոր, ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարանում՝ 6 դատավոր, ՀՀ Վերաքննիչ վարչական դատարանում՝ 3 դատավոր: 2021 թվականի ընթացքում ՀՀ դատական իշխանությունը համալրվել է 35 դատավորով, որոնցից 16-ը կին, 19-ը տղամարդ: Կին դատավորների ներգրավվածությունը ներկայումս կազմում է մոտ 30%:

Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 109-րդ հոդվածի 5-րդ մասով, այն է՝ եթե որևէ սեռի դատավորների թիվը պակաս է դատավորների ընդհանուր թվի 25 տոկոսից, ապա դատավորների թեկնածուների հավակնորդների ցուցակում երաշխավորվում է առավելագույն, սակայն ոչ պակաս, քան Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ծայների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ ստացած այդ սեռի ներկայացուցիչների համար մինչև 50 տոկոս տեղ, սահմանված է սեռային համամասնության ապահովմանն ուղղված դրույթ: Սակայն նախ 25 տոկոս է սահմանված, ինչպես նաև սահմանված նվազագույն տոկոսը պահպանվում է միայն դատավորների ընդհանուր թվի համամասնության տվյալների դեպքում:

Բարձրագույն դատական խորհրդի վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր ատյանների և մարզերում դատավորների սեռային համամասնության տվյալներ ուսումնասիրությամբ՝ պետք է նշել, որ մարզերում կանանց ցածր ներկայացվածությունը ավելի խնդրահարույց է:

Այսպիսով, աշխատանքային տարբեր ոլորտներում սեռային համամասնության խնդրի ուսումնասիրությամբ կարելի է փաստել, որ քանակական տվյալներն առավել ցայտուն են դարձնում կանանց ներգրավվածության ցածր մակարդակի համակարգային նշված խնդիրը, որը տարածում ունի բոլոր ոլորտներում և մակարդակներում: Մի շարք ոլորտներ դեռևս շարունակում են կանանց համար անմատչելի մնալ՝ առաջացնելով աշխատանքային իրավունքների սահմանափակման խնդիրներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. խթանել կանանց հնարավորությունները՝ հաշվարկելով վերջիններիս կրթական, տնտեսական, սոցիալական ներուժը և կիրառելիությունն աշխատաշուկայի համապատասխան հատվածներում,

2. մշակել և ներդնել աշխատաշուկայում տղամարդկանց և կանանց միջև մրցակցության ապահովման բաց և արդյունավետ մեխանիզմներ,

3. նախատեսել ծրագրեր մայրության արձակուրդից վերադարձող կանանց՝ աշխատավայրում վերաինտեգրելու ուղղությամբ,

4. նախատեսել առավել արդյունավետ մեխանիզմներ երեխաների խնամքը նախադպրոցական ուսումնական հաստատություններում մինչև ծնողի աշխատանքային ժամի ավարտը կազմակերպելու համար,

5. զանգվածային լրատվական միջոցներով նպաստել աշխատաշուկայում կանանց դերի վերաբերյալ գոյություն ունեցող կարծրատիպերի վերացմանը,

6. փոփոխել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» թիվ 2308-Ն որոշումը՝ դրանում առկա կարգավորումները համապատասխանեցնելով Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման ՄԱԿ-ի կոմիտեի առաջարկներին:



**ԲԱԺԻՆ 15. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ**

Երեխաների իրավունքների պաշտպանությունը մշտապես գտնվել է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո՝ սկսած մանկական աղքատության հիմնախնդիրներից, ընտանիքում ապրելու երեխայի իրավունքից մինչև հաստատություններում երեխաների իրավունքներ:

Երեխաների իրավունքներին առնչվող հարցերին, թե համայնքային և թե պետական մակարդակում, առավել արդյունավետ արձագանքելու նպատակով, Պաշտպանի աշխատակազմում 2016 թվականից գործում է առանձին՝ Երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի առաջարկության հիման վրա «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքով սահմանվել է, որ «Պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների խախտումների կանխարգելում և պաշտպանություն»: Այս կարգավիճակը Մարդու իրավունքների պաշտպանին վերապահելու առաջարկով էր հանդես եկել նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակը:

Մեծ ուշադրության է արժանի նաև 2018 թվականին հրապարակված «ՀՀ կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտականությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը: Զեկույցի նպատակն էր ներկայացնել, թե որքանով է Հայաստանի Հանրապետությունը կատարել և շարունակում կատարել անդամ պետությունների կողմից Կոնվենցիայի և կից երկու արձանագրությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող Երեխաների իրավունքների կոմիտեի՝ 2013 թվականի ամփոփիչ դիտարկումներում տեղ գտած առաջարկությունները: Զեկույցն ընդգրկում է 2013 թվականից մինչև 2017 թվականի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածը, որի շրջանակում ուսումնասիրվել են կոմիտեի երեք ամփոփիչ դիտարկումները, վեր են հանվել դրանցում ներկայացված առաջարկությունները և դրանցից յուրաքանչյուրի կատարման վերաբերյալ ներկայացվել են Պաշտպանի գնահատականները և առաջարկությունները:

Պաշտպանի աշխատակազմը մասնակցում է Երեխաների օմբուդսմենտների եվրոպական ցանցի աշխատանքներին, որը նպատակ ունի խրախուսել «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի լիարժեք իրականացումը, տեղեկատվության և լավագույն փորձի փոխանակումը<sup>930</sup>: Մարդու իրավունքների պաշտպանը Երեխաների օմբուդսմենտների եվրոպական ցանցի լիիրավ

<sup>930</sup> Տե՛ս Երեխաների օմբուդսմենտների եվրոպական ցանցի կայքէջը, հասանելի է <http://enoc.eu/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

անդամ է: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը մասնակցել է նաև Եվրոպայի խորհրդի երեխաների իրավունքների կոմիտեի աշխատանքներին:

Ակտիվ մասնակցություն է ապահովվել նաև Անչափահասների արդարադատության խորհրդի նիստերին:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը՝ համագործակցելով «Կասպերսկի» ընկերության հետ 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կազմակերպել է «Մեծահասակները և երեխաները թվային աշխարհում» խորագրով սեմինար հանրակրթական դպրոցների ինֆորմատիկա առարկայի ուսուցիչների համար: Սեմինարին մասնակցել են ինֆորմատիկայի ուսուցիչներ Երևանի շուրջ 100 հանրակրթական դպրոցներից: Միջոցառմանը քննարկվել են թվային միջավայրում երեխաների անվտանգությանը և նրանց իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցեր<sup>931</sup>:

Աշխատակազմի ներկայացուցիչները 2021 թվականի հունիսի մեկին կազմակերպել են միջոցառում երեխաների համար, որին մասնակցել են հանրակրթական ու հատուկ դպրոցների սաներ, Արցախից տեղահանված երեխաներ, հաշմանդամություն ունեցող երեխաներ, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված «Փոխիր աշխարհը» արշավի մասնակիցներ: Միջոցառումն ուղեկցվել է Ժեստերի լեզվով թարգմանությամբ, իսկ հյուրասիրությունը երեխաների համար իրականացվել է «Արեգակ» ներառական փուռ-սրճարանի հետ համագործակցությամբ: Միջոցառման կազմակերպմանը աջակցել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը<sup>932</sup>:

2021 թվականի դեկտեմբերի 23-ին ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում բնակվող շուրջ 50 սոցիալապես անապահով ընտանիքներում բնակվող երեխաների համար իրականացնել է միջոցառում՝ հանձնելով երեխաներին նվերներ: Միջոցառումը իրականացվել է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի և Վորլդ Վիժն կազմակերպությունների աջակցությամբ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականին մասնակցել է Օմբուդսմանների եվրասիական դաշինքի 6-րդ նիստին, որը նվիրված է եղել երիտասարդների իրավունքների պաշտպանության հարցերին: Նիստին մասնակցել են նաև Ռուսաստանի, Իրանի, Սերբիայի, Ղազախստանի, Ղրղզստանի և մի շարք այլ երկրների մարդու իրավունքների պաշտպանության ազգային հաստատությունների ղեկավարներ, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության պետական մարմինների ղեկավարներ: Նիստին ներկայացվել են Պաշտպանի հաստատության փորձը՝ հատուկ ուշադրություն դարձնելով համացանցից երեխաների անվտանգ օգտվելու կանոնների վերաբերյալ իրազեկումներին:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին երեխաների իրավունքների վերաբերյալ հասցեագրվել է 904 գրավոր և բանավոր բողոք: Բողոքները, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում

<sup>931</sup> Տե՛ս միջոցառման մասին, հասանելի է <https://ombuds.am/am/site/ViewNews/1970> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>932</sup> Միջոցառման վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս <https://ombuds.am/am/site/ViewNews/1722> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

վերաբերել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեությանը, երեխայի՝ ծնողի հետ շփվելու իրավունքի իրացմանը, դպրոցում երեխաների նկատմամբ վերաբերմունքին (բուլինգ) և իրավունքների պաշտպանությանը:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են իրականացրել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող և հանրակրթական ուսումնական թվով 17 հաստատություն:

Բացի հաստատություններից այցեր են իրականացվել նաև Արցախից տեղահանված և ՀՀ-ում ժամանակավորապես բնակություն հաստատած ընտանիքներին, կատարվել է նրանց կյանքի պայմանների, իրավունքների և շահերի պաշտպանության վիճակի ուսումնասիրություն:

Աշխատանքներ են տարվել երեխաների՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ: 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմ է այցելել շուրջ 200 երեխա, որոնք ծանոթացել են Մարդու իրավունքների պաշտպանի լիազորություններին: Երեխաներին ներկայացվել են իրենց իրավունքներն ու ազատությունները: Վերջիններս նաև ծանոթացել են երեխաներին նվիրված Պաշտպանի էլեկտրոնային կայքէջին, որի միջոցով նրանք կարող են նաև առցանց դիմում ուղարկել Պաշտպանին կամ ստանալ խորհրդատվություն:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում 2021 թվականին հրապարակվել և տպագրվել է ուսուցիչների համար նախատեսված «Եկեք սովորենք երեխայի իրավունքները» ուղեցույցը<sup>933</sup>, որը երաշխավորված է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարի հրամանով որպես ուսումնական նյութ դպրոցներում օգտագործելու համար:

Պաշտպանի աշխատակազմի երեխայի իրավունքների պաշտպանության բաժինը նախորդ տարիներն ևս համակարգել է Պաշտպանի՝ երեխաների իրավունքներին առնչվող մի շարք գեկույցների և ուղեցույցների մշակման աշխատանքները: Նշվածներից են օրինակ՝ Եվրոպայի խորհրդի «Երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի մշտադիտարկում» գործնական ուղեցույցի հայերեն տարբերակի ներկայացումը<sup>934</sup>: Ուղեցույցը նպատակ ունի բարելավել երեխաներին անազատության մեջ պահելու պայմանները՝ մշտադիտարկում իրականացնող մարմիններին ապահովելով կիրառական գործիքներով: Ուղեցույցի հայերեն ադապտացված տարբերակը նախատեսված է երեխաներին անազատության մեջ պահելու վայրերում մանդատով, օրենքով կամ առանձնահատուկ համաձայնագրով մշտադիտարկում իրականացնելու կամ այցելելու իրավասություն ունեցող մասնագետների, ինչպես նաև երեխաներին անազատության մեջ պահելու վայրերի ղեկավարության, վարչակազմի և աշխատակիցների համար:

<sup>933</sup> Տե՛ս ուղեցույցը, հասանելի է <https://ombuds.am/images/files/8cbe89fe58d54b6ba1ff2f6ac5255737.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>934</sup> Տե՛ս ուղեցույցը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/2f01b9fd9e9273bcfdf85a14940df721.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

2021 թվականին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մասնակցել է նաև ԱՊՀ անդամ երկրների Երեխաների իրավունքների հանձնակատարների (օմբուդսմանների) առաջին հանդիպմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել է երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային երկխոսության միասնական հարթակի ստեղծման կարևորությունը՝ համակարգային խնդիրների լուծման համար:

### **1. Խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանության վիճակի մշտադիտարկում**

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մշտադիտարկման այցեր են իրականացրել «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ, «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ, «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ, «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ, «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ: Բոլոր այցերն եղել են չհայտարարված և իրականացվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2018 թվականին մշակված մեթոդաբանության համաձայն՝ Հայաստանի իրավական համակարգին տեղայնացված ուղեցույցի հիման վրա<sup>935</sup>: Այցերին մասնակցել են նաև աշխատակազմի քիչ և հոգեբան փորձագետները:

Ուսումնասիրվել են հաստատությունների ննջարանային տարածքները, սանիտարական և կոմունալ հարմարությունները, սաների խնամքի, սննդի տրամադրման, ինչպես նաև սաների, աշխատակիցների իրավունքների և հիմնարար ազատությունների վիճակը, հաստատության գործունեությունն համակարգող, ինչպես նաև սաների՝ հաստատությունում գտնվելու հիմք հանդիսացող փաստաթղթերը, դրանց համապատասխանությունը գործող իրավակարգավորումներին և կիրառելի չափանիշներին: Այցերի ընթացքում հատուկ մշտադիտարկում է իրականացվել երեխայի կրթության իրավունքի իրացման երաշխավորման կապակցությամբ: Տեղի են ունեցել առանձնազրույցներ սաների և աշխատողների, ինչպես նաև քննարկումներ տնօրենության հետ:

Բոլոր հաստատություններում մանրամասն ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը. կանոնադրությունը, աշխատողների հաստիքների չափաքանակի և դրույքաչափերի վերաբերյալ փաստաթղթեր, սաների ցուցակը, մեկ ամսվա համար կազմված ճաշացանկերը, ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը, սաների անձնական գործերի օրինակները՝

<sup>935</sup>Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կայքէջը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/2f01b9fdae9273bcfdf85a14940df721.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ներառյալ անհատական ուսուցման պլանները, վնասվածքների և բռնությունների կասկածելի դեպքերի արձանագրման մատյանները, բժշկական փաստաթղթերը և այլն:

Նշված հաստատություններում արձանագրված խնդիրները մանրամասն ամփոփվել են և համապատասխան դիտարկումներով և առաջարկներով ներկայացվել են ինչպես իրավասու նախարարությանը, այնպես էլ հաստատություններին:

Պաշտպանը հետևողական է լինելու, որ վերացվեն արձանագրված թերությունները, ինչպես նաև առանձնահատուկ ուշադրություն դարձվի հաստատություններում խնամվող երեխաների իրավունքների վիճակին և պաշտպանությանը:

### **1.1 Շենքային և բնակության պայմանները**

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն այցերի ընթացքում ուսումնասիրել են բոլոր հաստատությունների շենքային և բնակության պայմանները: Յուրաքանչյուր հաստատությունում հատուկ ուշադրություն է դարձվել ննջարանների, սանհանգույցների, լոգարանների, խոհանոցի, ճաշարանի, դասասենյակների, մարզադահլիճի, պահեստային ու նկուղային, ինչպես նաև հաստատության մյուս հատվածների պայմաններին: Հայտնաբերված խնդիրները ներկայացված են ստորև:

Հաստատություններում արձանագրված համակարգային խնդիրներից է շենքային պայմանների հարմարեցված չլինելը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Տվյալ խնդիրն արձանագրվել է «Գավառի մանկատուն», «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց», «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց», «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր», «Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ներում:

Պետք է նշել, որ արձանագրվել են դեպքեր, երբ հաստատության ֆիզիկական մատչելիությունն ապահովվել է միայն մուտքի թեքահարթակով: Օրինակ, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց»-ում շենքի կողային պատի մոտ առկա էր թեքահարթակ, որով ապահովված էր մուտքի մատչելիությունը տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար: Արձանագրվել է, որ դպրոցի հարկերի միջև մատչելիությունն ապահովված չէ. չկան թեքահարթակներ կամ վերելակներ: Դպրոցի դասասենյակների, ննջարանների և սանհանգույցների դռները հիմնականում եղել են ոչ մատչելի կամ հարմար սայլակով կամ աջակցող միջոցներով տեղաշարժվող անձանց համար:

Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներով մշտապես արձանագրվել է, որ ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիության ապահովման նպատակով իրականացվող հարմարեցումները հիմնականում դրսևորվում են մուտքային թեքահարթակների կառուցմամբ: Ընդ որում՝ Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումներն ու հասարակական կազմակերպությունների հայտնած տեղեկությունները փաստում են, որ

կառուցվող թեքահարթակներն էլ ոչ միշտ են համապատասխանում գործող իրավակարգավորումներով սահմանված շինարարական նորմերին: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ուսումնական հաստատությունների մատչելիության խնդրի վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեն:

Հաշմանդամություն ունեցող երեխաների համար ֆիզիկական միջավայրի մատչելիության և հարմարեցվածության անհրաժեշտությունն ամրագրված է թե՛ ներպետական և թե՛ միջազգային փաստաթղթերով:

Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից 4.1 բաժնում նշվում է, որ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի համատեքստում պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու երեխաների համար առողջ միջավայր, որը սերտորեն կապված է այլ իրավունքների հետ: Սա ներառում է կյանքի, գոյատևման և զարգացման, սննդի, ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների, կրթության, տնտեսական շահագործման չենթարկվելու, տեղեկացված լինելու և ապրուստի բավարար պայմանների իրավունք: Հավասարության և խտրական մոտեցման չենթարկվելու իրավունքները ենթադրում են, որ բոլոր երեխաները պետք է ունենան առողջ և ապահով միջավայր<sup>936</sup>:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի համար պետք է ապահովվի մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում երեխայի բարձրագույն շահերը համարվում են առաջնահերթ:

Վերոնշյալ կոնվենցիայի 9-րդ հոդվածով սահմանվում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության հնարավորություն ընձեռելու նպատակով մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի նրանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ապահովեն ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաներն ու համակարգերը, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիությունը, որոնք հասանելի են հասարակությանը և՛ քաղաքներում, և՛ գյուղական վայրերում<sup>937</sup>:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրապարակված «Տարածաշրջանային նվազագույն չափորոշիչներ երեխաների այլընտրանքային խնամքի ծառայությունների համար» զեկույցում կարևորվել է, որ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում խնամվող բոլոր

<sup>936</sup> Հասանելի է <https://www.ohchr.org/Documents/HRBodies/CRC/Discussions/2016/DGDoutcomereport-May2017.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>937</sup> Հասանելի է [http://www.un.org/res/un20treaties/III\\_15.pdf](http://www.un.org/res/un20treaties/III_15.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

երեխաները, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողներն ապահովված լինեն իրենց հատուկ կարիքներին համապատասխան հարմարություններով և պատշաճ կահավորմամբ շենքային պայմաններով<sup>938</sup>:

«Ազգային չափորոշիչներ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում լավագույն փորձի ձևավորման համար» ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցում անդրադարձ է կատարվել հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ հատուկ շենքային պայմանների առկայության կարևորությանը, որում նշվել է, որ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում շենքային պայմանները պետք է հարմար և հասանելի լինեն հաշմանդամություն և այլ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար<sup>939</sup>:

**Վերոգրյալի կապակցությամբ պետք է նշել, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում ֆիզիկական մարչելիության և խելամիտ հարմարեցումների բացակայության խնդիրն ունի համակարգային բնույթ:**

Վերոնշյալ մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել են նաև ննջասենյակների գերծանրաբեռնվածության դեպքեր: Օրինակ՝ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» և Գյումրու «Երեխաների տուն» և Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ներում չի պահպանվել ՀՀ կառավարության 2007 թվականի թիվ 1490-Ն որոշման 4-րդ հավելվածով հաստատված են հատուկ (օժանդակ) հանրակրթական դպրոցներին, ընդհանուր տիպի մանկատներին, երեխաների խնամքի և պաշտպանության կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող տարածքների հաշվարկման նվազագույն նորմատիվներով սահմանված՝ յուրաքանչյուր երեխային հատկացվող առնվազն 4 քմ տարածք:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *ապահովել հաստատությունների ողջ տարածքում, ներառյալ՝ մասնաշենքերի ներսում, հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժման համար անհրաժեշտ պայմաններ, այդ թվում՝ միջհարկային թեքահարթակներ կամ վերելակ, բռնակներով և ցածր լվացարաններով սանհանգույցներ և այլ խելամիտ հարմարեցումներ,*

2. *բացառել ննջասենյակների գերծանրաբեռնվածությունը՝ ապահովելով յուրաքանչյուր երեխայի համար ՀՀ կառավարության 2007 թվականի թիվ 1490-Ն որոշմամբ հաստատված նորմատիվներին համապատասխան տարածքի հատկացումը:*

<sup>938</sup> Տե՛ս «Տարածաշրջանային նվազագույն չափորոշիչներ երեխաների այլընտրանքային խնամքի ծառայությունների համար», ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, էջ 62, հասանելի է [https://www.unicef.org/easterncaribbean/ECAO\\_Regional\\_Minimum\\_Standards\\_for\\_Alternative\\_Care\\_Services\\_for\\_Children.pdf](https://www.unicef.org/easterncaribbean/ECAO_Regional_Minimum_Standards_for_Alternative_Care_Services_for_Children.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>939</sup> Տե՛ս «Ազգային չափորոշիչներ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում լավագույն փորձի ձևավորման համար», ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2013թ. ապրիլ, էջ 70, հասանելի է <https://bettercarenetwork.org/sites/default/files/National%20Standards%20for%20Best%20Practices%20in%20Charitable%20Children%27s%20Institutions.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

## 1.2 *Սննդի կազմակերպում*

Մշտադիտարկման շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչներն ուսումնասիրել են հաստատությունների խոհանոցի, ճաշարանի սանիտարահիգիենիկ պայմանները, ճաշատեսակների նմուշների պահման պայմանները, ինչպես նաև սննդամթերքի պահման պահեստը: Ուսումնասիրվել են նաև հաստատությունների տրամադրած սննդի ճաշացանկերը, սաներին տրամադրված ընդհանուր և դիետիկ սննդի ճաշացանկերը:

«Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում արձանագրված խնդրահարույց հարցերից է օրինակ խոհանոցի աշխատակիցների ամենօրյա բուժզննման ժամերը: Խնդիրն այն է, որ յուրաքանչյուր օր՝ մանկատան բուժքույրը ջերմաչափում իրականացնում է ժամը՝ 09:00-ին: Ձննումների արդյունքները գրանցվում են բուժկետում պահվող մատյանում: Վերոգրյալի կապակցությամբ և օրենքի անալոգիայի կիրառմամբ հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի թիվ 32-Ն հրամանով հաստատված հավելվածի 65-րդ և 66-րդ կետերի համաձայն՝ ամեն օր, աշխատանքները սկսելուց առաջ, բուժաշխատողի կողմից կատարվում է ուսումնական հաստատության խոհանոցի աշխատողների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կատարալ երևույթների և անգինաների նկատմամբ: Այս առումով արձանագրվել է, որ խնդրահարույց է խոհարարների և նրանց օգնականների ամենօրյա բուժզննումը 09:00-ին իրականացնելը, քանի որ աշխատանքային օրերին նախաճաշի պատրաստումը սկսվում է 07:00-ից, իսկ սաները նախաճաշում են 08:00-ից:

Խոհանոցի աշխատակիցների բուժզննման հետ կապված խնդիր արձանագրվել է նաև «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց»-ում: Այցի պահին արձանագրվել է, որ Դպրոցում յուրաքանչյուր օր, աշխատանքները սկսելուց առաջ պատշաճ կերպով չի իրականացվում խոհանոցի աշխատողների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կատարալ երևույթների և անգինաների նկատմամբ:

Հարկ է նաև նշել, որ արձանագրված խնդիրներից է նաև սննդի ոչ պատշաճ նմուշառումը: «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում այցի պահին արձանագրվել է, որ խոհանոցի սառնարանում առկա էին նախորդ երկու օրերին պատրաստված ճաշատեսակների նմուշները, սակայն տվյալ օրվա նմուշառումը դեռ կատարված չէր: Խոհանոցի աշխատակիցների պնդմամբ՝ նախաճաշին տրամադրվող սննդի նմուշներ չեն վերցվում: Հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի «Հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների սննդի կազմակերպմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2.3.1-02-2014 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 32-Ն հրամանով հաստատված հավելվածի 58-րդ



կետով ամրագրված է, որ վերցված նմուշները պահպանում են 48 ժամից ոչ պակաս (չհաշված հանգստյան և փոն օրերը) հափուկ սառնարանում կամ սառնարանի հափուկ առանձնացված փեղում  $4 \pm 20$  C ջերմաստիճանի պայմաններում, նշելով նմուշառման ժամը, օրը, ամիսը:

Նույն հրամանով հաստատված հավելվածի 62-րդ կետի համաձայն՝ յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակի բացթողումն իրականացվում է նմուշառումից և զգայորոշման ցուցանիշների նկատմամբ գնահատումից հետո: Ուշագրավ է, որ ՀՀ օրենսդրությամբ առկա չէ նմուշառման ընթացակարգին առնչվող հստակ կարգավորում մանկատների համար, որի պատճառով օրենքի անալոգիայի կիրառմամբ անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի վերոնշյալ հրամանով սահմանված կարգավորումներով:

Հաստատություններում արձանագրված խնդիրներից է նաև ամենօրյա ճաշացուցակում ներառվող անհրաժեշտ սննդամթերքի բացակայությունը: Այսպես, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց»-ը ամիսներ շարունակ չի ստանում կաթ, այլ դրա փոխարեն ստանում է կաթի փոշի: Այցերի ընթացքում արձանագրվել է, որ «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում մեկ ամսվա ընթացքում կաթ տրամադրվել է ընդամենը 7 անգամ: «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» դիտարկված ճաշացանկերի վերլուծության արդյունքում պարզվել է, որ մեկ ամսվա ընթացքում կաթ տրամադրվել է 12 անգամ, ինչպես նաև պահպանված չի եղել ամենօրյա ճաշացանկում կաթի և մրգի ներառման պարտադիր պահանջը, ինչպես նաև կաթնաշոռի, ձվի, ձկան և պանրի տրամադրման հաճախականությունը:

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր»-ում 2021 թվականի ապրիլի 21-ից մայիսի 21-ը տրամադրված սննդի ճաշացանկերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ երեխաներին մեկ ամսվա ընթացքում հյութ չի տրամադրվել 17 օր, իսկ միս՝ 4 օր: Արձանագրվել է, որ Կրթահամալիրում երեխաներին տրամադրվում է ոչ թե կաթ, այլ կաթի փոշի: Ավելին, երեխաներին մեկ ամսվա ընթացքում 3 օր չի տրամադրվել կաթի փոշի: Միաժամանակ, մեկ ամսվա ընթացքում երեխաներին ձուկ տրամադրվել է ընդամենը 4 օր:

«Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր»-ում ճաշացանկերի ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանցում արտացոլված չէ սննդի բազմազանություն: 2021 թվականի հոկտեմբերի 9-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում Հաստատությունում երեխաներին մրգերից հիմնականում տրամադրվել է միայն խնձոր (միայն երկու օր է տրամադրվել խաղող և մեկ օր՝ խնձոր ու խաղող):

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում ևս ամբողջությամբ չի պահպանվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան ամենօրյա ճաշացանկ կազմելու և դրա հիման վրա սաներին անհրաժեշտ տեսակի և քանակի սննդամթերքը տրամադրելու պահանջը: Հաստատության սաներին յուրաքանչյուր օր, ինչպես նաև 2-3 օրը մեկ հաճախականությամբ պարտադիր տրամադրման ենթակա որոշակի տեսակի սնունդ տրամադրելու և արգելվող սննդամթերքի տրամադրումը բացառելու հանգամանքները դիտարկելիս, օրենքի

անալոգիայի կիրառմամբ, անհրաժեշտ է կրկին առաջնորդվել ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի թիվ 32-Ն հրամանով սահմանված կարգավորումներով, քանի որ ՀՀ օրենսդրությամբ այլ կարգավորումներ նախատեսված չեն: Մասնավորապես, ՀՀ առողջապահության նախարարի 2014 թվականի հունիսի 6-ի թիվ 32-Ն հրամանով հաստատված հավելվածի 24-րդ կետի համաձայն՝ *ամենօրյա ճաշացուցակում ներառվում են միսը, կաթը, սերուցքային կարագը և բուսական յուղը, հացը՝ ցորենի և տարեկանի, շաքարը, կարպոֆիլը, բանջարեղենը, միրգը, հյութերը, ձավարեղենը և յոդացված աղը: Ձուկը, ձուն (հավկիթը), պանիրը, կաթնաշոռը և կաթնաթթվային սննդամթերքը տրվում են 2-3 օրը մեկ:*

«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականին **կատարած** այցի ընթացքում արձանագրվել էր, որ դպրոցում **ապահովված չէին հացի պահպանման համար անհրաժեշտ պայմանները:** Այսպես, հացը պահվում էր պահարանում, պոլիէթիլենային թիթեղով փաթաթված, որն օդափոխության համար համապատասխան անցքեր չունեի, իսկ հացի պահարանը, ըստ խոհանոցի աշխատակցի, մաքրվում էր աղաջրով և սոդայաջրով: **2021 թվականի այցի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն արձանագրել են, որ բարձրացված հարցին տրվել է լուծում և ներկայումս հացը պոլիէթիլենային տոպրակով պահվում է օդափոխության համար անցքեր ունեցող առանձին պահարանում:**

«Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր»-ում այցի պահին հացը պահվում էր խոհանոցում գտնվող հացի պահարանում, որի դռները չունեին օդափոխության համար նախատեսված անցքեր: Հացի մի մասը պահվում էր տվյալ պահարանի ներքևի դարակում՝ պոլիէթիլենային տոպրակի մեջ: Այս առումով հարկ է ընդգծել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2003 թվականի մայիսի 2-ի «Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-4.2-01-2003 սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը հաստատելու մասին» թիվ 302 հրամանի 10.21-րդ կետի պահանջների համաձայն՝ *հացը և հացաբուլկեղենը պահվում են տեփուրներում՝ դարակաշարերի/դարակների վրա կամ պահարաններում: Հացի պահարանի դռները պետք է ունենան օդափոխիչ անցքեր: Պահարանները մաքրվում են հացի փշուրներից հատուկ խոզանակներով և շաքարը մեկ անգամ մանրակրկիտ մշակվում քացախաթթվի 1%-անոց լուծույթով՝ հացի կարպոֆիլային հիվանդության կանխարգելման նպատակով:* **Ուստի, արձանագրվել է, որ հաստատությունում պատշաճ չէին պահպանվում հացի պահման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանները:** Խոհանոցի աշխատակիցների տեղեկացմամբ՝ հացը մշտապես պահվում է տվյալ պահարանում և իրենք տեղյակ չէին, որ հացի պահարանի դռները պետք է ունենան օդափոխության համար նախատեսված անցքեր:

Նախորդ տարիներին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ կատարած մշտադիտարկման այցերի արդյունքում ևս արձանագրվել է, որ սննդի կազմակերպման հսկողությանը ներկայացվող պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ այդ հաստատությունների աշխատակազմի տեղեկացվածության

պակասը կրում է համակարգային բնույթ, հետևաբար անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների աշխատակազմի տվյալ բնագավառում վերապատրաստումների կազմակերպմանը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. մշակել նոր՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չափորոշիչներին համապատասխան ամենօրյա ճաշացանկ, սահմանված հաճախականությամբ փրամադրել անհրաժեշտ տեսակի և քանակի սննդամթերք,

2. ապահովել հացի պահման համար անհրաժեշտ սանիտարահիգիենիկ պայմանների պարզաճ պահպանումը: Հացը պահել տեփուրներում՝ դարակաշարերի (դարակների) վրա կամ օդափոխիչ անցքերով դռներ ունեցող պահարանում: Պահարանը հացի փշուրներից մաքրել հատուկ խոզանակներով, ինչպես նաև շաբաթը մեկ անգամ մշակել քացախաթթվի 1%-անոց լուծույթով,

3. ապահովել, որ յուրաքանչյուր պատրաստի կերակրատեսակի բացթողումն իրականացվի միայն սահմանված ընթացակարգով նմուշառումից և զգայորոշման ցուցանիշների նկատմամբ գնահատումից հետո,

4. իրականացնել աշխատակազմի վերապատրաստումներ՝ սննդի կազմակերպման հսկողությանը ներկայացվող պահանջներ սահմանող օրենսդրական կարգավորումների վերաբերյալ,

5. յուրաքանչյուր օր, աշխատանքները սկսելուց առաջ, բուժաշխատողի կողմից իրականացնել խոհանոցի աշխատակիցների ձեռքերի և մարմնի բաց հատվածների մաշկի զննում՝ թարախային վերքերի առկայության, ինչպես նաև վերին շնչուղիների կապարալ երևույթների և անզինանների նկատմամբ: Տվյալ զննումների արդյունքները գրանցել «Առողջության մատրան»-ում:

### **1.3 Անկախ ապրելու, ինքնուրույն կյանք վարելու հմտություններ, շփումներ անձնակազմի հետ և կապն արտաքին աշխարհի հետ**

Այցերի ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել հաստատությունների սաների բազմակողմանի և ներդաշնակ զարգացման, անվտանգ միջավայրի և հազեցած առօրյայի բնականոն կազմակերպման և ապահովման գործընթացին: Այս նպատակով Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները դիտարկումներ են իրականացրել երեխաների դասապատրաստման, հանգստի սենյակներում, առանձնազրույցներ ունեցել աշակերտների և մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչների հետ, ընտրանքային մեթոդով ուսումնասիրել են երեխաների անհատական միջամտության պլանները, անձնական գործերն ու մանկավարժահոգեբանական եզրակացությունները: Արձանագրված խնդիրները բազմակողմանի ուսումնասիրելու նպատակով այցի ընթացքում դրանք ներկայացվել են հաստատությունների

տնօրինությանը, արձանագրվել են ներկայացված պարզաբանումները, ինչպես նաև քննարկվել են խնդիրների լուծման իրատեսական և հասցեական առաջարկները:

«Գավառի մանկատուն» ՊՈԱԿ այցի ընթացքում արձանագրվել է, որ մանկատուն են տեղափոխվել վարքային առանձնահատուկ դրսևորումներ ունեցող երեխաներ, որոնց հետ աշխատելու հմտություններին տիրապետող հատուկ մասնագետներ հաստատությունը չունի: Այս դեպքում ավելի է սրվում նաև մասնագիտական հաստիքների սղության հարցը: Երեխաների առօրյայի կազմակերպմամբ և զբաղվածությամբ պայմանավորված՝ դաստիարակները հաճախ ի վիճակի չեն հետևել կամ լիարժեք տեղեկություն ունենալ իրենց կցված խմբերի յուրաքանչյուր երեխայի գտնվելու վայրի վերաբերյալ. օրինակ, այցի պահին աշխատակիցները մոտ 10-15 րոպե չէին կարողանում հստակ տեղեկություն տալ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին այցին, նախորդող օրերին, մանկատուն տեղափոխված երեխայի գտնվելու վայրի վերաբերյալ: Ընդ որում, նշված առավել խնդրահարույց է այն պատճառով, որ երեխան, ըստ տրամադրած տեղեկությունների, ունի վարքային առանձնահատուկ դրսևորումներ, այցի նախորդ օրն առանց դաստիարակների իմացության դուրս է եկել մանկատնից և վերադարձել է միայն մեկ այլ աշխատակցի ջանքերով: Այս դեպքում խնդիրն այն է, որ մանկատուն ելումուտ կատարելը ոչ միշտ է լիարժեք կերպով վերահսկվում, ինչի պարագայում հնարավոր չէ բացառել երեխաների փախուստի դեպքերը: Նման դեպքերի մասին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին պատմել են թե՛ աշխատակիցները, թե՛ երեխաները:

Այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ մանկատան կողմից ոչ միշտ է ապահովվում երեխայի համար մատչելի և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը երաշխավորող միջավայր հեռախոսագրույցներ ունենալու նպատակով: Այսպես, վարչական անձնակազմի աշխատասենյակներից մեկում առկա է շարժական հեռախոս, որից, ըստ անձնակազմի տրամադրած տեղեկությունների, կարող են օգտվել նաև երեխաները, հատկապես նրանք, ովքեր չունեն անձնական հեռախոս: Այս դեպքում երեխաները պետք է դիմեն մանկատան աշխատակիցներին, ովքեր էլ կազմակերպում են հեռախոսազանգը: Ստացվում է մի իրավիճակ, երբ ոչ բոլոր դեպքերում է երեխայի համար ստեղծված առանց որևէ մեկին նախապես զգուշացնելու կամ առանց կողմնակի վերահսկողության զանգահարելու հնարավորություն: Ըստ անձնակազմի տրամադրած տեղեկությունների՝ երեխաները հիմնականում խոսում են միջանցքում կամ աշխատասենյակներում: Երեխաներից ոմանք, առանձնագրույցների ընթացքում նշել են, որ *«նույնիսկ, եթե աշխատողներից ոչ ոք չկա հեռախոսագրույցի ընթացքում, հիմնականում այլ երեխաներ են լինում, ովքեր կարող են լսածների մասին պատմել նաև դաստիարակներին»*: Անձնակազմի հետ քննարկումից պարզ է դարձել, որ հատուկ ուշադրություն չի դարձվում խոսակցությունների գաղտնիությունը երաշխավորելու հարցին, թեև, օրինակ, մանկատունն ունի տեսակցությունների սենյակ, որտեղ հնարավոր է առանց որևէ կողմնակի անձի ներկայության զանգեր կատարել:

Առանձնագրույցների ընթացքում երեխաների հայտնաձ տեղեկությունները, ինչպես նաև որոշ դաստիարակների հետ քննարկումները վկայում են, որ կոնֆլիկտային իրավիճակների ժամանակ երեխան անհրաժեշտ հոգեբանական, իրավական աջակցություն ստանում է միայն մանկատան մասնագետների կողմից: Ընդ որում, երբեմն խնդրահարույց դեպքեր կարող են լինել այն ժամերին, երբ մանկատան մասնագիտական աջակցություն տրամադրող իրավասու մասնագետների աշխատանքային ժամն ավարտվել է: Տվյալ դեպքերում աջակցություն ցուցաբերում են դաստիարակները՝ ըստ իրավիճակի, ինչը ոչ միշտ է ապահովում խնդրի լիարժեք լուծում: Առանձնագրույցներից էլ պարզ է դարձել, որ խնդրի խորքային լուծման նպատակով տվյալ դեպքերում նեղ մասնագետների կողմից հաջորդ օրերին հետևողական աշխատանք ոչ միշտ է կատարվում: Այս դեպքում ոչ հետևողական աշխատանքը խնդրահարույց է հատկապես այն պատճառով, որ մանկատունը, որպես երեխային բռնությունից զերծ պահելու առաջնային օղակ, չունի գործուն մեխանիզմներ, որոնք լիարժեք կապահովեն երեխայի շահերի պաշտպանություն հատկապես այն դեպքում, երբ առկա է միջանձնային խնդիր երեխայի և մանկատան աշխատակցի միջև, ինչը որոշ դեպքում կարող է դրսևորվել անգամ երեխայի նկատմամբ բռնության տարբեր դրսևորումների տեսքով:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանության համաձայն՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները, պետք է հարգվեն մի շարք սկզբունքներ, այդ թվում՝ անվտանգությունը: Ընդ որում՝ անվտանգության սկզբունքը ենթադրում է ոչ մի այն երեխայի ֆիզիկական, միջավայրային անվտանգությունը, այլ նաև նրա հոգեկան և հուզական միջավայրային անվտանգությունը:

Հաստատություններում մասնագիտական աջակցության հետ կապված խնդիրներ արձանագրվել են նաև «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում:

Հաստատության տեղեկությունների համաձայն՝ հաստատության սաներին մատուցվում են նեղ մասնագիտական ծառայություններ, ներառյալ՝ հոգեբանական, մանկավարժական, սոցիալական: Այցի ընթացքում հնարավոր չի եղել դիտարկել հաստատության հոգեբանի աշխատանքային սենյակը, ինչպես նաև առանձնագրույցներ ունենալ հոգեբանների հետ, քանի որ այցը ընթացքում Հաստատությունում հոգեբաններ չեն եղել, ինչը բացատրվել է նրանց արձակուրդում գտնվելու հանգամանքով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ սաների առողջապահական կարիքներով և վարքային առանձնահատկություններով պայմանավորված՝ անհրաժեշտ է բացառել այնպիսի աշխատանքային գրաֆիկի կիրառումը, որի դեպքում կարող են լինել օրեր, երբ հաստատությունում առհասարակ հոգեբան չլինի:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի հետ իրականացվող աշխատանքները հիմնականում արձանագրվում են հոգեբանի, լոգոպեդի և սոցիալական աշխատողի կողմից կազմված ծրագրերում և փաստաթղթերում: Դրանցում առավելապես արտացոլվում են կատարվելիք մասնագիտական աշխատանքները,

դրանց նպատակները, աշխատանքի ակնկալվող արդյունքները: Այս դեպքում հնարավոր չէ ապահովել մասնագիտական եզրակացությունների և գնահատականների անհատականացումը, քանի որ սաների իրական կարիքները և դրանց՝ տարիքով, վարքով, զարգացման հնարավորություններով պայմանավորված առանձնահատկություններն անհատականացված չեն: Ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դարձել, որ իրական աշխատանքի արդյունքների վերահսկումն ու գնահատումը ոչ միշտ է կատարվում գրանցումների հիման վրա, քանի որ գրառումները ոչ միշտ են արտացոլում փաստացի կատարված աշխատանքն ու իրական արդյունքները, առաջընթացի կամ զարգացման հետընթացն ու խնդիրները, որոնք արձանագրվել են սանի հետ աշխատելիս: Արդյունքում՝ մասնագետների գրառումները, որպես կանոն, կրում են ֆորմալ բնույթ: Ուստի, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների, այդ թվում՝ հոգեբանի դիտարկմամբ՝ խախտվում է սաների՝ իրենց զարգացման հնարավորություններին և իրական կարիքներին համապատասխանող որակյալ ծառայություններ ստանալու հիմնարար իրավունքը:

Այսպիսով, անհատական ծրագրերի պատշաճ, ամբողջական և անհատականացված արձանագրման խնդրի կապակցությամբ պետք է ընդգծել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով ստանձնած՝ հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների և նրանց ինքնությունը պահպանելու իրավունքի իրացման նպատակով անչափ կարևոր է կատարված աշխատանքի հաշվետվողականությունն ապահովելն ու կատարված աշխատանքի վերաբերյալ օբյեկտիվ արձանագրություններ ունենալը: Այլապես անհնար է դառնում հետևել անձի կարիքներին համապատասխան անհատականացված աշխատանքի ընթացքին, դրա որակին և արդյունքներին, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել հաշմանդամություն ունեցող երեխայի ինքնությունը պահպանելու իրավունքի խախտմանը:

Այցի ընթացքում պարզվել է, որ տարբեր տարիներին՝ որդեգրողների կամ հաստատության սաների ցանկությամբ, չեղարկվել են որդեգրումները: Այս կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից սաների անհատական գործերի, դրանցում կատարված մասնագիտական գրառումների, ուսումնասիրությունը, ինչպես նաև անձնակազմի հետ քննարկումները վկայում են, որ չեղարկումից հետո երեխայի հետ հատուկ հոգեբանական աշխատանք չի իրականացվել՝ հաղթահարելու երեխայի՝ որդեգրման գործընթացով և դրա չեղարկմամբ պայմանավորված սթրեսային վիճակը: Անհատական գործերում մասնագետների գրառումները հիմնականում վերաբերում են որդեգրման և դրա չեղարկման հետ կապված իրավական գործընթացին: Մինչդեռ որդեգրման չեղարկման պատճառների վերաբերյալ կատարված գրառումներում չեն համապատասխանում աշխատակազմի ներկայացրած տեղեկություններին, իսկ որդեգրման չեղարկումից հետո երեխայի հոգեկան առողջության և հոգեբանական վիճակի, կարիքների վերաբերյալ նշումներ առհասարակ բացակայում են: Օրինակ՝ աշխատակազմի տրամադրած բանավոր տեղեկությունների համաձայն՝ որդեգրումներից մեկը չեղարկվել է երեխայի ցանկությամբ, մինչդեռ, ըստ անհատական գործերում կատարված մասնագետների նշումների՝ որդեգրումը չեղարկվել է օտարերկրացի որդեգրողի ցանկությամբ:

Տվյալ դեպքում որդեգրողի կողմից նշված տեղեկությունների համաձայն չեղարկման պատճառներից է որդեգրվողի խանդը փոքր երեխայի նկատմամբ, ինչպես նաև վարքային առանձնահատկությունները, մինչդեռ գրառումներից պարզ չէ, թե արդյոք այս խնդիրների ուղղությամբ հաստատության հոգեբաններ իրականացրել են վերականգնողական թերապիաներ, թե ոչ: Եթե իրականացվել են, ապա ինչ արդյունքներ են արձանագրվել դրանց միջոցով, երեխան հաղթահարել է որդեգրման չեղարկման սթրեսը, թե՛ ոչ:

Մշտադիտարկման արդյունքները վկայում են նաև, որ կարևոր խնդիրներից է հաստատության սաների իրական կարիքներին համապատասխան ծառայություններ տրամադրող հատուկ մասնագետների բացակայությունը: Մասնավորապես, սաների կարիքներից և առողջությամբ պայմանավորված առանձնահատկություններից ելնելով՝ հաստատությունն ունի էրգոթերապիստների, վարքային թերապիստների կարիք, մինչդեռ նման հաստիքներ նախատեսված չեն:

«Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում մանկավարժների և երեխաների փոխհարաբերություններն ուսումնասիրվել են դիտման և առանձնագրույցների միջոցով:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների դիտարկմամբ՝ աշխատակազմը փորձում է աշխատանքներ իրականացնել սաների և ընտանիքներ կապն ամրապնդելու ուղղությամբ, այդ թվում՝ խթանելով ծնողների և երեխաների տեսակցությունները: Այս հարցում, սոցիալական աշխատակցի տեղեկությունների համաձայն՝ հաստատությունը փորձում է աշխատել նաև այն ծնողների հետ, ովքեր հրաժարվել են իրենց ծնողական իրավունքներից՝ նպատակ ունենալով գոնե ապահովել տեսակցություններ իրենց երեխաների հետ: Խնդրի կապակցությամբ հաստատության անձնակազմը կարևորել է նաև ծնողավարության, երեխաների իրավունքների մասին դասընթացների անհրաժեշտությունն ինչպես աշխատակիցների, այնպես էլ երեխաներին այցելող անձանց համար:

Անձնակազմի տեղեկություններով սաներին իրենց կենսաբանական ընտանիք վերադարձնելու և ընտանիքների հետ կապն ամրապնդելու, ինչպես նաև ընտանիքների հետ աշխատանքը կազմակերպելու ընթացքում դժվարությունն են առաջանում համայնքների խնամակալության և հոգաբարձության մարմինների հետ համագործակցելիս: Օրինակ՝ այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում համայնքում ընտանիքի հետ աշխատելիս ներգրավել համայնքային սոցիալական աշխատողներին, խնամակալության և հոգաբարձության մարմինների կողմից չի ապահովվում արագ հետադարձ կապ և արձագանք, հնարավոր չի լինում պարզել, թե կոնկրետ ով է համայնքում աշխատում տվյալ ընտանիքի հետ: Արդյունքում՝ հաստատության մասնագետների կողմից հայտնաբերված խնդիրներն էլ ավելի են խորանում, նվազում են երեխաների ընտանիք վերադառնալու իրական հնարավորությունները:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է.*

1. ապահովել երեխայի մասնավոր կյանքի գաղտնիության համար անհրաժեշտ պայմաններ՝ երաշխավորելով հեռախոսի կամ այլ կապի միջոցների հասանելիությունը և մատչելիությունը՝ առանց կողմնակի միջամտության,

2. հաստատությունների անձնակազմի համար կազմակերպել առանձնահատուկ վարքային դրսևորում ունեցող երեխաների հետ հատուկ մասնագիտական վերապատրաստումներ՝ համագործակցելով տվյալ մասնագիտական ծառայությունները փրամադրող համայնքահեն ռեսուրսների, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների, մասնագիտացված մանկապարտեզների և պետական այլ կառույցների հետ,

3. կազմակերպել երեխայի իրավունքներն ու շահերը պաշտպանող փորձեր կառույցների հասանելիության և գործունեության մասին դասընթացներ՝ ըստ փորձային խմբերի,

4. ներդնել անհատական ծրագրերի վարման մանրամասն ուղեցույց՝ երաշխավորելու դրանցում ներառվող մասնագիտական եզրակացությունների, գնահատականների անհատականացումը՝ ըստ կոնկրետ սանի իրական կարիքների, զարգացման հնարավորությունների,

5. կազմակերպել մասնագիտական մատյանների վարման, անհատական ծրագրերի կազմման, արձանագրման վերաբերյալ վերապատրաստումներ այդ աշխատանքներում ներգրավված բոլոր աշխատողների համար՝ ապահովելու վերջիններիս գործնական կարողությունների զարգացմանը և երաշխավորելու պատշաճ փաստաթղթավարությունը,

6. իրականացնել հատուկ մասնագիտական հոգեբանական աշխատանք բոլոր այն սաների հետ, ում որդեգրումները փորձեր պատճառներով չեղարկվել են՝ հաղթահարելու որդեգրման չեղարկմամբ պայմանավորված սթրեսային վիճակը և կանխելու երեխայի համար անցանկալի հետևանքները,

7. հատուկ կրթական հաստատություններում ներգրավել նեղ մասնագետներ՝ էրգոթերապիստներ, վարքային թերապիստներ:

#### **1.4 Կրթության իրավունքի իրացման ապահովումը**

Մշտադիտարկման այցերի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մանրամասն ուսումնասիրել են երեխաների կրթության իրավունքի իրացման անհրաժեշտ պայմանների առկայությունը և արձանագրել են խնդիրներ:

«Գավառի մանկատուն» ՊՈԱԿ այցի ընթացքում անձնակազմի հետ քննարկումները վկայում են, որ երեխաների կրթության իրավունքի լիարժեք իրացումն ապահովող բոլոր կողմերի՝ դպրոցի, մանկատան արտադասարանական խմբակների համար առկա չէ ընդհանուր կրթական նպատակների, խնդիրների և ծրագրերի քննարկման միասնական հարթակ: Մանկատան երեխաների կարիքների, այդ թվում՝ կրթական կարիքների գնահատման գործընթացում հիմնական չի կիրառվում անհատական մոտեցում կամ էլ գնահատման արդյունքում հիմնականում արձանագրվում են նույնաբովանդակ, ոչ չափելի կարիքներ: Արդյունքում՝ հնարավոր չէ դիտարկել,



թե այս կամ այն ծրագրի, այդ թվում՝ կրթական, թե որքանով է հնարավոր եղել ապահովել դրա արդյունավետությունը, և որ ամենակարևորն է, որքանով է հնարավոր եղել բավարարել երեխայի կոնկրետ գնահատված կարիքը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նմանատիպ հաստատություններն իրենց վերապահված լիազորությունների շրջանակում ակտիվորեն հետևում են կրթության և աշխատաշուկայի փոխկապակցվածությանը և զարգացման միտումներին՝ դրանք արտացոլելով ոչ ֆորմալ կրթությամբ մրցունակ մասնագիտական գիտելիքներ, որակներ և հմտություններ խթանելու նպատակով:

Հատուկ դպրոցներում իրականացված այցերի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի իրավասու ներկայացուցիչներն իրականացրել են դասալսումներ, առանձնագրույցներ աշակերտների և դպրոցի մանկավարժական անձնակազմի ներկայացուցիչների հետ, ուսումնասիրել են դասապլանների օրինակներ, երեխաների անհատական ուսումնական պլանները, անձնական գործերն ու մանկավարժահոգեբանական եզրակացությունները, կրթական նյութերը՝ ընտրանքային մեթոդով:

Իսկ օրինակ, «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց»-ում մշտադիտարկման ընթացքում դիտարկվել են դեպքեր, երբ կրթական գործընթացում ապահովված չի եղել բոլոր աշակերտների ներգրավվածությունը: Արդյունքում դասապրոցեսում լիարժեք չներգրավված երեխաների կրթության կազմակերպումն արդյունավետ չի եղել: Օրինակ՝ կոնկրետ դիտարկված դեպքերում երեխան ունեցել է շփման կամ նյութի յուրացման դժվարություն, չի ներգրավվել դասապրոցեսում, դասին ներկա է եղել առանց դասագրքի կամ դիդակտիկ հատուկ նյութերի: Նման դեպքերում դասապրոցեսին չներգրավվելու պատճառով դիտարկված երեխաները հակված էին իրենց համար զբաղմունք գտնել և դասից շեղվել տարբեր միջոցներով:

Կրթությանն աջակցող ծառայություններից են հոգեբանական և սոցիալական ծառայությունները: Հոգեբանական աշխատանքների պլանավորումը թեև դիտարկված դեպքում արձանագրված է, սակայն դրանք հիմնականում ֆորմալ բնույթ են կրում: Ըստ այդմ՝ դժվար է իրական և ամբողջական պատկերացում կազմել այն մասին, թե կոնկրետ ինչ աշխատանք է կատարվել և ինչ է պլանավորվում տվյալ ուսումնական տարվա ընթացքում: Դիտարկված գրառումները հիմնականում աշխատանքի պլանավորումներ են եղել, այլ ոչ թե մասնագետի կատարած և ընթացիկ աշխատանքների մասին գրառումներ:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները պարզել են, որ սոցիալական մանկավարժի աշխատանքի վերաբերյալ գրառումները հիմնականում կատարված են այլ մասնագետների գրանցամատյաններում, օրինակ, մեթոդափափորման նախագահի գրանցամատյանում: Դիտարկումները վկայում են, որ սոցիալական մանկավարժի կատարած աշխատանքի վերաբերյալ գրանցումներն ու փաստաթղթավորումը լիարժեք չեն արտացոլում աշակերտների կարիքներն ու դրանց բավարարմանը միտված քայլերը: Դիտարկված անհատական

ուսումնական պլանները չեն արտահայտել աշակերտի առաջընթացն ու իրական նպատակները կրթության, ինչպես նաև ընթացիկ խնդիրներն ու դրանց հաղթահարումը: **Նշված խնդիրը համակարգային է նաև այլ հասարակ դպրոցների համար:**

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ որոշ դեպքերում անհասկանալի են դասապրոցեսի նպատակներն ու աշակերտների զարգացմանն ուղղված քայլերը: Մասնավորապես, կոնկրետ առարկայի դասի ժամանակ երեխաներին առաջարկվում են վարժություններ կամ խաղեր, որոնց նպատակները վերջիններիս համար պարզ չեն կամ չեն համապատասխանում և միտված չեն երեխաների կրթական կարիքների բավարարմանը: Օրինակ՝ դասի ընթացքում, երբ երեխաներն ուսումնասիրում են «ն» տառը, ուսուցիչն առաջարկել է երեխաներին հարթեցնել ավազը և երեխաներից մեկն սկսել է արկղում գտնվող ավազը հարթեցնել: Թեև այս գործողությունը կարող է հաճելի լինել տվյալ աշակերտի համար, բայց երեխային չի բացատրվում դրա նպատակը, անհասկանալի է, թե ինչ կրթական խնդիր է լուծում վարժությունը տվյալ դասապրոցեսում ուսումնասիրվող թեմայի յուրացման հարցում: Նշվածն անհասկանալի է ոչ միայն տվյալ վարժությանը չմասնակցող աշակերտների, այլ նաև կոնկրետ այն կատարող աշակերտի համար: Արդյունքում ակնհայտ է դառնում, որ նշվածն ունի երեխային զբաղեցնելու նպատակ: Ընդ որում՝ տվյալ գործընթացը որպես կոնկրետ թեմատիկ աշխատանք չներկայացնելու պատճառով երեխաների մոտ չի ձևավորվում հստակ ընկալում դասապրոցեսի վերաբերյալ: Ավելին՝ դասապրոցեսի կազմակերպչական խնդիրների պատճառով երեխաների համար հասկանելի չի լինում դասապրոցեսի սկիզբը, ընթացքը և ավարտը: Արդյունքում՝ խնդիրներ են առաջանում երեխաների ուշադրության, կենտրոնացման համար: Այս մոտեցումն ակնհայտորեն չի նպաստում երեխաների կողմից ուսումնական նյութի յուրացմանն ու հմտությունների ձևավորմանը, երեխաների զարգացմանը:

Դիտարկվել են դեպքեր, երբ դասապրոցեսին չներգրավվելու պատճառով որոշ երեխաներ հակված են եղել ինքնուրույն կազմակերպել իրենց զբաղմունքը և դասից շեղվել տարբեր միջոցներով: Դասաժամանակի նման կորուստը կրթական կարիքների համատեքստում առավել վտանգավոր է զարգացման դժվարություններ ունեցող սովորողների համար, քան նորմատիվային զարգացում ունեցող աշակերտների համար: Այդ առումով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար առավել կարևոր է ժամանակի և զբաղվածության ճիշտ կազմակերպումը, որպեսզի այն նպաստի նրանց զարգացմանը, ինքնուրույնության, ինքնասպասարկման և ինքնակարգավորման հմտությունների ձևավորմանը: Ստեղծված իրավիճակում խնդիրներ են առաջանում նաև երեխայի լաված լինելու իրավունքի իրացման հարցում:

Նշված հաստատություն այցի ընթացքում աշխատակազմի ներկայացուցիչները, այդ թվում՝ հոգեբան-փորձագետը դասապրոցեսի դիտարկման արդյունքում արձանագրել են, որ դասապրոցեսը բավարար չափով արդյունավետ չէ, ոչ միշտ են հաշվի առնվում տարբեր

կարողություններով երեխաների իրական կարիքները, որոշների կարողությունները թերագնահատված են: Այսպես, երեխաների հետ շփման, ինչպես նաև մանկավարժահոգեբանական եզրակացությունների և երեխաների անհատական ուսումնական պլանների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ մի քանի տարի դպրոցում ուսանելուց հետո որոշ երեխաների առաջադիմությունը շատ ցածր է, այն դեպքում, երբ վերջիններս ակնհայտորեն ունեն զարգացման իրական հնարավորություններ: Օրինակ, դիտարկված դասարաններում եղել են զարգացման և ունակությունների տեսանկյունից մեծ զարգացում ունեցող երեխաներ: Աշակերտներից մեկն առանձնազրույցների ընթացքում նշել է, որ դպրոցում իրեն նախընտրած հատվածը դասի ժամանակ դասը վարելու հատվածներն են՝ հավելելով, որ իր նման դասը վարում են նաև այլ աշակերտներ: Նշվածը հաստատվել է նաև դասապրոցեսի դիտարկման արդյունքում: Դիտարկված որոշ խմբերում մտավոր միջին կամ բարձր կարողություններ ունեցող երեխաները ամբողջ դասին մասնակցել են միայն արտագրություն կատարելով կամ արտանկարելով:

Խնդրի կապակցությամբ հարկ է նշել նաև, որ մշտադիտարկման արդյունքներով պարզ է դառնում, որ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորող երեխաների մի մասի կրթական կարիքների գնահատումը չի համապատասխանում նրանց իրական զարգացման հնարավորություններին ու կարիքներին, ավելին՝ տվյալ դպրոցում սովորելու անհրաժեշտությունն արդարացված չէ, քանի որ նրանք կարող են սովորել հանրակրթական ուսումնական հաստատություններում: Օրինակ՝ դիտարկվող դասարանում սովորող, զարգացման թույլ աստիճանի խնդիրներ ունեցող երեխայի տառաճանաչությունը, ըստ փաստաթղթային արձանագրումների, տեղավորվում է 12 տառի շրջանակում, իսկ նրա կրթական առաջընթացի մասին որևէ նշում կատարված չէ: Մինչդեռ երեխան ակնհայտորեն տարբերվում էր իր կարողություններում և զարգացման հնարավորություններով: Այնուամենայնիվ, փաստաթղթային ուսումնասիրություններով արձանագրվել է, որ երեխաների կարողությունների գնահատմամբ այլ պատկեր է նկարագրվել: Կարելի է ենթադրել, որ կարողությունների գնահատումը որոշ դեպքերում երեխաներին հատուկ կրթական հաստատություն ուղղորդելու նպատակ ունի՝ պայմանավորված ծնողի կամ ծնողների սոցիալական վիճակով և ցանկությամբ: Նշվածը կարելի է հաստատել նաև երեխաների հետ ունեցած առանձնազրույցների արդյունքում, որը նույնպես վկայում է, որ որոշ երեխաների՝ տվյալ դպրոցում սովորելու հիմնական մոտիվը հիմնականում սոցիալական է և պայմանավորված է երեխաների խնամքի հարցում հնարավոր աջակցությունից օգտվելու՝ ծնողների որոշմամբ:

Վերոգրյալ խնդրի մասին են վկայում նաև մանկավարժական անձնակազմի հետ ունեցող առանձնազրույցների արդյունքները: Ավելին՝ վերջիններս դժգոհություն են հայտնել այն կապակցությամբ, որ գնահատումը կատարվում է կրթական մեկ աստիճանից մյուսին անցնելիս և իրական պատկերը չի արտացոլում:

**Սա անընդունելի է ոչ միայն պեպոլոգիայի պոզիտիվ պարտավորության պատշաճ իրականացման տեսանկյունից, այլ նաև երեխաների իրավունքների համապետություն, քանի որ երեխաների կրթական կարիքների չբավարարման արդյունքում վերջիններս կորցնում են իրենց հնարավորությունը՝ զարգանալու և առաջընթաց ապրելու:**

Արդյունքում՝ ստեղծված իրավիճակում զարգացման ավելի մեծ հնարավորություններ ունեցող երեխաների կրթության որակը էապես տուժում է:

Բարձրացված հարցի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ կրթության իրավունքի պատշաճ իրացման համար կարևոր է առանձնահատուկ կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար նրա իրական կարիքների և կարողությունների վրա հիմնված կրթական գործընթացի և դրա ընթացքում դրական զարգացումների ապահովումը: Երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով<sup>940</sup>: Նշվածն ամրագրված է նաև ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայով՝ հատուկ շեշտադրելով, որ պետությունը պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացումը՝ օգտագործելով նրանց առավելագույն հնարավորությունները: Պետության պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է, որ կրթությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի համակողմանի, որակյալ, ինչպես նաև տրամադրվեն անհատի պահանջներին անհրաժեշտ հնարավորություններ: Ավելին՝ պետք է ձեռնարկվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ ներգրավելու նպատակն իրականացնելուն զուգահեռ նաև առավելագույնս կնպաստեն նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը<sup>941</sup>:

Այսպիսով, մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում ակնհայտորեն առկա է նշված դպրոցում սովորող երեխաների վերագնահատման անհրաժեշտություն:

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» այցի ընթացքում մանկավարժական աշխատակազմը բարձրացրել է նաև դիդակտիկ նյութերի ոչ բավարար լինելու հարցը: Ըստ ներկայացված տեղեկությունների՝ առկա դիդակտիկ նյութերը մեծամասամբ պատրաստվում են ուսուցիչների կողմից, որոշակի պարբերականությամբ իրենք դպրոցի տնօրինությանն են ներկայացնում անհրաժեշտ դիդակտիկ նյութերի ցանկ, սակայն դրանք բավարար չեն, քանի որ երեխաները շուտ են ձանձրանում: Նշվածը հաստատվել է նաև մշտադիտարկման խմբի ուսումնասիրության արդյունքում: Մասնավորապես, դպրոցում կար տարիքային և զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական նյութերի պակաս, ինչպես նաև առկա նյութերը հիմնականում օգտագործվում են միանման կերպով, որոշ դեպքերում՝ ոչ արդյունավետ, ինչի պատճառով էլ երեխաները շուտ են ձանձրանում:

<sup>940</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 29:

<sup>941</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 24:

Այցի ընթացքում արձանագրվել են նաև նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված՝ հեռավար եղանակով իրականացվող ուսուցման ընթացքում երեխաների կրթության իրավունքի իրացման խնդիրներ: Մասնավորապես, մի խումբ երեխաներ ինտերնետ կապի կամ հեռահաղորդակցության միջոցների բացակայության կամ ոչ բավարար ծավալի հասանելիության պատճառով բախվել են իրենց կրթության իրավունքի իրացման խնդիրներին կամ, առհասարակ, դուրս են մնացել կրթությունից: Ավելին՝ դպրոցի տեղեկատվության համաձայն՝ հեռավար ուսուցման համալիր heravar.armedu.am կայքէջում հաշվի առնված չեն չափավոր և ծանր մտավոր խնդիրներ ունեցող երեխաների կրթական կարիքները, տեղադրված չեն նրանց համար մատչելի, հասանելի և կարիքներին համապատասխան ուսումնական, ուսումնամեթոդական նյութեր: Այս խնդրի կապակցությամբ, ինչպես նաև՝ ինտերնետ կապի կամ հեռահաղորդակցության միջոցների բացակայության պատճառով կրթությունից դուրս մնացած երեխաների տվյալների փոխանցման նպատակով, դպրոցը տարբեր գրություններով դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, սակայն, ըստ տնօրենի, համապատասխան արձագանք չի եղել:

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» այցի ընթացքում անձնակազմի և սաների հետ տեղի ունեցած առանձնազրույցների, զրույցների, ինչպես նաև հաստատության տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման ընթացքում ոչ միշտ է կարևորվում դրա արդյունավետության բաղադրիչը, ինչի պատճառով լինում են դեպքեր, երբ երեխայի կրթության իրավունքի երաշխավորումը ձևական բնույթի է: Օրինակ, Պաշտպանի աշխատակազմին են ներկայացվել տեղեկություններ այն մասին, որ տնային ուսուցման դեպքում կրթական պրոցեսի ընթացքում մատուցվող կրթական նյութը չի համապատասխանում սանի կրթական կարիքներին և զարգացման հնարավորություններին: Մեկ այլ դեպքում կրթական նյութը մատչելի կերպով չի մատուցվում սանին՝ իր կարողությունների հաշվառմամբ, ինչի արդյունքում երեխան չի յուրացնում այն: Օրինակ՝ նշվել է, որ տնային ուսուցման ընթացքում այցելող մանկավարժը երեխային ներկայացրել է կրթական նյութը՝ առանց հստակեցնելու կոնկրետ հանձնարարության նպատակը և բացատրելու, թե ինչ առաջադրանք է կատարելու երեխան՝ պատճառաբանելով, որ **«միևնույն է երեխան չի հասկանալու»**: Եղել են նաև դեպքեր, երբ պալիատիվ խնամք ստացող խմբի սաներից մեկին տնային ուսուցմամբ դասավանդվում է օտար լեզու այն դեպքում, երբ վերջինս չի արձագանքում հայերեն պարզ հարցադրումներին:

Նկարագրված խնդրի և դեպքերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք հիմնականում հաստատության սաների իրական կրթական կարիքներին և կարողություններին համապատասխանող կրթական չափորոշիչների և ծրագրերի ներդրված չլինելու հետևանք են: Ավելին՝ դասավանդվող առկա կրթական նյութն էլ գործնականում մատչելի ու ընկալելի դարձնելու համար չկան բավարար մեթոդական կամ թիրախային վերապատրաստումներ, ձեռնարկներ, որոնք կօգնեն սաների հետ աշխատող մանկավարժներին, մասնագետներին լուծել իրենց

աշխատանքային գործունեության ընթացքում առաջացող խնդիրները: Այս խնդրի մասին բարձրաձայնել են նաև սաների հետ աշխատող մասնագետները:

Առանձնագրույցների ընթացքում պարզվել է նաև, որ կան սաներ, ովքեր իրենց կրթության իրավունքը հանրակրթական ուսումնական հաստատություններում իրացնելիս նույնպես բախվում են կամ վախենում են, որ կբախվեն ինտեգրման խնդիրների, խարանի, ինչի պատճառով էլ խուսափում են դպրոց հաճախելուց:

Պաշտպանի աշխատակազմի դիտարկմամբ՝ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի սաների կարիքները խորապես ուսումնասիրված չեն, որպեսզի վեր հանվեն նրանց իրական կրթական կարիքները: Առկա կարիքների ուսումնասիրության պրակտիկան, որպես կանոն, ֆորմալ բնույթի է և նպատակ ունի ապահովել կրթության իրավունքի երաշխավորման և երեխային կրթությունից դուրս չթողնելու համար անհրաժեշտ փաստաթղթավորման օրենսդրական պահանջը: Մինչդեռ Պաշտպանի գնահատմամբ՝ իրավունքի ֆորմալ երաշխավորումը չի կարող ապահովել պետության պոզիտիվ պարտավորությունների պատշաճ կատարումը:

Այս առումով պետք է ընդգծել, որ հաշմանդամությունն ինքնին որակվում է որպես սոցիալական ոլորտ, իսկ հաշմանդամություն ունեցող երեխայի կարիքները՝ նրա յուրահատկությամբ պայմանավորված առանձնահատկություններ: Ուստի, կրթական կարիքները գնահատելիս պետք է հաշվի առնել երեխայի կարողությունների, ունակությունների, հնարավորությունների ողջ ծավալը՝ ներառյալ առողջապահական և սոցիալական առանձնահատկությունները, դրանք դիտարկել նաև երեխայի ինքնասպասարկման և զարգացման հնարավորությունների համատեքստում և բացառել միայն բժշկական գնահատումը: Ըստ այդմ՝ կրթության իրավունքի պատշաճ իրացման համար կարևոր է առանձնահատուկ կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի համար կարիքների և կարողությունների վրա հիմնված կրթական գործընթացի և դրա ընթացքում դրական զարգացումների ապահովումը:

Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ այցի պահին սաներից 21-ի կրթության իրավունքն իրականացվում էր հանրակրթական ուսումնական հաստատությունների 1-6-րդ դասարաններում, իսկ 70-ինը՝ տնային ուսուցման միջոցով:

Այցի ընթացքում հաստատության անձնակազմի և սաների հետ տեղի ունեցած առանձնագրույցների, զրույցների, ինչպես նաև հաստատության տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ թեև սաների կրթության կազմակերպման ընթացքում հաստատության բազմամասնագիտական թիմն ակտիվ համագործակցում է հանրակրթական ուսումնասական հաստատության մասնագետների հետ, այնուամենայնիվ, խնդրահարույց է այն, որ պետական չափորոշիչները ոչ միշտ են համապատասխանում երեխաների ուսումնական կարիքներին, իսկ դրանց ադապտացման պրակտիկ մեթոդաբանություն պետության կողմից ներդրված չէ: Ավելին՝ դասավանդվող առկա կրթական նյութն էլ գործնականում մատչելի ու ընկալելի դարձնելու համար չկան բավարար մեթոդական կամ թիրախային վերապատրաստումներ, ձեռնարկներ, որոնք կօգնեն սաների հետ աշխատող մանկավարժներին,

մասնագետներին լուծել իրենց աշխատանքային գործունեության ընթացքում առաջացող խնդիրները:

Այցի ընթացքում հաստատության անձնակազմի հետ քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման ընթացքում ոչ միշտ է կարևորվում դրա արդյունավետության բաղադրիչը: Օրինակ, Պաշտպանի աշխատակազմին են ներկայացվել տեղեկություններ այն մասին, որ տնային ուսուցման դեպքում կրթական պրոցեսի ընթացքում մատուցվող կրթական նյութը չի համապատասխանում սանի կրթական կարիքներին և զարգացման հնարավորություններին:

Նկարագրված խնդրի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք հիմնականում սաների իրական կրթական կարիքներին և կարողություններին համապատասխանող կրթական չափորոշիչների և ծրագրերի ներդրված չլինելու հետևանք են, ինչն արձանագրվել է նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ այլ հաստատություններ այցերի արդյունքում: Մասնավորապես, դասավանդվող առկա կրթական նյութը գործնականում մատչելի ու ընկալելի դարձնելու համար չկան բավարար մեթոդական կամ թիրախային վերապատրաստումներ, ձեռնարկներ, որոնք կօգնեն սաների հետ աշխատող մանկավարժներին, մասնագետներին լուծել իրենց աշխատանքային գործունեության ընթացքում առաջացող խնդիրները: Այս խնդրի մասին բարձրաձայնել են նաև սաների հետ աշխատող մասնագետները: Ուստի, անհրաժեշտ է մշակել և ներդնել հատուկ կրթական չափորոշիչներ և ծրագրեր, ինչպես նաև առկա ծրագրերն ըստ սանի կրթական կարիքներին համապատասխանեցնելու ուղեցույցներ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. ապահովել սաների կրթության իրավունքի ոչ ձևական իրացումը՝ նրանց զարգացման հնարավորությունների և կարիքներին համապատասխան,*
- 2. իրականացնել սաների կրթական կարիքների թիրախային, խորքային և անհատական գնահատում, որոնց վրա կմշակվի սանի անհատական ուսուցման պլան՝ հաշվի առնելով նրա զարգացման հնարավորությունները,*
- 3. մշակել և ներդնել հատուկ կրթական չափորոշիչներ և ծրագրեր, ինչպես նաև առկա ծրագրերն ըստ սանի կրթական կարիքներին համապատասխանեցնելու ուղեցույցներ,*
- 4. մասնագիտական աշխատանքների գրանցումներն ու արձանագրումը դարձնել առարկայական, չափելի, իրական,*
- 5. ապահովել բավարար քանակի դիդակտիկ նյութերի առկայությունը դպրոցներում,*
- 6. իրականացնել աշակերտների կրթական կարիքների վերագնահատում դպրոցներում և մանկատներում,*
- 7. մշակել ներդնել երեխաների կարիքների գնահատման այնպիսի մեխանիզմներ, որոնք գնահատման գործընթացը կդարձնեն կանոնավոր և ավելի հաճախակի՝ ներգրավելով նաև երեխայի հետ աշխատող մանկավարժներին,*

8. կանոնավոր և պարբերական դարձնել մասնագիտական քննարկումներն ու սեմինարները դպրոցում՝ ներգրավելով նաև ոլորտի այլ մասնագետների, անկախ փորձագետների,

9. կազմակերպել և ապահովել երեխայի կրթության իրավունքի իրացման առավել թիրախային և հասցեական նպատակ, աստիճան,

10. գնահատել երեխայի զարգացման հնարավորությունները ողջ ծավալով,

11. կազմել անհատական կարիքահեն «կրթական փաթեթ», որը կներառի ոչ միայն պարտադիր դասաժամերը, այլ նաև սոցիալական, հումանիտար և այլ բաղադրիչներ, որոնք անհրաժեշտ են երեխային հաստատությունից դուրս ինքնուրույն կյանքին նախապատրաստելու համար:

### **1.5 Խմբերի ձևավորում (մանկապետներ)**

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում այցի պահին գործում էր 7 խումբ, որից 2-ը՝ պալիատիվ խնամք ստացող երեխաների: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ հաստատությունում խմբերը բաշխված էին հետևյալ կերպ՝ հաշվի առնելով սաների տարիքային և սեռային, ինչպես նաև նրանց զարգացման հնարավորություններն ու առանձնահատկությունները: Ըստ այդմ՝ հաստատությունն ունի աղջիկների և տղաների առանձին խմբեր՝ պայմանավորված հիմնականում նրանց սեռահասունացման հանգամանքով, ինչպես նաև մանկահասակ կամ մինչև դեռահասության տարիքի սաների համար ընդհանուր խմբեր:

Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում այցի պահին գործում էր 10 խումբ, յուրաքանչյուր խմբում մինչև 12-13 երեխա: Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ խմբերի ձևավորման համար հաշվի են առնվում ինչպես սաների տարիքային և սեռային, այնպես էլ նրանց զարգացման հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Այսպես, ըստ հաստատության բազմամասնագիտական թիմի հետ ունեցած քննարկումների, արձանագրվել է, որ սաների կարիքների գնահատման համար առաջարկվել է կիրառել Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) ծածկագրերը, սակայն այս դեպքում էլ խնդիր է առաջանում, օրինակ, 0-3 տարեկան երեխաների գնահատման դեպքում, քանի որ նշված ծածկագրերը համապատասխանեցված չեն և կիրառելի չեն այս տարիքային խմբի համար: Արդյունքում՝ բազմամասնագիտական խմբի կողմից ուսումնասիրվել է համադրելի միջազգային փորձը, մշակվել հաստատության սաների կարիքների գնահատման համար առավել ընդունելի և կիրառելի չափանիշներ, մեթոդաբանությունը:

Սաների գնահատումը, որպես կանոն, իրականացվում է 3-6 ամիսը մեկ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ կախված իրականացված աշխատանքների արդյունքներից կամ երեխայի զարգացման ընթացքից:

Այցի ընթացքում դիտարկումների, առանձնագրույցների և նեղ մասնագիտական ծառայությունների վերաբերյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքների համադրումը



վկայում է, որ հաստատության բազմամասնագիտական թիմն իրականացնում է փոխլրացնող աշխատանք, Հաստատության հոգեբանի և լոգոպեդների կողմից կանոնավոր գնահատումները, ուղղորդումները հաշվի են առնվում նաև այլ մասնագետների կողմից, ինչը դրական ազդեցություն է ունենում երեխաների հետ տարվող հետևողական, փուլային աշխատանքի արդյունավետության վրա: Այսպես, օրինակ, ներկայացված տեղեկությունների համաձայն՝ նման աշխատանքի արդյունքում մոտ 3 ամսվա ընթացքում հնարավոր է եղել հաստատության մեկ բաժանմունքի շուրջ տաս երեխայի զոնդով սնվելը փոխարինել գտալով սնվելով:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ պետության կողմից ներդրված չէ խնամքի հաստատություններում սաների գիշերակացի կազմակերպման նպատակով խմբերի ձևավորման չափորոշիչներ և մեթոդաբանություն: Առկա չեն մասնագիտական հստակ գործիքակազմեր և բավարար թիրախային վերապատրաստումներ նշված ոլորտում, որոնք կօգնեն հաստատությունների մասնագետներին իրականացնել առավել կարիքահեն և երեխայի շահերից բխող գնահատում և խմբերի ձևավորում:

*Ուստի, անհրաժեշտ է՝*

*1. մշակել և հաստատել խմբերի ձևավորման և կարիքների գնահատման նվազագույն չափորոշիչներ՝ այս գործընթացում ներգրավելով Հաստատության բազմամասնագիտական թիմին,*

*2. անձնակազմի համար իրականացնել խմբերի ձևավորման սկզբունքների և նվազագույն չափորոշիչներ վերաբերյալ վերապատրաստումներ:*

## **1.6 Բժշկական սպասարկում**

Մշտադիտարկման ընթացքում արձանագրվել են մի շարք խնդիրներ կապված հաստատություններում իրականացնող բժշկական սպասարկման իրականացման հետ, որոնք ներկայացված են ստորև:

### **• Հանդարտեցման մեթոդների կիրառման հետ կապված խնդիրներ.**

«Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում կատարված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ հաստատության բուժանձնակազմի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ հաստատությունում սաների նկատմամբ զսպման միջոցներ չեն կիրառվում: Անհրաժեշտության դեպքում սաների վարքային դրսևորումներով պայմանավորված՝ կիրառվում են միայն հանդարտեցման միջոցներ: Թեև իրեն կամ այլ անձի ֆիզիկական վնաս պատճառելու վտանգի դեպքում անձնակազմը փորձում է տվյալ սանին հանդարտեցնել զբոսանքի, համոզելու կամ նման այլ եղանակներով, սակայն լինում են դեպքեր, երբ դեղորայքային հանդարտեցման կարիք է լինում: Այս դեպքում, տրամադրված տեղեկությունների համաձայն՝ դեղորայքային հանդարտեցումը հիմնականում կատարվում է «Դիագեպամ» դեղորայքով կամ դրա տարատեսակներով, ինչի մասին գրառում է կատարվում միայն տվյալ սանի անհատական բժշկական քարտում: Պաշտպանի

աշխատակազմի ներկայացուցիչներին տրամադրած լրացուցիչ պարզաբանումների համաձայն՝ դեղորայքային հանդարտեցումն իրականացվում է «Ռիսպերիդոն» կամ «Ազալեոտին» դեղորայքներով: Նշվածի կապակցությամբ պետք է նշել, որ «Ռիսպերիդոն» դեղորայքը ներառված է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված՝ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հանդարտեցման նպատակով տրամադրվող դեղերի ցանկում, իսկ «Ազալեոտին» դեղորայքը մինչույն նեոլեպտիկ խմբից է և տրամադրվում է առանց դեղատոմսի:

Այս դեպքում խնդիրն այն է, որ միայն սանի անհատական բժշկական քարտում գրառում կատարելու միջոցով հնարավոր չէ պարզել, թե արդյոք դեղորայքային միջամտությունը կատարվել է հանդարտեցման նպատակով, թե՛ սանի բուժման մաս է կազմում՝ բժշկի ցուցման հիման վրա: Ավելին՝ մշտադիտարկման ընթացքում պարզվել է, որ հաստատությունը «Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ մատյան» չի վարում, քանի որ անձնակազմն իրազեկված չէ օրենսդրական պահանջների մասին: Մինչդեռ, ՀՀ առողջապահության նախարարության կողմից 20.01.2017 թվականին տրված թիվ Կ-ԲՕ-002226 լիցենզիայի շրջանակներում հաստատությունն իրականացնում է նաև մանկաբուժական, մանական նյարդաբանական, հոգեբուժական գործունեություն, ներառյալ՝ թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող դեղերի բացթողում և կիրառում: Միաժամանակ, պետք է նշել, որ հաստատությունն իրականացնում է սաների խնամք և աջակցություն, տրամադրում է նաև սոցիալական ծառայություններ հաստատության սաներին:

Վերոգրյալի կապակցությամբ պետք է նշել, որ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հոգեկան առողջության պահպանումը ներառում է հոգեկան առողջության բարելավումն ու հոգեկան խանգարումների կանխարգելումը, ինչպես նաև հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց անհրաժեշտ, բազմակողմանի և մատչելի հոգեբուժական բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, խնամքի ու օգնության այլ ձևերի ապահովումը: Այս գործընթացն իրականացնում են նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունները օրենքով սահմանված լիցենզիայի առկայության դեպքում: Այսպիսով, պետք է արձանագրել, որ «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ **հաստատությունը պարտավոր է վարել համապատասխան հաշվառման մատյան և յուրաքանչյուր դեպքով դրանում կարարել ամբողջական գրառումներ և ընթացքի վերաբերյալ արձանագրումներ:**

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մշտադիտարկման ընթացքում վերոգրյալ հարցերի առնչությամբ արձանագրված՝ գործող իրավակարգավորումների վերաբերյալ անբավարար իրազեկվածության խնդրով պայմանավորված՝ Պաշտպանը կարևոր է համարում նաև օրենսդրական պահանջների ներկայացումը: Այսպես, 2020 թվական օգոստոսի 30-ին ուժի մեջ մտած «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» թիվ ՀՕ-346-Ն օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանվում են ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցները, հանդարտեցման մեթոդներն ու դրանց կիրառման կարգը և պայմանները: Մասնավորապես, Օրենքի 7-րդ հոդվածը նախատեսում է, որ

հոգեբուժական հանձնաժողովի, իսկ դրա ստեղծման անհնարինության դեպքում՝ հետազոտող, բուժող կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի պատճառաբանված որոշման հիման վրա հոգեբուժական օգնություն և սպասարկում ստացող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ կարող են կիրառվել ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ:

Օրենքը նախատեսում է, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները կիրառվում են իրեն կամ շրջապատին **իրական** վնաս պատճառելու կամ դրա **իրական** սպառնալիքի դեպքում, եթե այդ սպառնալիքի վերացմանն ուղղված այլ միջոցների կիրառումը բավարար չէ այն վերացնելու համար: Ընդ որում՝ սպառնալիքի վերացմանն ուղղված միջոցներն են բանավոր խոսքը, ներառյալ՝ համոզումը: Ուստի, առանց այս միջոցների օգտագործման չի թույլատրվում կիրառել ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ: Կարևոր է արձանագրել, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի նկատմամբ արգելվում է կիրառել այնպիսի միջոցներ, որոնք անձին կենթարկեն ծաղրուծանակի կամ կիրառվող միջոցն անհամաչափ կլինի սպառնալիքի վերացմանը:

Միևնույն ժամանակ Օրենքը չի արգելում զուգակցել ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ, եթե վերջիններիս զուգակցումը կնպաստի կիրառման տևողության կրճատմանը, կամ եթե դա անհրաժեշտ է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին կամ այլ անձանց սպառնացող վտանգը կանխելու համար:

Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների իրականացման համար նախատեսվող բժշկական ցուցումներ են հոգեշարժական գրգռվածությունը, գիտակցության խանգարմամբ ընթացող վիճակները, ծանր դիսֆորիան, ագրեսիվ կամ խանգարմամբ ընթացող վիճակները, ծանր դեպրեսիվ խանգարումները՝ պացիենտի արտահայտված հոգեշարժական գրգռվածությամբ (աժիտացիայով) և (կամ) կայուն ինքնասպանության (սուիցիդալ) միտումներով, կախյալության ծանր վիճակները նարկոլոգիական ոլորտի հիվանդների մոտ, որոնք ընթանում են հոգեշարժական գրգռվածությամբ և (կամ) ագրեսիայով, և (կամ) աուտոագրեսիայով: Այս դեպքերից որևէ մեկն ընտրելիս բժիշկ-հոգեբույժը պարտավոր է տեղեկանալ դրանց կիրառման համար նախատեսվող հակացուցումների մասին: Տվյալ դեպքում՝ Պաշտպանը կարևոր է համարում նաև բժիշկ-հոգեբույժի ակտիվ համագործակցությունը ինչպես հաստատության հոգեբանի, այնպես էլ սանի հետ անմիջականորեն աշխատող կամ շփվող մասնագետների, անձնակազմի հետ: Օրենքն արգելում է՝ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցները կամ հանդարտեցման մեթոդները կիրառել այլ շահառուների, տվյալ դեպքում, այլ սաների ներկայությամբ, բացառությամբ ֆիզիկական ուժի անհապաղ կիրառման անհրաժեշտություն առաջանալու դեպքերի, որոնք կարող են կիրառվել վարքագծի կտրուկ փոփոխության և ագրեսիվացման դեպքերում, **այլ անձանց կյանքի կամ առողջության պաշտպանության և վերահաս ծանր հետևանքները կանխելու նպատակով**: Հատուկ պետք է շեշտադրել, որ նշված բացառությունը կարող է կիրառվել ծայրահեղ

դեպքում, երբ առկա են բավարար հիմնավոր ապացույցներ, որ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառման այլ տարբերակ ուղղակիորեն չկար: Նման դեպքերը վերահսկելու և մարդու իրավունքների հնարավոր խախտումները բացառելու նպատակով Պաշտպանը կարևոր է համարում այլ սաների ներկայությամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը թույլատրող հանգամանքների պատշաճ արձանագրումը մատչանում:

Հանդարտեցման մեթոդների կիրառման օրենսդրական կարգավորումներ են նախատեսված նաև դեղորայքային հանդարտեցման նպատակով կիրառվող գործողությունները վերահսկելի դարձնելու համար: Մասնավորապես՝ հանդարտեցման նպատակով կարող են տրամադրվել բացառապես լիազոր մարմնի կողմից հաստատած ցանկում ներառված դեղերը, որոնք սահմանված են ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի հունվարի 21-ի «Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին հանդարտեցման նպատակով տրամադրվող դեղերի ցանկը սահմանելու մասին» թիվ 04-ն հրամանով:

Ելնելով հոգեկան առողջության խնդիր ունեցող ֆիզիկական զսպման ենթարկված անձի վիճակից՝ կարող է անհրաժեշտություն առաջանալ կիրառել դեղամիջոցի ընդունման պարենտերալ ճանապարհը (միջմկանային կամ ներերակային): Դեղորայքային հանդարտեցման միջոցներ կիրառող բժիշկը պարտավոր է ոչ ուշ, քան մեկ ժամ պարբերականությամբ զննել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին և ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատչանում կատարել համապատասխան գրառում: Եթե կիրառվել են ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ, ապա հանգստացնող արդյունքի հասնելուց անմիջապես հետո դրանք պետք է անհապաղ դադարեցվեն:

Օրենքը սահմանում է նաև, որ հանդարտեցման նպատակով մեկուսացման միջոցների կիրառումն իրականացվում է այդ նպատակով առանձնացված, հատուկ կահավորված սենյակում: Մեկուսացման միջոցների կիրառման դեպքում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը պետք է լինի մշտական հսկողության ներքո: Այս դեպքում համապատասխան բուժաշխատողը պետք է գտնվի մեկուսացման սենյակից դուրս կամ հարևան սենյակում այնպես, որ հոգեկան առողջության խնդիր ունեցող անձը հնարավորություն ունենա ամբողջությամբ տեսնելու բուժաշխատողին, իսկ բուժաշխատողը հնարավորություն ունենա հսկելու և լսելու հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Ընդ որում՝ հատուկ պետք է ընդգծել, որ տեսանկարահանման միջոցները չեն կարող փոխարինել անձնակազմի մշտական ներկայությանը:

Կարևորագույն նշանակության օրենսդրական պահանջ է մեկուսացման միջոցների կիրառման առավելագույն տևողությունը՝ ըստ անձի տարիքի: Այսպես, մեկուսացման միջոցները 24 ժամվա ընթացքում կիրառվում են 18 տարեկանից բարձր անձանց համար՝ առավելագույնը չորս ժամ տևողությամբ, իսկ 9-17 տարեկան անձանց համար՝ առավելագույնը երկու ժամ տևողությամբ: Մինչև ինը տարեկան անձի նկատմամբ արգելվում է կիրառել մեկուսացման միջոցներ:

Ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման դեղորայքային մեթոդների կիրառման գործընթացը վերահսկելի դարձնելու նպատակով կարևոր է այն օրենսդրական պահանջը, որի համաձայն յուրաքանչյուր դեպքով աշխատանքային օրերին և ժամերին անմիջապես զեկուցվում է Հաստատության տնօրենին, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին՝ հաջորդ աշխատանքային օրը:

Օրենքը կարգավորում է նաև բժիշկ-հոգեբույժի գործունեությունը ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելիս: Մասնավորապես՝ բժիշկ-հոգեբույժը.

- ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում նույն օրը դրանց կիրառումը հիմնավորող գրառում է կատարում հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում, ինչպես նաև ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում (հաշվառման մատյանի ձևը հաստատում է լիազոր մարմինը)<sup>942</sup>,

- երեխայի, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու դեպքում դրա մասին մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ծանուցում է նրանց օրինական ներկայացուցիչներին, տվյալ դեպքում՝ նաև Հաստատության տնօրենին՝ որպես վերադաս և սաների խնամակալի պարտականությունները կատարող<sup>943</sup>,

- ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառման ամբողջ ժամանակահատվածում անձը պետք է մշտապես գտնվի բուժանձնակազմի հսկողության տակ,

- եթե ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը արդյունք չի տալիս, ապա հոգեբուժական հանձնաժողովը, (հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը) պարտավոր է ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցների կամ հանդարտեցման մեթոդների կիրառումը շարունակելու մասին ընդունել որոշում և յուրաքանչյուր դեպքի մասին աշխատանքային օրերին և ժամերին զեկուցել

<sup>942</sup> Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի 2021 թվականի փետրվարի 15-ի «Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանի ձևը հաստատելու մասին» N 17-Ն հրաման, հասանելի է <https://www.moh.am/images/legal-709.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>943</sup> «Դաստիարակչական, բժշկական, ազգաբնակչության սոցիալական պաշտպանության կամ նմանատիպ այլ կազմակերպություններում պետության լրիվ խնամքի տակ գտնվող երեխաների նկատմամբ խնամակալ (հոգաբարձու) չի նշանակվում: Նրանց պարտականությունների կատարումը դրվում է այդ կազմակերպությունների վրա», ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 136-րդ հոդված, 1-ին մաս:

«Մանկատանը գտնվող կամ տեղավորված և խնամակալի կարիք ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխայի խնամակալի պարտականությունները, ինչպես նաև այդ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում է մանկատան ղեկավարը», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 20:

տնօրենին, իսկ ոչ աշխատանքային օրերին և ժամերին կիրառելու դեպքում զեկուցում է հաջորդ աշխատանքային օրը:

Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսված են ֆիզիկական զսպման միջոցների կիրառման առանձնահատկությունները: Մասնավորապես, Օրենքը մեխանիկական միջոցներով ֆիզիկական զսպում իրականացնելիս թույլատրում է կիրառել միայն ոչ տրավմատիկ, հարմարավետ օգտագործմամբ ամրակապեր, գոտիներ, հատուկ հագուստներ: Դրանք պետք է լինեն հեշտությամբ արձակվող և չպետք է ցավ պատճառեն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին: Ֆիզիկական զսպումը ֆիզիկական ուժ գործադրելու միջոցով իրականացնելիս պետք է չոտնահարվի հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի արժանապատվությունը, և նվազագույնի հասցվեն հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին վնասելու կամ ցավ պատճառելու ռիսկերը:

Օրենսդրական պահանջներ են նախատեսված նաև ֆիզիկական զսպման միջոցի կիրառման տևողության կապակցությամբ: Այսպես՝ 24 ժամվա ընթացքում ֆիզիկական զսպման կիրառման ընդհանուր տևողությունը չպետք է գերազանցի՝

- 18 տարեկանից բարձր անձանց համար՝ չորս ժամը,
- 9-17 տարեկան անձանց համար՝ երկու ժամը,
- մինչև ինը տարեկան անձի նկատմամբ արգելվում է կիրառել ֆիզիկական զսպման մեխանիկական միջոցներ:

Ֆիզիկական զսպումն իրականացնելու իրավասություն ունի միջին և կրտսեր բուժանձնակազմը՝ բուժող բժիշկ-հոգեբույժի կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժի հսկողությամբ: Բժիշկ-հոգեբույժը ոչ ուշ, քան 30 րոպե պարբերականությամբ զննում է հոգեկան առողջության խնդիր ունեցող ֆիզիկական զսպման ենթարկված անձին՝ ստուգվելով կապերի ամրությունը, վերջույթների արտաքին տեսքը (գունավորումը, հնարավոր այտուցվածությունը), վերջույթների ջերմությունը, կապիչից ստորև գտնվող վերջույթների անոթազարկը, կապիչի տեղադրման հատվածում ցավի զգացողությունը, կապիչից ստորև վերջույթների զգայունությունը, որից հետո ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյանում կատարում է համապատասխան գրառում: Նախորդ զննումից 30 րոպե անց բժիշկ-հոգեբույժը հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի զննությամբ պարզում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը շարունակելու անհրաժեշտության հարցը: Այն դեպքում, երբ բժիշկ-հոգեբույժը պարզում է, որ ֆիզիկական զսպման միջոցների կիրառման պատճառները վերացել են՝ հոգեբուժական հանձնաժողովը (հետազոտող կամ բուժող բժիշկ-հոգեբույժը կամ հերթապահ բժիշկ-հոգեբույժը) որոշում է ֆիզիկական զսպման միջոցների կիրառումը դադարեցնել:

**Վերոգրյալի վերլուծության և Պաշտպանի աշխատակազմի արձանագրված խնդիրների համադրման արդյունքում հարկ է նշել, որ խնամքի հաստատություններում պետք է շրջանառվեն ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման**

**մեթոդներ կիրառելու վերաբերյալ մատյաններ և ապահովվի դրանց պատշաճ վարման նպատակով անհրաժեշտ մասնագիտական վերապատրաստում:**

**• Բժշկական թափոնների և դեղերի խոտանման վերաբերյալ խնդիրներ.**

«Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում բժշկական թափոնների, օգտագործված դիմակների համար հաստատությունում նախատեսված են եղել առանձնացված պլաստմասե տարաներ: Այնուամենայնիվ, մշտադիտարկման ընթացքում արձանագրվել է, որ դրանց պարունակությունը խառնված է այլ տնտեսական և բժշկական աղբի հետ: Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի մարտի 4-ի «Բժշկական թափոնների գործածության ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 03-Ն հրամանով հաստատված հավելված 1-ի 21-րդ կետի համաձայն՝ սրածայր թափոնները, դրանց գոյացման վայրում, օգտագործելուց անմիջապես հետո տեղադրվում են մեկանգամյա օգտագործման կարծր (օրինակ՝ պլաստիկ շշերի, մետաղյա կամ կարծր պլաստմասե բեռնարկղի մեջ)՝ կենսաբանական վտանգի նշանը և «Զգույշ սրածայրեր» մակնշումը կրող տարողությունների մեջ: Արգելվում է տեղադրելուց առաջ ներարկիչների ասեղների կրկնակի փակելը կափարիչով և (կամ) ախտահանելը:

Հավելվածի 25-րդ կետի համաձայն՝ բոլոր տեսակի բժշկական թափոնները տարողությունների մեջ տեղադրվելուց հետո հերմետիկորեն փակվում են, իսկ ախտաբանաանատոմիական, միկրոկենսաբանական, սրածայր և քիմիական թափոնները նաև կնքվում, ինչից հետո բժշկական թափոնի հավաքելու, տեղադրելու, փակելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողը լրացնում է պիտակ՝ դրա վրա նշելով տեղադրված բժշկական թափոնի տեսակը, դրա՝ տարողությունում տեղավորելու կոնկրետ ժամը, օրը, ամիսը, տարեթիվը, իր անունը և ազգանունը, ինչպես նաև կազմակերպության անվանումը: Լրացված պիտակը ամրացվում է տարողությանը, որն անմիջապես տեղափոխվում է բժշկական թափոնների ժամանակավոր պահման հատուկ տարածք: Լրացված պիտակը տարողությունից տարանջատվելու հնարավորությունը բացառվում է:

**«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում մշտադիտարկման արդյունքում պարզվել է, բժշկական անձնակազմի, ինչպես նաև տնօրենի տեղեկությունների համաձայն՝ այցի օրվա դրությամբ դեղերի խոտանման վերաբերյալ պայմանագիր չի կնքվել: Պիտանելիության ժամկետն անցած դեղորայքը, դպրոցի տնօրենի ցուցումով պահվում է առանձին տոպրակի մեջ՝ փակ պահարանում: Բժշկի և տնօրենի տեղեկությունների համաձայն՝ ժամկետանց դեղորայքի խոտանման համար մի քանի անգամ կապ է հաստատվել Արտակարգ իրավիճակների նախարարության հետ, պայմանավորվածություն է ձեռք բերվել նշված դեղորայքը նախարարության կողմից վերցնելու հարցում, սակայն այցի օրվա դրությամբ, այն չէր խոտանվել:**

Այցի ընթացքում արձանագրվել է, որ աշխատակազմը լիարժեք իրազեկված չէ մատյանների վարման ընթացակարգերի մասին: Օրինակ՝ այն դիտարկմանը, թե ինքնավնասումներ, վնասվածքների առաջացման պատճառները լրացված չեն համապատասխան մատյանում,

պարզաբանվել է, որ դրա անհրաժեշտության մասին տեղյակ չեն: Այցի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ներկայացել են տարբեր մատյանների վարման կարգը, պահանջները և նպատակը:

**•Բժշկական մատյանների հետ կապված խնդիրներ.**

Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում կատարված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ երեխաների հանդեպ կամ երեխաների միջև բռնության դեպքերի գրանցման մատյան, ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման մատյան և ինքնավնասումների մատյանների չեն վարվում: Մինչդեռ այցի ընթացքում դիտարկվել են դեպքեր, երբ որոշ սաների ձեռքերին, դեմքին եղել են կապտուկներ կամ չանգրվածքներ: Հաստատության աշխատակիցների կողմից պարզաբանվել է, որ մի դեպքում կապտուկները խաղի ընթացքում ընկնելու արդյունք է, մյուս դեպքում երեխան քնած ժամանակ ինքնավնասել է, իսկ երրորդ դեպքում երեխաներն իրար քաշքշել են խաղի ժամանակ: Այս մասին այցի ընթացքում որևէ տեղ արձանագրումներ չեն հայտնաբերվել: **Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է ներդնել «Երեխաների հանդեպ կամ երեխաների միջև բռնության դեպքերի գրանցման», «ինքնավնասումների» «Ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ հաշվառման» մատյանների վարման կարգը:**

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման» մատյանի ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանում ներառված են նաև բռնության դեպքից հետո իրականացված աշխատանքների նկարագրերը: Մասնավորապես, հոգեբանական աշխատանքների գրանցումներում նկարագրված են մեթոդներ, վարժություններ և խաղեր, որոնք որևէ կապ չունեն բռնության, ագրեսիայի, զայրույթի կառավարման հմտությունների ձևավորման կամ հանդուրժողականության և համագործակցության կարողությունների ձևավորման հետ: Անհասկանալի է, թե ինչ կերպ են դրանք նպաստում վարքագծային խնդիրների հաղթահարմանը: Դրանցում նաև նկարագրված չեն և ներկայացված չեն տարբեր կարողություններով և հնարավորություններով երեխաների հետ աշխատանքի նրբությունները:

**•Երեխաների պատվաստման և վերջիններիս դեղորայքի տրամադրման վերաբերյալ ծնողից գրավոր համաձայնություն ստանալու ընթացակարգի բացակայությունը.**

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ում, բժշկի տեղեկությունների համաձայն, կատարվում է տարեկան սեզոնային գրիպի դեմ պատվաստում, պատվաստանյութը տրամադրվում է Նուբարաշենի պոլիկլինիկայի կողմից: Համաձայն բուժող բժշկի տեղեկությունների՝ պատվաստանյութը սառցե պայուսակներով բերվում է դպրոց, որտեղ բուժող բժիշկը և պոլիկլինիկայի աշխատակիցը պատվաստում են դպրոցի սաներին: Նշվել է նաև, որ պատվաստման վերաբերյալ նախօրոք տեղեկացվում են աշակերտների



ծնողները և ստանում են վերջիններիս բանավոր համաձայնությունը, ինչը, սակայն որևէ կերպ չի արձանագրվում: Հարկ է ընդգծել, որ գրավոր համաձայնություն տրամադրելու ընթացակարգ չի գործում:

Այն հարցին, թե ծնողների հետ կապ հաստատելու անհնարինության դեպքում ինչպես է կարգավորվում պատվաստման համար ծնողի համաձայնություն ստանալու գործընթացը, բուժող բժիշկը պատասխանել է, որ աշակերտներին պատվաստվում են ՀՀ Առողջապահության նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 3427-Ա հրամանի համաձայն:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ *Մարդու գրավոր համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է, բացառություն են կազմում մարդու կյանքին սպառնացող վրանգի կամ շրջապատի համար վրանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերը, որոնց դեպքում մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնություն չի պահանջվում: 16 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի բժշկական միջամտության համար համաձայնությունը տալիս է նրա օրինական ներկայացուցիչը, եթե բացակայում են օրենքով նախատեսված պայմանները:*

*Նույն օրենքի համաձայն՝ օրինական ներկայացուցչի կամ կոնտակտային անձի բացակայության դեպքում, եթե բժշկի կարծիքով բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, և պացիենտի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, ապա բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով պացիենտի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից:*

Հատկանշական է, որ գրավոր պահանջը գործնականում կիրառվում է անգամ պոլիկլինիկայում ծնողի կողմից երեխային պատվաստելուց հրաժարվելու դեպքում ծնողը ստորագրում է համապատասխան տեղեկանք, որով վերջինիս պարզաբանվում է պատվաստանյութից հրաժարվելու հետևանքները, ինչի արդյունքում ապահովվում է իրազեկ համաձայնության գործընթացը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ մտահոգիչ է, որ դպրոցում բացակայում են գործուն մեխանիզմներ պատվաստման գործընթացի արդյունավետ վերահսկման ուղղությամբ: Անընդունելի է պատվաստման մասին որևէ կերպ չարձանագրվող բանավոր համաձայնություն ստանալու գործընթացը, ինչպես նաև անթույլատրելի է առանց ծնողի իրազեկ համաձայնության աշակերտին պատվաստելու հանգամանքը:

Նշվածի կապակցությամբ հարկ է հատուկ նշել նաև, որ ՀՀ գործող իրավակարգավորումների համաձայն Հայաստանի Հանրապետությունում պետական պատվերի շրջանակներում գրիպի դեմ պատվաստումները կատարվում են բացառապես կամավորության սկզբունքով և որևէ պարագայում չի կարելի անտեսել իրազեկ համաձայնության հանգամանքը: Ավելին, դպրոցի վկայակոչած՝ ՀՀ առողջապահության նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 2-ի N 3427-Ա հրամանը չի վերաբերում առանց գրավոր համաձայնության պատվաստում իրականացնելուն:

Այս խնդիրը արձանագրվել է նաև այլ հաստատություններում: Մասնավորապես, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ այցի ընթացքում արձանագրվել է, որ Հաստատության սաներն ստանում են ամենամյա սեզոնային գրիպի դեմ պատվաստումներ: Համաձայն մանկաբույժի տրամադրած տեղեկությունների՝ վերջին անգամ գրիպի դեմ պատվաստումներ կատարվել են 2020 թվականի նոյեմբերին՝ Պոլիկլինիկայի աշխատակազմի ուժերով: Հաստատության 24 չափահաս սաներից կորոնավիրուսային համավարակի (COVID-19) դեմ պատվաստումներ են ստացել 11-ը՝ ըստ առողջական վիճակի:

Բժշկի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ սաների հետ իրազեկման աշխատանքներ են իրականացվել՝ ելնելով նրանց մտավոր կարողություններից: Տնօրենի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ սաների ծնողները հնարավորության սահմաններում տեղեկացվել են կատարվելիք պատվաստումների մասին:

Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում համաձայն բժշկի տեղեկությունների՝ դպրոցի աշակերտների շրջանում իրականացվում է սեզոնային վիրուսային գրիպի պատվաստում «Արաբկիր» բժշկական կենտրոնի տնօրենի հրամանով և ուժերով: Դպրոցի կողմից նախապես բժշկական կենտրոնին տրամադրվում է ծնողների բանավոր համաձայնությամբ պատվաստվող երեխաների ցուցակը: Պատվաստումը կատարվում է բժշկական կենտրոնի աշխատակիցների կողմից: Պարզաբանվել է, որ պատվաստումից առաջ ծնողներին բանավոր համաձայնության հիման վրա կազմվում են աշակերտների ցուցակներ, որոնք փոխանցվում են բժշկական կենտրոն: Թեև ողջունելի է, որ ցուցակները կազմվում են համաձայնությունը ստանալուց հետո միայն, սակայն երեխաների իրավունքների պաշտպանության և իրազեկ համաձայնության պատշաճ ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է ստանալ ծնողների գրավոր համաձայնությունը:

**«Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ** դպրոցի կողմից հոգեմետ դեղորայք չի գնվում, փոխարենն իրենք ապահովում են ծնողների կողմից բերված դեղորայքի տրամադրումը երեխաներին՝ ծնողների կամ ծնողներից մեկի համաձայնությամբ, որի մասին, սակայն համապատասխան գրառում չի կատարվում: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի այն հարցին, թե ինչ եղանակով է դպրոցն իրազեկվում աշակերտին ցուցված դեղորայքային, այդ թվում՝ հոգեմետ դեղորայքային բուժման մասին, դպրոցի բժիշկը հայտնել է, որ իրենք հիմնվում են ծնողների ներկայացրած համապատասխան բժշկական տեղեկանքների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ծնողների բանավոր ցուցումների վրա:

**Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ ծնողների կողմից տրված բանավոր ցուցումների հիման վրա դեղորայքի տրամադրումը երեխաներին խնդրահարույց է հատկապես նրանց առողջության պահպանման իրավունքի արդյունավետ երաշխավորման տեսանկյունից: Ուստի, անհրաժեշտ է բարելավել համապատասխան պրակտիկան՝ առհասարակ բացառելով բանավոր ցուցումների հիման վրա հատկապես հոգեմետ դեղորայքի տրամադրումը:**

**Անհրաժեշտ է պարտադիր կերպով արձանագրել, թե երեխային ինչ դեղորայք, ում ցուցումով և նշանակմամբ է տրամադրվել է այն, ինչպես նաև ծնողից պահանջել ներկայացնելու դեղատոմսը այն դեպքերում, երբ այն անհրաժեշտ է գործող իրավակարգավորումների համաձայն: Անհրաժեշտ է նաև մշտապես հստակորեն կատարել դեղերի հաշվառումը և դրա շարժի մասին գրառումները:**

### **Այլ խնդիրներ.**

Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ իրականացված այցի ընթացքում արձանագրվել է, որ բժիշկների աշխատասենյակում առկա էր չիրկիզվող պահարան, որտեղ այցի պահին եղել են ժամկետանց դեղեր: Հաստատությունում մատուցվում է կինեզոթերապևտիկ, ֆիզիոթերապևտիկ վերականգնողական ծառայություններ: Հաստատության սաների վերականգնողական բուժումն իրականացվում է Հաստատության 2 մասնագիտացված սենյակներում, որոնք կահավորված էին հատուկ գույքով և սարքավորումներով, որոնք տրամադրվել են նաև անհատ բարերարների կողմից:

Այցի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի դիտարկումները, ինչպես նաև անձնակազմի հետ ունեցած առանձնագրույցները վկայում են, որ թեև հաստատությունում որոշակի քանակությամբ առկա են հաշմանդամություն ունեցող երեխաների աջակցող միջոցներ, օրինակ, սայլակ (ըստ անձնակազմի տեղեկությունների՝ յուրաքանչյուր խմբի համար 1 կամ 2 հատ), սակայն համապատասխան կարիք ունեցող բոլոր սաների խնամքը, աջակցությունը պատշաճ և արժանապատիվ կերպով կազմակերպելու համար հաստատությանն անհրաժեշտ են լրացուցիչ աջակցող միջոցներ, այդ թվում՝ սայլակներ, քայլակներ և այլն:

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր»-ում սաների լսողական ֆունկցիայի պարբերական դիսպանսեր հսկողությունն իրականացվում է «Արաբկիր» բժշկական կենտրոնի մասնագետների կողմից: Տնօրենի տեղեկացմամբ բարերարի աջակցությամբ 2021 թվականին բոլոր աշակերտների համար ձեռք են բերվել բարձրորակ լսողական սարքերով: Ակնաբուժական և ատամնաբուժական օգնությունը իրականացնում է «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական կազմակերպությունը: Այլ սքրինինգային, ինչպես նաև իմունականխարգելիչ միջոցառումներ վերջին տարիների ընթացքում չեն իրականացվել:

«Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ իրականացված մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ դեղերի պահման սենյակում ջերմաստիճանը 31 աստիճան էր, ինչն անթույլատրելի է դեղերի պահպանման համար: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ դեղորայքի պահպանման համար սենյակային ընդունելի ջերմաստիճանը մոտ 25 աստիճան է՝ ըստ Առողջության համաշխարհային կազմակերպության<sup>944</sup>:

<sup>944</sup> Տե՛ս ԱՀԿ «Հանրային առողջության պահպանման խորհուրդներ՝ կանխելու բարձր ջերմաստիճանի ազդեցությունը առողջության վրա» զեկույց, էջ 14, հասանելի է [https://cdn.who.int/media/docs/default-source/climate-change/publication--public-health-advice-on-protecting-health-effects-of-heat39cda4ff-5772-4afe-a067-e60ce02b807d.pdf?sfvrsn=5f1494a9\\_1&download=true](https://cdn.who.int/media/docs/default-source/climate-change/publication--public-health-advice-on-protecting-health-effects-of-heat39cda4ff-5772-4afe-a067-e60ce02b807d.pdf?sfvrsn=5f1494a9_1&download=true) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Այցի պահին մեկուսարանը չունի առանձնացված լվացարան և սանհանգույց, ինչի պատճառով հնարավոր չէ բացառել մեկուսացված սանի շփումն այլ սաների կամ նրանց կողմից օգտագործվող պարագաների հետ: Մանկաբույժի և տնօրենի տեղեկությունների համաձայն՝ մեկուսարանն ըստ նպատակային նշանակության չի օգտագործվում, քանի որ նման կարիք չի առաջացել:

«Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում այցի պահին ննջասենյակներում օդի ջերմաստիճանը եղել է 12-ից 14 աստիճան: Մանկատան տնօրենի խոսքերով կենտրոնացված ջեռուցման համակարգը միացվում է յուրաքանչյուր օր՝ 17:00-ից սկսած, ինչը պատճառաբանվել է ֆինանսական միջոցների սղությանը: Խնդրի քննարկման ընթացքում պարզվել է, որ այս դեպքում հարցն այն է, որ պայմանավորված տարածաշրջանի բնակլիմայական պայմաններով՝ Գավառում և հարակից շրջաններում ցուրտ ամիսներն ավելի երկար են տևում և ջեռուցման անհրաժեշտությունն առաջանում արդեն իսկ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և տևում է մինչև մարտ-ապրիլ ամիսներ: Մինչդեռ, ինչպես մյուս նմանատիպ հաստատություններին, այնպես այս Մանկատանը պետությունը ջեռուցման ֆինանսավորում հատկացնում, տնօրինության տվյալներով, շուրջ 3 ամսվա համար:

Տնօրենի տեղեկությունների համաձայն՝ իրենք նախապատրաստում են լրացուցիչ ֆինանսավորում հատկացնելու վերաբերյալ գրություն՝ ուղղված պետական իրավասու մարմնին:

*Նշվածի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝*

1. խնամքի հաստատությունների համար շրջանառել ֆիզիկական զսպման կամ մեկուսացման միջոցներ կամ հանդարտեցման մեթոդներ կիրառելու վերաբերյալ մատրյանների ձևանմուշները՝ ապահովելով դրանց պատշաճ վարման նպատակով անհրաժեշտ մասնագիտական վերապատրաստում,

2. ապահովել հաստատություններում ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման ներպետական և միջազգային պահանջների գործնական կատարումը,

3. հաստատության աշխատակազմի համար իրականացնել ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների գործնական կիրառման վերաբերյալ վերապատրաստումներ,

4. իրականացնել վերահսկողություն՝ հանդարտեցման կիրառվող բոլոր միջոցներն ու ընթացքը պատշաճ գրանցելու նկատմամբ,

5. մշակել և ներդնել մեթոդական ուղեցույցներ, որոնք հստակորեն կպարզաբանեն գործող իրավական կարգավորումները, դրանց կիրառման շրջանակը, տեխնիկական և մասնագիտական հարցերը՝ կապված ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման կարգավորումների հետ,

6. հաստատություններում իրականացնել կարիքների գնահատում և ապահովել անհրաժեշտ տեսակի և քանակի աջակցող միջոցների տրամադրումը հաստատության սաներին,

7. մշակել բժշկական փաստաթղթերի միասնական ձևանմուշներ, ինչպես նաև առողջական վիճակի վերաբերյալ տվյալների հավաքագրման, պահպանման և վարման միասնական կարգեր,
8. բացառել հաստատությունում հայտնաբերված ժամկետանց դեղորայքի առկայությունը,
9. ապահովել ինունդանխարգելման համար սահմանված պահանջների պատշաճ կատարումը, այդ թվում՝ համապատասխան փաստաթղթավորումը,
10. սենյակներում ապահովել դեղորայքի պահպանման համար անհրաժեշտ ջերմաստիճան,
11. «Դեղորայքի բաշխման հսկողության» մատյանում իրականացնել գրառումներ՝ դեղորայքի նշանակման բժշկական հիմնավորումների վերաբերյալ,
12. ապահովել բժշկական թափոնների հեռացման սահմանված ընթացակարգերը՝ բացառելով ժամկետանց դեղորայքի առկայությունը,
13. ապահովել պատվաստման կամավորությունն ու գրավոր իրազեկ համաձայնությունը՝ աշակերտներին պատվաստելիս,
14. բացառել բանավոր ցուցումների հիման վրա երեխաներին այնպիսի դեղորայքի տրամադրումը, որոնց համար գործող իրավակարգավորումների համաձայն անհրաժեշտ է դեղատոմս,
15. մեկուսարաններում ապահովել առանձին զուգարանակոնքի և լվացարանների առկայությունը,
16. ավելացնել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների ջեռուցման համար անհրաժեշտ ֆինանսավորումը՝ հաշվի առնելով մարզի բնակլիմայական պայմանները:

### **1.7 Բողոքարկման մեխանիզմներ**

«Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ում առկա էր բողոքարկման արկղ, որը տեղադրված էր առաջին հարկում՝ տեսանելի վայրում: Այն գտնվում էր առավել բարձրահասակ երեխաների համար հասանելի բարձրության վրա: Այն հարցին, թե ինչպես են համեմատաբար ցածրահասակ երեխաներն օգտվում բողոքարկման արկղի օգտագործման հնարավորությունից՝ դպրոցի ներկայացուցիչը պարզաբանել է, որ երեխաները միմյանց օգնում են: Նշվածը խնդրահարույց է բողոքների ներկայացման գաղտնիությունն ապահովելու տեսանկյունից: Այն առաջարկին, որ բողոքի արկղը պետք լինի առավել հասանելի բարձրության վրա, պարզաբանվել է, որ «այդ դեպքում երեխաները հարվածում կամ վնասում են այն»:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ երեխայի համար անհրաժեշտ է ապահովել կարծիք արտահայտելու առավել անկաշկանդ միջավայր: Այսպես, ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ երեխան ունի ազատ արտահայտվելու և լսված լինելու սահմանադրական իրավունք: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ հոդվածի դրույթների համաձայն՝ իր

հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Երեխայի սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը երաշխավորվում է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանության համաձայն<sup>945</sup>՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները, պետք է հարգվեն մի շարք սկզբունքներ, այդ թվում՝ անվտանգությունը: Տեղեկացվածության սկզբունքը ենթադրում է, որ երեխաները պետք է տեղեկացված լինեն նաև լսված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, անվտանգության սկզբունքը ենթադրում է, որ երեխան իր կարծիքն արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա, եթե նա խոսի իրեն հուզող հարցերից: **Լսված լինելու իրավունքի իրացման ձևերից մեկը երեխայի կողմից բողոք ներկայացնելու իրական հնարավորությունն է:** Բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման կարևորագույն չափանիշ է բողոքարկման գաղտնիությունը, որը հնարավորություն կտա երեխային իր խնդիրն իրավասու մարմնին ներկայացնել առանց վախի կամ իր համար բացասական հետևանքների ռիսկի: Այդ իսկ պատճառով, հաստատություններում պետք է հատուկ ուշադրություն դարձնել նրան, որ բողոքարկման արկղերը տեղադրվեն այնպիսի հարմարեցված վայրերում, որտեղ երեխան առանց վախի և ճնշվածության զգացողության կարողանա իր բողոքը կամ կարծիքն արտահայտել (այդ թվում՝ անանուն):

«Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում մանկավարժների և երեխաների փոխհարաբերություններն ուսումնասիրվել են դիտման և առանձնագրույցների միջոցով:

Երեխաներն ու մանկավարժները շփվում են անկաշկանդ և հանգիստ: Ակնհայտ է, որ երեխաները չեն վախենում և խուսափում նրանցից: Կարևոր է արձանագրել, որ անձնակազմն իր աշխատանքը կատարում է սրտացավորեն և առկա խնդիրները՝ կապված սաների խնամքի, հիգիենայի հետ, հիմնականում լուծվում են նրանց բարեխիղճ և հոգատար վերաբերմունքի արդյունքում: Թեև այցի ընթացքում արձանագրվել է հաստատությունում բողոքների և առաջարկությունների արկղի առկայությունը, սակայն դրա մատչելիությունը և կիրառումը գործնականում խնդրահարույց է: Խնդիրն այն է, որ թեև ֆորմալ առումով ապահովված է օրենսդրական պահանջը, սակայն անհասկանալի է, թե ինչ մեխանիզմներով և եղանակով պետք է ապահովվի դրա գործնական երաշխավորումը: Մասնավորապես, այն դեպքում, երբ սաները գրել չեն կարողանում կամ գտնվում են պալեատիվ խնամքի ներքո, ունեն ինքնասպասարկման

<sup>945</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի թիվ 12 ընդհանուր մեկնաբանությունը, հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

դժվարություններ, ի՞նչ կերպ են իրացնելու իրենց բողոքներ կամ առաջարկություններ ներկայացնելու իրավունքը:

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր»-ի առաջին հարկի միջանցքում՝ մուտքի մոտ կար բողոքի և առաջարկությունների մատյան: Կրթահամալիրի յուրաքանչյուր մասնաշենքում առկա է մեկական բողոքարկման արկղ:

Ծնողների, երեխաների հետ առանձնազրույցների ընթացքում նշվել է, որ գործնականում հնարավոր է ապահովել բողոքարկման գաղտնիությունը, քանի որ երեխաները կարող են բողոքները ներկայացնել անանուն, առանց մեծահասակների վերահսկողության:

Հարկ է նշել, որ դիտարկման ընթացքում կրթահամալիրի աշխատակիցների և երեխաների, ծնողների միջև դիտարկված շփումներն անկաշկանդ էին, ջերմ, անմիջական, ապահովված էր երեխայի համար կարծիք արտահայտելու համագործակցային միջավայր՝ քննարկելու և բարձրացնելու առկա խնդիրները: Օրինակ՝ եղել են դեպքեր, երբ երեխաներն անկաշկանդ մոտեցել են անձնակազմին, քննարկել տարբեր հարցեր, ստացել բավարարող պատասխաններ կամ ներկայացրել իրենց առարկությունները դրանց վերաբերյալ:

Վերոնշյալ դիտարկումները կարևոր են այն տեսանկյունից, որ ստեղծված է իրական հնարավորություն խնդիրն առանց վախի կամ երեխայի համար բացասական հետևանքների ռիսկի ներկայացնելու համար:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է ապահովել բողոքարկման արկղի մատչելիությունն ու հասանելիությունը բոլոր հասարակություններում՝ երաշխավորելով բողոքարկման գաղտնիության իրական հնարավորությունը:*

### **1.8 Դպրոցի անվանման անթույլատրելիությունը երեխայի իրավունքների համապետքաբար**

Պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է տարբեր հաստատությունների անվանումների կիրառման հարցում կարծրատիպային ընկալումների խնդիրը: Մասնավորապես, Պաշտպանը դիրքորոշում է հայտնել տարբեր հաստատությունների անվանումներում խտրական եզրույթների կիրառման կապակցությամբ՝ նշելով, որ այդ կերպ թիրախավորվում և պիտակավորվում են տվյալ հաստատությունում բնակվող, խնամք կամ կրթություն ստացող անձինք: Այս հարցին Պաշտպանն անդրադարձել է նաև 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդմամբ<sup>946</sup>:

Նշված խնդրի դրսևորումներից է նաև «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի անվանումը, որը դպրոցին վերաբերելի փաստաթղթերում և իրավական ակտերում նշված վերտառությամբ է արձանագրված: Այս

<sup>946</sup>Տե՛ս հաղորդումը, էջեր 1311-1316, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

անվանումն ինքնին նախադրյալներ է ստեղծում երեխային կյանքի հետագա տարիներին հաստատության հետ ասոցացնելու և պիտակավորելու համար: Սա հատկապես անթույլատրելի է այն տեսանկյունից, որ երեխաներն առավել խոցելի են՝ տարիքով և հուզական, վարքագծային առանձնահատկություններով պայմանավորված: Այս կապակցությամբ Պաշտպանն իր հաղորդումներում, ելույթներում և հրապարակային հայտարարություններում մեկ անգամ չէ, որ ընդգծել է, որ թե՛ իրավական ակտերում, թե՛ առօրյա կյանքում պետք է օգտագործել այնպիսի արտահայտություններ, որոնք կօգնեն հաղթահարել հասարակությունում առկա կարծրատիպերը: Ուստի, այս դեպքում առավել կարևոր է դառնում իրավական ակտերում գործածվող եզրութաբանության իրավունքահեն լինելը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փոփոխել դպրոցի անվանումը՝ բացառելով երեխաների վարքային դրսևորումների, առողջական կամ նրա ընտանիքի սոցիալական վիճակի հետ ասոցացվող որևէ եզրութաբանության կիրառում:*

## **2. Կրթության իրավունքի սահմանափակումները նախադպրոցական կրթական հաստատություններում**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդումներում տարիներ շարունակ անդրադարձ է կատարվում նախադպրոցական կրթական հաստատություններում կրթության իրավունքի իրացման խնդիրներին: 2021 թվականին ևս նշված խնդիրները շարունակել են արդիական լինել:

Կրթություն ստանալու իրավունքն անձի սահմանադրական իրավունքն է: Այն երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և ՀՀ-ի կողմից վավերացրած մի շարք միջազգային փաստաթղթերով: Ավելին, ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի<sup>947</sup> 4-րդ նպատակն է կրթության իրավունքի ապահովումը՝ որպես գերակայություն: Նպատակի բաղադրիչներից է՝ բոլոր աղջիկների և տղաների համար որակյալ վաղ մանկության զարգացման հնարավորությունների, խնամքի և նախադպրոցական կրթության հասանելիությունը<sup>948</sup>:

Նախադպրոցական կրթություն ստանալու իրավունք ունի նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա: Նախադպրոցական կրթությունը, «Նախադպրոցական կրթություն ստանալու մասին» ՀՀ օրենքի համաձայն, երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի գործընթացն է: Նույն

<sup>947</sup> Տե՛ս ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները, հասանելի է <http://un.am/hy/p/sustainable-development-goal-4> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>948</sup> Տե՛ս ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակները, նպատակ 4, կետ 2, հասանելի է <https://un.am/hy/p/sustainable-development-goal-4> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է նախադպրոցական կրթության բնագավառի ներառականությունը, մատչելիությունը, հասանելիությունն ու որակը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման, զարգացման ու դաստիարակության, անվտանգ միջավայրի ստեղծման, կյանքի, առողջության պահպանման և ամրապնդման կարևոր երաշխիք:

Երեխայի՝ վաղ մանկության շրջանում կրթություն ստանալը կարևոր է երեխայի զարգացման համար: Նախադպրոցական շրջանում կրթություն ստանալու իրավունքի պատշաճ իրացումը չապահովելն ազդեցություն է ունենում երեխայի ապագայի վրա և սահմանափակում է վերջինիս՝ իր լիարժեք ներուժին հասնելու հնարավորությունները: Ըստ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրապարակված վերլուծության՝ վաղ տարիքում նույնիսկ մեկ տարվա ընթացքում նախադպրոցական կրթություն ստացող երեխաների մոտ առավել մեծ հավանականությամբ են զարգանում այն կարևոր հմտությունները, որոնք անհրաժեշտ են դպրոցում հաջողության հասնելու համար<sup>949</sup>:

Նախադպրոցական կրթության հասանելիության խնդիրը արձանագրվել է նաև ՀՀ կառավարության կողմից՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ: Այսպես, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Կրթության իրավունք» 2.3 կետով նշված է, որ «Կրթության իրավունքի իրականացման մեկ այլ խոչընդոտ է համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցը: Հաճախ վարձավճարների տրամադրման անհնարինության պատճառով մի շարք դեպքերում հնարավոր չի լինում երեխայի կրթությունը կազմակերպել նախադպրոցական ուսումնական հաստատությունում»:

Այսինքն, պետական մակարդակով նույնպես նշվում է, որ նախադպրոցական կրթության ոլորտում առկա են խնդիրներ: Այս խնդիրները պահանջում են հրատապ լուծում, ինչի մասին տարիներ շարունակ նշվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներով:

## **2.1 Նախադպրոցական կրթական հաստատությունների հասանելիությունը**

Համաձայն ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հրապարակած տվյալների՝ 2000 թվականից ի վեր՝ նախադպրոցական կրթական համակարգում ընդգրկվածությունն ավելացել է գրեթե մեկ երրորդով, և նախատեսվում էր, որ հինգ տարեկան երեխաների համախառն ընդգրկվածության հարաբերակցությունն ավելանալու է՝ 2000 թվականի 35%-ից հասնելով 90%-ի՝ 2017 թվականին:

<sup>949</sup> Հասանելի է <https://www.unicef.org/education/early-childhood-education> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Չնայած այս ձեռքբերմանը՝ վերջին տարիներին առաջընթացը եղել է դանդաղ, և մարչելիության անհավասարությունները շարունակում են մնալ խնդիր<sup>950</sup>:

Ավելին, Հայաստանում գրանցված հաշմանդամություն ունեցող վաղ տարիքի երեխաների 1/3-ից պակասն է ստանում նախադպրոցական կրթության ծառայություն, իսկ գյուղական համայնքներում ապրող 10 երեխայից 8-ը նախադպրոցական կրթություն չի ստանում: Հայաստանում երեխաների 70%-ը չի ստանում այնպիսի խնամք և կրթություն, որը թույլ կտա նրանց հասնել իրենց ողջ ներուժին և ունենալ առողջ և արդյունավետ կյանք ունենալու հնարավորություն<sup>951</sup>:

ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն՝ 2020թ.-ին ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 24% և տարբերվում է ըստ աղքատության մակարդակի: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 28%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում համապատասխանաբար՝ 16% և 0.0%<sup>952</sup>:

Եթե առկա տվյալները համեմատենք նախորդ տարվա պաշտոնական վիճակագրական տվյալների հետ, ապա տեսնում ենք, որ 2019 թվականին ըստ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների՝ նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) կազմել է 34%: Ոչ աղքատ տնային տնտեսություններում այն կազմել է 37%, աղքատ (առանց ծայրահեղ աղքատների) և ծայրահեղ աղքատ տնային տնտեսություններում համապատասխանաբար՝ 27% և 24%<sup>953</sup>:

**Այսինքն, նախադպրոցական հաստատություններում համախառն ընդգրկվածությունը (մինչև 6 տարեկան երեխաների թվաքանակից) նվազել է:**

2021 թվականի սեպտեմբերի 27-ին հրապարակված ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի 2020 թվականին Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակի վերաբերյալ վերլուծության համաձայն՝ 2020 թվականին ՀՀ-ում գործել է 910 համայնքային, գերատեսչական և ոչ պետական նախադպրոցական հաստատություն (ՆԴՀ), որոնցից 697-ը՝ մանկապարտեզ, 48-ը՝ մսուր-մանկապարտեզ, 165-ը՝ դպրոց-մանկապարտեզ: ՆԴՀ-ների ընդհանուր քանակից 847-ը համայնքային ենթակայության է, 10-ը՝ գերատեսչական և 53-ը՝ ոչ պետական: Երեխաների

<sup>950</sup>

Հասանելի

է

<https://www.unicef.org/armenia/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A4%D5%BA%D6%80%D5%B8%D6%81%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6>

հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>951</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>952</sup> Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2020, էջ 98, հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2020\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2020_a_4.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>953</sup> Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2021, հասանելի է <https://www.armstat.am/am/?nid=82&id=2438> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ընդգրկվածությունը ՆԴՀ-ներում (0-5 տարեկան բնակչության թվաքանակից) կազմել է 24.3%, քաղաքներում՝ 28.6%, գյուղերում՝ 16.2%: Մեկ խմբում երեխաների միջին թվաքանակը կազմել է 19 երեխա, տեղերի փաստացի զբաղվածությունը՝ 66.5%: Միջին հաշվով մեկ ՆԴՀ հաճախել է 62 երեխա, մեկ մանկավարժին բաժին է ընկել 9 երեխա: ՆԴՀ-ների շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 766.6 հազ. քառ. մ: 2021 թվականի վիճակագրական տվյալները հրապարակվելու են 2022 թվականին:

Պաշտոնական վիճակագրական պատկերին զուգահեռ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունները ևս վկայում են, որ առկա է երեխաների՝ նախադպրոցական կրթության մեջ ցածր ներգրավվածության խնդիր: Խնդիրներից է նաև վաղ տարիքի երեխաների խմբերի փոքր քանակը, մի շարք համայնքներում և բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայությունը և նախադպրոցական ուսումնական հաստատությունների գերծանրաբեռնվածությունը:

Համաձայն Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ 2021 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ հերթագրված է եղել շուրջ 9000 երեխա, որոնց ընդունելությունը հնարավոր է կազմակերպել հաստատություններում համապատասխան տարիքային խմբերում ազատ տեղեր առաջանալու պարագայում: Երեխաների ընդունելության առաջնահերթությունների վերաբերյալ բողոքներ չեն ստացվել՝ պայմանավորված երեխաների արտահերթությամբ ընդունելության սահմանված կարգի:

Ըստ Քաղաքապետարանի տվյալների՝ Երևանի ենթակայությամբ գործում է թվով 161 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որոնցից 2021 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ չեն գործում 21 մանկապարտեզներ՝ հիմնանորոգման պատճառով:

- Գործող խմբերի ընդհանուր թիվը 886 է, որից՝
  - ա) վաղ տարիքի՝ մինչև 3 տարեկան - 56 խումբ,
  - բ) կրտսեր՝ 3-ից մինչև 5 տարեկան - 474 խումբ,
  - գ) ավագ տարիքի 5- 6 տարեկան - 310 խումբ,
  - դ) տարատարիք՝ 46 խումբ:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար նախատեսված է թվով 8 մանկապարտեզ՝ համար 42, 78, 92, 101,109,114, 146, 160, ուր հաճախում են 93 երեխա, ինչպես նաև այլ հաստատություններ են հաճախում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 58 երեխա:

2021 թվականին նախադպրոցական կրթության բնագավառի ներառականության ներդրման նպատակով հաստիքների ավելացում և բազմամասնագիտական թիմի ընդլայնում չի նախատեսվել: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ֆինանսավորման հաշվարկների առնչությամբ Երևանի քաղաքապետարանը դիմել է ՀՀ ԿԳՄՍ նախարարին:

Մանկապարտեզների աշխատաժամերի վերաբերյալ աշխատող ծնողների կողմից բողոքներ ստանալու և ծնողներին ընդառաջելու նպատակով մանկապարտեզներին տրվել է երկարօրյա խմբերի ձևավորման հնարավորություն: Ծնողների կողմից պահանջարկ առաջանալու պարագայում ձևավորված երկարօրյա խմբերում երեխաներին պահելու տևողությունը սահմանվել է մինչև ժամը՝ 19:00-ն:

Համաձայն Երևանի քաղաքապետարանի տվյալների՝ 2020 թվականին ևս կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար Երևանում նախատեսված է 8 մանկապարտեզ: Նշվածը վկայում է այն մասին, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար Երևան քաղաքում մեկ տարվա ընթացքում չեն իրականացվել անհրաժեշտ քայլեր, ինչը չի բխում կրթության ոլորտում համընդհանուր ներառականության սկզբունքից: Մինչդեռ՝ 2020 թվականի մայիսի 6-ին, Ազգային Ժողովն ընդունել է «Նախադպրոցական կրթության մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքը: «Նախադպրոցական կրթության մասին» օրենքով հռչակվում և երաշխավորվում է նախադպրոցական կրթության բնագավառի ներառականությունը, մատչելիությունը, հասանելիությունն ու որակը՝ որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման, զարգացման ու դաստիարակության, անվտանգ միջավայրի ստեղծման, կյանքի, առողջության պահպանման և ամրապնդման կարևոր երաշխիք:

Նշված օրենքի համաձայն՝ ոլորտային պետական քաղաքականության սկզբունքներն են՝ ուսուցման և խնամքի հավասար հնարավորությունները, մատչելիությունը, հասանելիությունը, ներառականությունը և համապատասխանությունը երեխայի զարգացման տարիքային և անհատական առանձնահատկություններին, ինչպես նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի մտավոր, հոգեկան, ֆիզիկական և սոցիալական զարգացման ձեռքբերումների արժևորմանն ու անհատականության բացահայտմանն ուղղված երեխայակենտրոն, ներառական և զարգացնող միջավայրի ապահովման առաջնայնությունը: Վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները պետք է նպաստեն որակյալ նախադպրոցական կրթություն տրամադրելու հավասար հնարավորությունների, ներառականության և մատչելիության ապահովումը խելամիտ հարմարեցումների միջոցով:

Նշվածի առումով հարկ է արձանագրել, որ մանկապարտեզները հաճախ դիտարկվում են որպես միայն խնամքի ծառայություններ մատուցող հաստատություններ, մինչդեռ պետք է ապահովվի նաև նախադպրոցական կրթության պատշաճ որակի ծառայությունների մատուցումը: Այս կապակցությամբ ծնողները նշել են, որ մասնագետների բացակայության, ինչպես նաև առկա մասնագետների՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների հետ աշխատելու համար անհրաժեշտ հմտությունների բացակայության պատճառով երեխաները չեն կարողանում վաղ տարիքից ներառվել կրթական գործընթացում, որը հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար ունի մեծ կարևորություն հետագայում դպրոց հաճախելն առավել դյուրին դարձնելու հարցում (Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների նախադպրոցական կրթության

ստանալու իրավունքի իրացման վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս սույն հաղորդման ««Մարդու իրավունքների Պաշտպանը որպես՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում)<sup>954</sup>:

2021 թվականին Պաշտպանին ուղղված բողոքներում հիմնականում բարձրացվում է նախադպրոցական տարիքի երեխաների սահմանված կարգով նախադպրոցական կրթական հաստատություն հերթագրված լինելու, սակայն հաստատությունում բավարար չափով տեղեր չլինելու կամ հաստատությունների վերանորոգման պատճառով երեխաների՝ նախադպրոցական կրթությունից դուրս մնալու և այլ հարցեր:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է տեղեկություններ այն մասին, որ Երևան քաղաքի մանկապարտեզներից մեկում հիմնանորոգման աշխատանքների մեկնարկի պատճառով մանկապարտեզ հաճախող 160 երեխա չի հաճախելու մանկապարտեզ: Երևանի քաղաքապետարանին է ուղղվել համապատասխան գրություն, որի արդյունքում տեղեկություններ են ստացվել, որ 111 երեխա տեղափոխվել է այլ նախադպրոցական ուսումնական հաստատություն, իսկ 49 երեխաների ծնողները հրաժարվել են երեխաների այլ մանկապարտեզ ընդգրկելու առաջարկից:

Բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ իր երեխան հերթագրված է Երևանի մանկապարտեզներից մեկը հաճախելու համար, սակայն մանկապարտեզի գերձանրաբեռնվածության պատճառով երեխան մանկապարտեզ չի հաճախում, իսկ ինքը չի կարողանում աշխատել: Նշված գործի շրջանակներում քաղաքապետարանի հետ համագործակցության արդյունքում ծնողին առաջարկվել է կազմակերպել երեխայի նախադպրոցական կրթությունը այլ մանկապարտեզում, սակայն վերջինս հրաժարվել է այդ առաջարկված տարբերակից: Նշված խնդրի առնչությամբ հարկ է արձանագրել, որ հիմնականում ինչպես դպրոցի այնպես էլ մանկապարտեզի պարագայում, ծնողը նախընտրում է երեխային տեղավորել բնակության վայրին առավել մոտ մանկապարտեզ, ինչը տվյալ պարագայում բխում է երեխայի լավագույն շահից:

Բողոքներից մեկով նշվել է, որ դեռևս 2020 թվականին երեխան հերթագրվել է Երևանի մանկապարտեզներից մեկը հաճախելու համար: Այնուհետ, 2020 թվականին երեխայի ծնողներից մեկը մահացել է, ուստի երեխան ձեռք է բերել միակողմանի ծնողազուրկ երեխայի կարգավիճակ: Բողոքով նշվել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երեխայի ծնողը աշխատում է, ուստի երեխայի հաճախումը մանկապարտեզ դարձել է անհրաժեշտություն, սակայն երեխան դեռևս չի

<sup>954</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույց, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կարողանում հաճախել մանկապարտեզ՝ իր հերթը չհասնելու պատճառով: Աշխատակազմի ներկայացուցիչների և հաստատության տնօրենի միջև համագործակցության արդյունքում հնարավոր է դարձել նախապատվության իրավունքով երեխային ընդունել մանկապարտեզ: Տվյալ պարագայում հարցն այն է, որ ծնողը տեղեկացված չի եղել երեխայի իրավունքների վերաբերյալ ողջ ծավալով և արդյունքում ստիպված է եղել սպասել մինչև երեխայի հերթագրման ժամկետը լրանալը, տեղեկացված չլինելով, որ երեխան ունի օրենքով սահմանված կարգով մանկապարտեզ հաճախելու նախապատվության իրավունք:

Նախադպրոցական կրթական հաստատությունների գերծանրաբեռնվածության խնդրին զուգահեռ առկա է նախադպրոցական կրթություն ստանալու իրավունքի իրացման մեկ այլ խնդիր: Մի շարք գյուղական համայնքներում և բնակավայրերում ընդհանրապես բացակայում են նախադպրոցական հաստատություններ:

Հարցի շուրջ պահանջված պարզաբանումների ուսումնասիրության համաձայն, ըստ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տվյալների, ՀՀ մարզերում գրանցվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների առկայության հետևյալ վիճակագրական պատկերը.

2021 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններում գործում է վաղ տարիքի 3 խումբ, կրտսեր՝ 27 խումբ, ավագ տարիքի՝ 29 խումբ: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Արարատի մարզում գործել է 82 մանկապարտեզներ (3-6 տարեկան): 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Արմավիրի մարզում գործել է 61 նախադպրոցական ուսումնական հաստատություն, դրանցից վաղ տարիքի խմբեր ունեցող՝ 18, կրտսեր՝ 61, ավագ տարիքի՝ 52 նախադպրոցական ուսումնական հաստատություն:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Արմավիրի մարզում գործել է 61 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից վաղ տարիքի՝ 18, կրտսեր՝ 61, ավագ տարիքի՝ 52 նախադպրոցական ուսումնական հաստատություն: 2021 թվականի հոկտեմբեր ամսից ՀՀ Արմավիրի մարզի Լուսազյուղ համայնքում սկսել է գործել նախադպրոցական ուսումնական հաստատություն:

2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզում գործել է 52 մանկապարտեզ, որից վաղ տարիքի խմբերում ընդգրկված են 72 երեխա, կրտսեր՝ 2454 երեխա, ավագ՝ 1277 երեխա:

ՀՀ Կոտայքի մարզում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 55 նախադպրոցական ուսումնական հաստատություն, որից վաղ տարիքի՝ 15 հաստատություն 15 խմբով: Դրանցում երեխաների փաստացի ընդգրկվածության թիվը եղել է 240-ը: Կրտսեր տարիքի 3651 երեխայի համար գործել է 55 մանկապարտեզ 147 խմբով: Ավագ տարիքի 2059 երեխայի համար՝ գործել է 55 մանկապարտեզ 83 խմբով:

ՀՀ Լոռու մարզում 2021 թվականի ընթացքում գործել է 71 մանկապարտեզ՝ 4322 երեխայով և 179 խմբով:

ՀՀ Շիրակի մարզում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 55 նախադպրոցական ուսումնական հաստատություններից գործում է 53-ը: Գյումրի համայնքի «Ջանգակ» և «Սուրբ Մարիամ» ՀՈԱԿ-ների շենքերում ընթանում են վերանորոգման աշխատանքներ:

ՀՀ Սյունիքի մարզում առկա է 43 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4158 երեխայի համար: ՀՀ Վայոց ձորի մարզում 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ գործել է 17 նախադպրոցական ուսումնական հաստատություն: 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Տավուշի մարզում գործում է համայնքային ենթակայության 53 նախադպրոցական ուսումնական հաստատություն:

2021 թվականից ՀՀ Արագածոտնի մարզի Նոր Ամանոս համայնքում գործում է նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 1 տարատարիք խմբով:

ՀՀ Արարատի մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններից Դիտակի մանկապարտեզն իր գործունեությունը սկսել է 2021 թվականից: ՀՀ Արմավիրի մարզում 2021 թվականի հոկտեմբերի 1-ից վերաբացվել է Լուսազյուղի նախադպրոցական ուսումնական հաստատությունը: ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր և Գեղարքունիք համայնքներում վերաբացվել են մանկապարտեզներ: ՀՀ Կոտայքի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատություններից 2021 թվականից իրենց գործունեությունը սկսվել են 3-ը՝ Գեղաշեն, Գեղադիր, Մայակովսկի համայնքներում: 2021 թվականից Լոռու մարզում բացվել են Գարգառի, Վահագնաձորի, Զիլիզայի և Ձորագյուղի նախադպրոցական ուսումնական հաստատությունները:

ՀՀ Շիրակի մարզի նախադպրոցական ուսումնական հաստատություններից 2-ի (Գեղանիստ համայնքի «Գեղանիստի մանկապարտեզ» և Ախուրյան համայնքի «Կամոյի նախադպրոցական ուսումնական հաստատություն ՀՈԱԿ-ների) գործունեությունը սկսվել է 2021 թվականից:

ՀՀ Սյունիքի մարզում 2021 թվականի ընթացքում նոր նախադպրոցական ուսումնական հաստատություն չի ստեղծվել:

ՀՀ Վայոց ձորի մարզում Արենի խոշորացված համայնքի Ռինդ բնակավայրի և Եղեգնաձոր խոշորացված համայնքի թիվ 2 մանկապարտեզների գործունեությունը վերսկսվել է հիմնանորոգումից հետո 2021 թվականին:

ՀՀ Արագածոտնի մարզի 29 համայնքում /մինչ խոշորացումը/ չի գործել նախադպրոցական ուսումնական հաստատություն, քանի որ նախադպրոցահասակ երեխաների թիվը բավարար չի եղել: Նշված համայնքներն են՝ Վ. Սասունիկ, Սասունիկ, Տեղեր, Անտառուտ, Օրգով, Դպրեվանք, Ուշի, Սաղմոսավան, Թլիկ, Ծաղկասար, Կարմրաշեն, Հակո, Հացաշեն, Դմասար, Ոսկեթաս, Պարտիզակ, Սորիկ, Վերին Սասնաշեն, Օթևան, Արևուտ, Գառնահովիտ, Մեծաձոր, Կանչ, Դիան, Արագածավան, Ապարան /խոշորացված/, Ալագյազ /խոշորացված/, Ծաղկահովիտ /խոշորացված/, Մելիքգյուղ, Արագածոտն, Արագածավան /խոշորացված/, Շղարշիկ, Լեռնարոտ, Եղնիկ, Սուսեր, Ակունք:

ՀՀ Կառավարության 06. 05. 2021 թվականի թիվ 741-Ն որոշմամբ Ալազյազ գյուղում /Ալազյազ խոշորացված համայնք/ կկառուցվի մանկապարտեզ, ուր կհաճախեն խոշորացված համայնքի երեխաները:

Պետբյուջեով նախատեսված «Նախադպրոցական այլընտրանքային ծախսաարդյունավետ մոդելների ներդրում» միջոցառման շրջանակում դրամաշնորհ են ստացել Գետափ /Արագածավան համայնք/, Շղարշիկ, Լեռնարոտ, Եղնիկ, Սուսեր և Ակունք բնակավայրերը: Վաղ մանկության զարգացման կենտրոններ են գործում Նոր Արթիկի միջնակարգ և Յամաքասարի հիմնական դպրոցներում:

ՀՀ Արարատի մարզի 21 համայնքներում մանկապարտեզ չի գործում:

ՀՀ Արմավիր մարզի 97 բնակավայրից 53 -ում (Այգեշատ /Էջմ./, Բաղրամյան, Խանջյան, Ծիածան, Հայթաղ, Հացիկ, Մեծամոր, Շահումյան, Շենավան, Ակնաշեն, Աղավնատուն, Ամասիա, Արաքս /Արմ./, Արաքս /Էջմ./, Արտամետ, Արտաշար, Արևաշատ, Արևիկ, Բագարան, Բերքաշատ, Գայ, Գետաշեն, Դաշտ, Դողս, Երասխահուն, Զարթոնք, Մայիսյան, Լենուղի, Լեռնամերձ, Ծաղկալանջ, Ծաղկունք, Կողբավան, Հայկավան, Հովտամեջ, Հուշակերտ, Այգեվան, Մրգաստան, Նոր Կեսարիա, Նորավան, Մոնթեավան, Ջրաշեն, Վարդանաշեն, Տալվորիկ, Տանձուտ, Փշատավան, Ֆերիկ, Երվանդաշատ, Վանանդ, Մարգարա, Տարոնիկ, Հայկաշեն, Արգինա և Ամբերդ) նախադպրոցական կրթական ծրագրեր չեն իրականացվում:

ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 5-ի թիվ 823-Ն որոշման համաձայն «Մոդուլային տիպի մանկապարտեզների շենքային ապահովում» միջոցառման շրջանակներում Այգեվան, Լենուղի, Գետաշեն, Նորավան և Փշատավան համայնքներում մոդուլային տիպի մսուր-մանկապարտեզի կառուցման համար կատարվել են նախագծանախահաշվային աշխատանքներ: Արևիկ համայնքում կառուցվում է մոդուլային տիպի մանկապարտեզ, իսկ Ֆերիկ համայնքում «Նախադպրոցական այլընտրանքային ծախսաարդյունավետ մոդելների ներդրում» միջոցառման շրջանակում ստեղծվելու է դպրոցահեն նախակրթարան: Երվանդաշատ համայնքի մանկապարտեզը 2022 թվականի ապրիլ ամսից կգործի, իսկ Վանանդ համայնքի մանկապարտեզի գործունեության վերսկսման ուղղությամբ տարվում են աշխատանքներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Բերդկունք, Սեմյոնովկա, Լճավան, Ախպրաձոր, Վանևան, Խաչաղբյուր, Մաքենիս, Գեղաքար և Տորֆավան համայնքներում նախադպրոցական կրթություն չի իրականացվում՝ պատճառը նշված համայնքներում երեխաների փոքր թիվն է:

ՀՀ Կոտայքի մարզի 16 համայնքում չի գործում նախադպրոցական ուսումնական հաստատություն, այդ համայնքներն են՝ Զրառատ, Առինջ, Արամուս, Բալահովիտ, Կաթնաղբյուր, Պտղնի, Գետարգել, Վերին Պտղնի, Գեղարդ, Գողթ, Հացավան, Ողջաբերդ, Գետամեջ, Թեղենիք, Նոր Արտամետ, Քարաշամբ, Եղվարդ համայնքի Բուժական, Սարալանջ, Արագյուղ բնակավայրերում, Մեղրաձոր համայնքի՝ Հանքավան, Մարմարիկ, Աղավնաձոր բնակավայրերում, Զարենցավան համայնքի՝ Ֆանտան, Կարենիս, Զրվեժ համայնքի՝ Զրվեժ, Զովք, Ակունք համայնքի՝



Հատիս, Ջովաշեն, Կապուտան, Կոտայք, Նոր Գյուղ, Ջառ, Սևաբերդ, Բյուրեղավան համայնքի՝ Նուռնուս, Ջրաբեր բնակավայրերում:

Հրազդան քաղաքում /1 մանկապարտեզում/, Արամուս, Վերին Պտղնի, Առինջ, Գողթ, Ջրվեժ համայնքի՝ Ջրվեժ և Ջովք բնակավայրերում, Ակունք համայնքի Կապուտան բնակավայրում, Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր բնակավայրում 2019-2021 թվականների ընթացքում ձեռնարկվել են միջոցներ, որպեսզի տվյալ համայնքներում, բնակավայրերում ևս գործեն նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Կատարվել են և կատարվում են շինարարական և հիմնանորոգման աշխատանքներ, նշված բոլոր համայնքների մանկապարտեզները նախատեսված են շահագործման հանձնել 2022թ. ընթացքում:

ՀՀ Լոռու մարզի 55 համայնքում առկա չէ նախադպրոցական ուսումնական հաստատություն, 18 համայնքի դպրոցներում գործում են նախակրթարաններ (5 տարեկան երեխաները ստանում են նախադպրոցական կրթական ծառայություն): Այսինքն, 37 համայնքում նախադպրոցական կրթական ծառայություններ ընդհանրապես չեն մատուցվում:

ՀՀ Շիրակի մարզի 42 համայնքներից 20-ում (Առափի, Ախուրիկ, Բայանդուր, Բենիամին, Գետք, Երազգավորս, Ղարիբջանյան, Արևշատ, Գետափ, Լուսակերտ, Հայրենյաց, Հայկասար, Մեղրաշեն, Հովտաշեն, Նահապետավան, Սարալանջ, Վարդաքար, Տուֆաշեն, Սարապատ, Արփի) առկա չեն նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Մարզի նախկին Մարմաշեն միավորված համայնքի Մարմաշեն, Քեթի, Ջաջուռ և նախկին Սարապատ համայնքի Մուսայեյան բնակավայրերում վերակառուցվել ու շահագործման են հանձնվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների նոր շենքեր, որոնք դեռևս չեն գործարկվել:

ՀՀ Սյունիքի մարզի բոլոր 8 խոշորացված համայնքներում էլ գործում են նախադպրոցական ուսումնական հաստատություններ, սակայն դեռևս կան առանձին շատ բնակավայրեր, որոնցում նախադպրոցական ուսումնական հաստատություններ չկան:

Օրինակ՝ համաձայն Գորիս համայնքից ստացված հաղորդման, համայնքի 4 բնակավայրերում /Ակներ, Որոտան, Հարթաշեն, Շուռնուխ/ չեն գործում նախադպրոցական ուսումնական հաստատություններ: 2021 թվականին Գորիսի համայնքապետարանի նախաձեռնությամբ քայլեր են ձեռնարկվել Հարթաշեն բնակավայրում ՆՈՒՀ հիմնելու ուղղությամբ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ Հարթաշեն բնակավայրում առաջիկայում կգործի ՆՈՒՀ: 2021 թվականին Գորիսի համայնքի Բարձրավան բնակավայրում բացվել է ՆՈՒՀ-ի 1 խումբ /Քարահունջի ՆՈՒՀ-ի կազմում կարճաժամկետ տևողությամբ/: Ակներ բնակավայրի երեխաները հաճախում են Վերիշենի ՆՈՒՀ: Վերիշենի ՆՈՒՀ-ի շենքում իրականացվում են վերակառուցման աշխատանքներ նոր խմբասենյակներ ավելացնելու նպատակով: Ծրագիրը իրականացվում է Գորիսի համայնքապետարանի և ամերիկյան «ՓԱՐՈՍ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի նախաձեռնությամբ: Շուռնուխ և Որոտան բնակավայրերում ՆՈՒՀ բացելու համար Գորիսի համայնքապետարանը նույնպես հայտեր է ներկայացրել ՄԱԿ-ի մանկական հիմնադրամին:

«Վայոց ձորի մարզի Եղեգիս խոշորացված համայնքի ոչ մի բնակավայրում չի գործում նախադպրոցական ուսումնական հաստատություն: Նախատեսվում է համայնքում մոդուլ մանկապարտեզ կառուցելու համար տրամադրել տարածք, որի աշխատանքները ընթացքի մեջ են:

«Տավուշի մարզի նախադպրոցական կրթական ծառայություն չի մատուցվում Աճարկուտ, Լճկաձոր, Բարեկամավան, Կիրանց և Լուսահովիտ բնակավայրերում: «Կառավարության 06.05.2021թ. թիվ 741-Ն և 20.05.2021թ. թիվ 823-Ն որոշումներով ֆինանսական միջոցներ են տրամադրվել 20 բնակավայրերում «Մոդուլային» տիպի մանկապարտեզների նախագծանախահաշվային փաստաթղթեր ձեռք բերելու և կառուցման համար, իսկ «Կառավարության 08.09.2021թ. թիվ 1459-Ն որոշմամբ, գումար է տրամադրվել 7 բնակավայրերում չգործող նախադպրոցական ուսումնական հաստատությունները վերաբացելու նպատակով: Ներկայում «300 դպրոց, 500 մանկապարտեզի կառուցման, վերանորոգման և վերակառուցման» ծրագրի շրջանակներում «ԿԳՄՍՆ-ի հետ աշխատանքներ են տարվում նախադպրոցական ուսումնական ծրագրեր չիրականացնող համայնքներում խնդրին լուծում տալու ուղղությամբ:

**Այսպիսով պաշտոնական տվյալները վկայում են, որ չնայած ձեռնարկվող քայլերին 2021 թվականին «Վ մարզերի բազմաթիվ համայնքներում և բնակավայրերում նախադպրոցական կրթություն չի իրականացվել: Ուստի, Նախադպրոցական կրթության մեջ ցածր ներգրավվածության, վաղ տարիքի երեխաների խմբերի փոքր քանակի, մի շարք գյուղական համայնքներում և բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների բացակայության խնդիրը համակարգային է:**

Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր մանկապարտեզների հերթագրման հետ կապված խնդիրների մասին, որոնք պայմանավորված են եղել նաև նախակրթության ոլորտում առկա օրենսդրական թերի և ոչ միասնական կարգավորումներով, ուստի Պաշտպանի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր օրենսդրորեն ամրագրել երեխաների՝ նախակրթական ուսումնական հաստատություն ընդունելության կարգը<sup>955</sup>: 2020 թվականի մայիսի 6-ին ընդունված ««Նախադպրոցական կրթության մասին» «Վ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» «Վ օրենքով սահմանվել է, որ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը սահմանում է նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը: «Վ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատվել է նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը, որով կարգավորվում են նախադպրոցական տարիքի երեխայի՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական

<sup>955</sup> Տե՛ս «Վ մարդու իրավունքների պաշտպանի՝ «2019 թվականների ընթացքում «Վ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդում, էջ 178, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հաստատություն հերթագրման, ընդունման և հաստատությունից ազատման հետ կապված իրավահարաբերությունները: Հատկանշական է, որ կարգով սահմանվել է, որ ընդունելությունը կազմակերպելիս՝ առաջնահերթությունը տրվում է նաև առաջին կամ երկրորդ կարգի հաշմանդամություն կամ երեք և ավելի երեխա ունեցող կամ զինծառայող ծնողի երեխաներին, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին, տվյալ հաստատությունում ընդգրկված քույր, եղբայր ունեցող երեխաներին:

Այսպիսով, 2021 թվականին արդեն գործում է նախադպրոցական ուսումնական հաստատություն ընդունելության միասնական կարգը, որի բացակայությունը շարունակում էր լինել համակարգային խնդիր տարիներ շարունակ, ինչի մասին բազմիցս նշվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը գտնում է, որ անհրաժեշտ է՝*

*1. ավելացնել նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը հանրապետության ամբողջ տարածքում, հատկապես մինչև 3 տարեկան երեխաների նախադպրոցական կրթությունն ապահովելու համար,*

*2. նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս նախապես կազմակերպել երեխաների՝ այլ հաստատությունում նախադպրոցական կրթությունը, առաջնորդվելով երեխայի լավագույն շահի սկզբունքով,*

*3. բոլոր նախադպրոցական կրթական հաստատություններում ավելացնել հաստիքներ՝ ընդլայնելով բազմամասնագիտական թիմը՝ ներառական նախադպրոցական կրթության գործընթացն ապահովելու համար:*

## **2.2 Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովի հիմունքներով գործելը**

ՀՀ մարզերում համայնքային նախադպրոցական հաստատությունների վճարովի լինելու հարցը տարիներ շարունակ նշվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներով:

Հարցն արդիական է հատկապես այն պարագայում, երբ Երևան քաղաքում նախադպրոցական կրթությունն անվճար է, իսկ մարզերի համայնքներում նախադպրոցական ուսումնական հաստատությունները գործում են վճարովի հիմունքներով և ավելին՝ այդ վճարների չափը ըստ համայնքների տարբեր է: 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը ստացել է մանկապարտեզների վարձավճարների վերաբերյալ բողոքներ: Օրինակ, բողոք ներկայացրած անձը խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր երկու երեխայի մանկապարտեզի ընդունելության հարցում: Պարզվել է, որ մանկապարտեզի համար անհրաժեշտ վճարը քաղաքացին չի կարող տրամադրել, քանի որ գտնվում է սոցիալապես անապահով վիճակում: Տվյալ գործի

շրջանակներում մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քաղաքացուն մարզպետարանի կողմից աջակցություն հատկացնելու հարցում:

Համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարների վերաբերյալ օրենսդրական կարգավորումները սահմանված են «Նախադպրոցական կրթության մասին» և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքներով, որոնց ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ յուրաքանչյուր համայնքում մանկապարտեզների վարձավճարները սահմանվում են համայնքի ավագանու կողմից և կարող են լինել տարբեր:

Միևնույն ժամանակ, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում քաղաքապետը կազմակերպում է Երևանի ենթակայության դպրոցների, մանկապարտեզների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները: 2016 թվականի մարտի 4-ի թիվ 706-Ա որոշմամբ հաստատված «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N 1101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխայի նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար, այդ թվում, եթե երեխայի ծնողները կամ ծնողներից մեկը կամ նրա օրինական ներկայացուցիչները կամ օրինական ներկայացուցիչներից մեկը մշտապես կամ փաստացի հաշվառված են Երևան քաղաքում<sup>956</sup>: Միևնույն ժամանակ, մարզերում մանկապարտեզ հաճախելու համար նախատեսված են վարձավճարներ:

Նախադպրոցական կրթական հաստատություններում կրթության և խնամքի գործընթացի անվճար կազմակերպման վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված տվյալների համաձայն՝ մարզերում վարձավճարների վերաբերյալ գրանցվել է հետևյալ պատկերը.

ՀՀ Շիրակի, Վայոց ձորի և Արագածոտնի մարզերում համայնքապետարանների կողմից չի նախատեսվում համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններն անվճար դարձնել: ՀՀ Արարատի և ՀՀ Արմավիրի մարզերում ևս չի նախատեսվում մարզի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները դարձնել անվճար: Եղեգնուտ բնակավայրում համայնքի ավագանու որոշմամբ անվճար է դարձվել սոցիալապես անապահով և բազմազավակ ընտանիքների երեխաների հաճախումը մանկապարտեզ (անվճար դարձնելու համար համայնքի բյուջեն հնարավորություն չունի): Նալբանդյան բնակավայրում նախատեսվում է սեփական եկամուտների ավելացման հաշվին 2022 թվականից նախադպրոցական ուսումնական հաստատությունը դարձնել անվճար:

<sup>956</sup> Տե՛ս Երևանի քաղաքապետի 2016 թվականի մարտի 4-ի «Երևանի քաղաքապետի 2011 թվականի մարտի 31-ի N 1101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 706-Ա որոշումը, հասանելի է <https://www.yerevan.am/am/mayors-decisions/706-a-3/> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

«Գեղարքունիքի մարզում 2021 թվականին նախադպրոցական կրթական հաստատություններ հաճախելը անվճար դարձնելու հարցի ուղղությամբ աշխատանքներ չեն տարվել: «Կոտայքի մարզում համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատություններից անվճար գործում են միայն մարզի Մեղրաձոր համայնքում՝ 2 մանկապարտեզ: Մնացած համայնքներում չի նախատեսվում համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունները դարձնել անվճար:

«Լոռու մարզի Օձուն, Շնող, Դսեղ համայնքներում նախադպրոցական կրթական ծառայությունները մատուցվում են անվճար:

Նշված պատկերը ցույց է տալիս, որ մարզերում հիմնականում նախադպրոցական կրթությունը վճարովի է, մինչդեռ պետությունը պետք է կայուն աջակցություն ցուցաբերի նախադպրոցական կրթության զարգացմանը, պետական կրթական չափորոշիչների շրջանակներում նախադպրոցական կրթության ծրագրերում երեխաների ընդգրկվածության ավելացմանը և նպաստի երեխայի կյանքի, առողջության պահպանմանը և ամրապնդմանը, ներդաշնակ ու համակողմանի զարգացմանը, ուսուցմանն ու դաստիարակությանը: Նշված գործում առաջնային է համայնքներում նախադպրոցական ուսումնական հաստատությունների վճարովիության հարցի վերաբերյալ գործուն քայլերի ձեռնարկումը, որպեսզի նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա հաճախելու նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ անկախ ծնողի վճարունակ լինելու հանգամանքից:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը վերահաստատում է, որ անհրաժեշտ է հատկացնել հավելյալ ֆինանսական միջոցներ՝ անվճար նախադպրոցական կրթությունը բոլոր երեխաների համար ապահովելու նպատակով:*

### **3. Հանրակրթական ուսումնական հաստատություններում ընդունելության ընթացակարգային խնդիրները**

Կրթություն ստանալու իրավունքը երեխայի հիմնարար իրավունքներից է: Դրա երաշխավորմամբ՝ պետությունն ընդունում է, որ կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով: Պետությունը ստեղծում է անհրաժեշտ պայմաններ, որպեսզի ապահովվի յուրաքանչյուր երեխայի հավասար հնարավորությունների հիման վրա կրթություն ստանալու իրավունքը<sup>957</sup>:

<sup>957</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդվածներ 28, 29:

Կրթության իրավունքի պատշաճ իրացման տեսանկյունից առաջնային կարևորություն ունեն երեխայի լավագույն շահից բխող հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելության ընթացակարգերը: Դեռևս 2019 թվականին Պաշտպանի տարեկան հաղորդմամբ նշվել էր, որ երեխաների՝ իրենց բնակության վայրին մոտ հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունվելու հարցի հետ կապված ծագում են խնդիրներ: Պատճառը՝ հանրակրթական ուսումնական հաստատություններ ընդունելության ընթացակարգերի օրենսդրորեն լիարժեք կարգավորված չլինելն էր: Ուստի Պաշտպանը տարեկան հաղորդումներով նշել էր, որ օրենսդրական մակարդակով պետք է սահմանվեն ընդունելության առաջնահերթությունների օբյեկտիվ չափանիշներ:

Նշված խնդիրն արձանագրվել էր Պաշտպանին ուղղված բողոքների քննարկման արդյունքում: Հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելության վերաբերյալ Պաշտպանին ուղղված խմբային բողոքով բարձրացված խնդիրներից էր այն, որ դպրոցներից մեկում քաղաքացիների երեխաներին չէին գրանցել դպրոցի առաջին դասարանում՝ ընդունելությունն իրականացնելիս տվյալ դպրոցում սովորող քույր կամ եղբայր ունեցող երեխաներին նախապատվություն տալու պատճառաբանությամբ: Մինչդեռ, քաղաքացիներն իրենց բողոքով նշել էին երեխաների՝ բնակության վայրին առավել մոտ գտնվող դպրոց հաճախելու հարցի կարևորությունը: Հարկ է նշել, որ նշված բողոքի քննարկման ժամանակահատվածում ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէր հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում ընդունելությունն իրականացնելիս առաջնահերթությունը տվյալ դպրոցում սովորող քույր կամ եղբայր ունեցող երեխաներին տալու վերաբերյալ դրույթ:

2020 թվականին Պաշտպանի որոշումներով արվել են եզրահանգումներ այն մասին, որ պետք է քննարկման առարկա դարձվի ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 1640-Ն հրամանի հավելվածով հաստատված **Հայաստանի Հանրապետության հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի ընդգրկման, հաստատությունից սովորողի տեղափոխման և ազատման, ինչպես նաև սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման** կարգում համապատասխան փոփոխություններ կատարելու հարցը՝ կապված հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելությունն իրականացնելիս առաջնահերթություններ ունեցող երեխաների խմբեր սահմանելու հետ:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 15-ի թիվ 06-Ն հրամանով կատարվել են փոփոխություններ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի նոյեմբերի 24-ի N1640-Ն հրամանում: Նշված որոշման հավելվածով սահմանվել է, որ սովորողների ընդունելությունը կազմակերպելիս՝ **առաջնահերթությունը տրվում է տվյալ դպրոցում սովորող քույր, եղբայր ունեցող երեխաներին, ինչպես նաև՝ տվյալ դպրոցի աշխատակիցների երեխաներին**: Այս առումով Պաշտպանն արձանագրել էր, որ դպրոցի ընդունելության կարգի հստակեցումների առկայությունը դրական է, սակայն փոփոխություններ

կատարելիս կարևոր էր հաշվի առնել նաև բնակության վայրին մոտ բնակվող երեխաների ընդունելության համար որոշակի առաջնահերթություններ սահմանելը:

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած պարզաբանումների՝ **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում նախատեսվում են փոփոխությունների, որոնք վերաբերում են դպրոցում սովորողների ընդունելությունը կազմակերպելիս տրվող առաջնահերթություններին:** Այսպես, ուսումնական հաստատության սովորողների ընդունելությունը կազմակերպելու ընթացքում ի հայտ եկող խնդիրների լուծման համար «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում նախատեսվել է առաջնահերթությունների շարքում ներառել նաև տվյալ դպրոցից մինչև տուն սպասարկման հետիոտնային հասանելիության շառավղով բնակվողների երեխաներին: Սակայն, հաշվի առնելով 2021-2022 ուստարվա ընդունելության ընթացքում բացահայտված անօրինական գործողությունները, մասնավորապես, բնակության հասցեի փոփոխությունը, առաջարկվում է նախագծում առաջնահերթություն սահմանել՝ հաշմանդամություն ունեցող, խնամակալության տակ գտնվող, «Ընտանեկան նպաստ» համակարգի շահառու ընտանիքների երեխաներին:

Հանրակրթական ուսումնական հաստատություն ընդունելության վերաբերյալ Պաշտպանը 2021 թվականին ևս ստացել է բողոքներ: Այսպես, բողոքներից մեկով նշվել է, որ երեխայի տվյալները առաջին դասարան ընդունվելու առցանց հայտագրման համակարգի միջոցով ծնողը փորձել է գրանցել իր կողմից նախընտրած դպրոցում, սակայն նշվածը չի հաջողվել, քանի որ ըստ համակարգի հաղորդագրության՝ երեխայի տվյալները թվայնացված չեն եղել: Խնդրի կապակցությամբ քաղաքացուն ուղղորդել են տարբեր պետական մարմիններ, որոնց հետ կապ հաստատելուց հետո քաղաքացու համար անորոշ է եղել, թե խնդրի կարգավորման նպատակով ինքը, որտեղ պետք է դիմի: Արդյունքում, քաղաքացին զանգահարել է Պաշտպանի աշխատակազմ, որպեսզի ստանա պատշաճ ուղղորդում հարցի կարգավորման նպատակով: Խնդրի կարգավորման նպատակով Պաշտպանի աշխատակազմը կապ է հաստատել Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի հետ և փոխանցել է երեխայի տվյալները՝ ներկայացնելով խնդիրը: Արդյունքում երեխայի տվյալների գրանցումը դպրոց հայտագրման առցանց համակարգում հաջողությամբ իրականացվել է:

Առցանց հայտագրման համակարգի վերաբերյալ բողոքներից մեկով քաղաքացին տեղեկացրել է, որ իր երեխայի տվյալները դպրոց ընդունվելու հայտագրման համակարգի միջոցով փորձել է գրանցել իր նախընտրած դպրոցի առաջին դասարանում, ինչն իրեն չի հաջողվել, քանի որ համակարգը խափանված է եղել, ինչի պատճառով լրացել են իր նախընտրած դպրոցում առաջին դասարանի համար սահմանված տեղերը: Արդյունքում, քաղաքացին ստիպված երեխային գրանցել է այլ դպրոցում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ նախորդ տարիներին հայտագրման գործընթացի հիմնական բողոքներն եղել են համակարգի ծանրաբեռնվածության վերաբերյալ: Ըստ Նախարարության՝ ուսումնասիրությունը ցույց է տվել, որ

հիմնական պատճառն այն է, որ առաջին դասարան ընդունվող յուրաքանչյուր երեխայի փորձել են գրանցել մի քանի սարքավորումներից միաժամանակ, որն էլ արհեստականորեն ծանրաբեռնել է համակարգը: Առաջին դասարան ընդունվող երեխային հնարավորություն է լինելու հայտագրել միայն մեկ սարքով (համակարգիչ, հեռախոս, պլանշետ և այլն), ինչը բավականին կթեթևացնի հայտագրման համակարգի ծանրաբեռնվածությունը: Ռուսերեն ուսուցման դասարաններ ունեցող դպրոցներում ռուսերեն ուսուցմամբ դասարաններում առցանց հայտագրումը կատարվելու է առանձին էջով և այլ ժամկետներում: Նախորդ տարիներին առաջանում էին խնդիրներ սխալ գրանցումների հետ կապված կամ քաղաքացիները մոռանում էին նշել, որ ռուսական դասարան են նախընտրում երեխային հայտագրել կամ հայերեն ուսուցմամբ դասարանների համար սխալմամբ նշում էին ռուսական: Ըստ Նախարարության՝ այս հնարավորությունը և՛ կբացառի նման խնդիրները, և մասամբ կթեթևացնի համակարգի՝ էլեկտրոնային հայտագրման առաջին օրվա/ժամերի ծանրաբեռնվածությունը: Կրթության օրենսդրության մեջ նախատեսվում է փոփոխություն՝ դպրոց ընդունվելիս առավելություն տալ երեխաների որոշ խմբերի: Վերջինիս հաստատումից հետո համակարգը կհամապատասխանեցվի նշված փոփոխությանը:

Նշվածի կապակցությամբ հարկ է նշել, որ պետք է իրականացնել հանրակրթական դպրոցներում ընդունելության առցանց համակարգի հնարավորությունների ընդլայնում և բարելավում:

2021 թվականին Պաշտպանին են հասցեագրվել բողոքներ նաև միջին մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու հետ կապված: Օրինակ՝ բողոքով նշվել էր, որ 9-րդ դասարանն ավարտելուց հետո սահմանված կարգով երեխայի փաստաթղթերը ներկայացվել էին նախընտրած քոլեջ: Քոլեջի ներկայացուցչի կողմից բանավոր կարգով երեխայի ընդունելության մասին տեղեկություն էր տրվել, սակայն ուսումնական գործընթացը սկսվելուց հետո երեխային համապատասխան քոլեջ չեն ընդունել և երեխան դուրս էր մնացել կրթությունից: Ծնողի պնդմամբ՝ քոլեջի աշխատակիցը բանավոր կերպով իրեն հայտնել է, որ երեխան ընդունվելու է քոլեջ՝ հաշվի առնելով երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը: Այնուհետ, ծնողի հետ կապ չեն հաստատել քոլեջից և որևէ տեղեկություն չեն հայտնել երեխայի ընդունելության մասին:

Ծնողը նշել է, որ քանի որ սկզբնապես իրեն հայտնել են, որ հաշմանդամություն ունենալու հիմքով երեխան ընդունվելու է քոլեջ, ինքն այլևս միջոցներ չի ձեռնարկել որևէ այլ քոլեջ կամ ավագ դպրոց երեխայի ընդունելությունը կազմակերպելու ուղղությամբ, և սպասել է ուսումնական գործընթացը սկսվելուն, սակայն հետագայում քոլեջից հայտնել են, որ երեխան չի ընդունվել, քանի որ վերջինիս ավարտական վկայականի գնահատականները բավարար չեն ընդունելության շեմը հաղթահարելու համար: Նշվածի հետևանքով երեխան ավելի քան մեկ ամիս չի հաճախել որևէ քոլեջ կամ դպրոց, չի ստացել կրթություն: Միևնույն ժամանակ ծնողը նշել է, որ երեխան այլևս չի ցանկանում հաճախել նշված քոլեջ ստեղծված բարդությունների պատճառով: Պաշտպանի աշխատակազմը քայլեր է ձեռնարկել երեխային իր նախընտրած ավագ դպրոց տեղավորելու հարցում, սակայն պարզվել է, որ դպրոցում լիցենզիայով սահմանված տեղերը լրացել են, սակայն տվյալ խնդիրը երկու շաբաթից կկարգավորվի: Հարցի կարգավորման շրջանակներում պաշտպանի



աշխատակազմը առաջարկել է հաջորդ օրվանից թույլատրել երեխային հաճախել դպրոց և մասնակցել դասերին, մինչ հնարավոր կլինի սահմանված ընթացակարգով կազմակերպել երեխայի ընդունելությունը դպրոց: Արդյունքում, երեխան մինչ սահմանված ընթացակարգով երեխայի ընդունելության կազմակերպումը հնարավորություն է ստացել իրացնել կրթություն ստանալու իր իրավունքը և մասնակցել դասերին:

Տվյալ պարագայում խնդիրն այն էր, որ վերոնշյալ քոլեջում պատշաճ կերպով տեղեկացված չեն եղել ընդունելության ընթացակարգերի վերաբերյալ և հետևաբար սխալ ուղղորդումներ են տվել քաղաքացուն: Նշվածի պատճառով երեխան ոչ միայն մեկ ամիս շարունակ դուրս է մնացել կրթությունից, այլ նաև գտնվել է ծանր հոգեբանական վիճակում՝ միջին մասնագիտական հաստատություն ընդունվելու և կրթություն ստանալու ողջամիտ ակնկալիք ունենալով:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. ապահովել առաջին դասարան ընդունելության առցանց համակարգի պատշաճ և անխափան գործարկումը,*
- 2. առաջին դասարան ընդունելության առցանց համակարգի վերաբերյալ իրազեկումներ իրականացել ծնողների շրջանում, այդ թվում՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների միջոցով,*
- 3. միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատակիցների շրջանում իրականացնել իրազեկում՝ ընդունելության ընթացակարգերի վերաբերյալ:*

#### **4. Երեխայի կրթության իրավունքի սահմանափակումը՝ կրթությունից դուրս մնալու հետևանքով**

Կրթություն ստանալու երեխայի իրավունքն ամրագրված է Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 1-ին մասի յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Կրթություն ստանալու երեխայի իրավունքը երաշխավորված է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածով և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 1-ին մասով: Կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ:

Հայաստանի վերաբերյալ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն դեռ 2013 թվականի իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգիչ է համարել հիմնական կրթությունից հետո դպրոցներից

դուրս մնացողների տոկոսային բարձր ցուցանիշը և առաջարկել է իրականացնել ուսումնասիրություն՝ պարզելով դպրոցներից դուրս մնալու խորքային պատճառները, և շահագրգռել երեխաներին, որպեսզի շարունակեն կրթությունը միջնակարգ դպրոցում<sup>958</sup>:

Կրթությունից դուրս մնացած երեխաների խնդիրն մանրամասն անդրադարձ է կատարվել նաև 2018 թվականի «Հայաստանի Հանրապետության կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում<sup>959</sup>:

Խնդիրն անդրադարձ է կատարվել նաև Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով: Տարիներ շարունակ Պաշտպանի հաղորդումներով նշվել է, որ կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման, կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառների վերհանման և այդ երևույթի կանխարգելման հարցերի լուծման համար անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել «կրթությունից դուրս մնացած երեխա» եզրույթը, որը միայն **2021 թվականին է ամրագրվել ՀՀ կառավարության N 154-Ն որոշմամբ:**

Հատկանշական է, որ Որոշմամբ հաստատված հավելվածով սահմանվել է «կրթությունից դուրս մնացած երեխա» եզրույթը:

Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու խնդիրը արձանագրվել է նաև ՀՀ կառավարության կողմից՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությամբ: Այսպես, ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի «Կրթության իրավունք» 2.3 կետով նշված է, որ կարևոր խնդիր է կրթությունից դուրս մնացած երեխաների հարցը: Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառները տարբեր են, ինչպես օրինակ՝ ոչ բավարար սոցիալական պայմանները, երեխայի հաշմանդամությունը, երեխաների բացակայություններին իրավասու անձանց ոչ պատշաճ արձագանքը, երեխաներին աշխատանքի մեջ ներգրավելը, իսկ բնակչության առանձին խմբերի դեպքում՝ անգամ երեխաների վաղ ամուսնությունը:

Համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների՝ «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության թիվ 154-Ն որոշման ընդունումից հետո, յուրաքանչյուր

<sup>958</sup> Տե՛ս ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության 3-4-րդ պարբերական զեկույցների վերաբերյալ 2013 թվականի հունիսի 14-ի եզրափակիչ դիտարկումները, հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>959</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կողմից Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» 2018 թվականի Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը, հասանելի է <http://old.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/25916e056fa49cb25bdba4ffde02141f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգում դասարանների կազմավորման ավարտից հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը, համեմատելով բնակչության պետական ռեգիստրի և դպրոցների կառավարման համակարգի տվյալները, «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում ներկայացնում է 6–18 տարեկան այն երեխաների տվյալները, որոնք որևէ հաստատությունում հաշվառված չեն: Բացահայտված երեխաների ցուցակները, ինչպես նաև էլեկտրոնային միասնական տեղեկատվական բազան հասանելի են «Պարտադիր ուսուցումից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային համակարգում: ԿՏԱԿ-ի կողմից համակարգ մուտք գործելու համար հաշիվներ են տրամադրվում հետևյալ շահագրգիռ և պատասխանատու կառույցներներին՝ ՀՀ կառավարությանը՝ ի դեմս Կրթության տեսչական մարմնին, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, տարածքային կառավարման մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ ոստիկանությանը, Խնամակալության և հոգաբարձության մարմնին, Հանրապետական և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններին, սոցիալական դեպք վարողներին:

Կրթությունից դուրս մնացած երեխաների վերաբերյալ Նախարարության տրամադրած տվյալների պատկերը՝ ըստ մարզերի և սեռի հետևյալն է.

Երևան քաղաքում՝ 14 երեխա, որից 3-ը աղջիկ, 9-ը՝ տղա: Արագածոտնի մարզում՝ 13 երեխա, որից՝ 6-ը աղջիկ, 7-ը տղա: Արարատի մարզում՝ 24 երեխա, որից՝ 9-ը աղջիկ, 15-ը՝ տղա: Արմավիրի մարզում՝ 27 երեխա, որից՝ 23-ը աղջիկ, 4-ը՝ տղա: Գեղարքունիքի մարզում՝ 23 երեխա, որից 12-ը աղջիկ: ՀՀ Լոռու մարզում 38 երեխա, որից 20-ը աղջիկ, 18-ը՝ տղա: ՀՀ Կոտայքի մարզում՝ 55 երեխա, որից՝ 21-ը աղջիկ, 34-ը՝ տղա: ՀՀ Շիրակի մարզում՝ 14 երեխա, որից 2-ը՝ աղջիկ: ՀՀ Սյունիքի մարզում՝ 7 երեխա, որից 2-ը աղջիկ, 5-ը՝ տղա: Վայոց Ձորի մարզում՝ 4 աղջիկ, որից 1-ը աղջիկ, 3-ը՝ տղա: Տավուշի մարզում՝ 3 երեխա, որից 2-ը աղջիկ, 1-ը՝ տղա:

Երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառների թվային պատկերը հետևյալն է. Սոցիալական պայմանների պատճառով՝ 37 երեխա, որից՝ 13 աղջիկ: Ծնողների՝ երեխային դպրոց հաճախել չթույլատրելը՝ 108 երեխա, որից 57-ը՝ աղջիկ: Լսողական առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 26 երեխա, որից 17-ը՝ աղջիկ: Տեսողական առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 4 երեխա, որից 1-ը աղջիկ, հենաշարժողական առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 7 երեխա, որից՝ 5-ը աղջիկ: Մտավոր զարգացման առանձնահատկություններ ունենալու հանգամանքը՝ 33 երեխա, որից 10-ը աղջիկ: Բազմակի հաշմանդամություն ունենալու հանգամանքը՝ 1 տղա երեխա: Երեխաների՝ քրեակատարողական հիմնարկ տեղափոխվելը՝ 7 տղա երեխա:

Երևանի քաղաքապետարանից ստացված տվյալների համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը համագործակցում է համապատասխան մարմինների հետ՝ առանձին ընտանիքների հետ կապված քննարկման շրջանակում աջակցելու կրթությունից դուրս մնացած երեխաներին դպրոց ընդգրկելու և/կամ վերադարձնելու գործընթացին: Մինչույն ժամանակ, Քաղաքապետարանի պարզաբանումների համաձայն՝ ՀՀ կառավարության 11.02.2021թ. թիվ 154-Ն որոշմամբ հաստատված՝ պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգով նախատեսված «Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման» էլեկտրոնային ենթահամակարգը դեռևս չի գործարկվում:

Հարցի կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տրամադրած տեղեկատվության վերլուծության պատկերն հետևյալն է.

ՀՀ Տավուշի, Արարատի, Սյունիքի և Գեղարքունիքի մարզերում կրթությունից դուրս մնացած երեխաներ չկան:

ՀՀ Արագածոտնի մարզում կրթությունից դուրս մնացած 44 երեխայի հայտնաբերման դեպք է գրանցվել, որից 8-ը տեղափոխվել է արտերկիր: Երեխաները դպրոց չեն հաճախել տարբեր պատճառներով (առողջական, աշխատելու, ամուսնանալու և այլն): Տարվա ընթացքում դպրոց են վերադարձել 24-ը: Ըստ տրամադրած տվյալների՝ դեռևս 12 երեխայի դպրոց վերադարձնելու խնդիրը արդիական է, ընդ որում՝ 5 երեխա աշխատելու պատճառով դպրոց չի հաճախում, 2-ը՝ ամուսնացել են և 5-ը՝ առողջական ծանր վիճակի պատճառով չեն հաճախում դպրոց: Կրթությունից դուրս մնացած երեխաներից 8-ը տղա են, 4-ը՝ աղջիկ:

ՀՀ Արմավիրի մարզում 2021 թվականի ընթացքում պարտադիր կրթությունից դուրս են մնացել 18 երեխաներ: Ըստ տրամադրած տվյալների՝ մեծամասնությունը աղջիկներ են և ամուսնության պատճառով չեն հաճախում դպրոց: Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաները հաշվառվել են ոստիկանության անչափահասների բաժնում, ինչպես նաև մարզապետարանի կրթության և ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների մասնագետների կողմից իրականացվել են համատեղ տնայցեր երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու ուղղությամբ:

ՀՀ Կոտայքի մարզում 2021 թվականի ընթացքում կրթությունից դուրս մնացած երեխաների ընդհանուր թիվը 13 է (5 աղջիկ և 8 տղա), որոնցից երկու երեխայի կրթական իրավունքը վերականգնվել է, 3 երեխա փոխել են բնակության վայրը, 2 երեխա ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Տրամադրած պարզաբանումների համաձայն՝ հանրակրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներից են բնակության վայրի տեղափոխումը, բացակայությունների պատճառով նույն դասարանում մնալը, այդ թվում նաև առցանց դասերին չմասնակցելը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

ՀՀ Շիրակի մարզում 2021 թվականի ընթացքում հայտնաբերվել է հանրակրթությունից դուրս մնացած 44 երեխա՝ 6 աղջիկ և 38 տղա: Կատարված աշխատանքների արդյունքում պարզվել է, որ կրթությունից դուրս մնալու հիմնական պատճառներն են՝ ընտանիքի սոցիալական վատ

պայմանների պատճառով երեխայի օրավարձով աշխատանքը, նույն դասարանում մնալու պատճառով դասապրոցեսը շարունակելուց հրաժարվելը և ամուսնությունը: Աշխատանքների իրականացման ընթացքում, ըստ անհրաժեշտության, մարզպետարանը համագործակցել է ոստիկանության, մարզի համայնքների ԽՀՀ-ների և միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ: Իրականացվել են տնայցեր, բացատրական զրույցներ, կազմակերպվել քննարկումներ շահագրգիռ այլ կազմակերպությունների մասնակցությամբ: Ելնելով կարիքից՝ ընտանիքներին տարբեր հասարակական կազմակերպությունների օգնությամբ տրամադրվել է սոցիալական աջակցություն: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում դպրոց է վերադարձել 26 երեխա՝ 2 աղջիկ և 24 տղա:

ՀՀ ոստիկանության տվյալների համաձայն՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում հաշվառված 11 անչափահասներից 2021-2022 ուսումնական տարվա անցած ժամանակահատվածում պարտադիր կրթությունից դուրս են մնացել 2-ը (1-ն արական սեռի, ՀՀ Կոտայքի մարզ, իսկ մյուսը՝ իգական սեռի, ՀՀ Շիրակի մարզ):

Համաձայն «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021 թվականի զեկույցի՝ 2020 թվականին դպրոց չհաճախելու հիմնական պատճառներից են երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը (0.7 ոչ աղքատ բնակչություն, 0.9 տոկոս աղքատ բնակչություն, 3.9 տոկոս ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան ստիպված է աշխատել (2.8 ոչ աղքատ բնակչություն, 2.8 աղքատ բնակչություն 8.4 ծայրահեղ աղքատ բնակչություն), ընտանեկան պատճառներից ելնելով (4.2 ոչ աղքատ բնակչություն, 3.2 աղքատ բնակչություն, 15.5 ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան չի ցանկանում սովորել (7.1 ոչ աղքատ բնակչություն, 9.9 աղքատ բնակչություն, 14.8 ծայրահեղ աղքատ բնակչություն), կրթությունը շատ թանկ է (1.3 ոչ աղքատ բնակչություն, 1.3 աղքատ բնակչություն, 12.3 ծայրահեղ աղքատ բնակչություն) և այլն<sup>960</sup>:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ՀՀ վիճակագրական կոմիտեի նախորդ տարի արձանագրած պաշտոնական տվյալներն հետևյալն են.

2020 թվականի վիճակագրական պատկերի վերլուծությամբ նշվել է, որ 2019 թվականին դպրոց չհաճախելու հիմնական պատճառներից են երեխայի հաշմանդամություն ունենալու հանգամանքը (0.7 ոչ աղքատ բնակչություն, 0.8 տոկոս աղքատ բնակչություն, 1.3 տոկոս ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան ստիպված է աշխատել (1.8 ոչ աղքատ բնակչություն, 2.4 աղքատ բնակչություն 3.2 ծայրահեղ աղքատ բնակչություն), բնակության վայրի մոտակայքում դպրոց չկա (0.1 ոչ աղքատ բնակչություն, 0.1 աղքատ բնակչություն, 0.0 ծայրահեղ աղքատ բնակչություն), ընտանեկան պատճառներից ելնելով (3.5 ոչ աղքատ բնակչություն, 4.7 աղքատ բնակչություն, 11.3 ծայրահեղ աղքատ բնակչություն), երեխան չի ցանկանում սովորել (6.5 ոչ աղքատ բնակչություն,

<sup>960</sup> Հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2021\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf) հղումով, էջ 110, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

10.3 աղքատ բնակչություն, 20.6 ծայրահեղ աղքատ բնակչություն), կրթությունը շատ թանկ է (1.3 ոչ աղքատ բնակչություն, 1.6 աղքատ բնակչություն, 2.4 ծայրահեղ աղքատ բնակչություն) և այլն<sup>961</sup>:

**Այսպիսով, պաշտոնական վիճակագրական պատկերը ցույց է տալիս, որ կրթության մեջ չներգրավվելու տոկոսները աճել են: Բացի այդ, պետական մարմիններից ստացված վերագրյալ պարզաբանումները երեխաների կրթությունից դուրս մնալու պատճառների վերաբերյալ խիստ մտահոգիչ են: Հիմնականում, որպես կրթությունից դուրս մնալու պատճառ նշվում են երեխաների՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունենալու, ամուսնանալու, սոցիալապես անապահով պայմաններ ունենալու, աշխատելու և ծնողների ցանկությամբ դպրոց չհաճախելու հանգամանքները:**

Արձանագրված պատկերում դրական փոփոխություններ ունենալու համար պետք են հստակ և անհապաղ քայլեր՝ երեխաներին պարտադիր կրթության մեջ ներգրավելու համար: Անընդունելի է որպես պատճառ նշել երեխաների առողջական առանձնահատկությունները, հատուկ կարիքներ կամ հաշմանդամություն ունենալը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ հանրակրթության մեջ չընդգրկվելու պատճառներից կարող է լինել ուսումնական հաստատությունների ֆիզիկական միջավայրի մատչելիությունը, դպրոցներում դասագրքերի, ծրագրերի մատչելիության հարցը, հատուկ կարիքներ ունեցող երեխայի դպրոց տեղափոխման խնդիրը<sup>962</sup>, որը անընդունելի է և խաթարում է երեխայի՝ կրթության իրավունքի իրացումը:

Անհրաժեշտ է, որպեսզի կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և ուղղորդման կարգի գործարկմանը զուգահեռ աշխատանքներ տարվեն կրթությունից դուրս մնացած բոլոր երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովման համար՝ պետական, մարզային և համայնքային մակարդակում բազմամասնագիտական թիմերի ներգրավմամբ: Բոլոր շահագրգիռ մարմինները պետք է համատեղ մշակեն երևույթի կանխարգելման հստակ գործուն ուղիներ, որպեսզի դպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա հաճախի դպրոց անկախ հաշմանդամություն, հատուկ կրթական կարիք ունենալու, սոցիալապես անապահով վիճակում հայտնվելու և այլ պայմաններից:

Բոլոր դեպքերում պետք է աշխատանք տարվի նաև ծնողների հետ՝ բացատրական աշխատանքների, երեխաների իրավունքների և ծնողների պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման միջոցով: Միևնույն ժամանակ, երեխայի՝ կրթության իրավունքի իրացման ապահովման գործում պետությունը պետք է օժանդակի ծնողին, նույնիսկ այն

<sup>961</sup> Հասանելի է [https://armstat.am/file/article/poverty\\_2020\\_a\\_4.pdf](https://armstat.am/file/article/poverty_2020_a_4.pdf) հղումով, էջ 99, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>962</sup> Առավել մանրամասն տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույց, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/66d55894cd4c933cef65a7d6d7d7b35a.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

դեպքերում, երբ վերջիններս ցածր իրազեկվածության կամ այլ պատճառներով հրաժարվում են երեխային դպրոց ուղարկել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը, վերահաստատելով 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արված առաջարկները, գտնում է, որ անհրաժեշտ է՝

1. իրազեկման աշխատանքներ իրականացնել ծնողների և երեխաների հետ, մասնավորապես՝ այն ընտանիքներում, որտեղ երեխան դուրս է մնում կրթությունից՝ ծնողի որոշմամբ,
2. մշակել աջակցության այնպիսի ծրագրեր, որոնց հիմքում ընկած կլինեն երեխաների՝ կրթությունից դուրս մնալու պատճառների վերացմանն ուղղված գործողություններ,
3. բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող հաստատություններին, խնամակալության և հոգաբարձության մարմինն, ուսումնական հաստատություններին և այլ շահագրգիռ մարմիններին իրազեկել պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի և դրանով պայմանավորված գործողությունների մասին,
4. ապահովել ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 154-Ն որոշմամբ ընդունված պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման և ուղղորդման կարգի պահանջների կատարումը՝ բոլոր շահագրգիռ կառույցների կողմից:

## **5. Մանկական աղքատության հիմնախնդիրը**

Տարիներ շարունակ Հայաստանում արդիական մնացող հիմնախնդիրներից է մանկական աղքատությունը, որին Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև նախորդ տարեկան հաղորդումներով:

ՄԱԿ-ի տվյալների համաձայն՝ Հայաստանում յուրաքանչյուր 3-րդ երեխա ապրում է աղքատության մեջ<sup>963</sup>:

Աղքատությունն անմիջականորեն ազդում է երեխաներ՝ առողջապահական ծառայություններից օգտվելու, կրթությունն ավարտին հասցնելու և պատշաճ կենսապայմաններում ապրելու իրավունքների իրացման վրա: Աղքատության երկարաժամկետ բացասական հետևանքներ ունենում հետագայում երեխայի՝ որպես չափահաս մարդ հասարակության լիարժեք անդամ լինելու վրա:

Պետությունը, որպես երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության առաջնային երաշխավոր պետք է իր երկարաժամկետ քաղաքականության մեջ առաջնային դարձնի երեխաների զարգացումը և երեխայակենտրոն սոցիալական պաշտպանության ծրագրերի ստեղծումը՝ մանկական աղքատության կանխարգելման և հաղթահարման համար՝ հաշվի առնելով

<sup>963</sup> Հասանելի է <https://uni.cf/3sDhQfg> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

այն հանգամանքը, որ աղքատությունը շատ դեպքերում առավել խոցելի է դարձնում հաշմանդամություն ունեցող, բազմանդամ ընտանիքներում, հեռավոր և սահմանամերձ գյուղական համայնքներում ապրող երեխաներին:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայով ամրագրված է, որ Պետությունը պետք է ծնողներին և երեխային դաստիարակող այլ անձանց օգնություն ցույց տա և հարկ եղած դեպքում ցուցաբերի նյութական աջակցություն ու սատարում հատկապես՝ սննդով, հագուստով և բնակարանով ապահովելու ծրագրերով<sup>964</sup>: Կոնվենցիայով երաշխավորված է նաև երեխայի՝ անհրաժեշտ կենսամակարդակի իրավունքը: Կոնվենցիան վավերացրած բոլոր երկրներն ընդունել են, որ յուրաքանչյուր երեխա իր ֆիզիկական, մտավոր, հոգևոր, բարոյական և սոցիալական զարգացման համար անհրաժեշտ կենսամակարդակի իրավունք ունի, որի ապահովման իրացման գործում կարևոր դեր ունի պետությունը:

Երեխաները, որոնք աղքատության մեջ գտնվելու պատճառով լիարժեք չեն իրացնում իրենց իրավունքները, հետագայում չեն կարող ամբողջական մասնակցություն ունենալ պետության սոցիալական, քաղաքական և տնտեսական աճին: Աղքատության մեջ մեծանալով՝ երեխաները չափահաս տարիքում ևս կարող են բախվել սոցիալապես անապահով պայմաններում լինելու խնդրին: Ավելին, հիմնականում աղքատության մեջ ապրող երեխաները հաճախ զբաղվում են մուրացկանությամբ և դուրս են մնում կրթությունից:

Չնայած Հայաստանում գործող օրենսդրական կարգավորումներին և դրանցով սահմանվող երաշխիքներին՝ պաշտոնական վիճակագրական տվյալները վկայում են, որ դեռևս կան աղքատության կամ ծայրահեղ աղքատության մեջ ապրող երեխաներ:

Պետության կողմից տրամադրվող դրամական աջակցությունն ու ծառայությունները պետք է լինեն փոխկապակցված երեխաներին տրամադրվող այլ ծառայությունների հետ, որոնք դրական ազդեցություն կունենան երեխաների կյանքի որակի վրա:

Հայաստանում գործում են երեխաների և ընտանիքների համար նախատեսված պետական աջակցության տարբեր ծրագրեր, սակայն 2021 թվականին Պաշտպանի աշխատակազմ ստացված բանավոր հարցումների վերլուծությունը վկայում է, որ գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ ծնողները ցածր իրազեկվածություն ունեն: Պաշտպանի աշխատակազմ ստացվել են զանգեր պետական աջակցության ծրագրերի տեսակների և դրանցից օգտվելու չափորոշիչների վերաբերյալ տեղեկություններ ստանալու մասին:

Երեխաների աղքատության վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացված են Հայաստանի հանրապետության վիճակագրական կոմիտեի 2021 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցում<sup>965</sup>:

<sup>964</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 27:

<sup>965</sup> Տե՛ս ՀՀ ազգային վիճակագրական կոմիտեի կայքէջում, հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2021\\_a\\_2..pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_2..pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:



Նշված զեկույցով արձանագրվել է, որ 2020 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 33.9 տոկոսը (որից՝ աղջիկներ-34.3 տոկոս, տղաներ-33.6 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատ՝ 0.7 տոկոսը (որից՝ աղջիկներ-1.3, տղաներ-0.8 տոկոս): Ընդհանուր վիճակագրական պատկերը ամբողջ բնակչության համար հետևյալն է. 27 տոկոս աղքատ է, 0.7 տոկոս՝ ծայրահեղ աղքատ:

Մանկական աղքատության ամենաբարձր մակարդակը 2020 թվականին եղել է Շիրակի մարզում (57.7%): Բարձր մակարդակ է դիտվել նաև Գեղարքունիքում (56.0%), Տավուշում (46.1%) և Արագածոտնում (40.1%):

Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի 2020 թվականին հրապարակած «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական վերլուծական զեկույցով արձանագրվել էր, որ 2019 թվականին Հայաստանում աղքատ է 0-18 տարեկան ազգաբնակչության 33.6 տոկոսը, այսինքն, ՀՀ-ում 2020 թվականին ընդհանուր բնակչության համեմատ մանկական աղքատության պարագայում առավել բարձր ցուցանիշներ են գրանցել:

Վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում դրամական սոցիալական աջակցության ոլորտի ամենամեծ ծրագիրը, ինչպես բնակչության ընդգրկվածության, այնպես էլ ՀՀ պետական բյուջեում այդ նպատակի համար նախատեսված ֆինանսական միջոցների առումով՝ ընտանեկան նպաստի ծրագիրն է: Միևնույն ժամանակ, թեպետ սոցիալական աջակցության միջոցները զգալիորեն նպաստում են աղքատության կրճատմանը, Հայաստանում աղքատ բնակչության գրեթե կեսը ներառված չէ սոցիալական աջակցության որևէ ծրագրում, և այդ ծրագրերի ոչ բոլոր շահառուներն են կարողանում աջակցությունը ստանալու արդյունքում հաղթահարել աղքատությունը<sup>966</sup>:

Միևնույն ժամանակ, ըստ վիճակագրական տվյալների, «*ընտանեկան նպաստի ծրագրում ընդգրկվածությունը 2016-2019 թվականներին նվազման միտում է դրսևորել՝ 14%-ից հասնելով 13%-ի: Այդ միտումը 2020 թվականին շարունակվել է, և տարվա արդյունքներով ընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը կազմել է շուրջ 12%: Թեև ընդգրկվածության ցուցանիշի այս ընդհանուր նվազումն ազդել է հիմնականում ոչ աղքատների վրա և հանգեցրել ծրագրի ծախսարդյունավետության բարձրացմանը, աղքատների ընդգրկվածությունը նույնպես նվազել է գրեթե 4 տոկոսային կետով, ինչի արդյունքում 2019 թվականի համեմատ ծրագրի շահառու աղքատների թիվը նվազել է ավելի քան 15%-ով*»<sup>967</sup>:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ ընտանեկան նպաստ ստանալու իրավունք ունի ընտանիքի սոցիալական գնահատման համակարգում հաշվառված՝ մինչև 18 տարեկան անդամ ունեցող այն ընտանիքը, որի անապահովության միավորը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից

<sup>966</sup> Հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2021\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>967</sup> Տե՛ս նույն տեղում:

տվյալ տարվա համար սահմանված ընտանեկան նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային միավորից: Նպաստի այս տեսակից օգտվում են շուրջ 60000 ընտանիքներ:

Միաժամանակ՝ ՀՀ կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հավանության արժանացած ՀՀ կառավարության ծրագրի 4-րդ՝ «Մարդկային կապիտալի զարգացում» բաժնի 4.6 ենթաբաժնի առաջին պարբերությամբ սահմանված է, որ Սոցիալական աջակցության քաղաքականությունը հիմնվելու է սոցիալական կարիքի գնահատման և դրան համաչափ սոցիալական ծառայություններ տրամադրելու սկզբունքի վրա՝ խրախուսելով անձի սոցիալ-տնտեսական ակտիվացումը: Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աղքատ ընտանիքների կարողությունների և հմտությունների զարգացման միջոցով, զբաղվածության և ինքնազբաղվածության միջոցների ապահովմամբ և աղքատության փուլային հաղթահարման մոդելների կիրառմամբ ընտանիքները դուրս են գալու աղքատությունից: Նախատեսվում է ավելի շատ ընտանիքների տրամադրել սոցիալական ծառայություններ՝ ավելացնելով ինքնաբավ, արժանապատիվ և սեփական վաստակն ունեցող ընտանիքների թիվը՝ հետզհետե վերացնելով նրանց կախվածությունը պետական աջակցությունից: Այս նպատակի իրականացման համար նախատեսվում է իրականացնել «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերի ներկայացում Վարչապետի աշխատակազմ» միջոցառումը:

Նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականին շարունակվել են «Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ» ծրագրի իրականացման աշխատանքները, որի շրջանակներում տրամադրվող ընտանեկան նպաստը սահմանում է ընտանիքի յուրաքանչյուր՝ մինչև 18 տարեկան անդամներին տրվող հավելումներ, որոնց չափը տարբերակվում է՝ ելնելով ընտանիքի անապահովությունից, ընտանիքում մինչև 18 տարեկան անդամների թվից և ընտանիքի բնակության վայրից (բարձր լեռնային կամ սահմանամերձ բնակավայրեր): Շուրջ 60 000 ընտանիք ստանում է ընտանեկան նպաստ (երեխա ունեցող ընտանիքներ):

Համաձայն Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ընտանեկան նպաստի ծրագրում ընդհանուր ընդգրկվածությունը 2016-2019 թվականներին նվազման միտում է դրսևորել՝ 14%-ից հասնելով 13%-ի: Այդ միտումը 2020 թվականին շարունակվել է, և տարվա արդյունքներով ընդհանուր ընդգրկվածության ցուցանիշը կազմել է շուրջ 12%: Թեև ընդգրկվածության ցուցանիշի այս ընդհանուր նվազումն ազդել է հիմնականում ոչ աղքատների վրա և հանգեցրել ծրագրի ծախսարդյունավետության բարձրացմանը, աղքատների ընդգրկվածությունը նույնպես նվազել է գրեթե 4 տոկոսային կետով, ինչի արդյունքում 2019 թվականի համեմատ ծրագրի շահառու աղքատների թիվը նվազել է ավելի քան 15%-ով<sup>968</sup>:

<sup>968</sup> Հասանելի է [https://www.armstat.am/file/article/poverty\\_2021\\_a\\_4.pdf](https://www.armstat.am/file/article/poverty_2021_a_4.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Վերոգրյալից պարզ է, որ մանկական աղքատության խնդրի լուծման ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր պետության կողմից, սակայն դրանք չեն կարող բավարար համարվել:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի «Կայուն զարգացման 2030 օրակարգ»-ի 1-ին նպատակի համաձայն՝ մինչև 2030 թվականը ամենուրեք և բոլոր մարդկանց համար պետք է իսպառ վերացնել ծայրահեղ աղքատությունը, առնվազն կիսով չափ նվազեցնել ըստ ազգային սահմանումների աղքատության բոլոր ձևերի մեջ ապրող բոլոր տարիքների տղամարդկանց, կանանց և երեխաների համամասնությունը, ներդնել տվյալ երկրում համապատասխան սոցիալական պաշտպանության համակարգեր և միջոցառումներ բոլորի համար, այդ թվում՝ սոցիալական պաշտպանության երաշխիքների խմբեր:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ պետությունը պետք է անհապաղ քայլեր ձեռնարկի մանկական աղքատության կրճատման ու վերացման ուղղությամբ ընտանիքի աջակցության ծրագրերի իրականացման, երեխաների աղքատության ռազմավարության մշակման, ինչպես նաև թիրախավորված սոցիալական ծրագրերի միջոցով:

*Ելնելով վերոգրյալից՝ երեխաների աղքատության հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ է՝*

*1. բարձրացնել բնակչության իրազեկվածությունը գործող սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ.*

*2. ներդնել երեխայակենտրոն աջակցության ծրագրեր՝ հաշվի առնելով երեխաների աղքատության ցուցանիշներն.*

*3. բարձրացնել ծայրահեղ աղքատ և աղքատ ընտանիքների ընդգրկվածության մակարդակն ընտանեկան նպաստի համակարգում այնպես, որ ապահովվի աղքատության իրական ու հիմնարար հաղթահարում:*

## **6. Երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքը, այդ թվում՝ բռնությունը**

Երեխայի նկատմամբ բռնությունը խաթարում է երեխայի բնականոն կյանքի ընթացքը, հակասում է երեխայի լավագույն շահի գաղափարին և խախտում է նրա իրավունքները: Երեխայի նկատմամբ բռնության դրսևորումները կարող են լինել հաստատություններում (մանկապարտեզ, դպրոց, երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն), ընտանիքում և նույնիսկ թվային միջավայրում:

Պաշտպանը տարիներ շարունակ անդրադարձել է երեխայի նկատմամբ բռնության դրսևորման արատավոր երևույթին: 2021 թվականին ևս Պաշտպանը ստացել է բողոքներ երեխաների նկատմամբ բռնության և վատ վերաբերմունքի վերաբերյալ: Բացի այդ, երեխաների նկատմամբ բռնության դեպքերի մասին Պաշտպանի աշխատակազմ տեղեկություններ են ստացվել նաև տեղեկատվության հրապարակային աղբյուրներից:

Երեխայի նկատմամբ բռնությունը կարող է դրսևորվել տարբեր կերպ՝ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնություն, ինչպես նաև բռնությունը կարող է դրսևորվել անտեսման ձևով:

Երեխաների իրավունքների պաշտպանությանը անդրադառնալիս, առանձնակի կարևորություն ունի բռնության բոլոր դրսևորումներից վերջինիս պաշտպանությունը, այդ դրսևորումների կանխարգելումն ու բացառումը, քանի որ բռնությունը երեխայի իրավունքների կոպիտ խախտում է, որը կարող է անդառնալի ու նույնիսկ ողբերգական հետևանքներ առաջացնել երեխայի կյանքի ու առողջության համար:

Պետությունն ունի պարտավորություն ձեռնարկելու բոլոր միջոցները՝ երաշխավորելու համար երեխայի պաշտպանությունը բռնությունից՝ անկախ բռնության դրսևորման ձևից: Երեխան պետք է պաշտպանված լինի բռնության բոլոր ձևերից այդ թվում՝ ֆիզիկական կամ հոգեբանական, ծեծից, վիրավորանքից կամ չարաշահումից, ծաղրանքից կամ անտեսումից, կոպիտ վերաբերմունքից, շահագործումից և այլն: Պետությունը պետք է ստեղծի երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության այնպիսի գործուն և արագ արձագանքող համակարգ, որում ի թիվս այլնի պետք է ներառվեն, սոցիալական ծրագրերի մշակման արդյունավետ ընթացակարգեր՝ նպատակ ունենալով անհրաժեշտ աջակցություն տրամադրել երեխային և այն անձանց, ովքեր հոգ են տանում նրա մասին: Պետության ջանքերը նախ պետք է ուղղված լինեն երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը կանխարգելելու և բացահայտելու, դրանց մասին իրավասու մարմիններին տեղեկացնելու, քննարկման հանձնելու, հետաքննելու և այդ առթիվ հետագա միջոցներ ձեռնարկելու այլ ձևերի իրականացման, այդ թվում, ըստ անհրաժեշտության՝ դատական գործ հարուցելու համար<sup>969</sup>: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով արձանագրված է, որ ցանկացած անձի, այդ թվում՝ ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին, արգելվում է երեխային ենթարկել բռնության կամ նրա արժանապատվությունը նվաստացնող պատժի, կամ նմանօրինակ այլ վերաբերմունքի:

Երեխային բռնությունից պաշտպանելու գործում կարևոր է այդ դրսևորումները վաղ հայտնաբերելը և դրանք կանխարգելելը, որտեղ մեծ դեր ունեն դպրոցն ու մանկապարտեզը: Դպրոցը և մանկապարտեզը պետք է լինեն այն երեխայակենտրոն միջավայրերը, որտեղ կապահովվի երեխայի կրթության իրավունքի իրացումը՝ ելնելով երեխայի լավագույն շահերից, իսկ դպրոցական կարգապահության պահպանմանն ուղղված մեթոդները պետք է լինեն երեխայի արժանապատվության հետ համատեղելի<sup>970</sup>:

Երեխայի նկատմամբ բռնությունը կարող է կրել թաքնված բնույթ, քանի որ երեխան հաճախ չի գիտակցում, որ ենթարկվել է բռնության որևէ դրսևորման: ՄԱԿ-ի կողմից հրապարակված երեխաների նկատմամբ բռնության վերաբերյալ անկախ փորձագիտական ուսումնասիրությամբ նշվում է, որ երեխաները վախենում են հայտնել բռնության դեպքերի մասին, ինչպես նաև հաճախ

<sup>969</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 19:

<sup>970</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 28:

բռնության մասին չի բարձրաձայնվում, քանի որ այն ընդունելի է հասարակության կողմից որպես կարգապահական մեթոդ<sup>971</sup>:

Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշմամբ հաստատված Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և դրանից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի առաջին հավելվածով նշված է, որ երեխաների անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծումը շարունակում է մնալ Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առաջնահերթություն: Այս շրջանակներում կարևոր է երեխաների նկատմամբ բռնության, երեխաների դեմ ուղղված հանցագործությունների դեմ պայքարը, դրանց կանխարգելումը, բոլոր երեխաների կրթության իրավունքի իրացման ապահովումը և այլն: Միևնույն ժամանակ, արձանագրված է, որ վերջին տարիներին մարդու իրավունքներին առնչվող ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական կիրառման խնդիրներին իրենց զեկույցներում պարբերաբար անդրադարձել են միջազգային կառույցները<sup>972</sup> և վերջիններիս կողմից, որպես ՀՀ-ում մարդու իրավունքների լրջագույն խնդիրներ, հատկապես առանձնացվել են, ի թիվս այլնի՝ երեխաների նկատմամբ բռնության և մարդու իրավունքների այլ խախտումների նկատմամբ պետության անհամարժեք արձագանքը<sup>973</sup>:

2021 թվականին Պաշտպանին ուղղված բողոքներով և բանավոր ահազանգերով նշվել է մասնավորապես երեխաների հանդեպ բուլինգի դեպքերի մասին, որին դպրոցի անձնակազմը պատշաճ չի արձագանքում: Օրինակ՝ բողոքներից մեկով նշվել է, որ դպրոցում երեխայի նկատմամբ դրևորել են խտրական մոտեցում՝ հոգեբանորել ճնշելով վերջինիս հաշմանդամություն ունենալու հիմքով: Արդյունքում, դպրոցում երեխայի՝ բուլինգի ենթարկվելու, պատշաճ արձագանք չստանալու հետևանքով ծնողը փոխել է երեխայի դպրոցը:

Դպրոցում երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի և տարբերակված մոտեցման վերաբերյալ 2021 թվականի ահազանգերից մեկով նշվել է, որ դպրոցում երեխայի ծնողին հայտնել են, որ երեխան վարքային որոշակի առանձնահատկություններ ունի և դրանք խաթարում են դպրոցի անդորրը: Ավելին, նշվել է, որ եթե ծնողը չի ցանկանում, որպեսզի իրավիճակն ավելի սրվի, պետք է իր երեխային տեղափոխի այլ դպրոց, քանի որ դպրոցը չունի բազմամասնագիտական այնպիսի անձնակազմ, որը աշխատանքներ կտանի երեխայի հետ: Տվյալ դեպքում Պաշտպանի աշխատակազմի մասնագիտական խորհրդատվությունից և միջամտությունից հետո,

<sup>971</sup> Հասանելի է [https://www.unicef.org/violencestudy/reports/SG\\_violencestudy\\_en.pdf](https://www.unicef.org/violencestudy/reports/SG_violencestudy_en.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>972</sup> ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհուրդը (առաջին հերթին՝ Համընդհանուր պարբերական զեկույցի շրջանակներում), ՄԱԿ-ի հատուկ զեկույցողները, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեն, Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն, Եվրոպայի խորհրդի Ռասիզմի և անհանդուրժողականության եվրոպական հանձնաժողովը, Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարները, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը, ԱՄՆ Պետքարտուղարությունը, «Հյուսիս Ռայթս Ուոչ» կազմակերպություն:

<sup>973</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշումը, հավելված 1:

պայմանավորվածություն է ձեռք բերվել տարածքային մասնագիտական աջակցության կենտրոնի կողմից անհրաժեշտ աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ:

Պաշտպանին ուղղված ահազանգերում հաճախ ծնողները նշում են, որ պատշաճ կերպով տեղեկացված չեն իրենց երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ և չգիտեն, թե որ մարմին դիմեն դպրոցում երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման դեպքում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի հունվարի 27-ի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017 թվականի ապրիլի 28-ի «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման ընթացակարգը և բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման մատյանի ձևը հաստատելու մասին» N7-Ա/1 և N464Ա/2 համատեղ հրամանով ստեղծվել են հաստատություններում սովորողների հանդեպ կամ նրանց միջև բռնության կասկածելի դեպքերի հայտնաբերման, բռնության կասկածելի և հաստատված դեպքերի գրանցման համար ընթացակարգեր:

Նշվածով պայմանավորված դեռևս Պաշտպանի 2019 թվականի տարեկան հաղորդմամբ առաջարկվել էր մշակել երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր՝ հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների համար, որը կարող է կիրառվել հանրակրթական դպրոցներում բռնության կանխարգելման և վերացման նպատակով:

ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվել են ուսումնական հաստատություններում բռնության և բուլինգի նվազեցմանն ուղղված միջոցառումներ: Ըստ պարզաբանումների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը դեռևս չի մշակել բռնության դեպքերի արձանագրման և դրանց արձագանքման կարգ:

Նշվածը խնդրահարույց է, քանի որ Պաշտպանին ուղղված բողոքների և բանավոր հարցումների, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաների հայտնած տեղեկությունների վերլուծությամբ պարզ է դարձել, որ դպրոցներում և մանկապարտեզներում առկա են երեխաների նկատմամբ բռնության դրսևորումներ, այդ թվում՝ երեխաների միջև:

Դպրոցում երեխաների նկատմամբ բռնության դեպքերն առհասարակ դժվար բացահայտվող են: Պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաները հիմնականում խուսափում են հայտնել դպրոցում իրենց նկատմամբ կիրառված բռնության կամ վատ վերաբերմունքի մասին, խուսափելով հետագայում առավել խտրական վերաբերմունքի արժանանալ: Դրա մասին են վկայում վերոգրյալ դեպքերը, երբ ծնողը, դպրոցում իր երեխայի նկատմամբ վատ վերաբերմունքի դրսևորման պատճառով և պատշաճ արձագանք չստանալով, փոխում է երեխայի ուսման վայրը:

Ուստի, խիստ արդիական է և անհրաժեշտ, որպեսզի դպրոցներում պատշաճ ուշադրություն դարձվի երեխաների նկատմամբ բռնության դրսևորումներին, միևնույն ժամանակ պետք է ստեղծվեն և գործեն դպրոցներում բռնության դեպքերի հայտնաբերման և պատշաճ արձանագրման մեխանիզմներ կրթության իրավունքի իրացման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու համար:

Պաշտպանի աշխատակազմ ճանաչողական այցերով պարբերաբար այցելում են տարբեր տարիքի երեխաներ: Այցերն իրականացվում են 2017 թվականից: Այս տարիների ընթացքում երեխաները մշտապես նշում են, որ դպրոցներում ուսուցիչների կողմից աշակերտների նկատմամբ թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական բռնության դեպքերի են ականատես լինում: Հաճախ երեխաները չգիտեն, որ իրենց նկատմամբ բռնության ցանկացած տեսակի դրսևորում արգելված է, այդ թվում՝ ուսուցիչների կողմից: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2021 թվականին Պաշտպանի աշխատակազմ այցելած երեխաները քիչ են տեղեկացված բռնությունից պաշտպանված լինելու իրենց իրավունքի վերաբերյալ: Երեխաները հայտնել են, որ դպրոցում բռնության և վատ վերաբերմունքի դեպքերի դրսևորման պարագայում չկան գործող ուղղորդման կարգեր: Պաշտպանի աշխատակազմը մշտապես երեխաներին մանրամասն իրազեկում է իրենց իրավունքների մասին, սակայն խնդրի վերաբերյալ պետք է շարունակական աշխատանք տարվի դպրոցներում, ընտանիքում, համայնքում:

«Կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը Շվեդական «Global to Local» կազմակերպության հետ իրականացրել է «Հանրակրթական դպրոցներում բուլինգի նվազեցման ծրագիրը», որի շրջանակներում Տավուշի, Լոռու և Շիրակի մարզի մեկական դպրոցներում և Երևանի 2 դպրոցներում իրականացվում է բուլինգի նվազեցմանը նպաստող վերապատրաստման դասընթացներ և միջոցառումներ ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների և ծնողների հետ: Ծրագրի շրջանակներում վերոնշյալ դպրոցներում կազմակերպվել են բուլինգի հիմնախնդրին նվիրված ինտերակտիվ ներկայացումներ: Ծրագրի շրջանակներում կիրառվող ծրագրի պիլոտային փորձարկումն ամփոփելուց և վերջնական շտկումներն իրականացնելուց հետո այն կներդրվի Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում:

Իրազեկման նպատակով կազմակերպված դասընթացներն անհրաժեշտ են դպրոցում բռնության և վատ վերաբերմունքի դրսևորումների կանխարգելման համար, սակայն հարկ է բռնության դեպքերի բացահայտման, արձանագրման և ուղղորդման ընթացակարգեր ներդնել:

Խնդրահարույց է նաև նախադպրոցական ուսումնական հաստատություններում բռնության դեպքերի, դրանց բացահայտման և կանխարգելման ուղղված քայլերի բացակայությունը:

Մանկապարտեզներում բռնության կասկածելի և հաստատված դեպքերի բացահայտման, պատշաճ ուղղորդման և կանխարգելման տեսանկյունից կարևոր է, որ մանկապարտեզներում պարտադիր գործի բռնության դեպքերի գրանցման կարգ: Մանկապարտեզներում բռնության դեպքերի նկատմամբ պետք է լինի հսկողություն տնօրինության և իրավասու տեղական

ինքնակառավարման մարմնի կողմից: Պետք է արձանագրել, որ մանկապարտեզում բռնության դեպքերի կանխարգելման համար առաջնային կարևորություն ունի ծնողների բարձր տեղեկացվածությունը երեխաների իրավունքների վերաբերյալ: Անկախ բռնության դրսևորումների դեպքերի քանակից՝ պետք է լինեն հստակ ընթացակարգեր և կանխարգելիչ գործիքներ:

«Նուստիկանության տրամադրած պարզաբանումների համաձայն՝ ինֆորմացիոն կենտրոնում առկա վիճակագրության համաձայն (ըստ Ոստիկանության՝ վիճակագրական տեղեկությունները վերջնական չեն, ընթանում են դրանց ճշգրտման աշխատանքները)՝ 2021 թվականի ընթացքում արձանագրվել է անչափահասների նկատմամբ բռնության 149 դեպք, որից՝ կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործություն-76 դեպք, անձի ազատության, պատվի և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություն-4 դեպք, սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործություն-63 դեպք, ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություն-2, սեփականության դեմ ուղղված հանցագործություն-3 դեպք, համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործություն-1 դեպք:

«Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ 2021 թվականի ընթացքում ներկայացված ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ դիմում-բողոքների բովանդակային վերլուծությունը վկայում է, որ ըստ դիմում-բողոք ներկայացրած անձանց պնդումների՝ ստացված 105 դիմում-բողոքներից 28 դիմում-բողոքների դեպքերում են երեխաները ընտանեկան բռնության ենթարկվել երեխաներ (10-ի դեպքում՝ իգական սեռի ներկայացուցիչներ, 8-ի դեպքում՝ արական, 10-ի դեպքում՝ երեխայի սեռի հետ կապված տվյալներ չեն ներկայացվել): Դիմում-բողոքներից 1-ով ընտանեկան բռնության է ենթարկվել առողջական խնդիրներ ունեցող երեխա: Ընտանիքում բռնության դեպքերի վերաբերյալ մյուս բողոքների դեպքերում երեխայի ներկայությամբ ընտանեկան բռնության գործադրման մասին տվյալներ չեն արձանագրվել: Մինչդեռ, նշվածը բավարար չէ այն պնդման համար, որ այդ դեպքերում ընտանեկան բռնության գործադրմանը երեխաներ ներկա չեն գտնվել:

Ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության դեպքերի պատճառներից է դրական ծնողավարման հմտությունների բացակայությունը, որը պահանջում է աշխատանքներ տանել ծնողների, խնամակալների և ընտանիքի անդամների հետ վաղ մանկական զարգացման վերաբերյալ տեղեկությունների հաղորդման միջոցով:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տվյալների համաձայն՝ ընտանիքում բռնության կանխարգելման և ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառնությունների իրականացման շրջանակներում 2021 թվականի ընթացքում, համաձայն «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման կարգը հաստատելու մասին» կառավարության 2019թ. հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշմամբ հաստատված կարգի, իրականացվել է վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից հաշվառում, անձնական թերթիկների լրացում, տեղեկատվությունը, ըստ պահանջվող ձևաչափի, փոխանցվել է «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն»:



2021 թվականի ընթացքում Երևան քաղաքի 12 վարչական շրջաններից ստացված տեղեկատվության համաձայն Երևան քաղաքում գրանցվել է 1-17 տարեկան երեխաների նկատմամբ ծնողների, խնամատարների, օրինական ներկայացուցիչների կամ այլ անձանց կողմից ֆիզիկական պատժի և /կամ/ հոգեբանական ագրեսիայի, սեռական բնույթի բռնության 10 դեպք: Բոլոր դեպքերով, ոստիկանության հետ համատեղ, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից իրականացվել են աշխատանքներ, անհրաժեշտության դեպքում, երեխաները տեղափոխվել են ժամանակավոր կացարան, ոստիկանության կողմից կայացվել է անհետաձգելի միջամտության մասին որոշում կամ ուղղորդվել են համապատասխան մասնագիտական ծառայություններ մատուցող կազմակերպություններ:

Ընտանիքում ապրելու, մեծանալու, ծնողների հետ շփվելու և վերջիններիս կողմից դաստիարակություն ստանալու իրավունքն երեխայի հիմնարար իրավունքներից է, որը երաշխավորվում է ՀՀ-ում, սակայն լինում են դեպքեր, երբ հենց ընտանիքում են խախտվում երեխայի իրավունքները: Տվյալ պարագայում համայնքային և մարզային մարմինների առաջնային կարևորության խնդիրը ընտանիքների հետ աշխատանքներ տանելն է՝ կանխարգելիչ ուսումնասիրության իրականացման և քայլերի ձեռնարկման միջոցով:

*Ուստի, վերահաստատելով 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արված առաջարկները՝ անհրաժեշտ է՝*

1. *հանրակրթական դպրոցների և մանկապարտեզների համար մշակել երեխաների նկատմամբ կամ նրանց կողմից միմյանց նկատմամբ բռնության կասկածելի դեպքերի կանխարգելման, հայտնաբերման և հաղորդման ընթացակարգեր,*

2. *իրականացնել շարունակական վերապատրաստումներ դպրոցի և մանկապարտեզների անձնակազմի համար՝ երեխաների իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով,*

3. *երեխաներին մշտապես իրազեկել իրենց իրավունքների վերաբերյալ մանկապարտեզներում և դպրոցներում՝ հասարակագիտության դասընթացների շրջանակներում, ինչպես նաև այլ միջոցառումների ընթացքում,*

4. *ներդնել և կիրառել դրական ծնողավարության վերաբերյալ ծրագրեր՝ ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման նպատակով:*

**7. *խնամակալության և հոգաբարձության մարմինների (հանձնաժողովների) գործունեության հետ կապված՝ լուծում չստացող շարունակական խնդիրները***

Խնամակալության և հոգաբարձության մարմինների<sup>974</sup> գործունեության հետ կապված համակարգային բնույթ ունեցող խնդիրները Մարդու իրավունքների պաշտպանը բարձրաձայնում է տարիներ շարունակ, սակայն այդ խնդիրներն այդպես էլ լուծում չեն ստանում և արդիական են մինչ օրս:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների<sup>975</sup> գործունեությանը վերաբերող գրավոր և բանավոր դիմում-բողոքներ, որոնցով հիմնականում բարձրացվել են ԽՀՀ-ների կողմից անգործություն ցուցաբերելուն կամ գործողությունները ոչ պատշաճ իրականացնելուն, տրված եզրակացությունների և կայացված որոշումների իրավաչափությանը, երեխայի՝ իր ծնողի, տատերի, պապերի և այլ ազգականների հետ շփվելու, ծնողների դաստիարակությունը ստանալու իրավունքների իրացումը ոչ պատշաճ ապահովելուն վերաբերող հարցեր:

Մարդու իրավունքների պաշտպանը ԽՀՄ-ների գործունեությանն առնչվող՝ արդեն քրոնիկ բնույթ ունեցող խնդիրներին անդրադարձել է ինչպես հրապարակային ելույթներով, հայտարարություններով, այնպես էլ դեռևս 2017 թվականին հրապարակված՝ «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցով<sup>976</sup>, տարեկան հաղորդումներով<sup>977</sup>:

ԽՀՀ-ների գործունեությանն առնչվող խնդիրներին անդրադարձ է կատարված նաև Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրում<sup>978</sup>:

Երևանի քաղաքապետարանի<sup>979</sup> տվյալների համաձայն՝ **2021 թվականի ընթացքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ 5 բողոք է ստացվել Քաղաքապետարան:**

<sup>974</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև ԽՀՄ:

<sup>975</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև ԽՀՀ:

<sup>976</sup> Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցը, Երևան, 2017թ., հասանելի է <http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/12/GTC-report.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>977</sup> Տե՛ս, օրինակ, 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 672-675, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1243-1261, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>978</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր: Տե՛ս ՀՀ կառավարության 2017 թվականի հուլիսի 13-ի նիստի N 30 արձանագրային որոշում, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=114901> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>979</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Քաղաքապետարան:

Ըստ Քաղաքապետարանի տրամադրած տեղեկությունների՝ վերոնշյալ բողոքներն ունեցել են հետևյալ բովանդակությունը՝

«1) ամուսնալուծված ծնողների երեխան փաստացի բնակվելով հոր մոտ, չի ցանկանում տեսակցել մոր հետ, որի վերաբերյալ դատարանում առկա է հայցադիմում: Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի հետ համատեղ ծնողներից յուրաքանչյուրի, ինչպես նաև երեխայի հետ /հոգեբանի մասնակցությամբ/ տեղի է ունեցել զրույց, փարվել են բացատրական աշխատանքներ, որի ընթացքում ծնողներին ներկայացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված թե՛ ծնողների, թե՛ երեխաների իրավունքներն ու պարտականությունները,

2) ահազանգի հիման վրա, ոստիկանության հետ համատեղ իրականացված այցի արդյունքում, անչափահասը տեղափոխվել է խնամքի հաստատություն՝ կյանքի և առողջության վրանգի առկայության պատճառով: Երեխայի մայրն ունի հոգեկան առողջության խնդիրներ, իսկ փապը, ով նշանակվել էր երեխայի խնամակալ, պատշաճ կերպով չէր իրականացնում իր պարտականությունները: Ընտանիքի հետ փարված մասնագիտական աշխատանքի արդյունքում երեխան 2 ամիս փորձաշրջանով տեղափոխվել է կենսաբանական ընտանիք: Ընտանիքը գտնվում է

ԽՀՀ-ի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Միասնական սոցիալական ծառայության փարածքային կենտրոնի, ոստիկանության և բաժնի հսկողության ներքո,

3) երեխայի հայրը, առանց մոր համաձայնության, ստանձնել է մանկահասակ երեխայի խնամքը և թույլ չի տալիս երեխայի մորը տեսակցել և մասնակցել երեխայի խնամքի հետ կապված հարցերին /բնակվում են առանձին/: Խնդիրը գտնվում է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ուշադրության կենտրոնում,

4) դատական ակտի առկայությունից հետո երեխայի հայրը չի կարողանում տեսակցել երեխայի հետ, բողոքը վերաբերում էր Հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից պարտականությունների թերի իրականացմանը,

5) ըստ բողոքի՝ երեխաների ծնողները բռնություն են կիրառում մանկահասակ երեխաների նկատմամբ: Հրավիրվել է խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստ՝ ոստիկանության մասնակցությամբ, հերքվել է երեխաների նկատմամբ բռնության կիրառումը: Հանձնաժողովի դիտարկմամբ խնդիրներն առաջացել են ծնողական պարտականությունների ոչ լիարժեք իրականացման արդյունքում, որի ուղղությամբ իրականացվել են բացատրական աշխատանքներ»:

Քաղաքապետարանը հայտնել է նաև, որ **2021 թվականի ընթացքում ԽՀՄ-ների (ԽՀՀ-ների) կողմից երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ստացվել է 3 բողոք (Արաբկիր, Ավան և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում):**

Քաղաքապետարանը նշել է, որ բողոքներով բարձրացված խնդիրները ևս մեկ անգամ քննվել են ԽՀՀ-ների կողմից՝ ներգրավելով բոլոր կողմերին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի

*աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության մասնագետներին: Երկու դեպքով եզրակացությունները մնացել են անփոփոխ, քանի որ հիմնված են եղել օբյեկտիվ փաստերի և համակողմանի ուսումնասիրությունների արդյունքների վրա, իսկ մի դեպքով երեխան վերադարձվել է կենսաբանական ընտանիք:*

Այս առումով հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանի՝ 2021 թվականի գործունեության վերաբերյալ Պաշտպանին տեղեկություններ է տրամադրել ոչ միայն անմիջականորեն Քաղաքապետարանը, այլ նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը<sup>980</sup>, ներկայացնելով հարցադրումների վերաբերյալ Քաղաքապետարանից ստացված պարզաբանումները: Նշված տեղեկությունների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Քաղաքապետարանի՝ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած և Պաշտպանին տրամադրելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացրած տեղեկությունների միջև առկա են որոշ հակասություններ:

Մասնավորապես՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված՝ Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ **2021 թվականի ընթացքում ԽՀՄ-ների (ԽՀՀ-ների) կողմից երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ստացվել է 4 նույնաբովանդակ դիմում-բողոք՝ Արաբկիր և Ավան վարչական շրջաններում՝ 2 անձից և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում՝ 1 անձից: Բողոքներով բարձրացված խնդիրները ևս մեկ անգամ քննվել են ԽՀՀ-ների կողմից՝ ներգրավելով բոլոր կողմերին, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության մասնագետներին: Բոլոր 2 դեպքերում եզրակացությունները մնացել են անփոփոխ, քանի որ հիմնված են եղել օբյեկտիվ փաստերի և համակողմանի ուսումնասիրությունների արդյունքների վրա:**

Վերոգրյալի կապակցությամբ, համեմատության համար, հարկ է նշել նաև այն, որ 2020 թվականի վերաբերյալ Երևանի քաղաքապետարանից ստացված տվյալների համաձայն՝ 2020 թվականի ընթացքում երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ բողոքներ Երևանի քաղաքապետարան չէին ստացվել:

Չնայած որոշ նախաձեռնություններին և նախատեսվող փոփոխություններին՝ համակարգային առումով շարունակում է արդիական մնալ ԽՀՀ-ների անդամների գործունեության կամավորության, տվյալ գործունեության համար ԽՀՀ-ների անդամներին լրացուցիչ վարձատրություն չտրամադրելու խնդիրը: Այս խնդիրն արդեն վաղուց ունի համակարգային բնույթ և չի ստանում լուծում՝ չնայած, որ այն ԽՀՀ-ների ոչ արդյունավետ գործունեության հիմնական պատճառներից մեկն է:

<sup>980</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Նախարարություն:

Կարևոր է, որ պետությունը հնարավորինս հրատապ և հետևողական կերպով ձեռնարկի հստակ միջոցներ՝ բացառելու համար ԽՀՀ-ների անդամների գործունեության կամավորության սկզբունքը և ապահովելու տվյալ գործունեության համար լրացուցիչ վարձատրության սահմանումը: Անհրաժեշտ է, որ Հայաստանի ամբողջ տարածքում գործող ԽՀՀ-ների կազմում պարտադիր ներգրավվեն վճարովի հիմունքներով աշխատող մասնագետներ (այդ թվում՝ հոգեբան, մանկավարժ և սոցիալական աշխատող):

Վերոնշյալ առաջարկը Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է նաև նախորդ տարեկան հաղորդումներով:

Քաղաքապետարանը տեղեկացրել է, որ 2021 թվականին իրականացվել են աշխատանքներ վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմում փոփոխություններ կատարելու ուղղությամբ, որով **նախատեսվում է 2022 թվականի ընթացքում** գործող սոցիալական ապահովության, առողջապահության և ծրագրերի բաժնի փոխարեն ձևավորել երեխաների և սոցիալական պաշտպանության բաժին: **Նոր ձևավորվող բաժնում ներդրվելու են սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքներ, որոնք ընդգրկվելու են ԽՀՀ-ում, որը ենթադրում է հանձնաժողովի հետագա գործունեության առավել արդյունավետ իրականացում: Նախատեսվում է, որ ԽՀՀ-ի քարտուղարի գործառույթներն իրականացնելու է սոցիալական աշխատողը, որը վճարովի հիմունքներով է իրականացնելու իր աշխատանքը:** Ինչ վերաբերում է հոգեբանին, ապա մինչ այժմ, անհրաժեշտության դեպքում, կամավորության սկզբունքով հրավիրվել է հոգեբան, սակայն **նախատեսվող փոփոխության արդյունքում հոգեբանը լինելու է բաժնի աշխատակից և վարձատրվելու է իր կատարած աշխատանքի համար:**

Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ 2021 թվականին USAID «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի (CLASS) շրջանակներում վարչական շրջանների սոցիալական ոլորտի մասնագետների համար իրականացվել է «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման դասընթաց, որի արդյունքում մասնակիցները ստացել են սոցիալական աշխատողի հավաստագիր՝ **հետագայում սոցիալական աշխատողի հաստիքով աշխատելու նպատակով:** Հաշվի առնելով սոցիալական աշխատողի հավաստագրի առկայությունը և տվյալ աշխատակիցների բազմամյա փորձը՝ **նախատեսվում է, որ նրանք են ընդգրկված լինելու հանձնաժողովում՝ որպես քարտուղար:**

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրաձայնել և կարևորել է ԽՀՀ-ների անդամների վերապատրաստումների, հատկապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում, անհրաժեշտությունը: Վերապատրաստումների իրականացումը հնարավորություն կտա բարձրացնել ԽՀՀ-ների գործունեության արդյունավետությունը, կնպաստի ԽՀՀ-ների անդամների կողմից ցանկացած գործունեություն ծավալելիս մշտապես երեխաների լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելուն, այդ թվում՝ երեխայակենտրոն մոտեցմամբ ուսումնասիրություններ իրականացնելուն, եզրակացություններ և որոշումներ կայացնելուն:

*Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրությունները վկայում են, որ Երևան քաղաքում և ՀՀ մարզերում տարիներ շարունակ գրեթե չեն կազմակերպվում ու իրականացվում ԽՀՀ-ների անդամների վերապատրաստումներ, ներառյալ՝ ուղղված երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում տվյալ մարմինների կարողությունների զարգացմանը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Բացի այդ, շարունակում է արդիական մնալ այն խնդիրը, որ կազմակերպվող սահմանափակ թվով վերապատրաստումների ընթացքում երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառին առնչվող առաջնահերթ կարևորության համակարգային խնդիրները մեծամասամբ քննարկման առարկա չեն դարձվում:*

*Քաղաքապետարանն այս առումով հայտնել է, որ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ուղարկված գրության համաձայն՝ 3 վարչական շրջանների ԽՀՀ ներկայիս քարտուղարների տվյալներ են փոխանցվել նախարարություն՝ վերապատրաստում իրականացնելու նպատակով»:*

*Ուշադրության է արժանի Քաղաքապետարանի այն մոտեցումը, համաձայն որի՝ «ելնելով երեխաների և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող համակարգային փոփոխություններից՝ միասնական պրակտիկայի ձևավորման համար նպատակահարմար է հաստիքների հստակ ներդրումից հետո միայն իրականացնել ԽՀՀ անդամների համար նախատեսված վերապատրաստումները, որոնք նախատեսված են 2022 թվականի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության տարեկան ծրագրով»:*

*Այս առումով առավել ուշագրավ է այն, որ դեռևս 2020 թվականին երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ԽՀՀ-ների անդամների կարողությունների զարգացմանն ու նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստումների կազմակերպման և արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը տեղեկացրել էր, որ 2020 թվականի ընթացքում նախատեսված էր ԽՀՀ-ների անդամների վերապատրաստումների իրականացում, սակայն կորոնավիրուսային համավարակով (COVID-19) պայմանավորված սահմանափակումների, երկրում ռազմական դրություն հայտարարելու, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային փոփոխությունների պատճառով այդ վերապատրաստումները չեն իրականացվել և դրանց իրականացումը տեղափոխվել է Երևանի զարգացման 2021 թվականի ծրագիր:*

*Այսպիսով, վերոնշյալը հերթական հաստատումն է այն փաստի, որ Երևանի քաղաքապետարանն անընդհատ տարբեր պատճառաբանություններով հետաձգում է հիմնարար նշանակություն և հրատապություն ունեցող հարցի՝ ԽՀՀ-ների անդամների կարողությունների զարգացմանն ու նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստումների իրականացումը:*

Ավելին, արդեն առնվազն երկրորդ փարին է, ինչ ամբողջ փարվա կտրվածքով ԽՀՀ-ների անդամների վերապատրաստումներ չիրականացնելը Երևանի քաղաքապետարանը պատճառաբանում է Քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային, հասփիքային փոփոխություններ իրականացնելով, ինչպես նաև նշում, որ վերապատրաստումների իրականացումը տեղափոխվել է հաջորդ փարվա համար նախատեսված փարեկան ծրագիր:

Քննարկվող կարևորագույն հարցի նկատմամբ Երևանի քաղաքապետարանի (և ոչ միայն) նման մոտեցումը ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության շարունակական, անփոփոխ անարդյունավետության հիմնական պատճառներից մեկն է:

Խնդրահարույց է, որ Երևանի քաղաքապետարանը՝ հստակ տեղյակ լինելով ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության հետ կապված փարիներ շարունակ առկա ու լուծում չստացող համակարգային խնդիրների, այդ մարմինների անդամների համար վերապատրաստումներ իրականացնելու առաջնահերթ, հրատապ անհրաժեշտության վերաբերյալ, այդպես էլ գործուն միջոցներ չի ձեռնարկում այդ ուղղությամբ, փոխարենը, վերապատրաստումներ չիրականացնելու համար անընդհատ ներկայացնում է պատճառաբանություններ՝ հետաձգելով դրանց իրականացումը:

Երևանի քաղաքապետարանի նման մոտեցումը ոչ միայն պրոֆեսիոնալ չէ, այլ նաև խիստ դատապարտելի է: Հասարակության շրջանում քիչ վստահություն ունեցող կամ ընդհանրապես վստահություն չունեցող, ոչ արդյունավետ գործող, սակայն կարևորագույն լիազորություններով օժտված մարմինները (քննարկվող թեմայի շրջանակներում՝ ԽՀՄ-ները, ԽՀՀ-ները) երկրում արտակարգ, ռազմական դրություն հայտարարվելու կամ արտակարգ որևէ այլ իրավիճակ առաջանալու պարագայում առավել հաճախ կարող են բախվել փարբեր խնդրահարույց հարցերի, որոնք կարող են կենսական նշանակություն ունենալ կոնկրետ անձի կամ մի խումբ անձանց, և որ ամենակարևորն է՝ երեխայի հիմնարար իրավունքների իրացման համար: Ուստի, ԽՀՄ-ները, ԽՀՀ-ները հատկապես նման ժամանակահատվածում պետք է գտնվեն իրավասու մարմինների առավել մեծ ուշադրության ներքո, ստանան անհրաժեշտ աջակցություն, որպեսզի կարողանան ապահովել իրենց կարևոր լիազորությունների պատշաճ իրականացումը համայնքում:

Այսպիսով, Քաղաքապետարանի ներկայացրած պատճառաբանություններն անընդունելի են: Հակառակը՝ դրանք իրականում պետք է հակառակ ազդեցությունն ունենային և հիմք հանդիսանային իրավասու մարմինների ներգրավմամբ ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության հետ կապված ոլորտային խնդիրների հնարավորինս հրատապ կարգավորման համար:

ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների նկատմամբ պետք է ցուցաբերվեր առավել մեծ ուշադրություն, այդ մարմինների անդամների համար պետք է կազմակերպվեին և իրականացվեին պարտադիր բնույթ ունեցող վերապատրաստումներ, նրանց պետք է տրամադրվեր անհրաժեշտ մասնագիտական աջակցություն՝ ապահովելու համար համայնքային մակարդակում նրանց իրավաչափ, արդյունավետ, օպերատիվ և անխափան գործունեությունը:

**Ինչ վերաբերում է առկա կամ հնարավոր խոչընդոտներին, ապա նման պարագայում, անհրաժեշտ վերապատրաստումները կարող էին կազմակերպվել մի շարք այլընտրանքային եղանակներով, այդ թվում՝ հեռավար կարգով:**

Քաղաքապետարանը նշել է, որ ԽՀՄ-ի (ԽՀՀ-ի) գործունեության բարելավման և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ավելացվել է համագործակցությունը տարածքային սոցիալական ծառայության հետ:

Քաղաքապետարանը տեղեկացրել է, որ ԽՀՀ-ում պարտադիր **ընդգրկվելու են** սոցիալական աշխատող և հոգեբան, որոնք **լինելու են** նոր ձևավորվող երեխաների և սոցիալական պաշտպանության բաժնի աշխատակիցներ և վարձատրվելու են՝ որպես համայնքային ծառայողներ: Նշված փոփոխությունների իրականացման կարևոր և առաջնային նպատակներից մեկն էլ հանձնաժողովների հետագա գործունեության արդյունավետության բարձրացումն է:

Քաղաքապետարանը հայտնել է, որ ԽՀՄ-ների կողմից իրականացվող աշխատանքներում թերություններ և բացթողումներ արձանագրելու, ինչպես նաև բարդ դեպքերում Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության կողմից տրամադրվում է համապատասխան մասնագիտական խորհրդարկություն, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, գրավոր պարզաբանում: Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության աշխատակիցները խնդրահարույց դեպքերում մասնակցում են ԽՀՀ-ների նիստերին: Երևանի քաղաքապետարանը նաև նշել է, որ սերտ համագործակցում է ոլորտում գործող բոլոր գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կառույցների ու հասարակական կազմակերպությունների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հրատապ լուծում պահանջող խնդիրների արագ արձագանքման և լուծման նպատակով:

**Ամփոփելով Քաղաքապետարանի ներկայացրած տեղեկությունները՝ հարկ է արձանագրել, որ խնդրահարույց է այն, որ դրանք մեծամասամբ վերացական են, չեն ներկայացնում 2021 թվականին իրականացված գործողությունների կոնկրետ արդյունք, այլ հիմնականում հղում են կատարում ապագայում կատարվելիք, նախատեսվող գործողություններին:**

2021 թվականի ընթացքում ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության արդյունավետության բարձրացման, տվյալ մարմինների գործունեության հետ կապված՝ տարիներ շարունակ առկա և լուծում չստացող համակարգային խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացրած տեղեկություններում գերակշռում են «նախատեսվում է», «լինելու են», «ընդգրկվելու են», «ներդրվելու են» և նմանատիպ այլ արտահայտություններով ձևակերպված՝ ապագայում կատարվելիք գործողությունները, որոնք տարիներ շարունակ պլանավորվում, նախատեսվում են, սակայն այդպես էլ չեն իրագործվում:

Ուստի՝ առաջնահերթ խնդիր է անհրաժեշտ փոփոխությունների գործնականում տեղի ունենալն ապահովելը, դրանք իրական կյանքում իրագործելը: Միայն այդ եղանակով



**հնարավոր կլինի ապահովել ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների արդյունավետ գործունեություն և մարդկանց իրավունքների իրական պաշտպանություն:**

2021 թվականի ընթացքում Ռազմավարական ծրագրից բխող՝ ԽՀՀ-ների կողմից երեխաների լավագույն շահերով առաջնորդվելու և երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանության նպատակով ԽՀՀ-ների անդամների վերապատրաստումներ իրականացնելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է հետևյալը՝

• ՀՀ Արագածոտնի մարզում 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսներին իրականացվել են 46 համայնքների ԽՀՀ-ների անդամների, քարտուղարների վերապատրաստումներ՝ «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կարողությունների զարգացմանը միտված գործողություններ», «ԽՀՀ-ի գործունեության կազմակերպումը, ներքին ռեսուրսների համալրման ու ակտիվացման հնարավորությունները», «ԽՀՀ-ի համագործակցությունը համայնքի սոցիալական աջակցության ցանցի հետ», «Ծնողների փոխհարաբերությունների ազդեցությունը երեխայի հոգեկան ներաշխարհի վրա», «ԽՀՀ-ի աշխատանքը շահառուների հետ. հիմնական մոտեցումներ», «Խնամապարտությունը՝ որպես ընտանիքի այլընտրանքային մոդել» թեմաներով: Վերապատրաստվել են ԽՀՀ-ի շուրջ 150 անդամ և 20 քարտուղար:

• ՀՀ Արարատի մարզում իրականացվել են «Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության» վերաբերյալ եռօրյա հեռավար դասընթացներ, որոնց մասնակցել են Արարատի մարզի երեք համայնքների ԽՀՀ-ների անդամները:

• ՀՀ Արմավիրի մարզի ԽՀՀ-ների (Արմավիր, Էջմիածին, Մեծամոր) 3 անդամների փոխարինողները ներկայացվել է ՀՀ փարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ վերապատրաստման դասընթացներ անցնելու նպատակով:

• ՀՀ Գեղարքունիքի մարզի երեք համայնքներում կազմակերպվել և իրականացվել են ԽՀՀ-ների անդամների վերապատրաստման հեռավար դասընթացներ:

• ՀՀ Կոտայքի մարզում (Չարենցավան, Մեղրաձոր, Ակունք, Ջրվեժ, Բյուրեղավան, Եղվարդ) ԽՀՀ-ների անդամները մասնակցել են «Երեխաների իրավունքները» թեմայով դասընթացի, «Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների/չափահասների հետ աշխատելու հմտություններ», «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» թեմաներով վերապատրաստումների:

• ՀՀ Լոռու մարզի ԽՀՀ-ների անդամների համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության վերաբերյալ հեռավար դասընթաց:

• ՀՀ Շիրակի մարզում վերապատրաստումներ անցկացնելու նպատակով ՀՀ փարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը փրամադրվել են վերապատրաստման կարիք ունեցող ԽՀՀ-ների անդամների փոխարինողներ:

• ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում, համաձայն փոխարինող համայնքից ստացված տեղեկատվության, ԽՀՀ-ների անդամների վերապատրաստում չի իրականացվել: ԽՀՀ-ի

նախագահը 2021 թվականի դեկտեմբերի 13-17-ն ընկած ժամանակահատվածում հեռավար կարգով մասնակցել է երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի օրենսդրության վերաբերյալ դասընթացի: **ՀՀ Սյունիքի մարզի մյուս համայնքների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:**

- ՀՀ Վայոց ձորում կազմակերպվել և իրականացվել են ԽՀՀ-ների անդամների վերապատրաստումներ՝ ուղղված վերջիններիս կողմից իրենց գործունեությունն իրականացնելիս երեխաների լավագույն շահերով առաջնորդվելուն և երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությանը: Մասնավորապես, Զերմուկի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աշխատողը, ով նաև ԽՀՀ-ի անդամ է, մասնակցել է թվով 6 վերապատրաստման դասընթացների (կազմակերպիչներ՝ ՀՕՖ, «Վորլդ Վիժն Հայաստան»)՝ «Ապահինստիտուցիոնալիզացիա և դեպի հաստատություններ կանխարգելում», «Հաշմանդամություն», «Միասնական սոցիալական ծառայություններ, տվյալների բազաներ», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին օրենսդրական մեխանիզմները», «Ներառական կրթության մարտահրավերները», «Աջակցող միջոցներ, դասակարգում և տերմինաբանություն», «Մասնագիտական տեխնիկաների կիրառումը սոցիալական աշխատանքում», «Սոցիալական աշխատանքի մեթոդներ», «Արցախից տեղահանված ընտանիքներին աջակցության մեխանիզմներ», «Խնամակալություն և խնամատարություն» (թվով 3 դասընթաց) թեմաներով: ՀՀ Վայոց ձորի մարզի ԽՀՀ-ների սոցիալական աշխատողները և իրավաբանները մասնակցել են երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման կարողությունների համագործակցային աշխատանքներին վերաբերող մարզային դասընթաց-քննարկման, որն իրականացվել է «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Հայաստանում ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հետ համագործակցության շրջանակներում: ԽՀՀ-ի անդամ սոցիալական աշխատողները մասնակցել են ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ կնքված հուշագրի շրջանակում կազմակերպված՝ «Ընտանիքից երեխայի անհարկի բաժանման կանխարգելումը և խնամատարությունը» թեմայով 2-օրյա սեմինար-դասընթացի:

- ՀՀ Տավուշի մարզում 2021 թվականի դեկտեմբերի 13-ից 17-ն ընկած ժամանակահատվածում համայնքների ԽՀՀ-ների անդամների համար անցկացվել են «Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում օրենսդրական բարեփոխումներից բխող աշխատանքների կազմակերպման ձևաչափերը» թեմայով վերապատրաստման դասընթացներ:

2021 թվականին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ու ՀՀ մարզպետարաններ ստացված՝ ԽՀՄ-ների (ԽՀՀ-ների) գործունեության վերաբերյալ բողոքների թվի, բովանդակության, ինչպես նաև դրանց լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների ու արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը տեղեկացրել է, որ **2021 թվականի ընթացքում ՀՀ**

**Արագածուրնի, Արարատի, Արմավիրի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի և Տավուշի մարզերում ԽՀՄ-ների (ԽՀՀ-ների) գործունեության վերաբերյալ բողոքներ չեն ստացվել:**

**2021 թվականի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում ԽՀՄ-ների (ԽՀՀ-ների) գործունեության վերաբերյալ բողոքներ ստանալու մասին տեղեկատվություն Նախարարությունը չի տրամադրել:**

2021 թվականին ԽՀՀ-ների գործունեության բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացված աշխատանքների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Նախարարությունը հայտնել է հետևյալը՝

- ՀՀ Արմավիրի մարզպետարան դիմած խնամակալության և հոգաբարձության բոլոր հանձնաժողովներին տրամադրվել են մեթոդական ուղեցույցներ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում գործունեության բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով:

- ՀՀ Կոտայքի մարզում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի գործունեության բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով սերտացվել է Ոստիկանության հետ համագործակցությունը, կազմակերպվել են հանդիպում-քննարկումներ նախադպրոցական ուսումնական հաստատությունների, հանրակրթական, ավագ դպրոցների տնօրինության, աշխատակազմի հետ, ինչպես նաև ԽՀՀ-ի անդամների կողմից տրվել է համապատասխան տեղեկատվություն՝ երեխաների իրավունքների և շահերի վերաբերյալ:

- ՀՀ Լոռու մարզպետարանն իր իրավասության շրջանակներում մարզի ԽՀՄ-ներին տրամադրել է մեթոդական և մասնագիտական աջակցություն:

- ՀՀ Շիրակի մարզպետարանը սերտորեն համագործակցել է համայնքների ԽՀՀ-ների հետ՝ ցուցաբերելով անհրաժեշտ մեթոդական աջակցություն: ՀՀ Շիրակի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի մասնագետներն այցելել են մարզի համայնքներ, մասնակցել ԽՀՀ-ների նիստերին:

- ՀՀ Սյունիքի մարզում, համաձայն Գորիս համայնքից ստացված տեղեկությունների, Գորիս համայնքի ԽՀՀ-ի կողմից հրավիրվել է 12 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են տարբեր դիմումներ, գրություններ՝ երեխաների տեսակցության, ծնողական իրավունքից զրկելու, երեխաներին խնամքի կենտրոնում տեղավորելու, երեխաների խնամքի և դաստիարակության, անչափահասի նկատմամբ խնամակալություն սահմանելու, անձին անգործունակ ճանաչելու և այլնի մասին: ՀՀ Սյունիքի մարզպետարանում մյուս համայնքներից տրվալներ չեն ստացվել:

- ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքում ԽՀՀ-ի կազմն էապես փոփոխվել է, ներգրավվել են արհեստավարժ և ոլորտում կայացած սոցիալական աշխատողներ, մանկավարժներ և մանկական հոգեբան, ԽՀՀ-ի՝ հատկապես երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող նիստերին հրավիրվել են Ոստիկանության ներկայացուցիչներ՝ թաղային տեսուչը, անչափահասների գծով տեսուչը, ակտիվ համագործակցություն է ձևավորվել Վայոց ձորի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի,

«Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն ՀԿ-ի, «Ջերմուկի Առողջության կենտրոն» ՓԲԸ-ի, համայնքի փարածքում գործող աջակցող ցանցի՝ սոցիալական ծառայությունների փրամադրման Համակարգող Խորհրդի և այլ կառույցների հետ: Ըստ անհրաժեշտության՝ հեռակապով խորհրդակցել են մասնագիտացված կազմակերպությունների հետ, Ջերմուկ համայնքին այդ առումով հարկապես մեծ աջակցություն է ցուցաբերել Մանկական զարգացման հիմնադրամը: ՀՀ Վայոց ձորի մարզում ԽՀՀ-ները կազմակերպել և անցկացրել են նիստեր, կատարել են փնայցեր կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (առանց ծնողական խնամքի մնացած, ամուսնալուծվող ընտանիքների, ընտանեկան փարածայնություններ ունեցող, սոցիալապես անապահով, իրավախախտ, հաշմանդամություն ունեցող) երեխաներին, ուսումնասիրել երեխաների սոցիալական, կրթական, հոգեբանական և առողջության հետ կապված հիմնական խնդիրները:

- ՀՀ Տավուշի մարզի համայնքների ԽՀՀ-ների գործունեության (հարկապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում) բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, քննարկումներ հանձնաժողովների անդամների և երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող շահագրգիռ կողմերի մասնակցությամբ: Տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն առկա խնդիրներն առավել արագ և արդյունավետ լուծելու համար՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Իրականացվել է այցելություն ընտանիքներ՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների հայտնաբերման, առկա խնդիրների լուծման նպատակով:

**Վերոնշյալ հարցի կապակցությամբ ՀՀ Արագածոտնի, Գեղարքունիքի, Արարատի մարզերի վերաբերյալ տեղեկատվություն Նախարարությունը չի փրամադրել:**

2021 թվականի ընթացքում Հայաստանի ամբողջ տարածքում գործող ԽՀՀ-ների անդամների աշխատանքի կամավորության սկզբունքը բացառելու, տվյալ գործունեության համար վերջիններիս լրացուցիչ վարձատրություն սահմանելու, ինչպես նաև ԽՀՀ-ի կազմում համապատասխան մասնագետների (օրինակ՝ հոգեբանի, սոցիալական աշխատողի) պարտադիր ներգրավման ուղղությամբ ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը հայտնել է հետևյալը՝

- ՀՀ Կոտայքի մարզում ԽՀՀ-ի կազմում ընդգրկված են համապատասխան մասնագետներ, սոցիալական աշխատող, մանկավարժ, բժիշկ, իրավաբան, սակայն **իրենց գործունեությունն իրականացնելու համար մասնագետները լրացուցիչ չեն վարձատրվում:**

- ՀՀ Լոռու մարզում ԽՀՀ-ի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են օրենքով սահմանված կարգով: Օրենսդրական դաշտում նախատեսվում են փոփոխություններ ԽՀՀ-ի անդամների աշխատանքի կամավորության սկզբունքի բացառման, լրացուցիչ վարձատրության և ԽՀՀ-ի կազմում մասնագետի՝ սոցիալական աշխատողի (որպես ԽՀՀ-ի քարտուղար) ներգրավման մասով:

• ՀՀ Սյունիքի մարզի 8 համայնքների ԽՀՀ-ների կազմում ընդգրկված են սոցիալական աշխատողներ: ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ԽՀՀ-ի կազմում ընդգրկված են նաև հոգեբան, բժիշկ, ոստիկան և մանկավարժ:

• **ՀՀ Վայոց ձորի մարզում ԽՀՀ-ի անդամների համար լրացուցիչ վարձատրություն չի սահմանվել.** հանձնաժողովի անդամների մի մասը համայնքապետարանի աշխատակազմի մասնագետներ են, որոնք համայնքային ծառայողներ են և իրենց պաշտոնների անձնագրերում հստակ ձևակերպված է անդամակցումը ԽՀՀ-ին: Հանձնաժողովի մյուս անդամները աշխատանքներին մասնակցում են հասարակական հիմունքներով, սակայն սրտացավ ու բարեխիղճ՝ ըստ իրենց մասնագիտական պարտքի: ԽՀՀ-ների կազմում կան համապատասխան մասնագետներ՝ հոգեբան, սոցիալական աշխատող, սոցիալական մանկավարժ, մանկավարժներ: Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ հրավիրվում են նաև այլ մասնագետներ: Համապատասխան մասնագետների ներգրավումը ԽՀՀ-ների աշխատանքներին մեծապես նպաստում է դրանց արդյունավետության բարձրացմանը: Հատկապես տեսանելի են խնդրահարույց իրադրություններում երեխայի լավագույն շահը վեր հանելու՝ ԽՀՀ-ի՝ մանկավարժ և հոգեբան անդամների ջանքերը, որոնց արդյունքում կայացված որոշումները սովորաբար լավագույնն են լինում: 2021 թվականին ԽՀՀ-ում կատարվել է փոփոխություն կամավորության սկզբունքով, հանձնաժողովի կազմում ընդգրկվել են համապատասխան մասնագետներ (հոգեբան, լոգոպեդ), ավագանու անդամներ:

• ՀՀ Տավուշի մարզում ձեռնարկվել են միջոցներ՝ ուղղված ԽՀՀ-ների կազմում սոցիալական աշխատողի պարտադիր ներգրավմանը՝ որպես ԽՀՀ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված կարևոր երաշխիք: **Նկատի ունենալով, որ ԽՀՀ-ների կազմում հիմնականում ընդգրկված են համայնքային ծառայողներ, բժիշկներ, մանկավարժներ և ավագանու անդամներ՝ օրենքով սահմանված կարգով լրացուցիչ վարձատրություն չի սահմանվել:** Հանձնաժողովի անդամները գործել են կամավորության սկզբունքով:

**Վերոնշյալ հարցի կապակցությամբ ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արարատի մարզերի վերաբերյալ տեղեկատվություն Նախարարությունը չի տրամադրել:**

Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվող կարևորագույն հարցերից է ԽՀՀ-ների գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովների անդամների կրթական որակավորման շեմ և մասնագիտական կրթության հետ կապված հստակ պահանջներ սահմանելու անհրաժեշտությունը: Այս առումով կարևոր է նաև ԽՀՀ-ների անդամների վարքագծի առանձին կանոնների և դրանց խախտման համար պատասխանատվության հստակ միջոցների սահմանումը, ինչպես նաև գործնականում դրանց կիրառման ապահովումը:

2021 թվականի ընթացքում ԽՀՀ-ների անդամների կրթական որակավորման շեմ և մասնագիտական կրթության հետ կապված հստակ պահանջներ, ինչպես նաև վերջիններիս վարքագծի առանձին կանոններ և դրանց խախտման համար պատասխանատվություն սահմանելու

ուղղությամբ ձեռնարկված միջոցների ու արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը հայտնել է հետևյալը՝

- **ՀՀ Կոտայքի մարզում այդ ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել:**
- **ՀՀ Վայոց ձորի մարզում ևս այդ ուղղությամբ միջոցներ չեն ձեռնարկվել:**
- **ՀՀ Լոռու մարզում նախատեսվում է ԽՀՀ-ի կազմում պարտադիր ընդգրկել մասնագետի՝**

**սոցիալական աշխատողի (որպես ԽՀՀ-ի քարտուղար):**

• **ՀՀ Տավուշի մարզում ձեռնարկված միջոցառումների արդյունքում ԽՀՀ-ների կազմում հիմնականում ընդգրկվել են համայնքային ծառայողներ, բժիշկներ, մանկավարժներ, սոցիալական աշխատողներ՝ բարձրագույն կրթությամբ և նշված անձանց կողմից վարքագծի առանձին կանոնների խախտման կամ այլ չարաշահման դեպքեր չեն արձանագրվել:**

**Վերոնշյալ հարցի կապակցությամբ ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արարատի, Սյունիքի մարզերի վերաբերյալ տեղեկատվություն Նախարարությունը չի տրամադրել:**

ԽՀՄ-ների գործունեության և դրա արդյունքում վրա հասնող հետևանքների կանխատեսելիություն ու որոշակիություն ապահովելու նպատակով տվյալ մարմինների կողմից իրենց գործառույթները չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու համար օրենսդրական մակարդակում պատասխանատվության հստակ միջոցներ սահմանելու ուղղությամբ 2021 թվականին ձեռնարկված միջոցների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը տեղեկացրել է հետևյալը՝

• **ՀՀ Կոտայքի մարզում ԽՀՄ-ներն առաջնորդվել են ՀՀ օրենքներով, ԽՀՄ կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով՝ պատշաճ կազմակերպելով իրենց աշխատանքը:**

- **ՀՀ Լոռու մարզում նման դեպքեր չեն արձանագրվել:**
- **ՀՀ Վայոց ձորի մարզում ԽՀՄ-ներն իրենց գործառույթները կատարել են պատշաճ կերպով:**

• **ՀՀ Տավուշի մարզում ԽՀՄ-ների կողմից իրենց գործառույթները չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու դեպքեր չեն արձանագրվել:**

**Վերոնշյալ հարցի կապակցությամբ ՀՀ Շիրակի, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի, Արարատի, Սյունիքի մարզերի վերաբերյալ տեղեկատվություն Նախարարությունը չի տրամադրել:**

ԽՀՀ-ների գործունեության հետ կապված մի շարք հիմնարար բնույթ ունեցող խնդիրների առաջացման պատճառներից է այն, որ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև առկա չէ արդյունավետ միջգերատեսչական համագործակցություն, այդ թվում՝ ձևավորված չէ և չի գործում հրատապ լուծում պահանջող խնդիրներին արագ արձագանքելու հստակ գործիքակազմ:

Մինչդեռ, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև արդյունավետ միջգերատեսչական համագործակցության ապահովումը համայնքում երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց իրավունքների հնարավոր խախտումները կանխարգելելու, բացառելու, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին հայտնաբերելու և նրանց պատշաճ աջակցություն ցուցաբերելու կարևոր երաշխիքներից է:

2021 թվականի ընթացքում միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հրատապ լուծում պահանջող խնդիրներին արագ արձագանքելու և դրանք լուծելու ուղղությամբ ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը հայտնել է հետևյալը՝

- ՀՀ Արարապի մարզում «ձեռնարկվել են **համապատասխան միջոցներ**, ուղղված միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հրատապ լուծում պահանջող խնդիրների արագ արձագանքմանը և լուծմանը: **2021 թվականի ընթացքում քննարկվել և լուծում են ստացել ընտանեկան վեճերի՝ 14, հարկադիր կապարողական հիմնարկում երեխաների տեսակցության և ծնողների միջև հակասությունների՝ 10 և 8 օրինախախտ երեխաների, որոնց հետք տարվել են հոգեբանական, մանկավարժական աշխատանքներ»:**

- ՀՀ Լոռու մարզում «երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հրատապ լուծում պահանջող խնդիրների լուծման նպատակով Լոռու մարզպետարանը ակտիվ համագործակցել է ԽՀՀ մարմինների, միասնական սոցիալական ծառայությունների, ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների, դպրոցների և այլ շահագրգիռ կառույցների հետ: Համագործակցության արդյունքում առաջացած խնդիրներին տրվել է արագ լուծում»:

- ՀՀ Շիրակի մարզում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման շրջանակներում միջգերատեսչական խմբի հետ համագործակցությամբ 2021 թվականի ընթացքում կազմակերպվել է 104 դեպքի քննարկում՝ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքների խնդիրների արագ և արդյունավետ լուծման նպատակով: Եղել են դեպքեր, որոնց քննարկումները ունեցել են փուլային բնույթ»:

- ՀՀ Սյունիքի մարզում «բնագավառի մասով Սյունիքի մարզպետարանն իր լիազորությունների շրջանակում կապի մեջ է համապատասխան գերատեսչությունների, մարմինների ու ծառայությունների հետ»:

- ՀՀ Վայոց ձորի մարզում «երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հրատապ լուծում պահանջող խնդիրների արագ արձագանքման օրինակ է (...) ընտանիքում բռնության դեպքի արձանագրումը, որին շատ արագ հետևեց կոլեգիալ սկզբունքով ԽՀՀ-ի նիստ, վեր հանվեցին հրատապ իրականացվելիք աշխատանքները: Միջգերատեսչական սոցիալական

համագործակցության արդյունքում Վայոց ձորի մարզում իրականացվել են աշխատանքներ ընդհանրական բռնության գործով ՀՀ ոստիկանության մարզային վարչության Եղեգնաձորի, Վայքի և Ջերմուկի ԱԳ և ԸԲԿ խմբերում հաշվառված 13 քաղաքացու»:

• ՀՀ Տավուշի մարզում «2021 թվականի ընթացքում միջգերատեսչական համագործակցության արդյունքում, այդ թվում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում հրատարակ լուծում պահանջող խնդիրների արագ արձագանքման և լուծման կապակցությամբ, մարզպետարանում կազմակերպվել են մի շարք հանդիպում-քննարկումներ մարզում հայտնաբերված հրատարակ և ընթացիկ դեպքերի շուրջ: Արդյունքում վեր են հանվել ընդհանրապես առկա խնդիրները, առաջարկվել են հնարավոր լուծումները, իրականացվել են բարոյա-հոգեբանական, բժշկական և իրավական անհրաժեշտ միջոցառումներ, անհրաժեշտությունից ելնելով 2 ընդհանրապես թվով 6 երեխաներ տեղավորվել են խնամքի համապատասխան հաստատություններում»:

**Վերոնշյալ հարցի կապակցությամբ ՀՀ Կոտայքի, Արագածոտնի, Արմավիրի, Գեղարքունիքի մարզերի վերաբերյալ տեղեկատվություն Նախարարությունը չի տրամադրել:**

Այսպես, վերը ներկայացված տեղեկությունների հաշվառմամբ՝ ակնհայտ է, որ 2021 թվականի ընթացքում ծավալած գործունեության վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված տեղեկությունները մեծամասամբ վերացական բնույթ ունեն և առավելապես վերաբերում են ապագայում նախատեսվող փոփոխություններին, ծրագրերին:

Երևանում և ՀՀ մարզերում շարունակում են արդիական մնալ տարիներ շարունակ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրաձայնվող՝ ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության հետ կապված խնդրահարույց հարցերը: Համակարգային լուծում պահանջող խնդիրները մնում են չլուծված և արդեն քրոնիկ բնույթ ունեն:

Մարդու իրավունքների պաշտպանը ոչ միայն տարիներ շարունակ բարձրաձայնում է ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության հետ կապված հիմնական խնդիրները, այլ նաև ներկայացնում է դրանց կարգավորմանն ուղղված հստակ առաջարկներ, սակայն պետության կողմից այդպես էլ չեն ձեռնարկվում գործուն միջոցներ՝ ուղղված երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության արդյունավետության բարձրացմանը, ԽՀՀ-ների անդամների կարողությունների զարգացմանը, ցանկացած իրավիճակում նրանց կողմից երեխայի լավագույն շահերը ճիշտ գնահատելուն և դրանցով առաջնորդվելուն:

Այսպիսով, հերթական անգամ հարկ է արձանագրել, որ համայնքում երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեությունն արդյունավետ չէ և չի ծառայում իր նպատակին:

ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների ոչ արդյունավետ գործունեությունը պայմանավորված է տարիներ շարունակ առկա ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական համակարգային խնդիրներով, որոնց հետևանքով այդ մարմինները համայնքներում չեն կարողանում ապահովել երեխաների



իրավունքների արդյունավետ պաշտպանություն, իրավունքների հնարավոր խախտումների կանխարգելում:

Կարևոր է արձանագրել, որ օրենսդրական առումով ԽՀՄ-ների գործունեության նկատմամբ առկա չէ պատշաճ վերահսկողության համակարգ: Սա տվյալ մարմինների գործունեության արհեստական և սուբյեկտիվ բնույթ ունենալու հիմնական պատճառներից է: Այս առումով առկա է օրենսդրական փոփոխությունների միջոցով ԽՀՄ-ների կողմից իրենց գործառույթները չիրականացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու համար պատասխանատվության հստակ միջոցներ սահմանելու անհրաժեշտություն՝ նրանց գործունեության և դրա արդյունքում վրա հասնող հետևանքների կանխատեսելիություն և որոշակիություն ապահովելու նպատակով:

Հայաստանի ամբողջ տարածքում գործող ԽՀՄ-ները, ԽՀՀ-ները յուրաքանչյուր իրավիճակում պետք է առաջնահերթ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին և անհատական մոտեցում ցուցաբերեն յուրաքանչյուր գործին՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ համայնքային մակարդակում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի բարելավմանը, ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեությանը վերաբերող համակարգային խնդիրների լուծմանն ուղղված գործուն միջոցներ 2021 թվականի ընթացքում ևս չեն ձեռնարկվել:

*Այսպիսով, վերահաստատելով «Խնամակալության և հոգաբարձության մարմինների ու Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցով, ինչպես նաև նախորդ տարեկան հաղորդումներով ներկայացված նկատառումները՝ առաջարկվում է՝*

1. Հայաստանի ամբողջ տարածքում հասարակության շրջանում իրականացնել ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների գործունեության վերաբերյալ իրազեկման լայն արշավներ,
2. ձեռնարկել միջոցներ՝ ուղղված գործնականում ԽՀՀ-ների անդամների մասնագիտական կարողությունների զարգացմանը, նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ ԽՀՀ-ների անդամների համար պարտադիր բնույթ ունեցող վերապատրաստումներ պարբերաբար կազմակերպելու և իրականացնելու միջոցով,
3. սահմանել ԽՀՀ-ների անդամների կրթական որակավորման շեմի և մասնագիտական կրթության հետ կապված հստակ պահանջներ,
4. սահմանել ԽՀՀ-ների անդամների վարքագծի առանձին կանոններ և դրանց խախտման համար պատասխանատվության հստակ միջոցներ, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ գործնականում դրանց կիրառումն ապահովելու նպատակով,
5. սահմանել պատասխանատվության հստակ միջոցներ ԽՀՄ-ների կողմից իրենց գործառույթների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման համար՝ ապահովելով նրանց

գործունեության և դրա արդյունքում վրա հասնող հետևանքների կանխատեսելիություն և որոշակիություն,

6. Հայաստանի ամբողջ տարածքում բացառել ԽՀՀ-ների անդամների գործունեության կամավորության սկզբունքը՝ վերջիններիս համար սահմանելով լրացուցիչ վարձատրություն, ինչպես նաև բոլոր համայնքների ԽՀՀ-ների կազմում ներգրավել վճարովի հիմունքներով աշխատող մասնագետներ (օրինակ՝ հոգեբան, մանկավարժ և սոցիալական աշխատող),

7. ԽՀՄ-ներին դիմող քաղաքացիներին տրամադրել տվյալ մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որտեղ նշված կլինի նաև տեղեկատվություն ԽՀՄ-ների գործողությունները կամ անգործությունը բողոքարկելու հնարավորությունների վերաբերյալ,

8. ապահովել ԽՀՄ-ների, ԽՀՀ-ների կողմից իրենց գործառույթներն իրականացնելիս երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելը՝ յուրաքանչյուր իրավիճակում կոնկրետ գործի հանգամանքներին անհատական մոտեցում ցուցաբերելու միջոցով,

9. գործուն միջոցներ ձեռնարկել երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում միջգերատեսչական համագործակցության արդյունավետության բարձրացման ուղղությամբ,

10. սահմանել վերադաս մարմինների կողմից ԽՀՀ-ների գործունեության նկատմամբ իրականացվող վերահսկողության հստակ գործիքակազմ՝ գործնականում ապահովելով դրա կիրառումը:

## **8. Թափառաշրջիկ ու մուրացիկ երեխաներին հայտնաբերելը և նրանց աջակցություն տրամադրելը**

Երեխաների՝ մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու հիմնական պատճառներն են դժվարին իրավիճակում հայտնվելը և սոցիալապես անապահով պայմաններ ունենալը: Երեխաները մուրացկանությամբ զբաղվելու արդյունքում չեն կարողանում ողջ ծավալով իրացնել իրենց իրավունքները, այդ թվում՝ դուրս են մնում հանրակրթությունից:

Խնդիրն արդիական է տարիներ շարունակ, որի մասին բազմիցս նշվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներով: Մուրացիկ և թափառաշրջիկ երեխաների խնդիրները արձանագրված են նաև ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեի կողմից: Կոմիտեի դիտարկումներում նշված է, որ մտահոգիչ է մուրացկանության մեջ ներգրավված երեխաների աճող թիվը<sup>981</sup>: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2013-2019 թվականի տարեկան հաղորդումներով արձանագրվել է, որ ՀՀ ոստիկանության կողմից իրականացված միջոցառումների արդյունքում և իրավասու այլ

<sup>981</sup> Հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

մարմինների տվյալների համաձայն՝ հայտնաբերվել են մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաներ, որոնց թվային պատկերը հետևյալն է.

2013 թվական– 61 երեխա, 2014 թվական– 8 երեխա, 2015 թվական – 33 երեխա, 2016 թվական– 57 երեխա, 2017 թվական– 50 երեխա, 2018 թվական– 51 երեխա, 2019 թվական– 46 երեխա: 2020 թվականին– 28 երեխա: Նշված երեխաների (որոշները մեկից ավել անգամ) գերակշիռ մասը զբաղվել է տարբեր իրերի վաճառքով և վերջիններս հայտնաբերվել են ոչ միայն Երևանում, այլ նաև ՀՀ տարբեր մարզերում:

2021 թվականի ՀՀ ոստիկանության տրամադրած տվյալների համաձայն՝ ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) 2021 թվականի ընթացքում մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար պրոֆիլակտիկ քարտային հաշվառման մեջ գտնվել է 11 անչափահաս: Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում հաշվառված 11 անչափահասներից՝ 2-ը իգական, 9-ն արական սեռի ներկայացուցիչներ են: 4-ի խնամքով և դաստիարակությամբ զբաղվել է միայն մեկ ծնողը: Մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու համար ոստիկանության տարածքային ստորաբաժանումներում հաշվառված 11 անչափահասներից 2021-2022 ուսումնական տարվա անցած ժամանակահատվածում պարտադիր կրթությունից դուրս են մնացել 2-ը (1-ն արական սեռի, բնակվող Կոտայքի մարզ, իսկ մյուսը՝ իգական սեռի, բնակվող Շիրակի մարզ):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստացված պարզաբանումների համաձայն՝ Արագածոտնի մարզում 2021 թվականի ընթացքում մուրացիկ և թափառաշրջիկ երեխա չի հայտնաբերվել: Արարատի մարզում ՀՀ Ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքների և մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից 2021 թվականի ընթացքում Արարատի մարզի մուրացիկ և թափառաշրջիկ 1 տղա երեխա է հայտնաբերվել: Լոռու մարզում հայտնաբերվել է 1 մուրացիկ տղա երեխա, որն, ըստ տեղեկատվության, տեղավորվել է խնամքի հաստատությունում:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում հայտնաբերվել է թափառաշրջիկությամբ զբաղվող 4 երեխա /3 աղջիկ, 1 տղա/, մուրացկանությամբ զբաղվող 2 երեխա /2 տղա/: Բոլոր դեպքերի առնչությամբ իրականացվել է ուսումնասիրություն և երեխաները տեղավորվել են խնամքի հաստատություններում:

Քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ ահազանգի հիման վրա, ոստիկանության հետ համատեղ հայտնաբերվել է նաև չափահաս անձ, որը զբաղվել է անձեռոցիկների վաճառքով փողոցում՝ մանկահասակ տղա երեխայի հետ: Պարզվել է, որ անձը մարզի բնակիչ է և արդյունքում խնդիրը փոխանցվել է իրավասու մարմնին, իրականացվել է կենսապայմանների ուսումնասիրություն և տրամադրվել համապատասխան աջակցություն:

Հատկանշական է, որ Պաշտպանի աշխատակազմ ևս 2021 թվականին ստացվել են ահազանգեր քաղաքացիների կողմից Երևան քաղաքի մարդաշատ վայրերում երեխաների մուրացկանությամբ կամ չափահաս անձի կողմից վերջիններիս մուրացկանությամբ զբաղվելու մեջ ներգրավվելու մասին:

ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ Ոստիկանության մասնագիտացված վարչության, ինչպես նաև տարածքային ստորաբաժանումների իրավասու ծառայողները մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող կամ տարբեր իրեր վաճառող անչափահասների խնդիրները լուծելու նպատակով համագործակցել են ՀՀ մարզպետարանների ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների, Երևանի քաղաքապետարանի, ՀՕՖ-ի Երեխաների աջակցության կենտրոնի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղական ինքնակառավարման մարմինների, սոցիալական աջակցության տարածքային մարմինների, ինչպես նաև շահագրգիռ այլ կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Անչափահասների կողմից մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվելու դեպքերը նախականիսելու, անչափահասներին հանցանքի կատարման կամ մուրացկանության հետ կապված գործողությունների կատարմանը ներգրավելու դեպքերը բացահայտելու նպատակով, ՀՀ ոստիկանության պետի 22.05.2019թ. թիվ 1444-Ա հրամանով հաստատված՝ ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների կողմից անչափահասների շրջանում կատարվող հանցագործությունների կանխարգելմանն ուղղված 2019-2021 թվականների միջոցառումների ցանկում նախատեսվել և յուրաքանչյուր ամսվա վերջին տասնօրյակում կազմակերպվել ու անցկացվել է նպատակային ստուգայց-շրջագայություններ:

Երևանի քաղաքապետարանի տվյալների համաձայն՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, այդ թվում նաև մուրացիկ և/կամ թափառաշրջիկ երեխաների և նրանց ընտանիքների աջակցության համար տվյալները փոխանցվում են վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերի համապատասխան բաժիններ՝ ըստ կարիքի աջակցություն տրամադրելու համար՝ համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների հետ:

Մուրացկանությամբ զբաղվող երեխաների իրավունքների պաշտպանության և մուրացկանությամբ զբաղվելու երևույթի կանխարգելումը երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը պետք է գործի դրանում ընդգրկված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դերերի հստակ բաշխմամբ:

Մուրացկանությամբ զբաղվող երեխաների հայտնաբերման և խնդրի՝ իրավասու մարմնին փոխանցման գործում կարևոր է նաև հասարակության դերը: Նշվածի համար պետք է շարունակական հանրային իրազեկման աշխատանքներ իրականացվեն՝ համայնքային, մարզային և պետական մակարդակում: Իրազեկումները պետք է տեղեկություններ պարունակեն մուրացկանությամբ զբաղվող երեխա հանդիպելու դեպքում պետական իրավասու մարմնին դիմելու

անհրաժեշտության մասին, ինչպես նաև թե նշված մարմինները ինչ պարտականություններ ունի երեխաների իրավունքների պաշտպանության գործում:

Թեև պետական իրավասու մարմինների տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում մուրացկանությամբ զբաղվող և թափառաշրջիկ երեխաների թիվը նվազել է, այնուամենայնիվ մուրացկանությամբ զբաղվող և թափառաշրջիկ երեխաների իրավունքների պաշտպանությունը, նրանց իրավունքների խախտումների կանխարգելումը, ինչպես նաև խախտված իրավունքների դեպքում դրանց վերականգնումը և հետագա վերահսկողությունը պետության պարտավորությունն է: Նշված գործում առաջնային է պետական իրավասու կառույցների և համայնքային մակարդակում գործող մարմինների փոխկապակցված արդյունավետ համագործակցությունը:

Խնդիրը կանխարգելելու և վերացնելու նպատակով պետք է առկա լինի կայուն և արդյունավետ համագործակցություն իրավասու բոլոր մարմինների միջև: Երեխային հայտնաբերելուց հետո պետք է տևական ժամանակ վերահսկողություն իրականացվի երեխայի իրավունքների իրացման ապահովման երաշխավորման նկատմամբ: **Պետք աշխատանքներ տարվեն երեխայի ընտանիքի հետ, որպեսզի մուրացկանությամբ զբաղվող երեխան ոչ թե հայտնվի հաստատությունում այլ ապրի ընտանիքում, քանի որ հաճախ երեխաները զբաղվում են մուրացկանությամբ կամ տարբեր իրերի վաճառքով ընտանիքի սոցիալապես անապահով լինելու պատճառով:** Յուրաքանչյուր երեխայի և ընտանիքի կարիքներից ելնելով՝ պետք է մշակվի երեխայակենտրոն աջակցության ծրագիր, որը կբացառի երեխայի՝ մուրացկանությամբ կրկին զբաղվելը:

Կարևոր է նաև դժվարին իրավիճակում հայտնված երեխաների վաղ հայտնաբերումը համայնքում, որտեղ առաջնային է խնամակալության և հոգաբարձության մարմնի արդյունավետ աշխատանքը, ով պարտավոր է համագործակցել ոչ միայն Ոստիկանության, այլ նաև սոցիալական ծառայությունների հետ, որպեսզի երեխաները և նրանց ընտանիքները ստանան անհրաժեշտ շարունակական աջակցություն:

*Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև վերահաստատելով 2020 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկները՝ անհրաժեշտ է՝*

1. ապահովել ՀՀ ոստիկանության, տեղական ինքնակառավարման մարմինների և սոցիալական ծառայությունների շարունակական և արդյունավետ համագործակցությունը՝ երաշխավորելու համար մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող երեխաների հայտնաբերումը և աջակցության տրամադրումը,

2. զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ հեռուստատեսության միջոցով շարունակաբար իրազեկել հասարակությանը մուրացկանությամբ զբաղվող երեխաներ հանդիպելու դեպքում իրավասու պետական մարմիններ դիմելու հնարավորությունների և գործող մեխանիզմների մասին:

## **9. Ապահանսարկությունալացման գործընթացը և ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման վիճակը**

Ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Սա ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածով ամրագրված հստակ պահանջ է:

Ընտանիքն է երեխայի առողջ և ներդաշնակ զարգացման համար լավագույն միջավայրը, ուստի պետության առաջնահերթություններից պետք է լինի յուրաքանչյուր երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի պատշաճ իրացումն ապահովելը:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի նախաբանում ամրագրված է, որ ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հարկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում: Միաժամանակ, նշված կոնվենցիայի նախաբանում ամրագրված է, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում:

Ընտանիքում ապրելու երեխայի հիմնարար իրավունքն ամրագրված է ինչպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով, միջազգային այլ փաստաթղթերով, այնպես էլ ներպետական իրավական ակտերով:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգաբարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համարեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին:

Յուրաքանչյուր երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման ապահովմանը վերաբերող հարցերը մշտապես գտնվել են Մարդու իրավունքների պաշտպանի առանձնահատուկ ուշադրության ներքո:

Պաշտպանն ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի կարևորությանը և այդ իրավունքը երաշխավորելու պետության պարտավորությանն անդրադարձ է կատարել նաև նախորդ տարիների տարեկան հաղորդումներում<sup>982</sup> և արտահերթ հրապարակային զեկույցում<sup>983</sup>:

<sup>982</sup> Տե՛ս 2019 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 677-685, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան

Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ առկա են ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման հետ կապված մի շարք խնդիրներ, խոչընդոտներ, որոնք ունեն համակարգային բնույթ: Դրանց լուծման հարցում առանցքային դերը պետությանն է, որը պետք է ունենա գործուն ներգրավվածություն և հստակ միջոցներ ձեռնարկի՝ ուղղված առկա համակարգային խնդիրները լուծելուն, խոչընդոտները վերացնելուն և ընտանիքում ապրելու յուրաքանչյուր երեխայի իրավունքի իրացումն ապահովելուն:

**Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումը վկայում է, որ տարիներ շարունակ երեխաները տեղավորվել են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում հիմնականում միայն այն պարճառով, որ նրանց ընտանիքը չի ունեցել բավարար ֆինանսական միջոցներ, գտնվել է սոցիալապես ծանր պայմաններում և (կամ) երեխաներն ունեցել են հաշմանդամություն: Նշվածը խնդրահարույց է հարկապես այն հանգամանքի հաշվառմամբ, որ այդ երեխաների մեծ մասն ունեցել են առնվազն մեկ ծնող: Ավելին, երեխաներին միայն վերոնշյալ պարճառով հաստատություններում տեղավորելու խնդիրը ներկայում ևս արդիական է, որի լուծման նպատակով պետությունը պարտավոր է հստակ, գործուն միջոցներ ձեռնարկել:**

**Բացի այդ, 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի կողմից երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ իրականացրած մշտադիտարկման այցերը վկայում են, որ այդ հաստատություններում շարունակում են արդիական մնալ մի շարք խնդիրներ՝ կապված այնտեղ խնամք և դաստիարակություն սպացող երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանության հետ<sup>984</sup>:**

Ապահիստիտուցիոնալացման քաղաքականության շրջանակներում պետության կողմից 2021 թվականին ձեռնարկվել են որոշ միջոցներ ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովման ուղղությամբ, սակայն տվյալ գործընթացում արձանագրված խնդրահարույց հարցերը շարունակում են մնալ արդիական:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրով<sup>985</sup> ընտանիքում ապրելու երեխայի իրավունքի իրացման ապահովումը դիտարկվել է որպես առաջնահերթություն:

---

հաղորդում, էջեր 1265-1271, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>983</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ հրապարակային զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ, Երևան, 2018թ., էջ 63-78, հասանելի է <https://ombuds.am/images/files/0b44c6d762045fbc7edd99b443608b0.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>984</sup> Առավել մանրամասն տե՛ս սույն բաժնի 1-ին պարագրաֆը:

<sup>985</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ Ռազմավարական ծրագիր:

**Ապահինստիտուցիոնալացման քաղաքականությունը պետք է հիմնված լինի ցանկացած իրավիճակում երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելու, յուրաքանչյուր երեխայի կարիքների գնահատման հիման վրա նրա կարիքներին անհատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության վրա:**

**Որպես առաջնահերթություն՝ պետք է դիտարկել երեխայի խնամքն իր կենսաբանական ընտանիքում կազմակերպելն ապահովելու հարցը: Դրա անհնարինության պարագայում պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի երեխայի խնամքն ընտանիքահեն, համայնքահեն միջավայրում կազմակերպելու համար՝ նրան այլընտրանքային խնամքով (խնամակալություն, խնամապարություն, որդեգրում) ապահովելու միջոցով:**

**Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների տեղավորումը պետության կողմից պետք է դիտարկվի միայն որպես վերջին, ծայրահեղ միջոց՝ միայն վերը թվարկված միջոցներով երեխայի խնամքը կազմակերպելու անհնարինությամբ պայմանավորված:**

**Պետության առաջնահերթություններից պետք է լինի երեխայի՝ իր ընտանիքի հետ հնարավոր վերամիավորմանն ուղղված գործուն միջոցների ձեռնարկումը, այդ թվում՝ դրական ծնողավարության դասընթացների կազմակերպման, երեխաներին և նրանց ընտանիքներին բնահրային, ինչպես նաև սոցիալ-հոգեբանական աջակցություն տրամադրելու միջոցով:**

Մարդու իրավունքների պաշտպանի առանձնահատուկ ուշադրության ներքո է գտնվում ապահինստիտուցիոնալացման արդյունքում ընտանիք վերադարձած երեխաների խնամքի պայմանների, նրանց կրթություն ստանալու, անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու, ինչպես նաև այլ իրավունքների իրացման հարցը, որի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացվում է հատուկ մշտադիտարկում:

Ապահինստիտուցիոնալացման արդյունքում ընտանիք վերադարձած երեխաների իրավունքների պատշաճ իրացման ապահովումը պետք է հատուկ ուշադրության արժանանա պետության կողմից, այդ թվում՝ պատշաճ վերահսկողություն իրականացնելու և ընտանիքներին անհրաժեշտ աջակցություն տրամադրելու միջոցով: Վերահսկողությունն իրականացնելիս պետք է հաշվի առնել այն, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններից ընտանիք վերադարձած երեխաներն առավել խոցելի են և հաճախ են խնդիրների, խոչընդոտների հանդիպում իրենց իրավունքներն իրացնելիս: Այս առումով հատուկ աշխատանք է անհրաժեշտ իրականացնել երեխաների ընտանիքի անդամների հետ:

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի ընթացքում ևս իրականացրել է ապահինստիտուցիոնալացման գործընթացի, ընտանիք վերադարձած երեխաների իրավունքների իրացման մշտադիտարկում: Մշտադիտարկումն իրականացվել է նաև համապատասխան այցեր (այդ թվում՝ ընտանիք վերադարձած երեխաների բնակության վայր) իրականացնելու և առկա վիճակը, այդ թվում՝ խնդիրները, տեղում արձանագրելու միջոցով:



**Ընդհանր վերադարձած երեխաների բնակության վայր իրականացրած մշտադիտարկման այցերի արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ երեխայի ընդհանր վերադառնալուց հետո հիմնական խնդիրները, որոնց բախվում են երեխաներն ու ընդհանրի անդամները կապված են ընդհանրի սոցիալական ծանր պայմաններում գտնվելու, երեխայի ծնողների (ծնողի) աշխատանք չունենալու (հիմնականում՝ կրթություն չունենալու, առողջական խնդիրներ ունենալու պատճառով), ինչպես նաև ծնողների մոտ ծնողավարման հմտությունների պակասի կամ բացակայության հետ:**

**Ընդ որում, վերը նշված խնդիրների մասին այցերի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին հայտնել են հենց ծնողները: Օրինակ՝ ՀՀ Շիրակի մարզում ընդհանր վերադարձած երեխաներից մեկի բնակության վայր իրականացված այցի ընթացքում երեխայի ծնողը, որպես հիմնական խնդիր, նշել է իրենց սոցիալական ծանր պայմաններում բնակվելը, իր աշխատանք չունենալը, ինչպես նաև այն, որ ինքը կրթություն չի ստացել և չի կարողանում երեխաներին օգնել տնային առաջադրանքները կատարելու հարցում: Այնուամենայնիվ, երեխաները նշել են, որ ընդհանրում՝ իրենց ծնողի կողքին, գտնվելն իրենց համար առավել նախընտրելի է: Երեխաները նաև նշել են, որ իրենք պարտաճանաչ կերպով հաճախում են դպրոց, ունեն ընկերներ և փորձում են ինքնուրույն կատարել տնային առաջադրանքները:**

**Ընդհանր վերադարձած այլ երեխաների բնակության վայր Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կատարած այցերի ընթացքում ևս երեխաներն ու նրանց ծնողները (ծնողը) նույնաբնույթ տեղեկություններ են հայտնել:**

**Վերոգրյալը հերթական հաստատումն է նրա, որ ապահինստիտուցիոնալացման գործընթացում պետությունն ավելի մեծ ջանքեր պետք է ներդնի և առավել գործուն միջոցներ ձեռնարկի ընդհանր վերադարձած երեխաների (ծնողի) ծնողավարման հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց աշխատանքով ապահովելու նպատակով մասնագիտական հմտություններ սովորեցնելու կամ ունեցած կարողությունները զարգացնելու ուղղությամբ:**

**Կարևոր է նաև սոցիալապես անապահով ընդհանրներին տրամադրվող ֆինանսական աջակցության ծավալներն ընդլայնելը, այդ թվում՝ աջակցության նոր ծրագրեր մշակելու և դրանց կենսագործումն ապահովելու միջոցով:**

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը<sup>986</sup> ներկայացրել է Ռազմավարական ծրագրից բխող՝ 2021 թվականին կատարման ենթակա միջոցառումների վերաբերյալ տեղեկատվություն: Մասնավորապես՝ Նախարարությունը հայտնել է, որ Վորլդ Վիժն կազմակերպության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ու Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համագործակցությամբ իրականացվել է 78**

<sup>986</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Նախարարություն:

մասնագետի վերապատրաստում՝ «Օրենքի հետ խնդիրներ ունեցող երեխաների, չափահասների հետ աշխատելու հմտություններ» թեմայով, 58 մասնագետի վերապատրաստում՝ «Համայնքային սոցիալական աշխատանքը COVID 19 համավարակի պայմաններում» թեմայով, 38 մասնագետի վերապատրաստում՝ «Ապահովիչությունը աշխատողների և դեպի հաստատություններ կանխարգելում», «Հաշմանդամություն», «Միասնական սոցիալական ծառայություններ», «Տվյալների բազաներ» թեմաներով, 7 մասնագետի վերապատրաստում՝ «Օգնություն, փոխօգնություն սթրեսային իրավիճակներում: Ինչպես հաղթահարել սթրեսը և ձեռք բերել հավասարակշռություն» թեմայով:

Նախարարությունը տեղեկացրել է, որ Նախարարության «Ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է 33 մասնագետների վերապատրաստում՝ «Երեխաների իրավունքների պաշտպանություն ոլորտի օրենսդրությունը, իրականացվող բարեփոխումները» թեմայով, 25 մասնագետի վերապատրաստում՝ «Արտ-գեշտալտ մոտեցման կիրառումը ճգնաժամային իրավիճակում հայտնված երեխայի և ընտանիքի հետ աշխատանքում» թեմայով:

Նշվել է, որ մի շարք վերապատրաստումների մասնակցել են Նախարարության ենթակայությամբ գործող ցերեկային և շուրջօրյա խնամքի հաստատությունների մասնագետները: Այդ վերապատրաստումներն իրականացվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Վորլդ Վիժն ՀԲՀ-ի, Սորոս հիմնադրամի, Ամբոր-Հայաստան ՀԿ-ի, ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի, ԿԱԶԱ շվեյցարական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի և ոլորտային այլ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականին դրամաշնորհային մրցույթի արդյունքում պետության կողմից հասարակական կազմակերպություններին պատվիրակման շրջանակում Հայաստանի Հանրապետության 22 խոշոր համայնքներում շուրջ 3100 երեխայի տրամադրվել է ցերեկային խնամքի ծառայություններ: Ծառայությունն ունի նաև շարժական բաղադրիչ, որի շրջանակում աջակցություն է տրամադրվել 118 ընտանիքի, 276 երեխայի՝ ուղղված սպասարկելու այն համայնքների երեխաներին, որտեղ ծառայությունը տեղակայված չէ, սակայն աջակցության կարիք կա: Ծառայությունը ներառական է, ընդգրկում է նաև հաշմանդամություն ունեցող երեխաների: Ցերեկային խնամքի ծառայություններում ընդգրկված հաշմանդամություն ունեցող երեխաների մասնաբաժինը կազմել է միջինում 21 տոկոս:

Նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականի հունվարից պետության կողմից պատվիրակման միջոցով՝ 6 մարզերում և Երևան քաղաքում ոլորտային հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվել է «ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և հաստատությունում հայտնվելու ռիսկի խմբում գտնվող երեխաների ընտանիք վերադարձնելու և մուտքը հաստատություններ կանխարգելելու ծառայություններ», ներառյալ՝ «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» ծրագիրը, որի շրջանակներում շուրջ 327 շահառու երեխաները և նրանց ընտանիքները ստանում են ծրագրի նպատակներից բխող ծառայություններ՝

մասնագիտական աջակցություն, սոցիալական աջակցություն՝ սննդի զամբյուղ և էլեկտրաէներգիայի փոխհատուցում, բնափրային փաթեթ:

ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 2-ի «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված 2020-2023 թվականների համալիր ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» N 432-Լ որոշմամբ հաստատված միջոցառումների ծրագրից բխող՝ 2021 թվականին իրականացված միջոցառումների վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների և նրանց ընտանիքների կարիքների խորը գնահատման նպատակով Նախարարությունը նախաձեռնել է շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունների երեխաների՝ կենսաբանական ընտանիքների հետ հնարավոր վերամիավորման գործընթաց՝ այդ նպատակով ընդգրկելով երեխայի իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի դերակատարներին:

Նշվել է, որ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի՝ երեխաների իրավունքների պաշտպանություն իրականացնող բաժիններին վերապահվել է խորքային գնահատման գործընթացի կազմակերպման և ղեկավարման իրավասությունը՝ հիմք ընդունելով վերջիններիս լիազորությունների շրջանակը: Գործընթացին մասնակից են եղել նաև շահագրգիռ մարմիններն ու կազմակերպությունները: Գործընթացի շրջանակներում իրականացվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 100 երեխաների և ընտանիքների խորքային գնահատում:

Նախարարությունը հայտնել է, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող գիշերօթիկ հաստատությունների լուծարման արդյունքում ընտանիքների հետ վերամիավորված երեխաների կարիքների խորքային գնահատման արդյունքների հիման վրա Նախարարությունն իրականացրել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 258 երեխայի գնահատված կարիքների վերլուծություն: Պետության կողմից պատվիրակված լիազորություններ ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից գնահատվել է ավելի քան 4500 երեխայի և նրանց ընտանիքների կարիքները: Նախարարության ենթակայությամբ գործող ցերեկային աջակցության վեց կենտրոններում ծառայության տրամադրման նպատակով գնահատվել է ավելի քան 600 երեխայի և նրանց ընտանիքների կարիքները: Կարիքի գնահատման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է կարիքի համակողմանի գնահատման ձևաթուղթ, որը ներդրվել է նաև տեղեկատվական համակարգի նախագծային փաթեթակում:

Վերոգրյալի հիման վրա՝ Նախարարությունը տեղեկացրել է, որ ընդհանուր առմամբ իրականացվել է շուրջ 5400 երեխայի կարիքների խորքային գնահատում, որը կազմում է ներկայում հաշվառված, կարիքները գնահատված՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների շուրջ 62 տոկոսը:

Նշվել է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող 6 հաստատությունների կողմից տրամադրվում են երեխաների խնամքի ցերեկային ծառայություններ, որտեղ ծառայություն է սպանում 600 երեխա: Այդ հաստատություններում ևս

ծառայությունը ներառական է, միջինում ընդգրկված են եղել 9,5 տոկոս հաշմանդամություն ունեցող երեխաներ:

2021 թվականի ընթացքում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ընտանիքներին ընտանեկան խորհրդատվության և ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացների կազմակերպման վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ *Նախարարության ենթակայությամբ գործող երեխաների ցերեկային խնամքի հաստատությունների կողմից ծառայություն ստացող 100 տոկոս երեխաների ծնողներին տրամադրվել է խորհրդատվություն, իսկ պետության կողմից պատվիրակված լիազորություններ ունեցող հասարակական կազմակերպությունների կողմից խնամքի ցերեկային ծառայությունների շրջանակներում այդ ցուցանիշը միջինում կազմում է 89,4 տոկոս:*

Ինչ վերաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ծնողների համար ծնողավարման, կենցաղավարման թեմաներով դասընթացների կազմակերպմանը, ապա, Նախարարության տվյալների համաձայն, պետական հաստատությունների կողմից այդ ցուցանիշը կազմում է 83,3 տոկոս, իսկ հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվել է միջինում 71,1 տոկոս ծնողների մասնակցությամբ դասընթացներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ 2020 թվականի նոյեմբերի 26-ին ՀՀ կառավարության N 1878 որոշմամբ «Գյումրի քաղաքի երեխաների հոգածության սոցիալական կենտրոն» և «Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ները միաձուլման ձևով վերակազմակերպվել են «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, որն իր գործունեությունը սկսել է իրականացնել 2021 թվականի հունիսի 1-ից՝ իրականացնելով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան 100 երեխայի ցերեկային խնամք և 0-18 տարեկան 60 երեխայի շուրջօրյա կարճաժամկետ խնամք:

Նախարարությունը հայտնել է, որ ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 14-ի N 37 որոշմամբ սրեղծվել է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որի գործունեությունը մեկնարկել է 2021 թվականի մայիսի 1-ից: Համաձայն հաստատության կանոնադրության՝ ցերեկային խնամքի բաղադրիչով խնամք են ստանում 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 100 երեխա, կարճաժամկետ շուրջօրյա խնամք է տրամադրվում 0-18 տարեկան 40 երեխայի:

Նախարարության տվյալների համաձայն՝ ճգնաժամային կենտրոնի մոդելով Երևան քաղաքում գործում է մեկ հաստատություն՝ «Երևանի «Զարիկ երեխաների աջակցության կենտրոն»» ՊՈԱԿ-ը, որտեղ շուրջօրյա կարճաժամկետ խնամք կարող է ստանալ մինչև 25 երեխա:

Նշվել է նաև, որ վերոնշյալ կենտրոններից կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորման ցուցանիշը 2021 թվականին կազմում է շուրջ 50 տոկոս:

Նախարարության տվյալների համաձայն՝ **2021 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք է**

**վերադարձել 10 երեխա, ժամանակավոր խնամք իրականացնող կենտրոններից կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորվել է 48 երեխա:**

Համեմատության համար հարկ է նշել, որ ըստ Նախարարության տվյալների՝ 2020 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա պետական հաստատություններից (մանկատներից) ընտանիք էր վերադարձել 47 երեխա:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ 2020 թվականի համեմատությամբ՝ 2021 թվականին երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի հաստատություններից ընտանիք են վերադարձել ավելի քիչ թվով երեխաներ, որն ապահիստիտոցիոնալացման քաղաքականության նպատակների հաշվառմամբ՝ դրական արդյունք չէ:

Նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի պետական հաստատություններում խնամվել է 584 երեխա: Տվյալ 584 երեխաներից 498-ն ունի հաշմանդամություն: Ուշագրավ է, որ Նախարարությունն այս առումով նշել է, որ «առողջական խնդիրներ ունեցող երեխաների բժշկական զննությանն ուղղված աշխատանքները գտնվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ուշադրության կենտրոնում և պայմանավորված բժշկական հավելյալ զննությունների արդյունքներով հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը աճել է»:

Նախարարությունը տեղեկացրել է, որ 2021 թվականին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման կամ լուծարման գործընթաց չի նախատեսվել, բացառությամբ՝ «Երևանի «Ձափիկ» երեխայի աջակցության կենտրոն»» ՊՈԱԿ-ի վերակազմակերպման, որը դեռևս չի իրականացվել՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայում իրականացվում է երեխաների ցերեկային խնամքի ծառայությունների տրամադրման մոդելի գնահատում, միջազգային փորձի ուսումնասիրություն և նոր, առավել արդյունավետ մոդելի մշակմանն ուղղված աշխատանքներ, որն իր հերթին որոշիչ դեր է ունենալու վերը նշված կենտրոնի հետագա կազմակերպահրավական կարգավիճակի փոփոխության տեսակի որոշման գործում:

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում այլընտրանքային ծառայությունների ընդլայնմանն ուղղված՝ 2021 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ Նախարարության և ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնի միջև 2020 թվականին կնքված հուշագրի շրջանակներում 2021 թվականին շարունակվել են այլընտրանքային ծառայությունների ընդլայնմանն ուղղված աշխատանքները: Մասնավորապես, ըստ Նախարարության տվյալների, իրականացվել են համայնքային իրազեկման հանդիպումներ՝ ընդգրկելով Գեղարքունիքի (Վարդենիս, Գավառ), Վայոց ձորի (Եղեգնաձոր, Ջառիթափ), Տավուշի (Կողբ, Իջևան, Դիլիջան, Թեղուտ), Կոտայքի (Աբովյան, Հրազդան) և Լոռու (Վանաձոր) մարզերը: Ընդհանուր առմամբ, իրականացվել են շուրջ 12 համայնքային հանդիպումներ՝ 302 քաղաքացու

մասնակցությամբ: Երեք իրազեկման հանդիպում (Իջևան, Եղեգնաձոր, Մարտունի) է իրականացվել նաև մասնագետների շրջանում (դպրոց, մանկապարտեզ, պոլիկլինիկա, տեղական ՀԿ-ներ)՝ 60 մասնագետի մասնակցությամբ:

Նշվել է, որ 2021 թվականի ընթացքում իրականացվել են կարողությունների զարգացման երկօրյա դասընթացներ ՀՀ Գեղարքունիքի, Տավուշի, Կոտայքի, Սյունիքի և Վայոց ձորի մարզերի երեխաների պաշտպանության 117 մասնագետի համար: Մասնավորապես, այն ընդգրկել է համայնքում գործող երեխաների պաշտպանության մասնագետներին (ուսուցիչներ, համայնքային սոցիալական աշխատողներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ):

2019-2021 թվականներին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման կամ լուծարման գործընթացի արդյունքում ընտանիք վերադարձած երեխաներին և նրանց ընտանիքներին 2021 թվականին տրամադրված աջակցության վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների լուծարման արդյունքում ընտանիքների հետ վերամիավորված 258 երեխայի՝ 137 ընտանիքի կարիքների խորքային գնահատման գործընթացի հիման վրա առանձնացվել են մի շարք խնդիրներ, որոնց համապատասխան ձեռնարկվել են միջամտության գործողություններ՝ գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: Նշվել է, որ մի շարք ընտանիքներ ընդգրկվել են աղքատության հաղթահարման ծրագրում, մասնակցել են ֆինանսական գրագիտության, ծնողավարման դասընթացների, ինչպես է նաև տրամադրվել է տնտեսական զբաղվածություն (ինքնազբաղվածություն) ապահովելու գործիքներ (պարագաներ):

Հաստատություններից ընտանիք վերադարձած երեխաների կյանքի պայմանների նկատմամբ 2021 թվականին իրականացված վերահսկողության վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ «2021 թվականին Նախարարության և Վորլդ Վիժն Հայաստան բարեգործական հիմնադրամի միջև կնքվել է հուշագիր, որի շրջանակներում փակված դեպքերի նկատմամբ իրականացվել է մշտադիտարկումներ, իսկ ընթացիկ դեպքերի նկատմամբ՝ վերահսկողություն: Հուշագրի շրջանակներում ամրագրվել է նաև երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների կարիքների խորքային գնահատման իրականացմանն ուղղված միջոցառում՝ վերամիավորման հավանականության գնահատման նպատակով, ինչպես նաև կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորված երեխաների ընտանիքների կարիքների խորքային գնահատում: Նշված երկու գործընթացներն էլ մեկնարկել են 2021 թվականին և ներկայում շարունակվում են»:

Հաստատություններից ընտանիք վերադարձած երեխաների կյանքի պայմանների նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը հայտնել է, որ **«նախկինում իրականացված գնահատումների արդյունքում ամրագրվել է, որ հիմնականում անբավարար են կոմունալ-կենցաղային պայմանները, առկա է կենցաղային և գույքի**

**անբավարար վիճակ, որոշ դեպքերում բնակարանի վերանորոգման կարիք կա, չկա ջրամատակարարման համակարգ և այլն»:**

Ներկայացված խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ **«նշված ընտանիքների հետ իրականացված աշխատանքների արդյունքում գործընկեր կազմակերպությունների կողմից մշակվել և իրականացվել են ծնողավարման հմտությունների դասընթացներ, տրամադրվել են կենցաղային տեխնիկաներ, առաջնային անհրաժեշտության ապրանքներ, միաժամանակ ձեռնարկվել են միջոցներ՝ ընտանիքների տնտեսական կայունության ապահովման ուղղությամբ»:**

Նախարարության տվյալների համաձայն՝ **2021 թվականի դրությամբ՝ 2019-2021 թվականներին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների վերակազմակերպման կամ լուծարման գործընթացի արդյունքում, փարբեր հանգամանքներով պայմանավորված (ծնողները Հայաստանի Հանրապետությունում չեն կամ զրկված են ծնողական իրավունքներից, չունեն ծնողավարման, կենցաղավարման հմտություններ և այլն), 42 երեխայի ընտանիքի հետ վերամիավորումն ապահովել հնարավոր չի եղել, ուստի նրանց խնամքը շարունակվել է կազմակերպվել երեխաների շուրջօրյա խնամք իրականացնող հաստատություններում կամ խնամատար ընտանիքներում:**

Նշվել է, որ **կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորման անհնարինության պայմաններում՝ 7 երեխայի խնամք կազմակերպվել է խնամատար ընտանիքներում, «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲԸ-ում խնամք է ստանում 4 երեխա, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության Վանաձորի «Սաբինե» ՓԽՏ-ում՝ 5 երեխա, «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում՝ 5 երեխա, իսկ 21 երեխա շարունակում է խնամք ստանալ «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում:**

Համեմատության համար հարկ է նշել, որ ըստ Նախարարության տվյալների՝ **2020 թվականին ընտանիքի հետ վերամիավորման առումով 452 երեխայի համար առկա են եղել խոչընդոտներ, օրինակ, հաշմանդամություն, ծանր հիվանդություններ ունենալու պատճառով երեխայի խնամքից և դաստիարակությունից հրաժարվելու և որդեգրման հանձնելու համաձայնության, ծնողի առողջական վիճակի (որոշ դեպքերում՝ զուգակցված սոցիալապես խիստ անապահով վիճակով), ծնողների ծնողական իրավունքների հստակեցման գործընթացների, ծնողների անհայտ բացակայող ճանաչված լինելու, ծնողական իրավունքները սահմանափակված կամ այդ իրավունքներից զրկված լինելու, ծնողի ազատագրված լինելու, վերամիավորման համար ոչ բարենպաստ պայմանների առկայության, բնակարանային պայմանների, իսկ որոշ դեպքերում՝ բնակության վայրին մոտ ցերեկային կենտրոնի և (կամ) համայնքային վերականգնողական ծառայությունների բացակայության պատճառով:**

Երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձը կամ նրանց ընտանիքում ապրելու իրավունքի իրացումն ընտանիքահեն և համայնքահեն այլընտրանքային խնամքի միջոցով

(խնամակալություն, խնամատարություն և որդեգրում) ապահովելու ուղղությամբ 2021 թվականին ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Նախարարությունը տեղեկացրել է, որ **2021 թվականին կենսաբանական ընդհանրությունների խորքային գնահատման արդյունքում իրականացվել է ընդհանրություններին կարիքահենք աջակցությունների փրամադրում, որը նպաստավոր պայմաններ է ստեղծել երեխաների՝ ընդհանրությունների հետ վերամիավորման համար: Արդյունքում՝ նշված երեխաներից ևս 17-ը վերամիավորվել են ընդհանրությունների հետ:**

Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում խնամատար ընտանիքների թվի վերաբերյալ Նախարարությունը հայտնել է, որ **2021 թվականի ընթացքում պայմանագրեր են կնքվել 73 խնամատար ծնողների հետ, որոնցից 65-ը՝ ընդհանուր, 7-ը՝ մասնագիտացված, 1-ը՝ ճգնաժամային:** Նշվել է, որ **երևան քաղաքում պայմանագիր է կնքվել 32 խնամատար ծնողների հետ, որոնցից 2-ը՝ մասնագիտացված, Սյունիքի մարզում գործում է 7 խնամատար ընդհանր, որոնցից 1-ը՝ մասնագիտացված, Արմավիրի մարզում՝ 3, Կոտայքի մարզում՝ 1 մասնագիտացված խնամատար ընդհանր, Արագածոտնի մարզում՝ 3 խնամատար ընդհանր, որից 1-ը՝ մասնագիտացված, Տավուշի մարզում՝ 3, Լոռու մարզում՝ 24 խնամատար ընդհանր, որից 1-ը՝ ճգնաժամային, 2-ը՝ մասնագիտացված, Գեղարքունիքի մարզում՝ 1, Արմավիրի մարզում՝ 3, Արարատի մարզում՝ 3 խնամատար ընդհանր:**

Նախարարության տվյալների համաձայն՝ **2021 թվականի ընթացքում խնամատար ընդհանրություններում խնամվելու նպատակով բյուջեփայլին հատկացումներ են նախատեսվել 125 երեխայի խնամքի համար: 2021 թվականի ընթացքում խնամատար ընդհանրություններում խնամք և դաստիարակություն է ստացել 0-18 տարեկան 98 երեխա, որոնցից 32-ը՝ արջիկ, 64-ը՝ տղա, ևս մեկ 18 տարին լրացած անձ՝ մասնագիտացված խնամատար ընդհանրություն: 2021 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ՝ մասնագիտացված 7 խնամատար ընդհանրություն կազմակերպվել է հաշմանդամություն ունեցող 9 երեխայի խնամքը:** Նշվել է, որ *հոգեզավակների թիվը փոփոխվել է տարվա ընթացքում՝ կապված 18 տարին լրանալու պատճառով խնամատարության դադարեցման, ճգնաժամային խնամատարության ավարտի հետ, ինչպես նաև երեխայի՝ կենսաբանական ընդհանրության հետ վերամիավորվելու կամ որոշ դեպքերում խնամատարության պայմանագրի լուծման հանգամանքներով պայմանավորված:*

Նախարարությունը հայտնել է, որ **2021 թվականին իրականացվել է խնամատար ծնող դառնալ ցանկացող անձանց համար 2 վերապատրաստում, որոնց մասնակցել է խնամատար ծնող դառնալ ցանկացող 25 անձ, իրականացվել են նաև խնամատար ծնողների որակավորման դասընթացներ՝ 22 խնամատար ծնողների մասնակցությամբ, որոնցից 8-ը՝ մասնագիտացված խնամատարություն իրականացնելու նպատակով: Վերապատրաստումների արդյունքում 10 խնամատար ծնող դառնալու ցանկություն ունեցող անձանց հետ կնքվել են խնամատարության պայմանագրեր:**

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ **2021 թվականին հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների վերակազմակերպում տեղի է ունեցել:**



ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ **2021 թվականի սեպտեմբերից համընդհանուր ներառական կրթության են անցել վերջին երկու՝ Արարափի և Վայոց Ձորի մարզերը: Նշված մարզերում գործող բոլոր դպրոցներն արդեն պատրաստ են իրականացնել ներառական կրթություն՝ Արարափի մարզում՝ 112 դպրոց, Վայոց ձորի մարզում՝ 48 դպրոց:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ **ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությունում ձևավորվել և գործում են 17 փարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ, որոնցից 4-ը՝ Երևան քաղաքում, 3-ը՝ Սյունիքի մարզում, 3-ը՝ Լոռու մարզում, 2-ը՝ Արմավիրի մարզում, 2-ը՝ Շիրակի մարզում, 1-ը՝ Կոտայքի մարզում, 1-ը՝ Գեղարքունիքի մարզում, 1-ը՝ Արագածոտնի մարզում:** Նշվել է, որ Արարափի, Վայոց Ձորի և Տավուշի մարզերում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները պատվիրակվել են նման ծառայությունների փորձ ունեցող կազմակերպությունների (Արարափի մարզում՝ «Ձեզ համար» ԲՀԿ-ին, Վայոց Ձորի մարզում՝ «Մանկական զարգացման հիմնադրամին», Տավուշի մարզում՝ «Հույսի կամուրջ» ՀԿ-ին):

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ **«Հայաստանի Հանրապետության 3 մարզերում փարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններ չեն գործում, քանի որ այդ մարզերում հատուկ դպրոցներ չկան և այդ մարզերում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների ապահովման նպատակով նախարարությունը անցկացրել է դրամաշնորհային մրցույթներ, որոնց արդյունքում հաղթած կազմակերպությունների կողմից էլ իրականացվել են ՏՄԱԿ-ների գործողությունները՝ Տավուշի մարզում՝ «Հույսի կամուրջ» ՀԿ, Արարափի մարզում՝ «Ձեզ համար» ՀԿ, Վայոց ձորի մարզում՝ «Մանկական զարգացման հիմնադրամ»»:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տվյալների համաձայն՝ **2021 թվականին Հայաստանի Հանրապետության ամբողջ փարածքում մանկավարժահոգեբանական աջակցություն է ստացել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 8105 երեխա:** Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործընթացի մշտադիտարկման նպատակով Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից 2021 թվականի ընթացքում իրականացվել է 46 մշտադիտարկում՝ 71 հաստատությունում (47 հանրակրթական ուսումնական հաստատություն և 24 փարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն): Գնահատմանը հաջորդող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման վերաբերյալ իրականացվել է 32 մշտադիտարկում՝ 225 հանրակրթական ուսումնական հաստատություններում և փարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում:

Նշվել է, որ 2021 թվականի ընթացքում 482 ուսումնական հաստատությունում իրականացվել են մասնագետների ու աշխատակիցների վերապատրաստումներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց հետ առավել արդյունավետ աշխատելու նպատակով:

Նախքան Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի և փարաօքսյին մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից վերապատրաստման փարեկան պլանի մշակումն իրականացվում է կարիքների գնահատում, որի հիման վրա էլ կազմվում են վերապատրաստման թեմաները, բովանդակությունն ու ժամանակացույցը: **Կարիքների գնահատումը ցույց է տվել, որ առավել մեծ դժվարությունների մասնագետները հիմնականում հանդիպում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին բուն ուսումնական գործընթացում ակտիվ ներգրավելու հարցերում:**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը նաև հայտնել է, որ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության հետ համատեղ իրականացնում են «Ներառական կրթության համակարգի հզորացում Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում նախատեսված է առնվազն 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների վերանորոգում (ներառյալ՝ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, յուրաքանչյուր կենտրոնում ռեսուրս սենյակների վերանորոգում, կահույքի ու սարքավորումների փոխարինում), փոքրածավալ ենթակառուցվածքների հարմարեցում առավելագույնը 100 ընդունող հանրակրթական դպրոցներում (ներառյալ՝ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, յուրաքանչյուր դպրոցում մեկ ռեսուրս սենյակի վերանորոգում և սարքավորումների փոխարինում) և ծրագրի փարեկան աուդիտ:

**Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող մարմին, կարևորում է ընդհանրում ապրելու յուրաքանչյուր երեխայի իրավունքի իրացումն ապահովելու նպատակով երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք և դաստիարակություն ստացող երեխաներին ընդհանր վերադարձնելուն կամ դրա անհնարինության պարագայում այդ երեխաներին ընդհանրապես և համայնքապես այլընտրանքային խնամք փոխարինելուն ուղղված՝ ապահինստիտուցիոնալացման պետության քաղաքականությունը:**

Նկատի ունենալով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից ներկայացված պարզաբանումները, ինչպես նաև այն, որ դեռևս գործում են երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ՝ ապահինստիտուցիոնալացման քաղաքականության շրջանակներում այդ հաստատությունների վերակազմակերպման գործընթացը, ինչպես նաև տվյալ գործընթացում երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանությանը, հատկապես՝ ընտանիքում ապրելու նրանց իրավունքի պատշաճ իրացման ապահովմանը, վերաբերող հարցերը պետք է շարունակեն գտնվել Մարդու իրավունքների պաշտպանի առանձնահատուկ ուշադրության ներքո:

**Ապահինստիտուցիոնալացման քաղաքականության արդյունքում ընդհանր վերադարձած երեխաների իրավունքների պաշտպանությունը պետք է առաջնահերթություն լինի պետության համար: Պետության կողմից պետք է ձեռնարկվեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ընդհանր**

**վերադարձած երեխաների հիմնարար իրավունքների պաշտպան իրացումն ապահովելու նպատակով: Այս առումով ևս Մարդու իրավունքների պաշտպանի՝ հատուկ մանդատի շրջանակներում իրականացվող մշտադիտարկումը պետք է լինի շարունակական:**

Հաշվի առնելով վերոգրյալը, վերահաստատելով Պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով ներկայացված առաջարկները՝ անհրաժեշտ է՝

1. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում շարունակաբար իրականացնել ապահովագրությունները և քաղաքականության նպատակի, այդ գործընթացի էական սկզբունքների, ինչպես նաև ընդհանրապես ապրելու երեխայի իրավունքի կարևորության վերաբերյալ լայն իրազեկումներ,

2. կարիքների գնահատման հիման վրա անհատական մոտեցում ցուցաբերել և անհրաժեշտ աջակցություն (այդ թվում՝ ֆինանսական, բնաիրային, սոցիալ-հոգեբանական աջակցություն) տրամադրել ընդհանրապես վերադարձած երեխաներին, նրանց ընդհանրներին,

3. ձեռնարկել գործուն միջոցներ՝ ուղղված հաստատություններից ընդհանրապես վերադարձած երեխաների ծնողների (ծնողի) ծնողավարման հմտությունները զարգացնելուն, ինչպես նաև նրանց աշխատանքով ապահովելու նպատակով մասնագիտական հմտություններ սովորեցնելուն կամ ունեցած կարողությունները զարգացնելուն,

4. մշակել և ներդնել հաստատություններից ընդհանրապես վերադարձած երեխաների ընդհանրներին սոցիալական աջակցություն տրամադրելու նոր ծրագրեր՝ ապահովելով նաև գործնականում դրանց կենսագործումը,

5. Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում ընդլայնել այլընտրանքային ծառայությունները և պարբերաբար իրականացնել ոլորտի մասնագետների վերապատրաստումներ,

6. մշակել հաստատությունների վերակազմակերպման արդյունքում ընդհանրապես վերադարձած երեխաների խնամքի պայմանների, նրանց իրավունքների (այդ թվում՝ կրթություն ստանալու, անհրաժեշտ առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքների) պաշտպան իրացման նկատմամբ արդյունավետ վերահսկողության հստակ ընթացակարգեր,

7. ձեռնարկել կենսաբանական ընդհանրապես վերադառնալու հնարավորություն չունեցող երեխաների՝ ընդհանրապես ապրելու իրավունքի իրացումն ընդհանրապես և համայնքապետական այլընտրանքային խնամքի միջոցով (խնամակալություն, խնամապարտություն և որդեգրում) ապահովելուն ուղղված գործուն միջոցներ,

8. ավելացնել խնամապարտ ընդհանրապես վերադարձածների թիվը (հատկապես՝ մասնագիտացված), ինչպես նաև խնամապարտ ծնող դառնալու ցանկություն հայտնաբերելու և խնամապարտ ծնողների հետ պարբերաբար իրականացնել վերապատրաստումներ,

9. ձեռնարկել միջոցներ հաստատությունների վերակազմակերպումից հետո բոլոր երեխաների՝ համընդհանուր ներառական կրթություն ստանալու իրավունքի պաշտպան իրացումն

ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ գործնականում երեխաների համար կրթական, միջավայրային և ֆիզիկական մատչելի պայմաններ ապահովելու միջոցով:

## **10. Երեխաների որդեգրման գործընթացը և ոլորտի խնդիրները**

Երեխայի կարևորագույն իրավունքներից է ընտանիքում ապրելու իրավունքը: Պետությունը պետք է աշխատի այն ուղղությամբ, որպեսզի մանկատուն կամ այլ հաստատություն երեխայի տեղափոխվելը լինի երեխայի խնամքի կազմակերպման վերջին միջոցը: Թեև վիճակագրությունը ցույց է տալիս, որ տարեցտարի պակասում է մանկատներում ապրող երեխաների թիվը, սակայն դրան զուգահեռ առողջական խնդիրների պատճառով ավելանում է երեխաների թիվը մասնագիտացված հաստատություններում: Երեխան, որը ժամանակավորապես կամ մշտապես իր ընտանեկան միջավայրից զրկված է, կամ իր լավագույն շահերի տեսակետից այդպիսի միջավայրում մնալ չի կարողանում ունի հատուկ պաշտպանության և օգնության իրավունք<sup>987</sup>:

Լինում են դեպքեր, երբ կենսաբանական ընտանիքում ապրելը չի բխում երեխայի իրավունքներից և երեխայի լավագույն շահից: Նման իրավիճակում պետությունը պետք է այլընտրանքային խնամքի տարբերակներ ապահովի<sup>988</sup>: Այլընտրանքային խնամքի ձևերից են է օրինակ խնամատարությունը և որդեգրումը, որոնց վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում պետք է առաջնային ուշադրության արժանանան երեխայի լավագույն շահերը: Ընդ որում, խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի դաստիարակության հաջորդականության ապահովումը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն<sup>989</sup>: Որդեգրումն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման նախապատվելի ձևն է<sup>990</sup>:

ՀՀ արդարադատության նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում օտարերկրյա քաղաքացիների կողմից որդեգրվել է թվով 5 երեխա: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների՝ «Մանուկ» տեղեկատվական համակարգում առկա տեղեկության՝ 2021 թվականի ընթացքում որդեգրվել է ՀՀ քաղաքացի հանդիսացող 22 երեխա, որոնցից 5-ը՝ օտարերկրյա քաղաքացիների կողմից, 17-ը ՀՀ քաղաքացիների կողմից, նրանցից առողջական խնդիրներ են ունեցել 7-ը, հաշմանդամություն՝ 5-ը:

<sup>987</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա, հոդված 20:

<sup>988</sup> Հասանելի է [https://www.unicef.org/childfamily/index\\_24511.html](https://www.unicef.org/childfamily/index_24511.html) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>989</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդված 24:

<sup>990</sup> Տե՛ս ՀՀ ընտանեկան օրենսգիրք, հոդված 112:

Որդեգրման գործընթացի իրավական կարգավորումները սահմանված են «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով, ՀՀ ընտանեկան օրենսգրքով, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային կոնվենցիաներով:

Որդեգրման գործընթացում երեխան արդեն իսկ պետության ուշադրության ներքո է և պետք է բոլոր գործողությունները կատարվեն երեխայի նկատմամբ հատուկ վերաբերմունքի ցուցաբերմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նա զրկված է ծնողական խնամքից:

Հատկապես մեծ ջանքեր պետք է գործադրվեն օտարերկրյա որդեգրումների գործընթացում՝ պահպանելով միջազգային իրավունքով ճանաչված նրա հիմնական իրավունքների իրացումը: Որդեգրման գործընթացում առաջնային խնդիրն է երեխայի խնամքի կազմակերպումը ընտանիքում: Ուստի, պետությունը պետք է պատշաճ համագործակցի այլ պետությունների հետ օտարերկրյա որդեգրման բնագավառում՝ երեխաների առևանգումը և վաճառքը կանխելու և բացառելու համար: Օտարերկրյա որդեգրումը պետք է կատարվի՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահերը և նրա իրավունքները<sup>991</sup>:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն ողջունելով «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի թիվ 33 կոնվենցիայի վավերացումը մտահոգություն է հայտնել դրանց իրագործման թերությունների առնչությամբ<sup>992</sup>: Կոմիտեի կողմից նշվել է, որ որդեգրման գործընթացի մշտադիտարկումը և վերանայումը կենտրոնացված չէ և իրականացվում է մարզային մակարդակով՝ ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ստորաբաժանումների կողմից, մինչդեռ, որոշումները կայացվում են տեղական դատարանների կողմից, որդեգրող ծնողների ընտրության չափորոշիչները չափազանց ֆորմալ են և հիմնված են պոտենցիալ ծնողների նյութական վիճակի, այլ ոչ՝ ծնողավարման հմտությունների վրա, որդեգրման գործընթացին մասնակցող սուբյեկտների մասնավոր գաղտնիքի պաշտպանությունն օգտագործվում է որպես հիմք՝ որդեգրման գործընթացի մշտադիտարկման սահմանափակումներն արդարացնելու նպատակով: Կոմիտեի արձանագրմամբ՝ անհրաժեշտ է արդյունավետ մեխանիզմներ ստեղծել Հաագայի թիվ 33 կոնվենցիայի կատարումն ապահովելու ուղղությամբ: **Պետք է ստեղծվի որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված համակարգ, սահմանվի որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր:**

Հաագայի թիվ 33 կոնվենցիայի լավագույն փորձի ներդրման վերաբերյալ ուղեցույցով նշված է, որ որդեգրման գործընթացում խնդիրների բացահայտման և դրանց հետագա կանխարգելման և բացառման համար, որդեգրման վերաբերյալ հսկողություն իրականացնող կենտրոնական մարմինները կարող են նաև որդեգրման մասին անանուն ինֆորմացիա ստանալ ծնողներից: **Պետք**

<sup>991</sup> Տե՛ս «Երեխաների պաշտպանության և օտարերկրյա որդեգրման բնագավառում համագործակցության մասին» Հաագայի թիվ 33 կոնվենցիա:

<sup>992</sup> Հասանելի է <https://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

է ստեղծել որդեգրման գործընթացի վերանայման կենտրոնացված համակարգ, սահմանել որդեգրող ծնողների ընտրության հստակ չափորոշիչներ և ընթացակարգեր, որոնք հիմնված կլինեն ոչ միայն նրանց նյութական վիճակի, այլ նաև՝ այլ պայմանների վրա, որոնք երեխային հնարավորություն կընձեռեն՝ մեծանալ առողջ և ապահով միջավայրում՝ պատասխանատու ծնողների հետ, սահմանել կարգ՝ որդեգրող ծնողներին որդեգրումից առաջ վերապատրաստման և օժանդակության ծառայություններ մատուցելու մասին, և ստեղծել որդեգրման գործընթացի բոլոր քայլերի՝ անկախ մարմի կողմից մշտադիտարկման համակարգ:

Պետությունը որդեգրումից հետո պետք է տրամադրի ծառայությունների ամբողջություն, որոնց նպատակը երեխայի՝ իր համար նոր միջավայրում ինտեգրման ապահովումն է<sup>993</sup>:

Հարկ է արձանագրել, որ որդեգրման վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններին Պաշտպանն անդրադարձել է դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ: Այլ օրենսդրական կարգավորումների թվում նշվել էր, որ պետք է ամրագրվեն միջազգային որդեգրումների հետագա վերահսկողության արդյունավետ և հստակ մեխանիզմներ, և որպես նշվածի իրագործման միջոց պետք է փոփոխվի որդեգրման կարգը: Պետք է բարձրացվի որդեգրման գործընթացի արդյունավետությունը:

ՀՀ քննչական կոմիտեից ստացված տվյալների համաձայն՝ 2021 թվականին երեխաների ապօրինի որդեգրման (ներպետական) դեպքի առթիվ հարուցվել է 1 քրեական գործ: Նշված քրեական գործը հարուցվել է ՀՀ քրեական օրենսգրքի 168-րդ հոդվածի 1-ի մասով և 169.1-րդ հոդվածով: Քրեական հետապնդման է ենթարկվել 5 անձ: ՀՀ դատախազության տվյալների համաձայն՝ 2021 թվականին հարուցվել է 3 քրեական գործ ներպետական որդեգրման դեպքերի վերաբերյալ: Քրեական հետապնդում հարուցվել է 7 անձի նկատմամբ, որոնք ունեն մեղադրյալի/ամբաստանյալի դատավարական կարգավիճակ:

**ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշման N 2 հավելվածի համաձայն հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի** 81-րդ կետով նախատեսված է «Բարելավել երեխայի որդեգրման ընթացակարգը» միջոցառումներում: Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ այդ միջոցառման աշխատանքներն իրականացվել են մասամբ: Նշված միջոցառման կատարումը (ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունման առումով) կախված է «ՀՀ ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումից: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի, «Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ վարչապետի աշխատակազմ

<sup>993</sup> Հասանելի է <https://assets.hcch.net/docs/bb168262-1696-4e7f-acf3-fbbd85504af6.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

միջոցառման մասով կատարվել է ուսումնասիրություն երեխայի որդեգրման ընթացակարգի վերաբերյալ խնդիրների վերհանման նպատակով՝ ոլորտային կազմակերպությունների մասնակցությամբ կազմակերպվել են ավելի քան մեկ տասնյակ քննարկումներ, վերանայվել են երեխայի որդեգրման գործընթացի իրավական մեխանիզմները, որոնք պահանջում են օրենսդրական կարգավորումներ:

Ըստ նախարարության՝ մշակվել է «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Հաշվի առնելով այն, որ Նախագիծը մշակվել է երեխայի բոլոր իրավունքների իրացման համար նպաստավոր պայմանների ստեղծման տրամաբանությամբ՝ անհրաժեշտություն է առաջացել նաև «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ իրականացնելու մասին» և «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ իրականացնելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մշակման: Վերոնշյալ նախագծերը ևս մշակվել են և փաթեթն ամբողջությամբ 2021 թվականի հունիսին ներկայացվել է Միասնական սոցիալական ծառայություն՝ ուսումնասիրության և կարծիքի տրամադրման նպատակով: Նախագիծն աշխատանքային կարգով քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ հաշվի առնելով երեխայի այլընտրանքային խնամքի եղանակներից մեկի՝ որդեգրման գործընթացում Կենտրոնական մարմինն վերապահված գործառույթների հանգամանքը: Նախագիծը քննարկվել է ՀՀ վարչապետի 2019 թվականի N 1197-Ն որոշմամբ ստեղծված աշխատանքային խմբի՝ հունիսին գումարված հերթական նիստի ընթացքում: Նախագիծը շրջանառության մեջ է դրվել 2021 թվականի հուլիսին:

Այսպիսով, **որդեգրման գործընթացը բարելավող օրենսդրականի փոփոխությունների նախագծերի մշակումը դրական է, սակայն վերջիններս պետք է կատարվեն հնարավոր կարճ ժամկետներում՝** առանձնակի ուշադրություն պետք է դարձվի նաև օտարերկրյա որդեգրումների գործընթացին՝ հաշվի առնելով այլ երկրի քաղաքացիների կողմից որդեգրված ՀՀ քաղաքացի երեխաների հետագա կյանքի նկատմամբ վերահսկողության կառավարման դժվարությունները:

*Ուստի, անհրաժեշտ է՝ հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել ՀՀ-ում երեխայի որդեգրման ընթացակարգերի բարելավումը համապատասխան օրենսդրական հիմքերի ապահովման միջոցով:*

**11. Երեխայի լավագույն շահերի ապահովումը ՀՀ ԱՆ հարկադիր կադրումն ապահովող ծառայությունում հարուցված կադրորդական վարույթների ընթացքում**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին 2021 թվականին հասցեագրվել են գրավոր և բանավոր դիմումներ, բողոքներ՝ կապված ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում<sup>994</sup> հարուցված կատարողական վարույթների ընթացքում հարկադիր կատարողների կողմից երեխայի լավագույն շահերով չառաջնորդվելու, կատարողական թերթի պահանջների պատշաճ կատարումը չապահովվելու, հարկադիր կատարողի կողմից անգործություն ցուցաբերելու, փորձաքննություն նշանակելիս մշտապես միևնույն հոգեբանական կենտրոնի հետ աշխատելու և մի շարք այլ հարցերի հետ:

Հատկանշական է, որ վերոնշյալ խնդիրներն արձանագրվել են նաև նախորդ տարիներին: Դրանց հատուկ անդրադարձ է կատարված Մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով:

2021 թվականին Պաշտպանին հասցեագրված դիմումների ուսումնասիրության, բողոքների քննարկման արդյունքում արձանագրվել է, որ արդիական է մնացել երկարատև շփման բացակայության, ծնողի և (կամ) երեխայի հետ համատեղ բնակվող այլ մերձավոր ազգականի կողմից երեխայի նկատմամբ հոգեբանական ազդեցություն ունենալու, այդ թվում՝ հոգեբանական ճնշում գործադրելու հետևանքով երեխայի կողմից մյուս ծնողի և (կամ) այլ մերձավոր ազգականի հետ շփվել, նրան (նրանց) տեսակցել չցանկանալու համակարգային խնդիրը: Սրա հետ մեկտեղ արդիական է մնացել նաև նման դեպքերում հարկադիր կատարողի կողմից կատարողական թերթի պահանջների կատարումն ապահովվելուն ուղղված պատշաճ միջոցներ չձեռնարկելու հարցը:

Խնդիրը կայանում է նրանում, որ շարունակում են լայն տարածում գտնել այն դեպքերը, երբ ծնողներից մեկը և (կամ) երեխայի հետ համատեղ բնակվող այլ մերձավոր ազգականը կամայական կերպով արգելում է մյուս ծնողի և (կամ) այլ մերձավոր ազգականի շփումը երեխայի հետ և խոչընդոտում է տեսակցությունների կայացմանը: Այս խնդիրն արդեն տարիներ շարունակ համակարգային բնույթ ունի:

**Այս առումով առկա է իրավասու մարմնի կողմից խնդրի արագ և արդյունավետ լուծմանն ուղղված հստակ գործիքակազմ մշակելու և ներդնելու, ինչպես նաև գործնականում դրա կիրառումն ապահովելու անհրաժեշտություն՝ հիմքում դնելով յուրաքանչյուր իրավիճակում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու հրամայականը:**

**Նման իրավիճակում առանձնահատուկ կարևորություն ունի Ծառայության դերը կատարողական թերթի պահանջների պարզաճ կատարումն ապահովելու, ինչպես նաև այդ գործընթացում երեխայի լավագույն շահերն ապահովելու հարցում:**

**Ընդ որում, հարկադիր կատարողի կողմից այդ կապակցությամբ գործուն միջոցներ ձեռնարկելը պետք է դրսևորվի ոչ միայն փորձաքննություն նշանակելու, այլ նաև կատարողական գործողություններին, մասնավորապես՝ տեսակցությունների կայացման ապահովմանը, համապատասխան մասնագետներ (օրինակ՝ հոգեբան, մանկավարժ, սոցիալական աշխատող) ներգրավելու միջոցով:**

<sup>994</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Ծառայություն:



Կատարողական գործողություններին, ըստ անհրաժեշտության, համապատասխան մասնագետների ներգրավման կարևորությանը Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ և առավել մանրամասն անդրադարձ է կատարել դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ՝ միջազգային փորձի հիման վրա ներկայացնելով համապատասխան առաջարկներ:

ՀՀ արդարադատության նախարարության<sup>995</sup> տվյալների համաձայն՝ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում հարուցված կատարողական վարույթների շրջանակում Ծառայությունը թվով 43 գործով դիմել է Գլխավոր դատախազություն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով նախատեսված՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու հանցակազմի առերևույթ առկայության հիմքով: Նախարարությունից նաև հայտնել են, որ նշված տեղեկատվությունը ներկայացնելու օրվա դրությամբ Ծառայությունը ներկայացված հաղորդումների հիմքով քրեական գործ հարուցված լինելու վերաբերյալ ամբողջական տեղեկատվության չի փրկապետել:

Համեմատության համար հարկ է նշել, որ 2020 թվականի վերաբերյալ Նախարարության տրամադրած տվյալների համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով նախատեսված՝ ծնողի կամ այլ մերձավոր ազգականի և երեխայի միջև տեսակցության իրականացմանը խոչընդոտելու հանցակազմի հատկանիշների հնարավոր առկայությունը ստուգելու նպատակով 2020 թվականին Ծառայության կողմից ՀՀ գլխավոր դատախազություն էին ուղարկվել 18 կատարողական վարույթներով նյութեր՝ քրեաիրավական գնահատական տալու համար, որի հիման վրա հարուցվել էր 6 քրեական գործ:

Հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի շրջանակներում նշանակված փորձաքննություններին, ինչպես նաև դրանց արդյունքում տրված եզրակացությունների իրավաչափությանն առնչվող հարցերի վերաբերյալ 2021 թվականի ընթացքում Նախարարություն հասցեագրված բողոքների թվի, բնույթի, ինչպես նաև այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրմանն ի պատասխան՝ Նախարարությունից հայտնել են, որ տվյալ հարցի առնչությամբ ՀՀ արդարադատության նախարարությունը բողոքներ չի ստացել:

Երեխայի հետ ծնողի տեսակցություններին և երեխայի խնամքի կազմակերպմանը վերաբերող կատարողական վարույթների առնչությամբ 2021 թվականի ընթացքում ՀՀ արդարադատության նախարարություն ստացված բողոքների վերաբերյալ Նախարարությունից հայտնել են, որ Նախարարության վերահսկողական ծառայությունում ստացվել է թվով 7 բողոք՝ թիվ ԱՎԴ/0092/02/19, ԵԴ/23712/02/21, ԵԴ/9354/02/18, ԱՐԱԴ/3107/02/20, ԵԱԴԴ/2297/02/17, ԱՐԱԴ/2075/02/20 և ԱՐԴ/1476/02/17 կատարողական թերթերի հիման վրա հարուցված կատարողական վարույթներով՝ երեխաների տեսակցությունների առնչությամբ: Նախարարությունից նշել են, որ այդ բողոքների ներկայացման առիթ է հանդիսացել երեխաների հետ տեսակցությունների չկայանալը կամ կատարողական թերթերով սահմանված կարգին ոչ

<sup>995</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Նախարարություն:

համապատասխան կայանալը: Հայտնել են նաև, որ արդյունքում, հաշվի առնելով, որ տվյալ կատարողական վարույթներով պարտապանների գործողություններում կարող են պարունակվել ՀՀ քրեական օրենսգրքի 167.1-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներ՝ համապատասխան նյութեր են ուղարկվել ՀՀ գլխավոր դատախազություն՝ արձանագրված փաստերին քրեաիրավական գնահատական տալու համար:

Հարկադիր կատարողների կողմից երեխայի հետ ծնողի տեսակցություններին և երեխայի խնամքի կազմակերպմանն առնչվող կատարողական վարույթների կասեցման հիմքերի իրավաչափությանը, համապատասխան որոշման իրավական առումով հիմնավորվածությանը վերաբերող հարցերով 2021 թվականի ընթացքում Նախարարություն հասցեագրված բողոքների թվի, ինչպես նաև այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցների և արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրմանն ի պատասխան՝ Նախարարությունից հայտնել են, որ երեխաների տեսակցություններին և խնամքի կազմակերպմանն առնչվող կատարողական վարույթների կասեցման հիմքերի իրավաչափությանը վերաբերող բողոքներով Ծառայությունն առանձին վիճակագրություն չի վարում:

Նախարարությունից հայտնել են, որ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 09.06.2021թ. թիվ 33-Լ հանձնարարականով հաստատվել է երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցը<sup>996</sup>, որով սահմանվել են երեխայի տեսակցության վարույթը մի շարք հիմքերով կասեցնելու վերաբերյալ ուղենիշային կարգավորումներ, մասնավորապես, նախատեսվել է, որ կատարողական թերթը պարզաբանելու վերաբերյալ դիմում ներկայացնելու («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մաս), փորձագետ ներգրավելու («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մաս) հիմքերով կատարողական վարույթը կասեցնելու հայեցողական լիազորությունից հարկադիր կատարողը պետք է օգտվի միայն այնպիսի բացառիկ դեպքերում, երբ կատարողական վարույթի կոնկրետ հանգամանքների համատեքստում, երեխայի լավագույն շահով պայմանավորված, վարույթը կասեցնելը անհրաժեշտ է: Տեղեկացրել են, որ Ուղեցույցն ընդգծում է, որ նման դեպքերում կատարողական վարույթը կասեցնելիս հարկադիր կատարողը պարտավոր է որոշմամբ հիմնավորել կատարողական կոնկրետ վարույթի հանգամանքների համատեքստում վարույթը կասեցնելու անհրաժեշտությունը: Նշել են նաև, որ տվյալ հարցի առնչությամբ Նախարարությունը բողոքներ չի ստացել:

**Վերոգրյալի առումով նախ հարկ է արձանագրել, որ ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից հարկադիր կատարողների համար նախատեսված՝ երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցի մշակումը և**

<sup>996</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Ուղեցույց: Հասանելի է <https://cesa.am/shared-files/6347/%D5%8F%D5%A5%D5%BD%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%B5%D5%A9%D5%AB-%D5%B8%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

հրապարակումը ողջունելի է երեխաների մասնակցությամբ կատարողական վարույթներում երեխաների լավագույն շահերի առաջնահերթության ապահովման տեսանկյունից:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է Ուղեցույցի մշակման աշխատանքներն իրականացնելիս ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից Պաշտպանի աշխատակազմի հետ արդյունավետ համագործակցությունը, ինչպես նաև նշված մարմնի կողմից արված այն արձանագրումը, որ Ուղեցույցով նախատեսված կարգավորումների հիմքում դրվել են նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից վերջին տարիներին Ծառայությանն ուղղված գրություններով երեխայի տեսակցության վարույթների վերաբերյալ բարձրաձայնված մի շարք հարցեր և արձանագրված խնդիրներ:

Կարևոր է նաև ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության այն դիրքորոշումը, որ Ուղեցույցում տեղ գտած լուծումները հետագայում դրվելու են նաև կատարողական վարույթի մասին օրենսդրությամբ երեխայի տեսակցության վարույթի կանոնակարգման հիմքում, քանի որ որոշ հարցեր պահանջում են օրենսդրական կարգավորում:

Ուղեցույցի հաստատումից առաջ դրա նախագիծն ուղարկվել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ՝ կարծիքի, որի արդյունքում Պաշտպանի աշխատակազմի կողմից ներկայացվել են Ուղեցույցի նախագծով նախատեսված մի շարք կարգավորումների վերաբերյալ մանրամասն դիտարկումներ և առաջարկներ:

Դրական է, որ տվյալ դիտարկումների և առաջարկների հիման վրա մի շարք կարևոր փոփոխություններ են կատարվել Ուղեցույցում՝ նախքան դրա հաստատումն ու հրապարակումը: Այնուամենայնիվ, Ուղեցույցի նախագծով նախատեսված որոշ կարգավորումներ, որոնց վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը դիտարկումներ և առաջարկներ էր ներկայացրել, հաստատված և հրապարակված Ուղեցույցում մնացել են անփոփոխ և (կամ) դեռևս չեն ստացել օրենսդրական մակարդակով ամրագրում: Սույն հաղորդմամբ հարկ ենք համարում հակիրճ անդրադարձ կատարել դրանց:

Այսպես, Մարդու իրավունքների պաշտպանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանել փորձաքննություն նշանակելու հիմքով կատարողական վարույթը կասեցնելիս հարկադիր կատարողի կողմից դրա անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականություն՝ բացառելով հարկադիր կատարողի կողմից համապատասխան որոշման մեջ միայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետը վկայակոչելու միջոցով այդ հիմքով կատարողական վարույթը կասեցնելը (նշվածը նաև վերաբերում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով սահմանված՝ հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթը կասեցնելու հայեցողական լիազորություն նախատեսող մյուս հիմքերին):

Այս առումով հարկ է արձանագրել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված հիմքերով կատարողական վարույթը կասեցնելը

հարկադիր կատարողի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը: Հետևաբար՝ այդ հիմքերից որևէ մեկով կատարողական վարույթը կասեցնելիս հարկադիր կատարողի կողմից դրա անհրաժեշտությունը հիմնավորելու պարտականությունն օրենսդրական մակարդակում նախատեսելը հնարավորություն կտա ապահովել հարկադիր կատարողի կողմից յուրաքանչյուր գործին անհատական մոտեցում ցուցաբերելը և կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով՝ երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելը:

Նշվածը նաև հնարավորություն կտա բացառել հարկադիր կատարողի կողմից միայն համապատասխան հիմքը, օրինակ, փորձաքննություն նշանակելու հանգամանքը որոշման մեջ վկայակոչելով, առանց կատարողական վարույթի կասեցման անհրաժեշտությունը պատշաճ հիմնավորելու՝ գրեթե բոլոր դեպքերում կատարողական վարույթը կասեցնելու լայն տարածում գտած պրակտիկան:

Երեխայի կողմից իր հետ չբնակվող ծնողի և (կամ) այլ մերձավոր ազգականի հետ տեսակցել չցանկանալու հետևանքով՝ տեսակցությունների կայացումն ապահովելը հնարավոր չլինելու դեպքերում, կատարողական թերթի պահանջների կատարումը հարկադիր կատարողների կողմից ապահովելու ուղղությամբ 2021 թվականին ձեռնարկված միջոցների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունը տրամադրել է պարզաբանումներ:

Մասնավորապես, Նախարարությունը հայտնել է, որ «Ուղեցույցի 29-31-րդ կետով սահմանվել է, որ տեսակցության սահմանված օրը և ժամին հարկադիր կատարողի կողմից տեսակցության վայր այցելելու, սակայն երեխայի կողմից տեսակցությունից հրաժարվելու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է ձեռնարկել **հնարավոր բոլոր միջոցները**, որոնք երեխայի վրա առերևույթ հոգեբանական նոր ճնշում չեն առաջացնի՝ հավաստիանալու համար, որ տեսակցությունից հրաժարվելը երեխայի կամքն է, իսկ համոզվելուց հետո՝ արձանագրել տեսակցությունից երեխայի հրաժարվելը: Այդպիսի միջոցներից են, օրինակ, երեխայի հետ զրուցելը, երեխայի վարքին հետևելը, տեսակցությունից երեխայի հրաժարվելու վերաբերյալ մինչ տեսակցությունը սկսելը տեղեկություններ հայտնի լինելու դեպքում՝ տեսակցությանը հոգեբանին կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչին մասնակից դարձնելը: **Եթե երեխայի տարիքն ու զարգացման մակարդակը թույլ են տալիս արտահայտել իր մտքերն ու ցանկությունները**, հարկադիր կատարողը պարտավոր է տեսակցությունից երեխայի հրաժարվելու հանգամանքի մասին հավաստիանալու համար խոսել երեխայի հետ: Երեխայի կարծիքը լսելու օբյեկտիվ անհնարինության կամ երեխայի ոչ բավարար զարգացվածության կամ շարժվող տարիքի պատճառով մտքերն արտահայտելուն ունակ չլինելու դեպքում հարկադիր կատարողը տեսակցությունից երեխայի հրաժարվելու փաստում հավաստիանում է՝ հիմք ընդունելով կատարողական վարույթի կողմերի դիրքորոշումը՝ միաժամանակ կիրառելով նաև տեսակցությունից երեխայի հրաժարվելու փաստում հավաստիանալու համար օրենքով թույլատրելի

այլ միջոցներ (օրինակ՝ երեխայի վարքին հետևելը, տեսակցությունից երեխայի հրաժարվելու վերաբերյալ մինչ տեսակցությունը սկսելը տեղեկություններ հայտնի լինելու դեպքում՝ տեսակցությանը հոգեբանին կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչին մասնակից դարձնելը և այլն): Տեսակցելուց երեխայի հրաժարվելու հիմքով տեսակցությունը չկայանալու դեպքում հարկադիր կատարողը պարտավոր է սահմանված կարգով քայլեր ձեռնարկել կատարողական վարույթին փորձագետ ներգրավելու համար»:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ նշված՝ **«հնարավոր բոլոր միջոցները» արտահայտությունը վերացական և ոչ որոշակի բնույթ ունի, հետևաբար առկա է այն հստակեցնելու կարիք: Մասնավորապես, ներկայացված գործընթացին իրավական որոշակիություն հաղորդելու նպատակով անհրաժեշտ է հստակեցնել, թե հարկադիր կատարողն ի՞նչ միջոցներ է պարտավոր ձեռնարկել այդ նպատակով և ի՞նչ եղանակով, միաժամանակ, դրանք թվարկելով ոչ սպառիչ կերպով՝ նախատեսելով նաև այլ եղանակներով այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորություն՝ կոնկրետ գործի հանգամանքների հաշվառմամբ: Սա պետք է կարգավորվի օրենսդրական մակարդակում:**

Բացի այդ, ներկայացված՝ **«եթե երեխայի տարիքն ու զարգացման մակարդակը թույլ են տալիս արտահայտել իր մտքերն ու ցանկությունները, հարկադիր կատարողը պարտավոր է տեսակցությունից երեխայի հրաժարվելու հանգամանքի մասին հավաստիանալու համար խոսել երեխայի հետ»** մոտեցումը, որն իր ամրագրումն է ստացել Ուղեցույցում, ընդունելի չէ: Մասնավորապես, սվյալ կարգավորումը խնդրահարույց է և չի բխում ցանկացած իրավիճակում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու, երեխայի լաված լինելու իրավունքի իրացումն ապահովելու հրամայականից: **Անհրաժեշտ է ապահովել, որ երեխային վերաբերող ցանկացած հարցի կապակցությամբ ապահովվի վերջինիս լաված լինելու իրավունքի իրացումը՝ անկախ նրա տարիքից:**

Սա բխում է ինչպես ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից, մի շարք միջազգային փաստաթղթերով ամրագրված երաշխիքներից, այնպես էլ ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՌ-1333 որոշմամբ արտահայտած դիրքորոշումից, ըստ որի՝ **«ՀՀ Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում չպետք է փորձել երեխայի լավելու իրավունքը պայմանավորել տարիքային սահմանափակումով, ինչը (...) չի բխում Սահմանադրության 37-րդ հոդվածի պահանջներից: Վարույթն իրականացնող մարմինն է պարտավոր ապահովել երեխայի լավելու իրավունքի իրացումը՝ անկախ տարիքից, հաշվի առնել այն և առաջնահերթ կարգով երեխայի շահերից ելնելով որոշում կայացնել<sup>997</sup>»:**

<sup>997</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ՍԴՌ-1333 որոշումը, հասանելի է <https://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1333.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

*Երեխայի ոչ բավարար զարգացվածության, շափ փոքր տարիքի պատճառով մտքերն արտահայտելուն ունակ չլինելու դեպքում վերջինիս լսված լինելու իրավունքի իրացումը հնարավոր է ապահովել, օրինակ, համապատասխան մասնագետների ներգրավմամբ, այդ թվում՝ հոգեբանի կողմից նրա հետ համապատասխան աշխատանք տանելու միջոցով:*

Ուստի, համապատասխան կարգավորումներն անհրաժեշտ է ձևակերպել և ամրագրել այնպես, որ ցանկացած դեպքում բացառվի երեխայի լսված լինելու իրավունքի իրացումը հարկադիր կատարողի կողմից չապահովելը՝ դա պայմանավորելով երեխայի ոչ բավարար զարգացվածությամբ, շատ փոքր տարիքի պատճառով մտքերն արտահայտելուն ունակ չլինելով, ինչպես նաև նմանատիպ այլ հանգամանքներով: Նման դեպքերում, ինչպես արդեն նշվել է, երեխայի լսված լինելու իրավունքի իրացումը հարկադիր կատարողը պարտավոր է ապահովել այլ եղանակներով, այդ թվում՝ հոգեբանի պարտադիր ներգրավմամբ: Ընդ որում, սա ևս օրենսդրական կարգավորում պահանջող հարց է:

Կարևոր է անդրադառնալ նաև Ուղեցույցով նախատեսված մեկ այլ կարգավորման, որի համաձայն՝ «Ծառայության Տեսակցությունների տնակում կամ մարզային ստորաբաժանումներում առանձնացված այլ հատուկ տարածքում անցկացվող **տեսակցությունը տեսահսկվելու դեպքում** հարկադիր կատարողը պարտավոր է մինչ տեսակցությունն սկսելն այդ մասին նախազգուշացնել տեսակցությանը ներկա գտնվող անձանց»:

Այս առումով հարկ է նշել, որ **նման պարագայում հնարավոր են դեպքեր, երբ անձը հրաժարվի տեսահսկմամբ տեսակցությունների կայացումից՝ իրացնելով մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը:**

ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից մշակված տեսահսկման ուղեցույցով<sup>998</sup> նշվում են տեսահսկման համակարգի տեղադրման և օգտագործման սկզբունքները:

Նշված ուղեցույցի համաձայն՝ «*տեսահսկումը տարածությունը և վարքագիծը մշտադիտարկելու/վերահսկելու միջոցներից մեկն է, բայց ոչ միակը: Քանի որ տեսահսկումը միջամտություն է անձնական կյանքին, տվյալներ մշակողը պետք է իրապես գնահատի սպառնալիքը և հիմնավորի նման համակարգի օգտագործման անհրաժեշտությունը: Մասնավորապես, պետք է գնահատել հետևյալը՝*

- *տվյալներ մշակելու իրական անհրաժեշտությունը և նպատակը,*
- *համակարգի ազդեցությունը անձի մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ,*
- *այլ միջոցներով նպատակին հասնելու հնարավորությունները:*

*Տեսահսկման համակարգը պետք է տեղադրվի և շահագործվի **օրինականության, համաչափության, թափանցիկության և անվտանգության** սկզբունքների պահպանմամբ»:*

<sup>998</sup> Հասանելի է [https://www.moj.am/storage/uploads/002Video\\_surveillance\\_guide.pdf](https://www.moj.am/storage/uploads/002Video_surveillance_guide.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Տեսահսկման ուղեցույցով նաև սահմանված է, որ «*տեսահսկման համակարգերը պետք է համապատասխանեն հետապնդվող նպատակին և բխեն համաչափության սկզբունքից: Այս առումով տեսահսկողը պետք է հաշվի առնի հետևյալը՝*

**Տեսախցիկների քանակը, դրանց գտնվելու վայրը և կերայնությունը (resolution) պետք է համապատասխանեն տեսահսկման նպատակին, կազմակերպության գործունեության առանձնահատկություններին, տարածքի ընդհանուր մակերեսին, սենյակի կառուցվածքին և այլն:** Տեսահսկման համակարգը պետք է տեղադրվի այնպես, որ հնարավորինս քիչ տարածք վերահսկելով հնարավոր լինի հասնել հետապնդվող նպատակին: Եթե նպատակին կարելի է հասնել ավելի ցածր կերայնությամբ տեսախցիկների օգնությամբ, ապա պետք է օգտագործել դրանք՝ խուսափելով ավելորդ անձնական տվյալներ մշակելուց:

Տեսանկարներից պետք է պարզ լինի տեսահսկման ժամը, ամսաթիվը, և վայրը:

**Ուղիղ, իրական ժամանակում/ռեժիմում տվյալների փոխանցմամբ** աշխատող տեսահսկումը կարող են իրականացնել միայն հատուկ թույլատրվություն ունեցող անձինք (օրինակ, անվտանգության աշխատակիցները): Այս ռեժիմում աշխատող տեսահսկման համակարգի էկրանները պետք է այնպես շրջված լինեն, որ միայն թույլատրված/լիազորված անձը կարողանա տեսնել տեսապատկերները»:

**Ուստի, հաշվի առնելով կատարողական վարույթներին մասնակցող անձանց, և հատկապես՝ երեխաների մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կարևորությունը, ինչպես նաև տեսահսկման դեպքում հատուկ կանոնների պահպանման անհրաժեշտությունը, հարկ է դիտարկել օրենսդրական մակարդակում Ծառայության Տեսակցությունների տնակում կամ մարզային ստորաբաժանումներում առանձնացված այլ հատուկ տարածքում անցկացվող տեսակցության տեսահսկման վերաբերյալ հստակ կարգավորումներ սահմանելու հարցը:**

Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցով նաև ամրագրվել է, որ «*երեխայի հոգեբանական աշխարհը շատ զգայուն է, և հնարավոր են բազմաթիվ դեպքեր, որ տեսակցության վարույթում երեխայի ագրեսիվ պահվածքի կամ տեսակցությունից հրաժարվելու պատճառը կամ պատճառներից մեկը լինի նաև համազգեստ կրող հարկադիր կատարողից վախը: Ուստի այն դեպքում, երբ առկա են բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ տեսակցությանը համազգեստ կրող հարկադիր կատարողի մասնակցությունը կարող է երեխայի մոտ վախ կամ հոգեբանական այլ խնդիրներ առաջացնել, կատարողական վարույթն իրականացնող հարկադիր կատարողն իր անմիջական ղեկավարի թույլտվությամբ տեսակցությանը կարող է ներկայանալ առանց համազգեստի»:*

Վերոգրյալի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը դիրքորոշում է հայտնել առ այն, որ **նման կարգավորման նախատեսումը ողջունելի է, սակայն, ցանկացած իրավիճակում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու և երեխայակենտրոն մոտեցում ցուցաբերելու հրամայականից ելնելով, առավել նպատակահարմար է, որ երեխաների մասնակցությամբ կամ**

**ներգրավմամբ կատարողական վարույթների շրջանակներում իրականացվող բոլոր կատարողական գործողություններին հարկադիր կատարողը ներկայանա առանց համազգեստի:**

**Նշվածը, որպես կանխարգելիչ միջոց, ունի երեխայի մոտ վախի, տագնապի, հոգեբանական խնդիրների առաջացման, ինչպես նաև դրա հետևանքով վերջինիս կողմից ագրեսիվ վարքագծի դրսևորման հնարավորությունն ի սկզբանե բացառելու, երեխայի լավագույն շահերին առաջնահերթություն տալու նպատակ:** Այդ մասին է վկայում նաև միջազգային փորձը:

**Ինչ վերաբերում է նման դեպքերում հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթի կողմերին պատշաճ ներկայանալու անհրաժեշտությանը, ապա դա կարող է իրականացվել այլ եղանակով, այդ թվում՝ ծառայողական վկայական ներկայացնելու միջոցով:**

Մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրացրել է երեխաների իրավունքներին առնչվող կատարողական վարույթներով հարկադիր կատարողների վերապատրաստումներ իրականացնելու անհրաժեշտությունը՝ ընդգծելով դրա առանձնահատուկ կարևորությունը հարկադիր կատարողների կողմից կատարողական վարույթի շրջանակներում յուրաքանչյուր իրավիճակում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու հարցում: Ավելին, Պաշտպանը հատուկ արձանագրել է նման վերապատրաստումները պարբերաբար և համապատասխան հարկադիր կատարողների պարտադիր մասնակցությամբ կազմակերպելու անհրաժեշտությունը:

Այս առումով ուշագրավ է այն հանգամանքը, որ Նախարարությունից դեռևս 2020 թվականի վերաբերյալ տրամադրած տեղեկատվությամբ հայտնել էին, որ Ծառայության աշխատակիցների համար 2020 թվականին նման վերապատրաստում չի կազմակերպվել:

Ծառայության հարկադիր կատարողների կողմից կատարողական գործողություններ իրականացնելիս երեխաների լավագույն շահերով առաջնորդվելու, երեխաների տեսակցությանը և խնամքի կազմակերպմանն առնչվող կատարողական վարույթների շրջանակներում կատարողական թերթի պահանջների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով հարկադիր կատարողների շրջանում 2021 թվականի ընթացքում վերապատրաստումներ իրականացնելու, ինչպես նաև այդ դեպքում՝ իրականացված վերապատրաստումների քանակի, բնույթի, դրանց մասնակցած հարկադիր կատարողների թվի և արձանագրված արդյունքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնել են, որ ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 30.06.2021թ. թիվ 38 հանձնարարականի հիման վրա Ծառայությունում 2021 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ՝ «Հարկադիր կատարողի կողմից գույքագրում իրականացնելու և երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման» թեմաներով՝ հաշվի առնելով ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի 15.12.2020թ. թիվ 1028-Լ և 09.06.2021թ. թիվ 33-Լ հանձնարարականներով հաստատված՝ հարկադիր



կատարողի կողմից գույքագրում իրականացնելու և երեխայի տեսակցության վարույթի իրականացման վերաբերյալ ուղեցույցների կարգավորումները:

Նշվել է, որ վերապատրաստման դասընթացներին մասնակցել են Ծառայության Երևան քաղաքի ու մարզային բաժինների հարկադիր կատարողները՝ 305 հարկադիր կատարող: Վերապատրաստման դասընթացների ընթացքում հարկադիր կատարողներին պարզաբանվել են Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի ուղեցույցի կարգավորումները, դրանց սահմանման նպատակները, տեսակցության վարույթով առկա խնդիրները և դրանց լուծման ուղիները: Վերապատրաստման դասընթացների ընթացքում քննարկվել են նաև հարկադիր կատարողների կողմից իրականացվող, երեխայի տեսակցության վերաբերյալ առանձին կատարողական վարույթներով առկա խնդիրները: Վերապատրաստման դասընթացներն ակնհայտորեն նպաստել են Ուղեցույցի կարգավորումների համարժեք ընկալմանը, երեխայի տեսակցության վարույթով միատեսակ պրակտիկայի ձևավորմանը և երեխայի լավագույն շահի պաշտպանության ապահովմանը:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից նաև ներկայացվել է Երեխայի իրավունքների պաշտպանության 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված միջոցառումների հաշվետվություն, որի 21-րդ կետով նախատեսված է «Անչափահասների (երեխաների) հետ աշխատող քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների վերապատրաստումների իրականացում» միջոցառումը, իսկ որպես տվյալ միջոցառման վերստուգելի չափանիշ՝ քրեակատարողական և հարկադիր կատարումն ապահովող ծառայողների համար **ամենամյա պարտադիր վերապատրաստումների շրջանակներում** անչափահասների (երեխաների) լաված լինելու և անձնական տվյալների պաշտպանության իրավունքների իրացման, ինչպես նաև երեխաների լավագույն շահի ապահովմանն ուղղված համապատասխան դասընթացների (ըստ անհրաժեշտ դասաժամերի) կազմակերպումը:

Վերոնշյալ հաշվետվության համաձայն՝ որպես տվյալ միջոցառման կապակցությամբ գրանցված արդյունք, Նախարարության կողմից արձանագրվել է, որ **2021 թվականի ընթացքում իրականացվել են քրեակատարողական ծառայողների համար նախատեսված ամենամյա պարտադիր վերապատրաստումներ, որոնց մասնակցել է 550 քրեակատարողական ծառայող: Միևնույն ժամանակ, հաշվետվությամբ առկա չէ որևէ տեղեկատվություն 2021 թվականի ընթացքում հարկադիր կատարումն ապահովող ծառայողների համար ամենամյա պարտադիր վերապատրաստումներ իրականացնելու վերաբերյալ:**

Ինչ վերաբերում է «Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման» ուղեցույցի ընդունումից հետո դրա վերաբերյալ հարկադիր կատարողների շրջանում իրազեկման միջոցառումներ իրականացնելուն, ապա այդ կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից կրկին մեջբերել են վերոնշյալ՝ *Ծառայությունում 2021 թվականի հուլիս և օգոստոս ամիսներին կազմակերպված վերապատրաստման դասընթացները*: Նշվել է նաև, որ «Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման

ուղեցույցը ծանոթացվել է Ծառայության ողջ անձնակազմին, այն հասանելի է նաև Ծառայության պաշտոնական կայքում»:

Միաժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանի այն հարցադրմանն ի պատասխան, թե արդյոք Ուղեցույցի ընդունումից հետո արձանագրվել է հարկադիր կատարողների գործունեության բարելավում և եթե այո, ապա ի՞նչ բնույթի՝ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնել են, որ *Ուղեցույցի ընդունումից հետո հարկադիր կատարողների գործունեության էական բարելավում է գրանցվել: Նշվել է, որ երեխայի տեսակցության վարույթներով ծագող մի շարք խնդրահարույց հարցեր, որոնք նախկինում հարկադիր կատարողների կողմից բարձրաձայնվում, վերադասության կարգով քննարկվում էին, կարգավորվել են, քանի որ հարկադիր կատարողի համար առկա են ուղենիշային կարգավորումներ: Հայտնել են նաև, որ բացի դրանից, ինչպես հավաստում են նաև հարկադիր կատարողների շրջանում կատարված հարցումները, Ուղեցույցի ընդունումից հետո հարկադիր կատարողի համար կանխատեսելի են դարձել տեսակցության վարույթի շրջանակում հավանական գրեթե բոլոր զարգացումները և հարկադիր կատարողի գործողությունների հաջորդականությունը:*

Նախարարությունից տեղեկացրել են, որ *հաշվի առնելով այն, որ Ուղեցույցը հասանելի է նաև Ծառայության պաշտոնական կայքում՝ Ուղեցույցին ծանոթանում են նաև կատարողական վարույթի կողմերը, նրանց ներկայացուցիչները, որն իր հերթին էականորեն նվազեցնում է վարույթի ընթացքում հարկադիր կատարողի հետ կոնֆլիկտի ռիսկը և կանխատեսելիություն ու իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածություն է ապահովում նաև կատարողական վարույթի կողմերի համար:*

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից բարձրացվել է նաև այն հարցը, թե ի՞նչ չափանիշներով է առաջնորդվում հարկադիր կատարողը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով (հարկադիր կատարողն ավարտում է կատարողական վարույթը, եթե ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում անհնարին է դարձել դատական ակտի կատարումը) նախատեսված հիմքով կատարողական վարույթն ավարտելու մասին որոշում կայացնելիս՝ «անհնարին է դարձել» եզրույթը մեկնաբանելիս միասնական մոտեցում ապահովելու նպատակով:

Նշված հարցի վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարությունից հայտնել են, որ *երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթը «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ավարտվում է միայն այնպիսի դեպքերում, երբ տեսակցության կատարողական վարույթով տեսակցություն իրականացնելն անհնարին է օբյեկտիվ բնույթ ունեցող, հարկադիր կատարողի իրավասությունից դուրս այնպիսի հանգամանքից ելնելով, որի հաղթահարումը չի ենթադրում որևէ կոնկրետ գործողության կատարում, և որի վերանայլը չի կարող ենթադրվել կամ կանխատեսվել:*

Նախարարությունից տեղեկացրել են, որ *Ուղեցույցով սահմանվել է ուղենիշային դրույթ այն մասին, որ սահմանված կարգով նշանակված փորձագետի եզրակացությամբ պահանջարկի հետ շփումը երեխայի վրա բացասաբար անդրադառնալու հանգամանքը հստակ հաստատվելու դեպքում հարկադիր կատարողը տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթը ավարտում է՝ ոչ գույքային բնույթի կատարողական վարույթներով կատարողական գործողությունների ընթացքում դատական ակտի կատարումն անհնարին լինելու հիմքով («Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 41 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ):*

Նախարարությունից նաև հայտնել են, որ *սահմանված կարգով նշանակված փորձագետի եզրակացությամբ տեսակցության վարույթով պարտապանի կողմից երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշում կամ ազդեցություն գործադրվելու հանգամանքը ժխտվելու դեպքում, եթե հաստատված է երեխայի կողմից իր կամքով պահանջարկի հետ տեսակցելուց հրաժարվելու հանգամանքը, հարկադիր կատարողը պարտավոր է ձեռնարկել երեխայի լավագույն շահից բխող բոլոր անհրաժեշտ միջոցները՝ տեսակցության կատարումն ապահովելու համար: Այս կետով նախատեսված միջոցները ձեռնարկելու դեպքում, եթե ակնհայտ է, որ տեսակցությունների հետագա իրականացումը չի բխում երեխայի լավագույն շահից, հարկադիր կատարողը պարտավոր է վերադասին ներկայացնել կատարողական վարույթը դատական ակտի կատարումն անհնարին լինելու հիմքով ավարտելու վերաբերյալ զեկուցագիր:*

Երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացման ուղեցույցով նախատեսված՝ վերոնշյալ պարբերության կապակցությամբ հարկ է նշել, որ **«բոլոր անհրաժեշտ միջոցները» ձևակերպումը վերացական բնույթ ունի, զուրկ է իրավական որոշակիությունից, հետևաբար՝ հնարավորինս հստակեցման կարիք ունի: Միաժամանակ, փվյալ ձևակերպումը հնարավորինս հստակեցնելուն զուգահեռ անհրաժեշտ է նախատեսել կոնկրետ գործի հանգամանքներից ելնելով այն նաև առավել լայն մեկնաբանելու հնարավորություն: Նման կարգավորումն, իհարկե, առավել արդյունավետ կլինի, եթե նախատեսվի օրենսդրական մակարդակում և ունենա բավարար չափով որոշակիություն:**

Նախարարության կողմից նաև նշվել է, որ *«այնուամենայնիվ, նույնիսկ կատարողական վարույթը նշված դեպքերում ավարտելուց հետո, հարկադիր կատարողը պարտավոր է ձեռնարկել օրենքով թույլատրելի բոլոր միջոցները՝ ապահովելու համար երեխայի լավագույն շահի պաշտպանությունը, երեխայի հետ հոգեբանական աշխատանք կատարելը՝ միջոցներ ձեռնարկելով, օրինակ, խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչներին կատարողական վարույթով մշտադիտարկում իրականացնելու նպատակով ներգրավելու ուղղությամբ»:*

**Այս առումով հարկ է նշել, որ վերոգրյալը, միանշանակ, ողջունելի մոտեցում է, սակայն դրանից առնվազն պարզ չէ, թե կատարողական վարույթը ներկայացված դեպքերում ավարտելուց հետո, կատարողական վարույթի ավարտված լինելու պարագայում, հարկադիր կատարողն ի՞նչ իրավական հիմքով է պարտավոր ձեռնարկել վերոնշյալ միջոցները:**

**Ավելին, նշվածն ուշագրավ է այն հանգամանքի հաշվառմամբ, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները և դիմումները վկայում են այն մասին, որ հարկադիր կադրավորումներն իրենց կողմից որոշակի գործողություններ չկատարելը քաղաքացիներին հաճախ պատճառաբանում են հենց այն հանգամանքով, որ կադրավորողական վարույթն ավարտվել է կամ, օրինակ, կարճվել, հետևաբար իրենք իրավասու չեն որևէ գործողություն կատարել:**

**Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումը վկայում է, որ գործնականում հարկադիր կադրավորողի կողմից հիմնականում նման մոտեցում չի ցուցաբերվում անգամ հարուցված կադրավորողական վարույթի շրջանակներում, հետևաբար հարկադիր կադրավորողի կողմից կադրավորողական վարույթն ավարտելուց հետո նման մոտեցում ցուցաբերելը գործնականում գրեթե անհնար է:**

Հաշվի առնելով վերոգրյալը, վերահաստատելով Պաշտպանի 2019 և 2020 թվականի տարեկան հաղորդումներով ներկայացված առաջարկները, անհրաժեշտ է՝

1. պարբերաբար կազմակերպել հարկադիր կադրավորումների պարտադիր վերապատրաստումներ՝ երեխաների իրավունքներին առնչվող կադրավորողական վարույթների շրջանակներում կադրավորողական գործողություններ իրականացնելիս երեխաների լավագույն շահերով առաջնորդվելու և յուրաքանչյուր իրավիճակում երեխայակենտրոն մոտեցում ցուցաբերելու նպատակով:

2. մշակել և ներդնել երեխայի հետ համատեղ բնակվող ծնողի և (կամ) այլ մերձավոր ազգականի կողմից մյուս ծնողի և (կամ) այլ մերձավոր ազգականի հետ երեխայի շփումն արգելելու, տեսակցությունների կայացմանը խոչընդոտելու, ներառյալ՝ այդ նպատակով երեխայի նկատմամբ հոգեբանական ճնշում գործադրելու դեպքերում իրավասու մարմնի կողմից խնդրի արագ և արդյունավետ կարգավորմանն ուղղված հստակ գործիքակազմ՝ հիմքում դնելով յուրաքանչյուր իրավիճակում երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու հրամայականը:

3. ձեռնարկել միջոցներ գործնականում վերոնշյալ գործիքակազմի կիրառումն ապահովելու ուղղությամբ:

4. երեխաների իրավունքներին առնչվող կադրավորողական վարույթների շրջանակներում սերտ համագործակցել հոգեբանների, մանկավարժների և սոցիալական աշխատողների հետ՝ ըստ անհրաժեշտության նրանց ներգրավելով նաև կոնկրետ կադրավորողական գործողությունների կատարմանը, այդ թվում՝ տեսակցությունների կայացման ապահովմանը:

5. ապահովել Ուղեցույցով նախատեսված մի շարք հիմնարար կարգավորումների՝ օրենսդրական մակարդակով ամրագրումը:

6. երեխային վերաբերող ցանկացած հարցի կապակցությամբ ապահովել վերջինիս լաված լինելու իրավունքի իրացումը՝ անկախ նրա տարիքից: Բացառել հարկադիր կադրավորողի կողմից երեխայի լաված լինելու իրավունքի իրացումը չապահովելը՝ դա պայմանավորելով երեխայի ոչ

բավարար զարգացվածությամբ, շափ փոքր փարիքի պատճառով մտքերն արտահայտելուն ունակ չլինելով և նմանափայ այլ հանգամանքներով.

7. երեխայի լաված լինելու իրավունքի իրացումն ապահովել այդ գործընթացում համապատասխան մասնագետների ներգրավմամբ, ներառյալ՝ հոգեբանի կողմից երեխայի հետ մասնագիտական աշխատանք փանելու միջոցով.

8. երեխայի տեսակցության վերաբերյալ կատարողական վարույթի իրականացմանը վերաբերող կարգավորումների հիմքում դնել առավել հստակ, իրավական առումով որոշակի և երեխայակենտրոն մոտեցումներ.

9. միջոցներ ձեռնարկել համապատասխան կարգավորումների վերաբերյալ հարկադիր կատարողներին պատշաճ իրազեկելու, ինչպես նաև նրանց կողմից գործնականում դրանցով առաջնորդվելն ապահովելու ուղղությամբ:

**12. Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների, շրջանավարտների և շրջանավարտ չհամարվող նախկին սաների հիմնախնդիրները՝ ինքնուրույն կյանք վարելու, հասարակությունում լիարժեք ներգրավվելու, բնակարանային ապահովման համարեքստում**

Երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների, այդ հաստատությունների շրջանավարտների և շրջանավարտ չհամարվող նախկին սաների իրավունքների իրացմանը վերաբերող՝ ինքնուրույն կյանք վարելու, հասարակությունում լիարժեք ներգրավվելու և բնակարանային ապահովման հետ կապված հիմնահարցերն արդիական են մնացել նաև 2021 թվականին:

Նշված հիմնահարցերին Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ անդրադարձել է ինչպես իրականացված մշտադիտարկման և հասցեագրված բողոքների հիման վրա իրավասու մարմինների հետ տարբեր ձևաչափերով տեղի ունեցած քննարկումների ընթացքում, այնպես էլ՝ առանձին հրապարակումներով, այդ թվում՝ հայտարարություններով: Հիմնարար բնույթի, համակարգային խնդիրներին Պաշտպանը հատուկ անդրադարձ է կատարել նաև նախորդ տարիներին հրապարակված տարեկան հաղորդումներով<sup>999</sup>:

<sup>999</sup> Առավել մանրամասն տե՛ս, օրինակ, 2018 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 644-647, հասանելի է <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ: Տե՛ս նաև 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջեր 1282-1289, հասանելի է <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից 2021 թվականի վերաբերյալ տրամադրված տվյալների համաձայն՝ **«Խարբերդի հարուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում դեռևս շարունակվում է 18 փարեկանը լրացած 164 շահառուի խնամք, որոնցից 79-ը կին է, 85-ը՝ փղամարդ, բոլորն ունեն հաշմանդամություն, 90-ը ճանաչվել են անգործունակ: «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում խնամվում են 18 փարեկանը լրացած 29 շահառու, որոնցից 8-ը կին են, 21-ը՝ փղամարդ, բոլոր շահառուներն ունեն հաշմանդամություն»:**

Համեմատության համար հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խարբերդի մասնագիտացված մանկատանը խնամվել է 145 չափահաս անձ, իսկ Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 23 չափահաս անձ: Նշված հաստատություններում խնամվող բոլոր չափահաս անձինք ունեցել են հաշմանդամություն:

Ավելին, 2019 թվականի տվյալներով՝ Խարբերդի մասնագիտացված մանկատանը խնամվել է 132 չափահաս անձ, Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 19 չափահաս անձ, իսկ 2018 թվականի տվյալներով՝ Խարբերդի մասնագիտացված մանկատանը խնամվել է 124 չափահաս անձ, Մարի Իզմիրյանի անվան մանկատանը՝ 12 չափահաս անձ:

Այսինքն, 2020 թվականի, ինչպես նաև նախորդ տարիների համեմատությամբ, 2021 թվականին նշված հաստատություններում խնամք ստացող չափահաս անձանց թիվն ավելացել է, որը հաստատում է այն հանգամանքը, որ տվյալ համակարգային խնդիրը քրոնիկ բնույթ ունի և տարիներ շարունակ լուծում չի ստանում:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից տրամադրել են «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տեղեկությունները, համաձայն որի՝ **Կապանի թիվ 3 հարուկ կրթահամալիրում ուսումն ավարտելուց հետո ննջարանային մասնաշենքում բնակվում են հաշմանդամություն ունեցող, այլ բնակության վայր չունեցող 7 չափահաս անձ (փրամադրվել են նաև այդ անձանց անձնական տվյալները):**

Ավելին, «Կապանի թիվ 3 հարուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ից հայտնել են, որ ներկայացված 7 չափահաս անձինք 1999 թվականից են հաշվառվել և բնակվում կրթահամալիրի ննջարանային մասնաշենքում՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Սպանդարյան փողոց, շենք 4Ա/ **հասցեում:** Նշվել է նաև, որ այդ չափահաս անձանց և կրթահամալիրում սովորող՝ ննջարանային մասնաշենքում ժամանակավոր գիշերող սաների մուտքը ննջարանային մասնաշենք տարբեր է:

Ուշագրավ է, որ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ «Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում 18 տարին լրացած անձանց խնամք ստանալու, ինչպես նաև այդ պարագայում նրանց թվի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի հարցադրմանն ի պատասխան՝ Կապանի թիվ 3 հատուկ կրթահամալիրից հայտնել էին, որ 2020 թվականի փետրվար ամսին հաստատությունում նախկինում բնակվող 8 չափահաս անձինք տեղավորվել են «Ջերմիկ անկյուն» հիմնադրամի ՀՀ

*Արարատի մարզի Գեղանիստ համայնքում գտնվող խմբային տանը և 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաստատությունում չի բնակվել որևէ չափահաս անձ:*

Տվյալ պարագայում պարզ չէ, թե ինչու՞ վերոնշյալ 7 չափահաս անձանց վերաբերյալ որևէ տեղեկատվություն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին նախկինում չի տրամադրել: Նման մոտեցումն անթույլատրելի է:

Այս փաստը հերթական հաստատումն է այն բանի, որ տվյալ խնդիրն արդեն վաղուց քրոնիկ բնույթ ունի, իսկ իրավասու մարմնի կողմից տարիներ շարունակ այդպես էլ չի ձեռնարկվում անհրաժեշտ միջոցներ՝ 18 տարին լրացած տվյալ անձանց հիմնարար իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու ուղղությամբ: Այս խնդրի հրատապ և գործուն միջոցներով կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ այդ բոլոր չափահաս անձինք ունեն հաշմանդամություն:

Ընդ որում, չնայած հաստատությունների դերի կարևորությանը, այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե, ասենք, Կապանի նշված կրթահամալիրի անհատական պատասխանատվությանը, այլ պետական մակարդակով իրականացվող քաղաքականությանը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից տրամադրել են նաև «Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի տեղեկությունները, համաձայն որի՝ **«Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում բնակվում են ուսուցումն ավարտած, այլ բնակության վայր չունեցող 11 անձինք:**

«Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ից նաև հայտնել են, որ «ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մասնագետների կողմից իրականացված՝ կրթահամալիրն ավարտած՝ երկկողմանի ծնողազուրկ, այլ բնակության վայր չունեցող թվով 11 սաների կարիքների բազմակողմանի գնահատման և ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչների հետ քննարկման արդյունքում նպատակահարմար է համարվել ներքոհիշյալ նշված սաներին Փոքր տուն տեղավորելու տարբերակը, սակայն ինչ-ինչ պատճառներով այս հարցը մինչև հիմա չի լուծվել և կրթահամալիրի կանխատեսված տնտեսումների հաշվին երեխաները սնվում, բնակվում են կրթահամալիրում մինչև նրանց տեղավորման հարցը կարգավորելը»:

Այս առումով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախկինում «Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ից տեղեկացրել էին, որ 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կրթահամալիրում բնակվել է 24 չափահաս անձ՝ 15 տղա և 9 աղջիկ, որոնք բոլորն էլ ունեն հաշմանդամություն:

**Վերոգրյալի հաշվառմամբ՝ առկա չէ որևէ տեղեկություն այն մասին, թե ներկայում որտե՞ղ և ի՞նչ եղանակով է կազմակերպվում մյուս 13 չափահաս, հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը:**

**Բացի այդ, խիստ քննադատելի և առնվազն անհասկանալի է, թե ինչու է «Հանրապետական N 2 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին տրամադրել անորոշ ձևակերպումներով տեղեկություններ, որից հետևում է, թե կրթահամալիրն ավարտած՝ երկկողմանի ծնողազուրկ, այլ բնակության վայր չունեցող 11 սաներին «Փոքր տանը» տեղավորելու հարցն «ինչ-ինչ պատճառներով» մինչ օրս լուծում չի ստացել:**

**Այս վիճակը վկայում է նման կարևոր հարցի նկատմամբ մակերեսային, ոչ պրոֆեսիոնալ մոտեցում ցուցաբերելու մասին:**

**Նշվածից բացի, դրանից այդպես էլ պարզ չէ, թե ինչ պատճառներով նշված հարցը մինչ օրս լուծում չի ստացել, ինչ խնդիրներ են առկա և իրավասու մարմիններն ինչ միջոցներ են ձեռնարկել կամ ձեռնարկում դրանց լուծման համար:**

Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրությունները փաստում են, որ տարիներ շարունակ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում հաշմանդամություն ունեցող մեծ թվով չափահաս անձանց գտնվելու և յուրաքանչյուր տարի նրանց թիվն ավելանալու հիմնական պատճառն է այն, որ պետությունը տարիներ շարունակ չի ձեռնարկել և մինչ օրս այդպես էլ չի ձեռնարկում այդ անձանց կողմից նախ՝ ինքնուրույն կյանք վարելու հմտություններ ձեռք բերելուն և հասարակությունում լիարժեք ներգրավվելուն, այնուհետև՝ նրանց չափահաս դառնալուց հետո, նաև բնակարանային ապահովմանն ուղղված պատշաճ ու թիրախային միջոցներ՝ այդ անձանցից յուրաքանչյուրի կարիքների, զարգացման հնարավորությունների գնահատման համապատասխան:

Տվյալ անձանց կողմից ի սկզբանե՝ նախքան չափահաս դառնալը, ինքնուրույն կյանք վարելու հմտություններ ձեռք բերելուն և հասարակությունում լիարժեք ներգրավվելուն ուղղված գործուն միջոցներ ձեռնարկելը պետք է լինի պետության առաջնային խնդիրներից մեկը՝ որպես հետագայում նման դեպքերը բացառելուն կամ առնվազն հնարավորինս բացառելուն ուղղված արդյունավետ երաշխիք:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2021 թվականի ընթացքում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող երեխաների համար ինքնուրույն կյանք վարելու վերաբերյալ դասընթացներ կազմակերպելու մասին Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ հայտնել է, որ 2021 թվականի ընթացքում «Երևանի «Զատիկ երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ում խնամվող երեխաների համար էրգոթերապևտիկ աջակցության շրջանակներում կազմակերպվել է տրանսպորտային միջոցներից օգտվելու, ինքնուրույն տեղաշարժվելու, ինքնասպասարկման հմտությունների զարգացմանն ուղղված շուրջ 20 դասընթացներ:

Նշվել է նաև, որ «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ում խնամք ստացող երեխաների համար կազմակերպվել են «Հետագա կյանքի հմտությունների ձեռքբերում» թեմայով անհատական և խմբային աշխատանքներ՝ 14-18 տարեկան շահառուների ընդգրկմամբ (ընդհանուր 18 հանդիպում):



«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող 18 տարեկանը լրացած երկու շահառու և ընտանիքի հետ վերամիավորված ևս երկու անձ Հայաստանի Հանրապետությունում Իզմիրյան հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Բարի մամա» հասարակական կազմակերպության միջև 2019 թվականին կնքված եռակողմ հուշագրի շրջանակում ինքնասպասարկման և մասնագիտական կողմնորոշման հմտությունների զարգացման նպատակով ծառայություններ են ստանում «Բարի մամա» տնակում՝ հետագա անհրաժեշտ հմտությունների զարգացման, զբաղվածության ապահովման և համայնքային կյանքին ինտեգրման նպատակով:

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ 2021 թվականի «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ի շրջանավարտներից մեկը կրթությունը շարունակում է բարձրագույն ուսումնական հաստատությունում, մեկը՝ քոլեջում, երկու շրջանավարտ աշխատում են, իսկ երկուսը գտնվում են ժամկետային զինվորական ծառայության մեջ: Նշվել է, որ «Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի 18 տարեկանը լրացած շահառուներից աշխատում է մեկ անձ, իսկ «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի 18 տարեկանը լրացած շահառուներից որևէ մեկը չի աշխատում:

**Այնուամենայնիվ, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում 18 տարին լրացած մեծ թվով չափահաս անձանց բնակվելու հարցը շարունակում է մնալ խնդրահարույց: Այս հարցը խնդրահարույց է ինչպես այդ չափահաս անձանց, այնպես էլ նրանց հետ միևնույն հաստատությունում բնակվող և խնամք ստացող երեխաների հիմնարար իրավունքների ապահովման տեսանկյունից:**

***Այս առումով կարևոր է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած չափահաս անձանց կարիքների և զարգացման հնարավորությունների գնահատման հիման վրա նրանց՝ բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործունե առաջիկներ սահմանելը:***

Այսպես, ՀՀ կառավարության կողմից 2019 թ. հոկտեմբերի 7-ին ընդունված N 1555-Ն որոշմամբ՝ ֆինանսական միջոցներ են ուղղվել Հայաստանի Հանրապետության մանկատան շրջանավարտների բնակարանային ապահովման խնդիրների լուծմանը՝ բնակարանի գնման վկայագրերի տրամադրման միջոցով: Ծրագրում ընդգրկված շահառուները հնարավորություն են ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում ձեռք բերել 6,3 մլն դրամը չգերազանցող բնակարաններ, իսկ սեփական միջոցներ ներդնելու դեպքում՝ ձեռք բերել 6,3 մլն դրամը գերազանցող արժեքով բնակարաններ:

«ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականի ընթացքում Նախարարությունը նախաձեռնել է մի շարք քայլեր՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1555 որոշման մեջ փոփոխություններ կատարելու միջոցով բնակարանի գնման վկայագրի իրավունք ունեցող շահառուների թիվն ընդլայնելու համար, որն

արտացոլված է ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1774-Ն որոշմամբ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով:

Մասնավորապես, ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1774-Ն որոշմամբ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ, որոնց արդյունքում՝ ներկայում բնակարանի գնման վկայագիր ստանալու իրավունք ունեն նաև տասնութ տարին լրացած, Հայաստանի Հանրապետության մանկատանն առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն ստացած սաները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու, սեփականության կամ համասեփականության իրավունքով այլ բնակելի տարածք չունենալու և վերջին հինգ տարվա ընթացքում բնակելի տարածք օտարած չլինելու դեպքում (բացառությամբ համապատասխան կետի 2.1-ին ենթակետով սահմանված դեպքերի և տվյալ որոշման N 9 հավելվածով սահմանված ցուցակի):

Ըստ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ *վերոնշյալ փոփոխություններից հետո Նախարարություն է դիմել շուրջ 30 շահառու, որոնց դիմումներին սահմանված կարգով ընթացք է տրվել:*

Այսպիսով, ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 28-ի որոշմամբ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների արդյունքում բնակարանի գնման վկայագիր ստանալու իրավունք է վերապահվել նաև տասնութ տարին լրացած, Հայաստանի Հանրապետության մանկատանն առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն ստացած սաներին, որոնք տարբեր պատճառներով Հայաստանի Հանրապետության համապատասխան մանկատանից մինչև 18 տարին լրանալը դուրս գրվելու հետևանքով չեն համարվում այդ մանկատան շրջանավարտ:

**ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2020 թվականի տարեկան հաղորդմամբ ևս անդրադարձել էր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք ստացած և մինչ 18 տարին լրանալն այդ հաստատություններից դուրս գրվելու հետևանքով շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովմանն առնչվող խնդիրներին և առաջարկել էր հաստատությունների նախկին սաների բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքներ սահմանել: Միաժամանակ, Պաշտպանն առաջարկել էր նախատեսել այդ երաշխիքներից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշելու հստակ չափանիշներ, այդ թվում՝ մինչ 18 տարին լրանալը հաստատությունից նրանց դուրս գրվելու հիմքի, ինչպես նաև բնակարանով ապահովված լինելու կամ չլինելու հանգամանքի հաշվառմամբ:**

*Իրականացված փոփոխությունն ինչ-որ չափով դրական է, քանի որ դրանով ընդլայնվել է ծրագրի շահառուների շրջանակը և բնակարանային ապահովման երաշխիքներ են սահմանվել նաև Հայաստանի Հանրապետության մանկատանն առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն ստացած մանկատան սաների համար:*

Այնուամենայնիվ, տվյալ փոփոխությունն ինքնին բավարար չէ և չի կարող համարվել խնդրի ամբողջական, համակարգային լուծում:

Խնդրահարույց է համապատասխան ծրագրի շրջանակներում բնակարանի գնման վկայագիր ստանալու իրավունքը մեխանիկորեն Հայաստանի Հանրապետության մանկատան միայն այն սաներին վերապահելը, որոնք առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն են ստացել այդ հաստատությունում՝ առանց տվյալ պահանջից բացառություն նախատեսելու: Մասնավորապես, անհրաժեշտ է ամրագրել նաև այլ հստակ չափանիշներ և սկզբունքներ, որոնք ևս հաշվի կառնվեն կոնկրետ անձի կողմից ծրագրի շահառու համարվելու կամ չհամարվելու հանգամանքը որոշելիս:

Բացի այդ, հստակ չէ, թե ի՞նչ չափանիշներով և սկզբունքներով առաջնորդվելով է անձի կողմից տվյալ ծրագրի շահառու համարվելու համար սահմանվել հաստատությունում խնամք և դաստիարակություն ստանալու առնվազն 7 տարվա ժամանակահատված, այլ ոչ թե, օրինակ՝ 5: Այս առումով անձին տվյալ ծրագրի շահառու համարելու համար նրա՝ հաստատությունում խնամք և դաստիարակություն ստանալու նվազագույն ժամանակահատված նախատեսելն արդարացված կլինի միայն այն պարագայում, եթե դա լինի պատշաճ հիմնավորված, այդ թվում՝ համապատասխան միջազգային փորձի վկայակոչմամբ: Այն նաև չպետք է սահմանափակվի միայն դրանով, այլ պետք է նախատեսի բացառություններ, այդ թվում՝ այլ հստակ չափանիշներ և սկզբունքներ սահմանելու միջոցով, որոնք ևս հաշվի կառնվեն համապատասխան որոշումը կայացնելիս:

Ավելին, առկա կարգավորումներով մինչ օրս նախատեսված չեն երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող մասնավոր հաստատությունների շրջանավարտների բնակարանային ապահովմանն ուղղված գործուն երաշխիքներ, որը խնդրահարույց է: Տվյալ խնդրին Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ անդրադարձ է կատարել նաև 2020 թվականի տարեկան հաղորդմամբ:

Ուշագրավ է, որ Մարդու իրավունքների պաշտպանի այն հարցադրմանն ի պատասխան, թե արդյոք նախատեսվում է ոչ պետական մանկատների շրջանավարտներին ևս ներգրավել բնակարանային ապահովմանն ուղղված ծրագրերում՝ «Հ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ ներկայում նման փոփոխություն չի նախատեսվում: Նշվել է նաև, որ «2021 թվականի ընթացքում Նախարարությունը ստացել է շուրջ 5 բողոք՝ ոչ պետական մանկատների շրջանավարտների բնակարանային ապահովմանը վերաբերող հարցերով»:

Նախարարության նման մոտեցումն անընդունելի է, քանի որ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումը, ինչպես նաև Պաշտպանին 2021 թվականին ու նախորդ տարիներին հասցեագրված բողոքները վկայում են, որ բնակարանային ապահովման հետ կապված լուրջ խնդիրների առաջ են կանգնած 18 տարին լրացած այն անձինք, որոնք խնամք և դաստիարակություն են ստացել ոչ պետական, մասնավոր մանկատներում, համարվում են այդ

մանկատների շրջանավարտ և այդ հիմքով չեն կարողանում համապատասխան ծրագրով դիմել և ստանալ բնակարանի գնման վկայագիր: Այս անձանց բնակարանային ապահովմանն ուղղված այլ գործուն երաշխիքներ ևս սահմանված չեն:

Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք և դաստիարակություն ստացած անձանց միջև պետական կամ մասնավոր հաստատության շրջանավարտ լինելու հիմքով կիրառվող տարբերակումն իրավաչափ չէ առնվազն այն հանգամանքի հաշվառմամբ, որ ոչ պետական մանկատներում խնամք ստացած անձինք, տվյալ մանկատների շրջանավարտներն իրենց կամքից անկախ են խնամվել այդ մանկատներում և հնարավորություն չեն ունեցել ընտրելու, ինչպես նաև կանխատեսելու, թե հետագայում իրենց բնակարանային ապահովման հետ կապված խնդիրների առաջ չկանգնելու նպատակով ո՞ր մանկատանը խնամվեն: Նման մոտեցումը ոչ միայն իրավաչափ չէ, այլ նաև զուրկ է տրամաբանությունից:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանի շարունակական մշտադիտարկումը, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ մինչ օրս արդիական է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք ստացած և մինչ 18 տարին լրանալն այդ հաստատություններից տարբեր պատճառներով (հիմնականում՝ իրենց կամքից անկախ հանգամանքների բերումով) դուրս գրվելու հետևանքով շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովման համակարգային խնդիրը: **Խնդիրը պայմանավորված է ինչպես երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական, այնպես էլ մասնավոր հաստատությունների շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքների բացակայությամբ:**

*Մարդու իրավունքների պաշտպանը հերթական անգամ հստակ արձանագրում է, որ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք ստացած և մինչ 18 տարին լրանալն այդ հաստատություններից դուրս գրվելու հետևանքով շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովմանն ուղղված գործուն երաշխիքներ սահմանելուն զուգահեռ անհրաժեշտ է նախատեսել տվյալ երաշխիքներից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշելու հստակ չափանիշներ ու սկզբունքներ, այդ թվում և հարկապես՝ մինչ 18 տարին լրանալը հաստատությունից նրանց դուրս գրվելու հիմքի հաշվառմամբ:*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի հոկտեմբերի 28-ի N 1774-Ն որոշմամբ՝ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններից հետո բնակարանի գնման վկայագիր ստանալու նպատակով Նախարարություն են դիմել տասնութ տարին լրացած, Հայաստանի Հանրապետության մանկատանն առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն ստացած **շուրջ 25** սան:

Մարդու իրավունքների պաշտպանի համապատասխան հարցադրմանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացվել է իրականացված փոփոխություններից հետո Նախարարություն դիմած՝ Հայաստանի Հանրապետության մանկատանն առնվազն 7 տարի խնամք և դաստիարակություն ստացած սաների թիվը, սակայն չի տրամադրվել որևէ տեղեկատվություն այդ «շուրջ 25» անձանց դիմումների ընթացքի, Նախարարության կողմից ձեռնարկված և (կամ) ձեռնարկվող միջոցների, ինչպես նաև արձանագրված արդյունքների վերաբերյալ: Բացի այդ, հասկանալի չեն դիմում ներկայացրած անձանց թիվը նշելիս Նախարարության կողմից այդ թվից առաջ «շուրջ» բառն օգտագործելու նպատակը և պատճառները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հայտնել են, որ ՀՀ մանկատանների շրջանավարտներից 2021 թվականի ընթացքում բնակարանի գնման վկայագիր է ստացել 6 անձ, որոնք հանդիսացել են Երևանի «Ջափիկ» մանկատուն, Վանաձորի «Մանկատուն» և «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ-ների շրջանավարտներ: Նշվել է, որ այդ անձանց մեջ հաշմանդամություն ունեցող անձինք չեն եղել:

Համեմատության համար հարկ է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ ծրագրի շրջանակներում 2019 թվականին բնակարանի գնման վկայագրեր էին տրամադրվել մանկատան 55 շրջանավարտների, իսկ 2020 թվականին՝ 149 շրջանավարտների:

Այսպիսով, 2021 թվականին ընդամենը 6 անձի բնակարանի գնման վկայագիր տրամադրելը դրական արդյունք չէ՝ ոչ միայն նախորդ տարիներին տվյալ ծրագրի շրջանակներում բնակարանի գնման վկայագիր ստացած անձանց անհամեմատ ավելի մեծ թվի հաշվառմամբ, այլ նաև՝ մինչ օրս բնակարանային ապահովման խնդիր ունեցող՝ հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների, այդ հաստատությունների շրջանավարտների և շրջանավարտ չհամարվող նախկին սաների մեծ թվի առկայությամբ պայմանավորված:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Նախարարություն է ստացվել ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի N 1555-Ն որոշմամբ նախատեսված՝ բնակարանի գնման վկայագիր ստանալու նպատակով ներկայացված դիմումը մերժվելու վերաբերյալ շուրջ 5 բողոք, որոնք հիմնականում վերաբերել են կենսաբանական ընտանիք վերադառնալու հիմքով մերժված դիմումներին:

Վերոնշյալ դեպքում ևս հասկանալի չեն բողոք ներկայացրած անձանց թիվը նշելիս Նախարարության կողմից այդ թվից առաջ «շուրջ» բառն օգտագործելու նպատակը և պատճառները:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով քաղաքացին բարձրացրել է այն հարցը, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը մերժել է բնակարանի գնման վկայագիր ստանալու վերաբերյալ իր դիմումն այն պատճառաբանությամբ, որ ինքը մանկատան շրջանավարտ չէ, այլ նախկինում եղել է մանկատան

սան, սակայն մինչ 18 տարին լրանալը դուրս է գրվել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունից: Քաղաքացին նշել է, որ իր դիմումը նշված պատճառաբանությամբ մերժելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից միևնույն փաստական հանգամանքների առկայության պարագայում իր նկատմամբ ցուցաբերվել է խտրական և անհիմն կերպով տարբերակված մոտեցում: Մասնավորապես, քաղաքացին հայտնել է, որ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1555-Ն որոշման N 9 հավելվածով սահմանված է ցուցակ, որում ներառված, սակայն տվյալ որոշմամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող անձինք բացառության կարգով հնարավորություն են ստացել օգտվել համապատասխան ծրագրից և ստանալ բնակարանի գնման վկայագիր:

Քաղաքացին տվյալ անձանց կողմից որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ իր պնդումը հիմնավորել է նրանով, որ անձամբ ճանաչում է այդ անձանցից մի քանիսին, որոնք ևս երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունից դուրս են գրվել մինչ 18 տարին լրանալը, հետևաբար չեն համարվում մանկատան շրջանավարտ, այլ եղել են մանկատան նախկին սան:

Այս առումով հարկ է նշել, որ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 1555-Ն որոշման 7-րդ կետի 6-րդ և 6.1 ենթակետերի համաձայն՝ «*Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ (...) 6) բնակարանի գնման վկայագիր տրամադրել մանկատան շրջանավարտ Վալենտին Վասիլի Եպիֆանովին (անձնագիր AR 0305599, ծնված 30.10.1974 թ.). 6.1) բնակարանի գնման վկայագիր տրամադրել մանկատան մի խումբ սաների՝ համաձայն N 9 հավելվածի<sup>1000</sup>*»:

Այսպիսով, ՀՀ կառավարության տվյալ որոշման համապատասխան ենթակետով ևս հստակ արձանագրված է, որ N 9 հավելվածով սահմանված ցուցակում ներառված են անձինք, որոնք մանկատան շրջանավարտ չեն, այլ մանկատան նախկին սան են:

Տվյալ պարագայում պարզ չէ, թե ի՞նչ հանգամանքով է պայմանավորված եղել որոշմամբ սահմանված պահանջներից հենց տվյալ ցուցակում ներառված անձանց համար բացառություն նախատեսելը և միևնույն փաստական հանգամանքների առկայության պարագայում Պաշտպանին բողոք ներկայացրած անձի նկատմամբ տարբերակված մոտեցում ցուցաբերելն ու վերջինիս անունը տվյալ ցուցակում չներառելը:

Միաժամանակ, պարզ չէ, թե ի՞նչ պատճառով է Վալենտին Եպիֆանովին բնակարանի գնման վկայագիր տրամադրելը նախատեսվել որոշման առանձին ենթակետով: Հատկանշական է, որ տվյալ անձի վերաբերյալ ևս բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ վերջինս մանկատան շրջանավարտ չէ, մանկատանից դուրս է գրվել 1987-1990 թվականներին, սակայն ապահովվել է բնակարանով:

<sup>1000</sup> Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157317> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

**Հարցի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով Մարդու իրավունքների պաշտպանը մանրամասն հարցադրումներով գրություններ է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, սակայն խնդրի վերաբերյալ այդպես էլ չի ստացել հստակ, սպառիչ ու հիմնավոր պարզաբանումներ Նախարարության կողմից:**

Մասնավորապես, Մարդու իրավունքների պաշտպանի գրությանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից նախ տրամադրել են տեղեկատվություն բողոք ներկայացրած քաղաքացու՝ մանկատանը գտնվելու ժամանակահատվածի և տվյալ մանկատանից դուրս գրվելուց հետո մեկ այլ հաստատություն տեղափոխվելու վերաբերյալ, ինչպես նաև հայտնել են, որ բողոք ներկայացրած քաղաքացու, ինչպես նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք ստացած և մինչ 18 փարին լրանալն այդ հաստատություններից դուրս գրվելու հետևանքով շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքներ սահմանելու նպատակով՝ տվյալ պահին Նախարարությունը կատարում է առկա խնդիրների գույքագրում և նշված անձանց հաշվառում: Տեղեկացրել են նաև, որ այդ նպատակով Նախարարությունում ստեղծվել է համապատասխան աշխատանքային խումբ, որի կողմից ամբողջական տեղեկատվության հավաքագրումից և ամփոփելուց հետո Նախարարությունը կնախաձեռնի համապատասխան միջոցառումներ՝ գործող օրենսդրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կատարելու կամ նոր չափորոշիչներ սահմանելու տեսքով և ձեռնարկված միջոցառումների մասին լրացուցիչ կտեղեկացնի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին:

Այնուհետև, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաջորդ գրությանն ի պատասխան՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տրամադրել են նույնաբովանդակ և վերացական բնույթ ունեցող պատասխան՝ հայտնելով, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում ստեղծված աշխատանքային խմբի կողմից շարունակվում է իրականացվել Պաշտպանին բողոք ներկայացրած քաղաքացու, ինչպես նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք ստացած և մինչ 18 փարին լրանալն այդ հաստատություններից դուրս գրվելու հետևանքով շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքների սահմանման, անձնական գործերի փաթեթների ուսումնասիրության, առկա սեփականության գույքագրման, հաշվառման գործընթացը:

Ուշագրավ է, որ խնդրի վերաբերյալ պատշաճ, հիմնավոր և կոնկրետ պարզաբանումներ չստանալու հետևանքով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հերթական գրությունն է հասցեագրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որին ի պատասխան՝ Նախարարությունից կրկին տրամադրել են նույնաբովանդակ և վերացական բնույթ ունեցող տեղեկատվություն՝ հայտնելով, որ աշխատանքային խումբը շարունակում է իր աշխատանքները, որի արդյունքում նախատեսվում է նախաձեռնել համապատասխան միջոցառումներ՝ գործող

օրենսդրության մեջ լրացումներ կամ փոփոխություններ կատարելու կամ նոր չափորոշիչներ սահմանելու տեսքով: Տեղեկացրել են նաև, որ նշված գործընթացը պայմանավորված է մի շարք հանգամանքներով (խնդիրներով), որոնց մասին արձանագրվել է նաև ՀՀ հաշվեքննիչ պալատի 26.05.20թ. թիվ 69-Ա, 26.05.20թ. թիվ 68-Ա, 07.08.20թ. թիվ 135-Ա, 20.11.20թ. թիվ 177-Ա, 10.02.21թ. թիվ 22-Ա որոշումներով իրականացված «ՀՀ մանկատան շրջանավարտներին բնակարանի ապահովում» ծրագրի հաշվեքննության արդյունքում ներկայացված եզրակացության մեջ:

Բացի այդ, Նախարարությունից հայտնել են, որ հաշվեքննության արդյունքների հիման վրա ՀՀ գլխավոր դատախազությունը, պետական շահերի պաշտպանության շրջանակներում, տվյալ պահին իրականացնում էր ուսումնասիրություն, որով պայմանավորված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրություններով բարձրացված հարցերի վերաբերյալ այդ ժամանակահատվածում հստակ դիրքորոշում հայտնել չեն կարող:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ անընդունելի են ոչ միայն ինքնին ներկայացված խնդիրն ու դրա հետ կապված անորոշությունները, այլ նաև իրավասու պետական մարմնի՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից այդ կապակցությամբ ցուցաբերվող մոտեցումը, այդ թվում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված մանրամասն և հստակ հարցադրումներին ի պատասխան՝ վերացական բնույթի ընդհանուր տեղեկություններ տրամադրելու հանգամանքը:

**Հարկ է նշել, որ տվյալ հարցը սույն փորձական հաղորդումը հրապարակելու օրվա դրությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում գտնվել է քննարկման փուլում՝ ընթացիկ վիճակում:**

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ հետևողական է լինելու տվյալ հարցի հետագա ընթացքի նկատմամբ:

**Պետության ստանձնած պարտավորությունների պարզաճ կատարումն ապահովելու, ինչպես նաև ներկայացված՝ փարիներ շարունակ համակարգային լուծում չստացող, հիմնարար բնույթի խնդիրների կարգավորմանը հասնելու նպատակով անհրաժեշտ է, որ պետությունը սահմանի երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հաստատություններում խնամվող 18 փարին լրացած սաների, այդ հաստատությունների շրջանավարտների և շրջանավարտ չհամարվող նախկին սաների իրավունքների իրացման ապահովմանն ուղղված օրենսդրական գործունեության երաշխիքներ՝ նրանցից յուրաքանչյուրի կարգավիճակից բխող առանձնահատկությունների հաշվառմամբ:**

**Դրանից զատ, համապատասխան երաշխիքների ամրագրման դեպքում առանձնահատուկ կարևորություն պետք է տրվի գործնականում դրանց պարզաճ իրագործման ապահովմանը, ինչպես նաև այդ գործընթացում հնարավոր չարաշահումների, այդ թվում՝ միևնույն փաստական հանգամանքների առկայության պարագայում անձանց նկատմամբ խտրական և անհիմն, կամայական կերպով փարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքերի բացառմանը:**



**Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում խնամք ստացող կամ նախկինում ստացած յուրաքանչյուր անձ, որն ունի հասարակությունում լիարժեք ներգրավվելու, ինքնուրույն կյանք վարելու, իսկ չափահաս դառնալուց հետո նաև՝ բնակարանային ապահովման հետ կապված խնդիրներ, պետք է մշտապես գտնվի պետության հոգածության ու ուշադրության ներքո:**

Մարդու իրավունքների պաշտպանը շարունակելու է հետևողական լինել երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների, այդ հաստատությունների շրջանավարտների և շրջանավարտ չհամարվող նախկին սաների հիմնարար իրավունքների իրացման պատշաճ ապահովման և այդ նպատակով իրավասու մարմինների կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու նկատմամբ:

Հաշվի առնելով վերոգրյալը, վերահաստատելով Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ ներկայացված առաջարկները, անհրաժեշտ է՝

1. բացառել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում 18 տարին լրացած սաների՝ երեխաների հետ համատեղ բնակվելը՝ մինչ խնդրի վերջնական կարգավորումը տվյալ չափահաս անձանց խնամքն առանձին և նրանց կարիքներին հարմարեցված պայմաններում ժամանակավորապես կազմակերպելու միջոցով.

2. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող և (կամ) սովորող երեխաների համար պարբերաբար կազմակերպել ինքնուրույն կյանք վարելու վերաբերյալ դասընթացներ.

3. ձեռնարկել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների 18 տարին լրացած սաներին իրենց համայնքներում ինքնուրույն կյանք վարելու, հասարակությունում լիարժեք ներգրավվելու հնարավորություն ապահովելուն ուղղված գործուն միջոցներ՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հաշմանդամություն ունեցող սաների անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացման ապահովմանը.

4. ընդլայնել առկա համայնքահեն ծառայությունները՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին և չափահաս անձանց համապատասխան ծառայություններ մատուցելու նպատակով.

5. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների կարիքների և զարգացման հնարավորությունների գնահատման հիման վրա սահմանել նրանց բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքներ.

6. սահմանել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող ոչ միայն պետական, այլ նաև մասնավոր հաստատությունների շրջանավարտների բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքներ.

7. սահմանել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամք ստացած և մինչ 18 տարին լրանալն այդ հաստատություններից դուրս գրվելու հետևանքով

շրջանավարտ չհամարվող նախկին սաների բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործուն երաշխիքներ՝ նախատեսելով նաև այդ երաշխիքներից օգտվելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշելու հստակ չափանիշներ և սկզբունքներ, այդ թվում և հատկապես՝ մինչ 18 տարին լրանալը հաստատությունից նրանց դուրս գրվելու հիմքի հաշվառմամբ:

8. օրենսդրական գործուն երաշխիքներ սահմանելուց զատ ձեռնարկել միջոցներ՝ այդ երաշխիքների գործնականում պատշաճ իրագործումն ապահովելու, ինչպես նաև տվյալ գործընթացում հնարավոր չարաշահումները, այդ թվում՝ միևնույն փաստական հանգամանքների առկայության պարագայում անձանց նկատմամբ խտրական և անհիմն, կամայական կերպով փարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքերը բացառելու ուղղությամբ:

9. պետական բյուջեով համապատասխան միջոցներ նախատեսել և հատկացնել վերոնշյալ միջոցառումների իրականացման նպատակով:

**13. Դժվարին իրավիճակում հայտնված և անօթևան մնացած ընտանիքներին կացարանով ապահովելու գործընթացում արագ արձագանքման գործիքակազմ ներդնելու անհրաժեշտությունը՝ երեխայի և ընտանիքի անդամների բաժանումը բացառելու սկզբունքի ապահովմամբ**

2021 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են դիմել քաղաքացիներ, մասնավորապես՝ կանայք, որոնք տարբեր պատճառներով (հիմնականում՝ ընտանեկան բռնության ենթարկվելու, ինչպես նաև իրենց մշտական բնակության վայր տվյալ պահին մեկնելու անհնարինության հետևանքով) իրենց երեխաների հետ միասին մնացել են առանց օթևան:

Նման իրավիճակում հայտնված կանայք ոչ միայն զանգահարում էին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ՝ իրենց և երեխաների իրավունքների պաշտպանության, ժամանակավոր կացարանում տեղավորվելու հնարավորությունների ու ընթացակարգի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու նպատակով, այլ նաև, գերակշռող դեպքերում, երեխաների հետ միասին, անձնական իրերով գալիս էին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ՝ հայտնելով, որ գիշերելու վայր չունեն, ինչպես նաև չունեն որևէ ազգական, ում բնակության վայրում կարող են տվյալ օրը գիշերել, ժամանակավորապես բնակվել:

Այս բնույթի խնդրի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ նման դեպքերը պահանջում էին արագ արձագանքման միջոցով խնդրի հրատապ կարգավորում:

Հարցն առանձնահատուկ ուշադրություն և հատուկ մոտեցում է պահանջել նաև այն հանգամանքի հաշվառմամբ, որ Մարդու իրավունքների պաշտպանին դիմած՝ երեխաների հետ անօթևան մնացած կանայք հիմնականում ընտանեկան բռնության ենթարկվելու հետևանքով էին հայտնվել նման իրավիճակում և մտավախություններ ունեին իրենց և երեխաների անվտանգության հետ կապված:

Ընդ որում, կանայք երեխաների հետ միասին Պաշտպանի աշխատակազմ հիմնականում գալիս են երեկոյան՝ աշխատանքային ժամի ավարտից հետո, որն էլ ավելի խնդրահարույց է դարձնում իրավասու մարմինների հետ համագործակցությամբ՝ հրատապ կարգով ընտանիքին համատեղ և ապահով ժամանակավոր կացարանում տեղավորելը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը նման դեպքերում հրատապ կարգով ձեռնամուխ է եղել տվյալ կանանց և երեխաների հիմնարար իրավունքների պաշտպանությանը՝ ինչպես մանրամասն իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու, այնպես էլ գործնականում անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու միջոցով:

**Հարկ է արձանագրել, որ դժվարին իրավիճակում հայտնված և անօթևան մնացած ընտանիքներին հրատապ կարգով ժամանակավոր կացարանով ապահովելու գործընթացում Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է համակարգային լուրջ խնդիր:**

Հարցը վերաբերում է նրան, որ տվյալ գործընթացում հիմնականում հնարավոր չի եղել գործնականում ապահովել անօթևան մնացած ընտանիքի անդամների՝ երեխաների և նրանց մոր համատեղ տեղավորումը որևէ ժամանակավոր կացարանում: Այլ կերպ ասած՝ երեխաների և նրանց մոր հրատապ տեղավորումը ժամանակավոր կացարանում հնարավոր չի եղել կազմակերպել նրանց բաժանումը բացառելու սկզբունքի ապահովմամբ, որը, միանշանակ, չի բխել երեխաների լավագույն շահերից, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի էությունից:

Այսպես, ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 381-Ն որոշման<sup>1001</sup> հավելվածի համաձայն՝ հաստատվել են Հայաստանի Հանրապետությունում երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում երեխաների տեղավորման չափանիշները:

ՀՀ կառավարության վերոնշյալ որոշման հավելվածի 5-րդ և 5.1-րդ կետերի համաձայն՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների տիպերից է երեխաների խնամքի ցերեկային հաստատությունը, որն իրականացնում է երեխաների խնամքի, սոցիալ-հոգեբանական, կրթական և դաստիարակչական աշխատանքները: Ճգնաժամային աջակցության կենտրոնն իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող 0-18 տարեկան երեխաների, նաև ըստ անհրաժեշտության՝ ուղեկցողների (ծնողի կամ խնամակալի) անհապաղ տեղավորում և առավելագույնը 6 ամիս շուրջօրյա խնամքի և անհրաժեշտ ծառայությունների տրամադրում:

Այսինքն, ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված է, որ ճգնաժամային աջակցության կենտրոնն իրավասու է իրականացնել ոչ միայն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, այլ նաև ըստ անհրաժեշտության՝ երեխաներին ուղեկցողների (ծնողի կամ խնամակալի) անհապաղ տեղավորումն ու առավելագույնը 6 ամիս շուրջօրյա խնամքի և անհրաժեշտ ծառայությունների տրամադրումը:

<sup>1001</sup> Հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=141015> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Այս առումով հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում դժվարին իրավիճակում հայտնված և առանց օթևան մնացած՝ երեխա ունեցող ընտանիքներից ստացված ահազանգերի թվի վերաբերյալ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ նման ահազանգերի վերաբերյալ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնում վիճակագրություն չի վարվում: Նշվել է նաև, որ նման ահազանգերի ստացման դեպքում տեղեկատվությունը փոխանցվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<sup>1002</sup>:

**Վերոնշյալի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ անօթևան մնացած ընտանիքներից ահազանգեր ստանալու պարագայում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը նման ահազանգերը որոշ դեպքերում փոխանցում է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ, չնայած այդ մասին նշված չէ Արտակարգ իրավիճակների նախարարության տրամադրած պարզաբանումներում:**

**Ընդ որում, այդ ահազանգերն Արտակարգ իրավիճակների նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ է փոխանցում հիմնականում այն դեպքերում, երբ դրանք ստացվում են ոչ աշխատանքային ժամերի կամ օրերի:**

**Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ դիմող քաղաքացիները ևս նշում են, որ Արտակարգ իրավիճակների նախարարություն դիմելու պարագայում իրենց ուղղորդում են դիմել Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:**

**Արտակարգ իրավիճակների նախարարությունից Պաշտպանի աշխատակազմ նման բնույթի ահազանգեր փոխանցվելու պարագայում դրանց հրատապ կարգով ընթացք է տրվում և ապահովվում է քաղաքացիների արագ և ապահով տեղավորումը ժամանակավոր կացարանում:**

**ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականի ընթացքում ահազանգ է ստացվել դժվարին իրավիճակում հայտնված և անօթևան մնացած՝ երեխա ունեցող մեկ ընտանիքից:**

Նախարարության տեղեկացմամբ՝ Միասնական սոցիալական ծառայության ջանքերով առաջարկվել է վարձով բնակարան, որից քաղաքացին հրաժարվել է: Նշվել է նաև, որ ՀՀ Կոտայքի մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում՝ ընտանիքի կացարանի հարցը լուծվել է Պոռչյան համայնքում:

Ստացված ահազանգերին ընթացք տալիս պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցությանն առնչվող՝ Մարդու իրավունքների պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Նախարարությունը հղում է կատարել վերոնշյալ պատասխանին:

Պաշտպանի այն հարցմանն ի պատասխան, թե արդյոք նման դեպքերում ընտանիքներն ուղղորդվել են աջակցության կենտրոններ և եթե ոչ՝ ի՞նչ պատճառով՝ Նախարարությունը կրկին հղում է կատարել վերոնշյալ պատասխանին:

<sup>1002</sup> Սույն հաղորդման սույն պարագրաֆում այսուհետ՝ նաև Նախարարություն:

Հարկ է արձանագրել, որ Նախարարության ներկայացրած տեղեկությունը վկայում է այն մասին, որ ամբողջ 2021 թվականի ընթացքում Նախարարություն ստացված ընդամենը մեկ ահազանգը չի վերաբերել միևնույն օրն ընտանիքին հրատապ կարգով տեղավորելու խնդրին, քանի որ քննարկվել է ընտանիքին վարձակալական հիմունքներով բնակարան տրամադրելու հարցը: Այնուամենայնիվ, եթե անգամ տվյալ խնդիրը հրատապ բնույթ է ունեցել՝ Նախարարության ներկայացրած տեղեկություններից հնարավոր չէ նման եզրակացություն կազմել, քանի որ Նախարարությունը չի տրամադրել որևէ տեղեկություն այն մասին, թե ընտանիքի կողմից խնդրի վերաբերյալ ահազանգելու նույն օրը որտե՞ղ, ի՞նչ եղանակով և ու՞մ կողմից է ապահովվել ընտանիքի հրատապ տեղավորումը: Հետևաբար՝ ներկայացված ահազանգն իր բնույթով վերաբերելի չէ քննարկվող թեմային:

Միևնույն ժամանակ, Պաշտպանի այն հարցմանն ի պատասխան, թե ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ի՞նչ քայլեր են ձեռնարկվում դժվարին իրավիճակում հայտնված և անօթևան մնացած՝ երեխա ունեցող ընտանիքներին (հիմնականում՝ մայր և երեխա կամ երեխաներ) ճգնաժամային կացարանով ապահովելու ուղղությամբ՝ Նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականի մայիսի 1-ից գործում է «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, իսկ հունիսի 1-ից՝ «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը, ինչպես նաև Երևանում՝ «Երևանի «Զարիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ը:

Նախարարությունը տեղեկացրել է, որ նշված հաստատություններն իրականացնում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ համապատասխանաբար 40, 60 և 25 երեխաների ժամանակավոր շուրջօրյա խնամքը՝ **անհրաժեշտության դեպքում 1 ամիս ծնողի հետ համատեղ՝ մինչև դժվարին իրավիճակ առաջացրած խոչընդոտների վերացումը:** Նշվել է նաև, որ այդ կենտրոնները կարող են ծառայել նաև նշված դեպքերին այնքանով, որքանով որ հարցն առնչվում է երեխայի՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ուշագրավ է Նախարարության ներկայացրած տեղեկությունն առ այն, որ երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոնները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր շուրջօրյա խնամքն, անհրաժեշտության դեպքում, իրականացնում են 1 ամիս ծնողի հետ համատեղ՝ մինչև դժվարին իրավիճակ առաջացրած խոչընդոտների վերացումը:

Նախարարության տվյալ տեղեկությունը խնդրահարույց է երկու հիմնական պատճառով: Նախ՝ Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկումը վկայում է, որ Նախարարության կողմից գործնականում չի ապահովվում նման մոտեցում: 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին դիմած քաղաքացիների՝ կանանց և նրանց երեխաների հրատապ, ժամանակավոր տեղավորմանը վերաբերող հարցերը Պաշտպանի ներկայացուցիչների կողմից Նախարարության ներկայացուցիչների հետ քննարկելիս վերջիններս որևէ դեպքում, որպես տարբերակ, չեն առաջարկել անօթևան մնացած կանանց և երեխաների ժամանակավոր

տեղավորում երեխայի և ընտանիքի աջակցության պետական որևէ կենտրոնում: Մարդու իրավունքների պաշտպանին դիմած քաղաքացիների ներկայացրած տեղեկատվությունը ևս վկայում է այն մասին, որ Նախարարությունը նրանց չի ուղղորդել ճգնաժամային աջակցության պետական կենտրոններ:

Նման դեպքերում Նախարարության՝ խնդրի կապակցությամբ առաջարկած հիմնական լուծումը եղել է այն, որ երեխան (երեխաները) կարող են ժամանակավորապես տեղավորվել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունում, մասնավորապես՝ երեխաների աջակցության կենտրոնում, իսկ ծնողը՝ անօթևանների ժամանակավոր կացարանում: Եղել են նաև դեպքեր, երբ Նախարարությունն ուղղորդել է դիմել մասնավոր բնագավառում գործունեություն ծավալող կազմակերպությունների, օրինակ՝ բարեգործական, հասարակական կազմակերպությունների՝ երեխաներին և ծնողին ժամանակավոր կացարանում համատեղ տեղավորելու հնարավորությունը պարզելու նպատակով:

Բացի այդ, առկա է հակասություն ՀՀ կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 381-Ն որոշմամբ սահմանված կարգավորման և Նախարարության ներկայացրած տեղեկության միջև: Մասնավորապես, ՀՀ կառավարության համապատասխան որոշման հավելվածի համաձայն՝ *ճգնաժամային աջակցության կենտրոնի կողմից կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների, նաև ըստ անհրաժեշտության՝ ուղեկցողների (ծնողի կամ խնամակալի) անհապաղ տեղավորման և շուրջօրյա խնամքի ու անհրաժեշտ ծառայությունների տրամադրման համար սահմանված է առավելագույնը 6-ամսյա ժամկետ*, մինչդեռ Նախարարության ներկայացրած տեղեկության համաձայն՝ *նշված հաստատությունները կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր շուրջօրյա խնամքն իրականացնում են անհրաժեշտության դեպքում 1 ամիս ծնողի հետ համատեղ՝ մինչև դժվարին իրավիճակ առաջացրած խոչընդոտների վերացումը*:

Նախարարության կողմից ներկայացված տեղեկությունը ոչ միայն չի բխում ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգավորումից, այլ նաև դրա բովանդակությունից պարզ չէ, թե, օրինակ, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ժամանակավոր շուրջօրյա խնամքը ծնողի հետ համատեղ 1 ամիս ապահովելուց հետո, դժվարին իրավիճակ առաջացրած խոչընդոտները վերացած չլինելու դեպքում, ի՞նչ եղանակով է ապահովվելու երեխաների հետագա ժամանակավոր խնամքն իրենց ծնողի հետ համատեղ: Մասնավորապես, պարզ չէ, թե արդյոք երեխայի՝ ծնողի հետ համատեղ խնամք ստանալու համար սահմանված՝ 1-ամսյա ժամկետը լրանալուց հետո ծնողին այլևս չեն թույլատրելու իր երեխայի հետ համատեղ ժամանակավորապես բնակվել փոխյալ հաստատությունում և նշվածի հետևանքն է լինելու այն, որ երեխան և ծնողը կրկին բաժանվելու են միմյանցից կամ կրկին միասին դառնալու են անօթևան՝ չցանկանալով բնակվել առանձին:

Նախարարության կողմից նման տեղեկություն ներկայացնելը ևս վկայում է այն մասին, որ տվյալ պահին պետական մակարդակով առկա չէ միասնական մոտեցում նման իրավիճակներում գործնականում կիրառվելիք կարգավորումների և դրանց ընթացակարգի վերաբերյալ, որն անընդունելի է: Նշվածի պատճառով է նաև, որ քննարկվող բնույթի խնդրի առաջ կանգնած քաղաքացիներին հաճախ չի տրվում ճիշտ ուղղորդում, որի հետևանքով վերջիններս իրազեկված չեն լինում իրենց երեխաների հետ համատեղ ժամանակավոր կացարաններում տեղավորվելու հնարավոր տարբերակների վերաբերյալ:

Այս համատեքստում համակարգային խնդիր է նաև ոլորտային իրավասու մարմինների աշխատակիցների, մասնագետների, օրինակ՝ թեժ գծի պատասխանատուների իրազեկված չլինելը կամ ոչ բավարար մակարդակով իրազեկված լինելը: Նշվածը կարող է վճռորոշ դեր ունենալ և բացասաբար ազդել արագ արձագանքում և հրատապ լուծում պահանջող իրավիճակներում քաղաքացիների, հատկապես՝ երեխաների հիմնարար իրավունքների պատշաճ իրացումն ապահովելու գործընթացի վրա:

Օրինակ՝ քննարկվող հարցի կապակցությամբ ոլորտային իրավասու մարմինների աշխատակիցների իրազեկվածության մակարդակը պարզելու նպատակով, Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը 2021 թվականի աշնանը, իրականացված մշտադիտարկման շրջանակներում, զանգահարել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թեժ գծի հեռախոսահամարով և ցանկացել է տեղեկանալ, թե արդյոք ՀՀ Սյունիքի մարզում գործում է երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն և եթե այո՝ ո՞ր հասցեում է այն գտնվում: Պաշտպանի ներկայացուցչի նշված հարցադրմանն ի պատասխան՝ թեժ գծի աշխատակիցը տվել է միմյանց հակասող պատասխաններ՝ սկզբնապես հայտնել է, որ ՀՀ Սյունիքի մարզում նման հաստատություն չի գործում, իսկ հետո՝ ուղղորդել է զանգահարել ՀՀ Սյունիքի մարզպետարան՝ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու նպատակով: Նույնաբնույթ հեռախոսային խոսակցություն է տեղի ունեցել նաև ՀՀ Սյունիքի մարզպետարանի թեժ գծի աշխատակցի հետ, որը ևս սկզբում հայտնել է, որ տեղյակ չէ, կճշտի և լրացուցիչ կհայտնի, հետո նշել է, որ տվյալ կենտրոնի շենքը կա, սակայն այն դեռևս չի գործում: Որոշ ժամանակ անց միայն աշխատակիցը զանգահարել է և հայտնել «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեն և նշել, որ տվյալ հաստատությունը գործում է:

Վերոնշյալն անընդունելի և խնդրահարույց է հատկապես այն առումով, որ քաղաքացիներին խորհրդատվություն տալու, նրանց ճիշտ ուղղորդելու համար պատասխանատու անձանց, այդ թվում՝ ոլորտային իրավասու մարմինների թեժ գծի աշխատակիցների իրազեկված չլինելը կամ իրազեկվածության պակասը, ինչպես նաև միջգերատեսչական համագործակցության շրջանակներում արագ արձագանքման արդյունավետ գործիքակազմի բացակայությունն են մեծամասամբ հիմք հանդիսանում, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքներին հրատապ կարգով ժամանակավոր կացարանով ապահովելը դառնում է

խնդրահարույց, իսկ այդ ընտանիքի անդամները, այդ թվում՝ մանկահասակ երեխաներ, անորոշ վիճակում, հաճախ՝ եղանակային անբարենպաստ պայմաններում, մնում են դրսում՝ անօթևան: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ այցելած՝ անօթևան մնացած կանայք նշել են, որ Պաշտպանի աշխատակազմ են եկել, քանի որ որևէ այլ վայր չեն իմացել, որտեղ կարող են դիմել և ստանալ անհրաժեշտ հրատապ աջակցություն:

Այսպիսով, այս առումով առաջնահերթ կարևորություն ունի ոլորտային բոլոր իրավասու մարմինների աշխատակիցների շրջանում գործող աջակցության կենտրոնների, դրանց գտնվելու վայրի, գործունեության բնույթի և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ լայնածավալ իրազեկումների իրականացումը՝ ապահովելու համար տվյալ աշխատակիցների կողմից քաղաքացիներին ճիշտ ուղղորդումներ տալը և դրանով իսկ՝ խնդրի հրատապ ու արդյունավետ կարգավորումը:

Մյուս կողմից վերոնշյալի վերաբերյալ լայնածավալ իրազեկումներ է անհրաժեշտ իրականացնել նաև հասարակության շրջանում, որպեսզի նման իրավիճակում հայտնվելու պարագայում քաղաքացիները հստակ իմանան, թե ո՞ր մարմինն պետք է դիմեն, ու՞ր գնան և ընդհանրապես՝ ի՞նչ իրավունքներ իրենք ունեն և ի՞նչ ընթացակարգեր են գործում տվյալ իրավիճակում:

Ստորև ներկայացված են 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին դիմած՝ անօթևան մնացած կանանց և նրանց երեխաներին ժամանակավոր կացարանում հրատապ կերպով տեղավորելու օրինակներ, որոնց դեպքում չնայած խնդիրն ընդհանուր առմամբ դրական լուծում է ստացել, սակայն բուն գործընթացն ընթացել է բավականին դժվարություններով, ինչպես նաև ժամանակավոր կացարաններում միմյանցից առանձին տեղավորվելու պատճառով՝ կանանց և հատկապես՝ մանկահասակ երեխաների համար հոգեբանական ծանր ապրումներով:

Օրինակ՝ նախկինում ընտանեկան բռնության ենթարկված կինն իր երեք անչափահաս երեխաների հետ միասին երեկոյան ժամի այցելել էր ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և հայտնել, որ ինքն ու երեխաները տվյալ օրը գիշերելու վայր չունեն: Մասնավորապես, երեխաների մայրը հայտնել էր, որ իրենք բնակվում են ՀՀ մարզերից մեկում, և ինքը տվյալ պահին չունի ֆինանսական միջոցներ, որպեսզի կարողանա երեխաների հետ վերադառնալ իրենց մշտական բնակության վայր: Բացի այդ, քաղաքացին նշել էր, որ տվյալ ժամին մարզ մեկնող անձ չկա, ում հետ իրենք կարող են վերադառնալ այնտեղ, ինչպես նաև այդ ժամին երեխաների հետ այնտեղ մեկնելն անվտանգ չէ:

Քաղաքացին տեղեկացրել էր, որ իրենց ընտանիքը հայտնվել էր կյանքի դժվարին իրավիճակում, որի հետևանքով շուրջ 2.5 ամիս իր երեխաներից երկուսի ժամանակավոր խնամքը կազմակերպվել էր երեխաների աջակցության մասնավոր կենտրոնում, իսկ մյուս երեխայի խնամքը՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող պետական հաստատությունում: Քաղաքացին նշել էր, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու պատճառ հանդիսացող հանգամանքները վերանալուց հետո ինքը գնացել և երեխաներին վերցրել էր նշված



հաստատություններից, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ այցելելու նախորդ օրը երեխաների հետ գիշերել էր ծանոթներից մեկի բնակության վայրում: Բացի այդ, քաղաքացին նշել էր, որ իրենք Երևան քաղաքում չունեն որևէ ազգական, ում բնակության վայրում կարող են տվյալ օրը գիշերել և խնդրել էր Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իրեն և երեխաներին ժամանակավոր կացարանով ապահովելու, ինչպես նաև հետագայում իր և երեխաների վերադարձն իրենց մշտական բնակության վայր ապահովելու հարցում:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները խնդիրը հրատապ կարգով քննարկել են ինչպես պետական և տեղական ինքնավարման իրավասու մարմինների, այդ թվում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ընտանիքի մշտական բնակության վայրի խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցիչների, այնպես էլ բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների ու բժշկական հաստատության ներկայացուցիչների հետ՝ յուրաքանչյուրի հետ իր իրավասությունների մասով:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև բարեգործական հիմնադրամների ու հասարակական կազմակերպությունների հետ տեղի ունեցած քննարկումների արդյունքներով, որպես տվյալ պահին հնարավոր միակ տարբերակ, դիտարկվել է երեխաներին բարեգործական հիմնադրամի կացարանում, իսկ նրանց մորն անօթևանների ժամանակավոր կացարանում տեղավորելու հարցը:

**Նշված մոտեցումն, իհարկե, ի սկզբանե անընդունելի չի եղել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից, քանի որ այն հանգեցնելու էր կնոջ և երեխաների հերթական բաժանման (թեկուզ մեկ կամ մի քանի օրով), այն դեպքում, երբ ընտանիքն ընդամենը մեկ օր առաջ էր վերամիավորվել: Այս մոտեցումը, միանշանակ, չէր բխում երեխաների լավագույն շահերից, երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի էությունից, ինչպես նաև ընդհանուր առմամբ՝ մեր երկրի որդեգրած ապահիստիտուցիոնալացման քաղաքականությունից:**

Այնուամենայնիվ, հաշվի առնելով խնդրի հրատապությունը և տվյալ պահին որևէ այլ հնարավոր տարբերակի բացակայությունը՝ միջոցներ են ձեռնարկվել առնվազն այդ տարբերակով կնոջ և նրա երեխաների ժամանակավոր տեղավորումն ապահովելու ուղղությամբ:

Բացի այդ, խնդրահարույց է եղել այն, որ երեխաների մորն անօթևանների ժամանակավոր կացարանում տեղավորելու նպատակով պահանջվել է ներկայացնել կորոնավիրուսի ՊՇՌ- թեստի բացասական արդյունք:

Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատել բժշկական հաստատության ղեկավարի հետ, որն այդ կապակցությամբ հայտնել է, որ երեխաների մայրը կորոնավիրուսի ՊՇՌ- թեստ հանձնելուց հետո, մինչև թեստի արդյունքները պարզ լինելը, կարող է գիշերել բժշկական հաստատության մեկուսարանում:

Նույն պահին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը զանգահարել է շտապօգնության ծառայության 103 թեժ գծի հեռախոսահամարով և ներկայացրել

խնդիրը, որի կապակցությամբ հայտնել են, որ շտապօգնության ծառայության աշխատակիցները քիչ անց կմոտենան Պաշտպանի աշխատակազմ:

Նույն օրը հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատվել բարեգործական հիմնադրամի ներկայացուցչի հետ՝ երեխաներին ժամանակավորապես այնտեղ տեղավորելու նպատակով: Ներկայացուցիչը հայտնել է, որ կարող են ապահովել երեխաների ժամանակավոր տեղավորումը, և քիչ անց իրենց վարորդն ու մանկավարժը կայցելեն Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ՝ երեխաներին այնտեղից վերցնելու նպատակով:

Այնուհետև՝ շտապօգնության ծառայության աշխատակիցները ժամանել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ և երեխաների մորը տեղափոխել բժշկական հաստատություն, որտեղ վերջինս հանձնել է կորոնավիրուսի ՊՇՌ թեստ և տեղավորվել այնտեղի մեկուսարանում՝ ապահովվելով ժամանակավոր գիշերելու վայրով:

Նույն օրը՝ ժամը 21:00-ի սահմաններում, բարեգործական հիմնադրամի մանկավարժն ու վարորդը եկել են Պաշտպանի աշխատակազմ և երեխաներին տեղափոխել բարեգործական հիմնադրամի կացարան:

Հաջորդ օրը Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատել ընտանիքի մշտական բնակության վայրի մարզպետարանի իրավասու ներկայացուցչի հետ, որին ներկայացվել է խնդիրը և առաջարկվել միջոցներ ձեռնարկել քաղաքացու և երեխաների վերադարձն իրենց մշտական բնակության վայր ապահովելու նպատակով: Որոշ ժամանակ անց՝ մարզպետարանի ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով կրկին կապ է հաստատել Պաշտպանի ներկայացուցչի հետ և հայտնել, որ խնդրի կապակցությամբ մարզպետարանում նիստ է գումարվել ու որոշում է կայացվել ընտանիքին տրամադրել միանվագ դրամական աջակցություն, ինչպես նաև ապահովել Երևան քաղաքից նրանց տեղափոխումն իրենց մշտական բնակության վայր:

Երեխաների՝ բարեգործական հիմնադրամի կացարանում, իսկ նրանց մոր՝ բժշկական հաստատությունում գտնվելու ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչները մշտապես կապ են պահպանել և՛ երեխաների մոր, և՛ երեխաների խնամքը ժամանակավորապես իրականացնող բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչների հետ: Բացի այդ, Պաշտպանի ներկայացուցիչները հեռախոսազանգի միջոցով կապ են պահպանել նաև երեխաների հետ:

Հետագայում Մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը հեռախոսազանգի միջոցով կրկին կապ է հաստատել մարզպետարանի ներկայացուցչի հետ, որը հայտնել է, որ ընտանիքը բարեհաջող վերադարձել է իրենց մշտական բնակության վայր, և այդ ընտանիքում երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը գտնվում են մարզպետարանի իրավասու աշխատակիցների վերահսկողության ներքո:

***Այսպիսով, թեև վերոնշյալ խնդիրն ըստ էության ստացել է դրական լուծում և հնարավոր է եղել հրապապ կարգով ապահովել երեխաների և նրանց մոր անվտանգ, ապահով տեղավորումը ժամանակավոր կացարաններում, սակայն քննարկվող համադրեքստում կրկին***

**խնդրահարույց է եղել այն, որ հերթական անգամ ցուցաբերվել է երեխաներին և նրանց մորը բաժանելու, նրանց տարբեր կացարաններում տեղավորելու միջոցով խնդրի կարգավորմանը հասնելու մոտեցում, որն անընդունելի է:**

Մեկ այլ դեպքում՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ էր այցելել կին՝ իր երեք անչափահաս երեխաների հետ միասին և հայտնել, որ ամուսնու կողմից ենթարկվել է բռնության, որի պատճառով երեխաների հետ միասին հեռացել է տնից, և իրենք տվյալ պահին գիշերելու վայր չունեն:

Քաղաքացին տեղեկացրել է, որ ինքը, ամուսինն ու երեխաները մի քանի օր առաջ են օտարերկրյա պետությունից ժամանել Հայաստանի Հանրապետություն, իրենք բոլորը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ են, սակայն բնակվել են օտարերկրյա պետությունում, և ինքն այստեղ ոչ մի ազգական չունի:

Քաղաքացին հայտնել է, որ Հայաստանի Հանրապետություն են ժամանել իր ամուսնու հետ փոխադարձ համաձայնությամբ՝ այստեղ համատեղ բնակվելու նպատակով, սակայն Հայաստանի Հանրապետություն ժամանելուց հետո իր և ամուսնու ու վերջինիս ծնողների միջև տարաձայնություններ են առաջացել, որի հետևանքով ամուսինը երեխաներին տարել է իր բնակարան, իսկ իրեն չի թույլատրել գնալ այնտեղ, ինչպես նաև այնտեղից վերցնել երեխաներին:

Համաձայն քաղաքացու պնդման՝ այն հանգամանքի հաշվառմամբ, որ ամուսինը չի ճանաչել երեխաների հայրությունը՝ ինքը կարողացել է ՀՀ ոստիկանության ծառայողների միջոցով վերցնել երեխաներին ամուսնու բնակության վայրից, որից հետո անմիջապես եկել է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ:

Մեկ այլ խնդիր էր այն, որ քաղաքացու տեղեկացմամբ՝ երեխաները Հայաստանի Հանրապետություն էին վերադարձել համապատասխան օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանության կողմից տրված վերադարձի վկայականով, քանի որ նրանց անձնագրերի վավերականության ժամկետը լրացել էր, ուստի, իր և երեխաների՝ օտարերկրյա պետություն վերադառնալու նպատակով (այնտեղ էին բնակվում կնոջ ծնողները) նախ անհրաժեշտ էր, որ ինքը դիմեր և երեխաների համար ստանար անձնագրեր: Նշված գործընթացը ևս որոշ ժամանակ կպահանջեր, որը ստեղծված իրավիճակում լրացուցիչ խնդիրներ էր առաջացնում կնոջ և երեխաների համար: Քաղաքացին նաև հայտնել էր, որ երեխաներին ամուսնու բնակության վայրից վերցնելիս ամուսինը բռնություն է գործադրել իր նկատմամբ: Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ քաղաքացին խնդրել էր Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունն իրեն և երեխաներին ժամանակավորապես որևէ կացարանում տեղավորելու հարցում:

Խնդրի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ներկայացուցիչը նույն օրը հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատել ընտանեկան բռնության ենթարկված կանանց և նրանց երեխաներին կացարանով ապահովող բարեգործական հիմնադրամի ներկայացուցչի հետ, որին ներկայացվել է խնդիրը՝ կնոջը և նրա երեխաներին տվյալ հաստատությունում տեղավորելու հնարավորությունը պարզելու նպատակով:

Քարեգործական հիմնադրամի տնօրենը հայտնել է, որ տվյալ հաստատությունում տեղավորում են բռնության ենթարկված կանանց և նրանց մինչև 10 տարեկան տղա երեխաներին ու մինչև 12 տարեկան աղջիկ երեխաներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ քաղաքացու ավագ որդին 10 տարեկանից մեծ է՝ տնօրենը նշել է, որ կնոջը երեք երեխաների հետ միասին իրենց հաստատությունում տեղավորելը խնդրահարույց է:

Պաշտպանի ներկայացուցիչը տնօրենին պարզաբանել է հարցի հրատապությունը, ինչպես նաև այն, որ քաղաքացու և վերջինիս երեխաների տեղավորումը կացարանում կրում է ժամանակավոր բնույթ, քանի որ երեխաների համար անձնագրեր ստանալուց հետո նրանք պատրաստվում են վերադառնալ օտարերկրյա պետություն՝ իրենց մշտական բնակության վայր: Միաժամանակ, տնօրենին են ներկայացվել քաղաքացու պնդումներն առ այն, որ վերջինս ամուսնու կողմից ենթարկվել է բռնության, Հայաստանի Հանրապետությունում չունի որևէ ազգական և երեխաների հետ միասին մնացել է անօթևան:

Քննարկման արդյունքում տնօրենը հայտնել է, որ հաշվի առնելով Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությունը, ինչպես նաև կնոջ և երեխաների դրությունը, իրենք կարող են բացառության կարգով ժամանակավոր կացարան տրամադրել նրանց:

Այնուհետև, վերոնշյալ տեղեկատվությունը փոխանցվել է կնոջը, որը համաձայնել է երեխաների հետ միասին տեղավորվել բարեգործական հիմնադրամի կացարանում:

Նույն օրը Պաշտպանի ներկայացուցիչը կնոջը և նրա երեխաներին տեղափոխել է կացարան: Հաջորդ օրը տվյալ քաղաքացին զանգահարել է Պաշտպանի աշխատակազմ և հայտնել, որ ինքն ու երեխաները տեղավորվել են կացարանում, գտնվում են ապահով ու բարենպաստ պայմաններում:

**Այսպիսով, ներկայացված դեպքում ևս խնդիրը հրապարտության կարգով կարգավորվել է Մարդու իրավունքների պաշտպանի և մասնավոր կազմակերպության արդյունավետ համագործակցության արդյունքում, ու բացառության կարգով հնարավոր է եղել ապահովել կնոջ և նրա երեք երեխաների համարեղ տեղավորումը ժամանակավոր կացարանում:**

**Ընդ որում, հափուկ ուշադրության է արժանի այն մոտեցումը, որ ներկայում Հայաստանի Հանրապետությունում փաստացի հնարավոր է կնոջ և նրա երեխաների հրապարտ կարգով համարեղ տեղավորումը ժամանակավոր կացարանում ապահովել (որոշ դեպքերում՝ երեխաների փարիքի հետ կապված սահմանափակումներով) կամ առնվազն դրա հնարավորությունը քննարկել միայն այն պարագայում, եթե կինը ենթարկվել է ընդհանրապես բռնության: Սա ևս չափազանց խնդրահարույց և անթույլատրելի մոտեցում է, քանի որ առկա են բազմաթիվ այլ իրավիճակներ, երբ կինը ենթարկված չի լինում ընդհանրապես բռնության, սակայն իր երեխաների հետ միասին հայտնված է լինում կյանքի դժվարին իրավիճակում և իր երեխաների հետ միասին հրապարտ կարգով ժամանակավոր կացարանում տեղավորվելու կարիք է ունենում:**

**Այսինքն, անհրաժեշտ է ապահովել (ընդ որում՝ ոչ թե մասնավոր ոլորտում, այլ պետական մակարդակով), որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անօթևան մնացած ցանկացած**

**անձ՝ անկախ նման իրավիճակում հայտնվելու պատճառներից և հիմքերից, իր երեխայի (երեխաների) հետ միասին հրապապ կարգով տեղավորվի այդ նպատակով նախատեսված ժամանակավոր կացարանում, որից հետո միայն մնացած հարցերը, այդ թվում՝ Կրկնա գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթավորման հետ կապված, ենթակա կլինեն սահմանված ընթացակարգով կարգավորման:**

Ամփոփելով հարկ է արձանագրել, որ **Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հրապապ լուծում պահանջող խնդիրները հիմնականում կարգավորել է բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցությամբ՝ հիմքում դնելով հարցի հրապապությունը, արագ արձագանքման անհրաժեշտությունը և երեխայի լավագույն շահերով առաջնորդվելու հրամայականը:**

Որպես առավել արդյունավետ համագործակցության օրինակ՝ հարկ է նշել հատկապես «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի հետ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի շարունակական արդյունավետ համագործակցությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և նշված կազմակերպությունների միջև ձևավորված արդյունավետ գործընկերային հարաբերությունների և համագործակցության արդյունքում է, որ այդ կազմակերպությունները որոշ դեպքերում բացառություններ են նախատեսել սահմանված ընդհանուր կանոններից և թույլատրել են կնոջ և նրա երեխայի (երեխաների) համատեղ տեղավորումը ժամանակավոր կացարաններում:

**Այնուամենայնիվ, նման մասնավոր կազմակերպությունների գործունեությունը որևէ դեպքում չպետք է փոխարինի պետական մակարդակով համապատասխան կացարանների ստեղծմանն ու գործնականում դրանց պատշաճ գործունեության ապահովմանը, այլ պետք է պարզապես լրացուցիչ աջակցություն լինի պետությանը:**

**Մինչդեռ, առկա պայմաններում հենց այդ մասնավոր կազմակերպություններն են պետության բեռը վերցրել իրենց վրա և որպես առաջնային մարմին ապահովում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անօթևան մնացած կանանց և նրանց երեխայի (երեխաների) հրապապ տեղավորումը ժամանակավոր կացարաններում, որը անթույլատրելի է:**

**Հարկ է նաև հատուկ ընդգծել, որ քննարկվող բնույթի հարցով քաղաքացիների՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ դիմելու դեպքում Պաշտպանի աշխատակազմը մշտապես համագործակցել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման դեպքերում պետական մակարդակով գործող համակարգային մոտեցումը հիմնականում եղել է երեխային (երեխաներին) առանձին, իսկ նրա (նրանց) ծնողին՝ առանձին ժամանակավոր կացարանում տեղավորելը կամ ընտանիքի համատեղ տեղավորման հնարավորությունը պարզելու նպատակով համապատասխան մասնավոր կազմակերպություններ դիմել ուղղորդելը՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը խնդիրը մեծամասամբ կարգավորվել է հենց**

**գործընկեր բարեգործական հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների աջակցությամբ:**

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անօթևան մնացած երեխային (երեխաներին) և նրա (նրանց) ծնողին առանձին ժամանակավոր կացարաններում տեղավորելու տարբերակը Մարդու իրավունքների պաշտպանի համար անընդունելի է, քանի որ ծնողից երեխայի (երեխաների) բաժանումը (թեկուզ մեկ կամ մի քանի օրով) միանշանակ չի բխում առանց այդ էլ դժվարին իրավիճակում հայտնված երեխայի (երեխաների) լավագույն շահերից, հոգեբանական ծանր ապրումներ է առաջացնում ինչպես երեխաների, այնպես էլ նրանց ծնողի համար:

Ցավոք, գործող համակարգային սխալ մոտեցման, անհրաժեշտ կարգավորումների բացակայության կամ գործնականում դրանց չկիրառվելու պայմաններում, այն դեպքերում, երբ որևէ այլ տարբերակով հնարավոր չի եղել կազմակերպել երեխաների և նրանց մոր համատեղ տեղավորումը որևէ ժամանակավոր կացարանում, նրանք տեղավորվել են առանձին կացարաններում: Նշվածի հետևանքով երեխաների և ծնողի մոտ առաջացել են հոգեբանական ծանր ապրումներ, որին անմիջականորեն ականատես են եղել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

Նման պրակտիկան պետք է բացառվի և քննարկվող համատեքստում պետական մակարդակով պետք է ապահովվի միասնական մոտեցում՝ հստակ կարգավորումներ սահմանելու և գործնականում դրանց կիրառումն ապահովելու միջոցով:

«Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է նաև քննարկվող հարցի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն, որի արդյունքում պարզվել է հետևյալը.

Միջազգային փորձը վկայում է, որ ընտանիքների անօթևան մնալն ի սկզբանե կանխարգելելը պետության համար առավել ծախսաարդյունավետ միջոց է, հատկապես՝ կրկնվող կամ շարունակական անօթևանությունից խուսափելու առումով: Այն նվազեցնում է անօթևանությամբ պայմանավորված՝ անձանց առողջության, բարեկեցության և կյանքի համար հնարավոր վտանգների հավանականությունը:

Հարկ է նշել, որ առկա են կանխարգելման ռազմավարությունների մշակման և իրագործման տարբեր համակարգեր, որոնցից են նաև՝

- առաջնային կանխարգելումը. համակարգեր՝ ուղղված ընտանիքների անօթևան դառնալու ռիսկը նվազեցնելուն, ինչպես օրինակ՝ բարեկեցության նպաստները՝ կանխելու համար ընտանեկան աղքատությունը և բնակարանի կորուստը,
- երկրորդային կանխարգելումը. համակարգեր, որը կենտրոնացած է անօթևան մնալու բարձր ռիսկային գոտում գտնվող ընտանիքների խնդիրների լուծման վրա, օրինակ՝ այն ընտանիքների, որոնց պատրաստվում են վտարել բնակարանից,
- երրորդային կանխարգելումը. միջոցառումներ, որոնք ուղղված են այն ընտանիքների խնդիրների կարգավորմանը, որոնք արդեն տուժել են անօթևանության հետևանքով: Նման

միջոցառումների նպատակն է նվազագույնի հասցնել անօթևանության տևողությունը, օրինակ՝ այնպիսի համակարգերի նախատեսումը, որոնք ապահովում են նման ընտանիքների հրատապ կարգով վերաբնակեցումը:

Տարբեր երկրներում իրականացված հետազոտությունները փաստում են, որ վերոնշյալ առաջնային կանխարգելման համակարգերի շրջանակում ամենալայն տարածում և կիրառություն ունեցող կանխարգելիչ գործիքակազմերն են՝

- անձանց սոցիալական բնակարաններով ապահովումը և (կամ) նրանց բնակարանային նպաստների տրամադրումը,
- բարեկեցության նպաստների համակարգը, որի շրջանակներում շատ երկրներում հաշվի է առնվում ընտանիքում երեխաների թիվը,
- պարտքերի հետ կապված հարցերով անձանց պատշաճ իրավախորհրդատվության և աջակցության տրամադրումը:

Այս գործիքակազմերը կարող են նվազեցնել ցածր եկամուտ ունեցող ընտանիքների անօթևան դառնալու ռիսկը:

Միևնույն ժամանակ, օրինակ՝ Բելգիայում, Իսպանիայում և Պորտուգալիայում բարեկեցության նպաստներով տրամադրվող եկամուտների մակարդակը գնահատվել է անբավարար՝ անձանց արժանապատիվ ապրելու, ներառյալ՝ համապատասխան բնակարանների, ժամանակավոր կացարանների հասանելիությունն ապահովելու համար: Երեխաներ ունեցող ընտանիքներն իրենց հիմնական կարիքներն ապահովել չկարողանալու առավել մեծ հավանականություն ունեն, քան միայնակ մեծահասակներն այդ երկրներում:

Բելգիայում անօթևան անձանց հրատապ կարգով սոցիալական կացարաններում տեղավորելը դիտարկվում է որպես առաջնահերթություն: Թեև անօթևան մնացած ընտանիքների համար նախատեսված չեն առանձին կարգավորումներ, սակայն գործնականում մոտեցումն այն է, որ երեխաներ ունեցող՝ անօթևան մնացած ընտանիքներին ժամանակավոր կացարանում հրատապ կարգով տեղավորելուն առնչվող հարցերին առաջնահերթություն է տրվում:

2012 թվականին Իսպանիայում ստեղծվել է ազգային հիմնադրամ, որի գործունեությունն ուղղված է այն անձանց սոցիալական կացարաններով ապահովելուն, որոնք զրկվել են իրենց բնակարանից ու մնացել են անօթևան: Նշված գործընթացում առաջնահերթությունը տրվում է անօթևան մնացած ընտանիքներին:

Պորտուգալիայում անօթևան մնացած ընտանիքների արագ վերաբնակեցման հայեցակարգը սովորաբար վերաբերում է տվյալ ընտանիքներին ժամանակավոր կացարաններով, այլ ոչ թե մշտական բնության վայրով ապահովմանը: Գործնականում ցուցաբերվում է այնպիսի մոտեցում, որ տվյալ գործընթացում առաջնահերթություն է տրվում անօթևան մնացած այն ընտանիքներին, որոնք ունեն երեխաներ:

Հունգարիայում տեղի ունեցած՝ սոցիալական և բնակարանային սուբսիդավորման սխեմաների ապակենտրոնացումն առաջացրել է համայնքային միջոցներից ընտանիքներին տրամադրվող

աջակցության մակարդակի փոփոխություն՝ հիմք հանդիսանալով անհավասար մոտեցումների համար:

Իռլանդիայում հաստատվել են «վարձակալության պաշտպանության միջոցներ»՝ ամրապնդելու համար այն ընտանիքների իրավունքների պաշտպանությունը, որոնք բնակվում են վարձակալական հիմունքներով, վճարում են վարձակալության գումար և գոյատևում են տրամադրվող սոցիալական աջակցության միջոցների հաշվին: Այս առումով պետության կողմից բարձրացվել են սոցիալական աջակցության դրույքաչափերը՝ բացառելու համար այն դեպքերը, երբ վարձակալության գումարը վճարելու անհնարինության պատճառով վարձակալները զրկվում են իրենց բնակության վայրից և դառնում են անօթևան:

Բացի այդ, 2015 թվականին Իռլանդիայում ներդրվել է անօթևան մնացած ընտանիքների արագ վերաբնակեցման գործիքակազմ՝ ժամանակավոր կացարանների օգտագործմամբ, որտեղ անօթևան մնացած ընտանիքները կարող են կարճ ժամանակահատվածով տեղավորվել:

Սլովակիայում տեղական ինքնակառավարման մարմինները միանվագ նպաստ են տրամադրում այն ընտանիքներին, որոնք տեղական ինքնակառավարման մարմիններին վճարման ենթակա պարտքեր չունեն: Այդ նպաստը կարող է օգտագործվել բնակարանի վարձակալության առաջին ամսվա գումարը վճարելու և կենցաղավարման համար անհրաժեշտ, առաջնային նշանակության պարագաներ գնելու համար:

Միևնույն ժամանակ, Սլովակիայում անօթևան ընտանիքներին բնակության վայրով ապահովելու հիմնական տարբերակը նրանց անօթևանների կացարաններում և արագ արձագանքում պահանջող դեպքերի համար նախատեսված կացարաններում տեղավորելն է: Նման կացարանները հիմնականում ղեկավարվում են հասարակական կազմակերպությունների կողմից, սակայն տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները նույնպես տրամադրում են նման ժամանակավոր կացարաններ: Ավելին, տարածքային կառավարման մարմիններն իրավական առումով անմիջականորեն պատասխանատու են Սլովակիայում ժամանակավոր կացարանների տրամադրման ֆինանսավորման համար:

Շվեդիան ունի սոցիալական նպաստների լայն շրջանակ, որոնք նախատեսված են երեխաներ ունեցող ընտանիքների անօթևան դառնալը կանխարգելելուն: Տեղական ինքնակառավարման մարմինների մակարդակում գործում են ֆինանսական և պարտքային հարցերով խորհրդատվական ծառայություններ մատուցող բաժիններ, որոնք աջակցություն են տրամադրում դրա կարիքն ունեցող ընտանիքներին:

Շվեդիայի շատ համայնքներում անօթևան մնացած՝ երեխաներ ունեցող ընտանիքներն իրենց բնակության վայրից վտարվելուց անմիջապես հետո վերաբնակեցվում են նոր բնակարաններում: Ավելի մեծ քաղաքներում ընտանիքները կարող են ստիպված լինել բնակվել ժամանակավոր կացարաններում: Այնուամենայնիվ, դա նախատեսված է որպես խնդրի կարճաժամկետ լուծում՝ նախքան ընտանիքներին նոր բնակարաններում վերաբնակեցնելու հարցի վերջնական կարգավորումը:



Ֆրանսիայում դեռևս 2007 թվականին ընդունվել է հատուկ օրենք, որով կարգավորվել է այն անձանց բնակարաններով ապահովելու, վերաբնակեցման հետ կապված իրավական համակարգը, որոնք չունեն բավարար միջոցներ ինքնուրույն վճարելու համար իրենց բնակարանային ծախսերը: Նշված օրենքով ամրագրվել է այդ անձանց՝ արժանապատիվ, անկախ ապրելու՝ պետության կողմից երաշխավորված իրավունքը: Արձանագրված փաստերը վկայում են, որ տվյալ օրենքի շրջանակներում բնակարանով ապահովվելու վերաբերյալ դիմումներ ներկայացնող ընտանիքների շարքում գերակշիռ մաս են կազմում այն անօթևան մնացած ընտանիքները, որոնք ունեն երեխաներ: Հարկ է նաև նշել, որ տվյալ օրենքով նախատեսված՝ համապատասխանելիության չափանիշներն այնպիսին են, որ օբյեկտիվորեն նպաստում են մինչև 18 տարեկան երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովմանը:

Մեծ Բրիտանիայում անօթևանությանն առնչվող հարցերի կարգավորմանն ուղղված՝ օրենքով սահմանված չորս համակարգերից յուրաքանչյուրն էլ նախատեսված է որպես անօթևանության դեպքերին հրատապ արձագանքելու և անօթևան մնացած անձանց արագ վերաբնակեցումն ապահովելու միջոց՝ հատուկ ուշադրություն դարձնելով անօթևան մնացած ընտանիքների վերաբնակեցմանը:

Գերմանիայում տեղական ինքնակառավարման մարմիններն անօթևան ընտանիքներին սովորաբար ապահովում են ժամանակավոր կացարանով: Անօթևան ընտանիքները տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված այդ ժամանակավոր կացարաններում տեղավորվելուց հետո հաճախ տևական ժամանակ շարունակում են բնակվել այնտեղ: Այդ ժամանակավոր կացարանները կարող են տվյալ ընտանիքների համար դառնալ մշտական բնակության վայր՝ առանց վարձակալության պայմանագրի կնքման: Այնուամենայնիվ, հիմնական մոտեցումն այն է, որ անօթևան ընտանիքներն ապահովվում են ժամանակավոր այնպիսի կացարանով, որը հատուկ նախատեսված է հենց այդ նպատակի համար<sup>1003</sup>:

Վերոնշյալ միջազգային փորձը կարող է հաշվի առնվել պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների կողմից՝ քննարկվող հարցի կապակցությամբ համակարգային առումով անհրաժեշտ օրենսդրական և գործնական փոփոխություններ իրականացնելիս:

*Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. Հայաստանի ամբողջ տարածքում ձևավորել անօթևան մնացած երեխաներին և նրանց ծնողին հրատապ կարգով ժամանակավոր կացարանում համատեղ տեղավորելու միատեսակ պրակտիկա և ապահովել գործնականում դրա կիրառումը,

<sup>1003</sup> Տե՛ս «Ընտանիքների անօթևանությունը Եվրոպայում. համեմատական ուսումնասիրություններ անօթևանության վերաբերյալ», Անօթևանության հարցերով եվրոպական հետազոտական կենտրոն, Բրյուսել, 2017, հասանելի է [https://eprints.whiterose.ac.uk/125725/1/Comparative\\_Studies\\_7\\_Family\\_Homelessness.pdf](https://eprints.whiterose.ac.uk/125725/1/Comparative_Studies_7_Family_Homelessness.pdf) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

2. բացառել կիրառվող այն համակարգային մոտեցումը, որի համաձայն՝ անօթևան մնացած կնոջն ու նրա երեխային (երեխաներին) հրատապ կարգով ժամանակավոր կացարանում համապետել տեղավորելը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կինը ենթարկվել է ընտանեկան բռնության,

3. պետական մակարդակով ապահովել, որ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, անօթևան մնացած ցանկացած անձ՝ անկախ նման իրավիճակում հայտնվելու պատճառներից և հիմքերից, իր երեխայի (երեխաների) հետ միասին հրատապ կարգով տեղավորվի այդ նպատակով նախատեսված ժամանակավոր կացարանում, որից հետո միայն մնացած հարցերը, այդ թվում՝ տվյալ գործընթացի համար անհրաժեշտ փաստաթղթավորման հետ կապված, ենթակա կլինեն սահմանված ընթացակարգով կարգավորման,

4. Հայաստանի ամբողջ տարածքում հասարակության շրջանում իրականացնել իրազեկման լայն արշավներ անօթևան մնալու դեպքում ժամանակավոր կացարանով ապահովվելու, այդ թվում՝ հրատապ կարգով ծնողի և նրա երեխայի (երեխաների) համապետել տեղավորման հնարավոր տարբերակների, այդ հարցերով իրավասու մարմինների, նրանց հետ հրատապ կարգով կապ հաստատելու միջոցների, ինչպես նաև գործող աջակցության կենտրոնների, դրանց գտնվելու վայրի, գործունեության բնույթի և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ,

5. ոլորտային բոլոր իրավասու մարմինների աշխատակիցների շրջանում իրականացնել գործող աջակցության կենտրոնների, դրանց գտնվելու վայրի, գործունեության բնույթի և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ լայնածավալ իրազեկումներ՝ ապահովելու համար տվյալ աշխատակիցների կողմից քաղաքացիներին ճիշտ ուղղորդումներ տալը և արագ արձագանքման միջոցով խնդրին հրատապ ու արդյունավետ լուծում տալը,

6. անօթևան մնացած երեխաներին և նրանց ծնողին հրատապ կարգով ժամանակավոր կացարանով ապահովելու գործընթացում զարգացնել միջգերատեսչական համագործակցությունը: Գործուն միջոցներ ձեռնարկել արագ արձագանքման արդյունավետ գործիքակազմ ներդնելու ուղղությամբ,

7. ապահովել իրավասու մարմինների կողմից քննարկվող խնդրի կապակցությամբ իրենց գործառույթներն իրականացնելիս մշտապես երեխայի լավագույն շահերին առաջնահերթ ուշադրություն դարձնելը, ինչպես նաև ցանկացած իրավիճակում երեխայի և ընտանիքի անդամների բաժանումը բացառելու սկզբունքով առաջնորդվելը,

8. հատուկ կարգավորումներ նախատեսել, որպեսզի անօթևան մնացած ընտանիքներին կացարանով ապահովելն իրապես ունենա ժամանակավոր բնույթ, և ընտանիքի՝ մշտական բնակության վայր չունենալու դեպքում իրավասու մարմինների կողմից միջոցներ ձեռնարկվեն նրանց մշտական բնակության վայրով ապահովելու ուղղությամբ, այդ թվում՝ համապատասխան ծրագրեր մշակելու և ներդնելու միջոցով:

**14. Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի՝ որպես Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստող խորհրդակցական մարմնի անարդյունավետ գործունեության հետևանքով շարունակական լուծում չստացող խնդիրները**

Հայաստանում երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգը ներդրվել է 2005 թվականին՝ ազգային մակարդակում ընդգրկելով Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը, մարզային մակարդակում՝ Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները և համայնքային մակարդակում՝ ԽՀՄ-ները:

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը ստեղծվել է ՀՀ վարչապետի 2005 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 835-Ն որոշմամբ: Հանձնաժողովը խորհրդակցական մարմին է, որի գործունեության հիմնական նպատակը երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը նպաստելն է:

Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի պատասխանատու մարմինների գործունեության համակարգմանն աջակցելը, երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված պետական քաղաքականության ու ռազմավարական ծրագրերի իրականացման և մշակման ապահովմանն աջակցելը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության ընթացքում ծագած խնդիրները վերլուծելը և դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ մշակելը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հիմնախնդիրների լուծմանն աջակցելը, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող երեխաների խնամքի և պաշտպանություն իրականացնող պետական, համայնքային մասնավոր հաստատությունների, հասարակական, քաղաքական, գիտական և համագործակցությանն աջակցելը: Այնուհետ, ՀՀ վարչապետի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշմամբ հաստատվել է հանձնաժողովի նոր կանոնադրությունը և անհատական կազմը:

Չնայած երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում Հանձնաժողովի կարևոր դերին և վերապահված լիազորություններին, Հանձնաժողովի գործունեությունը բավարար արդյունավետ չի եղել՝ երեխաների իրավունքներին վերաբերող խնդիրները համակարգելու, նոր լուծումներ առաջարկելու տեսանկյունից: Այսպիսի մտահոգություն է հայտնել, օրինակ, ՄԱԿ-ի երեխաների իրավունքների կոմիտեն դեռևս 2013 թվականին ՀՀ-ի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում:

Այնուհանդերձ, Կոմիտեն դեռևս 2013 թվականին ավստոսանք է հայտնել, որ Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովն այնքան էլ արդյունավետ չի իրականացնում համակարգողի իր դերը: Կոմիտեին մտահոգել է նաև այն հանգամանքը, որ

բավարար չափով չի իրականացվում միջոլորտային համակարգումը նախարարությունների, մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների միջև:

Երեխայի իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի գործունեությունը վերջին տարիներին դարձել է ոչ արդյունավետ: Պաշտպանի՝ դեռևս 2018 թվականին հրապարակված «Հայաստանի կողմից երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով և կից արձանագրություններով սահմանված պարտավորությունների կատարման վիճակի վերաբերյալ» արտահերթ հրապարակային զեկույցով<sup>1004</sup> նշվել է, որ հաշվի առնելով, որ հանձնաժողովն ամբողջությամբ չի իրականացնում երեխաների իրավունքների պաշտպանության պետական քաղաքականության ուղղությունների, առաջնահերթությունների, մասնավոր ու պետական հատվածի փոխգործակցության ապահովման ու հիմնախնդիրների քննարկման իր գործառույթը: Արտահերթ զեկույցով նշվել է, որ «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսված երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ստեղծման և գործունեությանը, երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության ապահովմանը վերաբերող օրենսդրական կարգավորումները լիարժեք չեն: Դրանց արդյունավետ կիրարկման ապահովման տեսանկյունից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ նախագծի վերաբերյալ ներկայացված կարծիքում հատուկ ընդգծվել է, որ հանձնաժողովը պետք է ունենա պատշաճ ֆինանսական և մարդկային ռեսուրսներ, որպեսզի կարողանա արդյունավետ համակարգել երեխայի իրավունքների պաշտպանությանն ուղղված քայլերը և բարելավել համագործակցությունը միջգերատեսչական, տարածաշրջանային և տեղական մակարդակներում՝ հատուկ ուշադրություն դարձնելով գյուղական համայնքներին՝ հաշվի առնելով նաև ՀՀ-ի վերաբերյալ 2013 թվականի ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտեի ամփոփիչ դիտարկումներում հանձնաժողովի վերաբերյալ Կոմիտեի առաջարկները:

Համաձայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2021 թվականի հաշվետու ժամանակահատվածի համար տրամադրած տեղեկությունների՝ ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 28-ի N 1295-Ն որոշման ընդունումից հետո երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը գումարել է շուրջ 15 նիստ:

Ըստ Նախարարության՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի աշխատանքների բարելավման ուղղությամբ նախանշված աշխատանքներն իրենց արտացոլումն են գտնելու «Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքի նախագծում: Հանձնաժողովի գործունեությունն ակտիվացնելու նպատակով ձևավորվել է հանձնաժողովի անդամներից խումբ, որոնք իրականացնում են ծառայությունների քարտեզագրում, հանձնաժողովն ակտիվ ընդգրկված է նաև իրականացվող օրենսդրական բարեփոխումների գործում:

<sup>1004</sup> Հասանելի է <https://www.ombuds.am/images/files/Ob44c6d762045fbcd7edd99b443608b0.pdf> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

Միևնույն ժամանակ, Նախարարության կողմից նշվել է, որ ՀՀ կառավարության 2019թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշման N 2 հավելվածի համաձայն հաստատված՝ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի 79-րդ կետով նախատեսված է փոփոխություններ կատարել «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքում՝ սահմանելով հիմնական հասկացություններն ու երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի ձևավորման ընթացակարգերը:

**Ըստ Նախարարության տրամադրած տվյալների՝ նշված կետով նախատեսված միջոցառումները կատարվել են մասամբ և ներկայում ընթացքի մեջ են:**

Սույն հաղորդման «Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկող մարմին» բաժնում մանրամասն ներկայացված են ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի առկա բացերը և խնդիրները: Նշվածը պահանջում է որպեսզի երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգի բոլոր օղակները գործեն հնարավորինս արդյունավետ: Այս գործում հատկապես կարևոր է համակարգող մարմնի պատշաճ աշխատանքը, որը ինչպես նշված է վերևում տարիներ շարունակ ոչ լիարժեք է և անարդյունավետ, որը խաթարում է երեխայակենտրոն միասնական պետական քաղաքականության ապահովումը: Ուստի անընդունելի է, որ 2005 թվականին ստեղծված Հանձնաժողովի վերաբերյալ օրենսդրական բարեփոխումների կապակցությամբ կատարվող աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, երբ խնդրի մասին բազմիցս նշվել է Պաշտպանի տարեկան հաղորդումներով և արտահերթ զեկույցներով:

*Հաշվի առնելով վերոգրյալն անհրաժեշտ է՝*

- 1. միջգերատեսչական համագործակցությունն ամրապնդելու նպատակով Հանձնաժողովի աշխատանքը կազմակերպել ռոտացիոն սկզբունքով՝ յուրաքանչյուր տարի այն լիազորելով երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտի շահագրգիռ գերատեսչություններից մեկին,*
- 2. սահմանել հանձնաժողովի նիստերի նվազագույն պարբերականություն,*
- 3. հնարավորին սեղմ ժամկետներում ընդունել Հանձնաժողովի գործունեությունը կարգավորող և բարեփոխող համապատասխան օրենսդրական ակտերը,*
- 4. հանձնաժողովին վերապահել անհրաժեշտ լիազորությունները և տրամադրել համարժեք մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի Հանձնաժողովը կարողանա արդյունավետ համակարգել երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցառումները,*
- 5. բարելավել միջգերատեսչական համագործակցությունը նախարարությունների, ինչպես նաև մարզային ու համայնքային կառույցների միջև՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գյուղական տարածաշրջաններին և առավել անբարենպաստ պայմաններում գտնվող տարածաշրջաններին:*

**ԲԱԺԻՆ 16. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ՈՐՊԵՍ «ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՂ ՄԱՐՄԻՆ**

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը, իր սահմանադրական և կոնվենցիոն մանդատների շրջանակներում, շարունակել է իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանություն՝ մշտադիտարկման ու անհատական այցերի, սեփական նախաձեռնությամբ և անհատական դիմումների քննարկման միջոցով:

Դեռևս 2019 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում ստեղծված Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժինը 2021 թվականի ընթացքում շարունակել է աջակցել ինչպես «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքով նախատեսված Պաշտպանի գործառույթների իրականացմանը, այնպես էլ նպաստել է Պաշտպանի Կոնվենցիոն կարգավիճակից բխող գործառույթների իրականացմանը՝ ապահովելով մասնագիտացված մոտեցում: Մասնավորապես, Պաշտպանի հանձնարարությամբ և անմիջական վերահսկողությամբ

1) իրականացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 2006 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված կոնվենցիայի<sup>1005</sup> դրույթների կիրառության մշտադիտարկում և մշակել «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույց<sup>1006</sup>: Արտահերթ զեկույցում ներկայացված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության միջազգային և ներպետական մեխանիզմներն ու պրակտիկան, տևական բնույթ ունեցող համակարգային խնդիրները, ինչպես նաև նոր կորոնավիրուսային համավարակի պայմաններում և 2020 թվականի պատերազմի հետևանքով առաջացած խնդիրները, որոնք խոչընդոտում են հաշմանդամություն ունեցող անձանց իրացնել իրենց իրավունքներն այլոց հետ հավասար հիմունքները: Այդ նպատակով Արտահերթ զեկույցում ուսումնասիրվել և ներկայացվել են նաև ոլորտային վիճակագրական տվյալների հավաքագրման, Կոնվենցիայի պահանջների կատարման մշտադիտարկման ներպետական մեխանիզմների, ոլորտային քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության, Կոնվենցիայի պահանջների կատարման նպատակով ոլորտային բյուջեի տրամադրման և կառավարման հետ կապված խնդիրները: **Ընդ որում՝ հատուկ արձանագրվում է, որ Արտահերթ զեկույցի մշակման աշխատանքներից հետո սույն տարեկան հաղորդման նպատակով ինչպես հասարակական կազմակերպություններին, այնպես էլ պետական իրավասու մարմիններին**

<sup>1005</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ նաև Կոնվենցիա:

<sup>1006</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ նաև Արտահերթ զեկույց: Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE> :

**ուղարկված հարցումներին ի պատասխան՝ վերջիններիս տրամադրված տեղեկություններն ուսումնասիրվել և ներկայացվում են սույն բաժնում,**

2) մշակել է Կոնվենցիայի կատարման վերաբերյալ զեկույց, որը Պաշտպանը ներկայացրել ՄԱԿ-ի հաշմանդամության հարցերով Կոմիտեին<sup>1007</sup>,

3) մասնակցել է Սյունիքում ադրբեջանական զինծառայողների առկայության հետևանքով մարդկանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման խոչընդոտների վերաբերյալ Պաշտպանի փաստափառաբանական աշխատանքներին,

4) ապահովել է անձանց իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտումների վերաբերյալ Պաշտպանին ներկայացվող բողոքների ուսումնասիրությունը և քննարկումը,

5) տրամադրել է իրավաբանական խորհրդատվություն իրենց իրավունքների և ազատությունների, ինչպես նաև դրանց արդյունավետ պաշտպանության հնարավորությունների վերաբերյալ,

6) մշակել է Պաշտպանին կարծիքի ներկայացված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ,

7) զեկույցներով հանդես է եկել տարբեր միջազգային կազմակերպությունների կազմակերպած առցանց քննարկումներին,

8) պետական իրավասու մարմիններին ուղարկել է շուրջ 25 մոնիթորինգային հարցումներով և համակարգային խնդիրների վերաբերյալ առաջարկություններով գրություններ,

9) իրականացրել է շուրջ 1200 մեդիա մոնիթորինգ, ներառյալ՝ սոցիալական հարթակների մոնիթորինգ, որի արդյունքում վեր են հանվել համակարգային խնդիրներ, իրականացրել է համայնքային այցեր արձանագրված խնդիրներին տեղում ծանոթանալու համար, կազմակերպել կամ մասնակցել է աշխատանքային քննարկումների վեր հանված խնդիրների ուսումնասիրության նպատակով,

10) իրականացրել է 2021 թվականի ընթացքում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների և ԱԺ արտահերթ ընտրությունների մշտադիտարկում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման համատեքստում,

11) կազմակերպել է Պաշտպանին առընթեր՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի նիստերը, այդ թվում՝ Արցախի մարդու իրավունքների Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի հետ համատեղ նիստը:

12) Պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ համատեղ իրականացվել է 6 մշտադիտարկման այց հաշմանդամություն ունեցող երեխաների

<sup>1007</sup> Տե՛ս Կոմիտեին ներկայացված զեկույցը: Հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fNHS%2fARM%2f47632&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=INT%2fCRPD%2fNHS%2fARM%2f47632&Lang=en) հղումով:

խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն և հատուկ դպրոց, ինչպես նաև շուրջ 10 սահմանամերձ դպրոցներ և այլ հաստատություններ,

13) աշխատանքներ են տարվել հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ (մասնավորապես՝ հանրային լրատվամիջոցների և սոցիալական հարթակների միջոցով),

14) աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ համատեղ կազմակերպել է Երեխաների պաշտպանության միջազգային օրն ու Ծնողների համաշխարհային օրվան նվիրված ներառական միջոցառում<sup>1008</sup>, որին մասնակցել են հանրակրթական ու հատուկ դպրոցների սաներ, Արցախից տեղահանված երեխաներ, հաշմանդամություն ունեցող երեխաներ, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված «Փոխիր աշխարհը» արշավի մասնակիցներ,

15) իրականացվել է շուրջ 65 աշխատանքային քննարկում պետական կառույցների ներկայացուցիչների և ոլորտային կազմակերպությունների հետ:

Պաշտպանի աշխատակազմը, հանձնիս հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության բաժնի, մշտապես առաջնորդվել է այն համոզմամբ, որ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում էական նշանակություն ունեն ոչ միայն խնդիրների արձանագրումը, բարձրաձայնումը, այլ նաև դրանց լուծման առաջարկների ներկայացումն իրավասու մարմիններին, ինչպես նաև իրավունքների խախտումների կանխարգելման նպատակով հանրային իրազեկման միջոցառումները, որոնք ներկայացվել են սույն բաժնում:

Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորումը պետք է հիմնված լինի նրանց արժանապատվության հարգման, զարգացման հնարավորությունների, հանրային կյանքում մյուսների հետ հավասար պայմաններով ներգրավվածության, որոշումների կայացման գործընթացում ինքնուրույնության, միջավայրային մատչելիության ապահովման սկզբունքներով: Ըստ այդմ՝ հանրային մարմինները պետք է առաջնորդվեն այն ընկալմամբ, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորումը սահմանադրորեն ամրագրված և պետության այլընտրանք չունեցող պարտավորություն է: Այս կերպ է հնարավոր միայն խթանել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման համար ոչ ձևական միջավայրի ձևավորումը: Ուստի, հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը և զարգացմանը միտված բոլոր միջոցները պետք է, նախևառաջ, ապահովեն միջավայրային ֆիզիկական մատչելիությունը, տեղեկատվության և հաղորդակցության հասանելիությունը: Այս հարցում կարևոր նշանակություն ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բարեփոխումների գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց և ոլորտային կազմակերպությունների ներգրավումը:

<sup>1008</sup> Տե՛ս հրապարակումը, հասանելի է <https://children.ombuds.am/hunisi-1-nerarakan/> հղումով:



Վերոնշյալ հիմնարար մոտեցումից ելնելով՝ 2021 թվականի ընթացքում ևս Պաշտպանը շարունակել է ակտիվ համագործակցությունը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ ինչպես տարբեր միջոցառումների կազմակերպման, այնպես էլ աշխատանքային քննարկումների, Արտահերթ զեկույցի<sup>1009</sup> մշակման աշխատանքների շրջանակներում:

Շարունակելով ինստիտուցիոնալ ակտիվ համագործակցությունը հասարակական կազմակերպությունների հետ՝ Պաշտպանի 2021 թվականի օգոստոսի 9-ի 23-Ա որոշմամբ հաստատվել է Պաշտպանին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի<sup>1010</sup> գործունեության կարգը և անհատական կազմը՝ ընդգրկելով 17 հասարակական կազմակերպություն և անհատ փորձագետ<sup>1011</sup>: Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի նիստերը տեղի են ունենում հրապարակային կամ ոչ հրապարակային, այդ թվում՝ ընդլայնված մասնակցությամբ: Հասարակական խորհրդի բոլոր նիստերի ընթացքում ապահովվել է ժեստերի լեզվով զուգընթաց թարգմանությունը, ինչը սկզբունքային նշանակություն ունի տեղեկատվության մատչելիության երաշխավորման տեսանկյունից:

Օրինակ՝ Պաշտպանի նախաձեռնությամբ 2021 թվականի մարտի 5-ին հրավիրվել է հասարակական խորհրդի նիստ<sup>1012</sup>, որի ընթացքում քննարկվել են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խնդիրները, այդ թվում՝ այնպիսիք, որոնք առաջ են եկել 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի հետևանքով: Խորհրդի անդամներին են ներկայացվել Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքները՝ ռազմական դրության ընթացքում: Նիստի ընթացքում խորհրդի անդամները ներկայացրել են նաև իրենց կողմից մատուցվող ծառայությունները՝ զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման, հաշմանդամություն ունեցող երեխաների համար վերականգնողական ծրագրերի իրականացման, հաշմանդամություն ունեցող անձանց համար սպորտի միջոցով վերականգնողական ծրագրերի իրականացման ոլորտներում:

Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի ստեղծումից ի վեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում շարունակվել է արդյունավետ համագործակցությունը միջազգային զարգացման գործակալությունների հետ: Օրինակ՝ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ և Պաշտպանի նախաձեռնությամբ 2021 թվականի սեպտեմբերի 7-ին հրավիրվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին առընթեր

<sup>1009</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով <https://bit.ly/3BFW7rE>:

<sup>1010</sup> Սույն հաղորդման սույն բաժնում այսուհետ՝ Պաշտպանին առընթեր հասարակական խորհուրդ:

<sup>1011</sup> Տե՛ս Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անհատական կազմը: Հասանելի է <https://www.ombuds.am/images/files/b61ee1a6dbde02aad0714cacaf5907a6.pdf> հղումով:

<sup>1012</sup> Տե՛ս Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի նիստի վերաբերյալ հրապարակումը: Հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1568> հղումով:

հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհրդի նիստ<sup>1013</sup>: Նիստի ընթացքում քննարկվել են հաշմանդամության կարգավիճակի սահմանման չափորոշիչների և բժշկասոցիալական փորձաքննության արդյունքների բողոքարկման հետ կապված հիմնախնդիրները:

Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի կարևոր դերի օրինակներից է նաև այն, որ Հայաստանի և Արցախի պաշտպանների նախաձեռնությամբ առաջին անգամ 2021 թվականի դեկտեմբերի 15-ին տեղի ունեցավ պաշտպաններին առընթեր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հարցերով հասարակական խորհուրդների առցանց նիստ<sup>1014</sup>: Համատեղ նիստի ընթացքում քննարկվել են հետպատերազմյան ժամանակահատվածում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրները, Հայաստանի և Արցախի ոլորտային հասարակական կազմակերպությունների համագործակցության հեռանկարները:

Կարևորելով միջգերատեսչական և միջոլորտային համագործակցություն՝ ի նպաստ համակարգային խնդիրների լուծման, 2021 թվականի Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները մասնակցել են գործադիր, օրենսդիր մարմինների նախաձեռնությամբ կազմակերպված խորհրդաժողովներին, աշխատանքային քննարկումներին, որոնց ընթացքում ներկայացվել են նաև Պաշտպանի մշտադիտարկումներին արդյունքները, ոլորտային համակարգային խնդիրները՝ ընդգծելով օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի բարելավման վերաբերյալ Պաշտպանի դիրքորոշումները և հնարավոր լուծումների առաջարկները:

Պաշտպանի աշխատակազմի նախաձեռնությամբ քննարկումներ են իրականացվել նաև տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև մարզային ոլորտային այլ կառույցների հետ: Օրինակ՝ աշխատանքային քննարկումներ են իրականացվել Շիրակի մարզպետարանում հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների վերաբերյալ, Սյունիքի մարզի «Կապանի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնում» հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքների գնահատման խնդիրների վերաբերյալ, Սյունիքի համայնքապետարանում՝ կապված հետպատերազմյան ժամանակաշրջանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խնդիրների հետ և այլն:

**Պաշտպանը՝ որպես Կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների կանխարգելման և պաշտպանության սահմանադրական անկախ մարմին, արձանագրում է, որ չնայած պետության ձեռնարկած քայլերին՝ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող մարդիկ շարունակում են բախվել խտրականության և իրենց իրավունքների իրացման**

<sup>1013</sup> Տե՛ս Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի նիստի վերաբերյալ հրապարակումը: Հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1902> հղումով:

<sup>1014</sup> Տե՛ս պաշտպաններին առընթեր հասարակական խորհուրդների համատեղ նիստի տեսագրությունը: Հասանելի է <https://www.facebook.com/Armenianombudsman/videos/625214065462556/> հղումով:

տարաբնույթ խոչընդոտների, որոնք ուսումնասիրվել և ներկայացվել սույն բաժնում՝ այն հաշվառմամբ, որ դրանք արտացոլված չեն կամ առավել մանրամասն ներկայացված են Արտահերթ զեկույցում:

## ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ ԵՎ ԽՏՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ՈՐՊԵՍ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՔԱՅԻՆ ՊԱՏՃԱՌ

Թեև հաշմանդամության հիմքով խտրականության սահմանադրական և կոնվենցիոն արգելքներին՝ շարունակում է արդիական մնալ խտրականության դրսևորումների արձանագրման, գնահատման գործուն ու արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Դրա հետևանքով գործնականում գրեթե անհնար է դառնում խտրականության դրսևորման բացահայտումը, կանխարգելումն ու հետևանքների վերացումը: Արդյունքում, խտրական վերաբերմունքի, հատկապես ոչ բացահայտ կամ անուղղակի, առկայության հաստատման իրական հնարավորություններից զրկված լինելու պատճառով հաշմանդամություն ունեցող մարդկանց մեկուսացումը հասարակությունից էլ ավելի է խորանում: Մինչդեռ՝ **հասարակությունում առկա կարծրատիպերի հաղթահարման համար իրական միջավայրի ստեղծումն ոչ միայն անհրաժեշտություն է, այլ նաև Կոնվենցիայով<sup>1015</sup> ստանձնած՝ պետության ուղղակի պոզիտիվ պարտավորություն:** Այս նպատակով պետությունը պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ քայլերն ապահովելու այդ միջավայրի ոչ ձևական լինելը:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքների ուսումնասիրությունը, մշտադիտարկման արդյունքները, հասարակական կազմակերպություններ ներկայացրած տեղեկությունները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ կարծրատիպային մոտեցումները, այդ թվում՝ պետական մարմինների ներկայացուցիչների շրջանում, շարունակում են համակարգային բնույթ կրել, որին Պաշտպանն անդրադարձել է իր տարեկան հաղորդումներով<sup>1016</sup> և Արտահերթ զեկույցով<sup>1017</sup>: Այս կապակցությամբ Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության նկատմամբ հարգանքի ամենաբարձր աստիճանի ընկալման և դրսևորման դեպքում է միայն, որ տվյալ մարդու իրավունքը կամ ազատությունը կարող է գործնականում իրականանալ և ձևական բնույթ չկրել: Մինչդեռ՝ գործնականում, հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորումները հաճախ

<sup>1015</sup> Տե՛ս Կոնվենցիայի 8-րդ հոդվածը: Հասանելի է [http://www.un.am/res/UN%20Treaties/III\\_15.pdf](http://www.un.am/res/UN%20Treaties/III_15.pdf) հղումով:

<sup>1016</sup> Տե՛ս Պաշտպանի տարեկան հաղորդումները, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1017</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

քողարկված են և առերևույթ չեն պարունակում հաշմանդամության հիմքով խտրականության հատկանիշներ կամ ակնհայտորեն ուղղված չեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Խտրական ընկալումների համատեքստում իրավական ակտերի եզրույթներում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային մոտեցումների կիրառության խնդրի մասին Պաշտպանն արձանագրել է նաև իր տարեկան հաղորդումներով<sup>1018</sup>: Մասնավորապես՝ Պաշտպանն անդրադարձել է օրենսդրական և ենթօրենսդրական ակտերում այնպիսի եզրույթների կիրառման անթույլատրելիությանը, որոնք թիրախավորում կամ խարանի են ենթարկում հաշմանդամություն ունեցող անձանց՝ առաջարկելով նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ բացառելու դրանցում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների տեսանկյունից անընդունելի եզրույթների կիրառումը: Այս կապակցությամբ, ի պատասխան Պաշտպանի հարցման, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ «Նախարարություն՝ կարծիքի ներկայացվող բոլոր իրավական ակտերն ուսումնասիրվում են նաև հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականություն պարունակող հասկացությունների, դրույթների տեսանկյունից և տրվում են համապատասխան առաջարկություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորություններ, մատչելի և ոչ խտրական պայմաններ ապահովելու նպատակով:»

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը բարձրացրել էր նաև տարբեր հաստատությունների անվանումների կիրառման հարցում խտրական եզրույթների անթույլատրելիության հարցը՝ այն նկատառմամբ, որ դրանք թիրախավորում և պիտակավորում են տվյալ հաստատությունում բնակվող, խնամք կամ կրթություն ստացող անձանց:

Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ «2021 թվականին նախարարության կողմից նախաձեռնվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի ծավալուն փոփոխություն, որում նախատեսվել է հանել «հակասոցիալական վարք դրսևորող» եզրույթը:» Այս դեպքում անհասկանալի է, թե ինչ չափանիշներով է որպես խնդրահարույց առանձնացվել միայն նշված եզրույթը, ինչպես նաև անընդունելի է այն, որ խնդիրը դիտարկվել է միայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի տիրույթում, որն ունի կարգավորման հստակ առարկա, մինչդեռ ուսումնական հաստատությունների անվանումները սահմանվում են նաև այլ ենթօրենսդրական ակտերով, որոնք նույնպես ենթակա են վերանայման: Ավելին՝ հարց է առաջանում, թե ինչ քայլեր են ձեռնարկվել նախարարության ենթակայությամբ գործող այն հաստատությունների անվանումների փոփոխման ուղղությամբ, որոնք «հակասոցիալական վարք դրսևորող» եզրույթի փոխարեն պարունակում են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների տեսանկյունից անընդունելի այլ եզրույթներ: Նման օրինակ էր նշվել նաև Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ՝ ներկայացնելով «Երևանի մտավոր

<sup>1018</sup> Տե՛ս Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ի անվանման<sup>1019</sup> հարցը:

Հաստատությունների անվանումներում անընդունելի եզրույթների վերանայման խնդրի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանվել է նաև, որ «2021թ. մայիսի 5-ին «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի ընդունումից հետո կգույքագրվեն Նախարարության կողմից մշակված՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների տեսանկյունից անընդունելի եզրույթների իրավական ակտերը՝ անհրաժեշտ փոփոխություններ իրականացնելու նպատակով: Միաժամանակ, Նախարարության կողմից մշակվել և շրջանառության է դրվել «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որում ի թիվս այլ փոփոխությունների՝ նախատեսվել է Օրենսգրքի բոլոր հոդվածներում կիրառվող «հաշմանդամ» բառերը փոխարինել «հաշմանդամություն ունեցող անձ բառերով»:

Հաշվի առնելով վերոգրյալ, ինչպես նաև կարևորելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ընդունված՝ անընդունելի եզրույթներով իրավական ակտերի գույքագրման մտադրությունը՝ Պաշտպանը հատուկ արձանագրում է, որ այն պետք է կրի շարունակական բնույթ, իրականացվի բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ առհասարակ ներառելով օրենսդրական և ենթաօրենսդրական բոլոր ակտերի վերլուծությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականության դրսևորման դեպքերի վերաբերյալ Պաշտպանի հարցմանն ի պատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ նախարարությունը հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ խտրականության դրսևորման դեպքերի վերաբերյալ բողոքներ չի ստացել:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Շիրակի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրականության, ծաղրի և խարանի վերաբերյալ բողոքներ չեն ստացվել, Լոռվա մարզում նման նախադեպ չի եղել, իսկ Կոտայքի մարզում 2021 թվականի ընթացքում նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաշմանդամություն ունեցող երեխաներ չեն հաճախել: Գեղարքունիքի և Տավուշի մարզերի վերաբերյալ տվյալներ չեն տրամադրվել:

Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ իր ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրականության, ծաղրի և խարանի, ինչպես նաև բռնության վերաբերյալ բողոքներ չեն գրանցվել:

<sup>1019</sup>

Տե՛ս

<http://escs.am/files/files/2020-02-11/2b4cb99687edb08d06f14870301cf8b2.pdf>

և

<https://www.imdproc.am/SchoolProfile/5adafef4-4de5-4ce2-b74c-186951acad3e> հղումներով:

Ի պատասխան Պաշտպանի հարցման՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կիրառվող խտրականության, ծաղրի և խարանի վերաբերյալ բողոքների դեպքեր չեն արձանագրվել:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ստացել է ահազանգեր ուսումնական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ խտրական վերաբերմունքի, ծաղրի կամ խարանի դեպքերի վերաբերյալ: Օրինակ՝ դիմումների մեկով անձը հայտնել է, որ իր երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք: Բողոք ներկայացրած անձի պնդմամբ՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչը թույլ չի տալիս իր երեխային մասնակցել դասաժամերին, քանի որ ըստ նրա՝ երեխան չի կարողանում կատարել վարժությունները: Ավելին՝ ծնողի պնդմամբ ուսուցիչն իրեն ասել է, որ «ինքը պետք է շնորհակալ լինի նրա համար, որ թույլ են տալիս իր «հիվանդ» երեխային մուտք գործել դահլիճ:» Քաղաքացին նշել է, որ տարբերակված մոտեցում է նաև դրսևորվում դպրոցի ուսմասվարի կողմից, քանի որ վերջինս ծնողական ժողովի ժամանակ իրեն հայտնել է, որ «բավարար ժամանակ չունի իր երեխային հատկացնելու համար, քանի որ նա չի հասկանում և անգրագետ է:» Դիմումի ուսումնասիրության ընթացքում բարձրացված հարցը քննարկվել է դպրոցի տնօրենի հետ, ով հերքել է ծնողի պնդումները, ներկայացրել ուսուցիչների և համադասարանցիների զեկուցագրերը: Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցչի կողմից ներկայացվել է հաշմանդամության հիմքով խտրական վերաբերմունքի անթույլատրելիությունը՝ նշելով, որ դպրոցում աշակերտին ծաղրելը, անվանարկելը, ճնշելը, արհամարհելը, շրջապատից բացառելը և այլ գործողությունները, որոնք նսեմացնում են աշակերտի արժանապատվությունը և բացասաբար ազդում նրա հոգեբանության վրա, ուստի խիստ կարևոր են տնօրինության կողմից ձեռնարկվող գործուն քայլերը: Հետագայում բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ Պաշտպանին դիմելուց հետո դպրոցում երեխայի նկատմամբ վերաբերմունքը որոշակիորեն փոխվել է:

Մեկ այլ դիմումով Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ իր երեխան ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, սովորում է 1-ին դասարանում: Ծնողի պնդմամբ՝ դպրոցի փոխտնօրենն իրեն հայտնել է, որ իր երեխան խաթարում է դպրոցի անդորրը և վախեցրել, որ «եթե չի ցանկանում, որպեսզի իրավիճակն ավելի սրվի, պետք է վերջինս իր երեխային տեղափոխի այլ դպրոց»: Բողոք ներկայացրած անձի տեղեկություններով դպրոցի փոխտնօրենը նաև նշել է, որ պետությունը դպրոցին ներառական կրթության իրականացման համար ոչնչով չի օժանդակել և հատուկ մասնագետներով չի ապահովել: Դիմումի ուսումնասիրության ընթացքում բարձրացված հարցը քննարկվել է, որ դպրոցի տնօրենի հետ, ով հերքել է ծնողի ներկայացրած տեղեկատվությունը և պարզաբանել, որ երեխայի մայրն իրականում խոչընդոտում է, որ երեխան ձեռք բերի ինքնուրույնություն, քանի որ վերջինս ցանկանում է մշտապես լինել երեխայի կողքին, այդ թվում՝ դասաժամերին: Քննարկման ընթացքում երեխայի հետ համապատասխան մասնագետների կողմից անհրաժեշտ աշխատանք իրականացնելու նպատակով ձեռք է բերվել

տարածքային մանկավարժահոգեբանական աջակցման կենտրոնի ներկայացուցիչների հետ համագործակցության պայմանավորվածություն: Հետագայում բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ իր հետ կապ է հաստատել ՏՄԱԿ-ի ներկայացուցիչը և տեղեկացրել, որ կիրականացվի երեխայի կարիքների գնահատում և կցուցաբերվի մասնագիտական աջակցություն:

Պաշտպանի աշխատակազմ ահազանգերից մեկով էլ ծնողը հայտնել, որ իր երեխայի մոտ ախտորոշված է «Էպիլեպսիա» հիվանդություն, ինչի հետևանքով դպրոցում երեխային ձեռնել են, աշակերտները քվեարկություն են կազմակերպել, թե ով է կողմ, որպեսզի իր երեխան դուրս գա դպրոցից: Քաղաքացու պնդմամբ խնդիր է այն, որ դասղեկի կողմից երեխայի հիվանդության մասին բժշկական գաղտնիքը բացահայտվել է, ինչի հետևանքով ինքը ստիպված է եղել երեխային տեղափոխել է այլ դպրոց:

Պաշտպանին հասցեագրված դիմումների և ահազանգերի ուսումնասիրությունը վկայում է, որ նմանատիպ դեպքերի խորքային պատճառներից է ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ կարծրատիպային ընկալումները, այլ երեխայի զարգացման հնարավորությունների և նրա արժանապատվության նկատմամբ հարգանքի ոտնահարումը<sup>1020</sup>, ինչպես նաև ուսումնամանկավարժական անձնակազմերի ոլորտային կարողությունների, ուսումնական հաստատություններին հատկացված ռեսուրսների, այդ թվում՝ նեղ մասնագետների սղությունը: Միաժամանակ, ոլորտային ուսումնասիրությունները, Պաշտպանի մշտադիտարկումները, հասարակական կազմակերպությունների ներկայացրած տեղեկատվությունը վկայում է, որ իրականացվող վերապատրաստումները ոչ միշտ են կարիքահեն և թիրախային: Դրանք գործնականում չեն ապահովում այն խնդիրների լուծման համար անհրաժեշտ կարողությունները, որոնց առնչվում են մասնագետները: Արդյունքում՝ հաճախ այդ խնդիրների լուծման ողջ բեռը կրում են մասնագետները:

Ավելին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրված տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում, այնուամենայնիվ, խիստ մտահոգիչ է հաշմանդամություն ունեցող անձանց խնամք, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ուսումնական հաստատություններում խտրականության, ծաղրի և խարանի դեպքերի բացահայտման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Այս կապակցությամբ Պաշտպանը հատուկ ընդգծում է նմանատիպ դեպքերի բացահայտման նպատակով իրավասու մարմինների կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացվող քայլերի կարևորությունը՝ անկախ բողոքների առկայությունից: Այս նպատակով անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր հանրային իրազեկման, վերահսկողության արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այս համատեքստում հատկանշական է, որ ՄԱԿ-ի Կայուն զարգացման 10.3.1, 16.b.1 նպատակների կատարումը ենթադրում է նաև այնպիսի ցուցանիշների առկայություն, որոնք վերաբերում են մարդու իրավունքների միջազգային իրավունքով արգելված խտրականության

<sup>1020</sup> Ավելի մանրամասն տե՛ս սույն բաժնի համապատասխան գլխում:

հիմքով վերջին 12 ամիսների ընթացքում անձամբ խտրականության կամ ոտնձգության ենթարկված լինելու մասին հաղորդում ներկայացրած մարդկանց համամասնությանը:

2020 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրած բողոքով «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների բարեգործական հասարակական Կազմակերպությունը<sup>1021</sup> բարձրացրել է Կազմակերպության շահառուների նկատմամբ խտրականության դրսևորման, Երևանի քաղաքապետարանի կողմից Կազմակերպության շահառուների իրավունքների իրացման խոչընդոտների հետ կապված մի շարք հարցեր: Բողոքի քննարկման արդյունքում Պաշտպանը կայացրել էր մարդու իրավունքների կամ ազատությունների խախտման առկայության մասին որոշում և հաստատված էր համարել, որ Կենտրոնի շահառուների նկատմամբ տեղի է ունեցել ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով ամրագրված՝ հաշմանդամության հիմքով խտրականության բացառման պահանջի խախտում, ինչպես նաև խոչընդոտներ են ստեղծվել Կոնվենցիայով ամրագրված՝ հաշմանդամություն ունեցող անձանց՝ համայնքում ներգրավված լինելու իրավունքի իրացման համար: Ըստ այդմ՝ Պաշտպանն առաջարկել էր Երևանի քաղաքապետին Երևանի ավագանուն առաջարկ ներկայացնելու «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների բարեգործական ՀԿ-ին թիվ 146 մանկապարտեզում անհատույց օգտագործման տարածք հատկացնելու վերաբերյալ՝ ապահովելով Կենտրոնի շահառուների կարիքներին առանձնահատկությունների ամբողջական ներկայացումը: Առաջարկվել էր նաև

- թիվ 146 մանկապարտեզում տարածք հատկացնելու վերաբերյալ առաջարկն ավագանու կողմից մերժելու դեպքում միջոցներ ձեռնարկել «Փրկություն» հաշմանդամ երեխաների և երիտասարդների բարեգործական ՀԿ-ին շահառուների կարիքներին համապատասխանող տարածքի տրամադրման ուղղությամբ՝ ապահովելով վերջիններիս ցերեկային խնամքի և առօրյա զբաղվածության սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը՝ սույն որոշման մեջ վկայակոչված՝ Հանրապետական մանկավարժահոգեբանական բազմամասնագիտական խմբի փորձագիտական եզրակացության հաշվառմամբ

- մինչև նոր տարածք տրամադրելն ապահովել Կազմակերպության գործունեության իրականացումը թիվ 146 մանկապարտեզում տարածքում՝ առանց խոչընդոտների,

- նոր տարածք տրամադրելիս հաշվի առնել նաև առավել երկարաժամկետ պայմանագրի կնքման նպատակահարմարությունը՝ հետագայում տեղափոխման հնարավոր խնդրից խուսափելու համար:

Բարձրացված հարցի առնչությամբ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Երևանի ավագանին որոշում է կայացրել Երևանի թիվ 146 մանկապարտեզի տարածքից հատված կազմակերպությանն անհատույց օգտագործման հանձնելու մասին պայմանագրի ժամկետը 5 տարով երկարաձգելու մասին:

<sup>1021</sup> Սույն գլխում այսուհետ՝ Կազմակերպություն



Այսպիսով, Պաշտպանը 2021 թվականին ևս արձանագրում է, որ խտրական դրսևորումների արդյունքում էլ ավելի է խորանում անհանդուրժողականությունը հասարակական տարբեր ոլորտներում: Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ կարևոր է պետության դերակատարումը խտրականության տարբեր դրսևորումների դեմ պայքարի հարցում: Այս համատեքստում սկզբունքային նշանակություն ունի հաշմանդամության հիմքով խտրականության բացառումը, որի նպատակով Կոմիտեն 2017 թվականի մայիսի 8-ի<sup>1022</sup> իր վերջնական եզրակացությունների ու առաջարկների դիտարկումներով առաջարկել է արագացնել հակախտրականության մասին օրենքի ընդունումը և ապահովել, որ օրենքը ներառի հաշմանդամության հիմքով խտրականության սահմանումը և՛ հանրային, և՛ մասնավոր ոլորտներում, բազմակի և փոխհատվող խտրականության սահմանումները, ինչպես նաև սահմանել սանկցիաների համակարգ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտման համար<sup>1023</sup>: Այս առումով Պաշտպանը կրկին ընդգծում է, որ **հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման ապահովումը պետության այլընտրանք չունեցող պարտավորությունն է:**

*Հաշվի առնելով վերոգրյալն՝ անհրաժեշտ է.*

- 1. պետական, համայնքային և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար ներդնել էթիկայի պարտադիր կանոններ, որոնք ներառում են նաև խտրական և վիրավորող խոսքի կիրառումը բացառող պահանջներ,*
- 2. սահմանել էթիկայի կանոնները խախտելու դեպքում պատասխանատվության միջոցներ և դրանց կիրառման ընթացակարգեր,*
- 3. պետական, համայնքային և տարածքային կառավարման մարմինների պաշտոնատար անձանց համար կազմակերպել պարտադիր վերապատրաստումներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց հետ հաղորդակցվելու հմտությունների վերաբերյալ,*
- 4. կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, հատկապես խտրականության դրսևորումների վերաբերյալ իրազեկման միջոցառումներ, որոնք միտված կլինեն խտրականության ձևերի վերաբերյալ առկա ընկալումների վերափոխմանը,*
- 5. նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ՝ բացառելու դրանցում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների տեսանկյունից անընդունելի եզրույթների կիրառումը:*

<sup>1022</sup> Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի առաջին զեկույցի վերաբերյալ: CRPD/C/ARM/CO/1: 2017. մայիսի 8: Ամբողջական տեքստը անգլերեն հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/ARM/CO/1&Lang=En](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/ARM/CO/1&Lang=En) հղումով՝

<sup>1023</sup> Վերջին մոտ տաս տարվա ընթացքում մշակվել է նշված օրենքի երեք նախագիծ, որոնցից վերջին [նախագիծը](#) դրվել է հանրային քննարկման մոտ երկու տարի առաջ:

## **ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐԵՎԷ ՏԵՍԱԿԻ ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆ**

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի հետ կապված հարցերը մշտապես գտնվել են Պաշտպանի առանձնակի ուշադրության ներքո՝ ինչպես իր կոնվենցիոն մանդատի շրջանակներում, այնպես էլ՝ որպես Խոշտանգումների ազգային մեխանիզմ: Այս համատեքստում Պաշտպանը մշտապես շեշտադրել է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ որևէ տեսակի վատ վերաբերմունքի բացառման կարևորությունը՝ հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր իրավունքների իրացումն ապահովելու հարցում: Պաշտպանը տարեկան հաղորդումներով և Արտահերթ զեկույցներով, հրապարակումներով բազմիցս է նշել նման վերաբերմունքի դրսևորման տարբեր օրինակների և խնդիրների մասին: Դրանց ուսումնասիրությունը վկայում է, որ առկա կարծրատիպերը, միջավայրի ազդեցությունը, խտրականության դրսևորումները դիտավորյալ կամ ոչ դիտավորյալ կերպով կարող են հանգեցնել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի, ինչն էլ իր հերթին ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում է հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքներն այլոց հետ հավասար հիմունքներով իրացնելու հնարավորությունների վրա:

Օրինակ՝ կարծրատիպային այն ընկալումը, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք չեն կարող ինքնուրույն իրացնել իրենց իրավունքները, մասնակցել որոշումներ կայացնելու գործընթացին շատ դեպքերում հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի ոտնահարման՝ վատ վերաբերմունքի միջոցով:

Պաշտպանի մշտադիտարկումները, բողոք ներկայացրած անձանց հետ առանձնազրույցների արդյունքները, ինչպես նաև նրան պնդումները փաստում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի տարածված դրսևորումներից է նաև նվաստացնող վերաբերմունքը: Օրինակ՝ Կանխարգելման ազգային մեխանիզմի ներկայացուցիչների կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում լվացքը չորացվել է լվացքատան հարակից հատվածներում՝ սյուների ամրացված պարանների վրա կամ բաժանմունքների տանիքներում: Այցի պահին պարանների՝ լվացքով ծանրաբեռնված լինելու պատճառով խնամարկյալների հագուստի և սպիտակեղենի մի մասը չորացվել է հոգեբուժական կազմակերպության ցանցապատ պարսպի վրա, իսկ մյուս մասը, այդ թվում՝ նաև ներքնազգեստներ, գետնին՝ աղբի և ծխախոտի

մնացորդների վրա: Նշվածը նվաստացնում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց արժանապատվությունը և խիստ անընդունելի է<sup>1024</sup>:

Այս համատեքստում Պաշտպանն արձանագրում է, որ արդյունավետ բողոքարկման մեխանիզմների առկայությունը, անկախ անձի գտնվելու վայրից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի հիմնարար երաշխիք է: Հարցին անդրադարձ է կատարել նաև ԽԿԿ-ն, որը 2018 թվականի 27-րդ ընդհանուր զեկույցի 84-րդ կետում ընդգծել է, որ հոգեբուժական կազմակերպությունում պետք է ապահովված լինի բողոքարկման ուղիղ և կոնֆիդենցիալ հասանելիություն, այսինքն՝ համապատասխան վայրերում տեղադրվեն դիմում-բողոքների փակ արկղեր, որոնք բացվում են միայն հատուկ դրա համար նախատեսված անձանց կողմից, ովքեր պահպանում են դիմում-բողոքի գաղտնիությունը, իսկ պահվող անձանց հետ առօրյա աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է չունենա այդ դիմում-բողոքներն ուսումնասիրելու հնարավորություն:

Ավելին՝ Պաշտպանին ներկայացված դիմումների, ինչպես նաև ահազանգերի ուսումնասիրությունները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունք է դրսևորում իրենց, իսկ բարեկամների կողմից, երբ վերջիններիս դիմում են որևէ պետական մարմնի հաշմանդամություն ունեցող կոնկրետ անձին վերաբերող հարցով: Արձանագրվել են դեպքեր, երբ Պաշտպանին բանավոր բողոք ներկայացնելիս, մարդիկ հաշմանդամություն ունեցող անձանց բնութագրել են «հոգեկան», «գիժ» կամ «անհասկացող» բառերով: Նման կարծրատիպային մոտեցման պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք իրենց իրավունքներն իրացնելիս արժանանում են անհարգալից, վիրավորական խոսքերի, ոտնահարվում է նրանց արժանապատվությունը: Խնդիրն էլ ավելի է խորանում այն պատճառով, որ պետությունը, ի դեմս՝ պետական մարմինների և հանրային մարդկանց, համարվելով սոցիալական և հասարակական որոշակի վարքագիծ թելադրող, բավարար իրազեկում չի կատարում նման վերաբերմունքի անթույլատրելիության վերաբերյալ : Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանն իր ելույթներում և հրապարակումներում բազմիցս է կարևորել՝ նշելով, որ հանրային մարմինների կողմից լրացուցիչ անհրաժեշտ և հրատապ ջանքերի գործադրմամբ պետք է նպաստել նման վերաբերմունքը բացառմանը: **Այս համատեքստում հաշմանդամություն ունեցող անձանց արժանապատվության և նրանց իրավունքների նկատմամբ հարգանքը կարևորագույն նախապայման է**, որն երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով:

Հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ բողոքների բացակայության մասին է տեղեկացրել նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Մինչդեռ Պաշտպանի ստացած ահազանգերով բողոք ներկայացրած անձինք և իրենց ընտանիքի անդամները նշել են, որ

<sup>1024</sup> Տե՛ս Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ արտահերթ զեկույց: Հասանելի է <https://www.ombuds.am/images/files/cdc79ed63e188008962836823aa696ab.pdf> հղումով:

որոշ դեպքերում վատ վերաբերմունքի են արժանանում, երբ որևէ հարցով դիմում են պատվիրակված ծառայություն մատուցող կազմակերպության կամ պետական իրավասու մարմիններին: Օրինակ, դիմումներից մեկով բողոք ներկայացրած անձը հայտնել է, որ երբ հերթական անգամ դիմել է իրավասու պետական մարմին իր ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամի համար պետության կողմից անվճար տրամադրվող դեղորայքը ստանալու հարցով, իրեն մերժել են և իր հասցեին արվել է «պետությունը հիմա Ձեր նմանների ձեռքը կրակն է ընկե՛լ» արտահայտությունը:

Շարունակում է արդիական մնալ բժշկասոցիալական փորձաքննությունների ընթացքում, խնամքի հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ցուցաբերվող անհանդուրժող, անհարգալից վերաբերմունքի հարցը:

Այս կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ Պետության խնամքի ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող անձնակազմերի, այդ թվում՝ հոգեբանների, նեղ մասնագետների մասնագիտական կարողությունների բարելավման ուղղությամբ, նրանց համար էթիկայի և վարքագծի կանոնների ներդրման ուղղությամբ իրականացվել մի շարք ոլորտային վերապատրաստումներ, այդ թվում՝

«1. «Հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների մատուցման առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստման դասընթաց, որտեղ ներառվել են «Հաշմանդամության ոլորտը կարգավորող իրավական դաշտը, ոլորտում իրականացվող բարեփոխումները», «Հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունները, դրանց իրավական հիմքերը», Հայաստանի Հանրապետությունում վերականգնողական օգնությունը և դրա տրամադրման կարգն ու պայմանները», «Կառավարության որոշումներ և իրավական այլ ակտեր՝ կապված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտի հետ» թեմաները: Դասընթացին մասնակցել են ՄՍԾ տարածքային կենտրոնների 44 փաստաթղթավար:

2. «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները» թեմայով վերապատրաստման դասընթաց, որտեղ ներառվել է «Հայաստանում տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրությունը, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող ծառայությունները» թեման: Դասընթացին մասնակցել են «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի, «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի, Սպիտակի խնամքի տան, «Խնամք» և «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ-ների 69 աշխատակից:

3. Հաշմանդամություն ունեցող կամ առողջական խնդիրներով երեխա խնամող ծնող դառնալ ցանկացող անձանց վերապատրաստումների դասընթաց, որտեղ ներառվել է Կոնվենցիան, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքը և այլ

նորմատիվ իրավական ակտեր» թեման: Դասընթացին մասնակցել են հատուկ կարիքներ ունեցող երեխա խնամող 7 խնամատար ծնող:

4. «ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործառույթները և ընթացակարգերը» թեմայով վերապատրաստման դասընթաց, որտեղ ներառվել է «Հաշմանդամության ոլորտը կարգավորող իրավական դաշտը, ոլորտում իրականացվող բարեփոխումները» թեման: Դասընթացին մասնակցել են ԲՍՓ և ԱՄԱ վարչության 51 աշխատակից:

5. «Սոցիալական աշխատանք» մասնագիտության հատուկ ուսուցման (մասնագիտացման) դասընթաց, որտեղ ներառվել են «Սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը. միջազգային իրավական նորմեր և տեղական օրենսդրություն» և «Սոցիալական աշխատանքն ընտանեկան բռնության դեպքերի հետ աշխատանքում» թեմաները: Դասընթացին մասնակցում են Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների 83 աշխատակիցներ:

6. «Սոցիալական աշխատանք տարեցների հետ» թեմայով դասընթաց, որտեղ ներառվել են «Տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությունն ու դրա իրականացման 2017-2021թթ. միջոցառումների ծրագիրը» և «Ոլորտը կարգավորող օրենսդրությունը և տարեցներին ու հաշմանդամներին տրամադրվող ծառայությունները» թեմաները: Դասընթացին մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տուն-ինտերնատների և ՀԿ-ների 30 սոցիալական աշխատողներ, հոգեբաններ և սոցիալական խնամողներ:

7. «Տարեցների խնամքի առանձնահատկությունները» թեմայով դասընթաց, որտեղ ներառվել են «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի, վերականգնողական օգնության տրամադրման կարգն ու պայմանները» և «Հայաստանում տարեցների և հաշմանդամների սոցիալական պաշտպանության ոլորտի օրենսդրությունը, տարեցներին և հաշմանդամներին տրամադրվող ծառայությունները» թեմաները: Դասընթացին մասնակցել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի տուն-ինտերնատների 59 բուժքույրեր, սոցիալական սպասարկողներ, խնամքի պատասխանատուներ և սանիտարներ:

8. «Տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրներն ու կառավարման մեթոդները» թեման: Դասընթացին մասնակցել են «Նորքի տուն-ինտերնատ» և «Երևանի թիվ 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների 109 աշխատակիցներ:»

Կարևորելով պետության կողմից գործադրած ջանքերը՝ Պաշտպանն արձանագրում, որ հաշմանդամություն ունեցող անձի՝ իր նկատմամբ նման վերաբերմունքի վերաբերյալ բողոքներն ու դժգոհությունները ոչ միշտ են պատշաճ արձանագրվում իրավասու մարմնի կողմից, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ բացակայում են համապատասխան արձանագրումները, ինչի հետևանքով հետագայում առաջանում են խնդիրներ անձի՝ բողոքը վերադասության կարգով քննելիս: Այս մասին է վկայում նաև այն, որ տրամադրած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ նախարարության ենթակայությամբ գործող մարմինների կողմից վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքներ 2021 թվականի ընթացքում չի ստացել:

«Առողջապահության նախարարությունը ևս հայտնել է, որ 2021 թվականի ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ նախարարությունը բողոք չի ստացել: Ավելին՝ Առողջապահության նախարարության քաղաքացիների բողոքների և դիմումների արագ արձագանքման բաժնում 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ դիմում չի ստացվել:

Երևանի քաղաքապետարանը պարզաբանել է, որ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ վատ վերաբերմունքի հետ կապված բողոքներ չեն ստացվել, ինչպես նաև խտրական վերաբերմունքի դրսևորման դեպքեր չեն արձանագրվել: Պարզաբանվել է նաև, որ Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների համար այդ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորումները բացառելու վարքագծի կամ էթիկայի կանոններ չեն սահմանվել:

Մինչդեռ՝ պետք է նշել, որ առկա են դեպքեր, երբ Պաշտպանին դիմած անձինք պնդում են, որ վերադասության կարգով, թեև օրինակ՝ բանավոր, բայց դիմել են պետական իրավասու մարմնին, սակայն իրենց հարցը պատշաճ ուշադրության չի արժանացել:

Միաժամանակ՝ պետք է նշել, որ Պաշտպանի մշտադիտարկումների արդյունքները վկայում են, որ պետական իրավասու մարմնի միասնական մոտեցման բացակայության արդյունքում, օրինակ, հոգեբուժական կազմակերպություններում ստացված վնասվածքների հաշվառվման և այդ մասին իրավապահ մարմիններին տեղեկացման սկզբունքները տարբեր են և չեն արտացոլում հոգեբուժական կազմակերպություններում պահվող անձանց անվտանգության ապահովման, ինչպես նաև խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման, դրա արդյունավետ քննությանն ուղղված աշխատանքների իրական պատկերը<sup>1025</sup>:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, իր այն դիրքորոշումը, որ գործող ընթացակարգերը բավարար չափով արդյունավետ չեն եղել, չեն կիրառվում անձի ներկայացրած տեղեկություններն օբյեկտիվ և բազմակողմանի քննարկելու գործուն մեխանիզմներ, ինչի պատճառով ներկայացրած փաստերը բողոքը քննարկող մարմնի կողմից հիմնականում անտեսվում են: Սա պայմանավորված է նաև նրանով, որ բողոքները հիմնականում քննարկվում են նույն մարմնի կողմից, որի աշխատակցի դեմ դրանք ներկայացվել են: Իսկ վերադասության մարմնին դիմելու դեպքում էլ վերջինիս բողոքը քննելու արդյունքում, որպես կանոն, ներկայացնում է այն մարմնի դիրքորոշումը, որի դեմ ներկայացվել էր բողոքը՝ առանց օբյեկտիվ անդրադարձ կատարելու դիմումատուի ներկայացրած տեղեկություններին: Այս կապակցությամբ, ի պատասխան Մարդու իրավունքներ պաշտպանի հարցումների՝ «Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը

<sup>1025</sup> Տե՛ս Հոգեբուժական կազմակերպություններում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ արտահերթ զեկույց: Հասանելի է <https://www.ombuds.am/images/files/cdc79ed63e188008962836823aa696ab.pdf> հղումով:

Պաշտպանի այն հարցին, թե արդյոք «ներդրվել են վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների արձագանքման նոր մեխանիզմներ, նախկինում եղած մեխանիզմներում փոփոխություններ կատարվել են, թե՞ ոչ: Ի՞նչ մեխանիզմներ են ներդրվել վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների նկատմամբ օբյեկտիվ, բազմակողմանի քննարկման, անկախության և պրոֆեսիոնալիզմի կայացման համար ստացել է «Հարցի ենթատեքստը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի» պատասխանը:»

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ որոշ պետություններում գործում են առանձին՝ անկախ մարմիններ, որոնք քննում են, օրինակ, բժշկական հաստատության աշխատակիցների ոչ պատշաճ վերաբերմունքը պացիենտների հետ (օրինակ՝ Իռլանդիայի Հանրապետությունում<sup>1026</sup> և այլն):

Պաշտպանը 2020 թվականի տարեկան հաղորդմամբ իր մտահոգությունն է հայտնել առողջապահության ոլորտում վերապատրաստումների քանակի խիստ անբավարար լինելու վերաբերյալ, ինչն արդիական է նաև 2021 թվականին:

Ավելին, Պաշտպանը արձանագրում է, որ ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս ծառայություններ մատուցելու էթիկայի վերաբերյալ բժշկական հաստատության աշխատակիցների իրազեկվածության բարձրացման հարցում 2021 թվականի ընթացքում գործադրած ջանքերը բավարար չեն: Այսպես, եթե 2020 թվականին ՀՀ Առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի կողմից մշակվել է բժիշկ հաշմանդամություն ունեցող անձի հետ փոխհարաբերությունների բժշկաիրավական ու բիոէթիկական կարգավորումների վերաբերյալ դասընթացներ, որոնց 2020 թվականին մասնակցել են 62 բուժաշխատողներ (բուժաշխատողների շուրջ 1%), ապա 2021 թվականի հարցումներին ի պատասխան ՀՀ առողջապահության նախարարությունը հայտնել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփվելու և վերջիններիս ծառայություններ մատուցելու էթիկայի վերաբերյալ բժշկական կազմակերպության աշխատակիցների իրազեկվածության բարձրացմանն ուղղված 2021 թվականի ընթացքում ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից քայլեր չեն ձեռնարկվել:

#### *Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտ է՝*

*1. ավելացնել հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու հմտությունները զարգացնող՝ բուժանձնակազմի համար նախատեսված դասընթացների թիվը՝ ներգրավելով նաև հաշմանդամություն ունեցող անձանց,*

<sup>1026</sup> Տե՛ս Իռլանդիայի փորձը, հասանելի է <http://www.irishhealth.com/article.html?con=520> հղումով:

2. ներդնել վաղ վերաբերմունքի վերաբերյալ բողոքների անաչառ, օբյեկտիվ, բազմակողմանի քննարկման ընթացակարգեր՝ երաշխավորելով բողոք քննող մարմնի անկախությունը և պրոֆեսիոնալիզմը,

3. ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց իրավունքները ներկայացնող անձանց համար բողոքների ներկայացման և քննման ընթացակարգի վերաբերյալ պատշաճ իրազեկումը՝ նախատեսվելով իրազեկման պարտադիր ընթացակարգեր,

4. աստիճանաբար ավելացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց հեղափոխական հմտությունների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակիցների տոկոսը՝ ապահովելով մարզային ենթակառուցվածքների աշխատակիցների ներգրավվածությունը դասընթացներին:

### **ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգի, այդ թվում՝ գործուն մեխանիզմների, օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայի խնդիրների մասին՝ ընդգծելով դրանց համակարգային բնույթը, ոլորտային բարեփոխումների տևական լինելու և հետաձգումների անթույլատրելիության հարցը<sup>1027</sup>: Մասնավորապես, Պաշտպանը հատուկ ընդգծել, որ օրենսդրական դաշտի անհամապատասխանությունը հաշմանդամության արդի մոդելներին հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների խախտումների և պետության ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարմանը:

Այս կապակցությամբ Պաշտպանը կարևորում է 2021 թվականին «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքների ընդունումը՝ հատուկ արձանագրելով, որ դեռևս 2013 թվականից մեկնարկած գործընթաց լիարժեք իրականացնելու համար անհրաժեշտ է ներդնել օրենքների կիրարկումը գործնականում ապահովող մեխանիզմներ և ընթացակարգեր:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքներով հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և իրացման նոր հնարավորություններին Պաշտպանն անդրադարձել է նաև

<sup>1027</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:



Արտահերթ զեկույցով<sup>1028</sup>: Մասնավորապես՝ կարևորվել է օրենսդրորեն մատչելիության, խելամիտ հարմարեցումների, համընդհանուր դիզայնի, հաշմանդամության ֆունկցիոնալության մոդելի և այլ կոնվենցիոն պահանջների ամրագրումը: Այնուամենայնիվ, Պաշտպանն արձանագրում է, 2021 թվականի ընթացքում խնդրահարույց է օրենքի կիրարկումը գործնականում ապահովող մեխանիզմների և ընթացակարգերի բացակայությունը: Այսպես, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով նախատեսվում է օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում ընդունել մի շարք ենթաօրենսդրական ակտեր, որոնցով ՀՀ կառավարությունը կհաստատի հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համալիր ծրագիրը, անձնական օգնականի ծառայություն տրամադրելու կարգը, խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնական կայքերին ներկայացվող մատչելիության պահանջները և մի շարք այլ կարգավորումներ: Ընդ որում՝ մինչև հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման նորմեր պարունակող իրավական ակտերն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքին: Նշված ենթաօրենսդրական ակտերը 2021 թվականին չեն ընդունվել: Ավելին՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ի օրենսդրական փոփոխություններով սահմանվել է, որ մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինը՝ միասնական սոցիալական ծառայությունն իրականացնում է մի շարք լիազորություններ, այդ թվում՝ հաշմանդամության կարգավիճակի սահմանում, վերականգնողական անհատական ծրագրի կազմում և հաստատում, աշխատանքային կամ մասնագիտական խեղման աստիճանների սահմանում և այլն: Ստացվում է, որ կոնկրետ բժշկասոցիալական փորձաքննությամբ հաշմանդամության պատճառական կապը սահմանվում է հաշմանդամություն առաջացնող ախտաբանական վիճակի և այդ ախտաբանական վիճակի առաջացման պատճառի (անմիջական կապի կամ հետևանքի) վերաբերյալ փաստաթղթերում եղած տվյալների հիման վրա: Միասնական սոցիալական ծառայության իրավասու ստորաբաժանումը բժշկասոցիալական փորձաքննությամբ անձին հաշմանդամություն ունեցող է ճանաչում բժշկասոցիալական փորձաքննության իրականացման, վերականգնողական անհատական ծրագրերի կազմման ու իրականացման կարգին և բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչներին համապատասխան:

2021 թվականին ընդունվել է նաև «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը, որի կարգավորման առարկան և ոլորտային իրավակիրառ պրակտիկան ներկայացված է Արտահերթ զեկույցով:

<sup>1028</sup> Առավել մանրամասն տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ, ի տարբերություն գործող իրավակարգավորումներով սահմանված հասկացությունների և չափանիշների, այս օրենքով անձի ֆունկցիոնալության գնահատումը սահմանված կարգով իրականացվող գործընթաց է, որն իրականացվում է անձի առողջական խնդիրների, գործունեության ու մասնակցության և միջավայրային արգելքների գնահատման հիման վրա անձին որպես հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու կամ մերժելու, անձի ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը որոշելու և անհատական կարիքներին համարժեք սոցիալական ծառայությունները որոշելու նպատակներով: Ընդ որում՝ այս գործընթացում հաշվի են առնվում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման ծածկագրերն ու ցուցանիշները: Օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ևս պետք է ընդունվեն օրենքի ընդունումից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

Պետք է նշել, որ վկայակոչված երկու օրենքների ընդունումից հետո Պաշտպանը բազմիցս նշել էր, որ դրանցով սահմանվել են իրավունքների իրականացման հնարավորություններ, սակայն խնդրահարույց այն, որ ենթաօրենսդրական ակտերի ընդունում կամ վերանայում 2021 թվականի ընթացքում չի իրականացվել: Արդյունքում, ստեղծված է մի իրավիճակ, երբ մարդը, ըստ էության, ունի օրենքով սահմանված իրավունք, սակայն այդ իրավունքը գործնականում իրացնելու մեխանիզմները, ընթացակարգերն ու գործիքակազմերը ներդրված չեն<sup>1029</sup>:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքում 2021 թվականի դեկտեմբերի 10-ին կատարված փոփոխություններով սահմանվեց, որ օրենքի գործողությունը տարածվում է 2023 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ ներքոնշյալ իրավանորմերից, որոնք գործում են մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը, իսկ ՀՀ Կառավարության կողմից ծառայությունների անհատական ծրագրերը կազմելու և իրականացնելու կարգի ընդունման իրավանորմը գործում է մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը: Այս դեպքում խոսքը ՀՀ կառավարության կողմից բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգի, բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչների, հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի կազմման և իրականացման կարգի հաստատման մասին է: Ստացվում է, որ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ համապատասխան ենթաօրենսդրական իրավական ակտերն ընդունվում են տվյալ օրենքն ընդունվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, իսկ 5-րդ հոդվածով այդ ենթաօրենսդրական ակտերի մի մասի հաստատման համար սահմանվում է ավելի երկար ժամկետի հնարավորություն:

Կարևորելով նշված օրենսդրական հստակեցումը՝ Պաշտպանն արձանագրում է, որ առանց անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման և դրանից բխող իրավանորմերի սահմանման «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի առկայությունը

<sup>1029</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

ձևական բնույթ է կրում, քանի որ գործնականում որոշ դեպքերում հնարավոր չի առհասարակ իրացնել հաշմանդամություն ունեցող անձի իրավունքները: Արդյունքում՝ ստացվում է, որ դեռևս գործող չափորոշիչներն ու ընթացակարգերն առավելապես հիմնված են հաշմանդամության բժշկական մոդելի վրա, ինչը համահունչ չէ նաև կոնվենցիոն պահանջներին և չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին ու խնդիրներին<sup>1030</sup>:

Խնդրահարույց է այն, որ 2021 թվականի հունվարի 29-ին ՀՀ Կառավարությունը Ազգային ժողովից հետ է կանչել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը՝ պատճառաբանելով, որ ոլորտային մի շարք օրենքների նախագծերի ընդունումից հետո միայն հնարավոր կլինի լիարժեք ապահովել Կոնվենցիայով նախատեսված պարտավորությունները<sup>1031</sup>: Հաշվի առնելով, որ Կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացմամբ կներդրվեն անհատական հաղորդումների (գանգատներ) և հետաքննության այնպիսի ընթացակարգեր, որոնք նախատեսում են իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ՝ Պաշտպանը հատուկ արձանագրում է, որ օրենսդրական անկատարությունն ու անհամապատասխանությունը Կոնվենցիայի պահանջներին, չի կարող հիմնավոր և արդարացված փաստարկ հանդիսանալ անձի իրավունքների պաշտպանության հնարավորությունները սահմանափակելու համար: Այս պատճառաբանությունը չի բխում մարդու իրավունքների պաշտպանության համընդհանուր մոտեցումներից, փոխարենն առավելապես ծառայում է պետության անգործությունը կամ թերացումներն արդարացնելուն: Այս նկատառմամբ էլ Պաշտպանը վերահաստատում է Կամընտիր արձանագրությունը վավերացնելու իր առաջարկը:

2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգի զարգացման համատեքստում շարունակում է արդիական մնալ քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացում նրանց ներգրավման գործուն և պարտադիր մեխանիզմների ապահովման հարցը, ինչպես նաև Պաշտպանին կարծիքի ներկայացված ոլորտային նորմատիվային իրավական ակտերով սահմանվող տարբեր միջոցառումների, ընթացակարգերի արդյունավետության գնահատման չափելի ցուցանիշների բացակայության հարցը<sup>1032</sup>:

### *Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունել «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքների կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերը,*

<sup>1030</sup> Տե՛ս «Հաշմանդամության կարգավիճակի սահմանման խնդիրները» ենթազվխում:

<sup>1031</sup> Տե՛ս հայտարարությունը: Հասանելի է <https://hcav.am/kamyntir/> հղումով:

<sup>1032</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

2. ներդնել ռազմավարությունների և ոլորտային քաղաքականությունների մշակման, իրականացման և վերահսկման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն ապահովող գործուն մեխանիզմներ,

3. հնարավորինս սեղմ ժամկետներում վավերացնել Կոնվենցիայի Կամընպրի արձանագրությունը:

#### **ԳԼՈՒԽ 4. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

##### **4.1 Հաշմանդամության կարգավիճակի սահմանման չափորոշիչների անհամապատասխանությունը անձի կարիքներին և կենսագործունեությանը**

Տարիներ շարունակ տարեկան հաղորդումներում և հրապարակումներում, ինչպես նաև Արտահերթ զեկույցով<sup>1033</sup> Մարդու իրավունքների պաշտպանը բարձրացրել է հաշմանդամության կարգավիճակի սահմանման ոլորտի համակարգային խնդիրները, որոնց հետևանքով խախտվում են մարդկանց իրավունքները: 2021 թվականի ընթացքում ևս Մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել բողոքներ՝ կապված հաշմանդամության կարգավիճակի սահմանման, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների որոշումների բողոքարկման հետ:

Այսպես, Պաշտպանին հասցեագրված բողոքներով մարդիկ դժգոհություն են հայտնում, որ հաշմանդամության կարգավիճակ սահմանելու նպատակով նշանակված բժշկասոցիալական փորձաքննությունների ընթացքում չի իրականացվում անձի օբյեկտիվ գնություն, հաշվի չեն առնվում անձի կենսագործունեության իրական հնարավորությունները, չի իրականացվում իրական կարիքների գնահատում և փոխարենը որոշումները կայացվում են իրենց համար անհասկանալի, սուբյեկտիվ մոտեցումներով: Խոսքն այն մասին է, որ նման դեպքերում անձի համար ընկալելի և մատչելի եղանակով չի բացատրվում, թե հատկապես ինչ պատճառով է նման կարգավիճակի սահմանվել կամ առհասարակ կարգավիճակ չի սահմանվել այն դեպքում, երբ փոփոխվել է մարդու կյանքի որակ:

Ըստ բողոքների, բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովին ներկայացվել են փորձաքննվողի առողջության վերաբերյալ բժշկական փաստաթղթերը, որոնց ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովները որոշում են կայացրել, որ դրանք չեն վկայում օրգանիզմի կայուն ֆունկցիաների խանգարման մասին: Այս հիմնավորմամբ հանձնաժողովների որոշումներով անձանց նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ չի սահմանվել կամ արդեն իսկ սահմանված հաշմանդամության խումբը չի վերանայվել՝ չանդրադառնալով այն հարցին, թե արդյոք նման

<sup>1033</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

առողջական կամ սոցիալական խնդիրների հետևանքով մարդու կյանքի որակը փաստացի փոփոխվել է, թե ոչ:

Հաշմանդամության կարգավիճակի սահմանման հետ կապված խնդիրների մասին են բարձրաձայնել նաև Մարդու իրավունքներ պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամները: Վերջիններս նշել են, որ բժշկասոցիալական փորձաքննության ժամանակ դեռևս օգտագործվող դասակարգիչներն ու բժշկասոցիալական փորձաքննության միջոցով հաշմանդամության կարգավիճակի, խմբերի սահմանման չափորոշիչները հստակ չեն և հաճախ տարաբնույթ մոտեցումների կիրառման պատճառ են դառնում: Ավելին՝ հաշմանդամության կարգավիճակ, որևէ խումբ սահմանելու կամ կարգավիճակ առհասարակ սահմանելիս բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ընթացքում անձի իրական կարիքների գնահատում խորությամբ չի իրականացվում: Փոխարենը հանձնաժողովի կողմից ուշադրություն է դարձվում միայն ներկայացված բժշկական փաստաթղթերում կատարված տերմինաբանական նշումներով արտացոլվող ախտորոշումներին՝ առանց դրանք համադրելու անձի կարիքների և հնարավորությունների հետ:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, որ բժշկասոցիալական փորձաքննության գործող չափորոշիչները և իրավակիրառ պրակտիկան արդյունավետ չեն ապահովում անձի կյանքի որակի և կենսագործունեության փաստացի փոփոխություն արտացոլող կարգավիճակի սահմանումը՝ ըստ այդմ՝ ոչ բավարար ծավալով անդրադառնալով անձի սոցիալական ներառմանն ուղղված ծառայությունների տեսակների որոշման հարցին: Փոխարենը, անգամ այն դեպքերում, երբ կարգավիճակի սահմանումից հետո առաջարկվում են նաև որոշակի վերականգնողական ծառայությունների տեսակներ, դրանք հիմնականում լինում են առողջապահական բնույթի, ինչը սկզբունքորեն հակասում է հաշմանդամության ֆունկցիոնալության մոդելի հատկանիշներին: Այս մասին է վկայում Պաշտպանին հասցեագրված բողոքների, Պաշտպանի մշտադիտարկումների Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամների դիտարկումների վերլուծությունը և միջազգային փորձի ուսումնասիրությունը:

Այս համատեքստում հարկ է նշել, որ հաշմանդամության ֆունկցիոնալության գնահատման մոդելին անցնելու նպատակով 2021 թվականին ընդունված «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ՀՀ կառավարությունը պետք է ընդունի անձի ֆունկցիոնալության գնահատման չափորոշիչներն ու կարգը՝ հիմնվելով ԱՀԿ դասակարգիչների վրա<sup>1034</sup>:

Հաշմանդամության կարգավիճակի սահմանման կամ հաշմանդամության խմբի փոփոխման հետ կապված խնդիրներն էլ ավելի են խորանում հանձնաժողովների որոշումների վերաբերյալ վարչական ակտերի բողոքարկման գործող ընթացակարգերի արդյունավետ չլինելու պատճառով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում բժշկասոցիալական

<sup>1034</sup> Տե՛ս սույն բաժնի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության իրավական համակարգի բարեփոխումները Կոնվենցիայի պահանջների համատեքստում» գլխում:

փորձաքննության հանձնաժողովների որոշումների բողոքարկման վերաբերյալ նախարարության կողմից ստացված դիմումների և դրանց բավարարման վերաբերյալ Նախարարությունն ապագրեգացված տվյալներ չի տրամադրել՝ նշելով, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, այդ թվում՝ տրամադրվող աջակցող միջոցների, արտոնությունների, բժշկասոցիալական փորձաքննության հարցերով ստացվել է 7315 դիմում, որոնց սահմանված կարգով տրվել է համապատասխան ընթացք: Մինչդեռ՝ Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները և Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամների դիտարկումները փաստում են, որ որոշումը հիմնականում մնում է անփոփոխ, չի կատարվում ամբողջական՝ անձի գանգատների, տեղեկությունների վերլուծություն և փաստաթղթային գննություն: Ավելին, պետական իրավասու մարմինը հաճախ պարզաբանում է, որ «առկա պաթոլոգիայով պայմանավորված աննշան խանգարումը չի հանգեցրել կենսագործունեության որևէ սահմանափակման, ուստի ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշմամբ հաստատված բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչների համաձայն՝ հաշմանդամություն սահմանելու հիմքեր չկան»: Արդյունքում, բողոք ներկայացրած անձանց հիմնականում ներկայացվում է վերափորձաքննության իրականացման կարգը և առաջարկվում առողջական վիճակի վատթարացման դեպքում հաշմանդամության սահմանման նպատակով կրկին դիմել բնակության վայրն սպասարկող բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողով՝ նոր բժշկական փաստաթղթերով: Այս մասին Պաշտպանը նշել է ինչպես 2019 թվականի, այնպես էլ 2020 թվականի տարեկան հաղորդմամբ՝ մատնանշելով նոր բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անձի համար առաջացող ֆինանսական դժվարությունները<sup>1035</sup>:

Պաշտպանին հասցեագրված բողոքների, Պաշտպանի մշտադիտարկումների Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամների դիտարկումների վերլուծությունը վկայում է, շարունակում է խնդրահարույց մնալ բժշկասոցիալական փորձաքննության հանձնաժողովների որոշումների բողոքարկման ընթացակարգերի նկատմամբ մարդկանց անվստահության հարցը<sup>1036</sup>: Նշվածը խիստ մտահոգիչ է նաև այն պատճառով, որ վարչական ակտերի վերադասության կարգով բողոքարկման մեխանիզմների արդյունավետության հարցում թերահավատությունն առհասարակ վտանգավոր է պետության նկատմամբ վստահության նվազման տեսանկյունից: Սա անթույլատրելի է նրանով, որ այս դեպքում մարդիկ չեն ձգտում իրենց իրավունքների պաշտպանության նպատակով օգտվել նախատեսված երաշխիքներից, ինչն էլ հանգեցնում է ինչպես պետության անգործությանը, այնպես էլ՝ մարդու իրավունքների խախտման դեպքերի չբացահայտմանն ու ամենաթողությանը:

1035	Տե՛ս	2020	թվականի	տարեկան	հաղորդումը:	Հասանելի	է
					հղումով:		
					<a href="https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf">https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf</a>		
1036	Տե՛ս	2020	թվականի	տարեկան	հաղորդումը:	Հասանելի	է
					հղումով:		
					<a href="https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf">https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf</a>		

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը բարձրացրել էր նաև փորձաքննությանն անձի կողմից ընտրած բուժող բժշկին կամ այլ բժիշկ մասնագետի՝ որպես ներկայացուցիչ, մասնակցության անարդյունավետության հարցը<sup>1037</sup>: Մասնավորապես, Պաշտպանն արձանագրել էր, որ չնայած ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1527-Ն որոշմամբ նախատեսված այս հնարավորությանը՝ բժիշկ մասնագետներին որպես ներկայացուցիչ ներգրավելը գործնականում ոչ միշտ է էական ազդեցություն ունենում: Այս կապակցությամբ Պաշտպանի կողմից առաջարկ էր արվել այն մասին, որ **անհրաժեշտ է վերջինիս համար սահմանել անկախ փորձագետի կարգավիճակ, վերապահել նաև մասնագիտական դիտարկումներ կատարելու լիազորություններ՝ դրանով իսկ ստեղծելով իրավական հիմք, որ փորձաքննվողի շահերն առավել արդյունավետ ներկայացվեն:**

Այս կապակցությամբ ի պատասխան Պաշտպանի այն հարցմանը, թե ինչ քայլեր են ձեռնարկվել բժշկասոցիալական փորձաքննական որոշումների բողոքարկման գործընթացը, այդ թվում՝ անձի ցանկությամբ ներգրավված բժիշկ-ներկայացուցչի մասնակցությունն առավել արդյունավետ դարձնելու ուղղությամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պարզաբանել է, որ « 2021 թվականի ընթացքում ի պատասխան քաղաքացիներից ստացված դիմումների, ինչպես նաև բանավոր կատարված հարցումների, ի թիվս ներկայացված այլ պարզաբանումների, պարզաբանվել է նաև բժշկասոցիալական փորձաքննական որոշումների բողոքարկման կարգը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1527-Ն որոշման համաձայն՝ իրականացվելիք վերափորձաքննությանը քաղաքացու իր կողմից ընտրած բուժող բժշկին կամ այլ բժիշկ մասնագետի՝ որպես ներկայացուցիչ մասնակից դարձնելու իրավունքը:» Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ 2021 թվականի ընթացքում Պաշտպանի նշված առաջարկի ուղղությամբ պետությունը քայլեր չի իրականացրել և խնդիրը շարունակում է մնալ արդիական:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. մշակել և ներդնել անձի ֆունկցիոնալության և կարիքահեն ծառայությունների գնահատման չափորոշիչներ,*
- 2. հաշմանդամություն սահմանելու յուրաքանչյուր դեպքով ապահովելով ոչ միայն բժշկական փաստաթղթերի, այլև անձի կարիքների և կենսագործունեության հնարավորությունների բազմակողմանի և ամբողջական ուսումնասիրություն, անձի օբյեկտիվ գննություն.*
- 3. վերանայել բժշկասոցիալական փորձաքննական որոշումների բողոքարկման գործող ընթացակարգերն այնպես, որ երաշխավորվի անկախ և օբյեկտիվ բողոքների քննարկումը՝ անձի ցանկությամբ ներգրավված բժիշկ-ներկայացուցչի մասնակցությունը դարձնելով արդյունավետ.*

4. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1527-Ն որոշմամբ սահմանել փորձաքննվող անձի ընտրած բուժող բժշկի համար անկախ փորձագետի կարգավիճակ՝ հստակեցնելով վերջինիս գործառույթներն ու լիազորությունները:

#### **4.2 Ոչ պատշաճ իրազեկումը և ուղղորդումը՝ որպես խնդիրների առաջացման խորքային պատճառ**

Պաշտպանին հասցեագրված դիմումների ուսումնասիրությունը և մշտադիտարկումները վկայում են, որ վարչարարության թերացումների և ոչ պատշաճ հաղորդակցման կամ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկման արդյունքում անձի նկատմամբ հաշմանդամության կարգավիճակի սահմանման խնդիրները շարունակում են մնալ համակարգային բնույթի:

Այսպես, արձանագրվել են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձինք իրենց իրավունքների վերաբերյալ կոնկրետ հարցով դիմում են հանրային մարմիններին և որպես պատասխան ստանում են օրենքներից կամ որոշումներից ուղղակի մեջբերումներ՝ առանց ընկալելի եղանակով պարզաբանելու դրանց բովանդակային մասը: Ընդ որում՝ նման դեպքեր են արձանագրվել ոչ միայն դիմումների մերժման պատասխանների առնչությամբ, այլ նաև այն դեպքերում, երբ կոնկրետ պետական իրավասու մարմինը բավարարել է անձի դիմումը կամ ուղղորդել է կատարելու կոնկրետ քայլեր՝ խնդրի լուծման նպատակով: Արդյունքում՝ լինում են դեպքեր, երբ ոչ մատչելի և ընկալելի հաղորդակցության հետևանքով մարդու մոտ ձևավորվում է ընկալում, որ իր իրավունքները խախտվել են պետական իրավասու մարմնի կողմից: Օրինակ՝ դիմումներից մեկով Պաշտպանին դիմած անձը հայտնել է, որ կացարանի ստանալու հարցով դիմել է պետական իրավասու մարմնին, որը մերժել է իր դիմումը: Բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ պետական իրավասու մարմինը, ի պատասխան քաղաքացու դիմումի, ներկայացրել է ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշմամբ հաստատված «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքներին) հաշվառելու և կացարան տրամադրելու» մասին կարգը և ուղղորդել է դիմել Միասնական սոցիալական ծառայություն՝ պարզելու անձի համապատասխանությունը նշված կարգին: Այս դեպքում խնդիր է եղել նաև այն, որ անձը տեղյակ չի եղել սոցիալական ծառայությունների ոլորտում իրականացված բարեփոխումներով պայմանավորված Միասնական սոցիալական ծառայության ստեղծման վերաբերյալ: Բողոք ներկայացրած անձին Պաշտպանի աշխատակազմի կողմից տրամադրվել է իրավախորհրդատվություն և պարզաբանվել քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև այն իրավասու մարմնի գտնվելու վայրը և փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ է կցել գրավոր դիմումին:



Արձանագրվել են դեպքեր, երբ Պաշտպանին դիմած անձինք հայտնել են, որ զանգահարել են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների թեժ գծերին և փորձել տեղեկանալ իրենց իրավունքների մասին, սակայն իրեն փոխանցել են միայն իրավական ակտի համարները՝ առանց նշելու, թե ում կողմից և երբ են ընդունվել դրանք, որտեղ կարող են ծանոթանալ այդ իրավական ակտերին և ինչ ոլորտ է կարգավորվում նշված իրավական ակտով: Մինչդեռ՝ այս դեպքում՝ պատշաճ հաղորդակցումը և իրազեկումը պահանջում է, ոչ միայն իրավական ակտի հղում, այլ անձի համար մատչելի և ընկալելի եղանակով այն ներկայացնելը և անհրաժեշտ ուղղորդումներ կատարելը:

Այսպիսով, Պաշտպանն արձանագրում է, որ ոչ բոլոր դեպքերում է, որ հանրային մարմինների կողմից ցուցաբերվում անհատական մոտեցում՝ ապահովելով մարդու համար ընկալելի և մատչելի իրազեկում, ուղղորդում: Արդյունքում, չկողմնորոշվելով իր քայլերի, դրանց հաջորդականության հարցում, անձը գործնականում զրկվում է իր իրավունքների իրացման հնարավորություններից, քանի որ նրա համար պարզ չէ, թե իր հարցի լուծման համար կամ իր վրա արդյոք տարածվում է այս կամ այն կանոնները, թե՞ ոչ: Այս կապակցությամբ Պաշտպանը բազմիցս է ընդգծել, որ հանրային մարմինները, պաշտոնատար անձինք պետք է միշտ նկատի ունենան, որ առանց այն էլ իրավական կարգավորումները բարդ են, իսկ պետության պարտավորությունն է ապահովելու մարդու համար ընկալելի և մատչելի եղանակով տեղեկատվության տրամադրումը:

2021 թվականի ընթացքում ևս շարունակվել են Պաշտպանին հասցեագրվել նաև բողոքներ, որոնցով հաշմանդամություն ունեցող անձինք պնդել են, որ խախտվել են իրենց իրավունքները, օրինակ, չի վճարվում հաշմանդամության թոշակ: Բողոքների ուսումնասիրման կամ քննարկման ընթացքում պարզվել է, որ դրանք, գործող իրավակարգավորումների համաձայն, չեն վկայում բողոքում նշված կոնկրետ իրավունքի կամ ազատության խախտման մասին, այլ պետական մարմինների կողմից գործող իրավակարգավորումների վերաբերյալ ոչ պատշաճ իրազեկման, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ չիրազեկելու հետևանք են: Օրինակ՝ դիմումներից մեկով անձը պնդել է, որ ինքը շուրջ երկու ամիս հաշմանդամության թոշակ չի ստանում: Դիմումի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ անձի հաշմանդամության կարգավիճակի ժամկետն ավարտվել է, ինչի պատճառով էլ ինքը թոշակ չի ստանում, սակայն այդ մասին իրեն ամբողջական տեղեկատվություն չի տրամադրվել և ուղղորդում չի կատարվել: Արդյունքում՝ անձն ուղղորդվել է վերափորձաքննության դիմում ներկայացնելու, ինչից հետո նրա նկատմամբ իրականացված բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում վերականգնվել է հաշմանդամության կարգավիճակը, և ըստ այդմ՝ նաև թոշակը: Այս կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ պետությունը պետք է ապահովի պաշտոնատար անձանց, հատկապես իրավասու մարմինների թեժ գծերն սպասարկող աշխատակիցների մասնագիտական կարողությունների և հմտությունների շարունակական զարգացումը՝ հատկապես 2021 թվականի ընթացքում կատարված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ<sup>1038</sup>:

<sup>1038</sup> Ավելի մանրամասն տե՛ս Պաշտպանի 2020 թվականի տարեկան զեկույցում

2021 թվականի ընթացքում Պաշտպանին են հասցեագրվել դիմումներ, որոնց ուսումնասիրություն կամ քննարկումը փաստում է, որ հաշմանդամություն ունեցող դատապարտյալների իրավունքների իրացման հարցում ևս խնդիրներ են առաջանում կապված գործող իրավակարգավորումների կամ պրակտիկայի, ինչպես նաև իրենց դիմումների քննարկման ընթացքի վերաբերյալ թերի իրազեկման հետևանքով: Օրինակ՝ դիմումներից մեկով անձը հայտնել է, որ 2021 թվականին քրեակատարողական հիմնարկից տեղափոխվել է մեկ այլ քրեակատարողական հիմնարկ և Պաշտպանին դիմում ներկայացնելու օրվա դրությամբ չի ստացել իր հաշմանդամության թոշակը: Դիմումի ուսումնասիրման ընթացքում պարզվել է, որ անձի հաշմանդամության թոշակը սխալմամբ ուղարկվել է իր նախկին պահման վայրի փոստային բաժին, սակայն այս մասին քաղաքացին չի իրազեկվել: Արդյունքում՝ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ և անձը հաջորդ ամսվա ընթացքում ստացել է նաև նախորդ ամսվա թոշակը: Մեկ այլ դեպքում էլ դիմում ներկայացնող անձը հայտնել է, որ իր երեխան հաշմանդամություն ունեցող անձ է, սակայն վերջին հինգ ամիսը դադարեցվել է հաշմանդամության թոշակի վճարումը: Դիմումի ուսումնասիրության փուլում պարզել է, որ դիմումատուի երեխայի հաշմանդամության կարգավիճակը վերջին փորձաքննության արդյունքում երկարաձգվել էր 2 տարի ժամկետով, որը լրանալու պատճառով դադարեցվել էր թոշակի վճարումը, սակայն քաղաքացին իրազեկված չի եղել գործող իրավակարգավորումների մասին և վերափորձաքննության դիմում չի ներկայացրել: Քաղաքացին ուղղորդվել է պետական իրավասու մարմին՝ համապատասխան դիմում ներկայացնելու, որից հետո երեխայի նկատմամբ իրականացվել է վերափորձաքննություն և վերականգնվել է երեխայի թոշակը: Դիմումներից մեկով էլ անձը հայտնել է, որ ինքը լիազորագրի միջոցով ստանում է հոգեկան առողջության կենտրոնում բուժում ստացող իր որդու հաշմանդամության կենսաթոշակը: Լիազորագրի ժամկետի ավարտով պայմանավորված՝ բողոք ներկայացրած անձը մեկ ամիս շարունակ չի կարողացել ստանալ որդու կենսաթոշակը, դիմել է հոգեկան առողջության կենտրոն՝ նոր լիազորագրի և տեղեկանքի տրամադրման նպատակով, սակայն վարչարարական քաշքշուկների պատճառով չի կարողացել ստանալ անհրաժեշտ փաստաթղթերը: Բողոքի ուսումնասիրության ընթացքում հոգեկան առողջան կենտրոնի տնօրինությանը ներկայացվել է պատշաճ վարչարարությունը ողջամիտ ժամկետներում իրականացնելու օրենսդրական պահանջը, ինչի արդյունքում նույն օրը բողոք ներկայացրած անձը ստացել է անհրաժեշտ փաստաթղթերը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. մշակել հաշմանդամության ոլորտային իրավակարգավորումների կիրառության ուղեցույցներ պետական մարմինների, այդ թվում՝ թե՛ գծերի պատասխանատու աշխատակիցների համար.*
- 2. հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացնել հանրային իրազեկման աշխատանքներ՝ իրենց իրավունքների մասին գիտելիքների բարձրացման նպատակով (օրինակ՝*

լրավորության միջոցներով, իրազեկման թերթիկների, ուղեցույցների հրապարակում, տեղեկատվական տեսահոլովակների պատրաստում և այլն):

3. ներդնել հաշմանդամության ոլորտի իրավակարգավորումների, այդ թվում՝ բժշկասոցիալական փորձաքննությունների իրականացման, բողոքարկման, ինչպես նաև սոցիալական իրավունքների իրացման հնարավորությունների մատչելի տեղեկատվական թերթիկներ՝ անհրաժեշտ քայլերի հաջորդական ներկայացմամբ և պահանջվող ուղղորդումներով:

### **4.3 Թերի վարչարարությունը՝ որպես այդ խնդիրների առաջացման խորքային պատճառ**

2021 թվականի ընթացքում բողոքների և Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ դիմումների քննարկման ընթացքում հանրային մարմինների վարչարարության թերացումներով պայմանավորված շարունակում են խնդիրներ առաջանալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հարցում:

Այսպես, արձանագրվել են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձը բախվում է խնդիրների՝ պայմանավորված պետական մարմինների կողմից իրենց պարտականությունները ողջամիտ ժամկետում չիրականացնելու կամ անհիմն ձգձգելու պատճառով<sup>1039</sup>: Օրինակ՝ սահմանված կարգի համաձայն՝ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց փորձաքննություն ենթարկելու մասին դիմումներն ուղարկվում են Բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակի իրավասու բաժիններ, «Քրեակատարողական հիմնարկի ղեկավարի համապատասխան գրությամբ, սակայն վարչական վարույթները ողջամիտ ժամկետներում ընթացք չեն ստանում: Արձանագրվել են դեպքեր, երբ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու մասին դիմումին սահմանված կարգով ընթացք չի տրվել «Քրեակատարողական հիմնարկի կողմից: Այսպես, դիմումներից մեկով անձը հայտնել է, որ պատիժ է կրում քրեակատարողական հիմնարկում, որտեղ դիմել է բժշկասոցիալական փորձաքննություն անցնելու համար, սակայն Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ իր նկատմամբ այն չի իրականացվել: Դիմումի ուսումնասիրության փուլում պարզվել է քրեակատարողական հիմնարկի կողմից դեռևս 2020 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին միջնորդություն է ներկայացվել պետական իրավասու մարմնին բողոք ներկայացրած անձի նկատմամբ բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնելու համար, սակայն այն Պաշտպանին դիմելու օրվա դրությամբ չի իրականացվել: Արձանագրված խնդիրն աշխատանքային կարգով քննարկվել է պետական իրավասու մարմնի հետ, ընդգծվել է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման ձգձգման հետևանքով մարդու իրավունքների իրացման խնդիրների հրատապ վերացման

<sup>1039</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>

անհրաժեշտությունը, ինչպես նաև պետության գործողությունների հետևանքով օրենքով հաշմանդամություն ունեցող անձի համար սահմանված իրավունքներից օգտվելու հնարավորությունից զրկվելու անթույլատրելիությունը: Բողոքի ուսումնասիրության ընթացքում հատուկ ընթացակարգով, այն է՝ պարզեցված եղանակով, առանց անձի զննության նրա նկատմամբ սահմանվել է հաշմանդամության 3-րդ խումբ և վճարվել է հաշմանդամության թոշակը:

Մեկ այլ բողոքով անձը հայտնել է, որ իր պատիժը կրում է քրեակատարողական հիմնարկում, որտեղ Պաշտպանին ահազանգելուց շուրջ մեկ ամիս առաջ դիմել է իրեն բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու համար, սակայն ապարդյուն: Բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ քրեակատարողական հիմնարկի կողմից բողոք ներկայացրած անձին բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու միջնորդագիր չի ներկայացվել՝ պատճառաբանելով, որ հիմնարկի բժիշկն ուսումնասիրել է նրա բժշկական փաստաթղթերը և որոշել, որ վերջինիս առողջական վիճակը բավարար է և նրա նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ չի սահմանվի: Պաշտպանի աշխատակազմի կողմից պարզաբանվել է, որ անձի նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ նշանակելու հարցն որոշվում է բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում, ուստի դատապարտյալին բժշկասոցիալական փորձաքննության ենթարկելու մասին դիմումը ստանալուց հետո քրեակատարողական հիմնարկը պարտավոր էր սահմանված կարգով միջնորդագիր ուղարկել պետական իրավասու մարմին: Արդյունքում՝ Պաշտպանի աջակցությամբ քրեակատարողական հիմնարկը սահմանված կարգով միջնորդագիր է ուղարկել պետական իրավասու մարմին՝ ապահովելով անձի փորձաքննվելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ հնարավորությունը:

Այսպիսով, 2021 թվականին ընթացքում Պաշտպանին հասցեագրված դիմումների ուսումնասիրությունները վկայում են, որ շարունակում է համակարգային բնույթի խնդիր մնալ քրեակատարողական հիմնարկներում պատիժ կրող անձանց հաշմանդամության կարգավիճակի հետ կապված հարցերը:

Հաշմանդամության կարգավիճակի սահմանման ոլորտի հիմնահարցերի շարքում դեռ 2018 թվականից տարեկան հաղորդումներով<sup>1040</sup>, ինչպես նաև արտահերթ զեկույցով<sup>1041</sup> Պաշտպանը բարձրացրել է նաև զինվորական անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց հսկողական կարգով վերափորձաքննության ենթարկելու և դրա արդյունքում անժամկետ սահմանված հաշմանդամությունը վերացնելու հետևանքով մի խումբ անձանց նկատմամբ պետության պոզիտիվ պարտավորությունների թերի կատարման հարցը: Մասնավորապես, խնդիրն այն է, որ Քրեական օրենսգրքի 314-րդ հոդվածի 1-ին մասի և 315-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով ՀՀ քննչական կոմիտեում հարուցվել է քրեական գործ և քննիչի որոշմամբ ՀՀ բժշկասոցիալական

<sup>1040</sup> Տե՛ս 2018 թվականի տարեկան հաղորդումը և 2019 թվականի տարեկան հաղորդումը: Հասանելի են Հասանելի է <https://ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf> և <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> հղումներով:

<sup>1041</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

փորձաքննության գործակալությունից առգրավվել են անժամկետ հաշմանդամություն ունեցող անձանց հսկողության վերցված թվով 166 ԲՍՓ գործերը:

Նշված քրեական վարույթի շրջանակներում կարգավիճակ ունեցող մի խումբ անձանց՝ Պաշտպանին հասցեագրված բողոքի քննարկման ընթացքում ի պատասխան Պաշտպանի գրությանը՝ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են տեղեկություններ առ այն, որ «քննիչի կողմից ստեղծվել է մասնագիտական խումբ (հանձնաժողով), որը պետք է քննության ենթարկի փորձաքննվողներին: Նշված ընթացակարգում բոլոր հետազոտվողների համար սահմանվել է ժամանակացույց, որոնք պետք է իրականացվեն 2021 թվականին»: Բողոք ներկայացրած անձանց տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ոչ բոլորի նկատմամբ են իրականացվել նշանակված փորձաքննությունները: Հատկանշական է, որ փորձաքննված անձանցից մեկի ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2021 թվականին իրականացված փորձաքննության արդյունքում ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տրված եզրակացությամբ, փորձաքննությանը ներկայացված համապատասխան բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև փորձաքննության շրջանակներում իրականացված հետազոտությունների և օբյեկտիվ ուսումնասիրության տվյալների արդյունքում, հաստատվել է, որ անձի մոտ ախտորոշված հիվանդությունը համապատասխանում է ՀՀ կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի թիվ 780-Ն որոշման պահանջների չափորոշիչներին՝ անձի նկատմամբ հաշմանդամության 2-րդ խմբի սահմանման համար: Ուշագրավ է, որ բողոք ներկայացրած անձը, վերոնշյալ եզրակացությունը Միասնական սոցիալական ծառայությանը ներկայացնելով, ստացել է պարզաբանում առ այն, որ «Հաշմանդամության զինվորական կենսաթոշակը նշանակվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար: ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի թիվ 665-Ն որոշման թիվ 1 հավելվածի 11-րդ կետի համաձայն՝ հաշմանդամության կենսաթոշակը նշանակվում է բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու պետական մարմնից ստացված՝ անձին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտի քաղվածքի հիման վրա: Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տեղեկատվության համաձայն՝ բողոք ներկայացրած անձի զինվորական հաշմանդամության կենսաթոշակի իրավունքը դադարեցվել է 2018 թվականի մայիս ամսից՝ Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հաշմանդամության ժամկետը լրանալու հիմքով: Ըստ այդմ՝ նշված իրավակարգավորումից հետևում է, որ ներկայացված փորձագետի եզրակացությունը հիմք չի կարող հանդիսանալ բժշկասոցիալական վերափորձաքննություն իրականացնելու և փորձաքննական որոշում, ընդունելու համար, հետևաբար կայացված բժշկասոցիալական փորձաքննական որոշումները կարող են վերանայվել միայն դատարանի որոշման կամ օրինական ուժի մտած վճռի առկայության պարագայում, **իսկ անցած տարիների համար չվճարված զինվորական հաշմանդամության գումարները ենթակա չեն վճարման՝ խնդրո առարկա ժամանակահատվածում զինվորական հաշմանդամության իրավունք չունենալու պատճառաբանությամբ»:**

Այս կապակցությամբ Պաշտպանը դեռևս 2020 թվականի տարեկան հաղորդմամբ արձանագրել էր, որ «Ստացվում է, որ պետությունը կասկածի տակ է դնում նախկինում ընդունված հաշմանդամություն սահմանող փորձաքննական որոշումները, տևական ժամանակ ձեռնամուխ չի լինում որոշակիություն մտցնելու և անձանց կարգավիճակը սահմանելու հարցում: Հերթական վարչարարական ապացուցողական բեռն ընկնում է անձի վրա: Նշվածի հետևանքով մարդկանց նկատմամբ շարունակում են գործել հաշմանդամություն չսահմանելու մասին փորձաքննական որոշումներ, ինչի պատճառով էլ վերջիններս չեն ստանում զինվորական հաշմանդամության կենսաթոշակ, չեն օգտվում այդ կարգավիճակից բխող օրենսդրությամբ սահմանված այլ արտոնություններից: Ուստի, առավել ընդունելի է այն տարբերակը, երբ պետությունը շարունակում է վճարել հաշմանդամության կենսաթոշակն այնքան ժամանակ, մինչև քրեական գործի արդյունքում դատաիրավական ակտով չի հաստատվել իրավունքից զրկման հիմքը, օրինակ՝ հայտնաբերվել են կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր, որոնք կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարման հիմք են: Պետությունը միշտ հնարավորություն ունի հիմքերից որևէ մեկի հաստատման դեպքում վճարած գումարը հետ գանձելու պահանջ ներկայացնել, սակայն կենսագործունեության սահմանափակումներ ունեցող անձը չի զրկվի կենսաապահովման կարիքները հոգալու միջոցներից:»

Պաշտպանը հատուկ արձանագրում է, որ պետությունը՝ ի դեմս ՀՀ կառավարության, մասնավորապես, պետական լիազոր մարմնի, տվյալ դեպքում՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար դեռևս քրեական վարույթի հարուցման փուլում գործող իրավակարգավորումների պայմաններում նման զարգացումը կանխատեսելի էր, հետևաբար կանխատեսելի պետք է լիներ նաև այն, որ անգամ այս դեպքում մարդու համար իրավունքի իրացման հետ կապված առաջանալու են լրացուցիչ օրենսդրական և վարչարարական խոչընդոտներ: Հետևաբար, պետության պարտավորության պատշաճ իրականացումը պետք է ներառի նաև օրենսդրական բացերի և դրանց հետևանքով հնարավոր ռիսկերի կանխարգելումը: Մինչդեռ՝ տվյալ դեպքում պետությունն անգործություն է թույլ տվել, ինչի հետևանքով մարդիկ տարիներ շարունակ բախվում են վարչարարական և դատավարական գործընթացների հետ՝ արդյունքում նաև զրկվելով հաշմանդամության թոշակը ստանալու հնարավորությունից:

Այս կապակցությամբ Պաշտպանը ևս մեկ անգամ վերահաստատում է, իր այն դիրքորոշումը, որ նման վիճակն անթույլատրելի է, քանի որ վարչարարության թերացումների և ոչ պատշաճ հաղորդակցման արդյունքում խախտվում է մարդկանց իրավունքները: Ընդ որում՝ կեղծ, ոչ հավաստի փաստաթղթեր ներկայացնելու կասկածը չհաստատվելու դեպքում առաջանալու է նաև քրեական գործի վարույթի ողջ ժամանակահատվածում չվճարված թոշակի փոխհատուցման և խախտված իրավունքների վերականգնման հետ կապված հարցեր: Այս դեպքում կրկին մարդիկ բախվելու են վարչարարական և դատավարական գործընթացների հետ, որոնք կարող են տևական լինել, ինչը բացարձակ անընդունելի է մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Նշված մոտեցումը չի կարող իրավունքահեն լինել և ապահովել պետության պոզիտիվ

պարտավորությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրենց իրավունքների իրացման երաշխավորման հարցում, առավել ևս, երբ վերջիններիս առողջության վնաս է հասցվել զինվորական ծառայության ընթացքում: Այս դեպքում պետության պոզիտիվ պարտավորության բեռն էլ ավելի է մեծանում՝ պայմանավորված այն հանգամանքով, որ իրենց սահմանադրական պարտականությունները կատարելու ողջ ժամանակահատվածում զինվորական ծառայություն իրականացնող անձինք գտնվում են պետության բացարձակ հոգածության ներքո:

Որպես Կոնվենցիա մշտադիտարկման անկախ մարմին՝ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները 2021 թվականի ընթացքում արտահերթ զեկույցի մշակման աշխատանքների շրջանակում մշտադիտարկման այց են իրականացրել Երևան քաղաքի Միասնական սոցիալական ծառայության Շենգավիթի տարածքային կենտրոն, որտեղ առանձնագրույցներ են ունեցել բժշկասոցիալական փորձաքննության ենթարկվող անձանց հետ: Հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ հենաշարժողական խնդիր ունեցողները, առանձնագրույցների ընթացքում բարձրացրել են բժշկասոցիալական հանձնաժողովներն իրենց բնակության վայրից հեռու լինելու խնդիրը: Խնդիրն առավել մտահոգիչ է, քանի որ հաշմանդամություն ունեցող կամ տեղաշարժման դժվարություններ ունեցող գրեթե բոլոր անձինք ֆիզիկական միջավայրային անմատչելիության հետևանքով ունեն տարածքային բաժիններ տեղափոխման խնդիրներ: Պաշտպանի ներկայացուցիչներն արձանագրել են, որ Միասնական սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններում առկա է ռեսուրսների չբավարարման և կառավարման խնդիրներ, ինչն էլ որոշ դեպքերում հանգեցնում է թերի վարչարարության իրականացման: Մասնավորապես, դիմում ներկայացնելու համար առկա է մարդկանց կուտակում, բաժիններում տեղադրված հերթերի կառավարման մոնիտորի ձայնի հնչեցումն առանց թվի արտաբերման է, բացակայում են սպասարկման արտոնություններ սահմանող չափանիշներ: COVID-19 համավարակի պայմաններում հերթերի կառավարման և սոցիալական հեռավորության պահպանման նկատմամբ վերահսկողությունը բացակայում է: Բաժիններում առկա նստարանների քանակը ևս բավարար չի եղել սպասարկման սպասող քաղաքացիներին:

*Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև պետության կողմից վարչարարության բարելավման ուղղությամբ լրացուցիչ ջանքերի գործադրման հրապարակությունը՝ անհրաժեշտ է՝*

- *սպահովել դիմումների պատշաճ ուսումնասիրությունը և ընթացքը՝ բացառելով ձևական հիմքերով այդ գործընթացի երկարաձգումը կամ դրա չիրականացումը,*
- *սպահովել զինվորական հաշմանդամություն ունեցող անձանց հաշմանդամության թոշակի վճարումը՝ մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարման հիմքերի առկայության հաստատումը,*
- *ավելացնել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում քաղաքացիներին սպասարկող բաժիններին հարկացված նյութատեխնիկական ռեսուրսները՝ երաշխավորելով*

հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան սպասարկման հնարավորություններ,

- հանրային, այդ թվում՝ սոցիալական ծառայություններ մատուցող պետական մարմիններում ներդնել հերթերի կառավարման համակարգ:

## **ԳԼՈՒԽ 5. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

### **5.1 Ֆիզիկական միջավայրի մատչելիություն**

Կոնվենցիայի բնորոշմամբ մատչելիությունը, որպես ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և մշակութային միջավայրի, ինչպես նաև առողջապահության ու կրթության, տեղեկատվության ու հաղորդակցության մատչելիության անհրաժեշտությունն է, որով հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն կտրվի լիարժեքորեն օգտվելու մարդու իրավունքներից ու հիմնարար ազատություններից<sup>1042</sup>: Այս համատեքստում մատչելիությունը սահմանված է որպես Կոնվենցիայի ընդհանուր, հիմնարար սկզբունքներից մեկը<sup>1043</sup>: Ուստի, Կոնվենցիայի վավերացմամբ՝ Հայաստանը պարտավոր է ապահովել այնպիսի ֆիզիկական միջավայրի մատչելիություն, որ հաշմանդամություն ունեցող անձինք անկախ, արժանապատիվ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիարժեք, այլոց հետ հավասար, առանց որևէ խտրականության մասնակցելու իրական հնարավորություններ ունենան: Ընդ որում՝ պետության պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է, որ ապահովվի ոչ միայն կոնկրետ շենքային պայմանների մատչելիությունը, այլ առհասարակ՝ ճանապարհների, մայրերի և կանգառների, բացօթյա և փակ հաստատությունների, կրթական ուսումնական և բժշկական հաստատությունների, բնակելի և հասարակական տարածքների, ինչպես նաև պետք է լինեն մատչելի բանկոմատներ, ծայնային լուսացույցներ և տեղեկատուներ բոլոր հասարակական վայրերում: Այսինքն, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման տեսանկյունից սկզբունքային նշանակություն ունի համընդհանուր դիզայնի մոտեցումը մատչելիության առնչվող քայլերում:

Հատկանշական է, որ 2021 թվականին ընդունված և ուժի մեջ մտած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով մատչելիությունը սահմանված է որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման ու պաշտպանության պետական քաղաքականության հիմնարար սկզբունքներից մեկը:

Թեև ֆիզիկական միջավայրի մատչելիությունն առաջնային է հաշմանդամություն ունեցող մարդկանց համար իրենց իրավունքներից ինքնուրույն օգտվելու տեսանկյունից՝ համընդհանուր

<sup>1042</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի նախաբանի կետ իբ: հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762> հղումով:

<sup>1043</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 3-րդ հոդվածը: հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762> հղումով:



**ներառականության համատեքստում մատչելի ֆիզիկական միջավայրն անհրաժեշտ է նաև հասարակության յուրաքանչյուր անդամի համար:**

Վերոնշյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ 2021 թվականի ընթացքում համակարգային առումով լուծում չի ստացել ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիրը: Խնդիրն էլ ավելի խորքային է այն պատճառով, որ այն հանգեցնում է հաշմանդամություն ունեցող մարդկանց կրթություն ստանալու, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու, ինչպես նաև առողջության պահպանման, մշակութային կյանքին մասնակցելու և այլ իրավունքների ինքնուրույն իրականացման սահմանափակման: Այս մասին Պաշտպանը մշտապես բարձրաձայնում է իր տարեկան հաղորդումներում և հրապարակումներում<sup>1044</sup>, ինչպես նաև մանրամասն անդրադարձել է Արտահերթ զեկույցում<sup>1045</sup> ներկայացնելով տարբեր ոլորտներում, այդ թվում՝ դատարանների, քրեակատարողական հիմնարկների և հոգեկան առողջության կենտրոնների մատչելիությանն առնչվող համակարգային խնդիրները:

2021 թվականի ընթացքում ֆիզիկական մատչելիության խնդիրը շարունակել է համակարգային բնույթի մնալ նաև այն հաստատություններում, որտեղ բնակվում և (կամ) սովորում են հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ երեխաները: Այս մասին են վկայում ինչպես Պաշտպանի մշտադիտարկման այցերը, պետական իրավասու մարմինների տրամադրած տեղեկությունների վերլուծությունը, այնպես էլ Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամների տեղեկությունները: Օրինակ՝ ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիրներ են արձանագրվել Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոցում: Մասնավորապես՝ դպրոցի հարկերի միջև մատչելիությունն ապահովված չէ. չկան թեքահարթակներ կամ վերելակներ: Դպրոցի դասասենյակների, ննջարանների և սանհանգույցների դռները հիմնականում եղել են ոչ մատչելի կամ հարմար սայլակով կամ աջակցող միջոցներով տեղաշարժվող անձանց համար: Դպրոցի սանհանգույցները դռներ չեն ունեցել, մինչդեռ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ դպրոցների սանիտարահիգիենիկ պահանջների ուղեցույցով սահմանվում են հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված սանհանգույցների համար չափորոշիչները՝ ներառելով թեքահարթակ, լայն դուռ, ներսում բավականաչափ տարածք անվասայլակով տեղաշարժման համար, հարմարեցված զուգարանակոնք և բռնակներ:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ Երևանի թիվ 11 հատուկ դպրոց չհայտարարված այցի ընթացքում արձանագրվել է, որ Դպրոցի մուտքի դուռը գտնվում էր երկաստիճան բարձրության վրա, չկար թեքահարթակ, ապահովված չէր մուտքի մատչելիություն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց համար: Դպրոցի հարկերի միջև նույնպես

<sup>1044</sup> Տե՛ս Պաշտպանի տարեկան հաղորդումները, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1045</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

մատչելիությունն ապահովված չէ. չկան թեքահարթակներ կամ վերելակներ: Դպրոցի դասասենյակների, ննջարանների և սանհանգույցների դռները եղել են ոչ մատչելի սայլակով կամ աջակցող միջոցներով տեղաշարժվող մարդկանց համար:

«Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրում» արձանագրվել է, որ կրթահամալիրի գլխավոր մուտքն ունի թեքահարթակ, իսկ շենքային ընդհանուր պայմանները՝ միջհարկային աստիճանները, սանհանգույցներն ապահովված չեն հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց տեղաշարժվելու համար անհրաժեշտ բավարար չափով հատուկ հարմարություններով, ինչը պայմանավորված է շենքային պայմանների վերանորոգման անհնարինությամբ: Օրինակ՝ դահլիճ հասնելու նպատակով անհրաժեշտ է բարձրանալ նեղ միջանցքում գտնվող աստիճաններով, ինչի պատճառով ծնողները և կրթահամալիրի աշխատակազմը ստիպված են սայլակը թողնել առաջին հարկում և երեխային գրկած տանել դահլիճ:

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Մարի Իզմիրյանի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպություն չհայտարարված այցի ընթացքում արձանագրվել է, որ Հաստատությունում սաների կարիքներին համապատասխան լրացուցիչ հարմարությունների անհրաժեշտություն կա: Թեև շենքի մուտքն ու ելքն ապահովող թեքահարթակը հարմար և անվտանգ է սաների տեղաշարժի համար, շենքի ներսում առկա է վերելակ, ապահովված է խմբասենյակներից դեպի այգի անխոչընդոտ տեղաշարժը, սակայն սանհանգույցներում հաշմանդամություն ունեցող անձանց համար բացակայում են բռնակները: Միևնույն ժամանակ դիտարկվել են դեպքեր, երբ սենյակների միջև առկա է փոքր թեքահարթակ, որոնք թեև մատչելի են, սակայն անվտանգ չեն տեղաշարժման տեսանկյունից, քանի չկան սենյակների ուղիղ հատակից թեքահարթակի թեքությունն ընդգծող գույնային կամ այլ եղանակով տարբերանշաններ:

Հատուկ պետք է ընդգծել, որ նշված հաստատություններում սաների կամ շահառուների առօրյա տեղաշարժն իրականացվում է հաստատությունների անձնակազմի բարեխիղճ աշխատանքի, երեխաների ներկայացուցիչների աջակցության միջոցով՝ գրկելով կամ սայլակը բարձրացնելով: Միաժամանակ, խնդրահարույց և խիստ մտահոգիչ է այն, որ նշված հաստատություններում ֆիզիկական միջավայրի մատչելիությունն ապահովելու նպատակով պետությունը բավարար ֆինանսական ռեսուրսներ չի հատկացնում, ինչի հետևանքով այս հաստատությունները ստիպված են սեփական ջանքերով միջոցներ հայթայթել անհրաժեշտ հարմարեցումների կատարման ուղղությամբ:

Ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիրներ են արձանագրվել ոչ միայն Պաշտպանի մշտադիտարկումների, այլ նաև անհատական բողոքների ուսումնասիրության արդյունքում: Այսպես, օրինակ, դիմումներից մեկով հենաշարժողական խնդիրներ ունեցող անձը հայտնել է, որ իր շենքի վերելակի փոխարինման աշխատանքներով պայմանավորված չի կարողանում տանից դուրս գալ, ինչի հետևանքով զրկված է աշխատելու և վերականգնողական բուժում ստանալու

հնարավորությունից: Պաշտպանի և համայնքապետարանի համագործակցության արդյունքում իրականացվել է անձի կարիքների գնահատում, առաջնահերթության կարգով տվյալ շենքի վերելակի փոխարինման աշխատանքներն իրականացվել են հնարավորինս սեղմ ժամկետում: Դիմումներից մեկով քաղաքացին բարձրացրել է, որ Վայոց Ձորի մարզպետարանի վարչական շենքի մատչելիության հարցը՝ նշելով տարածք ելումուտի կազմակերպման հարցում իրականացված փոփոխությունների հետևանքով սահմանափակվել է իր՝ անխոչընդոտ ելումուտ ունենալու հնարավորությունը: Խնդրի բազմակողման ուսումնասիրության նպատակով Պաշտպանի աշխատակազմի իրականացրած մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրել է, որ մարզպետարանի վարչական շենքի սպասասրահում քայլակով, անվասայլակով կամ այլ աջակցող միջոցներով տեղաշարժվող անձանց համար առկա է առանձին անցակետ՝ դռնակ և թեքահարթակ: Այնուամենայնիվ, դիտարկման ընթացքում դռնակը կողպված է եղել, իսկ անմիջապես թեքահարթակի առջև տեղադրված սեղանը խոչընդոտում էր թեքահարթակից անարգել օգտվելուն: Նշվածը խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլոց հետ հավասար, առանց կողմնակի աջակցության կամ միջամտության իրենց իրավունքների իրացման տեսանկյունից: Մշտադիտարկման այցի ընթացքում ուսումնասիրվել են նաև մարզպետարանի վարչական շենքի գլխավոր մուտքից և ետնամասից հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց մուտքի և ելքի հնարավորությունները, արձանագրվել են ֆիզիկական միջավայրի մատչելիության հետ կապված խնդիրներ: Օրինակ՝ կայանատեղին կահավորված չի եղել հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխող տրանսպորտային միջոցների համար առանձնացված գծանշումներով կամ ցուցանակներով:

Այս կապակցությամբ Պաշտպանն արձանագրում է, որ մարզպետարանի վարչական շենքի մուտքը պետք է լինի մատչելի և հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ առանց խտրականության: Ընդ որում՝ մարզպետարանի վարչական շենքի մուտքի մատչելիությունն ապահովող ցանկացած լուծում պետք է դիտարկվի ոչ թե հաշմանդամություն ունեցող անձանց՝ դրա օգտագործման հաճախականությունից ելնելով, այլ պետության պոզիտիվ պարտավորության կատարման համատեքստում: Ավելին՝ մարզպետարանի վարչական շենքի մուտքն ապահովող ցանկացած լուծման դեպքում պետք է երաշխավորվի հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն տեղաշարժվելու իրավունքի իրացումն արժանապատիվ կերպով, առանց լրացուցիչ, կողմնակի աջակցության անհրաժեշտության:

Ներկայացված օրինակները ևս մեկ անգամ փաստում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական մատչելիությանն առնչվող խնդիրներ լուծելիս պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, դրանց պաշտոնատար անձանց զգալի մասը, որպես ուղենիշ չի սահմանում անձի՝ տեղաշարժվելու ինքնուրույնությունը, ինչպես նաև չի իրականացնում կամ թերի է իրականացնում կարիքների գնահատում:

Պաշտպանը մշտապես բարձրացրել է արտակարգ իրավիճակներում հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար թաքստոցների և ապաստարանների մատչելիության

ապահովման անհրաժեշտությունը: Այս կապակցությամբ ՀՀ արտաքին իրավիճակների նախարարությունը հայտնել է, որ «Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 78-Ն հրամանով հաստատվել են «ՀՀՇՆ 31-03.02-2021 «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական պաշտպանության պաշտպանական կառույցներ» շինարարական նորմերը, որով սահմանվում են. «Խաղաղ պայմաններում պաշտպանական կառույցները՝ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից օգտագործման համար մատչելի դարձնելու նպատակով, անհրաժեշտ է դրանք կահավորել՝ համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01 և ՀՀԿՀ 23-101 նորմերի և գործող օրենսդրության պահանջների: Արտակարգ իրավիճակներում, ռազմական դրության և խաղաղ պայմաններում՝ սակավաշարժուն խմբերի կողմից պաշտպանական կառույցների օգտագործմանը ներկայացվող պահանջները պետք է համապատասխանեն առողջապահական հաստատություններում բուժվող հիվանդներին ներկայացվող պահանջներին:»: Կարևորելով ձեռնարկվող քայլերը, այնուամենայնիվ, Պաշտպանի մշտադիտարկումները և հասարակական կազմակերպությունների տեղեկությունները փաստում են, որ համակարգային առումով այս խնդիրները մնում է չլուծված, որի վերաբերյալ առավել համապարփակ վերլուծություն է ներկայացված Արտահերթ զեկույցով<sup>1046</sup>:

Ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիրներն առավել սուր են արտահայտված մարզային բնակավայրերում: Այս կապակցությամբ Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տեղեկացրել է, որ «2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց՝ մուտքի և կառույցի ներսում ազատ տեղաշարժի ապահովման նպատակով աշխատանքներ են իրականացվել Սյունիքի մարզի թվով 7 շինություններում, կառուցվել է 6 թեքահարթակ: ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններում 2021 թվականի ընթացքում կառուցվել է 9 թեքահարթակ:

Մարզային ենթակայությամբ գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցնելու ուղղությամբ աշխատանքներ են իրականացվել միայն Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերում (ընդհանուր առմամբ՝ 7 օբյեկտներ):

Հարմարեցումներ են իրականացվել նաև մարզային ենթակայությամբ գործող բժշկական հաստատություններում (օրինակ՝ Արագածոտնի մարզում՝ թվով 1, Արարատի մարզում՝ թվով 4, Արմավիրի մարզում՝ թվով 3, Կոտայքի մարզում՝ թվով 1, Լոռու մարզում՝ թվով 1, Շիրակի մարզում՝ թվով 2 կառուցապատման օբյեկտներ):

2021 թվականի ընթացքում մարզերի մեծ մասում իրականացվել են հասարակական տրանսպորտի կանգառների բարեկարգման և վերանորոգման աշխատանքներ, սակայն դրանցից ոչ մեկը չի հարմարեցվել տեսողական խնդիր ունեցող կամ կոյր անձանց համար:»

<sup>1046</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

Պաշտպանի հարցումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ «Աջակցություն վիրավոր զինվորներին և զինվորական հաշմանդամներին» բարեգործական հասարակական կազմակերպությանը տրամադրվել է դրամական աջակցություն, որի շրջանակներում իրականացվել են նաև սանհանգույցի հարմարեցման աշխատանքներ վիրավորում ստացած և հենաշարժողական խնդիրներ ունեցող 4 զինծառայողների բնակարաններում:

Վերելակները նորով փոխարինելու ծրագրի իրականացման ընթացքում վարչական շրջանների համապատասխան բաժինների կողմից իրականացվել են կարիք ուսումնասիրություններ, որի հիման վրա վերելակների նորով փոխարինելու առաջնայնությունը տրվել է հենաշարժողական խնդիրներ ունեցող՝ բազմաբնակարան շենքերում բնակվող զինծառայողներին:

2021 թվականի տարեկան ծրագրի և միջոցառումների շրջանակներում Երևան քաղաքում կառուցվող և վերակառուցվող շենքերն ու շինությունները հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի համար մատչելի դարձնելու նպատակով 2021 թվականի ընթացքում թվով 662 օբյեկտների (որից 131-ը բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ շենքեր) համար տրված նախագծման թույլտվություններում, որպես պարտադիր պայման, պահանջվել է ապահովել հաշմանդամների և ԲՍԽ-ների կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումներ՝ նախագծումը համապատասխանեցնելով ՀՀ քաղաքաշինության նախարարի 10.11.2006 թվականի ՀՀՇՆ IV-11.07.01-2006 (ՄՍՆ 3.02-05-2003) «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի հաստատման մասին հ.256-Ն հրամանի պահանջներին: Նշված պայմանների ապահովմամբ համաձայնեցվել և վերահամաձայնեցվել են թվով 712 օբյեկտների (որից 230 բազմաբնակարան և բազմաֆունկցիոնալ շենքերի) կառուցման կամ վերակառուցման աշխատանքային նախագծեր:

2021 թվականի ընթացքում տեսողական խնդիր ունեցող կամ կույր անձանց համար հատուկ սալիկների տեղադրման կամ այլ հարմարեցման աշխատանքներ չեն իրականացվել:»

Կարևորելով համայնքային ենթակառուցվածքների հարմարեցումների ուղղությամբ աշխատանքները՝ Պաշտպանն արձանագրում է, որ դրանք բավարար չեն ֆիզիկական մատչելիության խնդրի համակարգային լուծման համար: Ավելին, մի շարք դեպքերում հարմարեցումները սահմանափակվում են միայն թեքահարթակների կառուցմամբ: Այս մասին Պաշտպանը նշել է նաև նախորդ տարիների հաղորդումներում:

Խնդրի կապակցությամբ պետք է նշել, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ չի թույլատրվում բնակավայրերի նախագծումն ու կառուցապատումը, բնակելի, հասարակական արտադրական նշանակության շենքերի և շինությունների, տրանսպորտային համակարգերի նախագծումը, շինարարությունը և վերակառուցումը (հանրային նշանակության շենքերի և շինությունների դեպքում նաև հիմնանորոգումը), եթե իրականացման արդյունքները չեն համապատասխանելու համընդհանուր դիզայնի սկզբունքներին կամ այլ կերպ՝ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց օգտագործման համար: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ կառուցված հասարակական,

արտադրական նշանակության շենքերն ու շինությունները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում վերակառուցվում են՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը:

Միաժամանակ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքից բխող լրացումներ են կատարվել նաև «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում, որի 157.16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի<sup>1047</sup> համաձայն՝ մատչելիության նորմերը չպահպանելն առաջացնում է տուգանքի նշանակում:

Ավելին՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ աշխատավայրում կամ ուսումնական հաստատությունում հաշմանդամություն ունեցող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա կատարվում է խելամիտ հարմարեցում գործատուի կամ ուսումնական հաստատության ղեկավարի հետ երկխոսության միջոցով: Խելամիտ հարմարեցումների ապահովման ժամկետներն ամրագրվում են աշխատողի կամ ուսանողի հետ կնքվող համապատասխան պայմանագրերով: Ինտերակտիվ երկխոսությունից հետո առաջացած անհամաձայնության դեպքում խելամիտ հարմարեցումների ապահովման պարտականություն կրողը պետք է ներկայացնի օբյեկտիվ հիմնավորում (գրավոր): Պարտականություն կրողը կարող է մերժել խելամիտ հարմարեցումների տրամադրումը, չառաջացնելով հաշմանդամության հիմքով խտրականություն, եթե հիմնավորում է, որ այն իրագործելի չէ (իրավական և (կամ) գործնական տեսանկյուններից), համապատասխան չէ (խելամիտ հարմարեցումը չի համապատասխանում նպատակին կամ անհրաժեշտ չէ), օգտագործված միջոցների (ժամանակի, արժեքի, տևողության և ազդեցության) առումով անհամաչափ է կամ առաջացնում է անհարկի բեռ:

Չնայած նշված իրավակարգավորմանը՝ հարկ է նշել, որ խելամիտ հարմարեցումներ ապահովելու կարգը պետք է սահմանվի օրենքն ընդունելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում Կառավարության կողմից: Թեև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի անցումային դրույթներով նախատեսվում է, որ նշված ենթաօրենսդրական ակտը պետք է ընդունվի օրենքն ուժի մեջ մտնելուց մեկ տարվա ընթացքում<sup>1048</sup>, այնուամենայնիվ, ստացվում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք գործող իրավակարգավորումներով խելամիտ հարմարեցումներ պահանջելու իրավունք ունեն, սակայն այդ իրավունքը փաստացի իրացնելու մեխանիզմ ներդրված չէ:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է, որ ֆիզիկական մատչելիության վերահսկողական մեխանիզմները գործնականում բավարար արդյունավետ չեն, ինչի պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք զրկվում են ազատ տեղաշարժի հնարավորությունից:

<sup>1047</sup> Տե՛ս «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, հասանելի է <https://www.arlis.am/documentview.aspx?docid=152965> հղումով:

<sup>1048</sup> Օրենքն ընդունվել է 2021 մայիսի 5-ին, իսկ ուժի մեջ է մտել իրապարակման օրվան (25.05.2021 թվական) հաջորդող 10-րդ օրը :

Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝

1. հնարավորինս սեղմ ժամկետներում ապահովել հանրային, այդ թվում՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանության, տեղական ինքնակառավարման ու բոլոր մյուս մարմինների շինությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,

2. ապահովել շարունակական արդյունավետ վերահսկողություն՝ նոր կառուցվող կամ հիմնովին վերանորոգվող քաղաքաշինական օբյեկտների մատչելիության ապահովման նպատակով:

3. պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց համար կազմակերպել քննարկումներ, դասընթացներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց առնչվող խնդիրներ լուծելիս վերջիններիս ինքնուրույնության խթանումն առաջնահերթություն դիտարկելու նպատակով:

## 5.2 Փոխադրամիջոցների մատչելիություն

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է տրանսպորտային միջոցների մատչելիության հարցը: Այս խնդրին մանրամասն անդրադարձ է կատարվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի Արտահերթ զեկույցով<sup>1049</sup>:

Պաշտպանի մշտադիտարկումները, ինչպես նաև Հասարակական խորհրդի անդամների դիտարկումները վկայում են, որ 2021 թվականի ընթացքում ՀՀ-ում համակարգային առումով շարունակում է չլուծված մնալ միջմարզային և համայնքային տրանսպորտային միջոցներում հաշմանդամություն ունեցող անձանց համար անհրաժեշտ պայմանների ապահովման խնդիրը, որն առավել սուր է արտահայտվում մարզերում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց համար: Մասնավորապես, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարզաբանումների համաձայն՝ ՀՀ Արագածոտնի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու, Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերում 2021 թվականի ընթացքում որևէ հասարակական տրանսպորտային միջոց չի հարմարեցվել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Տրամադրած տեղեկությունների համաձայն՝ նախարարությունն Արարատի մարզում հայտարարել է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթ՝ մարզի միասնական երթուղիների համար: Մրցույթին ներկայացվող ավտոբուսների ընդհանուր թվի առնվազն 10%-ը պետք է հարմարեցված լինի հաշմանդամների (տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց) նստեցման և իջեցման համար: Մրցույթի անցկացման օրը՝ 2022 թվականի հունվարի 20-ը:

<sup>1049</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

Շիրակի մարզում ձեռք է բերվել հաշմանդամություն ունեցող անձանց համար հարմարեցված չորս տրանսպորտային միջոց (միկրոավտոբուս), սակայն դեռևս չի շահագործվում (երթուղի դուրս չեն եկել): Այս հարցի կապակցությամբ Պաշտպանի աշխատակազմը 2021 թվականի ընթացքում ստացել է հասարակական կազմակերպությունների մտահոգությունները Գյումրի համայնքում իրականացվելիք սուբվենցիոն ծրագրի շրջանակներում միկրոավտոբուսների ձեռք բերման վերաբերյալ հաշմանդամություն ունեցող անձանց համար մասամբ մատչելի լինելու և այդ հանգամանքով նրանց նկատմամբ ենթադրյալ խտրականության բացառման համար:

Երևանի քաղաքապետարանի տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Երևանի հասարակական տրանսպորտի շարժակազմերը հաշմանդամություն անձանց համար մատչելի և հարմարավետ դարձնելու ուղղությամբ իրականացվել են կոնկրետ աշխատանքներ:

Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների ծրագրի շրջանակներում 2021 թվականին ձեռք բերված բոլոր 311 ավտոբուսները կահավորված են թեքահարթակներով՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիությունն ապահովելու նպատակով (որպես պարտադիր չափորոշիչ այն ամրագրված է նաև երթուղիների սպասարկման իրավունքի հատկացման մրցույթների պայմաններում):

2021 թվականի ընթացքում Երևանի մետրոպոլիտենը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելու և հարմարեցնելու ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված հասարակական տրանսպորտի ձեռքբերումը Երևանի քաղաքապետարանի կողմից: Մինչդեռ՝ շարունակում մտահոգիչ մնալ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ ՀՀ մարզերում հանրային տրանսպորտի հարմարեցումների սղությունը կամ առհասարակ բացակայությունը:

2021 թվականին շարունակվել է չլուծված մնալ Երևանի մետրոպոլիտենի մատչելիության հարցը<sup>1050</sup>: Ըստ Երևանի քաղաքապետարանի՝ մետրոպոլիտենի հարմարեցման ուղղությամբ 2021 թվականի ընթացքում աշխատանքներ չեն իրականացվել:

Անդրադառնալով տրանսպորտային միջոցների մատչելիության հարցին՝ պետք է նշել, որ Կոնվենցիայի 9-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով փոխադրամիջոցների մատչելիության ապահովման նպատակով պետությունը համապատասխան միջոցներ ձեռնարկելու պարտավորություն է ստանձնել:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մրցույթին (ավտոբուսային կանոնավոր փոխադրումների իրականացման) ներկայացվող տրանսպորտային միջոցներում պետք է ներառվեն հաշմանդամություն ունեցող անձանց նստեցման

<sup>1051</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:



և իջեցման համար հարմարեցված ավտոբուսներ, որոնց նվազագույն քանակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: ՀՀ կառավարության 3 դեկտեմբերի 2020 թվականի N 1994-Ն որոշման 14-րդ կետի համաձայն՝ մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները պետք է ապահովեն տեղաշարժվելու, տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար մատչելի կամ հարմարեցված ավտոբուսներ: ՀՀ կառավարության «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 29 սեպտեմբերի 2020 թվականի N 1601-Լ որոշման թիվ 1 հավելվածի 2.6 և 2.7 կետերով նախատեսվել է հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման համար հարմարեցված տրանսպորտային միջոցների ձեռքբերման միջոցով ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիությունը և հարմարավետությունը, ինչպես նաև նախատեսվել է մշակել Երևանում և ՀՀ բոլոր մարզերում տրանսպորտի համակարգի, ինչպես նաև կանգառների ամբողջական հարմարեցման համար մանրամասն գործողությունների ծրագիր և ժամանակացույց, ինչը կապահովի փոխադրամիջոցների և կանգառների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:

**Վերահաստատելով նախորդ տարիների տարեկան հաղորդումներով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցով արձանագրված դիրքորոշումները՝ պետք է ընդգծել, որ տրանսպորտային միջոցների մատչելիությունը սկզբունքային նշանակություն ունի հաշմանդամություն ունեցող մարդկանց կողմից իրենց իրավունքների ինքնուրույն իրացման, ինչպես նաև անկախ ապրելու և կյանքի բոլոր բնագավառներում լիակատար մասնակցության համար<sup>1051</sup>:**

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. մշակել հաշմանդամություն ունեցող անձանց համար փոխադրամիջոցների մատչելիության համապետական ճանապարհային քարտեզ՝ նախատեսելով առանձնացված և մանրամասն գործողությունների՝ հստակ ժամանակացույցով ծրագիր,*

*2. Հայաստանի Հանրապետությունում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան հանրային տրանսպորտի անհրաժեշտ քանակ:*

<sup>1051</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

### **5.3 Մասնակցությունը մշակութային կյանքին, հանգստին, ժամանցային ու սպորտային միջոցառումներին**

Կոնվենցիայի 30-րդ հոդվածի համաձայն՝ պետությունն ապահովում է հատուկ սպորտային միջոցառումներին հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության հնարավորությունը, ինչպես նաև խրախուսում է անհրաժեշտ ուսուցման, վերապատրաստման և այլ միջոցների ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականին ավարտվել են «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ի շինարարական աշխատանքները, որը սկսվել էր 2017 թվականին: Արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսվել են վերելակ, թեքահարթակ և սանհանգույցից օգտվելու հնարավորություն: Այլ սպորտային կառույցների հարմարեցումների վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացրած դիմումների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ մարզադպրոցների շենքերում հիմնականում բացակայում են թեքահարթակները, հանդերձարանները, սանհանգույցները, մարզադահլիճները հարմարեցված չեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար: Այս մասին Պաշտպանն արձանագրել է ինչպես նախորդ տարիների տարեկան հաղորդումներով, այնպես էլ Արտահերթ զեկույցով<sup>1052</sup>:

Հատկանշական է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի մարզական և մշակութային ծրագրերի իրականացումը ներառված է ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 30-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1621-Լ որոշման մեջ: Համաձայն նշված որոշման՝ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը 2022 թվականի համար նախատեսված միջոցառումների ուղղություններից է:

Հաշմանդամություն ունեցող անձանց հանրային սոցիալական ներառման կապակցությամբ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականին «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակում հաշմանդամային (ադապտիվ) սպորտին տրամադրվելիք պետական աջակցության գումարը առնվազն երեք անգամ աճել է: Ավելացել է նաև պետական աջակցություն ստացող շահառու կազմակերպությունների թիվը: ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորվող «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակում 2021 թվականի տարեսկզբին հաստատված 31 միջոցառումներից իրականացվել է 19 միջոցառում:

<sup>1052</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

Նախարարության պարզաբանումների համաձայն՝ COVID-19 հիվանդությամբ պայմանավորված հաշմանդամային սպորտի միջազգային մարզական կազմակերպությունների կողմից մի շարք մրցումներ հետաձգվել կամ չեղարկվել են: Մի շարք տեղական միջոցառումներ հաշմանդամային մարզական կազմակերպությունների կողմից չեն իրականացվել՝ կազմակերպությունների որոշմամբ: «Ադապտիվ սպորտին առնչվող ծառայություններ» ծրագրի շրջանակում հաջորդ տարիների համար կընդգրկվեն շահառու կազմակերպությունների կողմից ներկայացված միջոցառումները: ««Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի շրջանակում անցկացվող մրցույթ սայլակով տեղաշարժվող հաշմանդամություն ունեցող ընտանիքի անդամ ունեցող ընտանիքների համար և «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում» միջոցառումները չեղարկվել են ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի ծրագրերի շրջանակներում հատկացումների նվազեցումների հետևանքով<sup>1053</sup>: Ընդ որում՝ չիրականացված ծրագրերը չեն ներառվել Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագրում:

Տրամադրած տեղեկությունների համաձայն՝ մինչ 2020 թվականը հաշմանդամային սպորտի զարգացման խնդիրներով զբաղվող 4 մարզական հասարակական կազմակերպության փոխարեն 2021 թվականին պետական աջակցություն է տրամադրվել 7 հասարակական կազմակերպություն: 2021 թվականին պետական աջակցության շրջանակում տարբեր մարզածներից անցկացվել է Հայաստանի 7 առաջնություն, 4 ուսումնամարզական հավաք, Ծաղկածորում անցկացվել է հաշմանդամություն ունեցող անձանց հանրապետական մարզական փառատոն, հաշմանդամություն ունեցող մարզիկները մասնակցել են միջազգային 5 մրցումների, այդ թվում՝ Տոկիոյում կայացած ամառային պարաօլիմպիկ խաղերին: Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում հաշմանդամային բազկամարտի աշխարհի առաջնությունում Հայաստանի հաշմանդամային սպորտի Ֆեդերացիայի մարզիկները նվաճել են 3 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզե մեդալներ: Նշված միջոցառումներին 2021 թվականի ընդհանուր առմամբ մասնակցել է 422 մարդ՝ 364 տղամարդ, 58 կին:

Կարևորելով պետության ջանքերը՝ հարկ է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց հետ քննարկումները, Պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ պետության կողմից հաշմանդամային սպորտի զարգացմանն ուղղված քայլերը հիմնականում կրում են մեկանգամյա միջոցառումների կազմակերպման կամ աջակցության բնույթ, մինչդեռ հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն այս ոլորտում խթանելու համար անհրաժեշտ են այնպիսի միջոցների, որոնք կհանգեցնեն հավասար հնարավորությունների ստեղծմանն ու միջավայրային հարմարեցումների ապահովմանը:

<sup>1053</sup> Տե՛ս ՀՀ Կառավարության 2021թ հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում և լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 2215-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 1064-Ն որոշում, հասանելի է <https://www.e-gov.am/gov-decrees/item/36470/> հղումով:

Հաշմանդամություն ունեցող անձանց հասարակությունում բոլորի հետ հավասար հնարավորություններով ինտեգրվելու հարցում կարևոր նշանակություն ունի նրանց մասնակցությունը մշակութային կյանքին: Այս համատեքստում տարիներ շարունակ արձանագրվել են տարաբնույթ խոչընդոտներ, որոնց շարքում հատկապես խնդրահարույց է մշակութային օբյեկտների ֆիզիկական մատչելիության հարցը՝ հատկապես մարզերում:

Մշակութային օբյեկտների մատչելիության հարցի կապակցությամբ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ խնդիրն ամբողջությամբ (ազատ տեղաշարժ և սանհանգույցներ) լուծվել է նորակառույց կամ վերանորոգված՝ Հայոց ցեղասպանության և Կոմիտասի թանգարան-ինստիտուտներում, Մ. Սարյանի տուն-թանգարանում, Հայ և Ռուս ժողովուրդների բարեկամության թանգարանում: Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի մարզային գրադարանները, Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոնը գտնվում է առաջին հարկում և ամբողջովին հարմար են հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժի համար: Հայաստանի ազգային պատկերասրահում, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում տեղաշարժը կազմակերպվում է աշխատակիցների օգնությամբ, Հովի. Թումանյանի և Ս. Փարաջանովի թանգարաններում ստեղծվել են անհրաժեշտ պայմաններ անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձանց համար միայն առաջին հարկում: Խնկո-Ապոր անվան ազգային-մանկական գրադարանում առաջին հարկի մուտքի մոտ կա թեքահարթակ, որի միջոցով էլ անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձինք մուտք են գործում գրադարան, իսկ ներսում տեղաշարժումն իրականացվում է վերելակի օգնությամբ, ընթերցասրահներում կան հատուկ բազմոցներ նրանց ընթերցանությունը կազմակերպելու համար, Կոտայքի մարզային գրադարանում առաջին հարկի մուտքի մոտ կա թեքահարթակ, որի միջոցով էլ անվասայլակի օգնությամբ տեղաշարժվող անձինք կարող են մուտք գործել գրադարան:

Օրբելի եղբայրների տուն-թանգարանը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի «Զվարթնոց» մասնաճյուղը, Շիրակի մարզային գրադարանը, Երվանդ Քոչարի թանգարանը, Հ. Շարաբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի Փայտարվեստի ցուցասրահն ունեն թեքահարթակներ:

Կարևոր է ընդգծել, որ Պաշտպանը նախարարությանը հարցում է կատարել այն մասին, թե 2021 թվականի ընթացքում քանի՞ մշակութային հաստատություն է հարմարեցվել հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի մուտքի, ելքի, հաստատություններում ազատ տեղաշարժի և սանհանգույցներից օգտվելու համար՝ ըստ մշակութային հաստատությունների անվանումների, տեղակայվածության և հարմարեցվածության աստիճանի: Նման պարզաբանումներ պահանջվում են իրավասու մարմնից ամենամյա հարցումներով՝ նպատակ ունենալով տարեկան հաղորդման մշակման աշխատանքների ընթացքում պարզելու տվյալ տարվա ընթացքում արձանագրված ոլորտային բարելավումները կամ թերացումները: Այս համատեքստում հարկ է նշել, որ նախարարության կողմից տրամադրված որոշ տեղեկությունները (օրինակ, Հայոց

ցեղասպանության և Կոմիտասի թանգարան-ինստիտուտների, Մ. Սարյանի տուն-թանգարանի ամբողջական հարմարեցումների, Վ. Պետրոսյանի անվան Գեղարքունիքի, Տավուշի, Լոռու, Արմավիրի մարզային գրադարանների առաջին հարկի հարմարեցումների վերաբերյալ և այլն) նույնությամբ Պաշտպանին են ներկայացվել դեռևս 2017 թվականին և դրանից հետո: Ըստ այդմ՝ անհասկանալի է, թե կոնկրետ 2021 թվականին նախորդ տարիների համեմատությամբ ինչ բարելավումներ են իրականացվել այս ոլորտում: Ավելին՝ Պաշտպանի, հասարակական խորհրդի անդամների մշտադիտարկումները վկայում են, որ համատարած են դեպքերը, երբ հենաշարժական խնդիրներ ունեցող այցելուների տեղաշարժը շարունակում է կազմակերպվել այլ անձանց օգնությամբ: Այս մոտեցումը, այնուամենայնիվ, չի բխում հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույնության խթանման, արժանապատվության հարգանքի և հասարակությունում լիարժեք ներգրավվելու սկզբունքներից: Պաշտպանը ևս մեկ անգամ վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ միայն թեքահարթակները, հարմարեցված սանհանգույցներն ու շարժական նստատեղերը բավարար չեն հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությունը տարբեր միջոցառումներին ապահովելու համար, եթե ստեղծված չեն բավարար պայմաններ անձի իրավունքների ինքնուրույն իրացումը խթանելու համար:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը կարևորել էր «Կույրերի, տեսողական խնդիրներ ունեցող կամ ընթերցանության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագրի վավերացումը<sup>1054</sup> շեշտադրելով պետության կողմից այս համատեքստում լրացուցիչ ջանքերի գործադրման անհրաժեշտությունը:

Նշվածի կապակցությամբ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ 2021 թ. ընթացքում «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ՀՀ Արագածոտնի, Արարատի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի 36 հուշարձանների տարածքներում տեղադրվել են քառալեզու և բրայլյան համակարգով 38 տեղեկատվական վահանակներ: Նախարարություն տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի տարեկան ծրագրով նախատեսված՝ «Թատրոններում լսողության խնդիրներ ունեցող անձանց համար սուրդո ծառայության ներդրում» միջոցառումը չի իրականացվել շահագրգիռ հասարակական կազմակերպությունների և «Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպության կողմից հայտեր չստանալու պատճառով:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանն անդրադարձել էր նաև սոցիալական հարթակներում քննարկվող՝ Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր

<sup>1054</sup> Տե՛ս «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դյուրացնելու մասին» Մարաքեշի պայմանագիրը վավերացնելու մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 2020 թվականի դեկտեմբերի 10-ին, հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=148952> հղումով:

մուտքի թեքահարթակի քանդման հարցին: Մասնավորապես, խնդրահարույց էր այն, որ մշակույթի պալատի կողային մուտքերը, որոնք համայնքի և մշակույթի տնօրինության կողմից առաջարկվել էին որպես խնդրի լուծում, մասամբ մատչելի և հասանելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Իսկ որպես մատչելի տարբերակ առաջարկված՝ ետնամասից կողային մուտքի առաջարկված տարբերակը խտրական է, քանի հակասում է այլոց հետ հավասար հիմունքներով իրավունքների իրացման իրավունքին ու կոնվենցիոն սկզբունքներին: Այս առնչությամբ Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ կողային մուտքերն ամբողջությամբ մատչելի և հասանելի դարձնելով անգամ, այդուհանդերձ, պետությունը չի երաշխավորում հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման իրավունքի լիարժեք և արժանապատիվ իրացման հնարավորությունը, քանի որ գլխավոր մուտքը չի ապահովում նման հնարավորություն:

Պաշտպանն արձանագրում է, որ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ խնդիրը լուծված չէ:

Մշակութային և մարզական օբյեկտների մատչելիության հետ կապված խնդիրների վերաբերյալ իր մտահոգությունն է հայտնել նաև Կոմիտեն՝ արձանագրելով հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաների ոչ բավարար մասնակցությունը մարզական և մշակութային գործունեությանն ու միջոցառումներին, հատկապես գյուղական վայրերում<sup>1055</sup>:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. լրացուցիչ ջանքեր գործադրել ապահովելու կույրերի, տեսողական խնդիրներ կամ ընթերցողության այլ դժվարություններ ունեցող անձանց համար ստեղծագործությունների հասանելի ձևաչափով օրինակների առկայությունը՝ ի կատարումը Մարաքեշի պայմանագրի,*

*2. ավելացնել մշակութային շենքերի, վայրերի, միջոցառումների, ինչպես նաև մարզադպրոցների ու սպորտային միջոցառումների անհրաժեշտ հարմարեցումները հաշմանդամություն ունեցող անձանց համար,*

*3. մարչելի դարձնել ֆիլմերը, ներկայացումները, ցուցահանդեսները՝ ապահովելով դրանց ձայնային կամ տիպոգրային լուծումները,*

*4. ապահովել Վանաձորի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի պալատի գլխավոր մուտքի մարչելիությունն ու հասանելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ առանց խտրականության:*

<sup>1055</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է <https://bit.ly/3p8c5FE> հղումով:

#### 5.4 Մասնակցությունը հանրային կյանքին

Կոնվենցիայի 29-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը երաշխավորում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով, ուղղակիորեն կամ ազատ կերպով ընտրված ներկայացուցիչների միջոցով, արդյունավետ ու լիարժեք կերպով մասնակցություն ունենան քաղաքական ու հասարակական կյանքին՝ ներառյալ քվեարկելու և ընտրվելու նրանց իրավունքը և հնարավորությունը: Պետության պոզիտիվ պարտավորությունը ներառում է նաև քվեարկության ընթացակարգերի, ընտրական տեղամասերի մատչելիությունը և դյուրին կիրառելիությունը:

Հատկանշական է, որ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքի նպատակներից է հասարակական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց հավասար մասնակցությունը և արդյունավետ սոցիալական ներառումն ապահովելը, այդ թվում՝ քաղաքական իրավունքների ու ազատությունների իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծման միջոցով: Այս համատեքստում պետք է արձանագրել, որ Պաշտպանի կողմից իրականացված մոնիթորինգը վկայում է, որ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց հանրային կյանքին այլ անձանց հետ համահավասար մասնակցության խնդիրները, այնուամենայնիվ, շարունակում են մնալ համակարգային բնույթի, իսկ պետության կողմից հաշմանդամության ոլորտում ձեռնարկված քայլերն առավելապես հանգեցնում են սոցիալական աջակցության տրամադրման և ոչ իրավունքների իրացման համար անհրաժեշտ հնարավորությունների ստեղծման: Մինչդեռ, 2021 թվականի հոկտեմբերի 3-ին ուժի մեջ է մտել «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2022 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը<sup>1056</sup>, որը ներկայացվել էր նաև Պաշտպանի կարծիքին:

Հարկ է նշել, որ հանրային կյանքի մասնակցության խթանումը սկզբունքային նշանակություն ունի ոչ միայն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորման, այլ նաև հասարակությունում առկա կարծրատիպերի և խտրական դրսևորումների դեմ պայքարի տեսանկյունից: Ակնհայտ է, որ որքան ցածր է լինում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը հանրային կյանքում, այնքան խորանում է նրանց մեկուսացումը հասարակությունից, ինչն էլ իր հերթին հանգեցնում է խարանի և խտրական վերաբերմունքի՝ հաշմանդամության հիմքով:

Պաշտպանը մշտապես բարձրաձայնել է որոշումների կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցության արդյունավետ մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը, ինչը համարվում է հանրային մասնակցության խթանման հիմնաքարերից մեկը: Մինչդեռ, մշտադիտարկումներն ու ուսումնասիրությունները վկայում են, որ որոշումների

<sup>1056</sup> Տե՛ս օրենքը: Հասանելի է հետևյալ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=156446> հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

կայացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունն առավելապես դրսևորվում է խորհրդակցական մարմիններից անդամության տեսքով, իսկ հանրության մասնակցությունը խթանող հետևողական քաղաքականություն կամ ռազմավարություն ներդրված չէ, որը կիրառելի կլինի ինչպես հանրապետական, այնպես էլ տարածքային և տեղական ինքնակառավարման մակարդակներում: Ավելին՝ գործող մասնակցային մեխանիզմների արդյունավետությունն ու ազդեցությունը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վրա հնարավոր չէ գնահատել՝ հաշվի առնելով, որ դրանք հետևողական և կանոնավոր չեն: Խնդիրն էլ ավելի է խորանում այն պատճառով, որ գործող ընթացակարգերով իրականացվող քննարկումներում հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական, ընտրական իրավունքներին առնչվող թեմաները շարունակում են բավարար պատշաճ ուշադրության չանդրադառնալ և չլուսաբանվել: Այս մասին են վկայում ինչպես Պաշտպանի մշտադիտարկումները, այնպես էլ Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ քննարկումների, տրամադրած տեղեկությունների վերլուծությունը:

Այս խնդիրն Պաշտպանն անդրադարձել է նաև Արտահերթ զեկույցով<sup>1057</sup> և նախորդ տարիների տարեկան հաղորդումներով: Մասնավորապես, արձանագրվել է, որ թեև ոլորտային որոշ հասարակական կազմակերպություններ մասնակցում են ներառական, ռազմավարական նշանակության ու կարևորության տարբեր ծրագրերի մշակմանը և իրականացմանը, այնուամենայնիվ, քաղաքականության, հայեցակարգերի մշակման և որոշումների կայացման մեջ հաշմանդամություն ունեցող անձանց շահերը, իրավունքները ներկայացնող քաղաքացիական հասարակության կառույցների առավել արդյունավետ մասնակցության համար դեռևս անհրաժեշտ են հստակ մեխանիզմներ: Այդպիսի մեխանիզմներից կարող է լինել, օրինակ, պետության միջոցների հաշվին մի շարք ծրագրերում քաղաքացիական հասարակության կառույցների կողմից իրականացվող մշտադիտարկման գործառույթների ներդրումը կամ դրանց ընդլայնումը:

*Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. մշակել հաշմանդամություն ունեցող անձանց հանրային մասնակցությունը խթանող ռազմավարություն և միջոցառումների ծրագիր,*
- 2. մշակել ոլորտային հասարակական կազմակերպությունների գործունեությունը խթանող միջոցառումների ծրագիր:*

## **5.5 Առողջապահության մատչելիություն**

Առողջության պահպանման իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի իրացման համար անհրաժեշտ մատչելի միջավայրի ապահովումն ուղղակիորեն անդրադառնում է մարդու

<sup>1057</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:



կյանքի որակի, նրա իրավունքների իրացման հնարավորությունների վրա: Նշված իրավունքի երաշխավորման պետության պոզիտիվ պարտավորությունը ենթադրում է նաև առողջապահական ծառայություններից օգտվելու և օրենքով սահմանված կարգով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքների համար արդյունավետ մեխանիզմների ներդրումն ու զարգացումը: Ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ պետության նշված պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է լրացուցիչ ջանքեր՝ պայմանավորված իրավատերերի կարիքների առանձնահատկություններով և այն խնդիրներով, որոնց բախվում են հաշմանդամություն ունեցող անձինք իրենց իրավունքն իրացնելիս<sup>1058</sup>:

Պաշտպանի այս դիրքորոշումը բխում է նաև Կոնվենցիայի պահանջներից, որը ենթադրում է, որ Հայաստանը, որպես Կոնվենցիան վավերացրած երկիր, **պետք է երաշխավորի և այդ նպատակով ստեղծի բավարար պայմաններ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձինք ունենան առողջության ապահովման, ինչպես նաև հիվանդությունների կանխարգելման բժշկական միջոցներից օգտվելու կարիքահեն, մատչելի հնարավորություն:** Նշվածը վերաբերելի է առողջապահական ծառայությունների և բուժսպասարկման գործընթացը պատշաճ կազմակերպելու համար անհրաժեշտ ֆիզիկական և միջավայրային մատչելիության ապահովմանը: Ուստի պետության կողմից ձեռնարկվող բոլոր ոլորտային քայլերն առողջապահության ոլորտում պետք է, ըստ էության, միտված լինեն մատուցվող ծառայություններն անձի կարիքներին համապատասխանեցնելուն և նրա կյանքի որակը բարելավելուն<sup>1059</sup>: Այս մոտեցումը կարող է նաև կարևոր կանխարգելիչ ազդեցություն ունենալ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հնարավոր խախտումների հարցում:

Չնայած նշվածին՝ Պաշտպանի մշտադիտարկումները, հասարակական խորհրդի անդամների տրամադրած տեղեկությունները, ինչպես նաև Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում են, որ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահության մատչելիության համակարգային խնդիրները շարունակում են մնալ չլուծված: Մասնավորապես, 2021 թվականի ընթացքում արձանագրված խնդիրներն առավելապես կապված են առողջապահական ծառայությունների հասանելիության, առկա ծառայություններից օգտվելու մատչելիության, ինչպես նաև պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով առողջապահական ծառայությունների, այդ թվում՝ հասանելի դեղորայքի տրամադրման գործընթացի հետ: Այս խնդիրներն էլ ավելի են սրվում այն պատճառով, որ ոչ բոլոր բժշկական հաստատություններն ունեն մատչելի շենքային պայմաններ, ինչի հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք ոչ միշտ են գործնականում կարողանում օգտվել առաջարկվող

<sup>1058</sup> Տե՛ս Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից արձանագրված խնդիրները: Հասանելի են <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/disability-and-health> հղումով:

<sup>1059</sup> Տե՛ս՝ «Առողջապահության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար» զեկույցը, հասանելի է <https://cutt.ly/Px4he40> հղումով:

ծառայություններից՝ իրավաչափորեն այդ իրավունքն ունենալով: Այս կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտնել է, որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» և «Հիվանդությունների կանխարգելման և վերահսկման լրացուցիչ ֆինանսավորում» վարկային ծրագրերի շրջանակներում 2021 թվականին շարունակվել են «Մարտունու ԲԿ» ՓԲԸ-ի նոր մասնաշենքի կառուցման շինարարական աշխատանքները և մեկնարկել է Վայոց ձորի մարզի Վայքի հիվանդանոցի նոր շենքի կառուցման աշխատանքները: ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցներով 2021 թվականին մեկնարկել են ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման կենտրոն» ՓԲԸ-ի, ՀՀ Սյունիքի մարզի «Սիսիանի ԲԿ» ՓԲԸ-ի, ՀՀ Կոտայքի մարզի «Չարենցավանի ԲԿ» ՓԲԸ-ի, ՀՀ Արագածոտնի մարզի «Թալինի ԲԿ» ՓԲԸ-ի վերակառուցման և ՀՀ Արագածոտնի մարզի «Ծաղկահովիտի ԱԿ»-ի կառուցման շինարարական աշխատանքները: Ընդ որում՝ նախարարության տեղեկությունների համաձայն՝ բժշկական կազմակերպությունների շենքերի կառուցման համար մշակված նախագծերում նախատեսվել են հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի մուտքի, ելքի (հատուկ թեքահարթակներ), ազատ տեղաշարժի, սանհանգույցներից, ինչպես նաև բոլոր բժշկական ծառայություններից օգտվելու հնարավորությունները:

Կարևորելով բուժհաստատությունների ֆիզիկական մատչելիության բարելավման ուղղությամբ հարմարեցման և վերանորոգման 2021 թվականի աշխատանքները՝ ֆիզիկական և միջավայրային մատչելիության խնդիրն առավել սուր է հատկապես ՀՀ մարզերում: Այսպես, օրինակ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկությունների համաձայն՝ Արագածոտնի մարզում գործում է 21 բժշկական կազմակերպություն, որից 13 հարմարեցված են, 1 մասնակի՝ թեքահարթակ չունի միայն պոլիկլինիկայի մասնաշենքը (Աշտարակի ԲԿ): 2021 թվականի ընթացքում կառուցվել են 1 թեքահարթակ (Թալինի ԲԿ ժամանակավոր տեղափոխված տարածք): Հարմարեցման կարիք ունեն 7 բժշկական կազմակերպություններ (Արագածի ԱԿ, Արուճի ԱԿ, Արագածավանի ԲԱ, Սասունիկ ԲԱ, Մաստարայի ԲԱ, Ոսկեվազի ԲԱ, Փարպիի ԲԱ): Աշտարակի, Թալինի և Ապարանի բժշկական կենտրոնների ստացիոնար ծառայություններում կան վերելակներ:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար 2021 թվականի ընթացքում Արարատի մարզում առողջապահական ծառայությունները մատչելի դարձնելու ուղղությամբ հարմարեցվել են 4 բժշկական հաստատություն, մարզում առկա են 55 բժշկական հաստատություն, որոնցից հարմարեցման կարիք ունեն 16-ը: Արմավիրի մարզպետանի ենթակայությամբ գործող 5 բուժհաստատությունում՝ առկա են թեքահարթակներ և հարմարեցված են տեղաշարժման խնդիր ունեցող հիվանդների համար, իսկ համայնքային ենթակայությամբ գործող 52 բժշկական ամբուլատորիաներից 30 -ում թեքահարթակներ առկա չեն: 2021 թվականի ընթացքում համայնքային 3 բուժհաստատություններում կառուցվել են թեքահարթակներով: ՀՀ Լոռու մարզի գյուղական համայնքներում գործող թվով 95 բուժակ-մանկաբարձական կետերից 43-ը մատչելի են,

մատչելի չէ 34-ը, մասնակի մատչելի՝ 9, իսկ տարածք չունեցող 9 ԲՄԿ սպասարկվում են արտագնա:

Շիրակի մարզում 2021 թվականի ընթացքում թվով 2 բժշկական հաստատություններում իրականացվել են շինարարական աշխատանքներ. մասնավորապես՝ կառուցվել են թեքահարթակներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար առողջապահական ծառայություններն առավել մատչելի դարձնելու նպատակով:

Սյունիքի մարզում գործում են 15 բուժհաստատություններ, որոնցից 6-ը փակ բաժնետիրական ընկերություններ են, իսկ 9-ը գյուղական բնակավայրերում գործող առողջության առաջնային պահպանման կենտրոններ: Թեև բոլոր փակ բաժնետիրական ընկերությունների շենքերը հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար (թեքահարթակներ, վերելակներ, հարմարեցված սանհանգույցներ), իսկ գյուղական բնակավայրերում գործող բուժհաստատությունները տեղակայվում են մեկ հարկանի շենքերում, այնուամենայնիվ, վերջիններից միայն երեքն են, որ հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց ազատ տեղաշարժման համար: 2 գյուղական առողջության առաջնային պահպանման կենտրոններ ընդգրկված են 2022-2023 թվականի մարզային առողջապահական հիմնարկների օպտիմալացման ծրագրի մեջ և կենթարկվեն վերակառուցման:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ՝ Պաշտպանը բարձրացրել էր առողջապահության ոլորտում տեղեկատվության, այդ թվում՝ լսողության խնդիրներ ունեցող անձանց համար հաղորդակցության մատչելիության խնդիրը, որը 2021 թվականին նույնպես արդիական է: Այս կապակցությամբ Պաշտպանը տարեկան հաղորդմամբ կարևորել էր առողջապահական ոլորտում ժեստերի լեզվով թարգմանչի ծառայության ներդրումը: «Առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2021 ընթացքում ևս առողջապահական հաստատություններում նման ծառայություն չի ներդրվել:

Պաշտպանի կողմից տարիներ շարունակ բարձրաձայնված խնդիրներից է նաև տեղեկություն ստանալու նպատակով պաշտոնական աղբյուրների հասանելիությունը, ինչն անկյունաքարային նշանակություն ունի հաշմանդամություն ունեցող անձի առողջության պահպանման իրավունքի իրացման մեխանիզմների և հնարավորությունների վերաբերյալ իրազեկումն ապահովելու հարցում: Այս դեպքում խոսքն առաջին հերթին վերաբերում է պաշտոնական կայքերի մատչելիությանը տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար, ինչպես նաև պաշտոնական աղբյուրներից ստացվող տեղեկատվության բովանդակության հասանելիության և մատչելիության մասին:

Այս կապակցությամբ Առողջապահության նախարարությունը պարզաբանել է, որ «Հիմք ընդունելով Կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1978-Լ որոշման 46-րդ կետը Առողջապահության նախարարի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 2751-Լ հրամանով հաստատվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման

ուղեցույցը<sup>1060</sup>», որի հարմարեցված տարբերակը «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» հասարակական կազմակերպության կողմից տեսողության և լսողության խնդիրներ ունեցող անձանց համար գտնվում է մշակման փուլում:» Նշված որոշման նախագիծը ներկայացվել է նաև Մարդու իրավունքների պաշտպանի կարծիքին:

Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում են, որ շարունակական բնույթ են կրում նաև գնումների կամ այլ կազմակերպչական գործընթացներով պայմանավորված՝ պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքի իրացման հետ կապված խնդիրները<sup>1061</sup>: Օրինակ՝ դիմումներից մեկով քաղաքացին նշել, որ ունի էպիլեպսիա ախտորոշում: Բժշկի կողմից նշանակված է «Դեպակին Էնտերիկ» դեղորայքը, սակայն ամիսներ շարունակ տարբեր պատճառաբանություններով չի կարողացել ստանալ այն, ինչի պատճառով ստիպված գնում է սեփական միջոցներով: Բողոքի ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ դեղորայքը քաղաքացուն չի տրամադրվել գնումների գործընթացի կազմակերպման ձգձգումներով պայմանավորված: Պաշտպանի աջակցությամբ քաղաքացուն տրամադրվել է «Դեպակին Էնտերիկ» դեղորայքը: Թեև Պաշտպանի կողմից արձանագրվել են նմանօրինակ մի շարք դեպքեր, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքի երաշխավորման նպատակով նոր մեխանիզմների, օրինակ, փոխհատուցման համակարգի չներդրման հետևանքով ոչ միշտ է հնարավոր լինում ապահովել մարդու իրավունքի իրացումը: Այսպես, օրինակ, Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը բարձրացրել է պետպատվերի շրջանակներում անվճար դեղորայք ստանալու հարցը: Իր բողոքով անձը նշել, որ իրեն նշանակված դեղորայքը չի կարողանում ստանալ բուժհաստատությունից: Բողոքի քննարկման շրջանակներում Մարդու իրավունքների պաշտպանը պարզաբանումներ է պահանջել ՀՀ առողջապահության նախարարությունից: Բողոքի քննարկման ընթացքում ձեռք բերված փաստական հանգամանքների ուսումնասիրություն վկայում է, որ բողոք ներկայացրած անձը չի կարողացել իրացնել իր իրավունքը՝ պայմանավորված բուժսպասարկում իրականացնող իրավաբանական անձի լուծարման, հետագայում այլ իրավաբանական անձի կցագրվելու և տվյալ բուժհաստատության լիզենզավորման և պետական պատվերի իրավունք ստանալու ընթացիկ գործընթացով: Նշվածի կապակցությամբ բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանն արձանագրել է, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված է, որ ֆունկցիոնալության միջին, ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող անձինք ունեն անվճար դեղեր ստանալու իրավունք: Անվճար բժշկական օգնություն և սպասարկում, այդ թվում՝ դեղեր տրամադրելու կարգը սահմանում է Կառավարությունը: Նույն օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ անժամկետ 1-ին

<sup>1060</sup> Տե՛ս ուղեցույցը, հասանելի է [https://moh.am/images/legal-806.pdf?fbclid=IwAR003nQbOfSQU08f6M7c0v3Rj9IUm9T\\_k6u5C3LhjihlsFIk0Je9uN5CHH8](https://moh.am/images/legal-806.pdf?fbclid=IwAR003nQbOfSQU08f6M7c0v3Rj9IUm9T_k6u5C3LhjihlsFIk0Je9uN5CHH8) հղումով

<sup>1061</sup> Առավել մանրամասն տե՛ս «Հիմնական դեղերի ցանկում ներառված դեղորայքի որակի, դրանք շահառուներին չտրամադրելու խնդիր» պարագրաֆում:

և 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անվճար, իսկ 3-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք՝ 50 տոկոս զեղչով դեղեր ստանալու իրավունք: ՀՀ Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշման հավելված 1-ում պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ներառված են նաև 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձինք: Հատկանշական է, որ անձի պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղորայք ստանալու իրավունքի իրացման բացառության դեպքեր օրենսդրորեն նախատեսված չեն: Բողոքը 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ շարունակում է քննարկվել Պաշտպանի աշխատակազմում:

Պաշտպանն արձանագրում է, որ նշված խնդիրները կրում են համակարգային բնույթ, դրանց մասին բարձրաձայնվել է Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդմամբ, ներկայացնելով նաև լուծմանն ուղղված առաջարկները<sup>1062</sup>:

Այս կապակցությամբ ևս մեկ անգամ հատուկ պետք է արձանագրել, որ պետության կամ պետության կողմից պատվիրակված ծառայություն մատուցող կազմակերպությունների պարտավորությունների կատարումը, ինչպես նաև օրենսդրորեն նախատեսված գործընթացների ապահովումը չի կարող լինել ի վնաս մարդու իրավունքների: Ավելին՝ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքի ստանալու գործընթացը պատշաճ վերահսկելու մեխանիզմների բացակայության արդյունքում, անձը միայնակ է մնում իր իրավունքների իրացման առջև դրված խոչընդոտների հետ:

Պաշտպանը բազմիցս ընդգծել է պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքը սեփական միջոցներով ձեռքբերելու դեպքում փոխհատուցման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությունը՝ բացառելու մարդու իրավունքի իրացման կախվածությունը գնումների կամ կազմակերպչական այլ գործընթացներից:

*Ուստի, հաշվի առնելով վերոգրյալ, Պաշտպանը վերահաստատում է նախորդ տարվա դիտարկումները և առաջարկները: Մասնավորապես՝ անհրաժեշտ է՝*

- 1. ապահովել բժշկական ծառայությունների հասանելիություն և մատչելիությունը՝ ընդլայնելով նաև դրանց շրջանակը,*
- 2. ապահովել բժշկական հաստատությունների շենքերի լիարժեք մատչելիությունը,*
- 3. ապահովել առողջապահական տեղեկատվական նյութերի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար,*

<sup>1062</sup> Տե՛ս 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> և <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումներ

4. ներդնել պետության կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով տրամադրվող դեղորայքը սեփական միջոցներով ձեռքբերելու դեպքում փոխհատուցման մեխանիզմ՝ բացառելու մարդու իրավունքի իրացման կախվածությունը գնումների գործընթացից և կառավարչական բնույթի խնդիրներից:

#### **5.6 Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման խնդիրները**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ «հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման «Փյունիկ» տեղեկատվական համակարգում 2021 թվականի հունիսի 17-ի դրությամբ հաշվառված են 184 449 տասնութ և բարձր տարիքի հաշմանդամություն ունեցող անձ, այդ թվում՝ 15 502 աչքի և նրա հավելյալ ապարատի հիվանդություններ, 2739՝ ականջի և պտկածն ելունի հիվանդություններ, 15 749 2-րդ աստիճանի և 3 860 3-րդ աստիճանի ինքնուրույն տեղաշարժման խնդիրներ ունեցող անձինք»:

Մարդու իրավունքների պաշտպանը՝ որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող անկախ մարմին, 2021 թվականի ընթացքում իրականացրել է Ազգային ժողովի արտահերթ և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորմանն ուղղված միջոցառումների մոնիթորինգ: Մոնիթորինգի շրջանակներում իրականացվել են մեդիա հրապարակումներ, մշտադիտարկումներ, Պաշտպանի աշխատակազմ ստացած ահազանգերի ուսումնասիրություններ: Գրություններ են հասցեագրվել իրավասու մարմիններին, արձանագրված խնդիրների առնչությամբ ուսումնասիրվել է միջազգային փորձ: Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացմանն առնչվող հիմնահարցերի քննարկման նպատակով Պաշտպանի աշխատակազմը արդյունավետ համագործակցություն է ունեցել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ: Մասնավորապես, կազմակերպվել են աշխատանքային քննարկումներ և հանդիպումներ, Պաշտպանի մշտադիտարկման արդյունքում արձանագրված խնդիրներն աշխատանքային կարգով փոխանցվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ քննարկման և լուծման նպատակով:

Պաշտպանին առընթեր հաշմանդամության հարցերով հասարակական խորհրդի անդամների տրամադրած տեղեկությունների, Պաշտպանի մշտադիտարկման արդյունքների համադրումը վկայում է, որ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացմանն առնչվող խնդիրները շարունակել են համակարգային բնույթ կրել: Մասնավորապես, թեև ՀՀ Սահմանադրությամբ, Ընտրական օրենսգրքով և Կոնվենցիայով երաշխավորում է բոլորի հետ հավասար հիմունքներով հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացումը՝ առանց խտրականության, այնուամենայնիվ, ֆիզիկական և տեղեկատվական ոչ լիարժեք մատչելի միջավայրի պայմաններում գործնականում լիարժեք կերպով երաշխավորված չէ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքը: Օրինակ, 2021

թվականի հունիսի 20-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց ահազանգերը, հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքային քննարկումները, Պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ ոչ բոլոր ընտրական տեղամասային կենտրոններն են եղել մատչելի, հիմնականում բացակայել են շենքի մուտքի և շենքի ներսում թեքահարթակներն ու բազրիքները, խելամիտ այլ հարմարեցումները, արձանագրվել են դեպքեր, երբ ընտրական սենյակ տանող դռները նեղ էին կամ ոչ ամբողջովին բացված: Նշված միջավայրային խոչընդոտների հետևանքով հաշմանդամություն ունեցող անձինք զրկվել են ինքնուրույն՝ առանց լրացուցիչ աջակցության ընտրատեղամաս մուտք գործելու, ներսում տեղաշարժվելու հնարավորությունից: Ավելին՝ անգամ այն տեղամասային կենտրոններում, որոնք հարմարեցված են հենաշարժողական կամ տեղաշարժման խնդիրներ ունեցող անձանց կարիքներին, այս դեպքում ևս հաշմանդամություն ունեցող անձինք ընտրության օրը բախվել են ֆիզիկական միջավայրային խոչընդոտների և չեն կարողացել իրացնել իրենց ընտրական իրավունքը:

Այսպես, օրինակ, Պաշտպանը ստացել է ահազանգեր, որոնցով մի խումբ քաղաքացիներ հայտնել են, որ ունեն հենաշարժողական խնդիրներ, ինչի պատճառով զրկվել են քվեարկության օրն իրենց ընտրական իրավունքն իրացնելու հնարավորությունից, քանի որ չեն կարողացել հասնել ընտրատեղամաս: Խնդիրն էլ ավելի է սրվում այն պատճառով, որ ընտրական իրավունքի երաշխավորման տեսանկյունից էական նշանակություն ունի ոչ միայն կոնկրետ ընտրատեղամասի ֆիզիկական մատչելիությունն ու խելամիտ հարմարեցումների առկայությունը, այլ առհասարակ տրանսպորտային, հարակից տարածքների, բնակավայրի միջավայրային ֆիզիկական մատչելիությունը: Այլապես հարց է առաջանում, թե ինչ կերպ պետք է մարդն իրացնի իր իրավունքը, եթե միջավայրային խոչընդոտների պատճառով չի կարողանում հասնել ընտրական տեղամաս: Մինչդեռ մարդու ընտրական իրավունքը սահմանադրական իրավունք է, որի երաշխավորումը պետության ուղիղ պոզիտիվ պարտավորությունն է:

Ի պատասխան Պաշտպանի գրության՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտնել է նաև, որ 2021 թվականի հունիսի 20-ի ԱԺ արտահերթ ընտրություններն անցկացնելու համար ձևավորվել են թվով 2008 տեղամասային կենտրոններ, որոնցից շուրջ 100-ն են տեղակայվել շինությունների առաջին հարկերում նախկին երկրորդ կամ ավելի բարձր հարկերի փոխարեն, մատչելի (հարմարեցված) կամ կիսով չափ մատչելի տեղամասային կենտրոնների վրա փակցվել են այդ մասին տեղեկությունը հավաստող տարբերանշաններ: Կենտրոնական հանձնաժողովը հայտնել է նաև, որ 2020 թվականին IFES-ի հայաստանյան մասնաճյուղի հետ համատեղ՝ «ԱԳԱԹ» հասարակական կազմակերպության միջոցով իրականացվել է տեղամասային կենտրոնների մատչելիության վերաբերյալ մեծածավալ մոնիտորինգ և այդ տեղեկությունների հիման վրա փորձ է արվել ավելացնել մատչելի կենտրոնների քանակը, սակայն այս պահին մատչելի կենտրոնների թիվը հաշվարկված չէ: Հնարավորության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովները քվեարկության սենյակը կահավորել են առաջին հարկերում, սակայն հստակ հաշվառում չի

իրականացվել: Այս կապակցությամբ պետք է նշել, որ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրի միջոցառումների շրջանակում նախատեսված է իրականացնել միայն ընտրական տեղամասային կենտրոնների մատչելիության համապարփակ հետազոտություն ինչը բավարար չէ հաշմանդամություն ունեցող անձանց՝ հանրային և քաղաքական կյանքին մասնակցությունն ապահովելու համար:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ դեռևս 2020 թվականին «ԱԳԱԹ» հասարակական կազմակերպության իրականացրած հետազոտության՝ տեղամասային կենտրոնների 32.4 %-ն են ունեցել թեքահարթակ: Մատչելիության և ֆիզիկական միջավայրային հարմարեցումների ապահովման համատեքստում այս պատկերն էապես չի փոփոխվել 2021 թվականի ընթացքում՝ հաշվի առնելով, որ գրեթե բոլոր ընտրությունների ժամանակ ընտրատեղամասերը հիմնականում ձևավորվել են նույն հաստատություններում և շինություններում, որոնք առավելապես կրթական հաստատություններ են: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ընտրական իրավունքի իրացման համար պահանջվող շենքերի, շինությունների, հարակից տարածքների ֆիզիկական մատչելիության ապահովումը չի կարող ընկալվել բացառապես նշված իրավունքի տեսանկյունից: Պաշտպանը բազմիցս է նշել, որ միջավայրային մատչելիությունը կարևորագույն նախապայմաններից մեկն է կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ հանրային և քաղաքական, հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք ինտեգրման համար:

Այս մասին Մարդու իրավունքների Պաշտպանը արձանագրել է նաև Պաշտպանի «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցում<sup>1063</sup>:

2021 թվականին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրության օրը Պաշտպանի աշխատակազմը հաշմանդամություն ունեցող անձանցից ստացել է դիմումներ այն մասին, որ իրենք գտնվում են անկողնային ռեժիմում և չեն կարողանում իրացնել իրենց ընտրական իրավունքը:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ տանից դուրս գալու, տեղամասային կենտրոն հասնելու հնարավորությունից զրկված անձանց ընտրական իրավունքի իրացման նպատակով որևէ օրենսդրական կարգավորում սահմանված չէ, իսկ ՀՀ ընտրական օրենսգրքի 63-րդ հոդվածի կարգավորման համաձայն՝ **ձերբակալված անձանց պահելու վայրերում և քրեակատարողական հիմնարկներում ընտրողները քվեարկությանը մասնակցում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով՝ շրջիկ արկղի միջոցով:** Ստացվում է, որ մի կողմից Սահմանադրությամբ երաշխավորված է մարդու ընտրական իրավունքը, մյուս կողմից մի խումբ անձինք, ովքեր ցանկանում են իրացնել իրենց ընտրական իրավունքը, սակայն առողջական խնդիրներով պայմանավորված չեն կարողանում այցելել ընտրատեղամաս և միաժամանակ ստացիոնար բուժում էլ չեն ստանում բուժհաստատությունում, զրկվում են իրենց ընտրական իրավունքի իրացման հնարավորությունից՝ թեև օրենքով սահմանված կարգով իրենց իրավունքը

<sup>1063</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:



սահմանափակված չէ: Այս դեպքում, ընտրական իրավունքի իրացման սկզբունքների ապահովման հարցում օրենսդրի մտահոգությունը հասկանալով հանդերձ, այնուամենայնիվ, հարկ է նշել, որ իրավակարգավորումների բացակայության պատճառով մի խումբ անձանց ընտրական իրավունքը գործնականում ոչ իրավաչափորեն սահմանափակում է՝ պայմանավորված նրանց առողջական՝ տեղաշարժվելու կարողությունների խնդիրներով:

Այս կապակցությամբ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ մի շարք երկրներում այս խնդրի լուծման նպատակով կիրառվում է, այսպես կոչված, «բացակա քվեարկությունը»<sup>1064</sup>, որը հնարավորություն է տալիս մասնակցել ընտրություններին՝ առանց ընտրատեղամաս ներկայանալու: Այս դեպքում կիրառվում է փոստային քվեարկության կամ քվեարկության օրը ընտրողի տուն բերվող շրջիկ քվեատուփերի միջոցով քվեարկության հնարավորության ապահովումը: Օրինակ՝ Գերմանիայում յուրաքանչյուր քաղաքացի կարող է գրանցվել փոստային քվեարկության համար, որը հասանելի է բոլորի համար՝ անկախ բնակության վայրից, տարիքից կամ հաշմանդամության կարգավիճակից: Էստոնիայում տեսողության խնդիրներ ունեցող անձինք հատուկ մշակված և ներդրված ծրագրերի միջոցով հնարավորություն ունեն քվեարկությանը մասնակցել համացանցի միջոցով:

Ինչպես Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդումներով, այնպես էլ Արտահերթ զեկույցով Պաշտպանն արձանագրել է, որ քաղաքական մասնակցությանը համակարգային բնույթի խոչընդոտներից է քարոզարշավերի ոչ լիարժեք մատչելիությունը, ինչը խոչընդոտներ է առաջացնում լսողության, տեսողության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման համար: Քարոզարշավերի մատչելիության թերի լինելը դրսևորվում է բրայլյան թարգմանության, ենթագրերի, լուսագրերի, աուդիոտարբերակի և սուրդոթարգմանության բացակայությամբ կամ ոչ ամբողջական ծավալի առկայությամբ, ինչպես նաև տեքստերի բովանդակության անմատչելիությամբ: Արդյունքում ոտնահարվում է հաշմանդամություն ունեցող անձի քաղաքական դիրքորոշման անկախ ձևավորման սկզբունքը:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանել է, որ Հանձնաժողովի կողմից պատրաստված բոլոր տեսահոլովակներն ուղեկցվել են ժեստերի լեզվով, թարգմանությամբ և լուսագրերով: Այնուամենայնիվ, մշտադիտարկումները վկայում են, որ ոչ բոլոր տեսահոլովակներն են միաժամանակ ուղեկցվում և՛ ժեստերի լեզվով և՛ թարգմանությամբ և՛ լուսագրերով: Օրինակ՝ հրապարակած տեսահոլովակներից մեկում<sup>1065</sup>, որով բացատրվում է ընտրության ժամանակ բրայլյան այբուբենով հատուկ կաղապարի օգտագործման կարգը, կիրառվում է միայն ժեստերի լեզուն, սակայն բացակայում են թարգմանությունը և լուսագրերը: Նշվածը խնդրահարույց է այն նկատմամբ, որ Կոնվենցիայի դրույթների համաձայն

<sup>1064</sup> Տե՛ս «Կույրերի եվրոպական միության» կողմից հրապարակված զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.euroblind.org/campaigns-and-activities/current-activities/accessible-voting>:

<sup>1065</sup> Տե՛ս տեսանյութը, հասանելի է <https://www.youtube.com/watch?v=iEIRIWH-zjM> հղումով:

հաշմանդամություն ունեցող անձինք իրավունք ունեն ստանալու իրենց փնտրած տեղեկատվությունը իրենց համար նախընտրելի եղանակով, ինչն այս դեպքում ապահովված չէ:

Քվեարկությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնելուն ուղղված քայլերի վերաբերյալ Պաշտպանի հարցին ի պատասխան՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը միաժամանակ պարզաբանել է, որ իր կողմից պահպանվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 136-ն որոշման պահանջները, բացառությամբ՝ խոշորացնող ոսպնյակների տրամադրումից, քանի որ քվեաթերթիկի նմուշը հաստատվել է այնպես, որ քվեաթերթիկի համարի տառաչափի մեծությունը հնարավորություն է տվել տեսողության խնդիրներ ունեցող անձանց այն ընթերցելու առանց որևէ լրացուցիչ միջոցների կիրառության: Այս դեպքում, սակայն, հարց է առաջանում, թե ինչպես է ԿԸՀ-ն որոշել, թե որ տառաչափն է համարվում մեծ և հնարավորություն տալիս ընթերցել առանց կողմնակի միջոցի օգտագործման, քանի որ տառաչափի որոշման կարգի վերաբերյալ չափորոշիչներ սահմանված չեն:

Այս կապակցությամբ «Կույրերի եվրոպական միության» զեկույցով<sup>1066</sup> առաջարկվում են մի շարք միջոցներ՝ միտված տեսողության խնդիրներ ունեցող անձանց՝ ընտրական իրավունքի իրացման ապահովմանը: Օրինակ՝ Նորվեգիայում տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար օրենսդրությամբ սահմանված է ընտրաթերթիկի հստակ՝ սովորականից ավելի մեծ տառաչափ (Arial pt. 12 ֆորմատով), իսկ Վրաստանում յուրաքանչյուր ընտրատեղամասում պետք է լինի երկու խոշորացույց կամ ոսպնյակ: Իսպանիայում 2018 թվականին առաջին անգամ կիրառված «տրաֆարետային» քվեարկությունը ենթադրում է թափանցիկ պլաստիկից պատրաստված քվեաթերթիկի օգտագործում, որի վրա տառերը տպագրված են հստակ, ունեն լավ գունային հակադրություն, իսկ կտրված հատվածները եզրագծվում են սև գույնով՝ օգնելու համար մարդկանց գտնել, թե որտեղ կատարեն համապատասխան նշումը: Բելգիայի ընտրական օրենսգիրքը, ինչպես նաև նորվեգական օրենսդրությունը թղթային քվեաթերթիկի համար սահմանում է կոնկրետ միլիմետրային չափորոշիչներ, որոնք ներառում են լուսանցքները, տողի բարձրությունը և սպիտակ բացերը:

#### *Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. հաշմանդամություն ունեցող անձանց՝ քվեարկության սենյակ հասնելու հնարավորությունն ապահովելու նպատակով թեքահարթակներ կամ այլընտրանքային մուտքեր չունեցող ընտրական տեղամասերում իրականացնել խելամիտ հարմարեցումներ,*

*2. ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց անխոչընդոտ տեղաշարժը դեպի ընտրական տեղամասեր, իսկ անհնարինության դեպքում՝ ներդնել այլընտրանքային քվեարկության ընթացակարգ,*

<sup>1066</sup> Տե՛ս «Կույրերի եվրոպական միության» կողմից հրապարկված զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.euroblind.org/campaigns-and-activities/current-activities/accessible-voting>:

3. տեղամասային կենտրոն հասնելու հնարավորություն չունեցող հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի իրացման երաշխավորման նպատակով մշակել և ներդնել համապատասխան օրենսդրական կարգավորումներ և դրանց գործարկման մեխանիզմներ,

4. ընտրական գործընթացի ողջ ընթացքում ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց իրենց նախընտրած տարբերակով տեղեկատվություն ստանալու իրավունքի իրացումը,

5. ներդնել տեսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեքստերի տառաչափի մեծությունը և ընթերցելիությունը հստակորեն որոշելու հստակ չափորոշիչներ:

6. մշակել և ներդնել ընտրական քարոզարշավի մատչելիությունն ամբողջ ծավալով հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովելու ռազմավարություն և մեխանիզմներ:

### **5.7. Տեղեկությունների և հաղորդակցության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար**

Տեղեկություններ ստանալու անձի իրավունքը՝ անկախ նրա հաշմանդամությունից, կարող է իրացվել սեփական կարծիք ունենալու և այն ազատորեն արտահայտելու, ցանկացած լրատվամիջոցով կամ սոցիալական հարթակում տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու միջոցով, այդ թվում՝ օրենքով չարգելված ցանկացած այլ եղանակներով: Այս իրավունքը երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և հանդիսանում է մարդու հիմնական իրավունքներից մեկը, որի ապահովման համատեքստում սկզբունքային նշանակություն ունի, այն որ նշված իրավունքի երաշխավորումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ դրա իրացման եղանակները և հնարավորությունները մատչելի և հասանելի են իրավատիրոջը, տվյալ դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձի համար՝ զերծ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջամտությունից և անկախ տվյալ պետական սահմաններից դուրս գտնվելու հանգամանքից: Առանձնահատուկ պետք է ընդգծել այն, որ **տեղեկությունների մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձի համար պետք է ապահովվի դրանք ինքնուրույն ստանալու հնարավորության առկայությամբ, այն է՝ առանց այլ անձի օգնության՝ հաշվի առնելով անձի կարողություններն ու հմտությունները:** Նման մոտեցումը բխում է նաև Կոնվենցիայի պահանջներից<sup>1067</sup>, ինչը ենթադրում է, որ պետությունն իր պոզիտիվ պարտավորությունը պատշաճ կատարելու նպատակով պետք է ձեռնարկի բոլոր անհրաժեշտ և խելամիտ միջոցները՝ ստեղծելով այլ անձանց հետ հավասար հիմունքներով իրավունքների իրացման իրական հնարավորություններ<sup>1068</sup> հաշվի առնելով անձի կարիքների առանձնահատկությունները:

<sup>1067</sup> Տե՛ս Կոնվենցիայի 21-րդ հոդվածը: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64762> հղումով:

<sup>1068</sup> Ավելի մանրամասն տե՛ս Պաշտպանի՝ 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, հասանելի է [https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf?fbclid=IwAR2Hz34bsPKwqIh5RC\\_gsKUEsAHZVV21OFCJzNWxvvnFVUD71FEg1AZa50s](https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf?fbclid=IwAR2Hz34bsPKwqIh5RC_gsKUEsAHZVV21OFCJzNWxvvnFVUD71FEg1AZa50s) հղումով:

Այս համատեքստում Պաշտպանն արձանագրում է, որ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց համար՝ իրեն նախընտրելի եղանակով տեղեկությունների ստացման և փոխանցման մատչելիության հետ կապված խնդիրները շարունակական են եղել կյանքի ամենատարբեր ոլորտներում՝ կրթությունից մինչև պետության հետ ծագած վարչական իրավահարաբերություններ: Պետք է հատուկ ընդգծել, որ խնդիրն արդիական է ոչ միայն անմիջականորեն հաշմանդամությանն առնչվող, այլ առհասարակ մարդուն և քաղաքացուն վերաբերելի հարցերի դեպքում: Այս համատեքստում, կարևորելով հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություններ ստանալու իրավունքը բոլոր ոլորտներում, 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի՝ Ազգային ժողովում 2020 թվականի տարեկան հաղորդման և խոշտանգումների կանխարգելման մեխանիզմի զեկույցի ներկայացումը<sup>1069</sup>, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ, առաջին անգամ ուղեկցվել է նաև ժեստերի լեզվով թարգմանությամբ<sup>1070</sup>:

Տեղեկատվության մատչելիության և հասանելիության համար անհրաժեշտ պայմանների ապահովման համատեքստում կարևոր նշանակություն ունի պետության կողմից լեզվաքաղաքականության արդյունավետ իրականացումը: Այս մասին Պաշտպանն արձանագրել է նաև 2020 թվականի տարեկան հաղորդմամբ: Մասնավորապես, Պաշտպանը նշել է, որ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի համաձայն պետական լեզվաքաղաքականության պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են նաև տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների իրացման և պարտականությունների կազմակերպման նպաստող լրացուցիչ մեխանիզմներ (օրինակ՝ հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցների, բրայլյան գրերով կամ հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրած՝ հաղորդակցության այլ մատչելի միջոցների նախատեսում)<sup>1071</sup>: Նշվածի կապակցությամբ Պաշտպանը 2020 թվականի տարեկան զեկույցով առաջարկել էր «Լեզվի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել Կոնվենցիային պահանջներին: Այս ուղղությամբ 2021 թվականի ընթացքում պետության կողմից քայլեր չեն իրականացվել:

2021 թվականի ընթացքում շարունակում է արդիական մնալ պետական կառույցների պաշտոնական կայքերի մատչելիության հետ կապված խնդիրները՝ հանգեցնելով հաշմանդամություն ունեցող անձանց ամենատարբեր իրավունքների իրացման տարաբնույթ խոչընդոտների: Այս կապակցությամբ Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ **հավասար հնարավորությունների ձևավորումը, նախևառաջ, էական նշանակություն ունի ներառական միջավայրի ձևավորման և զարգացման համար**: Այս հարցին Պաշտպանն

<sup>1069</sup> Տե՛ս հրապարակումը, հասանելի է <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1672> հղումով:

<sup>1070</sup> Տե՛ս Ազգային ժողովի նիստը, հասանելի է <https://www.youtube.com/watch?v=xnE9vIc8TY8&t=2s> հղումով:

<sup>1071</sup> Ավելի մանրամասն տե՛ս Պաշտպանի՝ 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

անդրադարձել է նաև իր հայտարարություններում և տարեկան հաղորդումներում՝ ներկայացնելով նաև համապատասխան առաջարկներ<sup>1072</sup>: **Մասնավորապես, Պաշտպանը բազմիցս նշել է, որ այս խնդիրների լուծումը պահանջում է ինչպես իրավական բարեփոխումներ, այնպես էլ՝ տեխնիկական և գործնական այնպիսի բարելավումներ, որոնք իրապես կապահովեն տեղեկատվության մատչելիությունն ու հասանելիությունը:**

Նախորդ տարիներին Պաշտպանը բարձրացրել էր նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքը Կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու հարցը՝ առաջարկելով նշված օրենքով նախատեսել հաշմանդամություն ունեցող անձանց համար ազատ շուկայական հարաբերությունների ոլորտում տեղեկատվության մատչելիությունը:<sup>1073</sup> Այս կապակցությամբ Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ գործող իրավակարգավորումներում բացակայում են հաշմանդամություն ունեցող անձանց համար տեղեկատվության և դրանք ստանալու եղանակների մատչելիության գործուն մեխանիզմները: Խնդիրն առավել սրվում է այն պատճառով, որ կոնվենցիոն պահանջների կատարումն ապահովող իրավասու մարմիններն այս ոլորտում վերահսկողություն իրականացնելու համար բավարար իրավասություններ չունեն:

2020 թվականի տարեկան հաղորդմամբ Պաշտպանը բարձրացրել էր նաև պետական կառույցներին բողոքներ, դիմումներ ներկայացնելու և դրանց քննարկումների արդյունքների վերաբերյալ պատասխաններ ստանալու գործընթացի մատչելիության խնդիրը (օրինակ՝ ինքնուրույն գրել չկարողանալու դեպքում): Մասնավորապես՝ գործող իրավակարգավորումների և պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ դիմումներ և բողոքներ ներկայացնելու, դրանց վերաբերյալ պարզաբանումներ ստանալու ընթացակարգը չի խթանում հաշմանդամություն ունեցող անձի ինքնուրույնությունը, անկախությունը: Ավելին, որոշ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձը ստիպված է լինում իր մասնավոր կյանքին, առողջությանն առնչվող տեղեկություններն այլ անձի համար հասանելի դարձնել, որպեսզի վերջինիս աջակցությամբ ապահովվի տեղեկությունների մատչելիությունը: Նշված խնդիրն առկա է նաև մասնավոր ոլորտում, օրինակ՝ բանկային համակարգում, երբ գործող իրավակարգավորումների պայմաններում տարբեր ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները ստիպված են հաշմանդամություն ունեցող անձանցից դիմումները պահանջել ներկայացնելու լիազորված անձանց միջոցով: Օրինակ, Պաշտպանին դիմած անձը նշել է, որ ինքն ունի տեսողության խնդիրներ, ունի իր ստորագրությամբ կնիք, սակայն բանկում պայմանագիր ստորագրելիս բանկը պահանջել է

<sup>1072</sup> Տե՛ս 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը: Հասանելի են <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> և <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումներով:

<sup>1073</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

ներկայանալ բացառապես լիազորված անձի հետ, ով իր անունից, լիազորագրի հիման վրա կստորագրի պայմանագիրը: Նշված խնդիրն արդիական է նաև 2021 թվականի ընթացքում:

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից Հանրային Հեռուստատեսության և Հայաստանի Հանրապետությունում գործող և մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակվող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հաղորդումներին ներկայացվող պահանջների պատշաճ կատարման վերահսկողության հարցը: Այս նպատակով Պաշտպանը կարևորել է նմանատիպ հաղորդումների քանակական և որակական տվյալների վերլուծության և վիճակագրության վարման անհրաժեշտությունը: Ի պատասխան Պաշտպանի՝ ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովին ուղղված հարցման՝ հանձնաժողովի կողմից պարզաբանվել է, որ ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով՝ ըստ հեռուստաալիքների, հաղորդման տեսակի, թարգմանության կամ լուսագրի քանակի, այդ հաղորդումների՝ եթեր հեռարձակման ժամերի տևողության և քանակի վերաբերյալ առանձին ուսումնասիրություններ իրականացնելու գործառույթներ Հանձնաժողովը չունի: Միաժամանակ, պարզաբանվել է նաև, որ Հանձնաժողովն իրականացնում է լիցենզիա ստացած հեռարձակողների ծրագրերում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների վերլուծություն:

Այս կապակցությամբ դեռևս Մարդու իրավունքների պաշտպանի 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով արձանագրվել է Պաշտպանի դիրքորոշումը: Ուստի, վերահաստատելով արդեն իսկ արտահայտած դիրքորոշումը, Պաշտպանը ևս մեկ անգամ նշում է, որ ՀՀ Սահմանադրությամբ սահմանվում է, որ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն անկախ պետական մարմին է, որն ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը, հետևաբար, այս նպատակով պետք է անդրադառնա նաև իր կողմից վերահսկվող սուբյեկտներին կողմից գործող իրավակարգավորումների պահանջների պատշաճ կատարման հարցին: Այլապես, Հանձնաժողովի վերահսկողական իրավասությունները գործնականում ծառայում են գործող իրավակարգավորումների ձևական, ֆորմալ կողմն ապահովելուն, այլ ոչ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացումը իրականում երաշխավորելուն:

Հատկանշական է, որ չնայած վերը նշված պարզաբանումներին, 2021 թվականին Հանձնաժողովն Օրենքով վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս Հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում 4 հեռարձակողների մոտ

արձանագրվել է Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասին պահանջի խախտում<sup>1074</sup>, որի արդյունքում կիրառվել է Օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանք: Միաժամանակ, Հանձնաժողովը հայտնել է, որ թեև 2021 թվականին հայերեն ենթագրով ապահովման վերաբերյալ բողոքներ չի ստացել, Հանձնաժողովն Օրենքով վերապահված իր վերահսկողական գործառույթներն իրականացնելիս՝ հեռարձակողների գործունեության մշտադիտարկման արդյունքում 2 հեռարձակողների մոտ արձանագրել է Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի խախտում: Ըստ այդմ՝ իրենց ծրագրերում լսողական խնդիրներ ունեցող սպառողների համար տեղեկատվության ընկալման մատչելիությունը՝ օրվա ընթացքում՝ Հանձնաժողովի սահմանված ժամերին, համապատասխանաբար առնվազն մեկական մանկական և լրատվական տեսալսողական հաղորդում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով ներկայացնելու պահանջը խախտելու համար կիրառվել է Օրենքի 57-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանք:

Մարդու իրավունքների պաշտպանը դեռևս 2019 թվականի տարեկան հաղորդմամբ բարձրացվել էր Հանրային Հեռուստատեսության և Հայաստանի Հանրապետությունում գործող մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակվող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից իրենց ծրագրերում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հաղորդումների ժամանակացույցի սահմանման հարցը<sup>1075</sup>, որը 2020 թվականին ստացել է լուծում և Հանձնաժողովին է վերապահվել լիազորություն՝ սահմանելու օրվա ընթացքում ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն ենթագրով առնվազն մեկ մանկական և մեկ լրատվական տեսալսողական հաղորդման հեռարձակման եթերային ժամերը:

Կարևորելով վերոնշյալ փոփոխությունների իրականացումը, այնուամենայնիվ, 2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ հայերեն ենթագրով հեռարձակվող մուլտֆիլմերը կամ մանկական հաղորդումները մատչելի չեն կարդալու հնարավորություն չունեցող երեխաների համար, ենթագրերի տառաչափերը ոչ միշտ են տեսանելի, հատկապես երկար նախադասություններով ենթագրերի ընթացքը որոշ դեպքերում արագ է, և դեռևս վարժ ընթերցել չկարողացող երեխաները մուլտֆիլմի տեքստային բովանդակությունը հասկանալու հետ կապված դժվարություններ են ունենում: Արձանագրվել են դեպքեր, երբ լուսագրերի գույնային դիզայնը նույնականացվել է պատկերի ֆոնային գույների հետ, ինչի հետևանքով ենթագրերը տեսանելի չեն եղել:

*Հաշվի առնելով վերոգրյալը և վերահաստատելով նախորդ տարեկան հաղորդումներով ներկայացրած առաջարկները՝ անհրաժեշտ է՝*

<sup>1074</sup> Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով լիցենզիա ստացած հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

1. «Լեզվի մասին» ՀՀ օրենքը համապատասխանեցնել Կոնվենցիայի պահանջներին.

2.«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում և հարակից իրավական ակտերում նախատեսել այնպիսի դրույթներ, որոնք կերաշխավորեն տեղեկատվության մատչելիությունը տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար (օրինակ՝ խանութներում բրայլյան գրերով կամ մատչելի ձևով տպագրված գնապիտակների առկայության պարտադիր պահանջ, առողջապահական հաստատություններում մատչելի տեղեկատվական նյութերի պարտադիր պահանջ, ինտերնետային կայքերի մատչելիության պարտադիր պահանջ)։

3. ներդնել պետական մարմինների կողմից բանավոր բողոք ընդունելու ընթացակարգ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքում սահմանելով բանավոր բողոք ներկայացնելու իրավանորմ և ընթացակարգ.

4.մշակել և ներդնել ենթագրերին ներկայացվող տեխնիկական պահանջները՝ համապատասխանեցնելով դրանցից օգտվող անձանց կարիքներին.

5.«Տեսողական մեդիայի մասին» օրենքում ամրագրել դրույթ՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի կողմից Հանրային Հեռուստատեսության և Հայաստանի Հանրապետությունում գործող և մանկական և (կամ) լրատվական հեռուստահաղորդումներ հեռարձակվող մասնավոր հեռուստաընկերությունների կողմից ժեստերի լեզվով թարգմանությամբ կամ հայերեն լուսագրով հաղորդումների՝ քանակական և որակական վիճակագրական տվյալների ուսումնասիրություններ իրականացնելու գործառույթի վերաբերյալ։

## **ԳԼՈՒԽ 6. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԱՐԺԱՆԱԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԸ**

Մասնավոր կյանքի և արժանապատվության նկատմամբ հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց հիմնարար իրավունքներից մեկն է, որը ամրագրված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ<sup>1076</sup>, այնպես էլ Կոնվենցիայով<sup>1077</sup>։

Հաշմանդամություն ունեցող անձի մասնավոր կյանքի և արժանապատվության նկատմամբ հարգանքը ներառում է ոչ միայն անձի մասնավոր կյանքի, այլ նաև նրա ընտանիքի, տան, նամակագրության կամ հաղորդակցության այլ ձևերի նկատմամբ որևէ միջամտության արգելքին։ Ընդ որում՝ հասարակության մոտ հաշմանդամություն ունեցող անձանց որպես իրավունքի լիիրավ սուբյեկտ ընկալումը կարող է նպաստել առկա **կարծրատիպային ընկալումների փոփոխությանը**։

Պաշտպանը ևս մեկ անգամ վերահաստատում է այն դիրքորոշումը, որ հաշմանդամություն ունեցող անձի մասնավոր կյանքի և արժանապատվության նկատմամբ հարգանքը պետք է

<sup>1076</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 23

<sup>1077</sup> Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 22



ընդգրկի անհատի՝ այլոց հետ հարաբերություններ ստեղծելու և զարգացնելու իրավունքը՝ անկախ հաշմանդամությունից:

Ինչպես 2020 թվականի, այնպես էլ 2021 թվականի Պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկման այցերի արդյունքում արձանագրվել է, որ առկա են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող անձինք, այդ թվում՝ երեխաները, գտնվելով պետության հոգածության ներքո, բնակվում են խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, որտեղ չունեն բավարար անձնական տարածք իրենց արժանապատիվ կենսակերպը կազմակերպելու համար: Օրինակ՝ «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում խմբասենյակներից մեկում յուրաքանչյուր երեխային փաստացի հատկացված էր մոտ 3.58 քմ տարածք գիշերելու, խաղալու և հանգստանալու համար: Սա այն դեպքում, երբ գործող իրավակարգավորումներով նշված հաստատություններում մեկ անձի համար նախատեսված է նվազագույնը 4 քմ անձնական տարածք: Մեկ այլ դեպքում, օրինակ, Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ում որոշ ննջասենյակներում մահճակալների դասավորվածությունը խիտ էր, բավարար միջանցիկ հեռավորություն պահպանված չէր, առկա էին դեպքեր, երբ մահճակալները փոքր էին և չէին համապատասխանում երեխայի հասակին:

Այս կապակցությամբ «Ազգային չափորոշիչներ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում լավագույն փորձի ձևավորման համար» ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կողմից հրապարակված զեկույցով արձանագրվել է հաշմանդամություն ունեցող երեխաների համար անհրաժեշտ հատուկ շենքային պայմանների առկայության կարևորությունը՝ նշելով, որ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում շենքային պայմանները պետք է հարմար և հասանելի լինեն հաշմանդամություն և այլ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար:<sup>1078</sup>

Հարկ է նշել, որ հաճախ հաշմանդամություն ունեցող անձանց մասնավոր կյանքի և արժանապատվության նկատմամբ հարգանքի պահանջը հաճախ ոտնահարվում է նաև կարծրատիպային ընկալումների պատճառով, հատկապես այն դեպքերում, եթե անձի հաշմանդամությունը տեսանելի է կամ կապված է անձի հոգեկան և մտավոր առողջության խնդիրների հետ: Օրինակ՝ Պաշտպանին ներկայացված դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են դեպքեր, երբ խնամակալները, չկարևորելով իրենց խնամարկյալների մասնավոր կյանքի իրավունքը, վերջիններիս վերաբերյալ տեղեկությունները փոխանցում են տարբեր մարմինների՝ առանց նրանց իրազեկ համաձայնության կամ այդ մասին խնամակալին նախատես տեղեկացնելու: Առկա են դեպքեր, երբ պետական մարմինների կողմից գործնականում կարևորվում է օրենսդրական՝ լիազորագրի միջոցով դիմում ներկայացնելու պահանջի ֆորմալ կողմից

<sup>1078</sup> Տե՛ս «Ազգային չափորոշիչներ երեխաների խնամք իրականացնող հաստատություններում լավագույն փորձի ձևավորման համար», ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ, 2013թ. ապրիլ, էջ 70, <https://bettercarenetwork.org/sites/default/files/National%20Standards%20for%20Best%20Practices%20in%20Charitable%20Children%27s%20Institutions.pdf>:

ապահովումը, իսկ անձի իրազեկ համաձայնության հանգամանքը հաճախ անտեսվում է: Խնդիրն ավելի է սրվում նաև այն պատճառով, որ պետական իրավասու մարմինները բոլոր դեպքերում չէ, որ բավարար մատչելի իրազեկում են իրականացնում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ: Արդյունքում՝ հաշմանդամություն ունեցող անձի ներկայացուցիչները հաճախ իրազեկված չեն լինում, որ մասնավոր կյանքի վերաբերյալ որևէ երրորդ անձի տեղեկություններ տրամադրելու համար անհրաժեշտ է իրավատիրոջ իրազեկ համաձայնությունը:

Այսպես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ Դատարանը հնարավոր կամ անհրաժեշտ չի համարում փորձել տալ «մասնավոր կյանք» հասկացության սպառիչ սահմանումը: Անընդունելի է նաև այդ հասկացությունը սահմանափակել «ներքին շրջանակով», որտեղ անհատը կարող է ապրել իր անձնական կյանքն իր իսկ ընտրությամբ, և դրանից ամբողջությամբ բացառել արտաքին աշխարհը: Գաղտնիության նկատմամբ հարգանքը պետք է նաև որոշակի չափով ներառի այլ մարդկանց հետ հարաբերություններ հաստատելու և զարգացնելու իրավունքը<sup>1079</sup>: Այնուամենայնիվ, անձի մասնավոր կյանքի վերաբերյալ որոշումներ ընդունելիս արտաքին գործոնների փոխազդեցությունը պետք է հաշվի առնի անձի արժանապատվության նկատմամբ հարգանքի անօտարելի բնույթը:

Պաշտպանին ուղղված դիմումների ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների վերաբերյալ բողոք են ներկայացնում հաշմանդամություն ունեցող անձի ընտանիքի անդամ չհամարվող կամ արյունակցական կապ չունեցող անձիք՝ առանց համապատասխան համաձայնության կամ լիազորագրի: Օրինակ՝ Պաշտպանին դիմում ներկայացրած անձը, վկայակոչելով իր բարեկամի վարքային դրսևորումներն ու հոգեկան առողջության խնդիրները, խնդրել է Պաշտպանի աջակցությունն իր բարեկամին հոգեկան առողջության կենտրոն տեղափոխելու հարցում: Այս դեպքում, դիմումի ուսումնասիրման ընթացքում, պարզվել է, որ հաշմանդամություն ունեցող անձն առհասարական տեղյակ չի եղել նման պահանջի մասին, ավելին՝ ո՛չ ինքը, ո՛չ էլ իր խնամակալը համաձայն չեն այդ պահանջի հետ:

**Այսպիսով, Պաշտպանը հատուկ վերահաստատում է իր այն սկզբունքային դիրքորոշումը, որ հաշմանդամություն ունեցող անձի մասնավոր կյանքի և արժանապատվության նկատմամբ հարգանքը մարդու իրավունքների բարձրագույն արժեքներից է և էական նշանակություն ունի հատկապես հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ստեղծման, երաշխավորման հարցում:**

*Այսպիսով, հաշվի առնելով վերագրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *վերանայել խնամք իրականացող հաստատություններում անձնական տարածքի համար գործող չափանիշները և բոլոր հաստատություններում ապահովել անձնական տարածք բոլոր բնակվողների համար,*

<sup>1079</sup> St' u Niemietz v. Germany գործով 1992 թվականի դեկտեմբերի 16-ի վճիռը, գանգատ թիվ 72/1991/324/396, կետ 29:

2. հանրային մարմինների և հասարակության համար կազմակերպել հաշմանդամություն ունեցող անձանց մասնավոր կյանքի անձեռնմխելիության վերաբերյալ դասընթացներ, իրազեկման միջոցառումներ:

## **ԳԼՈՒԽ 7. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿՅԱՆՔԻ ԽԹԱՆՈՒՄԸ**

### **7.1 Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և հասարակությունում (համայնքում) ներգրավվելու իրավունքի երաշխավորումը**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ Հայաստանում 2021թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ հաշվառված է 196241 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից առաջին խմբի՝ 9604, երկրորդ խմբի՝ 67311, երրորդ խմբի՝ 110183 և հաշմանդամություն ունեցող երեխաներ՝ 9143: Բնակչության շուրջ 6 տոկոսը ճանաչված է որպես հաշմանդամություն ունեցող անձ: Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության մակարդակը կազմում է շուրջ 29.7 տոկոս, այդ թվում ոչ գյուղատնտեսական զբաղվածությունը՝ 15.7 տոկոս<sup>1080</sup>:

Գործող իրավակարգավորումների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձինք ստանում են հաշմանդամության կենսաթոշակ, օգտվում են սոցիալական և առողջապահական որոշ ծառայություններից, այնուամենայնիվ, խնդրահարույց է այն, որ առկա չէ բավարար վերլուծված տեղեկություններ, թե որքանով են դրանք համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին կամ ինչ ազդեցություն են ունենում նրանց կյանքի որակի վրա: Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումների ուսումնասիրության և մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները բախվում են տարբեր խնդիրների, որոնց հետևանքով մեկուսանում են հասարակությունից: Սա իր հերթին հանգեցնում է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի ստորադասմանը՝ իրավունքահեն և կարիքահեն հարաբերությունների փոխարենը ձևավորելով բարեգթության վրա հիմնված հարաբերություններ:

Մարդու իրավունքների պաշտպանն իր՝ 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով արձանագրել է, որ Հայաստանում տարիներ շարունակ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացումը ֆորմալ բնույթ է ունեցել, իսկ հաշմանդամություն ունեցող անձինք գործնականում հաճախ չեն դիտվել որպես իրավունքի լիիրավ սուբյեկտներ: Արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հարցում

<sup>1080</sup> ՀՀ վիճակագրական կոմիտեի «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում ժողովածու», 2019թ., հասանելի է <https://armstat.am/am/?nid=82&id=2226> հղումով:

հիմնականում կիրառելի է եղել նրանց օգնություն տրամադրելու (օրինակ՝ նպաստների, բարեգործական օգնության) ձևը<sup>1081</sup>: Մինչդեռ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը բազմիցս ընդգծել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ինքնուրույն իրացման երաշխավորումը վերաբերում է ոչ թե հաշմանդամություն ունեցող անձանց օգնություն ցուցաբերելուն, այլ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից ինքնուրույն իրենց իրավունքների իրացման հնարավորություններ ստեղծելու և ապահովելու ճանապարհով: Ավելին՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու, ինքնուրույն կյանքի հմտությունների և համայնքում՝ առհասարակ հասարակությունում ներգրավվելու իրավունքի երաշխավորումն ու իրացումը սկզբունքային նշանակություն ունի նրանց բոլոր իրավունքների հարգման և խթանման հարցում: Պաշտպանն արձանագրում է նաև, որ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի վերաբերյալ կարծրատիպային ընկալումներն ու մոտեցումները շղթայական կերպով հանգեցնում են նաև այլ իրավունքների ոտնահարմանը, օրինակ, արժանապատվության հարգանքի և մասնավոր կյանքի ոտնահարմանը:

Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացման հետ կապված խնդիրը շարունակում է հատկապես խնդրահարույց մնալ պետության հոգաճության ներքո գտնվող՝ տուն-ինտերնատներում կամ խնամքի հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների համատեքստում: Այս մասին է վկայում 2021 թվականի ընթացքում Պաշտպանի՝ հաստատություններ իրականացրած չհայտարարված այցերի արդյունքների վերլուծությունը: Մասնավորապես՝ բազմաթիվ են դեպքերը, երբ հաստատությունների սաների կրթական կարիքներն ու զարգացումը, այդ թվում՝ ինքնասպասարկման և ինքնուրույն կյանք վարելու հմտությունների խթանումն առաջնային չէ, փոխարենը հիմնական շեշտադրումը կատարվում է նրանց խնամքի կազմակերպմանը: Ավելին՝ ներգրավված մասնագետների համամասնությունը խմբի սաների հետ բավարար չէ բոլոր սաների արժանապատիվ խնամքն ապահովելու համար, չնայած այն հանգամանքին, որ հաստատությունների անձնակազմերն աշխատում են գերձանրաբեռնված պայմաններում: Մինչդեռ ինքնուրույն կյանքի հմտություններ չզարգացնելու պարագայում հաշմանդամություն ունեցող երեխաները հետագայում հաստատությունից դուրս բախվում են ինչպես սոցիալիզացիայի, այնպես էլ ինքնասպասարկման, բնականոն կենսագործունեության կազմակերպման խնդիրների: Այս կապակցությամբ Պաշտպանն իր դիտարկումներն ու մոտեցումներն է ներկայացրել նաև այցերի վերաբերյալ կազմված տեղեկանքներով, որոնք համապատասխան առաջարկներով ուղարկվել են ինչպես իրավասու պետական մարմիններին, այնպես էլ հաստատություններ:

<sup>1081</sup> Տե՛ս 2019 և 2020 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> և <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումներով:

Խնդիրն առավել մտահոգիչ է երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում բնակվող 18 տարին լրացած անձանց պարագայում: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ «Խարբերդի հատուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ում շարունակում է բնակվել 18 տարեկանը լրացած 164 հաշմանդամություն ունեցող անձ, որից 90-ը ճանաչվել են անգործունակ: «Մարի Իզմիրյան անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում խնամվում են 18 տարեկանը լրացած 29 հաշմանդամություն ունեցող անձ: Նշված անձինք շարունակում են բնակվել երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում, քանի որ վերջիններիս կարիքներին համապատասխան այլ հաստատություններ առկա չեն: Ստացվում է մի իրավիճակ, երբ պետությունը, անձի նկատմամբ ունենալով հստակ պոզիտիվ պարտավորություններ, գործնականում բավարար միջոցներ չի ձեռնարկում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներն ինքնուրույն իրացնելու, համայնքում ներգրավվելու և, հատկապես, զբաղվածության ապահովման բավարար հնարավորություններ ստեղծելու ուղղությամբ<sup>1082</sup>: Այս մասին են վկայում ինչպես Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման, այնպես էլ բողոքների և ահազանգերի ուսումնասիրության արդյունքներն ու Պաշտպանին առընթեր Հասարակական խորհրդի անդամների կողմից ներկայացված տեղեկատվությունը: Պաշտպանի աշխատակազմի այցերի ընթացքում արձանագրվել է նաև, որ նշված խնդրի խորքային պատճառներից է նաև այն, որ իրավասու պետական մարմնի կողմից հաստատությունների սաների կարիքների գնահատման համար առաջարկվել է կիրառել Առողջապահության համաաշխարհային կազմակերպության ֆունկցիաների միջազգային դասակարգման (ՖՄԴ) ծածկագրերը, որը ոչ բոլոր դեպքերում է կիրառելի (օրինակ, այն 0-3 տարեկան երեխաների գնահատման համար):

Մեկ այլ դեպքում՝ արձանագրվել է, որ սաների գնահատումը և առաջարկվող ծրագրերը փոխկապակցված չեն, սաները տարբեր ծրագրերից, խմբակներից հիմնականում օգտվում են ոչ թե անհատական կարիքից ելնելով, այլ որպես առօրյա զբաղմունք: Ծրագրերն էլ ոչ միշտ են միտված հաստատությունից դուրս գալուց հետո ինքնուրույն կյանքին նախապատրաստելուն և ինքնուրույն կենսագործունեության համար անհրաժեշտ կոնկրետ հմտությունների զարգացմանը:

Այսպիսով, երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում սաների, այդ թվում՝ 18 տարին լրացած անձանց խնամքին, նրանց և այդ հաստատությունների շրջանավարտների, ինչպես նաև շրջանավարտ չհամարվող նախկին սաների ինքնուրույն կյանք վարելուն, հասարակությունում լիարժեք ներգրավվելուն և բնակարանային ապահովմանը վերաբերող խնդիրներն իրենց բնույթով շարունակում են մնալ համակարգային: Այս խնդիրները

<sup>1082</sup> Տե՛ս սույն բաժնի «Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի երաշխավորումը» գլխում:

պարբերաբար բարձրացվել են Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ինչպես տարեկան հաղորդումներով, այնպես էլ հրապարակային հայտարարություններով<sup>1083</sup>:

Ուստի, Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ անհրաժեշտ է նաև երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում խնամվող 18 տարին լրացած սաների կարիքների և զարգացման հնարավորությունների գնահատման հիման վրա սահմանել ինտեգրման, ինչպես նաև նրանց բնակարանային ապահովմանն ուղղված օրենսդրական գործունեության երաշխիքներ և մեխանիզմներ:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի կողմից իրականացված մշտադիտարկման արդյունքները, ստացված բողոքները, ահազանգերը, ինչպես նաև պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների տեղեկությունները վկայում են, որ չնայած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» և «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքների ընդունմանը, 2021 թվականի ևս բազմաթիվ են դեպքերը, երբ հաշմանդամությունը դիտարկվում է առավելապես բժշկական և սոցիալական մոդելների համատեքստում, իսկ ներառական, միջավայրային և կարիքահեն մոտեցումները ոչ միշտ են արտացոլվում ոլորտային իրավական ակտերում և ծրագրերում: Արդյունքում հաշմանդամության հետ կապված հարցերն առավելապես դիտարկվում են անձի առողջական սահմանափակումների տեսանկյունից, այլ ոչ թե հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրենց իրավունքների իրականացմանը խոչընդոտող միջավայրային (օրենքներ, ծրագրեր, ենթակառուցվածքներ, համակարգեր, վերաբերմունք և այլն) արգելքների վերացման և հավասար հնարավորությունների ստեղծման տեսանկյունից:

Նկարագրված համակարգային խնդիրների առնչությամբ հարկ է նշել, որ Կոնվենցիայի վավերացմամբ պետությունը պարտավորվել է ձեռնարկել արդյունավետ և համապատասխան միջոցներ՝ երաշխավորելու հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով համայնքում ապրելու իրավունքի իրացումը: Ավելին՝ հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի վերաբերյալ Կոմիտեն իր թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություններով<sup>1084</sup> կարևորում է հաշմանդամություն ունեցող անձի ինքնուրույն ապրելն ու միաժամանակ համայնքում ներառված լինելը, այն է՝ անձի ընտրության ազատությունը ինքնուրույն կայացնելու իր կյանքին վերաբերող որոշումներ: Այս նպատակով պետությունը պարտավոր է նաև ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով հնարավորություն ունենան ընտրելու իրենց բնակության վայրը, որտե՛ղ և ո՛ւմ հետ են ապրելու և ստիպված չլինեն ապրել կամ բնակվել իրենց կողմից ոչ ընդունելի պայմաններում:

<sup>1083</sup> Տե՛ս Պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին 2020 թվականի տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1084</sup> Տե՛ս Կոմիտեի թիվ 5 Ընդհանուր մեկնաբանությունները: Հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/5&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/5&Lang=en) հղումով:

Մինչդեռ՝ նշված կոնվենցիոն պահանջը պետության կողմից լիարժեք չի կատարվում: Ավելին՝ այս իրավունքի պատշաճ իրացումն ապահովելու նպատակով անհրաժեշտ մեխանիզմներ, ռազմավարություն և գործողությունների հստակ ծրագիր առկա չէ, իսկ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթներն էլ այս ոլորտում հստակեցված և տարանջատված չեն: Օրինակ՝ առկա են դեպքեր, երբ կոնկրետ խնդրի քննարկման ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինը նշել է, որ բարձրացված հարցի լուծումը դուրս է իր իրավասությունների շրջանակներից, իսկ պետական իրավասու մարմինն էլ շեշտել է տարածքային մարմնի դերակատարումը հաշմանդամություն ունեցող անձին համայնքում ներգրավելու հարցում: Խնդիրն էլ ավելի է սրվում այն պատճառով, որ հաշմանդամություն ունեցող անձանց համայնքում լիարժեք ներգրավվումն առավելապես իրականացվում է տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով, մինչդեռ տեղական սոցիալական ծրագրերի շրջանակում ծառայությունների պատվիրակումը խիստ կենտրոնաձիգ է, ինչն իր բացասական ազդեցությունն է ունենում տեղական մակարդակում կարիքահեն և համայնքահեն ծառայությունների զարգացման և ճկուն համակարգի խթանման վրա:

Ակնհայտ է, որ պետության պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարումն ենթադրում է կառավարման բոլոր մակարդակների ակտիվ մասնակցությունը: Այս մասին է վկայում նաև Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարի կողմից 2012 թվականին հրապարակված «Հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և հասարակությունում ընդգրկվելու իրավունքը» վերտառությամբ դիրքորոշումային փաստաթուղթը, որով առանձնահատուկ նշվում է՝ որպեսզի համայնքում ընդգրկվելի իրականություն դառնա, անհրաժեշտ է ներառել բազմաթիվ շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմիններին: Ավելին՝ Եվրոպական հանձնաժողովի կողմից 2005 թվականի նոյեմբերին՝ ի պատասխան ԱԿ-ի հոգեկան առողջության հոչակագրի, ընդունեց բնակչության հոգեկան առողջության բարելավման վերաբերյալ փաստաթուղթ<sup>1085</sup>, որով առանձնահատուկ ընդգծվեց հաշմանդամություն ունեցող անձանց և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալական ներառման խթանման կարևորությունը և այդ ուղղությամբ, պետությունների բոլոր օղակներում առավելագույն ջանքերի կիրառումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պաշտպանը ևս մեկ անգամ հատուկ ընդգծում է, որ **պետության պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան իրական հնարավորություն՝ օգտվելու մի շարք ներտնային ու համայնքահեն ծառայություններից, ինչպես նաև համայնքում ապրելուն և ներգրավվելուն միտված ծրագրերից:** Պետության այս պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարման պահանջի կապակցությամբ Պաշտպանը մշտապես ընդգծել է անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացման, ինչպես նաև որոշումների ինքնուրույն կայացման և համայնքում ներգրավվումը երաշխավորելու նպատակով պետական կառավարման բոլոր

1085

ՏԵՄ,

փաստաթուղթը

հասանելի

է

[http://ec.europa.eu/health/archive/ph\\_determinants/life\\_style/mental/green\\_paper/mental\\_gp\\_en.pdf](http://ec.europa.eu/health/archive/ph_determinants/life_style/mental/green_paper/mental_gp_en.pdf)

**օղակներում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների էլ ավելի նպատակային և թիրախային ջանքերի կիրառման անհրաժեշտությունը:** Օրինակ՝ պետությունը պետք է քայլեր ձեռնարկի ոչ միայն անձնական օգնականի ինստիտուտի, ապա ինստիտուցիոնալացման ռազմավարություններ ներդրման հարցում<sup>1086</sup>, այլև պետք է բավարար իրազեկման աշխատանքներ իրականացնի հաշմանդամություն ունեցող անձի՝ համայնքում ինքնուրույն ապրելու իրավունքի վերաբերյալ սխալ պատկերացումները վերացնելու ուղղությամբ: **Պետությունը պետք է կառավարման բոլոր մակարդակներով ապահովի, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված ցանկացած գործողության հիմքում ընկած լինի իրավունքների ինքնուրույն իրացման հնարավորությունների ապահովման սկզբունքը՝ երաշխավորելով դրանց ոչ ձևական լինելը:**

Պաշտպանի այս դիրքորոշումը համահունչ է նաև Կոմիտեի մոտեցումներին: Մասնավորապես, հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի վերաբերյալ Կոմիտեն իր թիվ 5 Ընդհանուր մեկնաբանություններով<sup>1087</sup> կարևորում է հաշմանդամություն ունեցող անձի ինքնուրույն ապրելն ու միաժամանակ համայնքում ներառված լինելը, այն է՝ անձի ընտրության ազատությունը ինքնուրույն կայացնելու իր կյանքին վերաբերող որոշումներ:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. մշակել և ներդնել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը և համայնքում ներգրավվելու իրավունքը խթանող ռազմավարություն ևս, և գործողությունների ծրագրեր՝ ներառելով ինչպես պեղական, այնպես էլ տարածքային, տեղական ինքնակառավարման մարմիններին:

2. ավելացնել հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ անօթևան, կացարանների տրամադրման ծրագրերի քանակը՝ ընդլայնելով հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխանող բնակարանային ֆոնդի ծավալները:

3. մշակել և ներդնել հստակ ռազմավարություն և հատուկ ծրագրեր՝ խնամքի հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացման հնարավորությունների ընդլայնման և երաշխավորման նպատակով,

4. հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքը և համայնքում ներգրավվելու իրավունքի վերաբերյալ իրականացնել հանրային իրազեկման ծրագրեր, այդ թվում՝ պաշտոնատար անձանց

<sup>1086</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի «Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնուրույն ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը» վերտառությամբ դիրքորոշումային դիտարկումները, Հասանելի է <https://rm.coe.int/the-right-of-people-with-disabilities-to-live-independently-and-be-inc/16806da8a9> հղումով:

<sup>1087</sup> Տե՛ս Կոմիտեի թիվ 5 Ընդհանուր մեկնաբանությունները: Հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/5&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD/C/GC/5&Lang=en) հղումով:



համար՝ ի ապահովումը Կոնվենցիայի պահանջների և Կոմիտեի թիվ 5 Ընդհանուր մեկնաբանությունների,

5. մշակել և հաստատել խնամքի հաստատություններում բնակվող հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների և կենսագործունեության հնարավորությունների գնահատման նվազագույն չափորոշիչներ, ինչպես նաև անհատական զարգացման պլանների կազմման գործիքակազմեր:

## **7.2 Հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի երաշխավորումը**

Աշխատանքի ազատ ընտրությունը ոչ միայն ապահովում է հաշմանդամություն ունեցող անձի եկամտի, ապրուստի կայունությունը, այլ նաև անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի իրացումը խթանող գործուն երաշխիքներից է: Այն երաշխավորված է ՀՀ Սահմանադրությամբ և Հայաստանի կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով: Այս համատեքստում հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի իրավունքի իրացման ապահովումը՝ մյուսների հետ հավասար հիմունքներով, պետության պոզիտիվ պարտավորություններից է: Ըստ այդմ՝ պետությունը հաշմանդամություն ունեցող անձի համար պետք է ձևավորի աշխատանքի ընտրության և իրականացման հնարավորություններով մատչելի աշխատանքային միջավայր:

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ տարեկան հաղորդումներում բարձրաձայնել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ մյուսների հետ հավասար հիմունքներով աշխատանքի և զբաղվածության իրավունքի իրացման հետ կապված խնդիրները<sup>1088</sup>: Պաշտպանն արձանագրում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և զբաղվածության իրավունքի իրացման հետ կապված խնդիրները 2021 թվականին ոչ միայն շարունակել են մնալ չլուծված, այլ նաև դեռևս չեն հաղթահարվել 2020 թվականին հայտարարված արտակարգ դրությամբ և ռազմական դրությամբ պայմանավորված հետևանքները: Այս մասին են վկայում ինչպես Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները, բողոքների ուսումնասիրությունը, այնպես էլ Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի կողմից ներկայացված տեղեկությունների վերլուծությունը:

Ի պատասխան Պաշտպանի հարցումների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2021 թվականին իրականացվել են զբաղվածության 3 հիմնական և 8 լրացուցիչ ծրագրեր: 2021 թվականի ընթացքում զբաղվածության կարգավորման պետական

<sup>1088</sup> Տես՝ 2018, 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների մասին տարեկան հաղորդումները, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/8f03a4f279d0491fd510fca443f8f269.pdf>, <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf>, <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումներով

ծրագրերում ընդգրկվել է 293 հաշմանդամություն ունեցող անձ, որոնցից աշխատանքի տեղավորվել կամ ինքնազբաղված է դարձել 94-ը, իսկ ժամանակավոր զբաղված՝ 123-ը: Արդյունքում՝ 76 անձ հաշվառվել է զբաղվածության կարգավորման պետական ծրագրերում, սակայն վերջնարդյունքում չի դարձել դրանցից որևէ մեկի շահառու:

Այս կապակցությամբ պետք է նշել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի պատասխան Պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման շրջանակներում կատարված հարցումների, հայտնել էր, որ 2020 թվականին իրականացվել է զբաղվածության պետական կարգավորման 13 ծրագիր՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսելով դրանցում ընդգրկվելու առաջնահերթություն: Ըստ այդմ՝ 2020 թվականին զբաղվածության պետական գործակալության միջնորդությամբ, այդ թվում՝ կայուն զբաղվածություն ապահովող ծրագրերի արդյունքում, աշխատանքի է տեղավորվել 343 հաշմանդամություն ունեցող անձ:

Ստացվում է, որ 2021 թվականին 2020 թվականի համեմատ զբաղվածություն ապահովող պետական ծրագրերի արդյունքում աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող անձանց քանակը նվազել է 126-ով: Չբացառելով այն, որ պետական ծրագրերի արդյունքում աշխատանքի տեղավորված հաշմանդամություն ունեցող անձանց քանակի նվազումը կարող է պայմանավորված լինել կորոնավիրուսային համավարակի տարածման և պատերազմի հետևանքներով, այնուամենայնիվ, մտահոգիչ է Կոնվենցիայի 27-րդ հոդվածի պահանջների պատշաճ կատարման տեսանկյունից: Մինչդեռ՝ այս դեպքում պետությունը պետք է հաշվի առնի, որ հատկապես գլոբալ մարտահրավերների պայմաններում, ինչպիսին են, օրինակ, կորոնավիրուսային համավարակի կանխարգելումը, հաշմանդամություն ունեցող անձինք էլ ավելի խոցելի են դառնում և բախվում լրացուցիչ խոչընդոտների կյանքի տարբեր ոլորտներում: Այս մասին են վկայում նաև մի շարք միջազգային կազմակերպությունների վերլուծություններն ու դիրքորոշումները, այդ թվում՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի գրասենյակի<sup>1089</sup>, Աշխատանքի միջազգային կազմակերպության<sup>1090</sup>, ՄԱԿ-ի<sup>1091</sup>, Եվրոպայի խորհրդի<sup>1092</sup> կողմից մշակված փաստաթղթերը:

<sup>1089</sup> Տե՛ս ՄԱԿ-ի մարդու իրավունքների գլխավոր հանձնակատարի և ՄԱԿ-ի Համագործակցություն հանուն հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների 2021 թվականին հրապարակված «ԿՈՎԻԴ 19-ի Սոցիալ-տնտեսական ազդեցությունը հաշմանդամություն ունեցող անձանց վրա»: Հասանելի է <https://www.ohchr.org/Documents/Issues/Disability/COVID-19/OHCHR-summaryreport.docx> հղումով:

<sup>1090</sup> Տե՛ս Աշխատանքի միջազգային կազմակերպության «ԿՈՎԻԴ 19 և աշխատանքի աշխարհը. Արձագանքման բոլոր փուլերով հաշմանդամություն ունեցող անձանց ներառման ապահովում» համառոտագիրը: Հասանելի է [https://www.ilo.org/global/topics/disability-and-work/WCMS\\_746909/lang-en/index.htm](https://www.ilo.org/global/topics/disability-and-work/WCMS_746909/lang-en/index.htm) հղումով:

<sup>1091</sup> Տե՛ս ՄԱԿ-ի 138 անդամ երկրների և դիտորդների «Հաշմանդամությունը ներառող արձագանք ԿՈՎԻԴ-19-ին. դեպի ավելի լավ ապագա բոլորի համար» համատեղ հայտարարությունը: Հասանելի է <https://www.un.org/development/desa/disabilities/wp-content/uploads/sites/15/2020/05/Joint-statement-Disability-inclusive-response-to-COVID-19.pdf> հղումով:

<sup>1092</sup> Տե՛ս Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի «Հաշմանդամություն ունեցող անձինք չպետք է դուրս մնան ԿՈՎԻԴ 19-ի համավարակի արձագանքման գործողություններից» հայտարարություն:

Պաշտպանին առընթեր հասարակական խորհրդի անդամների և այլ հասարակական կազմակերպությունների հետ աշխատանքային քննարկումների արդյունքում ձեռք բերված տեղեկությունները վկայում են, որ 2021 թվականի ընթացքում շարունակում համակարգային չլուծված մնալ հաշմանդամություն ունեցող անձանց խնամող անձանց զբաղվածության ապահովման խնդիրը<sup>1093</sup>: Այս կապակցությամբ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի պատասխան Պաշտպանի հարցման, պատասխանել է, որ 2021 թվականի ընթացքում իրականացվել է «Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում» ծրագիրը, որի շահառու է դարձել 2 անձ: Ընդ որում՝ աշխատանքային կարգով պարզաբանվել է, որ վերջիններս ոչ թե նոր աշխատանքի ընդունվող, այլ նախկին աշխատանքում վերականգնված անձինք են:

**Այսպիսով, Պաշտպանը ևս մեկ անգամ արձանագրում է, որ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ իրավական բավարար լրացուցիչ երաշխիքներ նախատեսված չեն հաշմանդամություն ունեցող անձ խնամող մարդկանց համար, ինչի արդյունքում հաշմանդամություն ունեցող անձանց խնամքն իրականացնող անձինք ոչ միայն զրկվում են իրենց աշխատանքի իրավունքն իրացնելու հնարավորությունից, այլ նաև մեկուսանում են հասարակությունից:**

Մարդու իրավունքների պաշտպանը 2019 թվականից սկսած բարձրացրել է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի (այսուհետ՝ քվոտա) կիրարկումն ապահովող իրավական ակտի<sup>1094</sup> գործողության կասեցման հարցը և առաջարկել էր հնարավորինս սեղմ ժամկետում վերանայել քվոտավորման համակարգը<sup>1095</sup>: Այս կապակցությամբ ՄԱԿ-ի Կոմիտեն ևս արձանագրել էր, որ հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում զգալի գործազրկության ցուցանիշները, ինչպես նաև նրանց բաց աշխատանքային շուկային արդյունավետ հնարավորություն սովոր ծրագրերի և զբաղվածության քաղաքականության բացակայությունը մտահոգիչ է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի

---

Հասանելի է [https://www.coe.int/en/web/yerevan/home/-/asset\\_publisher/KZTSm796kFrq/content/persons-with-disabilities-must-not-be-left-behind-in-the-response-to-the-covid-19-pandemic?\\_101\\_INSTANCE\\_KZTSm796kFrq\\_viewMode=view/](https://www.coe.int/en/web/yerevan/home/-/asset_publisher/KZTSm796kFrq/content/persons-with-disabilities-must-not-be-left-behind-in-the-response-to-the-covid-19-pandemic?_101_INSTANCE_KZTSm796kFrq_viewMode=view/) հղումով:

<sup>1093</sup> Տես՝ 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների մասին տարեկան հաղորդումները, հասանելի են <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> և <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումներով

<sup>1094</sup> ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի «Քվոտայի պահանջի չկատարման դեպքում կազմակերպության կողմից մասհանման կատարման և դրա օգտագործման կարգը հաստատելու մասին» N 1308-Ն որոշում:

<sup>1095</sup> Տես՝ 2019 և 2020 թվականների ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների մասին տարեկան հաղորդումները, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/15b2661f76d10eb07746d7d4d4dec84f.pdf> և <https://ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումներով

նախարարությունը Կոմիտեին ներկայացված զեկույցում քվոտայի համակարգի կասեցումը պատճառաբանել է կազմակերպությունների կողմից քվոտայի պահանջի կատարման հետ կապված՝ որոշակի ոլորտներում առաջացած մի շարք օբյեկտիվ խոչընդոտներով<sup>1096</sup>: Մինչդեռ, վկայակոչված խոչընդոտների օբյեկտիվությունը գնահատող վերլուծական տվյալներ չեն ներկայացվել:

2021 թվականի ընթացքում շարունակում է խնդրահարույց մնալ պետության հոգածության ներքո գտնվող և խնամքի հաստատություններում բնակվող անձանց՝ հաստատությունից հետո աշխատանքի և զբաղվածության ապահովումը: Այս խնդիրն իր բնույթով համակարգային է, որի մասին Պաշտպանը նշել է տարիներ շարունակ: Ավելին՝ խնդրի խորքային պատճառներից է նաև այն, որ խնամքի հաստատություններում գտնվող հաշմանդամություն ունեցող երեխաների համար առավելապես ապահովված է խնամքի կազմակերպումը, մինչդեռ՝ առաջնային նշանակություն պետք է ունենար ինքնասպասարկման և ինքնուրույն կյանքի հմտությունների զարգացումը: Արդյունքում՝ հաստատությունը դուրս գալուց հետո հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են տարաբնույթ խնդիրների, չեն կարողանում աշխատանք գտնել և կազմակերպել իրենց կենսագործունեությունը: Այս մասին են վկայում նաև տարբեր հաստատություններ իրականացրած՝ Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկման այցերի արդյունքները: Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից «Գավառի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության սաների հետ առանձնագրույցների ընթացքում արձանագրվել է, որ սաները հիմնականում հստակ տեղեկություններ և պատկերացումներ չունեն աշխատաշուկայի պահանջների, դրանց զարգացման, մրցունակ կադրերի ձևավորման մասին: Արդյունքում՝ սաներից շատերը հիմնականում վկայակոչում են որոշ կարծրացած ու պատրաստի ուղղություններ՝ ըստ սեռերի բաշխման (տղաները հիմնականում մտածում են բանակ զորակոչվելու, դրանից հետո պայմանագրային ծառայության անցնելու, իսկ աղջիկները սպասարկման ոլորտում աշխատելու կամ ամուսնանալու մասին): Ստացվում է, որ հաստատությունում եղած ժամանակահատվածում երեխան լայն առումով կիրառելի գիտելիքներ ու պատկերացումներ չի ձևավորում կյանքն ինքնուրույն, ինքնաբավ կառուցելու համար: Այցի ընթացքում արձանագրվել է նաև, որ տարբեր տարիքային խմբերի երեխաների համար առկա չեն անձի զարգացման արդյունավետ, իրագործելու, չափելի խմբային և անհատական ծրագրեր: Երեխայի անձնային աճի և ինքնուրույնությանն ուղղված մասնագիտական գործընթացները հիմնականում տեղի են ունենում ոչ համակարգված, ոչ կարիքահեն և առանց նպատակային ծրագրի՝ հիմնականում դաստիարակների հետ տեղի ունեցող զրույցների տեսքով: Մասնագիտական կողմնորոշմանը վերաբերող գիտելիքների և հմտությունների «փաթեթը» երեխաները ստանում են ոչ համակարգված՝ դաստիարակի կամ այլ անձանց հետ զրույցների միջոցով, ինչը չի ապահովում յուրաքանչյուր երեխայի զարգացման ունակությունների և կարողությունների լիարժեք բացահայտումն ու խթանումը:

<sup>1096</sup> Տե՛ս Հայաստանի զեկույցը, հասանելի է <https://bit.ly/31vG8uP> հղումով:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հայտնած տեղեկությունների համաձայն, 2021 թվականի ընթացքում մանկատների հաշմանդամություն ունեցող շրջանավարտների՝ աշխատանքի տեղավորման կամ ինքնազբաղվածության ուղղությամբ որևէ ծրագիր չի իրականացվել:

Այսպիսով, Պաշտպանը վերահաստատում է այն, որ հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ապահովմանն ուղղված ծրագրերի արդյունավետությունը խիստ մտահոգիչ է, իսկ որոշ դեպքերում առհասարակ չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձի զարգացման հնարավորություններին և աշխատաշուկայի կարիքներին: Արդյունքում, նախադրյալներ են ստեղծվում աշխատաշուկայից դուրս մնալու և անձի նկատմամբ հաշմանդամությամբ պայմանավորված խտրականության դրսևորման համար: Մինչդեռ Կոնվենցիայի ուղիղ պահանջներից է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի իրավունքի պաշտպանությունը, ինչպես նաև այդ նպատակով անհրաժեշտ այնպիսի քայլեր ձեռնարկելը, որոնք պետք է ուղղված լինեն այդ անձանց զբաղվածության խթանմանը:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. հնարավորին սեղմ ժամկետներում վերանայել քվոտավորման համակարգը՝ աշխատաշուկայի կարիքներին համապատասխան,*

*2. ավելացնել հաշմանդամություն ունեցող անձանց՝ աշխատանքի տեղավորման կամ ինքնազբաղվածության ծրագրերի քանակը և շրջանակը,*

*3. հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացնել վերապատրաստումներ իրենց հմտությունների զարգացման ուղղությամբ՝ հաշվի առնելով աշխատաշուկայի կարիքներն ու հնարավորությունները,*

*4. հատուկ ծրագրերով խնամքի հաստատություններում շարունակաբար խթանել մարդկանց զբաղվածությունը՝ ըստ հաշմանդամություն ունեցող անձի զարգացման հնարավորությունների և աշխատաշուկայի կարիքների,*

*5. ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց պատշաճ իրազեկվածությունը զբաղվածության ապահովման ծրագրերի վերաբերյալ:*

### **7.3 Սոցիալական բնակարանների ապահովումը**

Մարդու իրավունքների պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց կարիքներին համապատասխան բնակարանների կամ կացարանների հասանելիության հետ կապված խնդիրները: Մասնավորապես, Պաշտպանը ընդգծել է, որ մարդու բավարար, իր կարիքներին համապատասխան կենսապայմանների, այդ թվում՝ բնակարանի ապահովումը սկզբունքային նշանակություն ունի անձի արժանապատիվ կյանքի համար:

Այս կապակցությամբ Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը, ինչպես նաև Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումները վկայում են, որ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված կացարան տրամադրելու խնդիրը համակարգային է: Նշված խնդիրն առավել սրվել է 2020 թվականի պատերազմից հետո, որի հետևանքում Հայաստանում ավելացավ հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց թիվը: Օրինակ՝ դիմումներից մեկով անձը հայտնել է, որ պատերազմից հետո, տեղափոխվելով Հայաստան, ընտանիքի անդամները պետք է վերականգնողական բուժում ստանալ, որը հասանելի է միայն Երևանում, սակայն սայլակով տեղաշարժվող անձանց կարիքներին համապատասխան կացարան պետությունը չի կարողացել տրամադրել՝ դրա բացակայության պատճառով: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ տեղահանված հաշմանդամություն ունեցող անձանց առաջարկված կացարանները հարմարեցված չեն եղել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Մի շարք դիմումներով հաշմանդամություն ունեցող անձինք բարձրացրել են իրենց բնակարաններում անհրաժեշտ հարմարեցումներ կատարելու և կենսապայմանների բարելավման հարցերը: Օրինակ՝ դիմումներից մեկով անձը հայտնել է, որ հաշմանդամություն ունեցող երեխայի ծնող է, բնակվում են հանրակացարանում, որը չունի կոմունալ հարմարություններ, պատերը խոնավ են, փլված, ինչի հետևանքով էլ ավելի են խորանում իր երեխայի առողջական խնդիրները: Բողոքի քննարկման շրջանակներում Գյումրու համայնքապետարանը հայտնել է, որ տվյալ հանրակացարանն ունի կոմունալ հարմարեցումներ, ինչպես նաև որպես այլընտրանքային լուծում՝ առաջարկել է, որ բողոք ներկայացրած անձը կարող է բնակվել իր բարեկամի հետ՝ վերջինիս հատկացված բնակարանում: Այս մոտեցումն անընդունելի է նաև անձի մասնավոր կյանքի, արժանապատվության նկատմամբ հարգանքի և անկախ կյանքի իրավունքի երաշխավորման տեսանկյունից: Բողոքի քննարկման շրջանակներում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների կողմից իրականացվել է տնայց, որի ընթացքում ծանոթացել են բողոք ներկայացրած անձի բնակարանային պայմաններին՝ սենյակը չունի կոմունալ հարմարություններ, պատերը խոնավ են, փլված, լուսավորություն չկա, անձրևաջրերի պատճառով տանիքը կաթում է, ըստ որի հնարավոր չէ շարունակել բնակվել այնտեղ: Ի պատասխան Պաշտպանի գրության՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ Պաշտպանի գրությունն ուղարկվել է Միասնական սոցիալական ծառայություն՝ «Սոցիալական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով սոցիալական դեպքի վարման շրջանակներում ընտանիքների կարիքների գնահատում իրականացնելու, հնարավոր աջակցություն ցուցաբերելու նպատակով, մասնավորապես, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն շրջանակներում շահառու դիտարկելու հարցը քննարկելու և հնարավոր պարզաբանումներ տալու նպատակով: Նշված պարզաբանումները 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ չեն ստացվել:

Մի շարք դիմումներով Պաշտպանին դիմած անձինք բնակարանի տրամադրման հարցը: Որոշ դեպքերում բողոք ներկայացրած անձինք իրազեկվել և ուղղորդվել են Միասնական սոցիալական ծառայություն սահմանված փաստաթղթեր ներկայացնելու և համապատասխան հերթագրման

համար դիմում ներկայացնելու համար: Որոշ դեպքերում էլ դիմումների քննարկման ընթացքում կատարվել է կարիքների գնահատում և դիմող անձինք գործող իրավակարգավորումների համաձայն իրավասու մարմնի կողմից ընդունվել է որոշում՝ նրանց, որպես բնակելի տարածություն ստանալու կարիք ունեցող անձ (ընտանիք) ճանաչելու մասին և հերթագրվել են բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքների) հերթացուցակում: Այնուամենայնիվ, այս դեպքում էլ խնդիրն այն է, որ թեև պետության կողմից փաստագրվել է անձի կոնկրետ իրավունքը, այնուամենայնիվ, անձի իրավունքը, այսպես ասած, ֆորմալ բնույթ է ստանում և անձը հնարավորություն չի ունենում փաստացի իրացնելու այն՝ ամիսներ կամ տարիներ շարունակ սպասելով իրենց հերթին: Ավելին՝ դեռ հարց է, թե արդյոք հետագայում սահմանված կարգով սոցիալական բնակարան ստանալիս այն հարմարեցված կլինի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին թե՛ ոչ, կամ արդյոք պետությունը անհրաժեշտ աջակցություն կցուցաբերի բնակարանը անձի կամ իր ընտանիքի հաշմանդամություն ունեցող անդամի կարիքների համապատասխանեցնելու հարցում: Նշվածը մտահոգիչ է հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների պաշտպանության տեսանկյունից: Ստեղծված իրավիճակի պատճառներից է նաև բնակարանային ֆոնդի բացակայությունը կամ անբավարար լինելը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան կացարանով ապահովելու հետ կապված խնդիրների վերաբերյալ գրություններ է հասցեագրել իրավասու պետական մարմին ինչպես անհատական բողոքների քննարկման շրջանակում, այնպես էլ որպես կոնվենցիան անկախ մարմին վերջինիս ուղարկված հարցումներով:

Ի պատասխան Պաշտպանի գրություններից մեկի՝ 2021 թվականի հունիսին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկացրել է, որ իր «կողմից իրականացվում է սոցիալական բնակարանային ծրագիր բնակելի տարածության կարիք ունեցող սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց համար: ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշմամբ հաստատված է ցանկը և «Բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքներին) հաշվառելու և կացարան տրամադրելու» կարգը:» Պարզաբանվել է նաև, որ «Մարալիկ և Երևան քաղաքներում նախարարության ենթակայության տակ գտնվող սոցիալական բնակֆոնդում առկա են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված քիչ թվով բնակարաններ, որոնք բնակեցված են:»

Միաժամանակ, Պաշտպանի հարցման առ այն, թե «ինչ քայլեր են իրականացվել հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ անօթևան, կացարանների տրամադրման ծրագրերի և բնակարանային ֆոնդի ծավալների ընդլայնման ուղղությամբ (տրամադրել քանակական և որակական տվյալներ իրականացված քայլերի վերաբերյալ)» Նախարարությունը պատասխանել է, որ հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ հաշվառում չի իրականացվում: Նման պարզաբանումն ընդունելի չէ առնվազն այն նկատառմամբ, որ ՀՀ

վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 700-Լ որոշման 11-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գործառույթներից է որոշակի բնակության վայր չունեցող, անօթևան, սոցիալապես անապահով և (կամ) հատուկ խմբերին դասված անձանց կացարանով ապահովելու (այդ թվում՝ ժամանակավոր) պետական ծրագրերի մշակումը և այդ ծրագրերի իրականացման ապահովումը, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների երեխաների, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային և շուրջօրյա խնամքի տրամադրման պետական ծրագրերի մշակումը և այդ ծրագրերի իրականացման ապահովումը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին համապատասխան բնակարաններով կամ կացարաններով ապահովելու հարցի կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներից է բնակարանային շինարարության խթանումը: Ըստ այդմ՝ պետությունը պարտավորվում է ապահովել յուրաքանչյուր անձի համար բոլոր սոցիալական ծրագրերի, բնակարանի, սննդի, բոլորի համար ջրի և սանիտարահիգիենիկ պայմանների և առողջապահական ծառայությունների մատչելիությունը: Այս համատեքստում պետական քաղաքականության մեջ պետք է լիարժեք ներառվեն նաև հաշմանդամություն ունեցող անձինք՝ հատուկ շեշտադրում կատարելով վերջիններիս կարիքներին: Այս մոտեցումը համահունչ է նաև մարդու բնակարանով ապահովված լինելու իրավունքի երաշխավորման նպատակով մի շարք միջազգային փաստաթղթերով ստանձնած Հայաստանի Հանրապետության պարտավորություններին:

Այսպես, վավերացնելով ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան՝ Հայաստանը հանձնառություն է ստանձնել ճանաչելու և երաշխավորելու անձի՝ սոցիալական պաշտպանության իրավունքը, այդ թվում՝ բնակարանի և կենսաապահովման բավարար մակարդակ ունենալու իրավունքը: Կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամություն ունեցող անձանց ու նրանց ընտանիքների՝ կենսաապահովման բավարար մակարդակ ունենալու իրավունքը նախատեսում է նաև բնակության վայրի առկայությունը, ինչպես նաև մշտապես բարելավվող կենսական պայմանները:

Ավելին՝ ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանը ճանաչում է յուրաքանչյուրի անձի և իր ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ, **բնակարան** և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը:

Ուստի, պետությունը պետք է անհրաժեշտ քայլեր ձեռնարկի բնակարանի և կենսաապահովման բավարար մակարդակ ունենալու իրավունքի իրացումն ապահովելու ու դրան նպաստելու համար: Ընդ որում՝ այս իրավունքի իրականացումն ապահովելու ու դրան նպաստելու համար ձեռնարկվող քայլերը պետք է ուղղված լինեն հաշմանդամության կարիքները հոգալու համար նրանց



հավասարապես մաքուր ջրի ծառայությունների մատչելիության, անհրաժեշտ ու հնարավոր բոլոր ծառայությունների, պարագաների և աջակցության այն միջոցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալական պաշտպանության և աղքատության հաղթահարման, բնակարանով ապահովելու պետական ծրագրերի մատչելիության ապահովմանը:

Վկայակոչված իրավանորմերի համադրմամբ՝ ակնհայտ է, որ պետության պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարմամբ է նաև հնարավոր երաշխավորել Հայաստանի կողմից վավերացված մեկ այլ միջազգային փաստաթղթի՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 81-րդ հոդվածով ամրագրված՝ անձի անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունքը: Այս հարցում Մարդու իրավունքների պաշտպանը ղեկավարվում է նաև այն համոզմամբ, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների երաշխավորման հարցում պետության պոզիտիվ պարտավորությունը ձեռք է բերում հատուկ նշանակություն՝ պայմանավորված իրենց առանձնահատուկ կարիքներով: Այս հիմնարար գաղափարն ամրապնդվում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ որևէ խտրականության դրսևորման բացառման հանձնառությամբ, որի կատարման գնահատման հիմքում էլ դրված է մարդու արժանապատվությունը, որպես անօտարելի իրավունք, ու դրանից ածանցվող այլ իրավունքները: Այս մոտեցումը բխում է նաև Կոնվենցիայի պահանջից, որը նախատեսում է, որ պետությունը պետք է ոչ միայն բացառի հաշմանդամության հիմքով խտրականությունը, այլ նաև իր լավագույն ջանքերը կիրառի և ձեռնարկի անհրաժեշտ բոլոր քայլերը խտրականությունը բացառելու և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման խթանման ուղղությամբ՝ այս նպատակով ստեղծելով հավասար պայմաններ և հնարավորություններ:

Հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային իրավունքի իրացման խնդրի կապակցությամբ հարկ է նշել, որ դեռևս 2013 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 800-Ն որոշմամբ սահմանվել էին սոցիալապես անապահով, ցածր և միջին եկամուտ ունեցող, սոցիալական տարբեր խմբերում ընդգրկված անօթևան ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանն ուղղված պետական քաղաքականության հետագա քայլերը և որպես նրանց բնակարանային պայմանների բարելավման միջոց դիտարկվել սոցիալական բնակարանային ֆոնդի ինստիտուտի ներդրումը՝ պետություն-մասնավոր հատվածի գործընկերության գործիքների կիրառմամբ:

Ավելին՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշման համաձայն՝ բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված սոցիալապես անապահով անձանց (ընտանիքների) հերթացուցակում հաշվառված անձի կամ նրա ընտանիքի հաշմանդամություն ունենալու հանգամանքը իրավասու մարմինն սոցիալական տան ազատված կացարանում արտահերթ տեղավորման վերաբերյալ առաջարկ ներկայացնելու հիմքերից է: Ընդ որում՝ ընտանիքում 1-ին կամ 2-րդ խմբի

հաշմանդամություն կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձի առկայությունը և նրանց թիվ հերթացուցակում ընդգրկված անձանց (ընտանիքների) հերթագրման հավասար պայմանների (դիմումը տալու օր, սոցիալական խումբ) դեպքում առաջնահերթության կիրառման նախապայմաններից է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ նկարագրված համակարգային խնդիրը պահանջում է լրացուցիչ ջանքեր՝ առավել արդյունավետ մեխանիզմներ, նոր ծրագրեր իրականացնելու կամ սեփական միջոցներով արտոնյալ պայմաններով բնակարան ձեռքբերելու միջոցով ապահովելու մարդկանց իրավունքի իրացման իրական հնարավորություններ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց բնակարանային իրավունքի իրացումն ապահովելու և պետության պոզիտիվ պարտավորությունը պատշաճ կատարելու նպատակով հաճախ կիրառվում է նաև փոխհատուցումների կամ արտոնյալ հիփոթեքային վարկերի տրամադրման մեխանիզմները: Օրինակ, Ռուսաստանի Դաշնության 1995 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 181 դաշնային օրենքով նախատեսում են մի շարք արտոնություններ, որոնք հասանելի են հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ընտանիքներին, այդ թվում՝ հաստատվում է սոցիալական վարձակալության փաստաթղթով բնակարան հատկացնելու կարգը: Հետագայում օրենսդրական փոփոխություններով, հաշվի առնելով պետության ունեցած պարտավորության բեռի ծավալները, նախատեսվեց, որ մինչև 2005 թվականի հունվարի 1-ը բնակարան հատկացնելու համար գրանցված անձինք կարող էին պետությունից ստանալ գումար բնակարան կամ տուն գնելու համար: Ամերիկայի Միացյալ Նահանգներում հաշմանդամություն ունեցող անձինք իրենց սեփական միջոցների հաշվին բնակարանային իրավունքն իրացնելու դեպքում կարող են օգտվել հարկային արտոնություններից<sup>1097</sup>:

Նշվածը բխում է ոչ միայն միջազգայնորեն կիրառելի պրակտիկայից, այլ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Այսպես, օրինակ, Guberina v. Croatia<sup>1098</sup> գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն առաջին անգամ դիմումատուի հանդեպ խտրական վերաբերմունքը որակել է որպես հաշմանդամության հիմքով խտրականություն Կոնվենցիայի 14-րդ հոդվածի մասով (Անձի ազատությունը և անվտանգությունը): Մասնավորապես, դատարանը, դիտարկելով հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելիության ապահովման՝ պետության պոզիտիվ պարտավորությունը, 17 արձանագրել է, որ այդ պարտավորության չկատարման արդյունքում դիմումատուի կողմից՝ հաշմանդամություն ունեցող իր երեխայի համար մատչելի բնակարան գնելու համար կատարված ծախսերի մասով հարկային արտոնություն չտրամադրելը հանդիսացել է հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորում:

<sup>1097</sup> Տե՛ս ԱՄՆ փորձը, հասանելի է <https://militarybenefits.info/property-tax-exemptions-state/> և <https://www.va.gov/housing-assistance/disability-housing-grants/> հղումներով:

<sup>1098</sup> Տե՛ս Guberina v. Croatia գործով ՄԻԵԴ վճիռը: Հասանելի է <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22001-161530%22%5D%7D> հղումով:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝

1. ապահովել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական բնակարան տրամադրելու իրավունքի պատշաճ և խելամիտ ժամկետներում իրականացնելը՝ ներդնելով անհրաժեշտ մեխանիզմներ, այդ թվում՝ բնակարան գնելու համար հավասարազրեի, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրման կամ այլ թիրախային ծրագրերի իրականացման եղանակով,

2. հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական բնակարան տրամադրելիս պարտադիր կերպով կատարելի կարիքների գնահատում և կացարանների տրամադրումը կատարել ըստ վերջիններիս կարիքների,

3. ընդլայնել հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված սոցիալական բնակարանների ֆոնդը՝ առնվազ ըստ արդեն իսկ հերթագրված հաշմանդամություն ունեցող անձանց քանակի:

## ԳԼՈՒԽ 8. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի երաշխավորումը պահանջում է, որ պետությունը գործնականում ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության իրական հնարավորություններ կրթության բոլոր մակարդակներում՝ անկախ ուսումնական հաստատության մասնավոր կամ պետական լինելու հանգամանքից: Ընդ որում՝ կրթության մեջ հաշմանդամություն ունեցող անձանց ներգրվածությունը և ընդգրկվածությունը կամ կրթությունից դուրս մնալու, հաճախելիության աստիճանն որոշվում է նաև ՄԱԿ-ի Կայուն զարգացմանը նպատակների ցուցանիշներով, որոնք կարևորում են ոչ միայն ֆորմալ ներգրավվածությունը, այլ նաև կրթության որակը<sup>1099</sup>:

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատելու և կրթություն ստանալու իրավունքի նկատմամբ հարգանքը հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից է: Ընդ որում՝ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ապահովումը, այդ թվում՝ կրթության ոլորտում նրանց լիարժեք մասնակցության, մասնագիտություն ընտրելու իրավունքի իրականացման ապահովումը:

Այս համատեքստում Պաշտպանը ևս մեկ անգամ վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ համընդհանուր ներառական կրթության իրական երաշխավորման նպատակով անհրաժեշտ է

<sup>1099</sup> Տե՛ս հասանելի է <https://un.am/hy/p/sustainable-development-goal-4> հղումով:

ապահովել ֆիզիկական և միջավայրային մատչելիությունը, խելամիտ հարմարեցումները, մասնագիտական հմտությունների և կարողությունների զարգացումն ու մեթոդաբանական-տեխնիկական հնարավորությունների հագեցվածություն ու հասանելիությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացման հետ կապված խնդիրները համակարգային բնույթ են կրում, տարիներ շարունակ ներկայացվել են ինչպես Պաշտպանի տարեկան հաղորդումներով<sup>1100</sup>, այնպես էլ Արտահերթ զեկույցով<sup>1101</sup>: Այս մասին են վկայում նաև 2021 թվականի ընթացքում Պաշտպանի մշտադիտարկումների արդյունքների, հասարակական խորհրդի անդամներից ստացված տեղեկությունների, ստացված բողոքների վերլուծությունը: Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության իրավունքների իրացման խնդիրների մասին Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում բարձրաձայնել են նաև ծնողները: Խնդրի առնչության իր մտահոգությունն է հայտնել նաև Կոմիտեն՝ արձանագրելով հաշմանդամություն ունեցող երեխաների համար հանրակրթական դպրոցների մատչելիության և ողջամիտ հարմարեցումների, ինչպես նաև վարչական և ուսումնական անձնակազմի՝ ներառական կրթության վերաբերյալ վերապատրաստումների, դասընթացների ոչ բավարար լինելը<sup>1102</sup>: Ավելին՝ Կոմիտեն իր թիվ 4 ընդհանուր մեկնաբանությունում առանձնահատուկ կարևորել է ուսումնական հաստատությունների վարչական և ուսուցչական կազմի պարտադիր վերապատրաստումը՝ ներառական կրթության ներդրման և իրականացման վերաբերյալ:

## **8.1 Նախադպրոցական կրթություն**

Նախադպրոցական կրթության ապահովումը, թեև օրենսդրորեն պարտադիր կրթության բաղադրիչներից չէ, այնուամենայնիվ, այն համընդհանուր ներառականության համատեքստում հասարակության մեջ ներառվելու և երեխայի տարբեր ունակություններ բացահայտելու ձևավորելու, զարգացնելու գործընթացում կարևոր նշանակություն ունի: Ուստի, պետությունը պետք է լրացուցիչ ջանքեր գործադրի նախադպրոցական կրթությունը խթանելու ուղղությամբ:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հոկտեմբերի 11-ի թիվ 76-Ն հրամանով հաստատվել է նախադպրոցական հաստատություններ սաների ընդունելության կարգը: Այսպես՝

<sup>1100</sup> Տե՛ս Պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդում, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1101</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

<sup>1102</sup> Տե՛ս «ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի 2017 թվականի Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումները», հասանելի է [http://tbinternet.ohchr.org/\\_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&%20Lang=en](http://tbinternet.ohchr.org/_layouts/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2fCO%2f1&%20Lang=en) հղումով, 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

նախադպրոցական հաստատություններում ընդունելությունը կազմակերպելիս առաջնահերթությունը տրվում է նաև առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող ծնողի երեխաներին, ինչպես նաև կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող երեխաներին:

Հաշմանդամություն ունեցող անձանց երեխաների կամ կրթության առանձնահատուկ կարիքներ ունեցող երեխաների նախադպրոցական կրթությունը խթանելու տեսանկյունից Պաշտպանը կարևորում է նշված օրենսդրական բարեփոխումը՝ հավելելով, որ այն գործնականում կիրառելի դարձնելու համար, այնուամենայնիվ անհրաժեշտ են լրացուցիչ ջանքեր նախադպրոցական կրթություն առնվել հասանելի և մատչելի դարձնելու ուղղությամբ: Այս համատեքստում խիստ մտահոգիչ է այն, որ հասարակական կազմակերպությունները և ծնողները փաստում են, որ բազմաթիվ են դեպքերը, երբ հաշմանդամություն ունեցող երեխաները նախադպրոցական ուսումնական հաստատություն չեն հաճախում, քանի որ ապահովված չեն դրանց շենքային պայմանները, միջավայրային մատչելիությունը, բազմամասնագիտական թիմերով: Արդյունքում՝ հաշմանդամություն ունեցող երեխաները դեռևս վաղ տարիքից բախվում են հասարակությունից մեկուսանալու խնդրին:

Այս հարցում Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ համընդհանուր ներառական կրթության իրավունքի իրացման լիարժեք ապահովումը սկսվում է նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների և միջավայրային մատչելիությունից, որը չի կարող սահմանափակվել միայն թեքահարթակների կառուցմամբ կամ հաստատություններում մասնակի հարմարեցումների կատարմամբ:

Այս կապակցությամբ Պաշտպանի հարցմանը «Վ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկությունների համաձայն՝ համընդհանուր ներառական կրթության համատեքստում՝ հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին համապատասխանության տեսանկյունից հարմարեցումներ կան Արագածոտնի մարզի Նորաշենի մանկապարտեզում, որտեղ առկա է թեքահարթակ մուտքի մոտ, Գեղարքունիք մարզի նախադպրոցական ուսումնական 9 հաստատություն, ինչպես նաև Կոտայքի մարզում նախադպրոցական ուսումնական 7 հաստատություն մատչելի են մուտքի և ելքի, ինչպես նաև շենքում ազատ տեղաշարժի համար: Լոռու մարզում համայնքային ենթակայության 10 նախադպրոցական ուսումնական հաստատություն հարմարեցված է հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին (որոշ դեպքերում՝ մասնակի), Շիրակի մարզում 42 հաստատություն, այդ թվում՝ նախադպրոցական ուսումնական հաստատություններում առկա են թեքահարթակներ, իսկ Վայոց ձորում նախադպրոցական ուսումնական հաստատությունները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված չեն:

Երևանի քաղաքապետարանի տեղեկությունների համաձայն՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթադաստիարակչական աշխատանքների կազմակերպման համար նախատեսված է թվով 8 մանկապարտեզ՝ թիվ 42, 78, 92, 101, 109, 114,

146, 160, ուր հաճախում են 93 երեխա, ինչպես նաև այլ հաստատություններ են հաճախում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 58 երեխա: Քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թվով 9 նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման ծրագրերի իրականացման շրջանակներում կառուցվել են թվով 23 թեքահարթակներ՝ դրանց մուտքերի մոտ և անհրաժեշտ այլ հատվածներում: Մանկապարտեզներում, բացի մեկից, հաշմանդամություն ունեցող երեխաների համար սանհանգույցներ չեն տեղադրվել, քանի որ, ըստ քաղաքապետարանի տրամադրած տեղեկատվության, այստեղ սանհանգույցները հարմարեցված են հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին:

«Տարածքային կառավարման, ենթակառուցվածքների նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Կոտայքի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցնելու ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել, աշխատանքներ իրականացվում են նոր կառուցվող և հիմնանորոգվող նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Լոռու մարզի Վանաձորի թիվ 8 մանկապարտեզի շինարարությունը, որտեղ սանհանգույցները պետք է համապատասխան լինեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, իսկ Տավուշի և Շիրակի մարզերում նախադպրոցական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց հարմարեցնելու ուղղությամբ 2021 թվականի ընթացքում աշխատանքներ չեն իրականացվել: Մյուս մարզերի վերաբերյալ նախարարության կողմից տրամադրված տեղեկությունները վերաբերում են հանրակրթական ուսումնական հաստատությունների մատչելիությանը:

Հատկանշական է, որ նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Արագածոտնի մարզում նախադպրոցական ուսումնական հաստատություն են հաճախել հաշմանդամություն ունեցող 51 երեխա, Արարատի մարզում՝ 7 երեխա, Արմավիրի մարզում՝ 6 երեխա, Գեղարքունիքի մարզում՝ 3 երեխա, Լոռու մարզում՝ 39 երեխա, Շիրակի մարզում՝ 6 երեխա, Սյունիքի մարզի Գորիս համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախել են մտավոր առողջության հետ կապված խնդիրներ ունեցող 12 երեխա, Սյունիքի մարզապետարանի այլ համայնքներից տվյալներ չեն ստացվել: Վայոց ձորի և Կոտայքի մարզերում հաշմանդամություն ունեցող երեխա չի հաճախել նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Խնդիրը համակարգային բնույթի է նաև այն պատճառով, որ հաշմանդամություն ունեցող երեխաների նախադպրոցական կրթության իրավունքի փաստացի իրացման խոչընդոտներից է նաև բազմամասնագիտական թիմերի սղությունը, ինչպես նաև ոչ բոլոր դեպքերում հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատելու մասնագիտական հմտությունների ոչ բավարար լինելը: Այս մասին են վկայում նաև Պաշտպանի Արտահերթ զեկույցի մշակման աշխատանքների շրջանակներում հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների հետ

իրականացված քննարկումները: Մասնավորապես, ծնողները նշել են, որ նշված խնդիրներով պայմանավորված՝ երեխաներին չեն կարողանում վաղ տարիքից ներառվել կրթական գործընթացում: Մինչդեռ հաշմանդամություն ունեցող երեխաների ներգրավումը նախադպրոցական կրթությունում կարևոր է նաև հանրակրթական կրթությանը և միջավայրային ինտեգրմանը նախապատրաստելու տեսանկյունից:

Այս կապակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանը, ի պատասխան Պաշտպանի հարցման, հայտնել է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետ աշխատելու հմտությունների և կարողությունների զարգացման նպատակով 2021 թվականի ընթացքում Երևանի քաղաքապետարանի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի համագործակցությամբ կազմակերպվել է 8-ժամյա վերապատրաստման դասընթացներ՝ մանկապարտեզներում աշխատող հոգեբանների և լոգոպեդների համար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում երեխաների կրթական կարիքների գնահատման նոր գործիքակազմը ՀՀ յուրաքանչյուր մարզում ներդնելու և կիրառելու նպատակով ՅՈՒՆԻՍԵՖ-ի Հայաստանյան գրասենյակի հետ իրականացվել է «Մանկավարժահոգեբանական աջակցության ցուցաբերումը ՔՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում» ծրագիրը, որի շրջանակներում վերանայվել է դպրոցական կրթական աստիճանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատման գործիքակազմը և մշակվել են Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների բարելավմանն ուղղված փաստաթղթեր: Մշակվել է նախադպրոցական տարիքի Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման գործիքակազմ, որը պետք է ներդրվի 2022 թվականից՝ նախադպրոցական ոլորտում համընդհանուր ներառական կրթությանն անցման ծրագրի շրջանակներում: Միաժամանակ, պարզաբանվել է, որ 1256 խորհրդատվություն է տրամադրվել ՏՄԱԿ-ների և ուսումնական հաստատությունների մանկավարժներին, ուսուցչի օգնականներին, աջակցող մասնագետներին, ծնողներին և շուրջ 4813 վարչական աշխատողների: Համընդհանուր ներառական կրթության արդյունավետ ներդրման և խթանման նպատակով մշակվել է նաև «Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Խաղեր և վարժություններ» ձեռնարկը:

Կարևորելով պետության կողմից ձեռնարկվող քայլերը՝ Պաշտպանի մշտադիտարկումներն ու ոլորտային ուսումնասիրությունները վկայում են, որ դրանք ոչ միշտ են թիրախային, հաճախ ընդգրկում են խնդիրների մեծ, ընդհանուր շրջանակ (օրինակ՝ վերապատրաստումները վերաբերում են առհասարակ հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատանքին, մինչդեռ տարբեր տեսակի հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատանքը պահանջում է տարբեր մոտեցումներ): Արդյունքում լինում են դեպքեր, երբ տարբեր նախադպրոցական ուսումնական հաստատություններ խուսափում են ընդունել ծանր հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ պայմանավորված ռեսուրսների և մասնագիտական կարողությունների բացակայությամբ, կամ ծնողներն իրենք են հրաժարվում երեխաներին մանկապարտեզ տանելուց:

Խնդիրներ են առաջանում նաև այն պատճառով, որ հաշմանդամություն ունեցող երեխաների հետ աշխատանքը հաճախ պահանջում է նաև բժշկական հատուկ գիտելիքներ և հմտություններ, մինչդեռ նախադպրոցական ուսումնական հաստատությունների բուժանձնակազմերը միշտ չէ, որ մասնագիտացված են այդ ոլորտում: Ավելին՝ «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կարիքների գնահատումը պետք է իրականացվի ԱՀԿ դասակարգիչների կիրառմամբ, սակայն, մասնագետների տեղեկությունների համաձայն, դրանք ոչ բոլոր տարիքային խմբերի կարիքների գնահատման համար են կիրառելի:

Խնդիրներ են առաջանում նաև կապված նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի ձևավորման հետ: Մասնավորապես՝ խնդրահարույց է այն, որ պետության կողմից առաջարկվող խմբերի քվոտաները կամ գործնականում կիրառվող մեխանիզմներն արդյունավետ չեն երեխաների լավագույն շահի տեսանկյունից և կարիքահեն չեն: Մասնավորապես, առաջարկվող նորմերի համաձայն նախադպրոցական ուսումնական հաստատություններում յուրաքանչյուր խմբում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը 10 տոկոսից ավել չի կարող լինել: Մինչդեռ՝ գործնականում խմբերը հիմնականում կազմված են 20-25 երեխայից (ըստ շենքային պայմանների), որոնց հետ աշխատում են մեկ դաստիարակ և մեկ դայակ: Արդյունքում՝ խմբերում առավելապես իրականացվում է սաների կենցաղային և ֆիզիկական խնամքի գործառույթը, որը զբաղեցնում է մասնագետների աշխատաժամանակի գրեթե մեծ մասը: Խնդիրն ավելի սուր է դառնում այն պատճառով, որ գործող իրավակարգավորումներով պետությունը լրացուցիչ ֆինանսավորում է հատկացնում նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար, մինչդեռ խմբերում լրացուցիչ մասնագետների հաստիքներ ավելացնելու համար ֆինանսավորում չի հատկացվում:

Խնդրի կապակցությամբ՝ միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ նախադպրոցական տարիքի սաների հետ իրականացվող աշխատանքի բավարար արդյունավետությունը կարող է ապահովվել առավելագույնը 8 սաներից բաղկացած խմբերում՝ մեկ դաստիարակի և մեկ դայակի ներգրավմամբ: Հարկ է արձանագրել, որ «սան – անձնակազմ» հարաբերակցությունն ուղղակի ազդեցություն ունի Հաստատության սաների իրավունքների պատշաճ իրացման համար անհրաժեշտ միջավայրի ձևավորման վրա:

Հարկ է նշել, որ Երեխայի իրավունքների կոմիտեի 2016 թվականի «Երեխաները և միջավայրը» զեկույցի Երեխաների իրավունքների պաշտպանությունը միջավայրի վնասից 4.1 բաժնում նշվում է, որ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 24-րդ հոդվածի համատեքստում պետություններից պահանջվում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու երեխաների համար առողջ միջավայր, որը սերտորեն կապված է այլ իրավունքների հետ: Սա ներառում է նաև զարգացման համար բավարար պայմանների և հնարավորությունների իրավունքը: Ընդ որում՝ հավասարության և խտրական մոտեցման չենթարկվելու իրավունքները ենթադրում են, որ բոլոր



երեխաները պետք է ունենան առողջ և ապահով միջավայր<sup>1103</sup>: Ավելին՝ միջազգային լավագույն փորձի<sup>1104</sup> ուսումնասիրությունը փաստում է, որ «սան – անձնակազմ» հարաբերակցությունը պետք է հնարավորություն տա անհատապես բավարարել խմբում<sup>1105</sup> ընդգրկված երեխաների բոլոր կարիքները՝ առանց ստորադասելու դրանցից որևէ մեկը: Սա նշանակում է, որ նման հարաբերակցությունը չպետք է հանգեցնի «խնամք թե՛ զարգացում» երկընտրանքի: Խնամքի հաստատությունները պետք է ունենան բավարար անմիջական խնամքի պրոֆեսիոնալ անձնակազմ՝ պահանջվող ծրագրերն ու ծառայություններն ապահովելու համար: Որպես կանոն, նման հարաբերակցությունը կազմում է 1 դայակ յուրաքանչյուր 6 սանի համար, իսկ որոշ դեպքում՝ 1 դայակ յուրաքանչյուր 10 սանի համար, եթե վերջիններիս մանկահասակ չեն և չունեն ինքնասպասարկման դժվարությունները: Նման հարաբերակցության սահմանումը պայմանավորված է այն հանգամանքով, որ սաներից յուրաքանչյուրը պետք է ստանա անհատական մոտեցում, լիարժեք կերպով իրացնի իր բոլոր իրավունքները և օգտվի բոլոր հնարավորություններից՝ առանց հարկադրված լինելու հարմարվել մատուցվող ծառայությունների շրջանակին: Ավելին, հաստիքների ավելացումը կնվազեցնի երեխաների հետ աշխատող մասնագետների անհատական զբաղվածությունը՝ բարձրացնելով նրանց աշխատանքային պարտականությունների կատարման արդյունավետությունը:

*Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝*

1. ֆինանսական միջոցներ հատկացնել բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատություններին՝ դրանք հաշմանդամություն ունեցող երեխաներին մատչելի դարձնելու համար,

2. մշակել և ներդնել խելամիտ հարմարեցումների նվազագույն չափորոշիչներ բոլոր նախադպրոցական ուսումնական հաստատությունների ֆիզիկական և միջավայրային մատչելիությունը ապահովելու համար՝ ի կատարումն ՀՀ Սահմանադրությամբ և «Նախադպրոցական կրթության մասին» օրենքով հաստատված երաշխիքների,

3. ավելացնել ծնողների, երեխաների շրջանում ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքների ծավալը և շրջանակը՝ դրանց ներգրավելով մասնագիտական անձնակազմերին,

4. նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար կազմակերպող պարբերաբար վերապատրաստումների

<sup>1103</sup> <https://www.ohchr.org/Documents/HRBodies/CRC/Discussions/2016/DGDoutcomereport-May2017.pdf>:

<sup>1104</sup> Տե՛ս հղումները <https://nrckids.org/CFOC/Database/1>, <https://nrckids.org/CFOC/Database/1.1.1>, <https://nrckids.org/CFOC/Database/1.1.1.3>, <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5245988/>, <https://earlychildhood.qld.gov.au/legislation-and-guidelines/staffing-requirements-and-leadership/educator-to-child-ratio>

<sup>1105</sup> Տե՛ս Երեխայի խնամքի կենտրոնների «անձնակազմ – երեխաներ» գործակիցները և առաջարկվող «անձնակազմի – երեխաներ» գործակիցները խմբի ներսում: Հղումը հասանելի է. <https://www.opm.gov/policy-data-oversight/worklife/reference-materials/child-care-resources-handbook/>

մշակման և իրականացման գործընթացներում ապահովել ծնողների, երեխաների ակտիվ մասնակցությունը՝ հնարավորություն տալով ձեռք բերվող անհրաժեշտ հմտությունները համապատասխանեցնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքներին,

5. հաշմանդամություն ունեցող երեխաների նախադպրոցական կրթության կարիքների և զարգացման հնարավորությունների գնահատման գործընթացում խթանել և ապահովել ծնողների ակտիվ մասնակցությունը,

6. վերանայել խմբերում ընդգրկված երեխաների հետ աշխատող դաստիարակների և դայակների հաստիքների քանակը՝ սահմանելով «սան – անձնակազմ» առավելագույն հարաբերակցությունը,

7. ավելացնել բազմամասնագիտական խմբերի կազմը և հաստիքները՝ նախատեսելով երեխաների կարիքներին համապատասխան մասնագետներ, մասնավորապես՝ էրգոթերապիստներ, վարքային թերապիստներ:

## **8.2 Հանրակրթություն**

2021 թվականի ընթացքում հանրակրթության ոլորտում հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների իրացման հետ կապված խնդիրները շարունակում են մնալ համակարգային բնույթ: Այս խնդիրներն արձանագրվել են ինչպես Պաշտպանի տարեկան հաղորդումներով<sup>1106</sup>, այնպես էլ Արտահերթ զեկույցով<sup>1107</sup>: Ընդ որում՝ այդ խնդիրներից որոշները վերաբերելի են ոչ միայն հանրակրթության, այլ նաև նախադպրոցական և բարձրագույն կրթության ոլորտներին (օրինակ՝ միջավայրային մատչելիության և խելամիտ հարմարեցումների ոչ բավարար լինելը, բազմամասնագիտական թիմերի սղությունը և այլն):

«Հատկանշական, որ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ կրթության մատչելիությունը խթանող միջոցառումները միտված են անձի մտավոր կարողությունները, անհատականությունը, տաղանդը և ստեղծագործական միտքը զարգացնելուն, այդ թվում՝ բոլոր ուսումնական և կրթական հաստատություններում ներառական կրթական ծրագրերի ու անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունն ու մատչելիությունը ապահովելու միջոցով: Ընդ որում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ «ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների

<sup>1106</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1107</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն» է: Այս հարցում Պաշտպանը վերահաստատում է այն դիրքորոշումը, որ ներառական կրթության իրացման համար, նախևառաջ, կարևոր նշանակություն ունի ուսումնական հաստատություններում կարիքահեն հարմարեցումների կատարումը, ինչը բխում է Կոնվենցիայի պահանջներից:

«Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի սեպտեմբեր ամսից համընդհանուր ներառական կրթության են անցում կատարել վերջին 2՝ «Արարատի և Վայոց Ձորի մարզերը: Միաժամանակ, հղում կատարելով դպրոցներից հավաքագրված տեղեկատվությանը՝ նախարարությունը հայտնել է, որ 2020-2021 ուսումնական տարում «հանրակրթական ուսումնական հաստատություններում հաշվառված են եղել 1703 հաշմանդամություն ունեցող և 8310 կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցող աշակերտ, իսկ 2021 թվականի օգոստոս ամսվա տվյալներով «հանրակրթական դպրոցներում հաշվառվել և սովորել է հաշմանդամություն ունեցող 1713 երեխա, որից 43առանձնահատուկ-ը՝ հեռավար: «Ողջ տարածքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2568 երեխա ստացել է մանկավարժահոգեբանական աջակցություն:

«Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղեկատվության համաձայն՝ 2021 թվականի ընթացքում կատարվել են շինարարական աշխատանքներ հանրապետության մի շարք հանրակրթական ուսումնական հաստատություններում: Այսպես, «Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կարբի վարչական շրջանի միջնակարգ դպրոցում և «Արարատի մարզի թվով 2 հանրակրթական ուսումնական հաստատությունում աշխատանքներ են իրականացվել դրանց սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու ուղղությամբ:

«Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող՝ 3, «Գեղարքունիքի մարզի՝ 4 հանրակրթական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

«Կոտայքի մարզային ենթակայության թվով 4 դպրոցում արդեն իսկ վերանորոգված սանհանգույցները հարմարեցվել են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

«Լոռու, Շիրակի, Տավուշի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում հանրակրթական ուսումնական հաստատությունների սանհանգույցները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու ուղղությամբ ինչպես 2020, այնպես էլ 2021 թվականների ընթացքում շինարարական աշխատանքներ չեն իրականացվել:

«Արարատի մարզի 50 հանրակրթական հաստատություն հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց մուտքի և դրանցում ազատ տեղաշարժի համար:

«Արմավիրի մարզպետարանի ենթակայությամբ գործող 111 հանրակրթական ուսումնական հաստատությունից 80-ը հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, իսկ մարզում գործող 64 նախադպրոցական ուսումնական հաստատությունից՝ 12-ը:

Գեղարքունիքի մարզի 34 հանրակրթական և 9 նախադպրոցական հանրակրթական ուսումնական հաստատությունների հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին:

Կոտայքի մարզում համընդհանուր ներառական կրթության համատեքստում մարզային ենթակայությամբ գործող 89-ը դպրոցից 45-ը հարմարեցված չեն, 10-ը մասամբ են հարմարեցված հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Մարզում գործող 7 նախադպրոցական ուսումնական հաստատություն մատչելի են մուտքի և ելքի, ինչպես նաև շենքում ազատ տեղաշարժի համար:

Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործող թվով 42 ուսումնական հաստատություններում առկա են թեքահարթակներ:

Սյունիքում մարզային ենթակայությամբ գործող 10 դպրոց հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Տավուշի մարզպետարանի ենթակայությամբ գործող 76 հանրակրթական ուսումնական հաստատություն մուտքերի մոտ ունեն թեքահարթակներ:

Վայոց Ձորի մարզպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցված չեն:

Երևանի քաղաքպետարանի տրամադրած տեղեկությունների համաձայն՝ Երևանի ենթակայության շուրջ 120 դպրոց ապահովված է մուտքի թեքահարթակներով, երեք դպրոցում առկա է վերելակ:

Երևանքի քաղաքպետարանի ենթակայությամբ գործող հանրակրթական շուրջ 70 դպրոցներում առկա են հարմարեցված սանհանգույցներ:

Կարևորելով ֆիզիկական մատչելիության ուղղությամբ ձեռնարկված քայլերը՝ այնուամենայնիվ, Պաշտպանի մշտադիտարկումները, ստացված բողոքների ուսումնասիրությունը, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների, հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողների դիտարկումները վկայում են, որ գործնականում այս իրավունքի իրացման համար հնարավորությունները խիստ սահմանափակ են, որոշ դեպքերում առհասարակ բացակայում են կամ չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող երեխաների կարիքներին: Համընդհանուր ներառական կրթության համատեքստում գործնականում շարունակում է խնդրահարույց մնալ այն հարցը, թե ինչ միջոցներով և ընթացակարգով է երաշխավորվում հաշմանդամություն ունեցող երեխայի կրթության իրավունքի իրացումն այն դեպքում, երբ երեխան (նրա օրինական ներկայացուցիչը) ցանկություն է հայտնել իր (երեխայի) կրթության իրավունքն իրացնել այնպիսի հանրակրթական հաստատություն, որը տվյալ պահին հարմարեցված չէ երեխայի կարիքներին կամ տվյալ տարվա ընթացքում կառավարության հաստատած

գործողությունների պլանի և ժամանակացույցի համաձայն չի էլ նախատեսվում այդ հաստատության համապատասխան հարմարեցումների իրականացումը:

Կարևորելով ձեռնարկված քայլերը՝ Պաշպանն արձանագրում է, որ 2021 թվականի ընթացքում հանրակրթական ուսումնական հաստատություններում ֆիզիկական մատչելիության ապահովման նպատակով կատարված աշխատանքները հիմնականում մասնակի են, այն է՝ իրականացվել են թեքահարթակների կառուցմամբ՝ առանց ակոսավոր կամ հակադրական գույներով նախագգուշացնող մակերևույթի: Չեն իրականացվել նաև տեսողության կամ լսողության խնդիրներ ունեցող երեխաների կարիքներին համապատասխան հարմարեցումները, ինչն իրական խոչընդոտներ կստեղծի նման կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման համար:

Շարունակում է խնդրահարույց մնալ հատկապես գյուղական համայնքներում անհրաժեշտ ուսումնասօժանդակ պարագաների սղության,, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում դասագրքերի, ծրագրերի մատչելիության հարցը:

Օրինակ՝ «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ իրականացրած այցի ընթացքում պարզվել է, որ դպրոցը չունի բավարար քանակությամբ բրայլյան համակարգով դասագրքեր: Անձնակազմի տեղեկությունների համաձայն՝ դպրոցը չունի համապատասխան ֆինանսավորում բրայլյան համակարգով դասագրքերի տպագրության համար: Տվյալ խնդիրն առկա է եղել նաև նախորդ տարիներին: Պաշտպանի կողմից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն են ուղարկվել մի շարք գրություններ համապատասխան գրություններով, սակայն խնդիրը շարունակում է մնալ չլուծված:

Մինչև դասագրքերի ամբողջական ապահովումը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հեռավար եղանակով կրթական գործընթացի այլընտրանքային (ժամանակավոր) միջոցներ կիրառելու վերաբերյալ հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ. «հեռավար եղանակով դասավանդման ժամանակ ուսուցիչը դասապրոցեսն արդյունավետ կազմակերպելու և վարելու համար հատուկ ուշադրություն է դարձրել դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքներին՝ անհրաժեշտության պարագայում համագործակցելով ծնողների հետ»:

Տարիներ շարունակ Պաշտպանը, կարևորելով համընդհանուր ներառականությունը նաև կրթության ոլորտում, անդրադարձել է հանրակրթական ուսումնական հաստատություններում իրազեկման աշխատանքների, այդ թվում՝ մանկավարժների, բազմամասնագիտական թիմերի թիրախային և հանդիպող խնդիրների լուծման համար անհրաժեշտ գործնականում հմտություններ ապահովող վերապատրաստումների անհրաժեշտությանը՝ որպես հաշմանդամության հիմքով խտրական վերաբերմունքի դրսևորումների կանխարգելմանն ուղղված քայլեր կամ միջոցներ: Այս կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է,

որ համընդհանուր ներառական կրթության ոլորտի առնչությամբ մշակվել և տարածվել են իրավահավասարության, խտրականության արգելքի վերաբերյալ, ներառական կրթության, համընդհանուր ներառականության անցման վերաբերյալ տեղեկատվական նյութեր և տեսահոլովակներ, որոնք հրապարակվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարության պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերի էջերում:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ թեև խիստ կարևոր են համընդհանուր ներառական կրթության վերաբերյալ հանրային իրազեկման բարձրացմանն ուղղված աշխատանքները՝ այնուամենայնիվ, առկա են խնդրահարույց մի շարք խնդիրներ: Այսպես, անընդունելի է կրթության ոլորտում քաղաքականության մշակող մարմնի վերահսկողությամբ իրականացվող վերապատրաստումների ընթացքում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների տեսանկյունից խնդրահարույց եզրույթների կիրառումը: Օրինակ՝ Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների քննարկումները, առանձնագրույցները մի խումբ մանկավարժների հետ վկայում են, որ վերապատրաստումների ընթացքում հաճախ կիրառվում են «նորմալ երեխա», «խնդրով երեխա» կամ այլ նմանատիպ եզրույթներ: Անընդունելի եզրույթներ են կիրառվում նաև Պաշտպանի հարցումների վերաբերյալ գրավոր տեղեկություններ տրամադրելիս: Օրինակ՝ 2021 թվականի տարեկան հարցումներում կիրառված են «խանգարումներ ունեցող երեխա», «անկարողություն – մտավոր զարգացման խնդիրներ» և այլն: Մինչդեռ՝ հաշմանդամության հիմքով խտրականության բացառումը, մարդու առանձնահատկություններ նկատմամբ հանդուրժողականությունը և նրանց հետ համահավասար հիմունքներով համակեցությունը, նախևառաջ, սկսվում է անձի նկատմամբ ոչ կարծրատիպային վերաբերմունքից: Ուստի, կրթության ոլորտում լիազոր մարմինը, բացի ոլորտային ռազմավարության մշակումից և իրականացումից, նաև պետք է ընդունելի, հետևողական հանրային հաղորդակցության ջատագովը լինի:

2021 թվականի ընթացքում շարունակում է արդիական մնալ մի շարք առարկաների հանրակրթական դպրոցի չափորոշիչների և ծրագրերի մատչելիության հարցը: Այս կապակցությամբ նախարարության տեղեկությունների համաձայն՝ «Հանրակրթության նոր չափորոշիչն ու առարկայան չափորոշիչները մշակվել են հիմք ընդունելով ուսումնառության համընդհանուր ձևավորումը: Հանրակրթության ոլորտում առարկայական ծրագրերի մշակման ընդհանուր մեթոդաբանությունից և սահմանված վերջնարդյունքներն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ համընդհանուր ներառական կրթության համատեքստում իրականացվել է նաև առարկայական չափորոշիչների վերանայումը: Ավելին՝ Հանրապետական մանկավարժական կենտրոնի կողմից 2021 թվականի ընթացքում մշակվել են ներառական կրթությունը խթանող 8 ռեսուրսներ՝ ձեռնարկներ, ուղեցույցներ և գիրք-տետրեր: Միաժամանակ, 2021 թ. Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի կողմից իրականացվող «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագրի շրջանակներում հանրապետության 120 դպրոցներում 2861 ուսուցիչներ անցել են վերապատրաստման դասընթացներ և ստացել են

շարունակական մենթորական աջակցություն ներառական կրթության և խտրականության բացառման հիմնահարցերի շուրջ: Իրականացվել է մասնագիտական կարողությունների հզորացմանն ուղղված թվով 324 վերապատրաստման դասընթաց՝ ՏՄԱԿ-ների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ տրամադրող և կրթության առանձնահատուկ պայմանների կարիքների գնահատումներ իրականացնող, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններում մանկավարժական աշխատող հանդիսացող 7513 մասնագետների համար:»

Այս առումով խնդրահարույց է մնում, այն որ ինչպես հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները, այնպես էլ ուսումնամանկավարժական անձնակազմերի ներկայացուցիչները Պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների հետ քննարկումների, առանձնագրույցների ընթացքում հայտնել են, որ առարկայական չափորիչների մշակման, իսկ հետագայում նաև լրամշակման ընթացքում հաշվի չեն առնվել երեխաների, ծնողների, ոլորտի հասարակական կազմակերպությունների մտահոգություններն ու դժգոհությունները:

Մշտադիտարկումների արդյունքում Պաշտպանը տարիներ շարունակ բարձրացրել է ուսուցչի օգնականի հաստիքների սղության հարցը՝ այն դիտարկելով համընդհանուր ներառականության և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների իրավունքների արդյունավետ իրացման համատեքստում: Ի պատասխան Պաշտպանի հարցման՝ «Հ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցչի օգնականի և նեղ մասնագետի հաստիքների ավելացման վերաբերյալ Նախարարությունը քանակական տվյալներ չի տրամադրել՝ նշելով, որ «Հանրակրթական դպրոցներում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար անհրաժեշտ ֆինանսավորման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2005 թվականի օգոստոսի 25-ի N 1365-Ն որոշմամբ, որտեղ սահմանված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մանկավարժական աշխատողների և ուսուցչի օգնականի հաստիքների տրամադրման կարգը»:

Մինչդեռ՝ 2021 թվականի ընթացքում Պաշտպանի մշտադիտարկումները, աշխատանքային քննարկումներն ու ստացած ահազանգերի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա են դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող երեխան փաստացի հաճախում է դպրոց, սակայն դասապրոցեսին նրա մասնակցությունը ձևական բնույթ է կրում, ինչպես նաև աշակերտի հետ մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացն իրականացվում է դասապրոցեսի ընթացքում՝ տվյալ աշակերտին դասի ժամին ուղեկցելով համապատասխան մասնագետի մոտ, զրկելով լիարժեք իրացնել կրթության իրավունքը, ինչը թույլատրելի չէ գործող իրավակարգավորումներով: Նման խնդիրներ են արձանագրվել նաև հատում դպրոցներում իրականացրած չհայտարարված այցերի ընթացքում, օրինակ, Կապանի թիվ 3 հատուկ

կրթահամալիրում, որտեղ աջակցության գրաֆիկն ու ժամանակացույցը կազմված դասաժամերի հաշվին և փակցված էր ուսուցչանոցի միջանցքի պատին:

Մշտադիտարկման այցերի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ դասապլանները ձևական բնույթ են կրել և գործնականում չեն իրականացվել, քանի որ չեն համապատասխանում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական կարողություններին ու հնարավորություններին: Օրինակ՝ Երևանի թիվ 11 հատուկ դպրոցում իրականացված այցի ընթացքում դիտարկված դասերը, ինչպես նաև առանձնագրույցները վկայում են, որ դասապրոցեսը հիմնականում չի համապատասխանում դասապլանին: Մասնավորապես, դասապրոցեսում ավելի հաճախ կատարվում են քայլեր և գործողություններ, որոնք իրականում միտված են աշակերտներին նստած պահելուն կամ նրանց վարքը կառավարելուն և նրանց զսպելուն: Նման պրակտիկան ընդունելի չէ երեխայի իրավունքների տեսանկյունից, ինչպես նաև անթույլատրելի է, քանի որ կրթության իրավունքի արդյունավետ իրացման համար անհրաժեշտ մեխանիզմների, մասնագիտական պատրաստվածության պակասը կամ անբարեխիղճ վերաբերմունքը, կարողությունների և հմտությունների, այդ թվում՝ վերապատրաստումների պակասն անմիջապես արտահայտվում է երեխայի զարգացման, կրթական առաջընթացի և արդյունքների վրա: Մինչդեռ՝ նշվածը երեխայի համար կենսական կարևորություն ունեցող հարց է:

Նկարագրված խնդիրների խորքային պատճառներից է նաև այն, որ կրթական գործընթացում բովանդակային և միջավայրային ներառականության ապահովման ամբողջ պարտավորությունը դրված է ուսուցչի վրա: Մինչդեռ՝ ուսուցչի, ուսուցչի օգնականի պարտականությունները պետք է հստակեցնել ըստ դասապրոցեսի բովանդակային և միջավայրային գործառույթների: Այս մոտեցումը նաև կնպաստի մասնագետի՝ աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ հաշմանդամություն կամ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի նկատմամբ խտրական, վատ վերաբերմունքի դրսևորումների նվազեցմանը:

*Այսպիսով, հիմք ընդունելով ոլորտում առկա խնդիրները, անհրաժեշտ է հանրակրթական ուսումնական դպրոցներում իրականացնել շարունակական համակարգային միջոցառումներ՝*

*1. դպրոցների ֆիզիկական և միջավայրային մատչելիություն ապահովելու նպատակով, մինչև համընդհանուր ներառական կրթության ներդրման ավարտը, մշակել և ներդնել ողջամիտ հարմարեցումների նվազագույն չափորոշիչներ,*

*2. ապահովել հանրապետության ներառական, ինչպես նաև հատուկ կրթություն իրականացնող ուսումնական բոլոր հաստատություններում մատչելի դասագրքերի անհրաժեշտ քանակ, ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերին համապատասխան մատչելի դասագրքերի տպագրության ֆինանսավորում,*

*3. ծնողների, երեխաների շրջանում կազմակերպել ներառական կրթության վերաբերյալ իրազեկման աշխատանքներ՝ դրանց ներգրավելով մասնագիտական անձնակազմերին,*



4. գյուղական և քաղաքային համայնքներում բնակվող ծնողների և երեխաների հետ իրականացնել վերապատրաստումներ և աշխատանքային քննարկումներ՝ հաշմանդամություն ունեցող երեխաների վարքի, նրանց նկատմամբ վերաբերմունքի և նրանց հետ շփման ձևերի վերաբերյալ, որոնք կնպաստեն հանդուրժողականության բարձրացմանը և կնպաստեն երեխաների իրավունքների արդյունավետ պաշտպանությանը,

5. հանրակրթական ուսումնական հաստատությունների մասնագիտական և մանկավարժական անձնակազմի համար կազմակերպող պարբերաբար վերապատրաստումների մշակման և իրականացման գործընթացներում ապահովել ծնողների, երեխաների ակտիվ մասնակցությունը՝ հնարավորություն տալով ձեռք բերվող անհրաժեշտ հմտությունները համապատասխանեցնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կարիքներին,

6. ապահովել և վերահսկել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր սովորողի համար անհատական ուսուցման պլանի մշակումը՝ բացառապես մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության խմբի միջոցով՝ խմբում պարտադիր ներգրավելով նաև երեխայի ծնողին,

7. մշակել և ներդնել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների՝ զարգացման հնարավորությունները բացահայտելու գնահատման գործիքներ և ուղեցույցներ ինչպես մանկավարժների, այնպես էլ՝ երեխաների ու ծնողների համար:

### **8.3 Բարձրագույն կրթություն**

Հաշմանդամություն ունեցող անձանց բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման խնդիրները տարիներ շարունակ արձանագրվել են ինչպես Պաշտպանի տարեկան հաղորդումներով<sup>1108</sup>, այնպես էլ Արտահերթ զեկույցով<sup>1109</sup>:

Ըստ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության տրամադրած տեղեկության՝ «2021 թվականի ընթացքում Նախարարության կողմից հաշմանդամություն ունեցող դիմորդների և ուսանողների կրթության իրավունքի հետ կապված կարիքներ չեն արձանագրվել: «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը կազմակերպում և իրականացնում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության գործընթացը (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերի), որտեղ ըստ անհրաժեշտության հաշմանդամի կարգավիճակ

<sup>1108</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1109</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

ունեցող դիմորդների համար ընդունելությունը կազմակերպվում է համապատասխան պայմանների ապահովմամբ:»

Այս կապակցությամբ պետք է նշել, որ 2021 թվականի ընթացքում շարունակում է արդիական մնալ բարձրագույն կրթության միջավայրային մատչելիության հարցը, որի կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հայտնել է, որ «Բուհերում՝ շենքն ու ենթակառուցվածքները հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցնելու ուղղությամբ 2021 թվականի հոկտեմբեր ամսվա դրությամբ կառուցվել են թեքահարթակներ, մասնաշենքերի 1-ին հարկերում առկա են սանհանգույցներ, առկա են նաև սանհանգույցներ, որոնք հարմարեցնված են հաշմանդամություն ունեցող ուսանողների կարիքներին:» Այս կապակցությամբ հարկ է նշել, որ շենքերի մասնակի հարմարեցումների, այդ թվում՝ միայն 1-ին հարկերում հարմարեցումների իրականացումը խնդրահարույց է հաշմանդամություն ունեցող անձանց՝ այլոց հետ համահավասար հիմունքներով իրավունքների իրացման տեսանկյունից և համահունչ չէ Կոնվենցիայի պահանջներին:

Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2021 թվականի տարեկան ծրագրից բխող ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը վերապահված՝ հաշմանդամություն ունեցող անձանց կրթության և մասնագիտական ուսուցման և զբաղվածության խթանմանն ուղղված ծրագրերի շրջանակում իրականացված միջոցառումների վերաբերյալ նախարարությունը պարզաբանել է, որ «բարձրագույն ուսումնական հաստատությունները հաշմանդամության կարգավիճակ ունեցող ուսանողների համար (հնարավորության սահմաններում) կազմակերպում և ապահովում են ուսումնական գործընթացը՝ ըստ անհրաժեշտության ապահովելով համապատասխան պայմաններ ուսումնական ծրագրերի իրականացման համար, ինչպես նաև, գործընթացը կազմակերպվում է նաև անհատական ուսուցմամբ): Կրթական ծրագրերում իրականացվել են փոփոխություններ, որոնք ուղղված են հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների լիարժեք կրթություն ստանալուն, ինչպես նաև սոցիալական հարմարեցման խնդիրների լուծմանը: Բուհերում գործարկված հեռավար ուսուցման համակարգը թույլ է տալիս հաշմանդամություն ունեցող ուսանողներին առանց դժվարության միանալու վիրտուալ լսարաններում ընթացող դասընթացներին և ունենալ ակտիվ մասնակցություն: Բուհերում 2021 թվականի ընթացքում պրոֆեսորադասախոսական կազմի համար կազմակերպվել են վերապատրաստման առկա/առցանց դասընթացներ՝ ներառական կրթության ապահովման և դասավանդման, ուսումնառության ու գնահատման ներառական մոտեցումների վերաբերյալ, որոնք կրելու են շարունակական բնույթ:

Պաշտպանի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը տեղեկացրել է, որ յուրաքանչյուր տարի բուհերում հավաքագրվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների տվյալները, գնահատվում են կարիքները, այնուհետև վերոհիշյալ ուսանողների հետ տարվում են աշխատանքներ՝ կրթությունը հասանելի դարձնելու նպատակով, մասնավորապես՝ վեր են հանվում

հաշմանդամություն ունեցող անձանց կրթության առանձնահատուկ պայմաններին չբավարարող լաբորատորիաները և լսարանները, ձևավորում են դրանց բարելավմանը միտված առաջարկություններ, կատարվում են աշխատանքներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց համար թվայնացված ուսումնական գրականության հասանելիության ապահովմանը, առարկայական ծրագրերում սահմանվում են հաշմանդամություն ունեցող անձանց առանձնահատուկ կարիքներին առնչվող դրույթներ: Բուհերում սովորող լսողության խնդիրներ ունեցող ուսանողների համար տեսական դասերի նյութերը տրամադրվում են դասախոսությունների և տեսաշահիկաշարերի ձևաչափով, իսկ ընթացիկ և ամփոփիչ ստուգումներն իրականացվում են գրավոր առաջադրանքների ձևաչափով: Գործնական պարապմունքների դասախոսները տիրապետում են ժեստերի լեզվին և իրականացվում է համապատասխան գործիքակազմի կիրառմամբ: Կրթական ծրագրերում իրականացվում են փոփոխություններ, որոնք ուղղված են հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների լիարժեք կրթություն ստանալուն, ինչպես նաև սոցիալական հարմարման խնդիրների լուծմանը: Բուհերում գործարկվում է նաև հեռավար ուսուցման համակարգը, որը թույլ է տալիս հաշմանդամություն ունեցող ուսանողներին առանց դժվարության միանալու վիրտուալ լսարաններում ընթացող դասընթացներին և ունենալու ակտիվ մասնակցություն:

Պաշտպանն արձանագրում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց՝ կրթության իրավունքի իրացմանն առնչվող խնդիրներ լուծելիս ուսման հեռավար տարբերակ ուսանողի ցանկությամբ կամ օրենքով նախատեսված դեպքերում և չպետք է պայմանավորված լինի խելամիտ հարմարեցումների բացակայությամբ:

Խնդիրներ են առաջանում նաև հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված՝ ուսման վճարների արտոնություններից օգտվելիս: Օրինակ՝ դեռևս 2020 թվականին Պաշտպանի աշխատակազմում ստացված բողոքներից մեկով քաղաքացին հայտնել էր, որ հաշմանդամության կարգավիճակ ստանալուց հետո բարձրագույն ուսումնական հաստատությունն իրեն չի ազատում ուսման վճարից: Պաշտպանի միջամտությունից հետո խնդիրը կարգավորվել է, սակայն նույն անձը 2021 թվականին նորից դիմել է Պաշտպանին, քանի որ համալսարանը հաջորդ կիսամյակի ուսման վարձի արտոնություն իրեն չի տրամադրել: Ստացվում է, որ կոնկրետ դեպքով գործնականում խնդրի լուծումը դրվագային է, մինչդեռ անհրաժեշտ են հետևողական ջանքեր՝ բացառելու նման դեպքերի կրկնությունը:

*Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

*1. բարձրագույն ուսումնական հաստատություններում ֆիզիկական և միջավայրային մարչելիություն ապահովելու նպատակով մշակել և ներդնել ողջամիտ հարմարեցումների նվազագույն չափորոշիչներ.*

2. ապահովել գործող իրավակարգավորումների պահանջները՝ հաշմանդամություն ունեցող անձանց՝ բարձրագույն կրթական ուսումնական հաստատություններում սովորելու համար վարձավճարների արտոնությունների տրամադրման մասով:

## ԳԼՈՒԽ 9. ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՆԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը ստանձնել է հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանությունը հատուկ ուշադրության ներքո պահելու հանձնառություն՝ հաշվի առնելով, որ նրանք ենթարկվում են փոխհատվող խտրականության դրսևորումների<sup>110</sup>: Այս համատեքստում պետությունը պարտավոր է ձեռնարկել միջոցներ ապահովելու հաշմանդամություն ունեցող կանանց լիարժեք զարգացումը և իրենց իրավունքների իրացման նոր հնարավորությունները:

Հատկանշական է, որ Կոմիտեի Թիվ 3 ընդհանուր մեկնաբանությամբ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հիմնականում դրսևորվում է բազմակի (երկու կամ ավելի հատկանիշների հիմքերով) կամ փոխհատվող (մի քանի հիմքերի փոխազդեցություն նույն ժամանակահատվածում) խտրականություն: Նման դեպքեր են արձանագրվել նաև Պաշտպանին դիմած անձանց բողոքների ուսումնասիրության արդյունքում: Օրինակ, Պաշտպանին իրավախորհրդատվության համար դիմած անձն իր պնդումներում նշել է, որ համայնքում իր նկատմամբ խտրական վերաբերմունքը պայմանավորված է ոչ միայն իր սեռով, այլ նաև հաշմանդամության հանգամանքով: Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների իրացման հետ կապված խնդիրներին Պաշտպանն անդրադարձել է նաև Արտահերթ զեկույցով<sup>111</sup>: Նշված խնդիրների կապակցությամբ իր մտահոգություններն է հայտնել նաև Կոմիտեն<sup>112</sup> Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ եզրափակիչ դիտարկումներում: 2020 թվականի հոկտեմբերի 21-ին Կոմիտեն ներկայացված հաշվետվությունում Կառավարությունը նշել է, որ «Բազմավարության գործողությունների ծրագրով 2019-2023 թվականների համար նախատեսվում են մի շարք միջոցառումներ՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց և աղքիկների իրավունքների իրականացմանը: Մշակվել է «Հաշմանդամություն ունեցող կանանց սոցիալական ներառման» նոր նախաձեռնությունը: Այն ուղղված է խոցելի խմբերին պատկանող կանանց իրավունքների պաշտպանությանը, մասնավորապես՝ հաշմանդամություն ունեցող կանանց, ինչպես նաև սոցիալական, առողջապահական, կրթական և այլ ծառայությունների մատչելիության ապահովմանը: Այս նախաձեռնության շրջանակներում նախատեսվում է Գյումրի քաղաքում

<sup>110</sup> Տե՛ս Եվրոպական հաշմանդամության ֆորումի ակնարկը: Հասանելի է <https://www.edf-feph.org/gender-equality-index-2021-what-does-it-say-on-disability/> հղումով:

<sup>111</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

<sup>112</sup> Տե՛ս Կոմիտեի դիտարկումները: Հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/TreatyBodyExternal/countries.aspx?CountryCode=ARM&Lang=EN](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/TreatyBodyExternal/countries.aspx?CountryCode=ARM&Lang=EN) հղումով:

ծառայությունների մատուցման փորձնական ծրագիր, որը հնարավորություն կտա Շիրակի մարզի տարբեր գյուղական և քաղաքային բնակավայրերում 18-40 տարեկան հաշմանդամություն ունեցող շուրջ 70 կանանց ստանալ բազմազան ծառայություններ և մասնակցել. կարողությունների զարգացման դասընթացներում: Գենդերային քաղաքականության իրականացման 2019-2023 ռազմավարությունը նախատեսում է նաև մի շարք միջոցառումներ՝ ուղղված կանանց, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող, իրավունքների մասին իրազեկման բարձրացմանը<sup>1113</sup>:»

Այս կապակցությամբ Պաշտպանի հարցման ի պատասխան՝ «Հաշմանդամների և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունները հիմնականում վերաբերում են առհասարակ հաշմանդամության ոլորտին՝ առանց հասցեական շեշտադրման հենց հաշմանդամություն ունեցող կանանց վերաբերյալ թեմաներին: Այս դեպքում ամբողջական վերլուծություն ներկայացնել հնարավոր չէ նաև այն պատճառով, որ հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ կանանց վերաբերյալ հստակ ապագրեգացված տվյալներ և վիճակագրություն առկա չէ:

Ըստ ոլորտային ուսումնասիրությունների հաշմանդամություն ունեցող կանայք իրենց հաշմանդամության հետևանքով առավել հաճախ են ենթարկվում ընտանեկան բռնության<sup>1114</sup>, որը միշտ չէ, որ արտահայտված բնույթ է կրում: Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց պաշտպանության ներառականության ու մատչելիության խնդիրների մասին Պաշտպանն արձանագրել է նաև 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>1115</sup> նշելով, որ գործնականում այդ երաշխիքները դեռ ամբողջությամբ հասանելի չեն: Արձանագրվել էր նաև, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված հարցումների համաձայն՝ գրեթե որևէ մարմին առանձին չի հաշվառում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ իրականացված բռնությունը, իսկ կառավարության որոշումը բացառում է ընտանիքում տեղի ունեցած բռնության դեպքերը գրանցելիս բռնությունից տուժած անձի հաշմանդամության վերաբերյալ նշում կատարելը:

Այս կապակցությամբ Պաշտպանի 2021 թվականի տարեկան հարցումներին ի պատասխան՝ «Հաշմանդամների և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ «ՀՀ կառավարությունը 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1381-Ն որոշման համաձայն՝ Նախարարությունը թղթային տարբերակով պետք է ապահովի ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման

<sup>1113</sup> Տե՛ս անգլերեն հաշվետվությունը: Հասանելի է [https://tbinternet.ohchr.org/\\_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2f2-3&Lang=en](https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2f2-3&Lang=en) հղումով:

<sup>1114</sup> Տե՛ս «Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված որակական հետազոտություն»-ը հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3EwOALG>:

<sup>1115</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

գործընթացը: Սակայն, հաշվետու ժամանակահատվածում կենտրոնացված հաշվառման գործընթացն ապահովելու համար՝ գործնական կիրառության ընթացքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ վերոգրյալ որոշմամբ սահմանված կարգով ոլորտային պատասխանատու գերատեսչություններից ոչ բոլորն են պատշաճ, սահմանված չափորոշիչներին համապատասխան ներկայացրել պահանջվող տեղեկատվությունը: Բացի այդ, ներկայացված թերթիկներում պահանջվող տվյալներն ամբողջապես լրացված չեն եղել, շրջանառվել են այնպիսի տվյալներ, որոնք բավարար չեն եղել հաշվետվության ամբողջականությունն ապահովելու տեսանկյունից: Ինչպես նաև, առկա թղթային համակարգով տվյալների ներկայացումը հնարավորություն չի տալիս հետևելու յուրաքանչյուր հաղորդման ընթացքին և գործի ելքին արդարադատության համակարգում, ինչն անհրաժեշտ է ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար արդարադատության մատչելիության և պատասխանատվության անխուսափելիության գնահատման տեսանկյունից:

Այսպիսով, ներկայումս, էլեկտրոնային հարթակի բացակայության պայմաններում պատասխանատու մարմինները համապատասխան տվյալները Նախարարություն են ներկայացնում թղթային տարբերակով և առանց մշակման, ինչը չափազանց բարդացնում և ժամանակատար է դարձնում տվյալների ամփոփումը և վերլուծությունը: Այդ պատճառով հաշվետու ժամանակահատվածում հնարավոր չի եղել պատշաճ ամփոփել և հրապարակել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառմանն առնչվող տեղեկությունը:

Վերոգրյալ և այլ գործնականում հանդիպած խնդիրները հաշվի առնելով՝ որոշում է կայացվել մշակել և ընդունել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառմանն առնչվող իրավահարաբերությունները կանոնակարգող նոր իրավական ակտ՝ հիմնված ժամանակակից լավագույն փորձի և միջազգային չափանիշների վրա, ինչպես նաև հաշվի առնելով գործնականում ծառայած խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու անհրաժեշտությունը: Ըստ այդմ, Նախարարությունը 2021 թվականին մշակել է «Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման և ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N1381-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որը քննարկման առարկա է դարձել Ընտանիքում բռնության կանխարգելման խորհրդում, ներկայացվել է շահագրգիռ գերատեսչություններին, այնուհետև ամփոփվել և ներկայացվել է փորձագիտական եզրակացության, որից հետո, առաջիկայում կամփոփվի և կներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:

Նախատեսվող նոր կարգով, ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումն իրականացվելու է էլեկտրոնային համակարգի միջոցով, որտեղ շահագրգիռ յուրաքանչյուր մարմին լրացնելու է բռնության ենթարկված անձի տվյալները՝ ներառյալ ընտանիքում բռնության ենթարկված անձի հաշմանդամությունը փաստող տվյալները:

Պետք է հավելենք, որ 2021 թվականի ընթացքում միջազգային կազմակերպությունների աջակցությամբ և «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման

կենտրոն» հիմնադրամի կողմից արդեն իսկ մշակվել է նախատեսվող էլեկտրոնային համակարգը. համակարգի մշակման ամբողջ գործընթացում ներգրավված են եղել ոլորտային բոլոր գերատեսչությունների պատասխանատու աշխատակիցները, հասարակական կառույցների ներկայացուցիչները և SS համակարգի որակավորված մասնագետները:

Այսպիսով, վերագրյալում նշված նոր մշակված նախագծի ընդունումից հետո՝ 2022 թվականից կկարողանանք գործարկել Ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառման էլեկտրոնային համակարգը և վարել ընտանիքում բռնության դեպքերի կենտրոնացված հաշվառումը:»

Կարևորելով պետության կողմից նախատեսվող քայլերը՝ Պաշտպանն արձանագրում է, որ էական նշանակություն ունի ոչ միայն իրավական ակտերի ընդունումը, այլ սկզբունքային է հատկապես իրավակիրառ պրակտիկայի բարելավումը՝ բարձրացնելով մասնագետների կարողություններն ու ապահովելով գործառույթների պատշաճ կատարման համար բավարար նյութատեխնիկական ռեսուրսներ:

«Վարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում է շարունակում մնալ նաև ընտանիքում բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց ապաստարանների, աջակցության կենտրոնների և համապատասխան ծառայությունների հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական և հոգեբանական մատչելիության հարցը, որը շարունակում է արդիական մնալ նաև 2021 թվականի ընթացքում: Նույն խնդիրը բարձրացրել են նաև հասարակական կազմակերպությունները:

«Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ «Նախարարության կողմից համաֆինանսավորվող թվով երկու ապաստարանները գործում են «Ընտանիքում բռնության ենթարկվածների ապաստարաններին և դրանց անձնակազմին ներկայացվող պահանջները, ընտանիքում բռնության ենթարկվածների համար նախատեսված ապաստարանների ֆինանսավորման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու, «Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1078-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ և 2015 թվականի սեպտեմբերի 10-ի թիվ 1069-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» «Կառավարության 2019 թվականի N364-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ապաստարաններն ապահովված են կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմաններով և հաշմանդամություն ունեցող անձանց կարիքների համար հարմարեցված ու մատչելի միջավայրով: Նախարարության կողմից համաֆինանսավորվող՝ ընտանիքում բռնության ենթարկված անձանց աջակցության կենտրոնների ծառայություններ մատուցող կառույցների հետ կնքված պայմանագրային իրավահարաբերություններում հստակ սահմանվել է դրույթ, համաձայն որի աջակցության կենտրոնները ընտանիքում բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող անձանց դեպքում պետք է ապահովեն նրանց համար մատչելի օգնության տրամադրման գործընթացը:»

Չնայած տրամադրված տեղեկություններին, այնուամենայնիվ, տարբեր հասարակական կազմակերպություններ նշում են, որ ոչ բոլոր ապաստարաններ են մատչելի և հասանելի հաշմանդամություն ունեցող կանանց համար, դրանք առկա չեն բոլոր մարզերում: Նշվածը խնդրահարույց է նաև այն պատճառով, միջավայրային և տրանսպորտային մատչելիության խնդիրների հետևանքով ապաստարան հասնել չեն կարողանում:

Նախորդ տարիների տարեկան հաղորդումներով ևս Պաշտպանը բարձրացրել է հաշմանդամություն ունեցող կանանց համար առողջապահական ծառայությունների մատչելիության հարցը՝ նշելով որ վերջիններս բախվում են մի շարք խոչընդոտների ու խնդիրների հատկապես վերարտադրողական առողջության իրավունքներն իրացնելիս<sup>116</sup>: Հաշմանդամություն ունեցող կանանց համար բժշկական ծառայությունների և հաստատությունների մատչելիության բացակայության վերաբերյալ, (հատկապես՝ սեռական և վերարտադրողական առողջության ոլորտում) իր մտահոգությունն է հայտնել Կոմիտեն:

ՀՀ առողջապահության նախարարության տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում հաշմանդամություն ունեցող կանանց կողմից սեռական և վերարտադրողական առողջության իրականացման ընթացքում առկա խոչընդոտների վերաբերյալ Առողջապահության նախարարությունը բողոքներ չի ստացել:

Նախարարություն պարզաբանել է նաև ռուտինային կարգով իրականացվում է անվճար և արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունը, որի շահառուների մեջ ընդգրկված են նաև հաշմանդամություն ունեցող անձինք:

Ավելին՝ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ հանրային առողջապահության կազմակերպման և կառավարման ամբիոնի կողմից մշակվել է բուժաշխատողների համար նախատեսված կատարելագործման կրթական ծրագիր, որում ներառված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, բժշկական օգնության ու սպասարկման, դեղորայք ձեռք բերման իրավական հիմքերն ու բժիշկ հաշմանդամություն ունեցող անձ փոխհարաբերությունների բժշկաիրավական ու բիոէթիկական կարգավորումները: Նշված դասընթացները ընդգրկված են եղել բուժաշխատողների կատարելագործման դասընթացների մոդուլներում և մասնակցել են 41 բուժաշխատող: «Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից ընտանեկան բժիշկների և մանկաբարձ-գինեկոլոգների համար կազմակերպվել է և Առողջապահության նախարարության կողմից կրեդիտավորվել է «Կանանց տարբեր խմբերի վերարտադրողական առողջության և իրավունքի ոչ խտրական մոտեցման սկզբունքները բուժաշխատողների մոտ» թեմայով սեմինար, որի ընթացքում քննարկվել են նաև հաշմանդամություն ունեցող կանանց վերարտադրողականության հարցերին վերաբերվող հարցեր: Սեմինարին մասնակցել է 200 բուժաշխատող:

<sup>116</sup> Տե՛ս ՄԱԿ-ի փաստագրումը: Հասանելի է <https://www.un.org/development/desa/disabilities/resources/women-with-disabilities-fact-sheet.html> հղումով:



Կարևորելով ձեռնարկվող քայլերը՝ Պաշտպանն ընդգծում է, որ պետությունը պետք էլ ավելի գործուն ջանքեր գործադրի հատկապես հաշմանդամություն ունեցող կանանց առողջությանը վերաբերող տեղեկությունների գաղտնիության պահպանման հարցում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններիս հաճախ զրկված են լինում վերարտադրողական առողջության իրավունքի իրացման վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությունից, այնպես մասնավոր կյանքի անձեռնմխելիության երաշխավորումից:

Այս հարցի կապակցությամբ Կոմիտեն իր Ընդհանուր մեկնաբանություն 1-ում արձանագրում է, որ «Օրինակ, հարկադիր ամլացման ցուցանիշն ավելի մեծ է հաշմանդամություն ունեցող կանանց շրջանում, և հաճախ նրանք զրկվում են իրենց վերարտադրողական առողջության վերահսկման և որոշումների կայացման իրավունքից, ելնելով այն ենթադրությունից, թե նրանք ի վիճակի չեն իրենց սեռական կյանքի մասին որոշում կայացնել: Հետևաբար, հատկապես կարևոր է վերահաստատել, որ հաշմանդամ կանանց իրավունքները պետք է ճանաչվի մյուսների հետ հավասար հիմունքներով»<sup>1117</sup>:

*Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է՝*

1. կազմակերպել սոցիալական աշխատողների, իրավասու մարմինների աշխատակիցների համար վերապատրաստումներ՝ հաշմանդամություն ունեցող կանանց սոցիալ-տնտեսական իրավունքների և գործնականում դրանց իրացման հնարավորությունների վերաբերյալ,

2. շարունակել հետևողական ջանքեր գործադրել հաշմանդամություն ունեցող կանանց՝ վերարտադրողական առողջության պահպանման իրավունքների մասով բժշկական սպասարկում իրականացնող անձնակազմի պատշաճ իրազեկվածությունը բարձրացնելու ուղղությամբ,

3. ապահովել բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող կանանց համար համապատասխան ծառայություններ մատուցող բոլոր աջակցության կենտրոնների ու ապաստարանների ֆիզիկական և միջավայրային մարչելիությունը և դրանց հասանելիությունը:

## **ԳԼՈՒԽ 10. ՀԱՐԳԱՆՔ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՂ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏԱՄԲ**

Կոնվենցիայի վավերացմամբ պետությունը հանձնառություն է ստանձնել ապահովել հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների իրացումը՝ երաշխավորելու հարգանքը նրանց զարգացող հնարավորությունների նկատմամբ և իրենց ինքնությունը պահպանելու իրավունքի նկատմամբ: Այս համատեքստում պետությունը պետք է ձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող երեխաների՝ այլոց հետ հավասար հիմունքներով իրենց իրավունքներն իրացնելու իրական հնարավորություններ: Ընդ որում՝

<sup>1117</sup> Տես՝ [https://www.un.am/up/library/Report\\_Sexual\\_Reproductive\\_Rights\\_ARM.pdf](https://www.un.am/up/library/Report_Sexual_Reproductive_Rights_ARM.pdf) հղումով

պետությունը պարտավոր է հաշմանդամություն ունեցող երեխաներին վերաբերող բոլոր գործողություններում առաջնորդվել երեխայի բարձրագույն շահերով: Ավելին՝ պետությունը պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող երեխաների՝ իրենց վերաբերող հարցերի շուրջ կարծիքներն ազատ արտահայտելու իրավունքը: Այս նպատակով պետությունը պետք է տրամադրի անհրաժեշտ աջակցությունը հաշմանդամություն ունեցող երեխաներին՝ իրենց տեսակետները՝ տարիքին, հասունությանը և կարիքներին համապատասխան հայտնելու իրավունքն իրացնելու նպատակով:

Այս հիմնարար սկզբունքների ու պետության պոզիտիվ պարտավորությունների կատարման պահանջի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը 2021 թվականի ընթացքում իրականացրել է չհայտարարված մշտադիտարկման այցեր երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, հատուկ դպրոցներ: Այցերի ընթացքում արձանագրվել են մի շարք համակարգային խնդիրներ կապված երեխաների կրթության, անկախ կյանքի իրավունքի, ինքնասպասարկման հմտությունների խթանման, սոցիալական ներառման հետ, որոնք հետևանք են այն բանի, որ հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների հարգանքի սկզբունքը ոչ միշտ է պահպանվում:

Այսպես, օրինակ, Պաշտպանի աշխատակազմի կողմից Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ իրականացրած չհայտարարված այցի ընթացքում հաստատության անձնակազմի և սաների հետ տեղի ունեցած առանձնազրույցների, զրույցների, ինչպես նաև Հաստատության տրամադրած տեղեկությունների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ թեև սաների կրթության կազմակերպման ընթացքում Հաստատության բազմամասնագիտական թիմն ակտիվ համագործակցում է հանրակրթական ուսումնասական հաստատության մասնագետների հետ, այնուամենայնիվ, խնդրահարույց է այն, որ պետական չափորոշիչները ոչ միշտ են հնարավոր դարձնում հաշվի առնել երեխաների զարգացող հնարավորությունները կամ համապատասխանում նրանց ուսումնական կարիքներին, իսկ դրանց ադապտացման պրակտիկ մեթոդաբանություն պետության կողմից ներդրված չէ: Այցի ընթացքում Հաստատության անձնակազմի հետ քննարկումների արդյունքում արձանագրվել է, որ տնային ուսուցմամբ սովորողների կրթության կազմակերպման ընթացքում ոչ միշտ է կարևորվում դրա արդյունավետության բաղադրիչը: Նկարագրված խնդիրն արձանագրվել է նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների՝ այլ հաստատություններ այցերի ընթացքում: Այսպես, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում Պաշտպանի աշխատակազմին են ներկայացվել տեղեկություններ այն մասին, որ տնային ուսուցման դեպքում կրթական պրոցեսի ընթացքում մատուցվող կրթական նյութը չի համապատասխանում սանի կրթական կարիքներին և զարգացման հնարավորություններին: Մեկ այլ դեպքում կրթական նյութը մատչելի կերպով չի մատուցվում սանին՝ իր կարողությունների հաշվառմամբ, ինչի արդյունքում երեխան չի յուրացնում այն: Օրինակ՝ նշվել է, որ տնային ուսուցման ընթացքում այցելող մանկավարժը երեխային ներկայացրել է կրթական նյութը՝ առանց հստակեցնելու կոնկրետ հանձնարարության նպատակը և բացատրելու, թե ինչ առաջադրանք է կատարելու երեխան՝ պատճառաբանելով, որ «միևնույնն է երեխան չի հասկանալու»: Եղել են նաև

դեպքեր, երբ պալիատիվ խմբի սաներից մեկին տնային ուսուցմամբ դասավանդվում է օտար լեզու այն դեպքում, երբ վերջինս չի արձագանքում հայերեն պարզ հարցադրումներին:

Մեկ այլ հաստատության՝ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ դպրոց» ՊՈԱԿ կատարած մշտադիտարկման այցի ընթացքում արձանագրվել է, որ սովորողների անհատական ուսուցման պլաններում (ԱՌԻՊ) ներկայացված տեղեկությունները հիմնականում ձևական բնույթ են կրում և չեն արտահայտում իրական աշխատանքն ու երեխայի կրթական կարիքին համապատասխան իրականացված կրթության առանձնահատկություններն ու երեխայի զարգացման դինամիկան: Այսպես, օրինակ, երեխայի առաջընթացը կարող է 4-5 տարիների ընթացքում լինել 10 տառի ճանաչում, այնինչ երեխան ունի միջին աստիճանի ինտելեկտուալ ֆունկցիաների խնդիր, ինչը հնարավորություն է տալիս, որ նրա իրական զարգացումը և կրթական կարիքները լինեն ավելին: Այս մասին են վկայում նաև այցի ընթացքում երեխային դասապրոցեսի ընթացքում դիտարկելու և նրա հետ առանձնագրույցի արդյունքները: Այցի ընթացքում աշխատակազմի ներկայացուցիչները, այդ թվում՝ հոգեբան-փորձագետը դասապրոցեսի դիտարկման արդյունքում արձանագրել են, որ դասապրոցեսը բավարար չափով արդյունավետ չէ, ոչ միշտ են հաշվի առնվում տարբեր կարողություններով երեխաների իրական կարիքները, որոշների կարողությունները թերագնահատված են: Այսպես, երեխաների հետ շփման, ինչպես նաև մանկավարժահոգեբանական եզրակացությունների և երեխաների ԱՌԻՊ-ների ուսումնասիրության արդյունքում արձանագրվել է, որ մի քանի տարի դպրոցում ուսանելուց հետո որոշ երեխաների առաջադիմությունը սաստիկ ցածր է, այն դեպքում, երբ վերջիններս ակնհայտորեն ունեն զարգացման իրական հնարավորություններ: Օրինակ, դիտարկված դասարաններում եղել են զարգացման և ունակությունների տեսանկյունից առաջ ընկնող երեխաներ: Աշակերտներից մեկն առանձնագրույցների ընթացքում նշել է, որ դպրոցում իրեն նախընտրած հատվածը դասի ժամանակ դասը վարելու հատվածներն են՝ հավելելով, որ իր նման դասը վարում են նաև այլ աշակերտներ: Նշվածը հաստատվել է նաև դասապրոցեսի դիտարկման արդյունքում: Դիտարկված որոշ խմբերում մտավոր միջին կամ բարձր կարողություններ ունեցող երեխաները ամբողջ դասին մասնակցել են միայն արտագրություն կատարելով կամ արտանկարելով: Խնդրի կապակցությամբ հարկ է նշել նաև, որ մշտադիտարկման արդյունքներով պարզ է դառնում, որ դպրոցում սովորող երեխաների մի մասի կրթական կարիքների գնահատումը չի համապատասխանում նրանց իրական զարգացման հնարավորություններին ու կարիքներին, ավելին՝ տվյալ դպրոցում սովորելու անհրաժեշտությունն արդարացված չէ, քանի որ նրանք կարող են սովորել հանրակրթական ուսումնական հաստատություններում: Օրինակ՝ 4-րդ դասարանում սովորող, զարգացման թույլ աստիճանի խնդիրներ ունեցող երեխայի տառաճանաչությունը, ըստ փաստաթղթային արձանագրումների, տեղավորվում է 12 տառի շրջանակում, իսկ նրա կրթական առաջընթացի մասին որևէ նշում կատարված չէ: Մինչդեռ երեխան ակնհայտորեն տարբերվում էր իր կարողություններում և զարգացման հնարավորություններով: Այնուամենայնիվ, փաստաթղթային ուսումնասիրություններով արձանագրվել է, որ երեխաների կարողությունների գնահատմամբ այլ

պատկեր է նկարագրվել: Կարելի է ենթադրել, որ կարողությունների գնահատումը որոշ դեպքերում երեխաներին հատուկ կրթական հաստատություն ուղղորդելու նպատակ ունի՝ պայմանավորված ծնողի կամ ծնողների սոցիալական վիճակով և ցանկությամբ: Նշվածը կարելի է հաստատել նաև երեխաների հետ ունեցած առանձնագրույցների արդյունքում, որը նույնպես վկայում է, որ որոշ երեխաների՝ տվյալ դպրոցում սովորելու հիմնական մոտիվը հիմնականում սոցիալական է և պայմանավորված է երեխաների խնամքի հարցում հնարավոր աջակցությունից օգտվելու՝ ծնողների որոշմամբ: Այս խնդրի մասին են վկայում նաև մանկավարժական անձնակազմի հետ ունեցող առանձնագրույցների արդյունքները: Ավելին՝ վերջիններս դժգոհություն են հայտնել այն կապակցությամբ, որ գնահատումը կատարվում է կրթական մեկ աստիճանից մյուսին անցնելիս և իրական պատկերը չի արտացոլում:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ հաշմանդամություն ունեցող երեխայի զարգացման հնարավորությունները բավարար հաշվի չեն առնվում նաև նրա հետ նեղ մասնագիտական աշխատանք կատարելիս: Օրինակ, «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ում մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի հետ իրականացվող աշխատանքները հիմնականում արձանագրվում են հոգեբանի, լոգոպեդի և սոցիալական աշխատողի կողմից կազմված ծրագրերում և փաստաթղթերում: Դրանցում առավելապես արտացոլվում են կատարվելիք մասնագիտական աշխատանքները, դրանց նպատակները, աշխատանքի ակնկալվող արդյունքները: Այս դեպքում հնարավոր չէ ապահովել մասնագիտական եզրակացությունների և գնահատականների անհատականացումը, քանի որ սաների իրական կարիքները և դրանց՝ տարիքով, վարքով, զարգացման հնարավորություններով պայմանավորված առանձնահատկություններն անհատականացված չեն: Ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում, որ իրական աշխատանքի արդյունքների վերահսկումն ու գնահատումը ոչ միշտ է կատարվում գրանցումների հիման վրա, քանի որ գրառումները ոչ միշտ են արտացոլում փաստացի կատարված աշխատանքն ու իրական արդյունքները, առաջընթացի կամ զարգացման հետընթացն ու խնդիրները, որոնք արձանագրվել են սանի հետ աշխատելիս: Արդյունքում՝ մասնագետների գրառումները, որպես կանոն, կրում է ֆորմալ բնույթ, ինչպես նաև խախտվում է սաների՝ իրենց զարգացման հնարավորություններին և իրական կարիքներին համապատասխանող որակյալ ծառայություններ ստանալու հիմնարար իրավունքը:

**Նշվածն անընդունելի է ոչ միայն պետության պոզիտիվ պարտավորության պատշաճ իրականացման տեսանկյունից, այլ նաև երեխաների իրավունքների համատեքստում, քանի որ երեխաների կրթական կարիքների չբավարարման արդյունքում վերջիններս կորցնում են իրենց հնարավորությունը՝ զարգանալու և առաջընթաց ապրելու:** Արդյունքում՝ ստեղծված իրավիճակում զարգացման ավելի մեծ հնարավորություններ ունեցող երեխաների կրթության որակը էապես տուժում է:

Բարձրացված հարցի կապակցությամբ հարկ է արձանագրել, որ կրթության իրավունքի պատշաճ իրացման համար կարևոր է առանձնահատուկ կարիք ունեցող յուրաքանչյուր երեխայի

համար նրա իրական կարիքների և կարողությունների վրա հիմնված կրթական գործընթացի և դրա ընթացքում դրական զարգացումների ապահովումը:

Որպես օրինակ կարելի է նշել «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ իրականացրած այցի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչների արձանագրումն առ այն, որ կրթահամալիրում հատուկ ուշադրություն է դարձվում երեխաների՝ շտրեթերով կարդալու և հասկանալու կարողությունների զարգացմանը, որի նպատակն է առնվազն պահպանել, իսկ հնարավորության դեպքում՝ զարգացնել նրանց լսողության առկա ունակությունները, ինչպես նաև նպաստել նրանց հետագա սոցիալական ինտեգրմանը: Հատուկ ուշադրություն է դարձվում երեխաների կարողությունների զարգացմանը՝ այդ նպատակով ձեռնարկելով լրացուցիչ միջոցներ, այդ թվում՝ արտադասարանական խմբակների կազմակերպում, անհատական և խմբային թերապիաների իրականացում:

Մեկ այլ հաստատություն՝ «Երևանի Նիկողայոս Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների թիվ 14 հատուկ դպրոց» ՊՈԱԿ իրականացված այցի մշտադիտարկման արդյունքները, երեխաների հետ առանձնազրույցները վկայում են, որ անձնակազմի կողմից հատկապես կարևորվում և հնարավորինս ուշադրություն է դարձվում երեխաների՝ ինքնուրույն կյանքի հմտությունների զարգացումը: Օրինակ՝ աշխատանքներ են տարվում երեխաների՝ տարածության մեջ առանց լրացուցիչ աջակցության կողմնորոշվելու, ինքնասպասարկման հմտությունները զարգացնելու ուղղությամբ:

Այս համատեքստում Պաշտպանը վերահաստատում է այն մոտեցման կարևորությունը, որ երեխայի կրթությունը պետք է ուղղված լինի երեխայի անհատականության, տաղանդի և մտավոր ու ֆիզիկական ունակությունների զարգացմանը՝ դրանց լրիվ ծավալով<sup>1118</sup>: Նշվածն ամրագրված է նաև Կոնվենցիայով՝ հատուկ շեշտադրելով, որ պետությունը պետք է ապահովի հաշմանդամություն ունեցող անձանց մտավոր ու ֆիզիկական կարողությունների զարգացումը՝ օգտագործելով նրանց առավելագույն հնարավորությունները: Պետության պոզիտիվ պարտավորության պատշաճ կատարումը պահանջում է, որ կրթությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի լինի համակողմանի, որակյալ, ինչպես նաև տրամադրվեն անհատի պահանջներին անհրաժեշտ հնարավորություններ: Ավելին՝ պետք է ձեռնարկվեն անհատական աջակցությանն ուղղված արդյունավետ միջոցներ այնպիսի միջավայրերում, որոնք ամբողջությամբ ներգրավելու նպատակն իրականացնելուն զուգահեռ նաև առավելագույնս կնպաստեն նրանց ուսումնական ու սոցիալական զարգացմանը<sup>1119</sup>:

Այսպիսով, անհատական ծրագրերի պատշաճ, ամբողջական և անհատականացված արձանագրման խնդրի կապակցությամբ պետք է ընդգծել, որ Կոնվենցիայով ստանձնած՝ հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացող հնարավորությունների և նրանց ինքնությունը պահպանելու իրավունքի իրացման նպատակով անչափ կարևոր է կատարված աշխատանքի

<sup>1118</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 29

<sup>1119</sup> Տե՛ս ՄԱԿ-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 24

հաշվետվողականությունն ապահովելն ու կատարված աշխատանքի վերաբերյալ օբյեկտիվ արձանագրություններ ունենալը: Այլապես, անհնար է դառնում հետևել անձի կարիքներին համապատասխան անհատականացված աշխատանքի ընթացքին, դրա որակին և արդյունքներին, ինչն էլ իր հերթին կարող է հանգեցնել հաշմանդամություն ունեցող երեխայի ինքնությունը պահպանելու իրավունքի խախտմանը:

Հասարակական կազմակերպությունների ներկայացրած տեղեկությունների ուսումնասիրությունը վկայում է, որ 2021 թվականին շարունակում է արդիական մնալ նաև նորածնի հաշմանդամության պատճառով մանկալքության հետ կապված խնդիրը: Այս դեպքում վերլուծություններն ու ուսումնասիրությունները հավաստում են, որ խնդրի խորքային պատճառներից է ոչ միայն հասարակությունում խտրական և կարծրատիպային դրսևորումների առկայությունը, այլ նաև հաշմանդամություն ունեցող երեխայի զարգացման հնարավորությունների վերաբերյալ ձևավորված այն թյուր կարծիքը, որ հաշմանդամություն ունեցող երեխան չի կարող ինքնուրույն կենսակերպ ունենալ, ձեռք բերել կենսագործունեության համար անհրաժեշտ հմտություններ և այլն:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում գրանցվել է առողջական խնդիրներով նորածին երեխաների մանկալքության 11 դեպք:

Առողջական խնդիրներով նորածին երեխաների մանկալքության խնդրի առկայության մասին է փաստում նաև այն, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 2021 թվականի ընթացքում երեխայի խնամք և պաշտպանություն իրականացնող շուրջօրյա խնամքի պետական հաստատություններում խնամվել է 584 երեխա: Նշված երեխաներից 498-ը ունի հաշմանդամություն:

Պաշտպանի այն հարցին, թե մանկալքության կանխարգելման ուղղությամբ ի՞նչ քայլեր են ձեռնարկվել 2021 թվականի ընթացքում ՀՀ առողջապահության նախարարության կողմից պարզաբանվել է, որ «2020 թվականի ապրիլի 30-ից ուժի մեջ է մտել Առողջապահության նախարարի 2020 թվականի ապրիլի 21-ի թիվ 13-Ն հրամանը, որի հավելված 3-ով հաստատվել է երեխայի հիվանդությամբ պայմանավորված մանկալքության դեպքում բժշկական կազմակերպության կողմից մասնագիտական երկրորդ կարծիքի ստացման գործելակարգը: Վերջինիս կիրառման արդյունքում ապահովվում է երեխայի առողջական վիճակի համապարփակ ուսումնասիրությունը և մորը (ծնողներին) այդ մասին օբյեկտիվ, արժանահավատ տեղեկատվության տրամադրումը: Համաձայն վերոհիշյալ գործելակարգի, նույնիսկ այն դեպքում, երբ մանկալքությունը այնուամենայնիվ տեղի է ունեցել, կապ է հաստատում երեխայի ծնողի(ծնողների) հետ և տրամադրում երեխայի առողջական վիճակի, բուժման հնարավորությունների վերաբերյալ կոնսիլիումի եզրակացությունը՝ անձնական հանդիպման և (կամ) պատվիրված նամակի միջոցով: Միաժամանակ, շարունակում է գործել 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 3257-Լ հրամանով ստեղծված պերինատալ կոնսիլիումը՝ երեխայի

հիվանդության բնույթին համապատասխան նեղ մասնագիտական խմբերով, որը մինչև երեխայի ծնունդը տալիս է եզրակացություն, նշելով դեռ չծնված երեխայի ախտորոշումը, երեխային սպասվող բժշկական միջամտությունները և կիրառվելիք բուժման արդյունքում ակնկալվող ելքերի հավանականությունը:

Առողջապահության նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Բարի մամա» հասարակական կազմակերպության եռակողմ համաձայնագրի շրջանակներում 2020 թվականի ընթացքում իրականացվել են վերապատրաստումներ Առողջապահության նախարարության մոր և մանկան առողջության պահպանման վարչության մասնագետի կողմից: Մասնակցել են նաև 200 բուժաշխատող Արմավիրի, Լոռու և Շիրակի մարզերի: Վերապատրաստումները ժամանակավորապես դադարեցվել են համավարակով և հետպատերազմյան իրավիճակով պայմանավորված: Առողջապահության նախարարության տարածքում փակցված են պաստառներ, որոնք իրագեկում են երեխայի առողջական խնդիրների հետ կապված մանկալքության խնդրի կանխարգելման վերաբերյալ և աջակցության թեժ գծի հեռախոսահամարները:»

Կարևորելով մանկալքության կանխարգելման ուղղությամբ իրականացվող քայլեր՝ Պաշտպանը վերահաստատում է իր այն դիրքորոշումը, որ ծնողների կողմից առողջական խնդիրների կամ հաշմանդամության պատճառով մանկահասակ երեխաներին կամ առհասարակ ընտանիքը լքելու դեպքերը կանխարգելելու ուղղությամբ պետության կայուն աջակցության ապահովումը պետք է կրի շարունակական բնույթ, նախաձննդյան և հետձննդյան փուլերից բացի ընդգրկի կյանքի բոլոր շրջափուլերը, հաշվի առնի ընտանիքի կարիքները և ցուցաբերի անհատական մոտեցում: Այս նպատակով պետությունը պետք է ընդլայնի սոցիալ-հոգեբանական և վերականգնողական ծառայությունների, ընտանիքների ֆինանսական կայունությունը խթանող աջակցության, մասնագիտական ծառայությունների շրջանակը և ապահովի դրանց մատչելիությունը յուրաքանչյուրի համար:

*Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտ է՝*

1. *հաշմանդամություն ունեցող երեխաների զարգացման իրական հնարավորությունների և կարիքների գնահատման գործընթացում ներգրավել ծնողներին, մանկավարժներին և երեխային՝ այդ նպատակով մշակելով գնահատման առաջարկվող չափորոշիչների գործնական կիրառման մեթոդաբանություն,*

2. *ընդլայնել ուսումնառական խմբակների շրջանակը՝ հաշմանդամություն ունեցող երեխաների մասնագիտական կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով,*

3. *ավելացնել հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիքի անդամների հոգեբանական աջակցություն ցուցաբերող պարփոխակալած ծառայությունների շրջանակը, մշակել և ներդնել հաշմանդամության պարճառով մանկալքության դեմ պայքարի ծրագիր՝ նախատեսելով սոցիալ-*

հոգեբանական և վերականգնողական ծառայությունների ընդլայնում, ընդհանրապես ֆինանսական կայունությունը խթանող աջակցություն:

4. աստիճանաբար ավելացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների, նրանց հետ շփվելու հմտությունների վերաբերյալ վերապատրաստումներին երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող, ինչպես նաև ուսումնական հաստատությունների, խնամակալության մարմինների ներկայացուցիչների մասնակցության փոփոխել՝ ապահովելով մարզային ենթակառուցվածքների աշխատակիցների ներգրավվածությունը դասընթացներին:

**ԳԼՈՒԽ 11. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ, ՀԱՄԱՅՆՔԱՀԵՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ**

Ինչպես 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի ընթացքում, այնպես էլ դրանից հետո Պաշտպան իրականացրել է պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանն ուղղված միջոցառումների մշտադիտարկում:

Ի պատասխան Պաշտպանի հարցման՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ 2020 թվականի արցախյան պատերազմի հետևանքով վիրավորում ստացած 1953 անձ ենթարկվել է բժշկասոցիալական փորձաքննության, նրանցից 463-ը հաշմանդամ չեն ճանաչվել, 113 անձի սահմանվել է հաշմանդամության առաջին խումբ, 396 անձի՝ հաշմանդամության երկրորդ խումբ, 981 անձի՝ հաշմանդամության երրորդ խումբ: Հաշմանդամության կարգավիճակ ստացած 166 անձի մոտ հաշմանդամության պատճառ է սահմանվել ընդհանուր հիվանդությունը, 5 անձի՝ ՀՀ սահմանները պաշտպանելիս ստացած վնասվածքը, 11 անձի՝ հիվանդությունը կամ վնասվածքը ստացել է զինվորական ծառայության ընթացքում, 1308 անձի՝ վնասվածքը ստացել է հակառակորդի հետ շփման գծում՝ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով: Հաշմանդամության կարգավիճակ ստացած 133 անձի մոտ ախտորոշվել է վնասվածքային անդամահատում, 106 անձի՝ աչքի հիվանդություններ (վնասվածքներ), 31 անձի՝ գանգուղեղային վնասվածքներ, 466 անձի՝ մարմնի տարբեր հատվածների կոտրվածքներ, 54 անձի՝ հոգեկան և վարքի խանգարումներ, 38 անձի՝ պոլիտրավմաներ, 662 անձի՝ այլ վնասվածքներ:

2021 թվականի Պաշտպանի մշտադիտարկումները վկայում են, որ ադրբեջանական զինված ուժերի հարձակումների և ոտնձգությունների հետևանքով վիրավորում ստացած անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման հետ կապված խնդիրները ոչ միայն չեն լուծվել, այլ նաև էլ ավելի են սրվել ինչպես միջավայրային խոչընդոտներով, այնպես էլ



պետության կողմից որոշ դեպքերում դրանց լուծման ոչ համակարգային մոտեցումների կիրառմամբ պայմանավորված:

Այսպես, պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձինք շարունակում են բախվել իրենց իրավունքների իրացման խնդիրների, որոնք պայմանավորված են կարիքների գնահատման չափորոշիչների և մեխանիզմների անարդյունավետությամբ: Դեռևս 2020 թվականի տարեկան հաղորդմամբ<sup>1120</sup>, ինչպես նաև Արտահերթ զեկույցով<sup>1121</sup>: Մասնավորապես՝ կարիքների ոչ լիարժեք և ամբողջական գնահատման, այն է՝ հիմնականում անձի առողջական կարիքների արձանագրման հետևանքով մարդիկ բախվում են սոցիալական ինտեգրման տարաբնույթ խնդիրների: Այս մասին են վկայում ինչպես Պաշտպանի մշտադիտարկումներն ու անհատական բողոքների ուսումնասիրությունները, այնպես էլ հասարակական խորհրդի անդամների, այլ հասարակական կազմակերպություններից ստացած տեղեկությունները: Օրինակ, դիմումներից մեկով անձը հայտնել է, որ պատերազմի ընթացքում վիրավորում է ստացել, զինվորական հոսպիտալում փորձաքննության արդյունքում զինվորական ծառայության համար ճանաչվել է ոչ պիտանի: Բողոք ներկայացրած անձի տեղեկությունների համաձայն՝ վիրավորման հետևանքով իր մոտ առաջացել են հենաշարժողական խնդիրներ, իր կյանքի որակը և կենսագործունեության հնարավորությունները փոխվել են, սակայն իր նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ չի սահմանվել, չի կարողանում շարունակել ծառայությունը կամ այլ աշխատանք գտնել: Բողոքի քննարկման ընթացքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ անձն ուղղորդվել է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն անձին զբաղվածության և սոցիալական ներառման ծրագրերում ընդգրկելու նպատակով: Հարկ է նշել, որ այս դեպքում խնդրահարույց է այն, որ պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց կարիքներն ուսումնասիրվում է հաշմանդամության կարգավիճակի սահմանման նկատառումներով՝ հաշվի առնելով ներկայացված փաստաթղթերն ու առողջական զանգատները: Մինչդեռ՝ պետք է իրականացվի կարիքների ամբողջական գնահատում ինչպես առողջապահական, այնպես էլ սոցիալական և ֆունկցիոնալության տեսանկյունից, որպեսզի հնարավորիս սեղմ ժամկետներում ապահովվի անձի սոցիալական ինտեգրման համար անհրաժեշտ պայմաններ ու հնարավորություններ: Այս նկատառմամբ, «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է, որ անձի ֆունկցիոնալության գնահատման արդյունքներով անձը ճանաչվում է հաշմանդամություն ունեցող անձ (երեխա) կամ չի ճանաչվում, որոշվում է նրա ֆունկցիոնալության սահմանափակման աստիճանը՝ թեթև, միջին, ծանր, խորը, որի հիման վրա մշակվում է ծառայությունների անհատական ծրագիրը: Ընդ որում՝ ծառայությունների անհատական ծրագիրը պետք է ուղղված լինի հասարակական կյանքի բոլոր ոլորտներում (առողջապահության,

<sup>1120</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների եվ ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, հասանելի է <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf> հղումով:

<sup>1121</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցը, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://bit.ly/3BFW7rE>:

կրթության, զբաղվածության, սոցիալական ապահովության միջոցների, բուժական և վերականգնողական ծառայությունների և այլն) հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը խթանելուն՝ հաշվի առնելով անձի բոլոր հատուկ կարիքները: Կարևորելով նշված իրավակարգավորումը՝ այնուամենայնիվ, դեռևս դրա կիրարկման գործուն մեխանիզմներ ներդրված չեն:

Պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց սոցիալական ինտեգրման մարտահրավերներից է նաև նրանց բարձրագույն կրթություն ստանալու իրավունքի իրացման հետ կապված խնդիրները: Այս հարցն էլ ավելի զգայուն է դառնում նաև այն պատճառով, որ վիրավորում ստացած անձանց շարքում մեծ թիվ են կազմում 18 տարին լրացած և ժամկետային զինծառայության համար զինակոչված անձինք: Ստեղծված իրավիճակում դժվարություններ են առաջանում ոչ միայն բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆիզիկական և միջավայրային մատչելիության, այլ նաև մասնագիտական կողմնորոշման հետ կապված խնդիրների հետևանքով: Այս դեպքում խնդիրն այն է, որ մասնագիտական կողմնորոշման հարցում վճռորոշ է լինում կոնկրետ բարձրագույն ուսումնական հաստատությունում կոնկրետ ֆակուլտետում սովորելու համար սահմանված վճարի չափը, քանի որ սոցիալական խնդիրներով պայմանավորված ոչ բոլորն են կարողանում իրացնել իրենց կրթության իրավունքը: Թեև ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունած որոշմամբ հաստատված միջոցառումը նախատեսում է ուսման վարձի փոխհատուցումը այն սովորողներին, որոնք 2020-2021 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դրությամբ ընդգրկված են ուսումնական հաստատությունների ուսանողական համակազմում կամ սահմանված կարգով դադարեցրել են ուսումնառությունը պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու կապակցությամբ՝ ներառյալ 2020 թվականի ամառային զորակոչը<sup>1122</sup>, այնուամենայնիվ, արձանագրվել են դեպքեր, երբ անձինք բախվել են խնդիրների այդ իրավունքն իրացնելիս՝ պայմանավորված փաստաթղթերի, լիարժեք իրազեկման կամ սահմանվածից ցածր ՄՈԳ ցուցանիշներով: Ուսման վարձի փոխհատուցումը շարունակական դարձնելու և այն որպես սովորողի հիմնական իրավունք ամրագրելու նպատակով փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներում, որոնք ուժի մեջ են մտել 2021 թվականի օգոստոսի 16-ին: «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 1-ին

<sup>1122</sup> Տե՛ս ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 2008-Լ որոշումը «2020 թվականի սեպտեմբերի 27-ից Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից սովորողների, ինչպես նաև պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց սովորող երեխաների և սովորող ամուսնու ուսման վարձի փոխհատուցման միջոցառումը հաստատելու մասին»: Հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152184> հղումով:

կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողների համար նախատեսված է առնվազն 30 տոկոս:

Պաշտպանի մշտադիտարկումները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների տրամադրած տեղեկությունների վերլուծությունը վկայում է, որ պատերազմի հետևանքով վիրավորում ստացած կամ հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են բախվել մի շարք խնդիրների՝ պայմանավորված վերականգնողական կամ կարիքահեն ծառայությունների ոչ մատչելի լինելու, իսկ որոշ դեպքերում՝ առհասարակ բացակայությամբ: Օրինակ, Պաշտպանի՝ Սյունիքի մարզ կատարած փաստահավաք այցերից մեկը ընթացքում պարզվել է, որ մարզում բնակվում են 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ադրբեջանական զինված ուժերի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով վիրավորում ստացած շուրջ 80 անձ, ովքեր վերականգնողական ծառայություններից սկզբնական փուլում օգտվել են Երևանում, սակայն մարզում նմանատիպ ծառայությունների կամ վերականգնողական հատուկ մասնագետների բացակայության պատճառով հետագայում հնարավոր չի եղել համայնքում կազմակերպել այդ ծառայությունների շարունակականությունը: Արդյունքում՝ նրանց մի մասը կամ հրաժարվել է ծառայություններ ստանալ Երևանում՝ տեղափոխման ծախսատարության պատճառով, իսկ մյուս էլ առհասարակ վերականգնողական ծառայություններ չեն ստացել կամ իրենց իրավունքներն իրացնելիս բախվել են տարաբնույթ խնդիրների:

Ըստ ոլորտային կազմակերպությունների և հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկությունների՝ հաշմանդամության կարգավիճակ ստացած և զինվորական ծառայության ընթացքում վնասվածքի, խեղման կամ հիվանդության պատճառով զորացրված անձինք չեն կարողանում օգտվել իրենց անհրաժեշտ մի շարք բաժանական օգնության և սպասարկման տեսակներից: Մասնավորապես պետպատվերի շրջանակներում փոխհատուցում նախատեսված չէ՝ առողջարանային բուժօգնության, պլաստիկ և վերականգնողական վիրահատությունների, ոսկրային դեֆեկտների վիրահատությունների, որոշ լաբորատոր հետազոտությունների, կոնքազդրային հոդերի պրոթեզավորման համար՝ պրոթեզի արժեքի մասով, էլիզարովի սարքով օստեոսինթեզի համար՝ սարքի արժեքի մասով, չարորակ նորագոյացությունների ժամանակակից քիմիոթերապևտիկ, դեղորայքային բուժօգնության, վիրուսային հեպատիտների C B էթիոտրոպ-հակավիրուսային բուժումների և մի շարք ստոմատոլոգիական ծառայությունների համար: Զինվորական հաշմանդամություն ունեցող անձինք բախվում են նաև խնդիրների՝ կապված բուժող բժշկի կողմից նշանակված՝ ՀՀ-ում չգրանցված դեղորայքի ձեռքբերման հետ:

Համակարգային բնույթի խնդիր է նաև այն, որ զինվորական ծառայության կամ հայրենիքի պաշտպանության ժամանակ վնասվածք, խեղում կամ հիվանդություն ձեռք բերած, սակայն հաշմանդամության կարգավիճակ չունեցող անձինք չեն օգտվում պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնությունից: Վիրավորում ստանալով զինծառայողները զորացրվում են, սակայն չունենալով հաշմանդամության կարգավիճակ, վերջիններիս բուժման հարցերը դուրս են մնում պետության հոգաձության

շրջանակից: Արդյունքում՝ արձանագրվել են դեպքեր, երբ վիրավորում ստացած զինծառայողները չեն կարողանում սեփական միջոցներով լուծել իրենց առողջական խնդիրները, ինչի հետևանքով դրանք էլ ավելի են խորանում կամ նոր առողջական խնդիրների պատճառ են դառնում:

*Վերոգրյալի հաշվառմամբ՝ անհրաժեշտ է՝*

1. մշակել և ներդնել պատերազմի հետևանքով վիրավորում ստացած անձանց համապարփակ կարիքների գնահատման միասնական համակարգ և չափորոշիչներ.

2. մշակել և ներդնել վերականգնողական և կարիքահեն ծառայությունների, ծրագրերի փաթեթ՝ երաշխավորելու, որ վիրավորում ստացած անձինք, ում նկատմամբ հաշմանդամության կարգավիճակ չի սահմանվել, կարողանան օգտվել իրենց կարիքներին համապատասխան ծառայություններից, այդ թվում՝ առողջապահական և վերականգնողական.

3. ընդլայնել վերականգնողական և կարիքահեն ծառայությունների շրջանակը՝ հատկապես Հայաստանի Հանրապետության մարզերում՝ դրանք դարձնելով մարչելի և հասանելի բոլորի համար:

## ԲԱԺԻՆ 17. ՏԱՐԵՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Բնակչության ծերացումն ու դրա հետևանքների հաղթահարումը մեծ մարտահրավեր է Հայաստանի համար և վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ ակտիվ աշխատանքներ չիրականացնելն այդ ուղղությամբ լրջագույն խնդիրների առաջ է կանգնեցնելու պետությանը տասնամյակներ անց:

2020 թվականի դրությամբ ՀՀ մշտական բնակչությունը կազմում է 2 959 700 մարդ: ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 498-Լ որոշման համաձայն՝ բնակչության ընդհանուր թվաքանակում 65 տարին լրացած մարդկանց թիվը կազմում է 365 000 մարդ կամ ընդհանուր բնակչության 12,3%-ը (եթե հաշվի առնենք 63 տարեկանից բարձր տարիք ունեցող անձանց թիվը, որը կազմում է 434 500, ապա տոկոսային հարաբերակցությունը կկազմի 14,7%):

ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած «Աղքատության պատկերը Հայաստանում 2009-2021 թվականներին» զեկույցի համաձայն՝ 2021 թվականի տարեսկզբի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թվաքանակի 15.1%-ը կազմել է աշխատունակ տարիքից բարձր՝ 63 և ավելի տարեկան բնակչությունը: Արդյունքում, ՀՀ 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել անաշխատունակ տարիքի 237 տարեց անձ: Բավական ցածր է տարեցների զբաղվածության ցուցանիշը, և ոչ միայն տարեցների. զբաղված բնակչության ընդհանուր թվաքանակում 55 տարեկանից բարձր տարիք ունեցող անձինք կազմում են ընդամենը 19%, իսկ 65 և ավելի տարիքի աշխատողների թիվը տարեցների ընդհանուր թվաքանակում հասնում է ընդամենը 11%-ի:

Պետության ստանձնած միջազգային պարտավորություններն ապահովելու համար պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ պայմաններ, որպեսզի նրանք իրենց զգան գնահատված ու հասարակությունից չմեկուսացած:

Անհրաժեշտ է ունենալ տարեցների կարիքներին արձագանքող, առողջ երկարակեցությունը խթանող առողջապահական համակարգ: Կարևոր է նաև տարեց անձանց հասարակություն ինտեգրելու, նրանց կարողությունները բացահայտելու ու փորձը գնահատելու ուղղությամբ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը:

Պետության քաղաքականությունը պետք է առաջնահերթ ուղված լինի տարեցների շրջանում սոցիալական պաշտպանության ապահովմանը, նրանց առողջության պահպանմանը, կյանքի որակի բարձրացմանը և այդպիսով արժանավայել ծերություն ունենալու համար անհրաժեշտ ու բավարար նախադրյալների ստեղծմանը:

### **1. Տարեցների իրավունքների պաշտպանությունը փուն-ինփերնափներում**

## **1.1 Տարեցների իրավունքների պաշտպանությունը տուն-ինտերնատներում կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմաններում**

2021 թվականի ընթացքում շարունակվել են արդիական մնալ կորոնավիրուսային (COVID19) համավարակի արդյունքում առաջացած մարտահրավերները: Տարեց անձինք շարունակում են խոցելի լինել նման իրավիճակներում, թե իրենց ֆիզիկական բարեկեցության տեսանկյունից, թե հոգեկան առողջության:

Հաշվի առնելով, որ տարեցները կորոնավիրուսային հիվանդության զարգացման բարձր ռիսկային խմբում են և այդ պատճառով առավել խոցելի են, համավարակի տարածումը կանխելու նպատակով 2021 թվականի ընթացքում շարունակել են իրականացվել մի շարք միջոցառումներ և կիրառվել սահմանափակումներ: Նման իրավիճում կրկին առավել մտահոգիչ է խնամք իրականացնող կազմակերպություններում բնակվող տարեցների իրավունքների պաշտպանության խնդիրը:

Ինչպես 2020 թվականի ընթացքում, այնպես էլ 2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը շարունակել է մշտադիտարկում իրականացնել խնամքի հաստատություններում բնակվող անձանց իրավունքների պաշտպանության վիճակի նկատմամբ: Իրականացվել է չհայտարարված այց «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ, ինչպես նաև կատարվել փաստաթղթային ուսումնասիրություն՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն և խնամքի հաստատություններ կատարված հարցադրումների ուսումնասիրության միջոցով: Ամենօրյա աշխատանքային ռեժիմով առկա է սերտ համագործակցություն հաստատության պատասխանատուների հետ՝ ապահովելու օպերատիվ արձագանք տարեցների բարձրացրած հարցերին կամ առաջացած խնդիրներին:

Ինչպես արձանագրվել է 2020 թվականի Պաշտպանի տարեկան հաղորդմամբ, 2021 թվականի ընթացքում ևս, ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների՝ խնամքի հաստատություններում ՀՀ առողջապահության նախարարի 2013 թվականի դեկտեմբերի 10-ի թիվ 3210-Ա հրամանի պահանջների համաձայն՝ ստեղծվել են վարակի հսկողության հանձնաժողով և տնօրենի կողմից վարակի հսկողության պատասխանատու է նշանակել բժշկական ծառայության պետը: Պատասխանատուի և հանձնաժողովի կողմից մշակվել է և տնօրենի հրամանով հաստատվել է վարակի հսկողության ծրագիր՝ ներառելով օպերատիվ պլանը, որտեղ ընդգրկվում են շահառուի ընդունելության, մեկուսացման, տեսակավորման, բուժանձնակազմի և շահառուի, ինչպես նաև շրջակա միջավայրի անվտանգության ապահովման միջոցառումները: Պատասխանատուն կազմակերպել և իրականացրել է դասընթացներ աշխատակիցների համար՝ անհատական պաշտպանության միջոցների կիրառման, ձեռքերի հիգիենայի, շնչառական էթիկայի, կորոնավիրուսային հիվանդության փոխանցման կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: Տեսանելի վայրերում տեղադրվել են իրազեկման և հիշեցման պաստառներ՝ պարբերաբար ձեռքերը լվանալու, շնչառական հիգիենայի կանոնների վերաբերյալ: Ըստ պարզաբանումների՝ իրականացվել է ամենօրյա ախտահանում օրը 2 անգամ, տրամադրվել են սպիրտ պարունակող նյութեր և դիմակներ: Իրականացվել է 2 անգամյա ջերմաչափում, զննում և

տվյալների գրանցում համապատասխան մատյաններում: Յուրաքանչյուր շահառու ունի անհատական ջերմաչափման թերթիկ, որտեղ նույնպես գրանցվում են արդյունքները:

Կորոնավիրուսային համավարակի կանխարգելման և տարածման դեմ պայքարի գործընթացում առանձնահատուկ նշանակություն ունի խնամքի հաստատություններում մեկուսարանների առկայությունը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների՝ 2021 թվականին տուն-ինտերնատի յուրաքանչյուր մասնաշենքում գործել է 1 մեկուսարան՝ կասկածելի դեպքերի համար:

Օրինակ՝ Նորքի տուն-ինտերնատում 2-րդ մասնաշենքի առաջին հարկի նոր վերանորոգված տարածքում նախատեսվել են մեկուսացման 10 սենյակներ: Բոլոր սենյակներն ավտոահանվել են, կահավորվել, ունեն առանձին սանհանգույցներ և ծառայում են նոր ընդունվող շահառուների մեկուսացման համար:

Տուն-ինտերնատում ամենօրյա ջերմաչափման տվյալներից ելնելով, ինչպես նաև համապատասխան բնորոշ որևէ այլ ավտանիշ հայտնաբերելու դեպքում՝ շահառուն մեկուսացվում է, կազմակերպվում թեստավորում և դրական արդյունքի դեպքում տեղափոխվում է համապատասխան բուժ. հաստատություն: Զուգահեռ իրականացվում է սիմպտոմատիկ բուժում, կոնտակտավորների հայտնաբերում և մեկուսացում:

Հաշվի առնելով, որ խնամքի հաստատության խնամյալները, պայմանավորված իրենց տարիքով և առողջական վիճակով, գտնվում են կորոնավիրուսային համավարակի ռիսկային խմբում, առանձնահատուկ նշանակություն ունի վերջիններիս պատվաստման գործընթացը: Նախարարության կողմից հայտնաձևված տվյալների համաձայն՝ Նորքի տուն-ինտերնատում 2021 թվականի ընթացքում կորոնավիրուսային վարակ (COVID-19) հայտնաբերվել է 7 շահառուի մոտ: Խնդրահարույց է նախարարության կողմից խնամքի այլ հաստատությունների վերաբերյալ տեղեկությունների չտրամադրումն այն պարագայում, երբ Պաշտպանը տեղեկություններ է պահանջել նախարարության ենթակայությամբ գործող խնամքի հաստատությունների վերաբերյալ:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների՝ Նորքի տուն-ինտերնատում բժիշկների կողմից շահառուների համար իրականացվել են իրազեկման աշխատանքներ՝ COVID-19 համավարակի դեմ պատվաստումների կարևորության և անհրաժեշտության վերաբերյալ: Հաստատությունում ընդհանուր պատվաստվել է 114 աշխատակից և 125 շահառու:

Միևնույն ժամանակ, նախարարությունից տեղեկացրել են, որ Նորքի տուն-ինտերնատում խնամք է ստանում 209 շահառու, որոնցից պատվաստված են միայն 125-ը: Նման իրավիճակում անհրաժեշտ է շարունակել պատվաստման անհրաժեշտության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացումը խնամքի հաստատությունում:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից այլ տուն-ինտերնատների շահառուների և աշխատակիցների պատվաստումների վերաբերյալ տվյալներ չեն ներկայացվել: Նշվածը խնդրահարույց է Պաշտպանի կողմից տարեցների իրավունքների պաշտպանության վիճակի նկատմամբ մշտադիտարկման իրականացման հնարավորության տեսանկյունից:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների՝ կորոնավիրուսային վարակի (COVID-19) կանխարգելման և տարածման դեմ պայքարի նպատակով չեն սահմանվել տուն-ինտերնատների ընդունման չափանիշներ և իրավական պահանջներ: Իսկ տուն-ինտերնատներում ախտահանիչ նյութերի, պաշտպանիչ միջոցների օգտագործումը և ախտահանման աշխատանքներն իրականացվել են պարետատնից ստացված հանձնարարականի հիման վրա:

Մինչդեռ, հարկ է արձանագրել, որ ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 11-ի N 1514-Ն որոշմամբ ՀՀ ամբողջ տարածքում սահմանվել է կարանտին, իսկ կարանտինի ընթացքում կիրառվող միջոցառումները և սահմանափակումները կիրառվում են «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով՝ այդ օրենքներով նախատեսված մարմինների կողմից:

Հարկ է արձանագրել, որ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Կարանտին սահմանելու մասին որոշման մեջ նշվում են անհրաժեշտ կանխարգելիչ, հակահամաճարակային և սահմանափակող միջոցառումների ցանկը, սահմանափակող միջոցառումների կիրառման կարգը, դրանց կիրառման ժամկետը, կազմակերպումն ու իրականացումն ապահովելու համար պատասխանատու մարմինները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Միևնույն ժամանակ, վերոնշյալ իրավական ակտերի ուսումնասիրության արդյունքում Պարետատան՝ որպես լիազոր մարմնի վերաբերյալ որևէ նշում առկա չէ: Արդյունքում, կարանտինի սահմանման դեպքում Պարետատան ցուցումներով առաջնորդվելը ենթադրում է այլ իրավական ռեժիմ, հետևաբար իրավունքների սահմանափակման այլ շրջանակ:

2020 թվականի ընթացքում կիրառվող մի շարք սահմանափակումներ 2021 թվականի ընթացքում փոփոխվել են: Այսպես, ըստ նախարարության տեղեկությունների, 2020 թվականի ընթացքում տուն-ինտերնատներն անցել էին փակ ռեժիմի՝ սահմանափակելով շահառուների մի շարք իրավունքներ, իսկ 2021 թվականի հունվարից փակ ռեժիմն ավարտվել է:

Նախարարության կողմից 2020 թվականին տրամադրվել են տեղեկություններ այն մասին, որ տուն-ինտերնատներում ամբողջովին սահմանափակվել է փոստային առաքանիների և ծանրոցների ստացումը: Մինչդեռ, նախարարությունից հայտնել են, որ տուն-ինտերնատում սահմանափակումները, այդ թվում՝ շահառուների հետ տեսակցությունները, 2021 թվականի ընթացքում խստացվել են և բացառվել է կողմնակի անձանց մուտքը հաստատություն, իսկ ծանրոցների և փոստային առաքանիների ընդունումն ամբողջովին սահմանափակվել է: Մինչդեռ, օրինակ՝ ծանրոցների և փոստային առաքանիների ընդունումն ամբողջովին սահմանափակված է եղել 2020 թվականից:

Նախարարությունից նման պարզաբանումների տրամադրումը փաստում է, որ նախարարության կողմից դրսևորվում է մեխանիկական մոտեցում, ինչն անթույլատրելի է:



Արտաքին աշխարհի հետ կապը, ըստ նախարարության պարզաբանումների, ապահովվել է բուժկետում տեղադրված հեռախոսի և Skype սենյակի միջոցով, որից օգտվելու հնարավորություն տրամադրվել է յուրաքանչյուր շահառուի:

Նման պայմաններում սահմանափակվել է տարեց անձանց՝ արտաքին աշխարհի հետ կապը, մշակութային կյանքին մասնակցության և զբաղվածության ապահովման իրավունքերը: Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ տարեցների համար առանձնահատուկ նշանակություն ունի հարազատների հետ շփվելու և հասարակությունում ինտեգրվելու հնարավորությունը: Մասնավորապես, կարևոր է այդ իրավունքների ապահովումը խնամքի հաստատություններում բնակվող շահառուների համար, քանի որ վերջիններս, բնակվելով նման հաստատությունում, կարող են բախվել հասարակությունից և հարազատներից մեկուսացման խնդրին, ինչը բացասական ազդեցություն կունենա վերջիններիս առողջության վրա:

Հարկ է նշել, որ չնայած, որ ապահովվել են արտաքին աշխարհի հետ կապի այլընտրանքային եղանակներ, օրինակ՝ հեռախոսազանգի հնարավորություն, տարեցների հետ կատարված առանձնագրույցները վկայում են, որ վերջիններս ունեն հարազատներին տեսակցելու և հասարակական միջոցառումների մասնակցելու կարիք:

Օրինակ՝ «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի խնամյալները Պաշտպանին բանավոր բողոք են ներկայացրել այն մասին, որ նախկինում մասնակցել են տարբեր միջոցառումների, իսկ ներկայում, պայմանավորված կորոնավիրուսային համավարակով, որևէ զբաղվածություն չունեն, բացակայում է ժամանցը: Որոշ խնամյալների սենյակներ հեռուստացույցներով ապահովված չեն, ինչն առավել խնդրահարույց է, երբ սահմանափակվում է հաստատության հեռուստացույցներով առկա համընդհանուր օգտագործման սրահների կամ սենյակների օգտագործումը:

Իսկ Նորքի տուն-ինտերնատում 2021 թվականի ընթացքում Տարեցների օրվա կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում, որին մասնակցել են նաև Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևորում է տուն-ինտերնատներում արձանագրված խնդիրների վերացման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախաձեռնած քայլերը, մինչդեռ հարկ է նշել, որ անհրաժեշտ է շարունակել տարեցների իրավունքների պաշտպանությունը պահել ուշադրության կենտրոնում և շարունակաբար միջոցներ ձեռնարկել արձանագրված խնդիրների լուծմանը նպաստելու ուղղությամբ: Առանձնահատուկ կարևորություն ունի նաև կիրառվող միջոցների, այդ թվում՝ սահմանափակումների հիմնավորվածությունն ու համաչափությունը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. իրավիճակին համահունչ շարունակաբար վերանայել խնամքի հաստատությունների խնամյալների արտաքին աշխարհի հետ կապն ապահովելու և հասարակությունում ներգրավվելու հնարավորությունների սահմանափակումները,*
- 2. կազմակերպել խնամքի հաստատությունների խնամյալների զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումներ:*

## 1.2 **Տարեցների բնակության պայմանները փուն-ինտերնատներում**

«Նարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներով բարձրացրել է տուն-ինտերնատներում տարեցների բնակության պայմանների վերաբերյալ մի շարք հարցեր: 2018 և 2019 թվականների տարեկան հաղորդումներով Պաշտպանն արձանագրել է շենքային և ենթակառուցվածքների բավարար պայմաններ չունենալու՝ ֆիզիկական մատչելիության, վերանորոգված չլինելու, պատշաճ չջեռուցվելու, տաք ջրի բացակայության, լոգարանների և սանհանգույցների սանիտարահիգիենիկ անբավարար պայմանների խնդիրներ<sup>1123</sup>»:

Մինչդեռ ներպետական և միջազգային օրենսդրությամբ սահմանված է, որ տուն-ինտերնատները պետք է բավարարեն այնտեղ բնակվող տարեցների կարիքներին ու բարեկեցությանը թե՛ ֆիզիկական, թե՛ հոգեբանական տեսանկյունից:

2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատակազմի «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում կատարած մշտադիտարկման այցի շրջանակներում կրկին արձանագրվել է Պաշտպանի կողմից բարձրացված, սակայն լուծում չստացած խնդիրների առկայությունը: Այսպես, այցի պահին արձանագրվել է, որ հաստատության հիմնական մասնաշենքն ունի հիմնանորոգման, ջրատար խողովակների փոփոխման, հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցման անհրաժեշտություն: Հաստատության ոչ բարվոք պայմանների և ջրատար խողովակների հնամաշության պատճառով սենյակների սանհանգույցներում առկա է ջրի արտահոսք և օդի բարձր խոնավություն, ինչի վերաբերյալ խնամյալները հայտնել են իրենց դժգոհությունը: Ջրի արտահոսքի և օդի խոնավության խնդիրն առավել մտահոգիչ է ձմռանը՝ օդի ցածր ջերմաստիճանի առկայության պայմաններում:

«Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ կատարած այցի ընթացքում արձանագրվել են լոգանքի հետ կապված խնդիրներ: Մասնավորապես՝ արձանագրվել է, որ հիմնականում տուն-ինտերնատի միայն նոր վերանորոգված սենյակներն են ապահովված մշտական տաք և սառը ջրով: Նման իրավիճակում առաջանում է խտրական վերաբերմունք խնամյալներին անհրաժեշտ պայմանների տրամադրման հարցում:

Խնդրահարույց է նաև հաստատության շենքային պայմանների՝ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին հարմարեցվածության հարցը: Հաշմանդամություն և (կամ) հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար հարմարեցված է միայն Հաստատության անկողնային մասնաշենքը. մուտքերն ապահովված են թեքահարթակներով, մասնաշենքում առկա են թեքահարթակներ և վերելակ: Մինչդեռ, հիմնական մասնաշենքում թեքահարթակները բացակայում են, որը խնդրահարույց է հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց

<sup>1123</sup>Հասանելի <https://bit.ly/3LTCS2a>, <https://bit.ly/3JOvjlf> հղումներով:

տեղաշարժման համար և առաջացնում է ֆիզիկական միջավայրի մատչելիության խնդիր: Հաստատությունում շահագործվում է միայն մեկ վերալակ՝ այն էլ սննդի մատուցման կազմակերպման համար:

Հարկ է արձանագրել, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Երևանի N 1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում 2021 թվականին կատարված աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ չեն տրամադրվել:

Նախարարությունը տեղեկություններ է տրամադրել միայն «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում կատարված աշխատանքների վերաբերյալ: Այսպես, 2021 թվականի ընթացքում ավարտվել են կաթսայատան տանիքի և 2-րդ մասնաշենքի 2-րդ հարկի նախասրահի վերանորոգման աշխատանքները: Շենքային պայմանները բարելավելու նպատակով իրականացվել են 3-րդ մասնաշենքի առաջին հարկի վերանորոգման աշխատանքներ: Այնտեղ տեղակայված են բուժկետը, ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաների սենյակը և անկողնային հիվանդների սենյակները, որոնք ապահովվել են նաև մշտական տաք ջրով: Սակայն շատ կարևոր է օդափոխության համակարգի տեղադրման հարցի լուծումը, որի աշխատանքները մասնակի իրականացվել են, նախատեսվում է աշխատանքներն ավարտել 2022 թվականին: Մասնակի վերանորոգվել և տաք ջրով ապահովվել են խոհանոցը, ճաշարանը, լոգարանները, սանհանգույցները: «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի շենքերի մուտքերը և շենքերում տեղաշարժվելու համար այլ վայրերն ապահովված են թեքահարթակներով, իսկ հարկից-հարկ տեղաշարժվելու համար բոլոր մասնաշենքերն ապահովված են վերելակներով, որոնցից՝ «Բ» մասնաշենքի երկու վերելակները վերանորոգվել են 2021 թվականի ընթացքում:

Տուն-ինտերնատներում բնակվող տարեցների նորմալ կենսագործունեության համար շատ կարևոր է անհրաժեշտ և բավարար սննդի տրամադրումը:

ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի N 730-Ն որոշման 2-րդ հավելվածով սահմանվում են ծերերի և հաշմանդամների ընդհանուր տիպի տուն-ինտերնատներում խնամվողներին հատկացվող սննդամթերքի չափաքանակները, որտեղ ներառված են նաև շաքարավազ, օրական 60 գրամի չափաբաժնով, կաթ կամ կաթի փոշի, մածուն, թթվասեր, կաթնաշոռ, ձու և այլ մթերքներ:

Խնամյալներին հատկացվող սննդամթերքի և այլ անհրաժեշտ պարագաների ձեռքբերումն իրականացվում է գնումների գործընթացը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ խնամյալների հասանելիք սնունդը (օրինակ՝ կաթնամթերք, շաքարավազ, հավկիթ և այլն), պարագաները, ինչպես նաև ծխախոտը՝ գնման գործընթացի խափանման դեպքում մշտական ապահովելու նպատակով կատարվում է հրատապ գնում՝ օրենքով սահմանված կարգով:

2021 թվականին «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի խնամյալների կողմից Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել այն մասին, որ հաստատության կողմից որոշակի ժամանակահատված ճաշացանկում չի ընդգրկվել և խնամյալներին չի տրամադրվել կաթնամթերք, հավկիթ և շաքարավազ: Հաստատության ներկայացուցիչը խնդիրը պարզաբանել է գնումների գործընթացի

խափանամբ: Նման խնդիրներ առաջանում են պետական գնումների մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների կողմից մատակարարման հնարավորություն չունենալու դեպքում: Արդյունքում, տվյալ մատակարարի հետ առկա է լինում գնման պայմանագիր, մինչդեռ տարբեր հանգամանքների պատճառով մատակարարման գործընթացը չի իրականացվում կամ ուշացվում է: Նման պարագայում, խնամյալները զրկվում են իրենց անհրաժեշտ սնունդ ընդունելու հնարավորությունից: 2021 թվականի ընթացքում Պաշտպանին բողոք է հասցեագրվել «Երևանի N1 տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի սննդի վերաբերյալ, մինչդեռ այլ խնամքի հաստատությունների խնամյալներից նման բողոք չի արձանագրվել:

Այսպիսով, խնդրահարույց է գնումների գործընթացի ոչ պատշաճ կազմակերպման պատճառով խնամվողներին անհրաժեշտ և սահմանված սննդամթերքի չտրամադրումը:

Անհրաժեշտ է մեխանիզմներ ձեռնարկել ոչ պատշաճ վարչարարության իրականացման հետևանքով խնամյալների իրավունքների խախտումների բացառման ուղղությամբ:

Հարկ է նշել նաև խնամքի հաստատություններում ճաշացանկի կազմմանը խնամյալների կարծիքը հաշվի չառնելու խնդիրը: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ տուն-ինտերնատներում ճաշացանկը կազմելիս հնարավորինս ներգրավվում են խնամյալները: Մինչդեռ, խնամյալների հետ ունեցած առանձնագրույցների ընթացքում վերջիններս հայտնել են, որ ճաշացանկը կազմելիս հազվադեպ են իրենց կարծիքը կամ ցանկությունը հաշվի առնում:

Խնամյալների կողմից բողոքներ են արձանագրվել նաև տրամադրվող սննդի միատեսակության վերաբերյալ, ինչը հաստատվել է նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից ճաշացանկերի ուսումնասիրության արդյունքում: Ավելին, ըստ խնամյալների, տրամադրվող սնունդը երբեմն լինում է չափից շատ չոր և ատամնաշարի խնդիրներ ունեցող անձինք չեն կարողանում դրանք ուտել: Բարձրացվել է նաև տհաճ հոտ և համ ունեցող սնունդի տրամադրման հարցը, որի պայմաններում խնամյալները նախընտրում են հրաժարվել սննդից:

Նշվածը ոչ միայն խախտում է օրենսդրությամբ նախատեսված չափանիշները, այլ նաև խնամյալների արժանապատիվ կյանքի իրավունքը: Հետևաբար պետք է ապահովել պատշաճ որակի սնունդ, ինչպես նաև ճաշացանկը կազմելիս հաշվի առնել խնամյալների կարիքները և առողջական խնդիրները:

Սննդի տրամադրման գործընթացում խնդրահարույց է տրամադրվող սննդի նմուշառման բացակայությունը: Պաշտպանի աշխատակազմի կատարած այցի ընթացքում արձանագրվել է, որ սննդի նմուշներ առկա չեն, ինչն անհնար է դարձնում տրամադրվող սննդի նկատմամբ վերահսկողությունը:

Հարկ է անդրադառնալ Պաշտպանի ուշադրության կենտրոնում գտնվող մեկ այլ խնդրի՝ խնամքի հաստատություններում բռնության դեպքերի հայտնաբերման և կանխարգելման կարևորությանը: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների՝ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ում 2021 թվականի ընթացքում շահառուների վնասվածքների դեպքեր չեն գրանցվել: Մինչդեռ, 2021 թվականի ընթացքում, առկա սահմանափակումների հետևանքով բռնության հայտնաբերման և կանխարգելման հարցը դարձել է

առավել կարևոր, մասնավորապես՝ սոցիալական խնամքի հաստատություններում բնակվող անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից: 2021 թվականի ընթացքում տարեցների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունից Պաշտպանի աշխատակազմ է փոխանցվել տուն-ինտերնատի խնամյալի խնդիրը: Մասնավորապես, տուն-ինտերնատի աշխատակցի կողմից ոտնահարվել են խնամյալի շահերը, ազգականների կողմից խնամյալին փոխանցվող դրամական աջակցությունը պարբերաբար տնօրինել է աշխատակիցը ոչ ի շահ խնամյալի, կամ համապատասխան ծառայության համար խնամյալից պահանջել է գումար: Պաշտպանի աշխատակազմի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և Պաշտպանի աջակցությամբ խնդիրը կարգավորվել է:

Գովելի է, որ 2021 թվականին ընդունվել է ՀՀ ԱՍՀ նախարարի 171 Ա-1 հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող շահառուների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման, համապատասխան մարմիններին իրազեկման և բռնության ենթարկված անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացման կարգը, համապատասխան գրանցամատյանի, հաշվետվության և սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի ձևերը հաստատելու մասին» վերտառությամբ: Մինչդեռ, նույնքան կարևոր է ընդունված կարգի պահպանման նկատմամբ համապատասխան վերահսկողության իրականացումը:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. Ապահովել խնամքի հաստատություններում պատշաճ սննդի տրամադրումը և սննդի նմուշառումը,*
- 2. իրականացնել բռնության դեպքերի գրանցման մատյանների նկատմամբ վերահսկողություն:*

## **2. 2021 թվականին լուծում չստացած օրենսդրական խնդիրներ տարեցների խնամք իրականացնող հաստատություններ տեղավորվելու և այլ հարցերի հետ կապված**

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սոցիալական ծառայությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացվող միջոցառումներ են՝ ուղղված անձի (ընտանիքի կամ սոցիալական այլ խմբի) սոցիալ-տնտեսական կարիքների բավարարմանը, բնականոն կենսագործունեության ապահովմանը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելմանը, իսկ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձին այդ վիճակից դուրս բերելուն:

Սոցիալական տարբեր հաստատությունների կողմից սոցիալական ծառայություններ են մատուցվում հասարակության տարեց և (կամ) սոցիալապես անապահով անձանց:

Սոցիալական ծառայությունները ներառում են շուրջօրյա խնամքի ծառայությունները, որոնք մատուցում են բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա ընդհանուր տիպի և հատուկ (մասնագիտացված) հաստատությունները (տուն-ինտերնատները): Անկախ այն հանգամանքից, որ սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված որոշ խնդիրների լուծման կապակցությամբ 2021 թվականի ընթացքում կատարվել են օրենսդրական նախաձեռնություններ, այդ խնդիրները դեռևս շարունակում են մնալ արդիական:

Խոսքը, մասնավորապես, ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի «Երեխաների, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման կարգը և պայմանները սահմանելու, տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1112-Ն որոշման մասին է: Որոշման թիվ 3 հավելվածի ցանկում ընդգրկված հիվանդություններն են՝ հոգեկան խանգարումները՝ բացառությամբ բնակչության սոցիալական պաշտպանության հատուկ (մասնագիտացված) հաստատություն ընդունվելու դեպքերի, քրոնիկ ալկոհոլամոլությունը կամ թմրամոլությունը, մաշկային վարակիչ հիվանդությունները, սեռավարակները, օնկոլոգիական հիվանդությունները՝ դեկոմպենսացիայի շրջանում՝ բացառությամբ հոսպիսային օգնության տրամադրման դեպքերի, շրջապատի համար վտանգ ներկայացնող վարակիչ հիվանդությունները, մանրէազատ տուբերկուլյոզը: Կառավարության մեկ այլ՝ 2001 թվականի դեկտեմբերի 27-ի «Շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1286-Ն որոշմամբ էլ հաստատված է շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկը: Ցանկում ընդգրկված են նաև ՄԻԱՎ վարակը և տուբերկուլյոզը (բոլոր ձևերը):

Նման իրավակարգավորման պայմաններում միայնակ տարեց անձինք տարիներ շարունակ զրկված են շուրջօրյա խնամքի հաստատությունում խնամք ստանալու հնարավորությունից:

Պաշտպանը դեռևս 2019 թվականից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն առաջարկում է վերանայել 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշմամբ սահմանված՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրումը մերժելու հիմք հանդիսացող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քննարկել վերը նշված հիվանդություններն ունեցող անձանց խնամքը կազմակերպելու նպատակով այլընտրանքային խնամքի հաստատություններ և (կամ) ներկայիս խնամքի հաստատություններում հատուկ տարածքներ առանձնացնելու հնարավորությունը՝ հաշվի առնելով նման կարգավիճակ ունեցող անձանց կարիքներն ու հասարակության մեջ ինտեգրվելու անհրաժեշտությունը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 2021 թվականին «Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1069-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը ներկայացվել է Պաշտպանի կարծիքին: Նախագծում ամրագրված իրավակարգավորումներով խնդրին լուծում է լրվել. սահմանվել է օթևանների ուղղվածություն՝ տուբերկուլոզ և (կամ) սեռավարակներ (այդ թվում՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ) ունեցող և հոգեկան առողջության խնդիրներ (ծերունական թուլամտություն, դեմենցիա, փսիխոզ, հոգեկան առողջության և (կամ) մտավոր խնդիրներ) ունեցող անօթևան

անձանց կացարանով և անհրաժեշտ մասնագիտացված բժշկական և սոցիալ-հոգեբանական ծառայություններով ապահովելու համար:

Ողջունելի է նման օրենսդրական նախաձեռնությունը, սակայն հարկ է արձանագրել, որ վերոնշյալ օրենսդրական նախագիծը դեռևս գտնվում է լրամշակման փուլում, ինչը խնդրահարույց է անօթևան տարեց անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից: 2021 թվականի ընթացքում ևս Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել այն տարեց անձանցից, ովքեր մնացել են անօթևան և չունեն որևէ հաստատությունում սոցիալական ծառայություններ ստանալու հնարավորություն՝ պայմանավորված իրենց հիվանդությամբ:

Հետևաբար անհրաժեշտ է հրատապ միջոցներ ձեռնարկել նախագծի ընդունման ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, խնդրահարույց է նախագծով կացարանի շահառուների նման սահմանափակ շրջանակի նախատեսումն այն դեպքում, երբ շուրջօրյա խնամքի հաստատությունում խնամք ստանալու և կացարանում ժամանակավորապես բնակվելու հնարավորություններից զրկված են նաև քրոնիկ ալկոհոլամոլություն կամ թմրամոլություն ունեցող անձինք: Նման կարգավորումների առկայության դեպքում խնամքի կարիք ունեցող անձանց նկատմամբ շարունակում է ցուցաբերվել տարբերակված մոտեցում:

Պրակտիկայում, անգամ խնդիրներ են առաջացել «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից լավացումով դուրսգրման դեպքում անձին խնամքի հաստատությունում տեղավորելու կապակցությամբ: Արդյունքում, անձը «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ում հաշվառված լինելու պատճառով մնացել է անօթևան: Չնայած, որ նախարարության կողմից քաղաքացուն առաջարկվել է բնակություն հաստատել «Տուն ժայռի վրա» հասարակական կազմակերպության կացարանում, քաղաքացին հրաժարվել է՝ պայմանավորված առկա առողջական խնդիրներով և շարունակել է մնալ անօթևան: Գովելի է հասարակական կազմակերպության կողմից նման ծառայությունների մատուցումը, մինչդեռ շարունակում է խնդրահարույց մնալ ալկոհոլամոլություն և թունամոլություն ունեցող անձանց պետության կողմից սոցիալական ապահովության և անհրաժեշտ սոցիալական ծառայությունների բացակայությունը:

Հարկ է անդրադառնալ նաև բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում խնամք ստացող անձանց զբաղվածության խնդրին: Բավական ցածր է տարեցների զբաղվածության ցուցանիշը, և ոչ միայն տարեցների. զբաղված բնակչության ընդհանուր թվաքանակում 55+ անձինք կազմում են ընդամենը 19%, իսկ 65+ տարիքի աշխատողների թիվը տարեցների ընդհանուր թվաքանակում հասնում է ընդամենը 11 %-ի:

Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշման համաձայն՝ բնակչության սոցիալական պաշտպանության ընդհանուր տիպի հաստատություններում խնամքը տրամադրվում է դրա կարիքն ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց, միայնակ, չաշխատող կենսաթոշակառուներին: Այս պարագայում տարեց, միայնակ կենսաթոշակառուներն, ովքեր ունեն որոշակի զբաղվածություն, զրկվում են խնամք ստանալու հնարավորությունից: Արդյունքում, տարեց և միայնակ անձինք, անօթևան չմնալու և խնամք ստանալու նպատակով, հարկադրված հրաժարվում են որոշակի եկամուտ ունենալու հնարավորությունից:

Նշված իրավիճակը ևս խթանում է տարեց անձանց մոտ գործազրկության և աղքատության մակարդակի բարձրացմանը: Ըստ Ջբաղվածության պետական գործակալության տվյալների՝ 2021թ.-ի փետրվարի 1-ի դրությամբ զբաղվածության տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրողների թիվը կազմել է 88,9 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.0 %-ով: Իսկ գործազուրկների թվաքանակում 55-ից բարձր տարիքի անձինք կազմում են 19.0%:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն իր 2019 և 2020 թվականների տարեկան հաղորդումներով բարձրացրել է տարեցների զբաղվածության ապահովման հարցը և առաջարկել ընդունել օրենսդրական փոփոխություններ նախատեսող իրավական ակտ՝ խնամք ստացող անձանց տրամադրելով աշխատանքի և զբաղվածության իրավունքի իրացման հնարավորություն: 2019 թվականին քննարկվել է ՀՀ կառավարության որոշակի բնակչության վայր չունեցող աշխատող տարեցներին և հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց իրենց վարձակալած բնակելի տարածության դիմաց դրամական փոխհատուցում հատկացնելու, դրամական փոխհատուցման չափը սահմանելու և հատկացման կարգը հաստատելու մասին որոշման նախագիծը, որը մինչ օրս շարունակում է գտնվել լրամշակման փուլում: 2021 թվականի ընթացքում կառավարության որոշմամբ նախատեսված տարեց անձանց աշխատելը արգելող դրույթների փոփոխություններ չեն նախաձեռնվել և իրականացվել:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից դեռևս 2018 թվականից բարձրացվել է «Տարեց» եզրույթի հետ կապված իրավական անորոշության առկայության հարցը, որը պայմանավորված է օրենսդրական կարգավորումներով: Այսպես, «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքում շարունակում է «տարեց» անձ եզրույթը մեկնաբանվել որպես 65 տարին լրացած անձ: Մինչդեռ, շարունակում է նաև կենսաթոշակի սահմանման իրավունքի տրամադրումը 63 տարեկան անձանց՝ պայմանավորված նրանց աշխատանքային ստաժով: Արդյունքում, այն անձինք, ովքեր 63 տարեկանից համարվում են կենսաթոշակառու և ստանում են աշխատանքային տարիքային կենսաթոշակ, դուրս են մնում օրենքով նախատեսված խնամքի և սոցիալական աջակցության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակից, քանի որ դրանք տրամադրվում են տարեց, այսինքն՝ 65 տարին լրացած անձանց:

2021 թվականին ապրիլի 8-ի ընունվել է ՀՀ կառավարության N 498-Լ որոշումը, որով հաստատվել է տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը: Քանի որ վերոնշյալ իրավական ակտն ընդունվել է ղեկավարվելով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ նախատեսված խնամքի ծառայություններից կարող են օգտվել միայն տարեց, այսինքն՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 65 տարին լրացած անձինք: Արդյունքում, Կառավարության որոշմամբ սահմանված խնամքի ծառայություններից զրկվում են կենսաթոշակի տարիքի հասած (63 տարին լրացած) անձինք:



Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում (ՀՀԶՌԾ) ՀՀ-ում բնակչության ծերացման հետևանքների հաղթահարումը և տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրները սահմանվել են որպես պետության սոցիալական քաղաքականության գերակա ուղղություններից: Սոցիալական պաշտպանությունն ունի աղքատությունը մեղմելու և կրճատելու նպատակ, մինչդեռ ինչպես նշվեց, ներկայում աղքատության մակարդակը տարեցների շրջանում խիստ մտահոգիչ է: Առավել խնդրահարույց է միայնակ տարեցների սոցիալական պաշտպանության և կարիքահեն սոցիալական ծառայությունների մատուցման խնդիրը: Ներկայում, տարեցների սոցիալական պաշտպանությունը նույնացվում է նրանց մատուցվող խնամքի և սոցիալական այլ ծառայությունների հետ, մինչդեռ սոցիալական ծառայությունների գործող համակարգը չի կարող ամբողջովին հոգալ տարեցների հոգեբանական, իրավական, առողջական, բնակարանային կարիքները:

ՀՀ-ում յուրաքանչյուր տարեց մարդու համար արժանապատիվ կյանքի պայմանների ստեղծումը պետության պարտավորությունն է: Մարդու համար արժանապատիվ կյանքի ապահովման խնդիրն ամրագրված է ոչ միայն ներպետական իրավական ակտերում, այլ նաև միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Վերանայված Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայում:

Սոցիալական խարտիայի 23-րդ հոդվածի համաձայն՝ անդամ պետությունները պարտավորվում են ապահովել, որպեսզի տարեց անձինք հնարավորինս երկար մնան որպես հասարակության լիարժեք անդամներ, ազատորեն ընտրեն իրենց ապրելակերպը, ունենան ազատ կյանք իրենց նախընտրած միջավայրում՝ ինչպես նրանք ցանկանում են և կարող են, երաշխավորելու տարեցների համար նախատեսված հաստատություններում համապատասխան աջակցություն՝ հարգելով նրանց ազատությունն ու մասնակցությունը հաստատություններում նրանց կենսապայմանների վերաբերյալ որոշումների ընդունմանը:

Չնայած, որ Հայաստանը 1996թ. Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիան վավերացրել է 2004 թվականին, խարտիայի 23-րդ հոդվածը դեռևս չի վավերացրել և չի ստանձնել տարեց անձանց սոցիալական ապահովությանն առնչվող պարտավորությունները:

2021 թվականի ապրիլի 8-ին ընդունված ՀՀ կառավարության N 498-Լ որոշման N 2 հավելվածի համաձայն՝ Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածի վավերացման ուղղությամբ աշխատանքների իրականացումը նախատեսվում է կատարվել 2023 թվականին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պարզաբանումներ են ներկայացվել այն մասին, որ Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածի վավերացման ուղղությամբ 2021 թվականի աշնանը կատարվել են միայն նախապատրաստական աշխատանքներ՝ տուն-ինտերնատներում տարեցների կարիքներին ուղղված հարցումների տեսքով: Հաշվի առնելով 23-րդ հոդվածի վավերացման կարևորությունը՝ հարկ է ընդգծել կարիքների գնահատման

արդյունավետ միջոցների և դրանց ներդրման հստակ ժամկետների սահմանման անհրաժեշտությունը:

«-ում սոցիալ-տնտեսական կարևորագույն երաշխիքներից են պետության կողմից տրամադրվող կենսաթոշակներն ու նպաստները:

Պաշտպանին հասցեագրվող բողոքները և մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ տարեցները Հայաստանում բախվում են նվազագույն կենսապահովման պայմանների և սոցիալական ապահովության խնդիրների: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մշտապես բարձրացրել է պետության կողմից տարեցներին տրամադրվող կենսաթոշակի և նպաստի չափերի հարցը, որն անմիջականորեն կապված է տարեցների արժանապատիվ գոյության իրավունքի հետ: Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միլատովիչի՝ 2018թ. սեպտեմբերի 16-20 Հայաստան կատարած այցին հաջորդիվ հրապարակած զեկույցում հայտնել է, որ Հայաստանում տարեցների սոցիալական պաշտպանության ներկա մակարդակը հիմնականում անբավարար է: Հաշվի առնելով, որ աղքատության դեմ որոշիչ գործողությունների ձեռնարկումը անմիջական և դրական ազդեցություն կունենա Հայաստանում տարեցների բարեկեցության և արժանապատվության վրա՝ հանձնակատարը առաջարկել է նաև, որ իշխանությունները հաշվի առնեն ծերության թոշակի ընդհանուր մակարդակի բարձրացումը<sup>1124</sup>:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին շարունակվել են հասցեագրվել կենսաթոշակի և նպաստի ցածր չափի վերաբերյալ բողոքներ: Ըստ բողոք ներկայացրած տարեց անձանց՝ սոցիալական ապահովության միջոցները չեն ապահովում անգամ նվազագույն գոյամիջոցները և բացասական ազդեցություն են թողնում իրենց կյանքի որակի և արժանապատիվ ծերություն անցկացնելու վրա:

Հարկ է նշել, որ սոցիալական նպաստների և կենսաթոշակների չափի ավելացման տեսանկյունից 2021 թվականին սոցիալական ապահովության միջոցների չափերի փոփոխություն չի եղել:

«Կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 2043-Ն որոշմամբ փոփոխվել են որոշակի սոցիալական ապահովության միջոցների չափեր (օրինակ՝ նվազագույն կենսաթոշակի չափը սահմանվել է 28600 դրամ, նախկին՝ 26500 դրամի փոխարեն, ծերության նպաստի չափը սահմանվել է 28600 դրամ և այլն): Նշված փոփոխությունները ուժ են ստանում և սոցիալական ապահովության միջոցները վճարվելու են նոր չափերով 2022 թվականի հունվարի 1-ից:

Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է, որ սոցիալական ապահովության միջոցների չափերը պետք է համարժեք լինեն տարեցների կարիքներին և ապահովեն արժանապատիվ գոյություն:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

1. *Ընդունել նախարարության կողմից առաջարկված կառավարության որոշման նախագիծը և ապահովել դրա կատարումը,*

<sup>1124</sup> Հասանելի է <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149> հղումով:

2. վերանայել օրենսդրությամբ նախատեսված «տարեց» համարվող անձանց տարիքային սահմանը,

3. սեղմ ժամկետներում ընդունել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 1112-Ն որոշման մեջ փոփոխություններ նախատեսող, աշխատելու հնարավորությունը սահմանափակող դրույթ չպարունակող իրավական ակտ,

4. շարունակաբար բարձրացնել կենսաթոշակների և տարեցներին վճարվող նպաստների չափերը՝ ապահովելու տարեցի արժանապատիվ գոյության իրավունքը,

5. շարունակաբար միջոցներ ձեռնարկել Եվրոպական սոցիալական (վերանայված) խարտիայի՝ տարեց անձանց իրավունքների սոցիալական պաշտպանության մասին 23-րդ հոդվածի՝ մինչ 2023 թվականը վավերացման համար:

### **3. Տարեցներին տրամադրվող ծառայությունների վիճակը**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում են շարունակում մնալ սոցիալական ծառայությունների տրամադրման վերաբերյալ հարցերը: Սոցիալական ծառայությունների տրամադրումը կազմում է պետության սոցիալական քաղաքականության որոշակի մասը: Մինչդեռ ներկայում շատ տարեցներ բախվում են սոցիալական ծառայությունների բացակայության, անբավարարության կամ դժվարամատչելիության խնդիրներին: Այդ իսկ պատճառով, Հայաստանի Հանրապետությունում տարեցների իրավունքների արդյունավետ պաշտպանության համար անհրաժեշտ է մատչելի իրավական և սոցիալ-տնտեսական երաշխիքների հստակ իրավական ամրագրում:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետության կողմից տրամադրվող հիմնական սոցիալական ծառայություններն են՝ խորհրդատվական օգնությունը, վերականգնողական օգնությունը, բնափրային օգնությունը, կացարանով ապահովելը, խնամքը և այլն: ՀՀ օրենսդրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական ծառայություններ է տրամադրում տարածքային մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությամբ գործող կազմակերպությունների միջոցով:

2021 թվականին, կորոնավիրուսային համավարակով պայմանավորված, ավելի են խորացել տարեցների սոցիալական խնդիրները, որի պայմաններում առավել կարևոր և անհրաժեշտ են դարձել պետության կողմից տրամադրվող սոցիալական ծառայությունները:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների համաձայն՝ Կորոնավիրուսի համաճարակով պայմանավորված՝ որոշ սոցիալական ծառայություններ վերապրոֆիլավորվել են և իրենց նպատակային ուղղվածությամբ չեն գործել, շեշտը դրվել է առաջին անհրաժեշտության և բնամթերային օգնության տրամադրման և կորոնավիրուսի կանխարգելման հակաճգնաժամային միջոցառումների իրականացման վրա:

Մինչդեռ, համավարակի առկայության պայմաններում, տարեցները, գտնվելով վարակի ռիսկային խմբում, խուսափում են տանից դուրս գալուց, որի պայմաններում ավելի են մեկուսացվում հասարակությունից և ունենում սոցիալական ծառայությունների տրամադրման անհրաժեշտություն:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների՝ ինչպես տնային պայմաններում, այնպես էլ սոցիալական հոգաձության ցերեկային կենտրոններում, պահպանելով համավարակի կանխարգելման և անվտանգության կանոնները, նրանց տրամադրվել է անհրաժեշտ աջակցություն՝ խորհրդատվության, սննդի, դեղորայքի և սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պարագաների տեսքով, մասնավորապես՝ շուրջ 4400 անձի տրամադրվել է սննդի փաթեթ:

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից ևս տեղեկություններ են տրամադրվել այն մասին, որ կազմակերպությունն իրականացնում է սննդի տրամադրում: Միևնույն ժամանակ, հայտնել են, որ շահառուներն ունենում են լրացուցիչ սննդի, հագուստի, բնակարանի կոմունալ վարձերի վճարման, բնակարանների վերանորոգման և ջեռուցման կարիք, որը կազմակերպությունը, ունենալով սահմանափակ ռեսուրսներ, չի կարողանում բավարարել: Տարեցների մոտ նման խնդիրներ են արձանագրվել նաև Պաշտպանի աշխատակազմի կողմից:

Անկախ այն հանգամանքից, որ պետության և հասարակական կազմակերպությունների կողմից որոշ անձանց տրամադրվել է սննդային օգնություն, շատ տարեցներ շարունակում են ունենալ ֆինանսական խնդիրներ և չեն կարողանում բավարարել անգամ առաջնային կարիքները:

Հարցն առավել խնդրահարույց է միայնակ տարեցների շրջանում, որոնց միակ եկամուտը պետական ցածր նպաստներն ու կենսաթոշակներն են: Դրանք էլ չեն բավարարում անգամ տարեցների դեղերի ձեռքբերմանը:

2021 թվականի ընթացքում տարեցների շրջանում աղքատության խնդիրը բարձրացրել է նաև «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը: Ըստ ՀԿ-ի նախագահի՝ Առավել խոցելի են միայնակ տարեց անձինք, համապատասխան ծառայությունների բացակայության պայմաններում նրանք բախվում են կյանքի դժվարին իրավիճակների: Մասնավորապես, ձմռան ամիսներին ի թիվս այլ կարիքների, մեծ խնդիր է բնակության վայրերի ջեռուցումը, ինչի հետևանքով Շիրակի մարզում շատ տարեցներ գոյատևում են ցրտահարության պայմաններում, վտանգվում է վերջիններիս կյանքը և առողջությունը: Գրանցվել է անգամ ցրտահարության հետևանքով միայնակ տարեց կնոջ մահացության դեպք: Խնդրահարույց է նաև միայնակ տարեցների ցրտահարության դեպքում բժշկական օգնության տրամադրման և խնամքի հարցը: Այսպես, «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի նախագահի կողմից տեղեկություններ են հրապարակվել այն մասին, որ միայնակ տարեց կինը, ցրտահարության պատճառով հայտնվել է ծանր առողջական վիճակում և ունի բժշկական օգնության և սպասարկման անհրաժեշտություն, սակայն անկախ կատարված ահազանգերի՝ պետության կողմից համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվել<sup>1125</sup>:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2019 թվականի հունիսի 5-ի թիվ 71-Ա հրամանով հաստատված «Սոցիալական շտապ օգնության համակարգի ձևավորման ծրագրի

<sup>1125</sup>Տե՛ս <https://kentron.am/am/news/201676> հղումով:

շրջանակներում նախատեսվում է ձևավորվել սոցիալական շտապ օգնության համակարգ, որի նպատակն արագ արձագանքն է արտակարգ՝ կյանքին և առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակներում հայտնված, անհետաձգելի օգնության կարիք ունեցող անձանց սոցիալական խնդիրների լուծման հարցում: Դրա շրջանակներում տրամադրվում են հիմնական սոցիալական ծառայություններ, այդ թվում՝ կացարանով ապահովում:

Այս առումով խնդրահարույց է սոցիալական աջակցության «շտապ օգնության» ծառայություն ներդնելուն զուգընթաց դրա իրագործումն ապահովվելուն ուղղված շուտափույթ գործուն քայլեր չձեռնարկելը:

2021 թվականի ապրիլի 8-ին ընդունված Կառավարության N 498-Լ որոշմամբ հաստատվել է տարեցներին մատուցվող խնամքի ծառայությունների բարելավման և համայնքահեն ծառայությունների ներդրման ու զարգացման ծրագիրը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների 2021-2023 թվականների պլան-ժամանակացույցը: Միջոցառումների ցանկում ներառված է նաև տարեցների կարիքների համալիր և լիարժեք գնահատման միջոցառումը, որի շրջանակներում պետք է իրականացվի տարեցների, այդ թվում՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում խնամքի ծառայություններ ստացողների կարիքների լիարժեք և համակողմանի գնահատում՝ անհատապես ուսումնասիրելով յուրաքանչյուրի սոցիալական, հոգեբանական, առողջական վիճակը, նրանց բնակարանային պայմանները, ընտանեկան և սոցիալական այլ կապերը, նրանց ցանկությունները, պահանջմունքներն ու ներուժը՝ ինքնուրույն ապրելու, որոշակի ծառայություններից օգտվելու և այլ գործոններ: Միջոցառման ժամկետ է սահմանվել 2021 թվականը, երբ պետք է ամբողջությամբ և լիարժեք գնահատված լինեն տարեց բնակչության կարիքները: Հարկ է արձանագրել, որ նախարարությունը տեղեկություններ չի ներկայացրել կարիքների գնահատման գործընթացի և արդյունքների մասին:

2019 թվականի մայիսի 16-ին ՀՀ կառավարությունն ընդունել է N 650-Լ որոշումը, որով հաստատվել է ՀՀ կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի կատարումն ապահովող միջոցառումների ցանկը: Ցանկի 2-րդ նպատակի 2.1 միջոցառմամբ նախատեսվում է խնամքի ապահիստիտուցիոնալացման գործընթացի իրավական կարգավորման առկայություն (հաստատված հայեցակարգ), որը կապահովի յուրաքանչյուր տարի, շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատությունների կարողությունների և շահառուների կարիքների անհատական գնահատման հիման վրա շահառուների 5%-ի վերադարձ ընտանիք և առնվազն 10%-ի համայնքային այլընտրանքային ծառայություններից օգտվելու հնարավորություն:

Չնայած, որ միջոցառման ժամկետ է նախատեսվել 2020թ. մարտի 3-րդ տասնօրյակը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից որևէ տվյալ չի ներկայացվել 2021 թվականի ընթացքում խնամքի հաստատություններից ընտանիք վերադառնալու դեպքերի մասին, ինչը փաստում է միջոցառման իրագործմանն ուղղված միջոցների բացակայության կամ ոչ պատշաճ իրականացման մասին:

Վերոնշյալ միջոցառման ակնկալվող արդյունք է նախատեսվել յուրաքանչյուր տարի առնվազն 3 համայնքում համայնքային ծառայությունների ներդրումը, որի արդյունքում այլընտրանքային

տարբեր ծառայություններ կստանա 70-80 տարեց: Համայնքներում կներդրվեն նշված այլընտրանքային ծառայություններից առնվազն 3-ը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական նախարարության կողմից տեղեկություններ չեն ներկայացվել 2021 թվականի ընթացքում սոցիալական ծառայություններ ստացած շահառուների թվի վերաբերյալ: Միայն, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն, ըստ ստացված տեղեկությունների, 2021 թվականի ընթացքում սոցիալական ծառայություններ է տրամադրել 4842 տարեցի:

2021 թվականի ընթացքում Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել սոցիալական ծառայությունների հասանելիության վերաբերյալ: Այսպես, օրինակ՝ պետության կողմից դրամաշնորհի ստացած «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն սոցիալական ծառայություններ է մատուցում Հայաստանի ոչ բոլոր մարզերում և համայնքներում, ուստի շատ տարեցներ հնարավորություն չեն ունենում օգտվելու սոցիալական ծառայություններից:

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարը 2018թ. Հայաստան կատարած այցին հաջորդիվ զեկույցով առաջարկել է, որ իշխանությունները շարունակեն իրենց ջանքերը՝ տանը կամ համայնքում առաջնային և մասնագիտացված առողջապահական ծառայությունների հասանելիությունը բարձրացնելու խնդրով<sup>1126</sup>:

Նախարարության պարզաբանումների ուսումնասիրությամբ կարելի է եզրահանգել, որ տարեցներին մատուցվող ծառայությունների ապահիստիտուցիոնալացման ուղղությամբ և այլընտրանքային համայնքային ծառայությունների ներդրման ոլորտում՝ 2021 թվականի ընթացքում Գեղակերտի, Ակնաշենի և Մրգաստանի առանձնատների վերակառուցումը՝ դրանք որպես փոքր տներ կազմակերպելու առումով նախագծային փուլում են: Տնային սպասարկումը ներդրվել է փաստացի 8 մարզում և Երևանում, իսկ ցերեկային կենտրոնները գործել են 6 մարզում և Երևանում:

Միևնույն ժամանակ, Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են, որ տարեցներին մատուցվող սոցիալական ծառայություններն անբավարար են: Բողոքների շրջանակներում տարեցները հայտնել են, որ շաբաթվա մեջ մեկ անգամ իրենց տրամադրվում է սոցիալական ծառայություն՝ տնային սպասարկում, մինչդեռ քանի որ իրենք բնակվում են միայնակ և չունեն հարազատներ, շաբաթվա մեջ մեկ անգամ տրամադրված ծառայությունը բավարար չէ կարիքները լիարժեք հոգալու և արժանապատիվ գոյություն ապահովելու համար, ուստի շատ դեպքերում լրացուցիչ բեռն ընկնում է հարևանների, այլ ծանոթների վրա: Այսպիսով, ընդհանուր առմամբ, սոցիալական պաշտպանության հաստատություններից միայնակ տարեցները կամ դուրս են մնում սոցիալական ծառայությունից օգտվելու հնարավորությունից կամ ծառայությունները բավարար չեն լինում:

Մինչդեռ, հաշվի առնելով պետության կողմից որդեգրած ապահիստիտուցիոնալացման քաղաքականությունը, անհրաժեշտ է ավելացնել տրամադրվող սոցիալական ծառայությունների քանակը՝ հիմք ընդունելով տարեցների կարիքները, որի պարագայում այն տարեցները, ովքեր

<sup>1126</sup> Տե՛ս <https://rm.coe.int/-2018-16-20-/1680920149> հղումով:

ունեն սեփական կացարան և անօթևան չեն, խնամք ստանալու համար ստիպված չեն լինի ընդունվել շուրջօրյա խնամքի հաստատություն, մեկուսանալ իրենց միջավայրից:

Այս խնդրի լուծման կապակցությամբ կարևոր է ընդգծել նաև խնամակալության նպաստի տրամադրման հարցը: Շատ քաղաքացիներ Պաշտպանին հասցեագրված բողոքով տեղեկացրել են, որ խնամում են իրենց տարեց հարազատներին, սակայն ֆինանսական միջոցները չեն բավարարում վերջիններիս կարիքները հոգալու համար անգամ անհրաժեշտ պարագաների ձեռքբերման համար և խնդրում են Պաշտպանի աջակցությունը խնամակալության սահմանաման և որոշակի գումար՝ խնամակալության նպաստ տրամադրելու հարցում: Մինչդեռ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված է, որ խնամակալությունը և հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար: Նշված իրավակարգավորման պարագայում, տարեց անձինք, ովքեր խնամվում են կամ կարող են խնամվել իրենց հարազատների կողմից չեն կարող ունենալ խնամակալ, քանի որ խնամակալությունը սահմանվում է միայն անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության համար: Արդյունքում, նփաստացի խնամք իրականացրած քաղաքացիները չեն կարող օգտվել սահմանված արտոնություններից: Հարկ է նշել նաև, որ ներկայում լուծված չէ նաև խնամակալության նպաստի հարցը: Այսպիսով, այս ոլորտում առկա իրավակարգավորումները չեն նպաստում ապահինստիտուցիոնալացման իրագործմանը, քանի որ մարդիկ շահագրգռված չեն տարեցների խնամքն իրականացնել և հնարավորինս նվազագույնի հասցնել նրանց խնամքի հաստատությունում հայտնվելը:

Բացի այդ, Պաշտպանին բողոքներ են ներկայացվել նաև սոցիալական ծառայություններից օգտվելու ընթացակարգի բարդության վերաբերյալ: Այսպես, սոցիալական ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ է ներկայանալ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն, մինչդեռ շատ հաճախ տարեցներն ունենում են առողջական տարբեր խնդիրներ և հնարավորություն չեն ունենում տարածքային կենտրոն անձամբ ներկայանալու: Արդյունքում, պետության կողմից ներդրված սոցիալական միջոցառումները հասանելի չեն լինում տարեց անձանց: Օրինակ՝ դեպքեր են արձանագրվել, երբ միայնակ տարեց անձինք եղել են անկողնային վիճակում և չեն կարողացել ներկայանալ տարածքային կենտրոն՝ սոցիալական ծառայություններից օգտվելու կամ անգամ սեփական եկամուտների հետագա վճարումը կազմակերպելու նպատակով (կենսաթոշակը, նպաստ) դիմում և համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու համար: Տարեցներն, իրենց պնդմամբ, դիմել են նաև սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ՝ սոցիալական աշխատողի կողմից տնային այցելություն կատարելու խնդրանքով, սակայն շատ հաճախ ստացել են մերժում և արդյունքում շարունակել են չօգտվել ծառայությունից: Պաշտպանի աջակցության շնորհիվ է հնարավոր եղել կազմակերպել տնային այցելություն կամ ներկայացուցիչների միջոցով իրացնել տարեցի իրավունքը:

Հարկ է անդրադառնալ նաև միջազգային կազմակերպությունների և տեղական հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ տարեցների հետ աշխատող մասնագետների

(սոցիալական աշխատողներ, սոցիալական օգնականներ, դեպք վարողներ և այլն) վերապատրաստման միջոցառումներին:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկությունների համաձայն՝ «Նորքի տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի<sup>4</sup> աշխատակիցներ մասնակցել են Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Սոցիալական աշխատանքը տարեցների հետ» հեռավար վերապատրաստման դասընթացին, 5 աշխատակիցներ մասնակցել են Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Տարեցների խնամքի առանձնահատկությունները» հեռավար վերապատրաստման դասընթացին, նախատեսված բուժքույրերի և խնամողների համար, 1 աշխատակից, մասնակցել են Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Գնումների կարգավորման գործընթացները և ընթացակարգերը ՀՀ-ում» վերապատրաստման դասընթացին, 8 աշխատակիցներ մասնակցել են ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիայի կողմից կազմակերպված «Խնամել առանց վնասի» (Caring without Hurting” EduCamp for the Carestaff of Nursing Homes) կրթական 1-ին և 2-րդ ճամբարների ծրագրին, որը նաև միավորել է ՀՀ տուն-ինտերնատներում և տարեցների շուրջօրյա խնամքի կենտրոններում տարեցների հետ աշխատող մասնագետներին, 42 (քառասուներկու) աշխատակից մասնակցել են Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի կողմից կազմակերպված «Տարեցների սոցիալական պաշտպանության խնդիրներն ու կառավարման մեթոդները» վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացին:

Այս առումով պետք է նշել, որ բավարար չափով վերապատրաստումներ չեն իրականացվել, քանի որ ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 498-Լ որոշմամբ որպես միջոցառման արդյունքային ցուցանիշ՝ սահմանված է յուրաքանչյուր տարվա ընթացքում տարեցների հետ աշխատող առնվազն 700 մասնագետի վերապատրաստում:

ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի N 498-Լ որոշմամբ ներառված է նաև «Տարեց անձանց իրավունքների վերաբերյալ հասարակության իրազեկվածության բարձրացում» միջոցառումը: Որպես միջոցառման արդյունքային ցուցանիշ նախատեսված է բարձրացնել հասարակության իրազեկվածությունը՝ տարեցների իրավունքների մասին տեղեկատվական թերթիկների տպագրության և տարածման, ինչպես նաև ՁԼՄ-ների, կլոր սեղանների, քննարկումների կազմակերպման միջոցով: Յուրաքանչյուր տարի կազմակերպվել է առնվազն չորս միջոցառում, տպագրվել առնվազն մեկ տեղեկատվական թերթիկ և պատրաստվել առնվազն մեկ հաղորդում կամ տեսանյութ:

2021 թվականի ընթացքում սոցիալական ապահովության իրավունքի իրացման վերաբերյալ հանրային իրազեկման ուղղությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից պարզաբանել են, որ պարբերաբար թարմացվում է Նախարարության կայքէջը՝ իրազեկելով քաղաքացիներին կատարված փոփոխությունների մասին: Մինչդեռ, տարեց անձինք, ում անհրաժեշտ է իրազեկել իրենց իրավունքների մասին, հիմնականում հնարավորություն չունեն ծանոթանալու Նախարարության կայքէջում կատարած հրապարակումներին և արդյունքում՝



գրկվում են իրենց իրավունքներին ծանոթանալու հնարավորությունից: Նշված պայմաններում ակնհայտ է, որ սահմանված միջոցառումը և արդյունքների ցուցանիշը կրել են ձևական բնույթ և չեն ծառայել բուն նպատակին: Պաշտպանին տարեց անձանցից ուղղված դիմումները վկայում են, որ վերջիններս պարզապես տեղյակ չեն իրենց իրավունքների մասին և ցանկացել են տեղեկություններ ստանալ Պաշտպանի աշխատակազմից: Տարեցների կողմից բարձրացվել են նաև Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների կողմից ոչ պատշաճ իրազեկման պատճառով իրենց իրավունքների խախտման հարցերը, որին Պաշտպանն անդրադարձել է սույն տարեկան հաղորդման «Ոչ պատշաճ (թերի) վարչարարությունը և իրազեկման պակասը՝ որպես իրավունքների խախտման պատճառ սոցիալական ապահովության ոլորտում» թեմայի շրջանակում:

*Հաշվի առնելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է՝*

- 1. սահմանել խնամքի հաստատություններից տարեցների՝ ընտանիք վերադառնալուն ուղղված հստակ միջոցառումներ և դրանց իրականացման ժամանակացույց,*
- 2. ներդնել տարեցների իրավունքների մասին իրազեկման արդյունավետ մեխանիզմներ,*
- 3. տարածքային մակարդակով ավելացնել տրամադրվող սոցիալական ծառայությունները,*
- 4. տարեց անձանց կարիքներին համապատասխան ներդնել համայնքահեն ծառայություններ և ապահովել ծառայությունների շարունակական մատուցումը,*
- 5. շուտափույթ գործուն քայլեր ձեռնարկել սոցիալական աջակցության «շտապ օգնության» ծառայություն ներդնելու և դրա իրագործումն ապահովվելու ուղղությամբ:*

## **ԲԱԺԻՆ 18. ԱՂԻՐԲԵՋԱՆԻ ՍԱՆՁԱԶԵՐԾԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՐՑԱԽԻՑ ՀԱՅԱՍՏԱՆ ԲՈՒՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ**

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով մեծաթիվ էին աղբյուրաբանական զինված ուժերի կողմից միջազգային հումանիտար իրավունքի խախտման, Արցախի խաղաղ բնակչության թիրախավորման և մարդու իրավունքների խախտման դեպքերը: Հետպատերազմյան շրջանում Արցախն ու Հայաստանը հայտնվեցին շուրջ 100 հազար բռնի տեղահանված անձանց կյանքի, առողջության, անվտանգության և նվազագույն կենսապայմանների ապահովման մեծածավալ և տարաբնույթ խնդիրների առջև:

Մարդու իրավունքների պաշտպանի հատուկ ուշադրության ներքո շարունակվել են գտնվել 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած ռազմական գործողությունների հետևանքով իրենց բնակավայրերը թողած և Հայաստան բռնի տեղահանված անձանց իրավունքները: Սույն տարեկան հաղորդման շրջանակներում ուսումնասիրության առարկա են դարձել Արցախից տեղահանված անձանց իրավունքները հետպատերազմյան շրջանում:

Պատշաճ և բարձր մակարդակի համագործակցություն է եղել Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հետք: Այն ունեցել է հիմնարար նշանակություն մարդկանց օպերատիվ աջակցության տրամադրման, ինչպես նաև այդ նպատակով տեղեկությունների փոխանակման համար: Ստորև ներկայացվում են Արցախից տեղահանված անձանց՝ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի վերը նկարագրված աշխատանքի արդյունքում արձանագրված կարիքները, ինչպես նաև նրանց իրավունքների ապահովման առումով վերհանված խնդիրները:

### **1. Կացարանով ապահովում**

Հայաստանի Հանրապետությունում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին աղբյուրաբանական զինված ուժերի կողմից սանձազերծված պատերազմի հետևանքով՝ պատերազմի ընթացքում և դրանից հետո ՀՀ-ում տեղահանված արցախցիների թիվը հասել է շուրջ 96-98 հազարի:

Պաշտպանի նախորդ տարեկան հաղորդման շրջանակներում մանրամասն անդրադարձ է կատարվել Արցախից Հայաստան տեղահանված անձանց իրավունքներին առավելապես

պատերազմի և դրան անմիջապես նախորդող ժամանակահատվածում<sup>1127</sup>: Թեև 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած պատերազմից հետո անցել է մեկ տարուց ավել ժամանակահատված, սակայն արձանագրված այնպիսի համակարգային խնդիրները, որոնք վերաբերել են կարիքների համակարգված և թիրախային գնահատմանը, այդպես էլ մնացել են անփոփոխ: Ակնհայտ է, որ կարիքների գնահատումն ուղղակիորեն փոխկապակցված է այդ անձանց իրավունքների պատշաճ երաշխավորման հետ: Ուստի, այն պարագայում, երբ այդպես էլ չի կարգավորվում անձանց իրավունքների երաշխավորումն ապահովող հիմքերը, խոսք անգամ չի կարող գնալ անձանց իրավունքների պատշաճ երաշխավորման մասին:

2021 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը և իրականացված մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ Արցախից Հայաստան տեղահանված անձանց սոցիալական խնդիրները գրեթե նույնությամբ պահպանվել են: Պատճառը, իհարկե, տեղահանված խաղաղ բնակիչների կարիքների ոչ պատշաճ և ոչ համապարփակ գնահատումն է: Դա ի սկզբանե պետք է լիներ պետության առաջնային և կարևոր պարտականությունը: Ոլորտի լիազոր պետական մարմինները պարտավոր էին այդ հարցում ցուցաբերել նախաձեռնողականություն: Ավելին, կարիքների գնահատման ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձվեր խոցելի խմբերին և նրանց կարիքներին: Օրինակ՝ նման դեպքերում առավել խոցելի են հիմնականում երեխաները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք: Ուստի, անհրաժեշտ էր նախ դիտարկել դա ու այնուհետև ապահովել նրանց հատուկ կարիքները, ինչը, նույնպես պատշաճ չի իրականացվել ինչպես պատերազմի ժամանակ, այնպես էլ հետպատերազմյան շրջանում:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն սոցիալական ապահովության իրավունքի մասին 19-րդ ընդհանուր մեկնաբանությունում արձանագրել է, որ առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն հարցին, որ պետության սոցիալական ապահովության համակարգը պատրաստ լինի արձագանքել արտակարգ իրավիճակներին, այդ թվում՝ պատերազմին և հետպատերազմական իրավիճակներին: Պետությունը պարտավոր է օգտագործել իրեն հասանելի առկա բոլոր միջոցները սոցիալական ապահովության իրավունքի նվազագույն մակարդակ ապահովելու համար<sup>1128</sup>:

Այսպիսով, կարիքների պատշաճ և որակով գնահատում ի սկզբանե և հետպատերազմյան շրջանում չիրականացնելը 2021 թվականի ընթացքում էլ առաջացրել է սոցիալական խնդիրներ ինչպես տեղահանված խաղաղ բնակիչների իրավունքների ապահովման, այնպես էլ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հասցեական և համակարգված աշխատանքի տեսանկյունից:

<sup>1127</sup> Առավել մանրամասն տե՛ս 2021 թվականի տարեկան հաղորդումը:

<sup>1128</sup> Հասանելի է <https://www.globalhealthrights.org/instrument/cescr-general-comment-no-19-the-right-to-social-security/> հետևյալ հղումով:

2021 թվականի ընթացքում շարունակել է մտահոգիչ և խնդրահարույց լինել Արցախից տեղահանված անձանց խնդիրներին պետական մակարդակում ինստիտուցիոնալ արձագանքի բացակայությունը: Վերը նշվածը փաստում են նաև Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքները, որոնք վերաբերել են օրինակ՝ կացարաններին, սոցիալական աջակցության միջոցառումներին, զբաղվածությանը և այլն:

Այսպես, բացի այն, որ շարունակում է չլուծված մնալ կարիքների համապարփակ և պատշաճ գնահատման հարցը, դրան էլ գումարվել է այն, որ հետպատերազմյան շրջանում չի իրականացվել նաև պատշաճ իրազեկում Արցախից տեղահանված անձանց համար ՀՀ-ում իրենց իրավունքներն իրականացնելու նպատակով, որն ամբողջությամբ կարտացոլեր սոցիալական աջակցությանը, բժշկական օգնությանը և սպասարկմանը, կացարանի տրամադրմանը, ինչպես նաև աշխատանքային իրավունքներին առնչվող միջոցառումները:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ Արցախից Հայաստան տեղափոխված կամ տեղահանված անձանց սոցիալական աջակցության տրամադրման նպատակով Նախարարությունը նախաձեռնել և իրականացրել է արագ արձագանքման ծրագրեր, ինչպիսիք են, օրինակ՝ սննդի, հագուստի հատկացման ծրագրերը՝ և՛ ժամանակավոր կացարաններում և համայնքներում բնակություն հաստատած քաղաքացիներին, կոմունալ ծախսերի փոխհատուցման ծրագրերը, Արցախից պատերազմի հետևանքով տեղահանված և Արցախի հաշվառում ունեցող քաղաքացիների նվազագույն աշխատավարձի չափով միանվագ դրամական օգնության տրամադրման ծրագիրը և այլն: Բոլոր այդ ծրագրերն իրականացվել են պետական կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների և միջազգային գործընկերների հետ սերտ համագործակցության միջոցով: Արագ արձագանքման ծրագրերի շրջանակներում Նախարարությունը հնարավորինս ապահովել է նաև Արցախից Հայաստան տեղափոխված կամ տեղահանված անձանց այնպիսի մասնագիտական ծառայությունների հասանելիությունն, ինչպիսիք են՝ բժշկական, հոգեբանական, հոգեբուժական, սոցիալական աշխատանքի, ծառայությունները: Այդ հարցում Նախարարությունը համագործակցել է մասնագիտական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ Հայաստանի հոգեբանների ասոցիացիան, Հայաստանի հոգեբույժների ասոցիացիան, մանկական հոգեբանների խմբերը, Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիան և այլն: Ներկայում Նախարարությունը նախաձեռնել է նաև Արցախից Հայաստան տեղափոխված կամ տեղահանված անձանց սոցիալական աջակցության միջնաժամկետ արձագանքի հայեցակարգի մշակումը, որն անդրադառնալու է վերջիններիս այնպիսի հիմնարար իրավունքների ապահովման խնդիրների՝ միջնաժամկետ կտրվածքով լուծմանը, ինչպիսիք են՝ առողջապահական, կրթական, բնակարանային պայմանների ապահովման, զբաղվածության իրավունքները:

Այս առումով, իհարկե ողջունելի է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական աջակցության միջնաժամկետ արձագանքի հայեցակարգի մշակման նախաձեռնությունը, սակայն մտահոգիչն այն է, որ դա սկսվում է մշակվել շուրջ 2 տարի անց:

Արցախից Հայաստան տեղահանված բնակիչների իրավունքների ապահովման տեսանկյունից հետպատերազմյան շրջանում առավել հրատապ լուծում պահանջող հարցերից է նրանց կացարանով ապահովելու խնդիրը, որը 2021 թվականին վերջնականապես և պատշաճ լուծված չէ: Անձանց համար որպես կացարան շարունակում են ծառայել այնպիսի շինություններ, ինչպիսիք են գործող տուն-ինտերնատները, գիշերօթիկ դպրոցների շենքերը և այլն:

Հարկ է նշել, որ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված արցախցիների կարիքներին արագ արձագանքելու և սոցիալական աջակցությանը, այդ թվում՝ կացարանով ապահովելուն վերաբերող հարցերը մշտապես Մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության ներքո են:

Ինչպես սկզբնական փուլում, այնպես էլ հետպատերազմյան շրջանում Արցախի բնակիչներին կացարանով ապահովելու գործընթացում Պաշտպանի աշխատակազմում արձանագրվել են խնդիրներ, որոնք վեր են հանվել ստացված ահազանգերի և իրականացված մշտադիտարկման արդյունքում:

Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստան տեղափոխված հարցվածների համար առաջնային կարիքը կացարան ունենալն է, մինչդեռ Արցախ վերադարձածների պարագայում՝ որպես առաջնային կարիք է առանձնացվել կանխիկ գումարը: ՀՀ տեղահանվածների 30.2 տոկոսի կացարանի հետ կապված հիմնական կարիքները վերաբերում են անձնական տարածության, առանձնանալու հնարավորության պակասին<sup>1129</sup>:

Այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ընդհանրապես մարդու համար շատ կարևոր է անձնական տարածություն ունենալը: Դրա բացակայության պայմաններում էլ ավելի են մեծանում մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի խոցելիության հնարավոր ռիսկերը, այն նաև բացասաբար է ազդում մարդու անձնական կյանքի և արժանապատվության վրա: Այդ առումով, պետք է նշել, որ պատերազմի հետևանքով Հայաստան տեղահանված անձինք հայտնվել են կրկնակի խոցելի վիճակում իրենց իրավունքների իրացման մեթոդների և միջոցների ընտրության, այդ թվում՝ մասնավոր կյանքին և անձնական տարածքին առնչվող հարցերում:

Պետությունը պարտավոր է բոլոր հնարավոր միջոցներով Արցախից տեղահանված և Հայաստանում գտնվող անձանց համար ապահովել այնպիսի կենսամակարդակ, որը բավարար կլինի նրանց բարօրության ու անվտանգության համար, ինչպես նաև համահունչ կլինի մարդու իրավունքների՝ միջազգայնորեն ճանաչված սկզբունքներին, մասնավորապես՝ մարդու պատշաճ

<sup>1129</sup> Տե՛ս Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից իրականացված «Արցախյան պատերազմ 2020. Կորուստներ, մարտահրավերներ և դիմակայության զարգացման հնարավորություններ» հետազոտության արդյունքներ:

բնակարան ունենալու իրավունքին: Պատշաճ բնակարան ունենալու իրավունքը բացահայտ ճանաչում է ստացել մի շարք միջազգային փաստաթղթերում, այդ թվում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (25-րդ հոդվածի 1-ին կետ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում և այլ միջազգային փաստաթղթերում:

Արցախից Հայաստան տեղահանված անձանց իրավունքների ապահովման հարցով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն ակտիվ համագործակցել է մի շարք հասարակական կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության, «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հետ: Կազմակերպվել են կլոր սեղան քննարկումներ, որոնց մասնակից են եղել նաև Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2021 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ կազմակերպությունում որպես շահառու հաշվառված է Արցախից տեղահանված 3753 ընտանիք, շուրջ 15415 անձ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ ՀՀ Արագածոտնի մարզում 2022 թվականի հունվարի 7-ի դրությամբ պետության կողմից տրամադրված կացարաններում Արցախից տեղահանված բնակիչներ չեն բնակվում: 702 քաղաքացի բնակվում են մարզի 5 համայնքների 42 բնակավայրերում: ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի հյուրանոցն է հանդիսանում որպես ժամանակավոր կացարան, որտեղ վերաբնակեցվել են թվով 126 Արցախից տեղահանված անձինք: ՀՀ Գեղարքունիքի և Լոռու մարզերում պետության կողմից տրամադրված կացարաններում բնակվող՝ Արցախից տեղահանված անձինք չկան: ՀՀ Կոտայքի մարզում Արցախից տեղահանված ընտանիքները բնակվում են մարզի համայնքների կողմից տրամադրված ժամանակավոր կացարաններում, բնակարաններում/տներում, հյուրանոցներում/հյուրատներում: ՀՀ Սյունիքի մարզում Արցախից տեղահանված քաղաքացիները հիմնականում բնակվում են հյուրընկալող ընտանիքներում, պետության կողմից տրված կացարաններ չկան: ՀՀ Վայոց ձորի մարզում Արցախից տեղահանված անձինք ապրում են մասնավոր բնակարաններում: ՀՀ Տավուշի մարզում 2022 թվականի հունվարի 7-ի դրությամբ Դիլիջան համայնքում գտնվող նախկին գիշերօթիկ դպրոցի մասնաշենքում բնակվում են Արցախից տեղահանված 28 անձ (14 ընտանիք):

Հայաստանի Հանրապետությունում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի հայտնած տեղեկությունների համաձայն՝ ՀՀ տարբեր մարզերում ժամանակավորապես ապաստանած ԱՀ քաղաքացիների թիվը կազմում է շուրջ 21000 մարդ՝ 5400 ընտանիք: Ըստ առանձնացված խմբերի՝ ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբը տվյալներ չի ներկայացրել՝ տվյալների հաշվառման բացակայության պատճառով՝ նշելով, որ Օպերատիվ շտաբը պարբերաբար փորձում է հաշվառման շրջանակն ընդլայնել և Օպերատիվ շտաբի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումն այդ աշխատանքներն ապահովում է Օպերատիվ շտաբին կցված շրջանների

պատասխանատուների հետ համագործակցության միջոցով, տվյալներն արձանագրում են թղթային տարբերակով, այն վերահաստատվում է, ճշգրտվում, այնուհետև՝ կազմվում է համապատասխան բազա:

*Անընդունելի է, որ մինչ այժմ, ըստ առանձնացված խմբերի, չկան հստակ հաշվառման տվյալներ: Այդ տվյալների առկայությունը միայն հնարավորություն կտար հատուկ ուշադրություն դարձնել խոցելի խմբերին և նրանց կարիքներին: Օրինակ՝ նման դեպքերում առավել խոցելի են հիմնականում երեխաները, կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք: Ուստի, անհրաժեշտ էր նախ ունենալ այդ անձանց վերաբերյալ հաշվառման առանձին տվյալներ, այնուհետև՝ ապահովել նրանց հատուկ կարիքները:*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ներկայացված տեղեկությունների համաձայն՝ Արցախից Հայաստան տեղափոխված անձանց բնակապահովման հետ կապված Նախարարությունը 2021 թվականի ընթացքում նախաձեռնել է հետևյալ միջոցառումները. «Հայկական կարմիր խաչ» ընկերության և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ ժամանակավոր կացարաններում բնակություն հաստատած Արցախի քաղաքացիների ինքնուրույն կյանքի անցմանն աջակցելու նպատակով իրականացվել է բնակվարձի եռամսյա փոխհատուցման ծրագիր: Այդ ծրագրով ժամանակավոր կացարաններից դուրս է եկել և Հայաստանում բնակարան, տուն վարձել կամ Արցախ վերադարձել 339 ընտանիք: Պատերազմի հետևանքով տեղահանված անձանց բնակության հիմնախնդրի լուծման նպատակով 2022 թվականի հունվար ամսվա դրությամբ Նախարարությունն իրականացնում է Հայաստանի սոցիալական բնակարանային ապահովման քաղաքականության վերանայման աշխատանքներ, այդ թվում՝ Հայաստանում բնակություն հաստատած Արցախի քաղաքացիների բնակարանային պայմանների բարելավման նպատակով:

Չնայած վերը նշվածի՝ կացարանով ապահովման խնդիրը շարունակում է արդիական մնալ: Պաշտպանին հասցեագրված բողոքներով արձանագրվել են դեպքեր, երբ կացարաններն ապահովված չեն կենսաապահովման համար անհրաժեշտ պայմաններով:

Մասնավորապես՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով Հայաստան հարկադիր տեղահանված ընտանիքը բնակություն է հաստատել Հայաստանի մարզերից մեկում իրենց տրամադրված կացարանում: Ըստ բողոքի՝ կացարանը չի ջեռուցվում, չնայած մարզպետարանից տրամադրվել է էլեկտրական ջեռուցման սարքեր, սակայն տարածքում շարունակում է խնդիր մնալ պատշաճ ջերմաստիճանի ապահովումը:

Պաշտպանին հասցեագրված մեկ այլ բողոքով անձը տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ ընտանիքը բնակություն է հաստատել ՀՀ համայնքներից մեկի մանկապարտեզում: Ըստ անձի հայտնած տեղեկությունների՝ նշվածն առաջացրել է համայնքի բնակիչների դժգոհությունը, մասնավորապես կապված մանկապարտեզի չգործելու հետ: Վերջինս հավելել է նաև, որ արժանացել են վիրավորանքի և ծաղրանքի: Հետագայում նշված անձը տեղափոխվել է բնակության համար ոչ բարենպաստ պայմաններով տուն, քանի որ այլևս անհամատեղելի է եղել

բնակությունը մանկապարտեզում: Հարցը ստացել էր նաև հանրային հնչեղություն, համայնքի ներկայացուցիչների բարձրացրած խնդիրներով ստվերվել է տեղահանվածի խնդիրը:

*Նշվածի համապետքստում կարող ենք նշել, որ կացարանների մասով նմանատիպ խնդիրներից հնարավոր կլիներ ինչ-որ չափով խուսափել, եթե համապատասխան մարմինների կողմից ի սկզբանե իրականացվեր պատշաճ և ամբողջական կարիքների գնահատում և դրանց ապահովմանն ուղղված արդյունավետ քաղաքականություն:*

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից նշել են, որ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնների կողմից իրականացված Արցախից տեղահանված ընտանիքների սոցիալական կարիքների գնահատման արդյունքների ամփոփումից պարզ է դարձել, որ մոտավոր 141 ընտանիք (441 անձ) շարունակում է բնակվել ժամականավոր կացարաններում: Ժամականավոր կացարաններից անձանց տեղափոխումն ու ինքնուրույն կյանքի անցման խթանումը հնարավոր է եղել իրագործել Նախարարության գործընկեր կառույցների (UNHCR, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ) հետ համագործակցությամբ, որոնք իրականացրել են արցախցի ընտանիքների՝ Հայաստանում բնակվարձերի եռամսյա փոխհատուցման և զբաղվածության խթանման ծրագրեր:

Մինչդեռ, նույն հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի հայտնած տեղեկություններով՝ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ում կա 129 ընտանիք՝ շուրջ 350 անձ:

*Խնդրահարույց է, որ կա հակասություն ներկայացված տվյալների միջև, ակնհայտ է, որ այդպես էլ չի ներդրվել միասնական համակարգ հստակ վիճակագրություն վարելու համար: Ակնհայտ է, որ նախարարությունը դրսևորում է մեխանիկական մոտեցում, ինչը նույնպես խնդրահարույց է:*

Հայաստանում Արցախի օպերատիվ շտաբի հայտնած տեղեկությունների համաձայն՝ բնակարանային վարձավճարի փոխհատուցման ծրագրի շրջանակներում Օպերատիվ շտաբը ժամանակավորապես բնակվարձ տրամադրում է հիմնականում զոհված (առավել ևս՝ երկու և ավելի այդպիսիք լինելու դեպքում) և բազմազավակ ընտանիքների (հինգ, վեց և ավելի երեխաների առկայության պարագայում), վիրավոր ազատամարտիկների (ովքեր ունեն հետվիրահատական բարդություններ և սպասում են հաջորդ՝ երկրորդ կամ երրորդ վիրահատությանը՝ բժշկական հաստատությունների կողմից նշված ժամկետներում)՝ 1-3 ամիս ժամկետով: Մնացած բոլոր դեպքերում դրանք կարգավորվել և կարգավորվում են ՀՀ կառավարության կողմից իրականացվող սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակներում: Բնակարանների ապահովման հարցով առկա է ԱՀ կառավարության համապատասխան որոշում, որի համաձայն՝ տեղահանված արցախցիներին 3 տարվա ընթացքում կտրամադրվեն բնակարաններ՝ պարտադիր Արցախի տարածքում և ըստ ընտանեկան կարգավիճակի առաջնահերթության:

Պաշտպանին հասցեագրված բողոքները վկայում են այն մասին, որ ժամանակավոր կացարաններում բնակություն հայտնած անձինք ժամանակավոր կացարաններից չեն կարողանում դուրս գալ, քանի որ առկա է պատշաճ կացարան գտնելու դժվարություն և անգամ



անհնարինություն, վարձավճարներն են բարձր, վարձավճարը պահանջվում է միանգամից մի քանի ամսվա համար, իսկ տրամադրվող ֆինանսական միջոցները չեն բավականացնելու այլ կենսական կարիքները հոգալուն: Սոցիալական խնդիրներն էլ ավելի են խորանում՝ պայմանավորված սոցիալական և առողջապահական կարիքներով:

Մասնավորապես՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ 2020 թվականի պատերազմից հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջնորդությամբ ընտանիքը բնակություն է հաստատել մարզերից մեկի սոցիալական աջակցություն մատուցող կազմակերպությունում: Կազմակերպության տնօրենը Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնի աշխատակիցների մասնակցությամբ հրավիրել է ժողով և հաստատության բնակիչներին տեղեկացրել, որ 2021 թվականի հոկտեմբեր ամսից պետք է ինքնակամ հեռանան հաստատությունից, այլապես իրենց վտարումը կիրականացվի Ոստիկանության միջոցով: Կացարանում բնակություն հաստատած անձինք մտահոգություն են հայտնել, որ կացարանից դուրս գալու դեպքում կհայտնվեն կյանքի դժվարին իրավիճակում և կդառնան անօթևան, առավել ծանր կլինի մոտակա ցուրտ ամիսներին կացարանով ապահովումը: Բացի այդ, նշել են, որ դժվար է գտնել վարձակալական հիմունքներով բնակարաններ, իսկ գտնելու դեպքում էլ վարձավճարները բարձր են, իսկ բնակարանների սեփականատերերը պահանջում են կանխավ վճարել մի քանի ամսվա վարձավճարը: Ավելին՝ անգամ եթե վարձավճարը կարողանան վճարել, կոմունալ վճարները, հատկապես ծմռան ամիսներին, հնարավորություն չեն ունենա վճարել: Հարկ է նշել, որ միայն այս ընտանիքները չեն, որ հայտնվել են նման իրավիճակում:

*Սա մեկ անգամ ևս հաստատում է Արցախից տեղահանված անձանց կարիքներին համապարփակ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը և արդյունքահեն և պատշաճ միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը, որ կնպաստի առկա խնդիրների վերջնական կամ երկարաժամկետ լուծմանը:*

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տեղեկությունների՝ կացարաններում մարդկանց տեղավորելիս նախապես իրականացվում է կացարանային պայմանների ուսումնասիրություն, որի թիրախում հիմնականում կացարանի կենցաղային բավարար պայմանների առկայությունն է, հատուկ կարիքներ ունեցող անձանց դեպքում՝ դրանց համապատասխանությունը վերջիններիս կարիքներին: Անհրաժեշտ տեղեկատվությունը Նախարարությունը ստանում է կա՛մ կացարանի պատասխանատուի կողմից, կա՛մ տեղավորման խնդիրներով զբաղվող մասնագետների այցի և անմիջական ուսումնասիրության միջոցով:

Նախարարությունից տեղեկություն են տրամադրել նաև այն մասին, որ Արցախից ՀՀ տեղափոխված անձանց ժամանակավոր կացարանում տեղավորելու գործընթացում Նախարարությունը 2021 թվականին կիրառել է հետևյալ չափանիշները.

- անձի՝ Հայաստանում բնակության վայրի բացակայությունը,

•Արցախում սեփական բնակության վայրի բացակայությունը կամ առկայության դեպքում՝ ոչ բավարար պայմանները,

•Արցախ վերադառնալու անկարողությունը. այս չափանիշը կիրառվել է անաշխատունակ կամ սահմանափակ աշխատունակություն ունեցող անձանց և միայնակ տարեցների դեպքում:

Ըստ նախարարության՝ այդ չափանիշները պաշտոնապես ամրագրված չեն, սակայն սոցիալական բնակարանային ապահովության նոր ռազմավարության և համապատասխան իրավական ակտերի մշակման ընթացքում նախատեսվում է ապահովել դրանց իրավական ամրագրումը:

*Այսպիսով, անհրաժեշտ է՝*

1. *հնարավոր սեղմ ժամկետներում իրավական ամրագրում փալ ժամանակավոր կացարանում տեղավորելու գործընթացի որոշակի և հստակ չափանիշներին,*
2. *ապահովել փոխաբերական վիճակագրության վարում:*

## **2. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունը և սպասարկումը**

Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ տեղահանված արցախցիների պարագայում առողջապահական ծառայությունների կարիք եղել է հարցվածների 56.5 տոկոսի պարագայում<sup>1130</sup>:

ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված առողջության պահպանման իրավունքի ապահովման նպատակով 2020 թվականի հոկտեմբերի 1-ին ՀՀ կառավարության N 1625-Ն որոշմամբ փոփոխություն է արվել ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին» N 318-Ն որոշման մեջ, որի 12-րդ հավելվածով սահմանված «Արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման կարգի» 2-րդ կետով սահմանվել է, որ **«Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակներում կամ ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց (այսուհետ՝ տուժած անձինք) բժշկական օգնությունն ու սպասարկումն իրականացվում է պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով:»:**

<sup>1130</sup> Տե՛ս Հայաստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից իրականացված «Արցախյան պատերազմ 2020. Կորուստներ, մարտահրավերներ և դիմակայության զարգացման հնարավորություններ» հետազոտության արդյունքներ:

Այսպիսով, տուժած անձը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով առողջության առաջնային պահպանման ծառայություններ է ստանում իր կողմից կամավոր ընտրված բժշկի մոտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 30-ի N 420-Ն որոշմամբ սահմանված կարգով գրանցումից հետո: Տուժած անձին տրամադրվող պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական օգնությունը և սպասարկումը ներառում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի N 642-Ն որոշմամբ սահմանված կարգով հատկացվող դեղերի տրամադրումը:

Չնայած վերը նշված օրենսդրական փոփոխություններին՝ գործնականում խնդիրները շարունակվում են արձանագրվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ անձինք հիմնականում տեղեկացված չեն անվճար բուժօգնության պայմաններին, ինչպես նաև ընթացակարգին, որն էլ շատ դեպքերում խոչընդոտել է առողջության պահպանման իրավունքի իրացմանը:

Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված հարցադրմանն ի պատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում Արցախի կառավարության օպերատիվ շտաբը նշել է, որ առողջության պահպանման իրավունքի ապահովումն իրականացվել և իրականացվում է Հայաստանի Հանրապետության հետ ձեռք բերված փոխադարձ համաձայնությանն համապատասխան: Ըստ համաձայնության՝ տեղահանված արցախցիների առողջական խնդիրները լուծվելու են այնպես, ինչպես ՀՀ քաղաքացիներին: Արցախի քաղաքացիների առողջական խնդիրների նկատմամբ նույն ուշադրությունը ցուցաբերվում է նաև Հայաստանում: Համայնքներում ժամանակավորապես հաշվառված՝ տեղահանված արցախցիներն ապահովվում են լրիվ անվճար՝ նույնությամբ, ինչպես ՀՀ խոցելի խավերը: Միակ խնդիրն առաջացել է 2021 թվականի տարեվերջին, երբ պետական պատվերի համար սահմանված գումարներն սպառվել են: Քանի որ բժշկական հաստատություններն արցախցիներին տեղեկացրել են, որ պետական պատվերներն սպառված են, քաղաքացիների մոտ առաջացել է խուճապ, տագնապ և անհանգստություն: Ըստ Օպերատիվ շտաբի ներկայացրած տեղեկության՝ քաղաքացիներին բացատրվել է, որ անհետաձգելի, կյանքին վտանգ սպառնացող բժշկական միջամտություններն իրականացվելու են՝ անկախ պետպատվերի համար սահմանված գումարների առկայության (դա կլինի պետության պարտքը առողջապահական հաստատություններին), իսկ պլանային դեպքերը հետաձգվել են 2022 թվականի համար: Եղել է երկու դեպք, երբ ուղեգիր չի տրամադրվել, այնուհետև ուղեգրերն Օպերատիվ շտաբի միջամտությամբ ձեռք են բերվել նաև ԱՀ առողջապահության նախարարության օգնությամբ: Իսկ ՀՀ առողջապահության նախարարությունից տեղեկացրել են, որ Արցախից տեղահանված անձանց բժշկական օգնության ու սպասարկման ապահովումը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով չիրականացնելու վերաբերյալ բողոք չի ստացվել:

Արցախից տեղահանված անձանց բժշկական օգնության ու սպասարկման ապահովումը պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով չիրականացնելու վերաբերյալ բողոք

չստանալու ՀՀ առողջապահության տրամադրած տեղեկությունը մտահոգիչ և խնդրահարույց է այն առումով, որ նախ ստացվում է՝ նախարարությունը տեղեկացված չէ առկա խնդիրների մասին, բացի այդ էլ՝ ստացվում է այնպես, որ պետությունը չունի ակտիվ մասնակցություն Արցախից Հայաստան տեղահանված առողջապահության պահպանման իրավունքի երաշխավորման հարցերում: Նշված հարցում միակ դերակատարումը թողնվել է Հայաստանում Արցախի օպերատիվ շտաբին:

Պետական պատվերի շրջանակներում փոխհատուցվող առանձին բժշկական ծառայությունների համար պետբյուջեից ուղղվող հատկացումների սպառման հետ կապված խնդիրը ներկայացված է սույն հաղորդման «Անվճար և արտոնյալ պայմաններով բուժօգնության խնդիր» ենթաբաժնում:

*Այս կապակցությամբ հարկ է նշել, որ պետության ուղղակի պարտականությունն է ստանձնել Արցախից տեղահանված անձանց առողջության պահպանման իրավունքի երաշխավորման հետ կապված բոլոր հարցերը, վեր հանել առկա խնդիրները:*

Դեղորայքի տրամադրման խնդրի վերաբերյալ ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբից տեղեկություն են ներկայացրել այն մասին, որ ողջ գործընթացը կազմակերպվում է ՀՀ և ԱՀ օրենսդրություններին համապատասխան: Օպերատիվ շտաբում առկա է առողջապահական խնդիրներով զբաղվող բաժին, որը նաև տրամադրում է որոշակի քանակությամբ դեղորայք Երևանում և նրան մերձակա համայնքներում: ՀՀ-ում բնակվող արցախցիներին, ովքեր դիմում են անհրաժեշտ դեղորայքի համար, հնարավորության սահմաններում այն տրամադրվում է նրանց, ՀՀ պոլիկլինիկաները նույնպես տրամադրում են որոշակի դեղորայք համապատասխան խոցելի խմբերին: Միակ խնդիրը թե ՀՀ քաղաքացիների և թե Արցախից տեղահանվածների մասով այն է, որ հաճախ նշանակված դեղամիջոցի փոխարեն տրամադրվում է փոխարինողը:

Հարկ է նշել, որ դեղերի վերաբերյալ վերը նշված խնդիրն առկա է ոչ միայն Արցախից տեղահանված անձանց, այլ նաև ՀՀ քաղաքացիների մոտ: Այդ առումով Պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես բարձրացրել է Հայաստանի Հանրապետության հիմնական դեղերի ցանկն ընդլայնելու հարցը: Հարցին առավել մանրամասն անդրադարձ է կատարվել սույն հաղորդման «Հիմնական դեղերի ցանկում ներառված դեղորայքի որակի, դրանք շահառուներին չտրամադրելու խնդիր» պարագրաֆում:

Նշված խնդրի կապակցությամբ ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնել են, որ Արցախից տեղափոխված անձանց դեղերով չապահովելու վերաբերյալ Առողջապահության նախարարությունը բողոք չի ստացել, սակայն ստացվել է 11 դիմում, որոնք ուսումնասիրվել են Նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից և տրվել են լուծումներ:

ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 30-ի թիվ 642-Ն որոշման հավելված 1-ով ներառվել են Արցախի նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական գործողությունների կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում Արցախում մշտապես բնակվող, սակայն Հայաստանի Հանրապետություն տեղափոխված անձինք և Ադրբեջանի սանձազերծած պատերազմի ընթացքում վիրավորում ստացած անձինք՝ զինծառայողներ և ոչ

գորահավաքային գորակոչով պատերազմի մասնակիցներ (կամավորներ): Վերոնշյալ շուրջ 14600 նպաստառուներին, ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի կողմից շարունակաբար տրամադրվում են անվճար դեղեր:

*Այսպիսով, ելնելով վերը շարադրվածից անհրաժեշտ է՝*

1. *ապահովել պարզաձև իրազեկում Արցախից տեղահանված մարդկանց շրջանում բժշկական օգնության ու սպասարկման պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով իրականացնելու մասին,*

2. *մեծացնել պետության պարասխանապու դերակատարությունը Արցախից տեղահանված անձանց առողջության պահպանման հարցերին արձագանքնելու, խնդիրները վեր հանելու տեսանկյունից,*

3. *բնակչության անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում ընդգրկված բնակչության համար հարկացվող պետական ֆինանսավորման ծավալներն ավելացնել կամ հարկացվող պետական պարվերի ծավալները կիսամյակային կամ եռամսյակային կտրվածքով վերանայել:*

### **3. Սոցիալական աջակցության միջոցառումներին և ընթացակարգին առնչվող խնդիրներ**

Հետպատերազմական շրջանում Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվել են և շարունակում են իրականացվել մի շարք սոցիալական աջակցության ծրագրեր՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված և Արցախի հաշվառում ունեցող քաղաքացիներին աջակցելու նպատակով:

2021 թվականի ընթացքում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ միջոցառումների գործարկումից հետո կառավարությունը չի իրականացնում ազդեցության գնահատում, լուծում չեն ստանում խորքային խնդիրները: Մինչ օրս էլ Արցախից տեղահանված անձինք հանդիպում են վարչարարական խոչընդոտների իրենց իրավունքներն իրացնելու գործընթացում:

Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ Արցախի քաղաքացիների և նրանց հյուրընկալված անձանց աջակցության միջոցառումներից (ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ին N 1977-Լ որոշումը և դրա տրամադրման կարգը ՀՀ կառավարության 2020 դեկտեմբերի 17-ի N 2072-Լ որոշումը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2069-Լ որոշումը և դրա տրամադրման կարգը ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 24-ի 2148-Լ որոշում) օգտվել է համապատասխանաբար՝ 6164 և 1003 հյուրընկալող անձ:

Նշված միջոցառումների վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմն ստացել է բանավոր և գրավոր բողոքներ, ինչպես նաև իրականացրել է զանգվածային լրատվության միջոցների ու սոցիալական մեդիայի մշտադիտարկում: Արձանագրված խնդիրները վերաբերել են անհատական և համակարգային բնույթ կրող հարցերի, դրանք եղել են ինչպես տեխնիկական, այնպես էլ՝ օրենսդրական բնույթի:

Օրինակ՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներով հյուրընկալողները բարձրաձայնել են բոլոր ամիսների համար սոցիալական աջակցությունը չստանալու կամ ուշ ստանալու մասին: Բողոքներից մեկով Միասնական սոցիալական ծառայությունից գումարն ուշ ստանալու վերաբերյալ պարզաբանում է տրամադրվել այն մասին, որ Արցախի կողմից հյուրընկալվողի գույքի վերաբերյալ տեղեկություն չի ստացվել:

Նշվածի կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանի 2021 թվականի տարեկան հաղորդման կազմման նպատակով ներկայացված համապատասխան հարցադրմանն ի պատասխան առ այն, թե որքա՞ն և ի՞նչ բնույթի բողոքներ է ստացել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն Արցախի քաղաքացիների և նրանց հյուրընկալած անձանց սոցիալական աջակցության միջոցառումների հետ կապված, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը չի ներկայացրել ամբողջական և ըստ էության պատասխան: Փոխարենը նշել է, որ հյուրընկալի մասով դիմում-բողոքներ ստացվել են ինչպես Նախարարությունում, այնպես էլ Միասնական սոցիալական ծառայությունում՝ հիմնականում առցանց տարբերակով, սակայն դրանց բնույթի վերաբերյալ հատուկ հաշվառում չի իրականացվել:

Հարկ է նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանն իր տարեկան հաղորդումներում մշտապես բարձրացնում է վիճակագրություն վարելու կարևորությունն ու անհրաժեշտությունը, սակայն շատ ոլորտներում խնդիրը շարունակվում է մնալ չլուծված:

Մեկ այլ բողոքով Պաշտպանին դիմած անձը նշել է, որ ընտանիքը բազմանդամ է, կան անչափահաս երեխաներ, գտնվում են սոցիալապես ծանր վիճակում: Վերջինս հավելել է նաև, որ իրենց հյուրընկալել են այն պայմանով, որ իրենք պետք է վճարեն կոմունալ վճարումները, իսկ վարձավճարը կլինի ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1977-Լ որոշման շրջանակներում տրամադրվող աջակցությունը: Ըստ բողոք ներկայացրած անձի՝ դեկտեմբերի 25-ից հետո լրացված 1-ին էլեկտրոնային դիմումն ընդունվել է, սակայն գումար չի ստացել: Այնուհետև, վերը նշված որոշման շրջանակներում աջակցությունն ստանալու համար յուրաքանչյուր ամիս սահմանված ժամկետում էլեկտրոնային դիմումներ է ներկայացվել, սակայն յուրաքանչյուր անգամ ստացել է մերժում այն պատճառաբանությամբ, որ տվյալ անձի անունով սեփական գույք ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառված չէ: Բարձրացված խնդրի կապակցությամբ այցելել է ՀՀ ԱՍՀՆ միասնական սոցիալական ծառայություն, որտեղ առաջարկել են դիմում ներկայացնել՝ կցելով տան սեփականատիրոջ անձնագիրը և սեփականության իրավունքի վկայականի պատճենը և տեղեկացրել, որ դիմումին կպատասխանեն 10-օրյա ժամկետում: Նշված ժամկետում պատասխան չստանալով՝ 12-րդ օրը կրկին այցելել է Միասնական սոցիալական ծառայություն, որտեղ

աշխատակիցը տեղեկացրել է, որ սեփականության իրավունքի վկայագրի փոխարեն դիմումին պետք է կցվեր ՀՀ կադաստրի կոմիտեից տրված տեղեկանքը սեփականության իրավունքի վերաբերյալ: Դիմումը և պահանջված փաստաթղթերը կրկին ներկայացնելուց հետո էլ քաղաքացու դիմումին միայն ամիսներ անց է տրվել պարզաբանում այն մասին, որ հյուրընկալողի անվամբ սեփականության իրավունքով անշարժ գույքը ոչ բնակելի տարածք է:

Այսպիսով, ակնհայտ է, որ վարչական մարմինը պատշաճ վարչարարություն չի իրականացրել, որի արդյունքում անձը համապատասխան բարենպաստ վարչական ակտի ընդունման ակնկալիք է ունեցել, այդ իսկ պատճառով էլ Արցախից տեղահանվածները շարունակել են հյուրընկալվել և ակնկալիք ունենալ բարենպաստ որոշման կայացման համար:

Կարգավորման համաձայն՝ միջոցառումից օգտվելու համար դիմումը պետք է ներկայացվի էլեկտրոնային եղանակով՝ 2020 թվականի դեկտեմբեր ամսվա համար՝ դեկտեմբերի 25-ից մինչև 2021 թվականի հունվարի 20-ը ներառյալ, 2021 թվականի հունվար-օգոստոս ամիսների համար՝ յուրաքանչյուր ամսվա 25-ից մինչև հաջորդ ամսվա 5-ը ներառյալ:

Քննարկվող դեպքում անձը հյուրընկալել է Արցախի վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում հաշվառված չափահաս քաղաքացիների, յուրաքանչյուր ամիս սահմանված ժամկետում էլեկտրոնային դիմումներ է ներկայացրել: Դեկտեմբերի 25-ից հետո լրացված 1-ին էլեկտրոնային դիմումն ընդունվել է, սակայն գումար չի ստացել: Հաշվի առնելով այն, որ ներկայացված դիմումն ի սկզբանե չի մերժվել, վերջինիս մոտ առաջացել է արդարացի ակնկալիք, որ կստանա ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1977-Լ որոշման շրջանակներում տրամադրվող աջակցությունը և այդպիսով շարունակել է հաջորդ ամիսների համար նույնպես էլեկտրոնային դիմումներ ներկայացնել, ավելին այցելել իրավասու մարմին, բայց միայն ամիսներ անց է ստացել մերժում և այն հիմնավորող պատճառի մասին տեղեկություն: Մինչդեռ, Կառավարության որոշմամբ սահմանվել է պարտավորություն ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարին՝ նույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մինչև յուրաքանչյուր ամսվա 16-ը (դեկտեմբեր ամսվա համար՝ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 24-ը) նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետությունում բնակելի անշարժ գույքի նկատմամբ սեփականության (այդ թվում՝ համատեղ կամ բաժնային) իրավունք ունեցող ֆիզիկական անձանց վերաբերյալ հստակ սահմանված տեղեկատվություն: Ստացվում է, որ ՀՀ կադաստրի կոմիտեի փոխանցած տեղեկատվության հիման վրա ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը պետք է ապահովեր պատշաճ ընթացք. դիմումն ընդունել և բավարարել կամ ի սկզբանե մերժել, ինչը հնարավորություն կտար Արցախից տեղահանվածներին այլ բնակության վայր գտնել և լրացուցիչ ֆինանսական բեռի տակ չընկնել:

Արձանագրված բողոքների վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ բողոքների հաշվառում չի իրականացվել, սակայն չբավարարված դիմումների կարգավիճակները վերանայվել են Արցախից ստացված՝ ՀՀ կառավարության 2020 դեկտեմբերի 17-ի N 2072-Լ և ՀՀ կառավարության 2020

թվականի դեկտեմբերի 24-ի 2148-Լ որոշումների շրջանակներում աջակցության շահառու հանդիսացող անձանց, ինչպես նաև ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից բնակելի անշարժ գույքի սեփականատեր կամ համասեփականատեր հանդիսացող անձանց վերաբերյալ նոր տեղեկությունների ստացման դեպքերում:

Նշված միջոցառման վերաբերյալ ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբից տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ Արցախի քաղաքացիների և նրանց հյուրընկալած անձանց սոցիալական աջակցության միջոցառումներից օգտվողների թիվը կազմում է 6000 դիմում, շուրջ 14000 հյուրընկալված: Օպերատիվ շտաբից նշել են նաև, որ բացի օգտվողների նշված թվից կան նաև այլ ցուցակներ, որը ենթադրում է նոր շահառուներ: Հավելել են, որ առ այսօր, չնայած ներկայացված դիմումներին, վերջնական արդյունքներ ՀՀ-ից դեռ չի տրամադրվել: Ըստ Օպերատիվ շտաբի՝ վերը նշված ծրագրերն ամենաանկատարն են՝ թե՛ վերահսկման, և թե՛ հասանելիության առումով:

Մարդու իրավունքների պաշտպանի իրականացրած մշտադիտարկման արդյունքները նույնպես վկայում են, որ վերը նշված ծրագրերի իրականացման հարցում առկա են եղել խնդիրներ հատկապես դրանց բավարար կերպով հասանելիության հետ:

Այսպիսով, վերը նշվածի համատեքստում անհրաժեշտ է փաստել, որ պետական իրավասու մարմինները պետք է սահմանված տեղեկատվությունը փոխանակելին ճիշտ, ամբողջական և պատշաճ: Իսկ միջոցառման շրջանակներում անձանց տրվող մերժումները պետք է լինելին այնպիսին, որպեսզի անձը միանգամից հասկանար մերժման հիմքերի և պատճառների մասին:

Հարկ է նշել, որ նշված միջոցառման վերաբերյալ Պաշտպանը վեր է հանել նաև մեկ այլ խնդիր: Մասնավորապես, խոսքն այն դեպքերի մասին, է երբ միջոցառման շահառու հանդիսանալը պայմանավորում է նախորդ միջոցառումների շահառու հանդիսանալով: Օրինակ՝ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1709-Լ որոշման շրջանակներում շահառու հանդիսանալու համար անձը պետք է հանդիսանա ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ կամ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2021-Լ որոշումներով հաստատված միջոցառումների շրջանակներում աջակցություն ստացած անձ: Խնդրահարույցն այն է, երբ անձինք նախորդ միջոցառումների շրջանակներում աջակցություն ստացել էին, սակայն 1709-Լ որոշման շրջանակներում ներկայացված էլեկտրոնային դիմումը մերժվել է: Նշվածի կապակցությամբ Միասնական սոցիալական ծառայությունը տեղեկություն է տրամադրել այն մասին, որ դիմումները մերժվել են այն պատճառաբանությամբ, որ Արցախի կողմից նախկին միջոցառումների շրջանակներում միջոցառման շահառու լինելու փաստի հաստատումը չէղարկվել է: Ստացում է, որ անձինք նախորդ միջոցառման շրջանակում շահառու ճանաչվել են և ստացել են սահմանված աջակցությունը, սակայն մյուս միջոցառման պայմանին բավարարելու պարագայում առանց սահմանված հիմքի զրկվել համապատասխան սոցիալական աջակցությունից:



Բացի իրականացված վարչարարության խնդիրներից, խնդրահարույց է նաև այն, որ տրամադրվող ֆինանսական միջոցներն էլ տրամադրվում են ուշացումով, սոցիալական աջակցության միջոցառումները չեն գործարկվում օպերատիվ և ժամանակին:

Մասնավորապես խոսքը ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 12-ի թիվ 186-Լ որոշման մասին է, որի նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել 2021 թվականի փետրվարի 10-ի դրությամբ Արցախում հաշվառված կամ փաստացի բնակված քաղաքացիներին՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով տնտեսական և սոցիալական հետևանքները մեղմելու համար: Սոցիալական աջակցությունը տրամադրվում է ամենամյա դրամական օգնության ձևով՝ ոչ ավելի, քան 4 ամսվա համար՝ սկսած 2021 թվականի մարտ ամսվանից: Դրամական օգնության ամսական չափը 68000 դրամ է:

Նշված միջոցառման վերաբերյալ Պաշտպանին բողոքներ են հասցեագրվել այն մասին, որ սոցիալական աջակցության գումարների մի մասն ստացել են ուշացումով: Մասնավորապես՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներով անձինք տեղեկություն են ներկայացրել այն մասին, որ երեք ամսվա գումարն ստացել են, իսկ չորրորդ ամսվա աջակցության գումարը շուրջ մեկ ամիս չեն ստացել: Արձանագրվել են դեպքեր, որ կոնկրետ բողոքների քննարկման շրջանակներում էլ պարզվել է, որ գումարը փոխանցված է եղել, սակայն անձինք տեղեկացված չեն եղել այդ մասին:

Մեկ այլ դեպքում էլ ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 18-ի թիվ 1709-Լ որոշումը, որի նպատակն է սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով հաստատված միջոցառումների շրջանակներում աջակցություն ստացած (տվյալները վճարման ցուցակում ներառված) քաղաքացիներին՝ բացառությամբ նրանց, ում տվյալները նույն որոշման 6-րդ կետի համաձայն ստացվել են Արցախի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից: Աջակցությունը տրամադրվելու է 4 ամիս ժամկետով՝ 2021 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներից յուրաքանչյուրի համար՝ երեխաներին, 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձանց՝ 50000 դրամ, մյուս շահառուներին (կանայք, տղամարդիկ, այդ թվում՝ կենսաթոշակառուներ) 25000 դրամ: Որոշումն ուժի մեջ է մտել 2021 թվականի հոկտեմբերի 21-ին:

Դրամական օգնության տրամադրման դիմումները 2021 թվականի հոկտեմբերի 28-ից ընդունվել են առցանց եղանակով: Այսպիսով, ստացվում է, որ շահառուներն ամիսներ շարունակ զրկված են ֆինանսական աջակցությունից, իսկ նրանց եկամտի աղբյուրը հիմնականում ՀՀ կառավարության կողմից տրամադրվող օգնություններ են:

Խնդիրներ են առաջացել նաև ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակներում Արցախի Հանրապետության վերահսկողությունից դուրս մնացած համայնքներում մինչև պատերազմի սկսվելն առնվազն երեք ամիս փաստացի բնակված լինելու վերաբերյալ տեղեկությունն ստանալու հետ կապված: Բանն այն է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 27-ի N 1891-Լ որոշմամբ նախատեսված է, որ հիշյալ միջոցառման շրջանակներում վճարման ցուցակ ներառելու համար Արցախի տարածքային

կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ առնվազն 3 ամիս Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում փաստացի բնակված անձանց տվյալները մինչև 2021 թվականի մայիսի 1-ը ներկայացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Մինչդեռ, բազմաթիվ անձանց տվյալներ չեն ներառվել վճարման ցուցակներում այն պատճառով, որ սահմանվածից ուշ են դրանք Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացվել:

Մասնավորապես՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկացրել է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ որոշմամբ հաստատված միջոցառումից օգտվելու նպատակով [online.ssa.am](http://online.ssa.am) կայքէջի միջոցով ներկայացրել է էլեկտրոնային դիմում, սակայն չի ստացել միանվագ դրամական օգնությունը:

Բողոքի քննարկման շրջանակներում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտնել է, որ ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ անձը հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում, իսկ Արցախի Հանրապետությունից ստացված փաստացի բնակված անձանց ցուցակում նրա տվյալներն առկա չեն: Հետագայում ԱՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից հայտնել են, որ բողոք ներկայացրած անձի տվյալներն ընդգրկվել են 2020 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ առնվազն 3 ամիս Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ անցած համայնքներում փաստացի բնակված անձանց ցուցակում ու տրամադրվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը: Մինչդեռ, հնարավոր չէր եղել իրականացնել վճարումն այն պատճառաբանությամբ, որ տեղեկատվությունը փոխանցվել էր սահմանված ժամկետից ուշ՝ 2021 թվականի մայիսի 20-ին: Ստացվում է, որ անձինք տևական ժամանակ, այն է՝ շուրջ 5 ամիս էլեկտրոնային դիմում ներկայացնելուց հետո են միայն ստացել աջակցության շրջանակներում տրամադրվող աջակցության գումարը: Միայն դրամական օգնությունը վճարելու ժամկետները երկարաձգելու արդյունքում անձինք կարողացան ստանալ իրենց հասանելիք գումարն այն էլ շատ ուշ, ինչը տվյալ դեպքում խոսում է համապատասխան մարմինների աշխատանքի ոչ օպերատիվ լինելու մասին:

Այս միջոցառման շրջանակներում էլ առաջացել են անձանց փոստային բաժանմունքներում չնույնականացնելու խնդիրներ:

Մասնավորապես՝ Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ միջոցառման շրջանակներում միանվագ դրամական օգնությունն ստանալու համար սահմանված կարգով և ժամկետներում դիմում է ներկայացրել: Ներկայացված դիմումները չեն մերժվել, բողոք ներկայացրած անձի և վերջինիս ընտանիքի անդամների՝ որպես աջակցության վերոնշյալ միջոցառման շահառուների տվյալները ներառվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության նախկին սոցիալական ապահովության ծառայության ձևավորած վճարման համապատասխան ցուցակում և փոխանցվել «Հայփոստ» ՓԲ ընկերությանը:

Բողոք ներկայացրած անձը նշել է նաև, որ այցելել են «Հայփոստ» ՓԲ ընկերության համապատասխան փոստային բաժանմունք՝ իրենց հասանելիք միանվագ դրամական օգնության գումարներն ստանալու նպատակով, սակայն չեն կարողացել տվյալները նույնականացնել և գումարները չեն կարողացել ստանալ:

Միայն հետագայում Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 21-ի N 1820-Լ որոշման շրջանակներում աջակցության տրամադրման ժամկետը երկարաձգելու արդյունքում են դիմողները կարողացել ստանալ նշված միջոցառման շրջանակներում տրամադրվող աջակցությունը: Այս դեպքում պետք է հաշվի առնել, որ տրամադրվող գումարները սոցիալական աջակցության միջոց են, կոչված են բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տեղահանված ընտանիքների կարիքները: Միևնույն ժամանակ, միջոցառումներից օգտվելու հնարավորության սահմանումը՝ ժամկետների երկարաձգումը կանխատեսելի չէ տեղահանված անձանց համար:

Թեև վերոնշյալ սոցիալական ծրագրերով պետությունը փորձել է ապահովել տեղահանված և պատերազմից տուժած անձանց սոցիալական ապահովության իրավունքի նվազագույն բաղադրիչները, սակայն սոցիալական աջակցության տրամադրման գործընթացն ինքնին բազմաթիվ տեխնիկական թերություններ է ունեցել:

Հարկ է նշել, որ Պաշտպանին հասցեագրված բողոքներով արձանագրվել են դեպքեր, երբ անձինք տեղեկացված չեն եղել իրականացվող միջոցառումների, դրանց շրջանակներում դիմելու կարգի և մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Նշվածի հետևանքով դիմումները թերի են լրացվել, չեն կցվել անհրաժեշտ փաստաթղթերը, ինչի հետևանքով էլ դիմումները չեն հաստատվել:

Անգամ արձանագրվել է դեպք, երբ անձը դիմել է միասնական սոցիալական ծառայությանն աջակցելու էլեկտրոնային դիմում ներկայացնել, սակայն մերժում է ստացել:

Իրականացված իրազեկման աշխատանքների վերաբերյալ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկություն են ներկայացրել այն մասին, որ Նախարարության Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը պարբերաբար անդրադարձել և լուսաբանել է արցախահայության աջակցության ծրագրերը՝ Նախարարության պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում, որոնցից յուրաքանչյուրը տարածվել է մի քանի տասնյակ լրատվամիջոցներում: Արցախցիների հյուրընկալության ծրագրերի վերաբերյալ տարբեր զանգվածային լրատվամիջոցների հետ համագործակցությամբ՝ կազմակերպվել և անցկացվել են հարցազրույցներ, պատրաստվել տեսանյութեր: Նախարարության կողմից պատրաստված իրազեկումները մամուլի հաղորդագրությունների տեսքով տրամադրվել են ՋԼՄ-ներին:

Նշվածի կապակցությամբ ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբի հայտնած տեղեկությունների համաձայն՝ տարբեր լրատվամիջոցների, Օպերատիվ շտաբի ֆեյսբուքյան պաշտոնական կայքէջի միջոցով իրազեկվել և պարզաբանվել են ծրագրերի հասանելիության կարգերը, ինչպես նաև Օպերատիվ շտաբի աշխատակիցները տեղում մշտապես մեծ ուշադրությամբ ու հոգատարությամբ բացատրել, շատ հաճախ՝ օգնել են այցելուներին լրացնել ծրագրից օգտվելու համար նախատեսված առցանց դիմումները: Խնդիրները հիմնականում

առաջացել են մինչև պատերազմը՝ պատերազմի ընթացքում և պատերազմից հետո ծնված երեխանների՝ պետական ռեգիստրում գրանցելու փաստը, մինչև պատերազմը 3 ամիս փաստացի համապատասխան համայնքում ապրելու փաստը, նախկինում երեխանների ծննդյան ռեգիստրում գրանցման աշխատանքների անփույթ իրականացման ընթացքում՝ որոշակի խմբերի երեխանների ծննդականների պետական էլեկտրոնային հարթակում գրանցման բացակայությունը, քաղաքացիների անպատասխանատվության պատճառով փաստաթղթեր չունենալն ու երկրից ելումուտը:

*Այսպիսով, անհրաժեշտ է Արցախից տեղահանված մարդկանց համար աջակցության միջոցառումների իրականացման գործընթացում ապահովել պատշաճ, բազմակողմանի և լրիվ վարչարարություն, բարձրացնել միջոցառումների հասցեականությունը և օպերատիվությունը՝ կարիքին համապատասխան:*

#### **4. Արցախից Հայաստան տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների ապահովումը**

Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով մեծ թվով Արցախից տեղահանված մարդիկ տեղափոխվելով ՀՀ կորցրել են իրենց աշխատանքը և գումար վաստակելու հնարավորությունները: Նշված խնդիրը ճգնաժամային իրավիճակում սոցիալական և հոգեբանական բարձր լարվածություն է առաջացնում, ինչը չափազանց խնդրահարույց է:

Ըստ որոշ ուսումնասիրությունների ՀՀ տեղահանված Արցախցիների 76 տոկոսը պատերազմից հետո որևէ եկամտաբեր աշխատանք չի կատարել, ինչը պայմանավորված է եղել տեղահանման խնդիրներով, տվյալ ժամանակաշրջանում անկայունությամբ, տեղահանված անձանց՝ Հայաստանում մնալու ոչ երկարաժամկետ պլաններով և այլն: ՀՀ տեղահանված արցախցիների շրջանում պատերազմից հետո գործազրկությունն ավելացել է 33.62 տոկոսով<sup>131</sup>:

Այս կապակցությամբ ՀՀ կառավարությունը գործարկել է պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի գործազուրկ քաղաքացիների զբաղվածության երկու ծրագիր: Մասնավորապես՝ «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովում» միջոցառումը, որի

<sup>131</sup> Տե՛ս Հայստանի սոցիալական աշխատողների ասոցիացիայի կողմից իրականացված «Արցախյան պատերազմ 2020. Կորուստներ, մարտահրավերներ և դիմակայության զարգացման հնարավորություններ» հետազոտության արդյունքներ:

իրականացման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 2119-Լ որոշմամբ, ինչպես նաև «Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում» միջոցառումը, որի իրականացման կարգը հաստատվել է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 2118-Լ որոշմամբ:

Նշվածի կապակցությամբ ՀՀ-ում Արցախի կառավարության օպերատիվ շտաբից տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ երկու ծրագրի շրջանակներում են փորձել ապահովել արցախցիների զբաղվածությունը: Օպերատիվ շտաբից հավելել են, որ նշված միջոցառումներին դիմել է Արցախից տեղահանված թվով 2512 անձ, որից 1570-ը գրանցվել են որպես գործազուրկի կարգավիճակ ստացածներ, իսկ աշխատանք փնտրողների թիվը կազմել է 942, որից առաջին ծրագրից օգտվելու համար ցանկություն է հայտնել 857 քաղաքացի: Նրանցից 388-ի պահանջը բավարարվել է պետական բյուջեի հաշվին, իսկ 132-ը՝ միջազգային կազմակերպությունների միջոցով (թվի 72%-ից ավելին կազմում են կանայք), իսկ 85-ը՝ դիմել են հասարակական աշխատանքի համար (մեծամասնությունը տղամարդիկ, 23-ը՝ կին), 85-ի դեպքում էլ գտնվել է լուծում: Ընդհանուր առմամբ, 605 մարդ բավարարվել է, մյուս 337-ի մասով հարցը գտնվում է ընթացքի մեջ: Օպերատիվ շտաբի միջնորդությամբ 380 մարդ ձեռք է բերել աշխատանք, այդ թվում նաև՝ Օպերատիվ շտաբի աշխատակազմի գերակշռող մասը տեղահանված արցախցիներ են, բացառություն է կազմում սպասարկող անձնակազմը: Ըստ Օպերատիվ շտաբի հայտնած տեղեկությունների՝ ընթացիկ տարում կլինեն նաև տարբեր ծրագրեր՝ պիլոտային և բիզնես ծրագրերի շրջանակներում, այդ ուղղությամբ տարվում են աշխատանքներ:

Նշվածը խոսում է այն մասին, որ իրավիճակը շարունակում է խնդրահարույց մնալ: Այսպիսով, Արցախից Հայաստան տեղահանված անձանց աշխատանքային իրավունքների ապահովումը, աշխատանքային հարաբերություններ ձևավորելու հարցում վերջիններիս համակարգված աջակցության ցուցաբերումը կրում է խիստ կարևոր բնույթ, ինչում պետությունը պետք է գործադրի անհրաժեշտ ջանքեր:

Նշվածի կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից տեղեկություն է տրամադրվել այն մասին, որ Հայաստան տեղափոխված՝ Արցախի քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման նպատակով 2021 թվականին իրականացվել են թվով 2 միջոցառումներ: ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 2119-Լ որոշման շրջանակներում 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ իրականացվել է 18 միջոցառում՝ ապահովելով 85 անձի ժամանակավոր զբաղվածությունը:

ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի N 2118-Լ որոշման շրջանակներում 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ, ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, 388 անձ ձեռք է բերել գործատուի մոտ աշխատանքային փորձառություն անցնելու և զբաղված դառնալու

հնարավորություն: Միաժամանակ, ևս 65 անձ ընդգրկվել է միջոցառման մեջ՝ Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) ներկայացուցչության աջակցությամբ:

Հարկ է նշել, որ Պաշտպանին հասցեագրած բողոքները վկայում են, որ թեև Արցախից տեղահանված անձանց համար իրականացվում են սոցիալական աջակցության ծրագրեր, այդ թվում՝ միանվագ դրամական օգնության տրամադրում, այդուամենայնիվ դրանք ուղղված չեն վերջիններիս սոցիալական ապահովածության խնդիրների և կարիքների առնչությամբ երկարաժամկետ և հեռանկարային լուծմանը:

Այս առումով կարևոր է ներդնել այնպիսի մեխանիզմներ, որոնց արդյունքում Արցախից տեղահանված մեծ թվով գործազուրկ քաղաքացիներին հնարավորություն ընձեռվի ձևավորել աշխատանքային հարաբերություններ՝ կարիքները սեփական միջոցներով ապահովելու երաշխիքներ ստեղծելու նպատակով:

Հարկ է նշել նաև, որ Պաշտպանին հասցեագրված բողոքներով արձանագրվել են դեպքեր, երբ վերը նշված միջոցառումների շրջանակներում Արցախից տեղահանված անձինք աշխատել են, սակայն գումարը տևական ժամանակ չեն ստացել:

Մասնավորապես, Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով անձը տեղեկություն է ներկայացրել այն մասին, որ բնակվում է Հայաստանի մարզերից մեկում: Վերջինս հավելել է նաև, որ ընդգրկվել է զբաղվածության ծրագրում, աշխատել 3 ամիս, սակայն վարձատրություն չի ստացել:

Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 2119-Լ որոշմամբ սահմանված կարգով Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության մարմինն է ապահովում ծրագրի շրջանակներում կնքված վարձատրվող հասարակական աշխատանքների իրականացման պայմանագրի կատարումը, այդ թվում՝ գումարների փոխանցումը: Այնուհետև, Պաշտպանի աջակցության շնորհիվ մարդկանց աշխատանքի դիմաց գումարները վճարվեցին վերջիններին:

*Այսպիսով, հարկ է մեկ անգամ ևս շեշտել, որ անհրաժեշտ է նախևառաջ իրականացնել տեղահանված անձանց կարիքների գնահատում, ինչը պիտի լինի շարունակական գործընթաց կյանքին զուգահեռ և համապատասխան ուսումնասիրությունների արդյունքում մշակել նրանց աշխատանքով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հարաբերություններ ձևավորելու հարցում աջակցություն ցուցաբերելու համակարգված քաղաքականություն, որով կնախատեսվեն խնդրի լուծմանն ուղղված ամբողջական և արդյունավետ կառուցակարգեր:*

## ԲԱԺԻՆ 19. ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆ ՀԱՅՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Փախստականները և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովումը պետությունների պոզիտիվ պարտականությունն է, որը նախատեսված է միջազգային տարբեր փաստաթղթերով, այդ թվում՝ ՀՀ կողմից վավերացված:

Միջազգային պաշտպանության կարիք ունեցող մարդիկ ստիպված են լինում լքել իրենց բնակավայրերը պատերազմների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների, ինչպես նաև տարբեր հիմքերով հետապնդումների պատճառով: Իրենցից անկախ պայմանների ստեղծման պատճառով իրենց տները լքած անձանց աջակցություն ստանալը համարվում է մարդու հիմնարար իրավունքներից մեկը:

Այս համատեքստում, կարևոր է իրավունքահեն մոտեցման երաշխավորմամբ քննարկել և հիմնավոր որոշմամբ բավարարել կամ մերժել նրանց ապաստանի հայցերը: Այդուամենայնիվ, կարևոր սկզբունք է, որ ապաստանի հայցի քննարկումը պետք է իրականացվի այն կանխավարկածով, որ մարդը բավարարում է ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու պայմաններին, քանի դեռ իրավասու մարմնի կողմից չի ապացուցվել հակառակը:

Այս ընթացքում և դրանց հետո նշված խումբ անձինք պետք է տրամադրել սոցիալական աջակցության: Սա պայմանավորված է նրանով, որ փախստականները հաճախ իրենց քաղաքացիության երկրում թողնելով իրենց սեփականությունը, տեղափոխվում են այլ պետություն և կարիք են ունենում բարեկեցիկ կյանքի համար անհրաժեշտ նվազագույն պայմաններ ունենալու, ինչպես նաև բավարար հմտություններ ինտեգրվելու ընդունող երկրի հասարակությունում:

Ինչպես նշվեց՝ Հայաստանը, հանդիսանալով մարդու իրավունքների միջազգային համակարգի մաս, ևս ունի միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց աջակցության տրամադրման պարտավորություն: ՀՀ կողմից 1951 թվականի Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան<sup>1132</sup> վավերացրել է 1993 թվականի հոկտեմբերի 4-ին, իսկ դրան կից 1967 թվականի Արձանագրությունը<sup>1133</sup> նույն թվականի հուլիսի 6-ին:

Ներպետական օրենսդրության՝ ոլորտը կարգավորող հիմնական իրավական ակտն է 2008 թվականի նոյեմբերի 27-ին ընդունված «Փախստականների և ապաստանի մասին» նոր օրենքը<sup>1134</sup>, որն ուժի մեջ է մտել 2009 թվականի հունվարի 24-ին: Օրենքը կարգավորում է փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքները, ապաստանի ընթացակարգը, իրավասու մարմինների լիազորությունները և պարտականությունները, ինչպես նաև այլ վերաբերելի հարցեր:

<sup>1132</sup>Այսուհետ սույն բաժնում՝ Կոնվենցիա:

<sup>1133</sup>Այսուհետ սույն բաժնում՝ Արձանագրություն:

<sup>1134</sup>Այսուհետ սույն բաժնում՝ Օրենք:

Միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձանց իրավունքները, ինչպես նաև ոլորտի իրավասու մարմինների լիազորություններն ու պարտականությունները կարգավորվում են նաև այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով:

### **1. Ընդհանուր տեղեկություն Հայաստանում փախստականների և ապաստանի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետություն 1990-ականներից սկսած եղել են մի քանի խոշոր ներհուքեր: Դրանցից առաջինն արձանագրվել է Արցախյան հակամարտության արդյունքում, երբ Ադրբեջանից 1988-ից 1992 թվականների ընթացքում տեղի ունեցան տեղահանումներ: Այդ ժամանակ էթնիկ հայերի թիվն Ադրբեջանի ԽՍՀ խոշոր քաղաքներում կազմել է առավել քան 360,000: Հատկանշական է, որ տեղահանությունների համար պատճառ հանդիսացան էթնիկ պատկանելության հիմքով տեղի ունեցած զանգվածային ջարդերը, ինչի արդյունքում Ադրբեջանի տարբեր քաղաքներում, ներառյալ Բաքվում, Սումգայիթում, հարյուրավոր հայեր սպանվեցին, ենթարկվեցին անմարդկային վերաբերմունքի և ծեծի:

Հաջորդ խոշոր ներհուքը եղել է Սիրիայի Արաբական Հանրապետությունից, որի պատճառն էր պատերազմը: Դրա արդյունքում տարիներ շարունակ այնտեղ բնակվող ազգությամբ հայեր ստիպված եղան լքել իրենց բնակավայրերը և ապաստան հայցել Հայաստանի Հանրապետությունում: ՄԱԿ ՓԳՀ-ի պաշտոնական տվյալների համաձայն՝ 2011 թվականից ի վեր ավելի քան 6.6 միլիոն մարդ լքել է Սիրիան, որոնցից 5.6-ն ապաստանել է հարևան երկրներում: Ըստ նույն աղբյուրի՝ 6.7 միլիոն սիրիացիներ համարվում են ներքին տեղահանված անձինք<sup>1135</sup>:

2010-ից մինչև 2018 թվականը Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ են ստացել Սիրիայի Արաբական Հանրապետության 882 քաղաքացի: Խնդրի առկայությամբ պայմանավորված՝ մինչ օրս շարունակվում է սիրիացիների ներհուքը հանրապետություն:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության սրման արդյունքում՝ 2016 թվականի ապրիլին Արցախից Հայաստան հարկադրաբար տեղափոխվեցին և ապաստան ստացան այնտեղ բնակվող մեծ թվով ազգությամբ հայեր: Նշվածին անդրադարձ է կատարվել նաև Մարդու իրավունքների պաշտպանի «Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» արտահերթ զեկույցում<sup>1136</sup>:

<sup>1135</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ պաշտոնական կայքէջը, <http://www.unhcr.org/syria-emergency.html>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

<sup>1136</sup> Տե՛ս «Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցը, էջ 10, <https://ombuds.am/images/files/ddd65506a847cc7a7a4be2e24c580a60.pdf>



Որպես զանգվածային ներհոսքի պատճառ պետք է առանձնացնել Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախի դեմ սանձազերծած լայնածավալ պատերազմը, որի արդյունքում կոպտորեն ոտնահարվեցին տասնյակ հազարավոր խաղաղ բնակիչների՝ հայերի կյանքի, առողջության, սեփականության և կենսական կարևորության մյուս իրավունքները: Արցախի հայերի նկատմամբ տեղի ունեցան պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ ու խաղաղ բնակավայրերի զանգվածային ավերածություններ՝ էթնիկ զտումների և ահաբեկչական մեթոդներով ցեղասպանության նպատակով: Էթնիկ պատկանելության հիմքով Ադրբեջանում հայատյացության տարիների քաղաքականությունը հանգեցրեց ազգությամբ հայ զինձառայողների և քաղաքացիական անձանց նկատմամբ խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի (գլխատումներ, սպանություններ և այլն):

Ադրբեջանական զինված ուժերի՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքի և միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է բազմաթիվ զեկույցներ: Դրանք հիմնավորել են Ադրբեջանում ապօրինի պահվող հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքը և նրանց դեմ հարուցված քրեական գործերի անօրինականությունը, արգելված զինատեսակների կիրառումը քաղաքացիական օբյեկտների դեմ և այլն<sup>1137</sup>:

Այս մարդասիրական և մարդու իրավունքների համար աղետալի դեպքերը ստիպեցին մարդկանց լքել իրենց բնակավայրերը և տեղահանվել այլ՝ առավել ապահով վայրեր: Նրանց մեծ մասը ստիպված եղավ ապաստանել Հայաստանում: ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության<sup>1138</sup> տրամադրած տվյալների համաձայն՝ Արցախից Հայաստան է տեղահանվել 91760 անձ:

Վերը թվարկված հիմնական ներհոսքերից զատ, Հայաստանի Հանրապետությունում ապաստան են հայցել և փախստականի կարգավիճակ ստացել նաև այլ երկրների քաղաքացիներ, այդ թվում՝ Իրանից, Սիրիայից, Իրաքից, Կուբայից, Թուրքիայից և այլն:


Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ապաստան է հայցել 260 անձ:

Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ 2021 թվականի ընթացքում փախստականի կարգավիճակ է ստացել 78 անձ, իսկ մերժում ստացած ապաստան հայցողների թիվը կազմել է 67: Թվով 69 ապաստան հայցողի վերաբերյալ դիմում կարճվել կամ կասեցվել է:

<sup>1137</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցները՝ <https://www.ombuds.am/am/site/SpecialReports>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ


<sup>1138</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Միգրացիոն ծառայություն:

## Վիճակագրական տվյալներ 2021 թվականի ընթացքում ապաստանի դիմումների արդյունքների վերաբերյալ



Հարկ է նկատել, որ նախորդ տարվա համեմատ ապաստան հայցող անձանց թիվը աճել է շուրջ 20%-ով: 2020 թվականին արձանագրվել էր 207 դեպք:

Միգրացիոն ծառայության կողմից ներկայացվել են նաև վիճակագրական տվյալներ հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող և փախստականի կարգավիճակ ստացած անձանց քաղաքացիության երկրների վերաբերյալ, որոնք ներկայացվում են ստորև՝



Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, ապաստան հայցող անձանց մեծամասնությունը եղել են Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ ընդհանուր թվի 46%-ը: Թվաքանակով երկրորդը Իրաքի Հանրապետության քաղաքացիներն են՝ 52 ապաստան հայցող կամ ապաստան հայցող անձանց ընդհանուր թվի 20%-ը: Նշված երկրներից զատ, ապաստան են հայցել նաև Թուրքիայի, Ռուսաստանի, Կուբայի, Սիրիայի և այլ երկրների քաղաքացիներ, ինչպես նաև 1 քաղաքացիություն չունեցող անձ:

Միգրացիոն ծառայության տրամադրած վիճակագրական տվյալների համաձայն՝ 2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ստացածները մեծամասամբ եղել են Իրանի Իսլամական Հանրապետությունից՝ 40 անձ: Հայաստանում փախստականի կարգավիճակ ստացած Սիրիայի Արաբական Հանրապետության քաղաքացիների թիվը կազմել է 20: Այլ երկրներից՝ Իրաքից, Թուրքիայից, Նիգերիայից, Կուբայից, Լիբանանից և Ուկրաինայից ապաստան են ստացել ընդհանուր թվով ևս 18 անձ:

**2. 2021 թվականի ընթացքում Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղությունները**

2021 շարունակվել են Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը շարունակել է աշխատանքները փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման ոլորտում: Աշխատանքի հիմնական ուղղություններն են եղել օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունը, այդ թվում՝ անհատական բողոքների քննարկման համատեքստում:

Զարգացվել է համագործակցությունը ոլորտի միջազգային և հասարակական կազմակերպությունների հետ: Մասնավորապես, ՄԱԿ ՓԳՀ-ի և Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ փոխգործակցությամբ շարունակվել են ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի<sup>1139</sup> վերապատրաստումները: Դրանց ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչը քննարկել է ապաստանի ընթացակարգն ու սկզբունքները, ինչպես նաև ոլորտում Պաշտպանի աշխատանքի հիմնական ուղղություններն ու կատարած աշխատանքը:

Փախստականների և ապաստան հայցող անձանց իրազեկվածության մակարդակի բարձրացումը ևս կարևոր ուղղություն է: Նշված խումբ անձինք տեղահանվելով իրենց բնակավայրերից և հայտնվելով, որոշ դեպքերում, անձանոթ միջավայրում, տեղյակ չեն լինում իրենց իրավունքներից և պարտականություններից:

Հետևաբար, Պաշտպանը շարունակաբար իրականացնում է նրանց իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ: Ինչպես նշվել էր 2020 թվականի տարեկան հաղորդմամբ՝ դեռևս 2017 թվականին յոթ լեզվով (հայերեն, անգլերեն, ռուսերեն, արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն և իսպաներեն) տպագրվել են փախստականների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ, որոնք Պաշտպանի աշխատակազմի և գործընկեր կառույցների միջոցով մինչ այժմ բաժանվում են նրանց: Պետական սահմանի անցման կետերում տեղադրված են ՀՀ ապաստանի ընթացակարգի վերաբերյալ տեղեկատվական պաստառները նշված յոթ լեզվով:

2019 թվականին նույն լեզուներով տպագրվել են նաև Պաշտպանի՝ որպես Կանխարգելման ազգային մեխանիզմի գործառույթների վերաբերյալ տեղեկատվական թերթիկներ և պաստառներ, որոնք տարածվելու են փակ հաստատություններում:

2020 թվականին մշակվել էր «Նոր կորոնավիրուսի և արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների վերաբերյալ» ուղեցույցը, որը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից իրականացվող «Մարդու իրավունքների խթանում և պաշտպանություն» ծրագրի աջակցությամբ թարգմանվել է անգլերեն, ռուսերեն ասորերեն, հնդկերեն, եզդիերեն և քրդերեն: Հատկանշական է, որ ուղեցույցը հասանելի է նաև բրայլյան գրով<sup>1140</sup>: Ուղեցույցում հատուկ անդրադարձ է կատարվում Նոր կորոնավիրուսի և արտակարգ դրության պայմաններում ապաստանի իրավունքի ապահովմանը<sup>1141</sup>:

<sup>1139</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Սահմանապահ զորքեր:

<sup>1140</sup> Տե՛ս «Նոր կորոնավիրուսի և արտակարգ դրության պայմաններում մարդու իրավունքների վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի ուղեցույցը, <https://www.ombuds.am/images/files/f591c1548cbb355483f8919514c7f0dd.pdf>

<sup>1141</sup> Տե՛ս 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդումը, էջ 1511, <https://www.ombuds.am/images/files/883f55af65e3c33553139031c7ac0ce6.pdf>:

### **3. 2021 թվականի հիմնական զարգացումները**

Սույն տարեկան հաղորդման մշակման շրջանակներում, ինչպես նաև 2021 թվականին իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ «Հայաստանի Հանրապետությունում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում, ինչպես նաև տարեկան հաղորդումներում ներկայացված խնդիրների մի մասը լուծվել են: Օրենսդրական և գործնական այլ զարգացումներ նույնպես արձանագրվել են:

Մասնավորապես, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններով և լրացումներով սահմանվել է, որ այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որն ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը, կամ որի նկատմամբ քրեական հետապնդում է իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ որը ենթակա է հանձնման օտարերկրյա պետությանը, կարող է դիմել ապաստան ստանալու կամ փախստականի կարգավիճակ ձեռք բերելու համար այդ իրավունքի մասին ծանուցման պահից՝ 15 օրվա ընթացքում:

Նախատեսվել է նաև իրավասու մարմնի պաշտոնատար անձի պարտականություն վերը նշված անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, նրան ազատությունից զրկելու կամ նրա ազատությունը այլ կերպ սահմանափակելու պահից սկսած՝ անհապաղ, բայց ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, պարզաբանել ապաստան կամ փախստականի կարգավիճակ հայցելու նրա իրավունքը, որի վերաբերյալ նրան տալիս է գրավոր ծանուցագիր և ապահովում է նրա իրավունքի իրացումը՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստանալու մասին նրա դիմումն ուղարկելով լիազոր մարմին:

Հաշվետու տարվա մայիսին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» որոշումը:

Հայեցակարգի և գործողությունների ծրագրի նպատակն է միգրացիայի կառավարման ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած պարտավորությունների մեկտեղումը մեկ միասնական փաստաթղթում, ոլորտի կառավարման սկզբունքների սահմանումը և միգրացիոն քաղաքականության հիմնական ուղղությունների ձևակերպումը: Փաստաթուղթը քննարկում է նաև երկրի ապաստանի համակարգին առնչվող թեմաներ:

Ըստ Միգրացիոն ծառայության ներկայացրած տվյալների՝ *հաշվետու ժամանակահատվածում ՀՀ-ում փախստական ճանաչված 19 փախստական ընդանիքներին բնակարան վարձակալելու նպատակով 60 000 ՀՀ դրամի չափով 9 ամիս տևողությամբ տրամադրվել է փոխհատուցում:*

Նույն ժամանակահատվածում ՀՀ ՏԿԵՆ ՄԾ «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի սպասարկման ենթակա Երևան քաղաքի Մոլդովական 29/1 հասցեի «Ինտեգրման կենտրոն»-ում սենյակներ են հարկացվել ՀՀ-ում նոր փախստական ճանաչված 8 ընտանիքների՝ 16 անձանցով, իսկ ՀՀ Արարատի մարզի Դարբնիկ համայնքի Անդրանիկի 4 հասցեում գտնվող սոցիալական տանը բնակարաններ են հարկացվել 3 ընտանիքների:

Ողջունելի է նաև այն, որ Միգրացիոն ծառայության պնդմամբ՝ ՀՀ-ում յուրաքանչյուր ապաստան հայցողի և ճանաչված փախստականի հետ Միգրացիոն ծառայության համապատասխանաբար՝ ապաստանի հարցերի և իրավական ապահովման բաժնի, և ինտեգրման հարցերի բաժնի աշխատակիցներն անցկացրել են հանդիպում/խորհրդակցություն, որի ժամանակ նրանց բացատրվել են ՀՀ-ում իրենց իրավունքներն ու պարտականությունները: Փախստական ճանաչված անձանց դեպքում իրականացվել է նաև կարիքների գնահատում, որի հիման վրա հետագայում կազմվել է ինտեգրման պլան, որտեղ և արձանագրվել են անձի հետ կատարվող աշխատանքները, այդ թվում՝ նրա ներառումը Միգրացիոն ծառայության կողմից իրականացվող ծրագրերում և ուղղորդումներն այլ կառույցներ: Անհրաժեշտության դեպքում նշված աշխատանքներին ներգրավվել է նաև համապատասխան լեզվի թարգմանիչ:

Լուծում ստացած խնդիրներն առնչվել են նաև հատուկ հաստատություններում փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովմանը:

Անդրադառնալով ապաստան հայցող անձանց համար նոր ժամանակավոր տեղավորման կենտրոնի կառուցման հարցին, հարկ է նկատել, որ ըստ Միգրացիոն ծառայության ներկայացրած տվյալների՝ Ապաստան հայցողների համար նախատեսված ժամանակավոր տեղավորման նոր՝ 100 տեղանոց կենտրոնի կառուցումը ամրագրված է ՀՀ կառավարության 18.11.2021թ. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 94.2 կետով: Միջոցառման իրականացման ժամկետն է 2022թ. հուլիսի 3-րդ փասնօրյակը:

Կացարանի շինարարության համար ֆինանսական միջոցները տրամադրվել են Դանիայի, Նիդեռլանդների և Գերմանիայի կառավարությունների կողմից, իսկ շինարարության հետ կապված աշխատանքները կազմակերպվում են ՄՔԶՄԿ (ICMPD) հայաստանյան գրասենյակի միջոցով:

2021թ. հունիսի 28-ին տեղի է ունեցել կացարանի հիմնարկերի արարողությունը, որից հետո սկսված շինարարական աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ոլորտին առնչվող այլ խնդիրներ ևս 2021 թվականի ընթացքում լուծում են ստացել:

#### **4. 2021 թվականին արձանագրված հիմնական խնդիրները**

Չնայած նրան, որ հաշվետու տարվա, ինչպես նաև դրան նախորդող ժամանակահատվածում իրավասու մարմինների կողմից ձեռնարկվել են փախստականների և ապաստան հայցողների իրավունքների ապահովմանն ու պաշտպանությանն ուղղված քայլեր և առանձին հարցերի հետ կախված գրանցվել է առաջընթաց, ոլորտում դեռևս շարունակում են առկա լինել խնդիրներ, որոնք պահանջում են լուծումներ:

Հարկ է նկատել, որ 2021 թվականի ընթացքում շարունակել են արդիական մնալ նախորդ տարիներին արձանագրված սկզբունքային խնդիրներ, որոնք պահանջում են հրատապ լուծումներ, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների միջոցով: Այդ խնդիրների լուծումը միտված է ինչպես փախստականների և ապաստան հայցող անձանց հիմնարար իրավունքների երաշխավորմանը, այնպես էլ Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների իրականացմանն ու կարևոր չափանիշների ապահովմանը:

Ստորև ներկայացվում են արձանագրված խնդիրները:

##### 4.1 Փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձելիության սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար օրենսդրությամբ հատուկ կարգավիճակի բացակայություն

Սույն խնդիրն արձանագրվել է նաև «Փախստականների և ապաստան հայցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ» Մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույցում, որը հրապարակվել էր 2017 թվականին:

Այսպես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Փախստական է համարվում այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»: Նույն մասի 2-րդ կետը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը լքել է իր քաղաքացիության կամ նախկին մշտական բնակության երկիրը համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

Հարկ է նկատել, որ Օրենքով սահմանված փախստականի հասկացությունն արտացոլել է Կոնվենցիայի և Արձանագրության համապատասխան դրույթով ամրագրված հասկացությունը, ինչն, անշուշտ, ողջունելի է:

Այդուամենայնիվ, Օրենքը և վերաբերելի այլ իրավական ակտեր չեն նախատեսում պաշտպանության որևէ այլ միջոց, չեն սահմանում լրացուցիչ պաշտպանություն տրամադրելու կարգ, որը հնարավորություն կտար չվերադարձնելու սկզբունքով սահմանված հիմքերի առկայության դեպքում անձին նման պաշտպանություն և համապատասխան կարգավիճակ տալ՝ ապահովելով նրա անվտանգությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ներպետական օրենսդրության վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել, որ հնարավոր են դեպքեր, երբ անձը, չստանալով փախստականի կարգավիճակ կամ այդ կարգավիճակի դադարման դեպքում պետք է արտաքսվի ծագման երկիր: Այնուամենայնիվ, դա անհնար է, եթե կա հիմնավոր վտանգ, որ նա կենթարկվի մահապատժի, խոշտանգման, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Հատկանշական է, որ Օրենքի 58-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ Ոստիկանությունը պատասխանատվություն է կրում ապաստանի տրամադրումը մերժելու մասին վերջնական որոշում ստացած օտարերկրյա քաղաքացու կացության կարգավիճակի հարցը ՀՀ օրենսդրությանը համապատասխան լուծելու համար: Սա հատկապես կարևորվում է այն դեպքերում, երբ ապաստանի տրամադրման մերժում ստացած անձի վերադարձն անհնարին է՝ պայմանավորված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի նորմերով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի<sup>1142</sup> վճիռներում, օրինակ, սահմանված է պետության հայեցողությունը հիմնավոր պատճառների առկայության դեպքում անձին թույլ չտալու մուտք գործել երկիր կամ արտաքսելու հարցում: Այնուամենայնիվ, դատարանը կարևորել է նաև դրա շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի արգելքի ապահովումը, որն ունի բացարձակ բնույթ: Մասնավորապես, Սայիդն ընդդեմ Նիդեռլանդների գործով 2005 թվականի հուլիսի 5-ի վճռի 46-րդ կետի համաձայն՝ *պետությունները, հաշվի առնելով միջազգային իրավունքի նորմերը և պայմանագրային պարտավորությունները, իրավունք ունեն վերահսկել օտարերկրացիների մուտքը, բնակությունը և արտաքսումը (...): Այնուամենայնիվ, պետության կողմից արտաքսումը կարող է առաջացնել խնդիրներ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի՝ խոշտանգումների արգելքի լույսի ներքո և պարասխանատվություն տրվել պետության համար, եթե առկա են լուրջ հիմքեր, որ արտաքսվելու դեպքում անձը կարող է ենթարկվել 3-րդ հոդվածին հակասող վերաբերմունքի*<sup>1143</sup>:

Անհրաժեշտ է ընդգծել, որ եթե Կոնվենցիան նախատեսում է որոշ բացառություններ չվերադարձելիության սկզբունքից, ապա խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ

<sup>1142</sup>Այսուհետ՝ Եվրոպական դատարան:

<sup>1143</sup>Տե՛ս 2005 թվականի հուլիսի 5-ի Սայիդն ընդդեմ Նիդեռլանդների գործով Եվրոպական դատարանի (գանգատ թիվ 2345/02) վճռի 46-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-69614>, Տե՛ս 2014թ. նոյեմբերի 18-ի Մ.Ա.-ն ընդդեմ Շվեյցարիայի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 52589/13) 52-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-148078>:



նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ 1984 թվականի կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ «Ոչ մի մասնակից պետություն չպետք է որևէ անձի արտաքսի, վերադարձնի կամ հանձնի մեկ այլ պետության, եթե լուրջ հիմքեր կան ենթադրելու, որ նրան կարող է սպառնալ խոշտանգումների ենթարկվելու վրանգ:»<sup>1144</sup>:

Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին 2002 թվականի կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետով նախատեսված է, որ «Հանձնում չի կատարվում, եթե ծանրակշիռ հիմքեր կան ենթադրելու, որ հանձնման վերաբերյալ հարցումը կապված է ռասայի, սեռի, դավանանքի, էթնիկական պատկանելության կամ քաղաքական հայացքների համար անձին հետապնդելու հետ:»<sup>1145</sup>:

Գործնականում այս խնդրի լուծման համար անհրաժեշտ իրավական հիմքերի բացակայությունը տվյալ անձանց, իրավական պաշտպանվածության առումով, թողնում է անապահով վիճակում: Միջազգային իրավաբանությունը նման պարագայում սահմանում է լրացուցիչ պաշտպանության տրամադրման հնարավորություն: Օրինակ՝ Վրաստանում, բացի փախստականի կարգավիճակից, տրամադրվում է նաև **մարդասիրական կարգավիճակ**, որը ժամանակավորապես տրվում է այն անձանց, ովքեր չեն համապատասխանում փախստականի կարգավիճակի համար սահմանված չափանիշներին, սակայն ստիպված լքել են իրենց երկիրը բռնության, արտաքին ագրեսիայի, բռնազավթման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների և հասարակական կարգի զանգվածային խախտումների հետևանքով, ինչպես նաև այն անձանց, որոնք հարևան երկրներից են եկել և ապաստան են փնտրում բնական աղետներից<sup>1146</sup>:

Պաշտպանության նման մեխանիզմ ամրագրված է նաև Պորտուգալիայի օրենսդրությամբ: Մասնավորապես, սուբսիդիար պաշտպանություն է նախատեսված այն ապաստան հայցողների համար, ում նկատմամբ կիրառելի չեն փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշները, սակայն վերջիններս չեն կարող վերադառնալ իրենց քաղաքացիության կամ մշտական բնակության երկիր՝ մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ զգալի վնաս կրելու վրանգի պատճառով<sup>1147</sup>: Նշվածը հնարավորություն է տալիս չվերադարձնելու իրավունքից օգտվող անձանց կոնկրետ իրավական կարգավիճակով բնակվել օտար երկրում և

<sup>1144</sup>Տե՛ս 1984 թվականի դեկտեմբերի 10-ի ՄԱԿ-ի Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի դեմ կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասը, <http://www.ohchr.org/documents/professionalinterest/cat.pdf>:

<sup>1145</sup>Տե՛ս 2002 թվականի Քաղաքացիական, ընտանեկան եվ քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիայի 89-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետը, <http://www.parliament.am/library/APH/195.pdf>:

<sup>1146</sup>Տե՛ս «Փախստականի և մարդասիրական կարգավիճակի մասին» Վրաստանի օրենքի 4-րդ հոդվածը, <http://mra.gov.ge/res/docs/2014022416564743748.pdf>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ

<sup>1147</sup>Տե՛ս «Փախստականների / Ապաստանի մասին» Պորտուգալիայի 27/2008 օրենքի 7-րդ հոդվածը, <http://www.refworld.org/docid/48e5c13c8.html>, հասանելի է 2022 թվականի փետրվարի 23-ի դրությամբ:

ստանալ միջազգային պաշտպանություն իր՝ ոչ արդյունավետ ազգային պաշտպանության փոխարեն:

Ինդրի լուծման առումով պետությունը ձեռնարկել է որոշ քայլեր: ՀՀ ոստիկանության կողմից մշակվել և շրջանառվել է «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այն նախատեսում է կարճատև կացության կարգավիճակի տրամադրում ի թիվս այլոց, նաև բոլոր այն օտարերկրացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք, ովքեր չեն կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վտանգ կա, որ նրանք կենթարկվեն դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների կատանան կարճաժամկետ կացության կարգավիճակ: Այդուամենայնիվ, նման կարգավորում 2021 թվականի ընթացքում ևս չի ընդունվել:

Ինչպես նշվել էր Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ՝ նախագծի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմը ներկայացրել է առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերում են քոլոր դեպքերում վերը նշված խումբ անձանց կացության կարգավիճակ տրամադրելուն, օտարերկրացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից կարգավիճակի ճանաչման վերաբերյալ դիմում ներկայացնելու ընթացակարգին և այլ հարցերին:

Ուստի, անհրաժեշտ է ամրագրել անձանց նոր իրավական կարգավիճակ, որը հնարավորություն կտա լրացուցիչ պաշտպանություն սահմանել փախստականի կարգավիճակի համար անհրաժեշտ չափանիշներին չբավարարող, սակայն չվերադարձնելու սկզբունքի պաշտպանությունից օգտվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար: Սա կապահովի վերաբերելի իրավական կարգավորումների համապատասխանությունը միջազգային չափանիշներին՝ կանխելով մարդու իրավունքների և պետության սրանձնած միջազգային պարտավորությունների հնարավոր խախտման դեպքերը:

#### 4.2 Մահապատժի ենթարկվելու վրանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման օրենսդրական արգելքի բացակայությունը

Օրենքի 9-րդ հոդված 1-ին մասով սահմանվում է չվերադարձելիության սկզբունքը, ըստ որի արգելվում է փախստականին որևէ կերպ վերադարձնել այն փարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վրանգ սպառնալ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության, քաղաքական հայացքների կամ համապարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների հիմքով: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձը չի կարող արտաքսվել, վերադարձվել կամ հանձնվել այլ

երկիր, որտեղ հիմնավոր պատճառներով վրանգ կա, որ նա կենթարկվի դաժան և անմարդկային կամ ստորացուցիչ վերաբերմունքի կամ պատժի, ներառյալ՝ խոշտանգումների»:

Նշվածի հետ կապված անընդունելի է մեջբերված պատճառների թվում կյանքի իրավունքին առնչվող բացառության բացակայությունը: Մասնավորապես, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող արտաքսվել կամ հանձնվել օտարերկրյա պետությանը, եթե իրական սպառնալիք կա, որ տվյալ անձը կարող է այդ երկրում ենթարկվել **մահապատժի**, խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»: Նման մոտեցումը համահունչ է Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ 2-րդ մասի հոդվածի կարգավորումներին<sup>1148</sup>:

Ուստի, անհրաժեշտ է օրենքի՝ չվերադարձելիության սկզբունքն ամրագրող համապատասխան հոդվածում ներառել նաև մահապատժի ենթարկվելու վրանգի առկայության պարագայում անձի արտաքսման կամ հանձման արգելքը:

4.3 Միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընդանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակ դադարումը

Օրենքի 7-րդ հոդված 5-րդ մասի համաձայն՝ «Փախստականի կարգավիճակ ստացած անձի ընդանիքի անդամների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի համաձայն ստացած **փախստականի կարգավիճակը չեղյալ է հայտարարվում**, եթե ընդանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը, սույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, չեղյալ է հայտարարվել: Այդ անձի ընդանիքի անդամները չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա»:

Նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ «Փախստականի կարգավիճակ ստացած անձի ընդանիքի անդամների՝ սույն հոդվածի 1-ին, 2-րդ կամ 3-րդ մասերի համաձայն ստացած **փախստականի կարգավիճակը դադարում է**, եթե ընդանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը, սույն օրենքի 53-րդ հոդվածի համաձայն, դադարում է, բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքի: Այդ անձի ընդանիքի անդամները չեն զրկվում դրանից անմիջապես հետո ապաստանի հայց ներկայացնելու հնարավորությունից՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա»:

<sup>1148</sup>Տե՛ս Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, [http://www.europarl.europa.eu/charter/pdf/text\\_en.pdf](http://www.europarl.europa.eu/charter/pdf/text_en.pdf):

Վերը վկայակոչված կարգավորումները որոշակի առումով շեղվում է ապաստանի որոշման ընթացակարգի միջազգային չափանիշներից: Մասնավորապես, չի ապահովվում անհատական մոտեցում, քանի որ չի ուսումնասիրվում փախստականի կարգավիճակ ստացած անձի ընտանիքի անդամների կարգավիճակի դադարեցման կամ չեղյալ հայտարարելու հիմքերը, ինչը կարող է հանգեցնել նրանց իրավունքների ոչ պատշաճ իրացման:

Հարկ է նկատել նաև, որ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված բողոքների վերլուծությունը վկայում է, որ ընտանիքի անունից միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարելու դեպքում ընտանիքի մյուս անդամների փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելը կամ դադարեցնելը գործնականում առաջացնում անտեղի բարդություններ:

Այսպես, Օրենքի 7-րդ հոդվածի ինչպես 5-րդ, այնպես էլ 6-րդ մասը նախատեսում է միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի ընտանիքի անդամներին փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելուց կամ դադարեցնելուց անմիջապես հետո **ապաստանի նոր հայց ներկայացնելու հնարավորություն**՝ հիմնվելով իրենց անձնական պատճառների վրա: Նշված դեպքում անձը ունենում է ապաստանի նոր հայց ներկայացնելու, ինչպես նաև Միգրացիոն ծառայության կողմից դրա լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկման իրավունք: Սա առաջացնում է կրկնակի աշխատանք պետական մարմնի և անտեղի բարդեցված գործընթաց ապաստան հայցողի համար:

Հետևաբար, ինչպես պետական լիազոր մարմնի ռեսուրսների խնայողության, այնպես էլ ապաստան հայցողի իրավունքների ապահովման արդյունավետ միջոցներ ստեղծելու տեսանկյունից առավել նպատակահարմար է ընտանիքի յուրաքանչյուր անդամի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու կամ դադարեցնելու վերաբերյալ հարցերը քննարկել անհատական սկզբունքով: Նման պարագայում կապահովվի ինչպես ապաստան հայցող անձի նկատմամբ անհատական մոտեցում, այնպես էլ վարույթի շրջանակներում նրա համապատասխան իրավունքների ապահովումը:

*Հիմք ընդունելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է Օրենքով սահմանել այնպիսի կարգավորում, ըստ որի՝ միասնական ապաստանի հայց ներկայացրած անձի փախստականի կարգավիճակը չեղյալ հայտարարելու և դադարելու դեպքում նրա ընտանիքի անդամների կամ խնամարկյալների կարգավիճակը կդադարի միայն դրա համար սահմանված անհատական վարույթով քննություն անցկացնելու և կարգավիճակը չեղյալ հայտարարելու ու դադարելու համար բավարար հիմքերի առկայության դեպքում:*

4.4 Ապաստան հայցող անձանց՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց գանկում բացակայություն

Խնդիրը քննարկվել է Պաշտպանի կողմից նաև նախորդ տարեկան հաղորդումներում: Այսպես, Օրենքը, կոնվենցիոն չափանիշներից դրականորեն շեղվելով, վարձատրվող աշխատանքի իրավունքով օժտում է և՛ ապաստան հայցողներին, և՛ արդեն իսկ փախստականի կարգավիճակ ստացած անձանց՝ հավասարեցնելով նրանց ՀՀ քաղաքացիների հետ: Մասնավորապես, 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Ապաստան հայցողներն ու Հայաստանի Հանրապետությունում ապաստան ստացած փախստականներն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության փարածքում աշխատանք փնտրելու և աշխատելու նույն պայմաններով, ինչ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:»**:

Միևնույն ժամանակ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի ժա) կետը, ամրագրելով աշխատանքի թույլտվության բացառությունները, կարգավորման շրջանակից դուրս է թողել ապաստան հայցող անձանց. *«Առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում կարող են աշխատել փախստականի կարգավիճակ ունեցող, Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք՝ կացության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածով:»*:

Նշվածը կարող է անհարկի շփոթություն առաջացնել և գործնականում սահմանափակել ապաստան հայցող անձանց կողմից իրենց աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունը: Հետևաբար, անհրաժեշտ է օրենսդրական դաշտի միանման կարգավորումների համապատասխանեցնելու միջոցով, սահմանել Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ ապաստանի ընթացակարգը վերջնական որոշման կայացումը տևում է մի քանի տարի, իսկ այդ ընթացքում ապաստան հայցող անձինք շարունակում են բնակվել Հայաստանում: Թեև նրանք ստանում են որոշակի աջակցություն պետությունից, այդուամենայնիվ, հաճախ դա չի բավարարում և նրանք ցանկանում են աշխատել: Նրանց աշխատանքի ապահովումը կարևոր է նաև ինտեգրման տեսանկյունից:

Հարկ է նկատել, որ 2019 թվականին «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի քննարկվող հոդվածում կատարվել է լրացում: Այն նախատեսում է, որ առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի կարող են աշխատել նաև օտարերկրացի դատապարտյալները կամ կալանավորված անձինք, ինչպես նաև պրոբացիայի շահառու հանդիսացող օտարերկրացիները: Սա ներառում է նաև ապաստան հայցող անձանց: Թեև Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել էր նկատառում ազատության մեջ գտնվող ապաստան հայցող անձանց ևս նման արտոնություն շնորհելու համար, այդուամենայնիվ, դա չէր ընդունվել պատճառաբանելով, որ նախագծի նպատակն է ազատությունից զրկված անձանց միջև հավասարության ապահովը խրախուսանքի միջոցների կիրառման համատեքստում: Հետևաբար, խնդիրն ամբողջական լուծում չի ստացել:

*Իբրև լուծում՝ առաջարկվում է «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու*

միջոցով՝ առանց աշխատանքի թույլտվության աշխատելու իրավունք ունեցող անձանց ցանկում ավելացնել նաև ապաստան հայցող անձանց:

4.5 Ապաստանի հայցեր ընդունող պետական մարմիններում հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանության բացակայություն

Սույն խնդիրն արձանագրվել է նախորդ տարիների հաղորդումներում: Մասնավորապես, Օրենքի՝ հարցազրույցի անցկացմանն առնչվող 51-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ «**Եթե ապաստան հայցողը չունի հայերենի բավարար իմացություն, ապա միգրացիայի հարցերով լիազոր մարմինը նրան տրամադրում է անվճար թարգմանիչ (...):**»: Հետևաբար, Միգրացիոն ծառայությունը օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է հարցազրույցի ընթացքում ապահովել անվճար թարգմանություն: Հատկանշական է նաև, որ Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Միգրացիոն ծառայությունից զատ հարցազրույց ապաստան հայցողի հետ անցկացնելու լիազորություն ունեն նաև **Սահմանապահ գործերը, Ոստիկանությունը և ազատագրկման վայրի վարչակազմը**: Դրա հետ միասին ապաստանի հայց ընդունող նշված մարմինների լիազորությունները սահմանող կարգավորումներում բացակայում են թարգմանչական ծառայությունների մատուցման պարտավորությունների մասին դրույթները:

Ստացվում է, որ ապաստանի հայց ընդունող մարմինները պարտավոր են տրամադրել անհրաժեշտ տեղեկություն և վարել հարցազրույցներ Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց ներկայացնել ցանկացող անձանց հետ, այնուամենայնիվ, նման դեպքերում անձի՝ անվճար թարգմանչի ծառայություններից օգտվելու հնարավորությունն օրենսդրական ամրագրում չի ստացել:

Հարկ է նկատել, որ այս խնդիրն արձանագրվել էր նաև Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդմամբ:

*Ուստի, անհրաժեշտ է Օրենքում լրացում կատարելու միջոցով ապաստանի հայցեր ընդունող բոլոր պետական մարմինների համար նախատեսել հարցազրույցի ընթացքում անվճար թարգմանչական ծառայություններ տրամադրելու պարտավորություն:*

4.6 Կացարանում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսված չէ օրենքով

Ապաստան հայցող անձանց ժամանակավոր կացարանի տրամադրումը բխում է միջազգային չափանիշներից և պետության պարտականություններից: Սա պայմանավորված է նրանով, որ կանխատեսելիորեն միջազգային պաշտպանություն հայցած անձինք առավելապես չունեն բնակության որևէ վայր:

Այդ նպատակով Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ «Կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որն այդ նպատակով սրեղծված հատուկ հաստատություն է: (...)»:

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ կարգավորվում են կացարանում ապաստան հայցող անձանց բնակեցման հարցերը:

Ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կանոնները սահմանվում են «Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին» 2016 թվականի օգոստոսի 10-ի ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի հրամանով: Դրա վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանը ներկայացրել է հիմնարար նկատառումներ նաև 2019 թվականի տարեկան հաղորդմամբ, որոնք լուծում չեն ստացել: Ուստի, դրանց վերաբերյալ վերլուծությունը ներկայացվում է ստորև:

Այսպես, քննարկվող հրամանի հավելված հանդիսացող՝ Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը նախատեսում է. «**Բնակության ներքին կարգապահական կանոնները 2 և ավելի անգամ խախտելու դեպքում՝ բնակչին տրված «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրը, Կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, կարող է ուժը կորցրած ճանաչվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայության կողմից:**»:

Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում<sup>1149</sup> բնակվող 13 ապաստան հայցողի ուղեգրեր անվավեր են ճանաչվել՝ կացարանից անհարկի բացակայելու հիմքով: Բնակության ներքին կարգապահական կանոնները խախտելու համար գրավոր նախազգուշացվել է 8 ապաստան հայցող, իսկ բանավոր՝ 20 ապաստան հայցող:

Հատկանշական է, որ 2020 թվականի ընթացքում ևս անվավեր էր ճանաչվել Հատուկ կացարանում բնակվող 13 ապաստան հայցողի ուղեգիրը, նորից անհարկի բացակայության հիմքով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական ակտն **արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և**

<sup>1149</sup> Այսուհետ սույն բաժնում՝ Հատուկ կացարան:

**ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:**»: Քանի որ

«Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը ընդունվում է վարչական մարմնի՝ Միգրացիոն ծառայության կողմից հանրային իրավունքի բնագավառում, ունի արտաքին ներգործություն և ուղղված է ապաստան հայցողի իրավունքները վերացնելուն:

Հետևաբար, անժխտելի է, որ այդ որոշումը վարչական ակտ է: Ուստի, հարցն անհրաժեշտ է քննարկել վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

Այսպես, «**Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին**» ՀՀ օրենքի 66-րդ հոդված 3-րդ մասով ամրագրված են բարենպաստ վարչական ակտի ուժը կորցնելու համար սահմանված հիմքերը: Նույն մասի բ) կետի համաձայն՝ **բարենպաստ վարչական ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել, եթե դա թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ: Նշվածից ակնհայտ է դառնում, որ եթե վերապահում նախատեսված չէ, ապա նման սահմանափակում ամրագրող նորմը, որով բարենպաստ վարչական ակտը ուժը կորցրած կճանաչվի, անհրաժեշտ է սահմանել օրենքով:**

Վերը նշվածի հաշվառմամբ, անհրաժեշտ է Միգրացիոն ծառայության՝ ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվելու իրավունք ստացած ապաստան հայցող անձանց ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու լիազորությունը նախատեսել օրենքով և ուժը կորցրած ճանաչել Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների 44-րդ կետը:

4.7 Ապաստան հայցողի իրավունքների բացակայությունը «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու վարույթի ընթացքում

Վերը ներկայացված վերլուծությամբ հիմնավորվեց, որ «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը վարչական ակտ է: Դրանից հետևում է նաև, որ այդ վարչական ակտի ընդունման գործընթացը պետք է քննարկվի վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ N 1440-Ն որոշման 12.1-րդ կետի համաձայն՝ **Կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած ապաստան հայցողը կենտրոնի տնօրենի կողմից գրավոր նախազգուշացվում է խախտման հետևանքների վերաբերյալ: Բնակության ներքին կարգապահական կանոնների երկու և ավելի անգամ խախտման դեպքում՝**



ապաստան հայցողին տրված ուղեգիրը, կենտրոնի տնօրենի առաջարկության հիման վրա, ուժը կորցրած է ճանաչվում լիազոր մարմնի կողմից:

Քննարկվող հրամանի հավելվածի 43-րդ կետի համաձայն՝ (...) բնակության ներքին կարգապահական կանոնները խախտած բնակիչը Կենտրոնի տնօրենի կողմից **բանավոր/գրավոր նախազգուշացվում է խախտման հետևանքների վերաբերյալ**: Հետևաբար, տնօրենի 2 և ավելի **բանավոր/գրավոր** նախազգուշացում կարող է հանգեցնել ուղեգրից զրկման:

**Հարկ է նախ նկատել, որ առկա է ակնհայտ հակասություն նշված կարգավորումների միջև: Դրանցից առաջինը նախատեսում է, որ նախազգուշացումը կարող է ընդունվել բացառապես գրավոր, իսկ երկրորդը՝ նաև բանավոր:**

Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ*: Այնուամենայնիվ, հրամանի 42-րդ կետով նախատեսվում է, որ **տնօրենի պահանջով** ներկայանալ և տալ **բանավոր/գրավոր բացատրություն՝ բնակության ներքին կարգապահական կանոնների խախտման վերաբերյալ**: Ստացվում է, որ ըստ նշված կարգավորման, անձը հնարավորություն կարող է ունենալ տալ բացատրություն **բացառապես տնօրենի պահանջի առկայության դեպքում**:

Ուստի, անհրաժեշտ է վերացնել բնակչի՝ բացատրություն տալու համար տնօրենի պահանջի պարտադիր առկայության պայմանը և նախատեսել գրավոր եղանակով վարչական ակտն ընդունելու՝ նախազգուշացնելու պարտադիրություն, ինչպես նաև դրա ընդունման դեպքում անձի լաված լինելու իրավունքը:

Արդեն հիմնավորվել է, որ «Ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու գործընթացը պետք է քննարկվի վարչարարության հիմունքների և վարչական վարույթի շրջանակներում:

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ N 1440-Ն որոշման 12.2-րդ կետի համաձայն՝ *ապաստան հայցողին տրված ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին ապաստան հայցողը գրավոր ծանուցվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում*: Ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին տեղեկանալու օրվանից սկսած եռօրյա ժամկետում ապաստան հայցողն ազատում է զբաղեցրած սենյակը:

Այդուամենայնիվ, որոշումը չի նախատեսում կարգավորում այն մասին, որ անձն ունի վարչական ակտը վարչական կամ դատական կարգով բողոքարկելու իրավունք: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ *անձինք իրենց*

իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ): Նույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

Վերը վկայակոչված կարգավորումների համադրված մեկնաբանմամբ ստացվում է, որ եթե անձը որոշի բողոքարկել ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու մասին վարչական ակտը, նա ամեն դեպքում ստիպված է լինելու ազատել կացարանում իրեն հատկացված սենյակը: Ապաստան հայցող անձանց կացարանի իրավունքի ապահովման պետության պոզիտիվ պարտավորության տեսանկյունից սա հիմնարար խնդիր է: Ընդունելով այն հնարավոր փաստարկը, որ կարող են լինել ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտություն պահանջող դեպքեր, այդուհանդերձ, յուրաքանչյուր պարագայում պետք է գերակայի մարդու իրավունքը, ինչը, ի թիվս այլնի, ենթադրում է բավարար ընթացակարգային բավարար երաշխիքների ապահովում:

Հարկ է հատուկ ընդգծել, որ այս դեպքում նշված անձինք չեն համարվի «ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ N 951-Ն որոշման շահառու և չեն ստանա դրանով նախատեսված դրամական օգնությունը:

Սա էլ ավելի է խնդրահարույց դարձնում քննարկվող իրավիճակը: Ստացվում է, որ ապաստան հայցող անձը կարող զրկվել ոչ միայն Հատուկ կացարանում բնակվելու իրավունքից, այլ նաև՝ առհասարակ կացարանից:

Ավելին, բացակայում է նաև բողոքարկման բավարարման դեպքում անձի ուղեգիրը վերականգնելու պարտադիրությունը: Թեև խնդիրը կարող է ստանալ գործնական լուծում, այն է՝ պահանջն ամրագրվի դատական ակտով, այդուամենայնիվ, նման կարգավորում անհրաժեշտ է սահմանել նաև քննարկվող իրավական ակտով:

*Հետևաբար, անհրաժեշտ է նախատեսել «ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու դեպքում անձի բողոքարկման իրավունքը, ինչպես նաև բողոքարկման բավարարման պարագայում ուղեգրի վերականգնման և Հատուկ կացարանում վերատեղավորման՝ իրավասու պետական մարմնի պարտականություններ:*

#### 4.8 «ժամանակավոր տեղավորման Կենտրոնում տեղավորման» ուղեգիրն ուժը կորցրած ճանաչելու արդյունքում սենյակն ազատելու համար նախատեսված ժամկետի խնդիր

«Ապաստան հայցողներին ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 9-ի թիվ N 1440-Ն որոշման 12.2-րդ կետի համաձայն՝ *ապաստան հայցողին տրված ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին ապաստան հայցողը գրավոր*

*ծանուցվում է 3 աշխատանքային օրվա ընթացքում: **Ուղեգիրն ուժը կորցրած ճանաչվելու մասին տեղեկանալու օրվանից սկսած եռօրյա ժամկետում ապաստան հայցողն ազատում է զբաղեցրած սենյակը:***

Ապաստան հայցողի զբաղեցրած սենյակն ազատելու համար նախատեսված ժամկետի (3 օր) քննարկման համատեքստում, անհրաժեշտ է վկայակոչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածով վարչական ակտի բողոքարկման համար նախատեսված ժամկետներին: Այսպես, 1-ին մասի համաձայն՝ **վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում, վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում. վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 2 ամսվա ընթացքում. գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:** Օրենքով նախատեսված նվազագույն բողոքարկման ժամկետը 2 ամիս է, այն էլ՝ եթե վարչական մարմինը վարչական ակտում նշում է դա: Հետևաբար, անձը պետք է հնարավորություն ունենա շարունակել բնակվել սենյակում նվազագույնը մինչև բողոքարկման համար նախատեսված ժամկետի ավարտը՝ 2 ամիս:

Նույն օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը (...):* Ստացվում է, որ այն դեպքերում, երբ անձը բողոքարկում է վարչական ակտը, դրա կատարումը պետք է կասեցվի՝ անձը պետք է շարունակի բնակվել կացարանում:

*Ուստի, անհրաժեշտ է նախատեսել այնպիսի կարգավորում, որ սենյակն ազատելու ժամկետը կախված լինի բողոքարկման ժամկետից, իսկ բողոքարկման դեպքում՝ դրա վերջնական արդյունքից:*

#### 4.9 Հատուկ կացարանի գերբնակեցումը և սանիտարահիգիենիկ պայմանները

Օրենքի՝ ապաստան հայցող անձանց կենսաապահովման պայմանների վերաբերյալ 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կացարանի կարիք ունեցող ապաստան հայցողները մինչև նրանց ապաստանի հայցի վերաբերյալ վերջնական որոշում կայացվելը տեղավորվում են ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որն այդ նպատակով սրտեղծված հատուկ հաստատություն է:*

Միևնույն ժամանակ, Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասում սահմանվում է, որ (...) *լիազոր մարմինը դիմած ապաստան հայցողներին և (...) նրանց ընտանիքի անդամներին լիազոր մարմինը տեղավորում է (...) ժամանակավոր տեղավորման կենտրոնում, որտեղ նրանց տրամադրվում են սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ (այսուհետ՝ կենսաապահովման պայմաններ):*

Տարակերպ ընկալումից խուսափելու նպատակով անհրաժեշտ է նշել, որ Օրենքում կիրառվող «Ժամանակավոր տեղավորման կենտրոն» եզրույթը վերաբերում է Հատուկ կացարանին:

Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների՝ Կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են նաև ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշմամբ հաստատված կարգով: Նշված կարգի 6-րդ կետով սահմանվում է, որ *ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորվելու մասին ապաստան հայցողների դիմումի հիման վրա լիազոր մարմնի կողմից նրանց տրվում է ուղեգիր:*

Միգրացիոն ծառայության տրամադրած տվյալների համաձայն՝ 2021 թվականի ընթացքում Միգրացիոն ծառայության կողմից «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում բնակեցվել է 45 ապաստան հայցող: Նվազագույն քանակը արձանագրվել է՝ 2021 թվականի հունվար ամսին 32 անձ, իսկ առավելագույն քանակը՝ 2021 թվականի դեկտեմբեր ամսին 47 անձ:

Հատկանշական է, որ Միգրացիոն ծառայության տրամադրած պարզաբանման համաձայն՝ 2020 թվականի ընթացքում բնակիչների առավելագույն քանակը եղել էր **փետրվար ամսին՝ 56 բնակիչ, իսկ ամենաքիչը՝ հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին՝ անփոփոխ 43 բնակիչ բոլոր 3 ամիսներին:**

Ստացվում է, որ նախորդ տարվա համեմատ թիվը նվազել է, այդուամենայնիվ իրավիճակը շարունակում է խնդրահարույց լինել: Օրինակ՝ 2021 թվականին դեկտեմբերին ստացված բողոքների հիմքով 2022 թվականի սկզբին այց է իրականացվել Հատուկ կացարան և այցի պահին այդտեղ բնակվել է 50 ապաստան հայցող:

Ավելին, Միգրացիոն ծառայության տրամադրած պարզաբանման համաձայն՝ 2021 թվականի ընթացքում 92 ապաստան հայցող չի տեղավորվել «Հատուկ կացարան» ՊՈԱԿ-ում՝ ազատ սենյակների բացակայության պատճառով: Ինքնակամ հրաժարվել է 6 անձ:

Անհրաժեշտ է նորից արձանագրել, որ այս խնդրի լուծման ուղղությամբ պետության կողմից ձեռնարկվում են քայլեր: Մասնավորապես, նախատեսվում է կառուցել նոր Հատուկ կացարան:

Այդուամենայնիվ, *հաշվի առնելով ապաստան հայցող անձանց թվի աճը, անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր հնարավորինս շուրջ Հատուկ կացարանի նոր շենք կառուցելու ուղղությամբ:*

#### 4.10 Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում տրամադրվող դրամական օգնությանն առնչվող խնդիրներ


Պետությունը Հատուկ կացարանում տեղավորելու, այդ թվում՝ գերբնակեցման հիմքով, անհնարինության դեպքերում կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու

հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին պետք է տրամադրի դրամական օգնություն: ՀՀ կառավարության «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» 2016 թվականի սեպտեմբերի 15-ի N 951-Ն որոշման 2-րդ կետով սահմանվում է, որ *Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին տրամադրվող դրամական օգնության չափը սահմանել՝ դիմումատուին՝ 20.000 դրամ, իսկ նրա ընտանիքի յուրաքանչյուր անդամին՝ 15.000-ական դրամ:*

Խնդրի լուծման ուղղությամբ այս քայլը գովելի է, հատկապես հաշվի առնելով վերջին ժամանակաշրջանում ապաստանի հայցերի թվի և, հետևաբար, կացարանի կարիք ունեցող անձանց աճը: Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ գրեթե միշտ կացարանում առկա գերբնակեցում: Այդուամենայնիվ, Պաշտպանին հասցեագրված բողոքների ուսումնասիրությունը վկայում է, որ նշված գումարը հաճախ չի բավականացնում ապաստան հայցող դիմումատուին և նրա ընտանիքի անդամներին հոգալ իրենց նվազագույն կարիքները: Ընդ որում, դրանց մեջ է մտնում նաև բնակարանի վարձը:

Ավելին, դիմումների քննարկումը վկայում է, որ արձանագրվել են դեպքեր, երբ Հատուկ կացարանում տեղավորելու անհնարինության պատճառով կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողին չի տրամադրվել դրամական օգնություն՝ նախատեսված ծավալով և ժամանակին:

**Միգրացիոն ծառայության տրամադրած պարզաբանման համաձայն՝ 2021 թվականի ընթացքում ժամանակավոր տեղավորման կենտրոնում անհնարինության հիմքով չտեղավորված բոլոր 92 ապաստան հայցողները չեն ունեցել կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն: Նրանցից 31-ին՝ անհրաժեշտ ծավալով տրամադրվել է դրամական օգնություն, իսկ մյուսներին դրամական օգնություն չի տրամադրվել, քանի որ այդ նպատակի համար Միգրացիոն ծառայությանը տրամադրված գումարը սպառվել է:**



**Հատկանշական է, որ, ի պատասխան այդ առնչությամբ ներկայացված հարցմանը, Միգրացիոն ծառայությունը կրկին՝ ինչպես նախորդ տարի, պարզաբանել է, որ այդ նպատակով ՀՀ պետական բյուջեից Միգրացիոն ծառայությանը տրամադրված ֆինանսական միջոցները սպառված են եղել:**

Հատկանշական է, որ այս խնդիրն արձանագրվել է նաև նախորդ երկու տարիներին: Այս տարի ապաստան հայցող անձանց Հատուկ կացարանում ազատ սենյակների բացակայության պատճառով չտեղավորված ընդամենը 29%-ն են ստացել դրամական օգնություն: Ստացվում է, 71%-ը չեն ստացել կացարան և դրամական օգնություն:

**Այս իրավիճակը չափազանց խնդրահարույց է և պահանջում է հրատապ լուծում:**

*Հատուկ կացարանում չբնակվող անձանց նվազագույն կենսաապահովման պայմանների բավարարման նպատակով անհրաժեշտ է մեծացնել տրամադրվող ֆինանսական աջակցության չափը, իսկ նախատեսված չափով դրամական օգնությունը տրամադրել ժամանակին:*

**4.11 Կրոնի հիմքով հատուկ սննդի բացակայություն**

Անհրաժեշտ է քննարկել նաև կրոնի կամ ազգության հիմքով ապաստան հայցող անձանց հատուկ սնունդ չհատկացնելու հարցը: Մասնավորապես, Հատուկ կացարանում տեղավորելու և կենսաապահովման պայմաններ տրամադրելու կարգի 19-րդ կետի համաձայն՝ *Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին կենտրոնի տնօրինության կողմից տրամադրվում են կենսաապահովման պայմաններ՝ սնունդ (օրական երեք անգամ), սպիտակեղեն, անձնական*

հիգիենայի պարագաներ, անհրաժեշտության դեպքում՝ հագուստ և կոշիկ: Նույն կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ Կացարանում տեղավորված ապաստան հայցողներին օրական հատկացվող սննդամթերքի չափաքանակները և նրանց անկողնային պարագաներով ապահովումը հաշվարկվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 31-ի «Ծերերի և հաշմանդամների խնամքի և սոցիալական սպասարկման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» N 730-Ն որոշման համապատասխանաբար NN 2 և 4 հավելվածներով սահմանված նվազագույն չափորոշիչներով:

Այս առումով խնդիրն առնչվում է առաջին հերթին սննդին և ապաստան հայցողներին տրամադրվող սննդատեսակներին: Մասնավորապես, առանց հաշվի առնելու Կացարանում բնակվող ապաստան հայցողների կրոնական ու ազգային պատկանելությունը և դրանով պայմանավորված որոշակի սննդատեսակներից օգտվելու անհնարինությունը՝ ապաստան հայցողներին տրամադրվում է նույն տեսակի սնունդ: Այնուամենայնիվ, գործնականում այս խնդիրը փորձ է արվում լուծել՝ քննարկելով սննդատեսակը բոլոր բնակիչների հետ: Չնայած դրան, այս դեպքում նույնպես խնդիրը շարունակվում է մնալ այդպիսին:

Հատուկ հաստատություններում պահվող ապաստան հայցող անձանց տրամադրվող սննդի չափորոշիչներ և առանձնահատկություններ են սահմանվել նաև ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցում: Մասնավորապես, փաստաթղթի 48-րդ կետի (xi) պարբերությունը սահմանում է, որ «Կալանավորվածներին պետք է տրամադրվի **սննդարար արժեք ունեցող՝** տարիքին, առողջական վիճակին և մշակութային/կրոնական առանձնահատկություններին համապատասխան **սնունդ**: Հղի կանանց և կերակրող մայրերի համար պետք է ապահովվի համապատասխան սննդակարգ: **Սննդի պատրաստման և ընդունման տարածքները պետք է համապատասխանեն սանիտարահիգիենիկ տարրական պահանջներին:**»:<sup>1150</sup>

Հետևաբար, անհրաժեշտ է Կացարանում ապաստան հայցողների սննդի տրամադրման հիմքում դնել յուրաքանչյուրի ազգային և կրոնական պատկանելության առանձնահատկությունները, ինչպես նաև ֆիզիկական վիճակը:

#### 4.12 Պեղական սահմանի անցման կետերում թարգմանության բացակայություն

Օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով, Սահմանապահ զորքերը, ի թիվս այլ պետական մարմինների, հարցազրույց են անցկացնում ապաստան հայցողի հետ նույն հոդվածի 3-րդ մասով

<sup>1150</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի «Ապաստան հայցող անձանց ազատությունից զրկմանը և դրա այլընտրանքներին առնչվող չափանիշների և ստանդարտների վերաբերյալ» 2012 թվականի ուղեցույցի 48-րդ կետի (xi) պարբերությունը, <https://www.unhcr.org/publications/legal/505b10ee9/unhcr-detention-guidelines.html>:

սահմանված՝ պաշտպանություն գտնելու ցանկության, անձի և ընտանիքի բոլոր ուղեկցող անդամների մասին անձնական տվյալների, ինչպես նաև ծագման երկրից դեպի Հայաստանի Հանրապետություն ուղևորության նկարագրության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար: Ապաստան հայցողների հետ հարցազրույցների պատշաճ իրականացումը գործնականում ապահովելու, ինչպես նաև հատուկ կացարաններում բնակվող ապաստան հայցողների իրավունքներն ու պարտականությունները հասկանալի լեզվով իրենց լիարժեք ներկայացնելու նպատակով հնարավորինս անհրաժեշտ է ապահովել թարգմանություն օտար լեզուներով:

Պետական մարմինների կողմից ապաստան հայցող անձանց հետ իրավահարաբերությունների ընթացքում պատշաճ թարգմանություն ապահովելու առնչությամբ Եվրոպական դատարանը Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով 2011 թվականի հունվարի 21-ի վճռում, արձանագրել է, որ *ապաստանի ընթացակարգի խնդիրներից են նաև տրամադրված տեղեկությունների ոչ հստակ լինելը, պետական մարմինների և ապաստան հայցողի միջև հաղորդակցության ոչ պատշաճ համակարգը, ինչը պայմանավորված է նաև թարգմանիչների պակասով*<sup>151</sup>:

ՀՀ պետական սահմանի անցման կետերում և մասնավորապես, հատուկ կացարաններում թարգմանության ապահովումը կարևոր է ինչպես ապաստան հայցող անձանց հասկանալի լեզվով տեղեկացված լինելու և այլ իրավունքների պատշաճ ապահովման, այնպես էլ Սահմանապահ զորքերի՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման տեսանկյունից: Կարևոր է նաև Սահմանապահ զորքերի ծառայողների համար կազմակերպել օտար լեզուների դասընթացներ:

*Ուստի, առաջարկվում է ՀՀ պետական սահմանի անցման կետերում հնարավորինս ապահովել օտար լեզուներով թարգմանության հնարավորություն՝ ապաստան հայցող բոլոր անձանց համար հասկանալի լեզվով իրենց իրավունքներն ու պարտականությունները ներկայացնելու, համապատասխան հարցազրույցներ անցկացնելու, ինչպես նաև Սահմանապահ զորքերի ծառայողների՝ հատուկ կացարաններում գտնվող անձանց հետ առավել լիարժեք շփումն իրականացնելու համար:*

---

<sup>151</sup>Տե՛ս 2011թ. հունվարի 21-ի Մ.Ս.Ս.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի գործով Եվրոպական դատարանի վճռի (գանգատ թիվ 30696/09) 301-րդ կետը, <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-103050>:



**ԲԱԺԻՆ 20. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԿՐՃԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ապաքաղաքացիությունը ամբողջ աշխարհում մարդու իրավունքների պաշտպանության արդի լրջագույն մարտահրավերներից է: Քաղաքացիություն չունեցող անձինք, չհանդիսանալով որևէ երկրի քաղաքացի, այդ թվում՝ այն երկրի, որտեղ նրանք ծնվել են կամ մշտապես բնակվում են, սովորաբար չեն ունենում ինքնությունը հաստատող վավեր փաստաթուղթ ու դրա հետևանքով զրկվում են կոնկրետ երկրի օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով ամրագրված հիմնական իրավունքներից: Ընդ որում, որոշ մարդիկ ապաքաղաքացի են հենց ծննդյան պահից, իսկ որոշները՝ կորցնում են քաղաքացիությունը կյանքի ընթացքում:

Քաղաքացիություն չունեցող անձինք չեն կարողանում ձեռք բերել օրինական աշխատանք, ստանալ կրթություն և բժշկական օգնություն ու սպասարկում, զրկված են լինում սեփականության իրավունքից և նույնիսկ ամուսնությունից ու իրենց երեխայի ծնունդը գրանցելու հնարավորությունից: Ավելին, նրանք չեն կարողանում մասնակից լինել իրենց մշտական բնակության երկրում տեղի ունեցող իրավական գործընթացներին, օրինակ՝ ընտրություններին:

Ուստի, խնդիրն ունի կարևոր նշանակություն մարդու իրավունքների և ժողովրդավարության տեսանկյունից: Հետևաբար, պետություններն ունեն պոզիտիվ պարտավորություն կանխելու և կրճատելու ապաքաղաքացիությունը, բացահայտելու և փաստաթղթավորելու փաստաթուղթ չունեցող անձանց:

Անձի՝ քաղաքացիություն չունենալու պատճառները կարող են տարբեր լինել: Ներպետական օրենսդրության և օրենքների խնդիրներն ու բացերը, ինչպես նաև դրանց գործնական կիրառության ոլորտում առկա բացթողումները և անտեղի խոչընդոտները տարբեր երկրներում համարվում են ապաքաղաքացիության հիմնական պատճառ:

Մեկ այլ պատճառ կարող է լինել, երբ մարդիկ լքում են իրենց ծագման երկիրը, որտեղի քաղաքացի են հանդիսանում և չեն կարողանում ձեռք բերել վավեր փաստաթուղթ՝ լինելով քաղաքացիության երկրից դուրս: Եթե պետությունը թույլ չի տալիս քաղաքացիություն բացառապես ծննդով, ապա անձը կարող է հայտնվել ապաքաղաքացիության վտանգի առաջ: Որոշ դեպքերում քաղաքացիության շնորհմանն առնչվող գործընթացներում առկա է լինում խտրական մոտեցում, իսկ երեխայի ծննդի գրանցման տեսանկյունից պետությունները չեն ցուցաբերում անհրաժեշտ ճկունություն:

Պետությունների փլուզումը կամ նոր պետությունների ձևավորումը (օրինակ՝ ԽՍՀՄ փլուզումը և դրա կազմում ընդգրկված պետությունների անկախացումը) նույնպես կարող են նպաստող պայման

հանդիսանալ ապաքաղաքացիության տարածման համար: Ավելին, նման դեպքերում էթնիկ, ռասսայական կամ կրոնական առանձնահատկություններ ունեցող խմբեր կարող են խնդիրների բախվել ապացուցելու իրենց կապն այս կամ այն պետության հետ:

Քաղաքացիության կորստի կամ զրկման պատճառ կարող են համարվել նաև տեղահանությունները՝ ինչպես միջազգային պաշտպանություն հայցելու, այնպես էլ այլ նպատակներով: Գործնականում արձանագրվում են ապաքաղաքացիության տարածման այլ պատճառներ ևս:

Սույն բաժինը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության, ինչպես նաև ապաքաղաքացիության կրճատման և կանխարգելման վերաբերյալ ոլորտի վերլուծությամբ և առկա մարտահրավերների վերհանման անհրաժեշտությամբ պայմանավորված: Այն անդրադառնում է ինչպես Հայաստանում քննարկվող ոլորտին առնչվող ընդհանուր տեղեկությանը և երկրի միջազգային պարտավորություններին, այնպես էլ՝ օրենսդրական լուծումներին, պրակտիկային:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայաստանում քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության և ապաքաղաքացիության կանխարգելման ու կրճատման ոլորտում «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը՝ ՄԱԿ ՓԳՀ-ի և այլ կազմակերպությունների աջակցությամբ իրականացնում է բազմաթիվ ծրագրեր: Դրանք վերաբերում են ոչ միայն անհատական դեպքերի վարմանը և անձանց իրավաբանական օգնության տրամադրմանը, այլ նաև ոլորտի համակարգային մարտահրավերների լուծման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը՝ աշխատանքային խմբի և այլ ձևաչափերով: Ուստի, սույն բաժնի մշակման ընթացքում քննարկումներ են տեղի ունեցել նաև «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ներկայացուցիչների հետ:

# **ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՄԱՆ ՈՒ ԿՐՃԱՏՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ապաքաղաքացիությունը մարդու իրավունքներին առնչվող համաշխարհային խնդիր է, որը պետությունները հանձն են առել լուծել համատեղ ջանքերով: Այդ հանձնառության շրջանակներում ստորագրվել ու վավերացվել են միջազգային պայմանագրեր, մշակվել են ապաքաղաքացիության կանխարգելման ու կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների ապահովման վերաբերյալ գործիքներ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ՝ միջազգային մակարդակներում:

Ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությանն առնչվող ոլորտի հիմնական միջազգային փաստաթղթերն են «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի ՄԱԿ-ի կոնվենցիան<sup>1152</sup> և «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիան<sup>1153</sup>:

«Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» կոնվենցիան մշակվել է երաշխավորելու քաղաքացիություն չունեցող անձանց նվազագույն իրավունքները և սահմանելու համար «քաղաքացիություն չունեցող անձ» եզրույթի իրավական սահմանումը<sup>1154</sup>:

«Ապաքաղաքացիության կրճատման մասին» կոնվենցիայի նպատակն է կանխարգելել ապաքաղաքացիությունը և ժամանակի ընթացքում կրճատել այն: Այն պահանջում է, որ պետություններն իրենց ներպետական օրենսդրությամբ սահմանեն ապաքաղաքացիության կանխարգելման համար անհրաժեշտ իրավական երաշխիքներ: Թերևս, այս կոնվենցիայի ամենակարևոր դրույթն այն մասին է, որ ծննդի պահին երեխան պետք է ստանա այդ երկրի քաղաքացիություն: Կոնվենցիան սահմանում է այն եզակի դեպքերը, երբ պետությունը կարող է զրկել անձին քաղաքացիությունից:

***Հայաստանի Հանրապետությունն այս կոնվենցիաներին միացել է նույն օրը՝ 1994 թվականի մայիսի 18-ին<sup>1155</sup>:***

<sup>1152</sup> Տե՛ս «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի 1954 թվականի կոնվենցիան՝ <https://www.refworld.org/docid/3ae6b3840.html>: Այսուհետ՝ 1954թ. Կոնվենցիա:

<sup>1153</sup> Տե՛ս «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիան՝ <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=topic&docid=4cad866e2&skip=0&tocid=50ffbce51b1&toid=50ffbce5205&querysi=1961%20convention&searchin=fulltext&sort=date>: Այսուհետ՝ 1961թ. Կոնվենցիա:

<sup>1154</sup> Տե՛ս «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» ՄԱԿ-ի 1954 թվականի կոնվենցիայի 1-ին հոդվածի 1-ին մասը՝ <https://www.refworld.org/docid/3ae6b3840.html>:

Համաշխարհային մակարդակում քննարկվող խնդրի լուծման մանդատով օժտված է ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը: Այսպես, ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից շնորհվել է քաղաքացիություն չունեցող անձանց ճանաչելու և պաշտպանելու, ինչպես նաև ապաքաղաքացիությունը կանխելու և կրճատելու լիազորությամբ: Այն իր մանդատն իրականացնում է համաշխարհային մակարդակում ապաքաղաքացիության խնդրի լուծման նպատակով կառավարությունների, ՄԱԿ-ի այլ գործակալությունների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցելու միջոցով:

Ապաքաղաքացիության վերացման նպատակով ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի կողմից մշակվել է Ապաքաղաքացիության վերացման մասին 2014-2024թթ. գործողությունների համաշխարհային ծրագիրը: Գործողությունների ծրագիրն ունի կոնկրետ նպատակներ, որոնց անհրաժեշտ է հասնել 10 տարվա ընթացքում: Դրանցից հիմնականը, անշուշտ, համաշխարհային մակարդակում ապաքաղաքացիության վերացումն է:

Գործողությունների համաշխարհային ծրագրով նախատեսվել է 10 գործողություն<sup>1156</sup>:

Գործողությունների ծրագրի համաձայն՝ պետություններին խրախուսվում է հանձն առնել ձեռնարկելու նշված 10 գործողություններից մեկը կամ մի քանիսը: Օրինակ՝ ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտեի 2019 թվականի հոկտեմբերի հանդիպման ընթացքում տեղի ունեցած Ապաքաղաքացիության բարձրաստիճան սեկցիային պետությունները պարտավորվել են (pledged) իրականացնելու թվարկված գործողություններից մեկը կամ մի քանիսը:

## **1. Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունները և ձեռքբերումները**

Ինչպես արդեն նշվեց՝ Հայաստանի Հանրապետությունը միացել է քննարկվող ոլորտի հիմնական միջազգային փաստաթղթերին՝ 1954թ. Կոնվենցիային և 1961թ. Կոնվենցիային նույն օրը՝ 1994 թվականի մայիսի 18-ին: Դրանով Հայաստանը պարտավորվել է ներպետական մակարդակում կատարել կոնվենցիաներով նախատեսված պահանջները՝ կրճատելու և

<sup>1155</sup> Տե՛ս «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ պետությունների ցանկը՝ [https://treaties.un.org/pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtsg\\_no=V-4&chapter=5&clang=en](https://treaties.un.org/pages/ViewDetails.aspx?src=TREATY&mtsg_no=V-4&chapter=5&clang=en):

Տե՛ս «Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին» 1954 թվականի սեպտեմբերի 28-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ պետությունների ցանկը՝ [https://treaties.un.org/pages/ViewDetailsII.aspx?src=TREATY&mtsg\\_no=V-3&chapter=5&Temp=mtsg2&clang=en](https://treaties.un.org/pages/ViewDetailsII.aspx?src=TREATY&mtsg_no=V-3&chapter=5&Temp=mtsg2&clang=en):

<sup>1156</sup> Տե՛ս Ապաքաղաքացիության վերացման մասին 2014-2024թթ. գործողությունների համաշխարհային ծրագիրը՝ <https://www.unhcr.org/ibelong/global-action-plan-2014-2024/>:

Տե՛ս նաև ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիա ապաքաղաքացիության վերաբերյալ. արդյունքներ և կարևոր հարցեր» (2020թ. մայիս) փաստաթուղթը, էջ 20՝ <https://www.refworld.org/docid/5ec3e91b4.html>:

կանխարգելելու ապաքաղաքացիությունը և նպաստելու քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանությանը:

Հատկանշական է, որ ՄԱԿ ՓԳՀ-ի գործադիր կոմիտեի 2019 թվականի հոկտեմբերի վերը նշված հանդիպմանը Հայաստանի Հանրապետությունը, ի թիվս այլ պետությունների, պարտավորվել է իրականացնել որոշակի քայլեր կանխարգելելու ապաքաղաքացիությունը և նպաստելու դրա կրճատմանը: Մասնավորապես, ՀՀ կառավարությունը հանձն է առել իրականացնելու հետևյալ գործողությունները՝

➤ Մինչև 2020 թվականը անցկացնել համապարփակ ուսումնասիրություն քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին ոլորտում առկա բացերը բացահայտելու, խնդիրները քարտեզագրելու և ոլորտի հիմնական մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ առաջարկություններ անելու նպատակով:

➤ Մինչև 2020 թվականը լրացուցիչ փոփոխություններ կատարել քաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրության դրույթներում, որոնք կարող են առաջացնել ապաքաղաքացիություն (այն է՝ հետամուտ լինել քաղաքացիության մասին օրենքում փոփոխություններ կատարելու օրենսդրական նախաձեռնությանը, որի նպատակն է երաշխիքներ ներդնել հրաժարման գործընթացում):

➤ Մինչև 2024 թվականը վերանայել քաղաքացիության վերաբերյալ ազգային օրենսդրությունը քաղաքացիություն չունեցող թվի կրճատման օրենսդրական հիմքեր սահմանելու և նրանց իրավունքների իրականացումը երաշխավորող համապատասխան մեխանիզմներ ապահովելու նպատակով<sup>1157</sup>:

Նշվածից զատ, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է այլ պարտավորություններ ևս: Մասնավորապես, 2011 թվականին Ժնևում տեղի ունեցած Բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպման ժամանակ Կառավարությունը պարտավորվել է վերանայել ազգային օրենսդրությունը, որպեսզի այն համապատասխանեցնել իր միջազգային պարտավորություններին<sup>1158</sup>:

2015 թվականի մայիսին ՄԱԿ ՓԳՀ աջակցությամբ կատարվել են փոփոխություններ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: Կատարված բարեփոխումների նպատակն է եղել ներպետական օրենսդրությունը համապատասխանեցնել 1961թ. Կոնվենցիային և

<sup>1157</sup> Տե՛ս նաև ՄԱԿ փախստականների հարցերով գերագույն հանձնակատար (ՄԱԿ ՓԳՀ), «Բարձրաստիճան պաշտոնյաների սեկցիա ապաքաղաքացիության վերաբերյալ. Արդյունքներ և կարևոր հարցեր» (2020թ. մայիս) փաստաթուղթը, էջ 48՝ <https://www.refworld.org/docid/5ec3e91b4.html>:

<sup>1158</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և առաջարկությունները Հայաստանի Հանրապետությունում ապաքաղաքացիության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ սատարման փաստաթուղթը (2020թ. օգոստոս), էջ 2՝ <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=country&docid=5ff46f0a4&skip=0&publisher=UNHCR&coi=ARM&querysi=statelessness&searchin=fulltext&sort=date>:

քաղաքացիության ձեռքբերումն ու կորուստը կարգավորող համապատասխան իրավական նորմերին: Մասնավորապես՝

ա) երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության փարածքում ծնված երեխաները, որոնք այլապես կլինեին քաղաքացիություն չունեցող անձ (այդ թվում՝ այն երեխաները, որոնց ծնողների քաղաքացիությունը հայտնի չէ), ստանան Հայաստանի քաղաքացիություն,

բ) ապահովել, որ ծնողների, խնամակալների կողմից քաղաքացիության կորստի կամ որդեգրման արդյունքում երեխաները հայաստանյան քաղաքացիությունը կորցնեն միայն այն դեպքում, երբ նրանք ունեն կամ ձեռք են բերում այլ քաղաքացիություն,

գ) ապահովել, որ անձը կամավոր հրաժարվելու դեպքում քաղաքացիությունը կորցնի միայն այն դեպքում, երբ կա հավաստում այլ պետությունից այն մասին, որ խնդրո առարկա անձը դիմել է և իրավասու է ստանալու այդ երկրի քաղաքացիությունը,

դ) ապահովել, որ այն անձինք, որոնց քաղաքացիությունը դադարեցվել է կամավոր հրաժարվելու արդյունքում, կարողանան ինքնաբերաբար վերականգնել քաղաքացիությունը իրենց դիմումի հիման վրա,

ե) հնարավորություն նախատեսել օրենքով անաշխատունակ ճանաչված անձանց համար հպատակագրման դիմում ներկայացնել իրենց օրինական խնամակալի միջոցով,

զ) նախատեսել փախստականների և քաղաքացիություն չունեցող անձանց հեշտացված հպատակագրում՝ հանելով երեք փարվա օրինական բնակության և հայոց լեզվի հմտությունների ցուցադրման պահանջները, և

է) նախատեսել հինգ փարվա ժամկետային սահմանափակում, որից հետո անձը չի կարող զրկվել քաղաքացիությունից այն փաստի հիման վրա, որ քաղաքացիությունը ձեռք է բերվել կեղծ տվյալների/փաստաթղթերի հիման վրա<sup>1159</sup>:

Բացի այդ, 2017 թվականի դեկտեմբերի 6-ին խառը ամուսնությունների համատեքստում (մի ծնողը Հայաստանի քաղաքացի է, մյուս ծնողը՝ օտարերկրյա քաղաքացի) լրացուցիչ փոփոխություններ են ընդունվել «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում: Դրանց նպատակն էր նախատեսել, որ միայն մեկ ծնողի համաձայնությունը բավարար է, որպեսզի երեխան ստանա Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն, եթե բնակվում է Հայաստանում: Նախկինում անհրաժեշտ էր երկու ծնողների համաձայնությունը: Սա գործնականում առաջացնում էր որոշակի դժվարություններ:

<sup>1159</sup> Տե՛ս ՄԱԿ ՓԳՀ-ի դիտարկումները և առաջարկությունները Հայաստանի Հանրապետությունում ապաքաղաքացիության վերաբերյալ ՄԱԿ ՓԳՀ սատարման փաստաթուղթը (2020թ. օգոստոս), էջ 2՝ <https://www.refworld.org/cgi-bin/texis/vtx/rwmain?page=country&docid=5ff46f0a4&skip=0&publisher=UNHCR&coi=ARM&querysi=statelessness&searchin=fulltext&sort=date>:

Այժմ շրջանառության մեջ է դրված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը, որը 2021 թվականի հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է առաջին ընթերցմամբ:

Նախագծի ընդունմամբ նախատեսվում է ապահովել ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ ազգությամբ հայերի պարզեցված կարգով ՀՀ քաղաքացիություն ստանալու իրավունքի լիարժեք իրացումը, մասնավորապես, ազգությամբ հայերի կողմից ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումների քննարկման ժամկետը 6 ամսվա փոխարեն սահմանելով 3 ամիս:

Բացի այդ, ակնկալվում է, որ սույն նախագիծը ընդունման դեպքում ՀՀ քաղաքացիություն ստացած անձինք իրավունք կունենան առաջին անգամ ՀՀ քաղաքացու անձնագրով փաստաթղթավորվել ինչպես Հայաստանի Հանրապետության լիազոր մարմին, այնպես էլ օտարերկրյա պետություններում գործող դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ դիմելու դեպքում:

Միաժամանակ, պատշաճ կապահովվեն 1961թ. Կոնվենցիայի պահանջները, կբացառվի ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելուց հետո մինչև այլ պետության քաղաքացիություն ձեռք բերելը նախկին ՀՀ քաղաքացու կողմից քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակում հայտնվելը և իր իրավունքներն իրացնելու համար առանց անձը հաստատող փաստաթղթի մնալու հնարավորությունը, ինչպես նաև կկանոնակարգվեն անձի քաղաքացիություն ստանալու և դադարեցնելու հարաբերություններում իրականացվող վարչարարության ընթացքում իրավակիրառ պրակտիկայում առաջացած խնդիրները<sup>1160</sup>:

Նախագծի ընդունումը կարևոր առաջընթաց կլինի Հայաստանում ապաքաղաքացիության կրճատման և կանխարգելման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց փաստաթղթավորման տեսանկյունից:

**Ուստի, առաջարկվում է ընդունել նախագիծը հնարավոր սեղմ ժամկետում և ապահովել դրա գործնական կիրառումը:**

---

<sup>1160</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով առաջարկվող լուծումներն առավել մանրամասն, ինչպես նաև թե որ փուլում է տվյալ պահին նախագծի ընդունումը՝ [http://www.parliament.am/draft\\_history.php?id=12809](http://www.parliament.am/draft_history.php?id=12809):

## **ԳԼՈՒԽ 2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՊԱՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒ ԿՐՃԱՏՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ**

Չնայած վերը նկարագրված օրենսդրական բարեփոխումներին և ոլորտի կազմակերպությունների ու իրավասու պետական մարմինների գործուն քայլերին, քաղաքացիություն չունեցող անձանց բացահայտման ու ուղղորդման, փաստաթղթավորման ու պաշտպանության, ինչպես նաև ապաքաղաքացիության կանխարգելման ու կրճատման առումով Հայաստանի Հանրապետությունում շարունակում են գոյություն ունենալ լուրջ մարտահրավերներ: Դրանք ենթակա են վերացման հայտնաբերված օրենսդրական խնդիրների լուծման և օրենսդրության ու Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին ներդաշնակեցման, ինչպես նաև միջազգային չափանիշների ներդրման միջոցով:

Ստորև քննարկվում են առկա խնդիրները և դրանց համատեքստում առկա միջազգային կարգավորումներն ու չափանիշները՝ ներկայացնելով կոնկրետ առաջարկություններ լուծման համար:

### ***1. Ապաքաղաքացիության մասին նոր իրավական ակտի ընդունման ձգձգման հետ կապված խնդիր***

Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի ապաքաղաքացիության մասին ինքնուրույն իրավական ակտ, որը կնախատեսի քաղաքացիություն չունեցող անձանց բացահայտման և պաշտպանության, ինչպես նաև ապաքաղաքացիության կանխարգելման ու կրճատման մասին կարգավորումներ:

Հատկանշական է, որ 2013 թվականին մշակվել է Ապաքաղաքացիության մասին օրենքի նախագիծ, սակայն 2016 թվականին Կառավարությունն այդ նախագիծը վերադարձրել է մշակող մարմին՝ ՀՀ ոստիկանություն՝ որպես ապաքաղաքացիության մասով իրավասու պետական մարմին՝ Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին օրենքում ներառելու նպատակով:

Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին նոր օրենքի նախագիծը և վերաբերելի այլ իրավական ակտերի նախագծերը շրջանառության մեջ են դրվել դեռևս 2017 թվականին: Նախագծերի փաթեթը «e-draft» իրավական ակտերի քննարկման միասնական



կայքում 2019 թվականի դեկտեմբերի 11-ից 26-ը դրվել է քննարկման: Այդուամենայնիվ, այն մինչ օրս չի ընդունվել<sup>1161</sup>:

Նման ակտի կարևորությունը պայմանավորված է ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման, ուղղորդման և փաստաթղթավորման վերաբերյալ կոնկրետ կառուցակարգեր սահմանելու անհրաժեշտությամբ:

*Ուստի, առաջարկվում է ակտիվացնել նախագծերի փաթեթի ընդունման շուրջ քննարկումներն ու իրավական ակտի ընդունման համար անհրաժեշտ ընթացակարգերը, և ընդունել նախագծերի փաթեթը հնարավորին սեղմ ժամկետում:*

## **2. Քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց վերաբերյալ համապարփակ վիճակագրական տվյալների վարման հետ կապված խնդիր**

Թեև բնակչության վերջին մարդահամարի (2011թ.) շրջանակներում թվային տվյալներ են ներկայացվել նաև քաղաքացիություն չունեցող անձանց մասով, այդուամենայնիվ, դրանք համապարփակ չեն: Ըստ էության, վիճակագրական տվյալները քաղաքացիություն չունեցող անձանց մասով ներառում են միայն նրանց սեռի և տարիքի մասին տեղեկություն<sup>1162</sup>:

Այդուամենայնիվ, ապաքաղաքացիության բացահայտման, կանխարգելման, կրճատման և այդ անձանց պաշտպանության համար անհրաժեշտ է վերլուծել նրանց վերաբերյալ այլ տվյալներ ևս: Մասնավորապես, բնակչության մարդահամարի արդյունքները չեն պարունակում տվյալներ, օրինակ՝ քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց նկարագրի, էթնիկ պատկանելության, ամուսնական կարգավիճակի, ինչպես նաև բնակության վայրի վերաբերյալ:

Լրացման ենթակա կարևորագույն դաշտերից է անձի քաղաքացիություն չունենալու կամ չփաստաթղթավորված լինելու պատճառը:

«ԵԱՀԿ տարածքում ապաքաղաքացիության վերաբերյալ ձեռնարկ. միջազգային չափանիշները և լավագույն փորձը» ՄԱԿ ՓԳՀ և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) համատեղ փաստաթղթում ընդգծվում է մարդահամարի կարևոր դերը քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման, հետևաբար նաև՝ ապաքաղաքացիության կրճատման և կանխարգելման տեսանկյունից:

<sup>1161</sup> Տե՛ս «e-draft» իրավական ակտերի քննարկման միասնական կայքի հրապարակումը «Օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մասին» նոր օրենքի նախագծի և վերաբերելի այլ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ՝ <https://www.e-draft.am/projects/2175/justification>:

<sup>1162</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտի՝ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բնակչության մարդահամարի արդյունքները՝ <https://www.armstat.am/file/doc/99486303.pdf>:

Փաստաթղթում մասնավորապես նշվում է, որ [Ք]աղաքացիություն չունեցող անձի բացահայտումը սկսվում է իրավիճակային վերլուծությունից, ներառյալ վերլուծական ակնարկը և, հնարավորության դեպքում, մասնակցային գնահատումը: Վերլուծական ակնարկի համար համապատասխան քաղաքացիություն չունենալու մասին տեղեկատվությունը կարելի է գտնել տարբեր աղբյուրներում, այդ թվում՝

(...)

- մարդահամարների վիճակագրական տվյալներ. համապատասխան հանրային ռեգիստրներ, ինչպիսիք են քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյանները, բնակության գրանցամատյանները, սոցիալական ծառայության գործակալությունների կամ ընտրական մարմինների տվյալները. և քաղաքացիություն չունենալու տվյալների բազաներ (եթե առկա են):

Եթե ծրագրվում է ազգային մարդահամար, ապա այս հնարավորությունը կարող է օգտագործվել մարդահամարի հարցաթերթերում հատուկ հարցերի ներառմանը նպաստելու համար, որոնք թույլ են տալիս բացահայտել հնարավոր քաղաքացիություն չունեցող անձանց և ձեռք բերել նրանց մասին սոցիալ-տնտեսական տվյալներ: (...)

Բնակչության մարդահամարի միջոցով քաղաքացիություն չունենալը չափելիս ընդհանուր մարտահրավերն այն է, որ մարդիկ կարող են իրենց ճանաչել որպես քաղաքացիություն չունեցող, թեև նրանք ունեն ազգություն, կամ կարող են մտածել, որ քաղաքացիություն ունեն, մինչդեռ իրականում չունեն: Այդուամենայնիվ, մարդահամարի ժամանակ ազգության վերաբերյալ հարցերի պատասխանները կարող են ցույց տալ քաղաքացիություն չունենալու մտահոգություններ, որոնք կարող են և պետք է հետազայում վերլուծվեն և նորից ստուգվեն: Հետևաբար, մարդահամար կատարողները պետք է տեղյակ լինեն քաղաքացիություն չունենալու հնարավոր խնդիրների մասին և համապատասխան վերապատրաստում ստանան: (...):

**Բնակչության պրոֆիլավորումը, ներառյալ նպատակային հարցումները, նույնպես կարևոր գործիքներ են ինքնության հաստատման և նպատակների պլանավորման համար: Կառավարության քաղաքականության շրջանակի և համապատասխան ընթացակարգերի առկայության դեպքում, հարցումը կարող է զուգակցվել գրանցման, տեղեկատվության և իրավական խորհրդատվության հետ, որպեսզի օգնի քաղաքացիություն չունեցող առանձին անձանց մուտք գործել քաղաքացիություն ձեռք բերելու համապատասխան ընթացակարգեր, փաստաթղթային ընթացակարգեր, կամ լուծումների բացակայության դեպքում՝ որոշման ընթացակարգ, որը կապված է անվտանգ կարգավիճակի ձեռքբերման հետ: (...):**

(...)

Վերլուծական ակնարկի ընթացքում տեղեկատվական բացերը ակնհայտ կդառնան: Այնուհետև կարելի է գնահատել, թե ինչպես կարող են լրացվել նման բացերը և ինչպես կարելի է թարմացնել տեղեկատվությունը տեղեկատվության հավաքման այլ մեխանիզմների միջոցով: Նման մեխանիզմներից առաջնայինն շահառու անձանց ներգրավումն է մասնակցային գնահատման միջոցով, որը պետք է արտացոլի մասնակիցների տարբեր տարիքը, սեռը, էթնիկ

պատկանելությունը և բազմազանությունը: Մասնակցային գնահատումների արդյունքները, մասնավորապես, պետություններին, միջազգային կազմակերպություններին և գործընկերներին կրեդենցիաներն քաղաքացիության բացակայության պատճառների, քաղաքացիության ձեռքբերման խոչընդոտների, քաղաքացիություն չունեցող բնակչության պաշտպանության կարիքների մասին, ներառյալ կարգավիճակը և փաստաթղթերը, և լուծմանը նպաստելու բնակչության սեփական կարողությունները<sup>1163</sup>:

Ավելին, հրապարակված տվյալներն ունեն պարբերաբար թարմացման խնդիր: Դրանք կանոնավոր կերպով չեն ստուգվել, քանի որ բացակայում են դրա համար անհրաժեշտ մեխանիզմները: Չեն հավաքագրվում նաև ապաքաղաքացիության պատճառների մասին տվյալներ:

Այս տվյալների հավաքագրումը պետության համար կստեղծի ամուր հիմքեր վերլուծելու երկրում ապաքաղաքացիությանն առնչվող ոլորտում առկա մարտահրավերները և մշակելու դրանց լուծումներ: Օրինակ, դրանք կարող են պետության համար կանխորոշել քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման, ուղղորդման և փաստաթղթավորման համար ամենաարդյունավետ կառուցակարգերը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս հաստատում է այն թեզը, որ երկրում քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց վերաբերյալ համապարփակ տվյալների հավաքագրումը և վերլուծությունն ապաքաղաքացիության կրճատման և կանխարգելման տեսանկյունից կրում է կարևոր ռազմավարական նշանակություն: Մասնավորապես, «ԵԱՀԿ տարածքում ապաքաղաքացիության վերաբերյալ ձեռնարկ. միջազգային չափանիշները և լավագույն փորձը» ՄԱԿ ՓԳՀ և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) համատեղ փաստաթղթում նշվում է, որ [Բ]ացահայտումը ենթադրում է ավելին քան քաղաքացիություն չունեցող անձանց թվաքանակի վերաբերյալ տարրական վիճակագրությունը: Այն պահանջում է քաղաքացիություն չունեցող անձանց իրավիճակի լայնածավալ «քարտեզագրում», ներառյալ քաղաքացիություն չունենալու վրանգի տակ գտնվող բնակչության խմբերը, ինչպես նաև նրանց բնութագրերն ու կարիքները: Գոյություն ունեն բացահայտման մի շարք գործիքներ, ինչպիսիք են քարտեզագրումը, ազգության ստուգման արշավները և քաղաքացիություն չունեցող անձի որոշման ընթացակարգերը, որոնք կարող են արդյունավետ մեխանիզմներ լինել պետությունների համար՝ բացահայտելու իրենց քաղաքացիներին և 1954 թվականի Կոնվենցիայի շահառուներին:

2011 թվականին ՄԱԿ ՓԳՀ-ն հրապարակել է քաղաքացիություն չունեցող անձանց չափման վերաբերյալ ձեռնարկ, որը գործնական տեղեկատվություն է տրամադրում այն մասին, թե ինչպես պլանավորել և իրականացնել քարտեզագրում՝ օգտագործելով անհրաժեշտ մեթոդաբանությունը և

<sup>1163</sup> Տե՛ս «ԵԱՀԿ տարածքում ապաքաղաքացիության վերաբերյալ ձեռնարկ. միջազգային չափանիշները և լավագույն փորձը» ՄԱԿ ՓԳՀ և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) համատեղ փաստաթուղթը, էջեր 44 - 45՝ <https://www.osce.org/files/f/documents/5/1/302201.pdf>:

հետազոտական գործիքները: Քարտեզագրման ծրագրի արդյունքները կարող են օգտագործվել նաև քաղաքացիություն չունենալու դեմ պայքարելու գործում ռեսուրսների բաշխումը բացահայտելու կամ բարելավելու համար: Նրանք կարող են նաև արժեքավոր տեղեկատվություն տրամադրել՝ կառավարության կողմից սահմանված թիրախավորման առաջ մղման հարցում, որը կօգնի կանխել և նվազեցնել քաղաքացիություն չունենալը երկարաժամկետ հեռանկարում: Սա, օրինակ, կարող է ներառել ծնունդների գրանցման ընթացակարգերն ու գործելակերպը բարելավելու ուղիների առաջարկը<sup>1164</sup>:

Քաղաքացիություն չունենալու բացահայտումը և ռիսկերը ներառում են.

- խնդրի մասշտաբների գնահատում (թվեր, աշխարհագրական տարածում և այլն),
- ազդակիր բնակչության պրոֆիլի սահմանում (ժողովրդագրական կազմը, բաժանված՝ ըստ սեռի, տարիքի և էթնիկական պատկանելության տվյալների, անձնական տվյալների անվտանգության և պաշտպանության միջազգային չափանիշների պատշաճ հարգմամբ),
- քաղաքացիություն չունենալու խնդրի պատճառների և լուծման խոչընդոտների որոշում (օրենսդրության բացեր, վարչական պրակտիկա և այլն),
- ի հայտ եկած պաշտպանական խնդիրների բացահայտում, և
- բոլոր շահագրգիռ կողմերի բացահայտում (ազդակիր անձինք, կառավարություններ, միջազգային կազմակերպություններ, հասարակական կազմակերպություններ, քաղաքացիական հասարակություն և այլն)<sup>1165</sup>:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է մշակել քաղաքացիություն չունեցող բնակչության բացահայտման արդյունավետ մեխանիզմներ և ներդնել տեղեկատվության հավաքագրման, թարմացման և տրամադրման ավելի ֆորմալ և կանոնավոր մեթոդաբանություն:

### **3. Քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման գործուն մեխանիզմների բացակայություն. ընդհանուր նկատառումներ և բացահայտված դեպքերի օրինակներ՝ ըստ ընդհանրությունների**

Գիտակցելով քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման հետ կապված գործնական բարդությունները, այդուամենայնիվ, պետությունը պետք է ներդնի կոնկրետ գործուն մեխանիզմներ, որոնք կթիրախավորեն ներպետական համատեքստում այդ տեսանկյունից առավել խոցելի իրավիճակները և պայմանները, ինչպես նաև համապատասխան անձանց

<sup>1164</sup> Տե՛ս «Քաղաքացիություն չունեցող բնակչության չափման վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2011 թվականի մայիսի ուղեցույցը՝ <https://www.refworld.org/pdfid/4f6887672.pdf>:

<sup>1165</sup> Տե՛ս «ԵԱՀԿ տարածքում ապաքաղաքացիության վերաբերյալ ձեռնարկ. միջազգային չափանիշները և լավագույն փորձը» ՄԱԿ ՓԳՀ և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) համատեղ փաստաթուղթը, էջեր 42 - 43՝ <https://www.osce.org/files/f/documents/5/1/302201.pdf>:

առանձնահատկությունները: Դրանք կարող են կապված լինել տարբեր գործոնների հետ, որոնք ընդհանուր են բացահայտված քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց հետ կապված դեպքերում:

Արձանագրված առաջին խումբ դեպքերում ազգությամբ հայ անձինք, ովքեր բնակվում են Հայաստանում, ծնված են լինում Ադրբեջանում: 1988–1992թթ. Ադրբեջանի տարբեր քաղաքներում էթնիկ հայերի նկատմամբ լայնածավալ բռնությունների պատճառով Հայաստան է տեղահանվել շուրջ 360.000 հայ<sup>1166</sup>: Տեղահանության ընթացքում մարդիկ կորցրել են անձը հաստատող փաստաթուղթը:

Արձանագրված մեկ այլ խումբ դեպքերը վերաբերել են նրան, որ անձը ծնվել է Հայաստանում, ծնունդը ստացել է գրանցում, սակայն ծնողների անհետևողականության արդյունքում երեխան չափահաս դառնալուց հետո չի անձնագրավորվել:

Նման դեպքերում պատճառները կարող են տարբեր լինել՝ ընտանիքը սոցիալապես անապահով է, անձնագրային ստորաբաժանում այցելելը դժվար է անձի բնակության վայրից հեռու գտնվելու պատճառով:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ անձը ծնված լինելով Հայաստանում ստացել է ԽՍՀ անձնագիր, սակայն ձեռք չի բերել ՀՀ քաղաքացիություն:

Հատկանշական է, որ այս մասով առկա են փաստաթղթավորման օրենսդրական կառուցակարգեր, որոնք վերաբերում են տեղական ինքնակառավարման մարմինների՝ երեխաների ծնունդները գրանցելու ապահովմանն ուղղված գործընթացներում ներգրավմանը: Մասնավորապես, «Տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների բնագավառում իրականացնում է պետության պատվիրակված առանձին լիազորություններ, որոնցից է իր համայնքում երեխաների ծնունդների չգրանցման դեպքերը բացահայտելու և այդ ծնունդների պետական գրանցումներն ապահովելու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը, օրենքով սահմանված դեպքերում և կարգով երեխայի ծննդի պետական գրանցման գրավոր հայտարարություն տրամադրելը<sup>1167</sup>:

Ավելին, «Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի, վկայականի կրկնօրինակի և քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման մասին տեղեկանքի տրամադրման կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի հուլիսի 2-ի N 96-ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի 2020 թվականի մայիսի 13-ի թիվ 169-Ն

<sup>1166</sup> Տե՛ս ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության տվյալները 1988-1992թթ. Ադրբեջանից բռնի տեղահանված էթնիկ հայերի վերաբերյալ՝ [http://www.migration.am/general\\_information](http://www.migration.am/general_information):

<sup>1167</sup> Տե՛ս «Տեղեկան ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=157900>:

հրամանով սահմանվում է համայնքի ղեկավարի ներգրավվածությունը Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (ՔԿԱԳ) կողմից անձի փաստաթղթավորման հարցում<sup>1168</sup>:

**Այդուամենայնիվ, գործնականում համայնքի (առավելապես Երևան քաղաքում) ղեկավարի կողմից անհրաժեշտ փաստաթղթերը հաճախ չեն տրամադրվում:**

Արձանագրվել են դեպքեր, երբ Հայաստանի Հանրապետությունում ծնված գործունակ անձինք գտնվում են հոգեկան առողջության կենտրոնում՝ ունենալով դժվարություններ կապված գործողությունները գիտակցված կատալու հետ և չունեն վավեր անձնագիր: Նման դեպքերում հոգեկան առողջության կենտրոնի կամ անձի խնամակալի ներգրավվածությունն անհնարին է: Միակ հնարավոր տարբերակը, ստացվում է, լիազորված ներկայացուցչի կողմից համապատասխան մարմիններում, այդ թվում՝ դատարանում, ներկայացուցչությունն ապահովելն է:

Բացահայտված հաջորդ խումբ դեպքերում օտարերկրացին, ծնված լինելով արտերկրում, առհասարակ չի ունենում անձը հաստատող փաստաթուղթ կամ դրա վավերականության ժամկետը սպառված է լինում:

Բացահայտվել են նաև դեպքեր, երբ անձինք, ում ծնողները չեն հանդիսացել ՀՀ քաղաքացիներ, ովքեր ծնվել են ՀՀ սահմաններից դուրս, մանուկ հասակից բնակվել են Հայաստանում և ունեցել են կամ չեն ունեցել ծննդյան վկայականի բնօրինակ կամ պատճեն:

Նման դեպքերում խնդրի լուծման համար առաջարկվող օրենսդրական կարգավորումները նախատեսում են, որ անհրաժեշտ է անձնագրավորման համար դիմել ԱՎՎ՝ ՔԶԱ վկայականով փաստաթղթավորվելու համար: Այդուամենայնիվ, անձը ԱՎՎ-ի կողմից կփաստաթղթավորվի ՔԶԱ վկայականով այն դեպքում, եթե դիմողի ծագման երկրից ստացվի տեղեկատվություն առ այն, որ նա չի հանդիսանում այդ պետության քաղաքացին:

Ծննդյան վկայականի բացակայության դեպքում հնարավոր մյուս երկու եղանակներն են դատական կամ նոտարական կարգով իրավաբանական նշանակություն ունեցող ծննդյան կամ ծննդյան գրանցման կամ երեխայի ծննդաբերության փաստի հաստատումը:

Բժշկական կազմակերպությունից դուրս՝ տնային պայմաններում ծնունդը ևս գործնականում հաճախ հանդիպող խնդիր է, որի վերաբերյալ վերլուծությունը և օրինակը ներկայացված է ստորև:

---

<sup>1168</sup> Տե՛ս «Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի, վկայականի կրկնօրինակի և քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման մասին տեղեկանքի տրամադրման կարգը և ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի հուլիսի 2-ի N 96-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Արդարադատության նախարարի 2020 թվականի մայիսի 13-ի թիվ 169-Ն հրամանի հավելվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետը, 15-րդ կետի 6-րդ ենթակետը, 43-րդ կետի 6-րդ ենթակետը և 45-րդ կետի 6-րդ ենթակետը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142505>:

Այդուամենայնիվ, օրենսդրությամբ և գործնականում բացակայում են քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման մեխանիզմները: Ավելին, խիստ մտահոգիչ է նաև գործնականում վերը նշված օրենսդրական կարգավորումների ոչ մշտական կիրառումը:

Հարկ է նկատել, որ առկա օրենսդրական կարգավորումների տրամաբանությունը հուշում է, որ դրանք առավել հիմնված են անձի ինքնաբացահայտման վրա և չեն սահմանում իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման մեխանիզմներ:

Այս առումով ընդգծման ենթակա է այն փաստը, որ ըստ ՄԱԿ ՓԳՀ-ի քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման առումով կարևոր գործիք է նաև իրազեկումը: Մասնավորապես, «Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2014 թվականի ձեռնարկում ընդգծվում է, որ **տեղեկատվական արշավները որոշ երկրներում կարող են առավել արդյունավետ լինել, քան բացահայտման մեխանիզմները**<sup>169</sup>:

Ավելին, ուսումնասիրությունները վկայում են, որ հաճախ քաղաքացիություն չունեցող անձինք անվճարունակ են և չեն կարող վճարել փաստաթղթավորման համար անհրաժեշտ պետտուրքերը և ստանալ վճարովի իրավաբանական աջակցություն: Սա ևս պատճառ է նրանց կողմից փաստաթղթավորումից խուսափելու համար:

*Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է՝*

1) *ձևավորել կոնկրետ մեխանիզմներ, որոնք կնախատեսեն քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման հետ կապված կոնկրետ պարտավորություններ առանձին դերակատարների համար (օրինակ՝ Ոստիկանության փարածքային բաժիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, բժշկական կազմակերպություններ և այլն),*

2) *իրականացնել համապատասխան շահագրգիռ գերատեսչությունների քննարկում,*

3) *կազմակերպել պատասխանատու սուբյեկտների վերապատրաստում առկա օրենսդրական կարգավորումների (լիազորություններ և պարտականություններ), ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման վերաբերյալ,*

4) *քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման առումով իրականացնել պարբերական իրազեկման մակարդակի բարձրացման միջոցառումներ, որոնք*

<sup>169</sup> Տե՛ս «Քաղաքացիություն չունեցող անձանց պաշտպանության վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2014 թվականի ձեռնարկը, էջ 25 – 26՝ [https://www.unhcr.org/dach/wp-content/uploads/sites/27/2017/04/CH-UNHCR\\_Handbook-on-Protection-of-Stateless-Persons.pdf](https://www.unhcr.org/dach/wp-content/uploads/sites/27/2017/04/CH-UNHCR_Handbook-on-Protection-of-Stateless-Persons.pdf).

տեղեկություն կտրամադրեն փաստաթղթավորման գործընթացի և պատասխանատու մարմինների վերաբերյալ,

5) քաղաքացիություն չունեցող անձանց համար վերացնել փաստաթղթավորման համար անհրաժեշտ պեղծերը և նախատեսել իրավաբանական անվճար աջակցության հնարավորություն:

#### **4. Ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և պաշտպանության հարցերով զբաղվող միջգերատեսչական մարմնի ստեղծման անհրաժեշտություն**

Հայաստանի Հանրապետությունում ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և պաշտպանության ոլորտում անհրաժեշտ են գործուն քայլեր: Դրանց արդյունավետ իրականացման համար պարտադիր բաղադրիչներից մեկն է իրավասու մարմինների պատասխանատվությունների հստակ սահմանումը և նրանց միջև ակտիվ փոխգործակցության ապահովումը:

Սա հատկապես կարևոր է քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և ուղղորդման տեսանկյունից: Նշվածը հնարավորություն կտա նաև ապահովել տեղեկատվության օպերատիվ փոխանակում:

Խնդիրը քննարկվել է նաև Ծրագրի աշխատանքային խմբում: Աշխատանքային խմբի 9-րդ և 10-րդ հանդիպումների արձանագրությունից պարզ է դառնում, որ անդամների դիրքորոշման համաձայն՝ անհրաժեշտ է ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և պաշտպանության ոլորտում ստեղծել համակարգող մարմին՝ միջգերատեսչական հանձնաժողով: Դրա կազմում պետք է ընդգրկված լինեն մի շարք գերատեսչությունների և շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ:

Միջգերատեսչական հանձնաժողովի նիստերը պետք է կրեն պարբերական բնույթ: Դրանց ընթացքում անդամները կքննարկեն ոլորտում առկա համակարգային խնդիրներն ու դրանց լուծման ուղիները, ինչպես նաև հանձնաժողովը կիջեցնի համապատասխան հանձնարարականներ, որոնք կիրագործվեն պատասխանատու մարմինների կողմից:

Հետևաբար, անհրաժեշտ է ստեղծել ապաքաղաքացիության կանխարգելման և կրճատման, ինչպես նաև քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց բացահայտման և պաշտպանության ոլորտի միջգերատեսչական հանձնաժողով՝ սահմանելով դրա կազմը, որում ոլորտի հասարակական և միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը խիստ ցանկալի է, նախատեսելով լիազորություններ և պարտականություններ անդամների համար:



## **5. Երեխայի ծննդի դեպքում փաստաթղթավորման խոչընդոտները՝ որպես ծնունդը չգրանցելու կամ դրա խոչընդոտների պատճառ**

### 1. Ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթղթի բացակայությունը՝ որպես ծնունդը չգրանցելու կամ դրա խոչընդոտների պատճառ

Հաջորդ խնդիրը, որը ենթակա է սույն փաստաթղթի քննարկմանը, վերաբերում է այն դեպքերին, երբ երեխայի՝ բժշկական հաստատությունից դուրս, օրինակ՝ տնային ծննդի արդյունքում նա չի փաստաթղթավորվել:

ՀՀ օրենսդրությամբ երեխայի՝ բժշկական հաստատությունից դուրս ծննդի արդյունքում չփաստաթղթավորման հետ կապված խնդրի լուծման երեք հիմնական տարբերակ, որոնք ներկայացվում են ստորև՝

• **Նոտարական կարգով,**

• **Արտադատական կարգով (ՔԿԱԳ).**

• **Դատական կարգով:**

Այսպես, «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենք 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *[Ծ]ննդի պեղական գրանցման հիմք են՝*

1) Հայաստանի Հանրապետության տարածքի բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթուղթը.

(...)

3) երեխայի ծննդյան փաստը հաստատող՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը.

4) «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը.

(...)<sup>170</sup>:

Այսինքն՝ բժշկական հաստատությունից դուրս երեխայի ծննդի դեպքում ՔԿԱԳ գործակալության կողմից ծննդի գրանցման համար անհրաժեշտ է ձեռք բերել վերը թվարկված փաստաթղթերից որևէ մեկը, որոնց ձեռքբերումը որոշ դեպքերում առաջացնում է խոչընդոտներ մարդկանց համար: Մասնավորապես, երբ երեխան չի ծնվում բժշկական կազմակերպությունում կամ ծնվում է առանց բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնության բախվում է ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթղթի ձեռքբերման խնդրի:

<sup>170</sup> Տե՛ս «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149999>:

Հետևաբար, գործող օրենսդրական կառուցակարգերի պայմաններում ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթղթի բացակայության դեպքում, եթե բացակայում է նոտարի կամ դատարանի կողմից երեխայի ծննդյան փաստի հաստատումը, արտադատական կարգով՝ ՔԿԱԳ կողմից երեխայի փաստաթղթավորումը՝ ծննդի պետական գրանցումն անհնարին է:

Հաջորդ՝ արտադատական կարգով ՔԿԱԳ կողմից երեխայի փաստաթղթավորման համար «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված կարգով նոտարի հաստատած իրավաբանական փաստի մասին նոտարական ակտը ներկայացնելն է:

Այսպես, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 81.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ ի թիվս այլնի, *նոտարը հաստատում է **ծննդյան, որդեգրման (դստերագրման), ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցումը***:

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ *[Ն]ոտարը իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով ստանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր, կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը*: Քննարկվող նմանօրինակ դեպքերում անձի հնարավորությունը բացակայում է արտադատական կարգով ստանալու այդ փաստը:

Այդուամենայնիվ, գործնականում նոտարը մերժում է հրապարակել համապատասխան նոտարական ակտ այն պատճառաբանությամբ, որ **բացակայում է ինքնին անձը հաստատող փաստաթուղթը**՝ հիմնվելով նույն հոդվածի 9-րդ և 10-րդ մասերին:

Գործնականում արձանագրվել են նաև բարդություններ, երբ օտարերկրացի ծնողի դեպքում չի տրամադրվել ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթուղթը, ինչի հետևանքով հնարավոր չի լինում գրանցել երեխայի ծնունդը: Այդուամենայնիվ, հնարավոր է նաև մեկ այլ լուծման տարբերակ, որի համաձայն՝ համայնքի ղեկավարը իրավասու է դիմել բժշկական հաստատություն և ստանալ այդ փաստաթուղթը, որը, սակայն, գործնականում չի ապահովվում բժշկական հաստատության կողմից: Մինչդեռ, եթե տրամադրվի ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթուղթը համայնքի ղեկավարին, հնարավոր կլինի գրանցել երեխայի ծնունդը արտադատական կարգով :

Ավելին, 81.1-րդ հոդվածի 4.1-րդ մասի ով սահմանվում է, որ *[Դ]իմողի գրավոր միջնորդության հիման վրա նոտարը **ցուցմունք է վերցնում վկայից***: Վկայի ներկայությունն ապահովում է դիմողը: Նոտարի մոտ *ցուցմունք* տալը վկայի իրավունքն է: Նոտարը նախազգուշացնում է վկային սուր *ցուցմունք* տալու համար սահմանված քրեական պատասխանատվության մասին, որի վերաբերյալ վկան ստորագրում է, և որը կցվում է նոտարական գործին: *Ցուցմունքը* ձայնագրվում է, իսկ ձայնագրման կրիչը կցվում է նոտարական գործին: Վկայից *ցուցմունք* վերցնելիս նոտարը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի

համապատասխան դրույթներով՝ այնքանով, որքանով դրանք կիրառելի են սույն հոդվածի դրույթների նկատմամբ<sup>1171</sup>:

Այսինքն, ծննդյան գրանցման փաստը հաստատելու համար նոտարն օժտված է նաև վկայից ցուցմունք վերցնելու լիազորությամբ, որը գործնականում չի կիրառվում նոտարների կողմից ներկայացվող այն պատճառաբանությամբ, որ բացակայում են դրա համար անհրաժեշտ կառուցակարգերը:

**Ուստի, գործնականում բացակայում է նաև նոտարական կարգով երեխայի ծննդի գրանցման հնարավորությունը քննարկվող դեպքերում: Այդուամենայնիվ, սա վերաբերելի է չափահաս դարձած անձանց, կամ այն անչափահասների դեպքում ում ծնողը չունի վավեր անձը հաստատող փաստաթուղթ կամ բացակայում է օրենքով նախատեսված այլ անհրաժեշտ փաստաթուղթ:**

**Այսինքն՝ կարելի է պնդել, որ գործնականում թե՛ նոտարը և թե՛ ՔԿԱԳ-ը քննարկվող դեպքերում չեն համարվում իրավունքի պաշտպանության արդյունավետ միջոց:**

Նշված երկու մեխանիզմների անարդյունավետ լինելու պատճառով քաղաքացին ստիպված է լինում կիրառել վերջին հնարավոր մեխանիզմը՝ դատական կարգով երեխայի ծննդի փաստի հաստատումը: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *[Ա]ռաջին ատյանի դատարանը, գործերի փարածքային ընդդատությանը համապատասխան, հաստատում է այն փաստերը, որոնցից կախված է քաղաքացիների կամ իրավաբանական անձանց անձնական կամ գույքային իրավունքների ծագումը, փոփոխումը կամ դադարումը:*

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը սահմանում է, որ *դատարանը փաստերի հաստատման վերաբերյալ քննում է այն գործերը, որոնք վերաբերում են, ի թիվս այլնի՝ ծննդյան, որդեգրման, ամուսնության, ամուսնալուծության և մահվան գրանցմանը:*

Այդուամենայնիվ, օրենսգրքի 239-րդ հոդվածը Իրավաբանական նշանակություն ունեցող փաստի հաստատման համար նախատեսում է անհրաժեշտ պայմանը. *[Դ]ատարանն իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատում է միայն այն դեպքում, եթե դիմողը հնարավորություն չունի այլ արտադատական կարգով, բացառությամբ իրավաբանական նշանակություն ունեցող փաստը նոտարի կողմից հաստատելու կարգի, սրանալու այդ փաստը հավաստող պատշաճ փաստաթղթեր կամ անհնար է վերականգնել կորցրած փաստաթղթերը<sup>1172</sup>:*

<sup>1171</sup> Տե՛ս «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 81.1-րդ հոդվածը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144997>:

<sup>1172</sup> Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 237-րդ և 239-րդ հոդվածները՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=157257>:

Թեև կոնկրետ գործի շրջանակներում դատական կարգով ներկայացված դիմումի հիման վրա դատարանի կողմից կայացված որոշման արդյունքում փաստաթղթավորվել է ոչ միայն շահառուն, այլ նաև նրա նորածին երեխան, խնդիրը կրում է համակարգային բնույթ:

Ակնհայտ է, որ երեխայի ծննդի գրանցման անհնարինության դեպքում նա գրկվում է իր քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, օրինակ՝ ծննդյան վկայական, ստանալու հնարավորությունից: Ավելին, նման դեպքում, չստանալով որևէ հաշվառում, փաստացի նա կհամարվի քաղաքացիություն չունեցող անձ՝ իրավաբանորեն լինելով «անտեսանելի»՝ գոյություն չունեցող:

Այսինքն, սա լրջագույն խնդիր է նաև ապաքաղաքացիության կանխարգելման տեսանկյունից:

Հարկ է նկատել նաև, որ նման դեպքերում, երբ առկա են ծննդի գրանցման խոչընդոտներ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ քննարկվող խումբ անձինք հաճախ չեն ունենում նաև ֆինանսական բավարար միջոցներ հոգալու անհրաժեշտ ծախսերը, այդ թվում՝ վճարելու պետությունը: Միջազգային չափանիշների տեսանկյունից սա խնդրահարույց է, քանի որ պետությունը պետք է բացառի ֆինանսական վիճակի պատճառով երեխայի ծննդի գրանցման և քաղաքացիության շնորհման անհնարինությունը: Ավելին, սա վերաբերում է նաև փոխկապակցված կամ այլ վճարների, որոնց չկատարման դեպքում քաղաքացիության շնորհումը հնարավոր չէ:

«Ապաքաղաքացիության կրճատման վերաբերյալ 1961 թվականի կոնվենցիայի 1-ից 4-րդ հոդվածների միջոցով յուրաքանչյուր երեխայի քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ իրավունքի վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2012 թվականի դեկտեմբերի 21-ի 4-րդ ուղեցույցի 54-րդ կետի համաձայն՝ *[Այն դեպքերում, երբ անդամ պետությունները դիմումների հիման վրա շնորհում են քաղաքացիություն անձանց, ովքեր այլ կերպ կլինեն ապաքաղաքացի, խրախուսվում են ընդունել այդ դիմումներն անվճար: Անուղղակի ծախսերը, ինչպես՝ փաստաթղթերի վավերացման, չպետք է խոչընդոտ ստեղծեն անձանց համար ներկայացնելու դիմում 1961 թվականի կոնվենցիայի 1-ին և 4-րդ հոդվածների ներքո*<sup>1173</sup>:

Այսինքն, ՄԱԿ ՓԳՀ դիրքորոշմամբ ևս, քաղաքացիության շնորհման համար անձի անհաղթահարելի վճարները, որոնք կարող են հիմք հանդիսանալ քաղաքացիություն չստանալու, պետք է վերացվեն: Գործընթացը պետք է իրականացվի անվճար:

*Վերը նշվածի հաշվառմամբ, անհրաժեշտ է՝*

1) *անհրաժեշտ է ոչ թե առանց բժշկական փաստաթղթի առկայության իրականացնել երեխայի ծննդյան գրանցումը, այլ պարտավորեցնել բուժհաստատությանը տրամադրել երեխայի բժշկական փաստաթուղթը նաև համայնքի ղեկավարին, որը կնպաստի, այդ թվում՝ դատական*

<sup>1173</sup> Տե՛ս «Ապաքաղաքացիության կրճատման վերաբերյալ 1961 թվականի կոնվենցիայի 1-ից 4-րդ հոդվածների միջոցով յուրաքանչյուր երեխայի քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ իրավունքի վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2012 թվականի դեկտեմբերի 21-ի 4-րդ ուղեցույցի 54-րդ կետը՝ <https://www.refworld.org/docid/50d460c72.html>:

համակարգի ծանրաբեռնվածության նվազմանը և միտված կլինի բացառելու երեխայի ծննդյան փաստի գրանցման անտեղի խոչընդոտները, որոնք կարող են հանգեցնել ծնողի կողմից երեխայի ծննդի փաստի գրանցման համար անհրաժեշտ քայլեր չկատարելուն,

2) ներդնել նույնիսկ կողմից վկայից ցուցմունք վերցնելու համար անհրաժեշտ կառուցակարգեր՝ այդ նպատակով կազմակերպելով շահառու մարմինների, այդ թվում՝ նույնների մասնակցությամբ քննարկում,

3) իրականացնել նույնների վերապատրաստում քննարկվող թեմայի վերաբերյալ,

4) հաշվի առնել նույնական կարգով ծննդյան փաստի գրանցման դեպքում շահառու անձանց սոցիալ-տնտեսական վիճակը և նրանց հնարավոր անվճարունակությունը, լուծել նաև նույնիսկ վճարվող պետությունների խնդիրը՝ ազատելով անձին հնարավոր ֆինանսական բեռից և վերացնելով նման բնույթի հնարավոր խոչընդոտները:

## 2. Ծնողի անձը հաստատող փաստաթղթի բացակայությունը՝ որպես ծնունդը չգրանցելու կամ դրա խոչընդոտների պատճառ

«Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ ՔԿԱԳ կողմից երեխայի ծննդի գրանցման անհրաժեշտ պայման է ծնողի անձը հաստատող փաստաթղթի ներկայացումը: Հարկ է նկատել նաև, որ նույնիսկ, եթե բժշկական կազմակերպությունում տեղի ունեցած կամ բժշկական կազմակերպության կամ բժշկի օգնությամբ, սակայն բժշկական կազմակերպությունից դուրս տեղի ունեցած ծննդի դեպքում՝ ծննդի մասին սահմանված ձևի բժշկական փաստաթուղթն առկա է, այն բավարար չէ երեխայի ծնունդը գրանցելու համար, եթե բացակայում է ծնողի անձը հաստատող փաստաթուղթը<sup>1174</sup>:

Ավելին, բժշկական կազմակերպությունում ծնված երեխայի ծնողի անձնագրի վավերականության ժամկետը լրացած լինելու դեպքում, բուժհաստատությունը չի տրամադրում ծննդյան վերաբերյալ բժշկական փաստաթուղթ:

Կոնկրետ դեպքով արված օրենսդրական և գործնական վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ պետությունը պատշաճ կերպով չի իրականացնում չփաստաթղթավորված անձանց հայտնաբերման, փաստաթղթավորման պարտավորությունները: Այսինքն՝ փաստաթղթավորման բեռը դրված է առավելապես անձի վրա, ինչը որոշ դեպքերում նաև լինում է անհամաչափ և պատշաճ վարչարարության իրականացման տեսանկյունից խնդրահարույց:

Մասնավորապես, նման դեպքերի համար բացակայում են ուղղորդման և փաստաթղթավորման կոնկրետ մեխանիզմներ: Առկա չէ բացահայտված չփաստաթղթավորված անձի (պատճառը կարող է տարբեր լինել, օրինակ՝ անձը հաստատող փաստաթղթի վավերականության հետ կապված խնդիր, կորուստ) փաստաթղթավորման օրենսդրական կամ գործնական մեխանիզմներ, որոնք

<sup>1174</sup> Տե՛ս «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=149999>:

թայլ կտան խուսափել երեխայի ծննդյան փաստի գրանցման անհնարինությունից կամ անտեղի խոչընդոտներից:

Ինչպես նշվեց՝ ակնհայտ է, որ երեխայի ծննդի գրանցման անհնարինության դեպքում նա զրկվում է իր քաղաքացիությունը հավաստող փաստաթուղթ, օրինակ՝ ծննդյան վկայական, ստանալու հնարավորությունից: Չստանալով որևէ հաշվառում, անձը փաստացի կհամարվի քաղաքացիություն չունեցող:

Հետևաբար, մեխանիզմների բացակայությունը կարող է խնդրահարույց լինել նաև Հայաստանի Հանրապետության՝ 1961թ. Կոնվենցիայի 1-ին հոդվածով սահմանված միջազգային պարտավորությունների տեսանկյունից, որը նախատեսում է, որ *պայմանավորվող պետություն իր քաղաքացիությունը շնորհում է իր տարածքում ծնված ցանկացած անձի, որն այլապես կդառնար քաղաքացիություն չունեցող անձ*<sup>1175</sup>:

Ավելին, 1976 թվականի մարտի 23-ի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 24-րդ հոդված-ի 3-րդ մասը սահմանում է, որ *[Յ]ուրաքանչյուր երեխա ունի քաղաքացիություն ձեռք բերելու իրավունք*<sup>1176</sup>:

«Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի 7-րդ հոդվածի համաձայն՝ *[Ե]րեխան գրանցվում է ծնվելուց անմիջապես հետո և ծննդյան պահից ձեռք է բերում անվան և քաղաքացիության իրավունք, ինչպես նաև, որքան դա հնարավոր է, իր ծնողներին ճանաչելու և նրանց խնամքի իրավունք*<sup>1177</sup>:

Ծննդի գրանցման կարևորությունն արձանագրվում է նաև ՄԱԿ ՓԳՀ կողմից: Մասնավորապես, «Ապաքաղաքացիության կրճատման վերաբերյալ 1961 թվականի կոնվենցիայի 1-ից 4-րդ հոդվածների միջոցով յուրաքանչյուր երեխայի քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ իրավունքի վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2012 թվականի դեկտեմբերի 21-ի 4-րդ ուղեցույցի 55-րդ կետը սահմանում է, որ (...) *ծննդի գրանցումը վկայում է ծագման և ծննդավայրի մասին և, հետևաբար, հիմք է հանդիսանում 1961 թվականի Կոնվենցիայի և դրա հետ կապված մարդու իրավունքների նորմերի կապարման համար: (...)*<sup>1178</sup>:

*Հետևաբար, առաջարկվում է՝*

<sup>1175</sup> Տե՛ս «Ապաքաղաքացիության կրճատման մասին» 1961 թվականի օգոստոսի 30-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածը՝ <https://www.refworld.org/cgi-bin/telex/vtx/rwmain?page=topic&docid=4cad866e2&skip=0&toqid=50ffbce51b1&toqid=50ffbce5205&querysi=1961%20convention&searchin=fulltext&sort=date>:

<sup>1176</sup> Տե՛ս 1976 թվականի մարտի 23-ի Քաղաքացիական եւ քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ), որը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1993 թվականին՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>:

<sup>1177</sup> Տե՛ս «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի նոյեմբերի 20-ի ՄԱԿ-ի կոնվենցիան, որը վավերացվել է Հայաստանի Հանրապետության կողմից 1992 թվականին՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=60503>:

<sup>1178</sup> Տե՛ս «Ապաքաղաքացիության կրճատման վերաբերյալ 1961 թվականի կոնվենցիայի 1-ից 4-րդ հոդվածների միջոցով յուրաքանչյուր երեխայի քաղաքացիության ձեռքբերման վերաբերյալ իրավունքի վերաբերյալ» ՄԱԿ ՓԳՀ 2012 թվականի դեկտեմբերի 21-ի 4-րդ ուղեցույցի 55-րդ կետը՝ <https://www.refworld.org/docid/50d460c72.html>:

1) մշակել օրենսդրական գործուն մեխանիզմներ, որոնք կնախատեսեն ծնողի կողմից անձը հաստատող փաստաթղթի ներկայացման անհնարինության խնդրի լուծում (օրինակ՝ նոր անձը հաստատող փաստաթղթի տրամադրում ժամկետը սպառված լինելու կամ կորստի դեպքում)՝ բացառելու համար երեխայի ծննդյան փաստի գրանցման անհնարինությունը կամ անտեղի խոչընդոտների առկայությունը,

2) քննարկել ծնողի վավեր անձը հաստատող փաստաթղթի բացակայության՝ որպես երեխայի ծննդի գրանցման խոչընդոտի բացահայտման դեպքում բժշկական կազմակերպությունը տեղեկացնի Ոստիկանությանը, որն էլ իր իրավասության սահմաններում կլուծի խնդիրը:

## **6. Անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրում ՔՀԱ կարգավիճակ հայցող անձանց**

Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձը կարող է դիմել իրավասու պետական մարմին՝ ստանալու քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայական: Սա կարևոր է ոչ միայն անձի փաստաթղթավորման և իրավունքների ապահովման տեսանկյունից, այլ նաև նրան հաշվառելու տեսանկյունից:

«Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2.1-րդ կետը նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը, կացության վկայականի ձևը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը<sup>179</sup>:

ՀՀ կառավարության 2006 թվականի մարտի 2-ի N 318-Ն որոշմամբ սահմանվում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման կարգը և կացության վկայականի նկարագիրը: Այսպես, սույն որոշման Հավելված 1-ի 1.2-րդ կետը նախատեսում է, որ [Ք]աղաքացիություն չունեցող անձանց փաստաթղթավորման հարցերի մասին դիմումները քննարկվում են **30-օրյա ժամկետում**:

Ստացվում է, որ այն դեպքերում, երբ բարեխիղճ քաղաքացիություն չունեցող անձը դիմել է փաստաստաթղթավորման համար, կամ երբ պետության կողմից բացահայտվել է քաղաքացիություն չունեցող անձ, նա պետք շարունակի մնալ չփաստաթղթավորված ևս 30 օր:

Սա առնվազն մտահոգիչ է: Օրինակ՝ ապաստան հայցող անձանց դեպքում, մինչև վարչական մարմնի՝ Միգրացիոն ծառայության կամ դատարանի կողմից որոշման ուժի մեջ մտնելը անձն ունենում է ապաստան հայցողի վկայական:

Խնդիրը՝ քաղաքացիություն չունեցող անձի փաստաթղթավորումը, անհրաժեշտ է դիտարկել նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ) 8-րդ հոդվածով նախատեսված

<sup>179</sup> Տե՛ս «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2.1-րդ կետը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142381>:

անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքի համատեքստում, հատկապես՝ ՄԻԵԿ Թիվ 4 արձանագրության 2-րդ հոդվածով սահմանված ազատ տեղաշարժի իրավունքի տեսանկյունից: Վերջինը փաստաթղթի բացակայության դեպքում սահմանափակված է. անձի չի կարող ճամփորդել:

Այս աումով հարկ է նկատել, որ խրախուսվում է անձի փաստաթղթավորումը նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) իրավաբանության տրամաբանությամբ<sup>1180</sup>:

Ուստի, անհրաժեշտ է անձը հաստատող ժամանակավոր փաստաթղթի տրամադրում քաղաքացիություն չունեցող անձանց կացության վկայական ստանալու համար դիմած քաղաքացիություն չունեցող անձանց:

### **7. Անվճար իրավաբանական օգնության տրամադրում քաղաքացիություն չունեցող և չփաստաթղթավորված անձանց**

Քաղաքացիություն չունեցող անձինք հաճախ բախվում են սոցիալական և իրավական տարբեր խնդիրների: Փաստաթղթավորման հետ կապված գործընթացների բարդությամբ պայմանավորված՝ հաճախ այդ խնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է ստանալ իրավաբանական օգնություն: Հաշվի առնելով նրանց սոցիալական վիճակը և վճարունակության հետ կապված խնդիրները, այդ օգնության տրամադրումն անհրաժեշտ է, որ լինի անվճար:

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը՝ ՄԱԿ ՓԳՀ-ի և այլ կազմակերպությունների աջակցությամբ իրականացնում է քննարկվող խումբ անձանց իրավաբանական օգնությունը, այդ թվում՝ ապահովելով նրանց ներկայացուցչությունը դատարանում և պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններում: Այս փորձի հաշվառմամբ՝ կարելի է պնդել, որ քաղաքացիություն չունեցող անձ շահառուներն անվճարունակ են և չեն կարող ինքնուրույն անցնել փաստաթղթավորման գործընթացով, հաշվի առնելով նրանց իրավագիտակցության մակարդակը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1ին մասի համաձայն՝ *[Հ]անրային պաշտպանություն է համարվում սույն հոդվածով նախատեսված դեպքերում տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը:*

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ *[Ա]նվճար իրավաբանական օգնությունը ներառում է՝*

<sup>1180</sup> Տե՛ս «Ռազմավարական հարց. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայիով նախատեսված պարտավորություն ապաքաղաքացիության որոշման վերաբերյալ» ձեռնակ (2014), էջեր 17-18՝ <https://www.refworld.org/pdfid/582326c34.pdf>.



1) խորհրդարարությունը՝ հայցադիմումների, դիմումների, բողոքների և այլ իրավաբանական բնույթի դատավարական փաստաթղթերի կազմում, ներառյալ՝ իրավաբանական տեղեկատվության տրամադրում:

2) ներկայացուցչությունը կամ պաշտպանությունը՝ քրեական, քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով:

Օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսվում, որ [Հ]անրային պաշտպանի գրասենյակը, բացառությամբ քրեական գործով կասկածյալին կամ մեղադրյալին իրավաբանական օգնություն տրամադրելու, ինչպես նաև սույն հոդվածի 6-րդ մասում նշված դեպքերի, սույն հոդվածով նախատեսված անվճար իրավաբանական օգնությունը տրամադրում է հետևյալ անձանց՝

1) օրենքով սահմանված կարգով հաստատված՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապով զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի անդամներին:

2) 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամներին:

3) դատապարտյալներին:

4) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ 0-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամներին:

5) Հայրենական մեծ պատերազմի և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ մարտական գործողությունների մասնակիցներին:

6) գործազուրկներին:

7) միայնակ բնակվող կենսաթոշակառուներին:

8) առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց:

9) փախստականներին:

10) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր պաշտպանություն ստացածներին:

11) անվճարունակ այն ֆիզիկական անձանց, որոնք իրենց անվճարունակությունը հաստատող հավաստի տվյալներ են ներկայացնում: Սույն կետի իմաստով անվճարունակ է համարվում այն ֆիզիկական անձը, որը չունի բավարար եկամուտ, համատեղ բնակվող աշխատող ընտանիքի անդամ, ինչպես նաև բացի անձնական բնակարանից, որպես սեփականություն չունի այլ անշարժ գույք կամ նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող արժեքի փոխադրամիջոց:

12) հոգեբուժական կազմակերպությունում գտնվող հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց:

13) օրենքով սահմանված կարգով մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված զոհերի նույնացման հանձնաժողովի կողմից զոհ կամ հատուկ կատեգորիայի զոհ ճանաչված անձանց:

14) Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողներին:

15) խոշտանգումից տուժած անձանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.3-րդ հոդվածով սահմանված կարգով փոխհատուցում ստանալու նպատակով:

16) «Ընդհանրում բռնության կանխարգելման, ընդհանրում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընդհանրում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ընդհանրում բռնության ենթարկված անձանց.

17) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա հարուցված քաղաքացիական գործերով պատասխանողներին:

Նշված խմբերի հատկանիշների համադրված վերլուծությունը վկայում է, որ Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնության տրամադրման հիմքերից են անձի անվճարունակությունը և որոշակի սոցիալական կարգավիճակը, օրինակ՝ հաշմանդամություն ունենալը: Այդուամենայնիվ, որպես դրա հիմնավորում անձից պահանջվում է ներկայացնել հավաստի տվյալներ:

Այս իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել, որ քաղաքացիություն չունեցող անձինք, չունենալով անձը հաստատող վավեր փաստաթուղթ, չեն կարող իրավասու մարմինների կողմից ճանաչվել օրենսդրությամբ նախատեսված այս կամ այն կարգավիճակում գտնվող: Ավելին, ունենալով այդ կարգավիճակի հաստատման բոլոր հիմքերը, նույն՝ փաստաթուղթ չունենալու պատճառով չեն կարող դիմել ստանալու համար:

Հետևաբար, տվյալ իրավիճակներում անձի փաստաթղթավորումը և պետության կողմից սահմանված ծառայություններից օգտվելը փոխկապակցված հարցեր են, որոնց լուծման համար առաջին կարևոր քայլը կարող է դիտվել անձին անվճար իրավաբանական օգնության տրամադրումը:

Ուստի, անհրաժեշտ է «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսել, որ քաղաքացիություն չունեցող անձինք ունեն Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք:

**ԲԱԺԻՆ 21. ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ (COVID-19) ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԼԱՅՆԱԾԱՎԱԼ ԶԻՆՎԱԾ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ**

Սույն բաժնում ներկայացված են Արցախի և Հայաստանի նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի լայնածավալ հարձակումների հետևանքով մարդու իրավունքների կոպիտ խախտումները, պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունները հավաստող ամփոփ տվյալներ (մանրամասներն առանձին զեկույցներում ու հաղորդումներում են), այդ խախտումներն արձանագրող փաստահավաք աշխատանքների արդյունքները: Ընդ որում, բաժինը ներկայացնում է հարցերն այն տեսանկյունից, որոնք ցույց են տալիս ադրբեջանական իրական շարժառիթները՝ էթնիկ զտումների և ցեղասպան քաղաքականությունը: Դա էլ իր հերթին հիմնված է պետական աջակցությամբ ատելության և թշնամանքի քարոզի վրա:

Այս բաժնում, մասնավորապես, քննարկվում են՝ 1) 2020 թվականի հուլիսին Հայաստանի Տավուշի մարզի խաղաղ բնակավայրերի դեմ ադրբեջանական զինված հարձակումները, 2) 2020 թվականի սեպտեմբերի 27-ից ադրբեջանական զինված ուժերի լայնածավալ հարձակումները Արցախի և Հայաստանի բնակչության դեմ:

Բոլոր դեպքերում ադրբեջանական զինված հարձակումներն ուղեկցվել են Արցախի (Լեռնային Ղարաբաղի) և Հայաստանի խաղաղ բնակչության և քաղաքացիական բնակավայրերի, քաղաքացիական ենթակառուցվածքների բացահայտ թիրախավորմամբ, արգելված զինատեսակների շարունակաբար օգտագործմամբ, Արցախի խաղաղ բնակչության զանգվածային տեղահանմամբ, վարձկան ահաբեկիչների և ջիհադիստների օգտագործմամբ, էթնիկ ու կրոնական հիմքով լայնածավալ ատելության խոսքով ու բռնության կոչերով<sup>1181</sup>: Ադրբեջանական զինված ուժերի հասցված վնասները բնույթով այնպիսին էին, որ ակնհայտորեն հանգեցրին մարդասիրական աննախադեպ աղետի:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն իրականացրել է մեծածավալ փաստահավաք աշխատանքներ, որոնք ներկայացված են Պաշտպանի առանձին զեկույցներում ու հաղորդագրություններում:

Հատուկ պետք է նշել, որ պատերազմի առաջին պահից սկսած հատուկ ձևաչափով համագործակցություն է տարվել Արցախի մարդու իրավունքների պաշտպան Արտակ Բեգլարյանի հետ՝ ապահովելով սերտ աջակցություն նրա նախաձեռնած փաստահավաք աշխատանքներին: Երկու երկրների իրավապաշտպան հաստատությունները գործել են անձնական և ինստիտուցիոնալ բացարձակ վստահությամբ ու գործընկերային աշխատանքով:

Հարցն այն է, որ առանց այն էլ տարիներ շարունակ ադրբեջանական իշխանության մարմինները վարել են Արցախի բնակչությանը բոլոր տեսակի մարդասիրական հարցերից ու աշխարհից մեկուսացնելու քաղաքականություն: Ուստի, Արցախում բնակվող էթնիկ հայերը որևէ

<sup>1181</sup> <https://ombuds.am/images/files/326290df4f5627efee9967798fdcbcb2.pdf>

հնարավորություն չունենին սեփական ուժերով պաշտպանելու իրենց իրավունքները կամ իրենց իրավունքների խախտումները ներկայացնելու միջազգային հանրության ուշադրությանը: Ուստի, Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը լիարժեք աջակցել է Արցախի մարդու իրավունքների պաշտպանի կարևոր ջանքերին՝ արցախահայության իրավունքների պաշտպանության հարցերում:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին նույնպես հասցեագրել են բողոքներ Արցախի բնակիչները՝ ներկայացնելով իրավունքների կոպիտ խախտումները, ադրբեջանական դաժանությունները՝ խնդրելով Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը՝ Արցախից դուրս մարդու իրավունքների միջազգային կառույցների դիմելու հնարավորության բացակայության պատճառով: Խոսքը վերաբերում է թե՛ Արցախում բնակվող հայերին, թե՛ արդեն տեղահանված ու Հայաստան տեղափոխվածներին:

Ընդ որում, Ադրբեջանը լայնածավալ ագրեսիվ պատերազմը նախաձեռնել և իրականացրել է COVID-19-ի մահաբեր աղետի համատեքստում՝ անտեսելով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կոչը և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի այն պահանջը, որ COVID-19 վտանգով պայմանավորված զինված հակամարտությունները բոլոր հանգամանքներում պետք է անհապաղ դադարեցվեն<sup>1182</sup>: Ընդ որում, Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց, որտեղ բացառապես փաստերով ներկայացրել է մահաբեր վիրուսի առաջացրած մահվան ու վարակի թվերը: Ըստ այդմ, Պաշտպանը կոնկրետ օրինակների ու միջազգային չափանիշների հիման վրա եզրահանգել է, որ ադրբեջանական զինված ուժերը Արցախի ու Հայաստանի բնակչության դեմ կատարել են մարդկության դեմ ուղղված հանցագործություններ՝ աղետալի վիճակի հասցնելով երկու երկրների առողջապահական համակարգերը<sup>1183</sup>:

Ադրբեջանական վայրագությունների վերաբերյալ ապացույցները (այդ թվում՝ վարձկան ահաբեկիչների մասնակցությամբ) Պաշտպանի աշխատակազմում ենթարկվել են իրավական մշակման, թարգմանվել արաբերենից, ադրբեջաներենից կամ թուրքերենից անգլերեն ու ռուսերեն, իրականացվել է իրավական ամրագրում: Ադրբեջանական դաժանությունների վերաբերյալ Պաշտպանի հայտարարությունները և իրավական դիրքորոշումները թարգմանվել են ավելի քան 15 լեզուներով, այդ թվում՝ անգլերեն, ռուսերեն, արաբերեն, ֆրանսերեն, պարսկերեն, իսպաներեն:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն Արցախի և Հայաստանի խաղաղ բնակչության դեմ ադրբեջանական զինված ուժերի կողմից նախաձեռնված ռազմական հարձակման արդյունքում խախտված իրավունքների պաշտպանության հարցերով իր գործունեությունն իրականացրել է հիմք ընդունելով մարդու իրավունքների պաշտպանության իր մանդատը և կոնֆլիկտային ու հետկոնֆլիկտային իրավիճակներում մարդու իրավունքների ազգային հաստատությունների գործունեության սկզբունքները:

<sup>1182</sup> <https://www.un.org/en/globalceasefire>, [https://undocs.org/en/S/RES/2532\(2020\)](https://undocs.org/en/S/RES/2532(2020))

<sup>1183</sup> <https://ombuds.am/images/files/e632fe2219cb340fc05194d684d7206f.pdf>

Ցավոք, պատերազմի առանձնահատկություն դարձավ այն, որ մարդու իրավունքների միջազգային կառույցներն անհամաչափ լուրջություն էին պահպանում և համարժեք չէին արձագանքում ադրբեջանական զինված ուժերի վայրագություններին: Դրա հետևանքն էլ եղավ այն, որ լուրջ հարված հասցվեց մարդու իրավունքների համակարգին, այդ համակարգի հեղինակությանը և ստացվեց, որ քաղաքական հարցերը բացահայտ առավելություն ստացան մարդու իրավունքների նկատմամբ: Մինչդեռ իրականում մարդու իրավունքները համընդհանուր արժեքներ են ու դրանք պետք է գործեն բոլոր իրավիճակներում, երբևէ չեն կարող անտեսվել: Միջազգային կառույցների լուրջությունը խաթարեց նաև տարիներով մշակված միջազգային այն սկզբունքը, որ տարածքի քաղաքական կարգավիճակը չի կարող ազդել մարդու իրավունքների վրա և այն, որ որևէ մեկի իրավունք չի կարող հայտնվել լուսանցքում ու որևէ մեկը չի կարող անտեսված լինել: Դա էր նաև պատճառներից մեկը, որ չնայած պատերազմի ընթացքում մի քանի անգամ հայտարարված մարդասիրական հրադադարներին՝ ադրբեջանական կողմը շարունակում էր զինված հարձակումները:

Ուստի, այս պատերազմից հետո հատկապես արդիական է դարձել այն հայեցակարգի արմատավորումը, որ մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը և անվտանգությունը լրացնում են իրար:

Արձանագրված իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ զեկույցները հրապարակվել և ուղարկվել են միջազգային (ՄԱԿ, Եվրոպայի խորհուրդ, ԵԱՀԿ և այլն), ինչպես նաև ՀՀ համապատասխան մարմիններին:

## **ԳԼՈՒԽ 1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԵՎ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ**

### **1. Արգելված զենքերի կիրառումը խաղաղ բնակչության և քաղաքացիական օբյեկտների նկատմամբ**

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր պատերազմի առաջին օրերից սկսած՝ Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ իրականացվել են զինված հարձակումներ, արգելված կասետային, այդ թվում՝ հրթիռային, զինատեսակների շարունակաբար օգտագործմամբ: Այս մասին են առաջին հերթին վկայում Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հաղորդումներն ու զեկույցները<sup>1184</sup>: Այդ մասին նաև հաղորդել են տարբեր լրատվամիջոցներ և միջազգային կառույցներ (օրինակ՝ Human Rights Watch և այլն):

<sup>1184</sup> <https://artsakhombuds.am/en/node/1>

Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի հայտարարություններն, օրինակ, հաստատում են, որ Արցախի քաղաքացիական բնակավայրերը թիրախավորվել են LAR-160 և կասետային մարտագլխիկներով «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ հրթիռներով գրեթե բոլոր օրերին:

Սեպտեմբերի 27-28-ին, հոկտեմբերի 2-4-ին Ադրբեջանի կողմից LAR-160 և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ հրթիռներ է կիրառել Հադրութ քաղաքի, մայրաքաղաք Ստեփանակերտի և մայրաքաղաքին մոտ գտնվող Շոշ գյուղի ուղղությամբ: «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգով երկու անգամ հրթիռակոծել է Արցախի Հադրութ քաղաքը, որի արդյունքում վնաս է հասցվել քաղաքացիական բնակչությանը և այլն:

Նշված կասետային զինատեսակները բնույթով այնպիսին են, որ անխուսափելիորեն նրանց անհնար է դառնում ապահովել անհրաժեշտ տարբերակումը ռազմական և քաղաքացիական թիրախների միջև, երբ դրանք օգտագործվում են քաղաքացիական և քաղաքացիական օբյեկտների հարևանությամբ, առավել և, երբ դրանք օգտագործվում են խիտ բնակեցված բնակավայրերում:

Ադրբեջանի կողմից LAR-160 և «Սմերչ» կասետային հրթիռային համակարգերի օգտագործումը հանգեցրել է միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների՝ մարդու իրավունքների ոլորտի պարտավորությունների բացահայտ անտեսմամբ: Պաշտպանի հրապարակային հայտարարություններից մեկում հատուկ ընդգծվել է, որ նման զենքի կիրառումը կարող է բերել անկանխատեսելի հետևանքների, այն ոչ միայն անթույլատրելի է հասցված անմիջական վնասների տեսանկյունից, այլ նաև լրջորեն վտանգում է ապագա սերունդների առողջությունը:

Խիտ բնակեցված բնակավայրերի դեմ կասետային զինամթերքի բազմակի օգտագործումը միջազգային մարդասիրական իրավունքի (այդ թվում՝ Ժնևյան կոնվենցիաների), Կասետային զինամթերքի մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի, ինչպես նաև միջազգային մարդու իրավունքների, այդ թվում՝ կյանքի և առողջության իրավունքի, դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի և սեփականության իրավունքին վերաբերող պոզիտիվ պարտավորությունների կոպիտ խախտում է:

Միջազգային իրավական փաստաթղթերը և միջազգային մարդասիրական սովորության իրավունքն արգելում են կասետային զինատեսակների կիրառումը՝ դրանք համարելով մահաբեր և անմարդկային (inhuman): Նշված զինատեսակներն ունեն ոչ ընտրողական ազդեցություն (indiscriminate effect) և վտանգում են խաղաղ բնակչության կյանքն ու առողջությունը, պատճառում լրացուցիչ վնասներ ու տառապանքներ: Կասետային զինատեսակներ օգտագործելը արգելված է ցանկացած պարագայում, երբ այդպիսի օգտագործման հետևանքները չեն կարող սահմանափակվել այնպես, ինչպես պահանջվում է միջազգային մարդասիրական իրավունքով, այն է՝ երբ հնարավոր չէ ապահովել ռազմական թիրախների տարբերակում:

Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների փաստահավաք աշխատանքների ու զեկույցների, լրատվամիջոցների հրապարակումների և քաղաքացիական բնակչությունից հաղորդվող արժանահավատ տեղեկությունների, ինչպես նաև Հայաստանի և Արցախի

պաշտոնական աղբյուրներով հաստատված տվյալների վրա մշակվել և փաստաթղթավորվել են արգելված միջոցների և մեթոդների վերաբերյալ գնահատականները:

Պաշտպանի դիմումներում և զեկույցներում բարձրացրած խնդիրներին, որոնք վերաբերում են Արցախի (Լեռնային Ղարաբաղի) քաղաքացիական բնակավայրերում կետային զինատեսակների կիրառման փաստերին, անդրադարձել են մի շարք միջազգային կազմակերպություններ, ինչպես, օրինակ, «Human Rights Watch-ը» և «Amnesty International-ը»:

Արցախի Մարդու իրավունքների պաշտպանների զեկույցներում տեղ են գտել նաև հարցեր, որոնք վերաբերում են Արցախում պաշտամունքի վայրերի, պատմական և հուշարձանների արվեստի ստեղծագործությունների հրետակոծություններ: Խոսքը հատկապես վերաբերում է 2020 թվականի հոկտեմբերի 8-ին հայկական ճարտարապետության պատմական խորհրդանիշներից մեկը՝ Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Շուշի քաղաքի կենտրոնում գտնվող Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց Մայր տաճարը թիրախային հրթիռակոծության ենթարկելուն:

## **2. ԱԹՍ-ների կիրառումը Արցախի և Հայաստանի քաղաքացիական բնակավայրերի նկատմամբ**

Պատերազմական գործողությունների ժամանակ Ադրբեյջանն օգտագործել է նաև ռազմական անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ-ներ)՝ որպես քաղաքացիական բնակավայրերի և խաղաղ բնակչության դեմ թիրախային հարձակման միջոցներ:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին ստացած ահազանգերի համաձայն՝ Ադրբեյջանի զինված ուժերի կողմից ռազմական անօդաչու թռչող սարքերով հարվածներ են հասցվել Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի, Սոթք, Կուֆ, Նորաբակ և մի շարք այլ համայնքների քաղաքացիական բնակչությանը, այդ թվում՝ խիտ բնակեցված շրջաններում ապրող քաղաքացիական բնակչությանը, կարևորագույն քաղաքացիական ենթակառուցվածքներին:

Մասնավորապես, 2020 թվականի հոկտեմբերի սկզբին Գեղարքունիքի մարզի Շատվան գյուղը, Մեծ Մասրիկը ենթարկվել են հրետանային և ԱԹՍ-ների կողմից հարձակումների: Մարդու իրավունքների պաշտպանը առանձին տեղեկություններ է ստացել այն մասին, որ հարձակումների արդյունքում սպանվել է 1 քաղաքացիական անձ, 2 քաղաքացիական անձ վիրավորում է ստացել: Խաղաղ բնակիչներից Մարդու իրավունքների պաշտպանին ահազանգով նաև տեղեկացրել են, որ հարվածային ԱԹՍ-ները ընկել են 2 բնակելի տան վրա՝ այրելով տները:

Ընդ որում, հարվածներն իրականացվել են հենց բնակելի տների վրա և գիշերային ժամի, երբ մարդիկ վստահաբար գտնվել են տանը: Շատվանը հենց այն գյուղն է, որտեղ երեկ Մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբի գլխավերևում հայտնվել էին ԱԹՍ-ներ և որի պատճառով ստիպված էին եղել դադարեցնել 2020 թվականի սեպտեմբերի 30-ի փաստահավաք աշխատանքները:

Պաշտպանը խստորեն դատապարտել է այն, որ հարվածներն իրականացվել են հենց բնակելի տների վրա ու գիշերային ժամի՝ համարելով դրանք մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումներ և այդ հարցերի վրա է հրավիրել միջազգային կառույցների ուշադրությունը:

2020 թվականի հոկտեմբերին նման խախտումների վերաբերյալ մի շարք ահազանգեր են ստացվել Սյունիքի մարզի քաղաքացիական բնակչության կողմից՝ կապված Սյունիքի մարզի Դավիթ Բեկ և Ագարակ համայնքների ու գյուղերի, այդ բնակավայրերի խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից ռազմաօդային հարձակումների հետ:

Սյունիքի և Գեղարքունիքի մարզի համայնքների բնակիչների Մարդու իրավունքների պաշտպանին ուղղված ահազանգերը, համայնքների վարչակազմերի հետ քննարկումներն ու փաստահավաք աշխատանքները գյուղերում հաստատել են, որ Ադրբեջանի զինված ուժերի հարձակումներն իրական վտանգ են խաղաղ բնակիչների համար, արձանագրվել են այդ հարձակումներով նրանց կյանքի, առողջության, սեփականության և այլ իրավունքների կոպիտ խախտումներ:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքները և վերլուծությունները ամփոփվել են Հայաստանի և Արցախի խաղաղ բնակչության նկատմամբ ադրբեջանական ԱԹՍ-ների թիրախային հարձակումների վերաբերյալ և Սյունիքի մարզի Դավիթ Բեկ և Ագարակ գյուղերի խաղաղ բնակչության և Գեղարքունիքի մարզի քաղաքացիական բնակավայրերի թիրախավորման վերաբերյալ արտահերթ զեկույցներում:

Զեկույցներում նշվում է, որ ադրբեջանական կողմն իրականացրել է նպատակային թիրախավորումներ՝ կոնկրետ բնակավայրին վնաս հասցնելու նպատակով: Այդ հարձակումների արդյունքում արձանագրվել են խաղաղ բնակիչների առողջության, սեփականության և այլ իրավունքների կոպիտ խախտումներ:

Պաշտպանի զեկույցները ուղարկվել են միջազգային կառույցներին և պետական մարմիններին, մասնավորապես, Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցչին՝ վերջինիս պաշտոնական հարցմամբ:

Ադրբեջանական զինված ուժերը ԱԹՍ-ները լայնորեն օգտագործել են նաև Արցախի քաղաքացիական բնակավայրերի նկատմամբ, որի փաստերն ամփոփված են Արցախի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում:

### **3. Հայկական կողմի քաղաքացիական անձանց և զինծառայողների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի դաժանություններն ու խոշտանգումները**

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմն ուղեկցվել է ադրբեջանական զինվորականների կողմից արդեն իսկ իրենց վերահսկողության ներքո գտնվող քաղաքացիական անձանց և զինծառայողների սպանություններով, խոշտանգումներով ու այլ դաժանություններով, կենդանի մարդկանց գլխատումներով և այլն: Այս մասին ահազանգեր է ստացվել ՀՀ մարդու



իրավունքների պաշտպանը: Դրանք Պաշտպանի աշխատակազմն արձանագրել է մշտադիտարկման աշխատանքներով, ինչպես նաև Արցախի մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքների հիման վրա:

Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի հետ համատեղ անմիջապես նախաձեռնված մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական սոցիալական մեդիայի օգտահաշիվներից տարածվում են տեսանյութեր, որտեղ ցուցադրվում են հայկական կողմի քաղաքացիական անձանց և ռազմագերիների սպանություններ, խոշտանգումներ, այլ դաժան վերաբերմունք: Նույնիսկ բացահայտ ցինիզմով իրագործվում էին կենդանի մարդկանց գլխատումներ ու հրապարակելու համար պատրաստվում տեսանյութեր: Ավելին, այդ տեսաձայնագրությունները նկարահանվել և տարածվել են սպանություն իրականացնող անձանց կողմից:

Ստորև բազմաթիվ օրինակներից բերում ենք ընդամենը մի քանիսը:

Այսպես, 2020թ. հոկտեմբերի 12-14-ն ընկած ժամանակահատվածում Արցախի Հանրապետության Հադրութ քաղաքի հրապարակում ցուցադրաբար գնդակահարել են գերեվարված անձինք, ինչը ցուցադրող տեսանյութը հոկտեմբերի 15-ին հրապարակվել է ադրբեջանական սոցիալական մեդիայի տիրույթում<sup>1185</sup>:

Արցախի մարդու իրավունքների պաշտպան փաստահավաք աշխատանքները վկայում են նրա մասին, որ 2020 թ. Հոկտեմբերի սկզբին Արցախի Հադրութ քաղաքում սպանվել են 4 քաղաքացիական անձինք, որից 2-ը ընտանիքի անդամներ են՝ մայրը և հաշմանդամություն ունեցող որդին: Տվյալները վկայում են այն մասին, որ Հադրութում սպանված խաղաղ բնակիչների մահը վրա է հասել մոտ տարածությունից արձակված հրազենային կրակոցից: Ակնհայտ է, որ նրանք անմիջականորեն սպանել է Ադրբեջանից նախորդ օրը հայկական բնակավայր Հադրութ ներխուժած դիվերսիոն խումբը: Կան նաև վիրավորում ստացած խաղաղ բնակիչներ:

Տվյալները ցույց են տվել նաև, որ Հադրութում քաղաքացիական բնակիչները սպանվել են վարձկան ահաբեկիչների կողմից, իսկ մի մասին էլ ֆիզիկական տանջանքների են ենթարկել<sup>1186</sup>:

Հադրութում քաղաքացիական անձանց սպանությունների, ինչպես նաև հայ զինծառայողների սպանությունների հարցերով Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ գրություններ է ներկայացրել ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ադրբեջանական վերահսկողության ներքո էթնիկ հայ գերիների սպանությունների, այդ թվում՝ գլխատման միջոցով սպանությունների, դաժանությունների տեսանյութերը ոչ միայն տարածվում են ադրբեջանական սոցիալական մեդիայի տիրույթում, այլ նաև ուղարկվում են զոհերի հարազատների անհատական օգտահաշիվներին:

<sup>1185</sup> Տե՛ս Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի «Ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի քաղաքացիական անձանց սպանության դեպքերի վերաբերյալ» միջանկյալ զեկույցը՝ [https://artsakhombuds.am/hy/document/785#\\_Toc62764430](https://artsakhombuds.am/hy/document/785#_Toc62764430) (հայերեն):

<sup>1186</sup> <https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1528000540720738>

Մեկ այլ դեպքում, 2020թ. հոկտեմբերի 18-ին Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվեց ահազանգ այն մասին, որ Ադրբեջանի զինվորականները 2020թ. հոկտեմբերին հայ զինծառայող են գլխատել, ինչի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմում անհապաղ վարույթ է նախաձեռնվել:

Ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ հոկտեմբերի 16-ին՝ ժամը 13-ի սահմաններում Ադրբեջանի զինված ուժերի մի զինվորական զանգահարել է հայ զինծառայողի հարազատ եղբորը և տեղեկացրել, որ նրա եղբայրը գտնվում է իրենց մոտ, իրենք կտրել են եղբոր գլուխը, իսկ լուսանկարը տեղադրելու են համացանցում: Դրանից հետո՝ զանգից մի քանի ժամ անց սպանված զինծառայողի լուսանկարը եղբայրը հայտնաբերել է նրա սոցիալական ցանցի էջում: Համոզմունքն այն է, որ հենց ադրբեջանցի զինվորականներն էլ նկարը սոցիալական ցանցի էջում տեղադրել են սպանելուց հետո: Ադրբեջանի զինվորականների հետ եղբայրն ունեցել է իրար հաջորդող երկու հեռախոսային խոսակցություն, որոնց ընթացքում ադրբեջանական մի քանի զինվորական խմբով ծաղրել են, փորձել են նվաստացնել սպանված զինծառայողի եղբորը, նրա հետ խոսել ատելության խոսքով: Ընդ որում, ինչպես Մարդու իրավունքների պաշտպանին տեղեկացրել է հայ զինծառայողի եղբայրը, զանգերը կատարվել են իր եղբոր հեռախոսահամարով:

Այս իմաստով, անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ գլխատելը, դա պատկերող տեսանյութը սոցիալական մեդիայի տիրույթում տեղադրելը վկայում է վայրագ ու դաժան, ակնհայտ ահաբեկչական մեթոդների մասին<sup>1187</sup>:

2020 թվականի հոկտեմբերից ի վեր Հայաստանի և Արցախի Մարդու իրավունքների պաշտպանները համատեղ աշխատանքներ են տարել հայկական կողմի գերիների սպանությունները միջազգային հանրությանը ներկայացնելու ուղղությամբ: Բոլոր փաստերը անհրաժեշտ ձևակերպումներով և ձևաչափերով փաստագրվել են և ներկայացվել են միջազգային մարմիններին՝ ըստ իրավասության:

2020 թվականի դեկտեմբերի դրությամբ միջազգային մարմիններին և Հայաստանի պետական մարմիններին ներկայացվել են հայկական կողմի գերիների ու զոհվածների մարմինների նկատմամբ ադրբեջանական զինված ուժերի դաժանությունների, անարգանքի, վայրագությունների վերաբերյալ ոչ հրապարակային զեկույցներ՝ հաշվի առնելով դրանցում դաժանությունների բաց տեսարանները: Այդ զեկույցներում ցույց են տրված բոլոր դաժանությունները, պատերազմական հանցագործությունները, մասնավորապես՝ գերեվարված անձանց սպանությունները և գլխատումները: Այսինքն, զեկույցը ապացույցների ու վերլուծությունների ժողովածու է, հաստատում է Արցախում ահաբեկչական մեթոդներով էթնիկ զտումների և ցեղասպանության ադրբեջանական քաղաքականության մասին<sup>1188</sup>:

Կոնկրետ դեպքերի պարագայում կարելի է առանձնացնել հետևյալ մի քանի օրինակը:

Օրինակ՝ Ադրբեջանի զինված ուժերի ծայրահեղ դաժան գործողությունների օրինակներից է համացանցում տարածված այն տեսանյութը, որում պատկերված է Արցախի Ստեփանակերտի

<sup>1187</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1337>

<sup>1188</sup> <https://ombuds.am/am/site/ViewNews/1443>

շրջանի Մադաթաշեն գյուղում քաղաքացի Գենադի Պետրոսյանի (ծնված 1951 թ.) բացառիկ ցինիզմով գլխատումը: Այս դաժանության տեսանյութը լայնորեն տարածվել էր ադրբեջանական ինտերնետային աղբյուրի միջոցով: Մասնավորապես, տեսանյութում Ադրբեջանի զինված ուժերի անդամները կտրել են Գ. Պետրոսյանի գլուխը (ամբողջ գործընթացը ներկայացված է տեսանյութում), նրա կտրած գլուխը դրել են սատկած կենդանու (ակնհայտորեն՝ խոզի) մարմնի վրա: Տեսանյութում ադրբեջանցի զինվորականները ծաղրում և վիրավորում են էթնիկ հայի աճյունը՝ պնդելով, որ դա իրենց «վրեժն» է: Բացի դրանից, զինվորներից մեկը մյուսներին ասում է. «գնացե՛ք, բենզին բերեք և այրեք»:

Մեկ այլ դեպքում՝ ադրբեջանական զինծառայողի կողմից գլխատվել է Արցախի Հանրության շրջանի Ազոխ գյուղի բնակիչ Յուրիկ Ասրյանը (ծնված 1938 թ.), որի վերաբերյալ տարածվել է տեսանյութ: Յուրիկ Ասրյանի խոսքի թարգմանության համաձայն՝ նա ադրբեջանցի զինծառայողին խնդրում է ի կատար չաճել սպանելու մասին որոշումը: Հակառակ դրան տեսանյութում երևում է, թե ինչպես է ադրբեջանցի զինծառայողը գլխատում այդ պահին ողջ Յուրիկ Ասրյանին:<sup>1189</sup>

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ահազանգ է ստացվել այն մասին, որ 2020 թ. ժամը 13:00-ի Ադրբեջանի զինված ուժերի ներկայացուցիչներից մեկը զանգահարել է հայ զինծառայողի եղբորը և հայտնել, որ իրենք գերեվարել են հայ զինծառայողին, պատրաստվում են նրան գլխատել և տեղադրել նրա լուսանկարը համացանցում: Ժամեր անց եղբայրը սոցիալական ցանցերում, Instagram սոցիալական ցանցի էջում, հայտնաբերել է իր սպանված եղբոր լուսանկարը: Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս նաև, որ ադրբեջանցի զինվորականները զանգահարել և վախեցրել են նաև զինվորի մորը:

Նշված փաստերը հաստատվել են նաև Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրության արդյունքում, որը նախաձեռնվել էր այն բանից հետո, գլխատված զինվորի եղբայրը 2020 թ. հոկտեմբերի 18-ին դեպքի առնչությամբ Աշխատակազմի թեժ գծի միջոցով ահազանգ էր ներկայացրել: Նույն փաստերը հաստատել է նաև փաստաբանի հետ զրույցում:

Արցախի Մարդու իրավունքների պաշտպանի փաստափակաք աշխատանքների համաձայն՝ հաստատվել են դեպքեր, երբ զինծառայողները գնդակահարվել են շատ մոտ տարածությունից արձակված կրակոցներից, հայտնաբերվել են նաև մահը վրա հասնելուց հետո դանակով հասցված վնասվածքներ: Դեպքերից 5-ը եղել են Շուշի քաղաքում:

**Հայկական կողմի զինվորականներին ու քաղաքացիական անձանց սպանություններին անդրադարձ են կատարել նաև միջազգային կառույցները, ինչպես նաև միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները: Այսպես, ՄԱԿ-ի մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը 2020 թ. նոյեմբերի 1-ի սահմաններում հայտարարել է Արցախում պատերազմական հանցագործությունների: Հրապարակված հոդվածում ՄԱԿ-ի մարդու**

<sup>1189</sup> Տեսանյութում Յ. Ասրյանը խոսում է ադրբեջաներեն: Արցախում ընդունված է, որ տարեց էթնիկ հայերը տիրապետում են ադրբեջաներեն լեզվին, քանի որ նրանք ադրբեջանցիների հետ տարիներ շարունակ համատեղ բնակվել են Արցախում:

իրավունքների գերագույն հանձնակատարը նկատել է, որ «չնայած սոցիալական ցանցերում բազմաթիվ կեղծ լուսանկարներ շրջանառվելու հանգամանքին, ադրբեջանական զորքերի կողմից զինվորական համազգեստով երկու հայ ռազմագերիների մահապատժի ենթարկելու տեսանյութերի վերաբերյալ լրատվամիջոցների կողմից կատարված ուսումնասիրությունները բացահայտել են համոզիչ և խորապես անհանգստացնող տեղեկատվություն»։ Մարդու իրավունքների պաշտպանի հրապարակման համաձայն՝ հողվածում տիկին Հանձնակատարը ենթադրաբար նկատի ունի Հադրուբ քաղաքում երկու հայ գերիների սպանությունը ադրբեջանական զինված ուժերի կողմից<sup>1190</sup>։

Human Rights Watch կազմակերպության 2021 թվականի մարտի 12-ի հայտարարության համաձայն՝ Ադրբեջանում գերության մեջ գտնվող անձանց սպանություններից առնվազն մեկը ամենայն հավանականությամբ արտադատական մահապատժ է հանդիսացել<sup>1191</sup>։

Զեկույցներում արձանագրվել է, որ ադրբեջանական վերահսկողության ներքո հայտնված գերիների սպանությունները իրականացվել են դաժան և ահաբեկչական մեթոդներով։ Նշվել է, որ նման հանցավոր գործողությունները կատարողները պետք է պատժվեն միջազգային քրեական իրավունքի բոլոր միջոցներով։

Արցախի մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է կարևոր փաստական տվյալներ 2020թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի ընթացքում Արցախում խաղաղ բնակիչների իրավունքների կոպիտ խախտումների վերաբերյալ։ Մասնավորապես, իրենց մշտական, հայրենի բնակավայրերից տեղահանվել է ավելի քան 100,000 խաղաղ բնակիչ։ Պատերազմի հետևանքով անօթևան է դարձել շուրջ 40,000 մարդ՝ զրկվելով իրենց տներից, անձնական իրերից, կենսական տարրական պայմաններում ապրելու հնարավորությունից և այլ իրավունքներից։

Ադրբեջանական զինված ուժերի հարձակումների հետևանքով պատերազմի ընթացքում կրթությունից զրկվել է դպրոցական ու մանկապարտեզի տարիքի շուրջ 30,000 երեխա։ Վնասվել կամ ավերվել է 14 մանկապարտեզ և 71 դպրոց։ 2020թ. սեպտեմբերի 27-ից մինչև 2021 հունվարի 28-ը սպանվել է 77 քաղաքացիական անձ, այդ թվում՝ դաժան վերաբերմունքի, խոշտանգման արդյունքում։ Վիրավորում է ստացել 163 խաղաղ բնակիչ, այդ թվում՝ հաշմանդամություն ձեռք բերել, առողջությունն է ողջ կյանքի համար խեղվել<sup>1192</sup>։

#### **4. Քիմիական տարրեր պարունակող զենքի օգտագործում**

2020 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին և դրանից հետո ստացված օբյեկտիվ բնույթի ապացույցների համաձայն՝ Ադրբեջանի զինված ուժերն Արցախում կիրառել են զանգվածային

<sup>1190</sup> <https://www.reuters.com/article/us-armenia-azerbaijan-un-rights-idUSKBN27I238>,  
<https://www.facebook.com/Armenianombudsman/posts/1548401598680632>

<sup>1191</sup> <https://www.hrw.org/news/2021/03/12/survivors-unlawful-detention-nagorno-karabakh-speak-out-about-war-crimes>

<sup>1192</sup> <https://artsakhombuds.am/en/node/1>

ոչնչացման, քիմիական տարրեր պարունակող զինատեսակ, որը կիրառվել է Արցախի քաղաքացիական բնակավայրերի հարևանությամբ գտնվող անտառների նկատմամբ:

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանների համատեղ ուսումնասիրությունները հաստատել են, որ հրկիզող զինատեսակն օգտագործվել է Արցախի քաղաքացիական օբյեկտների և անտառների դեմ՝ առաջացնելով երկարաժամկետ ծանր հետևանքներ խաղաղ բնակչության և շրջակա միջավայրի համար:

Զանգվածային ոչնչացման հրկիզող զինատեսակի կիրառման շատ դեպքերում (օրինակ՝ Ննգի, Սղնախ, Ակնաղբյուր, Թաղավարդ, Տող, Քարին Տակ և այլ համայնքներում) անտառները գտնվում են բնակավայրերին անմիջականորեն մոտ. օրինակ՝ անգամ 100 մետր հեռավորությամբ: Հետևաբար, խոսքը նաև **քաղաքացիական բնակչության կյանքի և առողջության համար անխուսափելի երկարաժամկետ վնասի** մասին է:

Մարդու իրավունքների պաշտպանների համատեղ փաստաթուղթ աշխատանքների արդյունքում պարզվել է, որ Արցախի գրեթե բոլոր շրջաններում վնասվել է ընդհանուր շուրջ 1815 հեկտար անտառապատ տարածք: Հաշվի առնելով զինատեսակի առանձնահատկությունները, այս թիվը կարող է աճել նույնիսկ, եթե այն այլևս չշարունակվի կիրառվել:

Ավելին, արձանագրվել է, որ որոշ քաղաքացիական բնակավայրերում (օրինակ՝ Ննգի, Տաղավարդ, Ակնաղբյուր և այլն) ավերածություններ են պատճառվել քաղաքացիական բնակչության համար **կենսական նշանակություն ունեցող օբյեկտներին** (օրինակ՝ գազամատակարարման խողովակներ և այլն):

Ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախում հրկիզող, քիմիական տարրեր պարունակող (ինարավոր է՝ սպիտակ ֆոսֆոր) զանգվածային ոչնչացման զինատեսակ կիրառելու վերաբերյալ Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանները հրապարակել են համատեղ զեկույց:<sup>1193</sup>

Արտահերթ զեկույցում վեր են հանվել առնվազն հետևյալ փաստերը՝ անկախ կիրառված զինատեսակի քիմիական տարրերի կոնկրետ տեսակներից.

- 1) կիրառված զինատեսակն ունի զանգվածային ոչնչացման բնույթ,
- 2) այն պարունակում է քիմիական տարրեր,
- 3) զինատեսակը կիրառվում է անտառների նկատմամբ և առաջացնում է զանգվածային հրդեհներ ու երկարաժամկետ ծանր վնաս շրջակա միջավայրի համար,
- 4) այս զինատեսակի առաջացրած հրդեհը չի մարում անգամ այն մարող նյութերով կամ ջրով՝ ըստ մասնագիտական գնահատականների,

<sup>1193</sup> Տե՛ս «Ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախում հրկիզող, քիմիական տարրեր պարունակող զանգվածային ոչնչացման զինատեսակ կիրառելու վերաբերյալ» Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների համատեղ արտահերթ զեկույցը՝

<https://ombuds.am/images/files/ea04773e0fcf3a7e4dad87e9b73d360.pdf> (անգլերեն):

5) անտառները, որոնց նկատմամբ կիրառվել են այս նյութերը, գտնվում են քաղաքացիական բնակավայրերն անմիջականորեն մոտ,

6) ըստ փաստահավաք աշխատանքների՝ անտառներում ադրբեջանական զինված հարձակումներից պատսպարվում են նաև խաղաղ բնակիչներ, որոնք, հավանաբար, տուժել են այս զինատեսակի կիրառումից,

7) այս զինատեսակի օգտագործումը քաղաքացիական օբյեկտների դեմ արգելված է միջազգային իրավունքով և կարող է հանգեցնել պատերազմական հանցագործության<sup>1194</sup>:

Հետագայում Մարդու իրավունքների պաշտպանն աշխատակազմի բժշկի ու իրավաբանների հետ Այրվածքաբանության ազգային կենտրոնում ձեռք ենք բերել մի շարք լրացուցիչ ապացույցներ ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախում քիմիական տարրեր (հնարավոր է՝ սպիտակ ֆոսֆոր) պարունակող զանգվածային ոչնչացման զինատեսակի կիրառության վերաբերյալ: Այցի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ բուժանձնակազմի հետ, առանձնագրույցներ վիրավորված զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների հետ Բժիշկների եզրակացությամբ՝ զինծառայողների վնասվածքները, այտուցները (հատկապես վերին վերջույթներում) պահպանվում են **տևական ժամանակ**, այրվածքներից առաջացած վերքերը տեղ-տեղ խորն են, մոխրացած եզրերով, մերթընդմերթ՝ արյունահոսող, բուժմանը՝ դժվար ենթարկվող: Արյան մեջ նկատվում է կալցիումի և հեմոգլոբինի ցածր մակարդակ (հիպոկալցեմիա), դիտվում է լյարդի և փայծաղի չափերի մեծացում (հեպատոսպլենոմեգալիա): Ըստ մասնագետ բժիշկների՝ կիրառված զինատեսակներից արտանետված նյութերը շնչուղիներով օրգանիզմ ներթափանցելու դեպքում առաջանում է ներքին օրգանների ախտահարում, ինչը կարող է հանգեցնել առողջության երկարատև քայքայման, ընդհուպ՝ մահվան:

Ըստ բժիշկների՝ պատերազմի առաջին օրերից տարբեր աստիճանի այրվածքներ ստացած անձանց մեծ մասի մոտ դրանք **տարբերվել են մինչ այդ իրենց պրակտիկայում հանդիպած դեպքերից**:<sup>1195</sup>

Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների աշխատակազմերում իրականացված համատեղ ուսումնասիրությունների արդյունքները ամփոփվել և հրապարակվել են, ինչպես նաև ուղարկվել են միջազգային մարմիններին՝ ըստ իրավասության:<sup>1196</sup>

Արտահերթ զեկույցի հետևությունները հիմնված են զեկույցում ներկայացված ապացույցներով (քաղաքացիական բնակիչների մարմինների վնասվածքների լուսանկարներով, քարտեզային ցուցադրող պատկերներով և այլն): Առանձին հետևություններ հիմնված են Երևանի Մխիթար

<sup>1194</sup> Տե՛ս «Ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախում հրկիզող, քիմիական տարրեր պարունակող զանգվածային ոչնչացման զինատեսակ կիրառելու վերաբերյալ» Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների համատեղ արտահերթ զեկույցը՝

<https://ombuds.am/images/files/ea04773e0fcf3a7e4dad87e9b73d360.pdf> (անգլերեն):

<sup>1195</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1414>

<sup>1196</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1352>, <https://www.youtube.com/watch?v=jY2IXNgS91Q>

Հերացու անվան պետական բժշկական համալսարանի Ռազմաբժշկական ֆակուլտետի հետազոտությունների վրա:<sup>1197</sup>

### **5. Չինված հարձակումներով երեխաներին թիրախավորելը և երեխաների իրավունքների խախտումները**

Ադրբեջանական հարձակումների արդյունքում կոպիտ խախտվել են երեխաների իրավունքները, նրանց լավագույն շահերը՝ Հայաստանում և Արցախում երեխաների կյանքի ու առողջության համար իրական վտանգներով, պատերազմական հանցանքների սպառնալիքներով:

Սույն պարագրաֆը չի հավակնում ներկայացնել բոլոր խախտումները, քանի որ դրանք լայնածավալ են և տեղ են գտել ՀՀ ու Արցախի մարդու իրավունքների պաշտպանների առանձին կամ համատեղ զեկույցներում: Սույն պարագրաֆում ներկայացվում է մի քանի օրինակ՝ ցույց տալու համար կոնկրետ խախտումները:

2020 թ. հոկտեմբերի 14-ին վաղ առավոտյան՝ ժամը 09:00-ի սահմաններում, Ադրբեջանի զինված ուժերը ԱԹՍ-ի հարվածներ են հասցրել Հայաստանի Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքին մոտ գտնվող Սոթք համայնքի ուղղությամբ, ինչի արդյունքում ծանր վիրավորում է ստացել երեխա՝ Վարդենիս քաղաքի բնակիչ, 14-ամյա Ն. Ա.-ն: Վերջինս տեղափոխվել էր հիվանդանոցի վերակենդանացման բաժանմունք:<sup>1198</sup>

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման հատուկ խումբը, այդ թվում՝ բժիշկը մեկնել է քաղաքացիական բժշկական հաստատություն՝ Երևանի «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն՝ փաստահավաք աշխատանքների նպատակով: Այցի ընթացքում առանձնազրույցներ են տեղի ունեցել վիրավորում ստացած երեխայի, նրա հոր և բժշկական անձնակազմի հետ: Դրանից բացի, մի շարք հարցեր են քննարկվել նաև համայնքի ղեկավարի հետ:<sup>1199</sup>

Նախաձեռնված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ հոկտեմբերի 14-ի վաղ առավոտյան վիրավորում ստացած 14-ամյա երեխան իր 16 տարեկան հարազատ եղբոր, ինչպես նաև հոր հետ միասին նույն օրը գնացել է իրենց ընտանիքին պատկանող գյուղատնտեսական նշանակություն ունեցող ցանքատարածություն՝ սեզոնային բերքահավաք իրականացնելու: Դրանից հետո կարճ ժամանակ անց լսել են ԱԹՍ-ների ձայներ, որոնք լսելուն պես վիրավորում ստացած երեխան և իր ընտանիքի մյուս անդամները փորձել են փախչել ԱԹՍ-ի հարվածից: Դրանից գրեթե անմիջապես հետո ԱԹՍ-ը հարվածել է հենց այն նույն վայրում, որտեղ իրենք եղել են կանգնած: Այս փաստը, հատկապես, հաստատում է Ադրբեջանի զինված ուժերի կողմից խաղաղ բնակչությանը թիրախավորելու և կյանքից ապօրինաբար զրկելու հանցավոր մտադրությունը:

<sup>1197</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1364>

<sup>1198</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1334>

<sup>1199</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1334>

Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր է համարում ընդգծել, որ Գեղարքունիքի մարզում Ադրբեջանի կողմից ԱԹՍ-ներով իրականացված հարվածների ժամանակ ընթացել են սեզոնային բերքահավաքի աշխատանքներ ու այդ աշխատանքները յուրաքանչյուր ընտանիքի համար ունեն կենսական կարևորություն: Շատ դեպքերում դա ընտանիքի եկամտի գլխավոր աղբյուրն է: Դրանով է նաև պայմանավորված, որ ընտանիքի անդամներով են, որպես կանոն, իրականացվում բերքահավաքի աշխատանքները:

Ուշադրության է արժանի նաև այն, որ ինչպես նշել է վիրավորում ստացած երեխան, ինքն ու ավագ եղբայրը, ինչպես նաև իրենց համայնքի մյուս երեխաները Ադրբեջանի զինված ուժերի կողմից շարունակական ռամզաօդային հրթիռակոծումների պատճառով զրկված են դպրոց հաճախելու հնարավորությունից, քանի որ Վարդենիս քաղաքի և հարակից համայնքների դպրոցները ԱԹՍ-ների կողմից թիրախավորվում են, ուստի ժամանակավորապես չեն գործում:

«Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոնի բժիշկների կողմից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ներկայացրած տեղեկությունների համաձայն՝ երեխայի առողջական վիճակը ներկայում գնահատվում է ծանր: Երեխայի մոտ արձանագրվել էր աջակողմյան պնևմոթորաքս, ձախակողմյան թափանցող հեմոպնևմոթորաքս, որովայնի բուբ վնասվածք, փայծաղի սուբկապսուլյար հեմատոմա, ինչպես նաև աջակողմյան հյուսվածքում առկա է բեկոր: Երեխան ունեցել է արյան կորուստ:

Մարդու իրավունքների պաշտպանը, լինելով մարդու իրավունքների ազգային անկախ հաստատություն, ինչպես նաև «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում իրականացնող մարմին՝ խստորեն **դատապարտում է** խաղաղ բնակչության, այդ թվում՝ երեխաների նկատմամբ Ադրբեջանի զինված ուժերի տարբերակում չդնող հարձակումները, որոնք հանգեցնում են երեխաների իրավունքների կոպիտ խախտումների ու միջազգային իրավունքի հիմնարար պահանջների բացարձակ անտեսման:

Մարդու իրավունքների, հատկապես՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գործունեություն իրականացնող միջազգային կազմակերպությունները **պետք է հրատապ միջոցներ ձեռնարկեն** այս դեպքերին պատշաճ իրավական գնահատական տալու, ինչպես նաև հետագայում դրանք բացառելու նպատակով: Երեխաների նկատմամբ չտարբերակված և հաճախ թիրախավորված հարձակումները պետք է արժանանան **խստագույն դատապարտման** միջազգային հանրության կողմից<sup>1200</sup>:

Արցախում երեխաների իրավունքների կոնկրետ դեպքերով խախտումների մասին խոսվում է Արցախի մարդու իրավունքների պաշտպանի զեկույցներում:

<sup>1200</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1334>



## **6. Լրագրողների նկատմամբ հարձակումներն ու նրանց իրավունքների խախտումները ադրբեջանական զինված ուժերի կողմից**

Կոնֆլիկտային կամ պատերազմական հակամարտությունների ժամանակ մասնագիտական աշխատանք կատարող լրագրողները գտնվում են միջազգային պաշտպանության ներքո: Նրանց աշխատանքն իրավիճակի վերաբերյալ անգնահատելի է օբյեկտիվ, համապարփակ տեղեկություններ, ապացուցողական տվյալներ ունենալու, լարվածությունը նվազեցնելու<sup>1201</sup>: Լրագրողական աշխատանքը պատերազմական կամ զինված հարձակումների ժամանակ հատուկ կարևորություն է ստանում՝ լինելով երաշխիք ոչ միայն աշխարհին իրական վիճակի մասին տեղեկություններ փոխանցելու, այլ նաև քաղաքացիական անձանց պաշտպանության հարցերում:

2020 թվականի հոկտեմբերի սկզբից ի վեր հրապարակվել են տեղեկություններ այն մասին, հոկտեմբերի 1-ին ֆրանսիական «Le Monde» (Le Monde) պարբերականի 2 լրագրող, «24News.am»-ի (24News.am) լրագրողը և «ArmeniaTV»-ի (Armeniatv) օպերատորը վիրավորում են ստացել, իսկ որոշ լրատվամիջոցների ներկայացուցիչներ հայտնվել են թիրախային կրակի ներքո: Ավելին, ադրբեջանական զինված ուժերը թիրախավորել են նաև Արցախում լրագրողական առաքելություն իրականացնող «Agence France-Presse» (Agence France-Presse) միջազգային լրատվական գործակալության լրագրողներին տեղափոխող մեքենան, որի հետևանքով լրագրողներ են ծանր վիրավորում ստացել: Հարձակումների հետևանքով վնասվածքներ ստացած «Le Monde» -ի թղթակցի վիճակը բժիշկների կողմից գնահատվել է որպես ծանր, նա վիրահատվել է Ստեփանակերտի բժշկական կենտրոնում: Ընդ որում, լրագրողական խումբը եղել է հատուկ արտահագուստով, լրագրողական տարբերանշանով: «Press» տարբերանշան է ունեցել նաև հրետակոծության տակ հայտնված լրագրողական մեքենան:

Արցախի Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց Մայր տաճարին ադրբեջանական զինված ուժերի կողմից 2020 թ. հոկտեմբերի 8-ին հասցված երկու թիրախային հարվածի հետևանքով վիրավորումներ էին ստացել 3 ռուս լրագրող, այդ պահին տաճարում գտնվող երեխաներին, կանանց ու տարեցներին, ինչպես նաև պատճառվել էին մեծ ավերվածություններ:

Այս կապակցությամբ ՀՀ արդարադատության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված տեղեկությունների համաձայն՝ *Լեոնային Ղարաբաղում (Արցախում) մասնագիտական աշխատանք իրականացնող լրագրողներին հրետակոծելու և նրանց նկատմամբ հարձակումների* հարցով ՀՀ արդարադատության նախարարը դիմել է Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ, արժեքների և թափանցիկության հարցերով եվրոպական հանձնակատարին: Գրության մեջ բարձրացվել են

«Le Monde» թերթի 2 լրագրողներին, «Agence France-Presse» միջազգային լրատվական գործակալության լրագրողներին տեղափոխող մեքենան թիրախավորված հրետակոծելու հարցը: Արձանագրվել է նաև այն հանգամանքը, որ 2020 թ. հոկտեմբերի 8-ին Շուշի քաղաքի Սուրբ

<sup>1201</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1318>

Ամենափրկիչ Ղազանչեցոց Մայր տաճարին հասցված երկու թիրախային հարվածի հետևանքով վիրավորումներ էին ստացել 3 ուսու լրագրող:

Մասնագիտական աշխատանք իրականացնող լրագրողներին հրետակոծելու և նրանց նկատմամբ հարձակումների առաջին դեպքից ի վեր Պաշտպանը խստորեն **դատապարտել է** լրագրողներին հրետակոծելը:

Պաշտպանը 2020 թ. հոկտեմբերի 1-ին այցելել է Արցախում ադրբեջանական հրետակոծության արդյունքում վիրավորումներ ստացած ֆրանսիական «Le Monde» թերթի 2 լրագրողներին, որոնք Արցախից տեղափոխվել էին Հայաստան: Հոկտեմբերի 10-ին Պաշտպանը այցելել է նաև հոկտեմբերի 8-ին Շուշի քաղաքի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց Մայր տաճարին ադրբեջանական զինված ուժերը հասցրին երկու թիրախային հարվածի արդյունքում ծանր վիրավորում ստացած լրագրողին: Վերջինս Պաշտպանին տեղեկացրել է, որ անձամբ է ականատես եղել Ղազանչեցոց Մայր տաճարի թիրախային հարվածին և ընդգծել է, որ տաճարում այդ պահին եղել են բացառապես երեխաներ, կանայք ու տարեցներ: Լրագրողը պատմել է նաև, որ անձամբ հավաստիացնել է, որ Շուշի քաղաքի ճանապարհին չի եղել որևէ ռազմական օբյեկտ, այլ այնտեղ գտնվել են բացառապես քաղաքացիական բնակավայրեր:<sup>1202</sup>

Պատերազմի օրերին Արցախում լուսաբանման կարևոր աշխատանքներ էր իրականացնում ու ադրբեջանական խախտումների ապացույցներ ապահովում «ArmNews» լրատվամիջոցը և այդ լրատվամիջոցի ներկայացուցիչները:

Արցախում ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների վրա ադրբեջանական հարձակումների վերաբերյալ 2020 թվականի դեկտեմբերի 25-ին հրապարակվել է արտահերթ զեկույց: Ձեկույցում ներկայացված ապացույցները հստակ ցույց են տալիս, որ Ադրբեջանի կողմից Արցախի քաղաքացիական բնակչության և ենթակառուցվածքների թիրախավորմանը զուգահեռ՝ դիտավորյալ և չտարբերակված թիրախավորման են ենթարկվել նաև լրագրողները և նրանց սպասարկող տրանսպորտային միջոցները, որի հետևանքով ծանր վիրավորվել է 7 լրագրող (5 օտարերկրյա ու 2 հայ) և զոհվել է լրագրողական խմբի ուղեկցող 1 անձ: Ձեկույցում ամփոփվել են նաև վկայությունները, որոնց համաձայն՝ հարվածներից առաջ և ընթացքում դեպքերի վայրերում թռիչքներ էին կատարում ադրբեջանական հետախուզական ԱԹՍ-ները, ինչը նշանակում է, որ լրագրողները լիովին տեսանելի ու տարբերակելի են եղել ադրբեջանական զինված ուժերի համար<sup>1203</sup>:

Մասնագիտական աշխատանք իրականացնող լրագրողներին հրետակոծելու և նրանց նկատմամբ հարձակումները ակնհայտորեն վկայել են տարբերակում չդնող (indiscriminate), քաղաքացիական

<sup>1202</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1318>, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1332>

<sup>1203</sup> Տե՛ս «Արցախում ռազմական գործողությունները լուսաբանող լրագրողների վրա ադրբեջանական հարձակումների» վերաբերյալ Հայաստանի և Արցախի մարդու իրավունքների պաշտպանների արտահերթ զեկույցը՝ <https://ombuds.am/images/files/8af8216039c5ccd5277448a37eb5997f.pdf> (անգլերեն):

բնակավայրերի թիրախավորման մասին: Լրագրողների դեպքում դա առավել ևս դատապարտելի է, քանի որ նրանք գտնվում են հատուկ պաշտպանության ներքո<sup>1204</sup>:

Սույն պարագրաֆը նույնպես հասկանալիորեն չի հավակնում ներկայացնել լրագրողների իրավունքների բոլոր խախտումները. դրանք տեղ են գտել մասնագիտական՝ թեմային նվիրված զեկույցներում:

## **ԳԼՈՒԽ 2. ԳԵՐԻՆԵՐԻՆ ՉՎԵՐԱԴԱՐՁՆԵԼԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՈՊԻՏ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԽԱԹԱՐՈՒՄՆԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**

2020 թվականի սեպտեմբերի 27-ի նախաձեռնված լայնածավալ պատերազմն ուղեկցվեց ադրբեջանական զինված ուժերի կողմից ոչ միայն հայկական քաղաքացիական բնակավայրերի զանգվածային ավերածություններով, տասնյակ հազարավոր բռնի տեղահանվածներով, ռազմական գործողությունների ընթացքում խոշտանգումներով, այլ նաև հարյուրավոր քաղաքացիական անձանց ու զինծառայողների գերեվարումներով ու հետո գերիներին ազատ չարձակելով, մարդու իրավունքների միջազգային պահանջները կոպտորեն խախտելով, անհայտ կորածների որոնումների աշխատանքները խոչընդոտելով և այլն:

Մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական այս խախտումներով ադրբեջանական իշխանության մարմինները առանց այն էլ զինված հարձակումների դաժանություններից հետո հոգեկան լրացուցիչ տառապանքներ են շարունակաբար պատճառում գերիների ու անհայտ կորածների ընտանիքներին, խաղում են Արցախում և Հայաստանում հասարակության զգացմունքների հետ, պատճառում լարվածություն, ինչպես նաև մարդու իրավունքների հարցերն ակնհայտորեն օգտագործում միջազգային մարդասիրական իրավունքով արգելված՝ քաղաքական նպատակների սակարկությունների համար: Այս մասին նշել են նաև ՀՀ պետական իշխանության մարմինները:

Դրանից բացի, ադրբեջանական իշխանությունները շարունակաբար թաքցնում են գերիների իրական թվի հրապարակումը՝ նույնիսկ խոչընդոտներ առաջացնելով միջազգային կառույցների համար ու դրանով իսկ խախտելով Ադրբեջանում ապօրինի պահվող հայ գերիների իրավունքները: Ընդ որում, հատուկ պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունն ամբողջությամբ վերադարձրել է Հայաստանում պահվող ադրբեջանցիներին՝ թվով 14 հոգի. այս տեղեկությունը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հաստատել են իրավասու բարձրագույն մարմինները:

Ռազմական գործողություններից հետո առաջ եկած մարդասիրական հիմնարար հարց է անհայտ կորածների կամ զոհվածների մարմինների որոնման աշխատանքների հարցը: Ադրբեջանական

<sup>1204</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1314>

իշխանության մարմիններն անընդհատ խոչընդոտում են այս աշխատանքները՝ առանց որևէ պատճառաբանության անգամ: Եթե սրան էլ ավելացնեն, որ նրանք չեն հրապարակում գերիների իրական թիվը, ապա ստացվում է, որ անհայտ կորածների ընտանիքներին պատճառում են կրկնակի տառապանքներ, քանի որ մարդիկ ավելի մեծ անորոշության մեջ են հայտնվում:

Ողջ վերը նշվածին գումարվում է նաև այն, որ ադրբեջանական սոցիալական ցանցերում պարբերաբար հրապարակվում են տեսանյութեր ու լուսանկարներ այն մասին, թե ինչպես են ադրբեջանական զինված ուժերն անարգանքի ենթարկում հայկական կողմի զինծառայողների դիերը, խոշտանգում ու նվաստացնում գերեվարված զինծառայողներին ու քաղաքացիական անձանց: Այս ամենն էլ ադրբեջանական սոցիալական ցանցերում արժանանում է միայն գովասանքի: Ընդ որում, ադրբեջանական զինվորականներն իրենք են բաց դեմքերով տեսանյութերում՝ որևէ վախ չունենալով իրենց կողմից կատարվող քրեորեն պատժելի արարքների համար<sup>1205</sup>:

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն իրականացրել է հսկայածավալ աշխատանք: Մասնավորապես, շուրջ 300 տեսանյութ վերլուծվել և ուսումնասիրվել է, ադրբեջաներենից կամ թուրքերենից թարգմանել ռուսերեն և անգլերեն, իսկ շատ դեպքերում նաև հայերեն լեզուներով: Այդ թարգմանությունները տեղադրվել են տեսանյութերում և համապատասխան վերլուծությամբ ուղարկվել են միջազգային կառույցներին, ինչպես նաև մի շարք երկրերի քրեական հետապնդման մարմիններին: Այդ վերլուծությունները հնարավորություն է տվել ստանալ իրական պատկերացումներ ադրբեջանական էթնիկ զուումների և ցեղասպան քաղաքականության մասին ու դա ներկայացնել միջազգային կառույցներին:

Այդ կերպ է հնարավոր եղել ցույց տալ, որ խոսք է գնում պատերազմական և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասին:

### **1. *Գերիների ազատ արձակման և նրանց չվերադարձելու միջազգային պահանջների խախտումները՝ իրավական ընթացակարգեր չարաշահելու և դրանց էությունը նենգափոխելու միջոցով***

Ադրբեջանական իշխանության մարմինները ռազմական գործողությունների դադարից անմիջապես հետո որդեգրեցին գերիների ազատ արձակումն ու վերադարձն արհեստականորեն ձգձգելու, այդ հարցը քաղաքական նպատակների համար օգտագործելու քաղաքականություն:

Նախ, նրանք օգտվում էին առիթից, որ 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 8-րդ կետում առկա չէ վերադարձի ժամկետ՝ ակնհայտորեն ի խախտումն մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային մարդասիրական իրավունքի պահանջների:

Այնուհետև, հայտարարվեց «բոլորը բոլորի» դիմաց սկզբունքը: Այս սկզբունքի շրջանակում Հայաստանի Հանրապետությունը կարճ ժամանակահատվածում վերադարձրեց բոլոր գերիներին,

<sup>1205</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1402>

իսկ ադրբեջանական իշխանությունները վերադարձրին գերիների միայն մի մասին: 2020 թվականի ընթացքում խոշոր խմբով վերադարձրել են 44 հոգի՝ ՌԴ խաղաղապահ ուժերի կարևոր միջնորդական առաքելությամբ:

Գերիների ազատ արձակման ու վերադարձի և, առհասարակ, բոլոր հարցերով սերտ, բարձր որակի համագործակցություն հաստատված Արցախի մարդու իրավունքների պաշտպանի հետ: Աշխատանքը տարվել է անձնական ու ինստիտուցիոնալ բացարձակ վստահության պայմաններում:

Այս հարցերում առանձնացնել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի և նրա գրասենյակը, անհատ իրավապաշտպաններ Սիրանուշ Սահակյանի և Արտակ Ջեյնայանի դերը գերիների իրավունքների պաշտպանության նպատակով ՄԻԵԴ գանգատներ ներկայացնելու հարցում: Կարևոր դեր է ունեցել և շարունակում ունենալ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, այդ թվում՝ հատկապես միջազգային կառույցներում ՀՀ ներկայացուցիչները:

Գերիների իրավունքների պաշտպանության հարցերում կարևոր դեր է ունեցել ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը՝ տնօրենի գլխավորությամբ: Մասնավորապես, իր իրավասության սահմաններում Մարդու իրավունքների պաշտպանի և Ծառայության տնօրենի միջև համագործակցության շրջանակներում հնարավոր է եղել կարևոր հարցեր քննարկել և նախանշել դրանց լուծման ուղղությունները:

Այլ գործընկերների հետ համատեղ աշխատանքներ են տարվել նաև գերիների հարցերով հանձնաժողովների կամ աշխատանքային խմբերի շրջանակներում:

Կապ է պահպանվել ԱԺ մի շարք պատգամավորների հետ:

Մարդու իրավունքների պաշտպանը մշտական կապ է պահպանել նաև միջազգային կառույցների հետ: Խոսքը վերաբերում է ոչ միայն գրավոր հաղորդակցությանը, այլ նաև քննարկումներին (օրինակ՝ Human Rights Watch, ՄԱԿ-ի և ԵԽ-ի մարդու իրավունքների հանձնակատարներ, այլ երկրների խորհրդարաններ և այլն):

Կարևորագույն նշանակություն ունի համագործակցությունը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի հետ կապը, այդ թվում՝ համատեղ արդյունավետ աշխատանքը Հայաստանի պատվիրակության ու նրա ղեկավարի հետ:

Ցավոք, 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո Ադրբեջանի զինված ուժերը կարողացան գերեվարել քաղաքացիական անձանց, այդ թվում՝ կանանց, ինչպես նաև Շիրակի մարզից մեկնած և Արցախում ծառայություն իրականացնող 62 զինծառայող (նրանցից 8-ն արդեն վերադարձել է):

Դրանից հետո, ադրբեջանական իշխանությունները սկսեցին որդեգրել բոլորովին նոր քաղաքականություն՝ նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո գերեվարվածներին անվանելով «ահաբեկիչներ» կամ «դիվերսանտներ»:

Նախ, 2020 թվականի դեկտեմբերի 31-ին Ադրբեջանի նախագահը, խոսելով իր երկրում գերության մեջ գտնվող հայ զինծառայողների մասին, հայտարարել է, թե նրանք ռազմագերիներ չեն: Հայտարարվել է նաև, թե նրանք ձերբակալված են ու նրանք որպես ահաբեկիչներ են որակվել<sup>1206</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանը այս հայտարարությունից հետո հրապարակայնորեն հատուկ արձանագրել է, որ Ադրբեջանի նախագահի դեկտեմբերի 31-ի հայտարարությունը և նման հայտարարությունները կոպտորեն խախտում են հետպատերազմական մարդասիրական գործընթացը և մարդու իրավունքները պաշտպանող միջազգային պահանջները: Այլ կերպ, այն հայտարարությունները, թե գերության մեջ գտնվող անձինք ռազմագերիներ են, այլ ահաբեկիչներ ու ձերբակալված են, կոպտորեն ոտնահարում են հետպատերազմական մարդասիրական գործընթացը և մարդու իրավունքները պաշտպանող միջազգային պահանջները:

Ադրբեջանի նախագահի հայտարարությունը ուղիղ հակասում էր նաև 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության 8-րդ կետի պահանջին, որը վերաբերում է գերիների կամ այլ կերպ անազատության մեջ գտնվող անձանց փոխանակում իրականացնելուն: Նույնությամբ բոլոր պահանջները պետք է տարածվեն նաև զոհվածների

Այն, որ 2020 թվականի նոյեմբերի 10-ի եռակողմ հայտարարության 8-րդ կետում չկա կոնկրետ ժամկետ՝ կապված գերիների կամ այլ կերպ անազատության մեջ գտնվող անձանց փոխանակմանը կամ վերադարձին, դա չի նշանակում, թե Ադրբեջանի իշխանությունների համար թույլատրելի է մարդու իրավունքների միջազգային պահանջների ու մարդասիրական պայմանավորվածությունների անընդհատ խախտումը, որը արտահայտվել է գերիների վերադարձի արհեստական ձգձգմամբ, նրանց իրական թիվը չհայտնելով:

Այդ ժամանակ արդեն փորձեր էին արվում ներկայացնել իրական թվից նվազ թվաքանակ, այդ ողջ ընթացքում շարունակվել է նրանց նկատմամբ խոշտանգումն ու անմարդկային վերաբերմունքը, այդ մասին վկայող տեսանյութերի նպատակային հրապարակումը, խոչընդոտվում է զոհվածների մարմինների փոխանակումը եւ այլն:

Պաշտպանն իր հայտարարությամբ հրավիրեց միջազգային հանրության և, հատկապես, մարդու իրավունքների պաշտպանության մանդատ ունեցող միջազգային կառույցների ուշադրությունն Ադրբեջանի նախագահի դեկտեմբերի 31-ի հայտարարությանը՝ բացառելու համար մարդասիրական գործընթացի որևէ խախտում, ապահովելու համար այդ գործընթացի խիստ համապատասխանությունը մարդու իրավունքների միջազգային պահանջներին<sup>1207</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ գերիների անհապաղ վերադարձի մասին այս հայտարարությանը անդրադարձ է կատարել նաև միջազգային մամուլը<sup>1208</sup>:

<sup>1206</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1470>

<sup>1207</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1470>, <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1474>

<sup>1208</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1473> // Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի հայտարարությանն անդրադարձել են նաև ռուսական Тасс, Коммерсантъ, РИА Новости, Кавказский узел, Regnum լրատվամիջոցները: // В Армении потребовали вернуть военнопленных из Азербайджана

Ադրբեջանի նախագահի նշված հայտարարությունից հետո պարզ դարձավ, որ 2020 թվականի դեկտեմբերի 28-ին ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցիչը նամակով դիմել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, որն էլ տարածվել է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում և Անվտանգության խորհրդում:

Մասնավորապես, Ադրբեջանի մշտական ներկայացուցչի նամակում տեղ էին Ադրբեջանում գերության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին ու նրանց իրավունքներին վերաբերող հարցեր, ուստի Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանն այդ հարցերի վերաբերյալ ներկայացրել է իր իրավական դիրքորոշումները:

ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի նամակի հավելածի 6-րդ պարբերությունում նշված էր, որ հակասահբեկչական միջոցառման շրջանակում ադրբեջանական մարմինները հայտնաբերել են Հայաստանի քաղաքացի թվով 62 զինձառայող, որոնք զորակոչված են գլխավորապես Շիրակից, ներկայում կալանավորված են և Ադրբեջանում նրանց նկատմամբ ընթանում են քննչական վարույթներ: Այդ նամակում Հայաստանի քաղաքացի նշված զինձառայողներն անվանվում են Հայաստանի զինված ուժերի դիվերսիոն խմբի անդամներ ու նշում արվում այն մասին, որ նրանք ուղարկվել են «Ադրբեջանի Լաչինի շրջան»՝ իբր ադրբեջանական զինված ուժերի անձնակազմերի և քաղաքացիական անձանց նկատմամբ ահաբեկչական գործողություններ իրականացնելու նպատակով: Այնուհետև, այլ հարցերի թվում, Ադրբեջանի ներկայացուցիչը, գլխավորապես օգտագործելով Ադրբեջանում գերության մեջ գտնվող նշված հայ զինձառայողներին վերաբերող մասը, արել է քաղաքական բնույթի եզրահանգումներ, այդ թվում՝ ՄԱԿ-ին առաջարկելով Հայաստանի նկատմամբ ձեռնարկել որոշակի գործողություններ: Նույն սկզբունքով նամակում եզրահանգում է արված նաև այն մասին, թե Հայաստանը խախտում է 2020 թվականի նոյեմբերի 9-ի Ռուսաստանի, Հայաստանի ու Ադրբեջանի ստորագրած եռակողմ հայտարարությունը:

Իհարկե, բացարձակ դատապարտելի է գերիների և զոհվածների մարմինների վերադարձի հարցի քաղաքականացումը, քանի որ այն բնույթով մարդասիրական ու մարդու իրավունքներին առնչվող, կամ այս հարցը անգամ հեռավոր կերպով այն տարածքային որևէ հարցի հետ կապելը, կամ դա քաղաքական նպատակներով օգտագործելու ադրբեջանական իշխանությունների ակնհայտ փորձերը: Դա կոպտորեն խախտում է հետպատերազմական փուլի մարդասիրական գործընթացն ու մարդու իրավունքները երաշխավորող միջազգային պահանջները: Ինչպես ադրբեջանական նամակում նշված 62, այնպես մյուս բոլոր հայ զինձառայողները կարգավիճակով գերիներ են, նրանք իրենց գերեվարման վայրերում են գտնվել բացառապես իրենց իրավական պարտականությունը կատարելու՝ զինվորական ծառայություն տանելու նպատակով ու նրանք պետք է առանց որևէ

---

<https://ria.ru/20210102/voennoplennye-1591791723.html> // Омбудсмен Армении заявил о необходимости вернуть военнопленных из Азербайджана <https://www.kommersant.ru/doc/4638423> // Омбудсмен Армении потребовал вернуть военнопленных из Азербайджана <https://regnum.ru/news/polit/3156080.html> // Омбудсмен Армении потребовал возврата всех пленнных без дополнительных условий <https://www.kavkaz-uzel.eu/articles/358224/>

նախապայման ազատ արձակվեն ու վերադարձվեն Հայաստան: Այս եզրահանգումը հիմնված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման ու քննության արդյունքների վրա և ամրապնդված է հիմնավոր ապացույցներով:

Ուստի, Ադրբեջանում գերության մեջ գտնվող հայ գերիների նկատմամբ քրեական հետապնդման ընթացակարգեր նախաձեռնելը, նրանց կալանավորելն ու առավել ևս նրանց ահաբեկիչներ կոչելը միջազգային մարդասիրական իրավունքի ու առհասարակ մարդու իրավունքների միջազգային իրավունքի կոպիտ խախտում է: Ռազմական գործողությունների մասնակցելու համար նրանք չեն կարող որևէ տեսակի քրեական հետապնդման ենթարկվել կամ կալանավորվել՝ որպես պատիժ: Սրանք պահանջներ են, որոնք հատկապես ամրագրված են 1949 թվականի Ժնևի երրորդ կոնվենցիայում:

Բացարձակ անթույլատրելի է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը մեկնաբանել այնպես, իբր թե դրա գործողությունը տարածվում է միայն այդ հայտարարության ստորագրումից առաջ առկա իրավիճակի վրա: Նման մոտեցումը կոպտորեն ոտնահարում է մարդու իրավունքներն ու հետպատերազմական մարդասիրական գործընթացը: Նշված հայտարարությունը պետք է կիրառվի ինչպես 2020 թ. նոյեմբերի 9-ից առաջ, այնպես էլ դրանից հետո առաջ եկած բոլոր իրավիճակների նկատմամբ. այնքան ժամանակ, քանի դեռ պատերազմական գործողությունների հետևանքներով պայմանավորված՝ առկա է մարդու իրավունքների պաշտպանության ու մարդասիրական գործընթացի օբյեկտիվ անհրաժեշտություն: Ավելին, Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ գործնականում արդեն իսկ արձանագրվել են դեպքեր, երբ ադրբեջանական զինված ուժերը հայերի են գերեվարել նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունից հետո, սակայն նրանք վերադարձվել են Հայաստան:

Սկզբունքային կարևորության հարց է այն, որ ադրբեջանական իշխանությունները ձգձգում են հայ գերիների վերադարձը՝ նենգափոխելով իրավական գործընթացները, նրանց արհեստականորեն տալով կասկածյալի կամ մեղադրյալի կարգավիճակ ու կալանքի ձևով անազատության մեջ պահելը օգտագործելով՝ որպես պատիժ: Քանի որ միջազգային մարդասիրական իրավունքն արգելում է գերիների ազատ արձակման չարդարացված ձգձգումներն ու դա համարում պատերազմական հանցագործություն, ապա Մարդու իրավունքների պաշտպանի համար ակնհայտ է, որ ադրբեջանական իշխանություններն իրականացնում են իրավական գործընթացների ակնհայտ չարաշահում՝ այդ կերպ իրենց նպատակին հասնելու համար: Ադրբեջանական իշխանության մարմինների այս պահվածքն ուղղակիորեն հակասում է նաև 2020 թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությունը ստորագրած կողմերի մտադրություններին:

Այդ հայտարարության 8-րդ կետի պահանջի հիման վրա Հայաստանի Հանրապետությունն արդեն իսկ Ադրբեջանին է փոխանցել Արցախում հանցանքներ, այդ թվում՝ խաղաղ բնակիչների սպանություն կատարած և դատապարտված երկու անձի: Ադրբեջանը նույն սկզբունքով Հայաստանին է փոխանցել այդ երկրում ֆորմալ դատապարտված հայերի:



Ուստի, նշվածը նույնպես ակնհայտ է դարձնում, որ անգամ քրեական վարույթ նախաձեռնելու ու հայ զինծառայողներին կասկածյալ կամ մեղադրյալ դարձնելու միջոցով գերիների վերադարձը ձգձգելն ունի ակնհայտ արհեստական բնույթ, իրենից ներկայացնում է իրավական գործընթացների բացահայտ չարաշահում և խախտում է ոչ միայն միջազգային մարդասիրական իրավունքը, այլ նաև հակասում է նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությանը, այն ստորագրած կողմերի մտադրություններին:

Գերիների իրական թիվը չհայտնելու կապակցությամբ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրություններն ու քննության արդյունքները շարունակաբար հաստատել են, որ նրանց թիվն ավելի շատ է, քան ադրբեջանական իշխանությունները հաստատել են, ինչը վերաբերում է նաև մինչև 44 գերիների վերադարձին: Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է բազմաթիվ դեպքեր, երբ չնայած տեսանյութերով ու այլ ապացույցներով հաստատվող դեպքերին, ադրբեջանական իշխանության մարմինները մերժում են անձանց գտնվելն իրենց մոտ կամ ձգձգում են հաստատման գործընթացը:

Գերիների ազատ արձակման հարցի բացարձակ հրատապությունը պետք է դիտարկել նաև Ադրբեջանում հայատյացության ու թշնամանքի քարոզի կազմակերպված քաղաքականության համատեքստում: Այս հարցը սերտորեն կապված է ՄԱԿ-ում Ադրբեջանի մշտական ներկայացուցչի նամակի հետ նաև այն առումով, որ հայ զինծառայողներն առաջնահերթ իրականացրել են իրենց հայրենակիցների՝ հայերի կյանքի, ինչպես նաև առողջության պահպանման, սեփականության ու կենսական կարևորության մյուս իրավունքների պաշտպանությունը: Այս հարցը, հատկապես, կարևոր է այն պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, Արցախի խաղաղ բնակավայրերի զանգվածային ավերվածությունների ֆոնին, որ կատարել են ադրբեջանական զինված ուժերը ու նման առանձին արարքներ դեռ շարունակում են կատարել:

Եվ, իհարկե, գլխավորը՝ Ադրբեջանում պահվող հայկական կողմի բոլոր քաղաքացիական անձինք կարգավիճակով գերի են հենց այն հիմնարար պատճառով, որ Արցախում դեռևս առկա է ընթացիկ, չավարտված զինված հակամարտություն (ongoing armed conflict): Հակամարտությունն ավարտված չէ, որ ադրբեջանական իշխանությունները հնարավորություն ունենան նրանց կոչել «ահաբեկիչ», թե «դիվերսանտ»: Հետևաբար, այս հիմնարար փաստարկի ուժով է հենց հաստատվում, որ նոյեմբերի 9-ի սուկ ամսաթվի հետ հարցը կապելն անթույլատրելի է. միջազգային մարդասիրական իրավունքի իմաստով նոյեմբերի 9-ից առաջ ու հետո էլ գործ ունենք նույն ընթացող զինված հակամարտության հետ:

Չնայած այս ամենին՝ ադրբեջանական իշխանություններն, ի խախտումն միջազգային բացարձակ պահանջների շարունակում են ապօրինաբար պահել հայկական կողմի գերիներին: Այս հարցերը Մարդու իրավունքների պաշտպանը նույնիսկ ներկայացրել է ԵԱՀԿ Մինսկի խմբին և ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցչին՝ հաշվի առնելով նրանց մանդատի առանձնահատկությունները:

Ընդ որում, ներկայացնելու համար միջազգային ատյաններին իրական տիրող վիճակը, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ հատուկ զեկույց այն մասին, որ Ադրբեջանում հայկական կողմի գերիների հարցաքննությունների արդյունքները չեն կարող որևէ հիմք լինել նրանց քրեական հետապնդման ենթարկելու համար և չեն կարող ապացույց լինել միջազգային, այդ թվում՝ դատական ատյաններում: Նշված զեկույցում հատուկ շեշտադրվում է Ադրբեջանում հայ գերիների հարցաքննությունների վրա՝ եզրահանգելով, որ վերջիններիս հայտնած տեղեկությունները չեն կարող որևէ հիմք ծառայել նրանց նկատմամբ քրեական հետապնդման համար, ինչպես նաև չեն կարող ունենալ որևէ ապացուցողական նշանակություն միջազգային կառույցներում: Մասնավորապես, արտահերթ զեկույցը ներկայացնում է ադրբեջանական զինված ուժերի դաժանությունները, որոնք ուղեկցվել են հայկական կողմի գերիներին խոշտանգելով, գործողություններ անել հարկադրելով, նվաստացնելով և այլն<sup>1209</sup>:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է նաև հայ գերիներին խոշտանգելու և անմարդկային վերաբերմունքի ենթարկելու կոնկրետ ապացույցներ, որոնք արտացոլված են Պաշտպանի անգլերեն արտահերթ զեկույցում: Փաստաթուղթը վերաբերում է պատերազմական հանցագործությունների համար Ադրբեջանի պատասխանատվությանը:

Զեկույցի հիմնական դրույթներն հրապարակել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն ու իրավապաշտպան Սիրանուշ Սահակյանը՝ ցույց տալով հայ ռազմագերիների և քաղաքացիական անձանց նկատմամբ դաժան վերաբերմունքի, խոշտանգումների և նվաստացումների փաստերը, այդ արարքների համար պատասխանատվության մեխանիզմները: Արտահերթ զեկույցում ներկայացված են նաև 2020 թվականի հոկտեմբերի 20-ին Կովսականում տեղի ունեցած զանգվածային խախտումները (հայ զինվորներին մեքենայից կապել ու քաշել, սպանված մարդկանց ականջները կտրել և այլն): Զեկույցն ունի հետևությունները, այդ թվում՝ կապված Ադրբեջանի Սահմանապահ ծառայության հետ, հիմնավորող լուսանկարներ և տեսանյութեր, վերլուծություններ:<sup>1210</sup>

## **2. Հայկական կողմի գերիների կեղծ դադարավարությունները Ադրբեջանում**

<sup>1209</sup> [https://www.ombuds.am/images/files/1138b156720bec6ae0fd88dc709eb62c.pdf?fbclid=IwAR1j\\_gcspmen7yve0Mjcltk\\_Ya5ktDceh8RA2JghAuRDsHuj-jpxQe1PH8](https://www.ombuds.am/images/files/1138b156720bec6ae0fd88dc709eb62c.pdf?fbclid=IwAR1j_gcspmen7yve0Mjcltk_Ya5ktDceh8RA2JghAuRDsHuj-jpxQe1PH8)

<sup>1210</sup> [https://ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf?fbclid=IwAR2OAjo6BxmRFaBSrtbXFqvSyXeM3M-5vZRFgpgCRCo4urVPVE2NPL\\_VO4g](https://ombuds.am/images/files/5c7485fdc225adfd8a35d583830dcd17.pdf?fbclid=IwAR2OAjo6BxmRFaBSrtbXFqvSyXeM3M-5vZRFgpgCRCo4urVPVE2NPL_VO4g)

2020 թվականի պատերազմից հետո ադրբեջանական իշխանությունների կողմից հայկական կողմի գերիների նկատմամբ առաջադրվել են մեղադրանքներ և իրականացվել կեղծ դատավարություններ:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ Ադրբեջանում մեր գերիների դատապարտումներն ամբողջովին անհիմն են, կոպտորեն խախտում են գերիների իրավունքները և արհեստական պրոցեսի արհեստական արդյունք են: Նրանց ազատազրկումները միջազգային իրավունքով արգելված պատիժ են:

Ադրբեջանական հրապարակումները վկայում են, որ հայկական կողմի գերիների նկատմամբ մեղադրանքներ են առաջադրվել, իբր, կտտանքների, օրենքով չնախատեսված զինված կազմավորումներ կամ խմբեր ստեղծելու և այլ արարքների համար:

«Վ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը ուսումնասիրությամբ արձանագրել է, որ, ինչպես երևում էր ադրբեջանական աղբյուրներով հրապարակված տեսանյութերից ու լուսանկարներից, դատական նիստերի դահլիճում գերիների նկատմամբ դրսևորվում էր մարդու արժանապատվությունը բացահայտ նվաստացնող վերաբերմունք՝ նրանց պահելով ապակյա խցում ու մեկուսացած վիճակում:

Մշտադիտարկումը ցույց է տվել, որ այդ վերաբերմունքն ու հրապարակումներն արվել են այն նպատակով, որ լրացուցիչ հոգեկան տառապանքներ պատճառեն գերիների ընտանիքների անդամներին և լարվածություն առաջացնեն հայկական հասարակությունում:

Ադրբեջանական իշխանությունների կազմակերպած յուրաքանչյուր «դատավարություն» ուղեկցվում է ադրբեջանական լրատվամիջոցներում մարդու արժանապատվությունը, իրավունքները ոտնահարող հրապարակումներով՝ «Հայկական տեռորիստներ» կամ նման վերնագրերով: Ակնհայտ է, որ դա հատուկ է արվում ու կրում է կազմակերպված բնույթ: Ադրբեջանական սոցիալական ցանցերն էլ լցվում են ատելությամբ «քննարկումներով», գերիներին տանջելու, սպանելու կոչերով:

Ակնհայտ է, որ այս «դատավարությունները» արտաքին աշխարհի համար նախատեսված շղարշ են: Նրա համար են, որ Ադրբեջանում ունենան գերիներին ազատ չարձակելու «արդարացում», իսկ այդ ընթացքում հասցնեն որքան հնարավոր է շատ ռազմական-քաղաքական օգուտներ ստանալ:

Մշտադիտարկումը ցույց է տալիս, որ իրականում տեղի են ունենում քաղաքական սակարկություններ ու մարդկանց առևտուր. օրինակ՝ այս փաստը հաստատող անհերքելի ապացույց՝ Ադրբեջանի նախագահի և Թուրքիայի առաջին տիկնոջ միջև խոսակցության տեսանյութը<sup>1211</sup>:

«Վ մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ գերիները գերեվարվել են արցախյան հակամարտության շրջանակներում և հակամարտությունը հիմա էլ չի ավարտվել: Ադրբեջանում պահվող հայկական կողմի բոլոր զինձառայողներն ու քաղաքացիական անձինք կարգավիճակով գերի են: Նման պայմաններում Ադրբեջանում նրանք պահվում են ակնհայտ ապօրինի, և գերիներից ցանկացածի նկատմամբ քրեական հետապնդումը կամ դատավարությունը, նրանց կալանքի տակ

<sup>1211</sup> <https://www.youtube.com/watch?v=VnuBQmy4Acw&t=1s>

պահելը միջազգային մարդասիրական իրավունքի, այդ թվում՝ Ժնևի երրորդ կոնվենցիայի պահանջների կոպիտ խախտումներ են:

Հետևաբար, նրանցից որևէ մեկի նկատմամբ ցանկացած տեսակի հետապնդում կամ դատավարություն միջազգային իրավունքի կոպիտ խախտում է, նրանց կալանքի տակ պահելը՝ արգելված պատիժ: Այս կանոններն ուղղակիորեն բխում են միջազգային մարդասիրական իրավունքի պահանջներից: Ավելին, ադրբեջանական իշխանությունները հայկական կողմի գերիների նկատմամբ քրեական հետապնդումներ են հարուցում հենց նրանց, այսպես կոչված, «խոստովանական ցուցմունքների» հիմքով, և դրանք օգտագործում՝ որպես ապացույց: Միջազգային իրավունքի այս կոպիտ խախտումներն ամրագրված են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հատուկ զեկույցում:

Ադրբեջանական իշխանությունների հայատյացության ու թշնամանքի քաղաքականությունն իր հերթին ևս հաստատում է քրեական ընթացակարգերի ոչ իրավաչափ լինելը և ավելորդ դարձնում մարդու որևէ իրավունքի երաշխավորման մասին խոսելը: Այս պայմաններում ակնհայտ վտանգված է գերիների կյանքի իրավունքը, խախտված են կենսական իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրությունները, գերիների և անհայտ կորածների ծնողներից ստացվող բողոքները ակնհայտ վկայում են, որ նվաճ դատավարությունները լրացուցիչ հոգեկան տառապանքներ են պատճառում նրանց ընտանիքներին և լարվածություն առաջացնում հայկական հասարակությունում: Ուստի, այդ դատավարություններն ամբողջությամբ հակասում են միջազգային իրավունքի հիմքերին և կոպտորեն խախտում են գերիների, նրանց ու անհայտ կորածների ընտանիքների իրավունքները, բացահայտ քաղաքականացնում են մարդասիրական հարցերը:

*Վերոնշյալի հաշվառմամբ՝ պետք է արձանագրել, որ հայկական կողմի բոլոր գերիները պետք է անհապաղ ազատ արձակվեն ու վերադարձվեն Հայրենիք՝ առանց որևէ նախապայմանի:*

**ԳԼՈՒԽ 3. ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՀԱՅԱՏՅԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀՀ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀՐԱՏԱՊ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ**

Մարդու իրավունքների պաշտպանին 2021 թվականի ընթացքում հասցեագրվել են ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի, Արարատի և Վայոց ձորի մարզերի բնակիչներից բողոքներ և ահազանգեր այն մասին, որ խաթարվել է իրենց բնականոն կյանքը, խաղաղությունն ու անվտանգությունը, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության, ազատ տեղաշարժի և մյուս կենսական իրավունքները:

Բնակիչներից ստացված բողոքների ու ահազանգերի հիման վրա ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գլխավորած աշխատանքային խմբերը տարբեր ժամանակահատվածներում պարբերական այցեր են իրականացրել ՀՀ Սյունիքի, Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանամերձ համայնքներ և գյուղական բնակավայրեր: Այցերի ընթացքում հանդիպումներ և

քննարկումներ են տեղի ունեցել համայնքների և գյուղական բնակավայրերի բնակիչների հետ, որոնց ընթացքում բնակիչների կողմից բարձրացվել են պատերազմի հետևանքով առաջացած մի շարք հարցեր և խնդիրներ:

Արդյունքում, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի փաստահավաք աշխատանքները վեր են հանել ադրբեջանական զինված ուժերի կողմից Հայաստանի բնակչության մարդու իրավունքների կոպիտ և համակարգային խախտումներ:

Այսպես, ադրբեջանական զինված ուժերը պատերազմից հետո ներխուժել են և անօրինական տեղակայվել են ՀՀ ինքնիշխան տարածքում՝ Գեղարքունիքում և Սյունիքում: Նրանք ֆիզիկապես ներկա են այն տարածքներում, որոնք օրինական փաստաթղթերով սեփականության իրավունքով պատկանում են ՀՀ բնակիչներին կամ համայնքային սեփականություն են (տներ, խոտհարքեր, վարելահողեր արոտավայրեր):

Ադրբեջանական զինված ուժերը զբաղված են քաղաքացիական բնակիչների նկատմամբ հանցավոր արարքներով՝ կենդանիների գողություններ և հափշտակություններ, մարդկանց անօրինական ազատությունից զրկելու փորձեր, հրազենով սպառնալիքներ քաղաքացիական բնակիչներին, խոչընդոտներ գյուղատնտեսական աշխատանքներին և այլն: Բացի այդ, ադրբեջանական զինված ուժերը պարբերաբար կրակում են գյուղերի ուղղությամբ և իրական վտանգ ստեղծում քաղաքացիական բնակիչների կյանքին և առողջությանը, վնաս են պատճառում մարդկանց գույքին և կենդանիներին:

Արդյունքում, գյուղերի անմիջական հարևանությամբ և համայնքների միջև ճանապարհներին նրանց ներկայության պատճառով սահմանափակվել է մարդկանց ազատ տեղաշարժը: Մինչ օրս շարունակվում են ՀՀ սահմանային բնակիչների (երեխաներ, հաշմանդամություն ունեցող անձինք, տարեցներ և այլն) իրավունքների լրջագույն ոտնահարումներ և, առհասարակ, հումանիտար լրջագույն խնդիրներ: Մարդկանց համար առաջ է եկել խիստ անորոշ վիճակ:

Այս ամենը խախտում է Հայաստանի քաղաքացիական բնակչության կյանքի, անվտանգության, ազատ տեղաշարժի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, տնտեսական գործունեության ազատության, բժշկական առաջնահերթ օգնությունից օգտվելու մարդասիրական բացարձակ իրավունքները, երեխայի շահերը, և այլ իրավունքները:

Նշված իրավունքները ճանաչված են միջազգայնորեն և երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ: Նշված խախտումները կոպտորեն ոտնահարում են ԵԱՀԿ 2017թ. դեկտեմբերի 19-ի պաշտոնական ուղեցույցը Պետական սահմանների դելիմիտացիայի և դեմարկացիայի վերաբերյալ, և դրա ուժով սահմանային ցանկացած գործընթաց դարձնում են անօրինական (unlawful):

Ավելին, այս ամենին զուգահեռ շարունակվում է ադրբեջանական պետական հովանավորչությամբ հայատյացության ու թշնամանքի քարոզի քաղաքականությունը: Ադրբեջանական բարձրագույն իշխանությունները ոչ միայն չեն դադարեցրել, այլ ավելի են խորացրել հայատյացության ու ֆաշիզմի հասնող թշնամանքի քաղաքականությունը Հայաստանի

ողջ բնակչության, ողջ հայ ժողովրդի նկատմամբ: Խոսքն իրական ցեղասպան քաղաքականության մասին է:

Հենց այս քաղաքականությունն է պատերազմից առաջ, պատերազմի ընթացքում ու դրանից հետո Հայաստանում ու Արցախում ադրբեջանական զինված ուժերի կողմից մարդու իրավունքների խախտումների, այդ թվում՝ պատերազմական հանցանքների ու տարբեր դաժանությունների իրական աղբյուրը:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ ադրբեջանական զինված ծառայողների հանցավոր արարքները կանխելու միակ արդյունավետ տարբերակն անվտանգության (ապառազմականացված) գոտի ստեղծելն է:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է արտահերթ զեկույց անվտանգության ապառազմականացված գոտու հրատապ անհրաժեշտության վերաբերյալ՝ որպես բնակչության իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք Հայաստանում<sup>1212</sup>:

Ձեկույցը հիմնավորված կոնկրետ փաստերով ներկայացնում է ադրբեջանական անօրինական արարքների ազդեցությունը Հայաստանի բնակչության իրավունքների վրա: Ձեկույցը փաստում է, որ ՀՀ պետական սահմանի հետ կապված հարցերը պետք է դիտարկվեն մարդու իրավունքների տեսանկյունից, որպեսզի դրանք երկրորդական պլան չմղեն, չսահմանափակվեն այդ իրավունքները պաշտպանելու պետության հնարավորությունները: Պետք է նկատի ունենալ այն, որ Ադրբեջանի հետ միայն սահմանազատումը՝ առանց անվտանգության գոտի ստեղծելու, առանց ադրբեջանական զինված ծառայողների, նրանց ցուցանակների ու տեսախցիկների հեռացման, ոչ միայն չի ապահովելու ՀՀ քաղաքացիների ու հատկապես ՀՀ սահմանային բնակիչների իրավունքները, այլ կդառնա իրավունքների նոր խախտումների ու նոր լարվածության պատճառ: Ձեկույցը նաև ներկայացնում է քարտեզի (Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի օրինակով) վրա ադրբեջանական տեղակայումները, որոնք ցուցադրված են պայմանական դեղին վրաններով: Առկա նշանների տակ կան նաև իրական լուսանկար-ապացույցներ:

Պետք է հատուկ նշել, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև ապառազմականացված գոտի ստեղծելու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայեցակարգն ակտիվորեն տարածվում է նաև միջազգային հանրությունում: Այս առաջարկը ներկայացվել էր ԵԽԽՎ հատուկ զեկույցողին՝ փաստերի հիմնավորումով:

Մասնավորապես, 2021 թվականին Ստրասբուրգում ընդունվել է Լեոնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 2391 (2021) բանաձևը, որտեղ, այլ հարցերի թվում, երկու երկրներին կոչ է արվում սկսել բանակցություններ դելիմիտացիայի ու դեմարկացիայի վերաբերյալ և ուսումնասիրել ապառազմականացված գոտի ստեղծելու հարցը խաղաղապահ կամ ռազմական մշտադիտարկման ուժերի ներգրավմամբ:

<sup>1212</sup> <https://ombuds.am/images/files/4f4d3319548889e2900530457ae24bad.pdf>

**1. Հայատյացության խրախուսումը և թշնամանքի քարոզը՝ որպես ադրբեջանական պետական քաղաքականության մաս**

Արցախի և Հայաստանի դեմ 2020թ. սեպտեմբերի 27-ից սանձազերծած լայնամասշտաբ պատերազմն ուղեկցվեց ադրբեջանական աննախադեպ պատերազմական ու մարդկության դեմ ուղղված հանցագործություններով: Նշվածն ուղեկցվել է հսկայածավալ ատելության ու թշնամանքի քարոզով, որ ադրբեջանական իշխանությունները միայն խրախուսում էին:

Ադրբեջանական պետական հովանավորչությամբ հայատյացության ու թշնամանքի քարոզն այսօր ոչ միայն չի նվազել, այլ ստացել է ծայրահեղական, ֆաշիստական նոր դրսևորումներ:

Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանների որոշման գործընթացն իրականացվում է Ադրբեջանի կողմից Հայաստանի ողջ բնակչությանն ուղղված պատերազմի բացահայտ սպառնալիքների ներքո: Ադրբեջանի նախագահը ողջ հայ ժողովրդի ու Հայաստանի բնակչության մասին խոսում է էթնիկ զտումների ու ցեղասպանության բացահայտ սպառնալիքների լեզվով:

«Վարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացրած ուսումնասիրությունները և ադրբեջանական լեզվով նյութերի մշտադիտարկումը վկայում են, որ Ադրբեջանի նախագահը պատերազմից հետո շարունակում է իր հրապարակային ելույթներով գեներացնել ատելություն, տալիս է սպառնալիքներ, անում վիրավորական ու թշնամանք բորբոքող արտահայտություններ: Ընդ որում, նրա ելույթներն այնպիսին են, որ ակնհայտորեն հասնում են ֆաշիզմի: Այս ելույթներն ամբողջությամբ խաթարում են մարդկանց բնականոն կյանքը, խաղաղությունն ու անվտանգությունը, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության, ազատ տեղաշարժի և մյուս կենսական իրավունքները:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ ադրբեջանական իշխանությունների շարունակվող ատելության ու թշնամանքի քարոզի պետական քաղաքականությանն ունի 2 հենասյուն՝ էթնիկ ու կրոնական: Այդ քաղաքականությունը ոչ միայն ու ոչ այնքան հռետորաբանություն է, որքան տարիներով կենսագործվող իրական քաղաքականություն (կրթություն, մշակույթ, սպորտ և այլն):

Այդ քաղաքականությունն է պատերազմից առաջ, պատերազմի ընթացքում ու դրանից հետո Հայաստանում ու Արցախում ադրբեջանական զինված ուժերի կողմից մարդու իրավունքների խախտումների, այդ թվում՝ պատերազմական հանցանքների ու տարբեր դաժանությունների իրական աղբյուրը: Խոսքը վերաբերում է, մասնավորապես այն դաժանություններին, խոշտանգումներին ու սպանություններին, որոնք ադրբեջանական զինված ուժերի ծառայողներն իրականացրել են հայկական կողմի զինվորականների ու քաղաքացիական անձանց նկատմամբ: Այդ քաղաքականության ուղիղ հետևանքներն են նաև «Սահմանային բնակիչների իրավունքների խախտումները:

Բացի այդ, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պատերազմի ընթացքում հայկական կողմի զինվորականներին ու քաղաքացիական անձանց խոշտանգելիս, կենդանի վիճակում գլխատելիս, զոհվածների մարմիններն անարգելիս ու այլ վայրագություններ կատարելիս ադրբեջանական զինված ուժերի ծառայողներն օգտագործում են հենց այն նույն բառերն ու արտահայտությունները, ինչ Ադրբեջանի նախագահը:

Ավելին, Ադրբեջանի նախագահի ու այլ հանրային գործիչների արտահայտությունները դարձել էին պատերազմում հայերի նկատմամբ դաժանությունները ոգեշնչող կարգախոսներ (օրինակ՝ «ադրբեջանական զինվորները քշում են նրանց ինչպես շներին», «Հայաստանն արժեք չունեցող երկիր է...այն ադրբեջանական հինավուրց հողերի վրա ստեղծված արհեստական պետություն է», «Ադրբեջանը գալիս է վերջ տալու հայկական հարսանիքներին» և այլն):

Նման ելույթներն են, որ տարիների ընթացքում Ադրբեջանում ձևավորել են հայերի նկատմամբ էթնիկ պատկանելիության հիմքով ատելության ու թշնամանքի քարոզի ինստիտուցիոնալ համակարգ, անպատժելիության բացահայտ խրախուսում ու այդ ամենի պետական ամենաբարձր մակարդակով հովանավորում:

Այսինքն՝ հայատյացությունը փակ շրթայի մեջ է՝ գեներացվում է Ադրբեջանի իշխանությունների, այդ թվում՝ բարձրագույն մարմինների կողմից, այնուհետև գրեթե նույն ձևակերպումներով լայնորեն խրախուսվում է մշակութային ու հանրային այլ գործիչների կողմից ու արժանանում հանրային գովասանքի՝ ընդ որում, հաճախ երեխաների հատուկ թիրախավորմամբ:

Այս ամենի խորքային պատճառները հիմնավորված են Հայաստանի և Արցախի Մարդու իրավունքների պաշտպանների 2020 թվականի համատեղ հրապարակային զեկույցի ապացույցներով ու դրանց վերլուծությամբ («Ադրբեջանում կազմակերպված ատելության խոսքը և թշնամանքն էթնիկ հայերի նկատմամբ՝ որպես ադրբեջանական զինված ուժերի կողմից էթնիկ հիմքով խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի արմատական պատճառներ») <sup>1213</sup>: Արտահերթ զեկույցը պատրաստվել է 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի ընթացքում կատարված մշտադիտարկման արդյունքներով:

Ադրբեջանի իշխանությունների կողմից պետական մակարդակով խրախուսվող հայատյացության քաղաքականությունն ու Արցախում (Լեռնային Ղարաբաղ) հայերի էթնիկ զտման փաստը հիմնավորվում է նոր զարգացումներով:

Մասնավորապես, Ադրբեջանի տրանսպորտի, կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությունը թողարկել է «Ադրբեջան 2020» փոստային նամականիշներ, որոնցից մեկը արցախահայության բնաջնջման բացահայտ քարոզ է:

Նամականիշում բժշկական արտահագուստով մարդը գործիքով քիմիական ախտահանման է ենթարկում Արցախը հայերից՝ բացահայտորեն այն ներկայացնելով որպես «կեղտ»: Այս նամականիշը ևս մեկ անգամ ապացուցում է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի այն պնդումները, որ Ադրբեջանը վարում է հայերի ցեղասպանության քաղաքականություն ու դա անում

<sup>1213</sup> <https://ombuds.am/images/files/2032f021fe81176414a649d588ad0e86.pdf>



է հենց էթնիկ պատկանելիության հիմքով, միայն այն պատճառով, որ Արցախում ապրող մարդիկ հայ են:

Պետական մակարդակով իրականացվող հայատյացության ապացույցներից է Բաքվում 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմին վերաբերող այսպես կոչված «ցուցահանդես-պուրակի» բացումը:

«Պուրակում» հայկական զինվորական տեխնիկայի հետ միասին ցուցադրված են հայկական զինված ուժերի ծառայողների կերպարներ (մանեկեններ), որոնք բոլորն էլ ներկայացված են արժանապատվությունը ոտնահարող, նվաստացուցիչ վիճակում: Դա արված է հնարավորինս լայն հրապարակայնություն ապահովելով: Այն բաց է անգամ մանկահասակ երեխաների համար:

«Պուրակի» հրապարակված տեսանյութերից ու լուսանկարներից ակնհայտ է, որ ցուցադրությունն արված է Հայաստանի ու Արցախի հայերի, Հայաստանի քաղաքացիների նկատմամբ ատելությունն ու թշնամանքն ավելացնելու, խրախուսելու համար: Ցուցադրություններն արված են ցինիզմով՝ հրապարակայնորեն նսեմացնելու համար պատերազմում զոհվածների հիշատակը, անհայտ կորածներին ու գերիներին, ոտնահարելու համար նրանց ընտանիքների իրավունքներն ու արժանապատվությունը:

Մանրամասներն արտացոլված են Մարդու իրավունքների պաշտպանի «Սպանված հայ զինվորների և շղթայված գերիների պուրակ Բաքվում. մարդկային տառապանքների թանգարան և ռասիզմի խթանում» արտահերթ զեկույցում (անգլերենով):<sup>1214</sup> Ձեկույցում տեղ են գտել կոնկրետ օգտատերերի, այդ թվում՝ հանրային գործիչների խոսքերը: Այն կոնկրետ ապացույցներով՝ տեսանյութերով ու լուսանկարներով ցույց է տալիս, որ պուրակը հայատյացության և թշնամանքի գեներացիայի հերթական աղբյուրն է, որ ունի պետական բացահայտ հովանավորչություն:

Ձեկույցը ներկայացնում է նաև միջազգային մարմինների և լրատվամիջոցների հրապարակային դատապարտող հայտարարությունները պուրակի վերաբերյալ:

Ընդ որում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության փորձը ցույց է տալիս, որ ադրբեջանական իշխանությունները միշտ էլ նախաձեռնել են խաղաղասիրական գործընթացներ, բայց դրանք եղել կեղծ բնույթով: Ջուգահեռ այդ գործընթացներին ադրբեջանական իշխանությունները նախաձեռնել են զինված հարձակումներ կամ զինված ընդհարումներ: Ակնհայտ օրինակ է 2016 թվականի ապրիլյան պատերազմը:

Ադրբեջանական իշխանությունները միշտ են վարել Արցախն արտաքին աշխարհից մեկուսացնելու, մարդու իրավունքները խախտող, խաղաղության դեմ ուղղված պատերազմական հանցանքները թաքցնելու քաղաքականություն՝ կեղծելով փաստերը: Սրանով շարունակաբար կոպիտ կերպով խախտել են մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի միջազգային բացարձակ պահանջները:

<sup>1214</sup> [https://ombuds.am/images/files/96e6d55d169a784b6424e4d565b29dba.pdf?fbclid=IwAR1UXKtVBenb4AD71W-6V4s\\_E3fUP\\_uKM2d3sYK6UzHTSuBsynsPoxKzD\\_g](https://ombuds.am/images/files/96e6d55d169a784b6424e4d565b29dba.pdf?fbclid=IwAR1UXKtVBenb4AD71W-6V4s_E3fUP_uKM2d3sYK6UzHTSuBsynsPoxKzD_g)

Վիճակն այնպիսի ծայրահեղ է, որ ադրբեջանցու կողմից հային սպանելը կամ խոշտանգելը ոչ միայն նորմալ երևույթ է, այլ պատժի փոխարեն Ադրբեջանի ղեկավարները սպանողին շնորհում են բարձր պարգևներ, արժանացնում գովեստի (օրինակ՝ Գուրգեն Մարգարյանի կամ «Մակույջանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի և Հունգարիայի» գործով 26.05.2020թ. ՄԻԵԴ վճիռ):

Հայաստանի ու Արցախի մարդու իրավունքների պաշտպանները 2022 թվականին հրապարակել են անգլերենով արտահերթ զեկույց ադրբեջանական կեղծ խաղաղասիրության փաստերի վերաբերյալ՝ որպես մարդու իրավունքների երկարաժամկետ սպառնալիք:<sup>1215</sup>

Այս զեկույցն այն մասին է, որ հակամարտություններում մարդու իրավունքների պաշտպանության և իրական խաղաղության համար անհրաժեշտ է ազնիվ և վստահության վրա հիմնված երկխոսություն: Այդ երկխոսությունն առաջնահերթ անհրաժեշտ է հասարակությունների միջև՝ որպես խաղաղության երկարաժամկետ գրավական և կարևոր է, որպեսզի դրան պետությունները քաղաքական ուղղորդումներ կամ արհեստական միջամտություններ չանեն:

Իրական խաղաղասիրության ճանապարհը ենթադրում է, որ քաղաքական գործոնները չեն կարող ազդել մարդու իրավունքների պաշտպանության վրա:

Այս զեկույցը, ներկայացնելով Արցախին վերաբերող 1990-ական թվականներից սկսած տարբեր խաղաղաշինական նախաձեռնություններ, անդրադարձել է 2016-2017 թվականների Բաքու-Թբիլիսի պլատֆորմներին, որոնք ադրբեջանական կողմը նախաձեռնեց ադրբեջանական վայրագություններով ուղեկցվող ապրիլյան պատերազմից անմիջապես հետո: Այս նախաձեռնությունները հայտարարվել էին՝ որպես անկախ քաղաքացիական հասարակության նախաձեռնություններ, մինչդեռ դրանք կազմակերպվել և ուղղորդվում էին ադրբեջանական կառավարության ու մասնավորապես, հատուկ ծառայությունների կողմից:

Բացի այն, որ այդ պլատֆորմներն անտեսում էին ազգային ինքնորոշման բնական իրավունքը, դրանք ամբողջությամբ արտահայտում էին միայն ադրբեջանական պետական քաղաքական գիծը: Ավելին, այդ նախաձեռնությունները Հայաստանի կամ Արցախի քաղաքացիական հասարակությունների հետ կապ չունեին, իսկ նրանցում մի շարք հայերի ընդգրկել էր ադրբեջանական կողմը, որոնք էլ աչքի էին ընկնում իրենց հայատյաց ելույթներով: Այս ամենին զուգահեռ, ադրբեջանական կառավարությունը շարունակում էր հայատյացության հովանավորչության պետական քաղաքականությունը:

Պետք է հատուկ ընդգծել այն, որ խաղաղությունը բացարձակ արժեք է, բայց ադրբեջանական իշխանությունների խաղաղության կոչերն ու հայտարարություններն իրականում կեղծ են, շղարշ են արտաքին աշխարհի համար և ունեն իսկական մտադրությունները քողարկելու նպատակ: Իրականում, տարիներով վարվել է և մինչ օրս շարունակվում է վարվել հայատյացության հովանավորչության և թշնամանքի քարոզի քաղաքականություն էթնիկ ու կրոնական հիմնական հենասյուներով՝ խորքային անհանդուրժողականությամբ:

<sup>1215</sup> <https://ombuds.am/images/files/457b493b908a7a95948f84df7c5781e1.pdf>

2021 թվականի դեկտեմբերի 7-ին ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանը հրապարակել է Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի կողմից ներկայացված հրատապ միջոցների վերաբերյալ իր որոշումները: Հայաստանի կողմից ներկայացված հրատապ միջոցների առնչությամբ դատարանը գտել է, որ առկա է կոնվենցիայի շրջանակներում հայերի իրավունքներին անդառնալի վնաս հասցնելու անմիջական վտանգ, և ըստ այդմ Ադրբեջանին պարտավորեցրել է բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել բոլոր այն անձանց, որոնք 2020 թվականի հակամարտությամբ պայմանավորված հայտնվել և պահվում են Ադրբեջանում, ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առաջ հավասարությունը: Դատարանը պարտավորեցրել է նաև ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու ազգությամբ և էթնիկ հայերի դեմ ուղղված ռասայական խտրականության և ատելության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ պաշտոնատար անձանց և պետական հաստատությունների կողմից և ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության, այդ թվում՝ եկեղեցիների և պաշտամունքի այլ վայրերի, հուշարձանների, ուղենիշային պատկերների, գերեզմանատների և այլ ցուցանմուշների հանդեպ վանդալիզմի և պղծման գործողությունները:

## **2. Հայապայացությունն ու թշնամանքը Ադրբեջանի նախագահի հրապարակային ելույթներում**

«Ճ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում իրականացրած ուսումնասիրությունները և ադրբեջանական լեզվով նյութերի մշտադիտարկումը վկայում են, որ Ադրբեջանի նախագահը պատերազմից հետո շարունակում է իր հրապարակային ելույթներով տալ սպառնալիքներ, անել վիրավորական ու թշնամանք բորբոքող արտահայտություններ ողջ հայ ժողովրդի, Հայաստանի և Արցախի բնակչության նկատմամբ:

Ընդ որում, նրա ելույթներն այնպիսին են, որ ակնհայտորեն հասնում են ֆաշիզմի: Ադրբեջանական իշխանությունների համար հայատյացությունը ներքին ու արտաքին քաղաքական գործիք է, սնուցման աղբյուր: Դա սեփական ժողովրդին հայատյացության կամ արմենաֆոբիայի մեջ պահելու նպատակային քաղաքականություն է՝ շեղելու համար սեփական խնդիրներից:

Սա երկու երկրների ժողովուրդների միջև թշնամանքը մշտապես ակտիվ պահելու խորքային վտանգներով լի քաղաքականություն է, որ բացարձակ է հակադրվում խաղաղությանը, մարդու իրավունքների ու ժողովրդավարության հիմքերին: Աշխարհում միևնույն երկրներում ապրում են հայեր ու ադրբեջանցիներ. ակնհայտ է, որ այս քաղաքականությունը նրանց նույնպես մշտապես պահելու է թշնամացած վիճակում:

Ադրբեջանի նախագահի ելույթներն արմատավորում են ատելություն և ռասիզմ և առաջացնում են թշնամանք Հայաստանի ու Արցախի և սփյուռքի միջև: Օրինակ, 2021 թվականի ապրիլի 13-ին

նա հայտարարում է. «(...) **Նրանք (նկատի ունի հայերին) լավ բժիշկների կարիք ունեն: Ես բազմիցս ասել եմ, որ նրանց թունավորել են: Այս թույնը հիմնականում գալիս է իրենց սփյուռքից, որը Ֆրանսիայի հարավում, Կալիֆոռնիայում, Կրասնոդարի մարզում և այլ մայրաքաղաքներում շատ հանգիստ և գեղեցիկ վայրերում նստած կյանքն են վայելում:** Նրանք ուզում են, որ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հայերն իրենց պատանդը, գործիքը լինեն, որպեսզի իրենք կարողանան զբաղվել կտրուկ և շովինիստական գաղափարներով: Հայ հասարակությունը (...) ապրում են երկաթե վարագույրի հետևում և այս թունավոր գաղափարների ազդեցության տակ են: Մենք պատրաստ ենք նրանց աջակցել այս հարցում»:

Ադրբեջանի նախագահի ֆաշիզմի ու ցեղասպան քաղաքականության ապացույցի օրինակ է նաև «պուրակի» բացման ժամանակ հնչեցրած ելույթները:

«Մենք աշխարհում ներկայացել ենք որպես հաղթող ժողովուրդ: Մինչդեռ, Հայաստանը պարտված երկիր է, մեր առջև ծնկի եկած երկիր, գլուխն ու վիզը ծռած երկիր է, և միշտ այդպես կլինի: Երբ տեսնում ենք իրենց կատարած ոճրագործությունները, սարսափում ենք: (...) **Նրանք մզկիթներում կովեր ու խոզեր են պահել, անարգել են ողջ մահմեդական աշխարհը, ավերել գերեզմաններ, փորել գերեզմանները և հանել թաղված մարդկանց ոսկե ատամները: Եթե սա վայրի չէ, ի՞նչ է: Վայրին գուցե դեռ մեղմ բառ է:** Ամբողջ աշխարհը տեսավ, թե որն էր նրանց հիմնական գաղափարական գործոնը: Իբրև թե դրանք փոքրաթիվ, բայց քաղաքակիրթ, մեծ քաղաքակրթություն ունեցող ժողովուրդ են՝ շրջապատված վայրի մահմեդականներով: Այս մասին ասվում էր Եվրոպայի յուրաքանչյուր անկյունում: Ռուսաստանում ամենուր ասում էին՝ օգնեք մեզ, թե չէ մեզ այստեղ կխեղդեն: Հիմա բոլորը տեսել են, թե որն է դրա քաղաքակրթությունը, ո՞րն է դրա մշակույթը, ո՞րն է դրա բարոյականությունը: Նա բարբարոս է, ով քանդում է գերեզմանները, փորում, հանում մահացածների ոսկե ատամները և մզկիթում խոզեր պահում, նա այլ անուն չունի»:

Ադրբեջանի նախագահը «Նոր Ադրբեջան» կուսակցության 2021թ. մարտի 5-ի 7-րդ համագումարի ժամանակ հայտարարել է, որ **երիտասարդ սերունդը մեծացել է (...) թշնամու հանդեպ ատելության զգացումով և հենց այդ երիտասարդ սերունդն է մեր հողերը ազատագրել օկուպանտներից:**

Հաշվի առնելով վերը նշված ապացույցները՝ պարզ է դառնում, որ այն ամենն, ինչի մեջ հայ ժողովրդին մեղադրում է Ադրբեջանի նախագահը, իրականում հայելային էֆեկտով իր պետական քաղաքականության անբաժան մասն է: Մասնավորապես, նա հայտարարում է, թե Հայաստանում ադրբեջանցիների նկատմամբ ատելությունը հաստատված է՝ որպես պաշտոնական գաղափարախոսություն (27.09.2021թ. ուղերձ), բայց իրականում ադրբեջանական քաղաքականությունն է լցված խորը արմենոֆոբիայով, և ատելությունն անընդհատ բորբոքվում է: Ադրբեջանի նախագահն ինքն է պատերազմից հետո հայտարարել, որ իր երկրում դաստիարակվել է թշնամու [հայերի] նկատմամբ ատելությամբ լցված սերունդ:

Հենց սա էլ սադրում է հակադրություն երկու ժողովուրդների միջև:

Ադրբեջանի նախագահն անընդհատ խոսում է «հայկական ֆաշիզմի» մասին, բայց Ադրբեջանի նախագահի խոսքերն են մշտապես ողողված ֆաշիստական գաղափարներով (օրինակ՝ հայերը բորենի են, շներ են, չունեն ուղեղ, չունեն բարոյականություն, Հայաստանն արհեստական ու արժեքներ չունեցող երկիր է և այլն): Դա այն աստիճան խորն է, որ ադրբեջանական զինված ուժերը պատերազմից հետո ցուցադրաբար են ոչնչացրել Արցախում հայ մարշալների ու գեներալների արձանները, ովքեր Հայրենական Մեծ Պատերազմում հերոսաբար պայքարել են ֆաշիզմի ու նացիզմի դեմ:

Բացի այդ, նա խոսում է Հայաստանում ու Արցախում իսլամաֆոբիայի մասին ու իսլամական աշխարհին հայ ժողովրդից վրեժխնդիր լինելու կոչեր անում՝ կեղծելով փաստեր (27.09.2020թ. ուղերձ), բայց իրականում ինքն է կրոնական բաղադրիչի օգտագործմամբ վարում թշնամանքի քաղաքականություն. ոչնչացված ու պղծված հայկական եկեղեցիները, խաչքարերը հենց դրա արդյունքն են:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ կրոնական հիմքով ատելությունը ձեռք է բերել նոր խիստ վտանգավոր զարգացումներ՝ հայ ժողովրդին բացարձակ անհիմն մեղադրելով իսլամաֆոբիայի մեջ:

Ադրբեջանի նախագահն 2021 թվականի սեպտեմբերի 27-ի հայտարարված «Հիշատակի օրվա» իր ուղերձում բացահայտ բորբոքում է կրոնական թշնամանք՝ էթնիկ ատելությանն ու թշնամանքին զուգահեռ, օգտագործում է կեղծ փաստեր:

Մասնավորապես, ուղերձում բացահայտ կեղծելով փաստերը՝ նա նշում է. «կիսաքանդ մզկիթներում նենգ թշնամին անասուններ՝ կովեր և խոզեր էր պահում՝ մեզ և ողջ աշխարհի մուսուլմաններին անարգելու համար: Վստահ եմ, որ աշխարհի մուսուլմանները համարժեք պատասխան կտան: Այս խնդրի վերաբերյալ նամակներ եմ ստանում բազմաթիվ մահմեդական երկրներից: Մենք (...) հայկական վայրագությունների, հայկական ֆաշիզմի վերաբերյալ մենք իրազեկում և իրազեկելու ենք ամբողջ աշխարհին: (...) մեր հաղթանակը (...) հաղթանակ է հայկական ֆաշիզմի դեմ»: Այնուհետև, նա խոսում է Հայաստանում հաստատված իբր իսլամաֆոբիայի մասին:

Այս ամենը բացահայտ կեղծիք է, հիմնված է անիրական տվյալների վրա: Մինչդեռ, պետք է արձանագրել, որ Երևանի կենտրոնում կա գործող մզկիթ, իսկ Բաքվի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցին պղծված է՝ վերածված է գրադարանի պահոցի, գմբեթից իջեցված է խաչը, ոչնչացված են գերեզմանաքարերը, որ կային եկեղեցու հարևանությամբ:

Մինչդեռ, առկա են ապացույցներ, որոնք փաստում են հենց ադրբեջանական զինված ուժերի կողմից վերջին պատերազմից հետո Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց և Կանաչ ժամ եկեղեցիների հրթիռակոծումն ու պղծումը, Արցախում Մեխակավանի Զորավոր Սուրբ Աստվածածին եկեղեցու ոչնչացումը կամ Մատաղիսի Սուրբ Եղիշե եկեղեցու պղծումը, հայկական խաչքարերի ոչնչացումը Շուշիում և Հադրութում և այլն:

Ակնհայտ է, որ իրականում առկա է քրիստոնեության նկատմամբ բացահայտ ատելություն ու թշնամանք:

Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ Արցախում կանգուն մնացել ու պահպանվում են օրինակ, Շուշիի Վերին ու Ներքին մզկիթները, հիմնովին վերանորոգվել էին Վերին մզկիթն ու մեդրեսի՝ հոգևոր վարժարանի շենքը, կառուցվել էր պուրակ: Ավելին, խսկամ դավանող աշխարհի բազմաթիվ ժողովուրդների հետ հայերն ապրում են՝ որպես բարեկամներ դարերով:

Այս մասին առավել մանրամասն ներկայացված է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2022 թվականին հրապարակված արտահերթ զեկույցում:<sup>1216</sup> Զեկույցը ներկայացնում է ադրբեջանական հայատյացության ու թշնամանքի քաղաքականությունը 44-օրյա պատերազմից հետո:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ Ադրբեջանի կրթական համակարգում է դրված հայատյացության և թշնամանքի քաղաքականությունը՝ ապահովելով նույնական վերարտադրություն հետագայում և ատելության տարածում հասարակությունում:

Զեկույցը փաստում է, որ ադրբեջանական ատելության քաղաքականությունը թշնամանքի մեջ է պահում երկու ժողովուրդներին ողջ աշխարհում, և այն վտանգավոր է նաև այլ երկրների համար, որտեղ ապրում են հայեր ու ադրբեջանցիներ:

2021 թվականին Մարդու իրավունքների պաշտպանը Սան Ֆրանցիսկոյում այցելել է Սուրբ Գրիգոր լուսավորիչ Հայ առաքելական եկեղեցի և Գոուզեան-Չաքարեան-Վասպուրական ազգային վարժարան, որոնք 2020 թվականին հարձակման էին ենթարկել ադրբեջանական հանցավոր խմբեր: Մասնավորապես, եկեղեցին հրդեհվել էր 2020 թվականի սեպտեմբերին: Հուլիսին վարժարանն էր ենթարկվել վանդալիզմի՝ պատերին հայերի դեմ ադրբեջանական ատելության ու թշնամանքի խոսքերով:

Դրանից հետո՝ 2020 թվականի սեպտեմբերի 21-ին հրազենից կրակել էին վարժարանի վրա: Ընդ որում, վարժարանը մանկապարտեզի տարիքից մինչև 8-րդ դասարանի երեխաների համար է:

Այս արարքները հակադրվում են մարդու իրավունքներին ու ժողովրդավարությանը, ոտահարում են բռնությունից զերծ լինելու, երեխաների շահերի, խղճի և կրոնի ազատության և այլ կենսական իրավունքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի դիտարկմամբ՝ պատերազմից հետո Ադրբեջանը զարգացրել է թշնամանքի քաղաքականությունը: Այդ մասին են վկայում խոշտանգման նոր ձևերը հայ գերիների նկատմամբ: Օրինակ՝ մի դեպքում ադրբեջանական ծառայողները հայ զինծառայողից պահանջել են հրաժարվել քրիստոնեությունից ու ընդունել մահմեդականություն, այսինքն՝ կրոնափոխ լինել: Երբ հայ զինծառայողը հրաժարվել է կատարել պահանջը, այրել են նրա ոտքը, դաժան ծեծի ու ծաղրի են ենթարկել: Այսպիսի բան մենք դեռ երբեք չենք արձանագրել:

<sup>1216</sup> [https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf?fbclid=IwAR3BPWvKOlreGmQ7r\\_eVZbgK\\_R3-FIMiP0JbXni-JJcA\\_KGKVjA9H71M3g#page50](https://ombuds.am/images/files/3101f60c869b0f378dbc737b002e5054.pdf?fbclid=IwAR3BPWvKOlreGmQ7r_eVZbgK_R3-FIMiP0JbXni-JJcA_KGKVjA9H71M3g#page50)

Մեկ այլ դեպքում նկատել են խաչի դաջվածք և այրել են կրակայրիչով մարմնի այդ մասը, դաժան ծեծի են ենթարկել: Ում մոտ եղել է խաչ, այն կա՛մ վերցրել են, կա՛մ ոչնչացրել: Երբ մեր գերիները պահանջել են վերադարձնել խաչերը, դաժան ծեծի են ենթարկվել ու ծաղրել են կրոնը:

Այսպիսով, բազմաթիվ են օբյեկտիվ ապացույցները, որոնք հաստատում են, որ հայկական կողմի զինձառայողների ու քաղաքացիական բնակիչների խոշտանգումների, գլխատումների, բնակավայրերն ավերելու, սահմանային բնակիչների իրավունքները խախտելու, եկեղեցիներն ավերելու ու պղծելու և այլ ոտնահարումների խորքային պատճառների հիմքում ադրբեջանական թշնամանքի պետական քաղաքականությունն է հայ ժողովրդի նկատմամբ:

### **3. Հայատյացությունը ադրբեջանական և թուրքական սոցիալական ցանցերում**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի՝ ադրբեջանական և թուրքական զանգվածային լրատվության միջոցների և, հատկապես, սոցիալական ցանցերի մշտադիտարկումը վեր է հանել ատելության և բռնության, այդ թվում՝ սպանության կոչեր, որոնք տարածվում են թուրքական ու ադրբեջանական աղբյուրներից:

Գործում են մեծ թվով էջեր ու խմբեր, որոնցով տարածվում են էթնիկ հիմքով հայատյացություն սերմանող, բռնության, այդ թվում՝ սպանությունների ու ավերածությունների տեսարաններ ու կոչեր պարունակող տեսանյութեր ու տեքստեր: Առկա են նաև զգալի թվով հայկական անունազգանուններով կեղծ էջեր, որոնցից նաև հայերենով սպառնալիք պարունակող ու ահաբեկող հաղորդագրություններ են ուղարկվում հայ իրական օգտատերերին:

Մարդու իրավունքների պաշտպանի մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ նշված նյութերը տարածվում են «Ֆեյսբուք», «Թվիթեր», «ՏիկՏոկ» և սոցիալական այլ ցանցերով: Նշված նյութերով թիրախավորվում են հայ օգտատերեր, այդ թվում՝ անչափահասներ: Ընդ որում, առավել ագրեսիվ նյութեր են տարածվում «ՏիկՏոկ» սոցիալական ցանցով՝ նպատակ ունենալով առաջացնել վախ ու տագնապ խաղաղ բնակչության շրջանում:

Այս ամենը հաստատված է Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի անկախ քննությամբ հավաքագրած ապացույցներով: Դրանք առավելապես օբյեկտիվ ապացույցներ են, այսինքն՝ լուսանկարներ, սոցիալական ցանցերի արտապատկերներ ու տեսանյութեր:

Ադրբեջանական սոցիալական ցանցերը լի են եղել հայ երեխաների սպանելու, խոշտանգելու, արյունը խմելու ու այլ դաժան վերաբերմունքի արժանացնելու կոչերով, ատելությամբ: Օրինակ՝ հայ երեխաների նկարներով անգամ կազմակերպվել են հարցումներ, թե արդյոք կսպանեին հայ երեխայի:

Ադրբեջանում հայատյացության ու թշնամանքի խորքային արմատների վերաբերյալ լրացուցիչ ապացույցներ ադրբեջանական սոցիալական մեդիայի իրական օգտատերերի հրապարակումներից [մի քանիսը]

1) «Պետք է սպանել և՛ հայ կանանց, և՛ հայ երեխաներին», - Ադրբեջանի փաստաբանների

միության անդամ.

2) Ես չեմ խղճում հայ երեխայի: Լավագույն հայը մեռած հայն է.

3) Պետք է սպանել կենդանի մնացած հայերին: Խոշտանգեք սպանելուց առաջ.

4) Ես ուզում եմ հայերի, որոնց մերկացրել են ու բռնաբարել.

5) Վեր բարձրացրեք ձեռքերը և կրկնեք՝ մենք ձեզ կքշեն Ղարաբաղից շների պես.

6) Մենք ձեզ կքշենք Ղարաբաղից շների պես:

Գլխավոր հարցն այստեղ այն է, որ նշված հրապարակումներում օգտագործվում են նույն բառերը, ինչ ադրբեջանական իշխանության մարմիններն ու մշակութային գործիչները: Նույն բառերն են օգտագործում նաև ադրբեջանական զինվորականները հայերին խոշտանգելու ու անմարդկային վերաբերմունքի տեսանյութերում:

Պաշտպանի աշխատակազմի մշտադիտարկումը ցույց է տալիս, որ ադրբեջանական պետական հովանավորչությամբ հայատյացության ու թշնամանքի քարոզն այսօր ոչ միայն չի նվազել, այլ ստացել է ծայրահեղական, ֆաշիստական նոր դրսևորումներ:

Մասնավորապես, Պաշտպանի աշխատակազմը վեր է հանել 2021 թվականի ապրիլի 12-ին Բաքվում բացված Ռազմավարի պուրակի վերաբերյալ ադրբեջանական սոցիալական ցանցերի գրառումներ, որոնք միայն ողջունում ու խրախուսում են Ադրբեջանի նախագահի նախաձեռնությունը, իսկ մեկնաբանությունները վկայում են ակնհայտ հայատյացության ու թշնամանքի մասին:

Այս ամենը ներկայացված է Մարդու իրավունքների պաշտպանի «Սպանված հայ զինվորների և շղթայված գերիների պուրակ Բաքվում. մարդկային տառապանքների թանգարան և ռասիզմի խթանում» արտահերթ զեկույցում: Այս զեկույցում տեղ են գտել կոնկրետ օգտատերերի, այդ թվում՝ հանրային գործիչների խոսքերը: Ստորև այդ ընկալումների մի քանի օրինակ՝

1) Վազգեններին շան պես կապել են, որ չփախչեն:

2) Շնորհակալություն այն մարդկանց, ովքեր աշխատել, պատրաստել են այս մոդելները: Ստորներին, անամոթներին, անբարոյականներին, դավաճաններին, խորամանկներին, դահիճներին բնորոշ բոլոր գծերը ամենայն ճշգրտությամբ պատկերել են:

3) Ռազմական ավարի պուրակը ռևանշիստների համար խրատ է, դաս, հերթական «Երկաթե բռունցքի» մասին նախազգուշացում է:

4) Հաջորդ կանգառը՝ Երևան, Զանգեզուր, Գյոյչա (Սևան):

5) Ցանկանում եմ, որ այս ավարի ու մոդելների ցուցադրությունը երկարաժամկետ լինի, որովհետև ապագա սերունդը պետք է ճանաչի ազգի թշնամուն և ատելությամբ հիշի:

6) Ընկերներ, ասեք տեսնեմ այս մոդելների վրա անամոթների աչքերը ինչ էլ մեծ են: Կեցցեն ստեղծողները: Կարծես անօդաչուի գալուց են վախենում: Երկրորդ մոդելի դեպքում մեր պարոն Նախագահի իրավացի խոսքն է. «Ի՞նչ եք առնետի պես թաքնվել այստեղ-այնտեղ» և այլն:



Այս զեկույցը կոնկրետ ապացույցներով՝ տեսանյութերով ու լուսանկարներով ցույց է տալիս, որ պուրակը հայատյացության և թշնամանքի գեներացիայի հերթական աղբյուրն է, որ ունի պետական բացահայտ հովանավորչություն:

#### **ԳԼՈՒԽ 4. ՀՀ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲՆԱԿԻՋՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԵՄ ԽԱԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԸ**

##### **1. ՀՀ սահմանային բնակիչների կյանքի, խաղաղ և անվտանգ ապրելու իրավունքների խախտումներ**

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի ընթացքում և դրանից հետո ադրբեջանական զինված ծառայողների կողմից հաճախակի են կրակոցները Հայաստանի գյուղերի անմիջական հարևանությամբ և դրանք որոշ դեպքերում թիրախավորված են՝ գյուղերի ու քաղաքացիական տների ուղղությամբ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գյուղերի անմիջական հարևանությամբ գտնվող ադրբեջանական զինված ծառայողներն արձակում են կրակոցներ մանր ու խոշոր տրամաչափի զինատեսակներից: Կրակոցները պարբերական են, արվում են ինչպես ցերեկային, այնպես էլ գիշերային ժամերի, պարզ լսվում են գյուղերում ու առաջացնում անհանգստություն, առաջին հերթին՝ կանանց ու երեխաների համար:

Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացվել են ապացույցներ, որոնք հաստատում են, որ ադրբեջանական զինված ծառայողները կրակոցներ են արձակում Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի գյուղերի անմիջական հարևանությամբ:

Սյունիքի մարզի Շիկահող, Սրաշեն, Ներքին Հանդ և այլ գյուղական բնակավայրերի բնակիչներն ահազանգել են, որ կրակոցներ են արձակվել այն պահին, երբ իրենք գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված են եղել իրենց պատկանող հողերում՝ իհարկե, ցերեկային ժամերի: Մի շարք դեպքերում նրանք եղել են իրենց երեխաների (նաև թոռնիկների) հետ: Ընդ որում, կրակոցներ արձակված ադրբեջանական զինված ծառայողները գտնվում են այնպիսի տարածության վրա, որ անզեն աչքով հայ գյուղացիների հողատարածքները դիտարկելի են: Այսինքն՝ նրանք պարզ դիտարկում են, որ հողատարածքներում խաղաղ բնակիչները գյուղատնտեսական աշխատանքներ են իրականացնում<sup>1217</sup>:

<sup>1217</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1538>

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության սահմանային բնակավայրերի բնակիչների կյանքն ու առողջությունը, նրանց ֆիզիկական անվտանգությունն ու հոգեկան անձեռնմխելիությունն ուղիղ սպառնալիքի տակ է հայտնվել:

Պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ներկայացրել Արարատի մարզի Երասխ համայնքի բնակիչը և հայտնել, որ ադրբեջանական զինված ծառայողները գնդակոծել են իր տունը, հրավառ գնդակներից մեկը խոհանոցի պատուհանից անցել է ներս և խոհանոցում հրդեհ է բռնկվել: Տեղեկացրել է, որ կրակոցների ժամանակ մանկահասակ երեխաները գտնվել են տանը: Այս ամենն ուղիղ վտանգներ է ստեղծում նաև երեխաների համար: Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքները հաստատում են, որ ադրբեջանական զինված ծառայողները ՀՀ ինքնիշխան տարածքում հրազենով սպառնացել են Սյունիքի մարզի Տեղ գյուղի բնակիչներին և թույլ չեն տվել հավաքել հնձած խոտը:

Մասնավորապես, 2021 թվականի հունիսի 26-ին Տեղ գյուղի բնակիչները գնացել են սեփականության իրավունքով իրենց պատկանող հողատարածք, որպեսզի հավաքեն իրենց իսկ հնձած խոտը: Երբ գտնվել են ադրբեջանական դիրքից մոտ 300 մետր հեռավորության վրա՝ Տեղ համայնքի վարչական տարածքում, նկատել են, որ ադրբեջանական 5 զինված ծառայող ագրեսիվ պահվածքով և գոռգոռալով մոտենում են իրենց: Մոտ 150 մետր մոտենալով՝ նրանք դեպի գյուղացիներն են ուղղել զենքերը և սկսել են սպառնալ, գոռգոռալ ու թույլ չեն տվել հավաքել խոտը: Նրանցից երկուսն առավել ագրեսիվ պահվածքով են եղել ու գյուղացիներից պահանջել են, որ այդ տարածքներ այլևս ընդհանրապես չգան և չփորձեն օգտվել հողերից<sup>1218</sup>:

Մեկ այլ դեպքով՝ ադրբեջանական զինված ծառայողները Գեղարքունիքի մարզի գյուղերի հարևանությամբ՝ արոտավայրերում ապօրինաբար կանգնեցրել են գյուղացիներին, պահանջել են տալ բացատրություններ՝ ի՞նչ ուղղությամբ են շարժվում, ի՞նչ նպատակով և ի՞նչ են տեղափոխում, փորձել են իրականացնել մեքենաների ապօրինի խուզարկություններ և սպառնացել են նրանց<sup>1219</sup>: Մասնավորապես, 2021 թվականի հունիսի 3-ին ահազանգեր են ստացվել այն մասին, որ ադրբեջանական զինված ծառայողները պարբերաբար մի քանիսից մինչև մի քանի տասնյակ անձնակազմերով, այդ թվում՝ մեքենաներով իջնում են դեպի Վարդենիս համայնքի Վերին Շորժա գյուղի արոտավայրերը, որտեղ գտնվում են անասնագոմերը և որտեղ գյուղացիներն արածեցնում են իրենց կենդանիներին: Ադրբեջանական զինված ծառայողները դրսևորում են ցինիկ պահվածք, սպառնալիքներ տալիս գյուղացիներին զենքի ցուցադրումով: Նրանք դիրքեր են տեղակայել Վերին Շորժայի սարատեղիին առավել մոտ վայրերում և դրանով գրեթե անհնարին դարձրել արոտավայրերն օգտագործելը:

Պաշտպանի աշխատակազմ ահազանգ է ներկայացրել նաև Սյունիքի մարզի Արավուս գյուղի հովիվը և տեղեկացրել, որ ադրբեջանական զինված ծառայողները 2021 թվականի ապրիլի 18-ին հանցավոր ոտնձգություն են կատարել իր նկատմամբ: Մասնավորապես, վերջինս տեղեկացրել է,

<sup>1218</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1782>

<sup>1219</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1728>

որ իր տանից շուրջ 500 մետր հեռավորության վրա գտնվող արոտավայրում արածեցրել է 14 խոշոր ու մանր եղջերավոր կենդանի: Հովիվը տեղեկացրել է, որ ինքը գտնվել է ադրբեջանական զբաղեցրած դիրքից շուրջ 50 մետր հեռավորության վրա դեպի Արավուս գյուղն ընկած տարածքում, երբ իրեն են մոտեցել ադրբեջանական 3 զինված ծառայողներ: Ադրբեջանական զինված ծառայողները սկզբում զենքի ցուցադրումով սպառնացել են հովիին, իսկ այնուհետև՝ նրանցից երկուսը քաշքշել են իրեն ու փորձել հարկադրաբար տեղափոխել ադրբեջանական զբաղեցրած դիրքի ուղղությամբ: Այդ ողջ ընթացքում ադրբեջանցի զինված ծառայողներն անընդհատ հայհոյել ու սպառնացել են հովիին: Այնուհետև, երբ տեսել են, որ հովիին օգնության են շտապում Հայաստանի զինված ուժերի ծառայողներ, ադրբեջանական զինված ծառայողներից մեկը հարվածել է հովիի աչքին՝ առաջացնելով կապտուկ ու անմիջապես հեռացել են դեպի իրենց զբաղեցրած դիրքը<sup>1220</sup>:

Պաշտպանի աշխատակազմը փաստահավաք աշխատանքներով պարզել է, որ ադրբեջանական զինված ծառայողները 2021 թվականի հունիսի 5-ին կրակահերթ են արձակել ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուբ գյուղի հովիի ուղղությամբ, երբ նա գյուղի արոտավայրում արածեցրել է մանր ու խոշոր եղջերավոր կենդանիներ: Ընդ որում, հովիվը, ինչպես նաև կենդանիները գտնվել են ՀՀ ինքնիշխան տարածքում, իսկ ադրբեջանական զինված ուժերն այն հատվածում, որ ապօրինի ներխուժել են ՀՀ տարածք: Կրակահերթը Կուբի բնակիչ հովիի ուղղությամբ տևել է մոտ 30 րոպե: Հովիվը կարողացել է ձիով փախուստի դիմել, սակայն այդ ընթացքում կրակահերթից ձիու ոտքը վնասվել է<sup>1221</sup>:

Այսպիսով, Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքները շարունակաբար հաստատում են, որ ադրբեջանական զինված ծառայողները ՀՀ սահմանային բնակիչների նկատմամբ դրսևորում են բացահայտ հանցավոր արարքներ: Նրանք, փաստորեն, ուղիղ դիտավորությամբ կրակ են բացում ՀՀ քաղաքացիական բնակչության նկատմամբ՝ կյանքի և այլ կենսական իրավունքներից, անասնապահությամբ զբաղվելու և ընտանիքի եկամուտը վաստակելու հնարավորությունից զրկելու նպատակով: ՀՀ քաղաքացիական բնակիչների նկատմամբ այս հանցավոր արարքները սկսվել են, երբ նրանք 2021 թվականի մայիսից սկսած ապօրինաբար ներխուժել են ՀՀ ինքնիշխան տարածք: Ադրբեջանական զինված ուժերի այս հանցավոր արարքները պետք է դիտարկել միասնական դիտավորության մեջ՝ հաշվի առնելով այն, որ նրանք նույն արարքները կատարում են նաև ՀՀ Սյունիքի մարզի սահմանային գյուղերի, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի այլ գյուղերի բնակիչների նկատմամբ:

Ակնհայտ է, որ այս հանցավոր ոտնձգությունների, մարդկանց իրավունքների կոպիտ խախտումների հիմքը, դրանց սնուցման աղբյուրը մեկն է. ադրբեջանական իշխանությունների հայատյաց ու թշնամանքի, էթնիկ զտումների ու ցեղասպան քաղաքականությունը: Այս

<sup>1220</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1653>

<sup>1221</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1731>

քաղաքականությունն ունի ինստիտուցիոնալ հիմքեր ու քանի դեռ հանցանք կատարողները չեն պատժվել խախտումները չեն վերանալու, մարդկանց անվտանգությունը չի ապահովվելու:

Անհրաժեշտ է նաև հատուկ ընդգծել, որ նշված միջադեպերը հրահրող ու տարբեր սադրանքներ ձեռնարկող ադրբեջանական զինված ծառայողների գերագույն գլխավոր հրամանատարն Ադրբեջանի նախագահն է, ով անընդհատ խոսում է Հայաստանի ողջ բնակչության, հայ ժողովրդի մասին սպառնալիքների լեզվով, ուղերձներով ու քաղաքականությամբ խրախուսում է թշնամանք ու հայատյացություն:

## **2. ՀՀ սահմանային բնակիչների սեփականության իրավունքի խախտումները**

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմին հետևել է այն, որ Ադրբեջանի զինված ուժերը տեղակայվել են Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի բնակավայրերի հարևանությամբ, որի հետևանքով բնակիչները զրկվել են իրենց հողերից ու տներից օգտվելու հնարավորությունից: Ադրբեջանի վերահսկողության տակ են հայտնվել համայնքների բնակիչների հողերը (արոտներ, խոտհարքեր, վարելահողեր) և նրանց պատկանող տները: վերջիններս չեն կարողանում օգտագործել ադրբեջանական ռազմական դիրքերին մոտ գտնվող հողերը, քանի որ ադրբեջանական զինված ծառայողները կրակ են բացում խաղաղ բնակիչների ուղղությամբ, երբ նրանք փորձում են մոտենալ իրենց հողերին կամ տներին:

Հարկ է ընդգծել, որ այս բոլոր հողերն ու տները ունեն սեփականության վկայականներ կամ պայմանագրեր, որոնք տրվել են Խորհրդային կամ Անկախ Հայաստանի պետական մարմինների կողմից:

Սեփականության իրավունքի երաշխավորումն ու ապահովումը պետության առաջնահերթ պարտականություններից է: Սեփականության իրավունքի պաշտպանության իրավական հիմքերը դրված են Սահմանադրությամբ և միջազգային հիմնարար փաստաթղթերով:

Սեփականության իրավունքը ենթադրում է ոչ միայն յուրաքանչյուր անձի իրավունքը՝ պահանջելու, որ այլոք չխախտեն իր սեփականության իրավունքը, այլ նաև՝ պետության պարտականությունը սեփականության իրավունքը պաշտպանելու ցանկացած անօրինական ոտնձգությունից:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նման խնդիրներ առկա են Շուռնուխ, Որոտան, Արավուս, Քարահունջ, Խոզնավար, Խնածախ, Ներքին Խնձորեսկ, Ակներ, Դավիթ Բեկ, Սյունիք, Ագարակ, Եղվարդ, Շիկահող, Ճակատեն, Սրաշեն, Ներքին Հանդ, և Սյունիքի մարզի այլ գյուղերում, ինչպես նաև Կութ, Սոթք Նորաբակ, Վերին Շորժա և Գեղարքունիքի այլ գյուղերում:

Օրինակ՝ Շուռնուխ գյուղում տների ու հողատարածքների սեփականությունը բնակիչներին է փոխանցվել դեռևս 1991 թվականին, իսկ 2009 թվականին տրամադրվել են սեփականության իրավունքի գրանցման նոր վկայականներ: Ընդհանուր առմամբ կան 11 սեփականության

իրավունքի պետական գրանցման վկայականներով տներ, որոնք գտնվում են անմիջական ադրբեջանական զինված ծառայողների վերահսկողության տակ: Իսկ Որոտան բնակավայրի այգեգործական հողատարածքները բնակիչներին հատկացվել են ՀԽՍՀ գործկոմի որոշումներով, իսկ հետագայում՝ 2009 թվականից նրանց տրամադրվել են այդ հողատարածքների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը հաստատող կադաստրային նոր վկայականներ: Նշված հողատարածքների վրա կառուցվել են այգեգործական 18-20 տնակներ, որոնք նույնպես գտնվում են ադրբեջանական զինված ծառայողների վերահսկողության տակ:

Շուռնուխի գյուղի դեպքում այն բաժանվել է «ադրբեջանական» ու «հայկական» մասերի և որպես բաժանման հիմք է ընդունվել այդ բնակավայրով անցնող միջպետական ճանապարհը: Բայց հարցն այն է, որ ճանապարհի մի կողմում՝ «հայկական» մասում (այդ թվում՝ այն վայրերը, որտեղ երեխաները սովոր են խաղալ) խաղաղ բնակիչներ են, իսկ անմիջականորեն մյուս մասում՝ ադրբեջանական զինված ծառայողներ: Շուռնուխ գյուղում արձանագրված դեպքերից մեկի համաձայն՝ բնակիչ Ստյոպա Մովսիսյանի տան ուղիղ հարևանությամբ գտնվող նրան պատկանող անասնաշենքը GPS (գլոբալ տեղորոշման) համակարգի կամ Գուգլ քարտեզի (Google Map) կիրառության արդյունքում բաժանվել է 2 մասի՝ «ադրբեջանական» և «հայկական»: Ընդ որում, ինչպես տան, այնպես էլ անասնաշենքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը հաստատված է ՀՀ կադաստրի կոմիտեի վկայականներով:

Ցավոք, նման կոնկրետ օրինակները բազմաթիվ են և կիրառվող մոտեցումների, GPS կամ Գուգլ քարտեզի (Google Map) մեխանիկական կիրառության պատճառով վտանգվել, իսկ հատկապես սեփականության ու մի շարք այլ իրավունքների դեպքում կոպտորեն խախտվել են ՀՀ սահմանային բնակիչների իրավունքները:

ՀՀ բնակիչներին պատկանող կամ իրենց կողմից օգտագործվող արոտավայրի, խոտհարքի և վարելահողի համար նախատեսված հողատարածքների որոշ մասը ևս անցել է ադրբեջանական զինված ծառայողների վերահսկողության տակ կամ գտնվում է նրանց ուղիղ նշանառության տակ, ինչը կենսաապահովման լուրջ խնդիրներ է առաջացրել բնակավայրերի բնակիչների համար: Մասնավորապես, չկա կենդանիներին կերակրելու և ձմռան համար պահեստավորելու բավարար քանակի խոտ, չունեն վարելահողերը մշակելու և դրանից օգտվելու հնարավորություն:

Մարդու իրավունքների պաշտպանի՝ կատարած փաստահավաք աշխատանքների արդյունքում պարզվել է, որ արոտավայրերը, խոտհարքերը, վարելահողերը և այլ օբյեկտներ չեն կարող օգտագործվել նաև այն դեպքում, երբ դրանք գտնվում են ադրբեջանական ուղիղ նշանառության տակ (օրինակ՝ դիրքերը գտնվում են անմիջական հարևանությամբ և ամբողջովին վերահսկվում է): Նմանատիպ խնդիրներ արձանագրվել են Գորիս, Կապան, Մեղրի և Վարդենիս համայնքների գյուղերում:

Հայկական գյուղերի անմիջական հարևանությամբ կամ համայնքներն իրար կապող ճանապարհներին ադրբեջանցի զինված ծառայողների (նաև դրոշներ ու ցուցանակներ) առկայությունը կամ նրանց ցանկացած տեսակի տեղաշարժ, կոպտորեն ոտնահարում են

բնակիչների սեփականության իրավունքը, այդ թվում՝ ապրուստի միջոց վաստակելու նրանց հնարավորությունը, լրջորեն վտանգում է նրանց կյանքի ու առողջության, ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության և կենսական կարևորության մյուս իրավունքները, որոնք երաշխավորված են միջազգայնորեն ու ՀՀ Սահմանադրությամբ: Դա նաև խաթարում է մարդկանց, այդ թվում՝ երեխաների անվտանգությունն ու խաղաղ կյանքը: Այս ամենը տեղի է ունեցել Հայաստանի բնակչությանն ուղղված պատերազմի և ուժի ադրբեջանական սպառնալիքների ներքո մեխանիկական մոտեցումներ կիրառելու, անթույլատրելի արագ գործընթացի պատճառով՝ առանց հանձնաժողովային մասնագիտական աշխատանքների ու սահմանային բնակիչների իրավաչափ շահերը, նրանց միջազգայնորեն երաշխավորված իրավունքները, հետևաբար՝ իրավունքի գերակայության պահանջները հաշվի առնելու:

Ադրբեջանական զինված ծառայողները գտնվում են Կուբ գյուղական բնակավայրի մերձակայքում, արդյունքում՝ գյուղացիները կարողանում են օգտվել արոտավայրերի միայն մի փոքր հատվածից: Ավելին, ադրբեջանական զինված ծառայողները հայիոյում են հովիվներին, բարձր բղավում և սպառնում զենքի ցուցադրությամբ: Նորաբակ գյուղական բնակավայրի անասնագույնը գտնվում է ադրբեջանական զինված ծառայողների պատրիսի հսկողության տակ և բնակիչները զրկվել են դրանից օգտվելու հնարավորությունից: Անասնագույնի մոտ կան առվակներ, որոնք նույնպես օգտագործվում էին գյուղատնտեսական նպատակներով, սակայն այժմ գյուղացիներն այլևս չեն կարողանում օգտվել դրանից:

Ուսումնասիրությունները նաև ցույց են տվել, որ արոտավայրերից զրկվելու հետևանքով բնակիչները մտադիր են վաճառել իրենց կենդանիների մեծ մասը, քանի որ անհնար է դարձել անասնապահությամբ զբաղվել իրենց բնակավայրերում:

Արդյունքում, բազմաթիվ մարդիկ փաստացի զրկվել են նշված հողատարածքներն օգտագործելու, ինչպես նաև եկամուտի միակ աղբյուր հանդիսացող օգուտներ քաղելու հնարավորությունից:

Բարձրացված խնդրի վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պարզաբանվել է, որ Գեղարքունիքի մարզում 2020 թվականի Ադրբեջանի սանձազերծած պատերազմի հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել կամ անմիջականորեն դիտարկման տակ են գտնվում 2200 հա արոտավայր և 530 հա խոտհարք: Սյունիքի մարզում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հողատարածքներ չկան, սակայն կան պաշտպանական գոտում գտնվող հողեր, որոնք ժամանակավորապես անհասանելի են առանձին գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին: Դիտարկվող կամ նմանատիպ հողերի չափը հնարավոր կլինի վերջնականապես որոշել միայն սահմանազատում և սահմանազծում կատարելուց հետո:

Ադրբեջանական զինված ծառայողները Գեղարքունիքի մարզի գյուղերի հարևանությամբ հրդեհում են արոտավայրեր ու խոտհարքեր, գյուղերի անմիջական հարևանությամբ և Սյունիքի համայնքների միջև ճանապարհներին նրանց առկայության պատճառով վտանգված է մարդկանց

կյանքի իրավունքը, սահմանափակվել է մարդկանց ազատ տեղաշարժը, մարդիկ հայտնվել են մեկուսացման և հումանիտար խնդիրների առաջ:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքների՝ 2021 թվականի օգոստոսի 29-ին ադրբեջանական զինված ծառայողների զցած հրդեհների հետևանքով Գեղարքունիքի մարզի Ազատ, Կուֆ, Նորաբակ և Սոթք գյուղերում 2021 թվականի սեպտեմբերի 1-ի ժամը 16:00-ի դրությամբ այրվել է՝ շուրջ 270 հա արոտավայր և շուրջ 150 հա խոտհարք: Ոչնչացվել է նաև խոտը, որը մարդիկ չարչարանքով են պաշարել ձմռան համար: Օրինակ՝ ոչնչացվել է Կուֆ գյուղի միայն մեկ բնակչի պաշարած մոտ 500 հակ խոտ<sup>1222</sup>:

Մարդու իրավունքների պաշտպանին ահազանգել են նաև Արարատի մարզի Երասխ գյուղի բնակիչները: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2021 թվականի հոկտեմբերի 15-ին ադրբեջանական զինված ծառայողները դիտավորյալ կրակոցներով հրդեհել են Երասխ համայնքի բնակչի խոտի 8 հազար հակ: Ոչնչացվել է ձմռան ողջ պաշարը, որը քաղաքացին իր կենդանիներին կերակրելու համար չարչարանքով հավաքել է ողջ տարի: Ավելին, կրակը տարածվել է և հրդեհվել է քաղաքացու անասնազոմի տանիքը: Միայն հրշեջների միջամտության արդյունքում է կրակը հաջողվել մարել, որ քաղաքացու տանիքի մյուս մասը չայրվի<sup>1223</sup>:

Ըստ մեկ այլ ահազանգի՝ 2021 թվականի հոկտեմբերի 16-ին կրակահերթերը եղել են նպատակային՝ քաղաքացիական տների ուղղությամբ: Գնդակոծությունից անմիջապես հրդեհվել է Երասխ համայնքի բնակչի 3-4 հազար հակ խոտի դեզը: Միայն հրշեջների ժամանակին գալու շնորհիվ է կրակը մեկուսացվել, որ տների ուղղությամբ չտարածվի<sup>1224</sup>:

Նշվածի կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից պարզաբանել են, որ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմից հետո սահմանամերձ բնակավայրերի բնակիչների արոտավայրերից, խոտհարքերից զրկվելու հետևանքով կենդանիներին կերակրելու կամ ձմռան համար պահեստավորելու համար բավարար քանակի խոտով ապահովելու ուղղությամբ հարևան մարզերից իրենց սեփական միջոցներով տնտեսավարողները ձեռք են բերել անհրաժեշտ քանակությամբ անասնակեր:

Հաշվի առնելով, որ ադրբեջանական դիրքերը գտնվում են գյուղի անմիջական հարևանությամբ՝ ադրբեջանական զինված ծառայողների համար ակնհայտ է, որ իրենք վնաս են տալիս գյուղացիներին, ոչնչացնում են նրանց գույքը, խախտում են նրանց կյանքի ու սեփականության իրավունքը, խաթարում են խաղաղ կյանքն ու անվտանգությունը:

ՀՀ բնակիչների համար լրջագույն խնդիրներ են առաջացել գյուղատնտեսական վարկային պարտավորությունները կատարելու հետ կապված, այն է՝ պատերազմի հետևանքով նրանք կորցրել են հողատարածքներ, կենդանիներ և այլն, սակայն դրանց համար տրամադրված վարկային պարտավորություններից չեն ազատվել, ինչպես նաև չի տրամադրվում համարժեք փոխհատուցում:

<sup>1222</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1891>

<sup>1223</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1956>

<sup>1224</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1954>

Օրինակ՝ Տեղ համայնքի բնակիչներից մեկը տեղեկացրել է, որ 6.500.000 ՀՀ դրամ որպես վարկ տրամադրված գումարով ձեռք է բերել 120 ոչխար, որոնք պատերազմից հետո ադրբեջանական զինված ծառայողները հափշտակել ու չեն վերադարձրել: Ըստ բնակչի՝ իրեն տրամադրվել է ընդամենը 100.000 ՀՀ դրամ դրամական աջակցություն: Տեղեկացրել է նաև, որ վարկային կազմակերպությունը շարունակում է պահանջել կատարել վճարումները 120 կենդանու համար տրամադրված վարկի գումարի դիմաց<sup>1225</sup>:

Մեկ այլ դեպքում՝ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմի ընթացքում արկի հարվածից անկել է բնակչի 18 խոշոր եղջերավոր կենդանի, որոնք ձեռք է բերել գյուղատնտեսական վարկերով: Սյունիքի մարզպետարանից վնասի չափը հաշվարկվել է 6.300.000 ՀՀ դրամ գումար, սակայն փոխհատուցում չի տրվել, իսկ վարկային կազմակերպությունն ու բանկը՝ դիմելով դատարան շարունակում են պահանջել վճարել վարկերի գումարը:

Սյունիքի մարզի Տեղ համայնքի Քարաշեն գյուղական բնակավայրի բնակիչը բանկերից բարձր տոկոսադրույքով վերցրել է վարկեր և ձեռք է բերել վարելահողեր և սերմացու՝ ակնկալելով, որ ստացած եկամտի շնորհիվ կկարողանա վճարել վարկերը: Արդյունքում պատերազմի հետևանքով հողատարածքներն անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ և չի կարողանում վճարել վարկերը, քանի որ կորցրել է եկամտի միակ աղբյուրը:

Ավելին, նախկինում՝ մինչև 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների պատերազմը, Սյունիք և Գեղարքունիք համայնքների վերը նշված հողատարածքները բնակիչները օգտագործել են կենդանիներին արածեցնելու համար՝ այն տարածքներում, որոնք ներկայում կամ ուղղակիորեն վերահսկվում են Ադրբեջանի զինված ուժերի կողմից, կամ գտնվում են ուղիղ նշանառության տակ: Մասնավորապես, կենդանիների «սահմանը հատելու» բազմաթիվ դեպքեր են գրանցվել:

Ստեղծված պայմաններում բնակիչները չունեն վարկերը վճարելու հնարավորություն, քանի որ կորցրել են իրենց եկամտի աղբյուրը և կանգնել սոցիալական լուրջ խնդիրների առաջ: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 25-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի այնպիսի կենսամակարդակի, ներառյալ սնունդը, հագուստը, բնակարանը, բժշկական խնամքը և սոցիալական անհրաժեշտ սպասարկումը, որն անհրաժեշտ է իր և իր ընտանիքի առողջությունն ու բարեկեցությունը պահպանելու համար, և գործազրկության, հիվանդության, հաշմանդամության, այրիանալու, ծերության կամ *իր կամքից անկախ ապրուստի միջոցներից զրկվելու դեպքում՝* ապահովելու իրավունք:

Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք գործունեությունը բացահայտել է նաև դեպքեր ադրբեջանական զինված ծառայողների կողմից խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գողություն կամ հափշտակություն:

Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է, որ հովիվներն իրենք անփույթ չեն, պատճառն այն է, որ սովորաբար կենդանիները սովոր են արածել այդ տարածքներում, որտեղ

<sup>1225</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1865>



նախկինում արածել են: Նշված արոտավայրերն այնպիսին են, որ բավականին դժվար և անհրազործելի է կենդանիների նկատմամբ բավարար հսկողություն իրականացնելու համար:

Սահմանային բնակավայրերի բնակիչներից ստացվել են բողոքներ և ահազանգեր՝ կապված ադրբեջանական զինված ծառայողների կողմից իրենց կենդանիները հափշտակելու հետ: Այսպես, 2021 թվականի օգոստոսի 16-ին Վայոց ձորի Ջառիթափի համայնքի Սերս գյուղական բնակավայրի բնակիչներին պատկանող 80 խոշոր եղջերավոր կենդանի «Գոգի» լեռան լեռնամարգագետնային հատվածից անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածք և դրանցից 75-ը հափշտակվել են ադրբեջանական զինված ծառայողների կողմից: Կենդանիները բնակիչները ձեռք են բերել գյուղատնտեսական վարկերով<sup>1226</sup>:

Գեղարքունիքի մարզի Կութ գյուղական բնակավայրի երկու բնակչի պատկանող խոշոր եղջերավոր կենդանիներն անցել են ադրբեջանական զինված ծառայողների վերահսկողության տակ գտնվող տարածք և չեն վերադարձվել: Հափշտակվել է 34 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որոնք նույնպես ձեռք էին բերել տրամադրված վարկի գումարով: Նշված անձանցից բացի ադրբեջանական զինված ծառայողները հափշտակել են Կութ գյուղի 3 բնակչի թվով 80 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:

Օրինակ՝ 2021 թվականի փետրվարի 11-ին Սյունիքի մարզի Խնձորեսկ գյուղի բնակիչը գյուղի մոտ արոտավայրում արածեցրել է ընդհանուր 185 մանր եղջերավոր կենդանի, արածեցման ժամանակ կենդանիներից մի քանիսը մոտեցել են Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող տարածք, ինչից հետո ադրբեջանական զինված ծառայողներն ապօրինի կերպով 185 ոչխարներից 173-ը հափշտակել են: Կենդանիները վերադարձվել են միայն ՀՀ սահմանապահ զորքերի և զինված ուժերի բանակցությունների արդյունքում<sup>1227</sup>:

Մեկ այլ դեպքով Մարդու իրավունքների պաշտպանը ահազանգ է ստացել, որ Տեղ համայնքի Խնածախ գյուղի մի հովիվ իր խոշոր ու մանր եղջերավոր կենդանիներին արոտավայրում արածեցնելիս ադրբեջանցի զինված ծառայողները զենքի ցուցադրմամբ սպառնացել են, բղավել են և պահանջել են, որ այդ արոտավայրում կենդանիները չարածեն: Կենդանիները հափշտակելու դեպք է գրանցվել նաև Տեղ համայնքի Արավուս գյուղում: Ըստ 2021 թվականի մայիսի 23-ի ահազանգի ադրբեջանական զինված ծառայողները գյուղի հովիվներից ՀՀ տարածքից հափշտակվել է 42 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, որոնցից վերադարձվել է միայն 37-ը:

2022 թվականի հունվարի 13-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել է ահազանգ այն մասին, որ ադրբեջանական 4 զինված ծառայող նույն օրը գողգողալով, քաշքշելով, ուժի գործադրմամբ առևանգել են Սյունիքի մարզի Տեղ համայնքի Տեղ գյուղական բնակավայրի բնակչին ու նրան պատկանող մոտ 400-450 ոչխարներին: Այս ահազանգը ևս մեկ անգամ վկայում է ադրբեջանական զինված ծառայողների հանցավոր արարքներով ՀՀ խաղաղ բնակչի կյանքի, անձնական ազատության և սեփականության իրավունքների նկատմամբ հանցավոր ոտնձգության

<sup>1226</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1885>

<sup>1227</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1533>

մասին: ՀՀ քաղաքացիական բնակիչների նկատմամբ Ադրբեջանական զինված ծառայողների չդադարող հանցանքները, որոնք գրեթե ամեն օր են, անհնարին են դարձնում մարդկանց նորմալ կյանքը, զրկում են ընտանիքի եկամուտը վաստակելու, գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունից, պատճառում են սոցիալական խնդիրներ<sup>1228</sup>:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը հատուկ արձանագրում է, որ նկարագրված բոլոր դեպքերն ակնհայտորեն վկայում են ՀՀ քաղաքացիների՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված և միջազգային փաստաթղթերով ամրագրված իրավունքների խախտման մասին: Խոսքը վերաբերում է մարդկանց կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության և կենսական կարևորության այլ իրավունքներին:

Նշվածի կապակցությամբ ՀՀ էկոնոմիկայի նախարարության պարզաբանման համաձայն՝ Գեղարքունիքի մարզում ադրբեջանական զինված ծառայողները հափշտակել են շուրջ 85 գլուխ կենդանի: Կորստի դիմաց մարզի Վարդենիս համայնքի (Վերին Շորժա և Կութ բնակավայրեր) բնակիչների կրած վնասը մեղմելու նպատակով Գեղարքունիքի մարզպետարանը տրամադրել է դրամական օգնություն: Վայոց Ձորի մարզում 2021 թվականին Զառիթափ համայնքի Սերս բնակավայրի բնակչին պատկանող 75 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի անցել է ՀՀ պետական սահմանը և չի վերադարձվել: Վնասի դիմաց փոխհատուցում չի տրամադրվել:

Բարձրացված հարցի կապակցությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պարզաբանվել է, որ 2020 թվականի 44-օրյա պատերազմից հետո Սյունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերից, ըստ առանձին համայնքների ղեկավարներից ստացված նոր հաղորդումների, հակառակորդի վերահսկողության տակ գտնվող տարածքներ է անցել և չի վերադարձվել 46 խոշոր եղջերավոր կենդանի, 8 խոզ և 16 ձի: Քաղաքացիներին փոխհատուցվել է 25 խոշոր եղջերավոր կենդանու և 4 խոզի համար՝ ընդհանուր 7,717,000 դրամի չափով: Պատկան մարմիններում կատարվում են կորուստների համապատասխան ճշգրտումներ, և փոխհատուցումը շարունակվելու է:

**Մտահոգիչ է, որ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում մարզերի բնակիչներին փոխհատուցումներ տրամադրելու հարցում և մինչ օրս առկա չեն հստակ մեխանիզմներ մարզերի բնակիչներին կրած կորուստների համար համարժեք փոխհատուցումներ տրամադրելու համար:**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանն արձանագրել է խնդիրներ նաև ձեռնարկատիրական գործունեության հետ կապված: 2020 թվականի նոյեմբերի 26-ին ադրբեջանական զինված ծառայողները մուտք են գործել և տեղակայվել են «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության հանքի տարածքում: Արդյունքում, Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի հանքավայրի մեծ մասն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ: Մեկ այլ դեպքում ՀՀ կառավարությունը 2000 թվականի դեկտեմբերի որոշմամբ վարձակալական հիմունքներով «ԶՈԴ ՈՒԻՆԴ» ՓԲ ընկերությանը

<sup>1228</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2089>

տրամադրել է հողատարածք՝ էլեկտրական էներգիայի արտադրության համար հողմային էլեկտրակայան կառուցելու և շահագործելու նպատակով (նախատեսվել է կառուցել թվով 23 հողմային էլեկտրակայան): Ընկերությունը նշված տարածքում կառուցել է 2 հողմային էլեկտրակայան, սակայն ադրբեջանական զինված ծառայողները պատերազմի սպառնալիքով ներխուժել են ընկերության տարածք, որի արդյունքում ընկերությանը պատճառվել է մոտ 5.000.000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով վնաս<sup>1229</sup>:

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին ուղղված նշված բոլոր ահազանգերը փաստահավաք աշխատանքների շրջանակում հաստատվել են օբյեկտիվ ապացույցներով ու մի քանի աղբյուրով ստուգված տվյալներով:*

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 11-րդ հոդվածի համաձայն՝ նույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի համար և նրա ընտանիքի համար բավարար այնպիսի կենսամակարդակի իրավունքը, որն իր մեջ ներառում է բավարար սնունդ, հագուստ ու բնակարան և կյանքի պայմանների անընդհատ բարելավման իրավունքը: Մասնակից պետությունները պետք է ձեռնարկեն պատշաճ միջոցներ ապահովելու համար այդ իրավունքի իրականացումը, ընդունելով այդ առումով ազատ համաձայնության վրա հիմնված միջազգային համագործակցության կարևոր նշանակությունը:

Պետության պարտավորությունները միտված են լրացնելու, անհրաժեշտության դեպքում անձնական ջանքերը, օրինակ նշված դեպքերում անձինք չունեն այն հնարավորությունները, որոնք հասանելի են այլոց, անկարող են, բախվել են որոշ խոչընդոտների, որոնք իրենց փորձերը դարձնում են անհնարին, կամ ընդհանուր պայմաններն այնպիսին են, որ պատշաճ կենսամակարդակի անհնար է հասնել առանց արտաքին աջակցության:

Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն՝ հասարակության հիմնական միավոր հանդիսացող ընտանիքի ամբողջական զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են նպաստել ընտանեկան կյանքի տնտեսական, իրավական և սոցիալական պաշտպանվածությանը այնպիսի միջոցներով, ինչպիսիք են սոցիալական և ընտանեկան նպաստները, ֆիսկալ միջոցառումները, ընտանեկան կացարանի տրամադրումը, նորապսակներին նպաստների հատկացումը և այլ համապատասխան միջոցները:

Այսպիսով, սոցիալական ապահովության իրավունքը ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային նշված փաստաթղթերով երաշխավորված իրավունք է: Հայաստանը ստանձնել է սոցիալական ապահովության իրավունքի անարգել իրացումն ապահովող երաշխիքների ստեղծման միջազգային պոզիտիվ պարտավորություններ, այդ թվում՝ Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայով: Մեր երկիրը պարտավորվել է հաստատել սոցիալական ապահովության համակարգ կամ այն

<sup>1229</sup> Առավել մանրամասն տե՛ս «Անվտանգության ապառազմականացված գոտու հրատապ անհրաժեշտության վերաբերյալ՝ որպես բնակչության իրավունքների պաշտպանության հիմնարար երաշխիք Հայաստանում» արտահերթ զեկույցի գործարարության իրավունքներ բաժնում:

պահպանել և փորձել սոցիալական ապահովության համակարգն աստիճանաբար բարձրացնել ավելի բարձր մակարդակի: Ավելին, պետությունը պարտավոր է օրենսդրորեն ամրագրել իրավական և սոցիալտնտեսական այնպիսի երաշխիքներ, որոնք կապահովեն մարդկանց համար ընդունելի կենսամակարդակ:

**Հաշվի առնելով վերոգրյալը անհրաժեշտ է Սյունիքի, Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանամերձ համայնքների և գյուղական բնակավայրերի բնակիչների հոգսը թեթևացնելու և ստեղծված իրավիճակի մեղմման նպատակով ստեղծել պատերազմի և դրա հետևանքով մարդկանց կրած վնասները վերականգնելու գործուն մեխանիզմներ:**

**3. ՀՀ սահմանային բնակիչների սոցիալ-տնտեսական իրավունքների խախտումներն ազատ տեղաշարժի իրավունքի և անվտանգության իրավունքի իրացման համապետություն**

Ադրբեջանական զինված ուժերը պատերազմից հետո ներխուժել են և անօրինական տեղակայվել ՀՀ բնակավայրերի հարևանությամբ, ճանապարհներին ու ՀՀ ինքնիշխան տարածքում: Այդ ժամանակից սկսած տարբեր ժամանակաշրջաններում զբաղված են պարբերական հանցագործություններով, այդ թվում՝ ահաբեկչական արարքներով կրակում են բնակավայրերի ուղղությամբ, իրական վտանգ են քաղաքացիական բնակիչների կյանքի և առողջության համար, նրանց արարքների պատճառով սահմանափակվել է մարդկանց ազատ տեղաշարժը և այլն:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ուսումնասիրությունները վկայում են, որ կիրառվող մոտեցումների ու հատկապես Գլոբալ տեղորոշման համակարգով (GPS) կամ Գուգլ քարտեզների (Google map) մեխանիկական կիրառության արդյունքում ևս լուրջ սպառնալիքներ են ստեղծվել սահմանային բնակիչների կյանքի իրավունքի ու անվտանգության, նրանց ֆիզիկական ու հոգեկան անձեռնմխելիության ու ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կենսական կարևորության մյուս իրավունքների համար կամ դրանց մի մասն արդեն իսկ կոպտորեն խախտվել է:

Սահմանային դարձած գյուղական բնակավայրերի համայնքային մարմինների ու բնակիչների հետ քննարկումներն ու ուսումնասիրությունները հաստատում են, որ ադրբեջանական զինված ծառայողները պարբերաբար հայտնվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական բնակավայրերն իրար միացնող ճանապարհների տարբեր հատվածներին ու դա արել են սադրող եղանակով՝ զենքի բացահայտ ցուցադրումով՝ խաղաղ բնակիչներին ահաբեկելու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք առաքելությունները հաստատում են, որ միջպետական Մ2 ճանապարհի տարբեր հատվածներում, Գորիսից Կապան տանող հատվածում, ինչպես նաև Կապան քաղաքից Ճակատեն տանող ճանապարհի մի շարք հատվածներում ադրբեջանական զինված ծառայողների հայտնվելը իրական վտանգի տակ են դրել խաղաղ բնակիչների տեղաշարժը: Սյունիքի մարզի Ծավ, Ներքին Հանդ, Սրաշեն, Շիկահող, Ճակատեն,

Դավիթ-Բեկ, Շուռնուխ, Որոտան, Ներքին Խնձորսեկ, Կոռնիձոր, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Վերիշեն, Ակներ, Եղվարդ, Ագարակ և այլ գյուղական բնակավայրերի անվտանգության ու բնակիչների կենսական նշանակության իրավունքների համար այս ճանապարհներն ունեն բացարձակ կարևորություն:

Ուսումնասիրություններ են կատարվել Կապանի օդանավակայանի վարչական շենքի և թռիչքուղիների տարածքներում, որոնց անմիջական հարևանությամբ են գտնվում ադրբեջանական տեղակայման վայրերը: Ուսումնասիրությունները վկայում են, որ վտանգներ են առաջացել ոչ միայն Կապանի օդանավակայանի, այլ նաև Կապանից Երևան տանող Մ2 միջպետական ճանապարհով տեղաշարժի ու Կապան քաղաքի մի շարք բնակելի վայրերի համար<sup>1230</sup>:

Ադրբեջանական զինված ծառայողների (ներառյալ ադրբեջանական դրոշներն ու ցուցանակները) ներկայությունը ՀՀ ճանապարհներին Կապանից Ճակատեն և Սյունիքի մարզի Կապան համայնքի այլ գյուղեր, Գորիսից Որոտան մինչև Շուռնուխ և այլ բնակավայրերում լրջորեն խաթարվել են խաղաղ բնակիչների ազատ տեղաշարժը: Մասնավորապես, բնակիչներն իրենց անվտանգության և նրանց ընտանիքների անվտանգության համար խուսափում են այս ճանապարհներից օգտվել, հատկապես երեկոյան ժամերին (երթևեկել, քայլել կամ շրջել) նույնիսկ իրենց կենսական նշանակության կարիքները հոգալու համար (օրինակ՝ բժշկական հաստատություն գնալը կամ վերադառնալ):

Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին ադրբեջանական այն ծառայություններն են, որոնք պատերազմի ընթացքում խոշտանգել, սպանել են մեր զինված ծառայողներին ու քաղաքացիական անձանց և դրա համար չեն պատժվել:

ՀՀ բնակչության իրավունքները խախտող ադրբեջանական արարքների այնպիսի փաստեր են արձանագրվել, ինչպիսիք են՝ ճանապարհը Որոտանի և Դավիթ Բեկի հատվածներում 2021 թվականի օգոստոսի 25-27-ը դիտավորությամբ կամայական փակելը, դրանով ՀՀ Նոր Առաջածոր, Բարձրավան, Որոտան, Շուռնուխ բնակավայրեր մեկուսացման և հումանիտար ճգնաժամի առաջ դիտավորյալ կանգնեցնելը<sup>1231</sup>, քաղաքացիական մեքենաների ուղղությամբ քարեր նետելը, մայթեզրին՝ ադրբեջանական դիրքերի հարևանությամբ կանգնելու փորձ կատարող քաղաքացիական մեքենաներին զենքով սպառնալը, ահաբեկելու նպատակով ավտոբուսով երեխաների կանգնեցնելը:

Մասնավորապես, 2021 թվականի սեպտեմբերի 17-ին ադրբեջանական ոստիկանության զինված ու դիմակավորված ծառայողները Որոտանի ճանապարհին ապօրինի կանգնեցրել և ահաբեկել են երեխաներ տեղափոխող քաղաքացիական ավտոբուսը: Ադրբեջանական ծառայողները՝ զինված ու դիմակավորված, ստուգել են երեխաների հեռախոսները՝ ինչ-որ տեսանյութեր գտնելու պատրվակով: Երեխաների ավտոբուսն այդպես պահել են 10-15 րոպե: Այդ ընթացքում նաև

<sup>1230</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1478>

<sup>1231</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1880>

ավտորուսի վրայից դանակով քերել են Արցախի դրոշը: 14-16 տարեկան երեխաներն Արցախից Հայաստան էին եկել ֆուտբոլ խաղալու համար<sup>1232</sup>:

2021 թվականի սեպտեմբերի 9-ից Երևան-Կապան Մ2 միջպետական ճանապարհին՝ Գորիսի Որոտան բնակավայրի հատվածում, ադրբեջանական իշխանությունները տեղադրել են ոստիկանական հենակետ, որը նույն թվականի սեպտեմբերի 11-ից սկսել է գործել: Ադրբեջանական ոստիկանական հենակետի անմիջապես հարևանությամբ՝ ճանապարհի վրա տեղադրվել են արգելապատնեշներ: Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքները բացահայտել են ճանապարհի այդ հատվածում մարդու իրավունքների կոպիտ խախտումներ: Ադրբեջանական ոստիկանական հենակետի տեղակայումից հետո բացահայտվել է ճանապարհի նշված հատվածում տեղադրված ընդհանուր թվով 10 տեսախցիկ: Տեսախցիկները տեղադրված է ոստիկանական հենակետի անմիջապես հարևանությամբ գտնվող շենքի վրա, շենքի ճակատային մասում և շենքի տանիքին: Տեսախցիկների մեծ մասն ուղղված են դեպի ճանապարհը<sup>1233</sup>:

Այսինքն՝ ճանապարհի տարբեր ուղղություններից հսկողություն է իրականացվել/ում երթևեկության մասնակիցների, գլխավորապես՝ քաղաքացիական բնակչության շարժի նկատմամբ: Տեսախցիկներով ակնհայտ ֆիքսվել են բոլոր մեքենաների պետհամարանիշները, ուղևորների քանակը, նրանց ու վարորդների դեմքերը:

Այսպիսով, բացահայտ անիրավաչափ եղանակով հավաքվում են մարդկանց անձնական տվյալներ՝ այդ տվյալների միջազգային պաշտպանության կանոնների կոպիտ ոտնահարմամբ: Խոսքը գնում է մարդու մասնավոր կյանքին ու երթևեկողների անվտանգությանը բացահայտ անօրինական միջամտության մասին:

Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքները հաստատում են, որ 2021 թվականի նոյեմբերից հայտարարված համապատասխանաբար Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին, այսպես կոչված, ադրբեջանական սահմանային ու մաքսային հսկողության անցակետեր սահմանելու հետ, տեղում այցերով և մշտադիտարկմամբ, Պաշտպանին հասցեագրված անհատական ու կոլեկտիվ կոնկրետ բողոքների քննությամբ ձեռք է բերել հավաստի փաստեր այն մասին, որ այդ ճանապարհներին ադրբեջանական զինված ծառայողների հայտնվելու պահից խախտված են Հայաստանի քաղաքացիական բնակչության կյանքի, անվտանգության, ազատ տեղաշարժի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության, տնտեսական գործունեության ազատության իրավունքները, երեխայի շահերը և այլն:

Մ2 միջպետական ճանապարհի Որոտան բնակավայրի հատվածը փակելու հետևանքով բնակիչները հիմնականում երթևեկում են Կապան-Տաթև Մ17 ճանապարհով, որը դժվարանցանելի է բեռնատարների համար, բարդ ու վտանգավոր ձյան տեղումների ժամանակ:

<sup>1232</sup> <https://www.ombuds.am/am/site/VideoGalleryView/595>

<sup>1233</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1905>

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ կառուցվում/ել են շրջանցող (այլընտրանքային) նոր ճանապարհներ: Սակայն նշված այլընտրանքային ճանապարհները հաղթահարելը չափազանց բարդ է և վտանգավոր: Նշված ճանապարհներով ձյան և անձրևի ժամանակ երթևեկելը դառնում է գրեթե անհնար: Գորիս-Կապան ճանապարհի փակվելու հետևանքով շահագործվում է այլընտրանքային ճանապարհ, որն անցնում է Խոտ գյուղական բնակավայրով և տանում դեպի Որոտան, Շուռնուխ և Բարձրավան և այլ գյուղական բնակավայրեր, իսկ Կապան-Ճակատենի դեպքում այն անցնում է Գեղանուշ գյուղով և տանում դեպի Ճակատեն, Սրաշեն, Շիկահող, Ներքին Հանդ և Ծավ և այլ գյուղական բնակավայրեր: Երկու ճանապարհներն էլ դժվարանցանելի են թեթև մարդատար (ոչ ամենագնաց) ավտոմեքենաների համար: Սյունիքի մարզի Գորիս և, Կապան համայնքների բնակիչները կանգնել են հատկապես եղանակային պայմանների պատճառով մեկուսացման և հումանիտար խնդիրների առաջ:

Այդպիսով՝ բնակիչների աջակցելու համար սահմանվել են երթուղիներ: Գորիս համայնքում սահմանվել է «ՈՒՐԱԼ» ամենագնաց տրանսպորտային 1 միջոցով երթուղի, այն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին Գորիս քաղաքից առավոտյան ժամը 7:30 դպրոցի ուսուցիչներին տեղափոխում է Որոտան, ապա ճանապարհը շարունակում դեպի Շուռնուխ ու Բարձրավան և հետո հետադարձով ժամը 10:00-11:00-ի սահմաններում բնակիչներին Որոտանից տեղափոխում է Գորիս քաղաք: Այնուհետև, շաբաթվա նշված օրերին՝ ժամը 14:00-ի հատվածում Գորիսից վերադառնում է Որոտան և մյուս գյուղերը, իսկ երեկոյան ժամը 16:00-17:00-ի սահմաններում Որոտանից վերադառնում է Գորիս: Սահմանվել է երթուղի նաև Գեղանուշ-Կապան-Ճակատեն ուղղությամբ՝ ՈւԱԶ մակնիշի 2 ավտոմեքենայով (երկրորդ ՈՒԱԶ-ը սպասարկում է 2021 թվականի դեկտեմբերի 14-ից) օրական 3 անգամ և Կապան-Մեղրի-Ճակատեն-Կապան ուղղությամբ օրական մեկ անգամ ֆորդ մակնիշի ավտոբուսով: Նշված գյուղերի ուղևորափոխադրումները պատշաճ մակարդակով իրականացնելու համար 2021 թվականի դեկտեմբերի 14-ից գործում է նաև Ծավ-Ն. Հանդ-Ճակատեն-Ծավ երթուղին, որը սպասարկվում է ֆորդ մակնիշի ավտոբուսով օրական 2 անգամ: Այսինքն՝ գործում է ամենագնաց տրանսպորտային միջոցներով երթուղիներ, որոնք, թեև, պարտաճանաչ են, բայց ինքնին բավարար չէ, քանի որ երթուղիների սեղմ գրաֆիկը, դժվարանցանելի ճանապարհը թույլ չեն տալիս մարդկանց հոգալ իրենց առօրյա կարիքները, հասցնել մեկ օրվա ընթացքում՝ մինչև մութն ընկնելը կազմակերպել կարիքների բավարարումը և վերադարձը տուն:

Տեղական մարմինները, ինչպես նաև ՀՀ ԶՈՒ և ԱԱԾ Սահմանապահ զորքերի ծառայողները տեղերում միջոցներ են գործադրում մարդկանց օգնելու համար: Սակայն որքան էլ, օրինակ, տեղական մարմիններն աջակցեն, դա օբյեկտիվորեն չի լուծում իրավունքների զանգվածային խախտումների հարցը:

Ճանապարհների փակվելու հետևանքով խնդիրներ են առաջացել՝ կապված առողջության պահպանման իրավունքի և բուժօգնության հասանելիության հետ: Հատկապես առկա է շտապ բժշկական օգնության հասանելիության խնդիր: Այս հարցն արդիական է նաև այն պատճառով, որ

նշված բնակավայրերում ապրում են տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, որոնց առողջության պահպանումը, հատկապես պահանջում է հրատապ ու արդյունավետ արձագանք, դեղորայքի արագ մատակարարում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ արագ հոսպիտալացում: Բուժօգնության հասանելիությունն ունի հիմնարար նշանակություն: ՄԱԿ-ի «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ Դաշնագրի մասնակից պետությունները ճանաչում են յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել են դեպքեր, երբ մարդիկ չեն կարողանում ներկայանալ պլանային բուժօգնությունների՝ ճանապարհի խոչընդոտների պատճառով. այդ ճանապարհն անանցանելի է թեթև մարդատար ավտոմեքենաների և անգամ դժվարանցանելի ամենագնաց ավտոմեքենաների համար: Դժվարություններ են գրանցվել նաև հաշմանդամության սահմանման գործընթացում միասնական սոցիալական ծառայություններին դիմելու կապակցությամբ, քանի որ ծառայության տարածքային բաժինները տեղակայված են Գորիս և Կապան համայնքներում:

Օրինակ՝ բնակիչները տարբեր բժշկական հարցերի համար պայմանավորվածություններ ունեն բուժօգնություններում, բայց ժամերի տարբերության կամ ճանապարհի դժվարամատչելիությամբ պայմանավորված՝ չեն կարողանում սահմանված ժամերին հասնել բժշկի: Մինչև ճանապարհի փակվելն այն մարդկանց համար, որոնք առանց այն էլ ունեն տեղաշարժման կամ առողջական այլ խնդիրներ, դժվարությամբ, բայց հնարավոր էր մեկ օրվա ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ բժշկական հետազոտություններ անցնելով: Ներկայիս դժվարամատչելի միակ ճանապարհով տրանսպորտային երթուղու սահմանափակ ժամերի պայմաններում դա իրականացնել մեկ օրում գրեթե անհնար է օբյեկտիվորեն:

Բոլոր գյուղերում առաջացել են գյուղատնտեսական ապրանքների իրացման խնդիրներ: Օրինակ, ընկույզի համար մեծ թվով գնորդներ են միշտ այցելել Շիկահող գյուղական բնակավայր, սակայն Կապան-Ճակատեն ճանապարհը փակվելուց հետո նրանք չեն կարողանում այցելել դժվարանցանելի, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհով: Իսկ Որոտանում խաղողի, արքայանարինջի և այլն գյուղատնտեսական ապրանքների իրացման խնդիրներ: Արձանագրվել են նաև, որ այլընտրանքային ճանապարհն անանցանելի է նաև գյուղատնտեսական ծանր տեխնիկայի համար:

Դժվարացել է սննդի ձեռքբերման կազմակերպումը, առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, երեխաների խնամքի պարագաների ձեռք բերումը: Հացը մատակարարվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «ՈՒԱՀ» ամենագաց մեքենայով: Առկա են անհատական դժվարություններ (օրինակ՝ կան բնակիչներ, որոնք չեն կարողանում մասնավոր կամ անհատական կարգով կատարել գնումներ, ասենք, Գորիսից կամ Կապանից, քանի որ ճանապարհներն դժվարանցանելի են): Արձանագրվել է, որ 2022 թվականի հունվարի 20-ին Կարմիր խաչի միջազգային կոմիտեն իր ամենագնաց մեքենայով այլընտրանքային ճանապարհով



եղանակային պայմանների պատճառով չի կարողացել սնունդ ու հիգիենիկ պարագաներ հասցնել Բարձրավան գյուղ:

Ճանապարհների փակվելու հետևանքով բացի նրանից, որ խաթարվել է դպրոցների բնականոն աշխատանքը, առաջ են նաև եկել կրթական իրավունքի անհատական խնդիրներ: Այս առումով հարկ է նշել, որ կրթության իրավունքն անձի հիմնական իրավունքներից է, որի ապահովումն ունի կարևոր նշանակություն նաև անձի այլ իրավունքների և ազատությունների իրականացման համար: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Այն ամրագրված է Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերով: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածով ևս երաշխավորվում է երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են կրթության՝ յուրաքանչյուր մարդու իրավունքը: ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներից է, ի թիվս այլնի, ապահովել ներառական ու համապատասխան որակյալ կրթություն բոլորի համար և խթանել ողջ կյանքի ընթացքում ուսման հնարավորությունները (4-րդ նպատակ):

Օրինակ՝ Շիկահողի բնակիչներից մեկի երեխաներից 2-ը ճանապարհի պատճառով չեն կարողանում ամեն օր հասնել Կապան մեկը կրկնուսույցի հետ պարապելու, մյուսը քոլեջ հաճախելու նպատակով<sup>1234</sup>: Առցանց կազմակերպել ուսուցումը դեռևս չի ստացվում: Այլընտրանքային ճանապարհով էլ հնարավոր չէ կազմակերպել երեխայի բնականոն տեղաշարժը:

Կրթական իրավունքի խնդիրներ են առաջ եկել Սրաշենից Ներքին Հանդի դպրոց հաճախող երեխաների համար, իսկ Ներքին Հանդի երեխաների իրավունքներն առանց այն էլ կոպիտ ոտնահարված են, քանի որ ադրբեջանական զինված ուժերը տեղակայված են դպրոցից ընդամենը մի քանի հարյուր մետր հեռավորության վրա<sup>1235</sup>: Խաթարված են երեխաների լավագույն շահերը:

Որոտանում բնակվող երեխաների մի մասը չի կարողանում հաճախել Գորիսում սպորտի և պարի խմբակների. սա խնդրահարույց է, քանի որ երեխաները լուրջ հաջողություններ են գրանցել: Երեխաները չեն կարողանում նաև հաճախել ուսուցիչների մոտ լրացուցիչ դասընթացների Գորիս քաղաք: Գնալու դեպքում խնդիր է նաև երեխաների վերադարձը Գորիսից՝ կապված ժամերի անհարմարությունների հետ (օրինակ՝ ժամը 13-ին կամ 14-ին դասը վերջացնող երեխան պետք է ևս մի քանի ժամ սպասի տրանսպորտային միջոցի ժամին):

«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 28-րդ հոդվածով ևս երաշխավորվում է երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը: «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դաշնագրին

<sup>1234</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2026>

<sup>1235</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1538>

մասնակցող պետությունները ճանաչում են կրթության՝ յուրաքանչյուր մարդու իրավունքը: Նրանք համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ:

Մեկ այլ դեպքում Որոտանի բնակավայրի ուսանողները, ովքեր սովորում են Գորիս քաղաքում, զրկվել են դասերին բնականոն հաճախելու հնարավորությունից. դասերը սկսվում են ժամը 9:00-ին, իսկ այդ ժամին երիտասարդները Գորիս հասնել չեն կարողանում: Ուսանողների համար խնդիր է նաև Գորիսում դասերի ավարտից հետո Որոտան վերադարձը, քանի որ լինում են դեպքեր, երբ ամենագնաց մեքենայով երթուղային տրանսպորտային միջոցն արդեն մեկնած է լինում:

Բոլոր ծնողները նշել են, որ իրենց համար առաջնային հարցը ճանապարհի անվտանգության ապահովումն է, ինչը հնարավոր չէ լուծել այլընտրանքային ճանապարհի բարեկարգմամբ՝ հատկապես հաշվի առնելով, որ երեխաների դասից վերադարձին արդեն մեքենան գալիս է երեկոյան ժամերի: Որոշ ծնողներ նշել են, որ անգամ անհատական ամենագնաց մեքենա ունեցողների համար էլ իրենց երեխաների անվտանգության ապահովումն առաջնահերթ է, քանի որ ճանապարհին անմիջականորեն դիտարկվում է ադրբեջանական զինված ծառայողների կողմից:

Գորիս համայնքում ուսուցիչները, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհով եղանակային պայմանների պատճառով չեն կարողացել աշխատանքի գնալ անգամ ռազմական «Ուրալ» մեքենայով:

Կրթության իրավունքի ապահովման հարցում հիմնարար նշանակություն ունի պետության դերը: Պետությունը պարտավոր է երաշխավորել յուրաքանչյուրի կրթության պատշաճ կազմակերպումը:

Աշխատանքը մարդու արժանապատիվ կյանքի ու բարեկեցության, ընտանիքի կարիքները հոգալու և շարունակաբար ինքնակրթվելու, հասարակության լիիրավ անդամ լինելու և, ի վերջո, հասարակության և պետության բնականոն զարգացումն ապահովելու հիմնարար երաշխիք է: Աշխատանքային իրավունքների պահպանման հարցում պետությունն ունի պատասխանատու դերակատարություն, հատկապես աշխատանքային հարաբերությունների կարգավորումն ապահովելու, սոցիալական գործընկերությունը խթանելու, աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմներ ապահովելու և մի շարք այլ հարցերում: Աշխատանքային իրավունքների ապահովումը պետք է լինի պետության առաջնահերթությունների ցանկում՝ որպես գրավական ՄԱԿ-ի կայուն զարգացման թիվ 8 նպատակի իրագործման, այն է՝ խթանել կայացած, ներառական և կայուն տնտեսական աճ, լիարժեք և արտադրողական զբաղվածություն և արժանապատիվ աշխատանք բոլորի համար:

Ճանապարհների փակվելու հետևանքով դժվարություններ են առաջացել նաև աշխատանքի իրավունքն իրացնելու կամ զբաղվածությունն ապահովելու գործընթացում, կապված աշխատանքի հաճախելու անհնարինության կամ բացարձակ անհարմար և անեկամտաբեր դառնալու պատճառով: Մարդը պարզապես զրկվել է իր և ընտանիքի ապրուստը հոգալու հնարավորությունից:

Օրինակ՝ այն բնակիչները, ում աշխատանքը կապված է ճանապարհային շինարարության կամ բեռնափոխադրման հետ կամ պահանջում է ամենօրյա այցեր աշխատանքի՝ գրկվել են աշխատանքից ու ընտանիքի եկամտի աղբյուրից կամ էլ բաժանվել են ընտանիքից և չեն կարող միասին լինել, ստիպված են բնակվել այլ վայրում, որ կարողանան աշխատանքի հաճախել: Բնակիչներից մեկը, օրինակ, տեղեկացրել է, որ աշխատանքը չկորցնելու համար ստիպված բաժանվել է ընտանիքից և փաստացի չի բնակվում տանը. իր տուն է գալիս 15 օրը մեկ անգամ<sup>1236</sup>: Մեկ այլ օրինակով, Շիկահողում, Ճակատենում երիտասարդ ընտանիքներ Կապան աշխատանքի հասնելու դժվարությունների պատճառով ստիպված բնակարան են վարձակալել Կապան քաղաքում՝ գյուղում թողնելով իրենց ծնողներին կամ ընտանիքի այլ տարեց անդամներին: Սրաշեն և Ներքին Հանդ գյուղերում մարդիկ գրկվել են իրենց երեխաներին ու թոռնիկներին տեսնելու, ընտանիքի հետ միասին լինելու հնարավորությունից<sup>1237</sup>:

Բարձրացված խնդիրների հետ կապված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պարզաբանել են, որ այն սահմանամերձ բնակավայրերում, որոնց համայնքների կենտրոնների հետ կապող ավտոմոբիլային ճանապարհներն անցել են հակառակորդի վերահսկողության տակ՝ կրթական, գյուղատնտեսական ապրանքների իրացման, բուժօգնության և այլ խնդիրները, հիմնականում առաջացել են ճանապարհների հետ կապված խնդիրների պատճառով: Այլընտրանքային ճանապարհների կառուցման և շահագործման արդյունքում խնդիրներն աստիճանաբար մարում են: Նշված այլընտրանքային ճանապարհների կառուցմանը զուգահեռ Սյունիքի մարզպետարանի, համապատասխան համայնքապետարանների, մարզի առողջապահական հաստատությունների, Պաշտպանության նախարարության, սահմանապահ զորքերի և այլ կազմակերպությունների համատեղ ջանքերով պարբերաբար միջոցներ են ձեռնարկվել խնդիրները վերացնելու կամ մեղմելու ուղղությամբ:

Նախարարությունից պարզաբանվել է նաև, որ 2021 թվականին սկսել է իրականացվել Աղվանի-Տաթև միջպետական նշանակության ավտոճանապարհի (Քաշունի գյուղի խաչմերուկից) Բարձրավան և Տանձավեր-Շուռնուխ ճանապարհահատվածների կառուցման աշխատանքները: Նշված ճանապարհը գործող ծրագծով արդեն իսկ անցանելի է թեթև մարդատար մեքենաների համար: Բարձրավան գյուղ տանող ճանապարհն անցանելի է և՛ Աղվանի-Տաթև և՛ Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի Իսլամական Հանրապետության սահման միջպետական ավտոճանապարհներով: Ներկայում աշխատանքները տեղափոխվել են հիմնական (նոր) ծրագիծ, և իրականացվում են ճանապարհի հողային պաստառի կառուցման աշխատանքները: Տվյալ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022 թվականի վերջը: Տանձավեր-Շուռնուխ ավտոճանապարհի աշխատանքներն իրականացվում

<sup>1236</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2032>

<sup>1237</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2027>

են 3 տեղամասերում՝ ընդհանուր 7,2 կմ երկարությամբ հատվածի վրա: Տվյալ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022 թվականի վերջը: Լծեն-Տաթև ավտոճանապարհին իրականացվում են հողային աշխատանքներ, և այս պահին ճանապարհն անցանելի չէ: Տվյալ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022 թվականի վերջը: Որոտան-Խոտ ավտոճանապարհի Խոտից դեպի Որոտան (Մ2) հատվածի առաջին 5,5 կմ-ում հողային պաստառն ամբողջությամբ պատրաստ է, իրականացվել է ճանապարհի լայնացում, մյուս 5 կմ-ի վրա անցանելիության բարելավման աշխատանքներն ավարտված են: 2021 թվականի նոյեմբերի 18-ից այս հատվածն առաջին անգամ երթևեկելի է դարձել թեթև մարդատար մեքենաների համար: Ներկայում աշխատանքներ են իրականացվում սողանքային հատվածում: Տվյալ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022 թվականի վերջը: Կապան-Ճակատեն շրջանցիկ նոր ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներն իրականացվում են ճանապարհի երկու կողմերից: Ներկայում իրականացվում են հողային պաստառի լայնացման աշխատանքներ: Տվյալ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել մինչև 2022 թվականի վերջը: Մինչ Կապան-Ճակատեն հիմնական շրջանցիկ ճանապարհահատվածի կառուցման աշխատանքների ավարտն իրականացվել է Ճակատեն-Գեղանուշ-Կապան գործող ճանապարհի անցանելիության բարելավում: Հողային աշխատանքներն ավարտված են և ճանապարհը խճապատված է: Ճանապարհը չոր եղանակին անցանելի է անգամ թեթև մարդատար մեքենաների համար: Վերին Խոտանան շրջանցիկ ճանապարհի կառուցման համար առաջիկայում պատվիրվելու են նախագծման աշխատանքներ:

Այլընտրանքային ճանապարհները գտնվում են ադրբեջանական զինված անձանց ուղիղ նշանառության տակ, ինչը կենսաապահովման լուրջ խնդիրներ է առաջացրել բնակավայրերի բնակիչների համար<sup>1238</sup>:

Եվս մեկ կարևոր հանգամանք՝ այլընտրանքային ճանապարհների կառուցում չի նշանակում, թե դրանով վերացվում են Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին ներկա ադրբեջանական զինված ու դիմակավորված ծառայողներից բխող իրական սպառնալիքները ՀՀ բնակչության ու հատկապես նրանց տեղակայման դիրքերի հարևանությամբ գտնվող համայնքների բնակիչների կյանքին ու անվտանգությանը:

Սահմանամերձ բնակավայրի բնակիչները, հայտնվելով կյանքի դժվարին իրավիճակում, իրենց իրավունքների իրացման համար ունեն առավել սահմանափակ հնարավորություններ: Այս համատեքստում հատկապես կարևոր է պետության քայլերի, մեխանիզմների ներդրումն ու համակարգումն այնպես, որ բացառվի նրանց կրկնակի խոցելի դառնալու ռիսկը:

<sup>1238</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/2029>

Ստեղծված պայմաններում ադրբեջանական ոստիկանական հենակետը, սահմանային ու մաքսային հսկողության անցակետերը, արգելապատնեշներն ու տեսախցիկները, զինված ծառայողների տեղակայումը բացահայտ անիրավաչափ են: Այս հարցում պետք է ղեկավարվել մարդու իրավունքների գերակայության սկզբունքով՝ հատկապես հաշվի առնելով, որ երկու պետությունների միջև տեղի չի ունեցել պետական սահմանի դեղինիտացիա և դեմարկացիա:

#### **4. ՀՀ Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի ջրային պաշարների անվտանգ օգտագործման խնդիրներ**

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուսումնասիրություններն ու դիտարկումները հաստատում են, որ սահմանամերձ համայնքների բնակիչներ համար առաջացել են լուրջ բնապահպանական խնդիրներ, որոնք վտանգել են բնակիչների կյանքի, առողջության, ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության սահմանադրական իրավունքները: Հարկ է նշել, որ նշված խնդիրները միշտ կրել են շարունակական բնույթ, ինչի արդյունքում պարբերաբար խախտվել են սահմանամերձ համայնքների բնակիչների բնապահպանական իրավունքները, այդ թվում՝ ջրային պաշարներից անվտանգ օգտվելու իրավունքը:

Ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր մարդու համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի իրավունքը նրա նվազագույն պահանջմունքների բավարարման համար: Անվտանգ ջրի ողջամիտ քանակությունն անհրաժեշտ պայման է ջրազրկման հետևանքով առաջացող մահերի կանխարգելման, ամենօրյա անորակ ջրի օգտագործումից առաջացող հիվանդությունների ռիսկերի նվազման համար: 2010 թվականի հուլիսի 28-ի թիվ 64/292 հանձնարարականով<sup>1239</sup> ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ջրի և սանիտացիայի իրավունքը ճանաչվել է որպես մարդու իրավունք և ընդունվել այն փաստը, որ ջրի և սանիտացիայի հասանելիությունը հիմնարար է մարդու իրավունքների իրացման համար<sup>1240</sup>: Ջուրը մարդու կյանքի և առողջության համար հիմնային նշանակություն ունեցող հանրային բարիք է: Ջուրը մարդու արժանապատիվ կյանքի իրավունքի իրացման անփոխարինելի գործոններից մեկն է<sup>1241</sup>:

Վերոգրյալի համատեքստում հարկ է նշել, որ ադրբեջանական զինված ծառայողները 2021 թվականի մայիսի 12-ին և 13-ին անօրինական առաջխաղացում են ունեցել դեպի ՀՀ սահմաններից ներս, մասնավորապես՝ ՀՀ Սյունիքի մարզի Սև լճի տարածք և Գեղարքունիքի մարզի Կուֆ և Վերին

<sup>1239</sup> Տե՛ս United Nations General Assembly Resolution (64/292)

<sup>1240</sup> Տե՛ս [http://www.un.org/waterforlifedecade/human\\_right\\_to\\_water.shtml](http://www.un.org/waterforlifedecade/human_right_to_water.shtml)

<sup>1241</sup> Տե՛ս Տնտեսական, սոցիալային և մշակութային իրավունքների կոմիտեի Գլխավոր մեկնաբանություններ No 15, Ջրի իրավունք, E/C 12/2002/11 պարագրաֆ 1:

Շորժա գյուղական բնակավայրերի տարածքներ: Ներխուժման պատճառով ուղիղ սպառնալիքի տակ են հայտնվել Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի ջրային պաշարների որոշ մասը<sup>1242</sup>:

Սև լիճն ունի պետական արգելավայրի կարգավիճակ՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում է բնական էկոհամարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունն ու բնական վերարտադրությունն: ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 29-ի «Սև Լիճ» պետական արգելավայրի կանոնադրությունը հաստատելու մասի» N 631 որոշման 2-րդ կետի համաձայն՝ արգելավայրի կազմավորման հիմնական նպատակը Սև լճի ջրային և նրա հարակից ցամաքային էկոհամակարգերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունն ու կայուն օգտագործումը, Սևանա լճի իշխան և բեղլու ձկնատեսակների արհեստական վերարտադրության համար անհրաժեշտ ձկնային պաշարի աճեցումն ապահովելն է:

Մարդու իրավունքների պաշտպանը քննարկում է ունեցել տարածքում անասնապահությամբ զբաղվող մարդկանց հետ: Մի քանի հովիվներ Պաշտպանին տեղեկացրել են, որ 2021 թվականի մայիսի 12-ին և 13-ին կենդանիներին արածացնելու ժամանակ նկատել են ադրբեջանական զինված ծառայողների, որոնք զենքի ցուցադրումով, հանցավոր սպառնալիքով պահանջել են անմիջապես լքել արոտավայրերի տարածքները: Խոշոր ու մանր եղջերավոր անասուններին չեն կարողանում պահել մակատեղիներում, ջուր խմեցնել, ինչպես նաև չեն կարող հանգիստ լինել ոռոգման ու ջրային պաշարների հասանելիության համար: Ադրբեջանական զինված ծառայողների ներկայությունը վտանգում է վերջիններիս կյանքն ու անվտանգությունը, խաթարում է հոգեկան անդորրը<sup>1243</sup>:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ադրբեջանական զինված ծառայողները Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա բնակավայրի հատվածում մոտ 6 կմ առաջ են եկել, արդյունքում՝ սարատեղիում գտնվող ջրամբարը հայտնվել է ադրբեջանցիների վերահսկողության տակ, ինչի պատճառով տարածաշրջանի գյուղական բնակավայրերում՝ Վերին Շորժա, Այրք, Շատջրեք, Ջաղացածոր և այլն, ջրից անվտանգ օգտվելու կենսական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ են առաջացել:

Ադրբեջանի վերահսկողության տակ են անցել Ալ լճերից սնուցվող ջրահավաք ավազանները, որոնք ապահովում են Վարդենիսի համայնքի որոշ գյուղական բնակավայրերի խմելու ջրի պաշարները, սակայն ներկայում մի շարք վտանգավոր ազդեցությունների հետևանքով առկա է վտանգ մարդկանց կյանքի և առողջության պահպանման, բարենպաստ շրջակա միջավայր ապահովելու համար: Նորաբակ գյուղական բնակավայրի խմելու ջրի ավազանները գտնվում են սահմանային տարածքում և ստեղծված իրավիճակում նշված տարածքներում աշխատանքներ կատարելը դարձել է վտանգավոր:

<sup>1242</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1682>

<sup>1243</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1690>

Կարևոր հիմնախնդիրներից է նաև Սյունիքի մարզի Մեղրի գետի Զվարագետ վտակի հունը փոխելու հարցը, քանի որ ադրբեջանական զինված ծառայողները թույլ չեն տալիս, որպեսզի Մեղրի գետի Զվարագետ վտակը միանա մայր գետին և բավարար խմելու և ոռոգման ջուր ապահովի համայնքի բնակչության համար: Վտակի հունը փոխելը նաև լուրջ վնասներ են պատճառվում շրջակա միջավայրին, այն է՝ տեղի է ունեցել գյուղատնտեսական նշանակության հողերի չորացում, կենդանական և բուսական աշխարհի վերացում և ոչնչացում<sup>1244</sup>:

Ադրբեջանական զինված ծառայողների այս գործողությունները խախտում են ջրային պաշարների օգտագործման իրավունքը, որը կենսական կարևոր նշանակություն ունի Մեղրի համայնքի բնակիչների համար և երաշխավորված է միջազգային փաստաթղթերով: Այս իրավունքը ներառում է մարդու իրավունքը՝ ունենալ բավարար ջուր ինչպես շարունակական խմելու, այնպես էլ կենցաղային օգտագործման համար (ոռոգում, հիգիենա և այլն):

Նշվածի կապակցությամբ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից պարզաբանվել է, որ Զվար գետի ողջ ջրհավաք ավազանը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, գետի ակունքը գտնվում է հայ-ադրբեջանական (Նախիջևան) սահմանային կետում, այդ իսկ պատճառով հնարավոր չէ տեղում պատշաճ ուսումնասիրություն իրականացնել: Զվար գետի ջրերն ի սկզբանե համատեղ չեն օգտագործվել: Մեղրի գետի Զվար վտակի հունի փոփոխման վերաբերյալ շրջակա միջավայրի անդրսահմանային ազդեցության գնահատման փորձաքննություն չի իրականացվել, քանի որ փորձաքննություն պետք է իրականացնի այն կողմը, որի գործողություններն ունեցել են անդրսահմանային ազդեցություն:

Ադրբեջանական զինված ծառայողների նկարագրված գործողությունները կոպտորեն խախտում են «Միջսահմանային ջրահոսքերի և միջազգային լճերի պահպանության և օգտագործման մասին» 1992 թվականի մարտի 17-ին Հելսինկիում ստորագրված կոնվենցիայի և այլ միջազգային փաստաթղթերի դրույթները:

Սյունիքի մարզի Խոզնավար գյուղական բնակավայրի ջրավազանը նույնպես անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, ինչի հետևանքով բնակիչները չեն կարողանում ապահովել իրենց անվտանգ հասանելիությունը խմելու և ոռոգման ջրի պաշարներին: Ստեղծված իրավիճակը վտանգում է բնակիչների կյանքը, առողջությունը և անվտանգությունը:

Սյունիքի և Գեղարքունիքի մարզերի գյուղական բնակավայրերի ջրային պաշարները վտանգված են նաև այն պարագայում, երբ գետերը հոսում են Ադրբեջանի վերահսկողության տակ անցած տարածքներով և լցվում են ՀՀ տարածքում գտնվող ջրային ավազանները: Ջրային պաշարների վտանգված լինելու հիմնավորումը պետական հովանավորչությամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից հայատյացության դրսևորումն է, որն այս տարիների ընթացքում խորացել է և ստացել է նոր ծայրահեղ դրսևորումներ: Մասնավորապես, վերջին պատերազմի ընթացքում դրսևորվել է դաժանություններով ու մարդու իրավունքների այլ կոպիտ խախտումներով, իսկ նման դեպքերի կրկնությունը չի բացառվում:

<sup>1244</sup> <https://www.ombuds.am/am/site/ViewNews/1510>

Ջրի իրավունքն այնքան հիմնարար է, որ ՄԱԿ-ը ջրի և սանիտարական մաքրության իրավունքը հռչակել է Կայուն զարգացման գլոբալ նպատակ՝ հաշվի առնելով ջրի հիմնարար սկզբունքները, անփոխարինելի նշանակությունը մարդկության զարգացման և կյանքի կարիքների կազմակերպման համար:

Ջուրը սահմանափակ բնական ռեսուրս է, որն ունի կոնկրետ բարենպաստ ազդեցություն բնակչության կյանքի և առողջության համար: Ջրի իրավունքը մարդու արժանապատիվ կյանքի կարևորագույն պայմանն է: Այն պարտադիր պայման է մարդու մյուս իրավունքների իրականացման համար: Պետություններն առանց որևէ խտրականության իրավունք ունեն արդյունավետ միջոցներ կիրառել ջրի իրավունքի իրագործման նկատմամբ:

Ջրի նկատմամբ մարդու իրավունքը ենթադրում է յուրաքանչյուր մարդու համար բավարար քանակությամբ անվտանգ, տնտեսապես և ֆիզիկապես հասանելի խմելու ջրի նվազագույն պահանջմունքների բավարարումը: Անվտանգ ջրի ողջամիտ քանակությունն անհրաժեշտ պայման է ջրազրկման հետևանքով առաջացող մահերի կանխարգելման, ամենօրյա անորակ ջրի օգտագործումից առաջացող հիվանդությունների ռիսկերի նվազման համար:

***Այսպիսով, պեղության առաջնահերթ խնդիրներից է ապահովել սահմանային ջրային պաշարների անվտանգ օգտագործման երաշխավորումը:***

***\* Տարեկան հաղորդման սույն բաժնում ներկայացված կոնկրետ դեպքերն ակնհայտորեն հաստատում են ադրբեջանական զինված ծառայողների կողմից ՀՀ քաղաքացիների՝ Սահմանադրությամբ և միջազգայնորեն երաշխավորված իրավունքների կոպիտ խախտումները:***

***Խոսքը վերաբերում է մարդկանց կյանքի, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, սեփականության և կենսական կարևորության այլ իրավունքների մասին, իսկ կյանքի իրավունքի դեպքում՝ խախտման իրական վրանգի մասին:***

***Մարդու իրավունքների պաշտպանը մեկ անգամ ևս ընդգծում է, որ անհրաժեշտ է հրապարակ միջոցներ ձեռնարկել ապահովելու ՀՀ բնակիչների իրավունքները, նրանց անվտանգությունը՝ հողերն օգտագործելիս, գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվելիս, ինչպես նաև այդ մարդկանց պաշտպանել սեփականության իրավունքի խախտումներից և այդ իրավունքներին սպառնացող վրանգներից:***

***Ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացված և շարունակվող հանցանքներն ադրբեջանական հայատնադրության ու թշնամանքի քաղաքականության հետևանքներն են, էթնիկ զտումների արդյունք, և այս սպառնալիքն այսօր էլ վերացած չէ:***

***Միջազգային չափանիշներն ու փորձը վկայում են, որ ցանկացած գործընթացի հիմքում, որն առնչվում է մարդուն, այդ թվում՝ սահմանների որոշման հարցերում, պեղության գործողությունների հիմքում պեղք է լինեն մարդու իրավունքի գերակայությունը, մարդու***



իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքը ու, հետևաբար, մարդու՝ միջազգայնորեն ճանաչված և Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքները:

Այս համապետքստում խիստ վրանգավոր են դարձել ՀՀ այն պաշտոնյաների հայտարարությունները, որոնք, անտեսելով մարդկանց սահմանադրական իրավունքները, արդարացնում են Գորիս-Կապան և Կապան-Ճակատեն ճանապարհներին ադրբեջանական անցակետերը, իսկ տեղակայումները հիմնավորում են՝ ասելով, թե դրանք այն տարածքներում են, որոնք Ադրբեջանի Հանրապետություն են: Անընդհատ հղումներ են արվում ինչ որ այլընտրանքային ճանապարհների ու ԽՍՀՄ չկոնկրետացված ինչ-որ քարտեզների:

Պաշտոնյաների նշված հայտարարություններով օրինականացվում են ադրբեջանական զինված [ու իրավապահ] ծառայողների անօրինական տեղակայումները, որտեղից էլ նրանք անօրինականություններ են կատարում, հանցանքներ են գործում ՀՀ բնակչության նկատմամբ:

Բանն այն է, որ այդ, այսպես կոչված, այլընտրանքային ճանապարհները չեն վերացնում ՀՀ բնակչության անվտանգության սպառնալիքներն ու սահմանադրական իրավունքների խախտումները, չեն կարող լինել լիարժեք լուծումներ:

Իրականում, ճանապարհների ապաշրջափակման քողի ներքո ադրբեջանական իշխանությունները վարում են ՀՀ քաղաքացիական բնակավայրերի մեկուսացման և հումանիտար խնդիրներ առաջացնելու նպատակային քաղաքականություն:

Ուտի, պետք է բացառվեն տարբեր պաշտոնյաների հակասական ու մարդու իրավունքները ոտնահարող կամ վրանգող հայտարարությունները, որոնք խորացնում են անորոշությունը հասարակությունում: Իրականում, պետության ռազմավարությունը պետք է սահմանային անվտանգության հարցերում հաշվի առնի մարդու իրավունքների հետ կապը, ինչպես նաև այն, որ պետությունն ունի իր քաղաքացիների իրավունքների պաշտպանության պոզիտիվ պարավորություն:

Որոշ բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ ոլորտի պատասխանատու պաշտոնյաներ անելով այնպիսի արտահայտություններ, ինչպիսիք են՝ «Սյունիքն անվտանգ է», «իրենց [ադրբեջանական] տարածքն է, ինչ կարող ենք անել», ինչպես նաև այլընտրանքային ճանապարհները գովերգող արտահայտություններ՝ խնդիրներ են առաջացնում միջազգային ասպարեզում ՀՀ սահմանային բնակիչների իրավունքների պաշտպանության համար՝ ավելի նպաստելով քաղաքական հարցերի գերակայությանը մարդու իրավունքների նկատմամբ:

Ինչ վերաբերում է ՀՀ կառավարության կողմից «գորքերի հայելային հետքաշման» առաջարկին, Մարդու իրավունքների պաշտպանի դիրքորոշումն այն է, որ Կառավարությունը պետք է հրապարակային բացատրություն տա, թե ինչ է նշանակում «գորքերի հայելային հետքաշում» և ինչպես է դա երաշխավորելու ՀՀ բնակչության անվտանգությունն ու իրավունքները: Նշվածից բացի, ուսումնասիրությունները վկայում են, որ Կառավարության այդ գաղափարն անորոշություն է առաջացրել մարդկանց մոտ:

Կառավարությունը չի կարող «գաղտնիության» կամ «կոնֆիդենցիալ» լինելու քողի ներքո խուսափել մանրամասների հրապարակումից, քանի որ այս հարցն ուղիղ կապված է մեր երկրի ողջ բնակչության [առաջնահերթ սահմանային բնակիչների] անվտանգության ու արժանապատվության, կյանքի ու մյուս կենսական իրավունքների հետ:

Այս պահին ամբողջությամբ անորոշ է, թե Կառավարությունը, այսպես կոչված, «գործերի հայելային հետքաշման» դեպքում ինչպես է դա երաշխավորելու. հատկապես, որ սահմանային հարցերը Կառավարությունը շարունակում է առաջ փանել քաղաքական ու ռազմական փեսանկյուններից՝ առանց մարդու իրավունքների հիմքի:

Նշվածի համարեքստում Մարդու իրավունքների պաշտպանը վերահաստատում է իր առաջարկը ՀՀ քաղաքացիների իրավունքները երաշխավորելու նպատակով հրատարակված անվտանգության գոտի ստեղծելու կարևորության և անհրաժեշտության մասին:

Հարկ է ևս մեկ անգամ նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի այս առաջարկն արդեն փեղ է գտել միջազգային կոնկրետ փաստաթղթում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆԿՎ) 2021 թվականի սեպտեմբերի 27-ի թիվ 2391 (2021) բանաձևում:

Պետք է անհապաղ սկսվի Ադրբեջանի հետ ՀՀ սահմանների շուրջ անվտանգության ապառազմականացված գոտի ստեղծելու և ադրբեջանական զինված ծառայողներին ՀՀ գյուղերի հարևանությունից, համայնքների միջև ճանապարհներից անհապաղ հեռացնելու գործընթաց:

